ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ

# «ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ»

# ՀԱՄԱԲԱՐԲԱՌ

Կազմեց՝ բանասիրական գիտությունների թեկնածու
Սուսաննա Գրիգորյան

## ԳԻՐՔ Գ

## Կ - Չ

ԵՐԵՎԱՆ
«Տիգրան Մեծ» հրատարակչություն
2012

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:**

**Պատասխանատու խմբագիր՝**
**բանասիրական գիտությունների դոկտոր**
**Լ. Շ. Հովհաննիսյան**

**Գրիգորյան, Ս. Մ.**
«Գիրք հարցմանց», Համաբարբառ/Գրիգոր Տաթևացի: Կազմ.՝ Ս. Մ. Գրիգորյան: Խմբ.՝ Լ. Շ. Հովհաննիսյան, - Եր.: «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2012.
Հ. Գ. - 1060 էջ:

*Բնագրային համաբարբառը գրեթե փոխարինում է բնագրին: Գրիգոր Տաթևացու նշանավոր «Գիրք հարցմանց»-ը հրատարակվել է 1729 թվականին, Կ. Պոլսում: Նրա բնագրային համաբարբառը կարող է դառնալ սեղանի գիրք՝ թե հոգևորական գործչի, թե բանասերի, թե հայագիտությամբ և միջնադարով զբաղվող յուրաքանչյուր մասնագետի համար:*

© Սուսաննա Գրիգորյան, 2012

# Կ

**ԿԱԳ +** Եւ գիտելի է, զի **ժ** փործանացն աբրահամու որք էին ձոյլարան նորա՝ մի է և այս... Երրորդ՝ *կագ* հովուացն. և բաժանումն ղովտայ: - 304. Ո՞րքան էր փործութիւնք յոբայ... Վեցերորդ՝ կնոջն չար խրատն և *կագն*: - 322. Եւ ոմանք **ե** ասեն. **ա**, արտաքին ինչքն. **բ**, զաւակաց մահն. **գ**, մարմնոյն հարւածքն. **դ**, կնոջն *կագն*. **ե**, բարեկամաց հակառակիլն: - 322

**ԿԱԳԻՄ +** Եւ եփրեմեանցն *զկագելն* առ յուդա. ի ցոյցս հրեշտակացն յորժամ արար փրկութիւն մարդկան ազգի: - 438

**ԿԱԳԻՍԱ** - Եւ մին յորժամ զլրտեսքն առաքեցին ի *կագիսա*. և **խ** օր յամեցին և մովսէս զ**խ** պահեաց: - 353

**ԿԱԶԲԻԱԿԱՆ ԾՈՎ** - Եւ ի բաքու յեզրն *կազբիական ծովուն*. ուստի ծծումբն զօրութեամբ ունի զհուրն: - 208

**ԿԱԶԴՈՒՐԵՄ +** Վեցերորդ՝ զի կոյսն լինէր սփոփեալ և *կազդուրեալ* սպասաւորութեամբ առնն: - 461

**ԿԱԶՄ +** ...ի մէջ նեղութեանց լինելով՝ յանցեալ մեղացն զղջանամք և սրբիմք. և յապագայն զգուշութեամբ պարսպիմք. և ի ներկայն՝ արի՛ և *կա՛զմ* պատրաստիմք: - 162

**ԿԱԶՄԵՄ +** Զորօրինակ՝ արուեստաւոր ոք *կազմէ* սուր ի պատճառս բարւոյ. այլ որ նորգործեաց չար՝ նա եղև չարին պատճառ: - 16. Վասն ճանաչման իւրոյ աստուած *կազմեաց* կրկին կերպիւ օրինակս. այսինքն իմանալի և զգալի. որպէս հոգին, միտքն, և նմանք սոցա. կամ արեգակն, լոյս, և նմանք նոցա: - 24. Մետասաներորդ՝ զի թէ է՛ ինքն բնակարան և տաճար, *կազմէ* և զմեզ բնակարան և տաճար իւր: - 67. Իսկ ասա աչքն զօրանայ ի տեսանել զերևեալ պատկերն *կազմեալ* ի յօդոյ: - 133. Եւ զի ի լուսոյ *կազմեցան*: - 148. Զի աննիւթ և պա՛րզ էութիւն է աստուած. և յառաջ էած յոչընչէ զաննիւթ էութիւնքս. այսինքն զգոյացութիւն, զքանակ, զորակ, և զայլսն. և իւրով զօրութեամբն ի միասին ժողովեալ *կազմեաց* մարմնական նիւթ: - 175. Եւ լուսաւոր անօթքն ի չորրորդում աւուր *կազմեցան* ի յօդոյ. և իւրաքանչիւրքն ընկալան զլոյսս և եղեն լուսաւորք: - 188. Իսկ Գարնանամուտ՝ որ է՛ հասարակածն՝ է՛ չորրորդ օրն. յորում լուսաւորքն *կազմեցան*: - 191. Զի աստուած ի հողոյ *կազմեաց* զադամ: - 200. Որ մերձ ի հիւսիս է, Արգէստէս կոչի. *կազմէ* սա զամպս: - 205. Չորրորդ՝ զի ի ջրոյ *կազմեցաւ* երկինք երկնից: - 207. Չորրորդ՝ զի նիւթք եղեն երկնաւոր խորհրդոյն. որպէս ի տնկոց փայտ խաչին. և յայլ բուսոց հաց պատարագին և գինի. և ձէթ մեռոնի *կազմեցաւ*: - 212. Տասներորդ՝ մաշկեղէն հանդերձն ադամայ. իսկ այլ զգեստք ի յարուեստից *կազմեցան* յետոյ: - 216. Ասեմք թէ՝ կանխագէ՛տ է աստուած. և նախ ծանեաւ զի ո՛չ կարէին աճիլ անմեղութեամբ ի դրախտին որպէս զհրեշտակս. վասն որոյ *կազմեաց* նոցա մարմին, զի յերկրի անասնապէս աճեսցին: - 226. Իսկ յերրորդումն, զգազանս և զմարդն. ի վերջին տարրէ՛ այսինքն ի հողոյ *կազմեաց*: - 227. Վեցերորդ՝ զի տեսցէ ադամ թէ յապականացու հողոյս անապական մարմին *կազմեցաւ* վասն փառաց. և յորժամ կորոյս մեղօքն եղև ապականացու, ինքն իցէ պատճառ ապականութեան իւրոյ: - 229. Տասներորդ՝ մէջ և կապ ամենայն գոյիցս մա՛րդն է *կազմեալ*. զի ամենայն արարածք ի **բ** դէմս որոշին. այսինքն մինն յիմանալի և միւսն զգալի. և սոքա եղեն յառաջագոյն: - 231. Զի կազմողական զօրութիւնն որ է՛ ի նիւթն՝ ազդումն առեալ յարարչադիր հրամանէն, նախ *կազմէ՛* և պատրաստէ՛ զնիւթն առ ի յընդունելոյ զտնկականն. և ապա զզգայականն. յետ որոյ զբանականն ի ծագմանէն աստուծոյ: - 254. Եւ յորժամ *կազմի* զգայութիւնն, շունչն երևի ի նմա: - 255. Վեցերորդ՝ զի զգործն կենդանւոյ տեսանեմք ի նա որ է՛ ջերմութիւն, շարժութիւն, և ներգործութիւն. որ երևի ի *կազմելն* զհիւթն: - 256. Ապա *կազմէ՛* զձև զգայականին մինչև ի **ի** օրն...: - 261. Եւ նախ սիրտն *կազմի* քան զայլ անդամսն. զի ջերմութիւն սերմանն ի մէջն ժողովի և *կազմէ՛* զսիրտն: - 261. Արդ՝ տնկական զօրութիւնն բնականապէս՝ է նիւթն. որով *կազմի* և պատրաստի նիւթն առ տեսակս ազգի իւրեանց: - 262. Ա՛րդ՝ աստուածային գեղեցկութիւնն ո՛չ այսու երանգօք զարդարի զի զմեզ ի նմանն իւր *կազմեսցէ*: - 271. Այսպէս ասեն թէ՝ մարդն *կազմեալ* է ի պատկեր որդւոյ, և ըստ նմանութեան հոգւոյն սրբոյ: - 273. Եւ քրիստոս զյարկն դաւթի որ է՛ եկեղեցի՝ չորիցս առաքինութեամբ եռաբնակ օթևան աստուծոյ *կազմեաց*: - 328. Նա՛խ՝ հրամայեաց աստուած գրել զլինելութիւն աշխարհի. և ձևացոյց ի միտսն մովսէսի. զի մի՛ մոռասցին հանգամանքն. վասն որոյ զգալի խորան հրամայէ *կազմել*: - 342. Երրորդ՝ կամեցաւ զմարդն ի պատկեր իւր՝ երկրորդ ստեղծմանն աշխարհի գործակից և մասնակից լինիլ. վասն որոյ հրամայեաց ի նոցանէ առնուլ զնիւթ *կազմելոյն*: - 342. Չորրորդ՝ ինքն անկարօտ գոլով ստեղծեաց զարարածս. և բարձեալ կրէ՛ զամենայն բանիւ. և նոյն ինքն հրամայէ՛ խորան *կազմել*: - 342. Եօթներորդ՝ զի նոր իմն չնաշխարհիկ *կազմեաց*. նոր ժողովրդեանն և նոր օրինացն, իցէ և նո՛ր տաճար հռչակեալ ընդ ծով

և ընդ ցամաք. որպէս պսակ և փառք արդարոցն է՛ զոր ակն ո՛չ ետես և ունկն ո՛չ լուսաւ. նոյնպէս և սա՛ ի զգալիսս անիաս ի մտաց մարդկան: - 342. Տասներորդ՝ օրինա՛կ էր խորանի եկեղեցւոյ. զի նա՛ ստւե՛ր էր և սա՛ ճշմարտութիւն. վասն որոյ գեղեցկազարդ *կազմեցաւ*: - 342. Հինգերորդ՝ և մի՛ ժողովուրդն առցէ ի նշխարացն և պատկեր *կազմեսցէ* : - 411. Զի որդիքն և սպարապետն *կազմէին* զպատերազմն: - 429. Երեսուներորդ, նաւք թարսսեաց բերէին զմեծութիւն. և աթոռ *կազմեաց* զարմանալի: - 442. Տասներորդ՝ զի սողոմոն ի քարանց ծեռագործաց *կազմէր* տաճար աստուծոյ. իսկ քրիստոս զբանական հոգիս մարդկան շինէր օթևան սուրբ երրորդութեանն: - 442. Սա՛ ի **դ** ամի թագաւորութեան իւրում *կազմէ՛* զհանդերձանս տաճարին. և զեօթն ամ կատարեաց: - 452. Նա՛խ՝ զի *կազմեսցի* զօրութեամբ բարձրելոյն ի հոգւոյն սրբոյ և ո՛չ նպաստութեամբ մարդոյ: - 470. Յաղագս որոյ պատրաստեաց նիւթ արեան, *կազմեալ* զօրութեամբ հոգւոյն. որով լինիցի ճշմարիտ մայր քրիստոսի: - 470-471. ...ըստ որում որ էջ հոգին սուրբ յորովայն անարատ կուսին և մաքրեաց զնա, և *կազմեաց* ի նմանէ զարիւնն. և սրբեաց և օծեաց զնա միաւորելով պատկերապէս: - 475. ...զոր միշտ և յաւիտեան պատրաստէ՛ և *կազմէ՛* աստուած: - 647. Աստ զանազան ցաւոց՝ և զանազան դեղս *կազմեաց* արարիչն աստուած. որպէս յարմատս ի ծաղիկս ի պտուղս և յայլսն: - 665. Զքուն մահուն ասէ մինչ ի կատարած. և ի մէջ գիշերի յարութեանն աւուր յարեան ամենայն կուսանքն և *կազմեցին* զլապտերս: - 693. Զի տանջանարանք *կազմեն*, սառնամանիք ցուցանեն, հուր բորբոքեն: - 703. ...վասն որոյ յանապական տարերց *կազմի* անապական մարմին: - 723. Երկրորդ՝ երկինք զիրեշտակս ասէ որ ի վայր գլորեալ խոնարհին ամենայն դասք. աթոռք *կազմեալ*, և սպասաւորք շրջապատեալ: - 729. Սակայն երևելի աթոռ ի յօդոյդ *կազմեալ* հաւատացեալ լինի. զի ամենայն ոք տեսցէ նստեալ: - 736. Զի որպէս յաւուրս **զ** *կազմեցաւ* աշխարհ և ի **զ** դարս կայացաւ. նմանապէս և ի ժամս **զ** նորոգեսցի դարձեալ: - 747. Զաւազանն պղնձի ի հայելեաց կանանց *կազմեաց.* այսինքն զբանն աստուածային՝ ի սրբոցն հաստատեաց օրինօք: - 756. Ա՛րդ՝ առաջնոյն ասեմք թէ՝ ի պատկեր արարչին ինքնիշխան տէութեամբ և անմեղութեամբ *կազմեցաւ* առաջինն մարդ: - 776. Իսկ եթէ ոք զփոփոխումն ի մեզ ասիցէ ըստ օրինակի արեգական. որ զչորեսին եղանակս *կազմէ՛* և ինքն անյեղ մնայ: - 778. Եւ թէ նայիս մտօք, թէպէտ առ մեզ փոփոխին տիւ և գիշեր. այլ նա միշտ լոյս և միշտ գիշեր *կազմէ*...: - 779. Իսկ ամենայն զգայական կենդանւոյ թէպէտ իգին ըստինք գոն վասն զծնունդս կերակրելոյ. սակայն և արուացն գոյ նոյն մասն անդամոց *կազմեալ* յարարչէն. և այն յի՞նչ պէտս լինի. խնդրել արժան է: - 785. ...ոչ ինչ վայրապար *կազմեն* զտեսակ գոյացական և զտեսակ պատահական. խնդրելով ոմն պարզ նիւթ. և ոմն տեսակացեալ: - 786. Իսկ զի և արուի թէպէտ ո՛չ նոյն պիտոյից. սակայն ո՛չ ընդ վայր *կազմեցաւ*...: - 786. Ընդ այսմ և որ ի ծէնջ արկեալ եղև. թէ վասն է՞ր է զի երկու բացասութիւն լինի մի ստորասութիւն. իսկ **բ** ստորասութիւն ո՛չ *կազմէ* մի բացասութիւն: - 787

**ԿԱԶՄՈՂԱԿԱՆ +** Զի *կազմողական* զօրութիւնն որ է՛ ի նիւթն՝ ազդումն առեալ յարարչադիր հրամանէն, նախ կազմէ՛ և պատրաստէ՛ զնիւթն առ ի յընդունելոյ զտնկականն. և ապա զզգայականն. յետ որոյ զբանականն ի ծագմանէն աստուծոյ: - 254. Եւ այս *կազմողական* զօրութեանն է որ նախ պատրաստէ՛ զնիւթ առ կեանքն. և ապա ի զգայութիւնն. և ապա ի բանաւորութիւնն: - 255. Եւ յայնժամ զգայականն և տնկականն ո՛չ ունին զներգործութիւն իւրեանց ի *կազմողական* զօրութենէն. այլ ի նոյն ինքն ի հոգոյն: - 260. Զի վեցն որ է՛ կատարեալ թիւ, և նիւթն այն է՛ ի չորից տարերց, և ունի առ ինքն *զկազմողական* և զտնկական զօրութիւնն որ է **զ**: - 262. Զի ամենայն նիւթ սերմնականի է՛ ի չորից տարերց. և ունի *զկազմողականն* զօրութիւն. որով լինի տնկականն: - 262. Վասն որոյ բոյսք առ հասարակ յերեք ամիսս ծնանին, և ի չորրորդումն կատարին յաւելեալ ի վերայ *զկազմողական* զօրութիւնն: - 262. Այլ և յաւելեալ ի վերայ զշարժականն և զշնչականն և զցասմնականն և զցանկականն, ընդ նմին և *զկազմողական* նիւթն և զտնկականն, որ լինի **ժը**. վասն որոյ ոմանք ի տարին և կէսն ծնանին որպէս ուղտ: - 263. Եւ յաւելեալ *զկազմողականն*՝ յութն ամիսս ծնանի և ո՛չ ապրի զի անկատա՛ր է: - 263. Եւ վասն տնկական և զգայական մասին՝ *կազմողական* զօրութիւնն այլ ևս աճեցուցեալ զմարմինն բ ամ և դադարեալ յերեսներորդին, լինի ժամանեալ ի չափ հասակի կատարմանն քրիստոսի, յորում մկրտեցաւ տէրն մեր: - 265

**ԿԱԶՄՈՒԱԾ +** Զի այսպէս ի *կազմուածոյ* քո ուսցիս զբարեկարգութիւն և զպատիւ առ վերինս և առ ներքինս և առ հաւասարս: - 232. Իսկ հերն կիսասև և ոչ յոյժ բարակ՝ զբարեբարոյն և զբարի *կազմուածն* ցուցանէ: - 248. Եւ առ հասարակ ասեմ զայս դնել ի մտի. զի չափաւորութիւն անդամոցն ըստ ձևոյն և ըստ գունոյն և ըստ քանակութեան և ըստ *կազուածոյն* և ըստ շարժմանն, նշանակէ զբարի մտացն ընդաբոյս յարմարութիւնն: - 248. Եւ դարձեալ՝ յիւրաքանչիւր *կազմուած* մարդոյ՝ յառա՛ջ է մարմինն քան զհոգին **խ** աւուրբ կամ **ձ**: - 253. Այսպէս և ի *կազմուած* իւրաքանչիւր մարդոյ ո՛չ է մարմին յառաջ քան զհոգի որպէս

ցուցանելոց եմք: - 254. Զի է՛ սկիզբն նիւթական մարմնոյ *կազմուածոյն*. և է՛ սկիզբն՝ ծննդեան հոգւոյ: - 254. Ա՛րդ՝ ի նիւթոյն լինի *կազմած* մարմնոյն. և յազդու հրամանէն գոյացութիւն հոգւոյն: - 254. Եւ էգն հոգևորի յետ **ձ** աւուրն՝ որպէս ասացաք զպատճառն վասն տեղւոյն ցրտութեան որ է՛ ձախ կողմն արգանդին. որ ցուրտ գոլով վասն փայծաղանն՝ յապաղէ՛ *զկազմուած* նիւթոյն ի կրկնապատիկ ժամանակս ձ աւուրց: - 261. Նախ բնական խելքն. որ ի բարեխառն *կազմուածոյ* հանդիպի. որպէս էր՝ ակիտոփէլին և քուսեայ բարեկամին դաւթի: - 537

**ԿԱԶՄՈՒԹԻՒՆ +** Եւ երկիրս անշարժ է տեղեաւ, ետ սմա ապականիլ երեսօք. զի տեսեալ մարդիկ եղական և ծառայ իմասցեն զնոսա. և մի աստուածս կարծեսցեն և մոլորեսցին. որպէս ասէ նիւսացին ի գիրս *կազմութեան*: - 182. Եւ ի **իբ**ն մարտի՝ *կազմութիւն* մարդոյն է: - 191. Եւ ի **ժդ**ն՝ *կազմութիւն* մարդոյն է: - 191. Եւ ի նիսանի մեկն *կազմութիւն* մարդոյն է. զի նիսանն *կազմութիւն* լսի: - 191. Վեցերորդ՝ մուտն նիսանայ. որ է սկիզբն տարւոյ եբրայեցւոցն. և *կազմութիւն* մարդոյ ի սկզբանն: - 196. Քանզի եբրայեցիք և մակեդոնացիք՝ Զաւելեաց աւուրքն դնեն գլուխ տարւոյ. և ասեն օր առաջին. և **բ**. և **գ**. և **դ**. և **ե**. և վեցն մուտ Նիսան ամսոյ. որ թարգմանի *կազմութիւն*: - 200. Զնոյն յայտնէ և ի մերս. զի ուրբաթ ասի որ է՛ *կազմութիւն*: - 200. Վեցերորդ՝ զի ասէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս *կազմութեան* եթէ առաջին կեանք դրախտին էր կուսութիւն և անապականութիւն և հրեշտակաց նմանութիւն. և յետ յարութեանն վերըստին դառնամք յառաջին կեանս դրախտին. յանապականութիւն և ի հրեշտակաց հաւասարութիւն: - 225-226. Այսքան վասն մարդոյս *կազմութեան*: - 228. Զոր ընդ դերևս հանէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս *կազմութեան* այսպէս եթէ, որք զհոգին յառաջ ասեն գոյանալ քան զմարմին. և վասն մեղաց եդեալ ի մարմին մարդոյ. որ է՛ համանման բանականութեամբ. և է՛ իներքոյ երկնային կենաց՝ զի մարմնաւո՛ր է: - 252. Երրորդ՝ ևս յայտնի. զի ընդ նիւթոյ *կազմութեանն* համանգամա՛յն է և երևումն ոգւոյ. զի յորժամ անկատա՛ր է նիւթն, միայն կերակրիլն երևի ի նմա: - 255. Իսկ բնական երազն բաժանի ի չորս ըստ սրբոյն նիւսացւոյ ի գիրս *կազմութեան*: - 268. Եւ ի *կազմութենէ* մարդոյն այս քան: - 282. Նմանապէս և կողն որ առաւ յադամայ և շինեցաւ կին, ո՛չ յառնէ ի յադամ, այլ ի յևա. որոյ հիմն *կազմութեան* եղև փոխանակ սերման: - 719. Իսկ ուղղակին. զի մոռացումն բնաւորեալ է առ խառնուած *կազմութեան* մարդոյ. իսկ խրատ՝ յանդիմանութեան է՛ ի ցոյց ինքեան: - 774. Նա՛խ՝ ի շինուածոյս մերոյ *կազմութեան* ըստ նիւսացւոյ ասիցն: - 780. Այլ վարկանին ոմանք զթիւ *կազմութեան* աւուրց պակաս գոլոյ նախնւոյն մարդոյ. զորոյ զտիպ յինքն նկարելով և այժմ անդրանիկն ծնունդ՝ յապաղելով գայ աշխարհ: - 785. Զլինիլ արտասուաց՝ ուսուցանեն գիրք *կազմութեան* և որ ի բժշկաց, յերիս բաժանմանէ բնաւորեալ կերակրոց: - 786

**ԿԱԹ +** ...զի մին *կաթ* ջուրն և մին սափորն հաւասար են բնութեամբ: - 595. Զի *կա՛թ* մի արտասուաց ի կաթիլ դուլէ ձե՛րդ մաղթանաց ցօղեսցի ի գերեզման հոգւոյ իմ տառապանաց: - 773

**ԿԱԹԱԼԻԿ** - Իսկ լեարդն է սկիզբն արեան երակացն. որ ելանէ ի լերդէն է երակ լի արեամբ... վերին երակն քալասիկ է. և միջինն ասայիկ է: Եւ ներքինն *կաթալիկ* է: - 244

**ԿԱԹԵՑՈՒՑԱՆԵՄ +** Երբեմն զշնորհաց զանազանութիւնս. որպէս ասէ յերգերգոցն՝ «ձեռք իմ *կաթեցուցին* զմուռս. և մատունք իմ զմռսեալ ի վերայ փակաղաց»: - 62

**ԿԱԹԻԼ +** Չորրորդ «մկրտիլ ի նմանէ». այսինքն աղբիւրն ի յառուն. լիութիւնն ի *կաթիլ* մի ջրոյն. մաքուրն ի կաւոյն սրբիլ. և արեգականս արեգակն՝ ի ճրագէն լուսաւորիլ: - 487. Որպիսութեան կրիցն չափ ո՛չ է անտի տանջանացն. զի բոլոր աստի նեղութիւնս համեմատեալ այնմ՝ է՛ որպէս *կաթիլ* մի ի ծովէ և կայծ մի ի հնոցէ: - 751. Զի նւազունք են ամենայն փափկութիւնք որ լինին յաշխարհի մինչև ցօրն դատաստանի, բաղդատեալ առ այն քաղցրութիւն. որպէս *կաթիլ* մի ջրոյ առ համեմատութիւն ընդ հանուր ծովու: - 762. Զի կա՛թ մի արտասուաց ի *կաթիլ* դուլէ ձե՛րդ մաղթանաց ցօղեսցի ի գերեզման հոգւոյ իմ տառապանաց: - 773

**ԿԱԹՆ +** Եւ որպէս արիւն հոսմանն ի մէջ երակացն փոխի և լինի սպիտակ *կաթն*, և ժողովի ի ստինսն: - 242. Ոչխար զգօն և հեզ. ունելով պտուղ ասր և *կաթն* և ծնունդ: - 358. Ոչխար տարեկան. և պատարագելի. և զգօն և հեզ. և պտղատու *զկաթն* և ասր և ծնունդ: - 361. Եւ սա՛ բղխէ *զկաթն* և զմեղր. որ է՛ քաղցրութիւն և թողութիւն մեղաց. նոյնպէս և զժ բանեան օրէնս: - 395. Զի՞նչ է «մի՛ եփել զգառն ի *կաթն* մօր»: - 399. Երրորդ՝ մինչ գառն լինի ի *կաթն* մօր՝ մի՛ զենցես ասէ. զի գութն առաւե՛լ է: - 399. Հինգերորդ և մեծն ա՛յս է, զի գառն քրիստոս է. և *կաթն* օրէնք. և մայր ժողովուրդն: - 399. Երրորդ՝ կիթն ի կենդանեաց. որպէս *կաթն* և ձու: - 407. Իսկ նաւակատեաց կերակուր այն է՝ որ միջակ է սոցա երկոցունց. այսինքն ի կենդանւոյ և ի տնկոյ. որպէս ձուկն, ձու, և *կաթն*: - 510. Զի ձու և *կաթն* ի կենդանււո՛յ են, այլ ինքեանք ո՛չ են կենդանիք: - 510. Եւ տե՛ս և ի միտ առ. զի սոքա ի մի կարգի՛ են եդեալ. այսինքն ձուկն և ձու և *կաթն*. և որ ուտէ զմինն՝ կերիցէ և զմիւսն: - 510. Ասեմք թէ՝ և զձու հաւի և *զկաթն* ո՛չ զենումք, կե՛ր և զայն ի պահոց. զի համատեսա՛նկք

են: - 511. Եվ դարձեալ՝ զձու և *զկաթն* վասն այն ո՛չ ուտես զի արիւն ունին. և դարձեալ դու ասես թէ արիւն ո՛չ ունին: - 511. Իսկ թէ մարմնական խնդրես զխառնումն ջրոյ և պնդիս ի հակառակն, ասեմք քեզ թէ ո՛չ միայն ջրոյ, այլ և *կաթին* և մեղեր և գինւոյ աստ խառնումն ի խառնարանն. - 596. ...որպէս ստինքն զի ո՛չ է պէտք *կաթին*, այլ առնէ վասն կատարելութեան և գեղեցկութեան մարդոյն: - 725. Իսկ ստինք յատկապէս գործի՛ է բնութեան ի պէտս սննդեան այնոցիկ ծննդոց զօրէն սերմանեաց երկրի. յորմէ հիւթոյ արեանն գոյացելոյ, ընդ ագուգայս երակաց արտագունեալ որակօք *կաթն* փոխակերպեալ: - 786

**ԿԱԹՆԱՍՈՒՆ +** Դարձեալ ասեն նոքա, *կաթնասուն* եղև և կերակուր եկեր. և այս մա՛սն է ապականութեան: - 501

**ԿԱԹՈՂԻԿԷ +** Սա՛ ունի զձև նմանութեան տապանին վեցակողմ և *կաթողիկէ*, և դուռն ի կողմանէ: - 294. Վեցերորդ՝ եդ զարմատ հաւատոյ *կաթուղիկէ* եկեղեցւոյ...: - 465. եւ ո՞րպէս է մի *կաթուղիկէ* եկեղեցի: - 525. Նոյնպէս մի է քրիստոս և մի մարմին նորա. որ կոչի մի *կաթուղիկէ* եկեղեցի. որպէս ի հաւատամքն ասի: - 532. Ո՞րպէս է մի *կաթուղիկէ* եկեղեցի ընդ ոլորտս տիեզերաց: - 532. *Կաթողիկէն* ընդհանրական լսի. իսկ եկեղեցին ժողովումն: - 532. Եօթներորդ, զի և քրիստոս ո՛չ ընդ բազում, այլ ընդ մի *Կաթուղիկէ* եկեղեցի միաւորի: - 612

***ԿԱԹՈՂԻԿԷ (Ս.Գրքի մաս) +*** Այլ հոգին սուրբ էր որ խօսէր ընդ մարգարէսն. որպէս ասէ պետրոս ի *կաթողիկէքն*, «Ո՛չ թէ ըստ կամաց մարդկան տըւաւ մարգարէութիւն, այլ ի հոգւոյն սրբոյ կրեալք խօսեցան մարդիկ յաստուծոյ»: - 58. Այլ յոհաննէս ի *կաթողիկէն* ասէ, «որ էրն ի սկզբանէ զորմէ լըւաքն և ականատես իսկ եղաք. և ձեռք մեր շօշափեցին զբանն կենաց»: - 73. Այլ ա՛րդ՝ կարէ սրբել զանհուն մեղս. որպէս ասէ յոհաննէս ի *կաթողիկէքն*, «նա՛ է քաւութիւն մեղաց մերոց. և ո՛չ մերոց միայն՝ այլ և բոլոր աշխարհի»: - 100. Երկրորդ՝ զի իշովն յանդիմանեսցէ զանմտութիւն նորա. և զանօրէնութիւնն արգելցէ. որպէս ասի ի *կաթողիկէքն*: - 388. Փեգովրայ տեղի՛ էր կռոց. և դևքն չտային թոյլ թաղել զմարմինն, մինչև սաստեաց միքայէլ հրեշտակապետն ասելով, «սաստեսցէ՛ ի քեզ տէր». որպէս յա՛յտ է ի *կաթուղիկէից* վերջին թուղթն: - 409. Գործք: Եւ է թուղթ *կաթողիկէք*: - 450. Երրորդ՝ զի ասէ պետրոս ի *կաթողիկէն*՝ «երթեալ քարոզեաց երբեմն ապստամբելոցն». այլ ապստամբ՝ մեղաւո՛րքն էին և ո՛չ մարգարէքն: - 506. Չորեքտասաներորդ, ասէ յոհաննէս ի *կաթուղիկէքն*, «գիտեմ զի յորժամ նայն յայտնեսցի, տեսանելո՛ց եմք զնա որպէս և էն»: - 692. Երկրորդ, ասէ պետրոս ի *կաթողիկէն* «գիտէ տէր զաստուածապաշտս փրկել ի փորձութենէ»: - 698. Տասներորդն է ծանօթութիւն առանց տգիտութեան. յոհան ի *կաթողիկեաց*՝ «տեսանելոց եմք զնա որպէս և էն»: - 767

**ԿԱԹՈՂԻԿՈՍ +** Եւ դարձեալ, երկոտասան արքեպիսկոպոսք. և *կաթողիկոսն* ի մէջն. նոյնպէս և արքեպիսկոպոսն **բժ**ան ունի գաւազան: - 382. Եւ փոխանորդ նորա ի յերկրի ի հինն քահանայապետն որպէս ահարոն. և ի նորս *կաթողիկոսն* իւրաքանչիւր ազգի: - 534. Նա՛խ՝ թէ անկարգաբար կայէ. որպէս քահանայ զեպիսկոպոս կամ *զկաթողիկոսս*. կամ սարկաւագ զքահանայ. այս ո՛չ կատարի: - 539. Եւ սուրբն յոհան օծնեցին զեզր *կաթողիկոսին* և զայլոցն որք թիւրեալք էին զկնի քաղկեդոնի: - 541. Երկրորդն է ժողովն թէոդուպօլսի, որ այժմ կոչի կարնոյ քաղաք. ո՛չ այն զոր յետոյ հերակլ քաղկեդոնիկ ժողովեաց և խաբեաց զեզր *կաթուղիկոսն* հայոց: - 544. Այլ հրամանաւ մեծի թագաւորին ուստիանեայ ժողովեցան յունաց և հռոմոց և հայոց և վրաց և աղուանից եպիսկոպոսունք. և *կաթողիկոսն* հայոց սահակ...: - 544. Երրորդ ժողովն է դվնայ, ի չորրորդ ամի թագաւորութեանն կոստանդեայ հռոմոց. հրամանաւ մեծի *կաթողիկոսին* հայոց ներսէսի շինողի. և այլ է և **ժ** եպիսկոպոսաց՝ և վարդապետաց բազմաց և իշխանաց...: - 544. Չորրորդ՝ մեծ և արժանաւոր ժողովն եղև ի մանազկերտ. ի **ճիդ** թուականին. հրամանաւ և արդեամբք գիտնաւոր և մեծ իմաստասիրին սրբոյն յոհաննու *կաթողիկոսին* հայոց օծնեցւոյ: - 545. Որ կանոնական գլխօք պայծառացոյց զկարգ եկեղեցւոյ և զուղղափառութիւն հաւատոյ. զոր **զ** ամաւ յառաջ եդծեալ էր եզրի *կաթողիկոսի*...: - 545. ...որ եզր եղև հաւատոյ ուղղութեան. և հրամանաւ հերակլի հաւանեցաւ ժողովոյն քաղկեդոնի. կացեալ **զ** *կաթողիկոսք* նոյն աղանդովն որ են այսոքիկ. Եզր. Մովսէս. Անաստաս. Իսրայէլ. Սահակ. Եղիա: - 545. Եւ տէր սիոն հայոց *կաթողիկոսն* անդր հասեալ բազում եպիսկոպոսօք և մեծամեծ ազատօք հայոց և իշխանօք նոցին. ընդ դէմ աղանդոց ա՛յնր ժամանակի, և թուլութեան կարգաւորաց եկեղեցւոյ, և բռնութեան իշխանաց: - 545. Եօթներորդ՝ ժողովն սիմէօնի աղուանից *կաթողիկոսի* և հայոց *կաթողիկոսի* տէր եղիայի: - 545. Զոր յառաջին ամին յորժամ նստաւ *կաթողիկոս* տէր սիմէոնի, ի ձեռն տէր եղիայի մեծահանդէս ժողովմամբ պայծառացոյց զեկեղեցի կանոնական հաստատութեամբ ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս ամէն: - 545. Երրորդ՝ զի յետ համբարձմանն յորժամ էջ հոգին սուրբ, արար զնոսա *կաթողիկոսունս* առ հասարակ: - 546. Եւ յա՛յտ է

յայսմանէ, որ *կաթողիկոսն* ո՛չ կարէ *կաթողիկոս* ձեռնադրել. այլ եպիսկոպոս առնէ: - 546. Եւ յետ փոխման առաջնոյն՝ նստի *կաթողիկոսն* երկրորդ: - 546. Որպէս և քրիստոս արար. որ քան մարմնով ընդ առաքեալսն էր՝ եպիսկոպոսունս արար զնոսա. և յետ համբառնալոյն՝ հոգւովն սրբով արար զնոսա *կաթողիկոսունս*: - 546. Ասեմք թէ՝ պետրոս գլուխ է առաքելոցն՝ ո՛չ որպէս եպիսկոպոսն քահանայից. կամ *կաթողիկոսն* եպիսկոպոսաց: - 546. Եւ Իններորդ՝ Պապն. որ է՛ *կաթողիկոս*. գերագոյն վերոյ ասացելոցն: - 606. Օրհնեաց զնոսա և ցուցան *կաթողիկոսք* և հայրապետք: - 607. Եւ ի լեառն ծիթենեաց հանեալ զնոսա և օրհնեալ՝ արար զնոսա *Կաթողիկոսունս* և Պատրիարգունս, զամենայն շնորհելով նոցա լիով: - 607. Առաջինն է *կաթողիկոսն*. զոր եպիսկոպոսապետ կոչէ: - 608. Ապա թէ և զապաշխարօղքն ի թիւ կալցես, *Կաթողիկոսն* լինի **Ժ**երորդ. որպէս աստուած **Ժ**երորդ է ի վերայ **Թ** դասուց հրեշտակաց: - 608. Այսպէս ասէ մեծ իմաստասէրն և երկրորդ աւետարանիչն մեր և *կաթողիկոսն* սուրբ յոհան յօձնեայ թէ՝ պատարագին ժամն խորհուրդ է խաչին քրիստոսի...: - 634

**ԿԱԼ (լինել) +** Ո՛չ թէ նոր իմն տեսակ և կամ նոր աշխարհ. այլ զեղելոցս նախախնամութիւնն. և ի նոյնութիւն *կալն* հայր կամի և որդի կատարէ՛. ոչ ծառայաբար և անուսումնապէս. այլ տիրաբար և հանճարով: - 46. Եւ ենովք վասն անպտուղ *կալոյն* և զգայարանացն ծածկութեան, վերափոխեալ եղև: - 288. Ութերորդ, մովսէս **Խ** օր ի մէջ ամպոյն *կալով* էառ զպատուիրանսն: - 328

**ԿԱԼ (ցորենի) +** Նա՛խ ի սեղանն աբրահամու. և ապա՛ մովսիսին և ապա՛ դաւթին ի *կալն* ուռնայի. և ապա՛ ի տաճարին սողոմոնի. յետոյ ի սեղանն եղիայի: - 363. Սա՛ ետես զգեղմն իմանալի յորժամ ծեծէր զցորեանն ի *կալն*: - 420. Եւ մինչ ընթացաւ ի *կալն* ուռնայի և գնեաց զգինսն և ողջակիզեաց, եհաս ի **զ** ժամն. որ յառաջն դադարեալ էր սուրն: - 435. զի թէ աղտեղութիւն ինչ լինի խառնեալ արտաքուստ ի *կալ* կամ ի հնձան, սրբեսցին խղճմտանք մեր: - 654. Ի **բ** ամի թագաւորութեանն, առաքեաց սուրբն իսահակ և ետ բերել զսերմնօրհնէքն *զկալոյ* և զհնձանին...: - 658. Ութերորդ, բարի և չար սերմանիքն ի միասին բուսանին և մնան մինչ ի հունձս. մանաւանդ մինչ ի *կալն* ըստ առակի տեառն...: - 721. Դարձեալ, ձորն յովսափաթու կոչի ձոր դատաստանի. այսինքն է *կալն* ուռնայի, ուր դաւթի խոստացաւ անդ առնել դատաստան. յորժամ սեղան շինեաց և պատարագեաց զգինսն և բարձաւ մահն: - 737. Իսկ Չորրորդն արքայութիւն՝ է՛ յաւիտենականն գաւառ. յորմէ ի ձեռն մեղաց առաջնոյ մարդոյն՝ տարեալք պանդխտիմք յայսմ տառապանաց գբի և ի տիղմ կաւոյ. անարգաբար դեգերեալք ի հովիտս արտասուաց. յանապատի *կալով* և ո՛չ ի ճանապարհի...: - 756

**ԿԱԼԻՍՏՐԱՏՈՍ** - Այլ մեր վարդապետք յերկինս և ի ներքոյ երկնից ասեն. որպէս և *կալիստրատոս* վկայն առ ը երրորդ կամարաւն ուր են լուսաւորք և եթերային լոյսն: - 686. Եւ սուրբն *կալիստրատոս* վկայն ի ճառս իւր: - 687

**ԿԱԼՈՒՄ +** Յինգերորդ՝ զի բազմազան կենդանիք ի ջուրս զտեղի *կալցեն*: - 207. Որպէս տեառն մերոյ ի համբառնալն՝ ամպն *կալաւ* զնա՛ յաչաց նոցա: - 411. Երեքտասաներորդն ի դանա որդի մանովէի Սամփսոն. որ *կալաւ* **յ** աղուէսս, և կապեաց ի նոսա ջահս. և այրեաց զանդաստանս այլազգեացն: - 420. Ութերորդ՝ բազում աշխատութիւն անձին *կալաւ*: - 442. Երրորդ՝ կապեալ ածաւ ի տունն կայիափայ. և անդ զքուքն *կալաւ* յերեսն. և մինչ ի վաղիւն հսկեաց: - 492. Երկրորդ՝ զի ամպն *կալաւ* զնա յաչաց նոցա. նշանակի թէ ի մահկանացու մարմինս ո՛չ կարեմք տեսանել ի բարձունս զքրիստոս: - 520. Ապա թէ և զապաշխարօղքն ի թիւ *կալցես*, Կաթողիկոսն լինի **Ժ**երորդ. որպէս աստուած **Ժ**երորդ է ի վերայ **Թ** դասուց հրեշտակաց: - 608. Այլ զի և մեք նոցին բաղձասցուք և նոցա մասնակից լիցուք և զնոսա բարեխօս *կալցուք* և զնոսա՛ օրհնակ դիցուք. - 628. ...և ի համբարձումն տեառն ամպն *կալաւ* զնա յաչաց նոցա: - 674

**ԿԱԼՈՒՄՆ +** Եւ գիտելի է՝ զզանազանութիւն սոցա. զի հոգին է ի մարմինն *կալմամբ* և սահմանեալ. այլ ո՛չ պարագրեալ. իսկ հրեշտակն ո՛չ *կալմամբ* ի մարմին և ոչ պարագրեալ. այլ սահմանեալ: - 174. Զի առանց հողոյ շօշափումն ո՛չ լինի. և ո՛չ առանց ջրոյ *կալումն* և մածումն. և ո՛չ առանց օդոյ շարժումն. և ո՛չ առանց հրոյ երևումն: - 180

**ԿԱԽ** ***(Ի ԿԱԽ)*** **+** Բազկուրար յահեակ բազուկն ուսովն ածեալ՝ և կապեալ ի վերայ արմնկանն *ի կախ* ունելով: - 608

**ԿԱԽԱՂԱՆ +** Կամ լինէիր այնպէս ուրախ որպէս զայն որ ի *կախաղան* ածեալ լինի՝ և յանկարծակի ի ճանապարհին թագաւորութիւն ընկալեալ լինի: - 762

**ԿԱԽԱՐԴ +** Քասնէ, Վասն *կախարդացն*. և խօսից դիւացն. և խստութեան սրտին. և կողոպտելն զեգիպտացիսն: - 283. Քասնեն, մովսէս *զկախարդաց* օձն կորոյս: - 329. Նա՛խ՝ զի *կախարդքն* զա՛յն առնէին զոր մովսէսն առնէր: - 335. Այլ զի տեսանօղքն զարհուրեալք ի ճշմարիտ նշանիցն մովսէսի՝ առ աչօք թուէր

թէ և *կախարդքն* այնպէս առնէին: - 335. Երրորդ՝ կեղն և խաղաւարտն եղև և ի *կախարդսն* և զայլ հարւածսն կրեցին. և ո՛չ կարէին ի մովսէս և յահարոն դարձուցանել զնոյնս: - 335. Եւ այս գիտելի է. զի *կախարդքն* փոխեն զզգայարանս և ցուցանեն առ աչօք երևումն ինչ: - 335-336. Եւ ի ձեռն *կախարդաց* խափանէր զժամանակն փրկութեան: - 336. Եւ թոյլ տայ աստուած դիւաց և *կախարդացն* հրաշից: - 336. Բաղաամ մո՛գ էր և *կախարդ*. և սովո՛ր էր ընդ դևս խօսիլ. վասն որոյ յառաջեաց աստուած և խօսեցաւ: - 387. Եւ աստ հարցանեմ, զի՞նչ է դիւթն, և հմայն, *կախարդն*, և այլն: - 388. ...իսկ *Կախարդն* որ անօթ ինչ թաղէ ի հող. կապս, կամ մոմ, կամ երկաթ, և պէս պէս ժժանօք յարմարե՛ն զարուեստն: - 388. Եւ վասն *կախարդաց* գրեալ է ի վերոյ ի **ի** գլուխն **իէ** համարն: - 389. Երրորդ, դիւական. որպէս կռոց սուտ մարգարէքն. սեղեկիայն և այլոց բազմաց. որ այժմ երևին ի պատասխանիս *կախարդաց*. նաև հաւկռիչք և գարէդիւթք. որք են բնաւ սուտք և ոչինչք: - 536. Եթէ վարձատրելի է ասիցէ ոք, ապա զիա՞րդ որք ի հարկէ հաւատացին ո՛չ վարձատրեցան. որպէս դևքն ի հալածիլ. և որդիքն սկեւեայ. և սիմոն *կախարդն*. և այլք նման սոցին: - 783

**ԿԱԽԱՐԴԱԿԱՆ +** Եւ կախարդութեամբ երևեցուցէ զինքն մեռեալ և երեքօրեայ յարուցեալ. և զայս ամենայն արասցէ դիւական երևմամբ և *կախարդական* արուեստիւք: - 708

**ԿԱԽԱՐԴՈՒԹԻՒՆ +** Նոյնպէս և նոքա *կախարդութեամբն* իւրեանց ի վաստակս որդւոցն իսրայէլի: - 334. Եւ է՛ որ զկերպն և զձևն միա՛յն փոխէ, և կոչի առաչօք. որպէս յանէսն և յամրէսն առնէին *կախարդութեամբ* դիւական: - 335. Երկրորդ՝ սուտ սքանչելեօք և *կախարդութեամբ* պատրեսցէ զկրօնաւորս. - 708. Եւ *կախարդութեամբ* երևեցուցէ զինքն մեռեալ և երեքօրեայ յարուցեալ. և զայս ամենայն արասցէ դիւական երևմամբ և կախարդական արուեստիւք: - 708

**ԿԱԽԵՄ +** Որպէս կրիտէս թագաւորն կրէատացւոց *կախեաց* ի մէջ տաճարին անդամանդ քարեայ ամենայն ուստէք ըմբռնեալ: - 180. Եւ դարձեալ ի վեր քարշեալ ժողովին ի ծայրս խոտոց. և ծանրացեալ *կախին* իբրև զմարգարիտս: - 204-205. Շուրթն *կախեալ* սակաւ մի, տարտա՛մ է. զի յէշ և ի ձիս նմանի: - 247. Եւ զի՞նչ է՝ անիծեալ *կախեալ* զփայտէ: - 285. Ի դրախտն, զի թանձր մարմնով ո՛չ բնակին յիմանալեացն կայանս. և յօդս *կախիլ* անպատշա՛ճ էր: - 289. Եւ հայրազեղծն որ հարկանէր զծնօղ, զանիծից փայտէ *կախէին*, և ի նոյն օր ի գերեզման իջուցանէին զի մի՛ պղծեսցին: - 400. Եւ հայր աստուած որ ո՛չ կատարի կամք նորա ի մեզ. յայնժամ ըստ բազում գթութեան իւրոյ առաքեաց զմիածին որդին որ փոխանակ մեր *կախեցաւ* զփայտէն և ազատեաց զմեզ յանծիցն օրինաց...: - 400. Եւ այլք այսպէս մեկնեն թէ՝ ամենայն անիծեալ *կախեալ կայցէ* զփայտէ. այլ ո՛չ ամենայն *կախեալ* զփայտէ՝ անիծեալ է. որպէս խոյն ի սաբեկայ *կախեալ* ո՛չ է անիծեալ: - 400. Երկրորդ՝ զփայտէն *կախիլով* եբարձ զանէծսն և ետ մեզ օրհնութիւն: - 403. Նա՛խ՝ զի ի խղճմտանք մարդոյն *կախեալ* է կեանքն արժանի մահու. և տեսանէ՛ միշտ և ո՛չ հաւատայ և դադարէ ի մեղաց: - 404. Երկրորդ՝ հրէայքն ի գերութեան *կախեցին* զկտակարանքն ի յուռեաց, և ո՛չ հաւատային կենաց. որ ասէր կտակարանքն պահել զպատուիրանս աստուծոյ և կեալ: - 405. ...զոր *կախեցին* զցայգ և զցերեկ յաւուրն ուրբաթու, և ո՛չ հաւատացին մովսէսի...: - 405. ...այսինքն կեանքն՝ որ ասաց մովսէս «տեսանիցէք *կախեալ*». զի մովսէս վասն իմ գրեաց զայն: - 405. Չորրորդ՝ այժմ տեսանեն աչօք զեկեղեցի սուրբ որ *զկախեալ* ի նոցանէ՝ աստուած հաւատայ զնոյն մեռեալ և կենդանի, և ո՛չ հաւատան: - 405. Ուքևժ, զթագաւորս նոցա *կախեաց* յերկճղի փայտէ. և յերիկոյն ի գուբն սուզեաց: - 418. Այլ և ծառն սաբեկայ ուր խոյն *կախեցաւ*: - 494. Եւ սահմանեալ զտեղիսն՝ *կախեաց* կանթեղս յանուն ազգացս: - 549. Շող յաստուծոյ ծագեալ հաւատ. զերկնից *կախեալ* լար իմն լուսեղէն. զորմէ բուռն հարեալ ձեռն զձեռամբ փոփոխեալ. ի ծովու սքանչելեաց յերկինս և յօդս վերանալ: - 769. Եւ որպէս թէ բազումք զմիմեանց զմիոջէ *կախեալք* զվախէ՛. և եթէ ոք խզեսցէ զառաջնոյն զկապ, միապէս անկանին. թէպէտ մինն առաջին: - 777

**ԿԱԿԱՆԱԲԱՐՁ +** էր և տեսանել աստ աղիողորմ տեսիլ. միայն արտասուալի դիմօք և *կականաբարձ* հառաչմամբ. ազգք և սիրելիք. ծնօղք և եղբարք: - 789

**ԿԱԿՂԱՆԱՄ +** Որոյ գործն այս է. ոչ ի նեղութիւնն խորտակիլ և ո՛չ ի հեշտութիւնն *կակղանալ*: - 580

**ԿԱԿՂՈՒԹԻՒՆ +** Նոճն զբարձրութիւն խոկմանն. և Զիթենին *զկակղութիւն* ողորմութեանն: - 495

**ԿԱԿՈՒՂ +** Յերն *կակուղ* և նօսր, ցուցանէ զբթամիտն. և զգռուզն. և զաներկչոտն: - 246. Երկայն և *կակուղ* գլուխն զգուշաւո՛ր է: - 246. Եղունկն սպիտակ տափակ *կակուղ* և նօսր, կարմրագոյն և փայլուն, ուժե՛ղ է: - 247. Նա՛խ՝ զի զգայարանքն նորա որպէս *զկակուղ* մոմ առաւել ընդունի զտիպն: - 251. Իսկ չորրորդ մասն միայն *զկակուղ* միսն ուտեմք: - 296. Երեսունևմի, ջուրն *կակուղ* եւ ի կարծր ծնօտէն յորժամ խնդրեցաւ: - 424. Զբարկութիւնն՝ *կակուղ* պատասխանին: - 489. Եւ վերջինս այս վասն այն ասի գործ ողորմութեան, զի *կակուղ* և խոնարհ պատասխանին խորտակէ՛ զբարկութիւն ընկերին և շահի՛ զնա: - 585

**ԿԱՅ +** Եւ յետ **Ե** ամսոյ՝ նաբուզարդան դահճապետն հրձիգ արար զերուսաղէմ և զտաճարն և զտուն թագաւորացն. և զպարիսպն կործանեաց. և զսիւնսն պղնձի և զաւազանն և զամենայն *կահ* պղնձի և արծաթի տարաւ ի բաբիլօն: - 447

**ԿԱՅԱԹ** - Զի **գ** էին որդիք Ղեեայ. Գեթսոն. *Կահաթ*. և Մերարի: - 378. Մերարեայն ի հիւսիսոյ. և *Կահաթուն* որ է՛ ցեղն քահանայից ի հարաւոյ: - 378-379. Նա՛խ՝ **գ** որդիքն ղեեայ գեթսոն, *կահաթ*, և մերարի, յորինակ նորոյս **դ** դասուց: - 379. Չորրորդ՝ գեթսոնի ազգն դռնապա՛նք էին. և մերարեայ երդմնեցուցիչք ընդ իշխանութեամբն իթամարայ քահանայի. և *կահաթու* գունդն աւագ պաշտօնեայք: - 379. Եւ ապա ցեղին ղեեայ՝ գաթսոնի և *կահաթու* և մերարեայ զա՛յլ աստիճանքն ետ: - 609. Երրորդն ասեն եթէ՝ **բ** ազգն գեթսոնի և **բ** գունդն մերարեայ՝ զչորս փոքրիկ աստիճանս ունէին ի խորանն. զպահպանութիւնն մինչ ի ջահընկալն որ զաշտանակն բառնային. և որդիքն *կահաթու* էին բարձրագոյնք: - 609

**ԿԱՂ +** Եօթներորդ՝ զի մի՛ հպարտասցի ի գօտէմարտիլն՝ *կաղ* առնէ զնա: - 311. Ութերորդ՝ առ ի ցուցանել թէ մարդկային միտք ի քննութիւն աստուածային բանին *կա՛ղ* գտանին: - 311. Իններորդ՝ ի յանդիմանութիւն բնութեան մերոյ. զի մի՛ կարծեսցէ թէ առաքինութեամբն և սիրովն առ աստուած՝ հաւասարիլ կարէ՛ սիրոյն աստուծոյ որ առ մեզ. այլ *կաղ* գտանի: - 311. Իսկ քրիստոս խնամարկեալ իւրոցն **ժ** սքանչելեօք ի մարմինս նոցա բժշկէր զիէլացիսն: Այսինքն նախ՝ կուրաց տեսանել տայր. **բդ**՝ խլից լսել տայր. **գդ**՝ համերց խօսիլ. **դդ**՝ ձեռաց շարժումն. **եդ**՝ *կաղաց* գնալ...: - 328. Նա՛խ՝ *կաղ*. որ նշանակէ՛ զկաղալն ի յօրէնս: - 370. Չորրորդ՝ նշան թէ՝ զոր ասէ և լինի. և տէր մեր զգործս աստուծոյ գործէր առ *կաղս* և կոյրս և հիւանդս և մեռեալս. զոր ասէր բանիւ՝ կատարէր գործով: - 399. Երեքտասաներորդ, Կոյրք և *կաղք* ընդ դէմ դարձան դաւթի: - 412. Ա՛յն է որ *կաղք* և կոյրք ընդ դէմ դարձան դաւթի և անարգանօք ասէին՝ մի՛ մտցէ դաւիթ ի քաղաքս. որ նա՛ ինքն է երեսուղէմ. որ եղև տուն տեառն: - 431. Կամ զի օրէնքն գրեալ էր՝ կուրի և *կաղի* մի՛ դնել գայթակղութիւն, ասէին նախատելով թէ՝ որպէս ո՛չ կարես կոխել զդոսա, նոյնպէս ո՛չ կարես առնուլ զամուրն յեբուսայ: - 431. Վասն որոյ ասաց դաւիթ, ամենայն որ մարտնչի սրով ընդ *կաղս* և ընդ կոյրս որպէս ասացին յեբուսացիքն, նա՛ ատելի՛ է անձին դաւթի. և խնայեաց ի նոսա և փրկեաց: - 431. Որպէս յետոյ որդի նորա *զկաղս* և զկոյրս բժշկեաց ի տաճարին: - 431. Դաւիթ արար զողորմութիւն *կաղացն* և կուրացն յեբեսացոց. և տէր մեր բժշկեաց *զկաղս* և զկոյրս որ «որդի դաւթի» աղաղակէին: - 438

**ԿԱՂԱՄ +** Վեցերորդ՝ զի *կաղանալո՛ց* էին որդիք նորա ի շաւղա՛ցն աստուծոյ: - 311. Տասներորդ՝ ի ցուցանել թէ *կաղանալ* պարտիմք աշխարհի, և ապա ի հանդէսն աստուծոյ մտանել: - 311. Նա՛խ՝ կաղ. որ նշանակէ՛ *զկաղալն* ի յօրէնս: - 370. Երրորդ՝ առ քահանայս զգուշութիւն օրինօք ունել. թէպէտ և ոմանք *կաղան* առ այս: - 554

**ԿԱՂԱՊԱՐ +** Երկրորդ՝ զի թէ այլ և այլ էր հոգի, ի յայլ հոգւոյ տեղիս ո՛չ բնակէր այլ հոգի որպէս յայլո՛յ *կաղապար*. և ա՛յլ դրօշած ի յա՛յլ կնիք. այլ մի է. վասն այն որ յետոյ երևի, յառաջնոյն խառնուածն կարէ՛ բնակիլ: - 259

**ԿԱՂԱՊԱՐԵՄ** - Ո՛չ բանն որպէս հալածու *կաղապարեալ*. և կամ մարմինն որպէս բոց ի հրոյ և ծուխ անօսր լուծեալ յօդ: - 770

**ԿԱՂԱՑՈՒՑԱՆԵՄ +** Վասն է՞ր գօտէմարտեցաւ ընդ յակոբայ և *կաղացոյց*: - 311. Իսկ թէ վասն է՞ր *կաղացոյց*: - 311

**ԿԱՂՆԻ +** Ուստի յա՛յտ է յերից արանցն երևելոյն առ *կաղնեաւն* մամբրէի: - 305

**ԿԱՂՊԱՐ +** Թէ եսթանանունդրին. որ է՛ դարիճակաւ արարած. այսինքն *կաղպարաւ*. և պաշտեցին: - 387

**ԿԱՂՔԱՑԻՔ** - Եւ այս են **իբ** լեզուքն... *Կաղքացիք*: - 298

**ԿԱՄ, ԵՒ ԿԱՄ, ԿԱՄ ԹԷ, ԵՒ ԿԱՄ ԹԷ +** Որպէս արեգակն զի ո՛չ այրէ որ է հեռաւոր պատճառ. այլ հուրն ի նմանէ առեալ զջերմութիւն ի մերձ գոլով այրէ՛. որպէս յա՛յտ է ի հայելւոջն, որ առեալ զնշոյլս յարեգականէն՝ այրէ՛. ա՛յսպէս և բանս մեր ի հարկէ նոցա լինի՝ զոր ստորասեմք *կամ* բացասեմք: - 8. Զոր օրինակ՝ յորժամ ասեմք՝ լինի անձրև *կամ* ո՛չ, ի հարկէ միոն ի նոցանէ լինի: - 8. Չորրորդ, զի ո՛չ լինի ի դիպուածոց ինչ. որպէս սղից ոմանց պատահին բարեբախտութիւն, *կամ* վատաբախտութիւն...: - 8. Որպէս յորժամ ասեմք, վաղիւն լինի արև, *կամ* ո՛չ լինի. լինի անձրև, *կամ* ո՛չ լինի. ի հարկէ միոն ճշմարիտ է ի սոցանէ: - 8. Նախ՝ եթէ լինէր բանս մեր ի հարկէ ճշմարիտ, նա ո՛չ միոն միայն, այլև ամենայն բան զինչ ասէաք՝ ճշմարիտ լինէր. որպէս շինել քաղաք, *կամ* ո՛չ շինել. տնկել այգի, կամ ո՛չ տնկել: - 8. Ապա ուրեմն յա՛յտ է՝ զի բանն զիրն ո՛չ կարէ ճշմարտել. այլ իրն զբանն ճշմարտէ. յորժամ գոյ *կամ* ո՛չ գոյ. որպէս ասէ 'իհարկէ՛ գոլ զէակն յորժամ է՛. և ո՛չ գոլ յորժամ ո՛չ է: - 9. Իսկ բանին արիստոտէլի՝ թէ ի հակասութեանց մի կողմն ճշմարիտ է, այսինքն *կամ* ստորասութիւնն կամ բացասութիւնն: - 9. Իսկ ի վերայ փոփոխականացս ո՛չ նմանապէս. զի յանցեալ

ժամանակս և ի ներկայս բացորոշակի մինն ճշմարիտ է և մինն ստէ՛. որպէս ասեմք՝ երէկ անձրև էր, *կամ* ո՛չ էր. այսօր անձրև է, *կամ* ո՛չ է: - 9. Իսկ ի վաղիւն ո՛չ գիտեմք թէ անձրև է թէ ոչ. զի գիտեմք որ մինն լինի. այս՝ *կամ* այն՝ որ և հանդիպի. անձրև՝ *կամ* ո՛չ...: - 9. Եւ թէ ոք ասիցէ, բազում բանք մեր բացորոշակի լինին ի հանդերձեալն. որպէս թագաւորն յորժամ ասէ շինեսցի քաղաք, և շինի. և ասեմք թէ այսանուն մարդ մեռանելոց է, և մեռանի. և աղօթեմք և լինի. և այլն նմանապէս անէծք *կամ* օրհնութիւնք: - 9. Կամ է՛ ի ներգործական պատճառն. որ ունիցի խափան ինչ և արգելումն. որպէս մանուկս այս երկար ապրեսցի. *կամ* թէ մանուկս այս լինի երաժիշտ, թէ ո՛չ լինի խափանումն իմն: - 9-10. Կամ է՛ ի ներընդունակ պատճառն իւր. որ հաւասար է ի լինիլն և յոչ լինիլն. որպէս ելանել ի զբօսանս, *կամ* ո՛չ. լինիլ անձրև, *կամ* ո՛չ: - 10. Եւ թէ է ի պատճառն ներգործական՝ որ ունի արգելումն, է՛ որպէս անէծք, *կամ* օրհնութիւնք, *կամ* աղօթք. և մանկանն յերկար ապրիլ. *կամ* լինիլ երաժիշտ: - 10. Դարձեալ ասեն թէ՝ աստեղք ունին բնութիւնս ներհակս միմեանց. չար և բարի. և միմեանց դիպեալ ներհականան իրերաց. և առնեն չար կամ բարի խռովութիւն *կամ* խաղաղութիւն. աւեր *կամ* շինութիւն. և այլն: - 12. Նախ թէ՝ երկնային մարմինքն ո՛չ են ի չորից տարրաց. այլ են հինգերորդ տարր *կամ* էութիւն ըստ արիստոտէլի...: - 12. Ասեմք առ այս, մոլորականքն ո՛չ եթէ զի ունին ներհակ շարժումն վասն այն կոչին մոլորականք, *կամ* պատճառք են չարեաց, այլ զի մեք մոլորիմք ի շարժումն նոցա. զի ունին հասարակ շարժումն, և ունին յատուկ շարժումն: - 12. Զորօրինակ՝ ի կենդանեաց բազումք նշանակեն զլինելոց իրաց, և ո՛չ են նոքա պատճառք լինելոյ չարեացն *կամ* բարեաց: - 12. Ասեմք առ այս, եթէ այսու վկայե՛ս և դու մեզ՝ թէ ո՛չ է հարկ. զի ի բոլոր քաղաքն այնքան բիւր մարդիկ՝ ծեր և տղայ՝ ե՛րբ և ո՛ւր ի մի շարժումն աստեղաց ծնան, որք ի միասին կործանեցան. *կամ* բազմութիւն զօրացն. *կամ* որք ի նաւին կային. զի սոքա ամենեքեան յայլևայլ ժամանակս և այլևայլ շարժումն աստեղաց էին ծնեալք. ապա ուրեմն ո՛չ է հարկ բախտի և ճակատագրի: - 13. Երկոտասաներորդ՝ եթէ չարն է յաստուծոյ, *կամ* գիտէ զչարն չար՝ *կամ* ո՛չ գիտէ. թէ ո՛չ գիտէ՝ անգիտութիւն ունի. և թէ գիտէ՝ գիտութեամբ առնէ զչարն: - 14. Եւ եթէ երկուցն **բ** է սկիզբն, և այսպէս ի յաստուած երևի երկու սկիզբն, *կամ* երկու անսկիզբն ըստ մանիքոսի: - 14. Ութևժերորդ՝ զի թէ չարնէ յաստուծոյ, այս լինի կամ հակակայութեամբ յառաջ եկեալ. որպէս սպիտակն յո՛չ սպիտակէն. *կամ* բաղդատութեամբ. որպէս կենդանին ի կենդանւոյ: - 14. Դարձեալ ասեմք՝ թէպէտ տեսանէ աստուած զամենայն նախքան զլինիլն իւրեանց, սակայն տեսութիւնն աստուծոյ ո՛չ հարկ է ի վերայ նոցա լինիլ չար *կամ* բարի: - 15-16. Նո՛յնպէս և տեսութիւնն աստուծոյ ո՛չ հարկէ ի վերայ մեր գործ զբարի *կամ* զչար. այլ կամք մեր: - 16. Այլ և ո՛չ ի բնութենէ. զի բնութիւնք ամենայն հրեշտակաց *կամ* մարդկան բարի՛ են ի բարւոյն յառաջ եկեալ. այլ չարն է՛ յանձնիշխան կամաց եկամուտ ի բնութիւնս: - 16. Ա՛րդ՝ թէպէտ չարն ո՛չ է յաստուծոյ, այսու ո՛չ լինին երկու աստուածք. *կամ* **բ** սկիզբն. զի չարն ո՛չնչութիւն է. և ո՛չնչին սկիզբն ո՛չ է աստուած. զի աստուած սկիզբն էութեցէ: - 16. Նաև մարդկան չարեաց թոյլ տալ. զի *կամ* ընտրեսցեն զբարիս՝ *կամ* յետոյ զղջասցին. և այլ պէսպէս նախախնամութեամբ որպէս ինքն գիտէ աստուած՝ ներէ՛ չարեաց. որպէս տեսանելոց եմք յառաջիկայսդ: - 17. ...ո՛չինչ կարեմք առնել առանց կամաց՝ *կամ* առանց գիտութեան՝ *կամ* առանց թոյլ տալոյն աստուծոյ: - 18. Արդ՝ ժամանակեայ արդարութիւնն յայտնի է որ անձնիշխան կամօք փոփոխի. երբեմն ի չար և երբեմն ի բարի. և ժամանէ փրկութեան *կամ* դատապարտութեան: - 18. Ապա ուրեմն չարն ո՛չ է յաստուծոյ այլ ի մէնջ՝ *կամ* ի նենգութիւնէ թշնամւոյն որ պատրէ՛ զմեզ: - 19. Եօթներորդ՝ և ո՛չ լինէին մարդկային *կամ* աստուածային առաքինութիւնք: - 20. Եօթներորդ դարձեալ՝ թէ էին **բ** սկիզբն՝ լինէր այս *կամ* համանգամայն. *կամ* մի յետոյ միոյ: - 21. Ութերորդ՝ թէ են բ սկիզբն, *կամ* իշխեն ի վերայ միմեանց, *կամ* ո՛չ իշխեն: - 21. Իններորդ՝ թէ են **բ** սկիզբն չար և բարի, *կամ* հաղորդին միմեանց՝ *կամ* ոչ: - 21. Տասներորդ՝ **բ** սկիզբն՝ գերագոյն բարին. և ծայրագոյն չարն՝ *կամ* ըստ ինքեանց կայանան, *կամ* ո՛չ: - 21. Եւ այսպիսի չարս ո՛չ է է. և ո՛չ ի յէսս. և ո՛չ սկիզբն ունի *կամ* պատճառ. և ո՛չ ինքն սկիզբն այլոց *կամ* պատճառ. ա՛յս է ինքնաչարն: - 22. Վասն ճանաչման իւրոյ աստուած կազմեաց կրկին կերպիւ օրինակս. այսինքն իմանալի և զգալի. որպէս հոգին, միտքն, և նմանք սոցա. *կամ* արեգակն, լոյս, և նմանք նոցա: - 24. Երրորդ՝ պարզևականն. որպէս մարգարէիցն երևակայութեամբ, *կամ* ի ձեռն մարմնոյ զգայութեանց: - 24. Ո՛չ է ըստ չարափառացն ասել ուղղակի՝ թէ նախանձու *կամ* վասն փառաց որպէս ասեն, զի անգիտութեամբն պատուեսցի. ընդունա՛յն է կարծիքս այս. ասել զոր չէ՛ արժան անախտ և պարզ բնութեանն աստուծոյ: - 24. *Եւ կամ* առանց միջնորդութեան օդոյս տեսանել ինչ: - 25. Զի *կամ* լսիցեն ի նախնեացն թէ ի սկզբանէ՛ արար աստուած զերկինս և զերկիր: - 25. Այս է զի ի լուր պատմութեանց նախնեացն՝ *կամ* ի կարգէ՛ իրաց՝ *կամ* ի տեսս զգալեաց՝ ի ծանօթս գամք աստուծոյն ճշմարտի. յորմէ հաւատն լուսափայլեսցի: - 25. Եւ այս *կամ* յանբաւս ելեալ, *կամ* գտեալ զանսկիզբն սկիզբն, որ է աստուած: - 25. Ուստի յա՛յտ է մեծութիւն յանցանացն. քանզի

ի հինն զինչև մեղանչէր ոք մեծ *կամ* փոքր՝ պատարագաւն սրբէր. թռչնօք և անասնօք: - 33. Նա՛խ՝ զի գո՛րծ է նեռինն ուրանալ զաստուած, որպէս իւր անունն յայտնէ. ա՛յսպէս և հերձւածօղն ուրանայ զաստուածութիւն որդւոյ. *կամ* զհոգւոյն սրբոյ...: - 34. Ութերորդ՝ զնա օ՛ձ դարանակալ ասէ ի ճանապարհի. և սոքա առաջին օձին նմանեալ՝ հրապուրեն զբազումս. և արտաքսեն ի դրախտէ եկեղեցւոյ. և թոյնք իժից ի ներքոյ շրթանց ունելով և խայթոց՝ զի առորս մերձենան, ի յսկիզբն բանից *կամ* ի վերջն՝ մահացուցանեն զհոգիս. երկճղի ունելով լեզու նենգաւոր՝ չար և բարի, ծածուկ և յայտնի: - 35. *Եւ կամ* որպէս յղութիւն հարկ է զծնանիլն: - 36. *Եւ կամ* թէ՝ հակառակ է հօր: - 36. *Եւ կամ* զիա՞րդ բռնադատեալն աստուած իցէ: - 36. Ապա ուրեմն բնութեամբ և էութեամբ է որդի. և ոչ թէ կամաւ *կամ* ոչ կամայ: - 36. Եւ յոչ էից՝ զի սակաւ հիւթն այն՝ ո՛չ կայր միս և ոսկր և ջիլ. *կամ* մորթ: - 37. Դարձեալ առարկեն, եթէ աստուած է հայր՝ և անծին է բնութեամբ, և որդի ծնեալ է, ապա ուրեմն ո՛չ է որդի աստուած. զի ծնելութիւն և անծնելութիւն հակառա՛կ են միմեանց. որպէս սեաւ սպիտակի *կամ* լոյս խաւարի: - 38. Առարկութիւնս այս յայտնապէս զորդի *կամ* զհայր ի բա՛ց մերժէ յաստուածութենէն. ճարտա՛ր իմա, ո՛չ ասէ զհօրէ ոչ գոլ աստուած. այլ զանծնելութենէն: - 38. Պատասխանեմք թէ՝ անծնելութիւնն *և կամ* ծնելութիւնն ո՛չ ասի միայն աստուածութիւն. զի աստուածութիւնն հաւասա՛ր է Երրորդութեանն: - 38. Եւ թէ արար հայր առանց որդւոյ, անիմա՛ստ արար. զի որդի է իմաստութիւն հօր ըստ առաքելոյ. *և կամ* այլ իմն իմաստութեամբ որ է՛ սուտ ամենևին: - 46. Ո՛չ թէ նոր իմն տեսակ *և կամ* նոր աշխարհ. այլ զեղելոցս նախախնամութիւնն. և ի նոյնութիւն կալն հայր կամի և որդի կատարէ՛. ոչ ծառայաբար և անուսումնապէս. այլ տիրաբար և հանճարով: - 46. Զի՞նչ է տալն որդւոյ զկեանս՝ *կամ* զդատաստան՝ *կամ* զիշխանութիւն հեթանոսաց և ամէն մարմնոյ: - 46. Ոչ թէ նըւաստ է քան զհայր, *կամ* ծառայաբար ծունր կրկնելով բարեխօսէ՛: - 48. Եւ քարոզչօք՝ այսինքն հրեշտակօք *կամ* վարդապետօք *կամ* գրոց սրբոց գիտութեամբ, փութայ զկեալն մեր: - 48. Եւ յայսցանէ էն առաւել է. զի Աստուածն յաստ էած զմեզ, *և կամ* ստեղծօղ, *և կամ* ճանաչօղ լսի: - 49. Եւ ի տնտեսականն. որպէս Աստուած փրկիչ. *կամ* արդարութեան. *կամ* խաղաղութեան. *կամ* աբրահամու. *կամ* իսահակայ և այլն. և այս հասարա՛կ է Երրորդութեանն: - 49. Առորս ասելի է թէ՝ ո՛չ է այլ էութիւն ի մէջ արարչին և արարածոյն. այլ հա՛րկ է զի լիցի աստուած՝ *կամ* արարած: - 52. Եւ զի ստուգեցաք թէ ի հարկէ պիտոյ է էութեան՝ զի լիցի *կամ* արարիչ *կամ* արարած: - 52. Եւ զի աստուած է՝ ո՛չ կարէ ասիլ ստեղծեալ *կամ* արարած *կամ* պաշտօնեայ *կամ* ծառայ: - 52. Եւ թէ ծնեալ՝ ասեն հա՛րկ է զի լիցի ի հօրէ *կամ* յորդւոյ. թէ ի հօրէ է՝ լինին բ որդիք և եղբարք: - 52. *Կամ* ևս՝ զի և հայր է ամենակատար՝ ընդէ՞ր ո՛չ լինիցի որդի, զի է՛ ի նոյն բնութենէն: - 53. Ասեն դարձեալ, աւետարանն յօհաննու ասէ, «ամենայն ինչ որդովն եղև». ապա ուրեմն և հոգին եղեալ է ի ձեռն որդւոյ. զիա՞րդ է հաւասար որդւոյ *կամ* հօր: - 53. Եւ այլ անուն՝ այլոյ բնութեան ո՛չ թըւակցի. որպէս ո՛չ մի երկուին *և կամ* երկուքն երեքին: - 54. Եւ իմաստասէրքն զհոմանունսն որ ո՛չ էր ի նոյն տեսակէ *կամ* ի բնութենէ՝ թւակցէին: - 54. Երրորդ վանկն, ոչ են և ո՛չ ասին ի յէքս, ոչ եղեալքն ո՛չ ասին. և ո՛չ գունտն քառանկիւնի. *կամ* մարդս պարզ: - 55. Այլ զայսպիսի ի միում գոյութեանն յոյժ յիմարութիւն է կարծել *կամ* ասել: - 62. Երկրորդ՝ զի որպէս մատամբ գրեմք *կամ* գործեմք զամենայն գործս, այսպէս և հոգին սուրբ գրէր ի մարգարէսն...: - 62. Իսկ եթէ բոլոր, այս լինի *կամ* **բ** հոգի որպէս ասացաք, *կամ* աւելորդ գոյ բղխումն որդւոյ որ է յոյժ հայհոյութիւն: - 63. Ա՛րդ՝ եթէ հոգին ելանէ յորդւոյ, պարտ է զի ելցէ յորդւոյ ի հայր. *կամ* ի միւս անձն: - 63. Դարձեալ՝ հոգին սուրբ բղխէ ի հօրէ՛ որպէս հոտ ծաղկի *կամ* խնձորի: - 64. Դարձեալ՝ յորժամ ասի, թէ լսիցէ «ի հօրէ», *և կամ* «առնուցու», մի՛ իմասցի այնու թէ բղխումն հոգւոյն սրբոյ տակաւին ապառնի էր. զի յաւիտենակա՛ն էր: - 65. *Եւ կամ* թէ զո՛չ ոքն ասիցէք, ահա նո՛ր աղանդ չարափառութեան և խափանումն տընօրէնութեան մեծի խորհրդոյն: - 68. Իսկ թէ առանձնապէս զմարդոյն, զիա՞րդ իցէ կենդանարար մարմինն մարդոյ. *կամ* ո՞րպէս առաքեցաւ նա ի հօրէ. զիա՞րդ իցէ և կենդանի վասն հօր: - 69. Որպէս թէ մարմինն պետրոսի խոցի *կամ* տանջի, ասեմք թէ պետրոս խոցեցաւ և պետրոս տանջեցաւ: - 74. Ա՛րդ՝ ընդդէմ քումդ խոհեմութեան ո՛րպէս իմանաս ի միում հասարակ բնութեան զբանն ծնեալ և զհոգին բղխեալ. իսկ հայր ոչ ծնեալ *կամ* բղխեալ. և անդրադարձեալ ևս: - 74. Ա՛րդ՝ դու առանձնութեամբ քո որ ունիս զհասարակ բնութիւնդ՝ ծնար այսօր ի մօրէ՛ *կամ* մեռար յաշխարհէ՛ և ո՛չ հասարակ մարդկութիւնս: - 74. Ա՛րդ՝ զանազան զգայութեամբ զանազանապէս զգամք, և ո՛չ ամենայնիւ զմինն՝ *կամ* միովն զամենայն: - 75. Ա՛րդ՝ որպէս կարծեն իմքեանք զէն մեծ ունիլ առ երկոսին կողմանս, *կամ* հարկիւ անկանիլ ի նեստորին բնութիւն և բնութիւն, *և կամ* ըստ եւտիքեայ շփոթել զբնութիւնսն: - 75. Ուստի ո՛չ ասի քրիստոս սոսկ մարդն, *կամ* մերկ աստուածն. այլ որպէս ցուցաւ յերկուց միաւորութիւնն: - 75. Առաջնոյն ասեմք. թէպէտ բանն աստուած բնութեամբ միաւորեսցի ընդ մարդկութեանն, ո՛չ կրէ շփոթումն *և կամ* խառնակումն ինչ: - 76. Ո՛չ յեղմամբ *կամ* շփոթմամբ. այլ անշփոթ միաւորութեամբ զբանն մարմին եղեալ և միաւորեալ զբնութիւնս

մեր կատարելապէս ընդ իւրում աստուածութեանն: - 76. Եւ այս ո՛չ մասամբ *կամ* բաժանմամբ. այլ բոլորիւ և միութեամբ: - 77. Որպէս ասեմք զաստուածածին կոյսն մայր և կոյս. ո՛չ բ բնութիւն *կամ* բ անձն. որ է մասամբ և բաժանմամբ. այլ զմի և զնոյն. ունելով զայս և զայն յատկութիւն: - 77. Դարձեալ՝ որպէս բացբարձութեամբն ասի հայր աստուած՝ անսկիզբն և անվախճան. ունելով զայս և զայն ի պարզ միութեան իւրում. և ո՛չ է **բ** անձն *կամ* **բ** բնութիւն: - 77. Այսպէս և ծնեցեալն որդի միաւորեալ մարմնովն է և ասի աստուած և մարդ. ի բաղադրեալ միաւորութեանն. և ո՛չ ասի **բ** անձն *կամ* **բ** բնութիւն: - 77. Եւ ո՛չ է և ո՛չ ասի **բ** որդի *կամ* **բ** դէմ և այլն. այլ մի որդի և մի անհատ յատկութեամբ իւրով. և մի դէմ. և մի անձն. և մի կերպ. և այլն: - 77-78. Ասի դարձեալ՝ աստուած մարմնազգեաց. այլ ո՛չ ասի աստուած մարդազգեաց. *կամ* մարդ աստուածազգեաց. զի այս որոշմա՛ն է: - 79. Եւ ո՛չ ասի մարդով ծնեալ. և մարդով երևեալ. *կամ* մարդով շրջեալ. և այլն: - 79. Այլ ո՛չ ասի մարդով չարչարեալ. և մարդով մեռեալ. *կամ* յարուցեալ. *կամ* համբարձեալ: - 79. *Եւ կամ* զի՞նչ երկու բնութիւնն: - 81. *Եւ կամ* զի՞նչ յերկուցն եղեալ մի բնութիւն: - 81. Իսկ թէ զի՞նչ իմանի մի բնութիւն ասելն. և զի՞նչ երկու. *և կամ* յերկուցն մի բնութիւն: - 81. Այլ նոքա ո՛չ խոստովանին զաստուած մարդացեալ. այլ՝ *կամ* ի նախագոյացեալ անձն բնակեալ ասեն զաստուածայինն բնութիւն, *և կամ* շնորհօք որդիացեալ որպէս նեստորի թըւի: - 81. Նոքա ի կիսաէշ նման զտնօրէնութիւնն սուրբ համբաւեն. *և կամ* առ աչօք և ունայնութեամբ. որպէս մանիքեցւոցն, *և կամ* եւտիքի կարծի: - 81. Ասեմք եթէ՝ յորժամ մի ասեմք բնութիւն բանին և մարմնոյն, այս լինի *կամ* արիոսին. որ զբանն արարած ասէ և զմարմինն արարած. և այսպէս մի բնութիւն է արարածոյն ասէ. և զբանն ընդ մարմնոյն չարչարելի և մահկանացու: - 81. *Եւ կամ* բանն բնութեամբ մարմնոյ թանձրացեալ որպէս ջուր սառուցեալ: - 82. Իսկ անձն առանց բնութեան՝ միայն անուն է սոսկ. որպէս որդի՝ *կամ* քրիստոս՝ *կամ* յիսուս: - 82. Եւ սոքա *կամ* շփոթեալ խոստովանին. որպէս եւտիքէս և այլքն: - 82. *Եւ կամ* զմի բնութիւնն ուրացեալ. *և կամ* առ աչօք ասացեալ. զորս նզովէ՛ սուրբ եկեղեցի աստուծոյ: - 82. Արդ՝ մեք ո՛չ մտացածին բանիւ ինչ իշխեմք յաւելո՛ւլ *կամ* պակասեցուցանել: - 84. Զի միաւորեալն ո՛չ երկատի. զի **բ** բնութիւն ասել *կամ* իմանալ՝ երկատութիւն և բաժանումն է քրիստոսի: - 84. Զի թէ իր, ապա հա՛րկ է ասել քեզ զքրիստոս *կամ* մի իր և **բ**. *կամ* մասամբ ինչ մի և մասամբ ինչ երկու. *կամ* բոլոր մի և բոլոր **բ**: - 86. Իսկ անհատ ասի՝ զի ո՛չ քակտի և ո՛չ հատանի որպէս բոլորն ի մասունս. զի թէ բաժանես զնա որպէս ի հոգի և ի մարմին, *կամ* յոտս և ի ձեռս և ի գլուխս, ո՛չ մնայ բոլորն: - 86-87. Այսպէս և մի անձն է քրիստոս և մի անհատ. զի թէ բաժանես զնա՛ յաստուած և ի մարդ, ո՛չ մնայ բոլորն ի նոյն. այլ մասն ինչ և մասն. *կամ* ոմն և ոմն: - 87. *Կամ* ի պատահմանէ յէութիւն: - 87. Իսկ աստ բնութիւնք **բ** միայն. *կամ* **գ** ըստ ոմանց: - 88. Այլ է՛ որպէս ի միջոջէ և առ մի. այսինքն ի միջոջէ բանէն՝ առ մի մարդկութիւն նորին *կամ* աստուածութիւն որպէս նոքա կամին: - 88. *Կամ* որպէս բոլորն է ի հոգին, այսպէս բոլորն է ի մարմինն միաւորեալ. և բոլորն յիրաքանչիւր մասն մարմնոյն: - 89. Նոյնպէս և քրիստոսն անուն՝ և տէր՝ և աստուած՝ և այլն՝ զո՛յգ և հաւասա՛ր է մարդկութեան իւրոյ և աստուածութեանն. և ո՛չ առաւել և նըւազ. *կամ* տկար և հզօր. *կամ* անգէտ և ամենագէտ. և որ ինչ այսմ նման: - 89. Իսկ եթէ զաստուածային անձն և զաստուածային բնութիւնն և զմարդկայինն ասէք մի քրիստոս, այս լինի *կամ* միաւորութեամբ *կամ* բաժանմամբ: - 90. Եւ եթէ բաժանմամբ, այս լինի բ քրիստոս, *կամ* **գ**՝ ըստ անձին և բնութեանցն բաժանման: - 90. *Եւ կամ* լինի մի քրիստոս ըստ կոչմանն, և **գ** ըստ էութեանն: - 90. *Եւ կամ թէ* մկրտիմք յանուն հօր՝ և որդւոյ բ բնութեանցն՝ և հոգւոյն սրբոյ. և որ սոցին նման: - 90. Իսկ թէ զմինն, հարցանեմ ձեզ՝ զո՞րն պատուէք. *և կամ* զո՞րն անարգէք: - 90. Յամանգամայն՝ այսինքն բոլորովիմբ. *կամ* զոյգ և հաւասար. *կամ* միանգամայն: - 90. Զի թէ ասեմք եթէ ոչ է աստուած, յայնժամ բաժանեալ յաստուածութենէն՝ ո՛չ լինի աստուծոյ ձեռն. և ո՛չ աստուծոյ մարմին. *կամ* արիւն. զի մասն բաժանեալ ի բոլորէն ո՛չ է բոլորին մասն. և ո՛չ կոչի. որպէս ձեռն հատեալ յանդամոցն՝ ո՛չ կոչի մասն բոլորին: - 92. Իսկ ասելն «զնա», *կամ* ըստ միութեան իմանի. *և կամ* ըստ այլոց բաժանմամբ: - 94. Զի եթէ բաժանմամբ, այս *կամ* բանին իմացի, *և կամ* մարմնոյն: - 94. Նա աստուած օծաւ. և սոքա մարգարէ *կամ* այլինչ: - 95. Ա՛րդ՝ եթէ քրիստոս տգէտ է և նոքա զմիտս տգիտի ունէին. ո՞րպէս լինէին հազարապետք աստուծոյ խորհրդոցն. *կամ* հազարապետքն առաւել են քան զխորհուրդն աստուծոյ: - 96. *Եւ կամ* բանն զմարդկութիւնն իւր զրկեաց ի գիտութենէն և ո՛չ ետ: - 96. Ա՛րդ՝ եթէ յայտնեաց զինքն աշակերտաց իւրոց. և մարդկութեան իւրոյ ո՛չ յայտնեաց, եղիցի ինքն տգէտ քան զաշակերտսն իւր. *և կամ* ոչ ինչ յայտնեաց զոր ինքն ո՛չ գիտաց: - 96-97. Ա՛րդ՝ եթէ հայր առաւել գիտէ և որդի նըւազ, այս լինի *կամ* հօրն նոյնպէս նըւազ գիտել որպէս որդի. *և կամ* որդի՝ ո՛չ ճշմարիտ ասել: - 97. Արդ *կամ* ստեաց զաւետարանն, *կամ* սուտ լեր ի բանս քո ըստ նմանութեան հօր քոյ սատանայի: - 97. Արդ՝ եթէ բոլոր աստուածութիւնն ի քրիստոս էացեալ է մարմնապէս, և ծածկէ զգիտութիւնն ի նմանէ, այս լինի *կամ* ոչ աստուած մարմնացեալ և մարդացեալ *կամ* զէութիւնն

տըւեալ և ի գիտութենէն զրկեալ որ է սուտ: - 98. Իսկ թէ աստուծոյ բան է և անանց, ո՛չ ուրեմն է տգէտ *կամ* նըւազ գիտութեամբ: - 98. Իսկ գանձն և աղբիւրն իմաստութեան երկնի և երկրի՝ ո՛րպէս լինի կարօտ գիտութեան *կամ* ստացեալ յայլմէ: - 98. Նախ՝ զի բանն աստուած էառ զմարդկայինս բնութիւն և միաւորեաց ընդ աստուածութեան իւրում. ո՛չ մասն առեալ՝ *կամ* ըստ մասին միաւորեալ. այլ բոլորն ընդ բոլորին...: - 106-107. Երրորդ՝ բանն պատկեր է հօր. և մարդն պատկեր բանին. պատկերն զպատկերն էառ *կամ* նախատիպն զպատկերն: - 107. Եւ զի անծամբ յատկացեալք են և բնութեամբ մի. վասն այն Երրորդութիւն ո՛չ ասի միոյ անձին. այլ աստուած *կամ* աստուածութիւն ըստ միութեան բնութեանն: - 108. Չորրորդ՝ սկիզբն է առաջնոցն. և պատճառ վերջնոցս. որք միջնորդութեամբ գոյանան. որպէս ի տարերաց *կամ* ի ծնողաց: - 110. Եւ ո՛չ փոփոխի *կամ* այլայլի...: - 114. Այլ զայս ստեղծեալ յաւիտեանս ասեմք ոչ սկիզբն ունիլ և ո՛չ կատարած. զի պարունակօղ է ա՛յլ յաւիտենից որք ունին սկիզբն *կամ* կատարած. այլ ինքն պարունակի յանստեղծ յաւիտենէն որ է՛ աստուած: - 116. Աստուածային էութիւնն ըստ որում բնութիւն է՝ թէ զինչ է *կամ* որպիսի ինչ է անգիտելի՛ է մեզ յայսմ աշխարհի և ի հանդերձելումն: - 119. Երրորդն է նշանական աստուածաբանութիւն. որ ի զգալի կերպարանաց փոխակցիմք յիմանալի տեսութիւնն. թէ զի՞նչ նշանակէ մարդ երևելին. *կամ* առիւծ. գառն. հուր. լոյս. և այլն: - 122. Եւ թէ ո՞րպէս ասեմք ննջել զարթնուլ սրտմտիլ *կամ* տրտմիլ աստուծոյ: - 122. Զի ո՛չ մարմին է. և ո՛չ հոգի. և ո՛չ միտ. և ո՛չ այլ ինչ զոր մեք գիտեմք *կամ* իմանամք: - 122. Զի որպէս խաւարն անյայտ է, նոյնպէս և առաւել լոյսն անտեսութիւն առնէ. և նա անտես է ի հրեշտակաց. և անյայտ ի մարդկային մտաց. թէ ո՞րպէս *կամ* զի՞նչ է էութիւն և բնութիւն աստուածութեանն: - 122. *Կամ* ննջել և զարթնուլ. որ ո՛չէ ի յաստուած. այլ դնելով ի վերոյ ըստ ներգործութեանն տարացուցի: - 123. *Կամ* որպէս բունն մի է ծառոյն, և ճուղքն և տերևքն բազում. նմանապէս և աստուածաբանութիւնն: - 123. Իսկ բացբարձականքն՝ ո՛չ զէութիւն *կամ* զփառս աստուծոյ բառնայ, այլ զոր յետ էութեանն աստուծոյ է և ի նմանէ ստեղծեալ՝ և զխոնարհութիւնսն բառնայ: - 124. Նախ՝ զի դեղին լոյսն ձևանայ ընդ երբս *կամ* ընդ լուսանցս մտեալ, իսկ սպիտակն ոչ: - 125. Երկրորդ՝ ըստ չափոյ մտիցն քանականայ մեծ *կամ* փոքր: - 125. Եւ այս *կամ* յիմարիլ և ափշիլ. *կամ* արտաքս գերազանցիլ: - 127. Զորօրինակ՝ թափումն ի զգայութեանց թմրիլ՝ *կամ* ընդարմանալ ասի. այսպէս թափումն ի մտաց՝ զարմանալ ասի. ըստ պօղոսի որ յափշտակեցաւ. և ըստ դաւթի որ զարմացաւ. *կամ* ըստ ադամայ որ թմրեցաւ: - 127. Իսկ առողջ լսելիք և տկար՝ պատճառի ի համակարգս. և ի հաւասարն բնութեամբ. որք իմացմամբ և սիրով և ներգործութեամբ առաւել *կամ* նըւազ են. ուստի առաւել *կամ* նըւազ պարգևս ընդունին: - 131. Եւ աստ երևումն և խրատ ուղղութեան. պատիժ *կամ* պարգևք բարութեան: - 133. Ապա յա՛յտ է զի ա՛յլ է կարգ շնորհականին, և այլ է կարգ բնականին. զի բնականք ներքինք զվերնոցն բոլորապէս ունին և կոչին. այլ ո՛չ անդրադարձեալ. որպէս անհատն զտեսակն և զսեռն բոլորապէս ունի և կոչի. զի պետրոս մարդ է և կենդանի և կոչի. այլ կենդանին մարդ՝ *կամ* մարդն պետրոս ո՛չ է և ո՛չ ասի: - 136. Իսկ քահանայն *կամ* սարկաւագն ո՛չ ունի զվերնոցն և ո՛չ կոչի: - 136. Ասեմք առ այս եթէ՝ զինչէն՝ անուամբ *կամ* սահմանաւ ճանաչի. և անունն յայտնի՛ է ըստ ինքեան: - 140. Եւ այս առ հրեշտակս՝ *կամ* առ հոգիս՝ *կամ* ի մարմինս: - 142. Քանի՞ հրեշտակապետի անուն ասի *կամ* մեկնի: - 144. Երկրորդ՝ միքայէլ. որպէս զաստուած *կամ* հզօր: - 144. Իսկ այլք ասեն թէ՝ հրեշտակն ո՛չ երևի ձևացեալ մարմնովն և ո՛չ խօսի ընդ մարդոյն. այլ՝ դնէ զնմանութիւն դիտաւորութեան ի յաչքն *կամ* ի յականջն մարդոյն...: - 145. Իսկ խօսի դնն ընդ մարդոյ՝ *կամ* փոփոխելով զգոյութիւնն որպէս հրեշտակն *կամ* զպատկեր նմանութեանն ցուցանէ տեսանելեացն. և *կամ* տպաւորէ՛ յերևակայութիւնն: - 145. Ա՛րդ՝ տեղական անկումն դիւին եղև *կամ* ի դժոխս՝ *կամ* ի յօդս աղջամղջին որ է՛ միջին կայարան օդոյն: - 146. Եւ յօհաննէս զսա օդո՛յ դաւէ. վասն այն նոյն անուամբն՝ պօղոս իշխան օդոյս կոչէ. *կամ* զի յօդս են բնակեալ և իշխեն մարդկան: - 150. Որպէս արդարոց անկանիլ ի փործութիւնս և զանազան վնասս վասն օգտութեան իւր՝ *և կամ* այլոց: - 158. Երկրորդ՝ զի արդարութեամբ տացէ զպսակն *կամ* զտանջանքն. թէ յաղթեն և թէ յաղթին: - 161. Իսկ թէ կամիս ուսանիլ թէ զի՞նչ է նիւթ պսակին. որ ինչ առ աստուածութեան իւրում մեծութիւն գտանի, զա՛յն պատրաստեաց սիրելեաց իւրոց. զոր ո՛չ կարեմ զմտաւ ածել. *կամ* վայրապար լսելեօք լսել: - 161. Զի *կամ* ի զօրութենէ լինի ներգործութեամբ. որպէս մանկան հիւսնել: - 162. *Եւ կամ* ի ներգործութենէ լինի զօրութեամբ. որպէս ի շարժմանէ դադարեալ: - 162. Դարձեալ՝ կամքն աստուծոյ անփոփոխ է. զի ո՛չ տարակուսի և ո՛չ զղջանայ. ապա թէ արար աստուած զաշխարհս ի գոյութիւն՝ այժմ առնէ յանգոյութիւն, երևի փոփոխումն անփոփոխելոյն. *կամ* զղջումն և երկբայութիւն. որ օտա՛ր է արարչականն կամաց: - 162. Ութերորդ՝ զի բազմօր զբազումս տեսանեմք, *կամ* բազմօր զմի: - 164. Ուստի յա՛յտ է զի կարելին ունի զգոլն և զչգոլն. և անկարն զմինն. *կամ* զգոլն *կամ* զչգոլն: - 165. **Ուստի յա՛յտ է զի էութեան երկրորդ ամուսնութեամբն ո՛չ կարէ**

**քահանայագործել.** յիրաւի և ապա պոռնկեալն էրէց *կամ* աբեղայ՝ ո՛չ կարէ քահանայագործել. զի ուխտազա՛նց է: - 167. Երկրորդ՝ զի բազումք գայթակղութեամբ կորնչին. արդ ի հարկէ որպէս ասացաւ՝ *կամ* միոյ *կամ* բազմաց լինի կորուստ: - 167. Դարձեալ՝ այն զօրութիւնն միշտ է. զի բնաւորեալ է ընդ ներգործութեան. իսկ միւս զօրութիւնն երբեմն է. զի *կամ* նախ է ներգործութեան. որպէս մանկան հիւսնել: - 168. *Կամ* յետ ներգործութեան. որպէս ի շարժելոյն դադարիլ: - 168. Երրորդ՝ զի ի հարկէ՛ էակ է աստուած. և հարկն զմիննն ունի ի հակադրութեանց. այսինքն *կամ* զգոլն *կամ* զչգոլն: - 168. Եւ թէ է զօրութիւն ի նա՛, լինի յանկատարութենէ ի կատարելութիւն եկեալ, *կամ* հակադարձեալ. որ է՛ անհնարին հերձուած: - 168. Իսկ անեղ և պարզ էութեանն պատշաճի միայն նմանապէս համեմատութեամբ. զի է կոչի աստուած, ըստ այնմ «ես եմ որ էն». և ո՛չ ըստ այնմ որ բաժանի ի գոյացութիւն և ի պատահումն. որպէս հոմանուն *կամ* փաղանուն. *կամ* ի միոջէ և առ մի. որպէս ընդհանուր էակն է՝ բաժանի առ մեզ: - 171. Եւ ո՛չ թիւ պատահական *կամ* բան տարալուծական. այլ մի երրեակ. և երրեակ մի. ըստ որում սկիզբն է թուոց՝ և ո՛չ թիւ. և բաժանեալ յա՛յլ էակաց: - 171. Իսկ Առինչ կոչի, ո՛չ որպէս առ մեզ առինչք են մակագոյեղքն. այլ գոյացական, *կամ* բաղդատական. որպէս ծնօղ. ծնեալ. բղխօղ. բղխեալ. *կամ* արարիչ և տէր արարածոց և ծառայից: - 172. Իսկ Կալ՝ ո՛չ զկալն *կամ* զնստիլն մարմնապէս. այլ զհաստատիլն անշարժ էութեամբ. զի ո՛չ շարժի. ո՛չ բնութեամբ, ո՛չ կամաւ, և ո՛չ տեղեաւ: - 172. Այլ գոյացութիւնն է ունօղ բնութեանն, *կամ* ներքոյ կացեալ բնութեան որպէս մարդ: - 174. Իսկ պատահական տեղի է, յորում նեստեալ ոք՝ կարէ՛ թողուլ զայն և լինիլ յայլ տեղւոջ. որպէս ի վեր *կամ* ի վայր: - 174. Իսկ անմարմնոյն ո՛չ է տեղի մարմնական. որպէս աստուծոյ *կամ* հրեշտակաց. *կամ* հոգւոց. զի անպարագրելի են: - 174. Իսկ աստուած արտաքոյ է սոցա. զի ո՛չ է սահմանեալ և ո՛չ պարագրեալ և ո՛չ կալեալ յիմեքէ. ո՛չ իմացմամբ և ո՛չ տեղեաւ *կամ* մարմնով: - 174. Նախ՝ զի սոքա անմարմինք են ըստ ինքեան. այսինքն քանակ, որակ, և այլքն. և յանմարմին էութիւնս ո՛չ տեսանին. որպէս ի հրեշտակս *կամ* ի հոգիս. զի նոքա ո՛չ ունին ձև. որակ. քանակ. և զայլսն: - 175. Զայս և սովո՛ր են առնել մարդիկք առ մերձաւորս և սիրելիս անընդմիջաբար խօսին. և առ հեռաւորս *կամ* ատելիս գրով *կամ* միջնորդով: - 177. Չորրորդ՝ վանկն *կամ* փաղառութիւնն: - 177. **Նոյնպէս և այբն խառնի ի թաւ և ի լերկ, ի սուղ և յերկար, և միաբանի ընդ նոսա, և ի մի բնութենէ իւրմէ ո՛չ որոշի *կամ* այլայլի**: - 178. Եւ *կամ* բան, ցասումն, և ցանկութիւն: - 178. Ընդէ՞ր մի աշխարհ ստեղծ, և ո՛չ **բ**, *կամ* այլևս: - 179. Եւ արդ՝ այլ աշխարհն *կամ* լինէր որպէս այս, *կամ* այլապէս: - 179. Եւ եթէ գո՛յ՝ ցոյց թէ յորո՞ւմ ժամանակի եղև *կամ* ո՞ւր: - 180. Այլ և ո՛չ ունի տեղի մարմնական. և ոչ ի ժամանակի երեքմասնեան. այսինքն յանցեալն՝ ի ներկայս՝ *կամ* յապառնին: - 180. Հինգերորդ՝ թէ երկինքն ո՛չ էր բոլորակ՝ այլ քառանկիւնի *կամ* եռանկիւնի, յորժամ շարժէին անկիւնքն՝ յորմէ տեղւոջէ վերանային՝ մնային առանց տեղւոյ. և տեղի անկեանցն առանց մարմնոյ: - 183. Ապա ուրեմն ո՛չ երբէք մեծագոյն երևի աստղ՝ յորժամ է ի միջին կէտն՝ քան յորժամ է յարևելս *կամ* յարևմուտս: - 183. Ութերորդ՝ զի է՛ առանց պղտորման. այսինքն ձեան, *կամ* անձրևաց, խորշակի, և ցրտոյ: - 184. Զի հինքն զեօթն մոլորակսն՝ է տուն աստուածոց կոչէին... Զզօհալն Կռօնոսի. Զմուշթարին Դիոսի. Զմառեխն Արէսի. Զարեգակն Իլիոսի. *կամ* Զևսիլոսի. Զօհրայն. Ափրոդիտեայ. Զօտարիտն Երմեսի. Զլուսինն Սելինի: - 190. Երրորդն է աստուածութիւնն. *կամ* կեանքն յաւիտենից: - 195. Իսկ ամառն նորին նման. զի հունձք է և կատարած գործոց բարեաց. և ո՛չ ժամանակ սերմանելոյ *կամ* բուսանելոյ: - 198. Ուսաք յիմաստնոց թէ՝ ի բաժանիլ լեզուաց **հբ** տանուտերանց, և ի գնալն յիւրաքանչիւր տեղիս ի հեռու *կամ* ի մօտաւոր աշխարհս. զօրն զայն տարեմուտս կարգեցին. և ուսուցին որդւոց իւրեանց պատուել զօրն զայն տրօք ընչից: - 200. **Իսկ աղուանից ամիս Նաւասարդուլ. որ է՛ նաւասարդացի. այսինքն ի թոռանց է. յուստերաց *կամ* ի դստերաց**: - 201. **Եւ զորօրինակ՝ լիտր մի ցորեան, *կամ* այլ ինչ. յորժամ ձեռօքդ բաժանես և ցրուես զհատսն, ո՛չ մնայ կշիռն**: - 202. Այլ է՛ նշան փոխելոյ թագաւորաց. պատերազմի. և սովոյ. *կամ* այլ ինչ խռովութեան երկրի: - 203. Սա՛ ոչ դառնայ ի ամպ *կամ* ի անձրև. այլ մղի ի վայր կոյս և մնայ մերձ երկրի: - 204. *Կամ* են **բ** հողմունք ընդ դէմ միմեանց հանդիպեալք և զմիմեանս պատեալք: - 206. *Կամ* ի յերկրի պատառմանէն ուժգին վերաբերեալք լինին: - 206. *Եւ կամ* հո՛ղմ է արտաքս թիւրեալ ի ճանապարհէ՛ իւրմէ. և ի խոռոչս երկրի մտեալ. և վասն թանձրութեան երկրին շարժէ զնա մինչև գտանէ ելս և ապա՛ դադարի: - 206. Արդ՝ յորժամ աղբիւրք ջրոյ՝ մերձին յերակն հրոյ որ է՛ ծծումբն, ջերմանան խիստ *կամ* թոյլ. մերձ *կամ* հեռի անցանելովն: - 208. Երկոտասաներորդ՝ կոչման *կամ* տեսութեան: - 209. Զի մարդն ունի զգլուխն ի վեր որպէս երկինքն. և զոտքն ի վայր որպէս երկիրս. վասն որոյ ամենայն ծորմունք բնականապէս զառիվա՛յր հոսին. իսկ ծառն ծռեալ ունի զգլուխն ի վայր, և զոտսն ի վեր. *կամ թէ* ծռեա՛լ ունի զոտս և զստեղունս յայս կոյս և յայն կոյս: - 214. Ապա ուրեմն երևի թէ ի մին տարրէ գոյացան ի հողոյ *կամ* ի ջրոյ: - 214. Նախ՝ զի թէպէտ զջուր *կամ* զհող միայն յիշէ աստուած. այլ երեքն ընդ միոյն առին հրաման...: - 214.

Ապա ուրեմն յերկրէ *կամ* ի ջրոյ գոյացեալքն ի չորս տարերաց եղեն: - 214. Սպիտակն որ է մաղասն ի բոլոր մարմին *և կամ* յերիկամունքն՝ է՛ ջրոյն: - 215. Եւ սողունք կոչին, *կամ* զի սողալով գնան. *կամ* սղացեալ են ոտիւք. *կամ* զի սո՛ւղ են ձայնիւ: - 216. Իսկ անասուն, զի անխօսուն են. *կամ* զի անսնունդ և անընտել: - 216. Իսկ գազան, *կամ* զի գզօ՛ղ են և պատառօղ. *կամ* զի զանազան և ահագին կերպարանք ունին: - 216. Ո՞րք և ո՞յք են բնութեամբ զէնք կենդանեաց... *Կամ* եղջիւրք. որպէս ցլուց: *Կամ* կնջիթ. որպէս փղի:*Կամ* սմբակ. որպէս ձիոյ: *Կամ* խայթոց. որպէս մեղուի: *Կամ* թոյնք. որպէս օձի: - 216. *Կամ* ճիրանունք. որպէս արծուի: *Կամ* մագիլք. որպէս աքաղաղի: *Կամ* կտուց. որպէս բազէի:*Կամ* թև. որպէս թռչնոց: *Կամ* թեփ. որպէս կոկորդիլոսին: *Կամ* մազ. որպէս ոզնին: *Կամ* ապաւառ. որպէս եփենոսին: *Կամ* մեծութիւն. որպէս ուղտու: *Կամ* արագութիւն. որպէս նապաստակաց: *Կամ* խաբէութիւն. որպէս աղուեսուց. զայս և զսոյնպիսիս ունին կենդանիք բնութեամբ ի խնամս ինքեանց: - 216. Վասն է՞ր է զի մարդս ո՛չ ունի զբնութեամբ զէնս. *կամ* զծածկոյթ: - 217. Զի թէ մարդն ունէր զբնութեամբ զէնս, որպէս թէ եղջիւր ի գլուխն. և սուր զատամունսն. ճիրանունք ի ձեռս. և սմբակ *կամ* կճղակ ոտիւք. և զայլսն, Նախ՝ զի գազանադէմ և դժւարատես լինէր ամենեցուն: - 217. Երրորդ՝ զի թէ ունէր ի բնութենէ զէնս *կամ* զգեստս. ո՛չ կարօտէր այլոց կենդանեաց. այլ և ո՛չ խնամէր զնոսա: - 217. Երկրորդ՝ վասն հպարտութեան մարդոյն. զի յորժամ խայթեսցեն զնա՝ ծանիցէ զտկարութիւն իւր. որ և զփարաւօն ո՛չ թէ առիւծք *կամ* առջք հարին, այլ ճանճք և մժղուկք տանջեցին: - 217. Երկրորդ՝ զի աշխատութեամբ զմիտսն լուսաւորեսցէ. *կամ* ճգնութեամբ չարչարեսցէ: - 218. Երրորդ՝ զի իմանալեա՛ցն է տունկ. այսինքն բանականաց. հրեշտակաց *կամ* մարդկան. և ո՛չ զգալի կենդանեաց: - 222. Եւ այլք թէ՝ իմանալի՛ է լոյս նոցա. *և կամ* յեթերէն: - 222. Ոմանք ի դրախտն ևս ասեն թէ տիւ և գիշեր լինի. *կամ* գարուն և աշուն. զոր մեզ չէ ընդունելի: - 222. Այլք ասեն թէ՝ խաղո՛ղ էր. *կամ* ցորեան. զի զգինին ետ գրաւական կենաց՝ և զհաց մարմնոյն: - 224. Այլ ա՛յս է ճշմարիտն. որ մինն ծառ էր կենաց՝ և մինն գիտութեան. և ի դրախտին այլ ո՛չ գոյր նման նմա. թո՛ղ թէ յերկիրս. ո՞րպէս ասեմք թէ այս է՝ *կամ* այն: - 224. Եթէ յամենայն ամի նորն զհինն փոխէ, այս լինի *կամ* թափիլ պտղոյն ի ծառոյն. *և կամ* մնալ հինն ընդ նորոյն: - 224. ...իսկ թէ թափի հինն. այս լինի *կամ* յատակս ծառոցն ծորեալ և ապականեալ. *և կամ* ամենայն ամբարեալ և ժողովեալ և բարձրացեալ քան զծառս դրախտին որ է անպատշաճ: - 224. *Եւ կամ* որպէս եւա ի կողիցն ադամայ: - 226. *Եւ կամ* ա՛յլ ինչ եղանակաւ որպէս ինքն գիտէ ամէնագէտ արարիչն: - 226. Նա՛խ՝ զի աշխարհ է *կամ* իմանալի, որպէս հրեշտակք. *կամ* զգալի, որպէս մարմնականք: - 231. Եւ թէ ոք ասիցէ, խառնուածոցն է այս, *կամ* յատուկ տեսակաց. որպէս ձայնք և տերևք և կենդանիք չեն նման միմեանց: - 237. Եւ թէ ասեն՝ ի պատահմանէ լինին. *կամ* յարուեստից, *կամ* ի բնութեանց գործոց: - 237. Նախ՝ զի ոչ ոք ճանաչէր զհայր *կամ* զեղբայր իւր. այլ ես զքեզ հայր գիտէի, և դու զայլ ոմն եղբայր. և լինէր մեծ շփոթումն: - 238. *Կամ* զպարտս յոչ պարտականէն խնդրէին. որպէս ա՛յժմ անիրաւք զայլ ոք այլոյ գրաւ առնուն: - 238. Եօթներորդ՝ զի ո՛չ կարէին ընտրել և խոտել զչարն և զբարին, և զսուրբն և զանսուրբն ի մարդկանէ, թէ գործ սորին է այս *կամ* այն. այլ անմեղութեամբ յարակցեին պղծոյն, և զխեղդ ոգւոց նորա ընդունէին: - 238. Եւ գլխաւո՛ր անդամք են սոքա. զի թէ յայլ անդամքն՝ այսինքն աչքն՝ ականջն՝ ձեռքն՝ և ոտքն՝ *կամ* այլն վնասի, մարդն ապրի: - 241. *Կամ* զօդուածք ներքին գլխաւոր անդամոցն և արտաքին մարմնոյն, որ մորթ և միս և արիւն և այլքն առ միմեանս յօդին՝ լինին նոյնքան: - 244. Վասն է՞ր մին մարդն սեաւ լինի և մինն սպիտակ, *կամ* շէկ, և այլն: - 245. Դարձեալ խորհուրդ մարդոյն ճանաչի յերից. այսինքն *կամ* ի կերպէ՛ և յօրինակէ խօսիցն և ձայնին: - 250. *Կամ* ի փոփոխիլ երեսացն: - 250. *Եւ կամ* ի շարժութեանց մասանց ոտից և ձեռաց և այլն: - 250-251. Արդ յա՛յտ է թէ որ գործ չառնէ հոգևոր *կամ* մարմնաւոր՝ վա՛տ ասի: - 251. Յոգին պատկե՛ր է աստուծոյ. և աստուածապաշտ մարդոյ՝ զաստուած քննել ո՛չ մարթի թէ ուստի՞ է. *կամ* ո՞ւր է *կամ* ո՞րչափ է. և *կամ թէ* ո՞րպէս է. *կամ թէ* մինչ ի յուր է: - 251. *Կամ* ի խառնւածոյ տարերացն՝ չարախառն և բարեխառն գոլ: - 251. *Կամ* ի հայրենեաց նմանութենէ: - 251. *Կամ* ի հրահանգից խրատողաց: - 251. *Կամ* ի չար ուսումնակցաց և բարեաց: - 251. Խնդրեմ ուսանիլ վասն բոլոր էութեան հոգւոյն թէ ո՞րպէս *կամ* զի՞նչ եղանակաւ գոյանայ: - 252. Եւ եթէ այս սուտ է հա՛րկ է ասել քեզ *կամ* մնալ ի թուփն, *կամ* փոխիլ յանէն և անգոյանալ որպէս ցուցաւ: - 253. Եւ դարձեալ՝ յիւրաքանչիւր կազմուած մարդոյ՝ յառա՛ջ է մարմինն քան զհոգին **խ** աւուրբ *կամ* **ծ**: - 253. Եւ թէ ոք ասիցէ, զի՞նչ է այս որ յետ **խ**, *կամ* **ծ** աւուր ստեղծանի բանական հոգին: - 254. *Եւ կամ* որպէս զօրք թագաւորի՝ նախ հասանեն յիջևանն, և թագաւորին ասի իջևանն. թէպէտ յետոյ գայ: - 255. *Եւ կամ* որպէս պատկերագործք մինչ զոտն և զձեռն նկարեն՝ ո՛չ երևի պատկեր մարդոյ. այլ ոտից և ձեռաց: - 255. *Եւ կամ* որպէս ծնեալ մանուկն ունի առ ինքն ծածկեալ զհոգին. այլ նա կերակրի և ապա զգայ. և յետոյ խօսի: - 255. Չորրորդ՝ զի ո՛չ է այն մեռելութիւն միայն՝ որ բանականն *կամ* շունչն պակասի. այլ և որ տնկականն պակասի. որպէս քար. ա՛յն է իսկապէս մեռեալ: - 256. Թէ ժամանակն ցուրտ

է *կամ* ջերմ. և երկիրն գէջ *կամ* չոր. և սերմն հոտեալ *կամ* աղանձեալ. և սերմանօղ ո՛չ լինի *կամ* ոչ սերմանէ. վասն որոյ ո՛չ բուսանի: - 256. Եւ թէ ասիցէ ոք, ապա երևի թէ և բանական հոգին ի ծնողա՛ցն հատանի *կամ* գոյանայ: - 257. Երրորդ` զի հատեալն մասնաւորի. այլ ընդ ծնանիլ զաւակին` ոչ ինչ պակասի ի ծնօղն. բան, *կամ* շունչ, *կամ* կենդանութիւն. այլ բոլորն է ի ծնօղն և բոլորն ի ծնեալն: - 257. Նախախնամութեամբ` ո՛չ որպէս փտելով *կամ* ծնանելով զմարմին ի մարմնոց. այլ յառաջ բերէ զպատկերն իւր որպէս ինքն գիտէ: - 258. Իսկ թէ զոսա **գ** տեսակս ասես, *կամ* զօրութիւնս, *կամ* մասունս բանական հոգւոյն, մի՛ է տեսութիւնն: - 259. Ոմանք ըստ ազգի և տեսակի իւրեանց հով և ջերմ` չոր և գէջ գոլով, փութով *կամ* յապաղելով բուսանին: - 261. *Կամ* ընդ **դ** տարերց ունի զխառնումն երկուց նիւթոց, այսինքն արուական և իգական: - 262. Իսկ թէ վասն է՞ր ասիցէ ոք` յղացեալ մնան յարգանդի` մարդն ինն ամիս, և այլ կենդանիք աւելի *և կամ* պակաս: - 262. *Կամ* ըստ ազգի իւրեանց, և կամ ըստ տեղւոյն և ժամանակին ցրտութեան և ջերմութեան և այլն: - 263. Նմանապէս ծառք և տունկք` որ յետ երից ամաց *կամ* չորից ցուցանեն զպտուղս` յայսմ թւոյ ո՛չ ելանեն արտաքս: - 263. Եւ թէպէտ զնանիր խոտոյ ասեն ի նոյն ժամն բուսանիլ և կատարիլ և խամրիլ, ի նոյն թւոյս ոչ ելանէ ժամուք *կամ* մասամբք: - 263. *Եւ կամ* որպէս մարդ կատարեալ բերելով ինքեան զ**դ** և զ**ժ** ինն խորհուրդ: - 263. Իսկ որք ի **խ** աւուրս ծնանին *և կամ* ի **ի**, որպէս հաւ. ունին նոքա զխորհուրդ չորից տասանց և չորից հնգից, ըստ **ե** զգայութեանց ներքոյ և **ե** զգայութեանց արտաքոյ որպէս ասացաք: - 263. Այլ և զգայականին յաւելեալ շնչականն և շարժականն և ցասմնականն ընդ ցանկականին` լինի **թ**. վասն որոյ ոմանք յինն ամիսս ծնանին *կամ* ի **ժ**: - 263. *Եւ կամ* ըստ ազգի իւրեանց և ըստ տեղւոյն և ժամանակին փութան և յապաղեն զծնունդն: - 263. Զի բոյսք մանունք և չորքոտանիք մանունք կարեն ի նոյն ամի զնմանն ծնանիլ ըստ վերոյ ասացեալ երրեակ թւոյ ամսոյ, *կամ* կրկին վեցեկի: - 264. Իսկ այլ նւազունքն *և կամ* յաղթանդամքն մարմնով` առաւել և նուազ: - 264. Զի մանունքն յամսօրէից և ի վայր, ի շաբաթս և յաւուրս և ի ժամս ըստ նոյն թւոյ կարեն զնմանն ծնանիլ. և առաւելքն առաւելեալ ամօք կրկին *կամ* երեքկին որպէս ասացաք: - 264. Եւ ի հր-էն մինչև ի մահ, *և կամ* ի **ճժբ** ամն, լինի զառամացեալ. որ է եօթնիցս վեշտասան: - 265. Իսկ թէ մարդ լինի շանադէմք, և այն ո՛չ է ի խառնուածոյ շանց, այլ նշան է հայրենեաց, *կամ* սպի անձանց: - 267. Իսկ դիւականն ընդդէմ այսմ` վասն մոլորութեան զանազան երևմունս ցուցանէ աղտեղութեան. *և կամ* զբարին խափանել ջանայ. որպէս ի չարչարանս տեառն վասն կնոջն պիղատոսի ընթերցեալ լինի. և որպէս գրէ սուրբն Նազիհոս: - 268. Նա՛խ` զի մնացորդք գործոց և խորհրդոց կերպարանին ի յիշատակարանս հոգոյն զոր ինչ գործեաց ի անցելումն, *կամ* խորհեցաւ վասն հանդերձելոյն: - 268. Երրորդ` ըստ հիւթին յաւելւածոյ` և պակասութեան մաղձիցն` ի ներքուստ *կամ* յարտաքուստ, ջերմ և ցուրտ և այլն, զնորին նմանն և զկերպարանն առնու առ ինքն: - 268. Դարձեալ` պատկերն ի կերպարանն լինի առեալ. և նմանն ի յորակն *կամ* ի քանակն: - 273. Եւ այս ներգործեալ եղև ի յադամ. *և կամ* առեալ ի քրիստոս. *և կամ* բնաւորեալ ի մեզ: - 275. **Չինգերորդ` կին, իբր թէ կողաբոյս *կամ* կողածին:** - 276. Այլ *կամ* իբր զիրեշտակս, *կամ* որպէս ի միոյ լուսոյ բազումք, *կամ* կուսութեամբ ծնունդ. որպէս սուրբ կոյսն մարիամ աստուածածին սրբութեամբ և կուսութեամբ ծնեալ փոխեաց զկարգ բնութեան ծննդեանս որ ի սերմանէ առն և կնոջ. զի սա՛ ծնունդ միայն ի մօրէ՛: - 280. *Եւ կամ* որպէս ճանապարհորդք հեռացեալք ի տանէ՛ յորժամ դարձցին վերստին ի տունս իւրեանց, նախ թողուն զվերջին բնակետղն ուստի դիմեցինն երթալ: - 280. Եօթներորդ` վասն նշանակելոյ զսուգ *կամ* զուրախութիւն: - 281. Այսինքն տեսութեամբն գոչէ՛. *կամ* զհոգին կոչէ արեան անուամբ: - 287. Վասն է՞ր նահապետքն ի **ռ** ամն ո՛չ հասին. այլ **թճ**, աւելի *և կամ* պակաս ապրեցան: - 290. Զի վասն առաջնոյն ասեն վարդապետք, եթէ ադամ ո՛չ եկաց ի դրախտին **ռ** ամ, *կամ* աւելի *և կամ* պակաս, այլ մի օր. մանաւանդ **է** ժամ: - 290. Նոյնպէս և անդրանիկ ծնունդքն աշխարհի էին նահապետքն որ նախ քան զջուրն, տևէին ի կեանս այս **թճ** *կամ* աւելի ամ, և ապա ծնանէին ի հանդերձեալ կեանսն մահւամբ ելիւք: - 290. Զոր օրինակ վարձ մշակացն է՛ մինչև յերեկոյն. այլ թէ հիւանդութիւն *կամ* այլ ինչ դիպի, հանէ՛ ի վարձուն և ի մշակութեանցն: - 291. Եւ ա՛յս է պատճառ յերկարելոյ և կարճելոյ կենաց. այսինքն արդարութիւնն *կամ* մեղքն որպէս ցուցաւ: - 292. Ինքն նմա՛ն էր կոթողի, *կամ* սագաշէն եկեղեցւոյ: - 293. *Կամ* լեարդն ի ներքոյ. սիրտն ի մէջն. և թոքն թեքև ի վերոյ: - 293. Եւ այլք ակն կայծ, *կամ* բիւրեղ: - 294. *Եւ կամ* ի գէշք մարմնոյ կենդանոյ ինչ: - 294. *Կամ* որպէս ասեն թէ` ներսէս անուն արուեստաւոր տապանին` շինեաց իւր տուն ի վերոյ կողմանէ. և զի ո՛չ էր հրամանաւն աստուծոյ` սատակեցաւ նա՛ անդ, և զնորա գէշն ուտէր ագռաւն: - 294. Երրորդ` զպնդագոյնն, որպէս ոսկր *կամ* եղջիւր` ո՛չ ուտեմք: - 296. Եւ դարձեալ` այլազգին զհոգին իւր սպանեալ է մեղօք. և մեռելոյ զենեալն ո՛չ ուտի. որպէս ի քարէ անկեալն *կամ* ի կարկատէ՛ հարեալն ո՛չ ուտի: - 296. Որպէս ասելն գաւազան, աւազան, սապոն, ամէն, *և կամ* ա՛յլ ինչ: - 297. Սէթ ջրարբ. *կամ* մոռացումն չարի: - 299. Վեցերորդ` նուիրեաց

մելքիսեդեկ զպատարագն և ընկալաւ զտասանորդն. որպէս քրիստոս պարգևէ՛ հաւատացելոց զշնորհս, և առնու զտասանեակս զկատարեալ և զբարի գործս. *կամ* զտասն բանեան օրէնս **ժ** զգայարանօք: - 301. Եօթներորդ՝ մելքիսեդեկ ինքնին մատոյց զպատարագն քաղցելոց և ծարաւելոց. որպէս և քրիստոս ո՛չ միջնորդօք հրեշտակաց *կամ* մարդկան, այլ ինքնին բաշխեաց զմարմին և զարիւն իւր՝ քաղցեալ և ծարաւեալ ազգի: - 301. Եւ տէրն ո՛չ ի ձեռս հրեշտակաց սերօբէից և քերովբէից, և ո՛չ միջնորդութեամբ մարդկան ընտրելոց նահապետաց մարգարէից առաքելոց *կամ* մարտիրոսաց: - 302. Զի ո՛չ յառնէ *կամ* ի սերմանէ այլ կուսական ծնունդ: - 305. Զի զինչէն ի գոյացութեան խնդիրն է. որպէս յասելն՝ զի՞նչ է, ասեմք՝ մարդ է, *կամ* կենդանի: - 311. Դարձեալ՝ ամենայն անուն որ կոչի՝ *կամ* նախ քան զինքն լինի յորմէ անւանի. որպէս հայրն կոչէ՛ զորդին իւր մարդ: - 312. *Եւ կամ* ի հաւասարէն. որպէս պետրոս. *կամ* ի վերջնոցն որպէս հիւսն: - 312. Ապա յա՛յտ է՝ զի աստուած ինքն ինքեան նախկին և վերջին՝ հաւասար *կամ* անհաւասար ո՛չ ասի. վասն այն իւր անուն ո՛չ դնէ: - 312. Այլ թէ վերջինքս կոչեմք նմա անուն աստուած՝ արարիչ՝ և այլն. ներգործութեանն է ցոյցք և ո՛չ թէ գոյացութեան *կամ* բնութեանն է յայտնութիւն: - 312. Զա՛յս նշանակէ է ասելն և ո՛չ բնութիւն *կամ* գոյացութիւն: - 312. Յամբերօղն յոբ յորո՞ւմ ժամանակի էր, *և կամ* յո՞ր ազգէ: - 320. Երանելին յոբ՝ էր ի ժամանակս մովսէսի. ճ ամաւ յառաջ՝ աւելի *և կամ* պակաս: - 320. Այն է, որ բովանդակ մարմինն այնպէս խոցոտեալ էր կեղով՝ և լուծեալ ի շարաւ և ի թարախ. որ ո՛չ կարէր յոտին կալ *կամ* սողալ ուրեք. և ո՛չ ըմբռնիւր յայլմէ: - 322-323. Դարձեալ գիտելի՛ է, զի յոբ կրկնելով զբանսն՝ ուղղէ՛ր զբարեկամսն և ընկրկէ՛ր զսատանայ. զի այսպէս ամենայն ոք կարէ՛ յաղթել սատանայի յորժամ զընկերն ուղղէ ի բանս *կամ* ի գործս *կամ* ի հաւատս և յայլսն. յայնժամ սատանայ թիւրի և հեռանայ: - 323. Իսկ արդարք աստ ի նեղութեան *կամ* վասն կրկին պատճառի: - 324. Եւ այսպէս ամենայն ուրեք հնարի սատանայ զի և զբանբասեալն *և կամ* զբանբասօղսն կորուսցէ: - 325. Երկրորդ՝ զի մի ինչ ի մէջ քո և աստուծոյ անասնական լիցի. բարկութիւն *կամ* ցանկութիւն *կամ* ա՛յլ ինչ: - 331. Դարձեալ՝ ամենայն որ ի լեառն աստիճանէ բարձրանայ որպէս զմովսէս *և կամ* այլ ինչ, պա՛րտ է սրբութեամբ պաշտել: - 331. Վասն է՞ր տկար զեռնօք տանջեաց զեգիպտոս, և ո՛չ առիւծ *կամ* արջ *կամ* այլ ինչ հրաշունչ կենդանեօք: - 333. Երրորդ՝ հարուածն է մունն որ է՛ մանր տիզ. *կամ* մոծակ. *կամ* մժեխ. ի ցուցանել զի մանրակծո՛ւ էին բարուք և խոցոտիչք բանիւք: - 334. Իններորդ՝ խաւարն շօշափելի. *կամ* զի թանրացեալ ըմբռնիւր շօշափելով. *կամ* զի շօշափելով ձեռաց և գաւազանաւ կարէին շարժիլ: - 334. Սոյնպէս և ամենայն մեղաւորաց կրկին է հատուցումն. այսինքն հոգւով և մարմնով. *կամ* աստ և ի հանդերձեալն: - 335. Կապոյտն օդոյն է գոյն. զի թէ ա՛յլ գոյն էր, վնասիչ և խափանիչ լինէր տեսութեանց. որպէս սպիտակ *կամ* սեաւ. այլ կապոյտն է ի հեշտութիւն տեսութեանց: - 342. Ուր բեմն է. և մէջ եկեղեցւոյն. և արտաքին գաւիթն. *կամ* ժամատունն: - 343. **Եւ այլքն պղինձ արծաթապատ. որպէս սիմքուֆտ, և *կամ* ոսկի**: - 343. *Կամ* որ զմեզ ազատեաց, և զթշնամին կապեաց: - 347. Չորրորդ՝ զի մի՛ ջնջեսցի ի հրոյ *կամ* ի ջրոյ ի քարի՛ գրեաց: - 349. Այսինքն մինչև **գ** ազգն ներեմ. *կամ* **գ** դարս. և ի չորրորդն ո՛չ դառնամ ի վրէժ խնդրելոյ. այլ հատուցանեմ զմեղս հարց յորդիս: - 351. *Կամ* զքրիստոսի քառասունքն պահեմք և զմովսիսին և զեղիային: - 353. Իններորդ, նոքա ծառայաբար մատուցանէին. ուստի յա՛յտ է զի ո՛չ կարէին նստիլ ի սրբութիւնսն *կամ* ի քաւութիւնսն. իսկ քահանայապետն մեր տիրապէս և աստուածաբար նստեալ ի յերկինս ընդ աջմէ աստուծոյ...: - 354. Այլ որք յամառելով յօրինակն՝ ա՛ղ խառնեն ի խորհուրդն, պա՛րտ է նոցա խառնել և ձէթ և մուրկ և խունկ և միս գառին. *կամ* զանգեալ ի կասկարայս, *կամ* օծեալ ի տապակի, զի զօրինակն կատարեսցեն. և հեռասցին ի ճշմարտութենէն: - 357. Չորրորդ՝ վասն փրկութեան ի հիւանդութենէ *կամ* ի պատերազմէ՛ փրկեալք, մատուսցեն ասէ պատարագ և նւէրս ընծայեսցեն ի սեղանն ի հոտ անուշից: - 358. Հինգերորդ, վասն մեղաց պատարագ, ի մեռելոտի *կամ* ի պիղծ ինչ մերձեցեալ. ոչխարով և թռչնով և նաշիով առանց իւղոյ և խնկոյ քաւէին: - 358. Վեցերորդ, վասն յանցանաց ի նուէրս սրբութեանցն, *և կամ* յօրէնս աստուծոյ, *և կամ* յընկերս վնասու...: - 358. Ութերորդ, վասն գոհութեան. հեռաւորն եկեալ *կամ* բարւոյ յաջողեալ: - 358. *Կամ* զի օտար հուր եդին ի բուրվառն որ չէր օրէն: - 364. *Կամ* զի արբեցան գինւով: - 364. *Կամ թէ* հպարտացան յիջաջել հրոյն ի վերայ սեղանոյն: - 364. *Կամ* զի անժամ խնկարկեցին: - 364. *Կամ թէ* յաւուրն կրկին էր խնկարկումն. յառաւօտն և յերեկոյն. և յառաւօտն խնկեալ էր ահարօն: - 364. Որպէս նախ քան զօրէնս, բնական քննութեամբ ընտրէին մարդիկ. *կամ* զանճոռնի մեծն, *կամ* զամենևին փոքրն, *կամ* զգարշն տեսութեամբ, *կամ* զվնասակարն, ուտելոյ պիղծ ասէին զսոսա: - 364. Հինգերորդ՝ մասն. որ է՛ գլխոյն հատումն ուր ամենայն զգայութիւնքն են. և թէ այլ ինչ մասն հատցի՝ *կամ* գլուխն ջախջախեսցի՝ ո՛չ է ուտելի: - 365. Եւ անհաւատն սպանեալ է զհոգին մեղօք. *և կամ* ունի զգործ իգական՝ պիղծ է: - 366. Նա՛խ՝ զի իցէ կենդանի յորմէ ելցէ արիւն. իսկ մեռեալն *կամ* անշունչ քար ո՛չ ունի արիւն: - 366. *Կամ* ջրայինն որ ո՛չ ունի զարիւն

շնչոյ, այլ զարիւն ջրոյ, ո՛չ զենի. զի զենումն նոցա հանումն ի ջրոյն է: - 366. Ապա յա՛յտ է թէ՝ որ անկանի ընդ քար *կամ* ի վիհ և մեռցի, ո՛չ է ուտելի: - 366. Վեցերորդ՝ դիտաւորութիւնն խնդրի թէ վասն որո՞յ է զենումն. զի թէ վասն աստուծոյ է *կամ* հոգւոյ, հասարակա՛ց է. իսկ թէ վասն մարդկան և կենդանեաց, կամեցողա՛ց է: - 366. Իսկ թէ ի տունն ի ժողովուրդս նորա. *կամ* յեկեղեցիս մեղանչեմք. յետ է ժամանակի փոխելոյ՝ որ է՛ է հասակ մեր. և է դար կենցաղոյս...: - 368. Երրորդ՝ ի ցաւոց *կամ* ի հովութենէ յաւելու: - 368. Եւ ի սոցանէ ո՛ր և իցէ, արտա՛քս է յեկեղեցւոյ և ի սրբութեանց, օր մի *կամ* **բ** *կամ* աւելի. և սրբի խոստովանութեան ջրովն: - 368. Եօթներորդ՝ սապատողն. կուզն. *կամ* ելուստ ի թիկունքն. որ ո՛չ կրէ զբեռն քահանայութեան հպարտութեամբ: - 370. Այն որ զինքն պատարագէ, *կամ* առանձին կրօնիւք, *կամ* հասարակ աղօթիւք: - 370. Այլ հոգեպէս՝ նաշիին է՛ մարմնական նուէրքն. *և կամ* չարչարանք մարմնոյ որ ի տօնս ճգնիմք...: - 375. Դարձեալ զ**է** ժամանակն ասէ. *կամ* զէ հասակս. *կամ* է զգայարանօք մարմնոյս. *կամ* է զօրութեամբ հոգւոյս: - 376. *Կամ* ո՛չ լսել աղաղակի մեռոյ. իբր երկաթի երկինք ընդ մէջ գոլով: - 376. *Կամ* չողորմել կսկծողաց. իբր պղնձի մարմին զգեցողաց: - 376. Ապա թէ ոչ՝ հրեշտակք զայրացեալ հրով այրեն *կամ* զմարմինն *կամ* զհոգին: - 381. Զի գողացեալ մեղքն միայն խոստովանելով ոչ քաւի. այլ հատուցանել պարտ է զգողօնքն. *կամ* ի տէրն, *կամ* յազգականս նորա. *կամ* ի քահանայն. զի միջնո՛րդ է մեռելոց և կենդանեաց: - 384. Նոյնպէս այժմ ի նորս պարտ է խոստովանիլ վասն կանոնաց եկեղեցւոյ. և զգողօնսն վճարել *կամ* ի տէրն, *կամ* ի քահանայս, *կամ* յաղքատս: - 384. **Յմայն է՝ որ զտեսս աչաց *կամ* զձայն հմայէ՛. և զթռիչս և զկըռիչս հաւուց. և զձայն կրակի և զածառաց. և զդրան, *կամ* աքիս տեսեալ. *կամ* բէճ. *կամ* մուճակ. *կամ* այլ ինչ այսպիսի**...: - 388. Այն է որ թէ ի մասանց հոգւոյն և մարմնոյն այսինքն բանիւ՝ ցասմամբ՝ և ցանկութեամբ, *կամ* աչօք *կամ* լսելեօք *կամ* այլ ինչ գործով մեղանչէ դարձեալ, ուխտն ո՛չ եղև ամբողջ. դարձեալ նո՛ր պարտ է ապաշխարել: - 390. Ի գողունից *կամ* յաւազակաց ո՛չ է պարտ զի պիղծ է: - 390. Այլ և ոսկին ի յաւարացն թագաւորին է բաժին. և արծաթն թագուհւոյն *և կամ* իշխանացն: - 390. Եւ կէսն զնոսա, որք ունին թերութիւն ինչ ի հաւատս *կամ* ի վարս ինչ և յուսմունս: - 391. *Կամ* զղջումն՝ խոստովանութիւնն՝ և փոխարէնքն: - 392. Իսկ յետ մահու ա՛յնոցիկ հոգւոց որք զղջան *կամ* խոստովանին զմեղս, քաղաք ապաստանի է նոցա ի կայանս հոգւոցն տրտմութիւն և ցաւն վասն փոխարինաց մինչ մեռանի քահանայն մեծ. որ եկեղեցի սուրբ՝ պատարագաւ և աղօթիւք և ողորմութեամբ հատուցանէ՛ զպարտս նոցա և ազատին: - 392. ...վասն որոյ յայսմանէ ասեն ոմանք թէ՝ **գ** ամ *կամ* **խ** օր յամեաց ադամ ի դրախտին. որպէս ժողովուրդն ի յանապատին. *կամ* որպէս մովսէս ի լեառն: - 397. Ո՛չ միայն հրէի *կամ* հեթանոսի, այլ որք նուիրեն նմա զհաւատս ամբողջ սրբութեամբ՝ արժանի լինին շնորհացն նորա: - 398. **Զայն ցուցանէ որ պատճառաւ իրիք *կամ* պոռնկութեամբ *կամ* այլ ինչ յորժամ բաժանին, առանց ամուսնութեան մնասցեն թէ երկուքն են բաժանմանն պատճառ, մինչև հաշտեսցին**: - 401. Այլ կենդանի եղբօր, *կամ* փոքր եղբօր կինն, *կամ* գոլով զաւակ, անօրէնութիւն էր որպէս հերովդին. առ որ ասէր յովհաննէս, «չէ արժան քեզ ունել զկին եղբօր քոյ». զի դուստր նորա էր աղջիկն որ կաքաւեաց: - 402. **Զորօրինակ՝ ճրագ զտեսօղս լուսաւորէ՛, և զտկարս խաւարէ՛. *կամ* որք ի ճրագ նային տեսանեն լոյս. և որք յետս դառնան խաւարին:** - 403. Իսկ ի միասին կարգէ՛, զի *կամ* երկիցեն յանիծիցն, *և կամ* ցանկասցին օրհնութեանն և պահեսցեն զօրէնսն աստուծոյ: - 403. Այսինքն՝ զոր ծածկեալ է մեզ՝ բարի *կամ* չար ո՛չ կարեմք ասել: - 405. Երրորդ՝ յայտնել թարգմանի. իբր թէ յայտնի՛ է աստուած և ո՛չ ծածուկ *կամ* թաքուն: - 406. Այսպէս և օրհնութիւն մարդկան որ գերագոյն է քան զմեզ, շնորհակալութիւն է և գոհութիւն. որպէս սրբոց *կամ* թագաւորաց և այլն: - 406. Երկրորդ՝ զներքինս օրհնեմք, և աստուծոյ բարութեանցն կցորդեմք. ողորմութեան, պարգևաց, *կամ* այլ ինչ շնորհաց. և այսու եղանակաւ օրհնեմք զքահանայս. զժողովուրդս. զմեռեալս և զկենդանիս: - 406. Զի ասեմք՝ տե՛ս զհամն և զհոտն. տե՛ս զբանդ. տե՛ս թէ ջե՞րմ է *կամ* ծանր: - 407. Հինգերորդ՝ բարձրագոյն էր մովսէս քան զյակոբ. *կամ* հաւասար նմին: - 409. Յորոց յայսցանէ յա՛յտ է, զի եթէ ապաշխարեալ լինի արգելեալն. *կամ* վախճանեալ է կապօղն. այլ ոք որ գերագոյն է *կամ* հաւասար կապողին, կարէ՛ արձակել զնա՛: - 409. Այլ ո՛չ այսպէս. զի ե՞րբ եկաց և մնաց ընդ արև, *կամ* յառաջ քան զլուսին սողոմոն. այլ տէրն նորա: - 421. Նա՛խ՝ ըստ անուանն. զի սամփսոն՝ արեգակն *կամ* փրկութիւն լսի: - 421. *Կամ* զնոյն մեռեալ մարմինն ի խաչին. և զնոյն կենդանի գոլ աստուածութեամբն: - 423. Եւ այն որ վիճա՛կն է՝ ծիրանեգոյն հանդե՛րձ է. որ զսեղան հացին և զխնկոցն ծածկէին. և տեսութիւն *կամ* փրկութիւն թարգմանի: - 425. երիս զօրութեամբ ի վերայ խաչին. որ է՛ ձայնիւն և մարմնովն և հոգւովն որ էջ ի դժոխս. *կամ* **գ** գոյացութեամբ. այսինքն աստուածութեանն և հոգւոյն և մարմնոյն: - 427. *Կամ* երկոքեանն քահանայապետք էին: - 427. *Կամ* զի աքիմելէք **զճ** քահանայիւք սպանաւ ի սաւուղայ. և աբիաթար փախեաւ առ դաւիթ և ընդ նմա՛ էր զամենայն աւուրս թագաւորութեան նորա. և յանուանէ զնա՛ յիշէ: - 427.

Վիուկ կինն ո՞րպէս յարոյց զսամուէլ. *կամ* ո՞րպէս զառաջիկայն պատմէր: - 428. Ապա ուրեմն ի ժամանակիս յայս ընկե՛ր են սաւուղայ որք սակաւ մի կարծեօք հաւանին **երազոց *կամ* վիճակաց և ռամտեսաց** և այլոցն: - 429. Հինգերորդ՝ բանն որ ասաց սաւուղայ, *կամ* հրամայական էր, *կամ* մարգարէութիւն: - 430. Արդ եթէ սամուէլ յարեաւ և մեռաւ *և կամ* կինն, նա՛ ճշմարիտ եղիցի բանն. ապա թէ կինն ոչ մեռաւ և սաւուղ մեռաւ, սուտ խօսեցաւ: - 430. Նոյնպէս և դևք ի նրբութենէ տեսութեան իւրեանց՝ *կամ* ի լսելոյ՝ խաբեն, զառաջիկայն պատմելով: - 430. *Կամ* զի աղքատասէ՛ր էր դաւիթ և բազումք շրջէին ընդ նմա, վասն այն յեփուսացիքն նախանձեցան: - 431. *Կամ* զի օրէնքն գրեալ էր՝ կուրի և կաղի մի՛ դնել գայթակղութիւն, ասէին նախատելով թէ՝ որպէս ո՛չ կարես կոխել զդոսա, նոյնպէս ո՛չ կարես առնուլ զամուրն յեբուսայ: - 431. Երեսունենէ զօրավարք դաւթի. և **լէ** թիւ հնոյն օրինաց. և այլ նորոց կտակի. *և կամ* **իբ** գլխաւո՛ր են գրոց հնոց. և **ժ** բան օրինաց. և չորից աւետարանաց. և մինն առաքելական: - 438. *Եւ կամ* նշան խնդրել. *և կամ* զաստուած հարցանել և ապա՛ գնալ: - 443. *Կամ* ի մարդոյ մինչև ցշուն և այլն: - 443. *Կամ* փակեալ մնասցէ երկինքն: - 443. *Կամ* սուտ լիցի բան մարգարէին: - 443. Այրին նշանակէ զտարերս աշխարհի. զի այրի եղեն յանիծից պտղոյն. և *կամ թէ* բնութիւնն իւրեանց շարժէ ի լինիլ: - 444. *Կամ* առաջինն եղիա, երկրորդն եղիսէոս լինի քան զնա՛: - 445. *Կամ* զգործոց և զարդեանցն խնդրէ. որ է՛ սքանչելեաց և պատժոցն. որպէս եղիա: - 445. Եւ յետ նոյն քան ամաց շինութեան տաճարին աւելի *կամ* պակաս, նա՛խ արձակեցաւ եզր դպիր. և յետ նորա նէեմի: - 447-448. Նոյնպէս և բանն աստուած թէ կարի իսկ յառաջին դարս էր մարմնացեալ, որպէս յաւուրս նոյի՝ աբրահամու *և կամ* մովսէսի՝ լինէր կրկին վնաս: - 467. Վասն է՞ր բա՛նն մարմին եղև. և ո՛չ հայր *կամ* որդի: - 468. Չորրորդ՝ միտք և հոգին ո՛չ երևին. և բանն երևի և ի դուրս գայ. և մարդիկք տեսանեն և գրեն. վասն այն բանն մարմնացաւ, և ո՛չ հայր *կամ* հոգին: - 468. Այլ և ո՛չ ի մսոյ *կամ* յոսկերաց որպէս եւա ի կողէն: - 470. Զի *կամ* միաւորի էութիւն ընդ էութիւն. *կամ* պատահումն ընդ պատահման. *կամ* էութիւն ընդ պատահման: - 475. Եւ են որ էութիւնք են և էութեամբ շաղկապին. որպէս երկոքին նիւթք սոսընձով *կամ* երկաթով: - 476. Իսկ ըստ ժողովման, որպէս եկեղեցի. և անձն. հօտ. *կամ* քաղաք: - 476. Յետ այսորիկ երկրորդ միաւորութիւն սովորեցաք կոչել թէպէտ և ո՛չ իսկապէս՝ և զանհամանիւթից ոմանց. *և կամ* զիամանիւթից մարմնոց յարադրութիւն. որոց ընդ մէջ է մակերևութիւն միայն: - 476. *Եւ կամ* աննիւթ ինչ և անկերպ՝ ընդ նիւթական կերպարանաց ձևացեալ. յորում իւրաքանչիւրոցն էութիւնք անշփոթաբար երևին. որպէս պղինձ գնդացեալ. *կամ* քուէացեալ: - 476. *Եւ կամ* որպէս հուր ընդ գնդացելոյն ձևացեալ պղնձոյ: - 476. Երրորդ՝ որպէս բաժանեալ ի միմեանց՝ ո՛չ գոյ մարդ. այլ մեռեալ մարմին *կամ* մերկ հոգի: - 477. Նոյնպէս և յորոշելն ըստ ոմանց զաստուածն և զմարդ՝ ո՛չ է քրիստոս. այլ մարդ սոսկ *կամ* մերկ աստուած: - 477. Չորրորդ՝ թէ և ի մասնէ՛ կոչեմք երբեմն ի հոգւոյ *կամ* ի մարմնոյ...: - 477. Այսպէս թէ ուրեք մարդ միայն անուանի քրիստոս «զճշմարութիւն խօսեալ». *և կամ* «աստուած կնքեալ». ո՛չ ինչ ուրէք վնասէ զմիաւորութիւնն իբր մարդ սոսկ *կամ* աստուած միայն. այլ աստուած համանգամայն և մարդ խոստովանի միացեալ: - 477. Նա՛խ՝ զի մի՛ անընտել թուիցի մարդկան. զի թէ առ ժամայն ի ծնունդն եղեալ էր երեսնամեայ հասակաւ, առ աչօք համարէին զիրն. *և կամ* այլ ինչ: - 479. Ա՛րդ՝ եթէ նահապետքն ամենայն որ թճ ամ *կամ* աւելի և պակաս ապրէին՝ ո՛չ ալևորէին, ապա և ո՛չ տէր մեր յիսուս քրիստոս: - 480. Ո՛չ հատանելով զի անպատշա՛ճ էր բաժանիլ ի մարմնոյ *կամ* յարենէ նորա: - 486. Զի ո՛չ ասաց թէ որ ի դմա՛ է *կամ* դոքա ըստ բաժանողաց. այլ թէ դա՛. որ մի անձն բնութեամբ միացեալ նշանակէ: - 487. Այլ և խաչաձև ընթանայ նաւ ի վերայ ջուրց յորժամ լարէ հողմ զարմիռնն. *կամ* տարածեալ թևօք հասանին ի նաւահանգիստն: - 494. Դարձեալ ասեն հակառակքն, եթէ անապական է մարմինն, ապա ո՛չ է տարրական. այլ ի յերկնից բերեալ. *կամ* ինքն **ի** բնութիւնն իւր թանձրացեալ. որպէս ասէ եւտիքէս: - 500-501. Այլ ո՛չ ասեմք զբանն ի բնութիւնն իւր սառուցեալ, *կամ* զմարմինն ի յերկնից բերեալ: - 501. Դրունք և նիգք յետուստ են. այսինքն *կամ* սկզբնական և ներգործական մեղօք կապեաց յետոյ, *կամ* մեղօք և յուսահատութեամբ: - 504. Իսկ միջին դժոխք որ կոչի բանտ դժոխոց՝ է՛ միջակ մեղաւորաց. որք ունին հաւատ և ո՛չ գործք. որպէս չար հաւատացեալք. *կամ* գործք և ո՛չ հաւատ. որպէս թերահաւատք և անհաւատք: - 505. Եւ դարձեալ՝ դարձցին մեղաւորք անդրէն ի դժոխս թէ ի նոյն տեղի ըստ ոմանց, *կամ* յայլ տեղի տանջանաց ընդ գործոց հատուցման: - 508. Նաւակատիսն նորոգումն և տօն *կամ* ուրախութիւն թարգմանի: - 509. Նոյնպէս և որ ոք յայս օրս պահէ և յամենայն կերակրոց չուտէ, *կամ* միս ուտէ, ընդ դատապարտութեամբ է: - 510. Եւ զի **գ** է օր ի բոլոր տարին. *կամ* ամենևին պահք. *կամ* ուտիք. *կամ* միջակ. որպէս նաւակատիկք: - 510. *Կամ* որպէս ասեն ոմանք թէ երկու յաւազոյ և մի ի սերմանէ՛ գոյանան մարմինք ծկանցն: - 510. ...բայց մագդաղենացին ջե՛րմ էր ի սէրն քրիստոսի՝ եկաց զի ա՛յլ ինչ լուիցէ *կամ* տեսցէ: - 515. Եւ այսպէս սովորաբար խօսիմք, թէ յուրբաթի կէս օրն ելեալ ոք ի տեղւոջէ՛ մինչև գայ առ մեզ ի լոյս

կիրակէին *կամ* ընդ առաւօտն, ասեմք թէ **գ** օր է ճանապարհին. նոյնպէս և յարութիւնն քրիստոսի: - 516. Եօթներորդ, *կամ թէ* եգիտ ի նա երկեւան ինչ թերութեան վասն յարութեանն. իբր զի ասէ յայսմ գիշերի մերձեցայք յոտս իմ և ո՛չ հաւատացեր. վասն այն կրկին անգամ ո՛չ հրամայէ մերձենալ: - 517. Դարձեալ՝ զի հայր մարմնով ո՛չ երևեցաւ որպէս բանն մարմնացեալ. *կամ* որպէս հոգին սուրբ աղաւնակերպ և հրաձև: - 525. Եւ բաց յայսցանէ **գ** այլ մասնական *կամ* տեսական ասա. այսինքն բարոյական. բանական. վարդապետական: - 528. ...հրեշտակք և մարդիկք, *կամ* մարդկան ամենայն ազգ և ամենայն լեզուք, գայցեն ի կատարածի յերկրպագութիւն քրիստոսի. և անեզր յաւիտենիւ փառաւորեալ օրհնեն զնա: - 529. Այս է *կամ* սեռիւ. *կամ* տեսակաւ. *կամ* անհատիւ: - 533. *Կամ* որպէս բոլոր ի մասունս. *կամ* որպէս հոմանուն ձայն. *կամ* որպէս ի միջոջ և առ մի: - 533. *Կամ* մարդ ի հրեշտակէ՛: - 535. *Կամ* մարդ յաստուծոյ առաքեալ: - 535. *Կամ* հրեշտակ յաստուծոյ առաքեալ: - 535. վասն այն ո՛չ կոչին ճշմարիտ մարգարէ պարզաբար. այլ բաղադրեալ. որպէս մարգարէ բահաղու. *կամ* մարգարէ բարձանց *կամ* անտառին: - 536. Ո՛չ ամրոց, ո՛չ պարիսպ *կամ* զօրք *կամ* այլ ինչ: - 538. Զի քահանայն արդարութեանն աստուծոյ հրեշտա՛կ է. այսինքն յայտնօղ և թարգման ...ըստ յայտնութեան կամաց տեառն պարտ է որոշել *կամ* լուծանել: - 539. Եւ թէ ոք ասիցէ, ապա թէ զամենայն ոք առ հասարակ կապէ *կամ* արձակէ, այսինքն օրհնէ *կամ* անիծանէ, ո՞չ կատարի: - 539. Նա՛խ՝ թէ անկարգաբար կապէ. որպէս քահանայ զեպիսկոպոս *կամ* զկաթողիկոսս. *կամ* սարկաւագ զքահանայ. այս ո՛չ կատարի: - 539. Երրորդ՝ վասն ախտի. այսինքն փառաց *կամ* նախանաց. *կամ* ագահութեան ընչից. *կամ* այլ ինչ այսպիսեացս. ո՛չ կատարին կապանքն: - 539. Որպէս թէ զվերնագոյնն *կամ* զանարժանս *կամ* վասն ախտի ինչ օրհնել *կամ* ձեռնադրել. այլ զօր հոգին յայտնեսցէ զարժանիսն՝ նմա՛ կատարի: - 539. Իսկ առ ներքինս օրհնելն՝ իշխանութիւն և շնորհաց տալն թարգմանի. որ քահանայն *կամ* եպիսկոպոսն տայ. որպէս ցուցաւ ի վերոյ ի **իգ** գլուխն, **հե** համարն: - 540. Եւ թէ ոք ասիցէ, թէ վասն ուխտի *կամ* ագահութեան զանարժանս ձեռնադրեն՝ ո՞չ կատարի: - 540. Եւ արտաքոյ սոցա անկատար է օրհնելն *կամ* արձակելն: - 540. Եւ թէ ոք ասիցէ, յայտնեա՛ ապա զո՞րս պարտ է կապել *կամ* արձակել: - 540. Նոյնպէս և որք անբիծ են հաւատովք և սուրբ գործովք. *և կամ* որք զղջացեալ յետս դառնան ի մեղաց և ի հերձուածողաց. նոցա՛ է արձակումն և օրհնութիւնն: - 540. Յաղագս որոյ ո՛չ կարեմք զառաջնոյն հայրապետաց կարգ *կամ* զկանոնս զպահք *կամ* զայլ ինչ թիւրել և փոխել: - 541. Իսկ համակարգ քահանայք *կամ* եպիսկոպոսք զնոյն ոմն ընդէ՞ր ոչ կապեն *կամ* արձակեն: - 541. Ասեմք առ այս, եթէ համակա՛րգ են քահանայք *կամ* եպիսկոպոսք որպէս առաքեալքն. այլ ունին զվիճակ և ժողովուրդ այլ և այլ: - 541. Առաջին ժողովն եղև ի նիկիայ սրբոց հարց. զկնի **յժը**՝ *կամ* **յլ** ամի ծննդեանն քրիստոսի. և ի **ի** ամի թագաւորութեանն կոստանդիանոսի: - 542. Ասեմք թէ՝ պետրոս գլուխ է առաքելոցն՝ ո՛չ որպէս եպիսկոպոսն քահանայից. *կամ* կաթողիկոսն եպիսկոպոսաց: - 546. ...թէ զերկու քորս **բ** եղբարցն տալ. *կամ* զաանին քոյրն միւս եղբօրն. որպէս քո սուտ պետրոսին կանոն է, և ո՛չ ճշմարիտ պետրոսին. և զայլն լռեմ իբրև զամօթալի: - 548. Այսպէս ասեմք, զի որ ըստ ինքեան է ճշմարիտ և ըստ ինքեան բարի՝ առաւել է. և որ ըստ պատահման է ճշմարիտ *կամ* բարի՝ նուա՛զ է. վասն զի ըստ ինքեանն գոյացութեամբ և հարկաւո՛ր է. այսինքն անփոփոխ և միշտ: - 550. Այլ դաւանութիւն նոցա այս է. որպէս զի մի՛ լիցի ըստ նոցա աստուած մարդացեալ. *կամ* մերս բնութիւն ընդ աստուածութեանն միաւորեալ. որպէս ընդարձակապէս ցուցանէ աստուածաբանն կիւրեղ ի գիրս պարապմանց: - 552. Եւ յայսոսիկ միաբանութիւնս որ ըստ կանոնի՝ յաւէտ միաբանութիւն զայս է իմանալ՝ որ ըստ բոլորին օրհնադրութեանց սահմանաց *կամ* ըստ գլխաւորագունիցն լինիցի. և ո՛չ մասամբ միով միաբանեալք և բազմօք զանազանեալք. մանաւանդ թէ հակառակեալք և ընդդիմացեալք: - 552. Բայց պարտ է այնոցիկ որք ո՛չ գիտեն՝ և *կամ թէ* կամաւ տգիտանան՝ ցուցանել զմիաբանութիւն ազգիս հայոց առ այլ քրիստոնեայսն. զի գիտացեալ յամօթ լիցին յաղթեալք ի ճշմարտութենէն: - 553. Ա՛րդ՝ ի սոցանէ ո՞րք իցէ ճշմարիտ. *և կամ* հակառակք են միմեանց թէ ոչ, լուծանել աղաչեմ: - 555. Եւ այն զի խափանեցաւ գործ մարմնոյն, ի ժամանակէն *կամ* ի տեղւոյն *կամ* ի դիմացն պատճառեցաւ: - 556. այսինքն զի *կամ* ցանկանայ ոչ ցանկացեալ, *կամ* հրաժարի յոչ հրաժարելեաց: - 560-561. Զի *կամ* հրաժարէ՛ և թիւրի բանականաւ. ըստ այսմ է՛ նախանձ: - 561. *Կամ* թիւրի՛ ցասմամբ. և ըստ այսմ է՛ բարկութիւն: - 561. *Կամ* և թիւրի ցանկութեամբ. և ըստ այսմ է՛ ծուլութիւն. որ է՛ տրտմութիւն և ձանձրութիւն: - 561. Նա՛խ՝ զի ամենայն մեղք *կամ* ընդ դէմ իւր մարմնոյ է, *կամ* ընկերին. իսկ հպարտութիւնն է մեղանչումն ընդ դէմ աստուծոյ. որպէս սատանայի: - 561. Անպ մարգարէքն են *կամ* հրեշտակք. և աստեղք վերին դասքն: - 563. Երրորդ՝ ի յաստուած գիտութիւնն. որ եկեալ իցէ ի հաւատս ճշմարիտս. և գիտէ զքրիստոս աստուած ճշմարիտ. թողու և գործէ՛ զմեղս *կամ* զիաւատն: - 564. *Կամ* վտանգաւ. որպէս տգիտութիւնն: - 565. *Կամ* բարկացուցանելով զաստուած. որպէս կռապաշտութիւնն. և

այլք այլ ինչ ասեն: - 565. Չինգերորդ ըստ ուրին. թէ ուր գործեն զմեղքն. *կամ* ի վանք, *կամ* յեկեղեցի որ է տուն աստուծոյ. *կամ* ի գեօղ, *կամ* ի քաղաք, *կամ* ի պոռնկատուն: - 565. Նոյնպէս Առնելն *կամ* Կրել. ընդ դէմ բնութեանն առաւել ծանր է քան որ առնէ և կրէ ըստ կարգի բնութեան: - 565. Իններորդ՝ որ ո՛չ խոստովանի *կամ* թերի և անկատար լինի: - 566. Յիրաւի որք ո՛չ հաւատան թողութեան խոստովանութեան, ո՛չ թողցի նոցա աստ *կամ* անդ: - 566. Իսկ մահացուն մեղք է գլխաւորօրէն է. *կամ* ը որպէս ասացաւ: - 567. Եւ զի ո՛չ է որպէս մահացուն մեծ *կամ* փոքր. որպէս շնութիւն մեծ է քան զպոռնկութիւն. և մարդասպանութիւն քան զգողութիւն: - 568. Նա՛խ՝ զի գործ մեղաց է՛ ի զգայութիւնս ներքին *կամ* արտաքին: - 568. Եւ պատիժն ի հոգին *կամ* ի մարմինն: - 568. Դարձեալ զանազանին. զի գործ մեղացն է յայլմէ՛ առ մեզ՝ *կամ* ի մէնջ առ այլս. այսինքն ի պատրանաց բանսարկուին և ի չարաց ոմանց առ մեզ. և ի մէնջ առ ընկերակիցս մեր: - 569. Ծուլութիւն է հեղգութիւն հոգւոյ ոչ սկսիլ ի բարին. *կամ* տաղտկանալ ի սկսեալ բարւոյ և ո՛չ կատարել: - 570. *Կամ* այլ ազգ. սէրն է սկիզբն գործոց բարեաց, զի շարժէ՛ առ այն. որպէս ասեն վարդապետք՝ սէրն գործէ՛ մեծամեծս թէ է՛. և թէ դադարէ ի գործելոյն՝ ո՛չ է սէր: - 575. *Կամ* անկատար սիրով զմեզ. և կատարեալ զընկերն. և կատարելագոյն զաստուած: - 576. Վասն այն ասի արդարութիւնն ուղղութիւն կամաց. զի ո՛չ միայն է առանձնական զօրութիւն *կամ* առաքինութիւն. այլ և հասարակ և պարունակիչ ուղղութեան հոգւոյն: - 579. Զի՞նչ է արդարութիւն և զի՞նչ գործ նորա *կամ* մասունք: - 579. Ճշմարտութիւն է որ առանց փոփոխման ասին այնք որ են, *կամ* լինին, *կամ* լինելո՛ց են: - 579. Դարձեալ կոչին ծառայականք, զի և ի խառնուածոյ մարմնոյն գոյանան. որք ո՛չ հետևին միմեանց. զի որ ի խառնուածոյն ողջախո՛հ է, նա ո՛չ խոհեմ *կամ* արդար *կամ* արի կարէ գոլ: - 581. Եւ այսպիսիքս կոչին ծառայականք. զի ի հարկէ խառնուածոյ մարմնոյն լինին ողջախոհ *կամ* արի և այլն: - 581. Եւ քաղց արդարութեան է սաստիկ տենչումն արդարութեան. *կամ* ծայրագոյն բարւոյն: - 584. Իսկ թէ հարկաւոր ժամանակ հանդիպի զպատւական մասունքն միայն. *և կամ* զերեսս միայն բաւական է լուանալ: - 588. Այլ թէ արիոսեան լիցի *կամ* մակեդոնեան *կամ* նեստորական՝ մկրտեսցի: - 590. Չինգերորդ՝ զի համապատիւ ծնանիմք ամենեքեան. ո՛չ ոմն պատուով *կամ* անպատիւ. իշխան *կամ* իշխեցեալ. - 590. Այլ կնքահայր ո՛չ է պարտ առնել զայլազգին. զի ո՛չ ունի զհաւատն սուրբ, և ո՛չ է հրաժարեալ ի սատանայէ. վասն որոյ ո՛չ կարէ լեզու լինիլ տղային *կամ* երաշխաւոր. - 591. Վտա՞նգ են մեղք ծնողացն որդոց. *կամ* որդոց մեղքն ծնողաց: - 593. Այլ թէ ծնօղք որդւոց՝ *կամ* որդիք ծնողաց մեղացն կամակիցք և համախոհք լինին ի մեղս չա՛րք են ընդ նոսին…: - 593. Եւ վասն այն է գրեալ՝ յերրորդ *կամ* ի չորրորդ ազգս մեղաց վրէժ խնդրեսցի. յորժամ հայրն և որդին և թոռունքն զնոյն մեղս գործեսցեն: - 593. Եւ այսպէս պարտ է *կամ* զօրհնեալն դարձեալ օրհնել որ է սուտ. *կամ* ամենայն հացն ո՛չ է օրհնեալ այլ մինն: - 597. Նա՛խ՝ զի արիւնն հեղուկ նիւթ է. *կամ* ո՛չ է տալի որպէս այլ ազգք, և զրկել զժողովուրդն ի փրկական արենէն: - 598. *Եւ կամ* միաւորեալ ընդ մարմնոյն և տալ ժողովրդեանն: - 598. այլ ո՛չ յօրհնեալ հացէն և ի գինւոյն. այլ էառ ի սեղանոյն հաց և եթաց ի ջուր ինչ *կամ* ի սոսկ գինի՝ և ետ: - 599. այսինքն յի՞նչ տեղ *կամ* յի՞նչ ժամանակ գործեաց զմեղքն: - 601. Դարձեալ զգուշասցի զի մի՛ յամօթէ՛ *կամ* երկիւղէ՛ քահանային յուսահատութեամբ ծածկէ զմեղքն. - 601. …*և կամ* զմեղքն բաժանէ. և զկէսն մին քահանային ասէ և զկէսն մին: - 601. Թէ կրօնաւոր է՝ հարցանէ թէ ծոյլ եղեա՞լ է յաղօթքն. *կամ* անհնազանդ. թէ բղջախոհ. թէ յատուկ իրք ունօղ. թէ պճնօղ. թէ որոնօղ լաւ կերակրոց և ըմպելեաց. թէ քնափ և թէ կռւօղ: - 601. Նա՛խ՝ թէ խոստովանահայրն չունի իշխանութիւն արձակելոյ. *կամ* ընդ բանիւ արգելեալ է: - 603. Ապա և ո՛չ աղօթք և պաշտօն քահանայից *կամ* տուրք *կամ* պատարագք է օգուտ հոգւոյն ըստ քեզ որ է բնաւ սուտ և չար հերձուած: - 605. …զի բազում արգելմունք գոն պսակին. որպէս ազգակցութիւնն հոգևոր *կամ* մարմնաւոր. *կամ* տկարութիւն բնութեանն. *կամ* պոռնկութիւնն. *կամ* այսահարութիւնն. *կամ* ծառայութիւնն. *կամ* բռնութեամբն. *կամ* այլ ինչ այսպիսի պատճառ. որով բաժանին այրն և կինն: - 610. Եւ հեշտութիւնն է վասն որդէծնութեան, և որդէծնութիւնն վասն հեշտութեան, *կամ* ի պաշտօնն աստուծոյ: - 613. *Կամ* ի զանազան դիմաց և ազգաց. որպէս այր, կին, ծեր, տղայ, ժողովեալ կոչի մի եկեղեցի: - 613. Եւ այն զի պղծեալ տաճարի կարդամք. *կամ* զշարժեալ սեղանն հաստատեմք: - 615. Զի յորժամ մեղօք ինչ սրբութիւնս մեր ապականի, *կամ* շարժի ոք ի հաւատոյ, վերստին կարէ՛ հաստատիլ ի հաւատս, և դարձեալ կրկնել զխոստովանութիւն և զապաշխարութիւն: - 615. Եւ ա՛յն էր նշանակ չւելոյ բանակին *կամ* ժողովելոյ իշխանացն. *կամ* ամսամտից և այլ տօնից նոցա: - 618. Եւ նշանակէ՛ր կրկին փողն զերկու զանկակս, *կամ* զզանկակն և զժամահարն. *կամ* զփայտէն և զերկաթին: - 618. Եւ նոյնպէս **դ** անգամ յերեկոյն. ի լոյս զըւարթն, և յուղղեցին, և յերեքսրբեանն. *կամ* յարձակմանն խնկարկեն ոմանք: - 618. Նա՛խ՝ թէ ո՛չ գիտէ զկերպ աղօթիցն, *կամ* ծունր կրկնել, *կամ* զձեռն տարածել. և սոյնպիսիք ո՛չ մեղք են և ո՛չ արդարութիւն: - 620. Որով յա՛յտ է՝ զի ի կէս աւուրն որ է **ժբ** ժամն՝ աղօթելի՛ է

մեզ յամենայն օր. և զկէսն այլ՝ մարմնական հոգոց պարապիլ. գործոյ աշխատութեան՝ ննջելոյ՝ *կամ* այլ ինչ իրաց: - 623. Վասն է՞ր ի սկիզբն ժամուն ասեմք «Օրհնեա այս անուն» և ո՛չ թէ հրամայեա՛ *կամ* աղօթեա՛: - 624. Իսկ թագաւորքն առաջին և վերջին. զի կիրակին է թագաւորելն աստուծոյ. այժմ առաջին, և զկնի վերջին. *կամ* աստ կամողացն միայն, և անդ կամողաց և ո՛չ կամողաց: - 627-628. Եւ որ նա՛խ է վերջին տունն ի մեսեդի *կամ* կցորդ. այն է զի քրիստոսիւ դարձաք յառաջինն և ի բարձրագոյնսն. ուստի ադամաւ խոնարհեցաք...: - 629. Եւ որ՝ քան զայս աւելի ասեն, որպէս տնօրինեցար. *կամ* ընծայեցար. *կամ* քո տէրութեամբդ. *կամ* որ եկիր ի բեթանիա. *կամ* ի վերնատունն: - 634. Իսկ որ ասեն՝ հայր և որդի և սուրբ հոգի. *կամ թէ*՝ քրիստոս որ խաչեցար: - 635. Ի **Ն** և **Լ** ամն *կամ* աւել ապա՛ աւարտեցաւ: - 635. Իսկ քահանայն՝ յորժամ աղօթէ՛ *կամ* պատարագէ՛: - 635. Իսկ սարկաւագն՝ յորժամ քարոզէ՛ *կամ* խնկարկէ *կամ* ընթեռնու: - 635. Այլ ի պատարագն պարտ է բանալ զգլուխս որ պատարագիչն է ամենայն ոք որ և իցէ. թէ քահանայ և թէ եպիսկոպոս *և կամ* ա՛յլ ոք: - 635. Եւ որ սաղմոսն **ը** տուն է՝ *կամ* ա՛յլ նուազ, զփառքն և զայժմն վերջին տան շարականին տամք: - 636. ...նոցա փառ *կամ* կցորդ գոյ զկնի. և որք որիշ են՝ նոցա կցորդ ո՛չ ասի: - 636. *Կամ* անդրադարձեալ ի ներքուստ: - 640. *կամ* յառաջնոյն ի վերջն ընթանալ կարգաւ. *կամ* ի վերջնոյն յառաջքն: - 642. Զի՞նչ է նախ սաղմոսն և ապա՛ մարգարէ *կամ* առաքեալ: - 643. ...զի սուրբ գիրք *կամ* զառաջինսն պատմեն. որպէս մովսէսին. *կամ* զվերջինսն կանխաճառեն. որպէս եսայեայն և այլոցն: - 643. ...*կամ* մովսէս որ պատմեաց զօրէնսն աստուծոյ...: - 644. ...*կամ* միացաք ընդ քեզ հոգւով: - 644. *Կամ* որպէս յետ յարութեանն պետրոս նախ ետես զքրիստոս...: - 644. Երեք չուանն յեռեալ ի միմեանս մակդարձապէս, է՛ չորեքնիւթեայ բնութիւնս մեր ի տարերց խառնեալ. *կամ* շնչոյ մարմնոյ և հոգոյ խառնումն: - 645. Նոյնպէս և հոգւոցն ելեալ ի մարմնոց՝ այլ միջոց և արգելումն *կամ* խափան պսակացն չկայ: - 648. Եւ նոյն քան ուտիք. սակաւ ինչ աւելի *կամ* նուազ: - 650. Որպէս յաղուհացս զառաջին շաբաթն թէոդորոսի կոչեմք. և զմիւսն ղազարու. *կամ* այլ ինչ: - 650. ...եթէ ոք յանգէտս եկեր ի մսոյ յաւուր չորեքշաբաթի *կամ* ուրբաթի, **գ** շաբաթս պահեսցէ սրբութեամբ...: - 652. Վասն որոյ յետ համբարձմանն պահելի է զդշաբաթ և զուրբաթ. *և կամ* զինն օր մինչ ի հոգւոյ գալուստն: - 654. ...զի թէ աղտեղութիւն ինչ լինի խառնեալ արտաքուստ ի կալ *կամ* ի հնձան, սրբեսցին խղճմտանք մեր: - 654. Եւ դարձեալ՝ ի յարքայութիւնն երկնից այսպէս ըստ իւրաքանչիւր չափու և արժանեաց կարգաւորապէս պարգևէ աստուած զիմաստութիւնն. և ո՛չ անկարգ. *կամ* զրկելով. *կամ* աչառելով: - 656. Որպէս լեզուն մտաց՝ և ձեռքն սրտին է գործի. նոյնպէս ունկն կամա՛ց է. հնազանդութեան *և կամ* ոչ: - 658. Արդ՝ եթէ նախ զայն էր տուեալ, այսպիսի իմն հանդիպէր. *կամ* մնալով անփոփոխ՝ զրկէր զերկիր: - 662. Նա՛խ՝ յանպատրաստութենէ *կամ* ի պակասութենէ հարկաւոր պիտոյից. *կամ* յարտաքին ստահակութենէ օդոց: - 665. Իսկ վախճանեալն կատարեալ լսի. որպէս թէ ոք սկսանի երթալ ի ճանապարհ *կամ* ի գործ ինչ և ի յաւարտիլն կատարած ասի: - 666. Իսկ լի աւուրբ ասէ և ոչ ամօք *կամ* ամսօք...: - 666. Բարեաց՝ զի քաւեսցին փոշետեսակ յանցանք ինչ. *և կամ* զի պսակքն բազմասցին: - 668. Իսկ չարաց՝ առ հաւատչեայ տանջանացն. *և կամ* թեթևութիւն: - 668. Նմանապէս և յանկարծակամահ լինի, *կամ* ի խստութենէ ցաւոյն...: - 668. ...յորժամ ի գլխաւորագոյն անդամքն դիպին. այսինքն ի սիրտն, *կամ* ի լեարդն, *կամ* ի խելապատակն: - 668. *Կամ* ի պատահման է երևելոյ ինչ տեսլեան: - 668. *Կամ* ի վերինն խնամոցն. զի արդարքն դիւրաւ փոխեսցին ի կեանս: - 668. *Կամ* ի խիստ պատժէ անզղջից չարաց՝ իսկոյն սատակին: - 668. Յայս միտս՝ յորժամ փոշիմանիմք ի վերայ բանի *կամ* տրտմիմք, ատամամբք զմատն խածանեմք...: - 670. Երրորդ՝ զի կամօք և ուրախութեամբ ուղարկեմք ի քրիստոս և ո՛չ ակամայ *կամ* տրտմութեամբ: - 673. Օդ *կամ* կօշիկ յոտս, կուռ վառեալ զինու ընդ դէմ օդային թշնամւոյն: - 674. ...զի քահանայական աղօթիւք և պատարագօք *կամ* առաւելուն պսակքն, *կամ* ջնջին մեղք նոցա: - 674. Երրորդ, զի մի՛ կոխան լիցի *կամ* կերակուր գազանաց որպէս շաղիղ անասնոցն: - 677. Այլ և ամենայն աշխարհ տաճա՛ր է աստուծոյ. թէ ի դաշտի թէ յագարակի թէ ի տղմի. *կամ* ի ջուր սուզի, *կամ* ի գազանաց գիշատի, *կամ* ի ձկանց կլցի, արդարութեան ոչ ինչ վնասէ: - 678. Գիր իմոյ, *կամ* գերւոյ աման, *կամ* գերէ՛ զամէն: - 678. Այլ ստուգաբանի թէ՝ աստի շարժիմ, *կամ* շինիմ...: - 678. Իսկ տապանաքարն, Նա՛խ՝ զի մի՛ գործեսցի երկիրն այն յայլ ինչ գործ, *կամ* քակտեսցի վասն այլ մեռելոյ: - 679. Եւ ի հեռուստ տեսեալ զտեղին, զի յետ կատարածի մարմնով առնելո՛ց են իւրաքանչիւր ոք զփառս *կամ* զտանջանս: - 682. Եւ ո՛չ որպէս շաղակրատեն ոմանք մտացածին բանիւ. թէ երեք օրն՝ *կամ* յեօթն՝ *կամ* յամիսն՝ և *կամ* ի տարին ելանեն ի քաւարանէն: - 683-684. Այլ թէ ասեն՝ հաղորդադրամ, *կամ* խոստովանադրամ, խո՛րթ է. յագահութեանց երիցանց սահմանեալ և ո՛չ ըստ կանոնաց որպէս այլքն: - 684. Իսկ չարացն ոչ ինչ գիտեն. այլ զոր հրեշտակք *կամ* դևք նոցա պատմեն: - 685. Իսկ մեղաւոր հոգին դարձեալ ի ձեռն հրաշտակաց. զի աղաչէր զնա երևիլ. *կամ* ի ձեռն դիւաց կերպարանին նոքա: - 686. Այլք այլ իմն ասեն. իբր թէ իւրաքանչիւր մեղաւոր

հոգի ի գերեզմանս իւրեանց *կամ* ի յերկրի տանջին...: - 686. Իսկ արդարքն և մեղաւորքն միջակք` որք առին զօրէնսն և ըստ օրինացն գործեցին զբարիս. *կամ* սխալեցին...: - 687. Առաջին նման է այնմ որ ասեն զհոգին ընդ մարմնոյն ի հող լուծեալ *կամ* անդ տանջեալ...: - 687. Իսկ ի ներքոյ երկնից առ երկնիւ է կայանք հոգւոց կիսամասնեայ արդարոց այնոցիկ որոց պակա՛ս է արդարութիւն քան զմեղս *և կամ* առաւել: - 688. Որք աստ ունին զյաջողակ գործս բարեաց *կամ* ձախողակ. և նոյնպէս դասին յաջակողմն և ձախակողմն քրիստոսի: - 689. Յոգիք արդարոց *կամ* մեղաւորաց ունի՞ն այժմ զփառս *կամ* զտանջանս թէ ոչ: - 689. Ոչ մկրտեալքն *կամ* չարքն ո՞չ ունին տանջանս վասն սկզբնական *կամ* ներգործական մեղաց: - 690. Ոչ մկրտեալքն կամ չարքն ո՞չ ունին տանջանս վասն սկզբնական *կամ* ներգործական մեղաց: - 690. Որք ո՛չ թլփատեցան ի հինն և ոչ մկրտեցան ի նորս, *կամ* չարք ի մարդկանէ, ունին զդատապարտութիւնն զոր զրկելոց են ի դատաստանին զանազան տանջանս և ո՛չ այժմ: - 690. Ապա ուրեմն հոգին ո՛չ կարէ առնուլ զկատարեալ վարձս *կամ* զտանջանս: - 694. Քանևե, ամենայն ներգործութիւնք *կամ* ենթակայից են, *և կամ* անձանց. իսկ հոգին բաժանեալ ի մարմնոյն` ո՛չ է անձն և ո՛չ ենթակայ: - 694. Ապա հոգին առանց մարմնոյ ո՛չ ունի ներգործութեամբ ինչ վարձ *կամ* պսակ: - 694. Այլ յորժամ հոգին միաւորեսցի ընդ մարմնի և յերկուցն լինիցի անձն, յայնժամ կարէ՛ ունել ներգործութեամբ զփառս *կամ* զտանջանս: - 694. Քանևէ, զի թէ ամենայն ոք առնու այժմ զվարձս *կամ* զտանջանս, ապա ո՛չ գոյ յարութիւն...: - 694. ...և յետ մահու յոյս նոցա է՛ հանդերձ ստուգութեամբ գիտութեանն. *և կամ* տեսութեանն...: - 696. ...զի որք զպատիժ այսմ կենացս ակն ունին առնուլ` երկնչին ի չարեաց *կամ* սակաւ առնեն...: - 698. ...*կամ* ո՛չ է արժան միաւորիլ ընդ մարմնոյն...: - 699. ...զի մինչև ցօրն ցայն ասեն զքաւարանն. այլ առ ժամայն ի փառս *կամ* ի տանջանս: - 700. Եւ արդ` անգիտութեամբն ներելի՛ է. իսկ գիտութեամբն ապաշխարելի. իսկ չարութեամբ մեղքն է պատժելի. *կամ* աստ ժամանակեայ, *կամ* անդ յաւիտենական: - 701. Երկրորդ, որպէս մարմինն ոչ փոխի ի բարւոյ ի չար, *կամ* ի հակառակն. նոյնպէս և ո՛չ հոգին...: - 704. Եւ դաղմատերէն տիտան. այսինքն արեգակն *կամ* հսկայ: - 707. Եւ դարձեալ` հոգին և մարմինն ի միասին գործեցին զբարի *կամ* զչար. - 715. ...այլ արդ եթէ հոգին առանց մարմնոյ պսակի *կամ* պատժի` ո՛չ է արդար դատաստան. - 715. ...այլ պա՛րտ է զի յարիցէ և մարմինն և ի միասին առցեն զհատուցումն բարեաց *կամ* չարեաց: - 715. ...զի *կամ* իմանալիք են որպէս հրեշտակք. *կամ* զգալիք որպէս տարրեղէնք. *և կամ* յերկուց գոյացեալ որպէս մարդ. այսինքն ի հոգւոյ և մարմնոյ. - 715. Ասեմք առ այս, եթէ մարմին մարդոյ բաժանեալ ի հոգւոյ, և հոգին գնացեալ ի կայանս հոգւոց առ աստուած որ ետ զնա՛. և մարմինն ի հող լուծեալ *կամ* յայլ տարերս...: - 718. ...և թէ ի գազանաց և ի թռչնոց և ի ձկանց *կամ* ի մարդոյ ուտի, և նոքա ևս ի տարերս լուծանին: - 718. Իսկ վիժեալն ի յարգանդէ ըստ որում է սերմ *կամ* արիւն մօրն` ի մա՛յրն յարիցէ: - 719. Եւ թէպէտ մարմինն փոփոխի հասակաւ *կամ* հիւանդութեամբ, *կամ* մեղօք հոգին հիւանդանայ. դիմաւոր նշանս այս անփոփոխ մնայ: - 719. Եւ դարձեալ ոմանք ասացին թէ` ի յարութեանն մարմինք մարդկան օդային լինին *կամ* հողմային. զի երբեմն ի գրոց հողմ և օդ հոգի կոչի: - 720. *Կամ* ոսկի` արծաթ` ականս. զի արդարքն առաւել պայծառանան և ապա՛ բազմին ի սեղան հօրն երկնաւորի պաշտելովն ի քրիստոսէ: - 721. Չորրորդ պակասութիւն է` զի այժմ է՛ մարմին մեր թանձր և կոպիտ. այլ յայնժամ բառնի այս ի մարմնոյ և լինի անօսր և թափանցիկ. զոր ոչ պարիսպ *կամ* բանտ ըմբռնել կարիցէ: - 722. Եւ ա՛յս է պատճառ յարութեանն. զի ամենայն մարդիկ առնուցուն զվարձ *կամ* զպատիժ. *կամ* վասն իւրեանց գործոց, *կամ* վասն սկզբնականին: - 724. Երկրորդ` զի թէ արական մասն երևի` ոչ ինչ նախապատուի *կամ* էգն անարգի. զի մասունք անդամոց անդ ո՛չ է զազրալի: - 726. Թօթափիլ *կամ* խաւարիլ լուսաւորաց ո՛չ է իմանալ թէ ի կամարէ՛ երկնից անկանին *կամ* զգոյացական տեսակն փոխեն: - 728. Այսպէս և **դ** տարերք ըստ ինքեանց անապականք են. զի մասնաւորքն ի նոցանէ ապականին և դարձեալ ի նոսա խառնին. և այսոքիկ ըստ կամացն աստուծոյ են *կամ* մշտապէս: - 733. Յաւատացեալ արդարք. որք ըստ օրինաց հնոյն *կամ* նորոյս գործեցին զարդարութիւն. *կամ* որք սխալեցին և ապաշխարեցին զմեղս զղջմամբ խոստովանութեամբ պահօք աղօթիւք ողորմութեամբ և այլովք: - 739. Զի՞նչ է որ ասէ «օրհնեալք» *կամ* «անիծեալք». և ո՛չ թէ` ես օրհնեմ, *կամ* անիծանեմ: - 740. Յոգի և մարմինս է որպէս մագաղաթ. կամք և իմացումն դպիր և գրօղ. հաւատքն գրիչ. արտասուքն մելան. և գիրն գործք բարի *կամ* բան աղօթից: - 741. Որք որպէս գիրք յայնժամ բացեալք եղիցին. քանզի վարդապետութիւնք նոցա և օրինակք` ամենեցունց յայտնեսցին. ի յորս ամենեքեան իբրև ի գիրս տեսցեն թէ զի՞նչ պարտ էր առնել *կամ* խոտել ինքեանց: - 742. *Կամ* տնկական և զգայական և շնչաւոր գոյն: - 745. Չորրորդ զբարի և զչար գործս մեր առ միմեանս հաւասարել. *կամ* միտել ի չարս և ի բարիս: - 745. Եւ պա՛րտ է գիտել զի ի միոյ սեռէ բարութեանցն աստուծոյ` յառաջե՛ն առ մեզ ողորմութիւն և արդարութիւն. կրկին տեսակ *կամ* գործք *կամ* զօրութիւն. որպէս ի մեզ երկոքին ձեռք մարմնոյ. և որպէս իմացումն և կամք հոգւոյ: - 745. Եւ

որպէս մեք յարաժամ միտեմք ի գործ բարութեան *կամ* չարութեան. և գործ նորա միտէ՛ յողորմութեան *կամ* արդարութեան հատուցումն...: - 745. ...զի երբեմն ծածկէ՛ ողորմութիւնն զարդարութիւն. և երբեմն արդարութիւնն զողորմութիւն. և երբեմն հաւասար երկուքն յայտնի *և կամ* ծածուկ...: - 746. Եւ երբեմն միտէ՛. որպէս ի փրկել զբարիս *կամ* զչարս. և փարթամանալ բարեաց *կամ* չարաց: - 746. Երրորդ, հայի առ նոյն ինքն արդարապէս հատուցումն մանրամասն քննութեամբ բարեացն և չարացն. որք առաւել *կամ* նուազ ունին. *կամ* հասարակ յերկուցն կրից: - 746. Չորրորդ, կշիռն նշանակէ՛ զգործս մարդկան. ըստ կշռոյ օրինացն հաւասարել և հատուցանել. եթէ ըստ բնականին *կամ* ըստ գրոյն և աւետարանին. որում շատ տուաւ առաւել պահանջել: - 747. Եւ թէ ունիցին ըստ օրինացն հաւասարեալ ի գործս *կամ* ի հաւատս, և եթէ միտեալ և *կամ* նուազեալ, ըստ նոցին օրինացն հատուցանել. *և կամ* արտաքոյ օրինացն կորնչիլ ի յայսմ կշռոյ է հատուցումն: - 747. Եթէ ումեք տուեալ իցէ շնորհ հասարակ *կամ* յատուկ, որպէս մկրտութիւնն և հաւատքն. քանքար և տաղանդ. իշխան և առաջնորդ. մեծութիւն և ինչք. կեանք լոյս ամանակ և այլն ամենայն. այսու եղանակաւ կշռոյ հատուսցի: - 747. *Կամ* ցուցանէ զչափով տանջանս մեղաւորացն. որք չափով աստ տանջին, չափով կրեն զհանդերձեալ պատիժն. զի ըն դ պակասիլ ծխոյն՝ և հուրն նուազի: - 749. Նախ՝ զի *կամ* ննջելով հանգչին ի տանջանացն. իսկ անդ հատեալ է քուն յաչաց նոցա: - 750. Երրորդ՝ *կամ* գործիք տանջանացն նուազին. իսկ անդ հուրն է յաւիտենական որ ոչ պակասի: - 750. Չորրորդ՝ *կամ* տանջօղն դադարի. իսկ անդ հրամանն աստուծոյ է տանջօղ որ ո՛չ երբէք դադարի: - 750. Ո՛չ բնաւ, թէպէտ հայր տեսանէ զորդի *կամ* մայր զդուստր. *և կամ* զեղբայր և զայլս. ո՛չ միայն ո՛չ ցաւին, այլ ա՛յնպէս լինի հեշտալի, որպէս տեսանեմք զձկունս որ խաղան ի վտակս: - 754. Եւ վասն այն ասի արքայութիւնն աստուծոյ, զի պատուիրանօքն որ յաւետարանն *կամ* յայլ գիրս սուրբս գտանին, պահողացն արքայութեանն մուտ բացեալ լինի. և ներքին մարդս ամրացեալ հաստատի: - 754. *Կամ* փայտիս այսորիկ ոստք կարեն ասիլ միաւորեալ բնութիւնքն քրիստոսի. այսինքն աստուածութիւնն և հոգին և մարմինն: - 755. ***Կամ թէ* ոստք փայտիս այսորիկ ասին եօթանքս այսոքիկ. այսինքն՝ քրիստոսի ծնունդն, մկրտութիւնն, չարչարանքն, ի դժոխս իջումն, յարութիւն, յերկինս համբարձումն, և հոգւոյն սրբոյ պարգևումն:** - 755. Եւ քանզի մովսէս որ ջրային *կամ* ի ջրոյ հանեալ թարգմանի. թէպէտ երբեմն զօրէնս և երբեմն զտէրն նշանակէ. այլ աստ ոչ զօրէնս, այլ զտէրն գուշակէ՛. որ ի ջուրց մարդկայինս բնութեան ընկալեալ եղև: - 756. Եւ արդ՝ ի յաւարտիլ դատաստանին յորժամ ասէ եկա՛յք, վասն է՞ր իջանեն յերկիր, *կամ* ի դրախտն բնակին: - 759. Նմին նման և մեք յուսասցուք արժանաւորիլ տեսութեանն քրիստոսի. զի թէ և ի դժոխս իցեմք՝ ա՛յն է արքայութիւն մեր. և ո՛չ թէ յերկրի *կամ* յայլում տեղւոջ ըստ սրբոյն ոսկէբերանի: - 759. Զի ո՛չ զգալի գիշեր և ո՛չ իմանալի. մեղաց *կամ* անհաւատութեան *կամ* տգիտութեան գտանի անդ: - 761. *Կամ թէ* արագ որպէս ասայէլ որ հասնէր այծեման: - 761. *Կամ* լինէիր ուժեղ որպէս սամփսոն. որ զհազար այր ծնօտիւ իշոյն եսպան: - 761. *Կամ* լինէիր ազատ որպէս զօգոստոս. որում բոլոր աշխարհ ծառայեաց: - 761. *Կամ* առողջ որպէս զմովսէս. որում ո՛չ վատեցին աչքն և ո՛չ շարժեցաւ ատամն: - 761. *Կամ* երկայնակեաց որպէս զմաթուսաղայ. որ մերձ ի ռ ամն ժամանեաց: - 761. *Կամ* սիրելութիւն որպէս դաւթի և յովնաթանու. զոր սիրեաց որպէս զհոգի իւր: - 761. *Կամ* միաբանութիւն որպէս առաքելոցն. որոց էր սիրտ և անձն մի: - 761. *Կամ* ունէիր իշխանութիւն որպէս աղէքսանդրու. որ զասիա զեւրոպիա և զլիբիա ընդ իշխանութեամբ էարկ: - 761. *Կամ* լինէիր պատուեալ որպէս զյովսէփ. որում երկրպագէին եգիպտացիքն որպէս աստուծոյ: - 761. *Կամ* լինէիր անհոգ որպէս ենովք և եղիա որ այնպէս անհո՛գ են, որք ոչ ի մահու և ո՛չ յայլ ինչ պատահմանէ երկնչին: - 762. *Կամ* լինէիր այնպէս ուրախ որպէս զայն որ ի կախաղան ածեալ լինի՝ և յանկարծակի ի ճանապարհին թագաւորութիւն ընկալեալ լինի: - 762. Մեծութիւն այսմ ուրախութեան կարէ՛ զմտաւ ածիլ յայնմանէ, զոր սովո՛ր են ծնօղք յորժամ որդիք նոցա լինին եպիսկոպոսունք *կամ* թագաւորք: - 763. Որպէս գլուխ մարդոյ՝ զբարիս *կամ* զչարիս հատուցեալս անդամոց իւրոց՝ ինքեան համարի: - 763. Քանզի մարմինս ո՛չ ըմբռնեսցի *կամ* իւրն ծանրութեամբ *կամ* այլ մարմնոյ ընդդիմահարութեամբ: - 766. Ո՛չ բանն որպէս հալածու կաղապարեալ. *և կամ* մարմինն որպէս բոց ի հրոյ և ծուխ անօսր լուծեալ յօդդ: - 770. Ոչ բաժանեալ *կամ* հատեալ ի հօրէ և ի հոգւոյն. որպէս ո՛չ ջերմութիւն ի հրոյ *կամ* ի լուսոյ. *կամ* նկարագիր յէութենէ: - 770. Ա՛րդ՝ է՛ ինչ ի սմա հաւաքեալ ի լուսաւոր բանից վարդապետաց սրբոց ըստ գրոյն *կամ* իմացուածոյն: - 772. Զոր և ես զօրէն մշակաց բազմահաւաք պտղոց. *կամ* փունջ մի անուշահոտ բազմերանգ ծաղկանց. *կամ* չնչին թռչնոյ զխորիսխ մեղու. *կամ* որպէս զլոմայս այրւոյն տառապեալ գոյիւ: - 772. Ո՛չ իբր կարօտի բազմաց բաշխողի. *կամ* փորձողի փորձոյ սիրալի: - 773. *Կամ* զինչ անհնարին սաստ, եթէ ոք խոտեսցէ զսուրբ հոգւոյն խօսեցեալս ի գիրս սուրբս...: - 775. Եւ այսոքիկ որք երևին ընդ դէմ միմեանց, *կամ* առ այլս *կամ* երբեմն, ո՛չ փոփոխումն ինչ ցուցանեն անփոփոխելոյն. առ մեզ փոփոխելոց

ըստ արժանոյն գուք *կամ* հատուցումն. թէ աստ՝ թէ ի հանդերձեալն: - 779. Եւ ո՛չ է տարադէպ ցոյցք ականն արփիաւորի, զի ի միջօրեայ ժամու փոփոխումն մարմնոյ և ական արծակէ՛ ստուեր *կամ* լոյս. այլ ինքն միշտ լոյս գոլով ո՛չ փոփոխի: - 779. Նա՛խ՝ աղօթիցն ժամ. ո՛չ միայն յերեկոյս և ի վաղորդեան՝ ի հասարակն *կամ* է անգամ աւուր ըստ մարգարէին: - 779. Իսկ դժոխայինքն թէ և զղջան *կամ* խոստովանին, արտաքոյ սոցա՛ է. վասն որոյ ո՛չ հանդիպին թողութեան...: - 780. Այլ ո՛չ զամենայն պակասականքն կրեաց քրիստոս. որ է՛ հիւանդութիւն մարմնոյ և ապականութիւն. *կամ* մեղք հոգւոյ և տգիտութիւն: - 781. Դարձեալ ասեմ, թէ անունս այս՝ պակասութիւն, նոյն է որ լսի չարչարանք. զի յորժամ կրէ ոք զչարչարանս զայս ինչ *կամ* զայն, պակասի ի նմանէ այն ինչ *կամ* այն. այսինքն առողջութիւն, կեանք, և այլն: - 781. Զի թէ կորուսեալ էր, այսինքն բարձեալ ամենևին յազգէն ադամայ, ուստի՞ գոյր որդւոց նորա. *կամ* ո՞րպէս առ ջրհեղեղաւն բառնիւր բարձեալն: - 782. Դարձեալ, ամենայն շնորհք առ ո ոք և իցէ՝ բառնի վասն մեղաց. ո՛չ ըստ ունակութեան՝ այլ ըստ ներգործութեան *կամ* նշանակութեան: - 782. Այսպէս և ժանգ յանցանաց մկրտելոց և քահանայից՝ բառնայ զգործ՝ *կամ* զնշանակութիւն շնորհացն. իսկ յետ սրբութեան զղջմամբ՝ զիա՞րդ կրկնի ունակացեալն ի նմա՛: - 782. Իսկ որք զմի քանքար հաւատոյ *կամ* զմկրտութեանն շնորհի ի բաց կորուսանեն, ո՛չ զկնիքն խորհրդապէս, այլ զարժանն վարձու իրողապէս: - 783. Յորում թէ վասն է՞ր իննամսեայ ծնանին, *կամ* յաւուր **խ** շնչաբերին, և որպիսութիւնք նոցա: - 785. Եւ երկրորդն է լուսաւոր զօրութեամբ թափանցանց. գոլով ջրեղէն *կամ* պլօրեայ ըստ ոմանց: - 787. Ասացեալն նմանապէս և աստ կատարեալ. ո՛չ միայն յանդի հեռաստան, *կամ* աղալ յերկան: - 789

**ԿԱՄ (բայ) +** Եւ դարձեալ ի բաց պատառեսցէ զէութիւնն. որպէս թէ կէսն *կայր*՝ և զկիսոյն լինիլն կամեցաւ: - 36. Եւ յոչ էից՝ զի սակաւ հիւթն այն՝ ո՛չ *կայր* միս և ոսկր և ջիլ. կամ մորթ: - 37. Իսկ թէ ոչ յայնժամն մերձ՝ և ո՛չ այժմ հուպ քեզ, ոչ ես իսկ և ո՛չ *կաս*: - 37. Նաև ի կանոն երից սուրբ ժողովոցն՝ ընդ բանիւ արգելեալք *կան* նոքա՝ որ ա՛յլ կերպիւ քարոզեն և այլ կերպիւ ուսուցանեն քան զոր նոքա ուսուցանեն: - 64. Ասեմք եթէ՝ տէր ապաւէն եղև աստ մարգարէն. ո՛չ թէ փոփոխեցաւ ի տէրութենէն յապաւինութիւն, այլ *եկաց* մնաց տէր, և եղև ապաւէն: - 72. Նոյնպէս բանն աստուած *եկաց* մնաց բան, և եղև մարմին: - 72. Ո՛չ փոխարկապէս, այլ փոխատրապէս. այսինքն զի ի միաւորութեանն *եկաց* մնաց որ ինչ էրն, և եղև որ ինչ ո՛չն էր: - 75. Ո՛չ ասեմք մի ներգործութիւն որպէս թէ *չկայ* բարձրագոյն և նուաստագոյն: - 85. Եթէ զաստուածային անձն և զնորին բնութիւնն ասէք մի քրիստոս, դեռևս *կայր* յառաջ ասացեալ տարակուսանսդ. զի զաստուածային անձն և զբնութիւնն ասէք չարչարեալ և մեռեալ. զի քրիստոս խաչեցաւ և մեռաւ ըստ գրոց: - 89. Երկոտասաներորդ՝ զի ընդ բազումս բազմանայ, և ի միութեան իւրում *կայ* և մնայ ըստ միոյն օրինակի: - 110. Բարձրութիւն իմաստութիւնն է. որ գերազա՛նց է քան զամենայն միտս. և ամենայն ինչ մերկապարանո՛ց *կայ* առաջի նորա: - 129. Իսկ բանին ընդունարան է միտքն ի խո՛ր և ի հեռի *կացեալ*: - 131. Վասն այն աշխարհ ամենայն այժմ ի չարի *կայ*, և խաւարեալ զանազան մեղօք: - 139. Ա՛րդ՝ բնութեան նոցա պատշաճի բարձրագոյն տեղիք որ է երկինքն յորում ստեղծան. զի թէ *կացեալ* էին կատարելոց էին անդ: - 146. Ո՞ր քան *եկաց* յերկինս: - 147. Եւ ապա զի ցուցցէ թէ՝ չար խորհրդոցն վրէժ խնդրութիւն *կայ* և պատիժ: - 148. Երրորդ՝ զի *կայ* ի մարդս որ ի հարկէ՛ առնէ. իսկ աստուած առանց ամենայն հարկի է: - 156. Զորօրինակ՝ որպէս տղայ որ տեսանիցէ ցից ի յորմում, երթայ ի մօտ. թէ ամո՛ւր է՝ թողու. վասն զի ո՛չ կարէ հանել. և երթայ առ միւսն. թէ շարժի՝ ի մօտ *կենայ* մինչև հանէ՛: - 160-161. Նոյնպէս և սատանայ աներևոյթ մօտ՝ ի մարդն երթալ. թէ ամուր է հաւատն և կամքն՝ ո՛չ *կենայ* անդ, յուսահատի և թողու: - 161. Ապա թէ զկամքն երեւ՝ ուրախանայ և *կենայ* ի մօտն մինչև զմեղքն գործել տայ և հանէ ի բարւոյն: - 161. Ուստի յա՛յտ է զի ի լինիլն աշխարհի՝ նախագաղափար տեսութիւնն նոյնպէս *եկաց* մնաց առանց յաւելուածոյ և պակասութեան: - 169. Իսկ *Կայ*՝ ո՛չ *զկալն* կամ զնստիլն մարմնապէս. այլ զհաստատիլն անշարժ էութեամբ. զի ո՛չ շարժի. ո՛չ բնութեամբ, ո՛չ կամաւ, և ո՛չ տեղեաւ: - 172. *Կայ*՝ ըստ որում «*կայ* ընդ աջմէ աստուծոյ». և նստաւ ի փառսն հայրենի: - 172. Այլ գոյացութիւնն է ունօղ բնութեանն, կամ ներքոյ *կացեալ* բնութեան որպէս մարդ: - 174. Ասէ՝ երկի՛ր և *կա՛ց* ի կասկածանս. զի երկիւղ *կայ* անկանելոյ ի բարւոյն: - 210. Եւ առաջի *կացցէ* խնձորն մեզ օրինակ: - 213. Երկրորդ՝ զի ի հողն *կան* **գ** տարերքն ամբարեալք. որպէս երևին ուր ուրէք երակ հրոյ և երակ հողմոյ և երակ ջրոյ: - 214. Եւ *կայ* ի տունն՝ կատու. և խուզօղն խոզ: - 220. Չորրորդ՝ յա՛յտ է ի հնազանդեցելոցն որք *կան* այժմ ընդ ձեռամբ մարդկան. որպէս ոչխար, պախրէ՛, և այլն: - 220. Վասն է՞ր մարդն ինն ամիս, և այլ կենդանիք աւելի և պակաս *կան* յարգանդի: - 228. Ութերորդ՝ ո՛չ արար նախ զմարդն, զի մի՛ արարչակից գիտասցէ զինքն ոչ գոյիցն, և անկցի հպարտութեամբ. այլ գործօղ գոյիցն, զի *կացցէ* պահպանութեամբն...: - 231. Եւ օդն է ի թոքն. զի հանապազ ի շարժութեան *կայ* և փչէ՛ ընդ դէմ ջերմութեան սրտին: - 232. *Կայ* ընդ տընկոց: - 275. Տասներորդ՝ կին, իբր թէ կեանք. զի որպէս կենօք է տնել. նոյնպէս տեսակ մարդոյս ի ձեռն

կնոջ ծննդեանն տնէ՛, և *կայ* մնայ մինչ ի կատարած: - 276. Վեցերորդ՝ ո՛չ ևս համարձակութեամբ *կայ* առաջի աստուծոյ: - 280. Տե՛ս, զի յայտնապէս ցուցանէ սուրբն, զի թէ պահպանութեամբ *կացեալ* էին ի դրախտին, ո՛չ ևս ամուսնութեամբ լինէր աճումն: - 280. Եօթներորդ դարձեալ՝ առաջի աչաց *կայ* արարչին: - 281. Թէ *չկայ* շահ արծաթոյ: - 284. Երրորդ՝ զի կուսութեամբ *եկաց*. և այսոքիկ երկնայինք են և հանեն զմարդն առ աստուած: - 289. Ոմանք ասեն թէ՝ ռ ամ *եկաց* ադամ ի դրախտին: - 290. Զի վասն առաջնոյն ասեն վարդապետք, եթէ ադամ ո՛չ *եկաց* ի դրախտին ռ ամ, կամ աւելի և կամ պակաս, այլ մի օր. մանաւանդ է ժամ: - 290. Քանի՞ օր *կացին* ի տապանին: - 294. Ո՛չ կերին. զի թէպէտ ժողովեաց, սակայն ո՛չ կերին. այլ շնորհօքն աստուծոյ *կացին* որպէս մանուկն յարգանդի մօրն ապրի: - 294. Եւ երրորդ՝ զի մի՛ վասն աշտարակին ի նոյն տեղին մնասցեն՝ և աշխարհ ամենայն աւերակ *կասցէ*: - 298. Երկոտասաներորդ՝ զի որպէս իսահակ հնազանդ գտաւ հօրն մահո՛ւ չափ, լաւ համարելով զմեռանիլն՝ քան առանց հնազանդութեան *զկալն*: - 305. Երեքտասաներորդ՝ որպէս զհետ իսահակայ չոքան երկուք ի ծառայիցն և *կացին* ի բացուստ: - 306. Գոտին զօրութիւն նշանակէ որ էր ի մէջքն. այլ և ի յաղօթս *կայր* և գօտեաւ պնդեալ էր: - 311. Եւ այսպէս օրհնութիւն սոցա ընդ տեղւոյն իւրեանց *կայ* և մնայ մշտնջենաւոր յիշատակութեամբ: - 320. Քանի՞ ամ *եկաց* ի փորձութիւնսն: - 326. Եւ որք **լը** ասեն զփորձանսն՝ սոյնպէս թուեն. յետ հարւածոցն *եկաց* յոբ **բ** եօթանասուն. այսինքն **ճխ** ամ: - 327. Յայտ է զի յառաջ քան զհարւածն **h** ամաց էր. և **լը** ամ *եկաց* ի հիւանդութեանն. և այսպէս կրկին աճեցին կեանքն որպէս և ամենայն ինչքն: - 327. Եւ **խ** ամ ի մադիամ *եկաց*. և ի հանել զժողովուրդն՝ **խ** ամ յանապատին *եկաց*: - 330. Վեցերորդ՝ ձեռն հօր է՛ միածին որդին որ ել ի ծոցոյ հօր և էառ զօձաձև բնութիւնս մեր. և դարձեալ ել առ հայր, ի նոյն բնութենէն ո՛չ *կացեալ* ի բաց: - 333. Երկրորդ՝ ցոյցք է տկարութեան եգիպտացւոցն. որ ո՛չ կարացին ընդ դէմ *կալ* տկար զեռնոցն: - 333. Քանի՞ ամ *կացին* ի ծառայութիւն: - 337. Բոլորն ամենայն դճլ ա՛մ է յաւետեացն աբրահամու մինչև յելսն յեգիպտոսէ՛. այլ զերկու **ճե** ամն հարքն յերկրին քանանու բնակեցան. և **զբ ճիե** ամն որդիքն յեգիպտոս *կացին*...: - 337. Զի՞նչ *կայր* ի սրբութեան մէջն: - 346. Նա՛խ՝ ի դէմքն. զի գթութիւնն անմե՛ղ *կացելոցն* է. և ողորմութիւնն դարձելոց ի մեղաց: - 350. Իսկ երախայրին՝ որ է՛ *կալոյ* և հնձանաց առաջին չափն: - 357. Իսկ Մուրկ նորահաս, և Երախայրիք *կալոյ*: - 361. Երրորդ՝ զի յորում ժամու մտանէր մովսէս աղօթս առնել և խնդրուածս, աստուածախօսութիւնք լինէին ի միջոյ քերովբէիցն որ *կային* անդ: - 379. Այլք ասեն վասն դադանեանցն թէ՝ հոգիք նոցա մարմնով ի տանջանս *կային*. ուր ընկեղմեցան մինչև ցաւարումն դժոխոց. ընդ որս և զնոսա ազատեաց քրիստոս իջանելովն ի դժոխս: - 382. Վասն որոյ պա՛րտ է ընդ հրամանաւն *կալ* նոցա՝ յորմէ և առ որ զկապակցութիւն ունիմք եօթանցն ասացեալ: - 389. Այլ և փիլիպպոս **խ** օր արտաքոյ *եկաց* դրախտին: - 391. Իսկ է ի յայն խորհուրդն, զի որ ի պիղծ մերձենայր՝ է օր արտաքոյ բանակին *կալով* յերրորդ և յէերորդ օրն սրբէր, և ապա՛ մտանէր. վասն որոյ **գ** օրէք և **է** օրէք կատարեմք: - 391. Հինգերորդ՝ նոյն ինքն մարմինն սուրբ ո՛չ թէ հացիւ միայն *կայր* որպէս հասարակ մարդ. այլ բանիւն կենդանի ի նմա՛ միացեալ: - 397. Ութերորդ՝ մովսէս ի լեառն *եկաց* **խ** տիւ և **խ** գիշեր անսուաղ. և կերակրիւր բանիւն աստուծոյ. նոյնպէս և եղիա. նաև տէր մեր ի փորձութեան լերինն: - 397. Ասա՛ թէ՝ քահանայիցն հրամայեաց ի բաց *կալ* յամուսնութենէ յորժամ մտանէին ի տաճարն և ի խորանն. և յորժամ լսէին զօրէնս աստուծոյ **գ**օրեայ սրբեցան: - 404. Վեցերորդ՝ ի թաղումն մովսէսի միքայէլ սպասաւորեաց. որում սատանայ հակառակ *կայր* ներողութեամբն աստուծոյ: - 410. **Զայս նշանակէ թէ՝ յետ ելանելոյ հոգւոյ ի մարմնոյ և գնալոյ ի վերին շաւիղն, հակառակ *կայ* սատանայ և չար զօրութիւնքն ընդ նմա, տանիլ զհետ իւրեանց որ զչա՛րսն են գործեալ. և յարդարոցն յաղթին հրեշտակին օգնութեամբն. որպէս և անտօն ետես. զի իմացեալ և մեք զգուշասցուք այնմ**: - 410. Երկրորդ՝ և մի՛ փոքր *կասցի* օրէնքն, տեսանելով զլոյս երեսացն նւաղեալ: - 411. Եւ թէ պահեալ էր զպատւիրանն յաւիտեան անծերանելի էր *կացեալ*: - 411. Իսկ յետ մահուանն մովսէսի վերացաւ ամպն. և հրամայեցաւ ժողովրդեանն հեռու *կալ* կանգունս երկուց հազարաց վասն փառաց տապանակին և վասն զօրութեան նորա: - 415. Հինգերորդ՝ զի քրէական մեղքն ազգաջինջ առնէ. որպէս զդադան և զաբիրոն. զի ընդ մովսէսի և աստուծոյ հակառակ *կացին*, ազգօք և աղխիւք ընկղմեցան զի այլքն երկիցեն: - 416. Այլ սուրբն եփրեմ՝ զշրջանս երկնից *կացեալ* ասէ ընդ լուսաւորացն: - 416. Այլ ո՛չ այսպէս. զի ե՞րբ *եկաց* և մնաց ընդ արև, կամ յառաջ քան զլուսին սողոմոն. այլ տէրն նորա: - 421. Յայս միտս ի բերել ընծային ի սեղանն՝ է դասք քահանայից *կան* ի սպասու. և երգեն եղանակաւ. և քշոց և բուրվառ և զանգակ հնչէ: - 431. Յայս միտս ի կենդանագիր կուսին՝ ի ձախոյ գիրկս լինի փրկչական պատկերն. նոյնպէս և առ ի խաչին ի յաջակողմն *կացեալ*: - 441. Եւ յետ հիւրկանեայ ո՛չ ևս ի քահանայից ազգէն *կացին* օծեալքն առաջնորդք. այլ աննշանք ոմանք ամսօրեայք և տարևորք: - 449. Եւ թէ քանի՞ ժամս *եկաց* ի գերեզմանի: - 455. Եւ առ յովսեփայ խօսմանն՝ **գ** ամիս *եկաց* և հրեշտակն

ււետեաց: - 461. Եօթներորդ` որպէս այլայլական և փոփոխելի մարմինս *կայ* և մնայ անփոփոխ և անապական միաւորեալ ընդ հոգւոյն մինչև ցորոշումն: - 477. Իսկ հայաստանեայ քրիստոս որպէս ուսան ի սրբոյն գրիգորէ՞ անփոփոխ *կացին* ի նմին: - 482. Զոր օրինակ ի բարձր ուստէք քար հոլովեսցի, և որ մօտն *կացցէ* ասէ ցնա` երթալ ունիս մինչ ի ներքին վայր տեղիս և ապա դադարիս: - 497. Յորո՞ւմ ժամու յարեաւ քրիստոս. և քանի՞ ժամ *եկաց* մեռեալ: - 512. ...բայց մագդաղենացին ջե՛րմ էր ի սէրն քրիստոսի` *եկաց* զի ա՛յլ ինչ լուիցէ կամ տեսցէ: - 515. Եւ ոմանք ասեն թէ` երկու են մագդաղենացիքն. մինն գնաց և ի ճանապարհին ետես զտէրն. և միւսն *եկաց* և ի պարտիզին ետես: - 515. Իսկ թէ քանի՞ ժամս *եկաց* մեռեալ: - 515. Այլ որ ուղղապէս հանդիպիմք` ասեմք թէ **լ** ժամ մարմինն *եկաց* ի գերեզմանի. և հոգին **լգ** ժամ և կէս յամեաց ի դժոխս: - 515. Հինգերորդ` մարիամ կղէոպեանց որ *կայր* առ խաչին: - 517. Չորրորդ` **լգ** ամ յերկրի *եկաց*, զի ուսուսցէ զկենդանիս: - 520. Եւ այլք ասեն թէ` **խ** օր յերկրաւոր դրախտին *եկաց* ինքն և յարուցեալքն ընդ նմա. և մխիթարեաց զեղիա և զենովք: - 521. Յաղուհացն հանգստեան *չկայ*: - 527. ...որ եզր եղև հաւատոյ ուղղութեան. և հրամանաւ հերակլի հաւանեցաւ ժողովոյն քաղկեդոնի. *կացեալ* **զ** կաթողիկոսք նոյն աղանդովն որ են այսոքիկ. Եզր. Մովսէս. Անաստաս. Իսրայէլ. Սահակ. Եղիա: - 545. Մինչ *եկաց* երկրորդ լուսաւորիչն հայոց և կրկին կիւրղոս սուրբ իմաստասէրն յոհան. և լուսաւորեաց զեկեղեցի: - 545. Եւ վասն այն այլազգ ո՛չ հաւատան. զի յառաջն *չկայր* մինչ ի նա՛. և առաւել վասն այն անուանեցաւ լուսաւորիչ: - 549. ...զԹադէոս. և զԲարդուղիմէոս. և զՅուդայ յակոբեան. որ *կայ* ի յորմի. որ սեպհական քաղաք է հայոց: - 549. Եւ ի գալն յերկիրս հայոց, ետուն նմա օգնական զիւղն օծման զոր քրիստոս օրհնեալ էր. և զգեղարդն. և այլոց ազգաց *չկա՛յ* այս պարծանքս. զի մեր մեռոնս հանապազ և միշտ զնոյն շնորհ ունի: - 549. Իսկ մերս դաւանութիւն ամենայնիւ նոյնն *եկաց* մնաց զոր ունէր նախ ի սրբոյն գրիգորէ՛ լուսաւորչէ և ի նմանեաց նորա: - 551. Նոյնպէս և *Կալն* և Ունելն զամենայն մահու չափ մեղս. թէ գործեալ է և թողեալ. զի որ հաստատեալ է մեղքն յինքն, առաւել մեղանչէ: - 565. այսինքն չարութեամբն յորժամ կամքն կարէ՛ և գիտէ ընդ դէմ *կալ* չարի իմն, սակայն վասն չարութեան ընտրէ զայն: - 566. Դարձեալ խաղաղութիւն, սիրով առ հոմացեղսն *կալ* մնալ: - 585. Երրորդ, զի թէ *կայր* հնար որ ի ձեռն կնոջն տուեալ լինէր շնորհք, աստուածածին կոյսն մարիամ ընդէ՛ր ոչ եղև մերձ մկրտութեան որդւոյն իւրոյ ի յորդանան: - 589. Չորրորդ` զի սողոմոն յորժամ շինեաց զտաճարն` յաղօթս *եկաց* և նոյնպէս օրհնեաց և օծ. որպէս մովսէս...: - 615. Եւ յերեքին յաւետարանսն մերձ *կացեալ* խնկօք բուրելեօք: - 618. Եւ ինքն բազում ուրեք առանձին *կայր* յաղօթս: - 623. Երկրորդ, զի ի գոհութիւնն ամենայն չարք կործանին որ հակառակ *կան* մեզ: - 626. Եւ ի գուճ *կալն*, վասն կործանման մեղացն: - 628. Աստուած անուն ընդէ՞ր *չկայ*: - 631. Ապա ի բացեայ *կացեալ* և զձեռս համբարձեալ ասէ, Սուրբ աստուած Սուրբ և հզօր Սուրբ և անմահ որ խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ: - 631. Իսկ որք ի վերայ Երրորդութեանն ասեն` երեք վնաս *կայ* ի բանս նոցա: - 633. Տեսանէր ժողովուրդն ուր *կայր* աստուած, և ընդ ոտիւքն իբր զգործած աղիւս շափիւղայ. որ է՛ ակն պատւական. և աղիւսն խաչաձև է: - 639. ...և քաղաքացիքն նախ զարդարեն զինքեանս և զփողոցն և *կան* պատրաստ: - 646. Զի որպէս ի մէջ շաբաթուն և ի կիրակէին այլ միջոց օր *չկայ*: - 648. Նոյնպէս և հոգւոցն ելեալ ի մարմնոց` այլ միջոց և արգելումն կամ խափան պսակացն *չկայ*: - 648. Դարձեալ` մովսէս **զ** օր արտաքոյ ամպոյն և հրոյն *եկաց*...: - 651. Եւ դարձեալ` նոյ և ամենայն կենդանիքն ի տապանն *կացին* զբոլոր մի ամ և ոչ ինչ կերին. որպէս մանուկն յարգանդի: - 652. Հինգերորդ, **է** օրեայ սրբութիւնք բորոտացն և *կալ* արտաքոյ բանակին` ի պիղծ մերձեցեալք: - 653. Նախ այն է` որ հրամայէր մովսէս պղծոցն լուանալ զմարմինն և ողողել զհանդերձն և արտաքոյ *կալ* մինչև յերեկոյ: - 653. Այլ *կան* և սպասեն մեծի հարսանեացն քրիստոսի և կատարածի աւուր...: - 669. ...և նա ցաւօք և տրտմութեամբ և հեծութեամբ *կայ* անդ ի խաւարին բանտն ընդ այլ խաւարասէր հոգւոցն: - 669. ...զի նովին երկիւղիւն *կան* և սպասեն սոսկալի աւուրն այն. - 673. ...ապա և մարմինն անապական և հոգին անփոփոխ *կացցէ* յաւիտեան. նմանելով անապական և անփոփոխ մարմնոյն քրիստոսի: - 678. Եւ դարձեալ` ցուցանէ թէ այսպէս և հոգի նորա անշարժ *կայ* և մնայ ի յաւիտենական փառս և ի մշտնջենաւոր հանգիստն ամէն: - 679. ...և նոքա *կացին* յանապատ ամս **խ** և այլն: - 682. ...ոչ թողու արդար իրաւունքն աստուծոյ ելանել յերկինս. այլ *կան* և մնան իներքոյ. ակնունելով հանդերձեալ դատաստանին...: - 688. Հինգերորդ, ասէ աստուածաբանն գրիգոր` եթէ հաւանիմ իմաստնոյն բանի` թէ հոգի բարի և աստուածասէր յորժամ ի մարմնոյն արձակի, *կայ* և մնայ նմա բարին որ լինի: - 691. ...յայնժամ ի բաց *կացցէ* ի նմանէ հրեշտակն...: - 707. Զոր օրինակ նշան դրոշմի *կայ* ի մէջ քո` և անասնոյն` և տանն. զի ելեալ ի տանէ երթայ խառնի ի հասարակ նախիրն...: - 719. ...նմանապէս և մարմինք մեռեալք յերկրի և հոգիք ի կայանս իւրեանց ի միասին *կան* առհասարակ արդարոց և մեղաւորաց մինչ դատաստանաւն բաժանեսցին օդիքն և այծիք: - 721. Այժմ *կա՛լ* ասի և մարտնչիլ վասն հարսին եկեղեցւոյ:

- 736. Զի ի վերոյ *կացցէ* դատաւորն, և ի ներքոյ դժոխքն բացեալ: - 738. Յարութիւն մարդկան ի վայրկեան ժամանակի և յանկարծակի լինի որպէս ցուցաւ ի վերոյ. այլ զյերկարութիւն ժամու քննութեան դատաստանին, ոմանք ժամ մի ասեն. որքան *եկաց* ընդ ադամայ ի քննութիւն հարցմանց յետ յանցանաց նորին: - 747. Զի որպէս ձկունք ի ջուրս, այնպէս նոքա *կան* ի հուր: - 752. Եօթներորդ, որ ի տղայութեանն հասակէ՛ *կան* յաստուածպաշտութիւն, իբր զխոտս դալարի պտղաբերեն զիարիւրաւորն: - 757. Այսպէս և օդն յորս *եկաց* փրկիչն յետ յարութեանն, փոփոխեացէ զբնական նսեմութիւնն իւր և պայծառացի որպէս զեթերն: - 759. Եւ այնպիսի քաղցր է տեսութիւնն աստուծոյ, մինչ զի չարքն թէ կարէին՝ յօժարէին ի դժոխս *կալ* և զաստուած տեսանել. քան արտաքոյ տանջանաց լինիլ և զաստուած ո՛չ տեսանել: - 763. Զհոյ գիրն ա՛ռ ի բաց, աւատ ասի. ամենայնի դէպ ասեն թէ աւատ *կայ*: - 769. Դամպարք ի միում տան. և ուրուք շարժեցելոյ՝ ի նոցանէ լոյսն ո՛չ շարժի և ոչ բաժանի և ո՛չ հատանի թէ անջրպետ ոչ *կայցէ* ի միջի. և անդ ո՛չ է միջոց: - 770. Որ թէ ի բարձանց լինի պատերազմ անձրև օրէն փորձանաց, ի ներքոյ *կացցես* հաւատոցն և ապրիս: - 770. Եւ արդ, Ո՜ հաւատ մեծ պաշտելի լոյս իմ և տիպ. և գանձ անկողոպուտ. *կացցես* առ իս. յարգանդէ մօր իմոյ խուսափեալս ի ծոց քո: - 771. Իններորդ, հաւատով հնազանդի ոք օրինացն աստուծոյ. այլ դևն հակառակ *կայ* օրինացն և աստուծոյ. թէպէտ գիտէ զայն լինիլ ինքեան չար, այլ գիտութեամբ մեղանչէ: - 784. Թէ վասն զի՞նչ հարկի ամենայն անդրանիկ **Ե** օր աւելի *կայ* առ ծնողին: - 785. Փեռեկելով զերկուսին կիսազունդս ներքոյ և վերոյ և ի միջի հաստատ *կացելոյ* երկրի: - 788

**ԿԱՄԱԿԻՑ +** Այլ թէ ծնօղք որդւոց՝ կամ որդիք ծնողաց մեղացն *կամակիցք* և համախոհք լինին ի մեղս չա՛րք են ընդ նոսին...: - 593

**ԿԱՄԱԿՈՐ +** Տասներորդ՝ զի *կամակո՛ր* են ի չար շաւիղն. որոց բժշկութիւնն դժւարին է...: - 32-33. Եւ զայն որպէս թէ ո՛չ ունիցին. և այնու կոխեսցեն զգլուխ *կամակոր* օձին: - 331. Եւ կսկի՛ծ է անհաւատից. և կուրացոյց զօձն *կամակոր*: - 361

**ԿԱՄԱՅ +** Նա՛խ՝ զի ոչ *կամայ* էր և բռնութեամբ: - 415. Դարձեալ ասեն նոքա, զի թէ մարմին տն *զկամայն* ո՛չ կրէր, թերեկատար էր մարդեղութիւնն: - 502. Հինգերորդ՝ զի մեղքն զանազանի ի *կամայն* և յակամայն. ի գիտութեան և յանգիտութեան: - 556. Իսկ ըստ որակացն, *կամայի* և ակամայի. գիտութեան և անգիտութեան և այլն: - 746

**ԿԱՄԱՐ +** Հասարակ շարժումն է ըստ ութերորդ *կամարին* յարևելից յարևմուտս. իսկ յատուկ՝ յարևմտից յարևելս: - 12. Նմանապէս և հոմանունն է հաստատութիւնն ի ներքոյ ջրոյ. այսինքն **ը**երրորդ *կամարն*. և օդս առ մեզ որ ունի զջուրս ամպով հաստատեալ: - 184. Հրեղէն զլուսաւորսն ասէ. և ջուր զվերին *կամարն* ջրեղէն: - 188. Դարձեալ՝ հրեշտակք հրեղէնք գոլով՝ ընդ ջրեղէն *կամարն* գնալով ո՛չ շիջանին: - 188. Իսկ այլք ասեն թէ՝ վասն առաւել բարձրութեանն՝ լոյս արեգականն ո՛չ երբէք հեռանայ ի նմանէ. թէպէտ ի ներքոյ երկրի անցանէ. որպէս լուսինն թէպէտ ի վերին *կամարն* լինի, զլոյսն առնու յարևէն որ ի ներքին *կամարն*: - 222. Ո՞րպէս ասեն թէ լուսնոյ *կամարին* հաւասա՛ր է: - 222. յերկրորդ օրն, հաստատութիւնն և ջրեղէն *կամարն*. և ծովք. և ցամաք երկիր: - 226. Ոմանք ասեն միայն զլուսաւորս արգելեալ և *զկամարն* շրջեալ մինչ հասեալ ի նոյն կէտն: - 416. Եւ հաւատարիմ է այս. զի առ յեսու սքանչելիքն լինէր ի *կամարն* երկնից. և մի տիւն՝ ժամս **լզ**: - 416. Այլ մեր վարդապետք յերկինս և ի ներքոյ երկնից ասեն. որպէս և կալիստրատոս վկայն առ **ը**երորդ *կամարաւն* ուր են լուսաւորք և եթերային լոյսն: - 686. Զնոսա ասել գոլ առ **ը**երորդ *կամարն* երկնից. ամբարձեալ յիշխանութենէ սատանայի որք ի յօդս և ի տարերս միայն իշխեն: - 688. Թօթափիլ կամ խաւարիլ լուսաւորաց ո՛չ է իմանալ թէ ի *կամարէ* երկնից անկանին կամ զգոյացական տեսակն փոխեն: - 728

**ԿԱՄԱՐԱԶԳՈՒԹԻՒՆ +** Նախ՝ զլայնատարած մեծութիւնն՝ և զհաստատ *կամարաձգութիւնն* երկնից: - 26.

**ԿԱՄԱՐԱՁԵՒ +** Թէ *կամարաձևն* դէպ ի քունն է, նշանակէ զհեղգն: - 246

**ԿԱՄԱՐԱՌՈՒՆՔՆ -** *Կամարառունքն* թէ ի վերոյ շարակցեսցին՝ սակաւիմա՛ստ է. թէ վայր ի յռնգունսն հասցէ, սրամիտ է: - 246

**ԿԱՄԱՐԱՐ +** Երրորդն Միայնակեացք. որք կոչին *կամարարք*: - 608. ...զի գործունեա՛յ է նոցա և *կամարար*: - 669

**ԿԱՄԱՒՈՐ +** Դարձեալ թէ ի հարկէ՛ է՝ ո՛չ հետևի գով և պարսաւ ոմանց. զի սոքա *կամաւորա՛ցն* են և ո՛չ ակամայիցն: - 11. Մեղք *կամաւո՛րն* է. և յանցանք ակամայն: - 358. Դարձեալ՝ կրկին է ողջակէզն. մին վասն մեղաց որ է՛ *կամաւոր*. և միւսն յանցանաց որ է՛ ակամայն: - 362. Ասեմք եթէ, կիրքն բաժանի ի **դ**. այսինքն ի *կամաւորն* և յակամայն. յանգոսնելին և յանանգոսնելին: - 383. Ուրեմն յա՛յտ է զի կրեաց *զկամաւորն*. և զանանգոսնելին, որպէս և ծարաւն: - 383. Զի՞նչ է որ զակամայ մեղուցեալն քաւէր պատարագօք. և

*զկամաւոր* յանցաւորն սատակել տայր ժողովրդեանն: - 385. Ակամայն անգիտութեամբ է. որ ներելի՛ է և թողելի՛. իսկ *կամաւորն* անթողելին և մահու չափն է: - 385. Ո՛չ ասէ գնալ որ *կամաւորն* է. այլ երթալ, որ ակամայ քարշիլն է: - 389. Դարձեալ՝ մահն ի յադամ պատժաւո՛ր է. և ի քրիստոս *կամաւոր*. և ի մեզ հարկաւոր: - 495. Ասեմք թէ՝ ո՛չ զհարկաւորն, այլ *զկամաւոր* մահն կրեաց որպէս ցուցաւ ի վերոյ: - 497. Նոյնպէս և *զկամաւոր* մահն որ է՛ դեղ և առիթ յաւիտենական կենացն, նախ ինքն ճաշակեաց և ուսոյց հետևողաց իւրոց: - 497. Եւ զի ա՛յլ է *կամաւոր* մահն ի հարկաւորէն. ուստի յա՛յտ է զի հարկաւոր մահն է՛ պատիժ. և *կամաւորն* պսակ և պարգև: - 497. Արդ զայս *կամաւոր* մա՛հս կրեաց քրիստոս: - 497. Ասեմք եթէ՝ կրկին են կիրք. այսինքն *կամաւոր* և ակամայ: - 501. Եւ տէրն ի մարդեղութեանն *զկամաւո՛րն* կրեաց յինքեան և ո՛չ զակամայն. զի ո՛չ էր ի ներքոյ հարկի և ծառայութեան բնութեան որպէս մեք. այլ տէր և ազատ յամենայն կրից: - 501. Զի անեղ էութիւնն աստուծոյ անկրակա՛ն է *կամաւորի* և ակամայի: - 502. Իսկ հասարակ մարդիկ կրակա՛ն են *կամաւորի* և ակամայի. բնութեամբ և կամօք: - 502. Իսկ տէր մեր զի էր աստուած մարդացեալ՝ ո՛չ ունէր ակամայ կիրք. այլ *զկամաւորն*: - 502. Զի ըստ որում աստուած՝ ո՛չ կրէր ակամայ. և ըստ որում մարդ ճշմարիտ և մարմին բանին՝ կրէր *զկամաւորն*: - 502. Նա՛խ՝ զի բանական մարդ *կամաւորո՛քն* է մարդ, և ո՛չ ակամայիւքն. որպէս կատարեալ էր մարմինն ադամայ նախ քան զմեղանչելն: - 502. Այլ այժմ ասասցուք թէ ամենայն կիրք բաժանին ի չորս դէմս. *կամաւոր* և ակամայ. անգոսնելի և անանգոսնելի: - 502. Եւ ո՛չ զանգոսնելիսն կրեաց զի տեսա՛կ է մեղաց. ուրեմն ապա կրեաց *զկամաւորն* և զանանգոսնելիսն: - 502. Դարձեալ՝ մեղքն *կամաւո՛րն* է, և յանցանք ակամայն: - 555. Իսկ *կամաւոր* մեղքն գրա՛ծ է ի հին օրէնքն **իբ** գլուխն տես: - 564. Իսկ ունակութիւն մեղացն է ի մէնջ և առ մեզ. զի կամաւորապէս կրեցաք և *կամաւոր* պահեմք ի մեզ: - 569. Համբերութիւն է *կամաւոր* և միշտ տեսողութիւն մեծամեծ և դժուարին իրաց վասն օգտութեան և համեստութեան: - 580. Եւ դարձեալ՝ ողորմութիւն է *կամաւոր* ցաւակցութիւն յաղագս այլոյ թշուառութեանց: - 584. Նա՛խ՝ հասարակ աղօթքն է հարկաւոր. իսկ առանձնականն *կամաւոր*: - 623. Այլ թէպէտ առանձնականն *կամաւո՛ր* է, սակայն ի վերայ վանականաց որք են աբեղայք և կրօնաւորք, հարկաւո՛ր է վասն **դ** պատճառի: - 623. Որ և մեր նստելով իբր ի մետաղս *կամաւոր* դիպահոջ՝ շահապօնս կոչեցեալ ամրոցի: - 788.

**ԿԱՄԱՒՈՐԱՊԷՍ +** Եւ ահա՛ զմահ կրեաց *կամաւորապէս* և չարչարեցաւ: - 500. Իսկ ունակութիւն մեղացն է ի մէնջ և առ մեզ. զի *կամաւորապէս* կրեցաք և կամաւոր պահեմք ի մեզ: - 569

**ԿԱՄԱՒՈՐԻՄ +** Տասներորդ՝ գործ բութեան ո՛չ ինչ ունի մեղք. զի ըստ բնութեան գործելով ոչ ոք մեղանչէ ասէ փիլիսոփայն. իսկ կամացն գործ՝ մեղանչական է. վասն որոյ *կամաւորին* գով և պարսաւ հետևի: - 156

**ԿԱՄԱՒՈՐՈՒԹԻՒՆ +** Քանզի՝ ունիցի մարմինն Զգեղեցկութիւն. Զարագութիւն. Զուժգնութիւն. Զազատութիւն. *Զկամաւորութիւն*. Զառողջութիւն. և Զանմահութիւն: - 761

**ԿԱՄԵՑՈՂ +** Է և այլ իմն աննմանութիւն հոգւոյ ըստ իմացմանն. առաւել և նուազ. ուշիմ և ապուշ. չկամ և *կամեցօղ.* հեզ և յանդուգն. ցանկացօղ և ողջախոհ. ըստ բնական բարոյիցն որակացեալ. նման և աննման գոլով իրերաց: - 237. Վեցերորդ՝ դիտաւորութիւնն խնդրի թէ վասն որո՞յ է զենումն. զի թէ վասն աստուծոյ է կամ հոգւոյ, հասարակա՛ց է. իսկ թէ վասն մարդկան և կենդանեաց, *կամեցողա՛ց* է: - 366. Զի կա՛մքն հրամայէ զգործ հաւատոյն. զի ո՛չ ոք հաւատայ, եթէ ոչ *կամեցօղն*: - 572

**ԿԱՄԻՄ +** Իններորդ՝ եթէ չարն է յաստուծոյ, ապա և *կամի՛* զչարն...: - 14. Տասներորդ՝ եթէ չարն է յաստուծոյ և *կամի* զչարն, ապա զբարին ո՛չ *կամի*. ապա թէ զբարին ո՛չ *կամի*, բարին ուրեմն ո՛չ է յաստուծոյ: - 14. Երրորդ՝ ասեն թէ կամքն աստուծոյ ո՛չ է ընդունայն. և ո՛չ ոք կայ ընդդէմ կամացն աստուծոյ. վասն որոյ զորինչ *կամի*՝ այնպէս առնէ ..: - 16. Նախ եթէ կամացն աստուծոյ ոչ ոք է ընդդէմ. և որպէս *կամի* այնպէս առնէ. այլ չար ո՛չ *կամի* և ո՛չ առնէ: - 16. Դարձեալ ասեմք՝ թէ կամքն աստուծոյ ո՛չ է ընդունայն. զի զոր ինչ *կամի* առնէ. այլ *կամեցաւ* և արար զմեզ անձնիշխան և տէր գործոց մերոց. եթէ չար՝ և եթէ բարի: - 16. **Նախ թէ աստուած ստեղծ զկամքն բարի. և զբարին եդ առաջի *կամիլ*. իսկ նա անձնիշխանութեամբ հեռացեալ ի բարւոյն՝ գտա՛կ եղև չարին. զի չարն ո՛չ այլ ինչ է, բայց հեռացումն. կամ պակասութիւն բարւոյ. ապա ուրեմն թէպէտ բանն և կամքն է աստուծոյ, այլ *կամիլն* և ընտրելն զչարն՝ ոչ է յաստուծոյ, այլ կամացն և բանին**: - 16. Դարձեալ ասեմք թէ՝ աստուած ստեղծ զկամքն նաև զհրեշտակս և զմարդիկ բարի. և *կամի* զբարին և բռնադատէ՛ սիրել զբարին: - 17. Իսկ զչար ո՛չ *կամի*. և ո՛չ բռնադատէ ի չարն. այլ տանջանս և պատիժս եդ գործողացն զչար. ապա ուրեմն չարն ո՛չ է յաստուծոյ. և ո՛չ *կամի* զչար ուրուք: - 17. Ասեմք նախ եթէ՝ չարն ո՛չ է յաստուծոյ որպէս բարին. զի բարին ըստ կամա՛ց է. իսկ չարն թոյլ տալով է. և ա՛յլ է կամացն որ յօժարութեամբ է, և այլ է թոյլ տալովն որ իբր ի յո՛չ *կամացէ*: - 17. Ութերորդ ասեն, թէ աստուած ո՛չ *կամի* զչար, ապա կարեմք առնել ինչ զոր ո՛չ *կամի* աստուած..: - 17. **Ապա**

**յիմա՛ր են այնոքիկ որք ասեն՝ *կամիմ* առնել զիաճոյսն իմ. զի թէ յընտրելո՛ցն եմ՝ փրկեցայց. և եթէ ո՛չ՝ դատապարտեցայց**: - 18. **Որպէս յիմար հիւանդն ասիցէ, *կամիմ* ուտել և ըմպել զիաճոյսն իմ. եթէ առողջանալո՛յ եմ՝ առողջացայց. և եթէ մեռանելո՛յ՝ մեռայց**: - 18-19. Ապա թէ ոչ *կամեսցին*, յիրաւի պատժեսցին: - 19. Նախ՝ եթէ աղքատութիւն և մեծութիւն տիրելն և ծառայելն, է՛ յաստուծոյ. սակայն ոմանց *կամելով* և ոմանց ներելով և թոյլ տալով. այսինքն զբարի մեծատունս և զաղքատս *կամելով* առնէ. և ըզչարսն ներելով և թոյլ տալով առնէ: - 19. Այսպէս և զարդարս և զմեղաւորս. զչարս և զբարիս. զոմանս *կամելով* առնէ բարիս, և զոմանս թոյլ տալով առնէ չար. ապա ուրեմն ո՛չ են ի կամացն աստուծոյ չարութիւնք և ո՛չ մեղքն: - 19. Նոյնպէս և աստուած զամենայն մարդոյ փրկութիւն *կամի*. որք անձնիշխան կամօք համակամ լիցին աստուծոյ՝ փրկին. և որք հակառակին կամօք՝ ո՛չ փրկին: - 20. Որ զամենայն մարդիկ *կամի* զի կեցցեն: - 24. Վասն այն *կամեցաւ* աստուած զի ի տեսանելն զնա՝ **անի բաց դնելի սիրով** միացուք ընդ նմա: - 24. Երրորդ՝ զի *կամեցաւ* աստուած ո՛չ միայն ողորմութեամբ՝ այլև ըստ արդարութեան, վարձս նահատակութեան տացէ ըստ գործոցն համբերութեան: - 25. Երրորդ՝ զփոփոխումն ի խորհրդոց և կամաց մարդկան. զի բազում ինչ խորհիմք և *կամիմք* և ո՛չ կատարի: - 26. Եւ զի եդեր զկամքն միջոց, ի բա՛ց պարսպեցար յողորմութեանց նորին առ իւր արարածքս. զի եդեր ա՛յլ իմն *զկամիլն* և զկամքն: - 36. Եւ դարձեալ ի բաց պատառես զէութիւնն. որպէս թէ կէսն կայր՝ և զկիսոյն լինիլն *կամեցաւ*: - 36. Չորրորդ՝ այսու առաւել զմիակամութիւն ցուցանէ. զի մի՛ է կամք իւր և հօրն. վասն այն ո՛չ կարէ առանց հօր. զի ո՛չ է որդւոյ այլ կամք զի զոր ինչ *կամեսցի* բաց ի հօրէ արասցէ: - 45. Այլ այս է առնելն հօր՝ և նմին նման որդւոյ, այսինքն *կամիլն* հօր՝ և կատարեալն որդոյ զնոյն կամս: - 46. Ո՛չ թէ նոր իմն տեսակ և կամ նոր աշխարհ. այլ զեղելոցս նախախնամութիւնն. և ի նոյնութիւն կալն հայր *կամի* և որդի կատարէ՛. ոչ ծառայաբար և անուսումնապէս. այլ տիրաբար և հանճարով: - 46. Այլ ա՛յս է հոգւոյն բարեխօսելն, զի յորժամ *կամք* յաղօթս՝ ո՛չ գիտեմք զպատշաճն խնդրել. ապա հոգին անմռունչ տայ մեզ իմաստ զպատշաճն աղօթել: - 48. Դարձեալ՝ հոգին սուրբ ելանէ ի հօրէ և առաքի յորդւոյ. և ինքնիշխան կամօք շնչէ_զշնորհս իւր յորս *կամի* և որքան: - 66. Վեշտասաներորդ՝ աստուծոյ միա՛յն է ընդ *կամելոյն* և կարելն..: - 72. Իսկ յորժամ *կամեցաւ* արարիչն մարդ լինիլ, բանն աստուած իւրով կատարելութեամբն անձամբ և էութեամբ՝ ո՛չ մասամբ, այլ լրիւ միացաւ անճառապէս ի մարմնի: - 82-83. Իսկ զկամքն իմասցիս մի՝ վասն *կամելոյն* և վասն միաւորելոյն որ է սկիզբն և կատարումն: - 85. Այլ է՛ որպէս ի միոջէ և առ մի. այսինքն ի միոջէ բանէն՝ առ մի մարդկութիւն նորին կամ աստուածութիւն որպէս նոքա *կամին*: - 88. Զոր *կամիմ* ի կարճոյ վկայութեամբ հաստատել: - 96. Բայց *կամեցաւ* և յայտնեաց զինքն որդի և զհայր՝ ի ձեռն նշանաց աշակերտաց իւրոց. որպէս ի պտղոյն ծառն երևի: - 96. Զի աստուած նախ քան զգործն՝ և յառաջ քան *զկամիլն* և նախ քան զէանալն տեսանէ ..: - 118. Իսկ մեք զկնի գործոյն և *կամելոյն* և էութեան որպէս ասացաք: - 118. Զարեգական յատկութիւնս թէ *կամիս* յաւելուլ, ցուցցի յառաջիկայդ: - 127. Ի յինքն՝ զի իւրաքանչիւր ոք սիրէ զինքն և *կամի* զգոլն իւր: - 143. Երկրորդ՝ զի *կամի* այնու զփառս և զպատիւ աստուծոյ նուազել: - 146. Եւ այլք ասեն այսպէս հակառակիլ ընդ աստուծոյ, յորժամ ետես զինքն փառօք և վայելչութեամբ քան զամենայն դասս գերազանցեալ, *կամեցաւ* մեծ լինիլ ի վերայ ամենայնի և հաւասար աստուծոյ: - 149. Զլաւագոյն կայս զոր աստուած տուեալ էր նմա՝ *կամեցաւ* ականայ յաստուծոյ ի՛ւր շորթել. և այլոցն բռնաբար տիրապետել և հրամայել: - 149. Զի աստուած փոխանակ ապաշխարութեան զմահն *կամեցաւ*. և հրեշտակք անմահք են. վասն որոյ առանց փրկութեան մնացին: - 149. Կարե՞ն զամենայն զոր *կամին*: - 149. Բարի ինչ ո՛չ *կամին* և ո՛չ ամենևին կարեն: - 149. Իսկ առ չարն յո՛յժ ազդողակա՛նք են. այլ ո՛չ այնքան որչափ և *կամին*. այլ որքան իբր ի հրեշտակաց թոյլ տացի: - 149. Երեքտասաներորդ՝ մարդ զինչ որ *կամի* ո՛չ կարէ. իսկ աստուած զոր ինչ և *կամի* և կարէ՛: - 157. Այսպէս և գործ նախախնամութեան. զի *կամի*՛ զի ամենայն մարդիկ կեցցեն և ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն: - 157. Իսկ ի նոյն ինքն՝ առաջին է նախախնամութիւնն առ աստուած, և ապա՛ ստեղծումն. զի վասն նախախնամական բարութեանն *կամեցաւ* ստեղծանել զեղեալքս. որպէս ասէ սուրբն դիոնէսիոս ի **դ** գլուխն որ յաղագս երկնայնոցն քահանայապետութեանց: - 157-158. Իսկ թէ *կամիս* ուսանիլ թէ զի՞նչ է նիւթ պսակին. որ ինչ առ աստուածութեան իւրում մեծութիւն գտանի, զա՛յն պատրաստեաց սիրելեաց իւրոց. զոր ո՛չ կարեմ զմտաւ ածել. կամ վայրապար լսելեօք լսել: - 161. Վասն որոյ *կամեցաւ* և արար ի գոյութիւն. այժմ ո՛չ *կամի* և ո՛չ փոխէ յանգոյութիւն: - 162-163. Եւ զոր *կամի*՝ զնոյն և առնէ և կարէ. և զոր ո՛չ *կամի*՝ ո՛չ առնէ և ո՛չ կարէ: - 163. Եւ թէ ոք ասիցէ, եթէ աստուած զոր ոչ *կամի*՝ ո՛չ կարէ, որպէս զչար զի ո՛չ *կամի* և ո՛չ կարէ. նոյնպէս զմեղս և զայլսն. ապա երևի անկարութիւն ի յաստուած գոլ: - 163. Ասեմք առ այս Նախ՝ եթէ կամքն և կարն ի մեզ անհաւասա՛րք են. վասն այն զոր ինչ *կամիմք*՝ ո՛չ կարեմք. և զոր կարեմք՝ զա՛յն

*կամիմք*: - 163. Իսկ առ աստուած կամքն և կարն հաւասա՛րք գոն. վասն որոյ հակադարձին ի միմեանս. զի զոր ինչ *կամի*՝ կարէ՛. և զոր կարէ՝ զնոյն և *կամի*՛: - 163. Ապա յա՛յտ է զի զչարն և զմեղս ո՛չ *կամի*, վասն այն ո՛չ կարէ: - 163. Նոյնպէս վասն առաւել բարի կամացն ո՛չ *կամի* և ո՛չ կարէ առնել զաշխարհս ո՛չ է: - 163. **Զորօրինակ եթէ *կամիցի* ոք տաճար շինել. նախ ծևանայ ի միտքն և յետոյ շինէ զտաճարն ըստ այնմ ծևոյ:** - 163. Երկրորդ՝ զի բանիւ գործէ արուեստաւորն. այսինքն իմաստութեամբ և կամօք. այսպէս և արարիչն աստուած զամենայն եղեալքս *կամեցաւ* և արար..: - 164. Այլ և ո՛չ ըստ այնմ որ է՛ սկիզբն գոյացութեան աշխարհի. զի անփոփոխ կամօք *կամեցաւ* և արար ի գոյութիւն. և անկա՛ր է փոխիլ կամացն անեղին և առնել յանգոյութիւն զեղեալս էութիւն: - 165. Այսինքն կամօք է՝ զի գիտութիւնն և կամքն առաջնորդէ՛ գործոյն և հնարաւոր է՛ առնել զայս՝ և առնել զայն, զոր և *կամեսցի*. որպէս մարդ զի տէր է գործոյ իւրոյ՝ առնելոյ և ոչ առնելոյ: - 173. Ապա թէ *կամիս* զորոշումն բնութեանց ի ներքս բերել ո՛վ երկաբնակ, մի՛ ասեր բ բնութիւն. այլ գ. այսինքն զմարմնոյ և զհոգւոյ և զբանին բնութիւն: - 176. Վեցերորդ՝ *կամեցաւ* աստուած զի մեք բանիւ և տեսութեամբ վայելիցեմք ի գործս արարչին: - 192. Այլ այժմ ի ձեռն արուեստից ստացեալ զզէնս, յորժամ պիտոյանայ՝ առնու և ի գործ ածէ. և յորժամ *կամի*՝ ի բաց դնէ և հանգչի: - 217. Չորրորդ՝ զի ցուցցէ անձնիշխան գոլ զմարդն, վասն որոյ հրամայէ՛ նմա զի զոր ինչ և *կամեսցի*՝ անուն դնիցէ: - 219. Ոմանք *կամին* ցուցանել ապականացու գոլ զդրախտն և շաղաշարումն արուի և իգի. և առաւել ցանկութիւն և ծնունդ զաւակաց: - 225. Երրորդ՝ *կամեցաւ* աստուած՝ թագաւոր ստեղծանել զմարդն..: - 230. Երրորդ՝ զի բանականութեամբ կարեն սանձիլ սոքա, յորժամ *կամեսցին*: - 246. Դարձեալ են զօրութիւնք հոգւոյն բաժանեալք ի մարմնոյն. որպէս իմանալն և *կամիլն*: - 249. Զորօրինակ՝ արուեստաւոր ոք *կամիցի* դրօշել ի քարեայ պատկեր, նախ նկարէ՛ ի միտս իւր զձև պատկերին. և ապա հատանէ զքարն և տաշէ՛ և դրօշմէ՛ զկերպն ըստ այնմ նմանութեանն որ էր ի միտս ծևացեալ: - 258. Եւ որ ոք *կամեսցի* զդարձն, անդրէն ի ձեռն նորին յարմարութեան այսինքն նորին կարգին կարողանայ ելանել ի նոյն: - 280. Երկրորդ՝ հեշտութիւն խօսակցիլ ընդ օձին. և վասն այն *կամեցաւ* լսել, զի հեշտացաւ վասն փառաց աստուածանալոյն: - 280. Ա՛րդ՝ որ ոք *կամեսցի* ի նոյնն ելանել և առ քրիստոս լինիլ, պատշա՛ճ է ի վերջնագունէն սկիզբն առնել որպէս սանդղօք: - 280. Զի որք *կամին*՝ լինին անդրանիկ գործովք իւրեանց. և որք ոչ *կամին*՝ փոխին և լինին անարգ և վերջին: - 310. Դարձեալ՝ վարժէ՛ զնա գօտեւն՝ պատերազմիլ ընդ մեղս և ընդ մեղսասէր մարդիկ որ *կամին* զանմեղն քարշել արտաքոյ օրինացն աստուծոյ: - 311. Ասեմք թէ յակոբ ո՛չ զներգործութեան անունն հարցանէր աստուծոյ, զի գիտէր որ աստուած էր և ինքն իսրայէլ կոչեցաւ որ է աստուածատես. այլ անուամբ զբնութիւնն և զգոյացութիւնն աստուծոյ *կամէր* ուսանիլ: - 311. Երկրորդ՝ զի *կամէին* սուտ առնել զվկայութիւնն աստուծոյ վասն յոբայ. թէ այր արդար և անարատ է: - 324. Չորրորդ՝ *կամէին* զինքեանս արդա՛ր ցուցանել, և յանցաւոր զյոբ. և վասն այսմ կարգէին ընդ յոբայ: - 324. Այսինքն նոքա *կամէին* որ զնոսա արդարս ասէր յոբ՝ և զինքն յանցաւոր՝ և ո՛չ ասաց. զի թէ զնոսա որք անիրաւք էին արդար ասէր՝ մեղանչէր ճշմարտութեանն. և թէ զինքն մեղաւոր ասէր՝ մեղանչէր վկայութեանն աստուծոյ: - 324. Եւ զինչ և *կամէին*, զամենայն համս տայր ի բերան կերողացն: - 338. Երրորդ՝ *կամեցաւ* զմարդն ի պատկեր իւր՝ երկրորդ ստեղծմանն աշխարհի գործակից և մասնակից լինիլ. վասն որոյ հրամայեաց ի նոցանէ առնուլ զնիւթ կազմելոյն: - 342. Նա՛խ՝ զի *կամէին* քարկոծել: - 386. Նա՛խ՝ զի բարկացեալ՝ զէշն *կամէր* սպանանել սրով. թէ գոյր ի ձեռին ընդէ՞ր բանիւ ոչ սատակէր: - 388. Է՛ և ա՛յլ իմն տեսութիւն բանիս. զի *կամի*՛ զպաշտօնս մեր որոշել ի կռոց զոհիցն. զի սուտանուն դիքն խնդրէին ուստերս և դստերս և արջառս և ոչխարս զոհել և սպանումն օտարաց: - 396. Նա՛խ՝ բնական. զի *կամէր* աստուած բազմացուցանել զծնունդն: - 401. Երկրորդ՝ զի *կամէր* զա՛զգն հարցանել թէ յուդայի ցեղէն և փարիսէ՞ն իցէ, զի սպանցէ զնա: - 427. Եօթներորդ՝ զի թէ ճշմարտապէս սամուէլ յառնէր, ո՛չ *կամէր* կինն. զի կորուսիչ էր նոցա. այլ գիտէր որ նմանութիւնն էր սամուէլի: - 428. Երկրորդ՝ որպէս թուեաց դովէկ զքահանայսն զի մի՛ զերծանիցեն ի սրոյն. նոյնպէս և այս վասն քահանայիցն վրէժխնդրութեան էր. զի *կամեցաւ* ժողովուրդն փրկել զնոսա: - 434. Ապա թէ ոչ՝ ի միում աւուրն **եճ** և **կռ** *կամէր* կոտորել այսու համարով. և ոչ ինչ մնայր ի ժողովրդենէն: - 435. Այլ և դաւիթ եգիտ զսաւուղ և զզօրսն նորա ի քուն և ո՛չ վնասեաց. այլ զզէնն էառ. և տէրն ո՛չ *կամի* զմահ որք ննջեն ի մեղս. այլ զպատճառ մեղացն հանէ: - 437. Դարձեալ, *կամեցաւ* աստուած այլով իւիք յարգել զդաւիթ, և այլով զորդին իւր յետ նորա: - 440. Նախ՝ թէ *կամի*՞ զիրաժարիլն. և երկրորդ՝ թէ գիտէ՞ զվերանալն: - 445. Զնոյնս *կամի* և մեծն դիոնէսիոս՝ նախախնամութեամբն աստուծոյ եղեալ ամենայն արարածոց: - 457. Զի արիոս *կամէր* զանեղական բանն աստուած եղական և կարօտ օծման ցուցանել: - 475. Եւ նեստոր *կամէր* զմարմինն որոշել և սոսկ մարդ դաւանել: - 475. Դարձեալ նշանակէ զմահն քրիստոսի. զոր արեգակն արդարութեան *կամեցաւ* ի մարմին

իւր թաքչիլ. զի զմեզ լուսաւորեսցէ: - 490. Վասն է՞ր *կամեցաւ* ի փայտի բարձրանալ և մեռանիլ: - 491. Նոյնպէս և ադամայ ասաց աստուած՝ ի հողոյ սկսար և ի հող *կամիս* դադարիլ: - 497. Երրորդ պատճառ, *կամեցաւ* բանն աստուած ազատել զմեզ ի մեղաց և յապականութեանց: - 497. Եւ նզովիւք փակեն ասելով, «եթէ ոք յետ անճառ միաւորութեանն ապականացու ասէ զանապական մարմինն սուրբ, նզովեալ լիցի». որպէս յա՛յտ է ի գիրս իւրեանց. և որ ոք *կամեսցի* դիւրաւ գտցէ. ապա ուրեմն անապակա՛ն է մարմինն քրիստոսի: - 499. Ուստի յա՛յտ է զի յորժամ *կամէր*՝ քաղցնոյր և ծարաւէր: - 501. Տասներորդ՝ յաւուր միում այսահարեալ սաւուղ՝ *կամէր* նիզակաւն բևեռել զդաւիթ յորմն. յորմէ զերծեալ ապրեցաւ և գնաց ի տունն: - 513. Երկոտասաներորդ՝ դարձեալ սաւուղ *կամէր* պաշարել զդաւիթ. և եկն զօրօքն իւր և ննջեաց ի դաշտի..: - 514. Նոյնպէս և ծածուկ է աստուածային էութիւնն և անհաս յամենայն եղանակաց. միայն խնամօք երևի որոց *կամի*: - 517. Նա՛խ՝ ոմանք ասեն թէ մարդկօրէն *կամէր* իմանալ զնա և հարցանել վասն խաչին և դժոխոց և յարութեանն. իսկ այս կատարեալ մտաց պէտք էին և շա՛տ ժամու: - 517. Երեքտասաներորդ, զի մարիամ ո՛չ խոնարհութեամբ *կամէր* մերձենալ յոտս նորա որպէս այլ կանայքն. այլ յերե՛սն դիմեաց նա հպարտութեամբ առ ի համբուրել զնա. իսկ տէրն *կամեցաւ* ուսուցանել նմա զխոնարհութիւն՝ արգել զնա: - 518. Չնգետասաներորդ, զի բաւական համարեցաւ ի պատիւ կանանց զայն՝ զի յառաջագոյն մերձեցաւ ի նոսա ծննդեամբ. իսկ յետ յարութեանն *կամի*՛ զի ա՛րք նախ մերձեսցին ի նա մինչ դեռ ո՛չ է ելեալ նա առ հայր: - 518. Չիմն և շինուածն ցուցանեն եթէ տաճարս *կամի* շինել զմեզ աստուծոյ. ըստ այնմ «դուք տաճար աստուծոյ կենդանւոյ էք»: - 531. Այլ գիտելի է, զի քահանայն զինուո՛ր է. ոչ զոր ինքն *կամի* և ախորժէ զայնս կապէ և արձակէ. այլ զոր հաճո՛յ է զօրավարին քրիստոսի: - 539. Այլ որ ճճ ամաւ յառաջ եկին ի հայք՝ ասորիք արք քաջաբանք, և *կամեցան* սերմանել զաղանդն նեստորի. որք նզովեալ որոշեցան. բայց ոմանք ընկալեալ էին և թարգմանեալ ի նոցանէ գիրս սուտս, Զգօրտոսակ. Զկիրակոսակ. Զպղի տեսիլն: - 545. Ա՛րդ՝ զի՞նչ *կամիս* որ հնազանդիմք պետրոսի. ուրանա՞լ պարտ է զքրիստոս որ լինիմք հնազանդ պետրոսի, եթէ եղծանել զպահքն, թէ զամենայն պիղծ կերակուր ուտել..: - 548. Զորօրինակ բ ոք ի դատախազից իւրաքանչիւրն զինքն *կամի* և կարծէ ճշմարիտ գոլ. այլ մերձ եկեալ դատաւորին՝ վկայիւք յայտնի ճշմարիտն: - 551. Մինն *կամէր* լնուլ զպէտս իւր և անգիտութեամբ անկաւ յորովայնամոլութիւն. և մինն յօժարութեամբ և փափագանօք անկաւ: - 565. Դարձեալ զանազանին սոքա. զի մեղք խորհրդոյն կայանայ յերիս. ի տեսանելն, ի հաւանիլն, և ի *կամիլն*: - 568. Եւ կարելի է որ ոք *կամեսցի*՝ զայսոսիկ գլուխս ի սէրն աստուծոյ ուղղել: - 576. ...զի որք *կամին* զմարմինն քրիստոսի ապականացու ասել՝ խմոր և ջուր խառնեն. թէպէտ այլ և այլ պատճառեն: - 596-597. Ութերորդ, սմա անուն կոչի եկեղեցի. այսինքն զոր *կամիս* լիցի. և դուստր սիօնի: - 614. Երկոտասներորդ՝ զի մարդասէ՛ր է աստուած՝ *կամեցաւ* միածնին միաւորիլ ի մարմնի և մարդանալ յաշխարհի..: - 663. Դարձեալ՝ հանգիստ է, զոր մինչև ցայժմ ժողովէր արդարութեամբ, այժմ *կամի* վայելել: - 679. Ասեն ոմանք թէ՝ սրբոց հոգիքն յարաժամ երևին յորժամ *կամին* և որոց *կամին*: - 685. Դարձեալ ասեն՝ հոգին յառա՛ջ գործէ զբարին զի նախ իմանայ և *կամի*: - 696. Նա՛խ՝ վասն հեշտ ցանկութեան իւրեանց զոր ոչ *կամին* ելանել անտի..: - 701. Նա՛խ՝ զի շնորհին աստուածային պատկերին որ համանգամայն *կամեցաւ* զբոլոր բնութիւնս ըստ հրեշտակացն օրինակի մուծանել ի կեանս..: - 716. Նմանապէս և խաչն աստուծոյ՝ է՛ ի կամացն աստուծոյ և ի նորին ներգործութենէն որ անապական *կամի* զնա. զի նովաւ արար փրկութիւն ազգի մարդկան: - 733. Դարձեալ՝ չար կամք մեղաւորին է յաւիտենական. զի *կամին* յաւիտենական հեշտանալ ի մեղս թէ կարէին. ապա ուրեմն պատիժն լինի յաւիտենական: - 744. Եւ թէ *կամիս* ուղղել մարմնապէս: - 745. Զի այնպէս ծանակեալ լիցի մարմին մեղաւորին, մինչ զի հոգին գարշեսցի առնուլ զնա. և որպէս ուրուկ և որդնալից այնպէս ո՛չ *կամեսցի* ունել զնա: - 751. Վասն հինգերորդին, որք աստէն զխրատս ընդունել ո՛չ *կամեցան* և ընդ մարդկան տանջիլ ո՛չ արժանացան. վասն յանորիկ արդարապէս անդ՝ անդադար հարկանին ուռամբ: - 752. Վասն վեցերորդին, որք զխաւար մեղաց աստէն սիրեցին և առ լոյսն քրիստոս գալ ո՛չ *կամեցան*. վասն այնորիկ ահագին խաւարաւ անդ նըսեմանան: - 752. Վասն եօթներորդին, որք զմեղս խոստովան լինիլ ո՛չ *կամեցան* զորս առնել ո՛չ էր պարտ. վասն այնորիկ անդանօր ամենեցուն մերկացեալ և բացեալ յաւիտեան յամօթ լինին: - 752-753. Զի ուր *կամեսցի* հոգին՝ անդ եղիցի առ ժամայն և մարմինն: - 766. Իսկ մարդասիրին աստուծոյ տեսեալ արտագունեալ զպատկեր իւր, *կամեցաւ* նորոգել զնա: - 776

**ԿԱՄՈՂ (տ. ԿԱՄԵՑՈՂ) +** Այժմ արարչութեամբ ամէնի տիրէ՛ *կամողաց* և ոչ *կամողաց*. զի աստուած է: - 42. ...զի պարգևք հոգւոյն ո՛չ արհամարհողաց և *չկամողացն* լինին տուեալ. այլ հաւատով խնդրողացն..: - 588. Իսկ թագաւորքն առաջին և վերջին. զի կիրակին է թագաւորելն աստուծոյ. այժմ առաջին, և զկնի վերջին. կամ աստ *կամողացն* միայն, և անդ *կամողաց* և ո՛չ *կամողաց:* - 627-628

**ԿԱՄՈՎԻՆ +** Այլ եւ նոցա անձնիշխան կամս՝ զի *կամովին* ընտրեսցեն զբարին և արդարապէս զհատուցումն ընկալցին զի մի՛ երբեք մեղանչել կարիցեն: - 149

**ԿԱՄՈՒԹԻՒՆ** - Եւ ո՛չ լինի ի մէջ մի և նոյն էութեանն կամք և ոչ *կամութիւն*: - 36

**ԿԱՄՐ** - Եօթներորդ Լուսինն. զոր *կամր* կոչեն. հո՛վ է և գէճ. **բ** օր և կէս յամէ՛ ի կենդանակերպն. և ի **իթ** օր և կէս պատէ՛ զամենայն: - 189

**ԿԱՄՔ +** Նոքա որք զբախտ և զճակատագիր և զհրամանն համբաւեն, ո՛չ ինչ ասեն ի *կամաց* մեր գործիլ..: - 7. Երրորդ, զի թէ է՛ ամենայն ի հարկէ, ո՛չ լինի անձնիշխան *կամաց* գործք. որ հաւասար է յերկոսինն. այսինքն յառնել և յո՛չ առնել: - 8. Աստ ուրեմն ի հարկէ՛ երևեցաւ թէ գոն և են սոքա ասացեալքս, այսինքն գործ բնութեան և գործ *կամաց* և գործ պատահմանց. և ո՛չ ոք ուրաստ լինի վասն սոցա: - 8. Առ այս ասեմք, թէպէտ ստորնային մարմինք կառավարին վերնային մարմնովք, այլ մարդկային ներգործութիւնք կառավարին անձնիշխան *կամօք*. և անձնիշխան *կամքն* ո՛չ նըւաճի ի ներքոյ երկնային մարմնոց: - 10. Եւ թէպէտ մարմինք մարդկան են տարրականք, այլ բարի և չար ներգործի ըստ *կամաց* և ո՛չ ըստ բանականութեան: - 10. Ասեմք առ այս, թէպէտ խառնուածք մարմնոյն լինին ի շարժմանէ՛ աստեղացն, այլ բազումք անձնիշխան *կամօք* նըւաճեն զվատախառնութիւն մարմնոյն, և գործեն զբարիս: - 10. Դարձեալ ասեն, թէ բազում ինչ հանդիպի արտաքոյ *կամաց* մերոց. որպէս չար հիւանդութիւն. վատաբախտութիւն. մահ. և այլն, ապա ուրեմն նոքա ի հարկէ բախտի և ճակատագրի: - 11. Դարձեալ եթէ է՛ հարկ, ապա ո՛չ էր անձնիշխան *կամք*, այլ արդ՝ եթէ ունիմք *կամք* և է՛ սկիզբն գործոյն ի մեզ և առ մեզ, ապա ուրեմն ո՛չ է հարկ որոյ սկիզբն յայլմէ՛ է: - 11. Դարձեալ, թէ ամենայն ինչ ի հարկէ՛ է մարդոյ և անասնոյ, ապա ոչինչ զանազանի բանականն և անբանն. զի բանականն իմացմամբ և *կամօք* վարի. և անբանն ի բնութենէ՛ հարկի որպէս ասացաք: - 11. Երկրորդ և թէպէտ իցեն տարրականք և ներհակ որակք՝ յիմիասին դիպիլն՝ ո՛չ միշտ հակակային իրերաց. այլ եթէ *կամք* խնամողին հրաման տացէ: - 12. Երկրորդ՝ ասեմք եթէ և ոչ աստեղք վայրապար են ստեղծեալ. զի կառավարք են տարրեղէն մարմնոց որպէս ասացաք. այլ մարդկային ներգործութիւնք կառավարին յանձնիշխան *կամաց*. և անձնիշխան *կամքն* որ անմարմին է՝ ո՛չ նըւաճի ըստ շարժմամբ մարմնաւոր աստեղաց: - 13. Երկրորդ՝ ասեմք եթէ և ոչ աստեղք վայրապար են ըստեղծեալ. զի կառավարք են տարրեղէն մարմնոց որպէս ասացաք. այլ մարդկային ներգործութիւնք կառավարին յանձնիշխան կամաց. և անձնիշխան *կամքն* որ անմարմին է՝ ո՛չ նըւաճի ըստ շարժմամբ մարմնաւոր աստեղաց: - 13. Այլ կառավարի երբեք *ի կամս* նախախնամութեան առաջին պատճառին. որպէս ասէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս որ յաղագս բնութեան մարդոյն: - 13. Իններորդ՝ եթէ չարն է յաստուծոյ, ապա և կամի՛ զչարն. յայնժամ լինի կրկին *կամք* աստուծոյ. չար և բարի. զի կրկին գործ՝ ի կրկին *կամաց* առաջագայի: - 14. Այլ թէ գործ և *կամք* կրկին յաստուած, ո՛չ է պարզ մի. այլ բաղադրեալ. որ է անտեղի: - 14. Մետասաներորդ՝ եթէ զբարին ոչ կամի, ապա բարի ո՛չ ոք կարէ լինիլ յեղելոցս. ո՛չ մարդ և ո՛չ հրեշտակք. զի *կամացն* աստուծոյ ո՛չ ոք հակառակի: - 14. Դարձեալ ասեմք թէ՝ աստուած ո՛չ է պատճառ. ստեղծուածոցս ի հարկէ. այլ ըստ *կամաց* որով առնէ. զի ոմանք դիպին ի հարկէ, և ոմանք ո՛չ ի հարկէ: - 15. Ջրորհնակ՝ արուեստաւոր ոք մինչ գործէ զսայլ, և ի հեռուստ տեսանէ ոք զոր նա՛ գործէ, այլ ո՛չ տեսութիւնն հարկեաց զսայլն լինիլ այնպէս. այլ *կամք* արուեստաւորին: - 16. Նո՛յնպէս և տեսութիւնն աստուծոյ ո՛չ հարկէ ի վերայ մեր գործ զբարի կամ զչար. այլ *կամք* մեր: - 16. Երրորդ՝ ասեն թէ *կամքն* աստուծոյ ո՛չ է ընդունայն. և ո՛չ ոք կայ ընդդէմ *կամացն* աստուծոյ. վասն որոյ զորինչ կամի՝ այնպէս առնէ. զոմն չար և զոմն բարի: - 16. Նախ եթէ *կամացն* աստուծոյ ոչ ոք է ընդդէմ. և որպէս կամի այնպէս առնէ. այլ չար ո՛չ կամի և ո՛չ առնէ: - 16. Դարձեալ ասեմք՝ թէ *կամքն* աստուծոյ ո՛չ է ընդունայն. զի զոր ինչ կամի առնէ. այլ կամեցաւ և արար զմեզ անձնիշխան և տէր գործոց մերոց. եթէ չար՝ և եթէ բարի: - 16. Այլ և ո՛չ ի բնութենէ. զի բնութիւնք ամենայն հրեշտակաց կամ մարդկան բարի՛ են ի բարւոյն յառաջ եկեալ. այլ չարն է՛ յանձնիշխան *կամաց* եկամուտ ի բնութիւնս: - 16. Հինգերորդ, ասեն թէ՝ գործունեայք չարին են յաստուծոյ որպէս *կամքն*. ապա և չարն է յաստուծոյ. զի նա՛ ստեղծ *զկամքն*: - 16. Նախ թէ աստուած ստեղծ *զկամքն* բարի. և զբարին եդ առաջի կամիլ. իսկ նա անձնիշխանութեամբ հեռացեալ ի բարւոյն՝ գտա՛կ եղև չարին. զի չարն ո՛չ այլ ինչ է, բայց հեռացումն. կամ պակասութիւն բարւոյ. ապա ուրեմն թէպէտ բանն և *կամքն* է աստուծոյ, այլ կամիլն և ընտրելն զչարն՝ ոչ է յաստուծոյ, այլ *կամացն* և բանին: - 16. Նոյնպէս և աստուած է արարողական պատճառ *կամացն*. այլ ներգործական պատճառ է չար՝ *կամքս* մեր: - 16. Դարձեալ, անձնիշխան *կամքն* է՛ յաստուծոյ. և է՛ յոչընչէ եղեալ. այլ ա՛րդ՝ անձնիշխան *կամքն* ըստ այնմ՝ որ յաստուծոյ է եղեալ՝ ո՛չ է պատճառ չարի..: - 16. Դարձեալ ասեմք թէ՝ աստուած ստեղծ *զկամքն* նաև զհրեշտակս և զմարդիկ բարի. և կամի զբարին և բռնադատէ՛ սիրել զբարին: - 17. Ասեմք նախ եթէ՝ չարն ո՛չ է յաստուծոյ

որպէս բարին. զի բարին ըստ *կամա՛ց* է. իսկ չարն թոյլ տալով է. և ա՛յլ է *կամացն* որ յօժարութեամբ է, և այլ է թոյլ տալովն որ իբր ի յո՛չ կամացէ: - 17. Նախ եթէ՝ ունիմք անձնիշխան *կամք*. և տէ՛ր եմք գործոց մերոց. առնել և ո՛չ առնել. այլ երբեմն սկիզբն ի մէնջէ, և կատարումն ի նախախնամութիւնն աստուծոյ: - 17. Դարձեալ ասեմք թէ՝ ո՛չ է բարի առանց աստուծոյ *կամացն*. և ո՛չ չար առանց թոյլ տալոյ նորա. ա՛յն է որ ասէ՝ տերև ո՛չ անկանի, և մազ մի ի գլխոյ. զի ո՛չինչ կարեմք առնել առանց *կամաց*՝ կամ առանց գիտութեան՝ կամ առանց թոյլ տալոյն աստուծոյ: - 18. Արդ՝ ժամանակեայ արդարութիւնն յայտնի է որ անձնիշխան *կամօք* փոփոխի. երբեմն ի չար և երբեմն ի բարի. և ժամանէ փրկութեան կամ դատապարտութեան: - 18. Իսկ մարդիկ անձնիշխան *կամօք* և գործովք հասանին այն փրկութեան և շնորհաց և փառաց: - 18. Որ անձնիշխան *կամօք* և չար գործովք խոտեսցին չարքն: - 18. Այլ արդ՝ եդ աստուած զսոսա բնական որակութիւնս ի մասունս հոգւոյն. եդ և զանձնիշխան *կամքն* տէր և իշխան իներքս ի հոգին. զի կառավարէ և առաջնորդէ՛ հոգւոյն. զվատ որակն ի բարին ուղղել, և զբարին ի նոյնն պահել և առաւելուլ. զի այս է գործ անձնիշխանին: - 19. Ապա թէ զայս ո՛չ առնէ, անձնիշխան *կամօք* հետևի չարին և ո՛չ ի բնուէ, զոր աստուած բարի է ստեղծեալ: - 19. Այսպէս և զարդարս և զմեղաւորս. զչարս և զբարիս. զոմանս կամելով առնէ բարիս, և զոմանս թոյլ տալով առնէ չար. ապա ուրեմն ո՛չ են *ի կամացն* աստուծոյ չարութիւնք և ո՛չ մեղքն: - 19. Նոյնպէս և աստուած զամենայն մարդոյ փրկութիւն կամի. որք անձնիշխան *կամօք* համակամ լիցին աստուծոյ՝ փրկին. և որք հակառակին *կամօք*՝ ո՛չ փրկին: - 20. Եւ է և ո՛չ բարի. որպէս *կամքն* չար: - 22. Երրորդ՝ զփոփոխումն ի խորհրդոց և *կամաց* մարդկան. զի բազում ինչ խորհիմք և կամիմք և ո՛չ կատարի: - 26. Առաջին Որ ասեն, *կամաւ* ծնաւ, թէ յոչ *կամայ*: - 29. Վեշտասաներորդ՝ Ո՛չ *զկամս* իմ, այլ զառաքչին: - 29. Յնգետասաներորդ՝ Յարցումն երկաբնակացն առ մեզ **ժ** թւով. և անդ վասն մի *կամաց*՝ և մի գործոց՝ և կրից: - 30. Որք զաչս իմաստից յիմանալի ճառագայթիցն խուսափեցին թիւր *կամօք*, և խոտոր մտօք. զանուղղայս խորհելով, և զանպատշաճս բարբառելով. յարձակեալ անկապ լեզւաւ և անդուռն շրթամբք բացեալ յերկինս. ցոպ բերանով ի բարձունս բարբանջելով. և յածեալ ընդ երկրաւ լեզուագարելով. որոց դատաստանն ի բնէ ո՛չ դատարկանայ. և կորուստն ո՛չ նիրհեսցէ: - 31. Իսկ որ *զկամսն* է չարացուցեալ, զճանապա՛րհն ունի թիւր. և որքան ընթանայ՝ մոլորի: - 33. Ոմանք սոսկ մարդ ասելով բաժանեն զաստուածութիւնն **բ** բնութիւն, **բ** *կամք*, և բաժանեալ գործ, և այլն: - 35. Յայր *կամա՞ւ* ծնաւ զորդի թէ յոչ *կամայ*: - 36. Թէ *կամաւ*, Ասեն չարափառքն՝ *կամա՛ցն* է որդի՝ և թռռն աստուծոյ: - 36. Եւ դարձեալ՝ արարա՛ծ է ըստ այլոց. «որպէս կամեցաւ և արար տէր». և Դարձեալ՝ *զկամքն* ի տեղի մօ՛ր ստեղծանեն: - 36. Պատասխանեմք թէ՝ ամենայն հաւանութիւն որ է *կամք* յետ խոկմանցէ և իմաստութեանց. և քրիստոս է աստուծոյ իմաստութիւն ըստ առաքելոյ: - 36. Ապա ուրեմն որդի է յառաջ քան *զկամքն*: - 36. Եւ ասեն՝ թէ այդպէս է, ապա ուրեմն և ո՛չ *կամաւ* է որդի: - 36. Առ որս ասելի է թէ՝ ո՛չ *կամաւ*, և ո՛չ յոչ *կամայ*. զի պատկեր և նկարագիր էութեանն հօր է որդի, ըստ առաքելոյ: - 36. Եւ ո՛չ լինի ի մէջ մի և նոյն էութեանն *կամք* և ոչ կամութիւն: - 36. Ապա ուրեմն բնութեամբ և էութեամբ է որդի. և ոչ թէ *կամաւ* կամ ոչ *կամայ*: - 36. Յա՛րց դու զնոսա՝ թէ դու ի քո հօրէն յառաջ եկեալ *կամա՞ւ* ծնար թէ ակամայ: - 36. Զի թէ *կամաւ*, *կամա՛ցն* ես որդի և ոչ հօր. թէ այդպէս է, բարձեր զպատճառն քո զհայր. բարձար և դու ի տեսակաց մարդկան: - 36. Դարձեալ՝ հայր աստուած *կամա՞ւ* արար զամենայն եղեալքս, թէ ոչ *կամայ*: - 36. Զի թէ ոչ *կամաւ*, բռնադատեցաւ յայլ իմն հզօրէ՛. և հաներ յաստուածութենէն: - 36. Զի բռնադատեալն ոչ լինի աստուած. իսկ թէ *կամաւ*, *կամացն* եղեր արարած և ո՛չ աստուծոյ: - 36. Եւ զի եդեր *զկամքն* միջոց, ի բա՛ց պարսպեցար յողորմութեանց նորին առ իւր արարածքս. զի եդեր ա՛յլ իմն զկամիլն և *զկամքն*: - 36. Դարձեալ՝ հայր աստուած *կամա՛ւ* է թէ յոչ *կամայ*: - 36. Զի թէ *կամաւ*, *կամքն* էր ապա յառաջ քան զէութիւնն. որ անհնար է և յեղեալքս: - 36. Իսկ թէ յոչ *կամայ*, այլ ուրեմն բռնադատութեամբ քարշեցաւ յաստուածութիւն. և բարձեր զանսկզբնութիւն նորա: - 36. ...հրեշտակք և հոգիք ոչ դադարին, այս *կամա՛ցն* աստուծոյ է պահպանութիւն, և ոչ բնութեան նոցա. զի յո՛չ էից եղեալքն՝ կարեն յոչ էութիւն փոխիլ: - 37. Եւ զի *կամաւ* հօր էր այս առաքումնս՝ հօ՛ր ասի: - 40. Դարձեալ կերպիւ ինչ ասի հնազանդ որդի հօր գործով՝ լրմամբ *կամացն*: - 42. Եւ այս վասն միութեան բնութեան և *կամաց* հօր և որդւոյ: - 42. Իսկ «աստուած աստուած իմ ընդէ՞ր թողեր զիս», ո՛չ թէ յինքենէ՛ թողաւ և կամ ի հօրէ. որպէս թէ երկեաւ ի չարչարանացն. վասն զի *կամաւ* եկն և ո՛չ հարկիւ: - 42. Չորրորդ՝ այսու առաւել զմիակամութիւն ցուցանէ. զի մի՛ է *կամք* իւր և հօրն. վասն այն ո՛չ կարէ առանց հօր. զի ո՛չ է որդւոյ այլ *կամք* զի զոր ինչ կամեսցի բաց ի հօրէ արասցէ: - 45. Տէ՛ս՝ զի ի մի բնութիւն օտարութիւն ո՛չ ասի. վասն այն է աստուծոյ *կամքն* մի և ներգործութիւնքն մի. զի բնութիւնն մի է: - 45. Տարակուսելի է առ այս, զի թէ հա՛րկ է որոց բնութիւնքն մի գոլ՝ նոցա և *կամքն* և ներգործութիւնն մի լինիլ. ընդէ՞ր ապա զի մարդկային բնութիւնս մի է և նոյն հօրն և որդւոյն՝ և ո՛չ է *կամքն* և գործքն մի: - 45. Եւ պատճառն է այս.

զի թէպէտ մի է բնութիւն ծնողաց և ծնիցելոց, բայց ոչ ունին զմի *կամս*. զի հատեալ բաժանեցաւ որդին ի հօրէն: - 45. Այս ապա անբաժանութիւնս առնէ *զկամքն* մի: - 45. Այլ այս է առնելն հօր՝ և նմին նման որդւոյ, այսինքն կամիլն հօր՝ և կատարելն որդոյ զնոյն *կամս*: - 46. Զի մի՛ է *կամք* որդւոյ և հօր: - 46. Ո՛չ ցուցանէ այս **բ** *կամք* հակառակ միմեանց. զի առողին է բանս և ո՛չ առեցելոյն. այսինքն բանին՝ և ո՛չ մարդկութեանն: - 46. Այլ այս առաւել զմիականութիւնն ընդ հօր և որդւոյ ցուցանէ. զի ասէ՝ ո՛չ իմ *կամք* այլ որիշ զի առնեմ, այլ զա՛յդ *կամքդ* առնեմ զի հաստա՛կ է: - 46. Այսպէս և այժմ ասէ՝ «ո՛չ *զկամս* իմ արարից». որպէս թէ ո՛չ է իմ այլ *կամք* զի արարից. այլ նոյն հօր *կամքն* է և իմ *կամք*: - 46. Նմանապէս և այն՝ «ո՛չ իմ *կամք*՝ այլ քո՛յդ լիցի». աստանօր ո՛չ յատուկ *կամք* ցուցանէ բաժանեալ ի հօրէ. այլ առաւել զմիականութիւնն հօր: - 46. Իսկ արիոսի՝ զի նա միայն զհա՛յր ասէր աստուած. զայս ասեմք թէ, ո՛չ են մեզ երեք աստուածք՝ այլ մի աստուած և երեք անձինք. և երկուքն ի մի և ի նոյն էութենէն յառաջ եկեալ. *կամօք* մի և զօրութեամբ մի: - 54. Պատասխանեմք թէ՝ ո՛չ են հեթանոսաց աստուածքն մի, այլ բազումք և միմեանց հակառակք *կամօք* պաշտմանն և զոհիւք խնդրոյն: - 54. Նաև մարդիկ ո՛չ միայն զի ի բազմաց են գոյացեալ, այլ և ժամանակաւ առաւելք մի քան զմի. և *կամօք* բաժանեալք և ի միմեանց և իրերաց հակառակք: - 54. Իսկ աստուած ո՛չ այսպէս. այլ որպէս մի է բնութեամբ՝ և *կամօք* և զօրութեամբ մի: - 54. Եւ այսքան է միաւորթիւնն, զի որքան մին ինքն առ ինքն ունի զբնութիւնն և զզօրութիւնն և *զկամքն*, նոյնքան և ունի առ երկուսն. թէ զհայր իմանաս՝ թէ զորդի՝ թէ զհոգին: - 54. Այլ այսորիկ զհաճութիւն *կամացն* ցուցանեն: - 61. Դարձեալ՝ հոգին սուրբ է ի հօրէ որպէս *կամք* ի մտաց. և որդի որպէս իմացումն: - 64. Ա՛րդ՝ *կամքն* ո՛չ է յիմացմանէ. և ո՛չ հոգի յորդւոյ: - 64. Դարձեալ՝ հոգին սուրբ ելանէ ի հօրէ և առաքի յորդւոյ. և ինքնիշխան *կամօք* շնչէ_զշնորհս իւր յորս կամի և որքան: - 66. Իննևժերորդ՝ զի թէ առանձնապէս մարդ է, ապա հետևի բաժանեալ բնութիւն և **բ** *կամք* և կրկին ներգործութիւն. յայնժամ ո՛չ լինի բանն մարդ եղեալ. այլ մարդն բնակութեամբ ի փառս բանին բարձրացեալ: - 68. Եւ թէ միայն բանին որ ի յերկնից իջեալ, ահա՛ որ երկու *կամք* ընդ դէմ միմեանց խոստովանիս. ծնողին և բանին: - 70. Նոյնպէս և ի տնօրէնութիւնն քրիստոսի նեստոր չարաչա՛ր բաժանէ զանձինս և զբնութիւնս, *զկամս* և զգործս: - 81. Իսկ ընդ դէմ նմին եւտիքէս զամենայն շփոթէ և խառնակէ. զանձն և բնութիւնն. և *զկամս* և զկիրս: - 81. Եւ այսպէս փախչելով ի թիւր ծայրիցն, զմիջինն պահելով ընթացք բարեպաշտութեան, անշթոփ և անբաժան միութիւն, խոստովանիմք զքրիստոս՝ աստուած մարդացեալ. մի անձն և մի բնութիւն. և մի *կամք* և գործք ըստ ուղղութեանն բանի: - 81. Իսկ որք յետ միաւորութեանն բ ասեն բնութիւնս ի քրիստոս, և բաժանեն *զկամս*, և զգործս, և զկիրս, թէպէտ և անձն մի համբաւեն: - 81. Որք **բ** անձն և **բ** բնութիւնս՝ և **բ** *կամս*՝ և **բ** գործս բաժանեն քրիստոսի. **բ** որդի՝ և **բ** քրիստոս յայտնապէս ասեն. զմինն տէր, և զմինն ծառայ, զմինն բնութեամբ որդի աստուծոյ, և զմիւսն շնորհօք. և այլն: - 82. Եւ ոմանք որպէս քաղկեդոնիկքն՝ մի անձն համբաւեն, և յերկու բնութիւնս բաժանեն զմի քրիստոսն. և **բ** *կամք*. և **բ** գործք. որպէս անիծեալն լևոն. և փլաբիանոս, և ընկերք նոցա: - 82. Ո՛չ ի դէմն. և ո՛չ ի բնութիւնն. և ո՛չ ի *կամքն*. և ո՛չ ի գործս: - 83. Եւ զայս միաւորութիւնս խոստովանիմք մեք մի անձն. և մի դէմ. և մի կերպ. և մի բնութիւն. և մի *կամք*, և մի ներգործութիւն: - 83. Այլ հաստատեալ *կամք* ի վերայ սրբոցն դաւանութեանց: - 84. Ո՞րպէս ասէք մի *կամք* և մի գործ աստուծոյ և մարդոյ: - 85. Որպէս միաւորեալ ասեմք զբնութիւն մարդոյն ընդ էութեանն աստուծոյ, այսպէս միաւորեալ և մի է *կամք* բանին մարդացելոյ: - 85. Իսկ գործն՝ *կամացն* հետևի: - 85. Ապա ուրեմն մի՛ է ներգործութիւնն ի միոյ *կամաց* միոյն քիստոսի յառաջ եկեալ և գործեալ: - 85. Իսկ *զկամքն* իմասցիս մի՝ վասն կամելոյն և վասն միաւորելոյն որ է սկիզբն և կատարումն: - 85. Եւ այսպէս ասեմք մի բնութիւն և մի *կամք* և մի ներգործութիւն բանին մարմնացելոյ: - 85. Մանաւանդ թէ ամենայն ինչ հաստաակ է. բնութիւն. *կամք*. թագաւորութիւն. և այլն: - 104. Նմանապէս և հասարակն թէպէտ բազում է, այլ երկոտասան գլխով նշանակի. նախ Բնութիւն. որ նոյն Է էութիւն. ապա Բարութիւն. *Կամք*. Անմահութիւն. Իմաստութիւն. Լուսաւորութիւն. Գեղեցկութիւն. Անփոփոխութիւն. Յնծութիւն. Փառք. Իշխանութիւն. և Արարչութիւն: - 105. Չորրորդ՝ հասարակ է ի միոյ բարերար *կամաց* յառաջ եկելոց հաղորդեալ անհաղորդաբար ըստ համեմատութեան: - 106. Եւ մի է միտք և իմացումն և *կամք* իւր: - 107. Այլ է՛ յարացոյցն ի յաստուած. և ի տեսութիւն նորա. և ի բարի *կամս*: - 112. Զի առ աստուած՝ ո՛չէ սոսկ տեսութիւն արտաքոյ. այլ յինքն տեսանելով զյարացոյցն. և զմեզ ի յարացոյցն մեր իբր լինիլ մեզ նախ ի յաստուած, և ապա ի յէութեան մերում. և ո՛չ որպէս փոփոխումն ինչ ի բարի *կամացն*: - 112. ...նախ սահմանեաց զմեզ աստուած ի *կամս* իւր իբր անփոփոխելի սահմանադրութիւն: - 112. Դարձեալ՝ գործնականին սկիզբն *կամքն* է. և տեսականին իմացական զօրութիւն մտացն: - 121. Եւ որպէս զարմացումն առաւելութիւն է իմացմանն, նոյնպէս և նախանձն առաւելութիւն է *կամացն*: - 128. Իսկ աստուած կարէ՛ փոխել և *զկամքն* որ է՛ ախորժակ ի չարէն առ բարին. զոր հրեշտակք ո՛չ կարեն փոխել.

այլ միայն զարթուցանեն զախորժակն և օգնեն: - 133. Որև յայլուրեք ի քերօբէս ասի նստել. զի ամենեքեան աստուածակիրք են և հանգիստ *կամացն* աստուծոյ: - 135. Վեցերորդ՝ զի հնազանդեալք են ի սպաս *կամացն* աստուծոյ: - 137. Ութերորդ՝ զի ազատ և անձնիշխան *կամօք* ընտրեն զբարին և խոտեն զչարն. և դիւրասերտեալք ի բարին, և դժուարաշարժք ի չարն: - 137. Երկրորդ՝ զի *կամքն* աստուծոյ հանգուցեալ է ի նոսա և ուղղէ՛: - 139. Վասն երրորդին անչա՞փ է թէ չափաւոր՝ գիտելի՛ է, զի անչա՛փ է շնորհն ըստ իւրում ինքնութեան. այլ չափաւորի՛ ըստ տըւողին *կամաց* և ըստ ընդունողին կարեաց. որպէս բան մարդոյ ի լսելիս: - 140. **Յոգնորն այն է՝ զի անկաւ անձնիշխան *կամօք* ի բարւոյն ի չարն, ի լուսոյն ի խաւարն, ի գիտութենէն յանգիտութիւն, յանմեղութենէն ի մեղս, յերանութենէն ի թշուառութիւն, ի սիրոյն յատելութիւն**: - 146. Նաև անբարիշտ *կամք* նորա դարձել է յատելութիւն և ի նախանձ մարդոյն. զի ամենայն ջանիւ նկրտի ի կործանումն նորա բազմադիմի փորձութեամբ: - 146. Եւ այնչափ կուրացեալ է՝ մինչ զի պատերազմի ընդ դէմ աստուծոյ. թէպէտ գիտէ զայն լինիլ ինքեան ի չար, զի զոր ինչ չար գործէ անձնիշխան *կամօքն*, մեղանչէ մահու չափ: - 146. Այլ եւ նոցա անձնիշխան *կամս*՝ զի կամովին ընտրեցեն զբարին և արդարապէս զհաստուցումն ընկալցին զի մի՛ երբեք մեղանչել կարիցեն: - 149. Եւ այս վասն այնորիկ՝ զի չարախօսէ՛ր զմարդիկ եթէ ինքնայօժար *կամօք* և բնութեամբ մեղան և ո՛չ ի պատրանաց իմոց. որպէս չարախօսէր զյոբայ եթէ՝ «միթէ ձրի՞ պաշտէ յոբ զտէր»: - 153. Զի՞նչ է գործ բնութեան՝ և գործ *կամաց*: - 154. Աստուած բնութեա՞մբ գործէ՝ թէ *կամօք*: - 154. Եւ նախ հարցանեմ, որո՞վ զանազանի գործ բնութեան և գործ *կամաց*: - 156. Նախ՝ զի գործ բնութեան է՛ բնական. իսկ գործ *կամացն* է պատահական: - 156. Երկրորդ՝ գործ բնութեան է՛ հարկաւոր. իսկ գործ *կամացն* պատշաճաւոր: - 156. Երրորդ՝ գործ բնութեան է՛ հասարակ. իսկ *կամացն* առանձնակի: - 156. Չորրորդ՝ գործ բնութեանն է միշտ. իսկ *կամացն* երբեմն: - 156. Յինգերորդ՝ գործ բնութեանն է մի առ բազումս. իսկ *կամացն* բազում առ բազումս: - 156. Վեցերորդ՝ գործ բնութեանն է նոյնպէս և նման. իսկ *կամացն* զանազանապէս և աննման: - 156. Եօթներորդ՝ գործ բնութեան անբաժա՛ն է. իսկ *կամացն* բաժանական: - 156. Ութերորդ՝ գործ բնութեան ո՛չ առաւելու և ո՛չ նւազէ. իսկ *կամացն* առաւելու և նուազէ՛: - 156. Իններորդ՝ գործ բնութեան առանց ուսմա՛ն է. իսկ *կամացն* ուսմամբ է և կրթութեամբ: - 156. Տասներորդ՝ գործ բութեան ո՛չ ինչ ունի մեղք. զի ըստ բնութեան գործելով ոչ ոք մեղանչէ ասէ փիլիսոփայն. իսկ *կամացն* գործ՝ մեղանչական է. վասն որոյ կամաւորին գով և պարսաւ հետևի: - 156. Յինգերորդ՝ մարդ թէ բնութեամբ և թէ *կամօք* գործէ՝ կարօ՛տ է օգնականի, իսկ աստուած անկարօ՛տ է օգնականի: - 156. Յասարակութիւն է, Նախ՝ զի ի միոյ բարերար *կամաց* յառաջ եկին գործ արարչութեան..: - 157. Եւ նոյն ինքն նախախնամութիւնն է *կամք* արարչին յարարածս եղեալ: - 157. Նոյնպէս և սատանայ աներևոյթ մօտ՝ ի մարդն երթալ. թէ ամուր է հաւատն և *կամքն*՝ ո՛չ կենայ անդ, յուսահատի և թողու: - 161. Ապա թէ *զկամքն* երետ՝ ուրախանայ և կենայ ի մօտն մինչև զմեղքն գործել տայ և հանէ ի բարւոյն: - 161. Եւ իսկապէս ներգործութեամբ, զի զօրութեամբ որ է՛ անկատար իր ինչ ի յաստուած ո՛չ է. այլ ամենայն ներգործութեամբ. այսինքն ի տեսութիւնն և ի *կամքն*. ապա ուրեմն անշա՛րժ է տեսութեամբ և *կամօք*: - 162. Դարձեալ՝ *կամքն* աստուծոյ անփոփոխ է. զի ո՛չ տարակուսի և ո՛չ զղջանայ. ապա թէ արար աստուած զաշխարհս ի գոյութիւն՝ այժմ առնէ յանգոյութիւն, երևի փոփոխումն անփոփոխելոյն. կամ զղջումն և երկբայութիւն. որ օտա՛ր է արարչականն *կամաց*: - 162. Ասեմք առ այս Նախ՝ եթէ *կամքն* և կարն ի մեզ անհաւասա՛րք են. վասն այն զոր ինչ կամիմք՝ ո՛չ կարեմք. և զոր կարեմք՝ զա՛յն կամիմք: - 163. Իսկ առ աստուած *կամքն* և կարն հաւասա՛րք գոն. վասն որոյ հակադարձին ի միմեանս. զի զոր ինչ կամի՝ կարէ՛. և զոր կարէ՝ զնոյն և կամի՛: - 163. Նոյնպէս վասն առաւել բարի *կամացն* ո՛չ կամի և ո՛չ կարէ առնել զաշխարհս ո՛չ է: - 163. Երկրորդ՝ զի բանիւ գործէ արւեստաւորն. այսինքն իմաստութեամբ և *կամօք*. այսպէս և արարիչն աստուած զամենայն եղեալքս կամեցաւ և արար..: - 164. Այլ և ո՛չ ըստ այնմ որ է՛ սկիզբն գոյացութեան աշխարհի. զի անփոփոխ *կամօք* կամեցաւ և արար ի գոյութիւն. և անկա՛ր է փոխիլ *կամացն* անեղին և առնել յանգոյութիւն զեղեալս էութիւն: - 165. Նա՛խ՝ եթէ թողութիւնն է հետևեալ և կայացեալ ի զղջումն. և զղջումն է ի *կամքն*. և *կամքն* է ի կարելեացն. վասն որոյ ներընդունի զթողութիւն ի ձեռն զղջման: - 165. Նախ՝ զի պատահմունքն են յէութենէ իրին երևեալ. այլ արարածք ոչ յէութենէ, այլ *ի կամաց* արարչին յոչնչէ ներգործեալ են: - 169. Չորրորդ՝ զի պատահումն է՛ փոփոխական իր. իսկ աստուած անփոփոխ է էութեամբ զօրութեամբ *կամօք* և գիտութեամբ..: - 170. Իսկ Կալ՝ ո՛չ զկալն կամ զնստիլն մարմնապէս. այլ զհաստատիլն անշարժ էութեամբ. զի ո՛չ շարժի. ո՛չ բնութեամբ, ո՛չ *կամաւ*, և ո՛չ տեղեաւ: - 172. Եւ ո՛չ *կամաւ*, զի անզղջանալի՛ է: - 172. Ներգործելն աստուծոյ բնութեա՞մբ է թէ *կամօք*: - 173. Ասեմք առ այս եթէ գիտելի է նախ՝ թէ զի՞նչ է բնութեամբն և զի՞նչ *կամօքն*: - 173. Այսինքն *կամօք* է՝ զի գիտութիւնն և *կամքն* առաջնորդէ՛ գործոյն և հնարաւոր է՛ առնել զայս՝ և առնել զայն, զոր և կամեսցի. որպէս

մարդ զի տէր է գործոյ իւրոյ՝ առնելոյ և ոչ առնելոյ: - 173. Եւ այս ինչ է հարցումնդ զի թէ ասեմք *կամաւ* ներգործէ, ասեն՝ ապա փոփոխական ներգործէ որպէս մարդ. իսկ թէ ասեմք բնութեամբ, ասեն ցմեզ եթէ անբանապէս և ի հարկէ ներգործէ: - 173. Արդ այսպէս պատասխանեմք, եթէ բնութեամբ և *կամօք* ներգործէ աստուած ընդդէմ էակացս: - 173. Ասեմք առ այս Նախ՝ եթէ ո՛չ ամենայն գործ բնութեան հետևի, այլ և *կամաց*. որպէս մարդոյ. զի մի է *կամք* ի քրիստոս, մի է և ներգործութիւնն: - 174. Եւ ո՛չ ուրեք երբեք միտք ուղղափառաց բաժանմամբ տեսանէ. ո՛չ զբնութիւնս և ո՛չ *զկամս* և ո՛չ ներգործութիւնս որ յառաջն հարցափորձեցաք սակաւիկ: - 174. Երկրորդ՝ զի ծնունդ եմք *կամացն* աստուծոյ, և արարածք բանին: - 179. Չորրորդ՝ զի ծնանիմք ի բարի *կամացն* աստուծոյ յառաջ գիտութեամբ նորին. և ապա գոյանամք արդեամբ և գոյացութեամբ ըստ իւրաքանչիւր տեսակաց: - 179. Ապա թէ ոչ՝ ի յակնարկել *կամացն* բիւրապատիկ կարող էր աստուած ստեղծանել քան զայս աշխարհս: - 192. Ասեմք թէ՝ սոքա ի մասնաւոր հոգւոյն բարի են բնաւորեալ նախանձ ցանկութիւն և այլն. և վասն բարւո՛յ են եղեալ. այլ մարդն *կամօք* իւրովք փոխէ՛ զբնական բարին ի չարն: - 237. Եւ սոյնպէս մարդն առաւելու ի չարն. ի բանականէն և *ի կամացն* և ի թունիցն սատանայի չարացեալ որպէս ցուցաւ ի սկիզբն գրոցս: - 237-238. Իսկ կենդանականին են, *Կամք.* Ընտրողութիւն. Յօժարութիւն. Բարկութիւն. Ցանկութիւն: - 248. Բանականք են Միտք. Տրամախոհութիւն. Կարծիք. *Կամք*. Ընտրողութիւն: - 248. Իսկ ըստ այլոց, զօրութիւնք հոգւոյն բաժանին յերկուս. որ է իմացումն և *կամքն*: - 248. Եւ *կամքն* է որ շարժէ՛: - 248. Դարձեալ հոգին ունի զօրութիւնս ոմանս անխառն ընդ մարմնոյն. որպէս բանն՝ *կամքն* և սոյնպիսիք: - 249. Իսկ զոմանս ունի ո՛չ հասարակ ընդ անասնոց. որպէս բանն. իմացումն. և *կամքն*. և սոյնպիսիք: - 249. Երրորդ՝ *զկամքն* հնազանդ ունի: - 251. Երրորդ՝ *կամքն* կանգնեալ է մոլար ընթացից ջատագով: - 251. Եւ թէ զտեսութիւնս զայս կարծես էութիւն հոգւոյ ըստ որում է հոգի, ապա ո՛չ միայն ետես զհոգի, այլ և զմարմին՝ և զիւրաքանչիւրոց ընտրութիւն, և զհամար հերաց և զթիւն ատեղաց. և սոքա յետո՛յ են գոյացեալ ըստ *կամաց* տեսողին: - 260. Այսպէս և հոգի ըստ *կամաց* խնամողին յետոյ պարգևեալ ըստ թուոյ ծննդեան իւրաքանչիւր մարդոյ որպէս ինքն գիտէ: - 260-261. Եւ փոխանակ թագին՝ ինքնիշխան *կամօք* զարդարեաց: - 271. Վեցերորդ՝ ի յաստուած է՛ միտք և իմացումն և *կամք*. ունի և մարդս զայսոսիկ: - 271. Եւ դարձեալ ասեն թէ՝ հոգին է պատկեր աստուծոյ ըստ զօրութեանցն. զի ունի միտք և իմացումն և *կամք*: - 273. Եւ ապա զի յոչնչէ եղեալն կարէ՛ նմա և ի նոյն փոխիլ եթէ *կամքն* աստուծոյ թոյլ տացէ: - 274. Բայց վասն *կամացն* աստուծոյ մշտնջենաւոր մնան հրեշտակք և հոգիք մարդկան: - 274. Դարձեալ՝ մարդոյս միա՛յն է կարգ կանոնաց, բնութեան, *կամաց*, և հարկի. իսկ անասնոց միայն բնութեան է: - 275. Իսկ կայեն զի ո՛չ այսպիսի *կամօք* մատոյց՝ անարգեցաւ եօթնիցս ընդդիմակօքն: - 287. Դարձեալ ըստ եփրեմի հինգերորդ՝ զի սուրբ էր սրտիւ. և Վեցերորդ՝ զի միամիտ էր *կամօք*. և սոքա առնեն զմարդն մերձակայ աստուծոյ: - 290. Եօթնէժ, որպէս իսահակ արձակեցաւ յետ երից աւուրց, զի ի *կամս* հօրն յօրէ յայնմանէ էր մեռեալ՝ ուստի սկիզբն եղև ճանապարհին: - 306. Երկրորդ՝ անդրանիկ է բանն աստուած ի հօրէ ծնեալ. և կրտսեր ա՛յլ եղեալքս՝ ի հօրէ՛ գոյացեալ. զի որդի ծնո՛ւնդ է հօր և մեք արարածք. և նա՛ ի բնութենէն և մեք *ի կամացն:* - 309. Վեշտասաներորդ՝ զառիւծ ննջեալ ոչ ոք իշխէ զարթուցանել. զի իւր *կամաւ* ննջէ և յառնէ: - 316. Զի թէպէտ հրէա՛յքն խաչեցին, այլ իւր *կամաւն* մեռաւ: - 316. Եւ թէպէտ յովսէ՛փ իջոյց ի խաչէն, և յովսէփ և նիկոդիմոս պատեցին, այլ ինքն *կամաւն* էջ ի բազուկսն յովսեփայ և պատեցաւ զմռով: - 316. Նոյնպէս և կամաւ իւր յարեաւ: - 316. ...նոքա ի *կամս* աստուծոյ անմահապէս օրհնեցան: - 319. Իսկ լեառն հողեղէն բնութեանս մերում, *կամաւ* հօր վկայելով ի վերայ նորա՝ և հաճութեամբ սուրբ հոգւոյն աղաւնակերպ իջմամբ, և անքակտելի միացեալ բանիւն եղև լեառն մածեալ մշտնջենաւոր և անեզր յաւիտենիւ բարձրացեալ օրհնութեամբ և առաւելեալ: - 320. Իսկ հրեշտակք կարե՛ն փոխել զմիտս և շրջել ի բարին. նաև զերևակայութիւնս և զզգայարանս, այլ ո՛չ *զկամս*: - 336. Իսկ աստուած փոխէ՛ և *զկամս* ազդելով ի նոսա զբարին. և դարձուցանէ՛ ի չարէ՛. և երբեմն թոյլ տալով անձնիշխան *կամացն* դառնալ ի չարիս: - 336. Նախ՝ թոյլ տա՛լն է աստուծոյ. որ անձնիշխան *կամօք* ամրանայ մարդ ի չարն, և աստուած ներէ՛ և ո՛չ երկիւղիւ խրատէ զնա: - 336. Որպէս սովորութիւն է մարդոյ որ վատացն ասէ, ե՛ս արարի զայդ բանդ որ զքեզ ի քո *կամդ* թողի և ո՛չ խրատեցի: - 336. Երկրորդ ա՛յն է՝ որ յորժամ լինի *կամքն* մարդոյն չար և խիստ ի ծածուկ, և զայն յայտնէ՛ աստուած. որպէս նաբուգոդոնոսորայ. որ ունէր սիրտ գազանի՝ ի կերպարանս գազանաց փոխեցաւ: - 336. Երկրորդ՝ ըստ ախորժակաց նոցա պատրաստէր. զի գիտացեն թէ *զկամս* նոցա կատարէ՛ աստուած: - 339. Երկրորդ՝ օրէնքն է հարկի. և պատուէրն *կամաց*: - 340. Մովսէս զգործ աստուծոյ գործ էր. և նոքա մարդոյ գործ որիշ և *կամք*: - 350. Իններորդ, պատարագ ուխտի. որ ո՛չ վասն երախտեաց ինչ, այլ իւր *կամաւ* ուխտեալ. որ յերկրորդ օրն ևս ուտէին զմիսն: - 359. Նա՛խ՝ որ ստոյգ չարութեամբ լինի մեղքն. այսինքն *կամաւ* և գիտութեամբ և

կարողութեամբ, անթողելի՛ է: - 385. Շնորհքն է զարդ հոգւոյն և կրօնքն մտաց. և *կամքն* իշխան և կառավար սոցա: - 389. Իսկ մեզ նորոյս հրամայէ՛ զբանեղէնն մատուցանել որ է՛ հոգի և մարմին և *կամք*...: - 396. Բոլոր անձամբ, այսինքն աններհակ *կամօք*: - 396. Եւ հայր աստուած որ ո՛չ կատարի *կամք* նորա ի մեզ. յայնժամ ըստ բազում գթութեան իւրոյ առաքեաց զմիածին որդին որ փոխանակ մեր կախեցաւ զփայտէն և ազատեաց զմեզ յանծիցն օրինաց...: - 400. Դարձեալ՝ մի չար *կամք* է ամենայնցն որպէս ասացաւ: - 404. Եւ յա՛յտ է յայսմանէ, զի հուր բորբոքեալ է ի բարկութենէ. ո՛չ յէութենէ և ո՛չ *ի կամաց* իմ, այլ ի բարկութենէ: - 408. Զի աստուծոյ բնութիւնն և *կամք* և այլն ամենայն բարի է: - 408. Նա՛խ եթէ՝ բնութեամբ բարի է աստուած և ո՛չ ունի բարկութիւն. զի ծառ բարի պտուղ չար ո՛չ առնէ. այլ մեք գործովք մեր զայրացուցանեմք զնա և արկանեմք ի բարի *կամս* նորա բարկութիւն: - 408. Երկրորդ՝ որպէս բնութիւնս մեր բարի՛ էր պատկեր եղեալ բարւոյն. և մեք *կամօք* մեր ախտացուցաք չար ածելով ի ներքս...: - 408. Ցուցանէ թէ տարաժամ մահն ընտրութեամբ և *կամօքն* աստուծոյ լինի, և ո՛չ պատահմամբ որպէս ասեն ոմանք: - 435. Գտի զդաւիթ այր ըստ սրտի իմում, որ արասցէ զամենայն *կամս* իմ: - 435. Իսկ նստիլն ի յաթոռ՝ ասէր պատրել զաքայաբ, թոյլ տալն է աստուծոյ որ մարդ իւր *կամօքն* հաւանի չարին և պատժի: - 444. Զի հնազանդութեամբ կատարեաց *զկամս* հօրն: - 457. Ողորմութիւնն յառաջանայ *ի կամացն.* և արդարութիւնն յիմաստութեանցն: - 457. ...իսկ ի կատարել զգործ ողորմութեանն՝ ո՛չ ինչ պահանջի, եթէ ոչ *կամքն* նորա, որպէս երևեցաւ ի մարդեղութիւն բանին աստուծոյ ի սրբոյ կուսէն մարիամայ: - 459. Եւ նա՛ բնութեանն ծնունդ. և մեք *կամացն*: - 472. Ութերորդ՝ որպէս ի միաւորիլ հոգւոյ և մարմնոյ յառաջագայի ի միոյ *կամաց* միով զօրութեամբ հանճար և ներգործութիւն: - 478. Այսպէս և բոլոր տնօրէնութիւն մարդացելոյն բանի՝ միով զօրութեամբ և կարողութեամբ ըստ միութեանն *կամաց* մի ներգործութիւն երևի: - 478. Չորրորդ՝ զի *կամաւ* հնազանդեցաւ խաչի և չարչարանաց. վասն այն ի գլուխն է նկարեալ: - 481. Եւ այս ևս կրկին է գիր և դպրութիւն. մին անջինջ և յաւիտենից որ առ աստուած. և միւսն ժամանակեայ և ջնջելի որ առ մեզ. զոր մեր գործօք և *կամօք* գրեմք և ջնջեմք. թէ զչար թէ զբարի: - 481. Եւ դարձեալ՝ հաճութիւնն է հանգուցեալ *կամքն*. այսինքն հոգւովն սրբով հանգեայ ի յորդի առեցեալ մարմնովն: - 488. Զի զանմեղ մարմինն իւր *կամաւ* պատարագեաց վասն մեր: - 492. Նա՛խ՝ մեռանիլն. և անմեղ մեռանիլն. և *կամաւ* մեռանիլն: - 492. Զի ըստ այնմ որ *կամաւ* մեռաւ՝ դատապարտեաց զմահ: - 492. Ես սոքա այսպէս զանազանին դարձեալ՝ մեղքն է առաջին ծայր. սկսեալ յանձնիշխան *կամացն* ադամայ: - 496. Եւ պատճառն ասացաւ ի վերոյ, զոր ինչ ինքն եդ զպատիժ՝ նմանեաւն եբարձ. և զորս յանձնիշխան *կամաց* մարդոյն և ի բանսարկուէն արկածք, զայնոսիկ հակառակաւն ելոյծ տէր մեր յիսուս քրիստոս: - 498. Եւ զապականութիւնն ո՛չ կրեաց. ո՛չ *կամաւ* և ո՛չ ի հարկէ: - 500. Իսկ հասարակ մարդիկ կրակա՛ն են կամաւորի և ականայի. բնութեամբ և *կամօք*: - 502. Նոյնպէս քրիստոսիւ տեսանեմք զհայր աստուած, և առնեմք *զկամս* նորա. և կերակրիմք և զմայլիմք հոգէպէս: - 532. Իսկ հոգևորին հնազանդիմք *կամաւ* որպէս աստուծոյ: - 538. ...ըստ յայտնութեան *կամաց* տեառն պարտ է որոշել կամ լուծանել: - 539. Ասեմք առ այս, եթէ համակարգ և համիշխանք են վերջինն ընդ առաջնոյն ի կարգել և ի յուղղել. այլ ո՛չ ի թիւրել և ի քակել. զի առաջնոյն աւանդապա՛հ է վերջինն նո՛յն մտօք և նո՛յն *կամօք*: - 541. Յոհան անտիոքայ՝ թղթով միաբանեալ. **բճ** հարք ընդ դէմ նեստորի որ **բ** բնութիւն ասէր և **բ** որդի. կրկին *կամք* և կրկին ներգործութիւն քրիստոսի. և զաստուածածինն մարդածին: - 542. ...և նոքա զամենայն ինչ ծածկապէս տեղեկացան. զի ժողովեալքն ի քաղկեդոն ակն առին թագաւորին և կնոջ իւրոյ. և զարհուրեցան ի սպառնալեացն. և զնեստորի կարծիսն հաստատեցին. զերկու բնութիւնսն. և զ**բ** *կամսն*. և զ**բ** ներգործութիւնսն: - 543. Եւ պատճառ սոցա այն էր, զի քրիստոսի մի բնութիւն ասէին. և ինքեանք սահմանեցին **բ** բնութիւն. **բ** գործք. և **բ** *կամք*: - 544. Որպէս զինչ ասեմ համառօտ թէ՝ թերութիւն է մեր բաժանել զբանն ի մարմնոյն յերկու բնութիւնս և յերկու դէմս. ի կրկին *կամս* և ի գործս: - 552. Բայց պարտ է այնոցիկ որք ո՛չ գիտեն՝ և կամ թէ *կամաւ* տգիտանան՝ ցուցանել զմիաբանութիւն ազգիս հայոց առ այլ քրիստոնեայսն. զի գիտացեալ յամօթ լիցին յաղթեալք ի ճշմարտութենէն: - 553. Եւ այս յիրաւի իսկ. զի որ հայեցաւ ցանկական մտօք՝ ի *կամս* իւր գործեաց զմեղս: - 556. Դարձեալ ասեն վարդապետք եթէ՝ խորհրդոցն մեղք՝ որ ընտրէ և *կամաւ* հեշտանայ, առաւել չար է քան զգործոցն ըստ պատահմանն: - 557. Եւ է՛ հպարտութիւնն իմացմանն՝ և նախանձն *կամացն*: - 559. Հինգերորդ՝ որպէս ասեն այլ վարդապետք, թէ լինելութիւն մեղաց է յանկարգութենէ *կամաց.* և անկարգութիւն *կամացն* է կրկին...: - 560. Իսկ երկրորդ անկարգութիւն *կամաց* է՛ որ հրաժարի յոչ հրաժարելեաց: - 561. Չորրորդ՝ զի ա՛յլ մեղօք *կամք* մեր անկարգանայ. այլ հպարտութեամբ՝ իմացմամբն յիմարիմք և ապշիմք. և ապա *կամօք* անկարգանամք: - 562. Այսպէս մեղանչէ սատանայ և մարդ. զի զլոյսն աստուծոյ անձնիշխան *կամօք* և իմացմամբ մերժէ՝ և սիրէ զխաւար: - 562. Վասն բանին և անձնիշխան *կամացն*. զի անձնիշխան *կամք* անասնոց ո՛չ է. այլ

բանականին: - 563. Վասն որոյ թէպէտ գործն նոյն է, այլ բանն և *կամքն* ո՛չ է նոյն: - 563. Նա՛խ՝ զի որ *կամաւ* և գիտութեամբ մեղանչէ, առաւել է քան զակամայն և զտգիտութեան. զի թէպէտ և սոքա մեղք են, այլ պատիժն նւազ. որպէս անասնոյն քան զմարդոյն: - 563. Երկրորդ ի միտ առ, զի որ առաւել գիտութեամբ և *կամօք* մեղանչէ, առաւել պատժի քան զայն որ նուազ գիտութիւն ունի և *կամք*...: - 563. Այլ և որա՛կ է *կամաւն* և ակամայն. գիտութեամբն և անգիտութեամբ. կարողութեամբ և տկարութեամբ. և այլն: - 565. ...այսինքն չարութեամբն յորժամ *կամքն* կարէ՛ և գիտէ ընդ դէմ կալ չարի իմն, սակայն վասն չարութեան ընտրէ զայն: - 566. Ա՛րդ՝ մեղքն որ ընդ դէմ հոգւոյն սրբոյ՝ մանաւանդ ելանէ ի չար *կամաց* անձնիշխանականին. և ուղղակի մարտնչի ընդ դէմ շնորհաց հոգւոյն սրբոյ. և յիրաւի անթողլի՛ է: - 566. Նա՛խ՝ զի սկզբնականն հարկիւ և ակամայ տիրէ. իսկ սոքա ըստ *կամաց*: - 568. Եւ ունակութիւնն է՛ ի խորհուրդն և ի *կամքն*: - 568. Զի թէպէտ անպատեհ է ասել զբարկութիւնն առ աստուած զի անփոփոխելի քաղցրութիւն է. այլ *կամքն* որով մեղաւորքն վասն չար գործոցն տանջեալ լինին՝ բարկութիւն ասի աստուծոյ: - 569. Եւ սա բաժանի յերկուս. այս է յիմացումն և ի *կամքն*: - 572. Եւ հաւատն է յիմացումն որպէս ի յենթակայս. և է՛ ի *կամքն* որպէս հրամանատու: - 572. Զի *կա՛մքն* հրամայէ զգործ հաւատոյն. զի ո՛չ ոք հաւատայ, եթէ ոչ կամեցողն: - 572. Եւ որպէս հաւատն է ի հանճարն, նոյնպէս յոյսն և սէրն են ի *կամքն* վասն բ պատճառի: - 572. Նա՛խ՝ զի յառաջ եղեալ հանճարոյն է՛ ճշմարիտն. և յառաջ եղեալ *կամացն* բարին: - 572. Եւ զի յառաջ եղեալ հաւատոյն է՛ ճշմարիտն. վասն այն հաւատն է՛ յիմացումն որպէս ի ենթակայս. և յառաջ եղեալ յուսոյն և սիրոյն է բարին, վասն այն յոյսն և սէրն են ի *կամքն* որպէս ի յենթակայս: - 572. Ապա ուրեմն հաւատն է յիմացումն. և յոյսն և սէրն ի *կամքն*: - 572. Այս վասն համանման գործոց նոցա այսպէս կարգի որ են ի նոսա. այլ յոյսն և սէրն են ի *կամքն*: - 578. Վասն այն ասի արդարութիւնն ուղղութիւն *կամաց*. զի ո՛չ միայն է առանձնական զօրութիւն կամ առաքինութիւն. այլ և հասարակ և պարունակիչ ուղղութեան հոգւոյն: - 579. Շնորհ է յիշատակ բարեկամութեանց. և *կամք* անդրէն հատուցմանց: - 579. Այս է՝ զմեղքն՝ *զկամքն* չար՝ և զատանայ՝ որ խռովարարք էին եբարձ ի միջոյ. և արար խաղաղութիւն յերկինս և յերկրի: - 585. Նա՛խ արար խաղաղութիւն յանձն իւր. զի զաստուածային և զմարդկային բնութիւնն միաւորեաց յինքեան ի մի *կամս* և ի մի ներգործութիւն անբաժանաբար: - 585. Եւ երկրորդ անպատշաճութիւն, զի յասելն թէ՝ ես կու մկրտեմ. երևի թէ նուիրեալն ո՛չ իւր *կամաւն* է եկեալ ի մկրտութիւն, այլ բռնութեամբ և ի հարկէ՛ կու մկրտեմ: - 588. ...բայց թէ ազատեալ լիցի տն *կամօք*. որպէս նեսիմոնս այն. իսկ թէ զայր որ ընդ ծառայութեամբ է՝ ո՛չ հրամայեցին հայրապետքն սուրբք գալ ի յաստիճան եկեղեցւոյ...: - 589. Տղայն իւր *կամաւն* ո՛չ գործէ. վասն է՞ր է պարտական մեղացն ադամայ: - 591. ...որք *կամաւ* յանձն առնուն. զի այս մինչև ի մահ ճգնութիւն է: - 600. Եւ զօրհնեալ բաժակն առաջի եդ զի *կամաւ* արբցեն: - 600. Եւ է՛ խոստովանութիւն որ զարմատ մեղացն քակէ՛ ի սրտէն և զղջացեալ ի մեղաց, հաստա՛տ է ի *կամս* և ի միտս այլ ո՛չ մեղանչել. - 603. ...զի երկուց *կամաց* հաւանումն հաստատէ՛ զպսակն: - 609. Իսկ հաւանումն երկուց *կամացն*՝ հաստատութիւն է պսակին: - 610. Զայս ունի խորհուրդ, որ հարսն և փեսայն յառաջ քան զպսակն տեսանեն զմիմեանս. և հաւանին սրտիւք և *կամօք* և ապա՛ պսակին: - 610. Իսկ որդէգիրն որ բանիւ և *կամօք* լինի, ո՛չ լինին խնամիք մինչ ի կրկին ծնունդն. - 612. ...վասն զի բանից և *կամա՛ց* են զաւակք: - 612. Նոյնպէս և մասունք մտացն իմացումն է և *կամքն*: - 612. Այլ և **ե** զգայութիւն հոգւոյ և ե մարմնոյ. մտօք և *կամօք*: - 616. ...այսինքն միհն ի մարմինն. **բ** ի միտքն. **գ** ի *կամքն*. յորժամ սոքա պատրաստին, ապա՛ աղօթքն ընդունելի լինի աստուծոյ: - 620. Իսկ *կամօքն*, յորժամ *կամօք* առնէ զաղօթքն՝ վարձք առնու: - 620. Յորժամ յոչ *կամայ*՝ ո՛չ վարձք և ո՛չ մեղք: - 620. Նա՛խ՝ վասն զի հոգին եռամասնեայ է. բան, ցասումն, և ցանկութիւն. և ունի իմացումն և *կամք*: - 622. Թէպէտ *կամաւ* տկարացար և ետուր զքեզ ի ձեռս խաչողացն՝ հզօ՛ր ես յամենայնի: - 632. Որ *կամաւ* խաչեցար վասն մեր, նոյն սիրովն ողորմեա՛ մեզ: - 632. Որպէս լեզուն մտաց՝ և ձեռքն սրտին է գործի. նոյնպէս ունկն *կամա՛ց* է. հնազանդութեան և կամ ոչ: - 658. Իսկ *զկամքն* տալ աստուծոյ հաճո՛յ է քան զպատարագ՝ վասն չորից: - 658. Նախ՝ զի լսելովն *զկամս* աստուծոյ կատարեմք. իսկ պատարագաւն զմերս: - 658. Երկրորդ՝ պատարագն մասն է *ի կամացն*. և *կամքն* բոլոր: - 658. Երկրորդ, որք *կամաւ* աղքատանան վասն քրիստոսի: - 664. Զի չորք իրք դժուարին է. որ առանց *կամաց* մեր լինին: - 668. Երրորդ՝ զի *կամօք* և ուրախութեամբ ուղարկեմք ի քրիստոս և ո՛չ ակամայ կամ տրտմութեամբ: - 673. Դարձեալ՝ գիտութեամբ և *կամօք* գործեցաք զմեղս. - 680. Իսկ թէ անզեղջ *կամօք* և առանց խոստովանութեան ի մեղս մեռան, ո՛չ է օգուտ նոցա. թէպէտ մկրտեալ իցեն և հաւատացեալ. - 683. Աղօթք նոցա ցանկութիւնն է նոցա. զի *կամս* երկիւղածաց իւրոց կատարէ՛ տէր: - 685. զայն աղերսեն նմա. սակայն ըստ հաճոյութեան *կամացն* աստուծոյ խնդրեն և ո՛չ զիականսն: - 685. Որպէս աղօթէր «կամիմ զի ուր եսն եմ, և սոքա ընդ իս իցեն». և կատարեալ է *կամքն* քրիստոսի: - 688. Ասեմք առ այս, եթէ նախ է բարին

ի հոգին ըստ տեսութեան մտացն և *կամացն*...: - 696. Այլ և պա՛րտի ապաշխարութիւնն *կամաւ* գոլ. իսկ ի քաւարանն հարկիւ տանջի: - 699. Երկրորդ, զի ի սուրբ գրոց ածեն վկայութիւնս և մեկնեն ըստ *կամաց* իւրեանց...: - 701. ...և որ ոք աստ *կամաւ* ո՛չ պատժի, աստուած պատժէ զնա ի հուրն և քաւի: - 701. Իններորդ ասեն, ապա յայն կեանքն թողութիւն *չկա՞յ*: - 704. Որ է՝ ուրանամ *կամաւ* զարարիչն երկնի և երկրի: - 707. Զի ուր *կամք* հոգւոյն խնդրէ՝ անդ ընթանայ և մարմինն անարգել ի յական թօթափելն. - 722. Զի այժմ հոգիս փոփոխական է. որպէս խորհրդով *կամօք* և այլն. վասն որոյ զմիաւորութիւնն ընդ մարմնոյ փոփոխական ունի...: - 723. Ա՛րդ՝ որպէս հրեշտակք ի յոչ գոյից գոյացան և են անապականք և անմահք ի *կամքն* աստուծոյ: - 733. Այսպէս և **դ** տարերք ըստ ինքեանց անապականք են. զի մասնաւորքն ի նոցանէ ապականին և դարձեալ ի նոսա խառնին. և այսոքիկ ըստ *կամացն* աստուծոյ են կամ մշտապէս: - 733. Նմանապէս և խաչն աստուծոյ՝ է՛ *ի կամացն* աստուծոյ և ի նորին ներգործութենէն որ անապական կամի զնա. զի նովաւ արար փրկութիւն ազգի մարդկան: - 733. Յոգի և մարմինս է որպէս մագաղաթ. *կամք* և իմացումն դպիր և գրօղ. հաւատքն գրիչ. արտասուքն մելան. և գիրն գործք բարի կամ բան աղօթից: - 741. Իսկ խոտելոցն գիր, դպիր է պիղծ հոգին դիւական. և չար *կամքն* իւրեանց և խորհուրդն և հեշտութիւն մարմնոյն մելան. և ըստ գործոց առաւել և նւազ գրեն ի գիրն դատապարտութեան: - 741. Դարձեալ՝ չար *կամք* մեղաւորին է յաւիտենական. զի կամին յաւիտենական հեշտանալ ի մեղս թէ կարէին. ապա ուրեմն պատիժն լինի յաւիտենական: - 744. Նժարն է՛ ի մեզ անձնիշխան *կամքն*: - 744. Եւ պա՛րտ է գիտել զի ի միոյ սեռէ բարութեանցն աստուծոյ՝ յառաջե՛ն առ մեզ ողորմութիւն և արդարութիւն. կրկին տեսակ կամ գործք կամ զօրութիւն. որպէս ի մեզ երկոքին ձեռք մարմնոյ. և որպէս իմացումն և *կամք* հոգւոյ: - 745. Նախ ի նոյն առ ինքն ի դէմս սրբոյ Երրորդութեանն. հասարակ գոլ ամենայնիւ. աստուածութեամբ բնութեամբ *կամօք* և այլն: - 746. Երկրորդ, հայի՛ առ ի մի և նոյն բարերար *կամացն* յառաջ եկեալ գործքն. աստուածային՝ արարչական՝ և արքունական. որ է գործ ստեղծման և նախախնամութեան: - 746. Դարձեալ՝ առաջինն է ի *կամքն*. երկրորդն ի սէրն. երրորդն ի գործն: - 747. Ասեմք եթէ՝ բնութեամբ բարին մի է. որպէս ասէ մեծն դիոնէսիոս. այլ ներգործութեամբ բազում է ի զանազան *կամաց* յառաջ եկեալ: - 758. Վասն որոյ ի *կամս* ապաստան ներեսցուք հաւանել ճշմարտութեանն: - 759. Եւ թէ լինէիր *կամօք* փարթամ որպէս սողոմոն. որում ո՛չ անխայեաց զոր ինչ ցանկացաւ ի սրտի: - 761. Նոյն և *կամք* և կիրք և ներգործութիւն մարդկային ընդ աստուածայինն միաւորեալ. միջնորդելով հոգւոյ բանականի՝ աստուածութեանն՝ և մարմնոյն. որ է՛ ներգործութեամբ միշտ աստուած և փրկիչ բնութեամբ. քրիստոս. նոր ադամ. էմմանուէլ ճշմարտութեամբ: - 770. Ի *կամս* Հայրենի բարեխնամ գթութեանցն աստուծոյ: - 771. Եւ է՛ ինչ ի ներգործութեանց հոգւոյն աստուծոյ շնորհաց. որ ծածկէ՛ յիմաստնոց և յայտնէ տղայոց յիւրաքանչիւր ժամանակս ըստ *կամաց* իւրոց: - 772. ...իսկ Պարագայիւ, զի նա ակամայ և տգիտութեամբ. ուստի ո՛չ ունելով զգիտութիւն բարւոյ և չարի. իսկ նոքա *կամաւ* և գիտութեամբ: - 777. Յիրաւի դարձեալ՝ դարձցին յետոյ ի պատիժս անձնիշխան *կամաց* ներգործական մեղաց: - 778. Թէ ասիցէ ոք, թէ աստուած յողորմութենէ *կամացն* փոխի յայնժամ յանողորմութեան յաքոռ: - 778. Այլ ո՛չ թէ ողորմութիւնն աստուծոյ հետևի ժամանակի, այլ քաղցրութեան *կամացն*: - 780. Այլ մեք հետևելով ժամանակի՝ գտցուք զողորմութիւն ի քաղցրութեան *կամաց*: - 780. Յորմէն, զի իցէ յօժար *կամօք*: - 780. Եւ է՛ հասարակ շնորհ, հաւանութեամբ անձնիշխան *կամաց*՝ պատրաստել զինքն առ ի փրկութիւն օգնականութեամբ շնորհին: - 783. Եւ է՛ այս ի բաց դնելի ընտրութեանն *կամօք:* - 783. Չորրորդ, հաւատն է՛ աստուածային առաքինութիւն. իսկ դևք զի են խստացեալ ի չար՝ ո՛չ ունին զղջումն որ է բարոյական. ապա և ոչ հաւատ որ է վերնագոյն և բարի *կամաց* խոկումն առ աստուած: - 784. Այլ ամբարշտեալ *կամք* դիւին մնայ անկատար: - 784. Բաւուք ասացաւ յարարչէն. զի թէ և բնութիւն թարց երևակայութեան, և արհեստ հանդերձ երևակայութեամբ, սակայն *կամք* արարչական ետ նոցա բնական և բանական կարողութիւն. և ոչ ինչ վայրապար կազմեն զտեսակ գոյացական և զտեսակ պատահական. խնդրելով ոմն պարզ նիւթ. և ոմն տեսակացեալ: - 786. Միայն բարեսէր *կամօք* յիշատակ բարի առ քոյդ արձանագրեսցի ի տէր: - 789

***ՅՈՉ ԿԱՄԱՑ +*** Նա՛խ՝ զի մարմնաւորին հնազանդիմք *յոչ կամաց*. բռնութեամբ և ի հարկէ: - 538

**ԿԱՅ(Ք) +** Զլաւագոյն *կայս* զոր աստուած տուեալ էր նմա՝ կամեցաւ ակամայ յաստուծոյ ի՛ւր շորթել. և այլոցն բռնաբար տիրապետել և հրամայել: - 149. Եւ անտի յառաջ զբանական մասին կատարումն և *զկայ*՝ ցուցեալ: - 267. Այլ նախ ասի միշտ տիւ ի վերին երես երկրի. ուր արեգակն և լուսին *զկա՛յէ* առեալ. իսկ ներքինն միշտ գիշեր և խաւար անփոփոխելի: - 750. Աստանօր յիրաւապէս առցէ *զկայ*՝ բան Յարցմանցս այսոցիկ: - 771

**ԿԱՅԱՆ +** Երկրորդն է *կայանք* հոգւոց: - 221. Վեցերորդ՝ կին, իբր թէ *կայանք* և հանգիստ մարդոյն: - 276.

Ի դրախտն, զի թանձր մարմնով ո՛չ բնակին յիմանալեացն *կայանս*. և յօդս կախիլ անպատշա՛ճ էր: - 289. Նոյնպէս և սուրբքն ջերմ սիրովն աստուծոյ ժողովին ի *կայանս* հոգւոցն ի տեղւոջ լուսոյ և հանգստեան: - 315. Վասն այն ա՛ստ ի հաստատութեան երկնից ասեն *զկայանս* հոգւոցն մինչ ի կատարած յարութեան մարմնոց: - 346. Իսկ յետ մահու ա՛յնոցիկ հոգւոց որք զղջան կամ խոստովանին զմեղս, քաղաք ապաստանի է նոցա ի *կայանս* հոգւոցն տրտմութիւն և ցաւն վասն փոխարինաց մինչ մեռանի քահանայն մեծ. որ եկեղեցի սուրբ՝ պատարագաւ և աղօթիւք և ողորմութեամբ հատուցանէ՛ զպարտս նոցա և ազատին: - 392. Ա՛րդ՝ եգիպտոս է՛ նշանակ երկրիս այս. և ծովն կենցաղոյս. և անապատն *կայանք* հոգւոցն: - 393. Տասներորդ՝ ի *կայանս* հոգւոց նախ տեսանի պատիժն, և ապա փառքն: - 395. Նոյնպէս և քրիստոս առհասարակ ազատեաց զհոգիսն և եհան ի *կայանս* հոգւոցն: - 507. Եւ **խ** օր յօդս զի **լգ** օր զօդս սրբեսցէ ի ճենճերից կռոց. և **է** օրն ի խորհուրդ **է** աստեղեան խորանացն ի *կայանս* հոգւոցն: - 520-521. ...և առեալ տանի ի *կայանս* հոգւոց...: - 669. ...և նա դնէ յեկեղեցին մերձ առ դուռն որ նշանակէ *զկայանք* հոգւոցն յերկինս ի վերջին տեղւոջ մինչ ի յարութեանն օր: - 672. Տասներորդ, զի **գ** են տեղիք. այսինքն *կայանք* հոգւոցն և դժոխք և արքայութիւն. - 675. Չորրորդ, մարմինն ի հող հանգչի և հոգին ի *կայանս* հոգւոց...: - 677. Եւ միջին սրբութին է *կայանք* հոգւոցն. ուր աշտանակն լուսոյ և խունկն և հաց երեսացն: - 682. ...և յետ աստեացս մտանեմք ի *կայանս* հոգւոց...: - 682. Եւ անապատ է՛ *կայանք* հոգւոցն անկարօտ մարմնական պիտոյից: - 682. Այսպէս թէպէտ քրիստոնէից հոգիքն որ անարժանք են՝ ի ձեռն հրեշտակին ժամանեն ի *կայանս* հոգւոցն այսպիսի սքանչելեօք: - 682-683. Ո՞ւր է *կայանք* հոգւոցն և պահեստ: - 686. Նախ քան զքրիստոս, առ հասարակ ի դժոխս. բայց յետ քրիստոսի, առհասարակ ի *կայանս* հոգւոց. և երրորդն ի կատարածի...: - 686. Իսկ թէ այժմ ո՞ւր են *կայանք* հոգւոց: - 686. Եւ այլք ասեն ի դրախտին լինիլ *զկայանս* հոգւոց արդարոց և մեղաւորաց մինչ ի կատարած աշխարհի: - 686. Երրորդն ի տգիտա՛ց է ասացեալ. զի *կայանք* մարմնաւոր՝ անմարմին հոգւոց ո՛չ է պիտոյ: - 687. Իսկ ի ներքոյ երկնից առ երկնիւ է *կայանք* հոգւոց կիսամասնեայ արդարոց այնոցիկ որոց պակա՛ս է արդարութիւն քան զմեղս և կամ առաւել: - 688. Ապա ո՞րպէս մի *կայանք* հոգւոցն որ ասացաւ յառաջն: - 689. Դարձեալ՝ մի ասի *կայանք* երկուցն վասն միոյ ակնկալութեան. զի արդարքն ակնունին պսակաց, և մեղաւորքն տանջանաց: - 689. Եւ ապա ասեմք, եթէ աստուած յամենայն տեղիս է. վասն որոյ *կայանք* հոգւոցն ուր և իցէ առ աստուած է: - 695. ...իսկ միջակ արդարքն որ են ի *կայանս* հոգւոցն՝ և զտեսանելն պայծառապէս ընկալցին ի յարութեանն դէմ յանդիման որպէս և էն...: - 697-698. Ասեմք առ այս, եթէ մարմին մարդոյ բաժանեալ ի հոգւոյ, և հոգին գնացեալ ի *կայանս* հոգւոց առ աստուած որ ետ զնա՛. և մարմինն ի հող լուծեալ կամ յայլ տարերս...: - 718. ...նմանապէս և մարմինք մեռեալք յերկրի և հոգիք ի *կայանս* իւրեանց ի միասին կան առհասարակ արդարոց և մեղաւորաց մինչ դատաստանաւն բաժանեսցին օդիքն և այծիք: - 721

**ԿԱՅԱՆԱՄ +** Տասներորդ՝ **բ** սկիզբն՝ գերագոյն բարին. և ծայրագոյն չարն՝ կամ ըստ ինքեանց *կայանան*, կամ ո՛չ: - 21. Եթէ ո՛չ *կայանան*, ո՛չ են սկիզբն: - 21. Եւ եթէ *կայանան* ըստ ինքեանց, ո՛չ ոքն է չար. զի *կայանալն* ըստ ինքեան բարի՛ է: - 21. Եւ դարձեալ՝ հոգին որ ի հօրէ ելանէ և *կայանայ* յորդի. և ի ձեռն որդւոյ իբր զհայրական բարի ամենայն գոյիցս բաշխի երկնաւորաց և երկրաւորաց. նախ քան զմարմնանալն՝ և ի մարդեղութեանն: - 61. Այլ զի զանձնաւոր բնութիւն և զանհատն ասեմք մարմնացեալ. զի սկիզբն միաւորութեանն է ի բնութիւնն, և կատարումն *կայացեալ* ի յանձն, յիմարա՛ց ուրեմն և ափշելոց է խնդիր նոցա: - 76. Այլ մարդկութիւնն քրիստոսի ո՛չ կարէ *կայանալ* առանց աստուածային էութեանն: - 87. Եօթներորդ՝ այն երևեալ և ո՛չ *կայացեալ*. և աստ երևեալ և *կայացեալ*, որպէս ասեմք զեղջերւաքաղն անուանեալ և ո՛չ ենթակայացեալ. իսկ զեղջիւրն անւանեալ և էացեալ: - 133. Նա՛խ՝ եթէ թողութիւնն է հետևեալ և *կայացեալ* ի զղջումն. և զղջումն է ի կամքն. և կամքն է ի կարելեացն. վասն որոյ ներընդունի զթողութիւն ի ձեռն զղջման: - 165. Բաղկացական է, որ ընդ մարմնոյ մասնկանցն գոյանայ ի ներս և ի դուրս. վերոյ և ներքոյ շուրջանակի. զի իւրաքանչիւր մասունք ի տեղին ունին զդրութիւնն. և *կայացեալ* ի բոլորն: - 174. Ըստ այսմ ապացուցի. զի բնութիւնն ի սեռո՛ւմն է և ի տարբերութեան ուստի բաղկանայ. և անձն ի բութիւնն է յորմէ *կայանայ*. և դէմքն ի յանձնէ՛. և կերպարանն ի դիմաց. և պատկերն ի կերպարանաց. և տիպն ի պատկերաց. և որակ տպաւորեալ ի պատահմանց: - 235. Եւ անդանօր լինի անմահ և անապական ծնունդ և որդիք յարութեան. զի մեռանիլ ո՛չ ևս կարեն ասէ. վասն զի յանմահ զօրութենէն աստուծոյ ծնանիմք, և յանապական տարրեղէն նիւթոց. վասն որոյ անմահ և անապական *կայանան*: - 308. Վասն զի բոլոր մարդն երիւք է *կայացեալ*. որ է հոգի և մարմին, և ի մէջ երկուցն շունչն է խառնեալ: - 510. Ի հաղորդութիւն սոցա *կայանայ* ամենայն ուրեք առաքելութիւն: - 535. Դարձեալ զանազանին սոքա. զի մեղք խորհրդոյն *կայանայ* յերիս. ի տեսանելն, ի հաւանիլն, և ի կամիլն: - 568. Գիտելի է, որպէս պատկեր

աստուածութեանն *կայանայ* ի մի էութիւն և յերիս անձինս: - 577. Այսպէս և պատկեր վերստին ստեղծմանն ի մեզ *կայանայ* ի միութիւն շնորհին և յերիս ունակութիւնս: - 577. Զգաստութիւնն *կայանայ* առ ճաշակելիսն. ի յորում դնէ զկապն և զչափն: - 581. Իսկ համեստութիւնն *կայանայ* ի յասելիսն. այլ և ի տեսանելիսն. ի լսելիսն. ի հոտոտելիսն: - 581. Երրորդ, զի մարմինն փոխեսցի ի հող մինչև հոգին յանապական և յանփոփոխ սերտութիւնն *կայասցի*...: - 677. Զի որպէս յաւուրս **զ** կազմեցաւ աշխարհ և ի **զ** դարս *կայացաւ*. նմանապէս և ի ժամս զ նորոգեսցի դարձեալ: - 747

**ԿԱՅԱՐԱՆ +** Մ՛րդ՝ տեղական անկումն դիւին եղև կամ ի դժոխս՝ կամ ի յօդս աղջամղջին որ է՛ միջին *կայարան* օդոյն: - 146

**ԿԱՅԱՑՈՒԹԻՒՆ** - Իսկ թէ բաժանական է անձն՝ որպէս յա՛յտ է ի սահմանէն՝ անհաղորդելի *կայացութիւն*: - 86

**ԿԱՅԵՆ** - Զսէր քարոզեն, և զդաւ նենգութեամբ *կայենի* նիւթեն: - 34. Առաջին հարցումն Վասն աբէլի և *կայենի*, և պատարագաց նոցա: - 283. Եւ ի *կայէն* և ի զոհս նորա ո՛չ հայեցաւ: - 286. Իսկ *կայեն* զի ո՛չ այսպիսի կամօք մատոյց՝ անարգեցաւ եօթնիցս ընդդիմակօքն: - 287. Դարձեալ է յանցանօք մեղաւ *կայեն*. վասն որոյ և եօթնիցս պատժեցաւ: - 287. Վասն այն արդարադատն աստուած է պատիժս եդ. ի վերայ *կայենի*. վասն զի է չարութեամբ յանցեաւ: - 287. Այլք եղջիւրս ասեն ունել ի ճակատն որ իբր զփող գոչէր թէ՝ գա՛յ ահա *կայեն* եղբայրասպանն: - 287. Այլ ի դէ՛պ է զի նախանձախնդի՛ր է աստուծոյ ընդդէմ տանն *կայենի*: - 290. Նոյնպէս և զփոխումն ենովքայ տեսին եղբարքն ուստերքն և դստերք նորա. զի մի՛ ասիցեն թէ սպա՛ն զնա՛ կուրացեալն դամեք թոռն *կայենի*: - 290. Որպէս *կայեն* յորժամ սպան զաբէլ, պատճառեաց ծնողացն եթէ զնորա պատարագն ընկալաւ աստուած և վերացոյց ի դրախտն: - 290. Այլ գիտելի է, զի մեղքն երբեմն յերկարէ՛ զկեանս՝ զի չարչարեսցի իբրև *զկայեն*: - 292. Չորրորդ՝ նոր չարիս գործեցին, խիստ և առաւել պատուհասեցան. որպէս և *կայեն*. զի նշան լիցին աշխարհի ահի՛ և երկիւղի: - 303. Վասն է՞ր զանդրանիկն խոտէր և զկրտսերն ընտրէր. որպէս *կայեն* խոտեցաւ և սէթ ընտրեցաւ: - 309. Ուստի յա՛յտ է, զի որակ ծնողացն խառնի ի բեղնաւորիլն. ի դաշտանւոյն զօդի. ի հիւանդութենէ, ի շիկութենէ. որպէս ադամ տրտմութեամբ ծնաւ զորդին *կայէն*. ցաւած ծնողացն ցաւածին որդի: - 439. Երկրորդ, զի հաճո՛յ լիցի որպէս աբելին և մի՛ որպէս *կայենին*: - 657

**ԿԱՅԻԱՓԱ** - Սադովկ և աբիաթար. աննա և *կայիափա*. որ և աղջիկն հետազօտեալ: - 438. Երրորդ՝ կապեալ ածաւ ի տունն *կայիափայ*. և անդ զթուքն կալաւ յերեսն. և մինչ ի վաղիւն հսկեաց: - 492

**ԿԱՅԼԱԿ +** Եւ ի քիրտ արեանն *կայլակ* հոսիլ: - 492

**ԿԱՅԾ +** Իսկ ի չորրոյն՝ հողմունք և հնչմունք զանազանք. որոտք և փայլատակմունք. *կայծ*. և այլն որպէս ցուցաւ: - 204. Նոյնպէս և ի ջուրն կան այլ գն. հողմն երևի ի գոլորշիքն. և հուրն և հողն՝ *կայծն* ի վայր անկեալ քար լինի: - 214. Եւ այլք ակն *կայծ*, կամ բիւրեղ: - 294. Կարկեհանն՝ որ *կայծ* կոչի. հրագո՛յն է. գտանի յափրիկէ. ի գիշերի որպէս հուր վառի: - 348. Այլ որպէս *կայծ* հրոյ և անօթ արեգական բոլորովիմբ է լոյս, նոյնպէս և անդ բոլոր անդամօքն փայլեսցին իբրև զարեգակն: - 726. Որպիսութեան կրիցն չափ ո՛չ է անտի տանջանացն. զի բոլոր աստի նեղութիւնս համեմատեալ այնմ՝ է՛ որպէս կաթիլ մի ի ծովէ և *կայծ* մի ի հնոցէ: - 751. Ութերորդ՝ ահագին տեսիլն դիւաց և վիշապաց. զոր ի *կայծի* կայծել հրոյն տեսանեն. և ողորմելի աղաղակ լալ ականացն և ոտնիհար լինողացն: - 752

**ԿԱՅԾԱԿՆ +** Իսկ բանիւ գործոյ խօսի աստուած ընդ դիւին. նա՛և հրեշտակք ընդ սատանայի. որպէս որոտ և *կայծակունք* հրոյ ի վերայ նոցա...: - 145. Եւ թա՛նձր ծանրութեամբն ի վայր բերեալ՝ կոչի *կայծակ*. և լինի յամառնային եղանակս: - 204. Չորրորդ՝ յամպոյն որոտ և *կայծակունք* թափին: - 206. Վասն որոյ ի սոյն ժամանակի առաւելու որոտ *կայծակ* և կարկուտ զգալապէս՝ յիշատակ սքանչելեացն աստուծոյ: - 341. Դարձեալ պատճառե՛ն թէ՝ յետ յարութեանն եկեր ձուկն ընդ աշակերտսն. յորում կրակեաղ *կայծականց* տեսին և ձուկն խորովեալ և հաց. և օրն էր չորեքշաբաթի. և ի **ե** շաբաթի համբարձաւ: - 511. Իններորդ վասն սրբութեան. ըստ *կայծականն* մարգարէին: - 536

**ԿԱՅԾԱԿՆԱԾԻՆ** - Նմանապէս և մեծն ի մարգարէս աստուածախօսն մովսէս որ աստուած կոչեցաւ փարաւոնի. իշխելով տարերցս փոփոխման, որ ջրածինն էր՝ եղև վիմածին և *կայծակնածին*. որում լուսաւորեցան երեսք: - 288

**ԿԱՅԾԵԼ** - Եօթներորդ՝ զի լինի անձկ որ ո՛չ որոտայ և ո՛չ *կայծ է* վասն սաստիկ խստութեանն: - 206. Ութերորդ՝ ահագին տեսիլն դիւաց և վիշապաց. զոր ի կայծի *կայծել* հրոյն տեսանեն. և ողորմելի աղաղակ լալ ականացն և ոտնիհար լինողացն: - 752

**ԿԱՅՆԱՆ** - *Կայնան* ստացուած ընտրեալ օրհնեալ աստուած: - 299. Անունք Կանանց

Նախապետացն... *կայնանայն* մաղաղեդա՛: - 299. Վասն զի *զկայնան* որդի արփաքսաքայ և հայր սաղայի **ճ** և **ի** ամ ի թիւ առնու: - 411

**ԿԱՅՈՒՄՆ +** Ամենայն իր ունի *կայումն* և ունի շարժումն: - 142. *Կայումն* ըստ բնութեան, և շարժումն ըստ իմացման և ներգործութեան: - 142. Խաղաղութիւն է ի *կայումն* առաքինութեան. յորում է հեշտութիւն ի յաստուած առանց հասարակութեան մարմնոյ՝ աշխարհի՝ և սատանայի: - 585

**ԿԱՅՍՐ +** Որպէս յորժամ *կայսր* մտեալ ի քաղաք՝ թագ և այլ նշանք առաջի տարցին, որով գալուստ նորա ցուցանիցի: - 734

**ԿՆՆԱՄԲԻ +** Զի որ ի լեառն սուրբ առ աստուած մերձենայ, ո՛չ է պարտ յանկողինս կնոջ հեշտանալ. «զի որ *կանամբին* է՝ հոգայ զկնոջն և ո՛չ զտեառն» ասէ առաքեալն: - 331

**ԿՆՆԱՆՑԱԿԱՆ +** Այլ և ո՛չ *կանանցական* սերմն եղև նիւթ մարմնոյն քրիստոսի: - 470

**ԿՆՆԱՉ +** Վասն է՞ր ամենայն բոյսք *կանաչ* լինին գունով: - 212. Ոմանք ի ջրո՛յ ասեն *զկանաչն*. և յորժամ պակասի ջուրն՝ չորանան և սպիտակին: - 212. Ոմանք ասեն թէ յօդոյն է. զի օդն կապոյտ է՝ խառնի ընդ ջրոյն և լինի *կանանչ*: - 212. Այսպէս և սևութիւն երկրին և դեղնութիւն հրոյն խառնի և առնէ *զկանանչն*: - 212. Զմրուխտ. *կանա՛չ* է և դեղնագոյն. գտանի ի փիսոն գետ. Ղևի՛ է և Յոհաննէս: - 348. Զորօրինակ՝ *կանաչ* բոյս՝ թէպէտ ի ցօղուն և ի հասկ՝ չէ՛ կատարեալ. այլ ի տեսակս իւր կատարեալ է: - 556

**ԿՆՆԱՉԱԳԵՂ +** Դարձեալ՝ տերև *զկանաչագեղ* կեանս. և ծաղկեալ առաքինութեամբ. և պտուղ արդեանցն հանապազորդ: - 765

**ԿՆՆԱՉԱԳՈՅՆ +** Քանզի որպէս փայտն այն ասի քան զայլ փայտս դրախտին *կանաչագոյն*: - 755

**ԿՆՆԱՉԻՄ +** Եւ զի ծառք չորացեալք՝ դալարին և *կանաչին*: - 197

**ԿՆՆԱՉՈՒԹԻՒՆ +** Քառասունևզ) Վասն բուսուց և տնկոց՝ և *կանաչութեան* նոցա. և ծաղկի, և պտղոյ, և համոյ, և հոտոյ նոցա: - 155

**ԿՆՆԱՔԱՐԻՍ** - Եւ անուն փարաւոնի որ ընկղմեցաւ՝ փեսիոս. և ոմանք *կանաքարիս* կոչեն: - 337

**ԿՆՆԳՆԵՄ +** Չորրորդ՝ զայլայլումն լուսաւորացդ. այսինքն զի երբեմն խաւարին, որպէս առ խաչելութեամբն. և երբեմն յետս դառնան և *կանգնին*, որպէս յեսու և առ եզեկիա: - 26. Ի գիջութիւնս ախտից հեշտացեալք, և նոյն զգլորեալն *կանգնեն*: - 34. Քսանեղ՝ Այլ կենդանիք յորժամ ծնանին ի մօրէ *կանգնին*, և մարդս ո՛չ: - 228. Երրորդ՝ կամքն *կանգնեալ* է մոլար ընթացից ջատագով: - 251. Խնդրեմ և զայս ուսանիլ թէ ընդէ՞ր է՝ զի մարդս կատարեալ կենդանի է քան զանասունս. և յորժամ ծնանին նոքա ահա՛ ի նոյն ժամն *կանգնին* յոտից վերայ և գնան, և այլն. իսկ մարդն ոչ: - 266. Իսկ մարդոյն ուղեղն գէճ է և հով. զի նկարեսցէ յինքն զիմացումն մտացն. և ջիլքն յառաջեալ ի նման վասն գիճութեան ո՛չ կարէ պնդել զանդամսն. վասն որոյ ո՛չ *կանգնի* և ոչ գնայ: - 266. Ուստի յա՛յտ է՝ զի այծեամն առաւել է տեսանելեաւ. և շուն հոտոտելեաւ. և այլն նմանապէս. վասն որոյ փութով շարժին և *կանգնին* քան զմարդն: - 266. Ի ծնանիլն նախ խնդրէ միայն կերակուր և աճէ՛. յետ որոյ տեսանէ՛ *կանգնի՛* և գնայ. յետ որոյ խօսի և իմանայ: - 267. Դարձեալ՝ յատկութիւն ի տկարութենէ. զի հանապազորդ ունի զպակասութիւն. և անկա՛ր է ի միշտ *կանգնիլն*: - 275. **Չորրորդ՝ զի բ արձան *կանգնեաց* պղնձի և խեցի և արար գիր. և զոր ինչ ադամ անունս եդ իրաց, զամենայն գրեաց ի նոսա. զի մի՛ այլայլեսցին ի գնչուտ և ի լեզուատ արանց**: - 289. Զի յորժամ աբրահամ սեղան *կանգնեաց*, եցոյց զքահանայութիւն: - 300. Տասներորդ, մովսէս զեռայարկ խորանն *կանգնէր* ի չորից նիւթոց: - 328. Զոր թէ ընկենու ոք, լինի երկրաքարշ մարդ և մեղաւոր. և մինչ զղջացեալ դարձեալ ըմբռնէ յետոյ, լինի պատճառ *կանգնելոյ* և փրկութեան: - 332. Այլ և նստեալն ո՛չ կարէր *կանգնիլ*. և հուր և լոյս ճրագի ո՛չ կարէր ներգործել ի թանձրութենէն: - 334. Եւ կատարեցաւ խորանն յեօթն ամիսս. և յերկրորդ ամին յառաջին ամսեանն *կանգնեցաւ*: - 344. Նա՛խ՝ զի ամենայն իր որ ընտի՛ր է՝ չա՛փ ունի և սահման. և ո՛չ շփոթումն. վասն այն *կանգնաւ* չափէ զնոսա: - 344. Ութերորդ, նոքա մատուցանէին ի ձեռագործ խորանսն որ ի մովսիսէ՛ *կանգնեցաւ*, իսկ տէրն մեր անցեալ ի ներքին կողմն վարագուրին...: - 354. Երրորդ՝ զի մի՛ ժողովուրդն *կանգնեսցէ* արձան ի վերայ նորա ըստ սովորութեան երկրին: - 411. Նմանապէս և **բժան** քարինքն հանեալ ի ցամաք և *կանգնեալ* սեղան՝ հաւատացեալքն են. որք ի ձեռն **բժան** առաքելոցն հաւատացին և ելին ի մեղաց. և եղեն սրբութեան սեղան աստուծոյ **բժան** անդամօք և **բժան** առաքելովք: - 415. Եօթնեժ՝ յեսու *կանգնեաց* զգայիսոնն ի գայի, մինչ կոտորեցան թշնամիքն. որպէս մովսէս տարածմամբ ձեռաց զամաղէկ: - 418. Եւ տէրն մեր *կանգնեաց* զխաչն ի գողգոթայ մինչև յերեկոյ և վանեաց զթշնամին մեր: - 418. Եւ զարձանն վկայութեան *կանգնեաց* ի տիպ հաւատոյն որ ի քրիստոս, և վախճանեցաւ: - 419. Եւ յետոյ յամենայն աշխարհ եկեղեցի աստուծոյ և օրէնք և սեղան աստուծոյ *կանգնեցան*, և երուսաղէմ

ցամաքեցաւ: - 421. Եւ տարածումն ի խաչին՝ զոմանս *կանգնէր*, և զայլսն գլորէր: - 423. Դաւիթ *կանգնեաց* սեղան և դարձոյց զսուր հրեշտակին. և տէր մեր զսեղան խաչին զենմամբ պատարագին ի փրկանս և ի կեանս աշխարհի: - 438. Եւ տէրն ըզկործանեալ բնութիւնս *կանգնեաց*: - 440. Եւ այսպէս յետ աւերածոյն և գերութեանն նախ տաճարն շինեցաւ, և յետոյ պարիսպն *կանգնեցաւ*: - 448. Եւ յորժամ զղջանամք ի մեղաց՝ նախ խոստովանութեամբ շինեմք զտաճար սրբութեան մերոյ. և ապաշխարութեամբն որ է՛ փոխարէնքն՝ *կանգնեմք* զպարիսպն եօթնիւք զգայութեամբք: - 448. ...նշանակէ զքրիստոս որ եղև երկրորդ ադամ. և ի վեց դարուն *կանգնեաց* զկործանեալ բնութիւնս...: - 449. ...իսկ երրորդն նէեմի և եզր դպիր՝ *կանգնեցին* զպարիսպն և զդրունսն. նշանակեն զառաքեալսն զհայրապետսն և զվարդապետսն. որք օրինօք պարսպեն զեկեղեցի, և հանապազ ուսուցանեն զդպրութիւն: - 449. Զի մարդն ցանկացաւ գիտութեանն աստուծոյ որ է յատուկ որդւոյ՝ և անկաւ. նոյնպէս նովին գիտութեամբն պարտ էր և *կանգնիլ*: - 468. Երրորդ՝ զի արուն զօրաւո՛ր է քան զէգն. և նախաստեղծքն գլորեալ էին վասն հեշտութեան իւրեանց. պա՛րտ էր արու լինիլ և *կանգնել* զնոսա: - 480. Այլ ա՛րդ՝ հեղձուցեալսն՝ սուրբ և կերակրելի է նոցա. և պոռնկութիւնն անխտիր յորժամ *կանգնեն* զգլորեալսն: - 552. Իններորդ՝ կին ո՛չ առնուլ քահանայից. և զմորուսն ածիլել. և զգլորեալսն *կանգնել* անխտիր: - 553. Չորրորդն ապաշխարութիւնն. որ է՛ վերստին *կանգնելոցն*, որք անկանին մեղօք և վերստին *կանգնին* ապաշխարութեան գործովք: - 587. Թէ անպատկառ մտեալ յեկեղեցին. և ի յաղօթք *կանգնեալ*: - 601. Երրորդ՝ զի մովսէս ի *կանգնել* զխորանն օրինակի՝ արեամբ նոխազաց և ջրով և իւղովն էօծ և սրբեաց: - 615. Չորրորդ՝ զի խորանն մովսէսի խաչաձև էր *կանգնեալ* որպէս մերս եկեղեցի: - 616. Եօթներորդ՝ զի պսակ եկեղեցւոյ և փառք է՛ սուրբ խաչն տէրունական. որպէս ի գլուխն է *կանգնեալ*: - 616. ...և *կանգնեաց* զխաչն փրկական ի սուրբ գողգոթայ ի սեպտեմբերի **ժդ**ն...: - 617. Երկրորդ, զի քրիստոսիւ *կանգնեցաւ* անկեալ բնութիւնս մեր...: - 676. Դարձեալ՝ ո՛չ յարիցեն ի դատաստան, այսինքն ո՛չ *կանգնեսցին* ի դատաստանի զի մեղօք կործանեալք են: - 724-725. Զի նախընթաց հուրն գայ յարևելից և վառէ՛ զերկիր և զտարերքս, և *կանգնի* յարևմուտս: - 731. Այլ և ոմանք ասեն և է գոլ սեանց ընդ շինեալ տունն ի սողոմոնէ. *կանգնեալ* սիւնս է մարմնապէս. թէպէտ ա՛յլ է իմացումն հոգէպէս: - 788

**ԿԱՆԳՆՈՒՄՆ +** Նոյնպէս և մի տէր յիսուս քրիստոս մի բնութեամբ էր աստուած, և եղև մարդ. հաւատացելոցն *ի կանգնումն,* և անհաւատիցն ի գլորումն: - 333. Այլ և դարձ նորա և *կանգնումն* հաստատութիւն եղև ամենայն ուրացողաց և մեղաւորաց: - 547

**ԿԱՆԳՈՒՆ +** Է՛ որ ինքնաչա՛փ է. որպէս գիծն ի *կանգունն* ըստ ինքեան չափէ՛ *զկանգունն* ի յորում է. և ըստ պատահման չափէ՛ զկտաւն ի յորում ո՛չ է: - 198. Երկայն՝ **գճ** *կանգուն*. և լայն՝ **ծ**. և բարձր՝ **լ**: - 293. Քաղելով գործելն այն է, որ **ժե** *կանգուն* հաւասար բարձրացոյց, զի մեծահասակ կենդանիքն հանգիցեն: - 293. Եւ **ժե** նրբեցոյց ի մի *կանգուն*, զի ջուրն վիժեսցի: - 293. *Կանգունն* գիրկն է մարդոյ. և այլք **ը** թիզ ասեն. զոր այժմ Ֆռանկք վարին: - 293. Եւ **յ** *կանգուն* երկայն, զի ի կրնկէն ի գագաթն լար չափեալ՝ **դ** պատ առնու զգլխովն: - 293. Եւ **ծ** *կանգունն*, զի մանուկն յարգանդի խօրեայ հոգևորի և ծօրեայ շարժի: - 293. Եւ **լ** *կանգուն* բարձրութիւնն, զի բարձր հասա՛կ է մարդոյն. և պապ լինի երեսնամենի: - 293. Եւ փոխանակ **յ** *կանգնոյն* **յ** ամքն ի քրիստոսէ մինչև ի մեծն կոստանդիանոս. ուր յայտնեցաւ խաչն փրկչական: - 294. Եւ թանձրութիւն պարսպին **դ** *կանգուն*: - 297. Եւ **բ** երեսին մէջն **ծ** *կանգնոյ* լայնութիւն: - 297. Երկայն **իը** *կանգուն*. և բարձր **ժ**. և լայն **ի**. բոլորն հասարակ: - 343. Եւ արտաքին սրահին պատւարն ի մէջ ունելով զխորանն յամենայն կողմանց **ճ** *կանգուն* երկայն ի հիւսիսոյ և ի հարաւոյ կողմն: - 343. Եւ **ծ** *կանգուն* լայն յարևելից և յարևմտից կողմն: - 343. Եւ **ժե** *կանգուն* բարձր. զի մի՛ երևեսցի խորանն: - 343. Զի՞նչ է տապանակին չափն **բ** *կանգուն* և կէս երկայն: - 344. *Կանգուն* և կէս լայն: - 344. *Կանգուն* և կէս բարձր: - 344. Չորրորդ՝ և բովանդակն **ե** *կանգուն*, ցուցանէ թէ ո՛չ են նոքա ի չորից տարերց. այլ **ե**երորդ էութիւն են. որպէս ասեն ոմանք. անմարմին անփոփոխ և անմահ. որ ո՛չ է տարրականացս: - 344. Իսկ **ե** *կանգուն* և կէսն. զի գալուստն քրիստոսի և փրկական խաչն և եկեղեցի՝ է՛ ի **ե**երորդ դարն և կէսն երևեալ ի մուտ զ**ռ** ամին: - 345. Չորս *կանգուն* և կէս, ելեալ ի տարրական կենցաղոյս: - 346. Իսկ յետ մահուանն մովսէսի վերացաւ ամպն. և հրամայեցաւ ժողովրդեանն հեռու կալ *կանգունս* երկուց հազարաց վասն փառաց տապանակին և վասն զօրութեան նորա: - 415. Նշանակէ՛ զպատկերն ոսկի **կ** *կանգուն* երկայն և **զ** լայն: - 637. Իսկ վաթսունն զբաբելօնի պատկերն **կ** *կանգուն* երկայն, և **զ** լայն. յորում ընդարձակեցաւ կռամոլութիւն: - 708

**ԿԱՆԹԵՂ +** Եւ սահմանեալ զտեղիսն՝ կախեաց *կանթեղս* յանուն ազգացս: - 549

**ԿԱՆԽԱԳԷՏ +** *Կանխագէտ* եղև՞ անկման իւրոյ՝ թէ ոչ: - 147. Ասեմք թէ՝ *կանխագէ՛տ* է աստուած. և նախ ծանեաւ զի ո՛չ կարէին աճիլ անմեղութեամբ ի դրախտին որպէս զհրեշտակս. վասն որոյ

կազմեաց նոցա մարմին, զի յերկրի անասնապէս աճեսցին: - 226. Յինգերորդ՝ զի որպէս *զկանխագէտ* ոչ ասաց սաւուղայ թէ դու ո՞վ ես որ զիս փրկես ի սաւուղայ: - 428

**ԿԱՆԽԱԳԻՏՈՒԹԻՒՆ +** Մարգարէութիւն է *կանխագիտութիւն* ժամանակաց անցելոց՝ ներկայից և ապագայից, բարի հոգւոյն միջնորդութեամբ: - 536

**ԿԱՆԽԱՃԱՌԵՄ** - Տեսանօղք *կանխաճառեցին*: - 456. ...զի սուրբ գիրք կամ զառաջինսն պատմեն. որպէս մովսէսին. կամ զվերջինսն *կանխաճառեն.* որպէս եսայեայն և այլոցն: - 643

**ԿԱՆԽԵՄ +** «Եւ ընդ առաւօտս *կանխեցից*»: - 621

**ԿԱՆՈՆ +** Յինգերորդ՝ զի *կանոն* ընդհանուր ժողովոցն որ եղեն առ նոսա՝ բաւականաբար դաւանութիւն հաւատոյ տըւեալ է: - 64. Նաև ի *կանոն* երից սուրբ ժողովոցն՝ ընդ բանիւ արգելեալք կան նոքա՝ որ ա՛յլ կերպիւ քարոզեն և այլ կերպիւ ուսուցանեն քան զոր նոքա ուսուցանեն: - 64. Ապա ուրեմն նզովեալք են նոքա ի *կանոնաց* իւրեանց: - 64. Եւ հաստատութիւն՝ սուրբ գրոց վկայութիւնք, և բանք վարդապետաց, և *կանոնք* օրինաց: - 96. Ասեմք առ այս. Նախ՝ եթէ նոր եկելոցն ի հաւատս՝ սակաւ դնէին *կանոնս*...: - 166. Այլ յորժամ յաւելաւ քրիստոնէութիւնն, յաւելաւ և *կանոնքն*: - 166. Դարձեալ՝ մարդո՛յն է կարգաւորել զկիրս բարկութեան և ցանկութեան ըստ *կանոնաց* բանականին: - 274. Դարձեալ՝ մարդոյս միա՛յն է կարգ *կանոնաց*, բնութեան, կամաց, և հարկի. իսկ անասնոց միայն բնութեան է: - 275. Նա՛խ՝ զի օրէնքն *կանոն* և սահմա՛ն է առնելեաց և ոչ առնելեաց: - 340. Վեցերորդ՝ ականջատ. որ անլո՛ւրն է *կանոնաց*: - 370. Վասն որոյ և պա՛րտ է և նմա՛ խոստովանիլ որպէս է՛ ի *կանոնս* հարցն: - 384. Եւ զխոստովանութիւնն եկեղեցոյն բաժին, զի *զկանոնս* նորա ելոյծ: - 384. Նոյնպէս այժմ ի նորս պարտ է խոստովանիլ վասն *կանոնաց* եկեղեցւոյ. և զգողօնսն վճարել կամ ի տէրն, կամ ի քահանայս, կամ յաղքատս: - 384. Եւ քահանայի մահն՝ պատարագն քրիստոսի է. մինչ վճարեսցի *կանոն* ապաշխարութեանն և ապա արժանասցին հաղորդելոյ: - 392. Վեցերորդ՝ առաջին օրէնքն է *կանոնաց*. որ կարգաւորէ՛ զհոգի. իսկ երկրորդն դատաստանաց. որ կարգաւորէ՛ զմարմին: - 393. Զի սա՛ ի *կանոնաց* թեթևացեալ է որպէս յառաջիկայդ ցուցանի ի խոստովանութեան ճառն: - 432. Երկրորդ՝ *զկանոնս* ապաշխարութեան նշանակէ զոր խոստովանահայրն կարգէ. զի թէ յանցանէ ոք՝ մեղանչէ՛: - 439. Յինգերորդ, Վասն կրկին իշխանութեանց և *կանոնաց*: - 525. Եւ թէ արտաքոյ *կանոնա՛ց* է ջուրն: - 526. Քառասունևե, *Կանոն* գլուխ և այլ կարգ. սաղմոս. և անբիծք: - 527. Զի՞նչ է *կանոն*: - 538. Ստուգաբանութեամբ կոչի *կանոնն* քանոն. այսինքն ուղղութիւն և կարգ և օրէնք: - 538. Այսպէս և *կանոնն* պարունակէ՛ զընդհանուր կանոնեալսն: - 538. Այսպէս և *կանոնն* բաժանէ՛ զհաւատացեալսն յանհաւատից: - 538. Այսպէս. որք ելեալ ի *կանոնէն* չեն ի նոյն կարգ քրիստոնէից: - 538. Նախ՝ զի սահմանն բնութեան է. իսկ *կանոնն* անձին: - 538. Երկրորդ սահմանն գոյացութիւն է. իսկ *կանոնն* պատահումն: - 538. Երրորդ՝ սահմանն իրին է. իսկ *կանոնն* գործոյն: - 538. Նոյնպէս և աթոռակալքն որ ի չորս աթոռս, ա՛յլ զայլոյ վիճակեալ ո՛չ կարէ կապել և ո՛չ արձակել. նոյնպէս և ի նոյն աթոռն, վերջինն զառաջ նոյն ո՛չ կարէ փոխել *կանոնս* և զկարգ: - 541. Իսկ ի համակարգսն վերջինն զառաջ նոյն ընդէ՞ր ոչ փոխէ *զկանոնսն*: - 541. Յաղագս որոյ ո՛չ կարեմք զառաջնոյն հայրապետաց կարգ կամ *զկանոնս* զպահք կամ զայլ ինչ թիւրել և փոխել: - 541. Որպէս որք յեփեսոս՝ զնիկիականն ուղղութիւն ո՛չ քակեցին. այլ ի նոյն տեսակ նոր *կանոնս* կարգեցին ի հաւատս ուղիղ: - 541. Վասն որոյ զայս գ ժողովքս տիեզերական և միմեանց համաձայն ընդունիմք. այլ զքաղկեդոնին ո՛չ ընդունիմք. զի ընդ դէմ է առաջնոցն և կաքտումն դաւանութեան տօնից կարգաց և *կանոնաց* ամենայնիւ: - 541. Իսկ քահանայք ժողովրդեանն՝ նա *կանոնս* դնէ՝ որ խոստովանա հա՛յր է և գիտէ զկարն և զորքանն մեղաց: - 541-542. Եւ յետոյ բազումք զղջացան և ասացին, պատառեցաք *զկանոնս* հաւատոյ: - 543. Եւ գրեցին գիրս *կանոնաց* գլուխս ի, ընդ դէմ եկամուտ թուլութեանցն: - 544. ...և հաստատեցին *զկանոնսն* երից սուրբ ժողովոյն որ ի նիկիայ՝ ի կոստանդնուպօլիս՝ և յեփեսոս: - 544. Եւ նզովեցին զաղանդն մարկիանու և զարտեմոնի, և զտումարն լևոնի. և միաբանեցան ի մի հաւատս սուրբ առաքելոցն. և ի *կանոնս* սուրբ ժողովոյն ինչ պետք էին յաւելին գլուխս **թ** ի զգուշութիւն եկեղեցւոյ: - 544. Այսոցիկ սուրբ հարց և սիւնհոդոսաց հնազա՛նդ եմք. և զնոցա *կանոնքն* ունիմք և զդաւանութիւն, և պահեմք մինչև յելս շնչոյ մերոյ: - 547. Զի ա՛նդ բաժանեցին զբանն ի մարմնոյ. և պատառեցին *զկանոն* սուրբ հարցն: - 547. **Ա՛րդ՝ ե՛կ ես և դու փորձեսցուք թէ ով զդաւանութիւն առաքելոյն ունի և *զկանոնքն*՝ նա՛ է հնազանդ նմա: - 548. Եւ անապական պատարագեմ զքրիստոս որպէս *կանոնքն* է առաքելոցն և կղեմայ. և դու ապականես ջրով և զայլն որպէս յառաջիկայդ ասացի**: - 548. **...թէ զերկու քորս բ եղբարցն տալ. կամ զսանին քոյրն միւս եղբօրն. որպէս քո սուտ պետրոսին *կանոն* է, և ո՛չ ճշմարիտ պետրոսին. և զայլն լռեմ իբրև զամօթալի**: - 548. **Այլ և ասեն թէ ընդհանրական *կանոնքն* ճշմարիտ է քան զառանձնականն: - 550. Այլ ա՛րդ՝ ճշմարտութիւն է առաքելական *կանոնքն* և հայրապետականն և երից**

**սուրբ ժողովոցն**: - 550. Եւ յայսոսիկ միաբանութիւնս որ ըստ *կանոնի*՝ յաւէտ միաբանութիւն զայս է իմանալ՝ որ ըստ բոլորին օրինադրութեանց սահմանաց կամ ըստ գլխաւորագունիցն լինիցի. և ո՛չ մասամբ միով միաբանեալք և բազմօք զանազանեալք. մանաւանդ թէ հակառակեալք և ընդդիմացեալք: - 552. ...որպէս և գրեալ է ի գիրս նիկիական *կանոնացն* եթէ զծառայս ի ժառանգութիւն եկեղեցւոյ կարգել ո՛չ հրամայեմք...: - 589. Չորրորդ վկայութիւն ի *կանոնաց*: - 595. Զի յառաքելական *կանոնս* և կղեմայ և մակարայ և այլոցն: - 595. Ա՛րդ՝ ի սոցանէ մասն ինչ աղօթակա՛ն է և մասն ինչ հրաման. վասն զի մասն ինչ եկեղեցւոյ *կանոնաց* մեղանչեմք, և մասն ինչ և մասն ինչ պատուիրանացն աստուծոյ: - 602. Ա՛րդ՝ հասարակ *կանոնք* այսպէս եդին հարքն սուրբք...: - 611. Իսկ որ երրորդ կրկնի, ի պոռնկութեան սակի գրի ի *կանոնս* սրբոց հարց: - 613. Զի՞նչ է խորհուրդ *կանոն* գլխին որ ծայնիւ ասեմք: - 626. Նոյնպէս **է** էր *կանոնք* սաղմոսին. և **է է** գուբղայք *կանոնացն*: - 626. Իսկ ի նորս առ մեզ, Սակաւ ինչ հոգացեալ զեօթնիցս, այլ ութերորդին փոյթ տարեալ դարուց աւանդապահք եկեղեցոյ, կարգեցին ութն *կանոնս* **ըը** գուբղայիւ: - 627. Եւ զվերջին *կանոնն* ելք աստիճանաց. որ է՛ յաստեացս ի հանդերձեալն: - 627. **Իսկ զոր *կանոն* գլուխ կոչեմք, ասելով զ գուբղայ հանդարտ ի թիւ. և զեօթներորդն ծայնիւ**: - 627. Բայց դարձեալ տեսանել պարտ է զկանոնագլուխս ընդ *կանոնացն* կարգաւորեալ: - 629. Զի առաջին *կանոն* երանելեացն, որք դառնան ի չարէ և զճանապարհս օրինացն ընթանան...: - 629. **Դարձեալ և ըստ մերոց վարդապետաց, առաջին *կանոնին* ը երրորդ գուբղայն օրինութիւն՝ ի հանդերձելումն ակնարկէ**...: - 630. Եւ *կանոնն* սահման կոչի. որպէս թուղթն պօղոսի: - 631. Եօթներորդ՝ շաբաթի օր տօնեմք սրբոցն և պատարագ մատչի ըստ նիկիական *կանոնին*...: - 648. Եւ որ յինանցն պահէ մինչ ի համբարձումն, ընդ դէմ է *կանոնաց* հարցն և աւետարանին որ ասէ...: - 649. Առաջին և երկրորդն՝ ծննդեան և մկրտութեանն. զոր ի միասին տօնեմք ըստ *կանոնաց* սուրբ հարցն և տեառն եղբօրն յակոբայ: - 649. ...որ լինի յիսնեակ ըստ առաքելական *կանոնին*: - 651. Եւ ի նորս՝ ի չորեքշաբաթ և յուրբաթ փոխեցին առաքեալքն. որպէս յա՛յտ է յառաքելական *կանոնս*. նաև ի նիկիականն: - 652. Յինգերորդ, *կանոնս* եդեալ է և հաստատեալ ի նիկիոյն՝ ի բարսղին՝ ի յեփրեմին՝ և յայլոցն...: - 652. Իսկ թէ արհամարհելով զառաքելական *կանոնս* լուծցեն զչորեքշաբաթ և զուրբաթ...: - 652. Ահա՛ ա՛յս է *կանոնք* վասն պահոց չորեքշաբաթի և ուրբաթի: - 652. Եւ որ ոք ո՛չ պահէ որպէս ազգն Ֆռանկաց, ընդ անիծիւք է յառաքելական և հայրապետական *կանոնաց*: - 652. Իսկ *զկանոն* ջրօրհնէից՝ սրբոյն բարսղի է արարեալ յեօթն ամի հայրապետութեան իւրոյ յերուսաղէմ. զի անդ հանդիպեցաւ: - 658. Եւ առաջին *կանոնին* տէր տուընջան. և որ այլ զհետ սոցա աղօթք և փոխք նոցունց: - 659. Այլ թէ ասեն՝ հաղորդադրամ, կամ խոստովանադրամ, խո՛րթ է. յագահութեանց երիցանց սահմանեալ և ո՛չ ըստ *կանոնաց* որպէս այլքն: - 684. Տասնեմի, պատժոյն մեղաց չափ և ժամանակ գոյ ըստ իւրաքանչիւրիցն. որպէս յա՛յտ է ի *կանոնս*: - 700. Նա՛խ եթէ ի խոստովանութիւն մեղացն մնայ պատիժն զոր ապաշխարութիւնն քաւէ. որպէս յայտ է ի *կանոնս*...: - 701. Այլ զապաշխարանքն դնէ *կանոնքն*, զի ցանկ և պարիսպ է մեղաւորին. - 701. *Կանո՛ն* է իմաստասիրաց, զի իր որ բնութեամբ լինի, բոլոր տեսակին պարտի գոլ: - 773

**ԿԱՆՈՆԱԳԼՈՒԽ +** Բայց դարձեալ տեսանել պարտ է *զկանոնագլուխս* ընդ կանոնացն կարգաւորեալ: - 629. Այս քան վասն *կանոնագլխոցն*: - 630

**ԿԱՆՈՆԱԿԱՆ +** ...և նորոգեցին զթուլութիւն և զերկպառակութիւն ինչ եկեղեցւոյ. և հաստատեցին գիրս *կանոնականս* **բժ**ան գլխոց: - 544-545. Որ *կանոնական* գլխօք պայծառացոյց զկարգ եկեղեցւոյ և զուղղափառութիւն հաւատոյ. զոր զ ամաւ յառաջ եղծեալ էր եզրի կաթողիկոսի...: - 545. Գրէ կարգս *կանոնականս* **իդ** գլխօք. և հաստատէ՛ զեկեղեցի պայծառ կարգօք և ուղղութեամբ: - 545. Ժողովեալ բազում եպիսկոպոսաց յամենայն կողմանց. և իշխանաց և մեծամեծաց հայոց. կարգեցին սահմանս *կանոնականս* իբ գլխով. և պայծառացուցին զեկեղեցի սուրբ: - 545. Զոր յառաջին ամին յորժամ նստաւ կաթողիկոս տէր սիմէոնի, ի ձեռն տէր եղիայի մեծահանդէս ժողովմամբ պայծառացոյց զեկեղեցի *կանոնական* հաստատութեամբ ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս ամէն: - 545. **Ազգ առ ազգ բաժանեալ լինի գաւառաւ և լեզւաւ և *կանոնական* սահմանաւ որ են աւանդութիւնք և հաւատք եկեղեցւոյ**: - 552. **Եւ բաժանումն յաւէտ զքան գաւառաւ և լեզուաւ՝ *կանոնական* սահմանաւն ասացեալ լինի. այսպէս և առ միաբանութիւնս է իմանալ. առաւել միաբանութիւն ասել զորս *կանոնական* սահմանադրութեամբ է, քան որ գաւառաւ և լեզուաւ: - 552. Այսինքն է, զազգս քրիստոնէից տեսանեմք զի ո՛չ ըստ անուանն և զմիութիւն *կանոնական* սահմանի ունել:** - 553. Սակայն ազատի ի *կանոնական* հրամանաց: - 603. Թովմաս առաքեալն ի թաղումն տիրամօրն է ասացեալ. որպէս գրեալ է ի գիրս որ *կանոնական* լրմունք կոչի: - 633

**ԿԱՆՈՆԵՄ +** Յաղագս այսորիկ *կանոնեցին* սուրբ հարքն վասն այնպիսեացն ո՛չ կատարել դարձեալ

զկարգ քահանայութեան: - 165. Ապա ուրեմն ստուգապէս և յիրաւի՛ է *կանոնեալ* սուրբ հարցն, զի զայնպիսին արգելցեն ի սպասաւորութենէ խորհրդոյն: - 167. Եւ մինչ ի **կ** ա՛մն գործեն զքահանայութիւնն որպէս սուրբ հա՛րցն է *կանոնեալ:* - 379. Այսպէս և կանոնն պարունակէ՛ զընդհանուր *կանոնեալսն*: - 538. Դարձեալ, **ժ** շաբաթ պահոց այն է՝ որ մեծն ներսէս *կանոնեաց* յամենայն ամսամուտս պահել շաբաթ մի: - 650. Զմեծ կարգն՝ է՛ *կանոնեալ* տաեռն եղբայրն յակոբոս որ զընթերցուածն կարգեաց...: - 651. Եւ ո՛չ միայն լուծանեն զսկիզբն մեծի պահոցն, այլ և զամենայն չորեքշաբաթս որ յառաքելո՛ցն է *կանոնեալ*, լուծանեն ի բոլոր տարին, և լինին ընդ անիծիւք նոցին: - 652

**ԿԱՆՈՒԽ +** Նա՛խ՝ որպէս *կանուխ* անձրևն բուսուցանէ և անազանն սնուցանէ և պտղաբերէ՛: - 393. Նախագոյն ամօք, և *կանուխ* ժամանակօք: - 456. Իններորդ, ասէ «մի՛ մերձենար», զի մարմինն այն պտուղ էր *կանուխ* դժոխոցն. և ինքն տէր մեր իբրև քահանայ նոր յամենայն ձեռաց պահէր զգուշութեամբ, զի պահեսցէ զնա ի ձեռինն որ կարո՛ղ է ընդունել զայնպիսի պատարագն: - 517-518. Եւ հանապազ ի տաճարին գովէին և օրհնէին զաստուած նոր օրհնութեամբ համբարձելոյն ի յերկինս տեառն և աստուծոյ. որպէս *կանխաւ* ասաց մարգարէն...: - 528-529

**ԿԱՇԱՌ +** Զի դատաւորք երկրի վասն չորից թիւրեն զդատաստանս: ...Չորրորդ վասն *կաշառաց:* - 744

**ԿԱՇԱՌԵՄ +** Զի թէ գիտէր զստոյգ մահն սաւուղայ՝ ո՛չ *կաշառէր* զնա: - 428

**ԿԱՇԻ +** Եօթներորդ՝ *կաշի*. որպէս եզին: - 216. Չորրորդ՝ մարմառոտն. որ *կաշին* պատառեալ և խոց լինի նշանակէ՛ զխոց մեղաց: - 371. Ութերորդ՝ թաղամսաւորն. որ թաղիացեալ է միսն ի *կաշին* և չքերթուի. որ անորի՛շ է ի խառնակ կենաց: - 371

**ԿԱՇԿԱՆԴԵՄ +** Իններորդ՝ հրեղէն կապանքն. որովք իւրաքանչիւր անդամք *կաշկանդին*: - 752. Վասն իններորդին, որք աստ իւրաքանչիւր մեղօք գոյին շաղախեալք. արդարապէս ունին զիւրաքանչիւր անդամս կապանօք *կաշկանդեալս*. և ցանկան մեռանիլ և փախիցէ մահ ի նոցանէ: - 753

**ԿԱՊ +** Նոյնպէս և տգիտութիւնն մտա՛ցն է խաւար և մոլորութիւն. և *կապ*. և ծանրութիւն. և անջատօղ. և տգեղութիւն: 103-104. Երկրորդ՝ զի սերօբէն բորբոքէ ի սէրն որ է անմիջոց *կապ*. և քերօբէն ի ճանաչումն ճշմարտութեան. և աթոռքն ի յուղղութիւնն. և նոքա են վերակացուք դատաստանի իրաւանց: - 135. Տասներորդ՝ մէջ և *կապ* ամենայն գոյիցս մա՛րդն է կազմեալ. զի ամենայն արարածք ի **բ** դէմս որոշին. այսինքն մինն յիմանալի և միւսն զգալի. և սոքա եղեն յառաջագոյն: - 231. Զի իցէ միաւորիչ և *կա՛պ* իմն բոլոր արարածոց: - 231. *Կապ* բանին ի շրթունսն: - 250. Զի՞նչ է *կապն* որ ասէ՝ «կապեսցես զորթոյ. և զգնդակէ՛»: - 317. Այլ գիտելի է, զի **դ** սեռիւք որոշի *կապ* բանականացս. այսինքն հոգեկան և մարմնական և միջակօրէն: - 317. Յոգեկանն բաժանի ի չորս: Որ է՛ *կապ* հաւատոյ և յուսոյ: Եւ *կապ* սիրոյ: Եւ *կապ* երկիւղի: Եւ *կապ* պատուիրանացն աստուծոյ: - 317. Եւ այսու չորեքկին *կապովս* ըմբռնեմք զաստուած անորոշապէս...: - 317. Իսկ *կապ* մարմնական՝ և նա՛ բաժանի ի **դ** տեսակս: Ի *կապ* արեանն որպէս ընտանեաց: Եւ *կապ* ամուսնութեան որպէս պսակն օրհնութեան: Եւ *կապ* ցանկութեան որպէս մեղաց: Եւ *կապ* կարեաց որպէս վարձկանաց: - 317. Նոյնպէս և *կապն* միջակօրէն տրամատի ի **դ**: Ի *կապ* ուսման որպէս աշակերտաց: Եւ *կապ* կրօնից որպէս կարգաւորաց: Եւ *կապ* ուխտի որպէս բարեկամաց: Եւ *կապ* հարկի որպէս հնազանդեցելոց: - 317. Եւ կարելի՛ է ամենայն *կապիւս* զոր ունիմք առ միմեանս՝ փոխել առ աստուած և կապիլ ի նա: - 317. Նոյնպէս և մարմնական *կապովն*, զի ազգակից է մեզ և փեսայ հոգւոր. և ցանկամք նմա ակն ունելով վարձուցն հատուցման: - 318. Նմանապէս և միջակ *կապիւն*, զի ուսանիմք յաստուծոյ ընկալեալք զկարգ կրօնիցն. և ունիմք ուխտ և դաշին և հնազանդութեան նմա...: - 318. Է և ա՛յլ *կապ* բաց յայսցանէ, այսինքն Անձնական, որպէս հոգւոյ և մարմնոյ: - 318. Է և այլ ևս *կապ* առ իմաստասէրս ասացեալ: - 318. Եւ դարձեալ է՛ *կապ* մեղաց... Եւ է՛ *կապ* պատժոց...: - 318. ...իսկ Կախարդն՝ որ անօթ ինչ թաղէ ի հող. *կապս*, կամ մոմ, կամ երկաթ, և պէս պէս ժժանօք յարմարե՛ն զարուեստն: - 388. Քսանն**դ**, սամփսոն երիցս **է** *կապօք* փորձեցաւ ի կնոջէն: - 423. Եւ սոքա են հարճք որ կարեն ի բաց հանիլ ի ժառանգութենէ. զի սէրն է *կապ* և լար շարոցին որ ո՛չ թողու ցրուիլ: - 440. Եւ արձակօղն *կապից*՝ խանձարրօք պատի: - 470. Չորրորդ՝ որպէս արու բռնացա՛ւ տէր ի քակել զօրէնս բնութեան. և խզեաց *զկապ* կուսանաց և զմայրական. այսինքն զի որ մա՛յր է՝ կոյս ո՛չ է. և որ կոյս է՝ մայր ո՛չ է: - 480. Զգաստութիւնն կայանայ առ ճաշակելիսն. ի յորում դնէ *զկապն* և զչափն: - 581. Որով լինի պսակս այս դաշն և *կապ* ի մէջ առն և կնոջն. որով լինի անքակ միութիւն: - 609. Նա՛խ՝ զի արձակէ ի ժամանակեայ *կապիցն* և արկանէ ի յաւիտենից տանջանս: - 706. Եւ որպէս թէ բազումք զմիմեանց զմիոջէ կախեալք զվախէ՛. և եթէ ոք խզեսցէ զառաջնոյն *զկապ,* միապէս անկանին. թէպէտ մինն առաջին: - 777

**ԿԱՊԱԿՑԵՄ +** Եւ զի ո՛չ շիջանին հրամանաւ արարչին. ի միջի գոլով երկուց ներհակացն օդեղէնն

երկին. որպէս ստորին տարերքս հուր և ջուր միջնորդ օդիւն *կապակցեալ*: - 188. Առաքինութիւնս այս ցուցանէ թէ համբերել հալածանաց վասն արդարութեան՝ *կապակցեալ* է ընդ խաղաղութիւնն. - 586. Յիրաւի ընդ բառնիլ շաղկապին, բառնի և *կապակցեալն* նմին: - 782

**ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆ +** Վասն որոյ պա՛րտ է ընդ հրամանաւն կալ նոցա՝ յորմէ և առ որ *զկապակցութիւն* ունիմք եօթանցն ասացեալ: - 389. ...զի հաւատալի է թէ ի մարմինն քրիստոսի՝ է՛ և արիւնն *կապակցութեամբ*. և հոգին համազուգութեամբ. և աստուածութիւնն միաւորութեամբ: - 600

**ԿԱՊԱՆՔ +** Նախ՝ վասն վճարման պարտուցն լուծան *կապանք* դժոխոցն...: - 503-504. ...այլ արդարքն ո՛չ ունէին *զկապանս* մեղաց և ոչ զխաւար նախնական, այլ մեղաւորքն: - 507. Երրորդ՝ վասն ախտի. այսինքն փառաց կամ մախանաց. կամ ագահութեան ընչից. կամ այլ ինչ այսպիսեացս. ո՛չ կատարին *կապանքն*: - 539. Եւ յորժամ ել արտաքոյ քաղաքին թողեալ *զկապանս* սողոմոնի՝ սպանաւ: - 540. Մին *զկապանաց*, և միւսն զիակառակութեան: - 540. վասն որոյ կրկին անգամ ի կրկին մեղաց և ի կրկին *կապանաց* արձակումն խնդրեմք: - 680. Ա՛րդ՝ ի նախասացելոցս հաւաքեա՛. զի լինիցի անդ Ջերմութիւն հրոյ: *Կապանք:* Երկիւղ: Յաւ: Ամօթ: Նախանձ: Դեռ: Տրտմութիւն: - 751. Իններորդ՝ հրեղէն *կապանքն*. որովք իւրաքանչիւր անդամք կաշկանդին: - 752. Վասն իններորդին, որք աստ իւրաքանչիւր մեղօք գոյին շաղախեալք. արդարապէս ունին զիւրաքանչիւր անդամս *կապանօք* կաշկանդեալս. և ցանկան մեռանիլ և փախիցէ մահ ի նոցանէ: - 753

**ԿԱՊԱՐ +** Իսկ մեղաւորքն ի ձախմէ. այսինքն վայր ի յերկիր ծանրացեալ մեղօքն. որպէս *կապար* ի յերկիր հակեալ. ուր բոլորով սրտիւ սիրեցին զնա: - 738

**ԿԱՊԱՐՃԱԿԻՐ +** Վասն է՞ր եհարց թէ՝ ո՞յր որդի է դաւիթ. զի *կապարճակիր* և ծանօ՛թ էր սաւուղի: - 427

**ԿԱՊԵԱԼ +** Չորրորդ՝ զի որք *կապեալ* եմք ի մարմնի՝ անհնա՛ր է անմարմնապէս տեսանել զնա: - 25. Զի թէ այնպիսիք էին որ ո՛չ կարէին մեղանչել՝ իբր *կապեալք* լինէին և բռնադատեալք, և վարձս ո՛չ առնուին: - 149. Եւ վասն երկրորդին ինքն տէրն ասէ՝ *կապեալ* զհզօրն և զտուն նորա աւար հարեալ որ է՛ դժոխքն...: - 153. Զի ջուր ցրտութեամբ ընդ երկի՛ր է *կապեալ*. և գիճութեամբ ընդ օդ: - 181. Իսկ հուրս առ մեզ որ *կապեալ* է ի նիւթ՝ տկա՛րն ունի զայրելն. վասն որոյ նախ զքանակն և զորակն ապականէ, և ապա զգոյացութիւն իրին: - 204. Այլ և ի միտ ածցուք զփառս երկնային կենաց ուստի անկաք, և անդ դիմելոց եմք. զի տեսութիւն մտացն զհոգին ընդ ինքեան ի վեր տանի. և նա զշունչն. և շունչն ընդ արեանն է *կապեալ*. և արիւնն ընդ մարմնոյն. զգայարանքն ընդ մարմնոյն. և լինի մարդն բոլորովին երկնային: - 233. Ասեն բժիշկք թէ, **բճխը** ոսկր է մարդոյն. ջլօք պնտեալ և *կապեալ* ի մի մարմին. և է՛ այսպէս: - 243. Իսկ սահմանօրէն, հանճարն կարծիք է *կապեալ* ընդ ուղիղ խորհրդոյ: - 270. Դարձեալ՝ հանճարն է տրամախոհութեանն. զի կարծիք է *կապեալ* ընդ ուղիղ խորհրդոյ. իմաստութիւնն իմացմանն. գիտութիւնն յիշողութեանն: - 270. Տասնինն՝ *Կապելոյ* տեսակք: - 283. Եւ *կապեալն* ի գնդակէն՝ հաւատացեալ ժողովուրդն: - 317. Զի աստ ի ժամանակի և ի մարմնի *կապելոց* անհնա՛ր է գիտել: - 331. Ապա թէ բորոտիմք ծածուկ մեղօք ի մարմնի՝ *կապեալ* բերանով առանց խոստովանելոյ, արտաքսիմք յեկեղեցւոյ՝ ի հանգստենէ՝ և ի փառաց արդարոց: - 368. Եւ զկենդանին ներկեալ՝ և կարմիր *կապեալ* ի պարանոցն, ցուցանէր զմեռանիլն աստուծոյ վասն մեր: - 369. Եւ տէր մեր յեօթն տեղւոջ է ձաղանօք երիցս *կապեալ*: - 423. Երրորդ՝ զի ոտք և ձեռք *կապեալ* բազումք զզաւակս զոհէին նմա. նոյնպէս և նորայն հատան: - 426. Երկրորդ՝ *կապեալ* ածաւ ի տունն աննայի. և ի ծառայէն ապտակեցաւ. և պետրոս գ անգամ ուրացաւ: - 492. Երրորդ՝ *կապեալ* ածաւ ի տունն կայիափայ. և անդ զթուքն կալաւ յերեսն. և մինչ ի վաղիւն հսկեաց: - 492. Ա՛րդ՝ եթէ քրիստոս ի ներքին դժոխքն ոչ էջ, ո՛չ է *կապեալ* հզօրն որպէս աւետարանն ասէ. և ոչ զդրունսն խորտակեալ. և ո՛չ զգերիսն աւար առեալ որպէս դաւիթ ասէ: - 506. Եւ յորժամ առաքելոցն ետ՝ նախ փչեաց ի նոսա զհոգին սուրբ, և ապա ետ իշխանութիւն *կապելոյ* և արձակելոյ: - 539. Այսպէս լիցի ամենայն անհնազանդ *կապեալ*. վասն որոյ այնպիսին կրկին ունի պատիժ: - 540. Դարձեալ՝ կապի մեղքն, և լուծեալ ազատի անձն որ *կապեալն* էր: - 540. Դարձեալ՝ արձակեալ ի մեղաց, և *կապեալ* ի պատիժս: - 540. Եւ դարձեալ՝ կարէ՛ վերջինն զառաջնոյն թիւրութիւնն ուղղել և զանիրաւ *կապեալն* արձակել. որպէս աստուածաբանն գրիգոր զարիանոսացն: - 541. ...նոյնպէս և դու մի՛ ճաշակեր. այլ հաւատա՛ ի մարմինն զարիւնն *կապեալ*: - 600. Դարձեալ՝ թէ դու հաւատաս զարիւնն ի մարմինն *կապեալ*, մի՛ հաներ զտեսակ արեանն ի բեմն. այլ նշխար միայն օրհնեա և լիցի մարմին և արիւն քրիստոսի: - 600. Եւ ա՛յլ տեսութիւն բանիս. որպէս ասացեր ի մարմինն է *կապեալ* արիւնն և այլն...: - 600. ...նմանապէս և ի յարիւնն է *կապեալ* մարմինն և հոգին համազուգեալ և աստուածութիւնն միաւորեալ...: - 600. ...ապա յորժամ զրկես յարենէն զժողովուրդն, զրկես և ի նոցանէ որ *կապեալ* են ընդ արիւնն. այսինքն մարմինն և հոգին և

աստուածութիւնն: - 600. Զի եպիսկոպոսունք տան հոգի քահանայից և *զկապելոյ* և զարձակելոյ իշխանութիւն: - 607. Բազկուրար յահեակ բազուկն ուսովն ածեալ՝ և *կապեալ* ի վերայ արմնկանն ի կախ ունելով: - 608. Վեցտասաներորդ, **ռ** ամ *կապելոյն* սատանայի: - 660. Եւ կոչի պատանք, զի պատեալ և *կապեալ* է զամենայն զգայարանսն. և ոչ ինչ կարէ գործել. ո՛չ չար և ո՛չ բարի: - 671. Այլ յորժամ սիրտն *կապեալ* է ի մեղս աշխարհի և ոչ կարաց ապաշխարութեամբ քաւել, ո՛չ մտանէ յարքայութիւնն երկնից: - 683. ...զոր միանգամ կապիցէք յերկրի՝ եղիցի *կապեալ* յերկինս. - 698. Եւս յայտնի, աստեացս ամենայնի կատարումն է՛ ի հանդերձեալն. այսինքն մեղաց և արդարութեան. պատժի և պարգևի. *կապելոյ* և արձակելոյ: - 704. ...և պատարագաւ խաչին հաշտեցոյց զհայր. և իջմամբ ի դժոխս կապեաց զհզօրն սատանայ և արձակեաց *զկապեալ* հոգիսն. - 705. Եւ յարութեամբն իւր ազատեաց *զկապեալ* հոգիսն: - 705. Եւ մեզ ետ իշխանութիւն կոխել զօձս և զկարիճս որ տկարացեալ էր և *կապեալ*: - 706. Այլ և վասն *կապելոյն* սատանայի գրեալ է ի **թ** գլուխն ի **հզ** համարն ի վերոյ: - 706. Վասն է՞ր յետոյ արձակէ՛ *զկապեալն*: - 706. Երրորդ, հոգւովն տիրեաց դժոխայնոցն. կապեաց զհզօրն. և արձակեաց *զկապեալ* հոգիսն: - 711. Իններորդ, զի բռնութիւն սատանայի էր *կապեալ* զնոսա. և տէր մեր կապեաց զնա ընդ խաչափայտին. որ նա ինքն էր դրունք դժոխոց. ապա ուրեմն արձակեցան անտի: - 777

**ԿԱՊԵՄ +** Եւ այսպէս կարծեն յամենայն կողմանց *կապել* զմեզ: - 52. Զի խաւարի միտքն. և մոլորի՛ իմացումն. և *կապի* ընդարձակ տեսութիւնն. և ծանրանայ թեթեւութիւնն. և անջատի ի բազումս. և տգեղանայ պատկերն: - 104. Այն որ մերձ յարևելս է, Վոռէա՛ս կոչի. նեղէ՛ զամպս, և *կապէ՛* զանձրևս: - 205. Զի ուղեղն ի մէջն սնուցանէ զոսկրն. և ջիլն *կապէ՛* առ միմեանս զի մի քակտեսցին ոսկերքն. և արիւնն կերակո՛ւր է նոցա: - 240. Ոմանք ասեն, **ժէ** գլխաւոր ջլօքն որ *կապին* սոքա՝ լինին յկե զօդուածք: - 243-244. Եւ նոյն ջիլն *կապէ՛* և շարապնդէ՛ զամենայն յօդուածս ոսկերացն: - 244. Վեշտասաներորդ՝ որպէս *կապեցաւ* իսահակ ոտիւք և ձեռօք ի վերայ սեղանոյն: - 306. Եւ կարելի՛ է ամենայն կապիւս զոր ունիմք առ միմեանս՝ փոխիլ առ աստուած և *կապիլ* ի նա: - 317. Կամ որ զմեզ ազատեաց, և զթշնամին *կապեաց*: - 347. Որպէս ետ առաքելոցն, Նոյնպէս և նոցա ի գիր նզովից *զկապելն*. և յօրհնութիւն ժողովրդեանն զարձակելն: - 379. Յորոց յայսցանէ յա՛յտ է, զի եթէ ապաշխարեալ լինի արգելեալն. կամ վախճանեալ է *կապօղն*. այլ ոք որ գերագոյն է կամ հաւասար *կապողին*, կարէ՛ արձակել զնա՛: - 409. Քսաներորդ՝ յեսու զլուսաւորսն *կապեաց* և արար զմի օրն **բ**: - 418. Եւ տէր մեր նախ *կապեաց* զհզօրն ի խաչին և զտունն նորա աւերեաց որ էր ամրոց դժոխոցն: - 419. Երեքտասաներորդն ի դանա որդի մանովէի Սամփսոն. որ կալաւ յ աղուէսս, և *կապեաց* ի նոսա ջահս. և այրեաց զանդաստանս այլազգեացն: - 420. Մետասաներորդ՝ դնի ի բանտ, և *կապի՛* ի շղթայս մեղաց: - 424. Նախ անարգեցաւ ի պարտէզն զկնի արեան քրտանցն յորում մատնեցաւ ի յուդայէ. և իբրև աւազակ ըմբռնեցաւ և *կապեցաւ*: - 492. Չորրորդ՝ որպէս անիրաւութեամբ *կապեաց* սատանայ զհոգիս մարդկան. արդարութեամբն ազատեսցէ քրիստոս զնոսա: - 503. Որ և անդ ժամանեաց տէրն և *կապեաց* զհզօրն. և զկարծրացեալ ամրոցն աւերեաց. և կողոպտեաց ի նմանէ զհոգիսն մարդկան որ յադամայ հետէ ընդ բռամբ ունէր: - 503. Դրունք և նիգք յետուստ են. այսինքն կամ սկզբնական և ներգործական մեղօք *կապեաց* յետոյ, կամ մեղօք և յուսահատութեամբ: - 504. Եւ քրիստոս ա՛նդ գնաց և *կապեաց* զհզօրն և քակեաց զամուրս նորա և աւար էառ զհոգիսն: - 506. Երկրորդ՝ զի դժոխքն այն էր բուռն զօրութիւնն սատանայի. և քրիստոս *կապեաց* զհզօրն ըստ աւետարանին. ապա ուրեմն քրիստոս աւերեաց զդժոխս: - 506. Չորրորդ՝ ի մէջ գիշերի ըմբռնեցաւ և *կապեցաւ* ի մահ. և ի մէջ գիշերի յարեաւ և արձակեցաւ ի մահու: - 512. Նոյնպէս և քրիստոս ի մէջ գիշերի եհար զսատանայ և *կապեաց*: - 512. Նոյնպէս և ադամ զծնեալս յինքենէ՝ այլ և այլ զուգիցն *կապէր*: - 534. Ուստի յայտ է զի պատժէ զմարմին. և *կապէ՛* զհոգին ի կեանս և ի մահ: - 538. Զի՞նչ է *կապելն* և արձակելն: - 538. Կրկին իշխանութիւն է զոր ունի քահանայն. զի *կապելն* որոշելն է. սարկաւագին որ որոշէ՛ զանմաքուրն յեկեղեցւոյ: - 538. Այլ գիտելի է, զի քահանայն զինու՛ր է. ոչ զոր ինքն կամի և ախորժէ զայնս *կապէ* և արձակէ. այլ զոր հաճո՛յ է զօրավարին քրիստոսի: - 539. Եւ թէ ոք ասիցէ, ապա թէ զամենայն ոք առ հասարակ *կապէ* կամ արձակէ, այսինքն օրհնէ կամ անիծանէ, ո՞չ կատարի: - 539. Նա՛խ՝ թէ անկարգաբար *կապէ*. որպէս քահանայ զեպիսկոպոս կամ զկաթողիկոսս. կամ սարկաւագ զքահանայ. այս ո՛չ կատարի: - 539. Եւ թէ ոք ասիցէ, յայտնեա՛ ապա զո՞րս պարտ է *կապել* կամ արձակել: - 540. Եւ բաց յայսցանէ և արտաքոյ սոցա, ո՛չ օրհնին և ո՛չ անիծանին. ո՛չ *կապին* և ո՛չ արձակին: - 540. Այլ որ այսպէս իրաւամբք *կապեսցի*՝ հնազանդիլ պարտի կապողին որպէս յաստուծոյ շարժեալ: - 540. Այլ որ այսպէս իրաւամբք կապեսցի՝ հնազանդիլ պարտի *կապողին* որպէս յաստուծոյ շարժեալ: - 540. Իսկ *կապելն* ի դէմս մեղացն է և մեղսասիրաց. որպէս տէր մեր բևեռեաց զմեղս և զսատանայ ընդ խաչափայտին: - 540. Դարձեալ՝ *կապի* մեղքն, և լուծեալ ազատի անձն որ կապեալն էր: - 540. Ըստ այսմ

կարգի նախ *կապելն* է և ապա արձակելն. որպէս ասաց պետրոսի: - 541. Այլ սոքա ամենայնքն նախկին և պատուականք են. այսինքն քահանայ քան զսարկաւագ. և բանական քան զգայական. և ներգործութեամբ քան զօրութեամբ. այսպէս արձակելն քան *զկապելն*: - 541. Վասն որոյ ի վերնատունն յորժամ փչեաց յառաքեալսն՝ նախ ետ զարձակելն և ապա *զկապելն*: - 541. Դարձեալ՝ յերկրի ի կատարմանէ, և յերկինս ի սկզբանէ իշխանութեանն. եթէ *կապելն* և եթէ արձակելն: - 541. Եւ գիտելի է, թէ քահանայ ոմն զժողովուրդ իւր *կապիցէ*, ա՛յլ քահանայ ո՛չ կարէ արձակել: - 541. Եւ թէ եպիսկոպոս զիւր քահանայն *կապէ*, ա՛յլ եպիսկոպոս ո՛չ կարէ արձակել: - 541. Նոյնպէս և աթոռակալքն որ ի չորս աթոռս, ա՛յլ զայլոյ վիճակեալ ո՛չ կարէ *կապել* և ո՛չ արձակել. նոյնպէս և ի նոյն աթոռն, վերջինն զառաջ նոյն ո՛չ կարէ փոխել կանոնս և զկարգ: - 541. Իսկ համակարգ քահանայք կամ եպիսկոպոսք զնոյն ոմն ընդէ՞ր ոչ *կապեն* կամ արձակեն: - 541. Եւ զոր նա՛ *կապէ*, այլքն ո՛չ արձակեն. որպէս որ *կապեաց* զհոգիս ի մարմնի՝ նա՛ արձակեսցէ: - 542. Եւ որպէս եղիա որ *կապեաց* զերկինս և փախեաւ ի սիդոն. նոյն նմա հրամայեաց աստուած բանալ զերկինս. նմանապէս և այս: - 542. Այլ անիրաւ *կապելն* արձակեսցի. և *կապօղն* պատժեսցի. ոչ միայն ի համակարգից, այլ և ի ներքնոց: - 542. Այլ և մեղք մարմնոյն՝ ի հեշտանալն, ի սովորիլն, և ի *կապիլն* առ մեղս: - 568. Ասեմք թէ՝ սակաւ հեշտութիւն *կապեցաւ* յամուսնութիւնն...: - 613. Իսկ ի նորս փոխեցաւ ի հոգևոր օրհնութիւն և ծնունդ. և զմարմնաւորն ի սկզբան չափաւորն *կապեաց*. որպէս ադամ և եւա: - 613. Եւ այս է միտքն, որ մեղօք *կապեցաւ*: - 621. ...այլ և մեղօքն *կապի* մարդ յերկինս և յերկրի...: - 680. ...զոր միանգամ *կապիցէք* յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս...: - 698. Զի՞նչ է *կապիլն* սատանայի ռ ամ: - 705. և պատարագաւ խաչին հաշտեցոյց զհայր. և իջմամբ ի դժոխս *կապեաց* զհզօրն սատանայ և արձակեաց զկապեալ հոգիսն. - 705. Եւ իջմամբ ի դժոխս *կապեաց* զնա և արգելեաց յանդունդս: - 705. Դարձեալ և այլ իմն եղանակաւ *կապեաց* զիրեղէն վիշապն: - 705. Եւ ոմանք յետ զռ ամին զեօթներորդն որ վախճանն է՝ յարութիւն ասեն միայն սրբոցն և *կապիլ* սատանայի: - 706. Երկրորդ, *կապելովն* ետ նմա զառհաւատչեայն տանջանաց...: - 706. Երրորդ, հոգւովն տիրեաց դժոխայնոցն. *կապեաց* զհզօրն. և արձակեաց զկապեալ հոգիսն: - 711. Չորրորդ՝ զպնդութեամբ *կապիլն* ի սէրն կրկին: - 713. Իններորդ, զի բռնութիւն սատանայի էր կապեալ զնոսա. և տէր մեր *կապեաց* զնա ընդ խաչափայտին. որ նա ինքն էր դրունք դժոխոց. ապա ուրեմն արձակեցան անտի: - 777

**ԿԱՊԻՃ +** Երրորդ՝ զի ո՛չ հայէր ի վեր. երկաթի *կապիճս* եդեալ ի գլուխն: - 290

**ԿԱՊՈՅՏ +** Ոմանք ասեն թէ յօդոյն է. զի օդն *կապոյտ* է՝ խառնի ընդ ջրոյն և լինի կանանչ: - 212. Եւ ի սոցա խառնուածոցն լինի ա՛յլ զանազան գոյնք: *Կապոյտ*. Գորշ. և այլն: - 212. *Կապոյտն* օդոյն է գոյն. զի թէ ա՛յլ գոյն էր, վնասիչ և խափանիչ լինէր տեսութեանց. որպէս սպիտակ կամ սեաւ. այլ *կապոյտն* է ի հեշտութիւն տեսութեանց: - 342. Զի հանդերձն սպիտակ՝ շապիքն է և *Կապոյտ* վտաւակն՝ նափորտն: - 348. Պճղնաւորն *կապոյտ* բոլորապատ՝ երկինքն է: - 348. Գոճազմ. *կապո՛յտ* է. և գտանի ի մեծն սկիւթ: - 348. *Կապուտն* նշանակէ՛ զխորհուրդ յայտնութեանն քրիստոսի: - 379

**ԿԱՊՈՒՏԱԿ +** Սուտակ՝ որ է՛ լիգրոնն. զոր ո՛չ գիտէ ոք զուստն. նման է *կապուտակ* աւազոյ. ոմանք ասեն յամազունից բերաւ ի կանանց աշխարհէն: - 348

**ԿԱՊՈՒՏԻՄ** - Նոյնպէս յորժամ բարկանայ՝ *կապուտի*: - 245. ...և երեսն լըսնանայ վասն դեղնութեանն. և *կապուտի* ընդ կարմիրն խառնելով: - 620

**ԿԱՌԱՉԵՄ +** ...որք են, բառաչել, *կառաչել*, խխնչել, և այլն նմանապէս: - 640

**ԿԱՌԱՎԱՐ +** Երկրորդ՝ ասեմք եթէ և ոչ աստեղք վայրապար են ստեղծեալ. զի *կառավարք* են տարրեղէն մարմնոց որպէս ասացաք. այլ մարդկային ներգործութիւնք կառավարին յանձնիշխան կամաց. և անձնիշխան կամքն որ անմարմին է՝ ո՛չ նըւաճի ըստ շարժմամբ մարմնաւոր աստեղաց: - 13. Իններորդ՝ զի նոցա բանականն է մոլորեալ. և ո՛չ ցասումն և ցանկութիւնն. յորոց վերայ բանն բռնադատէ խղճիւն, և ստիպէ զնոսա յուղղութիւն. այլ ինքն *կառավարն* խոհեմութիւնն մոլորեալ ո՛չ ուղղի: - 32. Որպէս առաջին է կառքն և յետո՛յ *կառավարն*. և առաջին է նաւն, և ապա նաւավարն. և պատուական է մարդն քան զնաւն և զկառքն: - 230. Շնորհքն է զարդ հոգւոյն և կրօնքն մտաց. և կամքն իշխան և *կառավար* սոցա: - 389. Որ և պատուական է վարդապետն քան զաշակերտն. և զօրավարն քան զզօրս. և *կառավարն* քան զկառն և այլն: - 551. Երկրորդ՝ որպէս կառք և *կառավարն*. եթէ մարմինն թիւրի, միտքն ուղղէ՛ զնա: - 557. Իսկ թէ *կառավարն* թիւրի, կառքն ո՛չ կարէ ուղղել. այլ երկոքինն գահավիժին: - 557

**ԿԱՌԱՎԱՐԵՄ +** Դարձեալ ասեն, թէ ամենայն ստորնային մարմինք՝ *կառավարին* վերնային մարմնովք...: - 10. Առ այս ասեմք, թէպէտ ստորնային մարմինք *կառավարին* վերնային մարմնովք, այլ մարդկային ներգործութիւնք *կառավարին* անձնիշխան կամօք...: - 10. Երկրորդ՝ ասեմք եթէ և ոչ աստեղք

վայրապար են ըստեղծեալ. զի կառավարք են տարրեղէն մարմնոց որպէս ասացաք. այլ մարդկային ներգործութիւնք *կառավարին* յանձնիշխան կամաց. և անձնիշխան կամքն որ անմարմին է՝ ո՛չ նըւաճի ըստ շարժմամբ մարմնաւոր աստեղաց: - 13. Այլ արդ՝ եդ աստուած զսոսա բնական որակութիւնս ի մասունս հոգւոյն. եդ և զանձնիշխան կամքն տէր և իշխան իներքս ի հոգին. զի *կառավարէ* և առաջնորդէ՛ հոգւոյն. զվատ որակն ի բարին ուղղել, և զբարին ի նոյնն պահել և առաւելուլ. զի այս է գործ անձնիշխանին: - 19. Դարձեալ՝ յառաջինսն տիրէ աստուած իբր մեծութիւն. ի յերկրորդսն *կառավարէ* իբր զօրութիւն. ի յերրորդսն պարսպէ՛ իբր փրկութիւն: - 135. Դարձեալ, ի յառաջինսն *կառավարէ՛* աստուած իբր նախապետութիւն: - 136. Դարձեալ՝ առաջինքն *կառավարեն* ազգի և թագաւորութեան, որպէս միքայէլ: - 136. Երկրորդ՝ որ հոգւով *կառավարի*: - 210. Երկիր որ հոգւով *կառավարի*, է՛ մարմին մահկանացու: - 210. Եւ մարմնաւոր իշխան զթագաւորս և զբռնակալս. զի մարմնապէս *կառավարեսցեն* զմարդիկ և խրատեսցեն վասն մեղաց: - 538. Երրորդ՝ ի *կառավարել* զգործնական և զտեսական կեանս. այսպէս աստուածային և մարդկային առաքինութիւնքն են որ ասացաւ: - 583. Առաջինն ուսուցանէ կարգաւորել զբարս իւր առ ինքն... Երրորդն *կառավարել* զքաղաքս և զթագաւորութիւնս: - 580. Երեք կարգս այսոքիկ գուշակեին երեքումբք արամբքն զորս եզեկիէլ մարգարէացաւ. փրկելոցն Նոյիւ Յոբաւ և Դանիէլիւ... Նոյիւ՝ որ զտապանն *կառավարեաց*, ամուսնացելոցն: - 755

**ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ +** Ա՛րդ՝ ժուժկալութիւն է որով ամենայն ցանկութիւն ուղղի *կառավարութեամբ* խրատուն: - 581

**ԿԱՌԱՓԵՄ +** Եօթներորդ՝ ածաւ ի տեղի *կառափելոյ* և անդ խաչեցաւ: - 493

**ԿԱՌԱՓՆ +** Երեսունք, *զկառափս* իշխանացն խորտակեաց. և արեամբ զմարմինսն լուանայր: - 424

**ԿԱՌՆ +** Որ և պատուական է վարդապետն քան զաշակերտն. և զօրավարն քան զզօրս. և կառավարն քան *զկառն* և այլն: - 551

**ԿԱՌՈՅՑ +** Վերին ագոյցն իմացականն հոգի. և ներքին *կառոյցն* մարմնոյս բնութիւն: - 645

**ԿԱՌՈՒՑԱՆԵՄ +** Այլ զաստղալից երկինս ի յօդոյ ասէ խտացեալ և թանձրացեալ. և ի նմա՛ են *կառուցեալ* աստեղք և ընթանան: - 184

**ԿԱՌՔ +** Վասն է՞ր աստուածաբան մարգարէքն զտեսիլ երկնայնոցն սոյնպէս անարգ կերպիւ տպաւորեցին. որպէս առիւծ. և եզն. աթոռք. և *կառք*. և այլն: - 131. Եւ դարձեալ զի *Կառք* է թռչնոց: - 202. Որպէս առաջին է *կառքն* և յետո՛յ կառավարն. և առաջին է նաւն, և ապա նաւավարն. և պատուական է մարդն քան զնաւն և *զկառքն*: - 230. Քսանեզ, Վերացումն եղիայի շարժմամբ. և *կառքն* և հեծեալք տեսեալ: - 413. Վաթսուներորդ, մարտեաւ ընդ ադրիազարու և սպան զնա և քակեաց *զկառս* նորա, և զթագն եդ ի գլուխ իւր...: 438. *Կառքդ* իսրայէլի և հեծեալք դորա: - 445. Հրեղէն *կառք* և հեծեալք երևեցան: - 445. Նա՛խ՝ իբր զթագաւոր վերացեալ *կառօք* և զօրօք: - 445. Նա՛խ՝ քառադէմ *կառքն* եզեկիէլի, և տէր բազմեալ ի վերայ: - 494. Երկրորդ՝ որպէս *կառք* և կառավարն. եթէ մարմինն թիւրի, միտքն ուղղէ՛ զնա: - 557. Իսկ թէ կառավարն թիւրի, *կառքն* ո՛չ կարէ ուղղել. այլ երկոքինն գահավիժին: - 557

**ԿԱՍԲԻՑ** - Ասեն ոմանք թէ **Ժ** ցեղքն իսրայէլի որ փակեցան ի մէջ լերանցն *կասբից*...: - 708

**ԿԱՍԲԻՑ ԾՈՎ** - Յասպիս՝ նմա՛ն է զըմրխտի դեղնագոյն. գտանի յեզեր թորքոմէտոս գետոյ յեզր *կասբից ծովու*: - 348

**ԿԱՍԵՑՈՒՑԱՆԵՄ +** Եօթներորդ՝ զի չարչարանօքն իւրովք յուսադրեաց զմեզ, զի մի՛ յետ տկարութեանս և սակաւ չարչարանաց ի փորձողէն՝ *կասեսցուք* ի նահատակութեանց. այլ օրինակ դիցուք զչարչարիլն նորա մեզ և համբերեսցուք որպէս ասէ: - 43

**ԿԱՍԿԱԾ +** Այս է մեկնութիւնն թէ՝ հաւասարն աստուծոյ՝ յափշտակութիւն և զրկումն չհամարէր իւր զծառայի կերպարանս առնուլ. զի ո՛չ ունէր յայլմէ *կասկած* խլելոյ զփառսն. զի ի՛ւրն է սեպհական: - 39. Իսկ թէ և նա արտաքուստ ունի զորդիութիւն և զայլսն, գոյ *կասկած* երբեմն ի բաց մերժել զոր էառն: - 66

**ԿԱՍԿԱԾԱՆՔ +** Զի առնելն է հաճոյական գործ առանց *կասկածանաց*. որպէս բարի առնել բարեաց, որ է՛ արդարութեանն աստուծոյ. և չար առնել չարեաց, որև այս է՛ խրատ ուղղութեան. այլ բարի առնել չարեաց, այս ողորմութեան է և գթութեան. այսոքիկ առնելոյն են տեսակք: - 158. Ասէ՝ երկի՛ր և կա՛ց ի *կասկածանս*. զի երկիւղ կայ անկանելոյ ի բարւոյն: - 210

**ԿԱՍԿԱՐԱՅ +** Այլ որք յամառելով յօրինակն՝ ա՛ղ խառնեն ի խորհուրդն, պա՛րտ է նոցա խառնել և ձէթ և մուրկ և խունկ և միս գառին. կամ զանգեալ ի *կասկարայս*, կամ օծեալ ի տապակի, զի զօրինակն կատարեսցեն. և հեռասցին ի ճշմարտութենէն: - 357. Իսկ *կասկարա՛յ* է պուտուկ պղնձի: - 357. Եւ յետոյ

բաշխումն նշխարաց. որպէս դաւիթ բաշխեաց ամենայն իէլի բլիթ մի հաց, և պատառ մի ի տապակէ՛ և ի *կասկարայիցն*: - 431

**ԿԱՏԱՂԻՄ +** Ընդ դէմ արիոսի *կատաղելոյ* **յժը** հարք սուրբք: - 542. Չորրորդ, արձակէ՛ զսատանայ, զի տեսցէ զիւր ժամանակ տանջանացն մերձեալ. և մոլի որպէս գազան մերձ ի սատակումն. և շուն *կատաղեալ*: - 706

**ԿԱՏԱՐ** + Որ և ոչ ժամանեաց ի *կատար* բանիս վերոյ ասացեալ խնդրողն: - 772

**ԿԱՏԱՐԱԾ +** Որոց պատասխանեն վարդապետք եկեղեցւոյ. և ես զնոցայն առեալ ասացից՝ թէ յաւուրս յետինս՝ ոչ *զկատարած* աշխարհի կոչէ, այլ կոչէ աւուրս յետինս՝ զպակասութիւն օրինացն և արդարութեան նորա. քանզի օրէնք նոցա պակասեցաւ ի գալստեանն քրիստոսի: - 27. Քսաներորդ՝ Անգիտութիւնն որդւոյ վասն *կատարածի* ժամուն: - 29. Յորմէ յա՛յտ է թէ և ի *կատարածին* ո՛չ հեռանայ: - 42. Ոչ թէ անգիտանայ՝ քաւ լիցի. զի զամենայն որ լինելոցն էր ի *կատարածին* ասաց. զիա՞րդ զժամն անգիտանայ: - 48. Եւ որպէս թէ *զկատարած* աւուրն ոք գիտենայ, և զսկիզբն գիշերոյն ասէ չգիտել: - 48. Ուստի ընդ հաւատացեալս է մինչ ի *կատարած* աշխարհի: - 71. Որպէս նախ քան զլինիլն մեր՝ էր սկիզբն մեր. և այժմ է՛ նոյն սկիզբն. և յետոյ ի *կատարածի* անփոփոխելի մնայ ի սկիզբն գոլոյ: - 112. Նախ՝ որ ոչ սկիզբն ունի և ո՛չ *կատարած* : - 115. Երկրորդ՝ որ ո՛չ սկիզբն ունի, այլ *կատարած* : - 115. Երրորդ՝ որ սկիզբն ունի, այլ ո՛չ *կատարած* : - 115. Չորրորդ՝ որ սկիզբն ունի և *կատարած*. և թէպէտ հասարակ սոքա յաւիտեանք կոչին, այլ ունին յատուկ անունս: - 115. Յաւիտեանս Յաւիտենից. որ է՛ սկզբնական և յարաձգական. զի նա պարունակէ զերեք յաւիտեանսն. որ ո՛չ սկիզբն ունի և ո՛չ *կատարած* : - 116. Եւ գիտելի է՝ զի աստուած կոչի յաւիտեան անսկիզբն և անվախճան. և է՛ պատճառ պարունակողացն յաւիտենին. որ ո՛չ սկիզբն ունի և ո՛չ *կատարած* : - 116. Այլ զայս ստեղծեալ յաւիտեանս ասեմք ոչ սկիզբն ունիլ և ո՛չ *կատարած*. զի պարունակօղ է ա՛յլ յաւիտենից որք ունին սկիզբն կամ *կատարած*. այլ ինքն պարունակի յանստեղծ յաւիտենէն որ է՛ աստուած: - 116. Յաւիտենական է՝ որ ո՛չ սկիզբն ունի, և ո՛չ *կատարած*. որպէս աստուած: - 116. Եւ մշտնջենաւոր՝ որ ունի սկիզբն՝ և ո՛չ *կատարած*. որպէս հրեշտակք. և հոգի մարդոյ: - 116. Եւ ժամանակեայ՝ որ ունի սկիզբն և *կատարած*. որպէս զգայականք. և տնկականք: - 116-117. Այսինքն երկայնութիւն սիրոյն մինչ ի *կատարած* անվախճան: - 129. Երկրորդ՝ ես եմ սկիզբն և *կատարած* ամենայնի. զի ի բանէն աստուծոյ եղեն ամենեքեան և ի նոյն բանն վախճանին: - 129. Եօթներորդ՝ սկիզբն և վախճան գիտութեամբն ասի. զի զսկիզբն էից և *զկատարածն* ի ներքոյ իւր ամենահաս գիտութեանն բովանդակեալ ունի: - 129-130. Իսկ թէ դառնային ի ներքոյ ինքեանց առ փոփոխական բարին, անկանէին ի չար մեղացն և ի չար պատժոցն. որպէս այժմ դնք և ի *կատարածի*: - 146. Զի ի *կատարածի* աշխարհի յորժամ դադարի գործ դիւացն՝ ամենեքեան միահաղոյն փակեսցին ի դժոխս: - 147. Որև մերձ ի *կատարածն* դարձեալ յառնելոց է ի վերայ մարդկան ի ձեռն ներհինն: - 148. Երկոտասաներորդ՝ *կատարած* գործոյ մարդոյ ի սկիզբն անգիտելի է. իսկ աստուծոյն ի սկիզբն *կատարածն* գիտելի է նմա: - 157. Երրորդ՝ զի առնելն ի սկիզբն նայի ստեղծեալ իրին զի լինիցի. և նախախնամելն ի *կատարածն* զի մի՛ կորիցէ: - 158. Եւ թէ ոք ասիցէ՝ յորժամ գիտէ՛ աստուած *զկատարածն*, վասն է՞ր տայ ի փորձանս: - 161. Եւ միշտ ներգործութեամբ է. զի ո՛չ կարօտի սկզբան և *կատարածի* զօրութեամբ գոլ. ապա ուրեմն անսկիզբն է և անվախճան: - 162. Երկրորդ՝ զի ո՛չ երևի ի նմա սկիզբն և ո՛չ *կատարած*: - 182. Եւ դարձեալ այսպէս զանազանին սոքա երեքեան աւուրք. այսինքն առաջին օր ստեղծման. և միջին մինչ ի *կատարած*. և վերջին օր յարութեան: - 193. Վասն որոյ գիշերն յառաջէ՛ տունջեան մինչ ի *կատարած*: - 194. Իսկ ձմեռն է *կատարած* և վերջք կենցաղոյս. վասն այն բոյսք և ծնունդք դադարին և չորանան: - 198. Իսկ ամառն նորին նման. զի հունձք է և *կատարած* գործոց բարեաց. և ո՛չ ժամանակ սերմանելոյ կամ բուսանելոյ: - 198. Վերջին հուրն ի *կատարածի* զդրախտն փոփոխէ՞ թէ ոչ: - 225. Եւ ոչ նոր, զի մի և նոյն ի սկզբանէ հրամանն արարչադիր առանց տկարութեան ներգործէ մինչ ի *կատարած*. և ըստ իւրաքանչիւր հոգւոյ՝ նոր հրաման ստեղծանելոյ ո՛չ արձակի: - 257. Տասներորդ՝ կին, իբր թէ կեանք. զի որպէս կենօք է տևել. նոյնպէս տեսակ մարդոյս ի ձեռն կնոջ ծննդեանն տևէ՛, և կայ մնայ մինչ ի *կատարած* : - 276. Ընդէ՞ր ոչ գիտէ մարդ *զկատարած*. կենաց իւրոց և *զկատարած* աշխարհի: - 292. Նոյն պատճառ է և ո՛չ գիտելոյ *զկատարած* կենցաղոյս: - 292. Դարձեալ՝ գիտութիւն *կատարածի* խափանէ՛ զվարձս հաւատոյ. զի վարձքն ի հաւա՛տն է և ո՛չ ի գիտութիւնն. վասն այն հաւատով ակն ունիմք *կատարածի* և ո՛չ գիտութեամբ: - 292. Արդ որպէս հաւատով իմանամք հաստատեալ զյաւիտեանս որպէս ասէ առաքեալն. և նովին հաւատով իմանամք *զկատարած* կենցաղոյս և զյարութիւն մեռելոց և զդատաստան հատուցմանն: - 292. Եւ դարձեալ՝ որ քան մերձիմք *կատարածի*, այնքան մերձենամք ի ցաւս դժոխոցն. որպէս յերիկունն սակաւ սակաւ առաւելու խաւարն և ցուրտ: - 293. Եւ ի *կատարածի* դիցին

թշնամիքն քրիստոսի ի ներքոյ ոտից նորա ասացաւ: - 314. Նոյնպէս և տէր մեր յետոյ բառնալո՛ց է զչար. գազանն զորդին կորստեան և զպաշտօնեայսն նորա ի *կատարածի*: - 314. Նոյնպէս և ի *կատարածի* ահագին գոչէ ի վերայ մեղաւորաց...: - 316. Այլ ոտք զիաւատացեալ անդամս իւր ասէ. զի սոքա՛ վեցեքին թշնամիքս կոխան լինին հաւատացելոց ի *կատարածի*: - 317. Եւ տէր մեր զգալուստ հոգւոյն և *զկատարած* աշխարհի պատմեաց, և յանձնեաց զկոյս տաճար իւր ի կոյսն յօհաննէս: - 329. Երկրորդ, բոլո՛ր իր է. ո՛չ սկիզբն է և ո՛չ *կատարած*: - 338. Վասն այն ա՛ստ ի հաստատութեան երկնից ասեն զկայանս հոգւոցն մինչ ի *կատարած* յարութեան մարմնոց: - 346. Զի միջնո՛ց է մարմնոյն, և սկիզբն է կենդանւոյն, և *կատարած* կենաց: - 360. Երրորդ՝ վասն *կատարածի* և վերջին օրհնութեանն պատմէ. արդարոց զպատիւ, և մեղաւորաց զտանջանս: - 407. Դարձեալ՝ նշանակեն զերիս կոչմունս. մարգարէիւք և առաքելօք. և զվերջինն ի *կատարածի* հրեշտակօք: - 449. Նախ մասնաւոր հրէից. և ապա մեր եկեղեցւոյ. և ի *կատարածի* բովանդակքն...: 449. Վեցերորդն ի քրիստոսէ մինչ ի *կատարած* աշխարհի: - 467. Այս դպրութիւնքս բանին ի *կատարածի* ըստ դանիէլի. որպէս գրեալ է աստ յայլում տեղւոջ՝ անդ տեսցես: - 481. Ութերորդ ի *կատարածի*. այն որ ո՛չ ի փրկութիւն, այլ ամենայն չարութեան ջնջումն առնելով տանջանօք որ է հուրն անշիջանելի: - 488. ...և Ներքինն *զկատարած* ելից կենցաղոյս: - 493. Ասեմք, եթէ խոցուածն և արիւնն ցուցակ ապականութեան են, ապա և զայս խոցուածս եցոյց յետ յարութեանն. նաև ի *կատարածի* ցուցանելոյց է զամենայն խոցուածս վիրացն...: - 502-503. Երկրորդ՝ եթէ սկզբնաչարն սատանայ է ամենայն մեղաց պատճառ և ո՛չ տանջի մինչ ի *կատարած.* նաև ո՛չ մարդիկ: - 507. ...հրեշտակք և մարդիկք, կամ մարդկան ամենայն ազգ և ամենայն լեզուք, գայցեն ի *կատարածի* յերկրպագութիւն քրիստոսի. և անեզր յաւիտենիւ փառաւորեալ օրհնեն զնա: - 529. Որպէս և քրիստոս ի *կատարածի*՝ նախ օրհնէ ասելով՝ «եկայք օրհնեալք հօր իմոյ»: - 610. Այլ զփառս արքայութեան երկնից ի *կատարածի* ժառանգեսցեն հոգւով և մարմնով անվախճան յաւիտենիւ: - 617. Երրորդ՝ ի խորհուրդ **ը** երորդին՝ ի *կատարածի*, յազատեալք յաստեացս՝ գոհանամք զաստուծոյ - 627. Այլ և ունի զխորհուրդ վերջին աւուրն որ *կատարա՛ծ* է աշխարհի: - 641. Իսկ քեզ վայելէն, զարարչութեանն ունի խորհուրդ. այլ և զտնօրէնութեանն և *զկատարածին*...: - 644. Երկոտասաներորդ, Թէ հատուցումն ըստ գործոց՝ է՛ ի *կատարածի*, **լ** վկայութեամբ: - 660. Քսանէ, Թէ ո՞ր մարմինք մնան ի *կատարածի* և ո՞րք ոչ: - 661. Քսանեւ**թ**, Վասն գալստեան. և նշանացն նորին. և *կատարածի* հրոյն: - 661. Եւ վասն յերկարութեան կենաց, և վասն ո՛չ գիտելոյ զօր մահուն և *զկատարածի*, ասացեալ է ի վերն առ նախապետսն ի **դ** համարն: - 665. Իսկ վախճանեալն կատարեալ լսի. որպէս թէ ոք սկսանի երթալ ի ճանապարհ կամ ի գործ ինչ և ի յաւարտիլն *կատարած* ասի: - 666. Եւ ապա՛ ի *կատարածի* ի հուրն յաւիտենական տանջին ասէ տէր: - 667. Այլ կան և սպասեն մեծի հարսանեացն քրիստոսի և *կատարածի* աւուր...: - 669. ...և զբաժին իւր գիտասցէ որ լինելոց է ի *կատարածի*...: - 669. Դարձեալ՝ նշանակէ զմահ մեղաւորացն ի *կատարածի*...: - 671. Եւ ի հեռուստ տեսեալ զտեղին, զի յետ *կատարածի* մարմնով առնելո՛ց են իւրաքանչիւր ոք զփառս կամ զտանջանս: - 682. ...և ապա յետ յարութեանն ի *կատարածի* միանգամայն մտանեմք ի սուրբն սրբոց որ է արքայութիւնն երկնից: - 682. Այլ ըստ պսակացն որ մարմնով կատարին՝ և վասն ընկերացն որ ժողովին՝ պակաս է նոցա. զոր ի *կատարածի* լինելո՛ց է ի գալուստն քրիստոսի...: - 686. Նախ քան զքրիստոս, առ հասարակ ի դժոխս. բայց յետ քրիստոսի, առհասարակ ի կայանս հոգւոց. և երրորդն ի *կատարածի*...: - 686. Եւ այլք ասեն ի դրախտին լինիլ զկայանս հոգւոց արդարոց և մեղաւորաց մինչ ի *կատարած* աշխարհի: - 686. Նախ ասեմ, եթէ հանդերձ սպիտակ և պսակք և աթոռք և այլն ամենայն զոր ետես ի տեսիլն՝ ո՛չ ներկային. այլ հանդերձելոյն էր տեսութիւն որ ինչ լինելոց է ի *կատարածի*...: - 690. Երկրորդ, յանկնկալութենէ հատուցմանն կրեն զտանջանս. որ լինելոց է ի *կատարածի*: - 690. Արդ՝ առաջին վկայութիւն, ասէ սուրբն կիւրեղ ի գիրս պարապմանց ի հարցմունս տիբերեայ եթէ՝ հատուցմունքն հետևին դատաստանին. և դատաստանն գալստեան դատաւորին ի *կատարածի*: - 691. Զքուն մահուն ասէ մինչ ի *կատարած*. և ի մէջ գիշերի յարութեանն աւուր յարեան ամենայն կուսանքն և կազմեցին զլապտերս: - 693. Պատասխանեմք առ այս որպէս ասէ սուրբն կիւրեղ ի գիրս պարապմանց եթէ առակ օրինակ են սոքա արդարոց և մեղաւորաց որ այսպէս լինելոց է ի *կատարածի*: - 695. Ասեմք առ այս, եթէ ո՛չ է պահել որպէս այժմ ի մարմնի. և ո՛չ առնուն որպէս ի *կատարածի*...: - 695. Հնգետասաներորդ, զի թէ գոյ քաւարան այժմ հոգւոյ՝ ապա ո՛չ է բոլոր դատաստան ի *կատարածի*. - 700. Իսկ թէ բոլոր և բոլորից դատաստանն է ի *կատարածի*. ապա ուրեմն այժմ ո՛չ է քննութիւն մասնաւոր հոգւոյ: - 700. Դարձեալ ասեմք, եթէ ի հուրն համատարած ամենայնքն անցանելոց եմք ի *կատարածի*. այլ ո՛չ ի հուր քաւարանի. զի ո՛չ գոյ քաւարան: - 701. ...որպէս և ամենայն աղօթք մեր վասն *կատարածի* և յարութեանն է, նոյնպէս և այս: - 703. Եւ զոր ինչ լինի ի *կատարածի* անդ

ցուցանեն: - 703. Այլ և վասն դժոխոց ասացաւ ի վերոյ ի մարդեղութեան ճառն. ասի և յառաջիկայդ ի *կատարածի*: - 705. ...զոսա ասեն հրէայքն ելանել ի *կատարածի* և գալ յերուսաղէմ: - 708. ...որ ի *կատարածի* աշխարհի մարտնչին ընդ եկեղեցւոյ: - 708. Բայց ի *կատարածի* փոքրիկ լինին հասակք մարդկան քան զմերս. որպէս մերս քան զառաջնոցն: - 708. Այլ հրէայքն յայնժամ դարձցին ի հաւատս քրիստոսի. և եկեղեցի սուրբ խաղաղութեամբ հանգիցէ մինչ ի *կատարած* աշխարհի...: - 709. Եւ թէ վասն է՞ր ոչ գիտեմք *զկատարած* աշխարհի և զկենաց մեր, գրեալ է ի վեր անդ առ նախապետսն ի **ժը** գլուխն ի **դ** համարն: - 718. Զի՞նչ է պատճառն որ **գ** մարմինք միայն մնան ի *կատարածի*: - 727. Երրորդ պատճառ, ասեն իմաստունքն թէ ծնունդք կենդանեաց և բուսոց լինին ի շարժմանէ երկնային մարմնոց. իսկ ի *կատարածի* խափանի շարժումն նոցա. վասն այն անբան կենդանիք և տունկք խափանին: - 727. Նոյնպէս և լուսաւորքն ի վերջին ժամանակս ի *կատարածի* ծածկեսցին, և դարձեալ յա՛յլ իմն յազնուականութիւն փոխեսցին: - 728. Չորրորդ՝ զի յանկարծակի լինի և ի համառօտ ժամն մահ մարդոյ և *կատարած* աշխարհի: - 730. Եւ այսպէս հսկել և պահել զտունս մեր, զի մի՛ գող մահուն և *կատարածի*՝ գտեալ զմեզ անպատրաստ ի մեղս՝ տանիցի զհոգիս մեր ի տանջանս յաւիտենից: - 730. Ո՞ւր է հուրն որ գայ ի *կատարածի*: - 731. Եւ ի *կատարածի*՝ տարրական հուրն և հրեղէն ծովն և ամենայն հուրք որ են յերկրի՝ ժողովեսցին ի միասին...: - 731. Իսկ ի *կատարածի* ցրտացեալ լինին մարդիկ ի սիրոյն աստուծոյ իբր ծերացեալ աշխարհի. վասն այն ջերմ հրով պատժեսցին: - 731. Երևեսցի՞ Խաչն ի *կատարածի*: - 732. Չորրորդ, զի նա՛ արդարութեամբ հատուցանէ ի *կատարածի*. վասն որոյ կոչի կշիռք արդարութեան: - 746. Երրորդ՝ արմաւենին ուշ բերէ պտուղն. և մայրն յետոյ պնդի. և փառք արդարոցն է՛ ի *կատարած* աշխարհի. և պնդիլն անմահութեամբ: - 765. Ասի ի գիրս սուրբս թէ՝ ի *կատարածի* յանուն յիսուս քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի. և ամենայն լեզու խոստովանեսցի զնա աստուած: - 783. Ա՛րդ՝ եթէ ի *կատարածի* ի հարկէ սքանչելեացն հաւատալ վարձատրելի՞ է թէ ոչ: - 783. Եւ դարձեալ, ի *կատարածի*՝ կենդանեաց և մեռելոց է խոստովանիլ զոր սանդարամետք կոչէ: - 785

**ԿԱՏԱՐԵԱԼ +** Զի ի տեսութիւնն աստուծոյ ո՛չ է առաջին և վերջին. այլ բոլորն համանգամայն և *կատարեալ*: - 15. Այլ մեր պատասխանին առ այս՝ է՛ այս ինչ, թէ միշտ ծնունդ է ի հօրէ ըստ բնութեանն որդի. այլ անծամբ *կատարեալ*. որպէս լոյս ի հրոյն միշտ ծնանի և ոչ է անկատար՝ յօրինակ որդւոյ: - 37. Եւ այս ոչ էութիւն և չարութիւն՝ առ մեզ կարէ՛ երևիլ, զի մասա՛մբ ունիմք զկարողութիւն և ո՛չ *կատարեալ*: - 44. Այլ այս է առնելն հօր՝ և նմին նման որդւոյ, այսինքն կամիլն հօր՝ և *կատարեալն* որդոյ զնոյն կամս: - 46. Ապա ուրեմն և հոգին աստուած է *կատարեալ*: - 51. Զի մեզ հոգին ըստ ինքեան գոյացութիւն, և յայլում տեսանի. այսինքն *կատարեալ* անձնաւորութիւն յէութիւն հօր: - 51. Այսպէս զհոգւոյն թէ յայտնապէս աստուած ասիլ ծածկեցաւ, և այլ իմն բառիւ յայտնեցաւ. որ ցուցանէ զնոյն ճշմարտապէս աստուած *կատարեալ*...: - 55. Զի եթէ զոյգ և հաւասար, ո՛չ գոյ առ նոսա *կատարեալ* բղխօղ. զի երկոքինն ի մի բղխողի տեղի են: - 63. Իսկ թէ անզոյգ, որ *կատարեալն* բղխէ՝ նա՛ է բղխօղ. և ո՛չ անկատարն: - 63. *Զկատարեալն* ի վերայ անձի՞նն ասէք, թէ ի վերայ բնութեանն: - 68. Զի թէ ի վերայ բնութեանն, **բ** կատարելութիւն մուծիք յԵրրորդութիւնն. զի Երրորդութիւնն մի բնութիւն է *կատարեալ*. և մի բնութիւն մարդոյ: - 68. Այլ ամենևին *կատարեալ* և միշտ մեծ մարմնով իւրով: - 78. Այլ՝ էառ զհոգի և զմարմին. որ է *կատարեալ* բնութիւն մարդոյ. որպէս ասէ բնութիւնք **բ**. այսինքն *կատարեալք*: - 80. Ո՛չ որպէս ապօղինար կարծեաց. այլ աստուած *կատարեալ* և մարդ *կատարեալ*. հոգով և մարմնով: - 80. Արդ՝ որ պարզապէս մի բնութիւն ասեն բանին և մարմնոյն՝ *կատարեալ* ամբարշտութիւն է: - 81. Բնութեամբ միաւորեալ՝ և մի անձն *կատարեալ*: - 84. Բանն աստուած իւրով կատարելութեամբն էառ զմարդկայինս բնութիւն. զհոգի և զմարմին և զմիտս. և միաւորեալ ընդ իւրում աստուածութեանն՝ եղև մի անձն *կատարեալ* և մի դէմ: - 84. Երկրորդ՝ զի ո՛չ մասամբ ինչ ըստ ոմանց ապօղինարի և այլոց. այլ յերկուց *կատարեալ* բնութեանց է միաւորութիւն փրկչին: - 88. Զի՞նչ իցէ տըւեալ, յորժամ *զկատարեալ* գիտութիւնն ո՛չ ետ: - 96. Այլ արդ՝ յերկնաւոր փառսն այն է գերագոյն՝ որ քան *կատարեալ* տեսանէ զաստուած: - 97. Ըստ որում մինն ի սուրբ Երրորդութենէն բանն աստուած հաղորդեցաւ բնութեան մերում անքակ միութեամբ. և եղև աստուածն *կատարեալ*՝ մարդ *կատարեալ*: - 106. Իսկ հասարակն՝ զի բոլոր բանն աստուած իւրով կատարելութեամբն էառ զբոլոր և *կատարեալ* մարդկային բնութիւնս. և եղև աստուածն *կատարեալ*՝ մարդ *կատարեալ*: - 106. Նախ՝ զի **գ** թիւն *կատարեալ* է. զի ունի սկիզբն. և մէջ և կատարումն: - 107. Նոյնպէս և Երրորդութիւնն *կատարեալ* է. Հայր և Որդի և Հոգի սուրբ: - 107. Իսկ ի սուրբ Երրորդութիւնն հայր *կատարեալ*. որդի *կատարեալ*. հոգի *կատարեալ*. և *կատարեալն* ո՛չ յաւելու և ո՛չ նըւազի: - 108. Ասեմք եթէ՝ մի է յաւիտեան անսկիզբն և անվախճան. որ նոյն ինքն է աստուած. բոլորն համանգամայն և *կատարեալ*. և նախ քան զյաւիտեանս. և ամենայն յաւիտենից արարիչ: - 116.

Երրորդ՝ յաւիտեանն ո՛չ ունի մասն. այլ բոլորն համանգամայն և *կատարեալ*. այսպէս և միշտն: - 116. Ա՛րդ՝ աստուածայինն միտ չորիւք յատկութեամբ տեսանի այսպէս. համանգամայն. ներկայապէս *կատարեալ*. և անփոփոխ: - 118. *Կատարեալ*, զի առանց աւելւածոյ և պակասութեան. և Անփոփոխ, զի տեսութիւնն աստուծոյ նոյն է: - 118. Իսկ երկրորդն՝ *կատարելոցն*. որպէս մարգարէից և առաքելոցն: - 119. Այս է յղացմամբ յարգանդի և ծննդեամբ. և քարոզութեամբ. և մահուամբ. և յարութեամբն և համբարձմամբն առ հայր՝ իբր զպսակ տարւոյ *կատարեալ* բնութեամբ մեր՝ ի ներքին կողմն վարագուրին մտեալ: - 126. Երկրորդ՝ զի թիւ է *կատարեալ*. առաջին միջին և վերջին: - 134. Երրորդ՝ հրեշտակն ըստ ինքեան անձն է. և հոգին մարմնովն է *կատարեալ* անձն: - 141. Իսկ ի յարութեանն և այսպէս հրեշտակաց հաւասարին իմացմամբ՝ *կատարեալ* անձամբ՝ անքանակ մարմնով՝ և անփոփոխ: - 141. *Կատարեալ* և գերակատար թիւք դոքա են առ մեզ. որ ի **դ** գլխաւորին ըստ չորից տարերց: - 141. Եւ է՞ յորժամ իմացումն ի յիշողութիւնն ի տրամախոհութիւնն և յայլս բաժանի, և նոքօք իմանայ և տեսանէ զաստուած. և այս ևս է *կատարեալ* տեսութիւն. և կոչի սա բնական տեսութիւն: - 142. Եթէ զգայութեամբ և մարմնով սիրեսցես զաստուած՝ լինի *կատարեալ* սէր: - 143. Այս է զանազանութիւն սիրոյ. գերակատար. *կատարեալ*, և անկատար: - 143. Ա՛րդ՝ բնութեան նոցա պատշաճի բարձրագոյն տեղիք որ է երկինքն յորում ստեղծան. զի թէ կացեալ էին *կատարելոց* էին անդ: - 146. Եւ **ժ** *կատարեալ* թիւ է. նշանակէ՛ *զկատարեալ* զօրութիւնս թշնամւոյն որով կռուի ընդ մեզ. զոր նշանակեն եղջիւրքն: - 151. Հինգերորդ՝ զանազանութիւն՝ զի սատանայ ի փորձելն ո՛չ գիտէ զառաջիկայն թէ յաղթէ և թէ յաղթի. և եթէ էր տեղեակ՝ ո՛չ մրցէր ընդ *կատարելոցն* որք յաղթահարեն զնա. որպէս ընդ ստեփաննոսի, անտօնի, և այլոցն, որք յաղթեցին սատանայի: - 161. Եւ թէ ոք ասիցէ, երևի ապա թէ քահանայագործութիւն պոռնկին ո՛չ լինի *կատարեալ*. վասն այն արգիլեալ է ի գործոյն: - 167. Արդ եթէ ոչ է *կատարեալ* պատարագն, վասն է՞ր դատապարտէ զոչ արժանիսն: - 167. Վեցերորդ՝ զօրութեամբն է անկատար՝ և ներգործութեամբն *կատարեալ*: - 168. Ջորօրինակ՝ ներտրամադրեալ բանն է՛ նախ ի խորհուրդն *կատարեալ*. և յետոյ ժամանակաւ լինի յառաջ բերեալ և գրեալ բան. և նո՛յն բանն էր յառաջ բերեալս և գրեալս որ էր նախ ի խորհուրդն: - 169. Իսկ Երբ ո՛չ ասի աստուծոյ. զի անժամանա՛կ է և ո՛չ ունի փոփոխումն. այլ ասի յաւիտենական. ըստ որում բոլորն համանգամա՛յն է և *կատարեալ*...: - 172. Եւ այլապէս ո՛չ կարէր լինիլ. զի ամենայն ինչ ի սմա՛ *կատարեալ* գոյ. և ոչինչ է պակաս ի սմանէ: - 179. Չորրորդ՝ զի երկինքն է *կատարեալ* մարմին. զի ազդէ՛ յամենայն ստորնային մարմինս խնամելով զնոսա: - 182. Իսկ բոլորակ ձևն ի մէջ ամենայն ձևոց է *կատարեալ*: - 182. Երրորդ՝ զի վեցեակ թիւն ի մէջ ամենայն թուոց առաջին *կատարեալ* է. և **զ** թիւն է ի բոլորակ ձևն. զի որ քան է ի միջին կիտէն ի բոլոր ծիրն, վեց այնչափ է իւր բոլորակ ծիրն: - 182-183. Ապա ուրեմն բոլորակ ձևն որ *կատարեալ* է՝ պատշաճի *կատարեալ* մաննոյ երկնից: - 183. Երրորդ երկին՝ *կատարեալ* տեսութիւն իմացականին. որ դէմ յանդիման տեսանէին զաստուած. որպէս մովսէս և դաւիթ: - 183. Երրորդ՝ զի բոլորակ ունի ձևս. որ է *կատարեալ* վեցեկի չափովք: - 184. Վասն է՞ր զերկնայինսն *կատարեալ* ստեղծ աստուած, և զերկրաւորքս ըստ կարգի յաւուրս վեց: - 192. Երրորդ՝ որ զերկնայինսն *կատարեալ* ստեղծ, ամենակարօղ զօրութեանն է ցոյցք: - 192. Ութերորդ՝ նշանակէ վեց թիւն որ է՛ *կատարեալ*՝ թէ բոլոր կատարելութիւն աշխարհիս ի յաստուծոյ է ստեղծեալ. երկինք և երկիր՝ և ամենայն ինչ: - 192-193. Եւ զի **զ** ժամ է. որ է *կատարեալ* թիւ: - 196. Նա՛խ՝ զի բղխումն ցուցանէ *զկատարեալն*. որ ամենայն ինչ *կատարեալ* և լի ստեղծան յարարչէն: - 212. Ջի ի կոչումն անուան՝ չորքս այսոքիկ երևին միանգամայն. բանն և խօսքն և ձայնն և տեսութիւնն. այսոքիւք զմարդն *կատարեալ* երևեցոյց աստուած: - 219. Եւ գիտութեան փայտն՝ զյատուկ կերակուրն *կատարեալ* արանց: - 223-224. Որ է՛ ընտրողութիւն բարւոյ և չարի՝ *կատարելոցն* իմաստիւք: - 224. Ասեն սուրբք, եթէ զորօրինակ աստուածածին կոյսն մարիամ կուսութեամբ ծնաւ առանց սերման *կատարեալ* և ճշմարիտ: - 226. Նոյնպէս և ի դրախտին կարէին ծնանիլ կուսութեամբ և առանց սերման. *կատարեալ* մարդ ի բնութենէն ադամայ: - 226. Չորրորդ՝ զի մի իցէ նեղասիրտ և տառապեալ բարուք տեսանելով զինքն ի չքաւորութեան ստեղծեալ. այլ տեսցէ զամենայն *կատարեալ*. զի արձակ և առատ բարուք սնանիցի և վայելեսցէ: - 230. Եօթներորդ՝ զի **գ** տեսակ հոգոց բացայայտեսցին. որ է՛ անկատար՝ և միջակ՝ և *կատարեալ*: - 231. Այսինքն տնկական. և զգայական. և բանական. և զի յանկատարէն ելանեմք ի *կատարեալն*. վասն որոյ նախ ստեղծաւ տնկականն ոգի, և ապա՛ զգայականն, և ապա՛ բանականն որ է *կատարեալ* մարդն: - 231. Վասն այսորիկ *կատարեալ* իմաստութիւնն յերկուս բաժանի. ի տեսականն և ի գործնականն. այս ըստ դաւթի: - 248. Եւ սոքա առնեն զմարդն *կատարեալ* պատկեր աստուծոյ: - 248. Իսկ զբանականն և զիմաստութիւնն՝ *կատարեալքն* հասակաւ. յորժամ բանին մասն կատարի ի մարդն: - 251. Եւ արդ ի *կատարեալ* մարդն հոգւով և մարմնով՝ փչեաց զշնորհաց հոգին ի մարդկայինս ազգ. և ունէին որ քան յանմեղութեան էին. և

կորուսին ի մեղանչելն: - 253. Եւ մանաւանդ զի բնութիւնն յանկարծակի ո՛չ կարէ ներգործել. այլ սակաւ սակաւ հետևելով յանկատարէն ելանէ ի *կատարեալն*: - 255. Եւ բնակա՛ն է, զի յանկատարէն ի *կատարեալն* ելանէ. որպէս աստիճանաւ ի գլուխ սանդղոյն. և ի սակաւուն ի բազումս. այսպէս և հոգի: - 258. Իսկ հոգի մի է մարդոյ ի միոյ նախախնամութենէ յառաջ բերեալ. յանկատար նիւթն եղեալ զտնկականն և զզգայականն. և ի *կատարեալն* զհոգի բանական ծագեալ: - 259. Արդ՝ **ժ** թիւն *կատարեալ* է. և չորսն տարրական է. այսինքն զի *կատարեալ* հոգին բանական ի նո՛յն ժամն խառնեալ միաւորի ընդ մարմնոյն տարրական, և կերպացեալ լինի մի մարդ մի դէմ և մի բնութիւն մարդոյ ի հոգւոյ և ի մարմնոյ. որպէս քառասունն ի տասանց և ի չորից է գոյացեալ: - 262. Զի վեցն որ է՛ *կատարեալ* թիւ, և նիւթն այն է՛ ի չորից տարերց, և ունի առ ինքն զկազմողական և զտնկական զօրութիւնն որ է **զ**: - 262. Եւ կամ որպէս մարդ *կատարեալ* բերելով ինքեան զ**դ** և զ**ժ** ինն խորհուրդ: - 263. Դարձեալ **թ** թիւն է երիցս երրեակ. և երեք թիւն է *կատարեալ*. ունելով առաջին միջին և վերջին. ի նմանութիւն **թ** դասուց հրեշտակաց: - 264. Եւ երիցս կրկնեալ **է**-ից մինչև ի **իա**, լինի *կատարեալ* արիական մասն ցասմնականին. և կոչի պատանեակ մինչև ի **իը** ամն: - 265. Եւ զի ա՛յս է թիւ *կատարեալ* չափոյ հասակի մարմնոյ և մասանց հոգւոյ: - 265. Ա՛րդ՝ մանկութիւնն կատարի ի չորեքտասան ամն. և է՛ *կատարեալ* ծնօղն և ծնունդն: - 265. Եւ կրկնեալ ի հնգետասանէն մինչև ի **լ**, կատարի երիտասարդական հասակն. որ է **գ** տասամբ *կատարեալ*. ունելով զցանկականն և զցասմնականն և զբանականն լիով առ ինքեան: - 265. Եւ ա՛յս է բարձր հասակն և *կատարեալ*. զի ի սմա պապ կարէ լինիլ մարդն երեսն ամենի: - 265. Եւ այսպէս միջին հասակս *կատարեալ*, ձգի մինչև ի **խզ** ամն. որ է **դ ժզ**. և վեցն *կատարեալ* թիւ է. և աստ տիրէ ալիք և սկիզբն լինի ծերութեան մինչև ի **հբ** ամն. յորում է ծայրք կենաց ըստ դաւթի, և թիւ երկոտասան վեցից խորհրդաւոր: - 265. Խնդրեմ և զայս ուսանիլ թէ ընդէ՞ր է՝ զի մարդս *կատարեալ* կենդանի է քան զանասունս. և յորժամ ծնանին նոքա ահա՛ ի նոյն ժամն կանգնին յոտից վերայ և գնան, և այլն. իսկ մարդն ոչ: - 266. Չորրորդ՝ և *կատարեալ* իմաստութիւն է՝ իմացմանն հպիլ յաստուած և յաստուածայինս ի հոգևոր և յիմանալի կեանս: - 269. Ութերորդ՝ **գ** անձինք *կատարեալք*. և թէ մինն պակասիցէ՝ ո՛չ է *կատարեալ* աստուած. և մարդս երրորդութեամբ է *կատարեալ*. հոգւով և մարմնով և բանիւ. և թէ մինն պակասիցէ՝ անկատա՛ր է մարդն ասէ վարդապետն վարդան: - 271. Իսկ պատկեր շնորհաց և փառաց է, կատարելապէս ճանաչել և սիրել զաստուած. և այս է նմանութիւնն զոր *կատարեալքն* ունին աստ և ի վերին գաւառին: - 274. Ասեմք եթէ՝ զոր ինչ ի յարութեանն աւուր լինելոց է սրբոցն, զսկիզբն անդանօր սերմանեաց ի նախնի մարդն ադամ. զի թէ յիւրում ժամանակին կերեալ էին ի կենաց պտղոյն, լինէին *կատարեալ* անմահք. և փոխեին յարքայութիւնն: - 282. Զի պահելով զպատուիրանն ի *կատարեալ* անմահութիւնն ժամանէր յերկինս. իսկ անցանելովն փոխեցաւ ի մահ և անկաւ յերկիր: - 282. Երրորդ՝ **թ** դաս հրեշտակաց է յերկինս. և **ժ**երորդն մարդն կատարումն թուոյ նոցա. վասն այն ի կեանս այս ո՛չ հասանեն ի **ռ** թիւն *կատարեալ*. զի աստ ո՛չ լինի կատարումն դասուցն այլ ի հանդերձեալն: - 291. Իսկ վիրք և աղւանք ո՛չ *կատարեալ* գրով. այլ առեալ ի հայոց. որպէս ասորին և իսմայէլացին յեբրայեցւոցն: - 299. Վեցերորդ՝ նուիրեաց մելքիսեդեկ զպատարագն և ընկալաւ զտասանորդն. որպէս քրիստոս պարգևէ՛ հաւատացելոց զշնորհս, և առնու զտասնեակս *զկատարեալ* և զբարի գործս. կամ զտասն բանեան օրէնս **ժ** զգայարանօք: - 301. Նոյնպէս և տէրն մերետ հաւատացելոցն զկենարար մարմինն և արիւնն իւր. յորոց խնդրէ ըզգործս տասնաւոր. այսինքն *զկատարեալս*. և զկատարումն **ժ** բանեան օրինացն. ի յորս է՛ մաքրութիւն **ժ** զգայարանացս որպէս ի վերոյ ասացաւ: - 302. Չորեքտասաներորդ՝ իսահակ սրով և հրով եղև *կատարեալ* ի զենումն: - 306. Տասներորդ՝ վերջին և *կատարեալ* ծնունդ յարութեանն. զի մահ մարմնոյս է՛ սկիզբն և յղացումն յարութեան: - 308. Տասներորդ՝ յովսէփ ռոճիկս տայր նոցա. ա՛յս է զգեստս *կատարեալ* և կերակուրս: - 315. Իսկ մեզ *կատարելոցս*՝ բանիւ աւանդեաց: - 341. Գինին, արեամբ *կատարեալքն*: - 346. Նա՛խ՝ զի *կատարեա՛լ* է աստուածութեամբ և մարդկութեամբն միացեալ: - 347. Երրորդ՝ զի յերկնից էջ՝ և ել յերկինս *կատարեալ* զտնօրէնութիւնն: - 347.Դարձեալ՝ գութն բովանդակ և *կատարեալ* սէրն է. և ողորմութիւնն մասնաւոր. զի ողորմութիւն ի գթո՛յն յառաջի և սփռի ի մեզ: - 351. Դարձեալ՝ **դ** հասակ փոխի մարդոյս. մանուկ. երիտասարդ. կատարեալ հասակ. և ծեր: - 351. Դարձեալ՝ **դ** հասակ փոխի մարդոյս. մանուկ. երիտասարդ. *կատարեալ* հասակ. և ծեր: - 351. Տասներորդ՝ ձայնն երկիւղէ տղայոց. և բանն երկիւղէ *կատարելոց*: - 354. Երկրորդ՝ այն անկատար և աստ *կատարեալ*. և անդ կատարելագոյն որ է գերակատար: - 355. Նա՛խ՝ զի այրն *կատարեալ* է. իսկ կինն կէս: - 365. Նա՛խ՝ զի ո՛չ ունի *կատարեալ* զօրութիւն սերման: - 365. Զի պա՛րտ է անպարտ գոլ բոլորովին. զի քրիստոս *կատարեալ* անարա՛տ է աստուածութեամբ և մարդկութեամբ: - 370. Հինգերորդ՝ հանգիստն *կատարեալ* հոգւով և մարմնով. որ է՛ փողոց հնչմունք. ազատութիւն

յապականութեանց. ամ թողութեան և իւրաքանչիւր ուրուք ի ստացուածս իւր դարձումն. որ է՛ գործոց հատուցումն: - 372. Զի ի կեանս յայս հաւատով նուիրիմք. և յետ մահու յուսով. և յետ յարութեան *կատարեալ* սիրով ընդ քրիստոս միաւորիմք: - 375. Եւ **ժ** թիւ *կատարեալ* նուէր և սուրբ է աստուծոյ. յաղագս որոյ թագաւորք երկրի զընծայս ի մարդկանէ՛ հնազանդելոց **թ թ** խնդրեն...: - 376. Որ է՛ տղայն. *կատարեալն*. և ծերն: - 378. Միջին մինչ ի **ծ** ամն *կատարեալ* հասակ: - 378. Իսկ ի նորս՝ ի *կատարեալ* հասակն երեսնամեայ լինին քահանայք. ի հասակ մկրտութեանն քրիստոսի: - 379. Երրորդ՝ նախ անկատա՛ր բնութիւնս և տղայ. և այժմ *կատարեալ*: - 395. Վեցերորդ՝ միտք բանիս այս է, որ պա՛րտ է *կատարեալ* սիրով սիրել զաստուած: - 396. Եւ է՛ յատկութիւն *կատարեալ* սիրոյ **դ**: - 396. Եւ յորժամ է զօրութեամբք հոգւոյ յաղթիցեն նոցա, փախիցեն յէ զգայարանաց մարդոյն եօթնեկի մահացու մեղօք. զայս *կատարելո՛ցն* է իմանալ. և ո՛չ մեզ տկարացս: - 404. Եւ այս գիտելի է, զի ամենայն խոստովանելոց թէ *կատարեալ* թէ անկատար, պա՛րտ է կարգել զապաշխարութիւն. այսինքն զհատուցումն փոխարինաց: - 432. Երրորդ՝ զի փառք և պսակ է արդարոց և *կատարեալ* խոստովանողաց: - 432. Ասեմ թէ ոչ, զի *կատարեալ* խոստովանութիւնն թողու զմեղս, բառնայ զպատիժն, և ջնջէ՛ զյիշատակ մեղացն. մինչ զի ո՛չ երևի ի դատաստանին աստուծոյ: - 432. Դարձեալ, ժամանակն ունի մասունս երիս. և մշտնջենաւորն. և դարձեալ յաւիտենական է բանն. և ժամանակեայ մարմինն. և մշտնջենաւոր հոգին. և անքակտելի միութիւնն ցուցանէ մեզ զչորս թուոյն. և ամենայնիւ *կատարեալ* գոյացութեամբ: - 437-438. Նոյնպէս և ամենայն խաչի զօրութիւնն քրիստոս է. ի ձեռս արժանաւոր և *կատարեալ* հաւատոց առնէ սքանչելիս. իսկ ոչ նոյնպիսեացն ծածկէ զզօրութիւնն: - 445. Որ և յերկրորդ գալուստն նախ դատեսցէ. և ապա թագաւորեսցէ անվախճան. ընդ որով քահանայագործութեամբ մաքրէ՛ և լուսաւորէ՛ և *կատարեալս* առնէ միշտ անզրաւ յաւիտենիւ: - 450. «Աղախին տեառն» բացատրէ՛ *զկատարեալ* խոնարհութիւնն: - 465. «Ըստ բանի քում» նշանակէ *զկատարեալ* հաւատն: - 465. Իսկ նորն ադամ նոյն ի զ դարուն յա՛յց ել և խնդրեաց զկորուսեալ պատկերն ի թիւ խորհրդաւոր *կատարեալ* վեցերորդին: - 467. Եւ թէպէտ *կատարեալ* և լի և անթերի էին մասունք մարմնոյն քրիստոսի. այլ ա՛յն քան փոքրիկ, մինչ զի հազիւ անկարէր ընդ տեսութեամբ մարդոյ: - 470. Եւ էր *կատարեալ* ի զմայլումն: - 470. Վեցերորդ՝ զի հոգի և մարմին մասն գոլով գոյանայ մի *կատարեալ*: - 479. Իսկ բանն աստուած *կատարեալ* լրիւ մարդացեալ բովանդակապէս. հոգի մարմին և միտս ունելով անչփոթ կատարելութեամբ և անբաժ ենթակայութեամբ: - 479. Վասն է՞ր ոչ *կատարեալ* հասակաւ ծնաւ քրիստոս որպէս զադամ: - 479. Երկրորդ՝ զի ծերն ո՛չ է *կատարեալ* հասակ, այլ դարձումն ի նուազութիւն: - 479. Իսկ *զկատարեալ* հասակն նկարելով՝ ի ձև չորեքկուսի հանեն զաւետարանն ի ձեռն և ի գիրկն: - 481. Վեցերորդ՝ զի հարկ էր մատուցմունք նւիրաց ժողովրդեանն. և *կատարեալ* էր մի օր պաշտամանն: - 484. Յինգերորդ՝ մկրութիւն տն այն որ ինքն մկրտեցաւ. այլ մկրտիմք և մեք *զկատարեալ* մկրտութիւն տեառն ջրով և հոգւով: - 488. Երրորդ՝ ի վախճանն. զի յովհաննուն ունէր կարգեալ առ մկրտութիւնն քրիստոսի. զի յա՛յն սովորեցուցանէր զժողովուրդն որ էր *կատարեալ* մկրտութիւն: - 488. Ասեմք առ այս, եթէ ապականութիւնն առնէ *կատարեալ* և անապականութիւնն անկատար, ապա ադամ յառաջ քան զմեղանչելն անկատա՛ր էր զի անապական էր մարմնով...: - 500. ...և յետ մեղացն եղև ապականացու և *կատարեալ*. և երևի թէ ապականութիւնն առնէ *կատարեալ* զմարդն որ այլայլօ՛ղ է և ապականագործ: - 500. Դարձեալ ասեմք ըստ ձեզ, թէ յետ խաչին յապականութիւն փոխեցաւ մարմինն տն, ապա յառաջ քան զխաչն *կատարեալ* էր զի ապականացո՛ւ էր. և յետ խաչին անկատար զի անապական եղև որպէս դուքդ ասէք: - 500. Նա՛խ՝ զի բանական մարդ կամաւորօ՛քն է մարդ, և ո՛չ ակամայիւքն. որպէս *կատարեալ* էր մարմինն ադամայ նախ քան զմեղանչելն: - 502. Այլ մեք եղբարք ուղեկիցք իմ և դաւանակիցք եղիցուք. շինեալք և հաստատեալք ի վերայ հաւատոյ հիման. անշարժ խարսխեալք ի վերայ յուսոյն քրիստոսի, սեռն և յստակ *կատարեալ* սիրով սուրբ հոգւոյն: - 503. Զմիս կենդանւոյ, որ *կատարեալ* կենդանի է և ի կենդանւոյ յառաջ եկեալ. այն է *կատարեալն* որ ե զգայարանս ունի և շարժի և շունչ ունի. և է՛ այս կերակուր ուտեաց և զատկի: - 510. Իսկ ձուկն կենդանի՛ է *կատարեալ* զգայարանօք և շարժմամբ. այլ զտուր և առ շնչոյ ո՛չ ունի. վասն այն պակա՛ս է: - 510. Դարձեալ ասեն հակառակքն, թէ *կատարեալ* կենդանի է ձուկն, ընդէ՞ր ոչ զենումք: - 511. Եւ է՛ այսպէս. զի անուամբ բոլորին պարտ է իմանալ զմասնաւորն. զի առաջին օրն անկատա՛ր է. նոյնպէս և երկրորդն անկատա՛ր է և մասն. այլ միջինն *կատարեալ* է: - 516. Նա՛խ՝ ոմանք ասեն թէ մարդկօրէն կամէր իմանալ զնա և հարցանել վասն խաչին և դժոխոց և յարութեանն. իսկ այս *կատարեալ* մտաց պէտք էին և շա՛տ ժամու: - 517. Չորրորդ՝ *զկատարեալ* իմաստութիւն գիտութեանն ամենայն կտակարանաց մարգարէից...: - 524. Ասեմք առ այս, եթէ անմարմին իր անկատար ո՛չ լինի. զի սոյն բան աւետարանիս նոյն *կատարեալ* բանն է աստուծոյ որ ի մարմնի է միացեալ. և նախ քան զյաւիտեանս ծնեալ: - 529. Զոր

օրինակ, բան մարդոյ յիւրաքանչիւր մասնաւոր լսելիս բաժանի, և բոլոր և *կատարեալ* է և ո՛չ մասն: - 530. Այսպէս և բանն աստուծոյ բոլոր և *կատարեալ* է յիւրաքանչիւր աւետարանս և ո՛չ մասնաւոր: - 530. Եւ դարձեալ զոր օրինակ, գիր մատանւոյն մի և նոյն *կատարեալն* է տըպացեալ յամենայն մոմս կնքեալ և ո՛չ աւելի և ո՛չ նուազ: - 530. Չորրորդ՝ եկեղեցի է անդրանկացն վերինն սիոնի որ է հոգիք սրբոցն ժողովեալ. զոր պողոս եկեղեցի կոչէ զորդիս արդարոց *կատարելոցն*: - 534. Նա՛խ՝ վասն *կատարեալ* սիրոյն քրիստոսի որպէս փեսայի և հարսին: - 534. Ոմանք զյանցանս մտաց *կատարեալ* մեղս դնեն...: - 555. Բայց նախ զայս ասասցուք. զի մեղք մտացն *կատարեալ* մեղք է վասն բազում պատճառաց: - 556. Ապա ուրեմն *կատարեալ* է մեղք մտացն: - 556. Ա՛րդ՝ մեղք մտացն թէպէտ ըստ բանականին և մարմնականին չէ *կատարեալ*, այլ ի տեսակս իւր *կատարեալ* է: - 556. Զորօրինակ՝ կանաչ բոյս՝ թէպէտ ի ցօղուն և ի հասկ՝ չէ՛ *կատարեալ*. այլ ի տեսակս իւր *կատարեալ* է: - 556. Վասն որոյ և տէրն յորժամ ասաց զցանկութիւնն շնութիւն, յաւել ի վերայ թէ՝ «ի սրտի իւրում». զի մի՛ կարծեսցի մարմնական շնութիւն, այլ հոգէկան և մտաւոր. ապա ուրեմն *կատարեալ* է մեղք մտացն: - 556. Ապա ուրեմն *կատարեալ* մեղք է մտաց մեղքն. զի զոմանս առաւել պատժէ, և զոմանս սակաւ: - 556. Ապա ուրեմն *կատարեալ* մեղք է ի խորհրդոց մտացն: - 557. Ութերորդ յընդդիմակէն. զի թէ յաղօթելն միայն մտօք և սուրբ պահել զմիտս առաքինութիւն է *կատարեալ* ...: - 557. Ապա ուրեմն և հայհոյելն մտօք և մախալն և նենգելն *կատարեալ* չարութիւն է և մեղք...: - 557. Ապա ուրեմն *կատարեալ* մեղք է: - 557. Եւ այսպէս լինի *կատարեալ*. մեղք խառնեալ օտարին գաղտնապէս, ընդ մտածութեանն բնաւորապէս: - 558. Եւ ի *կատարեալ* հասակն ագահութիւնն. և յետ այնորիկ տրտմութիւն, ծուլութիւն, և այլն: - 561. Եւ գիտելի է, զի սահման առաքելոյն *կատարեալ* է: - 571. Եւ յայսցանէ յայտ է, զի յետ յարութեանն ի վերինն գաւառ ոչ գոյ յոյս. զի է՛ անդ երանութիւն, որ է ստացումն ամենայն բարեաց. բոլորն համանգամայն և *կատարեալ*. և ոչ ինչ է ապառնի յոր յուսացեալ լինի: - 574. Երեք են. այսինքն անկատար և *կատարեալ* և գերակատար, այսպէս: - 576. Եւ *կատարեալ* հոգւոյն: - 576. Կամ անկատար սիրով զմեզ. և *կատարեալ* զընկերն. և կատարելագոյն զաստուած: - 576. Եւ *կատարեալ*՝ վարձկականն վասն պատուոյն: - 576. Զի՞նչ է նշան *կատարեալ* Սիրոյ: - 576. Դարձեալ՝ *կատարեալ* սէր է, յորժամ է ունակութեամբ մեծ. ներքին շարժմամբն ուղիղ. արտաքին գործքն ժիր. արմատովն հաստատեալ. ջերմ եռանդութեամբն խոհեմ. և քաղցրութեամբն մխիթարական: - 576. Եւ դարձեալ՝ որպէս բոլոր նշխարն մի մարմին է, և ի մասունս բաժանեալ իւրաքանչիւրն բոլոր և *կատարեալ* մարմին է քրիստոսի: - 598. Նոյնպէս և բոլոր մարմին և հոգին է մի աստուած ընդ բանին միաւորեալ. և բաժանեալ ամբողջական մասունքն է՛ բոլոր և *կատարեալ* աստուած: - 598. Զի շնորհքն աստուծոյ ո՛չ է մասն մասն. այլ բոլոր և *կատարեալ*: - 601. ...այսպիսիս *կատարեալ* խոստովանութիւն է. և զայսպիսոյ մեղս թողու քահանայական իշխանութիւնն. և զպատիժն ընդ նմին: - 603. Նաև *կատարեալ* խոստովանութիւնն ունի զերիս մասունս ապաշխարութեան: - 603. Ասեն վարդապետք թէ՝ զմի անգամ խոստովանեալն բարի հաւատով և *կատարեալ* զղջմամբ՝ ո՛չ է պարտ կրկնել. եթէ ոչ վասն չորից պատճառաց: - 603. Ա՛յս է *կատարեալ* աստիճանք: - 607. Նոյնպէս հրեշտակք *կատարեալ* որդիք են յաստուծոյ անընդմիջաբար առնուն: - 620. Իսկ ոմանք ևս *կատարեալք* ամենայնիւ՝ յերեք ժամանակս աղօթեն առանձնակի. մի ի մէջ գիշերի յառաջ քան զհասարակաց ժամն. և մի յայգն. և մի ի ցերեկն: - 623. Զի սուրբ աստուածն անդ հաստատեցաւ. որպէս և փառք ի բարձունքն. սկսեալ ի հրեշտակացն ի ծնունդ քրիստոսի. և յերեք սուրբ ժողովնս եղև *կատարեալ*: - 635. Եւ *կատարեալ* է **ժ** թին: - 639. Եւ բոլորն *զկատարեալ* ընթացս մեր առ աստուած ուղղեալ: - 645. Ա՛րդ՝ ի տօնս տէրունականս նախատօնական առնեմք յերեկոյս. և ի վաղիւն *զկատարեալ* տօնն: - 646. Իսկ վաղն որ է՛ *կատարեալ* տօն...: - 646. ...այլ յետ մահուն և յարութեանն առնուն *զկատարեալ* փառս...: - 647. Եւ համագումար յոգիս անդրանկաց *կատարելոց*: - 647. Նոյնպէս և սուրբք որ ա՛յժմ են ի հանգիստ՝ ի կիրակէ գալստեանն ի *կատարեալ* փառս և ի հանգիստ մշտնջենաւոր փոխին. ի հանգչելոյ ի հանգիստ. ի փառաց ի փառս: - 648. Երրորդ, զի օրինակն նմանեսցի ճշմարտութեանն. որ պարարա՛կ էր աստուածութեամբն և *կատարեալ* մարմնով: - 657. Չորրորդ՝ Վասն ոգւոյ. և կարգ *կատարելոյ*. և պատանաց, և այլն: - 660. Եւ բնակա՛ն է զի նախ ի յանկատարն և ապա՛ ի *կատարեալն* ելցեն: - 662. Իսկ վախճանեալն *կատարեալ* լսի. որպէս թէ ոք սկսանի երթալ ի ճանապարհ կամ ի գործ ինչ և ի յաւարտիլն կատարած ասի: - 666. Եւ որպէս արդարքն դեռևս ոչ են ընկալեալ *զկատարեալ* փառս իւրեանց...: - 669. ...նոյնպէս և մեղաւորք ո՛չ են առեալ *զկատարեալ* տանջանս իւրեանց: - 669-670. Այլ երկոքինն ունին ի հոգիս իւրեանց մեծ տեսեալ՝ զոր ի յարութեանն առնելո՛ց են *կատարեալ* անձամբ՝ հոգւով և մարմնով...: - 670. Այսուքիկ այս քան վասն կարգ *կատարելոյ* առաջին աւուրն: - 679. Եւ այլք ոմանք վեցերորդ կարծիս ստացեալ ասեն զբուն *կատարեալ* բարեաց հոգիսն ժողովեալ ի հրեշտակացն դասս...: - 687. Եւ ո՞րք են

*կատարեալք*...: - 687. Նա՛խ՝ վասն նորընծայ հաւատացելոցն. անկիրթ գոլով *կատարեալ* տեսութեանց...: - 687. Եւ այն է եկեղեցիք անդրանկաց *կատարելոց* յերկինս որպէս ասէ պօղոս: - 688. Ո՜ հա՛յրդ ես որոց ի վեր քան զերկինս. այսինքն հոգւոց սրբոց *կատարելոցն* որ ի վերեն քան զդասս հրեշտակաց մեծ քրիստոսի որպէս քահանայք առ քահանայապետ, և անդամք առ գլուխն. և որդիք առ հայր: - 688. Անդ ժողովեցան առաքեալք և վկայք սուրբք և *կատարեալք* մինչ ի միւսանգամ գալուստն...: - 688. ...իսկ հոգին բաժանեալ ի մարմնոյն տակաւին ո՛չ է *կատարեալ* իւր յատուկ կատարելութեամբն: - 694. Ապա ուրեմն հոգին ո՛չ կարէ առնուլ *զկատարեալ* վարձս կամ զտանջանս: - 694. Ասեմք եթէ՝ անդրանիկ և *կատարեալ* ո՛չ վասն պսակացն ասէ որ դեռ առնելո՛յ են: - 695. Արդ ըստ *կատարեալ* գործոցն զոր ունին յինքեանս՝ եղեն անդրանիկ երանութեամբ և հանգստեամբ: - 695. Այսպէս հոգին նախ տեսութեամբն ուրախանայ և փառաւորի, և ապա՛ մարմնովն *կատարեալ* պսակի: - 696. Իսկ այս *կատարելոցն* է որ են յերկինս...: - 697. Եւ դարձեալ յարութիւն է հոգւոյ ելեալ և ազատեալ ի մարմնոյ և մտեալ առ աստուած, որ է յոգիս արդարոց *կատարելոց*: - 710. Հազար ամն է թիւ *կատարեալ*. զի ունի զտասն հարիւրեակն: - 710. Ցուցանեն այսուքիկ *զկատարեալ* և զառաւել հանգիստ սրբոցն այժմ յուսով և յետ մահու հոգւով թագաւորեալ ընդ քրիստոսի. և ապա յետ յարութեանն հոգւով և մարմնով ո՛չ ո ամօք. այլ անվախճան կենօք...: - 710. Նոյնպէս *կատարեալ* խոստովանութեամբն կորնչի մեղքն և բուսանի արդարութիւնն: - 714. ...իսկ թէ մարդս ոչ յառնէ, աշխարհ անկատար մնայ. զի բոլորն մասամբն է *կատարեալ*: - 715. Եւ այս սահմանս *կատարեալ* է: - 716. Երկրորդ՝ է՛ յարութիւն զի յառնէ ոք միանգամ և այլ ո՛չ ևս մեռանի. և յարութիւնս այս *կատարեալ* է: - 716. ...այսպէս և ննջեցեալք ամենայն ծեր և տղայ՝ յառնեն ի մի չափ հասակի երեսնամեայ որ է *կատարեալ* հասակ որպէս ցուցանի յառաջիկայդ: - 721. Որոյ պատճառ է, զի մարդն հոգւով և մարմնո՛վ է *կատարեալ*: - 725. Եւ որպէս հոգին ունի զզօրութիւն իւր անպակաս. նոյնպէս և անդամք մարմնոյն պարտ է լինիլ անպակաս զի իցէ *կատարեալ* մարդ: - 725. Վարդապետք ասեն թէ՝ ամենեքեան *կատարեալ* հասակաւ յառնեն և մի թուով երեսնամեայ: - 726. Եւ ի մէջ մանկութեան և ծերութեան երիտասարդութիւնն է թիւ *կատարեալ*...: - 726. Երկրորդ, աթոռակիցքն քրիստոսի. որպէս առաքեալքն և մարգարէք և *կատարեալքն* դատեն զմեղաւորս իբր տեղեակք օրինացն աստուծոյ: - 738. Ի չորրորդումն լիցուք լիապէս *կատարեալք*: - 755. Երկրորդ, հաւատն երեսնաւոր. և յոյսն վաթսունաւոր. և սէրն *կատարեալ* հարիւրաւոր: - 757. Երրորդ բաղդատութեամբ այնորիկ՝ որ եղիցի ի վերոյ ինքեան. զի առ հոգի իւր *կատարեալ* կարիցէ ունել հնազանդութիւնս: - 764. Ունելով տերև և ծաղիկ և պտուղ. այսինքն մաքրել, լուսաւորել, և *կատարեալս* առնել ըստ մեծին դիոնիսի: - 767. Միովն ստուգէ՛ զաստուածութիւնն. և միովն հաստատէ՛ զմարդն *կատարեալ*. և երկրորդիւն անքակ և անշփոթ և անբաժան զմիութիւնն յայտնէ: - 770. Զի հասարակա՛ց է ամենայն մարդոյ *կատարելոց* և անկատարից, զի ի յանդիմանութիւն յանդիմանելեացն առհասարակ դժկամա՛կ երևի ի սկիզբն. թէպէտ ընտրողութեամբ լաւին ընդունին զխրատն: - 774. Իսկ հրեշտակական կենաց է հրաշափառապէս գիտել և ո՛չ մոռանալ միշտ. ըստ որում զանցեալսն և զհանդերձեալսն ներկայապէս կրեն. զբոլորն համանգամայն և *կատարեալ*...: - 774. Վասն որոյ չարչարանքն քրիստոսի ասի պակասութիւն վասն հարցն. ասի և *կատարեալ* առ ինքեան: - 781. Զի առաջինն է անկատար. և միջին երկուքն *կատարեալ*. և վերջինն գերակատար: - 785. Եւ *կատարեալն* տեսութիւն խնդրեցաւ ի վերոյ ի **ժզ** գլուխն **իբ** համարն: - 785. Դարձեալ՝ զորօրինակ **բ** անկատարք լինին մի *կատարեալ*. իսկ *կատարեալն* թէ և կրկնեսցի՝ ո՛չ է անկատար. այսպէս և ասացեալքդ: - 787. Եւ *կատարեալ* տեսութիւն բացերևականն բանի յայտնի՛ է աշխատասէր մտաց. որ յաղագս մեկնութեան լուծումն գրոց. և գո՛ն առ քեզ: - 787. Ասացեալսն նմանապէս և աստ *կատարեալ*. ո՛չ միայն յանդի հեռաստան, կամ աղալ յերկան: - 789

**ԿԱՏԱՐԵԼԱԳՈՅՆ +** Ապա ուրեմն հոգին քրիստոսի *կատարելագոյն* ճանաչէ զաստուած: - 97. Երկրորդ՝ այն անկատար և աստ կատարեալ. և անդ *կատարելագոյն* որ է գերակատար: - 355. Կամ անկատար սիրով զմեզ. և կատարեալ զընկերն. և *կատարելագոյն* զաստուած: - 576

**ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵՄ +** Այսպէս, Նախ՝ զի մաքրել և լուսաւորել և *կատարելագործել* հասարակ է ի սոսա: - 138. Երկրորդ՝ զի նախ մաքրելն է, և ապա՛ լուսաւորելն, և ապա՛ *կատարելագործելն*. և այս կարգ հասարա՛կ է ի նոսա: - 138. Եւ նոքա գերազարդ իմացմամբ աստուածային հանճարովն *կատարելագործին*. իսկ մեք ի ձեռն հաւատոյ աստիճանաց *կատարելագործիմք*: - 139

**ԿԱՏԱՐԵԼԱՊԷՍ +** Ո՛չ յեղմամբ կամ շփոթմամբ. այլ անշփոթ միաւորութեամբ զբանն մարմին եղեալ և միաւորեալ զբնութիւնս մեր *կատարելապէս* ընդ իւրում աստուածութեանն: - 76. Եւ զայլ զանազանութիւն սոցա *կատարելապէս* ուսցուք յառաջիկայսդ: - 117. Իսկ պատկեր շնորհաց և փառաց է, *կատարելապէս* ճանաչել և սիրել զաստուած. և այս է նմանութիւնն զոր կատարեալքն ունին աստ և ի վերին գաւառին: -

274. Եւ սոքա ամենեքեան վասն էերորդին են որ է՛ սէրն. զոր ունէր *կատարելապէս* առ աստուած: - 286. Յիրաւի ապա այսպիսի խոստովանութիւնս *կատարելապէս* թողու զմեղս և զպատիժս...: - 603

**ԿԱՏԱՐԵԼԻ** - Նա՛խ՝ զի ամենայն ոք յինքն ձգեսցէ զբանս օրինացն. և մի՛ ծուլասցի թէ հասարակա՛ց է *կատարելի*: - 340

**ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆ +** Իսկ այլ վարդապետք ասեն թէ՝ բանիւս այսու՝ ցուցանի կերպ աստուածային ծննդեանն. քանզի ի ծնունդն՝ ծնեալն առնու զբնութիւն ծնողին որ է՛ *կատարելութիւն*: - 41. Զի թէ ի վերայ բնութեանն, **բ** *կատարելութիւն* մուծիք յԵրրորդութիւնն. զի Երրորդութիւնն մի բնութիւն է կատարեալ. և մի բնութիւն մարդոյ: - 68. Իսկ յորժամ կամեցաւ արարիչն մարդ լինիլ, բանն աստուած իւրով *կատարելութեամբն* անձամբ և էութեամբ՝ ո՛չ մասամբ, այլ լրիւ միացաւ անճառապէս ի մարմնի: - 82-83. Բանն աստուած իւրով *կատարելութեամբն* էառ զմարդկայինս բնութիւն. զհոգի և զմարմին և զմիտս. և միաւորեալ ընդ իւրում աստուածութեանն՝ եղև մի անձն կատարեալ և մի դէմ: - 84. Իսկ հասարակն՝ զի բոլոր բանն աստուած իւրով *կատարելութեամբն* էառ զբոլոր և կատարեալ մարդկային բնութիւնս. և եղև աստուածն կատարեալ՝ մարդ կատարեալ: - 106. Եւ թէ **է** զօրութիւն ի նա՛, լինի յանկատարութենէ ի *կատարելութիւն* եկեալ, կամ հակադարձեալ. որ է՛ անհնարին հերձուած: - 168. Ութերորդ՝ նշանակէ վեց թիւն որ է՛ կատարեալ՝ թէ բոլոր *կատարելութիւն* աշխարհիս ի յաստուծոյ է ստեղծեալ. երկինք և երկիր՝ և ամենայն ինչ: - 192-193. Այս է՝ **է** զօրութեամբ հոգւոյն և **ե** զգայարանօք մարմնոյ մեռանիմք և յառնեմք **գ** *կատարելութեամբ*: - 315. Վեցն *զկատարելութիւն* մարմնոյն ցուցանէ, և հարիւրն, զհոգւոյն. և հազարն, զպատիւ կենաց յաւիտենից: - 315. Իսկ բանն աստուած կատարեալ լրիւ մարդացեալ բովանդակապէս. հոգի մարմին և միտս ունելով անչափօթ *կատարելութեամբ* և անբաժ ենթակայութեամբ: - 479. Նա՛խ՝ զի առաւել մատչի առ *կատարելութիւնն*. զի մեծագոյն առաքինութիւն է: - 577. Այլ ունակութիւնք երանութեանցս պատրաստե՛ն առ *կատարելութիւն* երկոցունց: - 586. Զի ո՛չ վայելէ անկատարից զվախճանական կատարումն առնուլ. եթէ ոչ նախ իւր յատուկ *կատարելութեամբն* կատարեսցի...: - 693-694. ...իսկ հոգին բաժանեալ ի մարմնոյն տակաւին ո՛չ է կատարեալ իւր յատուկ *կատարելութեամբն*: - 694. Երկրորդ երիցունք են ծերքն. որք ծայրացեալք են *կատարելութեամբ*: - 711. Իններորդ, ամենայն սերմանիք բուսեալք՝ ի մի հասակ այսինքն ի *կատարելութեանն* իւրեանց ժամանեն ի հունձս. - 721. Ասեմք, թէպէտ այնպիսի անդամքն ո՛չ են պիտոյ ի յարութեանն, սակայն յառնեն վասն *կատարելութեան* և գեղեցկութեան...: - 725. ...որպէս ստինքն զի ո՛չ է պէտք կաթին, այլ առնէ վասն *կատարելութեան* և գեղեցկութեան մարդոյն: - 725. Իսկ մանկութիւնն թերի է զի ո՛չ եհաս ի կատարումն. և ծերութիւնն պակասութիւն ունի զի անցեալ է *զկատարելութեամբն*: - 726. Եւ այսպէս համահասակ թուով ժամանակի և *կատարելութեամբն* լինին: - 726. զի ո՛չ միայն էառ զբնութիւնս. այլ և զնոսա որ շուրջ զբնութեամբն. զի ծանիցի *կատարելութիւն* առաքինութեանն, և ճշմարտապէս մարդ գոլ: - 781

**ԿԱՏԱՐԵՄ +** Իսկ սկիզբն և կատարումն ի մեզ, որպէս նախածանօթ ընտրեալքն յառաջ քան զլինիլն աշխարհի. որ այժմ բարի գործովք *կատարեսցին* ըստ նախասահմանելոյն իւրեանց: - 18. Երրորդ՝ զփոփոխումն ի խորհրդոց և կամաց մարդկան. զի բազում ինչ խորհիմք և կամիմք և ո՛չ *կատարի*: - 26. Ասեմք եթէ՝ խոստումն աստուծոյ *կատարեցաւ* ի ժամանակս զօրաբաբէլի և եզրայ. որպէս ասէ Նէեմի յաղօթս իւր...: - 28. Որև *կատարեցաւ* իսկ: - 28. Երկրորդ՝ զի գործով *կատարեսցէ* զհնազանդութիւնն փործիւ չարչարանացն: - 43. Բայց է և այլ իմն տեսութիւն խորին և գեղեցիկ. զի նա՛ վասն սրբութեան չարչարեցաւ. և որ ոք ևս չարչարեսցի վասն սրբութեան՝ մի և նոյն է դիտաւորութիւն երկուցն. յայնժամ օգնեսցէ նմա. այսինքն միաւորեսցի ընդ նա՛ սրբութեամբն, և եղիցի աստուած ամէն յամէնի. այսինքն *կատարեսցէ* զնա աստուածս առնելովն. և եղիցին աստուածք ամենքն: - 43. Ո՛չ թէ նոր իմն տեսակ և կամ նոր աշխարհ. այլ զեղելոցս նախախնամութիւնն. և ի նոյնութիւն կալն հայր կամի և որդի *կատարէ*՛. ոչ ծառայաբար և անուսումնապէս. այլ տիրաբար և հանճարով: - 46. Երրորդ՝ թէ արարած՝ զիա՛րդ *կատարէ* զմեզ լինիլ աստուածս յորդեգրութիւն հօր՝ աւազանաւն: - 51. Եւ թէ արարած է՝ զիա՞րդ հաւատամք և *կատարիմք*. այսինքն յորժամ խնդրեմք և առնումք. զի ո՛չ տան մեզ ըզհայցւածքն որք են արարածք. որպէս անւամբ միայն աստւածք հեթանոսացն: - 52. Եւ որդի հոգւովն *կատարէր* զամենայն գործս սքանչելեաց: - 62. Բաղկացական տարբերութիւն է՝ ուստի տեսակքն գոյանան. որպէս բանականն և մահկանացուն՝ զբնութիւն մարդոյն *կատարեն*: - 85. Իսկ մի գոլ ներգործութիւնք և կիրք. որպէս քնարն՝ և որ շարժէ զքնարն՝ մի ներգործութիւն *կատարեն* և ո՛չ երկուս: - 86. Եւ որպէս որ շարժէ զգրիչն՝ և գրիչն՝ մի ներգործութիւն *կատարեն* և ո՛չ երկուս: - 86. Եւ որպէս ձայնն և բանն՝ մի ներգործութիւն *կատարեն* և ո՛չ երկուս: - 86. Եւ որպէս հոգին և մարմինն մի ներգործութիւն *կատարեն* և ո՛չ երկուս: - 86. Այսպէս և բանն աստուած

*կատարէր* մի ներգործութիւն մարմնով իւրով. զի միաւորութիւն բնութեանցն առանց փոփոխման և բաժանման է: - 86. Իսկ սուրբ գիտութիւնն ընդ դէմ այսմ լուսաւորէ՛ զմիտս և ուղղէ՛. և ընդարձակէ զտեսութիւնն և թեթեւացնէ առ վերինն. և ժողովէ ի մինն. և *կատարէ* զպատկերն: - 104. Վեցերորդ՝ սկիզբն է ներգործութեան. և պատճառ կատարման. զի ի նմանէ սկսեալք՝ ի նա՛ *կատարիմք*: - 111. Որպէս գործնականն որ է բարոյականն՝ սկսեալ է ի բարւոյն աստուծոյ. և *կատարի* առ բարին: - 121. Այսպէս և տեսականն որ է բանականն՝ սկսեալ է ի ճշմարտութենէն որ է՛ բանն աստուծոյ, և *կատարի* առ նոյն ճշմարտութիւնն: - 121. Նախ՝ զի բանականն առ երկրաւորս և բազում ճշմարտութեամբ *կատարի*: - 122. Ութերորդ՝ և զի զտիւս *կատարեն*: - 125. Զի ընդ ժամանակաւ եմուտ և զստուեր օրինացն *կատարեաց*: - 125. Չորրորդ՝ արեգակն չորիւք եղանակօք *կատարէ* զտարին: - 125. Եւ տէր մեր չորիւք *կատարեաց* զտարի տնօրէնութեան իւրոյ: - 126. Զի ի բարւոյն եմք յառաջ եկեալ. և ի բարին հաստատեալ. և ի բարին *կատարիմք*: - 128. Չինգերորդ՝ մաքրեն՝ լուսաւորեն՝ և *կատարեն*: - 134. Դարձեալ՝ առ հրեշտակս մի և նոյն իմացումն աստուածային՝ է՛ սրբութիւն՝ լուսաւորութիւն՝ և կատարումն նոցա. զի աստուածային գիտութիւնն սրբէ յառաջին տգիտութենէն և լուսաւորէ՛ զնոսա, և *կատարին* նոյն հանճարովն: - 139. Զորօրինակ գիտութիւն մարդկան ի սկիզբն և ի մէջն և յեզերն՝ նախ զտգիտութիւն փարատէ՛, և ապա՛ զմիտս լուսաւորէ՛ և *կատարէ*: - 139. Երկրորդ՝ մարդկան քահանայութիւն նիւթական խորհրդով ներգործի. որպէս հացիւ գինեաւ և այլով. իսկ նոցայն աննիւթութեամբ *կատարի*: - 139. Երկոտասաներորդ՝ զի սուրբքն բանիւ մեզ ուսուցանեն՝ նեղութեան և փորձանաց համբերել. պատրին ինքեանք գործով *կատարել* զնոյն. զի հաւատարիմ լիցին բանք նոցա: - 159. Յաղագս այսորիկ կանոնեցին սուրբ հարքն վասն այնպիսեացն ո՛չ *կատարել* դարձեալ զկարգ քահանայութեան: - 165. Չինգերորդ՝ զի առանձին բնութեամբ սոքա ի մի էութիւն ժողովեալ խառնին. և մի բնութիւն նիւթոյ *կատարեն*. և ի բնութիւնս իւրեանց ո՛չ շփոթին և այլայլին: - 176. Մետասաներորդ՝ զտիւ և զգիշեր *կատարէ՛*: - 186. Չինգերորդ Լուսաբերն. որ է՛ արուսեակն. զոր կոչեն զօհրա. ջե՛րմ է և խոնաւ. **յխը** օրն *կատարէ՛*, զընթացսն. և այլք ասեն թէ ի **գ** ամիսն: - 189. Վեցերորդ Փայլածուն. զոր օտարիտ կոչեն. միշտ շրջի ընդ արեգականն. և սակաւ հեռանայ ի նմանէ. զընթացս իւր *կատարէ՛* **յը** աւուրս. **ժ** օր պակաս քան զլուսաբերն. և այլք թէ **գ** ամիս: - 189. Իսկ զօր՝ որ է տիւ և գիշեր. և զ**դ** եղանակս. և զտարի, արեգա՛կն *կատարէ*: - 190. Զի արեգակն յամենայն աւուր զընթացս իւր *կատարէ՛* **իդ** ժամ, և **ժ** մասն և կէս: - 190. Եւ արեգակն ի կենդանակերպն *կատարէ՛* լ օր: - 191. Նախ՝ զի իմանալիքն մշտնջենաւո՛րք են, ի սակաւ վայրկենի *կատարեցան*: - 192. Իսկ որ զերկրաւորքս ըստ կարգի, ամենագութ մարդասիրութեանն է երևումն. ո՞րպէս խնամով զպէտս մարդկան յայնքան աւուրս *կատարեաց*: - 192. Չորրորդ՝ երկիրս այս տեղիք ուսմա՛ն է մեր՝ ըստ կարգի *կատարեցան*. զի մեք զամենայն ինչ ըստ կարգի ուսցուք. և մի՛ անկարգ և շփոթեալ: - 192. Եօթներորդ՝ ցուցանէ թէ՝ որպէս մարմնական բնութիւնք նախ էին անկատար և անտեսակ՝ և յետոյ *կատարեցան* յաստուծոյ: - 192. Նոյնպէս և հոգին նախ ի յինքենէ անտեսակ և անկատա՛ր է. և յետոյ *կատարի* յաստուծոյ շնորհօք և առաքինութեամբ և գիտութեամբ: - 192. Նոյնպէս և նշանակէ՛ զհրեշտակաց բնութիւնն, որ նախ ստեղծան անկատար ճանաչմամբ և գիտութեամբ. այլ յորժամ երանեցան և տեսին զէութիւնն աստուծոյ անընդմիջաբար, յայնժամ *կատարեցան* ճանաչմամբ և գիտութեամբ: - 192. Երկրորդ՝ զի մի և նոյն օր *կատարի* դարձմամբ արեգականն ի կիտէ՛ ի նոյն կէտ արևելից: - 193. Երրորդ՝ զի յորժամ *կատարին* է աւուրքն՝ դառնամք ի յառաջին օրն որ է՛ մի և նոյն: - 193. **Չինգերորդ՝ այս մին օրս է որ կրկնելով *կատարէ՛* զշաբաթ և զամիս և զտարի և զդարս կենցաղոյս, և հասանէ՛ ի վերջին օրն. որ է՛ մի օր աներեկ և անփոխանորդ:** - 193. Եւ դարձեալ ի գարունն բուսանին բոյսք. և յամառն *կատարին*. և յաշունն ժողովին. և ի ձմեռն վայելեն. և յիւրաքանչիւր ժամանակս՝ իւր գործն առաւելու: - 198. Յորմէ ուսեալք՝ յամենայն ամի *կատարեմք* իւրաքանչիւր ազգ քրիստոնէից: - 200. Եւ այդպէս պտուղքն բոլորապէս *կատարին*: - 213. Իսկ զբանականն և զիմաստութիւնն՝ կատարեալքն հասակաւ. յորժամ բանին մասն *կատարի* ի մարդն: - 251. Եւ ի *կատարիլ* մարմնոյն՝ հեղու ի նա զհոգի բանական ըստ նախատես գաղափարի այնորիկ որ էր ի միտս արարչին յառաջ քան զլինիլն աշխարհի: - 258. Այսպէս և արու մանկանն յաջ կողմն բեղմնաւորեալ՝ վասն ջերմութեան լերդին և լեղւոյն՝ փութով *կատարի* անդամօք: - 261. Վասն որոյ բոյսք առ հասարակ յերեք ամիսս ծնանին, և ի չորրորդումն *կատարին* յաւելեալ ի վերայ զկազմողական զօրութիւնն: - 262. Եւ այլք ևս յաւելեալ. զի են ի չորից տարերց՝ **է** և **ը** ամիսս *կատարին*: - 262. Ասեմք թէպէտ նիւթն ի չորից տարերց է, այլ տնկականն զօրացեալ քան զնիւթն՝ ըստ իւրոյ մասանցն ծնանի. զի ծնանիլն տնկականին է. այլ և ունի զտարերացն թիւ. զի յամիսս չորս *կատարի* այն՝ որ յառաջ ծնաւ: - 262-263. Եւ թէպէտ զնանիր խոտոյ ասեն ի նոյն ժամն բուսանիլ և *կատարիլ* և խամրիլ, ի նոյն թւոյս ոչ ելանէ ժամուք կամ մասամբք: - 263. Իսկ մարդոյն

խորհուրդն ըստ չորից տարերց և երից զօրութեանց տնկականին եօթեամբ *կատարի*. թիւ շնորհալի և մշտակոյս ըստ աթենայ. զի ոչ ծնեալ լինի և ո՛չ զայլս ծնանի: - 264. Եւ այսպէս ի ներքուստ ի վեր կրկնեալ եօթնից որ է չորեքտասան, *կատարի* ցանկական մասամբն և կարէ՛ զնմանն ծնանիլ և կոչի մանուկ: - 264-265. Եւ չորիցս կրկնեալ **է**-ից մինչև ի **իը** ամն, լինի երիտասարդ. և *կատարի* բանական մասն: - 265. Ա՛րդ՝ մանկութիւնն *կատարի* ի չորեքտասան ամն. և է՛ կատարեալ ծնօղն և ծնունդն: - 265. Եւ կրկնեալ ի հնգետասանէն մինչև ի **լ**, *կատարի* երիտասարդական հասակն. որ է **գ** տասամբ կատարեալ. ունելով զցանկականն և զցասմնականն և զբանականն լիով առ ինքեան: - 265. Երկրորդ՝ վասն ժամանակին. զի մարդն յինն ամիսն *կատարէ* զանդամս, և արջն երեք: - 267. Նոյնպէս և արուեստն նախ նկարի ի միտքն և ապա ներգործի և *կատարի*: - 268. Նա՛խ՝ զի մարդո՛յն է զանազանել զբարի և զչար. և փախչիլ ի չարէ՛, և երթալ զհետ բարւոյն՝ *կատարելոցն* է ըստ մարգարէին...: - 274. Այլ ադամ յերեկո՛յն ել ի դրախտէն. և ո՛չ *կատարեաց* զօրն բոլոր. վասն այն նախնիքն ո՛չ *կատարեն* զհազար ամն բոլոր: - 290. Իսկ քաղելով գործելն, զի սկսեալ բնութիւնս մեր ի գլխոյն լայնանայ ի թիկունքն՝ և նրբի ի կրունկն, և բոլորեալ դարձեալ *կատարի* ի գլուխն: - 293. Իսկ մեզ հոգևորապէս ետ պարգև զբնակութիւնս երկնից. ուստի մերժեցաւ հակառակորդն մեր սատանայ. զոր ասէ՝ «տեղի անկելոց հրեշտակաց». թէպէտ և յետո՛յ *կատարէ* որպէս և նոցայն բազում ամօք և չարչարանօք: - 306. Վեցերորդ՝ անդրանիկք են և ընտրեալքն աստուծոյ. որք նախքան զլինիլն աշխարհի ընտրեցան. թէպէտ յետոյ ի ժամանակի ըստ հասարակաց գոյացան և *կատարեցան*: - 309. Իններորդ՝ ցուցանէ թէ ո՛չ է այն անդրանիկն որ նախածին լինի և մարմնովն քաջ. զի ո՛չ հաճի տէր ընդ իրանս առն հսկայի. այլ անդրանիկ է այն՝ որ զհաճոյսն աստուծոյ *կատարէ*: - 310. Եւ տէրն մի անգամ *կատարեաց* ի վերնատունն և ետ յառաքեալսն և ի մանկունս եկեղեցւոյ: - 329. Երկրորդ՝ ըստ ախորժակաց նոցա պատրաստէր. զի գիտասցեն թէ զկամս նոցա *կատարէ՛* աստուած: - 339. Երկրորդ՝ զի մի ոք որ *կատարէ* զօրէնս, պատուակա՛ն է աստուծոյ քան զամենայն աշխարհս. վասն այն ընդ մինն խօսի: - 340. Եւ *կատարեցաւ* խորանն յեօթն ամիսս. և յերկրորդ ամին յառաջին ամսեանն կանգնեցաւ: - 344. Յին պատարագն վասն է՞ր աղիւ *կատարէր* և նորս ոչ: - 356. Այլ որք յամառելով յօրինակն՝ ա՛ղ խառնեն ի խորհուրդն, պա՛րտ է նոցա խառնել և ձէթ և մուրկ և խունկ և միս գառին. կամ զանգեալ ի կասկարայս, կամ օծեալ ի տապակի, զի զօրինակն *կատարեսցեն*. և հեռասցին ի ճշմարտութենէն: - 357. Իսկ իւղն զանգեալ՝ օրհնութիւնն է որ միանայ ի խորհուրդն և *կատարէ՛* մարմին և արիւն քրիստոսի: - 357. Եւ իւղն՝ զուարթութեամբ *կատարելն* առանց տրտմութեան: - 357. Եւ այսպէս *կատարէին*: - 359. Դարձեալ՝ իւղով զանգեալ բաղարջն և նոյն չափ իւղովն որ չափ մասն գինւոյն. այն է՝ զի ընդ օրհնութեան բանին աստուծոյ՝ և հոգին սուրբ իջանէ ի հացն և ի բաժակն և *կատարէ՛* մարմին և արիւն քրիստոսի: - 361. Յինգերորդ՝ կրկին ողջակէզն. մին պատարագն է ամենայն աւուր. և միւսն տօն չարչարաց խաչի և մահու յամենայն ամի՛ զոր նոյն խորհրդով *կատարէ՛* եկեղեցի: - 363. Այլ զքրիստոս ո՛չ պատարագեն. և ո՛չ այլ ինչ ի խորհրդոց եօթանց *կատարեն*: - 370. Եօթներորդ՝ տօն տաղաւարահարացն որ նշանակէ՛ առ մեզ զտօնելն եկեղեցւոյ, ի բոլոր ամն **ը** օր *կատարի*: - 373. Այլ և զօրհնելն եկեղեցւոյ՝ **ը** օրն նաւակատիս *կատարեմք*: - 373. Որ մինչ ի **ծ** ամն *կատարէր* զգործն իւր, և անդանօր դադարէ՛ր: - 379. Զի պահքն և աղօթքն խո՛յ է աստուծոյ. և ողորմութիւնն տուգանք. և ամենայն ապաշխարութիւն սոքօք *կատարի*: - 384. Եօթներորդ՝ զի նախ զօրէնսն *կատարեմք*, և յետոյ զմխիթարութիւնն առնումք: - 385. Ի յայս միտս **խ** *կատարեն* ննջեցելոց: - 391. Զի **խ** վասն այն *կատարեմք*, որ առաջինքն զննջեցեալքն **խ** օր լային անմխիթար. որպէս զնահապետն յակոբ լացին **խ** օր: - 391. Այլ և ամսագլուխ *կատարեմք*: - 391. Իսկ է ի յայն խորհուրդն, զի որ ի պիղծ մերձենայր՝ **է** օր արտաքոյ բանակին կալով յերրորդ և յէերորդ օրն սրբէր, և ապա՛ մտանէր. վասն որոյ **գ** օրէք և **է** օրէք *կատարեմք*: - 391. Երկրորդ՝ զի առաջին օրէնքն անկատար մնացին. ետ զերկրորդն զի *կատարեսցին*: - 393. Չորրորդ՝ նշան թէ՝ զոր ասէ և լինի. և տէր մեր զգործս աստուծոյ գործէր առ կաղս և կոյրս և հիւանդս և մեռեալս. զոր ասէր բանիւ՝ *կատարէր* գործով: - 399. Եւ հայր աստուած որ ո՛չ *կատարի* կամք նորա ի մեզ. յայնժամ ըստ բազում գթութեան իւրոյ առաքեաց զմիածին որդին որ փոխանակ մեր կախեցաւ զփայտէն և ազատեաց զմեզ յանծիցն օրինաց...: - 400. Մեք ո՛չ *կատարեմք* զօրէնս մովսէսի, զի՞նչ լինիմք: - 403. Թէպէտ ո՛չ *կատարեմք* զօրէնսն՝ ո՛չ եմք ընդ անիծիւք նորա վասն երից: - 403. Նա՛խ՝ զամենայն օրէնսն *կատարելով*: - 403. Այլ այս անէծքս յայտնապէս ի վերայ հրէիցն է. որք ո՛չ *կատարեն* զօրէնս, և ո՛չ ունին զմկրտութիւնն քրիստոսի: - 403. Մովսէս նշան *կատարեաց* մեծամեծ. նոյնպէս և ա՛յլ մարգարէք. փրկչին մերոյ ո՞րն է առաւել քան զնոցայն: - 411. Մարմնական նշանքն զոր *կատարէր*՝ չէ՛ր պակաս քան զնոցայն: - 411. *Կատարեցաւ* Վեցերորդ Յատոր Յարցմանցս Յինգ Գրոցն Մովսէսի. ի Փառս Յիսուս Քրիստոսի Աստուծոյ մերոյ: - 412. Քսանևթ՝ խոստումն աւետեաց երկրին *կատարեցաւ* առ յեսու: - 419. Եւ այն զի քամեալ լցաւ

կուրն և ո՛չ երկիր. զի մնացին և *կատարեցան* բանք մարգարէիցն ամենայն և ո՛չ եղծան. իսկ յետոյ հոգի տեառն ելից զտիեզերս մարգարէութեամբ և շնորհօքն քրիստոսի: - 421. Դարձեալ՝ նոյն ինքն քրիստոսի է իշխանութիւնն որ աստ լուծանէ ի ձեռն քահանային. և իշխանութիւն նորա ո՛չ տկարանայ երբէք. որպէս զհաց և զգինին *կատարէ* և զայլ խորհուրդս. նոյնպէս և աստ: - 433. Երկրորդ՝ զի յորժամ ուխտէ մարդ, ի նոյն ժամն դադարի ցասումն աստուծոյ. ապա յորժամ *կատարեմք*՝ երևի մեզ: - 435. Դարձոյց ի յորդանանու զբերզելի որ տասամբն կերակրեաց զդաւիթ. ի տիպ հին օրինացն **ժ** բանեան զոր *կատարեց* քրիստոս: - 438. Ոմանք ասեն թէ՝ զի դիովքն իւր անէծ զողիաք, ա՛յն *կատարեցաւ*: - 439. Վաքսունն՝ **զ** տասն է. նշան նոցա՝ որք զ**ժ** բանեան օրէնսն *կատարեն* ի **զ** դար կենցաղոյս. այսինքն ի տղայութենէ մինչ ի մահ. նոքա թագուհիք և ժառա՛նգ են արքայութեանն: - 440. Եւ **ձ** հարճք, որք զուք օրէնսն *կատարեն*: - 440. Արդ յերեքտասան ամէ՛ ովսիա մինչև ցմետասան ամն սեդեկիայ որ վերջին գերեցաւ՝ լինի **խ** ամ. և նաբուգոդոնոսորայն **ի** ամ. և որդւոց և թոռանց նորին **ժ** ամ. որ *կատարի* **հ** ամ մինչև յառաջին ամն կիւրոսի որ արձակեաց զգերիսն: - 447. Դարձեալ՝ ի վերջին գերութենէն սեդեկիայ մինչ ի դարեհի **բ** ամն *կատարի* **հ** ամ. որ արձակեաց զզօրաբաբէլ: - 447. Սա՛ ի **դ** ամի թագաւորութեան իւրում կազմէ՛ զհանդերձանս տաճարին. և զեօթն ամ *կատարեաց*: - 452. Արդիւնքն *կատարեցին*: - 456. Զի հնազանդութեամբ *կատարեաց* զկամս հօրն: - 457. Եւ գործ արդարութեան ի վախճանի. զի արդարապէս ամենայն որ սկսանի *կատարի*. և որ շարժի դադարի: - 458. Երրորդ՝ յորժամ անկատարն *կատարի*: - 458. Քանզի առ ի *կատարել* զգործ արդարութեանն՝ պահանջէ ինչ և ի կողմանէ մարդոյն. այսինքն պահանջումն ըստ արժանւոյն...: - 459. ...իսկ ի *կատարել* զգործ ողորմութեանն՝ ո՛չ ինչ պահանջի, եթէ ոչ կամքն նորա, որպէս երևեցաւ ի մարդեղութիւն բանին աստուծոյ ի սրբոյ կուսէն մարիամայ: - 459. Նա՛խ՝ որպէս մարդն յայլ և այլ բնութեանց միաւորեալ՝ մի անձն և մի դէմ և մի բնութիւն *կատարի*. զի մի ասեմք զմարդն և մի զբնութիւն նորա: - 477. Իսկ զձեռագիր հրէիցն, և զայն ևս պատառեաց քրիստոս *կատարելով* զամենայն օրէնս աստուծոյ: - 482. Վասն է՞ր ազգս հայոց զտօն ծննդեանն քրիստոսի և մկրութեան ի միում աւուր *կատարեմք*: - 482. Քանզի ո՛չ կարէին ի միում աւուր յերկոսեան ուխտսն *կատարել* զտօնսն հեռի գոլով ի միմեանց. երուսաղէմացիքն այսր աղագաւ փոխեցին. և փոքր փոքր աճմամբ ընկալան և ա՛յլ եկեղեցիք զնոյն: - 482. Զոր ի ժողովն քաղկեդոնի հաստատեցին զսոյն տօն ի **իե**ն դեկտեմբերի. պատճառելով թէ՝ ի հռօմ դարձի արեգական տօն *կատարէին*. և փոխեաց զայն պետրոս տօնել արեգականն արդարութեան: - 482. Ա՛րդ՝ ցուցից տումարաւ զտօնս մեր և զնցայն. զի տօնախմբութիւն նոցա այսպէս *կատարի* առ յայտնութիւնն: - 483. Եւ ի փետրվարի երկուքն տեառնընդառաջ *կատարեն*: - 483. Ա՛րդ՝ աստի մինչ ի նիսանի **ժէ**, և յապրիլի **է**՝ *կատարի* **է** ամիս. յորում առաքեցաւ գաբրիէլ առ կոյսն մարիամ յաւուր չորեքշաբաթու: - 483. Եւ անտի մինչև ի տբէթի **իա**՝ և յունվարի **զ**՝ *կատարի* **թ** ամիս և **ե** օր: - 483. Որ *կատարի* տեառնընդառաջն փետրվարի **ժդ**: - 483. Յաղագս որոյ յետ երկոտասան աւուրց *կատարեմք* զծնունդն: - 483. Անմարթ էր թողուլ զժողովուրդն ի դրան տաճարին և մերձիլ յանկողինս. և ըստ օրինացն զօրեայ սրբութիւն ստանալ. որ անհնա՛ր է ամենևին. թէպէտ ասեն՝ գոյր ա՛յլ քահանայապետ որ զկարգ պաշտամանն *կատարէր*: - 484. Այլ ո՛չ *կատարէր* **զգ** աւուրն ի միասին: - 484. Ութերորդ՝ զի թէ հաւատան աւետարանին և ոչ ստեն **լ** ամաց գալ քրիստոսի ի մկրտութիւն, ի հարկէ՛ պա՛րտին *կատարել* և զմկրտութիւնն ի նոյն ի տօնի ծննդեանն իւրեանց ի դեկտեմբերի **իե** որ իցեն ամենևիմբ սուտ: - 484. Տասներորդ՝ զի և ազգն հռօմայեցւոց մինչև ցայսօր յայտնապէս ի վեցն յունվարի զերից տօնից յիշատակս *կատարեն*: - 484. Երրորդ՝ զի զկարգեալ օրէնսն յինքենէ՞ պա՛րտ էր անձամբ *կատարել*. զի հաւատասցի թէ ի նմանէ՛ են կարգեալ: - 485. Իններորդ՝ զի աւետիս հարցն հաստատեսցէ. զի անսո՛ւտ է խոստմունք աւետեացն աստուծոյ. և որպէս զայս աւետիս ուխտի *կատարեաց*, նոյնպէս և զայլսն *կատարեսցէ*. այսինքն ի ծառայութենէ ազատութիւն, և արքայութեան խոստմունքն: - 485. Ա՛րդ՝ զհինն զամենայն *կատարեաց* և վճարեաց. և ապա՛ նորոյս սկիզբն էարկ մկրտութեան և շնորհաց: - 485. Վեցերորդ՝ զի *կատարեսցէ* և լցցէ զօրէնսն: - 486. Եօթներորդիւն *կատարել* զկեանս մեր պատշաճաւոր վախճանաւ: - 492. Զի պետրոս քարոզեալ ասէ հոգւոցն որ ի բազում ժամս *կատարի*: - 495. Եւ զայսոսիկ *կատարեաց* քրիստոս. զի ստեղծուած էր ինքեան: - 496. Նա՛խ՝ զի խոստովանիմք զքրիստոս աստուած և զտօն նորա ըստ տէրունականացն *կատարեմք*: - 509. Եւ ա՛յս է խորհուրդն որ առանց արեան *կատարեմք*: - 509. Զի հեթանոսք զոհէին արեամբ մանկանց. և հրէայք արեամբ անբան անասնոց *կատարէին* զնաւակատիսս իւրեանց: - 509. Ասեմք թէ՝ ի վերնատունն զհինն *կատարեաց* մինչ զմարմինն բաշխեաց և նոր օրէնս եդ. և մեք հնոյն ո՛չ եմք պարտական: - 510. Արդ մի՛ մերձենար դու յիս անկատար գոլով. որպէս մայր քո եւա ի ծառն գիտութեան. յորժամ առ բնութեամբ իմ հայր՝ և ձեր ըստ շնորհի՝ և աստուած մարմնոյ իմոյ ես ելանիցեմ, որոտմամբ իջեալ հոգին զձեզ *կատարէ*.

արժանաւորիք յայնժամ առ իս մերձենալ: - 518. Եւ յիսունն **ժժ** *կատարեն* **Ե** գլխաւոր համարք: - 524. Եւ տէր յորո՞ւմ տեղւոջ *կատարեաց*: - 526. Առաքելութիւնն վեցիւք *կատարի*: - 535. Եւ թէ ոք ասիցէ, ապա թէ զամենայն ոք առ հասարակ կապէ կամ արձակէ, այսինքն օրհնէ կամ անիծանէ, ո՞չ *կատարի*: - 539. Նա՛խ` թէ անկարգաբար կապէ. որպէս քահանայ զեպիսկոպոս կամ զկաթողիկոսս. կամ սարկաւագ զքահանայ. այս ո՛չ *կատարի*: - 539. Երրորդ` վասն ախտի. այսինքն փառաց կամ մախանաց. կամ ագահութեան ընչից. կամ այլ ինչ այսպիսեացս. ո՛չ *կատարին* կապանքն: - 539. Ասեմք առ այս թէ` անկատար մնայ ըստ այնմ որ ի յանիծելն ո՛չ *կատարի*. այլ ըստ որում դառնայ ի յանիծօղն *կատարի*: - 539. Նոյնպէս և արձակելն այսինքն օրհնելն ո՛չ *կատարի*. թէ այնպէս անկարգաբար իցէ: - 539. Որպէս թէ զվերնագոյնն կամ զանարժանս կամ վասն ախտի ինչ օրհնել կամ ձեռնադրել. այլ զոր հոգին յայտնեսցէ զարժանիսն` նմա՛ *կատարի*: - 539. Եւ թէ ոք ասիցէ, թէ վասն ուխտի կամ ագահութեան զանարժանս ձեռնադրեն` ո՞չ *կատարի*: - 540. Իսկ թէ ձեռնադրօղն իցէ անարժան, միայն ինքն ոչ օգտի. այլ դատապարտի. իսկ շնորհն *կատարի*՛ ի յընդունօղն: - 540. Եւ սոքա մտօք և ո՛չ մարմնով *կատարին*. որպէս յայտ է ի բանսարկուն սատանայ որ յանցեաւ հպարտութեամբ և նախանձով: - 556. Ծուլութիւն է հեղգութիւն հոգւոյ ոչ սկսիլ ի բարին. կամ տաղտկանալ ի սկսեալ բարւոյ և ո՛չ *կատարել*: - 570. Տասներորդ, զի մկրտութիւնն է գործ քահանայի որ աղօթիւք *կատարի*...: - 589-590. Այս ըստ հակառակասիրութեան նոցա ասի. այլ ըստ ուղղութեան` քահանայն ունի իշխանութիւն զեօթն խորհուրդ եկեղեցւոյ *կատարել*. և եպիսկոպոսն առաւել ունի. զի միայն տայ զկարգն, եկեղեցի օրհնէ և սեղան: - 594. Այլ և զայս հարցանեմք ձեզ. ո՞ր բան է որ զջուրն ի խորհուրդ *կատարէ*: - 596. Զի ասելն «ա՛յս է մարմին իմ» զէութիւն հացին *կատարեաց*: - 596. ...վասն որոյ անխմոր հացիւ և անապական բաժակաւ *կատարեմք* զխորհուրդ մարմնոյ և արեան նորա: - 597. Ասեմք թէ **դ**. զի թէ մինն պակաս լինի, խորհուրդն ո՛չ *կատարի*: - 597. զոր ասացաք ի վերոյ թէ` զդրոշմն և զառաջին օծումն և զվերջին օծումն *կատարեմք* ի մկրտեալն: - 604. Իսկ *կատարի* պսակն օրհնութեամբ քահանային. և մարմնական զուգաւորութեամբն: - 609. Եւ որպէս աստուծոյ բանն *կատարէ* զհաղորդութիւնն որ ասէ «ա՛յս է մարմին իմ և այս է արիւն իմ»: - 610. Եօթներորդ, ի սմա՛ է խորհուրդ եկեղեցւոյ ներգործի. և ի մեզ *կատարի* և կրի: - 614. Զի մե՛ք *կատարեմք* զխորհուրդս. և ի մեզ կրեմք դարձեալ. որպէս մկրտութիւնն. դրոշմն. պատարագն. և այլն: - 614. **Ա՛րդ` ջուր և գինին և մեռոնն նշանակեն ի մեզ զջուր սրբութեան աւազանին. և մեռոնն որով օծաք և դրոշմեցաք. և ապա ճաշակմամբ մեղսաքաւիչ արեանն *կատարեցաք*:** - 615. Վասն է՞ր հինքն **բժ**ան օր նաւակատիս *կատարէին* որ է՛ նորոգումն խորանի տաճարին: - 616. Ասեմք նախ եթէ` ո՛չ երկոտասան. այլ մի օր *կատարէին*: - 616. Ութերորդ` զի ամենայն խորհուրդ եկեղեցւոյ` խաչիւն *կատարի*. Մկրտութիւն. Դրոշմն. Պատարագն. և այլն: - 616. Վասն որոյ և մեք միշտ ի նոյն քանիս ամսոյն սուրբ խաչին և եկեղեցւոյ տօն *կատարեմք*: - 617. Զայս դ ժամու աղօթս ի գիշերի *կատարէին*. և զերեք ժամուն ի տիւն: - 621. Երրորդ ժամն արևագալին առ հոգին սուրբ. այս **գ** ժամս ի գիշերի *կատարին*: - 621. Զոր այժմույս **գ** ողորմեայն և պատարագն ի միասին *կատարի*: - 622. Եւ այս գիտելի է, զի ի գիշերն **դ** անգամ *կատարի*. այսինքն է հանգստեանն, մէջ գիշերին, առաւօտին, և արևագալին: - 622. Երրորդ, հասարակն զգայարանօք *կատարի*. իսկ առանձնականն ի միտս լուսափայլի: - 623. Այլ և զինն կարգ աղօթից **ը** անգամ *կատարեմք* այժմ այսպէս: - 627. Դարձեալ` մարգարէքն ասացին. և առաքեալքն *կատարեցին*: - 643. Նախ` զի լսելովն զկամս աստուծոյ *կատարեմք*. իսկ պատարագաւն զմերս: - 658. Յերկրորդ ամէ՛ սրբոյն սահակայ մինչև ի **ժգ** ամն նորին` *կատարեցան* ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ: - 659. Երրորդ ի ժամն. զի անցեալ մասն յաւելու. և ներկայն անցանէ. և հանդերձեալն պակասի. և բոլորն *կատարի* և լցուի: - 666. Այսպէս և նոքա *կատարեցին* զճանապարհ կենցաղոյս և զբարեաց գործոց. վասն որոյ վախճանեալ կոչին: - 666. Զի՞նչ է կարգ *կատարելն*: - 671. Երկրորդ կոչի կարգ, զի զիւրաքանչիւր ոք յիւրում կարգին յօրհնեմք և *կատարեմք*...: - 671. Երրորդ կոչի կարգ, զի զոր ինչ մեք առ մարմին ննջեցելոցն *կատարեմք*, զնոյն կարգ և հրեշտակք առ հոգիսն *կատարեն* այժմ և ի յարութեանն աւուր: - 671. Տասներորդ, նշանակէ զվերջին օծումն. զի ամենայն կարգ զոր մարմնոյն *կատարեմք*` հոգւոյն է և մարմնոյն որպէս ասացաք: - 673. ...և զեօթն խորհուրդ եկեղեցւոյ *կատարեաց*: - 674. Եւ ի խորհուրդ եօթանց դարուց կենցաղոյս` զեօթն օր նաւակատիս *կատարեմք* թաղման քահանայից: - 674. Արժանաւոր է թէ անարժան` պա՞րտ է *կատարել* զկարգն թէ ոչ: - 674. Ասեմք թէ այո՛ պա՛րտ է ամենեցուն *կատարել*: - 674. Նոյնպէս և մեզ շնորհացն այնմ պարտ է հնազանդիլ և *կատարել* զկարգն: - 674. Նոյնպէս և ամենայն աշխարհականաց պա՛րտ է *կատարել* զկարգս իւրեանց...: - 674. Եւ յետ այնորիկ յիշեմք զպատիժ հրամանացն աստուծոյ որ *կատարեցաւ* ի վերայ նորա...: - 676. ...իսկ մարդ զերեքեանն ունի. վասն որոյ երեքօրեայ յիշատակ *կատարեմք*: - 681. ...վասն որոյ **գ** օր յիշատակ *կատարեմք* և գամք ի գերեզմանն: - 681. ...և վասն եօթնից աստիճանաց, և

եօթն աստեղան խորանացն, եօթօրէք *կատարեմք*: - 683. Վասն որոյ ի սոյն աւուրքս *կատարին* արդիւնք ննջեցելոցն և յիշատակութիւնք նոցա այսու խորհրդով: - 683. Յոգիք արդարոցն զամենայն գիտեն զոր ինչ վասն նոցա գործեմք. և վասն մեր բարեխօսեն և *կատարեն* զխնդիրս: - 685. Աղօթք նոցա ցանկութիւնն է նոցա. զի կամս երկիւղածաց իւրոց *կատարէ* տէր: - 685. Այլ ըստ պսակացն որ մարմնով *կատարին* և վասն ընկերացն որ ժողովին՝ պակաս է նոցա. զոր ի կատարածի լինելոց է ի գալուստն քրիստոսի...: - 686. ...այսինքն է որ ի վեր քան զհրամայեալ օրէնսն *կատարեցին* զգործս. որպէս առաքեալքն, մարգարէքն, մարտիրոսքն, կուսանքն, և այլքն: - 687. Այս է խորանն առ երկնիւ ուր ժողովին արդարք և մեղաւորք հոգիք հաւատացելոց. որք դատաստանաւն *կատարին*, ակնունելով ողորմութեանն աստուծոյ: - 688. Եւ մինչ այս ոչ *կատարի*, ո՛չ առնուն արդարք զփառս, և ո՛չ մեղաւորք զտանջանս: - 693. Զի ո՛չ վայելէ անկատարից զվախճանական կատարումն առնուլ. եթէ ոչ նախ իւր յատուկ կատարելութեամբն *կատարեսցի.* - 693-694. ...զի զգործ դատաստանին այժմ *կատարէ* որպէս ցուցաւ ի վերոյ: - 700. ...մինչև *կատարեսցին* հարուածք բարկութեանն աստուծոյ ի վերայ երկրի. որով փորձին և արդարք և մեղաւորք...: - 703. ...և յետ յարութեանն առնու և *կատարի*: - 705. Այլ արդ՝ մարմնով աճումն է ըստ բնութեան. և բնութիւնն ըստ ժամանակի փոփոխման *կատարի*: - 716. Եւ դարձեալ՝ որպէս զանազան սերմանիք ցորեան կորեակ և այլք՝ հասարակ ի մի վայր սերմանին. և հասարակ ջրով և ջերմութեամբ սնանին. և ի յազգս իւրեանց *կատարին*. ցորեանն ի ցորեանն և այլն: - 719. Չորրորդ, յայլ և այլ ժամանակս սերմանին և ի մի ժամանակ *կատարի*. - 720-721. ...իսկ հոգիք սրբոցն նախ ծաղկին բնական պայծառութեամբն իւրեանց որպէս ցուցաւ ի վերոյ, և ապա՛ յետոյ արդեամբք պտղոյն *կատարին* ի հանդերձեալ կեանքն: - 721. ...ջրարբիք են հաւատով և յուսով մեռեալքն. և հանապազ յեկեղեցի սուրբ յիշատակութիւն նոցա *կատարի*...: - 721. Երկրորդ, պա՛րտ է զի *կատարեսցին* գրեալքն ի մարգարէից. - 735. Երկրորդ, զի դատաստանն պա՛րտի յայտնի լինի. այլ՝ արդ՝ երուսաղէմ է՛ առաւել յայտնի վասն փրկութեանն որ անդ *կատարեցաւ*: - 738. Եւ այլն ամենայն որ լսի ի սուրբ գիրս՝ անդ *կատարեսցի*: - 762. Այս հաւատ մեծ յուսով. և *կատարի* սիրով: - 770. Զորօրինակ, քարոզեցաւ նինուէի կործանումն. և նախագուշակ եղև եզեկիայի մահ. և ո՛չ մի ի սոցանէ *կատարեցաւ:* - 779. Եւ նոյն ինքն տէրն բոլորից վկայ քարոզութեան զգործս *կատարէր*. զի սովորութիւն է մարդկան քան զլուր լսելեաց տեսութեան աչաց հաւանիլ: - 785

**ԿԱՏԱՐԻՉ +** Երրորդ՝ զի սերօբէն մաքրական լսի և հրաբերձ. ըստ որում մաքրեաց զմարգարէն. և քերօբէն իմաստութեամբ լուսաւորիչ. և աթոռքն ուղղութեամբն *կատարիչ*: - 135

**ԿԱՏԱՐՈՂ +** Եւ յայտնի նշան մոլորութեան նոցա ա՛յս է, զի այնպիսեացն *կատարօղք* վատթարք են գործովք և մոլի. և առ դևս տանին զմարդիկք բռնութեամբ...: - 389

**ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ +** Եւ գիտելի է, զի յարացուցիս և նախասահմանութեանս՝ արարողական պատճառ է աստուած. և նիւթական պատճառ իրն այն որ է նախասահմանի. և տեսական պատճառ է՛ կարգն. զի նախ տըւեալ լինի շնորհքն աստ. եւ ապա փառքն ի հանդերձեալն. և *կատարողական* պատճառ՝ զի լինիցիմք սուրբք և անբիծք: - 112

**ԿԱՏԱՐՈՒՄՆ +** Նախ եթէ՝ ունիմք անձնիշխան կամք. և տէ՛ր եմք գործոց մերոց. առնել և ո՛չ առնել. այլ երբեմն սկիզբն ի մէնջէ, և *կատարումն* ի նախախնամութիւնն աստուծոյ: - 17. Երբեմն սկիզբն յաստուծոյ, և *կատարումն* առ մեզ: - 17. Եւ երբեմն երկոքինն յաստուծոյ. այսինքն սկիզբն և *կատարումն*: - 17. Այլ արդ որ սկիզբն և *կատարումն* է յաստուծոյ, աստուածային է ներգործութիւն. և սքանչելեաց իր: - 17. Իսկ սկիզբն և *կատարումն* ի մեզ, որպէս նախածանօթ ընտրեալքն յառաջ քան զլինիլն աշխարհի. որ այժմ բարի գործովք կատարեսցին ըստ նախասահմանելոյն իւրեանց: - 18. Իսկ որ սկիզբն ի մէնջ՝ և *կատարումն* ի խնամոցն աստուծոյ, այսինքն յորժամ սկսանիմք զբարին՝ և նա՛ աւարտէ՛ ի բարին: - 18. Զի՞նչ ասեմ, զի հոգւով հնազանդեցաւ ադամ, և մտօք հաւանեցաւ, և մարմնով զգործն ի *կատարումն* էած: - 50. Այլ զի զանձնաւոր բնութիւն և զանհատն ասեմք մարմնացեալ. զի սկիզբն միաւորութեանն է ի բնութիւնն, և *կատարումն* կայացեալ ի յանձն, յիմարա՛ց ուրեմն և ափշելոց է խնդիր նոցա: - 76. Միաւորութիւնն քրիստոսի ունի սկիզբն. և մէջ. և *կատարումն*: - 84. Սկիզբն յերկուց բնութեանց. և մէջ՝ որ է՛ միաւորութիւնն մի բնութիւն. և եզր և *կատարումն* մի անձն: - 84. Ծանիր և զայս. զի՝ մի բնութիւն ասեմք քրիստոսի՝ վասն *կատարմանն* և ո՛չ սկզբանն. և մի գործ ասեմք վասն սկզբանն և ո՛չ վասն *կատարման* գործոյն: - 85. Իսկ զկամքն իմասցիս մի՝ վասն կամելոյն և վասն միաւորելոյն որ է սկիզբն և *կատարումն*: - 85. Եւ *կատարումն* երկրորդ հատորի հարցմանց գրոցս: - 101. Եւ բանականութեան սկիզբն և *կատարումն*: - 101. Նախ՝ զի **գ** թիւն կատարեալ է. զի ունի սկիզբն. և մէջ և *կատարումն*: - 107. Եօթներորդ՝ միակն է *կատարումն* ամենայն թըւոց. և ամենայն գոյից *կատարումն* է աստուած: - 109. Վեցերորդ՝ սկիզբն է ներգործութեան. և պատճառ

*կատարման*. զի ի նմանէ սկսեալք՝ ի նա՛ կատարիմք: - 111. Երկրորդ՝ ասի անեղ այն՝ որ ո՛չէ եղեալ ի *կատարումն*. զի ունի սկիզբն՝ և կարօ՛տ է *կատարման*: - 113. Երրորդ ասի անեղ այն՝ որ ի յումե՛ք է, և ի յումեք ո՛չէ. որպէս հրեշտակք յաւիտենի եղեալ, և ի ժամանակի անեղ. սա կարօտ և անկարօտ երկոցունց. այսինքն սկզբան և *կատարման*: - 113. Չորրորդ՝ ասի անեղ՝ որպէս ոչ ուրեք և ո՛չ երբեքն. այսինքն է ոչինչն. սա կարօ՛տ է ամենևին սկզբան և *կատարման*: - 113. Զի անեղ է՛ գոլով՝ տարորոշի յանեղ ոչընչէն. և միշտ գոյ՝ ի հրեշտակաց. և ինքնակատարն՝ յայնցանէ որ կարօ՛տ են սկզման և *կատարման*: - 113. Դարձեալ անեղ ասի աստուած՝ իբր պատճառ անեղից. և նախ քան զամենայն անեղ. և *կատարումն*. և բովանդակութիւն ամենայն անեղի: - 113. Դարձեալ՝ տեսանէ աստուած ըստ պատճառի. զի ամենեցուն է պատճառ. և ըստ պարունակութեան, որ զամենայն առ ինքն ունի. և ըստ *կատարման*, որ ամենեցուն է վաղճան և *կատարումն*: - 118. Զի՞նչ է բանականութեան սկիզբն և *կատարումն*: - 121. Չորրորդ՝ սիրօղ՝ որպէս սկիզբն մեր. և սէր՝ որպէս հաստատութիւն. և սիրելի՝ որպէս *կատարումն*: - 128. Երրորդ՝ ես եմ սկիզբն արարչութեամբ, և *կատարումն* նախախնամութեամբ ամենայն գոյից: - 129. Վեցերորդ՝ սկիզբն եկեղեցւոյ որպէս հիմն. և վախճան որպէս գլուխ և *կատարումն*: - 129. Ութերորդ՝ սկիզբն է խոստմանցն, և *կատարումն* արդեանցն: - 130. Իններորդ՝ սկիզբն է շնորհաց որպէս այժմ. և *կատարումն* փառաց ի հանդերձեալն: - 130. Տասներորդ՝ սկիզբն է օրինացն, և *կատարումն* ճշմարտութեանն. որպէս հնոյն և նորոյս: - 130. Դարձեալ, զի ժերորդն աստուածպետութիւնն. և *կատարումն* ի վերայ ամենեցուն: - 134. Դարձեալ՝ առ հրեշտակս մի և նոյն իմացումն աստուածային՝ է՛ սրբութիւն՝ լուսաւորութիւն՝ և *կատարումն* նոցա...: - 139. Երրորդ՝ զի ամենեցուն *կատարումն* է և բովանդակութիւն. ապա այսպէս գիտէ զամենեսեան. ըստ որում սկիզբն է և *կատարումն*, յամենայնսն թափանցեալ է և ունի: - 141-142. Եւ ըստ որում մի է սկիզբն և *կատարումն* և թափանցումն...: - 142. Եւ ոմանք ասեն թէ՝ ընդ պատիւ մարդոյն նախանձեցաւ և ի խորհուրդ եմուտ թէ սորա *կատարումն* ի՞նչ լինի, և ո՛չ կարաց հասու լինիլ: - 147. *Կատարումն* Երրորդ Յատորի Աստուածաբանութեանն Դիոնէսիոսի: - 153. Յետ ընդդէմ արտաքս աքսորելոյ զարտաքինսն. և ընդ մէջ հերձելոյ զհերձուածօղսն, և զճշմարիտն աստուածաբանութիւն հաստատելոյ ի մեզ, բե՛ր սկսցուք զսկիզբն արարչութեան եղելոց մինչ ի վախճան *կատարման* այժմոյս՝ ըստ կարգի հին և նոր կտակարանաց հետևեալ: - 156. Իսկ թէ զի՞նչ համբերութիւնն. ասէ՝ «գործ կատարեալ ունիցի». այսինքն թէ՝ նիւթ աստուծոյ գործոյն՝ փորձութիւնն և նեղութիւնն է. և յօրինօղ՝ հաւա՛տն է. և ի *կատարումն* ածօղ՝ համբերութիւնն է: - 161. Արդ՝ տաճարիս այս է՛ կրկին սկիզբն. նախ միտքն շինողին, և յետոյ սկիզբն և *կատարումն* շինուածոյն: - 163. Երկրորդ զանազանութիւն՝ զի նախկին սկիզբն համանգամա՛յն է ի միտքն. և երկրորդ սկիզբն նա՛խ է՝ և *կատարումն* յետոյ: - 163. Նախ՝ զի որպէս շինօղ տաճարին զսկիզբն և *զկատարումն* ետես. այսպէս և արարիչն աստուած ի կրկին սկիզբն գործոյն *զկատարումն* աշխարհի ետես: - 163. Եւ ա՛յս է *կատարումն* մասանց լուսնին. զոր ոմանք *կատարումն* լուսնի ասեն: - 192. Եւ դարձեալ՝ յորժամ վերադիրն լինի **լ**. և **է** երեակն է ի միասին ի միում ամի. ասի այն *կատարումն* լուսնի. այսինքն մասանց թուոյն, և ո՛չ իրին: - 192. Այսպէս և *կատարումն* մասանց լուսնին ի տումարս մեր է և ո՛չ ի յենթակայն նորին: - 192. Այլ *կատարումն* լուսնի է ի վախճանի աշխարհի. յորժամ արեգակն և լուսին խաւարեսցին որպէս ասէ աւետարանն: - 192. Երկրորդ՝ ասեն թէ՝ ի սկիզբն աշխարհիս արար զբնութիւնն յանկարծակի. այլ բնութիւնն յամելով և ըստ կարգի յանկատարութենէ ելանէ ի *կատարումն*: - 192. Թէպէտ ըստ նիւթոյն յապականացու երկրէ է, այլ ըստ *կատարման* յանապականութիւն փոխեցաւ: - 225. *Կատարումն* յաղագս արարածոց **զ** օրէից: - 227. Եւ *կատարումն* զճշմարտութիւն: - 248. Եւ երկուցն *կատարումն* է՛ ի յաստուած. քանզի նա՛ է ճշմարտութիւնն. և նա՛ է բարին: - 248. Եւ յորժամ ասես **գ**, յայնժամ զառաջին թիւսն ունելով յինքեան՝ *կատարումն* եղև նոցա: - 259. Եւ վասն տնկական և զգայական մասին՝ կազմողական զօրութիւնն այլ ևս աճեցուցեալ զմարմինն **բ** ամ և դադարեալ յերեսներորդին, լինի ժամանեալ ի չափ հասակի *կատարմանն* քրիստոսի, յորում մկրտեցաւ տէրն մեր: - 265. Եւ անտի յառաջ զբանական մասին *կատարումն* և զկայ՝ ցուցեալ: - 267. Ըստ բնականին այս է. զի ամենայն իր որ լինի՝ յանկատարութենէ ի *կատարումն* ելանէ, և ի զօրութենէ ի ներգործութիւն որպէս ի վերոյ ասացաւ: - 267. Երրորդ՝ ըստ *կատարման*. զի այս յետ փոխման զյոյսն ունի լծակցեալ անմահութեան և խնդութեան. իսկ այնոքիկ կորստական և անցաւոր: - 269. Ճար՝ *զկատարումն* ասէ. և ստուգաբանի՝ անճար և անխափան լինի *կատարումն* նորին: - 270. Դարձեալ հանճար ասի, զի առ յապայն ունի *զկատարումն*: - 270. Դարձեալ՝ հանճարն է ի սկիզբն. իմաստութիւնն ի մէջն. գիտութիւնն ի *կատարումն*: - 270. Քառասուն, Զի՞նչ նշանակէր *կատարումն* պատարագացն: - 284. Եւ աստանօր *կատարումն* Վեցերորդ Յատորի Յարցմանցս: - 285. Երրորդ՝ **թ** դաս հրեշտակաց է յերկինս. և ժերորդն մարդն *կատարումն* թուոյ նոցա. վասն այն ի կեանս այս

ո՛չ հասանեն ի **ռ** թիւն կատարեալ. զի աստ ո՛չ լինի *կատարումն* դասուցն այլ ի հանդերձեալն: - 291. Ի մանկութենէ կռոց նուիրեցաւ, և հրեշտակ աստուծոյ յափշտակեալ սնոյց զնա յանապատի մինչև հասոյց ի *կատարումն*: - 300. Նոյնպէս և տէրն մեր ետ հաւատացելոցն զկենարար մարմինն և արիւնն իւր. յորոց խնդրէ ըզգործս տասնաւոր. այսինքն զկատարեալս. և *զկատարումն* **ժ** բանեան օրինացն. ի յորս է՛ մաքրութիւն **ժ** զգայարանացս որպէս ի վերոյ ասացաւ: - 302. Վեցերորդ՝ իսահակ նախկին էր *կատարումն* ուխտի **ը** օրեայ նշանին: - 305. Երկրորդ՝ զի դէտ եղև յոբ համբերութեան և տէր մեր *կատարման*...: - 327. Եւ իրաւունքն է *կատարումն* քննութեան և արդարապէս հատուցումն: - 340. Երրորդ՝ զի *կատարումն* է արարածոց: - 350. Վեցերորդ, այն սկիզբն. և աստ մէջ. և անդ եզր և *կատարումն*: - 355. Տասներորդ, խոյն *կատարման* քահանայից և պանն: - 359. Նա՛ է ողջակէզ և փրկութիւն և գոհութիւն, և վասն մեղաց և յանցանաց. և յամենայն նւիրաց *կատարումն* և գլուխ նա՛ է: - 362. Զի՞նչ նշանակէ կրկին ողջակէզն ի նորս. որպէս զուարակն և երկու խոյն *կատարման*: - 362. Իսկ միւս խոյն *կատարմանն*, քահանայիցն կերակուր և նուէրքն մովսէսի: - 362. Նա՛խ՝ ցուցանէ թէ քրիստոս է առաջին և վերջին. այսինքն սկիզբն և *կատարումն* եկեղեցւոյ. ո՛չ միայն աստուածութեամբն, այլ և մարդկութեամբն: - 385. Նախ գերծու զհերն. և զոր ուխտիւն աճէ՝ զայն ի սեղանն հանել ի *կատարումն* ուխտին: - 389. Եւ դարձեալ հրեշտակք և մարդիկք մշտնջենաւորք՝ պակաս ունին առ աստուածպետութիւնն յաւիտենական. և նա՛ է *կատարումն* **ժ**երորդ. անսկիզբն և անվախճան գոլով: - 391. Հինգերորդ՝ զրկելով աստ ի խոստմանէն լրոյ. և յետ մահու ի տեսութեանցն. և ի յարութեանն ի *կատարմանցն*: - 394. Աչք տեառն ի սկզբանէ տնօրէնութեանն և մինչև *զկատարումն* տարւոյն ի վերայ նորա: - 398. Իսկ տարի՛ է յաւիտենական փառքն. որոյ սկիզբն խնամոցէ՛ նախ քան զլինիլն աշխարհի. և *կատարումն* անվախճան փառքն: - 399. Զի սկիզբն մեղաց՝ հիմն է դժոխոց. և *կատարումն* դուռն. և յամելն՝ փակ: - 418. Եւ խոստումն օրհնութեանց զաւակին՝ և օրինաց *կատարումն* փրկիչն եղև: - 419. Քառասուն ամ թագաւորեաց դաւիթ, որ է չորիցս **ժ**. և սկիզբն և *կատարումն* ամենայնի է՛ տէր մեր: - 437. Եւ աստանօր *Կատարումն* հին Կտակարանաց. և Եօթներորդ Հատորի Հարցմանցս. ի Փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ Օրհնելոյն Յաւիտեանս Ամէն: - 453. Նա՛խ՝ զի գործ ողորմութեանն է ի սկիզբն աշխարհի՝ և ի մէջն. և ի *կատարումն* յարութեամբ մարդկան որպէս ցուցաւ ի վերոյ: - 458. Տասներորդ՝ այն քան գերազանցեաց պատիւ կուսին, զի այնմ որ մարգարէք գուշակէին զլինելոցն. ի սմա ընդ խօսից հրեշտակին եղև *կատարումն*: - 464. Հինգերորդ՝ զի սրբեսցէ զբոլոր բնութիւնս մեր ի մեղաց. ի սկիզբն ի մէջն և ի *կատարումն*: - 469. Չորրորդ եղանակն որ *կատարումն* է այլոցն՝ ի կնոջէ առանց առն. որպէս ծնունդն քրիստոսի զօրութեամբ հոգւոյն սրբոյ: - 471. Զի որպէս ո՛չ գոյ սկիզբն աստուածութեան նորա, այսպէս և ոչ *կատարումն* մարդկութեան և աստուածութեան նորա: - 478. Նա՛խ՝ ցուցանէ թէ *կատարումն* ամենայն տնօրէնութեանց խա՛չն եղև: - 481. Եւ թշրինի **ժե**՝ սկիզբն տօնի տաղաւարահարաց, որ է՛ հոկտեմբերի **բ**. և անտի մինչև ի **իբ**ն թշրինի՝ և ի հոկտեմբերի **թ** *կատարումն* տօնին: - 483. Վեցերորդ՝ զի ցուցցէ զինքն որդի աբրահամու. առ որ հրաման թլփատութեանն եղև և խոստումն օրհնեալ զաւակին. և այսպէս խոստմանն աստուծոյ *կատարումն* քրիստոս զինքն ցուցանէր: - 485. Զի իցէ ինքն սկիզբն և *կատարումն* ո՛չ միայն ըստ աստուածութեանն, այլ և ըստ մարդկութեանն: - 485. Այլ և *կատարումն* չորից կարգաւորաց օրինաց: - 494. Եւ պենտակոստէ գալուստ հոգւոյն և *կատարումն* խոստմանց և լրումն աւետեաց: - 524. Երեսուներորդ, Վասն դրոշմին և ա՛յլ *կատարմանցն*: - 526. Եւ աստանօր *Կատարումն* Իններորդ Հատորի Հարցմանցս Այսոցիկ. և Քրիստոսի Փառք յաւիտեանս Ամէն: - 527. Հինգերորդ՝ առաջին առաքեալքն իբր *կատարումն* բանից. երկրորդ մարգարէք նախաձայնք նոցին. երրորդ վարդապետք մեկնիչք և թարգմանք երկուցն քարոզութեանց: - 535. Դարձեալ՝ յերկրի ի *կատարմանէ*, և յերկինս ի սկզբանէ իշխանութեանն. եթէ կապելն և եթէ արձակելն: - 541. Իսկ մեղք է յօրինաց *կատարումն* ո՛չ հասանիլ: - 555. Չորրորդ՝ խորհուրդ մեղացն ճշմարիտ և բարի ցուցանէ զգործն և սիրելի և հեշտ. վասն որոյ յօժարի և եռայ ի *կատարումն*: - 558. Դարձեալ ըստ *կատարման* բաժանի մեղքն յերիս. այսինքն ի գործ մեղացն, և յունակութիւնն, ի պատիժն: - 568. Այս քան ըստ տեսակի և ըստ նիւթոյ և ըստ *կատարման* զանազանութիւն մեղաց: - 569. Զի ի վերոյ խաղաղութեան ո՛չ է այլ առաքինութիւն. զի խաղաղութիւնն է վախճան և *կատարումն* ամենայն առաքինութեանց: - 586. Եւ քահանայապետ ասէ զնա՝ որ պատարագէ և մկրտէ և դրոշմէ. զի նա՛ է պետ և աւագ ի *կատարմունս* խորհրդոյն: - 594. Եւ հաղորդելն, որպէս անդամ ի գլուխն յօդէ. զի ամենայն *կատարմանց կատարումն* հաղորդութիւնն է. այսինքն կարգին՝ պսակին՝ խոստովանութեան՝ մկրտութեան՝ և այլն: - 594. Իսկ ի *կատարումն* պսակին՝ նախ է՛ օրհնութիւն քահանային, և ապա՛ մարմնական զուգաւորութիւնն: - 610. Զի **դ** ծնունդ ի մէջն է ըստ չորից տարերց *կատարման*: - 611. Յետ այսորիկ հարցանելի՛ է զեկեղեցական *կատարմունքս* մեր: - 613. Երկրորդ, զի **է** է

խորհուրդ եկեղեցոյ. և **է** արփեան է շնորհք հոգւոյն. և մի *կատարմունքն* ի մեզ, որ լինի **ը**: - 616. ...և *կատարումն* ամենայն աղօթից առ բանն մարմնացեալ. որպէս ասացաւ: - 633. Եւ խաղաղութեամբ հոգին՝ *կատարումն* առ հոգին: - 633. Եւ հայր գթութեանցն՝ *կատարումն* առ հայր: - 633. Եւ քրիստոս որդին՝ *կատարումն* առ որդին: - 633. Իսկ յառաւօտն և յերեկոյն պատարագ ո՛չ մատչի. վասն այն ամենայն աղօթից և պաշտմանց *կատարումն* և աւարտ զխաչէն ճառեմք. - 634. ...զի ճառ խաչին պատւակա՛ն է առ աստուած և առ մարդիկ. և փառք քրիստոսի է խաչն և *կատարումն* ամենայն տնօրէնութեանցն: - 634. Որպէս ասացաք՝ վասն գերապատուութեան *կատարումն* և աւարտ ամենայն աղօթից զայն երգեմք: - 634. Այլ և յարութիւնն *կատարումն* է տնօրէնութեանցն. վասն այն զեսայի ընթեռնումք: - 644. զի պատմօղ և *կատարումն* են տնօրէնութեանցն քրիստոսի: - 646. ...վասն որոյ յերեկոյս տօնեմք զտօն *կատարման* ելից նոցա ի յերկրէ...: - 647. Եւ նա՝ եղիայի և մովսէսի քառասնիցն, սկիզբն է առաջին շաբաթն. և *կատարումն* տօնն ղազարու: - 651. Իսկ տեառն մերոյ քառասնիցն սկիզբն է երկրորդ շաբաթն, և *կատարումն* չարչարանք մեծի ուրբաթուն: - 651. Հինգերորդ՝ մարդոյս պիտոյ էր ժամանակաւ աճումն. զի թուով առցէ *զկատարումն* վերջին ընտրելոյն: - 662. Եւ մահն սկիզբն է պսակացն. և յարութիւնն *կատարումն*. - 667. և յարութիւնն է *կատարումն* պսակաց և երանութեանց: - 667. Կոչի կարգ, Նախ զի քրիստոնէից մին կարգ՝ ննջեցելոց *կատարումն* է ի վերայ է խորհրդոցս. ութերորդ խորհուրդ և կարգ. վասն ութերորդին կենաց: - 671. Չորրորդ, որպէս այն սկիզբն էր հանդիսին և աստ *կատարումն*...: - 672. ...ցուցանէ թէ ի նոյն հանդէսն ճանեցաւ և վախճան *կատարման* ընկալաւ: - 672. Այսպէս է կարգ *կատարման* ննջեցելոց սրբոց քահանայից և կրօնաւորաց և առ հասարակ ժողովրդոց: - 674. Ապա ուրեմն ամենեցուն առ հասարակ պէտք են քահանայական *կատարմունք* և նուէրք. գալ ի գերեզմանն և այլն ամենայն: - 675. Ա՛յս է խորհուրդ *կատարման* կարգին: - 675. Նա՛խ՝ զի **գ** թիւն խորհրդաւոր է. որ ունի սկիզբն և մէջ և *կատարումն*: - 681. Եւ **խ** ամն է՛ **դժ**. այսինքն մինչ ի *կատարումն* չորեքնիւթեայ կենցաղոյս: - 682. Նոյնպէս և յայլ խորհրդոց *կատարմունքն*. կնքոյ, պսակի, և այլոցն, լուսացուէ և խնկոց գին: - 684. Այս քան ի խորհուրդ ննջեցելոց ի թաղումն և ի *կատարումն* նոցա: - 684. Յետ մարմնոյ *կատարմանց*՝ հարցանեմ և վասն բաժանեալ հոգւոց: - 685. Երկրորդ, ասէ սուրբն դիոնէսիոս ի ննջեցելոց *կատարմանց* գլուխն՝ եթէ մաքրելոց հոգին հասեալ ի վախճան՝ յայտնի և մերձակայ տեսանէ զամենայն փառս և զպսակ զոր ընդունելո՛ց են նոքա ի յարութեան աւուրն: - 691. Զի ո՛չ վայելէ անկատարից զվախճանական *կատարումն* առնուլ. եթէ ոչ նախ իւր յատուկ կատարելութեամբն կատարեսցի. - 693-694. ...այլ սկիզբն է ի մահն, և *կատարումն* ի յարութեանն որպէս ասացաւ: - 697. ...որով դրոշմեալքն յետ արտաքս ելանելոյ ի մարմնոյս, թռչին յանապատն ի մեղաց յերկինս կերակրիլ անդ յուսով մինչև լնու թիւ *կատարման* աշխարհի: - 703. Եւս յայտնի, աստեացս ամենայնի *կատարումն* է՛ ի հանդերձեալն. այսինքն մեղաց և արդարութեան. պատժի և պարգևի. կապելոյ և արձակելոյ: - 704. Եւ վեցն՝ ի *կատարումն* վեցեակ դարին նոր ապստամբն ելցէ և կորուսցէ զբազումս: - 708. Երրորդ, մարդն մասն և *կատարումն* է աշխարհի...: - 715. Իսկ մանկութիւնն թերի է զի ո՛չ եհաս ի *կատարումն*. և ծերութիւնն պակասութիւն ունի զի անցեալ է զկատարելութեամբն: - 726. Եւ վասն այն ասի արքայութիւն, զի ամենայն երանութեանց և փառաց է՛ *կատարումն* և ծայրագոյն մեծութիւն: - 754. Եւ երկու *կատարումն*. մի զմկրտութիւնն. և մի զյարութիւնն որում սպասեալ ակն ունիմք: - 769. Յաւարտ և ի *կատարումն* Փառաց Պարգևաց Բանին և Շնորհաց նորին Հոգւոյ: - 771. Որոց սկիզբն է հաւատն առ մկրտութեամբն. և *կատարումն* հայի առ գործն. և սոքա փոփոխականք են ըստ քանքարացն յարգելոյ և պակասելոյ: - 783

**ԿԱՏՈՒ +** Տասներորդ՝ անունն յարմար նշանակութիւն է կենդանեաց ըստ բարուցն և զանազան կերպիցն եղեալ. զի ամենայն անուն՝ յիրէն և ի գործոյն և ի ձայնէն դնի ...Եւ կայ ի տուն՝ *կատու*. և խուզօղն խոզ: - 220

**ԿԱՐ +** Ասեմք առ այս Նախ՝ եթէ կամքն և *կարն* ի մեզ անհաւասա՛րք են. վասն այն զոր ինչ կամիմք՝ ո՛չ կարեմք. և զոր կարեմք՝ զա՛յն կամիմք: - 163. Իսկ առ աստուած կամքն և *կարն* հաւասա՛րք գոն. վասն որոյ հակադարձին ի միմեանս. զի զոր ինչ կամի՝ կարէ՛. և զոր կարէ՝ զնոյն և կամի՛: - 163. Իսկ զինչէն ի հանդերձեալն որքան *կա՛ր* է մեր. ըստ այնմ թէ, «տեսանելո՛ց եմք զնա՛ որպէս և էն»: - 331. Իսկ քահանայք ժողովրդեանն՝ նա կանոնս դնէ՝ որ խոստովանահա՛յր է և գիտէ *զկարն* և զորքանն մեղաց: - 541-542

**ԿԱՐԱԿՆ +** Որպէս *կարակնին* կէտ անշա՛րժ է, և պատճառէ զբոլորակ ծիրն: - 182. Եւ դարձեալ սիրտն է ի մէջ բոլոր անդամոցն որպէս կէտ *կարակնին*: - 261

**ԿԱՐԱՊԵՏ +** Ըստ այսմ օրինակի և նոր հերձւածօղք քաղկեդոնիկք նեռին *կարապետք*. հետևօղք նեստորի անիծելոյ՝ և լևոնի պղծոյ: - 34. Վեցերորդ՝ նախ ցօղն *կարապետ* իջանէր. և ի մեզ շնորհքն

նախապատրաստութեան ճաշակմանն: - 339. Առաջին, զի նախ ձայնն հասանէ, և ապա՛ բանն իբր *կարապետ* եղեալ բանին: - 353. Տասներորդ՝ և այսմ կողմանէ՛ շարժին լուսաւորքդ ի յընթացս իւրեանց. որ են *կարապետ* մեծին լուսոյ ծագմանն: - 555. Որպէս ի գալ թագաւորին նախ *կարապետք* և աւետաւորք մտանեն...: - 646. Եւ թէպէտ մարդ ո՛չ գիտէ զօր մահուն իւրոյ, այլ երիս իրս տուեալ է աստուած ի զգուշութիւն մեզ և *կարապետ* մահուն: - 665. ...զի ծաղիկն *կարապե՛տ* է պտղոյն...: - 721

**ԿԱՐԱՊԵՏԵՄ +** Նախընթացք *կարապետեցին*: - 456. Վասն զի արեգակն արդարության քրիստոս հայրական փառօք և աստուածագումար դասուք և *կարապետեալ* աստուածային նշանն անտի գալոց է...: - 555

**ԿԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ +** Այսպէս և խաչն իւր աստ տգեղ երևի, և ի *կարապետութեանն* իւրոյ արեգակնափայլ ճառագայթիւք: - 734

**ԿԱՐԳ +** Ա՛յս է նոցա զրախօսութեանն *կարգ*, որք զիրամանն համբաւեն: - 8. Եւ թէ ո՛չ՝ ի *կարգէ* իրացն իմացին մտօք: - 25. Եւ զայս *կարգաւ* ասէ եսայի մարգարէ: - 25. Այս է զի ի լուր պատմութեանց նախնեացն՝ կամ ի *կարգէ՛* իրաց՝ կամ ի տեսս զգալեաց՝ ի ծանօթս գամք աստուծոյն ճշմարտի. յորմէ հաւատն լուսափայլեսցի: - 25. Իսկ երկրորդ ի *կարգէ* իրաց իմանալի է ճշմարիտն աստուած: - 25. Առ որս ասեմք՝ թէ որդի ո՛չ ասի անդրանիկ վասն գոլոյն ի *կարգէ* ստեղծուածոց, զի ո՛չ ոք ստեղծուած՝ էառ զբնութիւն աստուծոյ որպէս որդին: - 41. Եւ այլք ո՛չ հաշտեն և ո՛չ անպատւեն. զի *զկարգն* յաւիտենին ո՛չ ստեն որպէս ասացաք: - 51. Եւ դարձեալ՝ զի հաներ զբանն ի *կացէ* Երրորդութեանն. շարադասելով զմարդն ի տեղի նորին: - 69. Իսկ թէ զմարդկային բնութիւնն պաշտէք, եղէք կռապարիշտք. և նո՛ր և եղական ոմն աստուած մուծանէք յԵրրորդութեանն *կարգ*: - 90. Ա՛րդ՝ ի մարդկանէ ո՛չ ոք ետես զաստուած, և որդի կուսին ո՛չ ետես որպէս դուդ ասես. սո՛ւտ է ապա և պատմութիւնն զոր ինչ ուսոյց մեզ. զի ո՛չ է տեսեալ և պատմէ. ահա անդունդք հայհոյութեան. զոր ի *կարգիս* լռե՛մ: - 96. Եւ այժմ առ քեզ խօսեսցուք ըստ վկայութեան *կարգիս* ո՛վ նեստորական երկաբնակ և մարդադաւան որոշօղ քրիստոսի, և որոշեալ ի շնորհաց նորին: - 98. Սոքա երկոտասանք և այլ անթիւք ի *կարգ* սոցա: - 105. Եւ գիտելի է, զի յարացուցիս և նախասահմանութեանս՝ արարողական պատճառ է աստուած. և նիւթական պատճառ իրն այն որ է նախասահմանի. և տեսական պատճառ է՛ *կարգն*. զի նախ տըւեալ լինի շնորհքն աստ. եւ ապա փառքն ի հանդերձեալն. և կատարողական պատճառ՝ զի լինիցիմք սուրբք և անբիծք: - 112. Նոյնպէս *կարգ* և սահման ընդհանուր եդեալ լուսաւորեցին զամենեսեան: - 126. Վեցերորդ՝ այն է՛ արւեստ ըստ բնութեան *կարգի*. և այս նշան ի վեր քան զբնութիւն: - 133. Ի յառաջին *կարգ* քահանայապետութեանն՝ սերօբէ՞ն է առաջին դաս՝ թէ աթոռքն: - 135. Այլ վասն առանձնութեան դասուցն՝ է՛ *կարգ* ի նոսա, որպէս դիոնէսիոս կարգէ՛: - 135. Որև այժմ ի յեկեղեցի ի նոյն խորհուրդ՝ սերօբէին պատկեր որ է քշոցն՝ ի ձեռն սարկաւագին աւանդի՝ որ է՛ մաքրօղն. և երրորդ *կարգ* յետ քահանային և քահանայապետին: - 135. Ապա յայտ է որպիսութիւն *կարգին*: - 135. Վասն որոյ այսպէս ասեն *զկարգ* դասուցն. և սոցա տարածայնութիւն զհամահաւասարութիւն դասուցն նշանակեն: - 135. Նմանապէս և ի միջին *կարգ* քահանայապետութեանն՝ առաջին է տէրութիւնքն. և ապա զօրութիւնք. և ընդ նմին իշխանութիւնք: - 135. Թէպէտ և զայս *կարգ* փոխեն ոմանք և զզօրութիւնն և զպետութիւնն աւանդեն որ մեզ ո՛չ է հետևելի. այլ սրբոյն դիոնիսեայ որպէս ասացաք: - 135. Այս է միջին *կարգ* քահանայապետութեան նոցա և գործ նոցա: - 136. Նախ պետութիւնք. և ապա հրեշտակապետք. և վերջին հրեշտակք. և այս *կարգ* այսպէս ուղղակի՛ է: - 136. Ապա յա՛յտ է զի ա՛յլ է *կարգ* շնորհականին, և այլ է *կարգ* բնականին...: - 136. Չորրորդ՝ յատուկ է նոցա *կարգն*. զի ոմանք բարձրագոյնք են քան զոմանս: - 138. Քահանապետութիւնն ըստ այնմ որ *կա՛րգ* է՝ մի և նոյն է ի մարդիկ՝ ի հրեշտակս՝ և յաստուածպետութիւնն սուրբ: - 138. Երկրորդ՝ զի նախ մաքրելն է, և ապա՛ լուսաւորելն, և ապա՛ կատարելագործելն. և այս *կարգ* հասարա՛կ է ի նոսա: - 138. Յաղագս այսորիկ կանոնեցին սուրբ հարքն վասն այնպիսեացն ո՛չ կատարել դարձեալ *զկարգ* քահանայութեան: - 165. Եւ եթէ ոք ասիցէ, եթէ պոռնիկն դարձեալ ի *կարգ* քահանայութեան ոչ մտանէ, ապա չեղև իսկապէս թողութիւն: - 165. Ասեմք առ այս Նա՛խ՝ եթէ թողութիւնն է ի զղջումն. և *կարգն* է ի յանձն ապականեալ. ապա ուրեմն իրաւի թէպէտ զթողութիւն ընկալաւ զղջմամբն, սակայն ի *կարգն* ո՛չ մտանէ ապականեալ և շրջեալ անձամբ և բնութեամբ, զորօրինակ բեկեալ և կցեալ անօթ՝ ո՛չ թւի ի *կարգ* անարատիցն: - 166. **Եւ թէ ոք ասիցէ, ընդէ՞ր այլ մեղուցեալն զղջացեալ մտանէ ի *կարգ*, որպէս հպարտն և ագահն և պոռնիկն ո՞չ: - 166. Ասեմք առ այս Նախ զառաքելոյն, եթէ «ամենայն որ մեղանչէ՝ արտաքոյ մարմնոյ իւրոյ է, իսկ որ պոռնկի՝ յիւր մարմին մեղանչէ». ապա ուրեմն յիրաւի ապականեալ մարմին ո՛չ մտցէ ի *կարգ*:** - 166. Ո՞րպէս է զի աստուած պարզ է և աննիւթ, զնիւթականքս յառաջ էած. զի այս է *կարգն* որ նիւթն ի նիւթոյ, և աննիւթն յաննիւթոյ յառաջագայի: - 175. Եւ

ուստի՞ է յայտ ասիցէ ոք. այսինքն զի բանն անմարմին է որ բաժանէ զոսա. զի այս է *կարգն* որ մարմին զմարմին բաժանէ. և անմարմին զանմանմինն: - 175. Իսկ երկրաւորքս ժամանակեայ. և ժամանակն *կարգ* ունի, առաջին՝ միջին՝ և վերջին: - 192. Վասն այն՝ ձեռն և ձայն և բան և թիւ և *կարգ* աւուրցն եդան: - 192. Իսկ գիշեր յարութեանն քրիստոսի՝ փոխեաց զայս *կարգ*. զի յարութեամբն իւրով եհան զմեզ ի լոյս շնորհաց և արդարութեան: - 194. Մարդս *զկարգ* եղանակացդ բերէ յինքն. վասն այն ի վերջին փոխիլն սպիտակի: - 213. Իսկ պտուղք *զկարգ* տարերա՛ցն բերէ որպէս ցուցաւ. ի հողոյն սկսեալ և առ հուրն դադարեալ: - 213. Դարձեալ և ի *կարգէ*՛ իրացն յայտնի՛ է: - 222. Իսկ որ ի **զ** օրն ասեմք ստեղծեալ զարարածս, այս *զկարգ* և զդասն նշանակէ մի քան զմի յետոյ. այլ ստեղծումն համանգամայն եղև: - 253. Պատասխանեմք և ասեմք թէ, ո՛չ է հոգին յետոյ. ո՛չ ժամանակաւ և ո՛չ բնութեամբ. այլ դասիւ և *կարգաւ*: - 254. Եւ ուսեալք զտնկականն՝ *կարգաւ* ելցուք ի զգայականն: - 263. Եւ մտանէ ի *կարգ* զինուորաց. վասն որոյ մովսէս **ի ի** ամենիցն ի վեր թուէր զզինուորսն: - 265. Թէպէտ ոմանք փոխեն զայս *կարգ*, ո՛չ ընդ դէմ բանիցս *կարգի*. այսպէս ասելով: - 265. Դարձեալ՝ *զկարգ* յղացման յարգանդին պահէ՛ աստ և ի ծննդեանն. այսինքն զսննդեան և զգայութեան և զբանի ներգործութիւնս այսպէս: - 266-267. Զայս *կարգ* պահէ՛ և ի զարգացման հասակին. զի մինչև ցեօթն ամն ատամն բուսանելով և փոփոխելով՝ նշանակէ՛ զկերակրականն: - 267. Դարձեալ ըստ այսմ *կարգ* ի իմաստութիւն է հաւատն. գիտութիւն յոյսն. հանճար սէրն: - 270. Իսկ սուրբն գրիգոր նիւսացին գեղեցիկ իմն *կարգաւ* մեկնէ՛: - 274. Դարձեալ՝ մարդոյս միա՛յն է *կարգ* կանոնաց, բնութեան, կամաց, և հարկի. իսկ անասնոց միայն բնութեան է: - 275. Նա՛խ՝ զի մերկացաւ յանմահութենէն և յանասնոց *կարգ* անկաւ: - 279. Եւ որ ոք կամեսցի զդարձն, անդրէն ի ձեռն նորին յարմարութեան այսինքն նորին *կարգին* կարողանայ ելանել ի նոյն: - 280. Ա՛րդ՝ անկման աստիճան առաջին էր հեշտութիւնն. որ ունի յինքեան զերեք *կարգն*: - 280. Այլ կամ իբր զիրեշտակս, կամ որպէս ի միոյ լուսոյ բազումք, կամ կուսութեամբ ծնունդ. որպէս սուրբ կոյսն մարիամ աստուածածին սրբութեամբ և կուսութեամբ ծնեալ փոխեաց *զկարգ* բնութեան ծննդեանս որ ի սերմանէ առն և կնոջ. զի սա՛ ծնունդ միայն ի մօրէ՛: - 280. Եւ թէպէտ կարելի՛ է ըստ բազմազան եղանակաց այս *կարգ* համեմատութեան ի սոյն խնամով աշխատասիրաց: - 304. Երրորդ՝ ծնաւ իսահակ ո՛չ բնականապէս ըստ բնութեան *կարգի*. զի անցեալ էին զաւուրբք. այլ էր աստուծոյ պարգև: - 304. Դարձեալ՝ նո՛ր էր ծնունդ սառայի և ո՛չ ըստ օրինաց *կարգի*: - 307. Նմանապէս և միջակ կապիւն, զի ուսանիմք յաստուծոյ ընկալեալք *զկարգ* կրօնիցն...: - 318. Այլ ասեմ թէ՝ ի *կարգի* արդարո՛ցն են նոքա վասն **գ** պատճառի: - 322. Հինգերորդ՝ ըստ առաջին *կարգին* դարձեալ ասացին բարեկամքն յոբայ՝ թէ հաճո՛յ ես աստուծոյ՝ լուիցէ և խօսեսցի աստուած. վասն այն առաջի նոցա խօսեցաւ և վկայեաց: - 326. Տասներորդ՝ մահ անդրանկացն. իբր ի փոքունցն *կարգաւ* ի խստագոյնն ելեալ: - 333. Որ և ցուցանէր յետ եօթանասուն ամի զդարձ գերւոյն, և զնորոգիլն հրէական *կարգին*: - 346-347. Եւ թէ գլուխն ջախջախի, ո՛չ է ուտելի. զի ո՛չ հատաւ պարանոցն. ի հեղձուցելո՛ց *կարգի* է: - 366. Եւ դարձեալ զորս թուէ ի *կարգն*: - 376. Հինգերորդ՝ թիւն զընտրութիւն՝ զդաս՝ և *զկարգն* ցուցանէ. զի գո՛յ ի նմա՛ առաջին միջին և վերջին. որպէս զինւորք. իսկ անթիւն խոտան և անկա՛րգ է. որպէս ծերք և տղայք: - 377. Եւ պակասն ի գիտութեանց բանին, և կնատքն և բղջախոհքն ո՛չ *կարգին* զինուորք աստուծոյ: - 377. Դարձեալ, քահանայութիւնն *կա՛րգ* է հրեշտակաց. պա՛րտ է սրբութեամբ պահել: - 381. Երկրորդ՝ թէ կրտսե՛ր է եղբայրն. որպէս առակն է եղբարց, որ առաջինն էառ և մեռաւ. և ապա երկրորդն, և որ ի *կարգին*: - 402. Զի **գ** *կա՛րգ* էին իշխանութեանն հրէից: - 421. Իններորդ՝ և մարմնական որդի էր դաւթի ըստ կարգի հասարակ մարդկան. իսկ քրիստոս ակնկալութեան և աւետեաց և ի վեր քան *զկարգ* բնութեան աստուած մարդացեալ: - 442. Այլ ընկալեալ են ի *կարգս* Աստուածաշունչ գրոց: - 451. Որ ո՛չ ըստ բնութեան *կարգի*, այլ ըստ անբաւազօր կարողութեանն աստուծոյ միայնոյ: - 469. Երրորդ՝ զի մի՛ իցէ ըստ հասարակաց *կարգի*. այլ ի վեր քան զբնութիւն որպէս ասացաւ: - 470. Երկրորդ՝ զի արարիչն ընդ բութեան *կարգս* եմուտ. որպէս մարդ լինիլն և ի կուսէ ծնանիլն: - 479. Անմարթ էր թողուլ զժողովուրդն ի դրան տաճարին և մերձիլ յանկողինս. և ըստ օրինացն **գ**օրեայ սրբութիւն ստանալ. որ անհնա՛ր է ամենևին. թէպէտ ասեն՝ գոյր ա՛յլ քահանայապետ որ *զկարգ* պաշտամանն կատարէր: - 484. Եւ տե՛ս և ի միտ առ. զի սոքա ի մի *կարգի*՛ են եդեալ. այսինքն ծունկն և ծու և կաթն. և որ ուտէ զմինն՝ կերիցէ և զմիւսն: - 510. Եւ *կարգաւ* վասն Արդարութեան. և Խոհեմութեան. Արիութեան. և Ողջախոհութեան: - 526. Քսանն**է**, Վասն ինն երանութեանցն. Աղքատութեան. Սգոյ. և Տրտմութեան. և այլոցն *կարգաւ*: - 526. Երեսունն**դ**, *Կարգ* քահանայութեան է **է**: - 526. Եւ ըստ յունաց թէ աստիճանն. և ըստ մեծին դիոնիսեայ. և մինչ ի **դ դ** *կարգն* փոքր է. հրաման ամուսնութեան: - 526. Երեսուննէ, Վասն առանձնակի եկեղեցոյս մեր *կարգաւ*. և զի՞նչպէս բաղդատի եկեղեցին՝ մարդն՝ և շինեալն: - 526. Քառասունն**ե**, Կանոն գլուխ և այլ *կարգ*. սաղմոս. և անբիծք:

- 527. Եւ *կարգաւ* բաժանելն. և թափել գինւոյն. և ընթրիսն. և բարեկենդանն: - 527. Յիսունևվեց, Թէ ուստի՞ է օրհնութիւն *կարգաց* եկեղեցւոյ: - 527. Եւ մի է ըստ խորհրդոյն՝ այսինքն մկրտութեամբ՝ պատարագելով՝ *կարգիւ*՝ և այլովն՝ որպէս տեսակաւ: - 533. Իսկ առաքեալն փոխէ՛ զայս *կարգ* բնական *ի կարգ* արհեստական և զարժանաւորսն նախադասէ: - 535. ...և առաքեալքն ձեռն դնելովն միայն՝ տային զհոգին սուրբ. և ի լեզուս խօսէին. և մարգարէանային ընդունօղքն. իսկ վարդապետք սուրբք՝ քարոզութեան նոցին հետևօղք և որդիք ծնողացն՝ երրորդ *կարգին* յետ նոցա: - 535. Դարձեալ՝ **դ** են *կարգ* գիտութեան: - 537. Ստուգաբանութեամբ կոչի կանոնն քանոն. այսինքն ուղղութիւն և *կարգ* և օրէնք: - 538. Այսպէս. որք ելեալ ի կանոնէն՝ չեն ի նոյն *կարգ* քրիստոնէից: - 538. Ըստ այսմ *կարգի* նախ կապելն է և ապա արձակելն. որպէս ասաց պետրոսի: - 541. Նոյնպէս և աթոռակալքն որ ի չորս աթոռս, ա՛յլ զայլոյ վիճակեալ ո՛չ կարէ կապել և ո՛չ արձակել. նոյնպէս և ի նոյն աթոռն, վերջինն զառաջ նոյն ո՛չ կարէ փոխել կանոնս և *զկարգ*: - 541. Յաղագս որոյ ո՛չ կարեմք զառաջնոյն հայրապետաց *կարգ* կամ զկանոնս զպահք կամ զայլ ինչ թիւրել և փոխել: - 541. Այլ կարէ յաւելուլ ի նոյն տեսակն ուղղութիւն և *կարգ*: - 541. Վասն որոյ զայս **գ** ժողովքս տիեզերական և միմեանց համաձայն ընդունիմք. այլ զքաղկեդոնին ո՛չ ընդունիմք. զի ընդ դէմ է առաջնոցն և կաքտումն դաւանութեան տօնից *կարգաց* և կանոնաց ամենայնիւ: - 541. Որ կանոնական գլխօք պայծառացոյց *զկարգ* եկեղեցւոյ և զուղղափառութիւն հաւատոյ. զոր **զ** ամաւ յառաջ եղծեալ էր եզրի կաթողիկոսի...: - 545. Գրէ *կարգս* կանոնականս իդ գլխօք. և հաստատէ՛ զեկեղեցի պայծառ *կարգօք* և ուղղութեամբ: - 545. Յորժամ անիծիւք աքսորեցին զներսէս եպիսկոպոս որ եղև աղանդովն ներսէսի, և այլայլեաց *զկարգ* և զուղղափառութիւն հաւատոյ: - 545. Սակայն *կարգ* գոյ ի մէջ նոցա և պատիւ և հնազանդութիւն և սէր. այլ իշխանութեամբ համահաւասարք են: - 547. Այլ արդ՝ ազգս հայոց ունի զառաւել ճշմարիտն և զառաւել բարին ի դաւանութիւնն և ի *կարգս*. այսինքն ի հաւատս և ի գործս: - 550. Նա՛խ՝ ըստ դրութեան *կարգի* աղօթիցն որ յեկեղեցիս նոցա: - 554. Եւ ոմանք ոչ ինչ համարին զյանցանս մտաց. և ո՛չ դնեն ի *կարգս* մեղաց. օրինակ տալով իբր զդատարկ սեղան ոչ ինչ կերակրել. և իբր զպտուղ ծառոց տեսութեամբ միայն վայելել: - 555. Ա՛րդ՝ ըստ առաջին *կարգին* թէ ցանկայ ի ներքս, ըստ որում է՛ հպարտութիւն և փառասիրութիւն: - 561. Երրորդ՝ զի շղթայք մեղաց այսպէս ունին *զկարգն*. զի նախ որկորստութեամբ լնու զորովայնն. և յետ այնորիկ պոռնկութեամբ թափէ՛ զնա. և ապա՛ արծաթ ժողովէ զի լնու զորովայնն և պոռնկի...: - 561. Իսկ փառասիրութիւն և հպարտութիւն ո՛չ են այսց *կարգաց*. այլ յորժամ զվեցեքին սոքա յաղթէ, ապա՛ փառասիրի և հպարտանայ: - 561. Երկրորդ պատճառ, զի այսոսիկ անասունքն գործեն ըստ բնական *կարգին*. իսկ մեք ի հակառակն փոխեմք: - 564. Երկրորդ՝ գործօղն որ ունիցի զճշմարտութիւն ինչ *կարգի*՝ թողու զայն և գործէ՛ զմեղս: - 564. Առ աստիճանս այս պարունակի է խորհուրդ եկեղեցւոյ. որ է՛ Մկրտութիւնն. Դրոշմն. Պատարագն. Ապաշխարութիւնն. *Կարգ* քահանայութեանն. Պսակն. և Օծումն: - 573. Զի՞նչ է *կարգ* Սիրոյն: - 576. *Կարգ* սիրոյն ասացաւ ի վերոյ յաստուածաբանութիւնն դիոնիսեայ ի **թ** գլուխն, ի **ժզ** համարն: - 576. Այլ և զձեռս ի հարկանել. յըմբռնել. և զոտս ի գնալ. համեստութիւնն ի նոսա ամենայնսն դնէ զեղանակն և *զկարգն*: - 581. Եւ որպէս ի թուումն պարգևացն է՛ *կարգ* արհեստական. զի նախ դնին արժանաւորագոյնքն: - 583. Այսպէս և ի թիւ երանութեանցս է՛ *կարգ* բնական. զի արժանաւորքն ի վերջո՛յ դնին: - 583. Վեցերորդ *կարգ* քահանայութեանն: - 587. Վեցերորդ *կարգն*. որ է՛ սպասաւորելոցն այսմ խորհրդոց որք են յեկեղեցի քահանայք և այլք: - 587. *Կարգն* է՛ ի խորհուրդ խոհեմութեան և գիտութեան. զի իմաստութեամբ և գիտութեամբ սպասաւորեսցէ խորհրդոցն և խրատեալ ուսուսցէ զժողովուրդն: - 587. *Կարգն* ընդ դէմ գիտութեան: - 588. Եւ ո՛չ *զկարգն* փոխել. որպէս թէ յառաջ զհոգւոյ անունն ասել և ապա զորդւոյ և ապա՛ զհօր: - 588. Որ և է՛ այս հերձուած մեծ և յանդուգն հայհոյութիւն ընդ դէմ *կարգաց* եկեղեցւոյ: - 589. Ութերորդ, զի թէ զզենումն կենդանեաց ո՛չ ունին հրաման զենուլ ազգ կանանց որ է՛ խտրութիւն մարմնաւոր սրբութեանց. զիա՞րդ պատշաճի տալ հրաման կանանց ազգի մերձենալ ի *կարգ* հոգևոր սրբութեան: - 589. Չորրորդ՝ զի մկրտութիւնն է անքակտելի կնիք ի հոգին. որպէս *կարգն* և դրոշմն. վասն որոյ ո՛չ կրկնին որք յանուն սուրբ Երրորդութեանն մկրտեցան: - 590. ...քահանայն ունի իշխանութիւն զեօթն խորհուրդ եկեղեցւոյ կատարել. և եպիսկոպոսն առաւել ունի. զի միայն տայ *զկարգն*, եկեղեցի օրհնէ և սեղան: - 594. Եւ հաղորդելն, որպէս անդամ ի գլուխն յօդէ. զի ամենայն կատարմանց կատարումն հաղորդութիւնն է. այսինքն *կարգին*՝ պսակին՝ խոստովանութեան՝ մկրտութեան՝ և այլն: - 594. Եւ ես *կարգաւս* քահանայութեան իշխանութեամբ և աստուածային հրամանաւն. թէ «զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս»: - 602. ...և ո՛չ ի բառնիլն ապականէ *զկարգ* եկեղեցւոյ. որ է վերջին օծումն. - 604. Այսպէս բազմապատիկ թողութիւն շնորհէ քահանայականն *կարգ*՝ ձեռնդնելով և բանիւ շնորհաց սրբելով:

- 605. Ապա թէ ոչ՝ ժա՛մ է քեզ ասել թէ ամենայն *կարգ* թաղման մարմնոյն՝ ո՛չ է օգուտ հոգւոյ ննջեցելոցն: - 605. Զի՞նչ է *կարգ* քահանայութեան: - 606. *Կարգն* է կարողութիւն զոր ետ եպիսկոպոսն այնմ զոր ի *կարգն* ընկալաւ և ի սպասաւորութիւն խորհրդոյ եկեղեցւոյ: - 606. Եւ են **է** *կարգ* ըստ **է** պարգևաց հոգւոյն սրբոյ: - 606. Երկրորդ *կարգն* է Ընթերցողութիւնն: - 606. Չորրորդ *կարգ* է Ջահավառքն. այսինքն դպրութիւն առնել և մոմեղէնս վառել ի սեղանն: - 606. Եւ զայս *կարգս* առաքեալքն կացուցին. յորժամ է սարկաւագունս կարգեցին ի սպասաւորութիւն: - 606. Նաև տէրն կացոյց զայս *կարգս*. յորժամ ի լերինն զարքայութիւնն երկնից աւետարանեաց նոցա: - 606. Զայս *կարգս* կացոյց քրիստոս յորժամ ի ժամ ընթրեացն զհացն ի մարմին իւր և զգինին ի յարիւն իւր փոխեաց: - 606. Եպիսկոպոսն և քահանայն, զսոսա ի մի *կարգ* թուէ ի դէմս վերնագոյն դասուց երկնաւորաց. որք են Աթոռք. Քերովբէք. և Սերովբէք: - 608. Վասն է՞ր **ե** *կարգ* է մինչ ի սարկաւագն. և նա՛ **զ**երորդ: - 608. Վասն է՞ր մինչ ի չորրորդ *կարգն* փոքրիկ ջահընկալութեանն կարեն ամուսնանալ, և յայնմ հետէ ոչ: - 609. Այս քան առ *կարգն*: - 609. Այլ և զինն *կարգ* աղօթից **ը** անգամ կատարեմք այժմ այսպէս: - 627. Նա՛խ՝ մեծն մեսրոպ *զկարգն* ապաշխարութեան. և սուրբն սահակ զաւագ շաբաթեանն: - 637. Այլ և *զկարգն* յարութեան՝ սորա՛ է ասացեալ մեծն վարդան ի տեսութիւն անթառամ ծաղկին: - 637. Զմեղաք յամենայնին, և *զկարգ* մեծ տօնիցն, յոհան օձնեցին: - 637. ...կամ յառաջնոյն ի վերջն ընթանալ *կարգաւ*. կամ ի վերջնոյն յառաջքն: - 642. Թէ տէրունի իցէ տօն, այսպէս է *կարգն*: - 642. Զնոյն *կարգ* և ա՛յժմ ունի եկեղեցի: - 643. Այլ և յամենայն խորհուրդս. այսինքն ի կնքելն, և ի պատարագելն, ի *կարգն*, ի պսակն, և յայլն: - 643. Եւ **դ** օր ի սուրբ խաչին *կարգն*: - 649. Քանի՞ են փոփոխմունք ժամատեղաց *կարգաց* ի բոլոր տարին: - 649. Այսինքն երեքն ի մին շաբաթն. որ է՛ Պահոց, Մարտիրոսաց, և Կիրակէն այլածև *կարգ*. Առաջաւորացն. Աղուհացիցն. և Յինանցն *կարգ*: - 649. Եւ խաչի և եկեղեցւոյ *կարգ*: - 649. Ասեմք թէ՝ ի յաղուհացսն կրկին *կարգ* է. այսինքն մեծ և փոքր: - 651. Զմեծ *կարգն* է՛ կանոնեալ տն եղբայրն յակոբոս որ զընթերցուածն կարգեաց...: - 651. Եւ զփոքր *կարգն* մեծն կիւրեղ եէմի հայրապետն. է՛ սկիզբն **բ** շաբաթի, և աւարտն ի **ե** շաբաթի: - 651. Վասն այն տէր ամենակալն ի մեծ *կարգն* սկսանի: - 651. Ապա պա՛րտ է քեզ ի փոքր *կարգն* ուտել զամենայն աւուրս և զմեծն պահել: - 651. Այս քան վասն Աղօթից և *Կարգաց* եկեղեցւոյ և Պահոց: - 654. Նախ՝ զի հաւասարութիւն ունիմք առ միմեանս. այլ և *կարգ*. որ է՛ առաջին միջին և վերջին: - 656. Իսկ *զկարգ* մայրօրհնէից՝ սուրբն կիպրիանոս կարգեդոնացի: - 658. Եւ ղազար թարգման եբեր ի հայս՝ ի **ժգ** ամի թարգմանութեան սրբոյն սահակայ առն աստուծոյ որ էր նախանձախնդիր *կարգաց* եկեղեցոյ: - 659. Իսկ զսըքեմայ *կարգն* սուրբն դիոդորոս եպիսկոպոս պամփիւլացոց քաղաքի. յառաջին ամի իւրոյ. հրամանաւ մեծին անտօնի և **բ** թեբայեցոցն. և **բ** սկիւթացւոց լերինն: - 659. Այս քան մինչև ցայս վայր՝ վասն այժմոյս, և *կարգաց* եկեղեցւոյ...: - 659. Չորրորդ՝ Վասն ոգւոյ. և *կարգ* կատարելոյ. և պատանաց, և այլն: - 660. Զի՞նչ է *կարգ* կատարելն: - 671. Կոչի *կարգ*, Նախ զի քրիստոնէից մին *կարգ*՝ ննջեցելոց կատարումն է ի վերայ **է** խորհրդոցս. ութերորդ խորհուրդ և *կարգ*. վասն ութերորդին կենաց: - 671. Երկրորդ կոչի *կարգ*, զի զիւրաքանչիւր ոք յիւրում *կարգին* յօրհնեմք և կատարեմք...: - 671. ...այսինքն ա՛յլ *կարգ* քահանայից. և ա՛յլ կրօնաւորաց. ա՛յլ աշխարհականաց. և ա՛յլ տղայոց: - 671. Երրորդ կոչի *կարգ*, զի զոր ինչ մեք առ մարմին ննջեցելոցն կատարեմք, զնոյն *կարգ* և հրեշտակք առ հոգիսն կատարեն այժմ և ի յարութեանն աւուր: - 671. Նոյնպէս թէ քահանայ իցէ՝ *կարգիւն* պատեն և դնեն ի վերայ բեմին. առաջի սեղանոյն: - 671. Նա՛խ՝ զի նա՛ միայն օծաւ յառնուլ *կարգին*: - 672. Իններորդ, երիցս օծանի. այսինքն ի մկրտութիւնն, ի *կարգն*, և ի թաղումն...: - 673. Տասներորդ, նշանակէ զվերջին օծումն. զի ամենայն *կարգ* զոր մարմնոյն կատարեմք՝ հոգւոյն է և մարմնոյն որպէս ասացաք: - 673. Այսպէս և հանգստարանք եպիսկոպոսաց ի *կարգս* իւրեանց, և քահանայից, և կրօնաւորաց, և թագաւորաց, և աշխարհականաց: - 674. Զի ցուցցէ թէ նմանապէս լինելոց է ի յարութեանն հանգիստ նոցա ի *կարգս* իւրեանց: - 674. Այսպէս է *կարգ* կատարման ննջեցելոց սրբոց քահանայից և կրօնաւորաց և առ հասարակ ժողովրդոց: - 674. Արժանաւոր է թէ անարժան՝ պա՞րտ է կատարել *զկարգն* թէ ոչ: - 674. Նոյնպէս և մեզ շնորհացն այնմ պարտ է հնազանդիլ և կատարել *զկարգն*: - 674. Նոյնպէս և ամենայն աշխարհականաց պա՛րտ է կատարել *զկարգս* իւրեանց...: - 674. Ա՛յս է խորհուրդ կատարման *կարգին*: - 675. ...որպէս ցուցաւ ի վերոյ **լե** գլուխն ի *կարգ* աղօթիցն ի **խա** համարն: - 676. Այսուքիկ այս քան վասն *կարգ* կատարելոյ առաջին աւուրն: - 679. Զի այս ո՛չ է ի *կարգէ* դատաստանին. այլ ի սքանչելեաց միածնին. որպէս արեգական խաւարիլն, և գերեզմանաց բանիլն, և այլն: - 697. Առաքեալն պօղոս ո՛չ զայն ասէ թէ յապաղելով լինի յարութիւնն, այլ *զկարգն* ցուցանէ ոչ ժամանել ննջեցելոցն: - 717. Իսկ զի նիւթ խաչին մնայ ըստ ոմանց՝ այս ո՛չ է ըստ բնութեան *կարգի*, այլ սքանչելեաց հարկի որպէս ցուցանի յառաջիկայդ: - 727. Վասն զի երկին որ շարժի՝ յօր դատաստանին դադարի և հաստատի յայն *կարգն* յոր նա՛խ ստեղծան.

արեգակն յարնելս և լուսինն յարևմուտս: - 727. Այսպէս և այս ո՛չ է ըստ բնութեան *կարգի*. զի նոյն բանն աստուած ի սա՛ է միաւորեալ անբաժանապէս: - 733. Այսմ փայտի ո՛ստ են **գ** *կարգ* յեկեղեցի աստուծոյ. այսինքն ամուսնացելոց, ժուժկալողաց, և կուսանաց: - 755. Երեք *կարգս* այսոքիկ գուշակեին երեքումբք արամբքն զորս եզեկիէլ մարգարէացաւ. փրկելոցն Նոյիւ Յոբաւ և Դանիէլիւ: - 755. Վեցերորդ, այլ և բարեպաշտ թագաւորք՝ և իշխանք՝ և իշխեցեալք՝ ունին զայս *կարգ*. թէ օրինօք կենցաղավարին ըստ հրամանացն աստուծոյ: - 757. Եւ են ամենայն հարցմունքդ **ռժ**ան գլխով. որպէս յա՛յտ է ի *կարգիդ*: - 773. Իսկ առ լուծումն խնդրոյս թէ վասն է՞ր արդեօք առ նորս շնորհ՝ որպէս աւազանին և *կարգին* ո՛չ բառնի ընդ բառնիլ շաղկապին. իսկ առ հնովն բարձաւ. որպէս յա՛յտ է ի վերոյ ասիցդ ադամայ և յայլոցն: - 782. Նորս խորհրդոյ շնորհք ոմանք են անիբաց դնելիք. զի են կնիք ի հոգին անփոփոխ գոլով ընդ նմա. որպէս է՛ շնորհք կնքոյն դրոշմին և *կարգին*: - 783

***ԸՍՏ ԿԱՐԳԻ +*** Նա՛խ՝ եթէ ուշիմ և ապուշ և այլն *ըստ կարգի*, սոքա եթէ ի մարմնոյն խառնուածոյ պատճառին՝ և եթէ բնական որակութեամբ հոգւոյն՝ նման և աննման գոլ, առանց ներգործելոյ ո՛չ չար են և ո՛չ բարի. ո՛չ գով. և ո՛չ պարսաւ հետևի. որպէս և ո՛չ բնական բարուց անասնոց: - 19. Զի քրիստոս Քահանա՛յ է *ըստ կարգին* մելքիսեդեկի **ծ** կերպիւ: - 50. Երկրորդ՝ զի թէ նա՛ շնորհիւ ունի զորդիութիւնն և ո՛չ էապէս, ապա ուրեմն մասամբ և *ըստ կարգի* ունի՝ և ո՛չ զլրումն աստուածութեանն. զի շնորհն է մասնաւո՛ր պարգև: - 66. Ապա և որդին մարդոյ եղիցի *ըստ կարգին* հրէից և ո՛չ առաւել: - 96. Եւ է սա՛ երրորդ *ըստ կարգի*. զի յերևելեաց և ի մարմնականաց աստուածաբանութիւնս այս յառաջագայի: - 122. Իսկ բացբարձականն ըստ գերազանցութեան է. զի գերազա՛նց բան է՝ և գերագունա՛կ միտ. և գերագոյն և առաւել հայր՝ և որդի. և ո՛չ *ըստ* մեր *կարգիս* որպէս մեր բանս է և միտք: - 124. Այսպէս և արարածքս *ըստ կարգի*: - 131. Եւ ասեն դո՛ւ ես քահանայ յաւիտեան *ըստ կարգին* մելքիսեդեկի: - 144. Յետ ընդդէմ արտաքս աքսորելոյ զարտաքինսն. և ընդ մէջ հերձելոյ զհերձուածօղսն, և զճշմարիտն աստուածաբանութիւն հաստատելոյ ի մեզ, բե՛ր սկսցուք զսկիզբն արարչութեան եղելոց մինչ ի վախճան կատարման այժմոյս՝ *ըստ կարգի* հին և նոր կտակարանաց հետևեալ: - 156. Որպէս յա՛յտ է ի լուսինն յորժամ ծնանի յարևմուտս. և գայ յարնելս *ըստ կարգի* կենդանակերպիցն: - 189. Վասն է՞ր զերկնայինսն կատարեալ ստեղծ աստուած, և զերկրաւորքս *ըստ կարգի* յաւուրս վեց: - 192. Երկրորդ՝ ասեն թէ՝ ի սկիզբն աշխարհիս արար զբնութիւնն յանկարծակի. այլ բնութիւնն յամելով և *ըստ կարգի* յանկատարութենէ ելանէ ի կատարումն: - 192. Իսկ որ զերկրաւորքս *ըստ կարգի*, ամենագութ մարդասիրութեանն է երևումն. ո՞րպէս խնամով զպէտս մարդկան յայնքան աւուրս կատարեաց: - 192. Չորրորդ՝ երկիրս այս տեղիք ուսմա՛ն է մեր՝ *ըստ կարգի* կատարեցան. զի մեք զամենայն ինչ *ըստ կարգի* ուսցուք. և մի՛ անկարգ և շփոթեալ: - 192. Հինգերորդ՝ զի մարդն տէր և իշխա՛ն է երկրաւորացս, գիտասցէ *ըստ կարգի* զիշխանութիւնն իւր ուղղել. և մի՛ անկարգ և անիրաւ: - 192. Նոյնպէս և այլքն *ըստ կարգի*. Աբրաբամ. Մովսէս. Դաւիթ. և Քրիստոս: - 193. Վասն է՞ր ասէ գիրն՝ «եղև օր մի». և ո՛չ թէ՝ առաջին. և այլն *ըստ կարգի*: - 193. Եւ այլքն *ըստ կարգի* մարգարէիցն կոչման: - 200. Երրորդ՝ *ըստ կարգի* դրութեանցն: - 221. Չորրորդ՝ *ըստ կարգի* աւուրցն: - 221. Իսկ այլ անդամքն *ըստ կարգի* զմիջին և զվերջին: - 232. Երկրորդ՝ *ըստ կարգի* տարերց. թիկունքն թանձր և պինտ՝ է՛ երկիր: - 234. Վասն է՞ր մասնկանցն դիրք՝ աչքն՝ ի վերոյ է եդեալ. և ականջն ի կողմանէ. և հոտոտելիքն զառ ի վայր. և այլն *ըստ կարգի*: - 235. *Ըստ կարգի* տարերց է և դիրք մասանցն: - 235. Առաջին և առաւել գոյացութիւն՝ է՛ անհատ անձն և դէմն. և Երկրորդ և նուազ՝ տեսակն և սեռ՝ և այլքն *ըստ կարգի*: - 235. Եւ դիրքն *ըստ կարգի*՝ տեղի է: - 236. Այսպէս և հոգին է ի նմա ծաղկեալ, և յետոյ յայտնի *ըստ կարգի*: - 255. Այլ հակադարձեալ սոքա *ըստ կարգի* և ըստ դասու՝ յառա՛ջ է տնկականն քան զզգայականն, և նա՛ քան զբանականն ի յերևումն. այլ էութեամբ համանգամայն են. որպէս անդ ուրեմն ասացաք վասն հոգւոյ և մարմնոյ: - 260. Դարձեալ *ըստ կարգիս* հարցանեմ թէ յո՞րժամ, և ի քանի՞ս սկսանի ներգործել տնկականն և զգայականն և բանականն: - 261. Յետ ելիցն ադամայ ի դրախտէն կենաց, հարցանելի է վասն նախահարցն *ըստ կարգի*: - 286. *Ըստ կարգիս* խնդրեմ և զայս: - 291. Եւ յետ այնորիկ *ըստ կարգի*: - 291. Երրորդ՝ անդրանիկ են հրեշտակք քան զմարդիկ *ըստ կարգի* և պատւոյ. թէպէտ բանականեմք որպէս նոքա: - 309. Վեցերորդ՝ մարմինն երէց է *ըստ կարգի* քան զհոգին. և յա՛յտ է, զի որ քան կենդանի եմք՝ զերիցագոյն պատիւն մարմնոյն տամք...: - 310. Եւ յարութիւնն է՛ սքանչելեօք և *ըստ կարգի*: - 314. *Ըստ կարգի* է, զի նոյն հոգի և նոյն մարմին յառնէ: - 314. Եւ ապա *ըստ կարգի* թագաւորք. Դաւիթ. Սողոմոն. և այլք մինչ ի գերութիւնն: - 421. Ապա ուրեմն պա՛րտ է ամենայն մարդոյ *ըստ կարգի* և որպիսութեան լուծ կարգել: - 432. Իններորդ՝ և մարմնական որդի էր դաւթի *ըստ կարգի* հասարակ մարդկան. իսկ քրիստոս ակնկալութեան և աւետեաց և ի վեր քան զկարգ բնութեան աստուած մարդացեալ: - 442. Ա՛րդ՝ *ըստ կարգի*՝ Բնականն՝ ադամայ տուաւ: - 528. Ապա ուրեմն յա՛յտ է

լուծումն տարակուսանացդ *ըստ կարգի*. և ոչ ոքն ի նոցանէ հակառակ գոն միմեանց որպէս ասացաւ: - 558. Վասն այն առաջին է ամբարտաւանութիւն, և ընդ նմա նախանձն, և այլքն *ըստ կարգի*: - 561. Երկրորդ պատճառ, զի այսոսիկ անասունքն գործեն *ըստ* բնական *կարգին*. իսկ մեք ի հակառակն փոխեմք: - 564. Նոյնպէս Առնելն կամ Կրել. ընդ դէմ բնութեանն առաւել ծանր է քան որ առնէ և կրէ *ըստ կարգի* բնութեան: - 565. Եւ զամենայն մեղք *ըստ կարգի* վերոյ գրելոց խոստովանեսցի: - 601. Ի յայս միտս և զեօթն օր շաբաթուն փոխեցին առաքեալքն ի կիրակէ. որ **ը** երորդ է *ըստ կարգի*: - 627. Երրորդ՝ *ըստ կարգի*: - 641. Եւ յերեքշաբաթին *ըստ կարգի*՝ մարգարէիցն և յովհաննու. որ միջնո՛րդ է օրինաց և շնորհաց: - 642. Երրորդ *ըստ կարգի*. և է՛ կարգն կրկին...: - 642. Զի՞նչ նշանակէ բաժանել զբաժակն *ըստ կարգի*: - 656. Արդ՝ *ըստ կարգի*՝ սերմանքն յառաջ են քան զարդիւնսն. և նախատակքն քան զպսակն. վասն որոյ որք աստ փորձ գտանին, անդ առցեն զպսակն կենաց: - 662-663. Ո՛չ նոյնն մարմնապէս, այլ նմանն հոգէպէս. ծարաւումն, խաւարն, հրախառն կարկուտն, ժահահոտն, և այլն *ըստ կարգի*: -751

**ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ +** ...զի առաջին աղօթք յամենայն *կարգադրութիւնս*՝ գոհանամք պարտ է դնել. բայց առաւել ի կնքելն՝ և ի թաղել մեռելոյն: - 659

**ԿԱՐԳԱՊԵՏՈՒԹԻՒՆ +** Նախ՝ ըստ սրբոյն դիոնէսիոսի որ ինն ասէ գոլ զդասս *կարգապետութեան* նոցա: - 134

**ԿԱՐԳԱՒՈՐ +** Յինգերորդ՝ բարին *կարգաւոր* է և չարն անկարգութիւն: - 13-14. Ընդ *կարգաւորս* շնալ կանանց՝ սրբութիւն նոցա համբաւեն: - 34. Դարձեալ հարցանեմ, հայր և որդի *կարգաւո՞ր* բղխեն զհոգի թէ անկարգ: - 63. Զի թէ *կարգաւոր*, երբեմն մինն՝ և յետոյ միւսն. որ յառաջին բղխօղ է՝ նա՛ է բղխօղ. և ո՛չ վերջինն: - 63. Նախ՝ եթէ անեղ է աստուած՝ ըստ որում անսկիզբն և անեղ էին արարածք ըստ անգոյին՝ *կարգաւո՛ր* է և յոյժ որպէս դու ասացեր. զի անեղ էն աստուած յառաջ էած զանեղն ի յէութիւն: - 113. Ա՛րդ՝ *կարգաւո՛ր* է զի անեղն աստուած՝ զանեղն ըստ տեսութեան՝ յեղելութիւն ածցէ ըստ գոյացութեան իւրեանց: - 114. Եւ որովհետև ծանեաք զայս, պատասխանե՛մք ասելով՝ եթէ *կարգաւո՛ր* է և յոյժ: - 114. *Կարգաւոր* էր նախ պատրաստել զարքունիս որ է երկինք և երկիր. և զգահոյս որ է՛ դրախտն. և զսպասաւորքն որ են կենդանիքն. և զմեծութիւնս տնկոց և բուսոց. մանաւանդ ոսկւոյ և արծաթոյ և ականց ի սիրտ երկրի գանձել. և ապա՛ թագաւորին բնակիլ: - 230. *Կարգաւո՛ր* է ապա՝ զի յանշնչոյն փոխեսցի յանէն և յանգոյն. որ մերձակայ և ներքո՛յ է անշունչ մարմնոյն: - 252. *Կարգաւո՛ր* է և աստ հարցանել թէ վասն է՞ր անասունք յերրորդ ամին կարեն զնմանն ծնանիլ, և մարդն ի չորեքտասանն: - 264. Նա՛խ՝ զի խորհրդական միտքն *կարգաւոր* և առանց տարակուսանաց տեսանէ. իսկ երազն անկարգ և տարակուսանօք և զանհնարն տեսանէ որպէս ի վերայ օդոյ թռչիլ, և ի ծովու գնալն, և աղքատաց թագաւորել, և այլն: - 268. Եւ կապ կրօնից որպէս *կարգաւորաց*: - 317. **Զի էգն, և չէզոտքն, և անկատարն, և անհաւատն, և արիւնահեղն, և *կարգաւոր*, սոքա վեցեքեան ո՛չ կարեն զենուլ զի պիղծ է զենն նոցա**: - 365. Ապա յա՛յտ է զի և ո՛չ այլ *կարգաւորք* զենցեն կենդանիս. որք են սարկաւագունք և այլք. զի անարիւն զենմանն կարգեալ են սպասաւորք: - 366. Այլ և կատարումն չորից *կարգաւորաց* օրինաց: - 494. Եւ տէր սիոն հայոց կաթողիկոսն անդր հասեալ բազում եպիսկոպոսօք և մեծամեծ ազատօք հայոց և իշխանօք նոցին. ընդ դէմ աղանդոց ա՛յնր ժամանակի, և թուլութեան *կարգաւորաց* եկեղեցւոյ, և բռնութեան իշխանաց: - 545. *Կարգաւոր* է զի ո՛ր դաս որ սկսանի զերգն, նոյնն աւարտէ փառօք. թէ այս՝ թէ այն: - 636. Այսպէս և այս *կարգաւո՛ր* է և ուղիղ վասն բազում պատճառի: - 662. Եւ գլխաւորի՛ սա՛ կրկին եօթեամբք *կարգաւոր* հարցմամբք: - 773

**ԿԱՐԳԱՒՈՐԱՊԷՍ +** Պատասխանեմք նախ, որպէս ասէ ոսկէբերանն թէ՝ նորածնեալքն աւազանաւն՝ ըստ չափու շնորհացն արժանաւորեին իմաստութեան, թարգմանութեան, և այլն. այսպէս և ոմն շնորհս ընդունէր աղօթելոյ *կարգաւորապէս*. զի ի նմանէ ուսանէին և այլքն աղօթել: - 59. Յետ այսորիկ հարցանելի՛ է ի նոր օրինաց և յեկեղեցւոյ *կարգաւորապէս* ընդ մարդեղութեան բանին յարմարեալ. իբր պատճառելիք առ պատճառ նորին հետևեալ և շարադասեալ: - 528. Եւ դարձեալ՝ ի յարքայութիւնն երկնից այսպէս ըստ իւրաքանչիւր չափու և արժանեաց *կարգաւորապէս* պարգևէ աստուած զիմաստութիւնն. և ո՛չ անկարգ. կամ զրկելով. կամ աչառելով: - 656

**ԿԱՐԳԱՒՈՐԵՄ +** Ո՛ր անեղն զեղականքս յառաջ էած. զի եղականն յեղականէ՛ և անեղն յանեղէ՛ *կարգաւորի*: - 113. Դարձեալ՝ առաջինքն *կարգաւորեն* զգործս հրեշտակաց և տէրութեանց մարդկան: - 136. Զի իմաստունն թէ մեծանայ, գիտէ՛ *կարգաւորել*: - 178. Դարձեալ՝ մարդո՛յն է *կարգաւորել* զկիրս բարկութեան և ցանկութեան ըստ կանոնաց բանականին: - 274. Իսկ **թ** ցեղն նշանակէ՛ զեկեղեցի նոր օրինացս **թ** աստիճանօք *կարգաւորեալ*: - 391. Վեցերորդ՝ առաջին օրէնքն է կանոնաց. որ *կարգաւորէ՛* զհոգի. իսկ երկրորդն դատաստանաց. որ *կարգաւորէ՛* զմարմին: - 393. Նա՛խ՝ զի կտակովն զմարմնաւորքն

*կարգաւորեն*, և օրհնութեամբն զհոգևորսն: - 408. Իշխանութիւնք ամենայն ի վերուստ յաստուծոյ են իջեալ առ ի մարդիկ վասն *կարգաւորելոյ* զնոսա...: -Առաջինն ուսուցանէ *կարգաւորել* զբարս իւր առ ինքն: - 580. Երկրորդն *կարգաւորել* զընտանիսն: - 580. Նախ խոհեմութիւն սրտին. և այս ի *կարգաւորել* զներկայն, ի միտ ածել զանցեալն, և նախատես լինիլ ապագային...: - 580. Զի սոքօք մարդկան հոգիք *կարգաւորին* և ո՛չ այլ կենդանեաց: - 581. Եւ զի դժուարին է հոգւոյ մարդոյ *կարգաւորել* զինքն և սրբել ի մեղաց. վասն այսորիկ օգնութիւն տայ աստուած հոգւոյ մարդոյ զեօթն պարգևս հոգւոյն սրբոյ: - 582. Չորրորդ ասեն եթէ՝ **դ** աստիճանք ըստ չորից տարերացդ *կարգաւորին*: - 609. Բայց դարձեալ տեսանել պարտ է զկանոնագլուխս ընդ կանոնացն *կարգաւորեալ*: - 629. Եւ այսպէս *կարգաւորին* հասարակութիւնք: - 775

**ԿԱՐԳԱՒՈՐԻՉ +** Եւ զի միջնորդութիւն ժամանակի *կարգաւորիչ* է ամենայն գործոց: - 780

**ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ +** Նախ՝ հայելով ի կերպարանս և ի նմանութիւնս որ է՛ *կարգաւորութիւն* արարածոց. և սոքօք ի յարացոյցն սոցա ելանել, և ի նմանէ դարձեալ ի նախատիպ յարացուցին ելանել. և այնպէս տեսանել թէ է՛ աստուած պատճառ ամենայնի: - 119. Եւ են վերջին *կարգաւորութիւնք*: - 134. ...զնոյն և ամենայն հեթանոսք առնեն. իսկ թէ ի հեթանոսս այսպիսի պարկեշտութիւն պարտ էր առնել, քանի՞ ևս առաւել յեկեղեցիս պարտ է լինիլ. որ է ճշմարիտ *կարգաւորութիւն* և սրբութեան օրէնք: - 589. Զօրհնութիւն *կարգաւորութեանցս* այսուցիկ ո՞վ է արարեալ...: - 658

**ԿԱՐԳԵՄ +** Եւ գիտելի է այս, եթէ նախասահմանութիւնն աստուծոյ առնէր հարկ գործոց մարդկան, չարի և բարւոյ, լինէր բազում անպատշաճութիւն որ վասն բախտին ասացեալ եղև. զորև աստ *կարգեսցուք*: - 20. Իսկ թէ յո՛չ ումեքէ, *կարգեցեր* զնա ընդ յոչ էից գոյացելոց: - 37. Պատասխանեմք թէ՝ ո՛չ ասէ պարզաբար ամենայն, այլ *կարգէ՛* զիետն թէ՝ ամենայն որ ինչ եղևն. թէ եղեալ ցուցանես զհոգին, և ես հաւատամ թէ ի ձեռն որդւո՛յ է եղեալ: - 53. Վեշտասաներորդ՝ մանաւանդ զի յոյժ անվայելուչ է *կարգել* զծառայն ընդ տեառն՝ և զստեղծուածն ընդ ստեղծողին՝ յորժամ ա՛յլ է բնութեամբ: - 67. Զի թէ ասես զառ ի յաստուծոյ հօրէ բանն, ահա *կարգեցեր* զնա ընդ եղեալքս կարօտ սրբութեան և շնորհօք որդիութեան: - 69. Զի եթէ ըստ ինքեան բանին, ահա՛ *կարգեցեր* զանմահն ընդ մահւան: - 70. Եւ հաստատեալ այսու եթէ՝ հոգին և մարմինն է միաւորեալ ընդ բանին աստուծոյ, *կարգէ՛* և զայն. բայց որդիք ասէ ո՛չ **բ**. և ո՛չ աստուածք. զայս վասն դիմաց միաւորութեանն ասէ: - 80. Երկրորդ՝ զի **Ժ**երորդ է մարդս *կարգեալ* ի թիւ նոցա ըստ հարիւրերորդ մոլորեալ ոչխարին, և կորուսեալ **Ժ**երորդ դրամին: - 134. Այլ վասն առանձնութեան դասուցն՝ է՛ կարգ ի նոսա, որպէս դիոնէսիոս *կարգէ՛*: - 135. Իսկ վերջինն այսպէս *կարգի*: - 136. Հրեշտակք ի վերոյ ջրո՛յ են. բայց ի ներքոյ հաստատութեան խնամածուք *կարգեալ* են աշխարհի և մարդկան: - 150. Հնգետասաներորդ՝ անդադա՛ր է ի ներգործութիւն յորս *կարգեցաւ*: - 186. Ուսաք յիմաստնոց թէ՝ ի բաժանիլ լեզուաց **հբ** տանուտերանց, և ի գնալն յիւրաքանչիւր տեղիս ի հեռու կամ ի մօտաւոր աշխարհս. զօրն զայն տարեմուտս *կարգեցին*. և ուսուցին որդւոց իւրեանց պատւեալ զօրն զայն տրօք ընչից: - 200. Դարձեալ՝ նախախնամութեանն է այսպէս *կարգեալ*. զի մարդս ունի դայեակ և սնուցօղ, պէտս ունի խնամարկութեան զի հասցէ ի չափ հասակի: - 267. Չորրորդ՝ կամէին զինքեանս արդա՛ր ցուցանել, և յանցաւոր զյոբ. և վասն այսմ *կարգէին* ընդ յոբայ: - 324. Երրորդ՝ ժողովումն արմտեաց ի յաշնան. որ ի թշրինի **Ժ** *կարգեցաւ*: - 340. Սոքա **բԺ**ան ազգ նուէրք գլխաւոր պատարագք *կարգեալ* ի մեծէն մովսիսէ՛: - 359. Ապա յա՛յտ է զի և ո՛չ այլ կարգաւորք զենցեն կենդանիս. որք են սարկաւագունք և այլք. զի անարիւն զենմանն *կարգեալ* են սպասաւորք: - 366. Պա՛րտ է տալ զսոսա ի քահանայսն որպէս *կարգեաց* մեծն մովսէս ի հինն, և սուրբն գրիգոր ի նորս: - 367. Իսկ ի միասին *կարգէ՛*, զի կամ երկիցեն յանիծիցն, և կամ ցանկասցին օրհնութեանն և պահեսցեն զօրէնսն աստուծոյ: - 403. Եւ այսպէս *կարգեցան* առաջնորդք. զի յետ յեսուայ տիրեցին այլազգիքն ամս **ը**: - 420. Եւ այս գիտելի է, զի ամենայն խոստովանելոց թէ կատարեալ թէ անկատար, պա՛րտ է *կարգել* զապաշխարութիւն. այսինքն զհատուցումն փոխարինաց: - 432. Ապա ուրեմն պա՛րտ է ամենայն մարդոյ ըստ կարգի և որպիսութեան լուծ *կարգել*: - 432. Քսանգ, զօրավար *կարգեցաւ* դաւիթ. և տէր մեր գլուխ զինւորաց եկեղեցոյ: - 436. Երկրորդ՝ զկանոնս ապաշխարութեան նշանակէ զոր խոստովանահայրն *կարգէ*. զի թէ յանցանէ ոք՝ մեղանչէ՛: - 439. Եւ որպէս *կարգեաց* տեառն եղբայրն յակոբոս զընթերցուածն. և ի նմին աւուր զերկու տօնս: - 482. Եւ զինչ և իցէ պատճառաւ *զկարգեալն* առաքելոցն փոխեցին զծնունդն և զտեառնընդառաջին տօնն: - 482. Ա՛րդ՝ *կարգեցին* բազմազան վկայութիւնս զոր հաստատապէս տօնեմք զծնունդն քրիստոսի ի վեցն յունվարի: - 483. Երեքտասաներորդ՝ ականատես տնօրէնութեանն եղբայր տեառն յակոբոս որ *կարգեաց* զընթերցուածն, յունվարի վեցն աւանդեաց զտօնն ծննդեանն. և ի նոյն օրն դարձեալ զմկրտութեանն: - 484. Երրորդ՝ զի *զկարգեալ* օրէնսն յինքենէ՞ պա՛րտ էր անձամբ կատարել. զի հաւատասցի թէ ի նմանէ՛ են *կարգեալ*: - 485. Երրորդ՝ ի

վախճանն. զի յովհաննուն ունէր *կարգեալ* առ մկրտութիւնն քրիստոսի. զի յա՛յն սովորեցուցանէր զժողովուրդն որ էր կատարեալ մկրտութիւն: - 488. Եւ տե՛ս, զի լուսաւորիչն *կարգեաց* զնաւակատիսս յայսմ աւուր որ էր յաւուրս նիկիական ժողովոյն. զոր յառաջն ունէին ամենայն ազգ, զնոյն *կարգեաց* մեզ: - 509. ...որպէս ասէ առաքեալն, «ո՛չ ուստեք է իշխանութիւն, եթէ ոչ յաստուծոյ. և որ *կարգեալ* են՝ յաստուծոյ են *կարգեալ»:* - 537. Ասեմք առ այս, եթէ համակարգ և համիշխանք են վերջինն ընդ առաջնոյն ի *կարգել* և ի յուղղել. այլ ո՛չ ի թիւրել և ի քակել. զի առաջնոյն աւանդապա՛հ է վերջինն նո՛յն մտօք և նո՛յն կամօք: - 541. Որպէս որք յեփեսոս՝ զնիկիականն ուղղութիւն ո՛չ քակեցին. այլ ի նոյն տեսակ նոր կանոնս *կարգեցին* ի հաւատս ուղիղ: - 541. Եւ վերստին հաստատեցին *զկարգեալսն* սրբոյն գրիգորի և ներսէսի և սահակայ և մաշտոցի: - 544. Ժողովեալ բազում եպիսկոպոսաց յամենայն կողմանց. և իշխանաց և մեծամեծաց հայոց. *կարգեցին* սահմանս կանոնականս **իբ** գլխով. և պայծառացուցին զեկեղեցի սուրբ: - 545. Զի **դ** գլխաւորագոյն աթոռք *կարգեցան* ընդ բոլոր տիեզերս վասն չորից աւետարանչացն: - 549. Սոքա **է** սիւնք և **է** խարիսխք են եկեղեցւոյ գլուխ *կարգեալք* ընդ բոլոր տիեզերս որպէս ասացաւ: - 549. Ապա ուրեմն և հայհոյելն մտօք և մախալն և նենգելն կատարեալ չարութիւն է և մեղք. զոր մարգարէն ընդ մարդասպանս *կարգէ*...: - 557. Երբեմն նշանակէ զշարժումն. որպէս ասի յերգսն՝ «*կարգեաց* յիս զսէրն»: 575. Այս վասն համանման գործոց նոցա այսպէս *կարգի* որ են ի նոսա. այլ յոյսն և սէրն են ի կամքն: - 578. Զի նա պարունակէ՛ զառաքինութիւնս որ *կարգեն* զմարդ առ ընկերն. որպէս ուղղութիւնն և առատաբաշխութիւնն: - 578. Եւ որ *կարգեն* առ ինքն. որպէս ապաշխարութիւնն և անմեղութիւնն: - 578. Եւ որ *կարգեն* զմարդն առ աստուած. որպէս աստուածապաշտութիւնն և հնազանդութիւնն: - 578-579. Դարձեալ՝ է և այլ պատճառ. զի *կարգին* ընդ դէմ երից մեղացն և ընդ դէմ չորեքկին պատժոցն: - 587. ...որպէս և գրեալ է ի գիրս նիկիական կանոնացն եթէ զճառայս ի ժառանգութիւն եկեղեցւոյ *կարգել* ո՛չ հրամայեմք...: - 589. Եւ սուրբ լուսաւորիչն զոր ի ժամանակին այնմիկ էր՝ զա՛յն *կարգեաց* ի մերս եկեղեցի. և ունիմք հաստատապէս: - 599. Չորրորդ՝ եթէ անփոյթ արար և մոռացաւ *զկարգեալ* ապաշխարութիւն փոխարինացն, պա՛րտ է կրկին խոստովանիլ...: - 603. Եւ զայս կարգս առաքեալքն կացուցին. յորժամ է սարկաւագունս *կարգեցին* ի սպասաւորութիւն: - 606. ...*կարգեաց* **ը** օր նաւակատիս խաչի և եկեղեցոյ ի միասին տօնել: - 617. Եւ այս գիտելի է, թէ ոմանք հանապազ յետ ամենայն *կարգեալ* աղօթից առանձնակի աղօթեն: - 623. Իսկ ի նորս առ մեզ, Սակաւ ինչ հոգացեալ զեօթնիցս, այլ ութերորդին փոյթ տարեալ դարուց աւանդապահք եկեղեցոյ, *կարգեցին* ութն կանոնս **ըը** գուբղայիւ: - 627. Ո՞վ է *կարգեալ* զսաղմոսս: - 631. Նոյնպէս և յերեկոյին զի նեղութեանն առաքեալքն *կարգեցին* յաւուրն ելն. զի ելք աստիճանաց ասի...: - 631. ...և *կարգեաց* յեկեղեցիս անտիոքայ յառաւօտն և յերեկոյն զսուրբ աստուածն խաչեցար ասել: - 631. Եւ յօհան ոսկէբերանն *կարգեաց* յաւուրն երիցս անգամ սուրբ աստուած ասել: - 631. Վասն որոյ ի սրբոյն կիւրղէ *կարգեալ* ասեմք զսուրբ աստուածն ի դէմս որդւոյ: - 631. Ա՛րդ՝ ա՛յս քան են *կարգեալ* սուրբ հարքն: - 634. Երկու դասք էին երգիչք ի տաճարին զոր *կարգեաց* դաւիթ ընդ տիւ և ընդ գիշեր հանապազորդ պաշտօն **իդ** ժամուց...: - 636. ...որք դաս առ դաս երգէին զսաղմոսն դաւթի. նոյնպէս և յեկեղեցի *կարգեցաւ*: - 636. Վասն որոյ *կարգեցին* առաքեալքն և հարքն՝ **ծձ** օր պահք. և նոյնչափ ուտիք: - 649. Եւ յորժամ մերն լուսաւորիչ ել ի վիրապէն, **ե** օր պահք *կարգեաց* և ապա՛ բժշկեաց ի հարուածոյն...: - 650. ...այլ վասն յարութեանն քրիստոսի բուն բարեկենդան *կարգեցաւ*...: - 651. Եւ այս որովայնամոլ ազգին անօրէն օրէնք *կարգեցաւ*: - 651. Զմեծ կարգն՝ է՛ կանոնեալ տեառն եղբայրն յակոբոս որ զընթերցուածն *կարգեաց*...: - 651. Եւ աւագ շաբաթ չարչարանացն քրիստոսի՝ է՛ ընդ քառասունս *կարգեալ*...: - 651. Եւ լուսաւորիչն *կարգեաց* զօրհնութիւն աղին: - 657. Իսկ ապաշխարօղսն *կարգել*. և դարձեալ ի մեծի **ե** շաբաթի աւուրն արձակել...: - 658. Եւ հրեշտակ բարի նախ *կարգեսցի* ի պահպանութիւն նեռին...: - 707. Եւ ասի սա նման փայտին կենաց որ է՛ ի մէջ դրախտին. այսինքն քրիստոս՝ որ է՛ ի մէջ եկեղեցւոյ *կարգեալ*: - 755

**ԿԱՐԴԱԼԻ** - Ապա ապականութիւնն փրկեաց զմեզ. զնա *կարդալի* է փրկիչ. այսինքն և զապականութիւնն և ո՛չ զքրիստոս: - 503

**ԿԱՐԴԱԼ +** Եւ օգտութիւն փորձանաց գրեալ է ի սաղմոսն, յայն բան գի՛տ և *կարդա՛*: - 162. Երբ լեզուքն բաժանեցան, զառաջին գիրն ո՞րպէս կարէին *կարդալ*: - 299. Եբրայական լեզուաւն *կարդային* որ ունէր դեռ զառաջինն. որպէս ասէ մեր լուսաւորիչն: - 299. Եւ մինչ զգիրն յառաջ կալան թէ այսո՛ւ փորձիմք, այլ ո՛չ ոք գիտաց *կարդալ*՝ բաց յեբրայեցւոցն. վասն այն ասի եբեր, թէ զառաջին լեզուն նա՛ եբեր: - 299. Վեցերորդ՝ օրինակն սողոմոն՝ և ճշմարտութիւնն քրիստոս՝ *կարդաց* հայր զաստուած: - 440. Քառասունևինն, Գրոց *կարդալն*. և Սաղմոս կցորդ. Որթի. և Ալէլուն. և Տէր ողորմեայն: - 527. Եւ նմա՛ պատշաճ է *կարդալ*

զմարգարէքն և զհին օրէնքն յեկեղեցին: - 606. Որոյ գործն է սպասաւորել քահանային ի խորհուրդ եկեղեցւոյն. զսկիհն պատրաստել, զաւետարանն *կարդալ* ի բեմն: - 606. Եւ ի նազերեթացոց ժողովրդանոցին դպիր ցուցաւ ի *կարդալն* զեսայի մարգարէն՝ յոտն և բացաւ գլխով: - 606. ...և գո՛րծ է նոցա, հրամանաւ քահանային աւետարան *կարդալ*, քարոզել, և բառնալ քշոց և բուրբառ. և նստիլ ամենեհին ո՛չ: - 608. Եւ գո՛րծ է նոցա առաքեալ *կարդալ*, և մոմեղէնս կրել, և գրակալ. և զխաչազլուխ գաւազանն կրել: - 608. Եւ այն զի պղծեալ տաճարի *կարդամբ*. կամ զշարժեալ սեղանն հաստատեմք: - 615. Այլ և խաղաղականն որ է ի *կարդալն* է՛ է փոխ. ի պահպանութիւն է զգայարանցս. և ի մաքրութիւն անցեալ գործելեացն: - 622

**ԿԱՐԴԱՑՈՂ** - Այլ և *կարդացողին* պա՛րտ է նմանեցուցանել զիւր խօսքն ասողին գրոց: - 643

**ԿԱՐԴԱՑՈՒՄՆ +** *Կարդացմունք*. քարոզք. ներբողեանք և այլք. որ ըստ տօնից առաւելուլ պարտ է զնոսա: - 375

**ԿԱՐԵԼԻ +** «Ո՛չ կարէք ասէ որ չարքդ էք բարիս խօսել». զի թէ ախորժ էին՝ *կարելի՛* էր: - 44. Այսօրիկ մեզ անկա՛ր են և անհնարինք. բայց ոչ յաստուծոյ. այլ հնարաւորք և *կարելիք* են նմա: - 44. Չի յատուկ է առաջին պատճառին որ է՛ աստուած՝ ի հարկէ էակ գոլ՝ և միշտ ներգործութեամբ, և իսկապէս ներգործութեամբ. որովք տարորոշի յայսցանէ՝ որ *կարելի՛* են էակ գոլ. և երբեմն ներգործութեամբ և հանդերձ զօրութեամբ: - 162. Դարձեալ՝ *կարելին* և անկարելին են այլագիծք և այլասեռք. և ոչ կարեն լինիլ մի և նոյն. զի այլասե՛ռ հակակայք են: - 165. Ուստի յա՛յտ է զի *կարելին* ունի զգոլն և զչգոլն. և անկարն զմինն. կամ զգոլն կամ զչգոլն: - 165. Վասն որոյ անկարելին ո՛չ հակադարձի առ *կարելին*: - 165. Այլ արդ՝ կուսութիւնն է ի *կարելոյն* որ ունի զգոլն և զչգոլն. իսկ ապականութիւնն է յանկարելւոյն. որ ունի զմինն և ո՛չ կարէ հակադարձիլ առ միւսն: - 165. Նա՛խ՝ եթէ թողութիւնն է հետևեալ և կայացեալ ի զղջումն. և զղջումն է ի կամքն. և կամքն է ի *կարելեացն*. վասն որոյ ներընդունի զթողութիւն ի ծեռն զղջման: - 165. Զօրութիւն որ ներգործութեամբ է՝ հարկաւո՛ր է. իսկ առանց ներգործութեան զօրութիւն՝ *կարելին* է որ է ներընդունականն: - 167. Դարձեալ այն զօրութիւնն և ներգործութիւնն և հարկաւորն մի է. և հետևին առ միմեանս. զի ամենայն որ հարկաւոր է՝ ներգործութեամբ է. և ամենայն ներգործութիւն զօրութեամբ ներգործէ. իսկ միւս զօրութիւնն և *կարելին* և ներընդունականն որ է մարթելի՝ մի է և հետևին առ իրեարս. զի ամենայն որ զօրութեամբն է՝ *կարելի* է և մարթելի: - 168. Իսկ միւս զօրութիւնն որ *կարելի* է՝ և ներընդունի զգոլն և զչգոլն՝ և երբեմն՝ ասի ի վերայ փոփոխական բնութեանց. որպէս հանդերձն կարէ՛ պատառիլ և ո՛չ պատառիլ. և ջուրն կարէ՛ ցրտացուցանել և ո՛չ ցրտացուցանել: - 168. Այլ արդ՝ եթէ գոյ զօրութեամբ ինչ ի նա՛ ո՛չ է ի հարկէ էակ. այլ *կարելի՛* էակ: - 168. Ասեմք եթէ՝ ի կողմանէ նիւթո՛յն *կարելի* է ասել. զի զոմն ունի, և զոմն ընդունի. այսինքն զտնկականն ունի, և ընդունի զբանականն: - 254. Եւ զուստին մի՛ հարցանէր թէ ի կենդանւո՞յ էառ, և թէ նո՛ր գոյացոյց. զի ամենայն ինչ *կարելի՛* է աստուծոյ: - 281. Եւ թէպէտ *կարելի՛* է ըստ բազմազան եղանակաց այս կարգ համեմատութեան ի սոյն խնամով աշխատասիրաց: - 304. Եւ *կարելի՛* է ամենայն կապիւս զոր ունիմք առ միմեանս՝ փոխիլ առ աստուած և կապիլ ի նա: - 317. Եւ *կարելի՛* է ասել զմարմին կենարարին չարչարելի և մահկանացու, այլ ո՛չ *կարելի* ասել ապականացու: - 498. Ապա ուրեմն *կարելի՛* է ասել չարչարելի և մահկանացու վասն մեր. այլ անապական և անմեղ մարմին: - 500. Իսկ ըստ պատահմանն՝ *կարելի՛* է և ներընդունական. այսինքն փոփոխական և երբեմն: - 550. **Այլ և արդ *կարելի՛* է զի միհն բազմաց հակառակեսցի և յաղթեսցէ. որպէս ազգս հայոց զայլս ամենայն որ բազո՛ւմ են և ո՛չ մի**: - 550. Եւ *կարելի* է որ ոք կամեսցի՝ զայսոսիկ գլուխս ի սէրն աստուծոյ ուղղել: - 576. Այլ զոր ինչ հասարա՛կ է երից անձնացն, աստուած, և հզօր, և անմահ և այլն ամենայն, *կարելի՛* է ասել միոյ անձինն և միոյ դիմաց. աստուած հզօր և այլն: - 633. Եւ որպէս *կարելի* է քեզ ի քում ափիդ զսերմանս զանազանել, և զեղեալն ի շտեմարանս քո յիւրաքանչիւր անկեան յառաջ բերել...: - 718. ...առաւել աստուծոյ է *կարելի* զհոգիս յերկնից և զմարմինս ի տարերաց ի մի վայր ժողովել և յարուցանել: - 718

**ԿԱՐԵԿԻՑ (ԼԻՆԵԼ) +** Դարձեալ՝ մարդն է քաղաքական կենդանի. զի *լինիցի* համաբնակք և *կարեկիցք* և օգտակարք ի բարին: - 274-275. Եւ միւս հաւն քաթաւեալ յարիւն, հոգին կենդանի. որ *կարեկից լինի* մարմնոյն և զսրբութիւն նորա հանէ՛ յուսով ի դաշտն որ է՛ յերկինս: - 368

**ԿԱՐԵՄ +** Եւ զի լինին և են սոքա՝ յա՛յտ է յայսցանէ, զի ո՛չ *կարեն* ոչ գոլ: - 8. Եւ զի ո՛չ *կարեն* ոչ գոլ, անկա՛ր է սոցա ոչ գոլ: - 8. Երկրորդ՝ զի թէ ի ներկայս ասեմք ի վերայ քարի թէ լինիցի փայտ. ո՛չ լինի այնպէս. արդ՝ թէ ասելն մեր զներկայն ո՛չ փոփոխէ, նա և ո՛չ զհանդերձեալ. *կարէ* փոխել. ո՛չ զմերձաւոր հանդերձեալն՝ և ո՛չ զհեռաւորն: - 8. Ապա ուրեմն յա՛յտ է՝ զի բանն զիրն ո՛չ *կարէ* ճշմարտել. այլ իրն զբանն ճշմարտէ. յորժամ գոյ կամ ո՛չ գոյ. որպէս ասէ ՚իհարկէ՛ գոլ զէակն յորժամ է՛. և ո՛չ գոլ յորժամ ո՛չ է: - 9.

Չորրորդ՝ զի թէ զոր ինչ ասեմք՝ ի հարկէ ճշմարիտ էր, յայնժամ աւելորդ էր խորհիլն մեր. զի խորհուրդն ո՛չ է ի հարկաւորացն. այլ ի ներընդունակացն. զի *կարէ՛* լինիլ, և ո՛չ լինիլ. զի թէ առնեմք զայս՝ եղիցի՛ այն. և թէ ո՛չ առնեմք զայս՝ ո՛չ եղիցի այն: - 9. Զորօրինակ՝ իրն ի ներկայս որ է նիւթ ներընդունակ՝ ունի կրկին զօրութիւն. որպէս հանդերձն *կարէ՛* պատառիլ, և *կարէ՛* ո՛չ պատառիլ. և ջուրն *կարէ* ջերմն գոլ, և *կարէ՛* ո՛չ գոլ. և միոյն ի նոցանէ՛ լինի ներգործութեամբ որն և հանդիպի: - 9. Ութերորդ ասեն, թէ աստուած ո՛չ կամի զչար, ապա *կարեմք* առնել ինչ զոր ո՛չ կամի աստուած...: - 17. Դարձեալ ասեմք թէ՝ ո՛չ է բարի առանց աստուծոյ կամացն. և ո՛չ չար առանց թոյլ տալոյ նորա. ա՛յն է որ ասէ՝ տերև ո՛չ անկանի, և մազ մի ի գլխոյ. զի ո՛չինչ *կարեմք* առնել առանց կամաց՝ կամ առանց գիտութեան՝ կամ առանց թոյլ տալոյն աստուծոյ: - 18. Միւն է արդարութեան այժմու կենացս, որ է փոփոխական. յորմէ *կարէ՛* ոք ջնջիլ: - 18. Եւ միւսն է յաւիտենական նախասահմանումն աստուծոյ. յորմէ ո՛չ ոք *կարէ* ջնջիլ: - 18. Նախ՝ երկեակն ո՛չ *կարէ* սկիզբն լինիլ. զի ի թիւս՝ երկեակն ի միակէն բաղկանայ: - 20. Այլ համանգամայն ո՛չ *կարեն* լինիլ. զի բ հակառակք ի միասին ոչ *կարեն* լինիլ: - 21. Իսկ թէ հաղորդին, ո՛չ *կարէ* լինիլ չար. զի չարն բարւոյն պակասութիւնէ. և սոյնպէս մի է սկիզբն: - 21. Իսկ ի բարւոյն ի չար՝ և ի չարէն ի բարի *կարէ* ոք փոխիլ: - 21. Ապա ուրեմն թէ չարն ապականիչ է այլոց, ուրև պատահի ապականէ՛ և զինքն ըստ որում չար է. ապա ուրեմն ոչ է՝ և ո՛չ *կարէ* գոլ չարն: - 22. Չորրորդ՝ ոչ էն յորժամ էանայ՝ դարձեալ յոչ էութիւն ո՛չ *կարէ* փոխիլ: - 23. Զորօրինակ ո՛չ է անզգուշագոյն յառել ի բոլորակս արեգական՝ զի շտնու և ի սակաւուն զօր ունի. ըստ այսմ խնայեաց աստուած ի յազինս մարդկային, զի մի՛ կրիցեմք զկիրս զանկելոյ արուսեկին. որ ո՛չ *կարացեալ* տանիլ մեծութեան փառացն՝ զրկեցաւ և ի չափաւորէն: - 24. Յեղելոց իրաց *կարե՛մք* ցուցանել թէ է՛ և գո՛յ աստուած՝ երեք եղանակաւ: - 25. Զի ո՛չ նա այսմ և ո՛չ սա այնմ *կարէ* միակ գոլ. վասն որոյ հա՛րկ է գոլ այնպիսի միակ՝ որ և ամենայն բազմութեան և միակաց է՛ միակ. որ է աստուած: - 26. Յինգերորդ՝ *Կարէ՞* և հայր ծնեալ ասիլ ի նոյն բնութենէ գոլ: - 29. Երեքտասաներորդ՝ Ո՛չ *կարեմ* յանձնէ. և պատասխանիք նոցա ժ գլխով: - 29. Արդ՝ զորօրինակ զգալի աչք մեր ո՛չ *կարէ* ըմբռնել զքանակութիւն արեգականն և այլ լուսաւորացն. այլ մտօք իմանամք զմեծութիւն նոցա: - 31. Նոյնպէս ո՛չ *կարէ* իմանալ յորժամ ի սուրբ գրոց և ի սքանչելեաց և ի բանից սուրբ վարդապետաց՝ դարձուցանէ զմիտքն. որպէս ասէ առակն՝ պակասամիտն ոչ ընդունի զբանս խոհեմութեանց. բայց միայն զայն՝ որ շրջին ի միտս նորա: - 31. Եւ զոր ինչ տեսանէ աչք արծըւին՝ ո՛չ *կարէ* տեսանել աչք մարդոյ. այնպէս բթամիտն ո՛չ իմանայ, զոր իմանայ նրբահայեացն և ուսեալն յաստուծոյ. զոր եդ աստուած ուսուցիչ այլոց. որպէս մարգարէքն, և առաքեալքն, և վարդապետք: - 31. Եւ այնպիսիքն տրամաբանել ո՛չ *կարեն* վասն հոգևորին. որպէս ի ծնէ կոյրն վասն գունոց, քանզի ասեն վարդապետք՝ աստուած լոյս է ո՛չ մարմնոց, այլ մտաց. զոր թէ ոք ո՛չ տեսանէ՝ կո՛յր է: - 32. Վասն որոյ որ հե՛զգ է ի խնդրել զպարզևս զայս, ո՛չ *կարէ* հաւատալ: - 32. Վասն այն հերձւածօղքն ո՛չ դառնան, զի ո՛չ *կարեն* ճանաչել զստութիւնն իւրեանց: - 32. Վասն այն հերձւածօղն ո՛չ *կարէ* ուղղիլ: - 33. Բայց հարցմունքս այս *կարէ՛* ասիլ ի վերայ մեր. զի ասիմք՝ յէից եղեալ և յոչ էից: - 37. Զի և յօհան դամասկացին ասէ հարկ գոլ ամենայն սկզբման ունել դադարումն. այլ զի հրեշտակք և հոգիք ոչ դադարին, այս կամա՛ցն աստուծոյ է պահպանութիւն, և ոչ բնութեան նոցա. զի յո՛չ էից եղեալքն՝ *կարեն* յոչ էութիւն փոխիլ: - 37. Յինգերորդ առարկեն, թէ իցէ մի և նոյն բնութիւն հօր և որդւոյ, և որդի ծնեալ ի նոյն բնութենէ, *կարէ՛* ասիլ և հօր ծնանիլ ի յորդւոյ ի նոյն բնութենէն. զի բնութիւնն մի է: - 38. Պատասխանեմք թէ՝ *կարի՛* յիմարութիւն է հարցումնդ. և զի գոյ հայր ըստ քում բանիդ ծնօղ որդւոյ. ապա ուրեմն ո՛չ *կարէ* ոչ լինիլ և ծնանիլ: - 38. Դարձեալ՝ ո՛չ *կարէ* ծնանիլ որդի զհայր՝ թէպէտ ունի զհօր բնութիւնն. որպէս դու ծնեալ ի հօրէն քո՝ ո՛չ *կարես* ծնանիլ զհայր քո և լինիլ հայր հօրն քում. թէպէտ ունիս յամենայնի զբնութիւն հօր քոյ: - 38. Եւ զիա՞րդ *կարիցէ* ձկտիլ նըւազն առ մեծն՝ լնուլ զհայր: - 39. Առորս ասեմք թէ՝ առարկութեանս այսմիկ զանազան կերպիւ *կարեմք* լուծումն առնել: - 40. Նախ ասեմք թէ՝ թագաւոր էր այր կերօղ և արբեցօղ և վաւաշոտ. զի՞նչ իցէ ի համար բան նորա. թէպէտ *կարի* ասել ո՛չ *կարեմք*: - 40. Ոչ *կարելն* բազմանշանա՛կ է: - 44. Նախ՝ ոչ *կարել* վասն նուազութեան զօրութեան ժամանակի և դիմի. որպէս ո՛չ *կարէ* մանուկ կռուիլ՝ և կորիւն տեսանել: - 44. Երրորդ՝ ըստ ո՛չ պատշաճի. որպէս ո՛չ *կարեն* պահել որդիք առագաստի մինչ ընդ նոսա իցէ փեսայն որ է քրիստոս: - 44. Եւ թէ բան իմանաս՝ և ոչ պահքն պատշաճ էր սրբեցելոցն բանիւն. ըստ այնմ՝ «դուք սուրբ էք վասն բանին զոր խօսեցայ ընդ ձեզ». զի պահքն զոչ սուրբն սրբէ. իսկ նոքա զի սուրբք էին ոչ պատշաճ պահքն. վասն այն ո՛չ *կարէին*: - 44. Չորրորդ՝ վասն ոչ ախորժողաց՝ իբր ոչ *կարաց* անդ նշանս առնել վասն անհաւատութեանց նոցա: - 44. Ապա առ ըստ ոչ ախորժանացն թէ աշխարհիք որք են աշխարհասէրքն՝ ո՛չ *կարեն* ատել զաշխարհասէրսն: - 44. Եւ այս ոչ էութիւն և չարութիւն՝ առ մեզ *կարէ՛* երկիլ, զի մասա՛մբ ունիմք զկարողութիւն և ո՛չ կատարեալ: - 44. Իմա՛, որպէս բրուտն *կարէ՛* գործել անօթ

ինչ, այլ ո՛չ երկինք, և երբեմն ի բարւոջ և երբեմն ի չար և ապականեալ. այլ ըստ այսմ ո՛չ լինի աստուած: - 44. Այսպէս իմացիր և զոչ *կարելն* որդոյ առնել յանձնէ՛. այսպէս օտար ինչ ի հօրէ: - 44. Ա՛յս է ոչ *կարելն* որդւոյ: - 45. Երկրորդ՝ ո՛չ *կարեմ* ոչ ինչ. այսինքն անօգուտ ինչ: - 45 Երրորդ՝ ո՛չ *կարեմ* ոչ ինչ. այսինքն մեղք և չար: - 45. Չորրորդ՝ այսու առաւել զմիակամութիւն ցուցանէ. զի մի՛ է կամք իւր և հօրն. վասն այն ո՛չ *կարէ* առանց հօր. զի ո՛չ է որդւոյ այլ կամք զի զոր ինչ կամեսցի բաց ի հօրէ արասցէ: - 45. Հինգերորդ՝ զի զօրութիւն՝ կարողութիւն՝ ուստի առնելն է՝ և աստուածութիւն՝ տէրութիւն՝ իշխանութիւն և այլք այսպիսիք՝ ո՛չ են առանձին անձնաւորութեանց. այլ հասարա՛կ են. և ո՛չ մին առաւել քան զմի. վասն այն ո՛չ *կարէ* որդի առնել ինչ յանձնէ իւրմէ թարց հօր որպէս ասացաք: - 45. Այլ ա՛յս է, Զի ճանաչէ՛ իբրև զաստուած. այլ իբրև զմարդ անգիտնայ. զի բացարձա՛կ է որդւոյն անունն. այսինքն անորոշակի. զի որոյ և տացես թէ բանին և թէ մարմնոյն՝ *կարէ՛* ասիլ: - 48. Տե՛ս՝ զի առանց որդւոյ անբան և տկա՛ր է հայր. ո՛չ *կարէ* լինիլ աստուած. ապա և ո՛չ հոգի: - 51. Եւ ո՛չ այս *կարէ* լինիլ ի յերկուցն հատումն. այսինքն զի լիցի յաստուծոյ և արարածէն՝ և լինիլ մի էութիւն. որպէս ո՛չ է էութիւն եղջերուաքաղն որ յեղջերէ՛ և ի քաղէ ստեղծանի. ապա ուրեմն ո՛չ լինի էութիւն յարարչէն և յարարածէն: - 52. Եւ զի աստուած է՝ ո՛չ *կարէ* ասիլ ստեղծւած կամ արարած կամ պաշտօնեայ կամ ծառայ: - 52. Ութևտասներորդ՝ ո՛չ ոք իմանալի ստեղծւած և մասնաւոր՝ *կարէ* հաղորդիլ բազմաց: - 59. Զի որպէս այժմ *կարեմք* ասել ճշմարտապէս թէ հոգին սուրբ ելանէ ի հօրէ. և վասն ապառնւոյն *կարեմք* ասել թէ հոգին սուրբ ո՛չ ելանէ յորդւոյ. մինչ այլ ո՛չ ևս ելանէ. և ո՛չ այնպէս էառ զգոյացութիւն և զճշմարտութիւն իւր՝ զի ո՛չ ևս երբեք առցէ: - 65. Իսկ թէ և նա շնորհիւ ունի զորդիութիւնն, զիա՛րդ *կարէ* տալ ումեք զոր հազիւն հարստացաւ: - 67. Ապա ուրեմն և մարմինն այն յատուկ է մարմին բանին աստուծոյ. և այս ո՛չ *կարէ* լինիլ՝ եթէ ո՛չ լիցի միաւորեալ ընդ նմին: - 73. Քսաներորդ՝ որպէս բարձրագոյնքն *կարեն* ասիլ մարմնոյն վասն միութեանն՝ որպէս աստուած, յարութիւն, և կեանք յաւիտենական: - 74. Ուրեմն նա ինքն հաւատարիմ մնայ, ուրանալ զանձն իւր ո՛չ *կարէ*: - 76. Եւ *կարեմք* ասել զմի և զնոյն՝ կուսութեամբն կոյս. և մայրութեամբն մայր: - 77. Ըստ որում մերձ դնէ, քանզի մարմին և հոգի. այսինքն թէ ո՛չ *կարէ* մարդն առանց հոգւոյն գոյանալ: - 80. Այլ մի ասեմք զներգործութիւնսն վասն մի միութենէն ներգործելոյ. որպէս մի ձեռն կտրէ՛ և *կարէ՛*. գրէ՛ և ջնջէ՛: - 85. Եւ պարտէ գիտել, զի որպէս սեռ ի տեսակս ո՛չ *կար*է բաժանիլ: - 87. Այլ մարդկութիւնն քրիստոսի ո՛չ *կարէ* կայանալ առանց աստուածային էութեանն: - 87. Այսպէս *կարեմք* ասել զմարմինն քրիստոսի թէ՝ աստուած է և աստուծոյ մարմին և արիւն. և այլն ամենայն: - 92. Ապա ուրեմն *կարեմք* ասել զմարմինն քրիստոսի աստուած և աստուծոյ մարմին, և զայլն նմանապէս: - 92. Այլ և նոյն կերպարանն հօր՝ խոնարհեցոյց զինքն ի մահ. որ *կարի* վերջինն էր: - 93. Վասն զի իմաստունք մաքառին ընդ դէմ հաւատոց. և քննութեամբ մտաց ո՛չ *կարեն* հասանիլ. և զրկին ի փրկութենէ իւրեանց: - 96. Եւ արդ՝ տգէտն զտգիտութիւն ո՛չ *կարէ* բառնալ. և ո՛չ մեղաւորն զմեղս. և ո՛չ ապականացուն զապականութիւն. և ո՛չ սոսկ մարդ զմարդ *կարէ* փրկել. զի սո՛ւտ է փրկութիւն մարդոյ: - 99. Ա՛րդ՝ եթէ՝ ի յարութեանն հասարակ արդարք տեսանեն զաստուած դէմ յանդիման որպէս և է, և քրիստոս ո՛չ *կարէ* տեսանել, փո՛քր լինի գիտութեամբ քան զմարդ որ է սուտ: - 99. Ա՛րդ՝ եթէ ճանաչելն զաստուած հայր և զյիսուս քրիստոս կեանք է յաւիտենից, և մարդն քրիստոս ճշմարտութեամբ ո՛չ *կարէ* ճանաչել որպէս դուդ ասես: - 99. Այլ դատաւորին պարտէ ունիլ անհուն գիտութիւն. զի քննել *կարասցէ* զամենայն բնութիւն հրեշտակաց և մարդկան. և զամենայն գործս եղեալս և զլինելոցն. զխորհուրդս և զբանս բոլորից. զառաջինն՝ զմիջինն՝ և վերջինն: - 100. Այսպէս զի հոգին քրիստոսի ճանաչէ զամենայն բովանդակ կարողութիւնն իւր. և զամենայն յորս *կարէ*: - 100. Այլ ա՛րդ՝ *կարէ* սրբել զանհուն մեղս. որպէս ասէ յօհաննէս ի կաթողիկէքն...: - 100. Իսկ չափաւորութիւնն զանչափութիւնն ո՛չ *կարէ* չափել: - 103. Ա՛րդ՝ ասեմք զհայր աստուած. և զորդի աստուած. և զհոգի աստուած. ապա *կարե՞մք* ասել զհայր երրորդութիւն. և զորդի երրորդութիւն. և զհոգին սուրբ: - 108. Զի ուր բնութիւն ո՛չ հասանի, անդ և միտք մեր ո՛չ *կարեն* հասանիլ: - 118. Պատասխանեմ առաջնոյն, թէպէտ մի և նոյն ուրացական մասնիկն որ է ո՛չն՝ գործէ՛ զուրացումն և զբառնալն, այլ ուրացումն և բառնալն ո՛չ է նոյն. զի բազում պատահի որ գործին նոյն է որպէս ձեռն. այլ գործելն ո՛չ է նոյն. որպէս կտրելն և *կարելն*: - 124. Իսկ հրեշտակք փոխեն զսոսա և զիմացականն վասն բարւոյ. զոր դևք ո՛չ *կարեն* փոխել: - 133. Իսկ աստուած *կարէ՛* փոխել և զկամքն՝ որ է՛ ախորժակ ի չարէն առ բարին. զոր հրեշտակք ո՛չ *կարեն* փոխել. այլ միայն զարթուցանեն զախորժակն և օգնեն: - 133. Վասն երրորդին անչա՞փ է թէ չափաւոր՝ գիտելի՛ է, զի անչա՛փ է շնորհն ըստ իւրում ինքնութեան. այլ չափաւորի՛ ըստ տըւողին կամաց և ըստ ընդունողին *կարեաց*. որպէս բան մարդոյ ի լսելիս: - 140. Զի թիւ մեր նիւթեղէն և տկա՛ր և չափաւո՛ր է. վասն որոյ զանբաւութիւն նոցա ո՛չ *կարէ* չափել. ուստի յայտ է՝ զի և ո՛չ զթիւ մեր *կարեմք* գիտել: - 141. Եւ կարօտի սա **բ** իրաց. այսինքն զի զգայութիւնն առո՛ղջ իցէ, և զգալի առաջի եդեալ

իրն յստա՛կ. ապա թափանցէ՛ յինքն ի սոցանէ՛ պա՛րզ տեսութիւն. ապա թե ո՛չ՝ ո՛չ *կարէ* միտքն յստակապէս տեսանել սոքօք: - 143. Դարձեալ՝ դնք ընդ աստուծոյ. զի դիտաւորութիւն ո՛չ *կարէ* թագչիլ յաստուծոյ: - 144-145. Սակայն զչար խորհուրդն ո՛չ *կարէ* ածել ի ներքս որ միայն հաւանութեամբն է չար: - 145. Երրորդ՝ զի ի սիրոյն աստուծոյ զրկեսցէ զմեզ. զի *կարասցէ* յաղթել: - 146. Եւ ոմանք ասեն թէ՝ ընդ պատիւ մարդոյն նախանձեցաւ և ի խորհուրդ եմուտ թէ սորա կատարումն ի՞նչ լինի, և ո՛չ *կարաց* հասու լինիլ: - 147. Դարձեալ՝ և ո՛չ զնա միայն փրկէր զի մեռանիլ ո՛չ *կարէր*: - 149. Վասն է՞ր ո՛չ ստեղծ զնոսա այնպէս զի մի՛ *կարիցեն* մեղանչել: - 149. Զի թէ այնպիսիք էին որ ո՛չ *կարէին* մեղանչել՝ իբր կապեալք լինէին և բռնադատեալք, և վարձս ո՛չ առնուին: - 149. Այլ ետ նոցա անձնիշխան կամս՝ զի կամովին ընտրեսցեն զբարին և արդարապէս զհատուցումն ընկալցին զի մի՛ երբեք մեղանչել *կարիցեն*: - 149. *Կարե՞ն* զամենայն զոր կամին: - 149. Բարի ինչ ո՛չ կամին և ո՛չ ամենևին *կարեն*: - 149. Երեքտասաներորդ՝ մարդ զինչ որ կամի ո՛չ *կարէ*. իսկ աստուած զոր ինչ և կամի և *կարէ*՛: - 157. Չորեքտասաներորդ՝ մարդն ո՛չ *կարէ* արարչագործ լինիլ. իսկ աստուած արարչագործ է՛: - 157. Ջորօրինակ՝ որպէս տղայ որ տեսանիցէ ցից ի յորմում, երթայ ի մօտ. թէ ամո՛ւր է՝ թողու. վասն զի ո՛չ *կարէ* հանել. և երթայ առ միւսն. թէ շարժի՝ ի մօտ կենայ մինչև հանէ՛: - 160-161. Իսկ թէ կամիս ուսանիլ թէ զի՞նչ է նիւթ պսակին. որ ինչ առ աստուածութեան իւրում մեծութիւն գտանի, զա՛յն պատրաստեաց սիրելեաց իւրոց. զոր ո՛չ *կարեմ* զմտաւ ածել. կամ վայրապար լսելեօք լսել: - 161. Որպէս այսոքիկ որ փոփոխականք են. որ *կարեն* գոլ և ո՛չ գոլ. և երբեմն հանդերձ զօրութեամբ: - 162. Վասն որոյ արար զաշխարհս գործ մշտնջենաւոր. և մշտնջենաւոր հարկաւո՛ր է. և հարկաւորն ի գոլն *կարէ*, և ի չգոլն անկա՛ր: - 162. Յաղագս որոյ աշխարհ գոյացեալ. երբեմն մշտնջենաւոր գոյութեամբ, անգոյանալ երբէք ո՛չ *կարէ* : - 162. Եւ զոր կամի՝ զնոյն և առնէ և *կարէ*. և զոր ո՛չ կամի՝ ո՛չ առնէ և ո՛չ *կարէ* : - 163. Եւ թէ ոք ասիցէ, եթէ աստուած զոր ոչ կամի՝ ո՛չ *կարէ*, որպէս զչար զի ո՛չ կամի և ո՛չ *կարէ*. նոյնպէս զմեղս և զայլսն. ապա երևի անկարութիւն ի յաստուած գոլ: - 163. Ասեմք առ այս Նախ՝ եթէ կամքն և կարն ի մեզ անհաւասա՛րք են. վասն այն զոր ինչ կամիմք՝ ո՛չ *կարեմք*. և զոր *կարեմք*՝ զա՛յն կամիմք: - 163. Իսկ առ աստուած կամքն և կարն հաւասա՛րք գոն. վասն որոյ հակադարձին ի միմեանս. զի զոր ինչ կամի՝ *կարէ*՛. և զոր *կարէ*՝ զնոյն և կամի՛: - 163. Ապա յա՛յտ է զի զչարն և զմեղս ո՛չ կամի, վասն այն ո՛չ *կարէ*: - 163. Իսկ այն որ ո՛չ *կարէ* զչար, առաւել կարողութեանն է ցոյցք, և ո՛չ եթէ անկարութեան: - 163. Ջորօրինակ՝ արեգակն ո՛չ *կարէ* լինիլ խաւար, զի առաւե՛լ է լոյս: - 163. Նմանապէս և աստուած ո՛չ *կարէ* զչար, զի առաւել *կարէ* զբարին: - 163. Եւ ո՛չ *կարէ* ոչ էանալ, զի առաւել է. և այլն ամենայն: - 163. Նոյնպէս վասն առաւել բարի կամացն ո՛չ կամի և ո՛չ *կարէ* առնել զաշխարհս ո՛չ է: - 163. Զի *կարէ*՛ ունակութեանն լինիլ պակասութիւն. և անկա՛ր է պակասութեանն լինիլ ունակութիւն: - 165. Իսկ ներհական հակակայքն և այլքն *կարեն* փոփոխիլ ի միմեանս. որպէս չարն և բարին. ջերմն և ցուրտն: - 165. Վասն որոյ *կարէ* կոյսն ապականիլ. և անկա՛ր է ապականեալն լինիլ կոյս: - 165. Դարձեալ՝ կարելին և անկարելին են այլագիծք և այլասեռք. և ոչ *կարեն* լինիլ մի և նոյն. զի այլասե՛ռ հակակայք են: - 165. Այլ արդ՝ կուսութիւնն է ի կարելոյն որ ունի զգոլն և զչգոլն. իսկ ապականութիւնն է յանկարելւոյն. որ ունի զմինն և ո՛չ *կարէ* հակադարձիլ առ միւսն: - 165. Եւ յայտնի եղեալ որպիսութիւն սոցա ի միտ առ. զի անհաւատն այժմ եկեալ ի հաւատս *կարէ*՛ լինիլ և քահանայ. իսկ չար հաւատացեալն ո՛չ *կարէ* լինիլ քահանայ: - 166. Ուստի յա՛յտ է զի էրէցն երկրորդ ամուսնութեամբն ո՛չ *կարէ* քահանայագործել. յիրաւի և ապա պոռնկեալն էրէց կամ աբեղայ՝ ո՛չ *կարէ* քահանայագործել. զի ուխտազա՛նց է: - 167. Յասցանէ յայտնի է զի զղջացեալ այնպիսին *կարէ*՛ հաղորդիլ ի ձեռն այլոց. այլ ո՛չ ինքն պատարագել: - 167. Դարձեալ այն զօրութիւնն անփոփոխ է. զի միայն ի գոլն *կարէ*, և ի չգոլն անկար: - 168. Իսկ միւս զօրութիւնն որ է փոփոխական՝ ի գոլն և ի չգոլն *կարէ*. և անկար առ ո՛չ ոք է: - 168. Իսկ միւս զօրութիւնն որ կարելի է՝ և ներընդունի զգոլն և զչգոլն՝ և երբեմն՝ ասի ի վերայ փոփոխական բնութեանց. որպէս հանդերձն *կարէ*՛ պատառիլ և ո՛չ պատառիլ. և ջուրն *կարէ*՛ ցրտացուցանել և ո՛չ ցրտացուցանել: - 168. Երկրորդ՝ պատահմունքն բաժանեալ ի գոյացութեանց ո՛չ *կարեն* ըստ ինքեան կեալ: - 169. Այլ արարածք բաժանեալ յարարչէն՝ *կարե՛ն* ըստ ինքեան կեալ: - 169. Նախ զայս ասեմք թէ ամենայն ինչ հնարաւոր է աստուծոյ. զի *կարէ*՛ առնել զոր միտք մարդկան տեսանէ. և *կարէ*՛ զոր ո՛չ տեսանէ: - 173. Իսկ պատահական տեղի է, յորում նեստեալ ոք՝ *կարէ*՛ թողուլ զայն և լինիլ յայլ տեղւոջ. որպէս ի վեր կամ ի վայր: - 174. Նա՛խ՝ զի իմաստութեամբն զնոսա *կարեմք* գտանել. և նոքօք զիմաստութիւնն ո՛չ: - 178. Եւ այլապէս ո՛չ *կարէր* լինիլ. զի ամենայն ինչ ի սմա՛ կատարեալ գոյ. և ոչինչ է պակաս ի սմանէ: - 179. Նախ զի ո՛չ *կարէ* յաւելուլ ի նմա և ո՛չ պակասիլ: - 182. Տասներորդ՝ ըստ չափու և կարողութեան բաշխէ. որպէս ի կեանս յայսմիկ, և ի հանդերձեալն առաւել զի *կարիցեմք* տանել: - 185. Դարձեալ՝ ոչ ինչ պատուական քան զժամանակ. զի զինչ և իցէ յաշխարհի՝ երկու մասունքն *կարե՛ն* համանգամայն գոլ ի միասին բաց ի

ժամանակէ և ի հասակէ՛...: - 199. Վասն այն պա՛րտ է զժամանակ կենցաղոյս ի բարին ծախել. զի զառաջին ժամանակն ո՛չ ոք *կարէ* վերստին ստանալ: - 199. Զի և ներկայ ժամանակս որ յայտնի երևի, այսպէս անյայտ և անկայուն է. զի ո՛չ ոք *կարէ* զվայրկեան ժամանակի մի ստուգել...: - 199. Զի վարդապետք ասեն եթէ՝ կերակուր գազանաց այլ կենդանիք են. վասն որոյ խնամքն աստուծոյ ետ նոցա առաւել հնարս և զօրութիւնս, զի *կարասցեն* ըմբռնել. զայլ կենդանիս և մի՛ ի սովոյ մեռցին: - 218. Նա՛խ՝ եթէ իմանալի է մեզ. զոր ո՛չ *կարեմք* այժմ զգալապէս տեսանել: - 222. Ոմանք թուզ ասեն. թէ ի նոյն ժամն որ կերաւ և մերկացաւ՝ և *կարեաց* ի տերևոյ նորա. և վկայ բերեն թէ՝ վասն այն անէծ զթզենին յերուսաղէմ: - 224. Ա՛րդ՝ եթէ մնայ հինն ընդ նորոյն հանապազ. նա՛ ծանրանայ. և ո՛չ *կարէ* զայն քան ամաց բազմութիւն պտղոցն կրել, և այսպէս լինին ամենայն ծառքն կոտորեալ և ապականեալ...: - 224. Ասեմք թէ՝ կանխագէ՛տ է աստուած. և նախ ծանեաւ զի ո՛չ *կարէին* աճիլ անմեղութեամբ ի դրախտին որպէս զիրեշտակս. վասն որոյ կազմեաց նոցա մարմին, զի յերկրի անասնապէս աճեսցին: - 226. Նոյնպէս և ի դրախտին *կարէին* ծնանիլ կուսութեամբ և առանց սերման. կատարեալ մարդ ի բնութենէն ադամայ: - 226. Ի քթթելական՝ որքան վաղվաղակի *կարես* բանալ զակն՝ զբոլորն համանգամայն ստեղծ: - 227. Եօթներորդ՝ վասն զգայութեանցն, որ ամենեքին յառաջ հեղուն յուղեղէն, և ազատապէս տեսանեն և իմանան. զի թէ գլուխն և ուղիղն ի վա՛յր էր քարշեալ և կորացեալ՝ ո՛չ *կարէր* ուղղակի զգալ և իմանալ. որպէս այլ կենդանիք: - 233. Զի թէ կորագլուխ էր մարդն, և երկոքին ձեռքն ի յերկիր հաստատեալ, ո՛չ *կարէր* գործել: - 233. Եւ պիտոյանայր լեզու երկայն և շրթունք ստուար, զի ժողովեսցէ զկերակուր. և յայնժամ ո՛չ *կարէր* սպասաւորել բանի որպէս ա՛յժմ: - 233. Վեցերորդ՝ զի ո՛չ պատուաւորքն մեծարեին, և ո՛չ անարգք անպատուեին. այլ ընդդիմակն սոցա. զի ո՛չ *կարէին* ճանաչել զտէրն և զծառայն. զազատն և զանազատն: - 238. Եօթներորդ՝ զի ո՛չ *կարէին* ընտրել և խոտել զչարն և զբարին, և զսուրբն և զանսուրբն ի մարդկանէ, թէ գործ սորին է այս կամ այն. այլ անմեղութեամբ յարակցեին պղծոյն, և զխեղդ ոգւոց նորա ընդունէին: - 238. Երրորդ՝ զի բանականութեամբ *կարեն* սանձիլ սոքա, յորժամ կամեսցին: - 246. Հինգերորդ՝ զի *կարէ՛* մարդ ներհակ սովորութեամբ պահօք և աղօթիւք և կրթութեամբ մարմնոյ սանձել յինքեան զայսպիսիս նշանաց գործ: - 246. Զի թէպէտ ըստ ներգործութեանն բաժանին երբեմն ի բաժանելի մարմնոյն՝ զի առանց մարմնոյն ո՛չ *կարեն* ներգործել սոքօք, այլ անբաժանելի մնան ըստ էութեանն ի հոգին. որպէս ցուցանելոց եմք յառաջիկայսդ: - 249. Այլ արդ՝ ի տունկն ո՛չ *կարէ* սրբիլ. այլ անկանի յանշունչն, որ ներքո՛յ է տնկոյն, և նման նորա զի մարմին է: - 252. Զի զօրութիւն ունի այս նիւթ՝ ընդունել զբանականն. զոր նիւթ անասնոցն ո՛չ *կարէ* ընդունել: - 254-255. Եւ մանաւանդ զի բնութիւնն յանկարծակի ո՛չ *կարէ* ներգործել. այլ սակաւ սակաւ հետևելով յանկատարէն ելանէ ի կատարեալն: - 255. Երկրորդ՝ զի թէ այլ և այլ էր հոգի, ի յայլ հոգւոյ տեղիս ո՛չ բնակէր այլ հոգի որպէս յայլո՛յ կաղապար. և ա՛յլ դրօշած ի յա՛յլ կնիք. այլ մի է. վասն այն որ յետոյ երևի, յառաջնոյն խառնուածն *կարէ՛* բնակիլ: - 259. Ասեմք առ այս, եթէ և յետ մահուան ո՛չ բաժանին սոքա ի հոգւոյն ըստ էութեան. զի մի է էութիւն սոցա. այլ ըստ ներգործութեան. զի ո՛չ է մարմին՝ ո՛չ *կարէ* ներգործել: - 260. Կարգաւո՛ր է և աստ հարցանել թէ վասն է՞ր անասունք յերրորդ ամին *կարեն* զնմանն ծնանիլ, և մարդն ի չորեքտասանն: - 264. Զի բոյսք մանունք և չորքոտանիք մանունք *կարեն* ի նոյն ամի զնմանն ծնանիլ ըստ վերոյ ասացեալ երրեակ թուոյ ամսոյ, կամ կրկին վեցեկի: - 264. Զի մանունքն յամսօրէից և ի վայր, ի շաբաթս և յաւուրս և ի ժամս ըստ նոյն թուոյ *կարեն* զնմանն ծնանիլ. և առաւելքն առաւելեալ ամօք կրկին կամ երեքկին որպէս ասացաք: - 264. Եւ այսպէս ի ներքուստ ի վեր կրկնեալ եօթնից որ է չորեքտասան, կատարի ցանկական մասամբն և *կարէ՛* զնմանն ծնանիլ և կոչի մանուկ: - 264-265. Զի **Ժ** ի չորից ծնանի. և չորսն տարրական է. վասն որոյ ի նմա *կարէ* մարդ ծնանիլ զնմանն իւր: - 265. Եւ ա՛յս է բարձր հասակն և կատարեալ. զի ի սմա պապ *կարէ* լինիլ մարդն երեսն ամենի: - 265. Ապա ուրեմն յա՛յտ է՝ զի տղայութիւնն ո՛չ *կարէ* զնմանն ծնանիլ. այլ մանկութիւնն որպէս ասացաւ: - 266. Ապա ուրեմն յա՛յտ է թէ վասն է՞ր մարդն ի չորեքտասան ամն *կարէ* ծնանիլ: - 266. Իսկ մարդոյն ուղեղն գէճ է և հով. զի նկարեսցէ յինքն զիմացումն մտացն. և ջիլքն յառաջեալ ի նման վասն գիճութեան ո՛չ *կարէ* պնդել զանդամսն. վասն որոյ ո՛չ կանգնի և ոչ գնայ: - 266. Ի մարդոյ և յայլ ինչ կենդանեաց *կարէ՛* լինիլ ծնունդ. որպէս ասեն՝ ի կնոջէ՛ և յարջոյ ծնունդ եղեալ: - 267. Բնական պատկեր է, որով իմանամք և *կարեմք* սիրել զաստուած. և այս հասարա՛կ է բարեաց և չարաց: - 273-274. Եւ ապա զի յոչնչէ եղեալն *կարէ՛* նմա և ի նոյն փոխիլ եթէ կամքն աստուծոյ թոյլ տացէ: - 274. Դարձեալ՝ զոր ինչ ունիմք՝ յայլմէ՛ ունիմք. և անկատա՛ր ունիմք. և միշտ *կարեմք* կորուսանել: - 275. Զի նախ քան զմեղանչելն ի դրախտին՝ մարդն *կարէ՛ր* մեղանչել, և *կարէր* ոչ մեղանչել. *կարէր* մեռանիլ, և *կարէր* ոչ մեռանիլ: - 278. Իսկ յետ մեղացն յաշխարհիս այս՝ *կարէ՛* մեղանչել, և ո՛չ *կարէ* ոչ մեղանչել: - 278. *Կարէ՛* մեռանիլ, և ո՛չ *կարէ* ոչ մեռանիլ: - 278. Իսկ յետ մահուն ի հանդերձեալն. ո՛չ *կարէ* մեղանչել, և անկա՛ր է

մեղանչել: - 278. Ո՛չ *կարէ* մեռանիլ. և անկա՛ր է մեռանիլ. և այլն նմանապէս: - 278. Այլք զդողդոճալն ասեն. որ և հաց և ջուր *չկարէր* ի բերանն տանել: - 287. Եթէ ադամ ի դրախտին ո՛չ *կարէր* մնալ անմահ: - 289. Ամենայն մարդոյ թիւ կենաց չափեալ է առ աստուած. և ո՛չ ոք *կարէ* սահմանն անցանել...: - 291. Երկրորդ՝ զի մարդիկք բազում ամս յաճախէին ի մեղս յուսով վերջին ապաշխարութեանն. և յետոյ սովորեալ ի մեղս ո՛չ *կարէին* դառնալ, *ամենքին* կորնչէին: - 292. Առաջին պատճառ, զի ըստ ինքեան մարդկայինս բնութիւն այլայլո՛տ է և ցաւոք. և յորժամ աստուած ևս բազմացուցանէ, ո՞վ *կարէ* զաղէտն պատմել: - 292. Երկրորդ՝ զի ո՛չ ոք *կարէ* ելանել և տեսանել: - 294-295. Եւ զի մի՛ մարդիկ ի պատճառս նորա մեղս գործեսցեն. վասն որոյ ո՛չ *կարէին* տեսանել զտապանն: - 296. Նմանապէս և զայս սահման լեզուի ո՛չ ոք *կարէ* փոփոխել. ո՛չ բռնաւոր և ո՛չ իշխան. բայց միայն աստուած որ եդ զսա: - 298. Երբ լեզուքն բաժանեցան, զառաջին գիրն ո՞րպէս *կարէին* կարդալ: - 299. Եւ անդանօր լինի անմահ և անապական ծնունդ և որդիք յարութեան. զի մեռանիլ ո՛չ ևս *կարեն* ասէ. վասն զի յանմահ զօրութենէն աստուծոյ ծնանիմք, և յանապական տարրեղէն նիւթոց. վասն որոյ անմահ և անապական կայանան: - 308. Իններորդ՝ ի յանդիմանութիւն բնութեան մերոյ. զի մի՛ կարծեսցէ թէ առաքինութեամբն և սիրովն առ աստուած՝ հաւասարիլ *կարէ՛* սիրոյն աստուծոյ որ առ մեզ. այլ կաղ գտանի: - 311. *Կարե՞ն* դևք հուր իջուցանել և փոփոխել զտարերքս: - 321. Ո՛չ *կարեն* դևք զտարերքս փոփոխել. և ո՛չ հուր և ո՛չ շանթս և ո՛չ այլ ինչ ի տարերացս առնել որպէս կարծեն ոմանք: - 321. Այն է, որ բովանդակ մարմինն այնպէս խոցոտեալ էր կեղով՝ և լուծեալ ի շարաւ և ի թարախ. որ ո՛չ *կարէր* յոտին կալ կամ սողալ ուրեք. և ո՛չ ըմբռնիւր յայլմէ: - 322-323. Դարձեալ գիտելի՛ է, զի յոր կրկնելով զբանսն՝ ուղղէ՛ր զբարեկամսն և ընկրկէ՛ր զսատանայ. զի այսպէս ամենայն ոք *կարէ՛* յաղթել սատանայի յորժամ զընկերն ուղղէ ի բանս կամ ի գործս կամ ի հաւատս և յայլսն. յայնժամ սատանայ թիւրի և հեռանայ: - 323. Երկրորդ՝ ցոյցք է տկարութեան եգիպտացւոցն. որ ո՛չ *կարացին* ընդ դէմ կալ տկար զեռնոցն: - 333. Իններորդ՝ խաւարն շօշափելի. կամ զի թանրացեալ ըմբռնիւր շօշափելով. կամ զի շօշափելով ձեռաց և գաւազանաւ *կարէին* շարժիլ: - 334. Այլ և նստեալն ո՛չ *կարէր* կանգնիլ. և հուր և լոյս ճրագի ո՛չ *կարէր* ներգործել ի թանձրութենէն: - 334. Երրորդ՝ կեղն և խաղաւարտն եղև և ի կախարդսն և զայլ հարւածսն կրեցին. և ո՛չ *կարէին* ի մովսէս և յահարոն դարձուցանել զնոյնս: - 335. Չորրորդ յա՛յտ է, զի ինքեանք խոստովանեցան թէ մատն աստուծոյ է այս. և ո՛չ *կարացին* այնպէս առնել: - 335. Իսկ հրեշտակք *կարե՛ն* փոխել զմիտս և շրջել ի բարին. նաև զերևակայութիւնս և զզգայարանս, այլ ո՛չ զկամս: - 336. Երես զիսկութիւն աստուածութեանն նշանակէ. զոր աստի կենօքս ո՛չ ոք *կարէ* տեսանել. որպէս զբոլորակ արեգականն. այլ ի հանդերձեալն տեսանեն ընտրեալք ըստ չափու: - 350. Դարձեալ՝ տէրն այլոց տայ զլոյսն. և մովսէս ո՛չ *կարէ*: - 352. Իններորդ, նոքա ծառայաբար մատուցանէին. ուստի յա՛յտ է զի ո՛չ *կարէին* նստիլ ի սրբութիւնսն կամ ի քաւութիւնսն...: - 354. Հնգետասաներորդ, նոցայն քահանայապետ մովսէս և ահարոն ո՛չ *կարացին* մտանել յերկիրն պարգևաց..: - 355. Զի էգն, և չէզոտքն, և անկատարն, և անհաւատն, և արիւնահեղն, և կարգաւոր, սոքա վեցեքեան ո՛չ *կարեն* զենուլ զի պիղծ է զենն նոցա: - 365. Երրորդ՝ զի *կարէ՛* այլոց խրատ լինիլ բազում ինչ զփորձ առեալ: - 378. Երրորդ՝ զօրաւոր հարւածքն եգիպտոսի, որ ո՛չ ոք *կարէր* հասանիլ և բռնել զպատիժն. որպէս ոք հարկանէ և դարձեալ բարձրացուցանէ զձեռն: - 395. Հինգերորդ՝ զի նոքա խնդրէին երևիլ մարմնով. զի ո՛չ *կարէին* տանել աստուածային հրոյն ի լերինն: - 399. Եւ մին այր *կարէ՛* ի բազում կանանց ծնանիլ զաւակ. այլ մին կնոջ ի բազում արանց ո՛չ բազմանայ ծնունդ: - 401. Երկրորդ՝ բարոյական. զի մին կնոջ ի բազում արանց ո՛չ երևի հարազատ զաւակն. իսկ մի այր ի բազում կանանց *կարէ՛* ծնանիլ հարազատ մանկունս և սիրել զնոսա: - 401. Երրորդ՝ օրինական. զի որպէս մին գլխոյ բազում անդամ *կարէ՛* լինիլ. այլ ո՛չ անդրադարձեալ: - 401. Նոյնպէս գլուխ է այր *կարէ՛* բազում կանայս առնուլ: - 401. Այսինքն՝ զոր ծածկեալ է մեզ՝ բարի կամ չար ո՛չ *կարեմք* ասել: - 405. Դարձեալ՝ զաստուածայինս ամենայն՝ ո՛չ *կարեմ* քննել. այլ զոր ինչ յայտնէ՝ պատմեմ ձեզ: - 405. Յորոց յայսցանէ յա՛յտ է, զի եթէ ապաշխարեալ լինի արգելեալն. կամ վախճանեալ է կապօղն. այլ ոք որ գերագոյն է կամ հաւասար կապողին, *կարէ՛* արձակել զնա՛: - 409. Չորրորդ, մահ՝ այսինքն սատանայ որ յաղթեաց ադամայ. իսկ մարմնոյն մովսէսի ո՛չ *կարաց* յաղթել հրեշտակային օգնականութեամբն. որպէս ասի յառաջիկայդ: - 409. Երկրորդ՝ զիոգին մովսէսի ո՛չ *կարէր* յափշտակել սատանայ, փոխանակ հոգւոյն զմարմինն ջանայր յափշտակել. և վիճէր ընդ հրեշտակին թէ իմ է...: - 410. Երրորդ՝ ի նախատինս զօրաց իւրոց. զի հովիւ մանուկն և որդի յեսսեայ սպան զգոդիաթ. և նոքա իշխանք և մեծամեծք ո՛չ *կարացին*: - 427. Երրորդ՝ զի զօրհասն իւր ո՛չ գիտէր. ապա և ո՛չ զայլոցն *կարէր* գիտել...: - 428. Կամ զի օրէնքն գրեալ էր՝ կուրի և կաղի մի՛ դնել գայթակղութիւն, ասէին նախատելով թէ՝ որպէս ո՛չ *կարես* կոխել զդոսա, նոյնպէս ո՛չ *կարես* առնուլ զամուրն յեբուսայ: - 431. Երկրորդ՝ վասն տկարութեան օրինացն. զի ի հինն ո՛չ *կարէր* բառնալ զմեղս

առանց մարմնական փոխարինաց և յիշատակութեանց: - 433. Սոյնպէս և շնորհք ապաշխարութեան նորոյս առաւե՛լ է քան զհնոյն. զի առանց գործոց հատուցման ո՛չ *կարէին* արդարանալ. իսկ աստ շնորհօք թողութեանն միայն, *կարէ՛* արդարանալ: - 433. Վեցերորդ՝ զի ո՛չ *կարէր* թագաւորել: - 433. Եօթներորդ՝ զի ո՛չ *կարէր* շինել զտաճարն սուրբ: - 433. Քառասուներորդ, սաւուղ բազում անգամ խնդրէր զդաւիթ և ո՛չ *կարէր* ըմբռնել. և որդիքն սաւուղայ զտէրն. զի ո՛չ էր հասեալ ժամ նորա: - 437. Եւ սոքա են հարճք որ *կարեն* ի բաց հանիլ ի ժառանգութենէ. զի սէրն է կապ և լար շարոցին որ ո՛չ թողու ցրուիլ: - 440. Նա՛խ՝ նշանակեն առաջինքն զմարգարէքն և զարդարսն. որք ո՛չ *կարացին* զկործանեալ բնութիւնս շինել արդարութեամբ...: - 448-449. Սակայն արմատ մեղացն որ է՛ ցանկութիւնն և դիւրասահութիւնն ի մեղանչելն՝ մնայ. որպէս յա՛յտ է ի մկրտեալսն որք *կարեն* մեղանչել: - 462. Նա՛ և ս գերազանցեալ քան զիրեշտակս այսու, զի նոքա ի գոյացական վարձս ո՛չ աճիլ *կարեն* և ո՛չ նուազիլ. իսկ երանուհի կոյսն *կարէր* յառաջանալ յարդիւնս և ո՛չ նուազիլ: - 463. Այլ յորժամ նկուն եղեն օրէնք ամենայն, և ո՛չ *կարեցին* փրկել. յետոյ եկն և երևեցաւ նոյն ինքն օրէնսդիրն և փրկեաց զմեզ: - 467. Եւ ո՞վ *կարիցէ* մտախոհ լինիլ: - 470. **Եւ յիսուս անունն՝ են վեց գիր. որ *կարեն* լինիլ սկիզբն այսպիսի ասութեանց. այսինքն Յարազուարճութիւն տրտմեցելոց**: - 474. Հինգերորդ՝ քրիստոս լինելոց էր քահանայ և թագաւոր յաւիտենական. և էգն ո՛չ *կարէր* օծանիլ քահանայ և թագաւոր. ո՛չ յօրինակն և ո՛չ ի ճշմարտութիւնս: - 480. Հարցումն թէ և ո՛չ *կարի* անագան: - 482. Քանզի ո՛չ *կարէին* ի միում աւուր յերկոսեան ուխտսն կատարել զտօնսն հեռի գոլով ի միմեանց. երուսաղէմացիքն այսր աղագաւ փոխեցին. և փոքր փոքր աճմամբ ընկալան և ա՛յլ եկեղեցիք զնոյն: - 482. Զի զսմանէ՛ ասեն աւէ աւետարանիչն յոհաննէս՝ «ի մէնջ ելին զի ո՛չ էին ի մէնջ». և *կարի* յոյժ ստեն նոքա: - 482. Չորրորդ՝ մկրտութիւնն յովհաննու որ մկրտէր ի յապաշխարութիւն. զի *կարասցեն* ընդունել զհոգւով մկրտութիւնն. վասն այն յառաջէ՛ր և սրբէ՛ր ջրովն: - 488. Զի թէ կրեալ էր զմեղս և զապականութիւն, ո՛չ *կարէր* ազատել զմեզ. ինքն ի ներքոյ անկեալ կրից և ապականութեանց: - 497. Ապա թէ ոչ՝ նա՛ որ զադամ երեսնամեայ ստեղծ, *կարէ՛ր* և նոյն հասակաւն ծնանիլ. այլ այն ո՛չ լինէր ըստ սովորութեան մեր որպէս ցուցաւ ի վերոյ: - 501. Զի ապականացու զապականացու մաքրել ո՛չ *կարէ*. այլ անապական մարմնովն եղև մաքրիչ տէրն մեր ապականութեան մերում: - 502. ...և մեղօք ծանրացեալ էջ ի ներքին կէտս դժոխոցն, և այլ ո՛չ *կարէր* բարձրանալ. մինչ ի վերին կիտէն բանն աստուած էջ ի ներքին կէտն. և ապա ել ադամ ի վերին կէտն երկնից: - 503. Եւ թէ ոք ասիցէ, ապա ուրեմն ամենայն հոգիք յետ մահու *կարեն* խոստովանիլ: - 508. Ասեմք թէ՝ ո՛չ *կարեն* վասն երկու պատճառի: - 508. Երկրորդ՝ զի փոխեալ է որպիսութիւն մարդոյն. զի ո՛չ *կարէ* մեռանիլ. նոյնպէս և ո՛չ *կարէ* արդարանալ ըստ ինքեան. նաև ո՛չ մեղանչել: - 508. Եւ որպէս դևք զկնի անկման իւրեանց ոչ *կարեն* արդարանալ ըստ ինքեան. զի անկումն նոցա մա՛հ է նոցա: - 508. Նոյնպէս և հոգի մարդոյ զկնի մահու ո՛չ *կարէ* արդարանալ ըստ ինքեան...: - 508. Զոր ո՛չ *կարեն* զայս ուրանալ ազգն ժխտողաց: - 509. Իսկ զտեղի համբարձմանն քրիստոսի միտք ո՛չ *կարէ* ցուցանել. զի ի լոյս անմատոյց է բնակեալ և ի ներքին կողմն վարագուրին ըստ առաքելոյն: - 519. Երկրորդ՝ զի ամպն կալաւ զնա յաչաց նոցա. նշանակի թէ ի մահկանացու մարմինս ո՛չ *կարեմք* տեսանել ի բարձունս զքրիստոս: - 520. Հինգերորդ՝ յետ **խ** աւուր համբարձաւ, զի ցուցցէ թէ որք զ**ժ** բանեան օրէնսն չորիւք աւետարանաւն լնուն, *կարեն* յերկինս ելանել: - 521. ...զի ուսցին բառնալ զտկարութեան այլոց. որպէս քրիստոս զնոցայն եբարձ. իսկ թէ նախ զհոգին առեալ էին՝ ո՛չ *կարէին* բառնալ զայլոց տկարութիւնն: - 521. Դարձեալ *կարէ* ասիլ Ութերորդ պատճառս, առ ի ցուցանել թէ հոգին ո՛չ ումեք առատապէս պարգևի, եթէ ոչ յիսուս ի սիրտ նորա յատկապէս փառաւորեսցի: - 522. Եւ բազումք զհոգին ո՛չ *կարեն* ընդունել...: - 522. Երրորդ՝ զի անդ ո՛չ *կարէր* արդարանալ զի հիւանդ էր սիրտն, ետ նոր օրէնս ի սիրտս մեր որ կարօ՛ղ է արդարացուցնել զժողովուրդս և զհեթանոսս: - 524. Իսկ աստուածաբանն ասէ, ուր պիտոյ էր՝ յամենայն լեզուս խօսիլ *կարէին*. զի լիցի շնորհքն խօսողաց և ո՛չ թէ լսողաց: - 525. ...իսկ թէ մի է, ո՞րպէս *կարասցուք* ասել մի և զնոյն բանն աստուծոյ որ նախ քան զյաւիտեանս. և այսօր գրեալ ի քարտիսի: - 529. ...այլ և մարգարէքն տալ զհոգին այլում ո՛չ *կարէին*...: - 535. Եւ գիտելի է, թէ քահանայ ոմն զժողովուրդ իւր կապիցէ, ա՛յլ քահանայ ո՛չ *կարէ* արձակել: - 541. Եւ թէ եպիսկոպոս զիւր քահանայն կապէ, ա՛յլ եպիսկոպոս ո՛չ *կարէ* արձակել: - 541. Նոյնպէս և աթոռակալքն որ ի չորս աթոռս, ա՛յլ զայլոյ վիճակեալ ո՛չ *կարէ* կապել և ո՛չ արձակել. նոյնպէս և ի նոյն աթոռն, վերջինն զառաջ նոյն ո՛չ *կարէ* փոխել կանոնս և զկարգ: - 541. Յաղագս որոյ ո՛չ *կարեմք* զառաջնոյն հայրապետաց կարգ կամ զկանոնս զպահք կամ զայլ ինչ թիւրել և փոխել: - 541. Այլ *կարէ* յաւելուլ ի նոյն տեսակն ուղղութիւն և կարգ: - 541. Եւ դարձեալ՝ *կարէ՛* վերջինն զառաջնոյն թիւրութիւնն ուղղել և զանիրաւ կապեալն արձակել. որպէս աստուածաբանն գրիգոր զարիանոսացն: - 541. Եւ թէ ոք ասիցէ, այս առաջնոյն. զի վերջինն *կարէ՛* ուղղել. այլ ո՛չ *կարէ* թիւրել: - 541. Եւ յա՛յտ է

յայսմանէ, որ կաթողիկոսն ո՛չ *կարէ* կաթողիկոս ձեռնադրել. այլ եպիսկոպոս առնէ: - 546. Նմանապէս և ազգս հայոց թէպէտ մի է, *կարէ՛* պատւական գոլ բազմաց: - 551. Իսկ թէ կառավարն թիւրի, կառքն ո՛չ *կարէ* ուղղել. այլ երկոքինն գահավիժին: - 557. Երկրորդ՝ զի այլ ամենայն մեղք մարմնական է և գիտեմք թէ մեղք է. իսկ հպարտութիւնն անմարմին է և անօսր. և ո՛չ *կարեմք* գիտել զմեղանչումն: - 562. այսինքն չարութեամբն յորժամ կամքն *կարէ՛* և գիտէ ընդ դէմ կալ չարի իմն, սակայն վասն չարութեան ընտրէ զայն: - 566. Զգուշանալ պա՛րտ է յամբարտաւանութենէ, զի զիրեշտակս *կարաց* խաբել. և զիրեշտակն սատանայ դարձոյց: - 569. Որ անհնազանդ է բանին, որպէս տնկականն. հալելն և աճիլն և այլն. և սոքա ոչ *կարեն* լինիլ ենթակայ առաքինութեանց: - 572. Իսկ երկրորդ սեռն հնազանդ բանին՝ ցասումն և ցանկութիւնն. և սոքա ո՛չ *կարեն* լինիլ ենթակայ իմանալի առաքինութեանց: - 572. Դարձեալ կոչին ծառայականք, զի և ի խառնուածոյ մարմնոյն գոյանան. որք ո՛չ հետևին միմեանց. զի որ ի խառնուածոյն ողջախո՛հ է, նա ո՛չ խոհեմ կամ արդար կամ արի *կարէ* գոլ: - 581. Դարձեալ գիտելի է, զի աստ ասեն հերձուածօղ ազգն Ֆռանկաց թէ՝ թէպէտ մկրտութիւնն գործ քահանայի է, բայց ի հարկաւոր ժամանակն թէ քահանայ ո՛չ լինի ամենայն ոք որ գիտէ զձև մկրտութեան՝ *կարէ* մկրտել: - 588. Եւ թէ այր մարդ ոչ լինի և տղայն մերձ ի մեռանիլ լինի, կինն *կարէ՛* մկրտել թէ գիտէ զձև բանին զոր քրիստոս ուսոյց «յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ». ցանէ՛ զջուրն և ասէ՝ մկրտեալ լինի: - 588-589. Հինգերորդ, զի թէ գո՛յր հնար կնոջ վասն հարկին առնել զգործ քահանայի, ընդէ՛ր ոչ *կարաց* նուևի կոյսն մկրտել զոք ի վրաց յորժամ դարձոյց յաստուածգիտութիւն...: - 589. Վեցերորդ, զի թէ կինն *կարէ* մկրտել ի հարկաւոր ժամանակի, սուրբն գրիգոր լուսաւորիչն քանի ևս առաւել պատւական էր քան զմի կին...: - 589. Նախ՝ զի *կարէ՛* միանգամայն ծնանիլ բոլոր ազգ մի. եթէ ռ, եթէ բիւր...: - 590. Այլ կնքահայր ո՛չ է պարտ առնել զայլազգին. զի ո՛չ ունի զհաւատն սուրբ, և ո՛չ է հրաժարեալ ի սատանայէ. վասն որոյ ո՛չ *կարէ* լեզու լինիլ տղային կամ երաշխաւոր. - 591. ...զի նա որ ոչ ունի զհաւատ, այլոց ո՛չ *կարէ* միջնորդել: - 591. **Կին մարդ *կարէ՞* կնքահայր լինիլ թէ ոչ:** - 591. **Ո՛չ *կարէ*. զի կնքահայր ասեմք և ո՛չ կնքամայր. զի կնքամայր եկեղեցին է նորածնելոցն:** - 591. Որոյ պատճառէ, զի կին երաշխաւոր և վկայ ո՛չ *կարէ* լինիլ, վասն որոյ և ո՛չ կնքահայր *կարէ* լինիլ: - 591. Եւ դարձեալ՝ կանանց ազգ ո՛չ *կարէ* քահանայագործել. և ո՛չ կնքահայր լինիլ: - 591. ...և առանց ցանկութեան մեղաց ո՛չ ոք *կարէ* ծնանիլ. բայց միայն տէր մեր որ առանց ցանկութեան ի կուսական արգանդէ ծնաւ՝ ո՛չ ունէր զմեղս սկզբնական: - 592. Ասեմք թէ՝ կարողութիւնն է ի դիտաւորութիւն. և դիտաւորութիւնն է ի կոպարն որ է մին հացն. որ ասաց «այս է մարմին իմ». ապա ուրեմն ո՛չ *կարէ* զբազում հացս օրհնել: - 597. Եւ թէ ասեն՝ *կարէ՛* մին քահանայն ի մին ժամս բազում տղայս մկրտել. ապա և *կարէ՛* բազում հացս օրհնել: - 597. Երկրորդ՝ զի մեք *կարասցուք* մերձենալ ի սրբութիւնն, վասն այն մնան պատահմունքն...: - 597. Եւ գիտո՞ւն էր որ *կարէր* ճանաչել զմահու չափ մեղքն և զներելին: - 601. Իսկ յորժամ քահանայն լաւ քննէ զխղճմտանքն ժողովրդեանն. խորհի վասն ապաշխարութեանն թէ ո՞րպէս *կարէ* ապաշխարել...: - 601. Երկրորդ՝ թէ տգէտ լիցի քահանայն և ո՛չ *կարէր* ընտրել զճանրութիւն մեղացն և զանազանել: - 603. Վասն է՞ր մինչ ի չորրորդ կարգն փոքրիկ ջահընկալութեանն *կարեն* ամուսնանալ, և յայնմ հետէ ոչ: - 609. Վասն այն մինչ յայս ամուսնանալ *կարեն*. և ի հինգն ելեալ վերագոյն դասուց՝ ո՛չ ամուսնանան: - 609. Զի թէպէտ և եկեղեցի սուրբ *կարէ՛* բաժանել վասն արգելմանցն...: - 610. Զի յորժամ մեղօք ինչ սրբութիւնս մեր ապականի, կամ շարժի ոք ի հաւատոյ, վերստին *կարէ՛* հաստատիլ ի հաւատս, և դարձեալ կրկնել զխոստովանութիւն և զապաշխարութիւն: - 615. ...ո՛չ *կարեմք* այլոց բարեխօսել. - 650. Եւ թէ ազատ ոք է և ո՛չ *կարէ* ապաշխարել...: - 652. Երկրորդ՝ այն տեղի անմարմնո՛ց է ոչ *կարէր* մարդս մարմնով անդ բնակիլ. - 662. Իններորդ՝ առաւել ամենահնար գթութեան է ցոյցք. զի եղական բնութիւնս ո՛չ *կարէր* անմեղ մնալ. զի անեղն է անմեղ: - 663. Ա՛րդ՝ թէ յերկինս էաք մեղանչեալ՝ ո՛չ *կարէաք* բշժկիլ որպէս դևքն: - 663. Եւ չորրորդ որպիսութիւն, զի աստ հոգին *կարէ՛* մեղանչել՝ *կարէ՛* և ոչ մեղանչել: - 667. Իսկ յետ մահու *կարէ՛* ոչ մեղանչել: - 667. Եւ յետ մահուն *կարէ* ոչ արդարանալ: - 667. Եւ յետ յարութեան ո՛չ *կարէ* մեղանչել զի անկա՛ր է մեղանչել: - 667. Նոյնպէս և մեղաւոր հոգին աստ *կարէ՛* արդարանալ և *կարէ* ոչ արդարանալ: - 667. Եւ յետ յարութեանն ո՛չ *կարէ* արդարանալ զի անկատա՛ր է...: - 667. Եւ դառնացեալ յոգոց հանէ, և այսր և անդր զերեսն շրջէ և թաքչիլ ո՛չ *կարէ*: - 669. Եւ կոչի պատանք, զի պատեալ և կապեալ է զամենայն զգայարանսն. և ոչ ինչ *կարէ* գործել. ո՛չ չար և ո՛չ բարի: - 671. Զի այժմ *կարե՛մք* մեռանիլ...: - 675. ...և յետ մահու *կարեմք* յառնել...: - 675. ...և յետ յարութեանն ո՛չ *կարեմք* մեռանիլ և յառնել...: - 675. Եւ փարաւօն ընկղմեալ զօրօքն. զի ոչ ինչ *կարեն* վնասել չար դևքն՝ քրիստոնէից հոգւոց: - 682. Այլ յորժամ սիրտն կապեալ է ի մեղս աշխարհի և ոչ *կարաց* ապաշխարութեամբ քաւել, ո՛չ մտանէ յարքայութիւնն երկնից: - 683. և ո՛չ *կարացին* բովանդակ ապաշխարել...: - 683. Եւ թէպէտ ամենայն մեղաւոր զղջանայ յետ մահու, այլ ո՛չ *կարէ*

ապաշխարել...: - 684. Այլ չար հոգիքն ոչ *կարեն* գալ առ մեզ մինչ ի դատաստանի օրն...: - 686. Ապա թէ ոչ՝ ո՛չ *կարէ* մեղաւոր հոգին ելանել յերկինս. ուստի և հրեշտակք վասն մեղաց անկան. և մարդն ի դրախտէն: - 689. ...որպէս փախեաւ կինն որ ծնաւ զմանուկն արու ի տեսիլն. և ո՛չ *կարաց* հրեղէն վիշապն հասանիլ: - 689. ...բայց վարձ հատուցման ո՛չ *կարէ* ընդունիլ առանց մարմնոյն. զի ո՛չ միայն հոգւոյն է վաստակն, այլ և մարմնոյն: - 691. Չորրորդ, ասէ սուրբն եպիփան ի հաւատոց գիրն, եթէ որպէս հոգին միայն դատի ըստ բանի հերձուածողացն զի *կարէ՛* ասել մարմնոյն եղեալ զյանցանքն: - 691. Ապա ուրեմն հոգին ո՛չ *կարէ* առնուլ զկատարեալ վարձս կամ զտանջանս: - 694. Այլ յորժամ հոգին միաւորեսցի ընդ մարմնի և յերկուցն լինիցի անձն, յայնժամ *կարէ՛* ունել ներգործութեամբ զփառս կամ զտանջանս: - 694. Զի ո՛չ *կարեմք* հոգւով երանի լինիլ եթէ ոչ մարմնով երանելի լիցուք: - 695. ...իսկ հոգին միայն ո՛չ *կարէ* քաւել զանչափ մեղս: - 699. Վեցերորդ, զի մահն սկիզբն է անփոփոխ կենացն. զի ո՛չ *կարէ* փոխիլ ի մեղաց յարդարութիւն...: - 699. ...որպէս և հրեշտակք յետ անկմանն ո՛չ *կարացին* փոխիլ յարդարութիւն: - 699. Նոյնպէս և հոգին յետ բաժանման մարմնոյն ո՛չ *կարէ* քաւել: - 699. ...այսինքն ո՛չ դառնայ յայժմու վարս աշխարհի և ո՛չ ապաշխարել *կարէ* ասէ մեկնիչն: - 699. Այլ հոգի դատարկ ի քաւարանին աչս ո՛չ ունի զի լացցէ որով յարատ հայեցաւ. և ո՛չ մարմին զի պահեսցէ և աղօթեսցէ. այլ և ո՛չ զղջումն. զի հոգին ինքն ըստ ինքեան ո՛չ *կարէ* զղջալ: - 699. ...հետևի զի և արդարքն *կարեն* ելանել յարքայութենէն աստուծոյ և գնալ ի դժոխքն: - 700. ...ո՛չ *կարեն* աստի այդր գալ, և ո՛չ այտի աստ: - 700. Դարձեալ ասեմք, եթէ զպատիժ մեռելոյն զոր նա ո՛չ *կարէ* քաւել...: - 701. ...զի թէ ոք աստ զպատիժ մեղաց ոչ *կարասցէ* վճարել, անդ վճարեսցէ և թողցի: - 704. Նա՛խ՝ զի *կարէ՛* որ յառնել միանգամ և դարձեալ մեռանիլ. - 716. զի *կարիցեն* հասկանալ. այն որ համանգամայն եղեն երկինք և երկիր: - 717. Երրորդ պակասութիւն տրտմութիւնն է ի հոգին. զի բազում ինչ խնդրէ և ո՛չ *կարէ* առնուլ. և բազում ինչ ոչ խնդրէ և լինի նմա. - 722. Չորրորդ պակասութիւն է՝ զի այժմ է՛ մարմին մեր թանձր և կոպիտ. այլ յայնժամ բառնի այս ի մարմնոյ և լինի անօսր և թափանցիկ. զոր ոչ պարիսպ կամ բանտ ըմբռնել *կարիցէ*: - 722. Հինգերորդ՝ զի ո՛չ ոք ապականացու զայլ ոք ամբողջ *կարէ* պահել որպէս յայտ է ի նիւթական իրս ամենայն: - 733. Նա՛խ՝ զի տեղիք դատաստանին ո՛չ է յերկինս ուր մեղաւորք ո՛չ *կարեն* ելանել: - 737. Եւ իւրաքանչիւր ոք զգործս իւր ընթեռնու յայտնապէս և ո՛չ *կարէ* ուրանալ և մոռանալ: - 741. Երրորդ ի վկայիցն զոր *կարեմք* փոփոխել այժմ: - 742. Երրորդ, յատեան դատաստանի **դ** խնդրին վկայք. զի մինն *կարէ՛* ոք խաբել և սուտ վկայել. այլ զերկու և զերեքն ո՛չ: - 742. Դարձեալ՝ չար կամք մեղաւորին է յաւիտենական. զի կամին յաւիտենական հեշտանալ ի մեղս թէ *կարէին*. ապա ուրեմն պատիժն լինի յաւիտենական: - 744. Եօթներորդ՝ ամօթ մեղացն. որք անդ ամենայնքն յայտ լիցին և զինքեանս թաքուցանել *չկարեն*: - 752. Կամ փայտիս այսորիկ ոստք *կարեն* ասիլ միաւորեալ բնութիւնքն քրիստոսի. այսինքն աստուածութիւնն և հոգին և մարմինն: - 755. Եւ այլ բազում վկայութեամբ *կարէ՛* հաստատիլ եթէ մի է արքայութիւնն երկնից որ է կեանքն յաւիտենից: - 759. Եւ այնպիսի քաղցր է տեսութիւնն աստուծոյ, մինչ զի չարքն թէ *կարէին*՝ յօժարէին ի դժոխս կալ և զաստուած տեսանել. քան արտաքոյ տանջանաց լինիլ և զաստուած ո՛չ տեսանել: - 763. Մեծութիւն այսմ ուրախութեան *կարէ՛* գմտաւ ածիլ յայնմանէ, զոր սովո՛ր են ծնօղք յորժամ որդիք նոցա լինին եպիսկոպոսունք կամ թագաւորք: - 763. Առաւել պարտ էր մարդկան վաստակիլ միայն՝ զի *կարասցեն* գոլ ի միում աւուր ընդ երանելի սրբուհւոյ աստուածածին կուսին. քան բազում վաստակիլ վասն յաւիտենական փառացն: - 763. Երրորդ բաղդատութեամբ այնորիկ՝ որ եղիցի ի վերոյ ինքեան. զի առ հոգի իւր կատարեալ *կարիցէ* ունել հնազանդութիւնս: - 764. Չորրորդ առ այն որ եղիցի ընդդէմ ինքեան. զի մի՛ յումեքէ *կարիցէ* վտանգիլ: - 764. Երրորդ այնու՝ զի մեղքն որ յոյժ վտանգեաց զմարդիկ, եղիցի փակեալ ի դժոխս զկնի աւուրն դատաստանի. զի եղիցի ի դժոխս իբր ի տեղւոջ իւրում. զի ո՛չ *կարասցէ* մնալ. ո՛չ յերկինս և ո՛չ յերկրի. այլ իջանէ ի դժոխս ներքինս: - 764. Իններորդ՝ վասն պտղոյն յամրութեան. զի ասեն թէ ո՛չ *կարէ* պտղաբերել մինչ ի հարիւր ամն: - 766. Եւ ոչ օրինակս *կարէ* յայտնել զոր ինչ էն: - 770. Եւ այս ո՛չ միայն փութանցիկ գոլոյ վասն, կամ ներհակաբար հատուցման որպէս սովորութիւն է. այլ զի ո՛չ ինչ *կարեն* տանիլ ընդ ինքեանս. բայց միայն նշխարհս ինչ յիշատակութեան ուրուական տեսլեան: - 775. Այլ որ քան և *կարասցէ* ոք զմիտս ուղղել. խօսակցելով առ նա, հաճո՛յ է աստուծոյ: - 779. Այլ զանազանի. զի դևք ամենևին ո՛չ ունին զղջումն և ոչ *կարեն*. վասն որոյ ո՛չ հանդիպին թողութեան. իսկ մեղաւորն ունի զղջումն այլ ո՛չ *կարէ* վարձաւորիլ: - 780. Եւ այլևս յարմար տեղւոյս այսպէս իմանի. զի սուրբ հարքն առաջինք պակաս ունէին զչարչարանս. վասն որոյ ո՛չ *կարէին* փրկիլ. իսկ քրիստոս եղեալ ըստ մարմնոյ որդի նոցա, զպակասութիւն հարցն չարչարանաց յիւրումն մարմնի էլից: - 781. Իսկ զոր ինչ շնորհօք լինի ոք ստացեալ, *կարէ՛* և մերկանալ. որպէս ադամ

զեռակի շնորհն. և առ ջրհեղեղաւն...: - 782. Ապա զի՞նչ է այն՝ որ զշնորհս աւազանին ոչ ուրացութիւն և ո՛չ այլ ինչ նոյնպիսի մերկացուցանել *կարէ:* - 782. Նմանապէս և ո՛չ զքահանայութիւն *կարէ* քակել ի յանարժանէն: - 782. Զի *կարէր* կորուսանել մեղօք, և *կարէր* պահել անմեղութեամբ. որպէս զանմահութիւն և զայլսն: - 783. Իսկ որքանութիւն ըստեանց կենդանեաց, բերէ՛ զօրինակ որքանութեան *կարելոյ* ծնանիլ յանոցիկ տեսակացեալ: - 786. Այլ և շարժումն երկնից բոլորաձև *կարէ՛* ասիլ. մասամբ զօրութեամբ, և մասամբ ներգործութեամբ: - 788

**ԿԱՐԵՎԵՐ +** եկն երևեցաւ. այսինքն մարդացաւ մարդասէր բժիշկն. և առողջացոյց *զկարեվէր* խոցեալքս. ըստ որում բժիշկ անուանէր զինքն անկեալ ի ձեռս աւազակաց հիւանդին: - 467

**ԿԱՐԵՒՈՐ +** ծածկէ՛ զգարշութիւն մեր. որպէս մայր մանկան քան զայլ *կարևորս*: - 677

**ԿԱՐԻ +** Նա՛խ՝ զի ամառն *կարի՛* ջերմ է և չոր՝ չորացուցանէ՛. և ձմեռն խիստ ցուրտ՝ սառուցանէ՛ զսերմն: - 197. Ոտք *կարի* իմն երկայն՝ նենգաւո՛ր է: - 247. Նոյնպէս և բանն աստուած թէ *կարի* իսկ յառաջին դարս էր մարմնացեալ, որպէս յաւուրս նոյի՝ աբրահամու և կամ մովսէսի՝ լինէր կրկին վնաս: - 467. Ասեմք եթէ՝ *կարի՛* արժանապէս քումդ անմտութեան հերձասիրութեանդ դատեցար: - 497. Եւ թէ ոք ասիցէ, *կարի՛* բարկացար. ո՛չ զայս ասեմ հնազանդիլ. այլ որպէս լուսաւորիչն գնաց ի հռօմ և հնազանդեցաւ: - 548. Ապա թէ կերակուրքս այսորիկ յառնեն ի մարդն, լինի մարդոյ մարմինն *կարի* անհեթեթ: - 718. Այլ որ առաւել մեծն է և հսկայանդամ, և *կարի* փոքր և փանաքի, յերեսնամեայ հասակն իւրեանց չափաւորին: - 726. ...և երկոքեան սոքա *կարի* յոյժ վայելեն դատաւորի. այսինքն իմաստութիւն և անմեղութիւն. վասն որոյ քրիստոս լինի դատաւոր: - 735. Որք դարձուսցեն զսիրտ հարց յորդիս ըստ մաղաքիայի. այսինքն ուսուցանեն զհաւատն փրկչին զոր հարքն ունէին. և է՛ վարձաւորելի և *կարի* քաջ. և թէ այսպէս և թէ այն՝ քրիստոս քարոզի: - 785. Ո՛չ ըստ բաւական բանի առեալ զլուծումն. այլ ըստ *կարի* տկարութեան արտայայտումն. մանաւանդ հարկեալ ի սիրոյ քումդ եղբայրական խնդրոյ: - 788. Այլ և աստ ապաշաւելն ոչ ինչ օգտեալ. որպէս և անդ ո՛չ լսողաց բերանով հաշեալք. որ և ո՛չ գոյր անդրէն դառնալ. և ո՛չ *կարի* յօժարացն շահավաճառ եղեալ. ո՛չ գիտ և ո՛չ ողորմ. հանգոյն յիմարացն օրիորդաց: - 789

**ԿԱՐԻՃ +** Իսկ Խեցգետինն և *Կարիճն* և Ձուկն, ունին զբնութիւն ջրոյ ցուրտ և գէճ: - 189. Ի կշիռն ի *կարիճն* և յաղեղնաւորն առնէ աշուն. նոյնպէս հասարակ տիւ և գիշեր **ժբ** ժամ: - 190. Գլուխ օձին մեղքն է. և խայթոց՝ *կարճին* մահն: - 489. Եւ մեզ ետ իշխանութիւն կոխել զօձս և *զկարիճս* որ տկարացեալ էր և կապեալ: - 706

**ԿԱՐԻՔ +** Որ ասես սոսկ մարդ գոլ զքրիստոս. և տգէտ և տկար. և ապականացու մարմին. և անկեալ ընդ *կարեօր* մարդկան: - 98. Եւ կապ *կարեաց* որպէս վարձկանաց: - 317. Եւ բաւականութիւն սոցա է այսպէս. զի եմք մարմին հոգի և միտք գոյացեալ. և ունիմք *կարիս* և ինչս և շնորհք և կրօնք: - 389. Եւ *կարիքն* կրկին է. ներքին ամուսնութեանց, և արտաքին ընչից: - 389

**ԿԱՐԾԵՄ +** Առաջին է՛ անգիտանալ զտկարութիւն և զփոքրկութիւն մարդկային մտաց. *կարծեն* թէ՝ ամենայնի պարունակօ՛ղ է, և ո՛չ ունի սահման: - 31. Ուստի հեշտութիւն և աւանդութիւն յիրաւի խառնեալ ընդ միմեանս, և հակառակասիրութիւն և ինքնահաճութիւն յառաջ եկեալ, որով զինեալ պնդին ընդդէմ ուղղութեան. զի *կարծեն* զինքեանս ճշմարիտ գոլ քան զայլսն: - 33. Իսկ սոքա անզեղջ մնան որպէս սատանայ՝ զինքեանս ուղիղ *կարծելով*: - 33. Դարձեալ ասէ թէ՝ ետ ինձ հայր, զի մի՛ հակառակ հօր *կարծիցեն* զորդի. որպէս *կարծէին* հրէայքն լուծանելով զշաբաթսն: - 46. Եւ թէ ըստ մարդկութեանն իմանաս, մի՛ *կարծիցես* պարգև և շնորհ զտալս զայս. զի այն նեստորին է: - 46. Ասեմք եթէ՝ օրինականն որպէս զմարդո՛յ բարութիւն *կարծէր* ունել քրիստոսի՝ այլ ո՛չ գերագոյն. զի և մարդիկք բարի անուանին...: - 47. Բե՛ր նախ տեսցուք ըստ քո *կարծեացդ* թէ արարա՞ծ է հոգին: - 52. Եւ այսպէս *կարծեն* յամենայն կողմանց կապել զմեզ: - 52. Ասեմք մարմնասիրեացն եթէ՝ մարմնակա՛ն *կարծէք* զծնունդն ըստ մեզ ո՛վ ծիծաղելիք: - 52. Եթէ ըստ մեզ *կարծէք* զծնունդն, պիտոյանայ երկուորիս և գործիս հօր. լիցի և այրութիւն և իգութիւն յաստուած. և լիցին որդիք երկորեակք էրէց և կրտսեր: - 52. Իսկ թէ՝ «իմս» այս՝ զբղխումն յորդւոյ ասէ, ապա և այլուր ըստ քեզ զհայր մարմնացեալ *կարծես*: - 61. Այլ զայսպիսի ի միում գոյութեանն յոյժ յիմարութիւն է *կարծել* կամ ասել: - 62. Ապա ուրեմն այսպէս *կարծելն* զհոգին միայն յորդւոյ ցուցանէ՛ և ո՛չ ի հօրէ որ է անհնարին հերձուած: - 62. Ա՛րդ՝ որպէս *կարծեն* ինքեանք զէն մեծ ունիլ առ երկոսին կողմանս, կամ հարկիւ անկանիլ ի նեստորին բնութիւն և բնութիւն, և կամ ըստ եւտիքեայ շփոթել զբնութիւնսն: - 75. Նոքա ի կիսաէշ նման զտնօրէնութիւնն սուրբ համբաւեն. և կամ առ աչօք և ունայնութեամբ. որպէս մանիքեցւոցն, և կամ եւտիքի *կարծի*: - 81. Եւ դարձեալ՝ զի մի՛ *կարծի* միայն յանմարմնութեանն պատկեր հօր, ի վերայ էած և ի լինելութեանն հաւասար աստուծոյ գոլ նովին մարմնովն առանց յափշտակութեան: -

93. Եւ դարձեալ՝ որպէս դուդ *կարծես* և ինքն որդին մարդոյ զինքն ո՛չ ճանաչէ. և իրէայքն զորդի ո՛չ ճանաչէին ասելով, «ո՛վ է այն որդին մարդոյ»: - 96. Նախ՝ զի մի՛ *կարծեսցի* հայր տկար վասն ծերութեան: - 105. Ա՛րդ՝ զի հայր պատճա՛ռ է որդւոյ ծննդեան՝ և հոգւոյ բղխման, վասն որոյ հայր նախադասի. իսկ ընդ նմա որդի. ո՛չ որպէս ոմանք *կարծեն* որդի պատճառ է հոգւոյ բղխման, այլ գ է ուղիղ տեսութիւնն: - 109. Ո՛չ են յաւերժահասունք որպէս ոմանք *կարծեն* թէ յերկուց տարերց այսինքն ի հրոյ և յօդոյ...: - 150. Եւ աստ ասէ իրինոս՝ զի թէ յաւիտենական է հուրն, զիա՞րդ վախճան ածեն տանջանաց յաւիտենից ունայնախոհքն. քերևս *կարծելով* թէ ի հուրն մաքրեսցի. զի մի՛ լիցի աշակերտացն ճշմարտութեան խորհիլ և ասել: - 153. Եւ այսպէս *կարծեն* յերկուց *դիմաց* ըմբռնել զմեզ: - 173. Երրորդ՝ զի արարած լսելով՝ մի՛ *կարծեսցես* օտար ի նմանէ զեղեալքս, կոչէ՛ ծնունդ. և յորժամ ծնունդ լուիցես, մի՛ *կարծեսցես* յէութենէն աստուծոյ զեղեալքս՝ ի վերայ բերէ արարած: - 179. *Կարծեմ* թէ և քեզ ծանր թուի հարցումնս այս. սակայն մտաւորաբար լո՛ւր: - 180. Եւ երկիրս անշարժ է տեղեաւ, եւ սմա ապականիլ երեսօք. զի տեսեալ մարդիկ եղական և ծառայ իմացեն զնոսա. և մի աստուածս *կարծեսցեն* և մոլորեսցին. որպէս ասէ նիւսացին ի գիրս կազմութեան: - 182. Եւ թէ զտեսութիւնս զայս *կարծես* էութիւն հոգւոյ ըստ որում է հոգի, ապա ո՛չ միայն ետես զհոգի...: - 260. *Կարծե՛մ* որպէս ասացեալ եղև այս. բայց ո՛չ լիապէս: - 264. Նա՛խ՝ զի մի՛ համեմատ առն *կարծիցէ* զինքն. այլ որպէս ոչ համահասակ և ոչ համահող լիցի: - 276. Չորրորդ՝ զի մի՛ տկար ոք *կարծիցի*. այլ որպէս կողե՛ղ և հաստակող ասեմք զըմբիշս. այսպէս զօրեղ եղիցի կինն ի տնօրինել զտունն: - 276. Զի ասեն թէ՝ ամենայն մարդ *կարծէր* թէ ե՛ս եմ ըղորդ և ե՛ս ունիմ զառաջին լեզուն: - 299. Իսկ զի հրամայէ՛ երից աւուրց ճանապարհ տանել, զի մի՛ ապշեալ ինչ *կարծեսցի*: - 304. Իններորդ՝ ի յանդիմանութիւն բնութեան մերոյ. զի մի՛ *կարծեսցէ* թէ առաքինութեամբն և սիրովն առ աստուած՝ հաւասարիլ կարէ՛ սիրոյն աստուծոյ որ առ մեզ. այլ կաղ գտանի: - 311. Ո՛չ կարեն դևք զտարերքս փոփոխել. և ո՛չ հուր և ո՛չ շանթս և ո՛չ այլ ինչ ի տարերացս առնել որպէս *կարծեն* ոմանք: - 321. Երրորդ՝ զբարի և զչար գործոց հատուցմունքն աստէն *կարծէին* լինիլ ի մարմնի: - 324. Երկրորդ, *կարծէին* թէ մովսէ՛ս տայ զջուրն: - 386. Եւ թէ մովսէսի ոչ հաւատայք որ փառաւո՛րն է ի մէջ ձեր, ինձ զիա՞րդ հաւատայք որ թշնամի *կարծէք*: - 405. Նախ ասեն թէ զնիւթն աստուած *կարծեցին*, սատանայ խաբէր թէ ի՛մ է այս մարմինս իբրև տեառն նիւթոյ...: - 409-410. Չորրորդ՝ տեսեալ զմովսէս առաւել փառաւորեալ, և յետ վախճանին թոյլ ետ ներողութիւնն աստուծոյ ժպրհիլ բանսարկուին ստգտանօք մեղաց. զի մի՛ տացեն նմա զգերազանց պատիւն աստուած *կարծելով*: - 410. Երրորդ՝ զի մի՛ *կարծեսցեն* թէ յինքեանց անկան սրով. այլ ի հրեշտակէն: - 446. Եւ թէ յայնմ ժամանակի փրկեալ լինէաք, *կարծէաք* թէ յօրինաց անտի եղև փրկութիւն: - 467. Երկրորդ՝ զի ցուցցէ զճշմարիտ մարդեղութիւն իւր և ո՛չ *կարծեսցի* առ աչօք. որպէս զրկեալքն ի շնորհաց նորա ասացին: - 485. Հինգերորդ՝ զի մի՛ *կարծիցի* հակառակ ընդ դէմ օրինացն աստուծոյ...: - 485. Ասեմք մեք, եթէ անմտութիւն է *կարծել* զմարմինն թերեկատար առանց ականայ կրից: - 502. Յայնժամ փախուցեալ սատանայ իբր զապստամբ ծառայ. և մտեալ յորջն դժոխոց *կարծէր* ամրանալ անդ և ունել զհոգիսն: - 503. Հինգերորդ՝ զի գիտասցեն թէ քրիստոսի պարգևեցաւ. թէ յառաջագոյն էին ընկալեալ, պարզապէս յաստուծոյ *կարծէին* զտուչութիւն հոգւոյն և ո՛չ ի քրիստոսէ: - 521. Դարձեալ, բնաւորեալ է մարդոյ՝ զի ամենայն ոք *կարծէ* զինքն ճշմարիտ և արդար. այլ որ ունի զճշմարտութիւնն նա՛ է ճշմարիտ և արդար: - 551. Զորօրինակ **բ** ոք ի դատախազից իւրաքանչիւրն զինքն կամի և *կարծէ* ճշմարիտ գոլ. այլ մերձ եկեալ դատաւորին՝ վկայիւք յայտնի ճշմարիտն: - 551. Վասն որոյ և տէրն յորժամ ասաց զցանկութիւնն շնութիւն, յաւել ի վերայ թէ՝ «ի սրտի իւրում». զի մի՛ *կարծեսցի* մարմնական շնութիւն, այլ հոգէկան և մտաւոր. ապա ուրեմն կատարեալ է մեղք մտացն: - 556. Դարձեալ ևս յայտնի. որ խորհրդովն է պղծեալ՝ ո՛չ *կարծէ* զինքն մեղանչական գոլ. այլ ի գործ մարմնոյն իմանայ զչարիս իւր զղջա՛յ և ապաշխարէ: - 558. Զիա՞րդ վախճան ածեն տանջանաց ունայնախոհքն. քերևս *կարծելով* թէ ի հուրն մաքրեսցին. զոր մի՛ լիցի աշակերտաց ճշմարտութեանն խորհիլ: - 703. Զի այժմ *կարծեմք*. և յետ մահու յայտնապէս տեսանեմք զամենայն. և յետ յարութեանն առնումք զամենայն: - 705. Զոր այժմ ի հեռուստ գիտէ և *կարծէ*...: - 705. Երրորդ, որպէս իդն բազում է քան զչորսն. նոյնպէս *կարծի* վեհագոյնքն ի մարդկանէ բազում գոլ քան զվեհագոյնս երկնայնոցն: - 711. Ոմանք այսպէս *կարծեն* թէ՝ հաստատութիւնդ բարձըի ի միջոյ մինչ վերին երկինքն երևի: - 729. Ապա առաւել նոքա որք չարչարեցին. զի մի՛ այլ և այլ *կարծեսցեն*: - 741

**ԿԱՐԾԵՑԵԱԼ +** Եւ այսորիկ թէպէտ և ոմանց ո՛չ թուեսցին որպէս փոքր *կարծեցեալք*. սակայն աւանդութիւն և ո՛չ հաւատ: - 554. Ժողովէ *զկարծեցեալ* ճաճանչն: - 639

**ԿԱՐԾԻՔ +** Ո՛չ է ըստ չարափառացն ասել ուղղակի՝ թէ նախանձու կամ վասն փառաց որպէս ասեն, զի անգիտութեամբն պատուեսցի. ընդունա՛յն է *կարծիքս* այս. ասել զոր չէ՛ արժան անախտ և պարզ

բնութեանն աստուծոյ: - 24. Եւ ոչ յետոյ ըստ *կարծեացն* արիոսի: - 37. Բայց *կարծիք* զանազան են հոգւոյն: - 51. Եւ այլ բազում ինչ հայհոյութիւն հետևի *կարծեացն* նեստորի: - 68. Ո՛չ որպէս ապօղինար *կարծեաց*. այլ աստուած կատարեալ և մարդ կատարեալ. հոգով և մարմնով: - 80. Եւ այսպիսի *կարծիքս* սո՛ւտ է: - 80. Ա՛րդ՝ հողոյ արարածի և աստուծոյ արարչի՝ մի և նոյն բնութիւն ասել ամբարշտութեան է *կարծիք*: - 81. Այլ հետևիմք հարցն սրբոց, որք առանց *կարծեաց* և խոտորմանց՝ զմիաւորութիւնն քրիստոսի անշա՛րժ պահեն: - 83. Եւ *կարծեօքն* տպաւորէ զնմանութիւնս և ի բացեայ. որպէս սպիտակ: - 103. Ութերորդ՝ աչքն յորժամ ընդարձակի՝ հեշտանայ. և միտքն լուծեալ ի *կարծեաց*: - 104. Այլ՝ առաջին *կարծիքն* է հասարակ և ճշմարիտ: - 134. Է՛ որ իմացումն մտացն առ ինքն ժողովի ի յիշողականէ՞ ի տրամախոհութեանցն՝ ի *կարծեաց*՝ և յայլոցն, և այնպէս ըստ ինքեան տեսութեանն ի աստուած հայի. այս է գերագոյն իմացումն. և կոչի իմացական տեսութիւն: - 142. Յասարակ *կարծիք* է թէ՝ ժերորդ դաս հրեշտակացն անկաւ, և մարդս զանկելոց տեղին լնու: - 150. Ո՛չ են յաւերժահասունք որպէս ոմանք կարծեն թէ յերկուց տարերց այսինքն ի հրոյ և յօդոյ են բանական կենդանիք և ունին ծնունդ և մահ. սուտ է այսպիսի *կարծիքս* և ընդունայն և հակառակ սուրբ գրոց. զի բանական կենդանի և մահկանացու՝ մարդս միա՛յն է որոյ յարութիւն և դատաստան գոյ: - 150. Կրկին են վասն այսմ *կարծիք*: - 218. Նա՛խ՝ պարտ է գիտել թէ վասն դրախտին գ է *կարծիք* վարդապետաց: - 221. Գիտնականին են՝ Միտք. Տրամախոհութիւն. *Կարծիք*. Երևակայութիւն. և Յասարակ զգայութիւն: - 248. Բանականք են Միտք. Տրամախոհութիւն. *Կարծիք*. Կամք. Ընտրողութիւն: - 248. Երևակայութիւնն: *Կարծիքն:* Տրամախոհութիւնն. և Յիշողականն: - 249. Իսկ ներքինն՝ որ է հասարակ զգայութիւնն. երևակայութիւնն. *կարծիքն*. տրամախոհութիւնն. յիշողութիւնն որ է միտք. զի ամենայն ինչ ի յիշողականն մտանէ: - 249. Վասն ոգւոյն մարդոյ զանազա՛ն են *կարծիք* արտաքին իմաստնոց և վարդապետաց եկեղեցւոյ: - 252. Ասեմք առ այս թէ, օն ի բա՛ց տար ի մտաց քոց զհեթանոսական *կարծիս*. զի ո՛չ է հոգի յառաջ քան զմարմին. և ո՛չ մարմին նախ քան զհոգի որպէս ի սկիզբն ասացաք: - 260. Իսկ սահմանօրէն, հանճարն *կարծիք* է կապեալ ընդ ուղիղ խորհրդոյ: - 270. Նա՛խ՝ զի իմաստնոց ուղիղ է, և անմտաց *կարծիք*: - 270. Երկրորդ՝ *կարծիք* է զգայութեանց, և ուղիղ իմացմամբ: - 270. Երրորդ՝ *կարծիք* է, զի ի ներկայս ո՛չ է. և ուղիղ խորհուրդ, զի յապագայն լինելո՛ց է: - 270. Դարձեալ՝ հանճարն է տրամախոհութեանն. զի *կարծիք* է կապեալ ընդ ուղիղ խորհրդոյ. իմաստութիւնն իմացմանն. գիտութիւնն յիշողութեանն: - 270. Նա՛խ՝ զի հաստատեսցէ զերկու *կարծիս* թերութեան մարդկան: - 289. Այլ ի յամօթ առաջին *կարծեացն* փոխեաց զենովք և ի հաւատ վերջին յարութեանն՝ վերացոյց զեղիա: - 289. Եւ վասն երկրորդին ասեն, եթէ *կարծեօ՛ք* է՝ թէ համանգամա՞յն փոխիլոց էին, թէ մի զհետ միոյ: - 290. Այսոքիկ հասարակ *կարծիք* և ընդունելիք: - 391. Այլ այս ո՛չ է հասարակաց ընդունելի *կարծիք*: - 391. Երկրորդ՝ ուստի՞ ճանաչեաց թէ սամուէլ է. զի ահա՛ կինն ասաց. այլ որպէս կինն երևեցոյց զձևն, նոյնպէս *կարծեաց* և սաւուղ: - 429. Ապա յա՛յտ է զի ի մէջ *կարծեաց* էր նա. զի թէ սուտ համարէր զվհուկն, ո՛չ երկնչէր ի մահու. և թէ ճշմարիտ՝ ո՛չ երթայր ի պատերազմ: - 429. Ապա ուրեմն ի ժամանակիս յայս ընկե՛ր են սաւուղայ որք սակաւ մի *կարծեօք* հաւանին երազոց կամ վիճակաց և ռամտեսաց և այլոցն: - 429. Եւ այս ևս *կարծեօ՛ք* է: - 495. Դարձեալ՝ առ հասարակ *կարծիք*, կոչի ներքին դժոխք յատակ դժոխոցն...: - 505. Իսկ թէ յորո՞ւմ ժամու յարեաւ, այսմ զանազա՛ն են *կարծիք*: - 512. ...և նոքա զամենայն ինչ ծածկապէս տեղեկացան. զի ժողովեալքն ի քաղկեդոն ակն առին թագաւորին և կնոջ իւրոյ. և զարհուրեցան ի սպառնալեացն. և զնեստորի *կարծիսն* հաստատեցին. զերկու բնութիւնսն. և զբ կամսն. և զբ ներգործութիւնսն: - 543. Ստուգութիւն աստ ոչ զապացուցականն ասէ. այլ զստուգութիւն *կարծեացն*: - 573. Այլ և զանազանի յոյսն. զի որք են ի ճանապարհի աստի կենաց, յոյս նոցա է՛ հանդերձ ստուգութեամբ *կարծեաց* որպէս ասացաւ: - 574. Որ և այսպիսի *կարծիքս* սո՛ւտ է բազում վկայութեամբ: - 594. Իսկ վասն թացեալ պատառին զանազան են *կարծիք*: - 599. Ոմանք ասեն թէ ի ջուր եթաց և լուաց յօրհնութենէն. և այս ո՛չ է ընդունելի *կարծիս*: - 599. ...որ է՛ հասարակ զգայութիւն. երևակայութիւն. *կարծիք.* տրամախոհութիւն. և միտք որ է՛ յիշողութիւն: - 622. ...յորժամ առ ինքն ժողովէ և ծագէ՛, ամենայն *կարծիք* լուծանին: - 639. ...այլ խաւար մեղացն արգելու զտեսութիւնն. և չա՛ր է *կարծիք* նոցա, և երկիւղ տանջանաց: - 685. Եւ այլք ոմանք վեցերորդ *կարծիս* ստացեալ ասեն զբուն կատարեալ բարեաց հոգիսն ժողովեալ ի հրեշտակացն դասս...: - 687. Եւ այս զանազան *կարծիքս* վասն այն է, զի գիրք սուրբք չե՛ն յայտնի բացայայտեալ զնոսա: - 687. ...վասն որոյ իւրաքանչիւր ոք ի բանից վկայութեանց ինչ *զկարծիս* իւր հաստատէ՛: - 687. Նմանապէս հետևի զի մարմինն ո՛չ կրեսցէ տանջանս. զի ո՛չ յառնէ ըստ նոցա *կարծեացն*: - 694. Եւ դարձեալ ասեմք, թէ աստի կենացն յոյս է՛ հանդերձ ստուգութեամբ *կարծեաց*...: - 696. Կրկին է *կարծիս*: - 713. Եւ ըստ ոմանց *կարծեաց* զի տեղիք լիցին երեսնաւոր արդարոցն. որպէս ցուցանելոց եմք յառաջիկայդ: - 727. ...այսինքն

յորժամ զճառագայթ բազում նշանացս առ ինքն ժողովէ խաչն սուրբ՝ յայնժամ ամենայն *կարծիք* լուծանին: - 732. Այլ զայս ո՛չ իմանան հասարակ *կարծիք*. զի արքայութիւնն երկնից մի է. այլ փառք և պսակքն են զանազանք առաւել և նուազ: - 758. Եւ զի ո՛չ է հասարակ *կարծիք*՝ո՛չ հաստատեմք: - 759. Իսկ թէ իցէ հաւատ դիւաց, գո՛յ մտածել տղայական *կարծեօք*՝ թէ անկումն նոցա եղև հաւատոց պատճառ է որ է՛ սուտ: - 784

**ԿԱՐԾՈՏ** - Ձայնն բարակ՝ տխո՛ւր է և *կարծոտ*: - 247

**ԿԱՐԾՐ +** Չորրորդ՝ *կա՛րծր* և անբախելի: - 184. Ութերորդ՝ ի թանձր և ի *կարծր* նիւթն անգործ մնայ. որպէս ի քար և ի հող: - 185. Ութերորդ՝ զի *զկարծր* սիրտ նոցա թլփատեսցէ օրինօքն ի վէմն գրեալ: - 415. Երեսունևմի, ջուրն կակուղ ել ի *կարծր* ծնօտէն յորժամ խնդրեցաւ: - 424. Յինգերորդ զի *կա՛րծր* է. ցուցանէ *զկարծր* և զսերտ առաքինութիւն նոցա առանց քակտելոյ: - 712

**ԿԱՐԾՐԱՆԱՄ +** Եւ որպէս ոսկին յերկրէ՛ է և անապական. և քարինք *կարծրացեալ* ի հրոյ և անապական մնան: - 225. Եօթներորդ՝ յօրինակ բանին մարդեղութեան գրեցաւ բանն ի տախտակի, և նա՛ կոչեցաւ վէմ *կարծրացեալ* աստուածութեամբն փոխանակ հողացելոյն ադամայ: - 349. Երկրորդ, զի *կարծրացաւ* աստուածութեամբն: - 386. Տասներորդ՝ և նորս թլփատութիւն սրտի՝ վէմն քրիստոս լինելոց էր. որ *կարծրացաւ* աստուածութեամբն. և էարկ սուր յերկիր և բաժին: - 415. Որ և անդ ժամանեաց տէրն և կապեաց զիզօրն. և *զկարծրացեալ* ամրոցն աւերեաց. և կողոպտեաց ի նմանէ զհոգիսն մարդկան որ յադամայ հետէ ընդ բռամբ ունէր: - 503. Վասն երկրորդին, որք ցրտիւ չարութեան աստ *կարծրացան*, արդարապէս անդ տանջողական ցրտիւ կրճտեն զատամունս իւրեանց: - 752

**ԿԱՐԾՐՈՒԹԻՒՆ +** Զի քանակն որակ ո՛չ է և ոչ ասի. և ո՛չ ծանրութիւն. և ո՛չ *կարծրութիւնն* մարմին: - 175-176

**ԿԱՐԿԱՌԵՄ +** Ապա՛ ի թաբօր լերինն ամպ խոնարհեալ և ձեռն *կարկառեալ* ձեռնադրեաց զնա ասելով, այս մելքիսեդեկ անհայր անմայր չհամարեալ յազգս՝ նմանեալ որդւոյն աստուծոյ: - 300

**ԿԱՐԿԵՀԱՆ +** *Կարկեհան* որ կայծ կոչի. հրագո՛յն է. գտանի յափրիկէ. ի գիշերի որպէս հուր վառի: - 348

**ԿԱՐԿԵՄ +** Զի ափիբերան *կարկեսցին* դնօղքն զբերանս յերկինս և զլեզուս ածելով զերկրաւ: - 502

**ԿԱՐԿՈՒՏ +** *Կարկուտ* և որոտ ներգործէ: - 202. Այսպէս յեգիպտոս հուրն որ ընդ *կարկտին* իջանէր, վասն ազդու զօրութեանն՝ զկենդանիսն սպանանէր, և մարմինքն ամբո՛ղջ մնային: - 204. Եւ ի սմանէ լինին մառախուղ՝ և սառնամանեաց տեսակ, այլ և ամպք և ձիւնաբեր և *կարկուտք*: - 204. Իսկ *Կարկուտն* ծնանի ի յամենևիմբ ջերմ ամպոյ, զօրութեամբ արեգականն ի վեր քարշեալ: - 205. Եւ ըստ չափու թանձրութեանն պատառեալ բեկանի, և ի վայր բերմամբ գնդի ի ջերմութենէ օդոյն, և լինի *կարկուտ*: - 205. Եւ ի սոցանէ թրասկիայն առնէ զձիւն և *զկարկուտ*: - 205. Յինգերորդ՝ յամպոյն իջանեն սառնամանիք ձիւն և *կարկուտ*: - 206. Տասներորդ՝ ամպն ո՛չ միայն զցօղ անձրևէ, այլ և ձիւն և *կարկուտ* և հրայրեցութիւն. որպէս ասացաւ ի վերոյ: - 206. Եւ դարձեալ՝ այլազգին զհոգին իւր սպանեալ է մեղօք. և մեռելոյ զենեալն ո՛չ ուտի. որպէս ի քարէ անկեալն կամ ի *կարկտաէ՛* հարեալն ո՛չ ուտի: - 296. Եօթներորդ՝ *կարկուտն* հրախառն. զի **բ** հակառակն միաբանեալ ջուր և հուր ի կորուստ ամբարշտացն և ո՛չ ապականէին զմիմեանս: - 334. Վասն զի *կարկուտն* բեկանիւր և հուրն այրէր զբեկեալն: - 334. Երկրորդ՝ *կարկուտն* զհպարտ և զհայհոյիչ բանս նոցա խայտառակէ, և հուրն զբարկութիւն սրտին զոր ունէին առ որդիսն իսրայէլի: - 334. Վասն որոյ ի սոյն ժամանակի առաւելու որոտ կայծակ և *կարկուտ* զգալապէս՝ յիշատակ սքանչելեացն աստուծոյ: - 341. Քսանբ, եհար քարեայ *կարկտիւ* ի պատերազմի: - 419. Ո՛չ նոյնն մարմնապէս, այլ նմանն հոգէպէս. ծարաւումն, խաւարն, հրախառն *կարկուտն*, ժահահոտն, և այլն ըստ կարգի: -751

**ԿԱՐԿՏԱԲԵՐ +** Իսկ միջինն՝ Ապարքտիաս. ցուրտ և *կարկտաբե՛ր* է: - 206

**ԿԱՐՃ +** Վեցերորդ՝ զի թէ երկինքն ո՛չ էր բոլորակ, յայնժամ արեգակն և այլ աստեղք յորժամ գային ի մէջ երկնից, մեծագոյն երևէին. քանզի ի միջին կիտէն երկնից առ մեզ է ուղղական գիծ. իսկ յարևելից առ մեզ է՛ խոտորնակի գիծ. և ուղղական գիծն *կա՛րճ* է քան զխոտորնակ գիծն: - 183. Եւ երկայն և *կարճ* քանա՛կ է շարունակ. և **բ** ակն և ունկն տարորո՛շ է: - 236. *Կարճ* կլափն՝ նախանձո՛տ է և ո՛չ հեզ. զի նման է օձի: - 247. *Կարճ* վիզն՝ համարձակ է: - 247. Ձեռքն *կարճ* և փոքր, ուժեղ է և հնարաւոր: - 247. Եղունգն յոյժ *կարճ* նշանակէ զչարակամն: - 247. Ոտք ստուար և *կարճ*, յոյժ տկարի է: - 247. Ոտք բարակ և *կարճ*, չարաբարո՛յ է: - 247. Եւ տե՛ս, զի ամենայն բանք կուսին են *կարճ*: - 466. Յօր անունն ռոմելոս ասեն. զմին ձեռն և զոտն երկայն և մինն *կարճ*. զմի ակն խաժ, և զմիւսն սև: - 706

***Ի ԿԱՐՃՈՅ +*** Իսկ ընդդէմ մանիքեցւոցն՝ որք ասեն **բ** սկիզբն, չար՝ և բարի. այսպէս հանդիպեսցուք և պատասխանեսցուք *ի կարճոյ*: - 20. Իսկ մեք *ի կարճոյ* պատասխանեսցուք: - 76.

Ահա՛ այս *ի կարծոյ* բացայայտութիւն ծածկեալ ամբարշտութեանց, որք **բ** բնութիւնս սահմանեն ի վերայ միոյն քրիստոսի. թէպէտ անձն մի համբաւեն համաձայն մեզ, սակայն որոշմամբ բնութեանց լինին տարաձայն մեզ և եկեղեցեացն աստուծոյ: - 90. Այս է ուղիղն *ի կարծոյ*: - 92. Զոր կամիմ *ի կարծոյ* վկայութեամբ հաստատել: - 96. Այսքան առ այս *ի կարծոյ*: - 172. Այսքան *ի կարծոյ* վասն յոբայ: - 327. Այժմ ասասցուք թէ ո՞րպէս կոչի մի եկեղեցի յայտնապէս *ի կարծոյ*: - 533. Այս քան *ի կարծոյ* առ հասարակ ամենայն առաքինութեանց: - 582. Այս քան ի *կարծոյ* վասն ապաշխարութեան: - 603. Չորրորդ վասն նորին անչարչարութեանն. որպէս ասացաւ նախ, և այժմ *ի կարծոյ*: - 764

**ԿԱՐԾԱՄԱՏՆ** - Հաստ ձեռն և *կարծամատն*, նենգաւո՛ր է և գող: - 247

**ԿԱՐԾԱՌՕՏ +** Երկրորդ՝ անունն սահմա՛ն է *կարծառօտ* յայտնիչ բնութեան ենթակայ իրին որպէս ասէ իմաստունն: - 219. Նոյնպէս և անունն սահմանէ *կարծառօտ*՝ յայտնիչ բնութեան իրին. որպէս մինչ ասեմք մարդ, քար, յայտնեցաւ բնութիւնն: - 311

**ԿԱՐԾԱՌՕՏՈՒԹԻՒՆ +** Ահա զսակաւ ընծայ *կարծառօտութիւն* բանիս ընկալ ի քում ընդարձակութեան գանձարանի սրտի՝ երիցագոյն հարազա՛տդ Գէորգի է: - 95

**ԿԱՐԾԵՄ +** Նոքա յերկար ապրէին՝ զի յաճախեցին բարիք և ծնունդք նոցա. և մեք պակաս, զի *կարծեցին* չարիք և բազմութիւնք մարդկան: - 291. Եւ երբեմն *կարծէ*՛ ի կենաց որպէս առ նոյիւ. զի ճի ամ խոստացաւ նոցա, և զի ամն *կարծեաց* վասն չարեաց նոցա: - 292. Նոյնպէս և արդարութիւնն երբեմն յերկարէ՛ զկեանս որպէս առ եզեկիա. և երբեմն *կարծէ*՛ որպէս առ ովսիայ: - 292. Եւ ա՛յս է պատճառ յերկարելոյ և *կարծելոյ* կենաց. այսինքն արդարութիւնն կամ մեղքն որպէս ցուցաւ: - 292. Մետասաներորդ, *կարծեաց* զիշխանութիւն նոցա. զի նոքա *կարծեցին* ի չարեացն և թեթևասցին տանջանքն: - 417. Եւ այսպէս *կարծեցին* աւուրքն այնոքիկ ողորմութեամբն աստուծոյ: - 709. Եւ *կարծել* ո՛չ զժամ աւուրցն ասէ, այլ զթիւ: - 709

**ԿԱՐԾՄՏՈՒԹԻՒՆ +** Նա՛խ՝ զի զտրտմութեան դնն զձանձրութեան *զկարծմտութեան* զսրտմտութիւն և զոխն հանէ՛ ի հոգւոյն: - 584

**ԿԱՐԾՈԳԻ +** Հինգերորդ՝ զի կին գոլով և *կարծոգի*: - 442

**ԿԱՐԾՈՒՆՉ +** *Կարծունչն* գո՛ղ է: - 246. Քանի՞ են արատք արգելք քահանայութեան: ...Հինգերորդ՝ *կարծունչն*. պակաս ընտրողութեամբ: - 370

**ԿԱՐՄԻՐ +** Եւ խառնուա՛ծ է ի նոցանէ ծիրանի և *կարմիր* գոյնն: - 203. Օդոյն՝ *կարմիրն*: - 212. Եւ ջերմութիւն արևուն և գիճութիւն լուսնին՝ առնեն զգոյնն *կարմիր*: - 213. *Կարմիրն* որ է արիւնն ի լեարդն՝ է՛ օդոյն: - 215. Զի թէ հուրն աւելի է, լինի շէկ գունով. և թէ օդն՝ լինի *կարմիր*. իսկ ջուրն առնէ սպիտակ. և հողն սեաւ գունով: - 245. Գոյնն սպիտակ և *կարմիր*՝ ուժեղ է և սրտային: - 247. Չորրորդ՝ կօշիկն *կարմիր*. զի արեամբ չափ ի ներքոյ ոտից են հնազանդեալք ամենայն: - 271. Բնական որակ տարերացն Սևն է՛ երկրի. և Սպիտակն ջրոյ. *Կարմիրն* օդոյ. և Դեղինն հրոյ: - 342. *Կարմիրն* հրոյն է. զի հուրն կրկին է: - 342. Տպազիոն. *կարմիր* է. և գտանի ի տոպազէ՛ քաղաք ի հնդիկս: - 348. Յակինթ. *կարմիր* է. գտանի առ բաբիլոնիւ: - 348. Դարձեալ՝ կրկին հաւն նշանակէ՛ զքրիստոս. Փայտն, զխաչն. և *Կարմիր* արիւնն. զի աստուծոյ է արիւն. և Զոպայն, զհոգին սուրբ: - 368. Եւ զկենդանին ներկեալ՝ և *կարմիր* կապեալ ի պարանոցն, ցուցանէր զմեռանիլն աստուծոյ վասն մեր: - 369. Եւ *կարմիրն* զարեամբ փրկութիւնն: - 379. Զի՞նչ նշանակէր *կարմիր* երինջն անարատ և անլուծ: - 383. *Կարմիր* երինջն նշանակէ՛ զկոյսն սուրբ: - 383. Եօթներորդ՝ դարձեալ յաւուր կիրակէի էանց մովսէս ընդ ծովն *կարմիր*. և ընկղմեցաւ փարաւոն ի տիպ յարութեանն քրիստոսի և կորստեան սատանայի: - 512-513. **Այլ նարօտն *կարմիր* և սպիտակ մանեալ՝ զարիւն և զջուր կողին քրիստոսի**: - 594. ...և երեսն լսնանայ վասն դեղնութեանն. և կապուտի ընդ *կարմիրն* խառնելով: - 620. Ունելով մշտասաղարթ ծաղիկ որ է՛ *կարմիր* երանգն գունոյ, և երկնագոյն հիւթով զարդարեալ: - 768. Թէ ի բերան պատերազմի յել անմահին և ի մուտ մահկանացուին. դիցես պահապան բերանոյդ. լար *կարմիր* շրթանցդ. այսինքն հաւատով սիրով զօրացեալ. և ո՛չ բաժանիլ ի քնասիրութիւն և յարծաթսիրութիւն. յառաքինասիրութիւն. և յախտասիրութիւն. յընկերսիրութիւն և յարատսիրութիւն: - 770-771

**ԿԱՐՄԻՐ ԾՈՎ** - Երկոտասաներորդ՝ ի *կարմիր ծովուն* ճանապարհ ետ: - 207. Դարձեալ՝ աստուած յառաջնումն ծննդեան յորժամ զյանցաւորս ըստ բնական մեղացն՝ ջրհեղեղաւն ջնջեաց. յերկրորդումն ծննդեան յորժամ զյանցաւորս ի կռապաշտութիւն՝ *կարմիր ծովովն* ընկղմեաց. յերրորդումն ծննդեան տուժեաց, յորժամ զյանցաւորս գրաւորական օրինացն պատերազմօք սատակեաց: - 351. Մինչ զկնի *կարմիր ծովուն*՝ յընկղմիլն փարաւոնի հանդերձ զօրօքն, զթմբուկն ունելով երգէ՛ զերգն, «օրհնեսցուք զտէր զի փառօք է փառաւորեալ» և այլն: - 764

**ԿԱՐՄՐԱԳՈՅՆ +** Իսկ թխակն և *կարմրագոյն* քան զգազան չա՛ր է: - 246. եղունկն սպիտակ տափակ կակուղ և նօսր, *կարմրագոյն* և փայլուն, ուժե՛ղ է: - 247

**ԿԱՐՄՐԱՆԱՄ +** Եւ ի *կարմրանալ* երկնից ընդ երեկս և ընդ առաւօտս, զերաշտոց և զանձրևոց ի փորձոյ ուսեալք յառաջագուշակ լինին: - 536

**ԿԱՐՄՐԻՄ +** Վասն է՞ր մարդս սպիտակի, և պտուղքն *կարմրին* ի հասանիլն: - 213. Վասն որոյ ի հրոյն ոմն սևանայ. որպէս խաղող. և կէսք *կարմրին* և դեղնին. որպէս բոյսք՝ և տերևք չորացեալ ի հրոյ: - 213. Դեղնի երեսն և *կարմրի*. և մին մարդն սև, և մին սպիտակ լինի. և շէկ և ծիծաղկոտ և այլն: - 227. Եւ թէ *կարմրէր*, արեանն հեղումն: - 349

**ԿԱՐՆՈՅ** - Երկրորդն է ժողովն թէոդուպօլսի, որ այժմ կոչի *կարնոյ* քաղաք. ո՛չ այն զոր յետոյ հերակլ քաղկեդոնիկ ժողովեաց և խաբեաց զեզր կաթուղիկոսն հայոց: - 544

**ԿԱՐՕՂ +** Երկրորդ, ասեմք եթէ՝ չարն կրկին իմանի. է՛ որ ինքնաչա՛ր է. որ պարզ և ամենևիմբ չարն է. և արտաքոյ բարւոյ և էութեան է. որ ո՛չ ուրեք է. և ո՛չ երբեք. և ո՛չ էր. և ո՛չ է. և ո՛չ լինիլ *կարօղ* է. որ է ո՛չ ինչ: - 22. Եւ թէ յերկուցն՝ ո՛չ է *կարօղ* հայր ծնանիլ և կարօտանայ որդւոյ օգնութեանն. և լիցի անկատար որդի: - 52. Դարձեալ հարցանեմ, հայր *կարօղ* է բղխել զհոգի՝ թէ անկար: - 62. Զի թէ *կարօղ*, ապա ո՛չ է կցորդ որդի: - 62. Այլ արդ՝ ըստ անեղ էութեանն յառաջ եած զանեղ էութիւնն որդւոյ և հոգւոյ. և ըստ անհուն զօրութեանն յառաջ եած զեղականն էութիւն. զի անհուն զօրութիւնն *կարօ՛ղ* է ամենայն ընդդիմակաց. ըստ որում ամենազօ՛ր է: - 113. Իսկ արժանապէսն՝ զի *կարօղ* աչքն լուսաւորին, և տկարքն խաւարին: - 127. Եւ ասեն՝ տէր հզօր զօրութեամբ, տէր *կարօղ* ի պատերազմի: - 144. Դարձեալ ասեմք, ամենակար և ամենազօ՛ր է աստուած. և որ ամենայնի *կարօղ* է և հզօր, ո՛չ է անկար: - 163. Ապա թէ ոչ՝ ի յակնարկել կամացն՝ բիւրապատիկ *կարօղ* էր աստուած ստեղծանել քան զայս աշխարհս: - 192. Զի փոխելն ցուցանէ նախ *զկարօղ* զօրութիւն փոխողին: - 289. Նոյնպէս և վերացուցանելն *զկարօղ* զօրութիւն յայնմ որ վերացոյցն: - 289. Պերճական պարսիկն. և համեղ հայոյն. որ բոլորապէս *կարօ՛ղ* է զամենայն լեզու ուղղակի ուսանիլ: - 297. Յամեղական հայն որ *կարօ՛ղ* է զամենայն լեզուս յինքն ամփոփել և բոլոր խօսիլ. և այլքն ո՛չ՝ որպէս ասացաւ ի վերոյ: - 299. Եւ այն ի քթթելական *կարօղ* զօրութեամբն աստուծոյ: - 314. Նախ՝ զի աստուծոյ է մարմին՝ կոչի տաճար իբր *կարօղ* սրբութեանց. և դարձեալ զի անշփոթ է միաւորեալ՝ կոչի տաճար: - 319. Չորրորդ, զի նոքա ոչ կարէին լինիլ ախտակից տկարացելոցն. իսկ տէրն որ զփորձ էառ՝ *կարօ՛ղ* է և փորձանաւորացն օգնել...: - 354. Երրորդ առ այսոքիւք՝ միաւորութիւն անուանեմք և զխառնուածս երկուց նայից ըստ զանազան որակութեանց. յորում ո՛չ ոք ի խառնեցելոցն զհիւր ծայրագոյն որակութիւնն սեռաբար *կարօղ* է պահել. այլ շփոթեալ անկանի ի ծայրագոյն որակութենէն...: - 476. Իններորդ, ասէ «մի՛ մերձենար», զի մարմինն այն պտուղ էր կանուխ դժոխոցն. և ինքն տէր մեր իբրև քահանայ նոր յամենայն ծեռաց պահէր զգուշութեամբ, զի պահեսցէ զնա ի ձեռինն որ *կարօ՛ղ* է ընդունել զայնպիսի պատարագն: - 517-518. Երրորդ՝ զի անդ ո՛չ կարէր արդարանալ զի հիւանդ էր սիրտն, եւ նոր օրէնս ի սիրտս մեր որ *կարօ՛ղ* է արդարացուցանել զժողովուրդս և զհեթանոսս: - 524. ...և այլ նմանապէս առ այսոքիւք երրորդ եկեղեցի որով *կարօ՛ղ* են հաւաքել ամենայն տիեզերք երկրի և լինիլ միով հաւատովն մի հաւատացեալք որպէս ասացաւ: - 533. Այլ դու ո՛վ այրդ աստուծոյ մաքրամիտ և ճգնազգեաց միայնաւոր սուրբ հայրդ սահակ, թէ և զիջանես եղբայրական սիրով խնդրել բանս ի մէնջ. սակայն *կարօղ* ես և զքերին լնուլ և զյաւելորդն կշռել. և զմեզ օգտեցուցանել ի ներգոյէ՛ քոյին պայծառամիտ սրբութեան սրտի: - 558. Որ և հարցանէր որդւոցն զեբեթեայ թէ՝ *կարօ՞ղ* էք ըմպել զբաժակն. այլ ո՛չ թէ միայն նոցա եւ և յայլ առաքելոցն արգել: - 600. Եւ յետոյ դնէ ապաշխարանք թէ զինչ կերպիւ պատեհ է. պահք. թէ աղօթք. թէ ողորմութիւն. պատարագ. և այլ զինչ զոր *կարօղ* հցէ...: - 602. Եւ բժշկութիւնն՝ ո՛չ ի դեղն, այլ յաստուած յուսալ պարտ է. որ դեղով և առանց դեղոյ *կարօ՛ղ* է բժշկել: - 665. Եւ սոքա ուղղին ի յարութեանն. զի գո՛րծ է *կարօղ* զօրութեանն աստուծոյ և ո՛չ տկար բնութեան: - 725. Արդ նա՛ որ զամենայն գերեզման կնքեալ պահէ, զեկեղեցիս օրհնէ՛ և հաստատէ՛ և ամենեցուն զօրաւիգն է ի փորձութիւնս, *կարօ՛ղ* է անապական լինիլ. զի աստուածային է նշան: - 733. Չորրորդ, հայր անտեսանելի՛ է և անմարմին. ըստ այնմ «զաստուած ոչ ոք ետես երբէք» և ո՛չ տեսանել *կարօղ* է. - 735

**ԿԱՐՕՂԱԲԱՐ +** Եւ թէպէտ այսպէս ասացաւ, սակայն գոյացաբար է՛ աստուած յիմանալի երկինս. և *կարողաբար* ամենայն ուրէք: - 180

**ԿԱՐՕՂԱՆԱՄ +** Նոյնպէս զիմանալի խորհուրդս և զգիտութիւնս զոր տկարանայ միտք, *կարողանայ* հաւատքն տեսանել. այլ ո՛չ ունի հաւատ՝ քան զտեսութիւն մտացն: - 31. Եւ ո՛չ *կարողանայ* մինն առանց միւսոյն զի լծակիցք են: - 44. Եւ որ ոք կամեսցի զդարձն, անդրէն ի ձեռն նորին յարմարութեան

այսինքն նորին կարգին *կարողանայ* ելանել ի նոյն: - 280. Դրոշմն է՛ խորհուրդ յուսոյ. զի յուսալով ի զօրութիւն սուրբ հոգւոյն *կարողանամք* ընդ դէմ թշնամւոյն: - 587

**ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ +** Երեքտասաներորդ՝ թէ չարն է յաստուծոյ՝ *կարողութեամբ* առնէ զչարն, թէ անկարութեամբ: - 14. Թէ անկարութեամբ՝ ահա բռնադատեալ է. և թէ *կարողութեամբ* առնէ ըզչար՝ անկա՛ր է առնել զբարի: - 14. Եւ այս ո՛չ թէ ոչ կարութիւն է նմա, այլ վասն առաւել *կարողութեանն* է: - 44. Եւ այս ոչ էութիւն և չարութիւն՝ առ մեզ կարէ՛ երևիլ, զի մասա՛մբ ունիմք *զկարողութիւն* և ո՛չ կատարեալ: - 44. Հինգերորդ՝ զի զօրութիւն՝ *կարողութիւն* ուստի առնելն է՝ և աստուածութիւն՝ տէրութիւն՝ իշխանութիւն և այլք այսպիսիք՝ ո՛չ են առանձին անձնաւորութեանց. այլ հասարա՛կ են...: - - 45. Եւ միտն արտաքոյ ամենեցուն՝ մեզ շնորհէ զտեսութիւն և *զկարողութիւն* յիւրաքնաչիւր արհեստ: - 51. Չորրորդ՝ *կարողութեամբ* արար զբանն և զհոգին և ո՛չ տկարութեամբ: - 56. Ա՛րդ՝ *կարողութիւնն* այն է բան և հոգի աստուծոյ. և ո՛չ եղեալք ի նմանէ: - 56. Այսպէս զի հոգին քրիստոսի ճանաչէ զամենայն բովանդակ *կարողութիւնն* իւր. և զամենայն յորս կարէ: - 100. Այսպէս մարմինն քրիստոսի միաւորեալ ընդ բանն աստուած՝ ունի *զկարողութիւն* և զաստուածութիւն բանին...: - 100. Եւ վերին խոկմամբ՝ որ ի վե՛ր է քան զմեզ՝ ըստ *կարողութեան* լուսաւորիմք ճառել զանճառէն: - 103. Չորրորդ՝ *կարողութիւնն* հօր. իմաստութիւնն որդւոյ. բարութիւնն հոգւոյն: - 105. Եւ դարձեալ՝ զի *կարողութիւնն* նախ է քան զիմաստութիւնն. և իմաստութիւնն նա՛խ է քան զբարութիւնն: - 105. Երրորդ՝ է՛ գործ նախախնամութեան. զի ըստ ընտանի *կարողութեան* իւրեանց՝ համեմատապէս զպարգևս ընկալցին. զի մի վնասեսցին փոքունքն մեծամեծօք. և թերի մնացին մեծամեծքն սակաւուք: - 130. Նախ՝ զի ընդհանուր դասք և իւրաքանչիւր անհատք ունին էութիւն՝ զօրութիւն՝ և ներգործութիւն. այսինքն ըստ որում էացեալքեն, և *կարողութիւն* ունին, և ներգործեն: - 137. Հաճոյ թուեցաւ նոցա բարձրութիւն նորա. խորհելով՝ զի թէ նա աստուծոյ յաղթեալ էր, նոքա ևս այլոցն իշխէին *կարողութեամբ*: - 149. Իսկ այն որ ո՛չ կարէ զչար, առաւել *կարողութեանն* է ցոյցք, և ո՛չ եթէ անկարութեան: - 163. Ո՛չ ըստ տարաչափութեան քանակի ասեմք. այլ ըստ ամենազօր *կարողութեան* և անչափ անհասութեան ասեմք զնա մեծ: - 171. Տասներորդ՝ ըստ չափու *կարողութեան* զաչս լուսաւորէ՛: - 185. Տասներորդ՝ ըստ չափու և *կարողութեան* բաշխէ. որպէս ի կեանս յայսմիկ, և ի հանդերձեալն առաւել զի կարիցեմք տանել: - 185. Դարձեալ՝ իմաստութիւնն պատշաճի հօր ըստ *կարողութեան*. և գիտութիւնն որդոյ իբր բան. և հանճարն հոգւոյն բղխման: - 270. Նախ՝ առ ի նշանակել զանձնիշխանութիւն մարդոյն. իբր թէ ունի *կարողութիւն* պահել և ո՛չ պահել: - 277. Նա՛խ՝ որ ստոյգ չարութեամբ լինի մեղքն. այսինքն կամաւ և գիտութեամբ և *կարողութեամբ*, անթողելի՛ է: - 385. Այլ շնորհք նորոյս *կարողութեամբ* արդարացուցանէ զմարդ այնպէս, մինչ զի սպիք մեղացն ջնջին և յիշատակութիւնն ծածկի: - 433. Որ ո՛չ ըստ բնութեան կարգի, այլ ըստ անբաւազօր *կարողութեանն* աստուծոյ միայնոյ: - 469. Այսպէս և բոլոր տնօրէնութիւն մարդացելոյն բանի՝ միով զօրութեամբ և *կարողութեամբ* ըստ միութեանն կամաց մի ներգործութիւն երևի: - 478. Եւ դարձեալ՝ որպէս աստուծոյ *կարողութեանն* է զանմարմին հոգին հրով տանջել և զմարմինն անմահ պահել ի հուրն: - 504. Երկրորդ՝ սքանչելեաց *կարողութիւն*: - 524. Այլ և որա՛կ է կամաւն և ակամայն. գիտութեամբն և անգիտութեամբ. *կարողութեամբ* և տկարութեամբ. և այլն: - 565. Եւ թէ ոք ասիցէ, *կարողութիւն* ունի քահանայն բազում հացս օրհնել: - 597. Ասեմք թէ՝ *կարողութիւնն* է ի դիտաւորութիւն. և դիտաւորութիւնն է ի կոպարն որ է մին հացն. որ ասաց «այս է մարմին իմ». ապա ուրեմն ո՛չ կարէ զբազում հացս օրհնել: - 597. Վասն որոյ ճաշակեմք զմարմինն և զարիւնն աստուծոյ և ո՛չ մարդոյ. և ճաշակելով լինիմք աստուած ըստ *կարողութեան* և ո՛չ թէ լինիմք մարդ: - 598. Կարգն է *կարողութիւն* զոր ետ եպիսկոպոսն այնմ զոր ի կարգն ընկալաւ և ի սպասաւորութիւն խորհրդոյ եկեղեցւոյ: - 606. Զի որպէս *կարողութիւնն* աստուծոյ երևի ի ստեղծանելն և ողորմութիւնն ի բարերարելն, այսպէս և արդարութիւնն ի հատուցանելն: - 778. Բաւուք ասացաւ յարարչէն. զի թէ և բնութիւն թարց երևակայութեան, և արհեստ հանդերձ երևակայութեամբ, սակայն կամք արարչական ետ նոցա բնական և բանական *կարողութիւն*. և ոչ ինչ վայրապար կազմեն զտեսակ գոյացական և զտեսակ պատահական. խնդրելով ոմն պարզ նիւթ. և ոմն տեսակացեալ: - 786

**ԿԱՐՈՒԹԻՒՆ +** Եւ այս ո՛չ թէ ոչ *կարութիւն* է նմա, այլ վասն առաւել կարողութեանն է: - 44. Գիտելի՛ է, զի հոմ անուն է զօրութիւնն. այսինքն *կարութիւնն*. և հոմանունն մա՛յր է մոլորութեան. վասն որոյ որոշելի է զնոսա: - 167

**ԿԱՐՕՏ +** Զի թէ ասես զառ ի յաստուծոյ հօրէ բանն, ահա կարգեցեր զնա ընդ եղեալքս *կարօտ* սրբութեան և շնորհօք որդիութեան: - 69. Եթէ զաստուծոյն ասես, ցուցանես զբանն *կարօտ* գոլ փառաց. և հա՛րկ է հետևիլ քեզ արիոսի: - 69. Իսկ գանձն և աղբիւրն իմաստութեան երկնի և երկրի՝ ո՛րպէս լինի *կարօտ*

գիտութեան կամ ստացեալ յայլմէ: - 98. Նախ ասի անեղ՝ որ դեռ չէ՛ եղեալ. որպէս այն որ ի հանդերձեալն լինի. որ *կարօտ* է սկզբան: - 113. Երկրորդ՝ ասի անեղ այն՝ որ ո՛չէ եղեալ ի կատարումն. զի ունի սկիզբն՝ և *կարօ՛տ* է կատարման: - 113. Երրորդ ասի անեղ այն՝ որ ի յումե՛ք է, և ի յումեք ո՛չէ. որպէս հրեշտակք յաւիտենի եղեալ, և ի ժամանակի անեղ. սա *կարօտ* և անկարօտ երկոցունց. այսինքն սկզբան և կատարման: - 113. Չորրորդ՝ ասի անեղ՝ որպէս ոչ ուրեք և ո՛չ երբեքն. այսինքն է ոչինչն. սա *կարօ՛տ* է ամենևին սկզբան և կատարման: - 113. Զի անեղ է՛ գոլով՝ տարրորոշի յանեղ ոչընչէն. և միշտ գոյ՝ ի հրեշտակաց. և ինքնակատարն՝ յայնցանէ որ *կարօ՛տ* են սկզման և կատարման: - 113. Եւ *կարօտի* սա **բ** իրաց. այսինքն զի զգայութիւնն առո՛ղջ իցէ, և զգալի առաջի եղեալ իրն յստա՛կ. ապա թափանցէ՛ յինքն ի սոցանէ՛ պա՛րզ տեսութիւն. ապա թե ո՛չ՝ ո՛չ կարէ միտքն յստակապէս տեսանել սոքօք: - 143. Երկրորդ՝ զի մարդն *կարօ՛տ* է նիւթոյ. իսկ աստուած անկարօ՛տ է նիւթոյ: - 156. Հինգերորդ՝ մարդ թէ բնութեամբ և թէ կամօք գործէ՝ *կարօ՛տ* է օգնականի, իսկ աստուած անկարօ՛տ է օգնականի: - 156. Վեցերորդ՝ մարդս *կարօ՛տ* է ուսմանց և իմաստից. իսկ աստուած անկարօ՛տ է ուսման և իմաստութեան. զի ինքն է աղբիւր գիտութեան և իմաստութեան: - 156. Եօթներորդ՝ մարդ *կարօ՛տ* է ժամանակի. իսկ աստուած ո՛չ է *կարօտ* ժամանակի. և այլ և զյաւիտեանս արար: - 156. Եւ միշտ ներգործութեամբ է. զի ո՛չ *կարօտի* սկզբան և կատարածի զօրութեամբ գոլ. ապա ուրեմն անսկիզբն է և անվախճան: - 162. Եւ այլ բազում զանազանութիւն է գործոց մարդկան և աստուծոյ. զի մեք *կարօտ* եմք նիւթոյ. ժամանակի. տեղւոյ. օգնականի: - 164. Իսկ պատահումն ի յայլս ունի զէութիւնն, և *կարօ՛տ* է այլոյ ի գոլն. որպէս գոյն ի մարմնի: - 170. Երրորդ՝ զի *կարօ՛տ* է երկնային մարմնոցն. վասն այն ի վե՛ր ընթանայ: - 214. Ո՞րպէս ասեն թէ դրախտն լուսոյ արեգական չէ *կարօտ*: - 222. Դարձեալ՝ *կարօտ* էր մարդասէրն աստուած, գայ ի համբոյր ծարաւելոյն նմա արդարոյն: - 311. Եւ երեք դաս է տրտունջն. այսինքն *Կարօտանաց*. և Փորձանաց. և Չարաչար: - 381. *Կարօտն* է՛ վասն իւր պակասութեանն: - 381. Նա՛խ՝ շնորհակալութիւն է և գոհութիւն երախտեացն աստուծոյ տրիտուր. ո՛չ իբր *կարօտի*, այլ անկարօտի որպէս աստուծոյ: - 406. Եւ չեն անկարօտք. այլ արարածք են և *կարօ՛տ* են աստուծոյ: - 406. Եօթներորդ՝ զի և *կարօտ* ընտանեաց: - 442. Զի արիոս կամէր զանեղական բանն աստուած եղական և *կարօտ* օծման ցուցանել: - 475. Նախ ասէ «եկն յիսուս». այսինքն տըւօղն փրկութեան և ոչ *կարօտն* փրկութեան: - 486-487. Եւ գերեզմանք բացան. զի *կարօ՛տ* էին ննջեցեալքն նմա. և նոքա փակեցին ըզգերեզմանս սրտից իւրեանց: - 490. Երկրորդ՝ զի պատարագն է դէմ յանդիման լինի քրիստոսի. և ո՛չ եմք *կարօտ* բարեխօսի: - 634. ...զի նա կենդանեացս աղօթի՛ց է *կարօտ*, և մեք նորա բարեխօսութեանն առ քրիստոս. - 673. ...ուր արդարք և մեղաւորք ի միասին բնակին *կարօտ* կերակրոց և ըմպելեաց: - 682. ...իսկ մարդիկ ի յարութեանն ո՛չ են *կարօտ* կերակրոյ զի անմա՛հ են. վասն այնորիկ նոքա ո՛չ յառնեն: - 727. Նախ վասն անկարօտութեան. զի սուրբքն իմանալի լոյս ունին զքրիստոս. և ո՛չ են *կարօտ* զգալի լուսոյ: - 760. Երրորդ՝ զի *կարօ՛տ* է նիւթոյ ապաշխարութեան: - 780

**ԿԱՐՕՏԱՆԱՄ +** Եւ թէ յերկուցն՝ ո՛չ է կարօղ հայր ծնանիլ և *կարօտանայ* որդւոյ օգնութեանն. և լիցի անկատար որդի: - 52. Վասն է՞ր մարդս *կարօտացաւ* գրոյ: - 143. Այլ ի մերկանալն ի մարմնոյն՝ *կարօտանայ* յատուկ իմն զօրութեան որով խօսեցի ընդ հրեշտակին: - 145. Իսկ թէ վասն է՞ր մարդս ալփաբէտից *կարօտացաւ*, գրեա՛լ է ի հրեշտակաց **ժե** համարն: - 177. Չորրորդ՝ զի թէ լինէր անդ ախտական ծնունդ որպէս ի յերկրի, *կարօտանայր* մարդն ամենայն պիտոյից զաւակին: - 225. Դարձեալ **թ** թիւն պակա՛ս է ի **ժ**երորդէն. և մեք պակասեցաք յինն դասուց հրեշտակաց, որ նախ հաւասար էաք ի դրախտին. և *կարօտացաք* մարմնաւոր ծննդեան, նմանելով անասնոց...: - 264. Դարձեալ՝ պիտանի է ի ստուգաբանութիւնս բանի. զի թէ ոք զամենայն լեզուս գիտիցէ, ոչ ինչ բառի *կարօտանայ*: - 297. Եւ փոխանակ հոգւոյն՝ հրեշտակական օգնութեանն *կարօտացաւ* ցուցանել զտիրապէս իշխօղն բնութեան. որ և կշտամբեաց զբռնութեամբ թագաւորելն նորա: - 410. ...զի յերկինս ո՛չ *կարօտանան* ողորմութեան. զի անդ ո՛չ գոյ ողորմելի: - 459. Այլ ի դիպօղ ժամու յորում ցաւն զօրացաւ և *կարօտացար* բժշկութեան...: - 467.

**ԿԱՐՕՏԵԱԼ +** Գոյացութիւն է ինքն ինքեամբ էացեալ և ոչ *կարօտեալ* յայլս հաստողի: - 170. Չորրորդ՝ զի ցուցցէ նոցա՝ յեօթանց զմինն աղքատաց և *կարօտելոց* բաշխել: - 372. Երկրորդ, զի ուսցուք այսպէս զամենայն ինչս մեր հաղորդել ի պէտս *կարօտելոց*. և զմիմեանս մեծարել և պատուել սիրով: - 655. Նախ՝ զի թէ բարի է մարդն, ընտրէ՛ աստուած և տայ զմեծութիւնն որ *կարօտելոց* ի գո՛րծ ածէ...: - 664

**ԿԱՐՕՏԻՄ +** Իսկ հրեշտակք զի ո՛չ ունին զգայարանք՝ ո՛չ *կարօտին* գրոց և բանից: - 143. Իսկ Երբ ո՛չ ասի աստուծոյ. զի անժամանա՛կ է և ո՛չ ունի փոփոխումն. այլ ասի յաւիտենական. ըստ որում բոլորն համանգամա՛յն է և կատարեալ. զի ոչ *կարօտի* սկզբան և վախճանի. որպէս ժամանակն. և ո՛չ միայն սկզբան որպէս մշտնջենաւորն. այլ անսկիզբն է և անվախճան. վասն որոյ կոչի յաւիտենական: - 172. Արդ

ամենայն ինչ որ զգալի է՝ ի ներքս ի սմա՛ է. ծա՛յն. գո՛յն. հո՛տ. համ՛. ծա՛նր և թեթև. և ո՛չ ինչ է արտաքոյ սորա. յաղագս որոյ և ո՛չ զգայարանաց *կարօտի*: - 179. Եւ զի *կարօտին* երբեմն հովանւոյ: - 196. Երրորդ՝ զի թէ ունէր ի բնութենէ զէնս կամ զգեստս. ո՛չ *կարօտէր* այլոց կենդանեաց. այլ և ո՛չ խնամէր զնոսա: - 217. Իններորդ՝ ի յօրինակ արդարոցն լուսոյն. որ ո՛չ *կարօտին* արտաքին լուսոյ, սոյնպէս և մովսէս ո՛չ *կարօտէր*. զի ո՛չ բնական էր լոյսն. զի աչք բնական տեսութիւն ունի, այլ ո՛չ թէ լոյս: - 352. Զի՞նչ էր *կարօտիլն* դաւթի ջրոյն բեթլէհէմի: - 434. Զի ի կիրակէ և ի տէրունական տօնս ո՛չ *կարօտիմք* բարեխօսի. այլ երգս սրովբէականս նուագեմք: - 627. Իսկ պահքն զչարութիւնն. զի նուազի և *կարօտի* հոգին յամենայն բարեաց. որպէս ի պահոց մարմինն: - 657. Ո՛չ իբր *կարօտի* բազմաց բաշխողի. կամ փոքրոյի փոքրոյ սիրալի: - 773

**ԿԱՐՕՏՈՒԹԻՒՆ +** Դարձեալ անդրանիկ է ըստ շնորհաց հոգւոյն զոր ընկալաւ ո՛չ վասն *կարօտութեան* զի լիապէս ունէր այլ զի գլուխ էր մեր՝ ընկալաւ՝ զի յանդամս իւր սփռեսցէ: - 41. Եւ այս է *կարօտութիւն* ամենայն ընտրելոց. այսինքն անհասին անհասապէս հասանիլ. և զանտեսն անտեսութեամբ տեսանել: - 123. Հինգերորդն *կարօտութեան* և տրտմութեան: - 210. Երկրորդ՝ զոր ախորժակն ունի *զկարօտութիւն* զա՛յն տեսանէ. որպէս քաղցեալն զկերակուր. և ծարաւն զջուր: - 268. Մկրտութիւնն քրիստոսի ո՛չ վասն *կարօտութեան* էր. զի ամենամաքուր և սուրբ է բնութեամբ և սրբիչ ամենայնի: - 486. Դարձեալ, նշանակէ՛ բարեկենդանն զդրախտին կեանքն. ամենայնիւ առանց *կարօտութեան*: - 657. Իսկ պահքն զկենաց *կարօտութիւնս* զայս: - 657. Եւ սոյնպէս *զկարօտութիւն* և զպակասութիւն ախորժակացս նշանակէ. որ քան ի միտ ածեմք և սըգամք: - 670. և յէութեանս միշտ փոփոխիմք վասն *կարօտութեան*...: - 681. վասն որոյ ի յարութեան՝ հրեշտակաց հաւասար յարուցանէ անմահ և առանց *կարօտութեան*. - 724. Ոչ ինչ *կարօտութիւն* աշխա՛տ արասցէ: - 765

**ԿԱՑՈՒՑԱՆԵՄ +** Չորեքտասաներորդ՝ ասէ պօղոս յեփեսացւոցն թէ՝ հայր *կացոյց* զքրիստոս յերկնաւորս ի վերայ ամենայն իշխանութեանց. և պետութեանց. և զօրութեանց. և ամենայն անուանելոց. ո՛չ միայն յաշխարհիս այլ և ի հանդերձելումն: - 97. Եւ զի պահապանք առ պարիսպս *կացուցանին*: - 196. Առնէ դատաստան արդար, և *կացուսցէ* զօդիսն յաջմէ...: - 317. Յորոց փրկեսցէ զմեզ և զամենայն հաւատացեալս անւան իւրոյ ի յաւիտենական և յանել տանջանաց հրոյն. և մասնաւոր աջակողմեան դասուն և ժառանգ արքայութեանն երկնից *կացուսցէ* յիսուս քրիստոս տէր մեր. որ է օրհնեալ յաւիտեանս Ամէն: - 317. Երրորդ՝ մովսէս զձեռն եդ ի վերայ եսուայ և *կացոյց* զնա՛ առաջնորդ: - 417. Երեսուներորդ, *կացոյց* սաւուղ պահապան դաւթի. և *կացուցին* պահապան գերեզմանին քրիստոսի: - 436. Յաղագս որոյ *կացոյց* հոգևոր իշխան զքահանայս. զի հոգէպէս ուղղեսցեն զմարդիկ և արգելցեն ի մեղաց: - 537-538. Այլ դատաւոր միտն *կացուցեալ* երկու վկայ զանբիծ հաւատս և զօրէնս որ են հաւատք և գործք. զի առ ո՞ր և իցէ քրիստոս նա՛ է ճշմարիտ: - 551. Ասեմք թէ՝ յատկութիւն պատահմունք են. այլ խորհուրդն ի յէութիւնն է *կացուցեալ* որ մի է, և ո՛չ ի պատահմունքն որ բազումք են: - 596. Ասեմք թէ՝ *կացոյց* քրիստոս զբազումս մկրտել...: - 597. Եւ զայս կարգս առաքեալքն *կացուցին*. յորժամ է սարկաւագունս կարգեցին ի սպասաւորութիւն: - 606. Նաև տէրն *կացոյց* զայս կարգս. յորժամ ի լերինն զարքայութիւնն երկնից աւետարանեաց նոցա: - 606. Զայս կարգս *կացոյց* քրիստոս յորժամ ի ժամ ընթրեացն զհացն ի մարմին իւր և զգինին ի յարիւն իւր փոխեաց: - 606. Քսանեմի, և յառակս տնտեսին զոր *կացոյց* տէր ի վերայ ծառայիցն տալ կերակուր. զոր յետոյ տէրն եկեալ գտցէ այնպէս՝ երանի է ծառային այնմիկ. ապա թէ ոչ՝ ընդ մէջ կտրեսցէ: - 693. Յորոց փրկեսցէ զմեզ փրկիչն ամենայնի և առհասարակ զամենայն հաւատացեալս անուան իւրոյ. և *կացուսցէ* ի տեղւոջ լուսոյ և հանգստեան. Ամէն: - 760

**ԿԱՒ +** Զորօրինակ խեցեղէն անօթ խորտակեալ՝ եթէ *կա՛ւ* է շինի դարձեալ անօթ. և թրծեալն ո՛չ շինի: - 166. Եւ զի *կաւ* և տիղմ և գարշութիւնք բազմանան: - 197. Նա՛խ՝ զի *կաւովն* քերէր *զկաւն* որ էր նիւթ մարմնոյն: - 323. Նա՛խ՝ զի ո՛չ էր աշխատեալ ի *կաւ* գործոյն, ո՛չ է առ յընչիցն եգիպտոսի: - 338. Որ ի *կաւոյ* աչք ստեղծ. և մեռեալս յարոյց. և զանշունչ նկանակս աճեցոյց. զոր ոչ արար մովսէս: - 411. Չորրորդ «մկրտիլ ի նմանէ». այսինքն աղբիւրն ի յառուն. լիութիւնն ի կաթիլ մի ջրոյն. մաքուրն ի *կաւոյն* սրբիլ. և արեգականս արեգակն՝ ի ճրագէն լուսաւորիլ: - 487. Վեցերորդ՝ զի գործ աստուծոյ է ի նւաստ և ի փոքր ինչ իր զմեծամեծսն ներգործել. որպէս *կաւովն* զկուրին աչքն եբաց, և ի վիմէն ջուր բղխեցոյց բժան. և այլ բազումս: - 733-734. Իսկ Չորրորդն արքայութիւն՝ է՛ յաւիտենականն գաւառ. յորմէ ի ձեռն մեղաց առաջնոյ մարդոյն՝ տարեալք պանդխտիմք յայսմ տառապանաց գբի և ի տիղմ *կաւոյ*. անարգաբար դեգերեալք ի հովիտս արտասուաց. յանապատի կալով և ո՛չ ի ճանապարհի...: - 756

**ԿԱՒԱԳՈՐԾ +** Եւ ա՛յս է հինգ տանջանքն: ...Երրորդ՝ *կաւագործն* և աղիւս: - 335

**ԿԱՒԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ +** Նա՛խ՝ զի իրաւո՛ւնք արար վասն վարձու *կաւագործութեանն* որ էր առ նոսա:

- 336. Եւ *կաւագործութիւնն* խստացաւ ի մովսիսի իբ ամէն ի վեր. որ լինի ծբ ամ խիստ ծառայութիւն նոցա: - 337

**ԿԱՒԵՂԷՆ +** Դարձեալ ի հողոյ ստեղծ ի նախատինս սատանայի. զի յամօթ լիցի յորժամ տկարս այս և *կաւեղէնս* ի փառսն մտանէր յորմէ նա՛ որ փառաւորն էր անկաւ: - 229

**ԿԱՓԱՐԻՉ +** Եւ ապա՛ յետ յարութեանն իջեալ հրեշտակն թաւալեցոյց *զկափարիչ* վէմն և նստաւ ի վերայ նորա և աւետեաց իւղաբերիցն: - 512. Յինգերորդ, զի և նախահարցն քարեայ էր գերեզմանն. աբրահամու. սահակայ. և յակոբայ. նոյնպէս և գերեզման տռ. և *կափարիչ* վէմն. - 679

**ԿԱՔԱՒ +** Երրորդ՝ յայլոց նոյնք. որպէս զձու *կաքաւի* և սագի թխէ՛ հաւ. և նոյն *կաքաւ*, և սագ ելանէ: - 53

**ԿԱՔԱՒԵՄ +** Այլ կենդանի եղբօր, կամ փոքր եղբօր կինն, կամ գոլով զաւակ, անօրէնութիւն էր որպէս հերովդին. առ որ ասէր յովհաննէս, «չէ արժան քեզ ունել զկին եղբօր քոյ». զի դուստր նորա էր աղջիկն որ *կաքաւեաց*: - 402

**ԿԱՔՏՈՒՄՆ** (Յավանաբար տպագրական սխալ, տե՛ս **ՔԱԿՏՈՒՄՆ**) - Վասն որոյ զայս **գ** ժողովքս տիեզերական և միմեանց համաձայն ընդունիմք. այլ զքաղկեդոնին ո՛չ ընդունիմք. զի ընդ դէմ է առաջնոցն և *կաքտումն* դաւանութեան տօնից կարգաց և կանոնաց ամենայնիւ: - 541

**ԿԵԱՄ +** Որ զամենայն մարդիկ կամի զի *կեցցեն*: - 24. Իսկ թէ ոչ կամաւ. ո՛ է որ զնա բռնադատեաց. զի բնութիւնն ողջախոհ է. և յայտնէ զայս կուսութեամբ *կեալն* բազմաց: - 36. Եւ քարոզչօք՝ այսինքն հրեշտակօք կամ վարդապետօք կամ գրոց սրբոց գիտութեամբ, փութայ *զկեալն* մեր: - 48. Այսպէս և գործ նախախնամութեան. զի կամի՛ զի ամենայն մարդիկ *կեցցեն* և ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն: - 157. Երկրորդ՝ պատահմունքն բաժանեալ ի գոյացութեանց ո՛չ կարեն ըստ ինքեան *կեալ*: - 169. Այլ արարածք բաժանեալ յարարչէն՝ կարե՛ն ըստ ինքեան *կեալ*: - 169. Թէ *կեալ*, յաւելու արդարութիւնն: - 178. Ասէ զայս, զի բնութեամբ անբովանդակելի է. և ոչ տեղեաւ ըմբռնի. ...մինչ զի ինքն զամենայն տեղիս պարունակէ. յորում *կեամք* և շարժիմք և եմք: - 180. Չորրորդ՝ զի մասն ապականի, այլ բոլորն *կեալ*. որպէս իւրաքանչիւր անհատ մարդոյ և ձիոյ մեռանի, այլ բոլորն մնայ. այսպէս և տարերք: - 181. Ապա ուրեմն հիւթն այն, նախ ունի *զկեալն* որ է՛ ունակութիւն. և ո՛չ զպակասն որ է մեռելութիւն: - 256. Եօթանասունենմի, Ո՛չ հացիւ *կեցցէ* մարդ: - 285. Եւ թէ՝ *կեցցէ* ռուբէն: - 285. Յինգերորդ ևս յայտնի. ասա *կեան* նահապետքն ժամանակաւ ընդ ամենայն մարդոյ. և յետ մահու ի մշտնջենաւորն ընդ հրեշտակաց. և յետ յարութեանն յանվախճան յաւիտենին թագաւորեալք ընդ աստուծոյ: - 291. Եւ այլ ևս. նոքա չունէին օրէնք գրաւոր, պա՛րտ էր նոցա յերկար *կեալ* և ի բնական օրէնս կրթել զծնունդս և զազգս իւրեանց: - 291. Զի՞նչ է «ո՛չ միայն հացիւ *կեցցէ* մարդ, այլ ամենայն բանիւն աստուծոյ»: - 397. Նա՛խ՝ վասն ժողովրդեանն ասէ, թէ ոչ միայն հացիւ *կեալ* մարդ. որպէս ասաց ադամայ ուտել զհաց քրտամբք: - 397. **Իններորդ՝ մանուկն յարգանդի ո՛չ հացիւ *կեալ*. այլ հրամանաւն աստուծոյ կերակրի ընդ պորտն զինն ամիս. որպէս տնկականք, և որպէս նոյ ի տապանն. մինչ ելանէ յարգանդէ**...: - 397. Երկրորդ՝ հրէայքն ի գերութեան կախեցին զկտակարանքն ի յուռեաց, և ո՛չ հաւատային կենաց. որ ասէր կտակարանքն պահել զպատուիրանս աստուծոյ և *կեալ*: - 405. Սա երեսնամեայ թագաւորեաց ամս **խ**. *կեցեալ* ամս **հ**: - 452. Սա՛ յերկոտասան ամին թագաւորէ՛ ամս **խ**. *կեցեալ* ամս **ծբ**: - 452. ...և մարդն *կեալ* հոգևոր և աստուածային...: - 668. ...զի չարութեամբ *կեցեալ* ոգին՝ չարութեամբ և մեռանի: - 669. ...զի որպէս հոգևոր սիրով *կեցաք*. նոյնպէս սիրով բաժանիմք. և թէ իցէ քէն ինչ, զայն շնորհմեք միմեանց: - 673. Վեցերորդ, արմաւենին յերկա՛ր *կեալ*...: - 766. Իսկ զի և արուի թէպէտ ո՛չ նոյն պիտոյիւք. սակայն ո՛չ ընդ վայր կազմեցաւ. ի լրումն **բժ**ան դրանց անդամոց. ի ներքս մուծանելոյ և արտաքս հոսելոյ զպակաս և զաւելորդս ինչ. անվնաս *կելով* կենդանւոյն: - 786

**ԿԵԱՆՔ +** Որպէս ասեն հերձուածօղք՝ զամենայն ինչ մարդկան ի հարկէ՛ գոլ. այսինքն զգործ. զդիպուած. զմահ. *զկեանք*. և զամենայն ինչ: - 7. Դարձեալ, թէ է՛ հարկ՝ անիրաւք են և ինքեանք աստեղքն. զի ոմանց բարիս գրեն, և ոմանց չարիս. զոմանս մեծատունս և զոմանս աղքատս. հեշտ *կեանս* և դժւարս. երկարակեացս և սակաւակեացս. բազում անգամ անարժանիցն բարիս խոստանան, և արժանեացն չարիս: - 12. Այլ և ո՛չ է բնութիւն. ո՛չ մասն և ո՛չ բոլոր. այլ պակասութիւն ունակութեան. զի բարին ունակութիւն է, և չարն պակասութիւն նորին. որպէս խաւարն լուսոյ, և հիվանդութիւնն առողջութեան, և մահ *կենաց*: - 16. Ասեմք առ այս եթէ կրկին ունի դէմս գիրն դպրութեան *կենաց*: - 18. Մինն է արդարութեան այժմու *կենացս*, որ է փոփոխական. յորմէ կարէ՛ ոք ջնջիլ: - 18. Եւ յամենևին նըւազիլ *կենաց*՝ և մահն կորնչի. զի յէութեան ունի զգոլն ներհակապէս: - 22. Ընդէ՞ր ոչ յայտնեաց աստուած զէութիւն իւր ի *կեանս* յայս՝ մարդկան ազգի: - 24. Նմանապէս և մարդկան տեսանել զաստուած առանց օրինակի և միջնորդի՝ անհնա՛ր է ի *կեանս* յայս: - 25. Յնգետասներորդ՝ Տալն որդւոյ *զկեանս*, զդատաստանս, և զայլն: - 29. Որք

հերձեալ ըստ ինքեան սարտուցան ի *կենաց*. և զհերձուած կորստեան ուսուցին բազմաց: - 31. Զի՞նչ է տալն որդւոյ *զկեանս*՝ կամ զդատաստան՝ կամ զիշխանութիւն հեթանոսաց և ամէն մարմնոյ: - 46. Իսկ մարդ, զի սրբեսցէ ինքեամբ զմեզ՝ եղև ամենայն յաղագս ամենայնի. այսինքն հոգի և միտք և մարմին. զի յորոց հասարակաց եղև մահ, լիցի և *կեանք*: - 50. Աղբիւր է հայր. զի ի նմանէ է՛ աղբիւր *կենաց*: - 56. *Կեանք* է հայր. ըստ որում, «ես սպանանեմ և ես կեցուցանեմ»: - 57. *Կեանք* է և որդի որ ասաց, «ե՜ս եմ յարութիւն և *կեանք*»: - 57. *Կեանք* է և հոգին սուրբ. ըստ որում, «հոգին է կենդանարար»: - 57. Ապա ուրեմն շօշափելի մարմինն է բան *կենաց* և աստուած: - 73. Ապա ուրեմն և ո՛չ էր յարութիւն և ո՛չ *կենաց* տըւօղ, եթէ ո՛չ էր միաւորեալ ընդ *կեանքն* յաւիտենական: - 74. Քսաներորդ՝ որպէս բարձրագոյնքն կարեն ասիլ մարմնոյն վասն միութեանն՝ որպէս աստուած, յարութիւն, և *կեանք* յաւիտենական: - 74. Ա՛րդ՝ եթէ ճանաչելն զաստուած հայր և զյիսուս քրիստոս *կեանք* է յաւիտենից, և մարդն քրիստոս ճշմարտութեամբ ո՛չ կարէ ճանաչել որպէս դուդ ասես: - 99. Ապա զրկեալ է ի յաւիտենից *կենացն*: - 99. Յորժամ ինքն ո՛չ ունի յաւիտենից *կեանք*, այլոց ո՞րպէս տայ: - 99. Ա՛րդ՝ քննել մտօք յանդգնութիւն է. և հաւատալն *կեանք*. զի ի հաւատո՛ցն է փրկութիւն: - 101. Եւ մեք զնոյն դաւանութիւնն պինդ կալցուք անշարժ յուսով ի *կեանս* և ի մահ և յետ մահու. և նորին խոստացեալ բարեացն արժանի լիցուք ի քրիստոս յիսուս ի տէր մեր: - 101. Վասն *կենաց*. և զանազանութեան աստուծոյ. և հրեշտակաց և մարդկան. և կենդանեաց: - 101. Ոմանց գոյութիւն միայն. և այլոց *կեանք*. և բան. և իմացումն. որպէս տիպ կնքեալ ի մոմի: - 106. Քանզի ո՛չ է ծնունդ, այլ բղխումն. որպէս շունչ և *կեանք* ի հոգւոյս մեր: - 109. Երրորդ՝ որդին ծնունդ նկատէ ի յէութիւնն, և հոգին ի *կեանքն*. և նախ է գոլ իրին՝ և ապա կենդանի: - 109. Երրորդ՝ բազմանայ ի յէութիւն եղելոցս. և բազմապատկի ի *կեանս*. ի շնորհս. և յայլ պարգևս: - 110. Հինգերորդ՝ սկիզբն էութեան. և պատճառ *կենաց* և շնորհաց և այլոց: - 110. Նոյն է և գիր դպրութիւն *կենաց*. իբր անջնջելի դարձումն ի նախասահմանութիւնն: - 112. Երրորդ՝ պատճառ է յաւիտենից. և ժամանակաց. և աւուրց. որպէս լոյս. իմաստութիւն և *կեանք* կոչի. զի պատճա՛ռ է սոցա: - 115. Քանի՞ս բաժանի *կեանքն*: - 116. Որո՞վ զանազանի *կեանքն* աստուծոյ. և հրեշտակաց: - 117. Երկրորդ՝ զի աստուած կենդանարար *կեանք* է: - 117. Երրորդ՝ աստուած է անսկիզբն և անվախճան *կեանք*: - 117. Որո՞վ զանազանի և հաւասարի *կեանք* հոգւոց և հրեշտակաց: - 117. Իսկ այս միայն *կենացն* է յատկութիւն: - 117. Որո՞վ զանազանի և հաւասարի իմանալի և զգալի *կեանք*: -117. Այլ զանազանին, Նախ՝ զի իմանալին անմա՛հ *կեանք* է. և զգալին մահկանացու: - 117. Որո՞վ զանազանին և հաւասարին զգայական և տնկական *կեանք*: - 117. Որպէս է՛ բարի. գեղեցիկ. լոյս. *կեանք*. իմաստութիւն. և այլն: - 122. Նախադրութեամբն՝ որ է՛ և ասի. որպէս Հա՜յր. Որդի՜. Հոգի՜. լո՜յս. *կեա՜նք*. և այլն: - 123. Երեքտասաներորդ՝ ի ծնունդ և ի *կեանս* շարժէ զտարերքս: - 126. Իսկ զարմացումն լինի ի սիրոյ առ սիրելին. զի զմիտս *զկեանս* և զամենայն ինչ թողու սիրօղն՝ և սիրելւոյն համարի: - 127. Որպէս և առաքեալն *զկեանս* իւր համարէր քրիստոսի...: - 127. Որպէս յորժամ ասեմք՝ լո՛յս *կեանք*՝ և այլն, արտաքո՛յ մնամք գիտութեանն. և յորժամ անժամանակ՝ անիմանալի, առաւել մերձենամք: - 132. Եօթներորդ՝ զի երանեալքեն *կենօք*: - 139. Եւ այսպէս խնդրի ապաշխարանքն. որ պատճառէ՛ զյաւիտենական *կեանքն*: - 160. Այլ տեսցուք զայս և յօրինակս ճշմարտութեան. զի ադամ յետ միոյ յանցանացն ո՛չ մատոյց պատարագ զամենայն աւուրս *կենաց* իւրոց. այլ որդւո՛ցն հրամայէր մատուցանել: - 167. Դարձեալ՝ որպէս ասեն իմաստունք՝ թէ քան զամենայն պարգևք գերագո՛յն է իմաստութիւնն յաստուծոյ առ մարդիկ իջեալ. այսինքն քան *զկեանս* և զառողջութիւն, և քան զմեծութիւն և զայլսն: - 178. Եւ դարձեալ՝ զի նոցա ամենեցուն ներհակ գոյ. որպէս մեծութեան աղքատութիւն. առողջութեան հիվանդութիւն. *կենաց* մահ: - 178. Տասներորդ՝ ըստ չափու և կարողութեան բաշխէ. որպէս ի *կեանս* յայսմիկ, և ի հանդերձեալն առաւել զի կարիցեմք տանել: - 185. Դարձեալ տանի զժամանակեայ *կեանս* մեր. վասն որոյ կոչի տարի: - 190. Երրորդն է աստուածութիւնն. կամ *կեանքն* յաւիտենից: - 195. Այսպիսի ժամանակ է յայտնապէս *կեանք* մեր. զի զոր ինչ ժամանակ կենցաղոյս չափէ բնութեամբ՝ ապականէ և փոփոխէ..: - 199. Եւ համառօտ ասեմ, *կեանք* մեր և ժամանակ որքան առաւել յերկարէ՛ և աճէ՛, այն քան առաւել պակասի և նուազէ...: - 199. Նոյնպէս և *կեանք* մեր. այլայլի ի մանկութենէ ի ծերութիւն. յառողջութենէ ի հիւանդութիւն...: - 199. Երրորդ՝ որով առ ժամանակեայ *կեանքս* վարի: - 210. Եւ յետ յարութեանն ընդունի զպտուղ. որ է՛ պարգևք խոստմանց անվախճան *կենացն*: - 213. Երկրորդ՝ իմանալի՛ է, զի իմացումն և իմաստութիւն տայ մեզ յայլ իրս. որպէս ծառն *կենաց* զքրիստոս: - 222. Դարձեալ՝ փայտն *կենաց* ունէր կերակրելի՛ պտուղ: - 223. Ա՛րդ՝ զի՞նչ ասես վասն *կենաց* պտղոյն. եթէ կերակրելի է և հատանելի, ո՞րպէս է *կենաց* պտուղ: - 223. Եւ թէ *կեանս* տայ՝ ո՞րպէս հատանի: - 223. Ա՛րդ՝ որպէս *կենաց* պտուղն կերակրելի է և կենսունակ, նոյնպէս ամենայն պտուղքն կերակրելիք էին և անապականք: - 223.

Պտո՛ւղ էր զգալի և կերակրելի. որպէս *կենաց* պտուղն անմահութեան էր պատճառ. և այլ ամենայն պտուղքն լիութեան: - 223. Այլք ասեն թէ՝ խաղո՛ղ էր. կամ ցորեան. զի զգինին ետ գրաւական *կենաց*՝ և զհաց մարմնոյն: - 224. Այլ ա՛յս է ճշմարիտն. որ մինն ծառ էր *կենաց*՝ և մինն գիտութեան. և ի դրախտին այլ ո՛չ գոյր նման նմա. թո՛ղ թէ յերկիրս. ո՞րպէս ասեմք թէ այս է՝ կամ այն: - 224. Վեցերորդ՝ զի ասէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս կազմութեան եթէ առաջին *կեանք* դրախտին էր կուսութիւն և անապականութիւն և հրեշտակաց նմանութիւն. և յետ յարութեանն վերըստին դառնամք յառաջին *կեանս* դրախտին. յանապականութիւն և ի հրեշտակաց հաւասարութիւն: - 225-226. Ա՛րդ՝ եթէ առաջին *կեանքն* էր ամուսնութեամբ և որդէծնութեամբ որպէս նոքա շաղակրատեն. ապա և ի վերջին յարութեանն նոյնպէս է՛ լինելոց: - 226. Եւ զմիջին կշեռ մահու և *կենաց* ունելով: - 231. Եւ զկրկնակի *կենաց* վայելումն ըստ խառնեալ էութեան իւրոյ. զի թէ զաստուածայինսն բերցէ յինքեան ըստ որում ի պատկերն եղև, վերափոխեսցի անմահ *կենօք* ի պատրաստեալն ժառանգութիւն: - 231. Այլ և ի միտ ածցուք զփառս երկնային *կենաց* ուստի անկաք...: - 233. Եւ այս դէմքս անփոփո՛խ է ի հոգւոյն ի *կեանս* և ի մահ. ո՛չ աճէ և ո՛չ նուազի: - 237. Յոգին *կեանք*: - 250. Զոր ընդ դերևս հանէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս կազմութեան այսպէս եթէ, որք զհոգին յառաջ ասեն գոյանալ քան զմարմին. և վասն մեղաց եդեալ ի մարմին մարդոյ. որ է՛ համանման բանականութեամբ. և է՛ իներքոյ երկնային *կենաց*՝ զի մարմնաւո՛ր է: - 252. Այլ արդ ի մարմնի առաւել մեղանչէ քան յերկնային *կեանս*. վասն որոյ անկանի ի զգայական մարմին որպէս ասեն՝ որ ներքո՛յ է մարդոյն՝ և համանման ախտիւք զի զգայակա՛ն է: - 252. Ասեմք առ այս եթէ որպէս դու օրէնս եդեր փոխանցիլ ի բարձրագունէն ի նուաստագոյն *կեանս* վասն մեղաց: - 252-253. Այլ ա՛րդ եթէ փոխի ի տնկոյն ի մարդն, վատթա՛ր է մարդոյն *կեանք* քան զտնկոյն. ուստի ի մեծագունէն ի նուաստն փոխեցաւ: - 253. Եւ այս կազմողական զօրութեանն է որ նախ պատրաստէ՛ զնիւթ առ *կեանքն*. և ապա ի զգայութիւնն. և ապա ի բանաւորութիւնն: - 255. Այսպէս և զներքին *կեանս* յարգանդին իմա՛: - 255. Իսկ բարոյականն այս ինչ է. զի զպատկերն արարչական և զառաջին *կեանս* դրախտին կորուսաք, և զանասնեղէն պատկերն և զերկրորդ և զախտաւոր *կեանս* ընտրեցաք. յիրաւի շրջեցաւ ի մեզ և լինելութիւն հոգւոյն: - 258. Եւ այսպէս միջին հասակս կատարեալ, ծգի մինչև ի **խզ** ամն. որ է **դ ժզ**. և վեցն կատարեալ թիւ է. և աստ տիրէ ալիք և սկիզբն լինի ծերութեան մինչև ի **հբ** ամն. յորում է ծայրք *կենաց* ըստ դաւթի, և թիւ երկոտասան վեցից խորհրդաւոր: - 265. Եւ յերեկոյ՝ ծերութիւնն. որ երեկոյացեալ *կենաց* և ի մահիճ գերեզմանի ժամանեալ: - 266. Չորրորդ՝ և կատարեալ իմաստութիւն է՝ իմացմանն հպիլ յաստուած և յաստուածայինս ի հոգևոր և յիմանալի *կեանս*: - 269. Դարձեալ՝ մարդո՛յն է յարութիւն *կենաց*. և դատաստանի վասն հոգւոյն՝ զոր ո՛չ ունին այլ կենդանիք: - 275. Տասներորդ՝ կին, իբր թէ *կեանք*. զի որպէս *կենօք* է տնել. նոյնպէս տեսակ մարդոյս ի ձեռն կնոջ ծննդեանն տնէ՛, և կայ մնայ մինչ ի կատարած: - 276. Վասն այսր պատճառի կոչեաց զանուն կնոջ իւրոյ *կեանս*. զի աճումն է և ծնունդն և մայր ամենայն կենդանեաց: - 276. Չորրորդ՝ ի ցուցանել զարդար վճիռ հատուցմանն. պահողացն՝ ըզվայելս դրախտին և զանմահ *կեանս*. և ոչ պահողացն՝ զարտաքսիլն և զմահու մեռանիլն: - 277. Չորրորդ՝ մահու մեռանիլ այն է, որ հոգւով և մարմնով տրտմին. և անմահ չարչարին. որպէս մեղաւորք յայս *կեանս* և յետ մահու. զի որ մեռանի մարմնով՝ զպարտս վճարէ. և որ տրտմի հոգւով՝ անմահ մահանայ: - 277. Գիտելի է, զի որպիսութիւն *կենաց* մարդոյս տրամատի յերիս. ըստ երից փոփոխմանց մարդոյն. այսինքն նախ քան զմեղքն. և յետ մեղացն. և յետ մահուն: - 278. Ի քահանայութենէն, զի ո՛չ իշխեաց պատարագ մատուցանել ի *կեանս* իւր: - 279. Երկրորդ՝ զի զրկեցաւ ի *կենացն* փայտէն և ի դրախտէն արտաքսեցաւ: - 279. Եւ ա՛րդ՝ հեռանալոյ մեզ ի դրախտէն *կենաց* վերջին ամուսնութիւնն եղև. զա՛յն նախ պա՛րտ է թողուլ, և ապա՛ յերկրաւոր հոգւոց և տառապանաց հեռանալ: - 281. Ասեմք եթէ՝ զոր ինչ ի յարութեանն աւուր լինելոց է սրբոցն, զսկիզբն անդանօր սերմանեաց ի նախնի մարդն ադամ. զի թէ յիւրում ժամանակին կերեալ էին ի *կենաց* պտղոյն, լինէին կատարեալ անմահք. և փոխեին յարքայութիւնն: - 282. Եւ այսպէս էր միջասահման *կեանք* նոցա զոր ասեն ի մէջ մահու և անմահութեան: - 282. Երրորդ՝ Վասն *կենաց* նահապետացն և *կենաց* մեր՝ չափեալ թուով: - 283. Չորրորդ՝ Վասն չգիտելոյ մեր զօր մահուն. և վասն ցաւագին *կենացս*: - 283. Յետ ելիցն ադամայ ի դրախտէն *կենաց*, հարցանելի է վասն նախահարցն ըստ կարգի: - 286. Որպէս ենովս որ յուսացաւ կոչել զանուն տեառն աստուծոյ. այսինքն յուսացաւ զհանդերձեալ *կեանսն* որ աներևոյթն էր. և վասն իւրաքանչիւր գործոց գոլ հատուցումն. և կոչեաց զանունն աստուծոյ ի յօգնականութիւն: - 288. Ըստ որում առաւել փառաւորեցաւ կրկին *կենօք*: - 288. Նա՛խ՝ զի յաներևոյթ *կեանսն* և ի հանդերձեալն յուսացաւ. և արհամարհեաց զերկրաւորս որ տեսանի...: - 288-289. Երկրորդ՝ զի առանձնակի *կեանս* ստացաւ **թճ** ամ: - 290. Չորրորդ՝ զի պտուղ ո՛չ եկեր. որով նա ուտելովն զրկեցաւ *կենաց.* և այսպիսիքս յերկինս հանեն զմարդն: - 290. Եւ

յորժամ կորոյս զդրախտին *կեանքն*, այլ ոչ հասին ի նոյն: - 290. Նոյնպէս և անդրանիկ ծնունդքն աշխարհի էին նահապետքն որ նախ քան զջուրն, տևէին ի *կեանս* այս **թճ** կամ աւելի ամ, և ապա ծնանէին ի հանդերձեալ *կեանսն* մահւամբ ելիւք: - 290. Երրորդ՝ **թ** դաս հրեշտակաց է յերկինս. և **ժ**երորդն մարդն կատարումն թուոյ նոցա. վասն այն ի *կեանս* այս ո՛չ հասանեն ի **ռ** թիւն կատարեալ. զի աստ ո՛չ լինի կատարումն դասուցն այլ ի հանդերձեալն: - 291. Թիւ *կենաց* մարդոյ չափեա՞լ է՝ թէ պատահմամբ յերկար և սակաւ ապրին: - 291. Ամենայն մարդոյ թիւ *կենաց* չափեալ է առ աստուած. և ո՛չ ոք կարէ սահմանն անցանել...: - 291. Այլ մեղքն նուազէ՛ *զկեանքն* և ո՛չ տայ հասանիլ ի կէտ կոչմանն: - 291. Այլ գիտելի է, զի մեղքն երբեմն յերկարէ՛ *զկեանս*՝ զի չարչարեսցի իբրև զկայեն: - 292. Եւ երբեմն կարճէ՛ ի *կենաց* որպէս առ նոյիւ. զի **ճի** ամ խոստացաւ նոցա, և զի ամն կարճեաց վասն չարեաց նոցա: - 292. Նոյնպէս և արդարութիւնն երբեմն յերկարէ՛ *զկեանս* որպէս առ եզեկիա. և երբեմն կարճէ՛ որպէս առ ովսիայ: - 292. Եւ ա՛յս է պատճառ յերկարելոյ և կարճելոյ *կենաց*. այսինքն արդարութիւնն կամ մեղքն որպէս ցուցաւ: - 292. Ընդէ՞ր ոչ գիտէ մարդ զկատարած. *կենաց* իւրոց և զկատարած աշխարհի: - 292. Երրորդ՝ զի նա՛խ բանայ զարգանդ ծնողին և գայ ի *կեանս*. որ և **ե** օր աւելի ստանայ *զկեանս* յարգանդի: - 310. Երրորդ՝ զանդրանիկ *կեանս* ի դրախտին անարգեաց ադամ և զերկրորդն ընտրեաց. և իւր անդրանիկն խոտեցաւ և կրտսերն ընտրեցաւ: - 310. ...իսկ յետ մահուն՝ փոխի և լինի հոգին երէց և անդրանիկ անմահ *կենօք*...: - 310. Ութերորդ՝ նախկին է ժամանակս, և երկրորդ հանդերձեալն. և *կեանք* ժամանակիս խոտեալ է և անարգ. և հանդերձեալն պատուական է և ընտիր: - 310. Չինգևժերորդ՝ որք աստ երկիր պագանեն քրիստոսի, *կենաց* հացիւն կերակրին որպէս եղբարքն յովսեփայ: - 314. Զի քանանացիքն խորհրդածի այսմ երկրի և *կենաց*: - 314. Վեցն զկատարելութիւն մարմնոյն ցուցանէ, և հարիւրն, զհոգւոյն. և հազարն, զպատիւ *կենաց* յաւիտենից: - 315. Եւ ի գոչել տեառն մերոյ ի վերայ խաչին՝ սարսեցին դժոխայինքն ահաբեկեալ ի *կենաց*: - 316. Առնէ դատաստան արդար, և կացուսցէ զօդիսն յաջմէ և ասէ՝ «եկա՛յք օրհնեալքն հօր իմոյ», և տայ նոցա *զկեանս* յաւիտենից: - 317. Երկրորդ՝ զի յուսասցին այլ *կենաց* և հատուցման գործոց: - 324. Որ լինի բովանդակ *կեանքն* յոբայ **բճխը** ամ: - 327. Յայտ է զի յառաջ քան զհարուածն **h** ամաց էր. և **լը** ամ եկաց ի հիւանդութեանն. և այսպէս կրկին աճեցին *կեանքն* որպէս և ամենայն ինչքն: - 327. Տասներորդ՝ կրկին եղև *կեանքն* և պատիւն յոբայ. և տէր մեր ել ի փառս առաջին և նստաւ մարմնով ընդ աջմէ հօր: - 327. Ութերորդ՝ խաչն փրկական նախ էր մահու գործիք. զոր առեալ ի ձեռն քրիստոս, և եղև *կենաց* պատճառ: - 332. Երրորդ՝ յօրինակ հեթանոսաց որք զազրացեալ էին մեղօք մինչև ջրով աւազանին սրբեցան և ճաշակեցին զմանանայն *կենաց* ի յերկնից իջեալ: - 333. Այսպէս և մարմին և արիւնն քրիստոսի՝ արժանաւորացն *կեանք* է և սրբութիւն. և անարժանիցն մահ և ապականութիւն: - 334. Այսպէս և քրիստոնեայք յորժամ ելանեն ի *կենաց* աստի, կողոպտեսցեն զդևս և ապա՛ ելցեն: - 336. Եւ զհաց մարմնոյն քրիստոսի՝ որք զբոլոր և որք զմասն ճաշակեն՝ միո՛յ *կենաց* հաղորդին: - 339. Եւ զի անապակա՛ն է գոյացութիւն հացին՝ աստի՛ յայտ է, զի *կեանք* և անմահութիւն տայ ճաշակողացն: - 339. Չինգերորդ՝ յախորժակս փոխիլն. արժանաւորացն *կեանք* է և անարժանիցն մահ: - 339. Երկայնութիւն՝ է՛ *կեանք* նոցա անմահ. զի գերազանցեալ են քան զժամանակեայս, և պակաս քան զյաւիտենականն աստուած: - 344. Երեսն զիսկութիւն աստուածութեանն նշանակէ. զոր աստի *կենօքս* ո՛չ ոք կարէ տեսանել. որպէս զբոլորակ արեգականն. այլ ի հանդերձեալն տեսանեն ընտրեալք ըստ չափու: - 350. Երրորդ՝ զձայնն միայն լսեցին և զտեսիլն ո՛չ տեսին. և մեք լուաք և տեսաք և շօշափեցաք զբանն *կենաց*: - 353. Զի միջնո՛ց է մարմնոյն, և սկիզբն է կենդանւոյն, և կատարած *կենաց*: - 360. Այսինքն զամենայն յաջողուածս հոգևոր և մարմնաւոր, և զմասն անմահութեան *կենաց* յուսոյն, ո՛չ վասն մեր արժանաւորութեան համարել. այլ բարութեան և ողորմութեանն աստուծոյ: - 360. Ութերորդ՝ թաղամսաւորն. որ թաղիացեալ է միսն ի կաշին և չքերթուի. որ անորի՛շ է ի խառնակ *կենաց*: - 371. Զի արիւնն շունչ է և *կեանք* անասնոց: - 371. Նա՛խ՝ զի զկենդանութիւնն տացեն տուողին *կենաց*՝ բաժին: - 371. Եւ կէս դորակին՝ զի յայժմու *կեանս* կիսակատա՛րք են ամենայն նուէրք մեր մինչ ի հանդերձեալն: - 375. Զի ի *կեանս* յայս հաւատով նուիրիմք. և յետ մահու յուսով. և յետ յարութեան կատարեալ սիրով ընդ քրիստոս միաւորիմք: - 375. Չինգերորդ՝ զի նուազեա՛լ են ամք *կենացն* և մերձեալ ի վախճան: - 377. Ութերորդ՝ զի ապաժո՛ւժ է և պակասամիտ որպէս զտղայ. զի անիւ *կենացն* հոլովեա՛լ է ի տղայութեան տիքն: - 377. Երրորդ, Երրորդական լուսովն հաւատոյ հետևիմք ի *կեանս*: - 380. Չինգերորդ՝ ի *կեանս* մեր՝ և յետ մահու՝ և յարութեանն հանգչիմք: - 380. Դարձեալ՝ զհանդերձեալ *կեանս*՝ դառնութեամբ աստեացս գտանեմք: - 381. Տասներորդ՝ զի զքրիստոսի առաջին գալուստն նշանակէր տապանակն և տախտակն և մանանայն և այլն. և զվերջինն՝ վէմն աղբիւրացեալ ի յաւիտենից *կեանսն*: - 385. Զի ասեն եթէ՝ **խ** օր էր պայմանն ադամայ. յետ **խ** աւուր ուտէր ասեն՝ ի փայտէն գիտութեան և սրբութեամբ որդիս ծնանէր.

և ապա՛ ուտէր ի *կենաց* փայտէն և վերափոխեր. և այլ բազում բանս տողե՛ն: - 391. Այլ **ե** թագաւորք մադիանացիքն էին, և **բ** այսոքիկ. որ են **է** դևք է գլխաւոր մեղաց. որք ի *կեանս* պատերազմին, և յետ մահու ընդ հոգւոցն բազումք: - 393. Վեցերորդ՝ նախ *զկեանս* զայս տեսանեմք որ է արևմուտք. և ապա յետ մահու զհանդերձեալն որ է՛ արևելք: - 395. Երկրորդ՝ ի հոգևոր *կենաց* դրախտէն անկաք ի մարմնաւորս. և յայսմանէ դառնամք ի հոգևորսն: - 395. Երրորդ՝ զայն ցուցանէ որ *կեանք* դրախտին դարձաւ առ նոսա յանապատին անկարօտ ամենայնի. զի զգեստն ո՛չ մաշէր. այլ աճէ՛ր ընդ տղայոցն. և ոտն բոկ՝ և ոչ՛ կոշկոճէր...: - 397. Երրորդ՝ զի ինքն օրհնութիւն էր, և անէծքն մերձեալ ի նա յօրհնութիւն փոխեցաւ. որպէս խաւարն ի լոյս փոխի. և մեղքն յարդարութիւն. և մահ ի *կեանս*: - 400. Անիծեալն՝ սատակեալ և սպանեալ ասի. որ է մեկնեալ և հեռացեալ ի *կենաց* աստուծոյ...: - 403. Իսկ օրհնեալն՝ յայտնեալ և յարեալ յաստուած որ է՛ *կեանք* և երանութիւն: - 403. Եւ օրհնութեամբ հաղորդիլ *կենացն* աստուծոյ և երանութեան: - 403. Եւ ի վերայ այսր՝ կուսութեամբ ծնաւ մարդն ադամ ի հողոյ. և կուսութեամբ ծնանիմք յաւազանէն որդիս աստուծոյ. և կուսութեամբ ծնանիմք ի յարութեանն ի *կեանս* անմահ: - 404. Եւ **է** երրորդն սատակիլն և կորուստ. զի *կեանքս* **զ** շարժմամբ է, և մահն է երրորդ արտաքոյ սորա: - 404. Նա՛խ՝ զի ի խղճմտանք մարդոյն կախեալ է *կեանքն* արժանի մահու. և տեսանէ՛ միշտ և ո՛չ հաւատայ և դադարէ ի մեղաց: - 404. Երկրորդ՝ հրէայքն ի գերութեան կախեցին զկտակարանքն ի յուռեաց, և ո՛չ հաւատային *կենաց.* որ ասէր կտակարանքն պահել զպատուիրանս աստուծոյ և կեալ: - 405. ...այսինքն *կեանքն* որ ասաց մովսէս «տեսանիցէք կախեալ». զի մովսէս վասն իմ գրեաց զայն: - 405. Իսկ բարեաց չար առնել՝ անիրաւութիւն է. որ ո՛չ գոյ բնաւ առ աստուած. ո՛չ ի *կեանս* յայս և ո՛չ ի հանդերձելումն: - 408. Չորրորդ՝ մարմնաւոր մահն վախճան է մարմնոյ *կենաց* և սկիզբն հոգևորին. վասն այն օրհնէ: - 408-409. Հինգերորդ՝ մովսէս օրինա՛կ էր, և ճշմարտութիւնն քրիստոս. առ որ խափանեցաւ մահ, և թագաւորեաց *կեանք*: - 409. Երկրորդ՝ զփոփոխելի *կեանքս* սգան. և յուսով հանդերձեալ յարութեանն դադարին ի սգոյ և ուրախանան: - 411. Եւ ամենայն աւուրք *կենաց* նորա **ճժ** ամ: - 414. Եւ տէրն մեր ներէ՛ մեղաւորաց աստ ի *կեանս* և յետ մահու գիշերի. և ի ծագել լուսոյ յարութեանն՝ ստուգութեամբ դատապարտէ՛: - 418. Եւ տէր մեր ի սպանօղ մարմնոյս որ է՛ պատառօղ հոգւոյս, սպանելով զսա՛ գտանէր զքաղցր *կեանս* տալ որդւոց մարդկան ազգի: - 422. Եւ տէր մեր մարմնով զպատերազմն վանեալ. և նոյն մարմնով մեզ *կեանս* բղխեալ: - 423. Երեսունն**ե**, սամփսոն ի մահն առաւել սատակեաց քան ի *կեանս*: - 424. Եւ տէր մեր մահուամբ առաւել կորոյս զթշնամին, որ քան ի *կեանս* գործով հրաշից: - 424. Երկրորդ՝ զի այն քան երկեա՛ւ ի մահու վհուկն այն, որ այլոց *կեանս* խոստանայր: - 428. Եւ գիտելի՛ է, զի ապաշխարութիւն աստի *կենացս*՝ է՛ հատուցումն և պսակ բարեաց...: - 434. Երեսունն**ը**, **ե** նկանակն և սուրն. այսինքն պատճառ *կենաց* և մահու անարժանից և արժանաւորաց: - 437. Դաւիթ կանգնեաց սեղան և դարձոյց զսուր հրեշտակին. և տէր մեր զսեղան խաչին զենմամբ պատարագին ի փրկանս և ի *կեանս* աշխարհի: - 438. Արդ եղիսիէէ նշանակէ՛ զբանն աստուած. որ փոքրկացաւ և բովանդակեցաւ ի ծոց կուսին ի մարմնի միաւորեալ. և ապա ի խաչն բարձրացեալ *կեանս* շնորհեաց մարդկան: - 446. Դարձեալ՝ առաջին գալուստն ծածուկ փրկութիւն և *կեանս* շնորհեաց. իսկ յերկրորդին յայտնապէս յարուցանէ: - 446. Իսկ ի մահուն որ յարոյց զմեռեալն յորժամ մերձեցաւ ի յոսկերսն եղիսէի, ի տիպ մահուն քրիստոսի որ մահուամբն մեզ *կեանք* և յարութիւն շնորհեաց: - 446. Նա՛խ՝ զի **հ** ա՛մ է վճիռ *կենաց* մարդոյս ըստ դաւթի: - 448. Չորրորդ՝ ողորմութիւնն աստուծոյ է աստ ի *կեանս*. և արդարութիւնն ի հանդերձեալն: - 458. Եւ միւս ի մէջ մարհամու և հրեշտակին. յորմէ եղև *կեանք*: - 465. Պարտ ուրեմն էր բանին *կենաց* ելանել յայնմ անդամոց, որ պատերազմի՛ ընդ մահու: - 469. Որ է որովայն *կեանք* և մահն: - 469. Զօրութիւնն երկնից՝ տկարանայ. և *կեանքն* ամենեցուն մեռանի: - 470. Դարձեալ ի ձեռն կուսին՝ *կենաց* գիր տուաւ ազգի մարդկան տէր մեր յիսուս քրիստոս: - 481. Կրկին է գիր. այսինքն *կենաց* և մահու. զի բարի գործովք գրիմք ի դպրութիւնն կենաց. և մեղօք գրիմք ի գիրն մահու և դատապարտութեան. որպէս ասեմք թէ զձեռագիր յանցանաց քոց ջնջեսցէ աստուած: - 481. Կրկին է գիր. այսինքն կենաց և մահու. զի բարի գործովք գրիմք ի դպրութիւնն *կենաց*. և մեղօք գրիմք ի գիրն մահու և դատապարտութեան. որպէս ասեմք թէ զձեռագիր յանցանաց քոց ջնջեսցէ աստուած: - 481. Եւ թէ պահեալ էր զպատուիրանն աստուծոյ՝ լինէր գիր *կենաց* դպրութեան: - 481. Երրորդ՝ թլփատեաց ինքն զինքն յամենայն *կեանս* իւր՝ խոնարհութեան սրովն: - 486. Ջոր մկրտութեամբն իւր քրիստոս սրբեաց զջուրն, և արար սրբութեան նիւթ և *կենաց*: - 489. Վասն մեռելոյ մեռանի *կեանքն*: - 491. Եօթներորդիւն կատարել *զկեանս* մեր պատշաճաւոր վախճանաւ: - 492. Աիեակն ողջախոհ և սուրբ ունել *կեանս* յանձին: - 493. Որ և մարդիկք կրկին թևօք ժամանեն ի փառս յաւիտենական *կենացն*: - 494. Դարձեալ վայելո՛ւչ էր փրկութեան մեր լինիլ ի ձեռն փայտի. որ ցուցանէ զփայտն *կենաց* ի մէջ դրախտին: - 494. Զի որ վախճա՛ն է *կենաց*, նոյն

և սկիզբն *կենաց*. այսինքն վախճան ժամանակին, և սկիզբն մշտնջենաւորին: - 496. Նոյնպէս և զկամաւոր մահն որ է՛ դեղ և առիթ յաւիտենական *կենացն*, նախ ինքն ճաշակեաց և ուսոյց հետևողաց իւրոց: - 497. Եւ ունի մահն կրկին յատկութիւն որ ընդ դէմ է երկուց ծայրիցն. այսինքն զի է՛ վախճան *կենաց*՝ և է՛ սկիզբն *կենաց:* - 497. Սկիզբն *կենաց*՝ ըստ այնմ որ վախճա՛ն է *կենաց*՝ վախճա՛ն է մեղաց: - 497. Եւ ըստ այնմ որ սկիզբն է *կենաց*՝ ընդ դէմ է ապականութեանց: - 497. Զի ապականութիւնն տանի յոչգոյութիւն. իսկ մահն առաջնորդէ՛ ի *կեանս*: - 497. Այսպէս մահն միայն հատանէ ի *կենաց*. և ապականութիւնն վերստին այլայլէ: - 498. Վեշտասաներորդ՝ ի մէջ գիշերի յարեաւ, զի զհոգիսն ի խաւարային բանտէն ի լոյս *կենաց* շրջեսցէ: - 514. Երկրորդ՝ զի տացէ օրինակ համբերութեան մերոյ, զի սպասեսցուք վարձուն ի հանդերձեալն. և ո՛չ իսկոյն վաղափոյթ լինիլ առնուլ այժմու *կենօք*...: - 520. Այսպէս և առեալք զհոգին սուրբ բղխեն. ոմանց ի մահ և ոմանց ի *կեանս*. որպէս առ տաբիթայն և առ սափիրային: - 523. Ասեմք առ այս, թէ յԵրրորդութիւնն սուրբ մի է բանն և իմաստութիւնն և բնութիւն և *կեանք* և ներգործութիւն և այլն ամենայն. բաց յառանձնութենէն որ է ծնօղ ծնեալ և բղխեալ: - 530. Բերան՝ աւետարանիչքն. և լեզուք՝ քարոզք բանին *կենաց*: - 534. Երրորդ՝ մարմնաւորն իշխէն միայն ի մարմին և ի *կեանս*. այլ յետ մահու ո՛չ: - 538. Ուստի յայտ է զի պատժէ զմարմին. և կապէ՛ զհոգին ի *կեանս* և ի մահ: - 538. Իսկ յերկրի և յերկինս, այսինքն ի *կեանս* և յետ մահու: - 541. Յինգերորդ՝ նման սատանային լինին որք ուրանան զպատճառն գոյութեան հոգոց իւրեանց. յիրաւի ապա որպէս սատանայ ո՛չ ունի թողութիւն ի *կեանս* յայս և ո՛չ ի հանդերձեալն և գործ ունէի նմին: - 566. Դարձեալ՝ յոյսն է ունակութիւն մտաց յղացեալ յառատութենէն աստուծոյ. ունելով *կեանս* յաւիտենական՝ բարի արդեամբք: - 574. Այլ և զանազանի յոյսն. զի որք են ի ճանապարհ աստի *կենաց*, յոյս նոցա է՛ հանդերձ ստուգութեամբ կարծեաց որպէս ասացաւ: - 574. Որ է՛ հաւատ՝ յոյս՝ սէր. և սոքա երեքեան հեղո՛ւմն են յաստուածային շնորհացն ի բանական ոգիս. որով ուղղիմք յերկնային *կեանս*: - 577. Եւ գիտեն զպատճառն թէ վասն է՞ր է ողջախոհ. այսինքն զի յանառակ *կենաց* ժլատութիւնք լինին. և նա ի հարկէ արի գոյ զախտն ստորադասելով. այնպիսին և խոհեմ գոյ գիտելով թէ վասն մարմնական հեշտախտութեանց լինի անիրաւութիւն: - 582. Երրորդ՝ ի կառավարել զգործնական և զտեսական *կեանս*. այսպէս աստուածային և մարդկային առաքինութիւնքն են որ ասացաւ: - 583. ...և հետևի նմա *կեանք* և խնդութիւն հոգևոր...: - 584. Ի յասացելոցս յառաջագոյն այս ինչ հաւաքի, եթէ ունակութիւնք մարդկային առաքինութեանց նախկնաբար պատրաստե՛ն ի վարժումն գործնական *կենացն*. իսկ ունակութիւնք պարգևացն պատրաստե՛ն ի վարժումն տեսական *կենացն*: - 586. Բայց գիտելի է, զի գործ մկրտութեանն է սրբել զհոգիս յամենայն մեղաց զոր ունիցի. թէ բնական թէ ներգործական և ի պատժոց մեղացն. զի թէ նոր մկրտեալն մեռանի, առ ժամայն թռչի ի *կեանս* յաւիտենականս: - 590. ...որ ո՛չ ուտէ զմարմին իմ և ո՛չ ըմպէ զարիւն իմ, ո՛չ ունի *կեանս*: - 600. Եւ դարձեալ տամ զքեզ ի խորհուրդ սուրբ եկեղեցոյ. զոր ինչ գործեսցես, եղիցի քեզ ի բարեգործութիւն և ի փառս հանդերձեալ *կենացն* ամէն: - 602. Եւ դարձեալ՝ վասն ելից մեր և մտից. որ է՛ մահ և *կեանք*: - 623. Եւ դարձեալ՝ **գ** է որպիսութիւնք մեր և փոփոխմունք. որ է՛ աստի *կեանս*. և յետ մահուն. և յետ յարութեանն. - 623. ...և խոնարհեսցուք ընդ ձեռամբ նորա. զի դարձուսցէ ի մահու ի *կեանս*: - 629. ...և աւուրք՝ աստիճանք են ելից *կենաց* մերոց: - 631. Այս է խորհուրդն. զի երեկոյս նշանակէ՛ *զկեանս* զայս որ տնօրէնութեամբ փրկչին սակաւ ինչ տեսօղ եղաք հաւատով: - 646. Երրորդ, աղուհացքն այսմ *կենաց* խորհուրդ, որ եմք ի սուգ վասն մեղաց...: - 654. Այլ բաժին ննջեցելոց քրիստոնէից արքայութիւնն է և *կեանքն* քրիստոս: - 656. Դարձեալ, նշանակէ՛ բարեկենդանն զդրախտին *կեանքն*. ամենայնիւ առանց կարօտութեան: - 657. Իսկ պահքն *զկենաց* կարօտութիւնս զայս: - 657. Չորրորդ, զի մա՛սն է հոգւոյն և հանդերձեալ *կենացն*. պա՛րտ է զպատւականն որոշել քան զմարմնոյս: - 657. Երկրորդ, որպէս կենդանւոյն աղ, նոյնպէս ի *կեանս* մեր հանապազ պա՛րտ է ի լեզուս ունել զօրհնութիւն և զփառս աստուծոյ: - 658. ...նոյնպէս և մեզ մասն ինչ բարւոյ է և աստուծոյ. և մասն ինչ աշխարհի. մասն ինչ հոգւոյ և մասն ինչ մարմնոյ. աստի՛ *կենաց* և հանդերձելոյն...: - 658. Առաջին՝ Վասն է՞ր աստուած նախ զայս *կեանքս*, և ապա զհանդերձեալն տայ: - 660. Քառասունն**ք**, *Կենաց* ծառն և երկոտասան պտուղ նորա: - 661. Վասն է՞ր է զի աստուած նախ զայս՝ և ապա զայն *կեանքն* տայ մարդոյս: - 662. Նա՛խ՝ այն *կեանքն* անապական է և անմահ. և մարդս մահկանացու և ապականելի...: - 662. Արդ՝ ըստ կարգի՝ սերմանքն յառաջ են քան զարդիւնսն. և նախատակքն քան զպսակն. վասն որոյ որք աստ փորձ գտանին, անդ առցեն զպսակն *կենաց*: - 662-663. Ա՛րդ՝ զայս *կեանս* շնորհեաց և զայն խոստացաւ: - 663. Մետասաներորդ, նախ ետ զայս *կեանքս* որ է՛ ցաւալից և բազմաչարչար...: - 663. ...զի յորժամ տեսցուք զանցաւոր *կեանս*, իմասցուք զմեծութիւն պատւոյն ա՛յնր *կենացն*: - 663. ...և այս *կենօքս* զայն *կեանքն* շահի: - 664. ...թէ զպատուիրանս նորա պահեմ, և զայն *կեանքն* տայ: - 664. որպէս մեծատունն որ ընկալաւ զբարիսն ի յայս

*կեանքս*: - 664. ...և այն մին մեղքն վճարի և այն *կենացն* սուրբ և արժանաւոր ժառանգորդ լինի: - 664. Դարձեալ՝ վասն հիվանդութեան գիտելի է, զի է ի մէջ մահու և *կենաց*: - 665. Եւ վասն յերկարութեան *կենաց*, և վասն ո՛չ գիտելոյ զօր մահուն և զկատարածի, ասացեալ է ի վերն առ նահապետսն ի դ համարն: - 665. Նախ ճանապարհ կոչի ծնունդն. որով ի *կեանս* գամք ըստ հասարակութեան ընթացից մարդկան: - 665. Չորրորդ՝ ճանապարհ կոչի աստի *կեանքս*. - 666. Ութերորդ՝ ճանապա՛րհ է *կեանք* անառակ...: - 666. Ասեն վարդապետք, որպէս միաւորութիւն նոցա *կեանք* է, նոյնպէս և որոշումն նոցա մահ: - 667. Մահն բաժանի յերկուս. այսինքն յիմանալի և ի զգալի. որպէս և *կեանքն* է իմանալի և զգալի: - 668. Կամ ի վերինն խնամոցն. զի արդարքն դիւրաւ փոխեցին ի *կեանս*: - 668. Ի վախճան մերձեցեալքն տեսանե՞ն զանտի *կենացն* ինչ՝ թէ ոչ: - 668. Յորժամ սրբազան և մաքուր հոգին հասանէ ի վախճան՝ ուրախութեամբ ցնծայ իբր ի հանդիսից զերծեալ և ի պսակն ընթացեալ. և որպէս յանփոփոխ *կեանքն* հետևեալ: - 668. Եւ դարձեալ՝ հոգի և մարմին զոյգ և ի միասին ստեղծան և ծնան ի մարմնաւոր *կեանքս*...: - 669. ...զոյգ և ի միասին մտցեն ի հոգևոր *կեանքն*: - 669. Նախ զերանական *կեանս* արդարոց ուստի զրկեցաւ մեզօք: - 669. Զի ի չար *կենաց* ի չար տանջանս ընթանայ: - 669. Է և ա՛յլ իմն տեսութիւն վերագոյն. զի արարողութիւն սգոյս ցուցանէ զառաջին անկումն մեր ի լուսեղէն *կենացն* ի խաւար աշխարհ տրտմութեամբ և ցաւօք մահու մեռեալք և ի հող դարձեալք. և այս ի ճաշակմանէ պտղոյն: - 670. Կոչի կարգ, Նախ զի քրիստոնէից մին կարգ՝ ննջեցելոց կատարումն է ի վերայ է խորհրդոցս. ութերորդ խորհուրդ և կարգ. վասն ութերորդին *կենաց*: - 671. Եօթներորդ, ցուցանէ թէ հոգին սուրբ և քրիստոս հանգուցեալ է ի նշխարս սրբոց. որպէս ի *կեանքն* նոյնպէս և ի մահն: - 672. ...զի կնիք է ի հոգին և անքակ. որպէս ի *կեանքն* նոյնպէս և յետ մահու ունի: - 673. ...ցուցանէ թէ անուշահոտ վարուք և խրատու աւետարանին ընթացաւ *զկեանս* իւր: - 674. Վեցերորդ, որպիսութիւն *կենաց* մեր գ է. այսինքն այժմու *կեանս*. և յետ մահու. և յետ յարութեանն: - 675. Նա՛խ՝ արտասուեմք զբնութիւնս մեր թէ վասն մեղաց յո՞րպիսի *կենաց* դրախտին ի մահ անկաւ և ի հող դարձաւ: - 676. Չորրորդ, արտասուօք թողութիւն խնդրեմք զոր մեղաք նմա ի մարմնաւոր *կեանս*...: - 676. ...և որպէս ի *կեանքն* հանդերձիւ ծածկեմք, նոյնպէս ի մահն հողով: - 677. Վեցերորդ, որպէս *կենօք* փոխեցաւ, նոյնպէս և տեղեաւ փոխեսցի...: - 677. ...նոյնպէս և մեք զհոգևոր դեղն *կենաց* յերեկեան աւուրն մատուցաք մեռելոյն...: - 680. Դարձեալ՝ կրկին է *կեանք*. այսինքն ժամանակեայս և հանդերձեալն. և յերկոքինս սխալեցաք մեք...: - 680. Եւ ամենայն ինչ որ աշխարհի է՝ յայսմանէ արտաքս ո՛չ է. եթէ ժամանակն եթէ *կեանքն* և եթէ փոփոխումն մեր: - 681. Նոքա որ թողին զամենայն և գնացին զհետ քրիստոսի, որոց խոստացաւ զհարիւրապատիկն աստ՝ և *զկեանսն* յաւիտենից: - 688. Երրորդ, զի զոյգ և ի միասին ստեղծան և ծնան ի մարմնաւոր *կեանքն* հոգին և մարմինն...: - 691. ...զոյգ և ի միասին մտցեն ի հոգևոր *կեանքն* որպէս ասացաւ ի վերոյ: - 691. Եւ յայնժամ զորոմն քաղել առ ի յայրել ի հուրն. և զցորեանն ի շտեմարանն ժողովել ի *կեանս:* - 693. Ապա ուրեմն մինչ ի դատաստան ընտրեալքն ո՛չ ունին *կեանս*, և ո՛չ մեղաւորքն տանջանս: - 693. Այլ որպէս ի միասին վարեցին զայս *կեանս* հոգին և մարմինն, նոյնպէս և զայն *կեանս* ընդունիցին: - 694. Քսանևը, տանջանք և փառք այնմ *կենաց* յա՛յտ է զի ո՛չ է ժամանակեայ, այլ յաւիտենական: - 694. Ա՛րդ՝ եթէ արդարք այժմ առնուն զփառս և ի դատաստանին դարձեալ փոխիցին յայնմանէ, ապա ուրեմն ամենայն ինչ այն *կենացն* անցաւոր է և փոփոխական. այսինքն փառքն և տանջանքն: - 694. Արդ՝ այս *կենացս* յոյս՝ ակն ունի ի հեռաւորն. և յետ մահու յոյս նոցա ըմբռնէ ի մերձաւորն: - 696. Եւ դարձեալ ասեմք, թէ աստի *կենացն* յոյս է՛ հանդերձ ստուգութեամբ կարծեաց. - 696. Եւ ասեն թէ մանկունք ի յանկողնի՝ են արդարքն ընդ քրիստոսի. և մէջ գիշերն է այս *կեանքս*. ապա ուրեմն առեալ են զվարձս: - 696-697. Ասեմք եթէ՝ ձայնիւն և պսակաւն եցոյց մարդկան և լսեցոյց ի յաչս և ի յականջս թէ զայնպիսի *կեանս* վիճակեցին նոքա որք սուրբք են ի մարդկանէ...: - 697. ...զի որք զպատիժ այսմ *կենացս* ակն ունին առնուլ՝ երկնչին ի չարեաց կամ սակաւ առնեն...: - 698. Վեցերորդ, զի մահն սկիզբն է անփոփոխ *կենացն*. զի ո՛չ կարէ փոխիլ ի մեղաց յարդարութիւն...: - 699. Նա՛խ՝ զի աստ յայժմու *կեանս* շնորհքն է, իսկ անդ փառքն. որպէս աստ մեղքն է և անդ պատիժն. այլ ո՛չ քաւարան: - 702. Ճանապարհ *կեանս* այս. և ոսոխ մարմինն. և դատաւոր միտքն. դահիճ խիղճ մտացն որ չարչարէ՛ զհոգին և ոչ ազատէ մինչև զամենայն պարտսն վճարեսցէ ապաշխարութեամբ: - 704. Իններորդ ասեն, ապա յայն *կեանքն* թողութիւն չկա՞յ: - 704. Զի այս *կեանքս* է գործոց, և այն հատուցմանց բարեաց և չարեաց: - 704. Այս *կեանքս* է սերմանելոյ, և անդ հնձելոյ և ժողովելոյ: - 704. Այն է՝ որ յետ աստի *կենացս* հոգին ի քննութիւն գործոց ժամանէ...: - 705. Ա՛յն է որ սատանայ խաբէութեամբ և բռնութեամբ զօրացեալ էր և իշխան եղեալ ի վերայ մարդկան. ի *կեանս* զանազան չարեօք և կռոց պաշտմամբ...: - 705. Զոր վարդապետք եկեղեցւոյ այսպէս իմանան եթէ՝ կրկին է յարութիւն. այսինքն *կեանք*: - 710. Եւ երկրորդ յարութիւնն որ է մարմնաւոր,

և այն ևս կրկին է. նախ յարութիւն *կենաց*, և ապա յարութիւն փառաց...: - 710. ...յորժամ հոգին միաւորի ընդ մարմնոյն և մարմնովն ժառանգէ զփառս և *զկեանսն* յաւիտենից: - 710. Ցուցանեն այսոքիկ զկատարեալ և զառաւել հանգիստ սրբոցն այժմ յուսով և յետ մահու հոգւով թագաւորեալ ընդ քրիստոսի. և ապա յետ յարութեանն հոգւով և մարմնով ո՛չ ռ ամօք. այլ անվախճան *կենօք*...: - 710. Վեցերորդ զի կրթելով առնու զսպիտակ գոյնն. նոյնպէս և սուրբքն ի *կեանս* յայս կրթելով չարչարեցան, և ապա՛ այն *կենացն* արժանի գտան: - 712. Այլ արդ ի *կեանս* յայս տեսանեմք զբազումս որ բարիքն ի նեղութեան են և չարքն ի հանգստեան. - 715. ...ապա պիտոյ է և ա՛յլ *կեանս* զի հատուցի բարեացն բարի և չարացն չար. և այս ո՛չ լինի եթէ ոչ իցէ յարութիւն: - 715. Եւ այսպէս սահմանի եթէ յարութիւն է այնմ որ անկաւ մարմնաւոր մահուամբ՝ վերստին յառնել անմահութեամբ ի *կեանս* յաւիտենականս: - 716. Նա՛խ՝ զի շնորհն աստուածային պատկերին որ համանգամայն կամեցաւ զբոլոր բնութիւնս ըստ հրեշտակացն օրինակի մուծանել ի *կեանս*. - 716. ...և ի դադարիլ ժամանակին՝ ի նոյն կէտն համանգամայն վերառեցեալ մտանեն ի *կեանս* առաջին ըստ խոստման բանին: - 716-717. Եւ թէ վասն է՞ր ոչ գիտեմք զկատարած աշխարհի և *զկենաց* մեր, գրեալ է ի վեր անդ առ նախապետսն ի ժը գլուխն ի դ համարն: - 718. ...իսկ հոգիք սրբոցն նախ ծաղկին բնական պայծառութեամբն իւրեանց որպէս ցուցաւ ի վերոյ, և ապա՛ յետոյ արդեամբք պտղոյն կատարին ի հանդերձեալ *կեանսն*: - 721. Վեցերորդ, կրկին են *կեանք*. մահկանացու և անմահ. և կրկին է մարդն. մահկանացու և անմահ: - 724. Եւ որպէս այժմ հոգով և մարմնով զմահկանացու *կեանս* վայելեաց, նոյնպէս և յայնժամ հոգւով և մարմնով զանմահ *կեանս* ժառանգեսցէ. վասն այն յառնէ: - 724. Ութերորդ, *կեանքն* բարի է և անեզր. և մահն չար և եզերեալ: - 724. Եւ որպէս ելաք ի բարի *կենաց* և մտաք ի չար մահն, այսպէս և ելեալք ի մահուանէ մտաք յանեզր և անվախճան *կեանսն* և բարութիւն: - 724. Չորրորդ յա՛յտ է յօրինակաց. զի գաւազանն ահարօնի որ ծաղկեցաւ՝ օրինա՛կ էր խաչին. և տախտակքն բանին. և ծառն *կենաց* որ ի մէջ դրախտին: - 733. Նա՛խ՝ զի տեսութիւնն աստուծոյ *կեանք* է յաւիտենից. - 740. Մանաւանդ թէ՝ հոգին սուրբ գրող դպիր. և ուղղութիւնն գրիչ գործիք. և որք զմելանն առատ տամք և զմագաղաթն, զսուրբ գործս անկեղծաւոր և զբանս աղօթից օրինաւոր, ա՛յնքան առաւել գրիմք ի գիրն *կենաց*: - 741. Սոքա՛ են **բ** գիր չարեաց և բարեաց. մահու և *կենաց*: - 741. Իսկ գիրք *կենաց* է գիրքն քրիստոս. ի յորում ամենեքեան իբրև ի գիրս ընթերցցին թէ զինչ ի պատուիրանաց նորա արարին: - 742. Գիր ևս *կենաց* է տեսութիւնն աստուածային. ի յորում ամենեքեան զխիղճս մտաց իւրեանց իբրև զգրեալս տեսցեն: - 742. Դիտելի՛ է, զի ի ճանապարհի աստի *կենաց* երկու են ոսոխք. այսինքն դատախազք: - 743. Դարձեալ հինգերորդ, մեղքն որոշէ ի յաւիտենական *կենացն*. վասն այն անկանի ի մահն յաւիտենական: - 744. Այլ չար փոխանակ բարեաց ո՛չ երբէք հատուցանէ. ոչ ի *կեանս* յայս և ո՛չ ի հանդերձեալն. զի ո՛չ է անիրաւ. այլ արդար յամենայնի և ճշմարիտ: - 744. Եթէ ունեք տեւալ իցէ շնորհ հասարակ կամ յատուկ, որպէս մկրտութիւնն և հաւատքն. քանքար և տաղանդ. իշխան և առաջնորդ. մեծութիւն և ինչք. *կեանք* լոյս ամանակ և այլն ամենայն. այսու եղանակաւ կշռոյ հատուցի: - 747. Երկոտասաներորդ, հնձան կոչի և վերջին օր դատաստանին. զի անդ հաւաքին ամենայն բարիք և չարք և գործք նոցին. և չարքն ճմլեալ արտաքսին ի տանջանս, և բարիքն ի *կեանս*: - 749. Երկրորդ՝ տիւ է իմանալ *զկեանս* սրբոցն ի յերկինս. իսկ գիշեր զտանջանս գարշելեացն ի դժոխս: - 750. Երկրորդ՝ զի մարդկան ազգի կրկին է հատուցումն. այսինքն յայժմու *կեանս* և ի հանդերձեալն. իսկ դիւացն եօթնեկի է հատուցումն վասն եօթնեկի յանցանաց նոցա. և եօթն գլխաւորագոյն մեղացն: 750. Արքայութիւն ասի և *կեանքն* յաւիտենից: - 754. Զի թէ և սակաւ ժամ լինի մնացեալ ի *կենացն* որ քան աւազակին ի յելս շնչոյն. և նա՛ յառաջ քան զամենայն արդարս եմուտ ի դրախտն աստուծոյ ընդ տեառն: - 758. Ո՞րպէս ասեն վարդապետք թէ յառաջին *կեանս* դրախտին ելանելոց եմք: - 758. Ասեմք առ այս, եթէ առաջին *կեանքն* դրախտին ո՛չ զայն իմանան վարդապետք զոր ունէրն ադամ. այլ զոր խոստացաւն ադամայ եթէ պահեալ էր զպատուիրանն. որ նոյն ինքն է արքայութիւնն երկնից ի տեղի անկելոց հրեշտակացն: - 758. Դարձեալ ասեմք առաջին *կեանք* մասնաւոր, զոր նախ քան զյանցանելն ունէր. անկարօտութիւն. լուսաւորութիւն. անծերանելի հասակ. անմահ *կեանք*. և այլն որ ասացաւ ի վերոյ **ժէ** գլուխն **լզ** համարն: - 758. Այլ պարզաբար զնոյն ինքն *կեանք* դրախտին ի յարութեանն ո՛չ է իմանալ: - 758. Եւ այլ բազում վկայութեամբ կարէ՛ հաստատիլ եթէ մի է արքայութիւնն երկնից որ է *կեանքն* յաւիտենից: - 759. Երթիցեն արդարքն ի *կեանսն* յաւիտենից. և մեղաւորքն ի տանջանս յաւիտենից: - 760. Որ է՛ *կեանք* յաւիտենական: - 761. Եօթն զարդ հարսին որպէս ցուցաւ. և օժիտք յաւիտենիցն *կենացն*. պսակք և արկանելիք, ասացան մեզ փոքրիշատէ յառաջագոյն ի բանից սրբոց: - 761. Եւ այն է *կեանք*՝ ուստի մերժեալ են ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք: - 762. Նախ այնու՝ զի ի տանջանաց թշուառութեան այսմ տարագրութեան ազատեալք լիցին. զի անցեալն ի մահուանէ ի *կեանս*՝ *զկենացն*

ուրախութիւն կրկնապատկէ՛: - 764. Զի՞նչ է ծառն *կենաց* և պտուղն երկոտասան զոր ասէ տեսիլն: - 765. Նա՛խ՝ ծառն *կենաց* են հաւատացելոց անձինքն տնկեալք ի վտակս հոգւոյն՝ ջրով աւազանին. հետևեալ ի մշտնջենաւոր *կեանս*: - 765. Եւ կրկին է ունակութիւն *կենաց.* այսինքն նախ ունելով յինքեան *զկեանս*, և ապա բաշխելով այլոց: - 765. Երկրորդ՝ ծառ *կենաց* են բնակիչք վերնոյն սիօնի. տնկեալք յաղբիւրն *կենաց* որ իջանէ յաթոռոյն աստուծոյ ի մէջ նոցա. ունելով զանմահ *կեանս* յաւիտենից: - 765. Դարձեալ՝ տերև զկանաչագեղ *կեանս*. և ծաղկեալ առաքինութեամբ. և պտուղ արդեանցն հանապազորդ: - 765. Այսպէս կոչեսցին արդարքն ծառ *կենաց*: - 766. Զի ա՛յն է *կեանք*՝ ուստի մերժեալ են ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք: - 767. Սոքա են **բժ**ան պտուղք փայտին *կենաց:* - 767. Դարձեալ ի վեր յառաջին բանն մեր երթիցուք որ էր ծառ *կենաց* ի մէջ դրախտին: - 767. Երրորդ՝ ծառ *կենաց* իմանին տունկք իմանալի դրախտին. այսինքն բանակք երկնաւոր զօրացն. միշտ յարազուարճ բերկրանօք բարձրացեալ ի փառս: - 767. Այսպէս վասն երկնային և իմանալի տնկոցն որ կոչին ծառ *կենաց*. ունելով յինքեան *զկեանս* և բաշխելով այլոց ամենեցուն զխնամս: - 767. Չորրորդ՝ ծառ *կենաց* կոչի տէր մեր յիսուս քրիստոս. ըստ որում փայտ դալար էր աստուածութեամբն. և մեզ *կեանք* և կենդանարար եղև յարութեամբն իւրով: - 768. Հինգերորդ՝ ծառ *կենաց* է փրկական փայտն կենդանարար սուրբ խաչին: - 768. Որ փոխանակ մահացու փայտին գիտութեան զյաւիտենից *կեանքն* մեզ պարգևեաց...: - 768. Տալով մեզ զանմահական պտուղն *կենաց* զտէր մեր յիսուս քրիստոս: - 768. Եւ երկոտասան պտուղ յերկոտասան ամիսս, զի ո՛չ երբէք նուազի անմահական պտուղն փայտին *կենաց*: - 768. Դարձեալ, ծառ *կենաց* և անմահական պտուղ՝ մարմին և արիւնն սուրբ. յորմէ ճաշակեալ հանապազ՝ անմահ *կենացն* վիճակէ զմեզ...: - 768. Դարձեալ, ծառ *կենաց* է աւետարանն սուրբ տնկեալ ի մէջ եկեղեցւոյ դրախտին. բերելով պտուղ *կենաց* զիմաստութիւնն երկնաւոր. որ *կեանս* տայ ճաշակողացն զնա. և միշտ շնորհս բժշկութեան և թողութեան մեղաց: - 768. Դարձեալ, ծառ *կենա՛ց* է աստուածածին կոյսն մարիամ բղխեալ յարմատոյն յեսսեայ...: - 768. Դարձեալ՝ ծառ *կենաց* է տունկն իմաստութեան որ ի յերկնից առ մարդիկ տնկեալ: - 768. Դարձեալ՝ ծառ *կենաց* և տունկ երկնային՝ է՛ հաւատն կենդանարար. որոյ արմատն է հայր, և ստեղունք որդի. ծաղիկ և պտուղ հոգին սուրբ: - 768-769. Արդ ահա ա՛յսոքիկ են ծառ *կենաց* ի յերկինս և յերկրի տնկեալ. փոխանակ ծառոյն *կենաց* ի դրախտին եդեմայ. յորմէ հրաժարեցոյց և պարսպեաց բոցեղէն սրովն զճանապարհ նորին: - 771. Այսօր վերստին հրամայեաց հաւատացելոց իւրոց ճաշակել ի պտղոյն *կենաց*. և մնալ յաւիտեան և անմահ կենդանութեամբ ի քրիստոս յիսուս ի տէր մեր: - 771. Այլ ի հասարակ գրոյս՝ հասարակեաց և նա *զկեանս* առօրեայ. հասեալ ի գանձ իմաստից և յաղբիւրն գիտութեանց: - 772. Եւ թէ այս և թէ այն, դու ընկա՛լ զխնդիր մտաց քոց առանց ամենայն երկբայութեանց. իբր ի միոյ կենեղուտ աղբերէ *կենաց* ուռճալրացեալ և պտղաւէտեալ: - 772. Որք տեսչութեամբն աստուծոյ՝ ի մեռելոցն զառհաւատաչեայն ընկալան յարութեան, թէ զիա՞րդ ոչ ունէին ի մտի զանտի *կենացն* ծանօթութիւն. պատմել մեզ խնդրի: - 774. Իսկ հրեշտակական *կենաց* է հրաշափառապէս գիտել և ո՛չ մոռանալ միշտ...: - 774. Ապա բնաւորապէս ընդ դէմ գոյ երից որպիսութեանց սա՛ մեզ չորրորդ գոլով. ոչ ունել ինչ ի մտի. մոռանալով միշտ. ո՛չ գիտել և ո՛չ յիշել ինչ զանտի *կենաց*: - 775. Յորոց յա՛յտ է թէ՝ որք աստի *կենօրս* ի սուգ տրտմութեան անցուցանին զի ուրախութեան հասցեն: - 775. ...մարմնով մեռելոցն անթիւ օճիրս ստախօսութեան գործէր. զանտի *կենաց* զյարութեան յուսոյ և զհատուցմանց ըստ գործոց՝ բառնալով. զերկիւղ դժոխոց և զսէր արքայութեան. և զամենայն ինչ որ նմանէ այսմ հոգևոր բարութեան: - 775. Եւ թէ այս ո՛չ է գրեալ, նա՛ և ո՛չ այն եթէ մեղանչեաց ուրէք զամենայն *կեանս* իւր բաց ի միոյն. և ո՛չ մեղանչելն կրկին՝ ապաշխարութիւն է առաջնոյն: - 778. Իսկ թէ որ ի *կեանս* յայս զղջասցին ատելով զմեղս և խոստովանին, առցեն զվարձս ապաշխարութեան որ է՛ թողութիւն մեղաց. առանց երկբայութեան է այս: - 780. Որպիսութիւն պահանջի, զի իցէ փոփոխական *կենօր*: - 780. Դարձեալ ասեմ, թէ անունս այս՝ պակասութիւն, նոյն է որ լսի չարչարանք. զի յորժամ կրէ ոք զչարչարանս զայս ինչ կամ զայն, պակասի ի նմանէ այն ինչ կամ այն. այսինքն առողջութիւն, *կեանք*, և այլն: - 781. Իսկ հաւատ ուղղակի և վարձատրելի՝ է՛ մարդկայինս ազգի ի ճանապարհ աստի *կենաց*. և չորիւք բացակատարի: - 784. Զի ունօղքն բարեկեցիկ *կենօր*, և ոչ նոյնպիսիքն սովամահ տուայտեալք: - 789

**ԿԵԴԵՍ** - Չորրորդն Բարակ. որդի ամենեմայ ի *կեդեսայ* նեփթաղէմի ամս **խ**: - 420

**ԿԵՂ +** Այն է, որ բովանդակ մարմինն այնպէս խոցոտեալ էր *կեղով* և լուծեալ ի շարաւ և ի թարախ. որ ո՛չ կարէր յոտին կալ կամ սողալ ուրեք. և ո՛չ ըմբռնիւր յայլմէ: - 322-323. Նա՛ *կեղ* և մուն յարուցանէր ի մարմին նոցա. և քրիստոս զբոր և զցաւս սրբէր ի մարմնոցն: - 328. Վեցերորդ՝ *կեղ*՝ և խաղաւարտ: - 333. Վեցերորդ հարուածն է՛ *կեղն* և խաղաւարտն. զի քերքեշէ՛ր զմորթն, և ի վեր եռացեալ լինէր խաղաւարտն.

և մորմոքէր զմարմինս նոցա: - 334. Երրորդ՝ *կեղն* և խաղաւարտն եղև և ի կախարդսն և զայլ հարւածսն կրեցին. և ո՛չ կարէին ի մովսէս և յահարոն դարձուցանել զնոյնս: - 335

**ԿԵՂԵՒ +** Զի են որ *զկեղևն* ունեն և ո՛չ զմէջն. որպէս ծիրան: - 213. Եւ են որ զմէջն ունեն և ո՛չ *զկեղևն*. որպէս նուռն: - 213. **Եւ են որ ո՛չ մէջն ունի և ո՛չ *կեղևն*. որպէս գղթորն**: - 213. Պատասխանեմք եթէ՝ ոմանք յարմատս ունին զսերմն. ոմանք ի ծայրքն. կէսք ի տերևն. այլք ի *կեղևն*. թէպէտ և սոցա սերմնական զօրութիւնն է՛ ի մէջն, այլ առաւել կենդանւոյն: - 256. Զի քարշեն յերկրէ զհիւթ, և ունակացեալ պահեն, և հալեալ փոխեն յինքեանս. և վտարեն զաւելորդսն ի *կեղն*՝ ի տերև՝ և յայլսն: - 262. **Իսկ Նուռն բժշկական է և դառն *կեղևն***: - 381. Հինգերորդ՝ խիստ է *կեղևն*. նոյնպէս և արդարքն խստակրօնք են...: - 766

**ԿԵՂԾԱՒՈՐ +** Չորրորդ՝ զի ասէ ոսկեբերանն՝ «անկեղծ սիրոյ կապանք է առատութիւն նեղութեանն». զի *կեղծաւոր* և անկեղծ սէրն առ աստուած փորձութեամբն երևի: - 162. Եւ են որք գործս ունին և ոչ հաւատս. որպէս *կեղծաւորքն*. նմանապէս և սոքա անպիտանք են աստուծոյ: - 215. Զայլամն որ է՛ ըշտռտուրմուղն, *կեղծաւորքն* են և անպիտանքն գործոյ. և այլքն նմանապէս: - 365

**ԿԵՂԾԱՒՈՐԻՄ +** Զի ահա՛ լատինացիք առանձնականս ունին աւանդութիւնս... Մանաւանդ *զկեղծաւորեալ* վիճիլս: - 553

**ԿԵՂԾԱՒՈՐՈՒԹԻՒՆ +** Չորրորդ՝ *կեղծաւորութիւն* է և խաբէութիւն գովելն զչարն և զանիրաւն. վասն այն ո՛չ ասաց բարեկամացն բարիս՝ զի չարք էին: - 325

**ԿԵՂԾԻՔ +** Եւ առաջին տեառն սպանանել. որ զծածուկս տեսանէ և ո՛չ *կեղծիք* ինչ: - 360

**ԿԵՆԱԳՈՐԾԵՄ +** Երկրորդ՝ աստուած *կենագործօղ* է...: - 70. Դարձեալ՝ որ զամենայն ստեղծ՝ հայր կոչի. և որ զամենայն պարունակէ՛ զի մի՛ լուծցին՝ որդի. և որ շնչելով *կենագործէ* և զարդարէ զամենայն՝ հոգի սուրբ յորջորջի: - 108. Վեցերորդ՝ զի յապականեալ նիւթոյն՝ զօրութիւն *կենագործի*: - 256. Եօթներորդ՝ օձն մեռեալ սպանանէր զօձսն. և զիարեալսն կեցուցանէր. և տէրն մեր մեռեալ մարմնովն զմեղս մեռուցանէր, և կենդանի աստուածութեամբն զմարդիկ *կենագործէր:* - 387

**ԿԵՆԱՐԱՐ +** Նոյնպէս և տէրն մեր ետ հաւատացելոցն *զկենարար* մարմինն և արիւնն իւր. յորոց խնդրէ զգործս տասնաւոր. այսինքն զկատարեալս. և զկատարումն **ժ** բանեան օրինացն. ի յորս է՛ մաքրութիւն **ժ** զգայարանացս որպէս ի վերոյ ասացաւ: - 302. Չորրորդ՝ հաց ի յերկնից իջեալ մանանայն *կենարար*. և բանն աստուծոյ նոյն ինքն տէրն մեր. որպէս ասաց առ փորձիչն թէ՝ ինև կերակրին ամենայն սուրբք և ո՛չ հացիւ: - 397. Այլ հերձուածօղք ոմանք որք են դասք երկաբնակաց՝ ապականացո՛ւ ասեն զանապական մարմինն *կենարարին*: - 498. Եւ կարելի՛ է ասել զմարմին *կենարարին* չարչարելի և մահկանացու, այլ ո՛չ կարելի ասել ապականացու: - 498. Իսկ զի անապական է մարմին *կենարարին* է՛ ի դաւանութենէ հաւատոյ. զոր ունիմք և եմք անփոփոխ: - 498. Իններորդ՝ խորհրդական մարմինն սուրբ զոր բաշխեաց ի վերնատունն՝ էր անապական և *կենարար*...: - 499. Դեռևս ապա զմարմին *կենարարին* ապականացու խոստովանիս: - 503. Զի և սա՛ մի է ի խորհրդականաց տօնից *կենարարին* մերոյ: - 554. Ոռոգեալ ի բղխմանէ *կենարար* գետոյն. որ հեղու ի նոսա անսպառապէս: - 767

**ԿԵՆԴԱՆԱԲՈՒՂԽ +** Եւ զիա՞րդ բաժակաւ լրումն հանդիպեսցի *կենդանաբուղխ* ջրհորոյ: - 93

**ԿԵՆԴԱՆԱԳԻՐ +** Յայս միտս ի *կենդանագիր* կուսին՝ ի ձախոյ գիրկս լինի փրկչական պատկերն. նոյնպէս և առ ի խաչին ի յաջակողմն կացեալ: - 441. Եւ *կենդանագիրն* պատկեր տիրամօ՛րն է: - 639

**ԿԵՆԴԱՆԱԿԱՆ +** Այսու հաւասա՛ր են, զի ի միոյ *կենդանական* պատճառէ՛ են սկսեալք: - 117. և զի *Կենդանակա՛ն* է: - 202. Ըստ փիլիսոփային **բ** են զօրութիւնք անձին. այսինքն գիտնականս և *կենդանականս*: - 248. Իսկ *կենդանականին* են, Կամք. Ընտրողութիւն. Յօժարութիւն. Բարկութիւն. Ցանկութիւն: - 248. Եւ զոմանս ունի խառնեալս ընդ մարմնոյ. որպէս է բնական զօրութիւն *կենդանականն* և շնչականն որպէս ասացաւ ի վերոյ: - 249. Մաշկն է *կենդանական* մորթ. զոր ստեղծեաց աստուած և զգեցոյց զադամ և զևա: - 281. *Կենդանական*, որպէս ջերմութեան և շնչոյ: - 318. Երկրորդ՝ զի շնչերակք և արեան երակք և *կենդանականքն* անդ ի միասին բաժանին: - 366. ...ցուցանէ թէ անշարժ է մեռեալ մարմինն ամենևին ի *կենդանական* շարժմանէ: - 678. Եւ թէ ոք ասիցէ, բազում անդամք են *կենդանականք*, որպէս սիրտն լեարդն թոքն և այլքն որք ի յարութեանն ո՛չ են պէտք. զի ո՛չ է հարկ կենդանութիւն մարդկան: - 725

**ԿԵՆԴԱՆԱԿԵՐՊ +** Մերձ եկեալ ի նոյն *կենդանակերպն* սակաւ լոյսն առնու ի նմանէ յարևելից կողմանէ...: - 187. Եւ յորժամ ի միւս կիսագունդն հասանէ, ընդ **զ** *կենդանակերպս* հետևեալ՝ բոլորի լոյսն ի նմա. զի ուղղապէս զլոյսն ընդունի: - 187. Եւ զիտելի՛ է, զի ընդ ամենևին հեռանալն լուսինն խաւարի. և ամենևիմբ մերձ եկեալ ի նոյն *կենդանակերպն* և ուղղապէս ընդ դէմ անցեալ արեգականն՝ խաւարէ՛ զնա. զի ընդ դիմատիպ է անօթ լուսնոյն: - 187. Եւ զի ո՛չ հանապազ խաւարին. զի ո՛չ միշտ ընդ նոյն շաւիղս

ընթանան. թէպէտ hանդիպին ընդ նոյն *կենդանակերպն*: - 187. Զի՞նչ է բնութիւն *կենդանակերպիցն*: - 189. Ասեմք թէ **բժ**ան *կենդանակերպքն* ունին զբնութիւն չորից տարերաց: - 189. Եւ այս **բժ**ան *կենդանակերպից* վեցն է ի մէջ երկնից ի hիւսիսոյ կողմս առ մեզ, և ի մին կիսագունդն: - 189. Եւ այսպէս զերկինս պատեալ ունին **բժ**ան *կենդանակերպս*: - 189. Վերին եզրն *կենդանակերպիցն* է խեցգետինն. և ներքին՝ այծեղջիւրն: - 189. Որպէս յա՛յտ է ի լուսինն յորժամ ծնանի յարևմուտս. և գայ յարնելս ըստ կարգի *կենդանակերպիցն*: - 189. Եւ է՛ առաջին և վերջին մոլորակացն Երևակն. զոր պարսիկք զօհալ կոչեն. ցուրտ է և չոր. **բ** ամ և կէս յամէ ի *կենդանակերպն*. և յերեսուն ամն վճարէ՛ զամենայն: - 189. Երկրորդ՝ Լուսնթագն. զոր մուշթարի կոչեն. ջե՛րմ է և գէճ. մին ամ յամէ՛ ի *կենդանակերպն*. և ի **ժբ** ամն պատէ՛ զամենայն: - 189. Երրորդ՝ Հրա՛տն. զոր մարեխ անուանեն. ջերմ է և չոր. **խ** օր յամէ՛ ի *կենդանակերպն*. և ի **ժզ** ամիսն պատէ՛ զամենայն: - 189. Չորրորդ Արեգակն. զոր շամս կոչեն ջե՛րմ է և լուսաւոր. **լ** օր և **ժ** ժամ և կէս յամէ՛ ի *կենդանակերպն*. և ի բոլոր տարին վճարէ՛: - 189. Եօթներորդ Լուսինն. զոր կամր կոչեն. hո՛վ է և գէճ. **բ** օր և կէս յամէ՛ ի *կենդանակերպն*. և ի **իթ** օր և կէս պատէ՛ զամենայն: - 189. Զի յարնելից կիտէ՛ ի նոյն կէտ շրջեալ՝ լինի օր մի. որ է **իդ** ժամ. երկու ժամ միոյ *կենդանակերպի*: - 190. Նա՛խ՝ զի տանի զերկոտասան *կենդանակերպսն* և վճարէ: - 190. Ասեմք եթէ՝ լուսինն ընթանայ ի *կենդանակերպսն* **իթ** օր և կէս՝ և ծնանի: - 191. Եւ արեգակն ի *կենդանակերպն* կատարէ՛ **լ** օր: - 191. Երկոտասան անդամքն՝ *կենդանակերպիցն* և **բժ**ան մասին երկրին: - 232. Եւ բաժանին **բժ**ան անդամքն ըստ երկոտասան *կենդանակերպիցն*. և **բժ**ան մասին երկրի: - 241. Ա՛րդ՝ առաջին դարն որ էր երևակին՝ ընդ երկա՛ր ապրէին մարդիկքն. զի ունի երևակն յերկար ընթանալ զճանապարհն իւր. որ ի **լ** ամն վճարէ *զկենդանակերպսն*: - 291. Եւ **բժ**ան *կենդանակերպքն* **բժ**ան առաքեալք: - 303. ...և **բ** Ակունք ուսոյն՝ կրկին կիսագունդք երկնից. ունելով **զզ** *կենդանակերպս*. և Վակաս լանջացն **բժ**ան ակամբք նոյն *կենդանակերպք* ի լանջս երկնից Միթրն՝ պսակ քահանայապետութեան. և Թիթեղն՝ մտաց թեթևութեան: - 348. Որպէս **բժ**ան *կենդանակերպք* երկնից, և ամիսք տարւոյն. այլ և **բժ**ան առաքեալքն ի լանջսն յիսուսի: - 348. Երկրորդ՝ որպէս աստեղաց գլխաւորքն թւեցան. բժան ազգն՝ **բժ**ան *կենդանակերպքն*. և այլք նմանապէս: - 377. Երկրորդ՝ զվեց *կենդանակերպսն* կոխեաց, որ էր **եժ**ան աւուր ճանապարհ ի կուսէն ի խոյն ընթացեալ: - 490. Եւ **բժ**ան *կենդանակերպ* յերկինս: - 546. Եւ որպէս ի *կենդանակերպս* խոյն գլուխ է և առաջին: - 546

**ԿԵՆԴԱՆԱՆԱՄ +** Հինգերորդ՝ արմաւ hաւուն՝ զոր այլք փիւնիկ ասեն որ է յարաբիայ. որ ծախէ՛ ինքն զինքն hրով, և դարձեալ *կենդանանայ*: - 53. Հարցանեմ զբաժանօղսդ յերկուս, զո՞ր բնութիւն կերակրիս որով *կենդանանասդ*: - 69. Դարձեալ զօրութիւնք hոգւոյն բաժանին երրակի ըստ երից ներգործութեանցն. որ է՛ *կենդանանալն*. զգալն. և բանաւորիլն: - 249. Իսկ ըստ նշանակութեան ցուցանէր զբանական hոգին. որով *կենդանացաւ* մարդն: - 282. Հինգերորդ՝ բորոտիլն զմահն եգիպտացւոց նշանակէր. և ողջանալն *զկենդանանալն* որդւոցն իէլի որ ի մահ գրաւեալ էին: - 332. Երկրորդ՝ իբր թէ տղայքն զորս ի ջուրն hեղձուին՝ *կենդանացեալ* տանջեն զնոսա: - 334. Երկրորդ՝ սերմն բանին պատւիրանացն որ ո՛չ *կենդանանայ*: - 368-369. Եւ դարձեալ՝ ինքն քրիստոս նախ մեռաւ մարմնով, և ապա *կենդանացաւ* յետ մկրտութեանն: - 592. Նոյնպէս և մեք նախ մեռանիմք մարմնով. և ապա *կենդանանամք* ի յարութեանն: - 592. ...որպէս սերմանիքն թաղեալ *կենդանանան* և բուսանին. նոյնպէս և մարդոյս մարմին: - 677. Ոմանք ասեն թէ՝ յարութիւն ո՛չ այլ ինչ է՝ քան թէ վերստին *կենդանանալ*: - 716. Նա՛խ՝ զի որպէս նախ սերմանի և ապա բուսանի. այսպէս և մարդն նախ մեռանի և ապա՛ *կենդանանայ*...: - 720. Չորրորդ, զի որպէս ադամաւ ամենեքին մեռան արդարք և մեղաւորք. այսպէս և քրիստոսիւ ամենեքին *կենդանացան*. այսինքն ազատեցան: - 777

**ԿԵՆԴԱՆԱՏԵՍԱԿ +** Այլ և երկոտասան գունդս hրեշտակաց եցոյց տէրն յաւետարանին ըստ թըւոյ երկոտասան առաքելոցն և երկոտասան *կենդանատեսակացն*: - 141

**ԿԵՆԴԱՆԱՐԱՐ +** Երեքտասաներորդ՝ զի թէ վասն բնակարան գոլոյ՝ մարմին նորա է *կենդանարար*: - 67. Ապա ուրեմն եղիցին ամենայն բնակարանացն մարմինք *կենդանարար* զոր անհնար է և զմտաւ ածել: - 67. Իսկ թէ առանձնապէս զմարդոյն, զիա՞րդ իցէ *կենդանարար* մարմինն մարդոյ. կամ ո՞րպէս առաքեցաւ նա ի hօրէ. զիա՞րդ իցէ և կենդանի վասն hօր: - 69. Եւ ո՛չ ասի մահկանացու վասն մարմնոյն. այլ միշտ անմահ և *կենդանարար* մարմնովն: - 78. Երկրորդ՝ զի աստուած *կենդանարար* կեանք է: - 117. Իսկ hրեշտակք ո՛չ են *կենդանարար* այլոց. այլ միայն կենդանի: - 117. Իսկ որ զմարմին յառաջ ասեն քան զhոգի, վկայ ածելով զմովսէս որ ասէ եթէ՝ էառ զhողն և շինեաց մարմին. և յետոյ փչեաց ի նա զշունչն կենդանի, որ է *կենդանարար* hոգին: - 253. Այլ և նաշիh. զի hաց *կենդանարար* և hատ ցորենոյ կոչեցեալ. ճնշեալ չարչարանօք և որոշեալ ի թեփոյ մեղաց: - 361. Այսպէս միաւորեալն ընդ բանին մարմին՝ է՛ և ասի միշտ

կենդանի և *կենդանարար*: - 477. Չորրորդ՝ ծառ կենաց կոչի տէր մեր յիսուս քրիստոս. ըստ որում փայտ դալար էր աստուածութեամբն. և մեզ կեանք և *կենդանարար* եղև յարութեամբն իւրով: - 768. Հինգերորդ՝ ծառ կենաց է փրկական փայտն *կենդանարար* սուրբ խաչին: - 768. Եւ որպէս *զկենդանարար* ջուր զընդունակս իւր դալարացուցեալ. ծաղկեալ յաստիս և պտղաբերեալ ի հանդերձեալն...: - 768. Դարձեալ՝ ծառ կենաց և տունկ երկնային՝ է՛ հաւատն *կենդանարար*. որոյ արմատն է հայր, և ստեղունք որդի. ծաղիկ և պտուղ հոգին սուրբ: - 768-769

**ԿԵՆԴԱՆԱՑՈՒՑԱՆԵՄ +** Իսկ թէ էր երբեմն առանց հոգւոյ, անկենդա՛ն էր և անսուրբ. և զիա՞րդ *կենդանացուցանող* էր և սրբող: - 51. Եւ զղազար կոչեաց ի գերեզմանէն և *կենդանացոյց* բանիւ: - 70. Եւ արիւնն, զմեղս մեր բարձեալ յինքեան և տարեալ ի դաշտն առ հայր յերկինս. զի որպէս մեռեալ մարմնովն քաւեաց զմեղս. նոյնպէս և անմահ աստուածութեամբն *կենդանացոյց* և յերկինս եհան: - 369. Խաչանման տարածեցաւ ի վերայ մանկանն և կծկեցաւ. այսինքն փոքրկացաւ ի չափ մանկանն. և ապա յայտնապէս է անգամ յօրանչելով և կծկելով *կենդանացոյց* զնա: - 446

**ԿԵՆԴԱՆԱՑՈՒՑԻՉ +** Իսկ երկրորդին այսպէս պատասխանեսցուք ընդդիմայարակայութեամբ. զի մարդոյ մարմին ապականի. վասն զի քակտի ի նմանէ *կենդանացուցիչ* նորին հոգին...: - 733

**ԿԵՆԴԱՆԻ** (անասուն) **+** Զորօրինակ՝ ի *կենդանեաց* բազումք նշանակեն զլինելոց իրաց, և ո՛չ են նոքա պատճառք լինելոյ չարեացն կամ բարեաց: - 12. Ութևժերորդ՝ զի թէ չարնէ յաստուծոյ, այս լինի կամ հակակայութեամբ յառաջ եկեալ. որպէս սպիտակն յո՛չ սպիտակէն. կամ բաղդատութեամբ. որպէս *կենդանին* ի *կենդանւոյ*: - 14. Մետասաներորդ՝ ասեն թէ որպէս ի *կենդանիս* ուղտն խոհեմ՝ և տատրակն ողջախոհ է, և ա՛յլ *կենդանիք* են ապուշք և բղջախոհք: - 19. Նախ՝ զի յընդդիմաբաժանեալ տեսակս սեռի՝ ո՛չ գոյ առաջին և վերջին. որպէս բաժանի *կենդանին* ի բանականն և յանբանն. և ո՛չ է ասել թէ՝ բանականն յառաջ է քան զանբանն. այլ զոյգ և համայնք են: - 87. Նախ՝ որպէս սեռ ի տեսակս բոլորապէս տեսանի և ո՛չ մասամբ. այս է՝ զի գոյացութիւնն որ է սեռ՝ բոլոր է ի մարմինն և յանմարմինն. և *կենդանին* բոլոր ի բանականն և բոլոր յանբանն: - 89. Հինգերորդ՝ ի բանէն կրկին էութիւնք յառաջեցան. այսինքն իմանալի և զգալի. զի թէ միայն ի հրեշտակաց էր առեալ՝ պակասէ՛ր զգալին. և թէ ի *կենդանեաց*՝ պակասէ՛ր իմանալին: - 107. Եւ ի միոյ աստուծոյ եղեն **Ժ** դասք հրեշտակաց ընդ մարդկան. և հարիւր գունդքն ըստ ոչխարաց առակին. և **Ռ** *կենդանեաց* տեսակքն որ յերկրի. և բիւր անկենդան բուսոց. և անթիւ գոյեղէնք: - 109. Եւ աստուած յայտնի է ի բանականքս իմացմամբ և պատկերաւ. այլ ի *կենդանիս* և ի բոյսս և ի գոյսս սակաւ ինչ նմանութեամբ: - 109-110. **Ոմանք մերձ են էութեամբ արարչին. և ոմանք հեռի. որպէս իմացականքն քան զբանականս. և սա՛ քան *զկենդանիս*. և նոքա քան զտունկս. և հուսկ յետոյ անշունչ գոյացութիւնքն. ըստ մերձ և հեռաւոր բնութեանց՝ զանազանապէս առնուն:** - 131. Զի՞նչ է չորեքկերպեան *կենդանիքն* զոր ետես եզէկիէլ: - 132. Զի երկնային է արծըւին. և մարդն յերկրէ. և *կենդանիքն* ի ծովու: - 132. Երրորդ՝ զի չորեքկին *կենդանիքն* թագաւորականքն են: - 132. Առիւծն գազանաց. և Մարդն ամենայն *կենդանեաց*. և Նստեալն ի վերայ սոցա Թագաւոր թագաւորաց: - 132. Ապա յա՛յտ է զի ա՛յլ է կարգ շնորհականին, և այլ է կարգ բնականին. զի բնականք ներքինք զվերնոցն բոլորապէս ունին և կոչին. այլ ո՛չ անդրադարձեալ. որպէս անհատն զտեսակն և զսեռն բոլորապէս ունի և կոչի. զի պետրոս մարդ է և *կենդանի* և կոչի. այլ *կենդանին* մարդ՝ կամ մարդն պետրոս ո՛չ է և ո՛չ ասի: - 136. Այլ և մարդ *զկենդանիս* և զանկենդանս. զի համասեռ գոյեղէնք են. և այս սիրովս շաղկապին առ իրեարս: - 143. Եւ զի՝ գուքն յատուկ տեսանի յանբան *կենդանիսն*, և սէրն յատուկ է առ աստուած: - 144. Նոյնպէս և յառնել մարդոյն և յանուն դնելն *կենդանեաց*՝ փառս ետուն աստուծոյ. իսկ նա լռեաց: - 147. Ո՛չ են յաւերժահասունք որպէս ոմանք կարծեն թէ յերկուց տարերց այսինքն ի հրոյ և յօդոյ են բանական *կենդանիք* և ունին ծնունդ և մահ. սուտ է այսպիսի կարծիքս և ընդունայն և հակառակ սուրբ գրոց. զի բանական *կենդանի* և մահկանացու՝ մարդս միա՛յն է որոյ յարութիւն և դատաստան գոյ: - 150. Ամենայն *կենդանիք* ի չորս տարերաց են: - 155. Վասն ջրայնոց և թռչնոց և սողնոց. և թէ քանի՞ ազգեն *կենդանեաց*: - 155. Թէ բնական զգեստ և զէն ունին *կենդանիք*, և մարդս ոչ. և ճանճք և այլքն: - 155. Ադամ եդ անուանս ամենայն *կենդանեաց*: - 155. Գոյացութիւն որ սկիզբն է ամենեցուն և նախասեռ. և ի նմանէ զուգաբաժանեալ մարմինն. և շնչաւորն. և զգայունն. և *կենդանին*. և բանաւորն. և մարդն. ո՞չ ապաքէն բնութիւն են սոքա այլևայլ. և ժողովեալ գոյացուցանեն զմի անհատն պետրոս անշփոթ միութեամբ: - 176. Եւ զի անշփո՛թ են սոքա յատկութեամբ՝ յայտ է. ուստի ասեմք, պետրոս մա՛րդ է և բանաւոր և *կենդանի* և զգայուն և շնչաւոր և մարմին և գոյացութիւն: - 176. Որպէս ի նիւթոյ և ի տեսակէ մարմին. և ի հոգւոյ և ի մարմնոյ *կենդանին*. և յարուէ՛ և իգէ ծնեալն. նոյնպէս ի ձայնաւորէ՛ և յանձայնէ՛ բանն ծնանի: - 177. Եօթներորդ՝ բուսոց և տնկոց և ամենայն *կենդանեաց* ծննդեան և աճման: -

196. Եւ զի շարժին *կենդանիք* ի ծնունդս: - 197. Եւ զի շարժին *կենդանիք* ի յղացումն, և սեաւ մաղցք առաւելուն ի մեզ: - 197. Եւ զի անգործութիւն է մարդկան, և ամենայն *կենդանեաց* սղութիւն և տխրութիւն: - 197. Եւ վասն առաւել և ազդու զօրութեան և ջերմութեան՝ զգոյացութիւն *կենդանեաց* և մարդկան առ որս դիպի ապականէ՛. և պատահմունքն քանակ և որակ մնան: - 204. Այսպէս յեգիպտոս հուրն որ ընդ կարկտին իջանէր, վասն ազդու զօրութեանն՝ *զկենդանիսն* սպանանէր, և մարմինքն ամբո՛ղջ մնային: - 204. Երրորդ՝ զի ամենայն տեղիս գտցի ջուր. ի լերինս և ի դաշտս, և արբցեն *կենդանիք*: - 207. Հինգերորդ՝ զի բազմազան *կենդանիք* ի ջուրս զտեղի կալցեն: - 207. Ոմանք ասեն թէ՝ զանազան և գարշ *կենդանիք* են ի ծովն, և ի նոցանէ դառնանայ: - 208. Նա՛խ՝ զի արարիչն աստուած բնական զծովս աղի և դա՛ռն արար. զի մի՛ հոտեսցին *կենդանիքն* ի նմա: - 208. Չորրորդ՝ ցոյցք է ամենաhրաշ խնամոց արարչին. որ զհոսանուտ ջուրս ներքին՝ ի մէջ լերանց ի վե՛ր հանէ ի պէտս *կենդանեաց* որ ա՛նդ են. այլ և յոռոգումն ուր գետք ոչ ելանեն: - 209. Եւ զի դայեա՛կ է *կենդանեաց*: - 211. Եւ զի մարդկամբ և *կենդանեօք* գեղեցկանայ: - 211. Ասեմք թէ՝ ամենայն մարմնական *կենդանիք* ի չորից տարերաց են եղեալ. և յայտ է ի բազում պատճառաց: - 214. Չորրորդ՝ զի *կենդանիքդ* ունին **զե** զգայարանք: - 215. Հինգերորդ՝ զի ունին *կենդանիքդ* **դ** մաղձ որ են. **դ** տարերքն: - 215. Եւ սոքա հաւասարապէս երևին յամենայն *կենդանիս*: - 215. Ապա ուրեմն յա՛յտ է զի ամենայն *կենդանիք* ի չորից տարերց են: - 215. Եւ մի և նոյն է. զի շունչ *կենդանեաց* է թանձր մասն օդոյս՝ խառնեալ ընդ ջրոյ. և շունչ նոցա է անօսր մասն ջրոյ՝ խառնեալ ընդ օդոյ: - 215. Արդ՝ ցամաքային *կենդանիքն* զերկոսին զսոսա՛ ունին. վասն որոյ ծայն արձակեն: - 216. Քանի՞ ազգ են *կենդանեաց*: - 216. Զանազա՛ն են զգեստ *կենդանեացն*: - 216. Ո՞րք և ո՞յք են բնութեամբ զէնք *կենդանեաց*: - 216. Կամ խաբէութիւն. որպէս աղուեսուց. զայս և զսոյնպիսիս ունին *կենդանիք* բնութեամբ ի խնամս ինքեանց: - 216. Երրորդ՝ զի թէ ունէր ի բնութենէ զէնս կամ զգեստս. ո՛չ կարօտէր այլոց *կենդանեաց*. այլ և ո՛չ խնամէր զնոսա: - 217. Գազանք և օձք և այլ *կենդանիք* որք վնասակա՛րք են՝ վասն է՞ր ստեղծան: - 217. Զի վարդապետք ասեն եթէ՝ կերակուր գազանաց այլ *կենդանիք* են. վասն որոյ խնամքն աստուծոյ ետ նոցա առաւել հնարս և զօրութիւնս, զի կարասցեն ըմբռնել. զայլ *կենդանիս* և մի՛ ի սովոյ մեռցին: - 218. Այլ և գիտելի է, զի ամենայն *կենդանեաց* բնականապէս հնարք ետ աստուած վասն օգտի նոցա և փրկութեան: - 218. Յաղագս այսորիկ անբան *կենդանիք* փութապէս զգան զառաջին շարժումն և զփոփոխումն օդոյդ քան զմարդ. և յառաջագէտ լինին: - 218. Հինգերորդ՝ զի մարդն գլուխ է ամենայն *կենդանեաց*, զնա սպանանել ջանայ: - 218. Եւ զի *զկենդանին* սպանանել ջանայ, ինքն յամէն *կենդանւոյ* սպանանի: - 219. Եւ զի օրհնութիւնն ի յանէծք փոխեաց, ինքն անիծաւ և զրկեցաւ յօրհնութենէ ամենայն *կենդանեաց*: - 219. Վասն է՞ր ադամ անուանս եդ ամենայն *կենդանեաց* և այլոցն: - 219. Հինգերորդ՝ օգնական ետ *զկենդանիքդ* մարդոյն. որպէս ծառայք տեառնն. անուամբ պարտ էր ճանաչել զնոսա: - 219. Տասներորդ՝ անունն յարմար նշանակութիւն է *կենդանեաց* ըստ բարուցն և զանազան կերպիցն եղեալ. զի ամենայն անուն՝ յիրէն և ի գործոյն և ի ծայնէն դնի: - 220. Եւ զի մարդն թագաւոր և իշխան է ամենայն *կենդանեաց*՝ յա՛յտ է ի բազմաց: - 220. Երկրորդ՝ զի պատկեր աստուծոյ է մարդն. այսինքն զի որպէս աստուած իշխան և թագաւոր է ամենայն արարածոց. նոյնպէս և մարդն իշխան է ամենայն *կենդանեաց*: - 220. Երրորդ՝ ի նոյն իսկ ի ձևոյ շինուածոյ մարդոյն. զի ուղիղ գոլով՝ զիշխանականն նշանակէ. իսկ *կենդանիքն* կո՛ր գլխով զծառայականն ցուցանեն: - 220. Երրորդ՝ զի իմանալեա՛ցն է տունկ. այսինքն բանականաց. հրեշտակաց կամ մարդկան. և ո՛չ զգալի *կենդանեաց*: - 222. Եւ որպէս ակն *կենդանւոյն* մա՛սն է բոլոր մարմնոյն՝ և լուսաւոր: - 225. ի Վեցերորդն, ցամաքային *կենդանիքն*. այլ և Ադամ և Եւա: - 226. Քսանն**բ**՝ Վասն է՞ր մարդն ինն ամիս, և այլ *կենդանիք* աւելի և պակաս կան յարգանդի: - 228. Քսանն**դ**՝ Այլ *կենդանիք* յորժամ ծնանին ի մօրէ կանգնին, և մարդս ո՛չ: - 228. Քսանն**ե**՝ Թէ խառնին սերմն *կենդանեաց*. և պատճառ յղացմանն: - 228. Կարգաւոր էր նախ պատրաստել զարքունիս որ է երկինք և երկիր. և զգահոյս որ է՛ դրախտն. և զսպասաւորքն որ են *կենդանիքն*. և զմեծութիւնս տնկոց և բուսոց. մանաւանդ ոսկւոյ և արծաթոյ և ականց ի սիրտ երկրի գանձել. և ապա՛ թագաւորին բնակիլ: - 230. Երկրորդ՝ զի իմանայ ընդ հրեշտակաց. զգայ ընդ *կենդանեաց*. աճէ՛ ընդ տնկոց. գոյ ընդ անշնչից: - 231. Իսկ այլ *կենդանեացն* հողն բազում է. վասն որոյ ծանրացեալ ի վա՛յր հակէ: - 233. Հինգերորդ՝ զի մարդն իշխան և տէր է ամենայն *կենդանեաց*. վասն որոյ ամենայն *կենդանիք* գլխակո՛ր են իբրև զծառայ և հնազանդ. և մարդն ուղղաձև իբրև ազատ և թագաւոր: - 233. Վեցերորդ՝ զի բաժանեսցի մարդն ի *կենդանեաց* և ի տնկոց. զի տունկք զհակառակն ունին զարմատն որ է՛ գլուխ՝ ի յերկիր, և զոտն ի յերկինս: - 233. Եւ *կենդանիք* խոտորնակ և կողմաւոր: - 233. Եօթներորդ՝ վասն զգայութեանցն, որ ամենեքին յառաջ հեղուն յուղեղէն, և ազատապէս տեսանեն և իմանան. զի թէ գլուխն և ուղիղն ի վա՛յր էր քարշեալ և կորացեալ՝ ո՛չ կարէր ուղղակի զգալ և իմանալ. որպէս այլ *կենդանիք:* - 233.

Ութերորդ՝ վասն արտաքին զգայութեանցն որ են ի գլուխն. զի այլ *կենդանիք* միայն հեշտանան կերակրով և ցանկութեամբ. իսկ մարդն հեշտանայ առաւել գեղեցկութեամբ զգալեացս. յորժամ տեսանէ աչօքն զերկին և զերկիր. և ժողովէ՛ զճշմարիտ գիտութիւն նոցա և հեշտանայ: - 233. Զի թէ կորագլուխ էր որպէս այլ *կենդանիքն*, խափա՛ն լինէր զգայութեանցն և պակասումն գիտութեան: - 233. Եւ յա՛յտ է զի ի դիմաց կուսէ առաւել հեշտանայ ամենայն *կենդանի*: - 234. Իսկ երրորդն թէ վասն է՞ր յամենայն իրս երևի նման և աննման. որպէս ի շնչաւորս և յանշունչս. ի *կենդանիս* և յանկենդանս և յայլսն ամենայն: - 236. Յաղագս որոյ և արարեալք ի նմանէ մարմին և անմարմին՝ *կենդանի* և անկենդան, զնմանն արարչին յինքեանս կերպագրեալ, նմանք և աննմանք են իրերաց: - 237. Եւ թէ ոք ասիցէ, խառնուածոցն է այս, կամ յատուկ տեսակաց. որպէս ծայնք և տերևք և *կենդանիք* չեն նման միմեանց: - 237. Տասներորդ՝ զի և բանականս մարդ՝ քան զանբան *կենդանիս* տգէտ լինէր. վասն զի ամենայն *կենդանի* ունի բնական ճանաչումն իւրոց և օտարաց. ըստ այնմ որ արագիլ արդար՝ կերակրէ զիւր ծնօղսն միայն. և տատրակ մենացեալ ի զուգակցէն, ո՛չ զուգի ընդ ա՛յլ տատրակի: - 238-239. Եւ յայնմանէ փոխեալ ի *կենդանւոյ* մարմին և ի տունկս, և ապա ի մարդն դարձեալ: - 252. Այլ ա՛րդ ի յանբանսն ո՛չ է առաքինութիւն որով սրբի ի մեղաց. ապա պարտ է զի փոխեսցի ի ներքինն իւր որ է՛ տունկն. և նման *կենդանւոյն* զի աճէ՛: - 252. Վեցերորդ՝ զի զգործն *կենդանւոյ* տեսանեմք ի նա որ է՛ ջերմութիւն, շարժութիւն, և ներգործութիւն. որ երևի ի կազմելն զհիւթն: - 256. Պատասխանեմք եթէ՝ ոմանք յարմատս ունին զսերմն. ոմանք ի ծայրքն. կէսք ի տերևն. այլք ի կեղևն. թէպէտ և սոցա սերմնական զօրութիւնն է՛ ի մէջն, այլ առաւել *կենդանւոյն*: - 256. Նա՛խ՝ զի մի գոյութիւն է մարդն և մի *կենդանի*. մի հոգի է միոյ մարդոյ և մի կենդանութիւն: - 259. Զի քանզի **դ ե** է. և *կենդանին* է ի չորից տարերց. ունելով զ**ե** զգայութիւնս: - 262. Իսկ թէ վասն է՞ր ասիցէ ոք՝ յղացեալ մնան յարգանդի՝ մարդն ինն ամիս, և այլ *կենդանիք* աւելի և կամ պակաս: - 262. Այսպէս և *կենդանիք* ոմանք երից ամաց յղանան և ծնանին: - 262. Խնդրեմ և զայս ուսանիլ թէ ընդէ՞ր է՝ զի մարդս կատարեալ *կենդանի* է քան զանասունս. և յորժամ ծնանին նոքա ահա՛ ի նոյն ժամն կանգնին յոտից վերայ և գնան, և այլն. իսկ մարդն ոչ: - 266. Ի մարդոյ և յայլ ինչ *կենդանեաց* կարէ՛ լինիլ ծնունդ. որպէս ասեն՝ ի կնոջէ՛ և յարջոյ ծնունդ եղեալ: - 267. Այլ թէ լինին մարդակերպ *կենդանիք*, վայրիք են և գազանք. և ո՛չ ի խառնուածոյ մարդոյ: - 267. Զի՞նչ է որ ամենայն ծնունդ թէ տունկք թէ *կենդանիք*՝ նախ յղանան և ապա ծնանին: - 267. Զանազանի պատկեր և նմանութիւն, որպէս մարդն և *կենդանին*. զի ամենայն մարդ ասի *կենդանի*. այլ ո՛չ ամենայն *կենդանի* մարդ: - 272. Զի իր ինչ յաւելու մարդն ի վերայ *կենդանւոյն*, որ է՛ բանականն: - 272. **Դարձեալ՝ մարդն է քաղաքական *կենդանի*. զի լինիցի համաբնակք և կարեկիցք և օգտակարք ի բարին**: - 274-275. Դարձեալ՝ մարդո՛յս է խօսիլ և բանաւորիլ. զի այլ *կենդանեացն* նմանութեամբ է և ո՛չ իսկապէս: - 275. Դարձեալ՝ մա՛րդն է *կենդանի* բանաւոր և մահկանացու: - 275. Դարձեալ՝ մարդո՛յն է յարութիւն կենաց. և դատաստանի վասն հոգւոյն՝ զոր ո՛չ ունին այլ *կենդանիք*: - 275. Չորրորդ՝ կին, զի ի *կենդանւոյ* առաւ: - 276. Նա՛խ՝ զի ո՛չ ունի զառնողական զօրութիւնն. որպէս և յամենայն *կենդանիս* էգն: - 276. **Վասն այսր պատճառի կոչեաց զանուն կնոջ իւրոյ կեանս. զի աճումն է և ծնունդն և մայր ամենայն *կենդանեաց***: - 276. Վեցերորդ՝ Վասն զենման *կենդանեաց*: - 283. Եւ յետ նորա **ժ** թիւն *կենդանեա՛ցն* է, որ ի չորից են բաղկացեալ. որպէս **ժ** ի **դ** թուոց: - 291. Զի զամենայն *կենդանեաց* սերմն կրելոյ էր՝ պիտո՛յ էր մեծ տուն: - 293. Քաղելով գործելն այն է, որ **ժե** կանգուն հաւասար բարձրացոյց, զի մեծահասակ *կենդանիքն* հանգիցեն: - 293. Եւ դուռն յետուստ կողմանէ, զի դիւրա՛ւ մտցեն *կենդանիքն*: - 293. Եւ կամ ի գէշք մարմնոյ *կենդանոյ* ինչ: - 294. *Զկենդանին* հրամայէ զենուլ. և զարիւնն և զշունչն հանել և ապա՛ ուտել: - 295. Երրորդ՝ արիւնն *կենդանի* է և խօսի տեսութեամբն որպէս հաբէլին. վասն որոյ անուտելի է: - 295. Եւ միապէս է մեր և *կենդանեաց*. վասն որոյ ո՛չ է պարտ զսկիզբն գոյացութեան մերոյ ուտել: - 295. Նա՛խ՝ որպէս հատանեմք քաղելով զբանջարն և ապա՛ ուտեմք, նոյնպէս զենումք *զկենդանին* և ապա՛ ուտեմք: - 295. Նոյնպէս ի *կենդանեաց* զսուրբն և անսուրբն ընտրեմք: - 295. Նոյնպէս և ի սուրբ *կենդանիս* ի **դ** մասնէն զմինն ուտեմք: - 296. Երկրորդ՝ զի աբրահամ յետոյ պատարագեաց *կենդանիս*. որ էր նշանակ ժամանակեայ պատարագին ահարօնի: - 300. Վեցերորդ՝ մարմինն երէց է ըստ կարգի քան զհոգին. և յա՛յտ է, զի որ քան *կենդանի* եմք՝ զերիցագոյն պատիւն մարմնոյն տամք...: - 310. Զի զինչէն ի գոյացութեան խնդիրն է. որպէս յասելն՝ զի՞նչ է, ասեմք՝ մարդ է, կամ *կենդանի*: - 311. Չորեքտասաներորդ՝ ի գոչմանէ առիւծուն սարսին այլ *կենդանիք* և արիւն միզեն: - 316. Զի մեռեալն մարմնով *կենդանի* էր աստուածութեամբն: - 316. Եօթնևժ, և ի յառնել առիւծուն սարսին ամենայն *կենդանիք* որդիք ջուրց: - 316. Սեռական, որպէս *կենդանին*: - 318. Վեցերորդ՝ խօսեցաւ աստուած՝ և զամենայն անճառելի գիտութիւնս վասն արարածոց ուսոյց նմա. զոր ոչ գիտէին մարդիկ զլինելութիւն երկնի և երկրի և ծովու և *կենդանեաց*: - 326. Երրորդ՝ զի և առաջինքն *կենդանի* են հոգւով առ աստուած: -

326. Վասն է՞ր տկար զեռնօք տանջեաց զեգիպտոս, և ո՛չ առիւծ կամ արջ կամ այլ ինչ հրաշունչ *կենդանեօք*: - 333. Նախ ցուցանէ թէ՝ զազիր են գործօք և բորոտեալ մեղօք. վասն որոյ գարշ *կենդանեօք* ապականէր զնոսա: - 334. Չորրորդ՝ շանաճանճն. զի շնաբարոյք էին և մոլէին յառնականայս շնութեամբ. զի շանց է ոչ զուգակցիլ որպէս զայլ *կենդանիս*. վասն որոյ ի շանց ելեալ թունալից ճանճք խայթէին զնոսա: - 334. Նշանակէր զխաւար անմտութեան նոցա որ առաւել էր քան զամենայն երկրի. զի զամենայն գարշ *կենդանիս* ի պաշտօն առին: - 334. Երրորդ՝ զի հաւատ մեռելոյն յանդիմանէր զքերեհաւատ *կենդանիսն* որք սրտիւք յեգիպտոս դառնային: - 338. Եթէ խորհրդական մարմինն քրիստոսի անապական՛ն է, ուստի գոյանան *կենդանիք* և բորբոսք: - 339. Չորրորդ՝ զանազան նկարք աշտանակին, զանազան ներգործութիւնք ընթացից նոցա առ երկիրս, *կենդանեաց*՝ տնկոց՝ և անշնչից: - 346. Երրորդ՝ զի անարժանք էին մեռեալքն հոգւով՝ *կենդանի* բանին աստուծոյ տեսանել ա՛յն աչօքն որ տեսին զորթն. և համբուրել շրթամբք: - 350. Հինգերորդ՝ ի մեռեալ *կենդանւոյ* է մեղուն. որպէս ասեն ի մեղուշ արջառաց: - 356. Վեցերորդ, խմորումն ո՛չ է *կենդանի* հաց. այլ թոյլ: - 356. Ի *կենդանիս*. որպէս ոչխար և այլն յաղագս մաքրութեան ոգւոց: - 357. Իսկ պատարագ ի *կենդանեաց*: - 358. Եւ դնել զձեռն ի գլուխ *կենդանւոյն*: - 359. Զի միջնո՛ց է մարմնոյն, և սկիզբն է *կենդանւոյն,* և կատարած կենաց: - 360. *Կենդանեաց* զենմունքն զի յանունն աստուծոյ էր՝ սրբէր զմարդ. վասն է՞ր ապա ոչ սրբեին կռապաշտքն. զի և նոքա յաստուծոյ անունն զոհէին և խնկէին: - 361. Այլ և ունիմք զմարմնաւոր պատարագս զօրինակին. զենմունք վասն *կենդանեաց* և մեռելոց: - 362. Այլ զանբան պատարագն ուսան հեթանոսք և կռոց մատուցին. և այն սովորութեամբն իսրայէլ մատոյց աստուծոյ զանբան *կենդանիս* մինչ եկն քրիստոս և եղև ինքն բանաւոր պատարագ, և զնոյնս աւանդեաց մեզ: - 362. Զի՞նչ էր սուրբ և անսուրբ *կենդանին*: - 364. Դարձեալ՝ որպէս ծառա՛յ են *կենդանիք* և սպասաւոր մարդկան. նոյնպէս և յօրինակ ընտրութեան մարդկան ընտրեցան զսուրբս և զանսուրբս նշանակելով այսպէս: - 364. Եւ տե՛ս, զի անսուրբ *կենդանին* սատակեալ և սուրբ *կենդանին* սատակեալ միապէս պիղծք են: - 365. Ո՞րպէս է ընտրելի զենումն *կենդանեաց*: - 365. Երկրորդ՝ զենլին. զի լիցի *կենդանի*. զի մեռեալն՝ և անկենդանն որպէս քար՝ ո՛չ զենի: - 365. Վեցերորդ՝ դիտաւորութիւնն խնդրի. յաղագս ո՞յր իցէ զենումն. *կենդանեա՞ց* թէ մեռելոց. վասն աստուծո՞յ թէ վասն մարդկան: - 365. Ապա պա՛րտ է զի այրն հեղցէ զարիւնն և բաժանեսցէ զգլուխ *կենդանւոյն*: - 365. Եւ չէզոտքն, զի չունի արիւն սերման, ո՛չ հեղցէ զարիւն *կենդանւոյ*: - 365. Ապա յա՛յտ է զի և ո՛չ այլ կարգաւորք զենցեն *կենդանիս*. որք են սարկաւագունք և այլք. զի անարիւն զենմանն կարգեալ են սպասաւորք: - 366. Նա՛խ՝ զի իցէ *կենդանի* յորմէ ելցէ արիւն. իսկ մեռեալն կամ անշունչ քար ո՛չ ունի արիւն: - 366. Երկրորդ՝ զի իցէ *կենդանին* սուրբ. զի անսուրբն ո՛չ զենանի և ո՛չ է ուտելի: - 366. Եւ թէ լիցի երկաթ և ո՛չ սուր, և ո՛չ է պիտանի. որպէս բոլոր երկաթն թէ հարցէ *զկենդանին* և սպանցէ, ո՛չ է ուտելի, զի թէպէտ զարիւնն հանէ, այլ ո՛չ համանգամայն զշունչն և զջերմութիւնն: - 366. Իսկ թէ այլ ինչ անդամն հատցի և մեռցի *կենդանին*, ո՛չ է ուտելի. ո՛չ հատեալ անդամն և ո՛չ բոլորն: - 366. Վեցերորդ՝ դիտաւորութիւնն խնդրի թէ վասն որո՞յ է զենումն. զի թէ վասն աստուծոյ է կամ հոգւոյ, հասարակա՛ց է. իսկ թէ վասն մարդկան և *կենդանեաց*, կամեցողա՛ց է: - 366. Կրկին հաւն *կենդանի* սուրբ՝ նշանակէ՛ զհոգւոյ և զմարմնոյ կենդանութիւն ի ձեռն ապաշխարութեան: - 368. Եւ *զկենդանին* ներկեալ՝ և կարմիր կապեալ ի պարանոցն, ցուցանէր զմեռանիլն աստուծոյ վասն մեր: - 369 Երրորդ՝ կիթն ի *կենդանեաց*. որպէս կաթն և ձու: - 407. Չորրորդ՝ մարմին *կենդանեաց* որ առաւել պարարտ է քան զամենայն. վասն այն ի մսոյ հատանին պարկեշտք. զի մի՛ առաւել գիրասցին և գազանասցին: - 407. Չորրորդ՝ ի *կենդանեաց*. որպէս ճարպն առաւել քան զայլսն պարզ և լուսաւոր: - 407. Զի պղծոցն ամենայն ինչ պիղծ է. որպէս պիղծ *կենդանւոյն* շան՝ մորթ և մազ և միս և այլն: - 416. Եւ զի ծնօտ է՛ գործի կերակրոյ. և անսուրբ և անբան *կենդանւոյ* մասն: - 423. Կամ զնոյն մեռեալ մարմինն ի խաչին. և զնոյն *կենդանի* գոլ աստուածութեամբն: - 423. Ա՛րդ՝ յորժամ *կենդանի* էր դառնութեամբ և սգով իջոյց ի գերեզման. այժմ մեռելո՛յն երկրպագէ: - 429. Այլ և խաչաձև՛ է մարդ, գլուխ տարրական *կենդանեաց*: - 494. Ա՛րդ՝ ի *կենդանեաց* երկոքինն պահանջին. իսկ հոգւոցն բաւակա՛ն է միայն ներքին իմացումն զի չունին մարմին: - 508. Զմիս *կենդանւոյ*, որ կատարեալ *կենդանի* է և ի *կենդանւոյ* յառաջ եկեալ. այն է կատարեալն որ ե զգայարանս ունի և շարժի և շունչ ունի. և է՛ այս կերակուր ուտեաց և զատկի: - 510. Իսկ նաւակատեաց կերակուր այն է՝ որ միջակ է սոցա երկոցունց. այսինքն ի *կենդանւոյ* և ի տնկոյ. որպէս ձուկն, ձու, և կաթն: - 510. Զի ձու և կաթն ի *կենդանւո՛յ* են, այլ ինքեանք ո՛չ են կենդանիք: - 510. Իսկ ձուկն *կենդանի՛* է կատարեալ զգայարանօք և շարժմամբ. այլ զտուր և առ շնչոյ ո՛չ ունի. վասն այն պակա՛ս է: - 510. Զի ձուկն կենդանի է և յոչ *կենդանւոյ*. և ձուն ոչ կենդանի է և ի *կենդանւոյ*: - 510. Դարձեալ ասեն հակառակքն, թէ կատարեալ *կենդանի* է ձուկն, ընդէ՞ր ոչ զենումք: - 511. Դարձեալ՝ որպէս տնկոց հատումն է, և ձկանց

հանումն, և այլ *կենդանեաց* զենումն: - 511. Եւ ա՛յս է պատճառն. վասն զի տունկն յարմատն է հաստատեալ. և ձուկն ի ջուրն. և *կենդանիք* ի շունչ և յարիւն: - 511. Տնկականք՝ այսինքն բոյսք և պտուղք յորմէ և հատցին թէ ի մարդոյ և թէ յայլ *կենդանեաց*՝ կերակրելիք են: - 511. Իսկ *կենդանիք* զենեալ յառնէ միայն կերակրելիք են. այլ ի կնոջէ ո՛չ: - 511. Չորրորդ՝ **լգ** ամ յերկրի եկաց, զի ուսուցէ *զկենդանիս*: - 520. Որպէս սեռիւ մի են ամենայն *կենդանիք.* և տեսակաւ ամենայն մարդ. և անհատիւ մի որպէս պետրոս: - 533. Դարձեալ, ի նախաստեղծուածս՝ մարդն միա՛յն էր՝ և *կենդանիք* բազում: - 551. Ո՞չ ապաքէն մովսէս ի հինն որոշեաց զսուրբս և անսուրբս. մանաւանդ թէ յաւուրս նոյի գոյր ընտրութիւնս. այսպէս ցուցաւ և մեզ պահելի իբր զբնական օրէնս. այլ սոցա ոչինչ է պիղծ ի *կենդանեաց*: - 552. Զպիղծ *կենդանիս* ո՛չ խաբել. և զհեղձուցեալսն ուտել. և այլ բազում ինչ: - 553. Զի՞նչ է պատճառն որ սրտմտութիւն և ցանկութիւն և այլն ի յանբան *կենդանիսդ* գործ է. իսկ ի մեզ ախտ և մեղք: - 563. Զի սրտիւն ապրին մարմնակեր գազանք. և հեշտ ցանկութեամբ բազմածին *կենդանիք* աճեն. և երկչոտութեամբ ապրին նապաստակք և տկարք ի հզօրից...: - 563. Զի սոքօք մարդկան հոգիք կարգաւորին և ո՛չ այլ *կենդանեաց*: - 581. Այլ և ի յանբան *կենդանիս* բնաւորեցաւ գոլ. որպէս ուղտ խոհեմ. և առիւծ արի. տատրակ ողջախոհ. և արագիլ արդար: - 581. Երկրորդ, զի այս խորհրդոյ նշանակ ի սկզբան արարածոց աստուած ադամայ ետ և ո՛չ կնոջն. յորժամ էած *զկենդանիսն* առ ադամ զի անունս դիցէ նոցա: - 589. Ութերորդ, զի թէ զզենումն *կենդանեաց* ո՛չ ունին հրաման զենուլ ազգ կանանց որ է՛ խտրութիւն մարմնաւոր սրբութեանց. զիա՞րդ պատշաճի տալ հրաման կանանց ազգի մերձենալ ի կարգ հոգևոր սրբութեան: - 589. Թէ ամենեքեան յադամայ մեռան, զիա՞րդ ծնանին *կենդանիք*: - 592. ...որք ունին զաթոռ չորից աւետարանչացն. որ փոխանակ չորեքկերպեան *կենդանեացն* եղան աւետարանիչքն: - 607. Աստ անարիւն պատարագն մատչի. և ի մեզ բանեղէն պատարագն հոգի և մարմին միշտ նուիրեալ *կենդանի*: - 614. Պատարագն ի հնումն անբան *կենդանիքն* էին. վասն որոյ և զճարպս նոցա լուցանէին ի տաճարին: - 617. ...վասն որոյ յանարիւն *կենդանւոյ* զլոյսն վառեմք. զի *կենդանին* այն անարիւն է յորմէ մոմն գոյանայ: - 617. Ասի ի լրոյ եթէ՝ նոյ արար փայտէ՛ կոչնակ. և կոչեաց *զկենդանիսն* ի տապանն: - 618. Ի հինգերորդ օր արարչութեանն ի խորհուրդ մկրտութեան ջրային *կենդանիք* և թռչունք յօդս ելին: - 638. Զի՞նչ է, չորեքկերպեան *կենդանեացն* զխորհուրդ քարոզեաց ամլորդին: - 638. Չորեքկերպեան *կենդանիքն* է՛ խաչն. և տեսեալն ի վերայ նորա՝ գառն որ բառնայ զմեղս աշխարհի: - 638. ...որ զամենայն *կենդանեաց* ձայնս նովաւ երգէին: - 640. Բայց արքեղայոս դարձեալ մաքրեաց զամենայն որ ուսաւ ի ծովային *կենդանեաց*: - 640. **Եւ դարձեալ՝ նոյ և ամենայն *կենդանիքն* ի տապանն կացին զբոլոր մի ամ և ոչ ինչ կերին. որպէս մանուկն յարգանդի:** - 652. Երրորդ, եօթնօրեայ ժողովիլ *կենդանեացն* առ դուռն տապանին անսուաղ մինչև տեղեաց անձրևն. և **է է** *կենդանիք* սուրբք: - 653. Յաղագս որոյ Նախ օրհնեալ աղ տամք *կենդանւոյն*: - 657. Նա՛խ՝ որպէս ի սուրբ *կենդանեաց* է պատարագն...: - 658. Երկրորդ, որպէս *կենդանւոյն* աղ, նոյնպէս ի կեանս մեր հանապազ պա՛րտ է ի լեզուս ունել զօրհնութիւն և զփառս աստուծոյ: - 658. ...զի *կենդանիք* բնակին ի վերայ յերկրի, և մեռեալք ի ներքոյ երկրի: - 677. Եօթներորդ, զի մի՛ յարաժամ տեսցեն *կենդանիքն* և մորմոքեսցին սիրտք նոցա: - 677. զի ահ մեծ է անկանիլ ի ձեռս աստուծոյ *կենդանւոյ* յանաչառ դատաստանին և ո՛չ այժմ: - 699. Տասներորդ, որք գտանին *կենդանի* յաւուրն դատաստանին, ո՛չ երթիցեն ի քաւարանն. - 700. Ա՛րդ՝ ողորմութիւնն աստուծոյ է՛ այսմ աշխարհի որ քան *կենդանի* եմք. - 700. Նա՛խ՝ որպէս բժան գունդ հրեշտակացն և չորք *կենդանիքն* զբոլոր երկնային զօրսն նշանակեն, նոյնպէս և իդ երիցունքն զբոլոր դասս սրբոցն: - 711. Երկրորդ, որպէս չորք *կենդանիքն* զվեհագոյնս և զնախամեծարս երկնայնոցն ցուցանեն. նոյնպէս և իդ երիցունքն զնախամեծարս ընտրելոցն մարդկան...: - 711. Եւ աստուած ո՛չ է մեռելոց այլ *կենդանեաց*. որոց հոգիքն ի ձեռս նորա *կենդանի* են. և մարմինքն ի ձեռս նորա *կենդանի* լինելո՛ց են: - 715. Նա՛խ՝ եթէ համանգամա՛յն է յարութիւնն ի նոյն կէտն, այլ ննջեցեալքն նա՛խ յառնեն և ապա՛ *կենդանիքն* ընդ նոսա. - 717. ...զի ննջեցելոցն միայն մին գործ է. այսինքն յարութիւնն. իսկ *կենդանեացն* մահն և յարութիւնն. զի նախ մեռանին ի նոյն կէտն և ապա՛ յառնեն: - 717. Դարձեալ՝ *կենդանիքն* ո՛չ ժամանեն ննջեցելոցն, այսինքն նոցա որ մեռեալ են և ի հող փտեալ և փոշիացեալ...: - 717. Ապա ուրեմն *կենդանեաց* մարմինն ոչ յառնէ ի մեզ ըստ բոլոր նիւթոյն, այլ ըստ չափոյ զօրութեանն որ փոխեցաւ ի մեզ և եղև մարմին մարդոյ, ա՛յն մարմինն յառնէ: - 718. Իսկ այլ ամենայն մարմինք շնչաւոր և անշունչ, տունկք և *կենդանիք* ամենայն ապականին վասն **գ** պատճառի: - 727. Երկրորդ՝ զի *կենդանիք* և բոյսք ստեղծան վասն մարմնաւոր կենդանութեան մարդկան...: - 727. Երրորդ պատճառ, ասեն իմաստունքն թէ ծնունդք *կենդանեաց* և բուսոց լինին ի շարժմանէ երկնային մարմնոց. իսկ ի կատարածի խափանի շարժումն նոցա. վասն այն անբան *կենդանիք* և տունկք խափանին: - 727. Ասեն վարդապետք՝ եթէ են ինչ որ էութեամբ և պատահմամբ

անցանեն. որպէս *կենդանիք* և տունկք և որ ինչ ի չորից տարերաց են գոյացեալք: - 727. ...և վառեսցեն զերկինս որ է՛ օդն. և զերկիր և զլերինս և զդաշտս և զբոյսս և *զկենդանիս*. և զժանկս մեղաց որպէս ասէ աստուածաբանն գրիգոր: - 731. Ո՛չ լինի. զի որդունքն այնք ո՛չ են զգայական *կենդանիք*. այլ հրեղէն տանջանք են զգայական մասինն: - 753. Իսկ ամենայն զգայական *կենդանւոյ* թէպէտ իգին ստինք գոն վասն զծնունդս կերակրելոյ. սակայն և արուացն գոյ նոյն մասն անդամոց կազմեալ յարարչէն. և այն յի՞նչ պէտս լինի. խնդրել արժան է: - 785

**ԿԵՆԴԱՆԻ (ողջ, կենարար) +** Նախ՝ փչեաց ի յադամ շունչ *կենդանի* և եղև: - 50. Ապա թէ ո՛չ՝ ընդէ՞ր զանմարմինն ընդ մարմնականացս իմանաս, և ընդ մեռեալս *զկենդանին* խնդրես ըստ եսայեայ: - 53. Ուստի յա՛յտ է ի սահմանէն. ամենայն մարդ *կենդանի* բանաւոր մահկանացու մտաց և հանճարոյ ընդունակ: - 74. Եւ դու պետրոս՝ մարդ *կենդանի* բանաւոր մահկանացու մտաց և հանճարոյ ընդունակ: - 74. Եւ տես ի հոմանունսն. որպէս ի *կենդանի* մարդն և գրեալն: - 95. Ո՞չ ապաքէն ի վեր ասեմք զմարդն անուն *կենդանի* մարդոյն՝ քան թէ գրեցելոյն: - 95. Երրորդ՝ որդին ծնունդ նկատէ ի յէութիւնն, և հոգին ի կեանքն. և նախ է գոլ իրին՝ և ապա *կենդանի*: - 109. Իսկ հրեշտակք ո՛չ են կենդանարար այլոց. այլ միայն *կենդանի*: - 117. Եւ զանազանին միով. այսինքն փոփոխմամբ. զի հրեշտակն նոյն և անփոփոխ *կենդանի* է: - 117. Զի նախ *կենդանի* է մարմնով. յետոյ անմարմին. և յետոյ միաւորութեամբ յաւիտեան: - 117. Սակայն ըստ մեր իմացմանս հասարակ է բարին քան զէէրն. զի ասեմք՝ սէրն բարի է. ազնիւն բարի է. և այլն. որպէս ասեմք՝ մարդն *կենդանի* է. ձին *կենդանի* է. և այլն: - 128-129. Վասն է՞ր զանազանապէս տայ աստուած զպարգևս և ո՛չ հաւասար. որպէս առաւել տայ հրեշտակաց՝ և սակաւ մարդկան. և նըւազ *կենդանեաց* և տնկոց և անշնչից: - 130. Իններորդ՝ նոյն ինքն մարմին *կենդանւոյն* է՛ շօշափելի և է՛ կալեալ և մածեալ. և շարժի և երևի. որպէս ասացաք վասն հողոյն: - 215. Իսկ բարոյականն, Նա՛խ՝ զի յերեսն փչեաց զշունչ *կենդանի*. վասն որոյ յերեսն ունի զգայարանս մարմնոյ: - 234. Զորօրինակ՝ բնութեան յատուկն և անձին. զի բնութեան տարբերն հեռագոյն է և մեծ. որպէս *կենդանին* և բանականն. և դիմաց յատուկն մերձ և նուազ. որպէս յատուկն մերձ և նուազ. որպէս պատկեր և տիպ: - 235. Իսկ որ զմարմին յառաջ ասեն քան զհոգի, վկայ ածելով զմովսէս որ ասէ եթէ՝ էառ զհողն և շինեաց մարմին. և յետոյ փչեաց ի նա զշունչն *կենդանի*, որ է կենդանարար հոգին: - 253. Նախ՝ զի ի *կենդանի* մարմնոյ է յառաջ եկեալ: - 256. Երկրորդ՝ զի *կենդանի* է և յառաջ եկեալն: - 256. Երրորդ՝ զի ի *կենդանի* երկիր անկանի: - 256. Եւ զուստին մի՛ հարցանէր թէ ի *կենդանւո՞յ* էառ, և թէ նո՛ր գոյացոյց. զի ամենայն ինչ կարելի՛ է աստուծոյ: - 281. Եւ ըստ այնմ որ նշանակութիւն է, ցուցանէ զմարմինս մեր փոփոխական. որպէս այն որ փչեաց յերեսս մարդոյն շունչ *կենդանի*: - 282. Բայց սեմ չէ՛ր *կենդանի* որ օրհնէր զնա՛. և թարայ չէր օրհնօղ: - 300. Եւ տէր մեր մարմնով մեռեալ, միշտ *կենդանի* է աստուածութեամբն: - 313. Նոյնպէս և քրիստոս եկն առ եղբարս իւր որ էին որդիք դաւթի և աբրահամու և առաջնորդք ժողովրդեանն. և յուդա վաճառեց զնա. և տէր եղև *կենդանեաց* և մեռելոց և կերակրիչ. զի ազատեաց զհոգիսն ի սովոյ դժոխոցն: - 313. Եւ միւս հաւն թաթաւեալ յարիւն, հոգին *կենդանի*. որ կարեկից լինի մարմնոյն և զսրբութիւն նորա հանէ՛ յուսով ի դաշտն որ է՛ յերկինս: - 368. *Կենդանի* ջուրն՝ սրբութիւն ապաշխարութեանն: - 368. Իսկ կրկին հաւն մեռեալ և *կենդանի*. քրիստոս մեռեալ մարմնովն, և *կենդանի* աստուածութեամբն: - 368. Իսկ չորրորդ դորակ գինւոյն և իւղոյն ընդ նաշիոյ և գառինն, նշանակէ՛ զբանաւոր և *զկենդանի* պատարագս մեր: - 375. Վասն է՞ր կորխեանքն սրբեցան հոգւով. և դադանեանքն *կենդանի* ի գերեզման իջեալ տանջեցան: - 381. Իսկ դադան *կենդանի* էջ ի դժոխս՝ ո՛չ սրբեցաւ. և ախտիւք իւր անսուրբ ընկղմեցաւ: - 382. Չորրորդ՝ բուրվառն աղօթք մեռելոց. և գաւազանն խրատ *կենդանեաց:* - 382. Զի գողացեալ մեղքն միայն խոստովանելով ոչ քաւի. այլ հատուցանել պարտ է զգողօնքն. կամ ի տէրն, կամ յազգականս նորա. կամ ի քահանայն. զի միջնո՛րդ է մեռելոց և *կենդանեաց*: - 384. Եօթներորդ՝ օձն մեռեալ սպանանէր զօձսն. և զհարեալսն կեցուցանէր. և տէրն մեր մեռեալ մարմնովն զմեղս մեռուցանէր, և *կենդանի* աստուածութեամբն զմարդիկ կենագործէր: - 387. Զի ակամայ սպանօղք զերծանիցին անդ մինչ քահանայն *կենդանի* իցէ. և յորժամ մեռանիցի քահանայն, ապա գնասցեն ի տեղիս իւրեանց: - 392. Հինգերորդ՝ նոյն ինքն մարմինն սուրբ ո՛չ թէ հացիւ միայն կայր որպէս հասարակ մարդ. այլ բանիւն *կենդանի* ի նմա՛ միացեալ: - 397. Այլ *կենդանի* եղբօր, կամ փոքր եղբօր կինն, կամ զոլով զաւակ, անօրէնութիւն էր որպէս հերովդին. առ որ ասէր յովհաննէս, «չէ արժան քեզ ունել զկին եղբօր քոյ». զի դուստր նորա էր աղջիկն որ կաքաւեաց: - 402. Չորրորդ՝ այժմ տեսանեն աչօք զեկեղեցի սուրբ որ զկախեալ ի նոցանէ՝ աստուած հաւատայ զնոյն մեռեալ և *կենդանի*, և ո՛չ հաւատան: - 405. Երկրորդ՝ զներքինս օրհնեմք, և աստուծոյ բարութեանցն կցորդեմք. ողորմութեան, պարգևաց, կամ այլ ինչ շնորհաց. և այսու եղանակաւ օրհնեմք զքահանայս. զժողովուրդս. զմեռեալս և *զկենդանիս*: - 406. Եւ տէրն զեկեղեցի

տաճար աստուծոյ *կենդանոյ*: - 441. Վեցերորդ` որպէս անկենդան մարմինս միաւորեալ ընդ հոգւոյն` *կենդանի* է և ասի: - 477. Այսպէս միաւորեալն ընդ բանին մարմին` է՛ և ասի միշտ *կենդանի* և կենդանարար: - 477. Ութերորդ` նշանակէ՛ զչորս տարբերութիւն փրկելոցս նովաւ. այսինքն երկնաւորք և երկրաւորք, *կենդանիք* և մեռեալք: - 493. Զի և նա՛ չարչարէ՛ զհոգիս և է *կենդանւոյն* ի դժոխս ընդ մեզ շրջեալ: - 505. Ա՛րդ` որպէս *կենդանեաց* շնորհեաց զթողութիւն, նոյնպէս և հոգւոցն առ հասարակ ազատութիւն. որպէս ասէ սուրբն եպիփան...: - 507. Զի ծու և կաթն ի կենդանւո՛յ են, այլ ինքեանք ո՛չ են *կենդանիք*: - 510. Զի ծուկն *կենդանի* է և յոչ կենդանւոյ. և ծուն ոչ *կենդանի* է և ի կենդանւոյ: - 510. Երկրորդ, մի անուն` և նշանակեալքն բազումք. որպէս խոյ է յերկինս և յերկրի և ի ծովս. նոյնպէս մի կոչի եկեղեցի *կենդանի* մարդն և շինեալն ի քարանց և եկեղեցին անդրանկացն յերկինս. սակայն զանազա՛ն են որպիսութեամբ: - 533. Եւ վէմ դաւանութիւնն էր որ խոստովանեցաւ զքրիստոս որդի աստուծոյ *կենդանւոյ*. և ի վերայ այնմ դաւանութեան շինեցաւ եկեղեցի քրիստոնէից: - 547. Եօթներորդն` դատել *զկենդանիս* և զմեռեալս. որ է՛ զբարիս և զչարս: - 573. ..և պատարագ և խաչ օրհնեմք. եթէ *կենդանեաց* և եթէ մեռելոց: - 605. ...վասն որոյ ո՛չ է պարտ բաժանել զօրհնաւոր պսակն որքան *կենդանի* իցեն: - 611. ...վասն որոյ ո՛չ է պարտ բաժանել զօրհնաւոր պսակն որքան *կենդանի* իցեն: - 611. Դարձեալ` ի յեբրայեցի լեզուն «ալ», ասէ թէ` գայ յայտնեսցի. «էլ», աստուած. «ուիայ», օրհնեցէք և գովեցէք *զկենդանին* աստուած: - 644. Եւ ա՛յս է խորհուրդն. զի որ քան են սուրբք ի յերկրի *կենդանի*, ո՛չ տօնեմք նոցա մինչ ի հանդէս նահատակութեան են...: - 647. Դարձեալ` ճշմարիտ պատարագն քրիստոս` Նախ *կենդանի* աղ կոչեցաւ...: - 657. Երրորդ ըստ *կենդանեաց* յողջութիւն և ի հիւանդութիւն: - 663. ...զի նա *կենդանեացս* աղօթի՛ց է կարօտ, և մեք նորա բարեխօսութեանն առ քրիստոս...: - 673. Երկրորդ` զի թէ մարդոյ մարմին որ է՛ բանական և *կենդանի*` ապականի մահուամբ. ապա ուրեմն և խաչն ևս ապականի զի ո՛չ *կենդանի* է և ո՛չ բանական: - 732. Զի՞նչ է ասելն` դատել *զկենդանիս* և զմեռեալս: - 740. Նա՛խ` որ ի յայնմ ժամու *կենդանի* լիցին...: - 740. Երկրորդ` *կենդանի* են արդարքն. և մեռեալ մեղաւորքն: - 740. Երրորդ` *կենդանի* են դևք. և մեռեալ` մարդիկ. որս դատէ՛ աստուած և սուրբք ամենայն: - 740. Դարձեալ` անդանօր բարեացն կրկին են վկայք. *կենդանի* և անկենդան: - 743. *Կենդանի*` հոգի և մարմին մեր. և սուրբք և հրեշտակք և հոգին սուրբ գրիչ: - 743. Երրորդ առ մեզ մնայ *կենդանի*: - 753. Զի նա՛ ծնաւ զմեզ ըստ բանի` բազմաջան երկօք. կրթեալ ի մամուլս վարժարանի և ի յոյսն *կենդանի*: - 773. Որպէս զի և դուք լիջիք գրեալ ի գիրն *կենդանեաց* ա՛մէն: - 773. Եւ դարձեալ, ի կատարածի` *կենդանեաց* և մեռելոց է խոստովանիլ զոր սանդարամետք կոչէ: - 785. Արդ ծունր *կենդանեաց* վարձաւո՛ր է. և մեռելոցն ո՛չ: - 785

**ԿԵՆԴԱՆՈՒԹԻՒՆ +** Երկրորդ` բանն է իմաստութիւնն, և հոգին *կենդանութիւնն*: - 55. Այլ այսպիսի *կենդանութիւնս* է ի հոգւոյն...: - 57. Եւ որպէս մի է հոգի և բան և *կենդանութիւն* իւր. որ է՛ խօսքն և շունչն: - 107. Քսանևզ` տնկոց *կենդանութիւն* է: - 207. Այլ յայտնապէս *կենդանութիւնն* է օդոյն և հրոյն. և նիւթ մարմնոյն է՛ ջրոյն և հողոյն: - 215. Եւ սոքօք սփռի ջերմութիւնն և *կենդանութիւնն* ի բոլոր մարմինն: - 244. Զի արիւնն կերակրէ՛. և ջիլն զգայութիւն տայ. և շնչերակն զջերմ *կենդանութիւնն* բոլոր մարմնոյն: - 244. *Կենդանութիւն*` աջոյ ձեռն: - 250. Նախ` զի նիւթն այն ունի առ ինքն բնական *զկենդանութիւն* տնկականին. և տնկականն մա՛սն է զգայականին. և զգայականն բանականին. և սոքա ո՛չ որոշին ի բոլորէն. զի մի են էութեամբ ի մարդն թէպէտ ա՛յլ են ներգործութեամբ: - 254. Եւ թէ ոք ասիցէ, ուստի՞ գտանեմք եթէ ունի *զկենդանութիւն* հիւթն այն: - 255. Ապա ուրեմն ունի բնականապէս *զկենդանութիւն*: - 256. Եւ թէ ոք ասիցէ, յորժամ ունի *զկենդանութիւն* սերմն այն` ընդէ՞ր ի վիժումն մեռանի: - 256. Պատասխանեմք եթէ դ իրաց պակասութիւն, խափանէ՛ *զկենդանութիւն* նորին: - 256. Երրորդ` զի *զկենդանութիւն* ունի և ո՛չ երևի: - 256. Եօթներորդ` զի մի գոլով սկիզբն ենթակային և *կենդանութեանն* որպէս ասացաք: - 256. Երրորդ` զի հատեալն մասնաւորի. այլ ընդ ծնանիլ զաւակին` ոչ ինչ պակասի ի ծնօղն. բան, կամ շունչ, կամ *կենդանութիւն*. այլ բոլորն է ի ծնօղն և բոլորն ի ծնեալն: - 257. Այլ հատանի նիւթն ունելով առ ինքն զբոլոր *կենդանութիւն*. և լինի նիւթ ա՛յլ մարմնոյ նովին *կենդանութեամբն* զոր ունի առ ինքն: - 257. Որպէս ճիւղ հատեալ ի ծառէ և տընկեալ յերկրի, ճիւղն է հատեալ ի ծառէն, այլ *կենդանութիւնն* ո՛չ. ուստի յա՛յտ է զի տընկեալ ճիւղն նոյն *կենդանութեամբն* բուսանի զոր ունի առ ինքն: - 257. Նա՛խ` զի մի գոյութիւն է մարդն և մի կենդանի. մի հոգի է միոյ մարդոյ և մի *կենդանութիւն*: - 259. Դարձեալ` պատկեր է հոգիս մեր. զի բանն և շունչ *կենդանութեանն* ի նմանէ՛ յառաջ գայ: - 273. Նախ` զի արիւնն և շունչն *կենդանութիւնն* է որ է աստուծոյ բաժին. վասն այն արիւնն ո՛չ է ուտելի: - 295. Զի որպէս այլասե՛ռք են ցամաքայինք և ջրայինք. նոյնպէս և այլատեսա՛կ են *կենդանութեամբ*. և այլատեսա՛կ է զենումն նոցա: - 296. Նոյնպէս և արդարութիւնն հաւասար է. զի ի գլխո՛յն է *կենդանութիւն* և մահ: - 358. Եւ զարիւնն հեղուլ շուրջ

զսեղանովն. որ է *կենդանութեան* նշանակ: - 360. Երրորդ՝ զենումն. զի լիցի բաժանումն արեան և շնչոյ և բնական *կենդանութեանն*: - 365. Իսկ թէ արիւնն ելցէ՝ և շունչն և *կենդանութիւնն* ընդ նմա, ա՛յն է հրամայական մահ: - 366. Նա՛խ՝ զարիւնն հանել որ է՛ *կենդանութիւն* և աստուծոյ մասն. և զմնացեալն ուտել որ է տարր միայն: - 366. Կրկին հաւն կենդանի սուրբ՝ նշանակէ՛ զհոգւոյ և զմարմնոյ *կենդանութիւն* ի ձեռն ապաշխարութեան: - 368. Նա՛խ՝ զի *զկենդանութիւնն* տացեն տուողին կենաց՝ բաժին: - 371. Իսկ սիրտ՝ զհոգին ասէ. որ ծածուկ է. և տեղիք խորհրդոց. և մի է. և *կենդանութիւն* մարմնոյն: - 396. Վեցերորդ՝ ո՛չ միայն հաց է հաղորդութիւնն. այլ հոգւովն սրբով օրհնեալ և միաւորեալ ի բանն աստուած, որով անմահ *կենդանութիւն* տայ ճաշակողացն: - 397. Ա՛րդ՝ թէ ճշմարիտ յարոյց կինն զսամուէլ. սաւուղ ո՛չ երկնչէր ի մահու. զի և զնա՛ յարուցանէր. և թէ երկեաւ, ապա սուտ էր *կենդանութիւն* մեռելոյն: - 429. Նա՛խ՝ որպէս ծծումն օդոյ *կենդանութիւն* է մարմնոյ: - 523. Եւ հոգին սուրբ *կենդանութիւն* է ներքին մարդոյն…: - 523. Երրորդ՝ ի գլխո՛յն իջանեն *կենդանութիւնք* և զօրութիւնք և առողջութիւնք և շարժութիւնք ի բոլոր անդամս ի ձեռն ջլոյն: - 532. Նոյնպէս ի քրիստոսէ ի մեզ իջանէ *կենդանութիւն* հոգևոր, և զօրութիւն, և առողջութիւն, և շարժութիւն յօդոց և խաղալեաց ի ձեռն հաւատոյն շաղկապութեան: - 532. Զի թողութիւն մեղաց որ է՛ *կենդանութիւն* հոգւոյ՝ աստուածային զօրութեամբն լինի: - 573. Եւ երբեմն հացն նշանակէ զմարմինն սուրբ, և արիւնն զանմահ *կենդանութիւնն*: - 598. Այլ ոմանք ասեն թէ յարութիւն է այնմ որ անկաւ՝ վերստին յառնել *ի կենդանութիւն* յաւիտենական անմահ: - 716. Եւ թէ ոք ասիցէ, բազում անդամք են կենդանականք, որպէս սիրտն լեարդն թոքն և այլքն որք ի յարութեանն ո՛չ են պէտք. զի ո՛չ է հարկ *կենդանութիւն* մարդկան: - 725. Երկրորդ՝ զի կենդանիք և բոյսք ստեղծան վասն մարմնաւոր *կենդանութեան* մարդկան. - 727. Այլ և *կենդանութեանց* քակտիչ է. զի գործիք է մահու: - 732. Իսկ խաչին *կենդանութիւնն* քրիստոս է, և ո՛չ քակտի ի նմանէ. - 733. Արդ որ մայրն է *կենդանութեան*, նա անապական է. այսինքն է սուրբ խաչն: - 734. Այսօր վերստին հրամայեաց հաւատացելոց իւրոց ճաշակել ի պտղոյն կենաց. և մնալ յաւիտեան և անմահ *կենդանութեամբ* ի քրիստոս յիսուս ի տէր մեր: - 771

**ԿԵՆԴՈՒՐԱԾԻՆ** - Զի *կենդուրածինքն* լցին զարևելս. և իմայէլացիքն զիարաւ. եսաւացիք զհիւսիս և զարևմուտս. և սոքա ո՛չ անկան ընդ թուով: - 377

**ԿԵՆԵԶ** - Եւ դատաւորաց առաջինն Գոդոնիէլ որդի *կենեզայ* եղբայր քաղեբայ յազգէ յուդայ ամս **խ**. և այլազգիքն ամս **ժը**: - 420

**ԿԵՆԵՂՈՒՏ +** Եւ թէ այս և թէ այն, դու ընկա՛լ զխնդիր մտաց քոց առանց ամենայն երկբայութեանց. իբր ի միոյ *կենեղուտ* աղբերէ կենաց ուռճալրացեալ և պտղաւէտեալ: - 772

**ԿԵՆՍԱԲՈՒՂԽ +** Եւ *կենսաբուղխ* սուրբ աւետարանն զթադէոս առաքեալն մեր յերկոտասանիցն ասէ: - 549

**ԿԵՆՍԱՏՈՒ +** Իններորդ՝ *կենսատու* չարչարանաց ժամանակ. թաղման և յարութեան. նաև համբարձմանն: - 196. Եւ զխաչն հրաշագործ՝ *զկենսատու* մանանայն. և բուրվառ զխունկս աղօթից. վէմն սեղանն սուրբ. և քերովբէք քշոցքն **բ**: - 345. Ի խորհուրդ *կենսատու* հացին որ յեկեղեցին: - 346

**ԿԵՆՍՈՒՆԱԿ +** Ա՛րդ՝ որպէս կենաց պտուղն կերակրելի է և *կենսունակ*, նոյնպէս ամենայն պտուղքն կերակրելիք էին և անապականք: - 223

**ԿԵՆՑԱՂ +** Նոքա որք զբախտ և զճակատագիր և զհրամանն համբաւեն, ո՛չ ինչ ասեն ի կամաց մեր գործիլ. այլ զամենայն ի հարկէ՛ ասեն. զի զեղխաբար *զկենցաղս* վճարեսցեն: - 7. Դարձեալ թե ի հարկէ՛ է ոչ լինին օգուտ խրատք և սպառնալիք և ուսմունք. որովք բազումք յորդորին ի բարիս, և հեռանան ի չարեաց *կենցաղոյս*: - 11. Այսորիկ յայսմ *կենցաղի*: - 24. Ութերորդ՝ թոյլ տալով սրբոց չարչարիլ՝ վասն պսակացն առաւելութեան է. **զի *կենցաղս* այս հանդէ՛ս է նահատակութեան. և ըստ չափոյ համբերութեան՝ առցէ զյաղթանակն**…: - 159. Հինգերորդ՝ այս մին օրս է որ կրկնելով կատարէ՛ զշաբաթ և զամիս և զտարի և զդարս *կենցաղոյս*, և հասանէ՛ ի վերջին օրն. որ է՛ մի օր աներեկ և անփոխանորդ: - 193. Իսկ ձմեռն է կատարած և վերջք *կենցաղոյս*. վասն այն բոյսք և ծնունդք դադարին և չորանան: - 198. Եւ սոքա երեք եղանակքս օրինակ են այսմ *կենցաղոյս*. և ձմեռն հանդերձելոյն որպէս ասացաւ: - 198. Այսպիսի ժամանակ է յայտնապէս կեանք մեր. զի զոր ինչ ժամանակ *կենցաղոյս* չափէ բնութեամբ՝ ապականէ և փոփոխէ…: - 199. Վասն այն պա՛րտ է զժամանակ *կենցաղոյս* ի բարին ծախել. զի զառաջին ժամանակն ո՛չ ոք կարէ վերստին ստանալ: - 199. Դարձեալ՝ քան զժամանակն ոչ ինչ անցաւոր և հասական. զի ժամանակ *կենցաղոյս* հանապազ հոսի. զի չափէ՛ զբնութիւնս՝ և զինքն չափէ՛: - 199. Նոյնպէս և մարդկային *կենցաղս* ամենեքեան հասարակաբար հաղորդին. և ամենեքեան առ հասարակ փոփոխին և կորուսանեն…: - 199. Ասեն աստեղագէտք եթէ՝ **է** դարուց *կենցաղոյս* վերակացուք են **է** աստեղքն որք կոչին մոլորակք: - 291.

Երկրորդ՝ **բոյս մեղաց և հոգ *կենցաղոյս* ի սիրտն բազո՛ւմ է:** - 251. Նոյն պատճառ է և ո՛չ գիտելոյ զկատարած *կենցաղոյս*: - 292. Արդ որպէս հաւատով իմանամք հաստատեալ զյաւիտեանս որպէս ասէ առաքեալն. և նովին հաւատով իմանամք զկատարած *կենցաղոյս* և զյարութիւն մեռելոց և զդատաստան հատուցմանն: - 292. Ի խորհուրդ է դարու վշտաց *կենցաղոյս*. և յութներորդին ազատութիւն բնութեանս: - 326. Նմանապէս և հոգին սուրբ ի գիշեր *կենցաղոյս* լուսով աւետարանին առաջնորդէ՛ մինչև հասուցանէ յայգն հանդերձեալ աւուր ի ցօղաւոր անպն որ է՛ բանն մարմնացեալ. որ է հովանի և հանգիստ ամենայն սրբոց: - 338. Չորս կանգուն և կէս, ելեալ ի տարրական *կենցաղոյս*: - 346. Եւ ցանեալ **է** անգամ ի վարագոյրն. որ է՛ քաւութիւն **է** զգայարանցս ի **է** զօրութեանց հոգւոյն. **է** խորհրդով եկեղեցւոյ. առ **է** դար *կենցաղոյս*: - 360. Իսկ թէ ի տունն ի ժողովուրդս նորա. կամ յեկեղեցիս մեղանչեմք. յետ է ժամանակի փոխելոյ՝ որ է՛ **է** հասակ մեր. և *է* դար *կենցաղոյս*...: - 368. Չորրորդ՝ է դար *կենցաղոյս* պակասի. և մինն հաստատի: - 374. Ա՛րդ՝ եգիպտոս է՛ նշանակ երկրիս այս. և ծովն *կենցաղոյս*. և անապատն կայանք հոգւոցն: - 393. Նա՛խ՝ փոփոխմամբ իւր նշանակէ՛ զփոփոխելի *կենցաղս* այս. իսկ արեգակն անփոփո՛խ է. որ է՛ հանդերձեալն: - 411. Իսկ դարձումն ի յետ, յեօթն դարուց *կենցաղոյս* դարձեալ ուստի ելին ժողովին ամենայն սրբութիւնք: - 426. Տասներորդ՝ յետ որոյ հնազանդեցան նմա՛ ամենայն իսրայէլ. և տեառն մերոյ զկնի խաչին հաստատեցան ի հաւատս. մանաւանդ յետ **է** դար *կենցաղոյս* ամենայն լեզու խոստովան լիցի զտէր յիսուս քրիստոս ի փառս աստուծոյ հօր ամէն: - 427. Նա՛խ՝ զի որդի է յեսսեայ. որ է՛ պտուղ կղզւոյ. և տէրն մեր եղև պտուղ մարիամու ցամաքեալ ի խոնաւութեանց *կենցաղոյս*: - 435. Վաքսունն՝ **զ** տասն է. նշան նոցա՝ որք **զծ** բանեան օրէնսն կատարեն ի **զ** դար *կենցաղոյս*. այսինքն ի տղայութենէ մինչ ի մահ. նոքա թագուհիք և ժառա՛նգ են արքայութեանն: - 440. Չորրորդ՝ գերիլն ի բաբիլօն՝ զգերութիւն բնութեանս նշանակէ. և եօթանասուն ամն զեօթն դար *կենցաղոյս*. և ապա դարձումն ի հայրենի բնակութիւնն մեր ի ձեռն փրկչին մերոյ և աստուծոյ: - 448. Եւ եօթնից ժամանակաց փոփոխմամբ՝ է հասակաւ յեօթն դար *կենցաղոյս*՝ լինիմք տաճար և քաղաք քրիստոսի աստուծոյ մերոյ: - 448. ...և տէր մեր յետ յերից օրինաց՝ այսինքն բնական բանական և գրաւական՝ երևեալ ի գիշեր *կենցաղոյս* և իջեալ ի դժոխս աւերելով զնա դարձոյց զերկոսին ժողովուրդս իւր...: - 514. Եւ դարձեալ ի բարութիւն և ի հանգիստ ելեալ ի ծախողակի՛ *կենցաղոյս*: - 521. Երրորդ՝ վասն զի օրինա՛կ է **է** աւուրցն ի յորս երկիր հիմնեցաւ. նաև **է** դարու *կենցաղոյս*: - 524. Հինգերորդ վերջին օծումն. որ է՛ ելելոցն ի *կենցաղոյս* և զերծելոցն ի պատերազմէ՛: - 587. Ասեմք թէ՝ որպէս մահն է վախճան *կենցաղոյս* և սկիզբն հանդերձելոյն: - 605. Երրորդ, վասն է *կենցաղոյս*՝ և ըստ հանդերձելումն **ը** օր տօնեմք: - 616. Երեկոյ է տղայութիւնն. յորում նո՛ր գամք ի խաւար *կենցաղոյս*: - 622. Հինքն ի խորհուրդ եօթնից *կենցաղոյ* դարոյս՝ զեօթն առաւել պատուէին: - 626. ...վասն որոյ ի գիշերի *կենցաղոյս* լուսաւորէ զհոգիս յետս ընկրկելով զթշնամիս: - 629. ...նոյնպէս և սուրբքն ակնունին յետ **զ** դարուց վճարման *կենցաղոյս* ժառանգել զհանգիստն յաւիտենական...: - 648. Այսպէս և նոքա կատարեցին զճանապարհ *կենցաղոյս* և զբարեաց գործոց. վասն որոյ վախճանեալ կոչին: - 666. Դարձեալ՝ մահն ե՛զր է հանդիսից որք են ի պատերազմ *կենցաղոյս* որ քան են: - 667. Ա՛րդ՝ զգեստին հանելն նախ նշանակէ թէ՝ *զկենցաղ* աշխարհի մերկացաւ և զգեցաւ զգեստ լուսեղէն որ ի դրախտին: - 671. Եւ ի խորհուրդ եօթանց դարուց *կենցաղոյս*՝ զեօթն օր նաւակատիս կատարեմք թաղման քահանայից: - 674. **Զի *կենցաղս* այս որպէս երկդռնի քաղաք է. ի միւն մտանեմք և ի միւսն ելանեմք**...: - 680. Եւ **խ** ամն է՛ **դծ**. այսինքն մինչ ի կատարումն չորեքնիւթեայ *կենցաղոյս*: - 682. Եւ ժամանակն **գ** է և եօթամբ չափի շաբաթի աւուրբ. և եօթն դար *կենցաղոյս*: - 683. Երկրորդ՝ զի ժամանակ *կենցաղոյս* համեմատեալ յաւիտենին՝ փո՛քր է և սակաւ: - 730. Զի յայսմ *կենցաղոյս* զուգաւորին յիշելն երբեմն և մոռանալ զներքոյս և զարտաքոյս. ըստ որում փոխանցապէս ունիմք զերից ժամանակաց գիտութիւն: - 774. *Կենցաղս* այս երա՛զ է համարեալ հանդերձելոյն...: - 775. Երրորդ՝ ժամանակ *կենցաղոյս* մինչև ի մահ, է՛ ընդունելութեան աստուծոյ. ըստ որում բազմեալ է յաթոռ շնորհաց ըստ առաքելոյ. իսկ յետ այնորիկ ո՛չ ևս. զի փոխի յաթոռ դատաստանաց ըստ աւետարանին: - 780

**ԿԵՆՑԱՂԱԿԱՆ +** Որ ամենեքեան լինին է փոփոխմունք *կենցաղական*...: - 663

**ԿԵՆՑԱՂԱՎԱՐԻՄ +** Երկիր որ առ ժամանակեայ *կենցաղավարի*, է՛ հոգի բանական: - 210. Վեցերորդ, այլ և բարեպաշտ թագաւորք՝ և իշխանք՝ և իշխեցեալք՝ ունին զայս կարգ. թէ օրինօք *կենցաղավարին* ըստ հրամանացն աստուծոյ: - 757

**ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹԻՒՆ** + Դարձեալ՝ պսակն է զուգաւորութիւն արուի և իգի. ունելով անբաժանելի *կենցաղավարութիւն*: - 609

**ԿԵՌ +** Ութերորդ՝ զի կողն *կեռ* գոլով՝ ցուցանէ զկինն նենգ գոլ և երկմիտ. *կեռ*, այսինքն խեռ ընդ առն: - 276

**ԿԵՍԱՐԱՑԻ** - Չորեքտասաներորդ՝ ըստ մեծին գրիգորի աստուածաբանի և սրբոյն բարսղի *կեսարացւոյ* որպէս ասացաւ ի վերոյ: - 484. Եւ սուրբն բարսեղ *կեսարացի* այսպէս բաշխէր ժողովրդեանն. որպէս գրեալ է ի պատմութեան նորին յունվարի **ա**: - 599

**ԿԵՍԱՐԻԱ** - Այլ և յորժամ սատակեցաւ յուլիանոս, զժողովեալ ինչսն սուրբն բարսեղ բաժանեաց ժողովրդեանն. նոր տարի անուանեալ ի *կեսարիայ*: - 200. Եւ լուսաւորչին ի *կեսարիայ* գնալն և ի հռօմ. և թադէոսի առաքելոյն: - 525. Եւ թէ ոք ասիցէ, ի *կեսարիայ* ձեռնադրեցաւ ի ղևոնդիէ պատրիարգէ: - 548. Ասեմք թէ՝ սուրբն գրիգոր ի *կեսարիայ* ձեռնադրեցաւ ո՛չ յայլմէ առաքելոյ, այլ ի սրբոյն թադէոսէ՛. որոյ էր վիճակս հայոց: - 548. Զի առաքեալն թադէոս յորժամ ձեռնադրեաց զադդէ յուռհայ, և ապա՛ ի *կեսարիայ* եկն և ձեռնադրեաց առաջին եպիսկոպոս զթէոփիլոս. զայն յորոյ անունն գրեաց Ղուկաս զաւետարանն և զգործքն առ թէոփիլոս: - 548. Եւ սեպհական քաղաք է հայոց *կեսարիա*: - 548. Ա՛յս էր պատճառ գնալոյն ի *կեսարիա* և ի հռօմ: - 549. ...ընդէ՞ր ոչ մկրտեաց զոք ի հաւատացելոցն. մինչև գնաց ի *կեսարիա* ձեռնադրեցաւ. և ապա եկեալ զհազարս հազարաց և զբիւրս մկրտեաց ի գետն: - 589

**ԿԵՐԱԿՈՒՐ +** Զհեղձուցեալսն ո՛չ խտրեն. և զազիր *կերակրոք* զեխին: - 34. Երկոտասաներորդ՝ զի թէ վասն բնակութեան նորա՝ է մարմին նորա ուտելի որպէս ինքն ասաց՝ «մարմին իմ ճշմարիտ կերակուր է». կերօղքն եղիցին գազանք մարդակերք. և ո՛չ մարմնոյ և արեան որդւոյն աստուծոյ: - 67. Եւ զի ժա՛մ է *կերակրոյ*: - 196. Եւ օրինակ տայ *զկերակուրն* որ ի ստամոքսն եփի. և գոլոշիկքն ի գլուխն ելանէ և պարզ ջուրն ի լեարդն. իսկ մնացեալ թանձրն լինի դառն և աղի: - 208. Այլ այժմ վասն զգեստուց պահեմք զոչխարս. և վասն *կերակրոյ* զեզինս. և վասն բեռին զէշս. և վասն բառնալոյ զմեզ զձիս. և վասն զքշնամիս հալածելոյ զշունս. և վասն զթռչունս ըմբռնելոյ զբազէս. և զայլսն նմանապէս: - 217. Զի վարդապետք ասեն եթէ՝ *կերակուր* գազանաց այլ կենդանիք են. վասն որոյ խնամքն աստուծոյ ետ նոցա առաւել հնարս և զօրութիւնս, զի կարասցեն ըմբռնել. զայլ կենդանիս և մի՛ ի սովոյ մեռցին: - 218. Այլ իմաստունք ասեն եթէ՝ *կերակուր* անասնոցն խո՛տ է անզօր. վասն այն նոքա ապուշք և անզօրք լինին: - 218. Եւ գիտութեան փայտն՝ զյատուկ *կերակուրն* կատարեալ արանց: - 223-224. Եւ լինի աղանդն այնոցիկ՝ որք ասեն մարմնաւոր արքայութիւն, և *կերակուր* և ամուսնութիւն, և այլ աղճատանք: - 226. Հինգերորդ՝ զորօրինակ մեծատուն ոմն զոք ի ճաշ կոչիցէ, նախ պատրաստէ՛ զամենայն պէտս *կերակրոց* և ըմպելեաց. և ապա՛ մեծարէ՛ զկոչնականսն: - 230. **Ի պատիւ մեծարեաց զմարդն. և նա՛խ՝ պատրաստեաց պէտս զանազան *կերակրոց* և ըմպելեաց որպէս ասացաք. և վառեաց զճրագ լուսաւորացն. և զգեղեցիկ ձայն երգեցողաց թռչնոց. և զզուարճութիւն զանազան ծաղկանց. և ապա՛ զմարդն ի պատիւ էած. ըստ այնմ «մարդ ի պատուի էր և ո՛չ իմացաւ»**...: - 230. Ութերորդ՝ վասն արտաքին զգայութեանցն որ են ի գլուխն. զի **այլ կենդանիք միայն հեշտանան *կերակրով* և ցանկութեամբ. իսկ մարդն հեշտանայ առաւել գեղեցկութեամբ զգալեացս. յորժամ տեսանէ աչօքն զերկին և զերկիր. և ժողովէ՛ զճշմարիտ գիտութիւն նոցա և հեշտանայ:** - 233. Եւ պիտոյանայր լեզու երկայն և շրթունք ստուար, զի ժողովեսցէ *զկերակուր*. և յայնժամ ո՛չ կարէր սպասաւորել բանի որպէս ա՛յժմ: - 233. Եւ որպէս սակաւ մասն ոտիցն ի յերկի՛ր է հպեալ և կոխէ, նոյնպէս և մեզ սակաւ պէտս մարմնոյ. այսինքն զգեստուց և *կերակրոց* ի յերկրէ ստանամք. և զանչափն և զաւելորդն կոխեմք և անցանեմք...: - 233. Զի ուղեղն ի մէջն սնուցանէ զոսկրն. և ջիլն կապէ՛ առ միմեանս զի մի քակտեսցին ոսկերքն. և արիւնն *կերակո՛ւր* է նոցա: - 240. Եւ միսն զի տաք է՝ հալէ՛ *զկերակուրն* որ ի յինքն ժողովեալ: - 242. Նոյնպէս լեարդն և լեղին հալեն *զկերակուրն* արտաքուստ ի յաջմէ կողմանէ: - 242. Վասն այն յորժամ ննջէ մարդն ի վերայ ձախ կողմանն, շուտո՛վ հալի *կերակուրն* քան ի վերայ աջ կողմանն: - 242. Քարշողականն է՝ յորժամ կծկի և քաղցի, ներքուստ և արտաքուստ խնդրէ *կերակուր*: - 242. Ունականն է՝ յորժամ ժողովէ *զկերակուրն* ծկտի և լայնանայ և փակէ՛ զամենայն դրունսն որ ի ներքոյ և ի վերոյ և ի կողմանէ, զի մի՛ թափեսցի *կերակուրն*: - 242. Հալողականն է՝ յորժամ ի ջերմութենէն եփի *կերակուրն* և հալի որպէս ապուր ի պտկի. և հալի ամենայն *կերակուրն* մինչև ի **զ** ժամն. և է՛ որ պակաս և աւելի. վասն առողջ և տկար մարմնոյն: - 242. Վտարականն է՝ յորժամ եփի և հալի *կերակուրն*, բանա՛յ զդրունսն և բաժանէ զնոսա: - 242. Նմանապէս և զմիջին դուռն բանայ, և զպարզ *կերակուրն* ի լեարդն յուղարկէ. և նա ներկէ յարիւն և բաժանէ: - 242. Ի ծնանիլն նախ խնդրէ միայն *կերակուր* և աճէ՛. յետ որոյ տեսանէ՛ կանգնի՛ և գնայ. յետ որոյ խօսի և իմանայ: - 267. Երկրորդ՝ զոր ախորժակն ունի զկարօտութիւն՝ զա՛յն տեսանէ. որպէս քաղցեալն *զկերակուր*. և ծարաւն զջուր: - 268. Եւ *կերակուրն* մի ամենեցուն առհասարակ մարմին և արիւնն սուրբ: - 294. *Կերակուր* կերի՞ն ի տապանին, թէ ոչ: - 294. Հատուցումն ի ստենէ՛ իսահակայ՝ փրկութիւն եղև հաստատ *կերակրովք*: - 308. Եւ ծնեալքս յաւազանէն հաստատիմք անմահ *կերակրովք* հացիւն որ յերկնից իջեալ: - 308. Ա՛րդ՝ զայս քան մեծագոյն պատիւ և խորհուրդ անդրանկութեանն

անարգեաց եսաւ ընդ պոռնկութեան. և վաճառեաց ընդ *կերակրոյ*: - 309. Տասներորդ՝ յովսէփ ռոճիկս տայր նոցա. ա՛յս է զգեստս կատարեալ և *կերակուրս*: - 315. Իսկ վերջին խորհուրդ է, յորժամ վասն հարկաւոր պիտոյից *կերակրոյ* և հանդերձի՝ յերկրաւորս հպիմք: - 331. Վեցերորդ՝ գետն նշանակէ՛ զբանն աստուած, որ հաղորդիլով ի մեզ՝ եղև մարմին և արիւն. և ետ մեզ ըմպելի զարիւն իւր սուրբ. և *կերակուր* զմարմինն: - 333. Նա՛խ՝ զի հրեշտակացեալ սրբոց է *կերակուր*: - 338. Վեցերորդ՝ զի յերկնից իջեալ հացին է օրինակ որ է *կերակուր* իմանալի հրեշտակաց: - 338. Ապա թէ ոչ՝ հրեշտակք անկարօ՛տ են մարմնական *կերակրոց*: - 338. Չորրորդ՝ զի գիտացեն թէ գոյնք և համք զանազան *կերակրոց* և պտղոց ո՛չ իւրովի պատրաստին, այլ ի շնորհացն աստուծոյ: - 339. Եւ զի բառնալո՛ց էր ի նոցանէ չքնաղ *կերակուրն*: - 340. Եւ ծնօտ՝ որ է՛ զիկն բոլորեալ. զիմանալի *կերակուրն* նշանակէ նոցա. զի ծնօտն գործի է *կերակրոյ*: - 344. Եւ մին վասն մեղաց. զի *կերակուր* ետ զմարմինն և զարիւնն իւր: - 361. Իսկ միւս խոյն կատարմանն, քահանայիցն *կերակուր* և նուէրքն մովսէսի: - 362. Զի որպէս ստամոքն *զկերակուրն* հալէ, նոյնպէս և քահանայն զմեղքն: - 363. Ուռն՝ կոյսն յարմատոյն և յեսսեայ. և Ողկոյզն տէր մեր ծնեալ ի նմանէ զուարճալի *կերակուր* մեզ: - 381. Երրորդ՝ զի մարմինն աճէր և ո՛չ ինչ յաւելոյր ի *կերակրոյն*: - 383. Չորրորդ՝ որպէս ո՛չ ունէր զաւելորդ ցանկութեանն, նոյնպէս և ո՛չ *զկերակրոյ*: - 383. Նա՛խ՝ զի օձին հող ետ աստուած *կերակուր* և ո՛չ տրտնջեաց: - 386. ...**որպէս ասաց մովսէսի թէ՝ «լո՛յծ զկօշիկս քո». և ո՛չ *կերակրոյ* հացի ունէին պէտք. այլ բանն աստուծոյ կերակրէր զնոսա որպէս ասացաւ**...: - 397. Եօթներորդ՝ որպէս հացն մարմնո՛յ է *կերակուր*, և բանն իմաստութեան աստուծոյ՝ հոգւոյ. զոր ի պակասիլն ասէր, «տաց ձեզ ո՛չ սով հացի և ծարաւ ջրոյ, այլ սով լսելոյ զբանն աստուծոյ»...: - 397. Տասներորդ՝ ի յարութեանն ո՛չ է մարմնական *կերակուր* և ըմպելի. այլ բանն աստուծոյ է *կերակուր*. որպէս այժմ հրեշտակաց յերկինս: - 397. Եւ որպէս ննջեցեալն քնով՝ ո՛չ տեսանէ զինքն. և որպէս յաւելի *կերակրոյ* խնուն զգայարանքն. նոյնպէս ագահութիւն և փարթամութիւն և հպարտութիւն մոռանալ տայ զինքն. վասն այն ասեն թէ՝ ինքեանց գիտակքն իմաստունք են: - 397-398. Եւ որք գիտեն զտնօրէնութիւն փրկչին, զգեցցին զփրկութիւն նորին. զի նա՛ է հզօրն յորմէ ել *կերակուր* քաղցր: - 422. Եւ զի ծնօտ է՛ գործի *կերակրոյ*. և անսուրբ և անբան կենդանւոյ մասն: - 423. Նշանակէ զադամայինս մարմին ի *կերակրոյ* պտղոյն հաւասարեալ անբանից՝ ընդ բեռամբ մեղաց: - 423. Եւ զի պիղծ և գարշելի էր զոհք կռոցն և *կերակուրք* հեթանոսաց: - 443. Ջուրն նուազեաց և *կերակուրն* արգելաւ, զի ողորմեսցի իսրայէլի: - 443. Զագահութիւնն՝ բազմաբաշխութիւնն. որ ետ զմարմին իւր ի *կերակուր* և զարիւնն իւր ըմպելի. զհոգին ի գին. զջուր կողին ի լուացումն. զհանդերձն՝ խաչողացն. զմարմինն՝ աշակերտացն. և զմայրն՝ յոհաննու: - 489. Դարձեալ ասեն նոքա, կաթնասուն եղև և *կերակուր* եկեր. և այս մա՛սն է ապականութեան: - 501. Եւ դարձեալ ասեմք, թէ *կերակուրն* մասն է ապականութեան, զոր յանմարմնութեանն եկեր առ աբրահամ զի՞նչ ասէք: - 501. Դարձեալ՝ եթէ առհասարակ սոքա՝ *կերակուր*՝ արիւն և խոցուածք և մահ՝ ապականութիւնք են որպէս դու ասես, և փրկութիւն աշխարհի սոքօք ներգործեցաւ. այսինքն չարչարանօք՝ մահուամբ և խոցւածովքն: - 503. Այսպէս և մեզ աւանդեցաւ յամենայն *կերակրոց* ուտել և զմիս ոչ: - 510. Նոյնպէս և որ ոք յայս օրս պահէ և յամենայն *կերակրոց* չուտէ, կամ միս ուտէ, ընդ դատապարտութեամբ է: - 510. Նմանապէս և *զկերակուրս* **գ** են որոշեալ քրիստոնէից: - 510. Զմիս կենդանւոյ, որ կատարեալ կենդանի է և ի կենդանւոյ յառաջ եկեալ. այն է կատարեալն որ **ե** զգայարանս ունի և շարժի և շունչ ունի. և է՛ այս *կերակուր* ուտեաց և զատկի: - 510. Իսկ նաւակատեաց *կերակուր* այն է՝ որ միջակ է սոցա երկոցունց. այսինքն ի կենդանւոյ և ի տնկոյ. որպէս ձուկն, ձու, և կաթն: - 510. Ապա յա՛յտ է *կերակուր* նաւակատեացն: - 510. Մի կոչի եկեղեցի՝ ո՛չ տեղեաւ մի. այլ միով հաւատով և յուսով կոչմանն. և միոյ մօր և մի որովայնի ծնունդ աւազանին. և մի *կերակուր* որ է տեսութիւն աստուածային գրոց. և մի մարմին և արիւն փրկական. և մի գլուխ և պսակ և զգեստ ունիմք զքրիստոս: - 533. Ատամունք՝ վարդապետք և մեկնիչք և ծասկիչք հոգևոր *կերակրոյն*: - 534. Ա՛րդ՝ զի՞նչ կամիս որ հնազանդիմք պետրոսի. ուրանա՞լ պարտ է զքրիստոս որ լինիմք հնազանդ պետրոսի, եթէ եղծանել զպահքն, թէ զամենայն պիղծ *կերակուր* ուտել...: - 548. Նա՛խ՝ ի լուծանել զճրագալոյցսն ի պանիր՝ ի յիւղ՝ և յա՛յլ այսպիսի *կերակուր* բաց ի մսոյ: - 554. զի անկարգ յօժարի ի *կերակուրն*. և թէ է ի պահպանութիւն տեսակին, լինի բղջախոհութիւն. զի անկարգ յօժարի ի պոռնկութիւն: - 561. Նոյնպէս և զորկրամոլութիւնն յաւելու միտքն հնարելով զանազան *կերակուրս* և ըմպելիս: - 564. ...զի *զկերակուրն* ի հարկաւոր ժամանակին պարտ է ուտել. այսինքն որ քաղցեալ լինի. այլ ո՛չ յամենայն ժամ որ յագեալ լինի: - 570. Երրորդն հաղորդութիւնն. որ է՛ վերըստին զօրացելոցն ի պատերազմի, և հոգևոր *կերակուր*: - 587. Եւ ի չորրորդ գիրքն ի ի համարն ասէ, ետ զմարմինն ի *կերակուր*. զարիւնն ըմպել. զհոգին ի գին. զջուրն կողին ի լւացումն: - 594. Զի միապէս միաւորին արտաքս և ի ներքս. զի ամենայն *կերակուր* և ըմպելի ի ներքս միաւորի: - 598. Ապա յա՛յտ է զի ո՛չ ի մարմնոյ և ո՛չ յարենէն էր

թացեալ պատառն. այլ ի այլ ինչ *կերակրոյ* ի սեղանոյն առեալ թացեալ և տուեալ. զի ցուցցէ զմատնիչն: - 599. Զի մարմին իմ ճշմարիտ *կերակուր* է և արիւն իմ ճշմարիտ ըմպելի: - 600. Թէ կրօնաւոր է՝ հարցանէ թէ ծոյլ եղեա՞լ է յաղօթքն. կամ անհնազանդ. թէ բղջախոհ. թէ յատուկ իրք ունօղ. թէ պճնօղ. թէ որոնօղ լաւ *կերակրոց* և ըմպելեաց. թէ քնափ և թէ կռւօղ: - 601. ...և միւսն երախայ և ո՛չ ունի լեզու, միայն լայ. և մայրն գթայ ի յարտասուքն և տայ *կերակուր*: - 620. մինչև ի հրեշտակէն յուսադրեցաւ և էառ *կերակուր*: - 653. Երկրորդ, զի աղօթք՝ հոգւոյն է՛ *կերակուր*, և հացն մարմնոյն...: - 654. ...այսպէս օրհնութիւնն աստուծոյ առատութիւն է ամենայն *կերակրոց*: - 654. Չորրորդ, զի բաժանեսցի *կերակուր* մեր ի յանանսւց...: - 654. Նոյնպէս զսուրբ *կերակուրն* դարձեալ սրբելի է անուամբն աստուծոյ...: - 654. Վեցերորդ, ընդ *կերակուր* և ըմպելիս մեր՝ դևն որ թշնամի է մեր բազում վնասս խառնէ...: - 654. Զի՞նչ է որ յետ *կերակրոյն* դարձեալ կրկին օրհնեմք: - 655. Եւ ոմանք երեքկին օրհնեն. ի սկիզբն. ի մէջն, և յետ *կերակրոյն*: - 655. ...զի պարկեշտութեամբ լիցի *կերակուրն*...: - 655. Չորրորդն, զի բազում աշխատօղք գոն *կերակրոցն* և ըմպելեացն...: - 655. Զի՞նչ է յորժամ գինի ըմպեմք, օրհնեմք և շնորհակալեմք միմեանց. և յայլ *կերակուրս* և ըմպելիս ո՛չ առնեմք նոյնպէս: - 655. *Կերակուրն* մինչ ի **զ** ժամն կոչի. և անտի յառաջ ընթրիս: - 656. Չորրորդ՝ անմահ *կերակուր* ետ զմարմին իւր: - 657. Քսանեմի, Յամանգամայն յառնեմք. և վասն *կերակրոյ*. և կերեալ մարդոյ ի գազանաց: - 660. Նաև բժշկութիւնն բազում անգամ ժուժկալութիւն ուսուցանէ ընդդէմ անչափութեան *կերակրոց*. - 665. Երրորդ, զի մի՛ կոխան լիցի կամ *կերակուր* գազանաց որպէս շաղիղ անասնոցն: - 677. Տասներորդ, զի *կերակուր* օձին է հող...: - 678. ...պատժեաց զմարդն և ետ զնա ի *կերակուր* օձին...: - 678. ...ուր արդարք և մեղաւորք ի միասին բնակին կարօտ *կերակրոց* և ըմպելեաց: - 682. Քսանեմի, և յառակս տնտեսին զոր կացոյց տէր ի վերայ ծառայիցն տալ *կերակուր*...: - 693. *Կերակուրս* զոր ուտեմք՝ յառնէ՞ ի մարդն թէ ոչ: - 718. Գիտելի է, զի ոմանք ասեն թէ *կերակուրս* զոր ինչ ուտեմք ո՛չ յառնէ ի մարդն...: - 718. Ապա թէ *կերակուրքս* այսոքիկ յառնեն ի մարդն, լինի մարդոյ մարմինն կարի անհեթեթ: - 718. ...և նիւթ *կերակրոյն* այն մասն որ փոխեցաւ ի գոյացութիւն մեր՝ յառնէ՛. զի մարմին եղև մարդոյն այլ աւելորդքն ո՛չ յառնեն: - 718. Եւ տէրն վասն *կերակրոյն* ո՛չ ասաց թէ ի մարմին մարդոյն ո՛չ հաւասարի. այլ զայն թէ՝ դառնութիւն և ծանրութիւնն արտաքս ելանէ...: - 718. Այլ բանն պօղոսի ո՛չ է այսպէս թէ մարմինն էութեամբ հոգի լինի. այլ նման հոգւոյ. զի անմահ լինի որպէս հոգի և անկարօտ *կերակրոյ*: - 720. ...իսկ մարդիկ ի յարութեանն ո՛չ են կարօտ *կերակրոյ* զի անմա՛հ են. վասն այնորիկ նոքա ո՛չ յառնեն: - 727. ...որպէս ծաղկեալ գաւազանն ահարօնի նշանակէր զխրատ իմաստութեանն. որով զարդարեալ տայ զպտուղ լուսաւոր նիւթոյ *կերակուր* ոգւոյ: - 768. Եւ ի ճաշակելեաց և շօշափելեաց, շօշափման բանի և ճաշակման պարարուն. և ուրախութեան նարդոս և *կերակուր* անմահութեան: - 771. Զլինիլ արտասուաց՝ ուսուցանեն գիրք կազմութեան և որ ի բժշկաց, յերիս բաժանմանէ բնաւորեալ *կերակրոց*: - 786

**ԿԵՐԱԿՐԱԿԱՆ +** Զի մի և նոյն հոգին ըստ այնմ որ ազդէ՛ ի տնկական ներգործութիւնն որ է՛ *կերակրական*. աճողական. և ծննդական. կոչի տնկական: - 259. Իսկ տնկականն ունի երիս զօրութիւնս. այսինքն *զկերակրականն* որ է՛ սննդականն. զաճողականն և զծննդականն: - 262. Նմանապէս և *կերակրականն* ունի զօրութիւնս **դ**. որ է՛ քարշողականն. ունականն. հալողականն. և վտարականն: - 262. Եւ այլք ունելով և *զկերակրականին* զօրութիւնս՝ յապաղեն մինչ **բժ**ան ամիսս: - 262. Զայս կարգ պահէ՛ և ի զարգացման հասակին. զի մինչև ցեօթն ամն ատամն բուսանելով և փոփոխելով՝ նշանակէ՛ *զկերակրա-կանն*: - 267. Եւ անտի ի չորեքտասանն՝ զծննդականն ցուցանէ. որ է՛ *կերակրականին* դարձեալ: - 267

**ԿԵՐԱԿՐԵԼԻ +** Պտուղքն դրախտին շօշափելիք են և *կերակրելիք*. հատանի և ծասկի և փոփոխի ըստ պատահական որակացն. և անապական մնայ ըստ գոյացութեանն և ներգործութեանն ի կերօղն: - 223. Եւ մանանայն յանապատին *կերակրելի* էր. և մնաց անապական ի մէջ սափորին: - 223. Դարձեալ՝ փայտն կենաց ունէր *կերակրելի՛* պտուղ: - 223. Ա՛րդ՝ զի՞նչ ասես վասն կենաց պտղոյն. եթէ *կերակրելի* է և հատանելի, ո՞րպէս է կենաց պտուղ: - 223. Ա՛րդ՝ որպէս կենաց պտուղն *կերակրելի* է և կենսունակ, նոյնպէս ամենայն պտուղքն *կերակրելիք* էին և անապականք: - 223. Պտո՛ւղ էր զգալի և *կերակրելի*. որպէս կենաց պտուղն անմահութեան էր պատճառ. և այլ ամենայն պտուղքն լիութեան: - 223. Ո՞րպէս է, *կերակրելի*՝ թէ անծորելի է պտուղն: - 224. Եւ որպէս ալիւրն ի սափորն և իւղն ի սրուակն *կերակրելի՛* էր, և ոչ նուազէր առ եղիայիւ: - 224. Գառն, զի անմեղ և *կերակրելի՛* է և որդի աստուծոյ: - 361. Զուարակն է պատարագեալ. և խոյ մեզ ծնեալ. և գառն *կերակրելի*. և նոխազ զմեղս մեր առեալ: - 374. Տնկականք՝ այսինքն բոյսք և պտուղք յորմէ և հացին թէ ի մարդոյ և թէ յայլ կենդանեաց՝ *կերակրելիք* են: - 511. Իսկ կենդանիք զենեալ յառնէ միայն *կերակրելիք* են. այլ ի կնոջէ ո՛չ: - 511. Այլ ա՛րդ՝ հեղձուցեալն՝ սուրբ և *կերակրելի* է նոցա. և պոռնկութիւնն անխտիր յորժամ կանգնեն զգլորեալն: - 552

**ԿԵՐԱԿՐԻՄ +** Յարցանեմ զբաժանօղսդ յերկուս, զո՞ր բնութիւն *կերակրիս* որով կենդանանաս: - 69. Նոյնպէս և զկիրսն և զզօրութիւնսն անբաժանաբա՛ր ասեմք ի քրիստոս. որպէս Կիրք է քաղցնուլն. և Ներգործութիւն զիազարսն *կերակրել*: - 85. Երկրորդ՝ զի տնկականն ունի *զկերակրիլն* զաճիլն՝ և զծնանիլն: - 117. Նա՛խ՝ զի ի նմա՛ շրջին գազանք և *կերակրին*: - 196. Եւ զի սեղան է ամենալիր. յորմէ *կերակրիմք* ամենայնքն: - 211. Որպէս լուսաւորք երկնից քարշեն յերկրէ և ի ծովէ զհիւթ՝ և *կերակրին* և անապականք են: - 224. Եւ որպէս հուր ճրագին զիւղն *կերակրի*, և ինքն ո՛չ առաւելու: - 224-225. Որպէս բոյսք վասն անասնոց. այսինքն է՛ այլոցն. ուստի անասունք *կերակրիլով* ծառայեն մարդոյն: - 230. Տասներորդ՝ զի և բանականս մարդ՝ քան զանբան կենդանիս տգէտ լինէր. վասն **զի ամենայն կենդանի ունի բնական ճանաչումն իւրոց և օտարաց. ըստ այնմ որ արագիլ արդար՝** *կերակրէ* **զիւր ծնօղսն միայն. և տատրակ մենացեալ ի զուգակցէն, ո՛չ զուգի ընդ ա՛յլ տատրակի**: - 238-239. Զի արիւնն *կերակրէ*. և ջիլն զգայութիւն տայ. և շնչերակն զջերմ կենդանութիւնն բոլոր մարմնոյն: - 244. Երրորդ՝ ևս յայտնի. զի ընդ նիւթոյ կազմութեանն համանգամա՛յն է և երևումն ոգւոյ. զի յորժամ անկատա՛ր է նիւթն, միայն *կերակրիլն* երևի ի նմա: - 255. Այսպէս և հոգին ընդ անկատար նիւթոյն ունի *զկերակրիլն*. և յորժամ հաստատի զգայութեամբն ծաղկի. և յևս հաստատիլն՝ բանականութեամբ պտղաբերի ի վերին խնամոցն որպէս պտուղն այն յարեգակնէ՛: - 255. Եւ կամ որպէս ծնեալ մանուկն ունի առ ինքն ծածկեալ զհոգին. այլ նա *կերակրի* և ապա զգայ. և յետոյ խօսի: - 255. Իսկ տնկականն *կերակրի* յետ **զ** աւուր: - 262. Արդ *կերակրելովն* պահի անհատն: - 262. Ուստի յա՛յտ է՝ զի յառաւել *կերակրի* և աւելի աճէ և բազումս ծնանի տունկն քան զանասունս: - 266. Իսկ տնկականն միայն գործ է ի *կերակրիլն* և աճիլն, նա նկարէ յինքեան ի զգայութեանցն և ի մտացն ըստ տկարութեան իւրոյ անկարգաբար երևեցուցեալ ի յիշատակարանս մտացն որպէս ասացաք: - 268. Յինգևժերորդ՝ որք աստ երկիր պագանեն քրիստոսի, կենաց հացիւն *կերակրին* որպէս եղբարքն յովսեփայ: - 314. Նոյնպէս և քրիստոս իմաստութեամբն իւրով *կերակրէ*՛ զնոսա և զգեցուցանէ որպէս **իդ** երիցանցն, որ տուաւ նոցա արկանելիս սպիտակս. այս է շնորհին մաքրութեան զոր ընկալան ի քրիստոսէ: - 315. Վասն որոյ ի յընչիցն պատարագ մատուցանելով և աղքատս *կերակրելով* գոհանան զաստուծոյ: - 321. ...և յայնցանէ աճեցոյց տէր զինչս և զանասունս նորա. որպէս յանապատին զսակաւն աճեցոյց նկանակ, և զբազումսն *կերակրեաց*: - 326. Այլ բանն աստուծոյ ի ծովէ լորամարգ ի վիմէն ջուր և յօդոյ մանանայիւ *կերակրեաց* զնոսա. զի ամենակա՛ր է զօրութիւնն աստուծոյ: - 397. Երկրորդ՝ զի **խ** ամ յանապատին հաց ո՛չ ետ նոցա. այլ մանանայ և զայլսն. զի բանիւն աստուծոյ *կերակրեցան* հոգւով. և ո՛չ մարմնական հացիւ: - 397. Չորրորդ՝ հաց ի յերկնից իջեալ մանանայն կենարար. և բանն աստուծոյ նոյն ինքն տէրն մեր. որպէս ասաց առ փորձիչն թէ՝ ինն *կերակրին* ամենայն սուրբք և ո՛չ հացիւ: - 397. Ութերորդ՝ մովսէս ի լեառն եկաց **խ** տիւ և **խ** գիշեր անսուաղ. և *կերակրիւր* բանիւն աստուծոյ. նոյնպէս և եղիա. նաև տէր մեր ի փորձութեան լերինն: - 397. Իններորդ՝ մանուկն յարգանդի ո՛չ հացիւ կեայ. այլ հրամանաւն աստուծոյ *կերակրի* ընդ պորտն զինն ամիս. որպէս տնկականք, և որպէս նոյ ի տապանն. մինչ ելանէ յարգանդէ...: - 397. ...և ապա ստեամբք *կերակրէ* զնա մայր իւր բանիւն աստուծոյ. զոր ասեն յաշխարհի, եթէ զմին դուռն փակէ աստուած, նա զերկուքն բանայ. զի յորժամ զմին դուռն պորտին փակեցաւ, **բ** ստինքն բացան: - 397. Երրորդ՝ զի ի փշրանաց սեղանոյն և հեթանոսք *կերակրեսցին*: - 402. Քսանևդ, Վասն եղիայի զոր ագռաւն *կերակրեաց*. և գնաց ի հեղեղատն. և նուաղեցաւ ջուրն: - 413. Դարձոյց ի յորդանանու զբերզելի որ տասամբն *կերակրեաց* զդաւիթ. ի տիպ հին օրինացն **ժ** բանեան զոր կատարեց քրիստոս: - 438. Զի՞նչ է որ ի ձեռաց ագռաւու *կերակրեցաւ* եղիա. և ուստի՞ էր: - 443. Զի չասացաւ նմա ի ձեռաց քահանայիցն *կերակրիլ*. այլ ի ձեռաց ագռաւուցն: - 443. Երրորդ՝ ցուցանէ զպտուղ դրախտին նոյնպէս գոլ առանց յաւելուածոյ և առանց նուազելոյ. թէպէտ *կերակրիւր*: - 444. Յացն հրեշտակաց՝ *կերակրի*: - 470. Ասեմք եթէ, *կերակրիլն* ո՛չ է մասն ապականութեան. ուստի յա՛յտ է զի ադամ նախ քան զյանցանելն ի դրախտին *կերակրիւր* և ո՛չ էր ապականացու. այլ անապական: - 501. Նոյնպէս և քրիստոս *կերակրիւր* անապական մարմնով: - 501. Նոյնպէս քրիստոսիւ տեսանեմք զհայր աստուած, և առնեմք զկամս նորա. և *կերակրիմք* և զմայլիմք հոգէպէս: - 532. Եւ ոմանք ոչ ինչ համարին զյանցանս մտաց. և ո՛չ դնեն ի կարգս մեղաց. օրինակ տալով իբր զդատարկ սեղան ոչ ինչ *կերակրել*. և իբր զպտուղ ծառոց տեսութեամբ միայն վայելել: - 555. Ա՛րդ՝ զբարի գործս ամենայնցն հրամայէ *կերակրել* և գործել. - 600. Որպէս և մանկունք նախ խնդրեն և ապա՛ ծնօղքն *կերակրեն*: - 654. ...նախ պա՛րտ է զհոգին *կերակրել* և ապա՛ զմարմինն: - 654. Չորրորդ, *կերակրիմք* ի նմանէ: - 657. Նաև **գ** զօրութիւնք են տնկականին. այսինքն *կերակրիլն*, աճիլն, և ծնանիլն. և մեք ունիմք զայս: - 681. Ա՛րդ՝ եկեալ հրեշտակն խնդրէ ի նմանէ զբարի գործս որով նա *կերակրի*...: - 697. ...որով դրոշմեալքն յետ արտաքս ելանելոյ ի մարմնոյս, թռչին յանապատն ի մեղաց

յերկինս _կերակրիլ_ անդ յուսով մինչև լնու թիւ կատարման աշխարհի: - 703. Զի նախ քան զյանցանելն ադամ ունէր զկիրս բնական և անգոսնելի. որպէս _կերակրիլն,_ ննջելն, և այլն: - 759. Իսկ ամենայն զգայական կենդանւոյ թէպէտ իգին ըստինք գոն վասն զծնունդս _կերակրելոյ_. սակայն և արուացն գոյ նոյն մասն անդամոց կազմեալ յարարչէն. և այն յի՞նչ պէտս լինի. խնդրել արժան է: - 785

**ԿԵՐԱԿՐԻՉ +** Տասներորդ՝ հայրն առաքեաց զյովսէփ առ եղբարսն որ էին հովիւք և երիցունք տեսանել զնոսա. և բանիւն յուդայի վաճառեցաւ և եղև տէր երկրին և _կերակրիչ_: - 313. Նոյնպէս և քրիստոս եկն առ եղբարս իւր որ էին որդիք դաւթի և աբրահամու և առաջնորդք ժողովրդեանն. և յուդա վաճառեց զնա. և տէր եղև կենդանեաց և մեռելոց և _կերակրիչ_. զի ազատեաց զհոգիսն ի սովոյ դժոխոցն: - 313

**ԿԵՐԻՆԹՈՍ** - Ապա թէ ո՛չ, լիցի աղանդն _կերինթոսի_ և սադուկեցւոցն. որք մարմնաւոր ասէին զարքայութիւնն: - 758-759

**ԿԵՐՈՂ (ԿԵՐՕՂ) +** Նախ ասեմք թէ՝ թագաւոր էր այր _կերօղ_ և արբեցօղ և վաւաշոտ. զի՞նչ իցէ ի համար բան նորա. թէպէտ կարի ասել ո՛չ կարեմք: - 40. Երկոտասաներորդ՝ զի թէ վասն բնակութեան նորա՝ է մարմին նորա ուտելի որպէս ինքն ասաց՝ «մարմին իմ ճշմարիտ կերակուր է». _կերօղքն_ եղիցին գազանք մարդակերք. և ո՛չ մարմնոյ և արեան որդւոյն աստուծոյ: - 67. Պտուղքն դրախտին շօշափելիք են և կերակրելիք. հատանի և ծասկի և փոփոխի ըստ պատահական որակացն. և անապական մնայ ըստ գոյացութեանն և ներգործութեանն ի _կերօղն_: - 223. Եւ զինչ և կամէին, զամենայն համս տայր ի բերան _կերողացն_: - 338. Եւ զի պատահմունքն փոփոխելի է, ուստի յա՛յտ է զի փոփոխի և միաւորի՛ ի մարմին _կերողացն_: - 339. Նոյնպէս և նշխարք մարմնոյն բոլոր. առ ի նշանակել թէ բոլոր պարտ է ունել հաւատ _կերողացն_: - 339. Եօթներորդ՝ առաւօտին. զի առաւօտ գործէ _կերողացն_ հալածելով զխաւար մեղաց: - 339

**ԿԵՐՊ +** Ասեմք առ այս թէպէտ ունին զօրութիւնս, բայց այլ և այլ _կերպիւ_...: - 12. Բայց նախախնամութիւնն աստուծոյ ճանաչէ զփրկեալսն, և տայ _զկերպ_ փրկելոցն որով փրկին ընտրեալքն: - 18. Վասն ճանաչման իւրոյ աստուած կազմեաց կրկին _կերպիւ_ օրինակս. այսինքն իմանալի և զգալի. որպէս հոգին, միտքն, և նմանք սոցա. կամ արեգակն, լոյս, և նմանք նոցա: - 24. Դարձեալ քննեսցուք ըստ մեզ. զի ո՛չ են հակառակ առաքելոյն բանն և աւետարանին, թէ հայր մեծ է քան զորդի. զի երկոքին նոյն ինքն աստուածութեանն իմանին. ըստ այնմ որ զմեր նուաստ և տկար բնութիւնս միացոյց ընդ իւրում աստուածութեանն, և անտեսանելին տեսանիւր՝ և ծառայի _կերպիւ_ շրջէր վասն տնօրէնութեան՝ ասի փոքր յայս միաւորութեանս քան զհայր. իսկ ըստ այնմ որ է՛ անճառ և նախքան զյաւիտեանս ծնունդ ի հօրէ՛, հաւասա՛ր է հօր և ոչ փոքր: - 40. Առորս ասեմք թէ՝ առարկութեանս այսմիկ զանազան _կերպիւ_ կարեմք լուծումն առնել: - 40. Իսկ այլ վարդապետք ասեն թէ՝ բանիւս այսու՝ ցուցանի _կերպ_ աստուածային ծննդեանն. քանզի ի ծնունդն՝ ծնեալն առնու զբնութիւն ծնողին որ է՛ կատարելութիւն: - 41. Դարձեալ _կերպիւ_ ինչ ասի հնազանդ որդի հօր գործով՝ լրմամբ կամացն: - 42. Զի քրիստոս Քահանա՛յ է ըստ կարգին մելքիսեդեկի ժ _կերպիւ_: - 50. Եւ ո՛չ ասի ի գիրս սուրբս ըստ այդմ բառի, բայց այլ _կերպիւ_ ցուցանէ զայդ...: - 55. Պատասխանեմք եթէ՝ թէպէտ հոգին ունի զբնութիւնն ի հօրէ՝ սակայն ո՛չ ծննդեամբ որպէս որդի, այլ բղխմամբ. որպէս շունչն և բանն ունին զէութիւնն հոգւոյն այլ և այլ _կերպիւ_. և որպէս ադամ յառաջ էած յինքենէ զսէթ և զևա. զմինն ծնունդ և զմիւսն ո՛չ ծնունդ. և ունին երեքեանն զմի և զնոյն բնութիւն մարդոյ: - 60. Նաև ի կանոն երից սուրբ ժողովոցն՝ ընդ բանիւ արգելեալք կան նոքա՝ որ ա՛յլ _կերպիւ_ քարոզեն և այլ _կերպիւ_ ուսուցանեն քան զոր նոքա ուսուցանեն: - 64. Այլ այնպէս ասաց առ ի ցուցանել զանչափ յաւիտենական աստուածութիւնն՝ որ ըստ ինքեան պարունակէ զամենայն ժամանակս. ըստ որում աստուածային ելմունք ի յապառնի ժամանակս իցեն. և _կերպիւ_ ինչ ներկայաբա՛ր գոն: - 65. Եւ ո՛չ է և ո՛չ ասի բ որդի կամ բ դէմ և այլն. այլ մի որդի և մի անհատ յատկութեամբ իւրով. և մի դէմ. և մի անձն. և մի _կերպ_. և այլն: - 77-78. Ո՛չ ասի պարզ և սոսկ մարդ. վասն մարդկային _կերպին_: - 79. Իսկ մեք դասք ուղղափառաց կրկին _կերպիւ_ իմանամք զբանս զայս: - 80. Եւ զայս միաւորութիւնս խոստովանիմք մեք մի անձն. և մի դէմ. և մի _կերպ_. և մի բնութիւն. և մի կամք, և մի ներգործութիւն: - 83. Նիւթն. ձևն. այսինքն է _կերպն_. Գաւառն. Ազգայինքն. Ժամանակն. Տեղին. և յատուկ Անունն: - 87. Նախ զՆիւթն զմի բնութիւն նիւթական որպէս մարդ. և զմիւսն բնութիւն աննիւթ որպէս զաստուած. զՁևն՝ զմինն քանակութեամբ և որակութեամբ տարբերեալ որպէս մարդոյ. և զմիւսն ի վեր քան _զկերպ_ և զձև որպէս աստուծոյ: - 87. Ըստ որոյ _կերպի_ և իցէ, թիւ ի ներքոյ բերէ միոջէն և առ մին. և նոյնէ անձն որոշեալ թըւով: - 88. Այն որ նըւաստացոյց զինքն ի յունայնութիւն մարդկան, եղև ի _կերպ_ ծառայի՝ և գործով և կրիւք և նմանութեամբ մարդկան...: - 93. Դարձեալ՝ գիտելի է՝ զի կրկին _կերպիւ_ առեալ լինի մինն: - 110. Սակայն՝ զի թէ էն ըստ որում է աստուած՝ կրկին _կերպիւ_ տեսանի. այսինքն գիտութեամբ և անգիտութեամբ. դնելով և

բացաբառնալով այսպէս: - 119. Վասն է՞ր աստուածաբան մարգարէքն զտեսիլ երկնայնոցն սոյնպէս անարգ *կերպիւ* տպաւորեցին. որպէս առիւծ. և եզն. աթոռք. և կառք. և այլն: - 131. Իսկ խօսի հրեշտակն ընդ մարդոյ կրկին *կերպիւ*: - 145. Երկրորդ՝ *կերպիւ* խօսի հրեշտակն ընդ մարդոյ տպաւորութեամբ երեւակայութեան: - 145. Նոյնպէս և խօսի հոգին ընդ հրեշտակն մարմնական *կերպիւ* զոր իմանայ հրեշտակն որպէս զայլ զգալիս որքան է ի մարմնի: - 145. Եւ ըստ ա՛յսմ *կերպի* է փորձութիւնն բարի. զի բնութեամբ չար է. և պատճառէ՛ զչար մեղքն. բայց պատահեցաւ ոմանց զի յաղթեցին փորձութեանց և ընտրիք երևեցան: - 160. Այլ ասի տեղի *կերպիւ* ինչ, զի է՛ հայր ի յորդի. և որդի ի հայր. և հոգի ի հայր և յորդի. և անդրադարձեալ...: - 172. Եւ այլք ասեն թէ՝ *կերպն* է ցամաք երկրիս. որպէս հայելին զմարդոյ *կերպն* յինքն երևեցնէ: - 187. Որ ասի **ժե** *կերպիւ*: - 195. Երկրորդ՝ ի *կերպ* հրոյ փայլէ: - 206. Ջուր **բժ**ան *կերպիւ* ասի: - 209. Տասներորդ՝ անունն յարմար նշանակութիւն է կենդանեաց ըստ բարուցն և զանազան *կերպիցն* եղեալ. զի ամենայն անուն՝ յիրէն և ի գործոյն և ի ձայնէն դնի: - 220. Իսկ երկրորդն թէ յորմէ՞ սեռէ է օտարն և աննմանն՝ գիտելի է, զի դէմն և *կերպն* ի չորից սեռից գոյանայ. ի գոյէ՝ ի քանակէ՝ յորակէ և ի տեղւոյ: - 236. Սակայն *կերպն* և կերպարանն տարորոշին. որպէս գաղափարն և պատկերեալն: - 236. Դարձեալ խորհուրդ մարդոյն ճանաչի յերից. այսինքն կամ ի *կերպէ՛* և յօրինակէ խօսիցն և ձայնին: - 250. Եւ յորժամ ձևանայ ի *կերպ* մարդոյ, յայնժամ բանական հոգին երևի ի նմա ի խնամոցն աստուծոյ: - 255. Զորօրինակ՝ արուեստաւոր ոք կամիցի դրօշել ի քարեայ պատկեր, նախ նկարէ՛ ի միտս իւր զձև պատկերին. և ապա հատանէ զքարն և տաշէ՛ և դրօշմէ՛ *զկերպն* ըստ այնմ նմանութեանն որ էր ի միտս ձևացեալ: - 258. Եւ ի **իա** աւուրցն ի վեր՝ երևեալ շնչոյն ձևակերպէ՛ *զկերպ* մարդոյ մինչ ի **խ** օր արու մանկան. և իսկոյն հեղի ի նա՛ հոգին բանական ի շնորհացն աստուծոյ ծագեալ ի նա: - 261. Դարձեալ՝ ասեմք եթէ **գ** *կերպիւ* մարդն իմանի պատկեր. այսինքն բնական, շնորհաց, և փառաց: - 273. Դարձեալ՝ մա՛րդն է ի պատկեր աստուծոյ եղեալ առաւել քան զհրեշտակս **գ** *կերպիւ*, ներքոյ և արտաքոյ. զորս ո՛չ ունին հրեշտակք: - 275. Ասեմք եթէ՝ էառ քրիստոս մարմին ի կուսէն մարիամայ զմերս թանձր և մեղանչական. և միաւորելով ընդ ինքեան՝ եղև առաջին *կերպ* անմեղութեանն ադամայ որ էր ի դրախտին: - 282. Եւ է՛ որ *զկերպն* և զձևն միա՛յն փոխէ, և կոչի առաչօք. որպէս յանէսն և յամրէսն առնէին կախարդութեամբ դիւական: - 335. Եւ **ե** միշտ՝ և առ ո՛չ միշտ. զի *կերպն* փոխեցաւ առ նորս: - 340. Նա՛խ՝ *զկերպն* ադամայ որ ի դրախտին՝ երևեցոյց յինքեան. զոր ետես մահ և ընկէց զթագն իւր: - 352. Վհուկն ա՛յն է, որ ի վհաց և յանդնդոց մեռեալս կերպարանեն. դնք ի *կերպս* մարդկան երևին. զոր դևակոչ ասեն և հազիմաթ. և Նշանագէտ, որ ի գերեզմանս ննջէ և նշանաւոր մարդ կերպարանէ. որպէս զսամուէլ սաւուղայ երևեցոյց հարցուկ կինն: - 388. Չորրորդ, Վասն սրբութեան Կուսին զանազան *կերպիւ*: - 454. Իննևժ, Թէ ո՛չ լինէր ծեր՝ **ե** *կերպիւ*: - 454. Քսաներորդ, Թէ արու ծնաւ քրիստոս **ժ** *կերպիւ*: - 454. Նա՛խ՝ հաւանական ըստ *կերպի* դաւանութեանն հաւատոյ...: - 457. Իսկ այլ վարդապետք ասեն թէ՝ արդարութիւնն աստուծոյ երեք *կերպիւ* առեալ լինի: - 458. Առաջին *կերպիւն* է՛ հատուցումն բարեաց և պատիժ չարաց՝ որ է՛ գործ արդարութեան: - 458. Նոյնպէս և ողորմութիւնն աստուծոյ **գ** *կերպիւ* առեալ լինի: - 459. Բազում ինչ անդ բնութիւն կորոյս զօրէնս իւր. այսինքն ի կողմանէ մօրն, ի կողմանէ զաւակին, և ի կողմանէ *կերպին*: - 469. Այլ և ի կողմանէ *կերպին* եղեն զարմանալիք: - 470. Այլ մեք այսպէս խոստովանիմք. եթէ օծաւ բանն աստուած ի հոգւոյն սրբոյ յորժամ յղացաւ մերովս *կերպիւ* յորովայնի...: - 475. Երկրորդ՝ զի երկրորդ ադամ եղև զպարտիս նորին վճարելով, պարտ էր ի *կերպս* ադամայ երևիլ: - 480. Համաձայնին ի նիւթ ջրոյն և ի *կերպ* ընկեղմելոյն: - 488. Որո՞վ *կերպիւ* համբարձաւ: - 520. Մինչև ցամպս այնու *կերպիւ* որ նախ քան զչարչարանս: - 520. Նա՛խ՝ զի հաստատեսցի յարութիւն իւր բազում *կերպիւ*: - 520. Եօթներորդ՝ պարտ էր մեծութեան այսմ պարգևի յայտնի լինի **գ** *կերպիւ*: - 521. Երկրորդ՝ զի ի *կերպ* հրոյ փայլէ. այսպէս և հոգին սուրբ հրեղէն լեզուօք: - 522. Դարձեալ՝ թէպէտ մի է հայր և մայր քրիստոսի և եկեղեցւոյ, այլ զանազան *կերպիւ*: - 534. Իսկ **ը** երորդ երանութիւնն դառնայ յառաջին գլուխն կրկին *կերպիւ*: - 586. Որ և ըստ այսմ *կերպիս* ո՛չ լինի տուեալ շնորհք հոգոյն ի մկրտողէն առ մկրտեալն...: - 588. Չորրորդ՝ զի սովաւ իմասցուք զմարդեղութիւն բանին կրկին *կերպիւ*: - 598. Զի որպէս **գ** *կերպիւ* մեղանչեմք. այսինքն ի խորհուրդս, ի բանս, և ի գործս: - 601. Նոյնպէս **գ** *կերպիւ* պարտիմք ապաշխարել: - 601. Եւ յետոյ դնէ ապաշխարանք թէ զինչ *կերպիւ* պատեհ է. պահք. թէ աղօթք. թէ ողորմութիւն. պատարագ. և այլ զինչ զոր կարող իցէ..: - 602. Նա՛խ՝ թէ ո՛չ գիտէ *զկերպ* աղօթիցն, կամ ծունր կրկնել, կամ զձեռն տարածել. և սոյնպիսիք ո՛չ մեղք են և ո՛չ արդարութիւն: - 620. Հինգերորդ հալեալ մոմ ո՛չ ունի զառաջին *կերպն* այլ զգոյացութիւնն. նոյնպէս և գոյացութիւնն երկրի ո՛չ կորնչի. այլ պատահմունքն այլայլին. զի ո՛չ ճանաչի թէ այս այն է: - 728. Եւ ա՛յս է տարածայնութիւն սոցա. զի ոմանք ապականացու ասեն զխաչն տէրունական առարկելով կրկին *կերպիւ*: - 732. Ընտրելոցն երևի այնու *կերպիւ* որ ի թափօր երևեցաւ: - 740. Չորրորդ՝

վասն արմատոյն խոշորութեան. և խոշորութիւնն է բ *կերպիւ*. մին վասն մտացն մտածութեան...: - 765-766. Եւ ըստ այլ *կերպի* փոփոխին սոքա ի միմեանս և լինի ստորասութիւնն բացասութիւն, և բացասութիւնն ստորասութիւն: - 787. Զի առ հասարակ ամենայն տարերք ըստ իւրեանց *կերպի* կրեցին զայլայլութիւն սգոյ, չարչարակիցք գոլով արարչին իւրեանց: - 788

**ԿԵՐՊԱԳՐԵՄ +** Յաղագս որոյ և արարեալք ի նմանէ մարմին և անմարմին՝ կենդանի և անկենդան, զնմանն արարչին յինքեանս *կերպագրեալ*, նմանք և աննմանք են իրերաց: - 237

**ԿԵՐՊԱՆԱՄ +** Վեցերորդ՝ զի թէ մեք շնորհիւ՝ որդեգրեալքս *կերպանամբ* առ ճշմարիտ և բնութեամբ որդին, և թէ և նա՛ է ըստ մեզ շնորհիւ, պիտո՛յ է նմա վերնագոյն բնութեամբ որդի մարմնացեալ ի յոր *կերպասցի* և սա՛ ի նմանութիւն նորա շնորհօք որդի: - 67. Դարձեալ՝ յարացոյցն ո՛չ թանձրանայ որպէս տարերք. և ո՛չ որպէս նիւթ և տեսակ *կերպանայ*. և ո՛չ թէ յարացոյցն արար զմեզ: - 112. Եւ սուտ առաքեալք զճշմարտիցն *կերպանային*. և այն զի ո՛չ ունէին զնոյն տիպ. իսկ թէ ունիցին զնոյն տիպ՝ ո՞րչափ ևս: - 238. Արդ՝ ժ թիւն կատարեալ է. և չորսն տարրական է. այսինքն զի կատարեալ հոգին բանական ի նո՛յն ժամն խառնեալ միաւորի ընդ մարմնոյն տարրական, և *կերպացեալ* լինի մի մարդ մի դէմ և մի բնութիւն մարդոյ ի հոգւոյ և ի մարմնոյ. որպէս քառասունն ի տասանց և ի չորից է գոյացեալ: - 262

**ԿԵՐՊԱՍ +** Վեցերորդ՝ որ փոխին այլք յայլոց բնութենէ վասն առատութեան բնութեանն. որպէս կարպասածին ճըճին ունի սա ծնունդ սերմամբ իւր զնմանն. և ունի ելումն *զկերպասն*: - 53

**ԿԵՐՊԱՍԱԾԻՆ +** Վեցերորդ՝ որ փոխին այլք յայլոց բնութենէ վասն առատութեան բնութեանն. որպէս *կարպասածին* ճըճին ունի սա ծնունդ սերմամբ իւր զնմանն. և ունի ելումն զկերպասն: - 53

**ԿԵՐՊԱՐԱՆ +** Իններորդ՝ նա՛ ի տաճարին նստի և ուսուցանէ. և սոքա ի ներքս ի յեկեղեցի. *զկերպարանս* բարեպաշտի ունելով արտաքոյ՝ ծածկեալ են գառնենեաւ զգայլենիս: - 35. Տասներորդ՝ նեռն քարոզութեամբ պատրէ՝ և ուրուական սքանչելեաց. և այլն. և սոքա քաղցրաբանութեամբ և օրհնութեամբ պատրեն զմիտս անմեղաց. և հրեշտակ լուսոյ *կերպարանին* որպէս հայրն իւրեանց սատանայ...: - 35. Այս է մեկնութիւնն թէ՝ հաւասարն աստուծոյ՝ յափշտակութիւն և զրկումն չհամարէր իւր զծառայի *կերպարանս* առնուլ. զի ո՛չ ունէր յայլմէ կասկած խլելոյ զփառսն. զի ի՛ւրն է սեպհական: - 39. Արդ բանն առանց մարմնոյն քրիստոս ո՛չ է. ապա ուրեմն յա՛յտ է զի միացեալ մարմնովն է՛ հաւասար և ի *կերպարանս* աստուծոյ տէր մեր յիսուս քրիստոս: - 72. Ասաց թէ՝ որ ի *կերպարանս* աստուծոյ էր բանն, այսինքն էակից հօր, ո՛չ ինչ զրկումն համարեցաւ ի ներգոյական փառաց զլինիլն հաւասար մեզ: - 93. Այն որ նըւաստացոյց զինքն ի յունայնութիւն մարդկան, եղև ի կերպ ծառայի՝ և գործով և կրիւք և նմանութեամբ մարդկան. և *կերպարանօր* գտաւ մարդ. զի ի վեր էր քան զմարդ՝ և քան *զկերպարան* մարդոյ: - 93. Այլ և նոյն *կերպարանն* հօր՝ խոնարհեցոյց զինքն ի մահ. որ կարի վերջինն էր: - 93. Զիա՞րդ միայն ի դէմս բանին իցէ այն՝ որ ի *կերպարանս* հօր է և հաւասար աստուծոյ: - 94. Վասն անկման դիւացն. և հակառակութեան նոցա. և լոյս *կերպարանին*: - 102. Նախ՝ հայելով ի *կերպարանս* և ի նմանութիւնս որ է՛ կարգաւորութիւն արարածոց. և սոքօք ի յարացոյցն սոցա ելանել, և ի նմանէ դարձեալ ի նախատիպ յարացուցին ելանել. և այնպէս տեսանել թէ է՛ աստուած պատճառ ամենայնի: - 119. Երրորդն է նշանական աստուածաբանութիւն. որ ի զգալի *կերպարանաց* փոխակցիմք յիմանալի տեսութիւնն. թէ զի՞նչ նշանակէ մարդ երևելին. կամ առիւծ. գառն. հուր. լոյս. և այլն: - 122. Այսպէս և ծիածանն յինքն փոխէ *զկերպարանն* և լինի այլ: - 131. Հինգերորդ՝ զի տեսեալ զանարգ *կերպարանն* խնդրեմք զճշմարիտ իմացումն: - 132. Նոյնպէս և լուսինն. զի այն որ պայծառն է՝ *կերպարանք* երկրի է. և աղտն՝ ծովուց: - 187. Իսկ գազան, կամ զի զզօ՛ղ են և պատառօղ. կամ զի զանազան և ահագին *կերպարանք* ունին: - 216. Նա՛խ՝ ի փառս աստուծոյ ստեղծան. զի յորժամ զզանազան *կերպարանս* նոցա տեսանեմք, փառս տամք արարչին: - 217. Ըստ այսմ ապացուցի. զի բնութիւնն ի սեռ՛մն է և ի տարբերութեան ուստի բաղկանայ. և անձն ի բուքիւնն է յորմէ կայանայ. և դէմքն ի յանձնէ՛. և *կերպարանն* ի դիմաց. և պատկերն ի *կերպարանաց*. և տիպն ի պատկերաց. և որակ տպաւորեալ ի պատահմանց: - 235. Եւ պակասեալ ի սոցանէ մարմնոյն, ցուցանի *կերպարան* ի գոյէ ի քանակէ և յորակէ և ի տեղւոյ շարակցեալ. որպէս յա՛յտ է ի հայելւոջ: - 236. Սակայն կերպն և *կերպարանն* տարորոշին. որպէս գաղափարն և պատկերեալն: - 236. Զի որդի պատկե՛ր է հօր և տիպ և *կերպարան*: - 237. Երրորդ՝ ըստ հիւթին յաւելլածոյ՝ և պակասութեան մաղձիցն՝ ի ներքուստ կամ յարտաքուստ, ջերմ և ցուրտ և այլն, զնորին նմանն և *զկերպարանն* առնու առ ինքն: - 268. Դարձեալ՝ պատկերն ի *կերպարանն* լինի առեալ. և նմանն ի յորակն կամ ի քանակն: - 273. Եւ մարտեաւ ընդ նմա այր, զչափ ուժոյ և *զկերպարանքն* եսաւայ զգեցեալ. զի կրթեսցի և մի երկիցէ ի նմանէ: - 311. Եւ տէր մեր ազատ յերկինս առ հայր, և յերկրի եղև ծառայ *զկերպարանս* ծառայի առեալ: - 313. Նա՛խ՝ գուժ լծոց եզանցն՝ և սպասաւորացն

մահ. և գուժկան ձևանայր դև մի ի *կերպարանս* ծառայիցն յոբայ: - 322. Չինգերորդ՝ զի *զկերպարանն* հնոյն ադամայ յինքն բերիցէ ախտիւ անկմանն: - 325. Երկրորդ ա՛յն է՝ որ յորժամ լինի կամքն մարդոյն չար և խիստ ի ծածուկ, և զայն յայտնէ՛ աստուած. որպէս նաբուգոդոնոսորայ. որ ունէր սիրտ գազանի՝ ի *կերպարանս* գազանաց փոխեցաւ: - 336. Եւ զոր ինչ լինելոց էր ի տարին, ի նոյն *կերպարանս* փոխեին և ակունքն: - 349. Ութերորդ՝ որպէս սուտ էր յարութիւնն, նոյնպէս սուտ է և խօսքն և *կերպարանօք*: - 430. Եւ կամ աննիւթ ինչ և անկերպ՝ ընդ նիւթական *կերպարանաց* ձևացեալ. յորում իւրաքանչիւրոցն էութիւնք անշփոթաբար երևին. որպէս պղինձ գնդացեալ. կամ քուէացեալ: - 476. ...զի թէ յայտնի *կերպարանօք* լինէր միս և արիւն, ո՛չ ոք իշխէր մերձենալ: - 597. ...նոյնպէս վերերևոյթ *կերպարանքն* նոյն է ըստ ձևին. այլ բնութիւնն միաւորեալ է ընդ բանին աստուծոյ և եղեալ աստուած: - 598. Իսկ մեղաւոր հոգին դարձեալ ի ձեռն հրեշտակաց. զի աղաչէր զնա երևիլ. կամ ի ձեռն դիւաց *կերպարանին* նոքա: - 686. Այսպէս քրիստոս այնու *կերպարանաւ* որով համբարձաւ՝ հանդերձ ամենայն դասուք հրեշտակաց ի դատաստան եկեսցէ: - 734. Ո՞րպիսի *կերպարանօք* երևի տէրն: - 740. Զի փոխեսցին յայսմ *կերպարանաց* զոր ունին, և այլ ինն նո՛ր զգեցցին...: - 759

**ԿԵՐՊԱՐԱՆԻՄ +** Իսկ աստ էութիւն հրեշտակին է *կերպարանեալ* մարմին տեսանելի: - 133. Վասն է՞ր այժմ լուսով *կերպարանին:* - 147. Եւ թէպէտ լոյս *կերպարանի* այժմ, բայց չտեսնու զլոյս իւր. որպէս և ո՛չ մեք զմեր հոգւոյս: - 147. Եւ թէպէտ անկան և եղեն դևք՝ գոյացականքն մնացին առ նոսա. և հրեշտակ լուսոյ *կերպարանին* ըստ առաքելոյն: - 151. Նա՛խ՝ զի մնացորդք գործոց և խորհրդոց *կերպարանին* ի յիշատակարանս հոգոյն զոր ինչ գործեաց ի անցելումն, կամ խորհեցաւ վասն հանդերձելոյն: - 268. Եւ որպէս սատանայ հրեշտակ լուսոյ *կերպարանի* որ չէ իսկ: - 335. Վհուկն ա՛յն է, որ ի վհաց և յանդնդոց մեռեալս *կերպարանեն*. դևք ի կերպս մարդկան երևին. զոր դևակոչ ասեն և հազիմաք. և Նշանագէտ, որ ի գերեզմանս ննջէ և նշանաւոր մարդ *կերպարանէ*. որպէս զսամուէլ սաւուղայ երևեցոյց հարցուկ կինն: - 388. Ապա յայսմ ամենայն է յա՛յտ է՝ զի ոչ ինչ գիտեն զառաջիկայն դևք. և ո՛չ իմանան զներկայական խորհուրդս. և ո՛չ յառնեն մեռեալք. այլ սուտ *կերպարանին*: - 430. Չինգերորդ՝ միաւորութիւն սովորեցաք կոչել յորժամ նիւթ ինչ աննիւթով *կերպարանեալ* տեսանի տեսակաւ: - 476. ...այլ ի սիրտս ամենեցուն խորհուրդ ամբարշտացն պատուհասից *կերպարանի*. իսկ պատիժն յետ արդար դատաստանին: - 703

**ԿԵՑՈՒՑԱՆԵՄ +** Եւ տէրն զհին կտակն որ խստութիւն էր և սպանօղ՝ ընդ նորոյս խառնելով. որ հոգւով է և *կեցուցանօղ*: - 126. Երրորդ՝ յուսացաւ կոչել զանուն տեառն աստուծոյ ի յօգնութիւն. զոր մարդիկ յուսահատեալ էին եթէ վասն մեղաց մերոց եթող զմեզ աստուած ի ձեռաց. և նա ի յօգնութիւն կոչեաց զանուն տեառն աստուծոյ. այսինքն զի տէր է՝ ո՛չ գարշի ի ծառայից իւրոց. և զի աստուած է՝ էա՛ծ զմեզ աստ ոչ ի կորուսանել, այլ ի *կեցուցանել*: - 289. Ութերորդ՝ յովսէփ զերկու երազատեսքն զմինն *կեցոյց* և զմինն մեռոյց: - 313. Երրորդ՝ հակառակատիպ տեսանի. զի անդ օձն պղնձի զմարդ թշնամիս իւր *կեցուցանէր* և զօձսն սատակէր. և տէր մեր զմարդիկ ազգակից իւր *կեցուցանէր*, և զթշնամին սատանայ հալածէր: - 386. Եօթներորդ՝ օձն մեռեալ սպանանէր զօձսն. և զհարեալսն *կեցուցանէր*. և տէրն մեր մեռեալ մարմնովն զմեղս մեռուցանէր, և կենդանի աստուածութեամբն զմարդիկ կենագործէր: - 387. Չինգերորդ՝ որպէս մեղքն զամենեսին մեռոյց, և շնորհքն առաւել զամենեսին *կեցոյց* որ գերազօ՛րն է ի վերայ մեղաց: - 507. Վասն է՞ր սարկաւագն զամենայն քարոզի վերջքն յաղօթից ձևս փոխէ ասելով՝ *կեցո՛* և ողորմեա՛: - 625-626. Եւ նոքա ասեն, *կեցո՛* և ապրեցո՛: - 638

**ԿԶԱԿ +** Ներքին *կզակն* և վերին. և **բ** քնատեղն մին ոսկր. և գագաթն: - 243

**ԿԷԼԷՍՏԻԱՆՈՍ** - Եւ Պատրիարգունք էին անդ, Սահակ հայոց՝ թղթով միաբանեալ: Յոբնաղ երուսաղէմի: *Կէլէստիանոս* հռօմայ: Կիւրեղ աղէքսանդրու: - 542

**ԿԷՍ +** Եւ դարձեալ ի բաց պատառես զէութիւնն. որպէս թէ *կէսն* կայր՝ և *զկիսոյն* լինիլն կամեցաւ: - 36. Այսպէս և զանհնազանդութիւնս մեր. զոր ոմանք ուրացութեամբ և *կէսք* ախտիւ՝ իւրն վերագրէ գլուխ գոլով անհնազանդ անդամոցն: - 42. Եւ է՛ առաջին և վերջին մոլորակացն Երևակն. զոր պարսիկք զօհալ կոչեն. ցուրտ է և չոր. **բ** ամ և *կէս* յամէ ի կենդանակերպն. և յերեսուն ամն վճարէ՛ զամենայն: - 189. Չորրորդ Արեգակն. զոր շամս կոչեն ջե՛րմ է և լուսաւոր. **լ** օր և **ժ** ժամ և *կէս* յամէ՛ ի կենդանակերպն. և ի բոլոր տարին վճարէ՛: - 189. Եօթներորդ Լուսինն. զոր կամր կոչեն. հո՛վ է և գէճ. **բ** օր և *կէս* յամէ՛ ի կենդանակերպն. և ի **իթ** օր և *կէս* պատէ՛ զամենայն: - 189. Զի արեգակն յամենայն աւուր զընթացս իւր կատարէ՛ **իդ** ժամ, և **ժ** մասն և *կէս*: - 190. Իսկ *կէս* մասն ի մեկ ամիսն՝ լինի *կէս* ժամ. և ի մեկ տարին **զ** ժամ. և ի **դ** տարին ժողովեալ՝ լինի օր մի **իդ** ժամ. և ա՛յն առնէ զնահանճն. և շարժէ՛ զտօնս և զեղանակս: - 190. Ասեմք եթէ՝ լուսինն ընթանայ ի կենդանակերպսն **իթ** օր և *կէս*՝ և ծնանի: - 191. Արդ յամենայն ամիս *կէս* օրն՝ ի բոլոր տարին լինի վեց օր

պակաս լուսնոյն: - 191. Այլ ևս ոմանք՝ ի գոյից ասեն զժամանակն, և *կէսք* յանգոյից: - 198. Եւ *կէսք* ասեն թէ՝ երկրի բնութիւնն աղտաղտուկ է և շօր՝ որ ծովն ի վերայէ. և որ առ եզերսն են՝ զնոսա լուանան անձրևք և խառնեն ի ծովն: - 208. Վասն որոյ ի հրոյն ոմն սևանայ. որպէս խաղող. և *կէսք* կարմրին և դեղնին. որպէս բոյսք՝ և տերևք չորացեալ ի հրոյ: - 213. Ոմանք զդառնութիւնն. այլք զհոտն վատ. և *կէսք* զվնասս մահու. և այլք այլ ինչ: - 217. Իսկ զի *կէսք* քաղց և անմորուք լինին, զի ջլապինտ է մորթ երեսացն որպէս զթաթ ձեռաց. վասն որոյ մազ ո՛չ բուսանի: - 245. Պատասխանեմք եթէ՝ ոմանք յարմատս ունին զսերմն. ոմանք ի ծայրքն. *կէսք* ի տերևն. այլք ի կեղևն. թէպէտ և սոցա սերմնական զօրութիւնն է՛ ի մէջն, այլ առաւել կենդանւոյն: - 256. Որև յաւելեալ իր ինչ զգայական՝ լինի **զ**. վասն որոյ առ հասարակ ի **զ** ամիսս ծնանին. և ա՛յլք ի **զ** շաբաթս. և *կէսք* ի **զ** օրս: - 263. Երկրորդ՝ կին, իբր թէ *կէս* մարդոյ: - 276. Երկու ցեղ և *կէսն* մնացին յայնկոյս, թէ զի՞նչ նշանակէր: - 285. Իսկ ոմանք զարաբացիս և զմակեդոնացիս՝ յեբրայեցիս համարին՝ և *կէսք* ոչ: - 299. Եւ ոմանք եզրի, և *կէսք* երեմիայի ասեն: - 320. Զի՞նչ է որ *զկէս* արեան պատարագին խառնեաց ի ջուր և ցանեաց ի ժողովուրդն. և *զկէսն* էարկ շուրջ զսեղանովն: - 341. Նա՛խ՝ զի մովսէս յայտնապէս *զկէս* արեանն անապական եհեղ զսեղանովն որ նշանակէր զանապական խորհուրդ արեանն. և *զկէսն* խառնեաց ի ջուր որպէս ցուցաւ ի խորհուրդ մկրտութեան և հաղորդութեանն խառնեալ: - 341. Զարծաթն է առ ի համարոց գլխոցն *կէս* երկդրամի որ է՛ **ժ** դանկ: - 344. Զի՞նչ է տապանակին չափն **բ** կանգուն և *կէս* երկայն: - 344. Կանգուն և *կէս* լայն: - 344. Կանգուն և *կէս* բարձր: - 344. Իսկ *կէսն*, զի կիսկատար և պակա՛ս են քան զաստուած այնու, զի եղակա՛նք են և յոչ գոյից գոյացեալք որպէս ասացաք: - 344. Իսկ ե կանգուն և *կէսն*. զի գալուստն քրիստոսի և փրկական խաչն և եկեղեցի՝ է՛ ի եերորդ դարն և *կէսն* երևեալ ի մուտ զ**ռ** ամին: - 345. Զի եօթանսունքն **եռբճ** պակաս **բ** թիւ գրեն. և այլք **եռշ** ամ. որ է՛ **ե** դար և *կէս*: - 345. Ի յա՛յս միտս յորժամ խաչ նկարեմք, զծագ մատին աջոյ մերձ ի բոյթն առնեմք որ է՛ ի համարն **զ**երորդ. *զկէս* զին նշանակելով: - 345. Չորս կանգուն և *կէս*, ելեալ ի տարրական կենցաղոյս: - 346. Յանապազորդ քահանայիցն գրիւ մի զանգեալ. *կէս* յառաւօտն և *կէս* յերիկոյն: - 359. ...և Ալոջ, և Որոջ. ունելով *զկէս* ամն աւելի քան զերեք ամն ի ծննդենէն մինչև ի խաչն: - 361. Նա՛խ՝ զի այրն կատարեալ է. իսկ կինն *կէս*: - 365. Իսկ ի նորս՝ *զկէս* ընչիցն հրամայեցաւ տալ աղքատաց յաւտրնին. որ է՛ հաւասար հոգւոյն և մարմնոյն: - 372. Եւ *կէս* դորակին՝ զի յայժմու կեանս կիսակատա՛րք են ամենայն նուէրք մեր մինչ ի հանդերձեալն: - 375. **Եւ այսպէս բաժանեսցեն զաւարն. ի ճէն զմինն տայցեն քահանայապետին. և յիսնէն զմինն քահանայից և աղքատաց. և հնգէն զմինն թագաւորաց բաժին. և *կէսն* աւար բերողացն է զինւորացն. և *կէսն* այլ հեծելիցն. որպէս բաժանեաց մովսէս:** - 390. Զի՞նչ նշանակէ որ **բ** ցեղն և *կէսն* մնացին յայնկոյս յորդանանու և ժառանգեցին, և այլքն անցին ի քանանացիքն: - 390. Եւ *կէսն* զնոսա, որք ունին թերութիւն ինչ ի հաւատս կամ ի վարս ինչ և յուսմունս: - 391. Իսկ ի վերջինն զաւառ՝ *կիսովն* իմանին կուսանքն ընտրեալք. որք լնուն զթերութիւն անկեալ դասուն: - 391. Եւ *կէս* գետոյն բաժանեալ և մտեալ ի ծովն աղի. նշանակ կորստեան մեղաւորաց և անհաւատից ի յատակս դժոխոց: - 414-415. Եւ վասն զի նաթան շարժեաց ի զղջումն՝ *զկէս* պատժոյն կրեաց: - 432. Զի **յգ** ամ և *կէսն* **է** անգամ սով լինի: - 444. Շարժումն ոմանք զյափշտակելն ասեն. և այլք հողմոյ և երկրի. և *կէսք* զինչումն հրեշտակաց: - 445. ...և կամ զմեղքն բաժանէ. և *զկէսն* մին քահանային աւէ և *զկէսն* մին: - 601. ...և նոցա որդին որ է՛ թոռն հօրն՝ ունի *զկէս* արեանն. և թոռին որդին **զ**երրորդ մասն. և թոռին թոռն զչորրորդ մասն: - 612. Որով յա՛յտ է՝ զի ի *կէս* աւուրն որ է **ժբ** ժամն՝ աղօթելի՛ է մեզ յամենայն օր. և *զկէսն* այլ՝ մարմնական հոգոց պարապիլ. գործոյ աշխատութեան՝ ննջելոյ՝ կամ այլ ինչ իրաց: - 623. Իսկ զհազար ամն, ոմանք ասեն զերեք ամն և *զկէս* ի մկրտութենէն մինչ ի համբարձումն: - 706. Եւ քարոզեսցեն զաւուրս **ռմ** և **կ**. այսինքն **գ** ամ և *կէս*. որպէս ասէ տեսիլն: - 709. Որ է՛ ամիսս **խբ**, և ամք՝ **գ** ամ և *կէս*: - 709. Վեցերորդ, ոմանք ատրք և *կէսք* ազազունք և այլք անպտուղք. այսպէս և մարմինք ընտրելոցն և ոչ նոյնպիսեացն ըստ չափու զանազանին: - 721. Եւ զանազան տեսութիւնք վարդապետաց չեն ընդ դէմ միմեանց. այլ զորօրինակ ոմն զական պատւականութիւն, և այլ ոմն զբնութեան, և *կէսք* զասդողութեան, և ոմանք զորակացն գեղեցկութեանց, պատմեն զմի և զնոյն ական իր: - 781-782. Ոմանք ի գերութիւն վարեալք արք և կանայք. և *կէսք* առաթուր դիաթաւալ սրախողխող գալարեալ. առհասարակ քահանայք և աշխարհականք գէշ անկեալ դիականք անթաղ ընկեցեալք: - 788. *Կէսք* խստամբէր կրիւք չարչարեալք. և այլ երկիւղիւ պակուցեալք: - 788

***ԿԷՍ ՕՐ*** - Եւ թէ յառաւօտուն իջանէ մինչ ի *կէս օրն*, արևելեան կոչի. և անտի մինչև յերեկոյն, արևմտեան: - 203. Եւ այսպէս սովորաբար խօսիմք, թէ յուրբաթի *կէս օրն* ելեալ ոք ի տեղւոջէ՛ մինչև գայ առ մեզ ի լոյս կիրակէին կամ ընդ առաւօտն, ասեմք թէ **գ** օր է ճանապարհին. նոյնպէս և յարութիւնն քրիստոսի: - 516

**ԿԷՏ +** Երրորդ՝ ի միակէ, զի ամենայն բազմութիւն է ի միակէ՛. որպէս տեսակն յանհատէ. և գիծն ի *կիտէ*. և բազում թիւ է՛ ի միոյն: - 25. Այլ զայս երկբայիս յաղագս ոչ գիտելոյ քոյ թէ «մինչդ» ամենուրէք ո՛չ որոշէ ընդդէմ հանդերձելոյն. զի թէպէտ նշանակէ՛ *զկէտն* ուր մինչն է եղեալ, այլ զոր ա՛նդր է քան զնա՝ ո՛չ ուրանայ: - 42. Եւ դարձեալ՝ որպէս ամենայն գիծ բոլորակին՝ ի միջին *կէտն* միաւորին առ միմեանս. և հեռացեալք ի միջին *կէտէն* բաժանին ի միմեանց. և զորօրինակ՝ մի է սեռն՝ և ի բազում տեսակս բազմանայ: - 112. Դարձեալ՝ *կէտ* երկրիս անշարժ է ի մէջն. և պատճառէ՛ զշարժութիւնն երկնի: - 182. Որպէս կարակնին *կէտ* անշա՛րժ է, և պատճառէ զբոլորակ ծիրն: - 182. Երրորդ՝ զի բոլորակն սո՛ւր է ի շարժումն. և երկինքն սրագո՛յն է ի շարժումն, որ ի շրջիլն իւրում շօշափէ՛ զերկիր ի մի *կէտ*: - 182. Երրորդ՝ զի վեցեակ թիւն ի մէջ ամենայն թուոց առաջին կատարեալ է. և **զ** թիւն է ի բոլորակ ձևն. զի որ քան է ի միջին *կիտէն* ի բոլոր ծիրն, վեց այնչափ է իւր բոլորակ ծիրն: - 182-183. Վեցերորդ՝ զի թէ երկինքն ո՛չ էր բոլորակ, յայնժամ արեգակն և այլ աստեղք յորժամ գային ի մէջ երկնից, մեծագոյն երևէին. քանզի ի միջին *կիտէն* երկնից առ մեզ է ուղղական գիծ. իսկ յարևելից առ մեզ է՛ խոտորնակի գիծ. և ուղղական գիծն կա՛րճ է քան զխոտորնակ գիծն: - 183. Ապա ուրեմն ո՛չ երբէք մեծագոյն երևի աստղ՝ յորժամ է ի միջին *կէտն* քան յորժամ է յարևելս կամ յարևմուտս: - 183. Զի յարևելից *կիտէ՛* ի նոյն *կէտ* շրջեալ՝ լինի օր մի. որ է **իդ** ժամ. երկու ժամ միոյ կենդանակերպի: - 190. Երկրորդ՝ զի մի և նոյն օր կատարի դարձմամբ արեգականն ի *կիտէ՛* ի նոյն *կէտ* արևելից: - 193. Օր բնական այն է՝ որ լինի ի *կիտէ* ի *կէտ* **իդ** ժամ: - 194. Եւ զի միջին *կէտ* է արարածոց: - 211. Եւ զի ի միջին *կիտէն* իւր ըմբռնի անշարժ: - 211. Վասն այնորիկ զօրութեամբ սիրոյն շարժի առ աստուած ի միջին *կէտ* իւր. զի գերազանցապէս հեշտասցի ի նա՛: - 249. Եւ դարձեալ սիրտն է ի մէջ բոլոր անդամոցն որպէս *կէտ* կարակնին: - 261. Այլ մեղքն նուազէ՛ զկեանքն և ո՛չ տայ հասանիլ ի *կէտ* կոչմանն: - 291. Ոմանք ասեն միայն զլուսաւորս արգելեալ և զկամարն շրջեալ մինչ հասեալ ի նոյն *կէտն*: - 416. Առաջինն ըստ դրութեան, որպէս *կէտ*. գիծ. մակերևոյթ. և մարմին: - 476. ...և մեղօք ծանրացեալ էջ ի ներքին *կէտս* դժոխոցն, և այլ ո՛չ կարէր բարձրանալ. մինչ ի վերին *կիտէն* բանն աստուած էջ ի ներքին *կէտն*. և ապա եւ ադամ ի վերին *կէտն* երկնից: - 503. ...և ժամանեալ ի *կէտն* լցեալ լինի բոլորն: - 666. Իսկ **իդ** թիւն ո՛չ եթէ սահման և *կէտ* է. այլ սովորութիւն է գրոց փոքր թուով զբազումսն ցուցանել: - 711. Եւ ի նոյն *կէտ* լրմանն որ է՛ վախճան ժամանակի և սկիզբն յաւիտենի՝ լինի վերառութիւն համայնից մարդկան որպէս գրէ առաքեալն կորնթացւոց...: - 716. ...և ի դադարիլ ժամանակին՝ ի նոյն *կէտն* համանգամայն վերառեցեալ մտանեն ի կեանս առաջին ըստ խոստման բանին: - 716-717. Իսկ աստուած անհուն է զօրութեամբ՝ յանկարծակի ի նոյն *կէտ* վայրկեան ժամանակի յարուցանէ: - 717. ...այլ ի նոյն *կէտն* է յարութիւն և միաւորութիւն հոգւոյ և նորոգումն մարմնոյ: - 717. Նա՛խ՝ եթէ համանգամա՛յն է յարութիւնն ի նոյն *կէտն*, այլ ննջեցեալքն նա՛խ յառնեն և ապա՛ կենդանիքն ընդ նոսա. - 717. ...զի ննջեցելոցն միայն մին գործ է. այսինքն յարութիւնն. իսկ կենդանեացն մահն և յարութիւնն. զի նախ մեռանին ի նոյն *կէտն* և ապա՛ յառնեն: - 717. Զի մասն որ առ *կէտն* արևելից՝ է՛ ներգործութեամբ ի յելս, և զօրութեամբ ի մուտս: - 788. Եւ *կէտն* արևմտից առ ելս. այնպէս ներքին և վերին կիսագունդն: - 788

**ԿԹԵՄ +** Ի մածնուլն արւական և իգական սերմանցն՝ լինի որպէս պանիր մինչև ի **զ** օրն. ըստ յոբայ որ ասէ, «որպէս կաթն *կթեցեր* զիս. և որպէս պանիր մածուցեր»: - 261. Զի՞նչ է որ ասէ տեսիլն, «*կթեա՛* զխաղողն և ա՛րկ ի հնձանն աստուծոյ ի մեծ»: - 748

**ԿԻԲԻԿՈՆ +** Երկրորդ՝ այսպիսի ձև հաստատո՛ւն է. զի *կիբիկո՛ն* է. զի հաստատ և յարամնա՛յք են: - 344. Իններորդ, զի անշա՛րժ է երկիր տեղեաւ. զի *կիբրկոն* ասեն...: - 678

**ԿԻԶԱՆԵՄ +** Զի ասին՝ արտաքոյ *կիզանիլ* հրով որպէս խոտ ի հնոցի. և ի ներքուստ ցրտանան...: - 752

**ԿԻԶԵՄ +** Նախ՝ վասն զի մի՛ ջերմութիւն լուսաւորացդ *կիզզէ* զերկիր և վնասեսցէ: - 207. Դարձեալ՝ մորենին էր կոյսն մարիամ, որ զիմանալի հուր աստուածութեանն յինքեան կրելով ո՛չ *կիզաւ*...: - 331. Նա՛խ՝ զի հուր աստուածութեանն *կիզոյր* զնա՛. որպէս ջուր ի մէջ ապակոյ ի տապոյ արևուն պակասի: - 383

**ԿԻԶՈՒՄՆ +** Եւ ոմանք ասեն՝ ի տարրական հրոյն բաժանի *կիզումն*. և լոյսն միա՛յն իջանէ...: - 203. Յուրն ունի լոյս և *կիզումն*: - 330. Արդ՝ լոյսն ցուցանէ զխնամս արժանաւորացն. և *կիզումն* զպատիժ անարժանիցն: - 330. Յինգերորդն հրոյ *կիզումն* և բարձումն ամբարշտաց. և ոմանց բժշկութեան ցօղ ի տեառնէ ցօղեալ: - 630

**ԿԻԹ +** Ո՞ր քան են պարարտութեան աստիճանք... Երրորդ՝ *կիթն* ի կենդանեաց. որպէս կաթն և ձու: - 407

**ԿԻԼԻԿԵՑԻ** - Եւ այս են **իբ** լեզուքն... *Կիլիկեցիք*: - 298

**ԿԻԿԻԱՍ** - Որ մերձ ի հիւսիս հնչէ, *Կիկիաս* կոչի. չո՛ր է և ցամաքեցուցիչ: - 205

**ԿԻՆ +** Ընդ կարգաւորս շնալ *կանանց*՝ սրբութիւն նոցա համբաւեն: - 34. Տասներրորդ՝ նեռն քարոզութեամբ պատրէ՝ և ուրական սքանչելեց. և այլն. և սոքա քաղցրաբանութեամբ և օրհնութեամբ պատրեն զմիտս անմեղաց. և հրեշտակ լուսոյ կերպարանին որպէս հայրն իւրեանց սատանայ. և ամենայնն ուրական միայն և ո՛չ ճշմարտութեամբ. և բոլոր դիտումն նոցա է՛ պատրել զմարդիկ և հանել ի հաւատոց. և լնուլ զորովայնս. և *զկանայս* շեղջակուտեալս մեղօք յինքեանս գրաւել: - 35. Եւ որք ի ջուրս և ի ծնունդս *կանանց*՝ ա՛լք կոչեցան. զի գէջ ախտիւն զիոգիս կորուսանեն. և ի ծնունդս՝ զմարմինս և զիոգին: - 150. Արաց. ի յունել ծեան զլերինս և զբլուրս, արա՛նց է ասեն այս ճանապարհ և ո՛չ *կանանց*: - 200-201. Հինգերրորդ՝ նախ քան զյանցանելն՝ էին ադամ և *կինն* մերկ և ո՛չ ամաչէին. վասն զի ո՛չ ունէին ցանկութիւն հեշտութեան: - 225. Վասն Կազմութեան Մարդոյն... Երեքտասաներրորդ՝ Բաժանումն առն և *կնոջ* և քարցի: - 227. Չորրորդ՝ զի ո՛չ ճանաչէր այր *զկին* իւր, և ոչ *կին* զայր իւր. և լինէր անօրէն խառնակումն. որպէս յուդայ զնու իւր զթամար ո՛չ ճանաչեաց. և ո՛չ ղովտ զդստերսն իւր: - 238. Զի՞նչ է որ զայր և *զկին* բաժանէ: - 245. Ասեմք եթէ երանքն. զի թէ հատանեն զերանսն, մարդն լինի որպէս *կին*. և մորուս ո՛չ բուսանի: - 245. Զի ասեն եթէ՝ ոգի արուին է՛ փոյթ և քաչասիրտ. իսկ *կին*՝ ողորմած և երկչոտ: - 246. Բերանն փոքր՝ պատկանի *կանանց*: - 247. Ի մարդոյ և յայլ ինչ կենդանեաց կարէ՛ լինիլ ծնունդ. որպէս ասեն՝ ի *կնոջէ* և յարջոյ ծնունդ եղեալ: - 267. Իսկ դիւականն ընդդէմ այսմ՝ վասն մոլորութեան զանազան երևմունս ցուցանէ աղտեղութեան. և կամ զբարին խափանել ջանայ. որպէս ի չարչարանս տեառն վասն *կնոջն* պիղատոսի ընթերցեալ լինի. և որպէս գրէ սուրբն նազիոս: - 268. Վասն է՞ր *զկինն* ի կողէն ստեղծ և ո՛չ ի հողոյ: - 276. Երրորդ՝ զի որպէս խօսիլ գլխոյն է. նոյնպէս լռութիւն կողին է. զի լուռ լիցի *կինն* ընդ իշխանութեամբ առնն: - 276. Չորրորդ՝ զի մի՛ տկար ոք կարծիցի. այլ որպէս կողե՛ղ և հաստակող ասեմք զըմբիշս. այսպէս զօրեղ եղիցի *կինն* ի տնօրինել զտունն: - 276. **Վեցերրորդ՝ ո՛չ առնու ի գլխոյն և ո՛չ յոտիցն. այլ ի միջացն. զի խրատէ՛ զմարդիկ ո՛չ հաւասար գլխոյն պատուել *զկինն,* և ո՛չ անարգել իբրև զոտք. այլ միջակ պատուով չափաւորել զնա:** - 276. **Եօթներրորդ՝ զի պարունակածն է կողն. ի նշանակել, զի *կինն* պարունակիչ և հաւաքիչ է տան առն և ընչից:** - 276. Ութերրորդ՝ զի կողն կեռ գոլով՝ ցուցանէ *զկինն* նենգ գոլ և երկմիտ. կեռ, այսինքն խեռ ընդ առն: - 276. **Տասներրորդ՝ որպէս կողն զզօրութիւնն քարշէ՛ և տայ ի թիկունքն և պնդէ՛ զնա. այսպէս *կինն* զփառս և զինչս առն յինքն քարշելով թանձրացուցանէ և պնդէ՛ զինքն**: - 276. **Իսկ կոչի *կին*: - 276. Երկրորդ՝ *կին*, իբր թէ կէս մարդոյ: - 276. Երրորդ՝ *կին*, իբր թէ կող մի. որ է՛ զօրութիւն սիւն: - 276. Չորրորդ՝ *կին*, զի ի կենդանւոյ առաւ: - 276. Հինգերրորդ՝ *կին*, իբր թէ կողաբոյս կամ կողածին: - 276. Վեցերրորդ՝ *կին*, իբր թէ կայանք և հանգիստ մարդոյն: - 276. Եօթներրորդ՝ *կին*, իբր թէ կրօղ զօրութեան և ընչից առն: - 276. Ութերրորդ՝ *կին*, իբր թէ կցորդ և օգնական առն յամենայն գործս: - 276. Իններրորդ՝ *կին*, նշանակէ զթոյլն և զտկարն: - 276. Երկրորդ՝ զի ի ձախ կողէ՛ շինեցաւ *կինն*. և տկա՛ր է ձախ կողմն մարդոյս: - 276. Տասներրորդ՝ *կին*, իբր թէ կեանք. զի որպէս կենօք է տնել. նոյնպէս տեսակ մարդոյս ի ձեռն *կնոջ* ծննդեանն տևէ՛, և կայ մնայ մինչ ի կատարած: - 276. Վասն այսր պատճառի կոչեաց զանուն *կնոջ* իւրոյ կեանս. զի աճումն է և ծնունդն և մայր ամենայն կենդանեաց**: - 276. Վասն է՞ր ոչ ամաչէին ադամ և *կինն*: - 278. Երրորդ՝ զի հնազանդեցաւ *կնոջն* առաւել քան աստուծոյ: - 279. Եօթներրորդ՝ զի զաստուած ասաց պատճառ. եթէ *կինս* զոր ետուր՝ սա՛ ետ ինձ ուտել: - 279. Վեցերրորդ՝ զի յառաջ քան զիւր վախճանն ետես զմահ *կնոջն* և զորդւոյն: - 279. Այլ կամ իբր զիրեշտակս, կամ որպէս ի միոյ լուսոյ բազումք, կամ կուսութեամբ ծնունդ. որպէս սուրբ կոյսն մարիամ աստուածածին սրբութեամբ և կուսութեամբ ծնեալ փոխեաց զկարգ բնութեան ծննդեանս որ ի սերմանէ առն և *կնոջ*. զի սա՛ ծնունդ միայն ի մօրէ՛: - 280. Ութերրորդ՝ Անուանց նախահարցն և *կանանց* նոցա: - 283. Տասներրորդ՝ Վասն ղովտայ և *կնոջն*. և սոդովմայ: - 283. Եւ թէ մին *կին* բազում այր չառնոյր. այլ մարդն առնոյր. և *զկին* եղբօրն առնուլ: - 285. Ընդէ՞ր *կնոջ* զենեալն ոչ ուտի: - 296. Զի արիւն և շունչն արակա՛ն է որպէս ցուցաւ. վասն այն ա՛յրն հանէ զնոսա. և *կինն* չէ տուեալ արիւն՝ ո՞րպէս հանէ: - 296. Նոյնդ է պատճառն որպէս *կնոջ* զենեալն ո՛չ ուտի: - 296. Իսկ **դ** *կանայքն* որք խառնեցան յօրհնութեան ազգն իսրայէլի...: - 300. *Կինն* ղովտայ վասն է՞ր յաղ և ոչ յայլ ինչ նիւթ փոխեցաւ: - 303. Երկրորդ՝ զի **խ** քաղաք առին ի բենիամենէ՛ յուդայի ցեղքն վասն շնութեան *կնոջն* պատահելոյ. և կոտորեցին զնոսա առ հասարակ իեռ արս. և մնաց վեց հարիւր այր զոր յետոյ ըստացան ժառանգութիւն իւրեանց. որպէս յա՛յտ է ի դատաւորաց վերջքն: - 312. Չորրորդ՝ յովսէփ փոխանակ պոռնիկ *կնոջն* էառ զասանէթ կոյս գեղեցիկ: - 313. Վեցերրորդ՝ ո՛չ յաղթեաց պոռնիկ *կինն* ողջախոհին յովսեփայ: - 313. Եօթներրորդ՝ ո՛չ ի մուտն և ոչ ի յելն՝ *զկանայս* նոցա ո՛չ թուէ. այլ զծնունդքն և զարսն: - 315. Եւ էր յազգէն եսաւայ ի *կնոջէն* բասեմաթայ՝ դստեր իսմայէլի. և **ե**երորդ ծնունդ էր յաբրահամէ: - 320. Վեցերրորդ՝ *կնոջն* չար խրատն և կազն: - 322. Եւ ոմանք **ե** ասեն. **ա**, արտաքին ինչքն. **բ**, զաւակաց մահն. **գ**, մարմնոյն

հարուածքն. **դ**, *կնոջն* կագն. **ե**, բարեկամաց հակառակիլն: - 322. Դարձեալ՝ յաղթեաց զսատանայ այնու, զի իմացաւ զչար հնարսն նորա և պատասխանէր զընդ դէմ. որպէս *կնոջն* և բարեկամացն և որք զգուժն բերէին. զի գիտէր ի բանսարկուէն լինիլ: - 323. Նախ՝ զի շարժեալք էին ի բանսարկուէին. որպէս երբեմն ի ձեռն *կնոջն*. և յայնժամ բարեկամօքն մարտնչէր ընդ յոբայ: - 324. Վասն է՞ր այնչափ դիմամարտս յարուցանէր բանսարկուն ի վերայ յոբայ. որպէս *զկինն* և զբարեկամսն և զծառայքն և զայլսն: - 325. Երրորդ՝ զի ի ձեռն *կնոջն* մարտեաւ: - 327. ...և էառ զսեփովրա *կին*. և ծնաւ **բ** որդիս. զգերսամ և զեղիազար...: - 330. Սեփովրա էր դուստր ռագուէլի քրմի՝ որդոյ դեդանայ. որդւոյ յեկտանայ. որդւոյ աբրահամու ի քետուրայ *կնոջէ* : - 330. Երրորդ, օրինակաւ կօշկին՝ *զկինն* հրամայէր մերկանալ յինքենէ: - 331. Զի որ ի լեառն սուրբ առ աստուած մերձենայ, ո՛չ է պարտ յանկողինս *կնոջ* հեշտանալ...: - 331. Սուտակ՝ որ է՛ լիգրոնն. զոր ո՛չ գիտէ ոք զուստն. նման է կապուտակ աւազոյ. ոմանք ասեն յամազունից բերաւ ի *կանանց* աշխարհէն: - 348. Եւ բաց յայսցանէ մասնաւորք այս են...: Ծնեալ *կանանց* տատրակ և աղաւնի: - 359. Այլ և ալիւր գարեղէն զոհ յիշատակի փորձութեան *կանանց*: - 359. Եւ բաց յայսցանէ մասնաւորք այս են...: Արանց **ծ** և *կանանց* **լ** երկդրամեան: - 359. Նա՛խ՝ զի այրն կատարեալ է. իսկ *կինն* կէս: - 365. Երկրորդ՝ արուն առնօ՛ղ է. իսկ *կինն* կրօղ: - 365. **Ի խոստման աւետիսն ծե՛ր էր աբրահամ, և *կինն* ամուլ. զի մի՛ անյուսացին ի բնութիւնն նայելով. այլ ի բանն աստուծոյ որ ամենազօ՛ր է. վասն այն ասացաւ անթիւ լինիլ զաւակացն. և եղև այնպէս:** - 377. Դարձեալ՝ ծեր և *կին* և տղայք ո՛չ թուին. զի պակասեա՛լ են յարիութեանն: - 377. **Վիուկն ա՛յն է, որ ի վհաց և յանդնդոց մեռեալս կերպարանեն. դևք ի կերպս մարդկան երևին. զոր դևակոչ ասեն և հազիմաթ. և Նշանագէտ, որ ի գերեզմանս ննջէ և նշանաւոր մարդ կերպարանէ. որպէս զսամուէլ սաւուղայ երևեցոյց հարցուկ *կինն***: - 388. Եւ որպէս *կնոջ* ընդ հրամանս առնն իւրոյ յանցանել պոռնկութենէ, նոյնպէս և զաւակաց, և ծառայից, և աշակերտաց, և հնազանդելոց, և ժողովրդոց. նոյնպէս և հոգիս մեր ելեալ ի հրամանացն աստուծոյ՝ պոռնկութիւն է նմա. եթէ ըստ գործոց. եթէ ըստ հաւատոց: - 389. Մովսէս օրէնս ետ՝ զի գիր տացեն մեկնելոյ զայր և *զկին*: - 400. Այլ՝ արձակեալ *կինն* ո՛չ դառնայր յառաջին այրն վերստին. թէպէտ մեռանէր վերջին մարդն: - 400. Եւ որ *զկին* իւր արձակէ՝ նա՛ տայ նմա շնալ: - 401. Եւ թէ մինն է պատճառ՝ որ և իցէ թէ այրն և թէ *կինն*, առանց ամուսութեան մնասցէ. և միւսն զուգեսցի այլոյ որ չէր պատճառ: - 401. Իսկ որ զարձակեալն առնուին, և յառաջին բաժանեալն ո՛չ տային, վասն երկիւղի առն և *կնոջ* էր, զի մի՛ լիցին պատճառ բաժանման: - 401. Նոյնպէս և նորոյս խորհուրդն զի անքակտելի՛ է *կինն:* - 401. Վասն է՞ր է որ մին *կին* թէ բազում այր առնէ՝ պոռնիկ է. - 401. Պոռնիկն ըստ այսմ որ շնացօղ է թէ *կին* և թէ այր՝ քարկոծէ՛ր օրէնքն: - 401. Այլ որ մարդն առնոյր բազում *կանայս*՝ և *կինն* ո՛չ, ա՛յս է պատճառն: - 401. Եւ մին այր կարէ՛ ի բազում *կանանց* ծնանիլ զաւակ. այլ մին *կնոջ* ի բազում արանց ո՛չ բազմանայ ծնունդ: - 401. Երկրորդ՝ բարոյական. զի մին *կնոջ* ի բազում արանց ո՛չ երևի հարազատ զաւակն. իսկ մի այր ի բազում *կանանց* կարէ՛ ծնանիլ հարազատ մանկունս և սիրել զնոսա: - 401. Քսաներորդ, Ո՛չ հրամայեցաւ դաւթի շինել զտաճարն. ի Յազարս գտի այր մի. և ի *կանանց* ո՛չ մի: - 413. Երրորդ՝ հրեշտակն կրկին երևեալ *կնոջն*, և ապա՛ մանովէի: - 422. Մետասաներորդ՝ առաջինն *կին* մերժեցաւ և երկրորդն մերձեցաւ որ կոչիւր դալիլա: - 422. Ութևժ, եւ *կինն* ի սամփսոնէ և եղև հացերիցուն. վասն որոյ և տուժեցան հրով: - 422-423. Քսանևդ, սամփսոն երիցս է կապօք փորձեցաւ ի *կնոջէն*: - 423. Վիուկ *կինն* ո՞րպէս յարոյց զսամուէլ. կամ ո՞րպէս զառաջիկայն պատմէր: - 428. Եօթներորդ՝ զի թէ ճշմարտապէս սամուէլ յառնէր, ո՛չ կամէր *կինն*. զի կորուսիչ էր նոցա. այլ գիտէր որ նմանութիւնն էր սամուէլի: - 428. Ապա յա՛յտ է թէ՝ որպէս սաւուղ խաբէր *զկինն*, նոյնպէս և *կինն* խաբէր զսաւուղ նմանութեամբն սամուէլի: - 428. Իններորդ՝ զիա՞րդ զարհուրեցաւ *կինն* յետ երդմանն, և անկաւ յերեսս մինչ քաջալերեաց սաւուղ և եհարց: - 428. Երկոտասաներորդ՝ ընդէ՞ր յետոյ ստեաց և *կինն* զտեսիլն զի եղեն զորքն իւր զդիեցիկ: - 428. Նա՛խ՝ զի ո՛չ ետես զնա. այլ միայն *կինն*. ապա յա՛յտ է զի սուտ նմանութիւնն էր: - 429. Երկրորդ՝ ուստի՞ ճանաչեաց թէ սամուէլ է. զի ահա՛ *կինն* ասաց. այլ որպէս *կինն* երևեցոյց զձևն, նոյնպէս կարծեաց և սաւուղ: - 429. Ա՛րդ՝ թէ ճշմարիտ յարոյց *կինն* զսամուէլ. սաւուղ ո՛չ երկնչէր ի մահու. զի և զնա՛ յարուցանէր. և թէ երկեաւ, ապա սուտ էր կենդանութիւն մեռելոյն: - 429. Երկրորդ՝ ընդէ՞ր ոչ երևեցաւ սաւուղայ. այլ միայն *կնոջն* որպէս ասացաւ ի վերոյ: - 429. Արդ եթէ սամուէլ յարեաւ և մեռաւ և կամ *կինն*, նա՛ ճշմարիտ եղիցի բանն. ապա թէ *կինն* ոչ մեռաւ և սաւուղ մեռաւ, սուտ խօսեցաւ: - 430. Յորժամ մեղայ ասաց՝ վասն է՞ր ոչ եբարձ զպատիժն. զի ահա՛ խայտառակեցան *կանայք* նորա: - 432. Երկրորդ՝ զի կրկին էր պատիժն. սուր ի տանն, և խայտառակութիւն *կանանցն*: - 432. Դաւիթ դարձոյց զերկու *կանայս* և զամենայն աւարն. և որդի նորա զ**բ** դասս հաւատացելոց և զամենայն հոգիսն ազատեաց: - 437. Ընդվզեալ սաբէի և կորուսեալ ի *կնոջէ*. և սատանայի կործանեալ յիմաստուն կուսէ: - 438. Զի՞նչ է ի հազարս գտի այր մի. ի *կանանց* և ո՛չ մի: - 440. Ասեն թէ՝ **ռ**

*կին* էր սողոմոնի. **է ճ** տիկնայք, և **գ ճ** հարճք. և նոցա **ռ** պահապան. իսկ ի փորձելն խաբեաց զհազար *կանայսն*. և ի յարանցն մին ո՛չ խաբեցաւ. այս առասպե՛լ է: - 440. Այլ զայն ասէ՝ թէ յամենայն ազգս արանց գտաւ այր մի քրիստոս, ազատ ի պարտուց սկզբնականին. և ի *կանանց* և ո՛չ մի: - 440. Քսաննե, երանեաց *զկանայս* և զծառայս սողոմոնի: - 441. Հինգերորդ՝ զի *կին* գոլով և կարճոգի: - 442. Եւ եղև քոյր սորա եղիսաբեթ *կին* ահարօնի քահանայի. յորմէ ծնաւ նաբաթ և աբիուդ. եղիազար և իթամար քահանայք: - 452. Եւ սաղմոն էառ զռահաբ իւր *կին* զոր յերիքովէ՛: - 452. Բոյոս ամաց **ճը**՝ ծնանի զովբէթ. առեալ բոյոսս իւր *կին* զհռութ մովաբացի: - 452. Եւ անուանք աւազակացն և խաչողացն և այլ *կանանց*: - 455. Զի ո՛չ էր օրէն *զկանայս* յազգահամարն թուել: - 460. Այլ և քահանայքն ո՛չ յանցանէին զօրինօքն և յօտար ազգէ տային նմա *կին*: - 460. Եւ յետ մահուանն մատթանայ՝ մելքի ի ցեղէն նաթանայ որ որդի էր ղևեայ և եղբայր պանթերայ, առեալ զնոյն *կին* մատթանայ և ծնաւ զելի: - 460. Իսկ յակոբ որ էր յազգէն սողոմոնի՝ առեալ *զկին* եղբօրն ըստ օրինացն զի յարուցէ զաւակ եղբօրն. և ծնաւ զյովսէփ: - 460. Արդ եթէ որդին աստուծոյ եղեալ է *կնոջ* որդի, ապա ուրեմն կոյսն սուրբ մայր է որդոյն աստուծոյ և աստուածածին: - 466. Հինգերորդ, որդի *կնոջ* ասի ոք՝ որ լինի մարմին ի նմանէ. թէպէտ հոգին յաստուծոյ է: - 466. Վեցերորդ, մայր մարդոյ ասի *կինն* որ ծնաւ զմանուկ. թէպէտ հոգին ո՛չ է ի մօրէն. այլ վասն միաւորեալ մարմնոյն մարդածին կոչի: - 466. Զի բարձօղն աշխարհի՝ ձեռամբ *կնոջ* բարձեալ լինի: - 470. Առաջին ծնունդն ո՛չ յառնէ և ո՛չ ի *կնոջէ*. որպէս ադամայն: - 471. Երկրորդն յառնէ առանց *կնոջ*. որպէս եւա: - 471. Երրորդն յառնէ և ի *կնոջէ*. որպէս հասարակաց ծնունդս: - 471. Չորրորդ եղանակն որ կատարումն է այլոցն՝ ի *կնոջէ* առանց առն. որպէս ծնունդն քրիստոսի զօրութեամբ հոգւոյն սրբոյ: - 471. Զօծումն մարմնական ընկալաւ ի պոռնիկ *կնոջէն* յորժամ եբեկ զշիշ իւղոյն ի գլուխ նորա ի տան սիմոնի: - 474. Ութերորդ՝ սկիզբն մարդկութեանս ա՛յրն է. և *կինն* ի նմանէ. վասն որոյ այր եղև, զի զբոլորս լինէր առեալ և փրկեալ: - 480. Զի ծնօղն *կանանց*. նոյնպէս և ծնունդն *կանանց*: - 480. Այլ և եղև այր, զի որպէս ծնօղն աստուածածին ազգի *կանանց*, և ի նմանէ ծնեալն աստուած՝ արանց միանգամայն և հանուրց լիցի փրկութեան պատճառ: - 480. Եւ ադամ ասաց *կնոջն* և կրկնեցաւ. և *կինն* օձին՝ և երեքկնեցաւ գիրն: - 481. Երրորդ՝ ի *կանայ* զջուրն ի գինի փոխելոյ: - 484. Այլ և սամարուհիի *կնոջն* լուսինա՛ էր անունն: - 495. Հինգերորդ՝ ապականութիւն մեր մարմնոցս է՛ ի սերմանէ հօր ի ձեռն *կնոջ* խառնեալ. իսկ մարմին բանին ո՛չ է ի սերմանէ հօր և մօր. այլ ի կուսական արգանդէ և յանապական արենէ բեղմնաւորեալ որպէս ցուցաւ ի վերոյ ի սոյն գլուխ ի **ժ** համարն. ապա ուրեմն անապակա՛ն է մարմին բանին աստուծոյ: - 499. Իսկ կենդանիք զենեալ յառնէ միայն կերակրելիք են. այլ ի *կնոջէ* ո՛չ: - 511. Երեքտասաներորդ՝ ամաղեկացիք գերեցին զկողմն հրէաստանի և զայլազգիս. և դաւիթ զհետ մտեալ յետ **գ** աւուր և հարեալ ի գիշերի և ի վաղիւն մինչ յերեկոյ. և դարձուցեալ զերկոսին *կանայս* իւր. և ո՛չ մնաց գերի և ո՛չ մի. և յաւարէ աստի բաշխեաց ամենայն սիրելեաց իւրոց: - 514. Իսկ թէ ոք ասիցէ, աւետարանն ընդ արշալոյսն ասէ զգալ *կանանցն* և տեսանել զքրիստոս: - 515. Դարձեալ ասեմք՝ թէ *կանայքն* իւղաբերք **դ** անգամ եկին ի գերեզմանն և այլ և այլ տեսլեան դիպեցան. և զիւրաքանչիւր դասուց **դ** աւետարանիչքն գրեն: - 515. Եւ այս հարցանելի է, զի թէ մագդաղենացին ընդ առաջին *կանայսն* եկն զոր մատթէոս պատմէ և համբուրեցին զոտն յիսուսի...: - 515. Այս է, զի յորժամ ի մէջ գիշերին հրամայեաց հրեշտակն գնալ և պատմել աշակերտացն, ա՛յլ *կանայքն* որ ընդ նմայն էին՝ գնացին...: - 515. Չորրորդ՝ մարիամ յակոբայ և յովսեայ մայրն, որ էր *կին* յովսեփայ կոչեցեալն աստուածահայր: - 517. Վասն է՞ր ոչ ետ թոյլ մերձենալ մարիամու. և այն զի ի ճանապարհին կալան զոտս նորա և համբուրեցին ա՛յլ *կանայք*: - 517. Հինգերորդ, այլք ասեն թէ հայցեաց ինչ շնորհս քահանայութեան որ չէր անկ *կանանց*: - 517. Երեքտասաներորդ, զի մարիամ ո՛չ խոնարհութեամբ կամէր մերձենալ յոտս նորա որպէս այլ *կանայքն*. այլ յերե՛սն դիմեաց նա հպարտութեամբ առ ի համբուրել զնա. իսկ տէրն կամեցաւ ուսուցանել նմա զխոնարհութիւն՝ արգել զնա: - 518. Չորեքտասաներորդ, զի ցուցցէ թէ յայսմ հետէ արքն միա՛յն ունին իշխանութիւն մերձենալ առ ի պատարագել. և ո՛չ գոյ համարձակութիւն *կանանց* յայս գործ: - 518. Հնգետասաներորդ, զի բաւական համարեցաւ ի պատիւ *կանանց* զայն՝ զի յառաջագոյն մերձեցաւ ի նոսա ծննդեամբ. իսկ յետ յարութեանն կամի՛ զի ա՛րք նախ մերձեսցին ի նա մինչ դեռ ո՛չ է ելեալ նա առ հայր: - 518. Եւ դարձեալ՝ որպէս զայլ *կանայսն* արար աւետաւորս յարութեան իւրոյ. սոյնպէս և զմագդաղենացին վերանալոյն առ հայր: - 518. Եւ ընդ դէմ երկաբնակաց որոց *կանայքն* մկրտութիւն առնեն: - 526. **Որպէս ասէ առաքեալն, «գլուխ *կնոջ* ա՛յր է». զի *կինն* յառնէ՛ն է և բնութիւն նորա ունի**: - 532. **Որպէս և առ մեզ է. զի *կին* որդւոյն դուստր կոչի հօրն վասն մի մարմնոյն**: - 534. **Եւ որպէս կողն ադամայ եղև *կին*. և շինեալ եկեղեցի լինի հարսն քրիստոսի**: - 534. Եւ *կին* վասն գոլոյն որում փեսայ կոչի: - 534. Զի պողքէր քոյր թագաւորին թէոդոսի ի կուսանաց վանս էր. և պղծեցաւ պոռնկութեամբ ի մարկիանոսէ. և ապա՛ եղև *կին* նմա. և ասեն

թէ ի նեստորէ՛ էր մկրտեալ: - 542. ...և նոքա զամենայն ինչ ծածկապէս տեղեկացան. զի ժողովեալքն ի քաղկեդոն ակն առին թագաւորին և *կնոջ* իւրոյ. և զարհուրեցան ի սպառնալեացն. և զնեստորի կարծիսն հաստատեցին. զերկու բնութիւնսն. և զբ կամսն. և զբ ներգործութիւնսն: - 543. Իններորդ՝ *կին* ո՛չ առնուլ քահանայից. և զմորուսն ածիլել. և զգլորեալն կանգնել անխտիր: - 553. Տասներորդ՝ *կանանց* մկրտութիւն առնել. և աշխարհականաց խոստովանիլ. այլ և կրկին մկրտել: - 553. Նաև ասեն թէ՝ վասն փառաց աստուածանալոյն մեղանչեաց ադամ. և վասն նախանձու առն՝ *կինն* նախ եկեր զպտուղն: - 561. Երկրորդ զօրացուցանէ. որպէս յա՛յտ է ի մակաբայեցւոցն *զկնոջէն* որ ունէր է որդիս՝ ածեալ ի սպանումն ի միումն աւուր տեսեալ. և տանէր այնմ՝ յուսովն որ առ աստուած. նոյնպէս և ամենայն դասք մարտիրոսացն յուսով զօրացան: - 574. Եւ թէ այր մարդ ոչ լինի և տղայն մերձ ի մեռանիլ լինի, *կինն* կարէ՛ մկրտել թէ գիտէ զձև բանին զոր քրիստոս ուսոյց «յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ». ցանէ՛ զջուրն և ասէ՝ մկրտեալ լինի: - 588-589. Երկրորդ, զի այս խորհրդոյ նշանակ ի սկզբան արարածոց աստուած ադամայ ետ և ո՛չ *կնոջն*. յորժամ էած զկենդանիսն առ ադամ զի անունս դիցէ նոցա: - 589. Երրորդ, զի թէ կայր հնար որ ի ձեռն *կնոջն* տուեալ լինէր շնորհք, աստուածածին կոյսն մարիամ ընդէ՛ր ոչ եղև մերձ մկրտութեան որդւոյն իւրոյ ի յորդանան: - 589. ...և ապա՛ էջ հոգին ի մկրտեալն նորա. զիա՞րդ ի ձեռն *կնոջ* լինի տուեալ շնորհք հոգւոյն լուացմամբ ջրոյն: - 589. Հինգերորդ, զի թէ գո՛յր հնար *կնոջ* վասն հարկին առնել զգործ քահանայի, ընդէ՛ր ոչ կարաց նունի կոյսն մկրտել զոք ի վրաց յորժամ դարձոյց յաստուածգիտութիւն. - 589. Վեցերորդ, զի թէ *կինն* կարէ մկրտել ի հարկաւոր ժամանակի, սուրբն գրիգոր լուսաւորիչն քանի ևս առաւել պատւական էր քան զմի *կին*. - 589. Եօթներորդ, զի մկրտելն է գործ քահանայի. և քահանայութիւնն է սպասաւորութիւն աստուծոյ. իսկ զայս սպասաւորութիւն աստուծոյ և ո՛չ կռապաշտքն ունէին սովորութիւն սնոտի կռոցն ի ձեռն *կանանցն* մատուցանել զպատարագն...: - 589. Ութերորդ, զի թէ զզենումն կենդանեաց ո՛չ ունին հրաման զենուլ ազգ *կանանց* որ է՛ խտրութիւն մարմնաւոր սրբութեանց. զիա՞րդ պատշաճի տալ հրաման *կանանց* ազգի մերձենալ ի կարգ հոգևոր սրբութեան: - 589. Իններորդ, զի մկրտութիւնն է գործ քահանայութեան. և քահանայութիւնն է ազատ և ո՛չ ընդ ումեք հարկի ներքոյ. իսկ *կինն* ծառայ և ոտք է առն. վասն այսր հարկի ո՛չ է պարտ ծառային առնել զգործ տեառն...: - 589. ...**քանի՞ ևս առաւել հերձուած մեծ է *կանանց*. որոյ ասաց աստուած թէ «առ այր քո դարձ քո և նա տիրեսցէ քեզ» հրաման տալ զգործ քահանայի առնել որ ազատա՛ց է և ո՛չ ծառայից**: - 589. ...**իսկ *կանանց* ազգին պատուիրէ՛ առաքեալն ի ժամ աղօթիցն շուք դնել գլխոյն վասն հրեշտակաց. այսինքն վասն քահանայից որ հրեշտակք կոչին ի գրոց**...: - 590. Որոյ պատճառէ, զի *կին* երաշխաւոր և վկայ ո՛չ կարէ լինիլ, վասն որոյ և ո՛չ կնքահայր կարէ լինիլ: - 591. Եւ դարձեալ՝ *կանանց* ազգ ո՛չ կարէ քահանայագործել. և ո՛չ կնքահայր լինիլ: - 591. **Եւ ոչ այս միայն այլ և ի ժամ մկրտութեանն ո՛չ է պարտ մնալ *կնոջ* յեկեղեցւոջն**: - 591. Թէ յղի *կին* մկրտի՝ օգ՞ւտ է այն տղային թէ յարգանդ մօրն մեռանի: - 592. Թէ *կնոջ* տէ՞ր էր յորժամ մեղանչեաց՝ թէ ազա՛պ էր: - 601. Որով լինի պսակս այս դաշն և կապ ի մէջ առն և *կնոջն*. որով լինի անքակ միութիւն: - 609. Նոյնպէս աստուծոյ բանն է որ առնէ զերկուսեանն մի՝ զայրն և *զկինն*: - 610. ...**զի բազում արգելմունք գոն պսակին. որպէս ազգակցութիւնն հոգևոր կամ մարմնաւոր. կամ տկարութիւն բնութեանն. կամ պոռնկութիւնն. կամ այսահարութիւնն. կամ ծառայութիւնն. կամ բռնութեամբն. կամ այլ ինչ այսպիսի պատճառ. որով բաժանին այրն և *կինն***: - 610. **Մին *կին* է միոյ առն օրինադրեալ և ո՛չ աւելի, յաղագս բազում պատճառի: - 612. Նա՛խ՝ զի մին *կին* ետ աստուած մին մարդոյն ադամայ՝ ի յօգնութիւն. նոյնպէս և ամենեցուն օրինադրեաց**: - 612. **Այսպէս և աստուածային օրինօք մի այր ընդ միոյ *կնոջ* զուգաւորի և ընկերակցի**: - 612. ...և ապա *կանայք* զծանրութիւն երկանցն կրեսցեն: - 613. Կամ ի զանազան դիմաց և ազգաց. որպէս այր, *կին*, ծեր, տղայ, ժողովեալ կոչի մի եկեղեցի: - 613. Եւ *կինն* պոռնիկ արտասուօքն թանայր զոտս յիսուսի: - 619. Նոյնպէս և խունկն զիւղաբերից *կանանցն* և զբուրումն հանդերձելոյն առ մեզ: - 628. Եւ թագաւորեսցէն, զհանդիպիլ իւղաբեր *կանանցն*: - 628. Եւ զկուրծսն բախելն, որ բնաւորեալ է *կանանց* յապաշաւելն զկուրծսն բախել և ողբալ: - 628. Որ և զուստիանէ սրբուհի կոյսն մա՛յր արար *կանանց* հաւատաւորաց: - 658. Տասնևմի, Ո՞ւր են *կայանք* ամենայն հոգւոց: - 660. Զի՞նչ է որ առ հասարակ ամենեքեան. այր և *կին*, ծեր և տղայ ընդ մեռելոյն ընթանան ի գերեզմանն: - 675. Եւ որպէս իւղաբեր *կանայքն* նախ եկին ի գերեզմանն և տեսին յարուցեալ զքրիստոս, և ապա առաքեալքն...: - 680. ...**նոյնպէս յերկրորդ օրն պարտ է գալ *կանանց* նախ ի գերեզմանն, և ապա արանց. և հոգևոր տեսութեամբ ուրախանալ:** - 680. Հինգերորդ՝ յետ գօրեայ թաղմանն քրիստոսի եկին առաքեալքն և *կանայքն* ի գերեզմանն. - 681. ...որպէս փախեաւ *կինն* որ ծնաւ զմանուկն արու ի տեսիլն. և ո՛չ կարաց հրեղէն վիշապն հասանիլ: - 689. Թովմաս ասէ, *կին* յեգիպտոսէ ի գալ լինի. և անդ ուր *կինն* ղովտայ էր նճջէ: - 706. Անդ ի քունն ձայն լսէ թէ՝ *կին* դու յղասցիս մեծ ոմն: - 706. Եւ լինիցի

նեռն բղջախոհ ի ցանկութիւնս *կանանց*...: - 707. Այլ արբանեակք նեռին յետ մահուան նորա ուրախասցին և առցեն իւրեանց *կանայս*...: - 709. Նմանապէս և կողն որ առաւ յադամայ և շինեցաւ *կին*, ո՛չ յառնէ ի յադամ, այլ ի յեւա. որոյ հիմն կազմութեան եղև փոխանակ սերման: - 719. **Սակայն իւրաքանչիւր ոք անսխալ անդամօք իւրովք յառնէ. այլ ո՛չ երևի թէ սա այր է և նա *կին*. այն ծեր և այն տղայ. զի որպէս հրեշտակք են յերկինս**: - 726. **Իսկ դատապարտեալքն ծանրացեալ մասամբք և զազիր անդամօք այր և *կին*. զի իւրաքանչիւր ոք ի գործիական անդամս իւր կրեսցէ զպատիժն:** - 726. Զի այսպէս ասեն վարդապետք՝ թէ յորժամ յղանայ ոք ի միտս իւր զխորհուրդ մեղացն, ի սատանայէ՛ սերմն առեալ որպէս *կին* յառնէ. և ի ծնանիլ մեղացն՝ ծնանին և որդունքն ի հրեղէն ծովն որ է՛ ի հարաւ: - 753. Իսկ Երրորդն արքայութիւն, գուշակի յաւազանն պղնձի. զոր հրամայեաց մովսէս առնել ի հայելեացն *կանանց* որ նստէին առաջի դրան խորանին. յորում լւանային որդիքն ահարօնի նախ քան զմտանելն ի սուրբն սրբոց: - 756. Զաւազանն պղնձի ի հայելեաց *կանանց* կազմեաց. այսինքն զբանն աստուածային՝ ի սրբոցն հաստատեաց օրինօք: - 756. *Կանայք* առաջի դրան խորանին նստեալք՝ են հաւատացեալքն. որք դրան երկնաւոր պալատին բանիլ ինքեանց ակն կալեալ մնան: - 756. Ոմանք ի գերութիւն վարեալք արք և *կանայք*. և կէսք առաթուր դիաթաւալ սրախողխող գալարեալ. առհասարակ քահանայք և աշխարհականք գէշ անկեալ դիակամբ անթաղ ընկեցեալք: - 788

***ԿԻՆ ԱՌՆՈՒԼ +*** Զի ասեն թէ՝ այր և երիտասարդն զոր սպան ղամեք և *էառ զկանայս* նոցա. ադդա և սելլա, նոքա եղբա՛րք էին ենովքայ արդարոյ: - 290. Երրորդ՝ զի յառնէ՛ *առաւ կինն*: - 365. Եւ թէ նա՛ ևս թողոյր, այլք զարձակեալ *կինն առնուին*: - 401. ...և թէ այրն բազում *կանայս առնէր*, չէր պոռնիկ որպէս ի հինն օրէնս: - 401. Նոյնպէս գլուխ է այր կարէ՛ բազում *կանայս առնուլ*: - 401. Տասներորդ՝ սամփսոն յայլազգեաց հաճեցաւ *առնուլ կին*: - 422. Զնա *էառ կին* յովիդա քահանայ. և խառնեցան երկու ցեղք թագաւորաց և քահանայից: - 452. Այլ և օրէն էր նոցա, որ իւրաքանչիւր ոք յազգէ իւրմէ *առնոյր* իւր *կին* և ո՛չ յօտարէ: - 460. Դարձեալ վասն յովսեփայ գիտելի է. զի ի ցեղէն սողոմոնի որդւոյն դաւթի՝ մատթան *առեալ կին*, ծնաւ զյակոբ: - 460. Չորրորդ՝ հրաման տալ աւագ սարկաւագաց *կին առնուլ* և քահանայ լինիլ: - 553. Եւ յառնուլ զաստիճան սարկաւագութեան ո՛չ տան հրաման *կին առնուլ* հայք և լատինք և յոյնք. բայց ասորիք ո՛չ: - 554. Ի հին օրէնս եդաւ յազգէն իւրմէ *առնուլ կին*...: - 612. Մա՞րթ է աւելի քան զմին *կին առնուլ*՝ թէ ոչ: - 612. Վեցերորդ, զի և առաջին ծնօղքն և հարք թէպէտ աւելի *կին առնուին* վասն զաւակաց, այլ հարսանիսն կրկնեալ ո՛չ ընթերցեալ լինի: - 612. Զի ահա՛ նահապետքն բազում *կանայս առին* և հարճ ևս: - 613. Ա՛րդ՝ նահապետքն *առնուին* բազում *կանայս* վասն որդէծնութեան և լրման մարմնաւոր օրհնութեանն: - 613. Զի թէ ոչ գոյր ըստինք առն, ապա և ո՛չ *կնոջն առեալ* ի նմանէ: - 786

**ԿԻՆԱՄՈՆ +** Ծաղիկ զըմռնեաց. նմանէ պոյտն ծաղկի. և *Կինամոն*. արմա՛տ է խոտոյ ի տմորիս հայոց. և Խնկեղէգն. որ յարմատս ո՛չ ամենայն եղեգան լինի. և Չիրիկ. խէ՛ժ է ծառոց: - 349

**ԿԻՊԱՐԻ +** Ասեն վարդապետք թէ Բունն *կիպարի* էր վերուստ ի վայր. և Խոտորնակն արմաւենի: - 494. Ա՛րդ՝ *Կիպարին* զանուշահոտ վարս նշանակէ. և Արմաւենին զպտուղ արդարութեանն: - 495

**ԿԻՊՐՈՍ + Այլ և յառաջին ժողովն գ աթոռք ինքնագլուխք հաստատեցան: Յերուսաղէմ վասն գերեզմանին քրիստոսի: Եւ ի *կիպրոս* վասն գերեզմանին ղազարու: Եւ ի հայք վասն սուրբ լուսաւորչին գրիգորի**: - 549

**ԿԻՍԱԳՈՒՆԴ +** Երկրորդ՝ այսպէս. զի օդն հողմովն փեռեկէ՛ զհուրն ի **բ** *կիսագունդս*. վերոյ և ներքոյ: - 181. Եւ բնականն Նախ այսպէս. զի օդն որ ի մէջէ մտեալ և փեռեկեալ զներքին և զվերին *կիսագունդն*, նա՛ է պատճառ շարժութեան երկնից: - 182. Եւ յորժամ ի միւս *կիսագունդն* հասանէ, ընդ **զ** կենդանակերպս հետևեալ՝ բոլորի լոյսն ի նմա. զի ուղղապէս զլոյսն ընդունի: - 187. Եւ այս **բժ**ան կենդանակերպից վեցն է ի մէջ երկնից ի հիւսիսոյ կողմս առ մեզ, և ի մին *կիսագունդն*: - 189. Եւ վեցն ի կողմն հարաւոյ ի միւս *կիսագունդն*: - 189. Եւ որքան ի վերին *կիսագունդն* տևէ՛, կոչի տիւ: - 190. Իսկ տեղիքն, զի յա՛յս *կիսագունդս* լինի լոյս, և ի միւսն խաւար: - 194. ...և **բ** Ակունք ուսոյն՝ կրկին *կիսագունդք* երկնից. ունելով զ**զ** կենդանակերպս. և Վակաս լանջացն **բժ**ան ակամբք նոյն կենդանակերպք ի լանջս երկնից Միթրն՝ պսակ քահանայապետութեան. և Թիթեղն՝ մտաց թեթևութեան: - 348. Նա՛խ՝ զի չորեքտասա՛ն էր լուսինն եկն ի ներքին *կիսագնդէն* ի վերին գունդն և ձգեցաւ առ արեգակն: - 490. Եւ կէտն արևմտից առ ելս. այնպէս ներքին և վերին *կիսագունդն*: - 788. Փեռեկելով զերկոսին *կիսագունդս* ներքոյ և վերոյ և ի միջի հաստատ կացելոյ երկրի: - 788

**ԿԻՍԱԷՇ** - Նոքա ի *կիսաէշ* նման զտնօրէնութիւնն սուրբ համբաւեն. և կամ առ աչօք և ունայնութեամբ. որպէս մանիքեցւոցն, և կամ եւտիքի կարծի: - 81

**ԿԻՍԱԿԱՏԱՐ +** Այսպէս և շնչականն գոյացեալ ի **ի**երորդ աւուր՝ *կիսակատար* գոլով բանականին զնոյն ունի խորհուրդ: - 262. Իսկ կէսն, զի *կիսկատար* և պակա՛ս են քան զաստուած այնու, զի եղակա՛նք են և յոչ գոյից գոյացեալք որպէս ասացաք: - 344. Եւ կէս դորակին՝ զի յայժմու կեանս *կիսակատա՛րք* են ամենայն նուէրք մեր մինչ ի հանդերձեալն: - 375. Չորրորդն՝ որք *կիսակատար* դարձեալք են ի մեղաց. և զոսա լուսաւորէ ջահընկալն: - 608

**ԿԻՍԱՁԱՅՆ +** Երրորդ՝ ի ձայնաւորէ՛, *կիսաձայնէ՛*, և բաղաձայնէ՛. որպէս բանական զգայական և տնկական: - 178

**ԿԻՍԱՄԱՍՆԵԱՅ +** Այլ և ուղղիցին **դ** տուն է *կիսամասնեայ*. ընդ սրբոյ խաչեցարին հզօր և անմահ գառինն եղեալ: - 375. Իսկ ի ներքոյ երկնից առ երկնիւ է կայանք հոգւոց *կիսամասնեայ* արդարոց այնոցիկ որոց պակա՛ս է արդարութիւն քան զմեղս և կամ առաւել: - 688. Նախ՝ զի ո՛չ է բոլոր մարդ. այլ *կիսամասնեայ*: - 780

**ԿԻՍԱՅՐԵԱՑ +** Ոմանք հրով *կիսայրեաց* տոչորեալք. և այլք ի սովոյ գազանաբեկ վտանգեալք: - 788

**ԿԻՍԱՍԱՐԿԱՒԱԳ +** Որպէս դիմոփիլոս *կիսասարկաւագ* զքահանայ ոմն արտաքսեաց յեկեղեցւոյ. զոր յանդիմանէ՛ սուրբն դիոնէսիոս յութերորդ թուղթն իւր: - 539. Հինգերորդ՝ *Կիսասարկաւագն.* որոյ գործն է զսկիհն և զմաղզմայն առ սեղանն տանիլ. - 606. Զառաքեալսն ո՞րպէս աստիճանեաց...: Եօթներորդ՝ *Կիսասարկաւագունք*: - 608

**ԿԻՍԱՍԵԻ +** Իսկ հերն *կիսասև* և ոչ յոյժ բարակ՝ զբարեբարոյն և զբարի կազմուածն ցուցանէ: - 248

**ԿԻՍԱՏԵԼ -** Երրորդ՝ թէ խոստովանօղն *կիսատեաց* զխոստովանութիւնն և ծածկեաց. զի պարտ է զոր ի մտի ունի՝ զբոլորն միոյ քահանայի խոստովանիլ...: - 603

**ԿԻՍԱՓՈԽՆ -** Եւ վեց *կիսափոխն* յաւելեալ ժամուցն մինչ ի հանգստեանն: - 622

**ԿԻՍԵԱՆ -** Աքար զարմեան և սաւուղ *կիսեան* և յուդա սիմոնեան մեղայ ասելով ո՛չ արդարացան: - 415

**ԿԻՍՈՆ -** Սա՛ սպան զսիսարա և զաբէն ի ձորն *կիսոնի*. և այլազգիքն ամս է: - 420

**ԿԻՐ +** Զորօրինակ ո՛չ է անզգուշագոյն յառել ի բոլորակս արեգական՝ զի շրտնու և ի սակաւուն զոր ունի. ըստ այսմ խնայեաց աստուած ի յազինս մարդկային, զի մի՛ կրիցեմք *զկիրս* զանկելոյ արուսեկին. որ ո՛չ կարացեալ տանիլ մեծութեան փառացն՝ զրկեցաւ և ի չափաւորէն: - 24. Հնգետասաներորդ՝ Հարցումն երկաբնակացն առ մեզ ժ թւով. և անդ վասն մի կամաց՝ և մի գործոց՝ և *կրից*: - 30. Զի անե՛ղ է՝ յաղագս որոյ ո՛չ կրէ յեղումն ինչ և փոփոխումն *կրից*: - 76. Ի յայսոսիկ հոգին ո՛չ առնու ի *կիր* զմարմինն. այլ *զկիր* առնօղն մարմնոյն զտրամախոհութիւն: - 249. Երկրորդ՝ զի զօրութիւնն որ քեզ տւաւ յաստուծոյ՝ չարաչար արկեր ի *կիր*: - 287. Դարձեալ՝ առաքինութիւն է բարի ունակութիւն մտաց, որով ուղիղ կեայ. և ո՛չ ոք չարաչար առնու ի *կիր*. որ աստուած ներգործէ ի մեզ առանց մեզ: - 578

**ԿԻՐԱԿԷ +** Յարեգական օրն կոչեցին *կիրակէ*. որ է՛ տէրունական վասն յարութեան տեառն: - 190. Զի՞նչ է յատկութիւն միաշաբաթ աւուրն որ է *կիրակէն*: - 193. Երրորդ՝ բազում աստուածախօսութիւնք ի նմա եղեն. յելանելն նոյի ի տապանէն. և առ աբրահամ. և առ մովսէս ի սինա լեառն. և տուչութիւն օրինացն ի *կիրակէ* եղև: - 193. Ուստի յա՛յտ է՝ զի երեկոյ շաբաթուն որ կոչի կիրակմուտ՝ պատուակա՛ն է քան զմիւս գիշերն որ զհետագայ *կիրակէին*: - 194. Իսկ յաւուր **ե** շաբաթոջ երեկունն զգառն զենին և ելին յայգ ուրբաթի. նիսանի **ժե**. որ էր առաջին ամիս նոցա. և ի *կիրակէ* անցին ընդ ծովն որ էր նիսանի **ժէ**: - 337. Եւ յերեկոյ շաբաթուն պատառեցաւ ծովն. և ի գիշերի *կիրակէին* անցին ընդ ծովն. և ընկղմեցաւ փարաւոն: - 337. Յորում աւուր *կիրակէին* ի մէջ գիշերի ընդ առաւօտս յարեաւ տէր ի գերեզմանէն, ազատելով զհոգիսն ի դժոխոց: - 337. Նա՛խ՝ շաբաթն հանապազորդ. և ի նորս *կիրակին*: - 372. Երկրորդ՝ շաբաթուց նւէրքն կրկին. և ի նորս *կիրակէն* մեր: - 372. Զոր օրինակ՝ անցեալ լինի մին ժամն յաւուր՝ *կիրակէ* կոչի. թէպէտ **իգ** ժամն պակա՛ս է: - 484. Եւ ոմանք ասեն թէ՝ յերկնաւոր դրախտն եմուտ հոգւովն մինչ ի *կիրակէ* մէջ գիշերին. և ի նոյն ժամն էջ ի դժոխս և ազատեալ զհոգիսն յարեաւ ի գերեզմանէն: - 495. Նմանապէս և աստ յայսմ աւուր շաբաթու որ ի *կիրակէ* յարութեան տօնեմք, այժմ յինն ժամուն ի վեր նախատօնակ առնեմք յարութեանն քրիստոսի. և այս վասն բազում պատճառի: - 509. Ապա յա՛յտ է զի ո՛չ ի չորեքշաբաթի եկեր զձուկն. այլ ի յանցեալ *կիրակէն*: - 511. Զի **ե** անգամ ի **ե** *կիրակէն* երևեցաւ քրիստոս աշակերտացն մինչ ի համբարձումն: - 511. Ասեմք թէ՝ օր յարութեանն քրիստոսի *կիրակէն* է ըստ աւետարանչացն: - 512. Վասն զի ոմանք՝ որպէս մեծն ներսէս ի մեկնութիւն սաղմոսին որ ասէ «**է** անգամ յաւուր օրհնեցից զքեզ», ասէ թէ՝ յերեկոյի շաբաթուն **է** յարութիւնն քրիստոսի յորում լուսանայր *կիրակէն*...: - 512. Ա՛րդ՝ յարութիւնն մեր է՛ ի վերջնումն *կիրակէն* ի մէջ գիշերի...: - 512. Ապա ուրեմն յարութիւնն քրիստոսի է՛ ի մէջ գիշերի յաւուր *կիրակէի* որպէս ասացաւ: -

512. Եօթներորդ՝ դարձեալ յաւուր *կիրակէի* էանց մովսէս ընդ ծովն կարմիր. և ընկղմեցաւ փարաւոն ի տիպ յարութեանն քրիստոսի և կորստեան սատանայի: - 512-513. Որ այսպիսի էր պատկեր աւուրն. յաւուր **ե** շաբաթոջ երեկոյին ի չորեքտասան լուսնին զգառն զենին և ելին յայգ ուրբաթի **ժե** ամսեանն. և ի *կիրակէ* անցին ընդ ծովն որ էր նիսանի **ժէ**: - 513. Եւ յերեկոյի շաբաթուն պատառեցաւ ծովն, և ի գիշերի *կիրակէի* անցին ընդ ծովն և ընկղմեցաւ փարաւոն: - 513. Յորում աւուր *կիրակէի* ի մէջ գիշերի ընդ առաւօտն յարեաւ տէրն ի գերեզմանէն. հանելով զհոգիսն յանապատն երկնից. և խաչանիշ գաւազանաւն ընկղմեցաւ փարաւոն յանդունդս դժոխոց: - 513. Ապա թէ ի լոյս *կիրակէին* էր յարութիւնն, պա՛րտ էր յառաւօտին առնել պատարագ և ո՛չ յերեկոյին: - 514. Ա՛րդ՝ շաբաթի գիշերն և տիւն **իդ** ժամ. և **գ** ժամ ի *կիրակէէն* մինչ ի մէջ գիշերն. որ լինի **լ** ժամ. իսկ հոգին **դ** ժամ և կէս նախ իջեալ ի դժոխս որ լինի **լգ** ժամ և կէս: - 516. Նախ՝ խորհրդաբար. ի **ե** շաբաթոջ աւուրն յերեկոյն թաղեցաւ ի սիրտ առաքելոցն ճաշակմամբ մարմնոյն. և յերեկոյի *կիրակէին* տեսին զտէրն յորժամ դրօքն փակելովք եմուտ առ նոսա: - 516. Չորրորդ սոյնպէս ասեն. ուրբաթն և իւր գիշերն որ չարչարեցաւ. և շաբաթն և իւր գիշերն որ թաղեցաւ. *կիրակէ* և իւր գիշերն որ յարեաւ. յորում ժամու և իցէ: - 516. Եւ այսպէս սովորաբար խօսիմք, թէ յուրբաթի կէս օրն ելեալ ոք ի տեղւոջէ՛ մինչև գայ առ մեզ ի լոյս *կիրակէին* կամ ընդ առաւօտն, ասեմք թէ **գ** օր է ճանապարհին. նոյնպէս և յարութիւնն քրիստոսի: - 516. Երկրորդ՝ ի յաղուհացսն ո՛չ ունել հրաման պատարագ մատուցանել բաց ի շաբաթէ՛ և ի *կիրակիէէ*՛: - 554. Աշխարհամատրանն. և յետ գալստեան Յոգւոյն *կիրակէն*. Տապանակին. Շողակաթին. և **դ** օր ի Խաչին տօնն. **բ** Գալստեանն. Վերնատանն. Եւ նոր *կիրակէին*: - 616. Եւ ի *կիրակէ* **գ** փող հնչէ ի գիշերի: - 618. Եւ յայս միտս ի *կիրակէ* գիշերն **գ** անգամ աւետարան ընթեռնուն: - 618. Ի յայս միտս և զեօթն օր շաբաթուն փոխեցին առաքեալքն ի *կիրակէ*. որ ը երորդ է ըստ կարգի: - 627. Զի ի *կիրակէ* և ի տէրունական տօնս ո՛չ կարօտիմք բարեխօսի. այլ երգս սրովբէականս նուագեմք: - 627. Իսկ թագաւորքն առաջին և վերջին. զի *կիրակին* է թագաւորելն աստուծոյ. այժմ առաջին, և զկնի վերջին. կամ աստ կամողացն միայն, և անդ կամողաց և ո՛չ կամողաց: - 627-628. Իսկ ի *կիրակէի* խնկարկելն և **ժ** օրհնութիւնն՝ նշանակէ զտասն քաղաքացն իշխանութիւն ունել. և **ժ** քանքարացն: - 628. Իսկ մեծացուսցէն ի *կիրակէի*, զբնաւ տնօրէնութիւնն պատմէ. զի թէ ոչ էր ծնեալ՝ և ո՛չ էր խաչեալ. և ո՛չ յարուցեալ. և ո՛չ զմեզ փրկեալ: - 628. Վեցերորդ «որ յարեար». ի մեծի շաբաթ երեկոյն, և յամենայն կիրակմտի և ի *կիրակէ* աւուր: - 634. Եւ անդ յաւուր *կիրակէի* յառաւօտին միաբան ի մի բարբառ յաւելին յերգս հրեշտակացն և զայս. «օրհնութիւն քեզ ի բարձունս»: - 635. Այլ և զաղցից *կիրակէիցն,* և զնինուէացւոցն, և զծաղկազարդի հարցն, - 637. Զի մեծ զատկի *կիրակէն* առաջի ձայն լիցի. որ զյարութեանն ունի խորհուրդ: - 641. Եւ այս է պատճառն, զի *կիրակին* տէրունի թարգմանի. և օր է ստեղծման աշխարհի, և յարութեանն քրիստոսի, և միւս անգամ գալստեանն: - 642. ...վասն որոյ ի *կիրակէի* երգեմք: - 644. Նմանապէս և զեսայի միշտ ի *կիրակէս* ընթեռնումք...: - 644. Եւ *կիրակէն* տօն է տէրունի: - 644. Այլ և բոլոր ամենայն տնօրէնութեանցն պատմօղ. վասն այն յամենայն օր ի տօնս, ի պահս, և յուտիս, ի շաբաթս, և ի *կիրակէ*, զնա՛ ընթեռնումք: - 644. Ութերորդ՝ որպէս յետ շաբաթուց *կիրակէն* փոխի: - 648. Նոյնպէս և սուրբք որ ա՛յժմ են ի հանգիստ՝ ի *կիրակէ* գալստեանն ի կատարեալ փառս և ի հանգիստ մշտնջենաւոր փոխին. ի հանգչելոյ ի հանգիստ. ի փառաց ի փառս: - 648. Զի որպէս ի մէջ շաբաթուն և ի *կիրակէին* այլ միջոց օր չկայ: - 648. Ասեմք թէ՝ ծննդեան պահքն **ը** օր է. զշաբաթն և *զկիրակէ* պահեաց...: - 649. Նո՛յնդ է պատճառ և վասն յիսներեկին. զի յաղուհացն զշաբաթ և *զկիրակէ* պահեաց...: - 649. Նոյնպէս աշխարհամատրանն և եկեղեցւոյ տօնն ի *կիրակէ* : - 649. Այսինքն երեքն ի մին շաբաթն. որ է՛ Պահոց, Մարտիրոսաց, և *Կիրակէն* այլածև կարգ. Առաջաւորցն. Աղուհացիցն. և Յինանցն կարգ: - 649. Իսկ ի շաբաթն և ի *կիրակէն* պատարագ մատչի: - 651. Որ և այժմ ոմանք յազգէ ասորւոց և յունաց՝ զշաբաթ և *զկիրակէ* միա՛յն լուծանեն ձկամբ: - 651. Զսկիզբն պահոցն մեծի՝ *կիրակէն* է...: - 651. Եւ թէ ոք ասիցէ, **խ** օր է պահոց. զի **խ** օր պահեաց քրիստոս. և *կիրակէն* ո՛չ է ի համարս: - 651. Եւ այլ ևս, յորժամ զշաբաթ և *զկիրակէ* արտաքոյ թուեմք որ պատարագ մատչի, **ե** օր առաջաւորոն ըստ աղուհացիցն համարեալ՝ լինի **խ** օր: - 651. Եւ թէ *կիրակէն* ո՛չ է պահք որպէս զերկու աւուրքն լուծանեն, նոյնպէս և *զկիրակէն* լոյծ: - 652. Նա՛խ՝ որպէս աղուհացքն զշաբաթ և *զկիրակի* պահել ետ...: - 654. Նա՛խ՝ որպէս մեք ի *կիրակէ* ուրախացաք և վայելեցաք ի շնորհաց յարութեանն քրիստոսի, ի միւս օրն և զնոսա մասնաւորեմք: - 684. Դարձեալ, ի *կիրակէ* յարութեանն քրիստոսի տօնեմք. և յերկուշաբաթին՝ նոցա սրբոցն որք ընդ քրիստոսի յարեան և մտին ի քաղաքն սուրբ: - 684. Ի գարնան եղանակի ի զատկի *կիրակէին* ի մէջ գիշերի յորում ժամու յարեաւ քրիստոս և հրեշտակն թաւալեցոյց զվէմն և գոչէր զյարութիւնն քրիստոսի. - 714. Իսկ մեր վարդապետք ասեն ի *կիրակէի* պենտակոստէին ի նոյն ժամն գիշերոյն. - 714. Ոմանք յաւուր ուրբաթու ասեն յորում խաչեցաւ քրիստոս. և այլք ի *կիրակէն*: - 732.

Նմանապէս և աստ յաւուր նոր *կիրակէի* ասացեալն կրկնո՛յ զատկի, յանկարծահաս ժամու շարժեալ հեղեղաց ուղխից խռովութեանց: - 789

**ԿԻՐԱԿՄՈՒՏ +** Վասն որոյ տօն առաջին աւուրն ի մէջ գիշերի սկսանի. և մեծամեծ տօնքն յերեկօրեայ որպէս ասեմք զշաբաթի երեկոյն *կիրակմուտ:* - 194. Ուստի յա՛յտ է՝ զի երեկոյ շաբաթուն որ կոչի *կիրակմուտ*՝ պատուակա՛ն է քան զմիւս գիշերն որ ըզհետագայ կիրակէին: - 194. Հինգերորդ վկայ, զի ի բոլոր տարին յերեկոյի շաբաթուն *կիրակմուտ* անուանեն ամենայն ազգք...: - 509. Երկրորդ «որ եկիր և գալոց ես». քառասնօրեայ գալստեանն, և ծաղկազարդին, և բուն յինանց *կիրակմտին* զա՛յս ասա: - 634. Վեցերորդ «որ յարեար». ի մեծի շաբաթ երեկոյն, և յամենայն *կիրակմտի* և ի կիրակէ աւուր: - 634. Երրորդն գալստեան. թէպէտ յայլ և այլ աւուրս. որպէս քառասնօրեայն, և յաւանակաւն, և յինանց *կիրակմտիցն*: - 649

**ԿԻՐԱԿՈՍԱԿ** - Այլ որ ԾԾ ամաւ յառաջ եկին ի հայք՝ ասորիք արք քաջաբանք, և կամեցան սերմանել զաղանդն նեստորի. որք նզովեալ որոշեցան. բայց ոմանք ընկալեալ էին և թարգմանեալ ի նոցանէ գիրս սուտս, Զգօրտոսակ. *Զկիրակոսակ*. Զպղի տեսիլն: - 545

**ԿԻՐԹ +** Ծածուկ և զանխո՛ւլ է աստուածաբանութեան տեսութիւն հասարակ մտաց. և հազիւ ճանաչի *կիրք* խորհրդոց՝ և նուրբ քննութեանց սրբոց: - 81

**ԿԻՐՔ +** Եւ որպէս *կիրք* ցաւոցն մարդոյն են, զի զգա՛յ զկսկիծն. նոյնպէս և *կիրք* հեշտութեանն նորա՛ են, եթէ չարեաց և եթէ բարեաց, ապա ուրեմն մեր է ներգործութիւնն և ո՛չ հարկին: - 11. Չորրորդ ասեն, տրտմութիւնն *կիրք* է և ո՛չ լինի յաստուած: - 60. Այս ո՛չ թէ ունիլ *զկիրս* նշանակէ յաստուած, այլ զպատիժ վասն գործոյ յանցաւորացն: - 60. Ութևժերորդ՝ ամենայն *կիրք* մարմնոյ՝ մարդոյն ասին. այնմ որոյ է՛ մարմին: - 74. Իսկ ընդ դէմ նմին եւտիքէս զամենայն շփոթէ և խառնակէ. զանձն և բնութիւնն. և զկամս և *զկիրս*: - 81. Իսկ որք յետ միաւորութեանն բ ասեն բնութիւնս ի քրիստոս, և բաժանեն զկամս, և զգործս, և *զկիրս*, թէպէտ և անձն մի համբաւեն: - 81. Նոյնպէս և *զկիրսն* և զզօրութիւնսն անբաժանաբա՛ր ասեմք ի քրիստոս. որպէս *Կիրք* է քաղցնուլն. և Ներգործութիւն զիազարսն կերակրել: *Կիրք*՝ ծարաւն... *Կիրք*՝ վաստակիլն ի ճանապարհին... *Կիրք*՝ բևեռիլն ի խաչին... *Կիրք*՝ արծակելն զհոգին... *Կիրք*՝ թաղիլն: - 86. Իսկ մի զոյլ ներգործութիւնք և *կիրք*. որպէս քնարն՝ և որ շարժէ զքնարն՝ մի ներգործութիւն կատարեն և ո՛չ երկուս: - 86. Այն որ նըւաստացոյց զինքն ի յունայնութիւն մարդկան, եղև ի կերպ ծառայի՝ և գործով և *կրիւք* և նմանութեամբ մարդկան. և կերպարանօք գտաւ մարդ. զի ի վեր էր քան զմարդ՝ և քան զկերպարան մարդոյ: - 93. Է՞ որ ի ներքուստ, որ չարութիւն և ախտ կոչի. և է՛ որ արտաքուստ, որ *կիրք* և արատ կոչի: - 139. Տասներորդ՝ զի *կիրք* մարմնոյն հեղուն ի հոգին...: - 233. Իններորդ՝ ա՛նդ են բերան և լեզուն. ուստի ներքին *կիրք* հոգւոյն և ամենայն բարութիւնք յառաջեն ի մեզ: - 234. արծեալ՝ մարդո՛յն է կարգաւորել *զկիրս* բարկութեան և ցանկութեան ըստ կանոնաց բանականին: - 274. Ութերորդ՝ բշնամիք եղեն *կիրք* պատժոցն. այսինքն մահ՝ ապականութիւն՝ տանջանք՝ հիւանդութիւնք՝ սով՝ և ծարաւ՝ և այլն ամենայն սոքա ի կրիցն են: - 277. Ութերորդ՝ բշնամիք եղեն կիրք պատժոցն. այսինքն մահ՝ ապականութիւն՝ տանջանք՝ հիւանդութիւնք՝ սով՝ և ծարաւ՝ և այլն ամենայն սոքա ի *կրիցն* են: - 277. Բաղդատութիւն *կրից* և գործոց յովսեփու առ քրիստոս: - 313. Եւ թէ ասեն, կրեաց քրիստոս զանգոսնելի *կիրս*: - 383. Ասեմք եթէ, *կիրքն* բաժանի ի դ. այսինքն ի կամաւորն և յակամայն. յանգոսնելին և յանանգոսնելին: - 383. Որ և միով հպմամբ ի լանջսն՝ մաքրեցաւ աշակերտն յայսպիսի *կրից*. քանի՞ առաւել որ եբարձ զապականութիւնս ազատ լիցի յայսպիսի *կրից*: - 383. Եւ վասն *կրից* և մահու և ապականութեան բանք: - 455. Այլ ա՛րդ՝ բանն աստուած եղև մարդ և անմեղ պահեաց զբնական *կիրս*. և ներգործական *կրիւքն* հնազանդ եղև հօր՝ մահու չափ և մահու խաչի: - 492. Գիտել պա՛րտ է, զի առ հասարակ մահն, հարկաւոր *կիրք* է մարդկայինս բնութեան. զի ամենայն որ ծնանի՝ մեռանի: - 495. Եւ այս գիտելի է, զի կրկին են *կիրք*. նախ բնական. և ապա եկամտական: - 496. Եւ է՛ բնականն *կիրք*, որպէս քաղց. ծարաւ. ննջել. աշխատիլ. և այլն: - 496. Եւ սոքա են անանգոսնելի *կիրք*: - 496. Իսկ եկամուտ *կիրքն* բաժանի յերիս տեսակս: - 496. Իսկ տէր մեր ի մարդեղութեան իւրում յայսցանէ եկամուտ *կրից* միայն զմահն կրեաց. իսկ զմեղս և զապականութիւնս ո՛չ կրեաց: - 496. Զի թէ կրեալ էր զմեղս և զապականութիւն, ո՛չ կարէր ազատել զմեզ. ինքն ի ներքոյ անկեալ *կրից* և ապականութեանց: - 497. Դարձեալ ասեմք, մեղքն ապականութիւնն են առաջին և վերջին ծայրքն *կրից*. իսկ մահն միջին որպէս ցուցաւ ի վերոյ: - 497. Ասեմք եթէ՝ կրկին են *կիրք*. այսինքն կամաւոր և ակամայ: - 501. Եւ ակամայքն հարկաւորք են և ծառայականք. և առ աստուած ակամայ *կիրք* ո՛չ տեսանի: - 501. Եւ տէրն ի մարդեղութեանն զկամաւո՛րն կրեաց յինքեան և ո՛չ զակամայն. զի ո՛չ էր ի ներքոյ հարկի և ծառայութեան բնութեան որպէս մեք. այլ տէր և ազատ յամենայն *կրից*: - 501. Զի *կիրք*՝ եղականի՛ է յայտնապէս: - 502. Իսկ տէր մեր զի էր աստուած մարդացեալ՝ ո՛չ ունէր ակամայ *կիրք*. այլ զկամաւորն: -

502. Ասեմք մեք, եթէ անմտութիւն է կարծել զմարմինն թերեկատար առանց ականայ *կրից*: - 502. Այլ այժմ ասասցուք թէ ամենայն *կիրք* բաժանին ի չորս դէմս. կամաւոր և ակամայ. անգոսնելի և անանգոսնելի: - 502. Դարձեալ ասեմք, եթէ միով հպմամբ լանջացն յիսուսի մաքրեցաւ աշակերտն յայսպիսի *կրից*. քանի՞ առաւել բարձօղն ապականութեանց ազատ լիցի յայսպիսի *կրից*: - 502. Դժոխ՝ զդժուար զնեղ և զանձուկն նշանակէ. և կոչի բազմաւոր, Նախ վասն բազում *կրիցն*. ուր լալ աչացն է և կրճել ատամանց և խաւար ներքին և արտաքին և այլն: - 505. Իսկ հոգիք հաւատացելոց որք ոչ գնացին այսպէս զհետ նորա, այլ ընկալան ի ներգործութեանցն սատանայի և ի *կրից* աշխարհի...: - 688. ...և են առ աստուած ի հանգիստ որպէս լուաք. և ճշմարիտ է հանգչիլն ի թանձրութենէն՝ յախտաւոր *կրից* զերծելոցն և առ աստուած եղելոցն: - 696. Երրորդ, հայի առ նոյն ինքն արդարապէս հատուցումն մանրամասն քննութեամբ բարեացն և չարացն. որք առաւել կամ նուազ ունին. կամ հաւասարակ յերկուցն *կրից*: - 746. Որպիսութեան *կրիցն* չափ ո՛չ է անտի տանջանացն. զի բոլոր աստի նեղութիւնս համեմատեալ այնմ՝ է՛ որպէս կաթիլ մի ի ծովէ և կայծ մի ի հնոցէ: - 751. Զի նախ քան զյանցանելն ադամ ունէր *զկիրս* բնական և անգոսնելի. որպէս կերակրիլն, ննջելն, և այլն: - 759. Նոյն և կամք և *կիրք* և ներգործութիւն մարդկային ընդ աստուածայինն միաւորեալ. միջնորդելով հոգւոյ բանականի՝ աստուածութեանն՝ և մարմնոյն. որ է՛ ներգործութեամբ միշտ աստուած և փրկիչ բնութեամբ. քրիստոս. նոր ադամ. էմմանուէլ ճշմարտութեամբ: - 770. Չորրորդ՝ զի ակամայ ի *կրիցն* ցաւոց, որպէս աւազակաց հատուցմանց: - 780. իսկ ժամանակն, զի իցէ յառաջ քան *զկիրս*: - 780. Իսկ մեծն ներսէս ասէ, պակասութիւնն այն է, որ *կիրք* չարչարանացն քրիստոսի թուով և տեսակաւ պակա՛ս էր յառաքեալն պօղոս. այսինքն խաչն, բևեռքն, և այլն. և զայն էլից քարոզութեամբն իւր ի մարմինս եկեղեցւոյ: - 781. Կէսք խստամբէր *կրիւք* չարչարեալք. և այլ երկիւղիւ պակուցեալք: - 788

**ԿԻՑ +** Երրորդ՝ ստորև *կից*, և վերև բացատ: - 178. Իսկ առ մեզ **ժ** մասունք և **գ** *կիցն*, զի **ժ**՝ սուրբ և նըւէ՛ր է աստուծոյ: - 340

**ԿԻՒՐԵՂ** - Իսկ սոքա և զիրեշտակս ընդ մեզ դասեն. որպէս յայտ է ի գիրս պարապմանցն *Կիւրեղի*: - 34. Սուրբն աթանաս և *կիւրեղ* և այլք՝ զհոգւոյ և զմարմնոյ միաւորութիւնս ասեն բանին մարմնացելոյ: - 477. Այսպէս և *կիւրեղ* երուսաղէմի՝ համախոհ նմին: - 484. Տասներորդ՝ ամենայն սուրբ վարդապետք ուղղափառաց որպէս եփրեմ՝ ոսկէբերանն՝ *կիւրեղ*՝ աթանաս՝ և այլք, անապական գրեն և խոստովանին զմարմինն սուրբ: - 499. Եւ Պատրիարգունք էին անդ, Ներսէս հայոց. *Կիւրեղ* երուսաղէմի. Դամասոս հռոմայ. Նեքտառիոս կոստանդնուպօլսի: - 542. Այլ դաւանութիւն նոցա այս է. որպէս զի մի՛ լիցի ըստ նոցա աստուած մարդացեալ. կամ մերս բնութիւն ընդ աստուածութեանն միաւորեալ. որպէս ընդարձակապէս ցուցանէ աստուածաբանն *կիւրեղ* ի գիրս պարապմանց: - 552. Երկրորդ՝ ի քրիստոս բնութեանցն միացելոց մի ասել բնութիւն ըստ սրբոյն աթանասի և *կիւրեղի*: - 554

**ԿԻՒՐԵՆԱՑԻ** - Եւ այս են **իբ** լեզուքն: ...*Կիւրենացիք*: - 298

**ԿԻՒՐՂՈՍ** - Մինչ եկաց երկրորդ լուսաւորիչն հայոց և կրկին *կիւրղոս* սուրբ իմաստասէրն յոհան. և լուսաւորեաց զեկեղեցի: - 545

**ԿԻՒՐՈՍ** - Արդ յերեքտասան ամէ՛ ովսիա մինչև ցմետասան ամն սեդեկիայ որ վերջին գերեցաւ՝ լինի **խ** ամ. և նաբուգոդոնոսորայն **ի** ամ. և որդւոց և թոռանց նորին **ժ** ամ. որ կատարի **հ** ամ մինչև յառաջին ամն *կիւրոսի* որ արձակեաց զգերիսն: - 447. *Կիւրոս* յառաջին ամի թագաւորութեանն իւրոյ՝ արձակեաց **ե** բիւր զգերիսն յերուսաղէմ, սաղմանասար իշխանաւն. զի շինեսցեն զտաճարն: - 448. Դարձեալ՝ յերիս ժամանակս ազատեցան ի բաբիլօնէ՛. այսինքն *կիւրոսիւ* սաղմանասարաւ. դարեհիւ զօրաբաբէլ. արտաշէսիւ եզր դպիր և նէեմի: - 448. ...իսկ երկրորդն զօրաբաբէլ ի **զ** ամին *կիւրոսի* շինեցան զտաճարն...: - 449

**ԿԼԱՅԻՍ** - Սաստկագին գոչմամբ. և ահագնատեսիլ սուսերամերկ կորովալից նետողաց. որ պատեալ պահեալ պաշարէին զմեզ: ...Այլ և ի դռան *Կլայիս* սակաւ ինչ դանդաղեալ, մինն փրկեալ և միւսն գերեալ: - 789

**ԿԼԱՅԵՑԻ** - Զայս ամենայն մեծն ներսէս է ասացեալ *կլայեցին*: - 637

**ԿԼԱՆԵՄ +** Երկրորդ՝ զի գաւազանն մովսէսի մի վիշապ եղեալ *կլանէր* զբազում վիշապս նոցա որ և հե՛տն միանգամայն ո՛չ երևէր. ընդէ՞ր ապա և նոցայն ո՛չ *եկուլ* զմովսէսին. քանզի սո՛ւտ էր: - 335. Զկնակուլքն մեծամեծք են որք *կլանեն* զմանունս: - 365. Իսկ իշխանութիւնն երկրաւոր, վասն որոյ բացաւ երկիր և *եկուլ* զդադան: - 381. Այլ և ամենայն աշխարհ տաճա՛ր է աստուծոյ. թէ ի դաշտի թէ յագարակի թէ ի տղմի. կամ ի ջուր սուզի, կամ ի գազանաց գիշատի, կամ ի ձկանց *կլցի*, արդարութեան ոչ ինչ վնասէ: - 678

**ԿԼԱՓՆ +** *Կլափն* երկայն՝ բարկացօղ է և նենգժոտ: - 247. Կարճ *կլափն* նախանձո՛տ է և ո՛չ հեզ. զի նման է օձի: - 247. *Կլափն* որ չափաւոր է և քառակուսի՝ օգո՛ւտ է: - 247

**ԿԼԵՄ +** Նոյնպէս և երկրի է՛ **է** մասն տիեզերաց. զոր **է** *կլեմ* կոչեն: - 241

**ԿԼՕԴԻԱՆՈՍ** - Նմանապէս և աստուածաբանն ասէ ի ճառն երկրորդ առ *կլօդիանոս*՝ «ո՞ւր են այնքիկ ուրացօղք որք յայտնապէս բաժանեն զքիստոսն յերկու կամս և **յբ** գործս»: - 85

**ԿԾԿԵՄ +** Միսն տաք է և ջիլն հով. զի ջիլն ծկտի յորժամ յագենայ. և *կծկի* յորժամ քաղցենայ: - 242. Քարշողականն է՝ յորժամ *կծկի* և քաղցի, ներքուստ և արտաքուստ խնդրէ կերակուր: - 242. Որ արագ ընթանայ և զսպէ զինքն՝ և զերեսն կորակնէ՛ և զբոլոր մարմինն *կծկէ*, երկնչո՛տ է և ըռիշտ և աղուեսաբարոյ: - 247. Զի՞նչ է *կծկիլին*. և **է** անգամ յօրանչելն ի վերայ մեռեալ պատանոյն: - 446. Խաչանման տարածեցաւ ի վերայ մանկանն և *կծկեցաւ*. այսինքն փոքրկացաւ ի չափ մանկանն. և ապա յայտնապէս է անգամ յօրանչելով և *կծկելով* կենդանացոյց զնա: - 446

**ԿՂԵՄ, ԿՂԷՄ** - Եւ որպէս ասէ *կղէմ* և անանիա դամասկացի, թէ զ գիրք այլ ընկալաք յեկեղեցի: - 450. Եւ անապական պատարագեմ զքրիստոս որպէս կանոնքն է առաքելոցն և *կղեմայ*. և դու ապականես ջրով և զայլն որպէս յառաջիկայդ ասացի: - 548. Զի յառաքելական կանոնս և *կղեմայ* և մակարայ և այլոցն: - 595

**ԿՂԶԻ +** Նա՛խ՝ զի որդի է յեսսեայ. որ է՛ պտուղ *կղզւոյ*. և տէրն մեր եղև պտուղ մարիամու ցամաքեալ ի խոնաւութեանց կենցաղոյս: - 435. Իսկ զայսօր յարեաւն, զնորոգեալ *կղզիքն*, և զքոռանցն, ներսէս լամբրօնացին: - 637

**ԿՂԷՈՊԵԱՆՑ** - Յինգերորդ՝ մարիամ *կղէոպեանց* որ կայր առ խաչին: - 517. *Կղէոպաս* եղբա՛յր է յովսեփայ. և մարիամս այս դո՛ւստր է նորա: - 517

**ԿՃՂԱԿ +** Զի թէ մարդն ունէր զբնութեամբ զէնս, որպէս թէ եղջիւր ի գլուխն. և սուր զատամունսն. ճիրանունք ի ձեռս. և սմբակ կամ *կճղակ* ոտիւք. և զայլսն, Նախ՝ զի զազանադէմ և դժւարատես լինէր ամենեցուն: - 217. Նա՛խ՝ է՛ աննշանն զորս որոշէ՛ օրէնքն. որ ո՛չ ունի *կճղակս* և որոճ այլն՝ անսուրբ է: - 295. Որոճօղն՝ քննօղ իմաստութեան. և *կճղակն* ուղիղ վարք հոգւոյ և մարմնոյ. սուրբ են: - 364

**ԿՆԱՏ +** Բերանն փոքր՝ պատկանի կանանց: Նաև *կնատ* վատասրտաց: - 247. Զի ի գալստեան տեառն *կնատքն* և թոյլքն ո՛չ թուին. այլ արիագոյնքն անխտիր. զի ի քրիստոս յիսուս արու և էգ ո՛չ է. ո՛չ ի մկրտութեանն և ո՛չ ի յարութեանն: - 315. Եւ պակասն ի գիտութեանց բանին, և *կնատքն* և բղջախոհքն ո՛չ կարգին զինուորք աստուծոյ: - 377

**ԿՆԴՐՈՒԿ +** Նմանապէս և խունկ ծխելոյ **դ** էր: Ստաշխն. և Քաղբան. եղունգն. և *Կնդրուկ*: - 349. Եւ *կընդրուկն* զմասն աստուծոյ ընդունելի: - 357. Եւ թէ ոք ասիցէ, ո՞րն է խորհուրդն քրիստոսի որով սրբիւր իսրայէլ ի մեղաց ...*Կնդրուկ* անուշահոտ բուրեալ. և Գինի ուրախարար ի զմայլումն հոգւոր: - 361

**ԿՆԻՔ +** Որպէս *կնիք* մատանւոյ ի բազում մոմս: - 106. Եւ որպէս մի է *կնիք* մատանւոյն, և բազմանայ ի կնքեալ մոմս: - 113. Երրորդ՝ զի անբաժանելի է յունօղսն. որպէս յաստուած՝ և ի հրեշտակս, այսպէս և ի մարդն արժանացեալ. զի ունակութիւն է յարամնայ և *կնիք* անքակտելի: - 138. Իսկ գործ պոռնկութեանն *զկնիք* կուսութեանն շրջէ և զբնութիւնն ապականէ...: - 165. Դարձեալ ասեմք, թէպէտ զթողութիւն ընկալաւ իսկապէս, և զպատիժս կրեաց հատուցմամբն, սակայն մնաց *կնիք* ապականութեանն ի յանձն որպէս ասացաք: - 166. Յաւատոյն յատուկ է՝ զի մի՛ անգամ է, և *կնի՛ք* է ի հոգին նախկին: - 166. Իսկ ապաշխարութիւնն կրկին. զի *կնիք* ո՛չ է. և վերջին է սրբութիւն: - 166. Եւ ի վախճանի եղև զգալի բանականն իբրև մատնահար և *կնիք* արարածոց. ունելով զիմացումն և զզգացումն. զի իմաստութեամբն ծանիցէ զիմաստութիւն արարչին. և զգալովն զամենակարօղ զօրութիւն նորա՛: - 231. Երկրորդ՝ զի թէ այլ և այլ էր հոգի, ի յայլ հոգւոյ տեղիս ո՛չ բնակէր այլ հոգի որպէս յայլո՛յ կաղապար. և ա՛յլ դրօշած ի յա՛յլ *կնիք*. այլ մի է. վասն այն որ յետոյ երևի, յառաջնոյն խառնուածն կարէ՛ բնակիլ: - 259. Սակայն ըստ ներգործութեան մեծագոյն է սրբութիւն մկրտութեանն. զի տպաւորէ *զկնիքն*. այլ և բանայ զդուռն արքայութեան. այլ և պատրաստէ՛ զմարդն առ ի խորհուրդս ամենայն. զոր ո՛չ ներգործեն ա՛յլ երկոքին եզական շնորհքն: - 462. Զի էր պտղաբերութիւն առանց ապականութեան *կնքոյ*: - 469. Չորրորդ՝ զի մկրտութիւնն է անքակտելի *կնիք* ի հոգին. որպէս կարգն և դրոշմն. վասն որոյ ո՛չ կրկնին որք յանուն սուրբ Երրորդութեանն մկրտեցան: - 590. Իւղ անոյշ յանուն յիսուսի հեղեալ ի վերայ քոյ *կնիք* երկնաւոր պարգևաց: - 593. *Կնիքս* այս որ յանուն յիսուսի լուսաւորեսցէ զաչս քո. - 604. Եւ գո՛րծ է նոցա ձեռնադրեալ զմետրապօլիտսն. և օրհնել զձէթ *կնքոյ*: - 607. ...և օրհնել ձէթ *կնքոյ* վասն յաւելուածոյն. արկանելով յառաքելական ծիրոյն. զոր օրհնէ եկեղեցի յաւելուածով: - 607. Եւ ուր չիցէ եպիսկոպոս՝ եկեղեցի օրհնեն և խաչի *կնիք* տան: - 608. Եւ ապա՛ իբր *զկնիք* զբաշխումն շնորհաց ի հոգւոյն սրբոյ աղերսեմք: - 633. ...զի *կնիք* է ի հոգին և անքակ. որպէս ի կեանքն՝

նոյնպէս և յետ մահու ունի: - 673. Նոյնպէս և յայլ խորհրդոց կատարմունքն. *կնքոյ*, պսակի, և այլոցն, լուսացուէ և խնկոց գին: - 684. Դիոնէսիոս զիաւատն տիպ ասէ. և Աղէքսանդրոս *կնիք*. և Պօղոս աներևոյթ իրաց երեւ. և Յօհան ոսկէբերանն՝ լոյս անյայտ իրաց: - 769. Նորս խորհրդոյ շնորհք ոմանք են անիբաց դնելիք. զի են *կնիք* ի հոգին անփոփոխ գոլով ընդ նմա. որպէս է՛ շնորհք *կնքոյն* դրոշմին և կարգին: - 783. Եւ այլքն ո՛չ են *կնիք.* այլ զարդ պակասութեանց նորին. վասն որոյ և փոփոխականք են: - 783. Իսկ որք զմի քանքար հաւատոյ կամ զմկրտութեանն շնորհի ի բաց կորուսանեն, ո՛չ *զկնիքն* խորհրդապէս, այլ զարժանն վարձու իրողապէս: - 783. Եւ յարամնայութիւն *կնքոյն* պատճառէ՛ ոմանց գերագոյն պատիւս. և ոմանց խստագոյն պատիժս. ըստ բազում գանից առակի ասիցն: - 783

**ԿՆԿՈՒՂ (տ. ԿՆԳՈՒՂ) +** Իսկ թէ ի կրօնաւորաց իցէ, պատեսցեն իւր զգեստիւն, մազեղէն և *կնկուղ* և այլ որպէս գրեալ է...: - 671. Իսկ *կնկուղ* ի գլուխ կրօնաւորաց և օդ յոտս և գօտի ընդ մէջ. զսպառազինիլն և զարիութեամբ ընթանալն ի պատերազմ: - 671

**ԿՆՃԻՌՆ +** Ցորեան ընդ յարդի. *կնճիռն* ընդ գինւոյ. մրուր ընդ ձիթոյ. յուդա ընդ յառաքեալսն. նիկօլայոս հերեսիոտ ընդ աշակերտսն: - 756

**ԿՆՈՒՆՔ +** Իսկ վասն հիմնարկութեան սուրբ տաճարի և ժամահար օրհնելոյ. սկիհ և մաղզմայ. և զգիրք. և *զկնունք* առնելոյ. և խաչօրհնելոյ. և զքառասնորդաց **գ** ժամուց զքարոզքն և զաղօթսն, յոհան մանդակունին է արարեալ...: - 659. ...թէ ասեն եպիսկոպոսին թէ ոք եկեալ է *կնունք* խնդրել, - 659

**ԿՆՁԻԹ (տ. ԿՆՃԻԹ) +** Ո՞րք և ո՞յք են բնութեամբ զէնք կենդանեաց... Կամ *կնջիք*. որպէս փղի: - 216

**ԿՆՏՈՒԹԻՒՆ +** Առ այս ասեմք, թէպէտ է՛ ամենայն իր բնութեամբ նա՛ և հասարակ. որպէս և սևութիւն ագռաւու. այլ ո՛չ անդրադարձեալ. զի է՛ ինչ բնութեամբ, այլ ո՛չ հասարակ. որպէս *կնտութիւն* մարդոյ: - 774

**ԿՆՔԱՀԱՅՐ +** Այլ *կնքահայր* ո՛չ է պարտ առնել զայլազգին. զի ո՛չ ունի զիաւատն սուրբ, և ո՛չ է հրաժարեալ ի սատանայէ. վասն որոյ ո՛չ կարէ լեզու լինիլ տղային կամ երաշխաւոր. - 591. Կին մարդ կարէ՞ *կնքահայր* լինիլ թէ ոչ: - 591. Ո՛չ կարէ. զի *կնքահայր* ասեմք և ո՛չ կնքամայր. զի կնքամայր եկեղեցին է նորածնելոցն: - 591. Որոյ պատճառէ, զի կին երաշխաւոր և վկայ ո՛չ կարէ լինիլ, վասն որոյ և ո՛չ *կնքահայր* կարէ լինիլ: - 591. Եւ դարձեալ՝ կանանց ազգ ո՛չ կարէ քահանայագործել. և ո՛չ *կնքահայր* լինիլ: - 591. Զի *կնքահայրն* և սանամայրն ծնունդ մի. և նոցա զաւակն **բ**. և նոցա թոռն **գ**. և չորսն որ է՛ թոռին թոռն՝ լինին խնամիք: - 611

**ԿՆՔԱՄԱՅՐ +** Ո՛չ կարէ. զի կնքահայր ասեմք և ո՛չ *կնքամայր*. զի *կնքամայր* եկեղեցին է նորածնելոցն: - 591

**ԿՆՔԵՄ +** *Կնքէ* և հոգին սուրբ «մի՛ տրտմեցուցանէք զհոգին սուրբ աստուծոյ, որով *կնքեցայք* յաւուրն փրկութեան ձերոյ»: - 56. Եւ զփառս բանին զրկելով՝ ետուք մարդոյն. և եղէք մարդապաշտք, և մարդոյ մարմնակերք. և ի մարդ մկրտեալք. և սուտ է փրկութիւն մարդոյ մարգարէն *կնքեաց*: - 90. Ոմանց գոյութիւն միայն. և այլոց կեանք. և բան. և իմացումն. որպէս տիպ *կնքեալ* ի մոմի: - 106. Եւ որպէս մի է կնիք մատանւոյն, և բազմանայ ի *կնքեալ* մոմս: - 113. Այլ և ըստ համարոյն՝ *կնքէ*՛ զինչս թագաւորաց. և չտայ գողանալ ծառայից. և զգողացեալն յայտնէ և յանդիմանէ: - 178. Վասն որոյ յետ մկրտութեանն հաղորդեմք *զկնքեալն*: - 341. Երեմիա և աշակերտն՝ տարան ի գիշերի զտապանակն և որ առ նմայն էին՝ ի լեառն սինա. և անդ *կնքեցին* ի վիմին անուամբն աստուծոյ ասելով, ո՛չ ոք բացցէ զսա՞ թէ ոչ մովսէս որ եբերն. և ո՛չ ոք բացցէ՝ թէ ոչ ահարօն: - 345. Երկրորդ՝ զի ասէ «իբրև զիս». իբրևն օրինա՛կ է. որպէս մովսէս աստուած կոչեցաւ, և տէր մեր էմմանուէլ. և զնա՛ հայր *կնքեաց* աստուած. և որպէս մովսէս իշխէր տարերաց, և տէր ի ծովուն գնայր, և ի վերայ օդոյն: - 399. Երեսունևմի, գիշերի ընդ պատուհանն եւ, թողեալ զպատանսն յանկողնի. և տէրն ի գիշերի յարուցեալ եթող զկտաւն ի գերեզմանին *կնքեալ*: - 436-437. Զի որպէս ի կուսական արգանդէ, նոյնպէս ծնաւ ի կոյս գերեզմանէ վիմովն *կնքելով*: - 471. Վասն զի գերեզմանն *կնքեալ* էր և յարեաւ: - 512. Եւ դարձեալ զոր օրինակ, գիր մատանւոյն մի և նոյն կատարեալն է տըպացեալ յամենայն մոմս *կնքեալ* և ո՛չ աւելի և ո՛չ նուազ: - 530. Ընդ դէմ աստեղաց *կնքէր*: - 639. Խաւարեցոյց *կնքեալ*, այսինքն վկայեաց եցոյց թէ ոչ են աստուածք: - 639. Դարձեալ՝ զմնացորդ դասուն որ անկաւ յերկիւղէն *կնքեաց* և հաստատեաց: - 639. Եւ դարձեալ՝ զիւր հոգին աւանդելով *կնքեաց* զամենայն հոգիսն ի ձեռն հօր: - 639. Այլ և յամենայն խորհուրդս. այսինքն ի *կնքելն*, և ի պատարագելն, ի կարգն, ի պսակն, և յայլն: - 643. ...որպէս նոքա որ զդեղ մահու խառնեն. վասն որոյ նշանաւ խաչին *կնքեմք* զնոսա, զի փախիցեն դևքն: - 654. ...զի առաջին աղօթք յամենայն կարգադրութիւնս՝ գոհանամք պարտ է դնել. բայց առաւել ի *կնքելն* և ի թաղել մեռելոյն: - 659. Զի՞նչ է խաչիւ և աւետարանաւ *կնքելն* զգերեզմանն անշարժապէս: - 679. Երիցս *կնքելն* զգերեզմանն, Նախ ի խորհուրդ սուրբ Երրորդութեանն: - 679. Վասն որոյ խաչիւ և

աւետարանաւ աւետեմք ննջեցելոցն զմեծ օր աւետեաց նոցա և *կնքեմք* զգերեզմանն: - 684. Որպէս լոյս արեգակն անցանէ ընդ երկինս առանց ապականութեան. և որպէս քրիստոս յարեաւ մարմնով ի գերեզմանէն վիմովն *կնքելով*. և եմուտ առ աշակերտսն դրօքն փակելովք: - 722. Արդ նա՛ որ զամենայն գերեզման *կնքեալ* պահէ, զեկեղեցիս օրհնէ՛ և հաստատէ՛ և ամենեցուն զօրաւիգն է ի փորձութիւնս, կարօ՛ղ է անապական լինիլ. զի աստուածային է նշան: - 733. Մեր գործքն և յաստուծոյ տուեալ բարին հաւատով *կնքի*. և պակասն յանդիմանի այժմ ի խղճէ մտաց որպէս ի գրոյ. և անդ ի դատաւորէն, որ չար ծառայ կոչէ: - 769. Կամ զինչ անհնարին սաստ, եթէ ոք խոտեսցէ զսուրբ հոգւոյն խօսեցեալս ի գիրս սուրբս. ընտրելով զոմն յարուցեալ ի մեռելոց. *կնքելով* առակաւոր բանին...: - 775

**ԿՇԵՌ (տ. ԿՇԻՌ) +** Եւ վասն բազում պատճառի յետոյ ստեղծաւ մարդս... Եւ զմիջին *կշեռ* մահու և կենաց ունելով: - 231

**ԿՇԻՌ +** Իսկ Եկաւորն և *Կշիռն* և Ջրհոսն, ունին զբնութիւն օդոյ ջերմ և գէջ: - 189. Ի *կշիռն* ի կարիճն և յաղեղնաւորն առնէ աշուն. նոյնպէս հասարակ տիւ և գիշեր **ժբ** ժամ: - 190. Նա՛խ՝ զի *կշիռ* և հաւասա՛ր են տիւ և գիշեր: - 197. Եւ զորօրինակ՝ լիտր մի ցորեան, կամ այլ ինչ. յորժամ ձեռօքդ բաժանես և ցրուես զհատսն, ո՛չ մնայ *կշիռն*: - 202. Երրորդ՝ զի չափով և թուով և *կշռով* տայ աստուած զտանջանս մեղաց. թէպէտ մեզ անգիտելի՛ է: - 333. Հարիւր խարիսխք արծաթիք. և իւրաքանչիւրքն ի մի մի տաղանդէ՛ *կշռոյ*: - 343. Սիկղն և սատերն և երկդրամեանն մի են. ի դանկ է. և մի դանկն **բ** գարւոյ *կշիռ* է: - 343. Երկրորդ՝ զի ադամ ի միջակ լուծն *կշռոց* այսինքն յանձնիշխանութիւնն ստեղծաւ...: - 503. Երեսունն**է**, Ուղիղ է դատաստանն աստուծոյ. և յաւիտեան տանջէ. և վասն *կշռոց* դատաստանին: - 661. Զի՞նչ է՝ դնին *կշիռք* արդարութեան: - 744. *Կշռիք* գործիական առ մեզ յայտնի՛ է. որ զարդար հաւասարութիւն նշանակէ ի ձեռս մեր: - 744. Իսկ երկոքին թաթք *կշռոցն* հոգի և մարմին: - 745. Զայս իմանամք *կշիռք* առ մեզ: - 745. Եւ որպէս այս առ մեզ, նոյնպէս և *զկշիռ* իրաւանցն աստուծոյ է տեսանել...: - 745. Զի որպէս ի *կշիռն* արդար՝ մէտ մի յաւելուածն հարստահարէ՛ զդիմակն և ի խոնարհ ձգէ, այսպէս և դատաստանն աստուծոյ...: - 745. Եւ որպէս աստ՝ նոյնպէս ևա՛նդ է *կշիռ* արդարութեան: - 745. Այսպէս բաղդատի կոչումն *կշռոյ* եթէ ումէք հաճոյ մարթասցի: - 745. Իսկ *կշիռ* արդարութեան՝ պարզաբար զհատուցումն արդարութեան նշանակէ: - 745. Դարձեալ *կշիռք* արդարութեան առանձնապէս իմանի տէր մեր ըստ չորից: - 745. Երրորդ, զի ի *կշիռ* արդարութեան դատեաց ի մէջ հրէից և հեթանոսաց. մարդկան ազգի և սատանայի: - 746. Չորրորդ, զի նա՛ արդարութեամբ հատուցանէ ի կատարածի. վասն որոյ կոչի *կշիռք* արդարութեան: - 746. Այլ և ի նոյնս գոյ իմն *կշիռ* արդարութեան ըստ ինքեան...: - 746. Եւ *կշիռ* ողորմութեանն ըստ ինքեան մարմնաւորի և հոգևորի. զի աստ մարմնաւորն և անդ հոգևորն կշռի և միտէ՛: - 746. Իսկ անդ հաւասարի *կշիռն* ըստ յուսոյ, և միտէ՛ ողորմութիւնն ըստ սիրոյ: - 746. Այսպէս հաւասարի և միտէ՛ *կշիռ* ողորմութեանն ըստ ինքեան առ նոյնս և առ այլս: - 746. Զայս ցուցանէ հաւասարութիւն *կշռոյն* և միտելն: - 747. Չորրորդ, *կշիռն* նշանակէ՛ զգործս մարդկան. ըստ *կշռոյ* օրինացն հաւասարել և հատուցանել...: - 747. Եւ թէ ունիցին ըստ օրինացն հաւասարեալ ի գործս կամ ի հաւատս, և եթէ միտեալ և կամ նուազեալ, ըստ նոցին օրինացն հատուցանել. և կամ արտաքոյ օրինացն կորնչիլ ի յայսմ *կշռոյ* է հատուցումն: - 747. Եթէ ումեք տուեալ իցէ շնորհ հասարակ կամ յատուկ, որպէս մկրտութիւնն և հաւատքն. քանքար և տաղանդ. իշխան և առաջնորդ. մեծութիւն և ինչք. կեանք լոյս ամանակ և այլն ամենայն. այսու եղանակաւ *կշռոյ* հատուսցի: - 747. Եւ այսպէս դնի *կշիռք* արդարութեան որպէս ցուցաւ: - 747. Եւ զայս ո՛չ շաբաթու և աւուրց սպառեալ. այլ ամսոց երից սորին յերկարեալ. և գործելոց վրէժ ո՛չ *կշիռ* հատուցեալ: - 789

**ԿՇՌԱՊԷՍ +** Քսաներորդ՝ արդար կոչի. և կրկին է արդարութիւն. այսինքն *կշռապէս*՝ և արժանապէս: - 127. Եւ *կշռապէսն* իցէ հաւասար ծագումն լուսոյն: - 127

**ԿՇՌԵՄ +** Զպակասն ուղղեա՛ և զաւելիսն *կշռեա՛* աղաչեմ ի ներգոյէ՛ քոյինդ մեծանձնութեան: - 95. Զորօրինակ՝ լիտր մին շաքար ի լիտր մին ջուր անկեալ, նոյն մին լիտր մնայ *կշռեալ*: - 202. Այլ դու ո՛վ այրդ աստուծոյ մաքրամիտ և ճգնազգեաց միայնաւոր սուրբ հայրդ սահակ, թէ և զիջանես եղբայրական սիրով խնդրել բանս ի մէնջ. սակայն կարող ես և զթերին լնուլ և զյաւելորդն *կշռել*. և զմեզ օգտեցուցանել ի ներգոյէ՛ քոյին պայծառամիտ սրբութեան սրտի: - 558. Եւ կշիռ ողորմութեանն ըստ ինքեան մարմնաւորի և հոգևորի. զի աստ մարմնաւորն և անդ հոգևորն *կշռի* և միտէ՛: - 746. Իսկ կշռողականն է զոյգ արդարութեամբ *կշռել*. որպէս յորժամ ողորմելով միոյն՝ պատժէ՛ զընդդիմակն նորին. որպէս փրկեցաւ իէլ և պատժեցաւ եգիպտոս. և յազատիլ բնութեան մարդոյս՝ պատժեցաւ սատանայ: - 747. Որ և աղաչեմ զբարեմիտ հանդիպօղսդ՝ եղբայրական սիրով հաւանիլ. զպակասն լնուլ և զաւելիսն *կշռել*: - 772. Եւ

մաղթե՛մ եղբայրական սիրով, ըստ բնածին բարեբոյս բարուցդ ամխոյժ մտօք ուղղապէս որոնել. զքերին լնլով և զաւելորդն *կշռել*: - 789

**ԿՇՌՈՂԱԿԱՆ** - Իսկ *կշռողականն* է զոյգ արդարութեամբ կշռել. որպէս յորժամ ողորմելով միոյն՝ պատժէ՛ զընդդիմակն նորին. որպէս փրկեցաւ իսրայէլ և պատժեցաւ եգիպտոս. և յազատիլ բնութեան մարդոյս՝ պատժեցաւ սատանայ: - 747

**ԿՇՌՈՐԴ +** Իսկ *կշռորդն* է՛ օրէնքն աստուածային, և գործք մեր նմին հաւասարեալ և միտեալ հաւատով: - 745

**ԿՇՏԱՄԲԵԼ +** Եւ փոխանակ հոգւոյն՝ հրեշտակական օգնութեանն կարօտացաւ ցուցանել զտիրապէս իշխօղն բնութեան. որ և *կշտամբեաց* զբռնութեամբ թագաւորելն նորա: - 410

**ԿՇՏԱՄԲՈՒԹԻՒՆ +** Դարձեալ և ըստ մերոց վարդապետաց, առաջին կանոնին **ը** երրորդ գուբդայն օրհնութիւն՝ ի հանդերձելումն ակնարկէ. զի օրն այն ուրախութիւն է արդարոց. և կործանումն ամբարշտաց... Երկրորդն նոյն խնամակալութիւն և *կշտամբութիւն*: - 630

**ԿՇՏՈՒՄՆ** - Ա՛յս է քաղցն որ *կշտումն* ո՛չ ունի: - 570

**ԿՈԹ + Եւ յետ այնորիկ յեօթներորդէ՛ աւուրն սկսանի արհւնածուծ լինիլ յարգանդէ մօրն ընդ պորտն. որպէս դդդում և ծծերուկ ընդ *կոթն*:** - 261

**ԿՈԹՈՂ +** Ինքն նմա՛ն էր *կոթողի*, կամ սագաշէն եկեղեցւոյ: - 293

**ԿՈԽԱՆ +** Երկրորդ՝ զի նիւթ սորա է՛ ի քարանց արտաքին և ի փայտից որ *կոխան* է եղեալ անասնոց և անսրբոց...: - 615

***ԿՈԽԱՆ ԱՌՆԵԼ, ԼԻՆԵԼ +*** Զոր եկեալ տէրն անմեղ և անապական մարմնովն նախանձեաց զմեղս, և զարդարութիւն սփռեաց ի վերայ մարդկան. և դատապարտեաց զսատանայ իբր զդաւաճանօղ մարդկան և *կոխան արար* ի ներքոյ մարդկան: - 153. Այլ ոտք զհաւատացեալ անդամս իւր ասէ. զի սոքա՛ վեցեքին թշնամիքս *կոխան լինին* հաւատացելոց ի կատարածի: - 317. Երրորդ, զի մի՛ *կոխան լիցի* կամ կերակուր գազանաց որպէս շաղիղ անասնոցն: - 677

***ԿՈԽԱՆ ՏԱԼ +*** Նոցա զգալի թշնամիքն *ետ կոխան*. և մեզ զիմանալին...: - 398. Քանզի՝ յեսու զպարանցս թագաւորացն *կոխան ետ* իշխանաց իւրոց և զօրաց: - 419

**ԿՈԽԵԼ +** Զորօրինակ՝ անհնա՛ր է յառաջ ընթանալով *կոխել* զսուերն: - 25. Զպետրոս գլուխ եդեալ, և զդաւանումն նորին *կոխեն*: - 34. Նոյնպէս և առ մեզ՝ որք մրցին և ջանան ընդ դէմ բանսարկուին և մեռուցանեն զէ գլուխ նորա՝ նոքա զնոյն պսակն ժուժկալութեամբ և առաքինութեամբ ընդունին ի գլուխս իւրեանց յիւրաքանչիւրոցն զորս *կոխեն* և յաղթահարեն...: - 152. Առաջին է որ ոտիւք *կոխի*: - 210. Երկիր որ *կոխի*՝ է՛ նիւթականս այս: - 210. Եւ զի ի մարդոց և յանասնոց *կոխի*: - 211. Եւ որպէս սակաւ մասն ոտիցն ի յերկի՛ր է հպեալ և *կոխէ*, նոյնպէս և մեզ սակաւ պէտս մարմնոյ. այսինքն զգեստուց և կերակրոց ի յերկրէ ստանամք. և զանչափն և զաւելորդն *կոխեմք* և անցանեմք...: - 233. Ա՛րդ՝ ո՛չ ասէ թէ ի ներքոյ քոյ. զի զսուա *կոխել* էր քրիստոսի: - 316. Եւ տէրն մեր զիմանալի օձն կորոյս և *կոխանեաց*: - 329. Եւ զայն որպէս թէ ո՛չ ունիցին. և այնու *կոխեսցեն* զգլուխ կամակոր օձին: - 331. Չորրորդ՝ նշանակ իմանալւոյն դագոնայ, որ զգլուխ իւր ամբարձ ընդ դէմ աստուծոյ. և ընդ բռամբ էարկ և *կոխեաց* զմարդկային ազգ. զորս խորտակեաց տէր մեր: - 426. Կամ զի օրէնքն գրեալ էր՝ կուրի և կաղի մի՛ դնել գայթակղութիւն, ասէին նախատելով թէ՝ որպէս ո՛չ կարես *կոխել* զդոսա, նոյնպէս ո՛չ կարես առնուլ զամուրն յեբուսայ: - 431. Քանզի երորդ, *կոխեսցին* զայլազգիսն իսրայէլ և յուդայ. և խոստովանօղք քրիստոսի զդևս այլազգիս: - 436. Եւ ա՛յլ առաքինութեամբք *կոխել* հատանեմք զխայթոցն որ է՛ ներգործական մեղքն և մահ հոգւոյ և դժոխք: - 489. Երկրորդ՝ զվեց կենդանակերպսն *կոխեաց*, որ էր **եժան** աւուր ճանապարհ ի կուսէն ի խոյն ընթացեալ: - 490. Երկրորդ՝ յանցանք է *կոխել* զօրէնս և անցանել: - 555. ...նոքա սիրեն զտէր. և զօրացեալ ի նմանէ՝ *կոխեն* զանմարմին թշնամին. որպէս ժողովուրդն զփարաւօն: - 629. Եւ մեզ ետ իշխանութիւն *կոխել* զօձս և զկարիճս որ տկարացեալ էր և կապեալ: - 706. Երկրորդ՝ մարմնովն տիրեաց ցանկութեանցն երկրաւոր՝ և իշխանացն դիւաց. և մարմնովն իւր *կոխեաց* և հալածեաց զայն որ ասէր «ինձ տուեալ է այս ամենայն»: - 711

**ԿՈԾ +** Զի՞նչ նշանակէ սուգն և *կոծն* և հանդերձին պատառելն: - 670. Դարձեալ՝ երէկ վասն մեռելոյն կսկծոյ *կոծ* մեծ արարաք. և այն դժուարութիւն էր աստուծոյ...: - 680

**ԿՈԾԻԼ +** ...և շրջեցին զնովաւ *կոծօղք* և լալականք հրապարակին...: - 669

**ԿՈԿ +** Իններորդ՝ զի որպէս կողից երեսն որ ի փորն նայի՝ *կոկ* գոլով և մզղնատեսակ. իսկ մէջն

փուշ և մրրախառն. այսպէս սէրն զոր ցուցանէ առ այրն, նոսր առ ի ցոյցս՝ և երեսս միայն ունի. իսկ ի սիրտն զմրուր դառնութեան: - 276

**ԿՈԿՈՆ +** *Կոկոն* աչքն՝ անհաստա՛տ է սրտիւք: - 246

**ԿՈԿՈՐԴԵԼՈՍ +** Կամ թէփ. որպէս *կոկորդիլոսին*: - 216. Ասեմք եթէ՝ մողեզն և *կոկորդիլոսն* որ քարբոշ ասեն, և յերկրի ազգի ազգի զեռունք արիւն ո՛չ ունին: - 511

**ԿՈՂ +** Նա՛խ՝ զի ի *կողէն* քրիստոսի աղբիւրացաւ և բղխեաց առ մեզ: - 207. Եւ կամ որպէս եւա ի *կողիցն* ադամայ: - 226. Երեսունք՝ Զկինն ի *կողէն* ստեղծ: - 228. Ո՞ր է **բժ**ան անդամք մարդոյն... Յինգն՝ *կողքն*: - 241. Քանի՞ են զօղուածք և ոսկերք մարդոյն: ...Աջ *կողքն* **թ** ոսկր: ...Եւ ձախ *կողքն* **ը**. որ լինին սոքա **խ**: - 243. Վասն է՞ր զկինն ի *կողէն* ստեղծ և ո՛չ ի հողոյ: - 276. Երկրորդ՝ զի մի՛ անփոյթ և անհնազանդ եղիցի մարդոյն. այլ ի նմանէ՛ ի *կողիցն*, զի որպէս մարմին հնազա՛նդ լիցի գլխոյն: - 276. Երրորդ՝ զի որպէս խօսիլ գլխոյն է. նոյնպէս լռութիւն *կողին* է. զի լուռ լիցի կինն ընդ իշխանութեամբ առնն: - 276. Յինգերորդ՝ զի *կողէ* աման և տեղի երիկամանց. յորմէ շարժի ցանկութիւնն. զի թէպէտ ո՛չ շարժէ զնա. այլ ազդումն ինչ ունի զնմանէ: - 276. Եօթներորդ՝ զի պարունակածև է *կողն*. ի նշանակել, զի կինն պարունակիչ և հաւաքիչ է տան առն և ընչից: - 276. Ութերորդ՝ զի *կողն* կեռ գոլով՝ ցուցանէ զկինն նենգ գոլ և երկմիտ. կեռ, այսինքն խեռ ընդ առն: - 276. Իններորդ՝ զի որպէս *կողից* երեսն որ ի փորն նայի՝ կոկ գոլով և մզղնատեսակ. իսկ մէջն փուշ և մրրախառն. այսպէս սէրն զոր ցուցանէ առ այրն, նոսր առ ի ցոյցս՝ և երեսս միայն ունի. իսկ ի սիրտն զմրուր դառնութեան: - 276. Տասներորդ՝ որպէս *կողն* զզօրութիւնն քարշէ՛ և տայ ի թիկունքն և պնդէ՛ զնա. այսպէս կինն զփառս և զինչս առն յինքն քարշելով թանձրացուցանէ և պնդէ՛ զինքն: - 276. Երրորդ՝ կին, իբր թէ *կող* մի. որ է՛ զօրութիւն սիւն: - 276. Երկրորդ՝ զի ի ձախ *կողէ*՛ շինեցաւ կինն. և տկա՛ր է ձախ կողմն մարդոյս: - 276. Վեցերորդ՝ հարուածս կրեալ յոր ի բոլոր մարմինն. և տէր մեր ի ձեռս և յոտս և ի *կողս*. որ և փշով պսակեալ ապտակեալ և գան հարեալ: - 327. Եւ ի *կողից* տեառն բղխեցին աղբերք ի զմայլումն պասքեցելոց և ի լուացումն ախտաժէտ հոգւոց: - 329. Իսկ ի ջուր, Նա՛խ՝ զի ջուր բղխեաց ի լուացումն և յարբուցումն. որպէս ի *կողից* փրկչին ջուր և արիւն: - 386. Եւ ջրովն շիջուցանէ զհուրն նախաստեղծ *կողին*: - 423. Քսանևը, ծգեաց սաւուղ զգեղարդն դաւթի, եհար զորմն և ապրեցաւ դաւիթ. և որդիքն սաւուղայ հարկանել ետուն *զկողս* տեառն և ո՛չ վնասեցին աստուածութեան նորա: - 436. Այլ և ո՛չ ի մսոյ կամ յոսկերաց որպէս եւա *ի կողէն*: - 470. Զագահութիւնն՝ բազմաբաշխութիւնն. որ ետ զմարմին իւր ի կերակուր և զարիւնն իւր ըմպելի. զհոգին ի գին. զջուր *կողին* ի լուացումն. զհանդերձն՝ խաչողացն. զմարմինն՝ աշակերտացն. և զմայրն՝ յոհաննու: - 489. Զբղջախոհութիւնն՝ խոցմամբ *կողին*: - 489. Երրորդն է՛ բացումն *կողին*. ի նշան ամէնառատ գնոջ փրկութեան մերոյ: - 489. Վեցերորդ՝ ջուր և արիւն բղխեաց *ի կողէն*: - 490. Նա՛խ՝ զի ծանիցի թէ սոցա արարիչ է անարգեալն. վասն այն լուսեղէնք և օդեղէնք և օդն խաւարեցան. ջուր *ի կողիցն* բղխեաց. և երկիր շարժեցաւ: - 490. Եւ վարագոյրն պատառեցաւ. զի յանարգանս փեսային պատառեաց հարսն զքօղն. և *կողն* աղբիւրացաւ. և նոքա ո՛չ արտասուեցին: - 490. Եւ որպէս *կողն* ադամայ եղև կին. և շինեալ եկեղեցի լինի հարսն քրիստոսի: - 534. Այլ նարօտն կարմիր և սպիտակ մանեալ՝ զարիւն և զջուր *կողին* քրիստոսի: - 594. Եւ ի չորրորդ գիրքն ի ի համարն ասէ, ետ զմարմինն ի կերակուր. զարիւնն ըմպել. զհոգին ի գին. զջուրն *կողին* ի լացումն: - 594. Որ և այսպիսի կարծիքս սո՛տ է բազում վկայութեամբ... Վեցերորդ վկայութիւն ի բացմանէ *կողին* քրիստոսի: - 595. Երկրորդ, զի մի *կող* էառ և ի նմանէ շինեաց: - 612. Նմանապէս և *կողն* որ առաւ յադամայ և շինեցաւ կին, ո՛չ յառնէ ի յադամ, այլ ի յևա. որոյ հիմն կազմութեան եղև փոխանակ սերման: - 719

**ԿՈՂԱԲՈՅՍ +** Իսկ կոչի կին: ...Յինգերորդ՝ կին, իբր թէ *կողաբոյս* կամ կողածին: - 276

**ԿՈՂԱԾԻՆ +** Իսկ կոչի կին: ...Յինգերորդ՝ կին, իբր թէ կողաբոյս կամ *կողածին*: - 276

**ԿՈՂԱՅՈՍ +** ...ծառ կենաց կոչի տէր մեր յիսուս քրիստոս...: Ի բղխմանէ *կողահոս* աղբերացն ռռոգեալ և զօրացեալ: - 768

**ԿՈՂԵՂ** - Չորրորդ՝ զի մի՛ տկար ոք կարծիցի. այլ որպէս *կողե՛ղ* և հաստակող ասեմք զըմբիշս. այսպէս զօրեղ եղիցի կինն ի տնօրինել զտունն: - 276

**ԿՈՂՄԱԿԱԼ +** Ժողովեալ **խ** եպիսկոպոսաց և բազում վարդապետաց և ժողովրդոց. *կողմնակալք* և մարզպանք, մեծամեծօքն հայոց, և սպարապետն վարդան ազգայնօքն իւր: - 544

**ԿՈՂՄԱՆԻՄ +** Ունկն *կողմանեալ* ի վերայ գլխոյն՝ ծո՛յլ է: - 246

**ԿՈՂՄԱՒՈՐ** - Վեցերորդ՝ զի բաժանեսցի մարդն ի կենդանեաց և ի տնկոց. զի տունկք զհակառակն ունին զարմատն որ է՛ գլուխ՝ ի յերկիր, և զոտն ի յերկինս: Եւ կենդանիք խոտորնակ և *կողմաւոր*: - 233

**ԿՈՂՄՆ կամ ԿՈՂՄ +** Ըստ իմաստնոյն արիստոտէլի՝ ի հակասութեանց ի հարկէ մին *կողմն* ճշմարիտ է:

- 8. Իսկ բանին արիստոտէլի՝ թէ ի հակասութեանց մի *կողմն* ճշմարիտ է, այսինքն կամ ստորասութիւնն կամ բացասութիւնն: - 9. Հինգերորդ՝ զի խափանեալ լինէր անձնիշխանութիւնն մեր. որ ունի զինքն առ երկոսեան *կողմն*: - 20. Ի յայս տարակուսանքս՝ որ է ստութիւն յերկուց *կողմանց*, բառնի էութիւն հօր. և լինի արարած որդի: - 36. Երկուց *կողմանցն* ևս պարտ է փախչիլ: - 37. Այսպէս և քահանայապետն մեր միայն եմուտ ի ներքին *կողմն* վարագուրին: - 50. Եւ այսպէս կարծեն յամենայն *կողմանց* կապել զմեզ: - 52. Զի լիցի քո պատճառն ի *կողմանէս* մեր՝ պատասխանի քեզ: - 54. Ա՛րդ՝ որպէս կարծեն ինքեանք զէն մեծ ունիլ առ երկոսին *կողմանս*, կամ հարկիւ անկանիլ ի նեստորին բնութիւն և բնութիւն, և կամ ըստ եւտիքեայ շփոթել զբնութիւնսն: - 75. Թէպէտ առ մեզ տեսանի անսկիզբն յառաջին *կողմն*, և անվախճանն ի վերջինն. այլ ի նա ո՛չէ առաջին և վերջին. զի պա՛րզ և միեղէ՛ն է: - 115. Այս է յղացմամբ յարգանդի և ծննդեամբ. և քարոզութեամբ. և մահուամբ. և յարութեամբն և համբարձմամբն առ հայր՝ իբր զպսակ տարւոյ կատարեալ բնութեամբ մեր՝ ի ներքին *կողմն* վարագուրին մտեալ: - 126. Չորրորդ՝ հաւասարակշիռ է երկիրս բոլորակի. և յամենայն *կողմանէ* ծանրութիւնն ի մէջն ժողովի. և այսպէս ինքն ի վերայ իւր հաստատեալ է: - 182. Երկրորդ՝ լայնացեալ յամենայն *կողմանց*: - 184. Մերձ եկեալ ի նոյն կենդանակերպն՝ սակաւ լոյսն առնու ի նմանէ յարևելից *կողմանէ.* թէպէտ մեզ ի յարևմտիցն երևի. այլ նմա՛ արևելից մասն է որ զլոյսն առնու: - 187. Հինգերորդ՝ զի տեսցուք և իմասցուք թէ արտաքին սրահն երկնից այսպէս է զարդարուն. քանի՞ առաւել ներքին *կողմն* սրբութեան իմանալեացն դասուց: - 188. Եւ այս **բժ**ան կենդանակերպից վեցն է ի մէջ երկնից ի հիւսիսոյ *կողմս* առ մեզ, և ի մին կիսագունդն: - 189. Եւ վեցն ի *կողմն* հարաւոյ ի միւս կիսագունդն: - 189. Նախ՝ ասեն ոմանք թէ՝ որքան բարձր է ի վերայ երկրի հողն, նոյնքան ծօծո՛ր է ի ներքին *կողմն*. վասն որոյ ջուրք ծովուն դիւրաւ ելանեն: - 209. Երրորդ՝ զի ջուրք ծովուն բա՛րձր է քան զերկիր. վասն որոյ հա՛րկ առնէ և ի վե՛ր մղէ և ապա՛ հեղու յերկիր. զորօրինակ մարդիկք ի բարձրագոյն լերանց իջուցանեն զջուրն, և ըստ նոյն չափոյ ի միւս *կողմն* ի վեր հանեն սակաւ ինչ պակաս: - 209. Եւ որպէս զհուր՝ ներքին *կողմն* լայն է և վերին ծայրքն նուրբք: - 215. Ո՛չ թէ քան զտարրական հուրն ի վե՛ր է անցեալ. այլ զի լուսինն և արեգակն միշտ ի հարաւոյ *կողմանէ* ի ստորոտէ լերինն ելանեն. և ի հիւսիսոյ *կողմն* լերինն միշտ գիշեր լինի. որպէս աղէքսանդրու պատմութիւնն ասէ. և ի գլուխն միշտ լոյս. և ի հարաւոյ *կողմն* տիւ և գիշեր: - 222. Մետասաներորդ՝ Վասն ստամոքսին. բերանն դառն և աղի՛ փոխի. և աջ *կողմն* ուժո՛վ է: - 227. Վասն է՞ր դէմք մեր ի մի *կողմանէ* է. և միւսն թիկունք: - 234. Զայս ցուցանէ դէմք ի նմին *կողմն*, և զոտս յառաջ փոխել և զձեռս: - 234. Վասն է՞ր մասնկանցն դիրք՝ աչքն՝ ի վերոյ է եդեալ. և ականջն ի *կողմանէ*. և հոտոտելիքն զառ ի վայր. և այլն ըստ կարգի: - 235. Եւ այն զի աչքն ի դէմքն է, և ականջն ի *կողմանէ*. զի աչքն ուղղակշիռ ի դէմն տեսանէ. և ականջն շուրջանակի յամենայն *կողմանէ* լսէ. ի վերոյ ի ներքոյ և այլն: - 235. Երկրորդ՝ զի յամենայն *կողմանէ* լսէ: - 235. Չորս հողմ է ի դ *կողմ* երկրի: - 240. Նոյնպէս լեարդն և լեղին հալեն զկերակուրն արտաքուստ ի յաջմէ *կողմանէ*: - 242. Եւ փայծեղն հո՛վ է ի ձախ *կողմանէ*: - 242. Վասն այն յորժամ ննջէ մարդն ի վերայ ձախ *կողմանն*, շուտո՛վ հալի կերակուրն քան ի վերայ աջ *կողմանն*: - 242. Ունականն է՝ յորժամ ժողովէ զկերակուրն՝ ձկտի և լայնանայ և փակէ՛ զամենայն դրունսն որ ի ներքոյ և ի վերոյ և ի *կողմանէ*, զի մի՛ թափեսցի կերակուրն: - 242. Վասն է՞ր մարդոյն աջ *կողմն* ուժով է քան զձախն: - 243. Զի սրտին արիւնն և լեարդն և լեղին որք ջերմայինք են՝ ի յաջոյ *կողմն* են մարդոյն: - 243. Եւ փայծեղն և թոքն ցրտայինք ի ձախ *կողմն* են. վասն այն աջն զօրեղ է և ձախն տկար: - 243. Զի սիրտն ունի **բ** տուն. ի յաջ *կողմն* իւր զարիւնն ժողովեալ որ առնու ի լերդէն: - 244. Եւ ի ձախ *կողմն* զօդն ժողովեալ որ առնու ի թոքէն: - 244. Եւ յայս *կողմս* ունի **դ** երակ առանց արեան լի ջերմութեամբ. և բաժանի ամենայն երակ՝ յերեսունբ երակս. որ լինի ամէնն **ճիը** երակ: - 244. Զի այսօրիկ ի *կողմանէ* մարմնո՛յն են պատճառք: - 251. Իսկ վարդապետք ուղղաձևութեան՝ յանդիմանեալ զերկոսին *կողմանց* ստախօսութիւն, ո՛չ զհոգի յառաջ քան զմարմին ասեն ստեղծեալ, և ո՛չ զմարմին քան զհոգի: - 254. Ասեմք եթէ՝ ի *կողմանէ* նիւթո՛յն կարելի է ասել. զի զոմն ունի, և զոմն ընդունի. այսինքն զտնկականն ունի, և ընդունի զբանականն: - 254. Այլ ի *կողմանէ* հոգւոյն՝ զօրութեամբ ո՛չ է ի սերմն այն ըստ ինքնութեան բոլորին. այլ ըստ ինքնութեան մասին. որ է տնկականն և զգայականն: - 255. Եւ էգն հոգևորի յետ **ծ** աւուրն՝ որպէս ասացաք զպատճառն վասն տեղւոյն ցրտութեան որ է՛ ձախ *կողմն* արգանդին. որ ցուրտ գոլով վասն փայծաղանն՝ յապաղէ՛ զկազմուած նիւթոյն ի կրկնապատիկ ժամանակս **ծ** աւուրց: - 261. Այսպէս և արու մանկանն յաջ *կողմն* բեղնաւորեալ՝ վասն ջերմութեան լերդին և լեղւոյն՝ փութով կատարի անդամօք: - 261. Երկրորդ՝ զի ի ձախ կողէ՛ շինեցաւ կինն. և տկա՛ր է ձախ *կողմն* մարդոյս: - 276. Եւ ներքին և վերին *կողմամբն* լինի **գ** *կողմ*. առաջին **գ**օրեայ ստեղծմանն նշանակ: - 293. Եւ դուռն ի *կողմանէ*, աղբոց աւելորդացն: - 293. Սա՛ ունի զձև նմանութեան տապանին վեցակողմ և կաթողիկէ, և դուռն ի *կողմանէ*: - 294. Կամ որպէս ասեն թէ՝ ներսէս անուն

արուեստաւոր տապանին՝ շինեաց իւր տուն ի վերոյ *կողմանէ*. և զի ո՛չ էր հրամանաւն աստուծոյ՝ սատակեցաւ նա՛ անդ, և զնորա գէշն ուտէր ագռաւն: - 294. Եւ արտաքին սրահին պատւարն ի մէջ ունելով զխորանն յամենայն *կողմանց* **ճ** կանգուն երկայն ի հիւսիսոյ և ի հարաւոյ *կողմն*: - 343. Եւ **ծ** կանգուն լայն յարևելից և յարևմտից *կողմն*: - 343. Եւ սրբութիւն սրբոցն ի յարևելք. զի երուսաղէմ՝ *կողմ* արևելից է նոցա. և սրբութիւնն ի մէջն. և սրահն յարևմուտս. որպէս մերս եկեղեցի: - 343. Եւ սրբութիւնն սրբոցն է՛ ներքին *կողմ* վարագուրին: - 345. Նա՛խ՝ սեղան երեսաց հացին և գառին ի հիւսիսոյ *կողմն*: - 346. Վասն այն զնշխարն ի *կողմն* հիւսիսոյ դնեմք և զսկիհն ի հարաւ որպէս անդ: - 346. Ութերորդ, նոքա մատուցանէին ի ձեռագործ խորանսն որ ի մովսիսէ՛ կանգնեցաւ, իսկ տէրն մեր անցեալ ի ներքին *կողմն* վարագուրին...: - 354. Այլ ի *կողմ* հիւսիսոյ զողջակէզս և զվասն մեղացն: - 360. Զի տէր մեր ի հիւսիսո՛յ *կողմ* երուսաղէմ խաչեցաւ: - 360. Այլ և արտաքոյ քաղաքին ի *կողմն* հիւսիսոյ: - 362. Ի **դ** *կողմն* խորանին բանակեցան **բժ**ան ցեղքն. և ի մէջ նոցա խորանն էր Ղևտական ցեղօքն: - 378. Ի յարևելից *կողմն* բանակէր **գ** ազգ: - 378. Եւ ի հիւսիսոյ *կողմն* **գ** ազգ: - 378. Երկրորդ՝ նշանակէ զերկրպագութիւնն հրէից. որ յամենայն *կողմանց* շուրջ յերուսաղէմ երկրպագէին: - 395. Երրորդ՝ զի ամենայն ազգ ի մի *կողմ* երկրպագէին. և յետոյ քրիստոնեայք յարևելս: - 395. Եւ մարգարէն դաւիթ ի ձախ *կողմն* **ռ**ք, և ի յաջն բիւրք ասէ անկանիլ: - 404. Չորրորդ՝ զի մի՛ ծովացի վերին *կողմ* երկրին և վնասեսցին: - 414. Հինգերորդ՝ զի մի՛ ընդ դառնալն ի վայր՝ ողողեսցէ զներքին *կողմ* եզերաց գետոյն: - 414. Եւ ա՛յս է պատճառն, զի յաջ *կողմ* արգանդի կրէ զորդին. վասն որոյ յաջ *կողմն* նորա նստի: - 441. Քանզի առ ի կատարել զգործ արդարութեանն՝ պահանջէ ինչ և ի *կողմանէ* մարդոյն. այսինքն պահանջումն ըստ արժանւոյն...: - 459. Եւ այսպէս **բ** եղբօր թոռունք էին Մարիամ կոյսն և Յովսէփ ի հարց *կողմանէ* մելքեայ և պանթերի ի նաթանայ: - 460. Բազում ինչ անդ բնութիւն կորոյս զօրէնս իւր. այսինքն ի *կողմանէ* մօրն, ի *կողմանէ* զաւակին, և ի *կողմանէ* կերպին: - 469. Այլ և ի *կողմանէ* կերպին եղեն զարմանալիք: - 470. Այլ և խաչաձև թռչին օդապարիկ թռչունք. որ է տեսական միտք. զբև տարածեալ յերկոսին *կողմանս*: - 494. Յաղագս որոյ զմահն կրեաց քրիստոս. զի այսպէս բարձցէ յերկուց *կողմանց* զմեղս և զապականութիւն: - 497. Երեքտասաներորդ՝ ամաղեկացիք գերեցին *զկողմն* հրէաստանի և զայլազգիս. և դաւիթ զհետ մտեալ յետ **գ** աւուր և հարեալ ի գիշերի և ի վաղիւն մինչ յերեկոյ...: - 517. Իսկ զտեղի համբարձմանն քրիստոսի միտք ո՛չ կարէ ցուցանել. զի ի լոյս անմատոյց է բնակեալ և ի ներքին *կողմն* վարագուրին ըստ առաքելոյն: - 519. Նա՛խ՝ ի *կողմանէ* պարգևողին. զի յորժամ քրիստոս նստեալ լինէր ըստ մարմնոյ ընդ աջմէ հօր իբր զթագաւոր փառաց յաթոռ թագաւորութեան իւրոյ, յայնժամ մեծագոյն լինէր պարգևք հոգւոյն տուեալ ի փառաւոր քրիստոսէ աստուծոյ: - 521. Երկրորդ՝ ի *կողմանէ* ընդունողաց առաքելոցն. զի պատշաճաւորեցան հոգոյն սրբոյ. զի փորձիւ գիտէին զվարդապետութիւնն քրիստոսի, զմահն և զյարութիւնն և զայլն: - 521-522. Երրորդ՝ ի *կողմանէ* հոգւոյն սրբոյ. զի առաւել հռչակելի և փառաւոր եղև այսպէս. զի ընկալեալ զհոգին՝ վաղվաղակի սքանչելիս առնէին վկայելով քրիստոսի. և զառաքեալսն առատապէս լցուցանելով, և նոքա զայլսն: - 522. Առաջին ժողովն եղև ի տանս թորգոմայ յարևելից *կողմանս*. զկնի **է** երորդ ամի վախճանելոյ մեծին սահակայ: - 544. Ժողովեալ բազում եպիսկոպոսաց յամենայն *կողմանց*. և իշխանաց և մեծամեծաց հայոց. կարգեցին սահմանս կանոնականս **իբ** գլխով. և պայծառացուցին զեկեղեցի սուրբ: - 545. Իններորդ՝ և յայսմ *կողմա՛ն* է և աստուածատունկ դրախտն: - 555. Տասներորդ՝ և այսմ *կողմանէ՛* շարժին լուսաւորքդ ի յընթացս իւրեանց. որ են կարապետ մեծին լուսոյ ծագմանն: - 555. Եւ ա՛յս է յաջ *կողմն* խոտորիլ. իսկ առաջինքն ձախակողմեան էին: - 561. Չորրորդ՝ զի միշտ որդի ծնանիմք աստուծոյ և ո՛չ դուստր և էգ. զի ի քրիստոս յիսուս արու և էգ ո՛չ է ասէ առաքեալն. և զայս ցուցանէ աւազանն ի յաջ *կողմն* եկեղեցւոյն: - 590. Երկուքն ի *կողմանէ* խոստովանահօրն, և երկուքն ի խոստովանողին: - 603. Արդ մարմնոյ ազգն բաժանի յերեք դէմս. ի վեր, ի վայր, և ի *կողմն*: - 611. Առաջին մեք, և հայրն, և պապն մեր. հօր պապն, և պապու հայրն, և պապուն պապն, և ապպապն. որ է՛ է. նմանապէս և ի մօր *կողմն*: - 611. Իսկ ի *կողմանէ*, որպէս եղբայր և քոյր մեր, և նոցին ծնունդքն: - 611. Զի ողորմութիւնն ի *կողմանէ* յորժամ անտես առնէ զմեղս՝ դուռն է հարաւոյն: - 614. Երրորդ՝ ի բանակիլն խաչաձև բանակեցան երկոտասան ցեղքն, և խորանն ի միջի. որ նշանակէ՛ զխորանն եկեղեցւոյ՝ խորհրդով խաչին քարոզեալ ընդ **դ** *կողմ* աշխարհի: - 616. Արևելք, Արևմուտք, Հարաւ, և Հիւսիսոյ *կողմն*: - 616. Ութերորդն նոյնպէս զերկոցունց *կողմանց* յայտնէ զփրկելոց և զկորուսելոց...: - 630. Իսկ և **դ** *կողմունք* նոցա որ լինի **ը**: - 639. Այլ և **բ** ստեղիք. մինն աւագ *կողմին*. և միւսն վերջին: - 639. Եւ ապա՛ քինոսփէնէս հմուտ ձայնից գազանաց և թռչնոց, զատուցանէ՛ *զկողմն* առաջին ձայնին: - 640. Ապա՛ աքիլեւս, զատուցանէ՛ *զկողմն* երկրորդ ձայնին որ կոչի աւագ *կողմն*: - 640. Ապա՛ նոմինոս, զատոյց *զկողմն* չորրորդ ձայնին. որ է՛ վերջին: - 640. ...առաջին ձայնն ա՛ջ դասուն է, և *կողմն* ահեակ: - 641. առաջին ձայնն

ահեակ դասուն է, և *կողմն* աջ: - 641. Եւ է՛ աջ դասն աւազանին *կողմն* և խորհրդանոցին: - 641. ...այնմ խորհրդով որ ընդ չորս *կողմն* տիեզերաց աւետարանեցաւ: - 673. Եւ խաչն բարձրացեալ զի նշան խաչին քրիստոսի յայնժամ ընդ երկնիւք ծագեսցէ և զչորս *կողմ* աշխարհի լցուսցէ: - 676. ...զի յարևելից *կողմն* լո՛յս է: - 677. Երկրորդ, զի յամենայն *կողմանց* վիշտ է: - 679. Չորրորդ, զի ամենայն մարմինք մարդկան միանգամայն ստեղծան ի *կողմանէ* առաջին նիւթոյն...: - 717. Իսկ մարմին մարդոյս քէպէտ ապականացո՛ւ է, այլ ի *կողմանէ* հոգւոյն անապակա՛ն է. վասն որոյ անապական մնան: - 727. Նա՛խ՝ զի խոնարհ և ցա՛ծ է *կողմն* հարաւոյ. և լուսաւորքն ա՛նդ շրջին. և աջ *կողմ* է աշխարհի. վասն այն ջերմ է: - 731. Իսկ հիւսիս բա՛րձր է. և լուսաւորքն հեռու. և է ձախ *կողմն* աշխարհի. վասն այն ցուրտ է և սառնամանիք: - 731. ...և Դարձեալ, զի յարևելս բազմեալ դատաւորն. և աջակողմեանքն լինին ի վերայ օդոյ ի *կողմն* հիւսիսոյ. և ձախակողմեանքն վայր ի յերկրի ի *կողմն* հարաւոյ...: - 731. Զի որպէս փայլակն ելանէ յարևելից ի վերայ լուսեղէն ամպոյ, և քառաձև լուսովն լնու զչորս *կողմ* աշխարհի և հաստատի ի գողգոթայ յորում խաչեցաւ տէրն: - 732. Զի՞նչ է աջ *կողմն* քրիստոսի և ձախ: - 738. Եւ տե՛ս թէ ո՞րպէս անձուկ և ահագին է յամենայն *կողմանէ* մեղաւորացն: - 738. Իսկ միտելն՝ զչափ թաքաղուն զեղուն երկոցունց *կողմանց*. այսինքն բարեաց և չարեաց: - 745. Եւ գիտելի է, զի ուրախութիւն ընտրելոցն հանդիպեսցի իբրև ի վեց *կողմանէ*: - 762. Այսպէս ի վեցից *կողմանէ* եղիցի ուրախութիւն սրբոցն. որ եղև հաւաքեալ ի վարդապետաց սրբոց: - 765. Եւ է՛ շնորհ յատուկ ընրութեամբն աստուծոյ, որ պատճառ է՛ զփառս զանազան ներգործութեամբ. և է՛ սա՛ ա՛ն'ի բաց դնելի անզեղջ խոստմամբ ի *կողմանէ* տուողին. որպէս է՛ առ մեզ շնորհք աւազանին: - 783. Եւ որպէս այլքն այլ ինչ, և սա՛ զծխատեսակ ջերմութիւն սրտի ընդ ցնցուղս ծայրից արտաքարշելով ի կրկին *կողմանէ* որպէս ասեն բժիշկք: - 786

**ԿՈՂՄՆԱՒՈՐ +** Տասներորդ՝ զի մշտաշարժք են երեքկին. այսինքն բոլոր՝ ուղիղ՝ և *կողմնաւոր*. որպէս ցուցցի յառաջիկայսդ: - 137. Իսկ շարժումն է եռակի ըստ սրբոյն դիոնիսեայ. այսինքն բոլոր՝ ուղղակի՝ և *կողմնաւոր*: - 142. Իսկ *կողմնաւոր*՝ ի խնամելոցն առ աստուած դարձողապէս միացումն յառաջին սկիզբն: - 142. Իսկ գնդակ որ է *կողմնաւոր*՝ շարժի հոգին, յորժամ բնականապէս լուսափայլի յաստուածային գիտութիւնս տեսութեամբ և մտածութեամբ. և այնպէս հոգէպէս ի յաստուած միաւորի. որպէս աշակերտաց առաքելոց և մարգարէից: - 142. Իսկ *կողմնաւոր*՝ որպէս փոխանցեալքն ի միմեանց. որդի ի հօրէ՛. և լողակք ի ջրոյ: - 142

**ԿՈՂՈՊՏԵՄ +** Եւ զի երկիր և ծառք ի պտողոց *կողոպտին*: - 197. Քսանևէ, Վասն կախարդացն. և խօսից դիւացն. և խստութեան սրտին. և *կողոպտելն* զեգիպտացիսն: - 283. Վասն է՞ր հրամայեաց խաբել և *կողոպտել* զեգիպտացիսն: - 336. Այսպէս և քրիստոնեայք յորժամ ելանեն ի կենաց աստի, *կողոպտեսցեն* զդև և ապա՛ ելցեն: - 336. Որ և անդ ժամանեաց տէրն և կապեաց զիզօրն. և զկարծրացեալ ամրոցն աւերեաց. և *կողոպտեաց* ի նմանէ զհոգիսն մարդկան որ յադամայ հետէ ընդ բռամբ ունէր: - 503

**ԿՈՂՈՊՏՈՒՄՆ** - Ոմանք ըստ քաղաքական օրինացն ը ասեն գող պատիժ: ...Առաջին՝ *կողոպտումն* ընչից: - 751

**ԿՈՂՈՍԱՑԻ (Ս.Գրքի մաս)** - Եւ պօղոս ի *կողոսացւոցն* ասէ, զորդի «անդրանիկ ամէն արարածոց»: - 41. Յնգետասաներորդ՝ ասէ ի *կողոսացոցն* եթէ՝ «նովաւ հաստատեցաւ ամենայն որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի»: - 73. Ութևժերորդ՝ ասէ առաքեալն ի *կողոսացւոց*, «ի նմա՛ բնակի ամենայն լրումն աստուածութեանն մարմնապէս». որ է էապէս: - 98. Քսաներորդ՝ ասէ առաքեալն ի *կողոսացւոց*՝ «ի քրիստոս են ծածկեալ ամենայն գանձք իմաստութեան և գիտութեան»: - 98. Գաղատացւոց: Եփեսացւոց: Փիլիպպեցւոց: *Կողոսացւոց*: - 450. *Կողոսացոց*, «յորժամ քրիստոս յայտնեսցի կեանքն մեր, յայնժամ և մեք ընդ նմա երևեսցուք փառօք»: - 767. Թէ յի՞նչ միտս ասէ առաքեալն ի *կողոսացւոց*, թէ՝ «զպակասութիւն չարչարանացն քրիստոսի ի մարմնի իմում կրեմ»: - 781

**ԿՈՂՐ +** Եւ որպէս ի տաղաւարքն *կողերս*՝ տերև՝ և ոստ մատուցանէին. զնոյն և քրիստոսի մատուցին յաւուրն ողոգոմեան ի գալուստ նորին յերուսաղէմ: - 374

**ԿՈՅՍ +** Զի որպէս առաջին նա՛ ծնաւ անսերմն ի *կուսէ* և ի հոգւոյն սրբոյ, այսպէս և մեք յետ նորա ի ծեռն հոգւոյն սրբոյ ծնանիմք ի *կոյս* աւազանէն: - 41. Իսկ որդի մարդոյ կոչի, զի էր ի յարենէն ի զանգւածոյն ադամայ իբր ի նախահօրէ՛. և ի *կուսէն* իբր ի մօրէ՛: - 50. *Կոյսն* մարիամ զմիածի՞նն որդի ծնաւ ըստ ինքեան, և թէ զանդրանիկն որդի առանձին, և թէ զերկուսն: - 68. Զի թէ առանձին մարդկութեանն, ո՞րպէս է յերկնից իջեալ. զի ի *կուսէն* ծնաւ մարմինն: - 70. Նմանապէս և որդին միածին էր ի ծոց հօր և յարգանդ *կուսին*. ի խաչին անարգեալ՝ և յաթոռ փառաց բազմեալ...: - 71. Ապա ուրեմն՝ աստուած է որդի *կուսին*: - 73. Այսպէս և խոնարհագոյնքն են աստուծոյ բանին վասն միաւորութեանն. որպէս մարդ ծնանիլ ի *կուսէ*՛ ժամանակեայ.

խաչիլ և մեռանիլ...: - 74. Որպէս ասեմք զաստուածածին *կոյսն* մայր և *կոյս*. ո՛չ **բ** բնութիւն կամ **բ** անձն. որ է մասամբ և բաժանմամբ. այլ զմի և զնոյն. ունելով զայս և զայն յատկութիւն: - 77. Եւ կարեմք ասել զմի և զնոյն՝ կուսութեամբն *կոյս*. և մայրութեամբն մայր: - 77. Եւ դարձեալ ասի՝ մայրն *կոյս*, և *կոյսն* մայր: - 77. Եւ դարձեալ՝ ասի՝ կուսութեամբն *կոյս*, և կուսութեամբն մայր: - 77. Եւ մայրութեամբն *կոյս*, և մայրութեամբն մայր: - 77. Դարձեալ՝ որպէս էր որդի հօր յատկութեամբ իւրով, և եղև որդի *կուսի* յատկութեամբ իւրով: - 77. Ապա՛ թէ որոշմամբ ասես աստուած և մարդ, ասա՛ և զծնօղն *կոյս*՝ աստուածածին և մարդածին: - 79. Իսկ սուրբն կիւրեղ ընդ դէմ նեստորի զինէր. որ ասէր բնակութեամբ զբանն ի մարմնի. և նախ զմարդն ծնեալ ի *կուսէն* և շրջեալ ի յերկրի, և յետոյ բնակեալ բանն աստուած յետ մկրտութեանն. և յետ յարութեանն փառաւորեաց զնա և զօրացոյց յարակցութեամբ ընդ ինքեան: - 79. Վասն որոյ ասէ սուրբն կիւրեղ եթէ՝ ո՛չ մարդն աստուածացաւ, այլ աստուած բանն էջ յարգանդ *կուսին* և առեալ հոգի և մարմին ի նմանէ՝ աստուածն մարդ եղև...: - 79. Զի մարմինն է՛ ի *կուսէն*. և *կոյսն* յազգէն ադամայ. և ադամ ի հողո՛յ արարած: - 81. Դարձեալ՝ մի բնութիւն ասաց միւս եւտիքէս. ոչինչ առեալ մարմին ի *կուսէն*. այլ իբր ընդ խողովակ անցեալ իբր ի դարիճակի. միայն զձևն ի նմանէ ձևացրեալ: - 81-82. Որք ասեն զսկիզբն բանին ի *կուսէն* առեալ. և ո՛չ նախ քան զյաւիտեանս ի հօրէ ծնեալ: - 82. Իսկ եթէ ի դէմս մարդոյն, ո՞րպէս ունէր զփառս յաւիտենից այն որ այսօր ի *կուսէն* ծնաւ: - 94. Եւ միածին որդի գիտացաք զբանն ծնեալ ի հօրէ. և եղեալ որդի *կուսին*: - 96. Ա՛րդ՝ ի մարդկանէ ո՛չ ոք ետես զաստուած, և որդի *կուսին* ո՛չ ետես որպէս դուդ ասես. սո՛ւտ է ապա և պատմութիւնն զոր ինչ ուսոյց մեզ. զի ո՛չ է տեսեալ և պատմէ. ահա անդունդք հայհոյութեան. զոր ի կարգիս լռե՛մ: - 96. Եւ ի *կուսէ*, զի դու ծնցիս ի *կոյս* աւազանէ: - 107. Եւ գերամբարձ, զի ի բա՛րձր *կոյս* տեսանեն և ամբառնան և ոչ ի խոնարհ: - 119. Եւ նա՛խ եկաւորի հոգին ամենայն ուրեք. որպէս ի մարգարէսն և ի *կոյսն* սուրբ, և ապա՛ բանն մարմնացաւ. և յետոյ հոգին սուրբ էջ յառաքեալսն և յեկեղեցի մնաց: - 125. Նոյնպէս իմանալի արեգակն քրիստոս ի հայրական ծոցոյ անհա՛ս է բնութեամբ՝ և ի սրբոյ *կուսէն* իբր ի յարևելից ծագեալ. և ջերմ սիրով ի մարդկային ազգս որպէս յարևմուտս խոնարհեալ. և զսառուցեալ բնութիւնս պատեալ. և ի գերեզմանէն ի բարձունս դարձեալ յարևելս առ հայր ամբարձեալ: - 126. Աշխարհ ո՛չ լինի ոչէ. և ո՛չ ապականեալն *կոյս*. և վասն թողութեան. յորս նախագաղափար տեսութիւնն աստուծոյ: - 154. Դարձեալ ասեն՝ անկա՛ր է *կուսի* ապականելոյ լինիլ *կոյս*: - 162. Իսկ վասն երկրորդ հարցմանն թէ՝ անկա՛ր է *կուսի* ապականելոյ լինի *կոյս*: - 165. Ասելի է թէ՝ *կոյսն* և ապականեալն են հակակայք ըստ ունակութեան և պակասութեան. որպէս երեսք և կուրութիւն. որոց ի լինիլն համահետևին երեքին սոքա. այսինքն ժամանակն, և մասն, և նոյն: - 165. Վասն որոյ կարէ *կոյսն* ապականիլ. և անկա՛ր է ապականեալն լինիլ *կոյս*: - 165. Եւ զի այս այսպէս է, յորում պոռնիկն է՝ անկա՛ր է լինիլ ոչ պոռնկեալ. և ապականեալն *կոյս*: - 165. Դարձեալ ասեմք, թէ *կոյսն* և պոռնիկն՝ առաքինութեան և չարութեան են տեսակք, և ներհա՛կք են առաքինութիւն և չարութիւն. զի փոփոխեն զմիմեանս. ըստ այնմ և թողութեան հանդիպին: - 165. Իսկ պոռնկութեան չափաւորն և անչափն մեղք են. որպէս մի՛ անգամ *կոյսն* ապականեալ՝ և մի՛ անգամ պոռնկեալ՝ կոչի պոռնիկ և ապականեալ: - 166. Իսկ Ցուլն և *Կոյսն* և Այծեղջիւրն, ունին զբնութիւն հողոյ չոր և ցուրտ: - 189. Ի խեցգետինն յառիւծն և ի *կոյսն* առնէ զամառն. որ տիւն առաւել է քան զգիշերն **գ** ժամ: - 190. Սա՛ ոչ դառնայ ի ամպ կամ ի անձրև. այլ մղի ի վայր *կոյս* և մնայ մերձ երկրի: - 204. Զի մարդն ունի զգլուխն ի վեր որպէս երկինքն. և զոտքն ի վայր որպէս երկիրս. վասն որոյ ամենայն ծորմունք բնականապէս զառիվա՛յր հոսին. իսկ ծառն ծռեալ ունի զգլուխն ի վայր, և զոտսն ի վեր. կամ թէ ծռեա՛լ ունի զոտս և զստեղունս յայս *կոյս* և յայն *կոյս*: - 214. Ասեն սուրբք, եթէ զորօրինակ աստուածածին *կոյսն* մարիամ կուսութեամբ ծնաւ առանց սերման կատարեալ և ճշմարիտ: - 226. Եւ յա՛յտ է զի ի դիմաց *կուսէ* առաւել հեշտանայ ամենայն կենդանի: - 234. Ասեմք եթէ՝ էառ քրիստոս մարմին ի *կուսէն* մարիամայ զմերս թանձր և մեղանչական. և միաւորելով ընդ ինքեան՝ եղև առաջին կերպ անմեղութեանն ադամայ որ էր ի դրախտին: - 282. Զի յանապական *կուսէ* ծնաւ եցոյց զանընդդիմահարութիւնն և զանօսրութիւնն. և գնալով ի վերայ ծովուն, զթեթևութիւնն և զերագութիւնն. իսկ զպայծառութիւնն յայլակերպիլն: - 282. Երրորդ՝ մինն կուսութեամբ, և միւսն ողջախոհ ամուսնութեամբ. զի ցուցցէ թէ ի *կուսից* և յամուսնացելոց մտցեն յարքայութիւնն երկնից: - 289. Եւ մելքիսեդեկին յերկրէ ծնեալ և յերկինս սնեալ, որ առաւել յարմարի ճշմարտութեանն ի յերկնից իջեալ և ի *կուսէ* ծնեալ: - 301. Նախ՝ ամուլ է սառա. և մարիամ *կոյս*. և եկեղեցի ամուլ և *կոյս*: - 307. Վեցերորդ՝ ուրախութեամբ յղացաւ սառա. ըստ որում «ծիծաղեցաւ». ուրախութեամբ և *կոյսն*...: - 307. Իններորդ՝ միամա՛յր է որդի սառայի. միածին է և որդի *կուսին*. մի ծնանիմք և մեք յաւազանէն: - 307. Տասներորդ՝ բազմամա՛յր եղև սառա ըստ նահապետացն. բազմամա՛յր է և *կոյսն* ըստ հաւատացելոցն. բազմամա՛յր է և եկեղեցի ըստ վերածնելոցն...: - 307. Նոր ծնաւ և *կոյսն* զաստուած

մարդացեալ յերկրի: - 307. Զառաջինն մխիթարեցաւ աստուածածին *կուսիւն* մարիամաւ. որ առանց երկանց և ցաւոց ծնաւ զմիածինն որդի, որ եբարձ զարտասուս վշտաց մօրն հռաքէլի: - 312. Չորրորդ՝ յովսէփ փոխանակ պոռնիկ կնոջն էառ զասանէթ *կոյս* գեղեցիկ: - 313. Նոյնպէս և տէր մեր փոխանակ շնացօղ ազգին հրէից ընկալաւ զեկեղեցի *կոյս*՝ և սուրբ ժողովուրդ իւր: - 313. Նոյնպէս և տեառն մերոյ կոչի տաճար արտաքին բնակարան. որպէս *կոյսն* մարիամ, և հաւատացեալ ժողովուրդք, և շինուածք տաճարաց: - 319. Քսանևէ, մովսէս ի վախճանիլն իւր՝ կտակ գրեաց զլինելոցն, և զեկեղեցին յանձնեաց ի *կոյսն* յեսու: - 329. Եւ տէր մեր զգալուստ հոգւոյն և զկատարած աշխարհի պատմեաց, և յանձնեաց *զկոյս* տաճար իւր ի *կոյսն* յօհաննէս: - 329. Դարձեալ՝ մորենին էր *կոյսն* մարիամ, որ զիմանալի հուր աստուածութեանն յինքեան կրելով ո՛չ կիզաւ...: - 331. Դարձեալ՝ ոսկի սափորն է՛ անապական *կոյսն*. և մանանայն բանն աստուած հոգւով և մարմնով միացեալ յարգանդի աստուածածին *կուսին*: - 340. Դարձեալ՝ աշտանակ *կոյսն* սուրբ: - 347. Եօթն բերանն՝ է բանք խօսեցեալ *կուսին* յաւետարանին: - 347. Չորրորդ՝ ամսամուտն նոցա. զոր ի նորանալ լուսնին տօնէին. իսկ մեզ տօն *կուսին* մարիամու որ լուսաւորութիւն լսի ըստ ոմանց: - 372-373. Իսկ մովսէս և ահարօն և ա՛յլ քահանայք յարևելից *կուսէ* ուր սուրբն սրբոց էր պաշտէին: - 379. Ուռն՝ *կոյսն* յարմատոյն և յեսսեայ. և Ողկոյզն տէր մեր ծնեալ ի նմանէ զուարճալի կերակուր մեզ: - 381. Այլ և *կոյսքն* ամբողջք՝ և մարտիրոսքն են նուռն: - 381. Երկրորդ, *կոյսն* մարիամ յարմատոյն յեսսեայ՝ յղացաւ և ծնաւ զբանն աստուած մարմնով: - 382. Կարմիր երինջն նշանակէ՛ *զկոյսն* սուրբ: - 383. Եւ կարմիրն, Նա՛խ՝ զողջախոհութիւնն *կուսին*: - 383. Եւ ո՛չ զմահացուն, զի *կո՛յս* էր անապական: - 383. Որպէս սափորն *կոյսն* էր, և գաւազանն խաչն, նոյնպէս վէմն քրիստոս: - 386. Նոյնպէս ազգն իսրայէլի ընտրեցաւ վասն աստուածածին *կուսին* մարիամու: - 398. Հինգերորդ՝ գզաթ էր *կոյսն* մարիամ. և ցօղ բանն աստուծոյ. որ աւետեօք հրեշտակապետին էջ ի վերայ նորա առանց ոտնածայնութեան և ծածուկ: - 421. Եւ կրկին աւետեալ *կուսին*, և ապա՛ յովսեփու: - 422. Ընդվզեալ սաբէի և կորուսեալ ի կնոջէ. և սատանայի կործանեալ յիմաստուն *կուսէ*: - 438. Դաւիթ ծարաւեալ ջրոյն բեթլէհէմի ծնիցելոյն ի *կուսէ*. և ծարաւեալ տէրն ի խաչին փրկութեան մարդկան ազգի: - 438. Երկրորդ՝ զի մի՛ սովորութեամբ գիտասցէ և զայլ *կոյսս*: - 439. Չորրորդ՝ ի տիպ աստուածահօրն յովսեփայ առ անարատ *կոյսն*: - 439. Ընդ աջմէ նստի և որդւոյն մայրն *կոյսն* աստուածածին: - 441. Յայս միտս ի կենդանագիր *կուսին* ի ձախոյ գիրկս լինի փրկչական պատկերն. նոյնպէս և առ ի խաչին ի յաջակողմն կացեալ: - 441. Նոր կուժն ի խորհուրդ աստուածածին *կուսին*. որ նո՛ր էր յղացումն և անապական ծնունդ: - 445. Արդ եղիսիէէ նշանակէ՛ զբանն աստուած. որ փոքրկացաւ և բովանդակեցաւ ի ծոց *կուսին* ի մարմնի միաւորեալ. և ապա ի խաչն բարձրացեալ կեանս շնորհեաց մարդկան: - 446. Երրորդ, Ազգաբանութիւն *կուսին* և յովսեփայ: - 454. Չորրորդ, Վասն սրբութեան *Կուսին* զանազան կերպիւ: - 454. Վեցերորդ, Վասն պատասխանւոյ *Կուսին*: - 454. Եօթներորդ, Զի աստուածածին է *կոյսն* **ժ** եղանակաւ: - 454. Յորմէ՞ ցեղէ էր աստուածածին *կոյսն*: - 459. Փառաւորեալ և միշտ *կոյսն* Աստուածածին մարիամ՝ էր ի թագաւորական ցեղէն դաւթի...: - 459. Եւ ա՛յսպէս ածեն զազգաբանութիւնն առ *կոյսն* և լռեն: - 460. Ապա յայտ է թէ ըստ մարմնոյ՝ *կոյսն* էր յազգէն յովսէփայ: - 460. Եւ յովակիմ ծնաւ զմարիամ *կոյս*: - 460. Եւ այսպէս **բ** եղբօր թոռունք էին Մարիամ *կոյսն* և Յովսէփ ի հարց կողմանէ մելքեայ և պանթերի ի նաթանայ: - 460. Որպէս զի լիցի *կոյսն* մարիամ յազգէ հարց ի թագաւորական ցեղէն. և յազգէ մօր ի քահանայից: - 461. Վասն է՞ր խօսեցեալ եղև առն *կոյսն* սուրբ: - 461. Նա՛խ՝ զի *կոյսն* սուրբ՝ նշանակեսցէ զսուրբ եկեղեցի խօսեցեալ քրիստոսի որ նմանապէս է *կոյս*: - 461. Երկրորդ՝ զի յովսեփիւ ցուցցի ազգաբանութիւն *կուսին* որ արամբն շարագրի: - 461. Երրորդ՝ զի յովսէփ վկայ լիցի ողջախոհութեան *կուսին*: - 461. Վեցերորդ՝ զի *կոյսն* լինէր սփոփեալ և կազդուրեալ սպասաւորութեամբ առնն: - 461. Զի՞նչ է սրբութիւն *կուսին* որ ասէ մարգարէն՝ «սուրբ է տաճար քո սքանչելի արդարութեամբ»: - 462. Զի գալ հոգւոյն սրբոյ պատճա՛ռ էր կրկին ներգործութեան. այսինքն սրբութեան արմատոյ մեղաց. և պտղաբերութեան կուսածին զաւակին. ծնանիլ և *կոյս* մնալ յետ ծննդեանն: - 463. Իսկ զչորրորդ սրբութիւնն որ է՛ միաւորութիւն բանականին առ աստուած, և միշտ ներգործապէս դիմել առ աստուած որպէս հրեշտակք. ընկալաւ աստուածածին *կոյսն* ի յղանալն զորդին աստուծոյ: - 463. Նա՛ ևս գերազանցեալ քան զհրեշտակս այսու, զի նոքա ի գոյացական վարձս ո՛չ աճիլ կարեն և ո՛չ նուազիլ. իսկ երանուհի *կոյսն* կարէր յառաջանալ յարդիւնս և ո՛չ նուազիլ: - 463. Այսպէս գերազա՛նց է քան զամենայն շնորհք հեղեալ ի ստեղծուածս. այս է գերագոյն շնորհք. որ պատրաստեաց *զկոյսն* առ մայրութիւն աստուծոյ: - 463. Ապա յա՛յտ է որպիսութիւն սրբութեան *կուսին*: - 463. Վասն է՞ր հրեշտակապետն գաբրիէլ աւետեաց *կուսին*, և ո՛չ մարդ ոք: - 463. Երկրորդ՝ վասն ազգականութեան *կուսին*, առաքեցաւ *կոյսն* բնութեամբ՝ առ *կոյսն* շնորհօք: - 463. Երրորդ՝ զի նորոգումն որ լինելոց էր

ծննդեամբ *կուսին* ո՛չ միայն մարդկան էր, այլ և հրեշտակաց. պարտ էր հրեշտակին սպասաւորել *կուսին*: - 463. Զի որպէս սատանայ օձիւն խօսեցաւ առ *կոյսն* եւա, այսպէս տէր մեր հրեշտակիւն առ *կոյսն* մարիամ: - 463. Ողջոյնս այս՝ է հանդերձ բերողիւն և առաքողիւն և *կուսիւն* ցուցանէ զ**Ժ** գերազանցութիւն պատուոյ *կուսին*: - 463-464. Նա՛խ՝ զի աստուած էր ողջոյնառաքն. որ խօսէր *զկոյսն* ի հարսնութիւն կուսութեան, կուսաբեր լինիլ պտղովն: - 464. Երկրորդ՝ զի հրեշտակ էր ողջունաբերն. *կոյսն* և անապական բնութեամբ: - 464. Երրորդ՝ զի *կոյս* էր ողջոյնընկալն և գերազանց քան զամենայն *կոյս* որպէս ցուցաւ: - 464. Չորրորդ՝ զի ասելն «ուրախ լեր» ի յայլ թարգմանս է «ողջ». ցուցանէ զողջութիւն և զանմեղութիւն *կուսին*: - 464. Իններորդ՝ զի ո՛չ մարգարէիւ յայտնեաց *կուսին*. որ էր աղօտ գիտութիւն համեմատեալ ընդ հրեշտակին: - 464. Տասներորդ՝ այն քան գերազանցեաց պատիւ *կուսին*, զի այնմ որ մարգարէք գուշակէին զլինելոցն. ի սմա ընդ խօսից հրեշտակին եղև կատարումն: - 464. Դարձեալ ողջոյնս այս՝ ունի նշանակութիւն գերազանցութեան *կուսին*. բնութեան, շնորհաց, և փառաց: - 464. Նախ՝ թէ ո՞րպէս պատուով ետ զողջոյնն *կուսին* ասելով «ուրա՛խ լեր լի՛ շնորհօք»: - 464. Զի՞նչ ցուցանեն պատասխանիք *Կուսին*: - 465. Ա՛րդ՝ սրբուհի *կոյսն* ի ողջոյն հրեշտակապետին երիս իրս արար: - 465. Իսկ հաւանական պատասխանիք սրբուհւոյ *կուսին* մարիամու են **դ** բանք: - 465. Այլ և ծանիր. զի է բան յիշէ սուրբ գիրք զոր խօսեցաւ աստուածածին *կոյսն*: - 465. Եւ տե՛ս, զի ամենայն բանք *կուսին* են կարճ: - 466. Վասն է՞ր ասեմք աստուածածին *զկոյսն*: - 466. Բազում պատճառաւ եկեղեցի սուրբ խոստովանի աստուածածին *զկոյսն*: - 466. Այլ արդ՝ սուրբ գիրք վկայեն, և ճշմարիտ հաւատն բռնադատէ՛ աստուած խոստովանիլ զծնեալն ի *կուսէն*. ապա ուրեմն և ծնօղն է՛ աստուածածին: - 466. Ապա ուրեմն *կոյսն* որ ծնաւ զէմմանուէլն՝ մա՛յր է աստուծոյ մարդացելոյ: - 466. Արդ եթէ որդին աստուծոյ եղեալ է կնոջ որդի, ապա ուրեմն *կոյսն* սուրբ մայր է որդոյն աստուծոյ և աստուածածին: - 466. Նոյնպէս որդին աստուծոյ որդի է *կուսին* որ էառ մարմին ի նմանէ. թէպէտ աստուածութիւնն ի հօրէ է. ապա ուրեմն աստուածածին է *կոյսն*: - 466. Նոյնպէս և *կոյսն* սուրբ աստուածածին է վասն աստուածացեալ մարմնոյն: - 466. Եւ նոյն է տէրն և աստուածն գոլ. ապա ուրեմն *կոյսն* սուրբ մայր է տն և աստուծոյ: - 466. Ա՛րդ՝ ծնեալն տէր ծնեալ է ի *կուսէն*. ապա ուրեմն *կոյսն* տիրամայր է և աստուածածին: - 466. Այլ արդ՝ քրիստոս ո՛չ է որդի աբրահամու և ո՛չ ի հարցն՝ թէ ոչ է որդի *կուսին*. ապա ուրեմն ըստ մարմնոյ աստուած է քրիստոս, և աստուածածին է ծնօղն. և մայր ըստ մարմնոյն քրիստոսի: - 466. Ասեմք եթէ յետ յղացման բանին յարգանդի *կուսին* օրինօք և ոչ օրինօք բնութեան, ժուժկալեալ ամսոց ըննից և աւուրց հնգից, ըստ հասարակաց ասեմ և անդրանկաց. ըստ հնգից յաւելեալ թւոց նախաստեղծին նախարարչութեան աւուրց: - 469. Նա՛խ՝ զի ո՛չ լինէր այն որդի ըստ բնութեան ծնողին. որպէս և ո՛չ եւա ադամայ. վասն որոյ յարգանդէ ծննդեամբ եղև որդի *կուսին*: - 469. Նա միա՛յն էր մայր և *կոյս*. որ ընդ աստուծոյ ունէր զորդին: - 469. Այլ յերկուցն ևս զերծաւ աստուածածին *կոյսն*: - 469. Նոյնպէս և զամբողջութիւն *կուսին* մուտ և ել աստուածն բան ո՛չ խախտեաց: - 469. Նա՛խ՝ զի ո՛չ վայելէր մաքրութեան *կուսին*: - 470. Ապա ուրեմն պատշա՛ճ էր նիւթ մարմնոյն քրիստոսի մաքուր արիւնն *կուսին*...: - 470. Երկրորդ ծնունդ իջումն բանին յարգանդ *կուսին* մինչ չև ծնեալ ի մօրէ ...: - 471. Զի որպէս ի կուսական արգանդէ, նոյնպէս ծնաւ ի *կոյս* գերեզմանէ վիմովն կնքելով: - 471. Այլ և անդրանիկ ծնաւ ի մօրէ առաջին ծնունդ. թէպէտ ո՛չ ունի եղբար ի *կուսէն*, անդրանկութիւն իւր ո՛չ խափանի: - 472. Իսկ ոմանք յետ ծննդեանն ի *կուսէն* ասեն օծեալ զքրիստոս ի մկրտութեանն...: - 475. ...ըստ որում որ էջ հոգին սուրբ յորովայն անարատ *կուսին* և մաքրեաց զնա, և կազմեաց ի նմանէ զարիւնն. և սրբեաց և օծեաց զնա միաւորելով պատկերապէս: - 475. Իսկ բանն աստուած է՛ անսկզբնաբար ի հօրէ. և յետոյ սկսեալ ի *կուսէ* : - 478. Երկրորդ՝ զի արարիչն ընդ բութեան կարգս եմուտ. որպէս մարդ լինիլն և ի *կուսէ* ծնանիլն: - 479. Չորրորդ՝ որպէս արու բռնացա՛ւ տէր ի քակել զօրէնս բնութեան. և խզեաց զկապ կուսանաց և զմայրական. այսինքն զի որ մա՛յր է՝ *կոյս* ո՛չ է. և որ *կոյս* է՝ մայր ո՛չ է: - 480. Այլ սրբուհի աստուածածինն մայր է որդւոյ և *կոյս* անապական: - 480. Դարձեալ ի ձեռն *կուսին* կենաց գիր տուաւ ազգի մարդկան տէր մեր յիսուս քրիստոս: - 481. Ա՛րդ՝ աստի մինչ ի նիսանի **Ժէ**, և յապրիլի է՝ կատարի է ամիս. յորում առաքեցաւ գաբրիէլ առ *կոյսն* մարիամ յաւուր չորեքշաբաթու: - 483. Երրորդ՝ զի ո՛չ ասաց հրեշտակապետն զաքարիայի թէ ահա՛ եղիսաբեթ յղասցի և ծնեցի քեզ որդի զներկայն ցուցանելով. որպէս ասաց թէ «ահա՛ եղիցիս համր». և առ *կոյսն* թէ՝ «յղասջիր»: - 483. Չորրորդ՝ զի որ յամսեանն զերորդի հրեշտակապետն եկն առ *կոյսն*, ի յղութենէն եղիսաբեթի ասաց գոլ **զ** ամիս, և ո՛չ յաւետեացն: - 483. Զի անսերմն յղութեամբ և ի սրբեալ յարենէ *կուսին* գոյացաւ մարդ: - 485. Երկրորդ՝ զվեց կենդանակերպսն կոխեաց, որ էր **եԺ**ան աւուր ճանապարհ ի *կուսէն* ի խոյն ընթացեալ: - 490. Այլ անապական մարմին յանապական *կուսէ*, ընդ անապական էութեանն աստուծոյ միաւորեալ: - 498. Վեցերորդ՝ զմարիամ մայր փրկչին *կոյս* և անապական խոստովանին հարք ուղղափառութեան. և զայս

ո՛չ ըստ գոյացութեան բնութեան, այլ զի ծնաւ զբանն աստուած անապական մարմնով: - 499. Ութերորդ՝ մանանայն յանապատի էր օրինակ անապական մարմնոյ փրկչին. և է՛ անապական մինչև ցայսօր ի մէջ ոսկի սափորին. ապա ուրեմն ճշմարիտ մարմինն քրիստոսի էր անապական ի կուսական արգանդէ աստուածածին *կուսին*: - 499. Եւ ծնաւ ի *կուսէ* անմեղ հոգւով և անապական մարմնով մարդացեալ աստուած: - 500. Ասեմք եթէ, բանն մարմնացաւ ի *կուսէն*. և *կոյսն* էր ի բնութենէն ադամայ ի հողոյ ստեղծեալ: - 501. Եւ ի նոյն ժամն ի մէջ գիշերի ծնաւ ի *կոյս* գերեզմանէն: - 512. Նա՛խ՝ աստուածածին *կոյսն* մարիամ: - 516. Իսկ փոխումն՝ աստուածամօրն *կուսի*. որ որդին յատկապէս սպասաւորէ մօրն: - 519. Այլ տեղի փոխման *կուսին* ի վե՛ր է քան զամենայն դասս հրեշտակաց: - 519. Եւ նա ի *կոյս* մօրէ, և մեք յաւազանէ ծնեալք: - 528. Առաջին վասն պատգամաց. որպէս գաբրիէլ առ *կոյսն* սուրբ: - 535. Բայց միայն զի խաբէութեամբ աստուածածին ասացին *զկոյսն* սուրբ: - 543. Այլ *կոյսն* մարիամ աստուածածին՝ էր ազատ ի մահացուէն և ի ներելւոյն. բայց ո՛չ ի սկզբնականէն. զոր հոգւովն սրբով մաքրեցաւ: - 568. Որոյ պատճառ է, զի ո՛չ ի սերմանէ՝ այլ ի մաքուր արենէ *կուսին* էառ մարմին: - 568. Երրորդ վասն մարմնով ծննդեանն ի *կուսէն*: - 572. Եւ զերկրորդն՝ ծնեալ ի *կուսէն* մարիամայ: - 573. Երրորդ, զի թէ կայր հնար որ ի ձեռն կնոջն տուեալ լինէր շնորհք, աստուածածին *կոյսն* մարիամ ընդէ՛ր ոչ եղև մեծ մկրտութեան որդւոյն իւրոյ ի յորդանան: - 589. Զի և տիրամայր *կոյսն* ո՛չ էր ի ժամ մկրտութեանն ընդ քրիստոսի ի յորդանան որպէս ասացաւ ի վերոյ: - 591. Այլ և առընթեր յարութեան աւետարանն. զի նո՛յն է խորհուրդ ծննդեանն ի *կոյս* մօրէ և ի *կոյս* գերեզմանէ: - 628. Այլ յետ երկոտասան ամաց ի թաղումն *կուսին* ասացաւ: - 634. Դարձեալ՝ ի հանդերձեալն յորժամ խառնին հրեշտակք և մարդիկք ի լնուլ զտեղի անկելոց՝ *կուսանաց* սրբոց: - 636. Այլ և *կուսին* փոխումն ի **ե** շաբաթի: - 638. Զի առանց կոփելոյ էր առաջին տախտակն աստուածագիծ. և *կոյսն* առանց սերման յղացաւ: - 639. Նա՛խ՝ զի յաղօթս *զկոյսն* սուրբ բարեխօս մաղթեմք. և զխաչն սուրբ՝ պահապան: - 642. Երկրորդ, ի *կոյսն* բնակեցաւ բանն **թ** ամիս. և ի խաչն յաւիտեանս յաւիտենից: - 642. Դարձեալ՝ բուրվառն է *կոյսն* մարիամ. և հուր աստուածութիւնն ի նմա բնակեալ. - 645. Որ է՛ *կոյս*՝ և մայր՝ և ծնօղ աստուծոյ: - 645. Չորրորդ, ի խորհուրդ *կուսին* որում աւետեաց հրեշտակն զփրկութիւն մեր...: - 653. Որ և զուստիանէ սրբուհի *կոյսն* մա՛յր արար կանանց հաւատաւորաց: - 658. Իսկ ի վեր *կոյս* ունել զերեսս մեռելոյն...: - 676. ...և յարութիւնն միանալ սիրով ընդ փեսային քրիստոսի և մտանել յառագաստն ընդ իմաստուն *կուսիցն*: - 681. Վեցերորդ, ի փոփոխումն աստուածածին *կուսին* յետ **գ** յաւուր ձայն հրեշտակացն դադարեցաւ...: - 681. Այլ և ի մերոց վարդապետաց սկիւռացին գրիգոր ի փոխումն աստուածածին *կուսին*: - 687. ...և էր *կոյս* ըստ որում պահեաց զմաքրութիւնն. վասն որոյ նմանակիցք նորին՝ թագիւ պսակին ընդ նմին: - 712. Հինգերորդ, զի որդին ծնաւ ի *կուսէն* և յերկրի շրջեցաւ և քարոզեաց և չարչարանօք փրկեաց և պատճառ եղև ընդհանուր յարութեան բնութեանս մերոյ. - 735. Իսկ դատաւորն նստեալ յաթոռ արդարութեան արդարապէս հատուցանէ ըստ գործոց. ըստ որում յիմար *կուսիցն* փակեցաւ դուռն և ո՛չ առին զխնդիրն: - 742. Իսկ ըստ տեսակի, որպիսութիւն հատուցմանց ըստ հաւատոց և գործոց վկայից և *կուսից*: - 746. Դանիէլիւ՝ *կուսիցն* դասք ծնուցեալ լինին: - 755. Երկրորդ վասն ազնուական ընկերութեանցն. յորում եղիցի երանելի *կոյսն*. և հրեշտակք և սուրբք և սրբուհիք. և ամենայն թագաւորք և թագուհիք եղիցին: - 763. Առաւել պարտ էր մարդկան վաստակիլ միայն՝ զի կարասցեն գոլ ի միում աւուր ընդ երանելի սրբուհւոյ աստուածածին *կուսին*. քան բազում վաստակիլ վասն յաւիտենական փառացն: - 763. Դարձեալ, ծառ կենա՛ց է աստուածածին *կոյսն* մարիամ բղխեալ յարմատոյն յեսսեայ. երկնուղէշ զարգացմամբ մշտասաղարթ կուսութեամբ ծաղկեալ և պայծառացեալ հոգւոյն սրբոյ եկաւորութեամբն. և պտղաբերեալ մեզ անմահ պտուղ զբանն մարմնացեալ. յորմէ վայելեալք երկնաւորք և երկրաւորք ի շնորհաց նորին զյաւիտենից կեանսն ժառանգեցաք: - 768. Իսկ հաւատ ի մարդկութիւն որդւոյ, ի *կուսէն* երևեալ անհայր ի մօրէ. որպէս անմայր ի հօրէ: - 769. Մի դէմն յԵրրորդութենէն որդի լինի. մի դէմ ի մարդկութենէս ի *կուսէ* առեալ բնութիւն մարդկութեան, աստուածութիւնն բոլորովին յաղագս անհաս միաւորութեանն ըստ ոսկէբերանին յոհաննու: - 770. Զի որպէս քրիստոս չարչարանօքն փրկեաց զեկեղեցի և հարսնացոյց, նոյն և առաքեալն քարոզութեամբ իբր *զկոյս* մի սուրբ յանդիման արար փեսային քրիստոսի: - 781

**ԿՈՅՐ +** Եւ այնպիսիքն տրամաբանել ո՛չ կարեն վասն հոգևորին. որպէս ի ծնէ *կոյրն* վասն գունոց, քանզի ասեն վարդապետք՝ աստուած լոյս է ո՛չ մարմնոց, այլ մտաց. զոր թէ ոք ո՛չ տեսանէ՝ *կո՛յր* է: - 32. Եւ ի ծնէ զաչս *կուրին* ստեղծեաց: - 70. Եւ *կուրին* ասէր, «որ տեսերդ՝ և որ խօսիդ ընդ քեզ նա՛ է որդին աստուծոյ»: - 73. Այսինքն նախ՝ *կուրաց* տեսանել տայր...: - 328. Զի նա խաւարաւ տանջէր, և քրիստոս *զկոյր* աչսն լուսաւորէր: - 328. Խլուրդն՝ *կո՛յրն* է մտօք: - 365. Երկրորդ՝ *կոյր*. որ մտօքն են խաւար: - 370.

Նա՛խ՝ կոյրն. իսկ ի մեզ որ մտօ՛քն իցէ: - 371. Չորրորդ՝ նշան թէ՝ զոր ասէ և լինի. և տէր մեր զգործս աստուծոյ գործէր առ կաղս և *կոյրս* և հիւանդս և մեռեալս. զոր ասէր բանիւ՝ կատարէր գործով: - 399. Երեքտասաներորդ, *Կոյրք* և կաղք ընդ դէմ դարձան դաւթի: - 412. Ա՛յն է որ կաղք և *կոյրք* ընդ դէմ դարձան դաւթի և անարգանօք ասէին՝ մի՛ մտցէ դաւիթ ի քաղաքս. որ նա՛ ինքն է երեսուղէմ. որ եղև տուն տեառն: - 431. Կամ զի օրէնքն գրեալ էր՝ *կուրի* և կաղի մի՛ դնել գայթակղութիւն, ասէին նախատելով թէ՝ որպէս ո՛չ կարես կոխել զդոսա, նոյնպէս ո՛չ կարես առնուլ զամուրն յեբուսայ: - 431. Վասն որոյ ասաց դաւիթ, ամենայն որ մարտնչի սրով ընդ կաղս և ընդ *կոյրս* որպէս ասացին յեբուսացիքն, նա՛ ատելի՛ է անձին դաւթի. և խնայեաց ի նոսա և փրկեաց: - 431. Որպէս յետոյ որդի նորա զկաղս և *զկոյրս* բժշկեաց ի տաճարին: - 431. Դաւիթ արար զողորմութիւն կաղացն և *կուրացն* յեբեսացոց. և տէր մեր բժշկեաց զկաղս և *զկոյրս* որ «որդի դաւթի» աղաղակէին: - 438. Ասեն թէ մին աչքն *կո՛յր* էր. և խոցեաց թէ ստամեռուկ չլինի: - 495. Վեցերորդ՝ զի գործ աստուծոյ է ի նւաստ և ի փոքր ինչ իր զմեծամեծսն ներգործել. որպէս կաւովն *զկուրին* աչքն եբաց, և ի վիմէն ջուր բղխեցոյց **բժ**ան. և այլ բազումս: - 733-734

**ԿՈՆԴԱԿ +** Եւ այն զի փաթութած է՝ ըստ հրէական օրինին է. զի *կոնդակ* և գալարելո՛վ էր նոցա գիրն. իբր թէ ծածո՛ւկ է ի նոցանէ խորհուրդ մարգարէիցն և թաքուն: - 481

**ԿՈՆՔ +** *Կոնք* արծաթի որ է՛ **բ** ունկի անգանակ: - 359

**ԿՈՆՔԵՌ +** Վակասն՝ ուրա՛րն է. և Տախտակ ականցն՝ *կոնքեռն*: - 348

**ԿՈՆՔԻԼՈՍ** - Ծիրանին ջրոյ. զի *կոնքիլոսն* որ ներկէ՛ զծիրանին՝ ի ջրո՛յ է. և Բեհեզն սպիտակ՝ երկրի. զի վուշն յերկրէ լինի: - 342

**ԿՈՇԿՈՃԵՄ +** Երրորդ՝ զայն ցուցանէ որ կեանք դրախտին դարձաւ առ նոսա յանապատին անկարօտ ամենայնի. զի զգեստն ո՛չ մաշէր. այլ աճէ՛ր ընդ տղայոցն. և ոտն բոկ՝ և ոչ՛ *կոշկոճէր*...: - 397

**ԿՈՇՏԱՒՈՐ** - Եւ *կոշտաւորն* առանց իմաստութեան է: - 246

**ԿՈՉԵՄ +** Ասեմք առ այս, մոլորականքն ո՛չ եթէ զի ունին ներհակ շարժումն վասն այն *կոչին* մոլորականք...: - 12. Եւ այսպէս է ընտրեալն և *կոչեալն* և արդարացուցանելն. որպէս գրէ առաքեալն: - 18. Զբացբարձականսն ի վերայ աստուծոյ՝ որպէս անճառ և անսահման՝ ո՛չ ըստ պակասութեան *կոչեմք*, այլ ըստ գերազանցութեան: - 24. Որոց պատասխանեն վարդապետք եկեղեցւոյ. և ես զնոցայն առեալ ասացից՝ թէ յաւուրս յետինս՝ ոչ զկատարած աշխարհի *կոչէ*, այլ *կոչէ* աւուրս յետինս՝ զպակասութիւն օրինացն և արդարութեան նորա. քանզի օրէնք նոցա պակասեցաւ ի գալստեանն քրիստոսի: - 27. Յերձեալք ի հաւատոց՝ բաժանեն զքրիստոս. և զայլ եկեղեցիս հերձուածօղս *կոչեն*: - 34. Եւ այս վասն բազում բաղդատութեան *կոչին* սոքա նեռն: - 34. Երկրորդ՝ նեռն հայհոյէ զքրիստոս զինքն *կոչելով*. նմանապէս և հերձուածօղք ոմանք հայհոյեն զմարդեղութիւնն Քրիստոսի: - 34. Երրորդ՝ մոլորեցուցիչ *կոչի*. և հերձուածօղք մոլորեն զուղիղ հաւատս քրիստոնէին. և զբարի գործս նոցա: - 35. Չորրորդ՝ նա սուտ քրիստոս և սուտ մարգարէ *կոչի*. և սոքա սուտ քահանայք՝ և սուտ վարդապետք՝ և սուտ առաքեալք *կոչին*: - 35. Յինգերորդ՝ նա պղծութիւն *կոչի* տաճարին: - 35. Եօթներորդ՝ զնա փոքր եղջիւր *կոչէ* դանիէլ. խեթկի և մեծամեծս բարբառելով. և սոքա խեթկեն զեկեղեցի. և բանան զհայհոյիչ բերանս իւրեանց յերկինս, և զլեզուս ածէին զերկրաւ: - 35. Վեցերորդ առարկեն թէ՝ որ հայր *կոչեմք* աստուծոյ՝ բնութեա՞նն է անունն՝ թէ արարչութեանն: - 39. Եւ գիտեմք հաւաստի թէ որդի էր. զի հրեշտա՛կ անուանէ զնա գիրն. և զի հայր երբէք հրեշտակ ո՛չ *կոչեցաւ*՝ այլ որդի ըստ եսայեայ մարգարէի, որ «հրեշտակ մեծի խորհրդոյ» *կոչէ* զորդի. որ եղև մեծ խորհրդոյս սպասաւոր. այսինքն փրկութեան մերոյ՝ մարդանալովն իւր: - 40. Այլ որ եղև փոխանակ հնոյն նոր անդամ. և նզովք *կոչեցաւ* վասն իմ և մեղք այն որ ո՛չ արար զմեղս, և ելոյծ զանէծս և եբարձ զմեղս: - 42. Իսկ որդի մարդոյ *կոչի*, զի էր ի յարենէն ի զանգւածոյն ադամայ իբր ի նախահօրէ՛. և ի կուսէն՝ իբր ի մօրէ՛: - 50. Զոր և այժմ օրինա՛կ է առ մեզ սարկաւագն. զոր հոգի *կոչէին* վասն հոգևորապէս խօսելոյն: - 59. Յինգերորդ ասեն, եթէ հոգին սուրբ առնու զբնութիւնն ի հօրէ՝ լինի որդի նորին. զի այն *կոչի* որդի որ ունի զբնութիւնն ի հօրէ ի նոյն տեսակէ: - 60. Եօթներորդ՝ եթէ մասն աստուծոյ *կոչի* հոգին սուրբ. և աջ և բազուկ է որդին. ապա ուրեմն և ի նմանէ՛ է: - 61. Եւ գիտելի է, զի որպէս բան *կոչի* որդին աստուծոյ, նոյնպէս խօսք *կոչի* հոգին սուրբ...: - 66. Տասներորդ՝ զի թէ նա վասն բնակութեանն երկրպագելի է և աստուած, ո՛չ միայն եղիցի նա՛ աստուած, այլև ամենայն երկնաւորք և երկրաւորքս. որք բնակեալ ունին զաստուած և *կոչին* անուամբ աստուածք: - 67. Ստեաց ուրեմն և հայր՝ *կոչելով* իւր որդի զոր ի զաւակէն Դաւթի: - 69. Եւ զղազար *կոչեաց* ի գերեզմանէն և կենդանացոյց բանիւ: - 70. Ա՛րդ՝ որով ամենայն՝ յարմարի բանին. ըստ այնմ ամենայն՝ (ինչ բանիւն եղև.) և յիսուս *կոչի* մարդն: - 72. Իններորդ՝ Որ էն՝ աստուած *կոչի*. ըստ այնմ որ ասացաւ մովսէսի, «ես եմ որ էնն»: - 73. Իննևժերորդ՝ թէպէտ մարդիկ ոմանք *կոչին* տէր վասն ունելոյ

իշխանութիւն ինչ, այլ տէր միայն աստուած է...: - 74. Զի բանն որդի *կոչի*, և մարդն որդի *կոչի*: - 82. Եւ բանն քրիստոս *կոչի*, և յիսուս, և տէր. և աստուած. նոյնպէս և մարդն *կոչի* քրիստոս, և յիսուս, և տէր, և աստուած: - 82. Այլ աստուածութիւնն և մարդկութիւնն ո՛չ նման միմեանց. և ո՛չ բոլորին *կոչին* ըստ ոմանց: - 88. Իսկ աստ նման միմեանց՝ և բոլորին *կոչի* քրիստոս...: - 88. Իսկ որպէս հոմանուն ձայն, զի հաւասարապէս հաղորդի որոց *կոչինն*. որպէս խոյ երկնային և երկրային և ջրային. զի ո՛չ առաւել և ո՛չ նըւազ *կոչին*. այլ հաւասարապէս: - 89. Ապա ըստ այսմ հետևի՝ զի մարիամ մայր քրիստոսի լինի և ո՛չ աստուծոյ. զի լաւ է քրիստոսածին և մարդածին *կոչիլ*՝ քան թէ աստուածածին: - 91. **Զի թէ ասեմք եթէ ոչ է աստուած, յայնժամ բաժանեալ յաստուածութենէն՝ ո՛չ լինի աստուծոյ ձեռն. և ո՛չ աստուծոյ մարմին. կամ արիւն. զի մասն բաժանեալ ի բոլորէն ո՛չ է բոլորին մասն. և ո՛չ *կոչի*. որպէս ձեռն հատեալ յանդամոցն՝ ո՛չ *կոչի* մասն բոլորին**: - 92. Որպէս ձեռն ունի զգոյացութիւն բոլոր մարմնոյն. և *կոչի* մարմինն առ բոլորն քրիստոս: - 92. Եւ որպէս քրիստոս աստուած է և *կոչի*: - 92. Նմանապէս մարմինն քրիստոսի աստուած է՝ և *կոչի* աստուած և աստուծոյ մարմին: - 92. Երրորդ՝ զի ո՛չ է նման առ մեզ և առ նա մասն և բոլորն. զի թէպէտ մասունք մարդոյ՝ ո՛չ ունին զկոչմունս բոլորին, սակայն մասունք մարմնոյն քրիստոսի՝ *կոչին* և ունին զբոլորին էութիւն: - 92. Նա՛և ո՛չ մարմինն որիշ յօծողէն *կոչեսցի* օծեալ: - 94. Իսկ թէ միայն անուն առանց էութեան. ապա անւամբ խոստովանիս աստուած զքրիստոս և ո՛չ գոյացութեամբ. և հաւասարե՛ս զնա մովսէսի. որ անուամբ աստուած *կոչեցաւ* և ո՛չ էութեամբ: - 95. Վասն սէ՞ր *կոչեմք* Երրորդութիւն. և Հայր. և Որդի. և Հոգի սուրբ: - 101. Արեգա՛կն *կոչի* աստուած ի յատկութեամբ: - 102. Եւ հասարակ հրեշտակք և զօրութիւնք *կոչին*: - 102. Յո՞ր դասէ անկան. և իշխանք օդոյ *կոչին*: - 102. Իսկ Երրորդութիւն *կոչեմք*՝ բաժանելով յերեք թըւոյն: - 107. Վասն է՞ր հայր *կոչի*: - 108. Վասն է՞ր *կոչի* որդի: - 108. Դարձեալ՝ որ զամենայն ստեղծ՝ հայր *կոչի*. և որ զամենայն պարունակէ՛ զի մի՛ լուծցին՝ որդի. և որ շնչելով կենագործէ և զարդարէ զամենայն՝ հոգի սուրբ յորջորջի: - 108. Ընդէ՞ր մայր ո՛չ *կոչի* յիգական սեռէ: - 109. Հոգին սուրբ ընդէ՞ր ո՛չ *կոչի* որդի: - 109. Իսկ աստուած մի *կոչի*: - 109. Հինգերորդ՝ մի *կոչի*. որպէս միակն սկիզբն է թըւոց և ո՛չ թիւ. և աստուած սկիզբն է արարածոց և ո՛չ արարած: - 109. Վասն է՞ր *կոչեմք* զնա էր. և է՛. և եղիցի...: - 111. Վասն որոյ երբեմն *կոչի* սկիզբն. և մեք սկսեալք ի նմանէ: - 112. Վասն է՞ր *կոչի* աստուած հին աւուրց ըստ դանիէլի: - 114. Ա՛յս է զի *կոչի* յաւիտեան. և ժամանակ. և օր...: - 115. Երրորդ՝ պատճառ է յաւիտենից. և ժամանակաց. և աւուրց. որպէս լոյս. իմաստութիւն և կեանք *կոչի*. զի պատճա՛ռ է սոցա: - 115. Չորրորդ՝ որ սկիզբն ունի և կատարած. և թէպէտ հասարակ սոքա յաւիտեանք *կոչին*, այլ ունին յատուկ անունս: - 115. Առաջինն *կոչի* յարաձգական յաւիտեան: - 115. *Կոչին* և հոմանուն սոցա յաւիտեան. որպէս իւրաքանչիւր դարք: - 115. Եւ գիտելի է՝ զի աստուած *կոչի* յաւիտեան անսկիզբն և անվախճան. և է՛ պատճառ պարունակողացն յաւիտենից. որ ո՛չ սկիզբն ունի և ո՛չ կատարած: - 116. Այլ՝ *կոչի* աստուած յաւիտեան. և միշտ. և ժամանակ. զի պատճառ է սոցա որպէս ասացաւ ի վերոյ: - 116. Իսկ հրեշտակք և հոգիք և աշխարհ՝ *կոչին* յաւիտենականք. զի հաղո՛րդ են յաւիտենից. այնմ որ սկսեալ է և անվախճան: - 116. Սա՛ *կոչի* խորհրդական աստուածաբանութիւն: - 123. Ա՛յս է զոր ինչ է ի յաստուած՝ դնելով *կոչեմք* զնա: - 123. Երկրորդ՝ զի որպէս մի արեգակն *կոչի* տարրեղէն ամանն լուսովն և հրովն: - 125. Սմին նման և տէր մեր ընտրեաց զառաքեալս և նոքօք *կոչեաց* զհաւատացեալս: - 127. Քսաներորդ՝ արդար *կոչի*. և կրկին է արդարութիւն. այսինքն կշռապէս՝ և արժանապէս: - 127. Վասն որոյ հիացական *կոչի* անունն աստուծոյ: - 127. Իսկ «ես նախանձոտ, զփառս իմ այլում ո՛չ կամիմ». փառք իւր *կոչէ* զմարդն: - 128. Ո՞րպէս *կոչի* աստուած սիրող՝ և սէր և սիրելի: - 128. Երրորդ՝ զի ինքն ինքեա՛մբ է յառաջածու, վասն որոյ *կոչի* սիրող: - 128. Եւ է՛ ինքն բարի և գեղեցիկ, *կոչի* սիրելի: - 128. Եւ *կոչի* սէր, զի շարժէ՛ զմեզ. և յառաջածու զօրութիւն է. և երևեցուցիչ. և միաւորիչ. զի այսոքիկ սիրոյ ներգործութիւնք են. վասն այն *կոչի* սէր: - 128. Վասն է՞ր մարմինն ոտք *կոչի* քրիստոսի: - 130. Եւ սոքա *կոչին* անբանք և անզգայք ըստ պակասութեան: - 132. Վասն է՞ր ապա ամենայն դասք հաւասար հրեշտակք *կոչին*...: - 136. Ապա յա՛յտ է զի ա՛յլ է կարգ շնորհականին, և այլ է կարգ բնականին. զի բնականք ներքինք զվերնոցն բոլորապէս ունին և *կոչին*. այլ ո՛չ անդրադարձեալ. որպէս անհատն զտեսակն և զսեռն բոլորապէս ունի և *կոչի*. զի պետրոս մարդ է և կենդանի և *կոչի*. այլ կենդանին մարդ՝ կամ մարդն պետրոս ո՛չ է և ո՛չ ասի: - 136. Իսկ ընդդէմ այսմ՝ քահանայապետն որ վերին է՝ ունի զքահանային և *կոչի*: - 136. Իսկ քահանայն կամ սարկաւագն ո՛չ ունի զվերնոցն և ո՛չ *կոչի*: - 136. Եւ թէ ոք ասիցէ, վասն էր մարդիկք հրեշտակք *կոչին*. նաև հրեշտակք աստուած՝ որ վերնոցն են կոչմունք: - 136. Ա՛րդ՝ որ քան սրբութեամբ և իմացմամբ աստուածատեսակ լինին՝ աստուածք *կոչին*. եթէ հրեշտակք և եթէ արք սուրբք որպէս մովսէս: - 137. Դարձեալ՝ աստուածք *կոչին* ո՛չ փաղանունաբար, այլ հոմանունութեամբ. այսինքն անւամբ միայն, այլ ո՛չ բնութեամբ: - 137. Զիա՞րդ առ հասարակ զօրութիւնք *կոչին* երկնայինքն...: - 137.

Վասն որոյ պարունակ բանիւ *կոչին* էութիւնք, զօրութիւնք, և այլն: - 137. Երկրորդ՝ զի առանձնաւորութիւն է զօրութեանց, այսինքն արիութիւն յաստուածայինսն և անշարժ գոլն և զօրացուցանելն. և զայս առ հասարակ ունին. վասն որոյ առ հասարակ զօրութիւնք *կոչին*: - 137. Եւ արդ որպէս ցուցաւ՝ վերինք մինչ ի միջինս ունին բոլորապէս զներքնոցն. և ներքինքն մասնաւորաբար մինչ ի զօրութիւնսն՝ յաղագս առ հասարակ զօրութիւնք *կոչին*: - 137. Երկրորդ՝ ամենեքեան հրեշտակք *կոչին*. իբր միմեանց ուսուցիչք և յայտնօղք: - 137. Երրորդ՝ ամենեքեան զօրութիւնք *կոչին*. զի ունին զօրութիւն էութիւն և ներգործութիւն: - 137. Է՞ որ ի ներքուստ, որ չարութիւն և ախտ *կոչի*. և է՛ որ արտաքուստ, որ կիրք և արատ *կոչի*: - 139. Իսկ նոքա անախտ և անարա՛տ *կոչին*: - 139. Երբեմն զմարմնական տուրս շնորհք *կոչէ*...: - 139. Երբեմն զնշան և զարուեստն *կոչէ*...: - 140. Երբեմն զհաւատն և զսէրն *կոչէ*..: - 140. Նախ՝ զի հրեշտակն միեղէն և բոլոր իմանայ. իսկ հոգին բան բան և մասնաւոր. վասն որոյ բանական *կոչի*: - 141. Է՛ որ իմացումն մտացն առ ինքն ժողովի ի յիշողականէ՞ ի տրամախոհութեանցն՝ ի կարծեաց՝ և յայլոցն, և այնպէս ըստ ինքեան տեսութեանն ի աստուած հպի. այս է գերագոյն իմացումն. և *կոչի* իմացական տեսութիւն: - 142. Եւ է՞ յորժամ իմացումն ի յիշողութիւնն ի տրամախոհութիւնն և յայլս բաժանի, և նոքօք իմանայ և տեսանէ զաստուած. և այս ևս է կատարեալ տեսութիւն. և *կոչի* սա բնական տեսութիւն: - 142. Իսկ որ զգայարանօքն տեսանէ, այսինքն աչօքն զգոյնն, ականջօքն զձայնն, և այլն. *կոչի* սա զգայական տեսութիւն: - 142. Դարձեալ ունին հրեշտակք առաւօտեան և երեկոյին ճանաչումն. այսինքն զի տեսանելով. զբանն աստուած՝ *կոչի* առաւօտու ճանաչումն: - 145. Եւ ի բանն աստուած տեսեալ զարարածս՝ *կոչի* երեկոյին ճանաչումն: - 145. Այլ և գործակից նմա մարդիկ՝ անւանակից եղեն նմա և չար *կոչեցան*: - 148. Եւ *կոչի* արուսեակ դարձեալ, զի քան զայլս՝ իւր լուսոյ գեղեցկութիւնն առաւել կուրացոյց զինքն: - 148. Դարձեալ՝ առաւօտ *կոչի* վախճան աշխարհիս որ սկիզբն է աներէկ աւուրն: - 148. Իշխանք օդոյ վասն է՞ր *կոչին*: - 150. Եւ յոհաննէս զսա օդո՛յ դասէ. վասն այն նոյն անուամբն՝ պօղոս իշխան օդոյս *կոչէ*. կամ զի յօդս են բնակեալ և իշխեն մարդկան: - 150. Եւ որք՝ ի վէմս իշխեն՝ քաջք *կոչեցան*: - 150. Եւ որք ի ջուրս և ի ծնունդս կանանց՝ ա՛լք *կոչեցան*. զի գէջ ախտիւն զհոգիս կորուսանեն. և ի ծնունդս՝ զմարմինս և զհոգին: - 150. «Աստեղս» զհրեշտակս *կոչէ* վասն բարձրութեան և պայծառ լուսոյն որպէս հրեշտակք ի յերկինս: - 152. Ծնունդ և արարած *կոչի*: - 154. Վասն դրախտին զի երկին *կոչի* և իմանալի տունկ: - 155. Եւ զի օրինակն ունի նմանութիւն և ունի աննմանութիւն. վասն որոյ *կոչի* օրինակ: - 163. Իսկ պոռնկութեան չափաւորն և անչափն մեղք են. որպէս մի՛ անգամ կոյսն ապականեալ՝ և մի՛ անգամ պոռնկեալ՝ *կոչի* պոռնիկ և ապականեալ: - 166. Իսկ անեղ և պարզ էութեանն պատշաճի միայն նմանապէս համեմատութեամբ. զի է *կոչի* աստուած...: - 171. Այլ *կոչի* է, ըստ այնմ որ միշտ է՛, ո՛չ ունելով սկիզբն և ո՛չ վախճան. այլ ինքն է ամենեցուն սկիզբն և վախճան. որպէս ասէր՝ «ես եմ ալֆա և օմեգա»: - 171. Եւ դարձեալ՝ է *կոչի* աստուած, զի նա միա՛յն է տեսակ առանց նիւթոյ. և գոյ առանց պատահման: - 171. Իսկ Գոյացութիւն *կոչի* աստուած, ո՛չ ըստ որում ներհակ պատահմանց է ընդունական որպէս մեք. այլ ըստ որում բաժանի ընդդէմ պատահմանց. որ է՛ միայն պարզ գոյացութիւն որպէս ասացուք: - 171. Եւ ըստ բազում բաղդատութեան *կոչի* աստուած գոյ: - 171. Իսկ Որակ *կոչի*, որպէս բարի, լոյս, քաղցր, և գեղեցիկ: - 171. Ո՛ր ըստ որում շարժօղ զգայութեանցս որ առ մեզ՝ *կոչին* որակք՝ գոյն, և համ, և սոյնպիսիք: - 171. Իսկ Առինչ *կոչի*, ո՛չ որպէս առ մեզ առինչք են մակագոյեղքն. այլ գոյացական, կամ բաղդատական. որպէս ծնօղ. ծնեալ. բղխօղ. բղխեալ. կամ արարիչ և տէր արարածոց և ծառայից: - 172. Իսկ Երբ ո՛չ ասի աստուծոյ. զի անժամանա՛կ է և ո՛չ ունի փոփոխումն. այլ ասի յաւիտենական. ըստ որում բոլորն համանգամա՛յն է և կատարեալ. զի ոչ կարօտի սկզբան և վախճանի. որպէս ժամանակն. և ո՛չ միայն սկզբան որպէս մշտնջենաւորն. այլ անսկիզբն է և անվախճան. վասն որոյ *կոչի* յաւիտենական: - 172. Իսկ Հինգերորդ զի *կոչի* այբ. որ թարգմանի հայր: - 178. Վասն է՞ր առաջին գիրքն մովսէսի՝ Ծնունդ *կոչի* և Արարած: - 179. Երրորդ՝ զի արարած լսելով՝ մի՛ կարծեսցես օտար ի նմանէ զեղեալքս, *կոչէ՛* ծնունդ. և յորժամ ծնունդ լըւիցես, մի՛ կարծեսցես յէութենէն աստուծոյ զեղեալքս՝ ի վերայ բերէ արարած: - 179. Հինգերորդ՝ զի և քրիստոս որ եղև երկրորդ կտակ և օրէնք մեր, *կոչի* ծնունդ և արարած: - 179. Եւ ևս բազումք. զի աշխարհ *կոչի* աշխարհարարն. և աշխարհս. և մարդս ըստ հոմերոնի: - 179. Առաջինն է տարրական հրոյն վերին մասն. որ *կոչի* հրեղէն երկինք. հոմանուն առաջին երկնից: - 183. Այլ *կոչի* սա՛ հրեղէն, զի է՛ ի հրոյ: - 183. Երկրորդն՝ ներքին մասն հրոյն. որ *կոչի* օլօմպային երկին. վասն մերձ գոլոյ յօլօմպիոս լեառն: - 183. Երրորդն՝ է վերին մասն օդոյն. և *կոչի* եթերային երկին. զի մերձ ի տարրեղէն հուրն է. և վառի ի նմանէ. զոր թռիչ աստեղաց *կոչեմք*: - 183. Չորրորդն՝ է ներքին մասն օդոյն. և *կոչի* օդեղէն երկին...: - 183. Հինգերորդ՝ երկինք *կոչի* և դրախտն. զի բա՛րձր է և լուսաւոր և անմահութեան է վայր...: - 183. Սոքա հինգեքին *կոչին*

երկինք. զի զյատկութիւնս երկնից ունին. և սոքօք լինին հնգետասան երկինք: - 183. Նախ *կոչի* երկինք ամենասուրբ Երրորդութիւնն. զի անհաս բարձրութեամբ գերազանցեալ է յամենայն եղելոց: - 183. Այլ և նախ *կոչի* երկինք՝ զգալի երևումն աստուծոյ՝ և հրեշտակաց՝ և մարգարէից սրբոց: - 183. Չորրորդ՝ հոգևոր բարութիւնքն և վարձք սրբոցն *կոչին* երկինք...: - 183. Հինգերորդ՝ երկին *կոչի* ամենասուրբ Երրորդութիւնն վասն լուսաւորութեան և անհաս բարձրութեանն յամենայն եղելոց որպէս ասացաւ: - 184. Եւ զայս գիտել պարտ է. զի մեծն ներսէս զհաստատութիւնն՝ արփի ասէ և եթեր *կոչէ*. զոր արտաքինքն **ե**երորդ տարր ասացին որ ո՛չ երևի մեզ: - 184. Եւ է՛ առաջին և վերջին մոլորակացն Երևակն. զոր պարսիկք զօհալ *կոչեն*. ցուրտ է և չոր. **բ** ամ և կէս յամէ ի կենդանակերպն. և յերեսուն ամն վճարէ՛ զամենայն: - 189. Երկրորդ՝ Լուսնթագն. զոր մուշթարի *կոչեն*. ջե՛րմ է և գէճ. մին ամ յամէ՛ ի կենդանակերպն. և ի **ժբ** ամն պատէ՛ զամենայն: - 189. Չորրորդ Արեգակն. զոր շամս *կոչեն* ջե՛րմ է և լուսաւոր. **լ** օր և **ժ** ժամ և կէս յամէ՛ ի կենդանակերպն. և ի բոլոր տարին վճարէ՛: - 189. Հինգերորդ Լուսաբերն. որ է՛ արուսեակն. զոր *կոչեն* զօհրա. ջե՛րմ է և խոնաւ. **յխը** օրն կատարէ՛, զընթացսն. և այլք ասեն թէ ի **զ** ամիսն: - 189. Վեցերորդ Փայլածուն. զոր օտարիտ *կոչեն*. միշտ շրջի ընդ արեգականն. և սակաւ հեռանայ ի նմանէ. զընթացս իւր կատարէ՛ **յլը** աւուրս. **ժ** օր պակաս քան զլուսաբերն. և այլք թէ **գ** ամիս: - 189. Եօթներորդ Լուսինն. զոր կամր *կոչեն*. հո՛վ է և գէճ. **բ** օր և կէս յամէ՛ ի կենդանակերպն. և ի **իթ** օր և կէս պատէ՛ զամենայն: - 189. Զի տեսեալ մարդիկ զնոր և հին նորա՝ ասացին՝ մե՛զ ես օրինակ ծննդեան և մահուան. և *կոչեցաւ* ամիս: - 190. Եւ որքան ի վերին կիսագունդն տևէ՛, *կոչի* տիւ: - 190. Վասն է՞ր *կոչի* Տարի: - 190. Դարձեալ տանի զժամանակեայ կեանս մեր. վասն որոյ *կոչի* տարի: - 190. Իսկ շաբաթն որ է՛ **է** օր՝ *կոչեցաւ* յեօթն մոլորակաց: - 190. Զի հինքն զեօթն մոլորակսն՝ է տուն աստուածոց *կոչէին*: - 190. Յարեգական օրն *կոչեցին* կիրակէ. որ է՛ տէրունական վասն յարութեան տեառն: - 190. Զոր յամենայն ամի ժա թիւ ի վերայ լուսնոյն դնեմք, զի հաւասարեսցի արեգականն, և *կոչեմք* վերադիր: - 191. Եւ արա՛ զերեսուն մասն մի ժամ, և զերկոտասան ժամն մի օր. և *կոչի* այս՝ իննևժերեկի ամ. որ աւելու ի լուսինն մի օր: - 191. Ուստի յա՛յտ է՝ զի երեկոյ շաբաթուն որ *կոչի* կիրակմուտ՝ պատուակա՛ն է քան զմիւս գիշերն որ ըզհետազայ կիրակէին: - 194. Երկրորդն է՛ որդի. զորմէ ասի, «ո՞չ երկոտասան ժամք են աւուր». օր *կոչէ* զինքն. և ժամք զառաքեալքն: - 195. *Կոչի* աշուն, զի անշնչին: - 197. Զ՞ինչ է ծիածանն որ *կոչի* աղեղն: - 203. Եւ թէ յառաւօտուն իջանէ մինչ ի կէս օրն, արևելեան *կոչի*. և անտի մինչև յերեկոյն, արևմտեան: - 203. Եւ թա՛նձր ծանրութեամբն ի վայր բերեալ՝ *կոչի* կայծակ. և լինի յամառնային եղանակս: - 204. Վասն այն մասնկունքն նորա ո՛չ խստանան. այլ անգայտացեալ ի վա՛յր բերի և *կոչի* ձիւն: - 205. Եւ ի հիւսիսոյ հողմոյն որ *կոչի* ապարքտիաս՝ լինի պաղուցեալ: - 205. Այն որ յԱրևելից հնչէ, առ հասարակ Եւրոսք *կոչին*: - 205. Իսկ որ ի Հարաւո՛յ հնչէ, հասարակ Նօտոսք *կոչին*: - 205. Իսկ Արևմտիցն հասարակ Զեփիւռք *կոչին*: - 205. Իսկ Հիւսիսայինքն, Վաւռէք *կոչին*. որք են ցուրտ: - 205. Արևելայինքն որք *կոչին* Եւրոսք, բաժանին յերիս: - 205. Որ մերձ ի հիւսիս հնչէ, Կիկիաս *կոչի*. չո՛ր է և ցամաքեցուցիչ: - 205. Եւ որ մերձ ի հարաւ հնչէ, Եւրոս *կոչի*. գէ՛ճ է. և տաղատարա՛փ բերէ: - 205. Արևմտականք որք *կոչին* Զեփիւռք, են ևս **գ**: - 205. Որ մերձ ի հիւսիս է, Արգէստէս *կոչի*. կազմէ սա զամպս: - 205. Եւ որ մերձ ի հարաւ է, լիփս *կոչի*. անձրևաբե՛ր է: - 205. Հիւսիսայինք որք *կոչին* Վոռէսք: - 205. Այն որ մերձ յարևելս է, Վոռէա՛ս *կոչի*. նեղէ՛ զամպս, և կապէ՛ զանձրևս: - 205. Եւ որ մերձ յարևմուտս է, Թրասկիաս *կոչի*. առնէ ըզձիւնն: - 205-206. Հարաւայինք որք Նօտոսք *կոչին*, Այն որ մերձ յարևելս է, Եւրո՛ նօտոս *կոչի*. հալէ՛ զպաղս: - 206. Վասն է՞ր *կոչի* երկիր: - 210. Վասն է՞ր *կոչին* ծառ: - 214. Երկրորդ՝ *կոչին* ծառք, այսինքն ծուռք. զի ընդ դէմ են ձևոյ աշխարհիս և մարդոյն: - 214. Երրորդ՝ *կոչին* ծերք. զի ծե՛րք են և ի սկզբանէ՛ եղեալք յարարչադիր հրամանէն...: - 214. Նմանապէս և *կոչին* փայտ. զի ի փտելոյ և յապականելոյ գոյանան այսպէս. յորժամ բորբոսի երկիր՝ նա՛ զարմատն ի վայր արձակէ և զբոյսն ի վեր: - 214. Եւ սողունք *կոչին*, կամ զի սողալով գնան. կամ սղացեալ են ոտիւք. կամ զի սո՛ւղ են ձայնիւ: - 216. Արդ՝ եթէ ադամ ոչ էր *կոչեալ*՝ այլ կրտսեր թոռունքն, նախատինք էր նախահօրն: - 219-220. Իսկ ադամայ *կոչելն* փա՛ռք է որդւոցս: - 220. Զանուանս գլխաւորացն որպէս սեռ՝ աստուած *կոչեաց*. որպէս երկին. երկիր. լոյս. և այլն: - 220. Վասն է՞ր պօղոս զդրախտն երրորդ երկին *կոչէ*: - 221. Ա՛րդ՝ դրախտն ո՛չ զգայութեամբ և ո՛չ երևակայութեամբ՝ այլ իմացմամբ տեսանի. վասն որոյ երրորդ երկին *կոչի*: - 221. Յաղագս որոյ երրորդ երկին *կոչէ* պօղոս զդրախտն: - 221. Այլ և աւետարանն ի յառակս անառակին՝ երկին *կոչէ* զդրախտն. ուր մեղանչեաց և ելաւ...: - 221. Երրորդ՝ Մարդն աշխարհ *կոչի*: - 227. Ութերորդ՝ հողն ի յերկրէ առեալ, զի երկիւղալից է մարմինս մեր. վասն այն *կոչի* երկիր...: - 229. Հինգերորդ՝ զորօրինակ մեծատուն ոմն զոք ի ճաշ *կոչիցէ*, նախ պատրաստէ՛ զամենայն պէտս կերակրոց և ըմպելեաց. և ապա՛ մեծարէ՛ զկոչնականսն: - 230. Վասն է՞ր մարդն աշխարհ *կոչի*...: - 231. Զի նմա՛ն է մարդն բոլոր աշխարհի վասն այն աշխարհ *կոչի*: - 231. Որպէս և իմաստունքն

ասացին զամենայն երևելիս յարացոյց իմանալեացն. զոր գոյ և որակ *կոչեն*. և զնիւթս պատկեր գոյին. զի որակն և գոյք անմարմին են և աննիւթաբար ի մտածութիւնս երևին: - 236. Իններորդ՝ զի և ի հոգևորն՝ փոքունք զմեծամեծաց անուանս *կոչէին* ինքեանց ի մոլորումն մարդկան. որպէս սիմոն կախարդն ասէր զինքենէ՛ թէ քրիստոսն իցէ. մինչև յանդիմանեցաւ ի պետրոսէ: - 238. Նոյնպէս և երկրի է՛ է մասն տիեզերաց. զոր է կլեմ *կոչեն*: - 241. Եւ այս երակքս *կոչին* մէճասք: - 244. Եւ *կոչին* վերին երակն քալասիկ է. և միջինն ասայիկ է: - 244. Զի մի և նոյն հոգին ըստ այնմ որ ազդէ՛ ի տըՆկական ներգործութիւնն որ է՛ կերակրական. աճողական. և ծննդական. *կոչի* տնկական: - 259. Եւ ըստ այնմ որ ներգործէ՛ ի զգայարանս, *կոչի* զգայական: - 259. Եւ ըստ որում իմանայ և խորհի, *կոչի* բանական հոգի. որպէս այլուր բաժանի ի տեսողական զօրութիւնն. և յիմացականն. և ի յիշողականն. մնալով անբաժանելի ներգործէ՛ ի նոսա: - 259. Եւ է ամեայ ուսումն ստանայ. վասն որոյ մինչև յեօթն ամն երեխայ *կոչի*. զի **գ** մասունք են հոգւոյն. բան. ցասումն. և ցանկութիւն. ըստ պղատոնի: - 264. Եւ այսպէս ի ներքուստ ի վեր կրկնեալ եօթնից որ է չորեքտասան, կատարի ցանկական մասամբն և կարէ՛ զնմանն ծնանիլ և *կոչի* մանուկ: - 264-265. Եւ երիցս կրկնեալ **է**-ից մինչև ի **իա**, լինի կատարեալ արիական մասն ցասմնականին. և *կոչի* պատանեակ մինչև ի **իը** ամն: - 265. Այն որ աստուածայինն է տեսիլ *կոչի*. որպէս Աբրահամուն. Յակոբայն. Յովսեփայն. և Դանիէլին: - 268. Զիմաստութիւնն հոմանուն է և ի բազում տեսակս որոշի. և բնաւքն ամենայն՝ մտա՛ցն են ներգործութիւն. վասն այն *կոչի* իմաստութիւն որ է իմացութիւն: - 269. Եւ զայս իմաստութիւնս տէրն հաւատ *կոչէ*. և յոհաննէս լոյս. և սողոմոն իմաստութիւն: - 269. Եւ ա՛յս է պատճառն. զի լոյս հաւատոյն հեղումն է յաստուծոյ առ իմացումն մարդոյ. և ըստ որում իմացումն է մեր՝ իմաստութիւն *կոչի*: - 269. Եւ իմաստակ *կոչին*՝ որք միոյ արհեստի են գլուխ. որպէս քերականութեան. ճարտասանութեան. աստղաբաշխութեան. և այլք. որպէս պիհռոնացիք ակադիմեանքն. որք հակառակ *կոչին*: - 269. Վասն զի յաստուծոյ. առին և *կոչեցան* իմաստունք: - 269. Վասն որոյ չարքն անամօթ *կոչին*. իբր թողեալ զպատիւ մարդոյն՝ և անասնոցն նմանեալ: - 274. Իսկ *կոչի* կին: - 276. Վասն այսր պատճառի *կոչեաց* զանուն կնոջ իւրոյ կեանս. զի աճումն է և ծնունդն և մայր ամենայն կենդանեաց: - 276. Քսաներորդ՝ Ո՞րպէս զգեստ *կոչի* մարմինն: - 283. Եւ զանազանութիւն մովսէսի որ աստուած *կոչեցաւ*: - 284. Այսինքն տեսութեամբն գոչէ՛. կամ զիոգին *կոչէ* արեան անուամբ: - 287. Եւ սատանային յայտնի են **է** չար խորհուրդքն որ *կոչին* գլխաւոր մեղք: - 287. Որպէս ենովս որ յուսացաւ *կոչել* զանուն տեառն աստուծոյ. այսինքն յուսացաւ զիանդերձեալ կեանսն որ աներևոյթն էր. և վասն իւրաքանչիւր գործոց գոլ հատուցումն. և *կոչեաց* զանունն աստուծոյ ի յօգնականութիւն: - 288. Եւ ի հանդերձեալսն գոգ և հանգիստ արդարոց *կոչեցաւ* ըստ ղուկասու, թէ «ղազար էր ի գոգն աբրահամու»: - 288. Նմանապէս և մեծն ի մարգարէս աստուածախօսն մովսէս որ աստուած *կոչեցաւ* փարաւոնի. իշխելով տարերցս փոփոխման, որ ջրածինն էր՝ եղև վիմածին և կայծակնածին. որում լուսաւորեցան երեսք: - 288. Երրորդ՝ յուսացաւ *կոչել* զանուն տեառն աստուծոյ ի յօգնութիւն. զոր մարդիկ յուսահատեալ էին եթէ վասն մեղաց մերոց եթող զմեզ աստուած ի ձեռաց. և նա ի յօգնութիւն *կոչեաց* զանուն տեառն աստուծոյ...: - 289. Ապա ուրեմն ի դրախտն մտնի. զի դրախտն երկին *կոչի*: - 289. Ասեն աստեղագէտք եթէ՝ է դարուց կեցաղոյս վերակացուք են է աստեղքն որք *կոչին* մոլորակք: - 291. Եւ այս ևս գիտելի է, զի լեզու *կոչի* գործիք խօսիցն. և լեզու *կոչի* որակ խօսիցն: - 297. Որպէս այն՝ որ *կոչեմք* զգայութիւն զգալն և զգայարանս: - 297. Եւ բան *կոչի* ներտրամադրեալն՝ և յառաջ բերեալն: - 297. Զորս հրեշտակս *կոչէ* ո՛չ վասն առաքինութեան, այլ զի պատգամաբերք և թարգմանք եղեն աստուծոյ իմաստութեանն առ մեզ ի ձեռն լեզուաց գիտութեանն: - 297. **Եւ սահման *կոչէ* զլեզուս որ բաժանէ՛ ի միմեանց զազգս և զազինս. որպէս որք պարսպով և նշանիւ սահման դնեն և զանդս բաժանեն**: - 298. Մելքիսեդեկ զնորա դէմն առեալ՝ զնորա գործն էլից. օրհնեաց զաբրահամ՝ և սեմ *կոչեցաւ*: - 300. Զալէկոծեալսն մեղօք և զծանրացեալսն՝ աւա՛զ *կոչէ*. որպէս զորդիսն իսմայէլի: - 303. Հինգերորդ՝ զի իսահակ նախքան զծնանիլն *կոչեցաւ* անուն: - 305. Երրորդ՝ սառա *կոչի* առաքինութիւն. և մարիամ լուսաւորութիւն. և եկեղեցի ժողովք հաւատացելոց՝ գործով ունի զառաքինութիւն և զլոյս հաւատոյ: - 307. Եօթներորդ՝ ցնծութիւն եղև իսահակ ազգին իւրում. ըստ որում *կոչեցաւ* իսահակ որ է՛ ծաղր. և ճշմարիտ ցնծութենէ քրիստոս ամենայն հաւատացելոց...: - 307. Հայրն աբրահամ *կոչեաց* զանուն որդւոյ իւր իսահակ: - 307. Հայրն երկնաւոր *կոչեաց* զիւր որդին անդրանիկ: - 307. *Կոչեցան* և մկրտեալքն անուամբ նոր, «զոր տէր անուանեաց» ասէ մարգարէն: - 307. Եօթներորդ՝ ըստ ուսման. որպէս աշակերտք ծնունդք *կոչին* վարժողաց. եթէ ի մարմնականս. և եթէ ի հոգեկանս...: - 308. Եօթներորդ՝ անդրանիկք են իշխանք հոգևորք, վերակացուք և խնամողք այլ հոգւոցն. որպէս քահանայք, ուսուցիչք, և այլք. վասն որոյ երիցունք *կոչին*: - 309. Տասներորդ՝ ևս մեծագոյն խորհուրդ. զի բանն աստուած որ անդրանիկ էր հօր, եղև կրտսեր

մարդ ի ժամանակի և փոքր. ըստ որում *կոչեաց* զինքն «փոքրիկ». զի բնութիւն մարդոյս ընդ ինքեան խառնելով արասցէ մեծ և անդրանիկ: - 311. Ասեմք թէ յակոբ ո՛չ զներգործութեան անունն հարցանէր աստուծոյ, զի գիտէր որ աստուած էր և ինքն իսրայէլ *կոչեցաւ* որ է աստուածատես. այլ անուամբ զբնութիւնն և զգոյացութիւնն աստուծոյ կամէր ուսանիլ: - 311. Դարձեալ՝ ամենայն անուն որ *կոչի*՝ կամ նախ քան զինքն լինի յորմէ անուանի. որպէս հայրն *կոչէ*՛ զորդին իւր մարդ: - 312. Զի **գ** են եղանակք անուանց. այսինքն բնութենական որ ի նախնւոյն *կոչի*: - 312. Անձնական՝ որ ի հաւասարէն *կոչի*: - 312. Այլ թէ վերջինքս *կոչեմք* նմա անուն աստուած՝ արարիչ՝ և այլն. ներգործութեանն է ցոյցք և ո՛չ թէ գոյացութեան կամ բնութեանն է յայտնութիւն: - 312. Երեքտասաներորդ՝ յովսէփ ծածկելոց գիտօղ *կոչեցաւ*: - 313. Յորմէ վստահացեալ *կոչեն* զնա նովին անուամբն: - 315. Մետասաներորդ՝ յառնելոյն *կոչի* առիւծ. իբր առից գնացից անհոգ յայլմէ: - 315. Վասն է՞ր զգեստ *կոչի* մարմինն փրկական: - 318. Զի զգեստ *կոչի* արտաքին հանդերձն որ ծածկէ զմարմինն: - 318. Եւ զգեստ *կոչի* մարմինն որ ծածկէ զհոգին. ըստ որում մաշկեղէն հանդերձն ադամայ որ էր արտաքին զգեստ և նշանակէր զմարմինն: - 318. Նախ՝ *կոչի* մարմինն զգեստ՝ գոյացական՝ անփոփոխ և անքակ միութեամբն. զի բաժանմամբ մարմնոյն և բանին ո՛չ է քրիստոս. որպէս ի բաժանիլ հոգւոյ և մարմնոյ ո՛չ է մարդ: - 318. Երկրորդ՝ *կոչի* զգեստ նմա արտաքին և փոփոխական՝ հաւատացեալ անդամք քրիստոսի՝ եկեղեցի սուրբ...: - 318. Եւ բաց յայսցանէ. *կոչի* զգեստ բնակութեան լոյսն անմատոյց և խաւարն անգիտութեան...: - 318. Եւ այս ևս գիտելի է, զի տէրն մեզ *կոչի* զգեստ փրկութեան և պատմուճան ուրախութեան ի ձեռն մկրտութեան...: - 318. Եւ մեք նորա *կոչիմք* զգեստ, զի ընտանի անդամք և ոսկերք եմք մարմնոյ նորա: - 318. Իսկ գոյացական մարմինն քրիստոսի *կոչի* զգեստ վայելչական...: - 319. Այսպէս *կոչի* և զգեստ մարմնոյն...: - 319. Այսպէս ուղիղ իմացիր թէ ուրեք և տաճար *կոչէ* զմարմին. զի կրկին է տաճարն: - 319. Զի է՛ տաճար միաւորեալ. որպէս մարմինն մեր *կոչի* տաճար մեզ...: - 319. Նոյնպէս և տեառն մերոյ *կոչի* տաճար արտաքին բնակարան. որպէս կոյսն մարիամ, և հաւատացեալ ժողովուրդք, և շինուածք տաճարաց: - 319. Եւ *կոչի* տաճար մարմինն միաւորեալ ընդ բանին անբաժանելի: - 319. Նա՛խ՝ զի աստուծոյ է մարմին՝ *կոչի* տաճար իբր կարօղ սրբութեանց. և դարձեալ զի անշփոթ է միաւորեալ՝ *կոչի* տաճար: - 319. Է՛ և այլ իմն պայծառ տեսութիւն այսմ բանի. զի զգեստ և տաճար *կոչի* մարմինն ստուգապէս ո՛չ աստուածութեանն քրիստոսի՝ որ ո՛չ բաժանեցաւ ի մարմնոյն ոչ ի մահ և ո՛չ ի գերեզմանն: - 319. Այլ *կոչի* տաճար և զգեստ բանական հոգւոյն մարմինն իւրական որպէս ամենայն մարդկան: - 319. Նա՛խ՝ լերինք և բլուրք մշտնջենաւորք *կոչին* հրեշտակացն դասք բարձրացեալք յերկինս և անշարժութեամբ սերտեալք...: - 319. Երկրորդ՝ նահապետք և մարգարէք *կոչին* լերինք և բլուրք մշտնջենաւոր վարուք և անշարժ աստուածապաշտութեամբ: - 319. Եւ բաց յայսցանէ և արտաքոյ սոցա, Լեառն պարարտ *կոչի* սուրբ Երրորդութիւնն ի մարգարէէն: - 320. Եւ նախ *կոչիւր* յոքաբ, որ է՛ սիրելի աստուծոյ. և *կոչեցաւ* յոբ, որ է՛ հայր. զի հա՛յր եղև համբերութեան: - 320. Նա՛խ՝ որպէս հասարակ շինականք ի ծննդեան զաւակաց զմին օրն պատուեն աղարուք *կոչելով*: - 321. Այլ աշխարհին օսիդ՝ գաւա՛ռ է եսաւայ. զի օսիդն մի է յորդւոցն եսաւայ յորոյ անուն *կոչեցաւ* երկիրն օսիդ: - 327. Եւ է՛ ի մէջ արաբիոյ և եդոմայ. զոր այժմ *կոչի* թիլգուրան. ուր գերեզման նորա՛ է: - 327. Քսանբ, մովսէս աստուած *կոչեցաւ* և իշխէր տարերաց: - 329. Եւ տէր մեր է՛ր աստուած և *կոչեցաւ* էմմանուէլ. և իրօք զգործս աստուծոյ ցուցանէր: - 329. Քսանև**զ**, մովսէս որդի *կոչեցաւ* դստերն փարաւոնի և փրկեաց զնա: - 329. Փարաւոնի դստերն մառի *կոչէին*. որ արար զմովսէս իւրն որդէգիր: - 330. Եգիպտոսի իշխանին քսանթիս *կոչէին* որ չարչարիչն էր իսրայէլի...: - 330. ...և նա՛ *կոչի* հրեշտակ մեծի խորհրդոյ ըստ մեծին եսայեայ...: - 330-331. Է՛ որ զէութիւնն փոխէ. որպէս մովսէս զգետն յարիւն դարձոյց և զգաւազանն յօձ. և այս *կոչի* սքանչելիք: - 335. Եւ է՛ որ զկերպն և զձևն միա՛յն փոխէ, և *կոչի* առաչօք. որպէս յանէսն և յամրէսն առնէին կախարդութեամբ դիւական: - 335. Եւ անուն փարաւոնի որ ընկղմեցաւ՝ փեսիոս. և ոմանք կանաքարիս *կոչեն*: - 337. Զոր տեսեալ ժողովրդեանն նոր՝ ասէին ցմիմեանս, զինչ է սա. և *կոչեցաւ* մանանայ: - 338. Նա՛խ՝ զի *կոչի* «զի՞նչ սա՛». զի ամենայն հարցանելոյ լուծումն գոյ և պատասխանի...: - 338. Այլ և զմանանայն հաց հրեշտակաց *կոչէ* մարգարէն դաւիթ: - 338. Եւ խաչիւն քաւեաց զմեզ. վասն որոյ սուրբ խաչ *կոչի*: - 345. Կարկեհան՝ որ կայծ *կոչի*. հրագո՛յն է. գտանի յափրիկէ. ի գիշերի որպէս հուր վառի: - 348. Եւ բաց յայսցանէ **բ** ակն յանդիմանութեան զոր անդամանդեայ *կոչէին*, և էր ի պճղնաւոր զգեստին ի վերայ ուսոց քահանայապետին յորժամ մտանէր ի սուրբն սրբոց երիցս ի տարւոջն, ի տօնի զատկին և յիսներորդացն և ի քաւութեանն: - 349. Եօթներորդ՝ յօրինակ բանին մարդեղութեան գրեցաւ բանն ի տախտակի, և նա՛ *կոչեցաւ* վէմ կարծրացեալ աստուածութեամբն փոխանակ հողացելոյն ադամայ: - 349. Զի՞նչ զանազանի որ մովսէս՝ աստուած և տէր *կոչեցաւ*: - 350. Ճշմարիտն աստուած՝ բնութեամբ և գործով

և անուամբ *կոչի* աստուած և տէր: - 350. Նոքա ո՛չ հաւասար մովսէսի ներեն զքրիստոս աստուած. զի մովսէս աստուած *կոչեցաւ*. և զնա մարդ խոստովանին սոսկ: - 350. Յինգերորդ՝ խնայեաց ի նա՛ տէր ո՛չ ցուցանել զերեսս իւր. այն *կոչեաց* զնա՛ տէր և արար զաչս նորա տէր և պատժօղ: - 352. Գառն օրինա՛կ էր քրիստոսի. զի *կոչեցաւ* գառն աստուծոյ. ա՛յլ զգալի գառն ո՛չ եղև: - 357. Եւ նախ ասեմք զանկենդանն որ *կոչի* զոհ. որ է՛ մասնաւոր նւէրք. որպէս նաշիհ և իւղ և խունկ: - 357. Եւ այլ **բժ**ան հաց ի վերայ առաջաւոր սեղանոյն **զ զ** հաց զոր սրբութեան հաց *կոչէին* շաբաթէ ի շաբաթ եղեալ: - 359. Եւ ըստ այնմ զկուռս *կոչէին* աստուած՝ դատապարտութիւն էր նոցա: - 361. Եւ քրիստոս *կոչեցաւ* եզն պարարակ զօրաւոր և արդիւնարար: - 361. Խոյ *կոչեցաւ*. զի ծնաւ և զգեցոյց զմեզ. և փեսա՛յ է եկեղեցոյ: - 361. Իսկ Աղ *կոչեցաւ*. զի զանհամութիւնս մեր համեմեաց, և զվէրս ողջացոյց: - 361. Ոմանք ասեն թէ՝ **ռ** ամն յաւիտեան *կոչի*: - 369. Երրորդ՝ որպէս ինքն զգալի աստեղս թըւէ՛ և յանուանէ՛ *կոչէ*, նոյնպէս և զիմանալի՛սն ետ թուել: - 377. Վասն է՞ր *կոչեցաւ* վրան ժամու: - 379. Անդրանկաց սատակումն եգիպտոսի, նշանակէ՛ զանկումն սատանայի յերկնից. և փոխանակ նոցա ընտրեալ և *կոչեալ* որդի անդրանիկ զիսրայէլ. և զնոսա փոխարկեալ առնու զօծելոց դասս քրիստոնէից ի տեղի նոցա: - 380. Եւ վէմ *կոչի*, Նա՛խ՝ զի ադամ հողացաւ մեղօք. և քրիստոս վէմ անմեղութեամբն: - 386. Եւ նոցա մանանայ յերկնից ետ և տրտնջէին և սնոտի՛ հաց *կոչէին*: - 386. Երկրորդ՝ զի ասէ «իբրև զիս». իբրևն օրինա՛կ է. որպէս մովսէս աստուած *կոչեցաւ*, և տէր մեր էմմանուէլ. և զնա՛ հայր կնքեաց աստուած. և որպէս մովսէս իշխէր տարերաց, և տէր ի ծովուն գնայր, և ի վերայ օդոյն: - 399. Երրորդ՝ նոր օրէնքս անուամբ հնոյն նորոգեալ *կոչեցար* իսրայէլ: - 402. Չորրորդ՝ որդին բնութեամբ. և շնորհօք նորածնեալք աւազանաւն որդիք աստուծոյ *կոչին* շնորհօք: - 402. Վասն է՞ր *կոչի* աւագ օրհնութիւն. զի յակոբ ևս օրհնեաց զորդիսն. նոյնպէս և իսահակ. և այլն: - 407. Նա՛խ՝ *կոչի* աւագ, զի մովսէս երէ՛ց է և առաջին քան զամենայն մարգարէսն: - 407. Երկրորդ՝ զի միայն մովսէս *կոչեցաւ* աստուած. և ո՛չ անուամբ միայն, այլ և գործով իշխէր ի վերայ տարերաց ի վեր և ի խոնարհ. վասն այն աւագ օրհնութիւն *կոչի*: - 407. ...իսկ յորժամ սպասաւորեաց հրեշտակապետն՝ զտիրական անունն ի սաստ *կոչելով*. յայնժամ ամպ ինչ լուսաւոր ծագեալ ի տեղւոջն, շիջոյց զերևումն չարին: - 410. Ութերորդ՝ և ոմանք զմարմինն մովսէսի զժողովուրդն *կոչեն* յելսն եգիպտոսի. որ հակառակէր ազատելոյ զնոսա յեգիպտոսէ՛: - 410. Ո՞րքան *կոչին* անուանք արարչին ի գիրս մովսէսի: - 412. Իններորդ՝ սպանմանն աբէլի գործիք եղև որպէս ասեն. ուստի գայլախազ *կոչեցաւ*. զի սրբեսցի դրոշմաւն: - 415. Մետասաներորդ՝ առաջինն կին մերժեցաւ և երկրորդն մերձեցաւ որ *կոչիւր* դալիլա: - 422. **Եփուտն հոմանուն է. քանզի *կոչի* ուսանոց. և *կոչի* վիճակ**: - 425. Եօթներորդ՝ *կոչի* սաւուղ, որ է՛ ընտրեալ հայեցումն. և տէր մեր հայեցումն և ակնկալութիւն է ամենայն արարածոց: - 427. Վասն է՞ր *կոչի* հաց սուրբ: - 427. Նոյնպէս և հաց պիղծ *կոչի* խմորումն և հասարակացն: - 427. Չորրորդ՝ ընդէ՞ր հաւանեցաւ աստուածս *կոչել* զինքն և երկրպագել նմա. զի նա մա՛րդ էր: - 429. Իսկ թէ մարգարէութիւն էր և զլինելոցն ասէր, ապա ո՛չ էր աստուած. սուտ *կոչեցաւ* անունն ի վերայ: - 430. Երկրորդ՝ *կոչի* դաւիթ որ է՛ սիրեցեալ և բաւական ձեռօք. և տէր մեր սիրեցեալ ի հօրէ և ի մարդկանէ իբր զորդիս մի եղջերոյ. և նա՛ է բաւական յամենայն գործս և ի պարգևս: - 435. Երրորդ, նա՛ հովիւ հօտից. և տէր մեր հովիւ *կոչեցաւ* իմանալեացն վերնոց և մարդկան մոլորելոց: - 435. Յինգերորդ, նա՛ փոքր և կրտսեր եղբարցն. և տէր մեր երկրորդ ադամ. և փոքրիկ *կոչեցաւ* քան զհրեշտակս և առաւել պատուեցաւ: - 435. Եօթներորդ, զառաջինն օծաւ ի բեթլէհէմ. և տէր մեր ի ծնունդն *կոչեցաւ* օծեալ ի հրեշտակին: - 435. Չորեքտասաներորդ, ցպով և պարսաքարով ել ընդ դէմ գողիաթու. և տէր մեր խաչիւ որ վէմ *կոչեցաւ*, և ի ձայն բարձր աղաղակեաց և արձակեաց զհոգին: - 436. Յիսուներորդ, *կոչեաց* զանունն աւար դաւթի. և այս ազատութիւն քրիստոսի: - 437. Եւ այսպէս աստուածահայր *կոչի* դաւիթ օրինակ յովսեփու: - 439. Առաջին, զի *կոչեցաւ* յաստուծոյ սիրեցեալ սիրելի: - 440. Չորրորդ՝ *կոչեցաւ* իմաստուն: - 440. Եւ տէր մեր յերկրի մարդացաւ, և յերկինս թագաւորեաց. իսկ նստիլն ի վերայ ջորոջ, որ է խաչն. զի վիրք զխաչն ջուարի *կոչեն*: - 441. Քսանգ, **տիկինն սաբայ որ *կոչիւր* նըսա, ցանկացաւ իմաստութեանն սողոմոնի**: - 441. **Եւ ի պահպանութիւն աշխարհին հրէից՝ առաքեաց սաղմանասար յերկրէն ասորւոց պանդուխտս որ բնակեցան ի սամարիայ և սամարացիք *կոչեցան***: - 447. Ձոր աւետարանիչն ռեքաբ *կոչէ* : - 452. Ի սամարիայ **ժ** ազգին տիրէ՛ րոբովամ որդին նաբատայ. որք *կոչեցան* թագաւորք իսրայէլի չարք և ո՛չ բարիք: - 452. Որք *կոչեցան* թագաւորք յուդայ. և ոմանք ի սոցանէ բարիք: - 452. Երեքտասաներորդ, Յիսուս *կոչի* և փրկիչ: - 454. Երբեմն արդարութիւն *կոչի* բանն միածին. ըստ որում «արդարացոյց զմեզ»: - 457. Եւ անդրադարձեալ. երբեմն ողորմութիւն *կոչի* որդին. զի ողորմեցաւ մեզ: - 457-458. Վեցերորդ, մայր մարդոյ ասի կինն որ ծնաւ զմանուկ. թէպէտ հոգին ո՛չ է ի մօրէն. այլ վասն միաւորեալ մարմնոյն մարդածին *կոչի*: - 466. Աստ գիտելի է, որպէս միածին *կոչի* անմարմնաբար և ըստ մարմնոյ: - 472. Եւ զառաջինն *կոչի* անդրանիկ՝ յորժամ եղև ի

բազում եղբարս. լինելով մարդ և որդի մարդոյ: - 472. Երրորդ՝ *կոչի* անդրանիկ ըստ հոգւոյն շնորհաց. զոր նախ ընկալաւ իբր գլուխ՝ և եհեղ յանդամքս իւր: - 473. Յիսուս *կոչեցաւ* յիրէ՞ն թէ ի գործոյն: - 473. Վասն որոյ *կոչի* Օծեալ և Քրիստոս: - 474. Յետ այսորիկ երկրորդ միաւորութիւն սովորեցաք *կոչել* թէպէտ և ո՛չ իսկապէս՝ և զանհամանիւթից ոմանց. և կամ զիամանիւթից մարմնոց յարադրութիւն. որոց ընդ մէջ է մակերևութիւն միայն: - 476. Հինգերորդ՝ միաւորութիւն սովորեցաք *կոչել* յորժամ նիւթ ինչ աննիւթով կերպարանեալ տեսանի տեսակաւ: - 476. Չորրորդ՝ թէ և ի մասնէ՛ *կոչեմք* երբեմն ի հոգւոյ կամ ի մարմնոյ...: - 477. Իսկ ի միաւորութիւն փրկչին բոլորից՝ բանն անդրանիկ *կոչի* և ի բազում եղբարս. և մարդն միածին հօր...: - 479. Վեցերորդ՝ ի յանմարմին բնութիւնն ո՛չ *կոչէր* իգական. այլ արական որդի. իսկ թէ ի մարդեղութիւնն լինէր իգական, փոփոխումն էր դիմացն և սերիցն: - 480. Եօթներորդ՝ գիրք սուրբք մարդեղութիւն ասեն բանին. այլ մարդն կոչումն յատուկ արական է և ո՛չ իգական թէ և հասարակաց *կոչի*: - 480. Տասներորդ՝ քրիստոս փեսայ *կոչի* և եկեղեցի հարսն հոգևոր. և նա՛ գլուխ և մեք անդամք և ժառանգակիցք: - 480. Այլ մեզ այսպէս իմանալի է. զի թշրինի մէկն նուիրեալ օր սուրբ տեառն *կոչեսցի* ասացաւ. որ է՛ սեպտեմբերի **ժը**: - 483. Զոր օրինակ՝ անցեալ լինի մին ժամն յաւուր՝ կիրակէ *կոչի*. թէպէտ իգ ժամն պակա՛ս է: - 484. Երկոտասաներորդ՝ յա՛յտ է յանւանէ ամսոյն որ *կոչի* յունվարի. և յունվար ի հոռոմն թարգմանի ծննդեան ամիս: - 484. Եւ այլք ասեն՝ դրախտ զտեսութիւն աստուածութեանն *կոչէ*. զոր յետ աւանդելոյ հոգւոյն ետես աւազակն. և այս ուղիղ է. զի ո՛չ ասաց թէ՝ իցեմք, այլ թէ՝ իցես: - 495. Զի որ ասի մահ, նոյն և նինջ *կոչի* ի սուրբ գիրս...: - 496. Դժոխ՝ զդժուար զնեղ և զանձուկն նշանակէ. և *կոչի* բազմաւոր, Նախ վասն բազում կրիցն. ուր լալ աչացն է և կրճել ատամանց և խաւար ներքին և արտաքին և այլն: - 505. Դարձեալ ասեմք, ներքին դժոխք է հոգւոցն. և վերին՝ գերեզման մարմնոցն. և նա *կոչի* դժոխք ի սուրբ գիրս...: - 505. Դարձեալ՝ առ հասարակ կարծիք, *կոչի* ներքին դժոխք յատակ դժոխոցն...: - 505. **Իսկ միջին դժոխք որ *կոչի* բանտ դժոխոց՝ է՛ միջակ մեղաւորաց. որք ունին հաւատ և ո՛չ գործք. որպէս չար հաւատացեալք. կամ գործ և ո՛չ հաւատ. որպէս թերահաւատք և անհաւատք**: - 505. **Իսկ վերջին դժոխք որ *կոչի* անջրդի գուբ, նոցա՛ է որք ո՛չ ունին չար և ո՛չ բարի. որպէս մանկունք անմկրտեալք. ո՛չ տանջին զի չեն մեղանչեալ. և ո՛չ հանգչին զի չեն արդարացեալ. այլ վասն սկզբնականին մնան յանջրդի գուբն խաւարին**: - 505. Իններորդ՝ յա՛յտ է յօրինակէն. զի եգիպտոս հալոց երկաթի *կոչի*. նշանակէ՛ զդժոխքն որ տանջէր զհոգիսն: - 507. Եւ վասն այս չափ ազգակցութեան՝ քոյր աստուածամօրն *կոչեցաւ*: - 517. Որ և այժմ յոյնք և ասորիք պենտակոստ *կոչեն* որ թարգմանի **ե** երորդ և ո՛չ **է** երորդ: - 524. Երեսունեզ, Ո՞րն է է ազգն զոր պորտ *կոչեմք*: - 526. Զոր տէրն օրէնք *կոչեաց* զմարգարէական բանն դաւթի...: - 528. Եկեղեցի սուրբ նոր ժողովուրդ *կոչեցաւ* աստուծոյ. զի հաւատով արդարացաք և եղաք ժողովուրդք և ո՛չ ըստ հնոյն օրինօք: - 528. Դարձեալ՝ ծննդեամբ աւազանին *կոչեցաք* նոր որդիք աստուծոյ և եղբարք քրիստոսի համահայր և համամայր: - 528. Իսկ թէ ուրեք առաքեալք և մարգարէք հիմն *կոչին*, քանզի նա՛խ նոքա ժողովեցան ի հաւատս և եղեն հիմունք եկեղեցւոյ, և ապա՛ զայլս ժողովեցին: - 532. Զ՞ինչ է որ քրիստոս գլուխ *կոչի* և եկեղեցի անդամք: - 532. Նոյնպէս մի է քրիստոս և մի մարմին նորա. որ *կոչի* մի կաթուղիկէ եկեղեցի. որպէս ի հաւատամքն ասի: - 532. Իսկ յատուկ, զի նա՛ *կոչի* ժողովարան. և մեք ժողովեալք: - 533. Եւ դարձեալ նա՛ *կոչի* դուստր. և մեք հարսն երկնաւոր փեսային: - 533. Այժմ ասասցուք թէ ո՞րպէս *կոչի* մի եկեղեցի յայտնապէս ի կարճոյ: - 533. **Մի *կոչի* եկեղեցի՝ ո՛չ տեղեաւ մի. այլ միով հաւատով և յուսով կոչմանն. և միոյ մօր և մի որովայնի ծնունդ աւազանին. և մի կերակուր որ է տեսութիւն աստուածային գրոց. և մի մարմին և արիւն փրկական. և մի գլուխ և պսակ և զգեստ ունիմք զքրիստոս:** - 533. Երկրորդ, մի անուն՝ և նշանակեալքն բազումք. որպէս խոյ է յերկինս և յերկրի և ի ծովս. նոյնպէս մի *կոչի* եկեղեցի կենդանի մարդն և շինեալն ի քարանց և եկեղեցին անդրանկացն յերկինս. սակայն զանազա՛ն են որպիսութեամբ: - 533. Չորրորդ՝ եկեղեցի է անդրանկացն վերինն սիոնի որ է հոգիք սրբոցն ժողովեալ. զոր պողոս եկեղեցի *կոչէ* զորդիս արդարոց կատարելոցն: - 534. Այս թէ ո՞րքանաբար *կոչի* եկեղեցի: - 534. Վասն է՞ր երբեմն իգական հարսն և դուստր *կոչի* եկեղեցի. և երբեմն արական որդի: - 534. Հարսն *կոչի* վասն երից: - 534. Իսկ և որդի *կոչի* վասն երից: - 534. Ո՞րպէս *կոչի* հարսն և դուստր: - 534. Ընդ քրիստոսի միաւորեալ. որպէս փեսայն որդի է, և հարսն դուստր *կոչի* աստուծոյ հօր: - 534. Որպէս և առ մեզ է. զի կին որդւոյն դուստր *կոչի* հօրն վասն մի մարմնոյն: - 534. Եւ կին վասն գոլոյն որում փեսայ *կոչի*: - 534. Այլ և եպիսկոպոսն վերատեսուչ և դէտ *կոչի*: - 534. Իսկ մորուս *կոչին* մարգարէք և առաքեալք և հայրապետք մերձ բերանոյն առ մեզ խօսելով զպատգամս օրինացն աստուծոյ: - 534. Իսկ գրապան՝ վարդապետք և քահանայք պահապանք ժողովրդեանն. որք բոլորակի զգեստ *կոչեցան* քրիստոսի: - 534. **Երկրորդ՝ որպէս հանուրն նախադասի մասնականաց, այսպէս առաքեալքն հանուրց աշխարհի լոյս *կոչեցան*.** և մարգարէքն

**միոյ ազգի**...: - 535. ...վասն այն ո՛չ *կոչին* ճշմարիտ մարգարէ պարզաբար. այլ բաղադրեալ. որպէս մարգարէ բահաղու. կամ մարգարէ բարձանց կամ անտառին: - 536. **Ստուգաբանութեամբ *կոչի* կանոնն քանոն. այսինքն ուղղութիւն և կարգ և օրէնք: - 538. Իսկ մեկնութեամբ *կոչի* սահման**: - 538. Երկրորդն է ժողովն թէոդուպօլսի, որ այժմ *կոչի* կարնոյ քաղաք. ո՛չ այն զոր յետոյ հերակլ քաղկեդոնիկ ժողովեաց և խաբեաց զեզր կաթուղիկոսն հայոց: - 544. Եւ գլուխ *կոչի* վասն երից: - 546. Եւ ա՛յս է պատճառն որ ոմանք յեօթանասանիցն ասեն. զի եօթանասուն աշակերտացն գլուխ և վարդապետ էր. որպէս պետրոս երկոտասանիցն. և առաջինքն ամենայն ուրեք յետնոցն անուամբ *կոչեին*. այս է ստոյգ պատճառն: - 549. Ութերորդ՝ զի արևելեանք *կոչին* հայք: - 555. Դարձեալ՝ որ ինչ նախ քան զօրէնս գործեին՝ մեղք *կոչիւր*. որպէս ի դարս նոյի. և այլս: - 555. Վասն այն այլ վարդապետք *կոչեն* զայս ախտ՝ ծուլութիւն. զի ծուլութիւնն յերկու իրաց երևի. մին որ յետս դառնայ ի հոգևոր բարւոյն և ծանրանայ ի գործելն. այսինքն պահել՝ աղօթել և այլն. և ըստ այսմ *կոչի* տրտմութիւն: - 559. Եւ միւս՝ որ դառնայ ի հեշտալին որ է՛ հանգիստ մարմնոյ. ըստ որում *կոչի* ծուլութիւն: - 559. Այսպէս և զայլն ամենայն յաւելու անչափութեամբ. վասն որոյ ախտ և մեղք *կոչին* առ մեզ: - 564. Եւ *կոչի* ներելի, իբր ներելի և թողլի. զի ակամայ և անգիտութեամբ հանդիպի: - 567. Եւ *կոչի* մահացու, զի պարտական առնէ զմարդն յաւիտենից մահուն: - 567. Եւ այսպիսի ասացեալ տկարութեան մեղաց առողջութիւն է բժշկարան է զօրութիւնք որ *կոչին* առաքինութիւնք. որ են այսորիկ: - 571. Եւ սոքա երեքեան *կոչին* աստուածային առաքինութիւնք: - 571. Եւ սոքա *կոչին* մարդկային առաքինութիւնք: - 571. Յաւատն և յոյսն և սէրն վասն է՞ր *կոչին* աստուածայինք: - 571. Այս թէ վասն է՞ր *կոչին* աստուածայինք: - 571. Վասն է՞ր զանազան անուամբ *կոչին* չորեքին առաքինութիւնքս այս: - 581. Նա՛խ՝ *կոչին* մարդկային առաքինութիւնք: - 581. Դարձեալ *կոչին* ծառայականք, զի և ի խառնուածոյ մարմնոյն գոյանան. որք ո՛չ հետևին միմեանց. զի որ ի խառնուածոյն ողջախո՛հ է, նա ո՛չ խոհեմ կամ արդար կամ արի կարէ գոլ: - 581. Եւ այսպիսիքս *կոչին* ծառայականք. զի ի հարկէ խառնուածոյ մարմնոյն լինին ողջախոհ կամ արի և այլն: - 581. Դարձեալ *կոչին* անբանք. զի ո՛չ գիտեն զպատճառն: - 581. Դարձեալ *կոչին* և բարոյական և տնտեսական և քաղաքական առաքինութիւնք. որպէս ասացաւ ի վերոյ ի ճառս խոհեմութեան: - 582. Դարձեալ *կոչին* յանձնառականք. որ ի պատուիրելոյ ումեք գոյ ողջախոհ. այլ զպատճառն ո՛չ գիտէ. նաև ո՛չ հետևին միմեանց: - 582. Իսկ վեցերորդ *կոչին* մակստացականք. այսինքն ի վեր ստացեալ աշխատութեամբ. որք հետևին միմեանց իբրև գչարս շղթայից: - 582. Սոքա ամենեքեան երանելիք ասին. զի որդիք աստուծոյ *կոչեսցին*: - 585. իսկ կանանց ազգին պատուիրէ՛ առաքեալն ի ժամ աղօթիցն շուք դնել գլխոյն վասն հրեշտակաց. այսինքն վասն քահանայից որ հրեշտակք *կոչին* ի գրոց...: - 590. Մեղքն ադամայ այն է որ զարդարութիւն կորոյս. և մեղօք և ցանկութեամբ ծնաւ զորդին. և այն մեղքն սկզբնական *կոչի*. և ո՛չ թողցի եթէ ոչ ի մահն քրիստոսի մկրտեսցի: - 591. Այսպէս ջրովն մկրտիմք ի քրիստոս և որդիք աստուծոյ *կոչիմք*. և իւղովն ի շնորհք հոգւոյն սրբոյ միաւորիմք: - 593. Առաջինն է կաթողիկոսն. զոր եպիսկոպոսապետ *կոչէ*: - 608. Երկրորդն Սարկաւագն և Դպիրն և Գղերիկոսն. զայսոսիկ հոմանուամբ պաշտօնեայ *կոչէ* : - 608. Երրորդն Միայնակեացք. որք *կոչին* կամարարք: - 608. Եւ սուրբ ժողովուրդն՝ և երեխայն որ դեռևս մկրտի, զայսոսիկ նւիրեալք *կոչէ* : - 608. Ո՞րն է է ազգն զոր է պորտ *կոչեմք*: - 611. Դարձեալ՝ բանն աստուած փեսայ *կոչի* հարսին եկեղեցւոյ. և զօտար բնութիւնս մարդկան միաւորեաց ընդ ինքեան: - 612. Որ և զեկեղեցւոյ անունս աստուած *կոչեաց* յառաջագոյն: - 613. Կամ ի զանազան դիմաց և ազգաց. որպէս այր, կին, ծեր, տղայ, ժողովեալ *կոչի* մի եկեղեցի: - 613. Ութերորդ, սմա անուն *կոչի* եկեղեցի. այսինքն զոր կամիս լիցի. և դուստր սիօնի: - 614. Այլ և սա՛ մայր *կոչի* հոգևոր ծննդոցս. և մեք մայր և ծնօղ հոգևոր զաւակացս բարեաց: - 614. ...զի և մեք եկեղեցի *կոչիմք* որպէս ասացաք ի վերոյ: - 615. Ասի ի լրոյ եթէ՝ նոյ արար փայտէ՛ կոչնակ. և *կոչեաց* զկենդանիսն ի տապանն: - 618. Այլ մովսէս օրինադրեաց ի թիւքն առնել կրկին փողս արծաթի. և *կոչեաց* զնոսա փողս ազդեցութեան. որպէս դեռևս գոն ի դրունս թագաւորաց կրկին փողք: - 618. Երրորդ՝ զի երիցս գոչէ փողն. նախ զհոգիսն ի յերկնից *կոչէ*. և ապա՛ զմարմինս ի հողոյ. և ապա՛ յարուցեալ զհոգի և զմարմին ի դատաստան հրաւիրէ: - 618. Իսկ զոր կանոն գլուխ *կոչեմք*, ասելով **զ** գուբղայ հանդարտ ի թիւ. և զեօթներորդն ձայնիւ: - 627. Իսկ **ը** երրորդն օրհնութիւն *կոչի*: - 627. Յամբոյր աւետարանին, *կոչելն* միայն զպետրոս յանուանէ: - 628. Եւ կանոնն սահման *կոչի*. որպէս թուղթն պօղոսի: - 631. Թովմաս առաքեալն ի թաղումն տիրամօրն է ասացէալ. որպէս գրեալ է ի գիրս որ կանոնական լրմունք *կոչի*: - 633. Ապա՛ աքիլեւս, զատուցանէ՛ զկողմն երկրորդ ձայնին որ *կոչի* աւագ կողմն: - 640. Եւ զերրորդ ձայնին որ *կոչի* վառ: - 640. Դարձեալ՝ դաւիթ աստուածահայր *կոչի*...: - 643. Երրորդ, աստուածահայր *կոչեցաւ*, պա՛րտ է առաւել զինչս հօրն ծախել ի տունս եկեղեցւոյ: - 643. ...վասն զի ի մէջ մարգարէիցն աստուածաբան *կոչեցաւ*. - 644. Երրորդ՝ զշաբաթս

հանգիստ *կոչեաց* աստուած. - 647. Որպէս յաղուհացս զառաջին շաբաթն թէոդորոսի *կոչեմք*. և զմիւսն դազարու. կամ այլ ինչ: - 650. ...վասն որոյ պահքն յանուն նոցա *կոչի*: - 650. և վասն այն առաջաւոր և առաջապահք *կոչի* և առանց գրոյ: - 650. Եւ դարձեալ՝ առաջաւոր *կոչի*, զի սա՛ է առաջին շաբաթ մեծի պահոց աղուհացիցն...: - 650. Կերակուրն մինչ ի զ ժամն *կոչի*. և անտի յառաջ ընթրիս: - 656. Դարձեալ՝ մատաղն ստեր և օրինակ է ճշմարիտ պատարագին քրիստոսի որ գառն աստուծոյ և եզն պարարակ *կոչեցաւ*...: - 657. Դարձեալ՝ ճշմարիտ պատարագն քրիստոս՝ Նախ կենդանի աղ *կոչեցաւ*...: - 657. Նախ ճանապարհ *կոչի* ծնունդն. որով ի կեանս գամք ըստ հասարակութեան ընթացից մարդկան: - 665. Երկրորդ՝ ճանապարհ *կոչի* կուսութեան և անմեղութեան. - 665. Երրորդ՝ ճանապարհ *կոչի* շնորհաց և մաքրութեան...: - 666. Չորրորդ՝ ճանապարհ *կոչի* աստի կեանքս...: - 666. Հինգերորդ՝ ճանապարհ *կոչի* բարեպաշտութեան հաւատոց...: - 666. Վեցերորդ՝ ճանապարհ *կոչի* օրինացն և պատուիրանաց...: - 666. Իններորդ՝ ճանապարհ *կոչի* և մահն որով ի հանդերձեալն ընթանամք...: - 666. Տասներորդ՝ ճանապարհ փառաց և երանութեան *կոչի* տէր մեր. զի առաջնորդէ՛ առ հայր...: - 666. Այսպէս և նոքա կատարեցին զճանապարհ կենցաղոյս և զբարեաց գործոց. վասն որոյ վախճանեալ *կոչին*: - 666. *Կոչի* կարգ, Նախ զի քրիստոնէից մին կարգ՝ ննջեցելոց կատարումն է ի վերայ է խորհրդոցս. ութերորդ խորհուրդ և կարգ. վասն ութերորդին կենաց: - 671. Երկրորդ *կոչի* կարգ, զի զիւրաքանչիւր ոք յիւրում կարգին յօրինեմք և կատարեմք...: - 671. Երրորդ *կոչի* կարգ, զի զոր ինչ մեք առ մարմին ննջեցելոցն կատարեմք, զնոյն կարգ և հրեշտակք առ հոգիսն կատարեն այժմ և ի յարութեանն աւուր: - 671. Եւ տանին առ աւագ երէցն զոր քահանայապետ *կոչէ* սուրբն դիոնէսիոս...: - 671. Եւ *կոչի* պատանք, զի պատեալ և կապեալ է զամենայն զգայարանսն. և ոչ ինչ կարէ գործել. ո՛չ չար և ո՛չ բարի: - 671. Իսկ դիրք *կոչի*. զի ի նմա՛ դնի մարմինն իբր ի յանօթ ինչ: - 678. Իսկ հանգիստ *կոչի*, Նա՛խ՝ զի հանգեաւ յաշխատանաց մարմնոյն. այլ և ի չար գործոց: - 679. Վասն է՞ր *կոչի* գերեզմանն դժոխք...: - 679. Արդ տանուտէր աստ *կոչէ* զաստուած, և այգի է եկեղեցի. և գաւառապետ *կոչէ* զքրիստոս. և առաւօտ յաբելէ առաջին արդարոյն. և երեկոյ օր դատաստանին յորժամ ընտրեալքն ամենայն ժողովին...: - 692. Արդ այժմ ի մկրտութիւնն հաւատն նշան դնի հարսին. և յետ մահու յուսով *կոչի* ի հարսանիս. և յետ յարութեանն սիրով միաւորի ընդ փեսային: - 693. ...և *կոչելն* զմահն ասէ. և վարձ՝ իսկոյն զփոխարէնն: - 696. Իսկ *կոչելն* զյառնելն ի մեռելոց ցուցանէ. հոգւոյն և մարմնոյն միաւորեալ: - 696. Երբայեցերէն *կոչի* արնաւիմէ. այսինքն ուրանամ: - 707. Եւ այս գիտելի է, զի անուն նեռին ջնջեալ և կորուսեալ է ի սուրբ գրոց. վասն այն զանազանապէս *կոչեն* զնա՛: - 707. Զի տէրն պղծութիւն *կոչէ* զնա և սուտ քրիստոս: - 707. Եւ յօհաննէս՝ նեռն *կոչէ*: - 707. Երկրորդ՝ բաժանիլ հոգւոյ ի մարմնոյ. և սոքա *կոչին* առաջին մահ: - 710. Չորրորդ, տանջանքն յաւիտենից մահ է մշտնջենաւոր. և սոքա *կոչին* երկրորդ մահ: - 710. Այսինքն զի աստուածք և տեարք *կոչին* յերկինս հրեշտակացն դասք, և թագաւորք յերկրի...: - 711. Նա՛խ՝ զի առաջին փող էին մարգարէքն *կոչելով* յօրինակն: - 713. Եւ միջին փող առաքեալքն *կոչելով* ի ճշմարտութիւնն: - 713. Վերջին փող է հրեշտակացն որ *կոչէ*՛ ի դատաստան: - 713. Նախ *կոչելով* զերկինս ի վերուստ որ են հոգիքն. և զերկիր որ են մարմինք: - 713. Եւ իշխանք են առաքեալք և մարգարէք որ փողք են տիեզերաց, նախ զնոսա *կոչէ*: - 713. Նա՛խ՝ զի *կոչեսցէ* յերկնէ զհոգիս սրբոց և յերկրէ զմարմինս...: - 714. Զի թէ զչգոյն *կոչէ* ի գոյ և լսեն նմա, քանի՞ առաւել զգոյն ի գոյից ժողովէ՛ և նորոգէ: - 714. Եւ դարձեալ ոմանք ասացին թէ՝ ի յարութեանն մարմինք մարդկան օդային լինին կամ հողմային. զի երբեմն ի գրոց հողմ և օդ հոգի *կոչի*: - 720. Նախ *կոչի* աքոռ նշանակ հանգստեան. որպէս հասարակաց մարդկան: - 736. Բայց զոր ինչ մեզ փառաւոր երևի՝ զնոյն և աստուծոյ փառս *կոչեմք*: - 736. Դարձեալ, ծորն յովսափաթու *կոչի* ծոր դատաստանի. այսինքն է կալն ուռնայի, ուր դաւթի խոստացաւ անդ առնել դատաստան. յորժամ սեղան շինեաց և պատարագեաց զեզինսն և բարձաւ մահն: - 737. Ուր ինքն տէրն խաչեցաւ և յարեաւ. և սոքա ամենեքեան ծոր յովսափաթու *կոչին*, որ յերկու ծորի մէջն է յերուսաղէմ: - 737. Չորրորդ, զի նա՛ արդարութեամբ հաստուցանէ ի կատարածի. վասն որոյ *կոչի* կշիռք արդարութեան: - 746. Նախ՝ *կոչի* սիրտ և անձինք մեղաւորաց, ուր ժողովին ամենայն գործք չար որ է՛ խաղող դառնութեան. և ունակացեալ պահէ յինքեան. և հեշտութեամբն ճմլէ հանապազ և արբենայ մեղացն գինով: - 748. Երկրորդ՝ *կոչի* հնձան ցասմանն աստուծոյ...: - 748. Երրորդ՝ *կոչի* հնձան դժոխքն. ուր ամբարիշտքն ժողովին և ճմլին...: - 748. Եւ այսպէս երեքին սոքա *կոչին* չարացն հնձան: - 748. Նախ *կոչի* հնձան նախածանօթ տեսութիւնն աստուծոյ. ուր ընտրէ՛ և ժողովէ՛ զսուրբս իւր յառաջ քան զլինիլն իւրեանց. - 748. Երկրորդ *կոչի* հնձան արքայութիւնն երկնից. ուր ժողովին պսակք և փառք զանազան հանգստեան սրբոց զոր պատրաստեալ է աստուած սիրելեաց իւրոց ըստ առաքելոյ: - 748-749. Եօթներորդ, *կոչի* հնձան եկեղեցի սուրբ. ուր ամենայն առաքինութիւնք մեր ժողովին. ու ճմլէ ապաշխարութեամբ և բաշխէ՛ զգինի շնորհաց...: - 749. Ութերորդ՝

հնձան *կոչի* և աւազանն սուրբ...: - 749. Իններորդ՝ *կոչի* հնձան և խաչն փրկական. յորում ողկոյզն անապական ճմլեցաւ և ետ մեզ ուրախարար գինի զանապական արիւնն իւր...: - 749. Մետասաներորդ, հնձան *կոչի* և հաւատն սուրբ. զի ի նա՛ հաւաքի ամենայն բան և գործք մեր. և ճմլեալ այսինքն քննեալ՝ լինի գինի ուրախարար աստուծոյ և հրեշտակաց: - 749. Երկոտասաներորդ, հնձան *կոչի* և վերջին օր դատաստանին. զի անդ հաւաքին ամենայն բարիք և չարք և գործք նոցին. և չարքն ճմլեալ արտաքսին ի տանջանս, և բարիքն ի կեանս: - 749. Արքայութիւն աստուծոյ *կոչի* որդի վերին արքային: - 754. Արքայութիւն *կոչի* և աստուածային գիրք: - 754. Եւ վասն այն *կոչի* եկեղեցի արքայութիւն, զի որ ի ներկայիս եկեղեցւոյ արքայութիւն առնէ և գործէ՛, ունի զվախճան մեծի փառաց: - 754. Դարձեալ, արքայութիւնն երկնից երբեմն *կոչի* ընթրիս՝ վասն անճառ բարեացն վայելմանն: - 757. Երբեմն արքայութիւն *կոչի*՝ վասն պատուականութեանն: - 757. Այսպէս *կոչեսցին* արդարքն ծառ կենաց: - 766. Այսպէս վասն երկնային և իմանալի տնկոցն որ *կոչին* ծառ կենաց. ունելով յինքեան զկեանս և բաշխելով այլոց ամենեցուն զխնամս: - 767. Չորրորդ՝ ծառ կենաց *կոչի* տէր մեր յիսուս քրիստոս...: - 768. Մեր գործքն և յաստուծոյ տուեալ բարին հաւատով կնքի. և պակասն յանդիմանի այժմ ի խղճէ մտաց որպէս ի գրոյ. և անդ ի դատաւորէն, որ չար ծառայ *կոչէ*: - 769. Զայս պօղոս վահան *կոչէ:* - 770. Այլ զբանիս խրթնութիւն առնէ կոչմանցն անորոշութիւն. զի *կոչի* շնորհ իջեալն պարգև. որպէս մարգարէութիւնն: - 783. *Կոչի* և շնորհ գործ նորին. որպէս մարգարէանալ: - 783. Իսկ եթէ ոչ են վարձատրելի, ապա զիա՞րդ վասն նոցա անհնազանդութեանն անհնազանդ *կոչի* և ինքն որդի հօր: - 784. Նախ բնական առարկութեամբ ըստ փիլիսոփայիցն հասողութեան. և սա՛ *կոչի* գիտութիւն: - 784. Երրորդ, ներգործութեամբ ի տեսութիւնս աչաց. սոքա *կոչին* հաւատ անտեսակ: - 784. Եւ դարձեալ, ի կատարածի՝ կենդանեաց և մեռելոց է խոստովանիլ զոր սանդարամետք *կոչէ*: - 785. Նոյնպէս և քարինք արձանացեալք հաստատութիւն է երկրի. զոր աշխարհ *կոչեմք* ի մասնէ՛: - 788

**ԿՈՉԵՑԵԱԼ +** Տասներորդ՝ զի յաստուծոյ էր *կոչեցեալ* նա ի քահանայութիւն: - 50. Եւ որպէս գիծն *կոչեցեալ* այբ՝ ի բազում վանգս բաժանեալ. և մնացեալ մի: - 106. Հինգերորդ՝ նշանակէ զչորեսին աւետարանիչսն. մարդն զՄատթէոս՝ զմարդեղութիւն բանին ցուցեալ առիւծն զՄարկոս՝ արիաբա՛ր աւետարանեալ. «և էր ընդ գազանսն» ասէ. եզն զՂուկաս՝ յերկարաձիգ պատմութեամբ. և եզն պարարակ *կոչեցեալ*. արծուին ըզՅօհաննէս՝ ի վերուստ զբանն աւետարանեալ: - 132-133. Հինգերորդ՝ *կոչեցեալ*. որ է՛ ա՛յբ: - 177. Ուստի բազմացեալ լցին զարևելս ի պալի. յորմէ թագաւորք պարսից և հայոց արշակունիք *կոչեցեալ*: - 330. Այլ և նաշիհ. զի հաց կենդանարար և հատ ցորենոյ *կոչեցեալ*. ճնշեալ չարչարանօք և որոշեալ ի թեփոյ մեղաց: - 361. Քանի՞ առաւել որք յաստուած՝ և ի մովսէս մեղան որ աստուած *կոչեցեալ* էր և իշխան ժողովրդեանն: - 381. Եօթներորդ, աստուած *կոչեցեալ* էր՝ զի յայտնեսցի տկարութիւն մարդոյ: - 386. Երկրորդ՝ զի աստուած էր *կոչեցեալ*, ո՛չ էր պարտ պակասիլ զգայութեանցն: - 411. Չորրորդ՝ մարիամ յակոբայ և յովսեայ մայրն, որ էր կին յովսեփայ *կոչեցեալն* աստուածահայր: - 517. Եւ թէոփիլեանք ոմանք *կոչեցեալք*, արարին զերկու ստեղունս ասացեալ. և այսպէս աւարտեցաւ ժ ձայնքն: - 640. Որ և մեր նստելով իբր ի մետաղս կամաւոր դիպահօջ՝ շահապօնս *կոչեցեալ* ամրոցի: - 788. Յորում ամի եղև ծռատօն զատկաց ազգի *կոչեցեալ* յունաց. ի վերոյ ասացեալն աւուր նորոյս տէրունեաց: - 789

**ԿՈՉՆԱԿ +** Ասի ի լրոյ եթէ՝ նոյ արար փայտէ՛ *կոչնակ*. և կոչեաց զկենդանիսն ի տապանն: - 618

**ԿՈՉՆԱԿԱՆ +** Հինգերորդ՝ զորօրինակ մեծատուն ոմն զոք ի ճաշ կոչիցէ, նախ պատրաստէ՛ զամենայն պէտս կերակրոց և ըմպելեաց. և ապա՛ մեծարէ՛ *զկոչնականսն*: - 230

**ԿՈՉՈՒՄՆ +** Եւ սոքա սոսկ մարդ դաւանին, և աստուած ասեն միայն *կոչմամբ* և անձամբ: - 34. Այսպէս սոքա *կոչմամբ* և ձայնիւ միաւորեն, և իրօք և բնութեամբ բաժանեն և որոշեն: - 82. Զի անձն առանց բնութեան՝ *կոչումն* միա՛յն է ո՛չ էութիւն: - 84. Երրորդ՝ զի թէ միայն անձամբ միանայ և ո՛չ բնութեամբ, ապա քրիստոս անձամբ և *կոչմամբ* միա՛յն է որդի աստուծոյ և ո՛չ բնութեամբ: - 84-85. Եւ կամ լինի մի քրիստոս ըստ *կոչմանն*, և գ ըստ էութեանն: - 90. Այսպէս և նեստոր մի ասէր զքրիստոս ո՛չ ըստ իրին միութեան, այլ ըստ անուանն համաձայնութեան. որպէս հոմանուն ձայն մի ունելով *զկոչմունս*, և զանազան բնութիւնս ի ներքոյ մի անուանն: - 90. Նա՛և մասն զբոլորին *կոչմունքն* ստանայ: - 92. Այլ և այսպէս ասելն՝ բոլորին *կոչմունքն* լինի մասնաւորին: - 92. Երկրորդ՝ ասեմք եթէ ամենայն մասունք է՛ ի գոյացութենէ բոլորին. և որ ունի զնոյն գոյացութիւն, ունի զնոյն *կոչումն*: - 92. Երրորդ՝ զի ո՛չ է նման առ մեզ և առ նա մասն և բոլորն. զի թէպէտ մասունք մարդոյ՝ ո՛չ ունին *զկոչմունս* բոլորին, սակայն մասունք մարմնոյն քրիստոսի՝ կոչին և ունին զբոլորին էութիւն: - 92. Այսպէս և *կոչումն* երից անձանցն. հա՛յր. որդի՛. հոգի՛: - 105. Եւ զայլ մասնաւորապէս զբացայայտութիւն *կոչմանց* ամենայն դասուց՝ գտցես յայլուրեք...: - 136. Եւ թէ ոք ասիցէ, վասն

էր մարդիկք հրեշտակք կոչին. նաև հրեշտակք աստուած՝ որ վերնոցն են *կոչմունք*: - 136. Երկրորդ՝ տառն որ է *կոչումն* գրոյն. որպէս ասեմք այբ: - 177. Եւ այլքն ըստ կարգի մարգարէիցն *կոչման*: - 200. Երկոտասաներորդ՝ *կոչման* կամ տեսութեան: - 209. Ձի ի *կոչումն* անուան՝ չորքս այսորիկ երևին միանգամայն. բանն և խօսքն և ձայնն և տեսութիւնն. այսորիւք զմարդն կատարեալ երևեցոյց աստուած: - 219. Այլ մեղքն նուազէ՛ զկեանքն և ո՛չ տայ հասանիլ ի կէտ *կոչմանն*: - 291. Դարձեալ՝ նշանակեն զերիս *կոչմունս*. մարգարէիւք և առաքելօք. և զվերջինն ի կատարածի հրեշտակօք: - 449. Իսկ շաղադրեալն միաւորութիւն՝ և սա՛ բաժանի յերիս. այսինքն ըստ դրութեան. ըստ ժողովման. ըստ *կոչման*: - 476. Իսկ ըստ *կոչման*, որպէս քրիստոնեայք. մկրտեալք. ծառայք. և ստեղծեալք: - 476. Եօթներորդ՝ գիրք սուրբք մարդեղութիւն ասեն բանին. այլ մարդն *կոչումն* յատուկ արական է և ո՛չ իգական թէ և հասարակաց կոչի: - 480. Տեսակն է *կոչումն* սուրբ Երրորդութեանն որ եղև անդ: - 487. Եւ մեզ հայր է *կոչմամբ*՝ և աստուած բնութեամբ: - 518. Մի կոչի եկեղեցի՝ ո՛չ տեղեաւ մի. այլ միով հաւատով և յուսով *կոչմանն*...: - 533. Ա՛րդ՝ մի է ամենայն ընդհանուր եկեղեցիք որ է բոլոր քրիստոնեայք ըստ հաւատոյն և *կոչմանն* յուսոյն որպէս սեռիւ: - 533. Եւ զայս ցուցանէ նոյն ձև բանին որ է *կոչմունք* Երրորդութեանն. և նոյն դաւանութիւն հաւատոյն և այլն: - 590-591. Վեցերորդ՝ Վասն գերեզմանին. և ի հող քաղելն. և *Կոչումն* գերեզմանին: - 660. Առաջին՝ *կոչումն* սիրական որ ասէ «եկա՛յք»: - 740. Այսպէս բաղդատի *կոչումն* կշռոյ եթէ ունէք հաճոյ մարթասցի: - 745. Գիտելի է, զի հոմանուն է արքայութեան *կոչումն*. և չորիւք եղանակօք ասի: - 754. Այլ զբանիս խորհնութիւն առնէ *կոչմանցն* անորոշութիւն. զի կոչի շնորհ իջեալն պարգև. որպէս մարգարէութիւնն: - 783. Եւ ո՛չ այս միայն, այլ և ի *կոչմանն* զօրութենէ առ որդւովքն սկսեալ հալածեին նոքա: - 784

**ԿՈՊԱՐ +** Ասեմք թէ՝ կարողութիւնն է ի դիտաւորութիւն. և դիտաւորութիւնն է ի *կոպարն* որ է մին հացն. որ ասաց «այս է մարմին իմ». ապա ուրեմն ո՛չ կարէ զբազում հացս օրհնել: - 597. Իսկ մինչև՝ անդ ո՛չ է *կոպար* ժամանակի. այլ յաւիտենի: - 704

**ԿՈՊԻՏ** - Չորրորդ պակասութիւն է՝ զի այժմ է՛ մարմին մեր թանձր և *կոպիտ.* այլ յայնժամ բառնի այս ի մարմնոյ և լինի անօսր և թափանցիկ. զոր ոչ պարիսպ կամ բանտ ըմբռնել կարիցէ: - 722

**ԿՈՍՏԱՆԴԻՆ** - Եւ **ծ** ամն՝ որ առ որդւով նորին *կոստանդեաւ* յերկնից լուսափայլեալ ի լեռնէն ձիթենեաց մինչև ի սուրբ գողգոթա: - 294. Իսկ **է**երորդ ժողովն եղև ի թագաւորութեանն միւս *կոստանդեայ*. որոյ մայրն եռինէ: - 544. Երրորդ ժողովն է դվնայ, ի չորրորդ ամի թագաւորութեանն *կոստանդեայ* հռոմոց. հրամանաւ մեծի կաթողիկոսին հայոց ներսէսի շինողի. և այլ է և **ժ** եպիսկոպոսաց՝ և վարդապետաց բազմաց և իշխանաց...: - 544

**ԿՈՍՏԱՆԴԻԱՆՈՍ** - Առաջին ժողովն եղև ի նիկիայ սրբոց հարց. զկնի **յժը**՝ կամ **յլ** ամի ծննդեանն քրիստոսի. և ի **ի** ամի թագաւորութեանն *կոստանդիանոսի*: - 542. **Ասեմք առ այս՝ թէ լուսաւորիչն գնաց ի հռոմ ո՛չ վասն ձեռնադրութեան, այլ վասն սիրոյ և միաբանութեան երկուց ազգաց և ուղղափառ թագաւորացն տրդատայ և *կոստանդիանոսի*:** - 548. Եւ յառաջ տրդատ հաւատաց և ապա՛ *կոստանդիանոս*: - 549

**ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ** - Մետրոփանոս *կոստանդնուպօլսի* Աղէքսանդրոս աղէքսանդրու: - 542. Երկրորդ՝ յետ կե ամի եղև *կոստանդնուպօլսի* ժողովն ի չորրորդ ամի թագաւորութեանն թէոդոսի մեծի: - 542. Եւ Պատրիարգունք էին անդ, Ներսէս հայոց. Կիւրեղ երուսաղէմի. Դամասոս հռոմայ. Նեքտառիոս *կոստանդնուպօլսի*: - 542. Եւ յովսէփ փալանացի, և եզնակ կողբացի թարգմանիչք, դարձեալ էին յաթենայ և եկեալ ի *կոստանդնուպօլիս*. լուան զժողովոյն և գնացին ի քաղկեդոն. զի չէր յոյժ հեռի ի ճանապարհէն որով գային ի հայս...: - 543. Ի թագաւորութեանն յուստիանոսի եղև դարձեալ **ե** երրորդ ժողով ի *կոստանդնուպօլիս*: - 543. Արար **զ** երրորդ ժողով՝ ագաթոն պապն հռոմայ. ի թագաւորութեան հօրն յուստիանու ի *կոստանդնուպօլիս*: - 543. Եւ պատրիարգունք էին անդ, Գէորգէոս *կոստանդնուպօլսի*. Թէոփիլոս անտիոքու. Պետրոս աղէքսանդրի: - 543. Եւ պատրիարգունք էին անդ... Տարասոս *կոստանդնուպօլսի*: - 544. և հաստատեցին զկանոնսն երից սուրբ ժողովոյն որ ի նիկիայ՝ ի *կոստանդնուպօլիս*՝ և յեփեսոս: - 544. Եւ յաւուրս մեծին թէոդոսի **ճճբ** որ ի *կոստանդինուպօլիս* ընդ դէմ հոգէմարտին մակեդոնի: - 547. Զոր յետոյ մեծն կոստանդիանոս զայս աթոռս յեփեսոսէ՛ ի *կոստանդնուպօլիս* փոխեաց: - 549. Եւ մինչ ի ժողովն *կոստանդնուպօլսի* զա՛յս ասացին: - 635. Որպէս ասեն երբեմն ժամանակի ի *կոստանդնուպօլիս* հռչակեալ քաղաքի, մոլորեալ յոյնք ի մոլորեալ երիտասարդէ՛ միոջէ՛, բարձին յեկեղեցւոյ զերգ երեքսրբեանն: - 775

**ԿՈՍՏԱՍ** - Աւազակն որ յաջմէն խաչեցաւ՝ դէմաս էր անունն. և որ յահեկէն՝ *կոստաս*: - 495

**ԿՈՏՈՐԵՄ +** Ա՛րդ՝ եթէ մնայ հինն ընդ նորոյն հանապազ. նա՛ ծանրանայ. և ո՛չ կարէ զայն քան ամաց

բազմութիւն պտղոցն կրել, և այսպէս լինին ամենայն ծառքն *կոտորեալ* և ապականեալ...: - 224. Եւ յորժամ *կոտորեաց* զթագաւորսն քոդող գոմորայ, եցոյց թէ թագաւոր թագաւորա՛ց է: - 300. Երկրորդ՝ զի **խ** քաղաք առին ի բենիամենէ՛ յուդայի ցեղքն վասն շնութեան կնոջն պատահելոյ. և *կոտորեցին* զնոսա առ հասարակ ի **եռ** արս. և մնաց վեց հարիւր այր զոր յետոյ ըստացան ժառանգութիւն իւրեանց. որպէս յա՛յտ է ի դատաւորաց վերջքն: - 312. Երրորդ՝ *կոտորեալ* մանկունքն բեթլէհէմի ո՛չ էին ի զաւակացն հռաքէլի որպէս ցուցաւ ի վերոյ: - 312. Եւ քաքար՝ պատա՛ռ պատառ *կոտորեալ* և ի տապակի եփեալ իւղով: - 357. Նա՛խ՝ անդ զիարքն թուեաց որք *կոտորեցան*. և աստ զորդիսն որք ժառանգէին զերկիրն: - 392. Եւ ո՛չ *կոտորեաց* զամենայն թագաւորսն: - 412. Զբահաղու մարգարէսն *կոտորեաց*: - 413. Զթագաւորսն քանանացւոց *կոտորեաց* թուով **իթ**: - 414. Վասն է՞ր ոչ *կոտորեաց* զամենայն թշնամիսն: - 416. Եօթներորդ՝ զի և այլք *կոտորեսցեն* զնոսա յետոյ: - 417. Եօթնեժ՝ յեսու կանգնեաց զգայիսոնն ի գայի, մինչ *կոտորեցան* թշնամիքն. որպէս մովսէս տարածմամբ ձեռաց զամաղէկ: - 418. Եւ **յ** արքն ընդ նմա ցամաք մնացին յարենէ մադիանացւոցն որ *կոտորեցան*: - 421. Եւ նա՛խ՝ զի ո՛չ ճանաչեաց վիուկն զսաւուղ աստի՛ յայտ է...: - 428. Ապա թէ ոչ՝ ի միում աւուրն **եճ** և **կռ** կամէր *կոտորել* այսու համարով. և ոչ ինչ մնայր ի ժողովրդենէն: - 435. Եւ այն զի դաւիթ միայն ետես *զկոտորող* հրեշտակն, զի միջնորդեսցէ: - 435. Տե՛ս, զի յորժամ *կոտորեաց* զիռսն՝ ասացաւ հրեշտակին արգելուլ զսուրն: - 435. *Կոտորեաց* սաւուղ զքահանայս վասն դաւթի. և հերովդէս զմանկունսն բեթլէհէմի: - 437. Վասն է՞ր զմարգարէսն բահաղու *կոտորեաց*: - 444. Նա՛խ՝ զի մի՛ զարհուրեսցի երուսաղէմ տեսեալ զսուրն որ *կոտորեաց* զնոսա: - 446. Առ երկրորդն ասեմք թէ, ըստ ուրացութիւնն պետրոսի՝ սիրտ ամենայն առաքելոցն տրտմեցան և *կոտորեցան*. և ի զղջումն նորա ամենեքեան հաստատեցան վերստին: - 547. Եւ երկաթ՝ բանն որ *կոտորէ* զախտ ստորադասեալ: - 645

**ԿՈՏՈՐՈՒՄՆ +** Նոյնպէս և երբեմն յուզել ուրախութեանց. ի փեռեկեալ թոքոյ ի *կոտորումն* շնչոյն, ի թաղանթէ՛ որ առ լերդաւն՝ հիւթ ինչ ծաւալի առ նոյն ասացեալ տեղի. ելեալ գոլորշեացն նմանապէս առաջնոյն. և լինի քաղցրագոյն արտօսր. վասն ասացեալ հիւթոյն ի քաղցրորակն անօթոյ: - 787

**ԿՈՐ +** Երրորդ՝ ի նոյն իսկ ի ձևոյ շինւածոյ մարդոյն. զի ուղիղ գոլով՝ զիշխանականն նշանակէ. իսկ կենդանիքն *կո՛ր* գլխով զծառայականն ցուցանեն: - 220. Եղունկն *կոր* և դար, բթամիտ և յափշտակօղ է: - 247

**ԿՈՐԱԳԼՈՒԽ +** Զի թէ *կորագլուխ* էր որպէս այլ կենդանիքն, խափա՛ն լինէր զգայութեանցն և պակասումն գիտութեան: - 233. Զի թէ *կորագլուխ* էր մարդն, և երկոքին ձեռքն ի յերկիր հաստատեալ, ո՛չ կարէր գործել: - 233

**ԿՈՐԱԿՆԵԼ +** Որ արագ ըսթանայ և զսպէ զինքն՝ և զերեսն *կորակնէ՛* և զբոլոր մարմինն կծկէ՛, երկնչո՛տ է և ըռիշտ և աղուեսաբարոյ: - 247

**ԿՈՐԱՆԱՄ +** Զի յետ անկմանն եղև խստացեալ և անզեղջ ի չարն. *կորացեալ* ի ճշմարտութենէն. անկեալ ի բարւոյն. տկարացեալ ի զօրութենէն. արտաքսեալ յաստուածային խոկմանէն: - 146. Վեցերորդ՝ զի ի միտ ածցուք զառաջին փառսն մեր և ցանկասցուք. և մի՛ որպէս զանասուն յերկիր *կորասցուք*: - 188. Եօթներորդ՝ վասն զգայութեանցն, որ ամենեքին յառաջ հեղուն յուղեղէն, և ազատապէս տեսանեն և իմանան. զի թէ գլուխն և ուղիղն ի վա՛յր էր քարշեալ և *կորացեալ*՝ ո՛չ կարէր ուղղակի զգալ և իմանալ. որպէս այլ կենդանիք: - 233

**ԿՈՐԴՒԱՑ ԼԵԱՌՆ -** Ասեն թէ՝ գոն ա՛յլ հոմանուն մասիս և արարատ. որպէս *կորդւաց լեառն* և ի պաղէստին և ի գամիրս: - 294

**ԿՈՐԵԱԿ +** Եւ դարձեալ՝ որպէս զանազան սերմանիք ցորեան *կորեակ* և այլք՝ հասարակ ի մի վայր սերմանին. և հասարակ ջրով և ջերմութեամբ սնանին. և ի յազգս իւրեանց կատարին. ցորեանն ի ցորեանն և այլն: - 719

**ԿՈՐԶԵՄ +** Վասն որոյ էջ ի դժոխս՝ և *կորզեաց* զհոգիսն ի բերանոյ գազանին: - 128. Եւ տէր մեր զապաւինեալ հեթանոս *կորզեաց* ի սրոյ յաւիտենական մահուն: - 418. Քսաներորդ, սամփսոն ի մէջ գիշերի զփակեալ դուռսն *կորզեաց* և էհան ի լեառն: - 423. Մետասաներորդ, ի բերանոց գազանաց *կորզէր* զհօտս. և տէր մեր փշրելով զժանիս մեղաւորին, *կորզեաց* զհաւատացեալս իւր: - 436. Յինգերորդ՝ զադամաստեղծ ձեռս իւր տարածեաց տէրն ի վերայ խաչին. և արտաքս ընկէց զչար իշխանն. և *կորզեաց* զմարդիկ յիշխանութենէ նորա: - 503

**ԿՈՐԻԶ +** Եւ ո՛չ *զկորիզն*, զի ի բաց ընկենլի՛ է: - 389

**ԿՈՐԻՒՆ +** Նախ՝ ոչ կարել վասն նուազութեան զօրութեան ժամանակի և դիմի. որպէս ո՛չ կարէ մանուկ կռուիլ՝ և *կորիւն* տեսանել: - 44

**ԿՈՐԻՒՆ (անձնանուն)** - Եւ արջևան և *կորիւն* թարգմանիչք բերին ի հայս: - 658

**ԿՈՐԽ** - Եւ որպէս *կորխ* դադան և աբիրոն վասն հակառակութեանցն ընդ մովսէս և ահարոն՝ հրով և բացմամբ երկրի դատապարտեցան: - 288. *Կորխ*՝ յազգէ ղևեայ էր զքահանայութիւնն խնդրէր: - 381. Արդ քահանայութիւնն երկնային է. վասն այն *կորխ* յերկնից հրովն այրեցաւ: - 381. Իսկ *կորխ* ի քահանայս մեղանչեաց: - 381. Այլ որ զուղիղն ասեն ա՛յս է, *կորխ*՝ եցոյց զօրինակ զղջման. զի լուաւ խրատուն մովսէսի և մնաց ընտրութեանն աստուծոյ ի դուռն խորանին: - 382. որպէս յա՛յտ է ի սաղմոսն ասափայ և *կորխայ* և այլոցն. - 636

**ԿՈՐԽԱՑԻՔ +** Յիսունք, Վասն *կորխեանցն*. և ծաղկեալ գաւազանին: - 284. Եւ զպղինձն ի բուրվառացն *կորխեանց* մծ իցն. յորմէ արար զնուարտանն ծածկոյթ պղնձի սեղանոյն. նշան յանդգնութեան նոցա: - 344. Վասն է՞ր *կորխեանքն*. և դադանեանքն ընկղմեցան: - 381. Վասն է՞ր *կորխեանքն* սրբեցան հոգւով. և դադանեանքն կենդանի ի գերեզման իջեալ տանջեցան: - 381. Եւ այլք ասեն թէ՝ *կորխեանքն* այրեցան մարմնով, վասն այն հոգւով սրբեցան. և բուրվառք նոցա սրբեցան: - 381-382

**ԿՈՐԾԱՆԵՄ +** Դարձեալ ասեն, եթէ ոչ է հարկ՝ ընդէ՛ր ոմն քաղաք *կործանի* և ոմանք ո՛չ. և ոմն նաւ հեղձանի, և ոմանք ի կռիւս անկանին: - 12-13. Ասեմք առ այս, եթէ այսու վկայե՛ս և դու մեզ՝ թէ ո՛չ է հարկ. զի ի բոլոր քաղաքն այնքան բիւր մարդիկ՝ ծեր և տղայ՝ ե՛րբ և ո՛ւր ի մի շարժումն աստեղաց ծնան, որք ի միասին *կործանեցան*...: - 13. Իսկ «երրորդ մասն», ասէ սուրբն մեթոդէոս եթէ՝ զապստամբ հրեշտակս ասէ որք զթիւ երկնաւոր դասուցն սխալեցին. զի մինչ ո՛չ էին *կործանեալ*՝ դ կարգ էին իւրաքանչիւր դասուցն. որպէս յա՛յտ է ի չորեքկերպեան կենդանեացն: - 152. Իսկ բանսարկուն սատիէլ՝ զմի յերից մասանցն զչորրորդն քարշեաց ընդ ինքեան և *կործանեաց* յերկնից...: - 152. Իսկ դևք զանհաստատսն մտօք՝ ի ստորևս քարշեն և յերկիր *կործանեն* զերկրաւորս խորհելով. և ընդ ինքեան ի յատակս դժոխոց մերժեն: - 152. Տասներորդ՝ ի փորձութեան լեառն զպատճառն ամենայն անիծից *կործանեաց*. և զառաջին անէծս յօրհնութիւն փոխեաց: - 320. Եւ հողմ *կործանեաց* զտունն և սպան զորդիսն ի սեղանի: - 321. Եւ տէրն բազկատարած ի խաչին զսատանայ *կործանէր*: - 329. ...զի ի մովսէս օրինակաւ՝ և ի քրիստոս ճշմարտութեամբ *կործանեցաւ* մահ. և ի յարութեանն առ հասարակ մեր: - 351. Եւ *կործանեցաւ* դագոն: - 412. *Կործանեաց* զերիքով ի նշանակ դժոխոցն: - 414. Այլ և զաքար *կործանեաց*: - 414. Մետասաներորդ՝ նախ *կործանեաց* զերիքով, և ապա՛ յերկիրն եմուտ: - 418. Եւ տէր մեր խաչիւն *կործանեաց* զկուռս և զպաշտամունս նոցա: - 418. Եւ տէր մեր խաչիւ և մարմնով զբովանդակ թշնամիսն *կործանեաց*: - 423. Երեսունևդ, նա՛ զբ սիւնսն շարժէր և զտունն *կործանէր*: - 424. Այլ և զապականութիւն և զդժոխս. մարմնով և հոգւով *կործանէր* զամուրն սատանայի: - 424. Վասն է՞ր *կործանեցաւ* դագովն առաջի տապանակին: - 425. Կրկին *կործանիլն* դագոնայ, զի նախ՝ օրինօքն մովսէսի անկաւ, և քրիստոսիւ *կործանեցաւ*: - 425. Ընդվզեալ սաբէի և կորուսեալ ի կնոջէ. և սատանայի *կործանեալ* յիմաստուն կուսէ: - 438. Եւ տէրն *ըզկործանեալ* բնութիւնս կանգնեաց: - 440. Եւ յետ **ե** ամսոյ՝ նաբուզարդան դահճապետն հրծիգ արար զերուսաղէմ և զտաճարն և զտուն թագաւորացն. և զպարիսպն *կործանեաց*. և զսիւնսն պղնձի և զաւազանն և զամենայն կահ պղնձի և արծաթի տարաւ ի բաբիլօն: - 447. Նա՛խ՝ նշանակեն առաջինքն զմարգարէքն և զարդարսն. որք ո՛չ կարացին *զկործանեալ* բնութիւնս շինել արդարութեամբ...: - 448-449. ...նշանակէ զքրիստոս որ եղև երկրորդ ադամ. և ի վեց դարուն կանգնեաց *զկործանեալ* բնութիւնս...: - 449. Այլ ո՛չ յարմարի բանս. զի և յերկինս տեսանի գործ արդարութեան առ հրեշտակս եղեալ. որք հպարտացեալ *կործանեցան*: - 458. Եւ յանցանելն զպատուիրանն՝ *կործանեցաւ* ի կորուստն ապականութեան: - 467. Իններորդ, գեթէօն՝ այն որ զցօղն ետես ի վերայ գեղման, զհօր իւրոյ զեզն պարարակ հրամանաւ հրեշտակին ի մէջ գիշերին պատարագեալ. և զանտառն և զսեղանն բահաղու *կործանեալ* և զերծեալ ի ձեռաց նոցա. որ էր օրինակ փրկչին. զի նա՛ է եզն պարարակ պատարագեալ. և ի մէջ գիշերի զբագինսն դժոխոց *կործանեալ* և յարուցեալ և ապրեալ ի մահու: - 513. ...և ո՛չ է աստուածային հրաման, այլ առաքելական ներումն ի դեղ անժուժկալութեան. զի մի՛ ի պոռնկութեան անդունդս *կործանեսցին*: - 613. Երկրորդ, զի ի գոհութիւնն ամենայն չարք *կործանին* որ հակառակ կան մեզ: - 626. Այլ և զեօթն օր շրջեցան տապանակաւն, և *կործանեցաւ* պարիսպն երիքովի: - 626. ...և յեօթներորդ օրն ի եօթն նուագին բարձրաձայն փողովք հնչեցին քահանայքն. և ժողովուրդն բարձրաձայն աղաղակեաց. յորմէ *կործանեցաւ* եօթնապատեան պարիսպն երիքովի: - 627. Նոյն սարասիւք այժմ ի ձեռն փրկչին մերոյ յիսուսի՝ տապանակաւ խաչին և աղօթիւք սուրբ եկեղեցւոյս՝ բարձրացեալ պարիսպն չարութեան եօթնից զգայութեանց մեղաց որոշօղ ի մէջ մեր և աստուծոյ, *կործանեսցի* ի սպառ: - 627. ...և բազումք մոլորին

զհետ բանից նոցա և յառասպելս նոցա *կործանին*: - 701. Դարձեալ՝ ո՛չ յարիցեն ի դատաստան, այսինքն ո՛չ կանգնեսցին ի դատաստանի զի մեզօք *կործանեալք* են: - 724-725. Երրորդ՝ դարձեալ զերկնային զօրութեանց վշտանալն ցուցանէ ի վերայ *կործանելոցն*. զի վասն իմ գալարին և ընդ իմ կործանումն՝ տրտմութիւն զգենուն: - 729. և Երկրորդ՝ զի *կործանեսցին* ուրացօղքն և խաչօղքն: - 732

**ԿՈՐԾԱՆՈՒՄՆ +** Նաև անբարիշտ կամք նորա դարձել է յատելութիւն և ի նախանձ մարդոյն. զի ամենայն ջանիւ նկրտի ի *կործանումն* նորա բազմադիմի փորձութեամբ: - 146. Որև *կործանմամբն* իւրով չարչարեաց զվերին դասքն սրտմտութեամբ, և զներքին դասքն սասանմամբ, և զհամակամսն ընդ ինքեան քարշեաց: - 148. Հինգերորդ՝ մահ և բռնութիւն սատանայի տիրեալ էր մարդկան. ի հաւատ *կործանման* նոցա անմահացոյց զենովք և վերացոյց զեղիա: - 289. Սեղանոյն պատառիլն նշանակէր *զկործանումն* սեղանոյն դիցն: - 442. Եւ ի գուճ կալն, վասն *կործանման* մեղացն: - 628. զի օրն այն ուրախութիւն է արդարոց. և *կործանումն* ամբարշտաց. որպէս երգն այն ուրախութիւն է, և սուգ՝ եգիպտոսի: - 630. Երրորդ՝ դարձեալ զերկնային զօրութեանց վշտանալն ցուցանէ ի վերայ կործանելոցն. զի վասն իմ գալարին և ընդ իմ *կործանումն* տրտմութիւն զգենուն: - 729. Ջորօրինակ, քարոզեցաւ նինուէի *կործանումն*. և նախագուշակ եղև եզեկիայի մահ. և ո՛չ մի ի սոցանէ կատարեցաւ: - 779

**ԿՈՐՆԹԱՑԻ (Ս. Գրքի մաս)** - Իսկ պօղոս յառաջին *կորնթացւոցն* ասէ, «ո՛չ գիտէք եթէ մարմինք ձեր տաճա՛ր են հոգւոյն սրբոյ»: - 57. Երրորդ՝ սրբել զմարդիկ՝ միայն աստուծոյ է. որպէս ասէ ի ղևտացւոցն, «ես եմ տէր՝ որ սրբեմ զձեզ». այլ յառաջին *կորնթացւոցն* ասի, «սրբեցարուք և արդարացարուք յանուն տեառն մերոյ յիսուսի քրիստոսի և ի հոգին աստուծոյ»: - 57. Այլ յառաջին *կորնթացւոցն* ասէ պօղոս՝ «հոգին է որ քննէ զամենայն և զխորս աստուծոյ»: - 57. Եւ այս ցուցանի յառաջին *կորրնթացւոցն* որ ասէ, «ո՛չ ոք գիտէ զմարդոյն՝ եթէ ոչ հոգի մարդոյն որ ի նմա»: - 58. Այլ յառաջին *կորնթացւոցն* ասէ, «հոգին է որ խօսի զխորհուրդս»: - 58. Երեքտասաներորդ՝ բնակիլ ի սիրտ սրբոց միայն աստուծոյ է. որպէս ասէ յառաջին *կորնթացոցն*, «ո՛չ գիտէք եթէ տաճար աստուծոյ էք. և հոգի աստուծոյ բնակեալ է ի ձեզ»: - 58. Հնգետասաներորդ՝ յառաջին *կորնթացւոցն* ասէ ի դիմաց աստուծոյ, «յօտար լեզուս և ի շրթունս օտարոտիս խօսեցայց ընդ ժողովրդեանն ընդ այնմիկ»: - 58. Այլ այս վերաբերի առ հոգին սուրբ. քանզի ասէ յառաջին *կորնթացւոցն*, «թէ ամենքեան մարգարէասցին, և մտանիցէ անդ անհաւատ կամ տգէտ՝ յանդիմանի յամենեցունց. և գաղտնիք սրտի նորա յայտնի լինին. և անկեալ ի վերայ երեսաց իւրոց երկիր պագանիցէ աստուծոյ. և խոստովան լիցի թէ արդարև աստուած է ի ձեզ»: - 58. Երևի յայտնապէս սուտ. քանզի ասէ յառաջին *կորնթացւոցն*, «թէպէտ բաժինք շնորհաց են, այլ հոգի նոյն է. թէպէտ բաժինք պաշտամանց են այլ տէր նոյն է. և թէպէտ բաժինք յաջողութեանց են, այլ աստուած նոյն է. որ յաջողէ զամենայն յամենայնի»: - 59. Այլ առաքեալն տէր փառաց զքրիստոս ասէ յառաջին *կորնթացւոցն*. «թէ էին ծանուցեալ՝ ո՛չ արդեօք զտէրն փառաց ի խաչ հանէին»: - 72. Այլ զխաչեալն քրիստոս՝ տէր փառաց կոչէ պօղոս յառաջին *կորնթացւոցն*. «թէ էին ծանուցեալ ասէ ո՛չ արդեօք զտէրն փառաց ի խաչ հանէին»: - 74. ...որպէս ասէ պօղոս ի *կորնթացւոցն* «գիտեմք եթէ քրիստոս յարուցեալ է ի մեռելոց. այսուհետև ո՛չ մեռանի և մահ նմա ոչ ևս տիրէ»: - 716. Եւ ի նոյն կէտ լրմանն որ է՛ վախճան ժամանակի և սկիզբն յաւիտենի՝ լինի վերառութիւն համայնից մարդկան որպէս գրէ առաքեալն *կորնթացւոց*...: - 716. Եւ ի նոյն կէտ լրմանն որ է՛ վախճան ժամանակի և սկիզբն յաւիտենի՝ լինի վերառութիւն համայնից մարդկան որպէս գրէ առաքեալն *կորնթացւոց*. - 716. Դարձեալ գիտելի է, զի պօղոս ի *կորնթացոցն* զհատ սերման՝ օրինակ տայ յարութեան մարդկան և ասէ. «ա՛նմիտ՝ դու զոր սերմանես ո՛չ կենդանանայ թէ ոչ մեռանի»: - 720. ...որպէս ասէ *կորնթացւոց*, «դու զոր սերմանես՝ ո՛չ բուսանի եթէ ոչ նախ մեռանի»: - 720

**ԿՈՐՆՉԻՄ +** Եւ ծանիր զայս, զի որքան նըւազի ողջութիւնն՝ առաւելու հիւանդութիւնն. և որչափ նըւազի մարմին՝ առաւելու ապականութիւն. այլ յամենևին նըւազիլ ողջութեան՝ և հիւանդութիւնն *կորրնչի*: - 22. Եւ յամենևին նըւազիլ կենաց՝ և մահն *կորրնչի*. զի յէութեան ունի զգոլն ներհակապէս: - 22. Նոյնպէս և բարին միշտ բարի է. թէպէտ ի հոգւոյն պակասեցաւ, դեռևս ի յէութեան է. զի է է բարին. և էութիւն ո՛չ *կորնչի*: - 23. Իսկ չարն *կորեաւ* յորժամ բարձաւ ի հոգւոյն. զի չարն ո՛չ է է՝ և ո՛չ գոյ: - 23. Իսկ ի գալստեան մեսիային ձեր առաւել ցրուեցան և *կորեան*: - 28. Յուսով մեղանչեն և անյոյս *կորնչին*: - 34. Եւ հաւատացեալքն փրկին. և հակառակօղքն *կորնչին*: - 96. Վասն որոյ ընդ կորուստ այսպիսի մասանց՝ և գիտութիւն մտաց մեր *կորնչի*: - 117. Վասն որոյ անկաւ և *կորեաւ*: - 149. Երրորդ՝ զի առնելն ի սկիզբն նայի ստեղծեալ իրին զի լինիցի. և նախախնամելն ի կատարածն զի մի՛ *կորիցէ* : - 158. Նախ զի փրկական է խորհուրդն ամենեցուն. այլ անարժան մերձեցեալն *կորնչի*. յիրաւի արգելցի ի սպասաւորութենէն: - 167. Երկրորդ՝ զի բազումք գայթակղութեամբ *կորնչին*. արդ ի հարկէ որպէս ասացաւ՝ կամ միոյ կամ բազմաց լինի կորուստ: - 167.

Երրորդ՝ ի ժողովիլն սոցա լինի մարմնական էութիւն. և յորոշելն *կորնչի* մարմինն: - 175. Որպէս տունն ի ժողովիլ փայտից և որմոց՝ շինի. և ի ցրուիլն սոցա *կորնչի* տունն: - 175. Եւ որպէս ի ժողովիլ հոգւոյ և մարմնոյ լինի մարդ. և ի բաժանիլն *կորնչի*. այսպէս և զայս իմա: - 175. Դարձեալ ասեմք թէ՝ զինչ ծանրութիւն որ պատահական է՝ ի ցրուիլն նիւթոյն *կորնչի* ծանրութիւնն: - 202. Իսկ ծանրութիւն երկաթոյն բնական է. վասն որոյ ո՛չ *կորնչի*: - 202. Իսկ յանասունսն ամենևին ըստ երկոցունցն *կորնչին* ընդ մարմնոյն: - 249. Եւ որպէս փարաւօն վասն հեղցուցեալ մանկանցն՝ ջրասոյզ *կորեաւ*. և յառաջ քան զայս՝ Ժ հարուածովք պատժեցան: - 288. Երկրորդ՝ զի մարդիկք բազում ամս յաճախէին ի մեղս յուսով վերջին ապաշխարութեանն. և յետոյ սովորեալ ի մեղս ո՛չ կարէին դառնալ, *ամենքին կորնչէին*: - 292. Երրորդ՝ *կորեան* երամակք ուղտուցն: - 322. Երրորդ, զի *կորնչելոց* էին անդրանիկ ծնունդքն սատանայի. որ էր հպարտութիւնն և կռապաշտութիւն. զի խոնարհութեամբ էր գալուստն քրիստոսի և ի մի աստուածպաշտութիւն հրաւիրեաց և կորոյս զպաշտօնն դիւական: - 334. Նա՛խ՝ զի մոլորեցին հաւանեալք նոցա և *կորիցեն*: - 336. Երկրորդ՝ ցուցանէ թէ բանական հոգիս մեր ո՛չ *կորնչի*: - 371. Եւ զի խոստովանեալ մեղքն *կորնչի*: - 412. Չորրորդ՝ զի և անասունքն գործակից լինին մեղացն. վասն որոյ ընդ մարդոյն *կորնչին*. որպէս ի սողոմ: - 416. Եօթներորդ՝ որպէս ինքն պիղծ է, և իւրքն ամենայն պիղծ են. վասն որոյ ընդ նմին *կորնչին*: - 416. Եւ այլքն ամենայն *կորեան* առ գերութեամբ նոցա: - 443. Ապա թէ առանց ընտրողութեան ամենայն բանի հաւանին՝ *կորիցեն* որպէս եւա: - 465. Երկրորդ՝ զի այն քան բազմութիւնք հաւատացելոց *կորնչելո՛ց* էին, որ ո՛չ վայելէր ամէնիմաստ գիտութեանն աստուծոյ: - 467. Ութերորդ, զի ծնունդ էր նա նոր և գլխաւոր. և այն՝ զի նովաւ *կորընչէին* ազգք և տոհմք և դարք: - 517. Ասեմք թէ՝ ոչ ինչ է այս նախատինք մեզ. զի հեթանոսք յետոյ հաւատացին և լաւագոյնք են քան զհրէայս. և վերջին մշակքն ընդ առաջինսն առին զվարձս. և որք նախանձեցան *կորեան*: - 549. Եւ նոյ միայն ապրեցաւ, և բազումք *կորեան*: - 551. Յայնժամ լոյս իմացականին *կորեաւ* և շիջաւ ի սատանայէ՛. և լոյս շնորհացն ո՛չ ներգործեաց ի նա. և ի նոյն սերտեալ հաստատեցաւ անզղջապէս. վասն որոյ մեծ են մեղք սատանայի և թողութեան ո՛չ հանդիպի: - 563. Զի ծաղիկն դիւրաւ թափի յամէն փոքր պատճառէ. յանձրևոյ և ի հողմոյ և ի սաստիկ որոտոյ. վասն այն պտուղն *կորնչի*: - 638. Նախ՝ զի քակե՛ն զխոստովանութիւնն յեկեղեցւոյ և ի քաւարանն ապաւինեալ *կորնչին* մեղօք: - 698. ...և ապա *կորնչին* դևք. և այս ո՛չ է բերքաթուր: - 704. ...և *կորիցեն* անհաւատք որպէս զյարդ այրեցեալ ի հուրն: - 706. Իսկ որք հաւանին նմա՝ *կորնչին* ի տանջանսն յաւիտենից: - 706. Նոյնպէս կատարեալ խոստովանութեամբն *կորնչի* մեղքն և բուսանի արդարութիւնն: - 714. Եւ զորօրինակ զկնի մկրտութեանն սկզբնական մեղքն ոչ երևի. նոյնպէս զկնի ապաշխարութեան ներգործական մեղքն ծածկի և *կորնչի*...: - 714. Հինգերորդ հալեալ մոմ ո՛չ ունի զառաջին կերպն այլ զգոյացութիւնն. նոյնպէս և գոյացութիւնն երկրի ո՛չ *կորնչի*. այլ պատահմունքն այլայլին. զի ո՛չ ճանաչի թէ այս այն է: - 728. Ո՞րք են որ առանց դատաստանի *կորնչին*: - 739. Ո՞րք են որ դատաստանաւ *կորնչին*: - 739. Եւ թէ ունիցին ըստ օրինացն հաւասարեալ ի գործս կամ ի հաւատս, և եթէ միտեալ և կամ նուազեալ, ըստ նոցին օրինացն հատուցանել. և կամ արտաքոյ օրինացն *կորնչիլ* ի յայսմ կշռոյ է հատուցումն: - 747. Ութերորդ՝ հնձան կոչի և աւազանն սուրբ. զի ի նմա ճմլին և *կորնչին* ամենայն մեղք մեր. ...: - 749. Ի ծովուց ջուրց ի չորից նաւաց հազիւ մինն *կորնչի*. և ի ծովու այսմ աշխարհի ի չորից նաւաց հազիւ մինն ի նաւահանգիստ փրկութեան հասանէ: - 764

**ԿՈՐՈՎԱԼԻՑ** - Սաստկագին գոչմամբ. և ահագնատեսիլ սուսերամերկ *կորովալից* նետողաց. որ պատեալ պահեալ պաշարէին զմեզ: - 789

**ԿՈՐՈՒՍԱՆԵՄ +** Հինգերորդ՝ ոչ ինչն ի յենթակայս եղեալ՝ ո՛չ ներհականայ էի. թէպէտ ըստ ինքեան ներհա՛կ է. և չարն ի յենթակայն երևեալ՝ ներհականայ և *կորուսանէ՛* զբարին. թէպէտ ըստ ինքեան ոչ ինչ է և ոչ գոյ: - 23. Եւ սոքա զմիայն տէրն ուրացեալ՝ քրիստոսամարտ լեզուաւ զանձինս *կորուսանեն*: - 34. Եւ թէ զմիայն ճշմարիտն՝ հօր միայն տաս, *կորուսեր* ապա զորդի ստութեամբ և մահուամբ և խաւարաւ և այլովն: - 47. Վեցերորդ՝ *զկորուսեալսն* գտանէ: - 49. Ա՛րդ՝ քրիստոսն որ է օծեալ աստուածութեամբն, և նա աստուծոյ իմաստութիւն է. և ո՛չ ճանաչէ՛ զաստուած. տգիտութեամբ *կորուսանէր* զնա և որոյ է՛ իմաստութիւն: - 96. Դարձեալ՝ միտք մեր այժմ ի ներքոյ ժամանակի՛ է. և բ մասն ժամանակին ո՛չէ. այսինքն անցեալն *կորուսեալ* է, և ապագայն ո՛չէ է: - 117. Երկրորդ՝ զի Ժերորդ է մարդս կարգեալ ի թիւ նոցա ըստ հարիւրերորդ մոլորեալ ոչխարին, և *կորուսեալ* Ժերորդ դրամին: - 134. Եւ որք ի ջուրս և ի ծնունդս կանանց՝ ա՛յք կոչեցան. զի գէջ ախտիւն զհոգիս *կորուսանեն*. և ի ծնունդս՝ զմարմինս և զհոգին: - 150. Իսկ զոմանս *կորուսանէ* և պատրէ՛. որ է՛ երրորդ մասն *կորուսելոցն*: - 152. Նոյնպէս և մարդկային կենցաղս ամենեքեան հասարակաբար հաղորդին. և ամենեքեան առ հասարակ փոփոխին և *կորուսանեն*...: - 199.

Պատասխանեմք յայտնի տեսութեամբ, թէ զոր ինչ այրէ հուր, ծախէ՛ և *կորուսանէ* զամենայն որակսն. այսինքն զգոյն. զհամ. զհոտ. նոյնպէս և զծանրութիւն: - 202. Դարձեալ ասեմք թէ՝ ծանրութիւն փայտին գիճութիւնն է և ցրտութիւնն. և հուրն ջերմութեամբ և չորութեամբ զսոսա *կորոյս*: - 202. Նոյնպէս ծանրութիւն փայտին պատահական՛ն է և եկամուտ. զորս *կորուսանէ* հուրն: - 202. Երեսուննզ՝ Երկոտասան պարգևն զոր *կորոյս* ադամ: - 228. Վեցերորդ՝ զի տեսցէ ադամ թէ յապականացու հողոյս անապական մարմին կազմեցաւ վասն փառաց. և յորժամ *կորոյս* մեղօքն եղև ապականացու, ինքն իցէ պատճառ ապականութեան իւրոյ: - 229. Եւ արդ ի կատարեալ մարդն հոգւով և մարմնով՝ փչեաց զշնորհաց հոգին ի մարդկայինս ազգ. և ունէին որ քան յանմեղութեան էին. և *կորուսին* ի մեղանչելն: - 253. Իսկ բարոյականն այս ինչ է. զի զպատկերն արարչական և զառաջին կեանս դրախտին *կորուսար*, և զանասնեղէն պատկերն և զերկրորդ և զախտաւոր կեանս ընտրեցաք. յիրաւի շրջեցաւ ի մեզ և լինելութիւն հոգւոյն: - 258. Դարձեալ՝ զոր ինչ ունիմք՝ յայլմէ՛ ունիմք. և անկատա՛ր ունիմք. և միշտ կարեմք *կորուսանել*: - 275. Երկոտասան պարգև՛ք էին ի դրախտին զոր *կորոյս* ադամ: - 278. Երրորդ՝ յուսացաւ կոչել զանուն տեառն աստուծոյ ի յօգնութիւն. զոր մարդիկ յուսահատեալ էին եթէ վասն մեղաց մերոց եթող զմեզ աստուած ի ձեռաց. և նա ի յօգնութիւն կոչեաց զանուն տեառն աստուծոյ. այսինքն զի տէր է՝ ո՛չ գարշի ի ծառայից իւրոց. և զի աստուած է՝ էա՛ծ զմեզ աստ ոչ ի *կորուսանել*, այլ ի կեցուցանել: - 289. Եւ յորժամ *կորոյս* զդրախտին կեանքն, այլ ոչ հասին ի նոյն: - 290. Ապա՛ ասեն՝ շինեսցուք բարձր աշտարակ զի մի՛ ջրհեղեղն զմեզ *կորուսցէ* : - 296. Նոյնպէս և ծնունդք սուրբ աւազանին որք են անդրանիկք և անդամք քրիստոսի եղեալք, ագահութեամբ և պոռնկութեամբ *կորուսանեն* զշնորհն երկնաւոր. և ո՛չ լան և ո՛չ զղջան որպէս եսաւ: - 309. Զմահ եբարձ մահւամբն, և զապականութիւն *կորոյս* յարութեամբն, անապական մարմնով յարուցեալ ի գերեզմանէն: - 317. **Ապա ուրեմն բովանդակ երևեցաւ ե զէն որով յաղթեմք թշնամոյն... Նախ՝ ուղղութիւն ընկերաց. բ գոհութիւն և համբերութիւն. գ՝ իմանալ զչար խորհուրդն սատանայի. դ՝ աղօթք և պահք. ե՝ խոնարհութիւն և ճշմարտութիւն. որ գերագոյն է ամենայն զինուց և իսպառ *կորուսանէ* զչար որ մայրն է ստութեան և հպարտութեան**: - 324. Եւ այսպէս ամենայն ուրեք հնարի սատանայ զի և զբանբասեալն և կամ զբանբասօղսն *կորուսցէ* : - 325. Քսանն**ե**, մովսէս զկախարդաց օձն *կորոյս*: - 329. Եւ տէրն մեր զիմանալի օձն *կորոյս* և կոխանեղ: - 329. Յինգերորդ, մա՛հ անասնոց. քանզի **ե** զգայարանօք իբրև զանասունս եղեն և *կորուսին* յինքեանց զբանն: - 334. Երկրորդ՝ զի անյագ և ամենակե՛ր է մարախն. և ի յայլոց վաստակս մտեալ *կորուսանէ* : - 334. Երկրորդ՝ զի զանդրանիկ խորհուրդն աստուածպաշտութեան *կորուսին* յանձինս իւրեանց...: - 334. Երրորդ, զի կործնչելոց էին անդրանիկ ծնունդքն սատանայի. որ էր հպարտութիւնն և կռապաշտութիւն. զի խոնարհութեամբ էր գալուստն քրիստոսի և ի մի աստուածպաշտութիւն հրաւիրեաց և *կորոյս* զպաշտօնն դիւական: - 334. Երկրորդ՝ զի *կորուսեալք* էին հոգւով, ո՛չ պահեաց զօրէնս նոցա: - 349. Դարձեալ ցուցանէ՝ ի լրման ժամանակի տասանց միոյ *կորուսեալ* դրամին ի խնդիր ելեալ: - 376. Զոր եզեկիա խարտեաց. որպէս մովսէս զգլուխ որթոյն և *կորոյս*: - 387. Զի՞նչ է որ զերկու թագաւորսն զսեհոն և զովք յայնկոյս յորդանանու *կորոյս*, և զայլսն ի քանանացիսն: - 393. Եւ որք պարտին աստ, նոքա և յետ մահու և յարութեանն. զորս *կորուսցէ* փրկիչն մեր յիսուս: - 394. **Տասներորդ՝ ի սկզբանէ հայհոյիչ աստուածամարտ էր սատանայ. և վասն այն զմարդիկ *կորուսանէր* մեղօք. որում զվճիռն և զսաստն տէրն ետ, և դատապարտեաց զմեղս ի մարմնի իւրում. և եբարձ մահուամբն զմահ, և որ զիշխանութիւն մահուն ունէր:** - 410. Երրորդ՝ ի յեղծանիլ պատկերին աստուծոյ որ վասն փառացն աստուծոյ ստեղծաւ, ընդ նմին եղծան և ապականեցան այլ արարածք որ վասն փառաց մարդոյն ստեղծան. որ ո՛չ միայն անասունք, այլ և հող և ջուր և օդ երկրին *կորուսանեն* զպտղածնութիւն. որպէս սոդոմայեցոցն: - 416. Վեցերորդ՝ զի թէ լինի անկարօտ գող և զրկօղ, ընդ տեառն իւրոյ *կորուսանէ* և զինչսն...: - 416. Եւ տէր մեր զիւաւատացեալս իւր հանեալ ի մեղաց շինեաց սեղան և եկեղեցի սուրբ. և զմեղս երկոտասան անդամոցն ընկղմեալ *կորոյս*: - 418. Եւ տէրն *կորոյս* զիսրայէլ ազգօք. և փոխանակեաց իւր ժողովուրդ զհեթանոսս օրինօք: - 418. Եւ տէր մեր մահուամբ առաւել *կորոյս* զթշնամին, որ քան ի կեանս գործով հրաշից: - 424. Իններորդ՝ յետ է աւուր *կորոյս զնաաս* խռովարար, որ բրէր զաջոյ ակն իսրայէլի. և տէր մեր զխռովարար բանսարկուն, որ բրէ՛ զակն իմացականին մարդոյ...: - 427. Ընդվզեալ սաբէի և *կորուսեալ* ի կնոջէ. և սատանայի կործանեալ յիմաստուն կուսէ: - 438. Եւ տէրն զզղջացեալն փրկէ, և զանզեղջսն *կորուսանէ*: - 441. Իսկ նորն ադամ նոյն ի զ դարուն յա՛յց ել և խնդրեաց *զկորուսեալ* պատկերն ի թիւ խորհրդաւոր կատարեալ վեցերորդին: - 467. Բազում ինչ անդ բնութիւն *կորոյս* զօրէնս իւր. այսինքն ի կողմանէ մօրն, ի կողմանէ զաւակին, և ի կողմանէ կերպին: - 469. Բայց կրկին է զրկումն լուսոյ. մի՝ որ ի ճառագայթէ՛ լուսոյն զակն խփէ և խաւարի. և **բ**՝ որ ընդ դէմ բոլորակի արեգականն հայիցի՝ *կորուսանէ* զլոյսն և խաւարի: - 562. Իսկ մեղանչելն սատանայի այնպէս

է որ ընդ դէմ արեգականն հայի և զլոյսն *կորուսանէ* և խաւարի: - 563. Որպէս անպտուղ երկիր *կորուսանէ* զբարի սերմանս և փուշ բուսուցանէ. նոյնպէս և մեք զբարի սերմանս որ եդ ի մեզ աստուած ի չարն փոխարկեմք: - 564. Զի որպէս նախանձն *կորուսանէ* զինքն, այսպէս և բարկութիւնն փախուցանէ զընկերն: - 570. **Դարձեալ, բարկութեամբ զպատկերն աստուծոյ *կորուսանեմք* ի մեզ. և հոգին սուրբ փախչի ի բարկացեալ հոգւոյ. զի խաղաղութիւն է տեղի նորա:** - 570. Երկիւղ է հոգևորապէս փախուստ ի չարէն. զի մի՛ *կորուսանիցէ* զայն զոր սիրէ: - 582. Այսպէս շնորհք հոգւոյն սրբոյ ի մկրտութեանն զաղտս մեղաց լուանայ. զծարաւ հոգւոյն բանիւն աստուծոյ շիջուցանէ. և *զկորուսեալ* պատկերն աստուծոյ դարձուցանէ: - 591. Մեղքն ադամայ այն է որ զարդարութիւն *կորոյս*. և մեզօք և ցանկութեամբ ծնաւ զորդին. և այն մեղքն սկզբնական կոչի. և ո՛չ թողցի եթէ ոչ ի մահն քրիստոսի մկրտեսցի: - 591. Եւ երկրորդ, ընդ դէմ օրինացն աստուծոյ *կորուսանի* բեղմնաւորիլն վասն յաճախ սերմանցն: - 613. Երկրորդ՝ մեղքն ի հոգւոյն և ի մարմնոյն ի վեր ելանէ. իսկ արտասուքն վերուստ ի վայր հոսի և *կորուսանէ՛* զնա: - 619. Ութերորդն նոյնպէս զերկոցունց կողմանց յայտնէ զփրկելոց և *զկորուսելոց*...: - 630. Եւ այս գիտելի է, զի անուն նեռին ջնջեալ և *կորուսեալ* է ի սուրբ գրոց. վասն այն զանազանապէս կոչեն զնա՛: - 707. Եւ վեցն՝ ի կատարումն վեցեակ դարին նոր ապստամբն ելցէ և *կորուսցէ* զբազումս: - 708. Հինգերորդ, զի դիցէ զթշնամիս իւր ի ներքոյ ոտից իւրոց. այսինքն *կորուսցէ* զնեռն և զսատանայ և զամենայն գայթակղութիւն մարդկան՝ զմեղս և զմահ...: - 737. Զի ըստ առաջնոյն ամբարիշտքն *կորուսին* զաստուած և զամենայն բարի շնորհս և զփառս. և ոչ ունին յոյս ողորմութեանն աստուծոյ...: - 751. Որպէս զսաւուղայ ասեն՝ էշ *կորուսեալ* և թագաւորութիւն գտեալ: - 762. Զվիշտս յայտ առնէ անցելոցն նուազութիւն և *կորուսելոցն* բազմութիւն: - 764. Եւ դարձեալ ի ճառս անառակին և *կորուսեալ* դրամին և մոլորեալ միոյ ոչխարին և անկելոյն ի ձեռս աւազակին, զնոյնս ուսուցանեն մեզ հարքն հոգելիցք արտայայտել: - 775. Իսկ յանցանել նորա՝ *կորոյս* զամենայն. ո՛չ միայն զխոստացեալն, այլ և զպարգևեալն...: - 776. Որ և ամենայն վերոյ գրեալքդ առակք, անառակին, մոլորելոյն, *կորուսելոյն* և այլն ևս, այսպէս ուղղին. այսինքն նմա՛, վասն նմա՛, որպէս նմա՛: - 778. Եւ յայտ ի դիւա՛ցն է. որ ո՛չ *կորուսին* զանմահութիւն և զանձնիշխանութիւն և զայլս: - 782. Զի թէ *կորուսեալ* էր, այսինքն բարձեալ ամենևին յազգէն ադամայ, ուստի՞ գոյր որդւոց նորա. կամ ո՞րպէս առ ջրհեղեղաւն բառնիւր բարձեալն: - 782. Այսպէս և ադամ զղջմամբ իւրով ընկալաւ. այսինքն երևեցոյց յինքեան *զկորուսեալ* շնորհն: - 783. Զի կարէր *կորուսանել* մեղօք, և կարէր պահել անմեղութեամբ. որպէս զանմահութիւն և զայլսն: - 783. Իսկ որք զմի քանքար հաւատոյ կամ զմկրտութեանն շնորհի ի բաց *կորուսանեն*, ո՛չ զկնիքն խորհրդապէս, այլ զարժանն վարձու իրողապէս: - 783

**ԿՈՐՈՒՍԻՉ +** Իսկ չարն *կորուսիչ* է և ապականիչ: - 22. Ասեմք զառաջինն թէ ո՛չէ է չար. զի ապականիչ և *կորուսիչ* է որպէս ցուցաւ. ա՛րդ՝ ընդ ապականել զայլսն՝ ապականէ և զինքն. և ո՛չ մնայ ի յէութեան: - 22. Եօթներորդ՝ զի թէ ճշմարտապէս սամուէլ յառնէր, ո՛չ կամէր կինն. զի *կորուսիչ* էր նոցա. այլ գիտէր որ նմանութիւնն էր սամուէլի: - 428

**ԿՈՐՈՒՍՏ +** Որք զաչս իմաստից յիմանալի ճառագայթիցն խուսափեցին թիւր կամօք, և խոտոր մտօք. զանուղղայս խորհելով, և զանպատշաճս բարբառելով. յարձակեալ անկապ լեզւաւ և անդուռն շրթամբք բացեալ յերկինս. ցոպ բերանով ի բարձունս բարբանջելով. և յածեալ ընդ երկրաւ լեզուագարելով. որոց դատաստանն ի բնէ ո՛չ դատարկանայ. և *կորուստն* ո՛չ նիրհեսցէ: - 31. Որք հերձեալ ըստ ինքեան սարտուցան ի կենաց. և զհերձուած *կորստեան* ուսուցին բազմաց: - 31. Չորրորդ՝ զի նոքա իւրաքանչիւր անձանց էին *կորուստ*, և ի ժամանակս իւրեանց: - 33. Այլ սոքա ինքեանց և բազմաց. այսինքն հօտին քրիստոսի. «յափշտակելով ի նմանէ և ինքեանց առնելով» ասէ սուրբն կիւրեղ. և յետոյ գրով աւանդեցին զչար աղանդն այլոց չար յիշատակ և ի *կորուստ* անձանց իւրեանց: - 33. Եւ այլս բազում բաղդատութիւն գոլով հերձւածողի և նեռինն. և զորս տէրն գնեաց՝ սոքա ուրացեալք՝ ածեն ի վերայ անձանց զերագահասն *կորուստ*: - 35. Ո՛չ ուրացմամբ, և ո՛չ *կորուսմամբ*. այլ՝ միաւորութեամբ մի բնութիւն: - 84. Վասն որոյ ընդ *կորուստ* այսպիսի մասանց՝ և գիտութիւն մտաց մեր կորնչի: - 117. Զի՞նչ էր յանցումն և պատճառ *կորստեան* նոցա: - 147. Չորրորդ՝ զի յետ փործութեան աստուած զպսակն պարգևէ. և յետ փործութեանն սատանայ, ընդ իւր ի *կորուստն* յաւիտենական սպանանէ: - 161. Երկրորդ՝ զի բազումք գայթակղութեամբ կորնչին. արդ ի հարկէ որպէս ասացաւ՝ կամ միոյ կամ բազմաց լինի *կորուստ*: - 167. Այլ մեզ զոր գիրք սուրբք լռեալ են՝ լռութեամբ պատուեսցի. և մի՛ մտացածին բանիւք վտարանդեալ ի գուբ *կորըստեան* անկցուք: - 226. Նոյնպէս և տէր մեր յետոյ բառնալո՛ց է զչար. գազանն զորդին *կորստեան* և զպաշտօնեայսն նորա ի կատարածի: - 314. Եօթներորդ՝ կարկուտն հրախառն. զի **բ** հակառակն միաբանեալ ջուր և հուր ի *կորուստ* ամբարշտացն և ո՛չ ապականէին զմիմեանս: - 334. Եւ **է** երորդն

սատակիլն և *կորուստ*. զի կեանքս **գ** շարժմամբ է, և մահն **է** երորդ արտաքոյ սորա: - 404. Ա՛րդ՝ սոքա համածայն ի մի *կորուստ* հոգւոյ դիմեն առ մարդն: - 404. Եւ կէս գետոյն բաժանեալ և մտեալ ի ծովն աղի. նշանակ *կորստեան* մեղաւորաց և անհաւատից ի յատակս դժոխոց: - 414-415. Երկրորդ՝ անցեալ ընդ լերամբ և ո՛չ գտեալ. մինչև առ տեսանօղն եկեալ. և տէր մեր էանց զլերինս հրեշտակաց և եկն ի մարգարէս. և նոքա աւետեցին զգիւտն **գ** օրեայ *կորստեան* իշոյն...: - 426. Եւ յանցանելն զպատւիրանն՝ կործանեցաւ ի *կորուստն* ապականութեան: - 467. Աւա՜ղ անբան մտահաճութեան նոցա. որք զմիայն տէրն ուրացեալ, ածեն ի վերայ ինքեանց զարագահասն *կորուստ*: - 503. Եօթներորդ՝ դարձեալ յաւուր կիրակէի էանց մովսէս ընդ ծովն կարմիր. և ընկղմեցաւ փարաւօն ի տիպ յարութեանն քրիստոսի և *կորստեան* սատանայի: - 512-513. Իսկ գործքս այսոքիկ որ նոցա պահպանօղք են՝ մեզ *կորուստ* և մեղք են: - 563. Եւ պօղոս՝ մարդ անօրէն և ապստամբ և որդի *կորստեան* աասէ: - 707. Ուստի երևի **գ** ժամս ի յարութենէն մինչ ի վճիռ հատուցման և *կորստեան* չարաց չորեքկին. այսինքն գործոց չարաց և պատժոց նոցին. պատճառաց դիւաց և հետևելոց մարդկան: - 748. Իսկ թէ նա որ սկիզբն *կորստեան* ամենեցուն մեզ եղև և պատճառ ամենայն մեղաւորաց՝ ապրեցաւ շնորհօքն քրիստոսի. - 775. Այլ ինչ ո՛չ օգնել ի գերութիւն վարելոց. որպէս և յայնմ աւուր ի *կորուստ* մատնելոց: - 789

**ԿՈՐՍՏԱԿԱՆ +** Երրորդ՝ ըստ կատարման. զի այս յետ փոխման զյոյսն ունի լծակցեալ անմահութեան և խնդութեան. իսկ այնոքիկ *կորստական* և անցաւոր: - 269. Երկրորդ՝ լա՛ւ համարեցաւ զերկնաւոր գանձն՝ քան զոսկի և քան զարծաթ *կորստական*: - 338. Նոյնպէս և տկարութեամբ նորին՝ *կորստական* խոնարհութիւն ցուցանի մարմնոյ իւրոյ աշխարհի: - 424

**ԿՈՒ (բայական մասնիկ)** - Զոր և ազգն Ֆռանկաց այլայլելով ասեն, ես *կու* մկրտեմ զքեզ յանուն Յօր և Որդւոյ և Յոգւոյն սրբոյ ...Զոր և անյարմար շարաբանութեամբ *զկո՛ւն* ցուցանեն մկրտել և ո՛չ զնուիրեալն: - 588. Եւ երկրորդ անպատշաճութիւն, զի յասելն թէ՝ ես *կու* մկրտեմ. երևի թէ նուիրեալն ո՛չ իւր կամաւն է եկեալ ի մկրտութիւն, այլ բռնութեամբ և ի հարկէ՛ *կու* մկրտեմ ...Ապա ուրեմն ո՛չ վայելէ ասել թէ ե՛ս *կու* մկրտեմ: - 588. Եւ դնէ զայս քահանայն սուրբ մեռոնաւն ի ճակատ նուիրելոյն ասելով այսպէս. ըստ այլազգաց եկեղեցեաց. թէ ի ներքոյ ձևիս այս ես *կու* նշանեմ զքեզ նշանաւ խաչի...: - 593. Եւ թէ ասեն՝ զեկեղեցին *կու* նշանակէ ջուրն այն: - 596

**ԿՈՒԶ +** Եօթներորդ՝ սապատողն. *կուզն*. կամ ելուստ ի թիկունքն. որ ո՛չ կրէ զբեռն քահանայութեան հպարտութեամբ: - 370

**ԿՈՒԺ +** Ծալեալ մաշկեակն և նոր *կուժն*: - 413. Զի՞նչ է նոր *կուժն* և աղն, որով բժշկեցան ջուրքն: - 445. Նոր *կուժն* ի խորհուրդ աստուածածին կուսին. որ նո՛ր էր յղացումն և անապական ծնունդ: - 445

**ԿՈՒՄԻՏԱՍ** - Զհռիփսիմեանց անձինքն և զհարցն՝ տէր *կումիտասն*: - 637

**ԿՈՒՇՏ +** Ո՞ր է **բժ**ան անդամք մարդոյն... Եօթն՝ *կուշտն*: - 241. *Կշտերն* բարակ՝ խորագէ՛տ է: - 247. *Կշտերն* մսալիր՝ անխելամուտ է: - 247. Վերջին օծումն է խորհուրդ եկեղեցւոյ. որ տուեալ լինի հիւանդաց ի հոգէվարի օրն. յաչքն, յականջն, ի բերանն, ի ձեռքն, ի *կուշտն*, յոտից ներբանքն: - 604

**ԿՈՒՊՐ +** Եւ նաւթն *կո՛ւպրն* է ներքոյ և արտաքոյ ծեփեալ զի մի՛ վնասեսցի: - 293. Եւ էր թրծեալ աղիւսն ի տեղի քարի, և *կուպրն* ի տեղի շաղախի: - 296. Թրծեալ աղիւսն ընդ դէմ հրոյ, և *կուպրն* ընդ դէմ ջրոյ: - 296

**ԿՈՒՌ +** Օդ կամ կօշիկ յոտս, *կուռ* վառեալ զինու ընդ դէմ օդային թշնամւոյն: - 674

**ԿՈՒՌՆ +** Դարձեալ ոմանք ասեն զմին ձեռքն երեք անդամ. այս է՝ մինչ ի խաղալիկն մին. և մինչ յարմունկն **բ**. և մինչ ի *կուռն* երեք: - 241

**ԿՈՒՌՆԷԼԻՈՍ** - Առաջինն խոհեմք և իմաստունք բնականապէս. որպէս նահապետքն առաջինք. աբրահամ. իսահակ. յակոբ. յոբ. *կուռնէլիոս*. և այլքն: - 269

**ԿՈՒՌՔ +** Իսկ ուրախանալն ի չարն մահ է և անզգայութիւն. և ընդդէմ բժշկողացն մրցումն. որպիսիք էին հեթանոսքն ի *կուռս* իւրեանց. և հրէայքն յօրէնսն. և փաղանք հերետիկոսացն յաղանդս իւրեանց: - 33. Եւ որպէս ասեն վարդապետք՝ քան զամենայն մեղս ծանրագոյն գոլ զպաշտօն *կռոցն* վասն երկուց: - 33. Իսկ պաշտօն *կռոցն* մեղանչումն է ընդդէմ էութեանն աստուծոյ և փառաց: - 33. Իսկ պաշտօն *կռոցն* ո՛չ ունի զերկիւղն աստուծոյ: - 33. Նախ՝ զի հեթանոսք անգիտութեամբ *կուռս* պաշտեցին: - 33. Ասեն դարձեալ թէ՝ և հեթանոսք մի աստուածս անուանեն զամենայն *կուռս*, այլ բազումք են. որպէս և մարդկութեանս մի ասի բնութիւն, այլ բազումք են մարդիկք. ապա և դուք բազմաստուածք էք: - 54. Եւ թէ ոք ասիցէ, ապա զիա՞րդ նոր եկեալքն ի հաւատս՝ թողեալք *զկուռս* և զամենայն չար՝ լինէին քահանայք և եպիսկոպոսունք. որպէս սուրբն կիպրիանոս: - 166. Իսկ երեսունն, մինչ ի մեծն թէոդոս. որ եբարձ զամենայն մեհեանս *կռոցն* և

բարձրացաւ սուրբ խաչն ի գլուխս գմբեթարդ սուրբ եկեղեցեաց: - 294. Ի մանկութենէ *կռոց* նուիրեցաւ, և հրեշտակ աստուծոյ յափշտակեալ սընոյց զնա յանապատի մինչև հասոյց ի կատարումն: - 300. Եւ զի ո՛չ նկարեցաւ ի պատկեր *կռոց* և ո՛չ պաշտեցաւ մորենին. վասն այն տէր երևեցաւ ի նմա: - 330. Վեցերորդ՝ սովո՛ր էին զտաճարս *կռոցն* զարդարել. վասն որոյ առաւել քան զնոսա զարդարէ՛ զխորանն: - 342. Իսկ *կուռքն* միայն անուամբ. ո՛չ բնութեամբ և ո՛չ գործով: - 350. Նա՛խ՝ զի սովոր էին յեգիպտոս *կռո՛ց* զոհել, զայն նուէրքն ի յինքն ընկալաւ: - 355. Եւ ըստ այնմ *զկուռս* կոչէին աստուած՝ դատապարտութիւն էր նոցա: - 361. Այլ զանբան պատարագն ուսան հեթանոսք և *կռոց* մատուցին. և այն սովորութեամբն իէլ մատոյց աստուծոյ զանբան կենդանիս մինչ եկն քրիստոս և եղև ինքն բանաւոր պատարագ, և զնոյնս աւանդեաց մեզ: - 362. Է՛ և ա՛յլ իմն տեսութիւն բանիս. զի կամի՛ զպաշտօնս մեր որոշել ի *կռոց* զոհիցն. զի սուտանուն դիքն խնդրէին ուստերս և դստերս և արջառս և ոչխարս զոհել և սպանումն օտարաց: - 396. Իններորդ՝ և զեծցին յընդունայն վաստակոց *կռոցն* որ ոչ օգտէին. զի ունայնութիւն լսի գեբաղն: - 402. Չորրորդ՝ պատկեր *կռոց* ո՛չ ձևացաւ անգծելի գոլով յերկաթոյ: - 415. Վեցերորդ՝ և զպատկերս *կռոց* երկաթով գործէին: - 415. Եօթներորդ՝ ռահաբ եթող *զկուռս* և զբազում հոմանիս. և ցանկացաւ յեսուայ: - 417. Եւ տէր մեր խաչիւն կործանեաց *զկուռս* և զպաշտամունս նոցա: - 418. Եւ զի պիղծ և գարշելի էր զոհք *կռոցն* և կերակուրք հեթանոսաց: - 443. Դարձեալ՝ նշանակեն զերիս ազատութիւնս ի *կռոց*: - 449. Եօթներորդ՝ եգիպտոսի *կռոց* խորտակիլն: - 471. Եւ **խ** օր յօդս զի **լգ** օր զօդս սրբեսցէ ի ճենճերից *կռոց*. և **է** օրն ի խորհուրդ է աստեղեան խորանացն ի կայանս հոգւոցն: - 520-521. Երրորդ, դիւական. որպէս *կռոց* սուտ մարգարէքն. սեդեկիայն և այլոց բազմաց. որ այժմ երևին ի պատասխանիս կախարդաց. նաև հաւկռիչք և գարէդիւթք. որք են բնաւ սուտք և ոչինչք: - 536. Եօթներորդ, զի մկրտելն է գործ քահանայի. և քահանայութիւնն է սպասաւորութիւն աստուծոյ. իսկ զայս սպասաւորութիւն աստուծոյ և ո՛չ կռապաշտքն ունէին սովորութիւն սնոտի *կռոցն* ի ձեռն կանանցն մատուցանել զպատարագն. - 589. Իսկ օրհնութիւն աղին, զի որոշեսցի ի զոհից *կռոց*, և ի հասարակ զենմանց...: - 657. Ա՛յն է որ սատանայ խաբէութեամբ և բռնութեամբ զօրացեալ էր և իշխան եղեալ ի վերայ մարդկան. ի կեանս զանազան չարեօք և *կռոց* պաշտմամբ...: - 705

**ԿՈՒՍԱԲԵՐ** - Նա՛խ՝ զի աստուած էր ողջոյնառաքն. որ խօսէր զկոյսն ի հարսնութիւն կուսութեան, *կուսաբեր* լինիլ պտղովն: - 464

**ԿՈՒՍԱԾԻՆ +** Իսկ եթէ զանդրանիկն առանձին, ահա՛ *զկուսածինն* որդի՝ ո՛չ ասէք աստուած՝ ըստ նեստորի: - 68. Զի գալ հոգւոյն սրբոյ պատճա՛ռ էր կրկին ներգործութեան. այսինքն սրբութեան արմատոյ մեղաց. և պտղաբերութեան *կուսածին* զաւակին. ծնանիլ և կոյս մնալ յետ ծննդեանն: - 463. Իսկ մեք դասք ուղղափառաց խոստովանիմք *զկուսածին* մարմինն քրիստոսի առանց ապականութեան. - 597

**ԿՈՒՍԱԿԱՆ +** Զի ո՛չ յառնէ կամ ի սերմանէ այլ *կուսական* ծնունդ: - 305. Երրորդ՝ զանթառամ դեղն *կուսական*: - 383. Եւ աւետեօք հրեշտակապետին ծնաւ փրկիչն ի *կուսական* արգանդէ: - 422. Յետ որոյ ծնեալ ի նոյն *կուսական* արգանդէ և ո՛չ յայլ ինչ մասնէ: - 469. Վասն որոյ սրբեսցէ զսկզբնականն մեղք՝ յարգանդէ *կուսական* հոգւով սրբութեան ծնաւ: - 469. Եւ որպէս ասացաւ ունի մայրական խնդութիւն հանդերձ *կուսական* պատուով: - 469. Երկրորդ՝ զի վէմն առանց ձեռին հատաւ ի *կուսական* լեռնէն ըստ դանիէլի: - 470. Նա՛խ՝ զի ո՛չ ապականիւր *կուսականն* ամբողջութիւն: - 470. Զի որպէս ի *կուսական* արգանդէ, նոյնպէս ծնաւ ի կոյս գերեզմանէ վիմովն կնքելով: - 471. Իսկ զօծումն բնութեանն միաւորութեան՝ ընկալաւ ի *կուսական* արգանդին. ուր խառնեալ միաւորեաց զմերս բնութիւն ընդ իւրում աստուածութեանն և ծնաւ քրիստոս որ թարգմանի օծեալ: - 475. Հինգերորդ՝ ապականութիւն մեր մարմնոցս է՛ ի սերմանէ հօր ի ձեռն կնոջ խառնեալ. իսկ մարմին բանին ո՛չ է ի սերմանէ հօր և մօր. այլ ի *կուսական* արգանդէ և յանապական արենէ բեղնաւորեալ որպէս ցուցաւ ի վերոյ ի սոյն գլուխ ի **ժ** համարն. ապա ուրեմն անապակա՛ն է մարմին բանին աստուծոյ: - 499. Ութերորդ՝ մանանայն յանապատի էր օրինակ անապական մարմնոյ փրկչին. և է՛ անապական մինչև ցայսօր ի մէջ ոսկի սափորին. ապա ուրեմն ճշմարիտ մարմինն քրիստոսի էր անապական ի *կուսական* արգանդէ աստուածածին կուսին: - 499. Երրորդ՝ ի մէջ գիշերի ծնաւ ի *կուսական* արգանդէն որպէս յա՛յտ է ի հովւացն և հրեշտակացն: - 512. և առանց ցանկութեան մեղաց ո՛չ ոք կարէ ծնանիլ. բայց միայն տէր մեր որ առանց ցանկութեան ի *կուսական* արգանդէ ծնաւ՝ ո՛չ ունէր զմեղս սկզբնական: - 592

**ԿՈՒՍԱՆ +** Ընդ որովք զինուորք ճգնաւորք. ընդ նոսին և *կուսանք* և մարտիրոսք: - 347. Իսկ նաշիին՝ ճգնաւորք և *կուսանք*. որք ի յերկանս ճգնութեան ճընշեն զմարմինս իւրեանց: - 374. Իսկ ի վերջինն գաւառ՝ կիսովն իմանին *կուսանքն* ընտրեալք. որք լնուն զթերութիւն անկեալ դասուն: - 391. Այլ ի *կուսանս* հանգչի. որք հրեշտակաց նմանք եղեն կուսութեամբ. վասն այն ասեն աստուած բնակեալ է յերկինս ուր *կուսանք*

են հրեշտակք. և ո՛չ յերկրի ուր ամուսնացեալք են: - 404. Այլ և **ժ** աշտանակն. **ժ** *կուսանք* լապտերօք: - 441. Ձերծեալ յանձից. զի անիծեալք էին *կուսանք* և ամուսնացեալք: - 469. *Կուսանք*` զի ո՛չ ծնան: - 469. Չորրորդ` որպէս արու բռնացա՛ւ տէր ի քակել զօրէնս բնութեան. և խզեաց զկապ *կուսանաց* և զմայրական. այսինքն զի որ մա՛յր է` կոյս ո՛չ է. և որ կոյս է` մայր ո՛չ է: - 480. Զի պոռքէր քոյր թագաւորին թէոդոսի ի *կուսանաց* վանս էր. և պղծեցաւ պոռնկութեամբ ի մարկիանոսէ. և ապա՛ եղև կին նմա. և ասեն թէ ի նեստորէ՛ էր մկրտեալ: - 542. ...զի անցեալ է ժամանակն որպէս յիմար *կուսանացն*: - 684. ...այսինքն է որ ի վեր քան զհրամայեալ օրէնսն կատարեցին զգործս. որպէս առաքեալքն, մարգարէքն, մարտիրոսքն, *կուսանքն*, և այլքն: - 687. Զքուն մահուն ասէ մինչ ի կատարած. և ի մէջ գիշերի յարութեանն աւուր յարեան ամենայն *կուսանքն* և կազմեցին զլապտերս: - 693. Եւ զի ո՛չ գոյ ողորմութիւն անդ` յա՛յտ է ի յիմար *կուսանացն*. և ո՛չ զերծումն ի տանջանաց. - 700. Պատասխանեն վարդապետք եթէ երից ոմանց. այսինքն *կուսանաց*. և մարտիրոսաց. և վարդապետաց: - 712. Եւ գերեզանց գործ ցանկութեանն է տանել ողջախոհ կուսութեան. և զայս ունին *կուսանքն*: - 712. Նա՛խ` զի արու և էգ անդ ո՛չ ճանաչին մասին անդամօք, այլ յատուկ դիմօք և բարի գործովք և փառօք և անուամբ զանազանին. որպէս դասք *կուսանացն* ի հայրապետացն: - 725. Որք ի վեր քան զօրէնս գործեցին. որպէս առաքեալք, մարգարէք, մարտիրոսք, *կուսանք*, և այլք: - 739. Այսմ փայտի ո՛ստ են **գ** կարգ յեկեղեցի աստուծոյ. այսինքն ամուսնացելոց, ժուժկալողաց, և *կուսանաց:* - 755. Ա՛րդ` ի տեղի անկելոց հրեշտակացն` ըստ թուոյ նոցա խառնելո՛ց են դասք *կուսանաց* սրբոց: - 760. Ո՞րպիսի լիցի օրն այն, մինչ քեզ մարիամ մայր տեառն ընդ առաջ ելանէ հանդերձ պարուք *կուսանաց*: - 764

**ԿՈՒՍՈՒԹԻՒՆ +** Իսկ թէ ոչ կամաւ. ո՛ է որ զնա բռնադատեաց. զի բնութիւնն ողջախո՛հ է. և յայտնէ զայս *կուսութեամբ* կեալն բազմաց: - 36. Եւ կարեմք ասել զմի և զնոյն` *կուսութեամբն* կոյս. և մայրութեամբն մայր: - 77. Եւ դարձեալ` ասի` *կուսութեամբն* կոյս, և *կուսութեամբն* մայր: - 77. Եւ ի սէր աստուածային շարժեալք` ոմանք յիմաստասիրութիւն. այլք ի ճգնութիւնս. ի *կուսութիւն*. և ի զանազան առաքինութիւնս: - 126. Ապա յա՛յտ է զի *կուսութիւնն* է ունակութիւն. և ապականութիւնն պակասութիւն նմին: - 165. Այլ արդ` *կուսութիւնն* է ի կարելոյն որ ունի զգոլն և զչգոլն. իսկ ապականութիւնն է յանկարելւոյն. որ ունի զմինն և ո՛չ կարէ հակադարձիլ առ միւսն: - 165. Իսկ գործ պոռնկութեանն զկնիք *կուսութեանն* շրջէ և զբնութիւնն ապականէ...: - 165. Իսկ աբեղայն ուխտեալ է *կուսութեամբ* քահանայագործել: - 167. Վեցերորդ` զի ասէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս կազմութեան եթէ առաջին կեանք դրախտին էր *կուսութիւն* և անապականութիւն և հրեշտակաց նմանութիւն. և յետ յարութեանն վերըստին դառնամք յառաջին կեանս դրախտին. յանապականութիւն և ի հրեշտակաց հաւասարութիւն: - 225-226. Ասեն սուրբք, եթէ զորօրինակ աստուածածին կոյսն մարիամ *կուսութեամբ* ծնաւ առանց սերման կատարեալ և ճշմարիտ: - 226. Նոյնպէս և ի դրախտին կարէին ծնանիլ *կուսութեամբ* և առանց սերման. կատարեալ մարդ ի բնութենէն ադամայ: - 226. Բայց սուրբն գրիգոր նիւսացին **ժ** աստիճան դնէ անկման մարդոյն ի դրախտէն ի գիրս *կուսութեան*: - 280. Այլ կամ իբր զհրեշտակս, կամ որպէս ի միոյ լուսոյ բազումք, կամ *կուսութեամբ* ծնունդ. որպէս սուրբ կոյսն մարիամ աստուածածին սրբութեամբ և *կուսութեամբ* ծնեալ փոխեաց զկարգ բնութեան ծննդեանս որ ի սերմանէ առն և կնոջ. զի սա՛ ծնունդ միայն ի մօրէ՛: - 280. Եւ նոյ` վասն *կուսութեան* սրբութեանն զշ ամն, և վասն արդար գոլոյն...: - 288. Երրորդ` մինն *կուսութեամբ*, և միւսն ողջախոհ ամուսնութեամբ. զի ցուցցէ թէ ի կուսից և յամուսնացելոց մտցեն յարքայութիւնն երկնից: - 289. Երրորդ` զի *կուսութեամբ* եկաց. և այսորիկ երկնայինք են և հանեն զմարդն առ աստուած: - 289. Երկրորդ` սառա ամլութեամբ ծնաւ զիսահակ. և մարիամ *կուսութեամբ* զէմմանուէլ. և եկեղեցի միշտ *կուսութեամբ* ծնանի զծնունդս աւազանին: - 307. Անփուտ փայտն անապական *կուսութիւնն*: - 345. Զի՞նչ կայր ի սրբութեան մէջն... Եւ խորովեալքն` *կուսութեամբ*: - 346. Երկրորդ` օրինաւոր ամուսնութիւնն պատուական է վասն որդեծնութեան. այլ ո՛չ է նա՛ առաքինութիւն. որպէս *կուսութիւն* պահք` և աղօթք: - 356. Ա՛րդ` զերկու օրհնութիւնս **բ** կտակօք բաշխեաց մարդկան. զմարմնոյ աճումն և ընչից` ետ իսրայէլի. և զհոգւոյ աճումն *կուսութեամբ* և աղքատութեամբ` ետ քրիստոնէից: - 403. Այլ ի կուսանս հանգչի. որք հրեշտակաց նմանք եղեն *կուսութեամբ*. վասն այն ասեն աստուած բնակեալ է յերկինս ուր կուսանք են հրեշտակք. և ո՛չ յերկրի ուր ամուսնացեալք են: - 404. Եւ եղիա և եղիսէոս *կուսութեամբ* եղեն զարմանալիք: - 404. Ասա՛ թէ` չափաւորն ընդունելի է. այլ անչափն պոռնկութիւն և ագահութիւն. իսկ *կուսութիւն* և աղքատութիւն որ չափ առաւելու` այնչափ գեղեցկանայ: - 404. Ասա՛ թէ` *կուսութիւնն* յերկինս օրհնեցաւ. զի հրեշտակք կուսութեամբ աճեցին: - 404. Ասա՛ թէ` կուսութիւնն յերկինս օրհնեցաւ. զի հրեշտակք *կուսութեամբ* աճեցին: - 404. Եւ ի վերայ այսր` *կուսութեամբ* ծնաւ մարդն ադամ ի հողոյ. և *կուսութեամբ* ծնանիմք յաւազանէն որդիս աստուծոյ. և *կուսութեամբ* ծնանիմք ի յարութեանն ի կեանս անմահ: - 404. Երրորդ` շնորհք

*կուսութեան*. որ և սա՛ է յատկական եղանակ. որպէս սրբոյ կուսին: - 462. Այլ և ի վերայ ա՛յնր՝ ունէր և գերրորդն սրբութիւն. որ *կուսութեան* իւրոյ էր յատկական. ջնջումն ի սկզբնական և յարմատոյ մեղաց: - 463. Զի ունի մայրական խնդութիւն հանդերձ *կուսութեան* պատուով: - 463. Երկրորդ՝ զի հրեշտակք ի հարկէ բնութեան ունին *զկուսութիւնն*. իսկ աստուածածինն զայն պահեաց մաքրութեամբ մարմնով *զկուսութիւն* ողջախոհութեան: - 463. **Նախ՝ զի աստուած էր ողջոյնառաքն. որ խօսէր զկոյսն ի հարսնութիւն *կուսութեան*, կուսաբեր լինիլ պտղովն**: - 464. Տասներորդ, յա՛յտ է ի սքանչելեաց ծննդեանն. զի անսերմն յղացումն. և անապական ծնունդ. և անխախտ *կուսութիւն*: - 466. Երրորդ՝ զի ո՛չ ինչ յորոց ստեղծ աստուած գարշի բնակիլ. մանաւանդ յարգանդի զարդարեալ *կուսութեամբ*. զի զոր ստեղծ ձեռօք, բնակէ՛ ի տան ձեռագործի իւրոյ: - 469. Զի *կուսութեամբ* ծնաւ և զցաւս ո՛չ զգաց: - 469. Բարոյականն՝ նոյի, որ ի բարուց վարդապետեալ բնակէր ի յանապատ և պահէր *զկուսութիւն* եծ ամ: - 528. Երկրորդ՝ զի *կուսութեամբ* ծնանի առանց ապականութեան. և զայս պատճառէ՛ հոգին սուրբ և նիւթ ջրոյն զի հեղո՛ւկ է: - 590. այլ սիրելիք են բարի գործօք առ հասարակ հաւատացեալքն. և նազելիք *կուսութեամբ* ճգնեալքն և մարտիրոսքն: - 600. իսկ *զկուսութիւն* և զմարտիրոսութիւն նազելեացն հրամայէ. - 600. Երկրորդ՝ ճանապարհի կոչի *կուսութեան* և անմեղութեան. - 665. որով տէրն մեր եկն առ մեզ *կուսութեամբքն* մարիամու: - 665. Ութերորդ, գ պսակ տայ աստուած արդարոցն. մին *զկուսութեան*. և մի զողջախոհութեան. և միւս զապաշխարութեան. - 675. Զյղանալն ապականութեամբ և *կուսութեամբ* ասեն. թէ ի ներքինեաց առանց խառնելոյ ի ներքս անցեալ յղութիւն առնէ: - 706. Եւ գերեզանց գործ ցանկութեանն է տանել ողջախոհ *կուսութեան*. և զայս ունին կուսանքն: - 712. Զքափանցութիւնն՝ զի *կուսութեամբ* ծնաւ: - 722. Զոր օրինակ ո՛չ էր բնութեանս անսերմ յղանալ և *կուսութեամբ* ծնանիլ, զոր բանն աստուած սքանչելապէս ներգործեաց: - 733. Երրորդ, *կուսութիւնն* ծնաւո՛ր է. և անուսնութիւնն փաքսունաւոր. և դարձեալքն ի մեղաց երեսնաւոր: - 757. Դարձեալ, ծառ կենա՛ց է աստուածածին կոյսն մարիամ բղխեալ յարմատոյն յեսսեայ. երկնուղէշ զարգացմամբ մշտասաղարթ *կուսութեամբ* ծաղկեալ և պայծառացեալ հոգւոյն սրբոյ եկաւորութեամբն. և պտղաբերեալ մեզ անմահ պտուղ զբանն մարմնացեալ. յորմէ վայելեալք երկնաւորք և երկրաւորք ի շնորհաց նորին զյաւիտենից կեանսն ժառանգեցաք: - 768

**ԿՈՒՏԵՄ +** Երկրորդ՝ զի ժողովուրդն առանց երկիւղի անցանիցէ. զի թէ դիզեալ և *կուտեալ* լինէր, երկիւղ գոյր: - 414. Միջնովն ժողովեալ *կուտին* մարմինքն: - 713

**ԿՈՒՐ +** Եւ այն զի քամեալ լցաւ *կուրն* և ո՛չ երկիր. զի մնացին և կատարեցան բանք մարգարէիցն ամենայն և ո՛չ եղծան. իսկ յետոյ հոգի տեառն ելից զտիեզերս մարգարէութեամբ և շնորհօքն քրիստոսի: - 421

**ԿՈՒՐԱՆԱՄ +** *Կուրացեալ* հրէայքն առարկեն ընդդէմ մեր թէ՝ դեռևս ոչ է եկեալ մէսիայն: - 27. Եւ այնչափ *կուրացեալ* է՝ մինչ զի պատերազմի ընդ դէմ աստուծոյ...: - 146. Եւ թէ այս բ երակս բռնուի մարդն *կուրանայ*: - 239. Նոյնպէս և զփոխումն ենովքայ տեսին եղբարքն ուստերքն և դստերք նորա. զի մի՛ ասիցեն թէ սպա՛ն զնա՛ *կուրացեալն* դամեք թոռն կայենի: - 290. Եւ զի ճշմարիտ վկայք են սոքա, և տէր մեր առ *կուրացեալ* հրէայսն զսոյն կացոյց վկայ, ասելով «թէ և ինձ ո՛չ հաւատայք, սակայն գործո՛ցն հաւատացէք»: - 551-552

**ԿՈՒՐԱՑՈՒՑԱՆԵՄ +** Եւ կոչի արուսեակ դարձեալ, զի քան զայլս՝ իւր լուսոյ գեղեցկութիւնն առաւել *կուրացոյց* զինքն: - 148. Եւ կսկի՛ծ է անհաւատից. և *կուրացոյց* զօձն կամակոր: - 361

**ԿՈՒՐԾՔ +** Եւ ութն ոսկր *կուրծքն*. որ լինի բճխը ոսկր: - 243. Եւ արտաքոյ՝ *կուրծքն* քահանայապետին, որ է՛ բնակարան սրտին: - 367. Եւ *զկուրծսն* բախելն, որ բնաւորեալ է կանանց յապաշաւելն *զկուրծսն* բախել և ողբալ: - 628. ...և զբարձս ոտիցն և զզլուխն և զերեսս և *զկուրծքն* հարեալ...: - 670

**ԿՈՒՐՈՒԹԻՒՆ +** Այլ քլւի որպէս ունակութիւն և պակասութիւն. զի բարին ունակութիւն է, և չարն պակասութիւն նմին. որպէս *կուրութիւն* երեսաց՝ և խաւար լուսո՛յ է պակասութիւն: - 21. Եւ այսպիսի տգիտութիւնս խաւա՛ր է մտացն և *կուրութիւն*: - 103. Ասելի է թէ՝ կոյսն և ապականեալն են հակակայք ըստ ունակութեան և պակասութեան. որպէս երեսք և *կուրութիւն*...: - 165. Իսկ խաւարումն արեգականն նշանակէ՛ զամենայն *կուրութիւնս* հրէիցն: - 490. Դարձեալ նշանակէ՛ զամենայն *կուրութիւնս* մարմնասիրաց ի մէջ եկեղեցւոյ: - 490. Եօթներորդ՝ ճանապա՛րհ է *կուրութեան* և անհաւատութեան. - 666. Դարձեալ ժամանակաւ փորումն աչաց՝ առնէ մշտնջենաւոր *կուրութիւն*: - 744

**ԿՈՓԵՄ +** Եւ յետոյ ասելն դու *կոփեա՛* քեզ տախտակ: - 350. Զի առանց *կոփելոյ* էր առաջին տախտակն աստուածագիծ. և կոյսն առանց սերման յղացաւ: - 639

**ԿՌԱՄՈԼ +** Վեցերորդ՝ փրկեաց ի *կռամոլ* դիւաց, և էած յաստուածպաշտութիւն հաւատոց. որպէս

ասէր յետ յարութեանն «երթա՛յք մկրտեցէք զամենայն հեթանոս յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. և ուսուցէք նոցա պահել զամենայն»: - 473

**ԿՌԱՄՈԼՈՒԹԻՒՆ +** Իսկ մեծութիւն կռապաշտութեան այնքան էր՝ մինչ միածին որդին պատարագեցաւ մարմնով, և ապա բարձաւ մեղք *<u>կռամոլութեանն</u>* յաշխարհէ: - 33. Իսկ վաքսունն զբաբելօնի պատկերն **կ** կանգուն երկայն, և **զ** լայն. յորում ընդարձակեցաւ *<u>կռամոլութիւն:</u>* - 708

**ԿՌԱՇՈՒՐԹՆ +** Նոյնպէս ի թռչունսն, *<u>կռաշուրթն</u>* և մսակերն նոքա են, որ պատառեն զընկերս՝ պիղծ են: - 365

**ԿՌԱՊԱՇՏ +** Արդ՝ *<u>կռապաշտն</u>* և հերձուածօղն հաւասա՛ր են յամբարիշտ գոլն. զի որպէս շուն դառնայ ի փսխած իւր. այսինքն զի նա ո՛չ ունէր, և սա՛ ուրացաւ և դարձաւ անդրէն: - 33. Կենդանեաց զենմունքն զի յանունն աստուծոյ էր՝ սրբէր զմարդ. վասն է՞ր ապա ոչ սրբեին *<u>կռապաշտքն</u>*. զի և նոքա յաստուծոյ անունն զոհէին և խնկէին: - 361. Երկրորդ՝ զի *<u>կռապաշտ:</u>* - 442. Եօթներորդ, զի մկրտելն է գործ քահանայի. և քահանայութիւնն է սպասաւորութիւն աստուծոյ. իսկ զայս սպասաւորութիւն աստուծոյ և ո՛չ *<u>կռապաշտքն</u>* ունէին սովորութիւն սնոտի կռոցն ի ձեռն կանանցն մատուցանել զպատարագն...: - 589. Եւ զբուն չարսն ի դժոխս. որք են անհաւատք, և չարք, և *<u>կռապաշտք</u>*...: - 687. Որք արտաքոյ օրինաց մեղանչեցին որպէս *<u>կռապաշտք</u>*՝ և հրէայքն որք յետ խաչելութեանն քրիստոսի. զի յետ խաչին պահպանութիւն օրինացն ի կռապաշտութիւն է համարեալ նոցա: - 739

**ԿՌԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ +** Իսկ մեծութիւն *<u>կռապաշտութեան</u>* այնքան էր՝ մինչ միածին որդին պատարագեցաւ մարմնով, և ապա բարձաւ մեղք կռամոլութեանն յաշխարհէ: - 33. Երկրորդ և ոչ վասն յետին յանցանացն *<u>կռապաշտութեան</u>* եպերեմք զիմաստութիւն նորա և ո՛չ ընդունիմք...: - 40. Նախ՝ խաբէութեամբ զմարդիկ ի մեղս և ի *<u>կռապաշտութիւն</u>* ձգելոյ: - 153. Զի թէ ո՛չ էր ասացեալ ընդ պատկերին զնմանն լինիլ, ամենայն ոք պատճառէր, և զմարդն պաշտելով անկանէր ի *<u>կռապաշտութիւն</u>*...: - 274. Քսաներորդ, և որպէս յովսէփ եթող զքուրմն և զերկիր նոցա, զոր քրիստոս էր բառնալոց զմեծամեծ մեղսն և *<u>զկռապաշտութիւնն</u>*. զի ըստ առն և զօրութիւն իւր. և ըստ աստուծոյ և գործք իւր: - 314. Երրորդ, զի կործնչելոց էին անդրանիկ ծնունդքն սատանայի. որ էր հպարտութիւնն և *<u>կռապաշտութիւն</u>*. զի խոնարհութեամբ էր գալուստն քրիստոսի և ի մի աստուածպաշտութիւն հրաւիրեաց և կորոյս զպաշտօնն դիւական: - 334. Դարձեալ՝ աստուած յառաջնումն ծննդեան յորժամ զյանցաւորս ըստ բնական մեղացն՝ ջրհեղեղաւն ջնջեաց. յերկրորդումն ծննդեան յորժամ զյանցաւորս ի *<u>կռապաշտութիւն</u>*՝ կարմիր ծովովն ընկղմեաց...: - 411. Կամ բարկացուցանելով զաստուած. որպէս *<u>կռապաշտութիւնն</u>*. և այլք այլ ինչ ասեն: - 565. Որք արտաքոյ օրինաց մեղանչեցին որպէս կռապաշտք՝ և հրէայքն որք յետ խաչելութեանն քրիստոսի. զի յետ խաչին պահպանութիւն օրինացն ի *<u>կռապաշտութիւն</u>* է համարեալ նոցա: - 739

**ԿՌԱՊԱՐԻՇՏ (տ. ԿՌԱՊԱՇՏ) +** Իսկ թէ զմարդկային բնութիւնն պաշտէք, եղէք *<u>կռապարիշտք</u>*. և նո՛ր և եղական ոմն աստուած մուծանէք յԵրրորդութեանն կարգ: - 90

**ԿՌԻՉՔ +** Յմայն է՝ որ զտեսս աչաց կամ զձայն հմայէ՛. և զթռիչս և *<u>զկռռիչս</u>* հաւուց. և զձայն կրակի և զաճառաց. և զդրան, կամ աքիս տեսեալ. կամ բէճ. կամ մուճակ. կամ այլ ինչ այսպիսի...: - 388

**ԿՌԻՒ +** Դարձեալ ասեն, եթէ ոչ է հարկ՝ ընդէ՛ր ոմն քաղաք կործանի և ոմանք ո՛չ. և ոմն նաւ հեղձանի, և ոմանք ի *<u>կռիւս</u>* անկանին: - 12-13

**ԿՌՈՆՈՍ** (տեքստում Կռօնոս) **+** Զզօհալն *<u>Կռօնոսի</u>*. Զմուշթարին Դիոսի. Զմառեխն Արէսի. Զարեգակն Իլիոսի. կամ Զևսիլոսի. Զօհրայն. Ափրոդիտեայ. Զօտարիտն Երմեսի. Զլուսինն Սելինի: - 190. Զոր սուրբ հայրապետք փոխեցին զանուանս նոցա և եդին բոլոր շաբաթուն եօթն աւուրցն... Եւ *<u>զկռօնայն</u>* շաբաթ: - 190

**ԿՌՈՒԻՄ +** Նախ՝ ոչ կարել վասն նուազութեան զօրութեան ժամանակի և դիմի. որպէս ո՛չ կարէ մանուկ *<u>կռուիլ</u>*՝ և կորիւն տեսանել: - 44. Եւ **ժ** կատարեալ թիւ է. նշանակէ՛ զկատարեալ զօրութիւնս թշնամւոյն որով *<u>կռուի</u>* ընդ մեզ. զոր նշանակեն եղջիւրքն: - 151. Զի՞նչ է որ ընդ դովտայ որդիսն և եսաւայ ո՛չ հրամայեաց *<u>կռուիլ</u>*. այլ ընդ ամուր հարցուցն: - 393. Նշանակէ՛ որ չէ՛ պարտ *<u>կռուիլ</u>* մեզ ընդ ամենայն մարդկան. թէ չար թէ բարի. զի ա՛զգ են մեր և որդիք ադամայ: - 393. Թէ կրօնաւոր է՝ հարցանէ թէ ծոյլ եղեա՞լ է յաղօթքն. կամ անհնազանդ. թէ բղջախոհ. թէ յատուկ իրք ունօղ. թէ պճնօղ. թէ որոնօղ լաւ կերակրոց և ըմպելեաց. թէ քնափ և թէ *<u>կռւօղ</u>*: - 601

**ԿՍԿԻԾ +** Եւ որպէս կիրք ցաւոցն մարդոյն են, զի զգա՛յ *<u>զկսկիծն</u>*. նոյնպէս և կիրք հեշտութեանն նորա՛ են, եթէ չարեաց և եթէ բարեաց, ապա ուրեմն մեր է ներգործութիւնն և ո՛չ հարկին: - 11. Չորրորդ՝ զի չարչարանօքն իւրովք փորձեցաւ՛ զհնազանդութիւնս մեր. այսինքն *<u>զկսկիծ</u>* և զծանրութիւն

չարչարանաց մերոց. որպէս թէ ունիցի գիտել իւրովք զմերս և ողորմիլ մեզ: - 43. Յաչքն աղի ջուրն, զի տեսցէ *զկսկիծ* անձինն և այլոց, և արտասուեսցէ: - 243. Եւ *կսկի՛ծ* է անհաւատից. և կուրացոյց զօձն կամակոր: - 361. Հինգերորդ, *կսկի՛ծ* է մարմնոյ. և մեղքն հոգւոյ: - 367. Նա՛խ՝ զի դիւրին է *կսկիծ* վիրացն: - 415. Նոյնպէս ի սրտէն ելանէ *կսկիծ* արտասուաց. և զհեշտութիւն նորա քաւէ՛: - 619. Դարձեալ՝ երէկ վասն մեռելոյն *կսկծոյ* կոծ մեծ արարաք. և այն դժուարութիւն էր աստուծոյ...: - 680

**ԿՍԿԾԵՑՈՒՑԱՆԵՄ +** Նա՛խ՝ զի ի դառն մաղձոյն հոսի յորովայնն ի ներքոյ սրտին և *կսկծեցուցանէ* զսրտակրանքն - 619

**ԿՍԿԾԻՄ +** Կամ չողորմել *կսկծողաց*. իբր պղնձի մարմին զգեցողաց: - 376. և ծխատեսակ հիւթն *կսկծօղ* վերանայ ի գլուխն և թափի՛ ընդ աչսն և լինի արտօսր: - 619. Երկրորդ՝ տեսանեն և *կսկծին*. զի ո՛չ հաւատացին ի խաչեալն վասն մեր: - 741

**ԿՍԿԾՈՏ +** Աղն *կըսկծո՛տ* է, նշանակէ՛ զխրատն: - 356

**ԿՏԱԿ +** Ահա նոր ուսմունք և երրորդ *կտակ*: - 89. Եւ տէրն զհին *կտակն* որ խստութիւն էր և սպանօղ՝ ընդ նորոյս խառնելով. որ հոգւով է և կեցուցանօղ: - 126. Հինգերորդ՝ զի և քրիստոս որ եղև երկրորդ *կտակ* և օրէնք մեր, կոչի ծնունդ և արարած: - 179. Եօթանասունսն**թ**, Վասն վերջին *կտակացն*: - 285. Մետասաներորդ՝ յովսէփ **ժե** ամաց վաճառեցաւ **լ** դահեկանի որպէս ասէ ի *կտակն:* - 313. Քսանն**է**, մովսէս ի վախճանիլն իւր՝ *կտակ* գրեաց զլինելոցն, և զեկեղեցին յանձնեաց ի կոյսն յեսու: - 329. Եւ անապական վարուք ոսկէզարդեալ ունի յինքեան զերկուս *կտակս*: - 345. Ա՛րդ՝ զերկու օրհնութիւնս **բ** *կտակօք* բաշխեաց մարդկան. զմարմնոյ աճումն և ընչից՝ ետ իսրայէլի. և զհոգւոյ աճումն կուսութեամբ և աղքատութեամբ՝ ետ քրիստոնէից: - 403. *Կտակ* գրեն և օրհնեն: - 408. Նա՛խ՝ զի *կտակովն* զմարմնաւորքն կարգաւորեն, և օրհնութեամբն զհոգևորսն: - 408. Եօթներորդ՝ ի կատարածի ասէ՝ «եկա՛յք օրհնեալք հօր իմոյ». և մտանեն ի փառս. զայս նշանակէ *կտակ* և օրհնութիւնն ի վախճանի: - 409. Իսկ սայլն՝ կրկին *կտակքն*. որ միշտ հոլովին առ մեզ: - 426. Երեսունևէ զօրավարք դաւթի. և **լէ** թիւ հնոյն օրհնաց. և այլ նորոց *կտակի*. և կամ **իբ** գլխաւո՛ր են գրոց հնոց. և **ժ** բան օրհնաց. և չորից աւետարանաց. և միոյն առաքելական: - 438. Եւ *կտակքն* վերջին: - 450. Այլ զերկոտասանքն մին գիրք, և զերեմիայն մին գիրք համարեալ, լինի **լզ** գիրք հին *կտակքն* բովանդակ: - 450. Իսկ նոր *կտակքն* յայտնի՛ են: - 450. Իսկ Սիրաք և Իմաստութիւնն և Յուդիդն և Տուբիդն և Տուբիայն և Մակաբայեցիքն և *Կտակքն* և այլք, չեն յայսմ համարի: - 451. Բանն աստուծոյ մի է թէ բազում. զի բազում երևի ի հին և ի նոր *կտակս* և յիւրաքանչիւր թուղթս գրեալ...: - 529. ...որպէս յա՛յտ է յառաջիկայդ ի զանազան վկայութեանց վարդապետաց սրբոց և ի հին և ի նոր աստուածաշունչ *կտակաց:* - 691

**ԿՏԱԿԱՐԱՆ +** Յետ ընդդէմ արտաքս աքսորելոյ զարտաքինսն. և ընդ մէջ հերձելոյ զհերձուածօղսն, և զճշմարիտն աստուածաբանութիւն հաստատելոյ ի մեզ, բե՛ր սկսցուք զսկիզբն արարչութեան եղելոց մինչ ի վախճան կատարման այժմոյս՝ ըստ կարգի հին և նոր *կտակարանաց* հետևեալ: - 156. Եւ **բ** ձիթենիքն՝ **բ** *կտակարանք* իւղալիցք և պարարտք: - 347. Դարձեալ՝ քաղեբ և յեսու. հին և նոր *կտակարանք*. որք զհանդերձեալն մեզ պատմեն. և զյաղթելն անմարմին թշնամւոյն: - 380. Երկրորդ՝ հրէայքն ի գերութեան կախեցին *զկտակարանքն* ի յուռեաց, և ո՛չ հաւատային կենաց. որ ասէր *կտակարանքն* պահել զպատուիրանս աստուծոյ և կեալ: - 405. Ո՞ր քան են և ո՞րք գիրք սուրբք հին և նոր *կտակարանք*: - 450. Եւ նոր *կտակարանքն* ամենայն՝ են տունք՝ **ա՞. փ. շ.դ.ա**: - 451. Միահամուռ հին և նոր *կտակարանքն* **դ ա՞. էռ. չ.ի** տուն է: - 451. Չորրորդ՝ զկատարեալ իմաստութիւն գիտութեանն ամենայն *կտակարանաց* մարգարէից...: - 524. Նոյնպէս և անչափութիւն բանից և խրատուց հարց և իմաստնոց գիրք սուրբք՝ հին և նոր *կտակարանք* ցուցանեն զանչափ հիւանդութիւն հոգւոյ. զի սոքօք առողջացին: - 531. Եւ զի քրիստոս է հիմն երկուցն. և **դ** անկիւն առաքեալք և մարգարէք. և հին և նոր *կտակարանք* ասացեալ նոցա: - 533. Տասներորդ, ասի հնձան և *կտակարանքն* սուրբ. ուր հին և նոր իմաստութիւն ժողովեցաւ ի խառնարանին գինւոյ. յորմէ բաժակէ՛ արբին առաքեալքն ի սուրբ վերնատունն. և արբուցին ամենայն տիեզերաց...: - 749

**ԿՏԱՒ +** Է՛ որ ինքնաչա՛փ է. որպէս գիծն ի կանգունն՝ ըստ ինքեան չափէ՛ զկանգունն ի յորում է. և ըստ պատահման չափէ՛ *զկտաւն* ի յորում ո՛չ է: - 198. Ջորօրինակ՝ եթէ ոք պատառէ *զկտաւ* և թափի փոշին: - 204. Երեսուննմի, գիշերի ընդ պատուհանն ել, թողեալ զպատանսն յանկողնի. և տէրն ի գիշերի յարուցեալ եթող *զկտաւն* ի գերեզմանին կնքեալ: - 436-437. Յորում ի մէջ գիշերի թողեալ *զկտաւսն* ի գերեզմանի և յարեաւ ել առ հայր ի յերկինս: - 513. Զի՞նչ է վարշամակն ծալեալ և *կտաւն* ո՛չ: - 517. Ծալեալ վարշամակն նշանակէ զաստուածութիւնն որ գլուխ է. և *կտաւն* զմարդկութիւնն: - 517. Իսկ պատանքն ո՛չ ծալեալ. զի խորհուրդ տնօրէնութեանն ո՛չ ամենևիմբ յայտնի է և ո՛չ անյայտ. որպէս *կտաւն* բազո՛ւմ ունէր փոթուածս: - 517. Եւ սոքա ամենայն ստուգե՛ն զյարութիւն նորա թէ ո՛չ է գողացեալ. զի գողն ո՛չ ծալէր զվարշամակն և *զկտաւն*

զըմռեալ: - 517. Իսկ ի սրբութիւն սրբոցն մերկանալ զայն և զգեստ սպասաւորի զգենուլ միայն սպիտակ *կտաւի* և խնկարկել անդ: - 636. Ա՛րդ՝ եթէ ի հասարակ ժողովրդենէ իցէ ննջեցեալն, հանեն զիին հանդերձն և պատե՛ն սուրբ *կտաւովք* և զգլուխն փակեղամբ և վարշամակօք, և օդ յոտս: - 671. Եւ զի *կտաւն* յերկրէ է և արուեստիւ գործեալ. ցուցանէ թէ զոր ինչ գործեաց ոք ի յերկրի, զնոյն զգենու և զարդարի: - 671

**ԿՏՈՒՑ +** Ո՞րք և ո՞յք են բնութեամբ զէնք կենդանեաց... Կամ *կտուց*. որպէս բազէի: - 216

**ԿՏՐԵՄ +** Այլ մի ասեմք զներգործութիւնսն վասն մի միութենէն ներգործելոյ. որպէս մի ձեռն *կտրէ՛* և կարէ՛. գրէ՛ և ջնջէ՛: - 85. Իսկ թէ ոք ընդդիմանալ ասելով, որպէս հրացեալ սուրն *կտրէ* և այրէ՛, այսպէս և կրկին ներգործութիւնք են ի քրիստոս: - 85. Ասեմք եթէ՝ մի և նոյն հրացեալ նիւթո՛յն է *կտրելն* և այրելն. այսպէս մի և նոյն միաւորութեանն էր այսինքն մարդացեալ բանին բարձրագոյնքն և նըւաստականքն: - 85. Պատասխանեմ առաջնոյն, թէպէտ մի և նոյն ուրացական մասնիկն որ է ո՛չն՝ գործէ՛ զուրացումն և զբառնալն, այլ ուրացումն և բառնալն ո՛չ է նոյն. զի բազում պատաիի որ գործին նոյն է որպէս ձեռն. այլ գործելն ո՛չ է նոյն. որպէս *կտրելն* և կարելն: - 124. Եւ զի թև և ոտք եղև չարին, թևք և ոտք իւր *կտրեցան*: - 219. Ի սոցանէ երակ *կտրէ* մարդն ի բազկացն: - 244. Յիսունն**դ**, Սեղան օրհնելն. և աղուհաց *կտրել*: - 527. Զի՞նչ է աղուհաց *կտրելն*: - 655. Քսաննմի, և յառակս տնտեսին զոր կացոյց տէր ի վերայ ծառայիցն տալ կերակուր. զոր յետոյ տէրն եկեալ գտցէ այնպէս՝ երանի է ծառային այնմիկ. ապա թէ ոչ՝ ընդ մէջ *կտրեսցէ*: - 693.

**ԿՐԱԿ +** Հմայն է՝ որ զտեսս աչաց կամ զձայն հմայէ՛. և զթռիչս և զկըռիչս հաւուց. և զձայն *կրակի* և զաճառաց. և զդրան, կամ աքիս տեսեալ. կամ բէճ. կամ մուճակ. կամ այլ ինչ այսպիսի...: - 388

**ԿՐԱԿԱՆ +** Ութերորդ՝ զի աստ ի միաւորութիւն հոգւոյ ընդ մարմնոյ՝ զգայակից և ախտակից լինին միմեանց *կրական* գոլով: - 479. Դարձեալ ասեն նոքա, *կրակա՞ն* էր մարմինն քրիստոսի թէ անկրական: - 501. Զի թէ *կրական*, և ապա ապականացու: - 501. Իսկ հասարակ մարդիկ *կրակա՛ն* են կամաւորի և ակամայի. բնութեամբ և կամօք: - 502

**ԿՐԱԿԵԱՂ** - Դարձեալ պատճառե՛ն թէ՝ յետ յարութեանն եկեր ձուկն ընդ աշակերտսն. յորում *կրակեաղ* կայծականց տեսին և ձուկն խորովեալ և հաց. և օրն էր չորեքշաբաթի. և ի **ե** շաբաթի համբարձաւ: - 511

**ԿՐԵՄ +** Դարձեալ, որոյ է իր գործեացն՝ նորա՛ է և ներգործութիւնն. եթէ առնել և եթէ *կրել*. արդ՝ մարդո՛յ է հոգին և մարմինն և ձեռն. մարդո՛յ է ուրեմն և գործ նոցին, եթէ չար և եթէ բարի: - 11. Զորօրինակ ո՛չ է անզգուշագոյն յառել ի բոլորակս արեգական՝ զի շրտնու և ի սակաւուն զօր ունի. ըստ այսմ խնայեաց աստուած ի յազինս մարդկային, զի մի՛ *կրիցեմք* զկիրս զանկելոյ արուսեկին. որ ո՛չ կարացեալ տանիլ մեծութեան փառացն՝ զրկեցաւ և ի չափաւորէն: - 24. Առաջնոյն ասեմք. թէպէտ բանն աստուած բնութեամբ միաւորեսցի ընդ մարդկութեանն, ո՛չ *կրէ* շփոթումն և կամ խառնակումն ինչ: - 76. Զի անե՛դ է՝ յաղագս որոյ ո՛չ *կրէ* յեղումն ինչ և փոփոխումն կրից: - 76. Նմանապէս և արարիչն աստուած. ներքոյ և հիմն է ամենեցուն որ *կրէ* զամենայն բանիւ զօրութեան իւրոյ: - 110. Դարձեալ ասեմք, թէպէտ զթողութիւն ընկալաւ իսկապէս, և զպատիժս *կրեաց* հատուցմամբն, սակայն մնաց կնիք ապականութեանն ի յանձն որպէս ասացաք: - 166. Իսկ Առնելն՝ յարարածոց յայտ է. և *Կրել* զնոսա բանիւ զօրութեան իւրոյ ըստ առաքելոյ: - 172. Դարձեալ առնելն է գործ ստեղծման. իսկ *կրելն* գործ նախախնամութեան: - 172. Դարձեալ առնելն է յինքենէ յայլս. իսկ *կրելն* յայլմէ առինքն...: - 172. Վեցերորդ՝ բանն աստուծոյ *կրէ՛* զամենայն զօրութեամբ իւրով...: - 182. Տրէ. զի առնու գիշերն յօրէն զժամ և զմասունքն. որպէս *կրելով* յինքն: - 200. Երրորդ՝ զի *կրէ՛* զջուր ի մէջ իւր, և յեզերս, և ի վերայ երեսացն: - 210. Եւ զի զամենայն աղտեղութիւնս յինքն *կրէ* : - 211. Ա՛րդ՝ եթէ մնայ հինն ընդ նորոյն հանապազ. նա՛ ծանրանայ. և ո՛չ կարէ զայն քան ամաց բազմութիւն պտղոցն *կրել*, և այսպէս լինին ամենայն ծառքն կոտորեալ և ապականեալ...: - 224. Չէ՛ զարմանք հրաշիցն աստուծոյ. որպէս ամենայն ռնգունք զհոտն զգան, և աչք զգոյնն *կրէ* յինքն, և անծորելի և անպակա՛ս են յենթակայէն: - 224. Հինգերորդ՝ ի յուսումն խոնարհութեան մերոյ. զի տեսանելով զմեզ տկար քան զանասունս, մերկ և աղքատ ի մօրէ ծնեալ, խոնարհեալ զիջանիմք ի հնազանդութիւն արարչին. և զի մի՛ եկամուտ հպարտութեամբ *կրեսցուք* զանկումն արուսեկին: - 267. Եօթներորդ՝ կին, իբր թէ *կրօղ* զօրութեան և ընչից առն: - 276. Երկրորդ՝ զի զպատիժս անցաւորովս *կրեսցէ*: - 288. Զի զամենայն կենդանեաց սերմն *կրելոյ* էր՝ պիտո՛յ էր մեծ տուն: - 293. Եւ տէր մեր գիտէր զինչ *կրէր* ի մարդն. այլ և զծածուկսն հօր յայտնեաց մեզ: - 313. Չորրորդ՝ զի և բանբասօղքն պատիժս *կրեսցեն* վասն նախատելոյն զնա: - 325. Վեցերորդ՝ հարուածս *կրեալ* յոբ ի բոլոր մարմինն. և տէր մեր ի ձեռս և յոտս և ի կողս. որ և փշով պսակեալ ապտակեալ և գան հարեալ: - 327. Դարձեալ՝ մորենին էր կոյսն մարիամ, որ զիմանալի հուր աստուածութեանն յինքեան *կրելով* ո՛չ կիզաւ...: - 331. Չորրորդ՝ խնայեաց զնոսա իբր ի մարդիկ զի զղջասցեն փոքր խրատովն և ի մեծ պատուհասէն

զերծանիցին. այլ նոքա խստացան մինչև զամենայնն *կրեցին*: - 333. Այսպէս հինգ եղանակաւ չարաչար ատեցին զհիւրսն. վասն այն կրկին *կրեցին* զհատուցումն վրիժուց ժ հարուածովք: - 335. Երրորդ՝ կեղն և խաղաւարտն եղև և ի կախարդսն և զայլ հարուածսն *կրեցին*. և ո՛չ կարէին ի մովսէս և յահարոն դարձուցանել զնոյնս: - 335. Չորրորդ՝ ինքն անկարօտ գոլով ստեղծեաց զարարածս. և բարձեալ *կրէ՛* զամենայն բանիւ. և նոյն ինքն հրամայէ՛ խորան կազմել: - 342. Աշտանակ ոսկի, անապական զօրութիւնն աստուծոյ որ խնամէր զնոսա և բարձեալ *կրէր*: - 346. Այլ և զպատահումն սոցա ի սրտի իմում *կրեմ*: - 348. Երկրորդ՝ արուն առնօ՛ղ է. իսկ կինն *կրօղ*: - 365. Եօթներորդ՝ սապատողն. կուզն. կամ ելուստ ի թիկունքն. որ ո՛չ *կրէ* զբեռն քահանայութեան հպարտութեամբ: - 370. Նա՛խ՝ զի զա՛յլ հարուածոց փոխն *կրեցին* զչարչարանքն յեգիպտոս. իսկ անդրանկացն մնաց: - 380. Եւ թէ ասեն, *կրեաց* քրիստոս զանգոսնելի կիրս: - 383. Եւ մեք զամենայն *կրեմք*: - 383. Իսկ տէրն ի մարդեղութեան զակամայն ո՛չ *կրեաց*. զի հեռի է յաստուծոյ ակամայն: - 383. Եւ զանգոսնելիսն ո՛չ *կրեաց*. զի տեսա՛կ է մեղաց. և տէրն ո՛չ արար մեղս: - 383. Ուրեմն յա՛յտ է զի *կրեաց* զկամաւորն. և զանանգոսնելին, որպէս և ծարաւն: - 383. Իսկ աւելորդ ծորումն թէպէտ անանգոսնելի է, այլ ակամա՛յ է. և զակամայն ո՛չ *կրեաց*: - 383. Եւ բանն՝ որ *կրէ՛* զամենայն զօրութեամբ իւրով: - 405. Երրորդ՝ *կրեցին* զանէծքն դադան և աբիրոն: - 409. Եւ վասն զի նաթան շարժեաց ի զղջումն՝ զկէս պատժոյն *կրեաց*: - 432. Եւ է՛ որ զմեղքն թողու՝ և զպատիժն *կրէ*. որք յայլմէ բռնաբա՛ր խոստովանին և պատահմամբ, և դարձեալ սխալին. այսպիսեաց մեղքն միայն թողի: - 432. Երկրորդ՝ զի մի՛ *կրեսցէ* զյաւիտենական պատիժն: - 432. Երկրորդ՝ զի զսուր պատժոյն նա *կրեաց*: - 433. Եւ ա՛յս է պատճառն, զի յաջ կողմ արգանդի *կրէ* զորդին. վասն որոյ յաջ կողմն նորա նստի: - 441. Երկրորդ՝ զի մի՛ ապականութիւն *կրեսցէ* մարմին բարձողին զապականութիւն: - 470. Իսկ բանն աստուած միաւորեալ մարմնովն *կրեալ* զմերս վասն մեր. անկրելի գոլով ըստ իւրում բնութեանն: - 479. Չորրորդ՝ զի պատճառ ամենայն սրբութեան ինքն էր, պա՛րտ էր զգործս սրբարար յանձն իւր *կրել*: - 485. Եօթներորդ՝ զի յինքն *կրելով* զթլփատութիւնն և զայլ օրինականս, ի ծանրութենէ թլփատութեան և օրինացն ազատեսցէ զմեզ: - 485. Վեցերորդ՝ զի անարգանա՛ց մահ էր խաչն. զայս ամենայն *կրեալ* վասն մեր: - 491. Դարձեալ՝ մահն ի յադամ պատիժ ինքեան էր. իսկ ի քրիստոս պատիժ այլոց. իսկ ի մեզ պատիժ ինքեան և այլոց. այսինքն զի վասն մեր և վասն ադամա՛յ *կրեմք* զմահն: - 496. Իսկ տէր մեր ի մարդեղութեան իւրում յայսցանէ եկամուտ կրից միայն զմահն *կրեաց*. իսկ զմեղս և զապականութիւնս ո՛չ *կրեաց*: - 496. Իսկ զմահն *կրեաց*. որպէս և սոյն մարգարէ վկայեաց...: - 496. Երկրորդ՝ զմահ *կրեաց*. զի ինքն եդ զմահն պատիժ ի վերայ մեր. իսկ զմեղքն և զապականութիւն՝ բանսարկուն և ադամ արկին ի բնութիւնս. վասն որոյ զոր ինքն ոչ եդ՝ ո՛չ *կրեաց* մարմնով իւրով: - 496. **Ապա ուրեմն օտա՛ր արկածք էր ապականութիւնն, վասն այն ո՛չ *կրեաց* ի սուրբ մարմին իւր անապական**: - 497. Ա՛րդ՝ յորոց ազատէրն զմեզ՝ աւելո՛րդ էր յինքեան *կրել*: - 497. Զի թէ *կրեալ* էր զմեղս և զապականութիւն, ո՛չ կարէր ազատել զմեզ. ինքն ի ներքոյ անկեալ կրից և ապականութեանց: - 497. Եւ թէ ոք ասիցէ, ապա և ի մահու ազատեաց զմեզ, վասն է՞ր *կրեաց* զմահ: - 497. Ասեմք թէ՝ ո՛չ զհարկաւորն, այլ զկամաւոր մահն *կրեաց* որպէս ցուցաւ ի վերոյ: - 497. Արդ զայս կամաւոր մա՛հս *կրեաց* քրիստոս: - 497. Այսպէս և քրիստոս զմահ *կրեաց* և ի բաց ջնջեաց զմեղս և զապականութիւն ի մերմէ բնութենէս: - 497. Յաղագս որոյ զմահն *կրեաց* քրիստոս. զի այսպէս բարձցէ յերկուց կողմանց զմեղս և զապականութիւն: - 497. Նախ որպէս ասացաւ՝ ապականութիւնն ծնունդ է մեղաց՝ և մեղքն չա՛ր է. և մեղք ո՛չ *կրեաց* սուրբ մարմինն քրիստոսի. ապա ուրեմն անապակա՛ն է: - 498. Եւ ահա՛ զմահ *կրեաց* կամաւորապէս և չարչարեցաւ: - 500. Եւ զապականութիւնն ո՛չ *կրեաց*. ո՛չ կամաւ և ո՛չ ի հարկէ: - 500. Եւ տէրն ի մարդեղութեանն զկամաւո՛րն *կրեաց* յինքեան և ո՛չ զակամայն. զի ո՛չ էր ի ներքոյ հարկի և ծառայութեան բնութեան որպէս մեք. այլ տէր և ազատ յամենայն կրից: - 501. Զի ըստ որում աստուած՝ ո՛չ *կրէր* ակամայ. և ըստ որում մարդ ճշմարիտ և մարմին բանին՝ *կրէր* զկամաւորն: - 502. Եւ դարձեալ ասեմք. տէրն մեր՝ մարդեղութեամբն եկն զապականութիւն մեր յանապականութիւն փոխարկել. և զիա՞րդ ինքն *կրէր* զապականութիւն: - 502. Դարձեալ ասեն նոքա, զի թէ մարմին տն զկամայն ո՛չ *կրէր*, թերեկատար էր մարդեղութիւնն: - 502. Դարձեալ ասեն նոքա, եթէ *կրեաց* զակամայս ընդ անգոսնելի ծորմանն: - 502. Ուստի յա՛յտ է զի մեք *կրեմք* զամենայն զայսոսիկ: - 502. Եւ ո՛չ զանգոսնելիսն *կրեաց* զի տեսա՛կ է մեղաց. ուրեմն ապա *կրեաց* զկամաւորն և զանանգոսնելիսն: - 502. Իսկ աւելորդ ծորումն թէպէտ անանգոսնելի՛ է, սակայն ակամայ է. և զակամայն ո՛չ *կրեաց* քրիստոս: - 502. Երկրորդ՝ վասն բազում մասանցն. որք *կրեն* զտանջանս մարմնոյ մասամբ և զգայութեամբ. և հոգւոյ զօրութեամբ և մտաց իմացմամբ: - 505. Որպէս բազում անգամ ի ժամանակս պատժոց մեղաց՝ և արդարք ընդ մեղաւորացն *կրեն* զպատուհասն: - 507. Վեցերորդ, զի եկեղեցի որ է մարմինն քրիստոսի՝ յետ չարչարանաց նեռինն որ հանդերձեալ է *կրել*, զկնի խ

աւուր յերկինս համբառնալոց հաւատացեալ լինի: - 521. և Ոտք՝ կրօնաւորք և ապաշխարօղք. որք *կրեն* զծանրութիւնս օրինացն: - 534. Նոյնպէս Առնելն կամ *Կրել*. ընդ դէմ բնութեանն առաւել ծանր է քան որ առնէ և *կրէ* ըստ կարգի բնութեան: - 565. Իսկ ունակութիւն մեղացն է ի մէնջ և առ մեզ. զի կամաւորապէս *կրեցար* և կամաւոր պահեմք ի մեզ: - 569. Դարձեալ զանազանին սոքա ըստ սեռին. զի գործ մեղացն է ի սեռս առնելոյն. և պատիժն ի սեռս *կրելոյն*. և ունակութիւն ի սեռս ունելոյն: - 569. Եւ որպէս ա՛յլ է ունելն և առնելն և *կրելն*. այսպէս ա՛յլ է ունակութիւն մեղաց. և առնել զմեղս. և *կրել* զպատիժս: - 569. Յեզ է որ ո՛չ *կրէ* և ոչ քարշի: - 584. Ա՛րդ մկրտեալն ի քրիստոս՝ վասն հոգևոր հօրն ազատի ի հոգևոր պատժոյն. և վասն մարմնաւոր հօրն *կրէ*՛ զմարմնաւոր պատիժն: - 592. Զի ատելութիւն մեղաց զղջումն է սրտին. և խոստովանի բերանով. և զամօթն *կրէ* փոխանակ պատժոյն: - 603. Եւ գո՛րծ է նոցա առաքեալ կարդալ, և մոմեղէնս *կրել*, և գրակալ. և զխաչագլուխ գաւազանն *կրել*: - 608. և ապա կանայք զծանրութիւն երկանցն *կրեսցեն*: - 613. Եօթներորդ, ի սմա՛ է խորհուրդ եկեղեցւոյ ներգործի. և ի մեզ կատարի և *կրի*: - 614. Զի մե՛ք կատարեմք զխորհուրդս. և ի մեզ *կրեմք* դարձեալ. որպէս մկրտութիւնն. դրոշմն. պատարագն. և այլն: - 614. ...և զխաչն հանապազ *կրեն* ընդ ինքեանս. և լուսով խաչին ելանեն ընդ առաջ քրիստոսի: - 616. Նոյնպէս և սուրբքն՝ քրիստոսի չարչարակիցք եղեն. և զպակասութիւն չարչարանացն քրիստոսի ի մարմինս իւրեանց *կրեցին*. - 648. ...որում *կրեսցէ* զվճիռս անվճար պատժոյն յաւիտենից տանջանացն: - 669. ...զի ի մեծի ծագման առաւօտուն *կրեսցեն* զպատիժն ըստ գործոց իւրեանց: - 669. Երրորդ, զի զառաջին պատիժն աստ *կրէ*. հողանալով գեղեցկայարմար շինուածն: - 679. ...զի մեղքն առնելն է, և պատիժն *կրելն*. յերեկեան օրն վասն մեղաց խնդրեցաք. այսօր վասն պատժոց: - 680. Եւ ի ձեռն հրեշտակի բազում պատուհաս և հարուած *կրէ* աստ մարմինս...: - 682. Դարձեալ աղօթքն՝ չարչարանքն և բարի գործքն է նոցա, զոր վասն քրիստոսի *կրեցին*. - 685. Նոյնպէս կրկին է և տանջանք չարաց. այսինքն տանջանք գործոց ըստ ինքեան, և տանջանք հատուցման, զի զտանջանք գործոցն *կրեն* յետ մահու. և զտանջանք հատուցման ի յարութեանն հոգւով և մարմնով: - 690. Ապա ուրեմն երկոքինն ո՛չ *կրեն* այժմ զտանջանս, այլ ի հանդերձեալն: - 690. Երկրորդ, յանկնկալութենէ հատուցմանն *կրեն* զտանջանս. որ լինելոց է ի կատարածի: - 690. Նմանապէս հետևի զի մարմինն ո՛չ *կրեսցէ* տանջանս. զի ո՛չ յառնէ ըստ նոցա կարծեացն: - 694. Ա՛րդ՝ եթէ մարմինն ևս գործեաց զմեղս, պա՛րտ է և նմա կրել պատիժ...: - 699. ...և որ ոք ի պատիժն աստ ոչ ժամանէ *կրել*, անդ *կրէ* յետ մահու ի հուրն և քաւի: - 701. Դարձեալ ասեմք եթէ՝ խոստովանողին պատիժ ամօթն է զոր *կրէ* առաջի քահանային. և ո՛չ *կրէ* զամօթն յաւիտենից: - 701. Ա՛րդ՝ որք *կրեն* զամօթն առաջի քահանային, ո՛չ կրկնի ի վերայ նոցա պատիժ: - 701. ...և ելոյծ առաւելուլ չարեօք զի արդարապէս *կրեսցէ* զանվախճան տանջանս: - 706. Եւ երևի որպէս բլուր մեծամարմինք նոցա յաչս իւրեանց. սև և աղտեղի և չարչարելի. զի *կրեն* անչափ չարչարանս և ցանկան մահու և ո՛չ մեռանին. - 723. Եւ որպէս աստ հոգին ի մարմնոյն *կրեաց*. նոյնպէս և անդ մարմինն ի հոգւոյն *կրեսցէ* եթէ զբարիս և եթէ զչարիս: - 724. Իսկ դատապարտեալքն ծանրացեալ մասամբք և զազիր անդամօք այր և կին. զի իւրաքանչիւր ոք ի գործիական անդամս իւր *կրեսցէ* զպատիժն: - 726. Նա՛խ՝ զի ամենայն որ ի չորից տարերց է՝ *կրէ*՛ զապականութիւն. արդ խաչն փա՛յտ է և ի չորից տարերց. ապա ուրեմն ապականի և նա՛: - 732. Երկրորդ՝ զի աստուած զամենայն արարածս *կրէ* բանիւ զօրութեան իւրոյ ասէ առաքեալն և ի նոյնութեան պահէ. և սոքա պահին առանց միաւորութեան էութեան նորա: - 733. Կամ ցուցանէ զչափով տանջանս մեղաւորացն. որք չափով աստ տանջին, չափով *կրեն* զհանդերձեալ պատիժն. զի ընդ պակասիլ ծխոյն՝ և հուրն նուազի: - 749. Որ են զանազան տանջանք զոր *կրեն* ամբարիշտքն անդ: - 751. Վասն է՞ր այն քան թշուառութիւնս *կրեն*: - 752. Վասն զի զընկերակցութիւն թ դասուց հրեշտակաց ապախտ արարին, արդարապէս թ տանջանս *կրել* արժանանան: - 752. Երրորդ երկնից արժանաւորն տեսլեամբ, և անօթն ընտրութեան հոգւոյն, որ *կրէր* յինքեան *զկրօղն* էից առաքեալն պօղոս ասէ..: - 761. Երկրորդ այնու՝ զի ի նաւաբեկութենէ փրկեալք եղիցին. թէ նաւաբեկեալքն որ ի ծովէն ելանեն այնքան ուրախանան, ո՞րչափ ևս առաւել ուրախասցին որք զայս քան նաւաբեկութիւնս *կրեալք* ի վշտագին ծովէ այսմ աշխարհի զերծան: - 764. Իսկ հրեշտակական կենաց է հրաշափառապէս գիտել և ո՛չ մոռանալ միշտ. ըստ որում զանցեալն և զհանդերձեալն ներկայապէս *կրեն*...: - 774. Եւ յիրաւի այս. զի այն ոք որ առնէ զոր ինչ ոչ է պարտ, յիրաւապէս *կրեսցէ* զոր ինչ պա՛րտն է. զի մեղքն է առնել, իսկ պատիժն է՛ *կրել*: - 776. Նմանապէս և բոլորս մարդկութիւն *կրեցին* զապականութիւն ի նոյն ադամայ. ծնունդ գոլով նորին ցանկութեանն: - 776. Արդ՝ քրիստոս զպատիժ նախահօրն *կրեաց* և զբնութեանս զպարտն վճարեաց: - 776. Ոմանք ասեն պակասութիւն զքաղց և զծարաւ՝ զերկիւղ և զայլն. որք են պակասականք բնութեան զորս *կրեաց* քրիստոս...: - 781. Այլ ո՛չ զամենայն պակասականքն *կրեաց* քրիստոս. որ է՛ հիւանդութիւն մարմնոյ և

ապականութիւն. կամ մեղք հոգւոյ և տգիտութիւն: - 781. Եւ ոմանք յորոց սրբազան առաջնորդն մեր, պակասութիւն ասաց գոլ զորս յետոյ *կրեցին* անդամք նորա. այսինքն զհատումն մասանց. այրումն հրոյ. և այլ իմն բազմազան տանջանս. յորմէ թուով պակասեաց ի քրիստոս և յաւելաւ անդամս իւր: - 781. Դարձեալ ասեմ, թէ անունս այս՝ պակասութիւն, նոյն է որ լսի չարչարանք. զի յորժամ *կրէ* ոք զչարչարանս զայս ինչ կամ զայն, պակասի ի նմանէ այն ինչ կամ այն. այսինքն առողջութիւն, կեանք, և այլն: - 781. Զի առ հասարակ ամենայն տարերք ըստ իւրեանց կերպի *կրեցին* զայլայլութիւն սըգոյ, չարչարակիցք գոլով արարչին իւրեանց: - 788

**ԿՐԷԱՏԱՑԻ** - Որպէս կրիտէս թագաւորն *կրէատացւոց* կախեաց ի մէջ տաճարին անդամանդ քարեայ ամենայն ուստէք ըմբռնեալ: - 180. Եւ այս են **հբ** լեզուքն… *Կրէտացիք:* - 298

**ԿՐԹԵՄ +** Չորրորդ՝ է՛ հեռաւորութիւն հաւատալեացն. զի որք ո՛չ *կրթին* ի գործ իմացման, բայց միայն ի զգայութեանց՝ հեռի՛ են ի հաւատալեացն որպէս երկիր յերկնէ: - 31. Եւ գործոյն որ ունին *կրթել* զմարդիկ՝ յարմարի օդն որ է՛ մերձ առ մեզ փորձելոյ զմեզ. այլ ո՛չ ի լոյս. զի մի ուրախասցին: - 146. Յօրինակ մարդկան՝ որ մարզին և *կրթին*, և ապա՛ պիտոյանան աստուծոյ և մարդկան: - 208. Եւ այլ ևս. նոքա չունէին օրէնք գրաւոր, պա՛րտ էր նոցա յերկար կեալ և ի բնական օրէնս *կրթել* զծնունդս և զազգս իւրեանց: - 291. Եւ մարտեաւ ընդ նմա այր, զչափ ուժոյ և զկերպարանքն եսաւայ զգեցեալ. զի *կրթեսցի* և մի երկիցէ ի նմանէ: - 311. Նշանակէ՛ զմանկունս ընդ ձեռամբ խրատու վարժեալ և *կրթեալ*: - 357. Այլ և քարինք բազումք էին ի վեր և ի վայր՝ բաց ի յունաց յոր անցանէին. որ *կրթեալ* և սրբեալ էին: - 415. Վեցերորդ զի *կրթելով* առնու զսպիտակ գոյնն. նոյնպէս և սուրբքն ի կեանս յայս *կրթելով* չարչարեցան, և ապա՛ այն կենացն արժանի գտան: - 712. Զի նա՛ ծնաւ զմեզ ըստ բանի՝ բազմաջան երկօք. *կրթեալ* ի մամուլս վարժարանի և ի յոյսն կենդանի: - 773

**ԿՐԹՈՒԹԻՒՆ +** Իններորդ՝ գործ բնութեան առանց ուսմա՛ն է. իսկ կամացն ուսմամբ է և *կրթութեամբ*: - 156. Հինգերորդ՝ զի կարէ՛ մարդ ներհակ սովորութեամբ պահօք և աղօթիւք և *կրթութեամբ* մարմնոյ սանձել յինքեան զայսպիսիս նշանաց գործ: - 246. Իմաստասէր իմանամք զայնս՝ որք ըստ արտաքին փիլիսոփայիցն *կրթութեան* են վարժեալք. որպէս պղատոն, արիստոտէլ, և այլքն: - 269. Էառ զքարինսն յօրինակ աշակերտաց *կրթութեանն* որ լինի ապա՛ պիտանի: - 415. Երկրորդ ի *կրթութենէ* ուսմանց. որ արտաքուստ *կրթութեամբ* ստանայ. որպէս պղատոնին և այլոցն: - 537. Հինգերորդ՝ զմեռելութիւն մարմնոյ և *զկրթութիւն* չարչարանաց նոցա ցուցանէ: - 713

**ԿՐԻԱՅ (տ. ԿՐԱՅ) +** Ո՞րք և ո՞յք են բնութեամբ զէնք կենդանեաց…Ութերորդ՝ խեցի. որպէս *կրիայից*: - 216

**ԿՐԻՏԷՍ** - Որպէս *կրիտէս* թագաւորն կրէատացւոց կախեաց ի մէջ տաճարին անդամանդ քարեայ ամենայն ուստէք ըմբռնեալ: - 180

**ԿՐԿԻՆ +** Զորօրինակ՝ իրն ի ներկայս որ է նիւթ ներընդունակ՝ ունի *կրկին* զօրութիւն…: - 9. Ա՛յսպէս և որ ի հանդերձեալն լինելոցն է՝ ունի *կրկին* զօրութիւն լինելոյ և ո՛չ լինելոյ. և հանդիպմամբ միոյն յառաջէ՛ ի նոցանէ և լինի ներգործութեամբ: - 9. Իններորդ՝ եթէ չարն է յաստուծոյ, ապա և կամի՛ զչարն. յայնժամ լինի *կրկին* կամք աստուծոյ. չար և բարի. զի *կրկին* գործ՝ ի *կրկին* կամաց առաջագայի: - 14. Այլ թէ գործ և կամք *կրկին* յաստուած, ո՛չ է պարզ մի. այլ բաղադրեալ. որ է անտեղի: - 14. Ասեմք առ այս նախ՝ եթէ *կրկին* է պատճառ. հուպ և հեռի: - 15. Դարձեալ ասեմք թէ՝ որպէս մեք ունիմք *կրկին* ճանաչումն իրաց, այսինքն զի զոմն ճանաչեմք ի յատուկ տեսակն իւր. և զոմն այլով տեսակաւ: - 17. Նմանապէս և աստուած միակ միջնորդութեամբ ճանաչէ զբարին ըստ ինքեան ի յատուկ տեսակն իւր. և ճանաչէ զչարն *կրկին* միջոցաւ. այսինքն զի է՛ հակակայ բարւոյն. և է՛ պակասութիւն նմին որպէս ասացաւ: - 17. Նախ եթէ *կրկին* է չար. է՛ չար գործոց, և է՛ չար պատժոց: - 18. Ասեմք առ այս եթէ *կրկին* ունի դէմս գիրն դպրութեան կենաց: - 18. Երկրորդ, ասեմք եթէ՝ չարն *կրկին* իմանի. է՛ որ ինքնաչա՛ր է. որ պարզ և ամենևիմբ չարն է. և արտաքոյ բարւոյ և էութեան է. որ ո՛չ ուրեք է. և ո՛չ երբեք. և ո՛չ էր. և ո՛չ է. և ո՛չ լինիլ կարօղ է. որ է ո՛չ ինչ: - 22. Վասն ճանաչման իւրոյ աստուած կազմեաց *կրկին* կերպիւ օրինակս. այսինքն իմանալի և զգալի. որպէս հոգին, միտքն, և նմանք սոցա. կամ արեգակն, լոյս, և նմանք նոցա: - 24. Հինգերորդ՝ որ բնութեամբ անկարելի է. որպէս ծնեալն *կրկին* ծնանիլ. և յուղոտ ընդ ասեղ անցանել: - 44. Ութերորդ՝ թէ արարա՛ծ է բանն աստուծոյ և հոգին, ապա *կրկին* է և ո՛չ մէկին. զի բանն արարած՝ և արարչի բան. և հոգին արարած՝ և արարչի հոգի: - 56. Իննևժերորդ՝ զի թէ առանձնապէս մարդ է, ապա հետևի բաժանեալ բնութիւն և **բ** կամք և *կրկին* ներգործութիւն. յայնժամ ո՛չ լինի բանն մարդ եղեալ. այլ մարդն բնակութեամբ ի փառս բանին բարձրացեալ: - 68. Աստուած և մարդ ասել քրիստոսի *կրկին* է իմացումն: - 77. Իսկ մեք դասք ուղղափառաց

*կրկին* կերպիւ իմանամք զբանս զայս: - 80. Ծէպէտ բնութեամբ միաւորին՝ տարբերութիւնն ո՛չ բառնի. զի տարբերութեանցն մնալ՝ խափանումն ո՛չ առնէ միաւորութեանն. որպէս հոգւոյ և մարմնոյ. ոսկւոյ և հրոյ. և ծանի՛ր՝ զի *կրկին* է տարբերութիւն. բաղկացական և բաժանական: - 85. Իսկ թէ ոք ընդդիմանալ ասելով, որպէս հրացեալ սուրն կտրէ և այրէ՛, այսպէս և *կրկին* ներգործութիւնք են ի քրիստոս: - 85. Վասն *կրկին* պատճառի: - 103. *Կրկին* է անգիտութիւնն. մինն է ի հեղգութեան ուսման: - 103. Եւ աստ երևի *կրկին* յատկութիւն՝ և *կրկին* հասարակութիւն: - 106. **Հինգերորդ՝ ի բանէն *կրկին* էութիւնք յառաջեցան. այսինքն իմանալի և զգալի. զի թէ միայն ի հրեշտակաց էր առեալ՝ պակասէ՛ր զգալին. և թէ ի կենդանեաց՝ պակասէ՛ր իմանալին**: - 107. Դարձեալ՝ գիտելի է՝ զի *կրկին* կերպիւ առեալ լինի մինն: - 110. Սակայն՝ զի թէ էն ըստ որում է աստուած՝ *կրկին* կերպիւ տեսանի. այսինքն գիտութեամբ և անգիտութեամբ. դնելով և բացաբառնալով այսպէս: - 119. *Կրկին* է տեսութիւն մարդոյ: - 120. Քսաներորդ՝ արդար կոչի. և *կրկին* է արդարութիւն. այսինքն կշռապէս՝ և արժանապէս: - 127. Երրորդ՝ *կրկին* ոտքն զհոգի և զմարմին նշանակէ: - 130. Եւ այսմ է՛ *կրկին* պատճառ լսողին: - 131. Իսկ թէ ոմանք գո՛լ ասեն ժ դասք և զմինն անկեալ, ո՛չ պարզապէս, այլ *կրկին* է իմացումն: - 134. Իսկ խօսի հրեշտակն ընդ մարդոյ *կրկին* կերպիւ: - 145. Անկումն դիւաց *կրկին* էր. այսինքն հոգեւոր և տեղական: - 146. Եւ *կրկին* է այս: - 147. Զի գ գլխոյն *կրկին* է եղջիւր. որ է հպարտութիւն՝ նախանձ՝ և բարկութիւն. զի սոքօք յաջ և յահեակ պատերազմի. և առ ընտիրս և առ խոտանս գտանին բազում ուրեք երեքին ախտքս այսոքիկ: 151-152. Չորրորդ՝ անկումն է ի զօրութենէ իւրեանց մինչ անգործ եղեալ մատնին. և այս *կրկին*: - 153. Եւ քրիստոսիւ տկարացան ի *կրկին* զօրութենէ...: - 153. *Կրկին* է փորձութիւն. այսինքն ներքին և արտաքին. որ է՛ մեղաց և պատժոց: - 160. Գիտելի է, զի *կրկին* է սկիզբն լինելութեան աշխարհի: - 163. Արդ՝ տաճարիս այս է՛ *կրկին* սկիզբն. նախ միտքն շինողին, և յետոյ սկիզբն և կատարումն շինուածոյն: - 163. Նախ՝ զի որպէս շինօղ տաճարին զսկիզբն և զկատարումն ետես. այսպէս և արարիչն աստուած ի *կրկին* սկիզբն գործոյն զկատարումն աշխարհի ետես: - 163. Իսկ ապաշխարութիւնն *կրկին*. զի կնիք ո՛չ է. և վերջին է սրբութիւն: - 166. Երկրորդ՝ ասեմք թէ *կրկին* է ոչ էակն. այսինքն ոչ ինչն: - 173. Նմանապէս ծանիր և զայս *կրկին* է էակն. մին մշտնջենաւոր և միշտ ներգործութեամբ, որպէս աստուած. հրեշտակք. և արեգակն և հուր: - 173. Եւ այսպիսի էակքս *կրկին* ունին զօրութիւն. լինելոյ և ո՛չ լինելոյ. գոլոյ և ո՛չ գոլոյ. և այլն: - 173. Եւ թէ ոք ասիցէ, որովհետև ներգործութիւնքն բնութեանց հետևին, որպէս հուրն միշտ այրէ, և ջուրն ցրտանայ և ջերմանայ. ապա ճշմարիտ երևի բանն դամասկացւոյն՝ եթէ է՛ ի քրիստոս *կրկին* ներգործութիւն. որպէս և *կրկին* բնութիւն: - 174. Եւ իւրաքանչիւր տարերք ունին *կրկին* որակութիւնս. այսինքն գոյացական և պատահական: - 181. *Կրկին* է այսմ պատճառ. այսինքն բնական և բարոյական: - 182. Ի բաց դնելն *կրկին* է. մին ըստ տեսակի, և միւսն ներգործութեամբ: - 186. Եւ այս հաւանելի՛ երևի վասն *կրկին* պատճառի: - 188. Եւ ունին *կրկին* շարժումն. հասարակ և յատուկ: - 189. Նախ գիտելի է, զի *կրկին* է օր. այսինքն օր բնական, և օր արուեստական: - 194. Եւ է՛ զանազանութիւն սոցա *կրկին*: - 194. Իսկ ա՛յժմ քրիստոնէիցս *կրկին* է սկիզբն բնական աւուր. այսինքն մէջ գիշերն, և առաւօտն: - 194. Որպէս ասեն փիլիսոփայք թէ *կրկին* է չափ: - 198. Զի հուրն *կրկին* որակ ունի. ջերմ և չոր: - 202. Եւ այն որ *կրկին* լինի, ներքին պայծառն է տիպ յարեգակնէն. և վերին նուազն զտիպ ներքնոյն է ընկալեալ: - 203. Այլ որ հաւանելին է՝ *կրկին* է: - 208. Երրորդ՝ անդ մէկին է ջերմութիւն՝ և աստ *կրկին*. զի հասեալ ի գոգ երկրի, մակադարձութեամբ ժողովին առ նա և լինի շող: - 211. *Կրկին* է այսմ պատճառ: - 214. *Կրկին* են վասն այսմ կարծիք: - 218. Իսկ սուրբն նիւսացին ասէ թէ՝ *կրկին* է բարին: - 224. Եւ այսմ *կրկին* է պատճառ. բնական և բարոյական: - 234. Արդ է՛ այսմ *կրկին* պատճառ. նախ բնական, և երկրորդ բարոյական: - 258. Դարձեալ ք խառնուա՛ծ է չորից տարերց ըստ *կրկին* քառից որակաց առաւել և նուազ, և հինգերորդն հաւասար է որ է ի մարդն. վասն որոյ հնն ամսեայ ծնանի: - 264. Զի բոյսք մանունք և չորքոտանիք մանունք կարեն ի նոյն ամի զնմանն ծնանիլ ըստ վերոյ ասացեալ երրեակ թուոյ ամսոյ, կամ *կրկին* վեցեկի: - 264. Իսկ տունկք որք են մեծաբոյսք՝ և չորքոտանիք մեծամեծք՝ յերրորդ ամին ծնանին զնմանն. որ է թիւ *կրկին* ամսոյ ընդ երրեակ վեցից: - 264. Զի մանունքն յամսօրէից և ի վայր, ի շաբաթս և յաւուրս և ի ժամս ըստ նոյն թուոյ կարեն զնմանն ծնանիլ. և առաւելքն առաւելեալ ամօք *կրկին* կամ երեքկին որպէս ասացաք: - 264. Իսկ զի բանական միտքն ո՛չ տեսանէ զերազն, այլ անբան մասն, որ է՛ տնկականն ի մեզ. նա՛ յածի յերազն. և ցուցանի այս ի *կրկին* իրաց: - 268. Դարձեալ՝ մարդն ի *կրկին* բնութեանց է միաւորեալ. այսինքն ի հոգւոյն և ի մարմնոյ: - 275. Եւ վասն *կրկին* պատճառի է տկար: - 276. Եւ զի գ պատարագս ունիմք. և թէ զի՞նչ էր *կրկին* ողջակէզն: - 284. Իսկ մարդոյս է չարիքն *կրկին* է: - 287. Ըստ որում առաւել փառաւորեցաւ *կրկին* կենօք: - 288. Եւ մարգարէացաւ եթէ վասն մեղաց մարդկան երկիր *կրկին* ապականի ջրով և հրով: - 289. Նոյն և որ հատանի ի ստենէ. և աւազան *կրկին* ո՛չ է: - 308.

Հինգերորդ՝ նշանակէ *զկրկին* ծնունդս մարդոյ. առաջինն մարմնաւոր և խոտելի. և վերջինն հոգևոր և ընտրելի: - 310. Երրորդ՝ յովսէփ ի *կրկին* գուբ եմուտ և ապրեցաւ: - 313. Եւ տէրն մեր *կրկին* թուով ամաց. զի աստուած և մարդ էր վաճառեցաւ լ արծաթոյ: - 313. Նոյնպէս և մեք աստէն քաղցեալ եմք բանիւ մինչ ա՛նդր երթիցուք, և ապա անդ *զկրկին* զգեստն զգեցցուք. այսինքն զփառս հոգւոյ և մարմնոյ: - 314. Եւ զայս յայտնեն *կրկին* վտակքն բղխեալ արիւն և ջուր: - 316. Այսպէս ուղիղ իմացիր թէ ուրեք և տաճար կոչէ զմարմին. զի *կրկին* է տաճարն: - 319. Նա՛խ՝ նշանակէ՛ զպատասխանին. զի պատասխանին *կրկին* է ի վերայ հարցմանն: - 323. Վասն երրորդին ասէր յոբ զբարի և չար գործոց հատուցմունքն լինիլ առհասարակ յետո՛յ ի հանդերձեալն. զի աստ են մեղաւորք և հնացեալք ի մեծութեան. և ներէ՛ նոցա աստուած վասն *կրկին* պատճառի: - 324. Իսկ արդարք աստ ի նեղութեան կան վասն *կրկին* պատճառի: - 324. Եւ այս վասն *կրկին* պատճառի: - 325. Վասն է՞ր *կրկին* վկայեաց յոբայ: - 326. Երկրորդ՝ առաջին վկայութիւնն վասն արդար գործոցն. *կրկինն* վասն համբերութեան նորին: - 326. Երրորդ՝ ցուցանէ թէ *կրկին* գովութիւն է և հատուցումն արդարոց. աստ և ի հանդերձեալն: - 326. Եւ աստ գիտելի՛ է, զի յետ փորձանացն *կրկին* եղեն ըստացւածքն նորա: - 326. Որ և այն լինի *կրկին*: - 326. Եւ այսպէս զաւակքն լինին *կրկին*: - 326. Նոյնպէս և կեանքն *կրկին*: - 326. Յայտ է զի յառաջ քան զհարւածն **հ** ամաց էր. և **լը** ամ եկաց ի հիւանդութեանն. և այսպէս *կրկին* աճեցին կեանքն որպէս և ամենայն ինչքն: - 327. Չորրորդ՝ յոբ *կրկին* վկայեալ յաստուծոյ արդար և անարատ. և տէր մեր երկիցս վկայեալ ի հօրէ «դա՛ է որդի իմ ընտրեալ»: - 327. Տասներորդ՝ *կրկին* եղև կեանքն և պատիւն յոբայ. և տէր մեր ել ի փառս առաջին և նստաւ մարմնով ընդ աջմէ հօր: - 327. Առ այս *կրկին* են բանք վարդապետաց: - 330. Վասն զի **ե** տանջանօք չարչարեաց զիսրայէլ, *կրկին* ընկալաւ զհատուցումն: - 335. Սոյնպէս և ամենայն մեղաւորաց *կրկին* է հատուցումն. այսինքն հոգւով և մարմնով. կամ աստ և ի հանդերձեալն: - 335. Այսպէս հինգ եղանակաւ չարաչար ատեցին զհիւրսն. վասն այն *կրկին* կրեցին զհատուցումն վրիժուց **ժ** հարուածովք: - 335. Որո՞վ զանազանին *կրկին* տախտակքն: - 340. Կարմիրն հրոյն է. զի հուրն *կրկին* է: - 342. Եւ ծիթենիքն՝ *կրկին* բարութիւնք խաչին. որ զարքայութիւնն եբաց և զդժոխս աւերեաց: - 347. Լուսնածև Վահանն ի վերայ թիկանցն և սրտին՝ և *կրկին* տախտակ դատաստանին յուսն, եմիփորո՛նն է: - 348. ...և **բ** Ակունք ուսոյն՝ *կրկին* կիսագունդք երկնից. ունելով **զզ** կենդանակերպս. և Վակաս լանջացն **բժ**ան ակամբք նոյն կենդանակերպք ի լանջս երկնից Միթրն՝ պսակ քահանայապետութեան. և Թիթեղն՝ մտաց թեթևութեան: - 348. Վասն է՞ր *կրկին* քարեղէն տախտակս: - 349. Հինգերորդ՝ *կրկին* օրէնքն հոգւոյ և մարմնոյ. վասն այն կրկին էր տախտակն: - 349. Հինգերորդ՝ կրկին օրէնքն հոգւոյ և մարմնոյ. վասն այն *կրկին* էր տախտակն: - 349. Վեցերորդ՝ *կրկին* տալոց էր օրէնք հին և նոր. վասն այն կրկին գրեաց: - 349. Վեցերորդ՝ կրկին տալոց էր օրէնք հին և նոր. վասն այն *կրկին* գրեաց: - 349. Եւ *կրկին*, զի հոգւով և մարմնով մի եղև բանն աստուած: - 349. Ասեմք եթէ՝ *կրկին* է մեղք. բնութեան և անձին. որ է սկզբնական և ներգործական: - 351. Երրորդ, դարձեալ **խ** պահեաց և էառ *զկրկին* տախտակն գրեալ մատամբն աստուծոյ իբրև զառաջինն, և եդ ի տապանակ վկայութեանն: - 352. Եւ մին վասն ահարոնի հաշտութեանն ելանել *կրկին* ի լեառնն: - 352-353. Դարձեալ ասեմք, ի հինն *կրկին* էր ընծայ պատարագայցն: - 356. Այլ և յիսներեկին է է գառինս. և ի նոր մտիցն *կրկին* հաց ևս: - 359. Երիկամունքն, *զկրկին* ցանկութիւնն հոգւոյ և մարմնոյ: - 360. Նահապետքն ունէին *կրկին* պատարագ. բանաւոր և անբան. որպէս Աբէլ. Նոյ. Աբրահամ. և այլքն: - 362. Ա՛րդ՝ մեք ունիմք զօրինակ *կրկին* պատարագաց. զնախնեացն և զճշմարտութիւնն քրիստոսի: - 362. Զի՞նչ նշանակէ *կրկին* ողջակէզն ի նորս. որպէս զուարակն և երկու խոյն կատարման: - 362. *Կրկին* էր ողջակէզն. մին որ արտաքոյ այրէին: - 362. Դարձեալ՝ *կրկին* է ողջակէզն. մին վասն մեղաց որ է՛ կամաւոր. և միւսն յանցանաց որ է՛ ակամայն: - 362. Դարձեալ՝ *կրկին* ողջակէզն. մին վասն մեղաց. և միւսն վասն սրբութեան: - 362. Դարձեալ՝ *կրկին* ողջակէզն, մին այն է որ մատուցանեմք զպատարագն քրիստոսի մարմնոյ և արեան: - 362. Հինգերորդ՝ *կրկին* ողջակէզն. մին պատարագն է ամենայն աւուր. և միւսն տօն չարչարաց խաչի և մահու յամենայն ամի՛ զոր նոյն խորհրդով կատարէ՛ եկեղեցի: - 363. Վասն զի *կրկին* է գործ քահանային: - 363. Կամ թէ յաւուրն *կրկին* էր խնկարկումն. յառաւօտն և յերեկոյն. և յառաւօտն խնկեալ էր ահարոն: - 364. Երրորդ, թէ լուացեալ և *կրկին* բորոտիւր՝ այրիւր: - 367. *Կրկին* հաւն կենդանի սուրբ՝ նշանակէ՛ զհոգւոյ և զմարմնոյ կենդանութիւն ի ծեռն ապաշխարութեան: - 368. Դարձեալ՝ *կրկին* հաւն նշանակէ՛ զքրիստոս. Փայտն, զխաչն. և Կարմիր արիւնն. զի աստուծոյ է արիւն. և Զոպայն, զհոգին սուրբ: - 368. Իսկ *կրկին* հաւն մեռեալ և կենդանի. քրիստոս մեռեալ մարմնովն, և կենդանի աստուածութեամբն: - 368. Երկու հաւն՝ *կրկին* զօրութիւնք ի մեզ. տեսնական և գործնական: - 368. Ի նորս *կրկին* է քահանայութիւն: - 370. Երկրորդ՝ շաբաթուց նւէրքն *կրկին*. և ի նորս կիրակէն մեր: - 372. Զի վարդավառին ա՛յն է, յորժամ *կրկին* **խ** պահեաց մովսէս ի լեառն և

լուսաւորեցան երեսքն. վասն այն զկնի երկու յիսնակացն տօնեմք: - 373-374. Իսկ *կրկին* պատարագն. մին վասն բոլոր ժողովրդեանն, և մին վասն անձին ակամայիցն. ցուցանէ *զկրկին* խոստովանութիւնն. մին յայտնի առհասարակ եկեղեցոյն. և միւսն ծածուկ առանձին մեղաց: - 385. Չորրորդ, *կրկին* հարկանելն, զի ոմանց տայ և ոմանց արգելու. այսինքն սրբոց և անսրբոց: - 386. Վասն *կրկին* պատճառի: - 387. Երկրորդ՝ զի եօթնիցս եղև արժանի տեսլեան Երրորդութեանն. կրկին անգամ զհայր ի գիշերի. և *կրկին* զորդին ի տիւն. և հոգի աստուծոյ ի վերայ նորա երկիցս անգամ. և մի անգամ զիրեշտակն ետես: - 387. Եւ զի *կրկին* ետես, Նախ՝ զի *կրկին* էր պատարագն. խոյ և զուարակ: - 387. Եւ կարիքն *կրկին* է. ներքին ամուսնութեանց, և արտաքին ընչից: - 389. Հինգերորդ՝ զի *կրկին* է օրէնք հին և նոր. այսինքն օրինակն և ճշմարտութիւն: - 393. Նշանակէ՛ *զկրկին* դևսն որ ի խորհուրդս և ի զգայութիւնս պատերազմին: - 393. Տասներորդ՝ ունի գ տեղիս. *կրկին* ուստի զրկեցաւ. և օդդ ուր անկաւ. և հուրն ուր տանջի: - 394. Ի *կրկին* թարգմանչա՛ցն է, յունաց և ասորւոց: - 407. Գեղմն և ցօղն մի էր. բայց նշանն *կրկին*: - 421. Երրորդ՝ հրեշտակն *կրկին* երևեալ կնոջն, և ապա՛ մանովէի: - 422. Եւ *կրկին* աւետեալ կուսին, և ապա՛ յովսեփու: - 422. *Կրկին* կործանիլն դագոնայ, զի նախ՝ օրինօքն մովսէսի անկաւ, և քրիստոսիւ կործանեցաւ: - 425. Իսկ սայլն՝ *կրկին* կտակքն. որ միշտ հոլովին առ մեզ: - 426. Եւ ինքն առ ինքն *կրկին* խոնարհելով և բարձրանալով: - 426. Երկրորդ՝ զի *կրկին* էր պատիժն. սուր ի տանն, և խայտառակութիւն կանանցն: - 432. Քանզի, երկոքին դուստրն խօսեցաւ դաւթի, և կրտսերն տւաւ. և փեսային քրիստոսի *կրկին* խօսեցաւ եկեղեցի և նո՛րս տուաւ: - 436. Իննևժ, *կրկին* քերովբէքն խաչատարած: - 441. *Կրկին* ոգի քո եղիցի: - 445. Եւ են սոքա *կրկին* զօրութիւնք. արարչական և արքունական. ըստ փիլոնի որպէս *կրկին* ձեռք մարդոյ աջ և ահեակ: - 457. Եւ ունի այս *կրկին* իմացումն: - 458. Զի գալ հոգւոյն սրբոյ պատճա՛ռ էր *կրկին* ներգործութեան. այսինքն սրբութեան արմատոյ մեղաց. և պտղաբերութեան կուսածին զաւակին. ծնանիլ և կոյս մնալ յետ ծննդեանն: - 463. Նոյնպէս և բանն աստուած թէ կարի իսկ յառաջին դարս էր մարմնացեալ, որպէս յաւուրս նոյի՝ աբրահամու և կամ մովսէսի՝ լինէր *կրկին* վնաս: - 467. Իսկ թէ ամենևին հուսկ յետոյ անագան ի վերջին դարս, լինէր և այսպէս *կրկին* պակասութիւն: - 467. Անդրանիկն անուն *կրկին* ունի իմացումն: - 472. *Կրկին* է գիր. այսինքն կենաց և մահու. զի բարի գործովք գրիմք ի դպրութիւնն կենաց. և մեղօք գրիմք ի գիրն մահու և դատապարտութեան. որպէս ասեմք թէ զձեռագիր յանցանաց քոց ջնջեսցէ աստուած: - 481. Եւ այս ևս *կրկին* է գիր և դպրութիւն. մին անջինջ և յաւիտենից որ առ աստուած. և միւսն ժամանակեայ և ջնջելի որ առ մեզ. զոր մեր գործօք և կամօք գրեմք և ջնջեմք. թէ չչար թէ զբարի: - 481. Եւ աստ գիտելի է, զի *կրկին* է թլփատութիւն. մարմնաւոր և հոգևոր: - 486. Որ և մարդիկք *կրկին* թևօք ժամանեն ի փառս յաւիտենական կենացն: - 494. Եւ այս գիտելի է, զի *կրկին* են կիրք. նախ բնական. և ապա եկամտական: - 496. Եւ ունի մահն *կրկին* յատկութիւն որ ընդ դէմ է երկուց ծայրիցն. այսինքն զի է՛ վախճան կենաց՝ և է՛ սկիզբն կենաց: - 497. Ասեմք եթէ՝ *կրկին* են կիրք. այսինքն կամաւոր և ակամայ: - 501. Նախ ասեմք, եթէ դժոխքն է պատիժ մեղաց. և *կրկին* է մեղք. այսինքն սկզբնական և ներգործական: - 507. Ասեմք եթէ՝ խոստովանիլն *կրկին* է. մին ներքին իմացմամբ. և միւսն մարմնով արտաձայնութեամբ: - 508. Ասեմք թէ՝ *կրկին* է փրկութիւնն. յաւիտենից և ժամանակեայ: - 508. Ասեմք թէ՝ *կրկին* սուտ և նոր աւետարան: - 511. Եւ *կրկին* սուտ. զի ուր զձուկն կերին՝ ի գալիլեայ յեզր տիբերիայ ծովուն էր դ աւուր ճանապարհ հեռի յերուսաղէմէ՛ և ի լեռնէն ձիթենեաց ուստի համբարձաւ քրիստոս: - 511. Երրորդ *կրկին* զատիկն երևեալ դրօքն փակելովք: - 524. Իսկ հուրն *կրկին* ունի յատկութիւն. որ է լոյս և սրբիչ հաւատացելոց. պատիժ և այրիչ անհաւատից: - 525. Հինգերորդ, Վասն *կրկին* իշխանութեանց և կանոնաց: - 525. Գլխոյն հարկաւո՛ր է *կրկին* իր: - 532. Այլ ա՛րդ՝ *կրկին* է իշխանութիւն. այսինքն հոգևոր և մարմնաւոր. վասն զի կրկին է մարդն. հոգի և մարմին: - 537. Այլ ա՛րդ՝ կրկին է իշխանութիւն. այսինքն հոգևոր և մարմնաւոր. վասն զի *կրկին* է մարդն. հոգի և մարմին: - 537. *Կրկին* իշխանութիւն է զոր ունի քահանայն. զի կապելն որոշելն է. սարկաւագին որ որոշէ՛ զանմաքուրն յեկեղեցւոյ: - 538. Այլ վերնագոյն է քահանայն. վասն որոյ ունի *զկրկինն*: - 538. Ասեմք առ այս, թէ օրհնելն *կրկին* է. այսինքն առ վերինս և առ ներքինս: - 539. Այսպէս լիցի ամենայն անհնազանդ կապեալ. վասն որոյ այնպիսին *կրկին* ունի պատիժ: - 540. Նոյնպէս և հնազանդեալքն արձակման՝ *կրկին* պսակեսցին: - 540. Յոհան անտիոքայ՝ թքով միաբանեալ. **բճ** հարք ընդ դէմ նեստորի որ **բ** բնութիւն ասէր և **բ** որդի. *կրկին* կամք և *կրկին* ներգործութիւն քրիստոսի. և զաստուածածինն մարդածին: - 542. Մինչ եկաց երկրորդ լուսաւորիչն հայոց և *կրկին* կիւրղոս սուրբ իմաստասէրն յոհան. և լուսաւորեաց զեկեղեցի: - 545. Որպէս զինչ ասեմ համառօտ թէ՝ թերութիւն է մեր բաժանել զբանն ի մարմնոյն յերկու բնութիւնս և յերկու դէմս. ի *կրկին* կամս և ի գործս: - 552. Տասներորդ՝ կանանց մկրտութիւն առնել. և աշխարհականաց խոստովանիլ. այլ և *կրկին* մկրտել: - 553. Երկրորդ՝ *կրկին* ջուրն, ջերմ և ցուրտ: - 553. Իսկ վասն ջրոյն զի՞նչ պարտ է ասել.

զի յոյնք թերի ցուցանեն զլատինացւոց խառնումն, ինքեանց *կրկին* խառնմամբն. և զայն խորհուրդ առեալ: - 554. Զի *կրկին* է յանցումն մտաց: - 558. Չինգերորդ՝ որպէս ասեն այլ վարդապետք, թէ լինելութիւն մեղաց է յանկարգութենէ կամաց. և անկարգութիւն կամացն է *կրկին*...: - 560. Եւ թէ ցանկայ ստորև հեշտալեաց, և այս լինի *կրկին*. թէ հեշտալին այն է ի պահպանութիւն անհատին, լինի որկորստութիւն...: - 561. Բայց *կրկին* է զրկումն լուսոյ. մի՝ որ ի ճառագայթէ՛ լուսոյն զակն խփէ և խաւարի. և **բ**՝ որ ընդ դէմ բոլորակի արեգականն հայիցի՝ կորուսանէ զլոյսն և խաւարի: - 562. Դարձեալ՝ պատրաստութեանն ի թողութիւն պարտի լինիլ *կրկին*. այսինքն ճանաչումն ճշմարտին՝ և սէր բարւոյն: - 567. Եւ այժմ յոյս մեր է՛ *կրկին*. նախ առ սուրբս վասն օժանդակութեան և բարեխօսութեան: - 574. Արդ յորժամ ասեմք *կրկին* զսէրն, այսինքն աստուծոյ և ընկերին. *կրկինս* այս ո՛չ է ըստ ունակութեանցն. այլ ըստ ներգործութեանցն: - 575. Դարձեալ՝ *կրկին* է թշնամին. մեր անձինս, և եկեղեցւոյ: - 577. *Կրկին* տրտմութիւն է և *կրկին* խնդութիւն. զի է՛ աստուածային և է դիւական: - 584. Իսկ **ը** երորդ երանութիւնն դառնայ յառաջին գլուխն *կրկին* կերպիւ: - 586. Ասեմք թէ ո՛չ է պարտ *կրկին* մկրտել զմկրտեալն վասն դ պատճառի: - 590. Երկրորդ՝ զի մկրտութիւնն է ընդ դէմ սկզբնական մեղաց. և սկզբնական մեղքն մի է և ո՛չ *կրկին*: - 590. Չորրորդ՝ զի մկրտութիւնն է անքակտելի կնիք ի հոգին. որպէս կարգն և դրոշմն. վասն որոյ ո՛չ *կրկնին* որք յանուն սուրբ Երրորդութեանն մկրտեցան: - 590. Արդ ունիմք *կրկին* ծնօղ. ըստ մարմնոյ զադամ. և ըստ հոգւոյ զքրիստոս: - 592. *Կրկին* է պատիժ մեղաց. այսինքն մահ մարմնոյն, և դժոխք հոգւոյն: - 592. Դարձեալ՝ *կրկին* է գալուստն քրիստոսի. յառաջինն զհոգւոյ պատիժն եբարձ. և յերկրորդն զմարմնոյն. զի երկրորդ է մարմինն հոգւոյն: - 592. Եւ թէ ասեն՝ ջուրն *կրկին* յատկութիւն ունի. այսինքն զովացնէ և լուանայ: - 596. Չորրորդ՝ զի սովաւ իմացուք զմարդեղութիւն բանին *կրկին* կերպիւ: - 598. Ասեմք եթէ՝ *կրկին* է խոստովանութիւնն: - 602. Դարձեալ ասեմք թէ *կրկին* է խոստովանութիւնն. նոյնպէս և թողութիւնն: - 603. Չորրորդ՝ եթէ անփոյթ արար և մոռացաւ զկարգեալ ապաշխարութիւն փոխարինացն, պա՛րտ է *կրկին* խոստովանիլ...: - 603. Վասն այնորիկ **է** *կրկին* պատմուճան զգենու եպիսկոպոսն: - 607. Եւ ունին զգեստ՝ նափորտ բազմախաչ. և ի վերայ եմիփորոն ե *կրկին* խաչիւ զարդարեալ: - 607. Երկրորդ՝ Արքեպիսկոպոսք. որ թարգմանին եպիսկոպոսապետք. և սըքեմ նոցա քականօթ և պճղնաւոր. և փիլոն. և ի վերայ նորա եմիփորոն **դ** *կրկին* խաչիւ շուրջ զիւրև: - 607. Երրորդ՝ Մետրապօլիտք. որք են մայրաքաղաքացիք. և ունին սքեմ զնոյն. բայց եմիփորոն **գ** *կրկին*: - 607. Եւ ունին զնոյն սըքեմ. բայց եմիփորոն *կրկին*: - 607. Եւ ունին նափորտ *կրկին*: - 608. Եւ *կրկին* է շաղկապ պսակին...: - 610. ...և *կրկին* է մահն որ պատասխանի տայ նոցին այսպէս: - 610. Իսկ և մահն *կրկին* է, հոգևոր և մարմնաւոր: - 610. Իսկ հոգևոր ազգն է *կրկին*. նախ աւազանին ծննդեամբ. և երկրորդն որդեգրութեամբ...: - 611. Իսկ որդէգիրն որ բանիւ և կամօք լինի, ո՛չ լինին խնամիք մինչ ի *կրկին* ծնունդն...: - 612. Եւ բանն *կրկին* է. այսինքն ներտրամադրեալն և յառաջ բերեալն. - 612. Վեցերորդ, ի սմա՛ *կրկին* դրունք ի հարաւ և յարևմուտս. որ նշանակէ՛ զդուռն ողորմութեան և զդուռն արդարութեան աստուծոյ, հարաւոյն և արևմտիցն: - 614. Այլ մովսէս օրինադրեաց ի թիւքն առնել *կրկին* փողս արծաթի. և կոչեաց զնոսա փողս ազդեցութեան. որպէս դեռևս գոն ի դրունս թագաւորաց *կրկին* փողք: - 618. Եւ նշանակէ՛ր *կրկին* փողն զերկու զանկակս, կամ զզանկակն և զժամահարն. կամ զփայտէն և զերկաթին: - 618. Իսկ ի նորս եկեղեցի քրիստոնէիցս ազգի՝ յաւելեալ է *կրկին* ժամ. այսինքն յետ առաւօտին զարևագալն. և յետ երեկոյին՝ զխաղաղականն...: - 621. Դարձեալ՝ **բ**ժանն *կրկին* վեց է...: - 624. Եօթներորդ, զի զաստուած *կրկին* ևս պարտական առնէ ի տալ: - 626. Եւ *կրկին* տուն սաղմոսին, զի հոգի և մարմին եղև բանն: - 628. Եւ դարձեալ՝ ի հնումն վեց դնէին զհաց երեսացն. և յաւուր շաբաթի *կրկին* **զ**: - 629. Իսկ *կրկին* ասել զշարականս. զի եմք հոգի և մարմին: - 636. Զամէն շարական *կրկին* ասեմք, վասն է՞ր զհարցն երեքկին ասեմք: - 637. Եւ գործատունն *կրկին* ասի. զի ամենայն արարածք *կրկին* են. այսինքն իմանալի և զգալի որք օրհնեն զարարիչն: - 637. **Նմանապէս և ամենայն շարական գ տուն է, և հարցն գ**. զի վեցն *կրկին* **գ** է: - 637. Դարձեալ՝ նոցա *կրկին* աղի. իսկ մերն բան և ձայն. և հոգի և մարմին: - 641. Երկրորդն ըստ համանմանութեանց. և է՛ համանմանքն *կրկին*: - 642. Երրորդ ըստ կարգի. և է՛ կարգն *կրկին*...: - 642. ...որ է *կրկին* տախտակն մովսէսի. յանձնառական և հրաժարական օրինօքն միաւորեալ: - 646. Դարձեալ՝ *կրկին* է տօն. մինն տէրունական, և միւսն հասարակ սրբոց: - 646. Ասեմք թէ՝ ի յաղուհացսն *կրկին* կարգ է. այսինքն մեծ և փոքր: - 651. ...*կրկին* **խ** գան արբցեն...: - 652. Իսկ վասն քառասնից պահոց, Նախ մովսէս պահեաց *կրկին* **խ** ի լերինն. և յեսու ընդ նմա: - 652. Իններորդ, ընկալաք *կրկին* օրէնս հին և նոր. վասն որոյ **բ** աւուրս սրբութեամբ պահեմք: - 654. Զի՞նչ է որ յետ կերակրոյն դարձեալ *կրկին* օրհնեմք: - 655. Նա՛խ՝ զի *կրկին* պարգևս ետ մեզ. այսինքն հոգևոր և մարմնաւոր...: - 655. ...վասն որոյ *կրկին* օրհնեմք: - 655. Երկրորդ, զի *կրկին* եմք մարդ. այսինքն հոգի և մարմին...: -655. Երրորդ, զի *կրկին* օրհնեմք, առաջին օրհնութիւնն

խնդրելն է, և վերջինն գոհանալն: - 655. Զի գոհութիւնն *կրկին* զօրութիւն ունի...: - 655. Երրորդ՝ *կրկին* է մարդս. որ է՛ հոգի և մարմին. և **բ** աշխարհս. այսինքն երկին և երկիր: - 662. *Կրկին* է տեսութիւնն: - 666. **Նշանաքարն *կրկին*, Նախ ցուցանէ զհոգի և մարմին բաժանեալ ի միմեանց**: - 679. Դարձեալ՝ *կրկին* է կեանք. այսինքն ժամանակեայս և հանդերձեալն. և յերկոքինս սխալեցաք մեք...: - 680. ...վասն որոյ *կրկին* գամք և թողութիւն խնդրեմք: - 680. Դարձեալ՝ և *կրկին* է մահ. որ է հոգւոյ և մարմնոյ...: - 680. ...վասն որոյ կրկին անգամ ի *կրկին* մեղաց և ի *կրկին* կապանաց արձակումն խնդրեմք: - 680. Դարձեալ՝ *կրկին* է օր մարդոյ թէպէտ յերկար ապրեսցի. այսինքն մին օր ծննդեանն, և մին օր մահուան: - 680. ...վասն այսոցիկ պատճառի *կրկին* գամք ի գերեզմանս: - 680. *Կրկին* ասեն զշաւիղս ընթացից հոգւոց. այսինքն մինն ի վեր յերկինս, և միւսն ի ներքոյ երկնից: - 688. Յետ աստեացս փառք երանելեացն *կրկին* է. այսինքն է փառք գործոց ըստ ինքեան, և փառք հատուցմանց: - 689. Նոյնպէս *կրկին* է և տանջանք չարաց. այսինքն տանջանք գործոց ըստ ինքեան, և տանջանք հատուցման, զի զտանջանք գործոցն կրեն յետ մահու. և զտանջանք հատուցման ի յարութեանն հոգւով և մարմնով: - 690. Դժոխքն նշանակէ զդժուարին և զնեղ տեղիս որ է՛ խորանն ծախակողմեան. ուր մեղաւորքն *կրկին* ունին զտանջանս: - 690. Ասեմք առ այս նախ՝ թէ *կրկին* է յոյսն: - 695. Եւ զայս ասաց տգիտութեամբ զի *կրկին* յարութիւն մարմնական իմացաւ: - 710. Զոր վարդապետք եկեղեցւոյ այսպէս իմանան եթէ՝ *կրկին* է յարութիւն. այսինքն կեանք: - 710. Եւ ընդ դէմ սմա *կրկին* է անկումն որ է՛ մահ. վասն զի *կրկին* է մարդն. այսինքն հոգի և մարմին: - 710. Եւ երկրորդ յարութիւնն որ է մարմնաւոր, և այն ևս *կրկին* է. նախ յարութիւն կենաց, և ապա յարութիւն փառաց...: - 710. Չորրորդ՝ զպնդութեամբ կապիլն ի սէրն *կրկին*: - 713. *Կրկին* է կարծիս: - 713. Այլ գիտելի է, զի *կրկին* է մարմնաւոր յարութիւն: - 716. Եւ այսպէս *կրկին* իմանի առաքելոյ բանն: - 717. Ասեմք այսմ *կրկին* պատճառ: - 719. Վեցերորդ, *կրկին* են կեանք. մահկանացու և անմահ. և *կրկին* է մարդն. մահկանացու և անմահ: - 724. Նորոգին արարածք վասն *կրկին* պատճառի: - 727. Երկրորդ՝ զի հուրն *կրկին* ունի զօրութիւն. այսինքն զլոյսն և զայրելն. և *կրկին* լինին մարդիկ. այսինքն արդարք և մեղաւորք. - 731. Եւ այս վասն *կրկին* պատճառի: - 732. Եւ ա՛յս է տարածայնութիւն սոցա. զի ոմանք ապականացու ասեն զխաչն տէրունական առարկելով *կրկին* կերպիւ: - 732. Եւ այսմ *կրկին* է իմացումն: - 737. *Կրկին* է դատաստանն: - 738. Միո՞վ բանիւ խօսի ընդ բ դասքն՝ թէ *կրկին*: - 739. Զի անարժանքն զաստուածութիւնն քրիստոսի ո՛չ տեսանեն վասն *կրկին* պատճառի: - 740. Դարձեալ՝ անդանօր բարեացն *կրկին* են վկայք. կենդանի և անկենդան: - 743. Դարձեալ *կրկին* վկայ անդ, - 743. Եւ պա՛րտ է գիտել զի ի միոյ սեռէ բարութեանցն աստուծոյ՝ յառաջե՛ն առ մեզ ողորմութիւն և արդարութիւն. *կրկին* տեսակ կամ գործք կամ զօրութիւն. որպէս ի մեզ երկոքին ձեռք մարմնոյ. և որպէս իմացումն և կամք հոգւոյ: - 745. Մարգարէն եսայի *կրկին* ասէ զհատուցումն մեղաց. նոյնպէս և ի տեսիլն. և վասն էր դաւիթ եօթնպատիկ ասէ հատուցանել ի ծոց նոցա: - 750. *Կրկին* է իմացումն: - 750. Նախ վասն մարդոյս. զի մին մեղացն *կրկին* հատուցանի աստ հոգւով և մարմնով. իսկ եօթնպատիկն է՛ ի հուրն յաւիտենից: - 750. Երկրորդ՝ զի մարդկան ազգի *կրկին* է հատուցումն. այսինքն յայժմու կեանս և ի հանդերձեալն. իսկ դիւացն եօթնեկի է հատուցումն վասն եօթնեկի յանցանաց նոցա. և եօթն գլխաւորագոյն մեղացն: - 750. Ասեմք թէ *կրկին*. այսինքն արքայութիւնն երկնից՝ հրեշտակաց և հրեշտակացելոց սրբոց: - 760. Եւ զայս *կրկին* տեղիքս ճշմարտութիւնն ցուցանէ: - 760. Ի յայս միտս ի ստորինս եկեղեցի այժմ *կրկին* են դասք պաշտամանց. որ և նոյնպէս է լինելոց ի վերնումն սիօնի յեկեղեցիս անդրանկաց: - 760. Եւ *կրկին* է ունակութիւն կենաց. այսինքն նախ ունելով յինքեան զկեանս, և ապա բաշխելով այլոց: - 765. Եւ գլխաւորի՛ սա՛ *կրկին* եօթեամբք կարգաւոր հարցմամբք: - 773. Եւ այլ ևս. որպէս ասացաւ *կրկին* է մեղքն. սկզբնական և ներգործական: - 777. Վասն որոյ *կրկին* է և պատիժն. զառաջինն ի նախնւոյն հասեալ. և ապա յետոյ յօր մի հաստատեալ ըստ առաքելոյ: - 777. Եւ թէ այս ո՛չ է գրեալ, նա՛ և ո՛չ այն եթէ մեղանչեաց ուրէք զամենայն կեանս իւր բաց ի միոյն. և ո՛չ մեղանչելն *կրկին* ապաշխարութիւն է առաջնոյն: - 778. Այսպէս և ժանգ յանցանաց մկրտելոց և քահանայից՝ բառնայ զգործ՝ կամ զնշանակութիւն շնորհացն. իսկ յետ սրբութեան զղջմամբ՝ զիա՞րդ *կրկնի* ունակացեալն ի նմա՛: - 782. *Կրկին* է շնորհքն. ոմն հասարակ և ոմն յատուկ: - 783. Եւ որպէս այլքն այլ ինչ, և սա՛ զծխատեսակ ջերմութիւն սրտի ընդ ցնցուղս ծայրից արտաքարշելով ի *կրկին* կողմանէ որպէս ասեն բժիշկք: - 786. Յա՛յտ է զի ի բառնիլ ոչէին՝ էութիւն հաստատի բացասութեամբ *կրկին*. իսկ ստորասութեամբ նոյն մնայ: - 787. Յորում պաշարեալք ի հինից նետողաց *կրկին* յարուցեալ խորա՛զմ անուանեալ ազգաց: - 788. Նմանապէս և աստ յաւուր նոր կիրակէի ասացեալն *կրկնո՛յ* զատկի, յանկարծահաս ժամու շարժեալ հեղեղաց ուղխից խռովութեանց: - 789

***ԿՐԿԻՆ ԱՆԳԱՄ +*** Երկրորդ՝ զի եօթնիցս եղև արժանի տեսլեան Երրորդութեանն. *կրկին անգամ* զհայր ի գիշերի. և կրկին զորդին ի տիւն. և հոգի աստուծոյ ի վերայ նորա երկիցս անգամ. և մի անգամ

զիրեշտակն ետես: - 387. Եւ աստ հարցանեմ ի վերջոյ. վասն է՞ր *կրկին անգամ* թւեաց զժողովուրդն: - 392. Եւ յետ **գ** ամի՝ *կրկին անգամ* ել յէմ, զյեքոնիա և զեզեկիէլ գերի վարեաց: - 447. Եօթներորդ, կամ թէ եգիտ ի նա երկեւան ինչ թերութեան վասն յարութեանն. իբր զի ասէ յայսմ գիշերի մերձեցայք յոտս իմ և ո՛չ հաւատացեր. վասն այն *կրկին անգամ* ո՛չ հրամայէ մերձենալ: - 517. Զմի անգամ մկրտեալն պա՞րտ է *կրկին անգամ* մկրտել թէ ոչ: - 590. Այլ որք ո՛չ ժամանեն՝ պա՛րտ է յամենայն աւուր *կրկին անգամ* աղօթել. այսինքն յայգն և յերեկոյն: - 623. Դարձեալ՝ և կրկին է մահ. որ է հոգւոյ և մարմնոյ. զի մեղօք մեռանի հոգին ի դժոխս. որպէս և մարմինն. վասն որոյ *կրկին անգամ* աղօթեմք: - 680. Դարձեալ՝ գիտութեամբ և կամօք գործեցաք զմեղս. այլ և մեղօքն կապի մարդ յերկինս և յերկրի. վասն որոյ *կրկին անգամ* ի կրկին մեղաց և ի կրկին կապանաց արձակումն խնդրեմք: - 680. Եւ աստ հարցանեմ ի վերջոյ. վասն է՞ր *կրկին անգամ* թւեաց զժողովուրդն: - 392. Եւ յետ **գ** ամի՝ *կրկին անգամ* ել յէմ, զյեքոնիա և զեզեկիէլ գերի վարեաց: - 447. Եօթներորդ, կամ թէ եգիտ ի նա երկեւան ինչ թերութեան վասն յարութեանն. իբր զի ասէ յայսմ գիշերի մերձեցայք յոտս իմ և ո՛չ հաւատացեր. վասն այն *կրկին անգամ* ո՛չ հրամայէ մերձենալ: - 517. Զմի անգամ մկրտեալն պա՞րտ է *կրկին անգամ* մկրտել թէ ոչ: - 590. Այլ որք ո՛չ ժամանեն՝ պա՛րտ է յամենայն աւուր *կրկին անգամ* աղօթել. այսինքն յայգն և յերեկոյն: - 623. վասն որոյ *կրկին անգամ* աղօթեմք: - 680. ...վասն որոյ *կրկին անգամ* ի կրկին մեղաց և ի կրկին կապանաց արձակումն խնդրեմք: - 680

**ԿՐԿՆԱԿԻ + Ե**ւ հետևի այսմ և գործ *կրկնակի:* - 70. Դարձեալ՝ եղեալ էութիւն բաժանի *կրկնակի*. ի գոյացութիւն և ի պատահումն: - 111. Եւ գոյացութիւնն դարձեալ *կրկնակի*. առաջին և երկրորդ: - 111. Ասեմք եթէ՝ տպաւորութիւնն լինի *կրկնակի*. մինն նման նմանութեամբ. որպէս լոյս. հուր. և այլն: - 131. Եւ այս լինի *կրկնակի*: - 143. Եւ *զկրկնակի* կենաց վայելումն ըստ խառնեալ էութեան իւրոյ. զի թէ զաստուածայինսն բերցէ յինքեան ըստ որում ի պատկերն եղև, վերափոխեսցի անմահ կենօք ի պատրաստեալն ժառանգութիւն: - 231. Չորրորդ, հասարակ աղօթքն է միակի պատիւ և փառք. և առանձնականն *կրկնակի*: - 623. ...պա՛րտիմք *կրկնակի* օրհնել զարարիչն: - 655. Ուստի ասացաւ թէ մահու մեռցիս. ոչ սոսկ. այլ *զկրկնակի* նշանակելով մահ. այսինքն զմեռանիլն մարմնով և զպատժիլն հոգւով: - 776. Եւ այս աղէտ անզերծ տարակուսից շրջապատեալ զմեզ շրջագայութեամբ տօմարի հայկազեան սեռից, հարիւրից *կրկնակի*՛ քառից և վեցեա՛կ վեցից: - 789

**ԿՐԿՆԱՊԱՏԻԿ +** Իսկ թէ այլ բղխէ հայր՝ և ա՛յլ որդի, *կրկնապատիկ* է հոգին և ո՛չ մի: - 63. Եւ էգն հոգևորի յետ **ձ** աւուրն՝ որպէս ասացաք զպատճառն վասն տեղւոյն ցրտութեան որ է՛ ձախ կողմն արգանդին. որ ցուրտ գոլով վասն փայծաղանն՝ յապաղէ՛ զկազմուած նիւթոյն ի *կրկնապատիկ* ժամանակս **ձ** աւուրց: - 261. Չորրորդ՝ որք միայն զորդւոյ ասեն բան՝ սակաւ պատիժն, զի մի է յերրորդութենէն. իսկ որ զփառակիցն ևս՝ *կրկնապատիկ* հատուցանի նմա: - 566

**ԿՐԿՆԱՊԱՏԿԵՄ +** Նախ այնու՝ զի ի տանջանաց թշուառութեան այսմ տարագրութեան ազատեալք լիցին. զի անցեալն ի մահուանէ ի կեանս՝ զկենացն ուրախութիւն *կրկնապատկէ*՛: - 764

**ԿՐԿՆԵՄ +** Ոչ թէ նըւաստ է քան զհայր, կամ ծառայաբար ծունր *կրկնելով* բարեխօսէ՛: - 48. **Յինգերորդ՝ այս մին օրս է որ *կրկնելով* կատարէ՛ զշաբաթ և զամիս և զտարի և զդարս կենցաղոյս, և հասանէ՛ ի վերջին օրն. որ է՛ մի օր աներեկ և անփոխանորդ**: - 193. Նախ՝ զի սկիզբն և առաջին է ամենայն աւուրց. զի նա *կրկնելով* առնէ զայլ աւուրս որպէս ասացաւ: - 193. Եւ այսպէս ի ներքուստ ի վեր *կրկնեալ* եօթնից որ է չորեքտասան, կատարի ցանկական մասամբն և կարէ՛ զնմանն ծնանիլ և կոչի մանուկ: - 264-265. Եւ երիցս *կրկնեալ* **է**-հց մինչև ի **իա**, լինի կատարեալ արիական մասն ցասմնականին. և կոչի պատանեակ մինչև ի իը ամն: - 265. Եւ չորիցս *կրկնեալ* **է**-հց մինչև ի **իը** ամն, լինի երիտասարդ. և կատարի բանական մասն: - 265. Եւ *կրկնեալ* ի հնգետասանէն մինչև ի **լ**, կատարի երիտասարդական հասակն. որ է **գ** տասամբ կատարեալ. ունելով զցանկականն և զցասմնականն և զբանականն լիով առ ինքեան: - 265. ..և մեք անդամք ի նա՛ յարեցաք և եղաք անդրանիկք հրեշտակաց որ էաք կրսեր նոցա. զի ամենայն երկնաւորքն ծունր *կրկնեն* քրիստոսի և խոստովանին զնա՛ տէր: - 309. Երկրորդ՝ նշանակէ՛ զհակառակիլն և *զկրկնելն*: - 323. Երրորդ՝ ցուցանէ զգողացեալն ի բանից, զնոյնն *կրկնել* և շրջել պատասխանելով: - 323. Դարձեալ գիտելի՛ է, զի յոբ *կրկնելով* զբանսն՝ ուղղէ՛ր զբարեկամսն և ընկրկէ՛ր զսատանայ. զի այսպէս ամենայն ոք կարէ՛ յաղթել սատանայի յորժամ զընկերն ուղղէ ի բանս կամ ի գործս կամ ի հաւատս և յայլսն. յայնժամ սատանայ թիւրի և հեռանայ: - 323. Եւ ի դարձեալ երևիլն դարձեալ լուանալ, այն է՝ որ դարձեալ խոստովանիմք և *կրկնեմք* զերկն ապաշխարութեան մինչև նկարեսցի ի մեզ քրիստոս: - 367. Չորրորդ՝ զի թէ սամուէլ էր որ ասաց թէ՝ տէր հեռացաւ ի քէն, և այս ո՛չ է մարգարէութիւն. զի *կրկնեաց* զիւր բանն. և թէ ո՛չ էր սամուէլ, այլ զանունն ընկալաւ և ինքն դև էր, սուտ խօսեցաւ ապա: - 430. Նախ զայն ցուցանէ առ նորս,

եթէ ոք յանգիտութեան մեղանչէ` թողու աստուած. և որ դարձեալ *կրկնէ*, և զառաջինն պահանջէ աստ: - 439. Եւ տեառն մերոյ *կրկնի* ամենայն ծունր յերկինս և յերկրի: - 442. Եւ ադամ ասաց կնոջն` և *կրկնեցաւ*. և կինն օձին` և երեքկնեցաւ գիրն: - 481. Արդ զապարանքն պիղատոսի իբր զմի տեղի առեալ. թէպէտ *կրկնեալ* եղև. և խաչելութեանն տեղի լինի **զ**. և գերեզմանն յորում հանգեաւ **է**: - 493. Եւ թէ ո՛չ *կրկնի*: - 526. Իսկ զէութիւն բանին որ է՛ յանուն Յօր և Որդւոյ և Յոգւոյն սրբոյ` ասելն մի՛անգամ պարտ է ասել և ո՛չ *կրկնել* տգիտաբար: - 588. Զխոստովանեալ մեղքն պա՞րտ է *կրկնել* թէ ոչ: - 603. Ասեն վարդապետք թէ` զմի անգամ խոստովանեալն բարի հաւատով և կատարեալ զղջմամբ` ո՛չ է պարտ *կրկնել*. եթէ ոչ վասն չորից պատճառաց: - 603. Վեցերորդ, զի և առաջին ծնօղքն և հարք թէպէտ աւելի կին առնուին վասն զաւակաց, այլ հարսանիսն *կրկնեալ* ո՛չ ընթերցեալ լինի: - 612. Իսկ որ երրորդ *կրկնի*, ի պոռնկութեան սակի գրի ի կանոնս սրբոց հարց: - 613. Զի յորժամ մեղօք ինչ սրբութիւնս մեր ապականի, կամ շարժի ոք ի հաւատոյ, վերստին կարէ՛ հաստատիլ ի հաւատս, և դարձեալ *կրկնել* զխոստովանութիւն և զապաշխարութիւն: - 615. Նա՛խ` թէ ո՛չ գիտէ զկերպ աղօթիցն, կամ ծունր *կրկնել*, կամ զձեռն տարածել. և սոյնպիսիք ո՛չ մեղք են և ո՛չ արդարութիւն: - 620. Եւ **գ** *կրկնելով* լինի **թ**. ըստ **թ** դասուց հրեշտակաց: - 632. Ա՛րդ` որք կրեն զամօթն առաջի քահանային, ո՛չ *կրկնի* ի վերայ նոցա պատիժ: - 701. Ասի ի գիրս սուրբս թէ` ի կատարածի յանուն յիսուս քրիստոսի ամենայն ծունր *կրկնեսցի.* և ամենայն լեզու խոստովանեսցի զնա աստուած: - 783. Եւ ևս. բացասութիւն ինքն ինքեան քակտիչ բացատրի *կրկնելովն*. իսկ ստորասութիւն ո՛չ: - 787. Դարձեալ` զորօրինակ **բ** անկատարք լինին մի կատարեալ. իսկ կատարեալն թէ և *կրկնեսցի*` ո՛չ է անկատար. այսպէս և ասացեալքդ: - 787. Եւ ևս. *կրկնեալ* սուտք համազգիք ճշմարիտ. բաղարկոցի ըստ ասիցդ վերոյ: - 787. Եւ *կրկնեալ* ճշմարիտն նոյն մնայ. զի անփոփո՛խ է ստութեան: - 787

**ԿՐԿՆՈՑ +** Եւ զի պատառեաց *զկրկնոցն*. և եհարց` ո՞յր որդի է դաւիթ: - 412. Զի՞նչ նշանակէր պատառիլ *կրկնոցին*: - 427

**ԿՐԿՈՒՏ +** Եւ տե՛ս յօրինակաց. զի չնչին գողութիւնն, զաքար իւր զարմիւքն քարկոծեաց. և *կրկուտ* քաղելն զայրին: - 745

**ԿՐՃԱՏ +** Տասներորդ` *կրճատն*. որ է ագատն. անամօ՛թն է: - 371

**ԿՐՃԵՄ +** Դժոխ` զդժուար զնեղ և զանձուկն նշանակէ. և կոչի բազմաւոր, Նախ վասն բազում կրիցն. ուր լալ աչացն է և *կրճել* ատամանց և խաւար ներքին և արտաքին և այլն: - 505. ...*զկրճել* ատամանցն ցուցանեն...: - 669. ...լալ և *կրճել* ատամանցն. փոշիմանիլ, տխրիլ, և ոչ ինչ օգտիլ...: - 671. *Կրճել* ատամանց ի ցրտոյ: Խաւար: Ծուխ: Արտասուք ներքին: - 751. Երկրորդ` անտանելի ցուրտ. յոր եթէ հրեղէն լեառն անկանէր` սառն դառնայր. վասն այս երկուցս ասի` լալ աչաց և *կրճել* ատամանց. - 752. ...զի ծուխն ի հրոյն պատճառէ զլալ աչաց. և ցուրտն *զկրճել* ատամանց: - 752. Այլոց հուր և խաւար և տարտարոս. լալ աչաց և *կրճել* ատամանց. և այլոց այլ ինչ: - 760

**ԿՐՃՏԵՄ +** Վասն երկրորդին, որք ցրտիւ չարութեան աստ կարծրացան, արդարապէս անդ տանջողական ցրտիւ *կրճտեն* զատամունս իւրեանց: - 752

**ԿՐՈՒԿՆ +** Եւ **յ** կանգուն երկայն, զի ի *կրնկէն* ի գագաթն լար չափեալ` **դ** պատ առնու զգլխովն: - 293. Իսկ քաղելով գործելն, զի սկսեալ բնութիւնս մեր ի գլխոյն լայնանայ ի թիկունքն` և նրբի ի *կրունկն*, և բոլորեալ դարձեալ կատարի ի գլուխն: - 293

**ԿՐՏՍԵՐ +** Իսկ դուք զի ուրանայք զհօգին հաւասար զօլ հօր և որդւոյ, և *կրտսե՛ր* ասէք քան զորդի: - 39. Եթէ ըստ մեզ կարծէք զծնունդն, պիտոյանայ երկուորիս և գործիս հօր. լիցի և այրութիւն և իգութիւն յաստուած. և լիցին որդիք երկորեակք էրէց և *կրտսեր*: - 52. Յամագոյ և միասնական սուրբ Երրորդութեանն ո՛չ է առաջին և վերջին. ո՛չ մեծ և փոքր. և ո՛չ երէց և *կրտսեր*: - 109. Արդ` եթէ ադամ ոչ էր կոչեալ` այլ *կրտսեր* թոռունքն, նախատինք էր նախահօրն: - 219-220. Երրորդ` զի ո՛չ գիտէին զանդրանիկն ժամանակաւ, և ո՛չ *զկրտսերն*. և լինէր փոփոխումն վիճակաց նոցին. որպէս յակոբ էառ զանդրանկութիւնն եսաւայ. և եփրեմ զմանասէին. թէ և սոքա տեսչութեամբն աստուծոյ. այլ նոքա ի պատրանաց լինէին: - 238. Չորրորդ` զի լինի առ ինքն հակառակութիւն, թէ ո՞ է երէց և *կրտսեր* առ ինքն: - 254. Տասներորդ` և որպէս իսահակ նախասիրէր զանդրանիկն որդի, բայց յետոյ ետ զօրհնութիւնն նորին` որդւոյն *կրտսերոյ*: - 305. Երկրորդ` անդրանիկ է բանն աստուած ի հօրէ ծնեալ. և *կրտսեր* ա՛յլ եղեալքս` ի հօրէ՛ գոյացեալ. զի որդի ծնո՛ւնդ է հօր և մեք արարածք. և նա՛ ի բնութենէն և մեք ի կամացն: - 309. ...և մեք անդամք ի նա՛ յարեցաք և եղաք անդրանիկք հրեշտակաց որ էաք *կրտսեր* նոցա. զի ամենայն երկնաւորքն ծունր կրկնեն քրիստոսի և խոստովանին զնա՛ տէր: - 309. Վասն է՞ր զանդրանիկն խոտէր և *զկրտսերն* ընտրէր. որպէս կայեն խոտեցաւ և սէթ ընտրեցաւ: - 309. Նոյնպէս և յակոբ, եփրեմ, դաւիթ, *կրտսեր* ի մէջ եղբարցն և թագաւորացն. խնդրե՛մ

ուսանիլ: - 309. Իսկ այն որ երբեմն անդրանիկն խոտիւր և *կրտսերն* ընտրիւր, բազում ունի խորհուրդ և նշանակութիւն: - 310. Եւ սոքա որ երևինս մեզ *կրտսեր* և վերջին, փոխեինն և լինէին նախկին և առաջին ըստ նախընտրութեանն աստուծոյ: - 310. Երկրորդ՝ իրեշտակք անդրանիկք են քան զմարդ ստեղծմամբ. և յորժամ մեղան դևքն՝ խոտեցան և եղեն *կրտսերք*. և մարդն ել ի տեղի նոցա և եղև անդրանիկ: - 310. Երրորդ՝ զանդրանիկ կեանս ի դրախտին անարգեաց ադամ և զերկրորդն ընտրեաց. և իւր անդրանիկն խոտեցաւ և *կրտսերն* ընտրեցաւ: - 310. Չորրորդ՝ նշանակէ՛ զիրէայս որ էին անդրանիկ ժողովուրդ խոտեցան. և հեթանոսք *կրտսերք* ընտրեցան և եղեն անդրանիկ ժողովուրդ աստուծոյ: - 310. Զա՛յս նշանակէ զանդրանիկն խոտել և *զրկտսերն* պատուել: - 310. Տասներորդ՝ ևս մեծագոյն խորհուրդ. զի բանն աստուած որ անդրանիկ էր հօր, եղև *կրտսեր* մարդ ի ժամանակի և փոքր. ըստ որում կոչեաց զինքն «փոքրիկ». զի բնութիւն մարդոյս ընդ ինքեան խառնելով արասցէ մեծ և անդրանիկ: - 311. Այս քան ըստ խորհրդոյ որ անդրանիկքն խոտեին, և *կրտսերքն* պատուեին: - 311. Երկրորդ՝ թէ *կրտսեր* է եղբայրն. որպէս առակն է եղբարց, որ առաջինն էառ և մեռաւ. և ապա երկրորդն, և որ ի կարգին: - 402. Երկրորդ՝ նշանակէր *կրտսեր* եղբայրն զքրիստոս զերկրորդն ադամ. որով յառնեն մարդիկ յերկրէ: - 402. Երեքտասաներորդ՝ անէ՛ծ յեսու որ շինէ զերիքով՝ անդ անդրանիկ և *կրտսեր* որդւով: - 418. Երրորդ՝ նա՛ ի *կրտսեր* ազգէ բենիամենի թագաւորեաց ամենայն իէլի. և տէր մեր յազգէ մարդկան *կրտսերաց* առեալ մարմին և թագաւորեալ ամենայն զօրութեանց երկնից: - 426. Հինգերորդ, նա՛ փոքր և *կրտսեր* եղբարցն. և տէր մեր երկրորդ ադամ. և փոքրիկ կոչեցաւ քան զիրեշտակս և առաւել պատուեցաւ: - 435. Քանզի, երկոքին դուստրն խօսեցաւ դաւթի, և *կրտսերն* տուաւ. և փեսային քրիստոսի կրկին խօսեցաւ եկեղեցի և նո՛րս տուաւ: - 436. Երրորդ՝ զի միշտ անդրանիկ ծնանի և ո՛չ *կրտսեր*. զի պատկեր քրիստոսի ստանամք որ է՛ անդրանիկ հօր: - 590

**ԿՐՕՆ(Ք) +** Եւ սոքա մարդադաւան ուրացօղք խաչին և *կրօնից* նորոց: - 34. Եւ կապ *կրօնից* որպէս կարգաւորաց: - 317. Նմանապէս և միջակ կապիւն, զի ուսանիմք յաստուծոյ ընկալեալք զկարգ *կրօնիցն*. և ունիմք ուխտ և դաշին և հնազանդութեան նմա...: - 318. Այն որ զինքն պատարագէ, կամ առանձին *կրօնիւք*, կամ հասարակ աղօթիւք: - 370. Եւ բաւականութիւն սոցա է այսպէս. զի եմք մարմին հոգի և միտք գոյացեալ. և ունիմք կարիս և ինչս և շնորհք և *կրօնք*: - 389. Շնորհքն է զարդ հոգւոյն և *կրօնքն* մտաց. և կամքն իշխան և կառավար սոցա: - 389. Մեղքն այն է՝ յորժամ ի *կրօնս* լինի ոք և գթէ՛ մեղօք և դարձեալ ապաշխարէ: - 564. Զսիրտ իւր հպարտացուսցէ որպէս ասէ դանիէլ. «յարիցէ ընդ դէմ իշխանաց իշխանին». այսինքն ընդ դէմ աստուծոյ. և ջանայ փոխել զօրէնս և *զկրօնս*: - 707

**ԿՐՕՆԱՒՈՐ +** Եւ նախնին *կրօնաւորաց* մեծն անտօն. և այլք բազումք ըստ տեառն հրամանի, թէ «որ արասցէ և ուսուսցէ, նա մեծ կոչեսցի»: - 288. Հինգերորդ՝ հնազանդք առաջնորդաց. որպէս *կրօնաւորք* և հաւատացեալք: - 389. Ապա յա՛յտ է՝ զի որ ընդ ապաշխարութեամբ է և *կրօնաւոր*, ի զինւոյ ի մրգոյ և ի մսոյ պահեսցէ: - 390. Նոյնպէս և *կրօնաւորն* ո՛չ ցաւի և տրտմի և ո՛չ հեշտանայ ընդ աշխարհի: - 390. Ոտք՝ *կրօնաւորք* և ապաշխարօղք. որք կրեն զծանրութիւնս օրինացն: - 534. Իսկ յորժամ մեղաւորն խոստովանի, պա՛րտ է հայիլ քահանային թէ *կրօնաւո՞ր* է թէ աշխարհական: - 601. Թէ *կրօնաւոր* է՝ հարցանէ թէ ծոյլ եղեա՞լ է յաղօթքն. կամ անհնազանդ. թէ բղջախոհ. թէ յատուկ իրք ունօղ. թէ պճնօղ. թէ որոնօղ լաւ կերակրոց և ըմպելեաց. թէ քնափ և թէ կռւօղ: - 601. Այլ թէպէտ առանձնականն կամաւո՛ր է, սակայն ի վերայ վանականաց որք են աբեղայք և *կրօնաւորք*, հարկաւո՛ր է վասն **դ** պատճառի: - 623. ...զի աբեղութիւնն կրօնաւորութիւն է. և *կրօնաւորին* պարտ է զամենայն զգայարանս ծածուկ պահել: - 635. այսինքն ա՛յլ կարգ քահանայից. և ա՛յլ *կրօնաւորաց*. ա՛յլ աշխարհականաց. և ա՛յլ տղայոց: - 671. Իսկ թէ ի *կրօնաւորաց* իցէ, պատեսցեն իւր զգեստիւն, մազեղէն և կնկուղ և այլ որպէս գրեալ է...: - 671. Իսկ կնկուղ ի գլուխ *կրօնաւորաց* և օդ յոտս և գօտի ընդ մէջ. զսպառազինիլն և զարիութեամբ ընթանալն ի պատերազմ: - 671. Դարձեալ՝ դնեն զքահանայս առաջի սեղանոյն ի վերայ բեմին, և *զկրօնաւորս* ի մէջ եկեղեցւոյն, և զաշխարհականս առ դուռն, նշանակէ զզանազան տեղիս: - 672. Եւ *զկրօնաւորս* ի վերջին դասս տէրութեանցն: - 672. Այսպէս և հանգստարանք եպիսկոպոսաց ի կարգս իւրեանց, և քահանայից, և *կրօնաւորաց*, և թագաւորաց, և աշխարհականաց: - 674. Այսպէս է կարգ կատարման ննջեցելոց սրբոց քահանայից և *կրօնաւորաց* և առ հասարակ ժողովրդոց: - 674. Երկրորդ՝ սուտ սքանչելեօք և կախարդութեամբ պատրեսցէ *զկրօնաւորս*. - 708

**ԿՐՕՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ +** Եւ մասունք արդարութեան են **գ**. այսինքն *կրօնաւորութիւն*. գթութիւն. շնորհ. վրէժխնդրութիւն. պահպանութիւն. և ճշմարտութիւն: - 579. *Կրօնաւորութիւնն* է աստուծոյ պաշտօն և առանձնակի սպասաւորութիւն մատուցանել: - 579. Այն է՝ յորժամ մարդն մեռանի աշխարհի. մտանելով ի

*կրօնաւորութիւն*: - 610. զի աբեղութիւնն *կրօնաւորութիւն* է. և կրօնաւորին պարտ է զամենայն զգայարանս ծածուկ պահել: - 635

**ԿՑԵՄ +** Ասեմք առ այս Նա՛խ՝ եթէ թողութիւնն է ի զղջումն. և կարգն է ի յանձն ապականեալ. ապա ուրեմն իրաւի թէպէտ զթողութիւն ընկալաւ զղջմամբն, սակայն ի կարգն ո՛չ մտանէ ապականեալ և շրջեալ անձամբ և բնութեամբ, զորօրինակ բեկեալ և *կցեալ* անօթ՝ ո՛չ թւի ի կարգ անարատիցն: - 166. Իսկ կցկցեալ. զի յօդեալ և *կցեալ* են ոսկերք մարդոյն առ իրեարս. և ի ներքոյ միս՝ և արտաքոյ մորթն է պատեալ: - 293

**ԿՑԿՑԵՄ +** Այսինքն յօդեալ և *կցկցեալ* ի միմեանս: - 293. Իսկ *կցկցեալ*. զի յօդեալ և կցեալ են ոսկերք մարդոյն առ իրեարս. և ի ներքոյ միս՝ և արտաքոյ մորթն է պատեալ: - 293

**ԿՑՈՂԱԿԱՆ +** Որպէս եսաւ անդրանիկն իսահակայ՝ *կցողական* դեղօք ողջացոյց զմարմին իւր և արար անթլփատ. զի ցրեսցէ զուխտն աստուծոյ: - 486

**ԿՑՈՐԴ +** Ձի թէ կարօղ, ապա ո՛չ է *կցորդ* որդի: - 62. Ութերորդ՝ կին, իբր թէ *կցորդ* և օգնական առն յամենայն գործս: - 276. Ձի՞նչ է որ եփրեմ ի գիրս *կցորդաց* ասէ, Մելքիսեդեկ՝ որ նա՛ ինքն է սեմ: - 300. Քառասունևինն, Գրոց կարդալն. և Սաղմոս *կցորդ*. Որթի. և Ալէլուն. և Տէր ողորմեայն: - 527. Եւ որ նա՛խ է վերջին տունն ի մեսեդի կամ *կցորդ*. այն է զի քրիստոսիւ դարձաք յառաջինն և ի բարձրագոյնսն. ուստի ադամաւ խոնարհեցաք...: - 629. նոցա փառ կամ *կցորդ* գոյ զկնի. և որք որիշ են՝ նոցա *կցորդ* ո՛չ ասի: - 636. Իսկ *կցորդ* և սկիզբն, այն մին տունն է խորհրդաւոր ըստ պատշաճի աւուրն: - 643. Եւ բոլոր սաղմոսն՝ այն մին տանն համաձայնք և վկայք. վասն այն ասի սաղմոս *կցորդ*: - 643

**ԿՑՈՐԴԵՄ +** Վեցերորդ՝ բարերարն աստուած իւր արարչութեանն *կցորդեաց* զադամ՝ անուանս դնելովն: - 219. Երկրորդ՝ զներքինս օրհնեմք, և աստուծոյ բարութեանցն *կցորդեմք*. ողորմութեան, պարգևաց, կամ այլ ինչ շնորհաց. և այսու եղանակաւ օրհնեմք զքահանայս. զժողովուրդս. զմեռեալս և զկենդանիս: - 406. Վասն երրորդին՝ վկայե՛մք և *կցորդիմք* բարութեան նորա և երանութեան: - 624. ...վասն որոյ պահեմք զչորեքշաբաթն. և ուրբաթն խաչելութեանն քրիստոսի. զի *կցորդեսցուք* խաչին: - 653. Դարձեալ՝ ցուցանէ՝ իբր թէ սիրելոյն որ մեռաւ՝ *կցորդիմք* և չարչարեմք զմարմինս. մերկանալով, ի սով և ի ծարաւ, ի մութն և ի հող որպէս նա ի գերեզմանի եղև: - 670

**ԿՑՈՐԴՈՒԹԻՒՆ +** Ձի թէ ասես միաւորական, ահա՛ արարեր դու զանձն բնութիւն. զի բնութիւն է միարար ըստ պորփիւրի, տեսակին *կցորդութեամբ* բազում մարդիկ մու: - 86

**ԿՕՇԻԿ +** Դարձեալ և ի յառակս անառակին որ դարձաւ առ հայրն՝ և ողջմամբ ընկալաւ և զգեցոյց զնա և զարդարեաց մատանի ի ձեռս՝ և *կօշիկ* յոտս...: - 167. Չորրորդ՝ *կօշիկն* կարմիր. զի արեամբ չափ ի ներքոյ ոտից են հնազանդեալք ամենայն: - 271. Եւ փոխանակ *կօշկաց*՝ զամենայն ինչ հնազանդ արար ի ներքոյ ոտից նորա: - 271. Երրորդ, օրինակաւ *կօշկին*՝ զկինն հրամայէր մերկանալ յինքենէ: - 331. Եւ հանել *զկօշիկս* յոտից, այսինքն ի վերջին խորհրդոց յերկրաւորս մերձեցեալ: - 331. Ի յայս միտս և տէրն աշակերտացն պատուիրեաց մի՛ ագանել *կօշիկս*: - 331. ...որպէս ասաց մովսէսի թէ՝ «լո՛յծ *զկօշիկս* քո». և ո՛չ կերակրոյ հացի ունէին պէտք. այլ բանն աստուծոյ կերակրէր զնոսա որպէս ասացաւ...: - 397. Եւ մեծն ի ծնունդս որովայնի՝ խրաց մի *կօշկաց* նորին լուծելոյ ոչ բաւէր: - 456. Օդ կամ *կօշիկ* յոտս, կուռ վառեալ զինու ընդ դէմ օդային թշնամւոյն: - 674

# Հ

**Հ** (հո կամ հոյ) **+** *Զհոյ* գիրն ա՛ռ ի բաց, աւատ ասի. ամենայնի դէպ ասեն թէ աւատ կայ: - 769

**ՀԱԶԱՐԱՄԵԱՅ +** Եւ հետևի *հազարամեայ* արքայութիւնն որոգինի. նաև փոխիլն ի տանջանաց: - 694. Իսկ որոգինէս *զհազարամեայ* արքայութիւն սրբոցն: - 706. Ոմանք հերձուածօղք որպէս որոգինէս, առաջին յարութիւն ասաց *զհազարամեայ* արքայութիւննն...: - 710. Չինչ է *հազարամեայ* թագաւորելն ընդ քրիստոսի: - 710

**ՀԱԶԱՐԱՊԵՏ +** Ա՛րդ՝ եթէ քրիստոս տգէտ է և նոքա զմիտս տգիտի ունէին. ո՞րպէս լինէին *հազարապետք* աստուծոյ խորհրդոցն. կամ *հազարապետքն* առաւել են քան զխորհուրդն աստուծոյ: - 96

**ՀԱԶԱՐԱՒՈՐ +** Նա՛խ ցուցանէ զառատութիւն պարգևացն աստուծոյ, որ ո՛չ զուգակշիռ գործոցն հատուցանէ, այլ բազմապատիկ և *հազարաւոր*: - 351

**ՀԱԶԱՐԵԱԿ +** Տասներորդ՝ որպէս միակն է ի ներքոյ տասնեկին և հարիւրեկին և *հազարեկին* և բիւրեկին, այսպէս և ի վերոյ նոցա՛ է: - 110.

**ՀԱԶԻՄԱԹ -** Վիուկն ա՛յն է, որ ի վհաց և յանդնդոց մեռեալս կերպարանեն. դևք ի կերպս մարդկան երևին. զոր դևակոչ ասեն և *հազիմաք*. և Նշանագէտ, որ ի գերեզմանս ննջէ և նշանաւոր մարդ կերպարանէ. որպէս զսամուէլ սաւուղայ երևեցոյց հարցուկ կինն: - 388

**ՀԱԶԻՒ +** Իսկ թէ և նա շնորհիւ ունի զորդիութիւնն, զիա՛րդ կարէ տալ ումեք զոր *հազիւն* հարստացաւ: - 67. Ծածուկ և զանխո՛ւլ է աստուածաբանութեան տեսութիւն հասարակ մտաց. և *հազիւ* ճանաչի կիրթ խորհրդոց՝ և նուրբ քննութեանց սրբոց: - 81. Եւ թէպէտ կատարեալ և լի և անթերի էին մասունք մարմնոյն քրիստոսի. այլ ա՛յն քան փոքրիկ, մինչ զի *հազիւ* անկարէր ընդ տեսութեամբ մարդոյ: - 470. Ի ծովուց ջուրց ի չորից նաւաց *հազիւ* միոնն կորնչի. և ի ծովու այսմ աշխարհի ի չորից նաւաց *հազիւ* միոնն ի նաւահանգիստ փրկութեան հասանէ: - 764

**ՀԱԼԱԼ -** Ասելի՛ է թէ՝ երիցունք աշխարհի՝ *հալալ* ամուսնութեամբ և ողջախոհութեամբ են ուխտեալ քահանայագործել: - 167. Այլ ի յաւարէ՛ թագաւորաց որ ի յերկրէն թշնամեաց բերեն՝ *հալա՛լ* է մատուցի՛ նուէրք յեկեղեցին: - 390

**ՀԱԼԱԾԱԿԱՆ (ԼԻՆԵԼ) +** Իններորդ՝ զի դևք *հալածական լինին* ի զօրութենէ աստուածեան նշանին. և հրեշտակք սպասաւորեն նմա. - 734

**ՀԱԼԱԾԱՆՔ +** Առաքինութիւնս այս ցուցանէ թէ համբերել *հալածանաց* վասն արդարութեան՝ կապակցեալ է ընդ խաղաղութիւնն. - 586

**ՀԱԼԱԾԵՄ +** Ասեմք եթէ՝ զօգ և մազօգն՝ հոգևորապէս իմացեալ լինին ամենայն *հալածօղք* եկեղեցւոյ...: - 28. Դարձեալ ի վերայ սաղմոսին որ ասէ, «զարքիր փառք իմ». ասէ մեկնիչն և աւանդութիւն հրէիցն թէ՝ խօսի աստ ի վերայ չորից թագաւորացն որք *հալածեցին* զիսրայէլ: - 28. «Զի թէ լոյսն վասն զգեստուն *հալածեցաւ* ի խաւարէն, խաւարն ո՞րչափ ևս». զի մեծ է նմա *հալածիլն* քան թէ մեր վերջանալն թշուառութեամբ: - 43. Իններորդ՝ զվնասակարս *հալածէ*: - 126. Նա՛խ՝ զի *հալածէ* զխաւարն: - 185. Նա՛խ՝ զխաւար անգիտութեանն *հալածէ*: - 185. Այլ այժմ վասն զգեստուց պահեմք զոչխարս. և վասն կերակրոյ զեզինս. և վասն բեռին զէշս. և վասն բառնալոյ զմեզ զձիս. և վասն զթշնամիս *հալածելոյ* զշունս. և վասն զթռչունս ըմբռնելոյ զբազէս. և զայլսն նմանապէս: - 217. Եօթներորդ՝ առաւօտին. զի առաւօտ գործէ կերողացն *հալածելով* զխաւար մեղաց: - 339. Վեցերորդ՝ զի իմանալի ունի լոյս՝ ցուցանէ՛ զգալի լոյսն. զի ի գիշերի ելեալ ի խորանէն *հալածէր* զխաւարն և լուսաւորէր զանապան: - 352. Երրորդ՝ հակառակատիպ տեսանի. զի անդ օձն պղնձի զմարդ թշնամիս իւր կեցուցանէր և զօձսն սատակէր. և տէր մեր զմարդիկ ազգակից իւր կեցուցանէր, և զթշնամին սատանայ *հալածէր*: - 386. Եօթներորդ՝ ոմանք մարմին մովսէսի զօրէնսն ասեն. զոր ի բերելն հակառակէր սատանայ, խոտան և անարժան գոլ ժողովրդեանն. վասն որոյ միքայէլ վերակացու ժողովրդեանն *հալածէր* զնա: - 410. Քսանևդ, դաւիթ *հալածեցաւ* ի սաւուղայ. և որդի նորա յորդւոց նորա: - 436. Դարձեալ *հալածեցաւ* յաքիսողոմայ. և տէրն յորդոց ժողովրդեանն իւրոյ: - 438. Դաւիթ *հալածեալ* ի սաւուղայ և յաքիսողոմայ. և տէր մեր յանհաւատից և հերձւածողաց: - 438. Ութերորդ՝ զի մի՛ հրէայքն համարելով զքրիստոս ո՛չ ունելով օրինաւոր ծնունդ՝ երևեցին յիրաւի ի *հալածելն* զնա: - 461. ...զի իւր սրովն խոցեսցէ զինքն և *հալածեսցէ* որպէս ի սաւուղայ: - 641. Զի զօգ նոքա են որովք սատանայ զաղտնաբա՛ր *հալածէ* զհաւատացեալս: - 708. Եւ մազօգ՝ որովք յայտնապէ՛ս *հալածէ* զեկեղեցի: - 708. Երկրորդ՝ մարմնովն տիրեաց ցանկութեանցն երկրաւոր՝ և իշխանացն դիւաց. և մարմնովն իւր կոխեաց և *հալածեաց* զայն որ ասէր «ինձ տուեալ է այս ամենայն»: -711. ...ապա պա՛րտ է ի նա՛ ընկենուլ

զդատաստան չարչարողացն մերոց և *հալածողաց*. և ուրախութեամբ տանիլ զլկանս. և մի՛ մեզէն վրէժխնդիր լինիլ մեզ. - 735. Եթէ վարձատրելի է ասիցէ ոք, ապա զիա՞րդ որք ի հարկէ հաւատացին ո՛չ վարձատրեցան. որպէս դևքն ի հալածիլ. և որդիքն սկեւեայ. և սիմոն կախարդն. և այլք նման սոցին: - 783. Եւ ո՛չ այս միայն, այլ և ի կոչմանն զօրութենէ առ որդւովքն սկևեայ *հալածեին* նոքա: - 784

**ՀԱԼԱԾԻՉ +** Իսկ առաքեալն վասն արտաքին փորձութեանցն ասէ. որ ի *հալածչաց* հասանէ ի վերայ մեր. յորում ուրախանալ պարտիմք. զի որքան յաճախէ փորձութիւնն, ա՛յնքան առաւելու և պսակն: - 160. Եւ որպէս նեռն լինիցի անողորմ քան զամենայն *հալածիչս* յառաջագոյն...: - 708

**ՀԱԼԱԾՈՒ** - Ո՛չ բանն որպէս *հալածու* կաղապարեալ. և կամ մարմինն որպէս բոց ի հրոյ և ծուխ անօսր լուծեալ յօդդ: - 770

**ՀԱԼԱԾՈՒՄՆ +** Եւ յայս քան միջոցս լինի *հալածումն* եկեղեցոյ: - 709

**ՀԱԼԵՄ +** *Հալէ՛* զպինդն: - 202. Այսինքն զքոյլն պնդէ՛. որպէս զձու. և զպինդն *հալէ*. որպէս զերկաթ: - 202. Եւ բազումք տեսանեն զսուրն ի մէջ պատենիցն *հալեալ*, և պատեանքն անխանձ մնացեալ: - 204. Եւ են ջերմ, *հալեն* զսառսն: - 205. Հարաւայինք որք Նոտոսք կոչին, Այն որ մերձ յարևելս է, Եւրո՛ նօտոս կոչի. *հալէ՛* զպաղս: - 206. Իսկ սիրտն զի առաւել ջերմ է՝ *հալէ* զճարպն: - 241. Եւ միսն զի տաք է՝ *հալէ* զկերակուրն որ ի յինքն ժողովեալ: - 242. Նոյնպէս լեարդն և լեղին *հալեն* զկերակուրն արտաքուստ ի յաջմէ կողմանէ: - 242. Վասն այն յորժամ ննջէ մարդն ի վերայ ձախ կողմանն, շուտո՛վ *հալի* կերակուրն քան ի վերայ աջ կողմանն: - 242. Հալողականն է՝ յորժամ ի ջերմութենէն եփի կերակուրն և *հալի* որպէս ապուր ի պտկի. և *հալի* ամենայն կերակուրն մինչև ի **զ** ժամն. և է՛ որ պակաս և աւելի. վասն առողջ և տկար մարմնոյն: - 242. Վտարականն է՝ յորժամ եփի և *հալի* կերակուրն, բանա՛յ զդրունսն և բաժանէ զնոսա: - 242. Զի քարշեն յերկրէ զհիւթ, և ունակացեալ պահեն, և *հալեալ* փոխեն յինքեանս. և վտարեն զաւելորդսն ի կեղև՝ ի տերև՝ և յայլսն: - 262. Երրորդ՝ զի *հալեսցի* և մի ի պաշտօն առցի: - 303. Եւ թէ ոք ասիցէ, վասն է՞ր յառաջին օրն նեխեցաւ, և յամենայն օր *հալէր*: - 339. Իսկ յամենայն օր *հալէր* հրամանաւն աստուծոյ, զի դադարեսցեն ի հաւաքելոյ. և ապա զի դարձեալ խնդրեսցեն առաւօտել առ աստուած: - 339. Զի որպէս ստամոքն զկերակուրն *հալէ*, նոյնպէս և քահանայն զմեղքն: - 363. Երկրորդ՝ զիրութիւնն *հալի* ի ջերմ ցանկութենէն և հոսի: - 368. Զոր օրինակ հուրն *հալէ* զոսկին և բոցն ջնջէ ի նմանէ զժանգն: - 497. Որ անհնազանդ է բանին, որպէս տնկականն. *հալելն* և աճիլն և այլն. և սոքա ոչ կարեն լինիլ ենթակայ առաքինութեանց: - 572. Չորրորդ՝ զի ջե՛րմ է արտասուքն և զսառուցումն *հալէ* և ջերմացուցանէ զսէրն: - 619. Նախ զի դիւրաւ *հալի* մոմ ի հրոյ. այսպէս և լերինք յերեսաց բարկութեան հրոյն: - 728. Երկրորդ զի հաւասարի *հալեալ* մոմ. այնպէս լերինք և բլուրք հարթեալ *հալին* և հասաւարին: - 728. Երրորդ զի պարզի *հալեալ* մոմ. այսպէս սնութիւն և թանձրութիւն երկրի ի դժոխս ժողովին և մարմինք մարդկան յերեսս երկրի: - 728. Հինգերորդ *հալեալ* մոմ ո՛չ ունի զառաջին կերպն այլ զգոյացութիւնն. նոյնպէս և գոյացութիւնն երկրի ո՛չ կորնչի. այլ պատահմունքն այլայլին. զի ո՛չ ճանաչի թէ այս այն է: - 728. Զոր օրինակ մի պատկերն դրոշմի ի զանազան մոմս. և ի *հալիլ* մոմոյն դրոշմ պատկերին ժողովի և մնայ ի մատանւոջն: - 732

**ՀԱԼՈՂԱԿԱՆ +** Եւ ունի ստամոքն **դ** զօրութիւնս. որ է՛ քարշողական. ունական. *հալողական*. վտարական: - 242. *Հալողականն* է՝ յորժամ ի ջերմութենէն եփի կերակուրն և հալի որպէս ապուր ի պտկի. և հալի ամենայն կերակուրն մինչև ի **զ** ժամն. և է՛ որ պակաս և աւելի. վասն առողջ և տկար մարմնոյն: - 242. Նմանապէս և կերակրականն ունի զօրութիւնս **դ**. որ է՛ քարշողականն. ունականն. *հալողականն*. և վտարականն: - 262

**ՀԱԼՈՑ +** Իններորդ՝ յա՛յտ է յօրինակէն. զի եգիպտոս *հալոց* երկաթի կոչի. նշանակէ՛ զդժոխքն որ տանջէր զհոգիսն: - 507. Արդ եգիպտոս նշանակէ՛ զաշխարհս որ է՛ *հալոց* չարութեան և տեղի ծառայութեան մեղաց և սատանայի որ է՛ փարաւօն: - 682

**ՀԱԿԱԴԱՐՁԻՄ +** Նախ՝ զի բարին էութիւն է. ուստի յա՛յտ է՝ զի *հակադարձին* առ միմեանս. զի ամենայն որ բարի՛ է՝ է է. և ամենայն որ է է՝ բարի՛ է: - 13. Իսկ սա ասէ միանգամայն. այսինքն է համանգամայն *հակադարձին* առ միմեանս և հետևին միմեանց: - 91. Իսկ առ աստուած կամքն և կարն հաւասա՛ր գոն. վասն որոյ *հակադարձին* ի միմեանս. զի զոր ինչ կամի՝ կարէ. և զոր կարէ՝ զնոյն և կամի՛: - 163. Վասն որոյ անկարելին ո՛չ *հակադարձի* առ կարելին: - 165. Այլ արդ՝ կուսութիւնն է ի կարելոյն որ ունի զգոլն և զչգոլն. իսկ ապականութիւնն է յանկարելւոյն. որ ունի զմինն և ո՛չ կարէ *հակադարձիլ* առ միւսն: - 165. Եւ գործ պոռնկութեանն է ունակութեանն պակասութիւն. վասն որոյ ո՛չ *հակադարձին*: - 165. Եւ թէ է զօրութիւն ի նա՛, լինի յանկատարութենէ ի կատարելութիւն եկեալ, կամ *հակադարձեալ*. որ է՛ անհնարին հերձուած: - 168. Այլ *հակադարձեալ* սոքա ըստ կարգի և ըստ դասու՝ յառա՛ջ է տնկականն քան զզգայականն, և նա՛ քան

զբանականն ի յերևումն. այլ էութեամբ համանգամայն են. որպէս անդ ուրեմն ասացաք վասն հոգւոյ և մարմնոյ: - 260

**ՀԱԿԱԴՐՈՒԹԻՒՆ +** Երրորդ՝ զի ի հարկէ՛ էակ է աստուած. և հարկն զմինն ունի ի *հակադրութեանց.* այսինքն կամ զգոլն կամ զչգոլն: - 168

**ՀԱԿԱԿԱՅ +** Նմանապէս և աստուած միակ միջնորդութեամբ ճանաչէ զբարին ըստ ինքեան ի յատուկ տեսակն իւր. և ճանաչէ զչարն կրկին միջոցաւ. այսինքն զի է՛ *հակակայ* բարւոյն. և է՛ պակասութիւն նմին որպէս ասացաւ: - 17. Զո՞րք են *հակակայք*: - 21. Արդ՝ բարի և չար ո՛չ են *հակակայք* որպէս առինչք. զի առ ինչքն համանգամա՛յն են. և ի միմեանց բաղկանան. իսկ բարին և չարն ո՛չ են համանգամայն. և չարն ի բարւոյն ո՛չ գոյանայ. և ո՛չ բարին ի չարէն: - 21. Եւ ո՛չ են որպէս ստորասութիւնք և բացասութիւնք, որ միայն ի բա՛նն են *հակակայք*. որպէս ճշմարիտ, և սուտ. այլ չար և բարի՝ ի բանս և ի գործս պատահին: - 21. Եւ զայլ ամենայն բնախօսութիւն յաղագս բարւոյ և չարի՝ գտցես ի Դիոնէսիոսի ի չորս գլուխն յաստուածային անուանսն. և ի ստորոգութիւնսն ի *հակակայից* ճառն. և ի սահմանս դաւթի ի վերջն որ է «ամենայն չար տանջելի»: - 24. Ապա ուրեմն համանգամայն ի միասին լինին երկու *հակակայք*. այսինքն ուղղական և հոլովական. զի ասելն աստուած ուղղական է. և աստուծոյ՝ սեռական հոլով: - 92. Ասելի է թէ՝ կոյսն և ապականեալն են *հակակայք* ըստ ունակութեան և պակասութեան. որպէս երեսք և կուրութիւն. որոց ի լինիլն համահետևին երեքին սոքա. այսինքն ժամանակն, և մասն, և նոյն: - 165. Իսկ ներհական *հակակայքն* և այլքն կարեն փոփոխիլ ի միմեանս. որպէս չարն և բարին. ջերմն և ցուրտն: - 165. Դարձեալ՝ կարելին և անկարելին են այլագիծք և այլասեռք. և ոչ կարեն լինիլ մի և նոյն. զի այլասե՛ռ *հակակայք* են: - 165. Չորրորդ՝ զօրութիւն և ներգործութիւն են *հակակա՛յ* իրերաց. ապա թէ է զօրութեամբ և ներգործութեամբ՝ գո՛յ ինքն ինքեան *հակակայ* որ է բնաւ սուտ: - 168. Երկրորդ՝ զի հաւասարութիւն և միաբանութիւն տարերաց անլուծանելի է. ըստ որում ներհակ որակօք հաւասարք են *հակակայ*. և միւսովն միաբանք: - 181. Զի *հակակայք* են. և որ քան ասի մինն, նոյն քան ասի և միւսն: - 504. Իմաստունք զտեղին յերկուս բաժանեն. ի վերին և ի ներքին. զի սոքա են *հակակայք* և առինչք միմեանց. իսկ միջին տեղի ո՛չ է...: - 505. Զի ի *հակակայիցն* որքանաբար ասի մինն, նոյն քան և միւսն: - 758

**ՀԱԿԱԿԱՅԻՄ +** Նախ թէ՝ երկնային մարմինքն ո՛չ են ի չորից տարրաց. այլ են հինգերորդ տարր կամ էութիւն ըստ արիստոտէլի. և որք են ի պարզ տարրէ միայն ո՛չ *հակակային* միմեանց: - 12. Այսպէս զունակութիւնն ճանաչեմք իւր յատուկ տեսակաւն. և զպակասութիւնն այլով տեսակաւ. զի *հակակայի* ունակութեանն: - 17

**ՀԱԿԱԿԱՅՈՒԹԻՒՆ +** Այլ արդ՝ որ *հակակայութեամբ* լինի՝ նա՛խ է զօրութեամբ՝ և ապա՛ ներգործութեամբ լինի: - 14

**ՀԱԿԱՃԱՌՈՒԹԻՒՆ +** Այսքան առ երկրորդն՝ տա՛սն գլխով եղեալ *հակաճառութեանց* զպատասխանիսն. և **բժ**ան գլխով առհասարակ տարահաճելիս: - 13

**ՀԱԿԱՌԱԿ +** Դարձեալ ասեն, ի *հակառակ* շարժմանց՝ լինի և *հակառակ* ներգործութիւն. ահա մոլորակք շարժին *հակառակ*. ապա ուրեմն և գործեն *հակառակս*: - 12. Վեշտասաներորդ՝ զի թէ չարն է յաստուծոյ որպէս բարին, և երկուցն սկիզբն է աստուած, և արդ՝ եթէ մին նոյն է սկիզբն երկուցն, անկարելի է ներհակացն ի միասին ունիլ մի սկիզբն. զի լինէր սկիզբն այն ո՛չ պարզ. այլ երկատեսակ. և ո՛չ միեղէն՝ այլ բաժանեալ և այլայլեալ. նաև լինէր ինքն ինքեան *հակառակ*, և յառաջ եկելոցն ի նմանէ: - 14. Վեցերորդ՝ ասեն *հակառակքն*, թէ՝ չարն ոչ է յաստուծոյ, ապա աստուած ո՛չ ճանաչէ զչարն. որպէս մեք նմանեաւ զնմանն ճանաչեմք. այսինքն հոգւով զհոգևորս, և մարմնով զմարմնաւորս: - 17. Երրորդ՝ թէ լինէին երկու սկիզբն *հակառակ* միմեանց, մի զմիոյ ստեղծուածս ապականէին. և ո՛չ լինէին արարածք ինչ: - 20-21. Չորրորդ՝ դարձեալ թէ լինէին երկու սկիզբն և *հակառակ*, մարտնչէին ընդ միմեանս՝ և ընդ սկսեալս իւրեանց. և ոչ ինչ մնայր ի խաղաղութեան: - 21. Հինգերորդ՝ թէ է բ սկիզբն և *հակառակ*, սկսեալքն ի նոցանէ անկարգ լինէին և *հակառակ*: - 21. Այլ համանգամայն ո՛չ կարեն լինիլ. զի **բ** *հակառակք* ի միասին ոչ կարեն լինիլ: - 21. Եօթներորդ՝ է՛ հպարտութիւնն. որ փքացումն է երեսաց մտացն և որոշէ՛ յաստուծոյ. զի «տէր ամբարտաւանից *հակառակ* կայ. տայ շնորհս խոնարհաց»: - 32. Երկրորդ՝ նոքա *հակառակ* էին քրիստոսի թէ «դու մարդ ես՝ և զանձն քո աստուած առնես»: - 34. Եւ կամ թէ՝ *հակառակ* է հօր: - 36. Երրորդ հարցումն *հակառակացն* թէ՝ որդի ի հօրէ ծնաւ և դադարեցա՞ւ, թէ դեռևս կուծնանի: - 37. Դարձեալ առարկեն, եթէ աստուած է հայր՝ և անծին է բնութեամբ, և որդի ծնեալ է, ապա ուրեմն ո՛չ է որդի աստուած. զի ծնելութիւն և անծնելութիւն *հակառա՛կ* են միմեանց. որպէս սեաւ սպիտակի կամ լոյս խաւարի: - 38. Չորրորդ՝ զի առաջին դրեր զպակասութիւնն, և ապա՛ զունակութիւնն. որ է՛ *հակառակ* ասացելոցն: - 38. Դարձեալ՝ զի

յիմարութիւն և իմաստութիւն են ի նոյն և ի մի բնութիւն մարդոյն, և ո՛չ ասին *հակառակ* միմեանց. այլ միապէս ունի յիմարն զիմաստնոյն բնութիւն և զսահման: - 38. Այսպէս անծնելութիւն և ծնելութիւն ո՛չ են *հակառակ* միմեանց բնութիւնք այլ ի մի և ի նոյն բնութիւնն: - 38. Դարձեալ քննեսցուք ըստ մեզ. զի ո՛չ են *հակառակ* առաքելոյն բանն և աւետարանին...: - 40. Դարձեալ ասէ թէ՝ ետ ինձ հայր, զի մի՛ *հակառակ* հօր կարծիցեն զորդի. որպէս կարծէին հրէայքն լուծանելով զշաբաթսն: - 46. Ո՛չ ցուցանէ այս բ կամք *հակառակ* միմեանց. զի առողին է բանս և ո՛չ առեցելոյն. այսինքն բանին՝ և ո՛չ մարդկութեանն: - 46. Զի թէ անծին, ասեն երկու անսկզբունք են և *հակառակ* միմեանց: - 52. Պատասխանեմք թէ՝ ո՛չ են հեթանոսաց աստուածքն մի, այլ բազումք և միմեանց *հակառակք* կամօք պաշտմանն և զոհիւք խնդրոյն: - 54. Նաև մարդիկ ո՛չ միայն զի ի բազմաց են գոյացեալ, այլ և ժամանակաւ առաւելք մի քան զմի. և կամօք բաժանեալք և ի միմեանց և իրերաց *հակառակք*: - 54. *Յակառակն* ասէ: - 84. Նոյն պարզ և աստուածային բանն է ճշմարտութիւնն. որ ո՛չ ունի ինչ ստութիւն և *հակառակ* իւր: - 121. Վասն է՞ր է *հակառակ* մարդոյ: - 146. Նախ՝ զի *հակառա՛կ* է աստուծոյ, և մարդն պատկեր է աստուծոյ. յորժամ տկարանայ ի նախատիպն՝ ընդ պատկերն հակառակի: - 146. Ո՛չ են յաւերժահասունք որպէս ոմանք կարծեն թէ յերկուց տարերց այսինքն ի հրոյ և յօդոյ են բանական կենդանիք և ունին ծնունդ և մահ. սուտ է այսպիսի կարծիքս և ընդունայն և *հակառակ* սուրբ գրոց. զի բանական կենդանի և մահկանացու՝ մարդս միա՛յն է որոյ յարութիւն և դատաստան գոյ: - 150. Յատկութիւնք հրոյ քսան գլխով. և *հակառակ* գործոյ նորին: - 155. Զի չորութիւն և ցրտութիւն *հակառա՛կ* է ծննդեան. և ջերմ և գէջն օգնական: - 197. Ի *հակառակն* միջնորդաւ: - 202. Վասն է՞ր հուրն *հակառակ* գործէ: - 202. Վասն էութեան հոգոյն լուծումն *հակառակ* բանից. և ճշմարտութեանն հաստատութիւն զանազան հարցմամբ: - 228. Վեցերորդ՝ զի բաժանեսցի մարդն ի կենդանեաց և ի տնկոց. զի տունկք *զհակառակն* ունին զարմատն որ է՛ գլուխ՝ ի յերկիր, և զոտն ի յերկինս: - 233. Այսպէս և զամենայն *հակառակ* տեսակս իմասցիս ոչ խառնիլ սերմանք նոցա: - 267. Եւ իմաստակ կոչին՝ որք միոյ արհեստի են գլուխ. որպէս քերականութեան. ճարտասանութեան. աստղաբաշխութեան. և այլք. որպէս պիռոնացիք ակադիմեանքն. որք *հակառակ* կոչին: - 269. *Զհակառակն* յաղթեալ ի փորձութիւնն. և զանհաւատն ի հաւատ էած: - 316-317. Քսաներորդ՝ յարուցեալ առիւծն ցրուէ *զհակառակս* իւր: - 317. Եօթներորդ՝ կարկուտն հրախառն. զի **բ** *հակառակն* միաբանեալ ջուր և հուր ի կորուստ ամբարշտացն և ո՛չ ապականէին զմիմեանս: - 334. Զայն ցուցանէ իբր միշտ թշնամի են մեր և *հակառակ*: - 394. Երկրորդ՝ ընդ երից գոյացութեանց մեր. աստ ընդ մարմնոյս. և ի մահն ընդ հոգւոյս. և ի յարութեանն ընդ մտաց տեսութեանն *հակառակին*: - 394. Ի *հակառակէն* տեսցուք: - 406. Վեցերորդ՝ ի թաղումն մովսէսի միքայէլ սպասաւորեաց. որում սատանայ *հակառակ* կայր ներողութեամբն աստուծոյ: - 410. Զայս նշանակէ թէ՝ յետ ելանելոյ հոգւոյ ի մարմնոյ և գնալոյ ի վերին շաւիղն, *հակառակ* կայ սատանայ և չար զօրութիւնքն ընդ նմա...: - 410. Հինգերորդ՝ զի քրէական մեղքն ազգաջինջ առնէ. որպէս զդադան և զաբիրոն. զի ընդ մովսէսի և աստուծոյ *հակառակ* կացին, ազգօք և աղխիւք ընկղմեցան զի այլքն երկիցեն: - 416. Եւ որք ծարաւին նմա՝ լիանան. և *հակառակքն* ունա՛յն մերժեսցին: - 423. Ա՛րդ՝ թէ աստուած ծածկեաց և սամուէլ յայտնէր *հակառակ* աստուծոյ, ահա՛ զի բարկացուցանէր զնա. ապա յա՛յտ է զի սո՛ւտ է և ո՛չ սամուէլ: - 429. Հինգերորդ՝ ընդէ՞ր *հակառակ* աստուծոյ և այլ մարգարէից զծածուկն սաւուղի յայտնէր: - 429. Իններորդ՝ զի մի՛ երևեսցի տէրն *հակառակ* օրինացն որ գովէր զպսակն: - 461. Իսկ զօծումն մարտի՝ յորժամ վարեցաւ ի հոգւոյն յանապատ և յաղթեաց *հակառակին*: - 474. Հինգերորդ՝ զի մի՛ կարծիցի *հակառակ* ընդ դէմ օրինացն աստուծոյ...: - 485. Այլ զորօրինակ՝ բժիշկք երբեմն նմանեաւն և երբեմն *հակառակաւն* բժշկեն. նմանեաւ՝ որպէս հրով զհուր, և ցրտով զցուրտ: - 497. Իսկ *հակառակաւն* որպէս ջերմ զցուրտ, և գէճ զչորն արտաքսէ: - 497. Այսպէս և տէր մեր նմանեաւ, որպէս անիծիւք զանէծս՝ և մահուամբ զմահ եբարձ. իսկ *հակառակաւն* անապական և անմեղ մարմնովն զմեղս և զապականութիւն ելոյծ: - 498. Եւ պատճառն ասացաւ ի վերոյ, զոր ինչ ինքն եդ զպատիժ՝ նմանեաւն եբարձ. և զորս յանձնիշխան կամաց մարդոյն և ի բանսարկուէն արկածք, զայնոսիկ *հակառակաւն* ելոյծ տէր մեր յիսուս քրիստոս: - 498. Երրորդ՝ ապականութիւնն ներգործէ՛ *հակառակ* արարչին. զի արարիչն յանգոյից գոյացուցանէ, իսկ ապականութիւնն զգոյսս ի յանգոյութիւն տարալուծէ և այլայլէ՛. վասն որոյ անապակա՛ն է մարմին արարչին: - 499. Դարձեալ ասեն *հակառակքն*, եթէ անապական է մարմինն, ապա ո՛չ է տարրական. այլ ի յերկնից բերեալ. կամ ինքն **ի** բնութիւնն իւր թանձրացեալ. որպէս ասէ եւտիքէս: - 500-501. Ասեմք թէ՝ աճումն մարնոյն ո՛չ է ապականութեան ցոյցք, այլ *հակառակ* նմին: - 501. Դարձեալ ասեն *հակառակքն*, թէ կատարեալ կենդանի է ձուկն, ընդէ՞ր ոչ զենումք: - 511. Եւ այսպէս բազում ունելով իւրաքանչիւր ոք սահմանս առանձին, միայն հայք նախատեալ լինին որպէս ո՛չ ունել միաբանութիւն ընդ այլս ի

քրիստոնէից. այլ առանձին միայնաբար ընթանալ. և այսու որպէս *հակառակ* եպերեալ: - 553. Ա՛րդ՝ ի սոցանէ ո՞րք իցէ ճշմարիտ. և կամ *հակառակք* են միմեանց թէ ոչ, լուծանել աղաչեմ: - 555. Պատասխանեմ և ասեմ եթէ ո՛չ են միմեանց *հակառակ*. այլ երկոքեանն ճշմարիտք են որպէս ցուցանեմք յետոյ: - 556. Իսկ գործն *զհակառակն* նմին սուտ երևեցնէ զխորհուրդն և չար ցուցանէ զգործն և զազրալի: - 558. Ապա ուրեմն յա՛յտ է լուծումն տարակուսանացդ ըստ կարգի. և ոչ ոքն ի նոցանէ *հակառակ* գոն միմեանց որպէս ասացաւ: - 558. Երկրորդ պատճառ, զի այսոսիկ անասունքն գործեն ըստ բնական կարգին. իսկ մեք ի *հակառակն* փոխեմք: - 564. Երրորդ ինքն առ ինքն. որպէս առաքինիքն ի մէջ հոգւոյն և մարմնոյն և մտացն առնեն զխաղաղութիւն. և զպատերազմն որով ցանկայ մարմինն *հակառակ* հոգւոյն, հանեն ի միջոյ: - 585. Զի ջուր *հակառակ* է հրոյ. և զի՞նչ է մեղք, եթէ ոչ հուր. որպէս յոգւոջ բարկութիւն. և ի մարմնի ցանկութիւն. ուստի յայտ է զի հրով տանջանաց պատժի. և աստ զի հուրն շիջցի ի ջուր մկրտիմք: - 591. Եւ թէ ասիցեն *հակառակքն* մեր, ո՛չ ապականի գինին զի սակաւ է ջուրն: - 595. Իսկ թէ մարմնական խնդրես զխառնումն ջրոյ և պնդիս ի *հակառակն*, ասեմք քեզ թէ ո՛չ միայն ջրոյ, այլ և կաթին և մեղեր և գինւոյ աւէ խառնումն ի խառնարանն. - 596. Երկրորդ, զի ի գոհութիւնն ամենայն չարք կործանին որ *հակառակ* կան մեզ: - 626. Իսկ երկրորդն, որ երկինք պատմեն զփառս աստուծոյ, զայնմ որ դատէ՛ *զհակառակն* մեր. զի յերկինս է ողորմութիւն նորա: - 629. Երեքտասաներորդ, Վկայութիւնք *հակառակ* ախթարմայիցն. և պատասխանիք նոցա **ժե** թուով: - 660. ...զայն աղերսեն նմա. սակայն ըստ հաճոյութեան կամացն աստուծոյ խնդրեն և ո՛չ *զհակառակն*: - 685. Այլ և տեսցուք զվկայութիւնս *հակառակացն* և յարմարեսցուք զպատասխանիսն, զի առ ձեռն պատրաստ լիցի: - 695. Այսքան առարկութիւնք *հակառակաց* և պատասխանիք ուղղափառաց: - 698. Երկրորդ, որպէս մարմինն ոչ փոխի ի բարւոյ ի չար, կամ ի *հակառակն*. նոյնպէս և ո՛չ հոգին...: - 704. Եւ յունարէն անթէվիոս. այսինքն *հակառակ*: - 707. Նախ հոգին և մարմինն. զի ցանկան *հակառակ* միմեանց ըստ այրւոյ առակին առ անիրաւ դատաւորին: - 743. Ա՛րդ՝ սոքա ամենայնքին մասնաւոր և փոփոխական են և *հակառակաւ*. զի՞նչ իմանաս զանտի երանութիւնն. որ բոլորովիմբ է, և անփոփոխ, և առանց *հակառակի* յաւիտենական: - 762. Իբրև ի *հակառակս* **լ** ամեայ միշտ մնասցեն...: - 766. Իններորդ, հաւատով հնազանդի ոք օրինացն աստուծոյ. այլ դևն *հակառակ* կայ օրինացն և աստուծոյ. թէպէտ գիտէ զայն լինիլ ինքեան չար, այլ գիտութեամբ մեղանչէ: - 784

**ՀԱԿԱՌԱԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ +** Ուստի հեշտութիւն և աւանդութիւն յիրաւի խառնեալ ընդ միմեանս, և *հակառակասիրութիւն* և ինքնահաճութիւն յառաջ եկեալ, որով զինեալ պնդին ընդդէմ ուղղութեան. զի կարծեն զինքեանս ճշմարիտ գոլ քան զայլսն: - 33. Այս ըստ *հակառակասիրութեան* նոցա ասի. այլ ըստ ուղղութեան՝ քահանայն ունի իշխանութիւն զեօթն խորհուրդ եկեղեցւոյ կատարել. և եպիսկոպոսն առաւել ունի. զի միայն տայ զկարգն, եկեղեցի օրհնէ և սեղան: - 594

**ՀԱԿԱՌԱԿԱՏԻՊ +** Երրորդ՝ *հակառակատիպ* տեսանի. զի անդ օձն պղնձի զմարդ թշնամիս իւր կեցուցանէր և զօձսն սատակէր. և տէր մեր զմարդիկ ազգակից իւր կեցուցանէր, և զթշնամին սատանայ հալածէր: - 386

**ՀԱԿԱՌԱԿԻՄ +** Դարձեալ ասեն *հակառակօղքն*, թէ բոյսք և ծաղիկք և պտուղք երկրի ունին զօրութիւն ազդողական. իսկ աստեղք երկնից ո՞չ ունիցին: - 12. Մետասաներորդ՝ եթէ զբարին ոչ կամի, ապա բարի ո՛չ ոք կարէ լինիլ յեղելոցս. ո՛չ մարդ և ո՛չ հրեշտակք. զի կամացն աստուծոյ ո՛չ ոք *հակառակի*: - 14. Նոյնպէս և աստուած զամենայն մարդոյ փրկութիւն կամի. որք անձնիշխան կամօք համակամ լիցին աստուծոյ՝ փրկին. և որք *հակառակին* կամօք՝ ո՛չ փրկին: - 20. Վեցերորդ՝ *հակառակէ* քրիստոսի՝ և քրիստոնէից. և սոքա *հակառակին* սուրբ եկեղեցւոյ և ուղղափառ հաւատոյ...: - 35. Իսկ զանգիտութիւնն որդւոյ վասն ժամուն և աւուրն թէ բերցեն ընդդէմ մեր *հակառակօղքն* և այնպէս նւազ ասիցեն զորդի: - 48. Եւ թէ ասիցէ *հակառակօղն*, եթէ՝ վերոգրեալ գործառնութիւնքս համարին հոգւոյն սրբոյ ո՛չ որպէս աստուծոյ, այլ որպէս պաշտօնէի: - 59. Պատասխանի *հակառակողի*: - 86. Եւ հաւատացեալքն փրկին. և *հակառակօղքն* կորնչին: - 96. Նախ՝ զի հակառա՛կ է աստուծոյ, և մարդն պատկեր է աստուծոյ. յորժամ տկարանայ ի նախատիպն՝ ընդ պատկերն *հակառակի*: - 146. Եւ այլք ասեն այսպէս *հակառակիլ* ընդ աստուծոյ, յորժամ ետես զինքն փառօք և վայելչութեամբ քան զամենայն դասս գերազանցեալ, կամեցաւ մեծ լինիլ ի վերայ ամենայնի և հաւասար աստուծոյ: - 149. Վեցերորդ՝ զի գլխոյն՝ այսինքն տեառն աստուծոյ՝ իմանալի օձն *հակառակեցաւ*: - 218. Նախ՝ զի ատէին զաստուած, և երկնչէին ի պատժոցն, և *հակառակէին* աստուծոյ: - 296. Եւ ոմանք **ե** ասեն. **ա**, արտաքին ինչքն. **բ**, զաւակաց մահն. **գ**, մարմնոյն հարւածքն. **դ**, կնոջն կագն. **ե**, բարեկամաց *հակառակիլն*: - 322. Երկրորդ՝ նշանակէ՛ *զհակառակիլն* և զկրկնելն: - 323. Վասն է՞ր այնչափ *հակառակեցան* բարեկամքն ընդ յոբայ: - 324. Վասն երկրորդին *հակառակէր* ընդ նոսա, զի մի՛ սուտ լիցի

վկայութիւն աստուծոյ ի վերայ նորա. զի և մեք ուսցուք՝ վասն վկայութեանն աստուծոյ այնչափ նախատինս յանձն առնուլ և ո՛չ ուրանալ. որպէս վկայից դասքն նահատակեցան: - 324. Քսաներորդ, նա՛ վասն *հակառակող* ժողովրդեանն աղօթէր առ աստուած: - 329. Յինգերորդ՝ զի հաւատոցն *հակառակէին*: - 335. Եօթներորդ՝ ոմանք մարմին մովսէսի զօրէնսն ասեն. զոր ի բերելն *հակառակէր* սատանայ, խոտան և անարժան գոլ ժողովրդեանն. վասն որոյ միքայէլ վերակացու ժողովրդեանն հալածէր զնա: - 410. Ութերորդ՝ և ոմանք զմարմինն մովսէսի զժողովուրդն կոչեն յելսն եգիպտոսի. որ *հակառակէր* ազատելոյ զնոսա յեգիպտոսէ՛: - 410. Նա՛խ՝ դարձաւ գետն, զի ա՛հ և երկիւղ լիցի քանանացւոցն. և մի՛ *հակառակեսցին* յեսուայ և անկցին ի սուր նորա: - 414. Ա՛րդ՝ նոքա որք զայս ասեն՝ երիւք *հակառակին* սուրբ գրոց: - 505. Վասն այն յերկարեցի, թէ ոք *հակառակի*՝ այսպէս պատասխանեսցես նոցա. և զեղկելի անձն իմ յիշեսցես ի տէր ուղղակից եղբայր իմ ի քրիստոս: - 511. Եւ սոքա են սուր երկսայրիք տուեալ ի ձեռս քահանայից զինուորաց քրիստոսի. զի յաջ և յահեակ հարցեն. այսինքն զսատանայ և զչարսն ի մարդկանէ որք *հակառակին* բարեաց: - 538-539. Այլ և արդ կարելի՛ է զի մինն բազմաց *հակառակեսցի* և յաղթեսցէ. որպէս ազգս հայոց զայլս ամենայն որ բազո՛ւմ են և ո՛չ մի: - 550. Եւ յայտսիկ միաբանութիւնս որ ըստ կանոնի՝ յաւէտ միաբանութիւն զայս է իմանալ՝ որ ըստ բոլորին օրինադրութեանց սահմանաց կամ ըստ գլխաւորագունիցն լինիցի. և ո՛չ մասամբ միով միաբանեալք և բազմօք զանազանեալք. մանաւանդ թէ *հակառակեալք* և ընդդիմացեալք: - 552. Բայց ոմանք բերանաբաց եղեալ *հակառակին*՝ զծնունդն և որ ըստ նորին ամենեցուն առ հասարակ միաբանեալ բաց ի հայոց: - 554. ապա՛ ի պակասիլն սոցա տրտմի. և թէ ոք *հակառակի*՝ բարկանայ ընդ դէմ նոցա. ապա յամենայնէ ձանձրանայ: - 561. Դարձեալ ասեմք, թէ սուրբն ոսկեբերան ըստ չորից *հակառակի*՛ և ստէ՛ զնոսա: - 702

**ՅԱԿԱՌԱԿՈՐԴ +** Եօթներորդ հարցումն *հակառակորդացն*. ընդէ՞ր ասէ քրիստոս թէ՝ «առաքեցայ ի հօրէ՛»: - 39. Իններորդ հարցումն *հակառակորդաց*՝ որ ասէ սիրաք՝ «ես ի բերանոյ բարձրելոյն ելի անդրանիկ ամենայն ստեղծուածոց»: - 41. Իսկ մեզ հոգևորապէս ետ պարգև զբնակութիւնս երկնից. ուստի մերժեցաւ *հակառակորդն* մեր սատանայ...: - 306

**ՅԱԿԱՌԱԿՈՒԹԻՒՆ +** Երկրորդ՝ զի անծնելութիւն և ծնելութիւն ըստ քո ասելոյդ եթէ բնութիւն իցէ՝ *հակառակութիւն* եդեր յաստուածութիւնն: - 38. Իսկ հնազանդիլն որդւոյ հօր, ո՛չ թէ այժմ անհնազանդ է վասն *հակառակութեան*. զի այս աւազակա՛ցն է. և անհնա՛ր է ասել զմի և զնոյն էութիւնն ինքն ինքեան հնազանդ և անհնազանդ ըստ այնմ որ բան է. այսինքն զպարզ աստուածութիւնն: - 42. Վասն անկման դիւացն. և *հակառակութեան* նոցա. և լոյս կերպարանին: - 102. Չորրորդ՝ զի լինի առ ինքն *հակառակութիւն*, թէ ո՞ է երէց և կրտսեր առ ինքն: - 254. Եւ որպէս կորխ դադան և աբիրոն վասն *հակառակութեանցն* ընդ մովսէս և ահարոն՝ հրով և բացմամբ երկրի դատապարտեցան: - 288. Եօթներորդ՝ բարեկամաց թշնամանքն յերկար *հակառակութեամբ*: - 322. Մին զկապանաց, և միւսն *զհակառակութեան*: - 540. քանզի խաղաղարարն է առանց *հակառակութեան* մարմնոյ՝ աշխարհի՝ և սատանայի. յա՛յտ է զի լինիցի պատրաստ ի յաղթել զփորձութիւն մահու: - 586

**ՅԱԿԱՍԱԿԱՆ** - Չո՛րք են հակակայք: Առընչական. որպէս մեծ և փոքր: Պակասական. որպէս ունակութիւն և պակասութիւն: Ներհական. որպէս ջերմ և ցուրտ: *Յակասական*. որպէս ստորասութիւն և բացասութիւն: - 21

**ՅԱԿԱՍՈՒԹԻՒՆ +** Ըստ իմաստնոյն արիստոտէլի՝ ի *հակասութեանց* ի հարկէ մին կողմն ճշմարիտ է: - 8. Իսկ բանին արիստոտէլի՝ թէ ի *հակասութեանց* մի կողմն ճշմարիտ է, այսինքն կամ ստորասութիւնն կամ բացասութիւնն: - 9

**ՅԱԿԵՄ +** Երրորդ՝ ծանրութիւն երկրիս ի վայր *հակէ*. և բռնութիւն հողմոյ ի վեր: - 182. Յինգերորդ՝ երկինքն թեթև է ի վեր քարշէ. և երկիրս ծանր ի վայր *հակէ*. և այսպէս մի զմի հաստատուն պահեն: - 182. Իսկ այլ կենդանեացն հողն բազում է. վասն որոյ ծանրացեալ ի վա՛յր *հակէ* : - 233. Ի հողոյ տրտմութիւն և ձանձրութիւն. զի ցուրտ է և *հակող*: - 560. Իսկ մեղաւորքն ի ձախմէ. այսինքն վայր ի յերկիր ծանրացեալ մեղօքն. որպէս կապար ի յերկիր *հակեալ*. ուր բոլորով սրտիւ սիրեցին զնա: - 738. ...զի մարդոյ ի բարի գործս *հակեալ*՝ հարստահարի՛ արդարութիւնն յողորմութենէն. և թէ ի չարն հետևիմք՝ ողորմութիւնն յարդարութենէն: - 745

**ՅԱՂԲԱՏ** - Եւ զղևոնդեանց մանկունքն **ոծ**, սարկաւագ վարդապետն որ ի *հաղբատ*: - 638

**ՅԱՂՈՐԴ +** Դարձեալ ո՛չ ասի անպատճառ պատճառն քան զպատճառելին մեծ. զի և որդի նոյն պատճառի հօր փառաց և մեծութեանն է *հաղորդ*: - 39. Թէպէտ մեկնեն և այլ ազգ, թէ որ զմարդկայինս բնութիւն հաւասարեցոյց փառաց իւրոց և *հաղորդ* արար աստուածութեանն, ոչ ինչ զրկումն համարեցաւ.

զի բնութիւնն մի է: - 39-40. Իսկ մովսէս՝ որ միոյ բնութեան էին *հաղորդք* և միոյն անուան քերովբէքն, մի յաջմէ և մի յահեկէ ասէ: - 54. Իսկ հրեշտակք և հոգիք և աշխարհ՝ կոչին յաւիտենականք. զի *հաղո՛րդ* են յաւիտենին. այնմ որ սկսեալ է և անվախճան: - 116. Ապա դուք բարւոք առնէք չտալ *հաղորդ* ժողովրդեանն զի մի՛ յուղա լիցին: - 598. Երրորդ, զի այսպէս *հաղորդ* լինիմք վերին սեղանոյն որ է արքայութիւնն երկնից: - 655. ...որք *հաղո՛րդ* եմք մարմնոյն քրիստոսի և բաժանորդք արքայութեանն երկնից: - 655

**ՀԱՂՈՐԴԱԴՐԱՄ** - Այլ թէ ասեն՝ *հաղորդադրամ*, կամ խոստովանադրամ, խո՛րթ է. յագահութեանց երիցանց սահմանեալ և ո՛չ ըստ կանոնաց որպէս այլքն: - 684

**ՀԱՂՈՐԴԱԿԱՆ +** Յատկութիւնք Հրոց **խա** թուով...: Եւ զի ջերմ է: *Հաղորդական*: Ներգործական: - 202

**ՀԱՂՈՐԴԱԿԻՑ +** Որպէս այնոքիկ որք զօրացան այսու մահուամբ և զորդեգրութեանն ընկալան շնորհ և նահատակեցան, նոքա չարչարակից եղեն քրիստոսի, և փառացն *հաղորդակիցք*: - 497

**ՀԱՂՈՐԴԻՄ +** Իններորդ՝ թէ են **բ** սկիզբն չար և բարի, կամ *հաղորդին* միմեանց՝ կամ ոչ: - 21. Եթէ ոչ *հաղորդին*, մինն է ի նոցանէ էակ. և այնպէս ո՛չ երկու սկիզբն: - 21. Իսկ թէ *հաղորդին*, ո՛չ կարէ լինիլ չար. զի չարն բարւոյն պակասութիւնէ. և սոյնպէս մի է սկիզբն: - 21. Երկրորդ՝ ոչ էն *հաղորդի* էի և լինի է: - 23. Իսկ չարն բարւոյ ո՛չ *հաղորդի* և ո՛չ լինի բարի: - 23. Դարձեալ հարցանեն թէ՝ զիա՞րդ ասէք երեք և մի բնութիւն. զի **գ** միոյ բնութեանն ո՛չ *հաղորդի*. այլ մինն *հաղորդի* միոյ բնութեանն, և երկուքն երկուքին. և երեքն երեքին. զի որքան է թիւն, այնքան բնութեան թըւակից լինի: - 54. Ապա ուրեմն զի դուք **գ** ասէք՝ հայր և որդի և հոգի, ըստ թըւոյն և երեք բնութեան *հաղորդին* և ո՛չ միոյն: - 54. Ութևտասներորդ՝ ո՛չ ոք իմանալի ստեղծեալ և մասնաւոր՝ կարէ *հաղորդիլ* բազմաց: - 59. Այլ հոգին սուրբ մի և նոյն՝ *հաղորդի* ամենայն հաւատացելոց...: - 59. Իսկ թէ անիր, ապա միայն անուա՛մբ է մի և ո՛չ իրօք. որպէս հոմանուն ձայն՝ անուամբ *հաղորդեալ* և բնութեամբ այլև այլ: - 86. Նախ՝ զի հոմանուն ձայնն միայն անուանն և ո՛չ իրի *հաղորդի*: - 88. Իսկ որպէս հոմանուն ձայն, զի հաւասարապէս *հաղորդի* որոց կոչինն. որպէս խոյ երկնային և երկրային և ջրային. զի ո՛չ առաւել և ո՛չ նըւազ կոչին. այլ հաւասարապէս: - 89. Չորրորդ՝ հասարակ է ի միոյ բարերար կամաց յառաջ եկելոց *հաղորդեալ* անհաղորդաբար ըստ համեմատութեան: - 106. Ըստ այսմ ապա և բազմութիւն արարածոցս միո՛յ են *հաղորդեալ*. մի սկզբան. մի աստուծոյ. և մի խնամողի: - 106. Ըստ որում մինն ի սուրբ Երրորդութենէն բանն աստուած *հաղորդեցաւ* բնութեան մերում անքակ միութեամբ. և եղև աստուածն կատարեալ՝ մարդ կատարեալ: - 106. Այլ արդ՝ շնորհքն ըստ իւրում ինքնութեան է՛ անեղ՝ յանեղ է էն յառաջեալ, և նախախնամաբար եղելոցս *հաղորդի*, և յիւրմէ էութենէն ո՛չ փոփոխի: - 140. Եւ ա՛յսպէս խօսին միայն վերինքն առ ստորինս. զի *հաղորդեսցեն* զնոսա աստուածային յայտնութեանցն: - 145. Յասցանէ յայտնի է զի զղջացեալ այնպիսին կարէ՛ *հաղորդիլ* ի ձեռն այլոց. այլ ո՛չ ինքն պատարագել: - 167. Զի նախախնամութեամբ *հաղորդեալ* են յարարածս. և իսկական բնութեամբն մեկնեալ և որոշեալ և յանհասս գերամբարձեալ: - 178. Բարութիւնն աստուծոյ. զի իցեն՝ որոց զբարութիւն իւր *հաղորդէ*: - 179. Եւ դարձեալ արեգակն միջակ գոլով *հաղորդի* ամենայն մոլորակաց. և զայն անցուցանէ ի լուսինն լուսո՛վն հանդերձ: - 187. Նոյնպէս և մարդկային կենցաղս ամենեքեան հասարակաբար *հաղորդին*. և ամենեքեան առ հասարակ փոփոխին և կորուսանեն...: - 199. *Հաղորդէ* զամենեսեան: - 203. Ութերորդ՝ որպէս և աբրահամ ճաշակեաց զպատարագն մելքիսեդեկի և ո՛չ *հաղորդեցաւ* ընչիցն սոդոմայ: - 301. Նոյնպէս և որք *հաղորդին* մարմնոյն քրիստոսի, ո՛չ մերձենան ի զանազան ախտս մարմնական անթլփատութեան և զոհից դիւական: - 301. Որք *հաղորդեցան* մարմնոյ նորա, եղեն զաւակք ըստ մարմնոյ՝ ըստ թլփատութեան և այլոց օրինաց նորա: - 303. Եւ որք *հաղորդեցան* հոգւոյ, այսինքն հաւատոյ նորա, եղեն որդիք հաւատոյ նորա. որպէս քրիստոնեայք: - 303. Նոյնպէս ի մահ խոնարհեալ դաւանիմք զհաւատն, և *հաղորդիմք:* - 314. Վեցերորդ՝ գետն նշանակէ՛ զբանն աստուած, որ *հաղորդիլով* ի մեզ՝ եղև մարմին և արիւն. և ետ մեզ ըմպելի զարիւն իւր սուրբ. և կերակուր զմարմինն: - 333. Եւ զհաց մարմնոյն քրիստոսի՝ որք զբոլոր և որք զմասն ճաշակեն՝ միո՛յ կենաց *հաղորդին*: - 339. Վասն որոյ յետ մկրտութեանն *հաղորդեմք* զկնքեալսն: - 341. Եւ յայտ է զի յետ մկրտութեանն պա՛րտ է *հաղորդել*, և նոքա ո՛չ առնեն որպէս ցուցաւ: - 341. Եւ ըստ միտս, զի առաքինութիւնն է ի փառս աստուծոյ. այլ և ի պատիւ և ի գովութիւն մարդկան. զի բազումք *հաղորդին* սրբութեան նորա: - 358. Ցուցանէ թէ՝ անկեալքն ի քահանայութենէ՝ *հաղորդին* ի ձեռս այլոց. այլ և հասի իրաւանցն: - 370. Եւ քահանայի մահն՝ պատարագն քրիստոսի է. մինչ վճարեսցի կանոն ապաշխարութեանն և ապա արժանասցին *հաղորդելոյ*: - 392. Եւ օրհնութեամբ *հաղորդիլ* կենացն աստուծոյ և երանութեան: - 403. Այլ և նշանակէ զպատարագ նորոյս. զոր ինչ մատուցանեմք աստուծոյ *հաղորդիմք* ի նմանէ: - 443. Սոքա ըստ իրին ո՛չ առաւելուն և ո՛չ նւազին. թէպէտ *հաղորդեալքն* առաւելուն և նւազին ըստ ունակութեան: - 444. Իսկ արծակելն որ է՛ մերձաւորել և *հաղորդել*՝ է՛ յատուկ քահանային: - 538. Որպէս մինչ

անարժան քահանայն պատարագէ, այլքն *հաղորդին* սրբութեան. այլ ինքն դատապարտի: - 540. Երկրորդ ըստ հասարակութեան. զի հասարակաբար ո՞ ոք որ *հաղորդի* բնութեանս՝ *հաղորդի* և սկզբնականին: - 568. Որ և շնորհաց նորա և թողութեանն *հաղորդեսցուք*: - 592. Եւ *հաղորդելն*, որպէս անդամ ի գլուխն յօդէ. զի ամենայն կատարմանց կատարումն հաղորդութիւնն է. այսինքն կարգին՝ պսակին՝ խոստովանութեան՝ մկրտութեան՝ և այլն: - 594. ...ահա՛ ևս յայտնի զմանկունս ո՛չ *հաղորդեն* մինչև լիցի **բժ**ան ամեայ...: - 600. Եւ թէ ոք ասիցէ՝ ընդէ՞ր ապա յորժամ խոստովանին *հաղորդին*: - 602. ...այլք սոքա ընդ ապաշխարութեան պատժոց են և ոչ *հաղորդին*...: - 602. ...և յետոյ խոստովանին և *հաղորդին*. - 603. ...զի *հաղորդիցուք* բարութեան նորա: - 624. ...զի և փառաց ընդ նմա *հաղորդեսցիս*...: - 648. ...և **ժ** զան արբցէ. և տրօք տնանկաց ապա՛ *հաղորդեսցի*: - 652. Եւ օրն յորում պղծեցաւ, սրբութեամբ պահեսցէ զնա մինչ ցմահ իւր. և ապա՛ *հաղորդեսցի*: - 652. ...**ծ** դրամ յեկեղեցին տացէ. և **լ** դրամ յաղքատս. և ապա՛ *հաղորդեսցի*: - 652. Նա՛խ՝ զի այսու՝ խաչին քրիստոսի *հաղորդեսցուք*. և սուրբ հացին զոր ի վերնատունն բաժանեաց: - 655. Երկրորդ, զի ուսցուք այսպէս զամենայն ինչս մեր *հաղորդել* ի պէտս կարօտելոց. և զմիմեանս մեծարել և պատուել սիրով: - 655. Երկրորդ, զի այսպէս *հաղորդիցուք* երկնաւոր գինւոյն. որ է՛ իմաստութիւնն աստուծոյ...: - 656. ...զի որպէս չարչարանացն *հաղորդեցաւ*, նոյնպէս և վայելչականացն նմա: - 691. Եւ այսպէս պատժոյ նորին *հաղորդեալ* մահու մեռանելոյն հասարակ ամենեցուն որպէս ասացաւ: - 776. Ա՛րդ՝ որպէս հասեալ պատժոյն *հաղորդեցան*, նմանապէս և հասեալ շնորհօքն ազատեցան: - 777

**ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ +** Եւ ճառելի է յառաջ ճառագայթեալ *հաղորդութիւնն* ամենայն եղելոց: - 103. Դարձեալ խօսին հրեշտակք *հաղորդութեամբ* աստուածային լուսոյն: - 145. Նշանակէ զժողովուրդն որք սրբին աւազանաւն և խառնին ի *հաղորդութիւն* արեանն քրիստոսի: - 341. Նա՛խ՝ զի մովսէս յայտնապէս զկէս արեանն անապական եհեղ զսեղանովն որ նշանակէր զանապական խորհուրդ արեանն. և զկէսն խառնեաց ի ջուր որպէս ցուցաւ ի խորհուրդ մկրտութեան և *հաղորդութեանն* խառնեալ: - 341. Որպէս այժմ մին նշխարն ի *հաղորդութիւն* սուրբ մարմնոյն, և զայլ նշխարքն արժանացեալք արիութեամբ ճաշակեն: - 358. Եւ ո՛չ յօշէին զբռչունքն. զի անբաժանելի՛ է յինքեան աստուածութիւնն և մարդկութիւնն. այլ և զբազումս *հաղորդութեամբն* իւրով մի՛ արար անբաժանելի: - 361. Վեցերորդ՝ ո՛չ միայն հաց է *հաղորդութիւնն*. այլ հոգւովն սրբով օրհնեալ և միաւորեալ ի բանն աստուած, որով անմահ կենդանութիւն տայ ճաշակողացն: - 397. Երկրորդ՝ ի վերնատանն դասք առաքելոցն ի վերայ նոր *հաղորդութեանն* մարմնոյ և արեանն՝ նոր օրհնեցին զքրիստոս և ելին ի լեառն ձիթենեաց որպէս ասէ աւետարանն: - 528. Երկրորդ՝ միով գլխով բոլոր անդամք ամենայն մի են *հաղորդութեամբ* նմա: - 532. **Այլ և այսու, զի մեք մկրտութեամբ և *հաղորդութեամբն* լինիմք տաճար աստուծոյ**: - 533. Ի *հաղորդութիւն* սոցա կայանայ ամենայն ուրեք առաքելութիւն: - 535. Երրորդն *հաղորդութիւնն*. որ է՛ վերըստին զօրացելոցն ի պատերազմի, և հոգևոր կերակուր: - 587. *Հաղորդութիւնն* է՛ խորհուրդ սիրոյ. զի սիրով միաւորիմք և յօդիմք ի գլուխն քրիստոս. մարմին ի մարմնոյ նորա և անդամ յանդամոց նորա: - 587. *Հաղորդութիւնն* ընդ դէմ չարութեան: - 588. Եւ հաղորդելն, որպէս անդամ ի գլուխն յօդէ. զի ամենայն կատարմանց կատարումն *հաղորդութիւնն* է. այսինքն կարգին՝ պսակին՝ խոստովանութեան՝ մկրտութեան՝ և այլն: - 594. Զի՞նչ է խորհուրդ *հաղորդութեան*: - 594. *Հաղորդութիւնն* է խորհուրդ՝ յորում պարունակի քրիստոս ի ներքոյ ձևի հացի և գինւոյ. և յերկրքին մասունքն է բոլոր քրիստոս: - 594. Ապա թէ ոչ՝ ջուրն է ի մկրտութիւն, և անապական արիւնն ի *հաղորդութիւն*: - 595. Ասեմք թէ՝ եկեղեցին սիրով և հաւատով է միացեալ ընդ *հաղորդութիւնն* քրիստոսի և ո՛չ ջրով: - 596. Եւ թէ ասեն՝ *հաղորդութիւնն* նշանա՛կ է մահուն քրիստոսի յորմէ ել արիւն և ջուր: - 596. Ասեմք թէ՝ արիւնն է՛ ի խորհուրդ *հաղորդութեանն*. ջուրն ի մկրտութեանն. որով մահ տեառն պատմի ըստ առաքելոյ, «որք ի քրիստոս մկրտեցայք ի մահ անդր նորա մկրտեցայք. թաղեալք ընդ նմին»: - 596. ...ընդէ՞ր զժողովուրդն զրկէք ի *հաղորդութենէ* մարմնոյ և արեանն քրիստոսի...: - 599. Ապա ուրեմն ծածուկ և յայտնի զրկես զժողովուրդն ի *հաղորդութենէն* քրիստոսի...: 600. Ասեմք առ այս, եթէ բանն սողոմոնի ո՛չ թէ զրկէ՛ զոմանս յարեանն *հաղորդութենէ*...: - 600. Այս քան վասն *հաղորդութեան*: - 600. Եւ որպէս աստուծոյ բանն կատարէ *զհաղորդութիւնն* որ ասէ «ա՛յս է մարմին իմ և այս է արիւն իմ»: - 610

**ՀԱՃԵԼԻ +** Սակայն *հաճելին* մեր՝ ընդունելի է աստուծոյ. զառաւել սէրն նշանակէ. զի որ ինչ մեզ անպիտան է, և աստուծոյ անպիտան է: - 371. Զի *հաճելի*՛ է բնաւորեալ գովութիւն մարդոյ. ըստ որում մեծարեցաւ տիրական պատուով. և է՛ այս հասարակ: - 774

**ՀԱՃԻՄ +** Իսկ զփոխարէն պարգևսն զոր ընկալաւ, Վասն առաջնոյն՝ զի ասէ գիր, «հայեցաւ», այսինքն *հաճեցաւ* աստուած ի հաբէլ: - 286. Զի ո՛չ *հաճեցաւ* ի նա և ո՛չ ի զոհս նորա. և տրտմեցան երեսք նորա և այլն: - 287. Իններորդ՝ ցուցանէ թէ ո՛չ է այն անդրանիկն որ նախածին լինի և մարմնովն քաջ. զի ո՛չ *հաճի*

տէր ընդ իրանս առն հսկայի. այլ անդրանիկ է այն՝ որ զհաճոյսն աստուծոյ կատարէ: - 310. Ըստ այնմ թէ «*հաճեցաւ* տէր ընդ երկիւղածս իւր», և ընդ այնոսիք որք յուսան ողորմութիւն նորա. որպէս դաւիթ կրտսեր էր և *հաճեցաւ* տէր. այլ եղբարքն մեծամեծք խոտանք եղեն: - 310. Տասներորդ՝ սամփսոն յայլազգեաց *հաճեցաւ* առնուլ կին: - 422. Եւ տէր մեր *հաճեցաւ* լինիլ մարմին ի մարդկան ազգէ: - 422

**ՀԱՃՈՅ +** Ապա յիմա՛ր են այնոքիկ որք ասեն՝ կամիմ առնել *զհաճոյսն* իմ. զի թէ յընտրելո՛ցն եմ՝ փրկցյց. և եթէ ո՛չ՝ դատապարտեցայց: - 18. Որպէս յիմար հիւանդն ասիցէ, կամիմ ուտել և ըմպել *զհաճոյսն* իմ. եթէ առողջանալո՛յ եմ՝ առողջացայց. և եթէ մեռանելո՛յ՝ մեռայց: - 18-19. Երկրորդ և ոչ վասն յետին յանցանացն կռապաշտութեան եպերեմք զիմաստութիւն նորա և ո՛չ ընդունիմք. թէպէտ և հնա՛ր է պատճառել թէ այնքան իմաստութիւնն, զնա ո՛չ պահեաց *հաճոյ* մնալ աստուծոյ: - 40. Իսկ անտօն և ո՛չ գիր գիտէր՝ ո՛չ թէ այնքան իմաստութիւն, որպէս *հաճոյ* եղև աստուծոյ. մեք յի՞նչ հաւատամք և ընդունիմք զայն իմաստութիւն: - 40. Երկրորդ՝ զմին յառաջ քան զջրհեղեղն, և զմիւսն յետոյ. զի ցուցցէ թէ յերկոսին ժամանակս ընտրեալքն *հաճոյ* եղեն աստուծոյ: - 289. Չորրորդ՝ ըստ գերազանցութեան. զի յանկարծակի ծագէ՛ ի մեզ շնորհն աստուծոյ եթէ ի հաւատս՝ և եթէ յայլ ինչ գործս ի *հաճոյսն* աստուծոյ: - 308. Իններորդ՝ ցուցանէ թէ ո՛չ է այն անդրանիկն որ նախածին լինի և մարմնովն քաջ. զի ո՛չ հաճի տէր ընդ իրանս առն հսկայի. այլ անդրանիկ է այն՝ որ *զհաճոյսն* աստուծոյ կատարէ: - 310. Ողջակիզիլն ի հոտ անուշից. ի *հաճոյս* աստուծոյ հրով սիրոյն աստուծոյ: - 360. Զի անուշահոտ վարուք *հաճոյ* եղեն աստուծոյ. և բուրմամբ աղօթից բարեխօսե՛ն վասն մեր: - 628. Երկրորդ, զի *հաճո՛յ* լիցի որպէս աբելին և մի՛ որպէս կայենին: - 657. Իսկ զկամքն տալ աստուծոյ *հաճո՛յ* է քան զպատարագ՝ վասն չորից: - 658. Այսպէս բաղդատի կոչումն կշռոյ եթէ ումէք *հաճոյ* մարթասցի: - 745. *Հաճոյ* լինէր քեզ թէ լինէիր գեղեցիկ որպէս զաբիսողոմ. որում ո՛չ գոյր արատ ի մարմնի: - 761

***ՀԱՃՈՅ Է կամ ԹՈՒԻ +*** *Հաճոյ թուեցաւ* նոցա բարձրութիւն նորա. խորհելով՝ զի թէ նա աստուծոյ յաղթեալ էր, նոքա ևս այլոցն իշխէին կարողութեամբ: - 149. Հինգերորդ՝ ըստ առաջին կարգին դարձեալ ասացին բարեկամքն յոբայ՝ թէ *հաճո՛յ ես* աստուծոյ՝ լուիցէ և խօսեսցի աստուած. վասն այն առաջի նոցա խօսեցաւ և վկայեաց: - 326. Եւ զմորթ մեղաց մերկացեալ ի մէնջ որ *է՛ հաճոյ* աստուծոյ ի հոտ անուշից: - 362. Այլ գիտելի է, զի քահանայն զինուո՛ր է. ոչ զոր ինքն կամի և ախորժէ զայնս կապէ և արձակէ. այլ զոր *հաճո՛յ է* զօրավարին քրիստոսի: - 539. Եւ դարձեալ այնպէս միաւորեալք են ընդ աստուծոյ, որ դատաստանն աստուծոյ ամենայն իրօք *հաճոյ թուի* նոցա. վասն այսորիկ այնոքիւք ուրախ լինին: - 754. Այլ որ քան և կարասցէ ոք զմիտս ուղղել. խօսակցելով առ նա, *հաճո՛յ է* աստուծոյ: - 779. Իսկ այլ բազում ժամք ի դատարկութեան՝ ո՛չ *է հաճոյ* նմա: - 779-780. Երկրորդ, ապաշխարութեան ժամանակն ընդունելի է. իսկ որ քան մարդ է ի մեղս՝ ո՛չ *է հաճոյ* աստուծոյ: - 780

**ՀԱՃՈՅԱԿԱՆ +** Առաջինն է *հաճոյական* սէր: - 143. Զի առնելն է *հաճոյական* գործ առանց կասկածանաց. որպէս բարի առնել բարեաց, որ է՛ արդարութեանն աստուծոյ. և չար առնել չարեաց, որև այս է՛ խրատ ուղղութեան. այլ բարի առնել չարեաց, այս ողորմութեան է և գրութեան. այսոքիկ առնելոյն են տեսակք: - 158

**ՀԱՃՈՅԱՆԱՄ +** Երեքտասաներորդ՝ ջանայ *հաճոյանալ* նմա: - 575

**ՀԱՃՈՅՈՒԹԻՒՆ +** զայն աղերսեն նմա. սակայն ըստ *հաճոյութեան* կամացն աստուծոյ խնդրեն և ո՛չ զհակառակն: - 685

**ՀԱՃՈՒԹԻՒՆ +** Եւ հայր որդւոյ՝ *հաճութեամբ* գործոյն: - 42. Այլ այսոքիկ *զհաճութիւն* կամացն ցուցանեն: - 61. Իսկ լեառն հողեղէն բնութեանս մերում, կամաւ հօր վկայելով ի վերայ նորա՝ և *հաճութեամբ* սուրբ հոգւոյն աղաւնակերպ իջմամբ, և անքակտելի միացեալ բանիւն եղև լեառն մածեալ մշտնջենաւոր և անեզր յաւիտենիւ բարձրացեալ օրհնութեամբ և առաւելեալ: - 320. Եւ զօծումն քահանայութեան ի թաբօր լերինն. ուր և հոգին սուրբ ամպ հովանի եղեալ. և հայր *հաճութեամբ* վկայեալ: - 474. Եւ դարձեալ՝ *հաճութիւնն* է հանգուցեալ կամքն. այսինքն հոգւովն սրբով հանգեայ ի յորդի առեցեալ մարմնովն: - 488

**ՀԱՄ +** Որպէս մի էութիւն է խնծորն. և ունի երեք յատկութիւնս որակաց. *զհամն*, և զհոտն, և զգոյնն ընդ ձևոյն: - 74. Զի աչք զգայ զգոյնն ընդ ձեւոյն. և ո՛չ *զհամն* և զհոտն: - 75. Եւ ճաշակելիքն *զհամն* միայն՝ արտաքոյ մնալով հոտոյն և գունոյն: - 75. Վասն բուսուց և տնկոց՝ և կանաչութեան նոցա. և ծաղկի, և պտղոյ, և *համոյ*, և հոտոյ նոցա: - 155. Ո՛ր ըստ որում շարժօղ զգայութեանցս որ առ մեզ՝ կոչին որակք՝ գոյն, և *համ*, և սոյնպիսիք: - 171. Արդ ամենայն ինչ որ զգալի է՝ ի ներքս ի սմա՛ է. ձա՛յն. գո՛յն. հո՛տ. *հա՛մ*. ծա՛նր և թեթև. և ո՛չ ինչ է արտաքոյ սորա. յաղագս որոյ և ո՛չ զգայարանաց կարօտի: - 179. Պատասխանեմք յայտնի տեսութեամբ, թէ զոր ինչ այրէ հուր, ծախէ՛ և կորուսանէ զամենայն որակսն. այսինքն զգոյն. *զհամ*. զհոտ.

նոյնպէս և գծանրութիւն: - 202. Տեղի՛ է հոտոց և *համոց*: - 202. Յնգետասաներորդ՝ մի և նոյն գոլով մտանէ ի բուրաստանս, և զանազան գոյնս և *համս* և հոտս յառաջ բերէ: - 207. Երկրորդ՝ պէտք են ի *համ*. ի հոտ. ի գոյն. և յայլս: - 212. Ուստի՞ գոյանան *համն* և հոտն և գոյնն: - 213. Արևն պնդէ՛ և լուսինն թուլացնէ. և յայնմանէ գոյանայ *համն* և հոտն և այլն: - 213. Եւ *համն* ջրոյն յետ այնորիկ: - 213. Եւ այն զի մեծ է բերանոյն. և զի հոտն և *համն* ազգակից են միմեանց. ի ջրոյ գոլով երկուցն. վասն այն զգայարանք նոցա առ միմեանս են մերձեցեալ: - 235. Եւ քաղցր ջուրն է ի բերանն վասն առնելոյ զճաշակ *համոցն*: - 240. Արդ եթէ ի խարտեաշ մաղձէն ի լեարդն է մնացեալ, լերդին *համն* ի լեղւոյն առնու և բերանն լեղի դառնայ. իսկ եթէ ի սեաւ մաղձէն է մնացեալ ի լեարդն. բերանն թթո՛ւ դառնայ. իսկ թէ պալղամն մնայ ի լեարդն, բերանն աղի փոխի. իսկ թէ յըստակ արիւնն մնայ ի լեարդն, լերդին *համն* անոյշ լինի, և բերանոյն *համն* անուշ տայ և քաղցր: - 242-243. Ի լերդէն ջուր բերանոյն քաղցր. զի զամենայն *համս* առցէ: - 243. Եւ զինչ և կամին, զամենայն *համս* տայր ի բերան կերողացն: - 338. Վասն է՞ր ի զանազան *համս* փոխէր մանանայն: - 339. Երրորդ՝ զի բազում օրհնութիւնս փոխանակէին ի զանազան *համսն*: - 339. Չորրորդ՝ զի գիտասցեն թէ գոյնք և *համք* զանազան կերակրոց և պտղոց ո՛չ իւրովի պատրաստին, այլ ի շնորհացն աստուծոյ: - 339. Ուստի յա՛յտ է զի ի մի նիւթ ժողովեաց զամենայն որակս *համոց*: - 339. Չորրորդ՝ քաղցր *համն*. զի քաղցրանայ ի մեզ դառնութիւն մեղաց: - 339. Երրորդ, շարաւահոտ և քացախո՛ւտ է. այս մեղաց հոտ է և *համ*: - 356. Զի ասեմք՝ տե՛ս *զհամն* և զհոտն. տե՛ս զբանդ. տե՛ս թէ ջե՞րմ է կամ ծանր: - 407. Չորրորդ՝ ի գլխո՛յն է տեսողութիւն և լուր և վայելչութիւնք *համոց* և հոտոց: - 532. Այսպիսի են խնձորք նոր և հին. որք հոտով զուարճացուցանեն, և *համով* զմայլե՛ն: - 756

**ՅԱՄԱԲՆԱԿ +** Դարձեալ՝ մարդն է քաղաքական կենդանի. զի լինիցի *համաբնակք* և կարեկիցք և օգտակարք ի բարին: - 274-275

**ՅԱՄԱԲՈՒՆ +** Նախ՝ առ *համաբունսն* հայր սկիզբն է որդւոյ և հոգւոյն սրբոյ. և պատճառ այլ ամենայն արարածոց: - 110. Նախ՝ ի դէմս Երրորդութեանն և *համաբուն* իսկութեանն: - 134. Նախ զայս ասեմք թէ՝ *համաբուն* և համապատիւ է Երրորդութիւնն սուրբ. զի միոյն փառքն երիցն է և երիցն միոյն: - 525

**ՅԱՄԱԳՈՅ +** Տասներորդ՝ Վկայութիւնք վասն *համագոյ* Երրորդութեանն տասն գլխով: - 30. *Յամագոյ* և միասնական սուրբ Երրորդութեանն ո՛չ է առաջին և վերջին. ո՛չ մեծ և փոքր. և ո՛չ երէց և կրտսեր: - 109. Իսկ թէ մինն *համագոյ* երրորդութեան բանն մարմին եղև՝ ցուցցի այժմ: - 468. Նախ ասի միածին՝ զի նա միա՛յն է *համագոյ* ծնողին ծնունդ. ըստ որում, (բանն էր ի սկզբանէ առ աստուած.) իսկ այլ ամենայն ծնօղ՝ յառա՛ջ է քան զծնեալն: - 472. Այլ բոլորովին *զհամագոյ* և ըզհամառօտ և զանաւեղորդ Երրորդութիւնն փառաւորեա միշտ և հանապազ: - 771

**ՅԱՄԱԳՈՅՈՒԹԻՒՆ +** Երկրորդ՝ Երրորդութիւնն ցուցանէ *զհամագոյութիւն* երիցն. զի ո՛չ է առաջին և վերջին ի նոսա. այլ՝ զո՛յգ և համանգամայն: - 107-108

**ՅԱՄԱԳՈՒՄԱՐ +** Իսկ գլխաւորագոյն սրբոցն, որպէս յաւագ տօներն և յայլս, որ առնեմք նախատօնակ որպէս ի տօնս տէրունականս... Եւ *համագումար* յոգիս անդրանկաց կատարելոց: - 647

**ՅԱՄԱԶԳԻ +** Եւ ևս. կրկնեալ սուտ *համազգիք* ճշմարիտ. բաղարկոցի ըստ ասիցդ վերոյ: - 787

**ՅԱՄԱԶՈՒԳԵԱԼ +** Իսկ ողջոյնս այս ունի *համազուգիլ* ընդ ամենայնսն: - 464. Նմանապէս և ի յարիւնն է կապեալ մարմինն և հոգին *համազուգեալ* և աստուածութիւնն միաւորեալ. - 600

**ՅԱՄԱԶՈՒԳՈՒԹԻՒՆ +** ...զի հաւատալի է թէ ի մարմինն քրիստոսի՝ է՛ և արիւնն կապակցութեամբ. և հոգին *համազուգութեամբ*. և աստուածութիւնն միաւորութեամբ: - 600

**ՅԱՄԱԶՕՐՈՒԹԻՒՆ +** Տասներորդ՝ յա՛յտ է ի *համազօրութենէ*. զի երբեմն շարժէ՛ ախտ զմիտս. և երբեմն շարժի ի մտացն ախտ. որպէս ասէ երանելին եւագրիոս. եթէ մինչ յերեսնամեայ հասակս ախտն շարժէ զմիտս ի ցանկութիւն. և անտի յառաջ միտքն շարժէ զախտն: - 557

**ՅԱՄԱԺԱՌԱՆԳ** - ...որպէս ասէ առաքեալն, «չիք խտիր ո՛չ հրէի և ո՛չ հեթանոսի. ո՛չ ծառայի և ո՛չ ազատի». զի դուք միապատիւ էք ի քրիստոս յիսուս և *համաժառանգք* արքայութեանն: - 590

**ՅԱՄԱԽՈՅ +** Այսպէս և կիւրեղ երուսաղէմի՝ *համախոհ* նմին: - 484. Այլ թէ ծնօղք որդւոց՝ կամ որդիք ծնողաց մեղացն կամակիցք և *համախոհք* լինին ի մեղս չա՛րք են ընդ նոսին...: - 593. Այլ որք ուղիղ դատեցան վարդապետք եկեղեցւոյ ըստ տեսլեանն յօհաննու. որպէս մեծն անդրէաս և *համախոհք* նմին սուրբն իրինոս, եպիփան, և բասիլիոս: - 687

**ՅԱՄԱԿ +** Երրորդ՝ *համակ* հանապազորդ ներգործական դարձումն բոլոր մարդոյն առ աստուած. որով մարդն աստուածային քաղցրութեամբն զմայլի. որպէս հրեշտակք ի բոլոր սրտէ՝ յամենայն անձնէ

և յամենայն զօրութենէ միշտ ներգործաբար դիմեն առ աստուած. և յիւրաքանչիւրսն ճառագայթի՛ ի նմա՛ աստուած: - 462

**ՀԱՄԱԿԱՄ +** Նոյնպէս և աստուած զամենայն մարդոյ փրկութիւն կամի. որք անձնիշխան կամօք *համակամ* լիցին աստուծոյ՝ փրկին. և որք հակառակին կամօք՝ ո՛չ փրկին: - 20. Որև կործանմամբն իւրով չարչարեաց զվերին դասքն սրտմտութեամբ, և զներքին դասքն սասանմամբ, և *զհամակամսն* ընդ ինքեան քարշեաց: - 148

**ՀԱՄԱԿԱՄՈՒԹԻՒՆ +** Նոյնպէս և առաքումն հոգւոյն ո՛չ նըւազութիւն ցուցանէ, այլ *զհամակամութիւն* ընդ հօր և ընդ որդւոյ: - 60

**ՀԱՄԱԿԱՐԳ +** Իսկ առողջ լսելիք և տկար՝ պատճառի ի *համակարգս*. և ի հաւասարն բնութեամբ. որք իմացմամբ և սիրով և ներգործութեամբ առաւել կամ նըւազ են. ուստի առաւել կամ նըւազ պարգևս ընդունին: - 131. Իսկ ի *համակարգսն* վերջինն զառաջ նոյն ընդէ՞ր ոչ փոխէ զկանոնսն: - 541. Ասեմք առ այս, եթէ *համակարգ* և համիշխանք են վերջինն ընդ առաջնոյն ի կարգել և ի յուղղել. այլ ո՛չ ի թիւրել և ի քակել. զի առաջնոյն աւանդապա՛հ է վերջինն նո՛յն մտօք և նո՛յն կամօք: - 541. Իսկ *համակարգ* քահանայք կամ եպիսկոպոսք զնոյն ումն ընդէ՞ր ոչ կապեն կամ արձակեն: - 541. Ասեմք առ այս, եթէ *համակա՛րգ* են քահանայք կամ եպիսկոպոսք որպէս առաքեալքն. այլ ունին զվիճակ և ժողովուրդ այլ և այլ: - 541. Այլ անիրաւ կապելն արձակեսցի. և կապօղն պատժեսցի. ոչ միայն ի *համակարգից*, այլ և ի ներքնոց: - 542. Որ զգլուխն ըսթերցար, *զհամակարգն* ընդէ՞ր մոռացար: - 546. Գլուխ ասէ և *համակարգ* նոցին: - 546. Եւ *համակա՛րգ* է նոցա ըստ առաքելութեան և ըստ քահանայապետութեան. զի ամենայնքն համահաւասար զիշխանութիւն առաքելութեան և քահանայապետութեան ունէին: - 546. Եւ թէ ոք ասիցէ, յորժամ *համակարգ* են իշխանութեամբ ամենայն երկոտասանքն, ապա ո՞րպէս է գլուխ առաքելոցն պետրոս: - 546. Այլ որպէս ի մէջ *համակարգից* քահանայից միոյն լինի հայր: - 546. Ասեմք առ այս, թէ որպէս ի մէջ սերովբէից և քերովբէից և աթոռոց ո՛չ ասի վերնագոյն և նուաստագոյն, զի *համակա՛րգ* են և շուրջ զավ: - 547. Տասներորդ՝ զի այսպէս ողջունի և հոգին անդ որպէս մարմինն աստ. նախ յաստուածպետութենէն, և ապա ի *համակարգ* հոգւոց սրբոց: - 673. Եւ *համակարգք* իւր իջուցեն զնա ի հանգիստ...: - 674

**ՀԱՄԱԿԱՐԳԱՊԷՍ** - Ասեմք եթէ՝ նոքա երեքեան դասքն՝ այսինքն աթոռք՝ քերօբէք՝ և սերօբէք՝ միակարգ միապատիւ և գերազանց էութիւնք են. զի անընդմիջաբար յաստուծոյ ամենայն լուսափայլութիւնք իմաստք և շնորհք ի նոսա հեղանին *համակարգապէս*. և ապա նոքօք յայլ ամենայն գոյս երկնաւոր և երկրաւոր: - 135

**ՀԱՄԱՀԱՅՐ +** Դարձեալ՝ ծննդեամբ աւազանին կոչեցաք նոր որդիք աստուծոյ և եղբարք քրիստոսի *համահայր* և համամայր: - 528

**ՀԱՄԱՀԱՍԱԿ +** Նա՛խ՝ զի մի՛ համեմատ առն կարծիցէ զինքն. այլ որպէս ոչ *համահասակ* և ոչ համահող լիցի: - 276. Եւ այսպէս *համահասակ* թւով ժամանակի և կատարելութեամբն լինին: - 726. Այլ *համահասակ* քանակաւ ո՛չ. զի աստ ումն մեծ լինի և ումն փոքր ի ջերմութենէն որ անհաւասա՛ր է ի նոսա. նոյնպէս և անդ: - 726

**ՀԱՄԱՀԱՒԱՍԱՐ +** Հինգերորդ՝ նա՛ միա՛յն է ծնունդ *համահաւասար* կատարելութեամբ զօրութեամբ և իմաստութեամբ ընդ հօր...: - 472. Եւ համակա՛րգ է նոցա ըստ առաքելութեան և ըստ քահանայապետութեան. զի ամենայնքն *համահաւասար* զիշխանութիւն առաքելութեան և քահանայապետութեան ունէին: - 546. Ապա յա՛յտ է թէ *համահաւասա՛րք* են երկոտասանքն իշխանութեամբ: - 546. Սակայն կարգ գոյ ի մէջ նոցա և պատիւ և հնազանդութիւն և սէր. այլ իշխանութեամբ *համահաւասարք* են: - 547

**ՀԱՄԱՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆ** - Վասն որոյ այսպէս ասեն զկարգ դասուցն. և սոցա տարածայնութիւն *զհամահաւասարութիւն* դասուցն նշանակեն: - 135

**ՀԱՄԱՀԵՏԵՒԻՄ** - Ասելի է թէ՝ կոյսն և ապականեալն են հակակայք ըստ ունակութեան և պակասութեան. որպէս երեսք և կուրութիւն. որոց ի լինիլն *համահետևին* երեքին սոքա. այսինքն ժամանակն, և մասն, և նոյն: - 165

**ՀԱՄԱՀՈՂ** - Նա՛խ՝ զի մի՛ համեմատ առն կարծիցէ զինքն. այլ որպէս ոչ համահասակ և ոչ *համահող* լիցի: - 276

**ՀԱՄԱՁԱՅՆ +** Վասն որոյ և մեք *համաձայն* գոլով ուղղափառաց հարցն սրբոց՝ դիցուք սուղ ինչ յառարկութեանց նոցա, և ընդ նմին զպատասխանիս: - 35. Եւ թէպէտ *համաձայն* մեզ այլք ասացին մի անձն՝ բայց թիւրապէս: - 83. Ահա՛ այս ի կարճոյ բացայայտութիւն ծածկեալ ամբարշտութեանց, որք **բ** բնութիւնս

սահմանեն ի վերայ միոյն քրիստոսի. թէպէտ անձն մի համբաւեն *համածայն* մեզ, սակայն որոշմամբ բնութեանց լինին տարածայն մեզ և եկեղեցեացն աստուծոյ: - 90. Ա՛րդ՝ սոքա *համածայն* ի մի կորուստ հոգւոյ դիմեն առ մարդն: - 404. Վասն որոյ զայս **գ** ժողովքս տիեզերական և միմեանց *համածայն* ընդունիմք. այլ զքաղկեդոնին ո՛չ ընդունիմք. զի ընդ դէմ է առաջնոցն և քակտումն դաւանութեան տօնից կարգաց և կանոնաց ամենայնիւ: - 541. Նախ ասեմք թէ՝ *համածա՛յն* են միմեանց...: - 559. Ապա յա՛յտ է թէ *համածայն* են միմեանց: - 559. Յայս միտս մեք ազգս քրիստոնէից յելս արևու և ի մուտս *համածայն* վերին զուարթնոցն աղօթեմք առ աստուած: - 621. Եւ յետ այսորիկ ի միասին *համածայն* երգել զփառս ի բարձունս աստուծոյ, որ փրկեաց զմեզ: - 628. Եւ բոլոր սաղմոսն՝ այն մին տանն *համածայնք* և վկայք. վասն այն ասի սաղմոս կցորդ: - 643. Զի՞նչ է նախատօնակն որ յերեկոյն սուրբ զգեստիւ խաչիւ և աւետարանաւ և լոյս վառեալ *համածայն* պաշտեմք: - 646. ...նշանակէ *համածայն* պաշտելն: - 647. Վասն որոյ վառեալ մոմեղինիւ ի միասին *համածայն* պաշտեմք: - 647

**ՀԱՄԱՁԱՅՆԵԼԻ** - Ապա ուրեմն *համածայնելի* է մեզ փիլոնի իմաստնոյ. որ անծորելի է ասէ պտուղն և անթափ տերևն: - 224

**ՀԱՄԱՁԱՅՆԻՄ +** Եւ մեք *համածայնեալ* սուրբ և ուղղափառ վարդապետութեանցս, այսպէս դաւանիմք և խոստովանիմք զՅոգին սուրբ աստուած բղխումն ի հօրէ աստուծոյ...: - 65. Այլ արդ՝ որ հարցնես թէ՝ մարդն քրիստոս տեսանէ՞ զաստուած թէ ո՛չ. *համածայնիս* հրէիցն...: - 95. *Համածայնին* միմեանց սուրբ վարդապետք. զի դիոնէսիոս ինն դասս ասէ հրեշտակաց. այլ առաջին դասքն անընդմիջաբա՛ր են յաստուածային իմացումն, համապատիւք և համափառք: - 134. Իսկ բանք փիլիսոփայիցն ո՛չ են ընդդէմ եկեղեցւոյ. այլ *համածայնին* միմեանց: - 173. Եւ բազում վարդապետք ի մէնջ և յօտարաց այսմ *համածայնին*: - 221. Երրորդ՝ զի *համածայնին* ամենեքեան՝ որ նախ քան զյանցանելն զմարդն անապական ասեն: - 222. Եւ սմին *համածայնի* վանական վարդապետն մեր ասելով, չորս տարր է մարդոյ և **դ** ծնունդ: - 353. Մկրութիւնն քրիստոսի և յովհաննու որո՞վ *համածայնին* և զանազանին: - 488. *Համածայնին* ի նիւթ ջրոյն և ի կերպ ընկեղմելոյն: - 488. Երկրորդ՝ զի վարդապետք եկեղեցւոյ ո՛չ *համածայնին* յարութեան ժամուն: - 512. Այլ *համածայնին.* զի երկոքեանն հաւատն և յոյսն՝ են յոչ երևելիսն: - 574. Իսկ երբեմն *համածայնին* երկու դասքն. որպէս ի փառք ի բարձունս և յայլ երգսն: - 636. Սոցա *համածայնին* ընդհանուր ամենայն վարդապետք գոլ ի յերկնային խորանս անմարմնոց ի զանազան օթևանս լուսոյ: - 688. Ընդհանուր ամենայն վարդապետք ուղղափառաց *համածայնեալ* աստուածեղէն գրոց՝ ո՛չ ասեն քաւարան հրոյ: - 698

**ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ +** Այսպէս և նեստոր մի ասէր զքրիստոս ո՛չ ըստ իրին միութեան, այլ ըստ անւանն *համածայնութեան*. որպէս հոմանուն ձայն մի ունելով զկոչմունս, և զանազան բնութիւնս ի ներքոյ մի անուանն: - 90. Եւ թէ ոք ասիցէ, ապա ուրեմն լա՛ւ է տարածայնութիւն քան *զհամածայնութիւն*. և բաժանումն քան զմիութիւն: - 551. **Ասեմք առ այս թէ՝ ո՛չ է հարկաւոր այս ամենայն ուրէք. զի գո՛յ և տարածայնութիւն բարի՝ քան *զհամածայնութիւն* ընդ հերձուածօղս. և լաւ է բաժանումն ի չար ժողովոց՝ քան զմիաբանութիւն**: - 551

**ՀԱՄԱՁԵՒԱՆԱՄ +** Ապա յա՛յտ է *համածևանեալ* այսուն՝ հնոյն շնորհ առ նորոյս: - 782

**ՀԱՄԱՄԱՅՐ +** Դարձեալ՝ ծննդեամբ աւազանին կոչեցաք նոր որդիք աստուծոյ և եղբարք քրիստոսի համահայր և *համամայր*: - 528

**ՀԱՄԱՅՆ +** Եւ դու այսպէս ընկալ և հաստատեա՛ ի քեզ. և լեր միացեալ ամենայն դիմօք և խաղալեօք ի *համայնից* գլուխն միշտ պաշտաճութեամբ ի քրիստոս: - 76. Նախ՝ զի յընդդիմաբաժանեալ տեսակս սեռի՝ ո՛չ գոյ առաջին և վերջին. որպէս բաժանի կենդանին ի բանականն և յանբանն. և ո՛չ է ասել թէ՝ բանականն յառաջ է քան զանբանն. այլ զոյգ և *համայնք* են: - 87. Այլ համբարձումն նշանակէ՛ ի միտս *համայն* բարձր քան զամենայն դասս իմանալեացն...: - 519. Եւ ի նոյն կէտ լրմանն որ է՛ վախճան ժամանակի և սկիզբն յաւիտենի՝ լինի վերառութիւն *համայնից* մարդկան որպէս գրէ առաքեալն կորնթացւոց. - 716

**ՀԱՄԱՆԳԱՄԱՅՆ +** Զի ի տեսութիւնն աստուծոյ ո՛չ է առաջին և վերջին. այլ բոլորն *համանգամայն* և կատարեալ: - 15. Եօթներորդ դարձեալ՝ թէ էին **բ** սկիզբն՝ լինէր այս կամ *համանգամայն*. կամ մի յետոյ միոյ: - 21. Այլ *համանգամայն* ո՛չ կարեն լինիլ. զի **բ** հակառակք ի միասին ոչ կարեն լինիլ: - 21. Արդ՝ բարի և չար ո՛չ են հակակայք որպէս առինչք. զի առինչքն *համանգամա՛յն* են. և ի միմեանց բաղկանան. իսկ բարին և չարն ո՛չ են *համանգամայն*. և չարն ի բարւոյն ո՛չ գոյանայ. և ո՛չ բարին ի չարէն: - 21. Եօթնևտասներորդ՝ Զի՞նչ է ասելն *համանգամայն* աստուած և մարդ: - 30. *Համանգամայն* այսինքն բոլորովիմբ. կամ զոյգ և հաւասար. կամ միանգամայն: - 90. Իսկ սա ասէ միանգամայն. այսինքն է *համանգամայն* հակադարձին առ

միմեանս և հետևին միմեանց: - 91. Այս է միտքն որ ասէ՝ *համանգամայն* աստուած և մարդ. այսինքն բոլորովիմբ և հաւասար և անբաժան աստուած և մարդ: - 91. Ապա ուրեմն *համանգամայն* ի միասին լինին երկու հակակայք. այսինքն ուղղական և հոլովական. զի ասելն աստուած ուղղական է. և աստուծոյ՝ սեռական հոլով: - 92. Այսպէս է *համանգամայն* ասելն եթէ՝ աստուած է և աստուծոյ մարմին: - 92. Երկրորդ՝ Երրորդութիւնն ցուցանէ զհամագոյութիւն երիցն. զի ո՛չ է առաջին և վերջին ի նոսա. այլ՝ զո՛յգ և *համանգամայն*: - 107-108. Երկրորդ՝ զի որդին առինչ է ի հայրն. և *համանգամայն* բնութեամբ: - 109. Ասեմք եթէ՝ մի է յաւիտեան անսկիզբն և անվախճան. որ նոյն ինքն է աստուած. բոլորն *համանգամայն* և կատարեալ. և նախ քան զյաւիտեանս. և ամենայն յաւիտենից արարիչ: - 116. Երրորդ՝ յաւիտեանն ո՛չ ունի մասն. այլ բոլորն *համանգամայն* և կատարեալ. այսպէս և միշտն: - 116. Ո՞րպէս աստուած զանցեալն և զապագայն *համանգամայն* տեսանէ ներկայաբար. իսկ մեք ո՛չ: - 117. Ա՛րդ՝ աստուածայինն միտ չորիւք յատկութեամբ տեսանի այսպէս. *համանգամայն*. ներկայապէս կատարեալ. և անփոփոխ: - 118. *Համանգամայն*, այս է՝ զանցեալն և զհանդերձեալն իբր ներկայ տեսանէ և ներկայապէս. զի յինքն տեսանէ զամենայն. և ինքն ներկա՛յ է ինքեան: - 118. Հինգերորդ՝ և զի *համանգամայնք* են: - 125. Ի յաստուածութիւնն՝ սոքա առաջին և վերջին ո՛չ ասին. զի *համանգամայն* զօրութիւնք են ի յաստուածութիւնն: - 128. Մետասաներորդ՝ մարդոյս գործ մասնաւոր և մի զկնի միոյ. իսկ աստուծոյն *համանգամայն* և բոլորովիմբ: - 157. Երկրորդ զանազանութիւն՝ զի նախկին սկիզբն *համանգամա՛յն* է ի միտքն. և երկրորդ սկիզբն նա՛խ է՝ և կատարումն յետոյ: - 163. Այսպէս առինչք են արարածք արարչին. և առինչքն *համանգամայն* ունին զգոլն: - 170. Իսկ Երբ ո՛չ ասի աստուծոյ. զի անժամանա՛կ է և ո՛չ ունի փոփոխումն. այլ ասի յաւիտենական. ըստ որում բոլորն *համանգամա՛յն* է և կատարեալ...: - 172. Դարձեալ՝ ոչ ինչ պատուական քան զժամանակ. զի զինչ և իցէ յաշխարհի՝ երկու մասունքն կարե՛ն *համանգամայն* գոլ ի միասին բաց ի ժամանակէ և ի հասակէ՛. զի ժամանակին **բ** մասն անհնա՛ր է *համանգամայն* գոլ ի միասին. զի և **բ** պահք ո՛չ կարեն *համանգամայն* գոլ: - 199. Եւ սառուցեալ ի ներհակ հողմոյն, *համանգամայն* ընդ փոխիլն ի ջուր: - 205. Երկրորդ՝ բղխումն *զհամանգամայն* ստեղծումն ցուցանէ: - 212. Ի քթթելական՝ որքան վաղվաղակի կարես բանալ զակն՝ զբոլորն *համանգամայն* ստեղծ: - 227. Ասեմք եթէ՝ ամենայն արարածք *համանգամայն* գոյացան յարարչէն. և ո՛չ մի զկնի միոյ...: - 253. Իսկ որ ի **զ** օրն ասեմք ստեղծեալ զարարածս, այս զկարգ և զդասն նշանակէ մի քան զմի յետոյ. այլ ստեղծումն *համանգամայն* եղև: - 253. Այլ ի միասին *համանգամայն* ստեղծեալ. ո՛չ ժամանակաւ յառաջ և յետոյ, և ո՛չ բնութեամբ. այլ մի է սկիզբն միոյ գոյութեան մարդոյն: - 254. Այսպէս և այժմ իւրաքանչիւրքն յառաջ եկեալ *համանգամայն* գոյութեամբ, լնուն զայն թիւն՝ որ նախ էր ի տեսութիւնն աստուծոյ: - 254. Երրորդ՝ կս յայտնի. զի ընդ նիւթոյ կազմութեանն *համանգամա՛յն* է և երևումն ոգւոյ. զի յորժամ անկատա՛ր է նիւթն, միայն կերակրիլն երևի ի նմա: - 255. Ապա ուրեմն *համանգամայն* ի միասին է հոգւոյ և մարմնոյ լինելութիւնն: - 255. Եւ դարձեալ՝ որպէս հատն ցորենոյ ունի առ ինքն զօրութեամբ զխոտն և զծաղիկն և զհասկն. և սոքա *համանգամա՛յն* են ի հատն այն զօրութեամբ. որ յետ ժամանակաւ ըստ դասի երևին: - 255. Այսպէս և բանական հոգին *համանգամայն* երևի ընդ ծնանալ մարմնոյն: - 255. Եւ *համանգամայն* երևի ասեմ. զոր օրինակ նիւթն այն ունի առ ինքն ծածկեալ զմասունս մարմնոյ. զձեռս և զոտս, զմիս և զմազ, որ յետոյ երևին ի նմանէ: - 255. Երկրորդ՝ զի ամենայն մասունս *համանգամայն* առ ինքն ունի: - 256. Ո՛չ է հին, զի ըստ իւրաքանչիւր մարմնոյ *համանգամայն* ստեղծանի հոգին: - 257. Այլ հակադարձեալ սոքա ըստ կարգի և ըստ դասու՝ յառա՛ջ է տնկականն քան զզգայականն, և նա՛ քան զբանականն ի յերևումն. այլ էութեամբ *համանգամայն* են...: - 260. Այլ է՛ նա՛խ էացեալ ի բանն աստուծոյ, և *համանգամայն* ընդ մարմնոյն երևեալ ի պարգևաց այնմ նախատես բանի: - 260. Եւ վասն երկրորդին ասեն, եթէ կարծեո՛ք է՝ թէ *համանգամա՞յն* փոխիլոց էին, թէ մի զհետ միոյ: - 290. Եւ թէ լիցի երկաթ և ո՛չ սուր, և ո՛չ է պիտանի. որպէս բոլոր երկաթն թէ հարցէ զկենդանին և սպանցէ, ո՛չ է ուտելի, զի թէպէտ զարիւնն հանէ, այլ ո՛չ *համանգամայն* զշունչն և զջերմութիւնն: - 366. Եւ այս ո՛չ զհետ իրերաց. այլ *համանգամայն* յանկարծօրէն ի վայրկեան ժամու զօրութեամբ հոգւոյն սրբոյ. որոյ յանկարծօրէն է ներգործելն աստուծոյ: - 470. Այսպէս թէ ուրեք մարդ միայն անուանի քրիստոս «զճշմարութիւն խօսեալ». և կամ՝ «աստուած կնքեալ». ո՛չ ինչ ուրէք վնասէ զմիաւորութիւնն իբր մարդ սոսկ կամ աստուած միայն. այլ աստուած *համանգամայն* և մարդ խոստովանի միացեալ: - 477. Եւ յայսցանէ յայտէ, զի յետ յարութեանն ի վերինն գաւառ ոչ գոյ յոյս. զի է՛ անդ երանութիւն, որ է ստացումն ամենայն բարեաց. բոլորն *համանգամայն* և կատարեալ. և ոչ ինչ է ապառնի յոր յուսացեալ լինի: - 574. *Համանգամայն* յառնեմք. և վասն կերակրոյ. և կերեալ մարդոյ ի գազանաց: - 660. Նաև զվարծն *համանգամայն* ետ մշակացն: - 696. Վասն է՞ր ի վերջին ժամանակս յառնեմք *համանգամայն*: - 716. Նա՛խ՝

զի շնորհն աստուածային պատկերին որ *համանգամայն* կամեցաւ զբոլոր բնութիւնս ըստ հրեշտակացն օրինակի մուծանել ի կեանս...: - 716. ...և ի դադարիլ ժամանակին՝ ի նոյն կէտն *համանգամայն* վերառեցեալ մտանեն ի կեանս առաջին ըստ խոստման բանին: - 716-717. Պարտ է ապա զի ամենայն մարմինք մարդկան *համանգամայն* յարիցեն ի յաւուրն վերջին: - 717. Հինգերորդ, զի մեծ ուրախութիւն է և տօն յորժամ *համանգամայն* ամենայն մարդկան յականթօթափելն լիցի յարութիւն, քան յայլ և այլ ժամանակս. - 717. ...զի կարիցեն հասկանալ. այն որ *համանգամայն* եղեն երկինք և երկիր: - 717. Նա՛խ՝ եթէ *համանգամա՛յն* է յարութիւնն ի նոյն կէտն, այլ ննջեցեալքն նա՛խ յառնեն և ապա՛ կենդանիքն ընդ նոսա...: - 717. Իսկ հրեշտակական կենաց է հրաշափառապէս գիտել և ո՛չ մոռանալ միշտ. ըստ որում զանցեալն և զիանդերձեալն ներկայապէս կրեն. զբոլորն *համանգամայն* և կատարեալ...: - 774

**ՀԱՄԱՆԻՒԹ +** Նմանաբար և այլոց *համանիւթից*: - 476. Յետ այսորիկ երկրորդ միաւորութիւն սովորեցաք կոչել թէպէտ և ո՛չ իսկապէս՝ և զանհամանիւթից ոմանց. և կամ *զիամանիւթից* մարմնոց յարադրութիւն. որոց ընդ մէջ է մակերևութիւն միայն: - 476

**ՀԱՄԱՆՄԱՆ +** Զոր ընդ դերևս հանէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս կազմութեան այսպէս եթէ, որք զհոգին յառաջ ասեն գոյանալ քան զմարմին. և վասն մեղաց եղեալ ի մարմին մարդոյ. որ է՛ *համանման* բանականութեամբ. և է՛ իներբոյ երկնային կենաց՝ զի մարմնաւո՛ր է: - 252. Այլ արդ ի մարմնի առաւել մեղանչէ քան յերկնային կեանս. վասն որոյ անկանի ի զգայական մարմին որպէս ասեն՝ որ ներքո՛յ է մարդոյն՝ և *համանման* ախտիւք զի զգայակա՛ն է: - 252. Եւ փոխանորդ իւր նստոյց յաթոռ զուլբրն արիստակէս *համանման* նորին առաքինութեամբ, և որդի ըստ մարմնոյ. և ապա՛ գնաց ի հռօմ: - 548. Այս վասն *համանման* գործոց նոցա այսպէս կարգի որ են ի նոսա. այլ յոյսն և սէրն են ի կամքն: - 578. Երկրորդն ըստ համանմանութեանց. և է՛ *համանմանքն* կրկին: - 642

**ՀԱՄԱՆՄԱՆՈՒԹԻՒՆ +** Թողում զայլսն բազմօրինակ *համանմանութիւն*: - 305. Չորրորդ՝ սառս օրինակ և ծնունդ իւր. մարիամ ճշմարտութիւն և ծնեալն իւր. և եկեղեցի *համանմանութիւն* և զաւակք իւր: - 307. Երկրորդ՝ *համանմանութեան*: - 641. Երկրորդն ըստ *համանմանութեանց*. և է՛ համանմանքն կրկին: - 642

**ՀԱՄԱՇԽԱՐՀԱԿԱՆ +** Երկրորդ՝ զի ջրհեղեղն *համաշխարհական* անդ սկսաւ՝ և դարձեալ դադարեաց: - 196

**ՀԱՄԱՇՈՒՆՉ +** Երկրորդ՝ զի պատկանեալ են և *համաշունչ* յերգն աստուածային՝ և ի սէրն առ միմեանս և առ աստուած: - 713

**ՀԱՄԱՊԱՅԾԱՌ +** Նաև *համապայծառ* լոյս Երրորդութեանն ծածկէ՛ զամենայն լոյս լուսաւորացդ. զա՛յն ասէ խաւարումն արեգական և լուսնի և աստեղաց. զոր օրինակ՝ լոյս ճրագի ծածկի մերձ եկեալ լուսոյ արևու: - 728

**ՀԱՄԱՊԱՏԻՒ +** Համածայնին միմեանց սուրբ վարդապետք. զի դիոնէսիոս ինն դասս ասէ հրեշտակաց. այլ առաջին դասքն անընդմիջաբա՛ր են յաստուածային իմացումն, *համապատիւք* և համափառք: - 134. Նախ զայս ասեմք թէ՝ համաբուն և *համապատիւ* է Երրորդութիւնն սուրբ. զի միոյն փառքն երիցն է և երիցն միոյն: - 525. Հինգերորդ՝ **զի *համապատիւ* ծնանիմք ամենեքեան. ո՛չ ոմն պատուով կամ անպատիւ. իշխան կամ իշխեցեալ**...: - 590

**ՀԱՄԱՌՕՏ + Եւ *համառօտ* ասեմ, կեանք մեր և ժամանակ որքան առաւել յերկարէ՛ և աճէ՛, այն քան առաւել պակասի և նուազէ**...: - 199. Եօթներորդ՝ *համառօ՛տ* է և փոյթ ի գզելն: - 315. Այս քան *համառօտ* վասն սողոմոնի: - 442. Որպէս զինչ ասեմ *համառօտ* թէ՝ թերութիւն է մեր բաժանել զբանն ի մարմնոյն յերկու բնութիւնս և յերկու դէմս. ի կրկին կամս և ի գործս: - 552. Չորրորդ՝ զի յանկարծակի լինի և ի *համառօտ* ժամն մահ մարդոյ և կատարած աշխարհի: - 730. Այլ բոլորովին զիամագոյ և *զհամառօտ* և զանաւելորդ Երրորդութիւնն փառաւորեա միշտ և հանապազ: - 771

**ՀԱՄԱՌՕՏԵՄ +** Իսկ **է** երրորդքն դանիէլի որ ասէ՝ «**է** երրորդ է՝ և եօթներորդ **կք** *համառօտեսցի* ժողովրդեանն»: - 449

**ՀԱՄԱՍԵՌ +** Այլ և մարդ զկենդանիս և զանկենդանս. զի *համասեռ* գոյեղէնք են. և այս սիրովս շաղկապին առ իրեարս: - 143. Եօթներորդ՝ թոյլ տուեալ լինի և ոմանց անկանիլ ի մեղս ինչ. զի ի հպարտութենէն զոր ունէր վասն առաքինութեան՝ խոնարհեսցի և անկցի առաջի տեառն խոստովանութեամբ. և ընկալցի զթողութիւն. որ նախ *համասե՛ռ* էր սատանայի: - 159

**ՀԱՄԱՏԱՐԱԾ +** Դարձեալ ասեմք, եթէ ի հուրն *համատարած* ամենայնքն անցանելոց եմք ի կատարածի. այլ ո՛չ ի հուր քաւարանի. զի ո՛չ գոյ քաւարան: - 701

**ՀԱՄԱՏԵՍԱԿ +** Երկու նոխազն *համատեսակ* օրինակ տեառն մերոյ՝ յերկուց միաւորեալ մի անձն.

և միաւոր բնութեամբ աստուած և մարդ: - 369. Ասեմք թէ՝ և զձու հաւի և զկաթն ո՛չ զենումք, կե՛ր և զայն ի պահոց. զի *համատեսա՛կք* են: - 511

**ՅԱՄԱՏԻՊ +** Վասն է՞ր է զի ամենայն անհատք ի մարդկանէ *համատիպք* են միմեանց. և օտարք իրերաց. զի նմանք են, և աննմանք որակութեամբ և ձևով: - 235

**ՅԱՄԱՐ +** Այլ և զամս ծննդեանն քրիստոսի՝ և վասն եօթներորդացն դանիէլի՝ գտցես ի չորրորդ թագաւորութեանց վերջքն ի **լ** *համարն*. զոր ընդդէմ հրէից գտցես բան: - 29. Նախ ասեմք թէ՝ թագաւոր էր այր կերօղ և արբեցօղ և վաւաշոտ. զի՞նչ իցէ **ի** *համար* բան նորա. թէպէտ կարի ասել ո՛չ կարեմք: - 40. Իսկ այլ բազում օրինակ երրորդութեանն ասացաւ ի վերոյ յերեք *համարն*: - 53. Իսկ յորժամ քակես՝ լինի մի և մի. քակեցաւ այժմ ի յառաջին բնութենէն ըստ քեզ՝ և ունի դեռևս զնոյն *համարն*: - 55. Տե՛ս՝ զի հոգին բղխումն է հօր անձամբ. և առումն յորդւոյ իմաստութեամբ. որպէս ցուցաւ ի վեց գլուխն ի **ժգ** *համարն*: - 105. Յատկութիւն արեգականն ասացեալ է յառաջիկայսդ ի գլխով ի **ժբ** գլուխն **իա** *համարն*: - 124. Նոյնպէս զլուսոյ և զհրոյ յատկութիւնս բաղդատել դիւրին է իմանալի լուսոյն ճշմարտի. որպէս գրեալ ի **ի** գլուխն՝ **լե** *համարն* տե՛ս անդ: - 127. Իսկ թէ վասն է՞ր մարդս ալփաբէտից կարօտացաւ, գրեա՛լ է ի հրեշտակաց **ժե** *համարն*: - 177. Այլ և ըստ *համարոյն* կնքէ՛ զինչս թագաւորաց. և չտայ գողանալ ծառայից. և զգողացեալն յայտնէ և յանդիմանէ: - 178. Զի ըստ հռոմ *համարին* այսպէս է. մա՛րտի **ժէ**՝ Առաջին օր արարչութեան է, յորում եղև լոյսն: - 191. Ժամանակն թէ ո՞րպէս բաժանի ի մշտնջենաւորն և յաւիտեանցն՝ ասացաւ ի վերոյ ի **ը** գլուխն՝ **ժբ** *համարն*: - 198. Զի տղայութիւնն օդո՛յ է. և միջին հասակն հրոյ և հողոյ. և վերջինն ջրոյ. վասն այն սպիտակի. որպէս ցուցանի յառաջիկայդ **ժզ** գլուխն՝ **իզ** *համարն*: - 213. Եւ զանազանութիւն ներքին և արտաքին զգայութեանցն ասացաւ ի վերոյ յաղագս հրեշտակաց ի **ը** գլուխն, ի **ժզ** *համարն*: - 249. Այլ և ի սկիզբն գրոցս ցուցաւ յերեք *համարն*: - 252. Եւ թէ զտեսութիւնս զայս կարծես էութիւն հոգւոյ ըստ որում է հոգի, ապա ո՛չ միայն ետես զհոգի, այլ և զմարմին՝ և զիւրաքանչիւրոց ընտրութիւն, և *զհամար* հերաց և զթիւն աստեղաց. և սոքա յետո՛յ են գոյացեալ ըստ կամաց տեսողին: - 260. Եւ զայլ քննութիւն զենմանն գտցես յառաջիկայդ ի **խե** *համարն*: - 296. Վասն քրիստոսի և մելքիսեդեկի, ասացեալ է և յայլ ուրեք ի վերոյ ի գիրս աստուածաբանութեան **ե** գլուխն՝ ի *համարքն*: - 302. Եւ այլն ասացաւ ի գօտէմարտիլն յակոբայ ի **ժե** *համարն* ա՛նդ տեսցես: - 332. Եւ զայս յայտնապէս ասէ ի ղևտացւոց **ծ** *համարն* թէ՝ «սուրբն սրբոց է՛ յարևելից կողմանն»: - 343. Զարծաթն է առ ի *համարոց* գլխոցն կէս երկդրամի որ է՛ **ժ** դանկ: - 344. Ի յա՛յս միտս յորժամ խաչ նկարեմք, զճագ մատին աջոյ մերձ ի բոյթն առնեմք որ է՛ ի *համարն* **զ**երորդ. զկէս զին նշանակելով: - 345. Եւ այսպէս ըստ բարուց մարդկան ընտրէր նոյ ի սրբոցն **է**. և յանսրբոցն **բ**. որպէս ասացաւ ի վերոյ **ժզ** գլուխն ի **զ** *համարն*: - 364. Արիւն ուտելն՝ և հեղձուցանելն՝ և գազանաբեկն՝ մի էր մեղք՝ որպէս ասացաւ ի վերոյ **ժը** գլուխն ի **զ** *համարն*: - 371. Վասն որոյ ի միասին տօնեմք խաչի և եկեղեցւոյ. որպէս ասացաւ ի **լե** գլուխն, **լը** *համարն*: - 373. Նա՛խ՝ զի ո՛չ առնու ի *համար* թըւոց: - 377. Իսկ այլք ի **դ** բաժանեն ըստ չորից տարերաց և **դ** պահու գիշերոյն. որպէս ասացաւ ի վերն **ժզ** գլուխն **իզ** *համարն*: - 378. Զի աթոռք՝ քերովբէք՝ սերովբէք՝ հաւասարապատիւք են՝ մի *համարի* դասս. և վեցն զկնի նոցա: - 380. Այլ և թիւ և *համար* գործոց. պահանջին ի մէնջ ի յերկրին աւետեաց: - 381. Եւ դարձեալ վասն օձին տե՛ս ի հարուածն եգիպտոսի ի ի գլուխ *համարոյն*: - 387. Եւ վասն առաջին օձին ի **ժգ** գլուխ *համարոյն* տես թէ պիտի: - 387. Եւ վասն կախարդաց գրեալ է ի վերոյ ի **ի** գլուխն **իէ** *համարն*: - 389. Զոր ա՛յլ մարգարէ ո՛չ արար. որպէս գրեալ է ի **ի** *համարն* ի վերոյ: - 399. Եւ ի մեծի ուրբաթի խաչին, լուսինն ընթացաւ և ծգեցաւ յարևն, և յետս դարձաւ. որպէս ցուցանի յառաջիկայդ առ խաչելութեամբն ի **լ** գլուխն ի **իզ** *համարն*: - 416. Եւ թէ զի՞նչ է խորհուրդն, գտցես ի չորրորդ թագաւորութեանց վերջքն **իթ** գլուխն **լ** *համարն*: - 421. Ապա թէ ոչ՝ ի միում աւուրն **եճ** և **կռ** կամէր կոտորել այսու *համարով*. և ոչ ինչ մնայր ի ժողովրդենէն: - 435. Իսկ Սիրաք և Իմաստութիւնն և Յուդիդն և Տուբիդն և Տուբիայն և Մակաբայեցիքն և Կտակքն և այլք, չեն յայսմ *համարի*: - 451. ...իսկ եբրայեցիք զամենայն շաբաթսն ո՛չ թուէին ի *համարն*. վասն որոյ նուազի՛ նոցայն: - 451. Է՛ և այլ եղանակ ծննդեան տեառն բաղդատութեամբ առ մովսէս ասացեալ ի վերոյ ի **ի** գլուխն, ի **իգ** *համարն*: - 472. Յինգերորդ՝ ապականութիւն մեր մարմնոցս է՛ ի սերմանէ հօր ի ծեռն կնոջ խառնեալ. իսկ մարմին բանին ո՛չ է ի սերմանէ հօր և մօր. այլ ի կուսական արգանդէ և յանապական արենէ բեղնաւորեալ որպէս ցուցաւ ի վերոյ ի սոյն գլուխ ի **ժ** *համարն*. ապա ուրեմն անապակա՛ն է մարմին բանին աստուծոյ: - 499. Ասեմք, զի ո՛չ ունին շունչ օդոյ այլ շունչ ջրոյ. և հանեալ ի ջրոյն պակասի շունչն. որպէս ասացաւ ի վերոյ ի **ժը** գլուխն ի **զ** *համարն*: - 511. Եւ ըստ եկեղեցոյ ցուցաւ խտրութիւնն ի վերոյ ի **իա** գլուխն **խե** *համարն*: - 511. Եւ այլ ևս գտցես յաստուածաբանին ճառն յառաջքն գրոցս ի եօթն գլուխն՝ ի **ժգ** *համարն*: - 518. Յինգերորդ՝ զի տացէ մեզ *համար* ծակութիւն յուսալոյ ի նոյն. այսինքն մտանել մարմնով ի

յաւիտենական ժառանգութիւնն: - 519. Եւ յիսունն **ժժ** կատարեն **ե** գլխաւոր *համարք*: - 524. Իսկ թէ **ը** օր տօնեմք, ասացեալ է ի վերոյ ի **իա** գլուխն, **ծա** *համարն*: - 525. Եւ վասն հիւանդութեան ասացի յառաջիկայդ ի **լզ** գլուխն ի **բ** *համարն* գիտ: - 531. Իսկ վասն շինուածոց ասացեալ է յառաջիկայդ ի **լե** գլուխն, ի **լէ** *համարն*: - 532. Եւ այլ բազում ինչ ունիմք հաւասարութիւն. որպէս ցուցանի յառաջիկայդ ի **լը** *համարն*: - 533. Ձորօրինակ՝ մեռեալ մարդ ո՛չ ասի պարզաբար մարդ, նոյնպէս և այս. որպէս ցուցաւ ի թագաւորութեանցն **իզ** գլուխն. **ժբ** *համարն*: - 536. Առաջին՝ ի բնական. որպէս երէոց, անասնոց, թռչնոց, և մրջմանց. որպէս ցուցաւ ի վերոյ ի **ժգ** գլուխն, **ծա** *համարն*: - 536. Այլ իմաստութիւն և հանճար զանազանեալ է ի վերոյ ի **ժզ** գլուխն, **իէ** *համարն* տես անդ: - 537. Եւ վասն ուխտի և սահմանի ասացաւ ի վերոյ ի **իբ** գլուխն, **կե** *համարն*: - 538. Իսկ առ ներքինս օրհնելն՝ իշխանութիւն և շնորհաց տալն թարգմանի. որ քահանայն կամ եպիսկոպոսն տայ. որպէս ցուցաւ ի վերոյ ի **իգ** գլուխն, **հե** *համարն*: - 540. Եւ թէ հաւատն առաւել է քան զգիտութիւն, ցուցաւ ի վերոյ յաստուածաբանութիւնն դիոնիսեայ ի **ժէ** *համարն* տես: - 573. Կարգ սիրոյն ասացաւ ի վերոյ յաստուածաբանութիւնն դիոնիսեայ ի **թ** գլուխն, ի **ժզ** *համարն*: - 576. Եւ ասացեալ է վասն հանճարոյ և գիտութեան ի վերոյ. ի **ե** հատորն ի **իէ** *համարն*: - 580. Եւ ասացեալ են գոյացականք մկրտութեանն ի վերոյ ի մկրտութիւն տեառն ի **իե** *համարն* գտցես: - 590. Եւ վասն աւազանին ծննդեանն ասացեալ է առ սառայ ի **ժթ** գլուխն, ի **ժբ** *համարն*: - 591. Նա՛խ՝ է՛ վկայութիւն անդուստ իսկ թշնամեացն. քանզի ասէ ալպերտն ի յառաջին գիրքն **ժա** *համարին*, թէ հոգի ասեմ սրբութեան. արիւն փրկութեան. և ջուր լուացման: - 594. Եւ ի չորրորդ գիրքն ի **ի** *համարն* ասէ, ետ զմարմինն ի կերակուր. զարիւնն ըմպել. զհոգին ի գին. զջուրն կողին ի լւացումն: - 594. Իսկ զի անխմոր բաղարջով է խորհուրդն՝ ասացաւ ի վերոյ **իա** գլուխն **լը** *համարն*: - 597. այսպէս և օգոստինոս վարդապետն Ֆռանկաց ի խորհրդոց գիրս **ծա** *համարն* ասէ, թէ յառաջագոյն բաշխեաց զխորհուրդ մարմնոյ և արեանն և տուեալ յուդայի: - 599. ...որպէս ասացաւ յառաջագոյն ի թագաւորութեանց **իէ** գլուխն. **ժե** *համարն* տես: - 603. Եւ վասն ներելեացն թողութեան ասացաւ ի թուոց **իբ** գլուխն, **կա** *համարն*: - 603. ...զի անխառնակ և անշփոթ երևեցի մադանալն բանին յազգէն յուդայ. որպէս ասացաւ ի վերոյ ի **լ** գլուխն, **դ** *համարն*: - 612. ...և ապա լինի եկեղեցի և ժողովուրդ քրիստոսի. որպէս ասացաւ ի վերոյ **լա** գլուխն, **գ** *համարն*: - 614. Յայս միտս ի վերայ սեղանոյն խունկ վառեմք. որպէս ասացաւ ի վերոյ **իա** գլուխն, **խգ** *համարն*: - 615. Եւ մեսեդի ճաշոյն և երեկոյեան, չորրորդ մասն դորակի գինւոյն. որպէս ասացաւ ի վերոյ ի **իա** գլուխն **ծբ** *համարն*: - 629. ...և բերէր ի խորանն հանգուցանէր. որպէս ցուցաւ յառաջագոյն յերկրորդ թագաւորութեանց **ժդ** *համարն*: - 645. Եօթներորդ հոգոյն գալստեան. որպէս ասացաւ պատճառն ի վերոյ ի **իա** գլուխն, **ծա** *համարն*: - 649. Եւ թէ ոք ասիցէ, **խ** օր է պահոց. զի **խ** օր պահեաց քրիստոս. և կիրակէն ո՛չ է ի *համարս*: - 651. Իսկ վասն ողորմութեան ասացաւ ի վերոյ **լ** գլուխն յառաջին *համարն*: - 654. Եւ որպէս ասացաւ ի վերոյ **լե** գլուխն, **խդ** *համարն*: - 655. ...որպէս ցուցաւ ի **իա** գլուխն, **խե** *համարն*: - 657. Եւ վասն յերկարութեան կենաց, և վասն ո՛չ գիտելոյ զօր մահուն և զկատարածի, ասացեալ է ի վերն առ նահապետսն ի **դ** *համարն*: - 665. Գտցես և վասն մահու առ խաչելութեանն քրիստոսի ի **լ** գլուխն ի **իզ** *համարն*: - 668. ...որպէս ցուցաւ ի վերոյ **լե** գլուխն ի կարգ աղօթիցն ի **խա** *համարն*: - 676. Իսկ թէ յեկեղեցիս ո՛չ թաղեմք՝ ասացաւ ի վերոյ **լե** գլուխն **լթ** *համարն*: - 678. ...ասացեալ եմք ի հարցմունքն գէորգեայ յառաջիկայդ տես ի **բ** *համարքն*: - 686. Եւ այլն ասացեալ է ի հարցմունսն գէորգեայ ի **գ** *համարն*: - 686. ...որպէս ասացաւ ի վերոյ **լգ** գլուխն ի **իբ** *համարն*: - 696. Այլ և վասն կապելոյն սատանայի գրեալ է ի **թ** գլուխն ի **իզ** *համարն* ի վերոյ: - 706. Եւ վասն հրեղէն վիշապին և տըտան նմին ասացաւ ի վերոյ **թ** գլուխն **իե** *համարն*: - 706. Իսկ *համար* անուան. ի յելլադացւոցն ի մերս թարգմանեալ այս է, **ռ. կ. զ**: - 707. Չինգերորդ, ըստ *համարոյ* **իդ** տառիցն որովք իմաստնացան և ի գիտութիւն ճշմարտութեան հասին: - 711-712. ...որպէս ցուցաւ յերգս երգոց ի **իդ** *համարն*: - 714. Եւ թէ վասն է՞ր ոչ գիտեմք զկատարած աշխարհի և զկենաց մեր, գրեալ է ի վեր անդ առ նահապետսն ի **ժը** գլուխն ի **դ** *համարն*: - 718. ...որպէս ասացաւ ի սկիզբն գրոցս երեք *համարն*: - 741. ...որպէս ասացաւ ի վերոյ յութերորդ հատոր գրոցս **լ** *համարն*: - 746. Իսկ վասն տեղեաց դժոխոցն ասացեալ է ի վեր անդր **լ** գլուխն, **իը** *համարն:* - 754. Որպէս համեմատեցաւ ի վերոյ ի **ժթ** գլուխն, **ժբ** *համարն*: - 756. Իսկ չար՝ թէպէտ լինի ներգործութեամբ անձնիշխան կամօք, այլ բնութեամբ չար ո՛չ է ըստ ինքեան. զի ո՛չ է էութիւն այլ պակասութիւն բարւոյ. որպէս ցուցաւ ի վերոյ ի **ե** *համարն:* - 758. Դարձեալ ասեմք առաջին կեանք մասնաւոր, զոր նախ քան զյանցանելն ունէր. անկարօտութիւն. լուսաւորութիւն. անծերանելի հասակ. անմահ կեանք. և այլն որ ասացաւ ի վերոյ **ժէ** գլուխն **լզ** *համարն*: - 758. Այլ ի նոցանէ՛ անկաւ, որպէս ցուցաւ ի վերոյ **թ** գլուխն, **իբ** *համարն*: - 760. Եւ կատարեալն տեսութիւն խնդրեցաւ ի վերոյ ի **ժզ** գլուխն **իբ** *համարն*: - 785

**ՅԱՄԱՐԻՄ +** Այս է մեկնութիւնն թէ՝ հաւասարն աստուծոյ՝ յափշտակութիւն և զրկումն *չհամարէր* իւր զծառայի կերպարանս առնուլ...: - 39. Թէպէտ մեկնեն և այլ ազգ, թէ որ զմարդկայինս բնութիւն հաւասարեցոյց փառաց իւրոց և հաղորդ արար աստուածութեանն, ոչ ինչ զրկումն *համարեցաւ*. զի բնութիւնն մի է: - 39-40. Եւ թէ ասիցէ հակառակօղն, եթէ՝ վերոգրեալ գործառնութիւնքս *համարին* հոգւոյն սրբոյ ո՛չ որպէս աստուծոյ, այլ որպէս պաշտօնէի: - 59. Զի սովորութիւն է սուրբ գրոց՝ աստուծոյ *համարել* զոր ինչ գո՛րծ է ի մարդիկ: - 59. Ասաց թէ՝ որ ի կերպարանս աստուծոյ էր բանն, այսինքն էակից հօր, ո՛չ ինչ զրկումն *համարեցաւ* ի ներգոյական փառաց զլինիլն հաւասար մեզ: - 93. Եւ ընդ անօրէնս *համարեցաւ*. որ առաւել նախատանաց էր: - 94. Իսկ զարմացումն լինի ի սիրոյ առ սիրելին. զի զմիտս զկեանս և զամենայն ինչ թողու սիրօղն՝ և սիրելւոյն *համարի*: - 127. Որպէս և առաքեալն զկեանս իւր *համարէր* քրիստոսի...: - 127. Նախ՝ զի անուամբն գոյանայ իրն ի միտս մեր. և անանունն իբր յանգոյս է *համարեալ* մեզ: - 219. Իսկ ոմանք զարաբացիս և զմակեդոնացիս՝ յեբրայեցիս *համարին*՝ և կէսք ոչ: - 299. Երկոտասաներորդ՝ զի որպէս իսահակ հնազանդ գտաւ հօրն մահո՛ւ չափ, լաւ *համարելով* զմեռանիլն՝ քան առանց հնազանդութեան զկալն: - 305. Յինգերորդ՝ զի մի՛ երազ և առ աչօք *համարեսցի* տեսիլն: - 311. Երկրորդ՝ լա՛ւ *համարեցաւ* զերկնաւոր գանձն՝ քան զոսկի և քան զարծաթ կորստական: - 338. Այսինքն զամենայն յաջողուածս հոգևոր և մարմնաւոր, և զմասն անմահութեան կենաց յաւսոյն, ո՛չ վասն մեր արժանաւորութեան *համարել*. այլ բարութեան և ողորմութեանն աստուծոյ: - 360. Նա՛խ՝ զի մի՛ *համարեսցեն* այլազգիք թէ դիքն իւրեանց առաջի ընթացան և գլուխ եղեն զօրացն և հարին զպատերազմն: - 425. Ապա յա՛յտ է զի ի մէջ կարծեաց էր նա. զի թէ սուտ *համարէր* զվիուկն, ո՛չ երկնչէր ի մահու. և թէ ճշմարիտ՝ ո՛չ երթայր ի պատերազմ: - 429. Ութերորդ՝ զի մի՛ հրէայքն *համարելով* զքրիստոս ո՛չ ունելով օրինաւոր ծնունդ՝ երևեսցին յիրաւի ի հալածելն զնա: - 461. Եւ չորիւքս այս առաւելու ամօթն. իսկ Յինգերորդ՝ զի ի մէջ չարագործ աւազակա՛ցն էր *համարեալ*: - 490. Յնգետասաներորդ, զի բաւական *համարեցաւ* ի պատիւ կանանց զայն՝ զի յառաջագոյն մերձեցաւ ի նոսա ծննդեամբ. իսկ յետ յարութեանն կամի՛ զի ա՛րք նախ մերձեսցին ի նա մինչ դեռ ո՛չ է ելեալ նա առ հայր: - 518. Զի ո՛չ միայն *համարի* մեծ և փառաւոր զաստուածություն նորա, այլ և զաղքատութիւնն և զանարգանս և զմահն. և յայնժամ արժանասցի առատապէս ընդունել զհոգին սուրբ: - 522. Եւ ոմանք ոչ ինչ *համարին* զյանցանս մտաց. և ո՛չ դնեն ի կարգս մեղաց. օրինակ տալով իբր զդատարկ սեղան ոչ ինչ կերակրել. և իբր զպտուղ ծառոց տեսութեամբ միայն վայելել: - 555. Ինևէ՝ զամենայն ինչ սիրելւոյն՝ իւրն *համարի*. և զիւրն սիրելւոյն: - 576. Վասն որոյ հայրապետք եկեղեցւոյ լա՛ւ *համարեցան* զվայելչականն բառնալ որ ո՛չ ի լինիլն յաւելուած առնէ...: - 604. Յինգերորդ, յաղագս ջերմ սիրոյն առ աստուած՝ ո՛չ բաւական *համարեցաւ* միայն լեզուաւ երգել աստուծոյ...: - 641. Չորրորդ, զի ոչ ինչ *համարին* զաստուածային իշխանութիւնն որ յեկեղեցի եդեալ...: - 698. Եւ լինիցի յանդուգն. զի ո՛չ *համարի* պատժիլ ի յաստուծոյ. զի յապաղէ դատաստանն...: - 707. Առասպել մի՛ *համարիր* զայն որ ասեն թէ ի վիրապն հարկանի: - 713. Որք արտաքոյ օրինաց մեղանչեցին որպէս կռապաշտք՝ և հրէայքն որք յետ խաչելութեանն քրիստոսի. զի յետ խաչին պահպանութիւն օրինացն ի կռապաշտութիւն է *համարեալ* նոցա: - 739. Իսկ յետ դատաստանին և այս ևս՝ բարձցի ի նոցանէ առ ի տանջանս իւրեանց. յորժամ անարժան *համարեսցին* նաև ի տեսանելն զայն: - 741. Այլ թէ ի սոցանէ մի մի ուրուք տուեալ լինէր, փոխանակ թագաւորութեան *համարէր*. իսկ թէ սոքօք ամենեքումբք վայելեսցէ, գերագոյն բոլոր աշխարհի լինէր: - 761. Այն քան եղիցի միութիւն գլխոյն և անդամոցն, զի անդամքն զպատիւ գլխոյն իւրեանց՝ իւրեանց *համարեսցեն*: - 763. Որպէս գլուխ մարդոյ՝ զբարիս կամ զչարիս հատուցեալս անդամոց իւրոց՝ իւրեան *համարի*: - 763. Երրորդ յաղագս սիրելութեան ընկերացն այնոցիկ. զի այն քան եղիցի սէր ի մէջ նոցա, մինչ զի զուրախութիւնս նոցա իւրեանց *համարեսցեն*: - 764. Իսկ տիւ և գիշեր, այսինքն արևապէս հասումն նոցա՝ տիւ է *համարեալ*. և անհասութիւն խորոցն աստուծոյ՝ գիշեր: - 767. Իսկ առաւօտ և երեկոյ այս է. զի տեսեալ ի բանն աստուծոյ բարձրագոյն և աստուածային իմաստ՝ առաւօտեա՛ն է ճանաչումն. իսկ ի նոյն բանն տեսեալ զգիտութիւն արարածոց՝ երեկոյեան ճանաչումն է *համարեալ*: - 767. Որում ոչ *համարիմ* զանձն թէ հասո՛ւ իցեմ: - 771. Կենցաղս այս երա՛զ է *համարեալ* հանդերձելոյն ըստ դաւթայ. «որպէս երազք զարթուցելոց»: - 775

**ՅԱՄԱՐԻՄ** (թվարկել. հաշվել) **+** Յաղօթս ծոյլ, և զողջոյնն թւով *համարեն*: - 34. Զի քրիստոս Քահանա՛յ է ըստ կարգին մելքիսեդեկի **ժ** կերպիւ... Վեցերորդ՝ *չհամարեալ* յազգս: - 50. Ապա՛ ի թաբօր լերինն ամպ խոնարհեալ և ձեռն կարկառեալ ձեռնադրեաց զնա ասելով, այս մելքիսեդեկ անհայր, անմայր, *չհամարեալ* յազգս՝ նմանեալ որդւոյն աստուծոյ: - 300. Եօթներորդ՝ զի մելքիսեդեկ անհայր անմայր *չհամարեալ* յազգս: - 302. Երկրորդ՝ զի **հ** ամն իբրև զմի օր *համարեցաւ* նոցա. զի հանգիցեն ի չար գործոց, և երկիրն ի չար

գործելոյ: - 448. Այլ զերկոտասանքն մին գիրք, և զերեմիայն մին գիրք *համարեալ*, լինի **լզ** գիրք հին կտակքն բովանդակ: - 450. Նախ՝ զի մի՛ անընտել թուիցի մարդկան. զի թէ առ ժամայն ի ծնունդն եղեալ էր երեսնամեայ հասակաւ, առ աչօք *համարէին* զիրն. և կամ այլ ինչ: - 479. Եւ անտի մինչ ի մարտի **իեն** *համարեն* **զ** ամիս, և անդ ասեն զաւետիսն: - 483. Եւ ի մարտի **իե** էն մինչ ի դեկտեմբերի **իեն** *համարեն* **թ** ամիս և **ե** օր, և ա՛նդ ասեն զծնունդն: - 483. Եւ այլ ևս, յորժամ զշաբաթ և զկիրակէ արտաքոյ թուեմք որ պատարագ մատչի, **ե** օր առաջաւորն ըստ աղուհացիցն *համարեալ*՝ լինի **խ** օր: - 651. ...զի լաւագոյն *համարեցաւ* աստուած մի՛ առանց մեր պսակիլ: - 696

**ՀԱՄԱՐՁԱԿ +** Խաժակն և փայլուն, *համարձա՛կ* է ի չարութիւնն: - 246. Կարճ վիզն՝ *համարձակ* է: - 247. Մատունքն փոքր և ստուար, *համարձա՛կ* է: - 247. Երրորդ՝ *համարձակ* և յայտնի պատժեցան: - 303. Ութևժ, խնդրէ ի նմանէ *համարձակ* յուսով: - 576

**ՀԱՄԱՐՁԱԿԻՄ +** Առաջին պատճառ, զի մի՛ և այլոք *համարձակեսցի*: - 288. Դարձեալ՝ և դուք զծածուկն աստուծոյ մի՛ *համարձակիք* քննել. այլ զոր ինչ յայտնէ ձեզ՝ ուսուցէք որդւոց ձերոց: - 405. Վասն է՞ր ի սրբութեան հացն *համարձակեցաւ* դաւիթ: - 427. Սա՛ բորոտեցաւ *համարձակեալ* ի տաճարն խնկարկել: - 452. Երրորդ վասն այն արգել, զի ցուցանէ թէ յոյժ պատուեցաւ մարմինն այն և ո՛չ է *համարձակելի* որպէս յառաջն մաքսաւորք և պոռնիկք մերձենային: - 517. ...զի մի՛ *համարձակեսցին* քահանայք և զձէթ օրհնելն վերստին մուծցեն յեկեղեցիս մեր: - 605

**ՀԱՄԱՐՁԱԿՈՒԹԻՒՆ +** Վեցերորդ՝ ո՛չ ևս *համարձակութեամբ* կալ առաջի աստուծոյ: - 280. Չորեքտասաներորդ, զի ցուցցէ թէ յայսմ հետէ արքն միա՛յն ունին իշխանութիւն մերձենալ առ ի պատարագել. և ո՛չ գոյ *համարձակութիւն* կանանց յայս գործ: - 518. Հինգերորդ՝ զի տացէ մեզ *համարձակութիւն* յուսալոյ ի նոյն. այսինքն մտանել մարմնով ի յաւիտենական ժառանգութիւնն: - 519. Երրորդ՝ *համարձակութիւն* քարոզութեան առանց երկիւղի խօսիլ զբանն առաջի ազգաց և ազանց և թագաւորաց. որպէս պետրոս ի միում ժամու զերեք հազարսն հաւատացոյց: - 524

**ՀԱՄԱՑԵՂ +** Եւ որպէս ո՛չ ումն նուազ զօրութեամբ ընդ առաւելն մրցի. այլ ընդ *համացեղսն*: - 44

**ՀԱՄԱՓԱՌ +** Համածայնին միմեանց սուրբ վարդապետք. զի դիոնէսիոս ինն դասս ասէ հրեշտակաց. այլ առաջին դասքն անընդմիջաբա՛ր են յաստուածային իմացումն, համապատիւ և *համափառք*: - 134

**ՀԱՄԲԱՌՆԱՄ +** Նոյնպէս և հոգին յիւրում ժամանակին. յետ խաչելութեանն քրիստոսի և *համբառնալոյն* առ հայր. և ապա իջանելոյ հոգւոյն. և յայտնելոյ զաստուածութիւնն իւր: - 55. Հնգէտասաներորդ՝ *համբարձաւ* և նստաւ ընդ աջմէ հօր: - 67. Զի թէ զբնութեամբն ասես, ստեա՛գ ուրեմն առաքեալն և աւետարանն. որք զքրիստոս ասեն յարուցեալ և *համբարձեալ* և նեստեալ ընդ աջմէ հօր: - 70. Նմանապէս ասի մարմնով չարչարեալ. և մարմնով մեռեալ. և յարուցեալ. և *համբարձեալ*: - 79. Այլ ո՛չ ասի մարդով չարչարեալ. և մարդով մեռեալ. կամ յարուցեալ. կամ *համբարձեալ*: - 79. Հնգետասաներորդ՝ ի *համբառնալն* յերկինս ասէին տարակուսեալ վերին զօրութիւնքն, «Ո՞վ է սա որ դիմեալ գայ յերկրէ. գեղեցիկ պատմուճանաւ և բուռն զօրութեամբ»: - 97. Նախ՝ աստուածաբանն գրիգոր՝ զոտքն մարմնով տընօրէնութեանն ասէ նշանակ. զի մարմնով եկեալ զփրկութիւն մեր արար. և մարմնով *համբարձաւ* առ հայր: - 130. Որպէս տեառն մերոյ ի *համբառնալն* ամպն կալաւ զնա՛ յաչաց նոցա: - 411. Վեցերորդ՝ զի թէպէտ *համբարձաւ* յերկինս, ընդ մե՛զ է զամենայն աւուրս որպէս ասաց: - 385. Եւ վասն է՞ր յետ **խ** աւուր *համբարձաւ*. և նստելոյն ընդ աջմէ: - 455. Դարձեալ պատճառե՛ն թէ՝ յետ յարութեանն եկեր ձուկն ընդ աշակերտսն. յորում կրակեաղ կայծականց տեսին և ձուկն խորովեալ և հաց. և օրն էր չորեքշաբաթի. և ի **ե** շաբաթի *համբարձաւ*: - 511. Եւ կրկին սուտ. զի ուր զձուկն կերին՝ ի գալիլեայ յեզր տիբերիայ ծովուն էր **դ** աւուր ճանապարհ հեռի յէէմէ՛ և ի լեռնէն ձիթենեաց ուստի *համբարձաւ* քրիստոս: - 511. Զի՞նչ զանազանին փոխիլն և *համբառնալն* և թռչիլ: - 519. Վասն է՞ր *համբարձաւ* քրիստոս: - 519. Հինգերորդ՝ *համբարձաւ* զուարճութեամբ. որ վերաբերի առ նոսա որք փրկեցան ի դժոխոցն և ընդ նմա ելին յերկինս. զի **բ** բանակօք ել յերկինս այսինքն սպասաւոր հրեշտակք և մարդկան փրկելովք: - 520. Վեցերորդ՝ *համբարձաւ* ձայնիւ փողով ըստ դաւթի. և այս վերաբերի յառաքեալսն. որ յանձնեցաւ նոցա երթալ քարոզել ամենայն հեթանոսաց. և փողք եղեն տիեզերաց...: - 520. Որո՞վ կերպիւ *համբարձաւ*: - 520. Վասն է՞ր յորժամ յարեաւ իսկոյն ո՛չ *համբարձաւ* այլ յետ խ աւուր: - 520. Հինգերորդ՝ յետ խ աւուր *համբարձաւ*, զի ցուցցէ թէ որք զ**ժ** բանեան օրէնսն չորիւք աւետարանաւն լնուն, կարեն յերկինս ելանել: - 521. Վեցերորդ, զի եկեղեցի որ է մարմինն քրիստոսի՝ յետ չարչարանաց նեռինն որ հանդերձեալ է կրել, զկնի **խ** աւուր յերկինս *համբառնալոց* հաւատացեալ լինի: - 521. Եւ հանապազ ի տաճարին գովէին և օրհնէին զաստուած նոր օրհնութեամբ *համբարձելոյն* ի յերկինս տեառն և աստուծոյ..: - 528-529. Որպէս և

քրիստոս արար. որ քան մարմնով ընդ առաքեալսն էր՝ եպիսկոպոսունս արար զնոսա. և յետ *համբառնալոյն*՝ հոգւովն սրբով արար զնոսա կաթողիկոսունս: - 546. Եւ ի *համբառնալն* կալան հրաման վերագոյն. առաքելով զնոսա ընդ տիեզերս: - 607. Ապա ի բացեայ կացեալ և զձեռս *համբարձեալ* ասէ, Սուրբ աստուած Սուրբ և հզօր Սուրբ և անմահ որ խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ: - 631. Ո՛չ միայն զգլուխս բանամք, այլ և զձեռս *համբառնամք* ի վեր. որպէս և յովսէփ ասաց: - 635. Իսկ թէ նուազ է, որպէս մանկունքն ճաշուն, և *համբարձին*. որիշ ասեմք զփառքն և զայժմն: - 636. Այրն ի տարաշխարհ գնաց քրիստոսէ. որ մարմնով *համբարձաւ* յերկինս. զի յատուկ տեղի մարմնոյ երկիրս է. վասն որոյ ի տարաշխարհ գնալ ասէ յերկինս: - 692-693. Եւ յետ այսորիկ ի լեառն ձիթենեաց ուստի *համբարձաւ* քրիստոս՝ տէր իշխանութեամբ իւրով սպանցէ զնեռն: - 709. Այսպէս քրիստոս այնու կերպարանաւ որով *համբարձաւ*՝ հանդերձ ամենայն դասուք հրեշտակաց ի դատաստան եկեսցէ: - 734

**ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ** + Այս է յղացմամբ յարգանդի և ծննդեամբ. և քարոզութեամբ. և մահուամբ. և յարութեամբն և *համբարձմամբն* առ հայր՝ իբր զպսակ տարւոյ կատարեալ բնութեամբ մեր՝ ի ներքին կողմն վարագուրին մտեալ: - 126. Իններորդ՝ կենսատու չարչարանաց ժամանակ. թաղման և յարութեան. նաև *համբարձմանն*: - 196. Եւ վկայ ածեն *զհամբարձումն* քրիստոսի յետ խ աւուր: - 391. Երեսունևա, Վասն *համբարձմանն* տեառն: - 455. Եւ ի քրիստոսի *համբարձմանն* խը ամաց էր: - 461. Զի **ե** անգամ ի **ե** կիրակէն երևեցաւ քրիստոս աշակերտացն մինչ ի *համբարձումն*: - 511. *Համբարձումն* վերաբերի առ քրիստոս յատուկ զօրութեամբն իւր: - 519. Իսկ զտեղի *համբարձմանն* քրիստոսի միտք ո՛չ կարէ ցուցանել. զի ի լոյս անմատոյց է բնակեալ և ի ներքին կողմն վարագուրին ըստ առաքելոյն: - 519. Այլ *համբարձումն* նշանակէ՛ ի միտս համայն բարձր քան զամենայն դասս իմանալեացն. զի նմա՛ երկրպագեն ամենայն երկնայինքն. և անդր քան զտեղի տիրամօրն. զի ի միածին որդւոյ իւրմէ խնդրէ զփրկութիւն մարդկան: - 519. Եւ եհան ի լեառն ձիթենեաց. զի լերամբն ցուցանի *համբարձումն* մտաց ի խոնկումն աստուածային: - 519. Ա՛րդ՝ եռակի՛ է *համբարձումն* քրիստոսի. որ է յերկրի, ի վերայ երկրի, ի վերոյ երկնից: - 520. Ի վերոյ երկնից՝ զուարճալի *համբարձմամբ*: - 520. Այլ ասեն վարդապետք եթէ՝ ի *համբարձմանն* քրիստոսի ընդ իրս տեսանելի է որք են պարագայք *համբարձմանն*: - 520. Այս քան վասն *համբարձմանն* քրիստոսի: - 521. Վասն է՞ր նախ քան զխաչն և *զհամբարձումն* ոչ պարգևեցաւ հոգին սուրբ երևելի նշանօք: - 521. Չորրորդ զատիկ *համբարձումն* առ հայր ցնծութեամբ և փողով: - 524. Երկրորդ՝ զի մերձ ի *համբարձումն* ձեռն եդ ի վերայ նոցա և օրհնեաց զնոսա և արար զնոսա առ հասարակ եպիսկոպոսունս: - 546. Երրորդ՝ զի յետ *համբարձմանն* յորժամ էջ հոգին սուրբ, արար զնոսա կաթողիկոսունս առ հասարակ: - 546. *Համբարձումն* ձեռաց սրբութեամբ աւետարանին, նշանակ գործոց բարեաց որով փառաւորի աստուած: - 628. Նախ ասել աւետեաց, և ապա՛ ծննդեան. և գալստեան. և խաչի. և յարութեան. և *համբարձման*. և հոգւոյ գալստեան. և վարդավառի. և փոխման: - 642. Եւ որ յինանցն պահէ մինչ ի *համբարձումն*, ընդ դէմ է կանոնաց հարցն և աւետարանին որ ասէ - 649. Վեցերորդ *համբարձման* տն յերկինս: - 649. Վասն որոյ յետ *համբարձմանն* պահելի է զդշաբաթ և զուրբաթ. և կամ զինն օր մինչ ի հոգւոյ գալուստն: - 654. ...և ի *համբարձումն* տեառն ամպն կալաւ զնա յաչաց նոցա: - 674. Իսկ զհազար ամն, ոմանք ասեն զերեք ամն և զկէս ի մկրտութենէն մինչ ի *համբարձումն*: - 706. Կամ թէ ոստք փայտիս այսորիկ ասին եօթանքս այսոքիկ. այսինքն՝ քրիստոսի ծնունդն, մկրտութիւնն, չարչարանքն, ի դժոխս իջումն, յարութիւն, յերկինս *համբարձումն*, և հոգւոյն սրբոյ պարգևումն: - 755

**ՀԱՄԲԱՒ** + Նա՛խ՝ բամբասողօք. որք բառնան զբարեկամս և զբարի *համբաւս*: - 486

**ՀԱՄԲԱՒԵՄ +** Նոքա որք զբախտ և զճակատագիր և զհրամանն համբաւեն, ո՛չ ինչ ասեն ի կամաց մեր գործիլ. այլ զամենայն ի հարկէ՛ ասեն. զի զեղխաբար զկենցաղս վճարեսցեն: - 7. Ա՛յս է նոցա զրախօսութեանն կարգ, որք զհրամանն *համբաւեն*: - 8. Ընդ կարգաւորս շնալ կանանց՝ սրբութիւն նոցա *համբաւեն*: - 34. Իսկ որք յետ միաւորութեանն **բ** ասեն բնութիւնս ի քրիստոս, և բաժանեն զկամս, և զգործս, և զկիրս, թէպէտ և անձն մի *համբաւեն*: - 81. Նոքա ի կիսաէշ նման զտնօրէնութիւնն սուրբ *համբաւեն*. և կամ առ աչօք և ունայնութեամբ. որպէս մանիքեցւոցն, և կամ եւտիքի կարծի: - 81. Դարձեալ՝ մի բնութիւն ասեն որք առ աչօք և նմանութեամբ զճշմարիտ մարդեղութիւնն *համբաւեն*: - 82. Դարձեալ՝ մի բնութիւն *համբաւեն* մարկեղոս և փոտինոս: - 82. Այսոքիկ են չար աղանդաւորացն *համբաւօղք* մի բնութիւն բանին և մարմնոյն: - 82. Եւ ոմանք որպէս քաղկեդոնիկքն՝ մի անձն *համբաւեն*, և յերկու բնութիւնս բաժանեն զմի քրիստոսն. և **բ** կամք. և **բ** գործք. որպէս անիծեալն լևոն. և փլաբիանոս, և ընկերք նոցա: - 82. Իսկ աստ **բ** բնութիւն ի մի թիւ անձին որպէս *համբաւեն* ոմանք: - 88. Այլ բաժանմամբ բնութեանցն՝ բաժանին և անձինքն ի քրիստոս. թէպէտ պատճառելով անձն մի *համբաւեն*: - 88. Ահա՛ այս

ի կարճոյ բացայայտութիւն ծածկեալ ամբարշտութեանց, որք **բ** բնութիւնս սահմանեն ի վերայ միոյն քրիստոսի. թէպէտ անձն մի *համբաւեն* համաձայն մեզ, սակայն որոշմամբ բնութեանց լինին տարաձայն մեզ և եկեղեցեացն աստուծոյ: - 90. Եւ անեղ բնութեանցն աստուծոյ զրպարտելով շփոթումն *համբաւեն*: - 176. Երկոտասան լրտեսաց տասունքն չա՛ր *համբաւէին*. և երկուքն զբարութիւն երկրին: - 380. Եւ որք զբերքաթուրն *համբաւեն*, այս ընդ դէ՛մ է նոցա: - 392. Եւ տէր մեր զառաքեալս ընդ ծագս. որք *համբաւեցին* մեզ զյաղթութիւնն սատանայի և դժոխոց: - 417. Այլ միայն վարդապետք Ֆռանկաց տարաձայնեալ ամենեցունց *համաբաւեն* զբերքաթուրն: - 698. Եւ նոքա որք բազում *համբաւեն* դժոխս, մի ասեն գոլ արքայութիւն. պատճառելով եթէ՝ բարին մի է և չարն բազում: - 758

**ՀԱՄԲԵՐԵՄ +** Եօթներորդ՝ զի չարչարանօքն իւրովք յուսադրեաց զմեզ, զի մի՛ յետ տկարութեանս և սակաւ չարչարանաց ի փորձողէն՝ կասեսցուք ի նահատակութեանց. այլ օրինակ դիցուք զչարչարիլն նորա մեզ և *համբերեսցուք* որպէս ասէ: - 43. Իսկ յորժամ դառնամք ի մեղաց՝ յորդորէ՛ զմեզ ի ծածուկ իմաստիւքն իւրովք, ժուժկալ լինել ի փորձութիւնս և *համբերել* տանջանաց որով ինքն զփորձ էառ: - 48. Երկոտասաներորդ՝ զի սուրբքն բանիւ մեզ ուսուցանեն՝ նեղութեան և փորձանաց *համբերել*. պատրին ինքեանք գործով կատարել զնոյն. զի հաւատարիմ լիցին բանք նոցա: - 159. Նախ՝ զի ունէր զամենայն առաքինութիւնս և *համբերեաց* նախատողացն. վասն որոյ խօսեցաւ աստուած և մխիթարեաց զնա: - 325. Սոքա նշանակեն զնահատակսն որք բազում վշտաց և փորձանաց *համբերեցին*: - 357. ...զի և մշակն յետ սերմանելոյն իսկոյն ո՛չ հնձէ. այլ *համբերէ* մինչ ի հասումն պտղոյն: - 520. Եօթներորդ՝ հաւատովն *համբերեմք*. յուսովն հաստատիմք. սիրովն զօրանամք. և զայս ասէ Նագրիոս: - 578. Եւ գործ նորա այս է. յառաւելութեանն գիտենայ նուազիլ. և ի յաղքատութեանն գիտենայ *համբերել*...: - 581. է՝ *համբերել* արարեալ անիրաւութեանցն ընդ դէմ ինքեան: - 585. Առաքինութիւնս այս ցուցանէ թէ *համբերել* հալածանաց վասն արդարութեան՝ կապակցեալ է ընդ խաղաղութիւնն...: - 586. Եւ գերազանց գործ ցասմանն է *համբերել* չարչարանաց . և զայս ունին մարտիրոսքն: - 712. ...և էր մարտիրոս ըստ որում չարչարանաց *համբերեաց*...: - 712

**ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ +** Երրորդ՝ զի կամեցաւ աստուած ո՛չ միայն ողորմութեամբ՝ այլև ըստ արդարութեան, վարձս նահատակութեան տացէ ըստ գործոցն *համբերութեան*: - 25. Երկայնութիւն է *համբերութիւնն*. որով տանի զչարսն. և վասն ապաշխարութեան անտես առնէ զմեղս: - 129. Ութերորդ՝ թոյլ տալով սրբոց չարչարիլ՝ վասն պսակացն առաւելութեան է. զի կենցաղս այս հանդէ՛ս է նահատակութեան. և ըստ չափոյ *համբերութեան* առցէ զյաղթանակն. որպէս սրբոյն ստեփաննոսի...: - 159. Դարձեալ այսպէս մեկնեն եթէ՝ փորձութիւնն ըստ ինքեան ո՛չ է բարի. այլ պատահմամբ լինի բարի. յորժամ *համբերութիւնն* մերձ դնի և յաղթիցէ. իսկ յորժամ *համբերութիւն* ոչ լիցի, ըստ ինքեան չար և վատ է փորձութիւնն. վասն այն տէրն արգելուլ հրամայէ: - 160. Երկրորդ՝ աստուած փորձէ և տայ *զհամբերութիւնն*. և սատանայ ընդ փորձութեանն առնէ զձանձրութիւն: - 161. Երկրորդ՝ զի *համբերութիւն* ուսուցանէ մեզ...: - 161. Իսկ թէ զի՞նչ *համբերութիւնն*. ասէ՝ «գործ կատարեալ ունիցի». այսինքն թէ՝ նիւթ աստուծոյ գործոյն՝ փորձութիւնն և նեղութիւնն է. և յօրինօղ՝ հաւա՛տն է. և ի կատարումն ածօղ՝ *համբերութիւնն* է: - 161. Եւ նախ կոչիւր յոբաբ, որ է՛ սիրելի աստուծոյ. և կոչեցաւ յոբ, որ է՛ հայր. զի հա՛յր եղև *համբերութեան*: - 320. Դարձեալ՝ բ իրօք յաղթեաց յոբ զսատանայ. գոհութեամբ բանի՝ և *համբերութեամբ* գործոյն: - 323. **Նախ՝ ուղղութիւն ընկերաց. բ գոհութիւն և *համբերութիւն*. գ՝ իմանալ զչար խորհուրդն սատանայի. դ՝ աղօթք և պահք. ե՝ խոնարհութիւն և ճշմարտութիւն. որ գերագոյն է ամենայն զինուց և իսպառ կորուսանէ զչար որ մայրն է ստութեան և հպարտութեան**: - 324. Երկրորդ՝ զի ծածուկ *համբերութիւն* նորա յայտնի լիցի. և ամենեցուն վարժարան եղիցի: - 325. Երկրորդ՝ առաջին վկայութիւնն վասն արդար գործոցն. կրկինն վասն *համբերութեան* նորին: - 326. Երկրորդ՝ զի դէտ եղև յոբ *համբերութեան* և տէր մեր կատարման...: - 327. Այլ և նշանակ արիական *համբերութեանն* մերոյ: - 360. Հինգերորդ՝ նշանակէ՛ զչորս առաքինութիւնս ի յորս պարտի տարածիլ ներքին մարդս մեր. այսինքն վերին մասն նշանակէ զսէրն. ներքինն զխոնարհութիւնն. աջն զհնազանդութիւնն. ահեակն *զհամբերութիւնն*: - 493. Ներքինն զարի և ժուժկալ վարս *համբերութեամբ* ստանալ զհոգիս: - 493. Երկրորդ՝ զի տացէ օրինակ *համբերութեան* մերոյ, զի սպասեսցուք վարձուն ի հանդերձեալն. և ո՛չ իսկոյն վաղափոյթ լինիլ առնուլ այժմու կենօք...: - 520. Բայց մասունք արիութեան են **դ**. այսինքն մեծագործութիւն. ապաստանութիւն. *համբերութիւն*. և յարամնայութիւն: - 580. *Համբերութիւն* է կամաւոր և միշտ տեսողութիւն մեծամեծ և դժուարին իրաց վասն օգտութեան և համեստութեան: - 580. Երրորդ ի *համբերութիւն* նեղութեանց. որպէս ասէ յերգս «զօրաւո՛ր է իբրև զմահ սէր»: - 581. Երկրորդ՝ զերկայնմտութիւն *զհամբերութիւն* զյոյս և զարիութիւն հաստատէ՛ ի

մարդն: - 584. Եւ մաստութիւնն է նոյն ընդ *համբերութեանն*. զի *համբերութիւնն* է տեւումն մարմնաւոր նեղութեանց. իսկ մաստնութիւնն է տեւումն նախատանաց: - 584

**ՀԱՄԲԵՐՈՂ +** *Համբերողն* յոբ յորո՞ւմ ժամանակի էր, և կամ յո՞ր ազգէ: - 320. Յոբ միայն *համբերող*, և ազգն բազում: - 551. Նոյնպէս և մարդն թէ *համբերող* է թէ ոչ: - 664

**ՀԱՄԲՈՅՐ +** Դարձեալ՝ կարօտ էր մարդասէրն աստուած, զայ ի *համբոյր* ծարաւելոյն նմա արդարոյն: - 311. Առաջինն է խոնարհումն գլխոյն. ի *համբոյր* և ի նշան հաշտութեան մերոյ: - 489. *Համբոյր* աւետարանին, կոչելն միայն զպետրոս յանուանէ: - 628

**ՀԱՄԲՈՒՐԵԼԻ** - Եօթներորդ՝ զի սիրելի և *համբուրելի* է նշխարքն սուրբ որ ի քրիստոս միացաւ և օծաւ, և քրիստոսի եղև բաժին: - 673

**ՀԱՄԲՈՒՐԵՄ +** Իններորդ՝ յովսէփ եւ ընդառաջ նոցա և *համբուրեաց*: - 315. Նոյնպէս և քրիստոս աստ ի գնալն հոգւոց և ի գալստեանն աւուր՝ ընդ առաջ ելանէ սրբոցն և *համբուրէ* զսիրելիս իւր, որպէս հայրն երկնաւոր ի դարձ անառակին: - 315. Երրորդ՝ զի անարժանք էին մեռեալքն հոգւով՝ կենդանի բանին աստուծոյ տեսանել ա՛յն աչօքն որ տեսին զորթն. և *համբուրել* շրթամբք: - 350. Եւ այս հարցանելի է, զի թէ մագդաղենացին ընդ առաջին կանայսն եկն զոր մատթէոս պատմէ և *համբուրեցին* զոտն յիսուսի...: - 515. Վասն է՞ր ոչ ետ թոյլ մերձենալ մարիամու. և այն զի ի ճանապարհին կալան զոտս նորա և *համբուրեցին* ա՛յլ կանայք: - 517. Երեքտասաներորդ, զի մարիամ ո՛չ խոնարհութեամբ կամէր մերձենալ յոտս նորա որպէս այլ կանայքն. այլ յերե՛սն դիմեաց նա հպարտութեամբ առ ի *համբուրել* զնա. իսկ տէրն կամեցաւ ուսուցանել նմա զխոնարհութիւն՝ արգել զնա: - 518. Որպէս ժողովուրդն ասաց և երկիրպագին, նոյնպէս և մեք երկիրպագանեմք և *համբուրեմք* զաւետարանն...: - 644. Նոյնպէս և մինն այն ի մէնջ *համբուրէ՛* զաւետարանն...: - 644

**ՀԱՄԵՂ +** Պերճական պարսիկն. և *համեղ* հայոյն. որ բոլորապէս կարօ՛ղ է զամենայն լեզու ուղղակի ուսանիլ: - 297

**ՀԱՄԵՂԱԿԱՆ +** *Համեղական* հայն որ կարօ՛ղ է զամենայն լեզուս յինքն ամփոփել և բոլոր խօսիլ. և այլքն ո՛չ՝ որպէս ասացաւ ի վերոյ: - 299

**ՀԱՄԵՄԱՏԱԲԱՐ +** Եւ դարձեալ ըստ չորից տարերց և եղանակաց և ժամուց աւուր և հիւթոց *համեմատաբար* փոփոխին և հասակ մարդկան: - 266. Զի իմաստութիւնն է ճանաչումն աստուծոյ բացարձակապէս. իսկ հանճարն է ճանաչումն *համեմատաբար*. այսինքն համեմատելով զստեղծուածս առ ստեղծօղն: - 270

**ՀԱՄԵՄԱՏԱՊԷՍ** - Երրորդ՝ է՛ գործ նախախնամութեան. զի ըստ ընտանի կարողութեան իւրեանց՝ *համեմատապէս* զպարգևս ընկալցին. զի մի վնասեսցին փոքունքն մեծամեծօք. և թերի մնացին մեծամեծքն սակաւուք: - 130

**ՀԱՄԵՄԱՏԵՄ +** Տես և *համեմատեա՛* առ աստուած թէ պիտի: - 124. Զի իմաստութիւնն է ճանաչումն աստուծոյ բացարձակապէս. իսկ հանճարն է ճանաչումն համեմատաբար. այսինքն *համեմատելով* զստեղծուածս առ ստեղծօղն: - 270. Նա՛խ՝ զի մի՛ *համեմատ* առն կարծիցէ զինքն. այլ որպէս ոչ համահասակ և ոչ համահող լիցի: - 276. Ա՛րդ՝ բազմազան եղանակաւ *համեմատի* մեծն մովսէս փրկչին մերոյ քրիստոսի...: - 328. Եւ բազում իրօք օրինակն *համեմատի* առ ճշմարտութիւնն: - 435. Տասներորդ՝ յորժամ եկն հեզութեամբ լսէր ի նմանէ. իսկ զայս ամենայն *համեմատելով* ի վերայ հրէիցն՝ յիրաւի ուրեմն դատապարտեսցէ զնոսա ի դատաստանի: - 442. Իններորդ՝ զի ո՛չ մարգարէիւ յայտնեաց կուսին. որ էր աղօտ գիտութիւն *համեմատեալ* ընդ հրեշտակին: - 464. Այլ ես հաւանիմ որք ասեն **ժ** գոլ զմեծութիւն մեղաց. և այն *համեմատի* ընդ **ժ** ստորոգութիւնն: - 565. Երկրորդ՝ զի ժամանակ կենցաղոյս *համեմատեալ* յաւիտենին՝ փո՛քր է և սակաւ: - 730. Որպիսութեան կրիցն չափ ո՛չ է անտի տանջանացն. զի բոլոր աստի նեղութիւնս *համեմատեալ* այնմ՝ է՛ որպէս կաթիլ մի ի ծովէ և կայծ մի ի հնոցէ: - 751. Եւ սոքա *համեմատին* պատժոց դժոխոցն: - 751. Որպէս *համեմատեցաւ* ի վերոյ ի **ժբ** գլուխն, **ժբ** հանարն: - 756. Որում *համեմատեալ* այլ ուստէք ամենայն հրճուանք տրտմութիւն է...: - 762. Ո՛չ է իշխանութիւն ի վերայ երկրի որ *համեմատեսցի* նմա որ եղև. զի ո՛չ յումեքէ երկնչիցի: - 765. Անպն *համեմատի* մեղաց...: - 793. Անպն *համեմատի* սուրբ կուսին...: - 793

**ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ +** Չորրորդ՝ հասարակ է ի միոյ բարերար կամաց յառաջ եկելոց հաղորդեալ անհաղորդաբար ըստ *համեմատութեան*: - 106. Արդ այս չափ *համեմատութիւն* է ի նախկին սկիզբն. նախագաղափար տեսութեանն աստուծոյ. և ո՛չ յերկրորդ սկիզբն ի գործ արարչութեան: - 164. Իսկ անեղ և պարզ էութեանն պատշաճի միայն նմանապէս *համեմատութեամբ*. զի է կոչի աստուած, ըստ

այնմ «ես եմ որ էն». և ո՛չ ըստ այնմ որ բաժանի ի գոյացութիւն և ի պատահումն. որպէս հոմանուն կամ փաղանուն. կամ ի միջէ և առ մի. որպէս ընդհանուր էակն է՝ բաժանի առ մեզ: - 171. Օրինակաւ *համեմատութիւն* մեւքիսեդեկի առ քրիստոս: - 301. Եւ թէպէտ կարելի՛ է ըստ բազմազան եղանակաց այս կարգ *համեմատութեան* ի սոյն խնամով աշխատասիրաց: - 304. Այս երրորդ եղանակ *համեմատութեան*: - 328. Եւ այս բազում *համեմատութեամբ*: - 523. Զի նւազունք են ամենայն փափկութիւնք որ լինին յաշխարհի մինչև ցօրն դատաստանի, բաղդատեալ առ այն քաղցրութիւն. որպէս կաթիլ մի ջրոյ առ *համեմատութիւն* ընդ համուր ծովու: - 762

**ՀԱՄԵՄԵՄ +** Դարձեալ՝ աղն նշանակէ՛ զբանն աստուած. որ զանհամութիւնս մեր *համեմեաց*, և զնեխեալ վէրքն ապականութեան մերոյ ողջացոյց: - 356. Իսկ Աղ կոչեցաւ. զի զանհամութիւնս մեր *համեմեաց*, և զվէրս ողջացոյց: - 361. Վերին մասն զխոհեմ և զհամեստ բանս իբրև աղիւ *համեմեալ*: - 493. ...ի զանհամութիւնս մեր *համեմեաց* և զնեխեալ վէրս սրբեաց: - 657

**ՀԱՄԵՍՏ +** Աչք որպէս զպայծառ շիտ լուսաւոր՝ նշանակէ՛ *զհամեստն*: - 246. Վերին մասն զխոհեմ և *զհամեստ* բանս իբրև աղիւ համեմեալ: - 493. Ապաստանութիւն է որով հոգին ի մեծ և ի *համեստ* իրս ստոյգ յուսովն հաստատի յինքեան: - 580

**ՀԱՄԵՍՏՈՒԹԻՒՆ +** Եւ որպէս հայրն աբրահամ նմանեցաւ աստուծոյ հօր, մանաւանդ և որդին իսահակ *համեստութեամբ* ինչ իրօք նմանի որդւոյ նորա քրիստոսի: - 304. Համբերութիւն է կամաւոր և միշտ տեսողութիւն մեծամեծ և դժուարին իրաց վասն օգտութեան և *համեստութեան*: - 580. Այլ մասունք ողջախոհութեան են երեք. այսինքն ժուժկալութիւն. անոխակալութիւն. և *համեստութիւն*: - 581. *Համեստութիւն* է որով զպարկեշտ ամօթխածութիւնն ստանայ և զնազելի պատկառանս: - 581. Իսկ տեսակ ողջախոհութեան են գ. այսինքն զգաստութիւն. ժուժկալութիւն. և *համեստութիւն*: - 581. Իսկ *համեստութիւնն* կայանայ ի յասելիսն. այլ և ի տեսանելիսն. ի լսելիսն. ի հոտոտելիսն: - 581. Այլ և զծեռս ի հարկանել. յըմբռնել. և զոտս ի գնալ. *համեստութիւնն* ի նոսա ամենայնսն դնէ զեղանակն և զկարգն: - 581

**ՀԱՄԸՆԹԱՑ +** Նա՛խ՝ զի *համընթա՛ցք* են ասէ ի վաստակն. այսինքն հոգին և մարմինն. ի միասին և հանգիցեն և պսակեսցին: - 668-669. Նա՛խ՝ զի *համընթացք* են ասէ ի վաստակն: - 691. Չորրորդ, սոքա իւրաքանչիւր հոգւոցն ասեն ընդ բաժանիլն. և ոսկերերանն ի վերջին օրն *համընթաց* այրեցումն: - 703. Այլ ի գալուստն քրիստոսի երե՛ք են ասացեալ հուր մի զհետ միոյ... Նախընթաց, *համընթաց*, վերջընթաց: - 731. Եւ *համընթաց* հուրն զհիւսիսիւ և պատէ՛ զմեղաւորս: - 731

**ՀԱՄԻՇԽԱՆ** - Ասեմք առ այս, եթէ համակարգ և *համիշխանք* են վերջինն ընդ առաջնոյն ի կարգել և ի յուղղել. այլ ո՛չ ի թիւրել և ի քակել. զի առաջնոյն աւանդապա՛հ է վերջինն նո՛յն մտօք և նո՛յն կամօք: - 541

**ՀԱՄՐ +** ...**բդ**՝ խլից լսել տայր. **գդ**՝ *համերց* խօսիլ. **դդ**՝ ծեռաց շարժումն. **եդ**՝ կաղաց գնալ...: - 328. Սողոմն *համր*՝ և գոմորն խիստ թարգմանի: - 755. Է՛ ուրեմն ասել, եթէ ոչ տեառն սաբաւովթ, այսինքն զօրութեանց, թողեալ էր մեզ սերմն առաքելօք և մարգարէիւք և այլովք սրբովք և վարդապետութեամբ աւետարանին, *համերբ* և ի մեղս լինէաք խստացեալք: - 755

**ՀԱՅ +** Նոյնպէս և ի մերն ի հին *հայոյն*, Արեգի ի **թ** է՛ առաջին օր արարչութեանն: - 191. Ոլոմպիաքն չորրորդ ամ է. զոր *հայք* նահանջ ասեն. և Ընդիքտիոնն **ժե** ամ է. որով հռոմք վարին: - 191. Իսկ *հայոցս* է՛ ի վերայ հայկին ըստ տասն ծննդոցն: - 200. Եւ ի գիրս սուրբս՝ մարգարէից այլոց ազգաց անուանք ո՛չ յիշին բաց ի *հայոցս*: - 201. Պերճական պարսիկն. և համեղ *հայոյն*. որ բոլորապէս կարո՛ղ է զամենայն լեզու ուղղակի ուսանիլ: - 297. **Եւ այլք *զհայոյն* ծեքական և թիւր ուսանին. զի մասնաւո՛ր է լեզու նոցա**: - 297. Եւ այս են **իբ** լեզուքն... *Հայք*: - 298. Իսկ վիրք և աղւանք ո՛չ կատարեալ գրով. այլ առեալ ի *հայոց*. որպէս ասորին և խմայէլացին յեբրայեցւոցն: - 299. Համեղական *հայքն* որ կարո՛ղ է զամենայն լեզուս յինքն ամփոփել և բոլոր խօսիլ. և այլքն ո՛չ՝ որպէս ասացաւ ի վերոյ: - 299. Ուստի բազմացեալ լցին զարևելս ի պալի. յորմէ թագաւորք պարսից և *հայոց* արշակունիք կոչեցեալ: - 330. Ծաղիկ զմռնեաց. նմանէ պոյտն ծաղկի. և Կինամոն. արմա՛տ է խոտոյ ի տմորիս *հայոց*. և Խնկեղէգն. որ յարմատս ո՛չ ամենայն եղեգան լինի. և Հիրիկ. խէ՛ժ է ծառոց: - 349. Եւ ըստ անանիա շիրակացւոյ, յաղամայ ի թուականն *հայոց*՝ են ամք՝ **ղճհզ**: - 451. Վասն է՞ր ազգս *հայոց* զտօն ծննդեանն քրիստոսի և մկրութեան ի միում աւուր կատարեմք: - 482. Եւ այս ի խնդրոյ սրբոյ լուսաւորչին մերոյ ի պատիւ ազգիս *հայոց*: - 509. Հատոր վասն Նոր օրինաց և Եկեղեցւոյ Զանազան Հարցմունք... Ութերորդ, Առանձին ժողովք *հայոց*: - 525. Տասներորդ, Թէ որի՛շ են *հայք*: - 525. Եւ ազգիս *հայոց* առանձին պարգևք: - 525. Եւ Պատրիարգունք էին անդ, Արիստակէս *հայոց*: - 542. Եւ Պատրիարգունք էին անդ, Ներսէս *հայոց*. Կիւրեղ էմի. Դամասոս հռօմայ. Նեքտառիոս կոստանդնուպօլսի: - 542. Եւ Պատրիարգունք էին անդ, Սահակ *հայոց*՝ թղթով միաբանեալ: - 542. Եւ յովսէփ

փալանացի, և եզնակ կողբացի թարգմանիչք, դարձեալ էին յաթենայ և եկեալ ի կոստանդնուպօլիս. լուան զժողովոյն և գնացին ի քաղկեդոն. զի չէր յոյժ հեռի ի ճանապարհէն որով գային ի *հայս*...: - 543. Իսկ յովսէփ և եզնակ եկեալք ի *հայս* պատմեցին զամենայն ստուգութեամբ: - 543. Եւ պետրոս անտիոքու պատրիարգն և սուրբն պարսամ գրեցին ի *հայք* և զգուշացուցին. և նզովեցին զհաւանեալսն մարկիանոսի: - 543. Եւ որպէս այսոքիկ ժողովք ընդ դէմ հասարակ հերձուածողաց, նոյնպէս և առանձին ժողովք եղև ազգիս *հայոց* է երորդ: - 544. Ժողովեալ **խ** եպիսկոպոսաց և բազում վարդապետաց և ժողովրդոց. կողմակալք և մարզպանք, մեծամեծօքն *հայոց*, և սպարապետն վարդան ազգայնօքն իւր: - 544. Երկրորդն է ժողովն թէոդուպօլսի, որ այժմ կոչի կարնոյ քաղաք. ո՛չ այն զոր յետոյ հերակլ քաղկեդոնիկ ժողովեաց և խաբեաց զեզր կաթուղիկոսն *հայոց*: - 544. Այլ հրամանաւ մեծի թագաւորին ուստիանեայ ժողովեցան յունաց և հռոմոց և *հայոց* և վրաց և աղուանից եպիսկոպոսունք. և կաթողիկոսն *հայոց* սահակ...: - 544. Երրորդ ժողովն է դվնայ, ի չորրորդ ամի թագաւորութեանն կոստանդեայ հռոմոց. հրամանաւ մեծի կաթողիկոսին *հայոց* ներսէսի շինողի. և այլ է և **Ժ** եպիսկոպոսաց՝ և վարդապետաց բազմաց և իշխանաց...: - 544. Չորրորդ՝ մեծ և արժանաւոր ժողովն եղև ի մանազկերտ. ի **ճհդ** թուականին. հրամանաւ և արդեամբք գիտնաւոր և մեծ իմաստասիրին սրբոյն յոհաննու կաթողիկոսին *հայոց* օձնեցւոյ: - 545. Մինչ եկաց երկրորդ լուսաւորիչն *հայոց* և կրկին կիւրղոս սուրբ իմաստասէրն յոհան. և լուսաւորեաց զեկեղեցի: - 545. Այլ որ **ճծ** ամաւ յառաջ եկին ի *հայք*՝ ասորիք արք քաջաբանք, և կամեցան սերմանել զաղանդն նեստորի. որք նզովեալ որոշեցան. բայց ոմանք ընկալեալ էին և թարգմանեալ ի նոցանէ գիրս սուտս, Զգօրտոսակ. Զկիրակոսակ. Զպղի տեսիլն: - 545. Եւ տէր սիոն *հայոց* կաթողիկոսն անդր հասեալ բազում եպիսկոպոսօք և մեծամեծ ազատօք *հայոց* և իշխանօք նոցին. ընդ դէմ աղանդոց ա՛յնր ժամանակի, և թուլութեան կարգաւորաց եկեղեցւոյ, և բռնութեան իշխանաց: - 545. Ժողովեալ բազում եպիսկոպոսաց յամենայն կողմանց. և իշխանաց և մեծամեծաց *հայոց*. կարգեցին սահմանս կանոնականս **իբ** գլխով. և պայծառացուցին զեկեղեցի սուրբ: - 545. Եօթներորդ՝ ժողովն սիմէօնի աղուանից կաթողիկոսի և *հայոց* կաթողիկոսի տէր եղիայի: - 545. Որպէս Թադէոս ի *հայք* զադդէ և զթէոփիլոս: - 546. Ասեմք թէ՝ սուրբն գրիգոր ի կեսարիայ ձեռնադրեցաւ ո՛չ յայլմէ առաքելոյ, այլ ի սրբոյն թադէոսէ՛. որոյ էր վիճակս *հայոց*: - 548. Եւ ա՛յս էր պատճառն *հայոց* անդ ի ձեռնադրութիւն գնալոյն: - 548. Եւ սեպհական քաղաք է *հայոց* կեսարիա: - 548. Զի այսպէս սահմանեցին՝ թէ ինքնակալ թագաւոր մի և ինքնագլուխ հայրապետ մի նստցի ի *հայս*. և թագաւոր մի ինքնակալ՝ և ինքնագլուխ հայրապետ մի ի հռօմ. և ի վերայ միմեանց դիցեն զանձինս ի մահ. և սոսկալի գրով եղեն միմեանց եղբարք. թացեալ զգրիչն յահաւոր խորհուրդն: - 548. Եւ բաժանեալ զուրբ տեղիս տընօրինական, ետուն զուրբ յակոբն պատրիարգարան, և զգողգոթայն, և զուրբ կարապետն և զնշարսն. և արկեալ վիճակս ի վերայ յարութեանն՝ անկաւ *հայոց*. և տրտմեցան ոմանք յազգէ նոցա: - 548. Եւ ի *հայք* վասն սուրբ լուսաւորչին գրիգորի: - 549. Եւ թէ ոք ասիցէ, ազգս *հայոց* յետին է հաւատացեալ: - 549. Դարձեալ ասեմք թէ զիա՞րդ յետին. զի աբգար թագաւորն *հայոց* նախ քան զխաչն հաւատաց ի քրիստոս և երանեցաւ ի նմանէ: - 549. Դարձեալ ասեմք թէ՝ երեք առաքեալս ունին *հայք*: - 549. Դարձեալ ասեմք թէ՝ երեք առաքեալս ունին հայք... զԹադէոս. և զԲարդուղիմէոս. և զՅուդայ յակոբեան. որ կայ ի յորմի. որ սեպհական քաղաք է *հայոց*: - 549. **Եւ ի գալն յերկիրս *հայոց*, ետուն նմա օգնական զիւղն օծման զոր քրիստոս օրհնեալ էր. և զգեղարդն. և այլոց ազգաց չկա՛յ այս պարծանքս. զի մեր մեռոնս հանապազ և միշտ զնոյն շնորհ ունի**: - 549. Զի՞նչ պատասխանեմք որք բամբասեն զազգս *հայոց* ո՛չ միաբանիլ այլոց: - 550. **Այլ արդ՝ ազգս *հայոց* ունի զառաւել ճշմարիտն և զառաւել բարին ի դաւանութիւնն և ի կարգս. այսինքն ի հաւատս և ի գործս**: - 550. **Այլ և արդ կարելի՛ է զի մինն բազմաց հակառակեսցի և յաղթեսցէ. որպէս ազգս *հայոց* զայլս ամենայն որ բազո՛ւմ են և ո՛չ մի**: - 550. Եւ որ սոցա առաւել մերձ է և անշարժ մնացեալ՝ է ազգս *հայոց:* - 550. Իսկ յազգէս *հայոց* ո՛չ ոք իշխեաց խօսիլ հերձուած և զայլոցն ո՛չ ընկալան: - 551. **Նմանապէս և ազգս *հայոց* թէպէտ մի է, կարէ՛ պատւական գոլ բազմաց**: - 551. **Ապա յա՛յտ է թէ ո՛չ ազգս *հայոց* եթող և բաժանեցաւ, այլ նոքա թողին զուղիղն և բաժանեցան**: - 551. Զա՛յս ասեմ, զի որ ինչ անօրէնութիւն է ազգիս *հայոց*, նո՛յն է օրէնք այլազգ քրիստոնէից. և որ մեզ երկբայութիւն է՝ նոյն դաւանութիւն է նոցա: - 552. Եւ այսպէս բազում ունելով իւրաքանչիւր ոք սահմանս առանձին, միայն *հայք* նախատեալ լինին որպէս ո՛չ ունել միաբանութիւն ընդ այլս ի քրիստոնէից. այլ առանձին միայնաբար ընթանալ. և այսու որպէս հակառակ եպերեալ: - 553. **Բայց պարտ է այնոցիկ որք ո՛չ գիտեն՝ և կամ թէ կամաւ տգիտանան՝ ցուցանել զմիաբանութիւն ազգիս *հայոց* առ այլ քրիստոնեայսն. զի գիտացեալ յամօթ լիցին յաղթեալք ի ճշմարտութենէն**: - 553. Բայց ոմանք բերանաբաց եղեալ հակառակին՝ զծնունդն և որ ըստ նորին ամենեցուն առ հասարակ միաբանեալ բաց ի *հայոց*: - 554. Որպէս ահա՛ յերկոսեան

ճրագալոյցսն այսինքն ի ծննդեանն և ի յարութեանն միաբանին *հայք* և յոյնք և ասորիք. իսկ լատինք ո՛չ: - 554. **Եւ ի հաց պատարագին զբոլորն մատուցանեն և ո՛չ մասն ինչ, լատինք և *հայք* և ասորիք. իսկ յոյնք ո՛չ: - 554. Եւ յառնուլ զաստիճան սարկաւագութեան ո՛չ տան հրաման կին առնուլ *հայք* և լատինք և յոյնք. բայց ասորիք ո՛չ: - 554. Որպէս և տօն ծննդեանն զոր միաբան ասեն տօնել այլոց քրիստոնէից բաց ի *հայոց*. և զի և այն աւանդութիւն է և տօնախմբութիւն և ո՛չ հաւատ:** - 554. Իսկ ազգիս *Յայոց* ի յաստուծոյ առանձնական բարութիւն պարգևեալ այսոքիկ: - 555. Երրորդ՝ յերկոտասանից առաքելոցն երիցն ի *հայս* քարոզութիւնն և վախճան: - 555. Ութերորդ՝ զի արևելեանք կոչին *հայք*: - 555. Նաև ի *հայք* ի ժողովն դվնայ հաստատեցին ի սուրբն աստուածն խաչեցար ասել ստուգապէս: - 631. ...և ո՞վ է բերեալ յազգս *հայոց*: - 658. Իսկ խոսրով թարգմանիչ եբեր ի *հայս*. որ գնացեալ էր յերուսաղէմ հրամանաւ սրբոյն սահակայ: - 658. Եւ արջևան և կորիւն թարգմանիչք բերին ի *հայս*: - 658. Եւ ղազար թարգման եբեր ի *հայս*՝ ի **ժգ** ամի թարգմանութեան սրբոյն սահակայ առն աստուծոյ որ էր նախանձախնդիր կարգաց եկեղեցոյ: - 659. Այլ և վարժապետին իմոյ և մեծ հռետորի *հայոց*, Յոհաննու Որոտնեցւոյ, եղիցի ի սմա յիշատակ մաղթանաց մասին օրհնութեան. և վիճակ ժառանգութեան սրբոցն ի լոյս: - 773

*ՅԱՅՈՑ ԼԵԶՈՒ* - **Երանելին մովսէս խորենացի՝ որ էր գրիչ սրբոյն սահակայ պարթևի, յետ ճժ ամի սրբոյն գրիգորի՝ եղև սկիզբն թարգմանութեան ի *հայոց լեզու*:** - 658

**ՅԱՅԱՍՏԱՆԵԱՅՔ +** Իսկ *հայաստանեայ* քրիստոս որպէս ուսան ի սրբոյն գրիգորէ՝ անփոփոխ կացին ի նմին: - 482. Զոր ունի զայս աւանդ այժմ սուրբ և ուղիղ աւանդապահ եկեղեցիս *հայաստանեայց* ըստ վկայութեանս որ եդաւ: - 484. Աղերս ընծայեցի ի գանձանակ ճոխութեան ծերդ մեծութեան. իմաստասէր և ճշմարտասէր եկեղեցոյդ *հայաստանեայց* և ընթերցասէրդ մտաց: - 772

**ՅԱՅԵԼԻ +** Որպէս արեգակն զի ո՛չ այրէ որ է հեռաւոր պատճառ. այլ հուրն ի նմանէ առեալ զջերմութիւն ի մերձ գոլով այրէ՛. որպէս յա՛յտ է ի *հայելւոջն*, որ առեալ զնշոյլս յարեգականէն՝ այրէ՛. ա՛յսպէս և բանս մեր ի հարկէ նոցա լինի՝ զոր ստորասեմք կամ բացասեմք: - 8. Երկրորդ՝ է՛ դարձուցանել զիմացումն ի հաւատալեացն, և յայնցանէ որ ածեն զմարդն առ հաւատալն. այնպիսին խաբեալ է. զի բնութեամբ է մարդոյ ո՛չ տեսանել զյետոյս իւր. և ո՛չ առանց աչաց *հայելոյ*: - 31. *Յայելի՛* է աշխարհի. ըստ որում աղտ յերեսն երևի: - 187. Եւ այլք ասեն թէ՝ կերպն է ցամաք երկրիս. որպէս *հայելին* զմարդոյ կերպն յինքն երևեցնէ: - 187. Երրորդ՝ զի երեսն *հայելի* է սրտին...: - 234. Եւ պակասեալ ի սոցանէ մարմնոյն, ցուցանի կերպարան ի գոյէ ի քանակէ և յորակէ և ի տեղւոյ շարակցեալ. որպէս յա՛յտ է ի *հայելւոջ*: - 236. Երկրորդ՝ զի զփոշին սրբէ որ ի յօդոյս նստի յաչքն. որպէս մեք ձեռօք սրբեմք զերեսս *հայելւոյ*: - 239. Զի որպէս *զհայելին* ո՛չ բեկանէ շառաւիղ արեգականն: - 469. Զոր օրինակ, մի՛ է արեգակն անձամբ և գոյութեամբ, և ի բազում լուսանցս և ի *հայելւոջ* երևեալ նոյն մի անձամբ և գոյութեամբ և ո՛չ բազում: - 530. Նոյնպէս սրբին ամենայն տիեզերք. զի երեսք երկրի այնպէս պայծառանայ որպէս *զհայելի*: - 728. Իսկ Երրորդն արքայութիւն, գուշակի յաւազանն պղնձի. զոր հրամայեաց մովսէս առնել ի *հայելեացն* կանանց որ նստէին առաջի դրան խորանին. յորում լւանային որդիքն ահարօնի նախ քան զմտանելն ի սուրբն սրբոց: - 756. Զաւազանն պղնձի ի *հայելեաց* կանանց կազմեաց. այսինքն զբանն աստուածային՝ ի սրբոցն հաստատեաց օրինօք: - 756. Զորօրինակ, ժանգ *հայելւոյ* ո՛չ զընդունակութիւնն բառնայ, այլ զտեսութիւնն. և յետ սրբելոյն, նոյն ծածկեալն երևի ի նմա: - 782

**ՅԱՅԵՑԱՐԱՏ** - Յաչաց աստի՝ *հայեցարատս* հերքեալ լիցի տեսութեամբ լուսոյդ: - 771

**ՅԱՅԵՑՈՂՈՒԹԻՒՆ +** Խորան ասեն աջակողմ և ձախակողմ. այսինքն ի քաղցր *հայեցողութիւնն* քրիստոսի որ է աջ. և ի դառն և ահաւոր որ է՛ ձախ: - 686

**ՅԱՅԵՑՈՒՄՆ +** Եօթներորդ՝ կոչի սաւուղ, որ է՛ ընտրեալ *հայեցումն*. և տէր մեր *հայեցումն* և ակնկալութիւն է ամենայն արարածոց: - 427

**ՅԱՅԹԱՅԹԵՄ +** Վեցերորդ՝ հակառակէ քրիստոսի՝ և քրիստոնէից. և սոքա հակառակին սուրբ եկեղեցւոյ և ուղղափառ հաւատոյ. և զոր բանն աստուած առեալ զմարդկայինս բնութիւն միաւորեաց ընդ իւրում աստուածութեանն՝ սոքա ընդդէմ նմին որոշեն զբանն ի մարմնոյն. զի մի՛ իցէ աստուած մարդացեալ ըստ նոցա՝ և մարմինն աստուած. և պատճառս *հայթայթելով* պատրեն զմարդիկ: - 35

**ՅԱՅԻՄ +** Որպէս տեսանեմք ի բոլորակս արեգականն և մի ասեմք զարեգակն. իսկ թէ *հայիմք* ի լոյսն և ի ջերութիւնն **գ** իմանամք: - 54. Այսոքիկ *հային* առ միութիւն անձինն աստուածային: - 77. Այսոքիկ *հային* առ միութիւն էութեանն: - 77. Այսոքիկ *հային* առ բնութեամբ միաւորութիւնն: - 77. Երկրորդ՝ որպէս աչք *հայելով* ի վեր՝ հեշտանայ զի վերընթա՛ց է լոյսն: - 104. Նախ՝ *հայելով* ի կերպարանս և ի նմանութիւնս որ է՛ կարգաւորութիւն արարածոց. և սոքօք ի յարացոյցն սոցա ելանել, և ի նմանէ դարձեալ ի նախատիպ

յարացուցին ելանել. և այնպէս տեսանել թէ է՛ աստուած պատճառ ամենայնի: - 119. Եւ թէ՝ *հայեա՛ց* ի քեզ: - 285. Եւ զի՞նչ է նայիլ և *հայիլ*: - 285. Իսկ զփոխարէն պարգևսն զոր ընկալաւ, Վասն առաջնոյն՝ զի ասէ գիր, «*հայեցաւ*», այսինքն հաճեցաւ աստուած ի հաբէլ: - 286. Երրորդ՝ զի ո՛չ *հայէր* ի վեր. երկաթի կապիճս եղեալ ի գլուխն: - 290. Իսկ մովսէս հրամանաւն աստուծոյ արար պղնձի օձ. և բարձրացոյց ի դուռն խորանին. և որ *հայէր* ի նա՝ ապրէր ի թունից օձիցն: - 386. Երկրորդ՝ որ *հայէր* ի յօձն՝ բժշկէր. և որ հաւատայ ի խաչեալն՝ բժշկի ի թունից մահաբեր օձին: - 386. Զի՞նչ է ասելն *հայեաց* ի քեզ: - 397. Մտացն ասէ *հայիլ* ի հոգին: - 397. Դարձեալ՝ *հայեա՛ց* յանձն քո. և նախ զքեզ քննեա և տե՛ս, և ապա՛ զայլս: - 398. Եւ դարձեալ՝ *հայեաց* ի քեզ. և մի՛ մոռանար զտկարութիւն և զպակասութիւն քո: - 398. Դարձեալ՝ Նայիլ և *Հայիլ*՝ է՛ հոգեկան...: - 407. Դարձեալ՝ Նայիլն և *Հայիլն* յատուկ տեսողութեանն է. իսկ Տեսանելն հասարակ զգայութեան: - 407. ...իսկ «տեսլեամբ գեղեցիկ», զի նստի յերկինս և *հայի* յանդունդս. և *հայելով* ի հիւանդս բուժէր, և զմեղաւորս սրբէր: - 436. Եւ այս գիտելի՛ է, զի դատաստան հին օրինացն *հայի* յարդարութիւնն աստուծոյ. և օրն դատաստանի: - 439. Եւ շնորհք նոր օրինացս *հայի* յողորմութիւնն աստուծոյ և ի փառս վերինն եէմի որպէս ասացաւ ի վերոյ: - 439. Եւ այս յիրաւի իսկ. զի որ *հայեցաւ* ցանկական մտօք՝ ի կամս իւր գործեաց զմեղս: - 556. Որովք միշտ երանութեամբ զաստուած տեսցես. *հայելով* յօրէնս նորա ի տուէ և ի գիշերի: - 558. Բայց կրկին է զրկումն լուսոյ. մի՝ որ ի ճառագայթէ՛ լուսոյն զակն խփէ և խաւարի. և բ՝ որ ընդ դէմ բոլորակի արեգականն *հայիցի*՝ կորուսանէ զլոյսն և խաւարի: - 562. Իսկ մեղանչելն սատանայի այնպէս է որ ընդ դէմ արեգականն *հայի* և զլոյսն կորուսանէ և խաւարի: - 563. Հինգերորդ թէ առ աստուած *հայիցին* միշտ և զնա՛ տեսանեն: - 586. ...վասն որոյ պա՛րտ է աչօք տեսանել զզգալիսն, և մտօք *հայիլ* յիմանալին և երանիլ: - 597. Իսկ յորժամ մեղաւորն խոստովանի, պա՛րտ է *հայիլ* քահանային թէ կրօնաւո՞ր է թէ աշխարհական: - 601. Իսկ թէ աշխարհական լինի. *հայի* քահանայն թէ խոստովանօղն իմաստուն մարդ լինի առանց բարի գործոց: - 601. Յայս միտս *հայելով* պօղոս ասէ՝ «Պատուակա՛ն է ամուսնութիւն և սուրբ անկողինք» ըստ օրինացն աստուծոյ: - 609. Իսկ ի մեզ դուռն մարմնոյս որ յերկիր և ի խաւար *հայի*, արևմտեանն է: - 614. Եւ դուռն մտացն որ յերկինս և ի լոյս *հայի*, հարաւայինն է: - 614. Այլ հոգի դատարկ ի քաւարանին աչս ո՛չ ունի զի լացցէ որով յարատ *հայեցաւ*. և ո՛չ մարմին զի պահեսցէ և աղօթեսցէ. այլ և ո՛չ զղջումն. զի հոգին ինքն ըստ ինքեան ո՛չ կարէ զղջալ: - 699. Նա՛խ՝ տեսանեն զմարդկութիւնն զի երկիցեն. և մի՛ զաստուածութիւնն զի մի՛ խնդասցեն. զի սրտմտութեամբ *հայի* ի մեղաւորս. - 741. Արդ բարի գործս մեր *հայի* առ գործ ողորմութեանն, և չար գործս առ գործ արդարութեանն աստուծոյ: - 745. Երկրորդ, *հայի*՛ առ ի մի և նոյն բարերար կամացն յառաջ եկեալ գործքն. աստուածային՝ արարչական՝ և արքունական. որ է գործ ստեղծման և նախախնամութեան: - 746. Երրորդ, *հայի* առ նոյն ինքն արդարապէս հատուցումն մանրամասն քննութեամբ բարեացն և չարացն. որք առաւել կամ նուազ ունին. կամ հասարակ յերկուցն կրից: - 746. Սոքա՛ են հոսանք ջուրցն լիութեան. զորոց յերգս գտանի սիրելոյ. որ ի խորութիւնն *հայեցեալ* աղաւնւոյն, ի գալստենէ բազային զգուշանայ: - 756. Իսկ աստուած ո՛չ փոխեաց զխորհուրդն իւր որ էր յաւիտենական. այլ վճիռն որ *հայէր* ի պատիժ արժանեաց նոցա: - 779. Որոց սկիզբն է հաւատն առ մկրտութեամբն. և կատարումն *հայի* առ գործն. և սոքա փոփոխականք են ըստ քանքարացն յարգելոյ և պակասելոյ: - 783

**ՀԱՅԿ +** Ամսոցդ անւանք՝ են որ ի նախնեացն անուանէ... Իսկ հայոցս է՛ ի վերայ *հայկին* ըստ տասն ծննդոցն: - 200. Եւ իշխանք վերակացուք գործոյն՝ Լամսուր ի սեմա՛յ ազգէն... *Հայկն* յաբեթի. և Բէլն ի քամայ որսորդ նոցա: - 297

**ՀԱՅԿԱԶՆԵԱՆ +** Որ և յարազուարճ բարերջանկութեամբ լի և ամենազան քաղցրորակ պտղաւէտութեամբ տընկեսցիս ծառ բարձրաբերձ յընթացս հոգւոյն ի մէջ եկեղեցւոյ տանս թորգոմեան ազգիս *հայկազնեան*: - 558

***ՀԱՅԿԱԶԵԱՆ ՏՕՄԱՐ*** - Ա՛րդ՝ եղև զրաւ բանիս, ի շրջագայութեան *Հայկազեան Տօմարի*, **պխզ** թուի: - 772. Եւ այս աղէտ անզերծ տարակուսից շրջապատեալ զմեզ շրջագայութեամբ *տօմարի հայկազեան* սեռից, հարիւրից կրկնակի՛ քառից և վեցեա՛կ վեցից: - 789

**ՀԱՅՀՈՅԵՄ +** Վկայ անիրաւ զտնէ՛ *հայհոյեն*. և դա՛տ խռովութեան ի ժողովս մուծանեն: - 34. Երկրորդ՝ նեռն *հայհոյէ* զքրիստոս զինքն կոչելով. նմանապէս և հերձուածօղք ոմանք *հայհոյեն* զմարդեղութիւնն Քրիստոսի: - 34. Երրորդ՝ վախճանեալ մովսէս ի լերինն, և միքայէլ փոխադրէր զմարմինն. սկսաւ սատանայ *հայհոյել* զսուրբն և սպանօղ անւանել վասն հարկանելոյն զեգիպտացին. վասն որոյ սաստեաց նմա հրեշտակապետն: - 410. Տասներորդ՝ վասն հոգեմարտին մակեդոնի որ

*հայհոյէր* զհոգին սուրբ նուազ ասելով քան զհայր և զորդի, ո՛չ թողցի նմա: - 566. Քանզի, որք *հայհոյեն* զսիրելին՝ խոյս տայ ի նոցանէ: - 576

**ՀԱՅՀՈՅԻՉ +** Եօթներորդ՝ զնա փոքր եղջիւր կոչէ դանիէլ. խեթկի և մեծամեծս բարբառելով. և սոքա խեթկեն զեկեղեցի. և բանան *զհայհոյիչ* բերանս իւրեանց յերկինս, և զլեզուս ածէին զերկրաւ: - 35. Երկրորդ՝ կարկուտն զհպարտ և *զհայհոյիչ* բանս նոցա խայտառակէ, և հուրն զբարկութիւն սրտին զոր ունէին առ որդիսն իսրայէլի: - 334. Տասներորդ՝ ի սկզբանէ *հայհոյիչ* աստուածամարտ էր սատանայ. և վասն այն զմարդիկ կորուսանէր մեղօք. որում զվճիռն և զսաստն տէրն ետ, և դատապարտեաց զմեղս ի մարմնի իւրում. և եբարձ մահուամբն զմահ, և որ զիշխանութիւն մահուն ունէր: - 410. Տիմոթէոս աղէքսանդրու. Մելիտոս անտիոքայ. **ԾԾ** հարք ընդ դէմ մակեդոնի *հայհոյչի* հոգւոյն սրբոյ: - 542. Այլ և լինի *հայհոյիչ*. զի խօսեսցի բան ընդ դէմ բարձրելոյն: - 707

**ՀԱՅՀՈՅՈՒԹԻՒՆ +** Իսկ եթէ բոլոր, այս լինի կամ **բ** հոգի որպէս ասացաք, կամ աւելորդ գոյ բղխումն որդւոյ որ է յոյժ *հայհոյութիւն*: - 63. Իսկ թէ յանսկզբնէն և ի սկզբնաւորէն յառաջ գայ հոգին, լինի անեղ և եղական որ է մակեդոնեան և ծանր *հայհոյութիւն*: - 63. Եւ այլ բազում ինչ *հայհոյութիւն* հետևի կարծեացն նեստորի: - 68. Իսկ թէ մարդկութեանն միայն, անկա՛ր ընդ մարդապաշտ *հայհոյութեամբ*. և փոխանակ արարչի՝ արարածո՛յ երկրպագեցեր ընդդէմ աստուածային օրինացն: - 68. Ա՛րդ՝ ի մարդկանէ ո՛չ ոք ետես զաստուած, և որդի կուսին ո՛չ ետես որպէս դուդ ասես. սո՛ւտ է ապա և պատմութիւնն զոր ինչ ուսոյց մեզ. զի ո՛չ է տեսեալ և պատմէ. ահա անդունդք *հայհոյութեան*. զոր ի կարգիս լռե՛մ: - 96. Փորձանքն է՝ որպէս թէ զայս առնես՝ լսեմք. և թէ ոչ առնես՝ ո՛չ լսեմք. և Չարաչարն՝ *հայհոյութեամբ* տրտունջն է: - 381. Եւ փոխանակ *հայհոյութեան* զպատարագ օրհնութեան մատուցանեն աստուծոյ: - 443. Եւ զի խիստ էր *հայհոյութիւնք* նոցա, խստագոյնս քարկոծեցան տանջանօքն յաւիտենից: - 566. Երրորդ՝ զի չունէին պատճառս *հայհոյութեան* հոգւոյն որպէս զորդոյ. զի տեսանէին մարմին զգեցեալ, ուտել և ըմպել, տքնիլ և ննջել: - 566. Որ և է՛ այս հերձուած մեծ և յանդուգն *հայհոյութիւն* ընդ դէմ կարգաց եկեղեցւոյ: - 589

**ՀԱՅՐ +** Նախ՝ ոչ ի *հօրէ* և ո՛չ ի մօրէ. որպէս ադամ: - 29. Երկրորդ՝ ի *հօրէ՛* և ո՛չ ի մօրէ. որպէս եւա: - 29. Երրորդ՝ ի *հօրէ՛* և ի մօրէ՛. որպէս ամենայն մարդ: - 29. Չորրորդն՝ ի մօրէ միայն առանց *հօր*. որ է քրիստոսին: - 29. Չորրորդ՝ Անծի՞ն է *հայր*, թէ ոչ: - 29. Հինգերորդ՝ Կարէ՞ և *հայր* ծնեալ ասիլ ի նոյն բնութենէ գոլ: - 29. Վեցերորդ՝ *Հայր* անուն արարչութեա՞ն է, թէ բնութեան: - 29. Եօթներորդ՝ *Հայր* իմ մեծ քան զիս. և պատասխանիք նոցա **ը** գլխով: - 29. Չորեքտասաներորդ՝ Զի *հայր* գործէ՛, և որդին նմին նման: - 29. Երեքտասաներորդ՝ Որք զհոգին՝ ի *հօրէ՛* և յորդւոյ ասեն ութն գլխով: - 30. Չորեքտասաներորդ՝ Հոգին միայն ի *հօրէ՛* է բղխումն՝ **ժ** հարցմամբ, և **գ** օրինակաւ, և **ը** վկայութեամբ: - 30. Հինգերորդ՝ *Հայր* և Հոգի ո՛չ մարմնացեալ. թէպէտ մի բնութիւն է երրորդութեանն: - 30. Տասներորդ՝ նեռն քարոզութեամբ պատրէ՝ և ուրական սքանչելեօք. և այլն. և սոքա քաղցրաբանութեամբ և օրհնութեամբ պատրեն զմիտս անմեղաց. և հրեշտակ լուսոյ կերպարանին որպէս *հայրն* իւրեանց սատանայ. և ամենայնն ուրական միայն և ո՛չ ճշմարտութեամբ. և բոլոր դիտումն նոցա է՛ պատրել զմարդիկ և հանել ի հաւատոց. և լնուլ զորովայնս. և զկանայս շեղջակուտեալս մեղօք յինքեանս գրաւել: - 35. *Հայր* կամա՞ւ ծնաւ զորդի թէ յոչ կամայ: - 36. Որ է տարակուսանք այս, եթէ գոյր ոմն մեծ քան *զհայր*՝ զի բռնադատեաց զնա՛: - 36. Եւ կամ թէ՝ հակառակ է *հօր*: - 36. Առ որս ասելի է թէ՝ ո՛չ կամաւ, և ո՛չ յոչ կամայ. զի պատկեր և նկարագիր էութեանն *հօր* է որդի, ըստ առաքելոյ: - 36. Եւ թէ ասեն տգիտաբար, քակեն զնկարն. բառնի և էութիւն *հօր*: - 36. Հա՛րց դու զնոսա՝ թէ դու ի քո *հօրէն* յառաջ եկեալ կամա՞ւ ծնար թէ ակամայ: - 36. Զի թէ կամաւ, կամա՛ցն ես որդի և ոչ *հօր*. թէ այդպէս է, բարձեր զպատճառն քո *զհայր*. բարձար և դու ի տեսակաց մարդկան: - 36. Դարձեալ՝ *հայր* աստուած կամա՞ւ արար զամենայն եղեալքս, թէ ոչ կամայ: - 36. Դարձեալ՝ *հայր* աստուած կամա՛ւ է թէ յոչ կամայ: - 36. Ի յայս տարակուսանքս՝ որ է ստութիւն յերկուց կողմանց, բառնի էութիւն *հօր*. և լինի արարած որդի: - 36. Զի թէ ասեն էր յառաջ քան զծնունդն որդի. իսկ էութիւնն *հօր* հայրութիւն է. և թէ ոչ էր որդւոյ *հայր*՝ բառնի յէութենէն իւրմէ, իսկ թէ ոչ էր և յետոյ ծնաւ՝ ո՞ւմ արդեօք իցէր *հայր*. զի ո՛չ էր որդի: - 36-37. Զի ասեմք թէ՝ որդի է ծնունդ *հօր* ի սկզբանն: - 37. Զի լուծումն է բանիդ յերկրուց դիմաց և հաստատօղ էութեանն *հօր*: - 37. Ասելովն ծնունդ ի *հօրէ*, ցուցանէ ոչ լինիլ յառաջ քան *զհայր*: - 37. Եւ ի սկզբանն ասելով, ո՛չ յետոյ քան *զհայր* գոլ: - 37. Այլ որքան *հայրն* *հայր*. նոյնքան և որդին ընդ նմա որդի: - 37. Յէից՝ որպէս դու ի քո *հօր* մէջքն էիր զօրութեամբ, և յետոյ ծնար նոր գործութեամբ: - 37. Հա՛րց և դու զնոսա, թէ *հայր* յումեքէ՛ է, թէ յոչ ումեքէ է եղեալ: - 37. Զի թէ յումեքէ է, բարձեր զանսկզբնութիւն և զանծնելութիւն *հօր*: - 37. Երրորդ հարցումն հակառակացն թէ՝ որդի ի *հօրէ* ծնաւ և դադարեցա՞ւ, թէ դեռևս կուծնանի: - 37. Այլ մեր պատասխանին առ այս՝ է՛ այս ինչ, թէ միշտ ծնունդ է ի *հօրէ* ըստ բնութեանն որդի. այլ անձամբ կատարեալ.

որպէս լոյս ի հրոյն միշտ ծնանի և ոչ է անկատար՝ յօրինակ որդւոյ: - 37. Եւ նոյն ինքն հուրն է՛ օրինակ *հօր*. զի անհնա՛ր է լինել առանց լուսոյ և ջերմութեան. զի էութիւն են հրոյն: - 38. Դարձեալ առարկեն, եթէ աստուած է *հայր*՝ և անծին է բնութեամբ, և որդի ծնեալ է, ապա ուրեմն ո՛չ է որդի աստուած. զի ծնելութիւն և անծնելութիւն հակառա՛կ են միմեանց. որպէս սեաւ սպիտակի կամ լոյս խաւարի: - 38. Առարկութիւնս այս յայտնապէս զորդի կամ *զհայր* ի բա՛ց մերժէ յաստուածութենէն. ճարտա՛ր իմն, ո՛չ ասէ *զհօրէ* ոչ գոլ աստուած. այլ զանծնելութենէն: - 38. Իսկ այսոքիկ առանձնաւորութիւնք են *հօր* և որդւոյ. և ո՛չ են բնութիւնք անծնելութիւնն և ծնելութիւնն. այլ ի մի և ի նոյն բնութեանն: - 38. Հինգերորդ՝ զի որ եղեր նախկին զպակասութիւնն, բարձեր զէութիւնն *հօր* և որդւոյ: - 38. Այսպէս և ո՛չ միայն *հայր* աստուած, այլ և ծնեալն ի նմանէ աստուած: - 38. Հինգերորդ առարկեն, թէ իցէ մի և նոյն բնութիւն *հօր* և որդւոյ, և որդի ծնեալ ի նոյն բնութենէ, կարէ՛ ասիլ և *հօր* ծնանիլ ի յորդւոյ ի նոյն բնութենէն. զի բնութիւնն մի է: - 38. Պատասխանեմք թէ՝ կարի՛ յիմարութիւն է հարցումնդ. և զի գոյ *հայր* ըստ քում բանիդ ծնօղ որդւոյ. ապա ուրեմն ո՛չ կարէ ոչ լինիլ և ծնանիլ: - 38. Դարձեալ՝ ո՛չ կարէ ծնանիլ որդի *զհայր*՝ թէպէտ ունի զհօր բնութիւնն. որպէս դու ծնեալ ի *հօրէն* քո՝ ո՛չ կարես ծնանիլ *զհայր* քո և լինիլ *հայր* *հօրն* քում. թէպէտ ունիս յամենայնի զբնութիւն հօր քոյ: - 38. Վեցերորդ առարկեն թէ՝ որ *հայր* կոչեմք աստուծոյ՝ բնութեա՞նն է անուն՝ թէ արարչութեանն: - 39. Եթէ որպէս *հօր*, է՛ հայրութիւն միայն. իւր լինի և բնութիւնն: - 39. Պատասխանեմք՝ թէ *հայր* ո՛չ բնութեանն է անուն՝ և ո՛չ արարչութեանն. այլ առանձնաւորութեանն. զի այնու յատկանայ յորդւոյ և ի հոգւոյ: - 39. Ով արիանոսք՝ զի թէ որպէս զմեզ զորդի շնորհօք ասէք և արարած, մեք զի եմք շնորհօք որդիք՝ ունիմք ընդ մեզ և ընդ *հայր* շաղկապ. իբր թէ զլար զհոգին սուրբ: - 39. Իսկ դուք զի ուրանայք զհոգին հաւասար գոլ *հօր* և որդւոյ, և կրտսե՛ր ասէք քան զորդի: - 39. Ո՞ ոք է ընդ մէջ որդւոյ և *հօր* շաղկապ՝ զի հրաւիրեսցէ զնա յորդէգրութիւն *հօր*. և զի ո՛չ ոք: - 39. Որ ետես զիս՝ ետես *զհայր* իմ: - 39. Որպէս գիտէ զիս *հայր*՝ գիտեմ և ես *զհայր*: - 39. Այսք և այլ սոյնպիսիք՝ հաւասարութեան են ցոյցք ընդ *հօր*: - 39. Եւ թէ *հայր* մեծ է քան զորդի, զիա՞րդ տանի փոքրն զմեծն: - 39. Եւ զիա՞րդ կարիցէ ձկտիլ նըւազն առ մեծն՝ լնուլ *զհայր*: - 39. Եւ զի ո՛չ է հնար որպէս ասացի, ապա ուրեմն ո՛չ է մեծ *հայր* քան զորդի. զի ի միմեանց տանին, և ի միմեանց լնուն: - 39. Եւ զի ո՛չ է հնար որպէս ասացի, ապա ուրեմն ո՛չ է մեծ *հայր* քան զորդի. զի ի միմեանց տանին, և ի միմեանց լնուն: - 39. Եւ դարձեալ՝ ըստ ձեզ պարտ էր ասել. թէ՝ ես ի միասին հօր, և մասն *հօր* ի յիս: - 39. Դարձեալ ո՛չ ասի անպատճառ պատճառն քան զպատճառելին մեծ. զի և որդի նոյն պատճառի *հօր* փառաց և մեծութեանն է հաղորդ: - 39. Զոր *հայր* մեր է ըստ ստեղծմանն և հանդերձելոյ աշխարհին: - 39. Դարձեալ քննեսցուք ըստ մեզ. զի ո՛չ են հակառակ առաքելոյն բանն և աւետարանին, թէ *հայր* մեծ է քան զորդի. զի երկոքին նոյն ինքն աստուածութեանն իմանին. ըստ այնմ որ զմեր նուաստ և տկար բնութիւնս միացոյց ընդ իւրում աստուածութեանն, և անտեսանելին տեսանիւր՝ և ծառայի կերպիւ շրջէր վասն տնօրէնութեան՝ ասի փոքր յայս միաւորութեանս քան *զհայր*. իսկ ըստ այնմ որ է՛ անճառ և նախքան զյաւիտեանս ծնունդ ի *հօրէ*, հաւասա՛ր է *հօր* և ոչ փոքր: - 40. Զի ո՛չ էր *հայր* մեծ քան զնա՝ ի յոր երդնոյր. զի որք երդնուն՝ ի մեծագոյնսն քան զինքեանս երդնուն. ապա ուրեմն հաւասա՛րէ որդի *հօր* և ո՛չ փոքր որպէս ասէ առաքեալն: - 40. Եւ գիտեմք հաւաստի թէ որդի էր. զի հրեշտա՛կ անուանէ զնա գիրն. և զի *հայր* երբէք հրեշտակ ո՛չ կոչեցաւ՝ այլ որդի ըստ եսայեայ մարգարէի...: - 40. Եւ զի կամաւ *հօր* էր այս առաքումնս՝ *հօ՛ր* ասի: - 40. Ապա ուրեմն ծնունդն նախքան զամենայն բլուրս՝ էր ի սկզբանն ի բնութենէ *հօր*. իսկ ստեղծումն վասն մարմնալոյն. զի իւր է մարմինն: - 41. Արդ ասի որդին ծնեալ և ստեղծեալ. զի ի ստեղծմանէն իմանի անփոփոխութիւն *հօրն*. և ի ծննդենէն միութիւն բնութեանն *հօր* և որդւոյ: - 41. Այլ ասի անդրանիկ՝ զի նա՛ էառ ի *հօրէ* զայն՝ որով ստեղծան ամենայնքն: - 41. Իսկ յորժամ ամէն լեզու խոստովան լիցի տէր զյիսուս քրիստոս, անզրաւապէս թագաւորէ՛ ընդ *հօր* և տնտեսութեամբն: - 42. Իսկ հնազանդիլն որդւոյ *հօր*, ո՛չ թէ այժմ անհնազանդ է վասն հակառակութեան. զի այս աւազակա՛ցն է. և անհնա՛ր է ասել զմի և զնոյն էութիւնն ինքն ինքեան հնազանդ և անհնազանդ ըստ այնմ որ բան է. այսինքն զպարզ աստուածութիւնն: - 42. Իսկ յորժամ հնազանդին ամենայն անդամք գլխոյն քրիստոսի գիտութեամբ և փոփոխմամբ, յայնժամ և ինքն լնու զհնազանդութիւնն, ընծայելով զհնազանդեալքս *հօր*: - 42. Դարձեալ կերպիւ ինչ ասի հնազանդ որդի *հօր* գործով՝ լրմամբ կամացն: - 42. Եւ *հայր* որդւոյ՝ հաճութեամբ գործոյն: - 42. Եւ այս վասն միութեան բնութեան և կամաց *հօր* և որդւոյ: - 42. Իսկ «աստուած աստուած իմ ընդէ՞ր թողեր զիս», ո՛չ թէ յինքենէ՛ թողաւ և կամ ի *հօրէ*. որպէս թէ երկեաւ ի չարչարանացն. վասն զի կամաւ եկն և ո՛չ հարկիւ: - 42. Գլուխ գոլով մեր և լեզու. զտկարութիւն բնութեան անդամոցս ցուցանելով *հօր*: - 42. Եւ միւսն որ է՛ *հայր*՝ նմա իսկապէս, և մեզ պիտակապէս: - 43. Զի նմա՛ բնութեամբ է *հայր*, և մեզ ըստ շնորհաց: - 43. Որպէս ասէ առաքեալն՝ «աստուած տէրն մերոյ յիսուսի քրիստոսի և *հայրն* փառաց». այսինքն՝ աստուած վասն

մարդկութեանն, և *հայր* փառացն որ է բանն աստուած ի բնութենէ հօրն ծնեալ անմարմին. որ յետոյ միաւորեցաւ ի մարմին: - 44. Այսպէս իմացիր և զոչ կարելն որդոյ առնել յանձնէ՛. այսպէս օտար ինչ ի *հօրէ* : - 44. Եւ թէ լինէր՝ գոյր և ի բնութենէ օտար. հետևէր ապա ոչ գոլ որդի *հօր*. թէ ոչ էր ի նոյն բնութենէն. ապա և ոչ *հայր*. զի *հայր* որդւո՛վն է *հայր*: - 44. Նմին իրի թէ ոչ *հայր* և ոչ որդի զի որդի *հօրն* է որդի՝ ըստ այսմ ապա ո՛չ էանայ աստուածութիւնն որ անկար է, որպէս ասացաք: - 45. Չորրորդ՝ այսու առաւել զմիականութիւն ցուցանէ. զի մի՛ է կամք իւր և *հօրն*. վասն այն ո՛չ կարէ առանց *հօր*. զի ո՛չ է որդւոյ այլ կամք զի զոր ինչ կամեսցի բաց ի *հօրէ* արասցէ: - 45. Հինգերորդ՝ զի զօրութիւն՝ կարողութիւն՝ ուստի առնելն է՝ և աստուածութիւն՝ տէրութիւն՝ իշխանութիւն և այլք այսպիսիք՝ ո՛չ են առանձին անձնաւորութեանց. այլ հասարա՛կ են. և ո՛չ մին առաւել քան զմի. վասն այն ո՛չ կարէ որդի առնել ինչ յանձնէ իւրմէ թարց *հօր* որպէս ասացաք: - 45. Տարակուսելի է առ այս, զի թէ հա՛րկ է որոց բնութիւնքն մի գոլ՝ նոցա և կամքն և ներգործութիւնն մի լինիլ. ընդէ՞ր ապա զի մարդկային բնութիւնս մի է և նոյն *հօրն* և որդւոյն՝ և ո՛չ է կամքն և գործքն մի: - 45. Եւ պատաճառն է այս. զի թէպէտ մի է բնութիւն ծնողաց և ծնիցելոց, բայց ոչ ունին զմի կամս. զի հատեալ բաժանեցաւ որդին ի *հօրէն*: - 45. Իսկ բանն աստուած է՛ ծնեալ ի *հօրէ*՝ այլ ո՛չ բաժանեալ. որպէս ո՛չ բաժանի բան՝ ի մտաց. թէպէտ ի բազում լսելիք մտանէ. և թէ ի վերայ քարտիսի մարմին զգենու: - 45. Եւ որպէս լոյս ո՛չ բաժանի ի հրոյ, այսպէս և ոչ զատի բանն ի *հօրէ*: - 45. Ասէին՝ առնէր *հայր*, և ապա որդին ի նոյն օրինակէն առնէր: - 45. Եւ թէ էր այսպէս՝ հետևէր ապա *հօր* զի արարեալ իցէ ա՛յլ աշխարհ. և հանդերձեալ. և շրջեալ յաշխարհի. սրբեալ զախտաժէտս. մեռեալս յարուցեալ. և ի վերայ ծովու գնացեալ: - 45. Եւ թէ արար *հայր* առանց որդւոյ, անիմա՛ստ արար. զի որդի է իմաստութիւն *հօր* ըստ առաքելոյ. և կամ այլ իմն իմաստութեամբ որ է՛ սուտ ամենևին: - 46. Այլ այս է առնելն *հօր*՝ և նմին նման որդւոյ, այսինքն կամիլն *հօր*՝ և կատարեալն որդոյ զնոյն կամս: - 46. Զի մի՛ է կամք որդւոյ և *հօր*: - 46. Ո՛չ թէ նոր իմն տեսակ և կամ նոր աշխարհ. այլ զեղելոցս նախախնամութիւնն. և ի նոյնութիւն կալն *հայր* կամի և որդի կատարէ՛. ոչ ծառայաբար և անուսումնապէս. այլ տիրաբար և հանճարով: - 46. Թուի թէ նուազ է քան *զհայր*. զի ոչ ունէր և տւաւ: - 46. Զի որպէս ունի զէութիւնն ի գոյութենէ *հօր*, այսպէս և զիշխանութիւնն յիշխանութենէ *հօր*. ըստ այսմ և զայլն իմասցիս զառնուլն: - 46. Դարձեալ ասէ թէ՝ ետ ինձ *հայր*, զի մի՛ հակառակ *հօր* կարծիցեն զորդի. որպէս կարծէին հրէայքն լուծանելով զշաբաթսն: - 46. Այլ այս առաւել զմիականութիւնն ընդ *հօր* և որդւոյ ցուցանէ. զի ասէ՝ ո՛չ իմ կամք այլ որիշ զի առնեմ, այլ զա՛յդ կամքդ առնեմ զի հասարա՛կ է: - 46. Այսպէս և այժմ ասէ՝ «ո՛չ զկամս իմ արարից». որպէս թէ ո՛չ է իմ այլ կամք զի արարից. այլ նոյն *հօր* կամքն է և իմ կամք: - 46. Նմանապէս և այն՝ «ո՛չ իմ կամք՝ այլ քո՛յդ լիցի». աստանօր ո՛չ յատուկ կամք ցուցանէ բաժանեալ ի *հօրէ*. այլ առաւել զմիականութիւնն *հօր*: - 46. Ապա ուրեմն ասեն չարափառքն թէ *հայր* միա՛յն է ճշմարիտ աստուած. և ո՛չ որդի և հոգի: - 47. Նախ՝ որ այժմ ասաց *զհայր* միայն ճշմարիտ աստուած, նոյն և զինքն ասաց ճշմարտութիւն: - 47. Եւ թէ՝ (զնա *հայր* կնքեաց աստուած:) - 47. Եւ թէ զմիայն ճշմարիտն՝ *հօր* միայն տաս, կորուսեր ապա զորդի ստութեամբ և մահուամբ և խաւարաւ և այլովն: . 47. Ըստ քում բանիդ աստ *հօ՛ր* տաս զաստուածութիւնն և բառնաս յորդւոյ. և ի մարգարէն՝ որդւոյ ասես զաստուածութիւնն և բառնաս ի *հօրէ*, ապա հա՛րկ է քեզ լինիլ անաստուած. զի միովն միւսոյն յաղթութիւն տաս: - 47. Եւ դարձեալ՝ *զի* այժմ ասէ *զհայր* ճշմարիտ աստուած, և զոր առաքեցեր, *ևն շաղկա՛պ է.* ցուցանէ՛ շաղկապ գրովն և զիւր աստուածութիւնն ընդ *հօր*: - 47. *Զհայրն* զի ասէ՝ «ճշմարիտ աստուած»: - 47. Եւ դու ընդ է՛ր ասես լինել ինձ ըստ մարդկան երկրորդաբար բարի. զի աստուածութեամբս եմ ընդ *հօր* ծայրագոյն բարի: - 47. Ոչ թէ նըւաստ է քան *զհայր*, կամ ծառայաբար ծունր կրկնելով բարեխօսէ՛: - 48. Սոյնպէս և զգիտութիւն մեծագունիս ի պատճառն ի *հայր* վերաբերէ ի պատիւ ծնողին: - 48. Նախ՝ զի է ի բնութենէ *հօր*: - 49. Չորրորդ՝ զի անորոշելի է ի *հօրէ* որպէս բան ի մտաց: - 49. Հինգերորդ՝ զի բանն է սահման. և որպէս յայտնիչ է սահմանն սահմանելոյն, այսպէս և որդի սահմանէ՛ զէութիւն *հօր*...: - 49. Վեցերորդ՝ զի սահմանէ՛ զորքանութիւն *հօր*: - 49. Տասներորդ՝ զի որպէս բանն թարգման և պատմօղ է մտացն, այսպէս և որդի *հօր*: - 49. Եւ քրիստոս ի *հօրէ՛*: - 50. Այսպէս և քրիստոս ի *հօրէ՛* ունէր զիշխանութիւնն: - 50. Իսկ որք բառնան զաստուածութիւնն ի միոյն՝ և ո՛չ երկոցունց տան զաստուածութիւնն, իմա՛, ըստ առաքելոյն զօրութիւն և իմաստութիւն է *հօր* որդի. և բան՝ ըստ աւետարանին յօհաննու: - 51. Եւ թէ էր երբեմն *հայր* առանց բանի և իմաստութեան, ի՞ւ խորհէր յետոյ ծնանիլ զորդի: - 51. Եւ թէ էր երբեմն *հայր* առանց զօրութեան, զիա՞րդ զօրանայր ի ծնունդն որդւոյ: - 51. Տե՛ս՝ զի առանց որդւոյ անբան և տկա՛ր է *հայր*. ո՛չ կարէ լինիլ աստուած. ապա և ո՛չ հոգի: - 51. Դարձեալ՝ որք ո՛չ ասեն աստուած զհոգին, առաջին հերձուած՝ զի *զհայր* բառնան: - 51. Երրորդ՝ թէ արարած՝ զիա՛րդ կատարէ զմեզ լինիլ աստուածս յորդեգրութիւն *հօր*՝ աւազանաւն: - 51. Եւ այլք աստուած խոստովանին. որպէս և մերս դաւանութիւն՝ ընդ *հօր* և ընդ որդւոյ: - 51. Զի մեզ հոգին ըստ

ինքեան գոյացութիւն, և յայլում տեսանի. այսինքն կատարեալ անձնաւորութիւն յէութիւն *հօր*: - 51. Իսկ յորժամ զյայլումն լսեն՝ արձակին ի վերայ մեր ասելով, եթէ յայլո՛ւմ է՝ պատահումն է ի *հայր* որպէս զօրութիւնս առ մեզ. իսկ եթէ զօրացեալ է՝ և ընդ զօրանալն դադարեսցէ ամենայնիւ. շարժումն եղիցի և ոչ շարժօղ: - 52. Ապա ասեն՝ թէ գոյացութիւն է և ո՛չ յայլում՝ այսինքն ի *հայր*, օտա՛ր է ի բնութենէն. արարա՛ծ է և ո՛չ աստուած: - 52. Եւ թէ ծնեալ՝ ասեն հա՛րկ է զի լիցի ի *հօրէ* կամ յորդւոյ. թէ ի *հօրէ* է՝ լինին **բ** որդիք և եղբարք: - 52. Եւ թէ յերկուցն՝ ո՛չ է կարօղ *հայր* ծնանիլ և կարօտանայ որդւոյ օգնութեանն. և լիցի անկատար որդի: - 52. Եթէ ըստ մեզ կարծէք զծնունդն, պիտոյանայ երկուորիս և գործիս *հօր*. լիցի և այրութիւն և իգութիւն յաստուած. և լիցին որդիք երկորեակք էրէց և կրտսեր: - 52. Բայց ո՛չ ծնեալ ասեմք՝ և ո՛չ անծին. այլ արտաքս առաքեալ ի *հօրէ*. որպէս վկայէ քրիստոս թէ՝ «հոգին որ ի *հօրէ*՛ ելանէ». թերևս ճշմարիտ աստուածաբա՛ն իցէ քան զքեզ: - 52. Ապա՛ թէ ո՛չ՝ անկարօտ է ամենայնիւ որդի՝ զիա՞րդ ո՛չ լինիցի *հայր*: - 53. Կամ ևս՝ զի և *հայր* է ամենակատար՝ ընդէ՞ր ո՛չ լինիցի որդի, զի է՛ ի նոյն բնութենէն: - 53. Ասեն դարձեալ, աւետարանն յօհաննու ասէ, «ամենայն ինչ որդովն եղև». ապա ուրեմն և հոգին եղեալ է ի ձեռն որդւոյ. զիա՞րդ է հաւասար որդւոյ կամ *հօր*: - 53. Ապա թէ ո՛չ՝ ըստ բանիդ և *հայր* լինի եղեալ ի ձեռն որդւոյ: - 53. Իսկ արիոսի՝ զի նա միայն *զհա՛յր* ասէր աստուած. զայս ասեմք թէ, ո՛չ են մեզ երեք աստուածք՝ այլ մի աստուած և երեք անձինք. և երկուքն ի մի և ի նոյն էութենէն յառաջ եկեալ. կամօք մի և զօրութեամբ մի: - 54. Եւ այսքան է միաւորթիւնն, զի որքան մին ինքն առ ինքն ունի զբնութիւնն և զզօրութիւնն և զկամքն, նոյնքան և ունի առ երկուսն. թէ *զհայր* իմանաս՝ թէ զորդի՝ թէ զհոգին: - 54. Ապա ուրեմն զի դուք **գ** ասէք՝ *հայր* և որդի և հոգի, ըստ թըւոյն և երեք բնութեան հաղորդին և ո՛չ միոյն: - 54. Ապա ուրեմն և *հայր* և որդի և հոգի թէպէտ թըւով **գ** են, այլ ոչ **գ** բնութիւնք: - 55. Զի որպէս էր *հօր* ծանօթութիւնն ի նախահարսն, և որդոյն ընդ աղօտ, այլ ի մարմնանալն իւր յայտնեցաւ: - 55. Նոյնպէս և հոգին յիւրում ժամանակին. յետ խաչելութեանն քրիստոսի և համբառնալոյն առ *հայր*. և ապա իջանելոյ հոգւոյն. և յայտնելոյ զաստուածութիւնն իւր: - 55. Արարիչ է *հայր*. արարիչ է և որդի. արարիչ է և հոգին սուրբ...: - 56. Զաշխարհս ամենայն ելից *հայր*. այլ ո՛չ առանց որդւոյ...: - 56. Մեծ է *հայր*. մեծ է և որդի. անբովանդակելի է և հոգին սուրբ...: - 56. Խաղաղութիւն է *հայր*...: - 56. Աղբիւր է *հայր*. զի ի նմանէ է՛ աղբիւր կենաց: - 56. Լո՛յս է *հայր*. վասն զի աստուած լուսոյ ասի: - 57. Կեանք է *հայր*...: - 57. Տէր է *հայր*...: - 57. Բարի՛ է *հայր*...: - 57. Չորրորդ՝ հոգևոր կենդանութիւն է յաստուծոյ. ըստ այնմ, «կենդանի՛ է *հայր*. և ես կենդանի եմ՝ վասն *հօր*. և որ ուտէն զիս՝ և նա՛ կեցցէ վասն իմ»: - 57. Նոյնպէս և առաքումն հոգւոյն ո՛չ նըւազութիւն ցուցանէ, այլ զհամակամութիւն ընդ *հօր* և ընդ որդւոյ: - 60. Դարձեալ՝ շարժումն ո՛չ միայն ասի ի վերայ հոգւոյն սրբոյ, այլ և *հօր* և որդւոյ...: - 60. Հինգերորդ ասեն, եթէ հոգին սուրբ առնու զբնութիւնն ի *հօրէ*՝ լինի որդի նորին. զի այն կոչի որդի որ ունի զբնութիւնն ի *հօրէ* ի նոյն տեսակէ: - 60. Իսկ թէ ո՛չ ունի զբնութիւնն *հօր* աստուծոյ՝ ո՛չ ուրեմն է աստուած: - 60. **Պատասխանեմք եթէ՝ թէպէտ հոգին ունի զբնութիւնն ի *հօրէ*՝ սակայն ո՛չ ծննդեամբ որպէս որդի, այլ բղխմամբ. որպէս շունչն և բանն ունին զէութիւնն հոգւոյն այլ և այլ կերպիւ. և որպէս ադամ յառաջ էած յինքենէ զսէթ և զևա. զմինն ծնունդ և զմիւսն ո՛չ ծնունդ. և ունին երեքեանն զմի և զնոյն բնութիւն մարդոյ:** - 60. Այսպէս և հոգին սուրբ էառ յաւիտենականապէս զէութիւնն ի *հօրէ* բղխմամբ, և որդի ծննդեամբ: - 60. Ապա ուրեմն հոգին սուրբ է հաւասար աստուած ընդ *հօր* և ընդ որդւոյ. արարչակից և մշտնջենաւորակից և փառակից: - 60. Եկեսցուք այժմ և տեսցուք զմոլորութիւնս նոցա՝ որք ասեն զհոգին սուրբ բղխումն ի *հօրէ* և յորդւոյ: - 61. Ութներորդ՝ որպէս խօսքն ի մտացն է և ի բանէն. այսպէս և հոգին ի *հօրէ*՛ է և յորդւոյ: - 61. Եւ դարձեալ՝ հոգին որ ի *հօրէ* ելանէ և կայանայ յորդի. և ի ձեռն որդւոյ իբր զհայրական բարի ամենայն գոյիցս բաշխի երկնաւորաց և երկրաւորաց. նախ քան զմարմնանալն՝ և ի մարդեղութեանն: - 61. Եւ դարձեալ, զի ամենայն ինչ որ *հօր* է՝ այն որդւոյ է որպէս ասէ տէր. ապա ուրեմն հոգի *հօր*՝ հոգի է որդւոյ վասն միոյ էութեանն: - 61. Զի՝ զինչ ետ *հայր* որդւոյ, և ո՛չ զառինչն: - 61. Իսկ թէ՝ «իմս» այս՝ զբղխումն յորդւոյ ասէ, ապա և այլուր ըստ քեզ *զհայր* մարմնացեալ կարծես: - 61. Տե՛ս՝ փառաւորէ՛ և *հայր* զորդի որ սկիզբն է նորա...: - 61. Ուղիղ է, զի որպէս խօսքն թարքման է մտաց և բանի, այսպէս և հոգին սուրբ՝ *հօր* և որդւոյ...: - 62. Ապա ուրեմն այսպէս կարծելն՝ զհոգին միայն յորդւոյ ցուցանէ՛ և ո՛չ ի *հօրէ* որ է անհնարին հերձուած: - 62. Եւ զի հոգին սուրբ է միայն ի *հօրէ* բղխումն, տեսցուք զայս Նախ՝ ի հարցմանէ: - 62. Եթէ զհոգին ի *հօրէ* և յորդւոյ ասէք, զա՞նձն ասէք բղխեալ, եթէ զբնութիւնն: - 62. Իսկ եթէ զանձն ասացիք բղխեալ, ահա բ անձն ասացիք հոգւոյն. մինն ի *հօրէ* բղխեալ, և մինն ի յորդւոյ. և այսպէս լինի երրորդութիւնն չորրորդութիւն: - 62. Զի թէ մի է սկիզբն, սո՛ւտ է նոցա ասելն զհոգին ի *հօրէ* և յորդւոյ բղխեալ: - 62. Դարձեալ հարցանեմ, *հայր* կարօղ է բղխել զհոգի՝ թէ անկար: - 62. Դարձեալ հարցանեմ, հոգին սուրբ մասն ինչ բղխէ ի *հօրէ* և մասն յորդւո՞յ, թէ բոլորն ի *հօրէ*՝ և բոլորն յորդւոյ: - 63. Դարձեալ՝

հարցանեմ, *հայր* և որդի զո՛յգ բղխեն զհոգի, թէ անզոյգ: - 63. Դարձեալ հարցանեմ, *հայր* և որդի կարգաւո՛ր բղխեն զհոգի թէ անկարգ: - 63. Դարձեալ հարցանեմ, յանսկզբնէ՞ն բղխէ հոգին, թէ ի սկզբնաւորէն. զի որ յանսկզբնէն յառաջ գայ, է՛ անեղ և անվախճան. որպէս որդի և հոգի յանսկիզբն *հօրէ*: - 63. Ապա ուրեմն յանսկզբնական *հօրէ* միայն բղխէ անեղ և անվախճան հոգին սուրբ: - 63. Դարձեալ՝ հարցանեմ, զբղխեա՞լն ի *հօրէ* բղխէ որդի, թէ զոչ բղխեալն: - 63. Զի թէ զբղխեալն բղխէ, աւելո՛րդ է որդւոյ բղխումն. զի *հայր* բղխէ զհոգին: - 63. Իսկ եթէ զոչ բղխեալն բղխէ, ահա ի *հօրէ* ո՛չ ասէք զբղխումն, այլ միայն յորդոյ. որ է սուտ: - 63. Դարձեալ՝ հարցանեմ, զի թէ մինն բոլոր բղխումն է հոգւոյն և ո՛չ մասն. զի թէ զմինն զայն *հայր* բղխէ, ապա ուրեմն ո՛չ բղխէ որդի. իսկ թէ զմինն զայն որդի բղխէ, բըղխեալն հոգի թո՛ռն լինի հօր, և ո՛չ բըղխումն նմին: - 63. Դարձեալ հարցանեմ, *հայր* և որդի զնո՞յն բղխեն զհոգին, թէ զայլ: - 63. Իսկ թէ այլ բղխէ *հայր*՝ և ա՛յլ որդի, կրկնապատիկ է հոգին և ո՛չ մի: - 63. Ա՛րդ՝ եթէ հոգին ելանէ յորդւոյ, պարտ է զի ելցէ յորդւոյ ի *հայր*. կամ ի միւս անձն: - 63. Ա՛րդ՝ ո՛չ ելանէ ի *հայր*. զի ո՛չ ունի *հայր* իր ինչ ի յորդոյ: - 63. Դարձեալ՝ հոգին սուրբ է ի *հօրէ* որպէս կամք ի մտաց. և որդի որպէս իմացումն: - 64. Դարձեալ հոգին սուրբ բղխէ ի *հօրէ* իբր ջերմութիւն ի հրոյ: - 64. Նոյնպէս հոգին սուրբ ոչ բղխէ յորդւոյ, այլ միայն ի *հօրէ*: - 64. Դարձեալ՝ հոգին սուրբ բղխէ ի *հօրէ*՛ որպէս հոտ ծաղկի կամ խնծորի: - 64. Նոյնպէս և հոգի ո՛չ է յորդւոյ՝ այլ միայն ի *հօրէ*: - 64. Ա՛րդ՝ եթէ ելանէ ի *հօրէ* և յորդւոյ, լինի իբրև եզր և **գ**. և ո՛չ իբրև զմիջին: - 64. Ապա ուրեմն ո՛չ ելանէ ի *հօրէ* և յորդւոյ. այլ ի *հօրէ* յորդի: - 64. Եւ դարձեալ ասէ՝ «որ գերագոյի աստուածածննողութեանն է»՝ ո՛չ հակադարձի առ միմեանս. զի միայն աղբիւր գերագոյի աստուածութեանն է *հայր*: - 64. Եւ անդ ասի ի հաւատամքն եթէ՝ հոգին սուրբ որ ի *հօրէ*. և ո՛չ յիշի որդի: - 64. Վեցերորդ վկայ ի ժողովոյն քաղկեդոնի զոր նոքա ընդունին և ո՛չ մեք. այսպէս է գրեալ թէ՝ որ ոք զհոգին ի *հօրէ* և յորդւոյ բղխումն ասիցէ՝ նզովեալ լիցի: - 64. Եօթներորդ՝ վկայ դամասկացին որ ասէ. որ և նա ևս քաղկեդոնիկ է. եթէ յայտնապէս զհոգին սուրբ ի *հօրէ*՛ ասեմք. և զնա հոգի *հօր* անւանեմք: - 64-65. Զի որպէս այժմ կարեմք ասել ճշմարտապէս թէ հոգին սուրբ ելանէ ի *հօրէ*. և վասն ապառնւոյն կարեմք ասել թէ հոգին սուրբ ո՛չ ելանէ յորդւոյ. մինչ այլ ո՛չ ևս ելանէ. և ո՛չ այնպէս էառ զգոյացութիւն և զճշմարտութիւն իւր՝ զի ո՛չ ևս երբեք առցէ: - 65. Ապա ուրեմն որդի և հոգին սուրբ ի *հօրէ* ելանեն իբր **բ** շառաւիղ. և ըստ այսմ ո՛չ ելանէ մի ի միւսոյն: - 65. Զի ա՛յլ է բղխումն, և ա՛յլ է առումն. այսպէս՝ զի հոգին բղխումն է ի *հօրէ*, որպէս որդին ծնունդ է ի *հօրէ*: - 65. Այլ զի ամենայն ինչ զոր ունի *հայր*՝ որդւոյ է. և քրիստոս աստուծոյ զօրութիւն և իմաստութիւն: - 65. Դարձեալ՝ հոգին սուրբ ելանէ ի *հօրէ* և առաքի յորդւոյ. և ինքնիշխան կամօք շնչէ զշնորհս իւր յորս կամի և որքան: - 66. Նախ՝ զի խօսքն է ի մտացն յառաջ եկեալ, որպէս ներտրամադրեալ բանն ծնեալ. և հոգին սուրբ ի *հօրէ* բղխեալ. որպէս բանն ծնեալ: - 66. Երկրորդ՝ խօսքն ունի զիմաստ բանին և զմտացն. և հոգին սուրբ զիմաստութիւն *հօր* և որդւոյ: - 66. Նոյնպէս հոգին սուրբ պատմէ և ուսուցանէ զգիտութիւն *հօր* և որդւոյ: - 66. Չորրորդ՝ խօսքն նոյն է բնութեամբ ընդ բանին և մտացն. և հոգին սուրբ նոյն է բնութեամբ ընդ *հօր* և որդւոյ: - 66. Հինգերորդ՝ որպէս այլ է անձն՝ այլ է խօսքն՝ և այլ միտքն. նոյնպէս ա՛յլ է անձն *հօր*, և ա՛յլ բանին, և ա՛յլ հոգւոյն սրբոյ: - 66. Հնգէտասաներորդ՝ համաբարձաւ և նստաւ ընդ աջմէ *հօր*: - 67. Ա՛րդ եթէ է՛ այլ որդի և եղև աթոռակից *հօր*, ուրեմն ի բաց էհան զբանն ի նստելոյն ընդ աջմէ *հօր* որ է սեփհական նմա և վայելուչ *հօր*՝ լինիլ աթոռակից և գահակից: - 67. Ութևժերորդ՝ սըտէ՛ ուրեմն *հայր* թէ՝ «դա՛ է որդի իմ սիրելի»: - 68. Եւ թէ մերկ բանին, հետևիս գոյութեան սկիզբն ի մօրէն գոլ և ո՛չ յաստուծոյ *հօրէ*: - 68. Զի թէ զաստուծոյն միայն՝ անկար ի յարիոսին. զի զբանն առանձին քրիստոս ասացեր. այսինքն օծեալ և սրբեալ ի *հօրէ*. յորմէ իմանի պակաս գոլ քան *զհայր*: - 68-69. Իսկ թէ և զերկու բնութիւնն ասես տէր, ընդդէմ խօսիս առաքելոյն որ մի ասաց զտէր մեր յիսուս քրիստոս՝ որպէս և *զհայր*: - 69. Իսկ թէ զերկուսն, ահա՛ որ երկու բնութիւն ասացեր գոլ *հօր*: - 69. Զի թէ ասես զառ ի յաստուծոյ *հօրէ* բանն, ահա կարգեցեր զնա ընդ եղեալքս կարօտ սրբութեան և շնորհօք որդիութեան: - 69. Ա՛րդ մկրտիմք հաւատացեալքս որպէս ի *հայր* և ի հոգին սուրբ՝ այսպէս և յորդին մարմնացեալ մի տէր մի քրիստոս: - 69. Իսկ թէ առանձնապէս զմարդոյն, զիա՞րդ իցէ կենդանարար մարմինն մարդոյ. կամ ո՞րպէս առաքեցաւ նա ի *հօրէ*. զիա՞րդ իցէ և կենդանի վասն *հօր*: - 69. Ստեաց ուրեմն և *հայր*՝ կոչելով իւր որդի զոր ի զաւակէն Դաւթի: - 69. Զի թէ զբնութեամբն ասես, ստեա՛ց ուրեմն առաքեալն և աւետարանն. որք զքրիստոս ասեն յարուցեալ և համբարձեալ և նեստեալ ընդ աջմէ *հօր*: - 70. Իսկ թէ զմարդն ասես նստեալ, ահա՛ զբանն զրկեցեր յաթոռակցութենէ *հօր*՝ ո՛վ սիրօղդ առանձնութեան: - 70. Իսկ թէ զերկու բնութիւնն ասիցես, ահա՛ երկու գոլ ասես *հօր* աթոռակից. մի զաստուածն, և մի զմարդն: - 70. Ապա ուրեմն աստուած է քրիստոս հաւասար *հօր* և հոգւոյն սրբոյ: - 72. Ապա ուրեմն երևեալն մարմնով և խօսեցեալն է որդի աստուծոյ և մի ընդ *հօր*: - 73. Եթէ մի է առհասարակ բնութիւն երրորդութեանն և ո՛չ բաժանեալ, ո՞րպէս իմանամք զբանն միայն մարմնացեալ. և ո՛չ *զհայր* և

զհոգի: - 74. Ա՛րդ՝ ըննդէմ քումդ խոհեմութեան ո՛րպէս իմանաս ի միում հասարակ բնութեան զբանն ծնեալ և զհոգին բղխեալ. իսկ *հայր* ոչ ծնեալ կամ բղխեալ. և անդրադարձեալ ևս: - 74. Նոյնպէս իմա՛ և զաստուածն բան. ունելով զնոյն բնութիւն յառանձնութեան իւրում. և միայն միացեալ ի մարմնի և ո՛չ *հայր* և հոգի ըստ առաքելոյ...: - 74. Սակայն բա՛նն մարմին եղև. և ո՛չ *հայր* և հոգի: - 75. Դարձեալ՝ ըստ նոյն սարասի՝ բանն աստուած ունի ծնունդ ի *հօրէ* նախ քան զյաւիտեանս. և ունի ծնունդ ի մօրէ ի յետին ժամանակիս. և ո՛չ ասի երկածին. այլ՝ միշտ միածին. այսպէս նոյն բանն ունի զբնութիւն աստուծոյ ի *հօրէ*. ունի և զբնութիւն մարդոյ ի մօրէ՛. և ո՛չ ասի բ բնութիւն. այլ մի բնութիւն վասն միաւորութեանն: - 77. Դարձեալ՝ որպէս էր որդի *հօր* յատկութեամբ իւրով, և եղև որդի կուսի յատկութեամբ իւրով: - 77. **Այսպէս էր ի *հօրէ* բնութեամբ՝ և եղև ի մօրէ բնութեամբ. և ո՛չ ասի երկաւոր բնութիւն և երկաբուն. այլ միաւոր և միաբուն. մի որդի. և մի բնութիւն. միատեսակ աստուած մարդացեալ**: - 78. Որք ասեն զսկիզբն բանին ի կուսէն առեալ. և ո՛չ նախ քան զյաւիտեանս ի *հօրէ* ծնեալ: - 82. Խոստովանիմք զորդին աստուծոյ նախ քան զյաւիտեանս ծնեալ ի *հօրէ՛*. և յետոյ ի ժամանակի ծնեալ ի մօրէ՛: - 83. Եւ բնութեամբ է *հայր* և որդի և հոգի մի: - 86. Եւ ազգայինքն՝ միոյն *հայր* և հոգի. և միւսոյն յովսէփ և մարիամ: - 87. Եթէ երկուքն, հարկ է ասել ձեզ՝ փառք *հօր*՝ և որդւոյ երկու բնութեանցն՝ և հոգւոյն սրբոյ: - 90. Եւ կամ թէ՝ մկրտիմք յանուն *հօր*՝ և որդւոյ բ բնութեանցն՝ և հոգւոյն սրբոյ. և որ սոցին նման: - 90. Ասաց թէ՝ որ ի կերպարանս աստուծոյ էր բանն, այսինքն էակից *հօր*, ո՛չ ինչ զրկումն համարեցաւ ի ներգոյական փառաց զլինիլն հաւասար մեզ: - 93. Եւ դարձեալ՝ զի մի՛ կարծի միայն յանմարմնութեանն պատկեր *հօր*, ի վերայ էած և ի լինելութեանն հաւասար աստուծոյ գոլ նովին մարմնովն առանց յափշտակութեան: - 93. Այլ և նոյն կերպարանն *հօր*՝ խոնարհեցոյց զինքն ի մահ. որ կարի վերջինն էր: - 93. Աստուած *հայր*. որ առաքեաց և նըւաստացոյց: - 94. Զիա՞րդ միայն ի դէմս բանին իջէ այն՝ որ ի կերպարանս *հօր* է և հաւասար աստուծոյ: - 94. Վասն զի *հայր* առաքեաց զբանն: - 94. Իսկ թէ ասի ուրեք՝ ի հոգւոյն և ի *հօրէ* օծանիլ նմա, վասն տնօրէնութեանն խորհրդոյ ասին: - 95. Ահա և այսու ի վեր է նա. զի յէակցէ հոգւոյ իւրմէ՝ և ի բնութեամբ *հօրէ*: - 95. Իսկ հիմն հաւատոյս մերոյ քրիստոս է եղեալ ի *հօրէ՛*: - 96. Եւ միածին որդի գիտացաք զբանն ծնեալ ի *հօրէ*. և եղեալ որդի կուսին: - 96. Ա՛րդ՝ եթէ տգէ՛տ է որդին աստուծոյ *հօր*, և տգէտ որդւով խօսեցաւ ընդ մեզ. տգիտութեան եղիցի և օրէնքս նոր քան զհինն: - 96. Ա՛րդ՝ եթէ *զհայր* ո՛չ ոք ի յօտարաց ճանաչէ՝ և ո՛չ որդի ճանաչէ ըստ քեզ, եղիցի և որդին օտար ի *հօրէ*: - 96. Բայց կամեցաւ և յայտնեաց զինքն որդի և *զհայր*՝ ի ձեռն նշանաց աշակերտաց իւրոց. որպէս ի պտղոյն ծառն երևի: - 96. Յայտնապէս ցուցանէ գիտութեամբ զինքն հաւասար *հօր*: - 97. Ա՛րդ՝ եթէ *հայր* առաւել գիտէ և որդի նըւազ, այս լինի կամ *հօրն* նոյնպէս նըւազ գիտել որպէս որդի. և կամ որդի՝ ո՛չ ճշմարիտ ասել: - 97. Ա՛րդ՝ եթէ զբոլորն ցուցանել նշան է սիրոյ *հօր*, ապա թէ ո՛չ ինչ ցուցանէ ատէ՛ զորդի: - 97. Արդ կամ ստեաց զաւետարանն, կամ սուտ լեր ի բանս քո ըստ նմանութեան *հօր* քոյ սատանայի: - 97. Մետասաներորդ՝ ասէ ի յօհաննէս, «ե՛ս եմ ճանապարհ և ճշմարտութիւն». այսինքն՝ որ տանիմ առ *հայր* և ճշմարտութեամբ ցուցանեմ ձեզ: - 97. Արդ՝ եթէ ինքն ճշմարտութեամբ ո՛չ գիտէ, մեզ որպէս ցուցանէ. և թէ ինքն մոլորեալ է՝ զմեզ ո՞րպէս տանի առ *հայր*: - 97. Չորեքտասաներորդ՝ ասէ պօղոս յեփեսացւոցն թէ՝ *հայր* կացոյց զքրիստոս յերկնաւորս ի վերայ ամենայն իշխանութեանց. և պետութեանց. և զօրութեանց. և ամենայն անուանելոց. ո՛չ միայն յաշխարհիս այլ և ի հանդերձելումն: - 97. Ա՛րդ՝ եթէ գիտէ *զհայր*, գիտէ՛ և զինքն. և թէ զինքն ո՛չ գիտէ, զիա՛րդ *զհայրն* գիտացէ: - 98. Եւ թէ *զհայր* ո՛չ գիտէ, զիա՞րդ զբան նորա պահէ առ ինքեան: - 98. Եւ ո՞րպէս երկիր պագանեն նմա երկնաւորք և երկրաւորք և սանդարամետականք. և ամենայն լեզու խոստովան լիցի թէ տէր է յիսուս քրիստոս ի փառս աստուծոյ *հօր*: - 99. Ա՛րդ՝ եթէ ճանաչելն զաստուած *հայր* և զյիսուս քրիստոս կեանք է յաւիտենից, և մարդն քրիստոս ճշմարտութեամբ ո՛չ կարէ ճանաչել որպէս դուդ ասես: - 99. Որով և ընդ Որում *Յօր* և Յոգւոյն սրբոյ փառք և պատիւ և իշխանութիւն յամենայն գոյից անբաւ յաւիտենիւ ամէն: - 101. Նա՛խ՝ զի ասեմք *հայր* և որդի և հոգի: - 105. Զի *հայր* ո՛չ է որդի և ո՛չ հոգի: - 105. Երկրորդ՝ ասեմք ծնօղ և բղխօղ *հայր*, ծնեալ և առեալ որդի. բղխումն և առումն հոգի: - 105. Տե՛ս՝ զի հոգին բղխումն է *հօր* անձամբ. և առումն յորդւոյ իմաստութեամբ. որպէս ցուցաւ ի վեց գլուխն ի ժգ համարն: - 105. Երրորդ՝ *Յայր* անպատճառ է և պատճառ: - 105. Վասն զի *հայր* ո՛չ ունի *հայր*. այլ ունի որդի և հոգի: - 105. Որդի ո՛չ ունի որդի. այլ ունի *հայր* և հոգի. զի հոգի քրիստոսի ասեմք: - 105. Յոգին ո՛չ ունի որդի և ո՛չ հոգի. այլ պատճառ *զհայր*: - 105. Չորրորդ՝ կարողութիւնն *հօր*. իմաստութիւնն որդւոյ. բարութիւնն հոգւոյն: - 105. Նախ՝ զի մի՛ կարծեսցի *հայր* տկար վասն ծերութեան: - 105. Յինգերորդ՝ որպէս միա՛կ է *հայր*. զի սկիզբն է ամենայն թւոց. և երկեակ որդի. և երրեակ հոգի ըստ աստուածաբանին: - 105. Ո՛չ թիւ ասեմ. ապա թէ ո՛չ, մի *հայր*. մի որդի. մի հոգի: - 105. Վեցերորդ՝ որպէս յաւիտեան է *հայր*. զի անսկիզբն է և անվախճան: - 105. Եւ որպէս մշտնջենաւոր որդի ի *հօրէ* սկսեալ և անվախճան. որպէս

ժամանակ հոգի ի *հօրէ* սկսեալ և յորդի դադարեալ: - 105. Այսպէս և կոչումն երից անձանցն. *հա՛յր*. որդի՛. հոգի՛: - 105. Եւ յատուկ է *Յայր* գոլ և անծին: - 106. Երկրորդ՝ հաւասարա՛կ է ի միմեանս գոլ անձանցն. որպէս որդի ի *հայր*. և *հայր* յորդւոջ. և հոգի ի *հայր* և յորդի. և անդրադարձեալ: - 106. Երրորդ՝ հաւասարա՛կ է ի յԵրրորդութիւնն միութիւնն սուրբ. զի մի է *հայր*. մի որդի. մի հոգի: - 106. Երրորդ՝ բանն պատկեր է *հօր*. և մարդն պատկեր բանին. պատկերն զպատկերն էառ կամ նախատիպն զպատկերն: - 107. Նոյնպէս *հայր* սկիզբն է. և որդի և հոգի ի միոյ սկզբնէ: - 107. Երրորդ՝ զի գ մի է. այսինքն մի. մի. և մի. նոյնպէս մի *հայր*. մի որդի. մի հոգի: - 107. Իսկ ի սուրբ Երրորդութիւնն՝ մինն պակաս չունի քան զերկուքն. և ո՛չ երկուքն աւելի քան զմինն. զի *հայր* ունի զամենայն լիութիւն որդւոյ և հոգւոյ: - 108. Իսկ ի սուրբ Երրորդութիւնն *հայր* կատարեալ. որդի կատարեալ. հոգի կատարեալ. և կատարեալն ո՛չ յաւելու և ո՛չ նըւազի: - 108. Իսկ սուրբ Երրորդութիւնն անփոփոխելի է. զի *հայր* ծնաւ զորդի և բղխեաց զհոգին. և ո՛չ փոխեցաւ ի գոլոյն *հայր*: - 108. Իսկ ի սուրբ Երրորդութիւնն անբաժանելի՛ է *հայր* ի յորդւոյ և ի հոգւոյ. որդի ի *հօրէ* և ի հոգւոյ. և հոգի ի *հօրէ* և յորդւոյ: - 108. Ա՛րդ՝ ասեմք *զհայր* աստուած. և զորդի աստուած. և զհոգի աստուած. ապա կարե՞մք ասել *զհայր* երրորդութիւն. և զորդի երրորդութիւն. և զհոգին սուրբ: - 108. Վասն է՞ր *հայր* կոչի: - 108. Զի որպէս ճառագայթ յարեգակն է՛, և որդի ծնեալ ի *հօրէ*: - 108. Զի յաւիտենական բղխէ ի *հօրէ* առ որդի. և նովաւ առ մեզ գայ. որպէս ջերմութիւն ճառագայթիւ արեգականն: - 108. Դարձեալ՝ որ զամենայն ստեղծ՝ *հայր* կոչի. և որ զամենայն պարունակէ՛ զի մի՛ լուծցին՝ որդի. և որ շնչելով կենագործէ և զարդարէ զամենայն՝ հոգի սուրբ յորջորջի: - 108. Քանզի ծնունդ սկզբնաբար ի *հօրէ՛* ելանէ: - 109. Քանզի՝ որդի նմանագո՛յն է *հօր* քան զդուստր: - 109. Վասն է՞ր յորժամ փառս տամք, նախ՝ *հօր*, ընդ նմին որդոյ, և ապա հոգւոյն: - 109. Ա՛րդ՝ զի *հայր* պատճա՛ռ է որդւոյ ծննդեան՝ և հոգւոյ բղխման, վասն որոյ *հայր* նախադասի. իսկ ընդ նմա որդի. ո՛չ որպէս ոմանք կարծեն որդի պատճառ է հոգւոյ բղխման, այլ գ է ուղիղ տեսութիւնն: - 109. Նախ՝ զի *հայր* պատճառ է հոգւոյ բղխման՝ և որդւոյ առման. զի հոգին սուրբ բղխէ՝ ի *հօրէ՝* և առնու յորդւոյ: - 109. Երկրորդ՝ զի որդին առինչ է ի *հայրն*. և համանգամայն բնութեամբ: - 109. Նախ՝ զի մի անձն *հօր* բազմացաւ ի յանձն որդւոյ. և բազմապատկի ի յանձն հոգւոյն սրբոյ: - 110. Նախ՝ առ համաբունսն՝ *հայր* սկիզբն է որդւոյ և հոգւոյն սրբոյ. և պատճառ այլ ամենայն արարածոց: - 110. Դարձեալ՝ անեղն և անսկիզբն աստուած *հայր՝* յինքենէ յառաջ քան զյաւիտեանս ծնաւ և բղխեաց զանեղակից որդին՝ և զսուրբ հոգին: - 114. Ա՛րդ՝ որդի և հոգի անեղակից գոլով՝ հաւասար են *հօր*: - 114. Իսկ զի ի պատճառէ՛ են՝ այսու յատկացեալ են ի *հօրէ*. զի *հայր* անպատճառ և անսկիզբն է: - 114. Այլ արդ՝ որդի և հոգի ըստ որում ի պատճառէն՝ սկիզբն ունին *զհայր*. և ըստ որում՝ նախ քան զյաւիտեանս՝ անսկիզբն են ընդ *հօր*: - 114. Զի *հայր* անսկիզբն՝ յինքենէ՛ սկսեալ որդւով և հոգւով՝ արար սկիզբն սկզբնաւորացս. որպէս ասէ յաւետարանն՝ «ամենայն ինչ նովաւ եղև»: - 114. Նախադրութեամբն՝ որ է՛ և ասի. որպէս *Յա՞յր*. Որդի՞. Յոգի՞. լո՞յս. կեա՞նք. և այլն: - 123. Նոյնպէս որք ուրանան և ասեն, ո՛չէ աստուած քրիստոս. ո՛չէ *հայր*. ո՛չէ որդի: - 124. Նախ՝ զի ուրացականն ըստ պակասութեան է. որ ասէ ո՛չէ աստուած քրիստոս. այսինքն պակա՛ս է և ո՛չէ աստուած. և ո՛չէ *հայր*. և ո՛չ որդի: - 124. Իսկ բացբարձականն ըստ գերազանցութեան է. զի գերազա՛նց բան է՝ և գերագունա՛կ միտ. և գերագոյն և առաւել *հայր՝* և որդի. և ո՛չ ըստ մեր կարգիս որպէս մեր բանս է և միտք: - 124. Եւ է՛ *հօր* պատկեր բոլոր արեգակն: - 124. Նոյնպէս *հայր* է սկիզբն որդւոյ ծննդեան. և հոգւոյն բղխման: - 124. Եւ որդի և հոգի ի *հօրէ*: - 125. Եւ *զհայր* որդի՛ յայտնէ: - 125. Եւ տէր մեր յարևելից ի *հօրէ*, և առ մեզ երևեալ ի մօրէ՞ լուսաւորեաց զմեզ: 125-126. Այս է յղացմամբ յարգանդի և ծննդեամբ. և քարոզութեամբ. և մահուամբ. և յարութեամբն և համբարձմամբն առ *հայր՝* իբր զպսակ տարւոյ կատարեալ բնութեամբ մեր՝ ի ներքին կողմն վարագուրին մտեալ: - 126. Նոյնպէս իմանալի արեգակն քրիստոս ի հայրական ծոցոյ անհա՛ս է բնութեամբ՝ և ի սրբոյ կուսէն իբր ի յարևելից ծագեալ. և ջերմ սիրով ի մարդկային ազգս որպէս յարևմուտս խոնարհեալ. և զսառուցեալ բնութիւնս պատեալ. և ի գերեզմանէն ի բարձունս դարձեալ յարևելս առ *հայր* ամբարձեալ: - 126. Զայս ոմանք ի վերայ սուրբ Երրորդութեանն մեկնեն այսպէս. սիրող է հայր. սիրելի որդի. և սէր հոգին սուրբ: - 128. Նախ՝ աստուածաբանն գրիգոր՝ զոտքն մարմնով տնօրէնութեանն ասէ նշանակ. զի մարմնով եկեալ զփրկութիւն մեր արար. և մարմնով համբարձաւ առ *հայր*: - 130. Երկրորդ՝ զի աթոռքն վերաբերին ի դէմս *հօր*...: - 135. Եւ քերօբէն որ է՛ բազում գիտութիւն՝ ի դէմս որդւոյ. զի նա՛ է իմաստութիւն և գիտութիւն *հօր* ըստ առաքելոյն: - 135. Նախ՝ զի տէրութիւնն ակնարկէ՛ առ *հայր*. և զօրութիւնն առ որդին. և իշխանութիւնն առ իշխանակից սուրբ հոգին: - 135. Նախ՝ զի պետութիւնք պատշաճին առ *հայր*. և հրեշտակապետքն առ որդի իբր յերկուց միացեալ. և հրեշտակքն ի դէմս հոգւոյն իբր նախ եկաւորեալք յամենայն ուրեք, և ապա յորդի և ի *հայր* բնակեալ: - 136. Իսկ կողմնաւոր՝ որպէս փոխանցեալքն ի միմեանց. որդի ի *հօրէ՛*. և լօղակք ի ջրոյ: - 142. Ա՛րդ՝ ներքնագոյն

սիրովն խնամէ աստուած զարարածս. և առաջին դասք հրեշտակաց զվերջինսն. և *հարք* զորդիս. և վարդապետք զաշակերտս. և իշխանք զիշխեցեալս. տեարք զծառայս. և այս սիրովս շարունակին ընդ նոսա: - 143. Իսկ վերնագոյն սիրով սիրեն արարածք զարարիչն. և վերջին հրեշտակք զառաջինսն. և որդիք *զհարս*. և նւազք զմեծամեծս. և այս սիրովս միաւորին ընդ նոսա: - 143. Վասն որոյ ասի սատանայ՝ գտակ և *հայր* չարեաց: - 148. Մետասաներորդ՝ որպէս *հայրն* զորդին գան հարու զի զգաստացեալ մի՛ զրկեսցի ի ժառանգութենէ հայրենեացն. այսպէս և աստուած զսուրբս և զսիրելիս իւր խրատէ՛: - 159. Երկրորդ՝ թէպէտ յետոյ եղեն արարածք, ո՛չ են պատահումն. որպէս և բանն էր յառաջ, և յետոյ եղև մարմին. այլ մարմինն բանին ո՛չ է պատահումն. և որդի *հօրն* ո՛չ է պատահումն թէպէտ յետոյ ծնանի զի առ ինչ է *հօրն*: - 170. Դարձեալ յարանունաբար, յաստուածութենէն աստուած. ի հայրութենէն *հայր*. արդար. ողորմած. և այլն: - 172. Այլ ասի տեղի կերպիւ ինչ, զի է՛ *հայր* ի յորդի. և որդի ի *հայր*. և հոգի ի *հայր* և յորդի. և անդրադարձեալ. որպէս ասէր՝ «*հայր* ի յիս, և ես ի *հայր*»: - 172. Նախ՝ զի առաջին է և *հայր* և ծնօղ ամենայն գրոց ձայնաւորաց և բաղաձայնից: - 178. Երկրորդ՝ առաջին ստեղն է *հայր*. ոչ յումեքէ. միջինն որդի ծնունդ ի *հօրէ*. վերջինն հոգի բղխումն ի *հօրէ* և ելումն յորդւոյ. զի որդւովն երևի. և հարթ հաւասար աստուածութեամբ և արարչութեամբ: - 178. Իսկ Յինգերորդ զի կոչի այբ. որ թարգմանի *հայր*: - 178. Ծնունդ, զի ի բնութենէ *հօր* նախքան զյաւիտեանս ծնեալ է: - 179. Որպէս առաջին *հարքն* անապական գոլ ասացին. և մեք հետևօղք նոցին անապական ուսանիմք: - 222. Որ ընդ դէմ է ըստ գրոց. և ուղղափառ *հարց*: - 225. Զի որդի պատկե՛ր է *հօր* և տիպ և կերպարան: - 237. Նախ՝ զի ոչ ոք ճանաչէր *զհայր* կամ զեղբայր իւր. այլ ես զքեզ *հայր* գիտէի, և դու զայլ ոմն եղբայր. և լինէր մեծ շփոթումն: - 238. Երկրորդ՝ զի ոչ հարազատ որդին սեպհականէր զժառանգութիւնս *հօր*. այլ օտարն ի մեծութիւն հասանէր, և իւրն չքաւորութեամբ տառապէր: - 238. Դարձեալ՝ իմաստութիւնն պատշաճի *հօր* ըստ կարողութեան. և գիտութիւնն որդոյ իբր բան. և հանճարն հոգւոյն բղխման: - 270. Ոմանք ասեն եթէ պատկեր աստուծոյ *հօր*՝ է՛ որդի, և նման հոգին սուրբ: - 273. Եւ այլք ասեն թէ՝ մարդն ո՛չ է պատկեր աստուծոյ. այլ պատկեր պատկերի. զի որդի է *հօր* պատկեր, և մարդն որդւոյն. վասն այն ասաց նման և պատկերի: - 273. Եւ զայս սուտ առնէ սուրբն կիւրեղ եթէ՝ որդի է ճշմարիտ պատկեր *հօր*. և մարդն եղեալն է ի պատկեր որդւոյ: - 273. Ապա ուրեմն և մարդն եղեալ է ի պատկեր *հօր*: - 273. Զի որպէս որդի՛ է ի *հօրէ* նոյն բնութեամբ. և մարդն ի մարդոյ նոյն բնութեամբ: - 275. Իսկ պատուիրանքն՝ բարեկամի առ բարեկամս քաղցրութեամբ. որպէս *հօր* առ որդիս. և եղբօր առ եղբարս: - 277. Ի խօսակցութենէն, զի մինչ ի յորդանան այլ ո՛չ ասի *հօր* աստուծոյ խօսիլ ընդ մարդկան: - 279. Որով և որդիքս վասն պարտուց *հօր*՝ արտաքոյ մնացաք: - 280. Եւ չորրորդ՝ զի յաւելեր անէծս երկրի զկնի *հօրն* քոյ Ադամայ: - 287. Աստ *հայր* ազգաց բազմաց եղև. մանաւանդ թէ և նորին իսկ քրիստոսի ըստ մարմնոյն: - 288. Իսկ այժմ ամենայն ոք ի գրեալսն ուսանի զպատուիրանս աստուծոյ և ո՛չ ի *հարց* իւրեանց: - 291. Եւ բ գետն ի բանն և ի հոգին սուրբ որ բղխեն ի *հօրէ*. զի հրաւիրակք են մեզ՝ յակն տանելով ուստի բղխեն սոքա: - 295. *Յայր* առ որդի և հոգի սուրբ ասաց, որովք արար զմարդն մի ազգ և մի լեզու: - 297. *Յօրն* անունն մելքի, և մօրն սաղա. և քաղաքին սաղիմ: - 300. Իսկ *հօրն* ամենևին ո՛չ պղտորեցան խորհուրդք. և ո՛չ տրտմեցան սիրտք. և ո՛չ տխրեցան դէմք: - 304. Եւ որպէս *հայրն* աբրահամ նմանեցաւ աստուծոյ *հօր*, մանաւանդ և որդին իսահակ համեստութեամբ ինչ իրօք նմանի որդւոյ նորա քրիստոսի: - 304. Երկոտասաներորդ՝ զի որպէս իսահակ հնազանդ գտաւ *հօրն* մահո՛ւ չափ, լաւ համարելով զմեռանիլն՝ քան առանց հնազանդութեան զկալն: - 305. Եօթնժ, որպէս իսահակ արձակեցաւ յետ երից աւուրց, զի ի կամս *հօրն* յօրէ յայնմանէ էր մեռեալ՝ ուստի սկիզբն եղև ճանապարհին: - 306. Զի *հա՛յր* ասէ զնա մարգարէն՝ հանդերձեալ աշխարհին աստեղափայլ պայծառացելոցն լուսաճաճանչ սլացմամբ: - 306. Եւ աստուածութեամբն ընդ *հօր* և հոգւոյ՝ ընկալաւ ինքն: - 307. *Յայրն* աբրահամ կոչեաց զանուն որդւոյ իւր իսահակ: - 307. *Յայրն* երկնաւոր կոչեաց զիւր որդին անդրանիկ: - 307. Եւ երէց է աստուած քան զաշխարհս. և անդրանիկն զաստուծոյ պատկերն ունի. զի *հայր* և խնամածո՛ւ է այլ հարազատ եղբարցն: - 308. Երկրորդ՝ անդրանիկ է բանն աստուած ի *հօրէ* ծնեալ. և կրտսեր ա՛յլ եղեալքս՝ ի *հօրէ՛* գոյացեալ. զի որդի ծնո՛ւնդ է *հօր* և մեք արարածք. և նա՛ ի բնութենէն և մեք ի կամացն: - 309. Իններորդ՝ ևս մեծագոյն խորհուրդ. զի անդրանիկ բանն աստուած ի *հօրէ՛* ծնեալ՝ եկն ի բնութիւնս մեր և եղև գլուխ մեր...: - 309. Տասներորդ՝ ևս մեծագոյն խորհուրդ. զի բանն աստուած որ անդրանիկ էր *հօր*, եղև կրտսեր մարդ ի ժամանակի և փոքր. ըստ որում կոչեաց զինքն «փոքրիկ». զի բնութիւն մարդոյս ընդ ինքեան խառնելով արասցէ մեծ և անդրանիկ: - 311. Դարձեալ՝ ամենայն անուն որ կոչի՝ կամ նախ քան զինքն լինի յորմէ անուանի. որպէս *հայրն* կոչէ՛ զորդին իւր մարդ: - 312. Երկրորդ՝ ատէին եղբարքն զյովսէփ, և *հայրն* սիրէր: - 313. Նոյնպէս և սատանայ ատէ՛ր զմարդկային բնութիւնս զի ի պատկերն աստուծոյ արարաւ. և հրէայքն

ատէին զքրիստոս. զի վկայեաց *հայր* թէ դա՛ է որդի իմ սիրելի: - 313. Յինգերորդ՝ յովսէփ ի տան *հօրն* ազա՛տ էր, և յեգիպտոս եղև ծառայ: - 313. Եւ տէր մեր ազատ յերկինս առ *հայր*, և յերկրի եղև ծառայ զկերպարանս ծառայի առեալ: - 313. Տասներորդ՝ *հայրն* առաքեաց զյովսէփ առ եղբարսն որ էին հովիւք և երիցունք տեսանել զնոսա. և բանիւն յուդայի վաճառեցաւ և եղև տէր երկրին և կերակրիչ: - 313. Եւ տէրն մեր լ ամեայ մկրտեցաւ. զորմէ հրամայեաց *հայր*՝ դմա՛ լուարուք ամենայքն: - 313. Եւ տէր մեր գիտէր զինչ կրէր ի մարդն. այլ և զծածուկսն *հօր* յայտնեաց մեզ: - 313. Նոյնպէս և քրիստոս աստ ի գնալն հոգւոց և ի գալստեանն աւուր՝ ընդ առաջ ելանէ սրբոցն և համբուրէ զսիրելիս իւր, որպէս *հայրն* երկնաւոր ի դարձ անառակին: - 315. Յինգերորդ՝ ի լերինն մասեայ յորժամ ել նոյ ի տապանէն՝ օրհնեաց աստուած զնա՛ և զորդիսն նորա ասէ գիրն. և *հայր* և սերմ արար մարդկան ազգի: - 319-320. Իսկ լեառն հողեղէն բնութեանս մերում, կամաւ *հօր* վկայելով ի վերայ նորա՝ և հաճութեամբ սուրբ հոգւոյն աղաւնակերպ իջմամբ, և անքակտելի միացեալ բանիւն եղև լեառն մածեալ մշտնջենաւոր և անեզր յաւիտենիւ բարձրացեալ օրհնութեամբ և առաւելեալ: - 320. Եւ նախ կոչիւր յոբաբ, որ է՛ սիրելի աստուծոյ. և կոչեցաւ յոբ, որ է՛ *հայր*. զի *հա՛յր* եղև համբերութեան: - 320. Նա՛խ՝ զի *հայր* նոցա բարեպաշտութեամբ սնուցանէր զնոսա. և վկայեցաւ առ աստուած արդար գոլ: - 322. Չորրորդ՝ յոբ կրկին վկայեալ յաստուծոյ արդար և անարատ. և տէր մեր երկիցս վկայեալ ի *հօրէ* «դա՛ է որդի իմ ընտրեալ»: - 327. Տասներորդ՝ կրկին եղև կեանքն և պատիւն յոբայ. և տէր մեր ել ի փառս առաջին և նստաւ մարմնով ընդ աջմէ *հօր*: - 327. Եւ քրիստոս առաքեալ զինքն ի *հօրէ* քարոզէր, և հաւատալ ՙի հայր պատուիրէր: - 328. Եւ տէր մեր՝ չարչարողացն իւրոց թողութիւն խնդրէր ի *հօրէ*: - 329. Նոյնպէս և տէր ի *հօրէ* և ի մօրէ. պայծառութեամբն ի թաբօր. մկրտութեամբն ի ջրոյ. և յարութեամբն ի գերեզմանէ՛: - 329. Եւ ամպն ընկալաւ զնա յաչաց նոցա և վերացաւ առ *հայր*: - 330. *Յայրն* մովսէսի ամրա՛մ է և մայրն յոքաբեթ: - 330. Վեցերորդ՝ նշանակէ՛ զբանն աստուած գաւազան ուղղութեան և թագաւորութեան առ *հայր*. եկն նա՛ յերկիր և էառ զօձաձև բնութիւնս մեր. և դարձեալ ըմբռնեալ մարմնովն ել յերկինս և նստաւ ընդ աջմէ *հօր:* - 332. Վեցերորդ՝ ձեռն *հօր* է՛ միածին որդին որ ել ի ծոցոյ *հօր* և էառ զօձաձև բնութիւնս մեր. և դարձեալ ել առ *հայր*, ի նոյն բնութենէն ո՛չ կացեալ ի բաց: - 333. Բոլորն ամենայն դձլ ա՛մ է յաւետեացն աբրահամու մինչև յելսն յեգիպտոսէ՛. այլ զերկու **ծե** ամն *հարքն* յերկրին քանանու բնակեցան. և զ**բ ծիե** ամն որդիքն յեգիպտոս կացին...: - 337. Իսկ ըստ ևսեբեայ, **վպթ** ա՛մ է. զկայնան ճի ամ ի ներս առեալ, որ է՛ որդի արփաքսաթայ՝ և *հայր* սաղայի. զոր յիշէ աւետարանն, և ո՛չ յիշէ մովսէս: - 337. Եւ նոյն գաւազան յարմատոյն յեսսեայ. և բուրվառն *հօր* ի հոտ անուշից: - 345. Երկրորդ՝ զի բանն աստուած ծնունդ *հօր*՝ էառ զբնութիւն մարդոյս որ վերջին է յարարածս: - 347. Եւ **բ** ձիթենիք՝ զօրութիւն *հօր*, և սուրբ հոգին հովանացեալ ի վերայ նորա: - 347. Վասն որոյ և յաւուրս զաքարիայի *հօրն* յովհաննու յորժամ յամեաց ի տաճարին և ել, ակնունէր ժողովուրդն տեսանել զա՛կնն և տե՛սին լուսափայլ սպիտակացեալ իբրև զձիւն. և լի՛ եղեն խնդութեամբ. զի երկնաւոր արքայութեան նշոյլքն պայծառացուցին զակն: - 349. Երկրորդ,«ի **ռ** ազգս», վասն առաքինի *հարց*՝ բարի առնէ զաւակաց բարեաց: - 351. Այսինքն մինչև **գ** ազգն ներեմ. կամ **գ** դարս. և ի չորրորդն ո՛չ դառնամ ի վրէժ խնդրելոյ. այլ հատուցանեմ զմեղս *հարց* յորդիս: - 351. Ո՛չ թէ զմեղս *հարց* յորդւոցն խնդրէ. այլ մեղաց *հարցն* ներէ երկայնամիտ լինելով մինչև յորդոց յորդիս զի դարձցին ի մեղաց: - 351. Այլ ո՛չ թէ *զհարց* մեղքն որդիք վճարեն: - 351. Այլ զներգործական մեղս անձին *հօր*՝ ո՛չ հատուցանէ անձն որդւոյ. ապա թէ ոչ՝ չար ծնողաց ո՛չ լինէր բարի զաւակ: - 351. Եօթներորդ, նոքա յօտարա՛ց մատուցանէին. այսինքն զուարակ և նոխազ, իսկ քահանայապետն մեր քրիստոս զմարմին իւր պատարագեաց *հօր* ի հոտ անուշից...: - 354. Եօթներորդ, անդ ի *հօրէ*. և աստ ի մարմնացեալն բան է. և անդ ի հոգւոյն սրբոյ: - 355. Եւ միայն յողջակէզ. ի խաչ սեղանոյն ի հոտ անուշից *հօր* և հոգւոյն սրբոյ: - 361. Զի նորահաս պտուղ եղև յարութեամբն մեռելոց, և նստելով ընդ աջմէ *հօր*: - 361. Նշանակէ՛ զպատարագիլն քրիստոսի ի սեղան խաչին ի հոտ անուշից *հօր* և հոգւոյն: - 362. Վիճակ սահմանն է. որ նախ քան զյաւիտեանս սահմանեաց *հայր* զփրկութիւն մարդկան: - 369. Եւ արիւնն, զմեղս մեր բարձեալ յինքեան և տարեալ ի դաշտն առ *հայր* յերկինս. զի որպէս մեռեալ մարմնովն քաւեաց զմեղս. նոյնպէս և անմահ աստուածութեամբն կենդանացոյց և յերկինս եհան: - 369. Եւ ա՛յս էր օրհնութիւնն՝ «օրհնեսցէ զքեզ տէր» *հայր*: - 379. Վասն որոյ և պա՛րտ է և նմա՛ խոստովանիլ որպէս է՛ ի կանոնս *հարցն*: - 384. Երկրորդ՝ զի եօթնիցս եղև արժանի տեսլեան Երրորդութեանն. կրկին անգամ *զհայր* ի գիշերի. և կրկին զորդին ի տիւն. և հոգի աստուծոյ ի վերայ նորա երկիցս անգամ. և մի անգամ զիրեշտակն ետես: - 387. Նա՛խ՝ անդ *զհարքն* թուեաց որք կոտորեցան. և աստ զորդիսն որք ժառանգէին զերկիրն: - 392. Երրորդ՝ զառաջինն *հարցն* ետ որ սատակեցան. զերկրորդն որդւոցն տայ, զի մի՛ լիցին չար և դառնացօղ որպէս *հարքն* իւրեանց: - 393. Երկրորդ՝ զի ասէ «իբրև զիս». իբրևն օրինա՛կ է. որպէս մովսէս աստուած կոչեցաւ, և տէր մեր էմմանուէլ. և

զնա՛ *հայր* կնքեաց աստուած. և որպէս մովսէս իշխէր տարերաց, և տէր ի ծովուն գնայր, և ի վերայ օդոյն: - 399. Ա՛րդ՝ ի նոյն օր զանիծեալ հայրազեղծն հանէին ի փայտն անիծից վասն *հօրն*: - 400. Վասն է՞ր մեծ ի վախճանն *հարք* և առաջնորդք օրհնեն զմնացորդս. որպէս մովսէս և յակոբ և այլ նահապետք: - 408. Վասն զի զկայնան որդի արփաքսաթայ և *հայր* սաղայի **ճ** և **ի** ամ ի թիւ առնու: - 411. Քանի՞ցս անգամ խօսեցաւ աստուած ընդ *հարսն* ամենայն: - 412. Եւ զյիսուս փրկիչն՝ *հայր* սրբեաց և առաքեաց. որ և ի յորդանանն վկայեաց «դա՛ է որդի իմ սիրելի, դմա՛ լուարուք»: - 417. Եւ զոր պատուիրեաց *հայր*՝ զնոյն և արար որդի: - 419. Վեցերորդ՝ դարձեալ տէր մեր յիսուս քրիստոս որ եղև զգեստ հաւատացելոց իւրոց. մկրտեցաւ ի յորդանան. և ձայն *հօր* վկայեաց. և աղաւնակերպ հոգին էջ ի վերայ նորա: - 421. Իններորդ՝ ետ զխորհուրդ քաղցր *հօր* և մօր իւրոյ ի ճաշակ: - 422. Եւ տէր մեր *զհայր* ի յերկինս և զմայր ի յերկրի քաղցրացոյց փրկութեամբ մարդկան: - 422. Եւ ինքն որդիէ՛ զօրութիւն *հօր*. և ծարաւ փրկութեան մարդկան, նովաւ զովացեալ: - 423. Երկրորդ՝ կոչի դաւիթ որ է՛ սիրեցեալ և բաւական ձեռօք. և տէր մեր սիրեցեալ ի *հօրէ* և ի մարդկանէ իբր զորդիս մի եղջերոյ. և նա՛ է բաւական յամենայն գործս և ի պարգևս: - 435. Ութերորդ, ի ձեռն սամուէլի և իւղով օծաւ. և տէր մեր ի *հօրէ* օծաւ և հոգւով սրբով: - 435. Երեսունք, յետոյ առ սամուէլ ի նաւաթ գնացեալ և հոգի աստուծոյ խաղացեալ. և տէր մեր առ *հայր* ի յերկինս ելեալ, և յառաքեալսն զհոգին առաքեալ: - 437. Եւ երիցս *հայր* վկայեաց որդւոյ: - 441. Եւ ծեր և հին աւուրցն *հայր* ետ զթագաւորութիւն որդւոյ: - 441. Իսկ որդին աջ և բազուկ է *հօր*, վասն որոյ աջմէ *հօր* նստի: - 441. Յետ որոյ քեղկի քահանայ որ էր *հայր* երեմիայի՝ եգիտ զերկրորդ օրէնքն և մատոյց առ ովսիա. և գնաց առ ողդիկին մարգարէ հարցանել...: - 447. Վասն է՞ր *հօր* ո՛չ տօնեմք որպէս քրիստոսի և հոգւոյն: - 455. Զի հնազանդութեամբ կատարեաց զկամս *հօրն*: - 457. Այսինքն երդումն աբրահամու և դաւթի՝ մարդ լինիլ բանին ի վերայ երկրի ի պտղոյ յորովայնէ նորա. և նստել յաթոռ *հօր* նորա. և ի նմանէ օրհնիլ ամենայն ազգաց: - 457. Եւ այսպէս **բ** եղբօր թոռունք էին Մարիամ կոյսն և Յովսէփ ի *հարց* կողմանէ մելքեայ և պանթերի ի նաթանայ: - 460. Որպէս զի լիցի կոյսն մարիամ յազգէ *հարց* ի թագաւորական ցեղէն. և յազգէ մօր ի քահանայից: - 461. Զի ի խորհուրդ մկրտութեանն ի յառնուլ ջուր, հոգին սուրբ և զօրութիւն բարձրելոյն և ողջոյն *հօրն* ի ձեռն հրեշտակին որ հերքէր զմեղս ըստ մկրտութեան: - 462. Նոյնպէս որդին աստուծոյ որդի է կուսին որ էառ մարմին ի նմանէ. թէպէտ աստուածութիւնն ի *հօրէ* է. ապա ուրեմն աստուածածին է կոյսն: - 466. Այլ արդ՝ քրիստոս ո՛չ է որդի աբրահամու և ո՛չ ի *հարցն*՝ թէ ոչ է որդի կուսին. ապա ուրեմն ըստ մարմնոյ աստուած է քրիստոս, և աստուածածին է ծնօղն. և մայր ըստ մարմնոյն քրիստոսի: - 466. Վասն է՞ր բա՛նն մարմին եղև. և ո՛չ *հայր* կամ որդի: - 468. Նա՛խ՝ անպատշա՛ճ էր թէ *հայր* էր մարմնացեալ. զի *հայր* անսկիզբն է. և յայնժամ ո՛չ ոք լինէր առանց սկզբան: - 468. Երրորդ՝ զի թէ *հայր* էր մարմնացեալ, մի և նոյն լինէր *հայր* և որդի: - 468. Չորրորդ՝ միտք և հոգին ո՛չ երևին. և բանն երևի և ի դուրս գայ. և մարդիկք տեսանեն և գրեն. վասն այն բանն մարմնացաւ, և ո՛չ *հայր* կամ հոգին: - 468. Հինգերորդ՝ բանն պատկեր է *հօր* էական. և մարդն պատկեր նմանութեան. վասն այն բանն աստուծոյ եղև ի պատկեր մարդոյ: - 468. Եօթներորդ՝ բանին էր պատշաճ պատմել *զհօրէ*. և երևիլ մեզ. որպէս ներտրամադրեալ բանն յառաջ գայ և լինի բարբառ և գրեալ ի քարտիսի, երևի և շօշափի: - 468. Այլ և իմաստութեանն *հօր* պարտ էր նորոգել զխնդրօղ իմաստութեանն որ է մարդն: - 468. Իններորդ՝ վասն հաստատ ժառանգութեան խոստացելոյն. զի մի՛ ասիցէ ոք *զհայր*, տէր դու ունիս որդի և ժառանգ: - 468. Ա՛րդ՝ սքանչելիք էին ՚ի մայրն քրիստոսի որպէս ասեն վարդապետք... Ծնեալ առանց երկանց... Դուստրն՝ *զհայրն*: - 469. Զի նա՛ եղև մայր *հօր*. և դուստր զաւակին: - 469. Այլ և ունէր *հայր* ի յերկինս, և մայր ի յերկրի. իսկ անդ *հայր* առանց մօր. և աստ մայր առանց *հօր*: - 470. Իններորդ՝ հոգին էջ ի յորդանան և ձայնն *հօր*: - 471. Զի ի *հօրէ* միշտ ծնանի աստուած. ի մօրէ միանգամ ծնաւ մարմինն. և ի միտս ծնանի բազում անգամ: - 471. Երրորդ՝ զի նա՛ միա՛յն է ի *հօրէ* ծնեալ. և չունի եղբայր: - 472. Եւ զի հոգին է ևս ի *հօրէ*, սակայն բղխումն է և ո՛չ ծնունդ որպէս ցուցաւ ի վերոյ: - 472. Հինգերորդ՝ նա՛ միա՛յն է ծնունդ համահաւասար կատարելութեամբ զօրութեամբ և իմաստութեամբ ընդ *հօր*...: - 472. Ութերորդ՝ նա՛ միա՛յն է ծնունդ ի *հօրէ* և ո՛չ երբէք հայրանայ. զի ո՛չ ունի յինքենէ ծնունդ որպէս նա՛ ի *հօրէ*: - 472. Իններորդ՝ ասի միածին ըստ մարմնաւոր ծննդեանն ի մօրէ ծնեալ առանց *հօր*...: - 472. Նոյնպէս և անդրանիկ ծնունդ ի *հօրէ* : - 472. Նա՛խ՝ զի նա ի *հօրէ*՛ է սկսեալ. և եղեալքս ի *հօրէ* : - 472. Եւ նա՛ ծնունդ ի *հօրէ*. իսկ մեք արարածք: - 472. Եւ զօծումն քահանայութեան ի թաբօր լերինն. ուր և հոգին սուրբ ամպ հովանի եղեալ. և *հայր* հաճութեամբ վկայեալ: - 474. Իսկ մկրտութիւն նորա ո՛չ որդեգրութեան էր որպէս մերս. այլ ճշմարիտ որդիութեանն յայտնութիւն ըստ ձայնին *հօր* «դա՛ է որդի իմ սիրելի»: - 474. Օծօղն է *հայր*. և Օծումն որպէս իւղ հոգին սուրբ. և Օծեալն բանն մարմնացեալ: - 475. Իսկ բանն աստուած է՛ անսկզբնաբար ի *հօրէ*. և յետոյ սկսեալ ի կուսէ: - 478. Իսկ բանն աստուած մարդացեալ՝ էութեամբ է առ

*հայր*. պահպանութեամբ ի բոլոր էակքս. շնորհօք յամենայն սուրբս. և բնութեամբ ի մարմնի միաւորեալ: - 478. Իսկ քրիստոս ամենևին ա՛կն՝ ամենևին ունկն՝ ընդ *հօր* և հոգւոյն աստուածաբար ներգործէ: - 479. Եւ ա՛յն է յայտնութիւնն որ *հայր* վկայեաց ի վերայ որդւոյն, և հոգին սուրբ աղաւնակերպ իջմամբ: - 482. Իններորդ՝ զի աւետիս *հարցն* հաստատեսցէ. զի անսո՛ւտ է խոստմունք աւետեացն աստուծոյ. և որպէս զայս աւետիս ուխտի կատարեաց, նոյնպէս և զայլսն կատարեսցէ. այսինքն ի ծառայութենէ ազատութիւն, և արքայութեան խոստմունքն: - 485. Եւ այլք թէ՝ զաքարիա *հայրն* յովհաննու: - 486. Իսկ տէրն մեր էր անդրանիկ ի *հօրէ* և անդրանիկ ի մօրէ. և անդրանիկ շնորհաց և արդարութեան. և անդրանիկ յարութեան մեռելոց. վասն որոյ անդրանկապէս ընկալաւ զօրէնս թլփատութեան: - 486. Նա՛խ՝ թլփատեաց զնա *հայրն* ի ծնունդն՝ աղքատութեան սրովն: - 486. Եւ ձայն *հօր* որ ասէ՝ «դա՛ է որդի իմ սիրելի»: - 487. *Հայր* վկայեաց: - 487. Իսկ ձայնն *հօր* ի վերայ որդւոյն՝ ցուցանէ զգերազանցութիւնն քրիստոսի: - 487. Երրորդ որ ասէ «որդի» նշանակէ զհաւասարութիւնն ընդ *հօր*. զի որդին լսի հաւասար *հօր*: - 487. Չորրորդ որ ասէ «իմ». ցուցանէ զքրիստոս գոյակից *հօր*: - 487. Վեցերորդ որ ասէ՝ «հաճեցայ». նշանակէ զմիաւորթիւնն ընդ *հօր*: - 487-488. Եւ աստուածութեամբն ընդ *հօր* և ընդ հոգւոյ ընկալաւ զինքն: - 491. Յորժամ *հայր* մատնեաց զորդի, ըստ այնմ «որ յիւր որդին ո՛չ խնայեաց. այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա՛»: - 491. *Հայր* մատնեաց զնա՛ վասն սիրոյ. և Որդի մատնեաց զանձն իւր վասն փրկութեան մերոյ. իսկ յուդա մատնեաց վասն ագահութեան: - 491. Այլ ա՛րդ՝ բանն աստուած եղև մարդ և անմեղ պահեաց զբնական կիրս. և ներգործական կրիւքն հնազանդ եղև *հօր*՝ մահու չափ և մահու խաչի: - 492. Զազգս մարդկան սատանայ էր գերեալ. վասն է՞ր քրիստոս զգին արեանն ի *հայր* ետ: - 492. Զի թէպէտ սատանայ էր գերեալ զմարդն, սակայն ի գերութիւն նմա *հա՛յր* մատնեաց յորժամ պատժեաց զնա: - 492. Յիրաւի ապա տէր մեր զգին արեանն ի *հայր* ետ. թէպէտ սատանայ էր գերեալ և չարչարէր զմարդիկ: - 492. Հինգերորդ՝ ապականութիւն մեր մարմնոցս է՛ ի սերմանէ *հօր* ի ծեռն կնոջ խառնեալ. իսկ մարմին բանին ո՛չ է ի սերմանէ *հօր* և մօր. այլ ի կուսական արգանդէ և յանապական արենէ բեղնաւորեալ որպէս ցուցաւ ի վերոյ ի սոյն գլուխ ի ժ համարն. ապա ուրեմն անապակա՛ն է մարմին բանին աստուծոյ: - 499. Վեցերորդ՝ զմարիամ մայր փրկչին կոյս և անապական խոստովանին *հարք* ուղղափառութեան. և զայս ո՛չ ըստ գոյացութեան բնութեան, այլ զի ծնաւ զբանն աստուած անապական մարմնով: - 499. Իններորդ, գեթէօն՝ այն որ զցօղն ետես ի վերայ գեղման, *զհօր* իւրոյ զեզն պարարակ հրամանաւ հրեշտակին ի մէջ գիշերին պատարագեալ...: - 513. Յորում ի մէջ գիշերի թողեալ զկտաւսն ի գերեզմանի և յարեաւ ել առ *հայր* ի յերկինս: - 513. Վեցերորդ, ոմանք ասեն թէ պարգևս խնդրէր հոգևորական. վասն այն ասէ ելանեմ առ *հայր* իմ և իջանէ հոգին և լնու զձեզ ծրի պարգևօք. այժմ յաղագս այդորիկ մի՛ մերձենար: - 517. Յայսմիկ յայտ արար թէ ի յարութեան անդ ո՛չ դառնայ ոք յոք. ո՛չ *հայր* յորդիս՝ և ո՛չ որդիք առ *հարս* իւրեանց. այլ դառնան ամենեքեան յայս. զի արժանի լիցին ողորմութեամբ ելանել առ *հայր*: - 517. Հնգետասաներորդ, զի բաւական համարեցաւ ի պատիւ կանանց զայն՝ զի յառաջագոյն մերձեցաւ ի նոսա ծննդեամբ. իսկ յետ յարութեանն կամի՛ զի ա՛րք նախ մերձեսցին ի նա մինչ դեռ ո՛չ է ելեալ նա առ *հայր*: - 518. Եւ դարձեալ՝ որպէս զայլ կանայսն արար աւետաւորս յարութեան իւրոյ. սոյնպէս և զմագդաղենացին վերանալոյն առ *հայր*: - 518. Արդ մի՛ մերձենար դու յիս անկատար գոլով. որպէս մայր քո եւա ի ծառն գիտութեան. յորժամ առ բնութեամբ իմ *հայր*՝ և ձեր ըստ շնորհի՝ և աստուած մարմնոյս իմոյ ես ելանիցեմ, որոտմամբ իջեալ հոգին զձեզ կատարէ՛. արժանաւորիք յայնժամ առ իս մերձենալ: - 518. Նա՛խ՝ որպէս ասաց սուրբն ներսէս՝ քրիստոսի բնութեամբ է *հայր*՝ և մեզ շնորհօք: - 518. Դարձեալ, քրիստոսի *հայր* է բնութեամբ՝ և աստուած հաւասարութեամբ: - 518. Եւ մեզ *հայր* է կոչմամբ՝ և աստուած բնութեամբ: - 518. Դարձեալ, *հայր* է քրիստոսի ըստ էութեանն. և աստուած վասն միաւորութեանն. զի *հա՛յր* միաւորեաց զբանն ի մարմնի...: - 518. Զի զանպարտ արիւնն իւր ցուցանէ *հօր*. և զխոցուած բևեռացն զօր վասն մեր ընկալաւ: - 519. Երրորդ՝ ամբարձեալ ձեռօք վերանայր յերկինս վասն երկուց. նախ՝ զի զինքնն ընծայեսցէ *հօրն*. երկրորդ՝ զի զթշնամիսն հարկանիցէ զօրաւոր ձեռամբ բարձրացեալ: - 520. Իսկ որ ասէ՝ «նստաւ ընդ աջմէ *հօր*», աջովն իմանի հաւասար ի փառս աստուածութեանն *հօր*: - 521. Այլ և աթոռակիցն գոլ *հօր* և սուրբ հոգւոյն: - 521. Նա՛խ՝ ի կողմանէ պարգևողին. զի յորժամ քրիստոս նստեալ լինէր ըստ մարմնոյ ընդ աջմէ *հօր* իբր զթագաւոր փառաց յաթոռ թագաւորութեան իւրոյ, յայնժամ մեծագոյն լինէր պարգևք հոգւոյն տուեալ ի փառաւոր քրիստոսէ աստուծոյ: - 521. Այսպէս նախ եկն քրիստոս և խաչիւ և մահուամբ հաշտեցոյց *զհայր*, և ապա՛ *հայր* աստուած առաքեաց զհոգին սուրբ պարգև մարդկան: - 522. Սակայն վարդապետք եկեղեցւոյ պատշաճե՛ն զստեղծանելն *հօր*. իսկ զտրոհելն որդոյ. և զզարդարելն հոգւոյն սրբոյ: - 522. Այսպէս պարտ էր յառաջագոյն *հօր* յայտնի լինիլ և ապա՛ որդոյ և հոգւոյն սրբոյ: - 522. Եւ հոգին սուրբ ի քրիստոսէ էջ

յառաքեալսն. և նա՛ է իմաստութիւն *հօր:* - 523. Եւ հոգին սուրբ բղխէ ի *հօրէ*՝ և առնու յորդւոյ զիմաստութիւն և բաշխէ՛ յարարածս բոլոր: - 523. Չորրորդ զատիկ համբարձումն առ *հայր* ցնծութեամբ և փողով: - 524. Դարձեալ՝ զի *հայր* մարմնով ո՛չ երևեցաւ որպէս բանն մարմնացեալ. կամ որպէս հոգին սուրբ աղաւնակերպ և հրաձև: - 525. Նախ այն է՝ որ զորդի ընդ *հօր* և սուրբ հոգւոյն փառաւորեմք և օրհնեմք գ անձինք ի միում բնութեան. և ո՛չ որպէս հինքն հրէական օրհնութիւնս. որք ո՛չ օրհնէին զորդի և զհոգի: - 528. Մի է բանն աստուծոյ անձնաւոր էութիւն և գոյացութիւն. որ էր ՚ի ծոց *հօր* անմարմին. որով ամենայնքն ի լինելութիւն եկին: - 529. Ասեմք առ այս, եթէ ո՛չ է արտաքոյ ուղիղ տեսութեան եթէ մի է առ *հօր* և բազում է առ մեզ: - 529. Եւ այս բազումս որ առ մեզ է, ի բազում թուղթս գրեալ մի և նոյն բանն է որ նախ քան զյաւիտեանս ի *հօրէ* ծնեալ: - 529. Այսպէս մի և նոյն բանն է յիւրաքանչիւր աւետարանս ձևացեալ, և ընդ աջմէ *հօր* նստեալ. և ոչ աւելի և ո՛չ նուազ: - 530. Պատասխանեմք թէ՝ նման է այնմ որ ասեն թէ՝ բան աստուած է պատկեր *հօր*, և մարդն ի պատկեր բանին. ապա մարդն ո՛չ է պատկեր աստուծոյ, այլ պատկեր պատկերի: - 530. Եւ թէ ոք ասիցէ, ո՞րպէս է մի բանն աստուծոյ. զի ահա՛ բանն մարմնացեալ էր. և *հայր* բանիւ վկայեաց ի վերայ որդւոյն. և անյարմար է ինքն ինքեան վկայել: - 530. Ա՛րդ՝ յորժամ ամենայն ինչ նոյն է սուրբ Երրորդութեանն, որով յա՛յտ է՝ թէ *հայր* խօսի, և թէ որդի, և թէ հոգին սուրբ, մի և նոյն բանիւն խօսին. ապա ուրեմն ո՛չ է անյարմար եթէ *հայր* նոյն բանիւն վկայեսցէ ի վերայ որդւոյ. զի որդի և *հայր* նշանակէ զյատկութիւն անձանցն: - 530-531. Դարձեալ յայտնապէս, զի բանն միացեալ ի մարմնի՝ էր անբաժանաբար ի *հայր*. որպէս առ մեզ ներտրամադրեալս բան և գրեալն ի թղթի: - 531. Ա՛րդ՝ ո՛չ է անյարմար եթէ *հայր* անբաժանելի բանիւն վկայեսցէ բանին որ էր ի մարմնի: - 531. Ա՛յսպէս *հայր* վկայէ՛ ի վերայ որդւոյ: - 531. Նոյնպէս և անչափութիւն բանից և խրատուց *հարց* և իմաստնոց գիրք սուրբք՝ հին և նոր կտակարանք ցուցանեն զանչափ հիւանդութիւն հոգւոյ. զի սոքօք առողջասցին: - 531. Ա՛րդ՝ առաջին հիմն քրիստոս է և գլուխ. և հաւատացեալքն շինուածք ի նա. և *հայր* շինօղ: - 531. Որպէս և առ մեզ է. զի կին որդւոյն դուստր կոչի *հօրն* վասն մի մարմնոյն: - 534. Դարձեալ՝ թէպէտ մի է *հայր* և մայր քրիստոսի և եկեղեցւոյ, այլ զանազան կերպիւ: - 534. Նա՛խ՝ մարգարէքն *զհայր* ծանուցին. ապա՛ առաքեալքն զորդի. և ապա՛ վարդապետք զհոգին սուրբ: - 535. Ի դէմս *հօր*՝ մարգարէքն. ի դէմս որդւոյ՝ առաքեալքն. ի դէմս հոգւոյն՝ քննիչ վարդապետք. զի «հոգին քննէ զամենայն և զխորս աստուծոյ»: - 535. Տիմոթէոս աղէքսանդրու. Մելիտոս անտիոքայ. **ճծ** *հարք* ընդ դէմ մակեդոնի հայհոյչի հոգւոյն սրբոյ: - 542. Յոհան անտիոքայ՝ թղթով միաբանեալ. **բճ** *հարք* ընդ դէմ նեստորի որ **բ** բնութիւն ասէր և **բ** որդի. կրկին կամք և կրկին ներգործութիւն քրիստոսի. և զաստուածածինն մարդածին: - 542. Արար **զ** երորդ ժողով՝ ագաթոն պապն հռոմայ. ի թագաւորութեան *հօրն* յուստիանու ի կոստանդնուպօլիս: - 543. Այլ որպէս ի մէջ համակարգից քահանայից մինն լինի *հայր*: - 546. Վեցերորդ՝ զհոգին ի *հօրէ* և յորդւոյ բղխումն: - 553. Որում փառք և զօրութիւն ընդ *Յօր* իւրում և սուրբ Յոգւոյն ամէն: - 555. Այլ դու ո՛վ այրդ աստուծոյ մաքրամիտ և ճգնազգեաց միայնաւոր սուրբ *հայրդ* սահակ, թէ և զիջանես եղբայրական սիրով խնդրել բանս ի մէնջ. սակայն կարօղ ես և զթերին լնուլ և զյաւելորդն կշռել. և զմեզ օգտեցուցանել ի ներգոյէ՛ քոյին պայծառամիտ սրբութեան սրտի: - 558. Այլ յատկապէս ըստ երից դիմացն, որ տկարութեամբ մեղանչէ՝ է՛ ընդ դէմ *հօր*. և տգիտութեամբն ընդ դէմ որդւոյ. և չարութեամբն ընդ դէմ հոգւոյն սրբոյ...: - 566. Տասներորդ՝ վասն հոգեմարտին մակեդոնի որ հայհոյէր զհոգին սուրբ նուազ ասելով քան *զհայր* և զորդի, ո՛չ թողցի նմա: - 566. Ա՛րդ՝ թէպէտ հոգին ո՛չ լինի սերեալ ի *հօրէն* որպէս մարմինն, սակայն սկզբնական մեղքն անցանէ ի հոգւոյն յադամայ ի հոգիս զհետ եկելոցն միջնորդութեամբ մարմնոյն ցանկութեամբ ծնելոյն: - 567. Որպէս **ժ** բան է օրինացն՝ և **ժ** բան է *հայր* մեր որ յերկինս: - 572. Նոյնպէս **ժ** բան է հաւատամքն որ է՛ այսպէս... Նա՛խ վասն աստուածութեանն *հօր*: - 572. Երկրորդ վասն առաջին ծննդեանն քրիստոսի որ ի *հօրէ* ...Ութերորդ վասն սուրբ հոգւոյն որ է՛ հաւասար *հօր* և որդւոյ: - 572. Նա՛խ որպէս ասէ սուրբն եւագրիոս՝ հաւատն ի *հայր*, յոյսն առ որդի, սէրն ի հոգին սուրբ: - 577. Այս ո՛չ եթէ բաժանմամբ. այլ նկատմամբ ի յատկութիւնս անձանց. ըստ որում սկիզբն է *հայր*. և փրկութիւն է որդին. և ջերմութիւն հոգին: - 577. Երրորդ՝ հաւատն է որպէս արմատ ծառոյն որ է *հայր*. յոյսն ստեղունքն որ է որդի. սէրն հոգին սուրբ որ է՛ ծաղիկ և պտուղ ըստ դիոնիսեայ: - 577. Եւ ո՛չ զկարգն փոխել. որպէս թէ յառաջ զհոգւոյ անունն ասել և ապա զորդւոյ և ապա՛ *զհօր*: - 588. Երրորդ՝ զի միշտ անդրանիկ ծնանի և ո՛չ կրտսեր. զի պատկեր քրիստոսի ստանամք որ է՛ անդրանիկ *հօր*: - 590. Որդի քրիստոնէին զիա՞րդ լինի մեղաւոր յորժամ սրբեալ է *հայրն* մկրտութեամբ: - 592. Թէ մեղք *հօրն* ի մկրտութեանն թողեալ լինի, վասն էր մկրտին որք ի նոցանէ ծնանին: - 592. Նոյնպէս յապականեալ *հօրէն* ադամայ ամենայն ծնեալքն ապականեալք են: - 592. Ա՛րդ մկրտեալն ի քրիստոս՝ վասն հոգևոր *հօրն* ազատի ի հոգևոր պատժոյն. և վասն մարմնաւոր *հօրն* կրէ՛ զմարմնաւոր պատիժն: - 592. Որպէս ո՛չ եղև վնաս յովսիայ որով *հայրն* թիւրէր: - 593. Եւ վասն այն

է գրեալ՝ յերրորդ կամ ի չորրորդ ազգս մեղաց վրէժ խնդրեսցի. յորժամ *հայրն* և որդին և թոռունքն զնոյն մեղս գործեսցեն: - 593. Եւ յորժամ զինքն ի խաչին՝ *հօր* պատարագ մատոյց: - 606. Առաջին մեք, և *հայրն*, և պապն մեր. *հօր* պապն, և պապու *հայրն*, և պապուն պապն, և ապպապն. որ է՛ է. նմանապէս և ի մօր կողմն: - 611. Եւ *հօր* եղբայր, և քոյր. և մօրաքոյր, և եղբայր. և ծնունդք նոցա մինչև յեօթն ազգն: - 611. Զի **բ** են *հայր* և մայր մեր. և **բ** ծնունդ որդին և դուստրն. և **բ** եղբայրն և քոյրն. և մեք ի մէջն է երորդ: - 611. Զի *հայրն* և որդին և թոռն որ է՛ **գ**. և թոռին թոռն որ է՛ **դ**. որ լինի **է**, և եզր արենակցութեան: - 611. ...և նոցա որդին որ է՛ թոռն *հօրն* ունի զկէս արեանն. և թոռին որդին զերրորդ մասն. և թոռին թոռն զչորրորդ մասն: - 612. Վեցերորդ, զի և առաջին ծնօղքն և *հարք* թէպէտ աւելի կին առնուին վասն զաւակաց, այլ հարսանիսն կրկնեալ ո՛չ ընթերցեալ լինի: - 612. Ողորմեայն ի դէմս *հօր* որ առաքեաց զորդին ի խաչ. և պատարագն ի դէմս որդւոյ որ խաչեցաւ վասն մեր: - 622. Վեցերորդ ժամն է վերջին ողորմեայն. իններորդ ժամու աղօթն. յորում քրիստոս աւանդեաց զհոգին ի ձեռս *հօր*: - 622. Իններորդն է հանգստեան ժամն ի դէմս *հօր*. որ ասեմք եկեսցէ և ննջեմք. - 622. Չորրորդ և ուղիղ, որպէս ասէ տեսիլն հրեշտակք առնուին զխունկս որ է՛ աղօթք սրբոցն, և նուիրէին ի սեղանն ոսկի որ է՛ քրիստոս. և ի նմանէ բուրէր ծուխն առ *հայր*: - 625. Եւ ա՛յս է պատճառն, զի քահանայն է՛ ի դէմս քրիստոսի, և եպիսկոպոսն հօր աստուծոյ. և խաղաղութիւնն է՛ հոգին սուրբ որ ի *հօրէ* առաքեցաւ. - 625. ...զի առաջին փոխն է ի դէմս *հօր*. և միջինն առ որդի. և վերջինն առ հոգին սուրբ: - 628. Իսկ սաղմոսն՝ մանկացելոցն մկրտութեամբ հրամայէ որդիացելոցն օրհնել *զհայրն* երկնաւոր. որում փառք յաւիտեանս ամէն: - 629. Զբանս զայս՝ մարգարէն ի դէմս *հօր* ասէ. զի յայնժամ միայն *զհայր* պատմէին: - 632. Իսկ յատուկ, Նա՛խ՝ զերեքսրբեանն ի դէմս որդւոյ. զի նա՛ է առաջնորդ որով *զհայր* տեսանեմք: - 633. Եւ ապա՛ իբր *զհայր* մեր որ յերկինս առ *հայր*: - 633. Դարձեալ՝ սկիզբն աղօթիցն է՛ առ *հայր*. և մէջն որ է՛ խաղաղութիւնն առ հոգին սուրբ. որպէս ասացաւ ի վերոյ. - 633. Երկրորդն առ *հայր*. վասն որոյ աղերսեմք՝ օրհնեալ *հայր* սուրբ աստուած ճշմարիտ ի միջինն: - 633. Եւ *հայր* գթութեանցն՝ կատարումն առ *հայր*: - 633. Եւ տե՛ս՝ զի ամենայն ուրէք զհոգին սուրբ *հօր* աղերսեմք. զի ի *հօրէ*՛ բղխէ: - 633. Վասն է՞ր ի վերջոյ *զհայր* մեր յերկինս աղօթեմք: - 634. Նա՛խ՝ զի քրիստոսիւ ծանեաք *զհայր*: - 634. Դարձեալ՝ որպէս յետ ամենայն տնօրէնութեանցն ել առ *հայր* և պարգևեաց զհոգին սուրբ: - 634. Նոյնպէս յետ ամենայն խորհրդական աղօթից՝ առ *հայր* ամբառնամք և աղերսեմք զհոգին սուրբ բաշխել մեզ. - 634. Նոյնպէս ի *հայր* մեր յերկինս: - 635. *Յայր* ի յորդանան բնութեամբ որդի իւր դաւանեաց. և մանկունքն ի քառասնօրէին և յողոգոմին: - 638. Այսինքն ի *հօրէ* յառաջ բղխէ հոգին առ որդի. և նովաւ բաշխի մեզ: - 639. Եւ դարձեալ՝ զիւր հոգին աւանդելով կնքեաց զամենայն հոգիսն ի ձեռն *հօր*: - 639. Երրորդ, աստուածահայր կոչեցաւ, պա՛րտ է առաւել զինչս *հօրն* ծախել ի տունս եկեղեցւոյ: - 643. Վասն որոյ կարգեցին առաքեալքն և *հարքն* **ծծ** օր պահք. և նոյնչափ ուտիք: - 649. Երրորդ, զայս ի քրիստոսէ ուսաք. զի գոհացաւ ի *հօրէ* և ապա՛ բաշխեաց զգարեղէն նկանակսն և աճեաց...: - 654. Երրորդ՝ ընդունելի եղև *հօր* ի հոտ անուշից: - 657. Եւ *հայր* ո՛չ դատէ, այլ միա՛յն որդին: - 661. Տասներորդ՝ ճանապարհ փառաց և երանութեան կոչի տէր մեր. զի առաջնորդէ՛ առ *հայր*...: - 666. ...զի քահանայապետն *զհայր* նշանակէ. և իւղն զքրիստոս. և անուշահոտն զհոգին սուրբ որ քրիստոսիւ պարգևեցաւ մեզ: - 672. Իսկ՝ նախ ի յարևելս, ցուցանէ զմիածինն որ իբր յարևելից ի ծոցոյ *հօր* ծագեցաւ մեզ արեգակն արդարութեան - 673. ...զի *հայրն* աբրահամ առեալ հուր և սուր, և յետ երից աւուրց տեսին զտեղին ի հեռաստանէ որպէս ասէ պատմութիւնն: - 681. Արդ *հայրն* աբրահամ նշանակէ՛ զհայր աստուած. և հուր և սուր՝ տանջանարանք որ հանդիպին ի ճանապարհի օդոյդ: - 681-682. Զի՞նչ է տուն *հօր* և օթևանք բազում: - 686. Ո՜ *հա՛յրդ* ես որոց ի վեր քան զերկինս. այսինքն հոգւոց սրբոց կատարելոցն որ ի վերեն քան զդասս հրեշտակաց մերձ քրիստոսի որպէս քահանայք առ քահանայապետ, և անդամք առ գլուխն. և որդիք առ *հայր*: - 688. ...զի ազատեցան ի պատժոց և առ *հայր* աւանդեցան. - 689. ...և յետ այնորիկ ո՞չ նստի ընդ աջմէ *հօր* որդի: - 704. և պատարագաւ խաչին հաշտեցոյց *զհայր*. և իջմամբ ի դժոխս կապեաց զհզօրն սատանայ և արձակեաց զկապեալ հոգիսն...: - 705. *Յօր* անունն ռոմելոս ասեն. զմին ձեռն և զոտն երկայն և մինն կարճ. զմի ակն խաժ, և զմիւսն սև: - 706. Ընդ երևիլ նեռինն և թագաւորելն յէմ, եկեսցեն ենովք և եղիա որպէս ասէ մաղաքիա և դարձուսցեն զսիրտս *հարց* յորդիս. - 709. Նախ աստուածութեամբն թագաւորէ՛ ընդ *հօր* և հոգւոյն: - 710. Կամ ոսկի՝ արծաթ՝ ականս. զի արդարքն առաւել պայծառանան և ապա՛ բազմին ի սեղան *հօրն* երկնաւորի պաշտելովն ի քրիստոսէ: - 721. Չորրորդ, զի փառօք *հօր* և հրեշտակաց սրբոց: - 730. Զի որպէս խաչեալն ի ժամ խաչելութեանն տգեղ երևէր, և ի միւսանգամ գալստեանն փառօք *հօր* և ընդ ամպս: - 734. Վասն է՞ր *հայր* ո՛չ դատէ, այլ զամենայն դատաստան ետ որդւոյ ասէ: - 735. Երրորդ, զի որդի է՛ նման *հօր*. իսկ հրեշտակք և մարդիկ շփոթեցին յինքեանս զնմանութիւնն յոր ստեղծան...: - 735. ...յիրաւի է ուրեմն

որում անիրաւութիւնն եղև առնել դատաստան վասն վրիժու. թէպէտ նմա *hայր* և hոգին սուրբ գործակից լինին: - 735. Չորրորդ, *hայր* անտեսանելի՛ է և անմարմին...: - 735. Վեցերորդ, քրիստոս է՛ իմաստութիւն և գիտութիւն *hօր*. և գիտէ զարժանաւորութիւն իւրաքանչիւր ումեք. - 735. Երկրորդ փառք է՝ զի *hայր* և hոգի ընդ նմա ի դատաստան գայցեն...: - 737. Իններորդ, փա՛ռք է զդատաստանն առնել. զի նմա տըւաւ իշխանութիւն ասէ դանիէլ. և *hայր* ո՛չ զոք դատէ. այլ զամենայն ետ որդւոյ որպէս ցուցաւ: - 737. Նախ՝ յառաջ քան զլինիլն աշխարհի՝ որդի ի *hօրէ՛* և *hայր* յորդւո՛յ: - 748. Զի ծուխ խնկոցն ի վերայ սեղանոյն, Նախ նշանակէ՛ սեղանն զքրիստոս. և ծուխն զաղօթս սրբոցն. զոր արծարծէ՛ *hօր* ի hոտ անուշից: - 749. Ո՛չ բնաւ, թէպէտ *hայր* տեսանէ զորդի կամ մայր զդուստր. և կամ զեղբայր և զայլս. ո՛չ միայն ո՛չ ցաւին, այլ ա՛յնպէս լինի hեշտալի, որպէս տեսանեմք զձկունս որ խաղան ի վտակս: - 754. Երբեմն գոգ աբրաhամու, վասն ընդ *hօրն* hաւատոյ որդւոցն hանգչելոյ: - 757. Եւ տերև գիտութիւն hոգւոյն. և ծաղիկ ծագումն բանին. և պտուղ արդեանցն *hօր*: - 765. Դարձեալ՝ ծառ կենաց և տունկ երկնային՝ է՛ hաւատն կենդանարար. որոյ արմատն է *hայր*, և ստեղունք որդի. ծաղիկ և պտուղ hոգին սուրբ: - 768-769. Որպէս և ոմն ի Պետաց մերային ազգաց՝ զhաւատն դրուատեաց ասելով, Յաւատ ի *hօրէ* սկսեալ յորդի և ի hոգի վերաբերի: - 769. Դարձեալ՝ ի մարդոյ ի *hայր* և յորդի և ի սուրբ hոգին: - 769. Իսկ hաւատ ի մարդկութիւն որդւոյ, Ի կուսէն երևեալ անհայր ի մօրէ. որպէս անմայր ի *hօրէ* : - 769. Ոչ բաժանեալ կամ hատեալ ի *hօրէ* և ի hոգւոյն. որպէս ո՛չ ջերմութիւն ի hրոյ կամ ի լուսոյ. կամ նկարագիր յէութենէ: - 770. Եւ քրիստոս աստուծոյ զօրութիւն և աստուծոյ իմաստութիւն ի *hօրէ* ըստ սրբոյն դիոնիսեայ: - 770. Ծնունդն, զօրութիւնն, մահն, ընդ աջմէ *hօր* նստիլն, և այլն ամենայն, զաստուած ի մարդում, մանաւանդ զմարդ յաստուածում ըստ սքանչելագործին գրիգորի ցուցանեն: - 770. Վասն որոյ սպանօղք որդւոյ՝ *hօր* և hոգւոյ թշնամիք են: - 770. Զի քև գեղեցկագոյն ի գերեզմանէն յարութեան քո hասից. և անդատապարտ եղէց յատենի քոյ առաջի *hօր* և hոգւոյդ սրբոյ: - 771. Որով և ընդ որում *hօր* միանգամայն և hոգւոյն սրբոյ վայելէ փառք և պատիւ և իշխանութիւն և զօրութիւն. այժմ և միշտ և յաւիտենից յաւիտեանս Ամէն: - 771. Դարձեալ, յերես անկեալ արտասուալի դիմօք hողս և փոշի՝ սուրբ գարշապարաց ծերոց, աղերսեմ ի խորոց սրտէ զhարազատ գութ *hարց* և եղբարց մեր hոգևորաց: - 773. Եւ դարձեալ ի ճառս անառակին և կորուսեալ դրամին և մոլորեալ միոյ ոչխարին և անկելոյն ի ձեռս աւազակին, զնոյնս ուսուցանեն մեզ *hարքն* hոգելիցք արտայայտել: - 775. Եւ այլևս յարմար տեղւոյս այսպէս իմանի. զի սուրբ hարքն առաջինք պակաս ունէին զչարչարանս. վասն որոյ ո՛չ կարէին փրկիլ. իսկ քրիստոս եղեալ ըստ մարմնոյ որդի նոցա, զպակասութիւն *hարցն* չարչարանաց յիւրումն մարմնի էլից: - 781. Վասն որոյ չարչարանքն քրիստոսի ասի պակասութիւն վասն *hարցն*. ասի և կատարեալ առ ինքեան: - 781. Իսկ եթէ ոչ են վարձատրելի, ապա զիա՞րդ վասն նոցա անհնազանդութեանն անհնազանդ կոչի և ինքն որդի *hօր*: - 784. Որք դարձուցեն զսիրտ *hարց* յորդիս ըստ մաղաքիայի. այսինքն ուսուցանեն զhաւատն փրկչին զոր *hարքն* ունէին. և է՛ վարձաւորելի և կարի քաջ. և թէ այսպէս և թէ այն՝ քրիստոս քարոզի: - 785

***ՅԱՅՐ ԱՍՏՈՒԱԾ*** - Զի թէ ասէք *hայր աստուած*՝ և որդի աստուած՝ և hոգի աստուած, բազմաստուած էք որպէս hեթանոսքն: - 54. Դարձեալ՝ որպէս բացբարձութեամբն ասի *hայր աստուած*՝ անսկիզբն և անվախճան. ունելով զայս և զայն ի պարզ միութեան իւրում. և ո՛չ է **բ** անձն կամ **բ** բնութիւն: - 77. Դարձեալ՝ որպէս ասելն *զhայր աստուած*, և որդի աստուած, և hոգի աստուած, ո՛չ է բազմաստուած. այլ մի աստուած: - 93. Նախ զի է ծնօղ և սկիզբն ամենայն գրոյ և իմաստութեան. որպէս *hայր աստուած* բղորից: - 178. Զի որպէս տապանաւն պահեաց զտունն նոյի *hայր աստուած*, պահեսցէ և զմեզ: - 295. Որոյ փոխանակ *hայր աստուած* ետ զորդին իւր վասն գերազանց սիրոյն ի փրկութիւն աշխարհի: - 304. Եւ *hայր աստուած* որ ո՛չ կատարի կամք նորա ի մեզ. յայնժամ ըստ բազում գթութեան իւրոյ առաքեաց զմիածին որդին որ փոխանակ մեր կախեցաւ զփայտէն և ազատեաց զմեզ յանծիցն օրինաց...: - 400. Ուքևժ, զօրացաւ դաւիթ անւամբն աստուծոյ. և տէր մեր զօրութիւն է *hօր աստուծոյ*: - 436. Վեցերորդ՝ օրինակն սողոմոն՝ և ճշմարտութիւնն քրիստոս՝ կարդաց *hայր զաստուած*: - 440. Նա՛խ՝ զի ծեր և hին աւուրց նշանակեցաւ *hայր աստուած* ի դանիէլէ՛. իսկ որդին նորածին և երիտասարդ hասակաւ: - 479. Երկրորդ՝ զի անհաշտ թշնամութիւն եղև *hօր աստուծոյ* ընդ մարդոյ: - 491. Եւ վասն անմեղ մահուն՝ hաշտեցաւ *hայր աստուած* ընդ մարդկան: - 492. Եւ վասն մահուան որդւոյ՝ *hայր աստուած* ետ զhոգին սուրբ պարգև մարդկան: - 492. *Յօր աստուծոյ* վասն է՞ր ոչ տօնեմք որպէս քրիստոսի և hոգւոյն սրբոյ: - 525. Յինգերորդ՝ զի խոստովանի ամենայն լեզու թէ տէր է յիսուս քրիստոս ի փառս *hօր աստուծոյ* բազմեալ: - 529. Նոյնպէս քրիստոսիւ տեսանեմք *զhայր աստուած*, և առնեմք զկամս նորա. և կերակրիմք և զմայլիմք hոգէպէս: - 532. Երկրորդ՝ hաշտեցոյց *զhայր աստուած* ընդ արարածս, և զhոգին սուրբ

պարգևեաց: - 585. Իսկ ելանելն ի բեմն, զի յետ բոլոր անօրէնութեանցն քրիստոս ել յերկինս և նստաւ ընդ աջմէ *հօր աստուծոյ*: - 594. վասն որոյ յայսմ ժամու սկիզբն է աղօթից բոլոր աւուրն. յորում ասեմք զտէր եթէ շրթունքն և զայլ սաղմոսսն ի դէմս *հօր աստուծոյ*: - 621. Եւ ա՛յս է պատճառն, զի քահանայն է՛ ի դէմս քրիստոսի, և եպիսկոպոսն *հօր աստուծոյ*. և խաղաղութիւնն է՛ հոգին սուրբ որ ի հօրէ առաքեցաւ. - 625. Նա՛խ՝ զի *զհայր աստուած* ասեն և ո՛չ հզօր և ո՛չ անմահ: - 633. Արդ հայրն աբրահամ նշանակէ՛ *զհայր աստուած*. և հուր և սուր՝ տանջանարանք որ հանդիպին ի ճանապարհի օդոյդ: - 681-682. Երկրորդ, զի միջնո՛րդ է *հօր աստուծոյ* և մարդկան հաշտութեան: - 745-746. Երրորդ՝ զի միջնորդութեամբն քրիստոսի միաւորի եկեղեցի ընդ *հօր աստուծոյ*. և լինի աստուած ընդ աստուածս միացեալ. - 757

***ՀԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ ԵՒ ՀՈԳԻ ՍՈՒՐԲ*** - Եւ այս է մեզ *հայր և որդի և հոգի սուրբ*: - 65. Ուստի մկրտիմք յանուն *Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ*: - 69. Վասն սէ՞ր կոչեմք Երրորդութիւն. և *Հայր. և Որդի. և Հոգի սուրբ*: - 101. Նոյնպէս և Երրորդութիւնն կատարեալ է. *Հայր և Որդի և Հոգի սուրբ*: - 107. Այսպէս և փառս տամք *հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ*: - 116. *Հայր և Որդի և Հոգին սուրբ*. այսպէս ի մարդն միտքն բանն հոգին. ըստ եզնկացւոյ պլուզ վարդապետին: - 271. Այսպէս և մեք փառս տամք *հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ*. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից: - 522. Զոր և ազգն Ֆռանկաց այլայլելով ասեն, ես կու մկրտեմ զքեզ յանուն *Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ*: - 588. Իսկ զէութիւն բանին որ է՛ յանուն *Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ*՝ ասելն մի՛անգամ պարտ է ասել և ո՛չ կրկնել տգիտաբար: - 588. Եւ թէ այր մարդ ոչ լինի և տղայն մերձ ի մեռանիլ լինի, կինն կարէ՛ մկրտել թէ գիտէ զծև բանին զոր քրիստոս ուսոյց «յանուն *Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ*». ցանէ՛ զջուրն և ասէ՝ մկրտեալ լինի: - 588-589. Նովին բանիւն արծակեմ զքեզ յամենայն մասնակցութենէ մեղաց. ի խորհրդոց ի բանից և ի գործոց. յանուն *հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ*: - 602. Իսկ որ ասեն՝ *հայր և որդի և սուրբ հոգի*. կամ թէ՝ քրիստոս որ խաչեցար: - 635. Միայն միայնոյ և միշտ էին *Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ*: - 771

**ՀԱՅՐԱԶԵՂԾ** + Եւ *հայրազեղծն* որ հարկանէր զծնօղ, զանիծից փայտէ կախէին, և ի նոյն օր ի գերեզման իջուցանէին զի մի՛ պղծեսցին: - 400. Ա՛րդ՝ ի նոյն օր զանիծեալ *հայրազեղծն* հանէին ի փայտն անիծից վասն հօրն: - 400

**ՀԱՅՐԱԿԱՆ** + Եւ դարձեալ՝ հոգին որ ի հօրէ ելանէ և կայանայ յորդի. և ի ձեռն որդւոյ իբր *զհայրական* բարի ամենայն գոյիցս բաշխի երկնաւորաց և երկրաւորաց. նախ քան զմարմնանալն՝ և ի մարդեղութեանն: - 61. Նոյնպէս իմանալի արեգակն քրիստոս ի *հայրական* ծոցոյ անհա՛ս է բնութեամբ՝ և ի սրբոյ կուսէն իբր ի յարևելից ծագեալ. և ջերմ սիրով ի մարդկային ազգս որպէս յարևմուտս խոնարհեալ. և զսառուցեալ բնութիւնս պատեալ. և ի գերեզմանէն ի բարձունս դարձեալ յարևելս առ հայր ամբարձեալ: - 126. Նոյնպէս և տէր մեր յառուցեալ ի *հայրական* աթոռոյն՝ գայ ի դատել զերկիր...: - 317. Վասն զի արեգակն արդարությյան քրիստոս *հայրական* փառօք և աստուածագումար դասուք և կարապետեալ աստուածային նշանն անտի գալոց է...: - 555. Իսկ ի թաքօր լերինն ծայնիւ *հայրական* և հովանեաւ հոգւոյն եղև քահանայ. ցուցեալ մովսէս և եղիա սարկաւագունք յաջմէ և յահեկէ: - 607. Երրորդ՝ սէրն *հայրական* որ ասէ «հօր իմոյ»: - 740

**ՀԱՅՐԱՆԱԼ** + Ութերորդ՝ նա՛ միա՛յն է ծնունդ ի հօրէ և ո՛չ երբէք *հայրանայ*. զի ո՛չ ունի յինքենէ ծնունդ որպէս նա՛ ի հօրէ: - 472

**ՀԱՅՐԱՇԱՐԺ** + Ա՛րդ՝ սկիզբն յառաջ շարժութեան հոգւոյն է՛ հայր. որպէս ասի ի շարականն, «Որ ի *հայրաշարժ* ի յաղբերէն յառաջ բղխեալ»: - 65

**ՀԱՅՐԱՊԵՏ** + Զի քրիստոս Քահանա՛յ է ըստ կարգին մելքիսեդեկի ժ կերպիւ... Եօթներորդ՝ *զհայրապետն* տասանորդեաց: - 50. Զոր սուրբ *հայրապետք* փոխեցին զանուանս նոցա և եդին բոլոր շաբաթուն եօթն աւուրցն: - 190. Եւ եօթն ճրագ շուրջ զնովաւ, եօթներին դասք ընտրելոց նորա... Առաքեալք և մարգարէք և *հայրապետք*: - 347. Երկրորդ՝ նշանակէ՛ զբանաւոր պատարագս մեր... Ամոլք հաւատոյ առաքեալքն սուրբք. և Խոյք *հայրապետացն* դասք: - 374. Վեցերորդ՝ շնորհընկալք. որպէս խոստովան որդիք. և ժողովուրդք. և քահանայք *հայրապետաց*: - 389. ...իսկ երրորդն նէեմի և եզր դպիր՝ կանգնեցին զպարիսպն և զդրունսն. նշանակեն զառաքեալսն *զհայրապետսն* և զվարդապետսն. որք օրինօք պարսպեն զեկեղեցի, և հանապազ ուսուցանեն զդպրութիւն: - 449. Եւ յառաջին ամին յօստոս էր *հայրապետ* յերուսաղէմ. իսկ յերկրորդն սուրբն մակար: - 485. Իսկ մորուս կոչին մարգարէք և առաքեալք և *հայրապետք* մերձ բերանոյն առ մեզ խօսելով զպատգամս օրինացն աստուծոյ: - 534. Յաղագս որոյ ո՛չ կարեմք զառաջնոյն *հայրապետաց* կարգ կամ զկանոնս զպահք կամ զայլ ինչ թիւրել և փոխել: - 541. ...և զթէոդորիտոս եդին զլուխ ժողովոյն վասն մարդահաճութեան թագուհւոյն և

թագաւորին. և զդէոսկորոս *հայրապետն* աղէքսանդրու, և զպետրոս անտիոքու, և զտիմոթէոս և զանատոլ, և զայլս բազումս խոտեցին. և վկայեցին նոքա ճշմարտութեան: - 543. Եւ *հայրապետք* էին անդ, Եւտիգէս երուսաղէմի: - 543. Եւ ի հռօմ գնացեալ՝ եղև *հայրապետ* և պապ: - 548. Զի այսպէս սահմանեցին՝ թէ ինքնակալ թագաւոր մի և ինքնագլուխ *հայրապետ* մի նստցի ի հայս. և թագաւոր մի ինքնակալ՝ և ինքնագլուխ *հայրապետ* մի ի հռօմ. և ի վերայ միմեանց դիցեն զանձինս ի մահ. և սոսկալի գրով եղեն միմեանց եղբարք. թացեալ զգրիչն յաւիտենից խորհուրդն: - 548. ...բայց թէ ազատեալ լիցի տն կամօք. որպէս նեսիմոնս այն. իսկ թէ զայր որ ընդ ծառայութեամբ է՝ ո՛չ հրամայեցին *հայրապետքն* սուրբք գալ ի յաստիճան եկեղեցւոյ. - 589. Հինգերորդ վկայութիւն *հայրապետացն* որք զխորհուրդ պատարագին գրեցին: - 595. Վասն որոյ *հայրապետք* եկեղեցւոյ լա՛ւ համարեցան զվայելչականն բառնալ որ ո՛չ ի լինիլն յաւելուած առնէ, - 604. Օրհնեաց զնոսա և ցուցան կաթողիկոսք և *հայրապետք*: - 607. Իսկ ըստ եկեղեցւոյն յունաց, Առաջին դասք են Պատրիարգունքն. որ թարգմանին *հայրապետ*...: - 607. Զի այսպէս ասէ ներտառիոս *հայրապետն* հռօմայ թէ՝ չէր հնար իջուցանել զմարմինն տեառն ի խաչէն վասն փայլատակմանցն ի խոցուածոյն: - 631. Եւ սուրբն կիւրեղ աղէքսանդրու *հայրապետն* ի ժողովն եփեսոսի ասաց զմիածին որդի ժամանուտն: - 631. Յաղագս որոյ եկեղեցի սուրբ ուսեալ յաւետարանչէն և ի սրբոց *հայրապետացն*, երգեմք զերեքսրբեանն ի դէմս որդւոյ: - 633. Իսկ թէ սրբոց, Նա՛խ մարգարէից. և ապա՛ առաքելոց. և *հայրապետաց*. և մարտիրոսաց: - 642. Իսկ *հայրապետքն* բաժանեցին զերկու քառասունսն ի շաբաթապահս: - 649-650. Եւ զփոքր կարգն մեծն կիւրեղ եէմի *հայրապետն*. է՛ սկիզբն **բ** շաբաթի, և աւարտն ի **ե** շաբաթի: - 651. Եւ *հայրապետն* ներսէս ի ճառս հրեշտակապետաց: - 687. Նա՛խ՝ զի արու և էգ անդ ո՛չ ճանաչին մասին անդամօք, այլ յատուկ դիմօք և բարի գործովք և փառօք և անւամբ զանազանին. որպէս դասք կուսանացն ի *հայրապետացն*: - 725

**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ +** Այլ ա՛րդ՝ ճշմարտութիւն է առաքելական կանոնքն և *հայրապետականն* և երից սուրբ ժողովոցն: - 550. Եւ որ ոք ո՛չ պահէ որպէս ազգն Ֆռանկաց, ընդ անիծիւք է յառաքելական և *հայրապետական* կանոնաց: - 652

**ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ +** զոր արարեալ էր սուրբն գրիգոր աստուածաբանն յեօթն ամի *հայրապետութեան* իւրոյ: - 658. Իսկ զկանոն ջրօրհնէից՝ սրբոյն բարսղի է արարեալ յեօթն ամի *հայրապետութեան* իւրոյ յերուսաղէմ. զի անդ հանդիպեցաւ: - 658. սրբոյն կիւրղի է արարեալ ի դուռն սրբոյն սիօնի. ի իա ամի *հայրապետութեան* իւրոյ: - 658

**ՀԱՅՐԵՆԻ +** Մետասաներորդ՝ զի *հայրենի*՛ է եղեալ աւանդութիւնն, և սովորութիւնն ստացական բնութիւնն: - 33. Մետասաներորդ՝ որպէս հայրն զորդին գան հարու զի զգաստացեալ մի՛ զրկեսցի ի ժառանգութենէ *հայրենեացն*. այսպէս և աստուած զուլրբս և զփիրելիս իւր խրատէ՛: - 159. Կալ՝ ըստ որում «կայ ընդ աջմէ աստուծոյ». և նստաւ ի փառսն *հայրենի*: - 172. Կամ ի *հայրենեաց* նմանութենէ: - 251. **Իսկ թէ մարդ լինի շանադէմք, և այն ո՛չ է ի խառնուածոյ շանց, այլ նշան է *հայրենեաց*, կամ սպի անձանց**: - 267. Եւ փրկիչն մեր *զհայրենի* ժառանգութիւնն: - 419. Չորրորդ՝ գերիլն ի բաբիլոն՝ զգերութիւն բնութեանս նշանակէ. և եօթանասունն ամն զեօթն դար կենցաղոյս. և ապա դարձումն ի *հայրենի* բնակութիւնն մեր ի ձեռն փրկչին մերոյ և աստուծոյ: - 448. Վեցերորդ՝ աքսորումն ի *հայրենեաց*: - 751. Ի կամս *Հայրենի* բարեխնամ գթութեանցն աստուծոյ: - 771

**ՀԱՅՐՈՒԹԻՒՆ +** Զի թէ ասեն էր յառաջ քան զծնունդն որդի. իսկ էութիւնն հօր *հայրութիւն* է. և թէ ոչ էր որդւոյ հայր՝ բառնի յէութենէն իւրմէ, իսկ թէ ոչ էր և յետոյ ծնաւ՝ ո՞ւմ արդեօք իցէր հայր. զի ո՛չ էր որդի: - 36-37. Եթէ որպէս հօր, է՛ *հայրութիւն* միայն. իւր լինի և բնութիւնն: - 39. Որպէս յորժամ ասեմք բառնալով՝ ո՛չէ, ո՛չ բան, ո՛չ միտ, ո՛չ որդիութիւն, ո՛չ *հայրութիւն*. և այլն: - 124. Դարձեալ յարանունաբար, յաստուածութենէն աստուած. ի *հայրութենէն* հայր. արդար. ողորմած. և այլն: - 172

**ՀԱՅՑԵՄ +** Հինգերորդ, այլք ասեն թէ *հայցեաց* ինչ շնորհս քահանայութեան որ չէր անկ կանանց: - 517. ...զ'ի քէն *հայցեմքն* զարևազալին շարականերն, զօրհնեմք զքեզն, զայսօր անճառն, զարարչակներն, զաստուած անեղն...: - 637. ...յայն ճանապարհ է օտարացեալք, զոր մարգարէն մեծաւ տենչմամբ *հայցէր* ասելով՝ «զմի խնդրեցի ի տեառնէ և զսո՛յն աղաչեմ բնակիլ ինձ ի տան տեառն ընդ երկայն աւուրս»: - 756-757

**ՀԱՅՑՈՒԱԾ(Ք)** + Եւ թէ արարած է՝ զիա՞րդ հաւատամք և կատարիմք. այսինքն յորժամ խնդրեմք և առնումք. զի ո՛չ տան մեզ *զհայցուածքն* որք են արարածք. որպէս անւամբ միայն աստուածք հեթանոսացն: - 52

**ՀԱՆԱՊԱԶ +** Իսկ գործ խնամելոյն միշտ և *հանապազ*. ըստ այնմ «հայր իմ մինչև ցայժմ գործ է՛ և ես

գործեմ». որ է՛ նախախնամելն: - 158. Արդ ներքին է՝ որ ի փափկութեանց և ի հեշտութեանց փորձի բնութիւնս մեր և այլայլի ի զանազան տեսակս մեղաց. զոր պա՛րտ է *հանապազ* աստուածային խնամոյն՝ զի մի՛ թողցէ յայսպիսի փորձութիւնս զմեզ ընկղմիլ: - 160. Եւ զի ո՛չ *հանապազ* խաւարին. զի ո՛չ միշտ ընդ նոյն շաւիղս ընթանան. թէպէտ հանդիպին ընդ նոյն կենդանակերպն: - 187. Դարձեալ՝ քան զժամանակն ոչ ինչ անցաւոր և հասական. զի ժամանակ կենցաղոյս *հանապազ* հոսի. զի չափէ՛ զբնութիւնս՝ և զինքն չափէ՛: - 199. Չորրորդ՝ զմիշտ և *զհանապազն*: - 212. Երկրորդ՝ զի անհանգիստ և ի չարչարանս լինէր *հանապազ*. ընդ ինքեան ունելով զնոսա: - 217. Ա՛րդ՝ եթէ մնայ հինն ընդ նորոյն *հանապազ*. նա՛ ծանրանայ. և ո՛չ կարէ զայն քան անմաց բազմութիւն պտղոցն կրել, և այսպէս լինին ամենայն ծառքն կոտորեալ և ապականեալ...: - 224. Եւ օղն է ի թոքն. զի *հանապազ* ի շարժութեան կայ և փչէ՛ ընդ դէմ ջերմութեան սրտին: - 232. Երրորդ՝ զի զդէմս ունիցիմք միշտ ի յերկինս. և զթիկունս յերկիր. և *հանապազ* ի բարին յառաջեմք ոտիւք և ձեռօք և ո՛չ դառնամք ի չարն: - 234. Վասն է՞ր բիբն *հանապազ* թարթէ՛ և թթէ զաչքն: - 239. Վեցերորդ, նոքա *հանապազ* մատուցանէին վասն *հանապազ* յանցմանն ի բազմօրինակ մեղս...: - 354. Ա՛յս է՝ *հանապազ* աղօթք, պահք, ողորմութիւն, և այլն: - 363. Ձի *հանապազ* քօղ երեսացն մովսէսի առագա՛ստ է ի վերայ սրտից նոցա. և ոչ իմանան զտեսութիւն բանին. վասն որոյ ո՛չ հաւատան: - 405. Եւ պա՛րտ է մեզ *հանապազ* զքրիստոս առաջի աչաց տեսանել ի խաչ վասն մեր և հաւատալ. և չարչարակից լինիլ նմա յամենայն ժամ: - 405. Ասեմք թէ՝ մեզ պա՛րտ է ի մտի պահել և ի լեզուի զմեղս. և ցաւիլ և հոգալ *հանապազ* վասն անցեալ մեղացն և չգործելոյ բարեացն: - 433. Իսկ երրորդն նէեմի և եզր դպիր՝ կանգնեցին զպարիսպն և զդրունսն. նշանակեն զառաքեալսն զհայրապետսն և զվարդապետսն. որք օրինօք պարսպեն զեկեղեցի, և *հանապազ* ուսուցանեն զդպրութիւն: - 449. Եօթներորդ՝ զի սաստիկ է. զի ամենայն ոք ի հարկէ զաչս խփէ որ *հանապազ* տեսանեմք զլոյս: - 522. Եւ *հանապազ* ի տաճարին գովէին և օրհնէին զաստուած նոր օրհնութեամբ համբարձելոյն ի յերկինս տեառն և աստուծոյ...: - 528-529. Եւ թէ ոք ասիցէ, աստուած վերնագոյն է և *հանապազ* օրհնեմք զնա, և այլ զսուրբս նորա: - 539. Եւ այսպէս *հանապազ* օրհնել պարտ է զաստուած...: - 539-540. Եւ ի գալն յերկիրս հայոց, ետուն նմա օգնական զհիւղն օծման զոր քրիստոս օրհնեաց էր. և զգեղարդն. և այլոց ազգաց չկա՛յ այս պարծանքս. զի մեր մեռոնս *հանապազ* և միշտ զնոյն շնորհ ունի: - 549. Նոյնպէս զցանկութիւնն ի շնութիւն և ի պոռնկութիւն յաւելու *հանապազ*. զոր անասունք յիւրեանց ժամանակին ունին զխառնումն: - 564. Երրորդ՝ զգոհութեան աղօթսն *հանապազ* անխափան մատուցանէ: - 584. Նա՛խ՝ զի միայն զհեշտ ցանկութիւնն սիրեն *հանապազ*. ինքն և գործակիցն իւր: - 613. ...և զխաչն *հանապազ* կրեն ընդ ինքեանս. և լուսով խաչին ելանեն ընդ առաջ քրիստոսի: - 616. Եւ այս գիտելի է, թէ ոմանք *հանապազ* յետ ամենայն կարգեալ աղօթից առանձնակի աղօթեն: - 623. ...և մեք *հանապազ* վեցեկի շարժմամբ հոգւով և մարմնով մեղանչեմք...: - 624. Այսպէս *հանապազ* յիշատակեմք զերախտիս նորա որ վասն մեր խաչեցաւ: - 632. Երկրորդ, որպէս կենդանւոյն աղ, նոյնպէս ի կեանս մեր *հանապազ* պա՛րտ է ի լեզուս ունել զօրհնութիւն և զփառս աստուծոյ: - 658. Ապա ուրեմն մի է օր դատաստանին և ո՛չ *հանապազ*: - 692. Ջրարբիք են հաւատով և յուսով մեռեալքն. և *հանապազ* յեկեղեցի սուրբ յիշատակութիւն նոցա կատարի...: - 721. Նախ՝ կոչի սիրտ և անձինք մեղաւորաց, ուր ժողովին ամենայն գործք չար որ է՛ խաղող դառնութեան. և ունակացեալ պահէ յինքեան. և հեշտութեամբն ծնլէ *հանապազ* և արբենայ մեղացն գինով: - 748. Դարձեալ, ծառ կենաց և անմահական պտուղ՝ մարմին և արիւնն սուրբ. յորմէ ճաշակեալ *հանապազ*՝ անմահ կենացն վիճակէ զմեզ...: - 768. Իսկ երկոտասան պտուղն իցէ երկոտասան աստիճանք հաւատոյն. որ ի սրտի և ի լեզուս առանց խափանման *հանապազ* դալանի և արտաբերի: - 768. Այլ բոլորովին զհամագոյ և ըզհամառօտ և զանաւելորդ երրորդութիւնն փառաւորեա միշտ և *հանապազ*: - 771

**ՅԱՆԱՊԱԶՈՐԴ** + Դարձեալ՝ յատկութիւն ի տկարութենէ. զի *հանապազորդ* ունի զպակասութիւն. և անկա՛ր է ի միշտ կանգնիլն: - 275. Ա՛րդ՝ գ հաց՝ և գառն խորովեալ դնէին յառաւօտուն. և չորրորդ մասն դորակի գինւոյ. նոյնպէս և յերեկոյն *հանապազորդ*: - 346. Մետասաներորդ, բոլորապտուղ. որ է *հանապազորդ* գառն խորովեալ յառաւօտն և յերիկոյն մին հացով և դ մասն դորակի գինով: - 359. *Յանապազորդ* քահանայիցն գրիւ մի զանգեալ. կէս յառաւօտն և կէս յերիկոյն: - 359. Նա՛խ՝ շաբաթն *հանապազորդ*. և ի նորս կիրակին: - 372. Նա՛խ՝ գառն *հանապազորդ*. և նուէրք յերեսաց սեղանն և յողջակիզաց: - 372. Որ է՛ ի մեզ յամենայն աւուր պատարագն սուրբ. այլ և առաւօտուն և երեկոյին աղօթքն *հանապազորդ*: - 372. Երրորդ՝ համակ *հանապազորդ* ներգործական դարձումն բոլոր մարդոյն առ աստուած. որով մարդն աստուածային քաղցրութեամբն զմայլի. որպէս հրեշտակք ի բոլոր սրտէ՝ յամենայն անձնէ և յամենայն զօրութենէ միշտ ներգործաբար դիմեն առ աստուած. և յիւրաքանչիւրսն

ճառագայթի՛ ի նմա՛ աստուած: - 462. Եւ գո՛րծ է այսմ խորհրդոյ՝ յաւելցնել զշնորհն, և դեղ *հանապազորդ* մեղացն: - 594. Այլ և մարգարէն մովսէս դնէր յերեսաց սեղանն գառ մի խորովեալ. և հաց և գինի և չորրորդ մասն դորակի *հանապազորդ*. և ջուր ո՛չ դնէր: - 595. Նոյնպէս և քահանայքն հնչէին ի հինն. որպէս այժմ ի յեկեղեցի ժողովեն ի յաղօթս *հանապազորդ*: - 618. Իսկ արտասուքն *հանապազո՛րդ* է ըստ ամենայնին. և առաւել քան զամենայն ընծայ հաշտութեան: - 619. Իսկ եկեսցէն ունի սաղմոսս **թ** փոխ բոլոր. պահապան **թ** ժամուց *հանապազորդ* գիշերոյն: - 622. Երկու դասք էին երգիչք ի տաճարին զոր կարգեաց դաւիթ ընդ տիւ և ընդ գիշեր *հանապազորդ* պաշտօն **իդ** ժամուց. - 636. Իսկ մեծացուսցէքն, և խաչի, և հանգստեան, *հանապազո՛րդք* են. զի միշտ բարեխօսք են: - 642. Դարձեալ՝ տերև զկանաչագեղ կեանս. և ծաղկեալ առաքինութեամբ. և պտուղ արդեանցն *հանապազորդ*: - 765

**ՅԱՆԱՊԱԶՈՐԴԵԱՆ +** Նոյն է վայելչութիւն *հանապազորդեան*: - 768

**ՅԱՆԳԱՄԱՆՔ +** Նա՛խ՝ հրամայեաց աստուած գրել զլինելութիւն աշխարհի. և ձևացոյց ի միտսն մովսէսի. զի մի՛ մոռասցին *հանգամանքն*. վասն որոյ զգալի խորան հրամայէ կազմել: - 342

**ՅԱՆԳԻՍՏ +** Երկրորդ՝ զի ի ջուրն *հանգստեան* սնուցանէ. այսինքն է աւազանին մկրտութեամբն ի հոգի սուրբ: - 49. Զի՞նչ է *հանգիստ* մտաց: - 101. Ապա ուրեմն *հանգիստ* է ճշմարտութիւնն՝ և լուծումն՝ և նմանութիւնն: - 104. Որև յայլուրեք ի քերօբէս ասի նստել. զի ամենեքեան աստուածակիրք են և *հանգիստ* կամացն աստուծոյ: - 135. Յնգետասաներորդ՝ ասէ սուրբն դիոնէսիոս՝ թէ վասն այն տայ աստուած սրբոցն նեղութիւնս և փորձութիւնս, զի նեղութիւնն սիրելի և փափագելի՛ է նոցա. և յայնժամ ուրախանան սուրբքն, յորժամ ի մարմնական հեշտութեանց հեռանան. և արիանան ի փորձութիւնս. և սակաւ նեղութեամբ ժամանեն ի մեծ *հանգիստն*: - 159-160. Թէպէտ ուր ուրէք *զհանգիստ* նշանակելով նստիլ ասի աստուծոյ, և ի յօգնութիւն ժամանել: - 172. Տասներորդ՝ և որ վեհագոյնն է. զի ապարանք և *հանգիստ* է միայն աստուծոյ պատշաճեալ: - 184. Զի սոքա են դարազլուխք **զ** դարուց. և **է**երորդն *հանգիստ*: - 193. Տասներորդ՝ **զ** թիւն նշանակէ զժամանակս բարեգործութեան. այլ շաբաթն ուր հանգեաւ աստուած՝ *զհանգիստն* յաւիտենական: - 193. Իններորդ՝ *հանգիստն*: - 209. ...և յեօթներորդն, *զհանգիստ* արդարոցն ասեն: - 226. *Յանգիստն* ի պարանոցն: - 250. Վեցերորդ՝ կին, իբր թէ կայանք և *հանգիստ* մարդոյն: - 276. Յիսուն, Վասն զանազան շաբաթուց. որ նշանակէ՛ *զհանգիստն* մեր: - 284. Նոյնպէս և սուրբքն ջերմ սիրովն աստուծոյ ժողովին ի կայանս հոգւոցն ի տեղւոջ լուսոյ և *հանգստեան*: - 315. Նա՛խ՝ զի անդ ի *հանգիստ* մտցեն: - 324. Նմանապէս և հոգին սուրբ ի գիշեր կենդաղոյս լուսով աւետարանին առաջնորդէ՛ մինչև հասուցանէ յայգն հանդերձեալ աւուր ի ցօղաւոր ամպն որ է՛ բանն մարմնացեալ. որ է հովանի և *հանգիստ* ամենայն սրբոց: - 338. Ապա թէ բորոտիմք ծածուկ մեղօք ի մարմնի՝ կապեալ բերանով առանց խոստովանելոյ, արտաքսիմք յեկեղեցւոյ՝ ի *հանգստենէ*՝ և ի փառաց արդարոց: - 368. Յոգեպէս նշանակեն ի մեզ զ**է** *հանգիստ*: - 372. Յինգերորդ՝ *հանգիստն* կատարեալ հոգւով և մարմնով. որ է՛ փողոց հնչմունք. ազատութիւն յապականութեանց. ամ թողութեան և իւրաքանչիւր ուրուք ի ստացուածս իւր դարձումն. որ է՛ գործոց հատուցումն: - 372. Զի՞նչ ցուցանէր **գ** օր յառաջ գնալ տապանակին դիտեալ *զհանգիստ*: - 380. Յինգերորդ՝ յառաջ տապանակն գնայր և դիտէր *հանգիստ*. և զհետ վէմն տայր ջուր. զի այժմ *զհանգիստ* պատրաստէ՛, և յետոյ զվայելչութիւն տայ: - 385. Զի օր՝ ժամանակիս այս պատշաճի. և շաբաթ՝ մահուն *հանգիստն*. և ամիս՝ մինչ ի յարութեանն: - 399. Երրորդ՝ յայտնեմք զփառս և զպատիւ և *զհանգիստ* նոցա և զայլն: - 406. Այլ և *հանգիստն* աշխատելոց՝ վաստակի: - 470. Եւ դարձեալ ի բարութիւն և ի *հանգիստ* ելեալ ի ձախողակի՛ կենցաղոյս: - 521. Նոյնպէս և նստիլն *զհանգիստն* ցուցանէ: - 521. Յաղուհացն *հանգստեան* չկայ: - 527. Եւ միւս՝ որ դառնայ ի հեշտալին որ է՛ *հանգիստ* մարմնոյ. ըստ որում կոչի ծուլութիւն: - 559. Եօթներորդ՝ զի որ հպարտքն են ոչ ունին *հանգիստ* մտաց և մարմնոյ. քանզի որ քան մարդ խոնարհէ՝ այն քան *հանգիստ* է: - 562. Երրորդ՝ զի մարմինք սրբոց ի գաւիթս պահին և ո՛չ յեկեղեցի. յօրինակ հոգւոց նոցա որք են ի պահեստ հոգւոյն ի տեղւոջ լուսոյ և *հանգստեան*: - 617. Եւ ապա՛ ի *հանգստեանն* ժամուն: - 621. և Իններորդն է *հանգստեան* ժամն ի դէմս հօր. որ ասեմք եկեսցէ և ննջեմք. - 622. Եւ վեց կիսափոխն՝ յաւելեալ ժամուցն մինչ ի *հանգստեանն*: - 622. Եւ այս գիտելի է, զի ի գիշերն **դ** անգամ կատարի. այսինքն է *հանգստեանն*, մէջ գիշերին, առաւօտին, և արևագալին: - 622. *Յանգիստն* որպէս մասնաւորքն. նոյնպէս և տունքն: - 631. *Զհանգստեանն*, և զմարտիրոսացն, պետրոս գետադարձն: - 637. Շաբաթ մեծամեծ տօն սրբոց. որք են ի *հանգիստն* երկնից. - 642. ...զի շաբաթն *հանգիստ* լսի: - 642. Այլ և *հանգստեան* ասեմք. նշանակ առ հասարակ յարութեանն. ննջեցելոցն մեր մաղթանք: - 642. Իսկ մեծացուսցէքն, և խաչի, և *հանգստեան*, հանապազո՛րդք են. զի միշտ բարեխօսք են: - 642. Նախ՝ զի ի շաբաթի սկսաւ *հանգիստն* և երանութիւն սրբոցն. յաւուր որում հանգեաւ աստուած ի գործոց: - 647. ...և ի **է** օրն սկսաւ զիմանալի

աշխարհին որ սրբոցն է *հանգիստ:* - 647. Եւ զայն աշխարհին տեսութեամբ և իմացմամբ միշտ յաւիտեան. անվախճան պատրաստէ՛ *զհանգիստ* և զերանութիւն նոցա: - 647. Եւ որպէս ի բարին է հանգուցեալ աստուած, նոյնպէս և բարի գործքն մեր *հանգիստ* է աստուծոյ և մեզ: - 647. Երրորդ՝ զշաբաթս *հանգիստ* կոչեաց աստուած. - 647. ...որ նշանակէր *զհանգիստ* և զվարս սրբոցն: - 647. Հինգերորդ, որպէս յետ **զ** աւուր լինի շաբաթ և *հանգիստ*, - 648. ...նոյնպէս և սուրբքն ակնունին յետ **զ** դարուց վճարման կենցաղոյս ժառանգել *զհանգիստն* յաւիտենական. - 648. ...նշանակէ *զհանգիստ* ապաշխարողաց. որք յուրբաթի յանցեաք ընդ ադամայ. ի շաբաթի հանգչիմք ընդ քրիստոսի: - 648. Նոյնպէս և սուրբք որ ա՛յժմ են ի *հանգիստ*՝ ի կիրակէ գալստեանն ի կատարեալ փառս և ի *հանգիստ* մշտնջենաւոր փոխին. ի հանգչելոյ ի *հանգիստ*. ի փառաց ի փառս: - 648. Զի մերձ յինքեանս և յինքեան տեսանեն զփառս և *զհանգիստ:* - 648. Եւ թէ հարցանէ ոք, այժմ ի յո՞ր *հանգիստ* են որ փոխին: - 648. Ասեմք թէ՝ այժմ ի *հանգիստ* գործո՛ցն են, և յայնժամ փոխին ի *հանգիստ* փառաց և պսակաց: - 648. Վասն է՞ր յաղուհացս *հանգստեան* ո՛չ ասեմք: - 650. Իսկ տեարքն բազմեալ ի *հանգիստ* վայելման: - 656. Իսկ վասն գրակարդացի և նկարեալ եկեղեցւոյ. և վասն զնշխարս ի *հանգիստ* փոխելոյ. այս ամենայն յիշատակ է մեզ ի սրբոյն գրիգորէ՛ լուսաւորչէն մերմէ: - 659. Եւ տանիլ ի *հանգիստ:* - 660. Եւ ի մեծ բարեկենդանին՝ **դ** շաբաթն և ուրբաթն *հանգստեան*: - 660. Որպէս որք ի խաւար բանտից զերծանին և ազատեալք զլոյս տեսանեն. նոյնպէս և հոգին բաժանեալ ի մարմնոյ. և են ի լոյս և յերանութեան *հանգիստն*: - 669. Օծցեն սուրբ իւղովն և ողջունեն և տանին ի *հանգիստն*: - 671. Եւ համակարգք իւր իջուսցեն զնա ի *հանգիստ*...: - 674. Զի ցուցցէ թէ նմանապէս լինելոց է ի յարութեանն *հանգիստ* նոցա ի կարգս իւրեանց: - 674. Ո՞րն է **գ** *հանգիստն*. և զի՞նչ խորհուրդն: - 675. Եւ նշանակէ նախ զերեք *հանգստեանն*. մինն մարմնոյ. և միւսն հոգւոյ. և միւսն հոգւոյ և մարմնոյ: - 675. ...որպէս ասեն ոմանք. վասն սոցա երեք *հանգստեան* տամք և աւետարան ընթեռնումք: - 675. Հինգերորդ, զի **գ** է հասակ մարդոյս. մանկութեան երիտասարդութեան և ծերութեան յորում փոփոխիմք վարուք. վասն սոցա **գ** *հանգիստ* դնեմք: - 675. ...վասն որոյ երիցս *հանգիստ* դնեմք: - 675. Եօթներորդ, զի **գ** են *հանգիստ* և վարձք սրբոցն. որպէս ասէ տէրն. **ճ, կ,** և **լ**...: - 675. ...վասն որոյ երիցս *հանգիստ* դնեմք, - 675. Երրորդ, զի խաչաձև դնի մարմինն ի *հանգիստն*. որ և ձեռքն խաչանմա՛ն է ի վերայ սրտին: - 677. Իսկ *հանգիստ* կոչի, Նա՛խ՝ զի հանգեաւ յաշխատանաց մարմնոյն. այլ և ի չար գործոց: - 679. Դարձեալ՝ *հանգիստ* է, զոր մինչև ցայժմ ժողովէր արդարութեամբ, այժմ կամի վայելել: - 679. Եւ դարձեալ՝ ցուցանէ թէ այսպէս և հոգի նորա անշարժ կայ և մնայ ի յաւիտենական փառս և ի մշտնջենաւոր *հանգիստն* ամէն: - 679. Եւ այլն յառաջագոյն ասացաւ **գ** *հանգստեան* դնելոյ: - 683. Եւ զի՞նչ է որ ի մեծի բարեկենդանին զբ չորեքշաբաթ և զուրբաթն *հանգստեան* ասեմք: - 684. Եւ դարձեալ, զի ի **խ** օր պահոցն մինչ ի յարութիւնն ղազարու այլ *հանգստեան* ո՛չ տօնեմք: - 684. Եւ միւս ներսէս ի *հանգիստն* յոհաննու: - 687. Եւ ի *հանգիստն* յօհաննու ասէ, - 688. Դարձեալ ասեմք, թէպէտ զներկայն ետես, սպիտակ հանդերձն ո՛չ ցուցանէ զփառս հատուցման. այլ զփառս և *զհանգիստ* գործոց: - 690. Երրորդ, ասէ առաքեալն թադէոս, եթէ հոգի ամենայն մարդոյ որ ելանէ ի մարմնոյ, են նոցա օթևանք և բնակութիւն ի *հանգստեան*...: - 691. Արդ ըստ կատարեալ գործոցն զոր ունին յինքեանս՝ եղեն անդրանիկ երանութեամբ և *հանգստեամբ*: - 695. ...և են առ աստուած ի *հանգիստ* որպէս լուաք. և ճշմարիտ է հանգչիլն ի թանձրութենէն՝ յախտաւոր կրից զերծելոցն և առ աստուած եղելոցն: - 696. Ասեմք նախ՝ եթէ մարգարէն դաւիթ վասն բոլոր աշխարհի ասէ որ ջրով և հրով անցանի. և ապա *հանգիստ* յաւիտենական լինի...: -701. Եւ յետ այնորիկ ոչ առ ժամայն գայցէ տէր ի դատաստան. այլ տացի խաղաղութիւն աւուրս խե. առ ի *հանգիստ* սրբոցն և ի յապաշխարութիւն թիւրելոցն: - 709. Ցուցանեն այսոքիկ զկատարեալ և զառաւել *հանգիստ* սրբոցն այժմ յուսով և յետ մահու հոգւով թագաւորեալ ընդ քրիստոսի. և ապա յետ յարութեանն հոգւով և մարմնով ո՛չ **ռ** ամօք. այլ անվախճան կենօք...: -710. Այլ արդ ի կեանս յայս տեսանեմք զբազումս որ բարիքն ի նեղութեան են և չարքն ի *հանգստեան*...: - 715. Նախ կոչի աթոռ նշանակ *հանգստեան*. որպէս հասարակաց մարդկան: - 736. Երկրորդ կոչի հնձան արքայութիւնն երկնից. ուր ժողովին պսակք և փառք զանազան *հանգստեան* սրբոց զոր պատրաստեալ է աստուած սիրելեաց իւրոց ըստ առաքելոյ: - 748-749. Եւ յետ մահու ըզկաւորն. այսինքն *զհանգիստն* ի հոգիս: - 758. Եւ թէպէտ մի իցէ արքայութիւն սրբոց, սակայն զանազանեսցին փառօք և պսակաւ և *հանգստեամբ*: - 760. Յորոց փրկեսցէ զմեզ փրկիչն ամենայնի և առհասարակ զամենայն հաւատացեալս անուան իւրոյ. և կացուսցէ ի տեղւոջ լուսոյ և *հանգստեան.* Ամէն: - 760. Եւ յետ նոցա ամենայն բազմութեանց ժողովելոց յամենայն ազգաց ասէ. որք եկին ի բազում վշտաց աշխարհի. այսինքն որք զանազան առաքինութեամբ և բազում նեղութեամբ մտին ի *հանգիստն*: - 760

**ՀԱՆԳՈՅՆ +** Բայց և այս բան՝ *հանգոյն* առաջնո՛յն է իմանալ. որք միտս ունին և ո՛չ նուազին: - 45.

Եւ այլք թէ՝ սողոմոն. զի չափաւո՛ր է բանքն տնատեալ *հանգոյն* բանիցն սողոմոնի: - 320. Դարձեալ և այսոքիւք, թէ լինէիր իմաստուն որպէս զսողոմոն. որում ո՛չ գտաւ *հանգոյն* նման ի վերայ երկրի: - 761. *Յանգո՛յն* է այսմ և նախնոյն ադամայ: - 782. Այլ և աստ ապաշաւելն ոչ ինչ օգտեալ. որպէս և անդ ո՛չ լսողաց բերանով հաշեալք. որ և ո՛չ գոյր անդրէն դառնալ. և ո՛չ կարի յօժարացն շահավաճառ եղեալ. ո՛չ գիւտ և ո՛չ ողորմ. *հանգոյն* յիմարացն օրիորդաց: - 789

**ՅԱՆԳՈՒՑԱՆԵՄ +** Ներգործութիւն՝ *հանգուցանելն* զաշխատեալքս: - 86. Եւ թէ ծարաւին գետք որ ի ծով մտանեն. և անձրևք *հանգուցանեն* զնոսա: - 208. ...և բերէր ի խորանն *հանգուցանէր*. որպէս ցուցաւ յառաջագոյն յերկրորդ թագաւորութեանց **ժդ** համարն: - 645. Եւ այսպէս ամենայն առաքինութիւն աստ *հանգուցանէ* զմիտս. և յետ մահու զհոգիս. և յարութեանն զհոգի և զմարմին: - 689

***ՅԱՆԳՈՒՑԵԱԼ +*** Երկրորդ՝ զի կամքն աստուծոյ *հանգուցեալ* է ի նոսա և ուղղէ՛: - 139. Երրորդ՝ նշանն սրբոյն յակոբայ մծբնայ հայրապետին. և գեօղն արկուռի՝ ուր տնկեաց այգի. և քաղաքն նախիջևան, ուր ինքն նոյ *հանգուցեալ* է ի տապանի: - 295. Եւ միշտ յամենայն օր ի թոշակ *հանգուցեալոցն*: - 346. Որ է՛ նախ քան զխաչն, և ի խաչին, և ի գերեզմանին *հանգուցեալ*: - 423. Եւ դարձեալ՝ հաճութիւնն է *հանգուցեալ* կամքն. այսինքն հոգւովն սրբով հանգեալ ի յորդի առեցեալ մարմնովն: - 488. Այլ և *հանգուցեալ* ի գիրկս իւր զվաստակեալսն մեզօք...: - 490. Զի որպէս աստուած ի գործոց իւրոց *հանգուցեալ* է, - 647. Եւ որպէս ի բարին է *հանգուցեալ* աստուած, նոյնպէս և բարի գործքն մեր հանգիստ է աստուծոյ և մեզ: - 647. Եօթներորդ, ցուցանէ թէ հոգին սուրբ և քրիստոս *հանգուցեալ* է ի նշխարս սրբոց. որպէս ի կեանքն՝ նոյնպէս և ի մահն: - 672. Եւ այսու նշանաւ ճանաչեաց հոգի մեծատանն զհոգին աբրահամու և զղազարու ի գոգ նորա *հանգուցեալ*: - 719. Յորս իբրև յոստս թռչունք երկնից՝ այսինքն սուրբքն *հանգուցեալ* են և բունի՛ն: - 755

**ՅԱՆԳՉԻՄ +** Եօթներորդ՝ էջ հոգին սուրբ ի վերայ քրիստոսի և *հանգեաւ* ի վերայ նորա: - 69. Նախ՝ որպէս տեսութիւն աչաց ի մարմինն *հանգչի*: - 104. Տասներորդ՝ զ թիւն նշանակէ զժամանակս բարեգործութեան. այլ շաբաթն ուր *հանգեաւ* աստուած՝ զհանգիստն յաւիտենական: - 193. Եւ զի *հանգչին* աշխատեալքն: - 196. Այլ այժմ ի ձեռն արուեստից ստացեալ զզէնս, յորժամ պիտոյանայ՝ առնու և ի գործ ածէ. և յորժամ կամի՝ ի բաց դնէ և *հանգչի*: - 217. Զի տնկական հոգին յօժարի՛ գոլ. և զգայականն բարեպէս գոլ. և բանականն ևս բարեպէս գոլ. զի ո՛չ երբէք *հանգչի*, մինչև միաւորեսցի ընդ ևս բարեգունին: - 249. Քաղելով գործելն այն է, որ **ժե** կանգուն հաւասար բարձրացոյց, զի մեծահասակ կենդանիքն *հանգիցեն*: - 293. Դարձեալ՝ մորենին անարգ թուփ՝ նշանակէր զխոնարհութիւնն մովսէսի յոր *հանգեաւ* աստուած...: - 331. Նա՛խ՝ զի խստասի՛րտք էին և անողորմք. և ո՛չ տային *հանգչիլ* ծառայիցն և անասնոցն: - 371. Երրորդ՝ զի *հանգիցէ* երկիր և տարերք որ ի չար գործն մեր չարչարին. այլ և պահպանապետ հրեշտակք նոցա: - 372. Երկրորդ՝ *հանգչիմք* ի խղճէ մտաց: - 372. Զի շաբաթացեալ *հանգչիցի* երկիր ի չար բնակչաց: - 376. Չորրորդ, **զ** օրն ի մեզ զղջմամբ և խոստովանութեամբ և փոխարինաւն *հանգչիմք*: - 380. Հինգերորդ՝ ի կեանս մեր՝ և յետ մահու՝ և յարութեանն *հանգչիմք*: - 380. Այլ ի կուսանս *հանգչի*. որք հրեշտակաց նմանք եղեն կուսութեամբ. վասն այն ասեն աստուած բնակեալ է յերկինս ուր կուսանք են հրեշտակք. և ո՛չ յերկրի ուր ամուսնացեալք են: - 404. Դաւիթ եթող զիրէաստան և բնակեցաւ յայլազգիս. և որդի նորա եթող զիրէայս և *հանգեաւ* ի հեթանոս: - 437. Երկրորդ՝ զի **հ** ամն իբրև զմի օր համարեցաւ նոցա. զի *հանգիցեն* ի չար գործոց, և երկիրն ի չար գործելոյ: - 448. Եւ դարձեալ՝ հաճութիւնն է հանգուցեալ կամքն. այսինքն հոգւովն սրբով *հանգեալ* ի յորդի առեցեալ մարմնովն: - 488. Արդ զապարանքն պիղատոսի իբր զմի տեղի առեալ. թէպէտ կրկնեալ եղև. և խաչելութեանն տեղի լինի **զ**. և գերեզմանն յորում *հանգեաւ* **է**: - 493. Իսկ վերջին դժոխք որ կոչի անջրդի գուբ, նոցա՛ է որք ո՛չ ունին չար և ո՛չ բարի. որպէս մանկունք անմկրտեալք. ո՛չ տանջին զի չեն մեղանչեալ. և ո՛չ *հանգչին* զի չեն արդարացեալ. այլ վասն սկզբնականին մնան յանջրդի գուբն խաւարին: - 505. Նա՛խ՝ զի *հանգիցէ* ի վաստակոցն զոր **լգ** ամ վաստակեցաւ ի վերայ երկրի: - 519. Նա՛խ՝ զի հոգին սուրբ պարգևք է խաչին քրիստոսի. այլ և ի վերնատունն լուսեղէն խաչիւ *հանգեաւ* յառաքեալսն: - 625. Նախ՝ զի ի շաբաթի սկսաւ հանգիստն և երանութիւն սրբոցն. յաւուր որում *հանգեաւ* աստուած ի գործոց: - 647. Երկրորդ, զի ի սմա *հանգեաւ* աստուած ի գործոց իւրոց ի բարութիւնն: - 647. ...նոյնպէս և սուրբքն ի գործոց իւրեանց *հանգչին*: - 647. ...և օրէնս եդ որ *հանգչէր* մարդ ի մարմնական գործոց յաւուրս և ի շաբաթս, յամիսս և ի տարիս. - 647. ...նոյնպէս և ի շաբաթի օրս *հանգեաւ* ի չարչարանաց ուրբաթուն և եդաւ ի գերեզմանի: - 647-648. ...վասն որոյ տէրն քրիստոս մարմնով ի գերեզմանի *հանգեաւ*. և սուրբքն հոգւով առ աստուած յերկինս: - 648. ...նշանակէ զհանգիստ ապաշխարողաց. որք յուրբաթի յանցեաք ընդ ադամայ. ի շաբաթի *հանգչիմք* ընդ քրիստոսի: - 648.

Նոյնպէս և սուրբք որ ա՛յժմ են ի հանգիստ՝ ի կիրակէ գալստեանն ի կատարեալ փառս և ի հանգիստ մշտնջենաւոր փոխին. ի *հանգչելոյ* ի հանգիստ. ի փառաց ի փառս: - 648. Զի որպէս աստուած ի գործոց իւրոց *հանգչի*. - 648. ...նոյնպէս և սուրբքն ամենայն ի գործոց իւրեանց *հանգչին* և փառաւորին և սպասեն գալստեանն քրիստոսի և հատուցման վարձուցն: - 648. Եւ ասացաւ նոցա *հանգչիլ*. մինչև լցցին ծառայակիցք և ընկերք նոցա: - 648. Նա՛խ՝ զի համըՆթա՛ցք են ասէ ի վաստակն. այսինքն հոգին և մարմինն. ի միասին և *հանգիցեն* և պսակեսցին: - 668-669. Չորրորդ, մարմինն ի հող *հանգչի* և հոգին ի կայանս հոգւոց...: - 677. Իսկ հանգիստ կոչի, Նա՛խ՝ զի *հանգեաւ* յաշխատանաց մարմնոյն. այլ և ի չար գործոց: - 679. Եւ այժմ հոգիք սրբոց առնուն զփառս գործոց ըստ ինքեան. զի *հանգչին* և ուրախանան ի գործս իւրեանց, - 689. Զի հոգիք սրբոցն ո՛չ են առանց մխիթարութեան. այլ *հանգչին* և ուրախանան ի գործս իւրեանց և յուսով փառացն հատուցման. - 690. Եւ թէ մասն մարդոյն որ է հոգին՝ տանջի այժմ վասն մեղաց և մարմինն *հանգչի*, այս ո՛չ է ուղիղ, նոյնպէս և զփառսն: - 694. ...և են առ աստուած ի հանգիստ որպէս լուաք. և ճշմարիտ է *հանգչիլն* ի թանձրութենէն՝ յախտաւոր կրից զերծելոցն և առ աստուած եղելոցն: - 696. Աստ վաստակիլ և անդ *հանգչիլ*: - 704. Այլ հրէայքն յայնժամ դարձցին ի հաւատս քրիստոսի. և եկեղեցի սուրբ խաղաղութեամբ *հանգիցէ* մինչ ի կատարած աշխարհի...: - 709. ...այսինքն բոլոր ամենայն անդամօք մարմնոյն յաստուածութիւնն *հանգիցէ*. զի դադարեսցի եկեղեցի յամենայն աշխատութեանց: - 736. Նախ՝ զի կամ ննջելով *հանգչին* ի տանջանացն. իսկ անդ հատեալ է քուն յաչաց նոցա: - 750. Երբեմն գոգ աբրահամու, վասն ընդ հօրն հաւատոյ որդւոցն *հանգչելոյ*: - 757

**ՀԱՆԳՍՏԱՐԱՆ +** Այսպէս և *հանգստարանք* եպիսկոպոսաց ի կարգս իւրեանց, և քահանայից, և կրօնաւորաց, և թագաւորաց, և աշխարհականաց: - 674

**ՀԱՆԳՐՈՒԱՆ** + Եւ որպէս դարձաւ ժողովուրդն ի *հանգրուանն* առաջին. և տեառն մարմինն եդաւ ի հող երկրի: - 337. Եւ որպէս դարձաւ ժողովուրդն ի *հանգրուանն* առաջին, և տն մարմինն եդաւ ի հող երկրի: - 513

**ՀԱՆԴԱՐՏ** + Ի սմա՛ ժողովեալ գազանաբարոյ և *հանդարտ* մարդկան ո՛չ մեղանչելով միմեանց: - 294. ...**թ**՝ *զհանդարտն* խռովէ՛...: - 322. Հինգերորդ, նոցա ձայնն որոտմամբ ահագին. և մեզ բանն *հանդարտ* և քաղցր: - 354. Իսկ զոր կանոն գլուխ կոչեմք, ասելով **զ** գուբղայ *հանդարտ* ի թիւ. և զեօթներորդն ձայնիւ: - 627

**ՀԱՆԴԱՐՏԵՄ** + Ըմբռնելն յուսադրեաց զմովսէս յաղթել ցփարաւոնի և *հանդարտել*: - 332

**ՀԱՆԴԵՐՁ** + Զորօրինակ՝ իրն ի ներկայս որ է նիւթ ներընդունակ՝ ունի կրկին զօրութիւն. որպէս *հանդերձն* կարէ՛ պատառիլ, և կարէ՛ ո՛չ պատառիլ. և ջուրն կարէ ջերմն գոլ, և կարէ՛ ո՛չ գոլ. և մինն ի նոցանէ՛ լինի ներգործութեամբ որն և հանդիպի: - 9. Իսկ միւս զօրութիւնն որ կարելի է՝ և ներընդունի զգոլն և զչգոլն՝ և երբեմն՝ ասի ի վերայ փոփոխական բնութեանց. որպէս *հանդերձն* կարէ՛ պատառիլ և ո՛չ պատառիլ. և ջուրն կարէ՛ ցրտացուցանել և ո՛չ ցրտացուցանել: - 168. Տասներորդ՝ մաշկեղէն *հանդերձն* ադամայ. իսկ այլ զգեստք ի յարւեստից կազմեցան յետոյ: - 216. Երեսունն**թ**՝ Մաշկեղէն *հանդերձն*: - 228. Քառասուներորդ՝ Ո՞րպէս է ի մեր մարմինս մաշկեղէն *հանդերձն*: - 228. Վեցերորդ՝ զի թէպէտ ի ձեռագործ *հանդերձից* մե՛րկ էին, սակայն ի լուսոյ շնորհաց զարդարեա՛լ էին: - 278. Ութերորդ՝ մաշկեղէն *հանդերձն*. ո՛չ ըստ ոմանց թէ մորթ մարմնոյս, զի ունէր զայս ի ստեղծմանէն: - 280. Զի՞նչ է մաշկեղէն *հանդերձն* զոր զգեցոյց աստուած ադամայ: - 281. Ո՞րպէս ասեն մաշկեղէն *հանդերձ* զմարմինս մեր: - 282. *Հանդերձն* մաշկեղէն՝ էր իր, և էր նշանակութիւն: - 282. Այսպէս մշակեղէն *հանդերձն* նշանակէ՛ զտխրալի և ախտաւոր մարմինս: - 282. Որպէս ասէ աստուածաբանն թէ՝ ոչ ինչ էր ծածկոյթ ի մէջ նոցա և աստուծոյ. իսկ յետ մեղացն փոխեցան այսոքիկ. վասն որոյ մաշկեղէն *հանդերձին* ցուցմամբն նշանակէ՛ զմարմինս: - 282. Զի զգեստ կոչի արտաքին *հանդերձն* որ ծածկէ զմարմինն: - 318. Եւ զգեստ կոչի մարմինն որ ծածկէ զհոգին. ըստ որում մաշկեղէն *հանդերձն* ադամայ որ էր արտաքին զգեստ և նշանակէր զմարմինն: - 318. Եւ այսպէս զանազանին սոքա. մարմին մեր զգեստ է գոյացական. և *հանդերձն* պատահական: - 318. Եւ դարձեալ՝ մարմինն է անփոփոխ. և *հանդերձն* փոփոխական: - 318. Իսկ վերջին խորհուրդ է, յորժամ վասն հարկաւոր պիտոյից կերակրոյ և *հանդերձի*՝ յերկրաւորս հպիմք: - 331. Զի *հանդերձն* սպիտակ՝ շապիքն է և Կապոյտ վտաւակն՝ նափորտն: - 348. Այլ և մարմնոյն՝ ծածուկ մեղքն. և *հանդերձին*՝ յայտնի մեղքն: - 367. Եւ այրել *զհանդերձն*, հանդերձեալ պատիժ հրոյն: - 367. Դարձեալ՝ **գ** իրա՛ց էր բորն. մարմնոյն՝ *հանդերձին*՝ և տանն: - 367. Իսկ թէ ի *հանդերձն* յայտնի մեղանչեմք առանց ապաշխարութեան, լուցկի առնէ հրոյն որպէս ասացաւ ի վերոյ: - 368. Երկրորդ՝ ողողելոյ *զհանդերձն*, է՛ ջուր խոստովանութեանն և թողութեան մեղաց: - 384. Եւ այն որ վիճա՛կն է՝ ծիրանեգոյն *հանդե՛րձ* է. որ զսեղան հացին և զխնկոցն

ծածկէին. և տեսութիւն կամ փրկութիւն թարգմանի: - 425. Իսկ թերափն է բոլորակ *հանդերձ* ծածկոյթ տապանակին: - 425. Սա՛ ի **դ** ամի թագաւորութեան իւրում կազմէ՛ *զհանդերձանս* տաճարին. և զեօթն ամ կատարեաց: - 452. Երրորդ՝ օրինակն. զի ամենայն անսուրբ ջրով լուացեալ սրբիւր. և ողողեալ *զհանդերձս* այնպէս մտանէր ի բանակն. և յաւազանն խոստովանութեան ջրովն: - 488. Զագահութիւնն՝ բազմաբաշխութիւնն. որ ետ զմարմին իւր ի կերակուր և զարիւնն իւր ըմպելի. զհոգին ի գին. զջուր կողին ի լուացումն. *զհանդերձն* խաչողացն. զմարմինն՝ աշակերտացն. և զմայրն՝ յոհաննու: - 489. Չինգերորդ՝ ածաւ առ հերովդէս. և ի հրէից յոյժ չարախօսեալ. և սպիտակ *հանդերձ* զգեցեալ առ ի նախատինս: - 492. Որ և պահապանքն շրջապատեալ. որ և *զհանդերձն* պատատեալ յանկողնի, և լերդ այծեաց և մազ ի սնարսն. և ի գիշերի իջեալ ընդ պատուհանն և ելեալ առ սամուէլ զերծաւ ի ձեռաց նոցա: - 513. Եւ տէրն ի գիշերի ելեալ ի գերեզմանէն բաժանեաց և էառ զհոգիս մարդկան ի նմանէ. և արար իւր *հանդերձ* զսուրբ ժողովուրդ իւր: - 513-514. Եւ գիտելի է, զի յետ օծանելոյն զգեցուցանեն *զհանդերձս* պայծառ. որ զլուսաւոր վարս և զպայծառ հաւատս և զանմեղութիւնն նշանակէ: - 594. և զաման գինւոյն և զնշխարն տանիլ առ աւագ սարկաւագն. և *զհանդերձ* սեղանոյն լուանալ: - 606. Նախ այն է՝ որ հրամայէր մովսէս պղծոցն լուանալ զմարմինն և ողողել *զհանդերձն* և արտաքոյ կալ մինչև յերեկոյ: - 653. Զի՞նչ նշանակէ սուգն և կոծն և *հանդերձին* պատառելն: - 670. Դարձեալ՝ նշանակէ՛ յետ մեռելոյն զփոխումն ուրախութեան մեր ի սուգ և ի մերկութիւն. և ի սև *հանդերձս*. ի խաւար տունս և այլն: - 670. Ա՛րդ՝ եթէ ի հասարակ ժողովրդենէ իցէ ննջեցեալն, հանեն զիին *հանդերձն* և պատե՛ն սուրբ կտաւովք և զգլուխն փակեղամբ և վարշամակօք, և օդ յոտս: - 671. Եւ դարձեալ, ի հոգևորն մերկ եկն և սուրբ *հանդերձիւ* զգեցեալ գնաց: - 671. և որպէս ի կեանքն *հանդերձիւ* ծածկեմք, նոյնպէս ի մահն հողով: - 677. Նախ ասեմ, եթէ *հանդերձ* սպիտակ և պսակք և աթոռք և այլն ամենայն զոր ետես ի տեսիլն՝ ո՛չ ներկային. այլ հանդերձելոյն էր տեսութիւն որ ինչ լինելոց է ի կատարածի...: - 690. Դարձեալ ասեմք, թէպէտ զներկայն ետես, սպիտակ *հանդերձն* ո՛չ ցուցանէ զփառս հատուցման. այլ զփառս և զհանգիստ գործոց: - 690. ...որպէս ասէ մեկնիչն տեսլեան. եթէ սպիտակ *հանդերձն* շնորհացն քրիստոսի մաքրութիւնն է. որ սրբութիւն մեղաց մերոց արար քրիստոս. յոր ամենայնքն վայելեցաք. զի յորժամ սրբի հոգին, բնական ունի զպայծառութիւնն: - 690. Երրորդ, աներևոյթ են մեղօք և ո՛չ ունին զպայծառութիւն բարեաց. որպէս այն որ ո՛չ ունէր *զհանդերձ* հարսանեաց: - 691. Ասէ մեկնիչն, սպիտակ *հանդերձն* զոր զգեցեալ էին՝ շնորհացն քրիստոսի մաքրութիւնն է. յորմէ ամենեքեան վայելեցաք որպէս ասէ առաքեալն. - 696. Զի՞նչ է սպիտակ *հանդերձն*: - 712. Պայծառ *հանդերձն* զոր զգեցեալ են՝ շնորհացն քրիստոսի մաքրութիւնն է յոր ամենայնքն վայելեցաք. - 712. Եւ զի սպիտակ *հանդերձն* արդարութիւն սրբոցն է...: - 712

**ՅԱՆԴԵՐՁ** (կապ) + Չինգերորդ՝ նոցա անմոռանալի՛ է տեսութիւնն. իսկ մերս *հանդերձ* մոռացմամբ. որքան զգայութեամբս տեսանէ միտքն: - 120. Զի յատուկ է առաջին պատճառին որ է՛ աստուած՝ ի հարկէ էակ գոլ՝ և միշտ ներգործութեամբ, և իսկապէս ներգործութեամբ. որովք տարորոշի յայսցանէ՝ որ կարելի՛ են էակ գոլ. և երբեմն ներգործութեամբ և *հանդերձ* զօրութեամբ: - 162. Որպէս այսոքիկ որ փոփոխականք են. որ կարեն գոլ և ո՛չ գոլ. և երբեմն *հանդերձ* զօրութեամբ: - 162. Արդ՝ է՛ զօրութիւն մի՝ որ *հանդերձ* ներգործութեամբ է. և է՛ զօրութիւն որ առանց ներգործութեան է: - 167. Իսկ անձն է զանազանեալ *հանդերձ* բացորոշ յատկութեամբ. որպէս պետրոս: - 174. Եւ դարձեալ արեգակն միջակ գոլով հաղորդի ամենայն մոլորակաց. և զայն անցուցանէ ի լուսինն լուսո՛վն *հանդերձ*: - 187. Դարձեալ՝ զի տնկականն վերափչո՛ւմն է օդոյն *հանդերձ* խոնաւութեամբն երկրի. վասն որոյ բոլորաձև արտաքս գայ և լինի ծառ: - 213. Դարձեալ՝ բազմազա՛նք են առաքինութիւնքն ի մեզ *հանդերձ* քաղցրութեամբն: - 381. Զի ունի մայրական խնդութիւն *հանդերձ* կուսութեան պատուով: - 463. Ողջոյնս այս՝ է *հանդերձ* բերողիւն և առաքողիւն և կուսիւն ցուցանէ զժ գերազանցութիւն պատուոյ կուսին: - 463-464. Եւ որպէս ասացաւ ունի մայրական խնդութիւն *հանդերձ* կուսական պատուով: - 469. Այլ և զանազանի յոյսն. զի որք են ի ճանապարհ աստի կենաց, յոյս նոցա է՛ *հանդերձ* ստուգութեամբ կարծեաց որպէս ասացաւ: - 574. Իսկ որք ելեալք են ի մարմնոյ, յոյս նոցա է՛ *հանդերձ* ստուգութեամբ գիտութեան. զի ստուգապէս գիտեն զլինելոց հատուցումն: - 574. Նոյնպէս և այժմ սրբոց և երանելեաց յոյսն է *հանդերձ* ստուգութեամբ տեսութեանն. զի դեռևս հանդերձեալ է նոցա մարմնոցն յարութիւն. և փառք և պսակքն ըստ իրին: - 574. Եւ դարձեալ ասեմք, թէ աստի կենացն յոյս է՛ *հանդերձ* ստուգութեամբ կարծեաց...: - 696. ...և յետ մահու յոյս նոցա է՛ *հանդերձ* ստուգութեամբ գիտութեանն. և կամ տեսութեանն. - 696. Այսպէս քրիստոս այնու կերպարանաւ որով համբարձաւ՝ *հանդերձ* ամենայն դասուք հրեշտակաց ի դատաստան եկեսցէ: - 734. Ո՞րպիսի լիցի օրն այն, մինչ քեզ մարիամ մայր տն ընդ առաջ ելանէ *հանդերձ* պարուք կուսանաց: - 764. Մինչ զկնի կարմիր ծովուն՝

յընկըղմիլն փարաւօնի *հանդերձ* զօրօքն, զքմբուկն ունելով երգէ՛ զերգն...: - 764. Բարւոք ասացաւ յարարչէն. զի թէ և բնութիւն թարց երևակայութեան, և արհեստ *հանդերձ* երևակայութեամբ, սակայն կամք արարչական ետ նոցա բնական և բանական կարողութիւն. և ոչ ինչ վայրապար կազմեն զտեսակ գոյացական և զտեսակ պատահական. խնդրելով ոմն պարզ նիւթ. և ոմն տեսակացեալ: - 786

**ՅԱՆԴԵՐՁԵՄ +** Երկրորդ՝ զի թէ ի ներկայս ասեմք ի վերայ քարի թէ լինիցի փայտ. ո՛չ լինի այնպէս. արդ՝ թէ ասելն մեր զներկայն ո՛չ փոփոխէ, նա և ո՛չ *զհանդերձեալ*. կարէ փոխել. ո՛չ ըզմերձաւոր *հանդերձեալն* և ո՛չ զհեռաւորն: - 8. Ապա յա՛յտ է՝ թէ զոր ինչ խորհիմք՝ ի *հանդերձեալն* զնոյն առնեմք. և ո՛չ ի հարկէ բանն մեր որպէս ցուցաւ: - 9. Ա՛յսպէս և որ ի *հանդերձեալն* լինելոցն է՝ ունի կրկին զօրութիւն լինելոյ և ո՛չ լինելոյ. և հանդիպմամբ միոնն յառաջէ՛ ի նոցանէ և լինի ներգործութեամբ: - 9. Եւ թէ ոք ասիցէ, բազում բանք մեր բացորոշակի լինին ի *հանդերձեալն*. որպէս թագաւորն յորժամ ասէ շինեսցի քաղաք, և շինի. և ասեմք թէ այսանուն մարդ մեռանելոց է, և մեռանի. և աղօթեմք և լինի. և այլն նմանապէս անէծք կամ օրհնութիւնք: - 9. Իսկ ի տեսութիւն մարդոյ է՛ առաջին և վերջին. զի զանցեալն տեսանէ յիշմամբ, և զներկայն իմացմամբ. և *զհանդերձեալն* ի պատճառն իւր ըստ ժամանակին փոփոխման որպէս ասացաք: - 15. Իսկ հինգերորդն ի *հանդերձեալն* դէմ՝ յանդիման տեսութիւն ըստ առաքելոյ: - 24. Զոր հայր մեր է ըստ ստեղծմանն և *հանդերձելոյ* աշխարհին: - 39. Այլ զայս երկբայիս յաղագս ոչ գիտելոյ քոյ թէ «մինչդ» ամենուրէք ո՛չ որոշէ ընդդէմ *հանդերձելոյն*. զի թէպէտ նշանակէ՛ զկէտն ուր մինչն է եղեալ, այլ զոր ա՛նդր է քան զնա՝ ո՛չ ուրանայ: - 42. Եւ թէ էր այսպէս՝ հետևէր ապա հօր զի արարեալ իցէ ա՛յլ աշխարհ. և *հանդերձեալ*. և շրջեալ յաշխարհի. սրբեալ զախտաժէտս. մեռեալս յարուցեալ. և ի վերայ ծովու գնացեալ: - 45. Չորեքտասաներորդ՝ ասէ պօղոս յեփեսացւոցն թէ՝ հայր կացոյց զքրիստոս յերկնաւորս ի վերայ ամենայն իշխանութեանց. և պետութեանց. և զօրութեանց. և ամենայն անուանելոց. ո՛չ միայն յաշխարհիս այլ և ի *հանդերձելումն*: - 97. Քսանըերորդ՝ առաքեալն պօղոս և աւետարանիչն յօհաննէս վկայեն *հանդերձելոյն* թէ՝ «տեսանելոց եմք զնա որպէս և էն. և ճանաչեմք զնա որպէս նայն ծանեաւ զիս»: - 99. Վեցերորդ՝ ոչէ ասին և բացարձակքն որ ի *հանդերձեալն*. զի դեռևս ո՛չ են. այլ՝ լինելոց են միշտ: - 111. Երրորդ՝ զի ի նմա՛ է անցեալն՝ ներկայն և *հանդերձեալն*: - 111. Եւ գիտելի է, զի յարացուցիս և նախասահմանութեանս՝ արարողական պատճառ է աստուած. և նիւթական պատճառ իրն այն որ է նախասահմանի. և տեսական պատճառ է՛ կարգն. զի նախ տըւեալ լինի շնորհքն աստ. եւ ապա փառքն ի *հանդերձեալն*. և կատարողական պատճառ՝ զի լինիցիմք սուրբք և անբիծք: - 112. Նախ ասի անեղ՝ որ դեռ չէ՛ եղեալ. որպէս այն որ ի *հանդերձեալն* լինի. որ կարօտ է սկզբան: - 113. Իսկ միտքն աստուծոյ ի վեր է քան զժամանակ. վասն որոյ ներկայաբար զանցեալն և *զհանդերձեալն* տեսանէ: - 117. Յամանգամայն, այս է՝ զանցեալն և *զհանդերձեալն* իբր ներկայ տեսանէ և ներկայապէս. զի յինքն տեսանէ զամենայն. և ինքն ներկա՛յ է ինքեան: - 118. Չորրորդ՝ զի զանցեալն և զներկայն և *զհանդերձեալն* տեսանէ: - 119. Աստուածային էութիւնն ըստ որում բնութիւն է՝ թէ զինչ է կամ որպիսի ինչ է անգիտելի՛ է մեզ յայսմ աշխարհի և ի *հանդերձելումն*: - 119. Չորրորդ՝ զգայութիւնն տեսանէ զմերձակա՛յն. որպէս ա՛ստ, և այժմ. և միտք զհեռաւորն և զանցեալն և *զհանդերձեալն*: - 121. Իսկ արժանաւորաց զհոգևոր շնորհս և զհաւատս աստ, և ի *հանդերձեալն* զփառս_անվախճանս: - 127. Իններորդ՝ սկիզբն է շնորհաց որպէս այժմ. և կատարումն փառաց ի *հանդերձեալն*: - 130. Իսկ աստ երեւումն, և նշանակ *հանդերձելոյ* իրողութեանց: - 133. Վեցերորդ՝ թողեալ լինին ոմանք չարչարեալ առ ի նախանձ այլոց. զի պատիւ չարչարելոցն յայտնի լիցի վասն *հանդերձեալ* յուսոյն...: - 158. Եւ այսպէս են մարմնաւոր բարիք. որպէս ոսկի և այլ ինչ. որ ի ձեռն ողորմութեան պատճառէ՛ *զհանդերձեալ* բարիսն: - 160. Ասեմք Նախ՝ եթէ ո՛չ մի է. այլ բ. այսինքն ներկայս, և *հանդերձեալ* աշխարհն: - 179. Տասներորդ՝ ըստ չափու և կարողութեան բաշխէ. որպէս ի կեանս յայսմիկ, և ի *հանդերձեալն* առաւել զի կարիցեմք տանել: - 185. Եւ սոքա երեք եղանակքս օրինակ են այսմ կենցաղոյս. և ձմեռն *հանդերձելոյն* որպէս ասացաւ: - 198. Զի ժամանակն նա՛խ է *հանդերձեալ*. և ապա ներկայ, և յետոյ լինի անցեալ: - 198. Իսկ նշանակէ նախ զժամանակն. զի անցեալն և *հանդերձեալն* ո՛չ է ի միջի այլ ներկայն: - 267. Նոյնպէս և յղանալն *հանդերձեալ* է, և վախճանեալ անցեալն, որ ո՛չ երևին. այլ միայն ծնեալն երևի որ է՛ ներկայ: - 267-268. Նա՛խ՝ զի մնացորդք գործոց և խորհրդոց կերպարանին ի յիշատակարանս հոգոյն զոր ինչ գործեաց ի անցելումն, կամ խորհեցաւ վասն *հանդերձելոյն*: - 268. Դարձեալ՝ հանճարն է *հանդերձելոյն*. իմաստն ներկային. գիտութիւնն անցեալ ժամանակին: - 270. Եւ այլք ասեն եթէ՝ պատկեր եղաք այժմ, այլ նման լինելոց եմք ի *հանդերձեալն*...: - 273. Նաև ըստ երից դրութեանց տեղեացն. որ է՛ դրախտն. և աշխարհս այս. և *հանդերձեալն*: - 278. Իսկ յետ մահուն ի *հանդերձեալն*. ո՛չ կարէ մեղանչել, և անկա՛ր է մեղանչել: - 278. Եւ թէ զի՞նչ փոխի ի *հանդերձեալն*: - 284. Որպէս ենովս որ

յուսացաւ կոչել զանուն տեառն աստուծոյ. այսինքն յուսացաւ *զհանդերձեալ* կեանսն որ աներևոյթն էր. և վասն իւրաքանչիւր գործոց գոլ հատուցումն. և կոչեաց զանունն աստուծոյ ի յօգնականութիւն: - 288. Եւ ի *հանդերձեալսն* գոգ և հանգիստ արդարոց կոչեցաւ ըստ ղուկասու...: - 288. Նա՛խ՝ զի յաներևոյթ կեանսն և ի *հանդերձեալն* յուսացաւ...: - 288-289. Եւ այս ցոյցք յուսո՛յ է վասն *հանդերձելոյն* հոգալ և պատրաստել: - 289. Նոյնպէս և անդրանիկ ծնունդքն աշխարհի էին նահապետքն որ նախ քան զջուրն, տևէին ի կեանս այս թճ կամ աւելի ամ, և ապա ծնանեին ի *հանդերձեալ* կեանսն մահւամբ ելիւք: - 290. Երրորդ՝ **թ** դաս հրեշտակաց է յերկինս. և **ժ**երրորդն մարդն կատարումն թւոյ նոցա. վասն այն ի կեանս այս ո՛չ հասանեն ի **ռ** թիւն կատարեալ. զի աստ ո՛չ լինի կատարումն դասուցն այլ ի *հանդերձեալն*: - 291. Եւ յորժամ փոփոխի այս, այսինքն ի *հանդերձեալն*, յայնժամ ի լեզուս հրեշտակաց խօսիցիմք: - 298. Զի հա՛յր ասէ զնա մարգարէն՝ *հանդերձեալ* աշխարհին աստեղափայլ պայծառացելոցն լուսաճաճանչ սլացմամբ: - 306. Ութերորդ՝ նախկին է ժամանակս, և երկրորդ *հանդերձեալն*. և կեանք ժամանակիս խոտեալ է և անարգ. և *հանդերձեալն* պատուական է և ընտիր: - 310. Նա՛խ՝ զի էն ներկայակա՛ն է. զի էրն և եղիցին անցեալն և *հանդերձեալն* է: - 312. Երկրորդ՝ էրն զվախճան անցելոյն ցուցանէ, և եղիցին զսկիզբն *հանդերձելոյն*: - 312. Վասն երրորդին ասէր յոբ զբարի և չար գործոց հատուցմունքն լինիլ առհասարակ յետո՛յ ի *հանդերձեալն*. զի աստ են մեղաւորք և հնացեալք ի մեծութեան. և ներէ՛ նոցա աստուած վասն կրկին պատճառի: - 324. Երկրորդ՝ զի թէ ո՛չ օգտին՝ ափիբերան լիցին ի *հանդերձեալն*: - 324. Երրորդ՝ ցուցանէ թէ կրկին գովութիւն է և հատուցումն արդարոց. աստ և ի *հանդերձեալն*: - 326. Իսկ զինչէն ի *հանդերձեալն* որքան կա՛ր է մեր...: - 331. Իսկ որպիսի ինչէն աստուծոյ՝ անգիտելի մնայ աստ և ի *հանդերձեալն* յամենայն եղական մտաց. թէ հրեշտակաց և թէ մարդկան: - 331. Սոյնպէս և ամենայն մեղաւորաց կրկին է հատուցումն. այսինքն հոգւով և մարմնով. կամ աստ և ի *հանդերձեալն*: - 335. Իսկ դեք խօսին զմերձաւոր *հանդերձեալն*: - 336. Նմանապէս և հոգին սուրբ ի գիշեր կենցաղոյս լուսով աւետարանին առաջնորդէ՛ մինչև հասուցանէ յայգն *հանդերձեալ* աւուր ի ցօղաւոր ամպն որ է՛ բանն մարմնացեալ. որ է հովանի և հանգիստ ամենայն սրբոց: - 338. Երես զիսկութիւն աստուածութեանն նշանակէ. զոր աստի կենօքս ո՛չ ոք կարէ տեսանել. որպէս զբոլորակ արեգականն. այլ ի *հանդերձեալն* տեսանեն ընտրեալք ըստ չափու: - 350. Հինն օրինա՛կ էր, և նորս ճշմարտութիւն. *հանդերձեալն* զի՞նչ փոխի: - 355. Նա՛խ՝ հինն օրինակ էր և նորս ճշմարտութիւն. և *հանդերձեալն* առաւել ճշմարտութիւն որպէս սուրբ սրբոց: - 355. Եւ այրել զհանդերձն, *հանդերձեալ* պատիժ հրոյն: - 367. Եւ կէս դորակին՝ զի յայժմու կեանս կիսակատա՛րք են ամենայն նուէրք մեր մինչ ի *հանդերձեալն*: - 375. Դարձեալ՝ քաղեբ և յեսու. հին և նոր կտակարանք. որք *զհանդերձեալն* մեզ պատմեն. և զյաղթելն անմարմին թշնամւոյն: - 380. Դարձեալ՝ *զհանդերձեալ* կեանս՝ դառնութեամբ աստեացս գտանեմք: - 381. Երրորդ՝ զայժմոյս և *զհանդերձելոյն* նշանակէ: - 387. Վեցերորդ՝ նախ զկեանս զայս տեսանեմք որ է արևմուտք. և ապա յետ մահու *զհանդերձեալն* որ է՛ արևելք: - 395. Երկրորդ՝ ծածո՛կ է *հանդերձեալն* գործ. և յայտնի անցեալն և ներկայն: - 406. Իսկ բարեաց չար առնել՝ անիրաւութիւն է. որ ո՛չ գոյ բնաւ առ աստուած. ո՛չ ի կեանս յայս և ո՛չ ի *հանդերձելումն*: - 408. Երրորդ՝ զի առցեն մասնաւոր զառհաւատչեայ *հանդերձելոյն*. տանջելով աստ ի սով, ի սուր, և ի գերութիւն: - 408. Նոյնպէս և *հանդերձեալ* պատուհասն բարի է և արդարութիւն: - 408. Նա՛խ՝ փոփոխմամբ իւր նշանակէ՛ զփոփոխելի կենցաղս այս. իսկ արեգակն անփոփո՛խ է. որ է՛ *հանդերձեալն*: - 411. Երկրորդ՝ զփոփոխելի կեանքս սգան. և յուսով *հանդերձեալ* յարութեանն դադարին ի սգոյ և ուրախանան: - 411. Երրորդ՝ *զհանդերձեալ* յարութեան խորհուրդն յինքեան ցուցանէր: - 411. Սակայն *հանդերձեալն* և սիրտ մարդոյն՝ միայն աստուծոյ է գիտելի և ոչ այլ ումեք որպէս ասացաւ ի սկիզբն գրոցս: - 430. Չորրորդ՝ ողորմութիւնն աստուծոյ է աստ ի կեանս. և արդարութիւնն ի *հանդերձեալն*: - 458. Նմանապէս և յարութիւնն մեր կոչի ծնունդ ի *հանդերձեալ* կեանսն...: - 471. Այլ ա՛րդ՝ տէրն մահուամբ զմահ մեռոյց որ է՛ դժոխքն այժմ. և յարութեամբն եբարձ զապականութիւն մարմնոյ ի *հանդերձեալն*. ապա ուրեմն աւերեաց զդժոխս: - 506. Եւ թէ ոք ասիցէ՝ հաւատն ա՛ստ է, և ի *հանդերձեալն* խափանի: - 507. Ասեմք եթէ՝ խափանի հաւատն ի *հանդերձեալն* վասն դէմ յանդիման տեսութեանն: - 507. Երկրորդ՝ զի տացէ օրինակ համբերութեան մերոյ, զի սպասեսցուք վարձուն ի *հանդերձեալն*. և ո՛չ իսկոյն վաղափոյթ լինիլ առնուլ այժմու կենօք...: - 520. Վեցերորդ, զի եկեղեցի որ է մարմինն քրիստոսի՝ յետ չարչարանաց նեռինն որ *հանդերձեալ* է կրել, զկնի **խ** աւուր յերկինս համբառնալոց հաւատացեալ լինի: - 521. Այլ և *հանդերձելոյն* զի է շաբաթէ ի յարութենէն քրիստոսի...: - 524. Եւ **է** շաբաթն **ծ** օր է. որ է՛ ազատարար թիւ և օրինակ *հանդերձելոյն*: - 524. Հինգերորդ՝ նման սատանային լինին որք ուրանան զպատճառն գոյութեան հոգոց իւրեանց. յիրաւի ապա որպէս սատանայ ո՛չ ունի թողութիւն ի կեանս յայս և ո՛չ ի *հանդերձեալն* և գործ ունէի նմին: - 566. Եւ պատիժն է ի

*հանդերձեալն* որ է ապագայն: - 569. Յոյսն է ստոյգ ակնկալութիւն *հանդերձեալ* երանութեանն. յառաջ եկեալ ի շնորհացն աստուծոյ և ի յատուկ արդեանցն: - 573. Ձի հաւատն է վասն անցելոցն և *հանդերձելոց*: - 574. Իսկ յոյսն վասն *հանդերձելոյն* միայն: - 574. Նոյնպէս և այժմ սրբոց և երանելեաց յոյսն է հանդերձ ստուգութեամբ տեսութեանն. զի դեռևս *հանդերձեալ* է նոցա մարմնոցն յարութիւն. և փառք և պսակքն ըստ իրին: - 574. Չորրորդ՝ հաւատն է յանցեալն և ի *հանդերձեալն* որպէս ասացաւ. յոյսն միայն ի *հանդերձեալն*. և սէրն ի ներկայն որ է միշտն: - 577. Խաւարն միայն. թէ այժմ և թէ ի *հանդերձեալն*: - 593. Եւ դարձեալ տամ զքեզ ի խորհուրդ սուրբ եկեղեցոյ. զոր ինչ գործեսցես, եղիցի քեզ ի բարեգործութիւն և ի փառս *հանդերձեալ* կենացն ամէն: - 602. Ասեմք թէ՝ որպէս մահն է վախճան կենցաղոյս և սկիզբն *հանդերձելոյն*: - 605. Երրորդ, վասն է կենցաղոյս՝ և ըստ *հանդերձելումն* **ը** օր տօնեմք: - 616. Յաւախօսն է աւևորութիւնն. և Առաւօտն ծերն է. որ մերձ է ծագման *հանդերձելոյ* աշխարհին: - 622. Չորրորդ՝ վասն այսմ աշխարհիս և *հենդերձելոյն* առանձնակի աղօթեմք փրկիլ ի փորձանաց: - 623. Այլ աղօթքն վասն *հանդերձելոյն* է: - 626. Եւ զվերջին կանոնն ելք աստիճանաց. որ է՛ յաստեացս ի *հանդերձեալն*: - 627. Նոյնպէս և խունկն զիւղաբերից կանանցն և զբուրումն *հանդերձելոյն* առ մեզ: - 628. Այլ և ոմանք ի *հանդերձեալն* ո՛չ ունին պատասխանի առաջի ահաւոր բեմին քրիստոսի: - 628. Դարձեալ և ըստ մերոց վարդապետաց, առաջին կանոնին ը երրորդ գուբղայն օրհնութիւն՝ ի *հանդերձելումն* ակնարկէ...: - 630. Այլ և այսպէս **բ** որմունք լինելոց են ի *հանդերձեալն*. այսինքն է մին հրեշտակաց և միւսն մարդկան սրբոց յաւիտենից փառաբանիչք: - 636. Դարձեալ՝ ի *հանդերձեալն* յորժամ խառնին հրեշտակք և մարդիկք ի լնուլ զտեղի անկելոց՝ կուսանաց սրբոց: - 636. Եւ ինքն դաւիթ *հանդերձեալ* և հոլանեալ երգէր զտաւիղն որպէս սարկաւագունք. - 645. ...նշանակէ՛ *զհանդերձեալն* որ դէմ յանդիման տեսանելոց եմք զնա: - 646. Որք առին զճապատիկն աստ. և զբիւրապատիկն ի *հանդերձեալն*: - 647. Եւ նշանակէ՛ ճաշն զաստիս, և ընթրիսն *զհանդերձեալն*: - 656. Չորրորդ, զի մա՛սն է հոգւոյն և *հանդերձեալ* կենացն. պա՛րտ է զպատւականն որոշել քան զմարմնոյս: - 657. ...նոյնպէս և մեզ մասն ինչ բարւոյ է և աստուծոյ. և մասն ինչ աշխարհի. մասն ինչ հոգւոյ և մասն ինչ մարմնոյ. աստի՛ կենաց և *հանդերձելոյն*...: - 658. Առաջին՝ Վասն է՞ր աստուած նախ զայս կեանքս, և ապա *զհանդերձեալն* տայ: - 660. Յետ այսորիկ հարցանելի՛ է վասն *հանդերձելոյն*: - 662. Իններորդ՝ ճանապարհ կոչի և մահն որով ի *հանդերձեալն* ընթանամք. - 666. Երրորդ ի ժամն. զի անցեալ մասն յաւելու. և ներկայն անցանէ. և *հանդերձեալն* պակասի. և բոլորն կատարի և լցուի: - 666. Չորրորդ, զի գ է ժամանակ յորում գործեմք զմեղս. այսինքն անցեալն ներկայն և *հանդերձեալն*...: - 675. Դարձեալ՝ կրկին է կեանք. այսինքն ժամանակեայս և *հանդերձեալն*. և յերկոքինս սխալեցաք մեք. - 680. ...ոչ թողու արդար իրաւունքն աստուծոյ ելանել յերկինս. այլ կան և մնան ի ներքոյ. ակնունելով *հանդերձեալ* դատաստանին...: - 688. Նախ ասեմ, եթէ հանդերձ սպիտակ և պսակք և աթոռք և այլն ամենայն զոր ետես ի տեսիլն՝ ո՛չ ներկային. այլ *հանդերձելոյն* էր տեսութիւն որ ինչ լինելոց է ի կատարածի...: - 690. Ապա ուրեմն երկոքինն ո՛չ կրեն այժմ զտանջանս, այլ ի *հանդերձեալն*: - 690. Այսպէս և աստ մինչև՝ զոր մինչ առ ինքն նշանակէ, և *զհանդերձեալն* ո՛չ լքանէ: - 704. Եւս յայտնի, աստեացս ամենայնի կատարումն է՛ ի *հանդերձեալն*. այսինքն մեղաց և արդարութեան. պատժի և պարգևի. կապելոյ և արձակելոյ: - 704. Ձայս ասէ մի՛ աստ և մի ի *հանդերձելումն*: - 704. իսկ հոգիք սրբոցն նախ ծաղկին բնական պայծառութեամբն իւրեանց որպէս ցուցաւ ի վերոյ, և ապա՛ յետոյ արդեամբք պտղոյն կատարին ի *հանդերձեալ* կեանքն: - 721. Այլ չար փոխանակ բարեաց ո՛չ երբէք հատուցանէ. ոչ ի կեանս յայս և ո՛չ ի *հանդերձեալն*. զի ո՛չ է անիրաւ. այլ արդար յամենայնի և ճշմարիտ: - 744. Կամ ցուցանէ զչափով տանջանս մեղաւորացն. որք չափով աստ տանջին, չափով կրեն *զհանդերձեալ* պատիժն. զի ըղդ պակասիլ ծխոյն՝ և հուրն նուազի: - 749. Ո՞ր է ի *հանդերձեալն* տիւ և գիշեր. որպէս ասաց տեսիլն «ո՛չ հանգիցեն զտիւ և զգիշեր»: - 750. Երկրորդ՝ զի մարդկան ազգի կրկին է հատուցումն. այսինքն յայժմու կեանս և ի *հանդերձեալն*. իսկ դիւացն եօթնեկի է հատուցումն վասն եօթնեկի յանցանաց նոցա. և եօթն գլխաւորագոյն մեղացն: 750. Եւ վասն այն ասի արքայութիւն, զի նովաւ յերկնաւորսն *հանդերձեալ* եմք թագաւորել: - 754. Իսկ երկոտասան պտուղ ընտրելոցն ի *հանդերձեալն* այս ինչ է: - 766. Եւ որպէս զկենդանարար ջուր զընդունակս իւր դալարացուցեալ. ծաղկեալ յաստիս և պտղաբերեալ ի *հանդերձեալն*. - 768. Տեսանելի՛ է թէ՝ զի՞նչ արդեօք իցէ ոչ ունելն ի մտի որ է՛ մոռանալ. այսինքն զանցեալն ո՛չ յիշել. և *զհանդերձեալն* ոչ տեսանել. իսկ զներկայն ո՛չ գիտել: - 774. Եւ տեսանել զհատուցումն որ է՛ *հանդերձեալն*: - 774. Իսկ հրեշտակական կենաց է հրաշափառապէս գիտել և ո՛չ մոռանալ միշտ. ըստ որում զանցեալն և *զհանդերձեալն* ներկայապէս կրեն. զբոլորն համանգամայն և կատարեալ...: - 774. Կենցաղս այս երա՛զ է համարեալ *հանդերձելոյն* ըստ դաւթայ. «որպէս երազք զարթուցելոց»: - 775. Իսկ ի *հանդերձելումն* ապա զիա՞րդ թէ բազում անգամ

զղջացին ո՛չ գտանեն թողութիւն ասէ գիրն: - 778. Եւ այսոքիկ որք երկին ընդ դէմ միմեանց, կամ առ այլս կամ երբեմն, ո՛չ փոփոխումն ինչ ցուցանեն անփոփոխելոյն. առ մեզ փոփոխելոց ըստ արժանոյն գութ կամ հատուցումն. թէ աստ՝ թէ ի *հանդերձեալն*: - 779

**ՅԱՆԴԷՊ +** Իսկ ի մէջ ծնկաց գլուխն՝ այն է, որ զծունկն ի գետինն եդ, և զգլուխն *հանդէպ* նմին. և յայսկոյս և յայնկոյս զձեռսն խաչանման ի գետինն: - 444. Որք են անուշահոտ հոգիք սրբոցն *հանդէպ* երեսացն քրիստոսի ի տեղւոջ մշտնջենաւոր լուսոյն: - 682

**ՅԱՆԴԷՍ +** Ութերորդ՝ թոյլ տալով սրբոց չարչարիլ՝ վասն պսակացն առաւելութեան է. զի կենցաղս այս *հանդէ՛ս* է նահատակութեան. և ըստ չափոյ համբերութեան՝ առցէ զյաղթանակն...: - 159. Տասներորդ՝ ի ցուցանել թէ կաղանալ պարտիմք աշխարհի, և ապա ի *հանդէսն* աստուծոյ մտանել: - 311. Նոյնպէս և մեք ի *հանդէս* տօնից նուիրեմք նաշիհ և գինի պատարագի. ձէթ՝ մոմ՝ խունկ՝ և զենումն մատաղի: - 375. Բովանդակ անցեալքն ի *հանդէս*՝ **զճռ** էին. որ է՛ **կ** բիւր. և **գռ** և **ոծ**: - 378. Վեցերորդ՝ աստ ի *հանդիսից* սխալէ. և յետոյ ի յընթացից. և ի յարութեանն յաղթանակաց պսակէն: - 394. ...զի օծանեմք զնոսա որպէս զըմբիշս. զի ի *հանդէս* մտցէ ընդ այսս չարութեան օդոյդ: - 605. Եւ ա՛յս է խորհուրդն. զի որ քան են սուրբք ի յերկրի կենդանի, ո՛չ տօնեմք նոցա մինչ ի *հանդէս* նահատակութեան են. - 647. Եօթներորդ՝ աստ *հանդէս* մարտի է, և անդ յաղթանակ պսակի: - 662. Դարձեալ՝ մահն ե՛զր է *հանդիսից* որք են ի պատերազմ կենցաղոյս որ քան են: - 667. Յորժամ սրբազան և մաքուր հոգին հասանէ ի վախճան՝ ուրախութեամբ ցնծայ իբր ի *հանդիսից* զերծեալ և ի պսակն ընթացեալ. և որպէս յանփոփոխ կեանքն հետևեալ: - 668. Երրորդ, նշանակէր անդ ի *հանդէս* մտանել...: - 672. Չորրորդ, որպէս այն սկիզբն էր *հանդիսին* և աստ կատարումն...: - 672. ցուցանէ թէ ի նոյն *հանդէսն* ճանեցաւ և վախճան կատարման ընկալաւ: - 672. Զորօրինակ զմարտիկ ոք յետ *հանդիսին* դարձեալ լուանան ի փոշոյն և օծանեն: - 672

**ՅԱՆԴԻՊԻՄ +** Նախ առհասարակ *հանդիպիմք* ընդդիմութեանցն, եթէ որք զայս ասեն՝ մեղանչեն չորիւք եղանակօք: - 8. Իսկ ի վաղիւն ո՛չ գիտեմք թէ անձրև է թէ ոչ. զի գիտեմք որ մինն լինի. այս՝ կամ այն՝ որ և *հանդիպի*. անձրև՝ կամ ո՛չ. այլ ի հարկէ բացորոշակի ո՛չ գիտեմք զմինն: - 9. Զորօրինակ՝ իրն ի ներկայս որ է նիւթ ներընդունակ՝ ունի կրկին զօրութիւն. որպէս հանդերձն կարէ՛ պատառիլ, և կարէ՛ ո՛չ պատառիլ. և ջուրն կարէ ջերմն գոլ, և կարէ՛ ո՛չ գոլ. և մինն ի նոցանէ՛ լինի ներգործութեամբ որն և *հանդիպի*: - 9. Ապա և բանս մեր ո՛չ է հարկիւ. այլ *հանդիպելով*: - 9. Դարձեալ ասեն, թէ բազում ինչ *հանդիպի* արտաքոյ կամաց մերոց. որպէս չար հիւանդութիւն. վատաբախտութիւն. մահ. և այլն, ապա ուրեմն նոքա ի հարկէ բախտի և ճակատագրի: - 11. Դարձեալ՝ ունիմք խորհուրդ, և ընտրեմք զառնելիսն, և խոտեմք զոչ առնելիսն. և բազում անգամ խորհելովն *հանդիպիմք* բարւոյ, և փախչիմք ի չարէ. և խորհուրդն ի հնարաւորա՛ցն է որպէս ասացաւ և ո՛չ ի հարկաւորացն: - 11. Իսկ ընդդէմ մանիքեցւոցն՝ որք ասեն բ սկիզբն, չար՝ և բարի. այսպէս *հանդիպեսցուք* և պատասխանեսցուք ի կարճոյ: - 20. Եւ զիա՞րդ բաժակաւ լրումն *հանդիպեսցի* կենդանաբուղխ ջրհորոյ: - 93. Որոց *հանդիպեսցուք* այսպէս: - 94. Իսկ եթէ շնորհօք, զիա՞րդ յետոյ ի ներգործութեանց ասես *հանդիպիլ* այնոցիկ: - 94. Այլ նոքա ամենեքեան ա՛զգ են դիւաց. և ըստ զանազան գործոյն՝ զանազան անուան *հանդիպեցան*. որպէս դևն պոռնկութեան, և հպարտութեան, և բէէզեբիւղ, բեհմովթ, և այլն: - 150. Դարձեալ ասեմք, թէ կոյսն և պոռնիկն՝ առաքինութեան և չարութեան են տեսակք, և ներհա՛կք են առաքինութիւն և չարութիւն. զի փոփոխեն զմիմեանս. ըստ այնմ և թողութեան *հանդիպին*: - 165. Եւ զի ո՛չ հանապազ խաւարին. զի ո՛չ միշտ ընդ նոյն շաւիղս ընթանան. թէպէտ *հանդիպին* ընդ նոյն կենդանակերպն: - 187. Կամ են **բ** հողմունք ընդ դէմ միմեանց *հանդիպեալք* և զմիմեանս պատեալք: - 206. Եւ սպասաւորն քան զթագաւորն առաջին *հանդիպի*: - 230. Ասեմք թէ՝ նոյն է պատասխանին. զի պատահումն առ մե՛զ *հանդիպի*. այլ առ աստուած ոչ ինչ է պատահմամբ. այլ ամենայն ինչ գիտութեամբ. զի ո՛չ տերև մի ի ծառոյ անկանի առանց գիտութեանն աստուծոյ: - 237. Առաջինն՝ զի նախ արտաքին մարմնոյ *հանդիպիմք* որպէս դրան. և ապա հոգւոյն ի ներս: - 395. Եւ այսպէս ամենայն տղայոց *հանդիպի* մահ ըստ խնամոցն աստուծոյ: - 433. Այսպէս ամենայն մարդոյ *հանդիպի*: - 439. Այլ որ ուղղապէս *հանդիպիմք*՝ ասեմք թէ լ ժամ մարմինն եկաց ի գերեզմանի. և հոգին **լգ** ժամ և կէս յամեաց ի դժոխս: - 515. Նախ բնական խելքն. որ ի բարեխառն կազմուածոյ *հանդիպի*. որպէս էր՝ ակիտոփէլին և քուսեայ բարեկամին դաւթի: - 537. Այսպէս և *հանդիպեալ* հպարտութեանն՝ ելանեն ամենայն բարութիւնք մեր: - 562. Յայնժամ լոյս իմացականին կորեաւ և շիջաւ ի սատանայէ՛. և լոյս շնորհացն ո՛չ ներգործեաց ի նա. և ի նոյն սերտեալ հաստատեցաւ անզղջապէս. վասն որոյ մեծ են մեղք սատանայի և թողութեան ո՛չ *հանդիպի*: - 563. Եւ կոչի ներելի, իբր ներելի և թողլի. զի ակամայ և անգիտութեամբ *հանդիպի*: - 567. Իսկ թէ հարկաւոր ժամանակ *հանդիպի* զպատուական մասունքն միայն. և կամ զերեսս միայն բաւական է լուանալ: - 588. Եւ

թագաւորեսցէն, *զհանդիպիլ* հիղաբեր կանանցն: - 628. Իսկ թէ քահանայ ոք *հանդիպի* ի նոյն չարիս, մի՛ պաշտեսցէ զքահանայութիւնն…: - 652. Իսկ զկանոն ջրօրհնէից՝ սրբոյն բարսղի է արարեալ յեօթն ամի հայրապետութեան իւրոյ յետ. զի անդ *հանդիպեցաւ*: - 658. Արդ՝ եթէ նախ զայն էր տուեալ, այսպիսի իմն *հանդիպէր*. կամ մնալով անփոփոխ՝ զրկէր զերկիր: - 662. Երրորդ, ի *հանդիպելոյ* լինի: - 664. Երրորդ, արտասուեմք զմեզ թէ և այնպէս *հանդիպելոց* է մեզ: - 676. Արդ հայրն աբրահամ նշանակէ՛ զհայր աստուած. և հուր և սուր՝ տանջանարանք որ *հանդիպին* ի ճանապարհի օդոյդ: - 681-682. Եւ գիտելի է, զի ուրախութիւն ընտրելոցն *հանդիպեսցի* իբրև ի վեց կողմանէ: - 762. Երկրորդ՝ ի տեղւոյն բարձրութեան եռակի ուրախութիւն ընտրելոցն *հանդիպեսցի*: - 763. Հինգերորդ վասն դժոխոցն եռակի *հանդիպեսցի* ընտրելոց ուրախութիւն: - 764. Վեցերորդ և վերջին՝ վասն աշխարհի՝ ընտրելոցն *հանդիպի* եռակի ուրախութիւն: - 764. Այլ թէ յետ մահու ո՛չ *հանդիպի* թողութեան, որպէս և ո՛չ դևք: - 780. Այլ զանազանի. զի դևք ամենևին ո՛չ ունին զղջումն և ոչ կարեն. վասն որոյ ո՛չ *հանդիպին* թողութեան. իսկ մեղաւորն ունի զղջումն այլ ո՛չ կարէ վարձաւորիլ: - 780

**ՀԱՆԴԻՊՈՂ +** Որ և աղաչեմ զբարեմիտ *հանդիպօղսդ*՝ եղբայրական սիրով հաւանիլ. զպակասն լնուլ և զաւելիսն կշռել: - 772

**ՀԱՆԴԻՊՈՒՄՆ +** Ա՛յսպէս և որ ի հանդերձեալն լինելոցն է՝ ունի կրկին զօրութիւն լինելոյ և ո՛չ լինելոյ. և *հանդիպմամբ* մինն յառաջէ՛ ի նոցանէ և լինի ներգործութեամբ: - 9

**ՀԱՆԵՄ +** …բոլոր դիտումն նոցա է՛ պատրել զմարդիկ և *հանել* ի հաւատոց. և լնուլ զորովայնս. և զկանայս շեղջակուտեալս մեղօք յինքեանս գրաւել: - 35. Զի թէ ոչ կամաւ, բռնադատեցաւ յայլ իմն հզօրէ՛. և *հանէր* յաստուածութենէն: - 36. Ա՛րդ եթէ է՛ այլ որդի և եղև աթոռակից հօր, ուրեմն ի բաց *էհան* զբանն ի նստելոյն ընդ աջմէ հօր որ է սեփհական նմա և վայելուչ հօր՝ լինիլ աթոռակից և գահակից: - 67. Իսկ եթէ զմարդկութիւնն բնութեամբ որդի ասացեր, ահա որ *հաներ* զբանն յորդիութենէ: - 69. Եւ դարձեալ՝ զի *հաներ* զբանն ի կազէ Երրորդութեանն. շարադասելով զմարդն ի տեղի նորին: - 69. Եւ ապա ի բարձր *հանէ* վարդապետութիւն զբնութեանցն միաւորութիւն. ասէ՝ այլ և այլ յորոց փրկիչն. եթէ ոչ՝ նո՛յն է երևելին և աներևոյթն. անժամանակն և ընդ ժամանակաւն: - 80. Եւ բարձրութիւն որ ի յերկինս *էհան*: - 129. Զորօրինակ՝ որպէս տղայ որ տեսանիցէ ցից ի յորմում, երբայ ի մօտ. թէ ամո՛ւր է՝ թողու. վասն զի ո՛չ կարէ *հանել*. և երբայ առ միւսն. թէ շարժի՝ ի մօտ կենայ մինչև հանէ՛: - 160-161. Զորօրինակ՝ որպէս տղայ որ տեսանիցէ ցից ի յորմում, երբայ ի մօտ. թէ ամո՛ւր է՝ թողու. վասն զի ո՛չ կարէ հանել. և երբայ առ միւսն. թէ շարժի՝ ի մօտ կենայ մինչև *հանէ*: - 160-161. Ապա թէ զկամքն երետ՝ ուրախանայ և կենայ ի մօտն մինչև զմեղքն գործել տայ և *հանէ* ի բարւոյն: - 161. Եւ այսու զանազանի փորձութիւնն աստուծոյ և սատանայի, Նախ՝ որպէս ասացաք՝ աստուած փորձէ՛ զի յայտնեսցէ զբարութիւնն. և սատանայ փորձէ զի *հանցէ* ի բարւոյն: - 161. Իսկ գիշեր յարութեանն քրիստոսի՝ փոխեաց զայս կարգ. զի յարութեամբն իւրով *եհան* զմեզ ի լոյս շնորհաց և արդարութեան: - 194. Երրորդ՝ զի ջուրք ծովուն բա՛րձր է քան զերկիր. վասն որոյ հա՛րկ առնէ և ի վե՛ր մղէ և ապա՛ հեղու յերկիր. զորօրինակ մարդիկք ի բարձրագոյն լերանց իջուցանեն զջուրն, և ըստ նոյն չափոյ ի միւս կողմն ի վեր *հանեն* սակաւ ինչ պակաս: - 209. **Չորրորդ՝ ցոյցք է ամենահրաշ խնամոց արարչին. որ զհոսանուտ ջուրս ներքին՝ ի մէջ լերանց ի վե՛ր *հանէ* ի պէտս կենդանեաց որ ա՛նդ են. այլ և յոռոգումն ուր գետք ոչ ելանեն**: - 209. Երկրորդ՝ և յորժամ մարդն ապականեցաւ մեղօք, վասն է՛ր ի դրախտէն *հանէր* զնա: - 222. Զոր ընդ դերևս *հանէ* սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս կազմութեան այսպէս եթէ, որք զհոգին յառաջ ասեն գոյանալ քան զմարմին. և վասն մեղաց եդեալ ի մարմին մարդոյ. որ է՛ համաձայն բանականութեամբ. և է՛ իներքոյ երկնային կենաց՝ զի մարմնաւո՛ր է: - 252. Զայս բժան պարզևս *էհան* ի մէնջ նա: - 279. Երրորդ՝ զի կուսութեամբ եկաց. և այսոքիկ երկնայինք են և *հանեն* զմարդն առ աստուած: - 289. Չորրորդ՝ զի պտուղ ո՛չ եկեր. որով նա ուտելովն զրկեցաւ կենաց. և այսպիսիքս յերկինս *հանեն* զմարդն: - 290. **Զոր օրինակ վարժ մշակացն է՛ մինչև յերեկոյն. այլ թէ հիւանդութիւն կամ այլ ինչ դիպի, *հանէ՛* ի վարձուն և ի մշակութեանցն**: - 291. Զկենդանին հրամայէ զենուլ. և զարիւնն և զշունչն *հանել* և ապա՛ ուտել: - 295. Եօթներորդ՝ արիւնն հուրն է՝ և շունչն օդն. պա՛րտ է *հանել* զք տարրն. իսկ մնացեալն ջուր է և հող՝ ուտելի է: - 295. Տասներորդ՝ արիւն ուտել գազանա՛ց է հմակերաց. զի մի՛ լիցուք անողորմ և գազանասիրտ՝ հրամայէ՛ զարիւնն *հանել* և զանզգայ մարմինն եփել և ուտել: - 295. Նա՛խ՝ զարիւնն և զշունչն *հանեմք*: - 296. Զի արիւն և շունչն արակա՛ն է որպէս ցուցաւ. վասն այն ա՛յրն *հանէ* զնուսա. և կինն չէ տուեալ արիւն՝ ո՞րպէս *հանէ*: - 296. Զենուլ ծկանն այն է՝ որ ի ջրոյն *հանեն*. զի զշունչ ջրոյ ունի և ո՛չ զշունչ օդոյ: - 296. Երկրորդ՝ որպէս նմա ասաց աստուած, ես իջից ընդ քեզ և ես *հանից* անտի: - 314. Ուստի յայտ է զի բարձր գոչեաց և *եհան* զոգի. զի ամենայն մարդկան նուազի ձայնն

ի ժամ մահուանն: - 316. Չորրորդ՝ ի խորհուրդ յարութեան մերոյ, որ վերըստին գոյացուցանէ ի խաւարէ՛ գերեզմանին և ի լոյս *հանէ* և ուրախութեամբ զարդարէ՛ և փառաւորէ՛: - 321. ...**զդ**՝ անդամալոյծ միակողմանց բժշկութիւն. էդ՝ բորոտից սրբութիւն. **ըդ**՝ բոլոր մարմնոյն հիւանդաց և ջերմացելոց առողջութիւն. **թդ**՝ զդևսն *հանէր*. **ժդ**՝ զմեռեալսն յարուցանէր: - 328. Եւ որպէս նա՛ ի մէջ գիշերի *էհան* զժողովուրդն: - 330. Եւ **խ** ամ ի մադիամ եկաց. և ի *հանել* զժողովուրդն՝ **խ** ամ յանապատին եկաց: - 330. Նա՛խ թէ՝ զմեռելոտի խորհուրդն *հա՛ն* ի մտաց քոց: - 331. Եւ *հանել* զկօշիկս յոտից, այսինքն ի վերջին խորհրդոց յերկրաւորս մերժեցեալ: - 331. Եւ պա՛րտ է զաղտեղութիւնն *հանել* և սրբել. ...: - 331. Եւ յաջակողմն, Շրայիա՜. դո՛ւ *հաներ* զմեզ աստուած: - 338. Եւ յայսմանէ՝ *հանեն* մասն զերիկամունս և զլերդափոյթն և զբովանդակ ճարպն ի հոտ անուշից տեառն: - 358. Եւ զայլն բովանդակ մորթով և փորոտիւք և գլխով *հանեն* ի մոխրակոյտն և այրեն անդ: - 358. Եւ զմորթն ի բաց *հանել*. զծածկոյթ մեղացն: - 360. Եւ զայս ցուցանէ զմորթն ի բաց *հանելն* և ապա՛ պատարագել: - 363. Երրորդ՝ որ զմիսն ի վերայ յօշէին և ի մեծ սեղանն *հանէին*: - 364. Չորրորդ՝ որով զճարպն ի սեղանն *հանէին*: - 364. Ո ոք և *հանցէ*՝ ուտելի՛ է: - 366. Նա՛խ՝ զարիւնն *հանել* որ է՛ կենդանութիւն և աստուծոյ մասն. և զմնացեալն ուտել որ է տարր միայն: - 366. Եւ թէ լիցի երկաթ և ո՛չ սուր, և ո՛չ է պիտանի. որպէս բոլոր երկաթն թէ հարցէ զկենդանին և սպանցէ, ո՛չ է ուտելի, զի թէպէտ զարիւնն *հանէ*, այլ ո՛չ համանգամայն զշունչն և զջերմութիւնն: - 366. Եւ միւս հաւն թաթաւեալ յարիւն, հոգին կենդանի. որ կարեկից լինի մարմնոյն և զսրբութիւն նորա *հանէ՛* յուսով ի դաշտն որ է՛ յերկինս: - 368. Եւ արիւնն, զմեղս մեր բարձեալ յինքեան և տարեալ ի դաշտն առ հայր յերկինս. զի որպէս մեռեալ մարմնովն քաւեաց զմեղս. նոյնպէս և անմահ աստուածութեամբն կենդանացոյց և յերկինս *եհան*: - 369. Երրորդ՝ զի աւետարանիչքն յայտնապէս ասեն թէ՝ ընդ մկրտիլ տեառն՝ նոյն ժամայն հոգին *հանէ՛* զնա յանապատ. և պահեաց զ**խ** տիւ և զ**խ** գիշեր: - 373. Նախ գերծու զհերն. և զոր ուխտիւն աճէ՝ զայն ի սեղանն *հանել* ի կատարումն ուխտին: - 389. Նոյնպէս յերեք տեղւոջ ոգորի. յերկրի՝ զի *հանցէ* յերկնից. և յօդդ՝ զի արգելցէ. և ի յարութեանն՝ զի ընկեսցէ ի հուրն: - 394. Երկրորդ՝ բարձր փառօք *հանել* զժողովուրդն անձեռնարկելի թշնամեաց: - 395. Ա՛րդ՝ ի նոյն օր զանիծեալ հայրազեղծն *հանէին* ի փայտն անիծից վասն հօրն: - 400. Եւ փոխանակ մօրն տարերք ամենայն. որ հեծեն և յոգոց *հանեն* վասն ապականութեան մեր ըստ առաքելոյ: - 400. Նմանապէս և բժան քարինքն *հանեալ* ի ցամաք և կանգնեալ սեղան՝ հաւատացեալքն են. որք ի ձեռն բժան առաքելոցն հաւատացին և ելին ի մեղաց. և եղեն սրբութեան սեղան աստուծոյ բժան անդամօք և բժան առաքելովք: - 415. Իններորդ՝ *հանեալ* ի գետոյն **բժ**ան վէմս շինեաց սեղան. և նոյն թուով խորասուզեալ ընկղմեաց: - 418. Եւ տէր մեր զհաւատացեալս իւր *հանեալ* ի մեղաց շինեաց սեղան և եկեղեցի սուրբ. և զմեղս երկոտասան անդամոցն ընկղմեալ կորոյս: - 418. Եւ տէր մեր աւերեաց զամուրս դժոխոց զմահ և զմեղք, և ապա՛ յերկինս *հանեալ* և անմահացոյց: - 418. Եւ ի նո՛յն ծնօտէ՛ *եհան* ջուր և էարբ: - 420. Եւ զաղխեալ դուռն քաղաքին եդեալ ի յուսն *եհան* ի գլուխ լերինն: - 420. Քսաներորդ, սամփսոն ի մէջ գիշերի զփակեալ դուռսն կորզեաց և *էհան* ի լեառն: - 423. Եւ տէրն ի մէջ գիշերի զդրունս և զնիգս դժոխոց խորտակեալ յարեաւ ի գերեզմանէն. և զհոգիս մարդկան *էհան* յերկինս: - 423. Նա՛խ՝ երեքժանի մսահանաւ *հանել* զմիսն որ չէր օրէն: - 425. Եւ թէ նա՛ յարուցանէր, ընդէ՞ր երկու *եհան*. զի նա՛ միայն զսամուէլ խնդրէր: - 428. Նախ այսպէս. զի եհարց թէ ընդէ՞ր *հաներ* զիս. այլ ո՛չ էր հարցեալ թէ գիտէր զխորհուրդն: - 430. Այլ և դաւիթ եգիտ զսաւուղ և զզօրսն նորա ի քուն և ո՛չ վնասեաց. այլ զգէնն էառ. և տէրն ո՛չ կամի զմահ որք ննջեն ի մեղս. այլ զպատճառ մեղացն *հանէ* : - 437. ...և տէրն մարտեաւ ընդ բելիարայ և յաղթեաց մահու. և քակեաց զդժխս. էառ աւար զգերեալսն և *էհան* յարքայութիւնն երկնից. տալով նոցա զանթառամ պսակն: - 438. Եւ սոքա են հարճք որ կարեն ի բաց *հանիլ* ի ժառանգութենէ. զի սէրն է կապ և լար շարոցին որ ո՛չ թողու ցրուիլ: - 440. Եւ հրաւիրակք են անուանեալ քրիստոնեայք. որք չունին զգործս՝ նոքա փութով *հանին* ի բաց: - 440. Ամինադաբ ամաց **խե**՝ ծնանի զնայասօն. և էր ասէ ամինադաբ սպարապետ զօրուն յուդայի ի *հանել* մովսէսի զորդիսն իսրայէլի յեգիպտոսէ: - 452. Չորրորդ՝ զարգացաւ հասակաւ, ի նշանակել թէ զբնութիւնս մեր ի նուազութենէ ի մեծութիւն և ի փառս է՛ *հանելոց*: - 479. Նոյնպէս և քրիստոսի մինչ զտղայական հասակն նկարեն, փաթութեալ *հանեն* զթուղթն ի ձեռն. իբր ի հրէից ծնեալ զամենայն ինչ ըստ օրինացն առնել: - 481. Իսկ զկատարեալ հասակն նկարելով՝ ի ձև չորեքկուսի *հանեն* զաւետարանն ի ձեռն և ի գիրկն: - 481. Այլ միաւորելով ընդ ինքեան՝ *էհան* յառաջին անմեղ և անապական բնութիւնն ադամայ: - 500. Եւ վասն այն աստուած եղև զի յառաջին փառս և որպիսութիւնն զմեզ *հանցէ*: - 500. Ոմանք ասեն թէ ի չորրորդ դժոխքն էջ ուր էին արդարոց հոգիքն արտաքոյ ասացեալ երիցս, և զնա միայն աւերեաց. և զարդարսն միայն *եհան*. և զայլսն եթող անդ: - 505. Երրորդ ասեն թէ զարդարսն միայն *հանեալ* և զայլսն թողեալ: - 506. Իսկ առ

երրորդն որ ասեն թէ միայն զարդարսն *եհան* և զայլսն եթող անդ: - 507. Այլ ա՛րդ՝ մովսէս բովանդակ զժողովուրդն *եհան* յանապատ: - 507. Նոյնպէս և քրիստոս առհասարակ ազատեաց զհոգիսն և *եհան* ի կայանս հոգւոցն: - 507. Ասեմք, զի ո՛չ ունին շունչ օդոյ այլ շունչ ջրոյ. և *հանեալ* ի ջրոյն պակասի շունչն. որպէս ասացաւ ի վերոյ ի **ժը** գլուխն ի **գ** համարն: - 511. Վեցերորդ՝ ի մէջ գիշերի հրեշտակն եհար զեգիպտոս. և մովսէս *եհան* զորդիսն իսրայէլի. որ էր օրինակ աւերման դժոխոցն և ազատութեան հոգւոց: - 512. Եւ յորում ժամու եղ մովսէս յեգիպտոսէ և *եհան* զժողովուրդն, ի նոյն ժամն յարեաւ քրիստոս ի մեռելոց և *եհան* ազատեաց զհոգիսն ի հրահալոց չարութենէ դժոխոցն և ի բռնութեանց իմանալի փարաւոնին: - 512. Յորում աւուր կիրակէի ի մէջ գիշերի ընդ առաւօտն յարեաւ տէրն ի գերեզմանէն. *հանելով* զհոգիսն յանապատն երկնից. և խաչանիշ գաւազանաւն ընկղմեցաւ փարաւօն յանդունդս դժոխոց: - 513. Եւ ի մէջ գիշերի զարթեաւ և զդրունս փակեալ նգօքն և սեմօք *եհան* յուսն և եղ ի լեառն: - 513. Որ նշանակէ՛ զյարութիւնն քրիստոսի ի մէջ գիշերի զդրունս դժոխոցն խորտակեալ. և զհոգիսն *հանեալ* ի լեառն երկնային: - 513. Չորեքտասաներորդ՝ այլ և ի գիշերի հրեշտակն տն *էհան* զզօրսն ռափսակայ. որ պաշարեալ էին զերուսաղէմ և փրկեաց զնոսա...: - 514. Վասն այն *եհան* զաշակերտսն արտաքոյ քաղաքին բեթանիոյ: - 519. Զի արտաքս *հանելով* ցուցցէ ո՛չ ունել քաղաք որ աստէն մնալոց իցէ: - 519. Եւ *եհան* ի լեառն ձիթենեաց. զի լերամբն ցուցանի համբարձումն մտաց ի խոկումն աստուածային: - 519. Եօթներորդ՝ զի (եղ ի բարձունս գերեալ զգերութիւն. այսինքն զհոգիս մարդկան ամենակարող զօրութեամբն ազատեալ ի դժոխոց *եհան* յերկինս: - 520. Երրորդ՝ զբոլոր հաց պատարագին ո՛չ *հանել* ի սեղանն. այլ մասն ինչ: - 553. Վեցերորդ՝ զի զամենայն բարիսն որ ի մեզ են՝ արտաքս *հանեն*. զորօրինակ եկեալ խաւարն *հանէ* զլոյսն: - 562. **Զի որպէս ամբարտաւանութիւնն *հանէ՛* զմարդն յաստուծոյ, նոյնպէս և նախանձն զմարդն զինքն յինքենէ՛ *հանէ:*** - 569. Նա՛խ՝ զի զտրտմութեան դևն զձանձրութեան զկարճմտութեան զսրտմտութիւն և զոխն *հանէ՛* ի հոգւոյն: - 584. Երրորդ ինքն առ ինքն. որպէս առաքինիքն ի մէջ հոգւոյն և մարմնոյն և մտացն առնեն զխաղաղութիւն. և զպատերազմն որով ցանկայ մարմինն հակառակ հոգւոյն, *հանեն* ի միջոյ: - 585. Որք ասեն՝ պա՛րտ է յամենայն աւուր ջերմ հաց *հանել* ի սեղանն և անապական բաժակ. զի անապական արեամբն քրիստոսի փրկեցաք: - 595. Դարձեալ՝ թէ դու հաւատաս զարիւնն ի մարմինն կապեալ, մի՛ *հաներ* զտեսակ արեանն ի բեմն. այլ նշխար միայն օրհնեա և լիցի մարմին և արիւն քրիստոսի: - 600. Եւ զայս գործս արար քրիստոս յորժամ *եհան* զգնօղս և զվաճառօղս ի տաճարէն: - 606. Եւ ի տօն զատկին որ արար խարազան չուաննեայ և *եհան* զվաճառականսն, ցուցաւ սարկաւագի գործ նորա: - 606-607. Եւ ի լեառն ձիթենեաց *հանեալ* զնոսա և օրհնեալ՝ արար զնոսա Կաթողիկոսունս և Պատրիարգունս, զամենայն շնորհելով նոցա լիով: - 607. Առաջինն է արտաքս *հանել* յեկեղեցւոյ զոչ մկրտեալն և զախտացեալս մեղօք. և զայս առնէ դռնապանն: - 608. Չորրորդ՝ յօրինակ քրիստոսի որ խարազանաւ *եհան* ի տաճարէն զոչխարս և զարջառս. նոյնպէս և մեք արտաքսեմք: - 617. Եւ որ եպիսկոպոսն զմիթրն և զեմիփորոնն և զմատանին զոր զգեցեալն էր ի ձեռնադրութեանն՝ *հանէ՛* յորժամ պատարագէ...: - 635-636. Դարձեալ՝ ունի զխորհուրդ անկմանն ադամայ որ վերջին խօսեցաւ աստուած և *եհան* ի դրախտէն: - 641. Այն է՝ յորժամ դաւիթ զտապանակ ուխտին *հանէր* յեէմ, է դաս պարուց որք են քահանայից դասք. և սրինկ. և փողք. և քնար. և այլն: - 645. Նա՛խ՝ նշանակէ՛ ի մեզ զջերմեռանդ բորբոք այրեցման սրտին. որ ի բա՛ց *հանէ* զօձիսն և արտասուէ...: - 670. Ա՛րդ՝ եթէ ի հասարակ ժողովրդենէ իցէ ննջեցեալն, *հանեն* զհին հանդերձն և պատե՛ն սուրբ կտաւովք և զգլուխն փակեղամբ և վարշամակօք, և օդ յոտս: - 671. Ա՛րդ՝ զգեստին *հանելն* նախ նշանակէ թէ՝ զկենցաղ աշխարհի մերկացաւ և զգեցաւ զգեստ լուսեղէն որ ի դրախտին: - 671. Զոր բազում հարուածովք *եհան* զժողովուրդն. - 682. Եւ գիտելի է, զի հիմն և սկիզբն անդ եկեղեցւոյն եղև տէր մեր յիսուս քրիստոս յարուցեալ ի մեռելոց. և ընդ ինքեան *հանեալ* և վերացուցեալ զհոգիս սրբոց նահապետաց և մարգարէից: - 688. Եւ քանզի մովսէս որ ջրային կամ ի ջրոյ *հանեալ* թարգմանի. թէպէտ երբեմն զօրէնս և երբեմն զտէրն նշանակէ. այլ աստ ոչ զօրէնս, այլ զտէրն գուշակէ՛. որ ի ջուրց մարդկայինս բնութեան ընկալեալ եղև: - 756

**ՅԱՆՃԱՐ +** Երրորդ՝ զի է՛ հնար առնուլ ի վերայ մարմնական իմաստութեանց՝ և արհեստից *հանճարաց*...: - 40. Ո՛չ թէ նոր իմն տեսակ և կամ նոր աշխարհ. այլ զեղելոցս նախախնամութիւնն. և ի նոյնութիւն կալն հայր կամի և որդի կատարէ՛. ոչ ծառայաբար և անուսումնապէս. այլ տիրաբար և *հանճարով*: - 46. Ուստի յա՛յտ է ի սահմանէն. ամենայն մարդ կենդանի բանաւոր մահկանացու մտաց և *հանճարոյ* ընդունակ: - 74. Եւ դու պետրոս՝ մարդ կենդանի բանաւոր մահկանացու մտաց և *հանճարոյ* ընդունակ: - 74. Եւ առ *հանճարն* ճանաչումն ամենայն աննիւթականաց: - 97. Եւ նոքա գերազարդ իմացմամբ աստուածային *հանճարովն* կատարելագործին. իսկ մեք ի ձեռն հաւատոյ աստիճանաց

կատարելագործիմք: - 139. Դարձեալ՝ առ հրեշտակս մի և նոյն իմացումն աստուածային՝ է՛ սրբութիւն՝ լուսաւորութիւն՝ և կատարումն նոցա. զի աստուածային գիտութիւնն սրբէ յառաջին տգիտութենէն և լուսաւորէ՛ զնոսա, և կատարին նոյն *հանճարովն*: - 139. Եւ զի տեղի է ուսման արուեստից և առաքինութեանց և իմաստութեան *հանճարոյ*: - 211. Քսանևէ՝ Ո՛ր է *հանճար* և իմաստութիւն: - 228. Որպէս յարարածս աստուած ճանաչի, այսպէս և ի մարմնոյս զհոգին օրինակաւ իմանալ մարթի...*Յանճարն* երիկամն: - 250. Որպէս յարարածս աստուած ճանաչի, այսպէս և ի մարմնոյս զհոգին օրինակաւ իմանալ մարթի... *Յանճարն* և ցանկութիւն՝ յերիկամունքն: - 250. Վասն որոյ յայսմանէ և յառաջ հաստատի մարդ ի *հանճարս* բանակրութեան և ի տեսութիւն իմացման մինչև ի **խը** ամն որ է եօթնիցս եօթն: - 265. Զի՞նչ է *հանճար*: - 270. Դարձեալ *հանճար* ասի, զի առ յապայն ունի զկատարումն: - 270. Իսկ սահմանօրէն, *հանճարն* կարծիք է կապեալ ընդ ուղիղ խորհրդոյ: - 270. Զի՞նչ է *հանճարն* իմաստութիւն՝ և գիտութիւն: - 270. Նա՛խ՝ *հանճարն* է՛ բնական իմաստութիւնն շնորհական: - 270. Դարձեալ՝ *հանճարն* է ի բնականականն. գիտութիւնն յուսումնականն. և իմաստութիւնն յաստուածաբանականն: - 270. Դարձեալ՝ *հանճարն* է ի յարհեստն. իմաստութիւնն ի բանն. և գիտութիւնն առ երկոքինն. այսինքն ի յարհեստն և ի բանն: - 270. Դարձեալ՝ *հանճարն* է հանդերձելոյն. իմաստն ներկային. գիտութիւնն անցեալ ժամանակին: - 270. Դարձեալ՝ *հանճարն* է տրամախոհութեանն. զի կարծիք է կապեալ ընդ ուղիղ խորհրդոյ. իմաստութիւնն իմացմանն. գիտութիւնն յիշողութեանն: - 270. Դարձեալ՝ *հանճարն* է ի գիրս արտաքին. իմաստութիւնն ի սուրբ գիրս. գիտութիւնն ի մեկնութիւն նոցին: - 270. Դարձեալ՝ *հանճարն* է ի սկիզբն. իմաստութիւնն ի մէջն. գիտութիւնն ի կատարումն: - 270. Դարձեալ՝ իմաստութիւնն է բանին. զի նորա՛ է իմանալն. գիտութիւնն ցասմանն. զի նորա է ընտրելն. և *հանճարն* ցանկութեանն. զի նորա է յանճարն տռփիլ: - 270. Այլ ոմանք ասեն թէ՝ *հանճարն* ցասմանն է արիութիւն. և գիտելն ցանկութեանն...: - 270. Դարձեալ ըստ այսմ կարգ ի իմաստութիւն է հաւատն. գիտութիւն յոյսն. *հանճար* սէրն: - 270. Դարձեալ՝ իմաստութիւնն պատշաճի հօր ըստ կարողութեան. և գիտութիւնն որդոյ իբր բան. և *հանճարն* հոգւոյն բղխման: - 270. Ոէ և ա՛յլ ուրեք զանազանութիւն *հանճարոյ* և իմաստից ի յայլ վարդապետաց ասացեալ: - 270. Այսպէս ասեն եթէ՝ իմաստութիւն և *հանճարն* զանազանին: - 270. Զի իմաստութիւնն է ճանաչումն աստուծոյ բացարձակապէս. իսկ *հանճարն* է ճանաչումն համեմատաբար. այսինքն համեմատելով զստեղծւածս առ ստեղծօղն: - 270. Դարձեալ զանազանութիւն, զի *հանճարովն* ճանաչի աստուած լուսաւորութեամբ լսելոցն ի գիրս սուրբս. իսկ իմաստութեամբ ճանաչի աստուած ըստ ինքեան: - 270. Դարձեալ՝ *հանճարովն* ճանաչեմք զաստուած. այլ իմաստութեամբն ճանաչեմք զքաղցրութիւն նորա: - 270. Դարձեալ ասեն թէ՝ *հանճարովն* եմք նախատեսք. այլ իմաստութեամբն հասունք: - 270. Վեցերորդ՝ ըստ արուեստից՝ յղացեալք *հանճարով*, ծնանիմք զգործս: - 308. Ութերորդ՝ որպէս ի միաւորիլ հոգւոյ և մարմնոյ յառաջագայի ի միոյ կամաց միով զօրութեամբ *հանճար* և ներգործութիւն: - 478. Այլ իմաստութիւն և *հանճար* զանազանեալ է ի վերոյ ի **ժզ** գլուխն, **իէ** համարն տես անդ: - 537. Եւ որպէս հաւատն է ի *հանճարն*, նոյնպէս յոյսն և սէրն են ի կամքն վասն **բ** պատճառի: - 572. Նա՛խ՝ զի յառաջ եղեալ *հանճարոյն* է՛ ճշմարիտն. և յառաջ եղեալ կամացն բարին: - 572. Եւ ասացեալ է վասն *հանճարոյ* և գիտութեան ի վերոյ. ի **ե** հատորն ի **իէ** համարն: - 580. Եւ զի դժուարին է հոգւոյ մարդոյ կարգաւորել զինքն և սրբել ի մեղաց. վասն այսորիկ օգնութիւն տայ աստուած հոգւոյ մարդոյ զեօթն պարգևս հոգւոյն սրբոյ... Երկրորդ *հանճար*: - 582. *Յանճա՛ր* է ճանաչել զփրկութեան նշանն. յորմէ ասաց տէր «որ ունիցի ականջս լսելոյ լուիցէ»: - 582. Դարձեալ ասեն վարդապետք թէ, Իմաստութեամբն եմք հասունք... *Յանճարովն* նախատեսք: - 583

**ՅԱՆՃԱՐԵՂ +** Քաղոց. զի արծակի խոյն ի հօտն ըստ *հանճարեղ* արանցն: - 200

**ՅԱՆՃԱՐԵՂՈՒԹԻՒՆ +** Եւ մասունք են խոհեմութեան **գ**. այսինքն *հանճարեղութիւն*, նախատեսութիւն, և յիշողութիւն: - 580. *Յանճարեղութիւն* է նկատել զայնս որ են. և Նախատեսութիւն է տեսանել զլինելոցն. այլ Յիշողութիւնն է վերստին յիշել զեղեալսն: - 580

**ՅԱՆՈՒՄՆ +** Կամ ջրայինն որ ո՛չ ունի զարիւն շնչոյ, այլ զարիւն ջրոյ, ո՛չ զենի. զի զենումն նոցա *հանումն* ի ջրոյն է: - 366. Դարձեալ՝ որպէս տնկոց հատումն է, և ծկանց *հանումն*, և այլ կենդանեաց զենումն: - 511

**ՅԱՆՈՒՐ +** Այլ և եղև այր, զի որպէս ծնօղն աստուածածին ազգի կանանց, և ի նմանէ ծնեալն աստուած՝ արանց միանգամայն և *հանուրց* լիցի փրկութեան պատճառ: - 480. Երկրորդ՝ որպէս *հանուրն* նախադասի մասնականաց, այսպէս առաքեալքն *հանուրց* աշխարհի լոյս կոչեցան. և մարգարէքն միոյ ազգի...: - 535. Եւ չորրորդն ի սոցանէ եղև յաթոռ վիճակի սրբոյն գրիգորի *հանուրց*: - 544

**ՀԱՇԵՄ +** Այլ և աստ ապաշաւելն ոչ ինչ օգտեալ. որպէս և անդ ո՛չ լսողաց բերանով *հաշեալք*. որ և ո՛չ գոյր անդրէն դառնալ. և ո՛չ կարի յօժարացն շահավաճառ եղեալ. ո՛չ գիտ և ո՛չ ողորմ. հանգոյն յիմարացն օրհորդաց: - 789

**ՀԱՇԻՒ +** ...որպէս և մեք ի սաղմոսաքաղ փոխերն չեմք ասեր. և այս այլ ի սաղմոսաքաղի *հաշիւն* է: - 630

**ՀԱՇՏԵՄ +** Եւ այլք ո՛չ *հաշտեն* և ո՛չ անպատւեն. զի զկարգն յաւիտենին ո՛չ ստեն որպէս ասացաք: - 51

**ՀԱՇՏԱՐԱՐ** + Հաւարակ, զի ամենայն քահանայ միջնորդ և *հաշտարար*'ք է աստուծոյ և մարդկան. զընծայս ժողովրդեանն աստուծոյ նուիրելով և յաստուծոյ շնորհս և քաւութիւն ժողովրդեանն առնելով: - 354

**ՀԱՇՏԵՑՈՒՑԱՆԵՄ +** Եւ տէր մեր յիսուսի քրիստոս է՛ թագաւոր յաւիտենական. և արդարութիւն արար մեզ և *հաշտեցոյց* զաստուած ընդ մարդկան: - 301. Այսպէս նախ եկն քրիստոս և խաչիւ և մահուամբ *հաշտեցոյց* զհայր, և ապա՛ հայր աստուած առաքեաց զհոգին սուրբ պարգև մարդկան: - 522. Եօթներորդ՝ թէ վիրաւորեալ է՝ *հաշտեցուցանէ* զնա: - 575. Երկրորդ՝ *հաշտեցոյց* զհայր աստուած ընդ արարածս, և զհոգին սուրբ պարգևեաց: - 585. Եւ զմեզ *հաշտեցոյց* ընդ աստուծոյ, - 646. և պատարագաւ խաչին *հաշտեցոյց* զհայր. և իջմամբ ի դժոխս կապեաց զհզօրն սատանայ և արձակեաց զկապեալ հոգիսն. - 705

**ՀԱՇՏԻՄ** + Զայն ցուցանէ որ պատճառաւ իրիք կամ պոռնկութեամբ կամ այլ ինչ յորժամ բաժանին, առանց ամուսնութեան մնասցեն թէ երկուքն են բաժանմանն պատճառ, մինչև *հաշտեսցին*: - 401. Նա՛խ՝ նշանակէ՛ զսեղան խաչին քրիստոսի. որ յերեք ժամուն մինչև ի զ ժամն խաչեցաւ, և *հաշտեցաւ* աստուած: - 435. Դարձեալ՝ զարդարութիւն գործէր զի *հաշտեսցի* աստուած. վասն որոյ ինքնին սպան զամենայն. այս զուբծ յիսուսնն, փոխանակ մարգարէիցն աստուծոյ զոր եսպան եզաբէլ: - 444. Եւ վասն անմեղ մահուն՝ *հաշտեցաւ* հայր աստուած ընդ մարդկան: - 492. Իններորդ՝ որպէս թագաւորք նախ *հաշտին* ընդ մահապարտս և ապա՛ պարգևաց արժանի առնեն: - 522. Եօթներորդ՝ թէ առ մարդ մեղանչեն՝ առ աստուած բարեխօսեն և *հաշտի*: - 566

**ՀԱՇՏՈՒԹԻՒՆ +** Եւ միջնորդ *հաշտութեան* է քրիստոս աստուծոյ և մարդկան. այլև հրեշտակաց և մարդկան. նաև հրէից և հեթանոսաց: - 126. Եւ մին վասն ահարոնի *հաշտութեանն* ելանել կրկին ի լեառնն: - 352-353. Առաջինն է խոնարհումն գլխոյն. ի համբոյր և ի նշան *հաշտութեան* մերոյ: - 489. Իսկ արտասուքն հանապազո՛րդ է ըստ ամենայնին. և առաւել քան զամենայն ընծայ *հաշտութեան*: - 619. ...և նոքա նըւիրեն աստուծոյ և բերեն մեզ *զհաշտութիւն*...: - 624. ...որպէս ընծայէ՛ զաղօթս մեր աստուծոյ, նոյնպէս և ի նմանէ առնու և տայ մեզ զշնորհս և զպարգևս *հաշտութեան*: - 625. Չորրորդ՝ զսէր և *զհաշտութիւն* նշանակէ զոր ունիմք առ նա...: - 673. Երկրորդ, զի միջնո՛րդ է հօր աստուծոյ և մարդկան *հաշտութեան*: - 745-746

**ՀԱՊԱՇԻ** - ...որպէս յառաջն ունէին ամենայն ազգք քրիստոնէից. և դեռևս պահէ՛ ազգն դպտի և *հապաշի*: - 650

**ՀԱՌԱՉԱՆՔ** + Եւ ի **խե** գլուխն ի վերայ այնմ բանի «ո՛չ ոք կարէ մտանել ի տաճարն մինչև կատարեսցին եօթն հարուածք յեօթն հրեշտակացն», ասէ մեկնիչն. ոչ արդարոցն հանգչելոյն աղաչանք, և ո՛չ մեղաւորացն ի տանջանս *հառաչանք*...: - 703. Իսկ որ ասէ «ծուխ նոցա ելցէ յաւիտեան», նախ կոչէ զներքին խորոց *հառաչանս* տանջելոցն. և երկրորդ զանընդմիջաբար այրեցումն հրոյն. որպէս նիւք փայտի մերձեցեալ ի հուր: - 750

**ՀԱՌԱՉՈՒՄՆ** + և արտադրէ՛ *հառաչումն* ծայնից և ողբ աղէողորմ: - 670. Էր և տեսանել աստ աղիողորմ տեսիլ. միայն արտասուալի դիմօք և կականաբարձ *հառաչմամբ*. ազգք և սիրելիք. ծնօղք և եղբարք: - 789

**ՀԱՍ** + Եւ ի սմանէ առցեն ասէ *զհաս* իրաւանցն. և զմնացեալն եփեսցեն ի սուրբ տեղւոջ և կերիցեն քահանայքն զեօթն օր: - 359. *Հաս*ք և իրաւունք քահանայից մե՞ղք է թէ ոչ: - 363. Ցուցանէ թէ՝ մինչ ի մեղս իցեն քահանայքն՝ ո՛չ *զհասն* կերիցեն և ո՛չ ի սուրբ խորհուրդն մերձեսցին: - 370. Զի քև գեղեցկագոյն ի գերեզմանէն յարութեան քո *հասից*. և անդատապարտ եղէց յատենի քոյ առաջի հօր և հոգւոյդ սրբոյ: - 771

**ՀԱՍԱԿ +**Այլ և ոչ ասի անկատար և փոքր վասն աճման *հասակին*: - 78. Դարձեալ՝ ոչ ինչ պատուական քան զժամանակ. զի զինչ և իցէ յաշխարհի՝ երկու մասունքն կարե՛ն համանգամայն գոլ ի միասին բաց ի ժամանակէ և ի *հասակէ*. զի ժամանակին **բ** մասն անհնա՛ր է համանգամայն գոլ ի միասին. զի և **բ** պահք ո՛չ կարեն համանգամայն գոլ: - 199. Զի տղայութիւնն օդո՛յ է. և միջին *հասակն* հրոյ և հողոյ. և վերջինն ջրոյ. վասն այն սպիտակի. որպէս ցուցանի յառաջիկայդ **ժզ** գլուխն՝ **իզ** համարն: - 213. Եւ աստ **զ** շարժմունքն. և **զ** *հասակ* մարդոյս. և բաղդատութիւն **դ** տարերց և եղանակաց և ժամուց աւուրն: - 228. Նոյնպէս ի **դ** *հասակ* մարդոյն փոփոխին **դ** հողմունքն: - 240. Նախ՝ ի տղայութեան *հասակն*. յորժամ ծնանի տղայն՝ ունի

զհողմն արևելից տաք և գէջ: - 240. Իսկ զբանականն և զիմաստութիւնն՝ կատարեալքն *հասակաւ*. յորժամ բանին մասն կատարի ի մարդն: - 251. Վասն որոյ յայսմ *հասակի* տիոց հրաման է յեկեղեցւոյ պսակ դնել այսպիսի մանկանց: - 265. Եւ վասն տնկական և զգայական մասին՝ կազմողական զօրութիւնն այլ ևս աճեցուցեալ զմարմինն **բ** ամ և դադարեալ յերեսներորդին, լինի ժամանեալ ի չափ *հասակի* կատարմանն քրիստոսի, յորում մկրտեցաւ տէրն մեր: - 265. Եւ այս *հասակաւ* և չափով յառնելոց եմք առ հասարակ: - 265. Եւ զի ա՛յս է թիւ կատարեալ չափոյ *հասակի* մարմնոյ և մասանց հոգւոյ: - 265. Եւ ի յիսներորդէն մինչև ի հէ որ է՛ մետասան է, լինի *հասակ* ծերութեան: - 265. Եւ այսպէս է ըստ ոմանց վեցեկի շարժմունք *հասակի* մարդոյս որպէս ասացաւ. այսինքն Երեխայ: - 265. Եւ դարձեալ՝ *հասակ* մարդոյ չորիցս ունի զփոփոխումն. այսինքն, Ի մանկութիւն. Յերիտասարդութիւն. Յալևորութիւն. և Ծերութիւն: - 265. Եւ կրկնեալ ի հնգետասանէն մինչև ի լ, կատարի երիտասարդական *հասակն*. որ է **գ** տասամբ կատարեալ. ունելով զցանկականն և զցասմնականն և զբանականն լիով առ ինքեան: - 265. Եւ ա՛յս է բարձր *հասակն* և կատարեալ. զի ի սմա պապ կարէ լինիլ մարդն երեսն ամենի: - 265. Եւ այսպէս միջին *հասակս* կատարեալ, ձգի մինչև ի **խզ** ամն. որ է **դ ժզ**. և վեցն կատարեալ թիւ է. և աստ տիրէ ալիք և սկիզբն լինի ծերութեան մինչև ի **հբ** ամն. յորում է ծայրք կենաց ըստ դաւթի, և թիւ երկոտասան վեցից խորհրդաւոր: - 265. Եւ տե՛ս, զի **բ բ** են յաւելեալ թիւ ի չորեքտասան, յերեք *հասակս* փոփոխելով: - 265. Դարձեալ և տէրն բաժանէ *զհասակ* մարդոյ ի **դ**. յերեկոյ. ի մէջ գիշեր. ի հաւախօս. և ընդ առաւօտս: - 265. Եւ դարձեալ ըստ չորից տարերց և եղանակաց և ժամուց աւուր և հիւթոց համեմատաբար փոփոխին և *հասակ* մարդկան: - 266. Յեղանակս գարնան, և յառաւօտուն մինչև յերեք ժամս, և հիւթոյ արեան, և մանկութեան *հասակն* ի տղայութենէ ծննդեան և աճման՝ ունին զնմանութիւն օդոյ ջերմ և գէջ գոլով: - 266. Զայս կարգ պահէ՛ և ի զարգացման *հասակին*. զի մինչև ցեօթն ամն ատամն բուսանելով և փոփոխելով՝ նշանակէ՛ զկերակրականն: - 267. Դարձեալ՝ նախախնամութեանն է այսպէս կարգեալ. զի մարդս ունի դայեակ և սնուցօղ, պէտս ունի խնամարկութեան զի հասցէ ի չափ *հասակի*: - 267. Եւ մի՛ աստ ընդ դէմ բերցի բանիս թէ՝ ամենայն մեծամեծք գութ ունին փոքունց. զի և այս նախախնամութեանն է. որ եդ ի բնութեանս խնամ տանիլ նոցա, մինչ ինքեանք ևս ի չափ *հասակի* եկեսցեն և զերծանիցեն ի վնասուց: - 267. Երկոտասան պարգև՛ք էին ի դրախտին զոր կորոյս ադամ... Վեցերորդ՝ անծերանալի *հասակ*: - 278. Զայս **բժ**ան պարգևս էհան ՚ի մէնջ ևս... Իսկ յանծերանալի *հասակէն*, «փուշ և տատասկ բուսցին ի քեզ»: - 279. Վեցերորդ Յատոր Յարցմանցս Յինգ Գիրքն է Մովսէսի... Յիսունն**ե**, Թուոցն. և ծերոցն. և *հասակի* մարդոյս: - 284. Եւ **լ** կանգուն բարձրութիւնն, զի բարձր *հասա՛կ* է մարդոյն. և պապ լինի երեսնամենի: - 293. Դարձեալ՝ **դ** *հասակ* փոխի մարդոյս. մանուկ. երիտասարդ. կատարեալ *հասակ*. և ծեր: - 351. Երբ զերեք *հասակի* մեղսն ներէ աստուած՝ և թէ ի չորրորդն ո՛չ զղջանայ, յայնժամ պատուհասէ՛: - 351. Չորրորդ՝ այն տղայ *հասակի*. և աստ երիտասարդ. և անդ ծեր: - 355. Որ է՛ **գ** *հասակս*: - 360. Նշանակէ՛ թէ՝ եթէ ի է *հասակս* մեղքն առաւելու, գեհեանն այրէ: - 367. Իսկ թէ ի տունն ի ժողովուրդս նորա. կամ յեկեղեցիս մեղանչեմք. յետ է ժամանակի փոխելոյ՝ որ է՛ է *հասակ* մեր. և է դար կենցաղոյս...: - 368. Երրորդ՝ եօթն *հասակ* մեր փոփոխի. և ութն հաստատի: - 374. Դարձեալ զ**է** ժամանակն ասէ. կամ զ**է** *հասակս*. կամ է զգայարանօք մարմնոյս. կամ է զօրութեամբ հոգւոյս: - 376. Քանի՞ է *հասակ* մարդոյս: - 378. Երիտասարդն **գ ժ** է *հասակն*. իբր թէ հասա՛ք ի չափ լրման և աճման: - 378. Միջին մինչ ի **ծ** ամն կատարեալ *հասակ*: - 378. Իսկ ի նորս՝ ի կատարեալ *հասակն* երեսնամեայ լինին քահանայք. ի *հասակ* մկրտութեանն քրիստոսի: - 379. Յինգերորդ՝ թէ յերեք *հասակս* մեր ոչ արդարանամք. և ո՛չ յ**է** *հասակին* արդարանամք յորում լուծեալ ծանրանայ մարմինն: - 384. Ա՛րդ նա՛խ՝ զայն *հասակն* **լ** ամեայ յորմէ զրկեցաւ մեղօք՝ լան: - 411. Եւ երիտասարդ *հասակով* յաւուր յարութեանն պսակեսցին: - 422. Եւ եօթնից ժամանակաց փոփոխմամբ՝ է *հասակաւ* յեօթն դար կենցաղոյս՝ լինիմք տաճար և քաղաք քրիստոսի աստուծոյ մերոյ: - 448. Ութև**ժ**, Վասն անկատար *հասակին*: - 454. Վասն է՞ր ոչ կատարեալ *հասակաւ* ծնաւ քրիստոս որպէս զադամ: - 479. Նա՛խ՝ զի մի՛ անընտել թուիցի մարդկան. զի թէ առ ժամայն ի ծնունդն եղեալ էր երեսնամեայ *հասակաւ*, առ աչօք համարէին զիրն. և կամ այլ ինչ: - 479. Նոյնպէս և ճանաչումն *հասակի* ընկալաւ ի փոքրութենէ ի մեծութիւն: - 479. Երրորդ՝ զի իւրաքանչիւր *հասակի* զմեղս բարձցէ. որպէս ծննդեամբն զերկունս ելոյծ. և մահուամբն զմահ. նոյնպէս և տղայ և մանուկ և երիտասարդ *հասակաւ* զնոսա արդարացոյց: - 479. Չորրորդ՝ զարգացաւ *հասակաւ*, ի նշանակել թէ զբնութիւնս մեր ի նուազութենէ ի մեծութիւն և ի փառս է՛ հանելոց: - 479. Նա՛խ՝ զի ծեր և հին աւուրց նշանակեցաւ հայր աստուած ի դանիէլէ՛. իսկ որդին նորածին և երիտասարդ *հասակաւ*: - 479. Երկրորդ՝ զի ծերն ո՛չ է կատարեալ *հասակ*, այլ դարձումն ի նուազութիւն: - 479. Երրորդ՝ զի քրիստոս զչափ *հասակի* զադամայն ունէր, որ նախ քան զյանցանս և ադա՛մ ոչ ունէր հիւանդութիւն և ո՛չ ծերութեան

փոփոխումն: - 480. Նոյնպէս և քրիստոսի մինչ զտղայական *հասակն* նկարեն, փաթութեալ հանեն զթուղթն ի ձեռն. իբր ի հրէից ծնեալ զամենայն ինչ ըստ օրինացն առնել: - 481. Իսկ զկատարեալ *հասակն* նկարելով՝ ի ձև չորեքկուսի հանեն զաւետարանն ի ձեռն և ի գիրկն: - 481. Այլ և երկիւղի զգայութեան չորս *հասակի* մարդոյն. ի մանկութեան, յերիտասարդութեան, յալիս և ի ծերութեան: - 493. Դարձեալ ասեմք, փոփոխումն և աճումն *հասակին* ո՛չ եթէ ապականութեան էր ցոյցք. այլ զի զճշմարիտ մարդեղութիւնն հաստատեսցէ ընտել սովորութեամբ մեր որ ի տղայութենէ զարգանամք: - 501. Ապա թէ ոչ՝ նա՛ որ զադամ երեսնամեայ ստեղծ, կարէ՛ր և նոյն *հասակաւն* ծնանիլ. այլ այն ո՛չ լինէր ըստ սովորութեան մեր որպէս ցուցաւ ի վերոյ: - 501. Տասներորդ՝ յա՛յտ է ի համազօրութենէ. զի երբեմն շարժէ՛ ախտ զմիտս. և երբեմն շարժի ի մտացն ախտ. որպէս ասէ երանելին եւագրիոս. եթէ մինչ յերեսնամեայ *հասակս* ախտն շարժէ զմիտս ի ցանկութիւն. և անտի յառաջ միտքն շարժէ զախտն: - 557. Երկրորդ՝ զի մանկունս *հասակաւ* նախ որկորստութիւնն տիրէ, և ապա՛ յերիտասարդութեանն պոռնկութիւնն զօրանայ: - 561. Եւ ի կատարեալ *հասակն* ագահութիւնն. և յետ այնորիկ տրտմութիւն, ծուլութիւն, և այլն: - 561. Այլ թէ որ *հասակաւ* մեծ է, խնդրի յատուկ հաւատ. իսկ թէ տղայ է՝ բաւական է խորհուրդն եկեղեցւոյ: - 588. Եւ յի՞նչ *հասակ* էր: - 601. Զի *հասակ* ամենայն մարդոյ ի չորս փոփոխի: - 622. Եւ դարձեալ ճաշքն ցուցանեն յերիս *հասակս* զբարեգործսն. և ընթրիսն զվերջին *հասակին* յորում ննջեմք ի գերեզմանի: - 656. Քսաննվեց, Վասն *հասակացն*: - 661. Չորրորդ ի *հասակն* է իմանալ. զի տիքն անցանեն, և զօրութիւնք և ներգործութիւնքն պակասին. - 666. Հինգերորդ, զի **գ** է *հասակ* մարդոյս. մանկութեան երիտասարդութեան և ծերութեան յորում փոփոխիմք վարուք. վասն սոցա **գ** հանգիստ դնեմք: - 675. Դարձեալ՝ նշանակէ զքանակ *հասակի* մարմնոյն մեռելոյ: - 679. Նա՛խ՝ որպէս ասացաւ ի քահանայաթաղն վասն է շնորհաց հոգւոյն, և **է** խորհրդոց եկեղեցւոյ, և **է** առաքինութեանց, և **է** գլխաւորագոյն մեղաց, և **է** զգայարանօք մեղանչեմք, և **է** փոփոխմամբ *հասակի*...: - 683. Բայց ի կատարածի փոքրիկ լինին *հասակք* մարդկան քան զմերս. որպէս մերս քան զառաջնոցն: - 708. Ո՞րպիսի *հասակաւ* գայցեն: - 709. Նոյն *հասակաւն* որով փոխեցան՝ և գայցեն: - 709. Եւ թէպէտ մարմինն փոփոխի *հասակաւ* կամ հիւանդութեամբ, կամ մեղօք հոգին հիւանդանայ. դիմաւոր նշանս այս անփոփոխ մնայ: - 719. Իններորդ, ամենայն սերմանիք բուսեալք՝ ի մի *հասակ* այսինքն ի կատարելութեանն իւրեանց ժամանեն ի հունձս...: - 721. ...այսպէս և ննջեցեալք ամենայն ծեր և տղայ՝ յառնեն ի մի չափ *հասակի* երեսնամեայ որ է կատարեալ *հասակ* որպէս ցուցանի յառաջիկայդ: - 721. Ո՞րպիսի *հասակաւ* յառնեն և յո՞ր թիւ: - 726. Վարդապետք ասեն թէ՝ ամենեքեան կատարեալ *հասակաւ* յառնեն և մի թուով երեսնամեայ: - 726. Այլ որ առաւել մեծն է և հսկայանդամ, և կարի փոքր և փանաքի, յերեսնամեայ *հասակն* իւրեանց չափաւորին: - 726. Երրորդ՝ քանակաւ *հասակին*. զի իւրաքանչիւր ոք յիւրն երեսնամեայ յարիցէ. որպէս հարիւրամեան անցեալ և քառասնօրեայ մեռեալ. որ լինելոց էր երեսնամեայ, ի նոյն *հասակն* յառնեն: - 726. **Եօթներորդ, որ ի տղայութեանն *հասակէ՛* կան յաստուածպաշտութիւն, իբր զխոտս դալարի պտղաբերեն զհարիւրաւորն**: - 757. Եւ որք ի միջին *հասակէն* զվաթսունաւորն: - 757. Դարձեալ ասեմք առաջին կեանք մասնաւոր, զոր նախ քան զյանցանելն ունէր. անկարօտութիւն. լուսաւորութիւն. անծերանելի *հասակ.* անմահ կեանք. և այլն որ ասացաւ ի վերոյ **ժէ** գլուխն **լզ** համարն: - 758

**ՀԱՍԱԿԱՆ +** Դարձեալ՝ քան զժամանակն ոչ ինչ անցաւոր և *հասական*. զի ժամանակ կենցաղոյս հանապազ հոսի. զի չափէ՛ զբնութիւնս՝ և զինքն չափէ՛: - 199

**ՀԱՍԱՆԵԼԻ -** Որ ցուցանէ թէ՝ ամենևին ժամն այն ո՛չ ումեք է *հասանելի* յեղելոցս, այլ առաջին անեղ բնութեանն աստուծոյ: - 48

**ՀԱՍԱՆԵՄ +** Իսկ մարդիկ անձնիշխան կամօք և գործովք *հասանին* այն փրկութեան և շնորհաց և փառաց: - 18. Ութերորդ՝ ընդ վա՛յր էին ուսմունք և յորդորմունք ի բարիս. որովք փախչիմք ի չարէն, և *հասանիմք* բարւոյն: - 20. Զոր օրինակ՝ Աղբիւր բղխեալ առ մեզ հոգին սուրբ ա՛րդ սկիզբն աղբերն շարժի ի ծովէ՛. և *հասանէ* յակն. և յակնէն առ մեզ բղխէ: - 65. Եւ *հասանէ* իբր յակն առ որդի. և յորդւոյ առ մեզ հեղու: - 65. Վասն զի իմաստունք մաքառին ընդ դէմ հաւատոց. և քննութեամբ մտաց ո՛չ կարեն *հասանիլ*. և զրկին ի փրկութենէ իւրեանց: - 96. Եւ դարձեալ՝ քննութեամբ մտաց ո՛չ լինի *հասեալ* անհասանելին. այլ հաւատով լինի իմացեալ. և յուսով ըմբռնեալ. և սիրով միաւորեալ: - 101. Զի ուր բնութիւն ո՛չ *հասանի*, անդ և միտք մեր ո՛չ կարեն *հասանիլ*: - 118. Եւ այս է կարօտութիւն ամենայն ընտրելոց. այսինքն անհասին անհասապէս *հասանիլ*. և զանտեսն անտեսութեամբ տեսանել: - 123. Եօթնևտասներորդ՝ հաւասա՛ր է լուսով և ջերմութեամբ. զի ուր *հասանի* լոյսն անդ և ջերմութիւնն: - 127. Ա՛յլ է բանն՝ և ա՛յլ է ձայնն. զի բանն անմարմին ծնունդն է մտաց. և ձայնն է՛ շարժումն օդոյ ի ձայնական գործեաց ի յօդս բախեալ. իսկ ի սրտի միաւորին նոքա՝

այսինքն բանն և ձայնն. և լեզուաւ յօ՛դս բախեալ` *հասանէ* մինչև ի լսելիս, և անդ ձայնն արտաքոյ մնացեալ, և բանն անմարմին ի միտս լսողացն նստեալ: - 131. Նախ` զի նիւթեղէն միտք` միջնորդութեամբ նիւթո՛յ *հասանէ* յաննիւթն. որպէս տեսեալ զգիր` իմանամք զզօրութիւն նորա. և տեսեալ զորակ և զքանակ` իմանամք զգոյացութիւն իրին: - 131. Երկրորդ` զի ուր *հասանէ* գործ արարչութեան, անդ գոյ և նախախնամութեան. և անդրադարձեալ ևս` զի ուր գործ նախախնամութեան է, անդ և գործ արարչութեան: - 157. Իսկ առաքեալն վասն արտաքին փորձութեանցն ասէ. որ ի հալածչաց *հասանէ* ի վերայ մեր. յորում ուրախանալ պարտիմք. զի որքան յաճախէ փորձութիւնն, ա՛յնքան առաւելու և պսակն: - 160. Չորրորդ` զի գրովն որ է մարմին` *հասանիմք* յանմարմին բանն: - 177. Եւ յորժամ ի միւս կիսագունդն *հասանէ*, ըստ **զ** կենդանակերպս հետևեալ` բոլորի լոյսն ի նմա. զի ուղղապէս զլոյսն ընդունի: - 187. Յինգերորդ` այս մին օրս է որ կրկնելով կատարէ՛ զշաբաթ և զամիս և զտարի և զդարս կենցաղոյս, և *հասանէ՛* ի վերջին օրն. որ է՛ մի օր աներեկ և անփոխանորդ: - 193. Իսկ աստեղագէտք զհասարակ օրն. յորում արեգակն ի բարձրութիւնս իւր *հասանէ* : - 194. Եւ զի *հասանին* պտուղք: - 197. Այլ ձայնն յա՛մր *հասանէ* ի լսելիս քան զփայլակն. վասն որոյ յետո՛յ լսի: - 204. Եւ է՛ որ յերկիր *հասանէ* և պատառի: - 204. Երրորդ` անդ մէկին է ջերմութիւն` և աստ կրկին. զի *հասեալ* ի գոգ երկրի, մակադարձութեամբ ժողովին առ նա և լինի շող: - 211. Եւ պտուղն ջրոյն` որ յետոյ *հասանի*: - 212. Վասն է՞ր մարդս սպիտակի, և պտուղքն կարմրին ի *հասանիլն*: - 213. Զի ի վերին մասն օդոյն է մերձեցեալ` որ է առաւել բարեսուն. և ամպոց և հողմոց շարժմունք ի միջին մասն օդոյս ծնանին. և ի դրախտն ո՛չ *հասանեն*: - 222. Երկրորդ` զի ոչ հարազատ որդին սեպհականէր զժառանգութիւնս հօր. այլ օտարն ի մեծութիւն *հասանէր*, և իւրն չքաւորութեամբ տառապէր: - 238. Կամարաւունքն` թէ ի վերոյ շարակցեսցին` սակաւիմա՛ստ է. թէ վայր ի յռնգունսն *հասցէ*, սրամիտ է: - 246. Բազուկն երկայն որ միջին մատն *հասանէ* ի ծունկն` ուժե՛ղ է: - 247. Եւ կամ որպէս զօրք թագաւորի` նախ *հասանեն* յիջևանն, և թագաւորին ասի իջևանն. թէպէտ յետոյ գայ: - 255. Դարձեալ` նախախնամութեանն է այսպէս կարգեալ. զի մարդս ունի դայեակ և սնուցօղ, պէտս ունի խնամարկութեան զի *հասցէ* ի չափ հասակի: - 267. Երկրորդ` զի խոնարհ և հնազանդ էր յամենայնի. ուստի մնաց եղբօրն պատարագի. որ իւրն **գ** ամսով յառա՛ջ էր *հասեալ* քան զեղբօրն. այսինքն ծնունդ ոչխարացն քան զպտուղ երկրին...: - 286. Վասն է՞ր նախապետքն ի **ռ** ամն ո՛չ *հասին*. այլ **թճ**, աւելի և կամ պակաս ապրեցան: - 290. Եւ յորժամ կորոյս զդրախտին կեանքն, այլ ոչ *հասին* ի նոյն: - 290. Եւ այլք ասեն ընդդէմ այսմ, եթէ յետ **ռ** ամին ի դրախտէն փոխիլոց էին յարքայութիւնն թէ պահէին զպատուիրանն. և յորժամ ելին ի դրախտէն` ի նոյն թիւն ո՛չ *հասին*: - 290. Երրորդ` **թ** դաս հրեշտակաց է յերկինս. և **ժ**երորդն մարդն կատարումն թուոյ նոցա. վասն այն ի կեանս այս ո՛չ *հասանեն* ի **ռ** թիւն կատարեալ. զի աստ ո՛չ լինի կատարումն դասուցն այլ ի հանդերձեալն: - 291. Վասն այն նախապետքն զհարիւրն պատկե՛ն որ է՛ ժամանակեան. և ի հազարն ո՛չ *հասանին* որ մշտնջենաւորն է: - 291. Այլ մեղքն նուազէ՛ զկեանքն և ո՛չ տայ *հասանիլ* ի կէտ կոչմանն: - 291. Եւ զ**խ** ամ շինեցին յամառն և ձմեռն ըստ բարեխառնութեան տեղւոյն. մինչև *հասին* յործկուտ օդն թանձրացեալ ի գոլորշեաց և ջերմացեալ յարևուն: - 297. Իններորդ` ըստ փոփոխման ասի. զի յղացեալ ունիմք զմահ անդըստին. և ի վախճան մերձեալ *հասանէ* երկն ցաւոց. և բաժանեալ հոգին ծնանի ի մահ: - 308. Եւ թէ լան և զղջան բոլոր սրտիւ ի ձեռն ապաշխարութեան, գտանեն վերըստին զշնորհն անդրանկութեան, և *հասանին* թողութեան մեղաց: - 309. Եւ բազմակեցութեամբ *էհաս* մինչև յելսն յեգիպտոսէ: - 320. Չորրորդ` զի վայելէ՛ր իսկ նմա որպէս զհատ ցորենոյ թաղեալ յաղբիւսն` այսինքն յերկիր. և պարարտացեալ *հասցէ* ի հունձս պտղաբերութեան: - 323. Նշանակէ՛ ըստ փիլոնի, զի անմարմինքն մինչև յերեքն *հասանին*. որպէս երկրաչափքն գրեն նիշ` գիծ` երևոյթ. ա՛յս է իմանալեացն չափ: - 344. Առաջին, զի նախ ձայնն *հասանէ*, և ապա՛ բանն իբր կարապետ եղեալ բանին: - 353. Ցուցանէ թէ` անկեալքն ի քահանայութենէ` հաղորդին ի ձեռս այլոց. այլ և *հասի* իրաւանցն: - 370. Երիտասարդն **գ ժ** է հասակն. իբր թէ *հասա՛ք* ի չափ լրման և աճման: - 378. Իսկ զ**խ** իջևանքն ոմանք խորհուրդ առնուն յետ ելիցն ի մարմնոյ հոգւոյն` խ աւուրբ *հասեալ* յօթևանս: - 391. Եւ ոմանք ի նոյն ժամն ասեն *հասանիլ* յիւրաքանչիւր օթևանս: - 391. Երրորդ` զօրաւոր հարւածքն եգիպտոսի, որ ո՛չ ոք կարէր *հասանիլ* և բռնել զպատիժն. որպէս ոք հարկանէ և դարձեալ բարձրացուցանէ զձեռն: - 395. Եւ անէծքս այս ո՛չ *հասին* ի նա վասն երից: - 400. Ոմանք ասեն միայն զլուսաւորս արգելեալ և զկամարն շրջեալ մինչ *հասեալ* ի նոյն կէտն: - 416. Եւ մինչ ընթացաւ ի կալն ուռնայի և գնեաց զեզինսն և ողջակիզեաց, *եհաս* ի **զ** ժամն. որ յառաջն դադարեալ էր սուրն: - 435. Քառասուներորդ, սաւուղ բազում անգամ խնդրէր զդաւիթ և ո՛չ կարէր ըմբռնել. և որդիքն սաւուղայ զտէրն. զի ո՛չ էր *հասեալ* ժամ նորա: - 437. Այլ և խաչաձև ընթանայ նաւ ի վերայ ջուրց յորժամ լարէ հողմ զարմիոնն. կամ տարածեալ թևօք *հասանին* ի նաւահանգիստն: - 494. Նոյնպէս և հոգի մարդոյ զկնի մահու ո՛չ կարէ

արդարանալ ըստ ինքեան. բայց թէ ի ձեռս այլոց վճարի պարտ նոցա և *հասանին* ողորմութեան: - 508. Նոյնպէս պա՛րտ էր զսերմն հաւատոյ ընդունել նոցա քրիստոսիւ, և ապա փոքր փոքր աճմամբ *հասանիլ* պարգևաց հոգւոյն, և պտղաբերել և զայլսն: - 521. Եւ տէր սիոն հայոց կաթողիկոսն անդր *հասեալ* բազում եպիսկոպոսօք և մեծամեծ ազատօք հայոց և իշխանօք նոցին. ընդ դէմ աղանդոց ա՛յնր ժամանակի, և թուլութեան կարգաւորաց եկեղեցւոյ, և բռնութեան իշխանաց: - 545. Իսկ մեղք է յօրինաց կատարումն ո՛չ *հասանիլ*: - 555. Իսկ պատիժն է յայլմէ առ մեզ. այսինքն յարդար իրաւանցն աստուծոյ առ անիրաւս *հասեալ*: - 569. Նախ՝ զի մեք զգայարանօք՝ միջնորդութեամբ պատահմանցն *հասանիմք* ի գոյացութիւնն. զի անմեկնելի որոշմունք են ի գոյացութեանց սոքա: - 597. Իսկ այժմ որ բաժա՛ն է՝ բաժանմամբ *հասանէ* ի նա ամենայն սրբութիւն: - 605. Զի՞նչ է որ զառաւօտու քարոզն՝ այսինքն զերկրպագեմքն, և զՊատարագին գոհութիւնն, և յերեկոյն *զՅասեալքս* ի ժամն, աղօթից ձևով ասէ սարկաւագն: - 626. Եւ զայս դնեն պատճառ թէ՝ ի ժամանակս ինչ՝ զօրք հեծելոց նոցա ո՛չ *հասին* ի բարեկենդանն...: - 651. ...և վասն ներգործականին զուրբաթն. որով սրբասէր լեալ *հասցուք* առ ճշմարիտն և առ բարին ի ձեռն աստուծոյ: - 654. Եւ զորօրինակ՝ ի ստորոտ լերին *հասեալ* զգրաստի բեռինս առեալ՝ թողումք յարօտս սակաւիկ մի: - 657. Յորժամ սրբազան և մաքուր հոգին *հասանէ* ի վախճան՝ ուրախութեամբ ցնծայ իբր ի հանդիսից զերծեալ և ի պսակն ընթացեալ. և որպէս յանփոփոխ կեանքն հետևեալ: - 668. Իսկ յորժամ մեղաւոր հոգին *հասանէ* ի վախճան, տրտմութեամբ և ակամայ իբրև զանասուն ի սպանդ վարեալ...: - 669. ...զի անցեալ է ժամանակն ողորմութեան, և դատաւորն առ դուրս *հասեալ*՝ դնել ի տանջանս դժոխոց. որպէս աստ զմարմինն ի գերեզմանի: - 671. Եւ դարձեալ որպէս որք յեզր ծովուն *հասեալ* զառագաստ նաւին իջուցանեն. - 676. որպէս փախեաւ կինն որ ծնաւ զմանուկն արու ի տեսիլն. և ո՛չ կարաց հրեղէն վիշապն *հասանիլ*: - 689. Երկրորդ, ասէ սուրբն դիոնէսիոս ի ննջեցելոց կատարմանց գլուխն՝ եթէ մաքրելոց հոգին *հասեալ* ի վախճան՝ յայտնի և մերձակայ տեսանէ զամենայն փառս և զպսակ զոր ընդունելո՛ց են նոքա ի յարութեան աւուրն: - 691. Սակայն ի յղութեանն իջանէ չար հոգին ի յորովայն մօրն. և նմա զօրութեամբն և ներգործութեամբն ծնանի մանուկն և սնանի և *հասանէ* յերիտասարդութիւն. - 706. Հինգերորդ, ըստ համարոյ **իդ** տառիցն որովք իմաստնացան և ի գիտութիւն ճշմարտութեան *հասին*: - 711-712. Իսկ մանկութիւնն թերի է զի ո՛չ *եհաս* ի կատարումն. և ծերութիւնն պակասութիւն ունի զի անցեալ է զկատարելութեամբն: - 726. Սա՛ է մայր մեր եկեղեցի որ հոգևոր որդիս աստուծոյ օրըստօրէ ծնանի. որ *հասեալ* ժառանգութեանն. ի բաց տանելով զաղախինն և զորդի նորա: - 756. Կամ թէ արագ որպէս ասայէլ որ *հասնէր* այծեման: - 761. Ի ծովուց ջուրց ի չորից նաւաց հազիւ մինն կորնչի. և ի ծովու այսմ աշխարհի ի չորից նաւաց հազիւ մինն ի նաւահանգիստ փրկութեան *հասանէ* : - 764. Այլ ի հասարակ գրոյս՝ հասարակեաց և նա զկեանս առօրեայ. *հասեալ* ի գանձ իմաստից և յաղբիւրն գիտութեանց: - 772. Միանգամայն և իղձք փրկական և հրաման հարկի ժամանեալ *էհաս* առ ներգևեալս ոգի և թաւազարթ թզենի: - 773. Յորոց յա՛յտ է թէ՝ որք աստի կենօքս ի սուգ տրտմութեան անցուցանին զի ուրախութեան *հասցեն:* - 775. Քանակաւ, զի նա՛ գործով, իսկ նոքա և գործով և *հասեալ* մեղօք...: - 777. Վասն որոյ կրկին է և պատիժն. զառաջինն ի նախնւոյն *հասեալ*. և ապա յետոյ յօր մի հաստատեալ ըստ առաքելոյ: - 777. Ա՛րդ՝ որպէս *հասեալ* պատժոյն հաղորդեցան, նմանապէս և *հասեալ* շնորհօքն ազատեցան: - 777. Նախ՝ որպէս անդանօր ողջունեն զխաղաղութեան և շինութեան գոլ. յեղակարծ ժամու *հասանիլ* բարկութեան: - 788-789

**ՀԱՍԱՐԱԿ +** Ասեմք առ այս, մոլորականքն ո՛չ եթէ զի ունին ներհակ շարժումն վասն այն կոչին մոլորականք, կամ պատճառք են չարեաց, այլ զի մեք մոլորիմք ի շարժումն նոցա. զի ունին *հասարակ* շարժումն, և ունին յատուկ շարժումն: - 12. *Հասարակ* շարժումն է ըստ ութերորդ կամարին յարևելից յարևմուտս. իսկ յատուկ՝ յարևմտից յարևելս: - 12. Հինգերորդ՝ զի զօրութիւն՝ կարողութիւն՝ ուստի առնելն է՝ և աստուածութիւն՝ տէրութիւն՝ իշխանութիւն և այլք այսպիսիք՝ ո՛չ են առանձին անձնաւորութեանց. այլ *հասարա՛կ* են. և ո՛չ մին առաւել քան զմի...: - 45. Հինգերորդ՝ զի զօրութիւն՝ կարողութիւն՝ ուստի առնելն է՝ և աստուածութիւն՝ տէրութիւն՝ իշխանութիւն և այլք այսպիսիք՝ ո՛չ են առանձին անձնաւորութեանց. այլ *հասարա՛կ* են. և ո՛չ մին առաւել քան զմի. վասն այն ո՛չ կարէ որդի առնել ինչ յանձնէ իւրմէ թարց հօր որպէս ասացաք: - 45. Այլ այս առաւել զմիակամութիւնն ընդ հօր և որդւոյ ցուցանէ. զի ասէ՝ ո՛չ իմ կամք այլ որոշ զի առնեմ, այլ զա՛յդ կամքդ առնեմ զի *հասարա՛կ* է: - 46. Այլ ա՛յս է լուծումն, զի յորժամ լսես թէ մի է աստուած, զընդ աստուած ասելոյն՝ զերրորդութիւնն իմացիր. զի ո՛չ է առանձին, այլ *հասարա՛կ* է աստուածութիւնն: - 47. Եւ ի տնտեսականն. որպէս Աստուած փրկիչ. կամ արդարութեան. կամ խաղաղութեան. կամ աբրահամու. կամ իսահակայ և այլն. և այս *հասարա՛կ* է Երրորդութեանն: - 49. Ա՛րդ՝ ընդդէմ քումդ խոհեմութեան ո՛րպէս իմանաս ի միում *հասարակ* բնութեան զբանն ծնեալ և զհոգին բղխեալ.

իսկ հայր ոչ ծնեալ կամ բղխեալ. և անդրադարձեալ ևս: - 74. Այլ զորօրինակ՝ ոմն անհատ ունի *զհասարակ* զբնութիւնն լիով յիւրում առանձնութեանն: - 74. Ա՛րդ՝ դու առանձնութեամբ քո որ ունիս *զհասարակ* բնութիւնդ՝ ծանր այսօր ի մօրէ՛ կամ մեռար յաշխարհէ՛ և ո՛չ *հասարակ* մարդկութիւնս: - 74. Այս վասն *հասարակ* բնութեանն: - 74. Զի բնութիւնն հասարա՛կ է. և մայր նորին՝ Երրորդութեանն լիցի մայր: - 76. Զի թէ անանձն բնութիւն ասէաք միաւորեալ որ էր *հասարակ*, գո՛յր ինչ նոցա ասել առ այս: - 76. Որև ըստ այսմ պարտին նոքա ուրանալ և զանհատ բնութիւնս մարդկութեան նորին. զիմի՛ *հասարակ* մարդկութիւնս միաւորեսցի: - 76. Ծածուկ և զանխո՛ւլ է աստուածաբանութեան տեսութիւն *հասարակ* մտաց. և հազիւ ճանաչի կիրթ խորհրդոց՝ և նուրբ քննութեանց սրբոց: - 81. Ա՛րդ՝ եթէ՝ ի յարութեանն *հասարակ* արդարք տեսանեն զաստուած դէմ յանդիման որպէս և է, և քրիստոս ո՛չ կարէ տեսանել, փո՛քր լինի գիտութեամբ քան զմարդ որ է սուտ: - 99. Եւ *հասարակ* հրեշտակք և զօրութիւնք կոչին: - 102. Զի՞նչ *հասարակ* և յատուկ նոցա: - 102. Զի՞նչ է միաւորութիւն և որոշումն. այսինքն *հասարակ* և յատուկ աստուածային: - 104. Դարձեալ՝ ա՛յն է *հասարակն* որ մի՛ է երիցն. և երկուքն ո՛չ աւելի. և մինն ո՛չ ունի պակաս: - 104. Մանաւանդ թէ ամենայն ինչ *հասարակ* է. բնութիւն. կամք. թագաւորութիւն. և այլն: - 104. Նմանապէս և *հասարակն* թէպէտ բազում է, այլ երկոտասան գլխով նշանակի...: - 105. Դարձեալ՝ *հասարակն* և յատուկն աստուածային՝ բազմազանապէս ասի ի սրբոյն դիոնիսեայ: - 105. Նախ՝ զի միեղէն է և *հասարակ*՝ գերադրականքն. որպէս գերագոյն աստուած. և տէր տէրանց: - 106. Երկրորդ՝ *հասարա՛կ* է ի միմեանս գոլ անձանցն. որպէս որդի ի հայր. և հայր յորդւոջ. և հոգի ի հայր և յորդի. և անդրադարձեալ: - 106. Երրորդ՝ *հասարա՛կ* է ի յԵրրորդութիւնն միութիւնն սուրբ. զի մի է հայր. մի որդի. մի հոգի: - 106. Չորրորդ՝ *հասարակ* է ի միոյ բարերար կամաց յառաջ եկելոց հաղորդեալ անհաղորդաբար ըստ համեմատութեան: - 106. Իսկ *հասարակն* զի բոլոր բանն աստուած իւրով կատարելութեամբն էառ զբոլոր և կատարեալ մարդկային բնութիւնս. և եղև աստուածն կատարեալ՝ մարդ կատարեալ: - 106. Այսպէս է միութիւնք և որոշմունք որ է *հասարակ* և յատուկ ի սուրբ Երրորդութիւնն: - 106. Երրորդ՝ Երրորդութիւնն ցուցանէ երիցն զմի *հասարակ* բնութիւն. որպէս ասեմք մարդ և մարդկութիւն. ձի և ձիութիւն. ընդդէմ արիոսի որ ասէ՝ երեք թիւն ունի երեք բնութիւն, ասեմք երից անձանցն մի բնութիւն: - 108. Երրորդութիւն *հասարակ* է. և աստուածութիւնն *հասարակ*: - 108. Ո՛չ ասեմք. զի աստուածութիւնն *հասարակ* է բնութեանն. իսկ Երրորդութիւնն *հասարակ* է անձանցն: - 108. Զի մինն *հասարակ* է. և միակն մասնաւոր և առանձնակի. զի ամենայն միակ՝ մի է. այլ ամենայն մի միակ ո՛չ է. որպէս յորժամ ասեմք՝ մի հօտ. մի շեղջ. մի լիտր. այսպիսիքս մի են. այլ միակ ո՛չ են: - 109. Չորրորդ՝ որ սկիզբն ունի և կատարած. և թէպէտ *հասարակ* սոքա յաւիտեանք կոչին, այլ ունին յատուկ անունս: - 115. Եւ արդ՝ զի *հասարակ* են էութեամբ՝ և յատուկ առանձնաւորութեամբ, յաղագս որոյ զանազանելի է զյատկութիւնս ըստ երկուց լուսոյն: - 125. **Սակայն ըստ մեր իմացմանս *հասարակ* է բարին քան զչէրն. զի ասեմք՝ սէրն բարի է. ազնիւն բարի է. և այլն. որպէս ասեմք՝ մարդն կենդանի է. ձին կենդանի է.** և այլն: - 128-129. Տասներորդ՝ դարձեալ զանազանի, զի երևմունքն միայն փոխեն *զհասարակ* զգայութիւնն: - 133. Այլ՝ առաջին կարծիքն է *հասարակ* և ճշմարիտ: - 134. Զի՞նչ է երկնայնոցն *հասարակ*՝ և զի՛նչ յատուկ: - 137. Նախ է *հասարակ*՝ գոլն հոգի՝ անմարմին՝ և իմացական: - 137. Այսպէս, Նախ՝ զի մաքրել և լուսաւորել և կատարելագործել *հասարակ* է ի սոսա: - 138. Երկրորդ՝ զի նախ մաքրելն է, և ապա՛ լուսաւորելն, և ապա՛ կատարելագործելն. և այս կարգ *հասարա՛կ* է ի նոսա: - 138. Ապա յա՛յտ է թէ ո՞րպէս է *հասարակ* և զանազան քահանայապետութիւնն առ աստուած ի հրեշտակս և ի մարդիկ: - 139. Իսկ այլք ասեն թէ՝ հրեշտակն ո՛չ երևի ձևացեալ մարմնովն և ո՛չ խօսի ընդ մարդոյն. այլ՝ դնէ զնմանութիւն դիտաւորութեան ի յաչքն կամ ի յականջն մարդոյն. և անդ ընդունի *հասարակ* զգայութիւնն զտեսակս այնմիկ, և տայ յերևակայութիւնն և յիմացականն. այսպէս երևին հրեշտակք և խօսին ընդ մարդոյ: - 145. *Յասարակ* կարծիք է թէ՝ **ժ**երորդ դաս հրեշտակացն անկաւ, և մարդս զանկելոց տեղին լնու: - 150. Այլ այս ո՛չ է *հասարակ* թէ **ժ** դաս էր հրեշտակաց և մինն անկաւ: - 150. *Յասարակ* տարերք թէ ո՞րպէս են անապականք: - 154. Յատկութիւնք առաւօտու և *հասարակ* աւուր. երեկոյի և գիշերոյ. տասն տասն գլխով: - 154. Երրորդ՝ գործ բնութեան է՛ *հասարակ*. իսկ կամացն առանձնակի: - 156. Ի փորձութեանց ծանեաք զշահն որ ասացաւ ի վերոյ. այլ *հասարակ* ամենայն մարդկան զի՞նչ օգուտ է փորձութիւնն...: - 161. Իններորդ՝ զերկնային և զերկրաւոր միտս մարդկան առ *հասարակ* լուսաւորէ՛: - 185. *Յասարակ* և յատուկ շարժութիւն ունի: - 186. Եւ ունին կրկին շարժումն. *հասարակ* և յատուկ: - 189. *Յասարա՛կն* է յարևելից յարևմուտս: - 189. Ի խոյն և ի ցուլն և յեկաւորն առնէ զգարուն. որ է *հասարակ* տիւն և գիշերն **ժբ** ժամ: - 190. Ի կշիռն ի կարիճն և յաղեղնաւորն առնէ աշուն. նոյնպէս *հասարակ* տիւ և գիշեր **ժբ** ժամ: - 190. Յինգերորդ՝ օ՛ր է *հասարակ* յարութեան մարդկան. և գալստեանն քրիստոսի. և հատուցման ըստ

իւրաքանչիւր գործոց: - 193. Իսկ աստեղագէտք *զհասարակ* օրն. յորում արեգակն ի բարձրութիւնս իւր հասանէ: - 194. Եւ քան զժամանակն ո՛չ է ինչ պատուական. ոչ ինչ *հասարակ*. ոչ ինչ անցական և հոսական. ոչ ինչ անմնացական. ոչ ինչ այլայլական և փոփոխական: - 198-199. Դարձեալ՝ քան զժամանակ ոչ ինչ *հասարակ*. զի ժամանակ յամենեցունց *հասարակ* ստացեալ լինի. և հասարակապէս անցանէ: - 199. Նոյնպէս և մարդկային կենցաղս ամենեքեան հասարակաբար հաղորդին. և ամենեքեան առ *հասարակ* փոփոխին և կորուսանեն...: - 199. Այն որ յԱրևելից հնչէ, առ *հասարակ* Եւրոսք կոչին: - 205. Իսկ որ ի Հարաւո՛յ հնչէ, *հասարակ* Նօտոսք կոչին: - 205. Իսկ Արևմտիցն *հասարակ* Զեփիւռք կոչին: - 205. Վասն առաջնոյն պա՛րտ է գիտել, զի առաւել *հասարակն* հեռի՛ է և մեծագոյն. և առաւել յատուկն մերձ է մեզ և նւազագոյն: - 235. Եւ առ *հասարակ* ասեմ զայս դնել ի մտի. զի չափաւորութիւն անդամոցն ըստ ձևոյն և ըստ գունոյն և ըստ քանակութեան և ըստ կազուածոյն և ըստ շարժմանն, նշանակէ զբարի մտացն ընդաբոյս յարմարութիւնն: - 248. Գիտնականին են՝ Միտք. Տրամախոհութիւն. Կարծիք. Երևակայութիւն. և *Հասարակ* զգայութիւն: - 248. Դարձեալ հոգին ունի զօրութիւնս ոմանս *հասարակ* ընդ անասնոց. որպէս զգայականութիւնն: - 249. *Հասարակ* զգայութիւնն: - 249. Իսկ զոմանս ունի ո՛չ *հասարակ* ընդ անասնոց. որպէս բանն. իմացումն. և կամքն. և սոյնպիսիք: - 249. Իսկ ներքինն՝ որ է *հասարակ* զգայութիւնն. երևակայութիւնն. կարծիքն. տրամախոհութիւնն. յիշողութիւնն որ է միտք. զի ամենայն ինչ ի յիշողականն մտանէ: - 249. Դարձեալ՝ *հասարակ* ամենայն մարդ յարակցէն և յարւեստէն ճանաչի: - 250. Իսկ որ *հասարակն* է սոցա և պատշաճաւոր, ունին զնոյն հասարակութիւն բուսոց ի նոյն ժամանակս: - 261. Վասն որոյ բոյսք առ *հասարակ* յերեք ամիսս ծնանին, և ի չորրորդումն կատարին յաւելեալ ի վերայ զկազմողական զօրութիւնն: - 262. Որև յաւելեալ իր ինչ զգայական՝ լինի զ. վասն որոյ առ *հասարակ* ի **զ** ամիսս ծնանին. և ա՛յլք ի **զ** շաբաթս. և կէսք ի **զ** օրս: - 263. Եւ այս հասակաւ և չափով յառնելոց եմք առ *հասարակ*: - 265. Բնական պատկեր է, որով իմանամք և կարեմք սիրել զաստուած. և այս *հասարա՛կ* է բարեաց և չարաց: - 273-274. Երեսունեմի, Վասն խորանին առ *հասարակ*: - 283. Տասներորդ՝ մկտութեամբն լինիմք որդիք աստուծոյ և եղբարք քրիստոսի. և գերազանցիմք **գ** ազգաց. այսինքն *հասարակ* մարդկան, և իսրայէլացւոցն, և հրեշտակաց երկնից: - 309. Նա՛խ՝ որպէս *հասարակ* շինականք ի ծննդեան զաւակաց զմին օրն պատուեն աղարուք կոչելով: - 321. Երկայն **իը** կանգուն. և բարձր **ժ**. և լայն **ի**. բոլորն *հասարակ*: - 343. Եւ *հասարակ* ժողովուրդք արտաքին սրահն: - 343. Զի՞նչ *հասարակ* և զի՞նչ յատուկ քահանայութեան տեառն մերոյ՝ և հնոյն քահանայութեան: - 354. *Հասարակ*, զի ամենայն քահանայ միջնորդ և հաշտարա՛ր է աստուծոյ և մարդկան. զընծայս ժողովրդեանն աստուծոյ նուիրելով և յաստուծոյ շնորհս և քաւութիւն ժողովրդեանն առնելով: - 354. Այն որ զինքն պատարագէ, կամ առանձին կրօնիւք, կամ *հասարակ* աղօթիւք: - 370. Եւ որ *հասարակն*, և սմա՛ մարմնոյն և հոգւոյն ո՛չ խտրի. զի եղբայր յեղբօրէ օգնեալ՝ զմիմեանց բառնան զտկարութիւն: - 370. Այսոքիկ *հասարակ* կարծիք և ընդունելիք: - 391. Հինգերորդ՝ նոյն ինքն մարմինն սուրբ ո՛չ թէ հացիւ միայն կայր որպէս *հասարակ* մարդ. այլ բանիւն կենդանի ի նմա՛ միացեալ: - 397. Եւ մի՛ մոռանար զզօրութիւնն աստուծոյ և զերախտիսն զոր արա՛ր *հասարակ* և առանձնակի: - 398. Այլ և *զհասարակս* խնամեաց առաւել քան զնոսա. զի ի մէջ նոցա օրինակօք էր, և ի մէջ մեր ճշմարտութեամբ: - 398. Դարձեալ՝ Նայիլն և Հայիլն յատուկ տեսողութեանն է. իսկ Տեսանելն *հասարակ* զգայութեան: - 407. Երրորդ՝ վասն *հասարակ* յարութեանն. զորմէ լուաւ սատանայ և բեկաւ ողն նորա: - 409. Իններորդ՝ և մարմնական որդի էր դաւթի ըստ կարգի *հասարակ* մարդկան. իսկ քրիստոս ակնկալութեան և աւետեաց և ի վեր քան զկարգ բնութեան աստուած մարդացեալ: - 442. Նա՛խ՝ սրբութիւն *հասարակ*. որպէս շնորհք մկրտութեան և խոստովանութեան. զի որք անցանեն ընդ նա՞ սրբին: - 462. Ա՛րդ՝ ունէր սուրբ կոյսն *զհասարակ* շնորհացն մկրտութիւն: - 462. Որո՞վ զանազանի մահն քրիստոսի և *հասարակ* ամենայն մարդոյ: - 495. Այլ զանազանութիւն գոյ ի մէջ մահու նախաստեղծ մարդոյն, և մահու տն մերոյ քրիստոսի, և մահու *հասարակ* մարդկայինս ազգի: - 495. Իսկ *հասարակ* մարդիկ կրակա՛ն են կամաւորի և ակամայի. բնութեամբ և կամօք: - 502. Նախ ասեմք եթէ՝ առաջին դժոխք հոգւոցն ո՛չ էր վասն ներգործական մեղացն *հասարակ*. այլ վասն պարտուցն ադամայ: - 506. Եւ որ ոք ո՛չ խոստովանի զքրիստոս աստուած, զտօն նորա ըստ *հասարակ* մարտիրոսացն առնէ ի մէջ գիշերոյն ի վեր: - 509. Տե՛ս զի ի ժողովն եփեսոսի *հասարակ* ամենայն ազգ այսօր նաւակատիս առնէին մինչ ի ժողովն քաղկեդոնի ուր փոխեցան տօնք և պահք և դաւանութիւնք: - 509. Նա՛խ՝ զի մատթէոս զերեկոյի շաբաթուն և զլուսանալ միաշաբաթին յիշէ. այսինքն զսկիզբն և զվախճան գիշերին. զի յերկուց մէջն որ է՛ *հասարակն* և մէջ գիշերին՝ նշանակեսցէ զժամ յարութեանն: - 512. Եւ ի յայս միտս զտօն ամենայն սրբոց մարտիրոսաց ի մէջ գիշերի սկսանեմք **զ** ժամով յառաջ քան զծագումն լուսոյն *հասարակ* աւուր: -

515. Եւ մեք ի *հասարակ* յարութեանն երեսնամեայ յառնելոց եմք: - 516. Տասներորդ՝ թէ և *հասարա՛կ* է ամենայն ինչ երրորդութեանն, տէրութիւն իշխանութիւն աստուածութիւն և այլն: - 522. Եւ որպէս այսորիկ ժողովք ընդ դէմ *հասարակ* հերձուածողաց, նոյնպէս և առանձին ժողովք եղև ազգիս հայոց է երորդ: - 544. Վասն է՞ր զի մարդոյս գործ և անասնոցն *հասարա՛կ* են, և մարդոյս միա՛յն է մեղք: - 563. Վասն այն ասի արդարութիւնն ուղղութիւն կամաց. զի ո՛չ միայն է առանձնական զօրութիւն կամ առաքինութիւն. այլ և *հասարակ* և պարունակիչ ուղղութեան հոգւոյն: - 579. Ոմանք ասեն թէ ի *հասարակ* ընթրիսն յորժամ բազմեցան՝ ի *հասարակ* սեղանոյն թացեալ զպատառն ետ յուդայի. - 599. Ա՛րդ՝ *հասարակ* կանոնք այսպէս եղին հարքն սուրբք. - 611. Եւ է՛ առաջին ժամ աղօթիցն ի մէջ գիշերի. վասն զի ի մէջ գիշերի յարեաւ քրիստոս. և ի մէջ գիշերի *հասարակ* յարութիւն մեր. - 621. ...որ է՛ *հասարակ* զգայութիւն. երևակայութիւն. կարծիք. տրամախոհութիւն. և միտք որ է՛ յիշողութիւն: - 622. Այս *հասարակ* աղօթք: - 622. Զի՞նչ զանազանի *հասարակ* աղօթքն և առանձնականն: - 623. Նա՛խ՝ *հասարակ* աղօթքն է հարկաւոր. իսկ առանձնականն կամաւոր: - 623. Երկրորդ՝ *հասարակն* վճարէ՛ զպարտս. և առանձնականն նիւթէ՛ զպսակ: - 623. Երրորդ, *հասարակն* զգայարանօք կատարի. իսկ առանձնականն ի միտս լուսափայլի: - 623. Չորրորդ, *հասարակ* աղօթքն է միակի պատիւ և փառք. և առանձնականն կրկնակի: - 623. Նախ ի տէրունական բանիցն է յայտ. որպէս ուսոյց *հասարակ* աղօթել. - 623. Երկրորդ՝ վասն զի քահանայք եմք՝ պա՛րտ է *հասարակ* աղօթել. և զի աբեղայք՝ պա՛րտ է առանձնակի աղօթել: - 623. Երրորդ՝ զի ունիմք զբնութիւնս *հասարակ*՝ պա՛րտ է *հասարակ* աղօթել. և զի ունիմք անձն և դէմք յատուկ՝ պա՛րտ է առանձնակի աղօթել: - 623. Չորրորդ՝ վասն *հասարակ* և յայտնի մեղաց՝ պա՛րտ է *հասարակ* և յայտնի աղօթել. - 623. Եւ ա՛յլ խորհուրդ. **գ** առանձնական աղօթքն, և **թ** *հասարակն*, որ լինի ամենայնն երկոտասան անգամ աղօթք: - 623. ...վասն որոյ մեզ լեզու լինի և ի դէմս մեր գոհանայ զաստուծոյ ըստ իւրաքանչիւր ժամու. այսինքն յառաւօտն, ի *հասարակ* օրն, և յերեկոյն. զի գոհացումն է և ո՛չ աղօթք: - 626. Եւ ի *հասարակ* օրն յորում խաչեցաւ: - 632. Այլ զոր ինչ *հասարա՛կ* է երից անձնացն, աստուած, և հզօր, և անմահ և այլն ամենայն, կարելի՛ է ասել միոյ անձինն և միոյ դիմաց. աստուած հզօր և այլն: - 633. Եւ գիտելի է, զի ամենայն ժամս աղօթից է՛ *հասարակ* և է՛ յատուկ: - 633. *Յասարակ*, որպէս ի սկզբանէ մինչև ցաւարտումն առ Երրորդութիւնն սուրբ աղերսեմք: - 633. Դարձեալ՝ կրկին է տօն. մինն տէրունական, և միւսն *հասարակ* սրբոց: - 646. Իսկ *հասարակ* սրբոցն նախատօնակ ո՛չ է այսօր: - 647. Իսկ օրհնութիւն աղին, զի որոշեսցի ի զոհից կռոց, և ի *հասարակ* զենմանց...: - 657. Ա՛րդ՝ եթէ ի *հասարակ* ժողովրդենէ իցէ ննջեցեալն, հանեն զհին հանդերձն և պատեն սուրբ կտաւովք և զգլուխն փակեղամբ և վարշամակօք, և օղ յոտս: - 671. Եւ *զհասարակ* ժողովուրդն ի դասս հրեշտակաց ըստ սրբոյն դիոնիսեայ: - 672. Նախ ցուցանէ թէ՝ և այսպէս *հասարակ* ընթանամք առաջի քրիստոսի: - 675. ...եթէ սուրբք որ աստ չարչարեցան, յառնեն յառաջագոյն և փափկանան մարմնով **ռ** ամ. և ապա *հասարակ* յարութիւնն ամենայն մարդկան: - 710. Զոր օրինակ նշան դրօշմի կայ ի մէջ քո՝ և անասնոյն՝ և տանն. զի ելեալ ի տանէ երթայ խառնի ի *հասարակ* նախիրն...: - 719. Նոյնպէս հոգին բաժանեալ և մարմին լուծեալ ի *հասարակ* տարրն, այսու խառնեալ դրօշմիւս ճանաչեն զմիմեանս անսխալապէս: - 719. Ո՞րպէս ի *հասարակ* տարրէ՛ մարմին մարդոյ անխառնապէս ժողովի: - 719. Այսպէս և ի մարմին մարդոյ ոչինչ խառնի ի *հասարակ* տարերաց ի յորս լուծաւ. այլ ինքն միայն գոյացութիւն մարմնոյն խառնեսցի ընդ հոգւոյն: - 719. Եւ դարձեալ՝ որպէս զանազան սերմանիք ցորեան կորեակ և այլք՝ *հասարակ* ի մի վայր սերմանին. և *հասարակ* ջրով և ջերմութեամբ սնանին. և ի յազգս իւրեանց կատարին. ցորեանն ի ցորեանն և այլն: - 719. Նմանապէս և մարմին մարդոյ առ հասարակ մեռանին և ի հող լուծանին և յայլ տարերս. և յորժամ յառնեն՝ ո՛չ ունին ի *հասարակ* տարրէ ընդ ինքեանս. և այս մարմին ի յայն մարմնոյ ոչ ինչ ունի խառնումն: - 719-720. Վասն այսորիկ ասեն վարդապետք թէ՝ սրբոցն և անսրբոց **բ** իրք *հասարա՛կ* է. այսինքն յարութիւնն զի առհասարակ յառնեն. և անմահութիւնն զի առհասարակ անմահ և անապական մարմնով յառնեն: - 723. Նա՛խ՝ զի տեղիք դատաստանին պա՛րտ է զի ի *հասարակ* վայրի լիցի և երուսաղէմ է՛ մէջ աշխարհի: - 738. Նախ ի նոյն առ ինքն ի դէմս սրբոյ Երրորդութեանն. *հասարակ* գոլ ամենայնիւ. աստուածութեամբ բնութեամբ կամօք և այլն: - 746. Երրորդ, հայի առ նոյն ինքն արդարապէս հատուցումն մանրամասն քննութեամբ բարեացն և չարացն. որք առաւել կամ նուազ ունին. կամ *հասարակ* յերկուցն կրից: - 746. Եթէ ումեք տուեալ իցէ շնորհ *հասարակ* կամ յատուկ, որպէս մկրտութիւնն և հաւատքն. քանքար և տաղանդ. իշխան և առաջնորդ. մեծութիւն և ինչք. կեանք լոյս ամանակ և այլն ամենայն. այսու եղանակաւ կշռոյ հատուսցի: - 747. Այլ զայս ո՛չ իմանան *հասարակ* կարծիք. զի արքայութիւնն երկնից մի է. այլ փառք և պսակքն են զանազանք առաւել և նուազ: - 758. Եւ զի ո՛չ է *հասարակ* կարծիք՝ ո՛չ հաստատեմք: - 759. Այլ ի *հասարակ* գրոյս՝ հասարակեաց և նա զկեանս

առօրեայ. հասեալ ի գանձ իմաստից և յաղբիւրն գիտութեանց: - 772. Առ այս ասեմք, թէպէտ է՛ ամենայն իր բնութեամբ նա՛ և *հասարակ*. որպէս և սևութիւն ագռաւու. այլ ո՛չ անդրադարձեալ. զի է՛ ինչ բնութեամբ, այլ ո՛չ *հասարակ*. որպէս կնտութիւն մարդոյ: - 774. Զի հաճելի՛ է բնաւորեալ գովութիւն մարդոյ. ըստ որում մեծարեցաւ տիրական պատուով. և է՛ այս *հասարակ*: - 774. *Յասարա՛կ* է և բնութեան իր, զի ամենայն ինչ նախնի մարդոյն բնութեամբ է ի մեզ և *հասարակ* իր. և առ յանդիմանութիւն դժկամակ երևեցան նախնիքն մեր. ուստի պատճառեցին զմիմեանս: - 774. Եւ այսպէս պատժոյ նորին հաղորդեալ մահու մեռանելոյն *հասարակ* ամենեցուն որպէս ասացաւ: - 776. Երկրորդն *հասարակ* բնութեանս նմա հետևեալ: - 778. Նա՛խ՝ աղօթիցն ժամ. ո՛չ միայն յերեկոյս և ի վաղորդեան՝ ի *հասարակն* կամ է անգամ աւուր ըստ մարգարէին: - 779. Կրկին է շնորհքն. ոմն *հասարակ* և ոմն յատուկ: - 783. Եւ է՛ *հասարակ* շնորհ, հաւանութեամբ անձնիշխան կամաց՝ պատրաստել զինքն առ ի փրկութիւն օգնականութեամբ շնորհին: - 783

**ՅԱՍԱՐԱԿԱԲԱՐ** + Նոյնպէս և մարդկային կենցաղս ամենեքեան *հասարակաբար* հաղորդին. և ամենեքեան առ հասարակ փոփոխին և կորուսանեն...: - 199. Ամենայն մեղք *հասարակաբար* է՛ ընդ դէմ աստուծոյ երիցն և միոյ: - 566. Երկրորդ ըստ հասարակութեան. զի *հասարակաբար* ո՞ ոք որ հաղորդի բնութեանս՝ հաղորդի և սկզբնականին: - 568

**ՅԱՍԱՐԱԿԱԾ** + Իսկ Գարնանամուտ՝ որ է՛ *հասարակած*՝ է՛ չորրորդ օրն. յորում լուսաւորքն կազմեցան: - 191. Եւ ի քսանն՝ *հասարակած* է: - 191. Եւ ի **ժբն**՝ *հասարակա՛ծ* է. որ է՛ գարնանամուտն: - 191

**ՅԱՍԱՐԱԿԱԿԱՆ** + Նախ *հասարակական*: - 747. *Յասարակական* է, որպէս ածէ՛ անձրև ի վերայ չարաց և բարեաց և այլն: - 747

**ՅԱՍԱՐԱԿԱՊԷՍ** + Դարձեալ՝ քան զժամանակ ոչ ինչ հասարակ. զի ժամանակ յամենեցունց հասարակ ստացեալ լինի. և *հասարակապէս* անցանէ: - 199

**ՅԱՍԱՐԱԿԱՑ** + Իսկ մարդ, զի սրբեսցէ ինքեամբ զմեզ՝ եղև ամենայն յաղագս ամենայնի. այսինքն հոգի և միտք և մարմին. զի յորոց *հասարակաց* եղև մահ, լիցի և կեանք: - 50. Առաջին տեսութիւնն է *հասարակաց*: - 119. Տասներորդ՝ այլև օրինակ և յարացոյց նմանատիպ *հասարակաց* յարութեան և նորոգման տիեզերաց և մարդկային բնութեանս որ յապագայն: - 196-197. Այսպէս ի *հասարակաց* ի նուազունս գոլով ի մարմնականն տիպ. իսկ անդրադարձեալ: - 235. Վեցերորդ՝ անդրանիկք են և ընտրեալքն աստուծոյ. որք նախքան զլինիլն աշխարհի ընտրեցան. թէպէտ յետոյ ի ժամանակի ըստ *հասարակաց* գոյացան և կատարեցան: - 309. Նա՛խ՝ զի ամենայն ոք յինքն ձգեսցէ զբանս օրինացն. և մի՛ ծուլասցի թէ *հասարակա՛ց* է կատարելի: - 340. Առաջին, ողջակիզաց մեծն. յոր *զհասարակացն* տօնէին: - 364. Վեցերորդ՝ դիտաւորութիւնն խնդրի թէ վասն որո՞յ է զենումն. զի թէ վասն աստուծոյ է կամ հոգւոյ, *հասարակա՛ց* է. իսկ թէ վասն մարդկան և կենդանեաց, կամեցողա՛ց է: - 366. Այլ այս ո՛չ է *հասարակաց* ընդունելի կարծիք: - 391. Վասն է՞ր *հասարակաց* արարիչն զազգս իրէից միայն սիրեաց այնպիսի օրինօք՝ նշանօք՝ և այլն...: - 398. Ասա՛ նմա թէ՝ այն *հասարակաց* հեթանոսա՛ց է. զի ածին մարմնով և ընչիւք. իսկ մերս ո՛չ է *հասարակաց*. այլ արժանաւորաց և ընտրելոց: - 403. Նոյնպէս և հաց պիղծ կոչի խմորունն և *հասարակացն*: - 427. Առաջին որ է *հասարակաց* սրբութիւն մկրտութեան, մերժէ՛ զմեղս և տայ զշնորհս: - 462. Ասեմք եթէ յետ յղացման բանին յարգանդի կուսին օրինօք և ոչ օրինօք բնութեան, ժուժկալեալ ամսոց ըննից և աւուրց հնգից, ըստ *հասարակաց* ասեմ և անդրանկաց. ըստ հնգից յաւելեալ թւոց նախաստեղծին նախարարչութեան աւուրց: - 469. Երրորդ՝ զի մի՛ իցէ ըստ *հասարակաց* կարգի. այլ ի վեր քան զբնութիւն որպէս ասացաւ: - 470. Երրորդն յառնէ և ի կնոջէ. որպէս *հասարակաց* ծնունդս: - 471. Եօթներորդ՝ գիրք սուրբք մարդեղութիւն ասեն բանին. այլ մարդն կոչումն յատուկ արական է և ո՛չ իգական թէ և *հասարակաց* կոչի: - 480. Իսկ զտէրունական տօնս երեկօրեայ յինն ժամ է աւուրն սկսանեմք. որ է՛ **թ** ժամաւ յառաջ քան *զհասարակաց* տօնս: - 508-509. Այլ ի մեծի **ե** շաբաթին օրինեմք իւղ, զի մի՛ մեռանն սուրբ ի *հասարակաց* ոտս մերձեսցի: - 605. Իսկ ոմանք ևս կատարեալք ամենայնիւ՝ յերեք ժամանակս աղօթեն առանձնակի. մի ի մէջ գիշերի յառաջ քան *զհասարակաց* ժամն. և մի յայգն. և մի ի ցերեկն: - 623. Իսկ վեցերորդ պատճառ վասն *հասարակաց* ամենայն մարդկան, զի ի հողոյ սկսաւ, դարձեալ ի հող վախճանի մարմինն...: - 678. Զի արեգական ծագելն զծնանիլն մեր նշանակէ. և մուտն զգերեզմանն. իսկ այս առաւօտ զյարութիւնն *հասարակաց*: - 680. ...որք աստիճանաւ վեհագոյնք են քան *զհասարակաց* արդարս. որպէս աբէլ, և առաքեալքն. և մարգարէքն. և այլք: - 711. Նախ կոչի աթոռ նշանակ հանգստեան. որպէս *հասարակաց* մարդկան: - 736. Զի *հասարակա՛ց* է ամենայն մարդոյ կատարելոց և անկատարից, զի ի յանդիմանութիւն յանդիմանելեացն առհասարակ դժկամա՛կ երևի ի սկիզբն. թէպէտ ընտրողութեամբ լաւին ընդունին

գխրատն: - 774. Այսպէս յընդդիմակէն տե՛ս և զայս. զի թէպէտ *հասարակա՛ց* է մարդոյ դժկամակ գոլ խրատու, այլ ո՛չ է բնութեամբ իր: - 774

**ՀԱՍԱՐԱԿԵՄ** + Երկրորդ՝ զի տեսութիւն մտաց *հասարակի* ընդ գոյութեան էութեան. և ուր եզերի բնութիւն՝ անդ և մտաւորութիւն: - 103. Այլ ի հասարակ գրոյս՝ *հասարակեաց* և նա զկեանս առօրեայ. հասեալ ի գանձ իմաստից և յաղբիւրն գիտութեանց: - 772

**ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ** + Հարցումնս այս է՛ ո՛չ գիտողաց *զհասարակութեանն* բան և զառանձնութեանն: - 74. Եւ միութիւնն ի քանակն՝ առնէ *զհասարակութիւն*: - 104. Եւ աստ երևի կրկին յատկութիւն՝ և կրկին *հասարակութիւն*: - 106. Իսկ *հասարակութիւն* երկու լուսոյն: - 125. Են և ա՛յլ *հասարակութիւն* և յատկութիւն նոցա. որոց բաւական է այսչափս առ այժմուս: - 138. Այսքան *հասարակութիւն*: - 138. Զի՞նչ *հասարակութիւն* է գործոյ արարչութեան և գործոյ նախախնամութեան. և զի՞նչ զանազանութիւն: - 157. *Հասարակութիւն* է, Նախ՝ զի ի միոյ բարերար կամաց յառաջ եկին գործ արարչութեան...: - 157. Այս թէ զի՞նչ է *հասարակութիւն*: - 157. Իսկ *հասարակութիւն* է Նախ՝ զի երկուց սկզբանցն մի և նո՛յն է պատճառ ներգործական. որ է՛ արուեստաւորն: - 163. Երկրորդ՝ *հասարակութիւն* է, զի որպէս է նկարեալ ծնն, նոյնպէս և շինեալ տաճարն քանակութեամբ և որպիսութեամբ. և անդրադարձեալ ևս: - 163. Հինգերորդ՝ *հասարակութիւն* տուընջեան և գիշերոյ: - 196. Իսկ որ հասարակն է սոցա և պատշաճաւոր, ունին զնոյն *հասարակութիւն* բուսոց ի նոյն ժամանակս: - 261. Դարձեալ՝ մա՛րդն ունի *հասարակութիւն* ինչ ամենայն ստեղծւածոց: - 275. Ա՛րդ՝ մեղք սկզբնականին չորիւք զանազանի յայլոցն. այսինքն ի մահացուէն և ի ներելոյն. ըստ միութեան. ըստ *հասարակութեան*. ըստ հաւասարութեան. ըստ որակի տարբերութեան: - 567. Երկրորդ ըստ *հասարակութեան*. զի հասարակաբար ո՞ ոք որ հաղորդի բնութեանս՝ հաղորդի և սկզբնականին: - 568. Խաղաղութիւն է ի կայումն առաքինութեան. յորում է հեշտութիւն ի յաստուած առանց *հասարակութեան* մարմնոյ՝ աշխարհի՝ և սատանայի: - 585. Նախ ճանապարհ կոչի ծնունդն. որով ի կեանս գամք ըստ *հասարակութեան* ընթացից մարդկան: - 665. Եւ այսպէս կարգաւորին *հասարակութիւնք*: - 775. Եւ առ այս եկն սով քաջ՝ զուգակշիռ *հասարակութեանց* մեծատանց և աղքատաց: - 789

**ՀԱՍԿ** + Որպէս փուշք վարդից. և քիստ *հասկից*. և խայթոցն աղնճին: - 217. Եւ դարձեալ՝ որպէս հատն ցորենոյ ունի առ ինքն զօրութեամբ զխոտն և զծաղիկն և *զհասկն*. և սոքա համանգամա՛յն են ի հատն այն զօրութեամբ. որ յետ ժամանակաւ ըստ դասի երևին: - 255. Զորօրինակ՝ կանաչ բոյս՝ թէպէտ ի ցօղուն և ի *հասկ*՝ չէ՛ կատարեալ. այլ ի տեսակս իւր կատարեալ է: - 556. Այսինքն նախ արմատն. և յետոյ խոտն. յետոյ ծղօտն. և ծնունդն. և ապա՛ տերև. պատանք. և քիստք. և ապա՛ ցորեանն ատոք ի *հասկին*: - 721

**ՀԱՍԿԱՆԱՄ** + Ո՛չ երկանունն է և ո՛չ այլ ինչ. այլ իրինոս ասէ՛ զպատճառն և դժուա՛ր է *հասկանալոյ*: - 300. ...զի կարիցեն *հասկանալ*. այն որ համանգամայն եղեն երկինք և երկիր: - 717

**ՀԱՍՈՂՈՒԹԻՒՆ** + Նախ բնական առարկութեամբ ըստ փիլիսոփայիցն *հասողութեան*. և սա՛ կոչի գիտութիւն: - 784

**ՀԱՍՈՅԹ** + Եւ ա՛յս է «իրիցունք կրկին պատւոյ արժանասցին». աստ *զհասոյթքն* և անդ զկեանքն յաւիտենից: - 363

**ՀԱՍՈՒ** + Եւ ոմանք ասեն թէ՝ ընդ պատիւ մարդոյն նախանձեցաւ և ի խորհուրդ եմուտ թէ սորա կատարումն ի՞նչ լինի, և ո՛չ կարաց *հասու* լինիլ: - 147. Որում ոչ համարիմ զանձն թէ *հասո՛ւ* իցեմ: - 771

**ՀԱՍՈՒՄՆ** + Երրորդ՝ տեղի ասի և *հասումն* մտաց. ըստ որում պարունակէ՛ իմացմամբ զէութիւն իմացեալ իրին: - 172. ...զի և մշակն յետ սերմանելոյն իսկոյն ո՛չ հնձէ. այլ համբերէ մինչ ի *հասումն* պտղոյն: - 520. Երրորդ՝ տիւ ասի պայծառ լուսոյն գիտութեան *հասումն*. և գիշեր ծածուկ խորոցն աստուծոյ անգիտութիւն անհասիցն: - 750. Իսկ տիւ և գիշեր, այսինքն արևապէս *հասումն* նոցա՝ տիւ է համարեալ. և անհասութիւն խորոցն աստուծոյ՝ գիշեր: - 767

**ՀԱՍՈՒՆ** + Դարձեալ ասեն թէ՝ հանճարովն եմք նախատեսք. այլ իմաստութեամբն *հասունք*: - 270. Դարձեալ ասեն վարդապետք թէ, Իմաստութեամբն եմք *հասունք*: - 583

**ՀԱՍՈՒՑԱՆԵՄ** + Եօթներորդ՝ *հասուցանէ* առ արեգակն: - 196. Որպէս լերինք ցուրտ գոլով՝ զպտուղս ո՛չ *հասուցանեն* որպէս ի դաշտի: - 261. Ի մանկութենէ կրօց նուիրեցաւ, և հրեշտակ աստուծոյ յափշտակեալ սընոյց զնա յանապատի մինչև *հասոյց* ի կատարումն: - 300. Նմանապէս և հոգին սուրբ ի գիշեր կենցաղոյս լուսով աւետարանին առաջնորդէ՛ մինչև *հասուցանէ* յայգն հանդերձեալ աւուր ի ցօղաւոր ամպն որ է՛ բանն մարմնացեալ. որ է հովանի և հանգիստ ամենայն սրբոց: - 338. Նա խթեաց զտէգն և *հասոյց* յաչքն իւր և լուսաւորեցաւ...: - 495. Այլ վասն առաջնոյն՝ գոհանամք, զի *հասոյց* զմեզ ի ժամս այս աւուրց: - 624. Եւ զպտուղս զգայութեանց ջրով *հասուցար.* եթէ բարի և եթէ չար: - 714

**ՀԱՍՏ +** Երրորդ՝ զի փափուկ ջիլք և նեարք՝ յերեսացն գան և առնեն զգայարանս. և *հաստն* ի թիկունքն սփռի վասն ուժոյ և պնդութեան և շարժութեան: - 234. *Հաստ* ձեռն և կարճամատն, նենգաւո՛ր է և գող: - 247. Եւ այս տուեալ է յաստուծոյ ընդ դէմ նոցա որ *հաստ* և բութ ունին զիմացումն: - 582

**ՀԱՍՏԱԿՈՂ +** Չորրորդ՝ զի մի՛ տկար ոք կարծիցի. այլ որպէս կողե՛ղ և *հաստակող* ասեմք զըմբիշս. այսպէս զօրեղ եղիցի կինն ի տնօրինել զտունն: - 276

**ՀԱՍՏԱՅԻՄՆ +** Եւ սկսան շինել *հաստահիմն* լայնամիջոց. աստիճանաձև ելիւք և իջիւք: - 296

**ՀԱՍՏԱՏ +** Նախ՝ զլայնատարած մեծութիւնն՝ և *զհաստատ* կամարաձգութիւնն երկնից: - 26. Արդ՝ ներքին հողմն ի վեր ձգէ զերկիր. և վերին հողմն ի վայր. և այսպէս ի մէջն *հաստատ* մնայ երկիր: - 181-182. Վեցերորդ՝ զի *հաստա՛տ* է ի դիրս իւր: - 186. Երկրորդ՝ զի տեսանելն *հաստա՛տ* է քան զլուր ունկան: - 235. Վասն է՞ր տեսանելն *հաստա՛տ* է քան զլսելն: - 239. Երկրորդ՝ ցուցմամբ. զի տեսանելն զհաւատն նշանակէ որ է *հաստատ*. և լսելն զուսումն ճարտարութեան: - 239. Եւ տեսանելն մնայ *հաստատ*, զոր ա՛յժմ իմանալ տայ: - 239. Հաստուցումն ի ստենէ՛ իսահակայ՝ փրկութիւն եղև *հաստատ* կերակրովք: - 308. Երկրորդ՝ այսպիսի ձև հաստատո՛ւն է. զի կիբիկո՛ն է. զի *հաստատ* և յարամնա՛յք են: - 344. Դարձեալ՝ զի անապակա՛ն է հաւատն եկեղեցւոյ, և *հաստատ* յոյսն, և ջերմ սէրն առ քրիստոս: - 347. Նա՛խ՝ զոր լւան զօրէնս ականջօք, տեսցեն և աչօք զի *հաստա՛տ* է տեսն քան զլուրն: - 349. Նա՛խ եթէ՝ դո՛ւ աշխատեաց ի գործն, զի *հաստատ* պահեսցես. զի մի՛ դիւրաւ արհամարհիցի: - 350. Երրորդ՝ ի խորհուրդ նոր օրինացս որ *հաստատ* մնաց: - 350. Իններորդ՝ վասն *հաստատ* ժառանգութեան խոստացելոյն. զի մի՛ ասիցէ ոք ցհայր, տէր դու ունիս որդի և ժառանգ: - 468. Զի տես աչացն *հաստա՛տ* է քան զլուր լսելեացն: - 509. Յարամնայութիւն է *հաստատ* և միշտ յարակայութիւն ի բարեպէս քննել բանականութեանն: - 580. Զի է՛ որ խոստովանին զմեղս և արմատն *հաստա՛տ* է...: - 603. Եւ է՛ խոստովանութիւն որ զարմատ մեղացն քակէ՛ ի սրտէն և զղջացեալ ի մեղաց, *հաստա՛տ* է ի կամս և ի միտս այլ ո՛չ մեղանչել. - 603. Եօթներորդ՝ երկինք զտիւն ասէ՝ և երկիր *հաստատ* զգիշերն: - 729. Ութերորդ, զի գ զգայութիւնքն *հաստատ* վկայք են. աչքն և ականջքն և ըմբռնելիքն: - 742. Իսկ շնորհք նորոյս *հաստատ* և անփոփոխ ի ճշմարիտ քահանայապետէն անփոխանցելի պարգևեալ: - 783. Փեռեկելով զերկուսին կիսագունդս ներքոյ և վերոյ և ի միջի *հաստատ* կացելոյ երկրի: - 788

**ՀԱՍՏԱՏԱԳՈՅՆ +** Չորրորդ՝ հրեշտակական սրբութիւնն. որ է երկնային և *հաստատագոյն* և անդրդուելի սրբութիւն: - 462

**ՀԱՍՏԱՏԱՊԷՍ +** Ա՛րդ՝ կարգեցին բազմազան վկայութիւնս զոր *հաստատապէս* տօնեմք զծնունդն քրիստոսի ի վեցն յունվարի: - 483. Եւ սուրբ լուսաւորիչն զոր ի ժամանակին այնմիկ էր՝ զա՛յն կարգեաց ի մերս եկեղեցի. և ունիմք *հաստատապէս*: - 599. և այս բառնի ի հոգւոյն և լինի ամրութիւն և հաստատութիւն. զի զաստուած *հաստատապէս* ըմբռնեմք և բնաւ ո՛չ բաժանիմք ի նմանէ և ոչ մոռանամք: - 722

**ՀԱՍՏԱՏԵՄ +** Զի լուծումն է բանիդ յերկրուց դիմաց և *հաստատօղ* էութեանն հօր: - 37. Ութերորդ՝ ասի բան վասն *հաստատելոյ* զամենայն...: - 49. Եւ դու այսպէս ընկալ և *հաստատեա՛* ի քեզ. և լեր միացեալ ամենայն դիմօք և խաղալեօք ի համայնից գլուխն միշտ պաշտաճութեամբ ի քրիստոս: - 76. Եւ *հաստատեալ* այսու եթէ՝ հոգին և մարմինն է միաւորեալ ընդ բանին աստուծոյ, կարգէ՛ և զայն. բայց որդիք ասէ ո՛չ **բ**. և ո՛չ աստուածք. զայս վասն դիմաց միաւորութեանն ասէ: - 80. Այլ *հաստատեալ* կամք ի վերայ սրբոցն դաւանութեանց: - 84. Զոր կամիմ ի կարճոյ վկայութեամբ *հաստատել*: - 96. Խոստովանեալ յերկնաւորաց և յերկրաւորաց. և *հաստատեալ* սուրբ գրոց վկայութեամբ որպէս ցուցաւ: - 101. Այլ վերին մասամբ ծայրիւ իմացութեան ձկտի յաստուածայինսն՝ հաւատոյն լուսով և վկայութեամբ սուրբ գրոց *հաստատել*: - 103. Եօթներորդ՝ աչք հեշտանայ յորժամ ի մինն *հաստատի*: - 104. Եւ միտքն ի բազում օրինակաց ի ճշմարտութիւն *հաստատեալ*: - 104. Զի յայս ճշմարտութենէս լոյս հաւատոյն ծագեալ ի միտս հաւատացելոց, անփոփոխ սերտութեամբ *հաստատէ՛* զհաւատացեալս ի ճշմարտութիւնն. և զճշմարտութիւնն ի նոսա: - 121. Զի ի բարւոյն եմք յառաջ եկեալ. և ի բարին *հաստատեալ*. և ի բարին կատարիմք: - 128. Յետ ընդդէմ արտաքս աքսորելոյ զարտաքինսն. և ընդ մէջ հերձելոյ զհերձուածօղսն, և զճշմարիտն աստուածաբանութիւն *հաստատելոյ* ի մեզ, բե՛ր սկսցուք զսկիզբն արարչութեան եղելոց մինչ ի վախճան կատարման այժմոյս՝ ըստ կարգի հին և նոր կտակարանաց հետևեալ: - 156. Նախ՝ զի աստուած միա՛յն է ինքն ինքեամբ. և ո՛չ յայլմէ *հաստատեալ*. ըստ որում ասէր առ մովսէս՝ «ե՛ս եմ որ էն»: - 170. Իսկ Կալ՝ ո՛չ զկալն կամ զնստիլն մարմնապէս. այլ *զհաստատիլն* անշարժ էութեամբ. զի ո՛չ շարժի. ո՛չ բնութեամբ, ո՛չ կամաւ, և ո՛չ տեղեաւ: - 172. Այլ և է՛ ուրէք. ըստ այնմ որ յա՛յլս է *հաստատեալ*: - 180. Ո՞րպէս է երկիրս ի մէջ երկնից *հաստատեալ* և անշարժ մնայ: - 181. Նախ այսպէս ասեն եթէ՝ տարերքն գնդաձև պատեալ են զմիմեանս և ամրացեալ. զի բոլորակ հուրն պատեալ է զօդ. և օդ զջուր. և ի մէջ ջրոյն երկիր է՛

*հաստատեալ*: - 181. Չորրորդ՝ հաւասարակշիռ է երկիրս բոլորակի. և յամենայն կողմանէ ծանրութիւնն ի մէջն ժողովի. և այսպէս ինքն ի վերայ իւր *հաստատեալ* է: - 182. Նմանապէս և հոմանուն է հաստատութիւնն ի ներքոյ ջրոյ. այսինքն ըերրորդ կամարն. և օդս առ մեզ որ ունի զջուրս անպով *հաստատեալ*: - 184. Եօթներորդ՝ Տես աչացն *հաստատէ*՛ զլուրն. և ի վեր նայիլն հեշտանայ: - 227. Տասներորդ՝ զի յայսմանէ *հաստատեսցի* ի մեզ հաւատ յարութեանն. որպէս զառաջինն ի հողոյ ստեղծ զմեզ, դարձեալ ի յարութեանն ի նոյն հողոյն լուծեալ և փոշիացեալ՝ յարուցանէ աստուած: - 229. Եւ դարձեալ՝ զի *հաստատեսցի* ի մեզ հաւատ մարդեղութեանն քրիստոսի. թէ որպէս ի յապականացու հողոյն ստեղծ ադամայ մարմին անապական: - 229. Զի թէ կորագլուխ էր մարդն, և երկոքին ձեռքն ի յերկիր *հաստատեալ*, ո՛չ կարէր գործել: - 233. Երրորդ՝ զի ամենայն իր յէից և յոչ էից են գոյացեալ. յէից՝ ըստ նախածանօթ տեսչութեան գաղափարին. և յոչ էից՝ ըստ ինքեան ի ժամանակի *հաստատեալք*: - 236. Վասն որոյ գտանի յամենայն իրս նման և աննման ըստ որում յէից և յոչ էից են *հաստատեալք*: - 237. Եւ զոր օրինակ՝ տունն ի յերկրի տնկեալ՝ նախ դալարի. և յորժամ *հաստատի* ծաղկի. և յորժամ ևս *հաստատի*՝ ապա պտղաբերի: - 255. Այսպէս և հոգին ընդ անկատար նիւթոյն ունի զկերակրիլն. և յորժամ *հաստատի* զգայութեամբն ծաղկի. և յևս *հաստատիլն*՝ բանականութեամբ պտղաբերի ի վերին խնամոցն որպէս պտուղն այն յարեգակնէ՛: - 255. Արդ՝ որպէս ասացաք՝ մարմինն է ի **դ** տարերաց. և ունի ե զգայութիւն. վասն որոյ յինն ամիսս *հաստատի* անդամօք և ապա ծնանի: - 263. Վասն որոյ յայսմանէ և յառաջ *հաստատի* մարդ ի հանճարս բանակրութեան և ի տեսութիւն իմացման մինչև ի **խբ** ամն որ է եօթնիցս եօթն: - 265. Երրորդ՝ ի գաւազանն և ի մատանին. զի ի վերայ իշխանաց և իշխեցելո՛ց է *հաստատեալ* և յեցեալ: - 271. Եւ փոխանակ գաւազանին՝ անմահ երանութեամբ *հաստատեաց*: - 271. Նա՛խ՝ զի *հաստատեսցէ* զերկու կարծիս թերութեան մարդկան: - 289. Արդ որպէս հաւատով իմանամք *հաստատեալ* զյաւիտեանս որպէս ասէ առաքեալն. և նովին հաւատով իմանամք զկատարած կենցաղոյս և զյարութիւն մեռելոց և զդատաստան հատուցմանն: - 292. Եւ ծնեալքս յաւազանէն *հաստատիմք* անմահ կերակրովք հացիւն որ յերկնից իջեալ: - 308. Երկրորդ՝ բնութիւնս ադամայ ել ի դրախտէն և բորոտացաւ զանազան մեղօք. մինչև բանն էառ ի ծոց աստուածութեան իւրոյ և *հաստատեցաւ* յառաջինն: - 332. Երկրորդ՝ մեղք եօթնից զգայարանացն պակասի. և արդարութիւն որ մինն է *հաստատի* առ զղջացեալս: - 374. Երրորդ՝ եօթն հասակ մեր փոփոխի. և ութն *հաստատի*: - 374. Տասներորդ՝ յետ որոյ հնազանդեցան նմա՛ ամենայն իէլ. և տեառն մերոյ զկնի խաչին *հաստատեցան* ի հաւատս. մանաւանդ յետ է դար կենցաղոյս ամենայն լեզու խոստովան լիցի զտէր յիսուս քրիստոս ի փառս աստուծոյ հօր ամէն: - 427. Չորրորդ՝ զի երդմամբն սաւուղայ ապա՛ *հաստատեցաւ*: - 428. Զի բանիւ սաղմոս երգեաց. և արդեամբ յաթոռ թագաւորութեան *հաստատեցաւ*: - 434. Երեսունևե, *հաստատեաց* զուխտն առ յովնաթան և մելքօղ. և տէրն եղբարց իւրոց և եկեղեցւոյ...: - 437. Եւ վկայքն *հաստատեցին* մեծ գոլ և ծածուկ՝ հրաշալի խորհուրդ միածնին փրկագործութեան երևումն առ մարդիկք: - 456. Եւ զմայլեալ ի բոլոր սրտէ և յամենայն անձնէ և ի զօրութենէ միշտ ներգործապէս դիմեալ առ աստուած *հաստատեցաւ*: - 463. Վասն այն եկն որդի և *հաստատեաց* մեզ զժառանգութիւն իւր ասելովն «ես ուխտեմ ձեզ որպէս հայր ուխտեաց ինձ զարքայութիւն»: - 468. Իսկ ամենայն մարդկան միտք *հաստատեալ* են ի խնամս չարի՝ վկայէ՛ աստուած. «և ո՞ պարծեսցի միտ սուրբ ունել» ասէ առակն...: - 473. Զոր ի ժողովն քաղկեդոնի *հաստատեցին* զսոյն տօն ի **իե**ն դեկտեմբերի. պատճառելով թէ՝ ի հռօմ դարձի արեգական տօն կատարէին. և փոխեաց զայն պետրոս տօնել արեգականն արդարութեան: - 482. Այսպէս ընկալեալ ի նոցանէ և նիկիականն ժողովք՝ *հաստատեցին* առ մեզ: - 484. Իններորդ՝ զի աւետիս հարցն *հաստատեսցէ*. զի անսո՛ւտ է խոստմունք աւետեացն աստուծոյ. և որպէս զայս աւետիս ուխտի կատարեաց, նոյնպէս և զայլսն կատարեսցէ. այսինքն ի ծառայութենէ ազատութիւն, և արքայութեան խոստմունքն: - 485. Այլ և սանդուղքն յակոբայ և տէր *հաստատեալ* ի նմա: - 494. Դարձեալ ասեմք, փոփոխումն և աճումն հասակին ո՛չ եթէ ապականութեան էր ցոյցք. այլ զի զճշմարիտ մարդեղութիւնն *հաստատեսցէ* ընտել սովորութեամբ մեր որ ի տղայութենէ զարգանամք: - 501. Այլ մեք եղբարք ուղեկիցք իմ և դաւանակիցք եղիցուք. շինեալք և *հաստատեալք* ի վերայ հաւատոյ հիման. անշարժ խարսխեալք ի վերայ յուսոյն քրիստոսի, սեռն և յստակ կատարեալ սիրով սուրբ հոգւոյն: - 503. Եւ ա՛յս է պատճառն. վասն զի տունկն յարմատն է *հաստատեալ*. և ձուկն ի ջուրն. և կենդանիք ի շունչ և յարիւն: - 511. Այլ որք ուղղաձնութեան են աշակերտք՝ ի մէջ գիշերի ասեն զժամ յարութեանն քրիստոսի ի գերեզմանէն. որոց հետևիմք և մեք և *հաստատեմք* բազում վկայութեամբ և օրինակաւ: - 512. Նա՛խ՝ զի *հաստատեսցի* յարութիւն իւր բազում կերպիւ: - 520. Չորրորդ՝ զի շինօղ և *հաստատօղ* եկեղեցւոյ առաքեալքն են. և ձեռնտու նիւթոց մարգարէքն. եզր և պարիսպ վարդապետք: - 535. ...և նոքա զամենայն ինչ ծածկապէս

տեղեկացան. զի ժողովեալքն ի քաղկեդոն ակն առին թագաւորին և կնոջ իւրոյ. և զարհուրեցան ի սպառնալեացն. և զնեստորի կարծիսն *հաստատեցին*. զերկու բնութիւնսն. և զ**բ** կամսն. և զ**բ** ներգործութիւնսն: - 543. Եւ յոլովք ի գիտողացն ասացին, թէ հաւատք զնեստորին *հաստատէք* զնա ընդէ՞ր նզովէք: - 543. Եւ վերստին *հաստատեցին* զկարգեալսն սրբոյն գրիգորի և ներսէսի և սահակայ և մաշտոցի: - 544. ...և *հաստատեցին* զկանոնսն երից սուրբ ժողովոյն որ ի նիկիայ՝ ի կոստանդնուպօլիս՝ և յեփեսոս: - 544. ...և նորոգեցին զթուլութիւն և զերկպառակութիւն ինչ եկեղեցւոյ. և *հաստատեցին* գիրս կանոնականս **բժ**ան գլխոց: - 544-545. Գրէ կարգս կանոնականս իդ գլխօք. և *հաստատէ* զեկեղեցի պայծառ կարգօք և ուղղութեամբ: - 545. Առ երկրորդն ասեմք թէ, ընդ ուրացութիւնն պետրոսի՝ սիրտ ամենայն առաքելոցն տրտմեցան և կոտորեցան. և ի զղջումն նորա ամենեքեան *հաստատեցան* վերստին: - 547. Այլ և յառաջին ժողովն գ աթոռք ինքնագլուխք *հաստատեցան*: - 549. Յայնժամ լոյս իմացականին կորեաւ և շիջաւ ի սատանայէ՛. և լոյս շնորհացն ո՛չ ներգործեաց ի նա. և ի նոյն սերտեալ *հաստատեցաւ* անզղջապէս. վասն որոյ մեծ են մեղք սատանայի և թողութեան ո՛չ հանդիպի: - 563. Նոյնպէս և Կալն և Ունելն զամենայն մահու չափ մեղս. թէ գործեալ է և թողեալ. զի որ *հաստատեալ* է մեղքն յինքն, առաւել մեղանչէ: - 565. Դարձեալ՝ կատարեալ սէր է, յորժամ է ունակութեամբ մեծ. ներքին շարժմամբն ուղիղ. արտաքին գործքն ժիր. արմատովն *հաստատեալ*. ջերմ եռանդութեամբն խոհեմ. և քաղցրութեամբն մխիթարական: - 576. Եօթներորդ՝ հաւատովն համբերեմք. յուսովն *հաստատիմք*. սիրովն զօրանամք. և զայս ասէ նազրիոս: - 578. Նա՛խ՝ զի մշտնջենաւոր առնէ զհոգին *հաստատելով* ի բարին: - 579. Ապաստանութիւն է որով հոգին ի մեծ և ի համեստ իրս ստոյգ յուսովն *հաստատի* յինքեան: - 580. Երկրորդ՝ զերկայնմտութիւն զհամբերութիւն զյոյս և զարիութիւն *հաստատէ* ի մարդն: - 584. ...*հաստատի* հաւանութեամբ սրտիցն յորժամ յայտնեն բանիւ...: - 609. ...զի երկուց կամաց հաւանումն *հաստատէ* զպսակն: - 609. Զի բռնութեամբ և առանց հաւանելոյ միմեանց՝ այսինքն փեսային և հարսին՝ ո՛չ *հաստատի* պսակն: - 610. Եւ այն զի պղծեալ տաճարի կարդամք. կամ զշարժեալ սեղանն *հաստատեմք*: - 615. Զի յորժամ մեզօք ինչ սրբութիւնս մեր ապականի, կամ շարժի ոք ի հաւատոյ, վերստին կարէ՛ *հաստատիլ* ի հաւատս, և դարձեալ կրկնել զխոստովանութիւն և զապաշխարութիւն: - 615. Իսկ չորրորդն, ողորմելիքս չորեքնիւթեայ բնութեամբ յուսասցուք ի տէր և երկիր պագցուք նմա. և այնու *հաստատեսցին* սիրտք մեր ի տէր: - 629. Այլ և պետրոս անտիոքայ և տիմօթէոս աղէքսանդրու հրամանաւ յուստիանոսի կայսեր՝ *հաստատեցին* ի սուրբ աստուածն խաչեցար ասել: - 631. Նաև ի հայք ի ժողովն դվնայ *հաստատեցին* ի սուրբն աստուածն խաչեցար ասել ստուգապէս: - 631. Զի սուրբ աստուածն անդ *հաստատեցաւ*. որպէս և փառք ի բարձունսն. սկսեալ ի հրեշտակացն ի ծնունդ քրիստոսի. և յերեք սուրբ ժողովսն եղև կատարեալ: - 635. Ապա ի ժողովն եփեսոսի վերստին *հաստատեցին* զփառք ի բարձունսն ի սաղմոսէն՝ յաւետարանէն՝ և ի մարգարէիցն...: - 635. Անփակ գրով *հաստատեալ*: - 638. Զաստուած ասեն. թէ քահանայապետի մատանւոյն աստուած անունն էր գրած. և *հաստատեաց* թէ աստուած է: - 638. Դարձեալ՝ զմնացորդ դասուն որ անկաւ յերկիւղէն կնքեաց և *հաստատեաց*: - 639. Հինգերորդ, կանոնս եդեալ է և *հաստատեալ* ի նիկիոյն՝ ի բարսղին՝ ի յեփրեմին՝ և յայլոցն, - 652. ...վասն որոյ իւրաքանչիւր ոք ի բանից վկայութեանց ինչ զկարծիս իւր *հաստատէ*: - 687. Իսկ որք *հաստատե՛ն* զքաւարան հրոյ՝ չորիւք մեղանչեն ինքեանց: - 698. Եւ զգործս բոլոր մարմնոյ յերկրի *հաստատեցաք*. թէ երկնաւոր թէ երկրաւոր: - 714. Սակայն *հաստատի* յարութիւնն բնական քննութեամբ և սուրբ գրոց վկայութեամբ: - 714. ...զի հաւատն վարձք ո՛չ ունի թէ վկայութեամբ *հաստատի*: - 717. ...իսկ ի յարութեանն անփոփոխ սերտութեամբ *հաստատի* ասէ սուրբն դիոնէսիոս. վասն որոյ անփոփոխ և անմահ միաւորի ընդ մարմնոյ: - 723. Վասն զի երկին որ շարժի՝ յօր դատաստանին դադարի և *հաստատի* յայն կարգն յոր նա՛խ ստեղծան. արեգակն յարևելս և լուսինն յարևմուտս: - 727. Զի որպէս փայլակն ելանէ յարևելից ի վերայ լուսեղէն ամպոյ, և քառաձև լուսովն լնու զչորս կողմ աշխարհի և *հաստատի* ի գողգոթայ յորում խաչեցաւ տէրն: - 732. Արդ նա՛ որ զամենայն գերեզման կնքեալ պահէ, զեկեղեցիս օրհնէ՛ և *հաստատէ* և ամենեցուն զօրաւիգն է ի փորձութիւնս, կարո՛ղ է անապական լինիլ. զի աստուածային է նշան: - 733. Երրորդ հիմն է իւրաքանչիւր սիրտ և անձինք արդարոց. որ *հաստատեալ* է հաւատով յորթն ճշմարիտ...: - 749. Եւ վասն այն ասի արքայութիւնն աստուծոյ, զի պատուիրանօքն որ յաւետարանն կամ յայլ գիրս սուրբս գտանին, պահողացն արքայութեանն մուտ բացեալ լինի. և ներքին մարդս ամրացեալ *հաստատի:* - 754. Զաւազանն պղնձի ի հայելեաց կանանց կազմեաց. այսինքն զբանն աստուածային՝ ի սրբոցն *հաստատեաց* օրհնօք: - 756. Եւ այլ բազում վկայութեամբ կարէ՛ *հաստատիլ* եթէ մի է արքայութիւնն երկնից որ է կեանքն յաւիտենից: - 759. Եւ զի ո՛չ է հասարակ կարծիք՝ ո՛չ *հաստատեմք*: - 759. Միովն ստուգէ՛ զաստուածութիւնն. և միովն *հաստատէ* զմարդն կատարեալ. և երկրորդիւն անքակ և

անշփոթ և անբաժան զմիութիւնն յայտնէ: - 770. Երկրորդ, զի դժոխքն այն պատիժ բնութեանս էր և ո՛չ առանձին գործոց. զի *հաստատեաց* օր մի յորում դատելո՛ց է զամենայն ըստ պօղոսի: - 776. Վասն որոյ կրկին է և պատիժն. զառաջինն ի նախնւոյն հասեալ. և ապա յետոյ յօր մի *հաստատեալ* ըստ առաքելոյ: - 777. Իսկ ստորասութիւն ընդ դէմ այսմ *հաստատօղ* ամենայնի: - 787. Յա՛յտ է զի ի բառնիլ ոչէին՝ էութիւն *հաստատի* բացասութեամբ կրկին. իսկ ստորասութեամբ նոյն մնայ: - 787

**ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ +** Նախ՝ *զհաստատութիւն* երկրի և զգնացս ջուրց: - 26. Եւ *հաստատութիւն* սուրբ գրոց վկայութիւնք, և բանք վարդապետաց, և կանոնք օրինաց: - 96. Չորրորդ՝ սիրօղ՝ որպէս սկիզբն մեր. և սէր՝ որպէս *հաստատութիւն.* և սիրելի՝ որպէս կատարումն: - 128. Իսկ ոմանք ասեն զտեղի նորա ի *հաստատութեան* երկնից. և զի ո՛չ ետուն զփառս աստուծոյ անկան. վկայէ՛ և դաւիթ՝ «Երկինք պատմեն զփառս աստուծոյ». որք են վերնագոյն դասքն. և *հաստատութիւն* զարարածս պատմէ և ո՛չ զփառս որպէս ցուցաւ: - 150. Հրեշտակք ի վերոյ ջրո՛յ են. բայց ի ներքոյ *հաստատութեան* խնամածուք կարգեալ են աշխարհի և մարդկան: - 150. Ութերորդ՝ պատճառէ՛ *զհաստատութիւն* միջոցիս: - 184. Եւ զայս գիտել պարտ է. զի մեծն ներսէս *զհաստատութիւնն* արփի ասէ և եթեր կոչէ. զոր արտաքինքն եերորդ տարր ասացին որ ո՛չ երևի մեզ: - 184. Նոյնպէս հոմանուն է և արփին. այսինքն լուսեղէնն և *հաստատութիւնդ*: - 184. Նմանապէս և հոմանուն է *հաստատութիւնն* ի ներքոյ ջրոյ. այսինքն ըերրորդ կամարն. և օդս առ մեզ որ ունի զջուրս ամպով հաստատեալ: - 184. Իսկ այլք ուղղակի՛ ասեն՝ թէ անմոլար աստեղքն ամրացեալ են ի *հաստատութեանն* որպէս սպի ի վերայ մարմնոյ, և ընդ նմա շարժին: - 189. Նա՛խ՝ զի *հաստատութիւն* և բրգո՛ւնք են աշխարհի: - 211. Յերկրորդ օրն եղև *հաստատութիւնն* երկնից: - 221. Եւ թէ տկարանաս ի զօրութիւնն աստուծոյ՝ առ մե՛զ ևս գոն քեզ *հաստատութեան* նշան՝ անփուտ փայտ. և անթառամ ծաղիկ. և մշտականաչ սաղարթ. և անթափ պտուղ: - 223. յԵրկրորդ օրն, *հաստատութիւնն* և ջրեղէն կամարն. և ծովք. և ցամաք երկիր: - 226. Քսաներորդ՝ Վասն էութեան հոգոյն լուծումն հակառակ բանից. և ճշմարտութեանն *հաստատութիւն* զանազան հարցմամբ: - 228. Եւ հատումն ի ստենէ հնոյն՝ *հաստատութիւն* եղև նոր օրինացս: - 308. Չորրորդ՝ է մոլորակաց գօտիք. և ը *հաստատութիւնն*. և ջրեղէն և լուսեղէն երկինքն: - 343. Սրբութիւն սրբոցն՝ լուսեղէն երկինքն և անջրպետ *հաստատութիւնդ*: - 343. Վասն այն ա՛ստ ի *հաստատութեան* երկնից ասեն զկայանս հոգւոցն մինչ ի կատարած յարութեան մարմնոց: - 346. Զոր յառաջին ամին յորժամ նստաւ կաթողիկոս տէր սիմէոնի, ի ձեռն տէր եղիայի մեծահանդէս ժողովմամբ պայծառացոյց զեկեղեցի կանոնական *հաստատութեամբ* ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս ամէն: - 545. Այլ և դարձ նորա և կանգնումն՝ *հաստատութիւն* եղև ամենայն ուրացողաց և մեղաւորաց: - 547. Ողջախոհութիւն է *հաստատութիւն* հոգւոյ. որով արգելու զցանկութիւն զգայական և զհեշտութիւն մարմնական: - 581. Դրօշմն է *հաստատութեան* խորհուրդ. որ տուեալ լինի առ ի զօրացնել և քաջացնել զմարդն: - 593. Իսկ հաւանումն երկուց կամացն՝ *հաստատութիւն* է պսակին: - 610. ...և այս բառնի ի հոգւոյն և լինի ամրութիւն և *հաստատութիւն*. զի զաստուած հաստատապէս ըմբռնեմք և բնաւ ո՛չ բաժանիմք ի նմանէ և ոչ մոռանամք: - 722. Ոմանք այսպէս կարծեն թէ՝ *հաստատութիւնդ* բարձցի ի միջոյ մինչ վերին երկինքն երևի: - 729. Վեցերորդ՝ գալարին երկինք՝ պատմելով զփառս աստուծոյ. և *հաստատութիւնդ* զարդար դատաստան նորա յարարածս իւր: - 729. Այն է ծալիլ և գալարիլ օդոյդ երկնի. և ո՛չ թէ *հաստատութիւնն* վերին էութեամբ ի բաց բառնի ըստ ոմանց: - 729. Թէ զի՞նչ է ասելն ի սահման *հաստատութեանն*, մասամբ ինչ զօրութեամբ և մասամբ ինչ ներգործութեամբ: - 787. Նոյնպէս և քարինք արձանացեալք *հաստատութիւն* է երկրի. զոր աշխարհ կոչեմք ի մասնէ՛: - 788

**ՀԱՍՏԱՏՈՒՆ +** Հինգերորդ՝ երկինքն թեքև է ի վեր քարշէ. և երկիրս ծանր ի վայր հակէ. և այսպէս մի զմի *հաստատուն* պահեն: - 182. Ի ներքոյ երկրի անցեալ և զերկին փեռեկեալ *հաստատուն* պահէ: - 203. Երկրորդ, զի *հաստատուն* մնասցեն հաւատացեալքն և վարձատրեսցին: - 336. Երկրորդ՝ այսպիսի ձև *հաստատո՛ւն* է. զի կիբիկո՛ն է. զի հաստատ և յարամնա՛յք են: - 344. Նախ՝ զի փորձեսցին և ընտրեսցին ի միմեանց *հաստատունքն* ի հաւատս և տկարքն: - 388. Երկրորդ՝ զի գործունեայք և հաւանօղքն այնպիսեացն պատժեսցին. որպէս ի յերկրորդ օրէնքն հրամայէ՛ սպանանել այնպիսիսն. իսկ *հաստատունքն* ի հաւատս՝ վարձս առցեն ի հաւատոց իւրեանց: - 388-389. Չորրորդ յայտնի և *հաստատուն*, որ ամենայն ազգ քրիստոնէից պահեն զչորեքշաբաթն և զուրբաթն վասն խաչելութեանն որ սո՛ւգ է և պահք: - 652. Այլ նոքա *հաստատունք* են: - 662. իսկ յետ մահու *հաստատուն* յուսով տեսանեմք և ուրախանամք. - 667. Մակա՛ն *հաստատուն* իմոյ տկարութեան ես դու: - 771

**ՀԱՍՏԵԼԻ -** Նա՛խ՝ զի խոստովանեալ է յամենեցունց որ ո՛չ է *հաստելի*. այսինքն ո՛չ ստեղծեալ: - 273

**ՀԱՍՏԵՄ +** Գոյացութիւն է ինքն ինքեամբ էացեալ և ոչ կարօտեալ յայլս *հաստողի*: - 170

**ՀԱՍՏԻՉ +** Ապա ուրեմն մի աստուած է և մի որդի *հաստիչն* ամենայնի և անդրանիկն մեռելոց: - 73

**ՀԱՏ +** Եւ զորօրինակ՝ լիտր մի ցորեան, կամ այլ ինչ. յորժամ ձեռօքդ բաժանես և ցրուես *զհատսն*, ո՛չ մնայ կշիռն: - 202. Եւ դարձեալ՝ որպէս *հատն* ցորենոյ ունի առ ինքն զօրութեամբ զխոտն և զծաղիկն և զհասկն. և սոքա համանգամա՛յն են ի *հատն* այն զօրութեամբ. որ յետ ժամանակաւ ըստ դասի երևին: - 255. Զայս և ի վերայ սերման *հատո՛յ* է իմանալ: - 256. Նա՛խ՝ զի զնման և զանմանն ծնանի. որպէս *հատն* զցորեանն և զծեղ: - 256. Չորրորդ՝ զի վայելէ՛ր իսկ նմա որպէս *զհատ* ցորենոյ թաղեալ յաղբիւսն՝ այսինքն յերկիր. և պարարտացեալ հասցէ ի հունձս պտղաբերութեան: - 323. Եւ զանգեալ նաշիհն զյիշատակ մարտիրոսացն՝ ուր խառնեմք աղ ի *հատ* պատարագին և իւղ անոյշ ի խորհուրդ նոցա: - 356-357. Այլ և նաշիհ. զի հաց կենդանարար և *հատ* ցորենոյ կոչեցեալ. ճնշեալ չարչարանօք և որոշեալ ի թեփոյ մեղաց: - 361. *Հատ* պատարագի մարտիրոսաց: - 362. Դարձեալ գիտելի է, զի պօղոս ի կորնթացոցն *զհատ* սերման՝ օրինակ տայ յարութեան մարդկան...: - 720. Երկրորդ՝ զի և վարդապետն իւր ետ օրինակ *զհատն* ցորենոյ: - 720. Երկրորդ, որպէս *հատ* մերկ անկանի և բուսանի ծաղկեալ և զարդարեալ տերևով...: - 720. Երրորդ, որպէս նոյն *հատն* սերմանեալ նոյն *հատն* բուսանի ըստ ազգի իւրում...: - 720. Տասներորդ, որպէս *հատն* սերմանեալ և բուսեալ և չարչարեալ և ընդ հուր անցեալ՝ ապա՛ ի սեղան եղեալ պատուեսցի: - 721. Դարձեալ որպէս *հատն* մերկ սերմանի և մերկ ո՛չ բուսանի. այլ զարդարեալ խոտով և տերևով եօթն թուով: - 721. Սա է *հատն* ցորենոյ որ անկեալ յերկիր՝ բազում պտուղս աշխարհի պտղաբերեաց...: - 755

**ՀԱՏԱՆԵԼԻ** - Ա՛րդ՝ զի՞նչ ասես վասն կենաց պտղոյն. եթէ կերակրելի է և *հատանելի*, ո՞րպէս է կենաց պտուղ: - 223

**ՀԱՏԱՆԵՄ +** Եւ պատաճառն է այս. զի թէպէտ մի է բնութիւն ծնողաց և ծնիցելոց, բայց ոչ ունին զմի կամս. զի *հատեալ* բաժանեցաւ որդին ի հօրէն: - 45. Իսկ անհատ ասի՝ զի ո՛չ քակտի և ո՛չ *հատանի* որպէս բոլորն ի մասունս. զի թէ բաժանես զնա որպէս ի հոգի և ի մարմին, կամ յոտս և ի ձեռս և ի գլուխս, ո՛չ մնայ բոլորն: - 86-87. Զի թէ ասեմք եթէ ոչ է աստուած, յայնժամ բաժանեալ յաստուածութենէն՝ ո՛չ լինի աստուծոյ ձեռն. և ո՛չ աստուծոյ մարմին. կամ արիւն. զի մասն բաժանեալ ի բոլորէն ո՛չ է բոլորին մասն. և ո՛չ կոչի. որպէս ձեռն *հատեալ* յանդամոցն՝ ո՛չ կոչի մասն բոլորին: - 92. Երրորդ՝ ի լինելութեանց և յապականութեանց. զի անպակասք են. ըստ որում *հատեալ* ի տարերաց՝ լինելութիւն է ա՛յլ էակաց. և ապականութիւն նոցա լնու զհատումն տարերաց: - 181. Եւ զի քարշեն լուսաւորք զգոլորշին յերկրէ՝ յայտ է ի ցօղ առաւօտուն և յեղեամն. որ ի գիշերն ի վեր քարշին. և ընդ ծագել լուսոյն *հատանին* և յետս յերկիր անկանին. և յաւուրս ձմերան լինի եղեամն. և յամարան ցօղ: - 208. Պտուղն որ *հատանի* և ծասկի և ի մարմին փոխարկի. ո՞րպէս է անապական: - 223. Պտուղքն դրախտին շօշափելիք են և կերակրելիք. *հատանի* և ծասկի և փոփոխի ըստ պատահական որակացն. և անապական մնայ ըստ գոյացութեանն և ներգործութեանն ի կերօղն: - 223. Եւ թէ կեանս տայ՝ ո՞րպէս *հատանի*: - 223. Ասեմք եթէ երանքն. զի թէ *հատանեն* զերանսն, մարդն լինի որպէս կին. և մորուս ո՛չ բուսանի: - 245. Հինգերորդ՝ զի նիւթն *հատանի*, և զօրութիւնն ո՛չ: - 256. Եւ թէ ասիցէ ոք, ապա երևի թէ և բանական հոգին ի ծնողա՛ցն *հատանի* կամ գոյանայ: - 257. Նա՛խ՝ զի անմարմին է հոգին. վասն որոյ ո՛չ *հատանի*. ո՛չ տընկականն. ո՛չ զգայականն. և ո՛չ բանականն: - 257. Ապա ուրեմն հոգին ո՛չ *հատանի* և ո՛չ գոյանայ ի հոգւոյ որպէս մարմին ի մարմնոյ: - 257. Այլ *հատանի* նիւթն ունելով առ ինքն զբոլոր կենդանութիւն. և լինի նիւթ ա՛յլ մարմնոյ նովին կենդանութեամբն զոր ունի առ ինքն: - 257. Որպէս ճիւղ *հատեալ* ի ծառէ և տընկեալ յերկրի, ճիւղն է *հատեալ* ի ծառէն, այլ կենդանութիւնն ո՛չ. ուստի յա՛յտ է զի տընկեալ ճիւղն նոյն կենդանութեամբն բուսանի զոր ունի առ ինքն: - 257. Զորօրինակ՝ արուեստաւոր ոք կամիցի դրօշել ի քարեայ պատկեր, նախ նկարէ՛ ի միտս իւր զձև պատկերին. և ապա *հատանէ* զքարն և տաշէ՛ և դրօշմէ՛ զկերպն ըստ այնմ նմանութեանն որ էր ի միտս ձևացեալ: - 258. Նա՛խ՝ որպէս *հատանեմք* քաղելով զբանջարն և ապա՛ ուտեմք, նոյնպէս զենումք զկենդանին և ապա՛ ուտեմք: - 295. Նոյն և որ *հատանի* ի ստենէ. և աւազան կրկին ո՛չ է: - 308. Անգամ անդամ յօշելն. զերկոտասան անդամոց սրբելն և *հատանել* ի մեղաց: - 360. Հինգերորդ՝ մասն. որ է՛ գլխոյն հատումն ուր ամենայն զգայութիւնքն են. և թէ այլ ինչ մասն *հատցի*՝ կամ գլուխն ջախջախեսցի՝ ո՛չ է ուտելի: - 365. Իսկ թէ այլ ինչ անդամն *հատցի* և մեռցի կենդանին, ո՛չ է ուտելի. ո՛չ *հատեալ* անդամն և ո՛չ բոլորն: - 366. Եւ թէ գլուխն ջախջախի, ո՛չ է ուտելի. զի ո՛չ *հատաւ* պարանոցն. ի հեղձուցելո՛ց կարգի է: - 366. Երկոտասաներորդ՝ փօշտանկն. որ *հատեա՛լ* է աղիքն և ի դուր թափեալ. նշանակ հոգեկան ցաւոց ի մարմինն երևեալ: - 371. Չորրորդ՝ մարմին կենդանեաց որ առաւել պարարտ է քան զամենայն. վասն այն ի մսոյ *հատանին* պարկեշտք. զի մի՛ առաւել գիրասցին և գազանասցին: - 407. Եւ տէր մեր յաղթեաց իշխանին դիւաց. և *եհատ* զնորայն բռնութիւն աջոյ. և զոմանս եթող ձախիւ թիւրելոյ և զընտիրս որոշելոյ: -

419. Եւ գլուխն և ձեռն և ոտն *հատեալ*: - 425. Երկրորդ՝ զի ժողովուրդն ոտիւք գայր, և զձեռս տարածէր, և զգլուխսն խոնարհեալ երկիր պագանէին. վասն որոյ *հատան* այնպիսի մասունքն: - 426. Երրորդ՝ զի ոտք և ձեռք կապեալ բազումք զզաւակս զոհէին նմա. նոյնպէս և նորայն *հատան:* - 426. Երկրորդ՝ զի դաւիթ որ *հատանէր* զլօղկին սաւուղի, նա՛ թագաւորէ՛: - 427. Զի գա՛յ զղջումն և խոստովանութիւն՝ որ զմեղքն բառնայ և զպատիժն ընդ նմին. որպէս *հատեալ* տունկ՝ չորանան ճիւղքն. որ բոլորով սրտիւ զղջայ և խոստովանի և այլ ո՛չ գործէ: - 432. Երկրորդ՝ զի վէմն առանց ձեռին *հատաւ* ի կուսական լեռնէն ըստ դանիէլի: - 470. Զի տրտմութիւն արտասուաց ընդ մահուանն բարձաւ. իսկ ամօթ և ցաւք մարմնոյ՝ ընդ մեղացն բարձան. որպէս ի *հատանիլ* արմատոյ՝ չորանան ստեղունքն: - 474. Ո՛չ *հատանելով* զի անպատշա՛ճ էր բաժանիլ ի մարմնոյ կամ յարենէ նորա: - 486. Այլ ճեղքելով որպէս օրէնն էր անդրանկացն ճեղքել և ո՛չ *հատանել*: - 486. Առաջին մկրտութիւն ջրհեղեղն. որ եբարձ *հատանելով* զմեղս յաշխարհէ: - 488. Եւ ա՛յլ առաքինութեամբք կոխեալ *հատանեմք* զխայթոցն որ է՛ ներգործական մեղքն և մահ հոգւոց և դժոխք: - 489. Երակ *հատեալ*, յորժամ բևեռօք և գեղարդեամբ խոցեցաւ: - 491. Զորօրինակ՝ մի ոմն ծառ *հատանէ*, և այլ ոմն զհատեալն դարձեալ հերձու և բաժանէ՛ և տայ յայրումն: - 498. Այսպէս մահն միայն *հատանէ* ի կենաց. և ապականութիւնն վերստին այլայլէ: - 498. Տնկականք՝ այսինքն բոյսք և պտուղք յորմէ և *հատցին* թէ ի մարդոյ և թէ յայլ կենդանեաց՝ կերակրելիք են: - 511. Եւ ի գիշերին *էհատ* դաւիթ զդրօշակն սաւուղի. և յառաւօտուն աղաղակեաց առ նա: - 513. Այս է ծառն չար որ պտուղ չար բերէ. և յետոյ *հատանի*. և ի հուրն յաւիտենից արկանի: - 570. ...որպէս թէ ոք *հատանէ* զարմատն՝ չորանան և ստեղունքն: - 604. ...զշաղկապ հաւատոյն *հատանէ* և հաւատովն պղծի: - 610. ...և դարձեալ *հատանեն* ի ձեռս իւրեանց որ լինի խաչ: - 655. ...իբր թէ այսպիսի սղալումն ի ճաշակելոյ պտղոյն եղև. որ ձեռօք *հատեալ* եդ ի բերանն: - 670. ...և ձեռքն *եհատ*, - 670. Նախ՝ զի կամ ննջելով հանգչին ի տանջանացն. իսկ անդ *հատեալ* է քուն յաչաց նոցա: - 750. Ոչ բաժանեալ կամ *հատեալ* ի հօրէ և ի հոգւոյն. որպէս ո՛չ ջերմութիւն ի հրոյ կամ ի լուսոյ. կամ նկարագիր յէութենէ: - 770. Ղամպարք ի միում տան. և ուրուք շարժեցելոյ՝ ի նոցանէ լոյսն ո՛չ շարժի և ոչ բաժանի և ո՛չ *հատանի* թէ անջրպետ ոչ կայցէ ի միջի. և անդ ո՛չ է միջոց: - 770

**ՀԱՏԵԱԼՆ +** Երկրորդ՝ զի *հատեալն* ապականի. այլ հոգին անապական է և անմահ: - 257. Երրորդ՝ զի *հատեալն* մասնաւորի. այլ ընդ ծնանիլ զաւակին՝ ոչ ինչ պակասի ի ծնօղն. բան, կամ շունչ, կամ կենդանութիւն. այլ բոլորն է ի ծնօղն և բոլորն ի ծնեալն: - 257. Զորօրինակ՝ մի ոմն ծառ հատանէ, և այլ ոմն *զհատեալն* դարձեալ հերձու և բաժանէ՛ և տայ յայրումն: - 498

**ՀԱՏՈՐ +** Աւարտումն առաջին *հատորիս* օգնութեամբ աստուծոյ: - 29. Եւ կատարումն երկրորդ *հատորի* հարցմանց գրոցս: - 101. Այսքան առ երրորդ *Հատոր* Գրոցս: - 102. Կատարումն Երրորդ *Հատորի* Աստուածաբանութեանն Դիոնէսիոսի: - 153. Եւ աստանօր կատարումն Վեցերորդ *Հատորի* Հարցմանցս: - 285. Կատարեցաւ Վեցերորդ *Հատոր* Հարցմանցս Հինգ Գրոցն Մովսէսի. ի Փառս Յիսուս Քրիստոսի Աստուծոյ մերոյ: - 412. Կատարումն Եօթներորդ *Հատորի* Հարցմանց Գրոցս: - 413. Եւ աստանօր Կատարումն հին Կտակարանաց. և Եօթներորդ *Հատորի* Հարցմանցս. ի Փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ Օրհնելոյն Յաւիտեանս Ամէն: - 453. Եւ կատարումն Ութերորդ *Հատորի* Հարցմանցս: - 525. Եւ աստանօր Կատարումն Իններորդ *Հատորի* Հարցմանցս Այսուհետև. և Քրիստոսի Փառք յաւիտեանս Ամէն: - 527. Եւ ասացեալ է վասն հանճարոյ և գիտութեան ի վերոյ. ի **ե** *հատորն* ի **իէ** համարն: - 580. Եւ աստանօր Աւարտումն Տասներորդ *Հատորի* Հարցմանցս, ի Փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ Յաւիտեանս Ամէն: - 661. ..որպէս ասացաւ ի վերոյ յութերորդ *հատոր* գրոցս **լ** համարն: - 746

**ՀԱՏՈՒ +** Երրորդ՝ զի բանս մեր ձայնիւ յամենայն լսելիս անցանէ և թղթով յամենայն տեղիս ընթանայ. և բանն աստուծոյ սո՛ւր է և *հատու* և ընդ ամենայն է քրիստոս անցանէ թափանցաբար: - 121

**ՀԱՏՈՒՄՆ +** Եւ ո՛չ այս կարէ լինիլ ի յերկուցն *հատումն*. այսինքն զի լիցի յաստուծոյ և արարածէն՝ և լինիլ մի էութիւն. որպէս ո՛չ է էութիւն եղջերուաքաղն որ յեղջերէ՛ և ի քաղէ ստեղծանի. ապա ուրեմն ո՛չ լինի էութիւն յարարչէն և յարարածէն: - 52. Եւ ապա՛ զադամ, զի ունի զսէթ ծնունդ՝ և զևա ո՛չ ծնունդ. այլ *հատումն* ի նոյն բնութենէ. և ընդ միով սահմանաւ գոլ ծնողին և *հատմանն* և ծնիցելոյն: - 53. Երրորդ՝ ի լինելութեանց և յապականութեանց. զի անպակասք են. ըստ որում հատեալ ի տարերաց՝ լինելութիւն է ա՛յլ էակաց. և ապականութիւն նոցա լնու *զհատումն* տարերաց: - 181. Այլ և *հատումն* ամենևին ո՛չ ասի հոգւոյն. ո՛չ տնկականի և ո՛չ զգայականի և ո՛չ բանականի: - 257. Այլ *հատումն* նիւթո՛յն է և ո՛չ հոգւոյն վասն **գ** պատճառաց: - 257. Եւ *հատումն* ի ստենէ հնոյն՝ հաստատութիւն եղև նոր օրինացս: - 308. Հինգերորդ՝ մասն. որ է՛ գլխոյն *հատումն* ուր ամենայն զգայութիւնքն են. և թէ այլ ինչ մասն հատցի՝ կամ գլուխն ջախջախեսցի՝ ո՛չ է ուտելի: - 365. Հինգերորդ՝ ընտրելի է մասն որ է

*հատումն* գլխոյ. յառաջուստ ուր են շնչերակքն՝ արիւնն և այլքն: - 366. Դարձեալ՝ որպէս տնկոց *հատումն* է, և ծկանց հանումն, և այլ կենդանեաց զենումն: - 511. Չորրորդ՝ նմանոյն *հատումն* մասանց. որպէս ակն ընդական: - 751. Եւ ոմանք յորոց սրբազան առաջնորդն մեր, պակասութիւն ասաց գոլ զորս յետոյ կրեցին անդամք նորա. այսինքն *զհատումն* մասանց. այրումն հրոյ. և այլ իմն բազմազան տանջանս. յորմէ թուով պակասեաց ի քրիստոս և յաւելաւ անդամս իւր: - 781. Սպառիլ սիրոյ և *հատումն* յուսոյ. բազմանալ անօրէնութեանց և տիրել անզղջութեանց: - 789

**ՀԱՏՈՒՑԱՆԵՄ +** Այլ արդ՝ չար գործոցն ո՛չ է յաստուծոյ. որպէս ցուցաւ. այլ չար պատժոցն է արդարութեանն աստուծոյ. որ *հատուցանէ* արդարապէս: - 18. Երկրորդ՝ է՛ գործ արդարութեան. զի ըստ արժանեաց *հատուցի* մեծաց և փոքունց. և առաջնոց և երկրորդաց: - 130. Նա՛խ ցուցանէ զառատութիւն պարգևացն աստուծոյ, որ ո՛չ զուգակշիռ գործոցն *հատուցանէ*, այլ բազմապատիկ և հազարաւոր: - 351. Այսինքն մինչև **գ** ազգն ներեմ. կամ **գ** դարս. և ի չորրորդն ո՛չ դառնամ ի վրէժ խնդրելոյ. այլ *հատուցանեմ* զմեղս հարց յորդիս: - 351. Այլ զներգործական մեղս անձին հօր՝ ո՛չ *հատուցանէ* անձն որդւոյ. ապա թէ ոչ՝ չար ծնողաց ո՛չ լինէր բարի զաւակ: - 351. Ապա ուրեմն յերրորդ և ի չորրորդ ազգն *հատուցանէ* աստուած զմեղս՝ յորժամ վասն գործեաց զյամառեալն ի մեղս պատժէ՛: - 351. Զի գողացեալ մեղքն միայն խոստովանելով ոչ քաւի. այլ *հատուցանել* պարտ է զգողօնքն. կամ ի տէրն, կամ յազգականս նորա. կամ ի քահանայն. զի միջնո՛րդ է մեռելոց և կենդանեաց: - 384. Իսկ յետ մահու ա՛յնոցիկ հոգւոց որք զղջան կամ խոստովանին զմեղս, քաղաք ապաստանի է նոցա ի կայանս հոգւոցն տրտմութիւն և ցաւն վասն փոխարինաց մինչ մեռանի քահանայն մեծ. որ եկեղեցի սուրբ՝ պատարագաւ և աղօթիւք և ողորմութեամբ *հատուցանէ՛* զպարտս նոցա և ազատին: - 392. Վեցերորդ, լռեաց՝ զի տէր *հատուցէ* բարիս ընդ այնր որպէս եղև: - 434. Երրորդ՝ զի *հատուցէ* զշնութիւնն բերսաբէի անարատութեամբ նմին: - 439. Երկրորդ՝ զի ողորմութիւն է բացարձակ և պարզապես բարի. իսկ արդարութիւնն է խառնել բարի. ըստ որում *հատուցանէ* բարեացն բարիս, և չարեացն տանջանս: - 458. Նա՛խ՝ յորժամ *հատուցանէ* ումեք ըստ արժանեաց: - 458. Երկրորդ՝ յորժամ խոստացեալն *հատուցանի*: - 458. Զայս *հատուցանել* ի վեր քան զարժանն. և պատժել սակաւ քան զարժանն: - 459. Այլ իւրաքանչիւրոցն *հատուցանէ* ըստ արժանեաց. այսինքն բարեացն բարիս, և չարացն չարիս: - 459. Չորրորդ՝ որք միայն զորդւոյ ասեն բան՝ սակաւ պատիժն, զի մի է յերրորդութենէն. իսկ որ զփառակիցն ևս՝ կրկնապատիկ *հատուցանի* նմա: - 566. ...նախ զառեալ պարգևսն *հատուցանէ*...: - 655. ...զի զպարտս նոցա մեք *հատուցանեմք*. - 683. Քանզի, ո՛չ է արդարութիւն աստուծոյ թէ այժմ *հատուցանի*. զի մարմին և հոգին ի միասին գործեցին զչար և զբարի: - 694. ...եկեղեցի սուրբ և աղօթք քահանայից *հատուցանէ* զպարտս նոցա և քաւէ. - 701. ...ապա պիտոյ է և ա՛յլ կեանս զի *հատուցի* բարեացն բարի և չարացն չար. և այս ո՛չ լինի եթէ ոչ իցէ յարութիւն: - 715. Որ արարն յոչ էից, գիտէ անխառնապէս որոշել զիւրաքանչիւր փոշիս արդարոց և մեղաւորաց. զի *հատուցէ* իւրաքանչիւր ըստ գործոց: - 719. Տասներորդ, գործք մարդոյ անցաւոր է որպէս ինքն. իսկ հատուցմունքն աստուծոյ մշտնջենաւոր որպէս նոյն ինքն. վասն որոյ յարուցանէ անմահ, զի *հատուցէ* ոմանց զփառս և ոմանց զտանջանս անմահ մարմնով: - 724. ...վասն որոյ նմա՛ պարտ էր դատաւոր լինիլ և *հատուցանել* ըստ գործոց հաւատացելոց և անհաւատից: - 735. Ոմանք դատին և դատապարտին. որպէս միջակք որք ունին հաւատ և ո՛չ գործք. որպէս չար հաւատացեալք. և որք ունին գործք և ո՛չ հաւատ. զի ասա *հատուցաւ* նոցա: - 739. Իսկ դատաւորն նստեալ յաթոռ արդարութեան արդարապէս *հատուցանէ* ըստ գործոց. ըստ որում յիմար կուսիցն փակեցաւ դուռն և ո՛չ առին զխնդիրն: - 742. Ապա ուրեմն յիրաւի և արդարապէս *հատուցանէ* աստուած չար փոխանակ չարեաց. այսինքն պատիժ վասն անիրաւութեան նոցա. զի արդար է աստուած: - 744. Իսկ *հատուցանէ* բարի փոխանակ բարեաց և շնորհ փոխանակ շնորհաց, զի բարի և արդա՛ր է: - 744. Այլ չար փոխանակ բարեաց ո՛չ երբէք *հատուցանէ.* ոչ ի կեանս յայս և ո՛չ ի հանդերձեալն. զի ո՛չ է անիրաւ. այլ արդար յամենայնի և ճշմարիտ: - 744. Չորրորդ, զի նա՛ արդարութեամբ *հատուցանէ* ի կատարածի. վասն որոյ կոչի կշիռք արդարութեան: - 746. Եւ սոքա երբեմն հաւասարին. որպէս յորժամ արդարապէս *հատուցէ* բարեաց և չարաց. և միտեն յարաժամ անվախճան պատուէ և պատժէ: - 746. Նոյնպէս և *հատուցի* առաւել և նուազ և հաւասար. ո՛չ միայն ըստ սեռի գործոց, այլ և ըստ տեսակի և քանակի և որակութեանց նմին: - 746. Զի ըստ սեռի *հատուցանի* բարեացն բարի և չարացն չար: - 746. Զի *հատուցանէ* աստուած ըստ արդեանցն գործոց...: - 746. Չորրորդ, կշիռն նշանակէ՛ զգործս մարդկան. ըստ կշռոյ օրինացն հաւասարել և *հատուցանել*. եթէ ըստ բնականին կամ ըստ գրոյն և աւետարանին. որում շատ տուաւ առաւել պահանջել: - 747. Եւ թէ ունիցին ըստ օրինացն հաւասարեալ ի գործս կամ ի հաւատս, և եթէ միտեալ և կամ նուազեալ, ըստ նոցին օրինացն *հատուցանել*. և կամ արտաքոյ օրինացն կորնչիլ ի յայսմ

կշռոյ է հատուցումն: - 747. Եթէ ունեք տւեալ իցէ շնորհ հասարակ կամ յատուկ, որպէս մկրտութիւնն և հաւատքն. քանքար և տաղանդ. իշխան և առաջնորդ. մեծութիւն և ինչք. կեանք լոյս ամանակ և այլն ամենայն. այսու եղանակաւ կշռոյ *հատուցի*: - 747. Մարգարէն եսայի կրկին ասէ զհատուցումն մեղաց. նոյնպէս և ի տեսիլն. և վասն էր դաւիթ եօթնպատիկ ասէ *հատուցանել* ի ծոց նոցա: - 750. Նախ վասն մարդոյս. զի մին մեղացն կրկին *հատուցանի* աստ հոգւով և մարմնով. իսկ եօթնպատիկն է՛ ի հուրն յաւիտենից: - 750. Որպէս գլուխ մարդոյ՝ զբարիս կամ զչարիս *հատուցեալս* անդամոց իւրոց՝ ինքեան համարի: - 763. Զի որպէս կարողութիւնն աստուծոյ երևի ի ստեղծանելն և ողորմութիւնն ի բարերարելն, այսպէս և արդարութիւնն ի *հատուցանելն*: - 778. Եւ զայս ո՛չ շաքաթու և աւուրց սպառեալ. այլ ամսոց երից սորին յերկարեալ. և գործելոց վրէժ ո՛չ կշիռ *հատուցեալ*: - 789

**ՀԱՏՈՒՑՈՒՄՆ +** Դարձեալ, թէ է՛ հարկ՝ ո՛չ են իրաւունք դատաստանի և քննութիւն. և ո՛չ օրէնք քաղաքական. և ո՛չ արժանապէս *հատուցմունք* բարեաց և չարեաց. զի հարկն բռնադատեաց գործել զայս. հարկին եղիցին պատիւք և պատիժք. և ո՛չ մարդոյն: - 12. Դարձեալ, չորեքկին են *հատուցմունք*. բարի՛ փոխանակ բարւոյ, և չար փոխանակ չարի. որ է՛ գործ արդարութեան: - 18. Երկրորդ՝ անիրաւ լինէին *հատուցմունքն*. բարեացն բարիս և չարեացն չարիս: - 20. Զի չարչարանքն այսպէս ստուգաբանի, նախագործեցեալ չարին չար *հատուցմունք*: - 42. Այլ ետ նոցա անձնիշխան կամս՝ զի կամովին ընտրեսցեն զբարին և արդարապէս *զհատուցումն* ընկալցին զի մի՛ երբեք մեղանչել կարիցեն: - 149. Դարձեալ ասեմք, թէպէտ զթողութիւն ընկալաւ իսկապէս, և զպատիժս կրեաց *հատուցմամբն*, սակայն մնաց կնիք ապականութեանն ի յանձն որպէս ասացաք: - 166. Հինգերորդ՝ օ՛ր է հասարակ յարութեան մարդկան. և գալստեանն քրիստոսի. և *հատուցման* ըստ իւրաքանչիւր գործոց: - 193. Չորրորդ՝ ի ցուցանել զարդար վճիռ *հատուցմանն*. պահողացն՝ զվայելս դրախտին և զանմահ կեանս. և ոչ պահողացն՝ զարտաքսիլն և զմահու մեռանիլն: - 277. Որպէս ենովս որ յուսացաւ կոչել զանունն տեառն աստուծոյ. այսինքն յուսացաւ զհանդերձեալ կեանսն որ աներևոյթն էր. և վասն իւրաքանչիւր գործոց գոլ *հատուցումն*. և կոչեաց զանունն աստուծոյ ի յօգնականութիւն: - 288. Երկրորդ՝ զուղղութեան գործոց բուռն էհար. և յուսացաւ թէ գո՛յ *հատուցումն* գործոց, և բարեաց փոխարէն: - 289. Արդ որպէս հաւատով իմանամք հաստատեալ զյաւիտեանս որպէս ասէ առաքեալն. և նովին հաւատով իմանամք զկատարած կենցաղոյս և զյարութիւն մեռելոց և զդատաստան *հատուցմանն*: - 292. *Հատուցումն* ի ստեն է՛ խաւաւակայ՝ փրկութիւն եղև հաստատ կերակրովք: - 308. Նախ ասեն եթէ ի ծննդեանն կալեալ էր զզարշապարէն՝ եսաւայ, այժմ զփոխն անդրադարձէ՛ և յիշեցուցանէ նմա թէ՝ ամենայն իրի *հատուցումն* գոյ: - 311. Եւ տէր մեր փոյթ ի *հատուցումն* չարաց: - 315. Նոյնպէս և մարմնական կապովն, զի ազգակից է մեզ և փեսայ հոգևոր. և ցանկամք նմա ակն ունելով վարձուցն *հատուցման*: - 318. Երրորդ՝ զբարի և զչար գործոց *հատուցմունքն* աստէն կարծէին լինիլ ի մարմնի: - 324. Վասն երրորդին ասէր յոր զբարի և չար գործոց *հատուցմունքն* լինիլ առհասարակ յետո՛յ ի հանդերձեալն. զի աստ են մեղաւորք և հնացեալք ի մեծութեան. և ներէ՛ նոցա աստուած վասն կրկին պատճառի: - 324. Երկրորդ՝ զի յուսասցին այլ կենաց և *հատուցման* գործոց: - 324. Երրորդ՝ ցուցանէ թէ կրկին գովութիւն է և *հատուցումն* արդարոց. աստ և ի հանդերձեալն: - 326. Վասն զի **Ե** տանջանօք չարչարեաց զհէլ, կրկին ընկալաւ *զհատուցումն*: - 335. Սոյնպէս և ամենայն մեղաւորաց կրկին է *հատուցումն*. այսինքն հոգւով և մարմնով. կամ աստ և ի հանդերձեալն: - 335. Այսպէս հինգ եղանակաւ չարաչար ատեցին զհիւրսն. վասն այն կրկին կրեցին *զհատուցումն* վրիժուց **Ժ** հարուածովք: - 335. Երկրորդ՝ զի նոցա *հատուցմունքն* մարմնական էր, իսկ մերս հոգեկա՛ն է: - 337. Իրաւունքն է ընտրութիւն և *հատուցումն* դատաստանին այսպէս. զի դատաստանն է տեղիք քննութեան. և արդարութիւնն է գործ դատաստանին: - 340. Եւ իրաւունքն է կատարումն քննութեան և արդարապէս *հատուցումն*: - 340. Հինգերորդ՝ հանգիստն կատարեալ հոգւով և մարմնով. որ է՛ փողոց հնչմունք. ազատութիւն յապականութեանց. ամ թողութեան և իւրաքանչիւր ուրուք ի ստացուածս իւր դարձումն. որ է՛ գործոց *հատուցումն*: - 372. Զի ամօթն և արտասուքն ի տեղի *հատուցմա՛նց* են խոստովանողին: - 432. Եւ այս գիտելի է, զի ամենայն խոստովանելոց թէ կատարեալ թէ անկատար, պա՛րտ է կարգել զապաշխարութիւն. այսինքն *զհատուցումն* փոխարինաց: - 432. Սոյնպէս և շնորհք ապաշխարութեան նորոյս առաւե՛լ է քան զհնոյն. զի առանց գործոց *հատուցման* ո՛չ կարէին արդարանալ. իսկ աստ շնորհօք թողութեանն միայն, կարէ՛ արդարանալ: - 433. Այլ աստ ասէ սուրբն եփրեմ եթէ՝ խրատն դաւթի եղև *հատուցումն* մեղացն. այլ և պարտք բարեաց առ աստուած ի ցոյց օրինի ամենայն ապաշխարողաց: - 434. Զի մի և նոյն ապաշխարութիւն է՛ *հատուցումն* մեղաց, և նիւթ բարեաց առ աստուած: - 434. Եւ գիտելի՛ է, զի ապաշխարութիւն աստի կենացս՝ է՛ *հատուցումն* և պսակ բարեաց...: - 434. ...իսկ յետ մահու պաշտօնք և

տուրք աղքատաց և այլն՝ է՛ *հատուցումն* պատժոց միայն...: - 434. ...իսկ յետ յարութեանն տանջանք անվճար և առանց *հատուցման*...: - 434. Եւ է՛ ողորմութիւն նորա ծրի շնորհօք և պարգևօք. իսկ արդարութիւնն տուրք փոխարէնք և *հատուցումն*: - 457. Առաջին կերպիւն է՛ *հատուցումն* բարեաց և պատիժ չարաց՝ որ է՛ գործ արդարութեան: - 458. Իսկ երբեմն երկոքեանն յայտնի. որպէս ի *հատուցումն* արդարոց. և ի պատիժ անարգելոցն...: - 459. Իսկ զգիր քրիստոնէից զոր յետ աւազանին մեղանչեմք և գրեմք զյանցանս, զայն պատառէ ապաշխարութիւնն. որ է՛ զղջումն սրտի և խոստովանութիւն լեզուի և *հատուցումն* գործոց մարմնոյ: - 482. Տասներորդ՝ առաջին գալուստն քրիստոսի ողորմութեան էր և շնորհաց. և երկրորդն արդարութեան և *հատուցման*: - 507. Եւ դարձեալ՝ դարձցին մեղաւորք անդրէն ի դժոխս թէ ի նոյն տեղի ըստ ոմանց, կամ յայլ տեղի տանջանաց ըստ գործոց *հատուցման*: - 508. Իսկ որք ելեալք են ի մարմնոյ, յոյս նոցա է՛ հանդերձ ստուգութեամբ գիտութեան. զի ստուգապէս գիտեն զլինելոց *հատուցումն*: - 574. Շնորհ է յիշատակ բարեկամութեանց. և կամք անդրէն *հատուցմանց*: - 579. Նոյնպէս և սուրբքն ամենայն ի գործոց իւրեանց հանգչին և փառաւորին և սպասեն գալստեանն քրիստոսի և *հատուցման* վարձուցն: - 648. Երկոտասաներորդ, Թէ *հատուցումն* ըստ գործոց՝ է՛ ի կատարածի, լ վկայութեամբ: - 660. Եւ ապա՛ զանտի *հատուցումն* իւր և զտանջանս գեհենին: - 669. Ապա ուրեմն յա՛յնմ աւուր լինի *հատուցումն* արդարոց և մեղաւորաց...: - 670. ...զի սոքա բարեաց և չարեաց են *հատուցմունք*: - 675. Եւ ո՛չ ոքն է առեալ արդեամբ զգործոց *հատուցումն* մինչ ի գալուստն դատաւորին որպէս ասէ աւետարանն: - 689. Յետ աստեացս փառք երանելեացն կրկին է. այսինքն է փառք գործոց ըստ ինքեան, և փառք *հատուցմանց*: - 689. ...և ի յարութեանն առնուն զփառս *հատուցմանց* հոգւով և մարմնով. և այնպէս փառաց ի փառս բարձրանան որպէս ասի յերգս: - 689. Բայց այժմ ըստ ինքեան, և անդ ըստ *հատուցման*: - 690. Նոյնպէս կրկին է և տանջանք չարաց. այսինքն տանջանք գործոց ըստ ինքեան, և տանջանք *հատուցման*, զի զտանջանք գործոցն կրեն յետ մահու. և զտանջանք *հատուցման* ի յարութեանն հոգւով և մարմնով: - 690. ...որպէս վասն նեռինն և դատաստանին ետես. Նոյնպէս և *զհատուցումն* սրբոց: - 690. Դարձեալ ասեմք, թէպէտ զներկայն ետես, սպիտակ հանդերձն ո՛չ ցուցանէ զփառս *հատուցման*. այլ զփառս և զհանգիստ գործոց: - 690. Զի հոգիք սրբոցն ո՛չ են առանց մխիթարութեան. այլ հանգչին և ուրախանան ի գործս իւրեանց և յուսով փառացն *հատուցման*...: - 690. Երկրորդ, յանկնկալութենէ *հատուցմանն* կրեն զտանջանս. որ լինելոց է ի կատարածի: - 690. Այլ սակայն *զհատուցումն* գործոց և զտանջանս յաւիտենական ո՛չ են առեալ այժմ...: - 691. Արդ՝ առաջին վկայութիւն, ասէ սուրբն կիւրեղ ի գիրս պարապմանց ի հարցմունս տիբերեայ եթէ՝ *հատուցմունքն* հետևին դատաստանին. և դատաստանն գալստեան դատաւորին ի կատարածի: - 691. Արդ չև է եկեալ դատաւորն. և ոչ է եղեալ դատաստան. նա և ո՛չ *հատուցումն*. ո՛չ բարեաց և ո՛չ չարաց որպէս ասացաւ ի վերոյ: - 691. ...բայց վարձ *հատուցման* ո՛չ կարէ ընդունիլ առանց մարմնոյն. զի ո՛չ միայն հոգւոյն է վաստակն, այլ և մարմնոյն: - 691. ...որպէս թէ այժմ ակն ունին և մնան գալստեանն քրիստոսի և վարձուց *հատուցման*: - 691. Իբր թէ յայնժամ առնուն զգործոց *հատուցումն*: - 692. Ապա ուրեմն *հատուցումն* յաւիտենական է՛ ի գալուստն քրիստոսի: - 693. ...զի յարութիւն վասն *հատուցման* գործոցն է: - 694. Յայտ ուրեմն է թէ ո՛չ է առակս վասն *հատուցման* արդարոց: - 697. Առ երկրորդն ասեմք թէ՝ ի տեսիլն ո՛չ *զհատուցումն* ասէ, այլ զյայտնութիւն գիտութեանն. - 697. Երկրորդ, զի բառնայ զերկրորդ գալուստն քրիստոսի և *զհատուցումն* դատաստանին: - 698. Եւ վասն զի մի օր է *հատուցումն* և ոչ յամենայն օր ասացաւ ի վերոյ: - 698. Այլ թէ ոչ գոյ դատաստան, նաև ոչ յարութիւն մարմնոյ. և ոչ *հատուցումն* գործոյ. ապա և ո՛չ գալուստն քրիստոսի որպէս ասէ սուրբն կիւրեղ: - 700. Իսկ թէ այժմ հոգւոյն եղեալ է դատաստան, և *հատուցումն* ըստ գործոց, և արդարոցն փառք և մեղաւորացն տանջանք. և յայնժամ մարմնոյն որպէս ասեն նոքա...: - 700. ...ապա ի յարութեանն ո՛չ է բոլոր մարդոյն *հատուցումն*. այլ մարմնոյն միայն որպէս ցուցաւ: - 700. Ասեմք նախ՝ եթէ սուրբն ոսկեբերան մեկնէ զբանս զայս աստի դատաւորաց և *հատուցմանց* այսպէս: - 704. Զի այս կեանքս է գործոց, և այն *հատուցմանց* բարեաց և չարեաց: - 704. ...այլ պա՛րտ է զի յարիցէ և մարմինն և ի միասին առցեն *զհատուցումն* բարեաց կամ չարեաց: - 715. Տասներորդ, գործք մարդոյ անցաւոր է որպէս ինքն. իսկ *հատուցմունքն* աստուծոյ մշտնջենաւոր որպէս նոյն ինքն...: - 724. Նախ քննութեան. և երկրորդն *հատուցման*: - 738. Եւ դատաստան *հատուցման* ամենեցուն է, այլ դատաստան քննութեանն ո՛չ. զի ի չորս բաժանին ամենայն դատեցեալք: - 738. Չորրորդ՝ *հատուցումն* բարեաց որ ասէ «ժառանգեցէք»: - 740. Եւ որպէս մեք յարաժամ միտեմք ի գործ բարութեան կամ չարութեան. և գործ նորա միտէ՛ յողորմութեան կամ արդարութեան *հատուցումն*. - 745. Իսկ կշիռ արդարութեան՝ պարզաբար *զհատուցումն* արդարութեան նշանակէ: - 745. Երրորդ, հայի առ նոյն ինքն արդարապէս *հատուցումն* մանրամասն քննութեամբ բարեացն և չարացն...: - 746. Իսկ ըստ տեսակի,

որպիսութիւն *հատուցմանց* ըստ հաւատոց և գործոց վկայից և կուսից: - 746. Եւ թէ ունիցին ըստ օրինացն հաւասարեալ ի գործս կամ ի հաւատս, և եթէ միտեալ և կամ նուազեալ, ըստ նոցին օրինացն հատուցանել. և կամ արտաքոյ օրինացն կորնչիլ ի յայսմ կշռոյ է *հատուցումն*: - 747. Ուստի երևի **զ** ժամս ի յարութենէն մինչ ի վճիռ *հատուցման* և կորստեան չարաց չորեքկին. այսինքն գործոց չարաց և պատժոց նոցին. պատճառաց դիւաց և հետևելոց մարդկան: - 748. Մարգարէն եսայի կրկին ասէ *զհատուցումն* մեղաց. նոյնպէս և ի տեսիլն. և վասն էր դաւիթ եօթնպատիկ ասէ հատուցանել ի ծոց նոցա: - 750. Երկրորդ՝ զի մարդկան ազգի կրկին է *հատուցումն*. այսինքն յայժմու կեանս և ի հանդերձեալն. իսկ դիւացն եօթնեկի է *հատուցումն* վասն եօթնեկի յանցանաց նոցա. և եօթն գլխաւորագոյն մեղացն: 750. Ութերորդ, այլ և զղջացեալքն զերեսնաւորն. և խոստովանեալքն զկաւորն. և ապաշխարեալքն *հատուցմամբ*՝ զհարիւրաւորն: - 758. Եւ տեսանել *զհատուցումն* որ է՛ հանդերձեալն: - 774. Եւ այս ո՛չ միայն փութանցիկ գոլոյ վասն, կամ ներհակաբար *հատուցման* որպէս սովորութիւն է...: - 775. ...մարմնով մեռելոցն անթիւ օճիրս ստախօսութեան գործէր. զանտի կենաց զյարութեան յուսոյ և *զհատուցմանց* ըստ գործոց՝ բառնալով. զերկիւղ դժոխոց և զսէր արքայութեան. և զամենայն ինչ որ նմանէ այսմ հոգևոր բարութեան: - 775. Եւ այսորիկ որք երևին ընդ դէմ միմեանց, կամ առ այլս կամ երբեմն, ո՛չ փոփոխումն ինչ ցուցանեն անփոփոխելոյն. առ մեզ փոփոխելոց ըստ արժանոյն գուք կամ *հատուցումն.* թէ աստ՝ թէ ի հանդերձեալն: - 779. Երբեմն երկոքեանն յայտնի. որպէս ի *հատուցումն* իւրաքանչիւր արդարոց և մեղուցելոց: - 779. Իսկ իւրաքանչիւրոց *հատուցումն* այսինքն բարեացն բարիս և չարացն չարիս, է՛ այս գործ արդարութեան. և այսորիկ առ մե՛զ փոփոխմունք. և ո՛չ անեղ բնութեանն: - 779. Չորրորդ՝ զի ակամայ ի կրիցն ցաւոց, որպէս աւազակաց *հատուցմանց:* - 780

**ՀԱՐԱԶԱՏ** + Ահա զսակաւ ընծայ կարճառօտութիւն բանիս ընկալ ի քում ընդարձակութեան գանձարանի սրտի՝ երիցագոյն *հարազա՛տդ* Գէորգիէ: - 95. Երկրորդ՝ զի ոչ *հարազատ* որդին սեպհականէր զժառանգութիւնս հօր. այլ օտարն ի մեծութիւն հասանէր, և իւրն չքաւորութեամբ տառապէր: - 238. Հինգերորդ՝ արեամբն ազգակիցեն մարդ և անասուն. վասն որոյ ո՛չ է պարտ մարդոյ *զհարազատն* իւր ուտել: - 295. Եւ երէց է աստուած քան զաշխարհս. և անդրանիկն զաստուծոյ պատկերն ունի. զի հայր և խնամածո՛ւ է այլ *հարազատ* եղբարցն: - 308. Երկրորդ՝ բարոյական. զի մին կնոջ բազում արանց ո՛չ երևի *հարազատ* զաւակն. իսկ մի այր ի բազում կանանց կարէ՛ ծնանիլ *հարազատ* մանկունս և սիրել զնոսա: - 401. Դարձեալ, յերես անկեալ արտասուալի դիմօք հողս և փոշի՝ սուրբ զարշապարաց ձերոց, աղերսեմ ի խորոց սրտէ *զհարազատ* գութ հարց և եղբարց մեր հոգևորաց: - 773. Գիր քոյոյ վսեմամիտ խոհեմութեանդ ո՛վ արփիածին *հարազատ,* և վերնոյն սիօնի նազելի զաւակ Գէորգէոս Րաբունեայ պետ: - 773. Հոգաբարձութեամբ նայիլ ի լուծումն խնդրոյս աղաչեմ *զհարազատդ* մեր: - 776

**ՀԱՐԱՇԱՐԺ (տ. ՀԱՅՐԱՇԱՐԺ)** + Ի *հարաշարժ* ի յաղբերէն ... Այսինքն ի հօրէ յառաջ բղխէ հոգին առ որդի. և նովաւ բաշխի մեզ: - 639

**ՀԱՐԱՒ** + Հինգերորդ՝ զի յարևելից ընդ *հարաւ* խոնարհի յարևմուտս՝ և պատէ՛ հիւսիս, և դարձեալ ելանէ յարևելս: - 126. Եւ վեցն ի կողմն *հարաւոյ* ի միւս կիսագունդն: - 189. Երեք ի *հարաւոյ*, և **զ** ի հիւսիսոյ: - 205. Իսկ որ ի *Հարաւո՛յ* հնչէ, հասարակ Նոտոսք կոչին: - 205. Եւ որ մեծ ի *հարաւ* հնչէ, Եւրոս կոչի. զէ՛ճ է. և տաղատարա՛փ բերէ: - 205. Եւ որ մեծ ի *հարաւ* է, լիփս կոչի. անձրևաբե՛ր է: - 205. Երկրորդ՝ զի ունի երկիցս բ ծայրք. երկայնք և լայնքն. որ է յարևելից յարևմուտս. և ի հիւսիսոյ ի *հարաւ*: - 210. Ո՛չ թէ քան զտարրական հուրն ի վե՛ր է անցեալ. այլ զի լուսինն և արեգակն միշտ ի *հարաւոյ* կողմանէ ի ստորոտէ լերինն ելանեն. և ի հիւսիսոյ կողմն լերինն միշտ գիշեր լինի. որպէս աղէքսանդրու պատմութիւնն ասէ. և ի գլուխն միշտ լոյս. և ի *հարաւոյ* կողմն տիւ և գիշեր: - 222. Երրորդ՝ զի աշխարհ որ քան է ի բեւեռէ՛ հիւսիսոյ մինչև ի բեւեռն *հարաւոյ*, նոյն քան է յարևելից մինչև յարևմուտս: - 231-232. Ութերորդ՝ որպէս իջեալքն յեգիպտոս ընդ *հարաւ* մտին ի գեսեմ ի պարարտ երկիր: - 315. Եւ արտաքին սրահին պատուարն ի մէջ ունելով զխորանն յամենայն կողմանց ճ կանգուն երկայն ի հիւսիսոյ և ի *հարաւոյ* կողմն: - 343. Երրորդ՝ աշտանակն լուսոյ ի *հարաւ*: - 346. Վասն այն զնշխարն ի կողմն հիւսիսոյ դնեմք և զսկիհն ի *հարաւ* որպէս անդ: - 346. Վասն է՞ր զաշտանակն եդ ի *հարաւ*: - 346. Նախ նշանա՛կ էր լուսաւորա՛ցդ երկնից որ ի *հարաւ* ընթանան: - 346. Դարձեալ՝ *հարաւն* նշանակէր զիրէայս, և հիւսիս զհեթանոսս. որ լինելոց էին պատարագ և ժողովուրդ աստուծոյ...: - 360. Զի կենդուրածինքն լցին զարևելս. և խմայէլացիքն *զհարաւ*. եսաւացիք զհիւսիս և զարևմուտս. և սոքա ո՛չ անկան ընդ թուով: - 377. Մերարեայն ի հիւսիսոյ. և Կահաթուն որ է՛ ցեղն քահանայից ի *հարաւոյ*: - 378-379. Որ նշանակէր՝ «աստուած ի *հարաւոյ* եկեսցէ» ի թագաւորի և քահանայի ցեղէն. զի բեթլէհէմ *հարաւ* է երուսաղէմի: - 379. Զի՞նչ է որ մովսէս ետես նախ զծովն որ յարևմուտս, և

զհիւսիս և *զհարաւ,* և ապա՛ զարևելս: - 394. Նախ՝ որպէս արեգակն եղև տեսութիւնն մովսէսի. զի յառաջ զարևմուտս տեսանէ. և վերացեալ զհիւսիս և *զհարաւ*. և ապա՛ զարևելս: - 394. Քսանք, Դշխոյն *հարաւոյ*. և առաւել քան զսողոմոն. ժժ գլխով: - 413. Գիշերի սատակեցան զօրքն ռափսակայ. և վասն յովսիայ զի *հարաւ* և մեռաւ: - 413. Վասն է՞ր *հարաւ* ովսիայ յորժամ խոստացաւ խաղաղութեամբ ննջել: - 446. Դարձեալ՝ խաչաձև է դ կողմն աշխարհի. որ է՛ Արևելք, Արևմուտք, Հիւսիս, և *Հարաւ*: - 494. Դշխոյին *հարաւոյ* նըսա՛ էր անունն: - 495. Վեցերորդ, ի սմա՛ կրկին դրունք ի *հարաւ* և յարևմուտս. որ նշանակէ՛ զդուռն ողորմութեան և զդուռն արդարութեան աստուծոյ, *հարաւոյն* և արևմտիցն: - 614. Զի ողորմութիւնն ի կողմանէ յորժամ անտես առնէ զմեղս՝ դուռն է *հարաւոյն*: - 614. Եւ յետ այնորիկ ի *հարաւ*. զի *հարաւով* հողմոյ սուրբ հոգւոյն՝ արար մեզ գարուն հոգևոր ազգի հաւատացելոցս. - 673. Հրեղէն ծով ասացեալ են ի *հարաւ*. վասն այն ջերմ է ասեն մասն այն: - 731. Եւ վերջընթացն է հրեղէն ծովն ի *հարաւ*. ուր առաքէ՛ զմեղաւորս ի հուրն յաւիտենից: - 731. Վասն է՞ր ասի հրեղէն ծովն ի *հարաւ*: - 731. Նա՛խ՝ զի խոնարհ և ցա՛ծ է կողմն *հարաւոյ*. և լուսաւորքն ա՛նդ շրջին. և աջ կողմ է աշխարհի. վասն այն ջերմ է: - 731. Դարձեալ, զի յարևելս բազմեալ դատաւորն. և աջակողմեանքն լինին ի վերայ օդոյ ի կողմն հիւսիսոյ. և ձախակողմեանքն վայր ի յերկրի ի կողմն *հարաւոյ*. - 731. Զի այսպէս ասեն վարդապետք՝ թէ յորժամ յղանայ ոք ի միտս իւր զխորհուրդ մեղացն, ի սատանայէ՛ սերմն առեալ որպէս կին յառնէ. և ի ծնանիլ մեղացն՝ ծնանին և որդունքն ի հրեղէն ծովն որ է՛ ի *հարաւ*: - 753

**ՀԱՐԱՒԱԿՈՂՄՆ** + Ո՞րպէս բանակէին բժան ցեղքն... Ի *հարաւակողմն* **գ** ազգ: - 378

**ՀԱՐԱՒԱՅԻՆ** + Սահմի. զի գնայ *հարաւայինն*, և գայ հիւսասայինն: - 200. *Հարաւայինք* որք Նօտոսք կոչին, Այն որ մերձ յարևելս է, Եւրո՛ նօտոս կոչի. հալէ՛ զպաղս: - 206. *Հարաւայինն* տա՛ք է և չոր: - 240. Եւ յերիտասարդութեանն՝ լինի հողմն *հարաւային* տաք և չոր: - 240. Եւ դուռն մտացն որ յերկինս և ի լոյս հայի, *հարաւայինն* է: - 614

**ՀԱՐԹ** + Երկրորդ՝ առաջին ստեղն է հայր. ոչ յումեքէ. միջինն որդի ծնունդ ի հօրէ. վերջինն հոգի բղխումն ի հօրէ և ելումն յորդւոյ. զի որդւովն երևի. և *հարք* հաւասար աստուածութեամբ և արարչութեամբ: - 178

**ՀԱՐԹԵՄ** + Երկրորդ զի հաւասարի հալեալ մոմ. այնպէս լերինք և բլուրք *հարթեալ* հալին և հասաւարին: - 728

**ՀԱՐԻՒՐԱՄԵԱՆ** + Երրորդ՝ քանակաւ հասակին. զի իւրաքանչիւր ոք յիւրն երեսնամեայ յարիցէ. որպէս *հարիւրամեան* անցեալ և քառասնօրեայ մեռեալ. որ լինելոց էր երեսնամեայ, ի նոյն հասակն յառնեն: - 726

**ՀԱՐԻՒՐԱՊԱՏԻԿ** + Նոքա որ թողին զամենայն և գնացին զհետ քրիստոսի, որոց խոստացաւ *զհարիւրապատիկն* աստ՝ և զկեանսն յաւիտենից: - 688

**ՀԱՐԻՒՐԱՒՈՐ** + Զի՞նչ է երեսնաւոր վաթսունաւոր և *հարիւրաւորն* առակ աւետարանին: - 757. Երկրորդ, հաւատն երեսնաւոր. և յոյսն վաթսունաւոր. և սէրն կատարեալ *հարիւրաւոր*: - 757. Երրորդ, կուսութիւնն *ճաւո՛ր* է. և ամուսնութիւնն վաթսունաւոր. և դարձեալքն ի մեղաց երեսնաւոր: - 757. Չորրորդ, այլ և մարտիրոսք և ճգնեալքն *ճաւոր*. և ուսուցիչքն **կ**աւոր. և ուսեալքն երեսնաւոր: - 757. Հինգերորդ, քահանայապետք *հարիւրաւոր*. և քահանայք վաթսունաւոր. և պաշտօնեայք երեսնաւոր: - 757. Եօթներորդ, որ ի տղայութեանն հասակէ՛ կան յաստուածպաշտութիւն, իբր զխոտս դալարի պտղաբերեն *զհարիւրաւորն*: - 757. Ութերորդ, այլ և զղջացեալքն զերեսնաւորն. և խոստովանեալքն ըզկաւորն. և ապաշխարեալքն հատուցմամբ՝ *զհարիւրաւորն:* - 758. Իններորդ, և որք նախ քան զօրէնս՝ զերեսնաւորն. և որք ընդ օրինօքն՝ զ**կ**աւորն. և որք ընդ շնորհօքս, *զհարիւրաւորն* տացեն պտուղ: - 758. Եւ ի յարութեանն *զհարիւրաւորն* յարքայութեանն երկնից: - 758. Այլ և են ոմանք որ ասեն զերկիրս մաքրեալ երեսնաւոր. և զդրախտն վաթսունաւոր. և զվերինն եէմ *հարիւրաւոր*: - 758

**ՀԱՐԻՒՐԵԱԿ** + Դարձեալ՝ *հարիւրեակ* **զ**. և տասնեակ **զ**. և միակ **զ**: - 707. Հազար ամն է թիւ կատարեալ. զի ունի զտասն *հարիւրեակն*: - 710

**ՀԱՐԻՒՐԵՐՈՐԴ** + Երկրորդ՝ զի **ժ**երորդ է մարդս կարգեալ ի թիւ նոցա ըստ *հարիւրերորդ* մոլորեալ ոչխարին, և կորուսեալ **ժ**երորդ դրամին: - 134

**ՀԱՐԻՒՐՈՐԴ** + Եւ *զհարիւրորդ* մոլորեալ ոչխարն խնդրեալ տեառն մերոյ յիսուս քրիստոսի: - 376

**ՀԱՐԿ** + Նախ՝ եթէ չար հիւանդութիւնն և այլն ի հարկէ՛ է, ապա ամենեցուն նոյնպէս պարտ էր գոլ. զի *հարկն* նոյն է առ ամենեսեան: - 11. Իսկ թէ այլ և այլ է ամենեցուն *հարկն*, ապա նոյնպէս ո՛չ լինէր ամենեցուն չար: - 11. Դարձեալ եթէ է՛ *հարկ*, ապա ո՛չ էր անձնիշխան կամք, այլ արդ՝ եթէ ունիմք կամք և է՛ սկիզբն գործոյն ի մեզ և առ մեզ, ապա ուրեմն ո՛չ է *հարկ* որոյ սկիզբն յայլմէ՛ է: - 11. զի բանականն իմացմամբ և

կամօք վարի. և անբանն ի բնութենէ՛ *հարկի* որպէս ասացաք: - 11. Դարձեալ, թէ է *հարկ*, վասն է՞ր աղօթք և պատարագք և ողորմութիւնք և այլն՝ դարձուցանեն զմերձեալ չարիսն, և փոխեն ի բարիս: - 11. Որպէս տուրքն նաբուգոդոնոսորայ. և աղօթքն եզեկիայ. որ յետս դարձոյց զմահ. և այլք բազումք. ապա ուրեմն ո՛չ է *հարկ*: - 11. Դարձեալ, թէ էր *հարկ* շարժումն աստեղացն, ինքեանք ո՛չ լինէին ընդ *հարկաւ* այլոց. ապա թէ ինքեանք են ընդ *հարկաւ*, ո՛չ են այլոց *հարկ*. զի են ինքեանք ընդ հարկաւ: - 11. Եւ թէ հետևեսցի՝ ոչ որ գործեաց զգեղեցիկս և ըզզարշելիս, այլ որ պատճառն է և *հարկ*՝ գովեսցի և պարսաւեսցի. այսինքն բախտն և ճակատագիրն: - 11. Դարձեալ, թէ է՛ *հարկ*՝ ո՛չ են իրաւունք դատաստանի և քննութիւն. և ո՛չ օրէնք քաղաքական. և ո՛չ արժանապէս հատուցմունք բարեաց և չարեաց. զի *հարկն* բռնադատեաց գործել զայս. *հարկին* եղիցին պատիւք և պատիժք. և ո՛չ մարդոյն: - 12. Դարձեալ, թէ է՛ *հարկ*՝ անիրաւք են և ինքեանք աստեղքն. զի ոմանց բարիս գրեն, և ոմանց չարիս. զոմանս մեծատունս և զոմանս աղքատս. հեշտ կեանս և դժուարս. երկարակեացս և սակաւակեացս. բազում անգամ անարժանիցն բարիս խոստանան, և արժանեացն չարիս...: 12. Դարձեալ ասեն, եթէ ոչ է *հարկ*՝ ընդէ՛ր ոմն քաղաք կործանի և ոմանք ո՛չ. և ոմն նաւ հեղձանի, և ոմանք ի կռիւս անկանին: - 12-13. Ասեմք առ այս, եթէ այսու վկայե՛ս և դու մեզ՝ թէ ո՛չ է *հարկ*. զի ի բոլոր քաղաքն այնքան բիւր մարդիկ՝ ծեր և տղայ՝ ե՛րբ և ո՛ւր ի մի շարժումն աստեղաց ծնան, որք ի միասին կործանեցան. կամ բազմութիւն զօրացն. կամ որք ի նաւին կային. զի սոքա ամքեան յայլևայլ ժամանակս և այլևայլ շարժումն աստեղաց էին ծնեալք. ապա ուրեմն ո՛չ է *հարկ* բախտի և ճակատագրի: - 13. Նախ՝ եթէ դու քեզէ՛ն խոստովանեցար եթէ ոչ գոյ *հարկ*. այլ՝ աստուած և բնութիւնն և արհեստն ևս ներգործեն. ապա թէ է գործ արհեստի և բնութեան, ո՛չ է *հարկ* բախտի և ճակատագրի: - 13. Դարձեալ ասեմք՝ թէպէտ տեսանէ աստուած զամենայն նախքան զլինիլն իւրեանց, սակայն տեսութիւնն աստուծոյ ո՛չ *հարկ* է ի վերայ նոցա լինիլ չար կամ բարի: - 15-16. Նո՛յնպէս և տեսութիւնն աստուծոյ ո՛չ *հարկէ* ի վերայ մեր գործ զբարի կամ զչար. այլ կամք մեր: - 16. Նախ՝ թէ ըստ այդմ բանի *հա՛րկ* է ապա և քեզ ջուր լինիլ և զջուրն գիտել. և քար լինիլ և զքարն ճանաչել, և զայլսն նոյնպէս: - 17. Եւ զի ոչ է այս *հարկ*. զի գոլով նոյն՝ ճանաչեմք զայլսն: - 17. Երկրորդ ի սկզբանէ, զի իր ինչ ինքն ինքեան սկիզբն և սկսեալ անկար է գոլ. ուստի *հա՛րկ* է ամենայն սկզբնաւորաց գոլ սկիզբն: - 25. Եւ կամ որպէս յղութիւն *հարկ* է զծնանիլն: - 36. Զի և յօհան դամասկացին ասէ *հարկ* գոլ ամենայն սկսզման ունել դադարումն. այլ զի հրեշտակք և հոգիք ոչ դադարին, այս կամա՛ցն աստուծոյ է պահպանութիւն, և ոչ բնութեան նոցա. զի յո՛չ էից եղեալքն՝ կարեն յոչ էութիւն փոխիլ: - 37. Ապա թէ ոչ՝ *հա՛րկ* է քեզ ասել ըստ բազում անուանցն և բազում բնութիւնս գոլ աստուծոյ: - 38. Տարակուսելի է առ այս, զի թէ *հա՛րկ* է որոց բնութիւնքն մի գոլ՝ նոցա և կամքն և ներգործութիւնն մի լինիլ. ընդէ՞ր ապա զի մարդկային բնութիւնս մի է և նոյն հօրն և որդւոյն՝ և ո՛չ է կամքն և գործքն մի: - 45. Ըստ քում բանիդ աստ հօ՛ր տաս զաստուածութիւնն և բառնաս յորդւոյ. և ի մարգարէն՝ որդւոյ ասես զաստուածութիւնն և բառնաս ի հօրէ, ապա *հա՛րկ* է քեզ լինիլ անաստուած. զի միովն միւսոյն յաղթութիւն տաս: - 47. Առորս ասելի է թէ՝ ո՛չ է այլ էութիւն ի մէջ արարչին և արարածոյն. այլ *հա՛րկ* է զի լիցի աստուած՝ կամ արարած: - 52. Եւ թէ ծնեալ՝ ասեն *հա՛րկ* է զի լիցի ի հօրէ կամ յորդւոյ. թէ ի հօրէ է՝ լինին **բ** որդիք և եղբարք: - 52. Եթէ զաստուծոյն ասես, ցուցանես զբանն կարօտ գոլ փառաց. և *հա՛րկ* է հետևիլ քեզ արիոսի: - 69. Զի թէ իր, ապա *հա՛րկ* է ասել քեզ զքրիստոս կամ մի իր և բ. կամ մասամբ ինչ մի և մասամբ ինչ երկու. կամ բոլոր մի և բոլոր բ: - 86. Եթէ երկուքն, *հարկ* է ասել ձեզ՝ փառք հօր՝ և որդւոյ երկու բնութեանցն՝ և հոգւոյն սրբոյ: - 90. Զի եթէ զաստուածային բնութիւնն պատւէք, *հա՛րկ* է ձեզ զմարդկայինն անարգել՝ և իրէական խտրութեամբ մոլիլ...: - 90. ...իսկ աստուած առանց ամենայն *հարկի* է: - 156. Երրորդ՝ զի ի հարկէ՛ էակ է աստուած. և *հարկն* զմինն ունի ի հակադրութեանց. այսինքն կամ զգոլն կամ զչգոլն: - 168. Ապա ուրեմն *հա՛րկ* է մի գոլ աշխարհի և ո՛չ բազում: - 179. Վասն այնորիկ յորժամ զիրս հոսականս և շարժունս չափէ՛, *հա՛րկ* է զի ի նոսին հոսեսցի. քանզի միշտ ժամանակն անցանէ և հոսի. յանցելոյն ի ներկայս. և ի ներկայէս յապառնին: - 199. Նա՛խ՝ զի այնպիսի նշանք ո՛չ դնեն *հարկ* ի մարդն. այլ ցուցանեն զծկտումն բնութեանն ի յայնպիսի իրս: - 246. Եւ եթէ այս սուտ է *հա՛րկ* է ասել քեզ կամ մնալ ի թուփն, կամ փոխիլ յանէն և անգոյանալ որպէս ցուցաւ: - 253. Դարձեալ՝ մարդոյս միա՛յն է կարգ կանոնաց, բնութեան, կամաց, և *հարկի*. իսկ անասնոց միայն բնութեան է: - 275. Դարձեալ՝ մարդո՛յն է *հարկ* մեռանիլն: - 275. Դարձեալ՝ օրէնքն և հրամանն *հա՛րկ* է ի վերայ: - 277. Եւ կապ *հարկի* որպէս հնազանդեցելոց: - 317. Երկրորդ՝ օրէնքն է *հարկի*. և պատուէրն կամաց: - 340. Վեցերորդ՝ զի *հարկ* էր մատուցմունք նփրաց ժողովրդեանն. և կատարեալ էր մի օր պաշտամանն: - 484. Եւ տէրն ի մարդեղութեանն զկամաւո՛րն կրեաց յինքեան և ո՛չ զակամայն. զի ո՛չ էր ի ներքոյ *հարկի* և ծառայութեան բնութեան որպէս մեք. այլ տէր և ազատ յամենայն կրից: - 501. Իսկ տէր մեր ի մարդեղութեան իւրում՝ զակամայն ո՛չ կրեաց. զի *հա՛րկ* է և ծառայական: - 502.

Դարձեալ՝ յայտնապէս ասել ո՛չ է *հարկ*՝ է ամենայն բազում պատուական է քան զմին. զի ահա՛ գոյացութիւնն մի է և պատահումն բազում. և արեգակն մի է և աստեղք բազում. և գլուխն մի է և անդամք բազում: - 551. Յինգերորդ, զի թէ գո՛յր հնար կնոջ վասն *հարկին* առնել զգործ քահանայի, ընդէ՛ր ոչ կարաց նունի կոյսն մկրտել զոք ի վրաց յորժամ դարձոյց յաստուածգիտութիւն...: - 589. Իններորդ, զի մկրտութիւնն է գործ քահանայութեան. և քահանայութիւնն է ազատ և ո՛չ ընդ ումեք *հարկի* ներքոյ. իսկ կինն ծառայ և ոտք է առն. վասն այսր *հարկի* ո՛չ է պարտ ծառային առնել զգործ տեառն...: - 589. Իսկ արդ ի յարութեանն *հա՛րկ* է զի միանգամ տանջեալ հոգին՝ միւս ևս ընդ մարմնոյն տանջեսցի որ է՛ անհնար...: - 699. Եւ թէ ոք ասիցէ, բազում անդամք են կենդանականք, որպէս սիրտն լեարդն թոքն և այլքն որք ի յարութեանն ո՛չ են պէտք. զի ո՛չ է *հարկ* կենդանութիւն մարդկան: - 725. Իսկ զի նիւթ խաչին մնայ ըստ ոմանց՝ այս ո՛չ է ըստ բնութեան կարգի, այլ սքանչելեաց *հարկի* որպէս ցուցանի յառաջիկայդ: - 727. Միանգամայն և իղձք փրկական և հրաման *հարկի* ժամանեալ էհաս առ ներգևեալս ոգի և թաւազարթ թզենի: - 773. Թէ վասն զի՞նչ *հարկի* ամենայն անդրանիկ **Ե** օր աւելի կայ առ ծնողին: - 785

***ՅԱՐԿ ԱՌՆԵԼ +*** Զի ո՛չ այլ ինչ է բախտն, եթէ ոչ զօրութիւն աստեղաց. զոր առեալ յառաջին պատճառէն՝ *հա՛րկ առնեն* ի վերայ մեր: - 7-8. Եւ գիտելի է այս, եթէ նախասահմանութիւնն աստուծոյ *առնէր հարկ* գործոց մարդկան, չարի և բարւոյ, լինէր բազում անպատշաճութիւն որ վասն բախտին ասացեալ եղև. զորև աստ կարգեսցուք: - 20. Երրորդ՝ զի ջուրք ծովուն բա՛րձր է քան զերկիր. վասն որոյ *հա՛րկ առնէ* և ի վե՛ր մղէ և ապա՛ հեղու յերկիր. զորօրինակ մարդիկք ի բարձրագոյն լերանց իջուցանեն զջուրն, և ըստ նոյն չափոյ ի միւս կողմն ի վեր հանեն սակաւ ինչ պակաս: - 209. Եւ յետ գերութեանն իսրայէլի անցեալ ամք **ճլե**, ել արքայն բաբիլացւոց նաբուգոդոնոսոր ի վերայ երուսաղէմի. ի **Ժ** ամի թագաւորութեանն յովակիմայ. և *էառ հարկ* ի նմանէ. և զմեծ մասն սրբութեանց տաճարին աւերեաց: - 447. Եղիակիմ որ և յովակիմ ամս **Ժբ**. ի սորա **Ժ** ամին նաբուգոդոնոսոր զիրէաստան հնազանդեաց. և *հարկ առեալ* յեղիակիմայ գնաց: - 453

***Ի ՅԱՐԿԷ, ՅԱՐԿԻՒ +*** Որպէս ասեն հերձուածօղք՝ զամենայն ինչ մարդկան *ի հարկէ՛* գոլ. այսինքն զգործ. զդիպուած. զմահ. զկեանք. և զամենայ ինչ: - 7. Նոքա որք զբախտ և զճակատագիր և զհրամանն համբաւեն, ո՛չ ինչ ասեն ի կամաց մեր գործիլ. այլ զամենայն *ի հարկէ՛* ասեն. զի զեղխաբար զկենցաղս վճարեսցեն: - 7. Որպէս արեգակն զի ո՛չ այրէ որ է հեռաւոր պատճառ. այլ հուրն ի նմանէ առեալ զջերմութիւն ի մերձ գոլով այրէ՛. որպէս յա՛յտ է ի հայելւոջն, որ առեալ զնշոյլս յարեգականէն՝ այրէ՛. ա՛յսպէս և բանս մեր *ի հարկէ* նոցա լինի՝ զոր ստորասեմք կամ բացասեմք: - 8. Զոր օրինակ՝ յորժամ ասեմք՝ լինի անձրև կամ ո՛չ, *ի հարկէ* մինն ի նոցանէ լինի: - 8. Նա՛խ, զի ըստ սոցա ոչինչ է զանազանութիւն մշտնջենաւորացն և փոփոխականացն. որք են երկնայինք և երկրաւորք. զի նոքա միա՛յն են *ի հարկէ*, որք միշտ նոյնպէս ունին. որպէս հրեշտակք անմահք. և լուսաւորք երկնից. և ջերմութիւն հիոյ: - 8. Երկրորդ, այլ և ո՛չ է բնութեան բերք և արուեստից, եթէ ամենայն են *ի հարկէ*. զի զանազան բնութիւնք և արւեստք զանազանապէս ներգործեն: - 8. Երրորդ, զի թէ է՛ ամենայն *ի հարկէ*, ո՛չ լինի անձնիշխան կամաց գործք. որ հաւասար է յերկոսինն. այսինքն յառնել և յո՛չ առնել: - 8. Չորրորդ, զի ո՛չ լինի ի դիպուածոց ինչ. որպէս սղից ոմանց պատահին բարեբախտութիւն, կամ վատաբախտութիւն. ա՛րդ՝ թէ է՛ ամենայն *ի հարկէ*, ո՛չ լինին վերոյ ասացեալքս: - 8. Եւ որ անկա՛ր է ո՛չ գոլ, *ի հարկէ՛* գո՛յ, և է՛: - 8. Եւ նախ առ նոսա՝ որք ասեն զբանս մեր *ի հարկէ* գոլ կամ ո՛չ գոլ: - 8. Ըստ իմաստնոյն արիստոտէլի՝ ի հակասութեանց *ի հարկէ* մին կողմն ճշմարիտ է: - 8. Որպէս յորժամ ասեմք, վաղիւն լինի արև, կամ ո՛չ լինի. լինի անձրև, կամ ո՛չ լինի. *ի հարկէ* մինն ճշմարիտ է ի սոցանէ: - 8. Նախ՝ եթէ լինէր բանս մեր *ի հարկէ* ճըշմարիտ, նա ո՛չ մինն միայն, այլև ամենայն բան զինչ ասէաք՝ ճշմարիտ լինէր. որպէս շինել քաղաք, կամ ո՛չ շինել. տնկել այգի, կամ ո՛չ տնկել: - 8. Չորրորդ՝ զի թէ զոր ինչ ասեմք՝ *ի հարկէ* ճշմարիտ էր, յայնժամ աւելորդ էր խորհիլն մեր. զի խորհուրդն ո՛չ է ի հարկաւորացն. այլ ի ներընդունակացն. զի կարէ՛ լինիլ, և ո՛չ լինիլ. զի թէ առնեմք զայս՝ եղիցի՛ այն. և թէ ո՛չ առնեմք զայս՝ ո՛չ եղիցի այն: - 9. Ապա յա՛յտ է՝ թէ զոր ինչ խորհիմք՝ ի հանդերձեալն զնոյն առնեմք. և ո՛չ ի *հարկէ* բանն մեր որպէս ցուցաւ: - 9. Ասեմք թէ՝ այո՛ *ի հարկէ* մինն ճշմարիտ է. և մինն սուտ. այլ զանազանապէս ըստ իրին: - 9. Իսկ ի վաղիւն ո՛չ գիտեմք թէ անձրև է թէ ոչ. զի գիտեմք որ մինն լինի. այս՝ կամ այն՝ որ և հանդիպի. անձրև՝ կամ ո՛չ. այլ *ի հարկէ* բացորոշակի ո՛չ գիտեմք զմինն: - 9. Ապա և բանս մեր ո՛չ է *հարկիւ*. այլ հանդիպելով: - 9. Իսկ որք զբախտ և զճակատագիր վերագրեն մարդկան, և զամենայն ինչ մեր *ի հարկէ* ասեն, այսինքն ի զօրութէ աստեղացն - 10. Ամենայն ինչ որ լինի՝ ունի պատճառ. և ամենայն պատճառ *ի հարկէ* է՛ նախքան զպատճառելին. ապա թէ հարկաւոր պատճառս այս ո՛չ է բանն մեր որպէս ցուցաւ, է՛ ուրեմն զօրութիւնն աստեղաց ի շարժմանէ նոցա ազդեցեալ: - 10. Դարձեալ ասեն, թէ ամենայն

ստորնային մարմինք՝ կառավարին վերնային մարմնովք. որպէս յա՛յտ է ի չորս եղանակս տարւոյն. այլև ծնունդ և աճումն՝ և բոյսք և պտուղք՝ ի շարժմանէ նոցա պատճառին. և շարժումն նոցա է՛ հարկաւոր. ապա ուրեմն ամենայն ինչ լինի *ի հարկէ*: - 10. Դարձեալ ասեն, թէ բազում ինչ հանդիպի արտաքոյ կամաց մերոց. որպէս չար հիւանդութիւն. վատաբախտութիւն. մահ. և այլն, ապա ուրեմն նոքա *ի հարկէ* բախտի և ճակատագրի: - 11. Նախ՝ եթէ չար հիւանդութիւնն և այլն *ի հարկէ՛* է, ապա ամենեցուն նոյնպէս պարտ էր գոլ. զի հարկն նոյն է առ ամենեսեան: - 11. Այլ արդ՝ բազմաց նոյնպէս մահ, հիւանդութիւն, և այլն. ապա ուրեմն ո՛չ է *ի հարկէ* : - 11. Դարձեալ, թէ ամենայն ինչ *ի հարկէ՛* է մարդոյ և անասնոյ, ապա ոչինչ զանազանի բանականն և անբանն. - 11. Դարձեալ՝ թէ ի *հարկէ* է՝ ապա բարձեա՛լ են ամենայն սկզբունք բարոյական առաքինութեանց. այսինքն խոհեմութեան. արիութեան. ողջախոհութեան. և արդարութեան. զի սոքա ըստացեալ լինին առ ոմանս՝ և ո՛չ *ի հարկէ*: - 11. Դարձեալ թե *ի հարկէ՛* է ոչ լինին օգուտ խրատք և սպառնալիք և ուսմունք. որովք բազումք յորդորին ի բարիս, և հեռանան ի չարեաց կենցաղոյս: - 11. Դարձեալ թէ *ի հարկէ՛* է՝ ո՛չ հետևի գով և պարսաւ ոմանց. զի սոքա կամաւորա՛ցն են և ո՛չ ակամայիցն: - 11. Քսաներորդ՝ զի *ի հարկէ* բարի է աստուած. որպէս *ի հարկէ* էա՛կ է. այլ արդ՝ հարկաւոր բարին է միշտ բարի և գոյացական բարի և զուտ բարի: - 15. Եւ զի *ի հարկէ* ունի զգօլն բարի՝ անկար է ո՛չ գոլ բարի: - 15. Դարձեալ ասեմք թէ՝ աստուած ո՛չ է պատճառ. ստեղծուածոցս *ի հարկէ*. այլ ըստ կամաց որով առնէ. զի ոմանք դիպին *ի հարկէ*, և ոմանք ո՛չ *ի հարկէ*: - 15. Ա՛րդ՝ հարկ է ամենեցունց գոլ այնպէս որպէս աստուած ետես և գիտաց. և գիտութիւնն աստուծոյ անպատիր է. ապա ուրեմն ամենայնն լինի *ի հարկէ* տեսութեանն աստուծոյ: - 15. Եւ աւետարանն ասէ՝ «որդի մարդոյ երթայ որպէս և գրեալ է վասն նորա». ապա ուրեմն ամենայն որ *ի հարկէ* գրոյն այնորիկ լինի. եթէ չար և եթե բարի: - 18. Թէ դադարեցաւ, ամենայնն *հարկիւ* է և սկիզբն ունի: - 37. Իսկ «աստուած աստուած իմ ընդէ՞ր թողեր զիս», ո՛չ թէ յինքենէ՛ թողաւ և կամ ի հօրէ. որպէս թէ երկեաւ ի չարչարանացն. վասն զի կամաւ եկն և ո՛չ *հարկիւ*: - 42. Եւ զի ստուգեցաք թէ ի *հարկէ* պիտոյ է էութեան՝ զի լիցի կամ արարիչ կամ արարած: - 52. Այլ *ի հարկէ* **բ** գոլ խոստովանին. զոմն բնութեամբ՝ և զոմն շնորհիւ: - 66. Ա՛րդ՝ որպէս կարծեն ինքեանք զէն մեծ ունիլ առ երկոսին կողմանս, կամ *հարկիւ* անկանիլ ի նեստորին բնութիւն և բնութիւն, և կամ ըստ եւտիքեայ շփոթել զբնութիւնսն: - 75. Զի մի յատկացին **բ** անձինք ի քրիստոս. զի թէ **բ** բնութիւն բաժանեմք *ի հարկէ* երկու անձն բաժանի: - 84. Երրորդ՝ զի կայ ի մարդս որ *ի հարկէ՛* առնէ. - 156. Զի յատուկ է առաջին պատճառին որ է՛ աստուած՝ ի *հարկէ* էակ գոլ՝ և միշտ ներգործութեամբ, և իսկապէս ներգործութեամբ. որովք տարորոշի յայսցանէ՝ որ կարելի՛ են էակ գոլ. և երբեմն ներգործութեամբ և հանդերձ զօրութեամբ: - 162. Զի *ի հարկէ՛* էակ է, որ զգօլն միայն ունի. իսկ զչգոլն ո՛չ ունի. ապա ուրեմն անփոփո՛խ է էութեամբ: - 162. Երկրորդ՝ զի բազումք գայթակղութեամբ կորնչին. արդ *ի հարկէ* որպէս ասացաւ՝ կամ միոյ կամ բազմաց լինի կորուստ: - 167. Երրորդ՝ զի *ի հարկէ՛* էակ է աստուած. և հարկն զմինն ունի ի հակադրութեանց. այսինքն կամ զգօլն կամ զչգօլն: - 168. Այլ արդ՝ եթէ գոյ զօրութեամբ ինչ ի նա՛ ո՛չ է *ի հարկէ* էակ. այլ կարելի՛ էակ: - 168. Եւ վասն զի բնութիւնն հարկաւոր է և նո՛յն առ ամենայնսն յաղագս որոյ ամենայնքն *ի հարկէ* զնո՛յն գործեն: - 173. Եւ այս ինչ է հարցումնդ զի թէ ասեմք կամաւ ներգործէ, ասեն՝ ապա փոփոխական ներգործէ որպէս մարդ. իսկ թէ ասեմք բնութեամբ, ասեն ցմեզ եթէ անբանապէս և *ի հարկէ* ներգործէ: - 173. Վարդապետք ասեն թէ ամենայն երկինք *ի հարկէ* պարտին ունել զբոլորակ ձև: - 182. Նոյնպէս և ամենայն պատկեր *ի հարկէ՛* ասի նմանութիւն. այլ ո՛չ ամենայն նմանութիւն է պատկեր: - 272. Եւ այս ևս ո՛չ է ընդունելի. զի սոցա պատասխանի տայ սուրբն կիւրեղ ի գիրս պարապմանց թէ՝ որ ասաց զպատկերն, իմանամք զնմանութիւնն ի պատկերին որպէս ցուցաւ ի վերոյ. զի ամենայն պատկեր *ի հարկէ* նմա՛ն է: - 273. Եւ զի անեղ է. *ի հարկէ* մշտնջենաւոր և անվախճան է: - 274. Եւ *ի հարկէ* նոյնպէս: - 383. Երկրորդ՝ զի հրեշտակք *ի հարկէ* բնութեան ունին զկուսութիւնն. իսկ աստուածածինն զայն պահեաց մաքրութեամբ մարմնով զկուսութիւն ողջախոհութեան: - 463. Ութերորդ՝ զի թէ հաւատան աւետարանին և ոչ ստեն լ ամաց գալ քրիստոսի ի մկրտութիւն, *ի հարկէ՛* պա՛րտին կատարել և զմկրտութիւնն ի նոյն ի տօնի ծննդեանն իւրեանց ի դեկտեմբերի իե որ իցեն ամենևիմբ սուտ: - 484. Եւ զապականութիւնն ո՛չ կրեաց. ո՛չ կամաւ և ո՛չ *ի հարկէ*: - 500. Դարձեալ՝ եթէ *հարկիւ* պահանջես ըստ մտաց քոց **գ** դժոխք: - 505. Եօթներորդ՝ զի սաստիկ է. զի ամենայն որ *ի հարկէ* զաչս խփէ որ հանապազ տեսանեմք զլոյս: - 522. Նա՛խ՝ զի մարմնաւորին հնազանդիմք յոչ կամաց. բռնութեամբ և *ի հարկէ*: - 538. Նա՛խ՝ զի սկզբնականն *հարկիւ* և ակամայ տիրէ. իսկ սոքա ըստ կամաց: - 568. Դարձեալ՝ հաւատովն հաւատամք՝ որ միայն իւր բարութեամբն զմեզ ստեղծեաց և վերստին փրկեաց և ո՛չ *ի հարկէ*: - 571. Եւ այսպիսիքս կոչին ծառայականք. զի *ի հարկէ* խառնուածոյ մարմնոյն լինին ողջախոհ կամ արի և այլն: - 581. Եւ գիտեն զպատճառն թէ վասն է՞ր է ողջախոհ. այսինքն զի յանառակ

կենաց ժլատութիւնք լինին. և նա *ի հարկէ* արի գոյ զախտն ստորադասելով. այնպիսին և խոհեմ գոյ գիտելով թէ վասն մարմնական հեշտախտութեանց լինի անիրաւութիւն: - 582. Եւ երկրորդ անպատշաճութիւն, զի յասելն թէ՝ «ես կու մկրտեմ». երևի թէ նուիրեալն ո՛չ իւր կամաւն է եկեալ ի մկրտութիւն, այլ բռնութեամբ և *ի հարկէ՛* կու մկրտեմ: - 588. միայն արտասուօք խնդրեմք յաստուծոյ զողորմութիւն. *ի հարկէ* գթայ և տայ: - 620. Այլ և պա՛րտի ապաշխարութիւնն կամաւ գոլ. իսկ ի քաւարանն *հարկիւ* տանջի: - 699. Ա՛րդ՝ եթէ ի կատարածի *ի հարկէ* սքանչելեացն հաւատալ վարձատրելի՞ է թէ ոչ: - 783. Եթէ վարձատրելի է ասիցէ ոք, ապա զիա՞րդ որք *ի հարկէ* հաւատացին ո՛չ վարձատրեցան. որպէս դևքն ի հալածիլ. և որդիքն սկեւեայ. և սիմոն կախարդն. և այլք նման սոցին: - 783. Արդ որպէս յամենայն ժամանակս սոքօք գան ի հաւատս ուղղութեան և է՛ վարձատրելի. այսպէս և ի վերջին ժամանակս որք յետ նեռինն՝ ո՛չ միայն *ի հարկէ* սքանչելեաց, այլ և ի լրոյ քարոզչաց երկուցն վկայից իջելոց սրբոց: - 785

**ՀԱՐԿԱՆԵՄ +** Այլ և մովսէս հրամայեաց յամենայն ամսամուտս տօնել և փող *հարկանել*...: - 200. Երկրորդ՝ զուղղութեան գործոց բուռն *էհար*. և յուսացաւ թէ գո՛յ հատուցումն գործոց, և բարեաց փոխարէն: - 289. Եւ դարձեալ՝ այլազգին զհոգին իւր սպանեալ է մեղօք. և մեռելոյ զենեալն ո՛չ ուտի. որպէս ի քարէ անկեալն կամ ի կարկատէ՛ *հարեալն* ո՛չ ուտի: - 296. Եւ տէր ինքն բարձրացաւ ի խաչ և *զհարեալսն* ի թունիցն դիւաց բժշկէր: - 329. Եւ դարձեալ բանն աստուած բուռն *էհար* զզաւակէն աբրահամու և եղև անօթ թագաւորական: - 332. Վասն է՞ր ժ հարուածովք *էհար*: - 335. Եւ ի մէջ գիշերին յորում ըմբռնեցաւ, *էհար* զանդրանիկս դիւաց: - 337. Զի՞նչ էր որ *եհար* զանդրանիկս եգիպտացւոց. և էառ զանդրանիկս իէլի. և զայն ևս փոխեաց և էառ զղևտացիս: - 380. Չորրորդ, կրկին *հարկանելն*, զի ոմանց տայ և ոմանց արգելու. այսինքն սրբոց և անսրբոց: - 386. Վասն է՞ր բարկութեամբ *եհար*: - 386. Վասն է՞ր օձիւ *հարկանէր* ժողովուրդն: - 386. Եօթներորդ՝ օձն մեռեալ սպանանէր զօձսն. և *զհարեալսն* կեցուցանէր. և տէրն մեր մեռեալ մարմնովն զմեղս մեռուցանէր, և կենդանի աստուածութեամբն զմարդիկ կենագործէր: - 387. Երրորդ, զի ողորմեցաւ աստուած անբանին զի մի՛ *հարկանիցէ* անողորմ...: - 388. Երրորդ՝ զօրաւոր հարուածքն եգիպտոսի, որ ո՛չ ոք կարէր հասանիլ և բռնել զպատիժն. որպէս ոք *հարկանէ* և դարձեալ բարձրացուցանէ զձեռն: - 395. Եւ հայրազեղծն որ *հարկանէր* զծնօղ, զանիծից փայտէ կախէին, և ի նոյն օր ի գերեզման իջուցանէին զի մի՛ պղծեսցին: - 400. Չորրորդ յա՛յտ է, զի թէպէտ սրտմտի՝ ո՛չ յինքենէ. այլ մե՛ք *հարկանե՛մք* զնա ի գործն, անդարձ լինելով մեր: - 408. Երրորդ՝ վախճանեալ մովսէս ի լերինն, և միքայէլ փոխադրէր զմարմինն. սկսաւ սատանայ հայհոյել զսուրբն և սպանօղ անւանել վասն *հարկանելոյն* զեգիպտացին. վասն որոյ սաստեաց նմա հրեշտակապետն: - 410. Եւ յետ մահուանն մարիամու նուազեաց ջուրն. յորում *եհար* բարկութեամբ զվէմն: - 415. Քսանբ, *եհար* քարեայ կարկտիւ ի պատերազմի: - 419. Որ ի ջուր ըմպելն ընտրեաց զզօրսն. և թաքուցեալ սափորօք զվառեալ լապտերսն, և *էհար* յ արամբք ըզճհ հազարսն: - 420. Եւ ծնօտիւ իշոյն *եհար* զհազարն: - 420. Հնգետասաներորդ՝ նա՛ զայլազգիսն *հարեալ*՝ զգեցոյց զնոսա: - 422. Նա՛խ՝ զի մի՛ համարեսցեն այլազգիք թէ դիքն իւրեանց առաջի ընթացան և գլուխ եղեն զօրացն և *հարին* զպատերազմն: - 425. Նա՛խ՝ եթէ ճշմարիտ յարեաւ սամուէլ, ընդէ՞ր ոչ *եհար* զվհուկն և սատակեաց. և ընդէ՞ր ոչ յանդիմանեաց զսաւուղ եկեալ առ վհուկն: - 429. Երեքտասաներորդ, *եհար* զգողիաթ զնախատիչն իլի. և տէրն զսատանայ նախատիչ մարդկան ազգի: - 436. Եօթնժ, անդ միով քարամբ *էհար*. և աստ մի բանիւ բերանոյ ի պարսէ՛ լեզուին: - 436. Քսանևմի, *հարին* մինչև ի դրունս գեթայ. և հաւատացեալք մինչ ի դրունս դժոխոց. և եղեն ի տեսիլ ամենայն մսեղեաց: - 436. Քսանըլ, ծգեաց սաւուղ զգեղարդն դաւթի, *եհար* զորմն և ապրեցաւ դաւիթ. և որդիքն սաւուղայ *հարկանել* ետուն զկողս տեառն և ո՛չ վնասեցին աստուածութեան նորա: - 436. Քսանևթ, *հարեալ* որմն վկայեաց թէ սպանօ՛ղ է դաւթի սաւուղ. և չարչարեալ և մեռեալ մարմինն վկայէ՛ թէ աստուածասպա՛նք են հրէայքն: - 436. Դաւիթ *եհար* զամաղէկ որ գերեաց զհրէայս և զայլազգիս. և տէր մեր *եհար* զգերիչն հրէից և հեթանոսաց: - 437. Եւ դարձեալ ի տիպ քրիստոսի որ ի գիշերի *եհար* զսատանայ և ազատեաց զհոգիսն ի դժոխոցն: - 446. Վեցերորդ՝ ի մէջ գիշերի հրեշտակն *եհար* զեգիպտոս. և մովսէս եհան զորդիսն իսրայէլի. որ էր օրինակ աւերման դժոխոցն և ազատութեան հոգւոց: - 512. Նոյնպէս և քրիստոս ի մէջ գիշերի *եհար* զսատանայ և կապեաց: - 512. Նոյնպէս ըստ օրինակին արար տէր մեր զատիկն յերեկոյի մեծի ե շաբաթին. և ի մէջ գիշերին յորում ըմբռնեցաւ՝ *եհար* զանդրանիկսն դիւաց: - 513. Այսպէս և որդիքն սաւուղայ *հարեալ* նախանձու բևեռեցին զտէրն և խոցեցին նիզակաւ. և պահէին զգերեզմանն: - 513. Երեքտասաներորդ՝ ամաղեկացիք գերեցին զկողմն հրէաստանի և զայլազգիս. և դաւիթ զհետ մտեալ յետ գ աւուր և *հարեալ* ի գիշերի և ի վաղիւն մինչ յերեկոյ. և դարձուցեալ զերկոսին կանայս իւր. և ո՛չ մնաց գերի և ո՛չ մի. և յաւարէ աստի բաշխեաց ամենայն սիրելեաց իւրոց: - 514. և զաւարն ժողովեցին ի տիպ խորհրդոյն քրիստոսի. որ ի գիշերի *եհար* զզօրութիւնն

սատանայի և յառաւօտուն ցուցեալ զինքն աշակերտաց իւրոց և զյարուցեալսն ընդ իւր: - 514. Տասներորդ, զի ցուցցէ թէ թշնամեաց նորա ո՛չ է իշխանութիւն բուռն *հարկանել* զնմանէ. իսկ բարեկամաց նորա գոյ իշխանութիւն այլով իւիք մերձենալ ի նա. այսինքն սիրով և երկիւղիւ յայնմիկ զոր ուտեն զնա: - 518. Երրորդ՝ ամբարձեալ ձեռօք վերանայր յերկինս վասն երկուց. նախ՝ զի զինքն ընծայեսցէ հօրն. երկրորդ՝ զի զթշնամիսն *հարկանիցէ* զօրաւոր ձեռամբ բարձրացեալ: - 520. Այլ և զձեռս ի *հարկանել*. յըմբռնել. և զոտս ի գնալ. համեստութիւնն ի նոսա ամենայնսն դնէ զեղանակն և զկարգն: - 581. և զբարձս ոտիցն և զգլուխն և զերեսս և զկուրծքն *հարեալ*...: - 670. Առասպել մի՛ համարիր զայն որ ասեն թէ ի վիրապն *հարկանի*: - 713. Դարձեալ՝ որ հրոյ է վերակացու, ի վերայ նորին *հարկանէ*. և որ օդոյ և ջրոյ և երկրի, ի վերայ իւրաքանչիւր տարերաց գոչէ՛: -714. ի նոյն ժամն ի մէջ գիշերի *հարկանի* փողն. - 714. Յետ որոյ փող *հարկանի* և մեռեալք յառնեն: - 732. Ի մէջ գիշերի. յորում ժամու հրեշտակն զեգիպտոս *եհար*, և տէրն զժոխս աւերեաց. յայն ժամու զընտրեալս իւր յաշխարհէ ազատեսցէ: - 734. Վասն հինգերորդին, որք աստէն զխրատս ընդունել ո՛չ կամեցան և ընդ մարդկան տանջիլ ո՛չ արժանացան. վասն յանորիկ արդարապէս անդ՝ անդադար *հարկանին* ուռամբ: - 752. Շող յաստուծոյ ծագեալ հաւատ. զերկնից կախեալ լար իմն լուսեղէն. զորմէ բուռն *հարեալ* ձեռն զձեռամբ փոփոխեալ. ի ծովու սքանչելեաց յերկինս և յօդս վերանալ: - 769

**ՀԱՐԿԱՆՈՂ** + Հինգերորդ՝ ծեծ *հարկանողացն*. որպէս ուռունք զերկաթս ծեծողաց: - 752

**ՀԱՐԿԱՆՈՒՄՆ** + Իսկ զանազանի մահացուն և ներելին ըստ առաւելութեան և նուազութեան. որպէս առաւել է *հարկանումն* օձի քան զլուոյ. և նետի քան զփշի. այսպէս և մահացուն է առաւել քան զներելին: - 568. Երրորդ՝ *հարկանումն*: - 751

**ՀԱՐԿԱՏՈՒ** + Զի որպէս աստ եղև ծառայ մեղաց, լիցի և անդ *հարկատու* պատժոց: - 751

**ՀԱՐԿԱՒՈՐ +** Չորրորդ՝ զի թէ զոր ինչ ասեմք՝ ի հարկէ ճշմարիտ էր, յայնժամ աւելորդ էր խորհիլն մեր. զի խորհուրդն ո՛չ է ի *հարկաւորացն*. այլ ի ներընդունակացն. զի կարէ՛ լինիլ, և ո՛չ լինիլ. զի թէ առնեմք զայս՝ եղիցի՛ այն. և թէ ո՛չ առնեմք զայս՝ ո՛չ եղիցի այն: - 9. Կամ է ի *հարկաւոր* պատճառէ. զի անխափան լինիցի. որպէս մարդ մեռանելո՛ց է: - 9. Եւ որովհետև ծանեաք զայս, արդ պատասխանեմք առարկութեանցն, եթէ որքան է՛ ի *հարկաւոր* պատճառ է՛, լինի բացորոշապէս բանն ճշմարիտ. որպէս բան թագաւորի. և մարդոյն մեռանիլն. և արև ծագելն. և լինիլն գարուն յետ ձմռան: - 10. Ամենայն ինչ որ լինի՝ ունի պատճառ. և ամենայն պատճառ ի հարկէ է՛ նախքան զպատճառելին. ապա թէ *հարկաւոր* պատճառս այս ո՛չ է բանն մեր որպէս ցուցաւ, է՛ ուրեմն զորութիւնն աստեղաց ի շարժմանէ նոցա ազդեցեալ: - 10. Ասեմք առ այս, եթէ՝ ամենայն ինչ որ լինի՝ ունի պատճառ. և նախ է պատճառն քան զպատճառելին. այլ ամենայն պատճառ ո՛չ է *հարկաւոր*. այլ գո՛յ և ներընդունակ պատճառ. ապա ուրեմն ո՛չ է *հարկաւոր* պատճառ շարժումն աստեղաց: - 10. Դարձեալ ասեն, թէ ամենայն ստորնային մարմինք՝ կառավարին վերնային մարմնովք. որպէս յա՛յտ է ի չորս եղանակս տարւոյն. այլև ծնունդ և աճումն՝ և բոյսք և պտուղք՝ ի շարժմանէ նոցա պատճառին. և շարժումն նոցա է՛ *հարկաւոր*. ապա ուրեմն ամենայն ինչ լինի ի հարկէ: - 10. Դարձեալ ասեն թէ՝ բազումք ի մարդկանէ գործեն ի խառնուածոյ մարմնոյն, որք *հարկաւորին* ի շարժմանէ աստեղացն: - 10. Դարձեալ՝ ունիմք խորհուրդ, և ընտրեմք զառնելիսն, և խոտեմք զոչ առնելիսն. և բազում անգամ խորհելովն հանդիպիմք բարւոյ, և փախչիմք ի չարէ. և խորհուրդն ի հնարաւորա՛ցն է որպէս ասացաւ և ո՛չ ի *հարկաւորացն*: - 11. Իսկ թէ ըստ ինքեան է չարն յաստուծոյ, նա ո՛չ լինէր բարին յաստուծոյ. զի ըստ ինքեան՝ *հարկաւոր* է և գոյացական և անփոփոխ: - 15. Քսաներորդ՝ զի ի հարկէ բարի է աստուած. որպէս ի հարկէ էա՛կ է. այլ արդ՝ *հարկաւոր* բարին է միշտ բարի և գոյացական բարի և զուտ բարի: - 15. Այլ արդ աստուած է պատճառ ամենեցուն և *հարկաւոր*. ապա ուրեմն ներգործութիւն նորին է *հարկաւոր*: - 15. Այլ արդ հուպ պատճառն է՝ *հարկաւոր*, և ներգործութիւն իւր. իսկ հեռին ո՛չ է *հարկաւոր* որպէս ասացաւ ի վերոյ: - 15. Այլ արդ՝ աստուած է ամենեցուն ո՛չ հուպ պատճառ, այլ հեռի. վասն որոյ ո՛չ *հարկաւոր* ներգործէ: - 15. Զի երկուս այս *հարկաւոր* է, բժշկելոցն հաւատ, և բժշկին զօրութիւն: - 44. Երկրորդ՝ գործ բնութեան է՛ *հարկաւոր*. իսկ գործ կամացն պատշաճաւոր: - 156. Վասն որոյ արար զաշխարհս գործ մշտնջենաւոր. և մշտնջենաւոր *հարկաւո՛ր* է. և *հարկաւորն* ի գոլն կարէ, և ի չգոլն անկա՛ր: - 162. Զօրութիւն որ ներգործութեամբ է՝ *հարկաւո՛ր* է. իսկ առանց ներգործութեան զօրութիւն՝ կարելին է որ է ներընդունականն: - 167. Դարձեալ այն զօրութիւնն և ներգործութիւնն և *հարկաւորն* մի է. և հետևին առ միմեանս. զի ամենայն որ *հարկաւոր* է՝ ներգործութեամբ է. և ամենայն ներգործութիւն զօրութեամբ ներգործէ. իսկ միւս զօրութիւնն և կարելին և ներընդունականն որ է մարթելի՝ մի է և հետևին առ իրեարս. զի ամենայն որ զօրութեամբն է՝ կարելի է և մարթելի: - 168. Ապա յա՛յտ է զանազանութիւն սոցա, զի ոմն

զօրութիւն *հարկաւոր* է և ներգործութեամբ և անփոփոխ և միշտ. որպէս հրոյ ջեռուցանել, և արեգական լուսաւորել: - 168. Եւ վասն զի բնութիւնն *հարկաւոր* է և նո՛յն առ ամենայնսն յաղագս որոյ ամենայնքն ի հարկէ զնո՛յն գործեն: - 173. *Յարկաւո՛ր* է անուն ամենայն իրի: - 219. Ի սոցանէ **դ** *հարկաւո՛րք* են. և **դ** պիտանիք և **բ** վայելչականք: - 281. Իսկ վերջին խորհուրդ է, յորժամ վասն *հարկաւոր* պիտոյից կերակրոյ և հանդերձի՝ յերկրաւորս հպիմք: - 331. Նա՛խ՝ ցուցանէ զչափաւոր *հարկաւորքն* մեր: - 444. Գիտել պա՛րտ է, զի առ հասարակ մահն, *հարկաւոր* կիրք է մարդկայինս բնութեան. զի ամենայն որ ծնանի՝ մեռանի: - 495. Դարձեալ՝ մահն ի յադամ պատժաւո՛ր է. և ի քրիստոս կամաւոր. և ի մեզ *հարկաւոր*: - 495. Ասեմք թէ՝ ո՛չ *զհարկաւորն*, այլ զկամաւոր մահն կրեաց որպէս ցուցաւ ի վերոյ: - 497. Եւ զի ա՛յլ է կամաւոր մահն ի *հարկաւորէն*. ուստի յա՛յտ է զի *հարկաւոր* մահն է՛ պատիժ. և կամաւորն պսակ և պարգև: - 497. Եւ ականայքն *հարկաւորք* են և ծառայականք. և առ աստուած ակամայ կիրք ո՛չ տեսանի: - 501. Գլխոյն *հարկաւո՛ր* է կրկին իր: - 532. Այսպէս ասեմք, զի որ ըստ ինքեան է ճշմարիտ և ըստ ինքեան բարի՝ առաւել է. և որ ըստ պատահման է ճշմարիտ կամ բարի՝ նուա՛զ է. վասն զի ըստ ինքեանն գոյացութեամբ և *հարկաւո՛ր* է. այսինքն անփոփոխ և միշտ: - 550. Ասեմք առ այս թէ՝ ո՛չ է *հարկաւոր* այս ամենայն ուրէք. զի գո՛յ և տարածայնութիւն բարի՝ քան զհամաձայնութիւն ընդ հերձուածօղս. և լաւ է բաժանումն ի չար ժողովոց՝ քան զմիաբանութիւն: - 551. զի զկերակուրն ի *հարկաւոր* ժամանակին պարտ է ուտել. այսինքն որ քաղցեալ լինի. այլ ո՛չ յամենայն ժամ որ յագեալ լինի: - 570. Իսկ թէ *հարկաւոր* ժամանակ հանդիպի զպատւական մասունքն միայն. և կամ զերեսս միայն բաւական է լուանալ: - 588. Դարձեալ գիտելի է, զի աստ ասեն հերձուածօղ ազգն Ֆռանկաց թէ՝ թէպէտ մկրտութիւնն գործ քահանայի է, բայց ի *հարկաւոր* ժամանակն թէ քահանայ ո՛չ լինի ամենայն ոք որ գիտէ զձև մկրտութեան՝ կարէ մկրտել: - 588. Վեցերորդ, զի թէ կինն կարէ մկրտել ի *հարկաւոր* ժամանակի, սուրբն գրիգոր լուսաւորիչն քանի ևս առաւել պատւական էր քան զմի կին. - 589. Ասեմք թէ, ի հնարից չարին բարձին մարդիկք զխոստովանութիւնն որ *հարկաւոր* էր, յայն ապաւինեալ թէ՝ ի վերջին օրն օծանիմք ծիթով բալասամինաւ և արդարանամք: - 604. քան թէ բառնալ զխոստովանութիւնն որ *հարկաւոր* է. առանց որոյ ո՛չ գոյ ներգործական մեղացն թողութիւն գտանել: - 604. Նա՛խ՝ հասարակ աղօթքն է *հարկաւոր*. իսկ առանձնականն կամաւոր: - 623. Այլ թէպէտ առանձնականն կամաւո՛ր է, սակայն ի վերայ վանականաց որք են աբեղայք և կրօնաւորք, *հարկաւո՛ր* է վասն դ պատճառի: - 623. Նա՛խ՝ յանպատրաստութենէ կամ ի պակասութենէ *հարկաւոր* պիտոյից. կամ յարտաքին ստահակութենէ օդոց: - 665. այլ դատապարտի՛լ *հարկաւոր* է. որպէս դիւաց մեղանչումն և անկումն. որ է մահն և դատապարտումն որ է՛ պատիժն: - 667. Եւ յայսցանէ երևի չորս ինչ *հարկաւոր* զղջման. այսինքն է որպիսութիւնն, ժամանակն, յորմէ, վասն որոյ: - 780

**ՅԱՐԿԱՒՈՐԵՄ +** Վասն որոյ *հարկաւորիմ* ցուցանել նոյն քան զլխով եթէ աստուած է քրիստոս և ըստ մարմնոյն միութեան մարմնացեալ և մարդացեալ աստուած: - 72

**ՅԱՐԿԵՄ +** Եւ զի *հարկեցաւ* բռնութեամբ՝ ոչ է աստուած: - 36. Ո՛չ ըստ բաւական բանի առեալ զլուծումն. այլ ըստ կարի տկարութեան արտայայտումն. մանաւանդ *հարկեալ* ի սիրոյ քումդ եղբայրական խնդրոյ: - 788

**ՅԱՐՃ +** Ասեն թէ՝ **ռ** կին էր սողոմոնի. **է ճ** տիկնայք, և **գ ճ** *հարճք*. և նոցա **ռ** պահապան. իսկ ի փորձելն խաբեաց զհազար կանայսն. և ի յարանցն մին ո՛չ խաբեցաւ. այս առասպե՛լ է: - 440. Իսկ այն որ ասէ **կ** էին թաքուհիք և ութսուն *հարճք*. և անթիւ հարսնածուք: - 440. Եւ **ձ** *հարճք*, որք զութ օրէնսն կատարեն: - 440. Եւ սոքա են *հարճք* որ կարեն ի բաց հանիլ ի ժառանգութենէ. զի սէրն է կապ և լար շարոցին որ ո՛չ թողու ցրւիլ: - 440. Զի ահա՛ նահապետքն բազում կանայս առին և *հարճ* ևս: - 613

**ՅԱՐՃՈՐԴԻ +** Եւ յետ յեսուայ դատաւորք դատեցին առաջնորդութեամբ զիէլ **նժ** ըստ եօթանասնիցն թուով երեքտասան դատաւորք մինչև ի հեղի քահանայ... Վեցերորդն Աբիմելէք *հարճորդին* գեդէօնի ամս **գ**: - 420

**ՅԱՐՈՒԱԾ +** Քսանևզ, Վասն **ժ** *հարուածոցն*. և թէ վասն է՞ր այն քան տանջեցան: - 283. Եւ որպէս փարաւօն վասն հեղցուցեալ մանկանցն՝ ջրասոյզ կորեաւ. և յառաջ քան զայս՝ **ժ** *հարուածովք* պատժեցան: - 288. Եւ տէրն մեր յերկրորդ գալստեանն տայ ծանօթս *հարուածովք* տիգին և բևեռացն: - 314. Եւ այսպէս **է** էին *հարուածքն*. այսինքն **ա**՝ եզինքն. **բ**՝ էշքն. **գ**՝ ուղտքն. **դ**՝ անասնոց մահն. **ե**՝ սպասաւորաց նոցին. **զ**՝ զաւակաց մահն. **է**՝ մարմնոյն *հարուածքն*: - 322. Եւ ոմանք **ե** ասեն. **ա**, արտաքին ինչքն. **բ**, զաւակաց մահն. **գ**, մարմնոյն *հարւածքն*. **դ**, կնոջն կագն. **ե**, բարեկամաց հակառակիլն: - 322. Վասն որոյ նստաւ յաղբիւսն փողոցին անհնարին *հարւածովք*: - 323. Եւ որք **լբ** ասեն զփորձանսն՝ սոյնպէս թուեն. յետ *հարւածոցն* եկաց յոբ **բ** եօթնասուն. այսինքն **ճխ** ամ: - 327. Յայտ է զի յառաջ քան *զհարւածն* **h** ամաց էր. և **լբ** ամ եկաց ի

հիւանդութեանն. և այսպէս կրկին աճեցին կեանքն որպէս և ամենայն ինչքն: - 327. Վեցերորդ՝ *հարւածս* կրեալ յոր ի բոլոր մարմինն. և տէր մեր ի ձեռս և յոտս և ի կողս. որ և փշով պսակեալ ապտակեալ և գան հարեալ: - 327. Երրորդ, մովսէս **Ժ** *հարուածովք* տանջէր զեգիպտացիսն: - 328. Երկրորդ *հարուածն* է՛ գորտն զոր բղխեաց գետն: - 334. Երրորդ՝ *հարուածն* է մունն որ է՛ մանր տիզ. կամ մոծակ. կամ մժեխ. ի ցուցանել զի մանրակրծո՛ւ էին բարուք և խոցոտիչք բանիւք: - 334. Վեցերորդ *հարուածն* է՛ կեղն և խաղաւարտն. զի քերքեշէ՛ր զմորթն, և ի վեր եռացեալ լինէր խաղաւարտն. և մորմոքէր զմարմինս նոցա: - 334. Տասներորդ *հարուածն* է մահ անդրանկացն: - 334. Վասն է՞ր **Ժ** *հարուածովք* էհար: - 335. Վասն որոյ **Ժ** *հարուածովք* տանջեցան: - 335. Այսպէս հինգ եղանակաւ չարաչար ատեցին զհիւրսն. վասն այն կրկին կրեցին զհատուցումն վրիժուց **Ժ** *հարուածովք*: - 335. Երրորդ՝ կեղն և խաղաւարտն եղև և ի կախարդսն և զայլ *հարւածսն* կրեցին. և ո՛չ կարէին ի մովսէս և յահարոն դարձուցանել զնոյնս: - 335. Տասն *հարւածք* էր եգիպտոսի, վասն է՞ր միայն զանդրանկաց փոխարէնն խնդրէ: - 380. Նա՛խ՝ զի զա՛յլ *հարուածոց* փոխն կրեցին զչարչարանքն յեգիպտոս. իսկ անդրանկացն մնաց: - 380. Եւ դարձեալ վասն օձին տե՛ս ի *հարուածն* եգիպտոսի ի **ի** գլուխ համարոյն: - 387. Երրորդ՝ զօրաւոր *հարւածքն* եգիպտոսի, որ ո՛չ ոք կարէր հասանիլ և բռնել զպատիժն. որպէս ոք հարկանէ և դարձեալ բարձրացուցանէ զձեռն: - 395. Եւ յորժամ մերն լուսաւորիչ եւ ի վիրապէն, **Ե** օր պահք կարգեաց և ապա՛ բժշկեաց ի *հարուածոյն*. - 650. Զոր բազում *հարուածովք* եհան զժողովուրդն...: - 682. Եւ ի ձեռն հրեշտակի բազում պատուհաս և *հարուած* կրէ աստ մարմինս...: - 682. Եւ ի **ԽԵ** գլուխն ի վերայ այնմ բանի «ո՛չ ոք կարէ մտանել ի տաճարն մինչև կատարեսցին եօթն *հարուածք* յեօթն հրեշտակացն», ասէ մեկնիչն. ոչ արդարոցն հանգչելոյն աղաչանք, և ո՛չ մեղաւորացն ի տանջանս հառաչանք...: - 703. ...մինչև կատարեսցին *հարուածք* բարկութեանն աստուծոյ ի վերայ երկրի. որով փործին և արդարք և մեղաւորք. - 703. Այլ ըստ զանազանութեան չափոյն, ոմանք **Ժ** են ասացեալ թուով ըստ *հարուածոցն* եգիպտոսի: - 751

**ՀԱՐՈՒԱԾԵՄ +** Այսու մտօք և տէր մեր *զհարւածեալսն* ի յուրբաթու՝ բժշկէր ի շաբաթու: - 648

**ՀԱՐՍԱՆԻՔ +** Երեքտասաներորդ՝ եօթնօրեայ եղև խրախութիւն *հարսանեաց*: - 422. Եւ եօթեամբ դարոյս *հարսանեաց* յութերորդին միաւորեսցին: - 422. Վեշտասաներորդ՝ **է** աւուր յերեկոյի *հարսանեացն* յայտնեցաւ առակն՝ հարսին: - 422. Վեցերորդ, զի և առաջին ծնօղքն և հարք թէպէտ աւելի կին առնուին վասն զաւակաց, այլ *հարսանիսն* կրկնեալ ո՛չ ընթերցեալ լինի: - 612. Որ ի *հարսանիսն* զջուրն ի գինի փոխեաց և օրհնեաց: - 655. Այլ կան և սպասեն մեծի *հարսանեացն* քրիստոսի և կատարածի աւուր...: - 669. ...ուր սուրբք ամենայն սպասեն մեծի *հարսանեաց* գալստեանն փրկչին: - 675. Չորրորդ՝ ի մարմնաւորս **Գ** օր լինի *հարսանիք*. - 681. ...հաւատն նշան է նոցա, և բարի գործքն զարդ. և մահն ի *հարսանիս* ընթանալ...: - 681. Երրորդ, աներևոյթ են մեղօք և ո՛չ ունին զպայծառութիւն բարեաց. որպէս այն որ ո՛չ ունէր զհանդերձ *հարսանեաց*: - 691. Արդ այժմ ի մկրտութիւնն հաւատն նշան դնի հարսին. և յետ մահու յուսով կոչի ի *հարսանիս*. և յետ յարութեանն սիրով միաւորի ընդ փեսային: - 693. Ապա ուրեմն ի գալ փեսային լինի պսակ և *հարսանիսս* այս հոգևորապէս: - 693. Երբեմն փեսայ և *հարսանիք*, վասն անտրտում ուրախութեանն: - 757. Որ և ա՛յն քան գերազանց է միաւորութիւնն քրիստոսի ընդ եկեղեցի քան զմարմնական *հարսանեաց*, որպէս լոյս քան զխաւար. և իւղ անոյշ քան զգարշութիւնս: - 757

**ՀԱՐՍՆ +** Եօթներորդ՝ որպէս փեսաւէրն խահակայ եղիազար խօսեցաւ *զհարսն* ի վերայ ջրհորոյն: - 305. Ութերորդ՝ զի էառ իսահակ *զհարսն* և ուրախացաւ ի տան մօրն իւրում սառայի. որ զվեց ամ փրկեալ գոյր և ո՛չ մտեալ: - 305. Չորրորդ՝ խորհրդական. զի մի է քրիստոս փեսայ. և զեկեղեցիս հրէից և հեթանոսաց ընկալաւ իւր *հարսն* սուրբ: - 401. Խօսեցաւ օրինօք նախ և նշանեաց զեկեղեցի սուրբ *հարսն* երկնաւորին: - 422. Վեշտասաներորդ՝ է աւուր յերեկոյի հարսանեացն յայտնեցաւ առակն՝ *հարսին*: - 422. Երանելի են *հարսունք* և հնազանդեալք քրիստոսի: - 441. Տասներորդ՝ քրիստոս փեսայ կոչի և եկեղեցի *հարսն* հոգևոր. և նա՛ գլուխ և մեք անդամք և ժառանգակիցք: - 480. Եւ վարագոյրն պատառեցաւ. զի յանարգանս փեսային պատառեաց *հարսն* զքօղն. և կողն աղբիւրացաւ. և նոքա ո՛չ արտասուեցին: - 490. Եւ դարձեալ նա՛ կոչի դուստր. և մեք *հարսն* երկնաւոր փեսային: - 533. Վասն է՞ր երբեմն իգական *հարսն* և դուստր կոչի եկեղեցի. և երբեմն արական որդի: - 534. *Հարսն* կոչի վասն երից: - 534. Նա՛խ՝ վասն կատարեալ սիրոյն քրիստոսի որպէս փեսայի և *հարսին*: - 534. Ո՞րպէս կոչի *հարսն* և դուստր: - 534. Ընդ քրիստոսի միաւորեալ. որպէս փեսայն որդի է, և *հարսն* դուստր կոչի աստուծոյ հօր: - 534. Եւ որպէս կողն ադամայ եղև կին. և շինեալ եկեղեցի լինի *հարսն* քրիստոսի: - 534. Զի եպիսկոպոսն փեսա՛յ է և վիճակն *հարսն.* նա՛ միա՛յն իշխէ: - 541. Եւ այս աճման սկիզբն պսակն է. որ միանայ *հարսն* ընդ փեսային. և լինի ըստ սահմանադրութեանն աստուծոյ ծննդագործութիւն: - 609. Զի յայնմ հետէ *հարսն* փեսային լինի

նշանեալ, և փեսայն *հարսինն* է՛ յատկացեալ: - 609-610. Նոյնպէս և նախ նշան դնի *հարսին*: - 610. Զի բռնութեամբ և առանց հաւանելոյ միմեանց՝ այսինքն փեսային և *հարսին* ո՛չ հաստատի պսակն: - 610. Զայս ունի խորհուրդ, որ *հարսն* և փեսայն յառաջ քան զպսակն տեսանեն զմիմեանս. և հաւանին սրտիւք և կամօք և ապա՛ պսակին: - 610. Զի օտար ազգք՝ միջնորդութեամբ փեսային և *հարսին* որ են մի մարմին, լինին և նոքա մի ազգ: - 611. Վասն է՞ր ի հին օրէնս եդաւ յիւր ազգէն առնուլ *հարսն*, և ի նորս յօտար ազգէ: - 612. Դարձեալ՝ բանն աստուած փեսայ կոչի *հարսին* եկեղեցւոյ. և զօտար բնութիւնս_մարդկան միաւորեաց ընդ ինքեան: - 612. Յասմանէ ուսեալք ազգ քրիստոնէից յօտար ազգէ առնեմք *զհարսն*: - 612. Եւ եկեղեցի սուրբ. *հարսն* անախտ. և դշխոյ անարատ ընդ աջմէ փեսային քրիստոսի: - 614. Քսանզ, Օրինակ սերմանց. և զարդ *հարսինն*: - 660. նոյնպէս և սուրբքն հոգևոր *հա՛րսն* են քրիստոսի. - 681. Ա՛րդ՝ փեսա քրիստոս է. և *հարսն* հաւատացեալ ժողովուրդքն: - 693. Արդ այժմ ի մկրտութիւնն հաւատն նշան դնի *հարսին*. և յետ մահու յուսով կոչի ի հարսանիս. և յետ յարութեանն սիրով միաւորի ընդ փեսային: - 693. Ի յայս միտս մարմնաւոր *հարսն* է զգեստուք զարդարի. գ զարդ զլխոյն և դ բոլոր մարմնոյն: - 721. Բայց եօթն զարդքն զոր ունին սուրբքն որք են *հարսունք* քրիստոսի՝ ո՛չ ունին անսուրբքն որք են *հարսունք* սատանայի: - 723. Այժմ կա՛լ ասի և մարտնչիլ վասն *հարսին* եկեղեցւոյ: - 736. Եւ յայնժամ յաղթեալ զթշնամին և *զհարսն* առ ինքն ընկալեալ յաթոռ մեծութեան նստցի...: - 736. Որ բանիւքս այսոքիւք *հարսն* ասէ զինքն պահեալ սիրելոյն: - 756. Նա՛խ՝ զի առ նոսա միաւորեալ է քրիստոս իբր տէր ընդ ծառայս. իսկ միաւորի ընդ եկեղեցի իբր փեսայ ընդ *հարսին*. և գլուխ ընդ անդամոց: - 757. Եօթն զարդ *հարսին* որպէս ցուցաւ. և օժիտք յաւիտենիցն կենացն. պսակք և արկանելիք, ասացան մեզ փոքրիշատէ յառաջագոյն ի բանից սրբոց: - 761

**ՀԱՐՍՆԱԾՈՒ +** Չորեքտասաներորդ՝ առակախօս մեկնութեամբ զգեցոյց *զհարսնածոյս*: - 422. Իսկ այն որ ասէ կ էին թաքուհիք և ութսուն հարճք. և անթիւ *հարսնածուք*: - 440

**ՀԱՐՍՆԱՆԱՄ +** Եւ մերոյն փեսային քրիստոսի՝ յովհաննէս ի վերայ յորդանանու խօսեցաւ *զհարսնացեալ* եկեղեցի: - 305. Եւ տէրն *զհարսնացեալ* եկեղեցի եմոյծ վերըստին ի դրախտն որ զվեց դարիւ արգելեալ էր և փակեալ: - 305

**ՀԱՐՍՆԱՑՈՒՑԱՆԵՄ +** Զի որպէս քրիստոս չարչարանօքն փրկեաց զեկեղեցի և *հարսնացոյց*, նոյն և առաքեալն քարոզութեամբ իբր զկոյս մի սուրբ յանդիման արար փեսային քրիստոսի: - 781

**ՀԱՐՍՆՈՒԹԻՒՆ +** Նա՛խ՝ զի աստուած էր ողջոյնառաքն. որ խօսէր զկոյսն ի *հարսնութիւն* կուսութեան, կուսաբեր լինիլ պտղովն: - 464

**ՀԱՐՍՏԱՀԱՐԵՄ +** Երկրորդ՝ զի *հարստահարեալ* ի մարմնոյ ախտից՝ մոռանայ զբանն: - 120. Աղքատ և տնանկ զմարդկային բնութիւնս ասէ. որ *հարստահարեցաւ* և զրկեցաւ ի սատանայէ՛: - 317. Զի որպէս ի կշիռն արդար՝ մէտ մի յաւելուածն *հարստահարէ*՛ զդիմակն և ի խոնարհ ձգէ, այսպէս և դատաստանն աստուծոյ. - 745. զի մարդոյ ի բարի գործս հակեալ՝ *հարստահարի*՛ արդարութիւնն յողորմութենէն. և թէ ի չարն հետևիմք՝ ողորմութիւնն յարդարութենէն: - 745. Եւ միտումն երբէք և ուրէք *հարստահարելով* և հաւասարելով ընդ միմեանս՝ այսպէս...: - 746

**ՀԱՐՍՏԱՆԱՄ +** Իսկ թէ և նա շնորհիւ ունի զորդիութիւնն, զիա՛րդ կարէ տալ ումեք զոր հազիւն *հարստացաւ*: - 67

**ՀԱՐՑԱՆԵԼԻ -** Եւ այս *հարցանելի* է, զի թէ մագդաղենացին ընդ առաջին կանայսն եկն զոր մատթէոս պատմէ և համբուրեցին զոտն յիսուսի...: - 515. Յետ այսորիկ *հարցանելի*՛ է ի նոր օրինաց և յեկեղեցւոյ կարգաւորապէս ընդ մարդեղութեան բանին յարմարեալ. իբր պատճառելիք առ պատճառ նորին հետևեալ և շարադասեալ: - 528. Յետ այսորիկ *հարցանելի*՛ է զեկեղեցական կատարմունքս մեր: - 613. Յետ այսորիկ *հարցանելի*՛ է վասն հանդերձելոյն: - 662

**ՀԱՐՑԱՆԵՄ +** *Հա՛րց* դու զնոսա՝ թէ դու ի քո հօրէն յառաջ եկեալ կամա՞ւ ծնար թէ ակամայ: - 36. *Հա՛րց* և դու զնոսա, թէ հայր յումեքէ՛ է, թէ յոչ ումեքէ է եղեալ: - 37. Դարձեալ *հարցանեն* թէ՝ հոգին անծի՞ն է՝ թէ ծնեալ: - 52. Դարձեալ *հարցանեն*, թէ հաւասար է հոգի որդւոյ, զի՞նչ արգելու ո՛չ լինիլ որդի. ապա թէ ո՛չ՝ նուա՛զ է քան զորդի: - 53. Դարձեալ *հարցանեն* թէ՝ զիա՞րդ ասէք երեք և մի բնութիւն. զի գ միոյ բնութեանն ո՛չ հաղորդի. այլ միևնն հաղորդի միոյ բնութեանն, և երկուքն երկուքին. և երեքն երեքին. զի որքան է թիւն, այնքան բնութեան թւակից լինի: - 54. Երկրորդ *հարցանեմ* եթէ, յերրորդութիւնն մի է սկիզբն՝ թէ բ: - 62. Դարձեալ *հարցանեմ*, հայր կարօղ է բղխել զհոգի՝ թէ անկար: - 62. Դարձեալ *հարցանեմ*, հոգին սուրբ մասն ինչ բղխէ ի հօրէ և մասն յորդւո՞յ, թէ բոլորն ի հօրէ՝ և բոլորն յորդւոյ: - 63. Դարձեալ՝ *հարցանեմ*, հայր և որդի զո՛յգ բղխեն զհոգի, թէ անզոյգ: - 63. Դարձեալ *հարցանեմ*, հայր և որդի կարգաւո՛ր բղխեն զհոգի թէ

անկարգ: - 63. Դարձեալ *հարցանեմ*, յանսկզբնէ՞ն բղխէ հոգին, թէ ի սկզբնաւորէն. զի որ յանսկզբնէն յառաջ գայ, է՛ անեղ և անվախճան. որպէս որդի և հոգի յանսկիզբն հօրէ: - 63. Դարձեալ՝ *հարցանեմ*, զբղխեա՞լն ի հօրէ բղխէ որդի, թէ զոչ բղխեալն: - 63. Դարձեալ՝ *հարցանեմ*, զի թէ մինն բոլոր բղխումն է հոգւոյն և ո՛չ մասն. զի թէ զմինն զայն հայր բղխէ, ապա ուրեմն ո՛չ բղխէ որդի. իսկ թէ զմինն զայն որդի բղխէ, բըղխեալն հոգի թո՛ռն լինի հօր, և ո՛չ բըղխումն նմին: - 63. Դարձեալ *հարցանեմ*, հայր և որդի զնո՞յն բղխեն զհոգին, թէ զայլ: - 63. Վեցերորդ՝ «դո՛ւ ես քրիստոս որդի աստուծոյ». *հարցանեմ* զքեզ ո՛վ բաժանօղդ, ի քրիստոս զո՞րն բնութեամբ ասես որդի աստուծոյ: - 69. Եւ *հարցանեմ* բաժանօղսդ քրիստոսի եթէ՝ յո՛ր բնութիւն մկրտիս. յաստուծոյն թէ ի մարդոյն: - 69. *Յարցանեմ* զբաժանօղսդ յերկուս, զո՞ր բնութիւն կերակրիս որով կենդանանասդ: - 69. Եւ դարձեալ՝ զորպիսութիւնն *հարցեր* մի գործոյն: - 85. *Յարցից* և ես զձեզ դասք երկաբնակաց: - 86. Իսկ թէ զմինն, *հարցանեմ* ձեզ՝ զո՞րն պատւէք. և կամ զո՞րն անարգէք: - 90. Զի՞նչ պատասխանեմք երկաբնակացն որք *հարցանեն* զմեզ, թէ մասունքն քրիստոսի աստուած է՝ այսինքն ոտքն և ձեռքն և գլուխն ապա բազմաստուածք էք: - 91. Ելե՛ր ի բանէդ և դժուարինս խօսիս. և զոր *հարցի*՝ ո՛չ ընկալայ զպատասխանին: - 92. Զա՛յս *հարցեր*, եթէ մասունքն քրիստոսի աստուած են, նաև բազմաստուած էք. զի բազում են մասունքն: - 92. Այլ արդ՝ որ *հարցնես* թէ՝ մարդն քրիստոս տեսանէ՞ զաստուած թէ ո՛չ. համաձայնիս հրէիցն...: - 95. Եւ նախ *հարցանեմ*, որո՞վ զանազանի գործ բնութեան և գործ կամաց: - 156. Զայս բան *եհարց* դշխոյն սաբայ՝ առ իմաստնացեալն յաստուծոյ սողոմոն: - 179. *Յարցանեմ* և զայս ևս: - 180. Իսկ եթէ որք *հարցանէ*, ապա վասն է՞ր ստեղծան ծննդական անդամքն յորժամ ո՛չ ծնանէին ի դրախտին: - 226. Այլ զայն ինչ հարցումն որ զմարդն ի հերձուածոյ ի զատ տանի՝ պա՛րտ է *հարցանել*. որպէս յառաջիկայդ հարցումն է սակաւ մի: - 251. Եւ թէ որք *հարցանէ*, ընդէ՞ր է զի ամենայն սերմն ի մէջն է: - 256. Դարձեալ ըստ կարգիս *հարցանեմ* թէ յո՞րժամ, և ի քանի՞ս սկսանի ներգործել տնկականն և զգայականն և բանականն: - 261. Կարգաւո՛ր է և աստ *հարցանել* թէ վասն է՞ր անասունք յերրորդ ամին կարեն զնմանն ծնանիլ, և մարդն ի չորեքտասանն: - 264. Եւ զուստին մի՛ *հարցանէր* թէ ի կենդանւո՞յ էառ, և թէ նո՛ր գոյացոյց. զի ամենայն ինչ կարելի՛ է աստուծոյ: - 281. Յետ ելիցն ադամայ ի դրախտէն կենաց, *հարցանելի* է վասն նախահարցն ըստ կարգի: - 286. Եօթներորդ՝ զի ստեաց աստուծոյ ի *հարցանելն* վասն զղջման: - 287. Իսկ թէ որք *հարցանէ* թէ զի՞նչ էր սոցա առաքինութիւնն որ այսպէս պատուեցան: - 289. Վեցերորդ՝ զի ի ձեռս ետ զհագար աղախինն չարչարել սառայի. ուստի զերծեալ փախեաւ և *հարցաւ* ի հրեշտակէն: - 304. Ասեմք թէ յակոբ ո՛չ զներգործութեան անունն *հարցանէր* աստուծոյ, զի գիտէր որ աստուած էր և ինքն իսրայէլ կոչեցաւ որ է աստուածատես. այլ անուամբ զբնութիւնն և զգոյացութիւնն աստուծոյ կամէր ուսանիլ: - 311. Նա՛խ՝ զի կոչի «զի՞նչ սա՛». զի ամենայն *հարցանելոյ* լուծումն գոյ և պատասխանի. - 338. ...իսկ զաստուծոյ *հարցանելն* զի՞նչ է՝ անգիտելի մնայ. որպէս *եհարց* յակոբ, «զի՞նչ է անուն քո. և նա՛ ասէ՝ զի՞ *հարցանես* զանուն իմ. զի սքանչելի՛ է»: - 338. Այլ թէ հարցանեն զորքանութիւն սիւնիցն. **ծ** սիւն ի մէջ խորանին. և **թ** սիւն վարագուրացն. և մի թափանց ի մէջն յարնելից յարևմուտս. որ լինի **կ**. և **ձ** սփռիչ. և **խ** նիգք. և ամենայնն ոսկեպատ. որ բովանդակն լինի **ճձ** ի ներքս: - 343. Եւ թէ լիցի երկաթ և ո՛չ սուր, և ո՛չ է պիտանի. որպէս բոլոր երկաթն թէ *հարցէ* զկենդանին և սպանցէ, ո՛չ է ուտելի, զի թէպէտ զարիւնն հանէ, այլ ո՛չ համանգամայն զշունչն և զջերմութիւնն: - 366. Եւ աստ *հարցանեմ*, զի՞նչ է դիւթն, և հըմայն, կախարդն, և այլն: - 388. Եւ աստ *հարցանեմ* ի վերջոյ. վասն է՞ր կրկին անգամ թւեաց զժողովուրդն: - 392. Եւ զի պատառեաց զկրկնոցն. և *եհարց*՝ ո՞յր որդի է դաւիթ: - 412. Վասն է՞ր *եհարց* թէ՝ ո՞յր որդի է դաւիթ. զի կապարճակիր և ծանօ՛թ էր սաւուղի: - 427. Երկրորդ՝ զի կամէր զա՛զգն *հարցանել* թէ յուդայի ցեղէն և փարիսէ՞ն իցէ, զի սպանցէ զնա: - 427. Վեցերորդ՝ զի *եհարց* ի սաւուղ թէ «զո՞ խնդրես». և թէ զառաջիկայն գիտէր, զներկայ միտքն ընդէ՛ր ո՛չ գիտաց: - 428. Իններորդ՝ զիա՞րդ զարհուրեցաւ կինն յետ երդմանն, և անկաւ յերեսս մինչ քաջալերեաց սաւուղ և *եհարց*: - 428. Նախ այսպէս. զի *եհարց* թէ ընդէ՞ր հաներ զիս. այլ ո՛չ էր *հարցեալ* թէ գիտէր զխորհուրդն: - 430. Ո՛չ էր պարտ պարզամտութեամբ խաբիլ. պարտ էր *հարցանել* զնա թէ մարգարէ՞ է թէ ոչ: - 443. Եւ կամ նշան խնդրել. և կամ զաստուած *հարցանել* և ապա՛ գնալ: - 443. Նա՛խ՝ զի ո՛չ *եհարց* զաստուած. այլ վաղվաղեաց ի պատերազմ: - 446. Յետ որոյ քեղկի քահանայ որ էր հայր երեմիայի՝ եգիտ զերկրորդ օրէնքն և մատոյց առ ովսիա. և գնաց առ ողդիկին մարգարէ *հարցանել*...: - 447. Եւ ի *հարցանելն* ո՛չ էր երկբայ որպէս զաքարիա: - 465. Նոյնպէս պա՛րտ է ամենայն մարդոյ յորժամ լսիցէ զբանն, նախ խորհիլ և *հարցանել*, և ապա՛ հաւանիլ: - 465. Եւ *հարցանել*՝ զորպիսութիւնն: - 465. Ի գիրս բենետիքտոսի *հարցեալ* եղև թէ ո՞ւր են դժոխքն. և տուաւ պատասխանի թէ՝ յանկեան և յեզր ծովուն ի ներքոյ երկրի ի խաւարչուտ վայրս: - 504. Նա՛խ՝ ոմանք ասեն թէ մարդկօրէն կամէր իմանալ զնա և *հարցանել* վասն խաչին և դժոխոց և յարութեանն. իսկ այս կատարեալ մտաց պէտք

էին և շա՛տ ժամու: - 517. Եւ սոքա են սուր երկսայրիք տուեալ ի ձեռս քահանայից զինուորաց քրիստոսի. զի յաջ և յահեակ *հարցեն*. այսինքն զսատանայ և զչարսն ի մարդկանէ որք հակառակին բարեաց: - 538-539. Այլ և զայս *հարցանեմք* ձեզ. ո՞ր բան է որ զջուրն ի խորհուրդ կատարէ: - 596. Այժմ *հարցանեմ* զձեզ անօրէն ազգք Ֆռանկաց...: - 599. Որ և *հարցանէր* որդւոցն զեբեթեայ թէ՝ կարո՞ղ էք ըմպել զբաժակն. այլ ո՛չ թէ միայն նոցա ետ և յայլ առաքելոցն արգել: - 600. Թէ կրօնաւոր է՝ *հարցանէ* թէ ծոյլ եղեա՞լ է յաղօթքն. կամ անհնազանդ. թէ բղջախոհ. թէ յատուկ իրք ունօղ. թէ պճնօղ. թէ որոնօղ լաւ կերակրոց և ըմպելեաց. թէ քնափ և թէ կռւօղ: - 601. Զամենայն ճշմարտութեամբ *հարցանէ* քահանայն. և այնպէս որ մի՛ լիցի ի *հարցանելն* մեղք ուսուցանել ժողովրդեանն: - 601. Յառաջ քան զայլսն *հարցանեմ*, ո՞րքան է եղանակ աղօթից: - 619. ...և *հարցանէին* զի՞նչ և ո՞վ է սա: - 638. Եւ թէ *հարցանէ* ոք, այժմ ի յո՞ր հանգիստ են որ փոխին: - 648. Դարձեալ՝ որպէս բժիշկք դեղ տան հիւանդաց՝ և ի միւս օրն դարձեալ *հարցանեն*...: - 680. ...և դարձեալ այսօր *հարցանեմք* զորպիսութիւնն: - 680. Յետ մարմնոյ կատարմանց՝ *հարցանեմ* և վասն բաժանեալ հոգւոց: - 685. Տասնք, *հարցանեմ*, հուր քաւարանին ժամանակեա՞յ է թէ յաւիտենից: - 700

**ՀԱՐՑԱՓՈՐՁԵՄ +** Եւ ո՛չ ուրեք երբեք միտք ուղղափառաց բաժանմամբ տեսանէ. ո՛չ զբնութիւնս և ո՛չ զկամս և ո՛չ ներգործութիւնս որ յառաջն *հարցափորձեցաք* սակաւիկ: - 174

**ՀԱՐՑԱՓՈՐՁՈՒԹԻՒՆ +** Բայց զի յուսացեալ ի բանն ճշմարտութեան յաղագս որոյ բանս *հարցափորձութեան*, հետևելով ուսուցչացն ուղղութեան, և յուսոյ ուսողացդ նպաստութեան. բացցուք զբերանս մտաց, և ձգեսցուք ի մեզ զհոգին շնորհաց: - 456

**ՀԱՐՑԱՔՆՆԵԼԻ** - Այլ ի վերայ այսմ *հարցաքննելի՛* է երիս իրս: - 140

**ՀԱՐՑՆ +** Երկրորդ՝ մովսէս քարոզէր ժողովրդեանն թէ՝ աստուած *հարցն* ձերոց առաքեաց զիս. և յերկրպագութիւն նմա հրաւիրէր: - 328. Ա՛րդ՝ նախ վասն *հարցն* սիրոյ զզաւակսն նոցա ընտրեաց աստուած: - 398. Իսկ ողորմեայն է՛ որպէս *հարցն* վասն յանցանացն ադամայ: - 628. Այլ գիտելի՛ է, թէ սաղմոսն շարականաց որ **բժ**ան տուն է՝ զփառքն և զայժմն ի միասին երգեմք. որպէս զօրհնութիւնն, *հարցն*, ողորմեայն, տէր յերկնիցն: - 636. Զամէն շարական կրկին ասեմք, վասն է՞ր *զհարցն* երեքկին ասեմք: - 637. Վասն զի *հարցն* երից մանկանցն է երգ: - 637. Նմանապէս և ամենայն շարական **գ** տուն է, և *հարցն* **զ**. զի վեցն կրկին **գ** է: - 637. Զշարականս ո՞վ է ասացեալ... Զհռիփսիմեանց անձինքն և *զհարցն* տէր կումիտասն: - 637. Այլ և զաղցից կիրակէիցն, և զնինուէացւոցն, և զծաղկազարդի *հարցն*, և զհոգւոյ գալստեան **դ** պատկերն, և զվարդավառի **բ** պատկերն, և զփոխման **բ** պատկերն, զհրեշտակապետացն, և զեօթանասնիցն, զղևոնդեանցն, զմարգարէից ***դճ*** *հարցն*, և զյովհաննու ***դճ*** *հարցն*, զնորահրաշն, զնայեա՛ սիրովն, զ'ի քէն հայցեմքն զարևագալին շարականերն, զօրհնեմք զքեզն, զայսօր անճառն, զարարչակներն, զաստուած անեղն, և յոմանց լուաք թէ զսուրբ յակոբին այլ... Զայս ամենայն մեծն ներսէս է ասացեալ կլայեցին: - 637. Եւ որ յինանցն պահէ մինչ ի համբարձումն, ընդ դէմ է կանոնաց *հարցն* և աւետարանին որ ասէ...: - 649. Յաղագս այսմ զանազան են տեսութիւնք հարց պետաց: - 781

**ՀԱՐՑՈՒԱԾ +** Այսքան *հարցուածս* է ընդդէմ երկաբնակացն որք ուրանան զմիաւորութիւն բնութեանցն քրիստոսի: - 70

**ՀԱՐՑՈՒԿ +** Վհուկն ա՛յն է, որ ի վհաց և յանդնդոց մեռեալս կերպարանեն. դևք ի կերպս մարդկան երևին. զոր դևակոչ ասեն և հազիմաթ. և Նշանագէտ, որ ի գերեզմանս ննջէ և նշանաւոր մարդ կերպարանէ. որպէս զսամուէլ սաւուղայ երևեցոյց *հարցուկ* կինն: - 388

**ՀԱՐՑՈՒՄՆ +** Այժմ պատասխանեսցուք *հարցմանն* եթէ առաքինութեանն չարութիւն, և արդարութեանն անիրաւութիւն ներհական. որպէս խաւարն լուսոյ. և էութիւն է լոյսն. և ո՛չ էութիւն խաւարն. և օդն ընդունակ լուսոյ և խաւարի: - 23. Եւ պատասխանիք, և ա՛յլ *հարցմունք* ուղղափառի առ նոսա: - 29. Չորեքտասաներորդ՝ Հոգին միայն ի հօրէ՛ է բղխումն՝ **ժ** *հարցմամբ*, և **զ** օրինակաւ, և **ը** վկայութեամբ: - 30. Հնգետասաներորդ՝ *Հարցումն* երկաբնակացն առ մեզ **ժ** թւով. և անդ վասն մի կամաց՝ և մի գործոց՝ և կրից: - 30. Վեշտասաներորդ՝ *Հարցմունք* ուղղափառաց առ նոսա **ժ** թւով: - 30. Քսաներորդ՝ *Հարցմունք* երկաբնակացն ի վերայ մարդեղութեան բանին: - 30. Երկրորդ *հարցումն* չարափառաց, զէ՛ն ծնաւ, թէ զոչ էն: - 36. Բայց *հարցմունքս* այս կարէ՛ ասիլ ի վերայ մեր. զի ասիմք՝ յէից եղեալ և յոչ էից: - 37. Երրորդ *հարցումն* հակառակացն թէ՝ որդի ի հօրէ ծնաւ և դադարեցա՞ւ, թէ դեռևս կուծնանի: - 37. Պատասխանեմք թէ՝ կարի՛ յիմարութիւն է *հարցումնդ*. և զի գոյ հայր ըստ քում բանիդ ծնօղ որդւոյ. ապա ուրեմն ո՛չ կարէ ոչ լինիլ և ծնանիլ: - 38. Եօթներորդ *հարցումն* հակառակորդացն. ընդէ՞ր ասէ քրիստոս թէ՝ «առաքեցայ ի հօրէ՛»: - 39. Իններորդ *հարցումն* հակառակորդաց՝ որ ասէ սիրաք՝ «ես ի բերանոյ բարձրելոյն ելի անդրանիկ ամենայն ստեղծուածոց»: - 41. Եւ զի հոգին սուրբ է միայն ի հօրէ բղխումն, տեսցուք զայս Նախ՝

ի *հարցմանէ*: - 62. Այսքան ի *հարցմանէ* : - 63. Եւ ահա՛ չորեքտասան *հարցմունքս* այս՝ է ընդ դէմ երկաբնակ աղանդոցն. որք զմի քրիստոսն յերկուս բաժանեն բնութիւնս: - 70. *Հարցումնս* այս է՛ ո՛չ գիտողաց զհասարակութեանն բան և զառանձնութեանն: - 74. *Հարցումնս* այս է՛ երկաբնակացն. և նմանի այնմ թէ՝ մարդ ըստ հոգւոյն բնութեանն մարմին է, թէ ըստ մարմնոյն բնութեանն հոգի: - 75. Դարձեալ *հարցումն* առ երկաբնակ դաւանողացդ զքրիստոս: - 90. Եւ այսպէս բազում է ի գիրս *հարցմանցս* վասն միաւորութեան բանին և մարմնոյն ընդ դէմ Նեստորի և երկաբնականց. որ բաւական լուծումն է բանիս: - 95. Եւ կատարումն երկրորդ հատորի *հարցմանց* գրոցս: - 101. Այլ և ա՛յլ են *հարցմունքդ* և ո՛չ մի: - 162. Եւ զի յա՛յտ եղև այս, այժմ պատասխանեսցուք *հարցմանն*: - 162. Իսկ վասն երկրորդ *հարցմանն* թէ՝ անկա՛ր է կուսի ապականելոյ լինի կոյս: - 165. Եւ դարձեալ է՛ ոչ էակ՝ որ թէպէտ ներգործութեամբ ո՛չ է, սակայն զօրութեամբ ունի զգոլն. և յայսպիսի յոչնչէ եղեն արարածք ամենայն. ապա ուրեմն յայտնի է *հարցումնդ*: - 173. Եւ այս ինչ է *հարցումնդ* զի թէ ասեմք կամաւ ներգործէ, ասեն՝ ապա փոփոխական ներգործէ որպէս մարդ. իսկ թէ ասեմք բնութեամբ, ասեն ցմեզ եթէ անբանապէս և ի հարկէ ներգործէ: - 173. Կարծեմ թէ և քեզ ծանր թուի *հարցումնս* այս. սակայն մտաւորաբար լո՛ւր: - 180. Իննևտասներորդ՝ *Հարցման* հոգւոյն և բացադարձութիւն իմացմանն: - 228. Քսաներորդ՝ Վասն էութեան հոգոյն լուծումն հակառակ բանից. և ճշմարտութեանն հաստատութիւն զանազան *հարցմամբ*: - 228. *Հարցումն* ա՛յսմ իրի՝ նախ գիտելի է՝ թէ ուստի՞ գոյանայ պատկերն և տիպ: - 235. Այլ զայն ինչ *հարցումն* որ զմարդն ի հերձւածոյ ի զատ տանի՝ պա՛րտ է հարցանել. որպէս յառաջիկայդ *հարցումն* է սակաւ մի: - 251. Ապա ուրեմն յայտնի է *հարցումնդ*: - 258. Կատարումն Հինգերորդ Մատենի *Հարցմանցս*: - 282. Առաջին *հարցումն* Վասն աբէլի և կայենի, և պատարագաց նոցա: - 283. Քսանբ, Վասն յոբայ զանազան *հարցմունք*: - 283. Եւ աստանօր կատարումն Վեցերորդ Հատորի *Հարցմանցս*: - 285. Նա՛խ՝ նշանակէ՛ զպատասխանին. զի պատասխանին կրկին է ի վերայ *հարցմանն*: - 323. Կատարեցաւ Վեցերորդ Հատոր *Հարցմանցս* Հինգ Գրոցն Մովսէսի. ի Փառս Յիսուս Քրիստոսի Աստուծոյ մերոյ: - 412. Կատարումն Եօթներորդ Հատորի *Հարցմանց* Գրոցս: - 413. Եւ աստանօր Կատարումն հին Կտակարանաց. և Եօթներորդ Հատորի *Հարցմանցս*. ի Փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ Օրհնելոյն Յաւիտեանս Ամէն: - 453. Երկրորդ *զհարցումն*. զի խնդրէր թէ «ո՛րպէս լինիցի ինձ այդ»: - 465. Այլ այժմ պատասխանեսցուք *հարցմանն*: - 481. *Հարցումն* թէ և ո՛չ կարի անագան: - 482. Եւ կատարումն Ութերորդ Հատորի *Հարցմանցս*: - 525. Քառասունևզ, Երեքսրբեանն բազում *հարցմամբ*: - 527. Եւ աստանօր Կատարումն Իններորդ Հատորի *Հարցմանցս* Այսոցիկ. և Քրիստոսի Փառք յաւիտեանս Ամէն: - 527. Առ երրորդն ասեմք թէ՝ երիցս *հարցումն* սիրոյն և արածելն զոչխարսն՝ վասն երից ուրացութեանցն էր բժշկութիւն. զի ո՛ր մասն որ խոցի՝ նորին է բժշկական դեղն դնելի՝ և ո՛չ առողջից: - 547. Այժմ պատասխանեսցուք *հարցմանն*: - 558. Իններորդ *հարցմանս* բաւական լիցի ի Փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ Ամէն: - 659. Քառասունևզ, *Հարցմունքն* գէորգեայ տասնևչորս գլուխ: - 661. Եւ աստանօր Աւարտումն Տասներորդ Հատորի *Հարցմանցս*, ի Փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ Յաւիտեանս Ամէն: - 661. ...ասացեալ եմք ի *հարցմունքն* գէորգեայ յառաջիկայդ տես ի **բ** համարքն: - 686. Եւ այլն ասացեալ է ի *հարցմունս* գէորգեայ ի **գ** համարն: - 686. Արդ՝ առաջին վկայութիւն, ասէ սուրբն կիւրեղ ի գիրս պարապմանց ի *հարցմունս* տիբերեայ եթէ՝ հատուցմունքն հետևին դատաստանին. և դատաստանն գալստեան դատաւորին ի կատարածի: - 691. Այլ և յետոյ ի գէորգեայ *հարցմունքն* գտցես: - 705. Յարութիւն մարդկան ի վայրկեան ժամանակի և յանկարծակի լինի որպէս ցուցաւ ի վերոյ. այլ զյերկարութիւն ժամու քննութեան դատաստանին, ոմանք ժամ մի ասեն. որքան եկաց ընդ ադամայ ի քննութիւն *հարցմանց* յետ յանցանաց նորին: - 747. Աստանօր յիրաւապէս առցէ զկայ՝ բան *Հարցմանցս* այսոցիկ: - 771. Արդ՝ ես վերջին ծնունդս եկեղեցւոյ և տրուպս բանասիրաց, Գրիգոր պիտակ անուն խնդրող բանին. բացայայտեցի զբանս *Հարցմանց* ի լուսաւոր բանից վարդապետաց եկեղեցւոյ: - 772. Իսկ լուծումն *հարցմանցս* այսոցիկ, ո՛չ ամենևին օտարածայն աւելորդս խուզեալ. և ո՛չ գեղջուկ իմն աշխարհական խօսից յարմարեալ: - 772. Այլ և զերջանիկ գաղափարօղսդ մաղթեմ. որք ընդօրինակէք զգիր *հարցմանցս* այսորիկ, գրել և զսակաւ յիշատակս այսոցիկ: - 773. Գրեսցի յայսմ տեղւոջ և *Հարցմունքն* Գէորգեայ: - 773. Եւ են ամենայն *հարցմունքդ* **դժ**ան գլխով. որպէս յա՛յտ է ի կարգիդ: - 773. Եւ գլխաւորի՛ սա՛ կրկին եօթեամբք կարգաւոր *հարցմամբք:* - 773. Ապա ուրեմն յայտնի՛ է որպիսութիւն *հարցմանս*: - 774. Եւ այս յայտ է բազում վկայութեամբ ի *հարցմանցդ* վերոյ: - 776. Յորժամ պարուկաւ այսինքն *հացմամբ* ասի. որպէս ասելն, ո՞չ քեզ ասացի զայդ. ահա՛ եղև ստորասութիւն. իբր թէ՝ ասացի՛: - 787

**ՀԱՑ +** Ութերորդ՝ զի *հաց* և բաժակ պատարագէր: - 50. Երկրորդ՝ մարդկան քահանայութիւն նիւթական խորհրդով ներգործի. որպէս *հացիւ* գինեաւ և այլով. իսկ նոցայն աննիւթութեամբ կատարի: - 139. Չորրորդ՝

զի նիւթք եղեն երկնաւոր խորհրդոյն. որպէս ի տնկոց փայտ խաչին. և յայլ բուսոց *հաց* պատարագին և գինի. և ծէթ մեռոնի կազմեցաւ: - 212. Որպէս *հաց* մարմնոյն քրիստոսի ըստ գոյացութեան և ներգործութեան անապական է. թէ և փոփոխի ըստ արտաքին որակացն: - 223. Այլք ասեն թէ՝ խաղո՛ղ էր. կամ ցորեան. զի զգինին եւ գրաւական կենաց՝ և *զհաց* մարմնոյն: - 224. Երեսունգ, Երեսաց *հացն*. և գառն. և աշտանակն. և քահանայական զգեստն: - 284. Եօթանասունևմի, Ո՛չ *հացիւ* կեցցէ մարդ: - 285. Այլք զդողդոճալն ասեն. որ և *հաց* և ջուր չկարէր ի բերանն տանել: - 287. Ուր եկեալ աբրահամ, և նա՛ ել ընդ առաջ նորա ջերմ բաղարջ *հացով* և գինեաւ օրինակ տէրունեան խորհրդոյն: - 300. Իսկ քահանայ, զի *հաց* և գինի պատարագ մատոյց: - 300. Նախ՝ զի մելքիսեդեկ ունէր պատարագ *հաց* և գինի. և աբրահամ ո՛չ ունէր: - 300. Այլ մելքիսեդեկին էր նշանակ յաւիտենական պատարագին քրիստոսի ի տեսակ *հացի* և գինւոյ: - 301. Ութերորդ՝ զի մելքիսեդեկ պատարագ *հաց* և գինի մատոյց աբրահամու: - 302. Եւ ծնեալքս յաւազանէն հաստատիմք անմահ կերակրովք *հացիւն* որ յերկնից իջեալ: - 308. Հինգևժերորդ՝ որք աստ երկիր պագանեն քրիստոսի, կենաց *հացիւն* կերակրին որպէս եղբարքն յովսեփայ: - 314. Վեշտասաներորդ՝ եղբարքն յովսեփու ո՛չ լցան *հացիւ* մինչև եկին առ յովսէփ: - 314. Չորեքտասաներորդ, մովսէս *հաց* զմանանայն ետ և լորամարգ ի ծովէ՛: - 329. Եւ տէր մեր *զհացն* աճեցոյց ապերախտ ազգին, և զձուկն ի ծովէն: - 329. Այլ և զմանանայն *հաց* հրեշտակաց կոչէ մարգարէն դաւիթ: - 338. Վեցերորդ՝ զի յերկնից իջեալ *հացին* է օրինակ որ է կերակուր իմանալի հրեշտակաց: - 338. Եւ *զհաց* մարմնոյն քրիստոսի՝ որք զբոլոր և որք զմասն ճաշակեն՝ միո՛յ կենաց հաղորդին: - 339. Գոյացութիւն *հացին* փոխեալ է ի գոյացութիւն մարմնոյն քրիստոսի և է՛ անապական. իսկ քանակն և որակն մնացեալ է դեռևս փոփոխելի. և յայնմանէ փոխարկեպին այլայլմունք ինչ: - 339. Եւ զի անապակա՛ն է գոյացութիւն *հացին* աստի՛ յայտ է, զի կեանք և անմահութիւն տայ ճաշակողացն: - 339. Նա՛խ՝ սեղան երեսաց *հացին* և գառին ի հիւսիսոյ կողմն: - 346. Ա՛րդ՝ **գ** *հաց*՝ և գառն խորովեալ դնէին յառաւօտուն. և չորրորդ մասն դորակի գինւոյ. նոյնպէս և յերեկոյն հանապազորդ: - 346. Ի խորհուրդ կենսատու *հացին* որ յեկեղեցին: - 346. *Յացն* ողջախոհքն մարմնով հոգւով և մտօք: - 346. Վեցերորդ, խմորունն ո՛չ է կենդանի *հաց*. այլ թոյլ: - 356. Վասն է՞ր յերեսաց սեղանն *հաց* և գինի և գառն դնէին. և մեք զգառն ո՛չ դնեմք: - 357. Այլ զգալապէս *հաց* և գինի աւանդեաց, զայն պատարագեմք: - 357. Մետասաներորդ, բոլորապտուղ. որ է հանապազորդ գառն խորովեալ յառաւօտն և յերիկոյն մին *հացով* և **դ** մասն դորակի գինով: - 359. Եւ այլ **բժ**ան *հաց* ի վերայ առաջաւոր սեղանոյն **զ զ** *հաց* զոր սրբութեան *հաց* կոչէին շաբաթէ ի շաբաթ եդեալ: - 359. Այլ և յիսներեկին **է է** գառինս. և ի նոր մտիցն կրկին *հաց* ևս: - 359. Այլ և նաշիհ. զի *հաց* կենդանարար և հատ ցորենոյ կոչեցեալ. ճնշեալ չարչարանօք և որոշեալ ի թեփոյ մեղաց: - 361. Դարձեալ՝ իւղով զանգեալ բաղարջն և նոյն չափ իւղովն որ չափ մասն գինւոյն. այն է՝ զի ընդ օրհնութեան բանին աստուծոյ՝ և հոգին սուրբ իջանէ ի *հացն* և ի բաժակն և կատարէ՛ մարմին և արիւն քրիստոսի: - 361. Իսկ ի ներսն, **ա**՝ *հացին* երեսաց և գառին. **բ**՝ խնկոցն. **գ**՝ շօթին և *զհացին*. **դ**՝ մին ա՛յլ **զ** *հացին*. զի **ժբ** *հաց* էր. և **բ** սեղան: - 364. Նոյնպէս և փոխ *հացի* և այլ ինչ իրաց: - 375. Զի որք զերեսաց *հացն* ի սեղանն բառնային՝ սարկաւագունք են: - 379. Եւ նոցա մանանայ յերկնից ետ և տրտնջէին և սնոտի՛ *հաց* կոչէին: - 386. Նա՛խ՝ վասն ժողովրդեանն ասէ, թէ ոչ միայն *հացիւ* կեայ մարդ. որպէս ասաց ադամայ ուտել *զհաց* քրտամբք: - 397. Երկրորդ՝ զի **խ** ամ յանապատին *հաց* ո՛չ ետ նոցա. այլ մանանայ և զայլսն. զի բանիւն աստուծոյ կերակրեցան հոգւով. և ո՛չ մարմնական *հացիւ*: - 397. Չորրորդ՝ *հաց* ի յերկնից իջեալ մանանայն կենարար. և բանն աստուծոյ նոյն ինքն տէրն մեր. որպէս ասաց առ փործիչն թէ՝ ինև կերակրին ամենայն սուրբք և ո՛չ *հացիւ*: - 397. Հինգերորդ՝ նոյն ինքն մարմինն սուրբ ո՛չ թէ *հացիւ* միայն կայր որպէս հասարակ մարդ. այլ բանիւն կենդանի ի նմա՛ միացեալ: - 397. Վեցերորդ՝ ո՛չ միայն *հաց* է հաղորդութիւնն. այլ հոգւովն սրբով օրհնեալ և միաւորեալ ի բանն աստուած, որով անմահ կենդանութիւն տայ ճաշակողացն: - 397. Եօթներորդ՝ որպէս *հացն* մարմնո՛յ է կերակուր, և բանն իմաստութեան աստուծոյ՝ հոգւոյ...: - 397. Իններորդ՝ մանուկն յարգանդի ո՛չ *հացիւ* կեայ. այլ հրամանաւն աստուծոյ կերակրի ընդ պորտն զինն ամիս. որպէս տնկականք, և որպէս նոյ ի տապանն. մինչ ելանէ յարգանդէ...: - 397. *Զհացն* աճեցոյց յանապատին և զձուկն: - 399. Մետասաներորդ՝ Զսուրբ *հացն* եկեր դաւիթ: - 412. Եւ այն որ վիճա՛կն է՝ ծիրանեգոյն հանդե՛րձ է. որ զսեղան *հացին* և զխնկոցն ծածկէին. և տեսութիւն կամ փրկութիւն թարգմանի: - 425. Վասն է՞ր կոչի *հաց* սուրբ: - 427. Նոյնպէս և *հաց* պիղծ կոչի խմորունն և հասարակացն: - 427. Վասն է՞ր ի սրբութեան *հացն* համարձակեցաւ դաւիթ: - 427. Երրորդ՝ ի տիպ երկնաւոր *հացին* որ բաշխելոց էր քրիստոնէից: - 427. Եւ յետոյ բաշխումն նշխարաց. որպէս դաւիթ բաշխեաց ամենայն իէլի բլիթ մի *հաց*, և պատառ մի ի տապակէ՛ և ի կասկարայիցն: - 431. ...և Դարձեալ՝ նոյն ինքն քրիստոսի է իշխանութիւնն որ աստ լուծանէ ի ձեռն քահանային. և իշխանութիւն նորա ո՛չ

տկարանայ երբէք. որպէս *զհաց* և զգինին կատարէ և զայլ խորհուրդս. նոյնպէս և աստ: - 433. Երեսունևէ, *զհաց* սրբութեանն բաշխեաց մանկանցն. և տէրն *զհացն* սուրբ և երկնային հաւատացելոց: - 437. Եւ *հաց* ոչ ուտել և ջուր ոչ ըմպել. զի անընդունելի՛ էր մարմին և արիւն զոհիցն: - 442-443. Դարձեալ *հաց* ոչ ուտել՝ զբարկութիւնն նշանակէ: - 443. Զի յորժամ գայր ագռաւն ի միոյն բերանն *հաց* դնէր աստուած, և ի միոյն միս. և ամբողջ բերէին առ նա: - 443. *Հացն* հրեշտակաց՝ կերակրի: - 470. Դարձեալ պատճառե՛ն թէ՝ յետ յարութեանն եկեր ձուկն ընդ աշակերտսն. յորում կրակեաղ կայծականց տեսին և ձուկն խորովեալ և *հաց*. և օրն էր չորեքշաբաթի. և ի **ե** շաբաթի համբարձաւ: - 511. Դարձեալ զորօրինակ, մարմինն քրիստոսի մի և նոյն էր ի խաչին բևեռեալ, և մի և նոյն մարմինն է ի բազում նշխարս միաւորեալ և ո՛չ բազմացեալ. զի նոյն է գոյացութիւն *հացին* և գոյացութիւն մարմնոյն քրիստոսի: - 530. **Զորօրինակ, քահանայ ոք ի վաճառանոցն ի բազում *հացս* և ի գինիս ասասցէ «ա՛յս է մարմին իմ և արիւն իմ» ո՛չ կատարի. զի ոչ ունի զդիտաւորութիւնն.** նոյնպէս և աստ: - 539. Երրորդ՝ զբոլոր *հաց* պատարագին ո՛չ հանել ի սեղանն. այլ մասն ինչ: - 553. Վեցերորդ՝ և *զհաց* պատարագին ձիթով օծանել: - 553. Նա՛խ՝ *զհաց* պատարագին բաղարջ առնել: - 553. Եւ ի *հաց* պատարագին զբոլորն մատուցանեն և ո՛չ մասն ինչ, լատինք և հայք և ասորիք. իսկ յոյնք ո՛չ: - 554. Զոր օրինակ զանգուած ինչ թունիւք ապականեալ լինի. ամենայն *հաց* ի նմանէ նիւթեալք մահաբերք են: - 592. Հաղորդութիւնն է խորհուրդ՝ յորում պարունակի քրիստոս ի ներքոյ ձևի *հացի* և գինւոյ. և յերկոքին մասունքն է բոլոր քրիստոս: - 594. Նիւթ այսմ խորհրդոյս է՛ *հաց* ցորենոյ, և գինի որթոյ: - 594. Իսկ ձև այսմ խորհրդոյ ի վերայ *հացին*, «Ա՛յս է մարմին իմ»: - 594. Այլ և մարգարէն մովսէս դնէր յերեսաց սեղանն գառ մի խորովեալ. և *հաց* և գինի և չորրորդ մասն դորակի հանապազորդ. և ջուր ո՛չ դնէր: - 595. Որ էր խորհուրդ անմահ գառինն. և *հացն* և գինին մարմին և արիւնն սուրբ: - 595. Դարձեալ՝ մելքիսեդեկ *հաց* և գինի մատոյց պատարագ աբրահամու և ո՛չ ջուր. որ նշանակէր զճշմարիտ պատարագն քրիստոսի. ապա ուրեմն ո՛չ է պարտ խառնել ջուր: - 595. Որք ասեն՝ պա՛րտ է յամենայն աւուր ջերմ *հաց* հանել ի սեղանն և անապական բաժակ. զի անապական արեամբն քրիստոսի փրկեցաք: - 595. **Զի ասելն «ա՛յս է մարմին իմ» զէութիւն *հացին* կատարեաց:** - 596. ...վասն որոյ անխմոր *հացիւ* և անապական բաժակաւ կատարեմք զխորհուրդ մարմնոյ և արեան նորա: - 597. Երկրորդ՝ տեսակ *հացին* և գինւոյն: - 597. Նա՛խ՝ զի քրիստոս մի *հաց* էառ ի ձեռն ի սեղանոյն և օրհնեաց. նոյնպէս և զմի գինի: - 597. Երկրորդ՝ զի հրամայեաց եզական բանիւ «ա՛յս է մարմին իմ. և ա՛յս է արիւն իմ». որ զմին *հացն* նշանակէ՛: - 597. Չորրորդ՝ ի յօրինակն մի *հաց* և մի գառն խորովեալ լինէր. որ ընդ մասին գինւոյ դնէին յերեսաց սեղանն: - 597. Եւ թէ ոք ասիցէ, կարողութիւն ունի քահանայն բազում *հացս* օրհնել: - 597. Ասեմք թէ՝ կարողութիւնն է ի դիտաւորութիւն. և դիտաւորութիւնն է ի կոպարն որ է մին *հացն*. որ ասաց «այս է մարմին իմ». ապա ուրեմն ո՛չ կարէ զբազում *հացս* օրհնել: - 597. Եւ թէ ասեն՝ կարէ՛ մին քահանայն ի մին ժամս բազում տղայս մկրտել. ապա և կարէ՛ բազում *հացս* օրհնել: - 597. Եւ դարձեալ ասեմք թէ՝ ամենայն *հացն* օրհնեցաւ այսօր. վաղիւն զիա՞րդ օրհնեն: - 597. Եւ այսպէս պարտ է կամ զօրհնեալն դարձեալ օրհնել որ է սուտ. կամ ամենայն *հացն* ո՛չ է օրհնեալ այլ մինն: - 597. Պատահմունք և որակն մնան ի *հացն* և ի գինին. իսկ գոյացութիւնն փոխարկի ի մարմին և արիւնն քրիստոսի վասն **դ** պատճառի: - 597. Նա՛խ՝ որպէս *հացն* նոյն է ըստ ձևին, այլ այլ գոյացութիւնն է եղեալ մարմին քրիստոսի...: - 598. Երկրորդ՝ երբեմն նշանակէ *հացն* ցամաք զբանն ի յերկնից իջեալ. և գինին զմարդկութիւնն...: - 598. Եւ երբեմն *հացն* նշանակէ զմարմինն սուրբ, և արիւնն զանմահ կենդանութիւնն: - 598. Երրորդ՝ բաժան ի միմեանց օրհնեմք *զհացն* և զբաժակն. և յետոյ միաւորեմք ի ճաշակելն. - 598. ...այլ ո՛չ յօրհնեալ *հացէն* և ի գինւոյն. այլ էառ ի սեղանոյն *հաց* և եթաց ի ջուր ինչ կամ ի սուսկ գինի՝ և ետ: - 599. Զի թէ յօրհնեալ *հացէն* այլոցն ամենեցուն ցամա՛ք էր տուեալ և նորա թաց, պատճառ լինէր մատնութեանն յուդայի. և յիրաւի: - 599. Եւ այս է ճշմարիտն. քանզի յօրհնեալ *հացէն* որ բաշխեաց և ետ առաքելոցն, այլ ո՛չ մնաց: - 599. ...զի յայտնապէս զարիւնն ո՛չ տայք, և ծածկապէս զմարմինն. զի յօրհնեալ մարմնոյն ո՛չ տայք. այլ սուսկ *հաց* որ ի բեմն: - 599. Նա՛խ՝ եթէ ո՛չ զմարմինն տան ժողովրդեանն. այլ սուսկ *հաց* և գինի. զի մարմին քրիստոսի այն մինն է որ օրհնեցաւ որպէս ցուցաւ ի վերոյ: - 600. ...զի սուսկ *հաց* տաս և ո՛չ զօրհնեալն: - 600. Զայս կարգս կացոյց քրիստոս յորժամ ի ժամ ընթրեացն *զհացն* ի մարմին իւր և զգինին ի յարիւն իւր փոխեաց: - 606. ոմն երթայ ի սապատն և *հաց* առնու...: - 620. Եւ դարձեալ՝ ի հնումն վեց դնէին *զհաց* երեսացն. և յաւուր շաբաթի կրկին **զ**: - 629. Եօթներորդ, **զ զ** դնելն *զհացն* առաջաւուր ըստ շաբաթուց: - 653. Երկրորդ, զի աղօթք՝ հոգւոյն է՛ կերակուր, և *հացն* մարմնոյն...: - 654. Եւ զայս ի քրիստոսէ ուսաք. զի այսպէս խաչանման բեկանէր *զհացն* երկոքին ձեռօքն: - 655. ...զի երկուքն բաժանեն զմի *հացն*...: - 655. Նա՛խ՝ զի այսու՝ խաչին քրիստոսի հաղորդեսցուք. և սուրբ *հացին* զոր ի վերնատունն բաժանեաց: - 655. Վասն այն ընդ քրիստոնէի՛ց պարտ է բաժանել *զհացն*...: - 655. Եւ

միջին սրբութին է կայանք հոգւոցն. ուր աշտանակն լուսոյ և խունկն և *հաց* երեւսացն: - 682. ...զի լցցին նոքա ի բոլոր մարմնոյն որպէս գարեղէն նկանակ *հացիցն*: - 725

**ՀԱՑԵՐԷՑ +** Ուքեժ, եւ կինն ի սամփոնէ և եղև *հացերիցուն*. վասն որոյ և տուժեցան հրով: - 422-423

**ՀԱՑԻ +** Որպէս յորժամ լցան մեղք ամուր *հացւոյն* ի չորրորդ դարուն՝ սատակեցան ի ձեռն յեսուայ: - 351. Զի՞նչ է որ ընդ դովտայ որդիսն և եսաւայ ո՛չ հրամայեաց կռուիլ. այլ ընդ ամուր *հարցւոյն*: - 393

**ՀԱՑՏՈՒ +** Այսպէս *հացտուն* ամենեցուն աստուած է...: - 230

**ՀԱՒ +** Երրորդ՝ յայլոց նոյնը. որպէս զձու կաքաւի և սագի թխէ՛ *հաւ*. և նոյն կաքաւ, և սագ ելանէ: - 53. Հինգերորդ՝ արմաւ *հաւուն* զոր այլք փիւնիկ ասեն որ է յարաբիայ. որ ծախէ՛ ինքն զինքն հրով, և դարձեալ կենդանանայ: - 53. Որպէս զձու *հաւի*. դեղնուցն ի մէջ ջրոյն. և մզղնա տեսակն ի խեճեպոյն է ամրացեալ: - 181. Այլ և ինչեն *հաւք* զանազան ձայնս: - 197. Եւ զի *հաւք* առաւելուն յերգս: - 197. Վասն որոյ ջերմութեամբ զցրտութիւն լուծանէ որ յերկաքն և ի սառն. և չորութեամբ զհիւքն մերժ որ ի ձու *հաւի* և յայլսն: - 202. Եւ որ *հաւուց* նման արտաբերէ, թեթևամիտ է: - 247. Իսկ որք ի **խ** աւուրս ծնանին և կամ ի **ի**, որպէս *հաւ*. ունին նոքա զխորհուրդ չորից տասանց և չորից հնգից...: - 263. Եւ դարձեալ՝ որպէս ձու *հաւի* և ձու քարեայ՝ նման ասին միմեանց, այլ ո՛չ պատկեր. զի ո՛չ են ի միմեանց ելեալ. և ո՛չ զնոյն էութիւն ունին: - 273. Բորոտից սրբիլն **բ** *հաւ*. զմինն զենուլ և զմինն յարիւն թաթաւել և թողուլ. և զառն և տատրակ և աղաւնի: - 359. Վասն սերմնակաթին սրբութեան **բ** *հաւ*: - 359. Բայց յենքեանց սատակեալն՝ և գազանաբեկն՝ և գիշատեալն ի *հաւուց*՝ մի՛ ուտիցի: - 366. Զի՞նչ է **բ** *հաւն* ի սրբիլ բորոտին. մին զենեալ, և միւսն արեամբն թաթաւեալ և ի բաց թողեալ: - 368. Կրկին *հաւն* կենդանի սուրբ՝ նշանակէ՛ զհոգւոյ և զմարմնոյ կենդանութիւն ի ձեռն ապաշխարութեան: - 368. Զենեալ *հաւն*, մարմինն մեռեալ վասն մեղաց: - 368. Եւ միւս *հաւն* թաթաւեալ յարիւն, հոգին կենդանի. որ կարեկից լինի մարմնոյն և զսրբութիւն նորա հանէ՛ յուսով ի դաշտն որ է՛ յերկինս: - 368. Դարձեալ՝ կրկին *հաւն* նշանակէ՛ զքրիստոս. Փայտն, զխաչն. և Կարմիր արիւնն. զի աստուծոյ է արիւն. և Զոպայն, զհոգին սուրբ: - 368. Իսկ կրկին *հաւն* մեռեալ և կենդանի. քրիստոս մեռեալ մարմնովն, և կենդանի աստուածութեամբն: - 368. Երկու *հաւն* կրկին զօրութիւնք ի մեզ. տեսնական և գործնական: - 368. Հմայն է՝ որ զտեսս աչաց կամ զձայն հմայէ՛. և զթռիչս և զկըռիչս *հաւուց*. և զձայն կրակի և զաճառաց. և զդրան, կամ աքիս տեսեալ. կամ բէճ. կամ մունճակ. կամ այլ ինչ այսպիսի...: - 388. Ասեմք թէ՝ և զձու *հաւի* և զկաքն ո՛չ զենումք, կե՛ր և զայն ի պահոց. զի համատեսա՛կք են: - 511. Երրորդ՝ զի պա՛րտ էր քրիստոսի հովուել զպարզամիտ աշակերտսն որպէս *հաւ* զձագս, և մայր զմանկունսն. և թէ ի սկզբանէ զհոգին ընկալեալ էին՝ ո՛չ էր պիտոյ հովուել զնոսա: - 521

**ՀԱՒԱԽՕՍ +** Դարձեալ և տէրն բաժանէ զիասակ մարդոյ ի **դ**. յերեկոյ. ի մէջ գիշեր. ի *հաւախօս*. և ընդ առաւօտս: - 265. Դարձեալ և տէրն բաժանէ զիասակ մարդոյ ի **դ**. յերեկոյ. ի մէջ գիշեր. ի *հաւախօս*. և ընդ առաւօտս... Երեկոյ է ի տղայութենէ ի մանկութիւն... Մէջ գիշեր է երիտասարդութիւնն... *Հաւախօս*՝ ալևորութիւնն: Առաւօտ՝ ծերութիւնն: - 266. *Հաւախօսն* է ալևորութիւնն. և Առաւօտն ծերն է. որ մերձ է ծագման հանդերձելոյ աշխարհին: - 622

**ՀԱՒԱՆ +** Այլ մեծն Ներսէս այսմ ո՛չ է *հաւան*: - 251

**ՀԱՒԱՆԱԿԱՆ +** Նա՛խ՝ *հաւանական* ըստ կերպի դաւանութեանն հաւատոյ...: - 457. Իսկ *հաւանական* պատասխանիք սրբուհւոյ կուսին մարիամու են **դ** բանք: - 465. Թերևս հետևելով ո՛չ ինքեան, այլ ուղղակին խորհրդոց *հաւանականք* գոն: - 782

**ՀԱՒԱՆԵԼԻ -** Եւ այս *հաւանելի՛* երևի վասն կրկին պատճառի: - 188. Այլ որ *հաւանելին* է՝ կրկին է: - 208. Ոմանք ասեն թէ աւանդիլ հոգւոյն քրիստոսի, աւազակն եմուտ յերկրաւոր դրախտն ուստի ել ադամ. և չէ՛ *հաւանելի*. զի անդ մարմնովն եմուտ յետ յարութեանն: - 495

**ՀԱՒԱՆԻ +** *Հաւանեցան* տեառն շնորհք, և սխալանացն տկա՛րս անօթոյ: - 789

**ՀԱՒԱՆԻՄ +** Վասն որոյ ո՛չ *հաւանին* ուղղութեան վարդապետաց: - 33. Զի՞նչ ասեմ, զի հոգւով հնազանդեցաւ ադամ, և մտօք *հաւանեցաւ*, և մարմնով զգործն ի կատարումն էած: - 50. Մեք ո՛չ պատրիմք. և ո՛չ *հաւանիմք* նոցա: - 83. Նա՛խ՝ զի մոլորեցին *հաւանեալք* նոցա և կորիցեն: - 336. Նա՛խ՝ զի անհաւա՛ն էր ժողովուրդն և անկատար, զզալի տեսլեամբ և ձայնիւ զարհուրեցոյց. զի մի՛ մոռասցին. այլ *հաւանեսցին* և ի միտ պահեսցեն: - 341. Նա՛խ՝ զի յորժամ ճշմարիտ սրբութիւնն գայցէ, *հաւանեսցին* որ է՛ արիւնն քրիստոսի...: - 383. Երկրորդ՝ զի գործունեայք և *հաւանօղքն* այնպիսեացն պատժեսցին. որպէս ի յերկրորդ օրէնքն հրամայէ՛ սպանանել այնպիսիսն. իսկ հաստատունքն ի հաւատս՝ վարձս առցեն ի հաւատոց իւրեանց: - 388-389. Ապա ուրեմն ի ժամանակիս յայս ընկե՛ր են սաւուղայ որք սակաւ մի կարծեօք *հաւանին* երազոց կամ վիճակաց և ռամտեսաց և այլոցն: - 429. Իսկ որ բոլորովին *հաւանին* վիո՛ւկ են և

արտաքսեալ յեկեղեցւոյ: - 429. Չորրորդ՝ ընդէ՞ր *հաւանեցաւ* աստուածս կոչել զինքն և երկրպագել նմա. զի նա մա՛րդ էր: - 429. Իսկ նստիլն ի յաթոռ՝ ասէր պատրել զաքայաբ, թոյլ տալն է աստուծոյ որ մարդ իւր կամօքն *հաւանի* չարին և պատժի: - 444. Եւ շուրջ զնովաւ հրեշտակք ամենայն ոչ *հաւանեցան*. զի նոքա զամենայնն ճշմարիտ խօսին. և բարի առնեն մարդկան. և յապաշխարութիւնն խնդան. իսկ սուտ խօսիլն և չար առնելն և ի վիշտս ուրախանալ՝ դիւա՛ցն է որ են չար հոգիքն: - 444. Եւ ո՛չ ի *հաւանելն* յամր որպէս սառա: - 465. Նոյնպէս պա՛րտ է ամենայն մարդոյ յորժամ լսիցէ զբանն, նախ խորհիլ և հարցանել, և ապա՛ *հաւանիլ*: - 465. Եւ *հաւանիլ*՝ այս է հնազանդիլ և ուսանիլ: - 465. Ապա թէ առանց ընտրողութեան ամենայն բանի *հաւանին* կորիցեն որպէս եւա: - 465. Եւ պետրոս անտիոքու պատրիարգն և սուրբն պարսամ գրեցին ի հայք և զգուշացուցին. և նզովեցին *զհաւանեալսն* մարկիանոսի: - 543. ...որ եզր եղև հաւատոյ ուղղութեան. և հրամանաւ հերակլի *հաւանեցաւ* ժողովոյն քաղկեդոնի. կացեալ **զ** կաթողիկոսք նոյն աղանդովն որ են այսոքիկ. Եզր. Մովսէս. Անաստաս. Իսրայէլ. Սահակ. Եղիա: - 545. Եւ երկրորդ յանցումնէ՝ որք մտօքն հեշտացեալ մեղկանան ընդ տեսութեանն. և *հաւանին* խոկացեալք ի նոյն: - 558. Այլ ես *հաւանիմ* որք ասեն **ժ** գոլ զմեծութիւն մեղաց. և այն համեմատի ընդ **ժ** ստորոգութիւնն: - 565. Դարձեալ զանազանին սոքա. զի մեղք խորհրդոյն կայանայ յերիս. ի տեսանելն, ի *հաւանիլն*, և ի կամիլն: - 568. Եօթնեժ, *հաւանի* խրատուց նորա: - 576. Զի հաւատովն *հաւանիմք* աստուծոյ. յուսովն ապաստանիմք ի յաստուած, և սիրեմք զաստուած: - 578. ...և ապա *հաւանեցաւ* և ասէ «կամ աղախին տեառն». և ապա՛ յղացաւ և ծնաւ զբանն աստուած մարմնացեալ: - 610. Զի բռնութեամբ և առանց *հաւանելոյ* միմեանց՝ այսինքն փեսային և հարսին՝ ո՛չ հաստատի պսակն: - 610. այսինքն զի տեսեալ *հաւանեսցին* միմեանց: - 610. Զայս ունի խորհուրդ, որ հարսն և փեսայն յառաջ քան զպսակն տեսանեն զմիմեանս. և *հաւանին* սրտիւք և կամօք և ապա՛ պսակին: - 610. Յինգերորդ, ասէ աստուածաբանն գրիգոր՝ եթէ *հաւանիմ* իմաստնոյն բանի՝ թէ հոգի բարի և աստուածասէր յորժամ ի մարմնոյն արձակի, կայ և մնայ նմա բարին որ լինի: - 691. Իսկ որք *հաւանին* նմա՝ կորնչին ի տանջանսն յաւիտենից: - 706. Վասն որոյ ի կամս ապաստան ներեսցուք *հաւանել* ճշմարտութեանն: - 759. Որ և աղաչեմ զբարեմիտ հանդիպօղսդ՝ եղբայրական սիրով *հաւանիլ*. զպակասն լնուլ և զաւելիսն կշռել: - 772. Եւ նոյն ինքն տէրն բոլորից վկայ քարոզութեան զգործս կատարէր. զի սովորութիւն է մարդկան քան զլուր լսելեաց տեսութեան աչաց *հաւանիլ*: - 785

**ՀԱՒԱՆՈՒԹԻՒՆ +** Պատասխանեմք թէ՝ ամենայն *հաւանութիւն* որ է կամք յետ խոկմանցէ և իմաստութեանց. և քրիստոս է աստուծոյ իմաստութիւն ըստ առաքելոյ: - 36. Սակայն զչար խորհուրդն ո՛չ կարէ ածել ի ներքս որ միայն *հաւանութեամբն* է չար: - 145. Երկոտասաներորդ՝ խօսեցան զառաջինն ի *հաւանութիւն* փեսային: - 422. ...հաստատի *հաւանութեամբ* սրտիցն յորժամ յայտնեն բանիւ...: - 609. Եւ թէ՝ դատաստանն աստուծոյ է՛ միածև բազմածև և ամենածև. և այլ սոյնպիսիք եթէ բերեն վկայութիւն. և թէ մտացածին բանիւ *հաւանութիւն* տան: - 705. Եւ է՛ հասարակ շնորհ, *հաւանութեամբ* անձնիշխան կամաց՝ պատրաստել զինքն առ ի փրկութիւն օգնականութեամբ շնորհին: - 783. Իսկ սիմոնի և այլոցն՝ փորձիւ և թերութեամբ է *հաւանութիւն*: - 785. Իբր ասութիւն է այլ ո՛չ *հաւանութիւն*: - 787

**ՀԱՒԱՆՈՒՄՆ +** ...զի երկուց կամաց *հաւանումն* հաստատէ՛ զպսակն: - 609. Իսկ *հաւանումն* երկուց կամացն՝ հաստատութիւն է պսակին: - 610

**ՀԱՒԱՍԱՐ +** Երրորդ, զի թէ է՛ ամենայն ի հարկէ, ո՛չ լինի անձնիշխան կամաց գործք. որ *հաւասար* է յերկոսինն. այսինքն յառնել և յո՛չ առնել: - 8. Կամ է՛ ի ներընդունակ պատճառն իւր. որ *հաւասար* է ի լինիլն և յոչ լինիլն. որպէս ելանել ի զբօսանս, կամ ո՛չ. լինիլ անձրև, կամ ո՛չ: - 10. Իսկ թէ է ի պատճառն ներընդունական, յայտնի՛ է որ *հաւասար* ունի զգոլն և զո՛չ գոլն որպէս ասացաւ: - 10. *Հաւասար* են ի յոչինչ գոլն չարն որ ներհականայ բարւոյ, և ոչինչն որ ներհականայ էի: - 23. Իննևտասներորդ՝ Զի՞նչ է *հաւասարն* աստուծոյ, և բարձրացոյցն, և շնորհեացն անուն: - 30. Արդ՝ կռապաշտն և հերձուածօղն *հաւասա՛ր* են յամբարիշտ գոլն. զի որպէս շուն դառնայ ի փսխած իւր. այսինքն զի նա ո՛չ ունէր, և սա՛ ուրացաւ և դարձաւ անդրէն: - 33. Նմանապէս *հաւասարի* պաշտօն հերձուածողաց և հրէից: - 34. Պատասխանեմք թէ՝ անծնելութիւնն և կամ ծնելութիւնն ո՛չ ասի միայն աստուածութիւն. զի աստուածութիւնն *հաւասա՛ր* է Երրորդութեանն: - 38. Իսկ դուք զի ուրանայք զհոգին *հաւասար* գոլ հօր և որդւոյ, և կրտսե՛ր ասէք քան զորդի: - 39. Դարձեալ ասի մեծ ըստ պատճառին, և *հաւասար* ըստ բնութեանն: - 39. Իսկ միաւորութեանն իմանալ՝ ոչ է ինչ մեծ. այլ է *հաւասար* որպէս առօղն՝ նոյնպէս և առեալն զոյգ աստուած և մարդ: - 39. Այս է մեկնութիւնն թէ՝ *հաւասարն* աստուծոյ՝ յափշտակութիւն և զրկումն չհամարէր իւր զծառայի կերպարանս առնուլ. զի ո՛չ ունէր յայլմէ կասկած խլելոյ զփառսն. զի ի՛ւրն է սեպհական: - 39. ...որ է՛ անճառ և նախքան զյաւիտեանս ծնունդ ի հօրէ՛, *հաւասա՛ր* է հօր և ոչ փոքր: - 40. Դարձեալ հարցանեն, թէ *հաւասար* է հոգի

որդւոյ, զի՞նչ արգելու ո՛չ լինիլ որդի. ապա թէ ո՛չ՝ նւա՛զ է քան զորդի: - 53. Ասեն դարձեալ, աւետարանն յօհաննու ասէ, «ամենայն ինչ որդովն եղև». ապա ուրեմն և հոգին եղեալ է ի ձեռն որդւոյ. զիա՞րդ է *հաւասար* որդւոյ կամ հօր: - 53. Ապա ուրեմն հոգին սուրբ է *հաւասար* աստուած ընդ հօր և ընդ որդւոյ. արարչակից և մշտնջենաւորակից և փառակից: - 60. Այլ այսոքիկ *զհաւասար* պատիւն բացայայտեն: - 61. Զի եթէ զոյգ և *հաւասար*, ո՛չ գոյ առ նոսա կատարեալ բղխօղ. զի երկոքինն ի մի բղխողի տեղի են: - 63. Ապա ուրեմն աստուած է քրիստոս *հաւասար* հօր և հոգւոյն սրբոյ: - 72. Արդ բանն առանց մարմնոյն քրիստոս ո՛չ է. ապա ուրեմն յա՛յտ է զի միացեալ մարմնովն է՛ *հաւասար* և ի կերպարանս աստուծոյ տէր մեր յիսուս քրիստոս: - 72. Իսկ միւսն մա՛րդ էր բնութեամբ յարարեալ և ստեղծեալ բնութենէ. և խառնելով ընդ բանին՝ եղև առեալն որպէս առօղն զո՛յգ և *հաւասար* աստուած...: - 79. Նոյնպէս և քրիստոսն անուն՝ և տէր՝ և աստուած՝ և այլն՝ զո՛յգ և *հաւասա՛ր* է մարդկութեան իւրոյ և աստուածութեանն. և ո՛չ առաւել և նըւազ. կամ տկար և հզօր. կամ անգէտ և ամենագէտ. և որ ինչ այսմ նման: - 89. Այլ ամենազոյգ և *հաւասա՛ր* է միաւորութիւն փրկչին: - 89. Իսկ թէ զաստուածայինն բնութիւն, ահա՛ զերրորդութիւնն ասէք մարմնացեալ. զի բնութիւնն *հաւասար* է երից անձանցն: - 89. Համանգամայն՝ այսինքն բոլորովիմբ. կամ զոյգ և *հաւասար*. կամ միանգամայն: - 90. Իսկ զոյգ և *հաւասար*՝ ընդ դէմ է նոցա: - 90. Իսկ աստ *հաւասար* և զոյգ ասէ աստուած և մարդ՝ ըստ Գրիգորի աստուածաբանին. «զոյգ աստուած. որպէս առօղն՝ նոյնպէս և առեալն աստուած»: - 90-91. Այս է միտքն որ ասէ՝ համանգամայն աստուած և մարդ. այսինքն բոլորովիմբ և *հաւասար* և անբաժան աստուած և մարդ: - 91. Ասաց թէ՝ որ ի կերպարանս աստուծոյ էր բանն, այսինքն էակից հօր, ո՛չ ինչ զրկումն համարեցաւ ի ներգոյական փառաց զլինիլն *հաւասար* մեզ: - 93. Եւ դարձեալ՝ զի մի՛ կարծի միայն յանմարմնութեանն պատկեր հօր, ի վերայ էած և ի լինելութեանն *հաւասար* աստուծոյ գոլ նովին մարմնովն առանց յափշտակութեան: - 93. Որպէս ասի ներտրամադրեալ բանն պատկեր մտացն. նոյն և յառաջ բերեալն բան և թանձրացեալ՝ է՛ պատկեր նորին և *հաւասար* մտացն: - 93. Զիա՞րդ միայն ի դէմս բանին իցէ այն՝ որ ի կերպարանս հօր է և *հաւասար* աստուծոյ: - 94. Յայտնապէս ցուցանէ գիտութեամբ զինքն *հաւասար* հօր: - 97. որպէս ասէ աստուածաբանն Գրիգոր, (համարձակիմ և ասեմ *հաւասար* աստուած՝ որպէս առօղն՝ նոյնպէս և առեալն. զի անմարմինն մարմնացաւ. բանն թանձրացաւ. և աստուածն մարդ եղև. մի անձնաւորութեամբ՝ և միաւորեալ բնութեամբ. մի տէր. մի քրիստոս. մի որդի աստուծոյ և որդի կուսին: - 100. Ա՛րդ՝ որդի և հոգի անեղակից գոլով՝ *հաւասար* են հօր: - 114. Անմահութեամբ *հաւասարք* են. զի սկսեալք են և անվախճան: - 117. Այսու *հաւասա՛ր* են, զի ի միոյ կենդանական պատճառէ՛ են սկսեալք: - 117. Այսու *հաւասար* է, զի պա՛րզ է և միեղէն և բարձրագոյն տեսութիւն որպէս ասացաք: - 119. Եօթնևժերորդ՝ *հաւասա՛ր* է լուսով և ջերմութեամբ. զի ուր հասանի լոյսն անդ և ջերմութիւնն: - 127. Եւ տէր մեր *հաւասար* ողորմութեամբ և արդարութեամբ. զի որքան տեսանեն ողորմութեամբ՝ ձգտին առ շնորհին արդարութեան: - 127. Եւ կշռապէսն իցէ *հաւասար* ծագումն լուսոյն: - 127. Վասն է՞ր զանազանապէս տայ աստուած զպարգևս և ո՛չ *հաւասար*. որպէս առաւել տայ հրեշտակաց՝ և սակաւ մարդկան. և նըւազ կենդանեաց և տնկոց և անշնչից: - 130. Իսկ առողջ լսելիք և տկար՝ պատճառի ի համակարգս. և ի *հաւասարն* բնութեամբ. որք իմացմամբ և սիրով և ներգործութեամբ առաւել կամ նըւազ են. ուստի առաւել կամ նըւազ պարգևս ընդունին: - 131. Վասն է՞ր ապա ամենայն դասք *հաւասար* հրեշտակք կոչին...: - 136. Նախ՝ զի *հաւասա՛րք* են բնութեամբ. անմարմինք՝ հրեղէնք՝ իմացական՝ և այլն: - 136. Նմանապէս և այս փոխի ի յարութեանն, և հրեշտակաց *հաւասար* լինի և հոգւոյն: - 141. Եւ ի *հաւասարս*, որպէս յեղբարս և յընկերս: - 143. Իսկ *հաւասար* սիրով սիրէ մարդ զմարդ. և ընկեր զընկեր. այլ և մարդ զհրեշտակս. և հրեշտակք զմարդիկ. և *զհաւասար* արարածք են: - 143. Եւ այլք ասեն այսպէս հակառակիլ ընդ աստուծոյ, յորժամ ետես զինքն փառօք և վայելչութեամբ քան զամենայն դասս գերազանցեալ, կամեցաւ մեծ լինիլ ի վերայ ամենայնի և *հաւասար* աստուծոյ: - 149. Ո՞րպէս *հաւասար* և մեծագոյն: - 149. Իսկ առ աստուած կամքն և կարն *հաւասա՛րք* գոն. վասն որոյ հակադարձին ի միմեանս. զի զոր ինչ կամի՝ կարէ՛. և զոր կարէ՝ զնոյն և կամի՛: - 163. Երկրորդ՝ առաջին ստեղն է հայր. ոչ յումեքէ. միջինն որդի ծնունդ ի հօրէ. վերջինն հոգի բղխումն ի հօրէ և ելումն յորդւոյ. զի որդւովն երևի. և հարթ *հաւասար* աստուածութեամբ և արարչութեամբ: - 178. Երկրորդ՝ զի հաւասարութիւն և միաբանութիւն տարերաց անլուծանելի է. ըստ որում ներհակ որակօք *հաւասարք* են հակակայ. և միւսովն միաբանք: - 181. Եօթներորդ՝ զի է անդորր վայր. այսինքն *հաւասար* ընդարձակ և դաշտաձև գոլով: - 184. Իններորդ՝ *հաւասար* ունի զջերմութիւն և զլոյս: - 186. Այլ եերորդ էութիւնն է պարզ և *հաւասար*. առաւել և նուազ ո՛չ ընդունի: - 188. Եւ զի *հաւասար* և մէջ է տուընջեան: - 196. Նա՛խ՝ զի կշիռ և *հաւասա՛ր* են տիւ և գիշեր: - 197. Իսկ գարուն և աշուն *հաւասար* արդարութիւն է տուընջեան և գիշերոյ. վասն որոյ բուսանին սերմանիք: -

198. Նա՛խ՝ զի սերմնական զօրութիւնն է ի մէջն բնաւորեալ. ուստի բոլորապէս և *հաւասար* տայ շարժիլ տնկոյն: - 213. Իսկ մարդոյս հնարք և իմաստութիւնն բանականութեամբ է. վասն այն բազում է ի նոսա հնարք. և առաւել և նուազ, և ո՛չ *հաւասարք*: - 218. Ո՞րպէս ասեն թէ լուսնոյ կամարին *հաւասա՛ր* է: - 222. Զի այսպէս ի կազմուածոյ քո ուսցիս զբարեկարգութիւն և զպատիւ առ վերինս և առ ներքինս և առ *հաւասարս*: - 232. Զի արարիչն սոցա մի է բնութեամբ. և ըստ բնութեան *հաւասար*, և անձամբ յատուկ: - 237. Երկրորդ՝ զի ոչ նոյնպէս աւելի և նուազ. այլ երբեմն՝ և *հաւասար* ամենայն մարդկան: - 246. Իսկ որ *հաւասար* ի ճակատէն իջանէ ոչ բարձր և ո՛չ ցած, արիութեան և խոհեմութեան է նշան: - 247. Նոյնպէս և ի բանական որակութիւնս հոգւոյն՝ նման և աննման, *հաւասար* և անհաւասար բացատրեաց. այսինքն խոհեմ և տգէտ. հեզ և բարկացօղ. ողջախոհ և ցանկասէր. և այլ զանազան բարս բնական՝ մարդոյն: - 252. Դարձեալ **թ** խառնուա՛ծ է չորից տարերց ըստ կրկին քառից որակաց առաւել և նուազ, և իններորդն *հաւասար* է որ է ի մարդն. վասն որոյ ինն ամսեայ ծնանի: - 264. Դարձեալ **թ** թիւն պակա՛ս է ի **ժ**երորդէն. և մեք պակասեցաք յինն դասուց հրեշտակաց, որ նախ *հաւասար* էաք ի դրախտին. և կարօտացաք մարմնաւոր ծննդեան, նմանելով անասնոց...: - 264. Երկրորդ՝ *հաւասար* մասունքն: - 271. Վեցերորդ՝ ո՛չ առնու ի գլխոյն և ո՛չ յոտիցն. այլ ի միջացն. զի խրատէ՛ զմարդիկ ո՛չ *հաւասար* գլխոյն պատուել զկինն, և ո՛չ անարգել իբրև զոտք. այլ միջակ պատուով չափաւորել զնա: - 276. Քաղելով գործելն այն է, որ **ժե** կանգուն *հաւասար* բարձրացոյց, զի մեծահասակ կենդանիքն հանգիցեն: - 293. Երեք շնորհօք *հաւասարք* են մելքիսեդեկ և աբրահամ. այսինքն քահանայութեամբ, թագաւորութեամբ, և մարգարէութեամբ: - 300. Չորրորդ՝ անդրանիկ է հոգին քան զմարմին բնութեամբ և պատւով. թէպէտ *հաւասարք* են ամանակաւ գոյացեալք: - 309. Ապա յա՛յտ է՝ զի աստուած ինքն ինքեան նախկին և վերջին՝ *հաւասար* կամ անհաւասար ո՛չ ասի. վասն այն իւր անուն ո՛չ դնէ: - 312. Իսկ յայլմէ ո՛չ դնի աստուծոյ անուն. ո՛չ բնութեան. և ո՛չ անձնական. զի ո՛չ ոք է նախ քան զնա, և ո՛չ *հաւասար* նմա: - 312. Նոքա ո՛չ *հաւասար* մովսէսի ներեն զքրիստոս աստուած. զի մովսէս աստուած կոչեցաւ. և զնա մարդ խոստովանին սոսկ: - 350. Իբր թէ *հաւասա՛ր* ծանր է մեղք քահանայապետին և բոլոր ժողովրդեանն: - 358. Նոյնպէս և արդարութիւնն *հաւասար* է. զի ի գլխո՛յն է կենդանութիւն և մահ: - 358. Իսկ ի նորս՝ զկէս ընչիցն հրամայեցաւ տալ աղքատաց յաւտրնին. որ է՛ *հաւասար* հոգւոյն և մարմնոյն: - 372. Եւ տես, զի սոքա երեքեան տօնքս, այսինքն ամսամուտն, և պասքայն, և յիսներեակն, *հաւասար* ունին զմատուցմունքն տօնից: - 373. Երրորդ՝ զի *հաւասարք* են **գ** տօնքս. որպէս ծննդեան և յարութեան՝ նոյնպէս և հոգւոյն գալստեան **ը** օր տօնեմք: - 373. Չորրորդ՝ ազգս քրիստոնէից. *հաւասար* անցեալք ընդ յորդանան և մկրտեալք: - 391. Տեսանել՝ *զհաւասարս*: - 407. Հինգերորդ՝ բարձրագոյն էր մովսէս քան զյակոբ. կամ *հաւասար* նմին: - 409. Յորոց յայսցանէ յա՛յտ է, զի եթէ ապաշխարեալ լինի արգելեալն. կամ վախճանեալ է կապօղն. այլ ոք որ գերագոյն է կամ *հաւասար* կապողին, կարէ՛ արձակել զնա՛: - 409. Երկրորդ՝ զի ո՛չ ինչ անդամ զազրելի է ի մարդն. այլ ամենայնն *հաւասար* են յարդարութիւն. եթէ ոչ եկամուտ ինչ խառնեսցի ի նմա: - 469. Երրորդ որ ասէ «որդի» նշանակէ զհաւասարութիւնն ընդ հօր. զի որդին լսի *հաւասար* հօր: - 487. Իսկ որ ասէ՝ «նստաւ ընդ աջմէ հօր», աջովն իմանի *հաւասար* ի փառս աստուածութեանն հօր: - 521. Նախ՝ զի յետ յարութեանն *հաւասար* ետ զիշխանութիւնն...: - 546. Որ և զդատողական աթոռս՝ երկոտասանիցն *հաւասար* շնորհեաց: - 546. Այլ սոցա երեցունց *հաւասար* է հոգւոյն և մարմնոյն բարկութիւն. և առաւել մարմնոյն ծուլութիւն. և առաւել հոգւոյն ագահութիւն: - 559. Իսկ անիրաւելն է բանիւ առ վերինս և առ ներքինս և առ *հաւասարս*: - 568. Ութերորդ վասն սուրբ հոգւոյն որ է՛ *հաւասար* հօր և որդւոյ: - 572. *Յաւասարին* զսէր և զխաղաղութիւն: - 579. Ասեմք, թէպէտ նիւթն սակաւ է այլ բնութիւնն *հաւասա՛ր* է...: - 595. ...զի մին կաթ ջուրն և մին սափորն *հաւասար* են բնութեամբ: - 595. Հինգերորդ՝ որ *հաւասա՛ր* է բանն և ձայնն ի լեզուն. որպէս բարբառ խօսից: - 639. ...այլ հրեշտակաց *հաւասարք* են առանց փոփոխման. - 663. Հինգերորդ, ստեղծաւ մարդն *հաւասար* հրեշտակաց. և յորժամ մեղանչեաց՝ անասնոց հաւասարեցաւ ըստ դաւթի և ընդ նոսա ապականեցաւ և պատժեցաւ. - 724. ...վասն որոյ ի յարութեան՝ հրեշտակաց *հաւասար* յարուցանէ անմահ և առանց կարօտութեան. - 724. Երրորդ զմեզ առ այլս դատակշռել. այսինքն առ վերինս և ներքինս և *հաւասարս*: - 745. ...զի երբեմն ծածկէ՛ ողորմութիւնն զարդարութիւն. և երբեմն արդարութիւնն զողորմութիւն. և երբեմն *հաւասար* երկուքն յայտնի և կամ ծածուկ...: - 746. Նոյնպէս և հատուցի առաւել և նուազ և *հաւասար*. ո՛չ միայն ըստ սեռի գործոց, այլ և ըստ տեսակի և քանակի և որակութեանց նմին: - 746. Ասեմք թէ այո՛. զի անկումն նոցա մահ է նոցա. այսու *հաւասարք:* - 780

**ՀԱՒԱՍԱՐԱԿՇԻՌ +** Չորրորդ՝ *հաւասարակշիռ* է երկիրս բոլորակի. և յամենայն կողմանէ ծանրութիւնն ի մէջն ժողովի. և այսպէս ինքն ի վերայ իւր հաստատեալ է: - 182

**ՅԱՒԱՍԱՐԱՉԱՓ +** Երկրորդ՝ բնական օրն *հաւասարաչա՛փ* է. զի ո՛չ առաւելու և ո՛չ նուազէ: - 194

**ՅԱՒԱՍԱՐԱՊԱՏԻՒ +** Զի աթոռք՝ քերովբէք՝ սերովբէք՝ *հաւասարապատիւք* են՝ մի համարի դասս. և վեցն զկնի նոցա: - 380

**ՅԱՒԱՍԱՐԱՊԷՍ +** Իսկ որպէս հոմանուն ձայն, զի *հաւասարապէս* հաղորդի որոց կոչինն. որպէս խոյ երկնային և երկրային և ջրային. զի ո՛չ առաւել և ո՛չ նըւազ կոչին. այլ *հաւասարապէս*: - 89. Եւ սոքա *հաւասարապէս* երևին յամենայն կենդանիս: - 215. Նախ վասն՝ ի մէջն գոլով *հաւասարապէս* հուպ յամենայն մասանցն զօրութիւն առնլոյ: - 256. Իսկ *հաւասարապէս* պատշաճի բոլոր բանական եղելոցս ըստ տեղւոյն դիպման: - 457. Երրորդն ըստ հաւասարութեան. զի սկզբնականն *հաւասարապէս* է ամենայն մարդկան: - 568

**ՅԱՒԱՍԱՐԵՄ +** Դարձեալ պօղոս *հաւասարէ*, «որ ի կերպարանս աստուծոյ էր, ոչինչ յափշտակութիւն համարեցաւ զլինիլն հաւասար աստուծոյ»: - 39. Զի ո՛չ էր հայր մեծ քան զնա՝ ի յոր երդնոյր. զի որք երդնուն՝ ի մեծագոյնսն քան զինքեանս երդնուն. ապա ուրեմն *հաւասա՛րէ* որդի հօր և ո՛չ փոքր որպէս ասէ առաքեալն: - 40. Իսկ առաւել բարձրութիւնն. զի որպէս անհամեմա՛տ է խոնարհութիւն՝ աստուծոյ մարդանալ և չարչարիլ. և անզուգական բարձրութիւն է մարդոյս բնութեան ընդ աջմէ աստուծոյ նստիլ և *հաւասարիլ*: - 94. Իսկ թէ միայն անուն առանց էութեան. ապա անւամբ խոստովանիս աստուած զքրիստոս և ո՛չ գոյացութեամբ. և *հաւասարե՛ս* զնա մովսէսի. որ անուամբ աստուած կոչեցաւ և ո՛չ էութեամբ: - 95. Զի՞նչ զանազանի և *հաւասարի* տեսութեանն աստուծոյ. և հրեշտակաց. և մարդկան: - 101. Որո՞վ զանազանի և *հաւասարի* կեանք հոգւոց և հրեշտակաց: - 117. Որո՞վ զանազանի և *հաւասարի* իմանալի և զգալի կեանք: -117. Որո՞վ զանազանին և *հաւասարին* զգայական և տնկական կեանք: - 117. *Յաւասարին*, Նախ՝ զի տարրական են: - 117. Որո՞վ զանազանի և *հաւասարի* տեսութիւնն աստուծոյ և հրեշտակաց: - 119. Որո՞վ զանազանի և *հաւասարի* տեսութիւն հրեշտակաց և մարդկան: - 120. Շնորհական տեսութեամբ *հաւասարի*. այլ բնականաւն զանազանի: - 120. Որո՞վ *հաւասարին* և զանազանին բանական քննութիւն և հաւատոյ տեսութիւն: - 121. Այսու *հաւասարին*, զի երկոքինն առ ճշմարիտն ունին զդիտումն: - 121. Որո՞վ զանազանին և *հաւասարին* բացբարձականքն և ուրացականքն. զի մի և նոյն երևին: - 124. Որո՞վ զանազանի հրեշտակն և հոգի մարդոյ՝ և *հաւասարի*: - 140. Չորիւք *հաւասարին*: - 140. Այսպէս *հաւասարին*: - 140. Իսկ ի յարութեանն և այսպէս հրեշտակաց *հաւասարին* իմացմամբ՝ կատարեալ անձամբ՝ անքանակ մարմնով՝ և անփոփոխ: - 141. Այլ վասն հրեղէն երկնիցն ասէր ելանել և *հաւասարիլ* նմա: - 184. Զոր յամենայն ամի **ժա** թիւ ի վերայ լուսնոյն դնեմք, զի *հաւասարեսցի* արեգականն, և կոչեմք վերադիր: - 191. Եւ զի *հաւասարի* տիւ և գիշեր: - 197. Իններորդ՝ ի յանդիմանութիւն բնութեան մերոյ. զի մի՛ կարծեսցէ թէ առաքինութեամբն և սիրովն առ աստուած՝ *հաւասարիլ* կարէ՛ սիրոյն աստուծոյ որ առ մեզ. այլ կաղ գտանի: - 311. Եւ կամ ի *հաւասարէն*. որպէս պետրոս. կամ ի վերջնոցն որպէս հիւսն: - 312. Անձնական՝ որ ի *հաւասարէն* կոչի: - 312. Նշանակէ զադամայինս մարմին ի կերակրոյ պտղոյն *հաւասարեալ* անբանից՝ ընդ բեռամբ մեղաց: - 423. Նա՛խ՝ որպէս սաւուղ ի խնդիր իշոյ ել և թագաւորութիւն եգիտ. և տէր մեր մարդկան ազգի որ *հաւասարեաց* անբանից, և թագաւորեաց մեզ: - 426. Եւ տէրն վասն կերակրոյն ո՛չ ասաց թէ ի մարմին մարդոյն ո՛չ *հաւասարի*. այլ զայն թէ՝ դառնութիւն և ծանրութիւնն արտաքս ելանէ, - 718. Յինգերորդ, ստեղծաւ մարդն հաւասար հրեշտակաց. և յորժամ մեղանչեաց՝ անասնոց *հաւասարեցաւ* ըստ դաւթի և ընդ նոսա ապականեցաւ և պատժեցաւ. - 724. Երկրորդ զի *հաւասարի* հալեալ մոմ. այնպէս լերինք և բլուրք հարթեալ հալին և *հաւսաւարին*: - 728. Իսկ կշռորդն է՛ օրէնքն աստուածային, և գործք մեր նմին *հաւասարեալ* և միտեալ հաւատով: - 745. Նախ հոգւոյ ընդ մարմնոյ բնական արդարութեամբ *հաւասարիլ*: - 745. Չորրորդ զբարի և զչար գործս մեր առ միմեանս *հաւասարել*. կամ միտել ի չարս և ի բարիս: - 745. Նախ ըստ գոյացութեան. զի որպէս անսկիզբն է աստուածութեամբն, նոյնպէս և անվախճան է մարդկութեամբն *հաւասարեալ*: - 745. Եւ միտումն երբէք և ուրէք հարստահարելով և *հաւասարելով* ընդ միմեանս՝ այսպէս. - 746. Եւ սոքա երբեմն *հաւասարին*. որպէս յորժամ արդարապէս հատուցէ բարեաց և չարաց. և միտեն յարաժամ անվախճան պատուէ և պատժէ: - 746. Այլ և աստ երբեմն *հաւասարին* արժանեաց և ոչ արժանեաց. որպէս ծագել զարև: - 746. Իսկ անդ *հաւասարի* կշիռն ըստ յուսոյ, և միտէ՛ ողորմութիւնն ըստ սիրոյ: - 746. Այսպէս *հաւասարի* և միտէ՛ կշիռ ողորմութեանն ըստ ինքեան առ նոյնս և առ այլս: - 746. Չորրորդ, կշիռն նշանակէ՛ զգործս մարդկան. ըստ կշռոյ օրինացն *հաւասարել* և հատուցանել. եթէ ըստ բնականին կամ ըստ գրոյն և աւետարանին. որում շատ տուաւ առաւել պահանջել: - 747. Եւ թէ ունիցին ըստ օրինացն *հաւասարեալ* ի գործս կամ ի հաւատս,

և եթէ միտեալ և կամ նուազեալ, ըստ նոցին օրինացն հատուցանել. և կամ արտաքոյ օրինացն կորնչիլ ի յայսմ կշռոյ է հատուցումն: - 747

**ՀԱՒԱՍԱՐԵՑՈՒՑԱՆԵՄ +** Թէպէտ մեկնեն և այլ ազգ, թէ որ զմարդկայինս բնութիւն *հաւասարեցոյց* փառաց իւրոց և հաղորդ արար աստուածութեանն, ոչ ինչ զրկումն համարեցաւ. զի բնութիւնն մի է: - 39-40

**ՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆ +** Այսք և այլ սոյնպիսիք՝ *հաւասարութեան* են ցոյցք ընդ հօր: - 39. Այսպէս և այլք բազումք գոն *հաւասարութիւնք*: - 125. Նմանապէս և իմանալի արեգակն արդարութեան քրիստոս՝ ըստ *հաւասարութեան* բաշխէ զմարմնաւորս...: - 127. Երկրորդ՝ զի *հաւասարութիւն* և միաբանութիւն տարերաց անլուծանելի է. ըստ որում ներհակ որակօք հաւասարք են հակակայ. և միսովն միաբանք: - 181. Վեցերորդ՝ զի ասէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս կազմութեան եթէ առաջին կեանք դրախտին էր կուսութիւն և անապականութիւն և հրեշտակաց նմանութիւն. և յետ յարութեանն վերըստին դառնամք յառաջին կեանս դրախտին. յանապականութիւն և ի հրեշտակաց *հաւասարութիւն*: - 225-226. Այլ այս է ուղիղ. զի որպէս նախախնամութիւնն աստուծոյ զդէմքն մարմնոյն ի *հաւասարութիւնն* անհաւասար պահեաց, և ի նմանութիւնն աննման: - 252. Եւ ըստ անասնոցն *հաւասարութեան* նախ գոյանայ անասնականն որ է տնկականն և զգայականն. և յետոյ բանականն: - 258. Երրորդ որ ասէ «որդի» նշանակէ *զհաւասարութիւնն* ընդ հօր. զի որդին լսի հաւասար հօր: - 487. Դարձեալ, քրիստոսի հայր է բնութեամբ՝ և աստուած *հաւասարութեամբ*: - 518. Եւ այլ բազում ինչ ունիմք *հաւասարութիւն*. որպէս ցուցանի յառաջիկայդ ի **լը** համարն: - 533. Ա՛րդ՝ մեղք սկզբնականին չորիւք զանազանի յայլոցն. այսինքն ի մահացուէն և ի ներելոյն. ըստ միութեան. ըստ հասարակութեան. ըստ *հաւասարութեան*. ըստ որակի տարբերութեան: - 567. Երրորդն ըստ *հաւասարութեան*. զի սկզբնականն հաւասարապէս է ամենայն մարդկան: - 568. Վեցերորդն՝ ելեալ ի յերկինս նստաւ ընդ աջմէ հօր. որ է *հաւասարութիւն* հօր: - 573. Եւ այսպէս *հաւասարութիւն* ունին սոքա: - 577. Եւ այլք, (առաքինութիւն է *հաւասարութիւն* կենաց. համաձայնեալ բանականութեանն:) - 578. Նախ՝ զի *հաւասարութիւն* ունիմք առ միմեանս. այլ և կարգ. որ է՛ առաջին միջին և վերջին: - 656. Կշռիք գործիական առ մեզ յայտնի՛ է. որ զարդար *հաւասարութիւն* նշանակէ ի ձեռս մեր: - 744. Եւ նոյնն զօլ ողորմութեան և արդարութեանն գործոց ունել *հաւասարութիւն*: - 746. Զայս ցուցանէ *հաւասարութիւն* կշռոյն և միտելն: - 747

**ՀԱՒԱՍՏԵՄ +** Ասեմք առ այս, թէ մի է հոգի *հաւաստեաւ*. և ո՛չ է ինքն ինքեան առաջին և վերջին. զի մի էութեան՝ առաջին և վերջին ո՛չ է. այլ ըստ ներգործութեան. զի ըստ առաջին և վերջին զօրութեանն՝ առաջին և վերջին ներգործէ: - 260. Երրորդ, *հաւաստի* արդարութեամբ. և այսպէս ամենայն սուրբք և հրեշտակք դատեսցեն զնոսա որք ի նոյն շաւիղն յանցաւոր գտան: - 738

**ՀԱՒԱՍՏԻ +** Եւ գիտեմք *հաւաստի* թէ որդի էր. զի հրեշտա՛կ անուանէ զնա գիրն. և զի հայր երբէք հրեշտակ ո՛չ կոչեցաւ՝ այլ որդի ըստ եսայեայ մարգարէի, որ «հրեշտակ մեծի խորհրդոյ» կոչէ զորդի. որ եղև մեծ խորհրդոյս սպասաւոր. այսինքն փրկութեան մերոյ՝ մարդանալովն իւր: - 40

**ՀԱՒԱՏ, ՀԱՒԱՏՔ +** Երկրորդ՝ *հաւատով*. որպէս մեզ հաւատացելոցս: - 24. Այս է զի ի լուր պատմութեանց նախնեացն՝ կամ ի կարգէ՛ իրաց՝ կամ ի տեսս զգալեաց՝ ի ծանօթս գամք աստուծոյն ճշմարտի. յորմէ *հաւատն* լուսափայլեսցի: - 25. Նոյնպէս զիմանալի խորհուրդս և զգիտութիւնս զոր տկարանայ միտք, կարողանայ *հաւատքն* տեսանել. այլ ո՛չ ունի *հաւատ*՝ քան զտեսութիւն մտացն: - 31. Հինգերորդ՝ է՛ ո՛չ խնդրել զօգնութիւնն աստուծոյ ի հաւատալն. զի *հաւատն* ո՛չ է բնական. զի ըստ այսմ միապէս լինէր ամենեցուն. այլ ի բարութէն աստուծոյ ծրի պարգևէ: - 32. Քանզի որպէս արեգակն ո՛չ տեսանի՝ եթէ ո՛չ լուսովն իւրով. այսպէս իմանալին աստուած ո՛չ տեսանի, եթէ ո՛չ լուսով շնորհաց *հաւատոյն* իւրոյ: - 32. Ութերորդ՝ է՛ անկարգ ախորժակն. որ քարշէ՛ զմիտսն առ ներհակս *հաւատոյն*. այսինքն է երկիւղն՝ սէրն՝ և ատելութիւնն: - 32. Այլ և ատելութիւնն դարձուցանէ զմիտս բազմաց ի *հաւատոցն*. որպէս ատելութիւն և նախանձ փարիսեցւոցն՝ ո՛չ տային թոյլ հաւատալ ի քրիստոս. թէպէտ տեսանէին զամենայն նշանսն զորս առնէր...: - 32. *Զհաւատս* ուրացեալ, և գիտութեամբ պարծեցեալ: - 34. Հերձեալք ի *հաւատոց*՝ բաժանեն զքրիստոս. և զայլ եկեղեցիս հերձուածօղս կոչեն: - 34. Երրորդ՝ մոլորեցուցիչ կոչի. և հերձուածօղք մոլորեն զուղիղ *հաւատս* քրիստոնէին. և զբարի գործս նոցա: - 35. Ուսուցանեն թիւր *հաւատս*, և գործս վատթարս: - 35. Նոյնպէս և հերձուածօղք պղծեն զտաճարն աստուծոյ և *զհաւատն* սուրբ՝ որով քրիստոս ի մեզ բնակի, և մեք ի նա՛: - 35. Վեցերորդ՝ հակառակէ քրիստոսի՝ և քրիստոնէից. և սոքա հակառակին սուրբ եկեղեցւոյ և ուղղափառ *հաւատոյ*...: - 35. ...և բոլոր դիտումն նոցա է՛ պատրել զմարդիկ և հանել ի *հաւատոց*. և լնուլ զորովայնս. և զկանայս շեղջակուտեալս մեղօք յինքեանս գրաւել: - 35. Զի երկուս այս հարկաւոր է,

բժշկելոցն *հաւատ*, և բժշկին զօրութիւն: - 44. Թուի թէ և այս յոչ պատշաճէն ասի զի վնասեալք էին *հաւատովք*՝ ո՛չ էր պատշաճ անել նոցա նշանս: - 44. Հինգերորդ՝ զի կանոն ընդհանուր ժողովոցն որ եղեն առ նոսա՝ բաւականաբար դաւանութիւն *հաւատոյ* տըւեալ է: - 64. Դարձեալ ի *հաւատոյ* ճառին ասէ, «պահի որպէս իմ բանս է մի աստուած հայր. ի մի պատճառ որդւոյ և հոգւոյ վերաբերելով»: - 65. Եւ որ ուրանայ զմիութիւնն՝ ուրանայ և զքրիստոսն գոլ. ապա ուրեմն և *զհաւատ* քրիստոնէութեանն: - 76. Ա՛րդ՝ եթէ բաժանեցեր զքրիստոս՝ բաժանեցար ի *հաւատոցդ*. և ո՛չ լինիս քրիստոնեայ: - 95. Վասն զի իմաստունք մաքառին ընդ դէմ *հաւատոց*. և քննութեամբ մտաց ո՛չ կարեն հասանիլ. և զրկին ի փրկութենէ իւրեանց: - 96. Իսկ հիմն *հաւատոյս* մերոյ քրիստոս է եղեալ ի հօրէ՛: - 96. Ա՛րդ՝ քննել մտօք յանդգնութիւն է. և հաւատալն կեանք. զի ի *հաւատո՛ցն* է փրկութիւն: - 101. Եւ դարձեալ՝ քննութեամբ մտաց ո՛չ լինի հասեալ անհասանելին. այլ *հաւատով* լինի իմացեալ. և յուսով ըմբռնեալ. և սիրով միաւորեալ: - 101. Եւ վասն ճշմարտութեան. և *հաւատոյ*: - 101. Եւ զանազանութիւն բնական քննութեան և *հաւատոյ*: - 101. Այլ վերին մասամբ ծայրիւ իմացութեան ձկտի յաստուածայինսն՝ *հաւատոյն* լուսով և վկայութեամբ սուրբ գրոց հաստատել: - 103. Յայս միտս երկոտասան են աստիճանք *հաւատոյն*: - 105. Դարձեալ՝ աստուածային առաքինութիւնք այսո՛ւ թըւով են. այսինքն *հաւատ*. յոյս. սէր: - 105. Իսկ երկրորդն՝ *հաւատոյն* պայծառ և լուսաւոր տեսութիւն: - 119. Եւ այսպէս է մարգարէիցն և առաքելոցն և *հաւատոյն* տեսութիւն: - 120. Իսկ ճշմարտութիւնն ո՛չ փոփոխի. որպէս լոյս *հաւատոյն*: - 121. Զի յայս ճշմարտութենէս լոյս *հաւատոյն* ծագեալ ի միտս հաւատացելոց, անփոփոխ սերտութեամբ հաստատէ՛ զհաւատացեալս ի ճշմարտութիւնն. և զճշմարտութիւնն ի նոսա: - 121. Նոյնպէս՝ *հաւատն* միաւորէ զճշմարտութիւնն ընդ հաւատացողն: - 121. Որո՞վ հաւասարին և զանազանին բանական քննութիւն և *հաւատոյ* տեսութիւն: - 121. Իսկ *հաւատն* առ մին և աստուածային ճշմարտութիւնն: - 122. Իսկ *հաւատն* անմոլար և անտարակո՛յս է ի ճշմարտութիւնն: - 122. Երրորդ՝ բանական քննութեան հետևի հերձուած. և *հաւատոյն* ուղղափառութիւն: - 122. Չորրորդ՝ բանական քննութիւն զճշմարիտն ընդ մտա՛ցն քարշէ. իսկ *հաւատոյն*՝ միտք ընդ ճշմարտութեանն հետևի: - 122. Իսկ *հաւատոյն* վարձս ընդունի և փառս: - 122. Նախ՝ զի խորհրդով և *հաւատով* տեսանի և ո՛չ քննութեամբ մտաց: - 123. Իսկ արժանաւորաց զհոգևոր շնորհս և *զհաւատս* աստ, և ի հանդերձեալն զփառս անվախճանս: - 127. Եւ նոքա գերազարդ իմացմամբ աստուածային հանճարովն կատարելագործին. իսկ մեք ի ձեռն *հաւատոյ* աստիճանաց կատարելագործիմք: - 139. Երբեմն *զհաւատն* և զսէրն կոչէ. ըստ այնմ թէ՝ «գործակից եմք շնորհացդ ձերոց». այսինքն *հաւատոց*. և թէ՝ «նախանձաւոր լերուք շնորհացն որ լաւն են» այսինքն է սէրն: - 140. Նոյնպէս և սատանայ աներևոյթ մօտ՝ ի մարդն երթալ. թէ ամուր է *հաւատն* և կամքն՝ ո՛չ կենայ անդ, յուսահատի և թողու: - 161. Իսկ թէ զի՞նչ համբերութիւնն. ասէ՝ «գործ կատարեալ ունիցի». այսինքն թէ՝ նիւթ աստուծոյ գործոյն՝ փորձութիւնն և նեղութիւնն է. և յօրինօղ՝ *հաւա՛տն* է. և ի կատարումն ածօղ՝ համբերութիւնն է: - 161. Եւ թէ ոք ասիցէ, ապա զիա՞րդ նոր եկեալքն ի *հաւատս*՝ թողեալք զկուռս և զամենայն չար՝ լինէին քահանայք և եպիսկոպոսունք. որպէս սուրբն կիպրիանոս: - 166. Ասեմք առ այս. Նախ՝ եթէ նոր եկելոցն ի *հաւատս*՝ սակաւ դնէին կանոնս. որպէս առաքեալն պատուիրէ «ի բաց կալ ի չորիցս յայսցանէ. ի զոհելոյ, ի պոռնկութենէ յարենէ, և ի հեղձուցելոյ»: - 166. Դարձեալ ասեմք թէ ո՛չ միապէս է մեղքն նախ քան զշնորհքն և յետ շնորհացն. զի առաջինն անգիտութեամբ էր, և վերջինն գիտութեամբ. և առաջինն *հաւատովք* սրբի, և վերջինս ապաշխարութեամբ և սրբութեամբ: - 166. *Յաւատոյն* յատուկ է՝ զի մի՛ անգամ է, և կնի՛ք է ի հոգին նախկին: - 166. **Եւ յայտնի եղեալ որպիսութիւն սոցա ի միտ առ. զի անհաւատն այժմ եկեալ ի *հաւատս* կարէ՛ լինիլ և քահանայ. իսկ չար հաւատացեալն ո՛չ կարէ լինիլ քահանայ**: - 166. Նշանակեն զնոսա՝ որք ունին զպտուղս բարի գործոց. և զծաղիկն *հաւատոյ*. և զհոտ գիտութեան՝ ամենայն մարդկան անոյշ: - 212. Եւ են ոմանք որ զթև *հաւատոյ* և զթեփ բարեաց գործոց ունին. և պիտանիք են աստուծոյ: - 215. Եւ են որ թև *հաւատոյ* ունին, և ո՛չ գործք. որպէս չար հաւատացեալքն: - 215. Եւ են որք գործս ունին և ոչ *հաւատս*. որպէս կեղծաւորքն. նմանապէս և սոքա անպիտանք են աստուծոյ: - 215. Եւ են որ ո՛չ ունին *հաւատս* և ո՛չ գործք. որպէս անօրէնք և չարք. և յայտնի անպիտանք են: - 215. Երրորդ՝ *զհաւատն* որ է գլուխ՝ պահեսցէ, զի մի՛ մոլորեսցի զհետ հերձուածողաց: - 218. Տասներորդ՝ զի յայսմանէ հաստատեսցի ի մեզ *հաւատ* յարութեանն. որպէս զառաջինն ի հողոյ ստեղծ զմեզ, դարձեալ ի յարութեանն ի նոյն հողոյն լուծեալ և փոշիացեալ՝ յարուցանէ աստուած: - 229. Եւ դարձեալ՝ զի հաստատեսցի ի մեզ *հաւատ* մարդեղութեանն քրիստոսի. թէ որպէս ի յապականացու հողոյն ստեղծ ադամայ մարմին անապական: - 229. Երկրորդ՝ ցուցմամբ. զի տեսանելն *զհաւատն* նշանակէ որ է հաստատ. և լսելն զուսումն ճարտարութեան: - 239. Իսկ Բանին, Խոկումն. Գործ. Առաքինութիւն. *Յաւատ*: - 248. Անմոռացութիւն ընդ *հաւատ*: - 248. Չորրորդ՝ պայծառութիւն *հաւատոյն*: - 251. Եւ է՛ գործի իմացմանս

այս՝ լոյս *հաւատոյն*. և առաջադրեալ՝ աստուածայինքն և իմացականքն: - 269. Եւ զայս իմաստութիւնս տէրն *հաւատ* կոչէ. և յօհաննէս լոյս. և սողոմոն իմաստութիւն: - 269. Եւ ա՛յս է պատճառն. զի լոյս *հաւատոյն* հեղումն է յաստուծոյ առ իմացումն մարդոյ. և ըստ որում իմացումն է մեր՝ իմաստութիւն կոչի: - 269. Եւ ըստ որում լոյս շնորհաց՝ *հաւատ* և լոյս անուանի: - 269. Դարձեալ ըստ այսմ կարգ ի իմաստութիւն է *հաւատն*. գիտութիւն յոյսն. հանճար սէրն: - 270. *Յաւատոյ* և խոկման՝ որով տեսանէ զաստուած: - 275. Նորն աբրահամ վասն աներկբայ *հաւատոյն* արդարացաւ...: - 288. Այլ ի յամօթ առաջին կարծեացն՝ փոխեաց զենովք և ի *հաւատ* վերջին յարութեանն՝ վերացոյց զեղիա: - 289. Յինգերորդ՝ մահ և բռնութիւն սատանայի տիրեալ էր մարդկան. ի *հաւատ* կործանման նոցա անմահացոյց զենովք և վերացոյց զեղիա: - 289. Դարձեալ՝ գիտութիւն կատարածի խափանէ՛ զվարձս *հաւատոյ*. զի վարձքն ի *հաւա՛տն* է և ո՛չ ի գիտութիւնն. վասն այն *հաւատով* ակն ունիմք կատարածի և ո՛չ գիտութեամբ: - 292. Դարձեալ՝ բնականապէս ըմբռնէ գիտութիւնն զայն զոր ներգործէ բնութիւնն. իսկ գործն աստուածային՝ գիտութեամբ ո՛չ ըմբռնի. այլ *հաւատո՛վք* իմանի: - 292. Արդ որպէս *հաւատով* իմանամք հաստատեալ զյաւիտեանս որպէս ասէ առաքեալն. և նովին *հաւատով* իմանամք զկատարած կենցաղոյս և զյարութիւն մեռելոց և զդատաստան հատուցմանն: - 292. Եւ թէ չունիս *հաւատ* զփտեալ փայտն տե՛ս ի գիշերի: - 294. Երրորդ՝ զի *հաւատր* բարեպաշտիցն առաւելասցին: - 302. Եւ որք հաղորդեցան հոգւոյ, այսինքն *հաւատոյ* նորա, եղեն որդիք *հաւատոյ* նորա. որպէս քրիստոնեայք: - 303. Զի աբրահամ *հաւատով* արդարացաւ. և մեք նովին *հաւատովն* աւազանաւն արդարանամք...: - 303. Երրորդ՝ սառա կոչի առաքինութիւն. և մարիամ լուսաւորութիւն. և եկեղեցի ժողովք հաւատացելոց՝ գործով ունի զառաքինութիւն և զլոյս *հաւատոյ*: - 307. Երկրորդ՝ հոգեկան. որ յաւազանէն ծնանիմք ի հոգւոյն սրբոյ. այսինքն յղացեալք ի բանէն *հաւատոյ*՝ ծնանիմք յորդիս աստուծոյ: - 308. Չորրորդ՝ ըստ գերազանցութեան. զի յանկարծակի ծագէ՛ ի մեզ շնորհն աստուծոյ եթէ ի *հաւատս*՝ և եթէ յայլ ինչ գործս ի հաճոյսն աստուծոյ: - 308. Նա՛խ՝ դաւանութիւն *հաւատոյն*: - 309. Նոյնպէս ի մահ խոնարհեալ դաւանիմք *զհաւատն*, և հաղորդիմք: - 314. Ձիակառակն յաղթեալ ի փորձութիւնն. և զանհաւատն ի *հաւատ* էած: - 316-317. Այն է զոր հրամայէ՛ տէր՝ «ես եմ որթ և դուք ուռ». այսինքն որթ և հիմն *հաւատոյս* մեր է՛ քրիստոս: - 317. Որ է՛ կապ *հաւատոյ* և յուսոյ: - 317. Որպէս *հաւատով* և սիրով և երկիւղիւ և օրհնօք նորա: - 318. Դարձեալ՝ նա՛ զգենու զմեզ սիրով, և մեք զգենումք զնա *հաւատով* և յուսով: - 319. Դարձեալ գիտելի՛ է, զի յոբ կրկնելով զբանսն՝ ուղղէ՛ր զբարեկամսն և ընկրկէ՛ր զսատանայ. զի այսպէս ամենայն ոք կարէ՛ յաղթել սատանայի յորժամ զընկերն ուղղէ ի բանս կամ ի գործս կամ ի *հաւատս* և յայլսն. յայնժամ սատանայ թիւրի և հեռանայ: - 323. Եւ նոքա յայնժամ էին տկարք ի *հաւատոց* և անպտուղք ի բարեաց գործոց: - 331. Ա՛րդ՝ եթէ է՛ աստուած՝ աստ *հաւատով* ճանաչեմք...: - 331. Յինգերորդ՝ զի *հաւատոցն* հակառակէին: - 335. Երրորդ՝ զի *հաւատ* մեռելոյն յանդիմանէր զթերահաւատ կենդանիսն որք սրտիւք յեգիպտոս դառնային: - 338. Նոյնպէս և նշխարք մարմնոյն բոլոր. առ ի նշանակել թէ բոլոր պարտ է ունել *հաւատ* կերողացն: - 339. Տասներորդ՝ **գ** ափկիցն. երրորդութեանն *հաւատով* սրբել **զժ** զգայարանս հոգւոյ և մարմնոյ: - 339. Եւ **գ** չափն *զհաւատն* մեր որ ի սուրբ Երրորդութիւնն է նշանակէ՛: - 340. Եւ **ժ** բան է՛ օրհնացն. և **խգ** իրաւանցն. բովանդակն **ծգ**. խորհուրդ ազատութեան մերոյ *հաւատով* Երրորդութեանն: - 340. Դարձեալ երիցս երեւին է, զի աստ ի մարմնի *հաւատով* տեսանեմք զքրիստոս. և յետ մահու յուսով ի հոգիս մեր. և յետ յարութեանն սիրով միաւորիմք ի նա՛: - 341. Դարձեալ՝ **է** ճրագն և **է** բերան ճրագացն որ լինի չորեքտասան, նշանակէ՛ զչորեքտասան աստիճան *հաւատոյն*. **է** ի յանմարմին բնութիւն աստուծոյ, և **է** ի տնօրէնութիւն բանին: - 347. Դարձեալ՝ զի անապակա՛ն է *հաւատն* եկեղեցւոյ, և հաստատ յոյսն, և ջերմ սէրն առ քրիստոս: - 347. Իսկ յետոյքէ աստուծոյ, Նա՛խ՝ *հաւատով* տեսանել: - 350. Մին վասն *հաւատոյ* օրինաց. և մին վասն հոգւոյս իբր ահարօնի. և մին վասն մարմնոյս որպէս ժողովրդեանն: - 353. Եւ ապա՛ սիրտ սուրբ և գեղեցիկ ստանալ ի *հաւատս* և խորովիլ ի սէրն աստուծոյ: - 360. Եւ որք զմինն ունին, որպէս գիտութիւն առանց գործոց, և գործս առանց *հաւատոց*, անսուրբք են: - 364. Մարմնոյն բորն, գործոց մեղքն. և գլխոյն, *հաւատոցն*: - 367. Դարձեալ՝ մեք մարմին եմք քրիստոսի և անդամք նմա. նոյնպէս և զգեստ. այսպէս տուն և տաճար. մկրտութեամբ և *հաւատով* և բարի գործով: - 367. Փայտն եղևնեայ, զօրութիւն *հաւատոյն*: - 368. Այլ և *հաւատն* և յոյս և սէր որպէս ցուցաւ: - 368. և Ամոլք *հաւատոյ* առաքեալքն սուրբք. և Խոյք հայրապետացն դասք: - 374. Դարձեալ՝ այն որ մի քան զմի առաւել են չափով դորակին, նշանակէ՛ *զհաւատն* և զյոյսն և զսէրն առաւել: - 375. Զի ի կեանս յայս *հաւատով* նուիրիմք. և յետ մահու յուսով. և յետ յարութեան կատարեալ սիրով ընդ քրիստոս միաւորիմք: - 375. Երրորդ, Երրորդական լուսովն *հաւատոյ* հետևիմք ի կեանս: - 380. Չորրորդ, քրիստոնէական ժողովուրդն դալարացեալ ի մեղաց. շառաւիղեալ ծննդօք. ծաղկեալ *հաւատով* և պտղաբերեալ: - 382. Նա՛խ՝ **գ** օրն

*հաւատն* է յԵրրորդութիւնն սուրբ. և ապա՛ սրբութիւն գործոց է է զգայութեամբ: - 384. Իններորդ՝ նոքա գործովք արդարացան զոր նշանակէր օրէնքն. և մեք *հաւատով* զոր նշանակէր վէմն յետոյ: - 385. Նախ՝ զի փորձեսցին և ընտրեսցին ի միմեանց հաստատունքն ի *հաւատս* և տկարքն: - 388. Երկրորդ՝ զի գործունեայք և հաւանօղքն այնպիսեացն պատժեսցին. որպէս ի յերկրորդ օրէնքն հրամայէ՛ սպանանել այնպիսիսն. իսկ հաստատունքն ի *հաւատս*՝ վարձս առցեն ի *հաւատոց* իւրեանց: - 388-389. Եւ որպէս կնոջ ընդ հրամանս առնն իւրոյ յանցանել պոռնկութենէ, նոյնպէս և զաւակաց, և ծառայից, և աշակերտաց, և հնազանդելոց, և ժողովրդոց. նոյնպէս և հոգիս մեր ելեալ ի հրամանացն աստուծոյ՝ պոռնկութիւն է նմա. եթէ ըստ գործոց. եթէ ըստ *հաւատոց*: - 389. Եւ կէսն զնոսա, որք ունին թերութիւն ինչ ի *հաւատս* կամ ի վարս ինչ և յուսմունս: - 391. Նա՛խ՝ *հաւատով* ճանաչելն է զԵրրորդութիւնն մի բնութիւն, և ապա գործով սիրել զնա. որպէս նախ ուսանիլն է և ապա առնել: - 396. Ո՛չ միայն հրէի կամ հեթանոսի, այլ որք նուիրեն նմա *զհաւատս* ամբողջ սրբութեամբ՝ արժանի լինին շնորհացն նորա: - 398. Իսկ երկիրն նոր օրինացս ո՛չ բնական իմաստութեամբ հեթանոսաց ոռոգի, այլ շնորհօքն աստուծոյ և *հաւատով* դալարի: - 398. Եւ մի *հաւատ* և հաւատացեալք բազումք: - 401. Իսկ մի այր և բազում *հաւատք* և բազում աստուածք՝ շնութիւն է հոգւոր: - 401. Տասներորդ՝ ի գարեզին. որ է՛ լեառն թլփատութեան. զի ելեալ ի լեառն *հաւատոց*՝ զաւելորդ մեղացն ի բաց ընկեսցեն, և զօրհնութիւնն աստուծոյ առցեն: - 402. Եւ տէր մեր վիմով *հաւատոյն* զհիրտս քրիստոնէից: - 418. Եւ *հաւատն* հաւատացելոց նշան և զանազանօղ: - 418. Եւ զարձանն վկայութեան կանգնեաց ի տիպ *հաւատոյն* որ ի քրիստոս, և վախճանեցաւ: - 419. Տասներորդ՝ յետ որոյ հնազանդեցան նմա՛ ամենայն իէլ. և տեառն մերոյ զկնի խաչին հաստատեցան ի *հաւատս*. մանաւանդ յետ է դար կենցաղոյս ամենայն լեզու խոստովան լիցի զտէր յիսուս քրիստոս ի փառս աստուծոյ հօր ամէն: - 427. Նա՛խ՝ որպէս գեդէոն ջրովն փորձեաց *զհաւատս* զօրացն. նոյնպէս և դաւիթ: - 434. Ոսկի անբիծ *հաւատն*. և ակն վարք պատուական. և խունկ աղօթից: - 441. Ութերորդ՝ *հաւատքն* անբիծ: - 444. Նոյնպէս և ամենայն խաչի զօրութիւնն քրիստոս է. ի ձեռս արժանաւոր և կատարեալ *հաւատոց* առնէ սքանչելիս. իսկ ոչ նոյնպիսեացն ծածկէ զզօրութիւնն: - 445. Նա՛խ՝ հաւանական ըստ կերպի դաւանութեանն *հաւատոյ*...: - 457. Ողորմութիւնն դիտէ առ *հաւատս* և առ յոյսս: - 458. Վեցերորդ՝ եդ զարմատ *հաւատոյ* կաթուղիկէ եկեղեցւոյ ասելով «որ ծնանելոցն է ի քէն սուրբ է. և որդի աստուծոյ կոչեսցի»: - 465. «Ըստ բանի քում» նշանակէ զկատարեալ *հաւատն*: - 465. Այլ արդ՝ սուրբ գիրք վկայեն, և ճշմարիտ *հաւատն* բռնադատէ՛ աստուած խոստովանիլ զծնեալն ի կուսէն. ապա ուրեմն և ծնօղն է՛ աստուածածին: - 466. ...իսկ մեք ո՛չ ի գործոց, այլ ի *հաւատոցն* քրիստոսի ընկալաք զսկզբնական արդարութիւնն և զներգործութիւն մարմնոյ և զսրբութիւն մտաց: - 473. Վեցերորդ՝ փրկեաց ի կռամոլ դիւաց, և էած յաստուածպաշտութիւն *հաւատոց*...: - 473. Խորութիւն *հաւատոյ*. որ յոյժ իմաստուն և խոնարհ է: - 493. Իսկ զի անապական է մարմին կենարարին՝ է՛ ի դաւանութենէ *հաւատոյ*. զոր ունիմք և եմք անփոփոխ: - 498. Այլ մեք եղբարք ուղեկիցք իմ և դաւանակիցք եղիցուք. շինեալք և հաստատեալք ի վերայ *հաւատոյ* հիման. անշարժ խարսխեալք ի վերայ յուսոյն քրիստոսի, սեռն և յստակ կատարեալ սիրով սուրբ հոգւոյն: - 503. Իսկ միջին դժոխք որ կոչի բանտ դժոխոց՝ է՛ միջակ մեղաւորաց. որք ունին *հաւատ* և ո՛չ գործք. որպէս չար հաւատացեալք. կամ գործք և ո՛չ *հաւատ*. որպէս թերահաւատք և անհաւատք: - 505. Ասեմք եթէ՝ ոչ ինչ գոյր նոցա արգելք *հաւատոյ* յորժամ լոյս ծագեաց քրիստոս ի դժոխս: - 508. Եւ թէ ոք ասիցէ՝ *հաւատն* ա՛ստ է, և ի հանդերձեալն խափանի: - 507. Ասեմք եթէ՝ խափանի *հաւատն* ի հանդերձեալն վասն դէմ յանդիման տեսութեանն: - 507. Այլ արդ՝ մեռեալքն ո՛չ են ի դէմ յանդիման տեսութեան. վասն որոյ պիտո՛յ էր նոցա *հաւատ*: - 507. ...յոյսն է մասն *հաւատոյն*: - 507. Իսկ հոգիքն ի դժոխս յորժամ տեսին զքրիստոս, այն էր ժամանակ փրկութեան նոցա և ընդունելոյ զողորմութիւն. յաղագս որոյ *հաւատովք* արդարացան նոքա միայն ի նոյն ժամն: - 508. Նոյնպէս պա՛րտ էր զսերմն *հաւատոյ* ընդունել նոցա քրիստոսիւ, և ապա փոքր փոքր աճմամբ հասանիլ պարգևաց հոգւոյն, և պտղաբերել և զայլսն: - 521. Ջսառուցեալսն ի *հաւատս* բորբոքեն. և զվառեալսն չարութեամբ՝ շիջուցանեն. որպէս զելիմաս և զսիմոն: - 523. Եւ թէ զի՞նչ է սահման *հաւատոյ*. և ի յո՞ր մասն է հոգւոյն: - 526. Եկեղեցի սուրբ նոր ժողովուրդ կոչեցաւ աստուծոյ. զի *հաւատով* արդարացաք և եղաք ժողովուրդք և ո՛չ ըստ հնոյն օրինօք: - 528. Չորրորդ՝ այժմ մանկունք *հաւատոյ* ի յեկեղեցիս նոր օրհնութիւն տալով գ սրբեան ձայնիւ աստուածաբանե՛ն զխաչեալն քրիստոս. և օրհնեն ի վերայ արքայութեան աթոռոյ խաչին: - 529. Երրորդ հիմն՝ առանձին *հաւատն* է. և գործքն շինուածք. և մեք շինօղք: - 531. Եւ թէ վասն է՞ր է գ հիմն *հաւատոյ*: - 531. Այս է. զի *հաւատն* ունի գ յատկութիւն. որ է՛ *հաւատն*. և հաւատալն. և հաւատալին: - 531. Այսպէս հաւատալին է քրիստոս. և հաւատալն դաւանելն. և *հաւատն* որ առ մեզ է: - 532. Վասն այսորիկ հիմն *հաւատոյն* և գլուխ՝ է երեք ամենայն հաւատացելոց: - 532. Իսկ թէ ուրեք առաքեալք և

մարգարէք հիմն կոչին, քանզի նա՛խ նոքա ժողովեցան ի *հաւատս* և եղեն հիմունք եկեղեցւոյ, և ապա՛ զայլս ժողովեցին: - 532. Եւ շինուածք են դասք ամենայն արդարոց. նոքին դարձեալ մարմնով բնակիչք և *հաւատով* շինուածք: - 532. Նոյնպէս ի քրիստոսէ ի մեզ իջանէ կենդանութիւն հոգևոր, և զօրութիւն, և առողջութիւն, և շարժութիւն յօդոց և խաղալեաց ի ձեռն *հաւատոյն* շաղկապութեան: - 532. Մի կոչի եկեղեցի՝ ո՛չ տեղեաւ մի. այլ միով *հաւատով* և յուսով կոչմանն. և միոյ մօր և մի որովայնի ծնունդ աւազանին. և մի կերակուր որ է տեսութիւն աստուածային գրոց. և մի մարմին և արիւն փրկական. և մի գլուխ և պսակ և զգեստ ունիմք զքրիստոս: - 533. Ա՛րդ՝ մի է ամենայն ընդհանուր եկեղեցիք որ է բոլոր քրիստոնեայք ըստ *հաւատոյն* և կոչմանն յուսոյն որպէս սեռիւ: - 533. Երրորդն ի միոջէ և առ մի. որպէս բժշկական դեղ և գործիք. նոյնպէս մի է եկեղեցի յիւրաքանչիւր ազգս. զմի և զնոյն ունելով գործ և իր ի միոյ գլխոյն առ մի անդամքս. ի միոյն քրիստոսէ առ մի քրիստոնեայքս. ի միոյ *հաւատոյն* առ մի հաւատացեալքս...: - 533. ...և այլ նմանապէս առ այսոքիւք երրորդ եկեղեցի որով կարօ՛ղ են հաւաքել ամենայն տիեզերք երկրի և լինիլ միով *հաւատովն* մի հաւատացեալք որպէս ասացաւ: - 533. Իբր զի հոմանուն է եկեղեցի և ունի **դ** նշանակութիւնս. որ է՛ ստորինս. և վերինն եկեղեցի. և շինեալք ի մէնջ. և *հաւատն* ժողովարան մեր: - 534. Դարձեալ զհերձուածօղս և զհեթանոսս. որք ընդ դէմ *հաւատոց* և գործոց զինին: - 539. Ասեմք, եթէ որք ի *հաւատս* ունին թիւրութիւն. որպէս հերձուածօղք և վնասիչք եկեղեցւոյ. և որք ի զազիր վարս պղծեալ են գործովք և վնասեն զինքեանս. և անզեղջք են առ երկոսին. յետ մի անգամ և երկիցս խրատելոյ, որոշեսցին յեկեղեցւոյ և պատժեսցին: - 540. Նոյնպէս և որք անբիծ են *հաւատովք* և սուրբ գործովք. և կամ որք զղջացեալ յետս դառնան ի մեղաց և ի հերձուածողաց. նոցա՛ է արձակումն և օրհնութիւնն: - 540. Որպէս որք յեփեսոս՝ զնիկիականն ուղղութիւն ո՛չ քակեցին. այլ ի նոյն տեսակ նոր կանոնս կարգեցին ի *հաւատս* ուղիղ: - 541. Եւ յետոյ բազումք զղջացան և ասացին, պատառեցաք զկանոնս *հաւատոյ*: - 543. Եւ յոլովք ի գիտողացն ասացին, թէ *հաւատք* զնեստորին հաստատէք զնա ընդէ՞ր նզովէք: - 543. Եւ նզովեցին զաղանդն մարկիանու և զարտեմոնի, և զտումարն լևոնի. և միաբանեցան ի մի *հաւատս* սուրբ առաքելոցն. և ի կանոնս սուրբ ժողովոյն ինչ պետք էին յաւելին գլուխս **թ** ի զգուշութիւն եկեղեցւոյ: - 544. Որ կանոնական գլխօք պայծառացոյց զկարգ եկեղեցւոյ և զուղղափառութիւն *հաւատոյ*. զոր **զ** ամաւ յառաջ եղծեալ էր եզրի կաթողիկոսի...: - 545. որ եզր եղև *հաւատոյ* ուղղութեան. և հրամանաւ հերակլի հաւանեցաւ ժողովոյն քաղկեդոնի. կացեալ **զ** կաթողիկոսք նոյն աղանդովն որ են այսոքիկ. Եզր. Մովսէս. Անաստաս. Իսրայէլ. Սահակ. Եղիա: - 545. Յորժամ անիծիւք աքսորեցին զներսէս եպիսկոպոս որ եղև աղանդովն ներսէսի, և այլայլեաց զկարգ և զուղղափառութիւն *հաւատոյ*: - 545. Այլ արդ՝ ազգս հայոց ունի զառաւել ճշմարիտն և զառաւել բարին ի դաւանութիւնն և ի կարգս. այսինքն ի *հաւատս* և ի գործս: - 550. Այլ դատաւոր միտն կացուցեալ երկու վկայ զանբիծ *հաւատս* և զօրէնս որ են *հաւատք* և գործք. զի առ ո՞ր և իցէ քրիստոս նա՛ է ճշմարիտ: - 551. Ապա ուրեմն յա՛յտ է յայսցանէ՝ թէ առ միոնն իցէ ճշմարիտ *հաւատ* և օրէնք՝ նա՛ է ճշմարիտ և ո՛չ այլքն. թէպէտ բաժանեալ լիցի ի նոցանէ: - 552. Ազգ առ ազգ բաժանեալ լինի գաւառաւ և լեզուաւ և կանոնական սահմանաւ որ են աւանդութիւնք և *հաւատք* եկեղեցւոյ: - 552. Եւ այսոքիկ աւանդութիւնք և ո՛չ *հաւատ*: - 554. Եւ այսոքիկ թէպէտ և ոմանց ո՛չ թուեսցին որպէս փոքր կարծեցեալք. սակայն աւանդութիւն և ո՛չ *հաւատ*: - 554. Որպէս և տօն ծննդեանն զոր միաբան ասեն տօնել այլոց քրիստոնէից բաց ի հայոց. և զի և այն աւանդութիւն է և տօնախմբութիւն և ո՛չ *հաւատ*: - 554. Իններորդ՝ զի թէ *հաւատն* և յոյսն և սէրն՝ աստուածային առաքինութիւնք են և լաւագոյն քան զամենայն առաքինութիւնս...: - 557. Երրորդ՝ ի յաստուած գիտութիւնն. որ եկեալ իցէ ի *հաւատս* ճշմարիտս. և գիտէ զքրիստոս աստուած ճշմարիտ. թողու և գործէ՛ զմեղս կամ *զհաւատն*: - 564. *Յաւատ:* Յոյս: Սէր... Եւ սոքա երեքեան կոչին աստուածային առաքինութիւնք: - 571. *Յաւատն* և յոյսն և սէրն վասն է՞ր կոչին աստուածայինք: - 571. Զի *հաւատովն* տեսանի ծայրագոյն բարին: - 571. Դարձեալ *հաւատովն* հաւատալի լինի: - 571. Դարձեալ՝ *հաւատովն* հաւատամք՝ որ միայն իւր բարութեամբն զմեզ ստեղծեաց և վերստին փրկեաց և ո՛չ ի հարկէ: - 571. Զի՞նչ է սահման *հաւատոյն*: - 571. *Զհաւատն* սահմանէ՛ պօղոս յեբրայեցւոցն, «*հաւատն* է յուսացելոց իրացն հաստատութիւն. և յանդիմանութիւն որոց ոչն երևին»: - 571. *Յաւատն* ի յո՛ր մասն է հոգւոյն իբր ի յենթակայ: - 572. Եւ *հաւատն* է յիմացումն որպէս ի յենթակայս. և է՛ ի կամքն որպէս հրամանատու: - 572. Զի կա՛մքն հրամայէ զգործ *հաւատոյն*. զի ո՛չ ոք հաւատայ, եթէ ոչ կամեցօղն: - 572. Եւ որպէս *հաւատն* է ի հանճարն, նոյնպէս յոյսն և սէրն են ի կամքն վասն բ պատճառի: - 572. Եւ զի յառաջ եղեալ *հաւատոյն* է՛ ճշմարիտն. վասն այն *հաւատն* է՛ յիմացումն որպէս ի ենթակայս. և յառաջ եղեալ յուսոյն և սիրոյն է բարին, վասն այն յոյսն և սէրն են ի կամքն որպէս ի յենթակայս: - 572. Ապա ուրեմն *հաւատն* է յիմացումն. և յոյսն և սէրն ի կամքն: - 572. Քանի՞

են աստիճանք *հաւատոյ*: - 572. Իսկ աստիճանք *հաւատոյն* որք են յէութենէ *հաւատոյն*, եթէ նկատեսցի առ այն որք արարին զհաւաքումն *հաւատոյ*, են երկոտասան աստիճանք ըստ թուոյ երկոտասան առաքելոցն: - 572. Այսոքիկ են աստիճանք *հաւատոյ*: - 573. Եւ թէ *հաւատն* առաւել է քան զգիտութիւն, ցուցաւ ի վերոյ յաստուածաբանութիւնն դիոնիսեայ ի ԺԷ համարն տես: - 573. Ապա ո՞րպէս մի է *հաւատս* ըստ առաքելոյ: - 573. Եւ գիտելի է զի *հաւատն* և յոյսն այսպէս զանազանին: - 574. Զի *հաւատն* է վասն անցելոցն և հանդերձելոց: - 574. Դարձեալ` *հաւատան* է ի բարեաց ինքեան և այլոց. իսկ յոյսն է ի բարեացն ինքեան միայն: - 574. Այլ համաձայնին. զի երկոքեանն *հաւատն* և յոյսն` են յոչ երևելիսն: - 574. Որո՞վ զանազանի *հաւատ* յոյս և սէր: - 577. Որ է՛ *հաւատ*` յոյս` սէր. և սոքա երեքեան հեղո՛ւմն են յաստուածային շնորհացն ի բանական ոգիս. որով ուղղիմք յերկնային կեանս: - 577. Նա՛խ որպէս ասէ սուրբն եւագրիոս` *հաւատն* ի հայր, յոյսն առ որդի, սէրն ի հոգին սուրբ: - 577. Երկրորդ` *հաւատն* է հիմն. յոյսն որմ. սէրն շինուածք: - 577. Երրորդ` *հաւատն* է որպէս արմատ ծառոյն որ է հայր. յոյսն ստեղունքն որ է որդի. սէրն հոգին սուրբ որ է՛ ծաղիկ և պտուղ ըստ դիոնիսեայ: - 577. Չորրորդ` *հաւատն* է յանցեալն և ի հանդերձեալն որպէս ասացաւ. յոյսն միայն ի հանդերձեալն. և սէրն ի ներկայն որ է միշտն: - 577. Հինգերորդ` ըստ որպիսութեան մեր *հաւատն* է այժմ. յոյսն յետ մահու...: - 578. Եւ զայս փոխեն ոմանք այսպէս. զսէրն առ բարութիւնն. զյոյսն ի բարձրութիւնն. և *զհաւատն* առ ճշմարտութիւնն: - 578. Եօթներորդ` *հաւատովն* համբերեմք. յուսովն հաստատիմք. սիրովն զօրանամք. և զայս ասէ նագրիոս: - 578. Ութերորդ` *հաւատն* տեսանէ. յոյսն ըմբռնէ. սէրն միաւորէ՛: - 578. Իններորդ ըստ հոգւոյն մասանց. *հաւատն* է ի բանն. յոյսն ի ցասումն. սէրն ի ցանկութիւնն: - 578. Զի *հաւատովն* հաւանիմք աստուծոյ. յուսովն ապաստանիմք ի յաստուած, և սիրեմք զաստուած: - 578. Զի արդարութիւն որ ասէ աստ` պարունակէ՛ *զհաւատն* զյոյսն և զսէրն. որք անընդմիջաբար միաւորեն զմեզ ընդ աստուծոյ: - 584. Որ է *հաւատն* յոյս` սէր. խոհեմութիւն և այլն: - 587. Զի մկրտութիւնն է՛ խորհուրդ *հաւատոյ*. ուստի յա՛յտ է զի նախ հաւատամք և ապա՛ մկրտիմք: - 587. ...զի պարգևք հոգւոյն ո՛չ արհամարհողաց և չկամողացն լինի տուեալ. այլ *հաւատով* խնդրողացն...: - 588. Այլ թէ որ հասակաւ մեծ է, խնդրի յատուկ *հաւատ*. իսկ թէ տղայ է` բաւական է խորհուրդն եկեղեցւոյ: - 588. Եւ զայս ցուցանէ նոյն ձև բանին որ է կոչմունք Երրորդութեանն. և նոյն դաւանութիւն *հաւատոյն* և այլն: - 590-591. Այլ կնքահայր ո՛չ է պարտ առնել զայլազգին. զի ո՛չ ունի *զհաւատն* սուրբ, և ո՛չ է հրաժարեալ ի սատանայէ. վասն որոյ ո՛չ կարէ լեզու լինիլ տղային կամ երաշխաւոր...: - 591. ...զի նա որ ոչ ունի *զհաւատ*, այլոց ո՛չ կարէ միջնորդել: - 591. Մահուամբն քրիստոսի լուծան մեղք. բայց մեք ի *հաւատ* մահուն քրիստոսի մկրտիմք. զի տնկակից լիցուք մահու նորա: - 592. ...և խառնեմ զքեզ այսօր ի *հաւատն* քրիստոսի: - 593. Եւ գիտելի է, զի յետ օծանելոյն զգեցուցանեն զհանդերձս պայծառ. որ զլուսաւոր վարս և զպայծառ *հաւատս* և զանմեղութիւնն նշանակէ: - 594. Ասեմք թէ` եկեղեցին սիրով և *հաւատով* է միացեալ ընդ հաղորդութիւնն քրիստոսի և ո՛չ ջրով: - 596. Երրորդ` զի վարձատրեսցուք *հաւատով*. այլ *հաւատն* ի յաներևոյթն է որ է՛ գոյացութիւնն...: - 597. Դարձեալ ասեմք, ընդէ՞ր ժողովրդեանն *հաւատ* քարոզես, և դու անհաւատանաս ի ճաշակումն արեանն...: - 600. Ասեն վարդապետք թէ` զմի անգամ խոստովանեալն բարի *հաւատով* և կատարեալ զղջմամբ` ո՛չ է պարտ կրկնել. եթէ ոչ վասն չորից պատճառաց: - 603. Ա՛րդ` բարի պսակն եռակի է. այսինքն *հաւատն*. զաւակն. և խորհուրդն: - 610. *Յաւատն* է՞ զի ո՛չ ոք ի յերկուցն պղծեսցի օտար անկողնով. որպէս այն որ թողու *զհաւատն* և ուրանայ բանիւ...: - 610. ...զշաղկապ *հաւատոյն* հատանէ և *հաւատովն* պղծի: - 610. Զի յորժամ մեղօք ինչ սրբութիւնս մեր ապականի, կամ շարժի ոք ի *հաւատոյ*, վերստին կարէ՛ հաստատիլ ի *հաւատս*, և դարձեալ կրկնել զխոստովանութիւն և զապաշխարութիւն: - 615. Ոսկի է *հաւատն* ի մեզ: - 645. Այս է խորհուրդն. զի երեկոյս նշանակէ՛ զկեանս զայս որ տնօրէնութեամբ փրկչին սակաւ ինչ տեսօղ եղաք *հաւատով*: - 646. Եւ վասն *հաւատոյ* բան: - 661. Տասներորդ` յապաղեաց զայն, զի փափագն առաւելասցի. աստ *հաւատով* և յուսով ակն ունել. և ապա՛ դէմ յանդիման երևիլ: - 663. Հինգերորդ` ճանապարհ կոչի բարեպաշտութեան *հաւատոց*. - 666. Եւ դարձեալ` աստ *հաւատոյն* է. իսկ յետ մահու յուսոյն. և ի յարութեանն սիրոյն: - 667. Զի աստ անփոփո՛խ *հաւատով* հաւատամք...: - 667. Եւ բամպակ երեսացն` զպայծառ *հաւատն*: - 671. Երրորդ, զի ի լոյս *հաւատ* եկն...: - 677. ...և լուսով *հաւատոյն* գնաց փառօք առ աստուած...: - 677. ...*հաւատն* նշան է նոցա, և բարի գործքն զարդ. և մահն ի հարսանիս ընթանալ...: - 681. Ասեմք թէ որ ունին *զհաւատ* սուրբ Երրորդութեանն և անկան ի սխալանս աշխարհի...: - 683. ...զի *հաւատք* առանց գործոց մեռեալ են: - 683. Եւ ամիսն **գ** տասամբ բաղկանայ. զոր ի *հաւատ* սուրբ Երրորդութեանն և **Ժ** բանեան օրինացն յանցաւոր գտաք: - 683. ...և Երկրորդ` ի *հաւատն* եղեն ապաստան. որոյ վարձքն հետևի. և ո՛չ ի քննութիւն մտաց...: - 687. Չորրորդ, ասէ սուրբն եպիփան ի *հաւատոց* գիրն, եթէ որպէս հոգին միայն դատի ըստ բանի հերձուածողացն զի կարէ՛

ասել մարմնոյն եղեալ զյանցանքն: - 691. Արդ այժմ ի մկրտութիւնն *հաւատն* նշան դնի հարսին. և յետ մահու յուսով կոչի ի հարսանիս. և յետ յարութեանն սիրով միաւորի ընդ փեսային: - 693. ...զոր վասն յոյժ ժտելոյն՝ յարուցեալ միտքն տացէ զխոստովանութիւն *հաւատոյ* սուրբ Երրորդութեանն. զոր յերիս նկանակս յառակեաց: - 697. Երկրորդ՝ զի տեսութիւնն *հաւատոյն* է փոխարէն զոր հոգին ընկալաւ. և պսակն գործոյն է զոր մարմնով առնու: - 697. Ա՛րդ՝ նախ գիտելի է, զի հիմն *հաւատն* է ի մեզ. և շինուածն գործքն: - 702. Ոսկի է խոկումն *հաւատոյն*: - 702. Եւ սոքա պարտ է զի լիցին *հաւատով*: - 702. Զի որ խոկայ առանց *հաւատոյ*՝ այնպէս է իբր թէ ջանայ ոք տեսանել զարեգակն առանց աչաց: - 702. Եւ որ քարոզէ՛ առանց *հաւատոյ*՝ ոչ խօսի զբանն հաւատարիմ որ ըստ աստուծոյ: - 702. Եւ որ գործէ զբարիս առանց *հաւատոյ*, այն է որ առնէ շինած ի վերայ աւազոյ: - 702. Դարձեալ՝ ոսկի է *հաւատն* և դաւանութիւնն անապական. և Արծաթ՝ անաղտ մաքրութիւնն ի մեղաց. և Պատւական ակունք՝ զանազան առաքինութիւնք: - 702. Դարձեալ, Ոսկի է *հաւատն* սուրբ. և Արծաթ յոյսն պայծառ: - 702. Արդ այսոքիկ փրկին արդեամբք հիման *հաւատոյն*. սակայն այնպէս որպէս թէ ի հուր: - 702. Զի այրի շինածն որ ո՛չ է յարմար այնպիսի հիման *հաւատոյ*: - 702. ...այսինքն զի ուսուսցեն վերջնոցն *զհաւատս* փրկչին. յոր և նոքայն հաւատացին: - 709. Այլ հրէայքն յայնժամ դարձցին ի *հաւատս* քրիստոսի. և եկեղեցի սուրբ խաղաղութեամբ հանգիցէ մինչ ի կատարած աշխարհի. - 709. Նա՛խ՝ յարութիւն է շնորհաց. որ զթողութիւնն մեղաց ընկալաք և *զհաւատն* քրիստոսի: - 710. Թէպէտ բան յարութեան է ի մասնէ *հաւատոյ*, որպէս սկիզբն աշխարհի և վախճան. - 714. Երրորդ, զի որ քան յապաղէ՛ ժամանակն, այն քան վարձք *հաւատոյն* աճէ՛. - 717. ...զի *հաւատն* վարձք ո՛չ ունի թէ վկայութեամբ հաստատի: - 717. Այլ արդ՝ թէ օրըստօրէ յառնէր իւրաքանչիւր ոք, *հաւատ* յարութեանն խափանէր. զի *հաւատն* ոչ երևելեացն է: - 717. ...ջրարբիք են *հաւատով* և յուսով մեռեալքն. և հանապազ յեկեղեցի սուրբ յիշատակութիւն նոցա կատարի...: - 721. Նստի քրիստոս ի բարձրագոյն աթոռ ի վերայ օդոյդ, և սուրբքն ընդ աջմէ. այսինքն ի վեր ի փառս ընդ նմա ի վերայ օդոյդ. *հաւատոյ* և գործոյ թևո՛քն բարձրացեալ իբր զարծուի: - 738. Ոմանք դատին և դատապարտին. որպէս միջակք որք ունին *հաւատ* և ո՛չ գործք. որպէս չար հաւատացեալք. և որք ունին գործք և ո՛չ *հաւատ*. զի աստ հատուցաւ նոցա: - 739. Երկրորդ՝ զի ո՛չ ունին զլոյս շնորհացն որովք տեսանի աստուած. զի որք աստ ո՛չ տեսին *հաւատով*, և անդ ո՛չ տեսանեն իմացմամբ: - 740. Յոգի և մարմինս է որպէս մագաղաթ. կամք և իմացումն դպիր և գրօղ. *հաւատքն* գրիչ. արտասուքն մելան. և գիրն գործք բարի կամ բան աղօթից: - 741. Իսկ կշռորդն է՛ օրէնքն աստուածային, և գործք մեր նմին հաւասարեալ և միտեալ *հաւատով*: - 745. Իսկ ըստ տեսակի, որպիսութիւն հատուցմանց ըստ *հաւատոց* և գործոց վկայից և կուսից: - 746. Եւ թէ ունիցին ըստ օրինացն հաւասարեալ ի գործս կամ ի *հաւատս*, և եթէ միտեալ և կամ նուազեալ, ըստ նոցին օրինացն հատուցանել. և կամ արտաքոյ օրինացն կորնչիլ ի յայսմ կշռոյ է հատուցումն: - 747. Եթէ ումեք տուեալ իցէ շնորհ հասարակ կամ յատուկ, որպէս մկրտութիւնն և *հաւատքն*. քանքար և տաղանդ. իշխան և առաջնորդ. մեծութիւն և ինչք. կեանք լոյս ամանակ և այլն ամենայն. այսու եղանակաւ կշռոյ հատուսցի: - 747. Երրորդ հնձան է իւրաքանչիւր սիրտ և անձինք արդարոց. որ հաստատեալ է *հաւատով* յորթն ճշմարիտ և պտղաբերէ՛ զողկոյզ բարեաց...: - 749. Մետասաներորդ, հնձան կոչի և *հաւատն* սուրբ. զի ի նա՛ հաւաքի ամենայն բան և գործք մեր. և ճմլեալ այսինքն քննեալ՝ լինի գինի ուրախարար աստուծոյ և հրեշտակաց: - 749. Երբեմն գոգ աբրահամու, վասն ընդ հօրն *հաւատոյ* որդւոցն հանգչելոյ: - 757. Երկրորդ, *հաւատն* երեսնաւոր. և յոյսն վաթսունաւոր. և սէրն կատարեալ հարիւրաւոր: - 757. Ունելով տերև զգիտութիւն սուրբ գրոց. և զծաղիկ *հաւատոյ*՝ և զպտուղ բարեաց գործոց: - 765. Դարձեալ՝ ծառ կենաց և տունկ երկնային՝ է՛ *հաւատն* կենդանարար. որոյ արմատն է հայր, և ստեղունք որդի. ծաղիկ և պտուղ հոգին սուրբ: - 768-769. Այլ և տերև է մշտասաղարթ գիտութիւն *հաւատոյն*. ծաղկեալ դաւանութեամբ և պտղաբերեալ գործով առաքինութեան: - 769. Զի ամենայն բոյս բարեգործութեան ի սերմանց *հաւատոյն* բուսանի և պտղաբերի: - 769. Իսկ երկոտասան պտուղն իցէ երկոտասան աստիճանք *հաւատոյն*. որ ի սրտի և ի լեզուս առանց խափանման հանապազ դաւանի և արտաբերի: - 768. Որպէս և ոմն ի Պետաց մերային ազգաց՝ *զհաւատն* դրուատեաց ասելով, *Յաւատ* ի հօրէ սկսեալ յորդի և ի հոգի վերաբերի: ...*Յաւատ* ի մի աստուածութենէն ի մարդիկ շնորհի: ...*Յաւատ* ի տնօրէնութենէն որդւոյ ի մարդիկ սփռի: ...*Յաւատ* ի միասնական սուրբ Երրորդութիւնն: ...*Յաւատ* ի տնօրէնութիւնն որդւոյ: - 769. Դիոնէսիոս *զհաւատն* տիպ ասէ. և Աղէքսանդրոս կնիք. և Պօղոս աներևոյթ իրաց երես. և Յօհան ոսկէբերանն՝ լոյս անյայտ իրաց: - 769. Նոյնպէս *հաւատն* լոյս է որով տեսանէ: - 769. *Յաւատն* սկիզբն աստ. և անդ զօրութիւն գործոյ: - 769. Օրինակ. Աստուած մատանի. և միտք մոմ. և *հաւատն* տիպ ի մատանոյն. այս է սուրբ Երրորդութիւնն: - 769. Մեր գործքն և յաստուծոյ տուեալ բարին *հաւատով* կնքի. և պակասն յանդիմանի այժմ ի խղճէ մտաց որպէս ի գրոյ. և անդ

ի դատաւորէն, որ չար ծառայ կոչէ: - 769. Ոչ ունիմք վեհագոյն քան *զհաւատն*. տիպ աստուծոյ ճշմարտի դրոշմեալ ի մեզ ի բնէ. մեր հրահանգ և զարդ: - 769. Երկու ենթակայ ունիմք *հաւատոյ*. մօտ և հեռի: - 769. Շող յաստուծոյ ծագեալ *հաւատ*. զերկնից կախեալ լար իմն լուսեղէն. զորմէ բուռն հարեալ ձեռն զձեռամբ փոփոխեալ. ի ծովու սքանչելեաց յերկինս և յօդս վերանալ: - 769. Իսկ *հաւատ* ի մարդկութիւն որդւոյ, Ի կուսէն երևեալ անհայր ի մօրէ. որպէս անմայր ի հօրէ: - 769. Այս *հաւատ* մեծ յուսով. և կատարի սիրով: - 770. Որ թէ ի բարձանց լինի պատերազմ անձրև օրէն փորձանաց, ի ներքոյ կացցես *հաւատոցն* և ապրիս: - 770. Եւ թէ ի ներքուստ շաղախմունք ապականութեան, ի վերայ *հաւատոյն* յեցցես և ո՛չ անկցիս: - 770. Եւ թէ յառաջուստ զգայութեանց, *զհաւատն* ընդ դէմ դիցես և ո՛չ սխալիս: - 770. Եւ թէ ձախողակի վրիպութիւնք ամփոփե՛ն տրտմականօք, ի *հաւատն* սփոփեսցիս և մի անկցիս յուսահատեալ: - 770. Եթէ ի խելս և ի խորհուրդ ցնորութիւնք և զայրուք ուռուցանիցեն խխայթեալք. բժշկեսցիս *հաւատով*. ըստ մարգարէին հիացեալ` ստուերս և ունայնս դնելով զամենայն անցաւորս: - 770. Թէ ի բերան պատերազմի յեւ անմահին և ի մուտ մահկանացուին. դիցես պահապան բերանոյդ. լար կարմիր շրթանցդ. այսինքն *հաւատով* սիրով զօրացեալ. և ո՛չ բաժանիլ ի քնասիրութիւն և յարծաթսիրութիւն. յառաքինասիրութիւն. և յախտասիրութիւն. յընկերսիրութիւն և յարատսիրութիւն: - 770-771. Եւ արդ, Ո՜ *հաւատ* մեծ պաշտելի լոյս իմ և տիպ. և գանձ անկողոպուտ. կացցես առ իս. յարգանդէ մօր իմոյ խուսափեալս ի ծոց քո: - 771. Այլ զպիտանիս եկեղեցւոյ և վարդապետաց ոգէշահ խնդիր *հաւատոյ* միա՛յն հոգ տարեալ: - 772. Եւ ո՞ւր արդեօք իցէ *հաւատոյն* վարձ: - 775. Որոց սկիզբն է *հաւատն* առ մկրտութեամբն. և կատարումն հայի առ գործն. և սոքա փոփոխականք են ըստ քանքարացն յարգելոյ և պակասելոյ: - 783. Իսկ որք զմի քանքար *հաւատոյ* կամ զմկրտութեանն շնորհի ի բաց կորուսանեն, ո՛չ զկնիքն խորհրդապէս, այլ զարժանն վարձու իրողապէս: - 783. Գիտելի՛ է, զի դևք ո՛չ ունին *հաւատս* իսկապէս. և յա՛յտ է ի բազմաց: - 784. Նա՛խ` զի ի վերին գաւառս ուստի էին դևք` ո՛չ գոյ *հաւատ*. այլ դէմ յանդիման տեսութիւն: - 784. Իսկ թէ իցէ *հաւատ* դիւաց, գո՛յ մտածել տղայական կարծեօք` թէ անկումն նոցա եղև *հաւատոց* պատճառ է որ է՛ սուտ: - 784. Երկրորդ, զի անկումն դիւաց մահ է նոցա. և յետ մահու ո՛չ է *հաւատ.* ուրեմն և ո՛չ ի դևս: - 784. Երրորդ, զի *հաւատն* է լուսաւորութիւն մտաց հեղեալ յաստուծոյ ի ճանաչել զհոգևոր բարիսն. իսկ դևք ո՛չ ունին զլոյս մտաց և ո՛չ զհեղումն շնորհաց. վասն որոյ ո՛չ ճանաչեն զհոգևոր բարիս: - 784. Չորրորդ, *հաւատն* է՛ աստուածային առաքինութիւն. իսկ դևք զի են խստացեալ ի չար` ո՛չ ունին զղջումն որ է բարոյական. ապա և ոչ *հաւատ* որ է վերնագոյն և բարի կամաց խոկումն առ աստուած: - 784. Հինգերորդ, *հաւաւով* տեսանի աստուած և երանեսցին...: - 784. Վեցերորդ, *հաւատովն* փրկի ոք...: - 784. Եօթներորդ, *հաւատովք* արդարանայ ոք...: - 784. Ութերորդ, *հաւատով* կատարին կամք մարդոյ...: - 784. Իններորդ, *հաւատով* հնազանդի ոք օրինացն աստուծոյ. այլ դևն հակառակ կայ օրինացն և աստուծոյ. թէպէտ գիտէ զայն լինիլ ինքեան չար, այլ գիտութեամբ մեղանչէ: - 784. Տասներորդ, *հաւատն* է աստիճանք *հաւատոյն*. այլ դևն ո՛չ հաւատայ նոցա: - 784. Յա՛յտ ուրեմն է յասացելոցս, զի դևք ո՛չ ունին *հաւատս* վարձաւոր. այլ ունին գիտութիւն նրբահայեաց որով սարսին յառաջ քան զտանջանս: - 784. Երկրորդ իմտութեամբ ժամանակին. որով իմանան զներկայս և զապառնիս և յառաջեն քան զգործս. որով աղաչէին, «գիտեմք զքեզ». ո՛չ *հաւատոյն* գիտութեամբ. այլ իմտութեամբ տանջանաց. որով սարսեին և ասէին «մի՛ տանջեր զմեզ»: - 784. Իսկ *հաւատ* ուղղակի և վարձատրելի` է՛ մարդկայինս ազգի ի ճանապարհ աստի կենաց. և չորիւք բացակատարի: - 784. Երրորդ, ներգործութեամբ ի տեսութիւնս աչաց. սոքա կոչին *հաւատ* անտեսակ: - 784. Արդ որպէս յամենայն ժամանակս սոքօք գան ի *հաւատս* ուղղութեան և է՛ վարձատրելի. այսպէս և ի վերջին ժամանակս որք յետ նեռինն` ո՛չ միայն ի հարկէ սքանչելեաց, այլ և ի լրոյ քարոզչաց երկուցն վկայից իջելոց սրբոց: - 785. Որք դարձուսցեն զսիրտ հարց յորդիս ըստ մաղաքիայի. այսինքն ուսուցանեն *զհաւատն* փրկչին զոր հարքն ունէին. և է՛ վարձաւորելի և կարի քաջ. և թէ այսպէս և թէ այն` քրիստոս քարոզի: - 785

**ՀԱՒԱՏԱԼԻ** - Զոր օրինակ` բժիշկն յորժամ հիւանդին զդեղն տայ, նախ ինքն ճաշակէ զի *հաւատալի* լիցի: - 497. Այս է. զի հաւատն ունի **գ** յատկութիւն. որ է՛ հաւատն. և հաւատալն. և *հաւատալին*: - 531. Այսպէս *հաւատալին* է քրիստոս. և հաւատալն դաւանելն. և հաւատն որ առ մեզ է: - 532. Դարձեալ հաւատովն *հաւատալի* լինի: - 571. Իսկ թէ նկատիցեմք առ այն որք են իբր արմատս *հաւատալեաց*, յայնժամ են չորեքտասան աստիճանք: - 572. ...զի *հաւատալի* է թէ ի մարմինն քրիստոսի` է՛ և արիւնն կապակցութեամբ. և հոգին համազուգութեամբ. և աստուածութիւնն միաւորութեամբ: - 600. Որով հետև ի վերայ երկրի և օդոյ է դատաստանն, *հաւատալի՛* է և ձայնական խօսից: - 739

**ՀԱՒԱՏԱՄ +** Վասն այնորիկ ո՛չ երևի ճշմարիտ նոցա, զոր ո՛չ ըմբռնէ միտք. և ո՛չ այլ իրիք *հաւատան*,

բայց միայն զայն՝ զոր իմանան: - 31. Երկրորդ՝ է՛ դարձուցանել զիմացումն ի հաւատալեացն, և յայնցանէ որ ածեն զմարդն առ *հաւատալն*. այնպիսին խաբեալ է. զի բնութեամբ է մարդոյ ո՛չ տեսանել զյետոյս իւր. և ո՛չ առանց աչաց հայելոյ: - 31. Հինգերորդ՝ է՛ ո՛չ խնդրել զօգնութիւնն աստուծոյ ի *հաւատալն*. զի հաւատն ո՛չ է բնական. զի ըստ այսմ միապէս լինէր ամենեցուն. այլ ի բարութէն աստուծոյ ձրի պարգևքէ: - 32. Վասն որոյ որ հե՛ղգ է ի խնդրել զպարգևս զայս, ո՛չ կարէ *հաւատալ*: - 32. **Զի որպէս գիջակնութիւնն չտայ թոյլ տեսանել յստակ, այսպէս երկիւղն յետս քարշէ զբազումս ո՛չ *հաւատալ* ի քրիստոս**...: - 32. **Նաև սէր աշխարհիս և փառաց՝ ո՛չ ետ թոյլ *հաւատալ***...: - 32. **Այլ և ատելութիւնն դարձուցանէ զմիտս բազմաց ի հաւատոցն. որպէս ատելութիւն և նախանձ փարիսեցւոցն՝ ո՛չ տային թոյլ *հաւատալ* ի քրիստոս. թէպէտ տեսանէին զամենայն նշանսն զորս առնէր**...: - 32. Իսկ անտօն և ո՛չ գիր գիտէր՝ ո՛չ թէ այնքան իմաստութիւն, որպէս հաճոյ եղև աստուծոյ. մեք յի՞նչ *հաւատամք* և ընդունիմք զայն իմաստութիւն: - 40. Եւ թէ արարած է՝ զիա՞րդ *հաւատամք* և կատարիմք. այսինքն յորժամ խնդրեմք և առնումք. զի ո՛չ տան մեզ ըզհայցուածքն որք են արարածք. որպէս անւամբ միայն աստուածք հեթանոսացն: - 52. Ասեն դարձեալ, օրինակ տուք զի լիցի ի նոյն բնութենէն մինն ծնունդ՝ և միւսն ո՛չ ծնունդ. և ապա՛ *հաւատամք* աստուած զհոգին: - 53. Պատասխանեմք թէ՝ ո՛չ ասէ պարզաբար ամենայն, այլ կարգէ՛ զհետն թէ՝ ամենայն որ ինչ եղև. թէ եղեալ ցուցանես զհոգին, և ես *հաւատամ* թէ ի ձեռն որդւո՛յ է եղեալ: - 53. Ա՛րդ՝ քննել մտօք յանդգնութիւն է. և *հաւատալն* կեանք. զի ի հաւատո՛ցն է փրկութիւն: - 101. Այսպէս պարտէ սրտիւ *հաւատալ*. և բերանով խոստովանիլ...: - 101. Նոյնպէս՝ հաւատն միաւորէ զճշմարտութիւնն ընդ *հաւատացօղն*: - 121. Չորրորդ՝ վասն անհաւատութեան եղև քար. զի ո՛չ *հաւատաց* հրեշտակացն: - 303. Եւ քրիստոս առաքեալ զինքն ի հօրէ քարոզէր, և *հաւատալ* ի հայր պատուիրէր: - 328. Որ և զՍաւուղ ազատեաց ի մեղաց. և զայլ խաչօղսն որք *հաւատացին* ի նա՛: - 369. Երկրորդ՝ որ հայէր ի յօձն՝ բժշկէր. և որ *հաւատայ* ի խաչեալն՝ բժշկի ի թունից մահաբեր օձին: - 386. Ութերորդ՝ ի մկրտութեանն նախ հրաժարիմք յարևմտից, և *հաւատամք* յարևելս: - 395. Եւ զի զայս ամենայն վկայութիւնս նշանի տեսին աչօք և լսեցին ականջօք և ո՛չ *հաւատացին*. վասն այն վրէժ խնդրեաց աստուած ի նոցանէ ...: - 400. Նշանակէր զյարութեան խորհուրդն յոր նոքա ո՛չ *հաւատային*. աստէն իսկոյն եցոյց յարութեան անուամբն. այսինքն «յարուցէ՛» ասելովն: - 402. Նա՛խ՝ զի ի խղճմտանք մարդոյն կախեալ է կեանքն արժանի մահու. և տեսանէ՛ միշտ և ո՛չ *հաւատայ* և դադարէ ի մեղաց: - 404. Երկրորդ՝ հրէայքն ի գերութեան կախեցին զկտակարանքն ի յուռեաց, և ո՛չ *հաւատային* կենաց. որ ասէր կտակարանքն պահել զպատուիրանս աստուծոյ և կեալ: - 405. ...զոր կախեցին զցայգ և զցերեկ յաւուրն ուրբաթու, և ո՛չ *հաւատացին* մովսէսի և զաքարիայ որ ասէ՝ «հայեսցին ի նա զոր խոցեցինն»: - 405. Այլ և ո՛չ *հաւատացին* որ ասաց, «ես յորժամ բարձրացայց յերկրէ՛, զամենեսեա՛ն ձգեցից առ իս»: - 405. Այլ և ո՛չ *հաւատացին* որ ասաց՝ «յորժամ բարձրացուսջիք զորդի մարդոյ, յայնժամ գիտասջիք թէ ե՛ս եմ»: - 405. Եւ թէ մովսէսի ոչ *հաւատայք* որ փառաւո՛րն է ի մէջ ձեր, ինձ զիա՞րդ *հաւատայք* որ թշնամի կարծէք: - 405. Չորրորդ՝ այժմ տեսանեն աչօք զեկեղեցի սուրբ որ զկախեալ ի նոցանէ՝ աստուած *հաւատայ* զնոյն մեռեալ և կենդանի, և ո՛չ *հաւատան*: - 405. Զի հանապազ քօղ երեսացն մովսէսի առագա՛ստ է ի վերայ սրտից նոցա. և ոչ իմանան զտեսութիւն բանին. վասն որոյ ո՛չ *հաւատան*: - 405. Եւ պա՛րտ է մեզ հանապազ զքրիստոս առաջի աչաց տեսանել ի խաչ վասն մեր և *հաւատալ*. և չարչարակից լինիլ նմա յամենայն ժամ: - 405. Զի *հաւատամք* զեթէ էն. այլ՝ ինչ և որպիսի ինչն ծածկեալ մնայ: - 406. Նմանապէս և **բժ**ան քարինքն հանեալ ի ցամաք և կանգնեալ սեղան՝ հաւատացեալքն են. որք ի ձեռն **բժ**ան առաքելոցն *հաւատացին* և ելին ի մեղաց. և եղեն սրբութեան սեղան աստուծոյ **բժ**ան անդամօք և **բժ**ան առաքելովք: - 415. Թողին և հրէայք զտէր մեր և *հաւատան* նեռին և ի հուր նորին այրեսցին: - 423. Երկրորդ՝ զի ո՛չ *հաւատաց* սոմնացին նմա: - 445. ...և Երկրորդ՝ զի ո՛չ *հաւատային*. ըստ որում ո՛չ գիտէին: - 467. Եւ յորժամ *հաւատան* ի քրիստոս և մկրտին, ջնջի գիր նոցա և անէծքն: - 482. Ութերորդ՝ զի թէ *հաւատան* աւետարանին և ոչ ստեն լ ամաց գալ քրիստոսի ի մկրտութիւն, ի հարկէ՛ պա՛րտին կատարել և զմկրտութիւնն ի նոյն ի տօնի ծննդեանն իւրեանց ի դեկտեմբերի իե որ իցեն ամենևիմբ սուտ: - 484. Երրորդ՝ զի զկարգեալ օրէնսն յինքենէ՞ պա՛րտ էր անձամբ կատարել. զի *հաւատասցի* թէ ի նմանէ՛ են կարգեալ: - 485. Եւ թէ ոք ասիցէ՝ ի յերկրի որք *հաւատացին* փրկեցան, և անհաւատքն ո՛չ նոյնպէս և ի դժոխս: - 507. Եւ դարձեալ որ ուղիղն է, որպէս մարմնով տեսին ի յերկրի, նոյնպէս և հոգւով ի դժոխս պարտ էր հոգւոցն *հաւատալ* ի հոգին քրիստոսի և ազատիլ: - 507-508. Եօթներորդ, կամ թէ եգիտ ի նա երկեւան ինչ թերութեան վասն յարութեանն. իբր զի ասէ յայսմ գիշերի մերձեցայք յոտս իմ և ո՛չ *հաւատացեր*. վասն այն կրկին անգամ ո՛չ հրամայէ մերձենալ: - 517. Այս է. զի հաւատն ունի **գ** յատկութիւն. որ է՛ հաւատն. և *հաւատալն*. և հաւատալին: - 531. Այսպէս հաւատալին է քրիստոս. և *հաւատալն* դաւանելն. և հաւատն որ

առ մեզ է: - 532. Եւ որ *հաւատայ* նոցա նզովի: - 545. Եւ վասն այն այլազգ ո՛չ *հաւատան*. զի յառաջն չկայր մինչ ի նա՛. և առաւել վասն այն անուանեցաւ լուսաւորիչ: - 549. Ասեմք թէ՝ ոչ ինչ է այս նախատինք մեզ. զի հեթանոսք յետոյ *հաւատացին* և լաւագոյնք են քան զիրէայս. և վերջին մշակքն ընդ առաջինսն առին զվարձս. և որք նախանձեցան կորեան: - 549. Դարձեալ ասեմք թէ զիա՞րդ յետին. զի աբգար թագաւորն հայոց նախ քան զխաչն *հաւատաց* ի քրիստոս և երանեցաւ ի նմանէ: - 549. Եւ յառաջ տրդատ *հաւատաց* և ապա՛ կոստանդիանոս: - 549. Չորրորդ՝ աբգարու թագաւորին նախընծայ ի քրիստոս *հաւատալն*: - 555. Եւ սրտիւ *հաւատալ* արդարութիւն է ասէ առաքեալն: - 557. Յիրաւի որք ո՛չ *հաւատան* թողութեան խոստովանութեան, ո՛չ թողցի նոցա աստ կամ անդ: - 566. Դարձեալ՝ հաւատովն *հաւատամք*՝ որ միայն իւր բարութեամբն զմեզ ստեղծեաց և վերստին փրկեաց և ո՛չ ի հարկէ: - 571. Զի կա՛մքն հրամայէ զգործ հաւատոյն. զի ո՛չ ոք *հաւատայ*, եթէ ոչ կամեցօղն: - 572. Առաջինն է *հաւատալ* զմիութիւն աստուածային բնութեանն: - 573. Առաջինն *հաւատալ* զորդին աստուծոյ յղացեալ ի հոգւոյն սրբոյ: - 573. Գիտութիւն է ճանաչումն այն իրացն որում *հաւատայն*: - 582. Զի մկրտութիւնն է՛ խորհուրդ հաւատոյ. ուստի յա՛յտ է զի նախ *հաւատամք* և ապա՛ մկրտիմք: - 587. ...նոյնպէս և դու մի՛ ճաշակեր. այլ *հաւատա՛* ի մարմինն զարիւնն կապեալ: - 600. Դարձեալ՝ թէ դու *հաւատաս* զարիւնն ի մարմինն կապեալ, մի՛ հաներ զտեսակ արեանն ի բեմն. այլ նշխար միայն օրհնեա և լիցի մարմին և արիւն քրիստոսի: - 600. Զի աստ անփոփո՛խ հաւատով *հաւատամք*. - 667. ..այսինքն զի ուսուսցեն վերջնոցն զհաւատս փրկչին. յոր և նոքայն *հաւատացին*: - 709. Երկրորդ՝ տեսանեն և կսկծին. զի ո՛չ *հաւատացին* ի խաչեալն վասն մեր: - 741. Եւ թէ յաջոյ յաջուածոց խենեշութիւն մեղկէ, վերնոյն հեշտալեաց *հաւատա՛* և ո՛չ խաբիս: - 770. Ա՛րդ՝ եթէ ի կատարածի ի հարկէ սքանչելեացն *հաւատալ* վարձատրելի՞ է թէ ոչ: - 783. Եթէ վարձատրելի է ասիցէ ոք, ապա զիա՞րդ որք ի հարկէ *հաւատացին* ո՛չ վարձատրեցան. որպէս դևքն ի հալածիլ. և որդիքն սկեւեայ. և սիմոն կախարդն. և այլք նման սոցին: - 783. Զի՞նչ օգուտ է և *հաւատալ* նոցա: - 784. Տասներորդ, հաւատն է աստիճանք հաւատոյն. այլ դևն ո՛չ *հաւատայ* նոցա: - 784

**ՅԱՒԱՏԱՄՔ +** Եւ անդ ասի ի *հաւատամքն* եթէ՝ հոգին սուրբ որ ի հօրէ. և ո՛չ յիշի որդի: - 64. Նոյնպէս մի է քրիստոս և մի մարմին նորա. որ կոչի մի կաթուղիկէ եկեղեցի. որպէս ի *հաւատամքն* ասի: - 532. Նոյնպէս **Ժ** բան է *հաւատամքն* որ է՛ այսպէս: - 572

**ՅԱՒԱՏԱՐԻՄ +** Ուրեմն նա ինքն *հաւատարիմ* մնայ, ուրանալ զանձն իւր ո՛չ կարէ: - 76. Երկոտասաներորդ՝ զի սուրբքն բանիւ մեզ ուսուցանեն՝ նեղութեան և փորձանաց համբերել. պատրին ինքեանք գործով կատարել զնոյն. զի *հաւատարիմ* լիցին բանք նոցա: - 159. Իսկ աստուած փորձէ զմարդ՝ զի գիտէ զնա՛ բարի և *հաւատարիմ*. այլ ծածկեա՛լ է յայլոց. փորձէ՛ զի յայտնի լիցի ամենայն աշխարհի առաքինութիւն նորա: - 161. Որպէս բժիշկք յորժամ հիւանդաց դեղ տան, նախ ինքեա՛նք զճաշակն առնուն զի *հաւատարիմ* լիցի: - 316. Եւ *հաւատարիմ* է այս. զի առ յեսու սքանչելիքն լինէր ի կամարն երկնից. և մի տիւն՝ ժամս **լզ**: - 416. Եւ *հաւատարիմ* է աստուած: - 454. *Յաւատարիմ* բառս՝ որ ի սուրբ գիրս՝ ըստ չորից եղանակաց իմասցի: - 457. Եւ գիտելի է, յորժամ ասի յաղագս աստուծոյ *հաւատարիմ* գոլ...: - 457. Ապա ուրեմն *հաւատարիմ* և ճշմարիտ անսուտ խոստումն է աստուծոյ...: - 457. Այլ ի ձեռն հրեշտակապետին վկայեալ և աւետեալ *զհաւատարիմս* ի գիտութիւն: - 464. զի *հաւատարիմ* է խոստացօղն և ճշմարիտ: - 695. Եւ որ քարոզէ՛ առանց հաւատոյ՝ ոչ խօսի զբանն *հաւատարիմ* որ ըստ աստուծոյ: - 702. Եւ *հաւատարիմ* վկայ ընդհանուր յարութեանն զգործս եցոյց. որ զղազար չորեքօրեայ ի գերեզմանէն յարոյց: - 716. Որ եսդ տէր տէր *հաւատարիմ* յիսուս, անբաժանելի լեր ի զգայութեանցս. և յամենայն գոյացութեանց աստի իմոցս. ներկեալ խոստովանութեամբ և շնորհօք հոգի մարմին նիարդք իմ և աճառք: - 771. Եթէ յարդեան ժամանակիս *հաւատարիմ* է, զի որ ոք և իցէ յանցաւոր, եթէ զղջասցի և ատեսցէ զմեղս ըստ մարգարէին՝ խոստովանութեամբն առնու զմաքրութիւն և զվարձս ապաշխարութեան: - 778

**ՅԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ +** Յինգերորդն է՛ *հաւատարմութեան*. ուստի ասի, «որ գնայ ի տուընջեան՝ ո՛չ գայթակղի. զի զլոյս աշխարհիս այսորիկ տեսանէ»: - 195

**ՅԱՒԱՏԱՑԵԱԼ +** Երկրորդ՝ հաւատով. որպէս մեզ *հաւատացելոցս*: - 24. Երկրորդ՝ է՛ դարձուցանել զիմացումն ի *հաւատալեացն*, և յայնցանէ որ ածեն զմարդն առ հաւատալն. այնպիսին խաբեալ է. զի բնութեամբ է մարդոյ ո՛չ տեսանել զյետոյս իւր. և ո՛չ առանց աչաց հայելոյ: - 31. Չորրորդ՝ է՛ հեռաւորութիւն *հաւատալեացն*. զի որք ո՛չ կրթին ի գործ իմացման, բայց միայն ի զգայութեանց՝ հեռի՛ են ի *հաւատալեացն* որպէս երկիր յերկնէ: - 31. Երկրորդ՝ զի նոքա զղջումն ունին. և յա՛յտ է ի հեթանոսաց *հաւատացելոց*: - 33. Եւ քրիստոս *զհաւատացեալքս*: - 50. Այլ հոգին սուրբ մի և նոյն՝ հաղորդի ամենայն *հաւատացելոց*...: - 59. Իսկ թէ զոր ի զաւակէն դաւթի առանձին, զիա՞րդ եթէ ինքն շնորհօք է սրբեալ՝ սրբեսցէ տիրաբար զառ ի

նա՛յն *հաւատացեալս*: - 69. Ա՛րդ մկրտիմք *հաւատացեալքս* որպէս ի հայր և ի հոգին սուրբ՝ այսպէս և յորդին մարմնացեալ մի տէր մի քրիստոս: - 69. Ուստի ընդ *հաւատացեալս* է մինչ ի կատարած աշխարհի: - 71. Եւ *հաւատացեալքն* փրկին. և հակառակօղքն կորնչին: - 96. Նախ՝ անօթն ընտրութեան առաքեալն պօղոս գրէ *հաւատացելոցս*. «քրիստոս աստուծոյ զօրութիւն. և աստուծոյ իմաստութիւն»: - 96. Զի յայս ճշմարտութենէս լոյս հաւատոյն ծագեալ ի միտս *հաւատացելոց*, անփոփոխ սերտութեամբ հաստատէ՛ *զհաւատացեալս* ի ճշմարտութիւնն. և զճշմարտութիւնն ի նոսա: - 121. Այլ և մեծ առ *հաւատացեալս*, և չափաւոր անհաւատիցն երևի: - 127. Սմին նման և տէր մեր ընտրեաց զառաքեալս և նոքօք կոչեաց *զհաւատացեալս*: - 127. Հինգերորդ՝ ոտքն են *հաւատացեալք* և առաքեալք նորին. և գլուխ է քրիստոս. զի անդամք և մարմին եմք նմա ըստ առաքելոյ: - 130. Եւ յայտնի եղեալ որպիսութիւն սոցա ի միտ առ. զի անհաւատն այժմ եկեալ ի հաւատս կարէ՛ լինիլ և քահանայ. իսկ չար *հաւատացեալն* ո՛չ կարէ լինիլ քահանայ: - 166. Եւ նոքօք լուսաւորեաց *զհաւատացեալս*: - 185. Եւ են որ թև հաւատոյ ունին, և ո՛չ գործք. որպէս չար *հաւատացեալքն*: - 215. Վեցերորդ՝ նուիրեաց մելքիսեդեկ զպատարագն և ընկալաւ զտասանորդն. որպէս քրիստոս պարգևէ՛ *հաւատացելոց* զշնորհս, և առնու զտասնեակս զկատարեալ և զբարի գործս. կամ զտասն բանեան օրէնս **ժ** զգայարանօք: - 301. Նոյնպէս և տէրն մեր ետ *հաւատացելոցն* զկենարար մարմինն և արիւնն իւր. յորոց խնդրէ ըզգործս տասնաւոր. այսինքն զկատարեալս. և զկատարումն **ժ** բանեան օրինացն. ի յորս է՛ մաքրութիւն **ժ** զգայարանացս որպէս ի վերոյ ասացաւ: - 302. Եւ ե բիւր *հաւատացեալքն* և այլքն: - 303. Եւ ի քրիստոս բազմութիւն ամենայն *հաւատացելոց* սերեալք անդամք յանդամոց նորա և մարմինք ի մարմնոյ նորա ծննդեամբ ի նմանէ աւազանաւն: - 306. Երրորդ՝ սառա կոչի առաքինութիւն. և մարիամ լուսաւորութիւն. և եկեղեցի ժողովք *հաւատացելոց*՝ գործով ունի զառաքինութիւն և զլոյս հաւատոյ: - 307. Եօթներորդ՝ ցնծութիւն եղև իսահակ ազգին իւրում. ըստ որում կոչեցաւ իսահակ որ է՛ ծաղր. և ճշմարիտ ցնծութենէ քրիստոս ամենայն *հաւատացելոց*...: - 307. Տասներորդ՝ բազմամա՛յր եղև սառա ըստ նահապետացն. բազմամա՛յր է և կոյսն ըստ *հաւատացելոցն*. բազմամա՛յր է և եկեղեցի...: - 307. Եւ դժոխք ո՛չ յաղթեաց տեառն մերոյ. այլ զերծաւ ի նմանէ բոլոր *հաւատացելովքն*: - 313. Այլ ոտք *զհաւատացեալ* անդամս իւր ասէ. զի սոքա՛ վեցեքին թշնամիքս կոխան լինին *հաւատացելոց* ի կատարածի: - 317. Յորոց փրկեսցէ զմեզ և զամենայն *հաւատացեալս* անւան իւրոյ ի յաւիտենական և յանել տանջանաց հրոյն. և մասնաւոր աջակողմեան դասուն և ժառանգ արքայութեանն երկնից կացուսցէ յիսուս քրիստոս տէր մեր. որ է օրհնեալ յաւիտեանս Ամէն: - 317. Եւ ուռ՝ ի նա՛ *հաւատացեալ* առաքեալքն: - 317. Եւ կապեալն ի գնդակէն՝ *հաւատացեալ* ժողովուրդն: - 317. Երկրորդ՝ կոչի զգեստ նմա արտաքին և փոփոխական՝ *հաւատացեալ* անդամք քրիստոսի՝ եկեղեցի սուրբ...: - 318. Նոյնպէս և տեառն մերոյ կոչի տաճար արտաքին բնակարան. որպէս կոյսն մարիամ, և *հաւատացեալ* ժողովուրդք, և շինուածք տաճարաց: - 319. Նոյնպէս և մի տէր յիսուս քրիստոս մի բնութեամբ էր աստուած, և եղև մարդ. *հաւատացելոցն* ի կանգնումն, և անհաւատիցն ի գլորումն: - 333. Երկրորդ, զի հաստատուն մնասցեն *հաւատացեալքն* և վարձատրեսցին: - 336. Եւ գունդն ջահ՝ տէր մեր, որ լուսաւորէ՛ *զհաւատացեալս* իւր: - 347. *Հաւատացեալքն* աւազանաւն: - 353. Որում արժանաւորս արասցէ զմեզ և զամենայն *հաւատացեալս* անուան իւրոյ ամէն: - 353. Ա՛րդ Առաջինն՝ պա՛րտ է զի լիցի զենօղն արու՝ աշխարհական՝ և *հաւատացեալ*: - 365. Հինգերորդ՝ հնազանդք առաջնորդաց. որպէս կրօնաւորք և *հաւատացեալք*: - 389. Եւ մի հաւատ և *հաւատացեալք* բազումք: - 401. Եօթներորդ՝ ի յօրինակ բնութեանս դառնալոյ անդրէն ի տեղիքն մեր ուստի ելաք որք են *հաւատացեալք:* - 414. Նմանապէս և **բժ**ան քարինքն հանեալ ի ցամաք և կանգնեալ սեղան՝ *հաւատացեալքն* են. որք ի ձեռն **բժ**ան առաքելոցն հաւատացին և ելին ի մեղաց. և եղեն սրբութեան սեղան աստուծոյ **բժ**ան անդամօք և **բժ**ան առաքելովք: - 415. Եւ տէր մեր *զհաւատացեալս* իւր հանեալ ի մեղաց շինեաց սեղան և եկեղեցի սուրբ. և զմեզս երկոտասան անդամոցն ընկղմեալ կորոյս: - 418. Եւ հաւատն *հաւատացելոց* նշան և զանազանօղ: - 418. Եւ բաշխեաց երկոտասան առաքելօքն աստ զնոր օրէնս, և անդ զվերին ժառանգութիւնն *հաւատացելոց* իւրոց: - 419. Եւ յետ այնորիկ իջանէ ի սուրբ սիրտ *հաւատացելոց*: - 421. Վեցերորդ՝ դարձեալ տէր մեր յիսուս քրիստոս որ եղև զգեստ *հաւատացելոց* իւրոց. մկրտեցաւ ի յորդանան. և ձայն հօր վկայեաց. և աղաւնակերպ հոգին էջ ի վերայ նորա: - 421. Եւ նոյնպէս ամենայն *հաւատացեալք* մկրտին. և զնոյն շնորհք պարգևաց ընդունին: - 421. Իսկ տէրն մեր զմարմին և *զհաւատացեալս* իւր ապրեցոյց յիշխանէն այլազգեացն դիւաց: - 423. Իսկ անդրանկածին երինջքն են մարգարէք և առաքեալք. որ *զհաւատացեալս* անդրանիկ ծնան. նոքա են ամոլք և պատարագք աստուծոյ: - 426. Վեցերորդ՝ զի թէ *հաւատացեալ* էր սաւուղ ո՛չ երթայր ի պատերազմ.

այլ խոյս տայր և փախչէր: - 429. Մետասաներորդ, ի բերանոց գազանաց կորզէր զհօտս. և տէր մեր փշրելով զժանիս մեղաւորին, կորզեաց *զհաւատացեալս* իւր: - 436. Քսանեմի, հարին մինչև ի դրունս գեթայ. և *հաւատացեալք* մինչ ի դրունս դժոխոց. և եղեն ի տեսիլ ամենայն մսեղեաց: - 436. Երեսունևէ, զհաց սրբութեանն բաշխեաց մանկանցն. և տէրն զհացն սուրբ և երկնային *հաւատացելոց*: - 437. Դաւիթ դարձոյց զերկու կանայս և զամենայն աւարն. և որդի նորա զք դասս *հաւատացելոց* և զամենայն հոգիսն ազատեաց: - 437. Թագաւորեաց նախ է ամ ի վերայ յուդայ, և ապա ամենայն իէլի. և տէր մեր յեօթն դարոյս թագաւորէ՛ *հաւատացելոց*, և ի վախճանի ամենայնի...: - 437. Երկրորդ՝ զի այն քան բազմութիւնք *հաւատացելոց* կորնչելո՛ց էին, որ ո՛չ վայելէր ամէնիմաստ գիտութեանն աստուծոյ: - 467. Դարձեալ նշանակէ **դ** թև խաչին՝ փրկութիւն գոլ և լոյս հոգւոյ որք ի **դ** ծագս տիեզերաց *հաւատացեալք* են: - 493. Իսկ միջին դժոխք որ կոչի բանտ դժոխոց՝ է՛ միջակ մեղաւորաց. որք ունին հաւատ և ո՛չ գործք. որպէս չար *հաւատացեալք*. կամ գործք և ո՛չ հաւատ. որպէս թերահաւատք և անհաւատք: - 505. Երկրորդ՝ առ ի բարեխօսել վասն մարդկան *հաւատացելոց*: - 519. Վեցերորդ, զի եկեղեցի որ է մարմինն քրիստոսի՝ յետ չարչարանաց նեռինն որ հանդերձեալ է կրել, զկնի **խ** աւուր յերկինս համբառնալոց *հաւատացեալ* լինի: - 521. Իսկ հուրն կրկին ունի յատկութիւն. որ է լոյս և սրբիչ *հաւատացելոց*. պատիժ և այրիչ անհաւատից: - 525. Այժմ *հաւատացեալք,* և յետոյ առ հասարակ երկինք և երկիր և ամենայն ազգ: - 529. Ա՛րդ՝ առաջին հիմն քրիստոս է և գլուխ. և *հաւատացեալքն* շինուածք ի նա. և հայր շինօղ: - 531. Վասն այսորիկ հիմն հաւատոյն և գլուխ՝ է երեք ամենայն *հաւատացելոց*: - 532. Այլ գիտելի է, զի քրիստոս գլուխ է եկեղեցւոյ, և *հաւատացեալք* մարմին և անդամք նմա...: - 532. Իսկ *հաւատացեալք* բազումք: - 532. Եւ հո՛մանուն է. զի եկեղեցի է շինեալն ի քարանց, և եկեղեցի է *հաւատացեալ* ժողովուրդն: - 532-533. Եւ շինուածքն բոլոր *հաւատացեալք*: - 533. Երրորդն ի միոջէ և առ մի. որպէս բժշկական դեղ և գործիք. նոյնպէս մի է եկեղեցի յիւրաքանչիւր ազգս. զմի և զնոյն ունելով գործ և իր ի միոյ գլխոյն առ մի անդամքս. ի միոյն քրիստոսէ առ մի քրիստոնեայքս. ի միոյ հաւատոյն առ մի *հաւատացեալքս*...: - 533. ...և այլ նմանապէս առ այսոքիւք երրորդ եկեղեցի որով կարօ՛ղ են հաւաքել ամենայն տիեզերք երկրի և լինիլ միով հաւատովն մի *հաւատացեալք* որպէս ասացաւ: - 533. Մարմին՝ բոլոր *հաւատացեալք* և անդամք քրիստոսի: - 534. Այսպէս և կանոնն բաժանէ՛ *զհաւատացեալսն* յանհաւատից: - 538. Եւ թէ ոք ասիցէ, ազգս հայոց յետին է *հաւատացեալ*: - 549. Եւ ո՛չ միաբանին յայս տօնախմբութիւն ամենայն *հաւատացելոց* ժողովուրդք: - 554. Յորմէ փրկեսցէ քրիստոս աստուած զմեզ և զամենայն *հաւատացեալս* անուան իւրոյ ամէն: - 570. ...զի էառ որպէս գլուխ մեր, և եհեղ յանդամս ի *հաւատացեալս* իւր...: - 593. ...այլ սիրելիք են բարի գործօք առ հասարակ *հաւատացեալքն*. և նազելիք կուսութեամբ ճգնեալքն և մարտիրոսքն: - 600. Իններորդ, զի եկեղեցի *հաւատացելոց*՝ ունի զձև խաչին ըստ մարմնոյ...: - 616. ...այսինքն է անհաւատքն և ուրացօղքն և չար *հաւատացեալքն*: - 648. Եւ յետ այնորիկ ի հարաւ. զի հարաւով հողմոյ սուրբ հոգւոյն՝ արար մեզ զարուն հոգևոր ազգի *հաւատացելոցս*. - 673. Իսկ թէ անզեղջ կամօք և առանց խոստովանութեան ի մեղս մեռան, ո՛չ է օգուտ նոցա. թէպէտ մկրտեալ իցեն և *հաւատացեալ*...: - 683. Նա՛խ՝ վասն նորընծայ *հաւատացելոցն*. անկիրթ գոլով կատարեալ տեսութեանց...: - 687. Իսկ հոգիք *հաւատացելոց* որք ոչ գնացին այսպէս զհետ նորա, այլ ընկալան ի ներգործութեանցն սատանայի և ի կրից աշխարհի...: - 688. Այս է խորանն առ երկնիւ ուր ժողովին արդարք և մեղաւորք հոգիք *հաւատացելոց*. որք դատաստանաւն կատարին, ակնունելով ողորմութեանն աստուծոյ: - 688. Ա՛րդ՝ փեսա քրիստոս է. և հարսն *հաւատացեալ* ժողովուրդքն: - 693. Զի զօգ նոքա են որովք սատանայ զաղտնաբա՛ր հալածէ *զհաւատացեալս*: - 708. Յորմէ փրկեսցէ քրիստոս աստուած առ հասարակ զամենայն *հաւատացեալս* անւան իւրոյ ամէն: - 710. Նախ ի պարծանս *հաւատացելոց* զի բերկրեսցին երկրպագուք խաչին: - 732. վասն որոյ նմա՛ պարտ էր դատաւոր լինիլ և հատուցանել ըստ գործոց *հաւատացելոց* և անհաւատից: - 735. Սակայն երևելի աթոռ ի յօդոյդ կազմեալ *հաւատացեալ* լինի. զի ամենայն ոք տեսցէ նստեալ: - 736. և Ոմանք դատին և դատապարտին. որպէս միջակք որք ունին հաւատ և ո՛չ գործք. որպէս չար *հաւատացեալք*. և որք ունին գործք և ո՛չ հաւատ. զի աստ հատուցաւ նոցա: - 739. *Յաւատացեալ* արդարք. որք ըստ օրինաց հնոյն կամ նորոյս գործեցին զարդարութիւն. կամ որք սխալեցին և ապաշխարեցին զմեղս զղջմամբ խոստովանութեամբ պահօք աղօթիւք ողորմութեամբ և այլովք: - 739. Կանայք առաջի դրան խորանին նստեալք՝ են *հաւատացեալքն*. որք դրան երկնաւոր պալատին բանիլ ինքեանց ակն կալեալ մնան: - 756. Իսկ արգաւանդ և պարարտ երկիր՝ սիրտ *հաւատացելոց*: - 757. Դարձեալ, հոգիք սրբոց ա՛յժմ են ի յերկինս և առ երկինս որպէս ցուցաւ. և յայնմ աւուր փառաց ի փառս բարձրանալ *հաւատացեալ* լինի: - 759. Նա՛խ՝

ծառն կենաց են *հաւատացելոց* անծինքն տնկեալք ի վտակս հոգւոյն՝ ջրով աւազանին. հետևեալ ի մշտնջենաւոր կեանս: - 765. Այսօր վերստին հրամայեաց *հաւատացելոց* իւրոց ճաշակել ի պտղոյն կենաց. և մնալ յաւիտեան և անմահ կենդանութեամբ ի քրիստոս յիսուս ի տէր մեր: - 771

**ՀԱՒԱՏԱՑՈՒՑԱՆԵՄ +** Երրորդ՝ համարձակութիւն քարոզութեան առանց երկիւղի խօսիլ զբանն առաջի ազգաց և ազանց և թագաւորաց. որպէս պետրոս ի միում ժամու զերեք հազարսն *հաւատացոյց*: - 524

**ՀԱՒԱՏԱՒՈՐ +** Զօրհնութիւն կարգաւորութեանցս այսոցիկ ո՞վ է արարեալ. և ո՞վ է բերեալ յազգս հայոց... Իսկ զկարգ մայրօրհնէից՝ սուրբն կիպրիանոս կարգեդոնացի... Որ և զուստիանէ սրբուհի կոյսն մա՛յր արար կանանց *հաւատաւորաց*: - 658

**ՀԱՒԱՔԵՄ +** Եւ առաքելօքն դարձեալ զեօթանասունևերկուքն ի մի *հաւաքեաց*: - 298. Իսկ յամենայն օր հալէր հրամանաւն աստուծոյ, զի դադարեսցեն ի *հաւաքելոյ*. և ապա զի դարձեալ խնդրեսցեն առաւօտել առ աստուած: - 339. ...և այլ նմանապէս առ այսոքիւք երրորդ եկեղեցի որով կարօ՛ղ են *հաւաքել* ամենայն տիեզերք երկրի և լինիլ միով հաւատովն մի հաւատացեալք որպէս ասացաւ: - 533. Ի յասացելոցս յառաջագոյն այս ինչ *հաւաքի*, եթէ ունակութիւնք մարդկային առաքինութեանց նախկնաբար պատրաստե՛ն ի վարժումն գործնական կենացն. իսկ ունակութիւնք պարգևացն պատրաստե՛ն ի վարժումն տեսական կենացն: - 586. Մետասաներորդ, հնծան կոչի և հաւատն սուրբ. զի ի նա՛ *հաւաքի* ամենայն բան և գործք մեր. և ճմլեալ այսինքն քննեալ՝ լինի գինի ուրախարար աստուծոյ և հրեշտակաց: - 749. Երկոտասաներորդ, հնծան կոչի և վերջին օր դատաստանին. զի անդ *հաւաքին* ամենայն բարիք և չարք և գործք նոցին. և չարքն ճմլեալ արտաքսին ի տանջանս, և բարիքն ի կեանս: - 749. Ա՛րդ՝ ի նախասացելոցս *հաւաքեա՛*. զի լինիցի անդ Ձերմութիւն հրոյ: - 751. Այսպէս ի վեցից կողմանէ եղիցի ուրախութիւն սրբոցն. որ եղև *հաւաքեալ* ի վարդապետաց սրբոց: - 765. Ա՛րդ՝ է՛ ինչ ի սմա *հաւաքեալ* ի լուսաւոր բանից վարդապետաց սրբոց ըստ գրոյն կամ իմացուածոյն: - 772

**ՀԱՒԱՔԻՉ +** Եօթներորդ՝ զի պարունակածն է կողն. ի նշանակել, զի կինն պարունակիչ և *հաւաքիչ* է տան առն և ընչից: - 276

**ՀԱՒԱՔՈՒՄՆ +** Իսկ աստիճանք հաւատոյն որք են յէութենէ հաւատոյն, եթէ նկատեսցի առ այն որք արարին *զհաւաքումն* հաւատոյ, են երկոտասան աստիճանք ըստ թուոյ երկոտասան առաքելոցն: - 572

**ՀԱՒԿՌԻՉՔ -** Երրորդ, դիւական. որպէս կռոց սուտ մարգարէքն. սեդեկիայն և այլոց բազմաց. որ այժմ երևին ի պատասխանիս կախարդաց. նաև *հաւկռիչք* և գարեդիւքք. որք են բնաւ սուտք և ոչինչք: - 536

**ՀԵԳ +** Երրորդ՝ *հեգն* ի ձայնաւորէ՛ և ի բաղաձայնէ: - 177. Այլ և ժողովէ՛ զբանն և որոշէ. այսինքն *զհեգ*. զբառ. զբան. և զիմաստութիւն: - 178

**ՀԵԶ +** Վասն այն *հեզն* յամենայնի արհամարհեաց զփառամոլ միտս նորա խոնարհ պատասխանեօք: - 47. Ի գործոյն, որպէս սողունն ի սողալոյն. ի շողոքորթելոյն շունն. ի *հեզոյն* եզն. յառնելոյն առիւծ: - 220. Է և այլ իմն աննմանութիւն հոգւոյ ըստ իմացմանն. առաւել և նւազ. ուշիմ և ապուշ. չկամ և կամեցօղ. *հեզ* և յանդուգն. ցանկացօղ և ողջախոհ. ըստ բնական բարոյիցն որակացեալ. նման և աննման գոլով իրերաց: - 237. Կարճ կլափն՝ նախանձո՛տ է և ո՛չ *հեզ*. զի նման է օձի: - 247. Նոյնպէս և ի բանական որակութիւնս հոգւոյն՝ նման և աննման, հաւասար և անհաւասար բացատրեաց. այսինքն խոհեմ և տգէտ. *հեզ* և բարկացօղ. ողջախոհ և ցանկասէր. և այլ զանազան բարս բնական՝ մարդոյն: - 252. Դարձեալ՝ մարդո՛յն է ընդունակ լինիլ ուսմանց և լինիլ *հեզ* և խոնարհ սրտիւ: - 275. Ոչխար զգօն և *հեզ*. ունելով պտուղ ասր և կաթն և ծնունդ: - 358. Ոչխար տարեկան. և պատարագելի. և զգօն և *հեզ*. և պտղատու զկաթն և ասր և ծնունդ: - 361. Աղաւնի, առանց դառնութեան և միամիտ և *հեզ*...: - 361. Սա իմաստուն է և *հեզ*. ուսի՛ր ի սմանէ: - 537. Ապա *հե՜զն* յամենայնի սուրբն գրիգոր ետ նոցա՝ զի նոքա շինեսցեն ընդարձակ. զի դեռ չէր շինեալ: - 549. *Հեզ* է որ ո՛չ կրէ և ոչ քարշի: - 584. Զի՞նչ է *հեզն* և զի՞նչ խոնարհին: - 584. Երկրորդ ինքեանց ընդ այլս. որպէս *հեզք* ըստ առաքելոյն խրատու. թէ «ընդ ամենայնսն զխաղաղութիւն ստացէք»: - 585

**ՀԵԶՈՒԹԻՒՆ +** Երկրորդ՝ զի այնչափ խոնարհեցաւ, որ աթոռոյն իւրմէ անկաւ ի *հեզութիւն* և ի յաղքիւսն: - 323. Որք պտղաբե՛րք են և ծննդականք բարեաց՝ *հեզութեամբ* նուիրին աստուծոյ: - 358. Տասներորդ՝ յորժամ եկն *հեզութեամբ* լսէր ի նմանէ. իսկ զայս ամենայն համեմատելով ի վերայ հրէիցն՝ յիրաւի ուրեմն դատապարտեսցէ զնոսա ի դատաստանի: - 442. Նա՛խ՝ զի *հեզութեամբ* և քաղցրութեամբ մեծարեաց զնա զի մի՛ սովեսցի և մեռցի: - 443. այսինքն Աղքատութիւն հոգւոյ. Սուգ. *Հեզութիւն*. Քաղց արդարութեան. Ողորմածութիւն. Սրբութիւն սրտի. և Խաղաղութիւն: - 583. *Հեզութիւնն* զքարկութիւն: - 583. Իսկ *հեզութիւնն* նոյն է ընդ մաստութիւնն. զի ասեն թէ՝ մաստութիւն է որ ո՛չ զգայ զդառնութիւն ինչ ոգոյ: - 584. *Հեզութիւնն* է ընդ դէմ ցասման. և խոնարհութիւնն ընդ դէմ հպարտութեան: - 584

**ՀԵԹԱՆՈՍ +** Իսկ ուրախանալն ի չարն մահ է և անզգայութիւն. և ընդդէմ բժշկողացն մրցումն. որպիսիք էին *հեթանոսքն* ի կուռս իւրեանց. և հրէայքն յօրէնսն. և փաղանք հերետիկոսացն յաղանդս իւրեանց: - 33. Նախ՝ զի *հեթանոսք* անգիտութեամբ կուռս պաշտեցին: - 33. Երկրորդ՝ զի նոքա զղջումն ունին. և յա՛յտ է ի *հեթանոսաց* հաւատացելոց: - 33. Վեցերորդ՝ զի նոքա *հեթանոսք* միա՛յն էին մոլորեալ: - 34. Առաջին՝ զի թէ աստուած էր անծնելութիւնն, պա՛րտ էր ունել և անծնելութեանն ստեղծուած ինչ. և զի ոչ ունի, և ո՛չ ոք ասէ ի *հեթանոսացն* այսպիսի բան. այլ ամենքն խոստովանին թէ աստուած է աստուած. և ո՛չ անծնելութիւն աստուած: - 38. Զի՞նչ է տալն որդւոյ զկեանս՝ կամ զդատաստան՝ կամ զիշխանութիւն *հեթանոսաց* և ամէն մարմնոյ: - 46. Իսկ մի և ճշմարիտ ասելովն՝ յատկացնէ՛ ի բազում և ի սուտ աստուածոց *հեթանոսաց* որ անուամբ միա՛յն են: - 47. Եւ աստուածաբանքն *հեթանոսաց*՝ որպէս միտս ամենեցուն՝ և միտս արտաքոյ գոլ ասացին լցեալ ըզփոռուածս երկնից: - 51. Եւ թէ արարած է՝ զիա՞րդ հաւատամք և կատարիմք. այսինքն յորժամ խնդրեմք և առնումք. զի ո՛չ տան մեզ ըզհայցուածքն որք են արարածք. որպէս անւամբ միայն աստւածք *հեթանոսացն*: - 52. Զի թէ ասէք հայր աստուած՝ և որդի աստուած՝ և հոգի աստուած, բազմաստուած էք որպէս *հեթանոսքն*: - 54. Ասեն դարձեալ թէ՝ և *հեթանոսք* մի աստուածս անուանեն զամենայն կուռս, այլ բազումք են. որպէս և մարդկութեանս մի ասի բնութիւն, այլ բազումք են մարդիկք. ապա և դուք բազմաստուածք էք: - 54. Պատասխանեմք թէ՝ ո՛չ են *հեթանոսաց* աստուածքն մի, այլ բազումք և միմեանց հակառակք կամօք պաշտմանն և զոհիւք խնդրոյն: - 54. Վասն որոյ հրէայք գայթակղեցան և *հեթանոսք* յիմարեցան...: - 95. Երրորդ՝ զի խորհրդով և ծածուկ է պահելի ի հերձւածողաց և ի *հեթանոսաց* և յանվարժ մտաց ախմարաց...: - 123. Եւ միջնորդ հաշտութեան է քրիստոս աստուծոյ և մարդկան. այլև հրեշտակաց և մարդկան. նաև հրէից և *հեթանոսաց*: - 126. Եւ ասեն, տըւան քեզ *հեթանոսք* ի ժառանգութիւն և յիշխանութիւն: - 144. Եօթանասունսնե, Տալ զօրէնս *հեթանոսաց*. և օրհնութիւն և անէծք. և բան ընդդէմ հրէիցն որք մարմնաւոր ունին զօրհնութիւնս: - 285. Եւ տէր մեր գլուխ հրէից և *հեթանոսաց*: - 305. Ա՛րդ՝ դաւանութեամբն գերազա՛նց եմք մարդկան *հեթանոսաց*. և մկրտութեամբն՝ հրէից. և ծննդեամբն ի հոգւոյն՝ հրեշտակաց. զի նոքա ո՛չ ունին ծնանիլ ի հոգւոյն. և ո՛չ եղբայր լինի քրիստոսի: - 309. Չորրորդ՝ նշանակէ՛ զհրէայս որ էին անդրանիկ ժողովուրդ խոտեցան. և *հեթանոսք* կրտսերք ընտրեցան և եղեն անդրանիկ ժոռովուրդ աստուծոյ: - 310. Եւ քրիստոս զհրէայսն ցրւեաց, և ի սիրտ *հեթանոսաց* նոր ժողովրդեանն աւանդեաց զօրէնսն: - 328. Եւ տէրն եկեղեցւոյ *հեթանոսաց*՝ և սրբեաց զնա՛: - 329. Երրորդ՝ յօրինակ *հեթանոսաց* որք զազրացեալ էին մեղօք մինչև ջրով աւազանին սրբեցան և ճաշակեցին զմանանայն կենաց ի յերկնից իջեալ: - 333. Եւ ի նմանէ լուսաւորեալք՝ պայծառացուցանեն վարդապետութեամբքն իւրեանց զերկու ժողովուրդս որք ի հրէից և որք ի *հեթանոսաց* օծեցան մկրտութեամբն: - 347. Գառն՝ որդիք քրիստոնէի. և Ուլն՝ որդիք *հեթանոսի* յորժամ գան յեկեղեցին սրբին և նւիրին աստուծոյ: - 358. Դարձեալ՝ հարաւն նշանակէր զհրէայս, և հիւսիս *զհեթանոսս*. որ լինելոց էին պատարագ և ժողովուրդ աստուծոյ...: - 360. Իսկ *հեթանոսք* ըստ այնմ որ յանուն աստուծոյ նուիրէին՝ ընդունելի՛ էր: - 361. Այլ զանբան պատարագն ուսան *հեթանոսք* և կռոց մատուցին. և այն սովորութեամբն իէլ մատոյց աստուծոյ զանբան կենդանիս մինչ եկն քրիստոս և եղև ինքն բանաւոր պատարագ, և զնոյնս աւանդեաց մեզ: - 362. Նա՛խ՝ զի մի պակաս երևեսցի քան *զհեթանոսս*, խտրէին զմարմնոյ արատն: - 370. Նա՛խ՝ զի *հեթանոսքն* զանարա՛տն զոհէին: - 370. Երրորդ, զի մարգարէութեամբ նորա բազում ազգաց *հեթանոսաց* օգուտ եղև. զի յայնմանէ եկին մոգք և երկիր պագին քրիստոսի: - 387. Երրորդ՝ *հեթանոսաց* ազգ. որ նախ քան զմկրտիլն բնական բարութեամբ և երկիւղիւ գան յաստուածապաշտութիւն և մկրտին: - 390-391. Զի եգիպտացիքն են *հեթանոսք* երկրի: - 395. Ո՛չ միայն հրէի կամ *հեթանոսի*, այլ որք նուիրեն նմա զհաւատս ամբողջ սրբութեամբ՝ արժանի լինին շնորհացն նորա: - 398. Իսկ երկիրն նոր օրինացս ո՛չ բնական իմաստութեամբ *հեթանոսաց* ոռոգի, այլ շնորհօքն աստուծոյ և հաւատով դալարի: - 398. Չորրորդ՝ խորհրդական. զի մի է քրիստոս փեսայ. և զեկեղեցիս հրէից և *հեթանոսաց* ընկալաւ իւր հարսն սուրբ: - 401. Վասն *հեթանոսաց* գրէ զօրէնս և ո՛չ հրէից զի առեալ էին: - 402. Նա՛խ՝ զի և *հեթանոսք* վայելեսցեն յողորմութեանցն: - 402. Երրորդ՝ զի ի փշրանաց սեղանոյն և *հեթանոսք* կերակրեսցին: - 402. Ասա՛ նմա թէ՝ այն հասարակաց *հեթանոսա՛ց* է. զի աճին մարմնով և ընչիւք. իսկ մերս ո՛չ է հասարակաց. այլ արժանաւորաց և ընտրելոց: - 403. Ապրեցոյց զռահաբ պոռնիկն ի դէմս *հեթանոսաց* եկեղեցւոյ: - 414. Հինգերորդ՝ գրեաց յեսու զօրէնս ի քարեայ արձանս *հեթանոսաց*: - 417. Եւ տէր մեր զնորս *հեթանոսաց* անջինջ գրեալ օրէնս ի սրտի: - 417. Եւ տէրն կորոյս զհսրայէլ ազգօք. և փոխանակեաց իւր ժողովուրդ *զհեթանոսս* օրհնօք: - 418. Եւ տէր մեր զապաւինեալ *հեթանոս* կորզեաց ի սրոյ յաւիտենական մահուն: - 418. Քսանևա՝ յեսու յաղթեաց ըզդիս և զդիակունս *հեթանոսաց*. զի զլուսաւորսն պաշտէին: - 418. Եւ տէր

մեր մերժեաց զիրէայս և ժողովեաց *զհեթանոս* որ էր աղքատ ի բարեաց: - 422. Եւ տէր մեր հրդեհեաց զգործս *հեթանոսաց* արուեստաւոր հնարիւք իւրոցն հետևողաց: - 423. Գերիլն նշանակէ՛ զօրէնքն և զաւետարանն ի *հեթանոսս* առաքեալ: - 426. Դաւիթ եթող զիրէաստան և բնակեցաւ յայլազգիս. և որդի նորա եթող զիրէայս և հանգեաւ ի *հեթանոս*: - 437. Դաւիթ եհար զամաղէկ որ գերեաց զիրէայս և զայլազգիս. և տէր մեր եհար զգերիչն հրէից և *հեթանոսաց*: - 437. Այլ և գոհացաւ ի վերջոյ ի վերայ ամենայն յաղթութեանցն. և տէր մեր ի վերայ ամենայն ներգործութեանցն. որ և ամենայն օրհնութիւնքն ի տէրն ակնարկէ. որ եղև գլուխ *հեթանոսաց*. յաղթեաց մահու և բարձրացաւ ի գերեզմանէ: - 438. Եւ նիւթն ոսկի և արծաթ և պղինձ և երկաթ. այլ և խունկն և պատւական ակունքն ի *հեթանոսա՛ց* էր: - 440. Եւ ինչ ոչ գոյր ի հրէիցն, բայց միայն սողոմոն. որոյ հրամանաւն շինեցաւ ի տիպ *հեթանոսաց* եկեղեցւոյ զոր շինելոց էր տէր մեր: - 440. Ութևժ, նա՛ *հեթանոսացն* տայր շինել զտաճարն: - 441. Եւ տէրն վասն *հեթանոսաց* աշխարհի: - 441. Եւ եկեղեցի *հեթանոսաց*՝ քրիստոսի: - 441. Եւ տն մերոյ ի *հեթանոսաց* փառք և մեծութիւն. որ նստի յանզուգական աթոռ դատողութեան բժան թագաւորօք դատել զամենայն: - 442. Եւ զի պիղծ և գարշելի էր զոհք կռոցն և կերակուրք *հեթանոսաց*: - 443. Այլ պիղծ ագռաւքն ի խորհուրդ *հեթանոսաց* անցեալ զյորդանան և սրբեալ աւազանաւն: - 443. Այլ և զառաւել գութն *հեթանոսաց* տեսցէ. որպէս յօնան զնինուէացւոցն ապաշխարութիւնս: - 444. Զի աւելին ագահութիւն *հեթանոսաց* էր. և պակասն անհաւատից. այլ միջինն քրիստոնէից...: - 444. Ասեն ոմանք թէ աջակողմեան աւազակն ի *հեթանոսա՛ց* էր. և ձախոյն ի հրէից: - 495. Զի *հեթանոսք* զոհէին արեամբ մանկանց. և հրէայք արեամբ անբան անասնոց կատարէին զնաւակատիսս իւրեանց: - 509. Ամաղէկ նշանակէ զսատանայ որ գերեաց զհոգիս մարդկան հրէից և *հեթանոսաց*...: - 514. Վեցերորդ՝ համբարձաւ ձայնիւ փողով ըստ դաւթի. և այս վերաբերի յառաքեալսն. որ յանձնեցաւ նոցա երթալ քարոզել ամենայն *հեթանոսաց*. և փողք եղեն տիեզերաց...: - 520. Երրորդ՝ զի անդ ո՛չ կարէր արդարանալ զի հիւանդ էր սիրտն, եւ նոր օրէնս ի սիրտս մեր որ կարօ՛ղ է արդարացուցնել զժողովուրդս և *զհեթանոսս*: - 524. Դարձեալ զհերձուածօղս և *զհեթանոսս*. որք ընդ դէմ հաւատոց և գործոց զինին: - 539. Ասեմք թէ՝ ոչ ինչ է այս նախատինք մեզ. զի *հեթանոսք* յետոյ հաւատացին և լաւագոյնք են քան զիրէայս. և վերջին մշակքն ընդ առաջինսն առին զվարձս. և որք նախանձեցան կորեան: - 549. Չորրորդ՝ զիրէայս և *զհեթանոսս* ի մի եկեղեցի ժողովեաց: - 585. ...զնոյն և ամենայն *հեթանոսք* առնեն. իսկ թէ ի հեթանոսս այսպիսի պարկեշտութիւն պարտ էր առնել, քանի՞ ևս առաւել յեկեղեցիս պարտ է լինիլ. որ է ճշմարիտ կարգաւորութիւն և սրբութեան օրէնք: - 589. ...զնոյն և ամենայն հեթանոսք առնեն. իսկ թէ ի *հեթանոսս* այսպիսի պարկեշտութիւն պարտ էր առնել, քանի՞ ևս առաւել յեկեղեցիս պարտ է լինիլ. որ է ճշմարիտ կարգաւորութիւն և սրբութեան օրէնք: - 589. Եւ զայս գործս արար քրիստոս յորժամ զինքն լոյս ի յայտնութիւն *հեթանոսաց* ետ. և ասաց թէ «ես եմ լոյս աշխարհի»: - 606. Այլ որպէս ի հինն ո՛չ առնէին ընդ *հեթանոսացն* խնամութիւն որք չէին թլփատեալք: - 612. Այլ և նշանակէ՛ զմարդիկ ընդ հրեշտակաց և զիրէայս և *զհեթանոսս* խառնեալ ի մի եկեղեցի: - 629. Եւ առ դաւիթ խորհուրդ *հեթանոսաց* եմուտ: - 629. Այլ և նշանակէ նախ զիրէայսն և *զհեթանոսս*: - 636. Նշանակէ այս զմիութիւն հրէից և *հեթանոսաց* ի մի հօտ և ի մի պաշտօն: - 636. Նոյնպէս և պօղոս հրէից և *հեթանոսաց* վարդապետ: - 644. և միաւորեաց զերկինս և զերկիր, զիրէայս և *զհեթանոսս*. - 646. *Յեթանոսաց* սովորութիւն էր որ զինչս մեռելոյն ընդ նմա՛ դնէին ի գերեզմանն. - 656. Զայս սովորութեամբ առնեն զոր չէ՛ պարտ. զի յուսահատութեան է նշան և *հեթանոսաց* գործ: - 656. Եւ վերջոյ ի հիւսիս. որ ցուցանէ զշնորհն որ ի հինն սիովնէ հնչեաց յեկեղեցիս *հեթանոսաց*. - 674. Իսկ այլք ասեն, գօգ ասին *հեթանոսք*. և մագօգ սատանայ: - 708. Երրորդ, զի ի կշիռ արդարութեան դատեաց ի մէջ հրէից և *հեթանոսաց*. մարդկան ազգի և սատանայի: - 746

**ՅԵԹԱՆՈՍԱԿԱՆ +** Ասեմք առ այս թէ, օն ի բա՛ց տար ի մտաց քոց *զհեթանոսական* կարծիս. զի ո՛չ է հոգի յառաջ քան զմարմին. և ո՛չ մարմին նախ քան զհոգի որպէս ի սկիզբն ասացաք: - 260

**ՅԵԼԼԵՆ +** Իսկ գեղեցկախօսութիւն լեզուաց, ...Փափուկ *հելլենն*: - 299

**ՅԵԼԼԵՆԱՑԻ +** Զի փափուկ է *հելլենացին*. և սաստիկ հռոմայեցին: - 297

**ՅԵԾԵԱԼ +** Եւ այսպէս բաժանեսցեն զաւարն. ի ճէն զմինն տայցեն քահանայապետին. և յիսնէն զմինն քահանայից և աղքատաց. և հնգէն զմինն թագաւորաց բաժին. և կէսն աւար բերողացն է զինուորացն. և կէսն այլ *հեծելիցն*. որպէս բաժանեաց մովսէս: - 390. Քսանևզ, Վերացումն եղիայի շարժմամբ. և կառքն և *հեծեալք* տեսեալ: - 413. Կառքդ իսրայէլի և *հեծեալք* դորա: - 445. Յրեղէն կառք և *հեծեալք* երևեցան: - 445. Երրորդ՝ եցոյց յայտնապէս զպատերազմն առաջի այսոց օդոցս. վասն այն պիտոյ էր *հեծեալք*: - 445. Եւ զայս դնեն պատճառ թէ՝ ի ժամանակս ինչ՝ զօրք *հեծելոց* նոցա ո՛չ հասին ի բարեկենդանն...: - 651

**ՅԵԾԵԾԱՆՔ +** Յինգերորդ՝ զի ցաւօք և *հեծեծանօք* ապրեցաւ: - 279

**ՀԵԾԵՄ +** Եւ փոխանակ մօրն տարերք ամենայն. որ *հեծեն* և յոգոց հանեն վասն ապականութեան մեր ըստ առաքելոյ: - 400

**ՀԵԾՈՒԹԻՒՆ +** ...և նա ցաւօք և տրտմութեամբ և *հեծութեամբ* կայ անդ ի խաւարին բանտն ընդ այլ խաւարասէր հոգւոցն: - 669. Եւ այն է կեանք՝ ուստի մերժեալ են ցաւք և տրտմութիւնք և *հեծութիւնք*: - 762. Զի ա՛յն է կեանք՝ ուստի մերժեալ են ցաւք և տրտմութիւնք և *հեծութիւնք*: - 767

**ՀԵՂԳ +** Վասն որոյ որ *հե՛ղգ* է ի խնդրել զպարգևս զայս, ո՛չ կարէ հաւատալ: - 32. Թէ կամարաձևն դէպ ի քունն է, նշանակէ *զհեղգն*: - 246

**ՀԵՂԳՈՒԹԻՒՆ +** Կրկին է անգիտութիւնն. մինն է ի *հեղգութեան* ուսման: - 103. **Ժ** պատուիրանացն աստուծոյ *հեղգութիւն* գործէ: - 322. Ծուլութիւն է *հեղգութիւն* հոգւոյ ոչ սկսիլ ի բարին. կամ տաղտկանալ ի սկսեալ բարւոյ և ո՛չ կատարել: - 570

**ՀԵՂԵՂ +** Հինգերորդ՝ զի անծերանալի՛ է երկիր. ըստ որում շարժմամբ թօթափի երկիր ի ներքին պատահմանց. և *հեղեղօք* ողողի և սրբի յարտաքին պատահմանց: - 181. Վեցերորդ՝ յամպոյն իջանէ անձրև և առնէ *հեղեղ*. որպէս առ նոյիւ: - 206. Նոյնպէս և վերջին հուրն նովին չափով *հեղեղին* ի նոյն տեղիսն ընթանայ: - 225. Եւ տապանն նշանակէ՛ զեկեղեցի. որք ի ձայն ժամահարին ժողովին և ապրին ի ջուրց *հեղեղաց* մեղաց: - 618. Նմանապէս և աստ յաւուր նոր կիրակէի ասացեալն կրկնո՛յ զատկի, յանկարծահաս ժամու շարժեալ *հեղեղաց* ուղխից խռովութեանց: - 789

**ՀԵՂԵՂԱՏ +** Քսանևդ, Վասն եղիայի զոր ագռաւն կերակրեաց. և գնաց ի *հեղեղատն*. և նուաղեցաւ ջուրն: - 413. Վասն է՞ր գնաց ի *հեղեղատն*: - 443

**ՀԵՂԻ** - Եւ յետ յեսուայ դատաւորք դատեցին առաջնորդութեամբ զիսրայէլ **նժ** ըստ եօթանասնիցն թւով երեքտասան դատաւորք մինչև ի *հեղի* քահանայ: - 420. Եւ յետ սորա *հեղի* քահանայ յազգէ ի թամարայ դատեաց զիէլ ամս խ: - 420. Ետես զայս չափ մեղս առ աստուած ասէ՝ *հեղի*: - 425. Եւ զի *հեղի* ո՛չ խրատէր զնոսա սաստիւ և տանջանօք. վասն որոյ և ինքն պատժեցաւ և մեռաւ. և քահանայութիւնն յազգէ նորա փոխեցաւ յաւուրս սողոմոնի: - 425. Եւ ծնաւ մելքի *զհեղի*: - 460. Եւ *հեղի* զյակոբ: - 460.

**ՀԵՂԻՆԷ** - Տասներորդ՝ զի դշխոյն *հեղինէ* որ շինեաց զսուրբ յարութիւնն յերուսաղէմ...: - 617

**ՀԵՂՁԱԿԱՆ +** Եւ թէ շունչն քաղի, է՛ *հեղձական* մահ. ո՛չ է ուտելի: - 366

**ՀԵՂՁԱՆԻՄ, ՀԵՂՁՈՒՄ +** Դարձեալ ասեն, եթէ ոչ է հարկ՝ ընդէ՛ր ոմն քաղաք կործանի և ոմանք ո՛չ. և ոմն նաւ *հեղձանի*, և ոմանք ի կռիւս անկանին: - 12-13. Հինգերորդ՝ նշանակէ թէ զարիւն տղայոցն չէ մոռացեալ աստուած զոր *հեղձուցին* ի գետն. զայն ըմպել տայ նոցա: - 333. Երկրորդ՝ իբր թէ տղայքն զորս ի ջուրն *հեղձուին* կենդանացեալ տանջեն զնոսա: - 334. Երկրորդ՝ զարու մանուկն *հեղձնուին*: - 335. Հինգերորդ՝ ևս առաւել զզաւակս նոցա ի ջուրսն *հեղձուցին*: - 335

**ՀԵՂՁՈՒՑԱՆԵԼ +** Արիւն ուտելն՝ և *հեղձուցանելն* և գազանաբեկն՝ մի էր մեղք՝ որպէս ասացաւ ի վերոյ **ժը** գլուխն ի **զ** համարն: - 371

**ՀԵՂՁՈՒՑԵԱԼ +** *Զհեղձուցեալսն* ո՛չ խտրեն. և զազիր կերակրօք զեխին: - 34. Եւ որպէս փարաւոն վասն *հեղցուցեալ* մանկանցն՝ ջրասոյզ կորեաւ. և յառաջ քան զայս՝ **Ժ** հարուածովք պատժեցաւ: - 288. Վեցերորդ՝ սկայքն անխտիր ուտէին թէ մեռեալ և թէ *հեղձուցեալ*. վասն որոյ զի որոշեսցէ ի նոցանէ՝ ասէ արեամբ շնչոյ մի՛ ուտիցէք: - 295. Եւ թէ գլուխն ջախջախի, ո՛չ է ուտելի. զի ո՛չ հատաւ պարանոցն. ի *հեղձուցելո՛ց* կարգի է: - 366. Ո՞չ ապաքէն առաքեալքն եդին զչորսս զայս. խորշիլ յարենէ և ի զոհից ի *հեղձուցելոյ* և ի պոռնկութենէ: - 552. Այլ ա՛րդ՝ *հեղձուցեալն* սուրբ և կերակրելի է նոցա. և պոռնկութիւնն անխտիր յորժամ կանգնեն զգլորեալն: - 552. Զպիղծ կենդանիս ո՛չ խաբել. և *զհեղձուցեալսն* ուտել. և այլ բազում ինչ: - 553

**ՀԵՂՈՒԿ +** Եօթնևժ *հեղո՛ւկ* է և շարժական: - 207. Նիւթն ջուրն է. որ առաւել յարմարի մկրտութեան քան զայլ ամենայն *հեղուկ* նիւթ: - 487. Երկրորդ՝ զի կուսութեամբ ծնանի առանց ապականութեան. և զայս պատճառէ՛ հոգին սուրբ և նիւթ ջրոյն զի *հեղո՛ւկ* է: - 590. Նա՛խ՝ զի արիւնն *հեղուկ* նիւթ է. կամ ո՛չ է տալի որպէս այլ ազգք, և զրկել զժողովուրդն ի փրկական արենէն: - 598

**ՀԵՂՈՒՄ +** Եւ հասանէ իբր յակն առ որդի. և յորդւոյ առ մեզ *հեղու*: - 65. Այսպէս վասն գերազանց սիրոյն զոր ունի աստուած առ էսս՝ զարմանալ ասի. այսինքն արտաքս ելանել՝ թափիլ և *հեղուլ* ի յէսս. և միաւորիլ անփոխաբերուն բնութեամբ: - 127. **Ասեմք եթէ՝ նոքա երեքեան դասքն՝ այսինքն աթոռք՝ քերոբէք՝ և սերոբէք՝ միակարգ միապատիւ և գերազանց էութիւնք են. զի անընդմիջաբար յաստուծոյ ամենայն լուսափայլութիւնք իմաստք և շնորհք ի նոսա *հեղանին* համակարգապէս. և ապա նոքօք յայլ ամենայն գոյս երկնաւոր և երկրաւոր:** - 135. Զանձրևս *հեղու*: - 202. Երրորդ՝ զի ջուրք ծովուն բա՛րձր է քան զերկիր. վասն

որոյ հա՛րկ առնէ և ի վե՛ր մղէ և ապա՛ *հեղու* յերկիր. զորօրինակ մարդիկք ի բարձրագոյն լերանց իջուցանեն զջուրն, և ըստ նոյն չափոյ ի միւս կողմն ի վեր հանեն սակաւ ինչ պակաս: - 209. Եօթներորդ՝ վասն զգայութեանցն, որ ամենեքին յառաջ *հեղուն* յուղեղէն, և ազատապէս տեսանեն և իմանան. զի թէ գլուխն և ուղիղն ի վա՛յր էր քարշեալ և կորացեալ՝ ո՛չ կարէր ուղղակի զգալ և իմանալ. որպէս այլ կենդանիք: - 233. Տասներորդ՝ զի կիրք մարմնոյն *հեղուն* ի հոգին. որպէս յորժամ մարմինն ննջէ՝ և հոգին թմրի և անգործ մնայ. վասն որոյ արարաւ ձևն ուղիղ, զի միտքն ընդ նմա՛ ուղղեսցի ի վեր առ աստուած...: - 233. Եւ ի կատարիլ մարմնոյն՝ *հեղու* ի նա զհոգի բանական ըստ նախատես գաղափարի այնորիկ որ էր ի միտս արարչին յառաջ քան զլինիլն աշխարհի: - 258. Այսպէս և զգայականն և տնկականն մասունք են բանականին՝ նախ եղեալ ի մարմինն. և յորժամ բանականն *հեղի* ի մարմինն, յայնժամ և սոքա *հեղին* ընդ նմա. զի զօրութիւնք և մասունք են նորա ըստ օրինակի նախասացեալ երրորդ թուոյն: - 259-260. Եւ ի **իա** աւուրցն ի վեր՝ երևեալ շնչոյն ձևակերպէ՛ զկերպ մարդոյ մինչ ի խ օր արու մանկան. և իսկոյն *հեղի* ի նա՛ հոգին բանական ի շնորհացն աստուծոյ ծագեալ ի նա: - 261. Այսպէս և ի նորս սուրբն ստեփաննոս որ եղև առաջին մարտիրոս և վկայ քրիստոսի՝ *հեղլով* զարիւն իւր. տեսանէր բացեալ զերկինս և զյիսուս ընդ աջմէ աստուծոյ: - 288. Նա՛խ՝ զի մովսէս յայտնապէս զկէս արեանն անապական *եհեղ* զսեղանովն որ նշանակէր զանապական խորհուրդ արեանն. և զկէսն խառնեաց ի ջուր որպէս ցուցաւ ի խորհուրդ մկրտութեան և հաղորդութեանն խառնեալ: - 341. Երկրորդ՝ զի նախ ջուրն էր ի խառնարանն և *եհե՛ղ* զարիւնն ի վերայ որ է՛ ցոյց մկրտութեանն: - 341. Իսկ սոքա նախ *հեղուն* զարիւնն և յետո՛յ զջուրն: - 341. ...զարիւնն *հեղուլ* շուրջ զսեղանովն. որ է կենդանութեան նշանակ: - 360. Զի հոգի անմահացեալ շուրջ գայ զավ ի *հեղուլ* զաղօթս առաջի նորա: - 360. Ապա պա՛րտ է զի այրն *հեղցէ* զարիւնն և բաժանեսցէ զգլուխ կենդանւոյն: - 365. Եւ չէ զոտքն, զի չունի արիւն սերման, ո՛չ *հեղցէ* զարիւն կենդանւոյ: - 365. Նոյնպէս և արիւնահեղն արիւնապա՛րտ է մարդոյ, ո՛չ *հեղու* զարիւն անասնոյ: - 366. Իսկ քահանայքն ի նորս ո՛չ *հեղուն* զարիւն: - 366. Ութերորդ՝ Զի՞նչ եփուտն և թերափն. և զի՞նչ մեղք որդւոցն *հեղեայ*: - 412. Զի **Ճժ** ամք դատաւորացն, և **խ** ամ *հեղեայն* մինչ ի սաւուղ. որ լինի **Ճծ** ամ: - 420. Զի՞նչ էր մեղքն որդոցն *հեղեայ*: - 425. Նա՛խ՝ զի անարժան լինին սպասաւորքն. որպէս ոփնի և փենէհէզ որդիքն *հեղեայ*: - 425. Աբիաթար որդի է աքիմէլէքայ. որդւոյ աքիտովբայ. որդւոյ փենէհէսի. որդւոյ *հեղեայ*: - 427. Ոմանք ասեն եթէ արիւն բազում *եհեղ* դաւիթ: - 439. Ասեմք եթէ՝ մովսէս արիւն *եհեղ*. և յեսու բազում. և սամուէլ. և ո՛չ մեղանչեցին: - 439. Այսպէս գերազա՛նց է քան զամենայն շնորհք *հեղեալ* ի ստեղծուածս. այս է գերագոյն շնորհք. որ պատրաստեաց զկոյսն առ մայրութիւն աստուծոյ: - 463. Երրորդ՝ կոչի անդրանիկ ըստ հոգւոյն շնորհաց. զոր նախ ընկալաւ իբր գլուխ՝ և *եհեղ* յանդամքս իւր: - 473. Այս խօսի *զհեղեալ* առաքինութենէն լուսով շնորհացն աստուծոյ: - 578. Իւղ անոյշ յանուն յիսուսի *հեղեալ* ի վերայ քոյ կնիք երկնաւոր պարգևաց: - 593. ...զի էառ որպէս գլուխ մեր, և *եհեղ* յանդամս ի հաւատացեալս իւր...: - 672. Արդ եթէ սիրելիքն աստուծոյ որք զարիւնս իւրեանց *հեղին* վասն քրիստոսի՝ ոչ առնուն զվարձս իւրեանց, նմանապէս և ամենայն ազգ մարդկան: - 694. ...որ *հեղու* զարիւն մարդոյ փոխանակ նորա *հեղցի* արիւն նորա. զի ի պատկեր աստուծոյ արարի ես զմարդն: - 715. ...զի որպէս ի հնձանի ամբարեալ է ի գիտութիւնն աստուծոյ՝ մեղաւորացն պատիժ. որ *հեղու* ի վերայ նոցա...: - 748. Առաջին՝ հուր վառեալ. այնպէս, որ թէ բոլորովին ծովք ի վերայ *հեղցին* ո՛չ շիջանիցի: - 752. Ոռոգեալ ի բղխմանէ կենարար գետոյն. որ *հեղու* ի նոսա անսպառապէս: - 767. Երրորդ, զի հաւատն է լուսաւորութիւն մտաց *հեղեալ* յաստուծոյ ի ճանաչել զհոգևոր բարիսն. իսկ դևք ո՛չ ունին զլոյս մտաց և ո՛չ զհեղումն շնորհաց. վասն որոյ ո՛չ ճանաչեն զհոգևոր բարիս: - 784. Առ այսորքիւք, թէ արտասուքն որ յաչացն *հեղու*, ընդէ՞ր աղի գոլով, Ո՛չ միայն զվասն էրն խնդրեմ. այլ և զորպէսն դառնալ նմա աղի ընդ երակս աչաց: - 786

**ՀԵՂՈՒՄՆ +** Իսկ որ ասէ յովէլ՝ «հեղից յոգւոյ իմոյ». *հեղումն* ո՛չ այլ ինչ է, բայց թէ առաքումն: - 60. Եւ ա՛յս է պատճառն. զի լոյս հաւատոյն *հեղումն* է յաստուծոյ առ իմացումն մարդոյ. և ըստ որում իմացումն է մեր՝ իմաստութիւն կոչի: - 269. Եւ թէ կարմրէր, արեանն *հեղումն*: - 349. իսկ քրիստոս ո՛չ ունէր զմեղս. վայն այն վաղվաղակի ել ի ջրոյն. և նշանակէ ի մեզ զշնորհաց *հեղումն*. որ մկրտեալն ազատի ի մեղաց և իսկոյն ելանէ յառաքինութիւնս: - 487. Եւ հոգին սուրբ բազմաբա՛շխ է և անպակաս *հեղումն* ի վերայ մարմնոյ: - 523. Երրորդ, զի հաւատն է լուսաւորութիւն մտաց հեղեալ յաստուծոյ ի ճանաչել զհոգևոր բարիսն. իսկ դևք ո՛չ ունին զլոյս մտաց և ո՛չ *զհեղումն* շնորհաց. վասն որոյ ո՛չ ճանաչեն զհոգևոր բարիս: - 784. Չորրորդ, *հեղմամբ* շնորհաց. ըստ այնմ՝ «մարմին և արիւն ո՛չ յայտնեաց, այլ հայրն իմ». և է այս տեսակաւորեալ հաւատ: - 784-785. Որ է՛ հաւատ՝ յոյս՝ սէր. և սոքա երեքեան *հեղո՛ւմն* են յաստուածային շնորհացն ի բանական ոգիս. որով ուղղիմք յերկնային կեանս: - 577

**ՀԵՇՏ +** Դարձեալ, թէ է՛ հարկ՝ անիրաւք են և ինքեանք աստեղքն. զի ոմանց բարիս գրեն, և ոմանց չարիս. զոմանս մեծատունս և զոմանս աղքատս. *հեշտ* կեանս և դժւարս. երկարակեացս և սակաւակեացս. բազում անգամ անարժանիցն բարիս խոստանան, և արժանեացն չարիս - 12. Վեցերորդ՝ *հեշտ* ցանկութեան: - 209. Վեցերորդ՝ *զհեշտ* ցանկութիւն նշանակէ ...: - 356. Տասներորդ, որպէս ասէ փիլոն՝ նշանակ *հեշտ* ցանկութեան է օձն. որ և զցանկացօղ ժողովուրդն սատակէր. ըստ ախտին իւրեանց նմանեցոյց զպատուհասն: - 387. Չորրորդ՝ խորհուրդ մեղացն ճշմարիտ և բարի ցուցանէ զգործն և սիրելի և *հեշտ*. վասն որոյ յօժարի և եռայ ի կատարումն: - 558. Զի սրտիւն ապրին մարմնակեր գազանք. և *հեշտ* ցանկութեամբ բազմածին կենդանիք աճեն. և երկչոտութեամբ ապրին նապաստակք և տկարք ի հզօրից...: - 563. Նա՛խ՝ զի միայն *զհեշտ* ցանկութիւնն սիրեն հանապազ. ինքն և գործակիցն իւր: - 613. Նա՛խ՝ վասն *հեշտ* ցանկութեան իւրեանց զոր ոչ կամին ելանել անտի, - 701

**ՀԵՇՏԱԼԻ +** Զի անասունք զայս ո՛չ գիտեն. այլ միայն *զհեշտալին* ընտրեն: - 274. Եւ միւս՝ որ դառնայ ի *հեշտալին* որ է՛ հանգիստ մարմնոյ. ըստ որում կոչի ծուլութիւն: - 559. Եւ թէ ցանկայ ստորև *հեշտալեաց*, և այս լինի կրկին. թէ *հեշտալին* այն է ի պահպանութիւն անհատին, լինի որկորստութիւն...: - 561. Զի հոգի և մարմին եմք. ուտիքն է մարմնոյ, և պահքն հոգւոյ *հեշտալի*: - 649. Ո՛չ բնաւ, թէպէտ հայր տեսանէ զորդի կամ մայր զդուստր. և կամ զեղբայր և զայլս. ո՛չ միայն ո՛չ ցաւին, այլ ա՛յնպէս լինի *հեշտալի*, որպէս տեսանեմք զձկունս որ խաղան ի վտակս: - 754. Եւ թէ յաջոյ յաջուածոց խենեշութիւն մեղկէ, վերնոյն *հեշտալեաց* հաւատա՛ և ո՛չ խաբիս: - 770. Փոխանակ խրախութեանց ճիչ աղաղակի ընդդէմ *հեշտալեաց*. անհանգիստ ի խշտի՝ յերեկօրեայ զառաւօտ խնդրէաք. և ի նմա զեռանդ երանեալք: - 789

**ՀԵՇՏԱԽՏՈՒԹԻՒՆ +** Եւ գիտեն զպատճառն թէ վասն է՞ր է ողջախոհ. այսինքն զի յանառակ կենաց ժլատութիւնք լինին. և նա ի հարկէ արի գոյ զախտն ստորադասելով. այնպիսին և խոհեմ գոյ գիտելով թէ վասն մարմնական *հեշտախտութեանց* լինի անիրաւութիւն: - 582. Եւ աղքատք են հոգւով՝ որք ո՛չ խնդրեն *զհեշտախտութիւնս*: - 583

**ՀԵՇՏԱՆԱՄ +** Ի գիջութիւնս ախտից *հեշտացեալք*, և նոյն զգլորեալն կանգնեն: - 34. Երկրորդ՝ որպէս աչք հայելով ի վեր՝ *հեշտանայ* զի վերընթա՛ց է լոյսն: - 104. Եւ միտք զվերինս խորհելով *հեշտանայ*: - 104. Երրորդ՝ որպէս աչք ի զգալի լոյսն *հեշտանայ* ազգակից գոլով: - 104. Չորրորդ՝ աչքն ի գեղեցկութիւնն *հեշտանայ*, և միտք ի գեղեցկութիւն բանին: - 104. Վեցերորդ՝ աչք *հեշտանայ* որքան առաւել տեսանէ: - 104. Եօթներորդ՝ աչք *հեշտանայ* յորժամ ի մինն հաստատի: - 104. Ութերորդ՝ աչքն յորժամ ընդարձակի՝ *հեշտանայ*. և միտքն լուծեալ ի կարծեաց: - 104. Իններորդ՝ աչք ի չափաւորն *հեշտանայ*՝ և յանչափն տկարանայ որպէս յարեգակն: - 104. Տասներորդ՝ աչքն ի միշտ տեսանելն *հեշտանայ*: - 104. Եօթներորդ՝ Տես աչացն հաստատէ՛ զլուրն. և ի վեր նայիլն *հեշտանայ*: - 227. Ութերորդ՝ վասն արտաքին զգայութեանցն որ են ի գլուխն. զի այլ կենդանիք միայն *հեշտանան* կերակրով և ցանկութեամբ. իսկ մարդն *հեշտանայ* առաւել գեղեցկութեամբ զգալեացս. յորժամ տեսանէ աչօքն զերկին և զերկիր. և ժողովէ՛ զճշմարիտ գիտութիւն նոցա և *հեշտանայ*: - 233. Եւ յա՛յտ է զի ի դիմաց կուսէ առաւել *հեշտանայ* ամենայն կենդանի: - 234. Զինչ է յորժամ մարդ ի վեր նայի *հեշտանայ* աչքն. և յորժամ ի վայր՝ դժուարի: - 239. Զի աչաց լոյսն հուր է. և հուրն վերընթա՛ց է. վասն այն ի բնականսն նայելով *հեշտանայ*, և ի բռնութեամբն դժուարի և զարհուրի: - 239. Վասն այնորիկ զօրութեամբ սիրոյն շարժի առ աստուած ի միջին կէտ իւր. զի գերազանցապէս *հեշտասցի* ի նա՛: - 249. Զի որ ի լեառն սուրբ առ աստուած Երկրորդ՝ հեշտութիւն խօսակցիլ ընդ օձին. և վասն այն կամեցաւ լսել, զի *հեշտացաւ* վասն փառաց աստուածանալոյն: - 280. Եւ հերքն յառաջ եկեալ՝ անզգա՛յ է. ո՛չ *հեշտանայ* և ո՛չ ցաւի: - 390. Նոյնպէս և կրօնաւորն ո՛չ ցաւի և տրտմի և ո՛չ *հեշտանայ* ընդ աշխարհի: - 390. Չորրորդ՝ թմրի և *հեշտանայ*: - 424. Դարձեալ ասեն վարդապետք եթէ՝ խորհրդոցն մեղք՝ որ ընտրէ և կամաւ *հեշտանայ*, առաւել չար է քան զգործոցն ըստ պատահմանն: - 557. Եւ երկրորդ յանցումնէ՝ որք մտօքն *հեշտացեալ* մեղկանան ընդ տեսութեանն. և հաւանին խոկացեալք ի նոյն: - 558. Այլ և մեղք մարմնոյն՝ ի *հեշտանալն*, ի սովորիլն, և ի կապիլն առ մեղս: - 568. Ասեն վարդապետք թէ՝ ի լուր ուրախութեան *հեշտանայ* լեարդն և տարածեալ լայնանայ. և այնպէս շունչն ելեալ յորդ ընդ շնչերակսն և առնէ զծաղրն: - 619. Երրորդ՝ զի քաղցր ձայնիւ *հեշտացեալ* մարդիկ՝ զանխլաբար ուսցին զհոգւոյն բանս: - 641. Դարձեալ՝ չար կամք մեղաւորին է յաւիտենական. զի կամին յաւիտենական *հեշտանալ* ի մեղս թէ կարէին. ապա ուրեմն պատիժն լինի յաւիտենական: - 744

**ՀԵՇՏԱՍԷՐ +** Զի սէր ընչիցն է աչք ագահացն. և սէր հեշտութեանցն է՛ աչք *հեշտասիրացն*: - 32

**ՀԵՇՏՈՒԹԻՒՆ +** Եւ որպէս կիրք ցաւոցն մարդոյն են, զի զգա՛յ զկսկիծն. նոյնպէս և կիրք *հեշտութեանն* նորա՛ են, եթէ չարեաց և եթէ բարեաց, ապա ուրեմն մեր է ներգործութիւնն և ո՛չ հարկին: - 11. Զի սէր ընչիցն

է աչք ագահացն. և սէր *հեշտութեանցն* է՛ աչք հեշտասիրացն: - 32. Ուստի *հեշտութիւն* և աւանդութիւն յիրաւի խառնեալ ընդ միմեանս, և հակառակասիրութիւն և ինքնահաճութիւն յառաջ եկեալ, որով զինեալ պնդին ընդդէմ ուղղութեան. զի կարծեն զինքեանս ճշմարիտ գոլ քան զայլսն: - 33. Յնգետասաներորդ՝ ասէ սուրբն դիոնէսիոս՝ թէ վասն այն տայ աստուած սրբոցն նեղութիւնս և փորձութիւնս, զի նեղութիւնն սիրելի և փափագելի՛ է նոցա. և յայնժամ ուրախանան սուրբքն, յորժամ ի մարմնական *հեշտութեանց* հեռանան. և արիանան ի փորձութիւնս. և սակաւ նեղութեամբ ժամանեն ի մեծ հանգիստն: - 159-160. Արդ ներքին է՝ որ ի փափկութեանց և ի *հեշտութեանց* փորձի բնութիւնս մեր և այլայլի ի զանազան տեսակս մեղաց. զոր պա՛րտ է հանապազ աստուածային խնամոյն՝ զի մի՛ թողցէ յայսպիսի փորձութիւնս զմեզ ընկղմիլ: - 160. Յինգերորդ՝ նախ քան զյանցանելն՝ էին ադամ և կինն մերկ և ո՛չ ամաչէին. վասն զի ո՛չ ունէին ցանկութիւն *հեշտութեան*: - 225. *Յեշտութիւնն* ի լեարդն: - 250. Ի նոյն խոկալով սիրել զնա՛ և ատել *զհեշտութիւն* զգայութեանցս: - 269. Ա՛րդ՝ անկման աստիճան առաջին էր *հեշտութիւնն*. որ ունի յինքեան զերեք կարգն: - 280. Երկրորդ՝ *հեշտութիւն* խօսակցիլ ընդ օձին. և վասն այն կամեցաւ լսել, զի հեշտացաւ վասն փառաց աստուածանալոյն: - 280. Երրորդ՝ *հեշտութիւն* տեսութեանն և ճաշակելեացն. ըստ որում «գեղեցիկ էր ի տեսանել, և քաղցր ի կերակուր»: - 280. Իսկ թագաւորք յամենայն ամի զնոյն առնեն ուրախութիւն. ուտել և ըմպել և *հեշտութիւն* մարմնոյ. որպէս փարաւօն առնէր և հերովդէս: - 321. Կապոյտն օդոյն է գոյն. զի թէ ա՛յլ գոյն էր, վնասիչ և խափանիչ լինէր տեսութեանց. որպէս սպիտակ կամ սեաւ. այլ կապոյտն է ի *հեշտութիւն* տեսութեանց: - 342. Նա՛խ՝ զի մեղրն *զհեշտութիւն* մարմնոյն ցուցանէ: - 355. ...և Լերդափոյթն, զուրախութիւնս և *զհեշտութիւնս* մեր նուիրել աստուծոյ: - 360. Երրորդ՝ զի արուն զօրաւո՛ր է քան զէգն. և նախաստեղծքն գլորեալ էին վասն *հեշտութեան* իւրեանց. պա՛րտ էր արու լինիլ և կանգնել զնոսա: - 480. Զի յամենայն մեղս երևի հպարտութիւն այսպէս. զի ամենայն մեղք խոտումն է պատուիրանացն աստուծոյ, և խոտորումն զհետ *հեշտութեան* մարմնոյ...: - 562. Ութերորդ՝ զի ամենայն տեսակք ախտիցն ի՛ր մի երևեցուցանեն մեզ. որպէս գողութիւն զինչս, և պոռնկութիւն *զհեշտութիւն*. իսկ հպարտութեանն ո՛չ գոյ ամենևին ակնկալութիւն: - 562. Արիութիւն է զօրութիւն իմն որով *հեշտութեամբ* տանի ամենայնի վասն սիրելի իրաց: - 580. Որոյ գործն այս է. ոչ ի նեղութիւնն խորտակիլ և ո՛չ ի *հեշտութիւնն* կակղանալ: - 580. Ողջախոհութիւն է հաստատութիւն հոգւոյ. որով արգելու զցանկութիւն զգայական և *զհեշտութիւն* մարմնական: - 581. Ողջախոհութիւն է հաստատութիւն հոգւոյ. որով արգելու զցանկութիւն զգայական և *զհեշտութիւն* մարմնական: - 581. Աղքատութիւն հոգւոյ է՛ հրաժարիլն յաշխարհէ. այսինքն ի սիրոյ մարմնական *հեշտութեանց* և ի փարթամութեանց և ի պատուոյ. քանզի զերիսս զայս պարունակէ սէր աշխարհիս: - 583. Խաղաղութիւն է ի կայումն առաքինութեան. յորում է *հեշտութիւն* ի յաստուած առանց հասարակութեան մարմնոյ՝ աշխարհի՝ և սատանայի: - 585. Ասեմք թէ՝ սակաւ *հեշտութիւն* կապեցաւ յամուսնութիւնն, - 613. Եւ *հեշտութիւնն* է վասն որդէծնութեան, և որդէծնութիւնն վասն *հեշտութեան*, կամ ի պաշտօնն աստուծոյ: - 613. Եւ է՛ որդէծնութիւնն բարի, և *հեշտութիւնն* չար: - 613. Արդ որպէս ի սրտէն յառաջ գայ *հեշտութիւն* մեղաց, շնութիւն՝ ագահութիւն՝ և այլն. որպէս աւետարանն հրամայէ: - 619. Նոյնպէս ի սրտէն ելանէ կսկիծ արտասուաց. և *զհեշտութիւն* նորա քաւէ՛: - 619. որ ամենայնիւ ընդ դէմն փոխի ուտելն և ըմպելն ի ծոմ և ի ծարաւ. ծաղրն ի սուգ. *հեշտութիւնն* ի տքնութիւն. և ի չարչարանս և այլն: - 657. Եւ երթայ առ իւր տէրն *հեշտութեամբ*. և անդէն վաղվաղակի իբրև երևմամբ և տեսութեամբ իմն շահի զպտուղն առաջիկայ երանութեանց: - 691. Ոմանք խոտ. որ է ծուխ մարմնական *հեշտութեանց*: - 702. Իսկ խոտելոցն գիր, դպիր է պիղծ հոգին դիւական. և չար կամքն իւրեանց և խորհուրդն և *հեշտութիւն* մարմնոյն մելան. և ըստ գործոց առաւել և նւազ գրեն ի գիրն դատապարտութեան: - 741. Նախ՝ կոչի սիրտ և անձինք մեղաւորաց, ուր ժողովին ամենայն գործք չար որ է՛ խաղող դառնութեան. և ունակացեալ պահէ յինքեան. և *հեշտութեամբն* ճմլէ հանապազ և արբենայ մեղացն գինով: - 748. Եւ որ քան գործեմք զմեղս, այնքան բազմանայ ծնունդն նոցա. և ծուլութիւն և *հեշտութիւն* մեր սնունդ է նոցա: - 753. Մինչ զի այս քան գտանիցին *հեշտութիւնք* ի մասնկան ստեղծուածոյս, որ քան գտցին ի ստեղծօղն յայն: - 762. Եւ ի լսելեացս *հեշտութիւն*՝ լուո՛ զձայն քո: - 771

**ՅԵՌ +** Երրորդ *հեռի* և նախանձու. ըստ այսմ «գիտաց զի առ նախանձու մատնեցին զնա»: - 579. Ա՛րդ՝ ՚ի նախասացելոցս հաւաքեա՛. զի լինիցի անդ... Կապանք: Երկիւղ: Ցաւ: Ամօթ: Նախանձ: *Յեռ*: Տրտմութիւն: - 751

**ՅԵՌԱԳՈՅՆ +** Երրորդ՝ այսպէս մեկնեն, եթէ հին աւուրց զնախնի ժամանակս նշանակէ. և մանուկն զնախնի թիւն. զի միակն սկիզբն է ամենայն թըւոց. և որ մերձ է միակին՝ սկզբնապետագո՛յն է քան *զհեռագոյնն*: - 115. Զորօրինակ՝ բնութեան յատուկն և անձին. զի բնութեան տարբերն *հեռագոյն* է և

մեծ. որպէս կենդանին և բանականն. և դիմաց յատուկն մերձ և նուազ. որպէս յատուկն մերձ և նուազ. որպէս պատկեր և տիպ: - 235

**ՀԵՌԱՆԱՄ +** Դարձեալ թե ի հարկէ՛ է ոչ լինին օգուտ խրատք և սպառնալիք և ուսմունք. որովք բազումք յորդորին ի բարիս, և *հեռանան* ի չարեաց կենցաղոյս: - 11. Նախ թէ աստուած ստեղծ զկամքն բարի. և զբարին եդ առաջի կամիլ. իսկ նա անձնիշխանութեամբ *հեռացեալ* ի բարւոյն՝ գտա՛կ եղև չարին...: - 16. Յորմէ յա՛յտ է թէ և ի կատարածին ո՛չ *հեռանայ*: - 42. Նոյնպէս՝ թէ ասի տրտմութիւն հոգւոյն. զի որպէս տրտմեալն *հեռանա՛յ* ի տրտմեցուցողէն, այսպէս և հոգին սուրբ *հեռանայ* ի մեղաւորէն: - 60. Նաև *հեռանալ* ի փրկութենէ նորին: - 90. Եւ դարձեալ՝ որպէս ամենայն գիծ բոլորակին՝ ի միջին կէտն միաւորին առ միմեանս. և *հեռացեալք* ի միջին կէտէն բաժանին ի միմեանց. և զորօրինակ՝ մի է սեռն՝ և ի բազում տեսակս բազմանայ: - 112. Տասներորդ՝ զի չարն իւրովի ատեաց զնոսա և *հեռացաւ*, և իբրև զմրուր յերկիրս զետեղեցաւ: - 139. Հնգետասաներորդ՝ ասէ սուրբն դիոնէսիոս՝ թէ վասն այն տայ աստուած սրբոցն նեղութիւնս և փորձութիւնս, զի նեղութիւնն սիրելի և փափագելի՛ է նոցա. և յայնժամ ուրախանան սուրբքն, յորժամ ի մարմնական հեշտութեանց *հեռանան*. և արիանան ի փորձութիւնս. և սակաւ նեղութեամբ ժամանեն ի մեծ հանգիստն: - 159-160. Նախ վասն հեռաւորութեանն որ մեղօք *հեռացար* յաստուծոյ: - 177. Չորեքտասաներորդ՝ մերձենալով նորոգէ, և *հեռանալով* ապականէ՛: - 186. Եւ *հեռացեալ* նուազի՛ լոյսն: - 186. Եւ գիտելի՛ է, զի ըստ ամենևին *հեռանալն* լուսինն խաւարի. և ամենևիմբ մերձ եկեալ ի նոյն կենդանակերպն և ուղղապէս ընդ դէմ անցեալ արեգականն՝ խաւարէ՛ զնա. զի ընդ դիմատիպ է անօթ լուսնոյն: - 187. Վեցերորդ Փայլածուն. զոր օտարիտ կոչեն. միշտ շրջի ընդ արեգականն. և սակաւ *հեռանայ* ի նմանէ. զընթացս իւր կատարէ՛ **յը** աւուրս. **ժ** օր պակաս քան զլուսաբերն. և այլք թէ **գ** ամիս: - 189. Նա՛խ՝ զի արեգակն *հեռանայ* ի մէնջ: - 197. Դարձեալ՝ արեգակն ի ձմեռն *հեռանայ* յերեսաց երկրի՝ և մերձի ի ներքոյ երկրի: - 209. Նմանապէս յամառն մերձի յերեսս երկրի, և *հեռանայ* ի ներքուստ: - 209. Իսկ այլք ասեն թէ՝ վասն առաւել բարձրութեանն՝ լոյս արեգականն ո՛չ երբէք *հեռանայ* ի նմանէ. թէպէտ ի ներքոյ երկրի անցանէ. որպէս լուսինն թէպէտ ի վերին կամարն լինի, զլոյսն առնու յարևէն որ ի ներքին կամարն: - 222. Եւ կամ որպէս ճանապարհորդք *հեռացեալք* ի տանէ՝ յորժամ դարձցին վերստին ի տունս իւրեանց, նախ թողուն զվերջին բնակետղն ուստի դիմեցինն երթալ: - 280. Եւ ա՛րդ՝ *հեռանալոյ* մեզ ի դրախտէն կենաց վերջին ամուսնութիւնն եղև. զա՛յն նախ պա՛րտ է թողուլ, և ապա՛ յերկրաւոր հոգւոց և տառապանաց *հեռանալ*: - 281. Դարձեալ՝ հոգի որ յաստուծոյ *հեռանայ*՝ ինքն յինքենէ շարժի. անհաստատ յերկրի, անպատսպարան յերկինս: - 287. Դարձեալ գիտելի՛ է, զի յոր կրկնելով զբանսն՝ ուղղէ՛ր զբարեկամսն և ընկրկէ՛ր զսատանայ. զի այսպէս ամենայն ոք կարէ՛ յաղթել սատանայի յորժամ զընկերն ուղղէ ի բանս կամ ի գործս կամ ի հաւատս և յայլսն. յայնժամ սատանայ թիւրի և *հեռանայ*: - 323. Ասեմ՝ թէ պահօք և աղօթիւք *հեռանայ* ի մարմնոյ մարդոյն և ո՛չ լըլկէ: - 324. Այլ որք յամառելով յօրինակն՝ ա՛ղ խառնեն ի խորհուրդն, պա՛րտ է նոցա խառնել և ձէթ և մուրկ և խունկ և միս գառին. կամ զանգեալ ի կասկարայս, կամ օծեալ ի տապակի, զի զօրինակն կատարեսցեն. և *հեռասցին* ի ճշմարտութենէն: - 357. Երրորդ՝ ի չարեաց *հեռանալ* պարտ է, և ապա ի բարին մերձիլ: - 403. Եւ դարձեալ՝ զի մի՛ *հեռասցի* մասն երկնից ըստ որում էին լուսաւորքն: - 416. Չորրորդ՝ զի թէ սամուէլ էր որ ասաց թէ՝ տէր *հեռացաւ* ի քէն, և այս ո՛չ է մարգարէութիւն. զի կրկնեաց զիւր բանն. և թէ ո՛չ էր սամուէլ, այլ զանունն ընկալաւ և ինքն դև էր, սուտ խօսեցաւ ապա: - 430. Նա՛խ՝ զի *հեռասցի* ի չարէն: - 432. Այլ և առ ինքն ժողովեալ *զհեռացեալսն* դիւապաշտութեամբ: - 489-490. Զի հոգի է աստուած. և յիմացական միտս և ի հոգիս բնակէ. և չէ՛ օգուտ մարմնոյն սրբութիւն յորժամ միտքն զբաղեալ է ի չարիս. զի *հեռանայ* ի սիրոյն աստուծոյ և ի բնակութեանց նորա...: - 558. Այնպէս մարդ մեղօք զրկի ի շնորհաց լուսոյն. այլ լոյս խնամոցն աստուծոյ չէ *հեռացեալ* և սակաւ փայլէ ի ներքս ի տրտնջականն...: - 562-563. Ա՛յս է որ ըզմարդն յաստուծոյ *հեռացնէ*. զի սուրբքն միա՛յն տեսանեն զաստուած: - 570. Տասներորդ, ցաւի ընդ *հեռանալն* նորա: - 575. Ասեմք եթէ՝ մտանելն առ աստուած այն է՝ որ *հեռանայ* ի չարութեանց և լինի ի բարութեան և ո՛չ փոփոխի ի չար, աստուծոյ պահելովն...: - 695

**ՀԵՌԱՍՏԱՆ +** Երրորդ՝ է՛ նրբութիւն իմանալեացն և բնութիւն իմացմանն. որպէս բժոտ աչքն ո՛չ տեսանէ զմազն ի *հեռաստանէ* : - 31. Իսկ երկուքն իշխանականք. որ է՛ տեսանելիքն և լսելիքն. ի *հեռաստանէ՛* զգան: - 235. Երկրորդ՝ վասն մեծ բարութեանցն ի *հեռաստանէ* էարկ հիմն մարդեղութեան իւրոյ ի զաւակէ՛ նոցա լինիլ: - 398. Երրորդ՝ ի *հեռաստանէ՛* եկն: - 442. ...զի հայրն աբրահամ առեալ հուր և սուր, և յետ երից աւուրց տեսին զտեղին ի *հեռաստանէ* որպէս ասէ պատմութիւնն: - 681. Ասացեալն նմանապէս և աստ կատարեալ. ո՛չ միայն յանդի *հեռաստան,* կամ աղալ յերկան: - 789

**ՀԵՌԱՑՈՒՄՆ +** Նախ թէ աստուած ստեղծ զկամքն բարի. և զբարին եդ առաջի կամիլ. իսկ նա

անձնիշխանութեամբ հեռացեալ ի բարւոյն՝ գտա՛կ եղև չարին. զի չարն ո՛չ այլ ինչ է, բայց *heռացումն*. կամ պակասութիւն բարւոյ. ապա ուրեմն թէպէտ բանն և կամքն է աստուծոյ, այլ կամիլն և ընտրելն զչարն՝ ոչ է յաստուծոյ, այլ կամացն և բանին: - 16. Երկրորդ՝ *հեռացումն* ի զգայութեանց: - 251. Առաջին՝ *հեռացումն* յաստուծոյ որ ասէ «երթա՛յք յինէն»: - 740

**ՀԵՌԱՑՈՒՑԱՆԵՄ +** Իսկ ի հոգւոյ մարդոյն **բ** իր *հեռացուցանեն* զդևսն. այսինքն խոնարհութեամբ և ճշմարտութեամբ. վասն զի զերկուքս զայս ո՛չ ունի սատանայ. և ամենևին փախչի և ատէ՛ զխոնարհութիւն և զճշմարտութիւն: - 324

**ՀԵՌԱՒՈՐ +** Որպէս արեգակն զի ո՛չ այրէ որ է *հեռաւոր* պատճառ. այլ հուրն ի նմանէ առեալ զջերմութիւն ի մերձ գոլով այրէ՛. որպէս յա՛յտ է ի հայելւոջն, որ առեալ զնշոյլս յարեգականէն՝ այրէ՛. ա՛յսպէս և բանս մեր ի հարկէ նոցա լինի՝ զոր ստորասեմք կամ բացասեմք: - 8. Երկրորդ՝ զի թէ ի ներկայս ասեմք ի վերայ քարի թէ լինիցի փայտ. ո՛չ լինի այնպէս. արդ՝ թէ ասելն մեր զներկայն ո՛չ փոփոխէ, նա և ո՛չ զհանդերձեալ. կարէ փոխել. ո՛չ ըզմերձաւոր հանդերձեալն՝ և ո՛չ *զհեռաւորն*: - 8. Չորրորդ՝ զգայութիւնն տեսանէ զմերձակա՛յն. որպէս ա՛ստ, և այժմ. և միտք *զհեռաւորն* և զանցեալն և զհանդերձեալն: - 121. Նախ մերձակայ և *հեռաւորն* գոլ: - 131. Ոմանք մերձ են էութեամբ արարչին. և ոմանք հեռի. որպէս իմացականքն քան զբանականս. և սա՛ քան զկենդանիս. և նոքա քան զտունկս. և հուսկ յետոյ անշունչ գոյացութիւնքն. ըստ մերձ և *հեռաւոր* բնութեանց՝ զանազանապէս առնուն: - 131. Ա՛րդ՝ ասեմք նախ եթէ՝ ձայնն ծածկո՛յթ է բանին. յաղագս որոյ *հեռաւորքն* զծածկո՛յթն տեսանեն, և զծածկեալն ո՛չ: - 131. Զայս և սովո՛ր են առնել մարդիկք առ մերձաւորս և սիրելիս անընդմիջաբար խօսին. և առ *հեռաւորս* կամ ատելիս գրով կամ միջնորդով: - 177. Ութերորդ, վասն գոհութեան. *հեռաւորն* եկեալ կամ բարւոյ յաջողեալ: - 358. Երրորդ, զի ո՛չ միայն մերձաւորք, այլ և *հեռաւորք* մինչ ի յակն տեսցեն զքանչելիսն: - 414. Նա՛խ՝ զի յայտնեսցէ զծածունկն և *զհեռաւոր* իրն ժամանակաց. զի թէ զմերձաւոր և զյայտնին ասէ՝ ո՛չ է մարգարէ: - 536. Երկրորդ՝ զի թէ ճանաչիցէ *զհեռաւորն* միջնորդութեամբ բարի հոգւոյն. զի թէ յայտնէ միջնորդութեամբ չար հոգւոյն՝ ո՛չ է մարգարէ. այլ ստոցն ծանօթութիւն...: - 536. Իսկ հոգևորն իշխէ՛ ի մերձաւորս և ի *հեռաւորս*: - 538. Զի է՛ յոյս ակնունիլ ի *հեռաւորն*. և է՛ յոյս ըմբռնել ի մերձաւորն: - 695. Արդ՝ այս կենացս յոյս՝ ակն ունի ի *հեռաւորն*. և յետ մահու յոյս նոցա ըմբռնէ ի մերձաւորն: - 696

**ՀԵՌԱՒՈՐՈՒԹԻՒՆ +** Չորրորդ՝ է՛ *հեռաւորութիւն* հաւատալեացն. զի որք ո՛չ կրթին ի գործ իմացման, բայց միայն ի զգայութեանց՝ հեռի՛ են ի հաւատալեացն որպէս երկիր յերկնէ: - 31. Նախ վասն *հեռաւորութեանն* որ մեղօք հեռացաք յաստուծոյ: - 177

**ՀԵՌԻ +** Ասեմք առ այս նախ՝ եթէ կրկին է պատճառ. հուպ և *հեռի*: - 15. Այլ արդ հուպ պատճառն է՝ հարկաւոր, և ներգործութիւն իւր. իսկ *հեռին* ո՛չ է հարկաւոր որպէս ասացաւ ի վերոյ: - 15. Այլ արդ՝ աստուած է ամենեցուն ո՛չ հուպ պատճառ, այլ *հեռի*. վասն որոյ ո՛չ հարկաւոր ներգործէ: - 15. Չորրորդ՝ է՛ հեռաւորութիւն հաւատալեացն. զի որք ո՛չ կրթին ի գործ իմացման, բայց միայն ի զգայութեանց՝ *հեռի՛* են ի հաւատալեացն որպէս երկիր յերկնէ: - 31. Նախ քան զմարդեղութիւնն *հեռի* ի միմեանց. որքան աստուծոյ և արարածոյ. անեղի և եղականի. ժամանակէի և յաւիտենականի: - 82. Ոմանք մերձ են էութեամբ արարչին. և ոմանք *հեռի*. որպէս իմացականքն քան զբանականս. և սա՛ քան զկենդանիս. և նոքա քան զտունկս. և հուսկ յետոյ անշունչ գոյացութիւնքն. ըստ մերձ և հեռաւոր բնութեանց՝ զանազանապէս առնուն: - 131. Իսկ բանին ընդունարան է միտքն ի խո՛ր և ի *հեռի* կացեալ: - 131. Իններորդ՝ զի նշանակեալքն՝ վայրիք գազանք՝ հրեղէնք՝ և թևաւորք երևէին. ցուցանելով թէ արտաքոյ և *հեռի՛* են յերևելեացս բնութեանց. և անընտելք և վայրենիք: - 132. Ութևժերորդ՝ լուսով և ջերմութեամբ մե՛րձ է յամենայնսն. և բոլորակութեամբ *հեռի*: - 186. Ի *հեռին* նուազ: - 202. Արդ՝ յորժամ աղբիւրք ջրոյ՝ մերձին յերակն հրոյ որ է՛ ծծումբն, ջերմանան խիստ կամ թոյլ. մերձ կամ *հեռի* անցանելովն: - 208. Վասն առաջնոյն պա՛րտ է գիտել, զի առաւել հասարակն *հեռի՛* է և մեծագոյն. և առաւել յատուկն մերձ է մեզ և նւազագոյն: - 235. Դարձեալ՝ ո՛չ *հեռի* է ի նախախնամութեանց, և ո՛չ *հեռի* ի ստեղծմանց. այլ է՛ ի մէջն: - 257. Իսկ տէրն ի մարդեղութեան զակամայն ո՛չ կրեաց. զի *հեռի* է յաստուծոյ ակամայն: - 383. Քանզի ո՛չ կարէին ի միում աւուր յերկոսեան ուխտսն կատարել զտօնսն *հեռի* գոլով ի միմեանց. երուսաղէմացիքն այսր աղագաւ փոխեցին. և փոքր փոքր աճմամբ ընկալան և ա՛յլ եկեղեցիք զնոյն: - 482. Եւ կրկին սուտ. զի ուր զձուկն կերին՝ ի գալիլեայ յեզր տիբերիայ ծովուն էր **դ** աւուր ճանապարհ *հեռի* յերուսաղէմէ՛ և ի լեռնէն ձիթենեաց ուստի համբարձաւ քրիստոս: - 511. Եւ յովսէփ փալանացի, և եզնակ կողբացի թարգմանիչք, դարձեալ էին յաթենայ և եկեալ ի կոստանդնուպօլիս. լուան զժողովոյն և գնացին ի քաղկեդոն. զի չէր յոյժ *հեռի* ի ճանապարհէն որով գային ի հայս...: - 543. Երկու ենթակայ ունիմք հաւատոյ. մօտ և *հեռի*: - 769. Մօտ զտնօրէնութիւն տեառն. և *հեռի* զարարչութիւնն: - 769

**ՀԵՌՈՒ** - Ուսաք յիմաստնոց թէ՝ ի բաժանիլ լեզուաց իբ տանուտերանց, և ի գնալն յիւրաքանչիւր տեղիս ի *հեռու* կամ ի մօտաւոր աշխարհս. զօրն զայն տարեմուտս կարգեցին. և ուսուցին որդւոց իւրեանց պատուեալ զօրն զայն տրօք ընչից: - 200. Տղայն զմերձն տեսնու, և ծերն *զհեռուն*: - 227. Զի՞նչ է որ տղայն զմերձն աղէկ տեսնու. և ծերն *զհեռուն*: - 239. Այս երկու երակս թէ տաք է և չոր, մարդն ի մօտն աղէկ տեսնու՝ և ի *հեռուն* վատ. որպէս տղայն: - 239. Եւ թէ այս երակս հո՛վ է և գէջ, ի *հեռուն* աղէկ տեսնու և ի մօտն վատ. որպէս ծեր մարդն: - 239. Իսկ յետ մահուանն մովսէսի վերացաւ ամպն. և հրամայեցաւ ժողովրդեանն *հեռու* կալ կանգունս երկուց հազարաց վասն փառաց տապանակին և վասն զօրութեան նորա: - 415. Եւ զոր այժմ մղտատեսակ և *հեռու* տեսանէր, - 668. Երկրորդ՝ զվերջին ողջոյնն տամք, զի ի *հեռու* ճանապարհ գնայ: - 673. Երրորդ, զի ի *հեռու* ճանապարհ գնայ. այս է յերկրէ յերկինս. յուղարկաւորեմք մինչ ի գերեզմանն: - 676. Իսկ հիւսիս բա՛րձր է. և լուսաւորքն *հեռու*. և է ձախ կողմն աշխարհի. վասն այն ցուրտ է և սառնամանիք: - 731

**ՀԵՌՈՒՍՏ +** Զորօրինակ՝ արուեստաւոր ոք մինչ գործէ զսայլ, և ի *հեռուստ* տեսանէ ոք զոր նա՛ գործէ, այլ ո՛չ տեսութիւնն հարկեաց զսայլն լինիլ այնպէս. այլ կամք արուեստաւորին: - 16. Իսկ ծառք միջնորդութեամբ փայտին ի *հեռուստ* ընդունին: - 214. Երկրորդ՝ նոքա զձայնն ի *հեռուստ* լսէին. և մեք զբանն ի մօտոյ: - 353. Չորրորդ՝ զի ուտելով և ըմպելով անփոյթ առնէին զուխտաւորս ի *հեռուստ* եկեալ քառասնօրեայ մանկամբ և այլ ուխտիւ. և յանձրև և յարև և ի ցուրտ վաստակէին: - 425. Դարձեալ՝ մարգարէքն ի *հեռուստ* տեսին. և առաքեալքն մերձ զբանն մարմնացեալ: - 643. Եւ ի *հեռուստ* տեսեալ զտեղին, զի յետ կատարածի մարմնով առնելո՛ց են իւրաքանչիւր ոք զփառս կամ զտանջանս: - 682. Զոր այժմ ի *հեռուստ* գիտէ և կարծէ...: - 705

**ՀԵՏ(Ք) +** Երրորդ՝ եթէ զոր ինչ ասէաք և ճշմարիտ էր, յայնժամ բանս մեր ո՛չ հետևէր իրացն. այլ իրն բանիցն հետևէր. որ է՛ յայտնապէս սուտ. զի մնացականն՝ ոչ մնացականին ո՛չ հետևի. այլ անդրադարձեալ. զի *հետքն* ընթացից ոտիցն հետևին. և ո՛չ ոտքն *հետոցն*: - 8-9. Պատասխանեմք թէ՝ ո՛չ ասէ պարզաբար ամենայն, այլ կարգէ՛ *զհետն* թէ՝ ամենայն որ ինչ եղևն. թէ եղեալ ցուցանես զհոգին, և ես հաւատամ թէ ի ձեռն որդւո՛յ է եղեալ: - 53. Նախ՝ զաթոռքն. և *զհետ* զքերօբէքն. և *զհետ* զսերօբէքն. և այս վասն գ պատճառի: - 135. Բայց սոքա և յոյնք իւրեանց ամսամտօք ո՛չ վարին. այլ ծառայաբար *զհետ* երթան այլոց: - 201. Երրորդ՝ զհաւատն որ է գլուխ՝ պահեսցէ, զի մի՛ մոլորեսցի *զհետ* հերձուածողաց: - 218. Նա՛խ՝ զի մարդո՛յն է զանազանել զբարի և զչար. և փախչիլ ի չարէ՛, և երթալ *զհետ* բարւոյն՝ կատարելոցն է...: - 274. Վաթսունք, Տապանակն յառաջ գնայր և վէմն *զհետ*՝ որ էր քրիստոս: - 285. Եւ վասն երկրորդին ասեն, եթէ կարծեօ՛ք է՝ թէ համանգամա՞յն փոխիլոց էին, թէ մի *զհետ* միոյ: - 290. Երեքտասաներորդ՝ որպէս *զհետ* իսահակայ չոքան երկուք ի ծառայիցն և կացին ի բացուստ: - 306. Եւ *զհետ* տեառն պետրոս և յովհաննէս մինչ ի սրահ քահանայապետին: - 306. Երկրորդ՝ զի գաւազանն մովսէսի մի վիշապ եղեալ կլանէր զբազում վիշապս նոցա որ և *հե՛տն* միանգամայն ո՛չ երևէր. ընդէ՞ր ապա և նոցայն ո՛չ եկուլ զմովսէսին. քանզի սո՛ւտ էր: - 335. Վասն է՞ր տապանակն յառաջ ընթանայր և վէմն *զհետ* բանակին: - 385. Հինգերորդ՝ յառաջ տապանակն գնայր և դիտէր հանգիստ. և *զհետ* վէմն տայր ջուր. զի այժմ զհանգիստ պատրաստէ՛, և յետոյ զվայելչութիւն տայ: - 385. Զայս նշանակէ թէ՝ յետ ելանելոյ հոգւոյ ի մարմնոյ և գնալոյ ի վերին շաւիղն, հակառակ կայ սատանայ և չար զօրութիւնքն ընդ նմա, տանիլ *զհետ* իւրեանց որ զչա՛րսն են գործեալ. և յարդարոցն յաղթին հրեշտակին օգնութեամբն. որպէս և անտօն ետես. զի իմացեալ և մեք զգուշասցուք այնմ: - 410. Եւ այս ո՛չ *զհետ* իրերաց. այլ համանգամայն յանկարծօրէն ի վայրկեան ժամու զօրութեամբ հոգւոյն սրբոյ. որոյ յանկարծօրէն է ներգործելն աստուծոյ: - 470. Երեքտասաներորդ՝ ամաղեկացիք գերեցին զկողմն հրէաստանի և զայլազգիս. և դաւիթ *զհետ* մտեալ յետ գ աւուր և հարեալ ի գիշերի և ի վաղիւն մինչ յերեկոյ. և դարձուցեալ զերկոսին կանայս իւր. և ո՛չ մնաց գերի և ո՛չ մի. և յաւարէ աստի բաշխեաց ամենայն սիրելեաց իւրոց: - 514. Եօթներորդ՝ զի զցանկութիւն մեր քարշեսցէ *զհետ* իւր...: - 519. Իսկ յետ և յահեակ որկորստութիւն և պոռնկութիւն. զի յետս դարձումն է ի ճշմարիտ բարւոյն, և *զհետ* ընթերցումն է առ ահեակ և սուտ բարիս: - 560. Զի յամենայն մեղս երևի հպարտութիւն այսպէս. զի ամենայն մեղք խոտումն է պատուիրանացն աստուծոյ, և խոտորումն *զհետ* հեշտութեան մարմնոյ...: - 562. ...այն է հպարտութիւն որ խոտե՛մք և անարգեմք զճշմարիտ բարին. և ապա խոտորիմք և հետևիմք *զհետ* փոփոխելոյ բարւոյս. և այսպէս երևի հպարտութիւնն յամենայն մեղս: - 562. Ա՛րդ՝ թէպէտ հոգին ո՛չ լինի սերեալ ի հօրէն որպէս մարմինն, սակայն սկզբնական մեղքն անցանէ ի հոգւոյն յադամայ ի հոգիս *զհետ* եկելոցն միջնորդութեամբ մարմնոյն ցանկութեամբ ծնելոյն: - 567. Եւ առաջին կանոնին՝ տէր տուընջան. և որ այլ *զհետ* սոցա աղօթք և փոխք նոցունց: - 659. Նոքա որ թողին զամենայն և գնացին *զհետ* քրիստոսի,

որոց խոստացաւ զհարիւրապատիկն աստ՝ և զկեանսն յաւիտենից: - 688. Իսկ հոգիք հաւատացելոց որք ոչ գնացին այսպէս *զհետ* նորա, այլ ընկալան ի ներգործութեանցն սատանայի և ի կրից աշխարհի. - 688. ...և բազումք մոլորին *զհետ* բանից նոցա և յառասպելս նոցա կործանին: - 701. Այլ ի գալուստն քրիստոսի երե՛ք են ասացեալ հուր մի *զհետ* միոյ: - 731. Ութերորդ՝ ցետովն *զհետն* ծածկէ: - 315

**ՀԵՏԱԳԱՅ +** Ուստի յա՛յտ է՝ զի երեկոյ շաբաթուն որ կոչի կիրակմուտ՝ պատուակա՛ն է քան զմիւս գիշերն որ *զհետագայ* կիրակէին: - 194. Երրորդ, զի մեր ախորժակացս *հետագայ* և աստուծոյն. զի յորժամ ի բարին լինիմք՝ օգնէ՛. և ի չարն թո՛յլ տայ. ա՛յն է խստացուցանելն զսիրտ մարդոյ: - 336

**ՀԵՏԱՁՕՏԵՄ +** Սադովկ և աբիաթար. աննա և կայիափա. որ և աղջիկն *հետազօտեալ*: - 438

**ՀԵՏԵՒԱԲԱՐ +** Իսկ այլոցն *հետևաբար* նմա՛: - 778

**ՀԵՏԵՒԱՆՔ +** Մեղքն է գործ. և մահն պատիժ. և ապականութիւնն *հետևանք* պատժոյն: - 496. Դարձեալ ի սկզբանէն ցուցցուք. մահն պատիժ է յարարչէն եղեալ. և ապականութիւնն ի բանսարկուէն արկեալ *հետևանք* մահուն: - 498

**ՀԵՏԵՒԵԼԻ** - Թէպէտ և զայս կարգ փոխեն ոմանք և զզօրութիւնն և զպետութիւնն աւանդեն որ մեզ ո՛չ է *հետևելի*. այլ սրբոյն դիոնիսեայ որպէս ասացաք: - 135

**ՀԵՏԵՒԻՄ +** Երրորդ՝ եթէ զոր ինչ ասէաք և ճշմարիտ էր, յայնժամ բանս մեր ո՛չ *հետևէր* իրացն. այլ իրն բանիցն *հետևէր*. որ է՛ յայտնապէս սուտ. զի մնացականն՝ ոչ մնացականին ո՛չ *հետևի*. այլ անդրադարձեալ. զի հետքն՝ ընթացից ոտիցն *հետևին*. և ո՛չ ոտքն հետոցն: - 8-9. Դարձեալ թէ ի հարկէ՛ է՝ ո՛չ *հետևի* գով և պարսաւ ոմանց. զի սոքա կամաւորա՛ցն են և ո՛չ ակամայիցն: - 11. Եւ թէ *հետևեսցի*՝ ոչ որ գործեաց զգեղեցիկս և զգարշելիս, այլ որ պատճառն է և հարկ՝ գովեսցի և պարսաւեսցի. այսինքն բախտն և ճակատագիրն: - 11. Այլ մեք դասք ուղղափառաց, *հետևօղք* ճշմարտասիրութեան, ընդդիմանամք այսմ ասելով թէ աստուած ո՛չ է պատճառ չարեաց. այլ միա՛յն բարեաց: - 13. Նա՛խ՝ եթէ ուշիմ և ապուշ և այլն ըստ կարգի, սոքա եթէ ի մարմնոյն խառնուածոյ պատճառին՝ և եթէ բնական որակութեամբ հոգւոյն՝ նման և աննման գոլ, առանց ներգործելոյ ո՛չ չար են և ո՛չ բարի. ո՛չ գով. և ո՛չ պարսաւ *հետևի*. որպէս և ո՛չ բնական բարուց անաւնոց: - 19. Ապա թէ զայս ո՛չ առնէ, անձնիշխան կամօք *հետևի* չարին և ո՛չ ի բնութենէ, զոր աստուած բարի է ստեղծեալ: - 19. Եւ թէ լինէր՝ գոյր և ի բնութենէ օտար. *հետևէր* ապա ոչ գոլ որդի հօր. թէ ոչ էր ի նոյն բնութենէն. ապա և ոչ հայր. զի հայր որդւո՛վն է հայր: - 44. Եւ թէ էր այսպէս՝ *հետևէր* ապա հօր զի արարեալ իցէ ա՛յլ աշխարհ. և հանդերձեալ. և շրջեալ յաշխարհի. սրբեալ զախտաժէտս. մեռեալս յարուցեալ. և ի վերայ ծովու գնացեալ: - 45. Իննևժերորդ՝ զի թէ առանձնապէս մարդ է, ապա *հետևի* բաժանեալ բնութիւն և բ կամք և կրկին ներգործութիւն. յայնժամ ո՛չ լինի բանն մարդ եղեալ. այլ մարդն բնակութեամբ ի փառս բանին բարձրացեալ: - 68. Եւ այլ բազում ինչ հայհոյութիւն *հետևի* կարծեացն նեստորի: - 68. Եւ թէ մերկ բանին, *հետևիս* գոյութեան սկիզբն ի մօրէն գոլ և ո՛չ յաստուծոյ հօրէ: - 68. Եթէ զաստուծոյն ասես, ցուցանես զբանն կարօտ գոլ փառաց. և հա՛րկ է *հետևիլ* քեզ արիոսի: - 69. Եւ *հետևի* այսմ և գործ կրկնակի: - 70. Այլ *հետևիմք* հարցն սրբոց, որք առանց կարծեաց և խոտորմանց՝ զմիաւորութիւնն քրիստոսի անշա՛րժ պահեն: - 83. Եւ դարձեալ՝ անձին միաւորութեան՝ բաժանումն *հետևի*. և բնութիւնն անբաժ միանայ: - 84. Իսկ գործն՝ կամացն *հետևի*: - 85. Իսկ սա ասէ միանգամայն. այսինքն է համանգամայն հակադարձին առ միմեանս և *հետևին* միմեանց: - 91. Ապա ըստ այսմ *հետևի*՝ զի մարիամ մայր քրիստոսի լինի և ո՛չ աստուծոյ. զի լաւ է քրիստոսածին և մարդածին կոչիլ՝ քան թէ աստուածածին: - 91. Սակայն աշակերտացն է ուղղութեան՝ ո՛չ յանձնէ խօսիլ. այլ նախնեացն սրբոց *հետևիլ* և նոքօք ուղղել: - 93. Դարձեալ է՛ յատկութիւն, զի նախ տեսութիւնն է աստուծոյ, և ապա էութիւն ամենայն իրի՝ տեսութեանն նորա *հետևի*: - 118. Իսկ մեր տեսութիւնս էութեանն *հետևի*. զի նախ իրն լինի, և ապա՛ մեք տեսանեմք: - 118. Երրորդ՝ բանական քննութեան *հետևի* հերձուած. և հաւատոյն ուղղափառութիւն: - 122. Չորրորդ՝ բանական քննութիւն զճշմարիտն ընդ մտա՛ցն քարշէ. իսկ հաւատոյն՝ միտք ընդ ճշմարտութեանն *հետևի*: - 122. Այլ թէ ըստ կարգին իմասցիս՝ *հետևիմք* առաջասացեալ սրբոյն դիոնիսեայ. որպէս աւանդեցաւ նմա յառաքելոյն պօղոսէ յափշտակելոյն յերրորդ երկինս: - 135. Իսկ «տուտն», Նախ՝ նշանակէ զվերջին *հետեւեալսն* ընդ նմա. զի նա առաջին ինքնագիտ էր ի չարն. և այլքն *հետևեցան* նմա: - 152. Նշանակէ *զհետևեալսն* ի մահ և ի դժոխս քարշել և արկանել: - 152. Յետ ընդդէմ արտաքս աքսորելոյ զարտաքինսն. և ընդ մէջ հերձելոյ զհերձուածօղսն, և զճշմարիտն աստուածաբանութիւն հաստատելոյ ի մեզ, բե՛ր սկսցուք զսկիզբն արարչութեան եղելոց մինչ ի վախճան կատարման այժմույս՝ ըստ կարգի հին և նոր կտակարանաց *հետևեալ*: - 156. Տասներորդ՝ գործ բութեան ո՛չ ինչ ունի մեղք. զի ըստ բնութեան գործելով ոչ ոք մեղանչէ ասէ փիլիսոփայն. իսկ կամացն գործ՝ մեղանչական է. վասն որոյ կամաւորին գով և պարսաւ *հետևի*: - 156.

Նա՛խ` եթէ թողութիւնն է *հետևեալ* և կայացեալ ի զղջումն. և զղջումն է ի կամքն. և կամքն է ի կարելեացն. վասն որոյ ներընդունի զթողութիւն ի ձեռն զղջման: - 165. Դարձեալ այն զօրութիւնն և ներգործութիւնն և հարկաւորն մի է. և *հետևին* առ միմեանս. զի ամենայն որ հարկաւոր է` ներգործութեամբ է. և ամենայն ներգործութիւն զօրութեամբ ներգործէ. իսկ միւս զօրութիւնն և կարելին և ներընդունականն որ է մարթելի` մի է և *հետևին* առ իրեարս. զի ամենայն որ զօրութեամբն է` կարելի է և մարթելի: - 168. Այլ արդ` բնականին *հետևելով* տեսցուք զի՞նչ է գոյացութիւն և զի՞նչ պատահումն: - 170. Եւ թէ ոք ասիցէ, որովհետև ներգործութիւնքն բնութեանց *հետևին*, որպէս հուրն միշտ այրէ, և ջուրն ցրտանայ և ջերմանայ. ապա ճշմարիտ երևի բանն դամասկացւոյն` եթէ է՛ ի քրիստոս կրկին ներգործութիւն. որպէս և կրկին բնութիւն: - 174. Ասեմք առ այս Նախ` եթէ ո՛չ ամենայն գործ բնութեան *հետևի*, այլ և կամաց. որպէս մարդոյ. զի մի է կամք ի քրիստոս, մի է և ներգործութիւնն: - 174. Եւ յոր քան *հետևի* արեգական` առաւելու լոյսն: - 187. Եւ յորժամ ի միւս կիսագունդն հասանէ, ընդ **զ** կենդանակերպս *հետևեալ*` բոլորի լոյսն ի նմա. զի ուղղապէս զլոյսն ընդունի: - 187. Եւ գիտելի է, զի *հետևին* միմեանց երեքեան սոքա. այսինքն ջիլն. և շնչերակն. և արեան երակն: - 244. Դարձեալ` ասէ պղատոն, եթէ մարդն որ ունի զնմանութիւն անասնոց ինչ` *հետևի* և բարուց նոցին: - 248. Իսկ տրամադրութիւնք հոգւոյն` խառնուածոյ մարմնոյն ո՛չ *հետևին*: - 251-252. Եւ որք զայս ասեն` *հետևին* մոլորութեանցն պղատոնի մարմնափոփոխութեանցն. որ ասէ քաղաք ի յերկինս. և հոգիքն անդ ժողովեալ իբրև զզօր և զդասս: - 252. Եւ մանաւանդ զի բնութիւնն յանկարծակի ո՛չ կարէ ներգործել. այլ սակաւ սակաւ *հետևելով* յանկատարէն ելանէ ի կատարեալն: - 255. Ութերորդ` զի թէ թողցեն զվայելչութիւն խորանիս այս և այլոց *հետևեսցին*, անպատասխանի լիցին ի պատուհասն. որպէս եթող զապերախտ ժողովուրդն և էառ զվրանն մողոքայ և զաստղն հռեմփայ ի դատապարտութիւն ինքեանց: - 342. Երրորդ, Երրորդական լուսովն հաւատոյ *հետևիմք* ի կեանս: - 380. Իններորդ` գլուխ և տուտն ցասումն է և տրտմութիւնն զկնի. և ամենայն մեղաց յետ գործոցն տրտմութիւն *հետևի*: - 387. *Յետևեալք* սպասաւորեցին: - 456. Բայց զի յուսացեալ ի բանն ճշմարտութեան յաղագս որոյ բանս հարցափորձութեան, *հետևելով* ուսուցչացն ուղղութեան, և յուսոյ ուսողացդ նպաստութեան. բացցուք զբերանս մտաց, և ծգեսցուք ի մեզ զհոգին շնորհաց: - 456. Յոգին սուրբ աղաւնակերպ. իսկ Դիտաւորութիւնն *հետևիլն* ձայնին առ որ մկրտի: - 487. Եօթներորդն է բարձումն խաչին. ի նշան *հետևելոյ* մեզ նմին: - 489. Իսկ ապականութիւնն վերջին. *հետևեալ* ի հնարից բանսարկուին: - 496. Եւ ապա *հետևիլ* թէ անապական է մարմին փրկչին: - 498. Այլ որք ուղղաձևութեան են աշակերտք` ի մէջ գիշերի ասեն զժամ յարութեանն քրիստոսի ի գերեզմանէն. որոց *հետևիմք* և մեք և հաստատեմք բազում վկայութեամբ և օրինակաւ: - 512. Յետ այսորիկ հարցանելի՛ է ի նոր օրինաց և յեկեղեցւոյ կարգաւորապէս ընդ մարդեղութեան բանին յարմարեալ. իբր պատճառելիք առ պատճառ նորին *հետևեալ* և շարադասեալ: - 528. Դարձեալ` թէպէտ ըստ պորփիւրոսի` մասն բոլորին *հետևի*. որպէս անհատն տեսակին. և տեսակն սեռին: - 550. Սակայն ըստ արիստոտէլի սեռն և տեսակն անհատին *հետևին*. զի են երկրորդ գոյացութիւն: - 550. Ապա յա՛յտ է, զի նըւազ ճշմարիտն առաւել ճշմարտին *հետևեսցի*. որպէս նուազ բարին առաւել բարւոյն. եթէ ընդհանուրն և եթէ մասնաւորն: - 550. Ապա ուրեմն պարտին ամենայն ազգք քրիստոնէից սորա *հետևիլ*: - 550. Եւ զայս վասն է՞ր յերկարել ինձ. զի ցուցանիցի թէ ո՛չ է պարտ միոյն ճշմարտի բազում ստոց *հետևիլ*: - 551. այն է հպարտութիւն որ խոտե՛մք և անարգեմք զճշմարիտ բարին. և ապա խոտորիմք և *հետևիմք* զհետ փոփոխելոյ բարւոյս. և այսպէս երևի հպարտութիւնն յամենայն մեղս: - 562. Երկրորդ` զի սկզբնականն բնութեանն *հետևի*. իսկ սոքա անձին: - 568. Երկրորդ, զի յարքայութիւնն յերկնից` *հետևի* պայծառ տեսութիւնն հաւատոյն...: - 572. Իսկ փառք և պսակք *հետևին* յուսոյն և սիրոյն: - 572. Դարձեալ կոչին ծառայականք, զի և ի խառնուածոյ մարմնոյն գոյանան. որք ո՛չ *հետևին* միմեանց. զի որ ի խառնուածոյն ողջախո՛հ է, նա ո՛չ խոհեմ կամ արդար կամ արի կարէ գոլ: - 581. Դարձեալ կոչին յանձնառականք. որ ի պատուիրելոյ ումեք գոյ ողջախոհ. այլ զպատճառն ո՛չ գիտէ. նաև ո՛չ *հետևին* միմեանց: - 582. Իսկ վեցերորդ կոչին մակստացականք. այսինքն ի վեր ստացեալ աշխատութեամբ. որք *հետևին* միմեանց իբրև զչարս շղթայից: - 582. ...և *հետևի* նմա կեանք և խնդութիւն հոգևոր...: - 584. Իսկ ընդ դէմ այսմ, դիւական տրտմութիւնն ի մարմինն է և վասն մարմնոյն. և զարտասուս ցամաքեցնէ. և տրտմի և ամբոխի. և *հետևի* նմա ոխ և ատելութիւն. այլ և մահ ևս գործէ որպէս ասէ առաքեալն: - 584. Իսկ որ մարմնական խնդութիւնն է և դիւական` ընդ դէմ այսմ ամենայնի. և ի վախճանի տրտմութիւն *հետևի* որպէս ասէ սուրբն եւագրիոս: - 584. Յորժամ սրբազան և մաքուր հոգին հասանէ ի վախճան` ուրախութեամբ ցնծայ իբր ի հանդիսից զերծեալ և ի պսակն ընթացեալ. և որպէս յանփոփոխ կեանքն *հետևեալ*: - 668. Դարձեալ` ամենայն մեղաց պատիժ գոյ. և ա՛յլ է մեղքն և ա՛յլ է պատիժն որ *հետևի* մեղացն. - 680. ...և

Երկրորդ՝ ի հաւատն եղեն ապաստան. որոյ վարձքն *հետևի*. և ո՛չ ի քննութիւն մտաց...: - 687. Արդ՝ առաջին վկայութիւն, ասէ սուրբն կիւրեղ ի գիրս պարապմանց ի հարցմունս տիբերեայ եթէ՝ հատուցմունքն *հետևին* դատաստանին. և դատաստանն գալստեան դատաւորին ի կատարածի: - 691. Եւ այսմ *հետևի* աղանդն սադուկեցւոց որ ասէին չիք յարութիւն: - 694. Նմանապէս *հետևի* զի մարմինն ո՛չ կրեսցէ տանջանս. զի ո՛չ յառնէ ըստ նոցա կարծեացն: - 694. Եւ *հետևի* հազարամեայ արքայութիւնն որոգինի. նաև փոխիլն ի տանջանաց: - 694. ...*հետևի* զի և արդարքն կարեն ելանել յարքայութենէն աստուծոյ և գնալ ի դժոխքն: - 700. ...զի մարդոյ ի բարի գործս հակեալ՝ հարստահարի՛ արդարութիւնն յողորմութենէն. և թէ ի չարն *հետևիմք*՝ ողորմութիւնն յարդարութենէն: - 745. Ուստի երևի **զ** ժամս ի յարութենէն մինչ ի վճիռ հատուցման և կորստեան չարաց չորեքկին. այսինքն գործոց չարաց և պատժոց նոցին. պատճառաց դիւաց և *հետևելոց* մարդկան: - 748. Նա՛խ՝ ծառն կենաց են հաւատացելոց անձինքն տնկեալք ի վտակս հոգւոյն՝ ջրով աւազանին. *հետևեալ* ի մշտնջենաւոր կեանս: - 765. Երկրորդն հասարակ բնութեանս նմա *հետևեալ*: - 778. Այլ ո՛չ թէ ողորմութիւնն աստուծոյ *հետևի* ժամանակի, այլ քաղցրութեան կամացն: - 780. Այլ մեք *հետևելով* ժամանակի՝ գտցուք զողորմութիւն ի քաղցրութեան կամաց: - 780. Դարձեալ՝ մարմին քրիստոսի խորհրդապէս է՛ եկեղեցի. և պա՛րտին չարչարակցիլ նորին՝ *հետևելով* նմին: - 781. Թերևս *հետևելով* ո՛չ ինքեան, այլ ուղղակին խորհրդոց հաւանականք գոն: - 782

**ՀԵՏԵՒԵՑՈՒՑԱՆԵՄ +** Եւ զապականութիւնն *հետևեցոյց* բանսարկուն սատանայ: - 496

**ՀԵՏԵՒՈՂ, ՀԵՏԵՒՕՂ +** Զորոց պատճառս մլորութեանն **ը** են ասացեալ *հետեւօղք* ուղղափառութեան: - 31. Ըստ այսմ օրինակի և նոր հերձւածօղք քաղկեդոնիկք նեռին կարապետք. *հետևօղք* նեստորի անիծելոյ՝ և լևոնի պղծոյ: - 34. Հինգերորդ՝ զի չա՛փ եդ զորքանութիւն չարչարանացն իւրոց *հետևողացն*...: - 43. Եւ ոմանք միայն զգալի և ապականացու և ծորելի որպէս երկիրս այս. և զայսոսիկ ո՛չ ընդունիմք մեք ճշմարտութեան *հետևօղքս*: - 221. Որպէս առաջին հարքն անապական գոլ ասացին. և մեք *հետևօղք* նոցին անապական ուսանիմք: - 222. Եւ տէր մեր հրդեհեաց զգործս հեթանոսաց արուեստաւոր հնարիւք իւրոցն *հետևողաց*: - 423. Նոյնպէս և զկամաւոր մահն որ է՛ դեղ և առիթ յաւիտենական կենացն, նախ ինքն ճաշակեաց և ուսոյց *հետևողաց* իւրոց: - 497. և առաքեալքն ձեռն դնելովն միայն՝ տային զհոգին սուրբ. և ի լեզուս խօսէին. և մարգարէանային ընդունօղքն. իսկ վարդապետք սուրբք՝ քարոզութեան նոցին *հետևօղք* և որդիք ծնողացն՝ երրորդ կարգին յետ նոցա: - 535. Առաքելոյն պետրոսի հնազա՛նդ եմք որպէս քրիստոսի. նաև պօղոսի և ամենայն առաքելոցն և աշակերտացն ամենեցուն և *հետևողաց* նորա և աթոռոց նոցա: - 547. Այլ գիտելի է, զի ոմանք *հետևօղք* չար աղանդոյն քաղկեդոնի մոլորեալք ի ճշմարտութենէն՝ ջուր խառնեն յանապական բաժակ արեանն քրիստոսի: - 594. Եւ դու խառնեա զսոսա ի խորհուրդ պատարագին. զի իցես ուղղակի մեկնիչ և գրոյն *հետևօղ*: - 596. Այլ և առաքեալքն և *հետևօղք* նոցա հարքն սուրբք՝ ո՛չ գիտէին զխառնարանն. և դու ուսար և խառնես ջուր և ընդ անիծիւք նոցա մնաս որպէս ցուցաւ ի վերոյ: - 596. Զի վարդապետութեանն իւրեանց և օրինակացն *հետևօղս* լեալ ցուցանեն. և արքայութեանն արժանաւորս վկայեն: - 740

**ՀԵՏԷ +** Որ և անդ ժամանեաց տէրն և կապեաց զհզօրն. և զկարծրացեալ ամրոցն աւերեաց. և կողոպտեաց ի նմանէ զհոգիսն մարդկան որ յադամայ *հետէ* ընդ բռամբ ունէր: - 503. Սկզբնական մեղն որ յադամայ *հետէ*: - 591. և մարմինք մեռեալք որ յադամայ *հետէ*՝ յանկարծակի յական թօթափել ի փող յետին յարիցեն ասէ առաքեալն: - 721

***ՅԱՅՆՄ ՀԵՏԷ +*** Այլ *յայնմ հետէ* ողորմութիւնն աստուծոյ արգել զայլ աւուրսն: 435. Զի մինչ յերեսուն ամն շարժի աճիլ. և *յայնմ հետէ* ի նուազիլ: - 479-480

***ՅԱՅՍՄ ՀԵՏԷ +*** Չորեքտասաներորդ, զի ցուցցէ թէ *յայսմ հետէ* արքն միա՛յն ունին իշխանութիւն մերձենալ առ ի պատարագել. և ո՛չ գոյ համարձակութիւն կանանց յայս գործ: - 518

***ՎԱՂՈՒՑ ՀԵՏԷ +*** Որ ի *վաղուց հետէ* բազումս թախանձէր: - 772

**ՀԵՏԻՈՏ +** *Հետիոտս* փախեաւ և ծածկեալ գլխով. և նոյնպէս տէրն ի խաչին: - 438

**ՀԵՐ +** Որ և զծովս և զաղբերս և *զհեր* և զղեղս առաւելու ընդ իւր և նւազէ՛: - 187. Գլխոյն *հերն* որպէս արմատ. և ջիլք և ոտք՝ որպէս ոստք ըստ ձևոյ աշխարհի: - 233. *Հերն* կակուղ և նօսր, ցուցանէ զբթամիտն. և զգռուզն. և զաներկչոտն: - 246. *Հերք* բուսեալ ի ճակատն, ցուցանէ զգազանաբարքն: - 246. *Հերն* շէկ և ստուար, ո՛չ է խելամուտ: - 248. Իսկ *հերն* կիսասև և ոչ յոյժ բարակ՝ զբարեբարոյն և զբարի կազմուածն ցուցանէ: - 248. Եւ թէ զտեսութիւնս զայս կարծես էութիւն հոգւոյ ըստ որում է հոգի, ապա ո՛չ միայն ետես զհոգի, այլ և զմարմին՝ և զիւրաքանչիւրոց ընտրութիւն, և զհամար *հերաց* և զթիւն աստեղաց. և սոքա յետո՛յ են գոյացեալ ըստ կամաց տեսողին: - 260. Այլ և զոհ ուխտաւորաց

զմազ *հերացն* այրել: - 359. Չորրորդ՝ զդեղձան *հերն* և անարատ մարմնով և անբիծ հոգով, որ ո՛չ ունէր զլուծ մեղաց: - 383. Նախ գերծու *զհերն*. և զոր ուխտիւն աճէ՝ զայն ի սեղանն հանել ի կատարումն ուխտին: - 389. Աբիսողոմ *հերովն*: - 434. ...և ցետեմք *զհերս*...: - 670. Երկրորդ՝ ուղղեցին աւելիքն ի չափն. որպէս աւելո՛րդ եղունգաց *հերաց* և վեցամատնից և այլոցն. որք չափաւորին: - 725. Գեղեցիկ գոյն որպէս ծնովն *հերովն* և այլովքն որ ասացաւ: - 725. Ծխատեսակն ի *հերս*: - 786

**ՀԵՐԱԿԼ** - Երկրորդն է ժողովն թէոդուպօլսի, որ այժմ կոչի կարնոյ քաղաք. ո՛չ այն զոր յետոյ *հերակլ* քաղկեդոնիկ ժողովեաց և խաբեաց զեզր կաթուղիկոսն հայոց: - 544. ...որ եզր եղև հաւատոյ ուղղութեան. և հրամանաւ *հերակլի* հաւանեցաւ ժողովոյն քաղկեդոնի. կացեալ զ կաթողիկոսք նոյն աղանդովն որ են այսոքիկ. Եզր. Մովսէս. Անաստաս. Իսրայէլ. Սահակ. Եղիա: - 545

**ՀԵՐԱՏՈՒԿ +** Եւ շրջապարեալ ընդելեաց ի *հերատուկ* ճիւաղաց: - 789

**ՀԵՐԵՏԻԿՈՍ +** Իսկ ուրախանալն ի չարն մահ է և անզգայութիւն. և ընդդէմ բժշկողացն մրցումն. որպիսիք էին հեթանոսքն ի կուռս իւրեանց. և հրէայքն յօրէնսն. և փաղանք *հերետիկոսացն* յաղանդս իւրեանց: - 33. Երրորդ՝ *հերիտիկոսօք*. որք բառնան զհոգին: - 486

**ՀԵՐՁԵՄ +** Որք *հերձեալ* ըստ ինքեան սարտուցան ի կենաց. և զհերձուած կորստեան ուսուցին բազմաց: - 31. *Հերձեալք* ի հաւատոց՝ բաժանեն զքրիստոս. և զայլ եկեղեցիս հերձուածօղս կոչեն: - 34. Յետ ընդդէմ արտաքս աքսորելոյ զարտաքինսն. և ընդ մէջ *հերձելոյ* զհերձուածօղսն, և զճշմարիտն աստուածաբանութիւն հաստատելոյ ի մեզ, բե՛ր սկսցուք զսկիզբն արարչութեան եղելոց մինչ ի վախճան կատարման այժմույս՝ ըստ կարգի հին և նոր կտակարանաց հետևեալ: - 156. Չորրորդ՝ վարագոյրն *հերձաւ*: - 490. Զորօրինակ՝ մի ոմն ծառ հատանէ, և այլ ոմն զհատեալն դարձեալ *հերձու* և բաժանէ՛ և տայ յայրումն: - 498

**ՀԵՐՁԱՍԻՐՈՒԹԻՒՆ** - Ասեմք եթէ՝ կարի՛ արժանապէս քումդ անմտութեան *հերձասիրութեանդ* դատեցար: - 497

**ՀԵՐՁՈՒԱԾ +** Այլ արդ՝ ամենայն պատճառ առաւել է քան զպատճառելին. եթէ բարեաց և եթէ չարեաց. ապա անհնարին *հերձուած* է ասել զչարն յաստուծոյ: - 14. Որք հերձեալ ըստ ինքեան սարտուցան ի կենաց. և *զհերձուած* կորստեան ուսուցին բազմաց: - 31. Եւ որպէս նեռնն ազդումն է սատանայի՝ որպէս առաքեալն ասէ. և նոքա յազդմանէ սատանայի՝ խորհին և խօսին զանազան *հերձուածս* ըստ չար խորհրդոց նորա: - 35. Դարձեալ՝ որք ո՛չ ասեն աստուած զհոգին, առաջին *հերձուած*՝ զի զհայր բառնան: - 51. Ապա ուրեմն այսպէս կարծելն՝ զհոգին միայն յորդւոյ ցուցանէ՛ և ո՛չ ի հօրէ որ է անհնարին *հերձուած*: - 62. Այլ և այլ վարդապետութիւնք ընդ դէմ այլ և այլ *հերձուածո՛ց* են, և ո՛չ ընդ դէմ միմեանց: - 79. Երրորդ՝ բանական քննութեան հետևի *հերձուած*. և հաւատոյն ուղղափառութիւն: - 122. Եւ թէ է զօրութիւն ի նա՛, լինի յանկատարութենէ ի կատարելութիւն եկեալ, կամ հակադարձեալ. որ է՛ անհնարին *հերձուած*: - 168. Այլ զայն ինչ հարցումն որ զմարդն ի *հերձուածոյ* ի զատ տանի՝ պա՛րտ է հարցանել. որպէս յառաջիկայդ հարցումն է սակաւ մի: - 251. Իսկ յազգէս հայոց ո՛չ ոք իշխեաց խօսիլ *հերձուած* և զայլոցն ո՛չ ընկալան: - 551. Որ և է՛ այս *հերձուած* մեծ և յանդուգն հայհոյութիւն ընդ դէմ կարգաց եկեղեցւոյ: - 589. ...քանի՞ ևս առաւել *հերձուած* մեծ է կանանց. որոյ ասաց աստուած թէ «առ այր քո դարձ քո և նա տիրեսցէ քեզ» հրաման տալ զգործ քահանայի առնել որ ազատա՛ց է և ո՛չ ծառայից: - 589. Են և այլ բազում վկայութիւնք ի գրոց սրբոց որ զայսպիսի *հերձուածս* սուտ և ընդունայն երևեցուցանեն: - 590. Ապա և ո՛չ աղօթք և պաշտօն քահանայից կամ տուրք կամ պատարագք է օգուտ հոգւոյն ըստ քեզ որ է բնաւ սուտ և չար *հերձուած*: - 605. Եւ այս՝ փոփոխումն յանեղ բնութիւնն երևեցուցանէ որ է՛ անդունդ *հերձուած*: - 778

**ՀԵՐՁՈՒԱԾՈՂ +** Որպէս ասեն *հերձուածօղք*՝ զամենայն ինչ մարդկան ի հարկէ՛ գոլ. այսինքն զգործ. զդիպուած. զմահ. զկեանք. և զամենայն ինչ: - 7. Վասն այն *հերձուածօղքն* ո՛չ դառնան, զի ո՛չ կարեն ճանաչել զստութիւնն իւրեանց: - 32. Վասն այն *հերձուածօղն* ո՛չ կարէ ուղղիլ: - 33. Արդ՝ կռապաշտն և *հերձուածօղն* հաւասա՛ր են յամբարիշտ գոլն. զի որպէս շուն դառնայ ի փսխած իւր. այսինքն զի նա ո՛չ ունէր, և սա՛ ուրացաւ և դարձաւ անդրէն: - 33. Իսկ *հերձուածօղ* զիտութեամբ ամբարշտին. որոց ծա՛նր է պատիժն: - 33. Իսկ *հերձուածօղքն* զփառս ճշմարտին աստուծոյ նուազեն: - 33. Նմանապէս հաւասարի պաշտօն *հերձուածողաց* և հրէից: - 34. Ըստ այսմ օրինակի և նոր *հերձուածօղք* քաղկեդոնիկք նեռին կարապետք. հետևօղք նեստորի անիծելոյ՝ և լևոնի պղծոյ: - 34. Հերձեալք ի հաւատոց՝ բաժանեն զքրիստոս. և զայլ եկեղեցիս *հերձուածօղս* կոչեն: - 34. Նա՛խ՝ զի գո՛րծ է նեռինն ուրանալ զաստուած, որպէս իւր անունն յայտնէ. ա՛յսպէս և *հերձուածօղն* ուրանայ զաստուածութիւն որդւոյ. կամ զհոգւոյն սրբոյ...: - 34. Երկրորդ՝ նեռն հայհոյէ զքրիստոս զինքն կոչելով. նմանապէս և *հերձուածօղք* ոմանք հայհոյեն

զմարդեղութիւնն Քրիստոսի: - 34. Երրորդ՝ մոլորեցուցիչ կոչի. և *հերձուածօղք* մոլորեն զուղիղ հաւատս քրիստոնէին. և զբարի գործս նոցա: - 35. Նոյնպէս և *հերձուածօղք* պղծեն զտաճարն աստուծոյ և զհաւատն սուրբ՝ որով քրիստոս ի մեզ բնակի, և մեք ի նա՛: - 35. Եւ այլս բազում բաղդատութիւն գոլով *հերձուածողի* և նեռինն. և զորս տէրն գնեաց՝ սոքա ուրացեալք՝ ածեն ի վերայ անձանց զերագահասն կորուստ: - 35. Այս օտարութիւն անուանցս լծակցեալ ընդ միմեանս՝ առնէ զմոլորութիւն *հերձուածողացն*: - 43. Ասեմք թէ՝ և այս ընդ դէմ երկուց *հերձուածողա՛ց* է: - 79. Արդ՝ յաջ և յահեակ խոտորին *հերձուածօղք*. որպէս սաբէլ յաջ խոտորեալ՝ ի մի բնութիւն և ի մի անձն ժողովեաց զերրորդութիւնն սուրբ: - 80. Երրորդ՝ զի խորհրդով և ծածուկ է պահելի ի *հերձուածողաց* և ի հեթանոսաց և յանվարժ մտաց ախմարաց...: - 123. Յետ ընդդէմ արտաքս աքսորելոյ զարտաքինսն. և ընդ մէջ հերձելոյ *զհերձուածօղսն*, և զճշմարիտն աստուածաբանութիւն հաստատելոյ ի մեզ, բե՛ր սկսցուք զսկիզբն արարչութեան եղելոց մինչ ի վախճան կատարման այժմույս՝ ըստ կարգի հին և նոր կտակարանաց հետևեալ: - 156. Երրորդ՝ զհաւատն որ է գլուխ՝ պահեսցէ, զի մի՛ մոլորեսցի զհետ *հերձուածողաց:* - 218. Հինգերորդ՝ ընդ *հերձուածողաց* և սատանայի մի՛ պարզմտութեամբ՝ այլ հնարիւք խօսեսցի: - 218. Եւ յայս ասեն *հերձուածօղ* ազգն Ֆռանգաց, թէպէտ խոստովանի՛ն աստ, յիշատակի՛ մեղքն ի դատաստանին: - 433. Դաւիթ հալածեալ ի սաւուղայ և յաբիսողոմայ. և տէր մեր յանհաւատից և *հերձուածողաց*: - 438. Եւ տէր զչարագործս և *զհերձուածօղս* սատակէ՛: - 441. Զի *հերձուածօղք* ոմանք օծեալ ասեն զքրիստոս յառաջ քան զյղացումն: - 475. Դարձեալ *զհերձուածօղս* և զհեթանոսս. որք ընդ դէմ հաւատոց և գործոց զինին: - 539. Ասեմք, եթէ որք ի հաւատս ունին թիւրութիւն. որպէս *հերձուածօղք* և վնասիչք եկեղեցւո...: - 540. Նոյնպէս և որք անբիծ են հաւատովք և սուրբ գործովք. և կամ որք զղջացեալ յետս դառնան ի մեղաց և ի *հերձուածողաց*. նոցա՛ է արձակումն և օրհնութիւնն: - 540. Եւ որպէս այսորիկ ժողովք ընդ դէմ հասարակ *հերձուածողաց*, նոյնպէս և առանձին ժողովք եղև ազգիս հայոց է երրոդ: - 544. Երբեմն ժամանակաց, ուր ուրէք մտանէին *հերձուածօղք* և սերմանէին զորոմն աղանդոց: - 544. Այլ ա՛րդ՝ յամենայն ազգաց ելին *հերձուածօղք* որ է սուտ. և խառնեցան ընդ ճշմարտութեանն: - 550-551. Ասեմք առ այս թէ՝ ո՛չ է հարկաւոր այս ամենայն ուրէք. զի գո՛յ և տարաձայնութիւն բարի՝ քան զհամաձայնութիւն ընդ *հերձուածօղս*. և լաւ է բաժանումն ի չար ժողովոց՝ քան զմիաբանութիւն: - 551. Դարձեալ գիտելի է, զի աստ ասեն *հերձուածօղ* ազգն Ֆռանկաց թէ՝ թէպէտ մկրտութիւնն գործ քահանայի է, բայց ի հարկաւոր ժամանակն թէ քահանայ ո՛չ լինի ամենայն ոք որ գիտէ զձև մկրտութեան՝ կարէ մկրտել: - 588. Դարձեալ թէ՝ ի՞նչ մարդոյ խոստովանեցաւ. թէ քահանա՞յ էր. *հերձուածօ՞ղ* էր թէ ուղղափառ: - 601. Այլ և ո՛չ զազան *հերձուածօղ*: - 617. Չորրորդ, ասէ սուրբն եպիփան ի հաւատոց գիրն, եթէ որպէս հոգին միայն դատի ըստ բանի *հերձուածողացն* զի կարէ՛ ասել մարմնոյն եղեալ զյանցանքն: - 691. Ոմանք *հերձուածօղք* որպէս որոգինէս, առաջին յարութիւն ասաց զհազարամեայ արքայութիւնն...: - 710. Գիտելի՛ է, զի ոմանք *հերձուածօղք* մոլորեցան վասն յարութեան մեռելոց և ասացին թէ մարմինն ո՛չ բաղկանայ ի չորից տարերց. այլ լինի պարզ: - 720. Եւ դարձեալ ոմանք *հերձուածօղք* ասացին թէ՝ այս մարմինս ո՛չ յառնէ և ո՛չ այս մարդ որ մեռանի. այլ փոխանակ նորա նոր մարդ յառնէ: - 720

**ՀԵՐՈՎԴԷՍ** - Իսկ թագաւորք յամենայն ամի զնոյն առնեն ուրախութիւն. ուտել և ըմպել և հեշտութիւն մարմնոյ. որպէս փարաւօն առնէր և *հերովդէս*: - 321. Եւ տէրն մեր քրիստոս ի մանկակոտոր սպանմանէն *հերովդէի*: - 328. Այլ կենդանի եղբօր, կամ փոքր եղբօր կինն, կամ գոլով զաւակ, անօրէնութիւն էր որպէս *հերովդին*. առ որ ասէր յովհաննէս, «չէ արժան քեզ ունել զկին եղբօր քոյ». զի դուստր նորա էր աղջիկն որ կաքաւեաց: - 402. Դաւիթ չորս ամ բնակեցաւ ի գէթ մինչ մեռաւ սաւուղ. և տէր մեր յեգիպտոս՝ մինչ մեռաւ *հերովդէս*: - 437. Կոտորեաց սաւուղ զքահանայս վասն դաւթի. և *հերովդէս* զմանկունսն բեթլէհէմի: - 437. Եւ *հերովդէս* այլազգի տիրէր. յորոյ **լք** ամին ծնաւ տէր մեր յիսուս քրիստոս: - 449. Հինգերորդ՝ աճաւ առ *հերովդէս*. և ի հրէից յոյժ չարախօսեալ. և սպիտակ հանդերձ զգեցեալ առ ի նախատինս: - 492. Յորժամ ըզպարսափելի գլուխն յովհաննու մկրտչին՝ բերին ի մէջ բազմականացն *հերովդէի*...: - 656

**ՀԵՐՔ** - Եւ *հերքն* յառաջ եկեալ՝ անզգա՛յ է. ո՛չ հեշտանայ և ո՛չ ցաւի: - 390. Եւ *զհերսն* պատարագել աստուծոյ, նախ զինքնածին բոյսքն ի յանձնէ իւրմէ, և ապա՛ զայլսն ի յանասնոց: - 390. Եւ դարձեալ՝ գլուխ է քրիստոս. և *հերք*՝ որպէս դասք վերին զօրացն ի նմանէ՛ առ մեզ իջուցեալ զշնորհս: - 534

**ՀԵՐՔԵՄ +** Երկրորդ՝ սրբութիւն արգանդին մերժէ՛ զմեղս և *հերքէ՛* զհիւրասահութիւն մեղանչելոյն մահու չափ. որպէս երեմիային և յովհաննուն: - 462. Զի ի խորհուրդ մկրտութեանն ի յառնուլ ջուր, հոգին սուրբ և զօրութիւն բարձրելոյն և ողջոյն հօրն ի ծեռն հրեշտակին որ *հերքէր* զմեղս ըստ մկրտութեան: - 462. Յաչաց աստի՝ հայեցարատս *հերքեալ* լիցի տեսութեամբ լուսոյդ: - 771

**ՅԵՐՔԻԶ +** Եւ այսոցիկ վատթարաց *հերիւք* եղաք: - 126

**ՅԵՐՔՈՒՄՆ +** Դարձեալ՝ տարածումն ձեռացն զմերժումն և *զհերքումն* թշնամւոյն, այլ և զիշխանութիւն նորա արտաքս ընկենու...: - 489

**ՅԶՕՐ +** Զի թէ ոչ կամաւ, բռնադատեցաւ յայլ իմն *հզօրէ*. և հաներ յաստուածութենէն: - 36. *Յզօր* և տկար: - 78. Նոյնպէս և քրիստոսն անունն՝ և տէր՝ և աստուած՝ և այլն՝ զո՛յգ և հաւասա՛ր է մարդկութեան իւրոյ և աստուածութեանն. և ո՛չ առաւել և նուազ. կամ տկար և *հզօր*. կամ անգէտ և ամենագէտ. և որ ինչ այսմ նման: - 89. Դարձեալ՝ որպէս ասեն աստուած և մարդ անհաւասար. այսինքն *հզօր* և տկար. անեղ և եղական. բնութեամբ և շնորհօք: - 90. Երկրորդ՝ միքայէլ. որպէս զաստուած կամ *հզօր*: - 144. Եւ ասեն՝ տէր *հզօր* զօրութեամբ, տէր կարօղ ի պատերազմի: - 144. Եւ վասն երկրորդին ինքն տէրն ասէ՝ կապեալ *զհզօրն* և զտուն նորա աւար հարեալ որ է՛ դժոխքն...: - 153. Դարձեալ ասեմք, ամենակար և ամենազօ՛ր է աստուած. և որ ամենայնի կարօղ է և *հզօր*, ո՛չ է անկար: - 163. Ձեռն բարձր և բազուկ *հզօր*: - 285. Վեցերորդ՝ *հզօ՛ր* է ուժով: - 315. Եւ տէր մեր *հզօր* զօրութեամբ, «որ կրէ զամենայն բանիւ զօրութեան իւրոյ»: - 315. Ութևժ, չո՛րս են որք *հզօրք* են և պերճ շրջին ասէ սողոմոն. այսինքն աքաղաղ, և նոխազ, և թագաւոր հրապարակախօս, և առիւծ՝ որ ո՛չ դարձուցանէ թիկունս յանասնոց: - 316. Դարձեալ գիտելի է, որք զքրիստոս բաժանեն յերկուս բնութիւնս. և յերկուս գործս սոյնպէս. զմինն աստուած՝ և զմիւսն մարդ. *հզօր* և տկար. և գործ մարդոյ և գործ աստուծոյ. որպէս աղանդն քաղկեդոնի: - 350. Զուարակն *հզօր* և արդիւնարար. զի արդիւնարարք և հզօրացեալք ի գործս բարիս՝ պատարագ են աստուծոյ...: - 358. Այլ և ուղղիցին **դ** տուն է կիսամասնեայ. ընդ սրբոյ խաչեցարին *հզօր* և անմահ գառինն եղեալ: - 375. Զի՞նչ է ձեռն բարձր և բազուկ *հզօր*: - 395. Եւ տէր մեր նախ կապեաց *զհզօրն* ի խաչին և զտուն նորա աւերեաց որ էր ամրոց դժոխոցն: - 419. Եւ որք գիտեն զտնօրէնութիւն փրկչին, զգեցցին զփրկութիւն նորին. զի նա՛ է *հզօրն* յորմէ եւ կերակուր քաղցր: - 422. Եւ զօծումն զօրութեան՝ յորժամ օծաւ արեամբ ի վերայ խաչին և քակեաց զամուրս *հզօրին* և էառ աւար: - 474. Որ և անդ ժամանեաց տէրն և կապեաց *զհզօրն*. և զկարծրացեալ ամրոցն աւերեաց. և կողոպտեաց ի նմանէ զհոգիսն մարդկան որ յադամայ հետէ ընդ բռամբ ունէր: - 503. Եւ քրիստոս ա՛նդ գնաց և կապեաց *զհզօրն* և քակեաց զամուրս նորա և աւար էառ զհոգիսն: - 506. Ա՛րդ՝ եթէ քրիստոս ի ներքին դժոխքն ոչ էջ, ո՛չ է կապեալ *հզօրն* որպէս աւետարանն ասէ. և ոչ զդրունսն խորտակեալ. և ո՛չ զգերիսն աւար առեալ որպէս դաւիթ ասէ: - 506. Երկրորդ՝ զի դժոխքն այն էր բուռն զօրութիւնն սատանայի. և քրիստոս կապեաց *զհզօրն* ըստ աւետարանին. ապա ուրեմն քրիստոս աւերեաց զդժոխս: - 506. Նաև զամենայն գլխաւոր մեղս ընդ *հզօր* խորհուրդ ասէ սուրբն եւագրիոս. վասն զի նախ ի խորհուրդն տնկի ամենայն սերմն մեղաց. և ապա ի մարմինն բուսանի և աճէ: - 557. Իսկ սուրբն Նագրիոս **ը** ասէ զխորհուրդս *հզօրս*. այս է: - 560. Զի սրտիւն ապրին մարմնակեր գազանք. և հեշտ ցանկութեամբ բազմածին կենդանիք աճեն. և երկչոտութեամբ ապրին նապաստակք և տկարք ի *հզօրից*...: - 563. Ապա ի բացեայ կացեալ և զձեռս համբարձեալ ասէ, Սուրբ աստուած Սուրբ և *հզօր* Սուրբ և անմահ որ խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ: - 631. Թէպէտ կամաւ տկարացար և ետուր զքեզ ի ձեռս խաչողացն՝ *հզօ՛ր* ես յամենայնի: - 632. **Եւ վկայ այսոցիկ ի մամեստիայ գտեալ քարն. յորում գրեալ էր յունարէն գրով, «սուրբ աստուած սուրբ և *հզօր* սուրբ և անմահ որ խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ**»: - 632. Այլ զոր ինչ հասարա՛կ է երից անձնացն, աստուած, և *հզօր*, և անմահ և այլն ամենայն, կարելի՛ է ասել միոյ անձինն և միոյ դիմաց. աստուած *հզօր* և այլն: - 633. Նա՛խ՝ զի զհայր աստուած ասեն և ո՛չ *հզօր* և ո՛չ անմահ: - 633. Եւ զորդի *հզօր*. և ո՛չ աստուած և ո՛չ անմահ: - 633. Եւ զհոգին անմահ և ո՛չ աստուած և ո՛չ *հզօր*: - 633. Երկրորդ, զի յայսպէս ասել սուրբ աստուած սուրբ և *հզօր* սուրբ և անմահ քրիստոս որ խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ: - 633. յորժամ ասեն՝ սուրբ աստուած հայր, սուրբ և *հզօր* բան, սուրբ և անմահ հոգի. - 633. և պատարագաւ խաչին հաշտեցոյց զհայր. և իջմամբ ի դժոխս կապեաց *զհզօրն* սատանայ և արձակեաց զկապեալ հոգիսն. - 705. Երրորդ, հոգւովն տիրեաց դժոխայնոցն. կապեաց *զհզօրն*. և արձակեաց զկապեալ հոգիսն: - 711. Եւ վասն այնորիկ պղնձի, զի ընդ դէմ ախտիցն յաղթի՝ *հզօրս* առնեն: - 756

**ՅԶՕՐԱԳՈՅՆ +** Այլ *հզօրագունին* յաղթելով. որպէս լոյս արեգականն ընդ իւր միաւորէ՛ զամենայն լոյս անշփոթ և անծախ: - 770

**ՅԶՕՐԱՆԱՄ +** Զուարակն հզօր և արդիւնարար. զի արդիւնարարք և *հզօրացեալք* ի գործս բարիս՝ պատարագ են աստուծոյ. - 358

**ՅԻԱՆԱՄ +** Զարմանալ և *հիանալ* ասի մեզ՝ թափումն և արտաքսելումն ի մտացն: - 127. Եթէ ի խելս և ի խորհուրդ ցնորութիւնք և զայրուք ուռուցանիցեն խխայթեալք. բժշկեսցիս հաւատով. ըստ մարգարէին հիացեալ՝ ստուերս և ունայնս դնելով զամենայն անցաւորս: - 770

**ՀԻԱՑԱԿԱՆ +** Վասն որոյ *հիացական* կոչի անունն աստուծոյ: - 127

**ՀԻՄՆ +** Եւ իմաստութիւն զքրիստոս ասէ աստուծոյ. թէ աստուած իմաստութեամբ *հիմունս* էարկ երկրի: - 45. Իսկ *հիմն* հաւատոյս մերոյ քրիստոս է եղեալ ի հօրէ՛: - 96. Նմանապէս և արարիչն աստուած. ներքոյ և *հիմն* է ամենեցուն որ կրէ զամենայն բանիւ զօրութեան իւրոյ: - 110. Վեցերորդ՝ սկիզբն եկեղեցւոյ որպէս *հիմն*. և վախճան որպէս գլուխ և կատարումն: - 129. Չորրորդ՝ ներքին է բոլոր մարմնոյն. և *հիմն* եկեղեցւոյ է քրիստոս ըստ առաքելոյ: - 130. Եւ զի *հիմն* է շինուածոց: - 211. Վասն զի անձն է մեզ առաջին *հիմն* և ի ներքոյ եդեալ. յորմէ և առ որ ժողովին տեսակն և սեռն և սեռականագոյն սեռք: - 236. Եւ թէ ասիցէ ոք, դ տարերքն են *հիմն* ամենայն նիւթոյ, պարտ էր լնուլ զդ թիւն: - 262. Այն է զոր հրամայէ՛ տէր՝ «ես եմ որթ և դուք ուռ». այսինքն որթ և *հիմն* հաւատոյս մեր է՛ քրիստոս: - 317. Երրորդ՝ ի յառնելն զարարածս լերամբք և բլրօք. զի լերինք և բլուրք, *հիմունք* և բոգունք են աշխարհի. վասն որոյ օրհնեցան անշարժապէս...: - 319. Չորրորդ, զի *հիմն* եկեղեցւոյ: - 386. Երկրորդ՝ վասն մեծ բարութեանցն ի հեռաստանէ էարկ *հիմն* մարդեղութեան իւրոյ ի զաւակէ՛ նոցա լինիլ: - 398. Զի սկիզբն մեղաց՝ *հիմն* է դժոխոց. և կատարումն՝ դուռն. և յամելն՝ փակ: - 418. Անխախտելի *հիմն* արկեալ: - 456. Այլ մեք եղբարք ուղեկիցք իմ և դաւանակիցք եղիցուք. շինեալք և հաստատեալք ի վերայ հաւատոյ *հիմանն*. անշարժ խարսխեալք ի վերայ յուսոյն քրիստոսի, սեռն և յստակ կատարեալ սիրով սուրբ հոգւոյն: - 503. Երրորդ, Քրիստոս գլուխ եկեղեցւոյ և *հիմն*: - 525. Զի՞նչ է *հիմն* որ եդեալ է յիսուս քրիստոս, և շինուածն ոսկի արծաթ և այլն: - 531. *Հիմն* և շինուածն ցուցանեն եթէ տաճարս կամի շինել զմեզ աստուծոյ...: - 531. Ա՛րդ՝ առաջին *հիմն* քրիստոս է և գլուխ. և հաւատացեալքն շինուածք ի նա. և հայր շինօղ: - 531. Երկրորդ *հիմն* դաւանութիւնն պետրոսի է. և դաւանօղքն շինուածք. և քրիստոս շինօղ: - 531. Երրորդ *հիմն* առանձին հաւատն է. և գործքն շինուածք. և մեք շինօղք: - 531. Եւ թէ վասն է՞ր է գ *հիմն* հաւատոյ: - 531. Վասն այսորիկ *հիմն* հաւատոյն և գլուխ՝ է երեք ամենայն հաւատացելոց: - 532. Իսկ թէ ուրեք առաքեալք և մարգարէք *հիմն* կոչին, քանզի նա՛խ նոքա ժողովեցան ի հաւատս և եղեն *հիմունք* եկեղեցւոյ, և ապա՛ զայլս ժողովեցին: - 532. Այս քան վասն *հիման* և գլխոյ եկեղեցւոյ: - 532. Եւ զի քրիստոս է *հիմն* երկուցն. և դ անկիւն առաքեալք և մարգարէք. և հին և նոր կտակարանք ասացեալ նոցա: - 533. Երկրորդ՝ հաւատն է *հիմն*. յոյսն որմ. սէրն շինուածք: - 577. ...որք *հիմունք* են եկեղեցւոյ և լոյս ծագօղք: - 614. ...պարտ է զբանիւ պատուականն *հիմն* դնել. որ է՛ երեքսրբեանն...: - 634. Եւ զայս ունին սկիզբն և *հիմն* պահոց ամենայն ազգ քրիստոնէից զոր նոքա լուծանեն: - 651. Եւ գիտելի է, զի *հիմն* և սկիզբն անդ եկեղեցւոյն եղև տէր մեր յիսուս քրիստոս յարուցեալ ի մեռելոց. և ընդ ինքեան հանեալ և վերացուցեալ զհոգիս սրբոց նահապետաց և մարգարէից: - 688. Ա՛րդ՝ նախ գիտելի է, զի *հիմն* հաւատն է ի մեզ. և շինուածն գործքն: - 702. Արդ այսորիկ փրկին արդեամբք *հիման* հաւատոյն. սակայն այնպէս որպէս թէ ի հուր: - 702. Զի այրի շինւածն որ ո՛չ է յարմար այնպիսի *հիման* հաւատոյ: - 702. Նոյնպէս և նիւթն սկզբնական ո՛չ յառնէ ի ծնօղս որ աւելորդ արտահոսումն է նոցա. այլ յառնէ ի ծնեալ մարմինն որոյ *հիմն* է շինուածոյն: - 719. Նմանապէս և կողն որ առաւ յադամայ և շինեցաւ կին, ո՛չ յառնէ ի յադամ, այլ ի յևա. որոյ *հիմն* կազմութեան եղև փոխանակ սերման: - 719. Նմանապէս և *հիմունք* երկրի ջուրք տատանեցան. այսպէս և սիւնք ասացեալն օդոյ դողային. և լուսաճեմքն խաւարեին: - 788

**ՀԻՄՆԱՐԿԵՄ +** Հինգերորդ, ի սմա՛ երկոտասան քարինք *հիմնարկեալք*. և բժան լուսանցոյց ի խորհուրդ մարգարէիցն և առաքելոցն...: - 614

**ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ +** Իսկ վասն *հիմնարկութեան* սուրբ տաճարի և ժամահար օրհնելոյ. սկիհ և մաղզմայ. և զգիրք. և զկնունք առնելոյ. և խաչօրհնելոյ. և զքառասնորդաց գ ժամուց զքարոզքն և զաղօթսն, յոհան մանդակունին է արարեալ...: - 659. Եւ որպէս ի *հիմնարկութեան* եկեղեցւոյ խաչիւ և աւետարանաւ բրել է աստիճանաւ...: - 674

**ՀԻՄՆԵՄ +** Երրորդ՝ վասն զի օրհնա՛կ է **է** աւուրցն ի յորս երկիր *հիմնեցաւ*. նաև **է** դարու կենցաղոյս: - 524

**ՀԻՆ +** Ուստի յա՛յտ է մեծութիւն յանցանացն. քանզի ի *հինն* զինչև մեղանչէր ոք մեծ կամ փոքր՝ պատարագաւն սրբէր. թռչնօք և անասնօք: - 33. Այլ որ եղև փոխանակ *հնոյն* նոր անդամ. և նզովք կոչեցաւ վասն իմ և մեղք այն որ ո՛չ արար զմեղս, և ելոյծ զանէծս և եբարձ զմեղս: - 42. Իսկ ի վերն քան զամենայն անուն. թէպէտ և անուանեին և յեսու՝ և օծեալք բազումք ի *հինն* և ի նորս: - 95. Ա՛րդ՝ եթէ տգէ՛տ է որդին աստուծոյ հօր, և տգէտ որդւով խօսեցաւ ընդ մեզ. տգիտութեան եղիցի և օրէնքս նոր քան *զհինն*: - 96. Գիտելի է, զի *հին* ասելով՝ զյաւիտեանն նշանակէ. և օր զժամանակն: - 115. Եւ տէրն *զհին* կտակն որ խստութիւն էր և սպանօղ՝ ընդ նորոյս խառնելով. որ հոգւով է և կեցուցանօղ: - 126. Տասներորդ՝ սկիզբն է

օրինացն, և կատարումն ճշմարտութեանն. որպէս *հնոյն* և նորոյս: - 130. Յետ ընդդէմ արտաքս աքսորելոյ զարտաքինսն. և ընդ մէջ հերձելոյ զհերձուածօղսն, և զճշմարիտն աստուածաբանութիւն հաստատելոյ ի մեզ, բե՛ր սկսցուք զսկիզբն արարչութեան եղելոց մինչ ի վախճան կատարման այժմոյս՝ ըստ կարգի *հին* և նոր կտակարանաց հետևեալ: - 156. Դարձեալ *հին* օրինացն: - 186. Զի տեսեալ մարդիկ զնոր և *հին* նորա՝ ասացին՝ մե՛զ ես օրինակ ծննդեան և մահուան. և կոչեցաւ ամիս: - 190. Զի *հինքն* զեօթն մոլորակսն՝ է տուն աստուածոց կոչէին: - 190. Նոյնպէս և ի մերն ի *հին* հայոյն, Արեգի ի **ք** է՛ առաջին օր արարչութեանն: - 191. Այսպէս երևի թէ և դրախտին պտուղն նորն *զհինն* փոխէ՛: - 224. Եթէ յամենայն ամի նորն *զհինն* փոխէ, այս լինի կամ թափիլ պտղոյն ի ծառոյն. և կամ մնալ *հինն* ընդ նորոյն: - 224. Ա՛րդ՝ եթէ մնայ *հինն* ընդ նորոյն հանապազ. նա՛ ծանրանայ. և ո՛չ կարէ զայն քան ամաց բազմութիւն պտղոցն կրել, և այսպէս լինին ամենայն ծառքն կոտորեալ և ապականեալ...: - 224. ...իսկ թէ թափի *հինն*. այս լինի կամ յատակս ծառոցն ծորեալ և ապականեալ. և կամ ամենայն ամբարեալ և ժողովեալ և բարձրացեալ քան զծառս դրախտին որ է անպատշաճ: - 224. Եւ դարձեալ՝ նոյն ինքն բանական հոգին ո՛չ նոր ստեղծումն է և ո՛չ *հին*: - 257. Ո՛չ է *հին*, զի ըստ իւրաքանչիւր մարմնոյ համանգամայն ստեղծանի հոգին: - 257. Երեսունն**է**, Զանազանի *հին* և նոր օրէնք. և քահանայութիւն տեառն և *հնոյն*: - 284. Երեսուն**ք**՝ Թէ քանի՞ են պատարագ *հնոյն*: - 284. Եւ թէ ո՞րպէս փոխեցաւ *հինն* ի նորս: - 284. Յիսուննմի, Ուր էր և տօնք ի *հինն* որ փոխեցաւ ի նորս: - 284. Յիսունն**է**, *Յին* քահանայքն՝ նորոյս աստիճանի օրինակ: - 284. Երկրորդ՝ զի ի *հին* օրէնքն քահանայքն զենուին. զոր որոշեսցուք ի նոցանէ: - 296. Զի է՛ որ մատուցօղն մեծ է քան զպատարագն. որպէս *հին* օրինաց պատարագն. զի անասունք էին: - 306. Եւ հատումն ի ստենէ *հնոյն* հաստատութիւն եղև նոր օրինացս: - 308. Հինգերորդ՝ զի զկերպարանն *հնոյն* ադամայ յինքն բերիցէ ախտիւ անկմանն: - 325. Ո՞րպէս էր յոր օրինակ *հնոյն* ադամայ և նորոյն: - 327. Ի *հինն* գ տօն էր գլխաւոր: - 340. Իսկ *հնոյն* խորհուրդ, **դ** որակ նիւթոցն՝ **դ** տարերացն. և ոսկին անապական՝ երկնից: - 348. Վեցերորդ՝ կրկին տալոց էր օրէնք *հին* և նոր. վասն այն կրկին գրեաց: - 349. Չորրորդ՝ ի խորհուրդ *հին* օրինացն որ բարձաւ և նոր օրէնք տուաւ: - 350. Ո՞րպէս զանազանի *հին* օրէնքն և նորս: - 353. Նա՛խ՝ զի *հինն* ստուեր և օրինա՛կ էր. իսկ նորս էութիւն և ճշմարտութիւն: - 353. Զի՞նչ հասարակ և զի՞նչ յատուկ քահանայութեան տեառն մերոյ՝ և *հնոյն* քահանայութեան: - 354. Երկոտասաներորդ, նոքա *հին* ուխտին էին միջնորդ. իսկ տէրն նորոյս...: - 355. *Յինն* օրինա՛կ էր, և նորս ճշմարտութիւն. հանդերձեալն զի՞նչ փոխի: - 355. Նա՛խ՝ *հինն* օրինակ էր և նորս ճշմարտութիւն. և հանդերձեալն առաւել ճշմարտութիւն որպէս սուրբ սրբոց: - 355. Նա՛խ՝ զի խմորն *զհին* չարութիւնն ցուցանէ. որ նախ հրաժարիլ պարտէ, և ապա՛ զբարիս գործել: - 356. *Յին* պատարագն վասն է՞ր աղիւ կատարէր և նորս ոչ: - 356. Ա՛րդ՝ *հինն* նորոյս օրինակ էր՝ ի բովանդակն ա՛ղ խառնիւր: - 356. Դարձեալ ասեմք, ի *հինն* կրկին էր ընծայ պատարագայցն: - 356. Զի՞նչ էր *հին* պատարագն: - 357. Գիտել պա՛րտ է, զի ամենայն պատարագ *հին* օրինացն նախ ի յերկուս բաժանի: - 357. Ա՛յս է խորհուրդ *հին* պատարագացն և քրիստոսիւ մաքրեհն: - 361. Ի հինգ տեղւոջ ի *հինն* հուր էջ յերկնից ի վերայ սեղանոյն և հոտոտեցաւ ի հոտ անուշից: - 363. Երկրորդ՝ զի անարիւն է զենումն նոցա և ո՛չ ըստ *հնոյ* քահանայիցն: - 366. Պա՛րտ է տալ զսուս ի քահանայսն որպէս կարգեաց մեծն մովսէս ի *հինն*, և սուրբն գրիգոր ի նորս: - 367. Ո՞րպէս է փոխեալ *հինն* ի նորս: - 369. և Դարձեալ ասեն, բնական մեղքն խտրութեան մնաց ի գրաւորն, նոյնպէս ի նորս. որպէս սերմնակաթն և դաշտանին. այլ պատիժն փոխեցաւ *հինն* ի նորս: - 369. Եւ այլք ասեն թէ, *հինն* ամենայն է՛ խորհուրդ. և ի նորս իր և խորհուրդ: - 369. Այլ և այս գիտելի է, զի **ե** թւով շաբաթ էին ի *հինն*: - 372. Քանի՞ էր տօնք ի *հինն*: - 372. Այլ և բոլոր ամենայն տօնք *հնոյն* ը տօն էր. զոր այժմ մեք ունիմք փոխեալ ի նորս: - 372. Այլ և վասն *հին* և նոր ժողովրդեանս թողութեան: - 373. Որ և այս երևի ի *հինն* ստուերագրեալ թէ ոք խնդրեսցէ: - 373. Զայն ցուցանէ որ նուազելոց էր *հինն* և օրինակն՝ ի գալ նորոյն և ճշմարտութեանն քրիստոսի: - 374. *Յին* քահանայքն ո՞րպէս էին օրինակ աստիճանի նորոյս: - 379. Զի՞նչ է օրինութիւն *հին* քահանայիցն: - 379. Դարձեալ, օրհնութիւնն իսրայէլի ի *հինն*: - 379. Դարձեալ՝ քաղեբ և յեսու. *հին* և նոր կտակարանք. որք զհանդերձեալն մեզ պատմեն. և զյաղթելն անմարմին թշնամւոյն: - 380. Եւ խաչօղքն անսուրբք էին մինչ յերեկոյանալ օրինացն *հնոյն* և ծագել նորոյն. մինչև սրբեցան աւազանաւն և խոստովան եղեն զքրիստոս: - 383. Վեցերորդ, մովսէս նշանակէր *զհին* օրէնքն որ բարկութեամբ բարի առնէր: - 386. Երկրորդ, *հին* օրէնքն և մարգարէքն. որ նախ քան զմկրտութիւնս խորհրդով և օրինակօք յառաջապա՛հք եղեն նորոյս: - 390. Հինգերորդ՝ զի կրկին է օրէնք *հին* և նոր. այսինքն օրինակն և ճշմարտութիւն: - 393. Նա՛խ՝ մովսէս նշանակէ՛ *զհին* օրէնքն. որ մինչ ի մկրտութիւնն եկն և վճարեցաւ: - 394. Հինգերորդ՝ արևմուտք *հին* օրէնք է. և արևելք նորս յետոյ: - 395. Զի *հին* ժողովուրդն զանասունս մատուցանէր պատարագ ոչխար և արջառ և այլն: - 396. Այլ և ի վերայ այսր ամենայնի անասելի

բարութիւն. զարիւնն իւր ետ ի փրկութիւն մեզ. ուստի ի *հնոյն* արգելեաց զարիւն զենմանցն. մեզ զիւրն արիւն ետ ի ճաշակումն: - 398. Վասն է՞ր է որ մին կին թէ բազում այր առնէ՝ պոռնիկ է. և թէ այրն բազում կանայս առնէր, չէր պոռնիկ որպէս ի *հինն* օրէնս: - 401. Երրորդ՝ նոր օրէնքս անուամբ *հնոյն* նորոգեալ կոչեցաք իսրայէլ: - 402. Ութերորդ՝ ի խորխորատէ՛ չարեաց ելցեն օրհնօք. զի գեբաղն՝ *հին* ծոր թարգմանի: - 402. Եւ *հին* օրէնքն արգելաւ ի մկրտութիւնն- և փոխեաց քրիստոս: - 417. Երկրորդ՝ վասն տկարութեան օրհնացն. զի ի *հինն* ո՛չ կարէր բառնալ զմեղս առանց մարմնական փոխարինաց և յիշատակութեանց: - 433. Սոյնպէս և շնորհք ապաշխարութեան նորոյս առաւե՛լ է քան *զհնոյն*. զի առանց գործոց հատուցման ո՛չ կարէին արդարանալ. իսկ աստ շնորհօք թողութեանն միայն, կարէ՛ արդարանալ: - 433. Վեցերորդ, խոտեցաւ սաւուղ և ընտրեցաւ դաւիթ. խոտեցաւ *հին* օրէնքն, և ընտրեցաւ նորս: - 435. Դարձոյց ի յորդանանու զբերգելի որ տասամբն կերակրեաց զդաւիթ. ի տիպ *հին* օրինացն ժ բանեան զոր կատարեց քրիստոս: - 438. Երեսունև**է** զօրավարք դաւթի. և **լէ** թիւ *հնոյն* օրինաց. և այլ նորոց կտակի. և կամ **իբ** գլխաւո՛ր են գրոց *հնոց*. և **ժ** բան օրինաց. և չորից աւետարանաց. և մինն առաքելական: - 438. Եւ այս գիտելի՛ է, զի դատաստան *հին* օրինացն հայի յարդարութիւնն աստուծոյ. և օրն դատաստանի: - 439. Ո՞ր քան են և ո՞րք գիրք սուրբք *հին* և նոր կտակարանք: - 450. *Յին* կտակարանք՝ հինգ գիրք մովսէսի ա՛յս են: - 450. Այլ զերկոտասանքն մին գիրք, և զերեմիայն մին գիրք համարեալ, լինի **լգ** գիրք *հին* կտակքն բովանդակ: - 450. Միահամուռ *հին* և նոր կտակարանքն՝ **դ ա՞. է.ռ. չ.ի.** տուն է: - 451. Ա՛րդ՝ *զհինն* զամենայն կատարեաց և վճարեաց. և ապա՛ նորոյս սկիզբն էարկ մկրտութեան և շնորհաց: - 485. Երրորդ՝ զի լուացէ զմեղս. և *զհինն* ադամ թաղեսցէ ի ջուրն: - 486. Զի է՛ որ մատուցօղն մեծ է քան զպատարագն. որպէս *հին* օրինաց պատարագն. զի անասունք էին: - 491. Ասեմք թէ՝ ի վերնատունն *զհինն* կատարեաց մինչ զմարմինն բաշխեաց և նոր օրէնս եդ. և մեք *հնոյն* ո՛չ եմք պարտական: - 510. Եւ վասն է՞ր ի *հին* օրէնս յիւրեանց ազգէն առնուին և ի նորս ոչ: - 526. Եկեղեցի սուրբ նոր ժողովուրդ կոչեցաւ աստուծոյ. զի հաւատով արդարացաք և եղաք ժողովուրդք և ո՛չ ըստ *հնոյն* օրինօք: - 528. Նախ այն է՝ որ զորդի ընդ հօր և սուրբ հոգւոյն փառաւորեմք և օրհնեմք **գ** անձինք ի միում բնութեան. և ո՛չ որպէս *հինքն* հրէական օրհնութիւնս. որք ո՛չ օրհնէին զորդի և զհոգի: - 528. Բանն աստուծոյ մի է թէ բազում. զի բազում երևի ի *հին* և ի նոր կտակս և յիւրաքանչիւր թուղթս գրեալ...: - 529. Սակայն մի և նոյն բանն բազմանայ ի բազումս. որպէս ի հրեշտակս և ի մարդիկ. ի *հին* և ի նոր օրէնս. այլ ի միութենէն ո՛չ բաժանի: - 529. Նոյնպէս և անչափութիւն բանից և խրատուց հարց և իմաստնոց գիրք սուրբք՝ *հին* և նոր կտակարանք ցուցանեն զանչափ հիւանդութիւն հոգւոյ. զի սոքօք առողջասցին: - 531. Եւ զի քրիստոս է հիմն երկուցն. և **դ** անկիւն առաքեալք և մարգարէք. և *հին* և նոր կտակարանք ասացեալ նոցա: - 533. Եւ փոխանորդ նորա ի յերկրի ի *հինն* քահանայապետն որպէս ահարօն. և ի նորս կաթողիկոսն իւրաքանչիւր ազգի: - 534. Ո՞չ ապաքէն մովսէս ի *հինն* որոշեաց զսուրբս և անսուրբս. մանաւանդ թէ յաւուրս նոյի գոյր ընտրութիւնս. այսպէս ցուցաւ և մեզ պահելի իբր զբնական օրէնս. այլ սոցա ոչինչ է պիղծ ի կենդանեաց: - 552. ...որպէս առաւել է մեղք հրեշտակին քան զմարդոյն. վասն այն մին քահանայի մեղք՝ որ չափ բոլոր ժողովրդեանն է. ուստի յա՛յտ է ի պատարագէ *հնոյն*...: -563. Իսկ կամաւոր մեղքն գրա՛ծ է ի *հին* օրէնքն իբ գլուխն տես: - 564. Ի *հինն* ասաց սիրել զընկերն, և ի նորս յաւել սիրել զթշնամին: - 577. Այս ի *հինն*: - 595. Այլ և *զհինն* իմաստութիւն ընդ նորոյս խառնեալ միաւորեաց քրիստոս. այսինքն զօրինակն ընդ ճշմարտութիւնս: - 596. Եւ նմա՛ պատշաճ է կարդալ զմարգարէքն և *զհին* օրէնքն յեկեղեցին: - 606. Վասն է՞ր ի *հին* օրէնս եդաւ յիւր ազգէն առնուլ հարսն, և ի նորս յօտար ազգէ: - 612. Ի *հին* օրէնս եդաւ յազգէն իւրմէ առնուլ կին, - 612. Այլ որպէս ի *հինն* ո՛չ առնէին ընդ հեթանոսացն խնամութիւն որք չէին թլփատեալք: - 612. Վասն է՞ր *հինքն* բժան օր նաւակատիս կատարէին որ է՛ նորոգումն խորանի տաճարին: - 616. Եւ *հին* և նոր եկեղեցւոյ որ է երկոտասան: - 616. Նա՛խ՝ զի ի *հինն* զտօն քաւութեան և զտաղաւարահարացն ի միասին տօնէին ի թշրինի **ժ**: - 616. Այս ի *հին* օրինակացն: - 616. Պատարագն ի *հնումն* անբան կենդանիքն էին. վասն որոյ և զճարպս նոցա լուցանէին ի տաճարին: - 617. Երրորդ՝ ի *հին* տաճարն գառն էր պատարագ. որ էր օրինակ գառինն աստուծոյ: - 617. Երկրորդ, զի և ի տաճարն *հին* ո՛չ թաղեցին զսուրբս. այլ ի գերեզմանատունս. նոյնպէս և առաւել սրբութեամբ պահելի է զնոր տաճարս: - 617. Նոյնպէս և քահանայքն հնչէին ի *հինն.* որպէս այժմ ի յեկեղեցի ժողովեն ի յաղօթս հանապազորդ: - 618. Ի *հինքն* **բ** անգամ քահանայապետն և քահանայն յառաւօտն և յերեկոյն խնկարկէին...: - 618. Գիտելի՛ է, զի ի *հին* օրէնսն մովսէսի է ժամ էր աղօթից...: - 621. Երկրորդ, որպէս ի *հինքն* մատուցանէին զպատարագն առ քահանայսն. և նոքա նուիրէին աստուծոյ: - 624. *Յինքն* ի խորհուրդ եօթնից կենցաղոյ դարոյս՝ զեօթն առաւել պատուէին: - 626. Եւ դարձեալ՝ ի *հնումն* վեց դնէին զհաց երեսացն. և յաւուր շաբաթի կրկին **զ**: - 629. Զոր առ *հնովքն* էր սովորութիւնս այս, և յետոյ

նուազեցաւ: - 631. Եւ որ ամէն շարականի սկիզբն ի մարգարէից դնեմք, այս է պատճառն, զի *զհինն* և զնորս ի միասին խառնեմք: - 636. Նա՛խ՝ զի սաղմոսն երգ լսի. և ի *հինքն* յամենայն ժամ զսա՛ երգէին ի տաճարին...: - 643. Նախ, զի առաքելական է աւանդ. որպէս ի *հինքն* զերկուշաբաթի և զհինգշաբաթի պահէին...: - 652. Իններորդ, ընկալաք կրկին օրէնս *հին* և նոր. վասն որոյ **բ** աւուրս սրբութեամբ պահեմք: - 654. Չորրորդ՝ զի այս՝ է՛ խօսուն և բանաւոր պատարագ և այն անբան զենումն զոր խօսեցաւ վասն *հնոյն*...: - 658. Եւ նոյն զքահանայթաղէքն, որ ունի է աւետարան. և զաշխարհական թաղումն, ի յայրարատ գաւառի ի վաղարշապատ քաղաքի ի վկայարանս սրբոյն հռիփսիմի. յետ **ճժա** ամի սրբոյն գրիգորի. զի մինչև ցայն *հնովն* վարեին: - 659. Ա՛րդ՝ եթէ ի հասարակ ժողովրդենէ իցէ ննջեցեալն, հանեն *զհին* հանդերձն և պատե՛ն սուրբ կտաւովք և զգլուխն փակեղամբ և վարշամակօք, և օդ յոտս: - 671. Եւ վերջոյ ի հիւսիս. որ ցուցանէ զշնորհն որ ի *հինն* սիովնէ հնչեաց յեկեղեցիս հեթանոսաց...: - 674. Անդրիավարտիս ըստ *հնոյն*, զի ի սրբութիւն մտանէ: - 674. ...որք ունին *զհին* օրէնս և ո՛չ զնորս. այլ ի ներքոյ մնացեալ սկզբնական մեղաց՝ նոքա ի տանջանս ընթանան: - 678. Որք ո՛չ թլփատեցան ի *հինն* և ոչ մկրտեցան ի նորս, կամ չարք ի մարդկանէ, ունին զդատապարտութիւնն զոր զրկելոց են ի դատաստանին զանազան տանջանս և ո՛չ այժմ: - 690. ...որպէս յա՛յտ է յառաջիկայդ ի զանազան վկայութեանց վարդապետաց սրբոց և ի *հին* և ի նոր աստուածաշունչ կտակաց: - 691. Վեցերորդ, զի բժան ցեղապետք էին *հնոյն*. և **բժ**ան առաքեալ նորոյս. զերկոցունց ազգաց նահապետսն դնելով զբոլոր թիւ ամենայն ազգին, նշանակէ՛: - 712. Երկրորդ զքահանայս *հին* և նոր. որ գնեն զպատարագս ուխտից ի սեղանն: - 713. Որք առին զօրէնս և ո՛չ պահեցին. որպէս չար քրիստոնեայք ի նորս և չար հրէայքն ի *հինն*...: - 739. Հաւատացեալ արդարք. որք ըստ օրինաց *հնոյն* կամ նորոյս գործեցին զարդարութիւն. կամ որք սխալեցին և ապաշխարեցին զմեղս զղջմամբ խոստովանութեամբ պահօք աղօթիւք ողորմութեամբ և այլովք: - 739. Տասներորդ, ասի հնձան և կտակարանքն սուրբ. ուր *հին* և նոր իմաստութիւն ժողովեցաւ ի խառնարանին գինւոյ. յորմէ բաժակէ՛ արբին առաքեալքն ի սուրբ վերնատունն. և արբուցին ամենայն տիեզերաց...: - 749. Այսոքիկ են խնձորք նոր և *հին*. որք հոտով զուարճացուցանեն, և համով զմայլե՛ն: - 756. Խնձոր նոր և *հին*, գիրքն են աստուածայինք. որք *հինք* են յօրէնս և ի մարգարէս. և նորք յաւետարանն և յառաքելական մատեանս: - 756. Իսկ առ լուծումն խնդրոյս թէ վասն է՞ր արդեօք առ նորս շնորհ՝ որպէս աւազանին և կարգին ո՛չ բառնի ընդ բառնիլ շաղկապին. իսկ առ *հնովն* բարձաւ. որպէս յա՛յտ է ի վերոյ ասիցդ ադամայ և յայլոցն: - 782. Ապա յա՛յտ է համաձևանալ այսու՝ *հնոյն* շնորհ առ նորոյս: - 782. Շնորհք որ ի *հինն* զինչ և իցէ փոփոխական գոլով՝ օրինակ նորոյս էր. որպէս քահանայութեան և այլն: - 783. Յորում պաշարեալք ի *հինից* նետողաց կրկին յարուցեալ խորա՛զմ անուանեալ ազգաց: - 788

***ՀԻՆ ԱՒՈՒՐՑ +*** Անժամանա՛կ է աստուած. և յաւիտեան. և *հին աւուրց*: - 101. Վասն է՞ր կոչի աստուած *հին աւուրց* ըստ դանիէլի: - 114. *Հին աւուրց* որ է ծերն՝ չորս յատկութիւն ունի: - 114. Դարձեալ՝ *հին աւուրցն*: - 115. Դարձեալ՝ գիտելի է, զի *հին աւուրց* և ծեր ետես դանիէլ. «հեր գլխոյ նորա սպիտակ իբրև զձիւն»: - 115. Որ նշանակէ *հին աւուրց* զծերն. և մանուկ զանծերանալին: - 115. Երրորդ՝ այսպէս մեկնեն, եթէ *հին աւուրց* զնախնի ժամանակս նշանակէ. և մանուկն զնախնի թիւն. զի միակն սկիզբն է ամենայն թըւոց. և որ մերձ է միակին՝ սկզբնապետագո՛յն է քան զհեռագոյնն: - 115. Ապա յա՛յտ է զի *հին աւուրցն* նշանակէ նախ քան զժամանակ և զյաւիտեան. և բարձրագոյն և արարիչ ժամանակի և յաւիտենի. և պարունակօղ յաւիտենի. որպէս յաւիտեանն ժամանակի: - 115. Չորրորդ՝ նշան պատկառելի է ծերութիւն. որ *զհին աւուրցն* տպաւորէ՛: - 378. Եւ ծեր և *հին աւուրցն* հայր ետ զթագաւորութիւն որդւոյ: - 441. Նա՛խ՝ զի ծեր և *հին աւուրց* նշանակեցաւ հայր աստուած ի դանիէլէ՛. իսկ որդին նորածին և երիտասարդ հասակաւ: - 479. ...և դանիէլ *զհին աւուրցն* ետես, և զի որդւոյ տուաւ իշխանութիւն դատաստան առնել: - 735

***ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ*** - Երկոտասաներորդ, լուսաւորեցաւ՝ զի քօղ արկցէ երեսացն. որ օրինակէ՛ *զհին կտակարանս*. որ քօ՛ղ է արկեալ և առագաստ մտաց նոցա. մինչև դարձցին առ տէր հոգիքն որպէս զմովսէս. և ապա վերասցի քօղն և յայտնեսցի լոյս գիտութեան նոցա: - 352. *Հին կտակարանք*՝ հինգ գիրք մովսէսի ա՛յս են: - 450. Իբր լինի **լգ** *հին կտակարանք* և **լգ** նորս. բովանդակն **հբ**: - 451. Դարձեալ գիտելի՛ է, զի *հին կտակարանքն* ամենայն՝ յերիս բաժանին: - 451. *Հին կտակարանքն* ամենայն՝ են տունք՝ **ա՟. ք. ճիթ**: - 451. Եւ աստանօր Կատարումն *հին Կտակարանաց*. և Եօթներորդ Հատորի Հարցմանցս. ի Փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ Օրհնելոյն Յաւիտեանս Ամէն: - 453.

**ՀԻՆԳՇԱԲԱԹԻ, ՀԻՆԳՇԱԲԱԹ +** Զոր սուրբ հայրապետք փոխեցին զանուանս նոցա և եդին բոլոր շաբաթուն եօթն աւուրցն... Զդիոսին՝ *հինգշաբթի*: - 190. *Հինգշաբաթի* օրն առաքելոց: - 642. Նախ, զի առաքելական է աւանդ. որպէս ի հինքն զերկուշաբաթի և *զհինգշաբաթի* պահէին...: - 652

**ՀԻՆԳՊԱՏ (ՀՆԳԱՊԱՏԻԿ)** - Ութերորդ՝ *հինգպատ* օծին է՛ **ե** զգայութիւնս մեր. զոր էառ տէրն և սրբեաց զմեզ: - 387

**ՀԻՆԳՕՐԵԱՅ +** Իսկ *հինգ օրեայ* անդրանկանն յետոյ լինիլ՝ բերէ՛ զնմանութիւն նախնի մարդոյն. որ յետ ե աւուր ստեղծաւ: - 264

**ՀԻՐԻԿ +** Ծաղիկ զմռնեաց. նմանէ պոյտն ծաղկի. և Կինամոն. արմա՛տ է խոտոյ ի տմորիս հայոց. և Խնկեղէգն. որ յարմատս ո՛չ ամենայն եղեգան լինի. և *Հիրիկ*. խէժ է ծառոց: - 349

**ՀԻՒԱՆԴ +** Որպէս յիմար *հիւանդն* ասիցէ, կամիմ ուտել և ըմպել զիաճոյսն իմ. եթէ առողջանալո՛յ եմ՝ առողջացայց. և եթէ մեռանելո՛յ՝ մեռայց: - 18-19. Զի տրտմութեամբ մեղանչումն հիւանդութիւն է և գայթակղութիւն. և *հիւանդն* յառողջութիւն փութայ. և գայթակղեալն՝ ի ճանապարհ: - 33. Եւ մարդիկ սովո՛ր են *զհիւանդս* և զաղճատս վատ ասել: - 251. Որպէս բժիշկք յորժամ *հիւանդաց* դեղ տան, նախ ինքեա՛նք զճաշակն առնուն զի հաւատարիմ լիցի: - 316. ...**զդ**՝ անդամալոյծ միակողմանց բժշկութիւն. **էդ**՝ բորոտից սրբութիւն. **ըդ**՝ բոլոր մարմնոյն *հիւանդաց* և ջերմացելոց առողջութիւն. **թդ**՝ զդևսն հանէր. **ժդ**՝ զմեռեալսն յարուցանէր: - 328. Այլ և ի վերայ այսր, *հիւանդն* և գիժն: - 371. Որ մտօքն է՛ մոլի, և մեղօք *հիւանդ*, չէ՛ ընդունելի: - 371. Չորրորդ՝ նշան թէ՝ զոր ասէ և լինի. և տէր մեր զգործս աստուծոյ գործէր առ կաղս և կոյրս և *հիւանդս* և մեռեալս. զոր ասէր բանիւ՝ կատարէր գործով: - 399. ...իսկ «տեսլեամբ գեղեցիկ», զի նստի յերկինս և հայի յանդունդս. և հայելով ի *հիւանդս* բուժէր, և զմեղաւորս սրբէր: - 436. ...եթէ զոր օրինակ բժիշկք՝ ո՛չ ի սկիզբն ցաւոց և ո՛չ ամենևին անագան տան ըզդեղ *հիւանդին*. զի անօգուտ է և վնասիչ. այլ ի դիպօղ ժամու յորում առողջասցի: - 467. եկն երևեցաւ. այսինքն մարդացաւ մարդասէր բժիշկն. և առողջացոյց զկարեվէր խոցեալքս. ըստ որում բժիշկ անուանէր զինքն անկեալ ի ձեռս աւազակաց *հիւանդին*: - 467. Երրորդ՝ օծումն մաքրական. որպէս *հիւանդաց*: - 474. Իսկ զօծումն *հիւանդաց* եցոյց ինքեամբ յայլս. յորժամ զանկեալն ի ձեռս աւազակաց ձիթով և գինւով բժշկեաց: - 474. Զոր օրինակ՝ բժիշկն յորժամ *հիւանդին* զդեղն տայ, նախ ինքն ճաշակէ զի հաւատալի լիցի: - 497. Երրորդ՝ զի անդ ո՛չ կարէր արդարանալ զի *հիւանդ* էր սիրտն, ետ նոր օրէնս ի սիրտս մեր որ կարօ՛ղ է արդարացուցնել զժողովուրդս և զհեթանոսս: - 524. Բժիշկք *զհիւանդաց* առողջութիւն և զցաւս. և նաւավարք զխռովութիւն ալեաց և զանդորրութիւն: - 536. Սա յիմա՛ր է ո՛չ գիտէ զտկարութիւն իւր որպէս չար *հիւանդ*. զարթո՛ զսա: - 537. Զի նման է ջրգողեալ *հիւանդի*. որ որքան աւելի խմէ, առաւել ծարաւի: - 570. ...**զ**՝ այց առնել *հիւանդաց*. - 585. Վերջին օծումն է խորհուրդ եկեղեցւոյ. որ տուեալ լինի *հիւանդաց* ի հոգէվարի օրն. յաչքն, յականջն, ի բերանն, ի ձեռքն, ի կուշտն, յոտից ներբանքն: - 604. Դարձեալ՝ օծումն *հիւանդաց* ո՛չ սրբէ զմահու չափ մեղս. այլ զներելիս: - 604. Դպիրք եղեն առաքեալքն սպասաւորելով ժողովրդեանն հրամանաւ. և Սարկաւագունք՝ օծանելով *զհիւանդս*. հրաման տալով նոցա իւղ օրհնել յիւրմէ: - 607. Պա՞րտ է բժշկական դեղով վարիլ *հիւանդաց*, թէ ոչ: - 665. Դարձեալ՝ որպէս բժիշկք դեղ տան *հիւանդաց*՝ և ի միւս օրն դարձեալ հարցանեն...: - 680

**ՀԻՒԱՆԴԱՆԱՄ + Յորժամ *հիւանդանաս*՝ մեծ ես դու հիւանդութեան քոյ. և յորժամ մանուկ լինիս՝ մեծ ես մանկութեանն. ի յալևորութեանն՝ ծերութեանն ես մեծ**: - 37. Թէ *հիւանդանայ*, փառաւորէ՛ զաստուած որպէս զյոբ: - 178. *Հիւանդացաւ* եղիսէ: - 413. Իսկ ի *հիւանդանալն* եղիսէոս եդ զձեռն ի վերայ ձեռաց արքային յովասու և զօրացոյց զնա ի պատերազմին ընդ դէմ ասորոցն փոխանակ լալոյն ի վերայ նորա: - 446. Եւ թէպէտ մարմինն փոփոխի հասակաւ կամ հիւանդութեամբ, կամ մեղօք հոգին *հիւանդանայ*. դիմաւոր նշանս այս անփոփոխ մնայ: - 719. Իսկ առաջին պակասութիւն է մարմնոյն աստ՝ զի է՛ մահկանացու՝ յապականացու՝ և չարչարելի. որպէս քաղցն՝ ծարաւն՝ *հիւանդանալն* և այլն...: - 722

**ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ +** Դարձեալ ասեն, թէ բազում ինչ հանդիպի արտաքոյ կամաց մերոց. որպէս չար հիւանդութիւն. վատաբախտութիւն. մահ. և այլն, ապա ուրեմն նոքա ի հարկէ բախտի և ճակատագրի: - 11. Նախ՝ եթէ չար *հիւանդութիւնն* և այլն ի հարկէ՛ է, ապա ամենեցուն նոյնպէս պարտ էր գոլ. զի հարկն նոյն է առ ամենեսեան: - 11. Այլ արդ՝ բազմաց նոյնպէս մահ, *հիւանդութիւն*, և այլն. ապա ուրեմն ո՛չ է ի հարկէ: - 11. Այլ և ո՛չ է բնութիւն. ո՛չ մասն և ո՛չ բոլոր. այլ պակասութիւն ունակութեան. **զի բարին ունակութիւն է, և չարն պակասութիւն նորին. որպէս խաւարն լուսոյ, և *հիվանդութիւնն* առողջութեան, և մահ կենաց**: - 16. Իսկ չար փոխանակ բարւոյ ո՛չ առնէ ըստ որում անիրաւութիւնէ. այլ առնէ երբեք ըստ որում նախախնամութիւնէ. զի ի չարէն լինիցի բարի. թէպէտ մեզ չար երևի, այլ այս ևս բարի է. որպէս *հիւանդութիւն*. փորձութիւն. և այլն: - 18. Եւ ի յէութեան է. որպէս *հիւանդութիւն* ի յողջութեան, և ապականութիւն ի մարմնի: - 22. Եւ է չար՝ որ խա՛ռն է ընդ բարւոյ. և ի յէութեան գոյանայ. որպէս *հիւանդութիւնն* ի յողջութեան. ապականությիւնն ի մարմնի: - 22. **Զի ի նըւազիլ ողջութեան՝ *հիւանդութիւնն***

**երևի. և ի նըւազիլ մարմնոյ՝ ապականութիւնն պատահի: - 22. Եւ ծանիր զայս, զի որքան նըւազի ողջութիւնն՝ առաւելու *հիւանդութիւնն*. և որչափ նըւազի մարմին՝ առաւելու ապականութիւն. այլ յամենևին նըւազիլ ողջութեան՝ և *հիւանդութիւնն* կորնչի:** - 22. Զի տրտմութեամբ մեղանչումն *հիւանդութիւն* է և գայթակղութիւն. և հիւանդն յառողջութիւն փութայ. և գայթակղեալն՝ ի ճանապարհ: - 33. Յորժամ հիւանդանաս՝ մերձ ես դու *հիւանդութեան* քոյ. և յորժամ մանուկ լինիս՝ մերձ ես մանկութեանն. ի յալևորութեանն՝ ծերութեանն ես մերձ: - 37. Եւ դարձեալ՝ զի նոցա ամենեցուն ներհակ գոյ. որպէս մեծութեան աղքատութիւն. առողջութեան *հիվանդութիւն*. կենաց մահ: - 178. Նոյնպէս և կեանք մեր. այլայլի ի մանկութենէ ի ծերութիւն. յառողջութենէ ի *հիւանդութիւն*...: - 199. Ութերորդ՝ թշնամիք եղեն կիրք պատժոցն. այսինքն մահ՝ ապականութիւն՝ տանջանք՝ *հիւանդութիւնք*՝ սով՝ և ծարաւ՝ և այլն ամենայն սոքա ի կրիցն են: - 277. Զոր օրինակ վարժ մշակացն է՛ մինչև յերեկոյն. այլ թէ *հիւանդութիւն* կամ այլ ինչ դիպի, հանէ՛ ի վարձուն և ի մշակութեանցն: - 291. Յայտ է զի յառաջ քան զհարւածն ի ամաց էր. և լը ամ եկաց ի *հիւանդութեանն*. և այսպէս կրկին աճեցին կեանքն որպէս և ամենայն ինչքն: - 327. Չորրորդ՝ վասն փրկութեան ի *հիւանդութենէ* կամ ի պատերազմէ՛ փրկեալք, մատուցեն ասէ պատարագ և նւէրս ընծայեսցեն ի սեղանն ի հոտ անուշից: - 358. Ուստի յա՛յտ է, զի որակ ծնողացն խառնի ի բեղնաւորիլն. ի դաշտանւոյն գօղի. ի *հիւանդութենէ*, ի շիկութենէ. որպէս ադամ տրտմութեամբ ծնաւ զորդին կայէն. ցաւած ծնողացն ցաւածին որդի: - 439. Եւ երբեմն երկոքեանն ծածուկ. որպէս ի նեղութիւնս իւրաքանչիւր արդարոց և անմեղաց. և ի *հիւանդութիւնս* տղայոց: - 459. Հինգերորդ՝ զի դեղն պատասխանէր *հիւանդութեանն*: - 463. Երրորդ՝ զի քրիստոս զչափ հասակի զադամայն ունէր, որ նախ քան զյանցանս և ադա՛մ ոչ ունէր *հիւանդութիւն* և ո՛չ ծերութեան փոփոխումն: - 480. Եւ տն մերոյ ո՛չ էր լինելոյ. ոչ *հիւանդութիւն* և ո՛չ ծերութեան փոփոխումն: - 480. Եւ վասն մերոյ *հիւանդութեան* քրիստոս էառ զդեղն և բժշկեաց զմեզ: - 491. Նախ վասն տգիտութեան. **բ** վասն փոփոխման. **գ** վասն *հիւանդութեան*: - 531. Ա՛րդ՝ տգիտութիւնն բնակա՛ն է մարդոյ. փոփոխումն ստացական. և *հիւանդութիւնն* դիւական: - 531. Վասն երրորդին գիտելի է, զի գոյ *հիւանդութիւն* մարմնոյ, գոյ և *հիւանդութիւն* հոգւոյ: - 531. Եւ որպէս անչափ են սպեղանիք և դեղք բժշկականք մարմնոյ ի բազում և զանազան ծաղիկս խոտոյ և յարմատս, ի տերևս ի պտուղս. և յայլսն. զի սոքա յայտնեն զբազմութիւն *հիւանդութեանց* մարմնոյ: - 531. Նոյնպէս և անչափութիւն բանից և խրատուց հարց և իմաստնոց գիրք սուրբք՝ հին և նոր կտակարանք ցուցանեն զանչափ *հիւանդութիւն* հոգւոյ. զի սոքօք առողջասցին: - 531. Եւ վասն *հիւանդութեան* ասասցի յառաջիկայդ ի **լգ** գլուխն ի **բ** համարն գիտ: - 531. *Հիւանդութեան* և բժշկութեան: - 660. Երրորդ ըստ կենդանեաց յողջութիւն և ի *հիւանդութիւն*: - 663. Եւ ըստ բոլոր անձինն ողջութիւն և *հիւանդութիւն*: - 664. Այլ վասն ողջութեան և *հիւանդութեան* մեծութեան և աղքատութեան՝ այժմ ասասցի: - 664. Զի՞նչ է *հիւանդութիւն*: - 665. *Հիւանդութիւն* է անչափակցութիւն տարերց մարմնոյ. որ առաւելու և նուազէ՛. ջերմ և ցուրտ, խոնաւ և ցամաք: - 665. Եւ լինի *հիւանդութիւն* ի չորից իմն պատճառաց: - 665. Երկրորդ, որ անզեղջ են ի մեղս՝ տայ աստուած *զհիւանդութիւն* ի խրատ ուղղութեան: - 665. Երրորդ *հիւանդութիւն* է ընտրելոց, զի փո՛րձ երևեսցին ի յամօթ չարին. որպէս յոբայն: - 665. իբր թէ նա՛ է առաւել պատճառ *հիւանդութեան*: - 665. Ա՛րդ՝ եթէ ըստ բնականին է *հիւանդութիւնն*, պա՛րտ է բժշկական դեղով առողջանալ. - 665. Դարձեալ՝ վասն *հիվանդութեան* գիտելի է, զի է ի մէջ մահու և կենաց: - 665. Երրորդ *զհիւանդութիւնն.* զի տեսեալ զսոսա՝ գիտասցուք զմահն մերձեալ: - 665. Նա՛խ՝ *հիւանդութիւնն*: - 668. Եւ թէպէտ մարմինն փոփոխի հասակաւ կամ *հիւանդութեամբ*, կամ մեղօք հոգին հիւանդանայ. դիմաւոր նշանս այս անփոփոխ մնայ: - 719. Առաջինն է առողջութիւն առանց *հիւանդութեա*...: - 766. Այլ ո՛չ զամենայն պակասականքն կրեաց քրիստոս. որ է՛ *հիւանդութիւն* մարմնոյ և ապականութիւն. կամ մեղք հոգւոյ և տգիտութիւն: - 781

**ՀԻՒԹ +** Եւ յոչ էից՝ զի սակաւ *հիւթն* այն՝ ո՛չ կայր միս և ոսկր և ջիլ. կամ մորթ: - 37. Եւ զի պլղամ և սպիտակ *հիւթք* տիրեն: - 197. Վասն որոյ ջերմութեամբ զցրտութիւն լուծանէ որ յերկաթն և ի սառն. և չորութեամբ *զհիւթն* մերժէ որ ի ձու հաւի և յայլսն: - 202. Չորրորդ՝ զի տունկք և բոյսք ի ներքին *հիւթոյ* և ի վերին անձրևոյ միշտ դալար մնասցեն: - 207. Երկրորդ՝ ասէ արիստոտէլ՝ թէ ջերմութիւն լուսաւորացդ և տարրական հրոյն և օդոյն մտանեն ի ծովն և քարշեն ի նմանէ զքաղցր և զպարզ *հիւթն*. և մնացեալն լինի դառն և աղի: - 208. Վեցերորդ՝ ըստ այլոց. զի բոլոր թանձր մարմինն է՛ հողոյ. և ամենայն *հիւթք* և մաղձք է՛ ջրոյ. թոքն է՛ օդոյն. և սիրտն է՛ հրոյն ջերմ գոլով: - 215. Երկրորդն է անապական ըստ *հիւթոյ*: - 221. Որպէս լուսաւորք երկնից քարշեն յերկրէ և ի ծովէ *զհիւթ*՝ և կերակրին և անապականք են: - 224. Նոյնպէս մարմինն է ի ներքոյ. և *հիւթ* արեանցն ի վերոյ. և ապա շունչն օդոյ և հուր լուսաւորացն ի վերոյ: - 232. Եւ ջուրն **դ** *հիւթք*. այսինքն արիւնն. պալղամն. սեաւ և խարտեաշ մաղձն: - 232. Վասն որոյ գլուխն է՛ ի վերոյ. և

խռչափողն որ ունի զտուր և զառն՝ օդո՛յդ է նման. և ի ներքոյ այլ մարմինք և *հիւք* արեան և ջրոյ՝ երկրիս է օրինակ: - 232-233. Զի **դ** *հիւքն* ներքին անդամոց՝ ի ձեռն սրտին պատճառե՛ն զ**դ** *հիւքն* արտաքին: - 243. Եւ թէ ոք ասիցէ, ուստի՞ գտանեմք եթէ ունի զկենդանութիւն *հիւքն* այն: - 255. Ապա ուրեմն *հիւքն* այն, նախ ունի զկեալն որ է՛ ունակութիւն. և ո՛չ զպակասն որ է մեռելութիւն: - 256. Վեցերորդ՝ զի զգործն կենդանւոյ տեսանեմք ի նա որ է՛ ջերմութիւն, շարժութիւն, և ներգործութիւն. որ երևի ի կազմելն *զհիւքն*: - 256. Զի քարշեն յերկրէ *զհիւք*, և ունակացեալ պահեն, և հալեալ փոխեն յինքեանս. և վտարեն զաւելորդսն ի կեղև՝ ի տերև՝ և յայլսն: - 262. Եւ դարձեալ ըստ չորից տարերց և եղանակաց և ժամուց աւուր և *հիւքոց* համեմատաբար փոփոխին և հասակ մարդկան: - 266. Յեղանակս գարնան, և յառաւօտուն մինչև յերեք ժամս, և *հիւքոյ* արեան, և մանկութեան հասակն ի տղայութենէ ծննդեան և աճման՝ ունին զնմանութիւն օդոյ ջերմ և գէջ գոլով: - 266. Երրորդ՝ ըստ *հիւթին* յաւելւածոյ՝ և պակասութեան մաղձիցն՝ ի ներքուստ կամ յարտաքուստ, ջերմ և ցուրտ և այլն, զնորին նմանն և զկերպարանն առնու առ ինքն: - 268. Դարձեալ՝ մեղք սկզբնական խառնեցաւ ի յաճումն *հիւթին*. և յետոյ մահ և ապականութիւն: - 445. ...և ծխատեսակ *հիւքն* կսկծօղ վերանայ ի գլուխն և թափի՛ ընդ աչսն և լինի արտօսր: - 619. Եւ ի *հիւքոյն* յայնմանէ ելեալ ի գլուխն լինի արտօսր քաղցր վասն քաղցրութեան լերդին: - 619. ...և *հիւքն* ելեալ ի գլուխն լինի արտասուքն դառն վասն լեղւոյն: - 620. այլ սակաւ *հիւքն* այն որ ի սկզբանէ՛ գոյացութեան մերոյ ի ծնողացն է՛ ընկալեալ: - 718. Ասեմք եթէ՝ անդամքն այնք որ աստ լցեալ են ապաւառով, անդ լցցին **դ** *հիւքովքն* լուսաւորեալ լուսով: - 725. Ունելով մշտասաղարթ ծաղիկ որ է՛ կարմիր երանգն գունոյ, և երկնագոյն *հիւքով* զարդարեալ: - 768. Իսկ ստինք յատկապէս գործի՛ է բնութեան ի պէտս սննդեան այնոցիկ ծննդոց զօրէն սերմանեաց երկրի. յորմէ *հիւքոյ* արեանն գոյացելոյ, ընդ ագուգայս երակաց արտագունեալ որակօք կաթն փոխակերպեալ: - 786. Նոյնպէս և երբեմն յուզել ուրախութեանց. ի փեռեկեալ թոքոյ ի կոտորումն շնչոյն, ի թաղանթէ՛ որ առ լերդաւն՝ *հիւք* ինչ ծաւալի առ նոյն ասացեալ տեղի. ելեալ գոլորշեացն նմանապէս առաջնոյն. և լինի քաղցրագոյն արտօսր. վասն ասացեալ *հիւքոյն* ի քաղցրորակն անօթոյ: - 787

**ՀԻՒՍԵՄ +** Զտարւոյն ոստն ջարդեն ի վերայ բնոյն. և որ աճէ՛ զայն քաղեն և *հիւսեն*. Պտղակորոյս որպէս ծիթենի: - 638

**ՀԻՒՍԻՍ +** Հինգերորդ՝ զի յարևելից ընդ հարաւ խոնարհի յարևմուտս՝ և պատէ՛ *հիւսիս*, և դարձեալ ելանէ յարևելս: - 126. Եւ այս **ԲԺ**ան կենդանակերպից վեցն է ի մէջ երկնից ի *հիւսիսոյ* կողմս առ մեզ, և ի մին կիսագունդն: - 189. Եւ ի *հիւսիսոյ* հողմոյն որ կոչի ապարքտիաս՝ լինի պաղուցեալ: - 205. Երեք ի հարաւոյ, և **գ** ի *հիւսիսոյ*: - 205. Որ մերձ ի *հիւսիս* հնչէ, Կիկիաս կոչի. չո՛ր է և ցամաքեցուցիչ: - 205. Որ մերձ ի *հիւսիս* է, Արգէստէս կոչի. կազմէ սա զամպս: - 205. Երկրորդ՝ զի ունի երկիցս **բ** ծայրք. երկայնք և լայնքն. որ է յարևելից յարևմուտս. և ի *հիւսիսոյ* ի հարաւ: - 210. Ո՛չ թէ քան զտարրական հուրն ի վե՛ր է անցեալ. այլ զի լուսինն և արեգակն միշտ ի հարաւոյ կողմանէ ի ստորոտէ լերինն ելանեն. և ի *հիւսիսոյ* կողմն լերինն միշտ գիշեր լինի. որպէս աղէքսանդրու պատմութիւնն ասէ. և ի գլուխն միշտ լոյս. և ի հարաւոյ կողմն տիւ և գիշեր: - 222. Երրորդ՝ զի աշխարհ որ քան է ի բեւեռէ՛ *հիւսիսոյ* մինչև ի բեւեռն հարաւոյ, նոյն քան է յարևելից մինչև յարևմուտս: - 231-232. Իսկ ի ծերութեանն՝ լինի հողմն *հիւսիսոյ* հով և գէջ: - 240. Եւ արտաքին սրահին պատւարն ի մէջ ունելով զխորանն յամենայն կողմանց ճ կանգուն երկայն ի *հիւսիսոյ* և ի հարաւոյ կողմն: - 343. Նա՛խ՝ սեղան երեսաց հացին և գառին ի *հիւսիսոյ* կողմն: - 346. Վասն այն զնշխարն ի կողմն *հիւսիսոյ* դնեմք և զսկիհն ի հարաւ որպէս անդ: - 346. Այլ ի կողմ *հիւսիսոյ* զողջակէզս և զվասն մեղացն: - 360. Զի տէր մեր ի *հիւսիսո՛յ* կողմ երուսաղէմ խաչեցաւ: - 360. Դարձեալ՝ հարաւն նշանակէր զհրէայս, և *հիւսիս* զհեթանոսս. որ լինելոց էին պատարագ և ժողովուրդ աստուծոյ...: - 360. Այլ և արտաքոյ քաղաքին ի կողմն *հիւսիսոյ*: - 362. Զի կենդուրածինքն լցին զարևելս. և իսմայէլացիքն զհարաւ. եսաւացիք *զհիւսիս* և զարևմուտս. և սոքա ո՛չ անկան ընդ թուով: - 377. Եւ ի *հիւսիսոյ* կողմն **գ** ազգ: - 378. Մերարեայն ի *հիւսիսոյ*. և Կահաթուն որ է՛ ցեղն քահանայից ի հարաւոյ: - 378-379. Զի՞նչ է որ մովսէս ետես նախ զծովն որ յարևմուտս, և *զհիւսիս* և զհարաւ, և ապա՛ զարևելս: - 394. Նախ՝ որպէս արեգակն եղև տեսութիւնն մովսէսի. զի յառաջ զարևմուտս տեսանէ. և վերացեալ *զհիւսիս* և զհարաւ. և ապա՛ զարևելս: - 394. Դարձեալ՝ խաչաձև է **դ** կողմն աշխարհի. որ է՛ Արևելք, Արևմուտք, *Հիւսիս*, և Հարաւ: - 494. Արևելք, Արևմուտք, Հարաւ, և *Հիւսիսոյ* կողմն: - 616. Եւ վերջոյ ի *հիւսիս*. որ ցուցանէ զշնորհին որ ի հինն սիովնէ հնչեաց յեկեղեցիս հեթանոսաց...: - 674. Եւ համընթաց հուրն *զհիւսիսիւ* և պատէ՛ զմեղաւորս: - 731. Իսկ *հիւսիս* բա՛րձր է. և լուսաւորքն հեռու. և է ձախ կողմն աշխարհի. վասն այն ցուրտ է և սառնամանիք: - 731. ...և Դարձեալ, զի յարևելս բազմեալ դատաւորն. և աջակողմեանքն լինին ի վերայ օդոյ ի կողմն *հիւսիսոյ*. և ձախակողմեանքն վայր ի յերկրի ի կողմն հարաւոյ. - 731

**ՅԻՒՍԻՍԱՅԻՆ +** Սահմի. զի գնայ հարաւայինն, և գայ *հիւսասայինն*: - 200. Իսկ *Յիւսիսայինքն*, Վաւռէք կոչին. որք են ցուրտ: - 205. *Յիւսիսայինք* որք կոչին Վոռէսք: - 205. *Յիւսիսայինն* ընդդէմ նմին հո՛վ է և գէջ: - 240. Եւ *հիւսիսայնոցն* ո՛չ բուսանի վասն խիստ ցրտոյն. և միջերկրայքս վասն բարեխառնութեանն մորուս ունին: - 245

**ՅԻՒՍՆ +** Եւ կամ ի հաւասարէն. որպէս պետրոս. կամ ի վերջնոցն որպէս *հիւսն*: - 312

**ՅԻՒՍՆԱԿԱՆ +** Իսկ յետ սորա՝ Սինիգրէս արար զառաջին ծայնն, ի *հիւսնականէ*՛ գտեալ արուեստից: - 640

**ՅԻՒՍՆԵԼ +** Զի կամ ի զօրութենէ լինի ներգործութեամբ. որպէս մանկան *հիւսնել*: - 162. Դարձեալ՝ այն զօրութիւնն միշտ է. զի բնաւորեալ է ընդ ներգործութեան. իսկ միւս զօրութիւնն երբեմն է. զի կամ նախ է ներգործութեան. որպէս մանկան *հիւսնել*: - 168

**ՅԻՒՐ +** Իսկ ծմեռն, և յինն ժամէն մինչև յերեկոյ և բոլոր գիշերն, և սպիտակաթոյր *հիւր* պլղամին, և ծեր մարդ, ըստ նմանութեան ջրոյ ցուրտ և գէջ գոլով. վասն որոյ սպիտակի և ցրտանայ և պակասի զօրութեամբ: - 266. Նա՛խ՝ զի օտարք և *հիւրք* էին որդիքն յակոբայ՝ և ատեցին զնոսա: - 335. Չորրորդ՝ և զայնպիսի *հիւրսն* գերի՛ և ծառայ չարչարեցին: - 335. Այսպէս հինգ եղանակաւ չարաչար ատեցին *զհիւրսն*. վասն այն կրկին կրեցին զհատուցումն վրիժուց **ժ** հարուածովք: - 335

**ՅԻՒՐԿԱՆՈՍ -** Արդ սկսեալ առ դարեհիւ ի **կե** ոլոմպիադին՝ դադարեցին ի **ճձզ** ոլոմպիադին առ *հիւրկանոսիւ* քահանայապետիւ, որ գերեցաւ ի պարթևաց: - 449. Եւ յետ *հիւրկանեայ* ո՛չ ևս ի քահանայից ազգէն կացին օծեալքն առաջնորդք. այլ աննշանք ոմանք ամսօրեայք և տարևորք: - 449

**ՅՄԱԿԵՐ +** Տասներորդ՝ արիւն ուտել գազանա՛ց է *հմակերաց*. զի մի՛ լիցուք անողորմ և գազանասիրտ՝ հրամայէ՛ զարիւնն հանել և զանզգայ մարմինն եփել և ուտել: - 295

**ՅՄԱՅ -** Եւ աստ հարցանեմ, զի՞նչ է դիւթն, և *հմայն*, կախարդն, և այլն: - 388. *Յմայն* է՝ որ զտեսս աչաց կամ զձայն հմայէ՛. և զթռիչս և զկռիչս հաւուց. և զձայն կրակի և զաճառաց. և զդրան, կամ աքիս տեսեալ. կամ բէճ. կամ մուճակ. կամ այլ ինչ այսպիսի...: - 388

**ՅՄԱՅԵՄ +** Յմայն է՝ որ զտեսս աչաց կամ զձայն *հմայէ*՛. և զթռիչս և զկռիչս հաւուց. և զձայն կրակի և զաճառաց. և զդրան, կամ աքիս տեսեալ. կամ բէճ. կամ մուճակ. կամ այլ ինչ այսպիսի...: - 388

**ՅՄԱՅՈՒԹԻՒՆ +** Եւ զայս գործի *հմայութեան* առնէին. և քաւութիւն թարգմանի: - 425

**ՅՄՈՒՏ +** Եւ ապա՛ քինոսփէնէս *հմուտ* ծայնից գազանաց և թռչնոց, զատուցանէ՛ զկողմն առաջին ծայնին: - 640

**ՅՄՏԱՆԱՄ +** Առաջին արքայութիւնն է բանն անճառելի, Երկրորդն խորանն զինուորական, Երրորդն հոգւոյ զմայլումն, Չորրորդն երկնցունցն ծայրագոյն միաւորութիւն...: ...Յերրորդումն *հմտանամք:* - 755

**ՅՄՏՈՒԹԻՒՆ +** Երկրորդ *հմտութեամբ* ժամանակին. որով իմանան զներկայս և զապառնիս և յառաջեն քան զգործս. որով աղաչէին, «գիտեմք զքեզ». ո՛չ հաւատոյն գիտութեամբ. այլ *հմտութեամբ* տանջանաց. որով սարսեին և ասէին «մի՛ տանջեր զմեզ»: - 784

**ՅՆԱԶԱՆԴ +** Իսկ հնազանդիլն որդւոյ հօր, ո՛չ թէ այժմ անհնազանդ է վասն հակառակութեան. զի այս աւազակա՛ցն է. և անհնա՛ր է ասել զմի և զնոյն էութիւնն ինքն ինքեան *հնազանդ* և անհնազանդ ըստ այնմ որ բան է. այսինքն զպարզ աստուածութիւնն: - 42. Դարձեալ կերպիւ ինչ ասի *հնազանդ* որդի հօր գործով՝ լրմամբ կամացն: - 42. Յինգերորդ՝ զի մարդն իշխան և տէր է ամենայն կենդանեաց. վասն որոյ ամենայն կենդանիք գլխակո՛ր են իբրև զծառայ և *հնազանդ*. և մարդն ուղղաձև իբրև ազատ և թագաւոր: - 233. Եւ նա՛ է *հնազանդ* բանին: - 244. Դարձեալ զօրութիւնք հոգւոյն. ոմանք են *հնազանդ* բանին. և ոմանք են անհնազանդ: - 249. Եւ *հնազանդ* են բանին՝ զգայականն. որպէս ցասումն և ցանկութիւնն: - 249. Երրորդ՝ զկամքն *հնազանդ* ունի: - 251. Երկրորդ՝ աստուած տէ՛ր է և իշխան և ինքնակալ արարածոց. և զամենայն երևելիս *հնազանդ* և ծառայ արար մարդոյն: - 271. Երկրորդ՝ զի խոնարհ և *հնազանդ* էր յամենայնի. ուստի մնաց եղբօրն պատարագի. որ իւրն **գ** ամսով յառա՛ջ էր հասեալ քան զեղբօրն. այսինքն ծնունդ ոչխարացն քան զպտուղ երկրին...: - 286. Երկոտասաներորդ՝ զի որպէս իսահակ *հնազանդ* գտաւ հօրն մահո՛ւ չափ, լաւ համարելով զմեռանիլն՝ քան առանց հնազանդութեան զկալն: - 305. Այլ ա՛րդ՝ բանն աստուած եղև մարդ և անմեղ պահեաց զբնական կիրս. և ներգործական կրիւքն *հնազանդ* եղև հօր՝ մահու չափ և մահու խաչի: - 492. Առաքելոյն պետրոսի *հնազա՛նդ* եմք որպէս քրիստոսի. նաև պօղոսի և ամենայն առաքելոցն և աշակերտացն ամենեցուն և հետևողաց նորա և աթոռոց նոցա: - 547. Այսոցիկ սուրբ հարց և սիւնհոդոսաց *հնազա՛նդ* եմք. և զնոցա կանոնքն ունիմք և զդաւանութիւն, և պահեմք մինչև յելս շնչոյ մերոյ: - 547. Ա՛րդ՝ ե՛կ ես և դու փորձեսցուք թէ ով զդաւանութիւն առաքելոյն ունի և զկանոնքն՝ նա՛ է *հնազանդ*

նմա: - 548. Արիստոտէլ գ սեռս զօրութեան ասէ հոգւոյն. այսինքն է միքն անհնազանդ բանին. և միքն *հնազանդ*. և միքն բան էութեամբ: - 572. Իսկ երկրորդ սեռն *հնազանդ* բանին՝ ցասումն և ցանկութիւնն. և սոքա ո՛չ կարեն լինիլ ենթակայ իմանալի առաքինութեանց: - 572

***ՀՆԱԶԱՆԴ ԱՌՆԵԼ և ԼԻՆԵԼ +*** Եւ փոխանակ կօշկաց՝ զամենայն ինչ *հնազանդ արար* ի ներքոյ ոտից նորա: - 271. Երկրորդ՝ զի մի՛ անփոյթ և անհնազանդ եղիցի մարդոյն. այլ ի նմանէ՛ ի կողիցն, զի որպէս մարմին *հնազա՛նդ լիցի* գլխոյն: - 276. Ա՛րդ՝ զի՞նչ կամիս որ հնազանդիմք պետրոսի. ուրանա՞լ պարտ է զքրիստոս որ *լինիմք հնազանդ* պետրոսի, եթէ եղծանել զպահքն, թէ զամենայն պիղծ կերակուր ուտել...: - 548.

**ՀՆԱԶԱՆԴԱՊԷՍ** - Երրորդ՝ իմասցի ի տեղի *հնազանդապէս* սպասաւորութեան, ըստ այնմ թէ՝ «հաւատարիմ է արարչին իւրոյ»: - 457

**ՀՆԱԶԱՆԴԵՑՈՒՑԱՆԵՄ +** Չորրորդ՝ յա՛յտ է ի *հնազանդեցելոցն* որք կան այժմ ընդ ձեռամբ մադկան. որպէս ոչխար, պախրէ՛, և այլն: - 220. Մետասաներորդ, զի ձգեալ զձեռն նայի *հնազանդեցոյց* զմարմինն զայն ի ներքոյ մահու: - 518

**ՀՆԱԶԱՆԴԻՄ +** Եւ ի ձեռն տէրանց խնամէ՛ զծառայս և *զհնազանդեալս*: - 19. Եւ տնտեսութեամբն ո՛չ. բայց միայն *հնազանդելոցն*: - 42. Իսկ *հնազանդիլն* որդւոյ հօր, ո՛չ թէ այժմ անհնազանդ է վասն հակառակութեան. զի այս աւազակա՛ցն է. և անհնա՛ր է ասել զմի և զնոյն էութիւնն ինքն ինքեան հնազանդ և անհնազանդ ըստ այնմ որ բան է. այսինքն զպարզ աստուածութիւնն: - 42. Իսկ յորժամ *հնազանդին* ամենայն անդամք գլխոյն քրիստոսի գիտութեամբ և փոփոխմամբ, յայնժամ և ինքն լնու զհնազանդութիւնն, ընծայելով *զհնազանդեալսն* հօր: - 42. Զի՞նչ ասեմ, զի հոգւով *հնազանդեցաւ* ադամ, և մտօք հաւանեցաւ, և մարմնով զգործն ի կատարումն էած: - 50. Վեցերորդ՝ զի *հնազանդեալք* են ի սպաս կամացն աստուծոյ: - 137. Եւ ի ներքնագոյնն, որպէս ի *հնազանդեալս*՝ և յորդիս: - 143. Ուստի յա՛յտ է, որք վերստին յաղթեն ախտիցն որք յինքեանս, այսինքն ցասման և ցանկութեան. յաղթին և *հնազանդին* նոցա արտաքին գազանք և անասունք: - 220. Զի թէ *հնազանդեալ* էր օրինացն, լինէր բարւոյ պատճառ. և ո՛չ *հնազանդեալ*՝ եղև չարի պատճառ: - 223. Այսպէս և *հնազանդեալ* զօրք հոգոյն՝ զգայականն և տնկականն է. և նորօ՛ք է հոգին ի մարմինն: - 255. Նախ՝ ի թագն. զի գլուխ և տէր է բոլոր *հնազանդելոցն*: - 271. Չորրորդ՝ կօշիկն կարմիր. զի արեամբ չափ ի ներքոյ ոտից են *հնազանդեալք* ամենայն: - 271. Երրորդ՝ զի *հնազանդեցաւ* կնոջն առաւել քան աստուծոյ: - 279. Ինն**ծ**, ո՛չ յառնէ առիւծն ի տեղւոջէն մինչև *հնազանդէ* զբշնամիս իւր: - 316. Եւ կապ հարկի որպէս *հնազանդեցելոց*: - 317. Չորրորդ՝ զի զարհուրեսցի ժողովուրդն և *հնազենդեսցի* մովսէսի: - 352. Եւ **ծ** թիւ կատարեալ նուէր և սուրբ է աստուծոյ. յաղագս որոյ թագաւորք երկրի զընծայս ի մարդկանէ՛ *հնազանդելոց* **ք ք** խնդրեն...: - 376. Եւ որպէս կնոջ ընդ հրամանս առնն իւրոյ յանցանել պոռնկութենէ, նոյնպէս և զաւակաց, և ծառայից, և աշակերտաց, և *հնազանդելոց*, և ժողովրդոց. նոյնպէս և հոգիս մեր ելեալ ի հրամանացն աստուծոյ՝ պոռնկութիւն է նմա. եթէ ըստ գործոց. եթէ ըստ հաւատոց: - 389. Հինգերորդ՝ ոմանք չարք ո՛չ *հնազանդէին* նմա. որ և ասէին հրէայքն «ո՛չ կամիմք թագաւորել դմա ի վերայ մեր». և այժմ ոմանք ո՛չ *հնազանդին* անհաւատք: - 426. Տասներորդ՝ յետ որոյ *հնազանդեցան* նմա՛ ամենայն հէլ. և տեառն մերոյ զկնի խաչին հաստատեցան ի հաւատս. մանաւանդ յետ է դար կենցաղոյս ամենայն լեզու խոստովան լիցի զտէր յիսուս քրիստոս ի փառս աստուծոյ հօր ամէն: - 427. Երանելի են հարսունք և *հնազանդեալք* քրիստոսի: - 441. Յետոյ վասն գազանաց երկրին՝ *հնազանդեցաւ* գրոյն մովսէսի. և ծածկեցին զաստուածս իւրեանց ի լերին սոմորոն. և անդ երկիր պագին սամարացիք: - 447. Եղիակիմ որ և յովակիմ ամս **ժբ**. ի սորա **ժ** ամին նաբուգոդոնոսոր զիրէաստան *հնազանդեաց.* և հարկ առեալ յեղիակիմայ գնաց: - 453. Եւ հաւանիլ՝ այս է *հնազանդիլ* և ուսանիլ: - 465. Չորրորդ՝ զի կամաւ *հնազանդեցաւ* խաչի և չարչարանաց. վասն այն ի գլուխն է նկարեալ: - 481. Նախ՝ զի մարմնաւորին *հնազանդիմք* յոչ կամաց. բռնութեամբ և ի հարկէ: - 538. Իսկ հոգևորին *հնազանդիմք* կամաւ որպէս աստուծոյ: - 538. Այլ որ այսպէս իրաւամբք կապեսցի՝ *հնազանդիլ* պարտի կապողին որպէս յաստուծոյ շարժեալ: - 540. Նոյնպէս և *հնազանդեալքն* արձակման՝ կրկին պսակեսցին: - 540. Եւ թէ ոք ասիցէ, երևի ապա թէ ո՛չ է պարտ *հնազանդիլ* առաքելոյն պետրոսի և աթոռոյ նորա: - 547. Եւ այլ չորիցն *հնազանդիմք* որպէս աթոռակից քրիստոսի: - 547. Եւ **զճ** ամ աւելի՝ բազում ազգ Ֆռանկաց ո՛չ *հնազանդեցան* չար ժողովոյն քաղկեդոնի: - 547. Ա՛րդ՝ զի՞նչ կամիս որ *հնազանդիմք* պետրոսի. ուրանա՞լ պարտ է զքրիստոս որ լինիմք հնազանդ պետրոսի, եթէ եղծանել զպահքն, թէ զամենայն պիղծ կերակուր ուտել...: - 548. Եւ թէ ոք ասիցէ, կարի՛ բարկացար. ո՛չ զայս ասեմ *հնազանդիլ*. այլ որպէս լուսաւորիչն գնաց ի հռօմ և *հնազանդեցաւ*: - 548. Խրոխտալ պարտ էր առ չարսն և ո՛չ *հնազանդիլ*. այժմ անհնազանդիմք

օրինացն աստուծոյ և ամբարիաւաճիմք առ ընկերս: - 564. ...իբր թէ ընկալաք և *հնազանդեցար* մարմնով...: - 644. Իսկ հող ցանեալ ի գլուխն, գլուխ զմիտքն նշանակէ. որ ինքնիշխան եղև յաստուծոյ. և *հնազանդեալ* խրատու հողակեր օձին՝ մահացաւ...: - 670. Նոյնպէս և մեզ շնորհացն այնմ պարտ է *հնազանդիլ* և կատարել զկարգն: - 674. Չորրորդ, զի *հնազանդին* նմա բոլոր արարածք...: - 737. Չորրորդ՝ ի վախճանի յորժամ *հնազանդին* նմա ամենայն և պսակէ զսուրբս իւր, ուրախ եղիցի տէր յարարածս իւր: - 748. Իններորդ, հաւատով *հնազանդի* ոք օրինացն աստուծոյ. այլ դնն հակառակ կայ օրինացն և աստուծոյ. թէպէտ գիտէ զայն լինիլ ինքեան չար, այլ գիտութեամբ մեղանչէ: - 784

**ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ +** Դարձեալ՝ ի գալստեանն քրիստոսի՝ բազում գազանաբարոյ անբարիշտք եկին ի *հնազանդութիւն* քրիստոսի: - 28. Տասներորդ՝ Թագաւորել մինչև ի ժամանակս ասեն. և վասն *հնազանդութեանն*: - 29. Իսկ յորժամ հնազանդին ամենայն անդամք գլխոյն քրիստոսի գիտութեամբ և փոփոխմամբ, յայնժամ և ինքն լնու *զհնազանդութիւնն*, ընծայելով զհնազանդեալքս հօր: - 42. Իսկ վասն չարչարանաց *հնազանդութեանն* քրիստոսի բազում պատճառս դնէ յայսմ վայրի աստուածաբանն գրիգորիոս: - 42. Երկրորդ՝ զի գործով կատարեսցէ *զհնազանդութիւնն* փործիւ չարչարանացն: - 43. Չորրորդ՝ զի չարչարանօքն իւրովք փործեսցէ՛ *զհնազանդութիւնս* մեր. այսինքն զկսկիծ և զծանրութիւն չարչարանաց մերոց. որպէս թէ ունիցի գիտել իւրովք զմերս և ողորմիլ մեզ: - 43. Հինգերորդ՝ ի յուսումն խոնարհութեան մերոյ. զի տեսանելով զմեզ տկար քան զանասունս, մերկ և աղքատ ի մօրէ ծնեալ, խոնարհեալ զիջանիմք ի *հնազանդութիւն* արարչին. և զի մի՛ եկամուտ հպարտութեամբ կրեսցուք զանկումն արուսեկին: - 267. Երրորդ՝ ի նշանակել զսէր և *զհնազանդութիւն* մարդոյն: - 277. Իններորդ՝ սէր և գութ աստուծոյ ի վերայ մարդոյն *հնազանդութեամբ* պատուիրանին որ գայր առ նա՛: - 279. Երկոտասաներորդ՝ զի որպէս իսահակ հնազանդ գտաւ հօրն մահո՛ւ չափ, լաւ համարելով զմեռանիլն՝ քան առանց *հնազանդութեան* զկալն: - 305. Նմանապէս և միջակ կապիւն, զի ուսանիմք յաստուծոյ ընկալեալք զկարգ կրօնիցն. և ունիմք ուխտ և դաշին և *հնազանդութեան* նմա...: - 318. Զի *հնազանդութեամբ* կատարեաց զկամս հօրն: - 457. Զի ասելն (Ահաւասիկ) ցուցանէ զյօժարական *հնազանդութիւնն*: - 465. Հինգերորդ՝ նշանակէ՛ զչորս առաքինութիւնս ի յորս պարտի տարածիլ ներքին մարդս մեր. այսինքն վերին մասն նշանակէ զսէրն. ներքինն զխոնարհութիւնն. աջն *զհնազանդութիւնն*. ահեակն զհամբերութիւնն: - 493. Ի մեծէն. ի կամացն. յիշխանութենէն ի փոքոյն. ի *հնազանդութենէն*. և ի գործոյն: - 535. Սակայն կարգ գոյ ի մէջ նոցա և պատիւ և *հնազանդութիւն* և սէր. այլ իշխանութեամբ համահաւասարք են: - 547. Եւ որ կարգեն զմարդն առ աստուած. որպէս աստուածապաշտութիւնն և *հնազանդութիւնն*: - 578-579. Իշխանաց *զհնազանդութիւնն*: - 579. Որպէս լեզուն մտաց՝ և ձեռքն սրտին է գործի. նոյնպէս ունկն կամա՛ց է. *հնազանդութեան* և կամ ոչ: - 658. Երրորդ բաղդատութեամբ այնորիկ՝ որ եղիցի ի վերոյ ինքեան. զի առ հոգի իւր կատարեալ կարիցէ ունել *հնազանդութիւնս*: - 764

**ՀՆԱՆԱՄ +** Երկրորդ՝ զի *հնացեա՛լ* է: - 114. Ա՛րդ՝ երեքն ո՛չ յարմարին աստուծոյ. զի ո՛չ *հնանայ* և ո՛չ ծերանայ. և ամք նորա ո՛չ պակասին ըստ մարգարէին...: - 114. Նոյնպէս յորժամ *հնանայ* և պակսի լոյսն: - 187. Վասն երրորդին ասէր յոբ զբարի և չար գործոց հատուցմունքն լինիլ առհասարակ յետո՛յ ի հանդերձեալն. զի աստ են մեղաւորք և *հնացեալք* ի մեծութեան. և ներէ՛ նոցա աստուած վասն կրկին պատճառի: - 324

**ՀՆԱՐ(Ք) +** Եւ զի ո՛չ է *հնար* որպէս ասացի, ապա ուրեմն ո՛չ է մեծ հայր քան զորդի. զի ի միմեանց տանին, և ի միմեանց լնուն: - 39. Երկրորդ և ոչ վասն յետին յանցանացն կռապաշտութեան եպերեմք զիմաստութիւն նորա և ո՛չ ընդունիմք. թէպէտ և *հնա՛ր* է պատճառել թէ այնքան իմաստութիւնն, զնա ո՛չ պահեաց հաճոյ մնալ աստուծոյ: - 40. Երրորդ՝ զի է՛ *հնար* առնուլ ի վերայ մարմնական իմաստութեանց՝ և արհեստից հանճարաց՝ և բնականին ներգործութեանց ի բնութիւն իրին յառաջ ածելով զէութիւնն...: - 40. Եւ որպէս այս ո՛չ ասի, նոյնպէս և ո՛չ է *հնար* երկատելով ասել զքրիստոս անեղ և եղական: - 78. Նախ այսպէս, ասէ թէ բաժանմունք որ յԵրրորդութիւնն է, ո՛չ է *հնար* միաւորութեան. զի ա՛յլ ոմն է և ա՛յլ: - 80. Իսկ բաժանմունքն յորոց փրկիչն՝ ընդդէմ է այնմ. զի բնութեամբ է միաւորեալ. որ ո՛չ է *հնար* շփոթելոյ: - 80. Զի վարդապետք ասեն եթէ՝ կերակուր գազանաց այլ կենդանիք են. վասն որոյ խնամքն աստուծոյ ետ նոցա առաւել *հնարս* և զօրութիւնս, զի կարասցեն ըմբռնել. զայլ կենդանիս և մի՛ ի սովոյ մեռցին: - 218. Այլ և գիտելի է, զի ամենայն կենդանեաց բնականապէս *հնարք* ետ աստուած վասն օգտի նոցա և փրկութեան: - 218. Եւ զի բնութեամբ ունին յայտ է, զի ամենայն տեսակն զմի և զնոյն ունի *հնարս*. վասն զի մի բնութենէ ի նոսա: - 218. Իսկ մարդոյս *հնարք* և իմաստութիւնն բանականութեամբ է. վասն այն բազում է ի նոսա *հնարք*. և առաւել և նուազ, և ո՛չ հաւասարք: - 218. Հինգերորդ՝ ընդ հերձուածողաց և սատանայի մի՛

պարզմտութեամբ՝ այլ *հնարիւք* խօսեցի: - 218. Դարձեալ՝ յաղթեաց զսատանայ այնու, զի իմացաւ զչար *հնարսն* նորա և պատասխանէր զընդ դէմ. որպէս կնոջն և բարեկամացն և որք զգուժն բերէին. զի գիտէր ի բանսարկուէն լինիլ: - 323. Եւ մեզ պա՛րտ է իմանալ զչար խորհուրդ խորամանկին ի զանազան *հնարս*, և պատասխանել ի սուրբ գրոց. որպէս յայտ է ի գիրս Նազրեայ: - 323. Դարձեալ՝ պահօք և աղօթիւք *հնար* է յաղթել փորձողին...: - 324. Եւ տէր մեր հրդեհեաց զգործս հեթանոսաց արուեստաւոր *հնարիւք* իւրոցն հետևողաց: - 423. Դարձեալ նշանակէ՛ զխաւարումն այնմ ժամանակի, յորում եթէ գուցէ *հնար*՝ ընտրեալքն մոլորեսցին: - 490. Իսկ ապականութիւնն վերջին. հետևեալ ի *հնարից* բանսարկուին: - 496. Երրորդ, զի թէ կայր *հնար* որ ի ձեռն կնոջն տուեալ լինէր շնորհք, աստուածածին կոյսն մարիամ ընդէ՛ր ոչ եղև մեծ մկրտութեան որդւոյն իւրոյ ի յորդանան: - 589. Հինգերորդ, զի թէ գո՛յր *հնար* կնոջ վասն հարկին առնել զգործ քահանայի, ընդէ՛ր ոչ կարաց նունի կոյսն մկրտել զոք ի վրաց յորժամ դարձոյց յաստուածգիտութիւն. - 589. Ասեն վարդապետք եթէ՝ խոստովանութիւնն է *հնարք*, և է՛ հրաման: - 603. Արդ ըստ այնմ որ է՛ *հնարք*՝ ո՛չ է օգուտ որ քան է մարդ ի մեղս: - 603. Ասեմք թէ, ի *հնարից* չարին բարձին մարդիկք զխոստովանութիւնն որ հարկաւոր էր, յայն ապաւինեալ թէ՝ ի վերջին օրն օծանիմք ծիթով բալասամինաւ և արդարանամք: - 604. Զի այսպէս ասէ ներտառիս հայրապետն հռոմայ թէ՝ չէր *հնար* իջուցանել զմարմինն տն ի խաչէն վասն փայլատակմանցն ի խոցուածոյն: - 631. Նոյնպէս և այժմ որ քան ի մարմնի եմք՝ գոյ *հնար* քաւութեան. - 700. ապա ուրենն ո՛չ գոյ *հնար* զերծանելոյ անտի: - 700. Չորեքտասաներորդ, զի թէ մեղաւորացն գոյ *հնար* արտաքս գալ ի հրոյն և երթալ յարքայութիւնն. - 700. Եւ զի ո՛չ գոյ *հնար*՝ ասաց աբրահամ առ մեծատունն, - 700. պատճառեն գործոց իւրեանց *հնարս*. իբր թէ ակամայ զերծանիցին ի տանջանաց: - 701

**ՀՆԱՐԱԳԷՏ +** Դարձեալ՝ մարդոյս միա՛յն է *հնարագէտ* գործք և արուեստք զանազան: - 275

**ՀՆԱՐԱՒՈՐ +** Դարձեալ՝ ունիմք խորհուրդ, և ընտրեմք զառնելիսն, և խոտեմք զոչ առնելիսն. և բազում անգամ խորհելովն հանդիպիմք բարւոյ, և փախչիմք ի չարէ. և խորհուրդն ի *հնարաւորա՛ցն* է որպէս ասացաւ և ո՛չ ի հարկաւորացն: - 11. Այսուքիկ մեզ անկա՛ր են և անհնարինք. բայց ոչ յաստուծոյ. այլ *հնարաւորք* և կարելիք են նմա: - 44. Նախ զայս ասեմք թէ ամենայն ինչ *հնարաւոր* է աստուծոյ. զի կարէ՛ առնել զոր միտք մարդկան տեսանէ. և կարէ՛ զոր ո՛չ տեսանէ: - 173. Այսինքն կամօք է՝ զի գիտութիւնն և կամքն առաջնորդէ՛ գործոյն և *հնարաւոր* է՛ առնել զայս՝ և առնել զայն, զոր և կամեսցի. որպէս մարդ զի տէր է գործոյ իւրոյ՝ առնելոյ և ոչ առնելոյ: - 173. Վասն է՞ր գազանք *հնարաւոր* և ուժեղք են քան զանասուն: - 218. Ձեռքն կարճ և փոքր, ուժեղ է և *հնարաւոր*: - 247. Դուռն ասեն զայն դժոխոց. և ամենայն ինչ *հնարաւո՛ր* է աստուծոյ: - 504

**ՀՆԱՐԻՄ (ՀՆԱՐԵՄ) +** Երկրորդ՝ և արդարք առնեն ընդ դէմ սմին ի յամօթ չարին. որ *հնարեցաւ* ի ձեռն մեղացն՝ մահուամբ բառնալ զմարդկութիւնս. այլ հրամանաւն արարչին ծննդեամբք տևէ՛ և յերկարէ՛ բնութիւնս: - 321. Եւ այսպէս ամենայն ուրեք *հնարի* սատանայ զի և զբանբասեալն և կամ զբանբասօղսն կորուսցէ: - 325. Նոյնպէս և զորկրամոլութիւնն յաւելու միտքն *հնարելով* զանազան կերակուրս և ըմպելիս: - 564

**ՀՆԱՐՕՂ -** Հինգերորդ՝ զի խորամա՛նկ է և *հնարօղ*: - 218

**ՀՆԳԵԿԻՆ +** Սոքա *հնգեկին* կոչին երկինք. զի զյատկութիւնս երկնից ունին. և սոքօք լինին հնգետասան երկինք: - 183

**ՀՆԴԻԿ +** Սպառնական հոնին. և ճնուօղ *հնդիկն*: - 297. *Հնդիկք*: - 299. Իսկ որ զդպրութիւն գիտէ և գրով վարի՝ **բժան** ազգ է. այսինքն Եբրայացիք. Քաղդէացիք. Ասորիք. Պարսիկք. Մարք. *Հնդիկք*: Փիւնիկեցիք: - 299. Ճնուողական *հնդիկն*: - 299. Տպազիոն. կարմիր է. և գտանի ի տոպազէ՛ քաղաք ի *հնդիկս*: - 348. Շափիղայ՝ ծիրանագո՛յն է. և գտանի ի *հնդիկս*: - 348. Եղունգն, խարտեա՛շ է. և գտանի ի *հնդիկս*: - 349. Թոմաս ի *հնդիկս*: - 546. Որպէս ասեն վարդապետք, ի վերջին ծովէն սպանիու մինչև ի *հնդիկս* սակաւ աւուրց բացատ գոյ թէ վարեսցէ հողմ զնաւն: - 763

**ՀՆԴԿԱՅԻՆ +** Այլ և լինի յաւելի ի հրոյն ներգործութեանց սեաւ գոյն. որպէս *հնդկայինն* ի ջերմոյ արևուն լինի սեաւ գունով: - 245

**ՀՆԴԿԱՑԻ -** *Հնդկացւոցն* մորուս ո՛չ բուսանի վասն սաստիկ ջերմոյն: - 245

**ՀՆՁԱՆ +** *Հնձան* զխաչն ասէ՝ որ արեամբ ներկեցաւ: - 98. Իսկ երախայրին՝ որ է՛ կալոյ և *հնձանաց* առաջին չափն: - 357. Դարձեալ՝ ուռն և լծակն՝ խաչն. և Ողկոյզն անապական ճմլեալ ի վերայ խաչին *հնձանի*. և եղև ուրախարար գինի տրտմեցելոցս մեզօք: - 381. ...զի թէ աղտեղութիւն ինչ լինի խառնեալ արտաքուստ ի կալ կամ ի *հնձան*, սրբեսցին խղճմտանք մեր: - 654. Ի **բ** ամի թագաւորութեանն,

առաքեաց սուրբն իսահակ և ետ բերել զսերմնօրինէքն զկալոյ և *զհնձանին*...: - 658. Երեսունևը, Վասն *հնձանաց*. և դժոխոց. և ծխոյ. և անվախճան է հուրն. և անհանգիստ տանջանքն: - 661. Այգի և *հնձան* երբեմն զչարս օրինակէ՛ և երբեմն զբարիս...: - 748. Նոյնպէս և *հնձան* ասի չարաց և բարեաց: - 748. Եւ չարաց *հնձան* իմանի եռակի: - 748. Երկրորդ՝ կոչի *հնձան* ցասմանն աստուծոյ...: - 748. ...զի որպէս ի *հնձանի* ամբարեալ է ի գիտութիւնն աստուծոյ՝ մեղաւորացն պատիժ. որ հեղու ի վերայ նոցա...: - 748. Երրորդ՝ կոչի *հնձան* դժոխքն. ուր ամբարիշտքն ժողովին և ճմլին...: - 748. Այս է *հնձան* մեծ որ զամենայն մեղաւորս ընդունի յինքեան: - 748. Եւ այսպէս երեքին սոքա կոչին չարացն *հնձան*: - 748. Նմանապէս և բարեացն *հնձան* ասի եռակի: - 748. Նախ կոչի *հնձան* նախածանօթ տեսութիւնն աստուծոյ. ուր ընտրէ՛ և ժողովէ՛ զսուրբս իւր յառաջ քան զլինիլն իւրեանց. - 748. Երկրորդ կոչի *հնձան* արքայութիւնն երկնից. ուր ժողովին պսակք և փառք զանազան հանգստեան սրբոց զոր պատրաստեալ է աստուած սիրելեաց իւրոց ըստ առաքելոյ: - 748-749. Երրորդ **_հնձան_ է իւրաքանչիւր սիրտ և անձինք արդարոց. որ հաստատեալ է հաւատով յորթն ճշմարիտ և պտղաբերէ՛ զողկոյզ բարեաց. և չարչարանօք ճմլէ՛ յինքեան զուրախարարն գինի հրեշտակաց և մարդկան. և այսոքիկ բարեա՛ցն են _հնձան_:** - 749. Եօթներորդ՝ կոչի *հնձան* եկեղեցի սուրբ. ուր ամենայն առաքինութիւնք մեր ժողովին. ու ճմլէ ապաշխարութեամբ և բաշխէ՛ զգինի շնորհաց...: - 749. Ութերորդ՝ *հնձան* կոչի և աւազանն սուրբ. զի ի նմա ճմլին և կորնչին ամենայն մեղք մեր...: - 749. Իններորդ՝ կոչի *հնձան* և խաչն փրկական. յորում ողկոյզն անապական ճմլեցաւ և ետ մեզ ուրախարար գինի զանապական արիւնն իւր. - 749. Տասներորդ, **ասի _հնձան_ և կտակարանքն սուրբ. ուր հին և նոր իմաստութիւն ժողովեցաւ ի խառնարանին գինւոյ. յորմէ բաժակէ՛ արբին առաքեալքն ի սուրբ վերնատունն. և արբուցին ամենայն տիեզերաց**. զորմէ ասէ մարգարէն «բաժակ քո անապակ արբեցոյց զիս»; - 749. Մետասաներորդ, *հնձան* կոչի և հաւատն սուրբ. զի ի նա՛ հաւաքի ամենայն բան և գործք մեր. և ճմլեալ այսինքն քննեալ՝ լինի գինի ուրախարար աստուծոյ և հրեշտակաց: - 749. Երկոտասաներորդ, *հնձան* կոչի և վերջին օր դատաստանին. զի անդ հաւաքին ամենայն բարիք և չարք և գործք նոցին. և չարքն ճմլեալ արտաքսին ի տանջանս, և բարիքն ի կեանս: - 749

**ՀՆՁԵՄ +** ...զի և մշակն յետ սերմանելոյն իսկոյն ո՛չ *հնձէ*. այլ համբերէ մինչ ի հասումն պտղոյն: - 520. Դարձեալ՝ մարգարէքն սերմանեցին. և առաքեալքն *հնձեցին*: - 643. Այս կեանքս է սերմանելոյ, և անդ *հնձելոյ* և ժողովելոյ: - 704. Եւ զի ժամանա՛կ է լինելոյ և ժամանակ քակելոյ, յայլում ժամու և ո՛չ ի նոյնն սերմանի և *հնձի*: - 780

**ՀՆՈՑ +** Երկրորդ ժամն է՛ օրհնութիւն երից մանկանցն ի դէմս որդւոյ. որ նա՛ էջ ի մէջ *հնոցի* աշխարհիս. և փրկեաց զմեզ: - 621. Որպիսութեան կրիցն չափ ո՛չ է անտի տանջանացն. զի բոլոր աստի նեղութիւնս համեմատեալ այնմ՝ է՛ որպէս կաթիլ մի ի ծովէ և կայծ մի ի *հնոցէ*: - 751. Զի ասին՝ արտաքոյ կիզանիլ հրով որպէս խոտ ի *հնոցի*. և ի ներքուստ ցրտանան...: - 752

**ՀՆՈՒԹԻՒՆ +** Օր ասի **ժե** կերպիւ... Առաջինն է հնութեան: - 195

**ՀՆՉԵՄ +** Նախ՝ զի *հնչէ՛* ձայն: - 177. Արդ *հնչէ* զձայնն ըստ ինքեան միայն. և ծնանի զբանն շարադրեալ ընդ բաղաձայնս: - 177. Այլ և *հնչեն* հաւք զանազան ձայնս: - 197. Այն որ յԱրևելից *հնչէ*, առ հասարակ Եւրոսք կոչին: - 205. Իսկ որ ի Հարաւո՛յ *հնչէ*, հասարակ Նօտոսք կոչին: - 205. Որ մերձ ի հիւսիս *հնչէ*, Կիկիաս կոչի. չո՛ր է և ցամաքեցուցիչ: - 205. Եւ որ մերձ ի հարաւ *հնչէ*, Եւրոս կոչի. գէ՛ճ է. և տաղատարա՛փ բերէ: - 205. Եւ որոց ձայն յռնգունսն *հնչէ*, ստաբանք են և չարախնդացք: - 247. Ասեն վարդապետք եթէ հողմն *հնչեաց* և ցրուեաց զաշտարակն. զի մի՛ փլուցեալ վնասեսցէ զմարդիկ: - 298. Յայս միտս ի բերել ընծային ի սեղանն՝ է դասք քահանայից կան ի սպասու. և երգեն եղանակաւ. և քշոց և բուրվառ և զանգակ *հնչէ*: - 431. Ձայնքն *հնչեցին*: - 456. Նոյնպէս և քահանայքն *հնչէին* ի հինն. որպէս այժմ ի յեկեղեցի ժողովեն ի յաղօթս հանապազորդ: - 618. Եւ ի կիրակէ **գ** փող *հնչէ* ի գիշերի: - 618. և յեօթներորդ օրն ի եօթն նուագին բարձրաձայն փողովք *հնչեցին* քահանայքն. և ժողովուրդն բարձրաձայն աղաղակեաց. յորմէ կործանեցաւ եօթնապատեան պարիսպն երիքովի: - 627. Եւ ընդ ոլորտս *հնչեցաւ* առաքելոցն քարոզութեամբ: - 645. Պղինձ *հնչօղ* ձայնն ի յերգս աստուծոյ պարապեալ: - 645. Եւ վերջոյ ի հիւսիս. որ ցուցանէ զշնորհն որ ի հինն սիովնէ *հնչեաց* յեկեղեցիս հեթանոսաց...: - 674

**ՀՆՉԵՑՈՒՑԱՆԵՄ +** Որպէս պատմի ի դատաւորքն. յորժամ գեդէոն զփողսն *հնչեցոյց*, այլազգիքն ինքեանք զինքեանս ի սուր մաշեցին ի գիշերի: - 238. ուր ազգին բունն է և գլուխ՝ ա՛նդ *հնչեցուցանէ* որ ազգին առաջնորդն է: - 713

**ՀՆՉՈՒՄՆ +** Անհաւասա՛ր է պարգևն ըստ *հնչման* ձայնի: - 102. Եւ հոգին զայրացօղ վասն *հնչման*: - 105. Որպէս ո՛չ արտաբերի *հնչումն* ձայնական գործեաց և ո՛չ փոփոխէ զօդն որ ի մէջն: -145. Իսկ ի չորրոյն՝

հողմունք և *հնչմունք* զանազանք. որոտք և փայլատակմունք. կայծ. և այլն որպէս ցուցաւ: - 204. Հինգերորդ՝ հանգիստն կատարեալ հոգւով և մարմնով. որ է՛ փողոց *հնչմունք*. ազատութիւն յապականութեանց. ամ թողութեան և իւրաքանչիւր ուրուք ի ստացուածս իւր դարձումն. որ է՛ գործոց հատուցումն: - 372. Շարժումն ոմանք զյափշտակելն ասեն. և այլք հողմոյ և երկրի. և կէսք *զհնչումն* հրեշտակաց: - 445. Իսկ թէ զի՞նչ է յորժամ վերընծայի խորհուրդն պաշտմամբ և *հնչմամբ* ժամահարաց: - 645. Սա՛ է ձորն այն յորում լսելի եղև *հնչումն* տապարին և ա՛յլ գործեաց: - 756

**ՀՈԳ +** Եօթներորդ՝ զի **գ** տեսակ *հոգոց* բացայայտեսցին. որ է՛ անկատար՝ և միջակ՝ և կատարեալ: - 231. Երկրորդ՝ զբոյս ախտից և զայլ *հոգս* պակա՛ս ունի: - 251. Երկրորդ՝ բոյս մեղաց և *հոգ* կենցաղոյս ի սիրտն բազո՛ւմ է: - 251. Վեցերորդիւն զամենայն *հոգս* մեր ընկենուլ առ աստուած: - 492. Եւ յորժամ միտքն երթայ յաշխարհական *հոգս* թէ զինչ կերիցուք և արբցուք, է՛ ներելի: - 620

***ՀՈԳ ՏԱՆԵԼ +*** Ասեն վարդապետք թէ՝ ա՛յն չափ *հոգս տարաւ* աստուած ի ստեղծանել զճանճս և զմրջմունս որքան հրեշտակաց: - 217. Այլ զպիտանիս եկեղեցւոյ և վարդապետաց ոգէշահ խնդիր հաւատոյ միա՛յն *հոգ տարեալ*: - 772

**ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ +** Ստե՞ղծ աստուած *հոգաբարձութեամբ* զճանճս և զմժեղս և զայլսն, թէ ի գոյի՞ց պատահեցան: - 217. *Հոգաբարձութեամբ* նայիլ ի լուծումն խնդրոյս աղաչեմ զհարազատդ մեր: - 776.

**ՀՈԳԱՄ +** Զի նա գլուխ է մեր՝ և մեք անդամք. յորժամ տեսանէ զմեզ ի մեղս՝ *հոգա՛յ* և ցաւի վասն մեր: - 48. Եւ այս ցոյցք յուսո՛յ է վասն հանդերձելոյն *հոգալ* և պատրաստել: - 289. Ասեմք թէ՝ մեզ պա՛րտ է ի մտի պահել և ի լեզուի զմեղս. և ցաւիլ և *հոգալ* հանապազ վասն անցեալ մեղացն և չգործելոյ բարեացն: - 433. Իսկ ի նորս առ մեզ, Սակաւ ինչ *հոգացեալ* զեօթնիցս, այլ ութերորդին փոյթ տարեալ դարուց աւանդապահք եկեղեցոյ, կարգեցին ութն կանոնս **ըը** գուբղայիւ: - 627

**ՀՈԳԵԼԻՑ +** Եւ դարձեալ ի ճառս անառակին և կորուսեալ դրամին և մոլորեալ միոյ ոչխարին և անկելոյն ի ձեռս աւազակին, զնոյնս ուսուցանեն մեզ հարքն *հոգելիցք* արտայայտել: - 775

**ՀՈԳԵԽԱՌՆԵԼ +** Եւ զայսոսիկ *հոգէխառնեաց* դաւիթ և ուսոյց երգեցողացն: - 640

**ՀՈԳԵԿԱՆ (ՀՈԳԷԿԱՆ) +** Եւ ամենայն ծառք զգուտ բարիս *հոգէկանս*: - 222. Երկրորդ՝ *հոգեկան*. որ յաւազանէն ծնանիմք ի հոգւոյն սրբոյ. այսինքն յղացեալք ի բանէն հաւատոյ՝ ծնանիմք յորդիս աստուծոյ: - 308. Եօթներորդ՝ ըստ ուսման. որպէս աշակերտք ծնունդք կոչին վարժողաց. եթէ ի մարմնականս. և եթէ ի *հոգեկանս*...: - 308. Այլ գիտելի է, զի **դ** սեռիւք որոշի կապ բանականացս. այսինքն *հոգեկան* և մարմնական և միջակօրէն: - 317. *Հոգեկանն* բաժանի ի չորս: - 317. Երկրորդ՝ զի նոցա հատուցմունքն մարմնական էր, իսկ մերս *հոգեկա՛ն* է: - 337. Այլ մեղքն *հոգեկան* նոյն է աստ և անդ. որպէս շնալ և գողանալ: - 369. Երկոտասաներորդ՝ փօշտանկն. որ հատեա՛լ է աղիքն և ի դուր թափեալ. նշանակ *հոգեկան* ցաւոց ի մարմինն երևեալ: - 371. Դարձեալ՝ Նայիլ և Հայիլ՝ է՛ *հոգեկան*. ըստ այնմ «հայեա՛ց յանձն քո»: - 407. Վասն որոյ և տէրն յորժամ ասաց զցանկութիւնն շնութիւն, յաւել ի վերայ թէ՝ «ի սրտի իւրում». զի մի՛ կարծեսցի մարմնական շնութիւն, այլ *հոգէկան* և մտաւոր. ապա ուրեմն կատարեալ է մեղք մտացն: - 556. Եւ ոմանք ասեն թէ յեօթանց անտի հինգն մարմնականք են և երկուքն *հոգեկանք*: - 559. Եւ ոմանք զեկուսն միա՛յն ասեն մարմնական. որ է՛ որկորստութիւն և բղջախոհութիւն. և այլքն ամենայն *հոգեկան*: - 559. Այլ ես ասեմ թէ յեօթանց անտի երկուքն պարզ *հոգեկան* են. այսինքն հպարտութիւն և նախանձ: - 559. Եւ երեքն *հոգեկան*. զի հոգին եռամասնեա՛յ է: - 611

**ՀՈԳԵՄԱՐՏ կմ ՀՈԳԷՄԱՐՏ +** Այս առ *հոգէմարտսն*: - 30. Եւ յաւուրս մեծին թէոդոսի **ճծք** որ ի կոստանդինուպօլիս ընդ դէմ *հոգէմարտին* մակեդոնի: - 547. Տասներորդ՝ վասն *հոգեմարտին* մակեդոնի որ հայհոյէր զհոգին սուրբ նուազ ասելով քան զհայր և զորդի, ո՛չ թողցի նմա: - 566. Եւ անդ յաւելին ընդ դէմ *հոգէմարտին* զայս, «և հոգիդ սուրբ որ ի փառս աստուած որ ընդ հօր ամէն»: - 635

**ՀՈԳԵՆՈՒԱԳ (ՀՈԳԷՆՈՒԱԳ) +** Մեծ է հայր. մեծ է և որդի. անբովանդակելի է և հոգին սուրբ. ըստ *հոգէնըւագին* որ ասէ, «Մեծ է տէր մեր. և մեծ է զօրութիւն նորա». որ է քրիստոս աստուծոյ զօրութիւն: - 56

**ՀՈԳԵՊԷՍ կմ ՀՈԳԷՊԷՍ +** Իսկ գնդակ որ է կողմնաւոր՝ շարժի հոգին, յորժամ բնականապէս լուսափայլի յաստուածային գիտութիւնս տեսութեամբ և մտածութեամբ. և այնպէս *հոգէպէս* ի յաստուած միաւորի. որպէս աշակերտաց առաքելոց և մարգարէից: - 142. Այլ *հոգէպէս* որպէս ծաղիկք երկրի, նոյնպէս աստեղք երկնից են զարդ: - 213. *Հոգեպէս* նշանակեն ի մեզ զե հանգիստ: - 372. Եւ գալստեան հոգւոյն՝ *հոգեպէս* պահօք և հոգևոր երգով տօնեմք: - 373. Այլ *հոգեպէս*՝ նաշիին է՛ մարմնական նուէրքն. և կամ չարչարանք մարմնոյ որ ի տօնս ճգնիմք...: - 375. Նոյնպէս քրիստոսիւ տեսանեմք զհայր աստուած, և առնեմք զկամս նորա. և կերակրիմք և զմայլիմք *հոգէպէս*: - 532. Եւ զի չորք են ձայնք բնականք ըստ չորից

տարերց, ցուցցի *հոգեպէս*: - 640. Յաղագս որոյ կացոյց հոգևոր իշխան զքահանայս. զի *հոգէպէս* ուղղեսցեն զմարդիկ և արգելցեն ի մեղաց: - 537-538. Ո՛չ նոյնն մարմնապէս, այլ նմանն *հոգէպէս*. ծարաւումն, խաւարն, հրախառն կարկուտն, ժահահոտն, և այլն ըստ կարգի: -751. Ո՛չ ի յամիսս անցաւոր. և ո՛չ ի յամն մշտնջենաւոր. զի աստ մարմնապէս և անդ *հոգէպէս*: - 768. Այլ և ոմանք ասեն և է գոլ սեանց ընդ շինեալ տունն ի սողոմոնէ. կանգնեալ սիւնս է մարմնապէս. թէպէտ ա՛յլ է իմացումն *հոգէպէս*: - 788

**ՅՈԳԵՎԱՐ (ՅՈԳԷՎԱՐ) +** Վերջին օծումն է խորհուրդ եկեղեցւոյ. որ տուեալ լինի հիւանդաց ի *հոգէվարի* օրն. յաչքն, յականջն, ի բերանն, ի ձեռքն, ի կուշտն, յոտից ներբանքն: - 604

**ՅՈԳԵՒՈՐ +** Վեցերորդ՝ ասեն հակառակքն, թէ՝ չարն ոչ է յաստուծոյ, ապա աստուած ո՛չ ճանաչէ զչարն. որպէս մեք նմանեաւ զնմանն ճանաչեմք. այսինքն հոգւով *զհոգևորս*, և մարմով զմարմնաւորս: - 17. Եւ այնպիսիքն տրամաբանել ո՛չ կարեն վասն *հոգևորին*. որպէս ի ծնէ կոյրն վասն գունոց, քանզի ասեն վարդապետք՝ աստուած լոյս է ո՛չ մարմնոց, այլ մտաց. զոր թէ ոք ո՛չ տեսանէ՝ կո՛յր է: - 32. Չորրորդ՝ *հոգևոր* կենդանութիւն է յաստուծոյ...: - 57. Եւ ո՛չ ասի շնչաւոր վասն շնչաւոր մարմնոյն. այլ ամենևին *հոգևոր*: - 78. Եւ որպէս այս ո՛չ ասի, նոյնպէս և ո՛չ է հնար երկատելով ասել զքրիստոս անեղ և եղական... *Յոգևոր* և շնչաւոր: - 78. Եւ զի նա *հոգևոր* ծնեալ՝ ծնաւ ըստ մարմնոյ. զի դու մարմնաւոր ծնեալ՝ ծնցիս վերստին ըստ հոգւոյ: - 107. Իսկ արժանաւորաց *զհոգևոր* շնորհս և զհաւատս աստ, և ի հանդերձեալն զփառս անվախճանս: - 127. Երկրորդքն՝ զօրացուցանեն՝ ի գործս սքանչելեաց և *հոգևոր* պատերազմաց: - 136. Եւ խօսի հրեշտակն ընդ հրեշտակի. ցուցանելով նմա զտեսութիւն մտացն միջնորդութեամբ *հոգևոր* իմն ճառագայթիւք. և այսպէս խօսին հրեշտակք ընդ միմեանս: - 145. Անկումն դիւաց կրկին էր. այսինքն *հոգեւոր* և տեղական: - 146. ***Յոգևորն* այն է՝ զի անկաւ անձնիշխան կամօք ի բարւոյն ի չարն, ի լուսոյն ի խաւարն, ի գիտութենէն յանգիտութիւն, յանմեղութենէն ի մեղս, յերանութենէն ի թշուառութիւն, ի սիրոյն յատելութիւն**: - 146. Յինգերորդ՝ զի *հոգևոր* բնութիւնն միանգամ միայն է շրջելի. վասն զի բոլորովին շրջէ զինքն՝ զոր ո՛չ առնէ մարդն. զի մարմինն միշտ մարտնչի ընդ հոգին. որպէս յառաջիկայդ ասի **լբ** գլուխն: - 151. Եւ միւսն *հոգևոր*. յորում *հոգևոր* գոյացութիւնք. այսինքն հրեշտակք բնակին: - 180. Չորրորդ՝ *հոգևոր* բարութիւնքն և վարձք սրբոցն կոչին երկինք...: - 183. Մինն պարզ և զուտ բարին ներքոյ և արտաքոյ. որպէս առաքինութիւն. և *հոգևոր* գործն. յայսպիսիքս հրամայէ՛ մեզ մերձենալ: - 224. Յերկրորդն՝ *զհոգևոր* ստեղծւածսն որոշեաց ի մարմնաւորէն: - 227. Այսմ դնի պատճառ մարմնաւոր և հոգևոր: - 234. Եւ որպէս այս, նոյնպէս ի *հոգևորն*. վասն որոյ մովսէս ցանկայր տեսանել զերեսս աստուծոյ: - 234. Երրորդ՝ զի զաստուածային բանս և *զհոգևորս* ականջն միա՛յն լսէ: - 235. Իններորդ՝ զի և ի *հոգևորն* փոքունք զմեծամեծաց անուանս կոչէին ինքեանց ի մոլորումն մարդկան. որպէս սիմոն կախարդն ասէր զինքենէ՛ թէ քրիստոսն իցէ. մինչև յանդիմանեցաւ ի պետրոսէ: - 238. Արդ յա՛յտ է թէ որ գործ չառնէ *հոգևոր* կամ մարմնաւոր՝ վա՛տ ասի: - 251. Եւ էգն *հոգևորի* յետ **ձ** աւուրն՝ որպէս ասացաք զպատճառն վասն տեղւոյն ցրտութեան որ է՛ ձախ կողմն արգանդին. որ ցուրտ գոլով վասն փայծաղանն՝ յապաղէ՛ զկազմուած նիւթոյն ի կրկնապատիկ ժամանակս **ձ** աւուրց: - 261. Չորրորդ՝ և կատարեալ իմաստութիւն է՝ իմացմանն հպիլ յաստուած և յաստուածայինս ի *հոգևոր* և յիմանալի կեանս: - 269. Այլ և եկեղեցի սուրբ շինեալ ի քրիստոսէ *հոգևոր* տապան մեզ ի մէջ ծովու աշխարհիս՝ որ զհոգիս մեր փրկէ ի ջուրց մեղաց: - 293. Երրորդ՝ զի զանարիւն պատարագն մատուցանէ որ *հոգևորն* է և ճշմարտութիւնն: - 296. Եօթներորդ՝ անդրանիկք են իշխանք *հոգևորք*, վերակացուք և խնամողք այլ հոգւոցն. որպէս քահանայք, ուսուցիչք, և այլք. վասն որոյ երիցունք կոչին: - 309. Յինգերորդ՝ զի ունի զվերոյ ասացեալն խորհուրդ տասնեակ թւով. վասն որոյ յիրաւի անդրանիկն պատուեալ լինէր թէ ի *հոգևորն* և թէ ի մարմնաւորն: - 310. Յինգերորդ՝ նշանակէ զկրկին ծնունդս մարդոյ. առաջինն մարմնաւոր և խոտելի. և վերջինն *հոգևոր* և ընտրելի: - 310. Նոյնպէս և մարմնական կապովն, զի ազգակից է մեզ և փեսայ *հոգևոր*. և ցանկամք նմա ակն ունելով վարձուցն հատուցման: - 318. Երկրորդ՝ այն մարմնական, և այս *հոգևոր* փրկութիւն: - 353. Երրորդ՝ անդ նկարեալ էր մեր *հոգևորն*. և աստ բացայայտեալ խորհուրդ տնօրէնութեան քրիստոսի աստուծոյ մերոյ: - 353. Երրորդ՝ այն մարմնաւոր. և աստ մարմնաւոր և *հոգևոր*. և անդ միայն *հոգևոր*: - 355. Այսինքն զամենայն յաջողուածս *հոգևոր* և մարմնաւոր, և զմասն անմահութեան կենաց յուսոյն, ո՛չ վասն մեր արժանաւորութեան համարել. այլ բարութեան և ողորմութեանն աստուծոյ: - 360. Կնդրուկ անուշահոտ բուրեալ. և Գինի ուրախարար ի զմայլումն *հոգևոր*: - 361. Վասն է՞ր զերեքեան պատարագս ունիմք մեք... Առաջինն է *հոգևոր* ...Միջինն *հոգևոր* և մարմնաւոր: - 362. Իսկ *հոգևոր* ծորումն է՛ եռակի: - 368. Ոմանք ասեն՝ գործ մեղաց մնաց նոյն. այլ գործ սրբութեանն փոխեցաւ ի *հոգևորն*: - 369. Եւ գալստեան հոգւոյն՝ հոգեպէս պահօք և *հոգևոր* երգով տօնեմք: - 373. և Գինին ուրախութիւնն *հոգևոր*: - 374. և Իւղն շնորհք *հոգևորք*: - 375. Վասն զի մարմնոյ

զինուորն ի ամեայ էր. զե ամն յաւել ի *հոգևոր* զինուորսն վասն **ե** զգայութեանցն: - 379. Վասն է՞ր առաջին մարմնակա՛ն էր օրէնք և օրհնութիւն, և վերջինս *հոգևոր* ամենայն: - 395. Ըստ այնմ նախ ըզմարմնաւոր օրէնս ետ, և ապա *զհոգևորն*: - 395. Երկրորդ՝ ի *հոգևոր* կենաց դրախտէն անկաք ի մարմնաւորս. և յայսմանէ դառնամք ի *հոգևորսն*: - 395. Իսկ մի այր և բազում հաւատք և բազում աստուածք՝ շնութիւն է *հոգևոր*: - 401. Օրհնութիւնն աստուծոյ բաժանի յերկուս. որ է՛ երկնաւորաց և երկրաւորաց. որ է՛ *հոգևոր* և մարմնաւոր. անցաւոր և անանց: - 403. Ա՛րդ՝ զերկու օրհնութիւնս **բ** կտակօք բաշխեաց մարդկան. զմարմնոյ աճումն և ընչից՝ ետ իսրայէլի. և *զհոգւոյ* աճումն կուսութեամբ և աղքատութեամբ՝ ետ քրիստոնէից: - 403. Երկրորդ՝ *հոգևորին* շնորհակալութիւն, և մարմնաւորին գոհութիւն: - 406. Նա՛խ՝ զի կտակովն զմարմնաւորքն կարգաւորեն, և օրհնութեամբն *զհոգևորսն*: - 408. Երրորդ՝ զի սկսեալ ի մարմնաւորն, վախճանի ի *հոգևորն*: - 408. Չորրորդ՝ մարմնաւոր մահն վախճան է մարմնոյ կենաց և սկիզբն *հոգևորին*. վասն այն օրհնէ: - 408-409. Հինգերորդ՝ ցուցանէ թէ մարմնաւոր օրհնացն վախճան *հոգևոր* և օրհնութիւնն է որ եղև քրիստոսիւ: - 409. Տասներորդ՝ քրիստոս փեսայ կոչի և եկեղեցի հարսն *հոգևոր*. և նա՛ գլուխ և մեք անդամք և ժառանգակիցք: - 480. Եւ աստ գիտելի է, զի կրկին է թլփատութիւն. մարմնաւոր և *հոգևոր*: - 486. Եւ որպէս զմարմնաւոր թլփատութիւնն աւանդեաց աբրահամու, նոյնպէս *զհոգևորն* որ է՛ թլփատութիւն սրտի՝ հրամայեաց ի ձեռն մովսէսի...: - 486. Եւ քրիստոս ո՛չ միայն օրինակաւն, այլ և *հոգևորաւն* թլփատեցաւ: - 486. Լայնութիւն *հոգևոր* սիրոյ: - 493. Եւ շնորհականն *հոգևոր*. ուր սկսանին ամենայն տօնք սրբոց **զ** ժամով յառաջ քան զբնական օրն: - 508. Նոյնպէս ի քրիստոսէ ի մեզ իջանէ կենդանութիւն *հոգևոր*, և զօրութիւն, և առողջութիւն, և շարժութիւն յօդոց և խաղալեաց ի ձեռն հաւատոյն շաղկապութեան: - 532. Ատամունք՝ վարդապետք և մեկնիչք և ծասկիչք *հոգևոր* կերակրոյն: - 534. Իսկ հինգերորդ մարգարէութիւն է *հոգևոր* և աստուածային գիտութեամբ. զոր յայտնութեամբ սուրբ հոգւոյն ուսեալք խօսին առ ի զգուշութիւն մարդկան ի *հոգևոր* շինուածս: - 536. Այլ ա՛րդ՝ կրկին է իշխանութիւն. այսինքն *հոգևոր* և մարմնաւոր. վասն զի կրկին է մարդն. հոգի և մարմին: - 537. Յաղագս որոյ կացոյց *հոգևոր* իշխան զքահանայս. զի հոգէպէս ուղղեսցեն զմարդիկ և արգելցեն ի մեղաց: - 537-538. Իսկ *հոգևորին* հնազանդիմք կամաւ որպէս աստուծոյ: - 538. Իսկ *հոգևորն* իշխէ՛ ի մերձաւորս և ի հեռաւորս: - 538. Իսկ *հոգևորն* իշխէ՛ ի հոգի և ի մարմին: - 538. Եւ այլ բազում և զանազան ազգապղծութիւն ընդ *հոգևորս* և ընդ մարմնաւորս. երկու եղբարց և **բ** քերց. և ընդ քերց *հոգևոր* մօր. և անխտիր ի բազմանկողինս և այլս բազումս որ զազիր է խօսելոյ օրէնքէ նոցա: - 552. Իսկ անօրէնութիւն՝ հոգւոյն է՛. զի օրէնքն *հոգևո՛ր* են: - 555. Վասն այն այլ վարդապետք կոչեն զայս ախտ՝ ծուլութիւն. զի ծուլութիւնն յերկու իրաց եղև. մին որ յետս դառնայ ի *հոգևոր* բարւոյն և ծանրանայ ի գործելն. այսինքն պահել՝ աղօթել և այլն. և ըստ այսմ կոչի տրտմութիւն: - 559. Խաղաղութիւնն արտաքսէ՛ զբղջախոհութիւնն. քանզի ընդ ճաշակելն *զհոգևորն* անհամանայ նմա ամենայն մարմնաւոր: - 583. Աստուածային տրտմութիւն և խնդութիւնն *հոգևո՛ր* է և բարի: - 584. ...և հետևի նմա կեանք և խնդութիւն *հոգևոր*...: - 584. Իսկ գործ ողորմութեան են չորեքտասան. այսինքն եօթն մարմնաւոր և եօթն *հոգևոր*: - 584. Իսկ գործ *հոգևոր* ողորմութեան են այսոքիկ: - 585. Երրորդն հաղորդութիւնն. որ է՛ վերըստին զօրացելոցն ի պատերազմի, և *հոգևոր* կերակուր: - 587. Ութերորդ, զի թէ զզենումն կենդանեաց ո՛չ ունին հրաման զենուլ ազգ կանանց որ է՛ խտրութիւն մարմնաւոր սրբութեանց. զիա՞րդ պատշաճի տալ հրաման կանանց ազգի մերձենալ ի կարգ *հոգևոր* սրբութեան: - 589. Նա՛խ՝ զի մարմնաւոր ծնունդն նշանա՛կ է *հոգևոր* ծննդեանն. և որպէս մի է մարմնաւոր ծնունդն, այսպէս մի է և *հոգևորն*: - 590. Ա՛րդ մկրտեալն ի քրիստոս՝ վասն *հոգևոր* հօրն ազատի ի *հոգևոր* պատժոյն. և վասն մարմնաւոր հօրն կրէ՛ զմարմնաւոր պատիժն: - 592. ...**զի բազում արգելմունք գոն պսակին. որպէս ազգակցութիւնն *հոգևոր* կամ մարմնաւոր. կամ տկարութիւն բնութեանն. կամ պոռնկութիւնն. կամ այսահարութիւնն. կամ ծառայութիւնն. կամ բռնութեամբն. կամ այլ ինչ այսպիսի պատճառ. որով բաժանին այրն և կինն:** - 610. Զի է՛ շաղկապ *հոգևոր*. այսինքն սրտիցն. և է՛ շաղկապ մարմնաւոր՝ խառնմամբ սերիցն: - 610. Իսկ և մահն կրկին է, *հոգևոր* և մարմնաւոր: - 610. *Յոգևոր* մահուամբն արձակի *հոգևոր* շաղկապն: - 610. Գիտելի է, զի նախ առաջին բաժանի ազգն ի բնականն՝ և յօրինացն՝ և ի *հոգևորն*: - 611. Ա՛րդ՝ բնականն է մարմնոյն. և օրինացն խնամութեամբ. և *հոգևորն* որդեգրութեամբ. - 611. Իսկ *հոգևոր* ազգն է կրկին. նախ աւազանին ծննդեամբ. և երկրորդն որդեգրութեամբ. - 611. ...եթէ ի *հոգեւոր* ազգն ո՛չ լինի խնամութիւն մինչ ի **գ** ծնունդն այսպէս: - 611. Վասն որոյ յօտար ազգէ լինին խնամիք. և յօտարէն *հոգևոր* որդիք: - 612. Իսկ ի նորս փոխեցաւ ի *հոգևոր* օրհնութիւն և ծնունդ. և զմարմնաւորն ի սկզբան չափաւորն կապեաց. որպէս ադամ և եւա: - 613. Այլ և սա՛ մայր կոչի *հոգևոր* ծննդոցս. և մեք մայր և ծնօղ *հոգևոր* զաւակացս բարեաց: - 614. Այլ գիտելի է, զի **գ** է արտասուքն *հոգևոր*.

մին վասն մեղաց. որ է՛ ապաշխարութիւն: - 620. Այսպէս *հոգևոր* սակաւ ինչ այսօր ուրախանամք և պատրաստեմք զմեզ: - 646. Նախ՝ զի կրկին պարգևս ետ մեզ. այսինքն *հոգևոր* և մարմնաւոր...: - 655. Եօթնեժ, Վասն առաջին յարութեանն *հոգևոր*: - 660. ...և մարդն կեայ *հոգևոր* և աստուածային...: - 668. ...զոյգ և ի միասին մտցեն ի *հոգևոր* կեանքն: - 669. Եւ դարձեալ, ի *հոգևորն* մերկ եկն և սուրբ հանդերձիւ զգեցեալ գնաց: - 671. ...Նոյնպէս և աստ ի մարտ մտանէ ընդ օդային այսոց՝ նախ օձանի *հոգևոր* հիղովն: - 672. ...զի որպէս *հոգևոր* սիրով կեցաք. նոյնպէս սիրով բաժանիմք. և թէ իցէ քէն ինչ, զայն շնորհմեք միմեանց: - 673. Եւ յետ այնորիկ ի հարաւ. զի հարաւով հողմոյ սուրբ հոգւոյն՝ արար մեզ զարուն *հոգևոր* ազգի հաւատացելոցս...: - 673. ...Նոյնպէս յերկրորդ օրն պարտ է գալ կանանց նախ ի գերեզմանն, և ապա արանց. և *հոգևոր* տեսութեամբ ուրախանալ: - 680. ...այսօր *հոգևոր* ջրով դարձեալ ոռոգանեմք, զի բուսցի ի գարնանաշարժ յարութեանն: - 680. ...Նոյնպէս և մեք *ըզհոգևոր* դեղն կենաց յերեկեան աւուրն մատուցաք մեռելոյն...: - 680. ...Նոյնպէս և սուրբքն *հոգևոր* հա՛րսն են քրիստոսի...: - 681. ...զոյգ և ի միասին մտցեն ի *հոգևոր* կեանքն որպէս ասացաւ ի վերոյ: - 691. Առաջին յարութիւնն է՛ *հոգևոր*, և երկրորդն մարմնաւոր: - 710. Այս քան վասն հոգևոր և առաջին յարութեանն: - 713. Եւ զբանս օդն ունի. եթէ *հոգևոր* եթէ մարմնաւոր. զի օդով խօսեցաք: - 714. Այսպէս և *հոգևորն*: - 721. ...և այս բառնի ի հոգւոյն և ընդունի ուրախութիւն և տարփումն *հոգևոր* առ աստուած. - 722. Երրորդ պակասութիւն է մարմնոյն՝ զի ծա՛նր է և ծոյլ յամենայն գործս *հոգևորս*: - 722. Ո՛չ յարիցեն ամբարիշտք ի յարութիւնս *հոգևորս*. այսինքն ի մեղաց ի շնորհքն. այլ յառնեն մարմնով: - 724. Եւ կշիռ ողորմութեանն ըստ ինքեան մարմնաւորի և հոգևորի. զի աստ մարմնաւորն և անդ *հոգևորն* կշռի և միտէ՛: - 746. Սա՛ է մայր մեր եկեղեցի որ *հոգևոր* որդիս աստուծոյ օրըստօրէ ծնանի. որ հասեալ ժառանգութեանն. ի բաց տանելով զաղախինն և զորդի նորա: - 756. Դարձեալ, յերես անկեալ արտասուալի դիմօք հողս և փոշի՝ սուրբ գարշապարաց ծերոց, աղերսեմ ի խորոց սրտէ զհարազատ գութ հարց և եղբարց մեր *հոգևորաց*: - 773. ...մարմնով մեռելոցն անթիւ օճիրս ստախօսութեան գործէր. զանտի կենաց զյարութեան յուսոյ և զհաւատուցմանց ըստ գործոց՝ բառնալով. զերկիւղ դժոխոց և զսէր արքայութեան. և զամենայն ինչ որ նմանէ այսմ *հոգևոր* բարութեան: - 775. Երրորդ, զի հաւատն է լուսաւորութիւն մտաց հեղեալ յաստուծոյ ի ճանաչել *զհոգևոր* բարիսն. իսկ դևք ո՛չ ունին զլոյս մտաց և ո՛չ զհեղումն շնորհաց. վասն որոյ ո՛չ ճանաչեն *զհոգևոր* բարիս: - 784

**ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ +** Վեցերորդ, ոմանք ասեն թէ պարգևս խնդրէր *հոգևորական*. վասն այն ասէ ելանեմ առ հայր իմ և իջանէ հոգին և լնու զծեզ ծրի պարգևօք. այժմ յաղագս այդորիկ մի՛ մերձենար: - 517

**ՀՈԳԵՒՈՐԱՊԷՍ +** Ասեմք եթէ՝ զոգ և մազօզն՝ *հոգևորապէս* իմացեալ լինին ամենայն հալածօղք եկեղեցւոյ...: - 28. Զոր և այժմ օրինա՛կ է առ մեզ սարկաւագն. զոր հոգի կոչէին վասն *հոգևորապէս* խօսելոյն: - 59. Իսկ մեզ *հոգևորապէս* ետ պարգև զբնակութիւնս երկնից. ուստի մերժեցաւ հակառակորդն մեր սատանայ...: - 306. Երկիւղ է *հոգևորապէս* փախուստ ի չարէն. զի մի՛ կորուսանիցէ զայն զոր սիրէ: - 582. Վասն որոյ նախ քահանայն օրհնէ *հոգևորապէս*, և ապա մարմնաւորապէս զուգակցին: - 610. Ապա ուրեմն ի գալ փեսային լինի պսակ և հարսանիսս այս *հոգևորապէս*: - 693

**ՀՈԳԵՒՈՐԻՄ +** Եւ ծ կանգունն, զի մանուկն յարգանդի խօրեայ *հոգևորի* և ծօրեայ շարժի: - 293. Զի իսկոյն էր անդ բաժանումն արեանն. թանձրանալն. ծևանալն. *հոգևորիլն*. և աստուածանալն: - 469-470. Եւ կշիռ ողորմութեանն ըստ ինքեան մարմնաւորի և *հոգևորի*. զի աստ մարմնաւորն և անդ հոգևորն կշռի և միտէ՛: - 746

**ՀՈԳԷԳԱԼՈՒՍՏ** - Տա՛սն է. ինն ի դէմս քրիստոսի. և մինն ի հոգին սուրբ ի *հոգէգալուստն*: - 634

**ՀՈԳԻ +** Վեցերորդ՝ ասեն հակառակքն, թէ՝ չարն ոչ է յաստուծոյ, ապա աստուած ո՛չ ճանաչէ զչարն. որպէս մեք նմանեաւ զնմանն ճանաչեմք. այսինքն *հոգւով* զհոգևորս, և մարմով զմարմնաւորս: - 17. Այսպէս ի բնական ստեղծումն *հոգւոյն* ոմն խոհեմ և ոմն անզգամ. ցանկասէր՝ և ողջախոհ. բարեբարոյ՝ և չարաբարոյ լինին: - 19. Նախ՝ եթէ ուշիմ և ապուշ և այլն ըստ կարգի, սոքա եթէ ի մարմնոյն խառնուածոյ պատճառին՝ և եթէ բնական որակութեամբ *հոգւոյն* նման և աննման զօլ, առանց ներգործելոյ ո՛չ չար են և ո՛չ բարի. ո՛չ գով. և ո՛չ պարսաւ հետևի. որպէս և ո՛չ բնական բարուց անաւնոց: - 19. Դարձեալ ասեմք թէ՝ սոքա ո՛չ են բնութիւնք ի *հոգին*. այլ որակութիւնք զանազանք և աննմանութիւնք. որպէս պատկերք երեսացն: - 19. Այլ արդ՝ եդ աստուած զսոսա բնական որակութիւնս ի մասունս *հոգւոյն*. եդ և զանձնիշխան կամքն տէր և իշխան իներքս ի *հոգին*. զի կառավարէ և առաջնորդէ՛ *հոգւոյն*. զվատ որակն ի բարին ուղղել, և զբարին ի նոյնն պահել և առաւելուլ. զի այս է գործ անձնիշխանին: - 19. Զի փոփոխական է *հոգիս* մեր. երբեմն բարի և երբեմն չար: - 23. Այսպէս *հոգին* էութիւն է և ընդունակ բարւոյ և չարի. այսինքն առաքինութեան և չարութեան: - 23. Նոյնպէս և բարին միշտ բարի է. թէպէտ ի *հոգւոյն* պակասեցաւ, դեռևս

ի յէութեան է. զի է է բարին. և էութիւն ո՛չ կորնչի: - 23. Իսկ չարն կորեաւ յորժամ բարձաւ ի *հոգւոյն*. զի չարն ո՛չ է է՝ և ո՛չ գոյ: - 23. Վասն ճանաչման իւրոյ աստուած կազմեաց կրկին կերպիւ օրինակս. այսինքն իմանալի և զգալի. որպէս *հոգին*, միտքն, և նմանք սոցա. կամ արեգակն, լոյս, և նմանք նոցա: - 24. Իննևտասներորդ՝ Բարեխօսելն որդւոյ և *հոգւոյ*: - 29. Նախ՝ որք աստիճան դնեն Երրորդութեանն. և ի յայլումն ասեն *զհոգին*. որպէս պատահումն: - 29. Երրորդ՝ *հոգին* ծնեա՞լ է թէ անծին: - 29. Չորրորդ՝ ոչինչ արգելէ *ըզհոգին* լինիլ որդի, թէ է՛ ի նոյն բնութենէ: - 30. Վեցերորդ ասեն՝ ամենայն ինչ որդւովն եղև. ապա և *հոգին*: - 30. Եօթներորդ՝ անգիր աստուած ասէք *զհոգին*: - 30. Եւ զպատճառ ծածկութեան *հոգւոյն*: - 30. Այլ և ընդդէմ նոցա՝ որք արարած ասեն զբանն աստուծոյ, և *զհոգին*: - 30. Մետասաներորդ՝ Թէ *հոգին* սուրբ աստուած է՝ **ի** գլխով: - 30. Երեքտասաներորդ՝ Որք *զհոգին* ի հօրէ՛ և յորդւոյ ասեն ութն գլխով: - 30. Չորեքտասաներորդ՝ *Յոգին* միայն ի հօրէ՛ է բղխումն՝ **ծ** հարցմամբ, և **զ** օրինակաւ, և **ը** վկայութեամբ: - 30. Յինգերորդ՝ Յայր և *Յոգի* ո՛չ մարմնացեալ. թէպէտ մի բնութիւն է երրորդութեանն: - 30. Նա՛խ՝ զի գո՛րծ է նեռինն ուրանալ զաստուած, որպէս իւր անունն յայտնէ. ա՛յսպէս և հերձւածօղն ուրանայ զաստուածութիւն որդւոյ. կամ *զհոգւոյն* սրբոյ...: - 34. Ութերորդ՝ զնա օ՛ձ դարանակալ ասէ ի ճանապարհի. և սոքա առաջին օձին նմանեալ՝ հրապուրեն զբազումս. և արտաքսեն ի դրախտէ եկեղեցւոյ. և թոյնք իժից ի ներքոյ շրթանց ունելով և խայթոց՝ զի առորս մերձենան, ի յսկիզբն բանից կամ ի վերջն՝ մահացուցանեն *զհոգիս*. երկճղի ունելով լեզու նենգաւոր՝ չար և բարի, ծածուկ և յայտնի: - 35. Զի թէ պատասխանեմք թէ ո՛չ է հարկ թէ սկսեալն ամենայն իրօք և դադարեսցի. որպէս հրեշտակք և *հոգիք* մարդկան. զի են սկսեալք և ո՛չ դադարին. է՛ այս պատասխանի, այլ ո՛չ բաւական: - 37. Զի և յօհան դամասկացին ասէ հարկ գոլ ամենայն սկզման ունել դադարումն. այլ զի հրեշտակք և *հոգիք* ոչ դադարին, այս կամա՛ցն աստուծոյ է պահպանութիւն, և ոչ բնութեան նոցա. զի յո՛չ էից եղեալքն՝ կարեն յոչ էութիւն փոխիլ: - 37. Եւ միշտ բղխէ՛ զջերմութիւնն յօրինակ բղխման *հոգւոյն* անսպառապէս: - 37-38. Պատասխանեմք՝ թէ հայր ո՛չ բնութեանն է անուն՝ և ո՛չ արարչութեանն. այլ առանձնաւորութեանն. զի այնու յատկանայ յորդւոյ և ի *հոգւոյ*: - 39. Ով արիանոսք՝ զի թէ որպէս զմեզ զորդի շնորհօք ասէք և արարած, մեք զի եմք շնորհօք որդիք՝ ունիմք ընդ մեզ և ընդ հայր շաղկապ. իբր թէ զլար *զհոգին* սուրբ: - 39. Իսկ դուք զի ուրանայք *զհոգին* հաւասար գոլ հօր և որդւոյ, և կրտսե՛ր ասէք քան զորդի: - 39. Զի որպէս առաջին նա՛ ծնաւ անսերմն ի կուսէ և ի *հոգւոյն* սրբոյ, այսպէս և մեք յետ նորա ի ծեռն *հոգւոյն* սրբոյ ծնանիմք ի կոյս աւազանէն: - 41. Դարձեալ անդրանիկ է ըստ շնորհաց *հոգւոյն* զոր ընկալաւ ո՛չ վասն կարօտութեան՝ զի լիապէս ունէր այլ զի գլուխ էր մեր՝ ընկալաւ՝ զի յանդամս իւր սփռեսցէ: - 41. Զի ոչս այս բացբարձակա՛ն է. որպէս թէ ո՛չ չափով տայ աստուած *զհոգին* որդւոյ. այսինքն է՝ զի ոչ տայ և ո՛չ չափէ: - 46. Ապա ուրեմն ասեն չարափառքն թէ հայր միա՛յն է ճշմարիտ աստուած. և ո՛չ որդի և *հոգի*: - 47. *Զհոգին* զի ասէ՝ «և զոր առաքեցեր»: - 47. Իսկ զի բարեխօսել լսեմք *հոգւոյ* և որդւոյ: - 48. Այլ ա՛յս է *հոգւոյն* բարեխօսելն, զի յորժամ կամք յաղօթս՝ ո՛չ գիտեմք զպատշաճն խնդրել. ապա *հոգին* անմռունչ տայ մեզ իմաստ զպատշաճն աղօթել: - 48. Ապա այս աղաչանքս զոր ինչ առնեմք ի ծագմանէ *հոգւոյն* սրբոյ, բարեխօսել ասի *հոգոյն* սրբոյ: - 48. Զի յորդորելն նորա՛ է, որպէս *հոգւոյն* ասացաք: - 48. Երկրորդ՝ զի ի ջուրն հանգստեան սնուցանէ. այսինքն է աւազանին մկրտութեամբն ի *հոգի* սուրբ: - 49. Իսկ մարդ, զի սրբեսցէ ինքեամբ զմեզ՝ եղև ամենայն յաղագս ամենայնի. այսինքն *հոգի* և միտք և մարմին. զի յորոց հասարակաց եղև մահ, լիցի և կեանք: - 50. Զի՞նչ ասեմ, զի *հոգւով* հնազանդեցաւ ադամ, և մտօք հաւանեցաւ, և մարմնով զգործն ի կատարումն էած: - 50. Տասներորդ՝ ըստ մեզ ի ջուրս աւազանին իջումն *հոգւոյն*: - 50. Իսկ թէ էր երբեմն առանց *հոգւոյ*, անկենդա՛ն էր և անսուրբ. և զիա՞րդ կենդանացուցանօղ էր և սրբօղ: - 51. Տե՛ս՝ զի առանց որդւոյ անբան և տկա՛ր է հայր. ո՛չ կարէ լինիլ աստուած. ապա և ո՛չ *հոգի*: - 51. Նոյնպէս և առանց *հոգւոյ* անկենդան և անսուրբն՝ ո՛չ է աստուած. ապա և ո՛չ որդի: - 51. Դարձեալ՝ որք ո՛չ ասեն աստուած *զհոգին*, առաջին հերձւած՝ զի զհայր բառնան: - 51. Երկրորդ՝ զի ըստ մեզ արարած ասեն *զհոգին*: - 51. Ապա ուրեմն և *հոգին* աստուած է կատարեալ: - 51. Բայց կարծիք զանազան են *հոգւոյն*: - 51. Իսկ այլք արարած վասն ո՛չ յայտնելոյ ի գիրս աստուած *զհոգին*: - 51. Այլ մեր բանս ո՛չ է ընդ այլսն ամենայն, այլ որք զօրութիւն և արարած ասեն գոլ *զհոգին*: - 51. Զի մեզ *հոգին* ըստ ինքեան գոյացութիւն, և յայլում տեսանի. այսինքն կատարեալ անձնաւորութիւն յէութիւն հօր: - 51. Ամենայնիւ այսոքիկ շարժողի՛ են և ո՛չ շարժութեան. ապա ուրեմն *հոգին* ո՛չ է զօրութիւն: - 52. Բե՛ր նախ տեսցուք ըստ քո կարծեացդ թէ արարա՞ծ է *հոգին*: - 52. Եւ թէ այդպէս է, ապա ուրեմն *հոգին* ո՛չ է արարած: - 52. Դարձեալ հարցանեն թէ՝ *հոգին* անծի՞ն է՝ թէ ծնեալ: - 52. Դարձեալ հարցանեն, թէ հաւասար է *հոգի* որդւոյ, զի՞նչ արգելու ո՛չ լինիլ որդի. ապա թէ ո՛չ՝ նւա՛զ է քան զորդի: - 53. Պատասխանեմք թէ ո՛չ է նըւազ *հոգին*. զի ո՛չ է անկատար աստուածութիւնն. և ո՛չ նըւազութիւնն առնէ

*հոգւոյն* ո՛չ լինիլ որդի, այլ դէմքն և առանձնաւորութիւնքն: - 53. Ասեն դարձեալ, օրինակ տուք զի լիցի ի նոյն բնութենէն մինն ծնունդ՝ և միւսն ո՛չ ծնունդ. և ապա՛ հաւատամք աստուած *զհոգին*: - 53. Ասեն դարձեալ, աւետարանն յոհաննու ասէ, «ամենայն ինչ որդովն եղև». ապա ուրեմն և *հոգին* եղեալ է ի ձեռն որդւոյ. զիա՞րդ է հաւասար որդւոյ կամ հօր: - 53. Պատասխանեմք թէ՝ ո՛չ ասէ պարզաբար ամենայն, այլ կարգէ՛ զհետն թէ՝ ամենայն որ ինչ եղևն. թէ եղեալ ցուցանես *զհոգին*, և ես հաւատամ թէ ի ձեռն որդւո՛յ է եղեալ: - 53. Ապա թէ ո՛չ՝ ստեցար դու ինքնին ի բանից քոց. զի *հոգին* անեղ է: - 53. Ասեն դարձեալ, զիա՞րդ եղանակէք մեզ անգիր աստուած *զհոգին*: - 54. Եւ այսքան է միաւորթիւնն, զի որքան մին ինքն առ ինքն ունի զբնութիւնն և զզօրութիւնն և զկամքն, նոյնքան և ունի առ երկուսն. թէ զհայր իմանաս՝ թէ զորդի՝ թէ *զհոգին*: - 54. Ապա ուրեմն զի դուք գ ասէք՝ հայր և որդի և *հոգի*, ըստ թւոյն և երեք բնութեան հաղորդին և ո՛չ միոյն: - 54. Եւ առաքեալն *զհոգին* և զջուր և զարիւնն ասէ գ վկայք քրիստոսի: - 54. Ապա ուրեմն և հայր և որդի և *հոգի* թէպէտ թւով գ են, այլ ոչ գ բնութիւնք: - 55. Վասն *հոգւոյն* են ի գիրս սուրբս՝ զի ո՛չ են և ասին ի յէքս. որպէս եղջերուաքաղն, յարալէզն, յուշկապարիկն: - 55. Այսպէս *զհոգւոյն* թէ յայտնապէս աստուած ասիլ ծածկեցաւ, և այլ ինն բառիւ յայտնեցաւ. որ ցուցանէ զնոյն ճշմարտապէս աստուած կատարեալ...: - 55. Այսոքիկ և այլ սոյնպիսիք յայտնապէս աստուած ցուցանեն *զհոգին*: - 55. Իսկ զպատճառ ծածկութեան *հոգւոյն*: - 55. Նոյնպէս և *հոգին* յիւրում ժամանակին. յետ խաչելութեանն քրիստոսի և համբառնալոյն առ հայր. և ապա իջանելոյ հոգւոյն. և յայտնելոյ զաստուածութիւնն իւր: - 55. Նոյնպէս և հոգին յիւրում ժամանակին. յետ խաչելութեանն քրիստոսի և համբառնալոյն առ հայր. և ապա իջանելոյ *հոգւոյն*. և յայտնելոյ զաստուածութիւնն իւր: - 55. Արդ՝ Նա՛խ՝ բան աստուծոյ՝ և *հոգի* աստուծոյ՝ ո՛չ պատշաճի արարածոյ. այլ միայն աստուծոյ: - 55. Որպէս *հոգի* մարդոյ և բան մարդոյ՝ միայն մարդո՛յ է: - 55. Եւ *հոգի* հրեշտակի և բան հրեշտակի՝ միայն հրեշտակի՛ է: - 55. Երկրորդ՝ բանն է իմաստութիւնն, և *հոգին* կենդանութիւնն: - 55. Երրորդ՝ իմաստութեամբ արար *ըզհոգին* և զբանն և ո՛չ անիմաստութեամբ: - 55. Ա՛րդ՝ իմաստութիւնն այն որ արար զբանն և *զհոգին*, նա՛ է բան աստուծոյ. և *հոգի* աստուծոյ. և ո՛չ արարած: - 55. Չորրորդ՝ կարողութեամբ արար զբանն և *զհոգին* և ո՛չ տկարութեամբ: - 56. Ա՛րդ՝ կարողութիւնն այն է բան և *հոգի* աստուծոյ. և ո՛չ եղեալք ի նմանէ: - 56. Հինգերորդ՝ թէ արտաքոյ արարածք են բանն և *հոգին* աստուծոյ, ապա անկարելի՛ է արարածոց՝ արարչի բան և *հոգի* լինիլ: - 56. Վեցերորդ՝ թէ արարա՛ծ է բանն և *հոգին* աստուծոյ՝ ապա օտա՛ր է յէութենէ աստուծոյ և եկամուտ և աւելո՛րդ նմա: - 56. Եօթներորդ՝ թէ արարա՛ծ է բանն և *հոգին* աստուծոյ և են յէութենէ նորին, ապա և ինքն արարած է որոյ է բանն և *հոգին*: - 56. Ութերորդ՝ թէ արարա՛ծ է բանն աստուծոյ և *հոգին*, ապա կրկին է և ո՛չ մէկին. զի բանն արարած՝ և արարչի բան. և *հոգին* արարած՝ և արարչի *հոգի*: - 56. Իններորդ՝ թէ արարիչ է աստուած՝ և բան իւր և *հոգին* արարած, ապա և ինքն ո՛չ է պարզ և մէկին՝ այլ բաղադրեալ և ի բազմաց գոյացեալ: - 56. Տասներորդ՝ թէ բանն աստուծոյ և *հոգին* արարա՛ծ են և այլ բնութիւն, յայնժամ ո՛չ լինի մի աստուած. այլ բազում և զանազան աստուած. զի յոլովութիւնն յոլովութիւն է աստուծոյ. որպէս թէ երեք բնութիւնն երեք աստուած, և երկու բնութիւնն երկու աստուած: - 56. Արարիչ է հայր. արարիչ է և որդի. արարիչ է և *հոգին* սուրբ...: - 56. Եւ վասն *հոգւոյն* ասացեալ է՝ «*հոգի* տեառն ելից զտիեզերս»: - 56. Կնքէ և *հոգին* սուրբ «մի՛ տրտմեցուցանէք *զհոգին* սուրբ աստուծոյ, որով կնքեցայք յաւուրն փրկութեան ձերոյ»: - 56. Մեծ է հայր. մեծ է և որդի. անբովանդակելի է և *հոգին* սուրբ. ըստ հոգէնըւագին որ ասէ, «Մեծ է տէր մեր. և մեծ է զօրութիւն նորա». որ է քրիստոս աստուծոյ զօրութիւն: - 56. Խաղաղութիւն է և *հոգին* սուրբ: - 56. Աղբիւր է *հոգին* սուրբ. քանզի մեք ամենայնքին զնոյն *հոգի* արբաք: - 57. Լոյս է և *հոգին* սուրբ...: - 57. Կեանք է և *հոգին* սուրբ...: - 57. Տէր է և *հոգին* սուրբ...: - 57. Բարի՛ է և *հոգին* սուրբ...: - 57. Ապա ուրեմն *հոգին* սուրբ է՛ աստուած: - 57. Ութերորդ՝ որպէս *հոգի* մարդոյն է՛ յէութենէ մարդոյն, այսպէս և *հոգին* աստուծոյ է յէութենէն աստուծոյ: - 58. Իսկ պօղոս զբանս զայս վերաբերէ ի *հոգին* սուրբ...: - 58. Ապա ուրեմն աստուած է *հոգին* սուրբ: - 58. Այլ *հոգին* սուրբ էր որ խօսէր ընդ մարգարէսն...: - 58. Այլ այս վերաբերի առ *հոգին* սուրբ...: - 58. Եւ թէ ասիցէ հակառակօղն, եթէ՝ վերոգրեալ գործառնութիւնքս համարին *հոգւոյն* սրբոյ ո՛չ որպէս աստուծոյ, այլ որպէս պաշտօնէի: - 59. Զոր և այժմ օրինա՛կ է առ մեզ սարկաւագն. զոր *հոգի* կոչէին վասն հոգևորապէս խօսելոյն: - 59. Իսկ այլք՝ *հոգի* զհրեշտակական *հոգին* ասեն. որ տըւեալ է առ ի պահպանութիւն մեզ. զի նա ուղղէ զմեզ ի բարիս, և զաղօթս մեր մատուցանէ աստուծոյ: - 59. Այլ և ի նոյն ինքն մխիթարիչ *հոգին* այսպէս ուղղակի՛ է բանս: - 59. Այսպէս և *հոգւոյն* բարեխօսելն է. զի ինքն ծագէ ի սիրտս մեր զբարեխօսն լինիլ յաղօթս. այսինքն զայն խնդրել որ ինչ ի փառս աստուծոյ է: - 59. Նոյնպէս և առաքումն *հոգւոյն* ո՛չ նըւազութիւն ցուցանէ, այլ զհամակամութիւն ընդ հօր և ընդ որդւոյ: - 60. Պատասխանեմք եթէ՝ *հոգի* աստուծոյ ոմանք զօդս ասեն. որոյ բնական տեղի իւր է՛ ի վերայ ջուրց: - 60. Դարձեալ՝ շարժումն ո՛չ միայն

ասի ի վերայ *հոգւոյն* սրբոյ, այլ և հօր և որդւոյ...: - 60. Ապա ուրեմն և ո՛չ *զհոգին* սուրբ: - 60. Եւ ցուցանէ զմիոյն ի բազումս ծաւալումն շնորհաց *հոգոյն*: - 60. Նոյնպէս՝ թէ ասի տրտմութիւն *հոգւոյն*. զի որպէս տրտմեալն հեռանա՛յ ի տրտմեցուցողէն, այսպէս և *հոգին* սուրբ հեռանայ ի մեղաւորէն: - 60. Հինգերորդ ասեն, եթէ *հոգին* սուրբ առնու զբնութիւնն ի հօրէ՝ լինի որդի նորին. զի այն կոչի որդի որ ունի զբնութիւնն ի հօրէ ի նոյն տեսակէ: - 60. Պատասխանեմք եթէ՝ թէպէտ *հոգին* ունի զբնութիւնն ի հօրէ՝ սակայն ո՛չ ծննդեամբ որպէս որդի, այլ բղխմամբ. որպէս շունչն և բանն ունին զէութիւնն *հոգւոյն* այլ և այլ կերպիւ. և որպէս ադամ յառաջ էած յինքենէ զսէթ և զևա. զմինն ծնունդ և զմիւսն ո՛չ ծնունդ. և ունին երեքեանն զմի և զնոյն բնութիւն մարդոյ: - 60. Այսպէս և *հոգին* սուրբ էառ յաւիտենականապէս զէութիւնն ի հօրէ բղխմամբ, և որդի ծննդեամբ: - 60. Ապա ուրեմն *հոգին* սուրբ է հաւասար աստուած ընդ հօր և ընդ որդւոյ. արարչակից և մշտնջենաւորակից և փառակից: - 60. Եկեսցուք այժմ և տեսցուք զմոլորութիւնս նոցա՝ որք ասեն *զհոգին* սուրբ բղխումն ի հօրէ և յորդւոյ: - 61. Նախ պատճառեն՝ զի ասի *հոգի* քրիստոսի: - 61. Եօթներորդ՝ եթէ մասն աստուծոյ կոչի *հոգին* սուրբ. և աջ և բազուկ է որդին. ապա ուրեմն և ի նմանէ՛ է: - 61. Ութներորդ՝ որպէս խօսքն ի մտացն է և ի բանէն. այսպէս և *հոգին* ի հօրէ՛ է և յորդւոյ: - 61. Պատասխանեմք, այն որ ասի *հոգի* քրիստոսի, և թէ՝ փչեաց, և թէ՝ առաքեաց, յայն սակս ասացան, զի ծաւալումն *հոգւոյն* սրբոյ յաղագս մարդկան՝ գալստեամբն քրիստոսի եղև: - 61. Եւ դարձեալ՝ *հոգին* որ ի հօրէ ելանէ և կայանայ յորդի. և ի ձեռն որդւոյ իբր զհայրական բարի ամենայն գոյիցս բաշխի երկնաւորաց և երկրաւորաց. նախ քան զմարմնանալն՝ և ի մարդեղութեանն: - 61. Վասն որոյ *հոգի* քրիստոսի անուանի: - 61. Եւ դարձեալ, զի ամենայն ինչ որ հօր է՝ այն որդւոյ է որպէս ասէ տէր. ապա ուրեմն *հոգի* հօր՝ *հոգի* է որդւոյ վասն միոյ էութեանն: - 61. Հինգերորդին պատասխանեմք, եթէ փառաւորէ *հոգի* զորդի՝ ասես ի նմանէ սկզբնաւորեալ: - 61. Վեցերորդին պատասխանեմք, թէ ասիցես որդին անկենդան է յորմէ *հոգին* ո՛չ բղխէ. ապա՛ և ըստ քեզ *հոգին* անբան է զի ըզբանն ո՛չ ծնանի: - 61-62. Եւ զի մատն աստուծոյ ասի *հոգին* սուրբ: - 62. Նախ՝ որպէս մատն է յէութենէ մարմնոյն, այսպէս և *հոգին* սուրբ է յէութենէն աստուծոյ: - 62. Երկրորդ՝ զի որպէս մատամբ գրեմք կամ գործեմք զամենայն գործս, այսպէս և *հոգին* սուրբ գրէր ի մարգարէսն...: - 62. Եւ որդի *հոգւովն* կատարէր զամենայն գործս սքանչելեաց: - 62. Ութերորդին ասեմք՝ եթէ օրինակաւ խօսից իմանալ *զհոգին* սուրբ՝ ունի ինչ ուղղութիւն և ունի ինչ թիւրութիւն: - 62. Ուղիղ է, զի որպէս խօսքն թարքման է մտաց և բանի, այսպէս և *հոգին* սուրբ՝ հօր և որդւոյ...: - 62. Ապա ուրեմն օրինակս զանձն *հոգւոյն* բառնայ: - 62. Ապա ուրեմն այսպէս կարծելն՝ *զհոգին* միայն յորդւոյ ցուցանէ՛ և ո՛չ ի հօրէ որ է անհնարին հերձուած: - 62. Եւ զի *հոգին* սուրբ է միայն ի հօրէ բղխումն, տեսցուք զայս Նախ՝ ի հարցմանէ: - 62. Եթէ *զհոգին* ի հօրէ և յորդւոյ ասէք, զա՞նձն ասէք բղխեալ, եթէ զբնութիւնն: - 62. Իսկ եթէ զանձն ասացիք բղխեալ, ահա **բ** անձն ասացիք *հոգւոյն*. մինն ի հօրէ բղխեալ, և մինն ի յորդւոյ. և այսպէս լինի երրորդութիւնն չորրորդութիւն: - 62. Զի թէ մի է սկիզբն, սո՛ւտ է նոցա ասելն *զհոգին* ի հօրէ և յորդւոյ բղխեալ: - 62. Դարձեալ հարցանեմ, հայր կարող է բղխել *զհոգի*՝ թէ անկար: - 62. Դարձեալ հարցանեմ, *հոգին* սուրբ մասն ինչ բղխէ ի հօրէ և մասն յորդւո՞յ, թէ բոլորն ի հօրէ՝ և բոլորն յորդւոյ: - 63. Զի եթէ մասամբ անկատա՛ր է բղխումն *հոգւոյն*: - 63. Իսկ եթէ բոլոր, այս լինի կամ **բ** *հոգի* որպէս ասացաք, կամ աւելորդ գոյ բղխումն որդւոյ որ է յոյժ հայհոյութիւն: - 63. Դարձեալ՝ հարցանեմ, հայր և որդի զո՛յգ բղխեն *զհոգի*, թէ անզոյգ: - 63. Դարձեալ հարցանեմ, հայր և որդի կարգաւո՛ր բղխեն *զհոգի* թէ անկարգ: - 63. Դարձեալ հարցանեմ, յանսկզբնէ՞ն բղխէ *հոգին*, թէ ի սկզբնաւորէն. զի որ յանսկզբնէն յառաջ գայ, է՛ անեղ և անվախճան. որպէս որդի և *հոգի* յանսկիզբն հօրէ: - 63.Իսկ թէ ի սկսելոյն յառաջ գայ, է՛ եղեալ և արարեալ. որպէս արարածք ամենայն որդւով և *հոգւով* եղեն: - 63. Իսկ թէ յանսկզբնէն և ի սկզբնաւորէն յառաջ գայ *հոգին*, լինի անեղ և եղական որ է մակեդոնեան և ծանր հայհոյութիւն: - 63. Ապա ուրեմն յանսկզբնական հօրէ միայն բղխէ անեղ և անվախճան *հոգին* սուրբ: - 63. Զի թէ զբղխեալն բղխէ, աւելո՛րդ է որդւոյ բղխումն. զի հայր բղխէ *զհոգին*: - 63. Դարձեալ՝ հարցանեմ, զի թէ մինն բոլոր բղխումն է *հոգւոյն* և ո՛չ մասն. զի թէ զմինն զայն հայր բղխէ, ապա ուրեմն ո՛չ բղխէ որդի. իսկ թէ զմինն զայն որդի բղխէ, բըղխեալն *հոգի* թո՛ռն լինի հօր, և ո՛չ բըղխումն նմին: - 63. Դարձեալ հարցանեմ, հայր և որդի զնո՞յն բղխեն *զհոգին*, թէ զայլ: - 63. Իսկ թէ այլ բղխէ հայր՝ և ա՛յլ որդի, կրկնապատիկ է *հոգին* և ո՛չ մի: - 63. Նախ՝ զի բղխումն *հոգոյն* է՛ ելումն. իսկ ելումն շարժումն միոյն ի միւսոյն: - 63. Ա՛րդ՝ եթէ *հոգին* ելանէ յորդւոյ, պարտ է զի ելցէ յորդւոյ ի հայր. կամ ի միւս անձն: - 63. Դարձեալ՝ *հոգին* սուրբ ելանէ իբրև զարտաշնչեալ և բղխեալ: - 63. Ա՛րդ՝ որպէս արտաշնչումն ո՛չ ելանէ ի բանէ, և ո՛չ *հոգի* ի յորդւոյ: - 63. Դարձեալ՝ *հոգին* սուրբ է ի հօրէ որպէս կամք ի մտաց. և որդի որպէս իմացումն: - 64. Ա՛րդ՝ կամքն ո՛չ է յիմացմանէ. և ո՛չ *հոգի* յորդւոյ: - 64. Դարձեալ *հոգին* սուրբ բղխէ ի հօրէ իբր ջերմութիւն ի հրոյ: - 64. Նոյնպէս *հոգին* սուրբ ոչ բղխէ յորդւոյ, այլ միայն ի հօրէ: - 64. Դարձեալ՝ *հոգին*

սուրբ բղխէ ի հօրէ՛ որպէս հոտ ծաղկի կամ խնծորի: - 64. Նոյնպէս և *հոգի* ո՛չ է յորդւոյ՝ այլ միայն ի հօրէ: - 64. Դարձեալ՝ *հոգին* ելանէ իբրև զշաղկապ և միաւորիչ. մի իբրև զմէջ որ շաղկապէ՛ զերկու եզերն. և միւս իբրև երեք՝ և եզր: - 64. Իսկ երրորդ ի վկայութեանց յայտնի է զի *հոգին* սուրբ միայն ի հօրէ է՛ բղխումն: - 64. Եւ անդ ասի ի հաւատամքն եթէ՝ *հոգին* սուրբ որ ի հօրէ. և ո՛չ յիշի որդի: - 64. Վեցերորդ վկայ ի ժողովոյն քաղկեդոնի զոր նոքա ընդունին և ո՛չ մեք. այսպէս է գրեալ թէ՝ որ ոք *զհոգին* ի հօրէ և յորդւոյ բղխումն ասիցէ՝ նզովեալ լիցի: - 64. Եօթներորդ՝ վկայ դամասկացին որ ասէ. որ և նա ևս քաղկեդոնիկ է. եթէ յայտնապէս *զհոգին* սուրբ ի հօրէ՛ ասեմք. և զնա *հոգի* հօր անւանեմք: - 64-65. Ա՛րդ՝ *զհոգին* սուրբ ի յորդւոյ ո՛չ ասեմք. սակայն զնա *հոգի* որդւոյ անւանեմք: - 65. Դարձեալ՝ յորժամ ասի, թէ լսիցէ «ի հօրէ», և կամ «առնուցու», մի՛ իմասցի այնու թէ բղխումն *հոգւոյն* սրբոյ տակաւին ապառնի էր. զի յաւիտենակա՛ն էր: - 65. Զի որպէս այժմ կարեմք ասել ճշմարտապէս թէ *հոգին* սուրբ ելանէ ի հօրէ. և վասն ապառնւոյն կարեմք ասել թէ *հոգին* սուրբ ո՛չ ելանէ յորդւոյ. մինչ այլ ո՛չ ևս ելանէ. և ո՛չ այնպէս էառ զգոյացութիւն և զճշմարտութիւն իւր՝ զի ո՛չ ևս երբեք առցէ: - 65. Ապա ուրեմն որդի և *հոգին* սուրբ ի հօրէ ելանեն իբր **բ** շառաւիղ. և ըստ այսմ ո՛չ ելանէ մի ի միւսոյն: - 65. Զի ա՛յլ է բղխումն, և ա՛յլ է առումն. այսպէս՝ զի *հոգին* բղխումն է ի հօրէ, որպէս որդին ծնունդ է ի հօրէ: - 65. Իսկ *հոգին* առնու յիմաստութեանց և զօրութեանց որդւոյ և բաշխէ՛ արարածոց: - 65. Զոր օրինակ՝ Աղբիւր բղխեալ առ մեզ *հոգին* սուրբ ա՛րդ սկիզբն աղբերն շարժի ի ծովէ՛. և հասանէ յակն. և յակնէն առ մեզ բղխէ: - 65. Ա՛րդ՝ սկիզբն յառաջ շարժութեան *հոգւոյն* է՛ հայր...: - 65. Այսպէս ասեմք *զհոգին* որդւոյ: - 65. Դարձեալ՝ *հոգին* սուրբ ելանէ ի հօրէ և առաքի յորդւոյ. և ինքնիշխան կամօք շնչէ զշնորհս իւր յորս կամի և որքան: - 66. Եւ գիտելի է, զի որպէս բան կոչի որդին աստուծոյ, նոյնպէս խօսք կոչի *հոգին* սուրբ...: - 66. Նախ՝ զի խօսքն է ի մտացն յառաջ եկեալ, որպէս ներտրամադրեալ բանն ծնեալ. և *հոգին* սուրբ ի հօրէ բղխեալ. որպէս բանն ծնեալ: - 66. Երկրորդ՝ խօսքն ունի զիմաստ բանին և զմտացն. և *հոգին* սուրբ զիմաստութիւն հօր և որդւոյ: - 66. Նոյնպէս *հոգին* սուրբ պատմէ և ուսուցանէ զգիտութիւն հօր և որդւոյ: - 66. Չորրորդ՝ խօսքն նոյն է բնութեամբ ընդ բանին և մտացն. և *հոգին* սուրբ նոյն է բնութեամբ ընդ հօր և որդւոյ: - 66. Հինգերորդ՝ որպէս այլ է անձն՝ այլ է խօսքն՝ և այլ միտքն. նոյնպէս ա՛յլ է անձն հօր, և ա՛յլ բանին, և ա՛յլ *հոգւոյն* սրբոյ: - 66. Եւ վասն *հոգւոյն* սրբոյ այսքան: - 66 Եօթներորդ՝ էջ *հոգին* սուրբ ի վերայ քրիստոսի և հանգեաւ ի վերայ նորա: - 69. Ո՛վ բաժանօղդ՝ որոյ որդւոյ ասես սրբիլ *հոգւովն* սրբով: - 69. Շնորհօ՞ք ասեմք այժմ *հոգի* քրիստոսի և ո՞չ բնութեամբ: - 69. Ա՛րդ մկրտիմք հաւատացեալքս որպէս ի հայր և ի *հոգին* սուրբ՝ այսպէս և յորդին մարմնացեալ մի տէր մի քրիստոս: - 69. Ապա ուրեմն աստուած է քրիստոս հաւասար հօր և *հոգւոյն* սրբոյ: - 72. Այլ մարմին և *հոգին* քրիստոսի զսկիզբն յաշխարհի ունին...: - 73. Եթէ մի է առհասարակ բնութիւն երրորդութեանն և ո՛չ բաժանեալ, ո՞րպէս իմանամք զբանն միայն մարմնացեալ. և ո՛չ զհայր և *զհոգի*: - 74. Ա՛րդ՝ ընդդէմ քումդ խոհեմութեան ո՛րպէս իմանաս ի միում հասարակ բնութեան զբանն ծնեալ և *զհոգին* բղխեալ. իսկ հայր ոչ ծնեալ կամ բղխեալ. և անդրադարձեալ ևս: - 74. Նոյնպէս իմա՛ և զաստուածն բան. ունելով զնոյն բնութիւն յառանձնութեան իւրում. և միայն միացեալ ի մարմնի և ո՛չ հայր և *հոգի* ըստ առաքելոյ...: - 74. Նոյնպէս ի մարդեղութեան բանին անբաժան գոլով հայր և *հոգի*...: - 75. Սակայն բա՛նն մարմին եղև. և ո՛չ հայր և *հոգի:* - 75. Հարցումնս այս է՛ երկաբնակացն. և նմանի այնմ թէ՝ մարդ ըստ *հոգւոյն* բնութեանն մարմին է, թէ ըստ մարմնոյն բնութեանն *հոգի*: - 75. Զի անմարմին է՝ և միաւորի ընդ մարմնոյ. որպէս *հոգի* և մարմին բնութեամբ միաւորին և ո՛չ շփոթին: - 76. Որև գոն ի յեղեալքս միաւորեալք. որպէս հուր և երկաթ. *հոգի* և մարմին. որք չարչարին անչարչարապէս: - 76. Վասն որոյ ասէ սուրբն կիւրեղ եթէ՝ ո՛չ մարդն աստուածացաւ, այլ աստուած բանն էջ յարգանդ կուսին և առեալ *հոգի* և մարմին ի նմանէ՝ աստուածն մարդ եղև...: - 79. Իսկ աստուածաբանն ընդդէմ՝ ապօղինարի՝ որ միայն մարմին ասաց առանց *հոգւոյ* առեալ. ասէ, մարմին առանց *հոգւոյ* անկատա՛ր է մարդ: - 80. Այլ՝ էառ *զհոգի* և զմարմին. որ է կատարեալ բնութիւն մարդոյ. որպէս ասէ բնութիւնք **բ**. այսինքն կատարեալք: - 80. Ո՛չ որպէս ապօղինար կարծեաց. այլ աստուած կատարեալ և մարդ կատարեալ. *հոգով* և մարմնով: - 80. Ըստ որում մերձ դնէ, քանզի մարմին և *հոգի*. այսինքն թէ ո՛չ կարէ մարդն առանց *հոգւոյն* գոյանալ: - 80. Եւ հաստատեալ այսու եթէ՝ *հոգին* և մարմինն է միաւորեալ ընդ բանին աստուծոյ, կարգէ՛ և զայն. բայց որդիք ասէ ո՛չ **բ**. և ո՛չ աստուածք. զայս վասն դիմաց միաւորութեանն ասէ: - 80. Դարձեալ՝ մի բնութիւն ասէ ապօղինար. որ *զհոգի* և զմիտս ուրացաւ. և միայն զմարմին ասէ առեալ, և ի տեղի *հոգւոյ* զբանն բնակեալ: - 81. Եւ այսոքիկ նզովեալք են ի *հոգւոյն* սրբոյ ի ժողովն եփեսոսի և այլոցն. և եղիցին ի նզովս սուրբ եկեղեցւոյ: - 82. Ո՛չ զմասն ինչ առեալ զմարդոյ. այլ զբոլոր բնութիւնն ժողովեալ անհատ մարդկութեամբն. *զհոգի* բանական՝ և զմիտս՝ և զմարմինս մեր՝ միաւորեաց ընդ իւրում աստուածութեանն անշփոթ և անորոշ միութեամբ: - 83. Զնոյն գոլ

աստուած և որդի աստուծոյ ըստ *հոգւոյ*. իսկ որդի մարդոյ ըստ մարմնոյ: - 83. Բանն աստուած իւրով կատարելութեամբն էառ զմարդկայինս բնութիւն. *զհոգի* և զմարմին և զմիտս. և միաւորեալ ընդ իւրում աստուածութեանն՝ եղև մի անձն կատարեալ և մի դէմ: - 84. Եւ չորրորդ՝ զի ամենայն իր բնութեամբ իւրով միանայ և ո՛չ արտաքոյ բնութեան. որպէս հուր ընդ երկաթ՝ և *հոգի* ընդ մարմին միաւորի: - 85. Թէպէտ բնութեամբ միաւորին՝ տարբերութիւնն ո՛չ բառնի. զի տարբերութեանցն մնալ՝ խափանումն ո՛չ առնէ միաւորութեանն. որպէս *հոգւոյ* և մարմնոյ. ոսկւոյ և հրոյ. և ծանի՛ր՝ զի կրկին է տարբերութիւն. բաղկացական և բաժանական: - 85. Կիրք՝ արծակելն *զհոգին*: - 86. Եւ որպէս *հոգին* և մարմինն մի ներգործութիւն կատարեն և ո՛չ երկուս: - 86. Որպէս մի է ի *հոգւոյ* և ի մարմնոյ մարդն՝ և մի ներգործութիւն մարդոյն: - 86. Եւ բնութեամբ է հայր և որդի և *հոգի* մի: - 86. Իսկ անհատ ասի՝ զի ո՛չ քակտի և ո՛չ հատանի որպէս բոլորն ի մասունս. զի թէ բաժանես զնա որպէս ի *հոգի* և ի մարմին, կամ յոտս և ի ձեռս և ի գլուխս, ո՛չ մնայ բոլորն: - 86-87. Եւ ազգայինքն՝ միոյն հայր և *հոգի*. և միւսոյն յովսէփ և մարիամ: - 87. Իսկ աստ նման միմեանց՝ և բոլորին կոչի քրիստոս. ըստ որում ասի՝ քրիստոս էջ յերկնից. որ է բանն. և քրիստոս եդաւ ի գերեզմանի. որ միայն մարմինն է աստուածութեամբն. և քրիստոս էջ ի դժոխս. որ միայն *հոգին* էր աստուածութեամբն: - 88. Կամ որպէս բոլորն է ի *հոգին*, այսպէս բոլորն է ի մարմինն միաւորեալ. և բոլորն յիրաքանչիւր մասն մարմնոյն: - 89. Նոյնպէս բանն աստուած և *հոգի* և մարմինն միաւորեալ է բոլոր մի քրիստոս. և ի պակասիլ միոյն՝ ո՛չ մնայ քրիստոս: - 89. Եթէ երկուքն, հարկ է ասել ձեզ՝ փառք հօր՝ և որդւոյ երկու բնութեանցն՝ և *հոգւոյն* սրբոյ: - 90. Եւ կամ թէ՝ մկրտիմք յանուն հօր՝ և որդւոյ բ բնութեանցն՝ և *հոգւոյն* սրբոյ. և որ սոցին նման: - 90. Եւ թէ մարմինն քրիստոսի չէ աստուած, և *հոգին* քրիստոսի չէ աստուած, որպէս նոքա բարբանջեն. ապա և բոլորն քրիստոս չէ աստուած. զի բոլորն քրիստոս յաստուածութենէն միաւորեալ լինի մի քրիստոս. և բաժանեալ ո՛չ է քրիստոս: - 91. Դարձեալ՝ որպէս ձեռն և ոտն մարդոյ ո՛չ է մարդ, նոյնպէս և ձեռն քրիստոսի ո՛չ է քրիստոս. և ոտն և այլ մասունքն ո՛չ են քրիստոս. ապա և բոլոր մարմինն ո՛չ է քրիստոս. և *հոգին* ո՛չ է քրիստոս. ապա թէ սոքա չեն քրիստոս, և բանն ըստ ինքեան ո՛չ է քրիստոս: - 91. Երևի ապա զի աստուծոյ ո՛չ ասեն զմասունքն, այսինքն զձեռն և զոտն. ապա ըստ նոցա և մարմինն չէ աստուծոյ մարմին. և արիւնն չէ աստուծոյ. և *հոգին* չէ աստուծոյ. այլ ամենեքեան սոքա մարդո՛յ են: - 91. Ասեն զայս թէ՝ քրիստոսի է մարմին. և քրիստոսի է արիւն. և քրիստոսի *հոգի*. այլ աստուծոյ ո՛չ ասեն: - 91. Այլ ասելն՝ աստուած է և աստուծոյ մարմին. *հոգի*. և այլն. ուղղակի՛ է: - 92. Այսպէս մարմին և *հոգին* են ի գոյացութենէն քրիստոսի: - 92. Իսկ թէ ասես միայնաբար աստուած է մարմինն՝ և աստուած է *հոգին*. այսու ո՛չ լինիս բազմաստուած. զի մի՛ է աստուածութիւնն ի սոսա միաւորեալ էութեամբ և գոյացութեամբ: - 93. Եւ դարձեալ որպէս ասեմք զմարմինն և զարիւնն և *զհոգին* և զբանն քրիստոս՝ և ո՛չ է բազում քրիստոս: - 93. Նոյնպէս և ասելն թէ՝ մարմինն քրիստոսի աստուած է. և արիւնն աստուած է. և *հոգին* աստուած է. ո՛չ է բազմաստուած. այլ մի աստուած: - 93. Իսկ թէ ասի ուրեք՝ ի *հոգւոյն* և ի հօրէ օծանիլ նմա, վասն տնօրէնութեանն խորհրդոյ ասին: - 95. Ահա և այսու ի վեր է նա. զի յէակցէ *հոգւոյ* իւրմէ՝ և ի բնութեամբ հօրէ: - 95. Ապա ուրեմն *հոգին* քրիստոսի ունի զամենայն ճանաչումն լցեալ *հոգւովն* սրբով: - 97. Ապա ուրեմն *հոգին* քրիստոսի կատարելագոյն ճանաչէ զաստուած: - 97. Քսանևմիերորդ՝ արդ՝ եթէ քրիստոս տգէտ ունէր միտս, և տկար *հոգի*, և ապականացու մարմին և եկն քրիստոս զի բարձցէ զտկարութիւնս մեր. և լուսաւորեսցէ որ նստէաք ի խաւարի. և նա՛ է գառն աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի և զապականութիւն: - 99. Արդ՝ եթէ առաքեալքն որ բնակարանք են *հոգւոյն* ճանաչեն *զհոգին* աստուած, և մարդկութիւնն քրիստոսի ո՛չ ճանաչէ, փոքր քան զբնակարանքն եղիցի քրիստոս: - 99. Ապա ուրեմն *հոգին* քրիստոսի ունի անհուն գիտութիւն. զի ճանաչէ զանհուն գիտացեալս: - 100. Այսպէս զի *հոգին* քրիստոսի ճանաչէ զամենայն բովանդակ կարողութիւնն իւր. և զամենայն յորս կարէ: - 100. Ապա ուրեմն *հոգին* քրիստոսի ճանաչէ զանհունս: - 100. Արդ՝ որպէս օդ լուսաւորեալ՝ ո՛չ ունի մասն խաւարի, Նո՛յնպէս *հոգին* քրիստոսի միաւորեալ ի բանն աստուած՝ ո՛չ ունի մասն տգիտութեան: - 100. Որով և ընդ Որում Հօր և *Հոգւոյն* սրբոյ փառք և պատիւ և իշխանութիւն յամենայն գոյից անբաւ յաւիտենիւ ամէն: - 101. Զանազանի հրեշտակն. և *հոգի* մարդոյ. և իմացումն հրեշտակաց: - 102. Նա՛խ՝ զի ասեմք հայր և որդի և *հոգի*: - 105. Զի հայր ո՛չ է որդի և ո՛չ *հոգի*: - 105. Նոյնպէս զորդւոյ և *զհոգւոյ* իմասցիս: - 105. Երկրորդ՝ ասեմք ծնօղ և բղխօղ հայր, ծնեալ և առեալ որդի. բղխումն և առումն *հոգի*: - 105. Տե՛ս՝ զի *հոգին* բղխումն է հօր անձամբ. և առումն յորդւոյ իմաստութեամբ. որպէս ցուցաւ ի վեց գլուխն ի ժգ համարն: - 105. *Յոգի* յանպատճառէն և ո՛չ պատճառ: - 105. Վասն զի հայր ո՛չ ունի հայր. այլ ունի որդի և *հոգի*: - 105. Որդի ո՛չ ունի որդի. այլ ունի հայր և *հոգի*. զի *հոգի* քրիստոսի ասեմք: - 105. *Յոգին* ո՛չ ունի որդի և ո՛չ *հոգի*. այլ պատճառ զհայր: - 105. Չորրորդ՝ կարողութիւնն հօր. իմաստութիւնն որդւոյ. բարութիւնն *հոգւոյն*: - 105. Եւ *հոգին* զայրացօղ վասն

հնչման: - 105. Հինգերորդ՝ որպէս միա՛կ է հայր. զի սկիզբն է ամենայն թւոց. և երկեակ որդի. և երրեակ *հոգի* ըստ աստուածաբանին: - 105. Ո՛չ թիւ ասեմ. ապա թէ ո՛չ, մի հայր. մի որդի. մի *հոգի*: - 105. Եւ որպէս մշտնջենաւոր որդի ի հօրէ սկսեալ և անվախճան. որպէս ժամանակ *հոգի* ի հօրէ սկսեալ և յորդի դադարեալ: - 105. Այսպէս և կոչումն երից անձանցն. հա՛յր. որդի՛. *հոգի՛*: - 105. Երկրորդ՝ հաւասարա՛կ է ի միմեանս գոլ անձանցն. որպէս որդի ի հայր. և հայր յորդւոջ. և *հոգի* ի հայր և յորդի. և անդրադարձեալ: - 106. Երրորդ՝ հաւասարա՛կ է ի յԵրրորդութիւնն միութիւնն սուրբ. զի մի է հայր. մի որդի. մի *հոգի*: - 106. Ութերորդ՝ նա ծնաւ ըստ մարմնոյ, զի դու ծնցիս ըստ *հոգւոյ*: - 107. Եւ զի նա հոգևոր ծնեալ՝ ծնաւ ըստ մարմնոյ. զի դու մարմնաւոր ծնեալ՝ ծնցիս վերստին ըստ *հոգւոյ*: - 107. Նոյնպէս հայր սկիզբն է. և որդի և *հոգի* ի միոյ սկզբնէ: - 107. Երրորդ՝ զի գ մի է. այսինքն մի. մի. և մի. նոյնպէս մի հայր. մի որդի. մի *հոգի*: - 107. Եւ որպէս մի է *հոգի* և բան և կենդանութիւն իւր. որ է՛ խօսքն և շունչն: - 107. Իսկ ի սուրբ Երրորդութիւնն՝ մինն պակաս չունի քան զերկուքն. և ո՛չ երկուքն աւելի քան զմինն. զի հայր ունի զամենայն լիութիւն որդւոյ և *հոգւոյ*: - 108. Նոյնպէս և որդի և *հոգի*: - 108. Իսկ ի սուրբ Երրորդութիւնն հայր կատարեալ. որդի կատարեալ. *հոգի* կատարեալ. և կատարեալն ո՛չ յաւելու և ո՛չ նըւազի: - 108. Իսկ սուրբ Երրորդութիւնն անփոփոխելի է. զի հայր ծնաւ զորդի և բղխեաց *զհոգին*. և ո՛չ փոխեցաւ ի գոլոյն հայր: - 108. Նոյնպէս և որդի և *հոգի*: - 108. Իսկ ի սուրբ Երրորդութիւնն անբաժանելի՛ է հայր ի յորդւոյ և ի *հոգւոյ*. որդի ի հօրէ և ի *հոգւոյ*. և *հոգի* ի հօրէ և յորդւոյ: - 108. Ա՛րդ՝ ասեմք զհայր աստուած. և զորդի աստուած. և զհոգի աստուած. ապա կարե՞մք ասել զհայր երրորդութիւն. և զորդի երրորդութիւն. և *զհոգին* սուրբ: - 108. Վասն է՞ր *հոգի*: - 108. Դարձեալ՝ որ զամենայն ստեղծ՝ հայր կոչի. և որ զամենայն պարունակէ՛ զի մի՛ լուծցին՝ որդի. և որ շնչելով կենագործէ և զարդարէ զամենայն՝ *հոգի* սուրբ յորջորջի: - 108. *Հոգին* սուրբ ընդէ՞ր ո՛չ կոչի որդի: - 109. Քանզի ո՛չ է ծնունդ, այլ բղխումն. որպէս շունչ և կեանք ի *հոգւոյս* մեր: - 109. Վասն է՞ր յորժամ փառս տամք, նախ՝ հօր, ընդ նմին որդոյ, և ապա *հոգւոյն*: - 109. Ա՛րդ՝ զի հայր պատճա՛ռ է որդւոյ ծննդեան՝ և *հոգւոյ* բղխման, վասն որոյ հայր նախադասի. իսկ ընդ նմա որդի. ո՛չ որպէս ոմանք կարծեն որդի պատճառ է *հոգւոյ* բղխման, այլ գ է ուղիղ տեսութիւնն: - 109. Նախ՝ զի հայր պատճառ է *հոգւոյ* բղխման՝ և որդւոյ առման. զի *հոգին* սուրբ բղխէ՝ ի հօրէ՝ և առնու յորդւոյ: - 109. Երրորդ՝ որդին ծնունդ նկատէ ի յէութիւնն, և *հոգին* ի կեանքն. և նախ է գոլ իրին՝ և ապա կենդանի: - 109. Նախ՝ զի մի անձն հօր բազմացաւ ի յանձն որդւոյ. և բազմապատկի ի յանձն *հոգւոյն* սրբոյ: - 110. Նախ՝ առ համաբունսն՝ հայր սկիզբն է որդւոյ և *հոգւոյն* սրբոյ. և պատճառ այլ ամենայն արարածոց: - 110. Եւ որպէս մի է զօրութիւն *հոգւոյն*, և յիւրաքանչիւր մասունս մասնաւորի: - 112-113. Այլ արդ՝ ըստ անեղ էութեանն յառաջ էած զանեղ էութիւնն որդւոյ և *հոգւոյ*. և ըստ անհուն զօրութեանն յառաջ էած զեղականն էութիւն. զի անհուն զօրութիւնն կարօ՛ղ է ամենայն ընդդիմակաց. ըստ որում ամենազօ՛ր է: - 113. Դարձեալ՝ անեղն և անսկիզբն աստուած հայր՝ յինքենէ յառաջ քան զյաւիտեանս ծնաւ և բղխեաց զանեղակից որդին՝ և զսուրբ *հոգին*: - 114. Ա՛րդ՝ որդի և *հոգի* անեղակից գոլով՝ հաւասար են հօր: - 114. Այլ արդ՝ որդի և *հոգի* ըստ որում ի պատճառէն՝ սկիզբն ունին զհայր. և ըստ որում՝ նախ քան զյաւիտեանս՝ անսկիզբն են ընդ հօր: - 114. Զի հայր անսկիզբն՝ յինքենէ՛ սկսեալ որդւով և *հոգւով*՝ արար սկիզբն սկզբնաւորացս...: - 114. Ո՞րպէս է անժամանակ աստուած, և անժամանակ է *հոգի*: - 114. Իսկ *հոգի* ո՛չ է արարիչ ժամանակաց. և ո՛չ յառաջ քան զժամանակս. զի ի մէջ ժամանակի՛ է: - 114. Ո՞րպէս յաւիտենական է աստուած. և յաւիտենական *հոգին*: - 114. Իսկ *հոգի* մեր՝ և հրեշտակք՝ ասին յաւիտենականք. զի ո՛չ են ընդ ժամանակաւ. այլ ընդ յաւիտենիւ: - 114. Այսպէս և փառս տամք հօր և որդւոյ և *հոգւոյն* սրբոյ: - 116. Իսկ հրեշտակք և *հոգիք* և աշխարհ՝ կոչին յաւիտենականք. զի հաղո՛րդ են յաւիտենին. այնմ որ սկսեալ է և անվախճան: - 116. Եւ մշտնջենաւոր՝ որ ունի սկիզբն՝ և ո՛չ կատարած. որպէս հրեշտակք. և *հոգի* մարդոյ: - 116. Որո՞վ զանազանի և հաւասարի կեանք *հոգւոց* և հրեշտակաց: - 117. Իսկ *հոգին* փոփոխի: - 117. Եւ զայլ յատկութիւնս *հոգւոյ* և հրեշտակի՝ ցուցանելո՛ց եմք յառաջիկայսդ չորիւք: - 117. Զի ո՛չ մարմին է. և ո՛չ *հոգի*. և ո՛չ միտ. և ո՛չ այլ ինչ զոր մեք գիտեմք կամ իմանամք: - 122. Նախադրութեամբն՝ որ է՛ և ասի. որպէս Հա՜յր. Որդի՜. *Հոգի՜*. լո՜յս. կեա՜նք. և այլն: - 123. Եւ *հոգւոյն* պատկեր՝ լոյսն սպիտակ: - 124. Նոյնպէս հայր է սկիզբն որդւոյ ծննդեան. և *հոգւոյն* բղխման: - 124. Եւ որդի և *հոգի* ի հօրէ: - 125. Նոյնպէս և բանն մարմին եղև. և *հոգին* ո՛չ: - 125. Վեցերորդ՝ դեղինն զառաքինութիւն մարմնոյն. և սպիտակն զանմեղութիւն *հոգւոյն*: - 125. Եւ *հոգւոյն* շնորհք իջանէ ի մեղաւորս և լուսաւորէ: - 125. Այս է զի *հոգին* սուրբ որդւով պարգևի ամենայն արարածոց յերկինս և երկրի: - 125. Եւ նա՛խ եկաւորի *հոգին* ամենայն ուրեք. որպէս ի մարգարէսն և ի կոյսն սուրբ, և ապա՛ բանն մարմնացաւ. և յետոյ *հոգին* սուրբ էջ յառաքեալսն և յեկեղեցի մնաց: - 125. Նոյնպէս հրեշտակաց և դիւաց՝ չարաց ի մարդկանէ և բարեաց ընտրութեան *հոգի* ընկալաք: - 126. Եւ տէրն զհին կտակն որ խստութիւն էր

և սպանօղ` ընդ նորոյս խառնելով. որ *հոգւով* է և կեցուցանօղ: - 126. Վասն որոյ էջ ի դժոխս` և կորզեաց *զհոգիսն* ի բերանոյ գազանին: - 128. Զայս ոմանք ի վերայ սուրբ Երրորդութեանն մեկնեն այսպէս. սիրօղ է հայր. սիրելի որդի. և սէր *հոգին* սուրբ: - 128. Երրորդ` կրկին ոտքն *զհոգի* և զմարմին նշանակէ: - 130. Իսկ` *հոգի* մարդոյ միայն իմանալի և ո՛չ իմացական. զի իմանան զվերինսն` իմանալի՛ են: - 130. Մարդն` զի այրացեալ աստուած. և արծըւին` զի *հոգին* ի վերուստ պարգևեալ: - 132. Արծւին երագընթաց մարկոս. ի *հոգւոյն* մարգարէութենէն արարեալ սկիզբն: - 133. Եւ սերօբէն որ է՛ ջեռուցիչ` ի դէմս *հոգւոյն* սրբոյ. զի նա՛ է հուր սիրոյ զոր էարկ տէր մեր յերկիր: - 135. Նախ` զի պետութիւնք պատշաճին առ հայր. և հրեշտակապետքն առ որդի իբր յերկուց միացեալ. և հրեշտակքն ի դէմս *հոգւոյն* իբր նախ եկաւորեալք յամենայն ուրեք, և ապա յորդի և ի հայր բնակեալ: - 136. Նախ է հասարակ` գոլն *հոգի*` անմարմին` և իմացական: - 137. Շնորհն երբեմն ի տեղի ողջունի դնի. ըստ այնմ թէ` «շնո՛րհք ընդ ձեզ և խաղաղութիւն». որով *հոգին* սուրբ տըւեալ լինի: - 139. Երբեմն զզանազան պարգևս *հոգւոյն* զոր յաւազանէն տայ մարգարէութիւն քահանայութիւն` լեզւաց գիտութիւն...: -140. Որո՞վ զանազանի հրեշտակն և *հոգի* մարդոյ` և հաւասարի: - 140. Նախ` զի *հոգին* բանական է. և հրեշտակն իմացական: - 140. Երկրորդ` *հոգին* միաւորի ընդ մարմնոյն. և հրեշտակն ո՛չ: - 140. Երրորդ` հրեշտակն ըստ ինքեան անձն է. և *հոգին* մարմնովն է կատարեալ անձն: - 141. Չորրորդ` հրեշտակն անփոփոխ է. իսկ *հոգին* փոփոխական. որպէս ասացաք ի լզ գլուխն: - 141. Իմացումն հրեշտակաց և *հոգւոց* ո՞րպէս զանազանին: - 141. Նախ` զի հրեշտակն միեղէն և բոլոր իմանայ. իսկ *հոգին* բան բան և մասնաւոր. վասն որոյ բանական կոչի: - 141. Երկրորդ` հրեշտակն պարզապէս իմանայ. և *հոգին* շարախառնի ընդ իրին: - 141. Չորրորդ` *հոգին* փոխանցապէս իմանայ և յարացուցիւ. իսկ հրեշտակն զնախատիպն առանց յարացուցի: - 141. Նմանապէս և այս փոխի ի յարութեանն, և հրեշտակաց հաւասար լինի և *հոգւոյն*: - 141. Եւ այս առ հրեշտակս` կամ առ *հոգիս*` կամ ի մարմինս: - 142. Նմանապէս և *հոգին* շարժի բոլոր` գնդակ` և ուղիղ: - 142. Իսկ գնդակ որ է կողմնաւոր` շարժի *հոգին*, յորժամ բնականապէս լուսափայլի յաստուածային գիտութիւնս տեսութեամբ և մտածութեամբ. և այնպէս հոգէպէս ի յաստուած միաւորի. որպէս աշակերտաց առաքելոց և մարգարէից: - 142. Դարձեալ` աստուած ընդ *հոգիս*, և *հոգին* ընդ աստուծոյ: - 144. Է՛ և խօսք *հոգւոց*: - 145. Զի *հոգին* խօսի ընդ աստուծոյ բաղձանօքն որ մերկապարանո՛ցն է առաջի նորա: - 145. Նոյնպէս և խօսի *հոգին* ընդ հրեշտակն մարմնական կերպիւ զոր իմանայ հրեշտակն որպէս զայլ զգալիս որքան է ի մարմնի: - 145. Դարձեալ` *հոգին* խօսի ընդ դիւին, զի զբաղձանք սրտին տպաւորէ ի զգայութիւնսն: - 145. Եւ թէպէտ լոյս կերպարանի այժմ, բայց չտեսնու զլոյս իւր. որպէս և ո՛չ մեք զմեր *հոգւոյս*: - 147. Եւ որք ի ջուրս և ի ծնունդս կանանց` ա՛լք կոչեցան. զի գէջ ախտիւն *զհոգիս* կորուսանեն. և ի ծնունդս` զմարմինս և *զհոգին*: - 150. Յինգերորդ` զի հոգևոր բնութիւնն միանգամ միայն է շրջելի. վասն զի բոլորովին շրջէ զինքն` զոր ո՛չ առնէ մարդն. զի մարմինն միշտ մարտնչի ընդ *հոգին*. որպէս յառաջիկայդ ասի **լբ** գլուխն: - 151. Երկրորդ` բռնութեամբ *զհոգիս* ի տանջանս տանելոյ մինչ ի քրիստոս: - 153. Զի յետ քրիստոսի դադարեաց սատանայ *զհոգիսն* ի դժոխս տանելոյ որպէս ասէ սուրբն եպիփան: - 153. Բաղդատութիւն ամպոյ և մեղաց. ամպոյ և սուրբ կուսին. և յատկութիւնք փայլման ի *հոգին* սուրբ: - 155. Յաւատոյն յատուկ է` զի մի՛ անգամ է, և կնի՛ք է ի *հոգին* նախկին: - 166. Այլ ասի տեղի կերպիւ ինչ, զի է՛ հայր ի յորդի. և որդի ի հայր. և *հոգի* ի հայր և յորդի. և անդրադարձեալ...: - 172. Իսկ անմարմնոյն ո՛չ է տեղի մարմնական. որպէս աստուծոյ կամ հրեշտակաց. կամ *հոգւոց*. զի անպարագրելի են: - 174. Եւ գիտելի է` զզանազանութիւն սոցա. զի *հոգին* է ի մարմինն կալմամբ և սահմանեալ. այլ ո՛չ պարագրեալ. իսկ հրեշտակն ո՛չ կալմամբ ի մարմին և ոչ պարագրեալ. այլ սահմանեալ: - 174. Նախ` զի սոքա անմարմինք են ըստ ինքեան. այսինքն քանակ, որակ, և այլքն. և յանմարմին էութիւնս ո՛չ տեսանին. որպէս ի հրեշտակս կամ ի *հոգիս*. զի նոքա ո՛չ ունին ձև. որակ. քանակ. և զայլսն: - 175. Եւ որպէս ի ժողովիլ *հոգւոյ* և մարմնոյ լինի մարդ. և ի բաժանիլն կորնչի. այսպէս և զայս իմա: - 175. Որպէս *հոգի* և մարմին բնութեամբ միաւորին ի մի բնութիւն և ի մի դէմ և ո՛չ շփոթին: - 176. Ապա թէ կամիս զորոշումն բնութեանց ի ներքս բերել ո՛վ երկաբնակ, մի՛ ասեր **բ** բնութիւն. այլ **գ**. այսինքն զմարմնոյ և *զհոգւոյ* և զբանին բնութիւն: - 176. Որպէս ի նիւթոյ և ի տեսակէ մարմին. և ի *հոգւոյ* և ի մարմնոյ կենդանին. և յարուէ՛ և իգէ ծնեալն. նոյնպէս ի ձայնաւորէ՛ և յանձայնէ՛ բանն ծնանի: - 177. Ապա ուրեմն ձայնաւոր գիրն է ձայն, և է տեսակ, և *հոգի*, և արու: - 177-178. Երկրորդ` առաջին ստեղն է հայր. ոչ յումեքէ. միջինն որդի ծնունդ ի հօրէ. վերջինն *հոգի* բղխումն ի հօրէ և ելումն յորդւոյ. զի որդւովն երևի. և հարթ հաւասար աստուածութեամբ և արարչութեամբ: - 178. Երկրորդ` յերից գծից բաղկանայ. որպէս մարդ ի *հոգւոյ* և ի մարմնոյ և ի մտաց: - 178. Դարձեալ` իմաստութեամբն տիրեմք ծովու և ցամաքի. և բազում բարութիւն *հոգւոյ* և մարմնոյ ի նմանէ ծնանի: - 178. Եւ է՛ իմանալի լոյս` որպէս հրեշտակք` և *հոգի* մարդոյ.

և պատուիրանըն աստուծոյ...: - 185. Նոյնպէս և *հոգին* նախ ի յինքենէ անտեսակ և անկատա՛ր է. և յետոյ կատարի յաստուծոյ շնորհօք և առաքինութեամբ և գիտութեամբ: - 192. Չորրորդ՝ պատուեցաւ յարութեամբըն քրիստոսի. և իջմամբ *հոգւոյն* սրբոյ ի դասս առաքելոցն: - 193. Յոմանուն է *հոգւոյն*: - 202. Երկրորդ՝ որ *հոգւով* կառավարի: - 210. Երկիր որ *հոգւով* կառավարի, է՛ մարմին մահկանացու: - 210. Երկիր որ առ ժամանակեայ կենցաղավարի, է՛ *հոգի* բանական: - 210. Երկրորդն *հոգւոց* օթարան: - 210. Դարձեալ՝ յետ մահու *հոգի* մարդոյն ծաղկի և գեղեցկանայ առաքինութեամբն իւրով և բնական պայծառութեամբն: - 213. Եօթներորդ՝ զի փչեաց ի նա զշնորհաց *հոգին* զանազան պարգևաց, այժմ զքահանայութեան շնորհն երևեցոյց ի նա՛: - 219. Երկրորդն է կայանք *հոգւոց*: - 221. Երրորդն է *հոգւոց* և մարմնոց սրբոց: - 221. Այլ ո՛չ թէ *հոգի* ունէր բանական. այլ զօրութիւն իմացական: - 222. Յնգետասաներորդ՝ Վասն զօրութեան *հոգւոյն* **ժբ** թուով: - 227. Վեցտասաներորդ՝ Մասանց *հոգւոյն*: - 228. Իննևժերորդ՝ Յարցման *հոգւոյն* և բացադարձութիւն իմացմանն: - 228. Քսաներորդ՝ Վասն էութեան *հոգոյն* լուծումն հակառակ բանից. և ճշմարտութեանն հաստատութիւն զանազան հարցմամբ: - 228. Եւ չորս առանձնութիւն *հոգւոյ* մեր և աստուծոյ: - 228. Նոյնպէս ի հողեղէն և յապականացու մարմնոյս մարդկան՝ էառ բանն աստուած. և միաւորելով ընդ ինքեան ծնաւ անապական մարմնով. անմեղ *հոգւով* և մտօք. և եղև երկրորդ ադամ Տէր յերնից: - 229. Եւ այս իսկ է գործն, այսինքն վայելել *հոգւով* յիմանալիսն, և մարմնով ի զգալիսս. պարտ էր նախ գոյանալ նոցա, և ապա՛ գործողին և վայելողին: - 231. Եւ մարդն ունի իմանալի *հոգի* և զգալի մարմին: - 231. Նա՛խ՝ ըստ փիլիսոփայիցն ներքին մասունքն *հոգւոյն* պատճառե՛ն զարտաքին մասունս մարմնոյն. և ըստ պղատոնի՝ *հոգին* եռամասնեայ գոլով՝ բան և ցասումն և ցանկութիւն: - 232. Եւ է՛ բանն առաջին մասն և զօրութիւն *հոգւոյն*: - 232. Տասներորդ՝ զի կիրք մարմնոյն հեղուն ի *հոգին*. որպէս յորժամ մարմինն ննջէ՝ և *հոգին* թմրի և անգործ մնայ...: - 233. Այլ և ի միտ ածցուք զփառս երկնային կենաց ուստի անկաք, և անդ դիմելոց եմք. զի տեսութիւն մտացն *զհոգին* ընդ ինքեան ի վեր տանի. և նա զշունչն. և շունչն ընդ արեանն է կապեալ. և արիւնն ընդ մարմնոյն. զգայարանքն ընդ մարմնոյն. և լինի մարդն բոլորովին երկնային: - 233. Երկրորդ՝ ցուցանէ յերկուց մասանց գոլ զբոլոր մարդն. և *հոգոյն* է զգալն և տեսանել և այլն: - 234. Իններորդ՝ ա՛նդ են բերան և լեզուն. ուստի ներքին կիրք *հոգւոյն* և ամենայն բարութիւնք յառաջեն ի մեզ: - 234. Նոյնպէս և *հոգի*. ըստ այսմ նման: - 237. Եւ որպէս մարմնոյն պատկերք նման և աննման են իրերաց. նոյնպէս և *հոգին* ըստ միոյ բնութեան ստեղծեալք նման և աննմանք են իրերաց: - 237. Նա՛խ՝ զի անմարմին դիմօք առանձնանան ի միմեանց. և այս յատուկ դիմօքս ճանաչեն *հոգիքն* զմիմեանս. որպէս մեծատունն զղազարու և զաբրահամու *հոգին*: - 237. Եւ այս դէմքս անփոփո՛խ է ի *հոգւոյն* ի կեանս և ի մահ. ո՛չ աճէ և ո՛չ նուազի: - 237. Է և այլ իմն աննմանութիւն *հոգւոյ* ըստ իմացմանն. առաւել և նւազ. ուշիմ և ապուշ. չկամ և կամեցօղ. հեզ և յանդուգն. ցանկացօղ և ողջախոհ. ըստ բնական բարոյիցն որակացեալ. նման և աննման գոլով իրերաց: - 237. Ասեմք թէ՝ սոքա ի մասնաւոր *հոգւոյն* բարի են բնաւորեալ նախանձ ցանկութիւն և այլն. և վասն բարւո՛յ են եղեալ. այլ մարդն կամօք իւրովք փոխէ՛ զբնական բարին ի չարն: - 237. Ո՞րքան են զօրութիւնք *հոգւոյն*: - 248. Իսկ մաքսիմոս իմաստասէրն ասէ, *Յոգի* մարդոյ **բ** զօրութիւն ունի. միտք և բան: - 248. Իսկ ըստ այլոց, զօրութիւնք *հոգւոյն* բաժանին յերկուս. որ է իմացումն և կամքն: - 248. Դարձեալ են զօրութիւնք *հոգւոյն* բաժանեալք ի մարմնոյն. որպէս իմանալն և կամիլն: - 249. Ի յայսոսիկ *հոգին* ո՛չ առնու ի կիր զմարմինն. այլ զկիր առնօղն մարմնոյն զտրամախոհութիւն: - 249. Դարձեալ *հոգին* ունի զօրութիւնս ոմանս անխառն ընդ մարմնոյն. որպէս բանն՝ կամքն՝ և սոյնպիսիք: - 249. Դարձեալ *հոգին* ունի զօրութիւնս ոմանս հասարակ ընդ անասնոց. որպէս զգայականութիւնն: - 249. Դարձեալ են և ա՛յլ զօրութիւնք անբաժանելիք ի *հոգւոյն*. որպէս տնկականք, և զգայականք: - 249. Զի թէպէտ ըստ ներգործութեանն բաժանին երբեմն ի բաժանելի մարմնոյն՝ զի առանց մարմնոյն ո՛չ կարեն ներգործել սոքօք, այլ անբաժանելի մնան ըստ էութեանն ի *հոգին*. որպէս ցուցանելոց եմք յառաջիկայսդ: - 249. Դարձեալ զօրութիւնք *հոգւոյն*. ոմանք են հնազանդ բանին. և ոմանք են անհնազանդ: - 249. Դարձեալ զօրութիւնք *հոգւոյն* բաժանին ի ներքին զգայութիւնքն և յարտաքին: - 249. Դարձեալ զօրութիւնք *հոգւոյն* բաժանին երրակի ըստ երից ներգործութեանցն. որ է՛ կենդանանալն. զգալն. և բանաւորիլն: - 249. Եւ ըստ այսմ զանազանին երեքկին զօրութիւնք *հոգւոյն*. այսինքն տնկական. զգայական. և բանական: - 249. Զի տնկական *հոգին* յօժարի՛ գոլ. և զգայականն բարեպէս գոլ. և բանականն ևս բարեպէս գոլ. զի ո՛չ երբէք հանգչի, մինչև միաւորեսցի ընդ ևս բարեգունին: - 249. Մասունք *հոգւոյն* ո՞րպէս ճանաչին: - 250. Որպէս յարարածս աստուած ճանաչի, այսպէս և ի մարմնոյս *զհոգին* օրինակաւ իմանալ մորթի: - 250. *Յոգւոյն* գլուխ՝ միտքն: - 250. *Յոգին* կեանք: - 250. Որպէս օրինակաւ մասունք *հոգւոյ* ասացան, նոյնպէս է և մասունք մարմնոյն իւրաքանչիւրոցն գործի: - 250. Զմարդոյ *հոգին* ո՞րպէս իմանալ մարթի: - 251. *Յոգին* պատկե՛ր է

աստուծոյ. և աստուածապաշտ մարդոյ՝ զաստուած քննել ո՛չ մարթի թէ ուստի՞ է. կամ ո՞ւր է կամ ո՞րչափ է. և կամ թէ ո՞րպէս է. կամ թէ մինչ ի յուր է: - 251. Նմանապէս և ո՛չ *զհոգի* մարդոյն: - 251. Իսկ տրամադրութիւնք *հոգւոյն* խառնուածոյ մարմնոյն ո՛չ հետևին: - 251-252. Նոյնպէս և ի բանական որակութիւնս *հոգւոյն* նման և աննման, հաւասար և անհաւասար բացատրեաց. այսինքն խոհեմ և տգէտ. հեզ և բարկացօղ. ողջախոհ և ցանկասէր. և այլ զանազան բարս բնական՝ մարդոյն: - 252. Խնդրեմ ուսանիլ վասն բոլոր էութեան *հոգւոյն* թէ ո՞րպէս կամ զի՞նչ եղանակաւ գոյանայ: - 252. Զի ոմանք ասեն *զհոգին* յառաջ գոյանալ քան զմարմինն: - 252. Եւ ոմանք զմարմինն քան *զհոգի*: - 252. Զի որք *զհոգի* յառաջ ասեն գոյանալ՝ զայս դնեն պատճառ, եթէ յէակքս իմանալիքն յառաջ ստեղծան քան զգալիքս. ապա և ի մարդոյն էութիւն *հոգին* յառաջ է քան զմարմինն: - 252. Եւ որք զայս ասեն՝ հետևին մոլորութեանցն պղատոնի մարմնափոփոխութեանցն. որ ասէ քաղաք ի յերկինս. և *հոգիքն* անդ ժողովեալ իբրև զզօր և զդասս: - 252. Զոր ընդ դերևս հանէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս կազմութեան այսպէս եթէ, որք *զհոգին* յառաջ ասեն գոյանալ քան զմարմին. և վասն մեղաց եդեալ ի մարմին մարդոյ. որ է՛ համանման բանականութեամբ. և է՛ իներքոյ երկնային կենաց՝ զի մարմնաւո՛ր է: - 252. Այս քան առ նոսա, որք *զհոգի* յառաջ ասեն քան զմարմին: - 253. Իսկ որ զմարմին յառաջ ասեն քան *զհոգի*, վկայ ածելով զմովսէս որ ասէ եթէ՝ էառ զհողն և շինեաց մարմին. և յետոյ փչեաց ի նա զշունչն կենդանի, որ է կենդանարար *հոգին*: - 253. Եւ դարձեալ՝ յիւրաքանչիւր կազմուած մարդոյ՝ յառա՛ջ է մարմինն քան *զհոգին* **խ** աւուրբ կամ **ծ**: - 253. Պատասխանեմք առ այս եթէ՝ փչումն ո՛չ զբանական *հոգին* ասեն սուրբ հարքն. զի մարդ ասելով *զհոգի* և զմարմին նշանակեաց. և զմարմինն զի ի նիւթո՛յ է՝ ի հողոյ ասաց. այսինքն ի **դ** տարերաց որ է՛ ի հողն. և *զհոգին* ո՛չ նշանակեաց թէ ուստի՞ է. զի յանէից է ստեղծումն նորա: - 253. Եւ արդ ի կատարեալ մարդն *հոգւով* և մարմնով՝ փչեաց զշնորհաց *հոգին* ի մարդկայինս ազգ. և ունէին որ քան յանմեղութեան էին. և կորուսին ի մեղանչելն: - 253. Եւ դարձեալ՝ եթէ տամք զփչումն՝ բանական *հոգւոյն* ըստ ոմանց, և այսու յետո՛յ իմանալ *զհոգին* քան զմարմինն մեղանչումն է ճշմարտութեան ըստ **ե** եղանակի: - 253. Նախ եթէ վասն մարմնո՛յն եղև *հոգի* զի շարժեսցէ զնա. ապա անա՛րգ է *հոգին* քան զմարմին որ վասն նորա եղելն է. և մեծ և պատուական է մարմին քան *զհոգի*: - 253. Եւ տէրն ասէ՝ «ոգի առաւե՛լ է քան զկերակուր. և մարմին քան զհանդերձ». զի սոքա վասն պիտոյից *հոգւոյ* և մարմնոյ եղեն: - 253. Այսպէս եթէ *հոգի* յետո՛յ ստեղծաւ վասն մարմնոյն, անա՛րգ է քան զմարմին: - 253. Երկրորդ՝ զի մի գոյութիւն է մարդն բաղադրեալ ի *հոգւոյ* և ի մարմնոյ. ոչ է պարտ **բ** լինիլ սկիզբն. այլ մի էութեանն մի է սկիզբն: - 253-254. Երրորդ՝ զի թէ *հոգին* յետո՛յ է քան զմարմին, լինի ինքն առ ինքն խեղ և անկատար: - 254. Այսպէս և ի կազմուած իւրաքանչիւր մարդոյ ո՛չ է մարմին յառաջ քան *զհոգի* որպէս ցուցանելոց եմք: - 254. Իսկ վարդապետք ուղղաձևութեան՝ յանդիմանեալ զերկոսին կողմանց ստախօսութիւն, ո՛չ *զհոգի* յառաջ քան զմարմին ասեն ստեղծեալ, և ո՛չ զմարմին քան *զհոգի*: - 254. Զի է՛ սկիզբն նիւթական մարմնոյ կազմուածոյն. և է՛ սկիզբն՝ ծննդեան *հոգւոյ*: - 254. Ա՛րդ՝ ի նիւթոյն լինի կազմած մարմնոյն. և յազդու հրամանէն գոյացութիւն *հոգւոյն*: - 254. Եւ թէ ոք ասիցէ, զի՞նչ է այս որ յետ **խ**, կամ **ծ** աւուր ստեղծանի բանական *հոգին*: - 254. Պատասխանեմք և ասեմք թէ, ո՛չ է *հոգին* յետոյ. ո՛չ ժամանակաւ և ո՛չ բնութեամբ. այլ դասիւ և կարգաւ: - 254. Երկրորդ՝ զի զօրութեամբ ունի *զհոգին* յինքեան ծածկեալ. որ յետոյ ներգործութեամբ երևի: - 254. Եւ թէ ասէ ոք, ո՞րպէս է բանական *հոգին* նախ զօրութեամբ և յետոյ ներգործութեամբ: - 254. Այլ ի կողմանէ *հոգւոյն* զօրութեամբ ո՛չ է ի սերմն այն ըստ ինքնութեան բոլորին. այլ ըստ ինքնութեան մասին. որ է տնկականն և զգայականն: - 255. Եւ յորժամ ծնանայ ի կերպ մարդոյ, յայնժամ բանական *հոգին* երևի ի նմա ի խնամոցն աստուծոյ: - 255. Ապա ուրեմն համանգամայն ի միասին է *հոգւոյ* և մարմնոյ լինելութիւնն: - 255. Այսպէս և բանական *հոգւոյն* նշոյլք է զգայականն և տնկականն: - 255. Այսպէս և հնազանդեալ զօրք *հոգոյն* զգայականն և տնկականն է. և նոքօ՛ք է *հոգին* ի մարմինն: - 255. Նոյնպէս իմա՛ և *զհոգին*: - 255. Այսպէս և *հոգին* ընդ անկատար նիւթոյն ունի զկերակրիլն. և յորժամ հաստատի զգայութեամբն ծաղկի. և յևս հաստատիլն՝ բանականութեամբ պտղաբերի ի վերին խնամոցն որպէս պտուղն այն յարեգակնէ՛: - 255. Այսպէս և բանական *հոգին* համանգամայն երևի ընդ ծնանալ մարմնոյն: - 255. Այսպէս և *հոգին* է ի նմա ծաղկեալ, և յետոյ յայտնի ըստ կարգի: - 255. Եւ կամ որպէս ծնեալ մանուկն ունի առ ինքն ծածկեալ *զհոգին*. այլ նա կերակրի և ապա զգայ. և յետոյ խօսի: - 255. Եւ թէ ասիցէ ոք, ապա երևի թէ և բանական *հոգին* ի ծնողա՛ցն հատանի կամ գոյանայ: - 257. Նիւթ մարմնոյն է ի ծնողացն. այլ *հոգին* ո՛չ է ի ծնողացն. այլ ի հրամանէն աստուծոյ գոյանայ և երևի: - 257. Այլ և հատումն ամենևին ո՛չ ասի *հոգւոյն*. ո՛չ տնկականի և ո՛չ զգայականի և ո՛չ բանականի: - 257. Այլ հատումն նիւթո՛յն է և ո՛չ *հոգւոյն* վասն գ պատճառաց: - 257. Նա՛խ՝ զի անմարմին է *հոգին*. վասն որոյ ո՛չ հատանի. ո՛չ տընկականն. ո՛չ զգայականն. և ո՛չ բանականն: - 257. Երկրորդ՝ զի

հատեալն ապականի. այլ *հոգին* անապական է և անմահ: - 257. Ապա ուրեմն *հոգին* ո՛չ հատանի և ո՛չ գոյանայ ի *հոգւոյ* որպէս մարմին ի մարմնոյ: - 257. Եւ թէ ասիցէ ոք. արդ յայտնեա՛, նախախնամութեա՞մբ է լինելութիւն *հոգւոյ*, թէ ստեղծմամբ: - 257. Իսկ բանականս մարդ ո՛չ ամենևին նախախնամութեամբ է. զի *հոգին* ո՛չ ի ծնողաց, այլ ի շնորհացն աստուծոյ պարգևի: - 257. Զի նախախնամութեամբ ունի զտնկականն և զզգայականն. և ստեղծմամբ զբանական *հոգին* զպատկերն աստուծոյ: - 257. Եւ դարձեալ՝ նոյն ինքն բանական *հոգին* ո՛չ նոր ստեղծումն է և ո՛չ հին: - 257. Ո՛չ է հին, զի ըստ իւրաքանչիւր մարմնոյ համանգամայն ստեղծանի *հոգին*: - 257. Եւ ոչ նոր, զի մի և նոյն ի սկզբանէ հրամանն արարչադիր առանց տկարութեան ներգործէ մինչ ի կատարած. և ըստ իւրաքանչիւր *հոգւոյ*՝ նոր հրաման ստեղծանելոյ ո՛չ արծակի: - 257. Ապա ուրեմն բանական *հոգին* նախախնամութեամբ է և ստեղծմամբ: - 258. Նմանապէս և արուեստաւորն աստուած նախանկար տեսութեամբն ունի ի միտս իւր նախքան զլինիլն մարդոյն՝ զորպիսիութիւնն. զորքանութիւնն. և զայլն. իսկ արուեստն որ է արարչադիր հրամանն, ազդէ՛ ի նիւթն. և զի անկատա՛ր է նիւթն, անկատար տայ և նմա *հոգի* զտնկականն: - 258. Եւ ի կատարիլ մարմնոյն՝ հեղու ի նա *զհոգի* բանական ըստ նախատես գաղափարի այնորիկ որ էր ի միտս արարչին յառաջ քան զլինիլն աշխարհի: - 258. Եւ թէ ոք ասիցէ, վասն է՞ր նախ զտնկականն տայ և ապա զբանական *հոգին*: - 258. Եւ բնակա՛ն է, զի յանկատարէն ի կատարեալն ելանէ. որպէս աստիճանաւ ի գլուխ սանդղոյն. և ի սակաւուն ի բազումս. այսպէս և *հոգի*: - 258. Իսկ բարոյականն այս ինչ է. զի զպատկերն արարչական և զառաջին կեանս դրախտին կորուսաք, և զանասնեղէն պատկերն և զերկրորդ և զախտաւոր կեանս ընտրեցաք. յիրաւի շրջեցաւ ի մեզ և լինելութիւն *հոգւոյն*: - 258. Եւ թէ ոք ասցէ, երևի ապա թէ **գ** *հոգի* է ի մարդն զանազանութեամբ էացեալ: - 258. Ասեմք առ այս թէ՝ ո՛չ են **գ** *հոգիք* ի մարդն. այլ **գ** զօրութիւնք են *հոգւոյ*: - 259. Իսկ *հոգի* մի է մարդոյ ի միոյ նախախնամութենէ յառաջ բերեալ. յանկատար նիւթն եղեալ զտնկականն և զզգայականն. և ի կատարեալն *զհոգի* բանական ծագեալ: - 259. Եւ որպէս տեսանին՝ այլ և այլ *հոգիք* են սոքա յայլ և այլ տեսակս: - 259. Այլ ի մարդն ո՛չ է պարտ ասել **գ** *հոգի*. այլ մի *հոգի* և **գ** զօրութիւն: - 259. Նոյնպէս և ի զգայականս ո՛չ է պարտ ասել **բ** *հոգի*. այլ **բ** զօրութիւն: - 259. Իսկ զտնկականն ի տունկն ո՛չ է պարտ ասել զօրութիւն. այլ *հոգի* է տնկական: - 259. Եւ յա՛յտ ուրեմն է՝ թէ մի է *հոգի* մարդոյն: - 259. Նա՛խ՝ զի մի գոյութիւն է մարդն և մի կենդանի. մի *հոգի* է միոյ մարդոյ և մի կենդանութիւն: - 259. Երկրորդ՝ զի թէ այլ և այլ էր *հոգի*, ի յայլ *հոգւոյ* տեղիս ո՛չ բնակէր այլ *հոգի* որպէս յայլո՛յ կաղապար. և ա՛յլ դրօշած ի յա՛յլ կնիք. այլ մի է. վասն այն որ յետոյ երևի, յառաջնոյն խառնուածն կարէ՛ բնակիլ: - 259. Ապա ուրեմն մի է էութիւն *հոգւոյ* ի մարդն: - 259. Զի մի և նոյն *հոգին* ըստ այնմ որ ազդէ՛ ի տնկական ներգործութիւնն որ է՛ կերակրական. աճողական. և ծննդական. կոչի տնկական: - 259. Եւ ըստ որում իմանայ և խորհի, կոչի բանական *հոգի*. որպէս այլուր բաժանի ի տեսողական զօրութիւնն. և յիմացականն. և ի յիշողականն. մնալով անբաժանելի ներգործէ՛ ի նոսա: - 259. Իսկ թէ զսոսա **գ** տեսակս ասես, կամ զօրութիւնս, կամ մասունս բանական *հոգւոյն*, մի՛ է տեսութիւնն: - 259. Այլ արդ՝ օրինակաւ տեսցուք զմիութիւն *հոգւոյն*: - 259. Եւ զորօրինակ՝ ի զգայականն գոյ տնկականն, այլ մի է *հոգի* զգայականին և ո՛չ **բ**: - 259. Այսպէս և սոքա գոն ի մարդն, այլ մի է *հոգի* մարդոյ և ո՛չ երեք: - 259. Այսպէս մի է էութիւն *հոգւոյն* ըստ ինքեան, և յերիս բաժանի ըստ ներգործութեան: - 259. Եւ զորօրինակ՝ մի է բոլորն մասամբ իւրով. այսպէս մի է բոլոր *հոգի*, և սոքա մասունք նորա: - 259. Եւ յայնժամ զգայականն և տնկականն ո՛չ ունին զներգործութիւն իւրեանց ի կազմողական զօրութենէն. այլ ի նոյն ինքն ի *հոգոյն*: - 260. Եւ նա *հոգին* է որ զգայական և զտնկական զօրութիւնն ի գործ ածէ միայն ի մարմինն որքան է ի մարմնի: - 260. Իսկ զերրորդ գործն որ է իմանալն և բանաւորիլն, ունի *հոգին* և յետ անջատելոյն ի մարմնոյն: - 260. Այսպէս իմա և զբանական *հոգւոյն*. որ ի մարդն մի է և զանազանապէս ներգործէ: - 260. Ասեմք առ այս, եթէ և յետ մահուան ո՛չ բաժանին սոքա ի *հոգւոյն* ըստ էութեան. զի մի է էութիւն սոցա. այլ ըստ ներգործութեան. զի ո՛չ է մարմին՝ ո՛չ կարէ ներգործել: - 260. Եւ այսպէս ո՛չ է բաժանեալ ի *հոգւոյն*, այլ ի մարմնոյն: - 260. Եւ թէ ասիցէ ոք, երևի ապա թէ *հոգին* ինքն առ ինքն նախկին է և յետոյ եթէ մի է *հոգի*: - 260. Ասեմք առ այս, թէ մի է *հոգի* հաւաստեաւ. և ո՛չ է ինքն ինքեան առաջին և վերջին. զի մի էութեան՝ առաջին և վերջին ո՛չ է. այլ ըստ ներգործութեան. զի ըստ առաջին և վերջին զօրութեանն՝ առաջին և վերջին ներգործէ: - 260. Եւ թէ ասիցէ ոք, երևի ապա թէ առաջին զօրութիւն *հոգւոյն* տնկականն է՝ և վերջին բանականն որ է՛ յոյժ անպատշաճ: - 260. Այլ հակադարձեալ սոքա ըստ կարգի և ըստ դասու՝ յառա՛ջ է տնկականն քան զզգայականն, և նա՛ քան զբանականն ի յերևումն. այլ էութեամբ համանգամայն են. որպէս անդ ուրեմն ասացաք վասն *հոգւոյ* և մարմնոյ: - 260. Այսպէս իմա՛ և աստ վասն *հոգւոյ* և զօրութեանց նորա: - 260. Եւ թէ ոք ասիցէ, երևի ապա թէ յառաջագո՛յն է *հոգի* քան զմարմին, և յետոյ մասամբ երևի: - 260. Ասեմք

առ այս թէ, օն ի բա՛ց տար ի մտաց քոց զհեթանոսական կարծիս. զի ո՛չ է *հոգի* յառաջ քան զմարմին. և ո՛չ մարմին նախ քան *զհոգի* որպէս ի սկիզբն ասացաք: - 260. Եւ թէ զտեսութիւնս զայս կարծես էութիւն *հոգւոյ* ըստ որում է *հոգի*, ապա ո՛չ միայն ետես *զհոգի*, այլ և զմարմին՝ և զիւրաքանչիւրոց ընտրութիւն, և զհամար հերաց և զթիւն աստեղաց. և սոքա յետո՛յ են գոյացեալ ըստ կամաց տեսողին: - 260. Այսպէս և *հոգի* ըստ կամաց խնամողին յետոյ պարգևեալ ըստ թուոյ ծննդեան իւրաքանչիւր մարդոյ որպէս ինքն գիտէ: - 260-261. Եւ ի իա աւուրցն ի վեր՝ երևեալ շնչոյն ձևակերպէ՛ զկերպ մարդոյ մինչ ի **խ** օր արու մանկան. և իսկոյն հեղի ի նա՛ *հոգին* բանական ի շնորհացն աստուծոյ ծագեալ ի նա: - 261. Արդ՝ **ժ** թիւն կատարեալ է. և չորսն տարրական է. այսինքն զի կատարեալ *հոգին* բանական ի նո՛յն ժամն խառնեալ միաւորի ընդ մարմնոյն տարրական, և կերպացեալ լինի մի մարդ մի դէմ և մի բնութիւն մարդոյ ի *հոգւոյ* և ի մարմնոյ. որպէս քառասունն ի տասանց և ի չորից է գոյացեալ: - 262. Դարձեալ **դ** տարր, և տնկականն և զգայականն, և երեք մասունք *հոգւոյն* բան ցասումն և ցանկութիւն, որ լինի **թ**: - 264. Եւ է ամեայ ուսումն ստանայ. վասն որոյ մինչև յեօթն ամն երեխայ կոչի. զի **գ** մասունք են *հոգւոյն*. բան. ցասումն. և ցանկութիւն. ըստ պղատոնի: - 264. Եւ զի ա՛յս է թիւ կատարեալ չափոյ հասակի մարմնոյ և մասանց *հոգւոյ*: - 265. Նա՛խ՝ զի մնացորդք գործոց և խորհրդոց կերպարանին ի յիշատակարանս *հոգոյն* զոր ինչ գործեաց ի անցելումն, կամ խորհեցաւ վասն հանդերձելոյն: - 268. Դարձեալ՝ իմաստութիւնն պատշաճի հօր ըստ կարողութեան. և գիտութիւնն որդոյ իբր բան. և հանճարն *հոգւոյն* բղխման: - 270. Երրորդ՝ զի անմարմին է *հոգին*: - 271. Հայր և Որդի և Հոգին սուրբ. այսպէս ի մարդն միտքն բանն *հոգին*. ըստ եզնկացւոյ պլուզ վարդապետին: - 271. Ութերորդ՝ **գ** անձինք կատարեալք. և թէ մինն պակասիցէ՝ ո՛չ է կատարեալ աստուած. և մարդս երրորդությամբ է կատարեալ. *հոգւով* և մարմնով և բանիւ. և թէ մինն պակասիցէ՝ անկատա՛ր է մարդն ասէ վարդապետն վարդան: - 271. Մետասաներորդ՝ անտեղի և անո՛ւր է աստուած. և *հոգի* մարդոյ բոլորն է ի բոլոր մարմինն. և բոլորն յիւրաքանչիւր մասն: - 272. Երկոտասաներորդ՝ անճառ և անպատո՛ւմ է աստուած. և *հոգւոյն* միացումն ի մարմնի ի վեր է քան զբան: - 272. Ութնժ՝ զի անմե՛ղ է *հոգին*: - 272. Ի սոցանէ ոմանք ըստ *հոգւոյն* միա՛յն են. և ոմանք ըստ *հոգւոյն* և մարմնոյն: - 272. Ոմանք ասեն եթէ պատկեր աստուծոյ հօր՝ է՛ որդի, և նման *հոգին* սուրբ: - 273. Այսպէս ասեն թէ՝ մարդն կազմեալ է ի պատկեր որդւոյ, և ըստ նմանութեան *հոգւոյն* սրբոյ: - 273. Եւ այս չէ՛ ընդունելի. զի մարդն երրորդութեանն է պատկեր եղեալ որպէս ցուցաւ. և ո՛չ միայն որդւոյ և *հոգւոյն* սրբոյ: - 273. Եւ դարձեալ ասեն թէ՝ *հոգին* է պատկեր աստուծոյ ըստ զօրութեանցն. զի ունի միտք և իմացումն և կամք: - 273. Այլ նման է աստուծոյ զի աստուած է անմահ և աներևոյթ. և *հոգիս* մեր է անմահ և աներևոյթ: - 273. Դարձեալ՝ ըստ երից բնական զօրութեանց *հոգւոյն* պատկեր եմք աստուծոյ. այլ սրբութեամբ արդարութեամբ և առաքինութեամբ նման եմք աստուծոյ: - 273. Դարձեալ՝ պատկեր է *հոգիս* մեր. զի բանն և շունչ կենդանութեանն ի նմանէ՛ յառաջ գայ: - 273. Զի թէ ո՛չ էր ասացեալ ընդ պատկերին զնմանն լինիլ, ամենայն ոք պատճառէր, և զմարդն պաշտելով անկանէր ի կռապաշտութիւն. վասն որոյ ասաց զնմանն, թէ յորժամ տեսցեն պատկերակից աստուծոյ զմարդն բանականութեամբ անմահութեամբ և այլովքն որ ինչ է ի *հոգիս*, իմանայցեն և զզանազանութիւնն աստուծոյ: - 274. Եւ դնէ **դ** առանձնութիւն աստուծոյ, և **դ** *հոգւոյս* այսպէս: - 274. Իսկ *հոգւոյն* առանձին, Նա՛խ՝ զի ամենայն ոք խոստովանի եղեալ զնա: - 274. Բայց վասն կամացն աստուծոյ մշտնջենաւոր մնան հրեշտակք և *հոգիք* մարդկան: - 274. Դարձեալ՝ մարդն ի կրկին բնութեանց է միաւորեալ. այսինքն ի *հոգւոյն* և ի մարմնոյ: - 275. Դարձեալ՝ մարդո՛յն է յարութիւն կենաց. և դատաստանի վասն *հոգւոյն* զոր ո՛չ ունին այլ կենդանիք: - 275. Եւ որպէս աստուած է՛ ամենայն ուրեք էապէս. և *հոգի* մարդոյն է՛ յիւրաքանչիւր մասունս մարմնոյն էապէս: - 275. Երրորդ՝ մահու մեռանիլ *զհոգւոյ* մահն ասէ որ մեղօքն մեռանի. զի այն է առաւել մահ և յաւիտեան չար...: - 277. Չորրորդ՝ մահու մեռանիլ այն է, որ *հոգւով* և մարմնով տրտմին. և անմահ չարչարին. որպէս մեղաւորք յայս կեանս և յետ մահու. զի որ մեռանի մարմնով՝ զպարտս վճարէ. և որ տրտմի *հոգւով*՝ անմահ մահանայ: - 277. Երրորդ՝ թշնամի են *հոգի* և մարմին իրերաց և մասունք նոցա: - 277. Եւ ա՛րդ՝ հեռանալոյ մեզ ի դրախտէն կենաց վերջին ամուսնութիւնն եղև. զա՛յն նախ պա՛րտ է թողուլ, և ապա՛ յերկրաւոր *հոգւոց* և տառապանաց հեռանալ: - 281. Ըստ իրին նշանակէր զշնորհաց *հոգին*, զոր ի մարմին եղելոցն վերացոյց. և ի վերնատունն դարձեալ փչեաց: - 282. Իսկ ըստ նշանակութեան ցուցանէր զբանական *հոգին*. որով կենդանացաւ մարդն: - 282. Եւ խ իջևանս փոխելոյ *հոգւոցն*: - 285. Եւ թէ՝ մեծ էր նշանն քրիստոսի որ *հոգւոցն* արար, քան զմովսէսին որ մարմնոց: - 285. Երկրորդ՝ զի խոնարի և հնազանդ էր յամենայնի. ուստի մնաց եղբօրն պատարագի. որ իւրն **գ** ամսով յառա՛ջ էր հասեալ քան զեղբօրն. այսինքն ծնունդ ոչխարացն քան զպտուղ երկրին...: - 286. Այսինքն տեսութեամբն գոչէ՛. կամ *զհոգին* կոչէ արեան անուամբ: - 287. Նա՛խ՝ **գ** մասունք *հոգւոյն*, բան՝ ցասումն՝ և ցանկութիւն. և **դ** տարերաց

խառնուածն որովք մեղանչէ մարդ: - 287. Դարձեալ` *հոգի* որ յաստուծոյ հեռանայ` ինքն յինքենէ շարժի. անհաստատ յերկրի, անպատսպարան յերկինս: - 287. Եւ հարիւրն ժամանակեայն է՛ մարդն, որ ունի *հոգի*: - 291. Այլ և եկեղեցի սուրբ շինեալ ի քրիստոսէ հոգևոր տապան մեզ ի մէջ ծովու աշխարհիս` որ *զհոգիս* մեր փրկէ ի ջուրց մեղաց: - 293. Եւ **բ** գետն ի բանն և ի *հոգին* սուրբ որ բղխեն ի հօրէ. զի հրաւիրակք են մեզ` յակն տանելով ուստի բղխեն սոքա: - 295. Երկրորդ` արիւնն և շունչն *հոգւոյն* է նշանակ. և *հոգին* անմահ է: - 295. Եւ դարձեալ` այլազգին *զհոգին* իւր սպանեալ է մեղօք. և մեռելոյ զենեալն ո՛չ ուտի. որպէս ի քարէ անկեալն կամ ի կարկատէ՛ հարեալն ո՛չ ուտի: - 296. Հայր առ որդի և *հոգի* սուրբ ասաց, որովք արար զմարդն մի ազգ և մի լեզու: - 297. Եւ որպէս անդ *հոգին* ի նմանութիւն հողմոյ եկեալ զմինն **իբ** բաժանեաց: - 298. Երրորդ` զի մելքիսեդեկ քահանայ ո՛չ ըստ մարմնական ինչ օծմամբ իւղոյ որպէս այլոցն, այլ շնորհօք *հոգւոյն* անընդմիջաբար: - 301. Վեցերորդ` պատժեաց զսոդոմայեցիսն մարմնով, զի թեթևացին տանջանք նոցա *հոգւով*: - 303. Եւ դարձեալ` աբրահամ ունի մարմին և *հոգի*. և ունի **բ** զաւակ, այսինքն մարմնոյ և *հոգւոյ*: - 303. Եւ որք հաղորդեցան *հոգւոյ*, այսինքն հաւատոյ նորա, եղեն որդիք հաւատոյ նորա. որպէս քրիստոնեայք: - 303. Եւ աստուածութեամբն ընդ հօր և *հոգւոյ*` ընկալաւ ինքն: - 307. Երկրորդ` հոգեկան. որ յաւազանէն ծնանիմք ի *հոգւոյն* սրբոյ. այսինքն յղացեալք ի բանէն հաւատոյ` ծնանիմք յորդիս աստուծոյ: - 308. Երրորդ` ըստ առաքինութեան ի պատուիրանէն տեառն յղացեալք, և ծնանիմք առաքինութեամբ զփրկութիւն *հոգւոյ*...: - 308. Իններորդ` ըստ փոփոխման ասի. զի յղացեալ ունիմք զմահ անդըստին. և ի վախճան մերձեալ հասանէ երկն ցաւոց. և բաժանեալ *հոգին* ծնանի ի մահ: - 308. Չորրորդ` անդրանիկ է *հոգին* քան զմարմին բնութեամբ և պատուով. թէպէտ հաւասարք են ամանակաւ գոյացեալք: - 309. Եօթներորդ` անդրանիկք են իշխանք հոգևորք, վերակացուք և խնամողք այլ *հոգւոցն*. որպէս քահանայք, ուսուցիչք, և այլք. վասն որոյ երիցունք կոչին: - 309. Երրորդ` ծնանիլ ի *հոգւոյն*: - 309. Ա՛րդ` դաւանութեամբն գերազա՛նց եմք մարդկան հեթանոսաց. և մկրտութեամբն` հրէից. և ծննդեամբն ի *հոգւոյն* հրեշտակաց. զի նոքա ո՛չ ունին ծնանիլ ի *հոգւոյն*. և ո՛չ եղբայր լինի քրիստոսի: - 309. Վեցերորդ` մարմինն երէց է ըստ կարգի քան *զհոգին*. և յա՛յտ է, զի որ քան կենդանի եմք` զերիցագոյն պատիւն մարմնոյն տամք...: - 310. ...իսկ յետ մահուն` փոխի և լինի *հոգին* երէց և անդրանիկ անմահ կենօք...: - 310. Եւ քրիստոս մարմնով ի գերեզման և *հոգւով* ի դժոխս եմուտ և եբարձ զմահ և զապականութիւն: - 313. Նոյնպէս և քրիստոս եկն առ եղբարս իւր որ էին որդիք դաւթի և աբրահամու և առաջնորդք ժողովրդեանն. և յուդա վաճառեց զնա. և տէր եղև կենդանեաց և մեռելոց և կերակրիչ. զի ազատեաց *զհոգիսն* ի սովոյ դժոխոցն: - 313. Նոյնպէս և մեք աստէն քաղցեալ եմք բանիւ մինչ ա՛նդր երթիցուք, և ապա անդ զկրկին զգեստն զգեցցուք. այսինքն զփառս *հոգւոյ* և մարմնոյ: - 314. Ըստ կարգի է, զի նոյն *հոգի* և նոյն մարմին յառնէ: - 314. Այս է` է զօրութեամբ *հոգւոյն* և **Ե** զգայարանօք մարմնոյ մեռանիմք և յառնեմք գ կատարելութեամբ: - 315. Վեցն զկատարելութիւն մարմնոյն ցուցանէ, և հարիւրն, *զհոգւոյն*. և հազարն, զպատիւ կենաց յաւիտենից: - 315. Նոյնպէս և սուրբքն ջերմ սիրովն աստուծոյ ժողովին ի կայանս *հոգւոցն* ի տեղւոջ լուսոյ և հանգստեան: - 315. Նոյնպէս և քրիստոս աստ ի գնալն *հոգւոց* և ի գալստեանն աւուր` ընդ առաջ ելանէ սրբոցն և համբուրէ զսիրելիս իւր, որպէս հայրն երկնաւոր ի դարձ անառակին: - 315. Նախ` սատանայ և անհաւատք աստուածութեան նորա. և մեղք և դժոխք *հոգւոյ* են թշնամիք. մահ և ապականութիւն մարմնոյն: - 316. Է և ա՛յլ կապ բաց յայսցանէ, այսինքն Անձնական, որպէս *հոգւոյ* և մարմնոյ: - 318. Թէ *հոգւոյ* և թէ մարմնոյ` գոյ մեղք և գոյ պատիժ: - 318. Եւ զգեստ կոչի մարմինն որ ծածկէ *զհոգին*...: - 318. Նախ` կոչի մարմինն զգեստ` գոյացական` անփոփոխ և անքակ միութեամբն. զի բաժանմամբ մարմնոյն և բանին ո՛չ է քրիստոս. որպէս ի բաժանիլ *հոգւոյ* և մարմնոյ ո՛չ է մարդ: - 318. Այլ կոչի տաճար և զգեստ բանական *հոգւոյն* մարմինն իւրական որպէս ամենայն մարդկան: - 319. Ուստի յա՛յտ է զի բաժանեցաւ *հոգին*, այլ աստուածութիւնն անբաժանելի մնաց ի բաժանեալ *հոգւոյն* և ի մեռեալ մարմնոյն: - 319. Այլ որ ստոյգն է ասեն թէ` մովսէս գրեաց որպէս պատմութիւն, և սողոմոն ստիքսեաց որպէս զիւր բանսն. յետոյ գրեաց և եզրաս *հոգւովն* աստուծոյ երբ ծախեցան գրեանքն ի հրէից: - 321. Չորրորդ` զի խեցեաւ սրբէր զմարմինն, և աղօթիւք զմիտս և *զհոգին*: - 323. Իսկ ի *հոգւոյ* մարդոյն **բ** իր հեռացուցանեն զդևսն. այսինքն խոնարհութեամբ և ճշմարտութեամբ. վասն զի զերկուքս զայս ո՛չ ունի սատանայ. և ամենևին փախչի և ատէ՛ զխոնարհութիւն և զճշմարտութիւն: - 324. Եւ թէ ոք ասիցէ` յորժամ սոյնպէս չարք էին` զնոցա բանքն ընդէ՞ր գրեաց *հոգին* սուրբ: - 325. Սոյնպէս բարեկամք յոբայ թէպէտ շարժեալք էին ի բանսարկուէն, այլ աստուծոյ *հոգւովն* զօգտակարսն բարբառէին. վասն այն գրեցան բանք նոցա ի սուրբ գիրս: - 325. Նախ` զի *հոգի* և մարմին են: - 326. Երրորդ` զի և առաջինքն կենդանի են *հոգւով* առ աստուած: - 326. Երկոտասաներորդ, մովսէս հ ծերս ընտրեաց և ետ ի *հոգւոյն*: - 328. Եւ ի կողից տեառն բղխեցին աղբերք ի զմայլումն պապքեցելոց և ի լուացումն ախտաժէտ *հոգւոց*: - 329. Զսոյն և մեզ

պարգևեաց ծնանիլ ի ջրոյ, և ի հրոյ, և ի *հոգւոյ*, և յարութեամբն մարմնոյ. իսկ ի մօրէ՛ բնականապէս: - 329. Եւ տէր մեր *զհոգին* սուրբ յառաքեալսն. «հուր եկի արկանել» ասէ: - 329. Եւ տէր մեր զգալուստ *հոգւոյն* և զկատարած աշխարհի պատմեաց, և յանձնեաց զկոյս տաճար իւր ի կոյսն յոհաննէս: - 329. Եւ փոխանակ սիւն ամպոյ՝ *հոգին* հովանաւոր և աւետարանին լոյս ծագեաց *հոգւոցն*: - 329. Եւ փրկիչն միա՛յն էջ ի դժոխս, և ազատեաց զամենայն *հոգիսն* ի հրահալոց տանջանացն սատանայի: - 329. այլ չոր ծաղկն դալարիւր. այսինքն թէ ի զանգուածոյն ադամայ ունէր ինչ փոշետեսակ՝ սրբեցաւ հրով *հոգւոյն* սրբոյ: - 331. Սոյնպէս և ամենայն մեղաւորաց կրկին է հատուցումն. այսինքն *հոգւով* և մարմնով. կամ աստ և ի հանդերձեալն: - 335. Եւ յերեկունն լոյս ծագեաց *հոգւոց* որպէս սիւն լուսոյն իէլի: - 337. Յորում աւուր կիրակէին ի մէջ գիշերի ընդ առաւօտս յարեաւ տէր ի գերեզմանէն, ազատելով *զհոգիսն* ի դժոխոց: - 337. Նմանապէս և *հոգին* սուրբ ի գիշեր կենցաղոյս լուսով աւետարանին առաջնորդէ՛ մինչև հասուցանէ յայգն հանդերձեալ աւուր ի ցօղաւոր ամպն որ է՛ բանն մարմնացեալ. որ է հովանի և հանգիստ ամենայն սրբոց: - 338. Իններորդ՝ աղալն յերկանս. յաղորիս *հոգւոյ* և մարմնոյ ծասկել: - 339. Տասներորդ՝ **գ** ափկիցն. երրորդութեանն հաւատով սրբել զ**ժ** զգայարանս *հոգւոյ* և մարմնոյ: - 339. Դարձեալ՝ ոսկի սափորն է՛ անապական կոյսն. և մանանայն բանն աստուած *հոգւով* և մարմնով միացեալ յարգանդի աստուածածին կուսին: - 340. Եւ *հոգւոյն* գալստեանն որ էջ յառաքեալսն: - 341. Դարձեալ երիցս երևիլն է, զի աստ ի մարմնի հաւատով տեսանեմք զքրիստոս. և յետ մահու յուսով ի *հոգիս* մեր. և յետ յարութեանն սիրով միաւորիմք ի նա՛: - 341. Եւ **ժ** զգայարանք մեր. հինգ *հոգւոյ* և հինգ մարմնոյ: - 342. Եւ *հոգին* սրբութիւնն: - 343. Որպէս *հոգի* մեր սկիզբն ունին, այլ ո՛չ վախճան: - 344. Ներքոյ և արտաքոյ ոսկին՝ *հոգւոյն* և մարմնոյն մաքրութիւնն: - 345. Ի յորում **բ** տախտակք են գրեալ. *հոգի* և մարմին միաւորեալ բանիւն: - 345. Ոսկւով, *հոգի* և մարմին միաւորեալ աստուածութեամբն: - 345. Նոյնպէս և սեղան խնկոց և երեսացն ցուցանէ *զհոգիս* սրբոց ելեալ ի մարմնոց և մտեալ դէմ յանդիման երեսացն աստուծոյ: - 346. Նա՛խ՝ սեղան անփուտ՝ է՛ անմահ *հոգիք*: - 346. Ղացն՝ ողջախոհքն մարմնով *հոգւուվ* և մտօք: - 346. Վասն այն ա՛ստ ի հաստատութեան երկնից ասեն զկայանս *հոգւոցն* մինչ ի կատարած յարութեան մարմնոց: - 346. Եւ **է** ճրագն՝ **է** արփեան շնորհք *հոգւոյն* սրբոյ: - 347. Այլ և **է** խորհուրդ եկեղեցւոյ, և *է* զօրութիւնք *հոգւոյս*. չորսն ստացական, և **գն** աստուածային առաքինութիւնք: - 347. Գունդն՝ բանական *հոգին*: - 347. Երրորդ՝ զի երևելի սրբութիւն մարմնոյն՝ զաներևոյթ սրբութիւն *հոգւոյն* նշանակէր: - 347. Հինգերորդ՝ կրկին օրէնքն *հոգւոյ* և մարմնոյ. վասն այն կրկին էր տախտակն: - 349. Եւ կրկին, զի *հոգւով* և մարմնով մի եղև բանն աստուած: - 349. Երկրորդ՝ զի կորուսեալք էին *հոգւով*, ո՛չ պահեաց զօրէնս նոցա: - 349. Երրորդ՝ զի անարժանք էին մեռեալքն *հոգւով* կենդանի բանին աստուծոյ տեսանել ա՛յն աչօքն որ տեսին զորթն. և համբուրել շրթամբք: - 350. Երկոտասաներորդ, լուսաւորեցաւ՝ զի քող արկցէ երեսացն. որ օրինակէ՛ զհին կտակարանս. որ քօ՛ղ է արկեալ և առագաստ մտաց նոցա. մինչև դարձցին առ տէր *հոգիքն* որպէս զմովսէս. և ապա վերացի քօղն և յայտնեսցի լոյս գիտութեան նոցա: - 352. Մին վասն հաւատոյ օրինաց. և մին վասն *հոգւոյս* իբր ահարոնի. և մին վասն մարմնոյս որպէս ժողովրդեանն: - 353. Նա՛խ ի մօրէ. և ապա՛ յաւազանէն, ի հրոյ, և ի *հոգւոյ*: - 353. Եօթներորդ, անդ ի հօրէ. և աստ ի մարմնացեալն բան է. և անդ ի *հոգւոյն* սրբոյ: - 355. Եւ դարձեալ՝ նաշիհն է՛ նշանակ խոնարհ մարմնոյ մաքրութեան. և խունկն առաքինութեան *հոգւոյ*. և իւղն զուարթութեան մտաց: - 357. Նշանակէ՛ զամենայն զառաջին բարի գործս մեր եթէ ի մարմնոյ և եթէ ի *հոգւոյ*. և ի մտաց նուիրել աստուծոյ: - 357. Զի *հոգի* անմահացեալ շուրջ գայ զավ ի հեղուլ զաղօթս առաջի նորա: - 360. Եւ ցանեալ է անգամ ի վարագոյրն. որ է՛ քաւութիւն է զգայարանցս ի է զօրութեանց *հոգւոյն*. է խորհրդով եկեղեցւոյ. առ է դար կենցաղոյս: - 360. Երիկամունքն, զկրկին ցանկութիւնն *հոգւոյ* և մարմնոյ: - 360. Եւ զոյգն. զի *հոգի* և մարմին՝ աստուածութեամբն միատեսակ եղեալ: - 361. Եւ միայն յողջակէզ. ի խաչ սեղանոյն ի հոտ անուշից հօր և *հոգւոյն* սրբոյ: - 361. Եւ իւղով զանգեալ և օծեալն, զի իւղով աստուածութեամբն օծաւ. այլ և *զհոգին* սուրբ ընկալաւ ի յորդանան: - 361. Դարձեալ՝ իւղով զանգեալ բաղարջն և նոյն չափ իւղովն որ չափ մասն գինւոյն. այն է՝ զի ընդ օրհնութեան բանին աստուծոյ՝ և *հոգին* սուրբ իջանէ ի հացն և ի բաժակն և կատարէ՛ մարմին և արիւն քրիստոսի: - 361. Այլ և ունիմք զբանաւոր պատարագս՝ *զհոգի* և զմարմին մեր սրբութեամբ փոխանակեալ նմա: - 362. Առաջինն է ի *հոգւոյն* պատարագ: - 362. Նշանակէ՛ զպատարագիլն քրիստոսի ի սեղան խաչին ի հոտ անուշից հօր և *հոգւոյն*: - 362. Եւ ողջակէզ սրբութեան է՝ յետ ապաշխարութեան զբարիս գործել. և զբովանդակ *զհոգի* և զմարմին մեր նուիրել աստուծոյ: - 362. Եւ միւսն, որ զմարմին մեր պատարագեմք միշտ. սիրտ սուրբ և *հոգի* խոնարհ ունելով. զոր աստուած ո՛չ արհամարհէ: - 363. Եւ դարձեալ՝ մանուկն յարգանդի խօրեայ շնչաբերի *հոգւով*: - 363. Եւ զգեստ քահանայութեանն ո՛չ այրեցաւ յօրինակ այժմույս որ *հոգւով* դատապարտին և մարմինն

մնայ: - 364. Որոճօղն՝ քննօղ իմաստութեան. և կճղակն ուղիղ վարք *հոգւոյ* և մարմնոյ. սուրբ են: - 364. Եւ անհաւատն սպանեալ է *զհոգին* մեղօք. և կամ ունի զգործ իգական՝ պիղծ է: - 366. Վեցերորդ՝ դիտաւորութիւնն խնդրի թէ վասն որո՞յ է զենումն. զի թէ վասն աստուծոյ է կամ *հոգւոյ*, հասարակա՛ց է. իսկ թէ վասն մարդկան և կենդանեաց, կամեցողա՛ց է: - 366. Նա՛խ՝ զի բորն պիսակ՝ մեռելութիւն է մարմնոյ. և մեղքն *հոգոյ*: - 366. Երկրորդ, բորն պղծէ՛ զմարմինն. և մեղքն *զհոգին*: - 367. Հինգերորդ, կսկի՛ծ է մարմնոյ. և մեղքն *հոգւոյ*: - 367. Իններորդ, բորն **գ** ազգ է. սպին սպիտակ շիտ. և պալար միատարր. և պաղպաջ շիտ աստ և անդ. որ է՛ մտաց և *հոգւոյ* և մարմնոյ մեղքն: - 367. յայնժամ քակէ՛ զտունն մեր որ է՛ *հոգի* և մարմին. և արտաքոյ քաղաքին յանսուրբ տեղիս ընկենու որ է՛ դժոխքն արտաքոյ արքայութեանն, և անսուրբ տեղի մեղաց և մեղաւորաց. և անդ արտաքսէ զմեղաւորսն: - 368. Կրկին հաւն կենդանի սուրբ՝ նշանակէ՛ *զհոգւոյ* և զմարմնոյ կենդանութիւն ի ձեռն ապաշխարութեան: - 368. Եւ միւս հաւն թաթաւեալ յարիւն, *հոգին* կենդանի. որ կարեկից լինի մարմնոյն և զսրբութիւն նորա հանէ՛ յուսով ի դաշտն որ է՛ յերկինս: - 368. Դարձեալ՝ կրկին հաւն նշանակէ՛ զքրիստոս. Փայտն, զխաչն. և Կարմիր արիւնն. զի աստուծոյ է արիւն. և Զոպայն, *զհոգին* սուրբ: - 368. *Յոգին* էջ ի դժոխս և ազատեաց զորս անդ: - 368. Այս էր սրբութիւն բորոտին մարմնոյ. և ի մեզ *հոգւոյ*: - 368. Երրորդ՝ յօրինակ *հոգւոյ* արատոյ ի նորս որպէս ասացաք: - 370. Ա՛րդ՝ որ առանձինն է՝ մարմնոյն արատն ոչ խտրի. այլ *հոգւոյն*: - 370. Եւ որ հասարակն, և սմա՛ մարմնոյն և *հոգւոյն* ո՛չ խտրի. զի եղբայր յեղբօրէ օգնեալ՝ զմիմեանց բառնան զտկարութիւն: - 370. Իսկ որ զքրիստոս պատարագէ, խտրութիւն է արատոյ ի *հոգի* և ի մարմին: - 370. Երկրորդ՝ ցուցանէ թէ բանական *հոգիս* մեր ո՛չ կորնչի: - 371. Երրորդ՝ զի *հոգիքն* ի դժոխքն չէ՛ մոռացեալ ի նմանէ: - 371. Չորրորդ՝ զի երկնչիմք և անմեղ պահեմք *զհոգիս* մեր որ ելանելոց է յերկինս: - 371. Հինգերորդ՝ որպէս արիւն անասնոց ի հողոյ է և ի հող լուծանի. և բանական *հոգիս* մեր յաստուծոյ է և առ աստուած երթայ: - 371. Դարձեալ շաբաթ շաբաթուց այն էր. որ քաւութիւն մեղաց *հոգւոցն* էր շաբաթ. որպէս դատարկանալն մարմնոյն: - 371. Իսկ ի նորս՝ զկէս ընչիցն հրամայեցաւ տալ աղքատաց յաւտրնին. որ է՛ հաւասար *հոգւոյն* և մարմնոյն: - 372. ...հանգիստն ի *հոգին* է: - 372. Հինգերորդ՝ հանգիստն կատարեալ *հոգւով* և մարմնով. որ է՛ փողոց հնչմունք. ազատութիւն յապականութեանց. ամ թողութեան և իւրաքանչիւր ուրուք ի ստացուածս իւր դարձումն. որ է՛ գործոց հատուցումն: - 372. Երրորդ՝ յիսներեկին տըւչութեան օրինացն. որ է՛ *հոգւոյ* գալուստն: - 372. Եւ ի մեզ *հոգւոյն* գալստեան ի պենտակոստէն: - 373. Այլ և վասն *հոգւոյ* և մարմնոյ փրկութեան: - 373. Եւ եօթնից է տօնեմք յարութեան. նոյնպէս զմի օր օրինացն տըւչութեան, տօնեմք **ը** օր *հոգւոյն* գալստեան: - 373. Երրորդ՝ զի հաւասարք են **գ** տօնքս. որպէս ծննդեան և յարութեան՝ նոյնպէս և *հոգւոյն* գալստեան **ը** օր տօնեմք: - 373. Եւ թէ ոք ասիցէ, ընդէ՞ր ծննդեան և յարութեան **ը** օրէք առնեմք և *հոգւոյ* գալստեան ո՛չ: - 373. Եւ գալստեան *հոգւոյն* հոգեպէս պահօք և հոգևոր երգով տօնեմք: - 373. Երրորդ՝ զի աւետարանիչքն յայտնապէս ասեն թէ՝ ընդ մկրտիլ տեառն՝ նոյն ժամայն *հոգին* հանէ՛ զնա յանապատ. և պահեաց զ**խ** տիւ և զ**խ** գիշեր: - 373. Նոյնպէս և մեք ի յառնուլ *զհոգին* սուրբ պահո՛ք տօնեմք: - 373. Երկրորդ՝ նշանակէ՛ զբանաւոր պատարագս մեր. այսինքն *զհոգի* զմարմին և զմիտս մեր անարատ մատուցեալ: - 374. Դարձեալ զ**է** ժամանակն ասէ. կամ զ**է** հասակս. կամ **է** զգայարանօք մարմնոյս. կամ **է** զօրութեամբ *հոգւոյս*: - 376. Եւ նախ **գ** օրն. **գ** գոյացութիւն նորին. այսինքն աստուածութիւնն՝ *հոգին* և մարմինն միաւորեալ մի: - 380. Տասն զօրութիւնք *հոգւոյ* և մարմնոյ զանգիտօղք և երկրասէրք: - 380. Զի բժշկութիւն *հոգւոյս*՝ դառնութիւն մարմնոյս լինի: - 381. Ապա թէ ոչ՝ հրեշտակք զայրացեալ հրով այրեն կամ զմարմինն կամ *զհոգին*: - 381. Վասն է՞ր կորխեանքն սրբեցան *հոգւով*. և դաղանեանքն կենդանի ի գերեզման իջեալ տանջեցան: - 381. Եւ այլք ասեն թէ՝ կորխեանքն այրեցան մարմնով, վասն այն *հոգւով* սրբեցան. և բուրվառք նոցա սրբեցան: - 381-382. Այլք ասեն վասն դաղանեանցն թէ՝ *հոգիք* նոցա մարմնով ի տանջանս կային. ուր ընկեղմեցան մինչև ցաւարումն դժոխոց. ընդ որս և զնոսա ազատեաց քրիստոս իջանելովն ի դժոխս: - 382. Չորրորդ՝ զդեղձան հերն և անարատ մարմնով և անբիծ *հոգով*, որ ո՛չ ունէր զլուծ մեղաց: - 383. Եւ ո՛չ զներելին, զի *հոգւովն* մաքրեցաւ: - 383. Չորրորդ՝ նա՛խ օրէնքն և ապա ջուրն. զի նախ *հոգւով* խնամէ՛ և յետոյ մարմնով: - 385. Երրորդ, *հոգին* սուրբ որ քրիստոսիւ ծաւալեցաւ: - 386. Երկրորդ՝ զի եօթնիցս եղև արժանի տեսլեան Երրորդութեանն. կրկին անգամ զհայր ի գիշերի. և կրկին զորդին ի տիւն. և *հոգի* աստուծոյ ի վերայ նորա երկիցս անգամ. և մի անգամ զհրեշտակն ետես: - 387. Երկրորդ՝ ըստ *հոգւոյ* և ըստ մարմնոյ: - 387. Դարձեալ՝ նզովքն մարմնո՛յն է, և անէծքն *հոգոյն*: - 388. Եւ բաւականութիւն սոցա է այսպէս. զի եմք մարմին *հոգի* և միտք գոյացեալ. և ունիմք կարիս և ինչս և շնորհք և կրօնք: - 389. Եւ է՛ *հոգին* յաստուծոյ. և մարմինն ի ծնողաց. և միտք յուսուցչաց: - 389. Շնորհքն է զարդ *հոգւոյն* և կրօնքն մտաց. և կամքն իշխան և կառավար սոցա: - 389. Եւ որպէս կնոջ ընդ հրամանս առնն իւրոյ յանցանել

պոռնկութենէ, նոյնպէս և զաւակաց, և ծառայից, և աշակերտաց, և հնազանդելոց, և ժողովրդոց. նոյնպէս և *հոգիս* մեր ելեալ ի հրամանացն աստուծոյ՝ պոռնկութիւն է նմա. եթէ ըստ գործոց. եթէ ըստ հաւատոց: - 389. Այն է որ թէ ի մասանց *հոգւոյն* և մարմնոյն այսինքն բանիւ՝ ցասմամբ՝ և ցանկութեամբ, կամ աչօք կամ լսելեօք կամ այլ ինչ գործով մեղանչէ դարձեալ, ուխտն ո՛չ եղև ամբողջ. դարձեալ նո՛ր պարտ է ապաշխարել: - 390. Իսկ զ**խ** իջևանքն ոմանք խորհուրդ առնուն յետ ելիցն ի մարմնոյ *հոգւոյն* **խ** աւուրբ հասեալ յօթևանս: - 391. Իսկ յետ մահու ա՛յնոցիկ *հոգւոց* որք զղջան կամ խոստովանին զմեղս, քաղաք ապաստանի է նոցա ի կայանս *հոգւոցն* տրտմութիւն և ցաւն վասն փոխարինաց մինչ մեռանի քահանայն մեծ. որ եկեղեցի սուրբ՝ պատարագաւ և աղօթիւք և ողորմութեամբ հատուցանէ՛ զպարտս նոցա և ազատին: - 392. Վեցերորդ՝ առաջին օրէնքն է կանոնաց. որ կարգաւորէ՛ *զհոգի*. իսկ երկրորդն դատաստանաց. որ կարգաւորէ՛ զմարմին: - 393. Ա՛րդ՝ եգիպտոս է՛ նշանակ երկրիս այս. և ծովն կենցաղոյս. և անապատն կայանք *հոգւոցն*: - 393. Այլ **Ե** թագաւորք մադիանացիքն էին, և **բ** այսոքիկ. որ են **է** դևք է գլխաւոր մեղաց. որք ի կեանս պատերազմին, և յետ մահու ընդ *հոգւոցն* բազումք: - 393. Երկրորդ՝ յանապատն ամաղէկ և այլքն. յետ մահու որ ընդ *հոգիս* պատերազմին. որք են այսք չարութեան ի ներքոյ յերկնից ըստ առաքելոյ: - 393-394. Առաջին աստ փոփոխիլ ի մարմին և ի *հոգի*: - 394. Երկրորդ՝ նշանակէ՛ *զհոգիս* սրբոց. որ տեսանեն զփառս, այլ ի յարութեանն առնուն: - 394. Եւ յետ մահու միայն *հոգի* անմարմին: - 394. Եւ յարութեանն անփոփոխ *հոգի* և մարմին: - 394. Երկրորդ՝ ընդ երից գոյացութեանց մեր. աստ ընդ մարմնոյս. և ի մահն ընդ *հոգւոյս*. և ի յարութեանն ընդ մտաց տեսութեանն հակառակին: - 394. Չորրորդ՝ մարմնով զօրինակն ետես, և ապա՛ *հոգւով* զճշմարիտ երկիրն պարգևաց: - 395. Տասներորդ՝ ի կայանս *հոգւոց* նախ տեսանի պատիժն, և ապա փառքն: - 395. Առաջինն՝ զի նախ արտաքին մարմնոյ հանդիպիմք որպէս դրան. և ապա *հոգւոյն* ի ներս: - 395. Իսկ սիրտ՝ *զհոգին* ասէ. որ ծածուկ է. և տեղիք խորհրդոց. և մի է. և կենդանութիւն մարմնոյն: - 396. Եւ զօրութիւն է, զի զգայարանքս զօրութիւն է *հոգւոյն* և միտքն: - 396. Մին՝ զի *հոգին* եռամասնեա՛յ է: - 396. Եւ դարձեալ՝ *հոգւովդ* և բոլոր մարմնով և բոլոր մտօք սիրեա և ո՛չ մասամբ: - 396. Դարձեալ՝ զերեք տեսակ սիրոյն ցուցանէ. մարմնով և *հոգւով* և մտօք սիրել զաստուած: - 396. Եւ *հոգւովն* վարձկականն վասն խոստացեալ բարեացն: - 396. Իսկ մեզ նորոյս հրամայէ՛ զքանեղէնն մատուցանել որ է՛ *հոգի* և մարմին և կամք...: - 396. Երկրորդ՝ զի **խ** ամ յանապատին հաց ո՛չ ետ նոցա. այլ մանանայ և զայլսն. զի բանիւն աստուծոյ կերակրեցան *հոգւով*. և ո՛չ մարմնական հացիւ: - 397. Վեցերորդ՝ ո՛չ միայն հաց է հաղորդութիւնն. այլ *հոգւովն* սրբով օրհնեալ և միաւորեալ ի բանն աստուած, որով անմահ կենդանութիւն տայ ճաշակողացն: - 397. Եօթներորդ՝ որպէս հացն մարմնո՛յ է կերակուր, և բանն իմաստութեան աստուծոյ՝ *հոգւոյ*. զոր ի պակասիլն ասէր...: - 397. Մտացն ասէ հայիլ ի *հոգին*: - 397. Նոյնպէս և մտօք զմասունսն *հոգւոյս* զբան՝ զցասումն՝ և զցանկութիւնն տեսանել և զարթարել: - 397. Նոցա ամպ հովանի, և մեզ *հոգին* սուրբ: - 398. Նոյն և երկիրն վերինն եէմի յանեզրական ծովէ՝ յամպոյ *հոգւոյն* և շնորհացն իմաստութեան ոռոգի. վերին և ներքին դասք հրեշտակաց՝ և մարդկան: - 398-399. Զի որպէս քահանային օծումն ի *հոգւոյն* ո՛չ բաժանի յաւիտեան, և պսակի օրհնութիւնն որ ի մարմինն է՝ ո՛չ բաժանի մինչ ի մահ ի մարմնոյն: - 401. Զի քրիստոնէութիւն որպէս մկրտութիւն և այլն՝ անբաժանելի՛ է ի *հոգւոյն*. թէպէտ ուրանայ լեզուաւ և գործով: - 401. Ա՛րդ՝ սոքա համաձայն ի մի կորուստ *հոգւոյ* դիմեն առ մարդն: - 404. Եւ յորժամ է զօրութեամբք *հոգւոյ* յաղթիցեն նոցա, փախիցեն **յէ** զգայարանաց մարդոյն եօթնեկի մահացու մեղօք. զայս կատարելո՛ցն է իմանալ. և ո՛չ մեզ տկարացս: - 404. Դարձեալ՝ օրէնքս յայտնի էր զոր ուսոյց. և աւետարանն ծածկեալ, զոր *հոգին* սուրբ յայտնէ որ քննէ զխորս աստուծոյ: - 405. Նա՛խ՝ ի պարգևաց բանականաց. որպէս հրեշտակաց և *հոգւոյս* մեր: - 406. Նա՛խ՝ զի շնորհակալե՛մք *հոգւով*, և գոհանամք մարմնով: - 406. ...վասն որոյ ասէ «սաստեսցէ՛ ի քեզ» որ տէրն է *հոգւոց* և ամենայն մարմնոց: - 410. Երկրորդ՝ *զհոգին* մովսէսի ո՛չ կարէր յափշտակել սատանայ, փոխանակ *հոգւոյն* զմարմինն ջանայր յափշտակել. և վիճէր ընդ հրեշտակին թէ իմ է...: - 410. Եւ փոխանակ *հոգւոյն* հրեշտակական օգնութեանն կարօտացաւ ցուցանել զտիրապէս իշխօղն բնութեան. որ և կշտամբեաց զբռնութեամբ թագաւորելն նորա: - 410. Զայս նշանակէ թէ՝ յետ ելանելոյ *հոգւոյ* ի մարմնոյ և գնալոյ ի վերին շաւիղն, հակառակ կայ սատանայ և չար զօրութիւնքն ընդ նմա, տանիլ զհետ իւրեանց որ զչա՛րսն են գործեալ. և յարդարոցն յաղթին հրեշտակին օգնութեամբն. որպէս և անտօն ետես. զի իմացեալ և մեք զգուշասցուք այնմ: - 410. Երրորդ՝ զի երեսունն **գ ժ** է. զի **ժ** զգայարանքն մարմնոյ և *հոգոյ* և մտաց՝ քակտի. վասն որոյ **լ** օր սգան: - 411. Այլ այնո՛ւ էր առաւել, զի քրիստոս *զհոգիս* ազատեաց ի դժոխոց. և աստուած էր և մարդ եղև և խաչեցաւ. որ մեծ է քան զամենայնին: - 411. Եւ որ շինէ զդժոխս *հոգւով* և մարմնով. նա՛ և անդրանիկ խորհրդով և մարմնոյ գործով: - 418. Եւ այն զի քամեալ լցաւ կուրն և ո՛չ երկիր. զի մնացին և կատարեցան

բանք մարգարէիցն ամենայն և ո՛չ եղծան. իսկ յետոյ *հոգի* տեառն ելից զտիեզերս մարգարէութեամբ և շնորհօքն քրիստոսի: - 421. Վեցերորդ՝ դարձեալ տէր մեր յիսուս քրիստոս որ եղև զգեստ հաւատացելոց իւրոց. մկրտեցաւ ի յորդանան. և ձայն հօր վկայեաց. և աղաւնակերպ *հոգին* էջ ի վերայ նորա: - 421. Յինգերորդ՝ օրհնեալ ի տեառնէ մանուկն սամփսոն, և *հոգւով* զօրութեամբ շրջէր: - 422. Նշանակ եօթնարփեան *հոգւոյն* ընկալեալ անկարօտաբար իբր ի գլուխ տէր մեր, և պարգևեալ անդամոց իւրոց: - 422. Եւ տէր մեր ի սպանօղ մարմնոյս որ է՛ պատառօղ *հոգւոյս*, սպանելով զսա՛ գտանէր զքաղցր կեանս տալ որդւոց մարդկան ազգի: - 422. Եւ տէրն ի մէջ գիշերի զդրունս և զնիգս դժոխոց խորտակեալ յարեաւ ի գերեզմանէն. և *զհոգիս* մարդկան էհան յերկինս: - 423. Այլ և զապականութիւն և զդժոխս. մարմնով և *հոգւով* կործանէր զամուրն սատանայի: - 424. երիս զօրութեամբ ի վերայ խաչին. որ է՛ ձայնիւն և մարմնովն և *հոգւովն* որ էջ ի դժոխս. կամ **գ** գոյացութեամբ. այսինքն աստուածութեանն և *հոգւոյն* և մարմնոյն: - 427. Եւ **է** զօրութիւնք *հոգւոյ*. և **է** առաքինութիւնք. **դ** մարմնականք և **գ** աստուածայինք: - 431. Ութերորդ, ի ձեռն սամուէլի և իւղով օծաւ. և տէր մեր ի հօրէ օծաւ և *հոգւով* սրբով: - 435. Իններորդ, խաղաց *հոգին* ի վերայ դաւթի. և աղաւնակերպ *հոգին* ի վերայ քրիստոսի: - 436. Չորեքտասաներորդ, ցպով և պարսաքարով ել ընդ դէմ գողիաթու. և տէր մեր խաչիւ որ վէմ կոչեցաւ, և ի ձայն բարձր աղաղակեաց և արձակեաց *զհոգին*: - 436. Երեսունք, յետոյ առ սամուէլ ի նաւաթ գնացեալ և *հոգի* աստուծոյ խաղացեալ. և տէր մեր առ հայր ի յերկինս ելեալ, և յառաքեալսն *զհոգին* առաքեալ: - 437. Դաւիթ դարձոյց զերկու կանայս և զամենայն աւարն. և որդի նորա զբ դասս հաւատացելոց և զամենայն *հոգիսն* ազատեաց: - 437. Դարձեալ, ժամանակն ունի մասունս երիս. և մշտնջենաւորն. և դարձեալ յաւիտենական է բանն. և ժամանակեայ մարմինն. և մշտնջենաւոր *հոգին*. և անքակտելի միութիւնն ցուցանէ մեզ զչորս թուոյն. և ամենայնիւ կատարեալ գոյացութեամբ: - 437-438. Դաւիթ յետ յերկուց ամաց ետես զաբիսողոմ. և տէրն զմեղաւորս յետ ապաշխարութեան *հոգւոյ* և մարմնոյ. այլ և յետ աստեացս և մահու տեսանէ ի դատաստանին: - 438. Եօթանասուներորդ, յերիս առաջս զօրօք յաղթեաց թշնամեաց. և տէրն մարմնով և *հոգւով* և աստուածութեամբն յաղթեաց: - 438. Այլ ի խաղաղութեան *հոգւոյ* և մարմնոյ և այլոցն: - 440. Եօթներորդ՝ զի նա՛ ո՛չ արար փրկութիւն *հոգւոց*. և քրիստոս ամենայն աշխարհի: - 442. Տասներորդ՝ զի սողոմոն ի քարանց ձեռագործաց կազմէր տաճար աստուծոյ. իսկ քրիստոս զբանական *հոգիս* մարդկան շինէր օթևան սուրբ երրորդութեանն: - 442. Յինգերորդ՝ **է**եկի շնորհօք բազմապատկեալ ի *հոգւոյն*. ոչ առաւելու արգելեալ. և ոչ նուազէ բաշխեալ: - 444. Եւ շուրջ զնովաւ հրեշտակք ամենայն ոչ հաւանեցան. զի նոքա զամենայնն ճշմարիտ խօսին. և բարի առնեն մարդկան. և յապաշխարութիւնն խնդան. իսկ սուտ խօսիլն և չար առնելն և ի վիշտս ուրախանալ՝ դիւա՛ցն է որ են չար *հոգիքն*: - 444. Երկրորդ՝ եցոյց թէ նոյնպէս ընդ քե՛զ է լինելոց զօրք հրեղինացն նովին *հոգւովն*: - 445. Եւ այս՝ և պատերազմն վասն մովսիսեան մարմնոյն՝ ցուցանեն զպատերազմ *հոգւոց* յետ ելից մարմնոյն: - 445. Եւ եղիսէ նովին *հոգւովն* օրհնեաց և եբարձ զանէծսն: - 445. Եւ դարձեալ ի տիպ քրիստոսի որ ի գիշերի եհար զսատանայ և ազատեաց *զհոգիսն* ի դժոխոցն: - 446. Վեշտասաներորդ, Որպէս *հոգի* և մարմին միաւորեալ **ժ** եղանակաւ: - 454. Քանի՞ են դժոխք զոր աւերեաց առհասարակ և ազատեաց *զհոգիսն*: - 455. Իջումն *հոգւոյն* փայլատակումն է՝ **ժ** թուով: - 455. Յորում աւուր օրէնքն տւաւ, և *հոգին* սուրբ էջ: - 455. Վեցեկի պարգևք ետ *հոգին* սուրբ: - 455. Վասն է՞ր հօր ո՛չ տօնեմք որպէս քրիստոսի և *հոգւոյն*: - 455. Բայց զի յուսացեալ ի բանն ճշմարտութեան յաղագս որոյ բանս հարցափորձութեան, հետևելով ուսուցչացն ուղղութեան, և յուսոյ ուսողացդ նպաստութեան. բացցուք զբերանս մտաց, և ձգեսցուք ի մեզ *զհոգին* շնորհաց: - 456. Եւ ողորմութիւն և շնորհք *հոգին* սուրբ. ըստ որում «շնորհք և ողորմութիւնն աստուծոյ առ ձեզ»: - 457. Եւ արդարութիւն *հոգին* սուրբ. ըստ որում «եկեալ յանդիմանեսցէ զաշխարհս վասն արդարութեան և դատաստանի»: - 458. Զի ի խորհուրդ մկրտութեանն ի յառնուլ ջուր, *հոգին* սուրբ և զօրութիւն բարձրելոյն և ողջոյն հօրն ի ձեռն հրեշտակին որ հերքէր զմեղս ըստ մկրտութեան: - 462. Զի գալ *հոգւոյն* սրբոյ պատճա՛ռ էր կրկին ներգործութեան. այսինքն սրբութեան արմատոյ մեղաց. և պտղաբերութեան կուսածին զաւակին. ծնանիլ և կոյս մնալ յետ ծննդեանն: - 463. Յինգերորդ, որդի կնոջ ասի ոք՝ որ լինի մարմին ի նմանէ. թէպէտ *հոգին* յաստուծոյ է: - 466. Վեցերորդ, մայր մարդոյ ասի կինն որ ծնաւ զմանուկ. թէպէտ *հոգին* ո՛չ է ի մօրէն. այլ վասն միաւորեալ մարմնոյն մարդածին կոչի: - 466. Երկրորդ՝ զի թէ *հոգին* սուրբ էր մարմնացեալ, յայնժամ լինէին **բ** որդիք: - 468. Նոյնպէս և *հոգին* սուրբ լինէր որդի և *հոգի*: - 468. Չորրորդ՝ միտք և *հոգին* ո՛չ երևին. և բանն երևի և ի դուրս գայ. և մարդիկք տեսանեն և գրեն. վասն այն բանն մարմնացաւ, և ո՛չ հայր կամ *հոգին*: - 468. Վասն որոյ սրբեսցէ զսկզբնականն մեղք՝ յարգանդէ կուսական *հոգւով* սրբութեան ծնաւ: - 469. Եւ այս ո՛չ զհետ իրերաց. այլ համանգամայն յանկարծօրէն ի վայրկեան ժամու զօրութեամբ *հոգւոյն* սրբոյ. որոյ

յանկարծօրէն է ներգործելն աստուծոյ: - 470. Եւ այն ևս սքանչելիք, որ ի փոքրագոյն մարմինն ընկալեալ եղև *հոգի* բանական, և տեսակաւորեալ որպէս քառասնօրեայ մանուկ յարգանդի: - 470. Դարձեալ ի սկիզբն յղութեան անդ բանական *հոգւով* գիտաց զամենայն միաւորեալ ընդ բանին: - 470. Նա՛խ՝ զի կազմեսցի զօրութեամբ բարձրելոյն ի *հոգւոյն* սրբոյ և ո՛չ նպաստութեամբ մարդոյ: - 470. Յաղագս որոյ պատրաստեաց նիւթ արեան, կազմեալ զօրութեամբ *հոգւոյն*. որով լինիցի ճշմարիտ մայր քրիստոսի: - 470-471. Իններորդ՝ *հոգին* էջ ի յորդանան և ձայնն հօր: - 471. Եւ երեքեան ծնունդ քրիստոս՝ ըստ երից գոյացութեանցն որ ի քրիստոս. այսինքն աստուածութիւնն՝ մարմինն՝ և *հոգին*: - 471. Չորրորդ եղանակն որ կատարումն է այլոցն՝ ի կնոջէ առանց առն. որպէս ծնունդն քրիստոսի զօրութեամբ *հոգւոյն* սրբոյ: - 471. Եւ զի *հոգին* է ևս ի հօրէ, սակայն բղխումն է և ո՛չ ծնունդ որպէս ցուցաւ ի վերոյ: - 472. Հինգերորդ՝ փրկեաց *զհոգիսն* ի բանտէ դժոխոցն...: - 473. Իսկ զօծումն մարտի՝ յորժամ վարեցաւ ի *հոգւոյն* յանապատ և յաղթեաց հակառակին: - 474. Եւ զօծումն քահանայութեան ի թաբօր լերինն. ուր և *հոգին* սուրբ ամպ հովանի եղեալ. և հայր հաճութեամբ վկայեալ: - 474. Իսկ զօծումն *հոգւոյն* սրբոյ՝ յորժամ էջ աղաւնակերպ ի վերայ նորա: - 474. Օծօղն է հայր. և Օծումն որպէս իւղ *հոգին* սուրբ. և Օծեալն բանն մարմնացեալ: - 475. Այլ մեք այսպէս խոստովանիմք. եթէ օծաւ բանն աստուած ի *հոգւոյն* սրբոյ յորժամ յղացաւ մերովս կերպիւ յորովայնի...: - 475. ...ըստ որում որ էջ *հոգին* սուրբ յորովայն անարատ կուսին և մաքրեաց զնա, և կազմեաց ի նմանէ զարիւնն. և սրբեաց և օծեաց զնա միաւորելով պատկերապէս: - 475. Այսպէս միաւորութեամբ բանն աստուած օծաւ և սրբեցաւ ի հօրէ, ի ձեռն *հոգւոյն* սրբոյ գործակցութեամբ: - 475. Եւ են որք անշփոթ միաւորին. որպէս հուր և երկաթ. *հոգի* և մարմին. սեռ ի տեսակս. և տեսակ յանհատս: - 475. Յասիցելոցս ո՛չ ոքն յարմարի միաւորութեան փրկչին. բայց միայն երրորդն առաջնոյն. այսինքն էութիւն առ էութիւն անշփոթ խառնումն. որպէս *հոգւոյ* և մարմնոյ. զոր և յառաջիկայդ ցուցցի: - 476. *Յոգւոյ* և մարմնոյ միաւորութիւն ո՞րպէս նմանի քրիստոսի: - 476. Սուրբն աթանաս և կիւրեղ և այլք՝ *զհոգւոյ* և զմարմնոյ միաւորութիւնս ասեն բանին մարմնացելոյ: - 477. Երկրորդ՝ որպէս բոլոր *հոգին* է՛ ի բոլոր մարմինն միաւորեալ. և բոլորն է՛ յիւրաքանչիւր մասն մարմնոյն: - 477. Երրորդ՝ որպէս բաժանեալ ի միմեանց՝ ո՛չ գոյ մարդ. այլ մեռեալ մարմին կամ մերկ *հոգի*: - 477. Չորրորդ՝ թէ և ի մասնէ՛ կոչեմք երբեմն ի *հոգւոյ* կամ ի մարմնոյ...: - 477. Հինգերորդ՝ որպէս մարմինն զգայական միաւորեալ ընդ բանական *հոգոյ*՝ ո՛չ է և ոչ ասի զգայական. այլ բանական մարդ: - 477. Վեցերորդ՝ որպէս անկենդան մարմինս միաւորեալ ընդ *հոգւոյն*՝ կենդանի է և ասի: - 477. Եօթներորդ՝ որպէս այլայլական և փոփոխելի մարմինս կայ և մնայ անփոփոխ և անապական միաւորեալ ընդ *հոգւոյն* մինչև ցորոշումն: - 477. Ութերորդ՝ որպէս ի միաւորիլ *հոգւոյ* և մարմնոյ յառաջագայի ի միոյ կամաց միով զօրութեամբ հանճար և ներգործութիւն: - 478. Իններորդ՝ միաւորութիւն մարդոյ՝ է՛ անմահ և մահկանացու. յաւիտենական և ժամանակեայ. այսինքն *հոգի* և մարմին: - 478. Երկրորդ՝ զի *հոգի* և մարմին գոյակիցք են միմեանց անընդհատ ժամանակաւ: - 478. Երրորդ՝ զի *հոգի* միաւորեալ ընդ մարմնոյ՝ է երբէք զի որոշի և դարձեալ միանայ: - 478. Չորրորդ՝ զի ի մարդն է մի միայն միաւորութիւն. այսինքն *հոգւոյ* և մարմնոյ: - 478. Իսկ ի քրիստոս եռակի գոյ միաւորութիւն. այսինքն աստուծոյ ընդ *հոգւոյ*. *հոգւոյ* ընդ մարմնոյ. աստուծոյ ընդ մարմնոյ: - 478. Հինգերորդ՝ զի *հոգի* միաւորեալ ընդ մարմնոյ՝ է՛ ի մարմնումն էութեամբ և ո՛չ այլ ուրեք թէ և մտօք բազումս տեսանէ: - 478. Վեցերորդ՝ զի *հոգի* և մարմին մասն գոլով գոյանայ մի կատարեալ: - 479. Իսկ բանն աստուած կատարեալ լրիւ մարդացեալ բովանդակապէս. *հոգի* մարմին և միտս ունելով անշփօթ կատարելութեամբ և անբաժ ենթակայութեամբ: - 479. Եօթներորդ՝ զի ի բազմա՛ցելոց *հոգի* ասէ նիւսացին միաւորի ընդ մարմնոյ: - 479. Ութերորդ՝ զի աստ ի միաւորութիւն *հոգւոյ* ընդ մարմնոյ՝ զգայակից և ախտակից լինին միմեանց կրական գոլով: - 479. Իններորդ՝ զի ի *հոգի*՝ ի նմանամասունս և յաննմանամասունս այլ և ա՛յլ գործէ. ըստ որում ակն տեսանէ և ո՛չ լսէ. բերանն ճաշակէ՛ և ո՛չ հոտոտէ: - 479. Իսկ քրիստոս ամենևին ա՛կն՝ ամենևին ունկն՝ ընդ հօր և *հոգւոյն* աստուածաբար ներգործէ: - 479. Տասներորդ՝ զի թէ և միաւորի *հոգի* և մարմին՝ այլ ո՛չ *հոգին* մարմին և ո՛չ մարմինն *հոգի* ասի: - 479. Այս քան յաղագս աննմանութեան *հոգւոյ* և մարմնոյ: - 479. Եւ ա՛յն է յայտնութիւնն որ հայր վկայեաց ի վերայ որդւոյն, և *հոգին* սուրբ աղաւնակերպ իջմամբ: - 482. Երրորդ՝ հերիտիկոսօք. որք բառնան *զհոգին*: - 486. Երրորդն որ ասէ «էջ *հոգին* ի վերայ նորա». ցուցանէ թէ մկրտութեամբն լինիմք տաճար *հոգոյն* սրբոյ: - 487. *Յոգին* սուրբ աղաւնակերպ. իսկ Դիտաւորութիւնն հետևիլն ձայնին առ որ մկրտի: - 487. Եւ դարձեալ՝ հաճութիւնն է հանգուցեալ կամքն. այսինքն *հոգւովն* սրբով հանգեայ ի յորդի առեցեալ մարմնովն: - 488. Երկրորդ մկրտութիւն ջրովն և ամպովն առ մովսէսիւ ըստ պօղոսի «հարքն մեր յամպն և ի ծովն մկրտեցան». զի օրինա՛կ էր ամպն *հոգւոյ*, և ծովն ջրոյ: - 488. Չորրորդ՝ մկրտութիւնն յովհաննու որ մկրտէր ի

յապաշխարութիւն. զի կարասցեն ընդունել *զհոգւով* մկրտութիւնն. վասն այն յառաջէ՛ր և սրբէ՛ր ջրովն: - 488. Հինգերորդ՝ մկրութիւն տն այն որ ինքն մկրտեցաւ. այլ մկրտիմք և մեք զկատարեալ մկրտութիւն տն ջրով և *հոգւով*: - 488. Այլ և հրով մկրտիչ ասի քրիստոս. ըստ որում «յոհաննէս մկրտեաց ի ջուր. այլ դուք մկրտիցիք ի *հոգին* սուրբ և ի հուր. ո՛չ յետ բազում ինչ աւուրցս այսոցիկ»: - 488. Այն է որ հրեղէն լեզուաւ սփռեաց յառաքեալսն զշնորհս *հոգւոյն* սրբոյ: - 488. Որ զապականութիւն և զմահ եբարձ աւերելով զնա և ազատելով *զհոգիսն*: - 489. Եւ ա՛յլ առաքինութեամբք կոխեալ հատանեմք զխայթոցն որ է՛ ներգործական մեղքն և մահ *հոգւոց* և դժոխք: - 489. Զագահութիւնն՝ բազմաբաշխութիւնն. որ ետ զմարմին իւր ի կերակուր և զարիւնն իւր ըմպելի. *զհոգին* ի գին. զջուր կողին ի լուացումն. զհանդերձն՝ խաչողացն. զմարմինն՝ աշակերտացն. և զմայրն՝ յոհաննու: - 489. Եւ աստուածութեամբն ընդ հօր և ընդ *հոգւոյ* ընկալաւ զինքն: - 491. Երրորդ՝ զի եբարձ *զհոգին* շնորհաց: - 491. Եւ վասն մահուան որդւոյ՝ հայր աստուած ետ *զհոգին* սուրբ պարգևս մարդկան: - 492. Ներքինն զարի և ժուժկալ վարս համբերութեամբ ստանալ *զհոգիս*: - 493. Դարձեալ նշանակէ **դ** թև խաչին՝ փրկութիւն գոլ և լոյս *հոգւոյ* որք ի **դ** ծագս տիեզերաց հաւատացեալք են: - 493. Ոմանք ասեն թէ աւանդիլ *հոգւոյն* քրիստոսի, աւազակն եմուտ յերկրաւոր դրախտն ուստի ել ադամ. և չէ՛ հաւանելի. զի անդ մարմնովն եմուտ յետ յարութեանն: - 495. Եւ ոմանք ասեն թէ՝ յերկնաւոր դրախտն եմուտ *հոգւովն* մինչ ի կիրակէ մէջ գիշերին. և ի նոյն ժամն էջ ի դժոխս և ազատեալ *զհոգիսն* յարեաւ ի գերեզմանէն: - 495. Զի պետրոս քարոզեալ ասէ *հոգւոցն* որ ի բազում ժամս կատարի: - 495. Զի որ քան ամ ի յերկրի քարոզեաց, նոյն քան ժամ ի դժոխս առ *հոգիսն*: - 495. Եւ այլք ասեն՝ դրախտ զտեսութիւն աստուածութեանն կոչէ. զոր յետ աւանդելոյ *հոգւոյն* ետես աւազակն. և այս ուղիղ է. զի ո՛չ ասաց թէ՝ իցեմք, այլ թէ՝ իցես: - 495. Եւ զի ա՛յլ է մահ և ա՛յլ ապականութիւն՝ յա՛յտ է նախ ի գործոյն. զի ինքեամբ մահ ի ներքս մտեալ որոշէ՛ *զհոգի* և զմարմին. և ա՛յս է գործ նորա: - 498. Իսկ ապականութիւն այլայլութեամբն ի ներքս մտանէ, և զորոշեալն ի միմեանց՝ դարձեալ օգտէ՛ և այլայլէ՛. մինչ զմարմինն ի բուն տարերս լուծանէ, և *զհոգին* յաներևոյթ տեղիս: - 498. Մետասաներորդ՝ և սուրբ գիրք ի *հոգւոյն* սրբոյ խօսեցեալք վկայեն: - 499. Ասեմք եթէ՝ բանն աստուած էառ զմեր ապականակիր մարմինս և զմեղանչական *հոգի* և զմիտս. և մերովս արար փրկութիւն մեզ: - 500. Այլ միաւորեալ ընդ ինքեան բաժանեաց զմեղս ի *հոգւոյն* և զապականութիւն ի մարմնոյն. որպէս հուր ընդ ոսկւոյ միաւորեալ բաժանէ զժանգն ի նմանէ: - 500. Եւ ծնաւ ի կուսէ անմեղ *հոգւով* և անապական մարմնով մարդացեալ աստուած: - 500. Վասն է՞ր *հոգւովն* էջ ի դժոխս տէրն մեր քրիստոս: - 503. Նա՛խ՝ զի ցուցցէ վասն որոյ մարդ եղև և մեռաւ զի ազատեսցէ *զհոգիսն*: - 503. Նոյնպէս և *հոգւոցն* որ ի դժոխս լոյս ծագեաց *հոգւով* և քարոզեաց զփրկութիւն: - 503. Նոյնպէս և հոգւոցն որ ի դժոխս լոյս ծագեաց *հոգւով* և քարոզեաց զփրկութիւն: - 503. Չորրորդ՝ որպէս անիրաւութեամբ կապեաց սատանայ *զհոգիս* մարդկան. արդարութեամբն ազատեսցէ քրիստոս զնոսա: - 503. Յայնժամ փախուցեալ սատանայ իբր զապստամբ ծառայ. և մտեալ յորջն դժոխոց կարծէր ամրանալ անդ և ունել *զհոգիսն*: - 503. Որ և անդ ժամանեաց տէրն և կապեաց զհզօրն. և զկարծրացեալ ամրոցն աւերեաց. և կողոպտեաց ի նմանէ *զհոգիսն* մարդկան որ յադամայ հետէ ընդ բռամբ ունէր: - 503. Ուր արկեալ էր սատանայ զաթոռ իւրոյ իշխանութեանն. և անդ արգելեալ բանտէ՛ր *զհոգիսն* որ յադամայ. մինչ ի գնալ անդ անմահ թագաւորին մերոյ և աստուծոյ յիսուսի քրիստոսի: - 504. Զի յայնմանէ ազատեաց քրիստոս իջանելովն անդ. և աւերեաց զնա յաւիտեան. և առ հասարակ ազատեաց *զհոգիսն*: - 504. Մարմնական տեղին զանմարմին *հոգին* ո՞րպէս արգիլէ: - 504. Որպէս մարմնական հուր զանմարմին *հոգիսն* և զդևսն տանջէ, նոյնպէս և տեղին ըմբռնէ: - 504. Եւ դարձեալ՝ որպէս աստուծոյ կարողութեանն է զանմարմին *հոգին* հրով տանջել և զմարմինն անմահ պահել ի հուրն: - 504. Նոյնպէս և *զհոգիրն* թողեալք ի յաստուծոյ արգելուն դևքն: - 504. Դժոխքն այն յորում նախ քան զքրիստոս *հոգիսն* արգելոյր սատանայ՝ աւերեցաւ յաւիտեան: - 504. Երկրորդ՝ վասն բազում մասանցն. որք կրեն զտանջանս մարմնոյ մասամբ և զգայութեամբ. և *հոգւոյ* զօրութեամբ և մտաց իմացմամբ: - 505. Դարձեալ ասեմք, ներքին դժոխք է *հոգւոցն*. և վերին՝ գերեզման մարմնոցն...: - 505. Ուստի յա՛յտ է թէ մի է դժոխք *հոգւոցն*: - 505. Ասեմք ներքին դժոխք *զհոգւոցն*. և միջին զգերեզմանս. և վերին զմեղքն որ է՛ ի *հոգիս*: - 505. Զի և նա՛ չարչարէ՛ *զհոգիս* և է կենդանւոյն ի դժոխս ընդ մեզ շրջեալ: - 505. Ոմանք ասեն թէ ի չորրորդ դժոխքն էջ ուր էին արդարոց *հոգիքն* արտաքոյ ասացեալ երիցս, և զնա միայն աւերեաց. և զարդարսն միայն եհան. և զայլսն եթող անդ: - 505. Եւ քրիստոս ա՛նդ գնաց և կապեաց զհզօրն և քակեաց զամուրս նորա և աւար էառ *զհոգիսն*: - 506. Նախ ասեմք եթէ՝ առաջին դժոխք *հոգւոցն* ո՛չ էր վասն ներգործական մեղացն հասարակ. այլ վասն պարտուցն ադամայ: - 506. Հինգերորդ՝ մահու մահն էր դժոխքն. զի մահ մարմնոյն՝ ապականութիւնն է, և մահ *հոգւոյն* դժոխքն. ըստ որում վճիռ հատաւ ադամայ մահու մեռանիլ: - 506. Իններորդ՝ յա՛յտ է յօրինակէն. զի եգիպտոս հալոց երկաթի կոչի.

նշանակէ՛ զդժոխքն որ տանջէր *զհոգիսն*: - 507. Նոյնպէս և քրիստոս առհասարակ ազատեաց *զհոգիսն* և եհան ի կայանս *հոգւոցն*: - 507. Ա՛րդ՝ որպէս կենդանեաց շնորհեաց զբողութիւն, նոյնպէս և *հոգւոցն* առ հասարակ ազատութիւն. որպէս ասէ սուրբն եպիփան...: - 507. Եւ դարձեալ որ ուղիղն է, որպէս մարմնով տեսին ի յերկրի, նոյնպէս և *հոգւով* ի դժոխս պարտ էր *հոգւոցն* հաւատալ ի *հոգին* քրիստոսի և ազատիլ: - 507-508. Ա՛րդ՝ ի կենդանեաց երկոքինն պահանջին. իսկ *հոգւոցն* բաւակա՛ն է միայն ներքին իմացումն զի չունին մարմին: - 508. Եւ թէ ոք ասիցէ, ապա ուրեմն ամենայն *հոգիք* յետ մահու կարեն խոստովանիլ: - 508. Նոյնպէս և *հոգի* մարդոյ զկնի մահու ո՛չ կարէ արդարանալ ըստ ինքեան. բայց թէ ի ձեռս այլոց վճարի պարտ նոցա և հասանին ողորմութեան: - 508. Այս առ հասարակ ամենայն *հոգւոց*: - 508. Իսկ *հոգիքն* ի դժոխս յորժամ տեսին զքրիստոս, այն էր ժամանակ փրկութեան նոցա և ընդունելոյ զողորմութիւն. յաղագս որոյ հաւատովք արդարացան նոքա միայն ի նոյն ժամն: - 508. Եւ որպէս յինն ժամու ուրբաթուն լոյս ծագեաց *հոգւոցն* ի դժոխս, նոյնպէս և յինն ժամու շաբաթուն լոյս ծագէ զճառագայթս իւր արեգակն արդարութեան քրիստոս. մինչ յառաւօտուն բոլորապէս տեսանի ինքն յարուցեալ ի մեռելոց: - 509. Վասն զի բոլոր մարդն երիւք է կայացեալ. որ է *հոգի* և մարմին, և ի մէջ երկուցն շունչն է խառնեալ: - 510. Պահքն վասն *հոգւոյն* պատշաճի. և Ուտիքն մարմնոյն. իսկ Նաւակատիքն վասն խառնեալ շնչոյն: - 510. Վեցերորդ՝ ի մէջ գիշերի հրեշտակն եհար զեգիպտոս. և մովսէս եհան զորդիսն իսրայէլի. որ էր օրինակ աւերման դժոխոցն և ազատութեան *հոգւոց*: - 512. Եւ յորում ժամու ել մովսէս յեգիպտոսէ և եհան զժողովուրդն, ի նոյն ժամն յարեաւ քրիստոս ի մեռելոց և եհան ազատեաց *զհոգիսն* ի հրահալոց չարութենէ դժոխոցն և ի բռնութեանց իմանալի փարաւոնին: - 512. Եւ յերեկոյին լոյս ծագեաց *հոգւոցն*. որպէս սիւն լուսոյն իսրայէլի: - 513. Յորում աւուր կիրակէի ի մէջ գիշերի ընդ առաւօտն յարեաւ տէրն ի գերեզմանէն. հանելով *զհոգիսն* յանապատն երկնից. և խաչանիշ գաւազանաւն ընկղմեցաւ փարաւօն յանդունդս դժոխոց: - 513. Որ նշանակէ՛ զյարութիւնն քրիստոսի ի մէջ գիշերի զդրունս դժոխոցն խորտակեալ. և *զհոգիսն* հանեալ ի լեառն երկնային: - 513. Եւ տէրն ի գիշերի ելեալ ի գերեզմանէն բաժանեաց և էառ *զհոգիս* մարդկան ի նմանէ. և արար իւր հանդերձ զսուրբ ժողովուրդ իւր: - 513-514. Անաղէկ նշանակէ զսատանայ որ գերեաց *զհոգիս* մարդկան հրէից և հեթանոսաց...: - 514. ...և ո՛չ մի *հոգի* եթող ի դժոխս. այլ զամենայն ազատեաց յարուցեալ ի մեռելոց. և բաշխեաց պարգևս որդւոց մարդկան: - 514. Վեշտասաներորդ՝ ի մէջ գիշերի յարեաւ, զի *զհոգիսն* ի խաւարային բանտէն ի լոյս կենաց շրջեսցէ: - 514. Այլ որ ուղղապէս հանդիպիմք՝ ասեմք թէ **լ** ժամ մարմինն եկաց ի գերեզմանի. և *հոգին* **լգ** ժամ և կէս յամեաց ի դժոխս: - 515. Զի յինն ժամու ուրբաթուն արձակեաց *զհոգին* և էջ ի դժոխս. և ապա՛ ընդ երեկոյս ի մուտն արևու մարմինն եմուտ ի գերեզման: - 516. Ա՛րդ՝ շաբաթի գիշերն և տիւն **իդ** ժամ. և **զ** ժամ ի կիրակէէն մինչ ի մէջ գիշերն. որ լինի **լ** ժամ. իսկ *հոգին* **դ** ժամ և կէս նախ իջեալ ի դժոխս որ լինի **լգ** ժամ և կէս: - 516. Եւ ա՛յն է խորհուրդն, զի որ քան ամ մարմնով մարմնաւորացն քարոզեաց. նոյնքան ժամս *հոգւով* *հոգւոցն* քարոզեաց. այսինքն **լգ** ամ և կէս ի յերկրի. **լգ** ժամ և կէս ի դժոխս...: - 516. Երկրորդ՝ ասելն «չև ևս ելեալ եմ առ հայր իմ», ցուցանէ թէ՝ զոր այժմ խնդրես, *հոգին* գայ և զայդ ամենայն ծանուցանէ ձեզ: - 517. Վեցերորդ, ոմանք ասեն թէ պարգևս խնդրէր հոգևորական. վասն այն ասէ ելանեմ առ հայր իմ և իջանէ *հոգին* և լնու զձեզ ձրի պարգևօք. այժմ յաղագս այդորիկ մի՛ մերձենար: - 517. Երկոտասաներորդ, «մի՛ մերձենար», եցոյց թէ՝ որք յետ յարութեանն և վերանալոյն յերկինս կամին մերձենալ ի մարմին նորա առաքինութեամբ և սրբութեամբ, զախտս *հոգւոց* ի բա՛ց ընկեսցեն և մի ունայնապէս մերձեսցին ի նա: - 518. Արդ մի՛ մերձենար դու յիս անկատար գոլով. որպէս մայր քո եւա ի ծառն գիտութեան. յորժամ առ բնութեամբ իմ հայր՝ և ձեր ըստ շնորհի՝ և աստուած մարմնոյս իմոյ ես ելանիցեմ, որոտմամբ իջեալ *հոգին* զձեզ կատարէ՛. արժանաւորիք յայնժամ առ իս մերձենալ: - 518. Վեցերորդ՝ զի *զհոգին* սուրբ առաքեսցէ մեզ...: - 519. Եւ յետ այսորիկ ո՛չ այլ ինչ մնայ. այլ վերացումն *հոգւոյն* յերկինս: - 519. Եւ **լգ** ժամ ի դժոխս, զի փրկեսցէ *զհոգիսն*: - 520. Եւ **խ** օր յօդս զի **լգ** օր զօդս սրբեսցէ ի ճենճերից կռոց. և **է** օրն ի խորհուրդ **է** աստեղեան խորանացն ի կայանս *հոգւոցն*: - 520-521. Վասն է՞ր նախ քան զխաչն և զհամբարձումն ոչ պարգևեցաւ *հոգին* սուրբ երևելի նշանօք: - 521. Երրորդ՝ զի պա՛րտ էր քրիստոսի հովուել զպարզամիտ աշակերտսն որպէս հաւ զձագս, և մայր զմանկունսն. և թէ ի սկզբանէ *զհոգին* ընկալեալ էին՝ ո՛չ էր պիտոյ հովուել զնոսա: - 521. ...զի ուսցին բառնալ զտկարութեան այլոց. որպէս քրիստոս զնոցայն եբարձ. իսկ թէ նախ *զհոգին* առեալ էին՝ ո՛չ կարէին բառնալ զայլոց տկարութիւնն: - 521. Հինգերորդ՝ զի գիտասցեն թէ քրիստոսիւ պարգևեցաւ. թէ յառաջագոյն էին ընկալեալ, պարզապէս յաստուծոյ կարծէին զտուչութիւն *հոգւոյն* և ո՛չ ի քրիստոսէ: - 521. Նոյնպէս պա՛րտ էր զսերմն հաւատոյ ընդունել նոցա քրիստոսիւ, և ապա փոքր փոքր աճմամբ հասանիլ պարգևաց *հոգւոյն*, և պտղաբերել և զայլսն: - 521. Նա՛խ՝ ի կողմանէ պարգևողին. զի յորժամ քրիստոս նստեալ լինէր ըստ

մարմնոյ ընդ աջմէ հօր իբր զթագաւոր փառաց յաթոռ թագաւորութեան իւրոյ, յայնժամ մեծագոյն լինէր պարգևք *հոգւոյն* տուեալ ի փառաւոր քրիստոսէ աստուծոյ: - 521. Երկրորդ՝ ի կողմանէ ընդունողաց առաքելոցն. զի պատշաճաւորեցան *հոգոյն* սրբոյ. զի փործիւ գիտէին զվարդապետութիւնն քրիստոսի, զմահն և զյարութիւնն և զայլն: - 521-522. Երրորդ՝ ի կողմանէ *հոգւոյն* սրբոյ. զի առաւել հռչակելի և փառաւոր եղև այսպէս. զի ընկալեալ *զհոգին* վաղվաղակի սքանչելիս առնէին վկայելով քրիստոսի. և զառաքեալսն առատապէս լցուցանելով, և նոքա զայլսն: - 522. Դարձեալ կարէ ասիլ Ութերորդ պատճառս, առ ի ցուցանել թէ *հոգին* ո՛չ ումեք առատապէս պարգևի, եթէ ոչ յիսուս ի սիրտ նորա յատկապէս փառաւորեսցի: - 522. Զի ո՛չ միայն համարի մեծ և փառաւոր զաստուածություն նորա, այլ և զաղքատութիւնն և զանարգանս և զմահն. և յայնժամ արժանասցի առատապէս ընդունել *զհոգին* սուրբ: - 522. Այսպէս նախ եկն քրիստոս և խաչիւ և մահուամբ հաշտեցոյց զհայր, և ապա՛ հայր աստուած առաքեաց *զհոգին* սուրբ պարգև մարդկան: - 522. Եւ զի պարգև խաչին է *հոգին* սուրբ, նմին իրի յիշատակեալ *զհոգին* սուրբ՝ խաչիւ դրոշմեմք զդէմս մեր: - 522. Սակայն վարդապետք եկեղեցւոյ պատշաճե՛ն զստեղծանելն հօր. իսկ զտրոհելն որդոյ. և զզարդարելն *հոգւոյն* սրբոյ: - 522. Այսպէս պարտ էր յառաջագոյն հօր յայտնի լինիլ և ապա՛ որդոյ և *հոգւոյն* սրբոյ: - 522. Վասն է՞ր փայլական նմանեցուցանէ զիջումն *հոգւոյն* սրբոյ: - 522. Նա՛խ՝ զի յանկարծակի՛ փայլէ. նոյնպէս և *հոգին* սուրբ յանկարծակի էջ: - 522. Երկրորդ՝ զի ի կերպ հրոյ փայլէ. այսպէս և *հոգին* սուրբ հրեղէն լեզուօք: - 522. Երրորդ՝ զի զամենայն փորւածս լնու. այսպէս և *հոգին* էլից զամենայն տունն յորում նստէին: - 522. Չորրորդ՝ զի փայլատակեալն անբաժանելի մնայ յինքենէ. այսպէս և շնորհք *հոգոյն* սրբոյ անբաժանելի գոլով բաժանեցաւ յառաքեալսն: - 522. Հինգերորդ՝ նախ որոտայ և ապա՛ փայլէ. այսպէս և *հոգին* որոտմամբ էջ...: - 522. Իսկ *հոգին* սուրբ երագ էջ յառաքեալսն. զոր արեգակն քրիստոս բազում ամօք յերկարեալ մարմնով ել յերկինս: - 522. Եւ բազումք *զհոգին* ո՛չ կարեն ընդունել. «զի ո՛չ ճանաչեն և ո՛չ տեսանեն զնա» որպէս ասաց տէր: - 522. Եւ *հոգին* սուրբ ի քրիստոսէ էջ յառաքեալսն. և նա՛ է իմաստութիւն հօր: - 523. Եւ *հոգին* սուրբ բղխէ ի հօրէ՝ և առնու յորդւոյ զիմաստութիւն և բաշխէ՛ յարարածս բոլոր: - 523. Եւ շնչաւոր մարդոյ յիմարութիւն է *հոգին*. որ և պատժեաց զանանիա և զսափիրայ: - 523. Վասն որոյ նմանեցաւ իջումն *հոգւոյն* սրբոյ փայլական: - 523. Զբերան մտացն ասէ. այսինքն է՛ յօժարութիւն *հոգւոյն* որ առնու *զհոգին* սուրբ...: - 523. Եւ *հոգին* սուրբ կենդանութիւն է ներքին մարդոյն...: - 523. Եւ *զհոգին* որ քան յօժարին՝ այն քան և առնուն: - 523. Եւ սուրբ հոգին զչարութիւնն վարէ՛ և սրբեալ բարեգործէ՛ *զհոգին*: - 523. Այսպէս որք ընկալան *զհոգին* նս փափագին նմա: - 523. Եւ *հոգին* սուրբ բազմաբա՛շխ է և անպակաս հեղումն ի վերայ մարմնոյ: - 523. Այսպէս և առեալք *զհոգին* սուրբ բղխեն. ոմանց ի մահ և ոմանց ի կեանս. որպէս առ տաբիթայն և առ սափիրային: - 523. Զի՞նչ է պատիւ այսմ աւուր իջման *հոգւոյն*: - 523. Նա՛խ՝ զի յայսմ աւուր էջ *հոգին* սուրբ յառաքեալսն...: - 524. Հինգերորդ զատիկ սա ինքն է *հոգւոյն* իջումն ի վերնատունն: - 524. Եւ պենտակոստէ գալուստ *հոգւոյն* և կատարումն խոստմանց և լրումն աւետեաց: - 524. Վասն է՞ր յորում աւուր տըւան օրէնքն՝ ի նմին աւուր և առաքելոց տուաւ *հոգին* սուրբ: - 524. Նախ՝ զի ցուցանէ թէ որ ետ զօրէնսն՝ նոյն առաքեաց և *զհոգին* և ի նոյն տիպն որոտ և փայլատակումն հողմ և հուր երևեալ որպէս անդ ի լերինն: - 524. Քանի՞ ազգ պարգև ետ *հոգի* սուրբ՝ առաքելոցն: - 524. Նա՛խ՝ մաքրութիւն ի մահու չափ մեղաց. զի այլ ո՛չ ևս տիրեցին նոցա յետ *հոգւոյն* իջման: - 524. Հինգերորդ՝ զանբաժանելի միացումն ի սէրն քրիստոսի. զի որ ի խաչին թողին և փախեան, յետ իջման *հոգւոյն* ամենեքեան վասն անուան նորա չարչարեցան և մեռան...: - 524-525. Յօր աստուծոյ վասն է՞ր ոչ տօնեմք որպէս քրիստոսի և *հոգւոյն* սրբոյ: - 525. Դարձեալ՝ զի հայր մարմնով ո՛չ երևեցաւ որպէս բանն մարմնացեալ. կամ որպէս *հոգին* սուրբ աղաւնակերպ և հրաձև: - 525. Վասն է՞ր ի յորդանան աղաւնակերպ էջ *հոգին* սուրբ, և ի վերնատունն հրեղէն լեզուաւ: - 525. Եւ թէ զի՞նչ է սահման հաւատոյ. և ի յո՞ր մասն է *հոգւոյն*: - 526. Նախ այն է՝ որ զորդի ընդ հօր և սուրբ հոգւոյն փառաւորեմք և օրհնեմք գ անձինք ի միում բնութեան. և ո՛չ որպէս հինքն հրէական օրհնութիւնս. որք ո՛չ օրհնէին զորդի և *զհոգի*: - 528. Որպէս խօսեցաւ *հոգին* սուրբ ի մարգարէսն. և *հոգին* սուրբ աստուած է ճշմարիտ. ապա և խօսեցեալքն ի *հոգւոյն* սրբոյ ճշմարիտ խօսք է աստուծոյ: - 530. Ա՛րդ՝ յորժամ ամենայն ինչ նոյն է սուրբ Երրորդութեանն, որով յա՛յտ է՝ թէ հայր խօսի, և թէ որդի, և թէ *հոգին* սուրբ, մի և նոյն բանիւն խօսին. ապա ուրեմն ո՛չ է անյարմար եթէ հայր նոյն բանիւն վկայեսցէ ի վերայ որդւոյ. զի որդի և հայր նշանակէ զյատկութիւն անձանցն: - 530-531. Վասն երրորդին գիտելի է, զի գոյ հիւանդութիւն մարմնոյ, գոյ և հիւանդութիւն *հոգւոյ*: - 531. Նոյնպէս և անչափութիւն բանից և խրատուց հարց և իմաստնոց գիրք սուրբք՝ հին և նոր կտակարանք ցուցանեն զանչափ հիւանդութիւն *հոգւոյ*. զի սոքօք առողջացին: - 531. Չորրորդ՝ եկեղեցի է անդրանկացն վերինն սիոնի որ է *հոգիք* սրբոցն ժողովեալ. զոր պօղոս եկեղեցի կոչէ զորդիս

արդարոց կատարելոցն: - 534. Նա՛խ՝ մարգարէքն զհայր ծանուցին. ապա՛ առաքեալքն զորդի. և ապա՛ վարդապետք *զհոգին* սուրբ: - 535. Ի դէմս հօր՝ մարգարէքն. ի դէմս որդւոյ՝ առաքեալքն. ի դէմս *հոգւոյն* քննիչ վարդապետք...: - 535. այլ և մարգարէքն տալ *զհոգին* այլում ո՛չ կարէին...: - 535. ...և առաքեալքն ձեռն դնելովն միայն՝ տային *զհոգին* սուրբ. և ի լեզուս խօսէին. և մարգարէանային ընդունօղքն. իսկ վարդապետք սուրբք՝ քարոզութեան նոցին հետևօղք և որդիք ծնողացն՝ երրորդ կարգին յետ նոցա: - 535. Մարգարէութիւն է կանխագիտութիւն ժամանակաց անցելոց՝ ներկայից և ապագայից, բարի *հոգւոյն* միջնորդութեամբ: - 536. Երկրորդ՝ զի թէ ճանաչիցէ զիեռաւորն միջնորդութեամբ բարի *հոգւոյն*. զի թէ յայտնէ միջնորդութեամբ չար *հոգւոյն* ո՛չ է մարգարէ. այլ ստոցն ծանօթութիւն...: - 536. Չորրորդ՝ զմիտս լուսաւորելով յայտնապէս առանց երևակայութեան՝ միայն միտքն լուսաւորեալ ի շնորհաց *հոգւոյն*...: - 536. Սոյնպէս և դաւթին մարգարէութիւն՝ մտաց լուսաւորութեամբն երգէր զամենայն սաղմոսն ի *հոգւոյն* սրբոյ: - 537. Երրորդ ի շնորհաց *հոգւոյն*. որպէս մարգարէիցն և առաքելոցն: - 537. Այլ ա՛րդ՝ կրկին է իշխանութիւն. այսինքն հոգևոր և մարմնաւոր. վասն զի կրկին է մարդն. *հոգի* և մարմին: - 537. Իսկ հոգևորն իշխէ՛ ի *հոգի* և ի մարմին: - 538. Ուստի յայտ է զի պատժէ զմարմին. և կապէ՛ *զհոգին* ի կեանս և ի մահ: - 538. Եւ յորժամ առաքելոցն ետ՝ նախ փչեաց ի նոսա *զհոգին* սուրբ, և ապա ետ իշխանութիւն կապելոյ և արձակելոյ: - 539. Որ նշանակէ՛ թէ ի յայտնութենէն աստուծոյ և ի շարժմանէ *հոգւոյն* սրբոյ պարտ է ներգործել զայդ իշխանութիւն: - 539. Որպէս թէ զվերնագոյնն կամ զանարժանս կամ վասն ախտի ինչ օրհնել կամ ձեռնադրել. այլ զոր *հոգին* յայտնեսցէ զարժանիսն՝ նմա՛ կատարի: - 539. Եւ զոր նա՛ կապէ, այլքն ո՛չ արձակեն. որպէս որ կապեաց *զհոգիս* ի մարմնի՝ նա՛ արձակեսցէ: - 542. Տիմոթէոս աղէքսանդրու. Մելիտոս անտիոքայ. ճճ հարք ընդ դէմ մակեդոնի հայհոյչի *հոգւոյն* սրբոյ: - 542. Եւ սուրբն ղուկիոս սքանչելագործ և մարգարէաշնորհ, գրեաց առ մարկիանոս, թէ սուգ զգեցուցեր առաքելոց և մարգարէից. զի քակտեցեր զնոցա շինուածն. և արգելաւ *հոգին* սուրբ յօրհնելոյ զպատարագն և զաւազան մկրտութեան: - 543. Երրորդ՝ զի յետ համբարձմանն յորժամ էջ *հոգին* սուրբ, արար զնոսա կաթողիկոսունս առ հասարակ: - 546. Որպէս և քրիստոս արար. որ քան մարմնով ընդ առաքեալսն էր՝ եպիսկոպոսունս արար զնոսա. և յետ համբառնալոյն՝ *հոգւովն* սրբով արար զնոսա կաթողիկոսունս: - 546. Վեցերորդ՝ *զհոգին* ի հօրէ և յորդւոյ բղխումն: - 553. Իսկ անօրէնութիւն՝ *հոգւոյն* է՛. զի օրէնքն հոգևո՛ր են: - 555. Վասն զի յերից գոյացեալ է մարդն. ի մտաց ի *հոգւոյ* և ի մարմնոյ: - 556. Նա՛խ՝ զի խորհրդոյն չարն ի բոլոր *հոգի* և ի մարմինն սփռի որպէս թոյնք օձից: - 557. Զի *հոգի* է աստուած. և յիմացական միտս և ի *հոգիս* բնակէ ...: - 558. Որ և յարազուարճ բարերջանկութեամբ լի և ամենազան քաղցրորակ պտղաւէտութեամբ տընկեցիս ծառ բարձրաբերձ յընթացս *հոգւոյն* ի մէջ եկեղեցւոյ տանս թորգոմեան ազգիս հայկազնեան: - 558. Դարձեալ ասեմք թէ՝ այլ վարդապետք է ասեն զմեղս, զի **դ** տարերք են մարմնոյն, և **գ** զօրութիւնք *հոգւոյն*. այսինքն բան, ցասումն, և ցանկութիւն: - 559. Բարկութիւնն ցասմանն. իսկ Ծուլութիւնն է *հոգւոյն*. Ագահութիւնն հրոյն. Որկրամոլութիւնն օդոյն. և Բղջախոհութիւնն ջրոյն: - 559. Դարձեալ ասեմք զեօթնեքինն ըստ երից մասանց *հոգւոյն* այսպէս: - 559. Եւ երեքն խառն ի *հոգւոյն* և ի մարմնոյն. որ է բարկութիւն, ծուլութիւն, և ագահութիւն: - 559. Այլ սոցա երեցունց հաւասար է *հոգւոյն* և մարմնոյն բարկութիւն. և առաւել մարմնոյն ծուլութիւն. և առաւել *հոգւոյն* ագահութիւն: - 559. Երկրորդ դարձեալ՝ զի **դ** են տարերք. և **դ** ազդումն միաւորութեանց *հոգւոյն* յիւրաքանչիւր տարերս ըստ այսմ օրինակի: - 560. Եւ ըստ միաւորութեան *հոգւոյն* ի տարերս, Յօգւոյ և ի հրոյ բարկութիւնն: - 560. Փառասիրութիւն և հպարտութիւն են *հոգւոյ* և մտաց. որ լինի **ը**: - 560. Եւ այս լինի երրակի ըստ երից մասանց *հոգւոյն*: - 561. Անարգե՛մք *զհոգիս* որ է՛ պատկեր աստուծոյ. և պատուեմք զմարմինս որ պատկեր է անասնոյ: - 564. Իսկ մահն՝ որ տգիտութեամբ մեղանչէ. թէպէտ ո՛չ գիտէ՝ *հոգին* մահանայ: - 564. Դժուարաթողութեամբ, որպէս մեղքն որ ընդ դէմ *հոգւոյն* սրբոյ: - 565. Զի՞նչ է մեղքն ընդ դէմ *հոգւոյն* սրբոյ որ ո՛չ թողցի: - 566. Այլ յատկապէս ըստ երից դիմացն, որ տկարութեամբ մեղանչէ՝ է՛ ընդ դէմ հօր. և տգիտութեամբն ընդ դէմ որդւոյ. և չարութեամբն ընդ դէմ *հոգւոյն* սրբոյ...: - 566. Ա՛րդ՝ մեղքն որ ընդ դէմ *հոգւոյն* սրբոյ՝ մանաւանդ ելանէ ի չար կամաց անձնիշխանականին. և ուղղակի մարտնչի ընդ դէմ շնորհաց *հոգւոյն* սրբոյ. և յիրաւի անթողլի՛ է: - 566. Նա՛խ առ հրէայսն. որ գիտէին *զհոգին* սուրբ՝ շնորհաց բաշխօղ. ուստի ելից *հոգին* զբէսէլիէլ ճարտարապետ. և զեօթնարփեան շնորհս թուէ եսայի...: - 566. Երրորդ՝ զի չունէին պատճառս հայհոյութեան *հոգւոյն* որպէս զորդոյ. զի տեսանէին մարմին զգեցեալ, ուտել և ըմպել, տքնիլ և ննջել: - 566. Հինգերորդ՝ նման սատանային լինին որք ուրանան զպատճառն գոյութեան *հոգոց* իւրեանց. յիրաւի ապա որպէս սատանայ ո՛չ ունի թողութիւն ի կեանս յայս և ո՛չ ի հանդերձեալն և գործ ունէի նմին: - 566. Իսկ *հոգին* սուրբ միշտ շնորհաբաշխ և պարգևատու: - 566. Տասներորդ՝ վասն հոգեմարտին մակեդոնի որ հայհոյէր *զհոգին* սուրբ նուազ ասելով

քան զհայր և զորդի, ո՛չ թողցի նմա: - 566. Ա՛րդ՝ թէպէտ *հոգին* ո՛չ լինի սերեալ ի հօրէն որպէս մարմինն, սակայն սկզբնական մեղքն անցանէ ի *հոգւոյն* յադամայ ի *հոգիս* զհետ եկելոցն միջնորդութեամբ մարմնոյն ցանկութեամբ ծնելոյն: - 567. Զի որպէս ի մեղանչել *հոգւոյն* ապականեցաւ մարմինն ադամայ և եղև դիւրասաի առ վավաշոտ ցանկութիւնն. այսպէս և սերեալ մարմինն քարշելով ընդ ինքեան զապականութիւնն՝ աղտեղացուցանէ *զհոգին*: - 567. Եւ յա՛յտ է՝ զի սկզբնական մեղքն է՛ ի մարմինն և ի *հոգին*: - 567. Այլ ի մարմինն նիւթօրէն և սկզբնաբար. իսկ ի *հոգին* տեսակաբար և իբր նենթակայոջ: - 567. Այլ կոյսն մարիամ աստուածածին՝ էր ազատ ի մահացուէն և ի ներելւոյն. բայց ո՛չ ի սկզբնականէն. զոր *հոգւովն* սրբով մաքրեցաւ: - 568. Եւ պատիժն ի *հոգին* կամ ի մարմինն: - 568. Բարկութիւն է ցասումն *հոգւոյ*. որով ոք ընդ դէմ այլոց յառնէ: - 570. Դարձեալ, բարկութեամբ զպատկերն աստուծոյ կորուսանեմք ի մեզ. և *հոգին* սուրբ փախչի ի բարկացեալ *հոգւոյ*. զի խաղաղութիւն է տեղի նորա: - 570. Իսկ յորժամ սուրբ հոգին ելանէ, պիղծ *հոգին* այսինքն սատանայ բանկէ՛ ի նա: - 570. Ծուլութիւն է հեղգութիւն *հոգւոյ* ոչ սկսիլ ի բարին. կամ տաղտկանալ ի սկսեալ բարւոյ և ո՛չ կատարել: - 570. Յաւատն ի յո՛ր մասն է *հոգւոյն* իբր ի յենթակայ: - 572. Արիստոտէլ **գ** սեռս զօրութեան ասէ *հոգւոյն*. այսինքն է մինն անհնազանդ բանին. և մինն հնազանդ. և մինն բան էութեամբ: - 572. Իններորդ վասն *հոգւոց* մարդկան: - 572. Չորրորդ՝ *զհոգին սուրբ* աստուած. որ ասէ «հաւատամք ի *հոգին* սուրբ»: - 573. Զի թողութիւն մեղաց որ է՛ կենդանութիւն *հոգւոյ*՝ աստուածային զօրութեամբն լինի: - 573. Նաև *հոգւոյ* և մարմնոյ փառաւորութիւն: - 573. Առաջինն հաւատալ զորդին աստուծոյ յղացեալ ի *հոգւոյն* սրբոյ: - 573. Չորրորդն՝ որդին աստուծոյ իջեալ ի դժոխս ըստ *հոգւոյն*: - 573. Եւ այլ վարդապետք ասեն, սիրել պարտ է նախ զայն որ ի վերո՛յ է քան զմեզ. այսինքն զաստուած. և ապա՛ զմեզ. յետ որոյ զընկերն. և ապա՛ զմարմինս մեր. և ի նոյն աստիճանս զմարմին ընկերին. զի մարմինն երկրորդ է *հոգւոյն*: - 576. Այլ *զհոգւոյ* թշնամիս ատել: - 577. Նա՛խ որպէս ասէ սուրբն եւագրիոս՝ հաւատն ի հայր, յոյսն առ որդի, սէրն ի *հոգին* սուրբ: - 577. Այս ո՛չ եթէ բաժանմամբ. այլ նկատմամբ ի յատկութիւնս անձանց. ըստ որում սկիզբն է հայր. և փրկութիւն է որդին. և ջերմութիւն *հոգին*: - 577. Երրորդ՝ հաւատն է որպէս արմատ ծառոյն որ է հայր. յոյսն ստեղունքն որ է որդի. սէրն *հոգին* սուրբ որ է՛ ծաղիկ և պտուղ ըստ դիոնիսեայ: - 577. Իններորդ ըստ *հոգւոյն* մասանց. հաւատն է ի բանն. յոյսն ի ցասումն. սէրն ի ցանկութիւնն: - 578. Այլ գիտելի է, զի առաքինութեամբն ուղղի *հոգին* ի զօրութիւնս իւր. քանզի խոհեմութիւնն ուղղէ զբանականն. արիութիւնն զցասմնականն. ողջախոհութիւնն զցանկականն. իսկ արդարութիւնն ուղղէ՛ զամենայն զօրութիւնս: - 578. Վասն այն ասի արդարութիւնն ուղղութիւն կամաց. զի ո՛չ միայն է առանձնական զօրութիւն կամ առաքինութիւն. այլ և հասարակ և պարունակիչ ուղղութեան *հոգւոյն*: - 579. Նա՛խ՝ զի մշտնջենաւոր առնէ *զհոգին* հաստատելով ի բարին: - 579. Խոհեմութիւնն է զօրութիւն *հոգւոյ*, որով ընտրութիւն առնէ ի մէջ չարին և բարւոյն: - 579. Ա՛րդ՝ մեծագործութիւնն է մեծ և վեհագոյն իրողութեանց ի խորհուրդ և ի գործ ածումն ընդարձակ մտադրութեամբ *հոգւոյն*: - 580. Ապաստանութիւն է որով *հոգին* ի մեծ և ի համեստ իրս ստոյգ յուսովն հաստատի յինքեան: - 580. Ողջախոհութիւն է հաստատութիւն *հոգւոյ*. որով արգելու զցանկութիւն զգայական և զհեշտութիւն մարմնական: - 581. Զի սոքօք մարդկան *հոգիք* կարգաւորին և ո՛չ այլ կենդանեաց: - 581. Եւ զի դժուարին է *հոգւոյ* մարդոյ կարգաւորել զինքն և սրբել ի մեղաց. վասն այսորիկ օգնութիւն տայ աստուած *հոգւոյ* մարդոյ զեօթն պարգևս *հոգւոյն* սրբոյ: - 582. Խրա՛տ է լոյս *հոգւոյ* առ ի յունել *զհոգին*. որ յերկրայինս և ի մարդկայինս ո՛չ շաղախի: - 582. Երկրորդ՝ զի օգնակա՛ն են բնական զօրութեանց *հոգւոյն*: - 583. Այս քան վասն պարգևաց *Յոգւոյն*: - 583. այսինքն Աղքատութիւն *հոգւոյ*. Սուգ. Յեզութիւն. Քաղց արդարութեան. Ողորմածութիւն. Սրբութիւն սրտի. և Խաղաղութիւն: - 583. Քանզի Աղքատութիւն *հոգւոյն* արտաքսէ՛ զհպարտութիւնն: - 583. Աղքատութիւն *հոգւոյ* է՛ հրաժարիլն յաշխարհէ. այսինքն ի սիրոյ մարմնական հեշտութեանց և ի փարթամութեանց և ի պատուոյ. քանզի զերիսս զայս պարունակէ սէր աշխարհիս: - 583. Եւ աղքատք են *հոգւով*՝ որք ո՛չ խնդրեն զհեշտախտութիւնս: - 583. Եւ աղքատք *հոգւով* են խոնարհքն որք երկնչին: - 583. Եւ աղքատք *հոգւով* են ըստ մարմնոյ աղքատքն. որք ոչ ինչ ունին և զամենայն ինչ ունին: - 583. Նա՛խ՝ զի ի *հոգին* է. **բ**՝ զի վասն *հոգւոյն* տրտմի և ցաւի. **գ**՝ արտասուս հոսէ. **դ**՝ զմահ զդատաստան և զտանջանս ի միտ ածէ՛...: - 584. Նա՛խ՝ զի զտրտմութեան դևն զձանձրութեան զկարճմտութեան զսրտմտութիւն և զոխն հանէ՛ ի *հոգւոյն*: - 584. Ա՛րդ՝ առեալ լինի աստ սրբութիւն սրտին ո՛չ վասն առաքինութեան, այլ վասն որպիսութեան իմն մաքրեալ *հոգւոյն*: - 585. Եւ թէ իցէ ինչ՝ անզօ՛ր է. ապա յա՛յտ է զի խաղաղութիւնն է յո՛յժ մաքրեալ *հոգւոյն*: - 585. Երրորդ ինքն առ ինքն. որպէս առաքինիքն ի մէջ *հոգւոյն* և մարմնոյն և մտացն առնեն զխաղաղութիւն. և զպատերազմն որով ցանկայ մարմինն հակառակ *հոգւոյն*, հանեն ի միջոյ: - 585. Երկրորդ՝ հաշտեցոյց զհայր աստուած ընդ արարածս, և *զհոգին* սուրբ

պարգևեաց: - 585. Որ և ըստ այսմ կերպիս ո՛չ լինի տուեալ շնորհք *հոգոյն* ի մկրտողէն առ մկրտեալն...: - 588. ...զի պարգևք *հոգւոյն* ո՛չ արհամարհողաց և չկամողացն լինի տուեալ. այլ հաւատով խնդրողացն...: - 588. Այլ զայն ասացեալ յառաջն զծև բանիցն. որ և արժանաւորապէս տուեալ լինի շնորհք *հոգւոյն*: - 588. Եւ ո՛չ զկարգն փոխել. որպէս թէ յառաջ *զհոգւոյ* անունն ասել և ապա զորդւոյ և ապա՛ զհօր: - 588. Չորրորդ, զի թէ ի ձեռն փիլիպպոսի առաքելոյ որ էր մի յեօթանց անտի սարկաւագացն ո՛չ եղև իջեալ *հոգին* ի վերայ ներքինւոյն մինչև յափշտակեցաւ յազովտոս...: - 589. ...և ապա՛ էջ *հոգին* ի մկրտեալն նորա. զիա՞րդ ի ձեռն կնոջ լինի տուեալ շնորհք հոգւոյն լուացմամբ ջրոյն: - 589. ...և ապա՛ էջ հոգին ի մկրտեալն նորա. զիա՞րդ ի ձեռն կնոջ լինի տուեալ շնորհք *հոգւոյն* լուացմամբ ջրոյն: - 589. Բայց գիտելի է, զի գործ մկրտութեանն է սրբել *զհոգիս* յամենայն մեղաց զոր ունիցի. թէ բնական թէ ներգործական և ի պատժոց մեղացն. զի թէ նոր մկրտեալն մեռանի, առ ժամայն թռչի ի կեանս յաւիտենականս: - 590. Չորրորդ՝ զի մկրտութիւնն է անքակտելի կնիք ի *հոգին*. որպէս կարգն և դրոշմն. վասն որոյ ո՛չ կրկնին որք յանուն սուրբ Երրորդութեանն մկրտեցան: - 590. Երկրորդ՝ զի կուսութեամբ ծնանի առանց ապականութեան. և զայս պատճառէ՛ *հոգին* սուրբ և նիւթ ջրոյն զի հեղո՛ւկ է: - 590. Այսպէս շնորհք հոգւոյն սրբոյ ի մկրտութեանն զաղտս մեղաց լուանայ. զծարաւ *հոգւոյն* բանիւն աստուծոյ շիջուցանէ. և զկորուսեալ պատկերն աստուծոյ դարձուցանէ: - 591. Արդ ունիմք կրկին ծնօղ. ըստ մարմնոյ զադամ. և ըստ *հոգւոյ* զքրիստոս: - 592. Կրկին է պատիժ մեղաց. այսինքն մահ մարմնոյն, և դժոխք *հոգւոյն*: - 592. Դարձեալ՝ կրկին է գալուստն քրիստոսի. յառաջինն *զհոգւոյ* պատիժն եբարձ. և յերկրորդն զմարմնոյն. զի երկրորդ է մարմինն *հոգւոյն*: - 592. Ո՛չ է օգուտ. զի չև ևս ծնաւ երկրորդ ադամ. զի նախ պա՛րտ էր ըստ մարմնոյ ծնանիլ. և ապա ըստ *հոգւոյ* վերստին ծնունդ: - 592-593. Որ տուեալ լինի ի մկրտութիւնն *հոգի* սուրբ որով մեղքն քաւեալ լինի: - 593. Զայն ցուցանէ թէ յորժամ մկրտեցաւ քրիստոս՝ *հոգին* սուրբ էջ ի վերայ նորա...: - 593. Այսպէս ջրովն մկրտիմք ի քրիստոս և որդիք աստուծոյ կոչիմք. և իւղովն ի շնորհք *հոգւոյն* սրբոյ միաւորիմք: - 593. Նա՛խ՝ է՛ վկայութիւն անդուստ իսկ թշնամեացն. քանզի ասէ ալպերտն ի յառաջին գիրքն **ժա** համարին, թէ *հոգի* ասեմ սրբութեան. արիւն փրկութեան. և ջուր լուացման: - 594. Եւ ի չորրորդ գիրքն ի **ի** համարն ասէ, ետ զմարմինն ի կերակուր. զարիւնն ըմպել. *զհոգին* ի գին. զջուրն կողին ի լւացումն: - 594. Նոյնպէս և բոլոր մարմին և *հոգին* է մի աստուած ընդ բանին միաւորեալ. և բաժանեալ ամբողջական մասունքն է՛ բոլոր և կատարեալ աստուած: - 598. Ապա ուրեմն *հոգին* քրիստոսի աստուած է և մարմինն աստուած է և արիւնն աստուած է: - 598. ...զի հաւատալի է թէ ի մարմինն քրիստոսի՝ է՛ և արիւնն կապակցութեամբ. և *հոգին* համազուգութեամբ. և աստուածութիւնն միաւորութեամբ: - 600. ...նմանապէս և ի յարիւնն է կապեալ մարմինն և *հոգին* համազուգեալ և աստուածութիւնն միաւորեալ...: - 600. ...ապա յորժամ զրկես յարենէն զժողովուրդն, զրկես և ի նոցանէ որ կապեալ են ընդ արիւնն. այսինքն մարմինն և *հոգին* և աստուածութիւնն: - 600. Զի որպէս հուրն դիզին վնասակա՛ր է, նոյնպէս մեղքն *հոգւոյն*: - 601. ...այլ ապաշխարութիւնն ամբարէ՛ զբարիս ի *հոգին* զի պսակեսցի: - 602. Եւ թէ ասեն, միայն մարմինն օծանի՝ զի՞նչ ներգործէ ի *հոգին*: - 605. Ապա թէ ոչ՝ ժա՛մ է քեզ ասել թէ ամենայն կարգ թաղման մարմնոյն՝ ո՛չ է օգուտ *հոգւոյ* ննջեցելոցն: - 605. Ապա և ո՛չ աղօթք և պաշտօն քահանայից կամ տուրք կամ պատարագք է օգուտ *հոգւոյն* ըստ քեզ որ է բնաւ սուտ և չար հերձւած: - 605. Եւ են է կարգ ըստ է պարգևաց *հոգւոյն* սրբոյ: - 606. Իսկ ի թաբօր լերինն ձայնիւ հայրական և հովանեաւ *հոգւոյն* եղև քահանայ. ցուցեալ մովսէս և եղիա սարկաւագունք յաջմէ և յահեկէ: - 607. Զի եպիսկոպոսունք տան *հոգի* քահանայից և զկապելոյ և զարձակելոյ իշխանութիւն: - 607. Եւ յետ յարութեանն փչելովն *զհոգին* արար զնոսա եպիսկոպոսունս: - 607. ...վասն զի ունիմք զմարմին և *հոգի* և օրէնք: - 611. Եւ երեքն հոգեկան. զի *հոգին* եռամասնեա՛յ է: - 611. Որոյ պատճառէ. զի *հոգին* եռամասնեա՛յ է. այսինքն բան՝ ցասումն՝ և ցանկութիւն. - 611. Եւ մարդս է եռայարկեան. մարմինն արտաքին. և *հոգին* ի միջին. և իմացումն առաջին: - 613. Աստ անարիւն պատարագն մատչի. և ի մեզ բանեղէն պատարագն *հոգի* և մարմին միշտ նուիրեալ կենդանի: - 614. Յինգերորդ, օրհնեմք զեկեղեցիս, զի օրհնութիւն վերնատանն ուր տէրն պատարագեաց, և *հոգին* սուրբ էջ յառաքեալսն...: - 615. Եւ լինիլ ի յառաջին սրբութեանն տաճար և բնակարան *հոգւոյն* աստուծոյ: - 615. Երկրորդ, զի **է** է խորհուրդ եկեղեցոյ. և **է** արփեան է շնորհք *հոգւոյն*. և մի կատարմունքն ի մեզ, որ լինի **ը**: - 616. Աշխարհամատրանն. և յետ գալստեան *Յոգւոյն* կիրակէն. Տապանակին. Շողակաթին. և **դ** օր ի Խաչին տօնն. **բ** Գալստեանն. Վերնատանն. Եւ նոր կիրակէին: - 616. Այլ և **ե** զգայութիւն *հոգւոյ* և **ե** մարմնոյ. մտօք և կամօք: - 616. Նա՛խ՝ որպէս զմեռեալս *հոգւով*՝ արտաքսեմք յեկեղեցւոյ. նոյնպէս և զմեռեալն մարմնով: - 617. Երրորդ՝ զի մարմինք սրբոց ի գաւիթս պահին և ո՛չ յեկեղեցի. յօրինակ *հոգւոց* նոցա որք են ի պահեստ *հոգւոյն* ի տեղւոջ լուսոյ և հանգստեան: - 617. Այլ զփառս արքայութեան երկնից ի կատարածի

ժառանգեսցեն *հոգւով* և մարմնով անվախճան յաւիտենիւ: - 617. Դարձեալ՝ ի խորհուրդ գոչման փողոյն այն որ ի բարձունս. զի նախ յերկնից գոչէ փողն գաբրիէլի և ժողովէ *զհոգիսն*...: - 618. Երրորդ՝ զի երիցս գոչէ փողն. նախ *զհոգիսն* ի յերկնից կոչէ. և ապա՛ զմարմինս ի հողոյ. և ապա՛ յարուցեալ *զհոգի* և զմարմին ի դատաստան հրաւիրէ: - 618. Երկրորդ՝ մեղքն ի *հոգւոյն* և ի մարմնոյն ի վեր ելանէ. իսկ արտասուքն վերուստ ի վայր հոսի և կորուսանէ՛ զնա: - 619. Զարձակումն խնդրեմք բերանոյ *հոգւոյ* և մարմոյ: - 621. Երրորդ ժամն արևագալին առ *հոգին* սուրբ. այս **գ** ժամս ի գիշերի կատարին: - 621. Իսկ չորրորդ ժամն՝ ցերեկին երրորդ ժամուն առաջին ողորմեայն է ի դէմ *հոգւոյն* սրբոյ. որ յերրորդ ժամու էջ յառաքեալսն: - 622. Վեցերորդ ժամն է վերջին ողորմեայն. իններորդ ժամու աղօթն. յորում քրիստոս աւանդեաց *զհոգին* ի ձեռս հօր: - 622. Ութերորդ՝ խաղաղականն է յետ երեկոյին ժամուն առ *հոգին* սուրբ. յորում ժամու *հոգին* քրիստոսի էջ ի դժոխս և խաղաղացոյց զնոսա: - 622. Իսկ ի ցերեկին աղօթեմք **ե** անգամ ի դէմս *հոգւոյս* մերոյ: - 622. Նա՛խ՝ վասն զի *հոգին* եռամասնեայ է. բան, ցասումն, և ցանկութիւն. և ունի իմացումն և կամք: - 622. Եւ դարձեալ՝ *հոգին* ունի **ե** ներքին զգայարանք. - 622. Նա՛խ՝ զի *հոգի* և մարմին է մարդն: - 623. Նա՛խ՝ զի յերի՛ց եմք գոյացեալ ի մարմնոյ, ի *հոգւոյ*, և ի մտաց, որպէս ասեն ոմանք. վասն որոյ **գ** առանձնական աղօթս մատուցանեմք: - 623. Որով յա՛յտ է՝ զի ի կէս աւուրն որ է **ժբ** ժամն՝ աղօթելի՛ է մեզ յամենայն օր. և զկէսն այլ՝ մարմնական *հոգոց* պարապիլ. գործոյ աշխատութեան՝ ննջելոյ՝ կամ այլ ինչ իրաց: - 623. և մեք հանապազ վեցեկի շարժմամբ *հոգւով* և մարմնով մեղանչեմք. - 624. Եւ ա՛յս է պատճառն, զի քահանայն է՛ ի դէմս քրիստոսի, և եպիսկոպոսն հօր աստուծոյ. և խաղաղութիւնն է՛ *հոգին* սուրբ որ ի հօրէ առաքեցաւ...: - 625. Զի ընդ ամենեսեանն՝ զանձն նշանակէ. իսկ ամենեցունն՝ զշնորհս *հոգոյն* սրբոյ ցուցանէ: - 625. Եւ առաւել յարմարէ քահանային զշնորհս *հոգւոյն* սրբոյ բաշխել, քան թէ զանձն: - 625. Եւ զայս տէրն ցուցանէ. երբեմն ասէր, «զխաղաղութիւն զիմ տամ ձեզ». որ է՛ շնորհք *հոգւոյն*: - 625. Եւ երբեմն թէ՝ «ընդ ձեզ բնակեսցէ և ընդ ձեզ եղիցի». որ է՛ անձնաւոր *հոգին*: - 625. Իսկ ամենեցունն՝ զմիշտն և զանբաժանելի *հոգին* սուրբ: - 625. Նա՛խ՝ զի *հոգին* սուրբ պարգևք է խաչին քրիստոսի. այլ և ի վերնատունն լուսեղէն խաչիւ հանգեաւ յառաքեալսն: - 625. Ապա ուրեմն պա՛րտ է յորժամ յիշատակեմք *զհոգին* սուրբ ամենայն ուրեք՝ խաչակնքել զդէմս և երկրպագել: - 625. Սարկաւագն է՛ քարոզ և ուսուցիչ մեր ի դէմս *հոգւոյն* և ի դէմս առաքելոցն. - 626. Նոյնպէս և **ը** ձայն եղանակաց. և **ը** օրեայ զտօնս գլխաւորս. որպէս ծննդեանն ութն օր. և յարութեանն՝ և *հոգւոյն* գալստեանն՝ և խաչի՝ և եկեղեցւոյ՝ և այլն: - 627. Եւ կրկին տուն սաղմոսին, զի *հոգի* և մարմին եղև բանն: - 628. ...զի առաջին փոխն է ի դէմս հօր. և միջինն առ որդի. և վերջինն առ *հոգին* սուրբ: - 628. Նոյնպէս և հինգերորդն, բարի՛ է աստուած և ողորմած տեսողացն զաստուած հնգիւք զօրութեամբ *հոգւոյ*...: - 629. ...վասն որոյ ի գիշերի կենցաղոյս լուսաւորէ *զհոգիս* յետս ընկրկելով զթշնամիս: - 629. Իսկ ութերորդն ի նեղութեան դարուն օրհնել *հոգւով*. և գովել ի վերինն երուսաղէմ...: - 630. Իսկ փառքն, և ալէլուն, և օրհնութիւն և փառքն, և ամէնն, և ընդ *հոգւոյդ* քումն, և խաղաղութիւնն, այս ամէն Առաքելադի՛ր է: - 631. Եւ յամենայն օր **դ** անգամ ասեմք ի սրբութիւն մեր *հոգւոյ* և մարմնոյ և մտաց: - 632. Իսկ առաքեալն պօղոս ի դէմս *հոգւոյն* ասէ ի գործքն. «բարւոք խօսեցաւ *հոգին* սուրբ ի ձեռն եսայեայ մարգարէի»...: - 632-633. Եւ *զհոգին* անմահ և ո՛չ աստուած և ո՛չ հզօր: - 633. ...յորժամ ասեն՝ սուրբ աստուած հայր, սուրբ և հզօր բան, սուրբ և անմահ *հոգի*...: - 633. Եւ ապա՛ իբր զկնիք զբաշխումն շնորհաց ի *հոգւոյն* սրբոյ աղերսեմք: - 633. Դարձեալ՝ սկիզբն աղօթիցն է՛ առ հայր. և մէջն որ է՛ խաղաղութիւնն առ *հոգին* սուրբ. որպէս ասացաւ ի վերոյ. - 633. Դարձեալ՝ առաջին ողորմեայն է՛ առ *հոգին* սուրբ. վասն այն ասեմք օրհնեալ *հոգիդ* սուրբ աստուած ճշմարիտ զառաջինն: - 633. Եւ խաղաղութեամբ *հոգին* կատարումն առ *հոգին*: - 633. Եւ տե՛ս՝ զի ամենայն ուրէք *զհոգին* սուրբ հօր աղերսեմք. զի ի հօրէ՛ բղխէ: - 633. և Դարձեալ՝ որպէս յետ ամենայն տնօրէնութեանցն ել առ հայր և պարգևեաց *զհոգին* սուրբ: - 634. Նոյնպէս յետ ամենայն խորհրդական աղօթից՝ առ հայր ամբառնամք և աղերսեմք *զհոգին* սուրբ բաշխել մեզ...: - 634. Տա՛սն է. ինն ի դէմս քրիստոսի. և մինն ի *հոգին* սուրբ ի հոգէգալուստն: - 634. Եւ դարձեալ թէ՝ այսպէս սուրբ ունիմք զմիտս և *զհոգիս* մեր: - 635. Իսկ կրկին ասել զշարականս. զի եմք *հոգի* և մարմին: - 636. Եւ *հոգւոյ* և մարմնոյ և մտաց մեր աղե՛րս է: - 637. Որք զծորանս *հոգւոյն* արբին և ի ժամանակս ժամանակս երգեցին եղանակաւ զերգս շարականաց՝ այսոքիկ են: - 637. ...և *զհոգւոյ* գալստեան **դ** պատկերն, - 637. Այսինքն ի հօրէ յառաջ բղխէ *հոգին* առ որդի. և նովաւ բաշխի մեզ: - 639. Եւ դարձեալ՝ զիւր *հոգին* աւանդելով կնքեաց զամենայն *հոգիսն* ի ձեռն հօր: - 639. Երրորդ՝ աւետարանն *հոգւոյ*: - 640. Երրորդն՝ ի վերնատունն *հոգւով*: - 640. Վասն է՞ր ձայն և քնար խառնէր դաւիթ ի յերգս *հոգւոյն*: - 641. Նա՛խ՝ զի մարդն *հոգի* է և մարմին, ձայնիւ և ձեռօք երգէր. զերկու մատունս ի մի լծակցեալ յօրհնութիւնն աստուծոյ: - 641. ...խառնեաց զնոսա ի բանս *հոգւոյն*, - 641. Երրորդ՝ զի քաղցր ձայնիւ հեշտացեալ մարդիկ՝ զանխլաբար ուսցին *զհոգւոյն* բանս:

- 641. Դարձեալ՝ նոցա կրկին աղի. իսկ մերն բան և ձայն. և *հոգի* և մարմին: - 641. Եօթն աղին՝ է զգայարանս. և եօթն փոփոխմունք եօթնից դարուցն. և զօրութիւնք *հոգւոյ:* - 641. Տասն աղին՝ **ժ** զգայութիւնքն *հոգւոյ* և մարմնոյ. և **ժ** մասունք արարածոց ընդ բան օրինացն: - 641. Նախ ասել աւետեաց, և ապա՛ ծննդեան. և գալստեան. և խաչի. և յարութեան. և համբարձման. և *հոգւոյ* գալստեան. և վարդավառի. և փոխման: - 642. ...վասն որոյ թէ ոք սրբութեամբ երգէ՝ լցցի շնորհօք *հոգւոյն* սրբոյ: - 643. ...կամ միացաք ընդ քեզ *հոգւով*: - 644. Նա՛խ՝ որպէս ասեն ոմանք՝ Բուրվառն նշանակէ զմարդկութիւնն քրիստոսի. և Հուրն զաստուածութիւնն. Ծխումն զբուրումն *հոգւոյն* սրբոյ: - 645. Երեք չուանն յեռեալ ի միմեանս մակդարձապէս, է՛ չորեքնիւթեայ բնութիւնս մեր ի տարերց խառնեալ. կամ շնչոյ մարմնոյ և *հոգոյ* խառնումն: - 645. Վերին ագոյցն իմացականն *հոգի*. և ներքին կառոյցն մարմնոյս բնութիւն: - 645. Որ և զանազան նկարքն՝ զանազան շնորհաց *հոգւոյն* նշանակք: - 646. Դարձեալ, նշանակէ զժողովուրդն աստուծոյ. յորոց ունկն ընթերցեալ լինին միշտ բանք աստուածայինք. հնգիւք զգայութեամբք *հոգւոյ* և մարմնոյ առ միմեանս յեռեալք: - 646. ...վասն որոյ տէրն քրիստոս մարմնով ի գերեզմանի հանգեաւ. և սուրբքն *հոգւով* առ աստուած յերկինս: - 648. Նոյնպէս և *հոգւոցն* ելեալ ի մարմնոց՝ այլ միջոց և արգելումն կամ խափան պսակացն չկայ: - 648. Զի այժմ յուսով լցեալ ունին ի *հոգիս* իւրեանց զփառս և զպայծառութիւն գործոցն: - 648. ...այսինքն զպայծառութիւն գործոցն և զանմեղութիւն *հոգւոյն* զոր ընկալան ի շնորհացն քրիստոսի: - 648. Եօթներորդ *հոգոյն* գալստեան. որպէս ասացաւ պատճառն ի վերոյ ի **իա** գլուխն, **ծա** համարն: - 649. Զի *հոգի* և մարմին եմք. ուտիքն է մարմնոյ, և պահքն *հոգւոյ* հեշտալի: - 649. Տօնն ուրախութիւն է. որպէս *հոգւոյ*՝ նոյնպէս և մարմնոյ: - 650. Վասն որոյ յորժամ տօնեմք *հոգւով*՝ ուրախանամք մարմնով: - 650. Եօթներորդ, ի դէմս *հոգւոյ* և մարմնոյ մերոյ սրբութեամբ պահեմք երկու ի շաբաթուն: - 653. Երկրորդ, զի **ծ** օր պահեցաք վասն *հոգւոյն*...: - 654. Վասն որոյ յետ համբարձմանն պահելի է զդշաբաթ և զուրբաթ. և կամ զինն օր մինչ ի *հոգւոյ* գալուստն: - 654. Երկրորդ, զի աղօթք՝ *հոգւոյն* է՛ կերակուր, և հացն մարմնոյն...: - 654. ...նախ պա՛րտ է *զհոգին* կերակրել և ապա՛ զմարմինն: - 654. Երկրորդ, զի կրկին եմք մարդ. այսինքն *հոգի* և մարմին...: - 655. Զի յերից եմք գոյացեալ մարդ. *հոգի* և մարմին և միտք: - 655. Եւ դարձեալ՝ բարեկենդանն նշանակէ՛ զառաքինութիւն *հոգւոյն* ամենայնիւ փարթամացեալ: - 657. Իսկ պահքն զչարութիւնն. զի նուազի և կարօտի *հոգին* յամենայն բարեաց. որպէս ի պահոց մարմինն: - 657. Չորրորդ, զի մա՛սն է *հոգւոյն* և հանդերձեալ կենացն. պա՛րտ է զպատւականն որոշել քան զմարմնոյս: - 657. ...զի պատարագ աստուծոյ սիրտ սուրբ և *հոգի* խոնարհ զոր աստուած ո՛չ արհամարհէ: - 658. ...նոյնպէս և մեզ մասն ինչ բարւոյ է և աստուծոյ. և մասն ինչ աշխարհի. մասն ինչ *հոգւոյ* և մասն ինչ մարմնոյ. աստի՛ կենաց և հանդերձելոյն. - 658. *Յոգի* սուրբ՝ սրբութեամբ քո սրբեա՛ զմեզ: - 659. Տասներորդ, Վասն բաժանման *հոգւոցն* թէ ճանաչե՞ն զմիմեանս. և գիտե՞ն զմեզ. և աղօթե՞ն ի վերայ մեր: - 660. Տասնևմի, Ո՞ւր են կայանք ամենայն *հոգւոց*: - 660. Քսանբ, ճանաչման *հոգւոց.* և որպիսութեան մարդոյ: - 660. ...այլ նախ բնակեսցէ *հոգւով*, և ընտանացեալ մտցէ և մարմնով: - 662. Երրորդ՝ կրկին է մարդս. որ է՛ *հոգի* և մարմին. և **բ** աշխարհս. այսինքն երկին և երկիր: - 662. Արդ՝ նա՛խ մարմնոյս ետ զերկիր, և ապա *հոգւոյն* տայ զերկին: - 662. Զի նախ է մարմին քան *զհոգի*. ոչ ժամանակաւ և պատւով. այլ նիւթով և զօրութեամբ: - 662. Չորրորդ ըստ բանական *հոգւոյն* յառաքինութիւն և ի չարութիւն: - 663. Եւ ըստ *հոգւոյն* բարի և չար: - 664. ...յայնժամ լինի բժշկութիւն *հոգւոյ* և մարմնոյ յաստուծոյ և ո՛չ ի դեղոց: - 665. Նախ ի դէմս մեր. զի պակասիմք ի մարմնոց և յաւելումք ի *հոգիսն*: - 666. Մահ է որոշումն *հոգւոյ* ի մարմնոյ: - 667. ...և *հոգին* երթայ առ աստուած որ ետ զնա ասէ սողոմոն: - 667. ...զի որ քան էր ի ժամանակս ի մէջ փոփոխման էր *հոգին*...: - 667. ...որպէս ասէ սուրբն դիոնէսիոս եթէ՝ *հոգին* և մարմինն առցէն ի բոլոր յարութեանն: - 667. Նախ աստ *հոգի* մարդոյն է ի մէջ չարեաց և բարեաց. իսկ յետ մահու ի մէջ բարեաց միայն. և ի յարութեանն ի մէջ բարեաց և փառաց: - 667. Եւ չորրորդ որպիսութիւն, զի աստ *հոգին* կարէ՛ մեղանչել՝ կարէ՛ և ոչ մեղանչել: - 667. Նոյնպէս և մեղաւոր *հոգին* աստ կարէ՛ արդարանալ և կարէ ոչ արդարանալ: - 667. ...և ապա մեռանի և բաժանի ի *հոգւոյն*...: - 667. Ա՛րդ՝ իմանալի մահ է՝ ի ձեռն առաքինութեան զմարմինն մեռուցանել և ի ձեռն չարութեան *զհոգին*: - 668. Զի յորժամ առաքինութեամբ ախտ մարմնոյն մեռանի՝ զօրանայ *հոգին*...: - 668. Եւ յորժամ չարութեամբ *հոգին* նուազի, մարմինն զօրանայ և լինի մարդն շնչաւոր և անբան...: - 668. Յորժամ սրբազան և մաքուր *հոգին* հասանէ ի վախճան՝ ուրախութեամբ ցնծայ իբր ի հանդիսից զերծեալ և ի պսակն ընթացեալ. և որպէս յանփոփոխ կեանքն հետևեալ: - 668. Նա՛խ՝ զի համընթա՛ցք են ասէ ի վաստակն. այսինքն *հոգին* և մարմինն. ի միասին և հանգիցեն և պսակեսցին: - 668-669. Եւ դարձեալ՝ *հոգի* և մարմին զոյգ և ի միասին ստեղծան և ծնան ի մարմնաւոր կեանքս...: - 669. Որպէս որք ի խաւար բանտից զերծանին և ազատեալք զլոյս տեսանեն.

նոյնպէս և *հոգին* բաժանեալ ի մարմնոյ. և են ի լոյս և յերանութեան հանգիստն: - 669. Իսկ յորժամ մեղաւոր *հոգին* հասանէ ի վախճան, տրտմութեամբ և ակամայ իբրև զանասուն ի սպանդ վարեալ...: - 669. Այլ և ի բաժանիլ չար *հոգւոյն* ի չարացեալ մարմնոյն...: - 669. ...չար *հոգիքն* ընդ առաջ ելեալ արգելուն զնա ի ճանապարհն. - 669. և առեալ տանի ի կայանս *հոգւոց*...: - 669. ...և նա ցաւօք և տրտմութեամբ և հեծութեամբ կայ անդ ի խաւարին բանտն ընդ այլ խաւարասէր *հոգւոցն*: - 669. Այլ երկոքինն ունին ի *հոգիս* իւրեանց մեծ տեսեալ` զոր ի յարութեանն առնելո՛ց են կատարեալ անձամբ` *հոգւով* և մարմնով...: - 670. Ո՛չ միայն մարմնով, այլ և *հոգւով*. թէ չունի զմասն բարութեան: - 670. Երրորդ կոչի կարգ, զի զոր ինչ մեք առ մարմին ննջեցելոցն կատարեմք, զնոյն կարգ և հրեշտակք առ *հոգիսն* կատարեն այժմ և ի յարութեանն աւուր: - 671. Իսկ զի չորիցն բարձեալ տանին, նշանակէ որ բ հրեշտակք պահապանք ամբառնան *զհոգին*. - 671. Եւ որպէս հրեշտակքն *զհոգին* ածեն առ աստուած, նոյնպէս և զմարմինն տանին առ քահանայապետն...: - 672. ...և նա դնէ յեկեղեցին մերձ առ դուռն որ նշանակէ զկայանք *հոգւոցն* յերկինս ի վերջին տեղւոջ մինչ ի յարութեանն օր: - 672. ...այսպէս և *հոգին* զմայլի տեսութեամբ սուրբ Երրորդութեանն...: - 672. ...զի քահանայապետն զհայր նշանակէ. և իւղն զքրիստոս. և անուշահոտն *զհոգին* սուրբ որ քրիստոսիւ պարգևեցաւ մեզ: - 672. Վեցերորդ, զբոլոր մարդոյն յարութիւնն և զբոլորին փրկութիւնն և զսրբութիւնն նշանակէ որ է՛ *հոգին* և մարմինն...: - 672. ...վասն այն *հոգւոյ* նորա աղօթիւք սրբութիւն և փրկութիւն խնդրեմք...: - 672. Եօթներորդ, ցուցանէ թէ *հոգին* սուրբ և քրիստոս հանգուցեալ է ի նշխարս սրբոց. որպէս ի կեանքն` նոյնպէս և ի մահն: - 672. ...զի կնիք է ի *հոգին* և անքակ. որպէս ի կեանքն` նոյնպէս և յետ մահու ունի: - 673. Տասներորդ, նշանակէ զվերջին օծումն. զի ամենայն կարգ զոր մարմնոյն կատարեմք` *հոգւոյն* է և մարմնոյն որպէս ասացաք: - 673. Ութերորդ` զողջութիւնն նշանակէ ողջոյնն բոլոր *հոգւոյն* և մարմնոյն որ է անբիծ և անարատ: - 673. Իններորդ` որպէս *հոգին* եղիայի էջ ի վերայ եղիսէի. - 673. նոյնպէս և մեք ողջունիւս *զհոգին* և զշնորհքն նորա ընդունիմք ի մեզ: - 673. Տասներորդ` զի այսպէս ողջունի և *հոգին* անդ որպէս մարմինն աստ. նախ յաստուածպետութենէն, և ապա ի համակարգ *հոգւոց* սրբոց: - 673. Եւ նշանակէ նախ զերեք հանգստեանն. մինն մարմնոյ. և միւսն *հոգւոյ*. և միւսն *հոգւոյ* և մարմնոյ: - 675. Երկրորդ, զի երի՛ց եմք գոյացեալ. ի մարմնոյ, ի *հոգւոյ*, և ի մտաց...: - 675. Տասներորդ, զի **գ** են տեղիք. այսինքն կայանք *հոգւոցն* և դժոխք և արքայութիւն. - 675. ...վասն որոյ երիցս խնդրեմք զի այժմ բաժանեալ *հոգին* խաղաղութեամբ ժամանեսցէ յօթևանս լուսոյ...: - 675. Երրորդ, զի մարմինն փոխեսցի ի հող մինչև *հոգին* յանապական և յանփոփոխ սերտութիւնն կայասցի...: - 677. Չորրորդ, մարմինն ի հող հանգչի և *հոգին* ի կայանս *հոգւոց*...: - 677. ...ապա և մարմինն անապական և *հոգին* անփոփոխ կացցէ յաւիտեան. նմանելով անապական և անփոփոխ մարմնոյն քրիստոսի: - 678. Երրորդ, զի աստ միայն մարմինն, և անդ *հոգին* և մարմինն տանջին: - 679. Նշանաքարն կրկին, Նախ ցուցանէ *զհոգի* և մարմին բաժանեալ ի միմեանց: - 679. Եւ դարձեալ *հոգւոյ* և մարմնոյ. և շնչոյս պահապան: - 679. Եւ դարձեալ` ցուցանէ թէ այսպէս և *հոգի* նորա անշարժ կայ և մնայ ի յաւիտենական փառս և ի մշտնջենաւոր հանգիստն ամէն: - 679. Դարձեալ` և կրկին է մահ. որ է *հոգւոյ* և մարմնոյ...: - 680. ...զի մեղօք մեռանի *հոգին* ի դժոխս. որպէս և մարմինն...: - 680. Երրորդ` զի **գ** են տեսակք *հոգւոց*. տնկական, զգայական, բանական. և սոքօք մեղանչեմք: - 681. Այլ և բանական *հոգւոյն* **գ** են զօրութիւնք. բան ցասումն և ցանկութիւն: - 681. ...և աւետիս յարութեան տամք նոցա. և տեսեալ *հոգով* ուրախանամք: - 681. Այսպէս և բաժանեալ *հոգին* ի մարմնոյ` ընթանայ յերկինս և ամփոփի ի տեղւոջ լուսոյ յօթևանս հոգւոց...: - 681. Այսպէս և բաժանեալ հոգին ի մարմնոյ` ընթանայ յերկինս և ամփոփի ի տեղւոջ լուսոյ յօթևանս *հոգւոց.* - 681. Եւ զերծեալ իսահակ և խոյն զենեալ. զի *հոգին* զերծանի ի տանջանացն և մարմինն մեռանի: - 682. Եւ միջին սրբութին է կայանք *հոգւոցն*. ուր աշտանակն լուսոյ և խունկն և հաց երեսացն: - 682. Որք են անուշահոտ *հոգիք* սրբոցն հանդէպ երեսացն քրիստոսի ի տեղւոջ մշտնջենաւոր լուսոյն: - 682. ...և յետ աստեացս մտանեմք ի կայանս *հոգւոց*, - 682. և *հոգին* անվնաս մնայ որպէս զիէլ. - 682. Եւ մկրտութեանն շնորհք և դաւանութիւնն սուրբ` հովանի և լուսատու լինի *հոգւոյն*: - 682. Եւ փարաւոն ընկղմեալ զօրօքն. զի ոչ ինչ կարեն վնասել չար դևքն` քրիստոնէից *հոգւոց*: - 682. Եւ անապատ է՛ կայանք *հոգւոցն* անկարօտ մարմնական պիտոյից: - 682. Մանանայ նոցա բանն աստուծոյ. և ջուր *հոգին* սուրբ: - 682. Այսպէս թէպէտ քրիստոնէից *հոգիքն* որ անարժանք են` ի ձեռն հրեշտակին ժամանեն ի կայանս *հոգւոցն* այսպիսի սքանչելեօք: - 682-683. Նա՛խ` որպէս ասացաւ ի քահանայաթաղն վասն է շնորհաց *հոգւոյն*, և է խորհրդոց եկեղեցւոյ, և է առաքինութեանց, և է գլխաւորագոյն մեղաց, և է զգայարանօք մեղանչեմք, և է փոփոխմամբ հասակի...: - 683. Երկրորդ ի մեզ. զի **գ** զօրութեամբ *հոգւոյ* և **դ** նիւթով մարմնոյ մեղանչեմք: - 683. Իսկ երրորդն ի դէմս Երրորդութեանն և **է** շնորհաց *հոգւոյն* զոր ընկալաք յաւազանին: - 683. Յետ մարմնոյ

կատարմանց՝ հարցանեմ և վասն բաժանեալ *հոգւոց*: - 685. *Յոգիք* ելեալ ի մարմնոց՝ ի զգայութեա՞ն են և ի միտս, թէ ոչ: - 685. Ի մարմնոյ բաժանեալ *հոգին* պայծառանայ տեսութեամբ. որպէս որք ի խաւար բանտից ազատին: - 685. *Յոգիքն* ճանաչե՞ն զիմիմեանս, թէ ոչ: - 685. *Յոգիք* արդարոցն ճանաչեն զմիմեանս անուամբ և ծննդեամբ և գործով վաստակոցն. որք զարդիւնսն միշտ մեծ տեսանեն: - 685. Իսկ չար *հոգիքն* ճանաչեն այն քան զչարս՝ վասն զի ըստ արժանեաց իւրոց տանջելոց են: - 685. *Յոգիք* արդարոցն զամենայն գիտեն զոր ինչ վասն նոցա գործեմք. և վասն մեր բարեխօսե՛ն և կատարե՛ն զխնդիրս: - 685. *Յոգիքն* աղօթե՞ն վասն սիրելեաց իւրեանց, թէ ոչ: - 685. *Յոգիքն* ո՞րպէս երևին մարդկան: - 685. Ասեն ոմանք թէ՝ սրբոց *հոգիքն* յարաժամ երևին յորժամ կամին և որոց կամին: - 685. Իսկ մեղաւոր *հոգին* դարձեալ ի ձեռն հրաշտակաց. զի աղաչէր զնա երևիլ. կամ ի ձեռն դիւաց կերպարանին նոքա: - 686. Այլ չար *հոգիքն* ոչ կարեն գալ առ մեզ մինչ ի դատաստանի օրն...: - 686. Ո՛չ. զի ըստ այնմ որ զերծան ի չարեաց, միայն ի *հոգիս* իւրեանց ունին զուրախութիւնն: - 686. Ո՞ւր է կայանք *հոգւոցն* և պահեստ: - 686. Վարդապետք սուրբք՝ զպահեստ *հոգւոց* յերիս փոփոխմունս գիտեն. այսինքն նախ քան զքրիստոս. և յետ քրիստոսի. և յետ դատելոյն: - 686. Նախ քան զքրիստոս, առ հասարակ ի դժոխս. բայց յետ քրիստոսի, առհասարակ ի կայանս *հոգւոց*. և երրորդն ի կատարածի...: - 686. Իսկ թէ այժմ ո՞ւր են կայանք *հոգւոց*: - 686. Այլք այլ իմն ասեն. իբր թէ իւրաքանչիւր մեղաւոր *հոգի* ի գերեզմանս իւրեանց կամ ի յերկրի տանջին...: - 686. Իսկ ազգն Ֆռանկաց ասեն զչարաց *հոգիսն* ի դժոխս իջեալ. և զբարեացն յերկինս ելեալ...: - 686. Եւ այլք ասեն ի դրախտին լինիլ զկայանս *հոգւոց* արդարոց և մեղաւորաց մինչ ի կատարած աշխարհի: - 686. Այլ և ոմանք ի մէնջ որպէս վարդապետն վարդան և այլք ասեն գոլ ի միում տեղւոջ զամենայն *հոգիս*...: - 686. Եւ այլք ոմանք վեցերորդ կարծիս ստացեալ ասեն զբուն կատարեալ բարեաց *հոգիսն* ժողովեալ ի հրեշտակացն դասս...: - 687. ...են *հոգիք* նոցա ի միում խորանի մինչ դատաստանն ընտրեսցէ զնոսա և որոշեսցէ. որպէս ցուցանի յառաջիկայդ: - 687. Առաջին նման է այնմ որ ասեն *զհոգին* ընդ մարմնոյն ի հող լուծեալ կամ անդ տանջեալ...: - 687. ...որպէս որք մահկանացու ասեն *զհոգին*. և այս խոտելի է ի բաց: - 687. Երրորդն ի տգիտա՛ց է ասացեալ. զի կայանք մարմնաւոր՝ անմարմին *հոգւոց* ո՛չ է պիտոյ: - 687. Կրկին ասեն զշաւիղս ընթացից *հոգւոց*. այսինքն մինն ի վեր յերկինս, և միւսն ի ներքոյ երկնից: - 688. Իսկ *հոգիք* հաւատացելոց որք ոչ գնացին այսպէս զհետ նորա, այլ ընկալան ի ներգործութեանցն սատանայի և ի կրից աշխարհի...: - 688. Ուր ետես զիդ երիցունսն շուրջ զաթոռովն աստուծոյ. և զբազմութիւն *հոգւոց* սրբոց յամենայն ազգաց ժողովեալ անդ: - 688. Ո՜ հա՛յրդ ես որոց ի վեր քան զերկինս. այսինքն *հոգւոց* սրբոց կատարելոցն որ ի վերեն քան զդասս հրեշտակաց մեծ քրիստոսի որպէս քահանայք առ քահանայապետ, և անդամք առ գլուխն. և որդիք առ հայր: - 688. Զի այժմ *հոգւով* են առ նա. և յետ յարութեանն *հոգւով* և մարմնով: - 688. Եւ գիտելի է, զի հիմն և սկիզբն անդ եկեղեցւոյն եղև տէր մեր յիսուս քրիստոս յարուցեալ ի մեռելոց. և ընդ ինքեան հանեալ և վերացուցեալ *զհոգիս* սրբոց նահապետաց և մարգարէից: - 688. Իսկ ի ներքոյ երկնից առ երկնիւ է կայանք *հոգւոց* կիսամասնեայ արդարոց այնոցիկ որոց պակա՛ս է արդարութիւն քան զմեղս և կամ առաւել: - 688. Այս է խորանն առ երկնիւ ուր ժողովին արդարք և մեղաւորք *հոգիք* հաւատացելոց. որք դատաստանաւն կատարին, ակնունելով ողորմութեանն աստուծոյ: - 688. Իսկ ձախակողմեան խորան՝ է՛ ի յօդս յաներևոյթ տեղիս. ուր ժողովին *հոգիք* չարաց և մեղաւորաց. որք դատաստանաւն դատապարտին: - 688. Եւ սկիզբն անդ ժողովելոյ՝ ի յարձակելն քրիստոսի առ ժամանակեայ *զհոգիսն* անարժանից՝ անդ մնացին և անտի դարձցին մեղաւորք անրդէն ի դժոխս ըստ մարգարէին: - 688. Անդ ժողովին և *հոգիք* չարաց և ամբարշտաց ի ձեռն հրեշտակաց չարաց. ո՛չ ըստ բնութեան, - 688. այսինքն զմեղօք մեռեալ *հոգիսն* ի դատաստան ըստ գործոց: - 689. Ապա ո՞րպէս մի կայանք *հոգւոցն* որ ասացաւ յառաջն: - 689. Ապա թէ ոչ՝ ո՛չ կարէ մեղաւոր *հոգին* ելանել յերկինս. ուստի և հրեշտակք վասն մեղաց անկան. և մարդն ի դրախտէն: - 689. Նոյնպէս և *հոգիք* արդարոց ո՛չ մնան ուրեք ընդ ներքոյ դատապարտեալ տարերաց...: - 689. Զի այժմ յուսով են յերկինս և առ երկինս. և յետ մահու *հոգւով*. և յետ յարութեանն *հոգւով* և մարմնով յանճառելի փառսն: - 689. *Յոգիք* արդարոց կամ մեղաւորաց ունի՞ն այժմ զփառս կամ զտանջանս թէ ոչ: - 689. Եւ այժմ *հոգիք* սրբոց առնուն զփառս գործոց ըստ ինքեան. զի հանգչին և ուրախանան ի գործս իւրեանց...: - 689. ...և ի յարութեանն առնուն զփառս հատուցմանց *հոգւով* և մարմնով. և այնպէս փառաց ի փառս բարձրանան որպէս ասի յերգս: - 689. Եւ այսպէս ամենայն առաքինութիւն աստ հանգուցանէ զմիտս. և յետ մահու *զհոգիս*. և յարութեանն *զհոգի* և զմարմին: - 689. Նոյնպէս կրկին է և տանջանք չարաց. այսինքն տանջանք գործոց ըստ ինքեան, և տանջանք հատուցման, զի զտանջանք գործոցն կրեն յետ մահու. և զտանջանք հատուցման ի յարութեանն *հոգւով* և մարմնով: - 690. Զի գործք չարութեան այժմ դատէ՛ խղճիւ զմիտս. և յետ մահու

*զհոգիս*. և յետ յարութեանն *զհոգի* և զմարմին որպէս ասացաւ: - 690. Զի *հոգիք* սրբոցն ո՛չ են առանց մխիթարութեան. այլ հանգչին և ուրախանան ի գործս իւրեանց և յուսով փառացն հատուցման. - 690. որպէս ասէ մեկնիչն տեսլեան. եթէ սպիտակ հանդերձն շնորհացն քրիստոսի մաքրութիւնն է. որ սրբութիւն մեղաց մերոց արար քրիստոս. յոր ամենայնքն վայելեցաք. զի յորժամ սրբի *հոգին*, բնական ունի զպայծառութիւնն: - 690. Ապա ո՞րպէս են ի դժոխս *հոգիք* մեղաւորաց...: - 690. ...այլ առցեն յաւուրն դատաստանի *հոգւով* և մարմնով...: - 691. Երկրորդ, ասէ սուրբն դիոնէսիոս ի ննջեցելոց կատարմանց գլուխն՝ եթէ մաքրելոց *հոգին* հասեալ ի վախճան՝ յայտնի և մերձակայ տեսանէ զամենայն փառս և զպսակ զոր ընդունելո՛ց են նոքա ի յարութեան աւուրն: - 691. Երրորդ, զի զոյգ և ի միասին ստեղծան և ծնան ի մարմնաւոր կեանքն *հոգին* և մարմինն...: - 691. Երրորդ, ասէ առաքեալն թադէոս, եթէ *հոգի* ամենայն մարդոյ որ ելանէ ի մարմնոյ, են նոցա օթևանք և բնակութիւն ի հանգստեան...: - 691. ...բայց վարձ հատուցման ո՛չ կարէ ընդունիլ առանց մարմնոյն. զի ո՛չ միայն *հոգւոյն* է վաստակն, այլ և մարմնոյն: - 691. Չորրորդ, ասէ սուրբն եպիփան ի հաւատոց գիրն, եթէ որպէս *հոգին* միայն դատի ըստ բանի հերձուածողացն զի կարէ՛ ասել մարմնոյն եղեալ զյանցանքն: - 691. Նոյնպէս և *հոգին* պատճառէ՛ զմարմինն՝ թէ յորմէ հետէ բաժանեցայ ի նմանէ՝ ո՛չ մեղանչեցի: - 691. Վասն այսորիկ արդար դատաւորն *զհոգի* և զմարմին ի միասին յարուցանէ և դատէ՛. եթէ վասն մեղաց ի տանջանս և եթէ վասն արդարութեան յարքայութիւնն երկնից: - 691. Հինգերորդ, ասէ աստուածաբանն գրիգոր՝ եթէ հաւանիմ իմաստնոյն բանի՝ թէ *հոգի* բարի և աստուածասէր յորժամ ի մարմնոյն արձակի, կայ և մնայ նմա բարին որ լինի: - 691. Այսինքն մի՛ առաջինքն առանց մեր վերջնոցս, և մի՛ *հոգիքն* առանց մարմնոյս պսակեսցին: - 692. ...իսկ *հոգին* բաժանեալ ի մարմնոյն տակաւին ո՛չ է կատարեալ իւր յատուկ կատարելութեամբն: - 694. Ապա ուրեմն *հոգին* ո՛չ կարէ առնուլ զկատարեալ վարձս կամ զտանջանս: - 694. Քսանևե, ամենայն ներգործութիւնք կամ ենթակայից են, և կամ անձանց. իսկ *հոգին* բաժանեալ ի մարմնոյն՝ ո՛չ է անձն և ո՛չ ենթակայ: - 694. Ապա *հոգին* առանց մարմնոյ ո՛չ ունի ներգործութեամբ ինչ վարձ կամ պսակ: - 694. Այլ յորժամ *հոգին* միաւորեսցի ընդ մարմնի և յերկուցն լինիցի անձն, յայնժամ կարէ՛ ունել ներգործութեամբ զփառս կամ զտանջանս: - 694. Քսանևզ, ո՛չ է արդարութիւն աստուծոյ թէ այժմ հատուցանի. զի մարմին և *հոգին* ի միասին գործեցին զչար և զբարի: - 694. Եւ թէ մասն մարդոյն որ է *հոգին* տանջի այժմ վասն մեղաց և մարմինն հանգչի, այս ո՛չ է ուղիղ, նոյնպէս և զփառսն: - 694. Այլ որպէս ի միասին վարեցին զայս կեանս *հոգին* և մարմինն, նոյնպէս և զայն կեանս ընդունիցին: - 694. Երեսուներորդ, յա՛յտ է յորպիսութեանցն չորից որ ասացաւ յառաջագոյն եթէ աստ *հոգի* մարդոյն է ի մէջ բարեաց և չարեաց. իսկ յետ մահու ի մէջ բարեաց միայն. իսկ ի յարութեանն ի մէջ բարեաց և փառաց: - 694. Զի ո՛չ կարեմք *հոգւով* երանի լինիլ եթէ ոչ մարմնով երանելի լիցուք: - 695. Եւ ապա ասեմք, եթէ աստուած յամենայն տեղիս է. վասն որոյ կայանք *հոգւոցն* ուր և իցէ առ աստուած է: - 695. Զի թէպէտ անդ ո՛չ է փառք, այլ և ո՛չ տանջանք և չարչարանք գոյ. վասն այսորիկ առ աստուած ասէ որք են ի պահեստ *հոգւոցն*: - 695. ...այլ ընկալեալ ունին զյոյս անմահութեան և զերանութեանն ի *հոգի*: - 695. Դարձեալ ասեն՝ *հոգին* յառա՛ջ գործէ զբարին զի նախ իմանայ և կամի: - 696. Ասեմք առ այս, եթէ նախ է բարին ի *հոգին* ըստ տեսութեան մտացն և կամացն. - 696. այլ զգործելն ի միասին գործեն *հոգին* և մարմինն: - 696. Այսպէս *հոգին* նախ տեսութեամբն ուրախանայ և փառաւորի, և ապա՛ մարմնովն կատարեալ պսակի: - 696. ...քանզի յորժամ սրբի *հոգին* բնական ունի զպայծառութիւնն: - 696. Իսկ կոչելն զյառնելն ի մեռելոց ցուցանէ. *հոգւոյն* և մարմնոյն միաւորեալ: - 696. Նաև մշակ ասելն, զի *հոգին* առանց մարմնոյն ո՛չ ինչ է աշխատեալ. վասն որոյ և զվարձն *հոգւոյն* և մարմնոյն տայ: - 696. ...իսկ *հոգի* մարդոյն յանհնարինս մտեալ երթայ առ միտս որ է՛ երրորդ բարեկամ և խնդրէ բարիս. - 697. իսկ *հոգին* թախանձէ՛ թերևս զի ելս իրացն իմասցէ. - 697. Դարձեալ ասեն, զի՞նչ է փառքն և պսակ արդարոցն, եթէ ոչ տեսութիւնն աստուծոյ զոր ունին *հոգիքն*: - 697. Երկրորդ՝ զի տեսութիւնն հաւատոյն է փոխարէն զոր *հոգին* ընկալաւ. և պսակն գործոյն է զոր մարմնով առնու: - 697. ...իսկ միջակ արդարքն որ են ի կայանս *հոգւոցն* և զտեսանելն պայծառապէս ընկալցին ի յարութեանն դէմ յանդիման որպէս և էն...: - 697-698. Ա՛րդ՝ եթէ ճշմարիտ է մարգարէն և առաքեալն, զի ահա՛ ա՛ստ է ընդունել զապաշխարութիւն և փրկել *զհոգիս*...: - 698. Հինգերորդ, *հոգի* և մարմին ի միասին գործեն զմեղս որպէս ասացաւ ի վերոյ...: - 699. ...իսկ *հոգին* միայն ո՛չ կարէ քաւել զանչափ մեղս: - 699. Եւ այն զի պատճառ մեղաց առաւել մարմինն՝ քան թէ *հոգին* լինի: - 699. Եւ ո՛չ է ի դէպ թէ *հոգին* ըստ ինքեան վճարէ զպարտս մարմնոյն. ապա ո՛չ է անդ քաւարան: - 699. Նոյնպէս և *հոգին* յետ բաժանման մարմնոյն ո՛չ կարէ քաւել: - 699. Այլ *հոգի* դատարկ ի քաւարանին աչս ո՛չ ունի զի լացցէ որով յարատ հայեցաւ. և ո՛չ մարմին զի պահեսցէ և աղօթեսցէ. այլ և ո՛չ զղջումն. զի *հոգին* ինքն ըստ ինքեան ո՛չ կարէ զղջալ: - 699. Իսկ արդ ի

յարութեանն հա՛րկ է զի միանգամ տանջեալ *հոգին* միւս ևս ընդ մարմնոյն տանջեսցի որ է՛ անհնար...: - 699. Հնգետասաներորդ, զի թէ գոյ քաւարան այժմ *հոգւոյ*՝ ապա ո՛չ է բոլոր դատաստան ի կատարածի. - 700. ...զի այժմ մասին քննութիւն է *հոգւոյ* և յայնժամ մասին մարմնոյ: - 700. Իսկ թէ բոլոր և բոլորից դատաստանն է ի կատարածի. ապա ուրեմն այժմ ո՛չ է քննութիւն մասնաւոր *հոգւոյ*: - 700. Իսկ թէ այժմ *հոգւոյն* եղեալ է դատաստան, և հատուցումն ըստ գործոց, և արդարոցն փառք և մեղաւորացն տանջանք. և յայնժամ մարմնոյն որպէս ասեն նոքա...: - 700. ...ապա ուրեմն և *հոգիքն* նորոգին ի հուր քաւարանին: - 701. Ասեմք նախ՝ եթէ երկինք և երկիր մարմին գոլով նորոգին մարմնական հրով. իսկ *հոգին* զի է՛ անմարմին՝ նորոգի շնորհօքն քրիստոսի և *հոգւովն* սրբով: - 701. Նա՛խ՝ զի նոքա ժամանակեայ հուր ասեն և տանջանք *հոգւոց*. իսկ ոսկեբերանն մի հուր և տանջանք յաւիտենից: - 702. Չորրորդ, սոքա իւրաքանչիւր *հոգւոցն* ասեն ընդ բաժանիլն. և ոսկեբերանն ի վերջին օրն համընթաց այրեցումն: - 703. Զի ո՛չ ասէ թէ ի գալ *հոգւոյս*, այլ՝ ի գալս իմում. որ է *հոգի* և մարմին: - 703. Դարձեալ՝ թէպէտ վասն *հոգւոյն* ասեմք որպէս այս, և տեսիլ անտօնին, և այլոց, այն ո՛չ է բերքաթուր. այլ պատերազմ դիւաց. որպէս աստ մարմնով, նոյնպէս և յետ մահու առ *հոգիսն*...: - 703. Ճանապարհ կեանս այս. և ոսոխ մարմինն. և դատաւոր միտքն. դահիճ խիղճ մտացն որ չարչարէ՛ *զհոգին* և ոչ ազատէ մինչև զամենայն պարտսն վճարեսցէ ապաշխարութեամբ: - 704. Երկրորդ, որպէս մարմինն ոչ փոխի ի բարւոյ ի չար, կամ ի հակառակն. նոյնպէս և ո՛չ *հոգին*...: - 704. Այն է՝ որ յետ աստի կենացս *հոգին* ի քննութիւն գործոց ժամանէ...: - 705. ...և յետ մահու *զհոգիսն* ի դժոխս տանջէր: - 705. և պատարագաւ խաչին հաշտեցոյց զհայր. և իջմամբ ի դժոխս կապեաց զհզօրն սատանայ և արձակեաց զկապեալ *հոգիսն*...: - 705. Եւ յարութեամբն իւր ազատեաց զկապեալ *հոգիսն*: - 705. Սակայն ի յղութեանն իջանէ չար *հոգին* ի յորովայն մօրն. և նմա զօրութեամբն և ներգործութեամբն ծնանի մանուկն և սնանի և հասանէ յերիտասարդութիւն...: - 706. ...մինչ խօսիլ տայ բազնեաց, և լերանց գնալ, և ծառոց ծաղկիլ և չորանալ. և մեռելոց յառնել. և հրոյ իջանել յերկնից. և չար *հոգւովն* խօսիլ տայ այլ և այլ լեզուս: - 708. Նոքա՛ են **բ** ծիթենիք. այսինքն օծեալ *հոգւով* սրբով: - 709. Եւ ընդ դէմ սմա կրկին է անկումն որ է՛ մահ. վասն զի կրկին է մարդն. այսինքն *հոգի* և մարմին: - 710. Եւ դարձեալ յարութիւն է *հոգւոյ* ելեալ և ազատեալ ի մարմնոյ և մտեալ առ աստուած, որ է յոգիս արդարոց կատարելոց: - 710. ...յորժամ *հոգին* միաւորի ընդ մարմնոյն և մարմնովն ժառանգէ զփառս և զկեանսն յաւիտենից: - 710. Երկրորդ՝ բաժանիլ *հոգւոյ* ի մարմնոյ. և սոքա կոչին առաջին մահ: - 710. Ցուցանեն այսոքիկ զկատարեալ և զառաւել հանգիստ սրբոցն այժմ յուսով և յետ մահու *հոգւով* թագաւորեալ ընդ քրիստոսի. և ապա յետ յարութեանն *հոգւով* և մարմնով ո՛չ **ռ** ամօք. այլ անվախճան կենօք...: - 710. Ցուցանեն այսոքիկ զկատարեալ և զառաւել հանգիստ սրբոցն այժմ յուսով և յետ մահու հոգւով թագաւորեալ ընդ քրիստոսի. և ապա յետ յարութեանն *հոգւով* և մարմնով ո՛չ **ռ** ամօք. այլ անվախճան կենօք...: - 710. Նախ աստուածութեամբն թագաւորէ՛ ընդ հօր և *հոգւոյն*: - 710. Երրորդ, *հոգւովն* տիրեաց դժոխայնոցն. կապեաց զհզօրն. և արձակեաց զկապեալ *հոգիսն*: - 711. Այլ քրիստոսի երկիր պագանեն ամենայն երկնաւորք և երկրաւորք և ամենայն *հոգիք* սրբոց: - 711. Զի յորժամ սրբի *հոգին* ի մեղաց, բնական ունի զպայծառութիւնն: - 712. Եւ ունի բեհեզն վեց յատկութիւնս որ նշանակէ զվայելչութիւն *հոգւոց* սրբոցն ելեալք ի մարմնոյ: - 712. Եւ այս նախ վասն գերազանց գործոյ երից մասանց *հոգւոյն*: - 712. ...զի առաջնովն *հոգիքն* սլանան յերկնից: - 713. Վերջնովն յարիցեն *հոգւով* և մարմնով: - 713. Նախ կոչելով զերկինս ի վերուստ որ են *հոգիքն*. և զերկիր որ են մարմինք: - 713. Նա՛խ՝ զի կոչեսցէ յերկնէ *զհոգիս* սրբոց և յերկրէ զմարմինս...: - 714. Եւ դարձեալ՝ *հոգին* և մարմինն ի միասին գործեցին զբարի կամ զչար...: - 715. ...այլ արդ եթէ *հոգին* առանց մարմնոյ պսակի կամ պատժի՝ ո՛չ է արդար դատաստան...: - 715. Երկրորդ, զի *հոգին* մարդոյ անմա՛հ է վասն **բ** պատճառի: - 715. Եւ դարձեալ զի *հոգին* ինքնաշա՛րժ է. և ինքնաշարժն մշտաշա՛րժ է. և մշտաշարժն անմահ. - 715. ...ապա ուրեմն *հոգին* անմահ է: - 715. Այլ արդ՝ յանմահութենէ *հոգւոյն* պա՛րտ է զի լինիցի և մարմինն անմահապէս շարժեալ ի նմանէ ...: - 715. ...զի կամ իմանալիք են որպէս հրեշտակք. կամ զգալիք որպէս տարրեղէնք. և կամ յերկուց գոյացեալ որպէս մարդ. այսինքն ի *հոգւոյ* և մարմնոյ...: - 715. Եւ աստուած ո՛չ է մեռելոց այլ կենդանեաց. որոց *հոգիքն* ի ձեռս նորա կենդանի են. և մարմինքն ի ձեռս նորա կենդանի լինելո՛ց են: - 715. Եւ ոմանք ասեն՝ *հոգոյ* և մարմնոյ վերստին նորոգիլ: - 716. ...այլ ի նոյն կէտն է յարութիւն և միաւորութիւն *հոգւոյ* և նորոգումն մարմնոյ: - 717. Ասեմք առ այս, եթէ մարմին մարդոյ բաժանեալ ի *հոգւոյ*, և *հոգին* գնացեալ ի կայանս *հոգւոց* առ աստուած որ ետ զնա՛. և մարմինն ի հող լուծեալ կամ յայլ տարերս...: - 718. ...առաւել աստուծոյ է կարելի *զհոգիս* յերկնից և զմարմինս ի տարերաց ի մի վայր ժողովել և յարուցանել: - 718. Ո՞րպէս անսխալ ճանաչէ *հոգին* զմարմինն: - 719. Եւ նշանս այս անքակտելի՛ է ի *հոգւոյն* և ի մարմնոյն խառնեալ. և յորժամ բաժանի *հոգին*

սա ո՛չ բաժանի ի *հոգւոյն* և ո՛չ լուծանի ընդ մարմնոյն: - 719. Եւ թէպէտ մարմինն փոփոխի հասակաւ կամ հիւանդութեամբ, կամ մեղօք *հոգին* հիւանդանայ. դիմաւոր նշանս այս անփոփոխ մնայ: - 719. Եւ այսու նշանաւ ճանաչեաց *հոգի* մեծատանն *զհոգին* աբրահամու և զղազարու ի գոգ նորա հանգուցեալ: - 719. Որով անսխալ ճանաչէ իւրաքանչիւր *հոգի* զիւր մարմինն և միաւորի: - 719. Նոյնպէս *հոգին* բաժանեալ և մարմին լուծեալ ի հասարակ տարրն, այսու խառնեալ դրոշմիւ ճանաչեն զմիմեանս անսխալապէս: - 719. Այսպէս և ի մարմին մարդոյ ոչինչ խառնի ի հասարակ տարերաց ի յորս լուծաւ. այլ ինքն միայն գոյացութիւն մարմնոյն խառնեսցի ընդ *հոգւոյն*: - 719. Ոմանք ասացին թէ ի յարութեանն մարմինք մարդկան ի *հոգի* փոխին: - 720. Այլ բանն պօղոսի ո՛չ է այսպէս թէ մարմինն էութեամբ *հոգի* լինի. այլ նման *հոգւոյ*. զի անմահ լինի որպէս *հոգի* և անկարօտ կերակրոյ: - 720. Եւ դարձեալ ոմանք ասացին թէ՝ ի յարութեանն մարմինք մարդկան օդային լինին կամ հողմային. զի երբեմն ի գրոց հողմ և օդ *հոգի* կոչի: - 720. ...իսկ *հոգիք* սրբոցն նախ ծաղկին բնական պայծառութեամբն իւրեանց որպէս ցուցաւ ի վերոյ, և ապա՛ յետոյ արդեամբք պտղոյն կատարին ի հանդերձեալ կեանքն: - 721. ...նմանապէս և մարմինք մեռեալք յերկրի և *հոգիք* ի կայանս իւրեանց ի միասին կան առհասարակ արդարոց և մեղաւորաց մինչ դատաստանաւն բաժանեսցին օդիքն և այծիք: - 721. Եւ զարդարեալ լինի է զարդուք. այսինքն **գ** *հոգւոյն* և **դ** մարմնոյն որպէս ասեն վարդապետք: - 721. Եւ բաւականութիւն է զարդուցն պատճառի յերից մասանց *հոգւոյն* և ի չորս տարերաց մարմնոյն: - 721-722. Վասն զի մարդն յայսմ աշխարհի եօթն պակասութիւն ունի. **գ** *հոգւոյ* և **դ** մարմնոյ...: - 722. Առաջին պակասութիւն է *հոգւոյն* իմացականին խաւարն և տգիտութիւնն. իսկ ի յարութեանն բառնի այս ի *հոգւոյն* և լինի լոյս պայծառ՝ և գիտութիւն աստուածային տեսութեանն. - 722. ...և այս բառնի ի *հոգւոյն* և լինի ամրութիւն և հաստատութիւն. զի զաստուած հաստատապէս ըմբռնեմք և բնաւ ո՛չ բաժանիմք ի նմանէ և ոչ մոռանամք: - 722. Երրորդ պակասութիւն տրտմութիւնն է ի *հոգին*. զի բազում ինչ խնդրէ և ո՛չ կարէ առնուլ. և բազում ինչ ոչ խնդրէ և լինի նմա. - 722. ...և այս բառնի ի *հոգւոյն* և ընդունի ուրախութիւն և տարփումն հոգևոր առ աստուած...: - 722. Զի ուր կամք *հոգւոյն* խնդրէ՝ անդ ընթանայ և մարմինն անարգել ի յական թօթափելն...: - 722. Վասն այն *հոգիք* մեղաւորաց լինին ի խաւարն անգիտութեան. և ի տրտմութիւն յաւիտենական. և որոշեալք յաստուծոյ: - 723. Զի այժմ *հոգիս* փոփոխական է. որպէս խորհրդով կամօք և այլն. վասն որոյ զմիաւորութիւնն ընդ մարմնոյ փոփոխական ունի...: - 723. Եւ որպէս այժմ *հոգով* և մարմնով զմահկանացու կեանս վայելեաց, նոյնպէս և յայնժամ *հոգւով* և մարմնով զանմահ կեանս ժառանգեսցէ. վասն այն յառնէ: - 724. Իններորդ, *հոգին* և մարմինն են մի անձն մարդոյ. վասն որոյ փոխակրեն ի միմեանց զբարիս և զչարիս: - 724. Եւ որպէս աստ *հոգին* ի մարմնոյն կրեաց. նոյնպէս և անդ մարմինն ի *հոգւոյն* կրեսցէ եթէ զբարիս և եթէ զչարիս: - 724. Այլ և նոքա որ յարգանդի մօրն մեռանին թէ առին զբանական *հոգին*: - 724. Որոյ պատճառ է, զի մարդն *հոգւով* և մարմնո՛վ է կատարեալ: - 725. Եւ որպէս *հոգին* ունի զզօրութիւն իւր անպակաս. նոյնպէս և անդամք մարմնոյն պարտ է լինիլ անպակաս զի իցէ կատարեալ մարդ: - 725. Գոլն է որպէս մարդն *հոգի* և մարմին: - 725. Այլ և որպէս նախաստեղծքն ի դրախտին ո՛չ ամաչէին. նոյնպէս և սուրբք ի յարութեանն. զի ծածկեալ են ի ներքուստ *հոգւոյն* լուսաւորութեամբն, և արտաքուստ պսակաւն և փառօք: - 726. Յանմարմնոցն հրեշտակք և դևք. և *հոգիք* մարդկան. իսկ ի մարմնոց երկնային մարմինք և **դ** տարերք և մարմինք մարդկան. և այլք ամենայնքն ապականին և յիւրաքանչիւր տարերս ժողովին: - 727. Իսկ մարմին մարդոյս թէպէտ ապականացո՛ւ է, այլ ի կողմանէ *հոգւոյն* անապակա՛ն է. վասն որոյ անապական մնան: - 727. Հինգերորդ՝ *հոգիք* մարդկան ի յերկնից խոնարհին և միաւորին ի մարմինս իւրեանց: - 729. Երկրորդ, զի գիր մագաղաթին անջինջ մնայ. նոյնպէս և գործն ի *հոգիս* մեր գրեալ. - 729. Եւ այսպէս հսկել և պահել զտունս մեր, զի մի՛ գող մահուն և կատարածի՝ գտեալ զմեզ անպատրաստ ի մեղս՝ տանիցի *զհոգիս* մեր ի տանջանս յաւիտենից: - 730. Իսկ երկրորդին այսպէս պատասխանեսցուք ընդդիմայարակայութեամբ. զի մարդոյ մարմին ապականի. վասն զի քակտի ի նմանէ կենդանացուցիչ նորին *հոգին*. - 733. ...յիրաւի է ուրեմն որում անիրաւութիւնն եղև առնել դատաստան վասն վրիժու. թէպէտ նմա հայր և *հոգին* սուրբ գործակից լինին: - 735. Երկրորդ փառք է՝ զի հայր և *հոգի* ընդ նմա ի դատաստան գայցեն...: - 737. *Յոգին* սուրբ բերանով սիրելեաց և թշնամեաց յառաջագոյն օրհնեաց զարժանաւորս...: - 740. Արդ՝ ա՛յս գիր գործոց մերոց գրեալ ի *հոգի* և ի մարմին մեր որպէս ի մագաղաթի՝ դատաւորն ընթեռնու ի տես և ի լուր հրեշտակաց և սրբոց: - 741. *Յոգի* և մարմինս է որպէս մագաղաթ. կամք և իմացումն դպիր և գրօղ. հաւատքն գրիչ. արտասուքն մելան. և գիրն գործք բարի կամ բան աղօթից: - 741. Մանաւանդ թէ՝ *հոգին* սուրբ գրօղ դպիր. և ուղղութիւնն գրիչ գործիք. և որք զմելանն առատ տամք և զմագաղաթն, զսուրբ գործս անկեղծաւոր և զբանս աղօթից օրհնաւոր, ա՛յնքան առաւել գրիմք ի գիրն կենաց: - 741. Իսկ խոստելոցն

գիր, դպիր է պիղծ *հոգին* դիւական. և չար կամքն իւրեանց և խորհուրդն և հեշտութիւն մարմնոյն մեւան. և ըստ գործոց առաւել և նւազ գրեն ի գիրն դատապարտութեան: - 741. Նա՛խ՝ զի յերի՛ց է մարդն. *հոգի* մարմին և շունչ գոյացեալ. ի քակտումն սոցա գ վկա՛յ է պիտոյ: - 742. Կենդանի՝ *հոգի* և մարմին մեր. և սուրբք և հրեշտակք և *հոգին* սուրբ գրիչ: - 743. Նախ *հոգին* և մարմինն. զի ցանկան հակառակ միմեանց ըստ այրւոյ առակին առ անիրաւ դատաւորին: - 743. Երեքթելեան լարքն, *հոգին* եռամասնեայ և մարմինն ի չորս տարերաց: - 744-745. Իսկ երկոքին թաքք կշռոցն՝ *հոգի* և մարմին: - 745. Նախ *հոգւոյ* ընդ մարմնոյ բնական արդարութեամբ հաւասարիլ: - 745. Եւ պա՛րտ է գիտել զի ի միոյ սեռէ բարութեանցն աստուծոյ՝ յառաջե՛ն առ մեզ ողորմութիւն և արդարութիւն. կրկին տեսակ կամ գործք կամ զօրութիւն. որպէս ի մեզ երկոքին ձեռք մարմնոյ. և որպէս իմացումն և կամք *հոգւոյ*: - 745. Ութերորդ՝ հնձան կոչի և աւազանն սուրբ. զի ի նմա ճմլին և կորնչին ամենայն մեղք մեր. «լուացեալ արեամբ խաղողոյ զհանդերձս մեր» և զարդարեալ պէս պէս պարգևօք շնորհաց *հոգւոյն*: - 749. Նախ վասն մարդոյս. զի մին մեղացն կրկին հատուցանի աստ *հոգւով* և մարմնով. իսկ եօթնպատիկն է՛ ի հուրն յաւիտենից: - 750. **Զի այնպէս ծանակեալ լիցի մարմին մեղաւորին, մինչ զի *հոգին* գարշեսցի առնուլ զնա. և որպէս ուրուկ և որդնալից այնպէս ո՛չ կամեսցի ունել զնա**: - 751. Այսպէս և քրիստոս քան զամենայն սուրբս զպարգևս ունի առատագոյնս. որում *հոգին* ո՛չ տուաւ չափով: - 755. Կամ փայտիս այսորիկ ոստք կարեն ասիլ միաւորեալ բնութիւնքն քրիստոսի. այսինքն աստուածութիւնն և *հոգին* և մարմինն: - 755. Կամ թէ ոստք փայտիս այսորիկ ասին եօթանքս այսոքիկ. այսինքն՝ քրիստոսի ծնունդն, մկրտութիւնն, չարչարանքն, ի դժոխս իջումն, յարութիւն, յերկինս համբարձումն, և *հոգւոյն* սրբոյ պարգևումն: - 755. Որ է՛ պտուղ առաքինութեան ըստ մարմնոյ և *հոգւոյ* և մտաց մերոց: - 757. Եւ յետ մահու զկաւորն. այսինքն զհանգիստն ի *հոգիս*: - 758. Դարձեալ, *հոգիք* սրբոց ա՛յժմ են ի յերկինս և առ երկինս որպէս ցուցաւ. և յայնմ աւուր փառաց ի փառս բարձրանալ հաւատացեալ լինի: - 759. Նմանապէս և հուրն որով հրեղէն լեզուօք երևեցաւ սրբութեան *հոգին*, բաժանեսցի այրեցումն և մշտափայլ լուսով փայլեսցի որպէս զարփին և որպէս զարեգակն: - 759-760. Երրորդ երկնից արժանաւորն տեսլեամբ, և անօթն ընտրութեան *հոգւոյն*, որ կրէր յինքեան զկրօղն էից առաքեալն պօղոս ասէ, - 761. և Դարձեալ որպէս ասեն վարդապետք, եօթն յատկապէս փառս ունին մարմինք, և եօթն *հոգիք*: - 761. Իսկ *հոգին*՝ Զիմաստութիւն. Զսիրելութիւն. Զմիաբանութիւն. Զիշխանութիւն. Զպատիւ. Զանհոգութիւն. և Զուրախութիւն: - 761. Կամ սիրելութիւն որպէս դաւթի և յովնաթանու. զոր սիրեաց որպէս *զհոգի* իւր: - 761. Երրորդ բաղդատութեամբ այնորիկ՝ որ եղիցի ի վերոյ ինքեան. զի առ *հոգի* իւր կատարեալ կարիցէ ունել հնազանդութիւնս: - 764. Նա՛խ՝ ծառն կենաց են հաւատացելոց անձինքն տնկեալք ի վտակս *հոգւոյն*՝ ջրով աւազանին. հետևեալ ի մշտնջենաւոր կեանս: - 765. Եւ տերև գիտութիւն *հոգւոյն*. և ծաղիկ ծագումն բանին. և պտուղ արդեանցն հօր: - 765. Զի ուր կամեսցի *հոգին*՝ անդ եղիցի առ ժամայն և մարմինն: - 766. Ի գնացս *հոգւոյն* զօրացեալ, զի ըստ տընօրէնութեանն խորհրդոյ միշտ *հոգւով* սրբով ներգործէր. ունելով տերև զաշխարհակեցոյց վարդապետութիւնն: - 768. Զի նովաւ զովացան ամենայն ազգք. և բժշկեցան վէրք *հոգոց* մարդկան: - 768. Դարձեալ, ծառ կենա՛ց է աստուածածին կոյսն մարիամ բղխեալ յարմատոյն յեսսեայ. երկնուղէշ զարգացմամբ մշտասաղարթ կուսութեամբ ծաղկեալ և պայծառացեալ *հոգւոյն* սրբոյ եկաւորութեամբն. և պտղաբերեալ մեզ անմահ պտուղ զբանն մարմնացեալ. յորմէ վայելեալք երկնաւորք և երկրաւորք ի շնորհաց նորին զյաւիտենից կեանսն ժառանգեցաք: - 768. Դարձեալ՝ ծառ կենաց և տունկ երկնային՝ է՛ հաւատն կենդանարար. որոյ արմատն է հայր, և ստեղունք որդի. ծաղիկ և պտուղ *հոգին* սուրբ: - 768-769. Որպէս և ոմն ի Պետաց մերային ազգաց՝ զհաւատն դրուատեաց ասելով, Հաւատ ի հօրէ սկսեալ յորդի և ի *հոգի* վերաբերի: - 769. Որպէս միտք *հոգւոյ*, և բան մտաց, և ակն մարմնոյ, և լոյսական: - 769. Նոյն և կամք և կիրք և ներգործութիւն մարդկային ընդ աստուածայինն միաւորեալ. միջնորդելով *հոգւոյ* բանականի՝ աստուածութեանն՝ և մարմնոյն. որ է՛ ներգործութեամբ միշտ աստուած և փրկիչ բնութեամբ. քրիստոս. նոր ադամ. էմմանուէլ ճշմարտութեամբ: - 770. Ոչ բաժանեալ կամ հատեալ ի հօրէ և ի *հոգւոյն*. որպէս ո՛չ ջերմութիւն ի հրոյ կամ ի լուսոյ. կամ նկարագիր յէութենէ: - 770. Վասն որոյ սպանօղք որդւոյ՝ հօր և *հոգւոյ* թշնամիք են: - 770. Որ եսդ տէր տէր հաւատարիմ յիսուս, անբաժանելի լեր ի զգայութեանցս. և յամենայն գոյացութեանց աստի իմոցս. ներկեալ խոստովանութեամբ և շնորհօք *հոգի* մարմին նիարդք իմ և աճառք: - 771. Զի քև գեղեցկագոյն ի գերեզմանէն յարութեան քո հասից. և անդատապարտ եղէց յատենի քոյ առաջի հօր և *հոգւոյդ* սրբոյ: - 771. Որով և ընդ որում հօր միանգամայն և *հոգւոյն* սրբոյ վայելէ փառք և պատիւ և իշխանութիւն և զօրութիւն. այժմ և միշտ և յաւիտենից յաւիտեանս Ամէն: - 771. Յաւարտ և ի կատարումն Փառաց Պարգևաց Բանին և Շնորհաց նորին *Հոգւոյ*: - 771. Եւ է՛ ինչ ի ներգործութեանց

*հոգւոյն* աստուծոյ շնորհաց. որ ծածկէ՛ յիմաստնոց և յայտնէ տղայոց յիւրաքանչիւր ժամանակս ըստ կամաց իւրոց: - 772. Զի կա՛ք մի արտասուաց ի կաթիլ դուլէ ծէ՛րդ մաղթանաց ցօղեսցի ի գերեզման *հոգւոյ* իմ տառապանաց: - 773. Ուստի ասացաւ թէ մահու մեռցիս. ոչ սոսկ. այլ զկրկնակի նշանակելով մահ. այսինքն զմեռանիլն մարմնով և զպատժիլն *հոգւով*: - 776. Եւ այսպէս քարշեալ եղև ի մեզ սկզբնականն մեղք՝ յանհնազանդութենէ *հոգոյն* և ի ցանկութենէ մարմնոյն. անցեալ ի ծնունդս նորա նիւթապէս ի մարմինս, և տեսակաբար ի հոգիս: - 776. Եւ այսպէս քարշեալ եղև ի մեզ սկզբնականն մեղք՝ յանհնազանդութենէ հոգոյն և ի ցանկութենէ մարմնոյն. անցեալ ի ծնունդս նորա նիւթապէս ի մարմինս, և տեսակաբար ի *հոգիս*: - 776. Այլ և պատմութիւնք և մեկնութիւնք սրբոց՝ նորին *հոգւոյն* են որք ուսուցանեն մեզ զնոյնս: - 778. Այլ ո՛չ զամենայն պակասականքն կրեաց քրիստոս. որ է՛ հիւանդութիւն մարմնոյ և ապականութիւն. կամ մեղք *հոգւոյ* և տգիտութիւն: - 781. Նորս խորհրդոյ շնորհք ոմանք են անիբաց դնելիք. զի են կնիք ի *հոգին* անփոփոխ գոլով ըղ նմա. որպէս է՛ շնորհք կնքոյն դրոշմին և կարգին: - 783. Են և այլ շնորհք մասնականք պարգևաց *հոգւոյն*. որպէս բան իմաստութեան և այլն: - 783

***ՀՈԳԻ ԱՍՏՈՒԱԾ*** - Զի թէ ասէք հայր աստուած՝ և որդի աստուած՝ և *հոգի աստուած*, բազմաստուած էք որպէս հեթանոսքն: - 54. Դարձեալ՝ որպէս ասելն զհայր աստուած, և որդի աստուած, և *հոգի աստուած*, ո՛չ է բազմաստուած. այլ մի աստուած: - 93. Ա՛րդ՝ ասեմք զհայր աստուած. և զորդի աստուած. և *զհոգի աստուած*. ապա կարե՞մք ասել զհայր երրորդութիւն. և զորդի երրորդութիւն. և զհոգին սուրբ: - 108.

**ՀՈԳԻԱՑՈՒՑԱՆԵՄ +** Եւ տէրն՝ զառաքինութիւն մարդկան *հոգիացուցանելով* և զթերին լնլով: - 126

**ՀՈԼԱԹԵՒ -** *Հոլաթևն* և սաւառնեալ, արծակ և պարզ բոլորակածնն է: - 638

**ՀՈԼԱԹԵՒԵԱՆ +** Հարցումն: *Հոլաթևեան* սերովբէն: Պատասխանի: Հոլաթևն և սաւառնեալ, արծակ և պարզ բոլորակածնն է: - 638

**ՀՈԼԱՆԵՄ +** Եւ ինքն դաւիթ հանդերձեալ և *հոլանեալ* երգէր զտաւիղն որպէս սարկաւագունք. - 645

**ՀՈԼԱՆԻ +** Զգեստ է նոցա, պատմուճան *հոլանի* և առանց գօտոյ...: - 608. Զգեստ է նոցա պատմուճան *հոլանի* և անգօտի: - 608. Իսկ *հոլանի* և անգօտի. գլխիբաց և գօտէլոյծն է: - 639

**ՀՈԼՈՆԵԼ +** Եւ քահանայքն *հոլոնեալ*. որ է ժողովեալ և խորհեալ: - 639

**ՀՈԼՈՎ +** Ապա ուրեմն համանգամայն ի միասին լինին երկու հակակայք. այսինքն ուղղական և հոլովական. զի ասելն աստուած ուղղական է. և աստուծոյ՝ սեռական *հոլով*: - 92. Եւ ի մէկ մասն՝ մի *հոլով* առնէ արեգակն. այսինքն մէկ թաւալ: - 191. Եւ ի մին *հոլովն* չ ասպարէզ ընթանայ: - 191

**ՀՈԼՈՎԱԿԱՆ +** Ապա ուրեմն համանգամայն ի միասին լինին երկու հակակայք. այսինքն ուղղական և *հոլովական*. զի ասելն աստուած ուղղական է. և աստուծոյ՝ սեռական հոլով: - 92. Ո՞չ ապաքէն ասեմք զքրիստոս՝ աստուած և որդի աստուծոյ. զի աստուածն ուղղական է՝ և որդի աստուծոյ *հոլովական*: - 92

**ՀՈԼՈՎԵՄ +** Ութերորդ՝ զի ապաժո՛ւժ է և պակասամիտ որպէս զտղայ. զի անիւ կենացն *հոլովեա՛լ* է ի տղայութեան տիքն: - 377. Իսկ սայլն՝ կրկին կտակքն. որ միշտ *հոլովին* առ մեզ: - 426. Զոր օրինակ ի բարձր ուստէք քար *հոլովեսցի*, և որ մօտն կացցէ ասէ ցնա՝ երթալ ունիս մինչ ի ներքին վայր տեղիս և ապա դադարիս: - 497

**ՀՈԼՈՎՈՒՄՆ +** Նոյնպէս և աստ *հոլովմամբ* ժամանակաց ընթանամք մինչև ընկերեսցի անիւն ի գուբն: - 314

**ՀՈԿՏԵՄԲԵՐ +** Եւ թշրինի **ժե**՝ սկիզբն տօնի տաղաւարահարաց, որ է՛ *հոկտեմբերի* **բ**. և անտի մինչև ի իբն թշրինի՝ և ի *հոկտեմբերի* **թ** կատարումն տօնին: - 483

**ՀՈՂ +** Զի մարմինն է՛ ի կուսէն. և կոյսն յազգէն ադամայ. և ադամ ի *հողո՛յ* արարած: - 81. Ա՛րդ՝ *հողոյ* արարածի և աստուծոյ արարչի՝ մի և նոյն բնութիւն ասել ամբարշտութեան է կարծիք: - 81. Չորս են տարերք. *հող* և ջուր. օդ և հուր: - 180. Զի առանց *հողոյ* շօշափումն ո՛չ լինի. և ո՛չ առանց ջրոյ կալումն և մածումն. և ո՛չ առանց օդոյ շարժումն. և ո՛չ առանց հրոյ երևումն: - 180. Ութերորդ՝ ի քանձր և ի կարծր նիւթն անգործ մնայ. որպէս ի քար և ի *հող*: - 185. Իսկ Ցուլն և Կոյսն և Այծեղջիւրն, ունին զբնութիւն *հողոյ* չոր և ցուրտ: - 189. Զի աստուած ի *հողոյ* կազմեաց զադամ: - 200. Նախ՝ ասեն ոմանք թէ՝ որքան բարձր է ի վերայ երկրի *հողն*, նոյնքան ծոծո՛ր է ի ներքին կողմն. վասն որոյ ջուրք ծովուն դիւրաւ ելանեն: - 209. Երկրորդ՝ զի ամենայն ուրեք *հողն* ընդ ջրոյն խա՛ռն է. և յա՛յտ է ի ջրհոս. և ջուրն այն որ բարձրացեալ է ընդ *հողոյն* իջանէ ի խոնարհ և բղխէ աղբիւր: - 209. Նա՛խ՝ զի երկու իր է. այսինքն *հող* և ջուր. որ ընտանի՛ է նմա: - 210. Եւ թանձրութիւնն փայտին՝ է՛ *հողոյն*: - 213. Զի ի չորս տարրէ՛ է գոյացեալ. և ունի զաճումն *հողոյն*. վասն այն նախ աճէ ենթակայ մարմինն: - 213. Զի տղայութիւնն օդո՛յ է. և միջին հասակն հրոյ և *հողոյ*. և վերջինն ջրոյ. վասն այն սպիտակի. որպէս ցուցանի յառաջիկայդ **ծզ** գլուխն՝ **իզ** համարն: - 213. Իսկ պտուղք զկարգ

տարերա՛ցն բերէ որպէս ցուցաւ. ի *հողոյն* սկսեալ և առ հուրն դադարեալ: - 213. Յորժամ արար աստուած զմարդն ի *հողոյ*, նաև զանասունքն և զգազանքն ի *հողոյ*. նոյնպէս զլողակս և զթռչունս ի ջրոյ: - 214. Ապա ուրեմն երևի թէ ի մին տարրէ գոյացան ի *հողոյ* կամ ի ջրոյ: - 214. Նախ՝ զի թէպէտ զջուր կամ *զհող* միայն յիշէ աստուած. այլ երեքն ընդ միոյն առին հրաման...: - 214. Երկրորդ՝ զի ի *հողն* կան **գ** տարերքն ամբարեալք. որպէս երևին ուր ուրէք երակ հրոյ և երակ հողմոյ և երակ ջրոյ: - 214. Նոյնպէս և ի ջուրն կան այլ գն. հողմն երևի ի գոլորշիքն. և հուրն և *հողն* կայծն ի վայր անկեալ քար լինի: - 214. Երրորդ՝ զի ինքն երկիրն ունի զթանձրութիւն որ *հողոյն* է. և զմածումն որ է՛ ջրոյն. և զշարժումն որ է հողմոյն. և զերևիլն որ է հրոյն: - 214-215. Շօշափականն է՛ *հողոյն* ի ներքոյ եղեալ: - 215. Սեաւ մաղձն որ է փայծեղն՝ է՛ *հողոյն*: - 215. Վեցերորդ՝ ըստ այլոց. զի բոլոր թանձր մարմինն է՛ *հողոյ*. և ամենայն հիւթք և մաղձք է՛ ջրոյ. թոքն է՛ օդոյն. և սիրտն է՛ հրոյն ջերմ գոլով: - 215. Թանձրութիւն մարմնոյն *հողոյ*: - 215. Զի զգայ զջերմութիւն հրոյն. և զցրտութիւն՝ որ է ջրոյն. և զխոնաւութիւն որ է օդոյն. և չորութիւն *հողոյն*: - 215. Իններորդ՝ նոյն ինքն մարմին կենդանւոյն է՛ շօշափելի և է՛ կալեալ և մածեալ. և շարժի և երևի. որպէս ասացաք վասն *հողոյն*: - 215. Այլ յայտնապէս կենդանութիւնն է օդոյն և հրոյն. և նիւթ մարմնոյն է՛ ջրոյն և *հողոյն*: - 215. Եւ զի զմարդն հողացոյց, ինքն *հող* եկեր: - 219. Իսկ յերրորդումն, զգազանս և զմարդն. ի վերջին տարրէ՛ այսինքն ի *հողոյ* կազմեաց: - 227. Առաջին՝ Թէ ի *հողոյ* ստեղծաւ: - 227. Վասն է՞ր մարդն ի *հողոյ* ստեղծաւ: - 229. Նա՛խ՝ որպէս ասացաւ ի վերոյ, *հողն* ունի զայլ **գ** տարերքն ի յինքն խառնեալ. յորժամ ի հողոյ ասէ՝ իմանալի զ**դ** տարերս: - 229. Երկրորդ՝ զի *հողն* բնակա՛ն ունի զթանձրութիւն, և այլքն խառնմամբ ի նմանէ. և մարմինս մեր թա՛նձր է ի *հողոյ*: - 229. Երրորդ՝ *հողն* վերջին է ի տարերս. զի գիտացէ զշնորհս աստուծոյ՝ որ այսպէս առաջին և պատկեր աստուծոյ ստեղծաւ: - 229. Զի թէ զպատկերն աստուծոյ տեսեալ ի մեզ հպարտասցուք, *զհողն* տեսեալ խոնարհեսցուք...: - 229. Հինգերորդ՝ զի *հողն* ապականացո՛ւ է, զապականութիւն մարմնոյս մեր նշանակէ: - 229. Վեցերորդ՝ զի տեսցէ ադամ թէ յապականացու *հողոյս* անապական մարմին կազմեցաւ վասն փառաց. և յորժամ կորոյս մեղօքն եղև ապականացու, ինքն իցէ պատճառ ապականութեան իւրոյ: - 229. Եօթներորդ՝ զի *հողն* ի հողմոյ փոշի լինի. այսպէս յորժամ հողմահուն շնչէ ի մարմինս մեր՝ ցրի և լինի փոշի: - 229. Ութերորդ՝ *հողն* ի յերկրէ առեալ, զի երկիւղալից է մարմինս մեր. վասն այն կոչի երկիր...: - 229. Իններորդ՝ զի մայր մեր *հողն* է. և սեղան և տեղիք և գերեզման. թէպէտ և այլ տարերքն են մեզ ազգականք. այլ մեք ի մօրէ՛ ծնանիմք: - 229. Տասներորդ՝ զի յայսմանէ հաստատեսցի ի մեզ հաւատ յարութեանն. որպէս զառաջինն ի *հողոյ* ստեղծ զմեզ, դարձեալ ի յարութեանն ի նոյն *հողոյն* լուծեալ և փոշիացեալ՝ յարուցանէ աստուած: - 229. Եւ դարձեալ՝ զի հաստատեսցի ի մեզ հաւատ մարդեղութեանն քրիստոսի. թէ որպէս ի յապականացու *հողոյն* ստեղծ ադամայ մարմին անապական: - 229. Դարձեալ ի *հողոյ* ստեղծ ի նախատինս սատանայի. զի յամօթ լիցի յորժամ տկարս այս և կաւեղէնս ի փառսն մտանէր յորմէ նա՛ որ փառաւորն էր անկաւ: - 229. Չորրորդ՝ այլ և դիրք տարերաց, *հողն* է ի ներքոյ. և ապա ջուրն և օդն և հուրն: - 232. Հինգերորդ՝ տարր *հողոյն* է ի մեզ ոսկերքն և բոլոր մարմինն: - 232. Մարմինն *հողոյ*: - 232. Չորրորդ՝ ի գլուխ մարդոյն սակաւ է *հողն* և օդն բազում. վասն այն ի վերո՛յ է: - 233. Իսկ այլ կենդանեացն *հողն* բազում է. վասն որոյ ծանրացեալ ի վա՛յր հակէ: - 233. Զի թէ հուրն աւելի է, լինի շէկ գունով. և թէ օդն՝ լինի կարմիր. իսկ ջուրն առնէ սպիտակ. և *հողն* սեաւ գունով: - 245. Եւ որ *զհողն* ունի, տրտմակեաց է և ծանրաշարժ և ծոյլ մարմնով: - 245. Իսկ որ զմարմին յառաջ ասեն քան զհոգի, վկայ ածելով զմովսէս որ ասէ եթէ՝ էառ *զհողն* և շինեաց մարմին. և յետոյ փչեաց ի նա զշունչն կենդանի, որ է կենդանարար հոգին: - 253. Պատասխանեմք առ այս եթէ՝ փչումն ո՛չ զբանական հոգին ասեն սուրբ հարքն. զի մարդ ասելով զհոգի և զմարմին նշանակեաց. և զմարմինն զի ի նիւթո՛յ է՝ ի *հողոյ* ասաց. այսինքն ի **դ** տարերաց որ է՛ ի *հողն*. և զհոգին ո՛չ նշանակեաց թէ ուստի՞ է. զի յանէից է ստեղծումն նորա: - 253. Վասն է՞ր զկինն ի կողէն ստեղծ և ո՛չ ի *հողոյ*: - 276. Եւ այլ ևս. ի վերայ սաղմոսին «մերձեցաւ անձն իմ ի *հող*» ասէ մեկնիչն, այժմ ծերացեալ է բնութիւնս՝ վասն որոյ փութայ ի *հող*: - 291. Եօթներորդ՝ արիւնն հուրն է՝ և շունչն օդն. պա՛րտ է հանել զբ տարրն. իսկ մնացեալն ջուր է և *հող*՝ ուտելի է: - 295. Ութերորդ՝ հուրն և օդն առաւել է յարիւնն զի առնօղք են. և յայտ է ի խառնումն միութեանց. զի հուրն մածուցանէ՛, և ջուրն և *հողն* մածնուն, և օդն սնուցանէ. վասն այն զարարօղն և զսնուցանօղն ո՛չ ուտեմք: - 295. Եւ որպէս դարձաւ ժողովուրդն ի հանգրուանն առաջին. և տեառն մարմինն եդաւ ի *հող* երկրի: - 337. Դարձեալ՝ ծնանիմք վերջին հրով. և յառնեմք ի *հողոյ* յարութեամբ: - 353. Ադամ ի *հողոյ*: - 353. Հինգերորդ՝ որպէս արիւն անասնոց ի *հողոյ* է և ի *հող* լուծանի. և բանական հոգիս մեր յաստուծոյ է և առ աստուած երթայ: - 371. Նա՛խ՝ զի օձին *հող* ետ աստուած կերակուր և ո՛չ տրտնջեաց: - 386. ...իսկ Կախարդն՝ որ անօթ ինչ թաղէ ի *հող*. կապս, կամ մոմ, կամ երկաթ, և պէս պէս ժժանօք յարմարե՛ն զարուեստն: - 388. Երրորդ, վասն վերջնոցն լաւութեան

ընտրեցան և խոտանքն. որպէս *զհող* զքար և զխեցցէ մորթն պատւեմք վասն ոսկւոյ և արծաթոյ և մարգարտին: - 398. Զի փայտն և *հողն* անիծաւ ադամաւ...: - 400. Եւ դնէին ի *հող* անիծից վասն մօրն: - 400. Եւ ի վերայ այսր՝ կուսութեամբ ծնաւ մարդն ադամ ի *հողոյ*. և կուսութեամբ ծնանիմք յաւազանէն որդիս աստուծոյ. և կուսութեամբ ծնանիմք ի յարութեանն ի կեանս անմահ: - 404. Նա՛խ՝ անընդմիջաբար ի *հողոյ*. որպէս փայտ: - 407. Երրորդ՝ ի յեղծանիլ պատկերին աստուծոյ որ վասն փառացն աստուծոյ ստեղծաւ, ընդ նմին եղծան և ապականեցան այլ արարածք որ վասն փառաց մարդոյն ստեղծան. որ ո՛չ միայն անասունք, այլ և *հող* և ջուր և օդ երկրին կորուսանեն զպտղածնութիւն. որպէս սոդոմայեցոցն: - 416. Եւ երկուց *հողոց* և օդոց նոյնպէս: - 476. Ուստի յա՛յտ է զի ո՛չ ասաց ի *հող* դարձիր. այլ թէ՝ «դարձցիս»: - 496-497. Նոյնպէս և ադամայ ասաց աստուած՝ ի *հողոյ* սկսար և ի *հող* կամիս դադարիլ: - 497. Եօթներորդ՝ ի տարրական *հողոյ* ստեղծեաց աստուած ադամայ անապական մարմին և եդ ի դրախտին. որ մեղօք յանցեալ՝ եղև ապականացու: - 499. Ասեմք եթէ, բանն մարմնացաւ ի կուսէն. և կոյսն էր ի բնութենէն ադամայ ի *հողոյ* ստեղծեալ: - 501. Եւ որպէս դարձաւ ժողովուրդն ի հանգրուանն առաջին, և տն մարմինն եդաւ ի *հող* երկրի: - 513. Ի *հողոյ* տրտմութիւն և ծանծրութիւն. զի ցուրտ է և հակօղ: - 560. Տրտմութիւն *հողոյ* որպէս ասացաք: - 560. Յօգւոյ և ի *հողոյ* ծանծրութիւնն: - 560. Նա՛խ՝ զի վասն յանցանաց մարդոյն ադամայ դատապարտեցան տարերք. *հող*, ջուր, և այլն...: - 615. Երրորդ՝ զի երիցս գոչէ փողն. նախ զհոգիսն ի յերկնից կոչէ. և ապա՛ զմարմինս ի *հողոյ*. և ապա՛ յարուցեալ զհոգի և զմարմին ի դատաստան հրաւիրէ: - 618. Առաջին ձայն՝ աստուծոյ, ի ստեղծումն զմարդն ի *հողոյ*: - 640. Օրհնեալ *հողն* և այլն: - 660. Վեցերորդ՝ Վասն գերեզմանին. և ի *հող* թաղելն. և Կոչումն գերեզմանին: - 660. Զի մարմինն բաժանեալ ի *հող* լուծանի ուստի առաւ. - 667. Այլ և մարմին և ոսկր և ջիլք և այլն քակտին և ի *հող* լուծանին: - 667. Դարձեալ՝ ցուցանէ՝ իբր թէ սիրելոյն որ մեռաւ՝ կցորդիմք և չարչարեմք զմարմինս. մերկանալով, ի սով և ի ծարաւ, ի մութն և ի *հող* որպէս նա ի գերեզմանի եղև: - 670. Է և ա՛յլ իմն տեսութիւն վերագոյն. զի արարողութիւն սգոյս ցուցանէ զառաջին անկումն մեր ի լուսեղէն կենացն ի խաւար աշխարհ տրտմութեամբ և ցաւօք մահու մեռեալք և ի *հող* դարձեալք. և այս ի ճաշակմանէ պտղոյն: - 670. ...և *հող* զգլխով արկեալ, ի խաւար բնակիմք և այլն: - 670. Իսկ *հող* ցանեալ ի գլուխն, գլուխ զմիտքն նշանակէ. որ ինքնիշխան եղև յաստուծոյ. և հնազանդեալ խրատու հողակեր օձին՝ մահացաւ...: - 670. ...վասն այն *հող* ի գլուխ արկանէ մարդ ի ժամ սգոյ. այլ և ի վերայ մեռելոյն: - 670. ...այսպէս և աստ նախ օծանի և ապա թաղի ի *հող*: - 672. Եւ այսպէս ծածկեսցեն *հողով* զեօթն օր զաստիճանքն...: - 674. Նա՛խ՝ արտասուեմք զբնութիւնս մեր թէ վասն մեղաց յո՞րպիսի կենաց դրախտին ի մահ անկաւ և ի *հող* դարձաւ: - 676. Եւ յորժամ դնեն ի գերեզման, քահանայն նախ օրհնէ՛ երիցս ափով *զհողն* և արկանէ ի գերեզմանն ասելով, - 676. Եւ յետ դնելոյ մարմնոյն՝ նոյնպէս օրհնէ *զհողն* ասելով...: - 676. ...և ապա՛ ժողովուրդն ծածկէ՛ *հողով* զմարմինն: - 676. Իսկ թէ վասն է՞ր օրհնեն *զհողն* այս է: - 676. Զի վասն յանցանացն ադամայ անիծաւ երկիր ի գործս նորա. զսուրբ մարմինն քրիստոնէի չէ՛ պարտ դնել յանսուրբ *հող*...: - 676....և որպէս ի կեանքն հանդերձիւ ծածկեմք, նոյնպէս ի մահն *հողով*: - 677. Վասն է՞ր ի *հող* թաղեմք և ո՛չ յայլ տարերս: - 677. Երկրորդ, զի *հողն* մա՛յր է մեր առաւել քան զայլ տարերք...: - 677. Երրորդ, զի մարմինն փոխեսցի ի *հող* մինչև հոգին յանապական և յանփոփոխ սերտութիւնն կայասցի...: - 677. Չորրորդ, մարմինն ի *հող* հանգչի և հոգին ի կայանս հոգւոց...: - 677. Հինգերորդ, մարմինն ի *հող* դնի, մինչև ապականացու տարերք զանապականութիւն ստասցին...: - 677-678. Իսկ վեցերորդ պատճառ վասն հասարակաց ամենայն մարդկան, զի ի *հողոյ* սկսաւ, դարձեալ ի *հող* վախճանի մարմինն...: - 678. ...թէպէտ են և այլ տարերք զօրութեամբ ի *հողն*: - 678. Եօթներորդ, զի *հողն* ամենևին ներքին ծայրքն է ամենայն տարերաց. անդ դնի մարմինն: - 678. Տասներորդ, զի կերակուր օձին է *հող*...: - 678. ...վասն որոյ ի *հող* թաղեմք: - 678. Ո՛չինչ բնաւ. քանզի յորմէ հետէ քրիստոս ի գերեզման եդաւ ամենայն *հողք* օրհնեցան...: - 678. Պարսիկ բառ է՝ ներքոյ *հողոյ*: - 678. նոյնպէս զբանական սերմս զայս երէկ թաղեցաք ի *հող*...: - 680. Առաջին նման է այնմ որ ասեն զհոգին ընդ մարմնոյն ի *հող* լուծեալ կամ անդ տանջեալ...: - 687. Երկրորդ, զի չո՛րք են սկզբունք աշխարհի. երկինք որ է՛ երկուք. հուր և օդ. և երկիր որ է՛ **բ** իր. *հող* և ջուր: - 714. ...այս զմարմնոյն ասէ որ ի *հող* դարձաւ: - 715. ...ըստ այնմ որ արար աստուած զմարդն ի *հողոյ*: - 717. Դարձեալ՝ կենդանիքն ո՛չ ժամանեն ննջեցելոցն, այսինքն նոցա որ մեռեալ են և ի *հող* փտեալ և փոշիացեալ...: - 717. Ո՞րպէս ի *հող* լուծեալ և յա՛յլ տարեր, և ի գազանաց կերեալ, ժողովի մարմինն մեր: - 718. Ասեմք առ այս, եթէ մարմին մարդոյ բաժանեալ ի հոգւոյ, և հոգին գնացեալ ի կայանս հոգւոց առ աստուած որ ետ զնա՛. և մարմինն ի *հող* լուծեալ կամ յայլ տարերս...: - 718. Այսպէս և *հողն* ուստի շինեցաւ ադամ, ո՛չ մնայ ի տարերս. այլ յառնէ ի յադամ որ սկիզբն եղև գոյութեան նմա: - 719. Ասեմք եթէ՝ զորօրինակ սընդիկ լուծեալ և ի *հող* խառնեալ գնդապէս և փոշիացեալ. յորժամ ի մի վայր ժողովես՝

թողու զփոշիսն ի յորս խառնեալ է և պարզ միայն սնդիկն ժողովի: - 719. Նմանապէս և մարմին մարդոյ առ հասարակ մեռանին և ի *հող* լուծանին և յայլ տարերս. և յորժամ յառնեն` ո՛չ ունին ի հասարակ տարրէ ընդ ինքեանս. և այս մարմին ի յայն մարմնոյ ոչ ինչ ունի խառնումն: - 719-720. Երկրորդ, այժմ մարմինս մեր յապականացու *հողոյ* է և տարերց. վասն որոյ և ապականի դարձեալ...: - 723. ...իսկ յայնժամ *հող* և տարերք յանապականութիւն փոխին ըստ պօղոսի «արարածք ազատեսցին ի ծառայութենէ ապականութեան»: - 723. Դարձեալ, յերես անկեալ արտասուալի դիմօք *հողս* և փոշի` սուրբ գարշապարաց ձերոց, աղերսեմ ի խորոց սրտէ զիարազատ գութ հարց և եղբարց մեր հոգևորաց: - 773

**ՀՈՂԱԹԱՓ +** Իսկ որ ասէր ագանել *հողաթափս*... Այս է թէ` եթէ ո՛չ ունիցին ժոյժ ընդ դէմ ցանկութեան, զգեցցին զօրինաւորն - 331

**ՀՈՂԱԾԻՆ +** այսպէս և քար տապանիս մեր լիցի. նշանակէ՛ զանապական յարութիւնն. որ վիմածին լինիմք և առանց ապականութեան որպէս քրիստոս. և ո՛չ *հողածին* ապականացու որպէս զառաջին ադամն: - 679

**ՀՈՂԱԿԵՐ +** Իսկ հող ցանեալ ի գլուխն, գլուխ զմիտքն նշանակէ. որ ինքնիշխան եղև յաստուծոյ. և հնազանդեալ խրատու *հողակեր* օձին` մահացաւ...: - 670

**ՀՈՂԱՆԱՄ +** Եօթներորդ` յօրինակ բանին մարդեղութեան գրեցաւ բանն ի տախտակի, և նա՛ կոչեցաւ վէմ կարծրացեալ աստուածութեամբն փոխանակ *հողացելոյն* ադամայ: - 349. Եւ վէմ կոչի, Նա՛խ` զի ադամ *հողացաւ* մեղօք. և քրիստոս վէմ անմեղութեամբն: - 386. Երրորդ, զի զառաջին պատիժն աստ կրէ. *հողանալով* գեղեցկայարմար շինուածն: - 679

**ՀՈՂԱՑՈՒՑԱՆԵՄ +** Եւ զի զմարդն *հողացոյց*, ինքն հող եկեր: - 219

**ՀՈՂԵՂԷՆ +** Ո՛չ ասի *հողեղէն* և երկրեղէն վասն *հողեղէն* մարմնոյն. այլ միշտ յերկնից մարմնով իւրով. և ստեղծիչ *հողեղինաց* և երկրաւորաց: - 78. Երրորդն *հողեղէն* և տնկեղէն: - 221. Նոյնպէս ի *հողեղէն* և յապականացու մարմնոյս մարդկան` էառ բանն աստուած. և միաւորելով ընդ ինքեան ծնաւ անապական մարմնով. անմեղ հոգւով և մտօք. և եղև երկրորդ ադամ Տէր յերնից: - 229. Իսկ լեառն *հողեղէն* բնութեանս մերում, կամաւ հօր վկայելով ի վերայ նորա` և հաճութեամբ սուրբ հոգւոյն աղաւնակերպ իջմամբ, և անքակտելի միացեալ բանիւն եղև լեառն մածեալ մշտնջենաւոր և անեզր յաւիտենիւ բարձրացեալ օրհնութեամբ և առաւելեալ: - 320

**ՀՈՂՄ +** Եւ դարձեալ, զի ամպով և *հողմով* ասի շարժիլ աստուծոյ. և այսու լինիլ նման այսինքն ի վերայ ամպոց և *հողմոց* և հրեշտակաց շրջելով: - 148-149. Երեսունև**թ**) Երկոտասան *հողմոց*, և շարժոյ: - 155. Երկրորդ` այսպէս. զի օդն *հողմովն* փեռեկէ՛ զհուրն ի **բ** կիսագունդս. վերոյ և ներքոյ: - 181. Արդ` ներքին *հողմն* ի վեր ձգէ զերկիր. և վերին *հողմն* ի վայր. և այսպէս ի մէջն հաստատ մնայ երկիր: - 181-182. Երրորդ` ծանրութիւն երկրիս ի վայր հակէ. և բռնութիւն *հողմոյ* ի վեր: - 182. Նա՛խ` զի Երագաշա՛րժ է *հողմն* և շարժօղ այլոց: - 202. Նոյն և սա՛ գոլորշի՛ է վերացեալ *հողմոց*. և մերձեցեալ ի հուռն` վառի՛ ի նմանէ. և բռնութեամբ *հողմոյն* վարեալ երևի իբրև զթռիչ աստղ և փութով շիջանի: - 203. Փայլակն լինի ի շիջեալ հրոյն ջրով ամպոյն և *հողմով* որ ի մէջն է, վերստին արծարծի և արտաքս բացափայլէ: - 203. Իսկ ի չորոյն` *հողմունք* և հնչմունք զանազանք. որոտք և փայլատակմունք. կայծ. և այլն որպէս ցուցաւ: - 204. Իսկ Զիւնն ծնանի ի ջերմացեալ ամպս ի մէջ երկուց ներհակ *հողմոց*: - 205. Եւ սառուցեալ ի ներհակ *հողմոյն*, համանգամայն ընդ փոխիլն ի ջուր: - 205. Եւ ի հիւսիսոյ *հողմոյն* որ կոչի ապարքտիաս` լինի պաղուցեալ: - 205. Իսկ չորն ի ցրումն վանելով արտաքս հոսմանէն *հո՛ղմ* եղև: - 205. Եւ նախ ի չորս դէմս բաժանին ամենայն *հողմունք*. և իւրաքանչիւրքն դարձեալ յերիս բաժանին. որ լինի բովանդակն բժան: - 205. Իսկ մրրիկ *հո՛ղմ* է ի յամպոյն ելեալ և առ ինքն ի յամպն ներման առեալ և շրջեալ: - 206. Կամ են **բ** *հողմունք* ընդ դէմ միմեանց հանդիպեալք և զմիմեանս պատեալք: - 206. Եւ կամ *հո՛ղմ* է արտաքս թիւրեալ ի ճանապարհէ՛ իւրմէ. և ի խոռոչս երկրի մտեալ. և վասն թանձրութեան երկրին շարժէ զնա մինչև գտանէ ելս և ապա՛ դադարի: - 206. Ութերորդ` ի շնչել *հողմոյ`* դիւրաւ ջնջի ամպն: - 206. Չորեքտասաներորդ` ջուրն օդով ի վեր ընթանայ, և *հողմով* անձրևի՛ յերկիր: - 207. Որպէս ի մէջ երկրի գոն երակք ջրոց, նոյնպէս և *հողմոց*, ուստի ի վեր փչեն: - 208. Նախ` զի շնչմունք *հողմոց* ի բարձունս են, և զբարձանց ջերմութիւնն բարեխառնեն: - 211. Իսկ ի դաշտս ո՛չ է *հողմ*. վասն որոյ առաւել շողէ: - 211. Երկրորդ` զի ի հողն կան **գ** տարերքն ամբարեալք. որպէս երևին ուր ուրէք երակ հրոյ և երակ *հողմոյ* և երակ ջրոյ: - 214. Նոյնպէս և ի ջուրն կան այլ **գ**ն. *հողմն* երևի ի գոլորշիքն. և հուրն և հողն` կայծն ի վայր անկեալ քար լինի: - 214. Երրորդ` զի ինքն երկիրն ունի զթանձրութիւն որ հողոյն է. և զմածումն որ է՛ ջրոյն. և զշարժումն որ է *հողմոյն*. և զերևիլն որ է հրոյն: - 214-215. Զի ո՛չ անձրև և ոչ ձիւն և ոչ *հողմ* է անդ: - 222. Զի ի վերին մասն օդոյն է մերձեցեալ` որ է առաւել

բարեսուն. և ամպոց և *հողմոց* շարժմունք ի միջին մասն օդոյս ծնանին. և ի դրախտն ո՛չ հասանեն: - 222. Իսկ ամպք և *հողմունք* ի յօդոյն են. որպէս քարինք և երկաթք յերկրէ. սոյնպէս աղբիւրք և գետք ի ծովէ՛: - 227. Իններորդ` Չորս է *հողմ* և ջուր և մարդս: - 227. Եօթներորդ` զի հողն ի *հողմոյ* փոշի լինի. այսպէս յորժամ հողմահուն շնչէ ի մարմինս մեր` ցրւի և լինի փոշի: - 229. Շունչն *հողմոց*: - 232. Չորս *հողմ* է ի **դ** կողմ երկրի: - 240. Նոյնպէս ի **դ** հասակ մարդոյն փոփոխին **դ** *հողմունքն*: - 240. Նախ` ի տղայութեան հասակն. յորժամ ծնանի տղայն` ունի *զհողմն* արևելից տաք և գէջ: - 240. Եւ յերիտասարդութեանն` լինի *հողմն* հարաւային տաք և չոր: - 240. Եւ յալևորութեանն` լինի *հողմն* արևմտիցն հով և չոր: - 240. Իսկ ի ծերութեանն` լինի *հողմն* հիւսիսոյ հով և գէջ: - 240. Ասեն վարդապետք եթէ *հողմն* հնչեաց և ցրուեաց զաշտարակն. զի մի՛ փլուցեալ վնասեսցէ զմարդիկ: - 298. Եւ ի *հողմոյն* յայնմանէ հոտ անուշութեան դրախտին բուրեաց ի նոսա. և տեսիլ իմանալի տեսին, և լուր իմանալի լուան. և յայնմանէ մոռացան զառաջինն. և որպէս ի քնոյ զարթուցեալք ո՛չ լսէին զլեզուս միմեանց: - 298. Եւ որպէս անդ հոգին ի նմանութիւն *հողմոյ* եկեալ զմինն **իբ** բաժանեաց: - 298. Եւ *հողմ* կործանեաց զտունն և սպան զորդիսն ի սեղանի: - 321. Այլ ինքեանք լինին հուր և *հողմ*...: - 321. Շարժումն ոմանք զյափշտակելն ասեն. և այլք *հողմոյ* և երկրի. և կէսք զինչումն հրեշտակաց: - 445. Այլ և խաչաձև ընթանայ նաւ ի վերայ ջուրց յորժամ լարէ *հողմ* զարմիոնն. կամ տարածեալ թևօք հասանին ի նաւահանգիստն: - 494. Նախ` զի ցուցանէ թէ որ ետ զօրէնսն` նոյն առաքեաց և զհոգին և ի նոյն տիպն որոտ և փայլատակումն *հողմ* և հուր երևեալ որպէս անդ ի լերինն: - 524. Զի ծաղիկն դիւրաւ թափի յամէն փոքր պատճառէ. յանձրևոյ և ի *հողմոյ* և ի սաստիկ որոտոյ. վասն այն պտուղն կորնչի: - 638. Եւ յետ այնորիկ ի հարաւ. զի հարաւով *հողմոյ* սուրբ հոգւոյն` արար մեզ զարուն հոգևոր ազգի հաւատացելոցս...: - 673. Եւ զի պահէ՛ ո՛չ ուտիլ ի գազանէ, և ո՛չ ցրուիլ ի ջրոյ. և ո՛չ հոսիլ ի *հողմոյ*, և յայլոցն պահէ: - 678. Եւ դարձեալ ոմանք ասացին թէ` ի յարութեանն մարմինք մարդկան օդային լինին կամ հողմային. զի երբեմն ի գրոց *հողմ* և օդ հոգի կոչի: - 720. Որպէս ասեն վարդապետք, ի վերջին ծովէն սպանիու մինչև ի հնդիկս սակաւ աւուրց բացատ գոյ թէ վարեսցէ *հողմ* զնաւն: - 763

**ՀՈՂՄԱՀՈՒՆ** - Եօթներորդ` զի հողն ի հողմոյ փոշի լինի. այսպէս յորժամ *հողմահուն* շնչէ ի մարմինս մեր` ցրւի և լինի փոշի: - 229

**ՀՈՂՄԱՅԻՆ +** Եւ դարձեալ ոմանք ասացին թէ` ի յարութեանն մարմինք մարդկան օդային լինին կամ *հողմային*. զի երբեմն ի գրոց հողմ և օդ հոգի կոչի: - 720

**ՀՈՄԱՆԻ +** Եօթներորդ` ռահաբ եթող զկուռս և զբազում *հոմանիս*. և ցանկացաւ յեսուայ: - 417.

**ՀՈՄԱՆԻՒԹ** - Առաջին միաւորութիւն ստոյգ և ճշմարիտ` *հոմանիւք* մասնաւորաբար որոշեցելոց. որոց ոչ ինչ տարանիւթ ընդ մէջ երևի. որպէս երկուց ջահից լուցելոց միաւորութիւն լուսոյն: - 476

**ՀՈՄԱՆՈՒՆ +** Եւ իմաստասէրքն *զհոմանունսն* որ ո՛չ էր ի նոյն տեսակէ կամ ի բնութենէ` թւակցէին: - 54. Ոչ մոլորիմք մեք ի *հոմանուն* ձայնս նոցա: - 83. Իսկ թէ անիր, ապա միայն անուա՛մբ է մի և ո՛չ իրօք. որպէս *հոմանուն* ձայն` անուամբ հաղորդեալ և բնութեամբ այլև այլ: - 86. Որպէս *հոմանուն* ձայն ի զանազան նշանակեալս: - 87. Այլ և ոչ որպէս *հոմանուն* ձայն: - 88. Նախ` զի *հոմանուն* ձայնն միայն անւանն և ո՛չ իրի հաղորդի: - 88. Երկրորդ` ի *հոմանունն* ո՛չ գոյ առաջին և վերջին: - 88. Եւ որպէս ասէ փիլիսոփայն` երեք են յասացելոցդ իսկապէս եղանակք բաժանման. այսինքն Որպէս սեռ ի տեսակս. Որպէս բոլոր ի մասունս. Որպէս *համանուն* ձայն: - 89. Իսկ որպէս *հոմանուն* ձայն, զի հաւասարապէս հաղորդի որոց կոչինն. որպէս խոյ երկնային և երկրային և ջրային. զի ո՛չ առաւել և ո՛չ նըւազ կոչին. այլ հաւասարապէս: - 89. Այսպէս և նեստոր մի ասէր զքրիստոս ո՛չ ըստ իրին միութեան, այլ ըստ անւանն համաձայնութեան. որպէս *հոմանուն* ձայն մի ունելով զկոչմունս, և զանազան բնութիւնս ի ներքոյ մի անուանն: - 90. Եւ տես ի *հոմանունսն*. որպէս ի կենդանի մարդն և գրեալն: - 95. Կոչին և *հոմանուն* սոցա յաւիտեան. որպէս իւրաքանչիւր դարք: - 115. Դարձեալ` *հոմանուն* է նախանձն. զի նախա՛նձ է յաչաղելն և ատելն...: - 128. Վասն յատկութեան երկնից. և զի *հոմանուն* է արփին` և եթերն` և այլն: - 154. Գիտելի՛ է, զի *հոմանուն* է զօրութիւնն. այսինքն կարութիւնն. և *հոմանունն* մա՛յր է մոլորութեան. վասն որոյ որոշելի է զնոսա: - 167. Իսկ անեղ և պարզ էութեանն պատշաճի միայն նմանապէս համեմատութեամբ. զի Է կոչի աստուած, ըստ այնմ «ես եմ որ էն». և ո՛չ ըստ այնմ որ բաժանի ի գոյացութիւն և ի պատահումն. որպէս *հոմանուն* կամ փաղանուն. կամ ի միոջէ և առ մի. որպէս ընդհանուր էակն է` բաժանի առ մեզ: - 171. Առաջինն է տարրական հրոյն վերին մասն. որ կոչի հրեղէն երկինք. *հոմանուն* առաջին երկնից: - 183. Եւ այս ևս գիտելի է, զի որպէս հրեղէն երկինն *հոմանուն* է, այսինքն լուսեղէնն որ ի սկզբանէ ստեղծաւ. և բոլորակ հրոյն: - 184. Նոյնպէս *հոմանուն* է և արփին. այսինքն լուսեղէնն և հաստատութիւնդ: - 184. Այսպէս և *հոմանուն* է եթերն. այսինքն եերորդ էութիւնն, և տարրական հուրն: - 184. Նմանապէս և *հոմանուն* է հաստատութիւնն ի ներքոյ ջրոյ. այսինքն

ըերրորդ կամարն. և օդս առ մեզ որ ունի զջուրս ամպով հաստատեալ: - 184. Գիտելի՛ է, զի *հոմանուն* է լոյսն: - 185. *Յոմանուն* է հոգւոյն: - 202. Զիմաստութիւնն *հոմանուն* է և ի բազում տեսակս որոշի. և բնաւքն ամենայն՝ մտա՛ցն են ներգործութիւն. վասն այն կոչի իմաստութիւն որ է իմացութիւն: - 269. Զի ի վերայ նմանութեան իր ինչ յաւելու պատկերն՝ որ է՛ նոյնութիւնն, և ապա՛ է պատկեր. զի պատկերն *հոմանուն* է: - 272. Ասեն թէ՝ գոն ա՛յլ *հոմանուն* մասիս և արարատ. որպէս կորդուաց լեառն և ի պաղէստին և ի գամիրս: - 294. Որպէս առ մեզ զգեստն *հոմանուն* է: - 318. Նա՛խ ըստ *հոմանունն*. զի յեսու՝ փրկիչ, և յիսուսն փրկիչ լսի ըստ հրեշտակին...: - 417. **Եփուտն *հոմանուն* է. քանզի կոչի ուսանոց. և կոչի վիճակ**: - 425. Եւ *հո՛մանուն* է. զի եկեղեցի է շինեալն ի քարանց, և եկեղեցի է հաւատացեալ ժողովուրդն: - 532-533. Կամ որպէս բոլոր ի մասունս. կամ որպէս *հոմանուն* ձայն. կամ որպէս ի միոջէ և առ մի: - 533. Իբր զի *հոմանուն* է եկեղեցի և ունի **դ** նշանակութիւնս. որ է՛ ստորինս. և վերինն եկեղեցի. և շինեալք ի մէնջ. և հաւատն ժողովարան մեր: - 534. Երկրորդն Սարկաւագն և Դպիրն և Գղերիկոսն. զայսոսիկ *հոմանուամբ* պաշտօնեայ կոչէ: - 608. Գիտելի է, զի *հոմանուն* է արքայութեան կոչումն. և չորիւք եղանակօք ասի: - 754

**ՅՈՄԱՆՈՒՆԱԲԱՐ +** Ոչ նմանամասնաբար. զի նոքա բոլորին՝ և միմեանց *հոմանունաբար* ասին. որպէս փայտ ի բազում փայտս: - 88. Եւ ո՛չ աննմանամասնաբար. որպէս պետրոս՝ յոտս և ի ձեռս և ի գլուխս. զի նոքա ո՛չ միմեանց և ո՛չ բոլորին *հոմանունաբար* ասին: - 88

**ՅՈՄԱՆՈՒՆՈՒԹԻՒՆ +** Դարձեալ՝ աստուածք կոչին ո՛չ փաղանունաբար, այլ *հոմանունութեամբ*. այսինքն անուամբ միայն, այլ ո՛չ բնութեամբ: - 137

**ՅՈՄԱՑԵՂ +** Դարձեալ խաղաղութիւն, սիրով առ *հոմացեղսն* կալ մնալ: - 585

**ՅՈՄԵՐՈՆ (ՅՈՄԵՐՈՍ) +** Եւ ևս բազումք. զի աշխարի կոչի աշխարհարարն. և աշխարհս. և մարդս ըստ *հոմերոնի*: - 179

**ՅՈՆԻ -** Դարձեալ՝ ա՛յն է խառնակիլն, որ ի միոյ խոշոր լեզուէ քաղդէացոցն խառնակեցան և եղեն զանազանք ...Սպառնական *հոնին*. և ճճուօղ հնդիկն: - 297. Իսկ գեղեցկախօսութիւն լեզուաց ...Սպառնական *հոնին*: - 299

**ՅՈՌԻ +** Եօթն արու. Նաւասարդի. *Յոռի*. Սահմի. և այլն: - 200. *Յոռի*. զի հորե՛ն երկրագործք և մշակք զցորեան և զգինի, յշտեմարանս ժողովեալ. զի **բ** *հոռի*՝ մո՛ւտ է աշնան: - 200

**ՅՈՌՈՄ +** Զի ըստ *հոռոմ* համարին այսպէս է. մա՛րտի **ժէ**՝ Առաջին օր արարչութեան է, յորում եղև լոյսն: - 191. Ոլոմպիաթն չորրորդ ամ է. զոր հայք նահանջ ասեն. և Ընդիքտիոնն **ժե** ամ է. որով *հոռոմք* վարին: - 191. Ըստ լեզուիս մեր՝ օծեալ. ի *հոռոմն* քրիստոս. և յեբրայեցին մեսիա թարգմանի: - 474. Երկոտասաներորդ՝ յա՛յտ է յանուանէ ամսոյն որ կոչի յունվարի. և յունվար ի *հոռոմն* թարգմանի ծննդեան ամիս: - 484

**ՅՈՍԱԿԱՆ** + Եւ քան զժամանակն ո՛չ է ինչ պատուական. ոչ ինչ հասարակ. ոչ ինչ անցական և *հոսական*. ոչ ինչ անմնացական. ոչ ինչ այլայլական և փոփոխական: - 198-199. Վասն այնորիկ յորժամ զիրս *հոսականս* և շարժունս չափէ՛, հա՛րկ է զի ի նոսին հոսեսցի. քանզի միշտ ժամանակն անցանէ և հոսի. յանցելոյն ի ներկայս. և ի ներկայէս յապառնին: - 199

**ՅՈՍԱՆՈՒՏ +** Չորրորդ՝ ցոյցք է ամենահրաշ խնամոց արարչին. որ *զհոսանուտ* ջուրս ներքին՝ ի մէջ լերանց ի վե՛ր հանէ ի պէտս կենդանեաց որ ա՛նդ են. այլ և յոռոգումն ուր գետք ոչ ելանեն: - 209

**ՅՈՍԱՆՔ** + ...ապա՛ Սոփէկղիդէս եղբայր սոցա եգիտ զերրորդ ձայնն ի *հոսանաց*...: - 640. Սոքա՛ են *հոսանք* ջուրցն լիութեան. զորոց յերգս գտանի սիրելոյ. որ ի խորութիւնն հայեցեալ աղաւնոյն, ի գալստենէ բազային զգուշանայ: - 756

**ՅՈՍԵՄ, ՅՈՍԻՄ** + Դարձեալ՝ քան զժամանակն ոչ ինչ անցաւոր և հասական. զի ժամանակ կենցաղոյս հանապազ *հոսի*. զի չափէ՛ զբնութիւնս՝ և զինքն չափէ՛: - 199. Վասն այնորիկ յորժամ զիրս հոսականս և շարժունս չափէ՛, հա՛րկ է զի ի նոսին *հոսեսցի*. քանզի միշտ ժամանակն անցանէ և *հոսի*. յանցելոյն ի ներկայս. և ի ներկայէս յապառնին: - 199. Զի մարդն ունի զգլուխն ի վեր որպէս երկինքն. և զոտքն ի վայր որպէս երկիրս. վասն որոյ ամենայն ծորմունք բնականապէս զառիվա՛յր *հոսին*. իսկ ծառն ծռեալ ունի զգլուխն ի վայր, և զոտսն ի վեր. կամ թէ ծռեա՛լ ունի զոտս և զստեղունս յայս կոյս և յայն կոյս: - 214. Գլուխն որպէս երկինք ի վերոյ. և ոտքն որպէս երկիր ի ներքոյ. զի ծանրութիւնք և ծորմունք ամենայն ի վայր *հոսեսցին*: - 233. Եւ ապա՝ զաւելորդ ծորումն ի գլխոյն ի վայր *հոսեսցէ*: - 235. Երկրորդ՝ գիրութիւնն հալի ի ջերմ ցանկութենէն և *հոսի*: - 368. Եւ տե՛ս, զի սերմն ի մեզ ո՛չ պղծէ զմեզ, այլ ի *հոսիլն* պղծէ զ**դ** դէմս: - 369. Երկրորդ՝ զի քիրտն *հոսէր*: - 383. Քանանէ, ծնօտն զարիւնն *հոսէր* այլազգեաց, և յինքենէ հով ջուր բղխէր: - 423. Եւ քրտամբ յորժամ քիրտն *հոսէր* յերկիր: - 491. Եւ ի քիրտ արեանն

կայլակ *հոսիլ*: - 492. Նա՛խ՝ զի ի հոգին է. **բ**՝ զի վասն հոգւոյն տրտմի և ցաւի. **գ**՝ արտասուս *հոսէ*. **դ**՝ զմահ զդատաստան և զտանջանս ի միտ ածէ՛. - 584. Նա՛խ՝ զի ի դառն մաղձոյն *հոսի* յորովայնն ի ներքոյ սրտին և կսկծեցուցանէ զսրտակրանքն - 619. Երկրորդ՝ մեղքն ի հոգւոյն և ի մարմնոյն ի վեր ելանէ. իսկ արտասուքն վերուստ ի վայր *հոսի* և կորուսանէ՛ զնա: - 619. Իսկ ի լուր տրտմութեան՝ խուճապի մարմինն. և ի դառն մաղձոյն որ է՛ լեղին՝ *հոսի* ի բերան քաղրդին. - 619-620. Եւ զի պահէ՛ ո՛չ ուտիլ ի գազանէ, և ո՛չ ցրուիլ ի ջրոյ. և ո՛չ *հոսիլ* ի հողմոյ, և յայլոցն պահէ: - 678. և Դարձեալ, որպէս մի շնչմամբ օդոյ՝ ցորեանն ժողովի և յարդն *հոսի*: - 739. Դաւիթ ասէր «ծարաւի է անձն իմ առ քեզ աստուած աղբիւր կենդանի». որ ամենայն բարութիւնք աշխարհի իբրև շիտք են *հոսեալ* յայնմանէ: - 762. Իսկ զի և արուի թէպէտ ո՛չ նոյն պիտոյիւք. սակայն ո՛չ ընդ վայր կազմեցաւ. ի լրումն **բժ**ան դրանց անդամոց. ի ներքս մուծանելոյ և արտաքս *հոսելոյ* զպակաս և զաւելորդս ինչ. անվնաս կելով կենդանւոյն: - 786. Իսկ ի ներքուստ, ի լինիլ տրտմութեանց՝ խուճապեալ մարմնոյն *հոսի* մաղձ դառն ի ստամոքս որովայնի. և վերացեալ գոլորշեաց նորա զօրէն շոգըլեաց պուտկի առ խելապատակս գլխոյ. և ծանրացեալ անտի թորի՛ առ բիբն ասացեալ ական. չոր գոլով և աղէգոյն ի սևատեսա՛կն մաղձոյ: - 787

**ՀՈՍՈՒՄՆ +** Այլ այս երկրորդաբար *հոսումն* է յառաջին բարւոյն. այսինքն յաստուծոյ: - 47. Իսկ չորն ի ցրումն վանելով արտաքս *հոսմանէն* հո՛ղմ եղև: - 205. Եւ որպէս արիւն *հոսմանն* ի մէջ երակացն փոխի և լինի սպիտակ կաթն, և ժողովի ի ստինսն: - 242. Նոյնպէս և արիւն դաշտանւոյն պղծէ՛ զչորս դէմս. որպէս *հոսումն* արուին և բղխումն իգին: - 369. Եօթներորդ՝ եդեմաբուղխ երից գետոց *հոսումն*: - 555. Իսկ *հոսումն* արտասուաց, պատճառի՛ ի ներքուստ, և արտաքուստ յիմեքէ՛ ինչ: - 786

**ՀՈՎ +** Նախ՝ զի լպրծի՛ միտք մեր և մոռանայ զբանն. զի *հով* և գէջ է պարուտակն և ուղեղ գլխոյն: - 120. Եօթներորդ Լուսինն. զոր կամր կոչեն. *հո՛վ* է և գէճ. **բ** օր և կէս յամէ՛ ի կենդանակերպն. և ի **իթ** օր և կէս պատէ՛ զամենայն: - 189. Եւ դարձեալ՝ զի ի գոլորշեաց է բաղկացեալ՝ արտաքին մասն *հով* է և գէջ, և ներքինն ջերմ և չոր. վասն որոյ զարտաքինսն պահէ՛, և զներքինսն ապականէ: - 204. Զի արեգակն արու է զի ջերմ է. և լուսինն էգ՝ զի *հով* և գէջ է: - 213. Հինգերորդ՝ սպիտակ ճրագուն. զի *հո՛վ* է բնութեամբ զջերմութիւն աչացն բարեխառնէ. նա և գեղեցկացուցանէ՛: - 239. Եւ թէ այս երակս *հո՛վ* է և գէջ, ի հեռուն աղէկ տեսնու և ի մօտն վատ. որպէս ծեր մարդն: - 239. Արևմտիցն ընդ դէմ նմին *հո՛վ* է և չոր: - 240. Հիւսիսայինն ընդդէմ նմին *հո՛վ* է և գէջ: - 240. Եւ յալևորութեանն՝ լինի հողմն արևմտիցն *հով* և չոր: - 240. Իսկ ի ծերութեանն՝ լինի հողմն հիւսիսոյ *հով* և գէջ: - 240. Երկրորդն ուղեղ գլխոյն է. *հով* է և գէճ ընդ դէմ սրտին ջերմութեանն և չորութեանն. զի բարեխառնեսցէ՛ զնոսա. և իւր տանուտէր լուսինն է: - 241. Չորրորդն թո՛քն է. *հո՛վ* և գէճ. և է՛ տուն պլղամի. և ունի տանուտէր զլուսինն: - 241. Միսն տաք է և ջիլն *հով*. զի ջիլն ձկտի յորժամ յագենայ. և կծկի յորժամ քաղցենայ: - 242. Եւ փայծեղն *հո՛վ* է ի ձախ կողմանէ: - 242. Ոմանք ըստ ազգի և տեսակի իւրեանց *հով* և ջերմ՝ չոր և գէջ գոլով, փութով կամ յապաղելով բուսանին: - 261. Իսկ մարդոյն ուղեղն գէճ է և *հով*. զի նկարեսցէ յինքն զիմացումն մտացն. և ջիլքն յառաջեալ ի նման վասն գիճութեան ո՛չ կարէ պնդել զանդամսն. վասն որոյ ո՛չ կանգնի և ոչ գնայ: - 266. Իններորդ՝ արիւնն և շունչն է սկիզբն գոյացութեան մերոյ. զի արիւնն փոխի ի սաղմն, և ջերմ օդով խառնի ի *հով* և ի գէճն, և լինի աճումն և սնունդ մարմնոյ: - 295. Քսանևէ, ծնօտն զարիւնն հոսէր այլազգեաց, և յինքենէ *հով* ջուր բղխէր: - 423

**ՀՈՎԱՆԱՄ +** Նոյնպէս և քերովբէքն ի վերայ քաւութեանն *հովանացեալ*, և ի միջոյ նոցա աստուածախօսութիւնն: - 345. Եւ **բ** ձիթենիք՝ զօրութիւն հօր, և սուրբ հոգին *հովանացեալ* ի վերայ նորա: - 347

**ՀՈՎԱՆԱՒՈՐ +** Նոյնպէս և թագաւորք երկրի և իշխանք՝ որք բարձրացեալ են փառօք և դատա՛րկ յառաքինութեանց, են որպէս *հովանաւորք*: - 212. Եւ փոխանակ սիւն ամպոյ՝ հոգին *հովանաւոր* և աւետարանին լոյս ծագեաց հոգւոցն: - 329

**ՀՈՎԱՆԻ +** Իսկ այլ ամենայն անուանքն՝ ներգործութեանցն են առ մեզ արարեալ՝ և *հովանւոյն*. բայց բաժանին ամենայն անւանք յերկուս: - 49. Եւ զի կարօտին երբեմն *հովանւոյ*: - 196. Հինգերորդ՝ զի *հովանի* լինի տօթոյ: - 206. Երկրորդ՝ ի *հովանիս*: - 212. Նմանապէս և հոգին սուրբ ի գիշեր կենցաղոյս լուսով աւետարանին առաջնորդէ՛ մինչև հասուցանէ յայգն հանդերձեալ աւուր ի ցօղաւոր ամպն որ է՛ բանն մարմնացեալ. որ է *հովանի* և հանգիստ ամենայն սրբոց: - 338. Նոցա ամպ *հովանի*, և մեզ հոգին սուրբ: - 398. Զոր յայսմ օրէ և յառաջ՝ ասեն զամպ *հովանին* վերացեալ ի նոցանէ: - 410. Եւ սարկաւագն սպիտակ զգեստուք *հովանի* որպէս դաւիթ: - 431. Եւ զօծումն քահանայութեան ի թաբօր լերինն. ուր և հոգին սուրբ ամպ *հովանի* եղեալ. և հայր հաճութեամբ վկայեալ: - 474. Իսկ ի

թաբօր լերինն ծայնիւ հայրական և *հովանեաւ* հոգւոյն եղև քահանայ. ցուցեալ մովսէս և եղիա սարկաւագունք յաջմէ և յահեկէ: - 607. ...և գնացին յերեքօրեայ ճանապարհ. ի տիւն ամպ *հովանի*, և գիշերն լոյս գայր. - 682. Եւ մկրտութեանն շնորհք և դաւանութիւնն սուրբ՝ *հովանի* և լուսատու լինի հոգւոյն: - 682. Ընդ *հովանեաւ* երկնահանգէտ մեծարագոյ ուխտի Սիւնեաց նահանգի: - 772

***ՀՈՎԱՆԻ ԼԻՆԵԼ, ՀՈՎԱՆԻ ՈՒՆԵԼ +*** Հրեշտա՛կ էր. որ ի տիւն *հովանի լինէր* ի տապոյ արևուն և ցուցանէր ամենայն աշխարհի զելս ժողովրդեանն: - 338. Որ և մովսէս նկարեաց զքերովբէսն *հովանի ունել* ի վերայ քաւութեանն: - 645

**ՀՈՎԱՑՈՒՑԱՆԵՄ +** *Հովացուցանէ՛* զպիրտս: - 203

**ՀՈՎԻՏ +** Մարգաց. որ է՛ ժամանակ ածելոյ զմարդ. որ ի դաշտս և ի *հովիտս* իջեն. յայգեստանս և ի բուրաստանս. յորժամ արեգակն առ շամբն և յետ շանն իջէ. զի ի **ժգ**ն՝ մօ՛ւտ է ամռան: - 201. Նոյնպէս և Աշխարհ կոչէ. այսինքն աշխար. և սուգ. և տրտմութեան *հովիտ*: - 210. Իսկ Չորրորդն արքայութիւն՝ է՛ յաւիտենականն գաւառ. յորմէ ի ձեռն մեղաց առաջնոյ մարդոյն՝ տարեալք պանդխտիմք յայսմ տառապանաց գբի և ի տիղմ կաւոյ. անարգաբար դեգերեալք ի *հովիտս* արտասուաց. յանապատի կալով և ո՛չ ի ճանապարհի. - 756

**ՀՈՎԻՒ +** *Հովիւ* Անուանի **ժ** գլխով: Իսկ զի Հովիւ անուանի: Նախ՝ զի *հովիւն* ի դալար վայրի բնակեցուցանէ. այսինքն ի վայրենացեալ գրոց սրբոց գիտութիւնն: - 49. Եւ զի հօտք ի *հովուաց* առ փարախս և ի գոմս ածին: - 196. Երրորդ՝ կազ *հովուացն*. և բաժանումն դովտայ: - 304. Տասներորդ՝ հայրն առաքեաց զյովսէփ առ եղբարսն որ էին *հովիւք* և երիցունք տեսանել զնոսա. և բանիւն յուդայի վաճառեցաւ և եղև տէր երկրին և կերակրիչ: - 313. Նա՛խ՝ երկրագործք, այգէգործք, *հովիւք*, և սոյնպիսիք: - 375. Երրորդ՝ ի նախատինս զօրաց իւրոց. զի *հովիւ* մանուկն և որդի յեսսեայ սպան զգողիաթ. և նոքա իշխանք և մեծամեծք ո՛չ կարացին: - 427. Երրորդ, նա՛ *հովիւ* հօտից. և տէր մեր *հովիւ* կոչեցաւ իմանալեացն վերնոց և մարդկան մոլորելոց: - 435. Չորրորդ՝ *հովուացն* և մոգուց գալն: - 471. Երրորդ՝ ի մէջ գիշերի ծնաւ ի կուսական արգանդէն որպէս յա՛յտ է ի *հովուացն* և հրեշտակացն: - 512

**ՀՈՎՈՒԱԿԱՆ** + Տասներորդ՝ *հովուական* բանիւ մխիթարէ՛ զնոսա: - 49. Այլ և ցուպն *հովուական* դաւթի. զոր տարաւ ընդ դէմ գողիաթու: - 494

**ՀՈՎՈՒԵՄ** + Երրորդ՝ զի պա՛րտ էր քրիստոսի *հովուել* զպարզամիտ աշակերտսն որպէս հաւ զձագս, և մայր զմանկունսն. և թէ ի սկզբանէ զհոգին ընկալեալ էին՝ ո՛չ էր պիտոյ *հովուել* զնոսա: - 521. Հինգերորդ՝ որք բոլորովիմբ զղջացեալք և թողեալք զմեղս՝ գործեն զբարիս. զնոսա *հովուէ՛* դպիրն սաղմոսիւք և ալէլուիւք: - 608

**ՀՈՎՈՒԹԻՒՆ +** Նախ ասեն ոմանք, եթէ ուղեղ գլխոյ անբանիցն ընդ խելապատակին ունի չորութիւն և *հովութիւն*. և ջիլքն ի նմանէ յառաջեալ յանդամս մարմնոյն՝ փութապէս պնդէ՛ և տայ շարժիլ: - 266. Երրորդ՝ ի ցաւոց կամ ի *հովութենէ* յաւելու: - 368

**ՀՈՎՈՒՈՒԹԻՒՆ** + Նախ ասեն թէ՝ փոխեալ էր զզգեստ պատւոյն և զգեցեալ ձորձ *հովուութեան* և այլագունեալ: - 427. Չորրորդ, ի *հովուութենէ* օծաւ թագաւոր և տէր մեր նա՛խ քարոզեաց, և ապա՛ ժողովեաց. և տիրեաց յերկինս և յերկրի: - 435

**ՀՈՏ +** Դարձեալ՝ հոգին սուրբ բղխէ ի հօրէ՛ որպէս *հոտ* ծաղկի կամ խնծորի: - 64. Ա՛րդ՝ *հոտն* ո՛չ է ի գունոյն. այլ միայն ի մարմնոյն: - 64. Որպէս մի էութիւն է խնծորն. և ունի երեք յատկութիւնս որակաց. զհամն, և *զհոտն*, և զգոյնն ընդ ձևոյն: - 74. Զի աչք զգայ զգոյնն ընդ ձեւոյն. և ո՛չ զհամն և *զհոտն*: - 75. Իսկ ռնկունքն *զհոտն*. և զայլսն ո՛չ: - 75. Եւ ճաշակելիքն զհամն միայն՝ արտաքոյ մնալով *հոտոյն* և գունոյն: - 75. Վասն բուսուց և տնկոց՝ և կանաչութեան նոցա. և ծաղկի, և պտղոյ, և համոյ, և *հոտոյ* նոցա: - 155. Արդ ամենայն ինչ որ զգալի է՝ ի ներքս ի սմա՛ է. ձա՛յն. գո՛յն. *հո՛տ*. հա՛մ. ծա՛նր և թեթև. և ո՛չ ինչ է արտաքոյ սորա. յաղագս որոյ և ո՛չ զգայարանաց կարօտի: - 179. Պատասխանեմք յայտնի տեսութեամբ, թէ զոր ինչ այրէ հուր, ծախէ՛ և կորուսանէ զամենայն որակսն. այսինքն զգոյն. զհամ. *զհոտ*. նոյնպէս և զծանրութիւն: - 202. Սրբէ՛ *զհոտ*: - 202. Տեղի՛ է *հոտոց* և համոց: - 202. Հնգետասաներորդ՝ մի և նոյն գոլով մտանէ ի բուրաստանս, և զանազան գոյնս և համս և *հոտս* յառաջ բերէ: - 207. Երկրորդ՝ պէտք են ի համ. ի *հոտ*. ի գոյն. և յայլս: - 212. Դարձեալ պտղաբեր ծառ՝ ունի պտուղ և ծաղիկ և *հոտ* անոյշ: - 212. Նշանակեն զնոսա՝ որք ունին զպտուղս բարի գործոց. և զծաղիկն հաւատոյ. և *զհոտ* գիտութեան՝ ամենայն մարդկան անոյշ: - 212. Ուստի՞ գոյանան համն և *հոտն* և գոյնն: - 213. Արևն պնդէ՛ և լուսինն թուլացնէ. և յայնմանէ գոյանայ համն և *հոտն* և այլն: - 213. Եւ *հոտն* օդոյն է: - 213. Ոմանք զդառնութիւնն. այլք *զհոտն* վատ. և կէսք զվնասս մահու. և այլք այլ ինչ: - 217. Չէ՛ զարմանք հրաշիցն աստուծոյ. որպէս

ամենայն ընդունչք *զհոտն* զգան, և աչք զգոյնն կրէ յինքն, և անծորելի և անպական են յենթակայէն: - 224. Եւ հոտոտելիքն զառ ի վայր է, նա՛խ՝ զի *հոտն* վերընթա՛ց է՝ յինքն ընդունի: - 235. Եւ այն զի մեծ է բերաննոյն. և զի *հոտն* և համն ազգակից են միմեանց. ի ջրոյ գոլով երկուցն. վասն այն զգայարանք նոցա առ միմեանս են մերձեցեալ: - 235. Ի քիթն հոտեալ. որ *զհոտ* մեղացն արտաքսեսցէ: - 243. Վասն երկրորդին՝ զի ասէ՝ «և ի պատարագս նորա». այսինքն զի ընկալաւ ի *հոտ* անուշից: - 286. Եւ ի հողմոյն յայնմանէ *հոտ* անուշութեան դրախտին բուրեաց ի նոսա. և տեսիլ իմանալի տեսին, և լուր իմանալի լուան. և յայնմանէ մոռացան զառաջինն. և որպէս ի քնոյ զարթուցեալք ո՛չ լսէին զլեզուս միմեանց: - 298. Երկոտասաներորդ՝ ի *հոտոյ* առհիծուն փախչի շունն: - 316. Եւ նոյն գաւազան յարմատոյն յեսսեայ. և բուրվառն հօր ի *հոտ* անուշից: - 345. Եօթներորդ, նոքա յօտարա՛ց մատուցանէին. այսինքն զուարակ և նոխազ, իսկ քահանայապետն մեր քրիստոս զմարմին իւր պատարագեաց հօր ի *հոտ* անուշից...: - 354. Երրորդ, շարաւահոտ և քացախո՛ւտ է. այս մեղաց *հոտ* է և համ: - 356. Իսկ որ վասն մեղաց նաշիի իւղ և խունկ ոչ դնէին. զի տրտմութիւն և խաւար է մեղքն, և գարշ *հոտ* գայ ի խղճմտանացն մինչև ապաշխարեսցէ: - 357. Ի սոցանէ ափով չափ դնէր քահանայն ի սեղան ողջակիզացն ի *հոտ* անուշից տեառն: - 357-358. Եւ յայսմանէ՝ հանեն մասն զերիկամունսն և զլերդափոյթն և զբովանդակ ճարպն ի *հոտ* անուշից տեառն: - 358. Չորրորդ՝ վասն փրկութեան ի հիւանդութենէ կամ ի պատերազմէ՛ փրկեալք, մատուցեն ասէ պատարագ և նէէրս ընծայեսցեն ի սեղանն ի *հոտ* անուշից: - 358. Ողջակիզիլն ի *հոտ* անուշից. ի հաճոյս աստուծոյ հրով սիրոյն աստուծոյ: - 360. Եւ միայն յողջակէզ. ի խաչ սեղանոյն ի *հոտ* անուշից հօր և հոգւոյն սրբոյ: - 361. Եւ միւսն ի սեղանն ի *հոտ* անուշից: - 362. Նշանակէ՛ զպատարագիլն քրիստոսի ի սեղան խաչին ի *հոտ* անուշից հօր և հոգւոյն: - 362. Եւ զմորթ մեղաց մերկացեալ ի մէնջ որ է՛ հաճոյ աստուծոյ ի *հոտ* անուշից: - 362. Ի հինգ տեղւոջ ի հինն հուր էջ յերկնից ի վերայ սեղանոյն և հոտոտեցաւ ի *հոտ* անուշից: - 363. Ի ներքուստ՝ սիրտն և երիկամունքն և լերդաբոյթն ընդ ճարպին ճենճերեալ ի *հոտ* անուշից. որպէս հրամայեաց մովսէս: - 367. Զի ասեմք՝ տե՛ս զհամն և *զհոտն*. տե՛ս զբանդ. տե՛ս թէ ջե՞րմ է կամ ծանր: - 407. Չորրորդ՝ ի գլխո՛յն է տեսողութիւն և լուր և վայելչութիւնք համոց և *հոտոց*: - 532. իսկ խունկն մերձեալ ի հուրն և *զհոտն* բուրեալ՝ է՛ մարմինն միաւորեալ ընդ բանին. և *զհոտ* անոյշ բուրեալ աշխարհի: - 645. Երրորդ՝ ընդունելի եղև հօր ի *հոտ* անուշից: - 657. Հինգերորդ, զի մի՛ ի զազիր *հոտոցն* և որդանցն գարշեսցուք և թողցուք զշէնս աւերակ: - 677. Զի ծուխ խնկոցն ի վերայ սեղանոյն, Նախ նշանակէ՛ սեղանն զքրիստոս. և ծուխն զաղօթս սրբոցն. զոր արծարծէ՛ հօր ի *հոտ* անուշից: - 749. *Հոտ* ծծմբի: - 751. Այսոքիկ են խնծորք նոր և հին. որք *հոտով* զուարճացուցանեն, և համով զմայլե՛ն: - 756. Եւ ի հոտոտելեացս իգութիւն՝ ի *հոտոյ* անուշութեան իւղոյդ: - 771

**ՀՈՏԱԾ** - Աղի, և դառն՝ քաղցր, և *հոտած*: - 240. Եւ *հոտած* ջուրն ի մէջքն է վասն գոյութեան ծննդեանն: - 240. Զդառնութիւնն ի լեղին. և *զհոտածն* յերիկամունքն. և զմրուրն և զթքուն ի փայծեղն. և զքաղցր արիւնն ի սիրտն. և սիրտն երակովն և շնչովն բաժանէ ի բոլոր մարմինն: - 242

**ՀՈՏԵՄ, ՀՈՏԻՄ +** Նա՛խ՝ զի արարիչն աստուած բնական զծովս աղի և դա՛ռն արար. զի մի՛ *հոտեսցին* կենդանիքն ի նմա: - 208. Վասն է՞ր մի ջուրն ի բերանն քաղցր լինի, և յաչքն աղի. յունչն *հոտեալ*. և յականջն դառն: - 243. Այսպէս ի սեաւ մաղձէն լինի արտասուքն աղի, զի մի՛ *հոտեսցի* ակն որպէս ցուցաւ նախ: - 243. Յերիկամանցն քթին *հոտեալ*: - 243. Ի քիթն *հոտեալ*. որ զհոտ մեղացն արտաքսեսցէ: - 243. Թէ ժամանակն ցուրտ է կամ ջերմ. և երկիրն գէջ կամ չոր. և սերմն *հոտեալ* կամ աղանձեալ. և սերմանող ո՛չ լինի կամ ոչ սերմանէ. վասն որոյ ո՛չ բուսանի: - 256

**ՀՈՏՈՏԵԼԻՔ +** *Հոտոտելիքն* և լսելիքն օդոյն՝ ի վերոյ նորա: - 215. Վասն է՞ր մասնկանցն դիրք՝ աչքն՝ ի վերոյ է եղեալ. և ականջն ի կողմանէ. և *հոտոտելիքն* զառ ի վայր. և այլն ըստ կարգի: - 235. Եւ *հոտոտելիքն* զառ ի վայր է, նա՛խ՝ զի հոտն վերընթա՛ց է՝ յինքն ընդունի: - 235. Երեքն ի սոցանէ գռեհիկք են. որ է շօշափելիք. ճաշակելիք. *հոտոտելիք*. զի խառնելովն ի զգալի իրն ճանաչէն: - 235. Եւ է՛ արտաքին զգայութիւնքն ե. որ է մասնական զգայութիւն. այսինքն է տեսանելիքն. լսելիքն. *հոտոտելիքն*. ճաշակելիքն. և շօշափելիքն: - 249. *Հոտոտելիք*՝ որք ընտրեն և որոշեն զբարի և զչար: - 534. Տրտմութիւն *հոտոտելեաց*. և Զանձրութիւն բոլոր մարմնոյն: - 560. Իսկ համեստութիւնն կայանայ ի յասելիսն. այլ և ի տեսանելիսն. ի լսելիսն. ի *հոտոտելիսն:* - 581. Եւ ե արտաքին զգայութիւն. այսինքն տեսանելիք. լսելիք. *հոտոտելիք*. ճաշակելիք. և շօշափելիք: - 622. Եւ ի *հոտոտելեացս* իգութիւն՝ ի հոտոյ անուշութեան իւղոյդ: - 771

**ՀՈՏՈՏԻՄ +** Ուստի յա՛յտ է՝ զի այծեամն առաւել է տեսանելեաւ. և շուն *հոտոտելեաւ*. և այլն նմանապէս. վասն որոյ փութով շարժին և կանգնին քան զմարդն: - 266. Ի հինգ տեղւոջ ի հինն հուր էջ

յերկնից ի վերայ սեղանոյն և *հոտոտեցաւ* ի հոտ անուշից: - 363. Իններորդ՝ զի ի հոգի՝ ի նմանամասունս և յաննմանամասունս այլ և ա՛յլ գործէ. ըստ որում ակն տեսանէ և ո՛չ լսէ. բերանն ճաշակէ՛ և ո՛չ *հոտոտէ*: - 479

**ՀՈՐԵՄ** - Հոռի. զի *հորե՛ն* երկրագործք և մշակք զցորեան և զգինի, յշտեմարանս ժողովեալ. զի ᵽ հոռի՝ մո՛ւտ է աշնան: - 200

**ՀՈՒՄ +** Եւ թէ իրէա ոմն ետես զի *հում* միս արիւնաթաթախ տայր ժողովրդեանն. և զզջացաւ անկաւ յոտս սրբոյն և մկրտեցաւ: - 599

**ՀՈՒՆԱՒՈՐ (չափավոր) +** Եւ այսու փառօք ըմբռնէր քրիստոս զամենայն *հունաւորս* ներգործութեամբ: - 100. Դարձեալ՝ զի անեղ է բնութեամբն աստուած. ապա և անհո՛ւն է զօրութեամբ. զի եղական բնութեան զօրութիւն *հունաւո՛ր* է: - 113

**ՀՈՒՆԱՒՈՐԵԱԼ** - Վեցերորդ, զի յարութիւնն է գործ սքանչելեացն աստուծոյ և ո՛չ բնութեան. զի բութիւնն *հունաւորեալ* է զօրութեամբ յերկար ժամանակս գործէ: - 717

**ՀՈՒՆՁՔ +** Իսկ ամառն նորին նման. զի *հունձք* է և կատարած գործոց բարեաց. և ո՛չ ժամանակ սերմանելոյ կամ բուսանելոյ: - 198. Չորրորդ՝ զի վայելէ՛ր իսկ նմա որպէս զհատ ցորենոյ թաղեալ յաղբիւսն՝ այսինքն յերկիր. և պարարտացեալ հասցէ ի *հունձս* պտղաբերութեան: - 323. ...արդիւնք և *հունձք* ի կատարածին է. այլ հանգիստն ի հոգին է: - 372. Վեցերորդ՝ որպէս սերմանելն նա՛խ է քան զպտուղն և *զհունձն*: - 521. Եւ զի դժւարաւ խլին չարքն առանց վնասելոյ բարեաց, վասն որոյ թոյլ ետ մինչ ի ժամանակի *հնձոցն*: - 693. Ութերորդ, բարի և չար սերմանիքն ի միասին բուսանին և մնան մինչ ի *հունձս.* մանաւանդ մինչ ի կալն ըստ առակի տեառն...: - 721. Իններորդ, ամենայն սերմանիք բուսեալք՝ ի մի հասակ այսինքն ի կատարելութեանն իւրեանց ժամանեն ի *հունձս*. - 721

**ՀՈՒՊ +** Ասեմք առ այս նախ՝ եթէ կրկին է պատճառ. *հուպ* և հեռի: - 15. Այլ արդ *հուպ* պատճառն է՝ հարկաւոր, և ներգործութիւն իւր. իսկ հեռին ո՛չ է հարկաւոր որպէս ասացաւ ի վերոյ: - 15. Այլ արդ՝ աստուած է ամենեցուն ո՛չ *հուպ* պատճառ, այլ հեռի. վասն որոյ ո՛չ հարկաւոր ներգործէ: - 15. Դարձեալ թէ՝ յորժամ եղեր՝ մե՞րձ էիր դու քեզ, և այժմ *հո՞ւպ* ես քեզ, թէ ոչ: - 37. Իսկ թէ ոչ յայնժամն մերձ՝ և ո՛չ այժմ *հուպ* քեզ, ոչ ես իսկ և ո՛չ կաս: - 37. Նախ վասն՝ ի մէջն գոլով հաւասարապէս *հուպ* յամենայն մասանցն զօրութիւն առնլոյ: - 256

**ՀՈՒՍԿ ՅԵՏԻՆ, ՀՈՒՍԿ ՅԵՏՈՅ +** Ոմանք մերձ են էութեամբ արարչին. և ոմանք հեռի. որպէս իմացականքն քան զբանականս. և սա՛ քան զկենդանիս. և նոքա քան զտունկս. և *հուսկ յետոյ* անշունչ գոյացութիւնքն. ըստ մերձ և հեռաւոր բնութեանց՝ զանազանապէս առնուն: - 131. Իսկ թէ ամենևին *հուսկ յետոյ* անագան ի վերջին դարս, լինէր և այսպէս կրկին պակասութիւն: - 467. Որում Գոհացողական Օրհնութիւն. և Բարեբանօղ Փառատրութիւն. Յամենայն գոյեղէն բնութեանց. ի վեհագունից մինչ ի *հուսկ յետինս*: - 771

**ՀՈՒՐ +** Որպէս արեգակն զի ո՛չ այրէ որ է հեռաւոր պատճառ. այլ *հուրն* ի նմանէ առեալ զջերմութիւն ի մերձ գոլով այրէ...: - 8. Նա՛խ, զի ըստ սոցա ոչինչ է զանազանութիւն մշտնջենաւորացն և փոփոխականացն. որք են երկնայինք և երկրաւորք. զի նոքա միա՛յն են ի հարկէ, որք միշտ նոյնպէս ունին. որպէս հրեշտակք անմահք. և լուսաւորք երկնից. և ջերմութիւն *հրոյ*: - 8. Զի ի վերայ մշտնջենաւորացն բացորոշակի յերեք ժամանակս՝ այսինքն յանցեալն ի ներկայն և յապագայն՝ մինն ճշմարիտ է և մինն սուտ. որպէս *հրոյ* ջերմութիւնն և արեգական լոյսն: - 9. Այլ մեր պատասխանին առ այս՝ է՛ այս ինչ, թէ միշտ ծնունդ է ի հօրէ ըստ բնութեանն որդի. այլ անձամբ կատարեալ. որպէս լոյս ի *հրոյն* միշտ ծնանի և ոչ է անկատար՝ յօրինակ որդւոյ: - 37. Եւ նոյն ինքն *հուրն* է՛ օրինակ հօր. զի անհնա՛ր է լինել առանց լուսոյ և ջերմութեան. զի էութիւն են *հրոյն*: - 38. Եւ որպէս լոյս ո՛չ բաժանի ի *հրոյ*, այսպէս և ոչ զատի բանն ի հօրէ: - 45. Ապա՛ տամք *զհուրն* օրինակ. զի ունի զլոյսն ծնունդ՝ և զջերմութիւնն բղխումն: - 53. Հինգերորդ՝ արմաւ հաւուն՝ զոր այլք փիւնիկ ասեն որ է յարաբիայ. որ ծախէ՛ ինքն զինքն *հրով*, և դարձեալ կենդանանայ: - 53. Դարձեալ հոգին սուրբ բղխէ ի հօրէ իբր ջերմութիւն ի *հրոյ*: - 64. Ա՛րդ՝ տեսանեմք զջերմութիւնն զի ո՛չ բղխէ ի լուսոյ, այլ միայն ի *հրոյ*: - 64. Եւ որպէս *հուրն* ունի յէութեան իւրում՝ լոյս և ջերմութիւն: - 75. Որև գոն ի յեղեալքս միաւորեալք. որպէս *հուր* և երկաթ. հոգի և մարմին. որք չարչարին անչարչարապէս: - 76. Եւ չորրորդ՝ զի ամենայն իր բնութեամբ իւրով միանայ և ո՛չ արտաքոյ բնութեան. որպէս *հուր* ընդ երկաթ՝ և հոգի ընդ մարմին միաւորի: - 85. Թէպէտ բնութեամբ միաւորին՝ տարբերութիւնն ո՛չ բառնի. զի տարբերութեանցն մնալ՝ խափանումն ո՛չ առնէ միաւորութեանն. որպէս հոգւոյ և մարմնոյ. ոսկւոյ և *հրոյ*. և ծանի՛ր՝ զի կրկին է տարբերութիւն. բաղկացական և բաժանական: - 85. Երեսներորդ՝ զի վարդապետք սուրբք օրինակ տան մարդեղութեանն քրիստոսի, որպէս լոյս ընդ օդ՝ և *հուր* ընդ երկաթ միաւորեալ: - 100.

Եւ որպէս *հուր* յերկաթ միաւորեալ բառնայ ի նմանէ զցրտութիւնն և զսևութիւնն և մնայ ծանրութիւնն, - 100. Եւ մի է *հուր* և լոյս և ջերմութիւն իւր: - 107. Եւ զանազանին, Նախ՝ զի տնկականն միայն ի ջերմութենէ *հրո՛յ* է: - 117. Երրորդն է նշանական աստուածաբանութիւն. որ ի զգալի կերպարանաց փոխակցիմք յիմանալի տեսութիւնն. թէ զի՞նչ նշանակէ մարդ երևելին. կամ առիւծ. գառն. *հուր*. լոյս. և այլն: - 122. Երկրորդ՝ զի որպէս մի արեգակն կոչի տարրեղէն ամանն լուսովն և *հրովն*: - 125. Նոյնպէս զլուսոյ և *զհրոյ* յատկութիւնս բաղդատել դիւրին է իմանալի լուսոյն ճշմարտի. որպէս գրեալ ի **ի** գլուխն՝ **լե** համարն տե՛ս անդ: - 127. Իսկ նախանձն աստուծոյ պարզապէս միայն ունի սիրել և զայլս և ո՛չ ատել. զի նախանձն աստուծոյ՝ սիրոյ առաւելութիւնն է. որպէս բոցն *հրոյ*: - 128. Ասեմք եթէ՝ տպաւորութիւնն լինի կրկնակի. մինն նման նմանութեամբ. որպէս լոյս. *հուր*. և այլն: - 131. Չորրորդ՝ զի թէ պատւական նիւթով երևէին որպէս արեգակն՝ *հուր*՝ ոսկի՝ և ակն. գիտէաք թէ զնոյն բնութիւն ունին, և ո՛չ այլ ինչ գերիվերոյ: - 132. Զի աստուած առնէ զբորբոքումն ախորժակին. որպէս *հուր* որ վառէ՛ զփայտ: - 133-134. Իսկ ախորժելի իրն բորբոքէ՛ զախորժակն որպէս փայտ *զհուր*: - 134. Իսկ հրեշտակն զարթուցանէ զախորժակն՝ որպէս այն որ դնէ զփայտ ի *հուրն*: - 134. Եւ սերոբէն որ է՛ ջեռուցիչ՝ ի դէմս հոգւոյն սրբոյ. զի նա՛ է *հուր* սիրոյ զոր էարկ տէր մեր յերկիր: - 135. Բոլորակ՝ այսինքն ի բնական ներգործութեանց. որպէս *հրոյ* այրելն և ծեան ցրտացուցանելն: - 142. Իսկ բանիւ գործոյ խօսի աստուած ընդ դիւին. նա՛և հրեշտակք ընդ սատանայի. որպէս որոտ և կայծակունք *հրոյ* ի վերայ նոցա...: - 145. Ո՛չ են յաւերժահասունք որպէս ոմանք կարծեն թէ յերկուց տարերց այսինքն ի *հրոյ* և յօդոյ...: - 150. Երկրորդ՝ զմերձեցեալս յինքն՝ տանջէ՛ և այրէ յաւիտենական *հրովն*: - 151. Եւ աստ ասէ իրինոս՝ զի թէ յաւիտենական է *հուրն*, զիա՞րդ վախճան ածեն տանջանաց յաւիտենից ունայնախոհքն. թերևս կարծելով թէ ի *հուրն* մաքրեսցի. զի մի՛ լիցի աշակերտացն ճշմարտութեան խորհիլ և ասել: - 153. Յատկութիւնք *հրոյ* քսան գլխով. և հակառակ գործոյ նորին: - 155. Զի որպէս *հուր* զժանկ արծաթոյ՝ և խարտոց զժանկ երկաթոյ, նոյնպէս և նեղութիւն սրբէ զմեղս մարդոյ: - 162. Զորօրինակ *հուր* միշտ ներգործութեամբ է ըստ ինքեան, և միշտ ներգործէ առ յայլս: - 162. Ապա յա՛յտ է զանազանութիւն սոցա, զի ոմն զօրութիւն հարկաւոր է և ներգործութեամբ և անփոփոխ և միշտ. որպէս *հրոյ* ջեռուցանել, և արեգական լուսաւորել: - 168. Այլ ասիցէ ոք, թէ բազում ինչ գոն ի յայլս գոյացութիւն և ի յայլս պատահումն. որպէս ջերմութիւն ի *հուրն* գոյացութենէ, և ի անորակ մարմինն պատահումն. և տերևն ըստ ինքեան գոյացութիւն է, և ի ծառն պատահումն. այսպէս և մազն: - 169. Նմանապէս ծանիր և զայս կրկին է էակն. մին մշտնջենաւոր և միշտ ներգործութեամբ, որպէս աստուած. հրեշտակք. և արեգակն և *հուր*: - 173. Իսկ մշտնջենաւոր էակն միայն մին ունի զօրութիւն որ է առինքն ներգործութեամբ. որպէս *հրոյ* ջեռուցանելն. և արեգական լոյսն. և հրեշտակին անապականութիւնն: - 173. Իսկ գործ բնութեամբ է՝ զի բնութիւնն առաջնորդէ՛ գործոյն. որպէս *հուր* բնութեամբ այրէ, և սարդն բնութեամբ գործէ: - 173. Եւ ոմանք միշտ ներգործեն և ո՛չ են բանաւոր. որպէս *հուրն*: - 173. Եւ թէ ոք ասիցէ, որովհետև ներգործութիւնքն բնութեանց հետևին, որպէս *հուրն* միշտ այրէ, և ջուրն ցրտանայ և ջերմանայ. ապա ճշմարիտ երևի բանն դամասկացւոյն՝ եթէ է՛ ի քրիստոս կրկին ներգործութիւն. որպէս և կրկին բնութիւն: - 174. Չորս են տարերք. հող և ջուր. օդ և *հուր*: - 180. Զի առանց հողոյ շօշափումն ո՛չ լինի. և ո՛չ առանց ջրոյ կալումն և մածումն. և ո՛չ առանց օդոյ շարժումն. և ո՛չ առանց *հրոյ* երևումն: - 180. Եւ ջուրն քան զօդ. և օդն ծա՛նր է քան *զհուր*. զի սակաւ ինչ գիճութիւն ունի: - 180. *Յուրն* չո՛ր է և ջերմ: - 181. Եւ օդ ջերմութեամբ ընդ *հուր*. և *հուր* չորութեամբ ընդ երկիր: - 181. Նախ այսպէս ասեն եթէ՝ տարերքն գնդաձև պատեալ են զմիմեանս և ամրացեալ. զի բոլորակ *հուրն* պատեալ է զօդ. և օդ զջուր. և ի մէջ ջրոյն երկիր է՛ հաստատեալ: - 181. Երկրորդ՝ այսպէս. զի օդն հողմովն փեռեկէ՛ *զհուրն* ի **բ** կիսագունդս. վերոյ և ներքոյ: - 181. Առաջինն է տարրական *հրոյն* վերին մասն. որ կոչի հրեղէն երկինք. հոմանուն առաջին երկնից: - 183. Այլ կոչի սա՛ հրեղէն, զի է՛ ի *հրոյ*: - 183. Երկրորդն՝ ներքին մասն *հրոյն*. որ կոչի օլոմպային երկին. վասն մերձ գոլոյ յօլոմպիոս լեառն: - 183. Երրորդն՝ է վերին մասն օդոյն. և կոչի եթերային երկին. զի մերձ ի տարրեղէն *հուրն* է. և վառի ի նմանէ. զոր թռիչ աստեղաց կոչեմք: - 183. Եւ այս ևս գիտելի է, զի որպէս հրեղէն երկինն հոմանուն է, այսինքն լուսեղէնն որ ի սկզբանէ ստեղծաւ. և բոլորակ *հրոյն*: - 184. Այսպէս և հոմանուն է եթերն. այսինքն եերորդ էութիւնն, և տարրական *հուրն*: - 184. Երկրորդ՝ լուսաւորքն ի *հրոյ* են. և տեղիք *հրոյն* է բարձրագոյն. որպէս տարր *հրոյն*: - 188. Եւ զի ո՛չ շիջանին հրամանաւ արարչին. ի միջի գոլով երկուց ներհակացն օդեղէնն երկին. որպէս ստորին տարերքս *հուր* և ջուր միջնորդ օդիւն կապակցեալ: - 188. Այլ վարդապետք եկեղեցւոյ ասեն ըստ պղատոնի եթէ՝ լոյսն խզումն է ի տարրական *հրոյ*, որ յառաջին օրն գոյացաւ: - 188. Զի Խոյն և Առիւծն և Աղեղնաւորն, ունին զբնութիւն *հրոյ* ջերմ և չոր: - 189. և Յրոտից, ըստ դրութեան է. զի *հո՛ւր* է ոտիցն որ այրէ՛ ներքուստ ի վեր ջերմութիւն արեգականն: - 201. Նա՛խ՝ զի

տարրական է *հուր*: - 202. Վասն է՞ր *հուրն* հակառակ գործէ: - 202. Զի *հուրն* կրկին որակ ունի. ջերմ և չոր: - 202. Պատասխանեմք յայտնի տեսութեամբ, թէ զոր ինչ այրէ *հուր*, ծախէ՛ և կորուսանէ զամենայն որակսն. այսինքն զգոյն. զհամ. զհոտ. նոյնպէս և զծանրութիւն: - 202. Դարձեալ ասեմք թէ՝ ծանրութիւն փայտին գիճութիւնն է և ցրտութիւնն. և *հուրն* ջերմութեամբ և չորութեամբ զսոսա կորոյս: - 202. Նոյնպէս ծանրութիւն փայտին պատահական է և եկամուտ. զորս կորուսանէ *հուրն*: - 202. Դեղինն *հրոյն*: - 203. Ո՛չ է աստղ. այլ գոլորշի վառեալ ի տարրական *հրոյն* յորժամ մերձի ի նա՛: - 203. Եւ ոմանք ասեն՝ ի տարրական *հրոյն* բաժանի կիզումն. և լոյսն միա՛յն իջանէ...: - 203. Փայլակն լինի ի շիջեալ *հրոյն* ջրով ամպոյն և հողմով որ ի մէջն է, վերստին արծարծի և արտաքս բացափայլէ: - 203. Շանթքն լինի ի մէջ գոլորշեացն որ ի մէջ ամպոյն. և ջերմութեամբն չորացեալ. քանզի *հո՛ւր* է քարացեալ: - 204. Այսպէս յեգիպտոս *հուրն* որ ընդ կարկտին իջանէր, վասն ազդու զօրութեանն՝ զկենդանիսն սպանանէր, և մարմինքն ամբո՛ղջ մնային: - 204. Իսկ *հուրս* առ մեզ որ կապեալ է ի նիւթ՝ տկա՛րն ունի զայրելն. վասն որոյ նախ զքանակն և զորակն ապականէ, և ապա զգոյացութիւն իրին: - 204. Երկրորդ՝ ի կերպ *հրոյ* փայլէ: - 206. Այսքան վասն օդոյ և *հրոյ* տարերց: - 207. Քսանք՝ *զհուրն* շիջուցանէ: - 207. Երկրորդ՝ ասէ արիստոտէլ՝ թէ ջերմութիւն լուսաւորացդ և տարրական *հրոյն* և օդոյն մտանեն ի ծովն և քարշեն ի նմանէ զքաղցր և զպարզ հիւթն. և մնացեալն լինի դառն և աղի: - 208. Նոյնպէս և գործելին ի *հրոյ* այրեալ՝ է՛ դառն և աղի: - 208. Նոյնպէս և *հրոյ*. որպէս յետն է լեառն յարևմուտս: - 208. Եւ ի բաքու յեզրն կազբիական ծովուն. ուստի ծծումբն զօրութեամբ ունի *զհուրն*: - 208. Արդ՝ յորժամ աղբիւրք ջրոյ՝ մերձին յերակն *հրոյ* որ է՛ ծծումբն, ջերմանան խիստ կամ թոյլ. մերձ կամ հեռի անցանելովն: - 208. Վեցերորդ՝ նիւթ *հրոյ*: - 212. *Յրոյն* դեղինն: - 212. Այսպէս և սևութիւն երկրին և դեղնութիւն *հրոյն* խառնի և առնէ զկանանչն: - 212. Դարձեալ՝ ծաղիկն է *հրոյն* որ նախ շարժի և երևի: - 212. Եւ յետ ամենայնի գոյնն *հրոյն* է: - 213. Զի տղայութիւնն օդո՛յ է. և միջին հասակն *հրոյ* և հողոյ. և վերջինն ջրոյ. վասն այն սպիտակի. որպէս ցուցանի յառաջիկայդ **ժզ** գլուխն՝ **ից** համարն: - 213. Իսկ պտուղք զկարգ տարերա՛ցն բերէ որպէս ցուցաւ. ի հողոյն սկսեալ և առ *հուրն* դադարեալ: - 213. Վասն որոյ ի *հրոյն* ոմն սևանայ. որպէս խաղող. և կէսք կարմրին և դեղնին. որպէս բոյսք՝ և տերևք չորացեալ ի *հրոյ*: - 213. Երկրորդ՝ զի ի հողն կան **գ** տարերքն ամբարեալք. որպէս երևին ուր ուրէք երակ *հրոյ* և երակ հողմոյ և երակ ջրոյ: - 214. Նոյնպէս և ի ջուրն կան այլ **գ**ն. հողմն երևի ի գոլորշիքն. և *հուրն* և հողն՝ կայծն ի վայր անկեալ քար լինի: - 214. Երրորդ՝ զի ինքն երկիրն ունի զթանձրութիւն որ հողոյն է. և զմածումն որ է՛ ջրոյն. և զշարժումն որ է հողմոյն. և զերևիլն որ է *հրոյն*: - 214-215. Տեսանելիքն *հրոյն* վերագոյն ամենեցուն: - 215. Խարտեաշն որ է լեղին՝ է՛ *հրոյն*: - 215. Վեցերորդ՝ ըստ այլոց. զի բոլոր թանձր մարմինն է՛ հողոյ. և ամենայն հիւթք և մաղձք է՛ ջրոյ. թոքն է՛ օդոյն. և սիրտն է՛ *հրոյն* ջերմ գոլով: - 215. Եւ որպէս *զհուր*՝ ներքին կողմն լայն է և վերին ծայրքն նուրբք: - 215. Նեարդք և ջիլք և արիւնն *հրոյ*: - 215. Զի զգայ զջերմութիւն *հրոյն*. և զցրտութիւն՝ որ է ջրոյն. և զխոնաւութիւն որ է օդոյն. և չորութիւն հողոյն: - 215. Այլ յայտնապէս կենդանութիւնն է օդոյն և *հրոյն*. և նիւթ մարմնոյն է՛ ջրոյն և հողոյն: - 215. Ո՛չ թէ քան զտարրական *հուրն* ի վե՛ր է անցեալ. այլ զի լուսինն և արեգակն միշտ ի հարաւոյ կողմանէ ի ստորոտէ լերինն ելանեն. և ի հիւսիսոյ կողմն լերինն միշտ գիշեր լինի. որպէս աղէքսանդրու պատմութիւնն ասէ. և ի գլուխն միշտ լոյս. և ի հարաւոյ կողմն տիւ և գիշեր: - 222. Եւ որպէս *հուր* ճրագին զհւղն կերակրի, և ինքն ո՛չ առաւելու: - 224-225. Եւ որպէս ոսկին յերկրէ՛ է և անապական. և քարինք կարծրացեալ ի *հրոյ* և անապական մնան: - 225. Վերջին *հուրն* ի կատարածի զդրախտն փոփոխէ՞ թէ ոչ: - 225. Նոյնպէս և վերջին *հուրն* նովին չափով հեղեղին ի նոյն տեղիսն ընթանայ: - 225. Ա՛րդ՝ վերջին *հրոյն* յորում վառին երկինք և երկիր, ըստ նիւթոյ մասին պարզի. այլ ըստ ապականութեան մնայ անփոփոխ: - 225. Նմանապէս և յայլ երիս յառաջնումն աւուր արար զլոյսն ժամանակեայ. զարեգակն և զլուսին և զաստեղս ի վերնագոյն տարրէ՛ *հրոյն*: - 227. Չորրորդ՝ այլ և դիրք տարերաց, հողն է ի ներքոյ. և ապա ջուրն և օդն և *հուրն*: - 232. Նոյնպէս մարմինն է ի ներքոյ. և հիւթ արեանցն ի վերոյ. և ապա շունչն օդոյ և *հուր* լուսաւորացն ի վերոյ: - 232. Եւ *հուրն* է ի սիրտն. զի սիրտն ջե՛րմ է և նման է *հրոյ*. լայն է տակն և բարակ ծայրքն: - 232. Եւ երեսք փորոյն՝ *հուրն*: - 234. Դեղինն *հրոյ*: - 234. Զի շօշափելիքն ի ներքո՛յ է որպէս երկիր. և ճաշակելիքն ի վերոյ որպէս ջուր. լսելիքն յօդն է. և տեսանելիքն *հուրն* ի վերոյ: - 235. Զի աչաց լոյսն *հուր* է. և *հուրն* վերընթա՛ց է. վասն այն ի բնականսն նայելով հեշտանայ, և ի բռնութեամբն դժուարի և զարհուրի: - 239. Զի թէ *հուրն* աւելի է, լինի շէկ գունով. և թէ օդն՝ լինի կարմիր. իսկ ջուրն առնէ սպիտակ. և հողն սեաւ գունով: - 245. Այլ և լինի յաւելի ի *հրոյն* ներգործութեանց սեաւ գոյն. որպէս հնդկայինն ի ջերմոյ արևուն լինի սեաւ գունով: - 245. Զի որ *զհուրն* առաւել ունի որ է շէկն՝ բարկացօ՛ղ է: - 245. Այլ արդ՝ գիճութիւն ջրոյ զջերմ և զչորն վնասէ՛, և ջերմութիւն *հրոյ* զգէջն, և լինի անպտուղ: - 256. Իսկ ամառն, և մինչ ի **զ** ժամս աւուրն, և խարտեաշ մաղձն,

և երիտասարդն՝ ըստ նմանութեան տարրական *հրոյ* ջերմ և չոր գոլով. վասն որոյ առաւել բարկացօղ և ցանկասէր լինի: - 266. Որպէս սոդոմայեցիքն վասն արտօրէն գործոցն՝ արտօրէն իջմամբ *հրոյ* պատժեցան: - 288. Եւ որպէս կորխ դադան և աբիրոն վասն հակառակութեանցն ընդ մովսէս և ահարոն՝ *հրով* և բացմամբ երկրի դատապարտեցան: - 288. Եւ մարգարէացաւ եթէ վասն մեղաց մարդկան երկիր կրկին ապականի ջրով և *հրով*: - 289. Զի թէ նախ ջրով ապականեսցի պղնձի սիւնն մնասցէ. և թէ *հրով*՝ աղիւսն: - 289. Եօթներորդ՝ արիւնն *հուրն* է՝ և շունչն օդն. պա՛րտ է հանել զբ տարրն. իսկ մնացեալն ջուր է և հող՝ ուտելի է: - 295. Ութերորդ՝ *հուրն* և օդն առաւել է յարիւնն զի առնօղք են. և յայտ է ի խառնումն միութեանց. զի *հուրն* մածուցանէ՛, և ջուրն և հողն մածնուն, և օդն սնուցանէ. վասն այն զարարօղն և զսնուցանօղն ո՛չ ուտեմք: - 295. Թրծեալ աղիւսն ընդ դէմ *հրոյ*, և կուպրն ընդ դէմ ջրոյ: - 296. Վասն է՞ր սոդոմ *հրով* այրեցաւ: - 302. Երկրորդ՝ օտար և ընդ դէմ բնութեան գործեցին, օտար և երկնատեղաց *հրով* այրեցան: - 303. Չորեքտասաներորդ՝ խաւհակ սրով և *հրով* եղև կատարեալ ի զենումն: - 306. Յորոց փրկեսցէ զմեզ և զամենայն հաւատացեալս անւան իւրոյ ի յաւիտենական և յանել տանջանաց *հրոյն*. և մասնաւոր աջակողմեան դասուն և ժառանգ արքայութեանն երկնից կացուսցէ յիսուս քրիստոս տէր մեր. որ է օրհնեալ յաւիտեանս Ամէն: - 317. Եւ յաւուր փորձութեանցն *հուր* անկեալ յերկնից այրեաց զհօտսն. և ասպատակք աւար առին զուղտն և զէշսն և զեզինսն: - 321. Կարե՞ն դևք *հուր* իջուցանել և փոփոխել զտարերքս: - 321. Ո՛չ կարեն դևք զտարերքս փոփոխել. և ո՛չ *հուր* և ո՛չ շանթս և ո՛չ այլ ինչ ի տարերացս առնել որպէս կարծեն ոմանք: - 321. Այլ ինքեանք լինին *հուր* և հողմ...: - 321. Եւ այսպէս ամենայն սպասաւորք նորա և ծառայքն որք սրով և *հրով* վախճանեցան: - 322. Երկրորդ՝ *հուրն* այրեաց զհօտսն: - 322. Քսանեմի, մովսէս **դ** ծնունդ ընկալաւ. ի մօրէ և ի ջրոյ՝ ի *հրոյ* և ի վիմէ: - 329. Զսոյն և մեզ պարգևեաց ծնանիլ ի ջրոյ, և ի *հրոյ*, և ի հոգւոյ, և յարութեամբն մարմնոյ. իսկ ի մօրէ՛ բնականապէս: - 329. Քսանգ, մովսէս *հուր* իջոյց: - 329. Վասն է՞ր *հրով* երևէր: - 330. *Յուրն* ունի լոյս և կիզումն: - 330. Դարձեալ՝ մորենին էր կոյսն մարիամ, որ զիմանալի *հուր* աստուածութեանն յինքեան կրելով ո՛չ կիզաւ...: - 331. ...այլ չոր ծաղկն դալարիւր. այսինքն թէ ի զանգուածոյն ադամայ ունէր ինչ փոշետեսակ՝ սրբեցաւ *հրով* հոգւոյն սրբոյ: - 331. Եօթներորդ՝ կարկուտն հրախառն. զի բ հակառակն միաբանեալ ջուր և *հուր* ի կորուստ ամբարշտացն և ո՛չ ապականէին զմիմեանս: - 334. Վասն զի կարկուտն բեկանիւր և *հուրն* այրէր զբեկեալն: - 334. Երկրորդ՝ կարկուտն զհպարտ և զհայհոյիչ բանս նոցա խայտառակէ, և *հուրն* զբարկութիւն սրտին զոր ունէին առ որդիսն իսրայէլի: - 334. Այլ և նստեալն ո՛չ կարէր կանգնիլ. և *հուր* և լոյս ճրագի ո՛չ կարէր ներգործել ի թանձրութենէն: - 334. Երկրորդ՝ ի յօրինակ միւս անգամ գալստեանն փողով և *հրով* իջանելն ի դատաստան: - 341. Բնական որակ տարերացն Սևն է՛ երկրի. և Սպիտակն ջրոյ. Կարմիրն օդոյ. և Դեղինն *հրոյ*: - 342. Կարմիրն *հրոյն* է. զի *հուրն* կրկին է: - 342. Երրորդ այսպէս. ի լուսնոյդ ի վայր տարրական *հուրն* և որ ի նմա երեւոյթք լուսոյ. օդն և թռչունք. ջուր և լօղականք. երկիր և բոյսք. մարդ և անասունք: - 343. Կարկեհան՝ որ կայծ կոչի. հրագո՛յն է. գտանի յափրիկէ. ի գիշերի որպէս *հուր* վառի: - 348. Չորրորդ՝ զի մի՛ ջնջեսցի ի *հրոյ* կամ ի ջրոյ ի քարի՛ գրեաց: - 349. Ի չորրորդում ծննդեանն զմեղս դատապարտեսցէ յորժամ զարհամարհօղս աւետարանին՝ վերջին *հրովն* այրեսցէ: - 351-352. Եւ **գ** ըստ շնորհաց. որպէս ի ջրոյ, ի *հրոյ*, և ի վիմէ. ի տիպ տեառն մերոյ որպէս ասացաւ: - 353. Նա՛խ ի մօրէ. և ապա՛ յաւազանէն, ի *հրոյ*, և ի հոգւոյ: - 353. Դարձեալ՝ ծնանիմք վերջին *հրով*. և յառնեմք ի հողոյ յարութեամբ: - 353. Իսկ ի յարութեանն *հրով*: - 353. Աղալ յերկանս՝ մաղիլ և զանգիլ՝ և ի *հուր* և յիւղս եփիլ...: - 357. Երկոտասաներորդ, ոչխար տարևոր մեծի զատկին յելսն եգիպտոսի, խորովեալ *հրով*. և բաղարջ ընդ եղեգի կերեալ: - 359. Ողջակիզիլն ի հոտ անուշից. ի հաճոյս աստուծոյ *հրով* սիրոյն աստուծոյ: - 360. Ի հինգ տեղւոջ ի հինն *հուր* էջ յերկնից ի վերայ սեղանոյն և հոտոտեցաւ ի հոտ անուշից: - 363. Կամ զի օտար *հուր* եդին ի բուրվառն որ չէր օրէն: - 364. Կամ թէ հպարտացան յիջաջել *հրոյն* ի վերայ սեղանոյն: - 364. Եւ քահանայքն հպարտացան և օտար *հրով* խնկարկեցին ի ներքս վարագուրին, վասն այն պատժեցան ի խրատ այլոց: - 364. Եւ այրել զհանդերձն, հանդերձեալ պատիժ *հրոյն*: - 367. Որ է՛ անզեղջ մեղքն այրելիք *հրոյն*: - 367. Որ յետ խոստովանութեան դառնայ ի նոյն մեղս, իբր շուն դառնայ ի փսխած իւր. և սա՛ ևս այրի *հրով*. զի զառաջինն ևս խնդրեսցեն ասէ առաքեալն: - 367. Իսկ թէ ի հանդերձն յայտնի մեղանչեմք առանց ապաշխարութեան, լուցկի առնէ *հրոյն* որպէս ասացաւ ի վերոյ: - 368. Արդ քահանայութիւնն երկնային է. վասն այն կորխ յերկնից *հրովն* այրեցաւ: - 381. Ապա թէ ոչ՝ հրեշտակք զայրացեալ *հրով* այրեն կամ զմարմինն կամ զհոգին: - 381. Նա՛խ՝ զի *հուր* աստուածութեանն կիզոյր զնա՛. որպէս ջուր ի մէջ ապակոյ ի տապոյ արևուն պակասի: - 383. Երրորդ՝ ահագին երևումն դատաւորին. և ձայն փողոյն, և *հուր* նախընթաց: - 393. Տասներորդ՝ ունի **գ** տեղիս. կրկին ուստի զրկեցաւ. և օդդ ուր անկաւ. և *հուրն* ուր տանջի: - 394. Նոյնպէս յերեք տեղւոջ ոգորի. յերկրի՝ զի

հանցէ յերկնից. և յօդդ՝ զի արգելցէ. և ի յարութեանն՝ զի ընկեսցէ ի *հուրն*: - 394. Յինգերորդ՝ զի նոքա խնդրէին երևիլ մարմնով. զի ո՛չ կարէին տանել աստուածային *հրոյն* ի լերինն: - 399. Եւ յա՛յտ է յայսմանէ, զի *հուր* բորբոքեալ է ի բարկութենէ. ո՛չ յէութենէ և ո՛չ ի կամաց իմ, այլ ի բարկութենէ: - 408. Ուքևժ, եւ կինն ի սամփսոնէ և եղև հացերիցուն. վասն որոյ և տուժեցան *հրով*: - 422-423. Թողին և հրէայք զտէր մեր և հաւատան նեռին և ի *հուր* նորին այրեսցին: - 423. Եւ ջրովն շիջուցանէ *զհուրն* նախաստեղծ կողին: - 423. Վասն է՞ր ի յորդանան աղաւնակերպ էջ, և ի վերնատունն *հրով*: - 455. Ո՞ր քան առաւել մերս անկրթութեան մտօք և իրօք պարտ էր հրաժարիլ և ի բաց փախչիլ որպէս խռիւ ի *հրոյ* և զաչացու ի լուսոյ: - 456. Եօթներորդ՝ նա՛ միա՛յն է միշտ և անդադար ծնունդ. զի ո՛չ սակաւ ի ժամանակի, և ո՛չ ի ժամանակի դադարի. այլ որպէս լոյս ի *հրոյ* միշտ և անհատապէս ծնանի: - 472. Եւ են որք անշփոթ միաւորին. որպէս *հուր* և երկաթ. հոգի և մարմին. սեռ ի տեսակս. և տեսակ յանհատս: - 475. Եւ կամ որպէս *հուր* ընդ գնդացելոյն ձևացեալ պղնձոյ: - 476. Այլ և *հրով* մկրտիչ ասի քրիստոս...: - 488. Ութերորդ ի կատարածի. այն որ ո՛չ ի փրկութիւն, այլ ամենայն չարութեան ջնջումն առնելով տանջանօք որ է *հուրն* անշիջանելի: - 488. Եւ զայս *հրոյ* իմանի որ առ գալստեամբն քրիստոսի ոմանց մաքրութիւն ներելեացն լինիլ և առաւել պայծառանալ. որք ոսկի և արծաթ և ականս պատուականս շինեցին: - 488. Եւ որք խռիւ փայտ՝ խոտ՝ և եղէգն, այրեսցի անշէջ *հրով*: - 488. Զոր օրինակ *հուրն* հալէ զոսկին և բոցն ջնջէ ի նմանէ զժանգն: - 497. Այլ զօրօրինակ՝ բժիշկք երբեմն նմանեաւն և երբեմն հակառակաւն բժշկեն. նմանեաւ՝ որպէս *հրով զհուր*, և ցրտով զցուրտ: - 497. Այլ միաւորեալ ընդ ինքեան բաժանեաց զմեղս ի հոգւոյն և զապականութիւն ի մարմնոյն. որպէս *հուր* ընդ ոսկւոյ միաւորեալ բաժանէ զժանգն ի նմանէ: - 500. Որպէս մարմնական *հուր* զանմարմին հոգիսն և զդևսն տանջէ, նոյնպէս և տեղին ըմբռնէ: - 504. Եւ դարձեալ՝ որպէս աստուծոյ կարողութեանն է զանմարմին հոգին *հրով* տանջել և զմարմինն անմահ պահել ի *հուրն*: - 504. Այլ *հուրն* յաւիտենից՝ է՛ այժմ դժոխք սատանայի և մեղաւորաց: - 504. Եւ որպէս մի *հուրն* զանազանապէս այրէ զդալար փայտ՝ և զչոր խոտ՝ և զեղէգն: - 505. Նոյնպէս մի *հուր* դժոխոցն զանազանապէս տանջէ զմեղաւորսն: - 505. Երկրորդ՝ զի ի կերպ *հրոյ* փայլէ. այսպէս և հոգին սուրբ հրեղէն լեզուօք: - 522. Նախ՝ զի ցուցանէ թէ որ ետ զօրէնսն՝ նոյն առաքեաց և զհոգին և ի նոյն տիպն որոտ և փայլատակումն հողմ և *հուր* երևեալ որպէս անդ ի լերինն: - 524. Իսկ *հուրն* կրկին ունի յատկութիւն. որ է լոյս և սրբիչ հաւատացելոց. պատիժ և այրիչ անհաւատից: - 525. Բարկութիւնն ցասմանն. իսկ Ծուլութիւնն է հոգւոյն. Ագահութիւնն *հրոյն.* Որկրամոլութիւնն օդոյն. և Բղջախոհութիւնն ջրոյն: - 559. Ի *հրոյ* ագահութիւն և բարկութիւն. զի պարունակօ՛ղ է և ջերմ: - 560. Ագահութիւնն *հրոյ*: - 560. Եւ ըստ միաւորութեան հոգւոյն ի տարերս, Յօգւոյ և ի *հրոյ* բարկութիւնն: - 560. Այս է ծառն չար որ պտուղ չար բերէ. և յետոյ հատանի. և ի *հուրն* յաւիտենից արկանի: - 570. Զի ջուր հակառակ է *հրոյ*. և զի՞նչ է մեղք, եթէ ոչ *հուր*. որպէս յոգւոջ բարկութիւն. և ի մարմնի ցանկութիւն. ուստի յայտ է զի *հրով* տանջանաց պատժի. և աստ զի *հուրն* շիջցի ի ջուր մկրտիմք: - 591. Զի տանջանք *հրոյն* ներգործական մեղա՛ցն է և ո՛չ սկզբնականին պատիժ: - 593. Զի որպէս *հուրն* դիզին վնասակա՛ր է, նոյնպէս մեղքն հոգւոյն: - 601. Զահընկալն *հրոյ*: - 609. ...վասն որոյ փառքն աստուծոյ լցին զտաճարն. և *հուր* էջ ի պատարագն: - 615. Երրորդ՝ զի ջուր արտասուացն *զհուր* մեղացն շիջուցանէ: - 619. Նոյնպէս և երկրորդն որ ասէ ոչ նախանձիլ ընդ չարս որ են անզգամք. և զի ո՛չ գոյր նոցա աստ փոխարէն մեղաց. վասն այն *հրովն* յաւիտենից այրեսցէ զնոսա: - 629. Երրորդն *հրոյ* սպառնալիք և սատակումն. և դարձեալ աւետեաց հրաւէր: - 630. Յինգերորդն *հրոյ* կիզումն և բարձումն ամբարշտաց. և ոմանց բժշկութեան ցօղ ի տեառնէ ցօղեալ: - 630. և իւրաքանչիւր ոք լոյս և *հուր* վառեալ՝ նմա՛ նըւիրէին զպաշտօնն իբր արարչի...: - 638. *Յրոյն* հրեղինաց: - 640. Չորրորդն՝ ի կատարածի *հրոյ*: - 640. Առաքելոցն *հրով* խօսեցաւ: - 640. Եւ դարձեալ՝ վերջին յարութիւնն և լիճն *հրոյ*: - 640. Ի խորհուրդ օրինացն. յորժամ էջ տէր ի սինա, փող և որոտ, *հուր* և ծուխ և այլն: - 644. Եւ ղամպարն վառեալ՝ *հուրն*: - 644. Նա՛խ՝ որպէս ասեն ոմանք՝ Բուրվառն նշանակէ զմարդկութիւնն քրիստոսի. և *Յուրն* զաստուածութիւնն. Ծխումն զբուրումն հոգւոյն սրբոյ: - 645. Դարձեալ՝ բուրվառն է կոյսն մարիամ. և *հուր* աստուածութիւնն ի նմա բնակեալ...: - 645. ...իսկ խունկն մերձեալ ի *հուրն* և զհոտն բուրեալ՝ է՛ մարմինն միաւորեալ ընդ բանին. և զհոտ անոյշ բուրեալ աշխարհի: - 645. Դարձեալ՝ սիրտք մեր բուրվա՛ռ է. և աղօթքն խունկ. և *հուրն* ջերմ սէրն նիւթ բուրվառին: - 645. Դարձեալ՝ մովսէս **զ** օր արտաքոյ ամպոյն և *հրոյն* եկաց...: - 651. Երկրորդ, ի *հուր* խորովեալ ողջակիզեմք: - 657. Չորեքտասաներորդ, թէ ո՛չ է քաւարան *հրոյ*, **ժե** թուով: - 660. Քսանեք, Վասն գալստեան. և նշանացն նորին. և կատարածի *հրոյն*: - 661. Երեսուներ, Վասն հնձանաց. և դժոխոց. և ծխոյ. և անվախճան է *հուրն*. և անհանգիստ տանջանքն: - 661. ...որպէս *հրովն* փորձի ոսկին թէ լաւ է թէ վատ...: - 664. Եւ ապա՛ ի կատարածի ի *հուրն* յաւիտենական տանջին ասէ տէր: - 667. ...և ապա տանջի ընդ սատանայի ի *հուրն*

յաւիտենական որ պատրաստեալ է նոցա: - 667. *Յուր* բորբոքեն, - 669. ...զի հայրն աբրահամ առեալ *հուր* և սուր, և յետ երից աւուրց տեսին զտեղին ի հեռաստանէ որպէս ասէ պատմութիւնն: - 681. Արդ հայրն աբրահամ նշանակէ՛ զհայր աստուած. և *հուր* և սուր՝ տանջանարանք որ հանդիպին ի ճանապարհ օդոյդ: - 681-682. ...և ի տնկոցն յերկինս վերափոխիլ. և սոքա ի *հուրն* ասեն մտեալ և անտի յերկինս վերափոխեալ: - 687. Եւ յայնժամ զորոմն քաղել առ ի յայրել ի *հուրն*. և զցորեանն ի շտեմարանն ժողովել ի կեանս: - 693. Ո՞րք են որ ասեն քաւարան *հրոյ*. և զի՞նչ է պատճառն: - 698. Ընդհանուր ամենայն վարդապետք ուղղափառաց համաձայնեալ աստուածեղէն գրոց՝ ո՛չ ասեն քաւարան *հրոյ*: - 698. Եւ վասն դ պատճառի ո՛չ ասեմք քաւարան *հրոյ*: - 698. Իսկ որք հաստատե՛ն զքաւարան *հրոյ*՝ չորիւք մեղանչեն ինքեանց: - 698. Եւ մեկնիչն ասէ, աստուածապա՛շտ են որք խոստովանին զմեղս. զոր գիտէ տէր յայսմ աշխարհի փրկել առանց քաւարանի *հրոյ*: - 699. Ապա ուրեմն խոստովանութեամբ քաւին մեղքն և ո՛չ *հրով*: - 699. Ապա ուրեմն ո՛չ գոյ քաւարան *հրոյ*: - 699. Իններորդ, *հուր* քաւարանին պատիժ է մեղացն ըստ նոցա: - 699. ...իսկ յետ մահու ո՛չ է քաւարան *հրոյ*: - 700. Տասնբ, հարցանեմ, *հուր* քաւարանին ժամանակեա՞յ է թէ յաւիտենից: - 700. Իսկ թէ ժամանակեայ, ընդ դէմ ասէք աստուածային բանին. զի տէրն մի *հուր* ասաց. և զայն յաւիտենից...: - 700. Ապա ուրեմն ո՛չ գոյ քաւարան. և ո՛չ *հուր* ժամանակեայ տանջիչ: - 700. Չորեքտասաներորդ, զի թէ մեղաւորացն գոյ հնար արտաքս գալ ի *հրոյն* և երթալ յարքայութիւնն...: - 700. Ապա ուրեմն ո՛չ գոյ քաւարան *հրոյ*: - 700. ...և որ ոք ի պատիժն աստ ոչ ժամանէ կրել, անդ կրէ յետ մահու ի *հուրն* և քաւի: - 701. ...և որ ոք աստ կամաւ ո՛չ պատժի, աստուած պատժէ զնա ի *հուրն* և քաւի: - 701. Երրորդ, ասեն բոլոր աշխարհ նորոգի *հրով*. որպէս ասէ պետրոս...: - 701. ...ապա ուրեմն և հոգիքն նորոգին ի *հուր* քաւարանին: - 701. Ասեմք նախ՝ եթէ երկինք և երկիր մարմին գոլով նորոգին մարմնական *հրով*. իսկ հոգին զի է՛ անմարմին՝ նորոգի շնորհօքն քրիստոսի և հոգւովն սրբով: - 701. Դարձեալ ասեմք, եթէ ի *հուրն* համատարած ամենայնքն անցանելոց եմք ի կատարածի. այլ ո՛չ ի *հուր* քաւարանի. զի ո՛չ գոյ քաւարան: - 701. Դարձեալ ասեմք, եթէ ի հուրն համատարած ամենայնքն անցանելոց եմք ի կատարածի. այլ ո՛չ ի *հուր* քաւարանի. զի ո՛չ գոյ քաւարան: - 701. Ասեմք նախ՝ եթէ մարգարէն դաւիթ վասն բոլոր աշխարհի ասէ որ ջրով և *հրով* անցանի. և ապա հանգիստ յաւիտենական լինի...: - 701. Դարձեալ ասեմք եթէ ջուր զմկրտութիւնն ասէ, և *հուր* զխոստովանութիւնն մեղաց: - 701. Արդ այսօրիկ փրկին արդեամբք հիման հաւատոյն. սակայն այնպէս որպէս թէ ի *հուր*: - 702. Եւ ամենեքեան անցանեն ընդ *հուրն* որ յառաջ ընթանայ գալստեանն քրիստոսի: - 702. Եւ ի յայս *հուրս* անցեալք՝ որ զգեցեալ են ոսկի՝ արծաթ՝ և ականս, առաւե՛լ պայծառանան: - 702. Եւ որք ունին զխռիւն և զխոտ, այրելիք են *հրոյ*: - 702. Վեցերորդ ասեն, ահա այս է քաւարանին *հուրն*: - 702. Նա՛խ՝ զի նոքա ժամանակեայ *հուր* ասեն և տանջանք հոգւոց. իսկ ոսկեբերանն մի *հուր* և տանջանք յաւիտենից: - 702. Երկրորդ, նոքա զարդարս ո՛չ ասեն անցանել ընդ *հուրն*. այլ ոսկեբերանն ամենեցուն անցանել և պայծառանալ ասէ: - 702. Զիա՞րդ վախճան ածեն տանջանաց ունայնախոհքն. թէրևս կարծելով թէ ի *հուրն* մաքրեսցին. զոր մի՛ լիցի աշակերտաց ճշմարտութեանն խորհիլ: - 703. Տեսէք եղբարք զսրբոց վարդապետաց բանսն զի ո՛չ գոյ անդ քաւարան *հրոյ*: - 703. Ասեմք նախ՝ եթէ գնալ առ քրիստոս՝ վասն յարութեանն ասէ և զվերջին *հուրն*. - 703. Զի տանջանարանք կազմեն, սառնամանիք ցուցանեն, *հուր* բորբոքեն: - 703. ...և կորիցեն անհաւատք որպէս զյարդ այրեցեալ ի *հուրն*: - 706. ...մինչ խօսիլ տայ բացնեաց, և լերանց գնալ, և ծառոց ծաղկիլ և չորանալ. և մեռելոց յառնել. և *հրոյ* իջանել յերկնից. և չար հոգւովն խօսիլ տայ այլ և այլ լեզուս: - 708. Դարձեալ՝ որ *հրոյ* է վերակացու, ի վերայ նորին հարկանէ. և որ օդոյ և ջրոյ և երկրի, ի վերայ իւրաքանչիւր տարերաց գոչէ՛: -714. Երկրորդ, զի չո՛րք են սկզբունք աշխարհի. երկինք որ է՛ երկուք. *հուր* և օդ. և երկիր որ է՛ բ իր. հող և ջուր: - 714. Ջջերմ սէրն *հուրն* ցուցանէ. թէ առ աստուած և թէ ի մարմինն: - 714. Տասներորդ, որպէս հատն սերմանեալ և բուսեալ և չարչարեալ և ընդ *հուր* անցեալ՝ ապա՛ ի սեղան եդեալ պատուեսցի: - 721. Նոյնպէս և ի յարութեանն մեռելոց «օրն ընտրեսցէ» ասէ առաքեալն. զի *հուրբ* յայտնելոց է: - 721. Այլ որպէս կայծ *հրոյ* և անօթ արեգական բոլորովիմբ է լոյս, նոյնպէս և անդ բոլոր անդամօքն փայլեսցին իբրև զարեգակն: - 726. Զի *հուր* մեծ ընթանայ ի գալստեանն քրիստոսի. և վառեսցին երկինք և երկիր *հրովն* այն, որպէս ասէ պետրոս: - 727-728. Եւ *հուրն* այնպէս փայլատակէ որպէս զլուսին. և լուսինն որպէս զարեգակն. և արեգակն եօթնապատիկ պայծառանայ որպէս ասէ եսայի: - 728. Դարձեալ՝ էութիւնն մնայ, այլ ներգործութիւնն պակասի՝ այսպէս. զի ջերմութիւն *հրոյն* և ցրտութիւն ջրոյն և փոփոխմունք օդոյդ որպէս ամպք և այլն, և սևութիւն երկրի...: - 728. Նախ զի դիւրաւ հալի մոմ ի *հրոյ*. այսպէս և լերինք յերեսաց բարկութեան *հրոյն*: - 728. Նա՛խ՝ զի մագաղաթն ի *հուր* մերձեալ գալարի. նոյնպէս և երկնայինքն յայնժամ խոնարհին յորժամ երկին և երկիր վառեսցին *հրով*: - 729. Ո՞ւր է *հուրն* որ գայ ի կատարածի: - 731. Եւ ի կատարածի՝ տարրական *հուրն* և հրեղէն ծովն

և ամենայն *հուրք* որ են յերկրի՝ ժողովեսցին ի միասին - 731. Այլ ի գալուստն քրիստոսի երե՛ք են ասացեալ *հուր* մի զիետ միոյ: - 731. Զի նախընթաց *հուրն* գայ յարևելից և վառէ՛ զերկիր և զտարերքս, և կանգնի յարևմուտս: - 731. Եւ համընթաց *հուրն* զիիւսիսիւ և պատէ՛ զմեղաւորս: - 731. Եւ վերջընթացն է հրեղէն ծովն ի հարաւ. ուր առաքէ՛ զմեղաւորս ի *հուրն* յաւիտենից: - 731. ...և ընդ վճռի դատաւորին իսկոյն քարշին ի տանջանս ի հրեղէն ծովն որ *հուրն* է յաւիտենից: - 731. Վասն է՞ր *հրով* գայ քրիստոս: - 731. Նա՛խ՝ զի աշխարիս ջրով և *հրով* ապականեսցի ըստ մարգարէութեանն ենովքայ: - 731. Իսկ ի կատարածի ցրտացեալ լինին մարդիկ ի սիրոյն աստուծոյ իբր ծերացեալ աշխարհի. վասն այն ջերմ *հրով* պատժեսցին: - 731. Երկրորդ՝ զի *հուրն* կրկին ունի զօրութիւն. այսինքն զլոյսն և զայրելն. և կրկին լինին մարդիկ. այսինքն արդարք և մեղաւորք. - 731. Վեցերորդ, զի ահագին փառօք գայցէ փողով մեծաւ և ամպախաղաց որոտմամբ և շարժմամբ և *հրով* բորբոքելոյ որպէս ի սինայ: - 737. Ապա յա՛յտ է յասացելոցս թէ՝ քրիստոս երևեսցի արդարոցն քաղցրատես, և մեղաւորացն դառնակերպ. որ նշանակեցաւ ի սիւն ամպոյն ի տուէ և ի *հուրն* ի գիշերի: - 741. Երկրորդ, հրեշտակք. որք արկանեն ի *հուրն*...: - 743. Դարձեալ՝ նիւթ *հրոյն* որ աղտ մեղաց, է՛ յաւիտենական. վասն այն յաւիտեան տանջէ զնոսա: - 744. Այլ զի մի՛ իրողութիւն դատաստանին և յարութեան ուրուական և առ աչօք թուեսցի ընդհանուր ամենայն մարդկան, վասն որոյ ասեն վարդապետք ի յարութենէն մինչ ի գալուստն և քննութիւնն և *հրով* նորոգիլն և այլն՝ յերկարի միջոցաւ որքան ժամս **զ**: - 747. Երկրորդ, նշանակէ՛ զծածուկ սէր սրտին. որպէս ծուխն *զհուր*: - 749. Իսկ ծուխն յերեսացն աստուծոյ, Նախ նշանակէ զահագին սպառնալիք բարկութեան տանջանացն. որպէս նա՛խ է ծուխն քան *զհուր*, և սպառնալիքն քան զտանջանս: - 749. Կամ ցուցանէ զչափով տանջանս մեղաւորացն. որք չափով աստ տանջին, չափով կրեն զհանդերձեալ պատիժն. զի ընդ պակասիլ ծխոյն՝ և *հուրն* նուազի: - 749. Իսկ որ ասէ «ծուխ նոցա ելցէ յաւիտեան», նախ կոչէ զներքին խորոց հառաչանս տանջելոցն. և երկրորդ զանընդմիջաբար այրեցումն *հրոյն*. որպէս նիւթ փայտի մերձեցեալ ի *հուր*: - 750. Վասն է՞ր է *հուրն* անվախճան: - 750. Նա՛խ՝ զի այրեցումն բաժանի ի լուսոյն և մնայ անփոփոխ ի *հուրն:* - 750. Երրորդ՝ զի նիւթ *հրոյն* և այրելիքն որ է աղտ մեղացն՝ նաև մեղաւորքն՝ են յաւիտենական: - 750. Երրորդ՝ կամ գործիք տանջանացն նուազին. իսկ անդ *հուրն* է յաւիտենական որ ոչ պակասի: - 750. Նախ վասն մարդոյս. զի մին մեղացն կրկին հատուցանի աստ հոգւով և մարմնով. իսկ եօթնպատիկն է՛ ի *հուրն* յաւիտենից: - 750. Ա՛րդ՝ ի նախասացելոցս հաւաքեա՛. զի լինիցի անդ Ջերմութիւն *հրոյ*: - 751. Առաջին՝ *հուր* վառեալ. այնպէս, որ թէ բոլորովին ծովք ի վերայ հեղցին՝ ո՛չ շիջանիցի: - 752. Եւ այնպէս յաղթէ զնիւթականս զայս *հուր*, որպէս այս զնկարեալն պատկեր *հրոյ*: - 752. զի ծուխն ի *հրոյն* պատճառէ զլալ աչաց. և ցուրտն զկրճել ատամանց: - 752. Զի որպէս ձկունք ի ջուրս, այնպէս նոքա կան ի *հուր*: - 752. Ութերորդ՝ ահագին տեսիլն դիւաց և վիշապաց. զոր ի կայծի կայծել *հրոյն* տեսանեն. և ողորմելի աղաղակ լալ ականացն և ոռնիար լինողացն: - 752. Վասն առաջնոյն, որք աստ *հրով* ցանկութեանցն վառեցան, արդարապէս բորբոքին: - 752. Երրորդ՝ զի խաւարն լինի յօդոյ. և ա՛յն ի *հրոյ*: - 753. Եւ յորժամ առաքին մեղաւորքն ի *հուրն* յաւիտենից, գտանեն զծնօղս իւրեանց որպէս գառինք զմարս, և յաւիտեան խածատեն զնոսա: - 753. Նմանապէս և *հուրն* որով հրեղէն լեզուօք երևեցաւ սրբութեան հոգին, բաժանեսցի այրեցումն և մշտափայլ լուսով փայլեսցի որպէս զարփին և որպէս զարեգակն: - 759-760. Ոմանց *հուր* և ծծումբ: - 760. Այլոց *հուր* և խաւար և տարտարոս. լալ աչաց և կրճել ատամանց. և այլոց այլ իմն: - 760. Որպէս բան ի ձայն՝ և բան ի գիր՝ և լոյս յօդ՝ և տեսութիւն յակն՝ և *հուր* յերկաթ՝ և մուխ ի պողուատ: - 769-770. Ո՛չ բանն որպէս հալածու կաղապարեալ. և կամ մարմինն որպէս բոց ի *հրոյ* և ծուխ անօսր լուծեալ յօդդ: - 770. Ոչ բաժանեալ կամ հատեալ ի հօրէ և ի հոգւոյն. որպէս ո՛չ ջերմութիւն ի *հրոյ* կամ ի լուսոյ. կամ նկարագիր յէութենէ: - 770. Զորօրինակ եթէ արմատ փայտի եդեալ ի *հուր*՝ նախ ինքն այրի և ապա ճիւղքն: - 777. Եւ ոմանք յորոց սրբազան առաջնորդն մեր, պակասութիւն ասաց զոլ զորս յետոյ կրեցին անդամք նորա. այսինքն ըզհատումն մասանց. այրումն *հրոյ*. և այլ իմն բազմազան տանջանս. յորմէ թուով պակասեաց ի քրիստոս և յաւելաւ անդամս իւր: - 781. Իսկ արտասուքն աղի և ջրատեսակ. զի բարեխառնեսցէ մինն զջերմութիւն *հրոյ*, և միւսն՝ զի մի՛ նեխիցին պարուտակք աչաց. շրջապատեալ երակացն լուսոյ: - 786. Ոմանք *հրով* կիսայրեաց տոչորեալք. և այլք ի սովոյ գազանաբեկ վտանգեալք: - 788

**ՀՊԱՐՏ +** Զի որպէս սատանայ ամբարտաւանութեամբն ընդդէմ աստուծոյ՝ զրկեցաւ ի լուսոյն, նոյնպէս և *հպարտն* զրկեցաւ ի շնորհացն ըստ երեմիայ: - 32. Եւ թէ ոք ասիցէ, ընդէ՞ր այլ մեղուցեալն զղջացեալ մտանէ ի կարգ, որպէս *հպարտն* և ագահն և պոռնիկն ո՞չ: - 166. Երկրորդ՝ կարկուտն զհպարտ և զհայհոյիչ բանս նոցա խայտառակէ, և հուրն զբարկութիւն սրտին զոր ունէին առ որդիսն իսրայէլի: - 334. Այլ զանազանին. զի *հպարտն* ի ներքուստ ունի զբարձրամտութիւնն. և փառասէրն յարտաքուստ

յայլմէ՛ բերանոյ ընդունի զփառս գովութեան: - 560. Եօթներորդ՝ զի որ *հպարտքն* են ոչ ունին հանգիստ մտաց և մարմնոյ. քանզի որ քան մարդ խոնարհէ՝ այն քան հանգիստ է: - 562. Տասներորդ՝ զի ամենայն մեղաւորաց ներէ՛ աստուած ժամանակս ինչ զի զղջասցին. իսկ *հպարտին* ոչ…: - 562

**ՅՊԱՐՏԱՆԱՄ +** Զի թէ զպատկերն աստուծոյ տեսեալ ի մեզ *հպարտասցուք*, զհողն տեսեալ խոնարհեսցուք…: - 229. Եօթներորդ՝ զի *մի՛ հպարտասցի* ի գօտէմարտիլն՝ կաղ առնէ զնա: - 311. Յինգերորդ՝ ընդ դէմ *հպարտացելոյն* որ խորհէր զաթոռ իւր դնել յամպս և անկաւ յերկիր. նա՛ խոնարհեցաւ յերկիր և ել յերկինս: - 323. Չորրորդ՝ զի ախոյեան լիցի և յաղթեսցէ *զհպարտացեալն* սատանայ: - 325. Երրորդ՝ զի մի *հպարտասցի* յետ յաղթութեանն սատանայի, խօսեցաւ աստուած և յաղթեաց բանիւ. զի տեսցէ զտկարութիւն իւր և խոնարհեսցի: - 325. Երկրորդ, *զհպարտացեալ* փառքն նշանակէ. զոր ո՛չ է պարտ խառնել ի բարիս: - 356. Կամ թէ *հպարտացան* յիջաջել հրոյն ի վերայ սեղանոյն: - 364. Եւ քահանայքն *հպարտացան* և օտար հրով խնկարկեցին ի ներքս վարագուրին, վասն այն պատժեցան ի խրատ այլոց: - 364. Նա՛խ՝ զի մի՛ *հպարտասցի* բաղաամ. զի և էշն ետես զհրեշտակն: - 388. Այլ ո՛չ յարմարի բանս. զի և յերկինս տեսանի գործ արդարութեան առ հրեշտակս եղեալ. որք *հպարտացեալ* կործանեցան: - 458. Զի սատանայ *հպարտացաւ* յերկինս և նախանձեցաւ ընդ մարդոյն. իսկ այլքն ամենայն մարմնականք են ասեն: - 559. Իսկ փառասիրութիւն և հպարտութիւն ո՛չ են այսց կարգաց. այլ յորժամ զվեցեքին սոքա յաղթէ, ապա՛ փառասիրի և *հպարտանայ*: - 561. Չորրորդ նախախնամութեամբ. զի մի՛ *հպարտասցին*. որպէս խէթն առաքելոյն պօղոսի: - 665. Զսիրտ իւր *հպարտացուսցէ* որպէս ասէ դանիէլ. «յարիցէ ընդ դէմ իշխանաց իշխանին». այսինքն ընդ դէմ աստուծոյ. և ջանայ փոխել զօրէնս և զկրօնս: - 707

**ՅՊԱՐՏՈՒԹԻՒՆ +** Եօթներորդ՝ է՛ *հպարտութիւնն*. որ փքացումն է երեսաց մտացն և որոշէ՛ յաստուծոյ…: - 32. **Այլ առ ժամայն *հպարտութեամբն* ուռուցաւ և ի ճշմարտութենէ լուսոյն դարձոյց զանձն իւր և խաւարեցաւ**: - 147. Ա՛յս է՝ մեղք *հպարտութեանն* որ է երկրային ախտ, ծանրացոյց և ընկէց յերկիր: - 148. Այլ նոքա ամենեքեան ա՛զգ են դիւաց. և ըստ զանազան գործոյն՝ զանազան անուան հանդիպեցան. որպէս դևն պոռնկութեան, և *հպարտութեան*, և բէէղզեբիւղ, բեհմովթ, և այլն: - 150. Եւ սողոմոն ասէ՝ «թէ աղաչէ զքեզ թշնամին՝ մի՛ հաւատար նմա. զի է չարիք գոն ի սիրտ նորա». որ է՛ *հպարտութիւն*, նախանձ, և այլն: - 151. Զի **գ** գլխոյն կրկին է եղջիւր. որ է *հպարտութիւն* նախանձ՝ և բարկութիւն. զի սոքօք յաջ և յահեակ պատերազմի. և առ ընտիրս և առ խոտանս գտանին բազում ուրեք երեքին ախտքս այսոքիկ: 151-152. Երրորդ՝ որպէս պօղոսի տուաւ խայթ մարմնոյն զի մի՛ զ՚ի վերուստ առեալ շնորհն և զօրութիւն՝ *հպարտութեամբ* լքանիցէ…: - 158. Եօթներորդ՝ թոյլ տուեալ լինի և ոմանց անկանիլ ի մեղս ինչ. զի ի *հպարտութենէն* զոր ունէր վասն առաքինութեան՝ խոնարհեսցի և անկցի առաջի տեառն խոստովանութեամբ. և ընկալցի զթողութիւն. որ նախ համասե՛ռ էր սատանայի: - 159. Այլ և զոռոզ *հպարտութեամբ*: - 212. Երկրորդ՝ վասն *հպարտութեան* մարդոյն. զի յորժամ խայթեսցեն զնա՝ ծանիցէ զտկարութիւն իւր. որ և զփարաւոն ո՛չ թէ առիւծք կամ առջք հարին, այլ ճանճք և մժղուկք տանջեցին: - 217. Ութերորդ՝ ո՛չ արար նախ զմարդն, զի մի՛ արարչակից գիտասցէ զինքն ոչ գոյիցն, և անկցի *հպարտութեամբ*. այլ գործօղ գոյիցն, զի կացցէ պահպանութեամբն…: - 231. *Յպարտութիւնն* ի բերանն: - 250. Յինգերորդ՝ ի յուսումն խոնարհութեան մերոյ. զի տեսանելով զմեզ տկար քան զանասունս, մերկ և աղքատ ի մօրէ ծնեալ, խոնարհեալ զիջանիմք ի հնազանդութիւն արարչին. և զի մի՛ եկամուտ *հպարտութեամբ* կրեսցուք զանկումն արուսեկին: - 267. Նախ՝ ուղղութիւն ընկերաց. **բ** գոհութիւն և համբերութիւն. **գ**՝ իմանալ զչար խորհուրդն սատանայի. **դ**՝ աղօթք և պահք. **ե**՝ խոնարհութիւն և ճշմարտութիւն. որ գերագոյն է ամենայն զինուց և իսպառ կորուսանէ զչար որ մայրն է ստութեան և *հպարտութեան*: - 324. Երրորդ, զի կործնչելոց էին անդրանիկ ծնունդքն սատանայի. որ էր *հպարտութիւնն* և կռապաշտութիւն. զի խոնարհութեամբ էր գալուստն քրիստոսի և ի մի աստուածպաշտութիւն հրաւիրեաց և կորոյս զպաշտօնն դիւական: - 334. Եօթներորդ՝ սապատողն. կուզն. կամ ելուստ ի թիկունքն. որ ո՛չ կրէ զբեռն քահանայութեան *հպարտութեամբ*: - 370. Այլ ընդ դևս պատերազմիլ միշտ. զի որոց դիւաց թէ յաղթէ մարդ, թէ *հպարտութեան* և թէ պոռնկութեան, զնոցա տեղիքն ժառանգէ յերկինս: - 393. Եւ որպէս ննջեցեալն քնով՝ ո՛չ տեսանէ զինքն. և որպէս յաւելի կերակրոյ խնուն զգայարանքն. նոյնպէս ագահութիւն և փարթամութիւն և *հպարտութիւն* մոռանալ տայ զինքն. վասն այն ասեն թէ՝ ինքեանց գիտակքն իմաստունք են: - 397-398. Երեքտասաներորդ, զի մարիամ ո՛չ խոնարհութեամբ կամէր մերձենալ յոտս նորա որպէս այլ կանայքն. այլ յերե՛սն դիմեաց նա *հպարտութեամբ* առ ի համբուրել զնա. իսկ տէրն կամեցաւ ուսուցանել նմա զխոնարհութիւն՝ արգել զնա: - 518. Չորրորդ՝ որ ո՛չ գիտէ. և գիտէ որ ոչ գիտէ, բայց սնափառ *հպարտութեամբն* լըլկի և յանդըգնի խօսիլ զոր ո՛չ գիտէ: - 537. Երրորդ՝ *հպարտութիւն* և

նախանձ և սոցին նմանքն մեղք են: - 556. Եւ սոքա մտօք և ո՛չ մարմնով կատարին. որպէս յայտ է ի բանսարկուն սատանայ որ յանցեաւ *հպարտութեամբ* և նախանձով: - 556. Այլ արդ՝ զղջանալ և խոստովանիլ պարտ է *զհպարտութիւն* զնախանձ՝ զատելութիւն՝ և զայլն, և ապա՛ թողութիւն գտանել: - 556. *Յպարտութիւնն* է բանին. Նախանձն ցանկութեանն: - 559. Բանին գոլ *զհպարտութիւն* և զնախանձ առ ներքինս և առ վերինս: - 559. Այլ ես ասեմ թէ յեօթանց անտի երկուքն պարզ հոգեկան են. այսինքն *հպարտութիւն* և նախանձ: - 559. Եւ է՛ *հպարտութիւնն* իմացմանն՝ և նախանձն կամացն: - 559. Ութերորդ *հպարտութիւն*: - 560. Յօղոյ որկորստութիւն և *հպարտութիւն*. զի վերընթա՛ց է և քարշօղ: - 560. Փառասիրութիւն և *հպարտութիւն* են հոգւոյ և մտաց. որ լինի **ը**: - 560. Ի վեր շարժումն է *հպարտութիւն* և փառասիրութիւն. զի յատուկ է սոցա ի վերամբարձումն: - 560. Ա՛րդ՝ ըստ առաջին կարգին թէ ցանկայ ի ներքս, ըստ որում է՛ *հպարտութիւն* և փառասիրութիւն: - 561. Վասն է՞ր ա՛յլ վարդապետք առաջին մեղք ասեն *զհպարտութիւնն*. իսկ Նազրիոս զորկորստութիւնն: - 561. Զի առաջին մեղք *հպարտութիւնն* է որով սատանայ մեղանչեաց յերկինս և անկաւ. և ապա նախանձն զոր ընդ մարդոյն արարին: - 561. Իսկ փառասիրութիւն և *հպարտութիւն* ո՛չ են այսց կարգաց. այլ յորժամ զվեցեքին սոքա յաղթէ, ապա՛ փառասիրի և հպարտանայ: - 561. Եւ է՛ *հպարտութիւնն* առաւել մեղք քան զամենայն վասն բազում պատճառի: - 561. Նա՛խ՝ զի ամենայն մեղք կամ ընդ դէմ իւր մարմնոյ է, կամ ընկերին. իսկ *հպարտութիւնն* է մեղանչումն ընդ դէմ աստուծոյ. որպէս սատանայի: - 561. Երկրորդ՝ զի այլ ամենայն մեղք մարմնական է և գիտեմք թէ մեղք է. իսկ *հպարտութիւնն* անմարմին է և անօսր. և ո՛չ կարեմք գիտել զմեղանչումն: - 562. Երրորդ՝ զի զայլ մեղս մեղսասէրքն գործեն. իսկ *զհպարտութիւնն* սուրբք և ընտիրք. որպէս հրեշտակք յերկինս: - 562. Չորրորդ՝ զի ա՛յլ մեղօք կամք մեր անկարգանայ. այլ *հպարտութեամբ*՝ իմացմամբն յիմարիմք և ապշիմք. և ապա կամօք անկարգանամք: - 562. Յինգերորդ՝ զի յամենայն մեղս գտանի *հպարտութիւն*. զի որպէս առանց սիրոյ այլ առաքինութիւնք ոչ ինչ են, նոյնպէս առ *հպարտութեան* ամենայն մոլութիւնք ոչ ինչ են: - 562. Զի յամենայն մեղս երևի *հպարտութիւն* այսպէս. զի ամենայն մեղք խոտումն է պատուիրանացն աստուծոյ, և խոտորումն զհետ հեշտութեան մարմնոյ...: - 562. ...այն է *հպարտութիւն* որ խոտե՛մք և անարգեմք զճշմարիտ բարին. և ապա խոտորիմք և հետևիմք զհետ փոփոխելոյ բարւոյս. և այսպէս երևի *հպարտութիւնն* յամենայն մեղս: - 562. Այսպէս և հանդիպեալ *հպարտութեանն* ելանեն ամենայն բարութիւնք մեր: - 562. Ութերորդ՝ զի ամենայն տեսակք ախտիցն ի՛ր մի երևեցուցանեն մեզ. որպէս գողութիւն զինչս, և պոռնկութիւն զհեշտութիւն. իսկ *հպարտութեանն* ո՛չ գոյ ամենևին ակնկալութիւն: - 562. Իսկ ամբարտաւանն ո՛չ իմանայ զմեղսն զոր գործէ *հպարտութեամբ*. այլ գիտէ ևս թէ առաքինութիւն է: - 562. Այսպէս մեծ է՛ մեղք *հպարտութեան* քան զամենայն մեղս մարմնական: - 563. Դժուարայաղթութեամբ. որպէս *հպարտութիւնն*: - 565. Քանզի Աղքատութիւն հոգւոյն արտաքսէ՛ *զհպարտութիւնն:* - 583. Յեզութիւնն է ընդ դէմ ցասման. և խոնարհութիւնն ընդ դէմ *հպարտութեան*: - 584. Որդիքն ահարօնի՝ են սուրբքն. որք նախ քան զվերափոխիլն ի սենեակ վերին արքային, աստուածայնովքն բանիւք յամենայն *հպարտութենէ* մեղաց մաքրին: - 756. Զի որոց բազում աւանդեցաւ. առաւել ինչ պահանջեցաւ. և փքացելոց *հպարտութեամբ*՝ ստորասուզեալ մակբեկութեամբ: - 789

**ՅՊԵՑՈՒՑԱՆԵՄ +** Երկրորդ՝ ապականութիւն և մեղք ո՛չ է գործ արարչի. այլ մեղանչականին ադամայ և արկածք բանսարկուին. վասն որոյ տէրն զարկուածս բանսարկւին ո՛չ *հպեցոյց* ի մարմինն իւր. ապա ուրեմն անապակա՛ն է մարմինն տեառն: - 498-499

**ՅՊԻՄ +** Բոլո՛ր է՝ յորժամ զիմացումն մտաց յամենայն եղելոց առ ինքն ժողովէ՛, և այնպէս բոլորովիմք յաստուած *հպի* և միանայ. և ա՛յս է ի բոլոր սրտէ և ի բոլոր մտաց սիրել զաստուած. և զայս ունին ընտրեալքն մարգարէք և առաքեալք: - 142. Իսկ ուղիղ շարժի՝ յորժամ ի ծեռն զգայութեանց յարացուցիւ և օրինակաւ *հպիմք* ի նախատիպն աստուած: - 142. Է՛ որ իմացումն մտացն առ ինքն ժողովի ի յիշողականէ՝ ի տրամախոհութեանցն՝ ի կարծեաց՝ և յայլոցն, և այնպէս ըստ ինքեան տեսութեանն ի աստուած *հպի*. այս է գերագոյն իմացումն. և կոչի իմացական տեսութիւն: - 142. Միատեսակ է՝ յորժամ ըստ ինքեան ժողովէ յամենայն զգայարանաց, և բոլոր և միեղէն սիրով *հպի* յաստուած. և է՛ այս գերակատար սէր: - 143. Եւ որպէս սակաւ մասն ոտիցն ի յերկի՛ր է *հպեալ* և կոխէ, նոյնպէս և մեզ սակաւ պէտս մարմնոյ. այսինքն զզեստուց և կերակրոց ի յերկրէ ստանամք. և զանչափն և զաւելորդն կոխեմք և անցանեմք...: - 233. Չորրորդ՝ և կատարեալ իմաստութիւն է՝ իմացմանն *հպիլ* յաստուած և յաստուածայինս ի հոգևոր և յիմանալի կեանս: - 269. Իսկ վերջին խորհուրդ է, յորժամ վասն հարկաւոր պիտոյից կերակրոյ և հանդերձի՝ յերկրաւորս *հպիմք:* - 331. Նոյնպէս և ջուրն որ *հպեցաւ* ի մարմին փրկչին, և ծնաւ զմարդիկ որդիս աստուծոյ, նորոգեսցի և պայծառասցի քան զամենայն տեսիլս գեղեցկագոյն ականց: - 759

**ՅՊՈՒՄՆ +** Որ և միով *հպմամբ* ի լանջսն՝ մաքրեցաւ աշակերտն յայսպիսի կրից. քանի՞ առաւել որ եբարձ զապականութիւնս ազատ լիցի յայսպիսի կրից: - 383. Դարձեալ ասեմք, եթէ միով *հպմամբ* լանջացն յիսուսի մաքրեցաւ աշակերտն յայսպիսի կրից. քանի՞ առաւել բարձօղն ապականութեանց ազատ լիցի յայսպիսի կրից: - 502

**ՅՌԱՍԻՄ** - Մերն ներսէս անուն տայ՝ *հռասիմ*: - 706

**ՅՌԱՔԷԼ** - Տասնևե՝ Գօտէմարտիլն յակոբայ. և անուանն սքանչելի. և *հռաքէլ* լայր զորդիս իւր: - 283. Յաղագս երից որդւոց է լալ մօրն *հռաքէլի*: - 312. Երրորդ՝ կոտորեալ մանկունքն բեթլէհէմի ո՛չ էին ի զաւակացն *հռաքէլի* որպէս ցուցաւ ի վերոյ: - 312. Զառաջինն մխիթարեցաւ աստուածածին կուսիւն մարիամաւ. որ առանց երկանց և ցաւոց ծնաւ զմիածինն որդի, որ եբարձ զարտասուս վշտաց մօրն *հռաքէլի*: - 312

**ՅՌԵՄՓԱՅ** - Ութերորդ՝ զի թէ թողցեն զվայելչութիւն խորանիս այս և այլոց հետևեսցին, անպատասխանի լիցին ի պատուհասն. որպէս եթող զապերախտ ժողովուրդն և էառ զվրանն մողոքայ և զաստղն *հռեմփայ* ի դատապարտութիւն ինքեանց: - 342

**ՅՌԵՏՈՐ +** Այլ և վարժապետին իմոյ և մեծ *հռետորի* հայոց, Յոհաննու Որոտնեցւոյ, եղիցի ի սմա յիշատակ մաղթանաց մասին օրհնութեան. և վիճակ ժառանգութեան սրբոցն ի լոյս: - 773

**ՅՌԻՓՍԻՄԵԱՆՑ** - Այլ և ի սրբոց *հռիփսիմեանց* գալոյն յայտնի է: - 549. Զշարականս ո՞վ է ասացեալ... *Զհռիփսիմեանց* անձինքն և զհարցն՝ տէր կումիտասն: - 637

**ՅՌՈՄ +** Զարթիր ի *հռօմ*, տալով մեզ զմեսիայն: - 28. Բայց ասեն ոմանք թէ՝ յաւուրս մանասէի՝ Նումաս պումիլոս **բ** ամիս յաւել ի տարին *հռօմոց*. զի յառաջ քան զնա՝ **ժ** էր. և յաւել ի նոսա զյունվար և զփետրվար: - 201. Զորս պօղոս՝ յընտանի և ի վայրենի ծիթենիս առակէ՛ ի թուղթն *հռօմոց*: - 347. Զոր ի ժողովն քաղկեդոնի հաստատեցին զսոյն տօն ի իեն դեկտեմբերի. պատճառելով թէ՝ ի *հռօմ* դարձի արեգական տօն կատարէին. և փոխեաց զայն պետրոս տօնել արեգականն արդարութեան: - 482. Եւ լուսաւորչին ի կեսարիայ գնալն և ի *հռօմ*. և թադէոսի առաքելոյն: - 525. Սեղբեստրոս *հռօմայ*: - 542. Եւ Պատրիարգունք էին անդ, Ներսէս հայոց. Կիւրեղ երուսաղէմի. Դամասոս *հռօմայ*. Նեքտառիոս կոստանդնուպօլսի: - 542. Կէլէստիանոս *հռօմայ*: - 542. Եւ գլուխ ժողովոյն էր սուրբն Դէոսկորոս աղէքսանդրացի, ...Լևոն *հռօմայ*: - 542. Եւ հայրապետք էին անդ... Աբիլիդոս *հռօվմայ:* ...Զոնորիոս ի *հռօմայ*: ...Ադիանոս *հռօմայ*: - 544. Այլ հրամանաւ մեծի թագաւորին ուստիանեայ ժողովեցան յունաց և *հռոմոց* և հայոց և վրաց և աղուանից եպիսկոպոսունք. և կաթողիկոսն հայոց սահակ...: - 544. Երրորդ ժողովն է դվնայ, ի չորրորդ ամի թագաւորութեանն կոստանդեայ *հռոմոց.* հրամանաւ մեծի կաթողիկոսին հայոց ներսէսի շինողի. և այլ **է** և **ժ** եպիսկոպոսաց՝ և վարդապետաց բազմաց և իշխանաց...: - 544. Եւ ո՛չ ոք գնաց առ պետրոս ի *հռօմ*. և ո՛չ պետրոս յայլ վիճակս ձեռնադրեաց զոք: - 546. Եւ թէ ոք ասիցէ, կարի՛ բարկացար. ո՛չ զայս ասեմ հնազանդիլ. այլ որպէս լուսաւորիչն գնաց ի *հռօմ* և հնազանդեցաւ: - 548. Ասեմք առ այս՝ թէ լուսաւորիչն գնաց ի *հռօմ* ո՛չ վասն ձեռնադրութեան, այլ վասն սիրոյ և միաբանութեան երկուց ազգաց և ուղղափառ թագաւորացն տրդատայ և կոստանդիանոսի: - 548. Եւ փոխանորդ իւր նստոյց յաթոռ զսուրբն արիստակէս համանըման նորին առաքինութեամբ, և որդի ըստ մարմնոյ. և ապա՛ գնաց ի *հռօմ*: - 548. Եւ ի *հռօմ* գնացեալ՝ եղև հայրապետ և պապ: - 548. Զի այսպէս սահմանեցին՝ թէ ինքնակալ թագաւոր մի և ինքնագլուխ հայրապետ մի նստցի ի հայս. և թագաւոր մի ինքնակալ՝ և ինքնագլուխ հայրապետ մի ի *հռօմ*. և ի վերայ միմեանց դիցեն զանձինս ի մահ. և սոսկալի գրով եղեն միմեանց եղբարք. թացեալ զգրիչն յահաւոր խորհուրդն: - 548. Ա՛յս էր պատճառ գնալոյն ի կեսարիա և ի *հռօմ*: - 549. Ի *հռօմ* վասն ղուկասի: - 549. Զի այսպէս ասէ նեքտառիոս հայրապետն *հռօմայ* թէ՝ չէր հնար իջուցանել զմարմինն տեառն ի խաչէն վասն փայլատակմանցն ի խոցուածոյն: - 631. Լուսաւորիչն գրիգոր ի *հռօմայ* գահիցն պատուեցաւ: - 639. այլ յորժամ բոլոր արարածք ազատեցին յապականութենէ ծառայութեան որպէս գրէ *հռօմ* յայնժամ և մարմինք մարդկան յանապականութիւն վերափոխեսցին: - 717

**ՅՌՈՒԹ** - *Յռութ*՝ որ ծնաւ զովբէթ ի բոյոսայ: - 300. Երկրորդ օրէնք. Յեսու. Դատաւորք. և *Յռութ*: - 450. Երկրորդ՝ դատաւորք և *հռութն*: - 451. Բոյոս ամաց **ճը**՝ ծնանի զովբէթ. առեալ բոյոսս իւր կին *զհռութ* մովաբացի: - 452. Չորրորդ՝ ըղձական օրհութեան. որպէս ի *հռութն* ասէ «օրհնեսցէ՛ զքեզ տէր»: - 464

**ՅՌՉԱԿԵԼԻ +** Երրորդ՝ ի կողմանէ հոգւոյն սրբոյ. զի առաւել *հռչակելի* և փառաւոր եղև այսպէս. զի ընկալեալ զհոգին՝ վաղվաղակի սքանչելիս առնէին վկայելով քրիստոսի. և զառաքեալսն առատապէս լցուցանելով, և նոքա զայլսն: - 522

**ՅՌՉԱԿԵՄ +** Եօթներորդ՝ զի նոր իմն չնաշխարհիկ կազմեաց. նոր ժողովրդեանն և նոր օրինացն,

իցէ և նո՛ր տաճար *հռչակեալ* ընդ ծով և ընդ ցամաք. որպէս պսակ և փառք արդարոցն է՛ զոր ակն ո՛չ ետես և ունկն ո՛չ լուաւ. նոյնպէս և սա՛ ի զգալիսս անհաս ի մտաց մարդկան: - 342. **Որպէս ասեն երբեմն ժամանակի ի կոստանդնուպօլիս *հռչակեալ* քաղաքի, մօլորեալ յոյնք ի մօլորեալ երիտասարդէ՛ միոջէ՛, բարձին յեկեղեցւոյ զերգ երեքսրբենին**: - 775

**ՀՌՕՄԱՅԵՑԻ +** Ասեմք թէ՝ զբանս զայս ասէ մարգարէն վասն խաղաղութեան որ եղև սակաւ մի յառաջ քան զգալուստն քրիստոսի՝ և ի բոլոր ժամանակս քրիստոսի, և յետ նորա խ ամ մինչև ապստամբեցին հրէայքն *հռօմայեցւոց* տէրութեանն: - 27. Իսկ *հռօմայեցւոցն* ի վերայ նախնեա՛ցն է: - 201. Զի փափուկ է հելլենացին. և սաստիկ *հռօմայեցին*: - 297. *Հռօմայեցիք* որ են սպանիացիք: - 299. Սաստիկ *Հռօմայեցին*: - 299. Որոց առաջինն *Հռովմայեցւոց*: - 450. Տասներորդ՝ զի և ազգն *հռօմայեցւոց* մինչև ցայսօր յայտնապէս ի վեցն յունվարի զերից տօնից յիշատակս կատարեն: - 484. Այս ըստ *հռօմայեցւոց* եկեղեցւոյն: - 606

**ՀՌՕՄԱՅԵՑԻ (Ս.Գրքի մաս) +** Այլ զօրութիւնս այս վերաբերի ի հոգին սուրբ. որպէս ասէ պօղոս ի *հռոմայեցւոցն*, «հոգի այնորիկ որ յարոյց զյիսուս ի մեռելոց. և կենդանացուսցէ զմահկանացու մարմինս ձեր»: - 57. Այլ ի *հռօմայեցոցն* ասէ՝ «առիք զհոգի յորդեգրութեան»: - 58. Այլ պօղոս ի *հռօմայեցւոցն* ասէ, «հոգին սուրբ բարեխօս լինի ի հեծութիւնս անմռունչս»: - 59. Երկրորդ՝ և պօղոս ի *հռօմայեցւոցն* ասէ, «հոգի այնորիկ որ յարոյց զյիսուս»: - 64. Իսկ պօղոս զզաւակն զայն զքրիստոս ասէ ի *հռօմայեցւոցն* թէ՝ «քրիստոս է ի հարցն ըստ մարմնոյն աստուած օրհնեալ յաւիտեան»: - 73. Եւ առաքեալն ցուցանէ թէ քրիստոս է զաւակն այն. որպէս ի *հռոմայեցոցն* ասէ, թէ «քրիստոս է ի հարցն ըստ մարմնոյ. որ է ի վերայ ամենեցուն աստուած»: - 466

**ՀՍԿԱՅ (տ. ՍԿԱՅ) +** Իններորդ՝ ցուցանէ թէ ո՛չ է այն անդրանիկն որ նախածին լինի և մարմնովն քաջ. զի ո՛չ հաճի տէր ընդ իրանս առն *հսկայի*. այլ անդրանիկ է այն՝ որ զհաճոյսն աստուծոյ կատարէ: - 310. Քանզի՝ նա՛ սպան զթագաւորս և *զհսկայսն* քանանու. և զոմանս եթող ի փորձ ընտրելոց: - 419. Յաղթեաց դաւիթ հնգից *հսկայիցն*. և տէրն մեր իշխանացն զգայութեանց: - 438. Եւ դաղմատերէն տիտան. այսինքն արեգակն կամ *հսկայ*: - 707. Մեք եմք որպէս մարախ. թշնամիք մեր որպէս *հսկայս*: - 765

**ՀՍԿԱՅԱՆԴԱՄ -** Այլ որ առաւել մեծն է և *հսկայանդամ*, և կարի փոքր և փանաքի, յերեսնամեայ հասակն իւրեանց չափաւորին: - 726

**ՀՍԿԵՄ (տ. ՍԿԵՄ) +** Երրորդ՝ կապեալ ածաւ ի տունն կայիափայ. և անդ զքուքն կալաւ յերեսն. և մինչ ի վաղիւն *հսկեաց*: - 492. Եւ այսպէս *հսկել* և պահել զտունս մեր, զի մի՛ գող մահուն և կատարածի՝ գտեալ զմեզ անպատրաստ ի մեղս՝ տանիցի զհոգիս մեր ի տանջանս յաւիտենից: - 730

**ՀՍԿՈՂ +** Եւ երրորդն յաթոռս աղուանից սրբոյն գրիգորիսի շառաւիղի նորին *հսկողի*: - 544

**ՀՐԱԲԵՐՁ +** Երրորդ՝ զի սերօբէն մաքրական լսի և *հրաբերձ*. ըստ որում մաքրեաց զմարգարէն. և քերօբէն իմաստութեամբ լուսաւորիչ. և աթոռքն ուղղութեամբն կատարիչ: - 135

**ՀՐԱԳՈՅՆ +** Կարկեհան՝ որ կայծ կոչի. *հրագո՛յն* է. գտանի յափրիկէ. ի գիշերի որպէս հուր վառի: - 348.

**ՀՐԱԺԱՐԱԿԱՆ +** Երկրորդ՝ զի **Ե** յանձնառական է. և **Ե** *հրաժարական*: - 340. ...որ է կրկին տախտակն մովսէսի. յանձնառական և *հրաժարական* օրհնօրքն միաւորեալ: - 646

**ՀՐԱԺԱՐԵԼԻ +** ...այսինքն զի կամ ցանկանայ ոչ ցանկացեալ, կամ հրաժարի յոչ *հրաժարելեաց*: - 560-561. Իսկ երկրորդ անկարգութիւն կամաց է՛ որ հրաժարի յոչ *հրաժարելեաց:* - 561

**ՀՐԱԺԱՐԵՄ +** Եւ է՛ միւս բարի խառնակն և պատրուակեալն. որպէս է աշխարհական բարին. զի գունով և երևելեաւ բարի է, այլ ի ներքոյ ծածկեալ չա՛ր է. յայսմանէ *հրաժարէ՛* զմեզ ոչ մերձենալ: - 224. Է՛ և երրորդ պատճառ. զխոզն ուտէին յեգիպտոս, և զարջառ և զոչխար պաշտէին. վասն որոյ հրամայեաց զաստուածս նոցա զենուլ զի չեն աստուածք. և ի խոզենւոյն *հրաժարիլ* ամենևին: - 355. Նա՛խ՝ զի խմորն զհին չարութիւնն ցուցանէ. որ նախ *հրաժարիլ* պարտ, և ապա՛ զբարիս գործել: - 356. Երկրորդ, մկրտութիւնն է **գ** օրն. զի ունի *հրաժարիլն* և զդաւանելն և զմաքրիլն. և ապա՛ եօթն խորհուրդ եկեղեցւոյ: - 384. Ութերորդ՝ ի մկրտութեանն նախ *հրաժարիմք* յարևմտից, և հաւատամք յարևելս: - 395. Նախ՝ թէ կամի՞ *զհրաժարիլն*. և երկրորդ՝ թէ զիտէ՞ զվերանալն: - 445. Ո՞ր քան առաւել մերս անկրթութեան մտօք և իրօք պարտ էր *հրաժարիլ* և ի բաց փախչիլ որպէս խռիւ ի հրոյ և զաչացու ի լուսոյ: - 456. Երրորդ ձեռագիր քրիստոնէիցս առ աւազանաւն. որ *հրաժարիմք* ի սատանայէ՛ և դաւանիմք զքրիստոս: - 482. ...այսինքն զի կամ ցանկանայ ոչ ցանկացեալ, կամ *հրաժարի* յոչ հրաժարելեաց: - 560-561. Իսկ երկրորդ անկարգութիւն կամաց է՛ որ *հրաժարի* յոչ հրաժարելեաց: - 561. Զի կամ *հրաժարէ՛* և թիւրի բանականաւ. ըստ այսմ է՛ նախանձ: - 561. Աղքատութիւն հոգւոյ է՛ *հրաժարիլն* յաշխարհէ. այսինքն ի սիրոյ մարմնական հեշտութեանց և ի փարթամութեանց և ի պատուոյ. քանզի զերիսս զայս պարունակէ սէր

աշխարհիս: - 583. Այլ կնքահայր ո՛չ է պարտ առնել զայլազգին. զի ո՛չ ունի զհաւատն սուրբ, և ո՛չ է *hրաժարեալ* ի սատանայէ. վասն որոյ ո՛չ կարէ լեզու լինիլ տղային կամ երաշխաւոր. - 591. Որոց գործն ա՛յն է, երդմնեցուցանել զդիւահարն՝ և զերեխայն՝ *hրաժարիլ* ի սատանայէ: - 606. Նա՛խ՝ երեխայքն ուխտեցին *hրաժարիլ* ի սատանայէ՛. և ի մեծի զատկին մկրտելովն իէլ. և ապա ուխտ ապաշխարութեան պահոցն. և յարութեանն տեսանել զքրիստոս. աստ և անդ: - 629

**ՀՐԱԺԱՐԵՑՈՒՑԱՆԵՄ +** Արդ ահա ա՛յսոքիկ են ծառ կենաց ի յերկինս և յերկրի տնկեալ. փոխանակ ծառոյն կենաց ի դրախտին եդեմայ. յորմէ *hրաժարեցոյց* և պարսպեաց բոցեղէն սրովն զճանապարհ նորին: - 771

**ՀՐԱԽԱՌՆ +** Եօթներորդ՝ կարկուտն *hրախառն*. զի **բ** հակառակն միաբանեալ ջուր և հուր ի կորուստ ամբարշտացն և ո՛չ ապականէին զմիմեանս: - 334. Այլ և ամենայն տարերք խռովեցին. մրրիկ ծմերան և ցրտոյ՝ *hրախառն* յամենայն ուրէք սաստկացեալ...: - 735. Ո՛չ նոյնն մարմնապէս, այլ նմանն հոգէպէս. ծարաւումն, խաւարն, *hրախառն* կարկուտն, ժահահոտն, և այլն ըստ կարգի: -751

**ՀՐԱՀԱԼԵԼԻ +** Եւ զի գանձարա՛ն է *hրահալելեաց*: - 211

**ՀՐԱՀԱԼՈՑ +** Եւ փրկիչն միա՛յն էջ ի դժոխս, և ազատեաց զամենայն հոգիսն ի *hրահալոց* տանջանացն սատանայի: - 329. Եւ յորում ժամու եղ մովսէս յեգիպտոսէ և եհան զժողովուրդն, ի նոյն ժամն յարեաւ քրիստոս ի մեռելոց և եհան ազատեաց զհոգիսն ի *hրահալոց* չարութենէ դժոխոցն և ի բռնութեանց իմանալի փարաւոնին: - 512

**ՀՐԱՀԱՆԳ +** Կամ ի *hրահանգից* խրատողաց: - 251. Ոչ ունիմք վեհագոյն քան զհաւատն. տիպ աստուծոյ ճշմարտի դրոշմեալ ի մեզ ի բնէ. մեր *hրահանգ* և զարդ: - 769

**ՀՐԱՁԵԻ +** Դարձեալ՝ զի հայր մարմնով ո՛չ երևեցաւ որպէս բանն մարմնացեալ. կամ որպէս հոգին սուրբ աղաւնակերպ և *hրաձև*: - 525

**ՀՐԱՄԱՅԱԿԱՆ +** Իսկ թէ արիւնն ելցէ՝ և շունչն և կենդանութիւնն ընդ նմա, ա՛յն է *hրամայական* մահ: - 366. Հինգերորդ՝ բանն որ ասաց սաւուղայ, կամ *hրամայական* էր, կամ մարգարէութիւն: - 430. Թէ *hրամայական* էր և վճիռ եհատ, ապա աստուած էր և ո՛չ մարգարէ. սուտ ասաց զգոլն սամուէլ: - 430

**ՀՐԱՄԱՅԵՄ +** Ջորօրինակ **բ** թշնամիք ոմանք ի յարկս թագաւորին ո՛չ իշխեն վնասել իրերաց, մինչև թագաւորն *hրամայեսցէ*: - 12. Զլաւագոյն կայս զոր աստուած տուեալ էր նմա՝ կամեցաւ ակամայ յաստուծոյ ի՛ւր շորթել. և այլոցն բռնաբար տիրապետել և *hրամայել*: - 149. Զի՞նչ է զոր տէրն *hրամայէ* աղօթել՝ «մի՛ տար զմեզ ի փորձութիւն». և առաքեալն յակոբոս՝ ուրախ լինիլ ասէ՝ «յորժամ ի պէս պէս փորձութեան մէջ անկանիցիք»: - 160. Դարձեալ այսպէս մեկնեն եթէ՝ փորձութիւնն ըստ ինքեան ո՛չ է բարի. այլ պատահմամբ լինի բարի. յորժամ համբերութիւնն մերձ դնի և յաղթիցէ. իսկ յորժամ համբերութիւն ոչ լիցի, ըստ ինքեան չար և վատ է փորձութիւնն. վասն այն տէրն արգելուլ *hրամայէ* : - 160. Երրորդ՝ զի *hրամայէ՛* տէրն, «յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք». որով անդորրութիւն պարգևի ծեզ: - 161. Զայս և տէրն աղիւ օրինակեաց. յորժամ անհամի՝ ո՛չ ինչ է պիտանի *hրամայէ*: - 166. **Այլ տեսցուք զայս և յօրինակս ճշմարտութեան. զի ադամ յետ միոյ յանցանացն ո՛չ մատոյց պատարագ զամենայն աւուրս կենաց իւրոց. այլ որդւո՛ցն *hրամայէր* մատուցանել**: - 167. **Դարձեալ և ի յառակս անառակին որ դարձաւ առ հայրն՝ և ողջմամբ ընկալաւ և զգեցոյց զնա և զարդարեաց մատանի ի ձեռս՝ և կօշիկ յոտս. այլ ո՛չ ետ թոյլ նմա պատարագել. այլ *hրամայէ՛* այլոցն**...: - 167. Այլ և մովսէս *hրամայեաց* յամենայն ամսամուտս տօնել և փող հարկանել...: - 200. Հինգերորդ՝ որ փոխիլ *hրամայի*: - 210. Երկիր որ փոխիլ *hրամայի*, է՛ յանցանք դատապարտելի: - 210. Երրորդ՝ զի ադամայ ետ աստուած զբնական իմաստութիւնն առ ի ցուցանել զլաւագոյն ծնունդս բանին՝ *hրամայէ՛* անունս դնել: - 219. Չորրորդ՝ զի ցուցցէ անձնիշխան գոլ զմարդն, վասն որոյ *hրամայէ՛* նմա զի զոր ինչ և կամեսցի՝ անուն դնիցէ: - 219. Մինն պարզ և զուտ բարին ներքոյ և արտաքոյ. որպէս առաքինութիւն. և հոգևոր գործն. յայսպիսիքս *hրամայէ՛* մեզ մերձենալ: - 224. Հնգետասաներորդ՝ այլ և ողորմած և գթա՛ծ է տէր. և մեզ *hրամայէ՛* «եղերուք գթածք, որպէս և հայրն ձեր երկնաւոր գթած է»: - 272. Դարձեալ՝ ի սուրբ գիրս է՛ ուրեք որ զբարերարելն աստուծոյ նշանակէ՞ *hրամայել* ասէ: - 277. Զկենդանին *hրամայէ* զենուլ. և զարիւնն և զշունչն հանել և ապա՛ ուտել: - 295. Տասներորդ՝ արիւն ուտել գազանա՛ց է հմակերաց. զի մի՛ լիցուք անողորմ և գազանասիրտ՝ *hրամայէ՛* զարիւնն հանել և զանզգայ մարմինն եփել և ուտել: - 295. Իսկ զի *hրամայէ՛* երից աւուրց ճանապարհ տանել, զի մի՛ ապշեալ ինչ կարծեսցի: - 304. Եւ տէրն մեր **լ** ամեայ մկրտեցաւ. զորմէ *hրամայեաց* հայր՝ դմա՛ լուարուք ամենայքն: - 313. Այն է զոր *hրամայէ՛* տէր՝ «ես եմ որթ և դուք ուռ». այսինքն որթ և հիմն հաւատոյս մեր է՛ քրիստոս: - 317. Երրորդ, օրինակաւ կօշկին՝ զկինն *hրամայէր* մերկանալ յինքենէ: - 331. Վասն է՞ր *hրամայեաց* խաբել

և կողոպտել զեգիպտացիսն: - 336. Վասն է՞ր *հրամայեաց* ի զանազան նիւթոց հրաշալի խորան շինել և այլն: - 342. Նա՛խ՝ *հրամայեաց* աստուած գրել զլինելութիւն աշխարհի. և ձևացոյց ի միտսն մովսէսի. զի մի՛ մոռասցին հանգամանքն. վասն որոյ զգալի խորան *հրամայէ* կազմել: - 342. Երրորդ՝ կամեցաւ զմարդն ի պատկեր իւր՝ երկրորդ ստեղծմանն աշխարհի գործակից և մասնակից լինիլ. վասն որոյ *հրամայեաց* ի նոցանէ առնուլ զնիւթ կազմելոյն: - 342. Չորրորդ՝ ինքն անկարօտ գոլով ստեղծեաց զարարածս. և բարձեալ կրէ՛ զամենայն բանիւ. և նոյն ինքն *հրամայէ՛* խորան կազմել: - 342. Վասն է՞ր այնպէս զարդարուն զգեստ *հրամայեաց*: - 347. Է՛ և երրորդ պատճառ. զխոզն ուտէին յեգիպտոս, և զարջառ և զոչխար պաշտէին. վասն որոյ *հրամայեաց* զաստուածս նոցա զենուլ զի չեն աստուածք. և ի խոզենւոյն հրաժարիլ ամենևին: - 355. Եւ այսոքիկ մասնաւոր նուէրք բովանդակք զոր *հրամայեաց* մովսէս: - 359. Փորոտին զծածուկ խորհուրդն. զոր լուանալ *հրամայէ՛* ջրով. այսինքն խոհականաւն զգարշելի մտածմունս սրբել: - 360. Զնոյն և ի նորս տէրն *հրամայէ*, «արժա՛ն է մշակն կերակրոյ իւրոյ»: - 363. Դարձեալ՝ զոր ինչ յեգիպտոս աստուած պաշտէին՝ սուրբ *հրամայեաց*. որպէս զանասունս: - 364. Ի ներքուստ՝ սիրտն և երիկամունքն և լերդաբոյթն ընդ ճարպին ճենճերեալ ի հոտ անուշից. որպէս *հրամայեաց* մովսէս: - 367. Զի՞նչ է որ զարիւն անասնոյ *հրամայէ՛* ծածկել և ո՛չ ուտել: - 371. Իսկ զարիւնն ծածկել *հրամայէր*...: - 371. Վասն է՞ր այնչափ շաբաթս *հրամայէ՛* պահել: - 371. Իսկ ի նորս՝ զկէս ընչիցն *հրամայեցաւ* տալ աղքատաց յաւտրնին. որ է՛ հաւասար հոգւոյն և մարմնոյն: - 372. Զի՞նչ է որ *հրամայէ՛* զարծաթ ի վարձու ո՛չ տալ: - 375. Վասն է՞ր աստուած *հրամայեաց* թլել զորդիս աբրահամու: - 377. Իսկ զսառայածինսն *հրամայէ՛* թուել որպէս զաստեղս: - 377. Երկրորդ՝ զի զգին ծերոյն պակաս *հրամայեաց*. զի **ե** ամեայ տղայոյ երկդրամեան էր. և ի ամենին ի երկդրամեան. և անտի մինչև ի **կ** ամն **ծ** երկդրամեան. և ի **կ** էն յառաջ **ժե** երկդրամեան: - 377. Երկրորդ՝ զի գործունեայք և հաւանօղքն այնպիսեացն պատժեցին. որպէս ի յերկրորդ օրէնքն *հրամայէ՛* սպանանել այնպիսիսն. իսկ հաստատունքն ի հաւատս՝ վարձս առցեն ի հաւատոց իւրեանց: - 388-389. Իսկ ուխտաւորին օրէնք զայն *հրամայեաց* աստուած: - 389. Վեց քաղաքաց *հրամայեաց* որոշել ապաստանի և տալ քահանայից. **գ** յերկիրն քանանու և **գ** յայնկոյս յորդանանու: - 392. Զի՞նչ է որ ընդ ղովտայ որդիսն և եսաւայ ո՛չ *հրամայեաց* կռուիլ. այլ ընդ ամուր հարցւոցն: - 393. Իսկ մեզ նորոյս *հրամայէ՛* զբանեղէնն մատուցանել որ է՛ հոգի և մարմին և կամք...: - 396. Իսկ նորս ո՛չ այսպէս. այլ *հրամայէ՛* քրիստոս թէ՝ «զոր աստուած զուգեաց և միացոյց՝ մարդ մի՛ մեկնեսցէ»: - 401. **Վասն է՞ր *հրամայեաց* գրել զօրէնս ի յանցս յորդանանու**: - 402. Ասա՛ թէ՝ քահանայիցն *հրամայեաց* ի բաց կալ յամուսնութենէ յորժամ մտանէին ի տաճարն և ի խորանն. և յորժամ լսէին զօրէնս աստուծոյ **գ**օրեայ սրբեցան: - 404. Եւ մարդն անկեալ ի հրեշտակաց աճմանէն, *հրամայեաց* նոցա զանասնոց աճումն: - 404. Եւ *հրամայեաց* սպանանել զյովաբ և զսիմէի: - 413. Քսաներորդ, Ո՛չ *հրամայեցաւ* դաւթի շինել զտաճարն. ի Յազարս գտի այր մի. և ի կանանց ո՛չ մի: - 413. Իսկ յետ մահուանն մովսէսի վերացաւ ամպն. և *հրամայեցաւ* ժողովրդեանն հեռու կալ կանգունս երկուց հազարաց վասն փառաց տապանակին և վասն զօրութեան նորա: - 415. Եւ տէր մեր առաքելոցն իւրոց «ետու ձեզ իշխանութիւն կոխել զօձս և զկարիճս» *հրամայէր*: - 419. Նա՛խ՝ զի պա՛րտ էր ուսով բառնալ զտապանակն որպէս *հրամայեաց* աստուած. և նոքա սայլիւ բերէին որպէս այլազգիքն: - 431. Վասն է՞ր *հրամայեաց* թուել և մահ ածել ժողովրդեանն: - 434. Նա՛խ՝ թուել *հրամայեաց*, որպէս այն որ թոյլ ետ իսրայէլի մարտնչիլ ընդ բենիամենի, և անկան **լռ** ի դասուց նոցա: - 434. Վասն է՞ր *հրամայեաց* սպանանել զյովաբ և զսիմէի զի երդուեալ էր նմա: - 439. Այլ որ *հրամայեցաւ* սիմէի ոչ ելանել յերուսաղէմէ. և յորժամ ել մեռաւ: - 439. Վասն է՞ր *հրամայեցաւ* դաւթի ո՛չ շինել զտաճարն: - 439. Եւ որպէս զմարմնաւոր թլփատութիւնն աւանդեաց աբրահամու, նոյնպէս զհոգևորն որ է՛ թլփատութիւն սրտի՝ *հրամայեաց* ի ձեռն մովսէսի...: - 486. Զոր օրինակ՝ զմահապարտ ոմն թագաւորն *հրամայէ՛* դահճին ի բանտ դնել. դարձեալ զնոյն թագաւորն աղերսեն և նա *հրամայէ՛* արձակել ի բանտէն: - 492. Դարձեալ ասեմք թէ յանապատին *հրամայեցաւ* զսպել ի սրբութիւն մանանային որ օրինա՛կ էր ճշմարիտ մանանային մարմնոյն սրբութեան: - 502. Նա՛խ՝ զի յետ յարութեանն ո՛չ էր պահք. այլ զատիկ մինչ փեսայն ընդ նոսա էր որպէս ինքն *հրամայեաց*: - 511. Այս է, զի յորժամ ի մէջ գիշերին *հրամայեաց* հրեշտակն գնալ և պատմել աշակերտացն, ա՛յլ կանայքն որ ընդ նմայն էին՝ գնացին...: - 515. Եօթներորդ, կամ թէ եգիտ ի նա երկեւան ինչ թերութեան վասն յարութեանն. իբր զի ասէ յայսմ գիշերի մերձեցայք յոտս իմ և ո՛չ հաւատացեր. վասն այն կրկին անգամ ո՛չ *հրամայէ* մերձենալ: - 517. Եւ որպէս եղիա որ կապեաց զերկինս և փախեաւ ի սիդոն. նոյն նմա *հրամայեաց* աստուած բանալ զերկինս. նմանապէս և այս: - 542. Զի կա՛մքն *հրամայէ* զգործ հաւատոյն. զի ո՛չ ոք հաւատայ, եթէ ոչ կամեցօղն: - 572. Վասն այս *հրամայեաց* քրիստոս «եղերուք խորագէտք իբրև զօձս և միամիտք որպէս զաղաւնիս»: - 579. որպէս և գրեալ է ի գիրս նիկիական կանոնացն եթէ զծառայս ի

ժառանգութիւն եկեղեցւոյ կարգել ո՛չ *հրամայեմք*...: - 589. ...բայց թէ ազատեալ լիցի տն կամօք. որպէս նեսիոնոնս այն. իսկ թէ զայր որ ընդ ծառայութեամբ է՝ ո՛չ *հրամայեցին* հայրապետքն սուրբք գալ ի յաստիճան եկեղեցւոյ...: - 589. Երկրորդ՝ զի *հրամայեաց* եզական բանիւ «ա՛յս է մարմին իմ. և ա՛յս է արիւն իմ». որ զմին հացն նշանակէ՛: - 597. Իսկ աստ զմինն *հրամայեաց* ասելով «զայս արարէք իմոյ յիշատակի». և ո՛չ թէ զնոսա: - 597. Դարձեալ՝ ընդէ՞ր ինքն տէրն *հրամայէ*...: - 600. Ա՛րդ՝ զբարի գործս ամենայնցն *հրամայէ* կերակրել և գործել...: - 600. ...իսկ զկուսութիւն և զմարտիրոսութիւն նազելեացն *հրամայէ*. - 600. Իսկ **զ**երորդ՝ սարկաւագն ի վերայ ամենեցուն առ հասարակ *հրամայէ՛* ...: - 608. Զի եկեղեցին ժողովո՛յ է անուն. որպէս *հրամայեաց* աստուած մովսէսի՝..: - 613. Արդ որպէս ի սրտէն յառաջ գայ հեշտութիւն մեղաց, շնութիւն՝ ագահութիւն՝ և այլն. որպէս աւետարանն *հրամայէ*: - 619. ...որպէս *հրամայէ* տէր՝ «երանի սգաւորաց զի նոքա մխիթարեսցին» և այլն: - 619. Վասն է՞ր ի սկիզբն ժամուն ասեմք «Օրհնեա այս անուն» և ո՛չ թէ *հրամայեա՛* կամ աղօթեա՛: - 624. Իսկ սաղմոսն՝ մանկացելոցն մկրտութեամբ *հրամայէ* որդիացելոցն օրհնել զհայրն երկնաւոր. որում փառք յաւիտեանս ամէն: - 629. Մեղաց պատարագին խունկ և իւղ չէր *հրամայեալ* օրէնքն. զի տրտում և ժահահո՛տ է: - 630. ...այն է, որ *հրամայեաց* աստուած ահարօնի զգենուլ զպճղնաւորն և զվակասն և զխոյրն և զայլն, և ելանել առ ժողովուրդն: - 636. ...և պապ նոցա *հրամայեաց* զերկու օրն ուտել: - 651. Իններորդ, շաբաթուց շաբաթն զոր *հրամայեաց* պահել: - 653. Նախ այն է՝ որ *հրամայէր* մովսէս պղծոցն լուանալ զմարմինն և ողողել զհանդերձն և արտաքոյ կալ մինչև յերեկոյ: - 653. ...այսինքն է որ ի վեր քան *զհրամայեալ* օրէնսն կատարեցին զգործս. որպէս առաքեալքն, մարգարէքն, մարտիրոսքն, կուսանքն, և այլքն: - 687. Որոյ ընդ դէմ է աւետարանն որ առ սադուկեցիսն *հրամայէ* տէր...: - 710. Նախ ձայն փողոյ է՛ հրամանն քրիստոսի որ *հրամայէ՛* զյարութիւնն: - 713. Յօրէնքն *հրամայեցաւ* **բ** և **գ** վկայք սպաննելոյն և ամենայն բանի: - 742. Իսկ Երրորդն արքայութիւն, գուշակի յաւազանն պղնձի. զոր *հրամայեաց* մովսէս առնել ի հայելեացն կանանց որ նստէին առաջի դրան խորանին. յորում լւանային որդիքն ահարօնի նախ քան զմտանելն ի սուրբն սրբոց: - 756. Այսօր վերստին *հրամայեաց* հաւատացելոց իւրոց ճաշակել ի պտղոյն կենաց. և մնալ յաւիտեան և անմահ կենդանութեամբ ի քրիստոս յիսուս ի տէր մեր: - 771

**ՀՐԱՄԱՆ +** Նոքա որք զբախտ և զճակատագիր և *զհրամանն* համբաւեն, ո՛չ ինչ ասեն ի կամաց մեր գործիլ. այլ զամենայն ի հարկէ՛ ասեն. զի զեղխաբար զկենցաղս վճարեսցեն: - 7. Ա՛յս է նոցա զրախօսութեանն կարգ, որք *զհրամանն* համբաւեն: - 8. Եւ զի ո՛չ շիջանին *հրամանաւ* արարչին. ի միջի գոլով երկուց ներհակացն օդեղէնն երկին. որպէս ստորին տարերքս հուր և ջուր միջնորդ օդիւն կապակցեալ: - 188. Արեգի. որպէս թէ յառնեն բոյսք և բանջարք աստուածային *հրամանաւն*: - 201. Երրորդ՝ կոչին ծերք. զի ծե՛րք են և ի սկզբանէ՛ եղեալք յարարչադիր *հրամանէն*, թէ՝ «բղխեսցէ երկիր ծառ պտղաբեր» և այլն: - 214. Նախ՝ ի նոյն իսկ աստուածային *հրամանացն* որ ասէ՝ «իշխեսցէ ձկանց ծովու, և գազանաց, և սողնոց»...: - 220. Նա՛խ՝ զի ասէ աստուածային *հրամանն* «աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր»...: - 225. Նիւթ մարմնական. և ազդումն արարչադիր *հրամանին* որ ասաց՝ «աճեցէք և բազմացարուք»...: - 254. Ա՛րդ՝ ի նիւթոյն լինի կազմած մարմնոյն. և յազդու *հրամանէն* գոյացութիւն հոգւոյն: - 254. Զի կազմողական զօրութիւնն որ է՛ ի նիւթն՝ ազդումն առեալ յարարչադիր *հրամանէն*, նախ կազմէ՛ և պատրաստէ՛ զնիւթն առ ի յընդունելոյ զտնկականն. և ապա զզգայականն. յետ որոյ զբանականն ի ծագմանէն աստուծոյ: - 254. Նախ տնկականն. և ապա զգայականն. և ուր սոքա երևին ի *հրամանէն* աստուծոյ, երևի և անդ բանականն: - 255. Նիւթ մարմնոյն է ի ծնողացն. այլ հոգին ո՛չ է ի ծնոցաղն. այլ ի *հրամանէն* աստուծոյ գոյանայ և երևի: - 257. Եւ ոչ նոր, զի մի և նոյն ի սկզբանէ *հրամանն* արարչադիր առանց տկարութեան ներգործէ մինչ ի կատարած. և ըստ իւրաքանչիւր հոգւոյ՝ նոր *հրաման* ստեղծանելոյ ո՛չ արժակի: - 257. Եւ թէ այդպէս է, ուրեմն ի *հրամանն* աստուծոյ ո՛չ է նոր. այլ ի գոյացութիւն իւր նո՛ր է: - 258. Նմանապէս և արուեստաւորն աստուած նախանկար տեսութեամբն ունի ի միտս իւր նախքան զլինիլն մարդոյն՝ զորպիսիութիւնն. զորքանութիւնն. և զայլն. իսկ արուեստն որ է արարչադիր *հրամանն*, ազդէ՛ ի նիւթն. և զի անկատա՛ր է նիւթն, անկատար տայ և նմա հոգի զտնկականն: - 258. Վասն որոյ յայսմ հասակի տիոց *հրաման* է յեկեղեցւոյ պսակ դնել այսպիսի մանկանց: - 265. Որո՞վ զանազնին օրէնքն և պատուիրանք և *հրամանք*: - 277. Նա՛խ՝ զի *հրամանքն* է ստեղծողի առ ստեղծուածս: - 277. Դարձեալ՝ օրէնքն և *հրամանն* հա՛րկ է ի վերայ: - 277. Եւ նախնին կրօնաւորաց մեծն անտօն. և այլք բազումք ըստ տեառն *հրամանի*, թէ «որ արասցէ և ուսուսցէ, նա մեծ կոչեսցի»...: - 288. Կամ որպէս ասեն թէ՝ ներսէս անուն արուեստաւոր տապանին՝ շինեաց իւր տուն ի վերոյ կողմանէ. և զի ո՛չ էր *հրամանաւն* աստուծոյ՝ սատակեցաւ նա՛ անդ, և զնորա զէշն ուտէր ագռաւն: - 294. Եւ տէրն վերջին ի լրումն օրինին ի նոյն քանիսն

եղեալ *հրամանին*. զի ո՛չ ելոյծ զօրէնսն, այլ էլից: - 305. Երկրորդ՝ և արդարք առնեն ընդ դէմ սմին ի յամօթ չարին. որ հնարեցաւ ի ձեռն մեղացն՝ մահւամբ բառնալ զմարդկութիւնս. այլ *հրամանաւն* արարչին ծննդեամբք տնէ՛ և յերկարէ՛ բնութիւնս: - 321. Նա՛խ՝ զի *հրամանաւն* աստուծոյ էր. որպէս պոռնկութիւնն ովսէի և սպանութիւնն փենեհէսի ո՛չ էր մեղք: - 337. Իսկ յամենայն օր հալէր *հրամանաւն* աստուծոյ, զի դադարեսցեն ի հաւաքելոյ. և ապա զի դարձեալ խնդրեսցեն առաւօտել առ աստուած: - 339. Չորրորդ՝ **ե** *հրամա՛նք* **է**. և **ե** արգելո՛ւմն: - 340. Նա՛խ՝ զի *հրամանաւն* աստուծոյ է՛: - 363. Իսկ մովսէս *հրամանաւն* աստուծոյ արար պղնձի օձ. և բարձրացոյց ի դուռն խորանին. և որ հայէր ի նա՝ ապրէր ի թունից օձիցն: - 386. Նա՛խ՝ զաւակաց որք ընդ *հրամանաւ* են ծնողաց: - 389. Երկրորդ՝ կանանց ի *հրամանս* արանց: - 389. Երրորդ՝ ծառայք և վարձկանք *հրամանաւ* տէրանց: - 389. Վասն որոյ պա՛րտ է ընդ *հրամանաւն* կալ նոցա՝ յորմէ և առ որ զկապակցութիւն ունիմք եօթանցն ասացեալ: - 389. Եւ որպէս կնոջ ընդ *հրամանս* առնն իւրոյ յանցանել պոռնկութենէ, նոյնպէս և զաւակաց, և ծառայից, և աշակերտաց, և հնազանդելոց, և ժողովրդոց. նոյնպէս և հոգիս մեր ելեալ ի *հրամանացն* աստուծոյ՝ պոռնկութիւն է նմա. եթէ ըստ գործոց. եթէ ըստ հաւատոց: - 389. Եւ որպէս ովսէէ ո՛չ է պոռնիկ՝ և ո՛չ սամուէլ մարդասպան զի *հրամանաւ* աստուծոյ էր: - 389. Նոյնպէս և ամենայն ոք *հրամանաւ* առաջնորդին թէ պահեսցէ զուխտն բարի է. և թէ զանցուսցէ ո՛չ դատապարտի: - 389. Եւ ի յանապատն միս ուտելոյ *հրաման* ո՛չ ունէին. որպէս և ո՛չ ի դրախտին: - 390. Իններորդ՝ մանուկն յարգանդի ո՛չ հացիւ կեայ. այլ *հրամանաւն* աստուծոյ կերակրի ընդ պորտն զինն ամիս. որպէս տնկականք, և որպէս նոյ ի տապանն. մինչ ելանէ յարգանդէ...: - 397. Վեցերորդ՝ զի ասէ ըստ *հրամանին* աստուծոյ գնալ: - 399. Եւ ինչ ոչ գոյր ի հրէիցն, բայց միայն սողոմոն. որոյ *հրամանաւն* շինեցաւ ի տիպ հեթանոսաց եկեղեցւոյ զոր շինելոց էր տէր մեր: - 440. Յօրինակ ամենայն մարդոյ. զի պա՛րտ է ստուգել զամենայն բան. և ո՛չ դիւրապատիր լինիլ և թողուլ *զհրամանն* աստուծոյ: - 443. Վեցերորդ՝ զի ցուցցէ զինքն որդի աբրահամու. առ որ *հրաման* թլփատութեանն եղև և խոստումն օրհնեալ զաւակին. և այսպէս խոստմանն աստուծոյ կատարումն քրիստոս զինքն ցուցանէր: - 485. Իններորդ, գեթէօն՝ այն որ զցօղն ետես ի վերայ գեղման, զիօր իւրոյ զեզն պարարակ *հրամանաւ* հրեշտակին ի մէջ գիշերին պատարագեալ...: - 513. Եւ ըստ յունաց թէ աստիճանն. և ըստ մեծին դիոնիսեայ. և մինչ ի **դ դ** կարգն փոքր է. *հրաման* ամուսնութեան: - 526. Եւ տե՛ս, զի սիմէի որքան յամեաց ի քաղաքն ըստ *հրամանի* սողոմոնի ո՛չ մեռաւ զերիս ամս: - 540. Այլ *հրամանաւ* մեծի թագաւորին ուստիանեայ ժողովեցան յունաց և հռոմոց և հայոց և վրաց և աղուանից եպիսկոպոսունք. և կաթողիկոսն հայոց սահակ...: - 544. Երրորդ ժողովն է դվնայ, ի չորրորդ ամի թագաւորութեանն կոստանդեայ հռոմոց. *հրամանաւ* մեծի կաթողիկոսին հայոց ներսէսի շինողի. և այլ **է** և **ժ** եպիսկոպոսաց՝ և վարդապետաց բազմաց և իշխանաց...: - 544. Չորրորդ՝ մեծ և արժանաւոր ժողովն եղև ի մանազկերտ. ի ճիդ թուականին. *հրամանաւ* և արդեամբք գիտնաւոր և մեծ իմաստասիրին սրբոյն յոհաննու կաթողիկոսին հայոց օծնեցւոյ: - 545. ...որ եզր եղև հաւատոյ ուղղութեան. և *հրամանաւ* հերակլի հաւանեցաւ ժողովոյն քաղկեդոնի. կացեալ **զ** կաթողիկոսք նոյն աղանդովն որ են այսոքիկ. Եզր. Մովսէս. Անաստաս. Իսրայէլ. Սահակ. Եղիա: - 545. Երկրորդ՝ ի յաղուհացսն ո՛չ ունել *հրաման* պատարագ մատուցանել բաց ի շաբաթէ՛ և ի կիրակիէէ՛: - 554. Նա՛խ՝ ի տէրունեան անսուտ *հրամանացն*. թէ «որ հայի ի կին մարդ ցանկութեամբ՝ անդէն շնացաւ ի սրտի իւրում»...: - 556. Ութերորդ, զի թէ զզենումն կենդանեաց ո՛չ ունին *հրաման* զենուլ ազգ կանանց որ է՛ խտրութիւն մարմնաւոր սրբութեանց. զիա՞րդ պատշաճի տալ հրաման կանանց ազգի մերձենալ ի կարգ հոգևոր սրբութեան: - 589. Եւ ես կարգաւս քահանայութեան իշխանութեամբ և աստուածային *հրամանաւն*. թէ «զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս»: - 602. Ա՛րդ՝ ի սոցանէ մասն ինչ աղօթակա՛ն է և մասն ինչ *հրաման*. վասն զի մասն ինչ եկեղեցւոյ կանոնաց մեղանչեմք, և մասն ինչ և մասն ինչ պատուիրանացն աստուծոյ: - 602. Եւ ա՛յս է պատճառն. զի անջրելի՛ է *հրամանքն* աստուծոյ...: - 602. **Ասեն վարդապետք եթէ՝ խոստովանութիւնն է հնարք, և է՛ *հրաման*:** - 603. Սակայն ազատի ի կանոնական *հրամանաց*: - 603. Եւ ի համբառնալն կալան *հրաման* վերագոյն. առաքելով զնոսա ընդ տիեզերս: - 607. Դպիրք եղեն առաքեալքն սպասաւորելով ժողովրդեանն *հրամանաւ*. և Սարկաւագունք՝ օծանելով զհիւանդս. հրաման տալով նոցա իւղ օրհնել յիւրմէ: - 607. և գո՛րծ է նոցա, *հրամանաւ* քահանային աւետարան կարդալ, քարոզել, և բառնալ քշոց և բուրբառ. և նստիլ ամենևին ո՛չ: - 608. Իսկ զաւակն, զի ծնցի և սնուցանի ի պաշտօնն աստուծոյ. զի վասն ծննդեան զաւակին է *հրաման* պսակին: - 610. ...և ո՛չ է աստուածային *հրաման*, այլ առաքելական ներումն ի դեղ անժուժկալութեան. զի մի՛ ի պոռնկութեան անդունդս կործանեսցին: - 613. Եւ դարձեալ գործս այս լրումն է աստուածային *հրամանին* որ ասէ «աճեցէք և բազմացարուք»: - 613. Այլ և պետրոս անտիոքայ և տիմօթէոս աղէքսանդրու *հրամանաւ* յուստիանոսի կայսեր՝ հաստատեցին ի սուրբ աստուածն խաչեցար

ասել: - 631. ...և ապա՛ *հրամանաւ* եպիսկոպոսին պաշտեսցէ զքահանայութիւնն: - 652. Յայսմանէ է առեալ *հրաման* վասն բարեկենդանի: - 657. Իսկ խոսրով թարգմանիչ եբեր ի հայս. որ գնացեալ էր յերուսաղէմ *հրամանաւ* սրբոյն սահակայ: - 658. ...յորժամ այս ամենայն հաստատեալ նորոգեցաւ *հրամանաւ* սրբոյն սահակայ պարթևի ի փառս քրիստոսի. ձեռամբ իմով մովսիսի գրչի սահակայ: - 659. Իսկ զսըքեմայ կարգն՝ սուրբն դիոդորոս եպիսկոպոս պամփիւլացոց քաղաքի. յառաջին ամի իւրոյ. *հրամանաւ* մեծին անտօնի և **բ** թեբայեցոցն. և **բ** սկիւթացւոց լերինն: - 659. Եւ յետ այնորիկ յիշեմք զպատիժ *հրամանացն* աստուծոյ որ կատարեցաւ ի վերայ նորա...: - 676. Եւ մինչդեռ ասասցեն զայս, յանկարծակի եկեսցէ ի վերայ նոցա սատակումն որպէս յաւուրսն նոյի ըստ *հրամանի* փրկչին: - 709. Նախ ձայն փողոյ է՛ *հրամանն* քրիստոսի որ հրամայէ՛ զյարութիւնն: - 713. Չորրորդ՝ կամ տանջօղն դադարի. իսկ անդ *հրամանն* աստուծոյ է տանջօղ որ ո՛չ երբէք դադարի: - 750. Զոր ընկալեալ զսերմն *հրամանաց* աստուծոյ, և բուսուցեալ ի մեզ՝ տամք պտուղ **լ, կ, և ճ:** - 757. Վեցերորդ, այլ և բարեպաշտ թագաւորք՝ և իշխանք՝ և իշխեցեալք՝ ունին զայս կարգ. թէ օրինօք կենցաղավարին ըստ *հրամանացն* աստուծոյ: - 757. Միանգամայն և իղձք փրկական և *հրաման* հարկի ժամանեալ էհաս առ ներգևեալս ոգի և թաւազարթ թզենի: - 773

***ՀՐԱՄԱՆ ՏԱԼ +*** Երկրորդ և թէպէտ իցեն տարրականք և ներհակ որակք՝ յիմիասին դիպիլն՝ ո՛չ միշտ հակակային իրերաց. այլ եթէ կամք խնամողին *հրաման տացէ* : - 12. ...երկի՛ր *ետ հրաման* աճելոյ և ոչ ի դրախտին: - 225. Եւ խնդրեցին զտապանն և զնա ոչ գտին. զի ո՛չ է *հրաման տալ* որ մարդն զարգանդ մօր իւրոյ տեսցէ: - 296. Ասեմք եթէ՝ ո՛չ ասաց զայս *հրաման տալով*. այլ պատմողաբար: - 496. Չորրորդ՝ *հրաման տալ* աւագ սարկաւագաց կին առնուլ և քահանայ լինիլ: - 553. Եւ յառնուլ զաստիճան սարկաւագութեան ո՛չ *տան հրաման* կին առնուլ հայք և լատինք և յոյնք. բայց ասորիք ո՛չ: - 554. Ութերորդ, զի թէ զզենումն կենդանեաց ո՛չ ունին հրաման զենուլ ազգ կանանց որ է՛ խտրութիւն մարմնաւոր սրբութեանց. զիա՞րդ պատշաճի *տալ հրաման* կանանց ազգի մերձենալ ի կարգ հոգևոր սրբութեան: - 589. ...քանի՞ ևս առաւել հերձուած մեծ է կանանց. որոյ ասաց աստուած թէ «առ այր քո դարձ քո և նա տիրեսցէ քեզ» *հրաման տալ* զգործ քահանայի առնել որ ազատա՛ց է և ո՛չ ծառայից: - 589. ...ապա քանի՞ դատապարտութիւն է *հրաման տալ* նոցա և ի գործ քահանայութեան յանդգնիլ: - 590. Դպիրք եղեն առաքեալքն սպասաւորելով ժողովրդեանն հրամանաւ. և Սարկաւագունք՝ օծանելով զհիւանդս. *հրաման տալով* նոցա իւղ օրհնել յիւրմէ: - 607. Եւ նա՛ *հրաման տայ* ժողով առնել: - 607

***ՀՐԱՄԱՆ ԱՌՆՈՒԼ +*** Նախ՝ զի թէպէտ զջուր կամ զհող միայն յիշէ աստուած. այլ երեքն ընդ միոյն *առին հրաման*. որպէս այն որ ասէ, «Ի սկզբանէ արար աստուած զեկինս և զերկիր»...: - 214

**ՀՐԱՄԱՆԱՏԱՐ +** Ներքին՝ դասք հրեշտակացն. որ են պատգամաւորք և *հրամանատարք*: - 144

**ՀՐԱՄԱՆԱՏՈՒ +** Ամպ՝ զբարձրութիւնն նշանակէ ի վերայ այլոց. և Դարձեալ՝ ամպ զմարգարէսն. իբր *հրամանատո՛ւ* լինիլ մարգարէիցն: - 148. Եւ հաւատն է յիմացումն որպէս ի յենթակայս. և է՛ ի կամքն որպէս *հրամանատու*: - 572

**ՀՐԱՅԻՆ +** Գոյնն *հրային* լուսափայլեալ աչօք՝ առ մոլորութիւն ձկտի: - 247

**ՀՐԱՅՐԵՑՈՒԹԻՒՆ +** Տասներորդ՝ ամպն ո՛չ միայն զցօղ անձրևէ, այլ և ձիւն և կարկուտ և *հրայրեցութիւն*. որպէս ասացաւ ի վերոյ: - 206

**ՀՐԱՆԱՄ +** Իսկ թէ ոք ընդդիմանալ ասելով, որպէս *հրացեալ* սուրն կտրէ և այրէ՛, այսպէս և կրկին ներգործութիւնք են ի քրիստոս: - 85. Ասեմք եթէ՝ մի և նոյն *հրացեալ* նիւթո՛յն է կտրելն և այրելն. այսպէս մի և նոյն միաւորութեանն էր այսինքն մարդացեալ բանին բարձրագոյնքն և նըւաստականքն: - 85

**ՀՐԱՇԱԳՈՐԾ +** Եւ զխաչն *հրաշագործ*՝ զկենսատու մանանայն. և բուրվառ զխունկս աղօթից. վէմն սեղանն սուրբ. և քերովբէք քշոցքն **բ**: - 345. Այլ և գաւազանն *հրաշագործ* ի ձեռն մովսէսի: - 494

**ՀՐԱՇԱԳՈՐԾԵՄ +** Որպէս զխոյն ի ծառոյն սաբեկայ. և զլորամարգն ի ծովէն. և զսատերն ի բերանոյ ձկանն *հրաշագործեաց*: - 326. Եւ տէր մեր էա՛ռ զնոյն և սրբեաց և նովաւ զամենայն *հրաշագործեաց*: - 423

**ՀՐԱՇԱԼԻ +** Վասն է՞ր հրամայեաց ի զանազան նիւթոց *հրաշալի* խորան շինել և այլն: - 342. Եւ վկայքն հաստատեցին մեծ գոլ և ծածուկ՝ *հրաշալի* խորհուրդ միածնին փրկագործութեան երևումն առ մարդիկք: - 456. Յորում զորոգինէի գրեալսն խոստեցին. և զսուրբն եւագրիոս միայնակեաց՝ և *զհրաշալի* այրն աստուծոյ զդիդիմոս՝ նզովեցին: - 543

**ՀՐԱՇԱԿԵՐՏԵՄ +** Սքանչելիք *հրաշակերտեցին*: - 456

**ՀՐԱՇԱՓԱՌԱՊԷՍ +** Իսկ հրեշտակական կենաց է *հրաշափառապէս* գիտել և ո՛չ մոռանալ միշտ...: - 774

**ՀՐԱՇՈՒՆՉ +** Վասն է՞ր տկար զեռնօք տանջեաց զեգիպտոս, և ո՛չ առիւծ կամ արջ կամ այլ ինչ *հրաշունչ* կենդանեօք: - 333

**ՀՐԱՇՔ +** Այսպէս և մարգարէիւք՝ և վարդապետօք՝ և *հրաշիւք*՝ և զանազան պատճառօք: - 127. Հինգերորդ՝ այն *հրաշք* միայն խաբէութիւն տեսութեան է: - 133. Իսկ այս *հրաշք* տեսութեանն և իմացմանն է: - 133. Չէ՛ զարմանք *հրաշիցն* աստուծոյ. որպէս ամենայն ըռնգունք զհոտն զգան, և աչք զգոյնն կրէ յինքն, և անծորելի և անպակա՛ս են յենթակայէն: - 224. Հինգերորդ՝ զի մտօք յաստուածային խոկումն էին վերացեալ, և զգայարանօք ընդ գործս *հրաշիցն*. և ոչ էին պարապեալ քննութեան անձին. զի «աչք իմաստնոյն ի գլուխ իւր»: - 278. Գէտքն ո՞րպէս առնեն *հրաշք*: - 335. Եւ թոյլ տայ աստուած դիւաց և կախարդացն *հրաշից*: - 336. Եւ տէր մեր մահուամբ առաւել կորոյս զքշնամին, որ քան ի կեանս գործով *հրաշից*: - 424. Ապա ուրեմն աստուած է ծնեալն այսպիսի *հրաշիւք*: - 466. Վասն է՞ր եղեն այս *հրաշք*: - 490. Առաջին՝ դարձն *հրաշիւք*: - 555

**ՀՐԱՊԱՐԱԿ +** և շրջեսցին զնովաւ կոծօղք և լալականք *հրապարակին*...: - 669. Որ և յետ այնորիկ սպանցին ի նեռնէն յէմ. և անկեալ լիցին մարմինք նոցա ի *հրապարակս* զերիս տիւս և զերիս գիշերս: - 709

**ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍ +** Ութևժ, չո՛րս են որք հզօրք են և պերճ շրջին ասէ սողոմոն. այսինքն աքաղաղ, և նոխազ, և թագաւոր *հրապարակախօս,* և առիւծ՝ որ ո՛չ դարձուցանէ թիկունս յանասնոց: - 316

**ՀՐԱՊՈՒՐԵՄ +** Ութերորդ՝ զնա օ՛ձ դարանակալ ասէ ի ճանապարհի. և սոքա առաջին օձին նմանեալ՝ *հրապուրեն* զբազումս. և արտաքսեն ի դրախտէ եկեղեցւոյ. և թոյնք իժից ի ներքոյ շրթանց ունելով և խայթոց՝ զի առորս մերձենան, ի յսկիզբն բանից կամ ի վերջն՝ մահացուցանեն զհոգիս. երկճղի ունելով լեզու նենգաւոր՝ չար և բարի, ծածուկ և յայտնի: - 35

**ՀՐԱՏ +** Եւ է երկինք՝ է գօտիքն են է մոլորակացն. որ է Զոհա՛լն. Երևա՛կն. *Հրա՛տն*. Արեգա՛կն. Լուսնթա՛գն. Փայլածո՛ւն և Լուսինն: - 183. Երրորդ՝ *Հրա՛տն*. զոր մարեխ անուանեն. ջերմ է և չոր. **խ** օր յամէ՛ ի կենդանակերպն. և ի **ժզ** ամիսն պատէ՛ զամենայն: - 189. Եօթներորդն է՛ լեղին. որ է խարտեաշ մաղձն. տա՛ք է և չոր. և տանուտէր ունի զմառեխն որ է *հրատն*: - 241

**ՀՐԱՏԵՍԱԿ +** Որ և անդ բաժանի *հրատեսակն* ի տեսանելիքն. և ծխատեսակն ի մազ գլխոյն: - 242. Այս է՝ *զհրատեսակն* յերակս աչաց. և զօդատեսակն լսելեաց. և զայլսն նմանապէս. և զմաքրագոյնն սոցա ի խելս ի զգուշութիւն զգայութեանց: - 786

**ՀՐԱՒԷՐ +** Երրորդն հրոյ սպառնալիք և սատակումն. և դարձեալ աւետեաց *հրաւէր*: - 630

**ՀՐԱՒԻՐԱԿ +** Եւ **բ** գետն ի բանն և ի հոգին սուրբ որ բղխեն ի հօրէ. զի *հրաւիրակք* են մեզ՝ յակն տանելով ուստի բղխեն սոքա: - 295. Եւ *հրաւիրակք* են անուանեալ քրիստոնեայք. որք չունին զգործս՝ նոքա փութով հանին ի բաց: - 440

**ՀՐԱՒԻՐԵՄ +** Ո՞ ոք է ընդ մէջ որդւոյ և հօր շաղկապ՝ զի *հրաւիրեսցէ* զնա յորդէգրութիւն հօր. և զի ո՛չ ոք: - 39. Քսաներորդ՝ յառաքելութիւն *հրաւիրել* միայն աստուծոյ է...: - 72. Երկրորդ՝ մովսէս քարոզէր ժողովրդեանն թէ՝ աստուած հարցն ձերոց առաքեաց զիս. և յերկրպագութիւն նմա հրաւիրէր: - 328. Եւ տէրն **բժ**ան առաքելօք զազգս քրիստոնէիցն յերկինս *հրաւիրեաց*: - 329. Երրորդ, զի կորնչելոց էին անդրանիկ ծնունդքն սատանայի. որ էր հպարտութիւնն և կռապաշտութիւն. զի խոնարհութեամբ էր գալուստն քրիստոսի և ի մի աստուածպաշտութիւն *հրաւիրեաց* և կորոյս զպաշտօնն դիւական: - 334. Նաև յանձեռագործ խորանն *հրաւիրէր* զսիրելիս իւր: - 442. ...զի մեղքն ի մահ *հրաւիրէ*, և ապականութիւնն յանգոյութիւն ճանապարհորդէ՛: - 496. Երրորդ՝ զի երիցս գոչէ փողն. նախ զհոգիսն ի յերկնից կոչէ. և ապա՛ զմարմինս ի հողոյ. և ապա՛ յարուցեալ զհոգի և զմարմին ի դատաստան *հրաւիրէ*: - 618. ...վասն որոյ յորժամ *հրաւիրէ՛* զմեզ՝ ուսուցանէ այսպէս աղօթել: - 626. Սարկաւագն քարոզօ՛ղ է մեզ և *հրաւիրօղ* յաղօթս. - 626. վասն որոյ նախ *հրաւիրէ՛* զայլս ի մեծարանս և վկայս որդւոյ իւրոյ: - 643

**ՀՐԴԵՀԵՄ +** Եւ տէր մեր *հրդեհեաց* զգործս հեթանոսաց արուեստաւոր հնարիւք իւրոցն հետևողաց: - 423

**ՀՐԵՂԷՆ +** *Հրեղէն* վիշապն. և տուտն նորա: - 102. Իններորդ՝ զի նշանակեալքն՝ վայրիք գազանք՝ *հրեղէնք*՝ և թևաւորք երևէին. ցուցանելով թէ արտաքոյ և հեռի՛ են յերևելեացս բնութեանց. և անըմբռնելք և վայրենիք: - 132. Նախ՝ զի հաւասա՛րք են բնութեամբ. անմարմինք՝ *հրեղէնք*՝ իմացական՝ և այլն: - 136. Իններորդ՝ զի ամենեքեան *հրեղէն* բնութեամբ են ի շնորհս և ի փառս անփոփոխելիք: - 137. Ութերորդ՝ քերօբէիցն. որ են վարսք *հրեղէնք*: - 144. Զի՞նչ է *հրեղէն* վիշապն. որպէս ասէ տեսիլն **լգ** գլուխն: - 151. Զսա՛ *հրեղէն* ասէ: - 151. Երրորդ՝ վասն գոյացութեան իւրոյ որ անկաւ ի *հրեղէն* դասուցն: - 151. Եւ **գ** է գոյացութիւն նոցա. անմարմին՝ անմահ՝ և *հրեղէն* գոլն...: - 151. Յերկինս են լուսաւորքն. և վասն գոյութեանց նոցա. և գնան *հրեղէնք* ընդ ջուրս: - 154. Նա՛խ՝ *հրեղէն* երկինք: - 183. Առաջինն է տարրական հրոյն վերին մասն. որ կոչի *հրեղէն* երկինք. հոմանուն առաջին երկնից: - 183. Այլ կոչի սա՛ *հրեղէն*, զի է՛ ի

հրոյ: - 183. Այլ վասն *հրեղէն* երկնիցն աստ ելանել և հաւասարիլ նմա: - 184. Եւ այս ևս գիտելի է, զի որպէս *հրեղէն* երկինն հոմանուն է, այսինքն լուսեղէնն որ ի սկզբանէ ստեղծաւ. և բոլորակ հրոյն: - 184. Զի՞նչ է որ ասէ սուրբն բարսեղ, գնան *հրեղէնք* ընդ ջուրս և ո՛չ շիջանին: - 188. *Յրեղէն* զլուսաւորսն ասէ. և ջուր զվերին կամարն ջրեղէն: - 188. Դարձեալ՝ հրեշտակք *հրեղէնք* գոլով՝ ընդ ջրեղէն կամարն գնալով ո՛չ շիջանին: - 188. Առաջին երկինքն է *հրեղէնն*: - 221. Յինգերորդ՝ Առաջին երկինքն է *հրեղէն* և լուսեղէն: - 221. յԱռաջին աւուրն՝ է արարածք եղեն. *հրեղէն* երկինքն. և չորս տարերք. և լոյս. և հրեշտակք ընդ լուսոյն: - 226. Նա՛խ՝ զի ի *հրեղէնսն* մտաբերեցին: - 302. *Յրեղէն* կառք և հեծեալք երևեցան: - 445. Երկրորդ՝ եցոյց թէ նոյնպէս ընդ քե՛զ է լինելոց զօրք *հրեղինացն* նովին հոգւովն: - 445. Այն է որ *հրեղէն* լեզուաւ սփռեաց յառաքեալսն զշնորհս հոգւոյն սրբոյ: - 488. Երկրորդ՝ զի ի կերպ հրոյ փայլէ. այսպէս և հոգին սուրբ *հրեղէն* լեզուօք: - 522. Վասն է՞ր ի յորդանան աղաւնակերպ էջ հոգին սուրբ, և ի վերնատունն *հրեղէն* լեզուաւ: - 525. Երրորդ՝ զհրեշտակս ընդ մարդիկ. և *զհրեղէն* սուրն և զքշնամութիւն եբարձ: - 585. Յրոյն՝ *հրեղինաց*: - 640. Չորրորդն *հրեղէն* լեզուօք: - 640. որպէս փախեաւ կինն որ ծնաւ զմանուկն արու ի տեսիլն. և ո՛չ կարաց *հրեղէն* վիշապն հասանիլ: - 689. Դարձեալ և այլ իմն եղանակաւ կապեաց *զհրեղէն* վիշապն: - 705. Եւ վասն *հրեղէն* վիշապին և տըտան նմին ասացաւ ի վերոյ թ գլուխն իե համարն: - 706. Նոյնպէս մարմին սրբոցն ընդ ամենայն երկինս անցանէ զօրութեամբն աստուծոյ մինչև ի *հրեղէն* երկինս. - 722. *Յրեղէն* ծով ասացեալ են ի հարաւ. վասն այն ջերմ է ասեն մասն այն: - 731. Եւ ի կատարածի՝ տարրական հուրն և *հրեղէն* ծովն և ամենայն հուրք որ են յերկրի՝ ժողովեսցին ի միասին - 731. Եւ վերջընթացն է *հրեղէն* ծովն ի հարաւ. ուր առաքէ՛ զմեղաւորս ի հուրն յաւիտենից: - 731. Վասն է՞ր ասի *հրեղէն* ծովն ի հարաւ: - 731. ...և ընդ վճռի դատաւորին իսկոյն քարշին ի տանջանս ի *հրեղէն* ծովն որ հուրն է յաւիտենից: - 731. Երկրորդ՝ անտանելի ցուրտ. յոր եթէ *հրեղէն* լեառն անկանէր՝ սառն դառնայր. վասն այս երկուցս ասի՝ լալ աչաց և կրճել ատամանց. - 752. Իններորդ՝ *հրեղէն* կապանքն. որովք իւրաքանչիւր անդամք կաշկանդին: - 752. Այլք՝ ի ներքուստ խիղճ մտացն, և արտաքուստ անքուն որդունքն *հրեղէնք*: - 753. Նոյնպէս և *հրեղէն* որդունքն ի մէնջ ծնանին: - 753. Ո՛չ լինի. զի որդունքն այնք ո՛չ են զգայական կենդանիք. այլ *հրեղէն* տանջանք են զգայական մասինն: - 753. Եւ որպէս որդս այս ո՛չ ունի զգայարանք, նոյնպէս և *հրեղէն* որդունքն: - 753. Զի այսպէս ասեն վարդապետք՝ թէ յորժամ յղանայ ոք ի միտս իւր զխորհուրդ մեղացն, ի սատանայէ՛ սերմն առեալ որպէս կին յառնէ. և ի ծնանիլ մեղացն՝ ծնանին և որդունքն ի *հրեղէն* ծովն որ է՛ ի հարաւ: - 753. Նմանապէս և հուրն որով *հրեղէն* լեզուօք երևեցաւ սրբութեան հոգին, բաժանեսցի այրեցումն և մշտափայլ լուսով փայլեսցի որպէս զարփին և որպէս զարեգակն: - 759-760. Զի անդ բոլոր մարմինն ընդ այն է՛ երկինն *հրեղէն* յորում է լոյս յաւէտ: - 763. Զի առաջնոյն ասէ՝ մարմին բարձր լուսաւորեալ ներգործութեամբ որ է՛ *հրեղէն*. այսինքն լուսաւորն երկին: - 787

**ՅՐԵՇՏԱԿ +** Նա՛խ, զի ըստ սոցա ոչինչ է զանազանութիւն մշտնջենաւորացն և փոփոխականացն. որք են երկնայինք և երկրաւորք. զի նոքա միա՛յն են ի հարկէ, որք միշտ նոյնպէս ունին. որպէս *հրեշտակք* անմահք. և լուսաւորք երկնից. և ջերմութիւն հիոյ: - 8. Մետասաներորդ՝ եթէ զբարին ոչ կամի, ապա բարի ո՛չ ոք կարէ լինիլ յեղելոցս. ո՛չ մարդ և ո՛չ *հրեշտակք*. զի կամացն աստուծոյ ո՛չ ոք հակառակի: - 14. Այլ և ո՛չ ի բնութենէ. զի բնութիւնք ամենայն *հրեշտակաց* կամ մարդկան բարի՛ են ի բարւոյն յառաջ եկեալ. այլ չարն է՛ յանձնիշխան կամաց եկամուտ ի բնութիւնս: - 16. Դարձեալ ասեմք թէ՝ աստուած ստեղծ զկամքն նաև *զհրեշտակս* և զմարդիկ բարի. և կամի զբարին և բռնադատէ՛ սիրել զբարին: - 17. Այս բարիս ի *հրեշտակս* անփոփոխ և սերտ է. իսկ ի մեզ փոփոխական է: - 23. Այսմ տեսութեանս որք արժանաւորին, նոքա երանին և անքակ միանան ի սէր նորին որպէս *հրեշտակք*: - 24. Իսկ սոքա և *զհրեշտակս* ընդ մեզ դասեն. որպէս յայտ է ի գիրս պարապմանցն Կիւրեղի: - 34. Տասներորդ՝ նեռն քարոզութեամբ պատրէ՝ և ուրական սքանչելեօք. և այլն. և սոքա քաղցրաբանութեամբ և օրհնութեամբ պատրեն զմիտս անմեղաց. և *հրեշտակ* լուսոյ կերպարանին որպէս հայրն իւրեանց սատանայ. և ամենայնն ուրական միայն և ո՛չ ճշմարտութեամբ. և բոլոր դիտումն նոցա է՛ պատրել զմարդիկ և հանել ի հաւատոց. և լնուլ զորովայնս. և զկանայս շեղջակուտեալս մեղօք յինքեանս գրաւել: - 35. Զի թէ պատասխանեմք թէ ո՛չ է հարկ թէ սկսեալն ամենայն իրօք և դադարեսցի. որպէս *հրեշտակք* և հոգիք մարդկան. զի են սկսեալք և ո՛չ դադարին. է՛ այս պատասխանի, այլ ո՛չ բաւական: - 37. Զի և յօհան դամասկացին ասէ հարկ գոլ ամենայն սկսզման ունել դադարումն. այլ զի *հրեշտակք* և հոգիք ոչ դադարին, այս կամա՛ցն աստուծոյ է պահպանութիւն, և ոչ բնութեան նոցա. զի յո՛չ էից եղեալքն՝ կարեն յոչ էութիւն փոխիլ: - 37. **Եւ գիտեմք հաւաստի թէ որդի էր. զի *հրեշտա՛կ* անուանէ զնա գիրն. և զի հայր երբէք *հրեշտակ* ո՛չ կոչեցաւ՝ այլ որդի ըստ եսայեայ մարգարէի, որ «*հրեշտակ* մեծի խորհրդոյ» կոչէ զորդի. որ եղև մեծ խորհրդոյս սպասաւոր. այսինքն փրկութեան մերոյ՝**

**մարդանալովն իւր**: - 40. Պատասխանեմք, ո՛վ յանդուգն մեկնիչ դու. յետ *այն..* զինչ վաղճան իցէ թագաւորութեանն նորա. ո՛վ ընկեսցէ և յի՛նչ պատճառս. և ո՞չ լուար ի *հրեշատակէն*, «թագաւորութեան նորա վախճան մի՛ լիցի»: - 41-42. Եւ քարոզչօք՝ այսինքն *հրեշտակօք* կամ վարդապետօք կամ գրոց սրբոց գիտութեամբ, փութայ զկեալն մեր: - 48. Դարձեալ՝ որպէս աթանաս ասէ թէ՝ (ո՛չ որդի այլ ազգ գիտէ զօրն և զժամն՝ եթէ ոչ որպէս հայր. այսինքն ո՛չ որպէս *հրեշտակ* կամ մարդ, այլ որպէս զաստուած գիտէ ...: - 48. Նա և ո՛չ զյարութիւն, և ո՛չ *զհրեշտակ*: - 51. Են և ասին ի յէքս, մարդ, *հրեշտակ*, երկինք, երկիր. և որ ի մէջ սոցա է՛ և ասի: - 55. Եւ հոգի *հրեշտակի* և բան *հրեշտակի*՝ միայն *հրեշտակի*՛ է: - 55. Իսկ առ երկրորդն ասեմք, եթէ «փչեաց յառաքեալսն» այս զբղխումն ցուցանէ, ապա ուրեմն որդին ծնունդ է ի հոգւոյն ըստ *հրեշտակին*՝ «որ ի նմայն ծնեալ է ի հոգւոյն սրբոյ է» ասէ: - 61. Իսկ թէ առանձնապէս մարդոյն, ահա նո՛ր իմն և առժամայն մուծանես աստուած՝ *հրեշտակաց* և մարդկան երկրպագելի: - 70. Ա՛րդ՝ ամենայն մարդկան՝ մարգարէից և սրբոց՝ *հրեշտակք* ուսուցանեն. և նոքա ի քրիստոս է՛ ուսանին: - 98. Ապա զիա՞րդ պակաս լինի գիտութեամբ. ուսուցանօղն *հրեշտակաց*: - 98. Քսաներորդ չորրորդ՝ ասեն վարդապետք վասն *հրեշտակաց* թէ ունին առաւօտեան և երեկոյին ճանաչումն: - 99. Ա՛րդ՝ եթէ *հրեշտակք* տեսանեն զբանն աստուած՝ և առնուն գիտութիւն ի նմանէ, և մարդն քրիստոս ո՛չ տեսանէ որպէս ասես նեստո՛րդ, ապա քրիստոս փո՛քր է գիտութեամբ քան *զհրեշտակս*: - 99. Այլ դատաւորին պարտ է ունիլ անհուն գիտութիւն. զի քննել կարասցէ զամենայն բնութիւն *հրեշտակաց* և մարդկան. և զամենայն գործս եղեալս և զլինելոցն. զխորհուրդս և զբանս բոլորից. զառաջինն՝ զմիջինն՝ և վերջինն: - 100. Երրորդ Յատոր Յարցմանցս՝ Աստուածաբանութիւն Սրբոյն Դիոնէսիոսի... **ժգ**) Վասն կենաց. և զանազանութեան աստուծոյ. և *հրեշտակաց* և մարդկան. և կենդանեաց: ...**ժդ**) Վասն տեսութեան աստուծոյ. և *հրեշտակաց*. և մարդկան: ...ժե) Զի՞նչ զանազանի և հաւասարի տեսութեանն աստուծոյ. և *հրեշտակաց*. և մարդկան: - 101. Երրորդ Յատոր Յարցմանցս... **զ**) Ինն դասք են *հրեշտակաց*. և յերիս երեակս որոշեալ. և այլք եօթն ասեն: ...**ը**) Անուանք *հրեշտակացն*: ...Եւ հասարակ *հրեշտակք* և զօրութիւնք կոչին: ...**ժբ**) Զանազանի *հրեշտակն*. և հոգի մարդոյ. և իմացումն *հրեշտակաց*: ...**ժգ**) Թիւք *հրեշտակացն*: **ժէ**) Յատուկ անուանք *հրեշտակաց*: - ...**ժը**) Փառաբանութիւնք *հրեշտակացն*: ...**ժթ**) Վասն խօսից *հրեշտակաց*: ...Այսինքն վասն *հրեշտակաց*: - 102. Իսկ տրամախոհութեամբ քննէ զիմանալիս. որպէս *հրեշտակ*: - 103. Հինգերորդ՝ ի բանէն կրկին էութիւնք յառաջեցան. այսինքն իմանալի և զգալի. զի թէ միայն ի *հրեշտակաց* էր առեալ՝ պակասէ՛ր զգալին. և թէ ի կենդանեաց՝ պակասէ՛ր իմանալին: - 107. Եւ ի միոյ աստուծոյ եղեն **ժ** դասք *հրեշտակաց* ընդ մարդկան. և հարիւր գունդքն ըստ ոչխարաց առակին. և **ռ** կենդանեաց տեսակքն որ յերկրի. և բիւր անկենդան բուսոց. և անթիւ գոյեղէնք: - 109. Ա՛րդ՝ ո՛չէ ի յաստուած անձնաւոր էութիւն. որպէս Երրորդական անձինքն. և ո՛չ բաժանեալ ի նմանէ. որպէս *հրեշտակաց* դասքն. և ո՛չ որպէս սոսկ մտածութիւն ի տեսութիւնն աստուծոյ: - 112. Երրորդ ասի անեղ այն՝ որ ի յումե՛ք է, և ի յումեք ո՛չէ. որպէս *հրեշտակք* յաւիտենի եղեալ, և ի ժամանակի անեղ. սա կարօտ և անկարօտ երկոցունց. այսինքն սկզբան և կատարման: - 113. Զի անեղ է՛ գոլով՝ տարրորշի յանեղ ոչընչէն. և միշտ գոյ՝ ի *հրեշտակաց*. և ինքնակատարն՝ յայնցանէ որ կարօ՛տ են սկզման և կատարման: - 113. Իսկ հոգի մեր՝ և *հրեշտակք*՝ ասին յաւիտենականք. զի ո՛չ են ընդ ժամանակաւ. այլ ընդ յաւիտենիւ: - 114. Իսկ *հրեշտակք* և հոգիք և աշխարհ՝ կոչին յաւիտենականք. զի հաղո՛րդ են յաւիտենին. այնմ որ սկսեալ է և անվախճան: - 116. Չորրորդ՝ յաւիտենական է աստուած. և մշտնջենաւոր *հրեշտակք*. և ժամանակեայ մարդիկ: - 116. Եւ մշտնջենաւոր՝ որ ունի սկիզբն՝ և ո՛չ կատարած. որպէս *հրեշտակք*. և հոգի մարդոյ: - 116. Որո՞վ զանազանի կեանքն աստուծոյ. և *հրեշտակաց*: - 117. Իսկ *հրեշտակք* յայլմէ ունին. այսինքն յաստուծոյ: - 117. Իսկ *հրեշտակք* ո՛չ են կենդանարար այլոց. այլ միայն կենդանի: - 117. Իսկ *հրեշտակք* սկսեալ և անվախճան որպէս ասացաք: - 117. Որո՞վ զանազանի և հաւասարի կեանք հոգւոց և *հրեշտակաց*: - 117. Եւ զանազանին միով. այսինքն փոփոխմամբ. զի *հրեշտակն* նոյն և անփոփոխ կենդանի է: - 117. Եւ զայլ յատկութիւնս հոգւոյ և *հրեշտակի*՝ ցուցանելո՛ց եմք յառաջիկայսդ չորիւք: - 117. *Հրեշտակք* ո՞րպէս ունին տեսութիւն: - 119. Որո՞վ զանազանի և հաւասարի տեսութիւնն աստուծոյ և *հրեշտակաց*: - 119. Իսկ *հրեշտակք* ո՛չ յինքենէ՛, այլ յաստուծոյ սկսեալ և անվախճան. զի առանց մոռացութեան ունին: - 120. Դարձեալ՝ *հրեշտակք* միշտ առաւելուն ի տեսութիւնս իւրեանց: - 120. Որո՞վ զանազանի և հաւասարի տեսութիւն *հրեշտակաց* և մարդկան: - 120. Նախ՝ զի *հրեշտակացն* իմանալի և միահաղոյն է տեսութիւն. իսկ մարդկան բանական և մասն մասն ժողովելով: - 120. Երկրորդ՝ *հրեշտակք* բարձրանան ի տեսութիւնն աստուծոյ. և մարդիկ խոնարհին և շեղին ի յիմացւածն: - 120. Զի որպէս խաւարն անյայտ է, նոյնպէս և առաւել լոյսն անտեսութիւն առնէ. և նա անտես է ի *հրեշտակաց*. և անյայտ ի մարդկային մտաց. թէ ո՞րպէս կամ զի՞նչ է

էութիւն և բնութիւն աստուածութեանն: - 122. Նոյնպէս *հրեշտակաց* և դիւաց՝ չարաց ի մարդկանէ և բարեաց ընտրութեան հոգի ընկալաք: - 126. Եւ միջնորդ հաշտութեան է քրիստոս աստուծոյ և մարդկան. այլև *հրեշտակաց* և մարդկան. նաև հրէից և հեթանոսաց: - 126. Ծանիր զայս, զի աստուած է միայն իմացական և ո՛չ իմանալի. և *հրեշտակք* իմացական և իմանալի. զի իմացականք են վերինքն. և իմանալի ներքինքն: - 130. Վասն է՞ր զանազանապէս տայ աստուած զպարգևս և ո՛չ հաւասար. որպէս առաւել տայ *հրեշտակաց*՝ և սակաւ մարդկան. և նըւազ կենդանեաց և տնկոց և անշնչից: - 130. Որպէս ի դասս *հրեշտակաց*՝ առաջին երրեակ դասքն առաւել են փառօք քան զմիջինսն և զվերջինսն: - 131. Ութերորդ՝ զի խորանն առաջին և երկրորդ և երրորդ՝ վարագո՛յր էր. և ծածկէին զմիմեանս և յայտնէին. այսպէս առաջին խորանն է աստուածայինքն. և երկրորդն *հրեշտակացն*. և երրորդն մերս՝ վարագուրիւք ծածկեալ՝ որ յայտնեն զմիմեանս: - 132. Իսկ աստ էութիւն *հրեշտակին* է կերպարանեալ մարմին տեսանելի: - 133. Իսկ *հրեշտակք* փոխեն զոսա և զիմացականն վասն բարւոյ. զոր դևք ո՛չ կարեն փոխել: - 133. Իսկ աստուած կարէ՛ փոխել և զկամքն՝ որ է՛ ախորժակ ի չարէն առ բարին. զոր *հրեշտակք* ո՛չ կարեն փոխել. այլ միայն զարթուցանեն զախորժակն և օգնեն: - 133. Իսկ *հրեշտակն* զարթուցանէ զախորժակն՝ որպէս այն որ դնէ զփայտ ի հուրն: - 134. Ո՞րքան է թիւ դասուց *հրեշտակաց*: - 134. Երրորդն՝ Պետութիւնք, Հրեշտակապետք, և *Հրեշտակք*: - 134. Եօթներորդ՝ աթոռոց՝ տէրութեանց՝ և *հրեշտակաց*: - 134. Վասն է՛ր դիոնէսիոս ինն դասս *հրեշտակաց* ասէ. և իրինոս և սուրբն եպիփան է երկինք և է դասք ասեն: - 134. Համաձայնին միմեանց սուրբ վարդապետք. զի դիոնէսիոս ինն դասս ասէ *հրեշտակաց*. այլ առաջին դասքն անընդմիջաբա՛ր են յաստուածային իմացումն, համապատիւք և համափառք: - 134. Իսկ է երկինք *զհրեշտակաց* դասուցն ասէ, մի քան զմի բարձրագոյն յիրաքանչիւր երկինս: - 134. Դարձեալ՝ առաջինքն կարգաւորեն զգործս *հրեշտակաց* և տէրութեանց մարդկան: - 136. Նախ պետութիւնք. և ապա հրեշտակապետք. և վերջին *հրեշտակք*. և այս կարգ այսպէս ուղղակի՛ է: - 136. Նախ՝ զի պետութիւնք պատշաճին առ հայր. և հրեշտակապետքն առ որդի իբր յերկուց միացեալ. և *հրեշտակքն* ի դէմս հոգւոյն իբր նախ եկաւորեալք յամենայն ուրեք, և ապա յորդի և ի հայր բնակեալ: - 136. Երկրորդ՝ *հրեշտակն* պատգամաբեր և յայտնօ՛ղ լսի. և առհասարակ զծածուկս առնուն յառաջնոցն և յայտնեն երկրորդիցն: - 136. Եւ թէ ոք ասիցէ, վասն էր մարդիկք *հրեշտակք* կոչին. նաև *հրեշտակք* աստուած՝ որ վերնոցն են կոչմունք: - 136. Ա՛րդ՝ որ քան սրբութեամբ և իմացմամբ աստուածատեսակ լինին՝ աստուածք կոչին. եթէ *հրեշտակք* և եթէ արք սուրբք որպէս մովսէս: - 137. Երկրորդ՝ ամենեքեան *հրեշտակք* կոչին. իբր միմեանց ուսուցիչք և յայտնօղք: - 137. Քահանայապետութիւնն ո՞րպէս է ի *հրեշտակս*, և ո՞րպէս ի մեզ: - 138. Քահանապետութիւնն ըստ այնմ որ կա՛րգ է՝ մի և նոյն է ի մարդիկ՝ ի *հրեշտակս*՝ և յաստուածպետութիւնն սուրբ: - 138. Երրորդ՝ զի անբաժանելի է յունօղսն. որպէս յաստուած՝ և ի *հրեշտակս*, այսպէս և ի մարդն արժանացեալ. զի ունակութիւն է յարամնայ և կնիք անքակտելի: - 138. Իսկ ի *հրեշտակս* և ի մարդն՝ այլակատար և երկրորդաբար: - 138. Իսկ *հրեշտակն* առնու՝ և տայ. զի առնու յառաջնոցն՝ և տայ ի վերջինսն: - 138. Իսկ *հրեշտակն* բնութեամբ և սկսմամբ: - 138. Իսկ *հրեշտակաց* և մարդկան, Նախ՝ զի մարդիկ միջնորդութեամբ *հրեշտակաց* առնուն, և ո՛չ անդրադարձեալ. թէ և մարդացեալ բանիւն: - 138. Երրորդ՝ մարդկան սրբութիւն է ի յաղտոյ. իսկ *հրեշտակք* սուրբ են առանց աղտոյ: - 139. Դարձեալ՝ առ *հրեշտակս* մի և նոյն իմացումն աստուածային՝ է՛ սրբութիւն՝ լուսաւորութիւն՝ և կատարումն նոցա. զի աստուածային գիտութիւնն սրբէ յառաջին տգիտութենէն և լուսաւորէ՛ զնոսա, և կատարին նոյն հանճարովն: - 139. Ապա յա՛յտ է թէ ո՞րպէս է հասարակ և զանազան քահանայապետութիւնն առ աստուած ի *հրեշտակս* և ի մարդիկ: - 139. Վասն է՞ր *հրեշտակք* մաքուր և ազատ են յամենայն չարեաց: - 139. Վասն առաջնոյն գիտելի՛ է, զի ամենայն շնորի բղխո՛ւմն է և ճառագայթ, յանեղական լուսոյն իջեալ առ էակս ամենայն իմանալի և զգալի. և զարդարէ՛ զոսա ըստ նմանութեան այնմ պարգևեալ շնորհի. եթէ ըստ բնութեան՝ և եթէ անձնական. ի *հրեշտակս* և ի մարդիկս: - 140. Որո՞վ զանազանի *հրեշտակն* և հոգի մարդոյ՝ և հաւասարի: - 140. Նախ՝ զի հոգին բանական է. և *հրեշտակն* իմացական: - 140. Երկրորդ՝ հոգին միաւորի ընդ մարմնոյն. և *հրեշտակն* ո՛չ: - 140. Երրորդ՝ *հրեշտակն* ըստ ինքեան անձն է. և հոգին մարմնովն է կատարեալ անձն: - 141. Չորրորդ՝ *հրեշտակն* անփոփոխ է. իսկ հոգին փոփոխական. որպէս ասացաք ի լզ գլուխն: - 141. Իսկ ի յարութեանն և այսպէս *հրեշտակաց* հաւասարին իմացմամբ՝ կատարեալ անձամբ՝ անքանակ մարմնով՝ և անփոփոխ: - 141. Իմացումն *հրեշտակաց* և հոգւոց ո՞րպէս զանազանին: - 141. Նախ՝ զի *հրեշտակն* միեղէն և բոլոր իմանայ. իսկ հոգին բան բան և մասնաւոր. վասն որոյ բանական կոչի: - 141. Երկրորդ՝ *հրեշտակն* պարզապէս իմանայ. և հոգին շարախառնի ընդ իրին: - 141. Չորրորդ՝ հոգին փոխանցապէս իմանայ և յարացուցիւ. իսկ *հրեշտակն* զնախատիպն առանց յարացուցի: - 141. Նմանապէս և այս փոխի ի յարութեանն, և *հրեշտակաց*

հաւասար լինի և հոգւոյն: - 141. Այլ և երկոտասան գունդս *հրեշտակաց* եցոյց տէրն յաւետարանին ըստ թըւոյ երկոտասան առաքելոցն և երկոտասան կենդանատեսակացն: - 141. Զի՞նչ է *հրեշտակաց* կալն և շարժումն ըստ եսայեայ թէ՝ «սերոբէք կային շուրջ զնովաւ և թռչէին»...: - 142. Եւ այս առ *հրեշտակս*՝ կամ առ հոգիս՝ կամ ի մարմինս: - 142. Իսկ առ *հրեշտակս* բոլոր շարժումն է ի նոյնէ ի նոյն. որպէս անիւն զոր ետես եզեկիէլ. այսինքն ի նոյն աստուծոյ են սկսեալք, և ի նոյն անվախճանապէս մնան: - 142. Իսկ *հրեշտակք* զի ո՛չ ունին զգայարանք՝ ո՛չ կարօտին գրոց և բանից: - 143. Իսկ որ ի յայլս՝ որոշի յերիս. այսինքն ի վերնագոյնն, որպէս յաստուած՝ ի *հրեշտակս* և ի սուրբս: - 143. Ա՛րդ՝ ներքնագոյն սիրովն խնամէ աստուած զարարածս. և առաջին դասք *հրեշտակաց* զվերջինսն. և հարք զորդիս. և վարդապետք զաշակերտս. և իշխանք զիշխեցեալս. տեարք զծառայս. և այս սիրովս շարունակին ընդ նոսա: - 143. Իսկ վերնագոյն սիրով սիրեն արարածք զարարիչն. և վերջին *հրեշտակք* զառաջինսն. և որդիք զհարս. և նւազք զմեծամեծս. և այս սիրովս միաւորին ընդ նոսա: - 143. Իսկ հաւասար սիրով սիրէ մարդ զմարդ. և ընկեր զընկեր. այլ և մարդ *զհրեշտակս*. և *հրեշտակք* զմարդիկ. և զհաւասար արարածք են: - 143. Զի՞նչ է փառաբանութիւն ինն դասուց *հրեշտակաց*: - 144. Ներքին՝ դասք *հրեշտակացն*. որ են պատգամաւորք և հրամանատարք: - 144. Ա՛րդ՝ բանիւ մտացն խօսի աստուած ընդ *հրեշտակաց*. նո՛յնպէս և *հրեշտակք* ընդ աստուծոյ: - 144. Իսկ բանիւ բերանոյ խօսի մարդ ընդ մարդոյ, *հրեշտակք* ընդ մարդոյ՝ ձևացեալ մարմնովն: - 145. Իսկ բանիւ գործոյ խօսի աստուած ընդ դիւին. նա՛և *հրեշտակք* ընդ սատանայի. որպէս որոտ և կայծակունք հրոյ ի վերայ նոցա...: - 145. Այլ և *հրեշտակն* խօսի ընդ աստուծոյ. զի զբաղձանս իւր ընծայէ՛ նմա: - 145. Եւ խօսի *հրեշտակն* ընդ *հրեշտակի*. ցուցանելով նմա զտեսութիւն մտացն միջնորդութեամբ հոգևոր իմն ճառագայթիւք. և այսպէս խօսին *հրեշտակք* ընդ միմեանս: - 145. Դարձեալ առնէ *հրեշտակն* առաջի միւս *հրեշտակին* զոր նախ ո՛չ իմանայր: - 145. Դարձեալ խօսին *հրեշտակք* հաղորդութեամբ աստուածային լուսոյն: - 145. Դարձեալ ունին *հրեշտակք* առաւօտեան և երեկոյին ճանաչումն. այսինքն զի տեսանելով. զբանն աստուած՝ կոչի առաւօտու ճանաչումն: - 145. Իսկ խօսի *հրեշտակն* ընդ մարդոյ կրկին կերպիւ: - 145. Նոյնպէս յերեւումն *հրեշտակաց* զոր միսն տեսանէ՝ այլ մերձակայքն ո՛չ տեսանեն. որպէս յա՛յտ է ի պատանեակն եղիսէի: - 145. Իսկ այլք ասեն թէ՝ *հրեշտակն* ո՛չ երևի ձևացեալ մարմնովն և ո՛չ խօսի ընդ մարդոյն. այլ՝ դնէ զնմանութիւն դիտաւորութեան ի յաչքն կամ ի յականջն մարդոյն. և անդ ընդունի հասարակ զգայութիւնն զտեսակս այնմիկ, և տայ յերևակայութիւնն և յիմացականն. այսպէս երևին *հրեշտակք* և խօսին ընդ մարդոյ: - 145. Երկրորդ՝ կերպիւ խօսի *հրեշտակն* ընդ մարդոյ տպաւորութեամբ երեւակայութեան: - 145. Իսկ խօսի *հրեշտակն* ընդ դիւին՝ ցուցանելով նմա զտեսակս իմացման իւրոյ առանց լուսաւորութեան իմն: - 145. Իսկ խօսի դևն ընդ մարդոյ՝ կամ փոփոխելով զգոյութիւնն որպէս *հրեշտակն* կամ զպատկեր նմանութեանն ցուցանէ տեսանելեացն. և կամ տպաւորէ՛ յերևակայութիւնն: - 145. Նոյնպէս և խօսի հոգին ընդ *հրեշտակն* մարմնական կերպիւ զոր իմանայ *հրեշտակն* որպէս զայլ զգալիս որքան է ի մարմնի: - 145. Այլ ի մերկանալն ի մարմնոյն՝ կարօտանայ յատուկ իմն զօրութեան որով խօսեցի ընդ *հրեշտակին*: - 145. Այսքան վասն սրբոց *հրեշտակաց*: - 145. Զամենայն *հրեշտակս* բարի արար աստուած, այլ ո՛չ ծայրագոյն բարիս. այլ միջակս. որ է ի մէջ անփոփոխ և փոփոխական բարւոյն. այնպէս՝ զի թէ դառնային և սիրէին զայն՝ որ ի վեր քան զինքեանս, ելանէին յորպիսութիւն շնորհաց և փառաց. որպէս այժմ են *հրեշտակք* բարիք: - 146. Երկրորդ՝ ասեն թէ՝ ի լինիլ աստեղաց՝ *հրեշտակք* օրհնեցին զաստուած ըստ յոբայ: - 147. Եւ դարձեալ, զի ամպով և հողմով ասի շարժիլ աստուծոյ. և այսու լինիլ նման այսինքն ի վերայ ամպոց և հողմոց և *հրեշտակաց* շրջելով: - 148-149. Ընդէ՞ր այլ *հրեշտակք* ո՛չ ստեղծ փոխանակ նոցա: - 149. Այլ *հրեշտակ* ո՛չ էր պարտ ստեղծանել փոխանակ նոցա: - 149. Նախ՝ զի գոյին այնպիսի *հրեշտակք* որք մնացին ի բարին: - 149. Ամենայն *հրեշտակք* զուգապէս ստեղծան յաստուծոյ. և ո՛չ մի ի միոյ. որպէս մարդ ի մարդոյ ծնանի: - 149. Վասն այն թէ քրիստոս զմի *հրեշտակի* բնութիւն ընդունէր՝ զնա միա՛յն փրկէր և այլքն արտաքոյ մնային փրկութեան: - 149. Զի աստուած փոխանակ ապաշխարութեան զմահն կամեցաւ. և *հրեշտակք* անմահք են. վասն որոյ առանց փրկութեան մնացին: - 149. Իսկ առ չարն յո՛յժ ազդողակա՛նք են. այլ ո՛չ այնքան որչափ և կամին. այլ որքան իբր ի *հրեշտակաց* թոյլ տացի: - 149. Յաասարակ կարծիք է թէ՝ ժերորդ դաս *հրեշտակացն* անկաւ, և մարդս զանկելոց տեղին լնու: - 150. Այլ այս ո՛չ է հասարակ թէ ժ դաս էր *հրեշտակաց* և մինն անկաւ: - 150. Իսկ նիւսացին գրիգոր ի բնութեան գիրս՝ ի վերջին դասուց *հրեշտակացն* ասէ անկեալ: - 150. *Հրեշտակք* ի վերոյ ջրո՛յ են. բայց ի ներքոյ հաստատութեան խնամածուք կարգեալ են աշխարհի և մարդկան: - 150. Եւ յայսմանէ յայտ է թէ երեքկին է որպիսութիւն *հրեշտակաց*: - 151. Դարձեալ՝ ոմանք են յերկնից և յերկինս. որպէս *հրեշտակէ* սուրբք: - 151. Երրորդ՝ ըստ դամասկացւոյն՝ *հրեշտակն* ո՛չ է ընդունակ

ապաշխարութեան. նմին իրի և ո՛չ թողութեան: - 151. Եւ թէպէտ անկան և եղեն դևք՝ գոյացականքն մնացին առ նոսա. և *հրեշտակ* լուսոյ կերպարանին ըստ առաքելոյն: - 151. «Աստեղս» *զհրեշտակս* կոչէ վասն բարձրութեան և պայծառ լուսոյն որպէս *հրեշտակք* ի յերկինս: - 152. Իսկ «երրորդ մասն», ասէ սուրբն մեթոդէոս եթէ՝ զապստամբ *հրեշտակս* ասէ որք զթիւ երկնաւոր դասուցն սխալեցին. զի մինչ ո՛չ էին կործանեալ՝ **դ** կարգ էին իւրաքանչիւր դասուցն. որպէս յա՛յտ է ի չորեքկերպեան կենդանեացն: - 152. Տեղական անկումն եղև դիւաց ի սկիզբն ստեղծման իւրեանց վասն ամբարտաւանութեան և մախանաց ընդդէմ արարչին փառաց. ուստի անկաւ յերկնից ի դասուց *հրեշտակաց* և ի փառաց իւրեանց որպէս ասացաւ յառաջագոյն: - 153. Նոյնպէս թէ և իցեն *հրեշտակք* արբանեկեալք ի ստեղծումն գոյից, սակայն մինն է աստուած պատճառ ամենայն գոյից: - 164. Նոյնպէս և *հրեշտակք* ո՛չ տեսանեն զնախագաղափար տեսութիւնն որ լինելո՛ց էր յետոյ: - 164. Նմանապէս ծանիր և զայս կրկին է էակն. մին մշտնջենաւոր և միշտ ներգործութեամբ, որպէս աստուած. *հրեշտակք*. և արեգակն և հուր: - 173. Իսկ մշտնջենաւոր էակն միայն մին ունի զօրութիւն որ է առինքն ներգործութեամբ. որպէս հրոյ ջեռուցանելն. և արեգական լոյսն. և *հրեշտակին* անապականութիւնն: - 173. Իսկ անմարմնոյն ո՛չ է տեղի մարմնական. որպէս աստուծոյ կամ *հրեշտակաց*. կամ հոգւոց. զի անպարագրելի են: - 174. Եւ գիտելի է՝ զզանազանութիւն սոցա. զի հոգին է ի մարմինն կալմամբ և սահմանեալ. այլ ո՛չ պարագրեալ. իսկ *հրեշտակն* ո՛չ կալմամբ ի մարմին և ոչ պարագրեալ. այլ սահմանեալ: - 174. Նախ՝ զի սոքա անմարմինք են ըստ ինքեան. այսինքն քանակ, որակ, և այլքն. և յանմարմին էութիւնս ո՛չ տեսանին. որպէս ի *հրեշտակս* կամ ի հոգիս. զի նոքա ո՛չ ունին ձև. որակ. քանակ. և զայլսն: - 175. Իսկ թէ վասն է՞ր մարդս ալփաբէտից կարօտացաւ, գրեա՛լ է ի *հրեշտակաց* **ժե** համարն: - 177. Եւ միւսն հոգևոր. յորում հոգևոր գոյացութիւնք. այսինքն *հրեշտակք* բնակին: - 180. Այլ և նախ կոչի երկինք՝ զգալի երևումն աստուծոյ՝ և *հրեշտակաց*՝ և մարգարէից սրբոց: - 183. Եւ զի յայնժամ էր ի դասս *հրեշտակաց* յերկինս: - 184. Եւ է՛ իմանալի լոյս՝ որպէս *հրեշտակք*՝ և հոգի մարդոյ. և պատւիրանն աստուծոյ...: - 185. Վեցերորդ՝ զբարեկամ *հրեշտակս*՝ և զթշնամին սատանայ ցուցանէ՛: - 185. Դարձեալ՝ *հրեշտակք* հրեղէնք գոլով՝ ընդ ջրեղէն կամարն գնալով ո՛չ շիջանին: - 188. Նոյնպէս և նշանակէ՛ *զհրեշտակաց* բնութիւնն, որ նախ ստեղծան անկատար ճանաչմամբ և գիտութեամբ. այլ յորժամ երանեցան և տեսին զէութիւնն աստուծոյ անընդմիջաբար, յայնժամ կատարեցան ճանաչմամբ և գիտութեամբ: - 192. Երկրորդ՝ զի ի նմա եղեն երկինք և երկիր. *հրեշտակք* և լոյսն և ա՛յլ տարերք. որ են է գործք արարչութեան: - 193. Ասեն վարդապետք թէ՝ ա՛յն չափ հոգս տարաւ աստուած ի ստեղծանել զճանճս և զմրջմունս որքան *հրեշտակաց*: - 217. Ութերորդ՝ Առաջին երկինն է բնակարան *հրեշտակաց* և հրեշտակացելոց: - 221. Երրորդ՝ զի իմանալեա՛ցն է տունկ. այսինքն բանականաց. *հրեշտակաց* կամ մարդկան. և ո՛չ զգալի կենդանեաց: - 222. Վեցերորդ՝ զի ասէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս կազմութեան եթէ առաջին կեանք դրախտին էր կուսութիւն և անապականութիւն և *հրեշտակաց* նմանութիւն. և յետ յարութեանն վերըստին դառնամք յառաջին կեանս դրախտին. յանապականութիւն և ի *հրեշտակաց* հաւասարութիւն: - 225-226. Ասեմք թէ՝ կանխագէ՛տ է աստուած. և նախ ծանեաւ զի ո՛չ կարէին աճիլ անմեղութեամբ ի դրախտին որպէս *զհրեշտակս*. վասն որոյ կազմեաց նոցա մարմին, զի յերկրի անասնապէս աճեսցին: - 226. Զայս այսեն սուրբ վարդապետք եթէ՝ որպէս *հրեշտակք* աճեցին յերկինս, նոյնպէս և մարդկան ազգ ի դրախտին: - 226. Եւ թէ ասեն, *հրեշտակք* յանէից գոյացան և ո՛չ ի միմեանց. իսկ մարդկան ազգ պա՛րտ էր ի միո՛յն ծնանիլ: - 226. յԱռաջին աւուրն՝ է արարածք եղեն. հրեղէն երկինքն. և չորս տարերք. և լոյս. և *հրեշտակք* ընդ լուսոյն: - 226. Նա՛խ՝ զի աշխարհ է կամ իմանալի, որպէս *հրեշտակք*. կամ զգալի, որպէս մարմնականք: - 231. Երկրորդ՝ զի իմանայ ընդ *հրեշտակաց*. զգայ ընդ կենդանեաց. աճէ՛ ընդ տնկոց. գոյ ընդ անշնչից: - 231. Եւ զանազանութիւն ներքին և արտաքին զգայութեանցն ասացաւ ի վերոյ յաղագս *հրեշտակաց* ի **ը** գլուխն, ի **ժզ** համարն: - 249. Դարձեալ **թ** թիւն է երիցս երրեակ. և երեք թիւն է կատարեալ. ունելով առաջին միջին և վերջին. ի նմանութիւն **թ** դասուց *հրեշտակաց*: - 264. Դարձեալ **թ** թիւն պակա՛ս է ի **ժ**երորդէն. և մեք պակասեցաք յինն դասուց *հրեշտակաց*, որ նախ հաւասար էաք ի դրախտին. և կարօտացաք մարմնաւոր ծննդեան, նմանելով անասնոց...: - 264. Բայց վասն կամացն աստուծոյ մշտնջենաւոր մնան *հրեշտակք* և հոգիք մարդկան: - 274. Իմանայ ընդ *հրեշտակաց* որպէս ասացաւ ի վերոյ: - 275. Դարձեալ՝ մարդո՛յն է թողութիւն մեղաց վասն մարմնոյն՝ զոր ոչ ունին *հրեշտակք*: - 275. Դարձեալ՝ մա՛րդն է ի պատկեր աստուծոյ եղեալ առաւել քան *զհրեշտակս* **գ** կերպիւ, ներքոյ և արտաքոյ. զորս ո՛չ ունին *հրեշտակք*: - 275. Չորրորդ՝ թշնամիք եղեն *հրեշտակք* մարդկան. որք պահէին սրով զճանապարհ ծառոյն: - 277. Այլ կամ իբր *զհրեշտակս*, կամ որպէս ի միոյ լուսոյ բազումք, կամ կուսութեամբ ծնունդ. որպէս սուրբ կոյսն մարիամ աստուածածին սրբութեամբ և կուսութեամբ ծնեալ փոխեաց զկարգ

բնութեան ծննդեանս որ ի սերմանէ առն և կնոջ. զի սա՛ ծնունդ միայն ի մօրէ՛: - 280. Երրորդ՝ **թ** դաս *հրեշտակաց* է յերկինս. և **ժ**երրորդն մարդն կատարումն թուոյ նոցա. վասն այն ի կեանս այս ո՛չ հասանեն ի **ռ** թիւն կատարեալ. զի աստ ո՛չ լինի կատարումն դասուցն այլ ի հանդերձեալն: - 291. Արդ բիւրն պատշաճի յաւիտենին աստուծոյ, որ պարունակէ՛ զմշտնջենաւորն որ են *հրեշտակք*: - 291. Յինգերորդ ևս յայտնի. աստ կեան նախապետքն ժամանակաւ ընդ ամենայն մարդոյ. և յետ մահու ի մշտնջենաւորն ընդ *հրեշտակաց*. և յետ յարութեանն յանվախճան յաւիտենին թագաւորեալք ընդ աստուծոյ: - 291. Զորս *հրեշտակս* կոչէ ո՛չ վասն առաքինութեան, այլ զի պատգամաբերք և թարգմանք եղեն աստուծոյ իմաստութեանն առ մեզ ի ձեռն լեզուաց գիտութեանն: - 297. Եւ յորժամ փոփոխի այս, այսինքն ի հանդերձեալն, յայնժամ ի լեզուս *հրեշտակաց* խօսիցիմք: - 298. Ի մանկութենէ կռոց նուիրեցաւ, և *հրեշտակ* աստուծոյ յափշտակեալ սընոյց զնա յանապատի մինչև հասոյց ի կատարումն: - 300. Եօթներորդ՝ մելքիսեդեկ ինքնին մատոյց զպատարագն քաղցելոց և ծարաւելոց. որպէս և քրիստոս ո՛չ միջնորդօք *հրեշտակաց* կամ մարդկան, այլ ինքնին բաշխեաց զմարմին և զարիւն իւր՝ քաղցեալ և ծարաւեալ ազգի: - 301. Եւ քրիստոս թագաւոր գոլով անվախճան՝ ըստ *հրեշտակին* թէ՝ «թագաւորութեան նորա ո՛չ գոյ վախճան»...: - 302. Եւ քրիստոս թագաւորն վերնոյն եէ մի՝ զնոյն խաղաղութիւն ետ առաքելոցն զոր ի ծննդեանն *հրեշտակք* երգէին: - 302. Եւ տէրն ո՛չ ի ձեռս *հրեշտակաց* սերոբէից և քերովբէից, և ո՛չ միջնորդութեամբ մարդկան ընտրելոց նախապետաց մարգարէից առաքելոց կամ մարտիրոսաց: - 302. Չորրորդ՝ վասն անհաւատութեան եղև քար. զի ո՛չ հաւատաց *հրեշտակացն*: - 303. Վեցերորդ՝ զի ի ձեռս ետ զհագար աղախինն չարչարել սառայի. ուստի զերծեալ փախեաւ և հարցաւ ի *հրեշտակէն*: - 304. Իսկ *հրեշտակն* աւետէր կուսին, (ուրա՛խ լեր բե՛րկրեալ՝ տէր ընդ քեզ. և ի քէն ծնանելո՛ց է որդի: - 304. Իսկ *հրեշտակն* ասէր, «ծնցի որդի և կոչեսցի յիսուս, որ է՛ փրկիչ»: - 305. Յինգերորդ՝ աւետեօք երից արանցն ծնաւ սառա. և աւետեօք *հրեշտակին* մարիամ. և աւետեօք մարգարէին եկեղեցի: - 307. Երրորդ՝ անդրանիկ են *հրեշտակք* քան զմարդիկ ըստ կարգի և պատւոյ. թէպէտ բանականեմք որպէս նոքա: - 309. ...և մեք անդամք ի նա՛ յարեցաք և եղաք անդրանիկք *հրեշտակաց* որ էաք կրսեր նոցա. զի ամենայն երկնաւորքն ծունր կրկնեն քրիստոսի և խոստովանին զնա՛ տէր: - 309. Տասներորդ՝ մկրտութեամբն լինիմք որդիք աստուծոյ և եղբարք քրիստոսի. և գերազանցիմք **գ** ազգաց. այսինքն հասարակ մարդկան, և իսրայէլացւոցն, և *հրեշտակաց* երկնից: - 309. Ա՛րդ՝ դաւանութեամբն գերազա՛նց եմք մարդկան հեթանոսաց. և մկրտութեամբն՝ հրէից. և ծննդեամբն ի հոգւոյն՝ *հրեշտակաց*. զի նոքա ո՛չ ունին ծնանիլ ի հոգւոյն. և ո՛չ եղբայր լինի քրիստոսի: - 309. Երկրորդ՝ *հրեշտակք* անդրանիկք են քան զմարդ ստեղծմամբ. և յորժամ մեղան դևքն՝ խոտեցան և եղեն կրտսերք. և մարդն ել ի տեղի նոցա և եղև անդրանիկ: - 310. Նա՛խ՝ լերինք և բլուրք մշտնջենաւորք կոչին *հրեշտակացն* դասք բարձրացեալք յերկինս և անշարժութեամբ սերտեալք...: - 319. Ա՛յս է առաւել օրհնութիւն քան *զհրեշտակաց* և մարդկան: - 320. Այլ ոմանք ասեն ի ձեռն *հրեշտակաց* ի միում աւուր ժողովեցան. որպէս ի ձեռն դիւաց ցրուեցան: - 326. Վասն է՞ր *հրեշտակ* կոչէ և ասէ «ես եմ աստուած աբրահամու»: - 330. Ոմանք ասեն թէ՝ միշտ միջնորդութեամբ *հրեշտակաց* երևի աստուած...: - 330. և նա՛ կոչի *հրեշտակ* մեծի խորհրդոյ ըստ մեծին եսայեայ...: - 330-331. ...զի *հրեշտակն* պատգամաբեր լսի. և տէրն ասաց, «զոր ինչ լուայ ի հօրէ՝ ծանուցի ձեզ»: - 331. Իսկ որպիսի ինչէն աստուծոյ՝ անգիտելի մնայ աստ և ի հանդերձեալն յամենայն եղական մտաց. թէ *հրեշտակաց* և թէ մարդկան: - 331. Եւ որպէս սատանայ *հրեշտակ* լուսոյ կերպարանի որ չէ իսկ: - 335. Իսկ *հրեշտակք* կարե՛ն փոխել զմիտս և շրջել ի բարին. նաև զերևակայութիւնս և զզգայարանս, այլ ո՛չ զկամս: - 336. Զառաջիկայն և զմիտս մարդկան ո՛չ ոք գիտէ. ո՛չ *հրեշտակք* և ո՛չ դևք և ո՛չ մարդիկք. բայց միայն աստուած որ քննէ զսիրտս և զերիկամունս: - 336. Եւ ի յայտնութենէն աստուծոյ ուսանին *հրեշտակք* և մարդիկք զառաջիկայն: - 336. Երկրորդ՝ ի յայտնութենէ վերնագոյն *հրեշտակաց*: - 336. *Յրեշտա՛կ* էր. որ ի տիւն հովանի լինէր ի տապոյ արևուն և ցուցանէր ամենայն աշխարհի զելս ժողովրդեանն: - 338. Այլ և զմանանայն հաց *հրեշտակաց* կոչէ մարգարէն դաւիթ: - 338. Երրորդ, ի ձեռն *հրեշտակաց* պարգևի: - 338. Վեցերորդ՝ զի յերկնից իջեալ հացին է օրինակ որ է կերակուր իմանալի *հրեշտակաց*: - 338. Ապա թէ ոչ՝ *հրեշտակք* անկարօ՛տ են մարմնական կերակրոց: - 338. Մարդիկ և *հրեշտակք*: - 342. Յինգերորդ, **թ** դասք *հրեշտակաց*. և մի դաս մարդկան ընտրելոց լինի **ժ**: - 343. Եւ վերջինն *հրեշտակաց* դասուն: - 343. Բազում է խորհուրդն. բայց նախ *հրեշտակաց* յարմարի ցոյցք տապանին. զի նոքա են անապական և անմահ: - 344. Դարձեալ՝ զայս օրինակ ետես մարգարէն զաքարիա և պատասխանեաց *հրեշտակին*...: - 346. Երրորդ՝ զի հանգիցէ երկիր և տարերք որ ի չար գործն մեր չարչարին. այլ և պահպանապետ *հրեշտակք* նոցա: - 372. Նա՛խ՝ զայս նշանակէ թէ ի **ժ** դասուց *հրեշտակաց* մինն անկաւ, և մարդիկ զտեղի և զթիւ անկելոցն լնուն: -

376. Այլ ա՛յս է ուղիղն. զի բովանդակն ամենայն **թ** դասք են *հրեշտակաց*. այլ անկեալքն ի նոցանէ՝ են ի չափ միոյ դասու. և մարդիկ զնոցա տեղին լնուն: - 376. Դարձեալ, է դաս թուէ առաքեալն *զհրեշտակսն* յեփեսացւոց թղթին: - 380. Դարձեալ, քահանայութիւնն կա՛րգ է *հրեշտակաց*. պա՛րտ է սրբութեամբ պահել: - 381. Ապա թէ ոչ՝ *հրեշտակք* զայրացեալ հրով այրեն կամ զմարմինն կամ զհոգին: - 381. Զի ո՞ր ոք և յանցանէ՝ պատուհասի. եթէ *հրեշտակք*, և եթէ սուրբք ի մարդկանէ: - 386. Երկրորդ՝ զի եօթնիցս եղև արժանի տեսլեան Երրորդութեանն. կրկին անգամ զհայր ի գիշերի. և կրկին զորդին ի տիւն. և հոգի աստուծոյ ի վերայ նորա երկիցս անգամ. և մի անգամ *զհրեշտակն* ետես: - 387. Նա՛խ՝ զի մի՛ հպարտասցի բաղաամ. զի և էշն ետես *զհրեշտակն*: - 388. Եւ դարձեալ *հրեշտակք* և մարդիկք մշտնջենաւորք՝ պակաս ունին առ աստուածպետութիւնն յաւիտենական. և նա՛ է կատարումն **ժ**երորդ. անսկիզբն և անվախճան գոլով: - 391. Ութերորդ՝ աստ յեկեղեցւոյ ամօթ. և անդ ի սրբոց հոգւոց. և յարութեանն առաջի աստուծոյ և *հրեշտակաց* ոստխ լինելով: - 394. Տասներորդ՝ ի յարութեանն ո՛չ է մարմնական կերակուր և ըմպելի. այլ բանն աստուծոյ է կերակուր. որպէս այժմ *հրեշտակաց* յերկինս: - 397. Նոյն և երկիրն վերինն եէմի յանեզրական ծովէ՝ յամպոյ հոգւոյն և շնորհացն իմաստութեան ոռոգի. վերին և ներքին դասք *հրեշտակաց*՝ և մարդկան: - 398-399. Այլ ի կուսանս հանգչի. որք *հրեշտակաց* նմանք եղեն կուսութեամբ. վասն այն ասեն աստուած բնակեալ է յերկինս ուր կուսանք են *հրեշտակք*. և ո՛չ յերկրի ուր ամուսնացեալք են: - 404. Ասա՛ թէ՝ կուսութիւնն յերկինս օրհնեցաւ. զի *հրեշտակք* կուսութեամբ աճեցին: - 404. Եւ մարդն անկեալ ի *հրեշտակաց* աճմանէն, հրամայեաց նոցա զանասնոց աճումն: - 404. Նա՛խ՝ ի պարգևաց բանականաց. որպէս *հրեշտակաց* և հոգւոյս մեր: - 406. Եւ այսու եղանակաւ օրհնեմք *զհրեշտակս*, զսուրբս, զխաչ, և զայլն: - 406. Երկրորդ՝ զհոգին մովսէսի ո՛չ կարէր յափշտակել սատանայ, փոխանակ հոգւոյն զմարմինն ջանայր յափշտակել. և վիճէր ընդ *հրեշտակին* թէ իմ է...: - 410. Զայս նշանակէ թէ՝ յետ ելանելոյ հոգւոյ ի մարմնոյ և գնալոյ ի վերին շաւիղն, հակառակ կայ սատանայ և չար զօրութիւնքն ընդ նմա, տանիլ զհետ իւրեանց որ զչա՛րսն են գործեալ. և յարդարոցն յաղթին *հրեշտակին* օգնութեամբն. որպէս և անտօն ետես. զի իմացեալ և մեք զգուշասցուք այնմ: - 410. Իններորդ՝ ի ժամ այլակերպութեան տեառն ի բերել հրեշտակապետին զմովսէս, ասէ սատանայ *զհրեշտակն*, ստեաց աստուած զմովսէս մուծանել յերկիրն ուր երդուաւ ո՛չ մտանել նմա: - 410. Նա՛խ ըստ հոմանունն. զի յեսու՝ փրկիչ, և յիսուսն փրկիչ լսի ըստ *հրեշտակին*...: - 417. Վեշտասաներորդ՝ յեսու ետես *զհրեշտակ* աստուծոյ յօգնութիւն եկեալ: - 418. Նա՛խ՝ նշանակէր զնոյն ինքն գեդէոն. որ երևմամբ *հրեշտակին* դատաւոր եղև իսրայէլի: - 421. Երկրորդ՝ աւետեօք *հրեշտակին* ծնաւ սամփսոն ի յամուլ մօրէն: - 422. Երրորդ՝ *հրեշտակն* կրկին երևեալ կնօջն, և ապա՛ մանովէի: - 422. Երկրորդ՝ անցեալ ընդ լերամբ և ո՛չ գտեալ. մինչև առ տեսանօղն եկեալ. և տէր մեր էանց զլերինս *հրեշտակաց* և եկն ի մարգարէս. և նոքա աւետեցին զգիտն **գ** օրեայ կորստեան իշոյն...: - 426. Եւ այն զի դաւիթ միայն ետես զկոտորօղ *հրեշտակն*, զի միջնորդեսցէ: - 435. Տե՛ս, զի յորժամ կոտորեաց զհռսն՝ ասացաւ *հրեշտակին* արգելուլ զսուրն: - 435. Հինգերորդ, նա՛ փոքր և կրտսեր եղբարցն. և տէր մեր երկրորդ ադամ. և փոքրիկ կոչեցաւ քան *զհրեշտակս* և առաւել պատուեցաւ: - 435. Եօթներորդ, զառաջինն օծաւ ի բեթլէհէմ. և տէր մեր ի ծնունդն կոչեցաւ օծեալ ի *հրեշտակին*: - 435. Եւ եփրեմեանցն զկագելն առ յուդա. ի ցոյցս *հրեշտակացն* յորժամ արար փրկութիւն մարդկան ազգի: - 438. Դաւիթ կանգնեաց սեղան և դարձոյց զսուր *հրեշտակին*. և տէր մեր զսեղան խաչին զենմամբ պատարագին ի փրկանս և ի կեանս աշխարհի: - 438. Եւ քրիստոսի վախճան ո՛չ գոյ ասէ *հրեշտակն*: - 441. Եւ շուրջ զնովաւ *հրեշտակք* ամենայն ոչ հաւանեցան. զի նոքա զամենայնն ճշմարիտ խօսին. և բարի առնեն մարդկան. և յապաշխարութիւնն խնդան. իսկ սուտ խօսիլն և չար առնելն և ի վիշտս ուրախանալ՝ դիւա՛ցն է որ են չար հոգիքն: - 444. Շարժումն ոմանք զյափշտակելն ասեն. և այլք հողմոյ և երկրի. և կէսք զհնչումն *հրեշտակաց*: - 445. Երրորդ՝ զի մի՛ կարծեսցեն թէ յինքեանց անկան սրով. այլ ի *հրեշտակէն*: - 446. Դարձեալ՝ նշանակեն զերիս կոչմունս. մարգարէիւք և առաքելօք. և զվերջինն ի կատարածի *հրեշտակօք:* - 449. Հինգերորդ, Վասն աւետեաց *հրեշտակին* և ողջունին: - 454. *Հրեշտակք* պաշտպանեցին: - 456. Ոմանք ասեն թէ՝ ողորմութիւնն աստուծոյ է՛ յերկինս առ *հրեշտակս*. և արդարութիւնն յերկրի առ մարդիկս: - 458. Այլ ո՛չ յարմարի բանս. զի և յերկինս տեսանի գործ արդարութեան առ *հրեշտակս* եղեալ. որք հպարտացեալ կործանեցան: - 458. Եւ առ յովսեփայ խօսմանն՝ **գ** ամիս եկաց և *հրեշտակն* աւետեաց: - 461. Երրորդ՝ համակ հանապազորդ ներգործական դարձումն բոլոր մարդոյն առ աստուած. որով մարդն աստուածային քաղցրութեամբն զմայլի. որպէս *հրեշտակք* ի բոլոր սրտէ՝ յամենայն անձնէ և յամենայն զօրութենէ միշտ ներգործաբար դիմեն առ աստուած. և յիւրաքանչիւրսն ճառագայթի՛ ի նմա՛ աստուած: - 462. Զի ի խորհուրդ մկրտութեանն ի յառնուլ ջուր, հոգին սուրբ և զօրութիւն բարձրելոյն և ողջոյն հօրն ի ձեռն *հրեշտակին* որ հերքէր զմեղս

ըստ մկրտութեան: - 462. Իսկ զչորրորդ սրբութիւնն որ է՛ միաւորութիւն բանականին առ աստուած, և միշտ ներգործապէս դիմել առ աստուած որպէս *հրեշտակք*. ընկալաւ աստուածածին կոյսն ի յղանալն զորդին աստուծոյ: - 463. Նա՛ ևս գերազանցեալ քան *զհրեշտակս* այսու, զի նոքա ի գոյացական վարձս ո՛չ աճիլ կարեն և ո՛չ նուազիլ. իսկ երանուհի կոյսն կարէր յառաջանալ յարդիւնս և ո՛չ նուազիլ: - 463. Երկրորդ՝ զի *հրեշտակք* ի հարկէ բնութեան ունին զկուսութիւնն. իսկ աստուածածինն զայն պահեաց մաքրութեամբ մարմնով զկուսութիւն ողջախոհութեան: - 463. Նա՛խ՝ զի աստուած էր որ ծնանէր. պարտ էր զի աւետաւորն *հրեշտակ* աստուծոյ լինէր: - 463. Երրորդ՝ զի նորոգումն որ լինելոց էր ծննդեամբ կուսին՝ ո՛չ միայն մարդկան էր, այլ և *հրեշտակաց*. պարտ էր *հրեշտակին* սպասաւորել կուսին: - 463. Չորրորդ՝ զի անկասկած լիցի ամենևին և անկարծ ի չարեաց զատուցեալ սուրբ կոյսն. ի ձեռն *հրեշտակին* աւետարանել զյղութիւնն. և ո՛չ ի ձեռն մարդոյ: - 463. Զի որպէս սատանայ օձիւն խօսեցաւ առ կոյսն եւա, այսպէս տէր մեր *հրեշտակիւն* առ կոյսն մարիամ: - 463. Երկրորդ՝ զի *հրեշտակ* էր ողջունաբերն. կոյսն և անապական բնութեամբ: - 464. Իններորդ՝ զի ո՛չ մարգարէիւ յայտնեաց կուսին. որ էր աղօտ գիտութիւն համեմատեալ ընդ *հրեշտակին*: - 464. Տասներորդ՝ այն քան գերազանցեաց պատիւ կուսին, զի այնմ որ մարգարէք գուշակէին զլինելոցն. ի սմա ընդ խօսից *հրեշտակին* եղև կատարումն: - 464. Զի՞նչ յայտնէ պատգամ *հրեշտակին*: - 464. Եւ միւս ի մէջ մարիամու և *հրեշտակին*. յորմէ եղև կեանք: - 465. Ութերորդ, ասաց *հրեշտակն* ի ծննդեանն՝ «ծնաւ ձեզ այսօր փրկիչ. որ է օծեալ տէր»: - 466. Յացն *հրեշտակաց*՝ կերակրի: - 470. Երկրորդ ծնունդ իջումն բանին յարգանդ կուսին մինչ չև ծնեալ ի մօրէ. ըստ *հրեշտակին*...: - 471. Երրորդ ծնունդն ի մօրէ. ըստ որում ծնաւ մարմնով և երևեցաւ մեզ. ըստ *հրեշտակին*...: - 471. Իններորդ՝ ասի միածին ըստ մարմնաւոր ծննդեանն ի մօրէ ծնեալ առանց հօր. ըստ այնմ որ ասաց *հրեշտակն* ...: - 472. Յիսուս՝ փրկիչ թարգմանի. որպէս ասաց *հրեշտակն* առ յովսէփ: - 473. Զի թէ յետոյ ի մկրտութեանն օծաւ քրիստոս, զի՞նչ աւետարանեաց *հրեշտակն* եթէ՝ «ծնաւ ձեզ այսօր փրկիչ օծեալ տէր»: - 475. Այլ և գաւազանն ի ձեռն *հրեշտակին*. որ ընկալաւ զպատարագն գեդէովնի: - 494. Եւ ապա՛ յետ յարութեանն իջեալ *հրեշտակն* թաւալեցոյց զկափարիչ վէմն և նստաւ ի վերայ նորա և աւետեաց իւղաբերիցն: - 512. Երրորդ՝ ի մէջ գիշերի ծնաւ ի կուսական արգանդէն որպէս յա՛յտ է ի հովւացն և *հրեշտակացն*: - 512. Վեցերորդ՝ ի մէջ գիշերի *հրեշտակն* եհար զեգիպտոս. և մովսէս եհան զորդիսն իէլի. որ էր օրինակ աւերման դժոխոցն և ազատութեան հոգւոց: - 512. Իններորդ, գեթէօն՝ այն որ զցօղն ետես ի վերայ գեղման, զհօր իւրոյ զեզն պարարակ հրամանաւ *հրեշտակին* ի մէջ գիշերին պատարագեալ...: - 513. Չորեքտասաներորդ՝ այլ և ի գիշերի *հրեշտակն* տն էհան զզօրսն ռափսակայ. որ պաշարեալ էին զերուսաղէմ և փրկեաց զնոսա...: - 514. Մատթէոս զառաջինն գրէ որ ի մէջ գիշերի եկին. և մի *հրեշտակ* տեսին. և զվէմն առաջի նոցա թաւալեցոյց և նստաւ ի վերայ նորա: - 515. Եւ զչորրորդն յօհաննէս պատմէ միա՛յն զմագդաղենացին. և տեսեալ երկու *հրեշտակս* ի սնարս և յոտս նստեալ: - 515. Այս է, զի յորժամ ի մէջ գիշերին հրամայեաց *հրեշտակն* գնալ և պատմել աշակերտացն, ա՛յլ կանայքն որ ընդ նմայն էին՝ գնացին...: - 515. Իսկ թռչիլ ամենայն սրբոց ի ձեռն սպասաւորութեան *հրեշտակաց*: - 519. Այլ տեղի փոխման կուսին ի վե՛ր է քան զամենայն դասս *հրեշտակաց*: - 519. Հինգերորդ՝ համբարձաւ զուարճութեամբ. որ վերաբերի առ նոսա որք փրկեցան ի դժոխոցն և ընդ նմա ելին յերկինս. զի բ բանակօք ել յերկինս այսինքն սպասաւոր *հրեշտակք* և մարդկան փրկելովք: - 520. Ըստ այնմ, «զամենայն ազգս զոր արարեր» այսինքն *հրեշտակք* և մարդիկք, կամ մարդկան ամենայն ազգ և ամենայն լեզուք, գայցեն ի կատարածի յերկրպագութիւն քրիստոսի. և անեզր յաւիտենիւ փառաւորեալ օրհնեն զնա: - 529. Սակայն մի և նոյն բանն բազմանայ ի բազումս. որպէս ի *հրեշտակս* և ի մարդիկ. ի հին և ի նոր օրէնս. այլ ի միութենէն ո՛չ բաժանի: - 529. Կամ մարդ ի *հրեշտակէ՛*: - 535. Դարձեալ՝ *հրեշտակ* ի *հրեշտակէ* առաքեալ: - 535. Կամ *հրեշտակ* յաստուծոյ առաքեալ: - 535. Երրորդ՝ երևակայութեամբ. որպէս եղիսէին ի տեսանել զզօրս *հրեշտակացն*, և մանկանն ո՛չ տեսանել: - 536. Զի քահանայն արդարութեանն աստուծոյ *հրեշտա՛կ* է. այսինքն յայտնօղ և թարգման...: - 539. Ասեմք թէ՝ տէրն երկոտասան գունդս ասաց *հրեշտակաց* իւրաքանչիւր դասուց: - 546. Եւ որպէս ի դասս *հրեշտակաց* մինն գնդապետ բժան գնդին: - 547. Երրորդ՝ զի զայլ մեղս մեղսասէրքն գործեն. իսկ զհպարտութիւնն սուրբք և ընտիրք. որպէս *հրեշտակք* յերկինս: - 562. Ամպ մարգարէքն են կամ *հրեշտակք*. և աստեղք վերին դասքն: - 563. Այսպէս ապա գիտելի է, զի և *հրեշտակք* վասն այն մեղանչեն որ են բանականք և անձնիշխանք: - 563. ...որպէս առաւել է մեղք *հրեշտակին* քան զմարդոյն. վասն այն մին քահանայի մեղք՝ որ չափ բոլոր ժողովրդեանն է. ուստի յա՛յտ է ի պատարագէ հնոյն...: - 563. Զգուշանալ պա՛րտ է յամբարտաւանութենէ, զի *զհրեշտակս* կարաց խաբել. և *զհրեշտակն* սատանայ դարձոյց: - 569. Երրորդ՝ *զհրեշտակս* ընդ մարդիկ. և զիրեղէն սուրն և զթշնամութիւն եբարձ: - 585. Երրորդ թէ դասակից

*հրեշտակաց* լինին: - 586. Վեցերորդ, ընդ *հրեշտակաց* զնոր իմաստ և զնոր գիտութիւն առնուն: - 586. իսկ կանանց ազգին պատուիրէ՛ առաքեալն ի ժամ աղօթիցն շուք դնել գլխոյն վասն *հրեշտակաց*. այսինքն վասն քահանայից որ *հրեշտակք* կոչին ի գրոց...: - 590. Ապա թէ և զապաշխարօղքն ի թիւ կալցես, Կաթողիկոսն լինի **ժ**երորդ. որպէս աստուած ժերորդ է ի վերայ **թ** դասուց *հրեշտակաց*: - 608. Նոյնպէս *հրեշտակք* կատարեալ որդիք են յաստուծոյ անընդմիջաբար առնուն: - 620. ...որ լինի **թ** անգամ աղօթք ըստ **թ** դասուց *հրեշտակաց*: - 621. Որ էր յերկինս երկնից բանն աստուած, ի պայծառ և լուսաւոր դասուց *հրեշտակաց* օրհնաբանեալ...: - 621. Այլ և զերկոտասան գունդս *հրեշտակաց* յերկինս և զ**բժ**ան առաքեալսն բարեխօս մատուցանեմք առ աստուած: - 624. Երրորդ, որպէս յերկինս յերիս երրեակս որոշին դասքն. այսինքն առաջին՝ աթոռոցն. միջին՝ տէրութեանցն. և վերջին՝ *հրեշտակացն*: - 624. Չորրորդ և ուղիղ, որպէս ասէ տեսիլն *հրեշտակք* առնուին զխունկս որ է՛ աղօթք սրբոցն, և նուիրէին ի սեղանն ոսկի որ է՛ քրիստոս. և ի նմանէ բուրէր ծուխն առ հայր: - 625. Նմանապէս և յեկեղեցի՝ ոմանք սաղմոսե՛ն. և սարկաւագն ի տիպ *հրեշտակին* տայ զօրհնեայն ի քահանայն որ է՛ տիպ քրիստոսի. - 625. Չորրորդ՝ զմարդկան և *զհրեշտակաց* երգն ի միասին խառնեալ: - 627. Յետոյ ալէլուն որ է՛ *հրեշտակացն* օրհներգութիւն: - 627. Եւ ի պահքն առաւել ձայնաւորքն քան զերգս. զի յաւուրս պահոց՝ *հրեշտակաց* նմանիմք, և յուտիքն մարդկան: - 628. Երկու դամպարքն, **բ** լուսաւոր *հրեշտակքն*. այլ և զլոյս աւետարանին: - 628. Իսկ տէր երկնիցն, ընդ *հրեշտակս* օրհնաբանել զսուրբ Երրորդութիւնն. - 628. Այլ և նշանակէ՛ զմարդիկ ընդ *հրեշտակաց* և զհրէայս և զհեթանոսս խառնեալ ի մի եկեղեցի: - 629. Եօթներորդն օրհնութիւն *հրեշտակաց* և փրկութիւն: - 630. Եւ **գ** կրկնելով լինի **թ**. ըստ **թ** դասուց *հրեշտակաց*: - 632. Զի սուրբ աստուածն անդ հաստատեցաւ. որպէս և փառք ի բարձունքն. սկսեալ ի *հրեշտակացն* ի ծնունդ քրիստոսի. և յերեք սուրբ ժողովնս եղև կատարեալ: - 635. Զի այն որ ասէ՝ «փառք ի բարձունս աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն». *հրեշտակացն* է ասացեալ երգ: - 635. Եւ անդ յաւուր կիրակէի յառաւօտին միաբան ի մի բարբառ յաւելին յերգս *հրեշտակացն* և զայս. «օրհնութիւն քեզ ի բարձունս»: - 635. Այլ և այսպէս **բ** որմունք լինելոց են ի հանդերձեալն. այսինքն է մին *հրեշտակաց* և միւսն մարդկան սրբոց յաւիտենից փառաբանիչք: - 636. Դարձեալ՝ ի հանդերձեալն յորժամ խառնին *հրեշտակք* և մարդիկք ի լնուլ զտեղի անկելոց՝ կուսանաց սրբոց: - 636. *Հրեշտակք* առին զէութիւնն մշտնջենաւոր: - 639. Եւ **ժ**, զի յաւելումք յինն դասս *հրեշտակաց*: - 640. Երկուշաբաթի օրն *հրեշտակաց*: - 642. Իսկ **բ** շաբաթին *հրեշտակաց*. զի յառաջնում աւուրն ընդ լուսոյն ստեղծան: - 642. Ընթերցօղ սարկաւագն, որ է՛ *հրեշտակն* միջնորդ...: - 644. Ալէլուն է *հրեշտակացն* երգ...: - 644. Իսկ սաղմոս տունն է երգ մարդկան. այսինքն է զի *հրեշտակք* և մարդիկ միաբանեալ օրհնեմք զաստուած փրկիչն մեր որ խօսի ընդ մեզ: - 644. ...մինչև ի *հրեշտակէն* յուսադրեցաւ և էառ կերակուր: - 653. Չորրորդ, ի խորհուրդ կուսին որում աւետեաց *հրեշտակն* զփրկութիւն մեր. - 653. Վասն որոյ յերկրի աստ բազմանան թուով. և ապա՛ միահաղոյն մտցեն անդ որպէս բազմութիւնք *հրեշակաց*: - 662. Եւ գիտելի է, զի *հրեշտակք* ո՛չ ունին զայսպիսի փոփոխմունս. զի ո՛չ են տարրականք, և ո՛չ ընդ ժամանակաւ: - 663. ...այլ *հրեշտակաց* հաւասարք են առանց փոփոխման...: - 663. ...մինչ աւանդօղ *հրեշտակն* սաստեսցէ ի նոսա...: - 669. Երրորդ կոչի կարգ, զի զոր ինչ մեք առ մարմին ննջեցելոցն կատարեմք, զնոյն կարգ և *հրեշտակք* առ հոգիսն կատարեն այժմ և ի յարութեանն աւուր: - 671. Իսկ զի չորիցն բարձեալ տանին, նշանակէ որ **բ** *հրեշտակք* պահապանք ամբառնան զհոգին...: - 671. ...և **բ** *հրեշտակք* դարձեալ բերեն **ի** յերկիր ի յարութեան աւուրն: - 671-672. Եւ որպէս *հրեշտակքն* զհոգին ածեն առ աստուած, նոյնպէս և զմարմինն տանին առ քահանայապետն...: - 672. Եւ զհասարակ ժողովուրդն ի դասս *հրեշտակաց* ըստ սրբոյն դիոնիսեայ: - 672. Դարձեալ, ի տիպ պահապան *հրեշտակին* որ նստէր մի ի սնարից և մի յանոտից տեառն գերեզմանին. - 679. ...զի *հրեշտակք* խաչաձև երևեցան առ գերեզմանաւն տեառն: - 679. ...իսկ *հրեշտակք* զմինն ունին. զի յոչ է է՛ եղեն. և զերկուքն չունին...: - 681. Վեցերորդ, ի փոփոխումն աստուածածին կուսին յետ **գ** յաւուր ձայն *հրեշտակացն* դադարեցաւ...: - 681. Եւ **բ** ծառայքն՝ սպասաւոր *հրեշտակքն*: - 682. Եւ ի ձեռն *հրեշտակի* բազում պատուհաս և հարուած կրէ աստ մարմինս...: - 682. Եւ ծովն պատառեալ ի ձեռն մովսիսի այսինքն խաւարային անդունդք օդոյդ ի ձեռն առաջնորդ *հրեշտակին*: - 682. Այսպէս թէպէտ քրիստոնէից հոգիքն որ անարժանք են՝ ի ձեռն *հրեշտակին* ժամանեն ի կայանս հոգւոցն այսպիսի սքանչելեօք: - 682-683. Իսկ չարացն ոչ ինչ գիտեն. այլ զոր *հրեշտակք* կամ դևք նոցա պատմեն: - 685. Այլ մեծն ներսէս ասէ թէ՝ սուրբքն ի ձեռն պահապան՝ *հրեշտակացն* երևին. թէ յերազս թէ յարթնութեան. և օգնեն մեզ. և խօսին. և լսեն զաղօթս մեր: - 685. Իսկ մեղաւոր հոգին դարձեալ ի ձեռն *հրաշտակաց*. զի աղաչէր զնա երևիլ. կամ ի ձեռն դիւաց կերպարանին նոքա: - 686. Եւ այլք ոմանք վեցերորդ կարծիս ստացեալ ասեն զբուն կատարեալ բարեաց

հոգիսն ժողովեալ ի *հրեշտակացն* դասս...: - 687. Իսկ թէ ո՞ւր իցեն սոքա երկոքեանս, տեսիլն յոհաննու յայտնապէս ցուցանէ. սրբոց խորանս ասէ զվերինն սիօն և *զհրեշտակացն* դասս: - 688. Ո՜ հա՛յրդ ես որոց ի վեր քան զերկինս. այսինքն հոգւոց սրբոց կատարելոցն որ ի վերեն քան զդասս *հրեշտակաց* մերձ քրիստոսի որպէս քահանայք առ քահանայապետ, և անդամք առ գլուխն. և որդիք առ հայր: - 688. ...և սոքա ո՛չ գան ի դատաստան. այլ ի դատել *զհրեշտակս* և զմարդիկ ըստ առաքելոյ: - 688. Անդ ժողովին և հոգիք չարաց և ամբարշտաց ի ձեռն *հրեշտակաց* չարաց. ո՛չ ըստ բնութեան...: - 688. Ապա թէ ոչ՝ ո՛չ կարէ մեղաւոր հոգին ելանել յերկինս. ուստի և *հրեշտակք* վասն մեղաց անկան. և մարդն ի դրախտէն: - 689. Նա՛խ՝ զի աներևո՛յթ են ի մէնջ. այլ և ի մտացն աստուծոյ. ի *հրեշտակաց* և ի սրբոց մոռացեալ: - 690. Զի ասէ մեծն իգնատիոս մեկնիչն յայսմ բանի, եթէ բարեկամ եկեալ՝ զպահանջօղ *հրեշտակն* ասէ յօր մահուն. իսկ առաջին բարեկամ է՛ աստուած: - 697. Ա՛րդ՝ եկեալ *հրեշտակն* խնդրէ ի նմանէ զբարի գործս որով նա կերակրի. - 697. ...որպէս և *հրեշտակք* յետ անկմանն ո՛չ կարացին փոխիլ յարդարութիւն: - 699. Եւ յետ սակաւուց ի նոյն գլուխն ասէ, թէ ո՛չ զգայապէս լինի տեսիլ *հրեշտակի*, - 703. Այլ ո՛չ թողու աւանդօղ *հրեշտակն*...: - 703. Դատաւոր աստուած. և դահիճ *հրեշտակք*. և բանտ դժոխքն: - 704. Եւ *հրեշտակ* բարի նախ կարգեսցի ի պահպանութիւն նեռին...: - 707. Այսինքն զի աստուածք և տեարք կոչին յերկինս *հրեշտակացն* դասք, և թագաւորք յերկրի. - 711. Նոյնպէս և զօրք *հրեշտակաց* և մարդիկ երկիր պագանեն սրբոց. վասն որոյ թագաւոր թագաւորաց են և տէր տէրանց. - 711. Եւ որպէս **բժ**ան բիւր *հրեշտակացն*, և եօթանասնից եօթն թողուլն, և ամլոյն եօթն ծնանիլն ո՛չ է վճիռ, նոյնպէս և իդ երիցանցն: - 711. Նա՛խ՝ որպէս **բժ**ան գունդ *հրեշտակացն* և չորք կենդանիքն զբոլոր երկնային զօրսն նշանակեն, նոյնպէս և իդ երիցունքն զբոլոր դասս սրբոցն: - 711. Բուրվառն ոսկի և խունկն՝ այսինքն զի զաղօթս երկրաւորաց սուրբքն և *հրեշտակք* մատուցանեն քրիստոսի: - 713. Վերջին փող է *հրեշտակացն* որ կոչէ՛ ի դատաստան: - 713. Զի հրեշտակապետն *հրեշտակօք* իւրովք վերակացո՛ւ է ազգի. - 713. Ի գարնան եղանակի ի զատկի կիրակէին ի մէջ գիշերի յորում ժամու յարեաւ քրիստոս և *հրեշտակն* թաւալեցոյց զվէմն և գոչէր զյարութիւնն քրիստոսի. - 714. ...զի կամ իմանալիք են որպէս *հրեշտակք*. կամ զգալիք որպէս տարրեղէնք. և կամ յերկուց գոյացեալ որպէս մարդ. այսինքն ի հոգւոյ և մարմնոյ...: - 715. Նա՛խ՝ զի շնորհն աստուածային պատկերին որ համանգամայն կամեցաւ զբոլոր բնութիւնս ըստ *հրեշտակացն* օրինակի մուծանել ի կեանս...: - 716. Հինգերորդ, ստեղծաւ մարդն հաւասար *հրեշտակաց*. և յորժամ մեղանչեաց՝ անասնոց հաւասարեցաւ ըստ դաւթի և ընդ նոսա ապականացաւ և պատժեցաւ...: - 724. ...վասն որոյ ի յարութեան՝ *հրեշտակաց* հաւասար յարուցանէ անմահ և առանց կարօտութեան. - 724. Այլ և որպէս *հրեշտակք* զանազանին. նոյնպէս և ի յարութեանն փառօք և պսակաւն: - 725. Սակայն իւրաքանչիւր ոք անսխալ անդամօք իւրովք յառնէ. այլ ո՛չ երևի թէ սա այր է և նա կին. այն ծեր և այն տղայ. զի որպէս *հրեշտակք* են յերկինս: - 726. Յանմարմնոցն *հրեշտակք* և դևք. և հոգիք մարդկան. իսկ ի մարմնոց երկնային մարմինք և դ տարերք և մարմինք մարդկան. և այլք ամենայնքն ապականին և յիւրաքանչիւր տարերս ժողովին: - 727. ...այլ ա՛յս է՝ զի իւրաքանչիւր մարմինք սրբոց պայծառասցին էպատիկ քան զարեգակն. որպէս տեառն մերոյ ի թաբօր լերինն. և **թ** դասուց *հրեշտակաց* լոյսն յերկիր ծաւալին. զի զօրութիւնք երկնից շարժեսցին: - 728. Նա՛խ՝ այն է գալարիլն երկնի, զի եթերն որպէս մագաղաթ ծալեալ նուազի և նսեմանայ վասն առաւել ճառագայթից լուսաւորացն *հրեշտակաց* և սրբոցն յերկնէ երևեալ: - 729. Երկրորդ՝ երկինք *զհրեշտակս* ասէ որ ի վայր գլորեալ խոնարհին ամենայն դասք. աթոռք կազմեալ, և սպասաւորք շրջապատեալ: - 729. Չորրորդ, զի փառօք հօր և *հրեշտակաց* սրբոց: - 730. Եօթներորդ, զի առաքեսցէ *զհրեշտակս* իւր փողով մեծաւ. - 730. Ա՛րդ՝ որպէս *հրեշտակք* ի յոչ գոյից գոյացան և են անապականք և անմահք ի կամքն աստուծոյ: - 733. Իններորդ՝ զի դևք հալածական լինին ի զօրութենէ աստուածեան նշանին. և *հրեշտակք* սպասաւորեն նմա. - 734. Ի մէջ գիշերի. յորում ժամու *հրեշտակն* զեգիպտոս եհար, և տէրն զդժոխս աւերեաց. յայն ժամու զընտրեալս իւր յաշխարհէ ազատեսցէ: - 734. Այսպէս քրիստոս այնու կերպարանաւ որով համբարձաւ՝ հանդերձ ամենայն դասուք *հրեշտակաց* ի դատաստան եկեսցէ: - 734. Եւ *հրեշտակք* զխաչն բարձեալ առաջի երթիցեն. և զմեռեալս՝ փողով և ձայնիւ ընդ առաջ նորա զարթուսցեն: - 734. Երրորդ, զի որդի է՛ նման հօր. իսկ *հրեշտակք* և մարդիկ շփոթեցին յինքեանս զնմանութիւնն յոր ստեղծան. - 735. Եւ եզեկիէլ զչորեքկերպեանն աթոռ ի *հրեշտակաց*: - 736. Եւ շուրջ զինքեամբ բարի *հրեշտակքն* որ մղեն ի դժոխս: - 738. Երրորդ, հաւաստի արդարութեամբ. և այսպէս ամենայն սուրբք և *հրեշտակք* դատեսցեն զնոսա որք ի նոյն շաւիղն յանցաւոր գտան: - 738. Դարձեալ որպէս ի վեր անդր ի *հրեշտակացն* բանն յերիս որոշեցաւ. այսինքն է՛ բան մտաց և բան լեզուի և բան գործոյ: - 739. Արդ բանիւ մտաց խօսի ընդ բուն արդարս և ընդ *հրեշտակս* որք դատենն զայլս: - 739. Արդ՝ ա՛յս գիր գործոց մերոց գրեալ ի հոգի

և ի մարմին մեր որպէս ի մագաղաթի՝ դատաւորն ընթեռնու ի տես և ի լուր *հրեշտակաց* և սրբոց: - 741. Այլ և արդարութիւնն աստուծոյ, պահապան *հրեշտակքն*, և խիղճ մտացն իւր, են երեք վկայք: - 743. Կենդանի՝ հոգի և մարմին մեր. և սուրբք և *հրեշտակք* և հոգին սուրբ գրիչ: - 743. Երրորդ հնձան է իւրաքանչիւր սիրտ և անձինք արդարոց. որ հաստատեալ է հաւատով յորթն ճշմարիտ և պտղաբերէ՛ զողկոյզ բարեաց. և չարչարանօք ճմլէ՛ յինքեան զուրախարարն գինի *հրեշտակաց* և մարդկան. և այսոքիկ բարեա՛ցն են հնձան: - 749. Մետասաներորդ, հնձան կոչի և հաւատն սուրբ. զի ի նա՛ հաւաքի ամենայն բան և գործք մեր. և ճմլեալ այսինքն քննեալ՝ լինի գինի ուրախարար աստուծոյ և *հրեշտակաց*: - 749. Վասն զի զընկերակցութիւն **թ** դասուց *հրեշտակաց* ապախտ արարին, արդարապէս թ տանջանս կրել արժանանան: - 752. Ասեմք առ այս, եթէ առաջին կեանքն դրախտին ո՛չ զայն իմանան վարդապետք զոր ունէրն ադամ. այլ զոր խոստացաւն ադամայ եթէ պահեալ էր զպատուիրանն. որ նոյն ինքն է արքայութիւնն երկնից ի տեղի անկելոց *հրեշտակացն*: - 758. Ասեմք թէ կրկին. այսինքն արքայութիւնն երկնից՝ *հրեշտակաց* և հրեշտակացելոց սրբոց: - 760. Որքան մնացին *հրեշտակք* ի յերկինս, նոյնքան և բազմութիւնք ի մարդկանէ ընտրեսցին: - 760. Ա՛րդ՝ ի տեղի անկելոց *հրեշտակացն*՝ ըստ թուոյ նոցա խառնելո՛ց են դասք կուսանաց սրբոց: - 760. Մին ամենայն դասք *հրեշտակաց*: - 760. Երկրորդ վասն ազնուական ընկերութեանցն. յորում եղիցի երանելի կոյսն. և *հրեշտակք* և սուրբք և սրբուհիք. և ամենայն թագաւորք և թագուհիք եղիցին: - 763. Նա՛խ խոստացաւ *հրեշտակօք*. աւետեաց մարգարէիւք. դաստիարակեաց օրինօք. և յետոյ երևեցաւ ի լրումն նոցին: - 776

**ՀՐԵՇՏԱԿԱԲՆԱԿ +** Առաքելական աթոռոյ սուրբ առաքելոյս. և այլ շրջակայ *հրեշտակաբնակ* սուրբ Մենաստանեայց: - 772

**ՀՐԵՇՏԱԿԱԿԱՆ +** Իսկ այլք՝ հոգի *զհրեշտակական* հոգին ասեն. որ տըւեալ է առ ի պահպանութիւն մեզ. զի նա ուղղէ զմեզ ի բարիս, և զաղօթս մեր մատուցանէ աստուծոյ: - 59. Եւ փոխանակ հոգւոյն՝ *հրեշտակական* օգնութեանն կարօտացաւ ցուցանել զտիրապէս իշխօղն բնութեան. որ և կշտամբեաց զբռնութեամբ թագաւորելն նորա: - 410. Չորրորդ՝ *հրեշտակական* սրբութիւնն. որ է երկնային և հաստատագոյն և անդրդուելի սրբութիւն: - 462. Իսկ *հրեշտակական* կենաց է հրաշափառապէս գիտել և ո՛չ մոռանալ միշտ...: - 774

**ՀՐԵՇՏԱԿԱՅԻՆ +** Չորրորդ, մահ՝ այսինքն սատանայ որ յաղթեաց ադամայ. իսկ մարմնոյն մովսէսի ո՛չ կարաց յաղթել *հրեշտակային* օգնականութեամբն. որպէս ասի յառաջիկայդ: - 409. Իսկ չորրորդ սրբութիւնն լիակատար շնորհաց ի վերին գաւառն որ է՛ *հրեշտակային*՝ գերազանցէ՛ զամենեքումբք: - 462

**ՀՐԵՇՏԱԿԱՆԱՄ +** Ութերորդ՝ Առաջին երկինն է բնակարան հրեշտակաց և *հրեշտակացելոց*: - 221. Նա՛խ՝ զի *հրեշտակացեալ* սրբոց է կերակուր: - 338. Ասեմք թէ կրկին. այսինքն արքայութիւնն երկնից՝ հրեշտակաց և *հրեշտակացելոց* սրբոց: - 760

**ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏ +** Երրորդն՝ Պետութիւնք, *Հրեշտակապետք*, և Հրեշտակք: - 134. Նախ պետութիւնք. և ապա *հրեշտակապետք*. և վերջին հրեշտակք. և այս կարգ այսպէս ուղղակի՛ է: - 136. Նախ՝ զի պետութիւնք պատշաճին առ հայր. և *հրեշտակապետքն* առ որդի իբր յերկուց միացեալ. և հրեշտակքն ի դէմս հոգւոյն իբր նախ եկաւորեալք յամենայն ուրեք, և ապա յորդի և ի հայր բնակեալ: - 136. Քանի՞ *հրեշտակապետի* անուն ասի կամ մեկնի: - 144. Երկրորդ՝ դասք *հրեշտակապետացն*: - 144. Փեգովրայ տեղի՛ էր կռոց. և դևքն չտային թոյլ թաղել զմարմինն, մինչև սաստեաց միքայէլ *հրեշտակապետն* ասելով, «սաստեսցէ՛ ի քեզ տէր». որպէս յա՛յտ է ի կաթուղիկէից վերջին թուղթն: - 409. իսկ յորժամ սպասաւորեաց *հրեշտակապետն*՝ զտիրական անունն ի սաստ կոչելով. յայնժամ ամպ ինչ լուսաւոր ծագեալ ի տեղւոջն, շիջոյց զերևումն չարին: - 410. Երրորդ՝ վախճանեալ մովսէս ի լերինն, և միքայէլ փոխադրէր զմարմինն. սկսաւ սատանայ հայհոյել զսուրբն և սպանօղ անւանել վասն հարկանելոյն զեգիպտացին. վասն որոյ սաստեաց նմա *հրեշտակապետն*: - 410. Իններորդ՝ ի ժամ այլակերպութեան տեառն ի բերել *հրեշտակապետին* զմովսէս, ասէ սատանայ ցհրեշտակն, ստեաց աստուած զմովսէս մուծանել յերկիրն ուր երդուաւ ո՛չ մտանել նմա: - 410. Հինգերորդ՝ գզաթ էր կոյսն մարիամ. և ցօղ բանն աստուծոյ. որ աւետեօք *հրեշտակապետին* էջ ի վերայ նորա առանց ոտնածայնութեան և ծածուկ: - 421. Եւ աւետեօք *հրեշտակապետին* ծնաւ փրկիչն ի կուսական արգանդէ: - 422. Վասն է՞ր *հրեշտակապետն* գաբրիէլ աւետեաց կուսին, և ո՛չ մարդ ոք: - 463. Այլ ի ձեռն *հրեշտակապետին* վկայեալ և աւետեալ զհաւատարիմս ի գիտութիւն: - 464. Վեց իրս յայտնէ մեզ ատանօր պատգամ *հրեշտակապետին*: - 464. Ա՛րդ՝ սրբուհի կոյսն ի ողջոյն *հրեշտակապետին* երիս

իրս արար: - 465. Երրորդ, *հրեշտակապետն* աւետեաց կուսին թէ՝ «որ ծնանելոցն է ի քէն՝ սուրբ է և որդի աստուծոյ»: - 466. Երրորդ՝ զի ո՛չ ասաց *հրեշտակապետն* զաքարիայի թէ ահա՛ եղիսաբեթ յղասցի և ծնեցի քեզ որդի զներկայն ցուցանելով...: - 483. Չորրորդ՝ զի որ յամսեանն զերորդի *հրեշտակապետն* եկն առ կոյսն, ի յղութենէն եղիսաբեթի ասաց զոլ **զ** ամիս, և ո՛չ յաւետեացն: - 483. Եւ որպէս *հրեշտակապետն* գաբրիէլ, նախ ետ զաւետիս սրբոյ կուսին, և նա՛ խորհէր ի միտս...: - 610. ...և ապա՛ ի յերկրէ յարուցանէ զմարմինս. որպէս այն որ *հրեշտակապետն* նստեալ ի վերայ վիմին փողէր զյարութիւնն քրիստոսի: - 618. Նա՛խ՝ մարգարէքն. երկրորդ առաքեալքն. երրորդ *հրեշտակապետին* վերջին փողն: - 618. ...և զվարդավառի բ պատկերն, և զփոխման բ պատկերն, *զհրեշտակապետացն*, և զեօթանասնիցն, զղևոնդեանցն...: - 637. Իսկ խաչն վառել և ժամահարն յառաջ. նշանակէ՛ զվերջին գոչումն փողոյ *հրեշտակապետին*: - 676. Եւ հայրապետն ներսէս ի ճառս *հրեշտակապետաց*: - 687. Երկրորդ երևելի ձայնն *հրեշտակապետին*. որպէս ձայնն փողոյ ի սինա լերինն. և ազդումն զօրութեանն քրիստոսի: - 713. վասն զի գաբրիէլ *հրեշտակապետաց* դասուն է պետ, - 713. Զի *հրեշտակապետն* հրեշտակօք իւրովք վերակացո՛ւ է ազգի...: - 713

**ՀՐԷԱԲԱՐ +** Զի թէ աստուածութեանն, *հրէաբա՛ր* երկրպագես: - 68

**ՀՐԷԱԿԱՆ +** Զի եթէ զաստուածային բնութիւնն պատուէք, հա՛րկ է ձեզ զմարդկայինն անարգել՝ և *հրէական* խտրութեամբ մոլիլ, որք ասէին՝ «դու մարդ ես՝ և զանձն քո աստուած առնես»: - 90. Որ և ցուցանէր յետ եօթանասուն ամի զդարձ գերւոյն, և զնորոգիլն *հրէական* կարգին: - 346-347. Եւ այն զի փաթութած է՝ ըստ *հրէական* օրինին է. զի կոնդակ և գալարելո՛վ էր նոցա գիրն. իբր թէ ծածո՛ւկ է ի նոցանէ խորհուրդ մարգարէիցն և թաքուն: - 481. Նախ այն է՝ որ զորդի ընդ հօր և սուրբ հոգւոյն փառաւորեմք և օրհնեմք **գ** անձինք ի միում բնութեան. և ո՛չ որպէս հինքն *հրէական* օրհնութիւնս. որք ո՛չ օրհնէին զորդի և զհոգի: - 528

**ՀՐԷԱՅ +** Կուրացեալ *հրէայքն* առարկեն ընդդէմ մեր թէ՝ դեռևս ոչ է եկեալ մէսիայն: - 27. Ասեմք թէ՝ զբանս զայս ասէ մարգարէն վասն խաղաղութեան որ եղև սակաւ մի յառաջ քան զգալուստն քրիստոսի՝ և ի բոլոր ժամանակս քրիստոսի, և յետ նորա **խ** ամ մինչև ապստամբեցին *հրէայքն* հռոմայեցւոց տէրութեանն: - 27. Քանզի *հրէայքն* ի ժամանակս քրիստոսի ո՛չ լինէին նեղեալք յումեքէ: - 28. Եւ թէ ասիցեն *հրէայքն*, ո՛չ ամենայն *հրէայքն* ժողովեալ են ըստ խոստմանն: - 28. Դարձեալ ի վերայ սաղմոսին որ ասէ, «զարթիր փառք իմ». ասէ մեկնիչն և աւանդութիւն *հրէիցն* թէ՝ խօսի աստ ի վերայ չորից թագաւորացն որք հալածեցին զիսրայէլ: - 28. Այլ և զամս ծննդեանն քրիստոսի՝ և վասն եօթներորդացն դանիէլի՝ գտցես ի չորրորդ թագաւորութեանց վերջքն ի լ համարն. զոր ընդդէմ *հրէից* գտցես բան: - 29. Իսկ ուրախանալն ի չարն մահ է և անզգայութիւն. և ընդդէմ բժշկողացն մրցումն. որպիսիք էին հեթանոսքն ի կուռս իւրեանց. և *հրէայքն* յօրէնսն. և փաղանք հերետիկոսացն յաղանդս իւրեանց: - 33. Նմանապէս հաւասարի պաշտօն հերձուածողաց և *հրէից*: - 34. Երրորդ՝ *հրէայքն* ո՛չ խոստովանին երեք անձինք և մի բնութիւն: - 34. Չորրորդ՝ *հրէայքն* դաւանին զմովսէս՝ և ուրանան զքրիստոս, զխաչն և զօրէնս նորա: - 34. Հինգերորդ՝ *հրէայքն* տիրանենգք և աստուածասպանք: - 34. Առաջին միտք՝ զի ասաց թէ «հայր գործէ՛ և ես գործեմ». և վասն այնր զչարացան *հրէայքն*, այժմ իբր թէ զնուաստագոյնս ճառէ ի զիջումն բորբոքման նոցա: - 45. Դարձեալ ասէ թէ՝ ետ ինձ հայր, զի մի՛ հակառակ հօր կարծիցեն զորդի. որպէս կարծէին *հրէայքն* լուծանելով զշաբաթսն: - 46. Դարձեալ ընդդէմ այնոցիկ որք արարած ասեն զբանն աստուծոյ և զհոգին. որպէս արիոս. և մակեդոն. և *հրէայք*. և այլք: - 55. Այլ արդ՝ որ հարցնես թէ՝ մարդն քրիստոս տեսանէ՞ զաստուած թէ ո՛չ. համաձայնիս *հրէիցն*. որք ասէին՝ «դու մարդ ես՝ և զանձն քո աստուած առնես»: - 95. Վասն որոյ *հրէայք* գայթակղեցան և հեթանոսք յիմարեցան...: - 95. Եւ դարձեալ՝ որպէս դուդ կարծես և ինքն որդին մարդոյ զինքն ո՛չ ճանաչէ. և *հրէայքն* զորդի ո՛չ ճանաչէին ասելով, «ո՛վ է այն որդին մարդոյ»: - 96. Ապա և որդին մարդոյ եղիցի ըստ կարգին *հրէից* և ո՛չ առաւել: - 96. Եւ միջնորդ հաշտութեան է քրիստոս աստուծոյ և մարդկան. այլև հրեշտակաց և մարդկան. նաև *հրէից* և հեթանոսաց: - 126. Զի *հրէայք* և ասորիք՝ զերեկո՛յն դնեն սկիզբն բնական աւուր...: - 194. Եօթանասունք, Վասն է՞ր զազգն *հրէից* միայն սիրեաց: - 285. Եօթանասունսն, Տալ զօրէնս հեթանոսաց. և օրհնութիւն և անէծք. և բան ընդդէմ *հրէիցն* որք մարմնաւոր ունին զօրհնութիւնս: - 285. Եւ տէր մեր գլուխ *հրէից* և հեթանոսաց: - 305. Ա՛րդ՝ դաւանութեամբն գերազա՛նց եմք մարդկան հեթանոսաց. և մկրտութեամբն՝ *հրէից.* և ծննդեամբն ի հոգւոյն՝ հրեշտակաց. զի նոքա ո՛չ ունին ծնանիլ ի հոգւոյն. և ո՛չ եղբայր լինի քրիստոսի: - 309.

Չորրորդ՝ նշանակէ՛ *զհրէայս* որ էին անդրանիկ ժողովուրդ խոտեցան. և հեթանոսք կրտսերք ընտրեցան և եղեն անդրանիկ ժորովուրդ աստուծոյ: - 310. Նոյնպէս և սատանայ ատէ՛ր զմարդկային բնութիւնս զի ի պատկերն աստուծոյ արարաւ. և *հրէայքն* ատէին զքրիստոս. զի վկայեաց հայր թէ դա՛ է որդի իմ սիրելի: - 313. Նոյնպէս և տէր մեր փոխանակ շնացօղ ազգին *հրէից* ընկալաւ զեկեղեցի կոյս՝ և սուրբ ժողովուրդ իւր: - 313. Զի թէպէտ *հրէա՛յքն* խաչեցին, այլ իւր կամաւն մեռաւ: - 316. Այլ որ ըստոյգն է ասեն թէ՝ մովսէս գրեաց որպէս պատմութիւն, և սողոմոն ստիքսեաց որպէս զիւր բանսն. յետոյ գրեաց և եզրաս հոգւովն աստուծոյ երբ ծախեցան գրեանքն ի *հրէից*: - 321. Եւ քրիստոս *զհրէայսն* ցրւեաց, և ի սիրտ հեթանոսաց նոր ժողովրդեանն աւանդեաց զօրէնսն: - 328. Եւ ի նմանէ լուսաւորեալք՝ պայծառացուցանեն վարդապետութեամբքն իւրեանց զերկու ժողովուրդս որք ի *հրէից* և որք ի հեթանոսաց օծեցան մկրտութեամբն: - 347. Դարձեալ՝ հարաւն նշանակէր *զհրէայս*, և հիւսիս զհեթանոսս. որ լինելոց էին պատարագ և ժողովուրդ աստուծոյ...: - 360. Երկրորդ՝ նշանակէ զերկրպագութիւնն *հրէից*. որ յամենայն կողմանց շուրջ յեէմ երկրպագէին: - 395. Վասն է՞ր հասարակաց արարիչն զազգս *հրէից* միայն սիրեաց այնպիսի օրինօք՝ նշանօք՝ և այլն...: - 398. Ո՛չ միայն *հրէի* կամ հեթանոսի, այլ որք նուիրեն նմա զհաւատս ամբողջ սրբութեամբ՝ արժանի լինին շնորհացն նորա: - 398. Չորրորդ՝ խորհրդական. զի մի է քրիստոս փեսայ. և զեկեղեցիս *հրէից* և հեթանոսաց ընկալաւ իւր հարսն սուրբ: - 401. Վասն հեթանոսաց գրէ զօրէնս և ո՛չ *հրէից* զի առեալ էին: - 402. Երկրորդ՝ զի մեծասցի օրէնքն յաչս *հրէից*: - 402. Այլ այս անէծքս յայտնապէս ի վերայ *հրէիցն* է. որք ո՛չ կատարեն զօրէնս, և ո՛չ ունին զմկրտութիւնն քրիստոսի: - 403. Եւ թէ ասէ *հրէայն*, աստուած օրհնեաց զաբրահամ մարմնով: - 403. Երկրորդ՝ *հրէայքն* ի գերութեան կախեցին զկտակարանքն ի յուռեաց, և ո՛չ հաւատային կենաց. որ ասէր կտակարանքն պահել զպատուիրանս աստուծոյ և կեալ: - 405. Զի **գ** կա՛րգ էին իշխանութեանն *հրէից*: - 421. Եւ յեօթներորդ երեկոյի վախճանին, ծանիցեն և *հրէայք* զմարդեղութիւն բանին: - 422. Թողին և *հրէայք* զտէր մեր և հաւատան նեռին և ի հուր նորին այրեսցին: - 423. Յինգերորդ՝ ոմանք չարք ո՛չ հնազանդէին նմա. որ և ասէին *հրէայքն* «ո՛չ կամիմք թագաւորել դմա ի վերայ մեր». և այժմ ոմանք ո՛չ հնազանդին անհաւատք: - 426. Քսանևթ, հարեալ որմն վկայեաց թէ սպանօ՛ղ է դաւթի սաւուղ. և չարչարեալ և մեռեալ մարմինն վկայէ՛ թէ աստուածասպա՛նք են *հրէայքն*: - 436. Դաւիթ եթող զհրէաստան և բնակեցաւ յայլազգիս. և որդի նորա եթող *զհրէայս* և հանգեաւ ի հեթանոս: - 437. Դաւիթ եհար զամաղէկ որ գերեաց *զհրէայս* և զայլազգիս. և տէր մեր եհար զգերիչն *հրէից* և հեթանոսաց: - 437. Եւ տե՛ս, զի ոչ ինչ էր *հրէիցն* ի տաճարին: - 440. Եւ ինչ ոչ գոյր ի *հրէիցն*, բայց միայն սողոմոն. որոյ հրամանաւն շինեցաւ ի տիպ հեթանոսաց եկեղեցւոյ զոր շինելոց էր տէր մեր: - 440. Տասներորդ՝ յորժամ եկն հեզութեամբ լսէր ի նմանէ. իսկ զայս ամենայն համեմատելով ի վերայ *հրէիցն*՝ յիրաւի ուրեմն դատապարտեսցէ զնոսա ի դատաստանի: - 442. Եւ ի պահպանութիւն աշխարհին *հրէից*՝ առաքեաց սաղմանասար յերկրէն ասորւոց պանդուխտս որ բնակեցան ի սամարիայ և սամարացիք կոչեցան: - 447. Նախ մասնաւոր *հրէից*. և ապա մեր եկեղեցւոյ. և ի կատարածի բովանդակքն. «յորժամ լրումն հեթանոսաց մտցէ, ամենայն իսրայէլ կեցցէ»: - 449. Եւ առաջնորդեն օծեալ քահանայքն յետ դարձին նձգ ամ. մինչև բարձան օծեալքն *հրէից* և ծնաւ ճշմարիտ օծեալն քրիստոս: - 449. Եւ ըստ *հրէից* և շամրտացւոց՝ **դռ** ամ: - 451. Ութերորդ՝ զի մի՛ *հրէայքն* համարելով զքրիստոս ո՛չ ունելով օրինաւոր ծնունդ՝ երևեսցին յիրաւի ի հալածելն զնա: - 461. Նոյնպէս և քրիստոսի մինչ զտղայական հասակն նկարեն, փաթուեալ հանեն զթուղթն ի ձեռն. իբր ի *հրէից* ծնեալ զամենայն ինչ ըստ օրինացն առնել: - 481. Երկրորդ ձեռագիր *հրէիցն*. որ յելսն եգիպտոսի ասացին մովսէսի. «զոր ինչ հրամայէ աստուած՝ լուիցուք և արասցուք»: - 481. Իսկ զձեռագիր *հրէիցն*, և զայն ևս պատառեաց քրիստոս կատարելով զամենայն օրէնս աստուծոյ: - 482. Յինգերորդ՝ զի մի՛ կարծիցի հակառակ ընդ դէմ օրինացն աստուծոյ. որպէս *հրէայքն* և խաչօղքն ասէին՝ «չէ այրն այն յաստուծոյ, զի զշաբաթս ո՛չ պահէ»: - 485. Ութերորդ՝ զի թլփատութեամբն զինքն եղբայր *հրէիցն* ցուցանէր. ըստ այնմ «մարգարէ յարուսցէ ձեզ տէր յեղբարց ձերոց». զի մի՛ մերժեսցեն զնա իբրև զօտար և ոչ վկայեալ ի մարգարէիցն: - 485. Չորրորդ՝ թլփատեցին զնա *հրէայքն*՝ ի չարչարանս՝ սրով խաչին. և զայս զինուորքն պիղատոսի: - 486. Իսկ խաւարումն արեգականն նշանակէ՛ զամենայն կուրութիւնս *հրէիցն*: - 490. Յինգերորդ՝ ածաւ առ հերովդէս. և ի *հրէից* յոյժ չարախօսեալ. և սպիտակ հանդերձ զգեցեալ առ ի նախատինս: - 492. Ասեն ոմանք թէ աջակողմեան աւազակն ի հեթանոսա՛ց էր. և ձախոյն ի *հրէից*: - 495. Զի հեթանոսք զոհէին արեամբ մանկանց. և *հրէայք* արեամբ անբան անասնոց

կատարէին զնաւակատիսս իւրեանց: - 509. Ասեմք թէ և այդ ևս է սուտ պատճառ. զի *հրէից* նախ զատիկն էր և ապա բաղարջակերքն պահք: - 510. Եւ դարձեալ՝ ի քառասունս իւր ո՛չ եկեր ձուկն. և մեք զքրիստոսի քառասունսն պահեմք և ո՛չ *զհրէիցն*: - 510. Ամաղէկ նշանակէ զսատանայ որ գերեաց զհոգիս մարդկան *հրէից* և հեթանոսաց...: - 514. Ասեմք թէ՝ ոչ ինչ է այս նախատինք մեզ. զի հեթանոսք յետոյ հաւատացին և լաւագոյնք են քան *զհրէայս*. և վերջին մշակքն ընդ առաջինսն առին զվարձս. և որք նախանձեցան կորեան: - 549. Եւ զի ճշմարիտ վկայք են սոքա, և տէր մեր առ կուրացեալ *հրէայսն* զսոյն կացոյց վկայ...: - 551-552. Նա՛խ առ *հրէայսն*. որ գիտէին զհոգին սուրբ՝ շնորհաց բաշխօղ. ուստի ելից հոգին զքէսէլիէլ ճարտարապետ. և զեօթնարփեան շնորհս թուէ եսայի...: - 566. Չորրորդ՝ *զհրէայս* և զհեթանոսս ի մի եկեղեցի ժողովեաց: - 585. ...որպէս ասէ առաքեալն, «չիք խտիր ո՛չ *հրէի* և ո՛չ հեթանոսի. ո՛չ ծառայի և ո՛չ ազատի». **զի դուք միապատիւ էք ի քրիստոս յիսուս և համաժառանգք արքայութեանն**: - 590. Եւ թէ *հրէա* ոմն ետես զի հում միս արիւնաթաթախ տայր ժողովրդեանն. և զղջացաւ անկաւ յոտս սրբոյն և մկրտեցաւ: - 599. Այլ և նշանակէ՛ զմարդիկ ընդ հրեշտակաց և *զհրէայս* և զհեթանոսս խառնեալ ի մի եկեղեցի: - 629. Եւ այս է մեկնութիւնն. թէպէտ *հրէայքն* որպէս յանցաւոր մարդ սպանին՝ սուրբ աստուած և ո՛չ սոսկ մարդ: - 632. Այլ և նշանակէ նախ *զհրէայսն* և զհեթանոսս: - 636. Նշանակէ այս զմիութիւն *հրէից* և հեթանոսաց ի մի հօտ և ի մի պաշտօն: - 636. Նոյնպէս և պօղոս *հրէից* և հեթանոսաց վարդապետ: - 644. ...և միաւորեաց զերկինս և զերկիր, *զհրէայս* և զհեթանոսս...: - 646. Եւ ասէ *հրէիցն* թէ ե՛ս եմ քրիստոս խոստացեալն ձեզ...: - 707. ...և *հրէից* ժողովն յարեսցի ի նա՛: - 707. Նստցի ի տաճարին զոր շինեսցեն նմա *հրէայքն*. և ասասցէ թէ, յառաջ քան զիս ո՛չ ոք է ճշմարիտ քրիստոնեայ. այլ նեռինք են ամենայնքն: - 707. ...զսոսա ասեն *հրէայքն* ելանել ի կատարածի և գալ յերուսաղէմ: - 708. Այլ *հրէայքն* յայնժամ դարձցին ի հաւատս քրիստոսի. և եկեղեցի սուրբ խաղաղութեամբ հանգիցէ մինչ ի կատարած աշխարհի...: - 709. Որք արտաքոյ օրինաց մեղանչեցին որպէս կռապաշտք՝ և *հրէայքն* որք յետ խաչելութեանն քրիստոսի. զի յետ խաչին պահպանութիւն օրինացն ի կռապաշտութիւն է համարեալ նոցա: - 739. Որք առին զօրէնս և ո՛չ պահեցին. որպէս չար քրիստոնեայք ի նորս և չար *հրէայքն* ի հինն...: - 739. Երրորդ, զի ի կշիռ արդարութեան դատեաց ի մէջ *հրէից* և հեթանոսաց. մարդկան ազգի և սատանայի: - 746

**ՀՐԷԱՍՏԱՆ +** Քաանկը, Գերութիւնք իսրայէլի և *հրէաստանի*: - 413. Դաւիթ եթող *զհրէաստան* և բնակեցաւ յայլազգիս. և որդի նորա եթող զհրէայս և հանգեաւ ի հեթանոս: - 437. Արդ ի բաժանիլ թագաւորացն *հրէաստանի* յերկուս, յուդայի և իսրայէլի: - 446. Եղիակիմ որ և յովակիմ ամս **ժբ**. ի սորա **Ժ** ամին նաբուգոդոնոսոր *զհրէաստան* հնազանդեաց. և հարկ առեալ յեղիակիմայ գնաց: - 453. Յիսուս ծնանի ի բեթլէհէմ *հրէաստանի*: - 453. Երեքտասաներորդ՝ ամաղեկացիք գերեցին զկողմն *հրէաստանի* և զայլազգիս. և դաւիթ զհետ մտեալ յետ **գ** աւուր և հարեալ ի գիշերի և ի վաղիւն մինչ յերեկոյ. և դարձուցեալ զերկոսին կանայս իւր. և ո՛չ մնաց գերի և ո՛չ մի. և յաւարէ ատտի բաշխեաց ամենայն սիրելեաց իւրոց: - 514

**ՀՐՁԻԳ +** Տնեալ ամս **Ն**. մինչ ի սեդեկիա որ գերեցաւ ի բաբիլօն. և *հրձիգ* եղև տաճարն և եէմ: - 446

***ՀՐՁԻԳ ԱՌՆԵԼ +*** Եւ յետ **Ե** ամսոյ՝ նաբուզարդան դահճապետն *հրձիգ արար* զերուսաղէմ և զտաճարն և զտուն թագաւորացն. և զպարիսպն կործանեաց. և զսիւնսն պղնձի և զաւազանն և զամենայն կահ պղնձի և արծաթի տարաւ ի բաբիլօն: - 447. Յերկոտասան ամին սեդեկիայ՝ նաբուգոդոնոսոր քաղդէացի էառ զէմ և զտաճարն *հրձիգ առնէ*: - 453.

**ՀՐՃՈՒԱՆՔ +** Որում համեմատեալ այլ ուստէք ամենայն *հրճուանք* տրտմութիւն է ...: - 762

**ՀՐՃՈՒԻՄ +** Նախ եղիցի ուրախութիւն ի մարմնի, բաղդատելով առ այն որ եղիցի մերձ ինքեան. այսինքն զի ա՛յլ մարմինք փառաւորեալ առաջի նորա *հրճուին*: - 764

**ՀՐՈՏԻՑ +** Եւ **բ** ի վերայ եղանակացդ. Մարգաց. և *Յրոտից*: - 200. ...և *Յրոտից*, ըստ դրութեան է. զի հո՛ւր է ոտիցն որ այրէ՛ ներքուստ ի վեր ջերմութիւն արեգականն: - 201

**ՀՈՏ +** Այլ սոքա ինքեանց և բազմաց. այսինքն *հոտին* քրիստոսի. «յափշտակելով ի նմանէ և ինքեանց առնելով» ասէ սուրբն կիւրեղ. և յետոյ գրով աւանդեցին զչար աղանդն այլոց չար յիշատակ և ի կորուստ անձանց իւրեանց: - 33. Զի մինն հասարակ է. և միակն մասնաւոր և առանձնակի. զի ամենայն միակ՝ մի է. այլ ամենայն մի միակ ո՛չ է. որպէս յորժամ ասեմք՝ մի *հօտ*. մի շեղջ. մի լիտր. այսպիսիքս մի են. այլ միակ ո՛չ են: - 109. Եւ զի *հօտք* ի հովուաց առ փարախս և ի գոմս ածին: - 196. Քաղոց. զի արձակի խոյն ի *հօտն* ըստ հաճարեղ արանցն: - 200. Եւ յաւուր փորձութեանցն հուր անկեալ յերկնից այրեաց *զհօտսն*. և ասպատակք աւար առին զուղտն և զէշսն և զեզինսն: - 321. Երկրորդ՝ հուրն այրեաց *զհօտսն*: - 322. Երրորդ,

նա՛ հովիւ *հօտից*. և տէր մեր հովիւ կոչեցաւ իմանալեացն վերնոց և մարդկան մոլորելոց: - 435. Մետասաներորդ, ի բերանոց գազանաց կորզէր *զհօտս*. և տէր մեր փշրելով զժանիս մեղաւորին, կորզեաց զհաւատացեալս իւր: - 436. Իսկ ըստ ժողովման, որպէս եկեղեցի. և անձն. *հօտ.* կամ քաղաք: - 476. Վեցերորդ՝ զի եկեղեցին փարա՛խ է բանաւոր *հօտից*. և ո՛չ անբանից: - 617. Նշանակէ այս զմիութիւն հրէից և հեթանոսաց ի մի *հօտ* և ի մի պաշտօն: - 636.

# Ծ

**ԾԱԳ +** Երրորդ՝ զի պա՛րտ էր քրիստոսի հովուել զպարզամիտ աշակերտսն որպէս հաւ *զծագս*, և մայր զմանկունսն. և թէ ի սկզբանէ զհոգին ընկալեալ էին՝ ո՛չ էր պիտոյ հովուել զնոսա: - 521

**ԾԱԽ +** Իսկ ոմանք յաւելուն յնս ամբարշտութիւն. իբր փախչելով ի *ծախոյն* խոտորին յաջ կողմն: - 13. Եւ ընդ դէմ նմին արիոս ի *ծախ* խոտորեալ՝ **գ** անձինք և **գ** բնութիւնս որոշեաց: - 80-81. Եւ փայծեղն հո՛վ է ի *ծախ* կողմանէ: - 242. Վասն այն յորժամ ննջէ մարդն ի վերայ *ծախ* կողմանն, շուտո՛վ հալի կերակուրն քան ի վերայ աջ կողմանն: - 242. Վասն է՞ր մարդոյն աջ կողմն ուժով է քան *զծախն*: - 243. Եւ փայծեղն և թոքն ցրտայինք ի *ծախ* կողմն են. վասն այն աջն զօրեղ է և *ծախն* տկար: - 243. Եւ *ծախ* կողքն **ը**. որ լինին սոքա **խ**: - 243. Եւ ի *ծախ* կողմն զօղն ժողովեալ որ առնու ի թոքէն: - 244. Փառք՝ *ծախոյ* ձեռն: - 250. Եւ էգն հոգևորի յետ **ծ** աւուրն՝ որպէս ասացաք զպատճառն վասն տեղւոյն ցրտութեան որ է՛ *ծախ* կողմն արգանդին. որ ցուրտ գոլով վասն փայծաղանն՝ յապաղէ՛ զկազմուած նիւթոյն ի կրկնապատիկ ժամանակս **ծ** աւուրց: - 261. Երկրորդ՝ զի ի *ծախ* կողէ՛ շինեցաւ կինն. և տկա՛ր է *ծախ* կողմն մարդոյս: - 276. Եւ զայծիսն ի *ծախն* և ասէ՝ «երթա՛յք յինէն ա՛նիծեալք», և տայ նոցա զտանջանս յաւիտենից: - 317. Եւ ի *ծախն*, Ադօնիա՛. տէր տէրանց ընդ մեզ: - 338. Եւ մարգարէն դաւիթ ի *ծախ* կողմն **ռ**ք, և ի յաջն բիւրք ասէ անկանիլ: - 404. Եւ տէր մեր յաղթեաց իշխանին դիւաց. և եհատ զնորայն բռնութիւն աջոյ. և զոմանս եթող *ծախիւ* թիւրելոյ և զընտիրս որոշելոյ: - 419. Յայս միտս ի կենդանագիր կուսին՝ ի *ծախոյ* գիրկս լինի փրկչական պատկերն. նոյնպէս և առ ի խաչին ի յաջակողմն կացեալ: - 441. Ասեն ոմանք թէ աջակողմեան աւազակն ի հեթանոսա՛ց էր. և *ծախոյն* ի հրէից: - 495. Դարձեալ՝ ի դատաստանի յորժամ դպրութիւնք բանին, որք աստ ի *ծախմէ* մարմնոյ՝ փոխեսցին յաջմէ. և որք յաջմէ՝ յահեկէ՛: - 646. Տասներորդ, և աստի ընտրեալքն յաջմէ, և խոտելիքն ի *ծախմէ* միշտ նշանակին: - 646. Եւ աջակողմ և *ծախ.* և ահագին դատելոցն: - 661. ...և ա՛յս ճանապարհ է ի *ծախմէն* և թիւր: - 666. Խորան ասեն աջակողմ և ծախակողմ. այսինքն ի քաղցր հայեցողութիւնն քրիստոսի որ է աջ. և ի դառն և ահաւոր որ է՛ *ծախ*: - 686. Իսկ հիւսիս բա՛րձր է. և լուսաւորքն հեռու. և է *ծախ* կողմն աշխարհի. վասն այն ցուրտ է և սառնամանիք: - 731. Զի՞նչ է աջ կողմն քրիստոսի և *ծախ:* - 738. Իսկ մեղաւորքն ի *ծախմէ*. այսինքն վայր ի յերկիր ծանրացեալ մեղօքն. որպէս կապար ի յերկիր հակեալ. ուր բոլորով սրտիւ սիրեցին զնա: - 738. Դարձեալ, աջն արևելք է՝ և *ծախն* արևմուտք: - 738. Ի յաջմէ մեղքն մատնիչ, ի *ծախմէ* դևքն ահագին: - 738

**ԾԱԽԱԿՈՂՄԵԱՆ +** Աջ և ահեակն զընտրութիւն դատաստանին. զփառս աջակողմեանց, և զպատիժ *ծախակողմեանց:* - 493. Եւ ա՛յս է յաջ կողմն խոտորիլ. իսկ առաջինքն *ծախակողմեան* էին: - 561. Իսկ *ծախակողմեան* խորան՝ է՛ ի յօդս յաներևոյթ տեղիս. ուր ժողովին հոգիք չարաց և մեղաւորաց. որք դատաստանաւն դատապարտին: - 688. Եւ այսոքիկ են աջակողմեան և *ծախակողմեան* խորանք: - 689. Դժոխքն նշանակէ զդժուարին և զնեղ տեղիս որ է՛ խորանն *ծախակողմեան*. ուր մեղաւորքն կրկին ունին զտանջանս: - 690. Դարձեալ, զի յարևելս բազմեալ դատաւորն. և աջակողմեանքն լինին ի վերայ օդոյ ի կողմն հիւսիսոյ. և *ծախակողմեանքն* վայր ի յերկրի ի կողմն հարաւոյ...: - 731

**ԾԱԽԱԿՈՂՄ +** Խորան ասեն աջակողմ և *ծախակողմ*. այսինքն ի քաղցր հայեցողութիւնն քրիստոսի որ է աջ. և ի դառն և ահաւոր որ է՛ ծախ: - 686. Որք աստ ունին զյաջողակ գործս բարեաց կամ ծախողակ. և նոյնպէս դասին յաջակողմն և *ծախակողմն* քրիստոսի: - 689

**ԾԱԽՈՂԱԿ +** Որք աստ ունին զյաջողակ գործս բարեաց կամ *ծախողակ*. և նոյնպէս դասին յաջակողմն և ծախակողմն քրիստոսի: - 689

**ԾԱԽՈՂԱԿԻ +** Եւ դարձեալ ի բարութիւն և ի հանգիստ ելեալ ի *ծախողակի՛* կենցաղոյս: - 521. Եւ թէ *ծախողակի* վրիպութիւնք ամփոփե՛ն տրտմականօք, ի հաւատն սփոփեսցիս և մի անկցիս յուսահատեալ: - 770

**ԾԱՂԱՆՔ +** Եւ տէր մեր յեօթն տեղւոջ է *ծաղանօք* երիցս կապեալ: - 423

**ԾԱՂԵՄ +** Այլ և ասեն վարդապետք, Վասն ամբարշտին՝ *ծաղի՛* գթութիւնն: - 491. Վեցերորդ՝ ածաւ վերստին առ պիղատոս. և անդ խնդրեցին ի խաչ հանել. և զկնի *ծաղեալ*. և թուք ընկալեալ. և ի խաչ դատապարտեցաւ: - 492

**ԾԱՂԿ +** այլ չոր *ծաղկն* դալարիւր. այսինքն թէ ի զանգուածոյն ադամայ ունէր ինչ փոշետեսակ՝ սրբեցաւ հրով հոգւոյն սրբոյ: - 331

**ԾԱՅՆ +** Այսպէս սոքա կոչմամբ և *ծայնիւ* միաւորեն, և իրօք և բնութեամբ բաժանեն և որոշեն: - 82. Ոչ մոլորիմք մեք ի հոմանուն *ծայնս* նոցա: - 83. Եւ որպէս *ծայնն* և բանն՝ մի ներգործութիւն կատարեն և ո՛չ

երկուս: - 86. Իսկ թէ անիր, ապա միայն անուա՛մբ է մի և ո՛չ իրօք. որպէս հոմանուն *ձայն* անուամբ հաղորդեալ և բնութեամբ այլև այլ: - 86. Որպէս հոմանուն *ձայն* ի զանազան նշանակեալս: - 87. Այլ և ոչ որպէս հոմանուն *ձայն*: - 88. Նախ՝ զի հոմանուն *ձայնն* միայն անուանն և ո՛չ իրի հաղորդի: - 88. Եւ որպէս ասէ փիլիսոփայն՝ երեք են յասացելոցդ իսկապէս եղանակք բաժանման. այսինքն Որպէս սեռ ի տեսակս. Որպէս բոլոր ի մասունս. Որպէս համանուն *ձայն*: - 89. Իսկ որպէս հոմանուն *ձայն*, զի հաւասարապէս հաղորդի որոց կոչինն. որպէս խոյ երկնային և երկրային և ջրային. զի ո՛չ առաւել և ո՛չ նըւազ կոչին. այլ հաւասարապէս: - 89. Այսպէս և նեստոր մի ասէր զքրիստոս ո՛չ ըստ իրին միութեան, այլ ըստ անուանն համաձայնութեան. որպէս հոմանուն *ձայն* մի ունելով զկոչմունս, և զանազան բնութիւնս ի ներքոյ մի անուանն: - 90. Անհաւասա՛ր է պարգևն ըստ հնչման *ձայնի*: - 102. Եւ թէ՝ բանս մեր միաւորեալ է ընդ *ձայնի*: - 102. Եւ որպէս մի է *ձայնն*, բազմանայ ի բազում լսելիս: - 113. Երրորդ՝ զի բանս մեր *ձայնիւ* յամենայն լսելիս անցանէ և թղթով յամենայն տեղիս ընթանայ. և բանն աստուծոյ սո՛ւր է և հատու և ընդ ամենայն է քրիստոս անցանէ թափանցաբար: - 121. Զի մի՛ է *ձայնն* յառաջ եկեալ յասողէն. իսկ լսօղք՝ առաւել և նըւազ ընդունին: - 131. Զի՞նչ է պատճառ՝ որ արտաբերեալ բանս մեր միաւորեալ է ընդ *ձայնի*. և բացակայքն զձայնն լսեն՝ և զբանն ո՛չ: - 131. Զի՞նչ է պատճառ՝ որ արտաբերեալ բանս մեր միաւորեալ է ընդ ձայնի. և բացակայքն *զձայնն* լսեն՝ և զբանն ո՛չ: - 131. Ա՛յլ է բանն՝ և ա՛յլ է *ձայնն*. զի բանն անմարմին ծնունդն է մտաց. և *ձայնն* է՛ շարժումն օդոյ ի ձայնական գործեաց ի յօդս բախեալ. իսկ ի սրտի միաւորին նոքա՝ այսինքն բանն և *ձայնն*. և լեզուաւ յօ՛դս բախեալ՝ հասանէ մինչև ի լսելիս, և անդ *ձայնն* արտաքոյ մնացեալ, և բանն անմարմին ի միտս լսողացն նստեալ: - 131. Ա՛րդ՝ ասեմք նախ եթէ՝ *ձայնն* ծածկո՛յթ է բանին. յաղագս որոյ հեռաւորքն զծածկո՛յթն տեսանեն, և զծածկեալն ո՛չ: - 131. Երկրորդ՝ զի *ձայնին* ընդունարան է լսելիքն մերձ գոլով օդոյն: - 131. Երրորդ՝ բացակացեալն ընդ աղօտ լսէ ո՛չ *զձայն* բերանոյն, այլ *զձայն* բախման օդոյն. որպէս արձագանչումն յինքն նկարէ *զձայնն* և ո՛չ զբանն: - 131. Նմանապէս և նըւազ *ձայնն* այն՝ փոխո՛ւմն է առաջին *ձայնին*. վասն այն լսէ *զձայնն* և ո՛չ զբանն: - 131. Իսկ որ զգայարանօքն տեսանէ, այսինքն աչօքն զգոյնն, ականջօքն *զձայնն*, և այլն. կոչի սա զգայական տեսութիւն: - 142. Նախ՝ զի հնչէ՛ *ձայն*: - 177. Արդ հնչէ *զձայնն* ըստ ինքեան միայն. և ծնանի զբանն շարադրեալ ընդ բաղաձայնս: - 177. Ապա ուրեմն ձայնաւոր գիրն է *ձայն*, և է տեսակ, և հոգի, և արու: - 177-178. Գործ զգայարանացն է զարտաքինս ի ներքս զգալ. որպէս աչօք զգոյնս. և ականջով *զձայնս*. և այլն: - 179. Արդ ամենայն ինչ որ զգալի է՝ ի ներքս ի սմա՛ է. *ձա՛յն*. գո՛յն. հո՛տ. հա՛մ. ծա՛նր և թեթև. և ո՛չ ինչ է արտաքոյ սորա. յաղագս որոյ և ո՛չ զգայարանաց կարօտի: - 179. Վասն այն՝ ձեռն և *ձայն* և բան և թիւ և կարգ աւուրցն եդան: - 192. Այլ և հնչեն հաւք զանազան *ձայնս*: - 197. Այլ *ձայնն* յա՛մր հասանէ ի լսելիս քան զփայլակն. վասն որոյ յետո՛յ լսի: - 204. Վասն է՞ր է՝ զի ջրայինքն և սողունքն *ձայն* ո՛չ ունին: - 216. *Ձայնի* պիտո՛յ է **բ** ինչ: - 216. Նախ՝ օդն. որ էութիւն է *ձայնի*: - 216. Արդ՝ ցամաքային կենդանիքն զերկոսին զսոսա՛ ունին. վասն որոյ *ձայն* արձակեն: - 216. Եւ սողունք որք պակա՛ս են ի ձայնական գործեաց, սո՛ւղ են և *ձայնից*: - 216. Եւ սողունք կոչին, կամ զի սողալով գնան. կամ սղացեալ են ոտիւք. կամ զի սո՛ւղ են *ձայնիւ*: - 216. Ութերորդ՝ զխոհեմութեան և խօսից և *ձայնից* և տէրութեան շնորհին այժմ երևեցո՛յց ի յադամ: - 219. Զի ի կոչումն անուան՝ չորքս այսոքիկ երևին միանգամայն. բանն և խօսքն և *ձայնն* և տեսութիւնն. այսոքիւք զմարդն կատարեալ երևեցոյց աստուած: - 219. Տասներորդ՝ անունն յարմար նշանակութիւն է կենդանեաց ըստ բարուցն և զանազան կերպիցն եդեալ. զի ամենայն անուն՝ յիրէն և ի գործոյն և ի *ձայնէն* դնի: - 220. Եւ ի *ձայնէն*, որպէս ճնճղուկ. ծիծառն. խօսօղ. ագռաւ. և այլն: - 220. Ի պատիւ մեծարեաց զմարդն. և նա՛խ՝ պատրաստեաց պէտս զանազան կերակրոց և ըմպելեաց որպէս ասացաք. և վառեաց զճրագ լուսաւորացն. և զգեղեցիկ *ձայն* երգեցողաց թռչնոց. և զզուարճութիւն զանազան ծաղկանց. և ապա՛ զմարդն ի պատիւ էած...: - 230. Եւ թէ ոք ասիցէ, խառնուածոցն է այս, կամ յատուկ տեսակաց. որպէս *ձայնք* և տերևք և կենդանիք չեն նման միմեանց: - 237. Նախ՝ բնական. զի յառաջ եղեալն աչացն անփոփո՛խ է իրօք. և ականջին *ձայնն* և բանն փոփոխական: - 239. *Ձայնն* նման ոչխարաց և այծից՝ յիմարի՛ է: - 247. *Ձայնն* բարակ՝ տխո՛ւր է և կարճոտ: - 247. Եւ որոց *ձայն* յռնգունսն հնչէ, ստաբանք են և չարախնդացք: - 247. *Ձայնն* ի լեզուն: - 250. Դարձեալ խորհուրդ մարդոյն ճանաչի յերից. այսինքն կամ ի կերպէ՛ և յօրինակէ խօսիցն և *ձայնին*: - 250. Հինգերորդ՝ երկիւղն յայնմ. զի լւան *զձայն* գնալոյ տեառն և երկեան: - 280. Եւ որպէս է **է** գործիք *ձայնին*, որ է՛ թոքն. խռչափողն. մակալեզուն. բերանն. լեզուն. ատամունքն. և շրթունքն. և սոքա միաբանին ի խօսքն: - 296. Ութևժ, որպէս վասն իսահակայ եղև *ձայն* յերկնից. այսինքն «օրհնելով օրհնեցից». որ է՛ յայտնեցից երկնի և երկրի: - 306. Եւ վասն տեառն եղև *ձայն* «փառաւոր արարի, և դարձեալ փառաւոր արարից»...: - 306. Ուստի յայտ է զի բարձր գոչեաց և եհան զոգի. զի ամենայն մարդկան նուազի *ձայնն* ի ժամ մահուանն: -

316. Տասներորդ՝ ընդ նոսա *ձայնն* աստուծոյ խօսեցաւ. և ընդ մեզ բանն: - 353. Առաջին, զի նախ *ձայնն* հասանէ, և ապա՛ բանն իբր կարապետ եղեալ բանին: - 353. Երկրորդ՝ նոքա *զձայնն* ի հեռուստ լսէին. և մեք զբանն ի մօտոյ: - 353. Երրորդ՝ *զձայնն* միայն լսեցին և զտեսիլն ո՛չ տեսին. և մեք լուաք և տեսաք և շօշափեցաք զբանն կենաց: - 353. Չորրորդ՝ նոցա *ձայնն* միջնորդով օդիւ և մարգարէիւքն. և ընդ մեզ բանն աստուած անընդմիջաբար խօսեցեալ: - 353. Հինգերորդ, նոցա *ձայնն* որոտմամբ ահագին. և մեզ բանն հանդարտ և քաղցր: - 354. Վեցերորդ, նոցա *ձայնիւ* օրինակաւ. և մեզ բանիւ ճշմարտութեամբ: - 354. Եօթներորդ, նոցա *ձայն* զգայարանաց. և մեզ բանն իմաստութեան: - 354. Ութերորդ, *ձայն* փոփոխի. և բանն մնայ: - 354. Իններորդ, *զձայն* և անասունք լսեն. և զբանն մարդ միայն: - 354. Տասներորդ՝ *ձայնն* երկիւղէ տղայոց. և բանն երկիւղէ կատարելոց: - 354. Գինին ուրախութեան *ձայնք* պաշտամանց քահանայից: - 375. Հմայն է՝ որ զտեսս աչաց կամ *զձայն* հմայէ՛. և զթռիչս և զկլռիչս հաւուց. և *զձայն* կրակի և զաճառաց. և զդրան, կամ աքիս տեսեալ. կամ բէճ. կամ մուճակ. կամ այլ ինչ այսպիսի...: - 388. Երրորդ՝ ահագին երևումն դատաւորին. և *ձայն* փողոյն, և հուր նախընթաց: - 393. Վեցերորդ՝ դարձեալ տէր մեր յիսուս քրիստոս որ եղև զգեստ հաւատացելոց իւրոց. մկրտեցաւ ի յորդանան. և *ձայն* հօր վկայեաց. և աղաւնակերպ հոգին էջ ի վերայ նորա: - 421. ...երիս զօրութեամբ ի վերայ խաչին. որ է՛ *ձայնիւն* և մարմնովն և հոգւովն որ էջ ի դժոխս. կամ **գ** գոյացութեամբ. այսինքն աստուածութեանն և հոգւոյն և մարմնոյն: - 427. Չորեքտասաներորդ, ցպով և պարսաքարով ել ընդ դէմ գողիաթու. և տէր մեր խաչիւ որ վէմ կոչեցաւ, և ի *ձայն* բարձր աղաղակեաց և արձակեաց զհոգին: - 436. Եւ *ձայն* աղաղակին՝ *ձայն* փողոյն: - 444. *Ձայնքն* հնչեցին: - 456. Իններորդ՝ հոգին էջ ի յորդանան և *ձայնն* հօր: - 471. Իսկ մկրտութիւն նորա ո՛չ որդեգրութեան էր որպէս մերս. այլ ճշմարիտ որդիութեանն յայտնութիւն ըստ *ձայնին* հօր «դա՛ է որդի իմ սիրելի»: - 474. Եւ զանազան *ձայնք* քնարի՝ մի ենթակայ օդով միաւորին: - 476. Չորրորդ «*ձայնն* հօր». նշանակէ թէ մկրտութեամբն լինիմք շնորհօք որդիք աստուծոյ. որպէս ասէ աւետարանն յոհաննու. «որք ո՛չ յարենէ և ի կամաց առն, այլ յաստուծոյ ծնան»...: - 487. Հոգին սուրբ աղաւնակերպ. իսկ Դիտաւորութիւնն հետևիլն *ձայնին* առ որ մկրտի: - 487. Իսկ *ձայնն* հօր ի վերայ որդւոյն՝ ցուցանէ զգերազանցութիւնն քրիստոսի: - 487. Եւ ի *ձայնէն* վէմք պատառեալ և երկիր շարժեալ, տեղի ետուն իջանել ի նոսա՛. և քարացեալ սիրտ նոցա ո՛չ շարժեցաւ: - 490. Ապա վասն է՞ր յէմ ասեն զժոխքն՝ թէ է՛ այր դիւահոտ և *ձայն* աղաղակի և չարչարանք և այրեցումն չարաչար դիւաց լսելի լինի: - 504. Վեցերորդ՝ համբարձաւ *ձայնիւ* փողով ըստ դաւթի...: - 520. Տասներորդ՝ զի օդ յիւրաքանչիւր ոք զանազան արտաբերէ *զձայն* և զբան: - 523. Այնց է իմանալ, ուր ժողով լինէր մի լեզուաւ խօսէր ոք առաքեալ, և ամենայն ոք լսէր իւր *ձայնիւն*: - 525. Քառասունսն**ը**, Ութ *ձայնից* գիւտն: - 527. Եւ փոփոխումն *ձայնից*. և շարականաց քաղելն: - 527. Չորրորդ՝ այժմ մանկունք հաւատոյ ի յեկեղեցիս նոր օրհնութիւն տալով **գ** սրբեան *ձայնիւ* աստուածաբանե՛ն զխաչեալն քրիստոս. և օրհնեն ի վերայ արքայութեան աթոռոյ խաչին: - 529. Կամ որպէս բոլոր ի մասունս. կամ որպէս հոմանուն *ձայն*. կամ որպէս ի միոջէ և առ մի: - 533. Իսկ ի թաբօր լերինն *ձայնիւ* հայրական և հովանեաւ հոգւոյն եղև քահանայ. ցուցեալ մովսէս և եղիա սարկաւագունք յաջմէ և յահեկէ: - 607. Եւ տապանն նշանակէ՛ զեկեղեցի. որք ի *ձայն* ժամահարին ժողովին և ապրին ի ջուրց հեղեղաց մեղաց: - 618. Երրորդ *ձայնիւ*. ըստ այնմ «*ձայնիւ* իմով ես առ տէր կարդացի»...: - 619. Եւ այս է պատճառն, զի աստուած ետ մեզ միտք և բան և *ձայնի* գործիք և մարմնոյ մասունք և ինչք. վասն որոյ յամենայնէ՛ նուիրելի՛ է աստուծոյ: - 619. Զի՞նչ է խորհուրդ կանոն գլխին որ *ձայնիւ* ասեմք: - 626. Նոյնպէս և **ը** *ձայն* եղանակաց. և **ը** օրեայ զտօնս գլխաւորս. որպէս ծննդեանն ութն օր. և յարութեանն՝ և հոգւոյն գալստեանն՝ և խաչի՝ և եկեղեցւոյ՝ և այլն: - 627. Իսկ զոր կանոն գլուխ կոչեմք, ասելով զ գուբղայ հանդարտ ի թիւ. և զեօթներորդն *ձայնիւ*: - 627. Ի յայս միտս զվեց գուբղայն ի թիւ ասեմք. և զեօթներորդն *ձայնիւ* փողոյ: - 627. Երկրորդ՝ նշանակէ *զձայն* փողոյն, և ապա՛ զօրհնութիւն յարուցելոցն: - 627. Եղիցի անունն, վասն ադամայ նուազ *ձայնիւ*: - 628. Եւ այն որ **բ** *ձայնիցն* մի է մեսեդին. զի դարն ադամայ և ենովքայ միապէս բնական օրինօքն վարեին: - 629. Եւ սուրբն կիւրեղ ասաց ի ժողովն եփեսոսի. զմիածին որդին *ձայնիւ* ընդ դէմ նեստորի: - 632. Զաւագ օրհնութիւնքն զեօթն *ձայնիցն*, ստեփաննոս սիւնեցին: - 637. Վասն է՞ր **ը** են *ձայնք*: - 639. **Երկրորդ՝ ամեննին *ձայն* առանց բանի. որպէս գոչումն:** - 639. Երրորդ՝ որ բանն առաւե՛լ է քան *զձայնն*. որպէս երգ շարականաց: - 639. Չորրորդ՝ *ձայնն* առաւել քան զբանն. որպէս ձայնաւոր երգք: - 639. Հինգերորդ՝ որ հաւասա՛ր է բանն և *ձայնն* ի լեզուն. որպէս բարբառ խօսից: - 639. Այլ և ութն *ձայնք* **դ** են ըստ չորից տարերց. այս է՝ առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ: - 639. Եւ մի *ձայն* է այլ ամենայն տաղք և երգք: - 639. Եւ ոմանք ասեն **ը** *ձայն* վասն ութ ձայնաւոր գրոց. և **ժ** *ձայն* ըստ **ժ** առոգանութեանցն: - 640. Եւ դարձեալ՝ ութ *ձայն* ի խորհուրդ ութն դարուց: - 640. Եւ զի չորք են *ձայնք*

բնականք ըստ չորից տարերց, ցուցցի հոգեպէս: - 640. Առաջին՝ *ձայն* իմանալեաց: - 640. Երկրի *ձայն* տարերց: - 640. Առաջին *ձայն* աստուծոյ, ի ստեղծումն զմարդն ի հողոյ: - 640. Դարձեալ՝ առաջին *ձայնն* ի յերկրէ ի ծնունդն մարմնով: - 640. Այս է խորհուրդ չորս *ձայնից*: - 640. Ո՞րք գտին *զձայնս*: - 640. Ասեն եթէ՝ սեփաննոս ոմն երաժիշտ զամենայն *ձայնս* գոյից բաժանեաց **իզ**...: - 640. ...որ զամենայն կենդանեաց *ձայնս* նովաւ երգէին: - 640. Իսկ յետ սորա՝ Սինիգրէս արար զառաջին *ձայնն,* ի հիւսնականէ՛ գտեալ արուեստից: - 640. ...և Փոկեղէդէս եղբայր նորա՝ արար զերկրորդ *ձայնն* ի դարբնականէ՛...: - 640. ...ապա՛ Սոփէկղիդէս եղբայր սոցա եգիտ **զ**երրորդ *ձայնն* ի հոսանաց...: - 640. ...ապա Պապիանոս քեռորդի սոցա՝ արար զչորրորդ *ձայնն* ի ծփանաց ծովու: - 640. Եւ ապա՛ քինոսփէնէս հմուտ *ձայնից* գազանաց և թռչնոց, զատուցանէ՛ զկողմն առաջին ձայնին: - 640. Եւ ապա՛ քինոսփէնէս հմուտ ձայնից գազանաց և թռչնոց, զատուցանէ՛ զկողմն առաջին *ձայնին*: - 640. Ապա՛ աքիլեւս, զատուցանէ՛ զկողմն երկրորդ *ձայնին* որ կոչի աւագ կողմն: - 640. Եւ **զ**երրորդ *ձայնին* որ կոչի վառ: - 640. Ապա՛ նոմինոս, զատոյց զկողմն չորրորդ *ձայնին*. որ է՛ վերջին: - 640. Եւ թէոփիլեանք ոմանք կոչեցեալք, արարին զերկու ստեղունս ասացեալ. և այսպէս աւարտեցաւ **ժ** *ձայնքն*: - 640. Վասն է՞ր *ձայն* և քնար խառնէր դաւիթ ի յերգս հոգւոյն: - 641. Նա՛խ՝ զի մարդն հոգի է և մարմին, *ձայնիւ* և ձեռօք երգէր. զերկու մատունս ի մի լծակցեալ յօրհնութիւնն աստուծոյ: - 641. Երրորդ՝ զի քաղցր *ձայնիւ* հեշտացեալ մարդիկ՝ զանխլաբար ուսցին զհոգւոյն բանս: - 641. Չորրորդ՝ զի մասունք արարածոց *ձայն* ունին և բան չունին...: - 641. ...վասն որոյ խառնէ՛ *զձայնս* նոցա ի բանս իւր և մատուցանէ աստուծոյ: - 641. Դարձեալ՝ նոցա կրկին աղի. իսկ մերն բան և *ձայն*. և հոգի և մարմին: - 641. *Զձայնն* ո՞րպէս գիտենամք թէ ո՞ր դասուն է: - 641. ...առաջին *ձայնն* ա՛ջ դասուն է, և կողմն ահեակ: - 641. ...առաջին *ձայնն* ահեակ դասուն է, և կողմն աջ: - 641. Վասն է՞ր ի բուն բարեկենդանն *զձայնն* ի վերջ փոխեմք: - 641. Զի մեծ զատկի կիրակէն առաջի *ձայն* լիցի. որ զյարութեանն ունի խորհուրդ: - 641. Նախ որպէս *ձայնիւ* եղանակաւ նման միմեանց. որպէս զողորմեայքն առ նոյն. և զտէր յերկնիցն առ նոյն: - 642. Զաւետարանն յառաջին *ձայնն*. և զառաքեալն յերկրորդ...: - 643. ...և զմարգարէսն ի չորրորդ *ձայնս* է ընթեռնլի. և ներբողեանն ի վերջին *ձայնն*: - 643. Եւ *ձայն* բուրվառին՝ որպէս փողքն: - 644. Պղինձ հնչօղ *ձայնն* ի յերգս աստուծոյ պարապեալ: - 645. ...և արտադրէ՛ հառաչումն *ձայնից* և ողբ աղէողորմ: - 670. Վեցերորդ, ի փոփոխումն աստուածածին կուսին յետ **գ** յաւուր *ձայն* հրեշտակացն դադարեցաւ...: - 681. ...այլ սրտմտութեամբ տանջանաց արդէն իսկ դատապարտելոց ըստ աւետարանին *ձայնի*: - 688-689. ...և աղաղակէին բարձր *ձայնիւ*՝ մինչ յե՞րբ տէր սուրբ և ճշմարիտ ո՛չ դատես և առնուս զվրէժ արեան մերոյ: - 694. Դարձեալ ընդ դէմ բերեն *զձայնն* երկնային եթէ՝ «ծառայք իմ եկա՛յք և հանգերուք»: - 697. Ասեմք եթէ՝ *ձայնիւն* և պսակաւն եցոյց մարդկան և լսեցոյց ի յաչս և ի յականջս թէ զայնպիսի կեանս վիճակեցին նոքա որք սուրբք են ի մարդկանէ. - 697. Անդ ի քունն *ձայն* լսէ թէ՝ կին դու յղասցիս մեծ ոմն: - 706. Զի՞նչ է *ձայն* փողոյն: - 713. Նախ *ձայն* փողոյ է՛ հրամանն քրիստոսի որ հրամայէ՛ զյարութիւնն: - 713. Երկրորդ երևելի *ձայնն* հրեշտակապետին. որպէս *ձայնն* փողոյ ի սինա լերինն. և ազդումն զօրութեանն քրիստոսի: - 713. Եւ հրեշտակք զխաչն բարձեալ առաջի երթիցեն. և զմեռեալս՝ փողով և *ձայնիւ* ընդ առաջ նորա զարթուսցեն: - 734. Նոյնպէս և ի միոյ *ձայնէն* ոմանք զօրհնութիւնս և այլք զանէծսն լսեն: - 739. Որպէս բան ի *ձայն* և բան ի գիր՝ և լոյս յօդ՝ և տեսութիւն յակն՝ և հուր յերկաթ՝ և մուխ ի պողուատ: - 769-770. Եւ ի լսելեացս հեշտութիւն՝ լուռ՛ *զձայն* քո: - 771

**ՁԱՅՆԱԿԱՆ +** Ա՛յլ է բանն՝ և ա՛յլ է ձայնն. զի բանն անմարմին ծնունդն է մտաց. և ձայնն է՛ շարժումն օդոյ ի *ձայնական* գործեաց ի յօդս բախեալ. իսկ ի սրտի միաւորին նոքա՝ այսինքն բանն և ձայնն. և լեզուաւ յօ՛դս բախեալ՝ հասանէ մինչև ի լսելիս, և անդ ձայնն արտաքոյ մնացեալ, և բանն անմարմին ի միտս լսողացն նստեալ: - 131. Նախ՝ *ձայնական* բանիւ՝ ձևացեալ մարմնովն: - 145. Որպէս ո՛չ արտաբերի հնչումն *ձայնական* գործեաց և ո՛չ փոփոխէ զօդն որ ի մէջն: -145. Երկրորդ՝ *ձայնական* գործիքն. որ են **է**. որպէս Շրթունք. Ատամունք. Լեզու. Մակալեզու. Բերան. Խռչափող. Թոք: - 216. Եւ սողունք որք պակա՛ս են ի *ձայնական* գործեաց, սո՛ւղ են և ձայնից: - 216. Եւ ի մեզ **է** են *ձայնական* գործիք որով սաղմոսե՛մք: - 431. Իցէ՞ անդ *ձայնական* խօսք: - 739. Որով հետև ի վերայ երկրի և օդոյ է դատաստանն, հաւատալի՛ է և *ձայնական* խօսից: - 739

**ՁԱՅՆԱՒՈՐ +** Երրորդ՝ հեգն՝ ի *ձայնաւորէ* և ի բաղաձայնէ: - 177. Երկրորդ՝ *ձայնաւոր*: - 177. Իսկ Երկրորդն զի է *ձայնաւոր*: - 177. Որպէս ի նիւթոյ և ի տեսակէ մարմին. և ի հոգւոյ և ի մարմնոյ կենդանին. և յարուէ՛ և իգէ ծնեալն. նոյնպէս ի *ձայնաւորէ* և յանձայնէ՛ բանն ծնանի: - 177. Ապա ուրեմն *ձայնաւոր* գիրն **է** ձայն, և **է** տեսակ, և հոգի, և արու: - 177-178. Եւ զայս ունի այբն. զի է՛ *ձայնաւոր* ընդ այլ է *ձայնաւորաց*: - 178. Նախ՝ զի առաջին է և հայր և ծնօղ ամենայն գրոց *ձայնաւորաց* և բաղաձայնից: -

178. Երրորդ` ի *ձայնաւորէ*՛, կիսաձայնէ՛, և բաղաձայնէ՛. որպէս բանական զգայական և տնկական: - 178. Վեցերորդ` զի ի բազում բանս մտանէ և գրի քան զայլ *ձայնաւորս*. և յա՛յտ է, զի բազում իմաստութիւնս ծնանի: - 178. Եւ ի պաիքն առաւել *ձայնաւորքն* քան զերգս. զի յաւուրս պահոց` հրեշտակաց նմանիմք, և յուտիքն մարդկան: - 628. Չորրորդ` ձայնն առաւել քան զբանն. որպէս *ձայնաւոր* երգք: - 639. Եւ ոմանք ասեն **ը** ձայն վասն ութ *ձայնաւոր* գրոց. և **ժ** ձայն ըստ **ժ** առոգանութեանցն: - 640

**ՁԱՆՁՐԱՆԱՄ +** ...ապա՛ ի պակասիլն սոցա տրտմի. և թէ ոք հակառակի` բարկանայ ընդ դէմ նոցա. ապա յամենայնէ *ձանձրանայ*: - 561

**ՁԱՆՁՐԱՑՈՒՑԱՆԵՄ +** Երրորդ` աստուած փորձէ՛ և տայ զելն` զի մի՛ յուսահատեսցի. և սատանայ փորձէ և *ձանձրացուցանէ* զի ընկեղմեսցին: - 161

**ՁԱՆՁՐՈՒԹԻՒՆ +** Երկրորդ` աստուած փորձէ և տայ զհամբերութիւնն. և սատանայ ընդ փորձութեանն առնէ *զձանձրութիւն*: - 161. Նախ ասեմք թէ` համաձա՛յն են միմեանց. զի և սա Նագրիոս է ասէ. զի տրտմութիւն և *ձանձրութիւն* մի երևին. զի տրտմութիւն ի պակասութենէ բարւոյն լինի, իսկ *ձանձրութիւն* յաւելուածոյ բարւոյն: - 559. Վեցերորդ *ձանձրութիւն*: - 560. Ի հողոյ տրտմութիւն և *ձանձրութիւն*. զի ցուրտ է և հակօղ: - 560. Յօգւոյ և ի հողոյ *ձանձրութիւնն*: - 560. Տրտմութիւն հոտոտելեաց. և *Ձանձրութիւն* բոլոր մարմնոյն: - 560. Ի վայր շարժումն է տրտմութիւն և *ձանձրութիւն*. որ է՛ ծուլութիւն. զի մինն ծանրանայ և ո՛չ գործէ զբարիս. և միւսն տրտմի և պակասի: - 560. Կամ և թիւրի ցանկութեամբ. և ըստ այսմ է՛ ծուլութիւն. որ է՛ տրտմութիւն և *ձանձրութիւն*: - 561. Չորրորդ` առանց *ձանձրութեան* ծառայէ՛ նմա: - 575. Նա՛խ` զի զտրտմութեան դնն *զձանձրութեան* զկարճմտութեան զսրտմտութիւն և զոխն հանէ՛ ի հոգւոյն: - 584. Որպէս ասեն վարդապետք, յագեալ ցանկասցուք, զի մի՛ յագեցումն ծնսի զտաղտկութիւն. ցանկացեալ յագեսցուք, զի մի՛ *ձանձրութեամբ* իցէ ցանկութիւնն: - 766

**ՁԳԵՄ +** Նախ` խաբէութեամբ զմարդիկ ի մեղս և ի կռապաշտութիւն *ձգելոյ*: - 153. Արդ` ներքին հողմն ի վեր *ձգէ* զերկիր. և վերին հողմն ի վայր. և այսպէս ի մէջն հաստատ մնայ երկիր: - 181-182. Երկրորդ` զի զխորխն *ձգէ* և զաչսն լուսաւորէ՛: - 218. Եւ այսպէս միջին հասակս կատարեալ, *ձգի* մինչև ի **խզ** ամն. որ է **դ** **ժզ**. և վեցն կատարեալ թիւ է. և աստ տիրէ ալիք և սկիզբն լինի ծերութեան մինչև ի **հբ** ամն. յորում է ծայրք կենաց ըստ դաւթի, և թիւ երկոտասան վեցից խորհրդաւոր: - 265. Դարձեալ` զբանջարն ընտրելով ուտեմք. այս է զի զվնասակարն և զդառն և զժահահոտն ի բաց *ձգեմք* և զչորրորդ մասն ուտեմք: - 295. Երկրորդ` զաւելորդ ապաւառն և զմազն արտաքս *ձգեմք*: - 296. Զոր ոմանք **լ** ստադիոն ասեն զբարձրութիւնն և զլայնութիւնն շուրջանակի **խղռ** քայլք. այսինքն **խդ** մղոն *ձգեալ* ասի: - 297. Խաչանիշ *ձգեաց* զգաւազանն ի վերայ ծովուն ընդ առաջ ասելով, Այիա՞. որ է` աստուած առաջի մեր: - 338. Նա՛խ` զի ամենայն ոք յինքն *ձգեսցէ* զբանս օրինացն. և մի՛ ծուլասցի թէ հասարակա՛ց է կատարելի: - 340. Զայս խորհուրդ յինքն *ձգեաց* տէրն ասելով. «որպէս մովսէս բարձրացոյց զօձն յանապատին, նոյնպէս բարձրանալ պա՛րտ է որդւոյ մարդոյ»: - 386. Եւ ի մեծի ուրբաթի խաչին, լուսինն ընթացաւ և *ձգեցաւ* յարևն, և յետս դարձաւ. որպէս ցուցանի յառաջիկայդ առ խաչելութեամբն ի **լ** գլուխն ի **իզ** համարն: - 416. Քսանևը, *ձգեաց* սաւուղ զգեղարդն դաւթի, եհար զորմն և ապրեցաւ դաւիթ. և որդիքն սաւուղայ հարկանել ետուն ըզկողս տեառն և ո՛չ վնասեցին աստուածութեան նորա: - 436. Եւ *ձգեցաւ* գերութիւնն ամս եօթանասուն: - 453. Բայց զի յուսացեալ ի բանն ճշմարտութեան յաղագս որոյ բանս հարցափորձութեան, հետևելով ուսուցչացն ուղղութեան, և յուսոյ ուսողացդ նպաստութեան. բացցուք զբերանս մտաց, և *ձգեսցուք* ի մեզ զհոգին շնորհաց: - 456. Նա՛խ` զի չորեքտասա՛ն էր լուսինն եկն ի ներքին կիսագնդէն ի վերին գունդն և *ձգեցաւ* առ արեգակն: - 490. Մետասաներորդ, զի *ձգեալ* զձեռն նայի հնազանդեցոյց զմարմինն զայն ի ներքոյ մահու: - 518. ...այլ յորժամ խստանայ ի չարիս մինչ զի զպաշտօնն աստուծոյ յինքն *ձգեսցէ*...: - 707. Զի որպէս ի կշիռն արդար` մէտ մի յաւելուածն հարստահարէ՛ զդիմակն և ի խոնարհ *ձգէ*, այսպէս և դատաստանն աստուծոյ...: - 745. Եւ ես յորժամ բարձրացայց, զամենեսեան *ձգեցից* առ իս: - 759

**ՁԳՏԻՄ կմ ՁԿՏԻՄ +** Եւ զիա՞րդ կարիցէ *ձկտիլ* նըւազն առ մեծն` լնուլ զիայր: - 39. Այլ վերին մասամբ ծայրիւ իմացութեան *ձկտի* յաստուածայինսն` հաւատոյն լուսով և վկայութեամբ սուրբ գրոց հաստատել: - 103. Եւ տէր մեր հաւասար ողորմութեամբ և արդարութեամբ. զի որքան տեսանեն ողորմութեամբ` *ձգտին* առ շնորհին արդարութեան: - 127. Միսն տաք է և ջիլն հով. զի ջիլն *ձկտի* յորժամ յագենայ. և կծկի յորժամ քաղցենայ: - 242. Ունականն է` յորժամ ժողովէ զկերակուրն` *ձկտի* և լայնանայ և փակէ՛ զամենայն դրունսն որ ի ներքոյ և ի վերոյ և ի կողմանէ, զի մի՛ թափեսցի կերակուրն: - 242. Գոյնն հրային լուսափայլեալ աչօք` առ մոլորութիւն *ձկտի*: - 247. Եւ որքան սոքա առաւելուն, առաւել *ձկտի* ներգործութիւն իմացականին: - 251. Ոտք ի վեր ուղղեալք, և ի տանջանս ամենայն ուստէք *ձկտեալք*: - 753

**ՁԳՏՈՒՄՆ կմ ՁԿՏՈՒՄՆ +** Նա՛խ՝ զի այնպիսի նշանք ո՛չ դնեն հարկ ի մարդն. այլ ցուցանեն *զձկտումն* բնութեանն ի յայնպիսի իրս: - 246

**ՁԵՂՈՒՆ +** Ոմանք *ձեղուն* ասեն յապակէ՛ շինեալ: - 294

**ՁԵՌԱԳԻՐ +** Քսանբ, *Ձեռագիրն* ադամայ: - 454. Զի՞նչ է *ձեռագիրն* ադամայ զոր պատառեաց քրիստոս: - 481. Երկրորդ *ձեռագիր* հրէիցն. որ յելսն եգիպտոսի ասացին մովսէսի. «զոր ինչ հրամայէ աստուած՝ լուիցուք և արասցուք»: - 481. Երրորդ *ձեռագիր* քրիստոնէիցս առ աւազանաւն. որ հրաժարիմք ի սատանայէ՛ և դաւանիմք զքրիստոս: - 482. Իսկ *զձեռագիր* հրէիցն, և զայն ևս պատառեաց քրիստոս կատարելով զամենայն օրէնս աստուծոյ: - 482

**ՁԵՌԱԳՈՐԾ +** Յայն՝ զի փայտ դրախտին անփուտ է. և տերևն անփտելի. և պտուղն անծորելի. և ծաղիկն անթառամելի. և աստուծոյ տնկեալ ձեռօք իւր. տեղի անապական *ձեռագործին* ադամայ: - 223. Վեցերորդ՝ զի թէպէտ ի *ձեռագործ* հանդերձից մե՛րկ էին, սակայն ի լուսոյ շնորհաց զարդարեա՛լ էին: - 278. Երկրորդ թէ՝ զքո *ձեռագործն* ցո՛յց անարժան ժողովրդեանն: - 350. Ութերորդ, նոքա մատուցանէին ի *ձեռագործ* խորանսն որ ի մովսիսէ՛ կանգնեցաւ, իսկ տէրն մեր անցեալ ի ներքին կողմն վարագուրին...: - 354. Տասներորդ՝ զի սողոմոն ի քարանց *ձեռագործաց* կազմէր տաճար աստուծոյ. իսկ քրիստոս զբանական հոգիս մարդկան շինէր օթևան սուրբ երրորդութեանն: - 442. Երրորդ՝ զի ո՛չ ինչ յորոց ստեղծ աստուած գարշի բնակիլ. մանաւանդ յարգանդի զարդարեալ կուսութեամբ. զի զոր ստեղծ ձեռօք, բնակէ՛ ի տան *ձեռագործի* իւրոյ: - 469. Կրկին է գիր. այսինքն կենաց և մահու. զի բարի գործովք գրիմք ի դպրութիւնն կենաց. և մեղօք գրիմք ի գիրն մահու և դատապարտութեան. որպէս ասեմք թէ *զձեռագիր* յանցանաց քոց ջնջեսցէ աստուած: - 481

**ՁԵՌԱԿԵՐՏ +** Նմանապէս և արարիչն. այլ նա՛ պարզ և ի վեր քան *զձեռակերտս* յարացուցին: - 236-237. Տասներորդ՝ թագաւորութիւն ի վերայ ամենայն *ձեռակերտաց:* - 279

**ՁԵՌՆ +** Դարձեալ, որոյ է իր գործեացն՝ նորա՛ է և ներգործութիւնն. եթէ առնել և եթէ կրել. արդ՝ մարդո՛յ է հոգին և մարմինն և *ձեռն*. մարդո՛յ է ուրեմն և գործ նոցին, եթէ չար և եթէ բարի: - 11. Եւ ի *ձեռն* տէրանց խնամէ՛ զծառայս և զհնազանդեալս: - 19. Ա՛յսպէս առնէ զչարս և զմեղաւորս, զի ի *ձեռն* բարեաց օգտեսցին և ի լաւութիւն գայցեն: - 19-20. Երրորդ՝ պարգևականն. որպէս մարգարէիցն երևակայութեամբ, կամ ի *ձեռն* մարմնոյ զգայութեանց: - 24. Ութևտասներորդ՝ Զի մասունքն քրիստոսի աստուած է, ոտք և *ձեռք* և գլուխն: - 30. Եւ ի *ձեռն* դաւթի ասէր, «որ ամբարտաւանն էր աչօք և ագահ սրտիւ, ընդ նմա և հա՛ց ո՛չ ուտէի»: - 32. Զի որպէս առաջին նա՛ ծնաւ անսերմն ի կուսէ և ի հոգւոյն սրբոյ, այսպէս և մեք յետ նորա ի *ձեռն* հոգւոյն սրբոյ ծնանիմք ի կոյս աւազանէն: - 41. Ասեն դարձեալ, աւետարանն յօհաննու ասէ, «ամենայն ինչ որդովն եղև». ապա ուրեմն և հոգին եղեալ է ի *ձեռն* որդւոյ. զիա՞րդ է հաւասար որդւոյ կամ հօր: - 53. Պատասխանեմք թէ՝ ո՛չ ասէ պարզաբար ամենայն, այլ կարգէ՛ զիետն թէ՝ ամենայն որ ինչ եղև. թէ եղեալ ցուցանես զհոգին, և ես հաւատամ թէ ի *ձեռն* որդւո՛յ է եղեալ: - 53. Ապա թէ ո՛չ՝ ըստ բանիդ և հայր լինի եղեալ ի *ձեռն* որդւոյ: - 53. Եւ դարձեալ՝ հոգին որ ի հօրէ ելանէ և կայանայ յորդի. և ի *ձեռն* որդւոյ իբր զհայրական բարի ամենայն գոյիցս բաշխի երկնաւորաց և երկրաւորաց. նախ քան զմարմնանալն՝ և ի մարդեղութեանն: - 61. Այլ մի ասեմք զներգործութիւնսն վասն մի միութենէն ներգործելոյ. որպէս մի *ձեռն* կտրէ՛ և կարէ՛. գրէ՛ և ջնջէ՛: - 85. Իսկ անհատ ասի՝ զի ո՛չ քակտի և ո՛չ հատանի որպէս բոլորն ի մասունս. զի թէ բաժանես զնա որպէս ի հոգի և ի մարմին, կամ յոտս և ի *ձեռս* և ի գլուխս, ո՛չ մնայ բոլորն: - 86-87. Եւ ո՛չ աննմանամասնաբար. որպէս պետրոս՝ յոտս և ի *ձեռս* և ի գլուխս. զի նոքա ո՛չ միմեանց և ո՛չ բոլորին հոմանունաբար ասին: - 88. Զի՞նչ պատասխանեմք երկաբնակացն որք հարցանեն զմեզ, թէ մասունքն քրիստոսի աստուած է՝ այսինքն ոտքն և *ձեռքն* և գլուխն ապա բազմաստուածք էք: - 91. Ապա ուրեմն յայտնապէս նոքա ուրանան զայս, և ասեն թէ՝ *ձեռքն* քրիստոսի ոչ է աստուած. և գլուխն քրիստոսի ո՛չ է աստուած. և այլն. զի մի բազմաստուածք լիցին: - 91. Ասեն զայս թէ՝ և ո՛չ մարդ չէ. այսինքն *ձեռքն* և ոտքն քրիստոսի. թող թէ աստուած: - 91. Այլ զորօրինակ՝ մարդոյ *ձեռն* և ոտն մարդ չէ, այլ՝ մարդոյ *ձեռն*, և մարդոյ ոտն. նոյնպէս և զքրիստոս է՛ ասեն: - 91. Յորժամ *ձեռն* քրիստոսի ոչ է աստուած, ապա ուրեմն և բոլոր մարմինն ո՛չ է աստուած. զի բոլորն ի մասանցն բաղկանայ: - 91. Դարձեալ՝ որպէս *ձեռն* և ոտն մարդոյ ո՛չ է մարդ, նոյնպէս և *ձեռն* քրիստոսի ո՛չ է քրիստոս. և ոտն և այլ մասունքն ո՛չ են քրիստոս. ապա և բոլոր մարմինն ո՛չ է քրիստոս. և հոգին ո՛չ է քրիստոս. ապա թէ սոքա չեն քրիստոս, և բանն ըստ ինքեան ո՛չ է քրիստոս: - 91. Ասեն այսպէս՝ եթէ *ձեռն* մարդոյ է՝ զի և ոտն մարդոյ՝ և այլ մասունքն մարդոյ է. զի աստուծոյ մասն ո՛չ ասի: - 91. Երևի ապա զի աստուծոյ ո՛չ ասեն զմասունքն, այսինքն *զձեռն* և զոտն. ապա ըստ նոցա և մարմինն չէ աստուծոյ մարմին. և արիւնն չէ աստուծոյ. և հոգին չէ աստուծոյ. այլ ամենեքեան սոքա

մարդո՛յ են: - 91. Զի թէ ասեմք եթէ ոչ է աստուած, յայնժամ բաժանեալ յաստուածութենէն՝ ո՛չ լինի աստուծոյ *ձեռն*. և ո՛չ աստուծոյ մարմին. կամ արիւն. զի մասն բաժանեալ ի բոլորէն ո՛չ է բոլորին մասն. և ո՛չ կոչի. որպէս *ձեռն* հատեալ յանդամոցն՝ ո՛չ կոչի մասն բոլորին: - 92. Որպէս յորժամ ասեմք *զձեռն* բոլոր և մասն. զի մասն է բոլոր մարմնոյն, և բոլոր առ մատունս *ձեռացն*: - 92. Որպէս *ձեռն* ունի զգոյացութիւն բոլոր մարմնոյն. և կոչի մարմինն առ բոլորն քրիստոս: - 92. Բայց կամեցաւ և յայտնեաց զինքն որդի և զհայր՝ ի *ձեռն* նշանաց աշակերտաց իւրոց. որպէս ի պտղոյն ծառն երևի: - 96. Քանզի ներքին մասամբ ի *ձեռն* զգայութեանց ճանաչէ զերևելիս. որպէս քար: - 103. Երկրորդ՝ ո՛չէ և ասի. որպէս մարմին. *ձեռն*. և ոտն: - 123. Պատասխանեմ առաջնոյն, թէպէտ մի և նոյն ուրացական մասնիկն որ է ո՛չն՝ գործէ՛ զուրացումն և զբառնալն, այլ ուրացումն և բառնալն ո՛չ է նոյն. զի բազում պատահի որ գործին նոյն է որպէս *ձեռն*. այլ գործելն ո՛չ է նոյն. որպէս կտրելն և կարելն: - 124. Որև այժմ ի յեկեղեցի ի նոյն խորհուրդ՝ սերոբէին պատկեր որ է քշոցն՝ ի *ձեռն* սարկաւագին աւանդի՝ որ է՛ մաքրօղն. և երրորդ կարգ յետ քահանային և քահանայապետին: - 135. Եւ նոքա գերազարդ իմացմամբ աստուածային հանճարովն կատարելագործին. իսկ մեք ի *ձեռն* հաւատոյ աստիճանաց կատարելագործիմք: - 139. Իսկ ուղիղ շարժի՝ յորժամ ի *ձեռն* զգայութեանց յարացուցիւ և օրինակաւ հպիմք ի նախատիպն աստուած: - 142. Երկրորդ՝ որ ի *ձեռն* զգայարանաց: - 142. Որև մերձ ի կատարածն դարձեալ յառնելոց է ի վերայ մարդկան ի *ձեռն* նեռինն: - 148. Իսկ յանդիմանութեան անկումն դիւաց եղև գալստեամբն քրիստոսի ի *ձեռն* խաչին. և այս չորեքկին: - 153. Երկրորդ՝ զի ի *ձեռն* անտեղի գործոց՝ փրկութիւն լիցի այլոց. որպէս ի *ձեռն* խաչին քրիստոսի՝ փրկութիւն եղև աշխարհի: - 158. Եւ այսպէս են մարմնաւոր բարիք. որպէս ոսկի և այլ ինչ. որ ի *ձեռն* ողորմութեան պատճառէ՛ զիանդերձեալ բարիսն: - 160. Նա՛խ՝ եթէ թողութիւնն է հետևեալ և կայացեալ ի զղջումն. և զղջումն է ի կամքն. և կամքն է ի կարելեացն. վասն որոյ ներընդունի զթողութիւն ի *ձեռն* զղջման: - 165. Դարձեալ և ի յառակս անառակին որ դարձաւ առ հայրն՝ և ողջմամբ ընկալաւ և զգեցոյց զնա և զարդարեաց մատանի ի *ձեռս*՝ և կօշիկ յոտս. այլ ո՛չ ետ թոյլ նմա պատարագել...: - 167. Յասցանէ յայտնի է զի զղջացեալ այնպիսին կարէ՛ հաղորդիլ ի *ձեռն* այլոց. այլ ո՛չ ինքն պատարագել: - 167. Երկրորդ՝ զի *ձեռամբ* գրչի մտանէ ի բառ. և առանց բերանոյ բարբառի. և տեսանի աչաց. և լսի ականջաց. և ուսուցանէ զմիտս: - 177. Երրորդ՝ առանց ոտից ընթանայ. առանց թևոց թռչի. առանց լեզուի խօսի. առանց *ձեռաց* գործէ: - 177. Ապա զիա՞րդ ասէ ի *ձեռն* մաղաքիայ թէ «զերկին և զերկիր ե՛ս լնում»...: - 180. Զորօրինակ՝ **դ** մարդ երկու երկու *ձեռօք* զմիմեանս ըմբռնեն: - 181. Ուստի և նեղեալք՝ ի խնդիրս առ ի բարձունս *զձեռս* տարածել ըղձան: - 184. Վասն այն՝ *ձեռն* և ձայն և բան և թիւ և կարգ աւուրցն եդան: - 192. Եւ զորօրինակ՝ լիտր մի ցորեան, կամ այլ ինչ. յորժամ *ձեռօքդ* բաժանես և ցրուես զհատսն, ո՛չ մնայ կշիռն: - 202. Եւ թռչնոյն **բ** թև և **բ** ոտն է. և մարդոյն *ձեռք* և ոտք: - 215. Զի թէ մարդն ունէր զբնութեամբ զէնս, որպէս թէ եղջիւր ի գլուխն. և սուր զատամունսն. ճիրանունք ի *ձեռս*. և սմբակ կամ կճղակ ոտիւք. և զայլսն, Նախ՝ զի գազանադէմ և դժուարատես լինէր ամենեցուն: - 217. Այլ այժմ ի *ձեռն* արուեստից ստացեալ զզէնս, յորժամ պիտոյանայ՝ առնու և ի գործ ածէ. և յորժամ կամի՝ ի բաց դնէ և հանգչի: - 217. Չորրորդ՝ յա՛յտ է ի հնազանդեցելոցն որք կան այժմ ընդ *ձեռամբ* մարդկան. որպէս ոչխար, պախրէ՛, և այլն: - 220. Յայն՝ զի փայտ դրախտին անփուտ է. և տերևն անփտելի. և պտուղն անծորելի. և ծաղիկն անթառամելի. և աստուծոյ տնկեալ *ձեռօք* իւր. տեղի անապական ձեռագործին ադամայ: - 223. Այսպէս մարմին մարդոյ որ քան է երկայնութեամբ ի գագաթէ՛ գլխոյն մինչև ի ներբանս ոտիցն, նոյն քան է լայնութիւն ի մէջ երկուց երկայն մատիցն *ձեռաց*: - 232. Իններորդ՝ ի վեր է գլուխն, զի լեզուն և *ձեռն* սպասաւորեսցեն բանի և գործոց: - 233. Զի թէ կորագլուխ էր մարդն, և երկոքին *ձեռքն* ի յերկիր հաստատեալ, ո՛չ կարէր գործել: - 233. Երրորդ՝ զի զդէմս ունիցիմք միշտ ի յերկինս. և զթիկունս յերկիր. և հանապազ ի բարին յառաջեմք ոտիւք և *ձեռօք* և ո՛չ դառնամք ի չարն: - 234. Զայս ցուցանէ դէմք ի նմին կողմն, և զոտս յառաջ փոխել և *զձեռս*: - 234. Երկրորդ՝ զի զփոշին սրբէ որ ի յօդոյս նստի յաչքն. որպէս մեք *ձեռօք* սրբեմք զերեսս հայելւոյ: - 239. Երրորդ՝ ուսքն և *ձեռքն*: - 241. Դարձեալ ոմանք ասեն զմին *ձեռքն* երեք անդամ. այս է՝ մինչ ի խաղալիկն մին. և մինչ յարմունկն **բ**. և մինչ ի կուռն երեք: - 241. Եւ նոյն քան միւս *ձեռքն* որ լինի **զ**: - 241. Եւ գլխաւո՛ր անդամք են սոքա. զի թէ յայլ անդամքն՝ այսինքն աչքն՝ ականջն՝ *ձեռքն* և ոտքն՝ կամ այլն վնասի, մարդն ապրի: - 241. Զի **դ** հիւթն ներքին անդամոց՝ ի *ձեռն* սրտին պատճառե՛ն զ**դ** հիւթն արտաքին: - 243. Եւ թաթք *ձեռացն* **լբ** ոսկր. որ լինի բովանդակ *ձեռքն* ի թիկանցն **խ** ոսկր: - 243. Նա՛խ՝ խելապատակն սկիզբն է ջլացն. որ միայնաբար ընդ ուլունս պարանոցին անցանէ. և բաժանի ի թիկունս, ի *ձեռս*, և յա՛յլ մարմինս: - 244. Եւ նա՛ տայ խաղալ և շարժիլ ոտից և *ձեռաց* և այլ մասանց անդամոցն: - 244. Եւ բաց յայսցանէ՝ ի յուղեղէն **բ բ** երակ գայ յիւրաքանչիւր զգայարանս. **բ** յաչքն. **բ** յականջն. **բ** ի քիթն. **ա** ի բերանն. մին ի լեզուն. **բ** ի *ձեռքն*.

**բ** ի յոտքն. որ լինի **ժբ**: - 244. Իսկ զի կէսք քարց և անմորուք լինին, զի ջլապինտ է մորթ երեսացն որպէս զքաթ *ծեռաց*. վասն որոյ մազ ո՛չ բուսանի: - 245. *Ձեռքն* կարճ և փոքր, ուժեղ է և հնարաւոր: - 247. Յաստ *ծեռն* և կարճամատն, նենգաւո՛ր է և գող: - 247. *Ձեռքն* թիւր՝ շատախօ՛ս է. և շատակուլ: - 247. Բանն *ծեռք*: - 250. Կենդանութիւն՝ աջոյ *ծեռն*: - 250. Փառք՝ ձախոյ *ծեռն*: - 250. Գործն ի *ծեռն*: - 250. Յաչաց նայիլն. ի *ծեռաց* շարժիլն. և յոտից գնալն երևի: - 250. Եւ կամ ի շարժութեանց մասանց ոտից և *ծեռաց* և այլն: - 250-251. Եւ կամ որպէս պատկերագործք մինչ զոտն և *զծեռն* նկարեն՝ ո՛չ երևի պատկեր մարդոյ. այլ ոտից և *ծեռաց*: - 255. Եւ համանգամայն երևի ասեմ. զոր օրինակ նիւթն այն ունի առ ինքն ծածկեալ զմասունս մարմնոյ. *զծեռս* և զոտս, զմիս և զմազ, որ յետոյ երևին ի նմանէ: - 255. Եւ է՛ գործի իմացման նոցա՝ *ծեռք* և մատունք. և ենթակայ՝ նիւթք երկրաւոր: - 269. Զթռչունս ըմբռնել. ի վերայ ծովու գնալ. դիւաց սաստել. *ծեռօք* առ այլս խօսիլ: - 275. Տասներորդ՝ կին, իբր թէ կեանք. զի որպէս կենօք է տեւել. նոյնպէս տեսակ մարդոյս ի *ծեռն* կնոջ ծննդեանն տևէ՛, և կայ մնայ մինչ ի կատարած: - 276. Եւ որ ոք կամեսցի զդարձն, անդրէն ի *ծեռն* նորին յարմարութեան այսինքն նորին կարգին կարողանայ ելանել ի նոյն: - 280. *Ձեռն* բարձր և բազուկ հզօր: - 285. Երրորդ՝ յուսացաւ կոչել զանուն տեառն աստուծոյ ի յօգնութիւն. զոր մարդիկ յուսահատեալ էին եթէ վասն մեղաց մերոց եթող զմեզ աստուած ի *ծեռաց*. և նա ի յօգնութիւն կոչեաց զանուն տեառն աստուծոյ. այսինքն զի տէր է՝ ո՛չ գարշի ի ծառայից իւրոց. և զի աստուած է՝ էա՛ծ զմեզ աստ ոչ ի կորուսանել, այլ ի կեցուցանել: - 289. Եւ այլք զնշխարս նախահօրն ադամայ ասեն. զի յաստուծոյ *ծեռացն* էր յօրինեալ՝ լո՛յս տայր նոցա: - 294. Զորս հրեշտակս կոչէ ո՛չ վասն առաքինութեան, այլ զի պատգամաբերք և թարգմանք եղեն աստուծոյ իմաստութեանն առ մեզ ի *ծեռն* լեզուաց գիտութեանն: - 297. Ապա՛ ի թաբօր լերինն ամպ խոնարհեալ և *ծեռն* կարկառեալ ծեռնադրեաց զնա ասելով, այս մելքիսեդեկ անհայր անմայր չհամարեալ յազգս՝ նմանեալ որդւոյն աստուծոյ: - 300. Իւր *ծեռօքն* ցանէր և որթ վաստակէր իւր բաւական: - 300. Իններորդ՝ զի զայս ո՛չ ի *ծեռս* ծառայից, այլ ինքնին ընդ առաջ ել աբրահամու և ետ: - 302. Եւ տէրն ո՛չ ի *ծեռս* հրեշտակաց սերօբէից և քերովբէից, և ո՛չ միջնորդութեամբ մարդկան ընտրելոց նահապետաց մարգարէից առաքելոց կամ մարտիրոսաց: - 302. Վեցերորդ՝ զի ի *ծեռս* ետ զհագար աղախինն չարչարել սառայի. ուստի զերծեալ փախեաւ և հարցաւ ի հրեշտակէն: - 304. Այսպէս և սէրն աստուծոյ առաւել ցուցաւ ի *ծեռն* որդւոյն: - 305. Վեշտասաներորդ՝ որպէս կապեցաւ իսահակ ոտիւք և *ծեռօք* ի վերայ սեղանոյն: - 306. Եւ թէ լան և զղջան բոլոր սրտիւ ի *ծեռն* ապաշխարութեան, գտանեն վերստին զշնորհին անդրանկութեան, և հասանին թողութեան մեղաց: - 309. Եւ այս ևս գիտելի է, զի տէրն մեզ կոչի զգեստ փրկութեան և պատմուճան ուրախութեան ի *ծեռն* մկրտութեան...: - 318. Երկրորդ՝ և արդարք առնեն ընդ դէմ սմին ի յամօթ չարին. որ հնարեցաւ ի *ծեռն* մեղացն՝ մահուամբ բառնալ զմարդկութիւնս. այլ հրամանաւն արարչին ծննդեամբք տևէ՛ և յերկարէ՛ բնութիւնս: - 321. Երրորդ՝ զի *ծեռամբ* թշնամւոյն նահատակեցան. որպէս այլ ամենայն մարտիրոսք: - 322. Նախ՝ զի շարժեալք էին ի բանսարկուէին. որպէս երբեմն ի *ծեռն* կնոջն. և յայնժամ բարեկամօքն մարտնչէր ընդ յոբայ: - 324. Այլ ոմանք ասեն ի *ծեռն* հրեշտակաց ի միում աւուր ժողովեցան. որպէս ի *ծեռն* դիւաց ցրուեցան: - 326. Երրորդ՝ զի ի *ծեռն* կնոջն մարտեաւ: - 327. Վեցերորդ՝ հարուածս կրեալ յոբ ի բոլոր մարմինն. և տէր մեր ի *ծեռս* և յոտս և ի կողս. որ և փշով պսակեալ ապտակեալ և գան հարեալ: - 327. ...**բդ**՝ խլից լսել տայր. **գդ**՝ համերց խօսիլ. **դդ**՝ *ծեռաց* շարժումն. եդ՝ կաղաց գնալ...: - 328. Իննև**ժ**, մովսէս տարածմամբ *ծեռացն* զամաղէկ պարտէր: - 329. Երեսուներորդ, մովսէս *ծեռն* եդ ի վերայ եսուայ: - 330. Եւ տէրն եդ *զծեռն* ի վերայ առաքելոցն: - 330. Չորրորդ՝ ի *ծեռն* յովսեփայ ժողովուրդն էջ ի յեգիպտոս և եղև չարութիւն: - 332. Եւ ի *ծեռն* մովսէսի դարձեալ եղև գաւազան թագաւորական և քահանայութեան: - 332. Ութերորդ՝ խաչն փրկական նախ էր մահու գործիք. զոր առեալ ի *ծեռն* քրիստոս, և եղև կենաց պատճառ: - 332. Եւ ի *ծեռն* խաչին ներգործին ամենայն սքանչելիք որպէս ի *ծեռն* գաւազանին մովսէսի: - 332. Զի՞նչ է որ բորոտեցաւ *ծեռն*: - 332. Նա՛խ ցուցանէ՛ թէ՝ *ծեռքդ* այդ գրեսցէ օրէնս որով սրբին պահօղք, և պղծին ո՛չ պահօղք: - 332. Չորրորդ՝ մին *ծեռն* մովսէսի մեռաւ բորոտութեամբ. զի մին ազգ փրկեցաւ նովաւ: - 332. Վեցերորդ՝ *ծեռն* հօր է՛ միածին որդին որ ել ի ծոցոյ հօր և էառ զօձաձև բնութիւնս մեր. և դարձեալ ել առ հայր, ի նոյն բնութենէն ո՛չ կացեալ ի բաց: - 333. Իններորդ՝ խաւարն շօշափելի. կամ զի թանրացեալ ըմբռնիւր շօշափելով. կամ զի շօշափելով *ծեռաց* և գաւազանաւ կարէին շարժիլ: - 334. Եւ ի *ծեռն* կախարդաց խափանէր զժամանակն փրկութեան: - 336. Երրորդ, ի *ծեռն* հրեշտակաց պարգևի: - 338. Որպէս յորժամ լցան մեղք ամուր հացւոցն ի չորրորդ դարուն՝ սատակեցան ի *ծեռն* յեսուայ: - 351. Եօթներորդ՝ անդ մարդկային մովսէսիւ. և աստ աստուածային ի *ծեռն* քրիստոսի: - 353. Նաշիհ և իւղ զանգեալ և ո՛չ եփեալ, նշանա՛կ է նոցա՝ որ ի փորձութիւնս մտեալ և փութով ելեալ ի *ծեռն* աղօթից. ըստ

այնմ, «յաղօթս կացէք, զի մի՛ մտանիցէք ի փործութիւն»...: - 357. Նշանակէ՛ զմանկունս ընդ *ձեռամբ* խրատու վարժեալ և կրթեալ: - 357. Եւ դնել *զձեռն* ի գլուխ կենդանւոյն: - 359. Նա՛խ՝ ցուցանէ թէ սա՛ անմեղ է՝ վասն իմ մեղացս մեռանի. զոր *ձեռօք* ի սա՛ տամ զմեղս: - 359. Կրկին հաւն կենդանի սուրբ՝ նշանակէ՛ զհոգւոյ և զմարմնոյ կենդանութիւն ի *ձեռն* ապաշխարութեան: - 368. Ցուցանէ թէ՝ անկեալքն ի քահանայութենէ՝ հաղորդին ի *ձեռս* այլոց. այլ և հասի իրաւանցն: - 370. Եօթներորդ՝ ստուերապէս նշանակէր զազատութիւնն որ եղև մեզ ի *ձեռն* քրիստոսի. որ ազատեաց յօրինացն դժւարութեանց, և ի մեղացն, զթողութիւն շնորհելով: - 372. Յորժամ և *զձեռն* դնեն ի գլուխ մեղուցելոյն: - 384. Նա՛խ՝ զի բարկացեալ՝ զէշն կամէր սպանանել սրով. թէ գոյր ի *ձեռին* ընդէ՞ր բանիւ ոչ սատակէր: - 388. Դիւթ է՝ որ *ձեռօք* և նիւթո՛վ գործէ. որպէս գարի, և ալիւր, և աւազ, և ջուր, և քար. և այն որ թզով չափէ, և այլն ամենայն: - 388. Եւ երկրորդ՝ զի ո՛չ ինքեամբ՝ այլ ի *ձեռն* քահանայիցն մահուն ազատիւր: - 392. Զի՞նչ է *ձեռն* բարձր և բազուկ հզօր: - 395. Երրորդ՝ զօրաւոր հարուածքն եգիպտոսի, որ ո՛չ ոք կարէր հասանիլ և բռնել զպատիժն. որպէս ոք հարկանէ և դարձեալ բարձրացուցանէ *զձեռն*: - 395. Չորրորդ՝ *ձեռն* գործոց է նշանակ, և բազուկն զօրութեան զի անաշխատ գործէ: - 395. Իսկ անապատ՝ գրաւոր օրէնքն ի *ձեռն* մովսէսի: - 395. Իսկ խոստման երկիրն նոր օրինօքս ի *ձեռն* փրկչին յիսուսի: - 395. Այս է՝ ի միոյ բարի էութենէն աստուծոյ յառաջ գայ արարչական և արքունական զօրութիւն. իբր աջ և ահեակ *ձեռն*: - 403. Երրորդ՝ օրէնքն որ ի *ձեռն* մովսէսի՝ էր խափանիչ մեղաց և մահու: - 409. Նմանապէս և **բժ**ան քարինքն հանեալ ի ցամաք և կանգնեալ սեղան՝ հաւատացեալքն են. որք ի *ձեռն* **բժ**ան առաքելոցն հաւատացին և ելին ի մեղաց. և եղեն սրբութեան սեղան աստուծոյ **բժ**ան անդամօք և **բժ**ան առաքելովք: - 415. Երրորդ՝ զի առ *ձեռն* պատրա՛ստ գտանէր: - 415. Եւ յիսուս փրկեաց զմեզ յիմանալւոյն *ձեռաց*: - 417. Երրորդ՝ մովսէս *զձեռն* եդ ի վերայ եսուայ և կացոյց զնա՛ առաջնորդ: - 417. Եօթնեւծ՝ յեսու կանգնեաց զգայիսոնն ի գայի, մինչ կոտորեցան թշնամիքն. որպէս մովսէս տարածմամբ *ձեռաց* զամաղէկ: - 418. Երկրորդն Աւովդ. յերկուց *ձեռաց* յաջողակ եմինացի յեփրեմայ ամս **ծ**. և այլազգիքն ամս **ի**: - 420. Եւ տէրն զոսոխն մեր սատանայ իբր զառիւծ պատառօղ՝ տարածմամբ *ձեռաց* ի խաչին սատակեաց: - 422. Իններորդ՝ մատնի ի *ձեռս* նոցա: - 424. Վասն այն և ի նորս զխաչ և զսրբութիւն և զեկեղեցի և զայլն տայ ի *ձեռս* այլազգեաց: - 425. Եւ գլուխն և *ձեռն* և ոտն հատեալ: - 425. Երկրորդ՝ զի ժողովուրդն ոտիւք գայր, և *զձեռս* տարածէր, և զգլուխսն խոնարհեալ երկիր պագանէին. վասն որոյ հատան այնպիսի մասունքն: - 426. Երրորդ՝ զի ոտք և *ձեռք* կապեալ բազումք զզաւակս զոհէին նմա. նոյնպէս և նորայն հատան: - 426. ...այսինքն բնական և բանական և գրաւոր օրինօք ո՛չ գտեալ. այլ ի *ձեռն* աւետարանին: - 426. Եւ չորսն *ձեռօք*. որ է տաւիղն, քնարն, թմբուկն, և ծնծղայք: - 431. Վասն է՞ր յանդիմանեաց աստուած զդաւիթ ի *ձեռն* նաթան մարգարէի: - 432. Դարձեալ՝ նոյն ինքն քրիստոսի է իշխանութիւնն որ աստ լուծանէ ի *ձեռն* քահանային. և իշխանութիւն նորա ո՛չ տկարանայ երբէք. որպէս զհաց և զգինին կատարէ և զայլ խորհուրդս. նոյնպէս և աստ: - 433. Որ օրինակաւ ակնարկէ՛ ի տէր մեր ի մարդացեալ բանն. որոյ գործք *ձեռացն* արդարութիւն և իրաւունք են: - 435. Երկրորդ՝ կոչի դաւիթ որ է՛ սիրեցեալ և բաւական *ձեռօք*. և տէր մեր սիրեցեալ ի հօրէ և ի մարդկանէ իբր զորդիս մի եղջերոյ. և նա՛ է բաւական յամենայն գործս և ի պարգևս: - 435. Ութերորդ, ի *ձեռն* սամուէլի և իւղով օծաւ. և տէր մեր ի հօրէ օծաւ և հոգւով սրբով: - 435. Քսանեմի, տարածմամբ *ձեռաց* աղօթեաց: - 441. Եւ գօսանալ *ձեռինն* զբառնալ թագաւորութեանն: - 442. Զի՞նչ է որ ի *ձեռաց* ագռաւու կերակրեցաւ եղիա. և ուստի՞ էր: - 443. Զի չասացաւ նմա ի *ձեռաց* քահանայիցն կերակրիլ. այլ ի *ձեռաց* ագռաւուցն: - 443. Իսկ ի մէջ ծնկաց գլուխն՝ այն է, որ զծունկն ի գետինն եդ, և զգլուխն հանդէպ նմին. և յայսկոյս և յայնկոյս *զձեռսն* խաչանման ի գետինն: - 444. Նոյնպէս և ամենայն խաչի զօրութիւնն քրիստոս է. ի *ձեռս* արժանաւոր և կատարեալ հաւատոց առնէ սքանչելիս. իսկ ոչ նոյնպիսեացն ծածկէ զզօրութիւնն: - 445. Իսկ ի հիւանդանալն՝ եղիսէոս եդ *զձեռն* ի վերայ *ձեռաց* արքային յովասու և զօրացոյց զնա ի պատերազմին ընդ դէմ ասորոցն փոխանակ լալոյն ի վերայ նորա: - 446. Երկրորդ՝ զի իջցէ ի գերեզման և մի՛ տեսցէ զչարիքն որ ի *ձեռն* նաբուգոդոնոսորայ գալո՛ց էր ի վերայ երուսաղէմի. որպէս յայտ է ի պատմութիւնն: - 446. Վասն է՞ր **հ** ամ եդ զվճիռ գերւոյն բաբիլօնի ի *ձեռն* երեմիայի: - 448. Չորրորդ՝ գերիլն ի բաբիլօն՝ զգերութիւն բնութեանս նշանակէ. և եօթանասուն ամն զեօթն դար կենցաղոյս. և ապա դարձումն ի հայրենի բնակութիւնն մեր ի *ձեռն* փրկչին մերոյ և աստուծոյ: - 448. Քսանեմի, Գիր ի *ձեռն*. և խաչ ի գլուխն: - 454. Եւ են սոքա կրկին զօրութիւնք. արարչական և արքունական. ըստ փիլոնի որպէս կրկին *ձեռք* մարդոյ աջ և ահեակ: - 457. Զի ի խորհուրդ մկրտութեանն ի յառնուլ ջուր, հոգին սուրբ և զօրութիւն բարձրելոյն և ողջոյն հօրն ի *ձեռն* հրեշտակին որ հերքէր զմեղս ըստ մկրտութեան: - 462. Չորրորդ՝ զի անկասկած լիցի ամենևին և անկարծ ի չարեաց զատուցեալ սուրբ կոյսն. ի *ձեռն* հրեշտակին

աւետարանել զյղութիւնն. և ո՛չ ի *ձեռն* մարդոյ: - 463. Այլ ի *ձեռն* հրեշտակապետին վկայեալ և աւետեալ զիաւատարիմս ի գիտութիւն: - 464. ...եկն երևեցաւ. այսինքն մարդացաւ մարդասէր բժիշկն. և առողջացոյց զկարեվէր խոցեալքս. ըստ որում բժիշկ անուանէր զինքն անկեալ ի *ձեռս* աւազակաց հիւանդին: - 467. Երրորդ՝ զի ո՛չ ինչ յորոց ստեղծ աստուած գարշի բնակիլ. մանաւանդ յարգանդի զարդարեալ կուսութեամբ. զի զոր ստեղծ *ձեռօք*, բնակէ՛ ի տան ձեռագործի իւրոյ: - 469. Զի բարձօղն աշխարհի՝ *ձեռամբ* կնոջ բարձեալ լինի: - 470. Երկրորդ՝ զի վէմն առանց *ձեռին* հատաւ ի կուսական լեռնէն ըստ դանիէլի: - 470. Իսկ զօծումն հիւանդաց եցոյց ինքեամբ յայլս. յորժամ զանկեալն ի *ձեռս* աւազակաց ձիթով և գինւով բժշկեաց: - 474. Այսպէս միաւորութեամբ բանն աստուած օծաւ և սրբեցաւ ի հօրէ, ի *ձեռն* հոգւոյն սրբոյ գործակցութեամբ: - 475. Զի՞նչ է որ ի փրկչական պատկերն գիր ի *ձեռն* և խաչ ի գլուխն նկարեն: - 481. Ասեն վարդապետք եթէ՝ որպէս մարգարէքն և առաքեալքն զխօսեցեալ բանս իւրեանց ի *ձեռս* ունին իբր պատգամաբեր յաստուծոյ առ մարդիկ: - 481. Նոյնպէս և փրկիչն զիւր աւետարանն ի *ձեռն* ունի: - 481. Նոյնպէս և քրիստոսի մինչ զտղայական հասակն նկարեն, փաթութեալ հանեն զթուղթն ի *ձեռն*. իբր ի հրէից ծնեալ զամենայն ինչ ըստ օրինացն առնել: - 481. Իսկ զկատարեալ հասակն նկարելով՝ ի ձև չորեքկուսի հանեն զաւետարանն ի *ձեռն* և ի գիրկն: - 481. Դարձեալ ի *ձեռն* կուսին՝ կենաց գիր տուաւ ազգի մարդկան տէր մեր յիսուս քրիստոս: - 481. Զայս որպէս *ձեռին* գիր ունէր սատանայ, և նովաւ չարչարէր զմարդիկ՝ թէ աստուած ասաց մի ուտել և դու կերեր և մեռար. իմ ի՞նչ մեղք է: - 481. Արդ զգիրն ադամայ պարտուց՝ տէրն որդի եղև նմա և անմեղ մահուամբն տարածեալ *զձեռս* ի խաչին պատառեաց ասելով, նա մեղաւ և մեռաւ. ես զինչ մեղայ. դո՛ւ ես պատճառն: - 482. Յերկրորդ ամին աստուածածինն տըպացաւ ի սեանն, և քառասնօրեայ մանուկն յիսուս ի գիրկն. և խաչ ծիրանի յերկոսին *ձեռինն*: - 485. Եւ որպէս զմարմնաւոր թլփատութիւնն աւանդեաց աբրահամու, նոյնպէս զհոգևորն որ է՛ թլփատութիւն սրտի՝ հրամայեաց ի *ձեռն* մովսէսի...: - 486. Յիննգերորդն է բևեռք ոտիցն և *ձեռացն*. առ միշտ յիշատակելոյ զմեզ ի միտս իւր...: - 489. Դարձեալ՝ տարածումն *ձեռացն* զմերժումն և զհերքումն թշնամւոյն, այլ և զիշխանութիւն նորա արտաքս ընկենու...: - 489. Եւ յերկոսին *ձեռացն* և ոտիցն: - 492. Գրաւորն մովսէսի. իսկ Աւետարանն չորրորդ ի *ձեռն* խաչին: - 494. Այլ և տարածումն *ձեռացն* մովսէսի ընդ դէմ ամաղէկայ: - 494. Դարձեալ վայելո՛ւչ էր փրկութեան մեր լինիլ ի *ձեռն* փայտի. որ ցուցանէ զփայտն կենաց ի մէջ դրախտին: - 494. Այլ և գաւազանն հրաշագործ ի *ձեռն* մովսէսի: - 494. Այլ և ցիցն ի *ձեռին* հայելի զոր վարսեաց ընդ ծամելիսն սիսարայ: - 494. Այլ և գաւազանն ի *ձեռն* հրեշտակին. որ ընկալաւ զպատարագն գեդէովնի: - 494. Այսպէս. **բ** ոտիցն. **բ** *ձեռացն*. **ա** ուսոյն վերայ. **ա** խաչին թևին. **ա** պիղատոսի տախտակին. **բ** այն տախտակին որ պատուանդան էր և ոտքն ի վերայ բևեռեալ: - 495. Յինգերորդ՝ ապականութիւն մեր մարմնոցս է՛ ի սերմանէ հօր ի *ձեռն* կնոջ խառնեալ...: - 499. Յինգերորդ՝ զադամաստեղծ *ձեռս* իւր տարածեաց տէրն ի վերայ խաչին. և արտաքս ընկէց զչար իշխանն. և կորզեաց զմարդիկ յիշխանութենէ նորա: - 503. Նոյնպէս և հոգի մարդոյ զկնի մահու ո՛չ կարէ արդարանալ ըստ ինքեան. բայց թէ ի *ձեռս* այլոց վճարի պարտ նոցա և հասանին ողորմութեան: - 508. Իններորդ, գեթէօն՝ այն որ զցօղն ետես ի վերայ գեղման, զհօր իւրոյ զեզն պարարակ հրամանաւ հրեշտակին ի մէջ գիշերին պատարագեալ. և զանտառն և զսեղանն բահաղու կործանեալ և զերծեալ ի *ձեռաց* նոցա. որ էր օրինակ փրկչին. զի նա՛ է եզն պարարակ պատարագեալ. և ի մէջ գիշերի զբագինսն դժոխոց կործանեալ և յարուցեալ և ապրեալ ի մահու: - 513. Որ և պահապանքն շրջապատեալ. որ և զհանդերձն պատատեալ յանկողնի, և լերդ այծեաց և մազ ի սնարսն. և ի գիշերի իջեալ ընդ պատուհանն և ելեալ առ սամուէլ զերծաւ ի *ձեռաց* նոցա: - 513. Իններորդ, ասէ «մի՛ մերձենար», զի մարմինն այն պտուղ էր կանուխ դժոխոցն. և ինքն տէր մեր իբրև քահանայ նոր յամենայն *ձեռաց* պահէր զգուշութեամբ, զի պահեսցէ զնա ի *ձեռինն* որ կարօ՛ղ է ընդունել զայնպիսի պատարագն: - 517-518. Մետասաներորդ, զի ձգեալ *զձեռն* նայի հնազանդեցոյց զմարմինն զայն ի ներքոյ մահու: - 518. Իսկ թռչիլ ամենայն սրբոց ի *ձեռն* սպասաւորութեան հրեշտակաց: - 519. Երրորդ՝ ամբարձեալ *ձեռօք* վերանայր յերկինս վասն երկուց. նախ՝ զի զինքնն ընծայեսցէ հօրն. երկրորդ՝ զի զթշնամիսն հարկանիցէ զօրաւոր *ձեռամբ* բարձրացեալ: - 520. Երկրորդ՝ և յայսմ աւուր տուաւ նոցա օրէնք ի *ձեռն* մովսէսի: - 524. Երրորդ՝ ի գլխո՛յն իջանեն կենդանութիւնք և զօրութիւնք և առողջութիւնք և շարժութիւնք ի բոլոր անդամս ի *ձեռն* ջլոյն: - 532. Նոյնպէս ի քրիստոսէ ի մեզ իջանէ կենդանութիւն հոգևոր, և զօրութիւն, և առողջութիւն, և շարժութիւն յօդոց և խաղալեաց ի *ձեռն* հաւատոյն շաղկապութեան: - 532. *Ձեռք*՝ քահանայք գործիք սուրբ խորհրդոցն: - 534. ..և առաքեալքն *ձեռն* դնելովն միայն՝ տային զհոգին սուրբ. և ի լեզուս խօսէին. և մարգարէանային ընդունօղքն. իսկ վարդապետք սուրբք՝ քարոզութեան նոցին հետևօղք և որդիք ծնողացն՝ երրորդ կարգին յետ նոցա: - 535. Եւ սոքա են սուր երկսայրիք տուեալ ի *ձեռս* քահանայից զինուորաց

քրիստոսի. զի յաջ և յահեակ հարցեն. այսինքն զսատանայ և զչարսն ի մարդկանէ որք հակառակին բարեաց: - 538-539. Զոր յառաջին ամին յորժամ նստաւ կաթողիկոս տէր սիմէոնի, ի *ձեռն* տէր եղիայի մեծահանդէս ժողովմամբ պայծառացոյց զեկեղեցի կանոնական հաստատութեամբ ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս ամէն: - 545. Երկրորդ՝ զի մերձ ի համբարձումն *ձեռն* եդ ի վերայ նոցա և օրհնեաց զնոսա և արար զնոսա առ հասարակ եպիսկոպոսունս: - 546. Այլ զչար և զաստուածուրաց ժողովն քաղկեդոնի որ ի *ձեռն* մարկիանոսի և անիծելոյն պօղքերի՝ ո՛չ ընդունիմք. և զընդունօղսն նզովեմք: - 547. Այլ և *գձեռս* ի հարկանել. յըմբռնել. և զոտս ի գնալ. համեստութիւնն ի նոսա ամենայնսն դնէ զեղանակն և զկարգն: - 581. Եօթներորդ պսակն. որ է՛ խորհուրդ նոր զինուորս ի ներս մուծանելոյ ի *ձեռն* մարմնաւոր ծննդեան: - 587. Ապաշխարութիւնն է՛ խորհուրդ արդարութեան. զի ի *ձեռն* զղջման և խոստովանութեան և այլոցն արդարանամք ի մեղաց: - 587. Երրորդ, զի թէ կայր հնար որ ի *ձեռն* կնոջն տուեալ լինէր շնորհք, աստուածածին կոյսն մարիամ ընդէ՛ր ոչ եղև մերձ մկրտութեան որդւոյն իւրոյ ի յորդանան: - 589. Չորրորդ, զի թէ ի *ձեռն* փիլիպպոսի առաքելոյ որ էր մի յեօթանց անտի սարկաւագացն ո՛չ եղև իջեալ հոգին ի վերայ ներքինւոյն մինչև յափշտակեցաւ յազովտոս...: - 589. ...և ապա՛ էջ հոգին ի մկրտեալն նորա. զիա՞րդ ի *ձեռն* կնոջ լինի տուեալ շնորհք հոգւոյն լուացմամբ ջրոյն: - 589. Եօթներորդ, զի մկրտելն է գործ քահանայի. և քահանայութիւնն է սպասաւորութիւն աստուծոյ. իսկ զայս սպասաւորութիւն աստուծոյ և ո՛չ կռապաշտքն ունէին սովորութիւն սնոտի կռոցն ի *ձեռն* կանանցն մատուցանել զպատարագն. - 589. Յորժամ բոլորովիմբ մարդն ի *ձեռն* մկրտութեանն սրբի, սերմն նորա ո՞րպէս է անսուրբ: - 592. Բոլորովիմբ մարդ ի *ձեռն* մկրտութեանն ներքուստ և արտաքուստ սրբի. բայց դարձեալ սերմն նորա ի *ձեռն* մարմնոյն ցանկութեանն պղծի: - 592. Ոչ ինչ ամենևին՝ թէ ընկալցին զմկրտութիւնն. որպէս և ոչ ցորենոյն է վտանգ թէ գողունի իցէ և սերմանի ի *ձեռն* գողի: - 593. Նա՛խ՝ զի քրիստոս մի հաց էառ ի *ձեռն* ի սեղանոյն և օրհնեաց. նոյնպէս և զմի գինի: - 597. Այլ թացեալ պատառն այսպէս էր. զի ի սկաւառակն ընդ վարդապետին փութացաւ մատնիչն տանիլ *գձեռն* լիրբ դիմօք և արիամարհեալ մտօք: - 599. Եւ զպատառն զայն զոր ի *ձեռն* ունէր քրիստոս՝ ետ ի նա...: - 599. ...որ սակաւ մի խրատեցաւ ի *ձեռն* աբիսողոմայ: - 602. Վերջին օծումն է խորհուրդ եկեղեցւոյ. որ տուեալ լինի հիւանդաց ի հոգէվարի օրն. յաչքն, յականջն, ի բերանն, ի *ձեռքն*, ի կուշտն, յոտից ներբանքն: - 604. Դարձեալ՝ մահու չափ մեղքն բանիւ սրբի ի *ձեռն* քահանային...: - 604. Եւ թէ ոք ասիցէ, պա՛րտ է զի *ձեռն* քահանային մերձեսցի ի զգայարանսն: - 605. Եւ *ձեռն* քահանային է՛ օծեալ և սրբեալ մեռոնաւն...: - 605. Եւ այս միութիւնս լինի ի *ձեռն* պսակին: - 609. Եւ այս լինի ի *ձեռն* պսակին որ տուեալ լինի ի *ձեռն* խորհրդոյ: - 609. Նա՛խ՝ թէ ո՛չ գիտէ զկերպ աղօթիցն, կամ ծունր կրկնել, կամ *գձեռն* տարածել. և սոյնպիսիք ո՛չ մեղք են և ո՛չ արդարութիւն: - 620. Վեցերորդ ժամն է վերջին ողորմեայն. իններորդ ժամու աղօթն. յորում քրիստոս աւանդեաց զհոգին ի *ձեռս* հօր: - 622. Նոյն սարասիւք այժմ ի *ձեռն* փրկչին մերոյ յիսուսի՝ տապանակաւ խաչին և աղօթիւք սուրբ եկեղեցւոյս՝ բարձրացեալ պարիսպն չարութեան եօթնից զգայութեանց մեղաց որոշօղ ի մէջ մեր և աստուծոյ, կործանեսցի ի սպառ: - 627. Համբարձումն *ձեռաց* սրբութեամբ աւետարանին, նշանակ գործոց բարեաց որով փառաւորի աստուած: - 628. ...և խոնարհեսցուք ընդ *ձեռամբ* նորա. զի դարձուսցէ ի մահու ի կեանս: - 629. Ապա ի բացեայ կացեալ և *գձեռս* համբարձեալ ասէ, Սուրբ աստուած Սուրբ և հզօր Սուրբ և անմահ որ խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ: - 631. Թէպէտ կամաւ տկարացար և ետուր զքեզ ի *ձեռս* խաչողացն՝ հզօ՛ր ես յամենայնի: - 632. Ո՛չ միայն զգլուխս բանամք, այլ և *գձեռս* համբառնամք ի վեր. որպէս և յովսէփ ասաց: - 635. ...և մեք բաց գլխով *գձեռս* տարածեալ զնորա նմանութիւնն բերեմք ի մեզ: - 635. Եւ դարձեալ՝ զիւր հոգին աւանդելով կնքեաց զամենայն հոգիսն ի *ձեռն* հօր: - 639. Նա՛խ՝ զի մարդն հոգի է և մարմին, ձայնիւ և *ձեռօք* երգէր. զերկու մատունս ի մի լծակցեալ յօրհնութիւնն աստուծոյ: - 641. Զոր առեալ ի *ձեռս* միշտ մատուցանեմք աստուծոյ: - 645. ...և վասն ներգործականին զուրբաթն. որով սրբասէր լեալ հասցուք առ ճշմարիտն և առ բարին ի *ձեռն* աստուծոյ: - 654. Եւ զայս ի քրիստոսէ ուսաք. զի այսպէս խաչանման բեկանէր զհացն երկոքին *ձեռօքն*: - 655. ...և դարձեալ հատանեն ի *ձեռս* իւրեանց որ լինի խաչ: - 655. Որպէս լեզուն մտաց՝ և *ձեռքն* սրտին է գործի. նոյնպէս ունկն կամա՛ց է. հնազանդութեան և կամ ոչ: - 658. ...յորժամ այս ամենայն հաստատեալ նորոգեցաւ հրամանաւ սրբոյն սահակայ պարթևի ի փառս քրիստոսի. *ձեռամբ* իմով մովսիսի գրչի սահակայ: - 659. ...նա *գձեռն* ի վեր առեալ գոհանայ զաստուծոյ. նմանապէս թէ պատմի վասն վախճանի ուրուք: - 659. Ա՛րդ՝ իմանալի մահ է՝ ի *ձեռն* առաքինութեան զմարմինն մեռուցանել և ի *ձեռն* չարութեան զհոգին: - 668. ...իբր թէ այսպիսի սղալումն ի ճաշակելոյ պտղոյն եղև. որ *ձեռօք* հատեալ եդ ի բերանն: - 670. Նաև ի տխրիլն *գձեռն* ի ծնօտն եդեալ...: - 670. ...և *ձեռամբ գձեռն* ծեծեալ...: - 670. ...և *ձեռքն*

եհատ…: - 670. Իսկ ի քահանայաթաղն՝ քահանայապետն հեղու զիւղն ի վերայ մարմնոյն. այսինքն ի ճակատն և ի *ձեռն*…: - 672. Ասեմք թէ ո՛չ. այլ առաւել վտա՛նգ է նոցա. զի ի բազում անգամ ի *ձեռս* դիւաց արտաքս ընկեցեալ լինին մարմինք նոցա: - 678. Եւ ի *ձեռն* հրեշտակի բազում պատուհաս և հարուած կրէ աստ մարմինս…: - 682. Եւ ծովն պատառեալ ի *ձեռն* մովսիսի այսինքն խաւարային անդունդք օդոյդ ի *ձեռն* առաջնորդ հրեշտակին: - 682. Եւ ապա՛ ի *ձեռն* յիսուսի արժանաւորքն մտանեն յարքայութիւնն երկնից և ժառանգեն զնա՛…: - 682. Այսպէս թէպէտ քրիստոնէից հոգիքն որ անարժանք են՝ ի *ձեռն* հրեշտակին ժամանեն ի կայանս հոգւոցն այսպիսի սքանչելեօք: - 682-683. Այլ մեծն ներսէս ասէ թէ՝ սուրբքն ի *ձեռն* պահապան՝ հրեշտակացն երևին. թէ յերազս թէ յարթնութեան. և օգնեն մեզ. և խօսին. և լսեն զաղօթս մեր: - 685. Իսկ մեղաւոր հոգին դարձեալ ի *ձեռն* հրաշտակաց. զի աղաչէր զնա երևիլ. կամ ի *ձեռն* դիւաց կերպարանին նոքա: - 686. Անդ ժողովին և հոգիք չարաց և ամբարշտաց ի *ձեռն* հրեշտակաց չարաց. ո՛չ ըստ բնութեան…: - 688. Այլ և տեսցուք զվկայութիւնս հակառակացն և յարմարեսցուք զպատասխանիսն, զի առ *ձեռն* պատրաստ լիցի: - 695. Իսկ արմաւենեօքն զոր բարձեալ են ի *ձեռս*՝ զյաղթութիւնն նկարագրեն: - 696. Եւ անիրաւք որ ո՛չ խոստովանին զմեղս, նոքա ո՛չ զերծանին ի *ձեռաց*. այսինքն պատժոցն աստուծոյ…: - 699. …զի ահ մեծ է անկանիլ ի *ձեռս* աստուծոյ կենդանւոյ յանաչառ դատաստանին և ո՛չ այժմ: - 699. Եւ բևեռմամբ *ձեռացն* բևեռեաց ընդ խաչափայտին զսատանայ և զմեղս մեր: - 705. Յօր անունն ռոմելոս ասեն. զմին *ձեռն* և զոտն երկայն և մինն կարճ. զմի ակն խաժ, և զմիւսն սև: - 706. Եւ զամենայնսն դրոշմէ՛ ի ճակատն և յաջոյ *ձեռն*. որպէս ասէ տեսիլն յօհաննու: - 707. Եւ զայս ի ճակատն և յաջոյ *ձեռինն* տայ դրոշմել: - 707. Եթէ ինքեամբ՝ եթէ ի *ձեռն* միքայէլի. ի մէջ վրանի և յաթոռն իւր սատակեսցի. և գլորեսցի մարմինն ակներև ժողովրդեան իւրոյ. - 709. Զի՞նչ է արմաւենին ի *ձեռս* նոցա: - 712. Զի՞նչ է բուրվառն ոսկի և քնարն ի *ձեռս* նոցա: - 713. Այս զյարութիւնն ասէ ի *ձեռաց* գազանաց խնդրելն. զի յառնեն մարմինք որ մեռեալ են ի *ձեռն* գազանաց: - 715. Եւ աստուած ո՛չ է մեռելոց այլ կենդանեաց. որոց հոգիքն ի *ձեռս* նորա կենդանի են. և մարմինքն ի *ձեռս* նորա կենդանի լինելո՛ց են: - 715. Եւ տարերք ամենայն շտեմարանք են աստուծոյ. և տիեզերք ամենայն ի *ձեռին* նորա՛ են ըստ մարգարէին: - 718. Զի արարածք ամենայն գործք *ձեռինն* աստուծոյ են…: - 733. Եւ այս ո՛չ թէ լոյս միայն է. զի զլոյսն ո՛չ ետ մեզ նշան. այլ զխաչն փայտեղէն յորոյ վերայ *զձեռն* իւր տարածեաց միածին բանն: - 734. Կշռիք գործիական առ մեզ յայտնի՛ է. որ զարդար հաւասարութիւն նշանակէ ի *ձեռս* մեր: - 744. Եւ պա՛րտ է գիտել զի ի միոյ սեռէ բարութեանցն աստուծոյ՝ յառաջե՛ն առ մեզ ողորմութիւն և արդարութիւն. կրկին տեսակ կամ գործք կամ զօրութիւն. որպէս ի մեզ երկոքին *ձեռք* մարմնոյ. և որպէս իմացումն և կամք հոգւոյ: - 745. Իսկ Չորրորդն արքայութիւն՝ է՛ յաւիտենականն գաւառ. յորմէ ի *ձեռն* մեղաց առաջնոյ մարդոյն՝ տարեալք պանդխտիմք յայսմ տառապանաց գբի և ի տիղմ կաւոյ. անարգաբար դեգերեալք ի հովիտս արտասուաց. յանապատի կալով և ո՛չ ի ճանապարհի. - 756. Տէրն զգանձն մատանեաւ դրոշմեալ տայ ի ծառայս. և մատանին ի *ձեռին* է. երբ խնդրէ՝ թերին յանդիմանի: - 769. Շող յաստուծոյ ծագեալ հաւատ. զերկնից կախեալ լար իմն լուսեղէն. զորմէ բուռն հարեալ *ձեռն* *զձեռամբ* փոփոխեալ. ի ծովու սքանչելեաց յերկինս և յօդս վերանալ: - 769. Եւ ապա ի սէր և անձուկ ժտելոյ նորին, ապաստանեալ ի նոյն որ զօրացոյց զտկարս, *ձեռն* ի գործ արկեալ աւարտեցաւ բազում միջոցաւ. և փախստեամբ ի տեղիս. և մեծ ջանիւ փութացեալ: - 772. Եւ դարձեալ ի ճառս անառակին և կորուսեալ դրամին և մոլորեալ միոյ ոչխարին և անկելոյն ի *ձեռս* աւազակին, զնոյնս ուսուցանեն մեզ հարքն հոգելիցք արտայայտել: - 775. Զի առաջին *ձեռամբն* աստուծոյ նա՛ արարաւ, և նա՛ միայն յանցեաւ. և նմա՛ խոստացաւ փրկութիւն: - 778. Իսկ շնորհք նորոյս ի *ձեռն* քրիստոսի տուեալ՝ ո՛չ է փոփոխական. զի վերստին նորոգման է շնորհք և անապականութեան: - 783

**ՁԵՌՆԱԴՐԵՄ +** Ապա՛ ի թաբօր լերինն ամպ խոնարհեալ և ձեռն կարկառեալ *ձեռնադրեաց* զնա ասելով, այս մելքիսեդեկ անհայր անմայր չհամարեալ յազգս՝ նմանեալ որդւոյն աստուծոյ: - 300. Եւ զառաքեալսն ո՞րպէս *ձեռնադրեաց*: - 526. Որպէս թէ զվերնագոյնն կամ զանարժանս կամ վասն ախտի ինչ օրհնել կամ *ձեռնադրել*. այլ զոր հոգին յայտնեսցէ զարժանիսն՝ նմա՛ կատարի: - 539. Եւ թէ ոք ասիցէ, թէ վասն ուխտի կամ ագահութեան զանարժանս *ձեռնադրեն* ո՞չ կատարի: - 540. Ասեմք առ այս, թէ *ձեռնադրեալն* իցէ անարժան՝ ո՛չ առնու շնորհս. այլ դատապարտի ինքն և *ձեռնադրօղն*. զի սրբութիւն՝ շանց ետ: - 540. Իսկ թէ *ձեռնադրօղն* իցէ անարժան, միայն ինքն ոչ օգտի. այլ դատապարտի. իսկ շնորհն կատարի՛ ի յընդունօղն: - 540. Եւ յա՛յտ է յայսմանէ, որ կաթողիկոսն ո՛չ կարէ կաթողիկոս *ձեռնադրել*. այլ եպիսկոպոս առնէ: - 546. Չորրորդ՝ յա՛յտ է, զի իւրաքանչիւր առաքեալ յիւր վիճակն ընթացեալ *ձեռնադրեցին* եպիսկոպոսունս: - 546. Եւ ո՛չ ոք գնաց առ պետրոս ի հռօմ. և ո՛չ պետրոս յայլ վիճակս *ձեռնադրեաց* զոք: - 546. Եւ թէ ոք ասիցէ, ի կեսարիայ *ձեռնադրեցաւ* ի ղևոնդիէ

պատրիարգէ: - 548. Ասեմք թէ՝ սուրբն գրիգոր ի կեսարիայ *ձեռնադրեցաւ* ո՛չ յայլմէ առաքելոյ, այլ ի սրբոյն թադէոսէ՛. որոյ էր վիճակս հայոց: - 548. Զի առաքեալն թադէոս յորժամ *ձեռնադրեաց* զադդէ յուռհայ, և ապա՛ ի կեսարիայ եկն և *ձեռնադրեաց* առաջին եպիսկոպոս զթէոփիլոս. զայն յորոյ անունն գրեաց Ղուկաս զաւետարանն և զգործքն առ թէոփիլոս: - 548. Եւ այսպէս ղևոնդիոս *ձեռնադրեալ* ի նմանէ պատրիարգ. յորմէ *ձեռնադրեցաւ* լուսաւորիչն մեր: - 548. ...ընդէ՞ր ոչ մկրտեաց զոք ի հաւատացելոցն. մինչև գնաց ի կեսարիա *ձեռնադրեցաւ*. և ապա եկեալ զհազարս հազարաց և զբիւրս մկրտեաց ի գետն: - 589. Այսպէս բազմապատիկ թողութիւն շնորհէ քահանայականն կարգ՝ *ձեռնդնելով* և բանիւ շնորհաց սրբելով: - 605. Եւ գո՛րծ է նոցա *ձեռնադրել* զարք եպիսկոպոսունս. որք են ընդ իւր վիճակաւն ի չորս բաժինս տիեզերաց: - 607. Եւ գո՛րծ է նոցա *ձեռնադրեալ* զմետրապօլիտսն. և օրհնել զձէթ կնքոյ: - 607. Եւ գ արքեպիսկոպոսք ունին իշխանութիւն *ձեռնադրել* զպատրիարգսն: - 607. Եւ գո՛րծ է նոցա *ձեռնադրել* եպիսկոպոսունս...: - 607. Եւ գ մետրապօլիտք ունին իշխանութիւն *ձեռնադրել* զարքեպիսկոպոսունս իւրեանց: - 607. Եւ գո՛րծ է նոցա՝ *ձեռնադրել* զամենայն վիճակաւորս եկեղեցւոյն իւրեանց: - 607. Եւ գ ի նոցանէ *ձեռնադրեն* զիւրեանց մետրապօլիտն: - 607

**ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ +** Ասեմք առ այս՝ թէ լուսաւորիչն գնաց ի հռոմ ո՛չ վասն *ձեռնադրութեան*, այլ վասն սիրոյ և միաբանութեան երկուց ազգաց և ուղղափառ թագաւորացն տրդատայ և կոստանդիանոսի: - 548. Եւ ա՛յս էր պատճառն հայոց անդ ի *ձեռնադրութիւն* գնալոյն: - 548. Եւ որ եպիսկոպոսն զմիթրն և զեմիփորոնն և զմատանին զոր զգեցեալն էր ի *ձեռնադրութեանն* հանէ՛ յորժամ պատարագէ...: - 635-636

**ՁԵՌՆԱՄՈՒԽ ԼԻՆԵԼ +** Եւ արիութիւնն ո՛չ *լինի ձեռնամուխ* ի զարհուրելիս: - 579. ...զի մի՛ *ձեռնամուխ լիցի* ի նա թշնամին...: - 672

**ՁԵՌՆԱՐԿ +** Եւ թէ անկրական, եղև առաջին *ձեռնարկն*: - 501

**ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆ +** Դարձեալ՝ արիութիւնն կայանայ ի **ե**. այսինքն Նա՛խ ի *ձեռնարկումն* բարձրագունից. որպէս ասէ սաղմոս «քաջալերացարո՛ւք և զօրացին սիրտք ձեր»...: - 580

**ՁԵՌՆԲԵԿ +** Իններորդ՝ *ձեռնբեկ*. ի գործս բարիս: - 370

**ՁԵՌՆՀԱՍ +** Երկրորդ՝ զի մարմնաւորն իշխէ՛ որքան մեծ է և *ձեռնհաս*: - 538

**ՁԵՌՆՏՈՒ +** Չորրորդ՝ զի շինօղ և հաստատօղ եկեղեցւոյ առաքեալքն են. և *ձեռնտու* նիւթոց մարգարէքն. եզր և պարիսպ վարդապետք: - 535. Զոր և բիբն անուանեալ պահապան, զառաջինն ո՛չ զգուշացեալ, լինի դարձեալ *ձեռնտու*, զաւելորդսն արտաքս մերժելով. որ անուանի արտասուք. այսինքն արտաքսեալ: - 787

**ՁԵՒ +** Որպէս մի էութիւն է խնձորն. և ունի երեք յատկութիւնս որակաց. զհամն, և զհոտն, և զգոյնն ընդ *ձևոյն*: - 74. Զի աչք զգայ զգոյնն ընդ *ձեւոյն*. և ո՛չ զհամն և զհոտն: - 75. Դարձեալ՝ մի բնութիւն ասաց միւս եւտիքէս. ոչինչ առեալ մարմին ի կուսէն. այլ իբր ընդ խողովակ անցեալ իբր ի դարիճակի. միայն *զձևն* ի նմանէ ձևագրեալ: - 81-82. Նիւթն. *ձևն*. այսինքն է կերպն. Գաւառն. Ազգայինքն. Ժամանակն. Տեղին. և յատուկ Անունն: - 87. Նախ զՆիւթն զմի բնութիւն նիւթական որպէս մարդ. և զմիւսն բնութիւն աննիւթ որպէս զաստուած. *զՁևն* զմինն քանակութեամբ և որակութեամբ տարբերեալ որպէս մարդոյ. և զմիւսն ի վեր քան զկերպ և *զձև* որպէս աստուծոյ: - 87. Երրորդ՝ ասի ոչէ՝ նիւթն անորակ. որ ո՛չ ունի *ձև* և ո՛չ ունի տեսակ և ո՛չ որակ: - 111. Զո՞ր *ձև* ունի երկինք. և քանի՞ է: - 154. Վասն ծառոյ՝ և *ձևոյ* և անուան նոցին. և զի բոյսք փութով աճեն քան զծառս: - 155. Զորօրինակ եթէ կամիցի ոք տաճար շինել. նախ ձևանայ ի միտքն և յետոյ շինէ զտաճարն ըստ այնմ *ձևոյ*: - 163. Հինգերորդ զանազանութիւն՝ զի *ձևն* անմարմին է ի միտս. իսկ շինեալն մարմին: - 163. Երկրորդ՝ հասարակութիւն է, զի որպէս է նկարեալ *ձևն*, նոյնպէս և շինեալ տաճարն քանակութեամբ և որպիսութեամբ. և անդրադարձեալ ևս: - 163. Հինգ. այսինքն Քանակն որ է չափն. Որակն. որ է գոյնն. *ձևն*. տեղին. զատութիւնն: - 174. Նախ՝ զի ո՛չ ունի քանակ, որակ, *ձև*, և այլքն, որ նիւթո՛յ են յատկականք: - 175. Նախ՝ զի սոքա անմարմինք են ըստ ինքեան. այսինքն քանակ, որակ, և այլքն. և յանմարմին էութիւնս ո՛չ տեսանին. որպէս ի հրեշտակս կամ ի հոգիս. զի նոքա ո՛չ ունին *ձև*. որակ. քանակ. և զայլսն: - 175. Իսկ Չորրորդն զի ունի *ձև*, գ ստեղն ի մի խառնեալ: - 178. Երկինք զո՞ր *ձև* ունի: - 182. Վարդապետք ասեն թէ ամենայն երկինք ի հարկէ պարտին ունել զբոլորակ *ձև*: - 182. Եւ բոլորակ *ձևն* պա՛րզ է քան զամենայն *ձև*. զի եռանկիւնին յերից գծից բաղկանայ, և քառանկիւնին ի քառից. նոյնպէս և այլքն: - 182. Իսկ բոլորակ *ձևն* ի միոյ գծոյ բաղկանայ: - 182. Ապա ուրեմն պարզ էութեան երկնից պարտ է ունել զպարզ *ձև* որ է բոլորակն: - 182. Երկրորդ՝ զի բոլորակ *ձևն* պարունակօ՛ղ է. և երկինքն զամենայն պարունակեալ ունի ի ծոց իւր: - 182. Ապա ուրեմն պա՛րտ է զի ունիցի *զձև* բոլորակ: - 182. Ապա ուրեմն բոլորակ *ձևն* պատշա՛ճէ երկնից: - 182. Իսկ բոլորակ *ձևն* ի մէջ ամենայն *ձևոց* է կատարեալ: - 182. Երրորդ՝

զի վեցեակ թիւն ի մէջ ամենայն թուոց առաջին կատարեալ **է**. և **զ** թիւն է ի բոլորակ *ձևն*. զի որ քան է ի միջին կիտէն ի բոլոր ծիրն, վեց այնչափ է իւր բոլորակ ծիրն: - 182-183. Ապա ուրեմն բոլորակ *ձևն* որ կատարեալ է` պատշաճի կատարեալ մամնոյ երկնից: - 183. Երրորդ` զի բոլորակ ունի *ձևս*. որ է կատարեալ վեցեկի չափովք: - 184. Եւ յորժամ առնու զլոյսն յարևոյն, ի յեզրն երկրիս *ձևն* բոլորակ է` խաւար մնա մէջն: - 187. Գէջ օդն գոգացեալ և դէմ եղեալ արեգականն` առնու զլոյսն ի նմանէ ըստ բոլորակ *ձևոյ* նորա: - 203. Վասն է՞ր ամենայն բոյսք *զձևն* զառ ի վեր ունին: - 213. Երկրորդ` կոչին ծառք, այսինքն ծուռք. զի ընդ դէմ են *ձևոյ* աշխարհիս և մարդոյն: - 214. Երրորդ` ի նոյն իսկ ի *ձևոյ* շինուածոյ մարդոյն. զի ուղիղ գոլով` զիշխանականն նշանակէ. իսկ կենդանիքն կո՛ր գլխով զծառայականն ցուցանեն: - 220. Չորրորդ` *Ձևն* ուղիղ է մարդոյս: - 227. Վասն է՞ր մարդոյս *ձևն* ուղիղ. գլուխն ի վերայ. և այլ անդամքն ի ներքոյ: - 232. Գլխոյն հերն որպէս արմատ. և ջիլք և ոտք` որպէս ոստք ըստ *ձևոյ* աշխարհի: - 233. Տասներորդ` զի կիրք մարմնոյն հեղուն ի հոգին. որպէս յորժամ մարմինն ննջէ` և հոգին թմրի և անգործ մնայ. վասն որոյ արարաւ *ձևն* ուղիղ, զի միտքն ընդ նմա՛ ուղղեսցի ի վեր առ աստուած...: - 233. Վասն է՞ր է զի ամենայն անհատք ի մարդկանէ համատիպք են միմեանց. և օտարք իրերաց. զի նմանք են, և աննմանք որակութեամբ և *ձևով*: - 235. Եւ *ձևն* ուղիղ և թիւր` որա՛կ է: - 236. Եւ նւազեալ յայսցանէ գոյնն` մնայ պատկեր ի քանակէ և ի *ձևոյ* և ի տեղւոյ երևեալ. որպէս յա՛յտ է ի մեռեալ մարդն: - 236. Եւ պակասեալ ի սմանէ տեղին, լինի տիպ ի քանակէ և ի *ձևոյ* բաղկացեալ. որպէս յա՛յտ է ի մոմն տպացեալ: - 236. Իսկ միայնացեալ որակ ի *ձևոյն*, երևի աննման. զի նմանն ի վերայ որակութեան ասի. որպէս ծանրութիւն: - 236. Ապա ուրեմն յա՛յտ է զի աննմանն և օտարն են ի սեռի որակութեան և յատուկ *ձևոյ* որակի: - 236. Եւ առ հասարակ ասեմ զայս դնել ի մտի. զի չափաւորութիւն անդամոցն ըստ *ձևոյն* և ըստ գունոյն և ըստ քանակութեան և ըստ կազուածոյն և ըստ շարժմանն, նշանակէ զբարի մտացն ընդաբոյս յարմարութիւնն: - 248. Զորօրինակ` արուեստաւոր ոք կամիցի դրօշել ի քարեայ պատկեր, նախ նկարէ՛ ի միտս իւր *զձև* պատկերին. և ապա հատանէ զքարն և տաշէ՛ և դրօշմէ՛ զկերպն ըստ այնմ նմանութեանն որ էր ի միտս ձևացեալ: - 258. Ապա կազմէ՛ *զձև* զգայականին մինչև ի **ի** օրն...: - 261. Նախ` չափաւոր *ձևն*: - 271. Ինն**ձ**` ուղիղ է *ձև* մարդոյ. և ուղիղ է տէր աստուած մեր: - 272. Քսանն**ե**, ասէ լուսաւորիչն մեր, թէ *ձև* մարդոյ երևեցաւ ի ստեղծանելն, զոր առնելոց էր զնոյն մարմին յետոյ ժամանակի. և ի նոյն պատկերն արար զմարդն: - 272. Զոր օրինակ ո՛չ ասի մարդ մարդոյ նման գոլ ըստ մարդկութեան. վասն զի նոյնութիւն է և ոչ նմանութիւն. բայց ասի նման մարդ մարդոյ ըստ երեսացն և գունոյն և *ձևոյն* նմանութեան: - 272. Իսկ դրամն և տախտակն ուր գրեալ է պատկեր թագաւորին` միայն նման է թագաւորին ըստ *ձևոյն*. այլ ո՛չ ըստ բնութեանն: - 273. Ո՞րպիսի էր տապանին *ձև*: - 293. Սա՛ ունի *զձև* նմանութեան տապանին վեցակողմ և կաթողիկէ, և դուռն ի կողմանէ: - 294. Երկրորդ` դարձեալ նոյն ինքն սատանա՛յ է օձն. որ փոխեցաւ ի բարեկամի *ձև*. և պատրեաց զնախաստեղծսն: - 332. Եւ է՛ որ զկերպն և *զձևն* միա՛յն փոխէ, և կոչի առաչօք. որպէս յանէսն և յամրէսն առնէին կախարդութեամբ դիւական: - 335. Ահա՛ յայտնապէս այլ է *ձև* արարողութեան սոցա ի յօրինակէն: - 341. Երկրորդ` զորպիսութիւն և *զձև* աշխարհիս ցուցանէր ի խորանն եռայարկեան ի չորից նիւթոց փոխանակ դ տարերաց յանապական և յապականացու բնակչաց: - 342. Զի՞նչ նշանակէր **ձ** փեղկ և *ձև* խորանին: - 342. Իսկ *ձև* խորանին, որպէս սագաշէն եկեղեցոյ: - 343. Նախ` նշանակէր *զձև* աշխարհի: - 343. Երկրորդ, ունի *զձև* երկնայնոցն: - 343. Երրորդ` ի *ձև* եկեղեցւոյ: - 343. Երկրորդ` այսպիսի *ձև* հաստատո՛ւն է. զի կիբիկո՛ն է. զի հաստատ և յարամնա՛յք են: - 344. Հինգերորդ, որ ասաց զերեք *ձևն*, երկայն և լայն և բարձր. և ո՛չ զխորն որ է՛ թանձրութիւն: - 344. Երկրորդ` ուստի՞ ճանաչեաց թէ սամուէլ է. զի ահա՛ կինն ասաց. այլ որպէս կինն երևեցոյց *զձևն*, նոյնպէս կարծեաց և սաւուղ: - 429. Որպէս *ձևն* բոլորակ` և գոյնն` ենթակայ նիւթովն: - 476. Իսկ զկատարեալ հասակն նկարելով` ի *ձև* չորեքկուսի հանեն զաւետարանն ի ձեռն և ի գիրկն: - 481. Այլ զանազանին Նախ ի *ձևն*. զի մկրտութիւնն յոհաննու տուեալ լինէր յանուն այնմ որ գալոցն էր. իսկ քրիստոսին յանուն Երրորդութեանն: - 488. Եւ մի է ըստ *ձևոյն* արարողութեան պահոց աղօթից որպէս անհատիւ: - 533. Վեցերորդ` *զձև* զգեստուն այլաբա՛ր ունել: - 553. Եւ մկրտելի է այսու *ձևով*: - 588. Այլ զայն ասացեալ յառաջն *զձև* բանիցն. որ և արժանաւորապէս տուեալ լինի շնորհք հոգւոյն: - 588. Դարձեալ գիտելի է, զի աստ ասեն հերձուածօղ ազգն Ֆռանկաց թէ` թէպէտ մկրտութիւնն գործ քահանայի է, բայց ի հարկաւոր ժամանակն թէ քահանայ ո՛չ լինի ամենայն ոք որ գիտէ *զձև* մկրտութեան` կարէ մկրտել: - 588. Եւ թէ այր մարդ ոչ լինի և տղայն մերձ ի մեռանիլ լինի, կինն կարէ՛ մկրտել թէ գիտէ *զձև* բանին զոր քրիստոս ուսոյց «յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ». ցանէ՛ զջուրն և ասէ` մկրտեալ լինի: - 588-589. Եւ զայս ցուցանէ նոյն *ձև* բանին որ է կոչմունք Երրորդութեանն. և նոյն դաւանութիւն հաւատոյն և այլն: - 590-591. Եւ դնէ զայս քահանայն սուրբ մեռոնաւն ի ճակատ նուիրելոյն ասելով այսպէս. ըստ այլազգաց եկեղեցեաց. թէ ի ներքոյ *ձևիս* այս ես կու նշանեմ զքեզ նշանաւ խաչի...: - 593. Հաղորդութիւնն է խորհուրդ` յորում

պարունակի քրիստոս ի ներքոյ *ծնի* հացի և գինւոյ. և յերկոքին մասունքն է բոլոր քրիստոս: - 594. Իսկ *ծն* այսմ խորհրդոյ ի վերայ հացին, «Ա՛յս է մարմին իմ»: - 594. Նա՛խ՝ որպէս հացն նոյն է ըստ *ծնին*, այլ այլ գոյացութիւնն է եղեալ մարմին քրիստոսի...: - 598. ...նոյնպէս վերերևոյթ կերպարանքն նոյն է ըստ *ծնին*. այլ բնութիւնն միաւորեալ է ընդ բանին աստուծոյ և եղեալ աստուած: - 598. Յայնժամ արձակէ՛ ի մեղացն այս *ծնովս*: - 602. Այսու *ծնովս*: - 604. Երրորդ՝ *ծնն* խաչանման. յարևելս գմբէթայարդ: - 613. Իններորդ, զի եկեղեցի հաւատացելոց՝ ունի *զծն* խաչին ըստ մարմնոյ. - 616. Վասն է՞ր սարկաւագն զամենայն քարոզի վերջքն յաղօթից *ծնս* փոխէ ասելով՝ կեցո՛ և ողորմեա՛: - 625-626. Զի՞նչ է որ զառաւօտու քարոզն՝ այսինքն զԵրկրպագեմքն, և զՊատարագին գոհութիւնն, և յերեկոյն զՅասեալքս ի ժամն, աղօթից *ծնով* ասէ սարկաւագն: - 626. Գեղեցիկ գոլն որպէս *ծնովն* հերովն և այլովքն որ ասացաւ: - 725. Նիւթ նշանացս է՛ բազում և զանազան. այլ զօրութիւն և *ծնն* մի և նոյն է խաչին: - 732. Ոմանք ասեն թէ լոյս երևի ի *ծն* խաչին: - 732. Եւ գեղեցկութիւն մարմնոյն բաղկանայ յերից. այսինքն ի մաքրութիւնն, ի չափաւորութիւնն, ի *ծն* անդամոցն: - 766

**ՁԵՒԱԳՐԵԼ +** Դարձեալ՝ մի բնութիւն ասաց միւս եւտիքէս. ոչինչ առեալ մարմին ի կուսէն. այլ իբր ընդ խողովակ անցեալ իբր ի դարիճակի. միայն զձևն ի նմանէ *ծևագրեալ*: - 81-82

**ՁԵՒԱԿԱՆ +** Եւ յայնմ *ծևական* բանիցն ո՛չ է պարտ ի բաց թողուլ. և ո՛չ այլ բան ի ներս խառնել: - 588

**ՁԵՒԱԿԵՐՊԵՄ +** Եւ ի իա աւուրցն ի վեր՝ երևեալ շնչոյն *ծևակերպէ՛* զկերպ մարդոյ մինչ ի **խ** օր արու մանկան. և իսկոյն հեղի ի նա՛ հոգին բանական ի շնորհացն աստուծոյ ծագեալ ի նա: - 261

**ՁԵՒԱՆԱՄ +** Այս ո՛չ որպէս չարափառքն ասեն՝ թէ որպէս նկարիչ իմաստուն *ծևացնէ՛* պատկեր, և ապա ոչ ունեալն՝ զնոյն օրինակէ՛: - 45. Երկրորդ՝ զի խօսքն միայն ի բանէն *ծևանայ* և ո՛չ ի մտացն: - 62. Նախ՝ զի դեղին լոյսն *ծևանայ* ընդ երթս կամ ընդ լուսանցս մտեալ, իսկ սպիտակն ոչ: - 125. Իսկ բանիւ բերանոյ խօսի մարդ ընդ մարդոյ, հրեշտակք ընդ մարդոյ՝ *ծևացեալ* մարմնովն: - 145. Նախ՝ ձայնական բանիւ՝ *ծևացեալ* մարմնովն: - 145. Իսկ այլք ասեն թէ՝ հրեշտակն ո՛չ երևի *ծևացեալ* մարմնովն և ո՛չ խօսի ընդ մարդոյն. այլ՝ դնէ զնմանութիւն դիտաւորութեան ի յաչքն կամ ի յականջն մարդոյն. և անդ ընդունի հասարակ զգայութիւնն զտեսակս այնմիկ, և տայ յերևակայութիւնն և յիմացականն. այսպէս երևին հրեշտակք և խօսին ընդ մարդոյ: - 145. Զորօրինակ եթէ կամիցի ոք տաճար շինել. նախ *ծևանայ* ի միտքն և յետոյ շինէ զտաճարն ըստ այնմ ձևոյ: - 163. Չորրորդ՝ *ծևացեալ*: - 177. Եւ յորժամ *ծևանայ* ի կերպ մարդոյ, յայնժամ բանական հոգին երևի ի նմա ի խնամոցն աստուծոյ: - 255. Եւ յորժամ *ծևանայ* դէմքն, ի նոյն ժամն երևի յինքեան պատկերն մարդոյ: - 255. Այսպէս և բանական հոգին համանգամայն երևի ընդ *ծևանալ* մարմնոյն: - 255. Զորօրինակ՝ արուեստաւոր ոք կամիցի դրօշել ի քարեայ պատկեր, նախ նկարէ՛ ի միտս իւր զձև պատկերին. և ապա հատանէ զքարն և տաշէ՛ և դրօշմէ՛ զկերպն ըստ այնմ նմանութեանն որ էր ի միտս *ծևացեալ*: - 258. Նա՛խ՝ գուժ լծոց եզանցն՝ և սպասաւորացն մահ. և գուժկան *ծևանայր* դև մի ի կերպարանս ծառայիցն յոբայ: - 322. իսկ աստուած անա՛խտ է՝ *ծևանայ* բարկացեալ և սրտմտեալ. զի զմեզ դարձուսցէ յառաջին բարին: - 408. Չորրորդ՝ պատկեր կռոց ո՛չ *ծևացաւ* անգծելի գոլով յերկաթոյ: - 415. Ապա յայտ ուրեմն է զի սուտ երևումն էր սամուէլի *ծևացեալ*: - 429. Զի իսկոյն էր անդ բաժանումն արեանն. թանձրանալն. *ծևանալն*. հոգևորիլն. և աստուածանալն: - 469-470. Եւ կամ աննիւթ ինչ և անկերպ՝ ընդ նիւթական կերպարանաց *ծևացեալ*. յորում իւրաքանչիւրոցն էութիւնք անշփոթաբար երևին. որպէս պղինձ գնդացեալ. կամ քուէացեալ: - 476. Եւ կամ որպէս հուր ընդ գնդացելոյն *ծևացեալ* պղնձոյ: - 476. Այսպէս մի և նոյն բանն է յիւրաքանչիւր աւետարանս *ծևացեալ*, և ընդ աջմէ հօր նստեալ. և ոչ աւելի և ո՛չ նուազ: - 530

**ՁԵՒԱՑՈՒՑԱՆԵՄ +** Նա՛խ՝ հրամայեաց աստուած գրել զլինելութիւն աշխարհի. և *ծևացոյց* ի միտսն մովսէսի. զի մի՛ մոռասցին հանգամանքն. վասն որոյ զգալի խորան հրամայէ կազմել: - 342. Զի թէ ինքն *ծևացոյց* մարմին և շունչ և յարոյց զնա, զիա՛րդ ոչ ճանաչէր: - 428

**ՁԷԹ +** Չորրորդ՝ զի նիւթք եղեն երկնաւոր խորհրդոյն. որպէս ի տնկոց փայտ խաչին. և յայլ բուսոց հաց պատարագին և գինի. և *ծէթ* մեռոնի կազմեցաւ: - 212. Եւ պտղի *ծիթով* որպէս զվարդէջուր եփեալ: - 349. Այլ որք յամառելով յօրինակն՝ ա՛ղ խառնեն ի խորհուրդն, պա՛րտ է նոցա խառնել և *ծէթ* և մուրկ և խունկ և միս գառին. կամ զանգեալ ի կասկարայս, կամ օծեալ ի տապակի, զի զօրինակն կատարեսցեն. և հեռասցին ի ճշմարտութենէն: - 357. Եւ վասն ուխտի, խաչի, և եկեղեցւոյ: Պտուղս: Շօթ: Նաշիհ: *Ձէթ*: Մոմ: Խունկ. և այլն: - 362. Նոյնպէս և մեք ի հանդէս տօնից նուիրեմք նաշիհ և գինի պատարագի. *ծէթ*՝ մոմ՝ խունկ՝ և զենումն մատաղի: - 375. Երկրորդ՝ ի բուսոց և ի պտղոց. որպէս *ծէթ* և այլք: - 407. Երկրորդ՝ ի պտղոյ. որպէս *ծէթ*: - 407. Իսկ զօծումն հիւանդաց եցոյց ինքեամբ յայլս. յորժամ զանկեալն ի ձեռս աւազակաց *ծիթով* և գինւով բժշկեաց: - 474. Այլ արդ լուծումն պահոցս այսոցիկ օրէնք է նոցա. նաև ի ձուկն և ի *ծէթ* և յայլ սոյնպիսիս: - 552. Վեցերորդ՝ և զհաց պատարագին *ծիթով* օծանել: - 553. Ասեմք թէ,

ի հնարից չարին բարձին մարդիկք զխոստովանութիւնն որ հարկաւոր էր, յայն ապաւինեալ թէ՝ ի վերջին օրն օծանիմք *ձիթով* բալասամինաւ և արդարանամք: - 604. ...զի մի՛ համարձակեսցին քահանայք և *գձէթ* օրհնելն վերստին մուծցեն յեկեղեցիս մեր: - 605. Եւ գո՛րծ է նոցա ձեռնադրեալ զմետրապօլիտսն. և օրհնել *գձէթ* կնքոյ: - 607. և օրհնել *ձէթ* կնքոյ վասն յաւելուածոյն. արկանելով յառաքելական *ձիթոյն*. զոր օրհնէ եկեղեցի յաւելուածով: - 607. Ցորեան ընդ յարդի. կնճիռն ընդ գինւոյ. մրուր ընդ *ձիթոյ*. յուդա ընդ յառաքեալսն. նիկօլայոս հերեսիոտ ընդ աշակերտսն: - 756

**ՁԻ +** Իսկ երկրաւորք մերթ այսպէս և մերթ այնպէս. լինին և ո՛չ լինին. որպէս մարդ, *ձի*, ծառ, և այլն: - 8. Նախ՝ ի նոցունց նոյնք. որպէս ի *ձիոյ* *ձի*, և յարջառոյ արջառ: - 53. Զի ունին ծնունդ ըզնմանն իւրեանց, և ունին զելումն բաց ի ծննդենէն. որպէս ի *ձիոյն* ձիակապիկն. և յարջառոյն մեղու. և յայլոցն որդն: - 53. Իսկ բաժանական է՝ որպէս բանականն և անբանն բաժանեն զմարդ և *գձի*: - 85. Երրորդ՝ Երրորդութիւնն ցուցանէ երիցն զմի հաասարակ բնութիւն. որպէս ասեմք մարդ և մարդկութիւն. *ձի* և ձիութիւն. ընդդէմ արիոսի որ ասէ՝ երեք թիւն ունի երեք բնութիւն, ասեմք երից անձանցն մի բնութիւն: - 108. Սակայն ըստ մեր իմացմանս հաասարակ է բարին քան զսէրն. զի ասեմք՝ սէրն բարի է. ազնիւն բարի է. և այլն. որպէս ասեմք՝ մարդն կենդանի է. *ձին* կենդանի է. և այլն: - 128-129. Չորրորդ՝ զի մասն ապականի, այլ բոլորն կեայ. որպէս իւրաքանչիւր անհատ մարդոյ և *ձիոյ* մեռանի, այլ բոլորն մնայ. այսպէս և տարերք: - 181. Կամ սմբակ. որպէս *ձիոյ*: - 216. Այլ այժմ վասն զգեստուց պահեմք զոչխարս. և վասն կերակրոյ զեզինս. և վասն բեռին զէշս. և վասն բառնալոյ զմեզ *գձիս*. և վասն զթշնամիս հալածելոյ զշունս. և վասն զթռչունս ըմբռնելոյ զբազէս. և զայլսն նմանապէս: - 217. Իսկ զընդհանուր տեսակացն՝ ադամ. որպէս եզն. *ձի*. և այլն: - 220. Սեռիւ նոյն, որպէս եզն և *ձի*: - 236. Շուրթն կախեալ սակաւ մի, տարտա՛մ է. զի յէշ և ի *ձիս* նմանի: - 247. Վասն որոյ ոմանք յ**բժ**ան ամիսս ծնանին որպէս *ձի*: - 263. Իսկ ի *ձիոյ* և յիշոյ լինի ջորի. զի ընտակերք են և միաժամք ծնանին: - 267. Եւ դարձեալ՝ զի անփոփոխելի է սահմանն. որպէս սահման մարդոյն և *ձիոյն* և այլոցն: - 298. Այսինքն իգամոլք իբրև *գձիս*. խեռաբարոյք որպէս զէշ. և խորամանկք որպէս զուղտ: - 334. Երկրորդ՝ որպէս սահմանն բաժանէ՛ զմարդն ի *ձիոյ*: - 538. ...և որկրամոլութեամբ մնան բազմամարմինք. և ատելութեամբ զերծանի ոչխարն ի գայլէ. և խրոխտումն մեծարգոյ առնէ *գձին*. և այլն նմանապէս: - 563

**ՁԻԱԿԱՊԻԿ +** Զի ունին ծնունդ ըզնմանն իւրեանց, և ունին զելումն բաց ի ծննդենէն. որպէս ի ձիոյն *ձիակապիկն*. և յարջառոյն մեղու. և յայլոցն որդն: - 53

**ՁԻԹԵՆԻ +** Եւ **ծ** ամն՝ որ առ որդւով նորին կոստանդեաւ յերկնից լուսափայլեալ ի լեռնէն *ձիթենեաց* մինչև ի սուրբ գողգոդա: - 294. Եօթներորդ՝ ի մարդեղութեան իւրում նստաւ ի լերինն *ձիթենեաց* և զերանութիւնն աւետարանեաց: - 320. Իններորդ՝ ի *ձիթենեաց* լեառն զգիշերս ագանելով և աղօթելով օրհնեաց: - 320. Եւ **բ** *ձիթենիքն*, զօրաբաբէլ և յեսու քահանայ: - 347. Եւ **բ** *ձիթենիքն*՝ **բ** կտակարանք իւղալիցք և պարարտք: - 347. Զորս պօղոս՝ յընտանի և ի վայրենի *ձիթենիս* առակէ՛ ի թուղթն հռօմոց: - 347. Երկու *ձիթենիք*՝ երկոքին բանքն սրտի և բերանոյ: - 347. Եւ *ձիթենիքն* կրկին բարութիւնք խաչին. որ զարքայութիւնն եբաց և զդժոխս աւերեաց: - 347. Եւ **բ** *ձիթենիք*՝ զօրութիւն հօր, և սուրբ հոգին հովանացեալ ի վերայ նորա: - 347. Թևէ՛ ի թև և Պատուանդանն նոճի. և Տախտակ վերնագրին *ձիթենի*: - 494. Նոճն զբարձրութիւն խոկմանն. և *Ձիթենին* զկակղութիւն ողորմութեանն: - 495. Եւ կրկին սուտ. զի ուր զձուկն կերին՝ ի գալիլեայ յեզր տիբերիայ ծովուն էր դ աւուր ճանապարհ հեռի յերուսաղէմէ՛ և ի լեռնէն *ձիթենեաց* ուստի համբարձաւ քրիստոս: - 511. Եւ եհան ի լեառն *ձիթենեաց*. զի լերամբն ցուցանի համբարձումն մտաց ի խոկումն աստուածային: - 519. Իսկ *ձիթենին* զպարարտութիւն օծման ջերմեռանդ և ողորմած սրտին: - 519. Աղաւնին աւետաբեր է շնորհաց. որպէս ի տապանն նոյի եբեր զշիւղ *ձիթենւոյն*. որ ցուցանէ զշնորհս մկրտելոցն: - 525. Երկրորդ՝ ի վերնատանն դասք առաքելոցն ի վերայ նոր հաղորդութեանն մարմնոյ և արեանն՝ նոր օրհնեցին զքրիստոս և ելին ի լեառն *ձիթենեաց* որպէս ասէ աւետարանն: - 528. Երրորդ՝ ի լեառն *ձիթենեաց* տեսին զտէրն ելեալ յերկինս՝ երկրպագեցին նմա: - 528. և գոհացեալ ելին ի լեառն *ձիթենեաց*. - 599. Եւ ի լեառն *ձիթենեաց* հանեալ զնոսա և օրհնեալ՝ արար զնոսա Կաթողիկոսունս և Պատրիարգունս, զամենայն շնորհելով նոցա լիով: - 607. Զտարւոյն ոստն ջարդեն ի վերայ բնոյն. և որ աճէ՛ զայն քաղեն և հիւսեն. Պտղակորոյս որպէս *ձիթենի*: - 638. Եւ զայս ուսաք ի քրիստոսէ. որ ի վերնատունն յետ ընթրեացն օրհնեցին և ելին ի լեառն *ձիթենեաց*: - 655. Նոքա՛ են **բ** *ձիթենիք*. այսինքն օծեալ հոգւով սրբով: - 709. Եւ յետ այսորիկ ի լեառն *ձիթենեաց* ուստի համբարձաւ քրիստոս՝ տէր իշխանութեամբ իւրով սպանցէ զնեռն: - 709. Քանզի լեառն *ձիթենեաց* նշանակէ՛ զողորմութիւնն որ մե՛րձ է ի ձորն այն: - 738

**ՁԻՈՒԹԻՒՆ +** Երրորդ՝ Երրորդութիւնն ցուցանէ երիցն զմի հաասարակ բնութիւն. որպէս ասեմք մարդ

և մարդկութիւն. ձի և *ձիութիւն*. ընդդէմ արիոսի որ ասէ՝ երեք թիւն ունի երեք բնութիւն, ասեմք երից անձանցն մի բնութիւն: - 108

**ՁԻՒՆ +** Բոլորակ՝ այսինքն ի բնական ներգործութեանց. որպէս հրոյ այրելն և *ձեան* ցրտացուցանելն: - 142. Ամպք. *ձիւն*. կարկուտ. և այլքն: - 155. Ութերորդ՝ զի է՛ առանց պղտորման. այսինքն *ձեան*, կամ անձրևաց, խորշակի, և ցրտոյ: - 184. Եւ զի սառն և *ձիւն* տարածի: - 197. Արաց. ի յունել *ձեան* զլերինս և զբլուրս, արա՛նց է ասեն այս ճանապարհ և ո՛չ կանանց: - 200-201. Աւկի. այսինքն ահ անկանի ի յառնելն գետոց և թուլանալն *ձեան*: - 201. Իսկ *Ձիւնն* ծնանի ի ջերմացեալ ամպս ի մէջ երկուց ներհակ հողմոց: - 205. Վասն այն մասնկունքն նորա ո՛չ խստանան. այլ անգայտացեալ ի վա՛յր բերի և կոչի *ձիւն*: - 205. Եւ ի սոցանէ թրասկիայն առնէ *զձիւն* և զկարկուտ: - 205. Եւ որ մերձ յարևմուտս է, Թրասկիաս կոչի. առնէ *ըզձիւնն*: - 205-206. Հինգերորդ՝ յամպոյն իջանեն սառնամանիք *ձիւն* և կարկուտ: - 206. Տասներորդ՝ ամպն ո՛չ միայն զցօղ անձրևէ, այլ և *ձիւն* և կարկուտ և հրայրեցութիւն. որպէս ասացաւ ի վերոյ: - 206. Զի ո՛չ անձրև և ոչ *ձիւն* և ոչ հողմ է անդ: - 222. Որպէս ջուրն ի մէջ ամպոյն փրփրի և լինի սպիտակ *ձիւն*: - 242. Վասն որոյ և յաւուրս զաքարիայի հօրն յովհաննու յորժամ յամեաց ի տաճարին և ել, ակնունէր ժողովուրդն տեսանել զա՛կնն և տե՛սին լուսափայլ սպիտակացեալ իբրև *զձիւն*. և լի՛ եղեն խնդութեամբ. զի երկնաւոր արքայութեան նշոյլքն պայծառացուցին զակն: - 349

**ՁԻՒՆԱԲԵՐ +** Եւ ի սմանէ լինին մառախուղ՝ և սառնամանեաց տեսակ, այլ և ամպք և *ձիւնաբեր* և կարկուտք: - 204

**ՁԻՒՆԱԹԱՂ +** Մեհեկի. զի տունկք և բոյսք որպէս զմեռեալ զլինին եղեմնապատ և *ձիւնաթաղ*. մէհէկի. այսինքն աճի: - 201

**ՁԻՒՆԱՄԵՌ** - Եւ ձմեռն, զի *ձիւնամեռ* լինին: - 197

**ՁԿՆԱԿՈՒԼ** - *Ձկնակուլքն* մեծամեծք են որք կլանեն զմանունս: - 365

**ՁՄԵՌՆ +** Եւ որովհետև ծանեաք զայս, արդ պատասխանեմք առարկութեանցն, եթէ որքան է՛ ի հարկաւոր պատճառ է՛, լինի բացորոշապէս բանն ճշմարիտ. որպէս բան թագաւորի. և մարդոյն մեռանիլն. և արև ծագելն. և լինիլն գարուն յետ *ձմռան*: - 10. Յատկութիւնք գարնան և ամարան, աշնան և *ձմերան* նոյն թուով: - 154. Եւ յայծեղջիւրն ի ջրհոսն և ի ձուկն՝ առնէ *զձմեռն*. որ առաւելու գիշերն քան զտիւ **զ** ժամ. զի լինի գիշերն **ժե** ժամ. և տիւն ինն ժամ. որպէս յամառն տիւն է **ժե** ժամ. և գիշերն **թ** ժամ: - 190. Եւ *ձմեռն*, զի ձիւնամեռ լինին: - 197. Վասն է՞ր յամառն և ի *ձմեռն* ոչ բուսանին սերմանիք: - 197. Նա՛խ՝ զի ամառն կարի՛ ջերմ է և չոր՝ չորացուցանէ՛. և *ձմեռն* խիստ ցուրտ՝ սառուցանէ՛ զսերմն: - 197. Դարձեալ՝ յամառն և ի *ձմեռն* զրկո՛ւմն է տուընջեան և գիշերոյ. զի ամառն զրկէ զգիշերն, և *ձմեռն* զտիւ: - 198. Իսկ *ձմեռն* է կատարած և վերջք կենցաղոյս. վասն այն բոյսք և ծնունդք դադարին և չորանան: - 198. Եւ դարձեալ ի գարունն բուսանին բոյսք. և յամառն կատարին. և յաշունն ժողովին. և ի *ձմեռն* վայելեն. և յիւրաքանչիւր ժամանակս՝ իւր գործն առաւելու: - 198. Եւ սոքա երեք եղանակքս օրինակ են այսմ կենցաղոյս. և *ձմեռն* հանդերձելոյն որպէս ասացաւ: - 198. Եւ ի յերկրի լինի ամառն և *ձմեռն* և ո՛չ ի յերկինս: - 198. Եւ դարձեալ՝ արք իմաստունք սահմանեն զտունս իւրեանց ի գալ *ձմերան*: - 200. Եւ զի քարշեն լուսաւորք զգոլորշին յերկրէ՝ յայտ է ի ցօղ առաւօտուն և յեղեամն. որ ի գիշերն ի վեր քարշին. և ընդ ծագել լուսոյն հատանին և յետս յերկիր անկանին. և յաւուրս *ձմերան* լինի եղեամն. և յամարան ցօղ: - 208. Նա՛խ՝ զի ի *ձմեռն* ջերմութիւնն ի սիրտ երկրի ժողովի. և յամառն ի վեր յերես սփռի: - 208-209. Եւ ծառք ի *ձմեռն* յարմատն ժողովին: - 209. Դարձեալ՝ արեգակն ի *ձմեռն* հեռանայ յերեսաց երկրի՝ և մերձի ի ներքոյ երկրի: - 209. Իսկ *ձմեռն*, և յինն ժամէն մինչև յերեկոյ և բոլոր գիշերն, և սպիտակաթոյր հիւր պլղամին, և ծեր մարդ, ըստ նմանութեան ջրոյ ցուրտ և գէջ գոլով. վասն որոյ սպիտակի և ցրտանայ և պակասի զօրութեամբ: - 266. Եւ զ**խ** ամ շինեցին յամառն և *ձմեռն* ըստ բարեխառնութեան տեղւոյն. մինչև հասին յործկուտ օդն թանձրացեալ ի գոլորշեաց և ջերմացեալ յարևուն: - 297. Չորրորդ, գռեհիկ. զոր սովորութեամբ լուեալ ասեն՝ *ձմեռն* գայ, և զկնի այնորիկ գարուն ամառն և աշուն: - 536. Եւ այլ ևս ի շարժմանէ դադարին որպէս ասացաւ. զի ո՛չ առնեն ամառն և *ձմեռն*: - 728. Այլ և ամենայն տարերք խռովեցին. մրրիկ *ձմերան* և ցրտոյ՝ հրախառն յամենայն ուրէք սաստկացեալ. - 735. և Երկոտասան պտուղ, զի ո՛չ խափանէ զնոսա *ձմեռն* մեղաց: - 765

**ՁՄԵՌՆԱՄՈՒՏ +** Այլ և քաղի ժամք և մասունքն. զի քաղոցի տասն *ձմեռնամո՛ւտ* է: - 200

**ՁՄԵՐԱՅԻՆ +** Վասն ջերմ ջուրց. և աղբերաց ի *ձմերայնի*. և զի ի լերինս բղխեն: - 155. Վասն է՞ր աղբերք ի *ձմերայնի* ջերմն բղխեն, և յամարայնի ցուրտ: - 208

**ՁՄԵՐՈՒԿ +** Եւ յետ այնորիկ յեօթներորդէ՛ աւուրն սկսանի արհինածուծ լինիլ յարգանդէ մօրն ընդ պորտն. որպէս դդում և *ձմերուկ* ընդ կոթն: - 261

**ԶՈՂ +** Նախ՝ որպէս բարձրացաւ օձն ի *ձողին*. նոյնպէս տէրն մեր ի խաչին: - 386. Եւ *ձողն* յորում՝ օձն պղնձի բարձրացաւ: - 494

**ԶՈՅԼԱՐԱՆ** - Եւ գիտելի է, զի **Ժ** փորձանացն աբրահամու որք էին *ձոյլարան* նորա՝ մի է և այս: - 304

**ԶՈՐ +** Ութերորդ՝ ի խորխորատէ՛ չարեաց ելցեն օրինօք. զի գեբաղն՝ հին *ձոր* քարգմանի: - 402. Սա՛ սպան զսիսարա և զաբէն ի *ձորն* կիսոնի. և այլազգիքն ամս է: - 420. Ի *ձորն* յովսափաթու. քանզի ասէ մարգարէն յովէլ, «ժողովեցարո՛ւք առ իս ամենայն ազգ ի *ձորն* յովսափաթու. զի անդ նստայց և դատեցից ասէ տէր»; - 737. Զի *ձո՛ր* է յաշխարհս այս՝ և լեառն երկինքն. ի *ձորն* ապա լիցի դատաստանն. այսինքն յայսմ աշխարհի ի վերայ օդոյդ: - 737. Դարձեալ, *ձորն* յովսափաթու կոչի *ձոր* դատաստանի. այսինքն է կալն ոռնայի, ուր դաւթի խոստացաւ անդ առնել դատաստան. յորժամ սեղան շինեաց և պատարագեաց զեզինսն և բարձաւ մահն: - 737. Ուր ինքն տէրն խաչեցաւ և յարեաւ. և սոքա ամենեքեան *ձոր* յովսափաթու կոչին, որ յերկու *ձորի* մէջն է յերուսաղէմ: - 737. Քանզի լեառն ձիթենեաց նշանակէ՛ զողորմութիւնն որ մե՛ծ է ի *ձորն* այն: - 738. Սա՛ է *ձորն* այն յորում լսելի եղև հնչումն տապարին և ա՛յլ գործեաց: - 756

**ԶՈՐՁ +** Եւ **դ** է՛ *ձորձին* բորն: - 367. Նախ ասեն թէ՝ փոխեալ էր զզգեստ պատւոյն և զգեցեալ *ձորձ* հովւութեան և այլագունեալ: - 427

**ԶՈՒ +** Երրորդ՝ յայլոց նոյնք. որպէս *զձու* կաքաւի և սագի թխէ՛ հաւ. և նոյն կաքաւ, և սագ ելանէ: - 53. Որպէս *զձու* հաւի. դեղնուցն ի մէջ ջրոյն. և մզղնա տեսակն ի խեճեպոյն է ամրացեալ: - 181. Այսինքն զթոյլն պնդէ՛. որպէս *զձու*. և զպինդն հալէ՛. որպէս զերկաթ: - 202. Վասն որոյ ջերմութեամբ զցրտութիւն լուծանէ որ յերկաթն և ի սառն. և չորութեամբ զհիւթն մերժէ որ ի *ձու* հաւի և յայլսն: - 202. Եւ դարձեալ՝ որպէս *ձու* հաւի և *ձու* քարեայ՝ նման ասին միմեանց, այլ ո՛չ պատկեր. զի ո՛չ են ի միմեանց ելեալ. և ո՛չ զնոյն էութիւն ունին: - 273. Երրորդ՝ կիթն ի կենդանեաց. որպէս կաթն և *ձու*: - 407. Իսկ նաւակատեաց կերակուր այն է՝ որ միջակ է սոցա երկոցունց. այսինքն ի կենդանւոյ և ի տնկոյ. որպէս ձուկն, *ձու*, և կաթն: - 510. Զի *ձու* և կաթն ի կենդանւո՛յ են, այլ ինքեանք ո՛չ են կենդանիք: - 510. Զի ձուկն կենդանի է և յոչ կենդանւոյ. և *ձուն* ոչ կենդանի է և ի կենդանւոյ: - 510. Եւ տե՛ս և ի միտ առ. զի սոքա ի մի կարգի՛ են եդեալ. այսինքն *ձուկն* և ձու և կաթն. և որ ուտէ զմինն՝ կերիցէ և զմիւսն: - 510. Ասեմք թէ՝ և *զձու* հաւի և զկաթն ո՛չ զենումք, կե՛ր և զայն ի պահոց. զի համատեսա՛կք են: - 511. Եվ դարձեալ՝ *զձու* և զկաթն վասն այն ո՛չ ուտես զի արիւն ունին. և դարձեալ դու ասես թէ արիւն ո՛չ ունին: - 511

**ԶՈՒԼԵՄ +** Եւ արդ զինչ զարմանք էր թէ յայնպիսի խաղաղութեան *ձուլէին* զսուսերս իւրեանց ի խոփս: - 27

**ԶՈՒԿՆ +** Զպահս լուծեալ ի միս *ձկան*, և նաւակատեաց զմիս առանց ոսկր ուտեն: - 34. Իսկ Խեցգետինն և Կարիճն և *Զուկն*, ունին զբնութիւն ջրոյ ցուրտ և գէճ: - 189. Եւ յայժեղջիւրն ի ջրհոսն և ի *ձուկն* առնէ զձմեռն. որ առաւելու գիշերն քան զտիւ **զ** ժամ. զի լինի գիշերն **ժե** ժամ. և տիւն ինն ժամ. որպէս յամառն տիւն է **ժե** ժամ. և գիշերն **թ** ժամ: - 190. Հինգերորդ՝ զի *ձկամբք* զարդարի: - 207. Եւ չո՛րս են ազգ *ձկանց*: - 215. Իսկ *ձկունք* զի ո՛չ ունին զօդ՝ ամենևին են անձայնք: - 216. Երկրորդ՝ թեփ. որպէս *ձկանց*: - 216. Յերկրորդ օրն՝ ի միջին տարրէ՛ ջրոյն *զձկունս* և զթռչունս: - 227. *Զձկունս* ի թանձրագոյն մասն եթող, և զթռչունս յանօսրագոյն մասն որ է օդդ՝ վերացոյց: - 227. Եւ *ձուկն* ի ջուրն՝ փոր ի վեր շրջի: - 234. *Զձուկն* ընդէ՞ր ոչ զենումք: - 296. Զենուլ *ձկանն* այն է՝ որ ի ջրոյն հանեն. զի զշունչ ջրոյ ունի և ո՛չ զշունչ օդոյ: - 296. Որպէս զխոյն ի ծառոյն սաբեկայ. և զլորամարգն ի ծովէն. և զսատերն ի բերանոյ *ձկանն* հրաշագործեաց: - 326. Եւ տէր մեր զհացն աճեցոյց ապերախտ ազգին, և *զձուկն* ի ծովէն: - 329. Նոյնպէս ի *ձկունս* որ թև ունին և թեփ: - 364. Զհացն աճեցոյց յանապատին և *զձուկն*: - 399. Եւ վասն *ձկան* բանք: - 455. Թէպէտ այսօր վասն պատրանաց մարդկան և փոխելոյ զտօնս՝ ոչ ինչ ուտեն զնաւակատեաց որ է *ձուկն*. զոր միշտ զքառասնորդ պահքս պղծեալ են *ձկամբ* և արբեցութեամբ: - 509. Վասն է՞ր ի նաւակատիսս *ձուկն* ուտի և միսն ոչ: - 509. Իսկ նաւակատեաց կերակուր այն է՝ որ միջակ է սոցա երկոցունց. այսինքն ի կենդանւոյ և ի տնկոյ. որպէս *ձուկն*, ձու, և կաթն: - 510. Իսկ *ձուկն* կենդանի՛ է կատարեալ զգայարանօք և շարժմամբ. այլ զտուր և առ շնչոյ ո՛չ ունի. վասն այն պակա՛ս է: - 510. Կամ որպէս ասեն ոմանք թէ երկու յաւազոյ և մի ի սերմանէ՛ գոյանան մարմինք *ձկանցն*: - 510. Զի *ձուկն* կենդանի է և յոչ կենդանւոյ. և ձուն ոչ կենդանի է և ի կենդանւոյ: - 510. Եւ տե՛ս և ի միտ առ. զի սոքա ի մի կարգի՛ են եդեալ. այսինքն *ձուկն* և ձու և կաթն. և որ ուտէ զմինն՝ կերիցէ և զմիւսն: - 510. **Եւ վա՛յ ասեմ որովայնամոլ ազգացն որք զամենայն պահքս լուծանեն ի *ձուկն* անխտիր. որոց աստուած որովայնք իւրեանց է և փառք ամօթն ըստ առաքելոյ:** - 510. Նա՛խ այսպէս, եթէ ի վերնատունն քրիստոս *ձուկն* եկեր. պա՛րտ է ի նմին աւուր *ձուկն* ուտել: - 510. Դարձեալ

պատճառեն թէ՝ յորժամ զնկանակն և *գծուկն* աճեցոյց քրիստոս՝ մե՛րձ էր զատիկն: - 510. Ապա զի ուտիք էր յորում բաժանեաց *գծուկն*: - 510. Եւ դարձեալ՝ ի քառասունս իւր ո՛չ եկեր *ծուկն*. և մեք զքրիստոսի քառասունսն պահեմք և ո՛չ զիրէիցն: - 510. Դարձեալ պատճառե՛ն թէ՝ յետ յարութեանն եկեր *ծուկն* ընդ աշակերտսն. յորում կրակեաղ կայծականց տեսին և *ծուկն* խորովեալ և հաց. և օրն էր չորեքշաբաթի. և ի **ե** շաբաթի համբարձաւ: - 511. **Եւ կրկին սուտ. զի ուր *գծուկն* կերին՝ ի գալիլեայ յեզր տիբերիայ ծովուն էր դ աւուր ճանապարհի հեռի յերուսաղէմէ՛ և ի լեռնէն ծիթենեաց ուստի համբարձաւ քրիստոս: - 511. Ապա յա՛յտ է զի ո՛չ ի չորեքշաբաթի եկեր *գծուկն*. այլ ի յանցեալ կիրակէն: - 511. Ապա ուրեմն սուտ ասեն թէ ի չորեքշաբաթի *ծուկն* եկեր:** - 511. Դարձեալ ասեն հակառակքն, թէ կատարեալ կենդանի է *ծուկն*, ընդէ՞ր ոչ զենումք: - 511. Դարձեալ՝ որպէս տնկոց հատումն է, և *ծկանց* հանումն, և այլ կենդանեաց զենումն: - 511. Եւ ա՛յս է պատճառն. վասն զի տունկն յարմատն է հաստատեալ. և *ծուկն* ի ջուրն. և կենդանիք ի շունչ և յարիւն: - 511. Յինգերորդ ասեն, *գծուկն* ո՛չ զենումք վասն այն ի պահոց ուտեմք: - 511. Վեցերորդ ասեն *ծուկն* արիւն ո՛չ ունի: - 511. Եւ գազա՛ն է *ծուկն* և վիթխարի և խառնակեր քան զամենայն գազանս: - 511. Եօթներորդ ասեն, ջո՛ւր է *ծուկն*: - 511. Եւ լուծին զպահքն ի *ծուկն* և ի միս: - 547. Այլ արդ լուծումն պահոցս այսոցիկ օրէնք է նոցա. նաև ի *ծուկն* և ի ձէթ և յայլ սոյնպիսիս: - 552. Որ և այժմ ոմանք յազգէ ասորւոց և յունաց՝ զշաբաթ և զկիրակէ միա՛յն լուծանեն *ծկամբ*: - 651. Այլ և ամենայն աշխարհ տաճա՛ր է աստուծոյ. թէ ի դաշտի թէ յագարակի թէ ի տղմի. կամ ի ջուր սուզի, կամ ի գազանաց գիշատի, կամ ի *ծկանց* կլցի, արդարութեան ոչ ինչ վնասէ: - 678. ...և թէ ի գազանաց և ի թռչնոց և ի *ծկանց* կամ ի մարդոյ ուտի, և նոքա ևս ի տարերս լուծանին: - 718. **Թէ *գծուկն* զայն որ եկեր զմարմին մարդոյ՝ ուտէ մարդ, և յայնմ սերմանէ ծնանի զա՛յլ մարդ. ի յորո՞յ մարմին յարիցէ**: - 718. Մարմին մարդոյն զոր եկեր *ծուկն*՝ ո՛չ յառնէ ի ծնեալ մարդն այլ ի կերեալն: - 718. Զի որպէս *ծկունք* ի ջուրս, այնպէս նոքա կան ի հուր: - 752. Ո՛չ բնաւ, թէպէտ հայր տեսանէ զորդի կամ մայր զդուստր. և կամ զեղբայր և զայլս. ո՛չ միայն ո՛չ ցաւին, այլ ա՛յնպէս լինի հեշտալի, որպէս տեսանեմք *գծկունս* որ խաղան ի վտակս: - 754. Խոտան *ծկունքն* ընդ բարեաց յուռկանին: - 756

**ՁՐԻ +** Յինգերորդ՝ է՛ ո՛չ խնդրել զօգնութիւնն աստուծոյ ի հաւատալն. զի հաւատն ո՛չ է բնական. զի ըստ այսմ միապէս լինէր ամենեցուն. այլ ի բարութէն աստուծոյ *ձրի* պարգևէ: - 32. Եւ մեք առանց արծաթոյ միայն *ձրի* շնորհօքն քրիստոսի լինիմք փրկեալք և ապրեալք: - 314. Չորրորդ՝ յօրինակ դրախտին ադամայ՝ որ *ձրի* տուաւ և ո՛չ պահեաց. վասն այն որդւոց նորա գործով և աշխատութեամբ պարգևէ: - 350. Եւ է՛ ողորմութիւն նորա *ձրի* շնորհօք և պարգևօք. իսկ արդարութիւնն տուրք փոխարէնք և հատուցումն: - 457. Վեցերորդ, ոմանք ասեն թէ պարգևս խնդրէր հոգևորական. վասն այն ասէ ելանեմ առ հայր իմ և իջանէ հոգին և լնու զձեզ *ձրի* պարգևօք. այժմ յաղագս այդորիկ մի՛ մերձենար: - 517. Զի արարիչն և բնութիւնն և արուեստն ոչ ինչ *ձրի* և վայրապար ստեղծանեն ըստ իմաստասիրին: - 785

# Ղ

**ՂԱԶԱՐ** - Եւ *ղղազար* կոչեաց ի գերեզմանէն և կենդանացոյց բանիւ: - 70. Չորրորդ՝ թոյլ տայ փորձութեան արդարոց ի յուղղութիւն այլոց. որպէս *ղազարոյն* և մեծատանն. զի տեսանելով *ղղազարոս*՝ և լսելով վասն մեծատանն՝ զարիուրիմք և գամք յուղղութիւն: - 158. Նա՛խ՝ զի անմարմին դիմօք առանձնանան ի միմեանց. և այս յատուկ դիմօքս ճանաչեն հոգիքն զմիմեանս. որպէս մեծատունն *ղղազարու* և զաբրահամու հոգին: - 237. Եւ զայրացաւ ի գերեզմանն *ղազարու* ի վերայ մահուն: - 387. Դաւիթ երիցս սուգ էառ մեռելոյ. և տէրն ի վերայ երուսաղէմի և ի գերեզմանն *ղազարու* և մերձ ի խաչն: - 438. Եւ զօծումն թագաւորական՝ ի մարեմայ քեռէն *ղազարու*. յորժամ նստաւ ի վերայ յաւանակին: - 474. Վեցերորդ՝ մարիամ քոյրն *ղազարու*. որ էօծ զտէրն իւղով: - 517. Եւ ի կիպրոս վասն գերեզմանին *ղազարու*: - 549. Որպէս յաղուհացս զառաջին շաբաթն քէոդորոսի կոչեմք. և զմիւսն *ղազարու*. կամ այլ ինչ: - 650. Ասեմք թէ՝ քրիստոս **խ** օր պահեաց, և **խ** օր է մինչ ի *ղազարու* տօնն: - 651. Եւ նա՝ եղիայի և մովսէսի քառասնիցն, սկիզբն է առաջին շաբաթն. և կատարումն տօնն *ղազարու*: - 651. Եւ *ղազար* թարգման եբեր ի հայս՝ ի **ժզ** ամի թարգմանութեան սրբոյն սահակայ առն աստուծոյ որ էր նախանձախնդիր կարգաց եկեղեցոյ: - 659. ...որպէս արտասուեաց քրիստոս ի վերայ *ղազարու*: - 676. Եւ դարձեալ, զի ի **խ** օր պահոցն մինչ ի յարութիւնն *ղազարու* այլ հանգստեան ո՛չ տօնեմք: - 684. Դարձեալ՝ զչարս և զբարիս ճանաչեն անւամբն. որպէս մեծատունն զաբրահամ և *ղղազար*: - 685. Նախ ընդ դէմ բերեն զբան մեծատանն և *ղղազարու*. որ մինն ի գոգն աբրահամու և միւսն ի տանջանքն էջ: - 695. Եւ հաւատարիմ վկայ ընդհանուր յարութեանն զգործս եցոյց. որ *ղղազար* չորեքօրեայ ի գերեզմանէն յարոյց: - 716. Եւ այսու նշանաւ ճանաչեաց հոգի մեծատանն զհոգին աբրահամու և *ղղազարու* ի գոգ նորա հանգուցեալ: - 719

**ՂԱԹՓԱՂԱՍԱՐ** - Եւ յետ հնգետասան ամի յաւուրս աքազու՝ եկ թագ *ղաթփաղասար* արքայ ասորեստանի ի վերայ իսրայէլի...: - 446-447

**ՂԱՄՊԱՐ (տ. ՂԱՄԲԱՐ) +** Երկու *ղամպարքն*, **բ** լուսաւոր հրեշտակքն. այլ և զլոյս աւետարանին: - 628. Եւ *ղամպարն* վառեալ՝ հուրն: - 644. *Ղամպարք* ի միում տան. և ուրուք շարժեցելոյ՝ ի նոցանէ լոյսն ո՛չ շարժի և ոչ բաժանի և ո՛չ հատանի թէ անջրպետ ոչ կայցէ ի միջի. և անդ ո՛չ է միջոց: - 770

**ՂԱՄԷՔ** - Նոյնպէս և զփոխումն եւնովքայ տեսին եղբարքն ուստերքն և դստերք նորա. զի մի՛ ասիցեն թէ սպա՛ն զնա՛ կուրացեալն *ղամէք* թոռն կայենի: - 290. Զի ասեն թէ՝ այր և երիտասարդն զոր սպան *ղամէք* և էառ զկանայս նոցա. ադդա և սելլա, նոքա եղբա՛րք էին եւնովքայ արդարոյ: - 290. Անունք Նախահարցն: ...*Ղամէք* տառապանք: - 299. Անունք Կանանց Նահապետացն: ...*Ղամէքայն* բեդիա՛: - 299

**ՂԱՓԻՐԱՑԻ** - Եւ այս են **իբ** լեզուքն: ...*Ղափիրացիք*: - 298

**ՂԵԿ +** *Ղեկ* նաւին ի ջուրս բեկեալ թուի. և ցաւոտ գլխոյ լերինք շարժեալ: - 662

**ՂԵՂ (ուղեղ)** - Որ և զծովս և զաղբերս և զհեր և *զղեղս* առաւելու ընդ իւր և նւազէ՛: - 187

**ՂԵՆՋԱԿ կմ ՂԵՆՋԵԱԿ +** Զայս գործս արար քրիստոս յորժամ սփածաւ *զղենջեակ* և լուաց զոտս աշակերտացն: - 606

**ՂԵՒԻ** - Աբրահամ: Իսահակ: Յակոբ: *Ղևի:* Կահաթ: Ամրամ: Մովսէս: - 330. Զմրուխտ. կանա՛չ է և դեղնագոյն. գտանի ի փիսոն գետ. *Ղևի՛* է և Յոհաննէս: - 348. Զի **գ** էին որդիք *Ղևեայ*. Գեթսոն. Կահաթ. և Մերարի: - 378. Նա՛խ՝ **գ** որդիքն *ղևեայ* գեթսոն, կահաթ, և մերարի, յօրինակ նորոյս **դ** դասուց: - 379. Երրորդ՝ ութն գունդ են *ղևեայ* **գ** որդւոցն, և մովսէս իններորդ: - 379. Կորխ՝ յազգէ *ղևեայ* էր զքահանայութիւնն խնդրէր: - 381. Նախ՝ զի ասէ՝ «յեղբարց ձերոց». այսինքն ո՛չ յօտարաց, այլ յազգէ նոցա յուդայէ՛, և ի *ղևեայ* եղբարց: - 399. Եւ տե՛ս, զի և *զղևի՛* օրհնեաց. վասն զի ապաշխարեաց ի յարենէ սիկիմացւոց ի յարիւն եղբարցն որթապաշտից: - 409. Եւ *ղևեայ* ցեղին բաժին ո՛չ ետ: - 412. Վասն է՞ր ոչ ետ *ղևեայ* ցեղին բաժին: - 417. Եւ այսպէս խառնեցաւ ազգն յուդայ ընդ ազգն *ղևեայ* խնամութեամբ: - 452. Զի ի ցեղէն նաթանայ որդւոյ դաւթի այրն ոմն անուն *ղևի*՝ ծնաւ երկուս որդիս. զմելքի և զպանթեր: - 460. Եւ յետ մահուանն մատթանայ՝ մելքի ի ցեղէն նաթանայ որ որդի էր *ղևեայ* և եղբայր պանթերայ, առեալ զնոյն կին մատթանայ և ծնաւ զելի: - 460. Այսպէս և յովակիմ ի յուդայէ՛ էր և ունէր զաննա զդուստր մատթանայ ի ցեղէն *ղևեայ*. վասն այն ազգական մարիամու զեղիսաբեթ ասէր գաբրիէլ: - 461. Եւ ապա ցեղին *ղևեայ*՝ գաթսոնի և կահաթու և մերարեայ զա՛յլ աստիճանքն ետ: - 609. Եւ բաց յայսցանէ՝ *Ղևեայ* ցեղք քահանայիցն: - 609

**ՂԵՒՈՆԱՑԻ** - Եւ այս են **իբ** լեզուքն: ...*Ղեոնացիք:* - 298

**ՂԵՒՈՆԴԻ** - Եւ թէ որք ասիցէ, ի կեսարիայ ձեռնադրեցաւ ի *ղեոնդիէ* պատրիարգէ: - 548. Եւ այսպէս *ղեոնդիոս* ձեռնադրեալ ի նմանէ պատրիարգ. յորմէ ձեռնադրեցաւ լուսաւորիչն մեր: - 548. ...և զվարդավառի **բ** պատկերն, և զփոխման **բ** պատկերն, զիրեշտակապետացն, և զեօթանասնիցն, *զղեոնդեանցն*, - 637. Եւ *զղեոնդեանց* մանկունքն **ղծ**, սարկաւագ վարդապետն որ ի հաղբատ: - 638

**ՂԵՒՏԱԿԱՆ + Ի ղ** կողմն խորանին բանակեցան **բժան** ցեղքն. և ի մէջ նոցա խորանն էր *Ղևտական* ցեղօքն: - 378

**ՂԵՒՏԱԿԱՆ** (Ս.Գրքի մաս) + Առաջին՝ Արարածք. Ելք. *Ղևտականք*. Թիւք: - 450

**ՂԵՒՏԱՑԻ +** Եւ այս են **իբ** լեզուքն: ...*Ղևտացիք*: - 298. Նոյնպէս և *Ղևտացիքն* շուրջ զխորանաւն բանակէին ի մէջ **բժան** ցեղիցն. և խորանն ի միջի նոցա այսպէս: - 378. Զի՞նչ էր որ եհար զանդրանիկս եգիպտացւոց. և էառ զանդրանիկս իսրայէլի. և զայն ևս փոխեաց և էառ *զղևտացիս*: - 380. Երրորդ՝ զի ո՛չ էր քահանայ. վասն որոյ յետոյ ասէր դաւիթ ցքահանայսն, դո՛ւք *ղևտացիքդ* սրբեցէք և բարձէք զտապանակն. զի մի՛ լիցուք որպէս զօզիա: - 431. Զի թէպէտ փակեալ էր օրէնքն խառնիլ երկուց ցեղիցն ընդ միմեանս, սակայն *ղևտացւոցն* ո՛չ գոյր ժառանգութիւն և բաժին, խառնեին երբեմն ընդ թագաւորական ազգն յուդայ: - 461

**ՂԵՒՏԱՑԻ** (Ս.Գրքի մաս) **+** Երրորդ՝ սրբել զմարդիկ՝ միայն աստուծոյ է. որպէս ասէ ի *ղևտացւոցն*, «ես եմ տէր՝ որ սրբեմ զձեզ»... - 57. ...և թուեցան ընդ *ղևտացիս* որպէս պատմէ մնացորդացն գիրք: - 330. Եւ զայս յայտնապէս ասէ ի *ղևտացւոց* **ծ** համարն թէ՝ «սուրբն սրբոց է՛ յարևելից կողմանն»: - 343. Երկոտասան ասէ ի *ղևտացիսն*: - 370. Այս քան ի *Ղևտացւոց* գրոց: - 376. *Ղևտացւոց* **իը** գլուխն ասէ՝ «սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո»: - 396

**ՂԷԲԷՈՍ** - «*Ղէբէոս* որ անուանեցաւ թադէոս». յայտ է ի քրիստոսէ զանունն փոխեալ. որպէս զպետրոսին և զորդւոցն որոտման: - 549

**ՂՈՎՏ** - Չորրորդ՝ զի ո՛չ ճանաչէր այր զկին իւր, և ոչ կին զայր իւր. և լինէր անօրէն խառնակումն. որպէս յուդայ զնու իւր զթամար ո՛չ ճանաչեաց. և ո՛չ *ղովտ* զդստերսն իւր: - 238. Տասներորդ՝ Վասն *ղովտայ* և կնոջն. և սոդովմայ: - 283. Դարձեալ սիրեցաւ յաստուծոյ, զի առաջին մարտիրոս սա՛ եղև. թէպէտ թոյլ ետ իջանել ի դժոխս, զի ի պատճառս նորա խնդրեսցին այլքն. որպէս ի պատճառս *ղովտայ* զերծան սոդոմայեցիքն աբրահամաւ: - 287. Վասն է՞ր *ղովտ* ի սոդոմ բնակեցաւ: - 302. Նա՛խ՝ զի ի պատճառս *ղովտայ* փրկեսցի սոդոմ ի գերչացն: - 302. Երրորդ՝ զի առաքինութիւնն *ղովտայ* առաւել երևեսցի ի մէջ չարացն: - 302. Չորրորդ՝ զի յորժամ փրկեսցի *ղովտ* ի սոդոմայ, զօրութիւն աստուծոյ յայտնի լիցի: - 302. Կինն *ղովտայ* վասն է՞ր յաղ և ոչ յայլ ինչ նիւթ փոխեցաւ: - 303. Երկրորդ՝ զի գեղեցիկ էր՝ զի մի ի պատճառս նորա սպանցեն *զղովտ*: - 303. Երրորդ՝ կազ հովուացն. և բաժանումն *ղովտայ*: - 304. Եւ ո՛չ միայն այս, այլ զեօթն օր անխմոր բաղարջ ուտէին ամենայն ժողովուրդն. և Աբրահամ և *ղովտ* բաղա՛րջ յօրինեցին զխորհուրդ փրկական մարմնոյ տեառն որ ի վերնատունն բաղարջով աւանդեաց: - 356. Զի՞նչ է որ ընդ *ղովտայ* որդիսն և եսաւայ ո՛չ հրամայեաց կռուիլ. այլ ընդ ամուր հարցւոցն: - 393. Թովմաս ասէ, կին յեգիպտոսէ ի գալ լինի. և անդ ուր կինն *ղովտայ* էր նշէ: - 706

**ՂՈՐԴ (տ. ՈՒՂՂՈՐԴ) +** Զի ասեն թէ՝ ամենայն մարդ կարծէր թէ ե՛ս եմ *ղորդ* և ե՛ս ունիմ զառաջին լեզուն: - 299

**ՂՈՒԲՆԱ** - Անունք Կանանց Նահապետացն: ...Փաղեկայն *ղուբնա՛*: - 299

**ՂՈՒԿԱՍ** (Ս.Գրքի չորս ավետարաններից մեկը) - Երկոտասաներորդ՝ ասէ *ղուկաս*, «մանուկն աճէր և զօրանայր լի՛ շնորհօք և իմաստութեամբ»...: - 97. Հինգերորդ՝ նշանակէ զչորեսին աւետարանիչքն. մարդն զՄատթէոս՝ զմարդեղութիւն բանին ցուցեալ առիւծն զՄարկոս՝ արիաբա՛ր աւետարանեալ. «և էր ընդ գազանսն» ասէ. եզն *զՂուկաս*՝ յերկարածիգ պատմութեամբ. և եզն պարարակ կոչեցեալ. արծիւին զՅօհաննէս՝ ի վերուստ զբանն աւետարանեալ: - 132-133. Եզն վաստակաւէր. որպէս *ղուկաս* ընդարձակ զցեղ ազգատոհմին տեառն ցուցեալ: - 133. Եւ ի հանդերձեալսն զոգ և հանգիստ արդարոց կոչեցաւ ըստ *ղուկասու*, թէ «ղազար էր ի գոգն աբրահամու»: - 288. Եւ *ղուկաս* ասէ, «կոչեցաւ անուն նորա յիսուս, կոչեցեալն ի հրեշտակէն մինչչև յղացեալ էր»: - 305. Զոր յիշէ աւետարանն *ղուկասու*, և մնացորդացն գիրք. և ո՛չ յիշէ մովսէս. զի զսկիզբն կռապաշտութեան ի նմանէ՛ ասեն լինիլ: - 411. Մատթէոս, Մարկոս, *Ղուկաս*, Յոհաննէս: - 450. Եւ յովսէփ արդարն էր ի թագաւորական ցեղէն. որպէս պատմէ՛ աստուածախօսութիւնն Մատթէոս և *Ղուկաս*: - 460. Մատթէոս ի սողոմոնէ՛ իջանէ առ յովսէփ,

և *Ղուկաս* ի նաթանայ: - 460. Նա՛խ՝ զի ասէ աւետարանն *ղուկասու*, «իբրև լցան աւուրք պաշտամանն, գնաց զաքարիա ի տուն իւր»: - 483. Երկրորդ՝ զի և նոյն *ղուկաս* կրկնէ վասն հաստատութեան և ասէ՝ «և յետ աւուրցն այնոցիկ յղացաւ եղիսաբեթ» որպէս ասացաւ: - 483. Եւ զերկրորդն *ղուկաս* պատմէ՛ վաղ քաջ ընդ առաւօտն. և տեսին արք երկու լուսազգեացք. և զվէմն թաւալեալ: - 515. Իսկ զերրորդն մարկոս պատմէ՛ առաւօտուն և յարևագալն յետ *ղուկասու*. և տեսին երիտասարդ մի ի ներքս ի գերեզմանն ընդ աջմէ նստեալ: - 515. Զի առաքեալն թադէոս յորժամ ձեռնադրեաց զադդէ յուռհայ, և ապա՛ ի կեսարիայ եկն և ձեռնադրեաց առաջին եպիսկոպոս զթէոփիլոս. զայն յորոյ անունն գրեաց *Ղուկաս* զաւետարանն և զգործքն առ թէոփիլոս: - 548. Զի **դ** գլխաւորագոյն աթոռք կարգեցան ընդ բոլոր տիեզերս վասն չորից աւետարանչացն: ...Ի հռոմ վասն *ղուկասի*: - 549. ...այսպէս պատմէ Մատթէոս և Մարկոս. իսկ *Ղուկաս* և Յոհաննէս յետ ընթրեա՛ցն նշանակեն զթացեալ պատառն: - 599. Դարձեալ ասեն զբանն *ղուկասու*, «որ ունիցի բարեկամ և երթայ առ նա ի գիշերի, և նա ասէ՝ մանկունքս ընդ ինն են»: - 696

**ՂՈՒՆԿԻԱՆՈՍ** - Աւազակն որ յաջմէն խաչեցաւ՝ դէմաս էր անունն. և որ յահեկէն՝ կոստաս: ...Որ խոցեաց՝ *ղունկիանոս*: - 495

**ՂՊՏԻ** - ...որպէս յառաջն ունէին ամենայն ազգք քրիստոնէից. և դեռևս պահէ՛ ազգն *ղպտի* և հապաշի: - 650

# Ճ

**ՃԱԳԱՐ +** Եւ զոր ուտէին և դիւաց զոհէին՝ պիղծ ասաց. որպէս զխո՛զ, *զճագա՛ր*, և զնապաստակ: - 364

**ՃԱԿԱՏ +** Հերք բուսեալ ի *ճակատն*, ցուցանէ զգազանաբարքն: - 246. *Ճակատն* նեղ՝ շատակո՛ւլ է: - 246. Իսկ որ հաւասար ի *ճակատէն* իջանէ ոչ բարձր և ո՛չ ցած, արիութեան և խոհեմութեան է նշան: - 247. Այլք եղջիւրս ասեն ունել ի *ճակատն* որ իբր զփող գոչէր թէ՝ գա՛յ ահա կայեն եղբայրասպանն: - 287. Վեցերորդ, թիթեղն ցուցանէր ի *ճակատն* գրեալ սրբութիւն տեառն նուիրեալ. զի նւէրք քահանային սրբութիւն է: - 363. Եւ բացերես ի *ճակա՛տն* ունի: - 363. Եւ դնէ զայս քահանային սուրբ մեռոնաւն ի *ճակատ* նուիրելոյն ասելով այսպէս. ըստ այլազգաց եկեղեցեաց. թէ ի ներքոյ ձևիս այս ես կու նշանեմ զքեզ նշանաւ խաչի...: - 593. Եւ գիտելի է, զի որ ի *ճակատն* և ի սիրտն և ի թիկնամէջն օծանէ, այն դրո՛շմ է. և որ զհինգ զգայութիւնսն օծանէ՝ այն ի խորհուրդ օծմանն է ծածկապէս: - 593. Իսկ ի քահանայաթաղն՝ քահանայապետն հեղու զիւղն ի վերայ մարմնոյն. այսինքն ի *ճակատն* և ի ձեռն...: - 672. Եւ զամենայնսն դրոշմէ՛ ի *ճակատն* և յաջոյ ձեռն. որպէս ասէ տեսիլն յօհաննու: - 707. Եւ զայս ի *ճակատն* և յաջոյ ձեռինն տայ դրոշմել: - 707

**ՃԱԿԱՏԱԳԻՐ +** Նոքա որք զբախտ և *զճակատագիր* և զհրամանն համբաւեն, ո՛չ ինչ ասեն ի կամաց մեր գործիլ. այլ զամենայն ի հարկէ՛ ասեն. զի զեղխաբար զկենցաղս վճարեսցեն: - 7. Իսկ որք զբախտ և *զճակատագիր* վերագրեն մարդկան, և զամենայն ինչ մեր ի հարկէ ասեն, այսինքն ի զօրուէ աստեղացն - 10 Դարձեալ ասեն, թէ բազում ինչ հանդիպի արտաքոյ կամաց մերոց. որպէս չար հիւանդութիւն. վատաբախտութիւն. մահ. և այլն, ապա ուրեմն նոքա ի հարկէ բախտի և *ճակատագրի*: - 11. Եւ թէ հետևեսցի՝ ոչ որ գործեաց զգեղեցիկս և ըզգաբշելիս, այլ որ պատճառն է և հարկ՝ գովեսցի և պարսաւեսցի. այսինքն բախտն և *ճակատագիրն*: - 11. Ասեմք առ այս, եթէ այսու վկայե՛ս և դու մեզ՝ թէ ո՛չ է հարկ. զի ի բոլոր քաղաքն այնքան բիւր մարդիկ՝ ծեր և տղայ՝ ե՛րբ և ո՛ւր ի մի շարժումն աստեղաց ծնան, որք ի միասին կործանեցան. կամ բազմութիւն զօրացն. կամ որք ի նաւին կային. զի սոքա ամենեքեան յայլևայլ ժամանակս և այլևայլ շարժումն աստեղաց էին ծնեալք. ապա ուրեմն ո՛չ է հարկ բախտի և *ճակատագրի*: - 13. Նախ՝ եթէ դու քեզէ՛ն խոստովանեցար եթէ ոչ գոյ հարկ. այլ՝ աստուած և բնութիւնն և արհեստն ևս ներգործեն. ապա թէ է գործ արհեստի և բնութեան, ո՛չ է հարկ բախտի և *ճակատագրի*: - 13. Ասելով թէ պատճառ ամենայնի՝ բարեաց և չարեաց մերոց ո՛չ մեք եմք, այլ է՛ առաջին պատճառն աստուած. որք փախչելով յառաջ ասացեալ բախտէ՛ և *ճակատագրէ՛* աստեղացն, փոխանակ նոցա յառաջին պատճառն վերագրեն զհարկն. որպէս զի մի՛ ասիցեն երկու սկիզբն ըստ մանիքոսի: - 13

**ՃԱՂԱՏ +** Յորժամ պալղամն շատանայ ի մարդն, մազն նօսրանայ. վասն այն մարդն ի ծերութեանն լինի *ճաղատ*: - 240. Դարձեալ՝ մարդո՛յս է լայն եղունգն և *ճաղատ* գոլ: - 275

**ՃԱՃԱՆՉ +** Ժողովէ զկարծեցեալ *ճաճանչն*: - 639

**ՃԱՆԱՉԵԼԻ +** Եւ ի ներքոյ սոցա պարունակին ամենայն *ճանաչելիք:* - 97

**ՃԱՆԱՉԵՄ +** Եւ որովհետև *ծանեաք* զայս, արդ պատասխանեմք առարկութեանցն, եթէ որքան է՛ ի հարկաւոր պատճառ է՛, լինի բացորոշապէս բանն ճշմարիտ. որպէս բան թագաւորի. և մարդոյն մեռանիլն. և արև ծագելն. և լինիլն զարուն յետ ձմռան: - 10. Վեցերորդ՝ ասեն հակառակքն, թէ՝ չարն ոչ է յաստուծոյ, ապա աստուած ո՛չ *ճանաչէ* զչարն. որպէս մեք նմանեաւ զնմանն *ճանաչեմք*. այսինքն հոգւով զհոգևորս, և մարմնով զմարմնաւորս: - 17. Նախ՝ թէ ըստ այդմ բանի հա՛րկ է ապա և քեզ ջուր լինիլ և զջուրն գիտել. և քար լինիլ և զքարն *ճանաչել*, և զայլսն նոյնպէս: - 17. Եւ զի ոչ է այս հարկ. զի գոլով նոյն՝ *ճանաչեմք* զայլսն: - 17. Նմանապէս և աստուած գոլով բարի՝ *ճանաչէ* զչարս: - 17. Այսպէս զուգակութիւնն *ճանաչեմք* իւր յատուկ տեսակաւն. և զպակասութիւնն այլով տեսակաւ. զի հակակայի ունակութեանն: - 17. Ա՛րդ՝ առաջնովն *ճանաչեմք* զլոյս. և երկրորդիւն զխաւարն. և առաջնովն *ճանաչեմք* զճշմարիտն. և երկրորդիւ զսուտն: - 17. Այսպէս և առաջնովն *ճանաչեմք* զբարին, և երկրորդիւն զչարն: - 17. Նմանապէս և աստուած միակ միջնորդութեամբ *ճանաչէ* զբարին ըստ ինքեան ի յատուկ տեսակն իւր. և *ճանաչէ* զչարն կրկին միջոցաւ. այսինքն զի է՛ հակակայ բարւոյն. և է՛ պակասութիւն նմին որպէս ասացաւ: - 17. Բայց նախախնամութիւնն աստուծոյ *ճանաչէ* զփրկեալսն, և տայ զկերպ փրկելոցն որով փրկին ընտրեալքն: - 18. Եւ ի բացայայտութիւն այսմ բանի՝ *ծանիր* ըստ օրինակի: - 20. Եւ զի մարդոյ ճանաչումն է՛ այժմ ընդ լինիլ իրին. այլ աստուած *ճանաչէ* յաւիտենից և յառաջ քան զլինիլ իրին: - 20. Եւ *ծանիր* զայս, զի որքան նըւազի ողջութիւնն՝ առաւելու հիւանդութիւնն. և որչափ նըւազի մարմին՝ առաւելու ապականութիւն. այլ յամենևին

նըւազիլ ողջութեան՝ և hիւանդութիւնն կորընչի: - 22. Իսկ *ճանաչի* աստուած ըստ հինգ եղանակս: - 24. Եօթնևժերորդ՝ *Ծանիցեն* զքեզ միայն ճշմարիտ աստուած: - 29. Վասն այն հերձւածօղքն ո՛չ դառնան, զի ո՛չ կարեն *ճանաչել* զստութիւնն իւրեանց: - 32. Երկրորդ՝ զի որպէս ամէն ոք իւր զգեստիւն *ճանաչի*, այսպէս և քրիստոս մարմնով երևեալ յայտնեցաւ աշխարհի: - 43. Այլ ա՛յս է, Զի *ճանաչէ՛* իբրև զաստուած. այլ իբրև զմարդ անգիտնայ. զի բացարձա՛կ է որդւոյն անունն. այսինքն անորոշակի. զի որոյ և տացես թէ բանին և թէ մարմնոյն՝ կարէ՛ ասիլ: - 48. Եւ յայսցանէ էն առաւել է. զի Աստուածն յաստ էած զմեզ, և կամ ստեղծօղ, և կամ *ճանաչօղ* լսի: - 49. Որպէս ասէր առ աբրահամ, «այժմ *ծանեայ* թէ երկիւղա՛ծ ես դու յաստուծոյ». այսինքն այժմ ծանուցի մարդկան զերկիւղ քո: - 59. Իսկ վասն անբաժան էութեանն *ծանի՛ր* և զայդ օրինակաւ: - 74. Դարձեալ՝ *ծանի՛ր* ուղղապէս. զի ասի աստուած մարմնացեալ և մարդացեալ. զի այս միաւորութեան է: - 79. Ծածուկ և զանխո՛ւլ է աստուածաբանութեան տեսութիւն հասարակ մտաց. և հազիւ *ճանաչի* կիրթ խորհրդոց՝ և նուրբ քննութեանց սրբոց: - 81. Թէպէտ բնութեամբ միաւորին՝ տարբերութիւնն ո՛չ բառնի. զի տարբերութեանցն մնալ՝ խափանումն ո՛չ առնէ միաւորութեանն. որպէս հոգւոյ և մարմնոյ. ոսկւոյ և հրոյ. և *ծանի՛ր*՝ զի կրկին է տարբերութիւն. բաղկացական և բաժանական: - 85. *Ծանիր* և զայս. զի՝ մի բնութիւն ասեմք քրիստոսի՝ վասն կատարմանն և ո՛չ սկզբանն. և մի գործ ասեմք վասն սկզբանն և ո՛չ վասն կատարման գործոյն: - 85. Ա՛րդ՝ քրիստոսն որ է օծեալ աստուածութեամբն, և նա աստուծոյ իմաստութիւն է. և ո՛չ *ճանաչէ՛* զաստուած. տգիտութեամբ կորուսանէր զնա և որոյ է՛ իմաստութիւն: - 96. Ա՛րդ՝ եթէ զհայր ո՛չ ոք ի յօտարաց *ճանաչէ*՝ և ո՛չ որդի *ճանաչէ* ըստ քեզ, եղիցի և որդին օտար ի հօրէ: - 96. Եւ դարձեալ՝ որպէս դուդ կարծես և ինքն որդին մարդոյ զինքն ո՛չ *ճանաչէ*. և հրէայքն զորդի ո՛չ *ճանաչէին* ասելով, «ո՛վ է այն որդին մարդոյ»: - 96. Ապա ուրեմն հոգին քրիստոսի կատարելագոյն *ճանաչէ* զաստուած: - 97. Իսկ թէ զամենայն *ճանաչէ*՝ և զսէրն պետրոսի, ապա ո՛չ է պակաս գիտութիւն նորա: - 98. Քսանբերորդ՝ առաքեալն պօղոս և աւետարանիչն յօհաննէս վկայեն հանդերձելոյն թէ՝ «տեսանելոց եմք զնա որպէս և էն. և *ճանաչեմք* զնա որպէս նայն ծանեաւ զիս»: - 99. Քսաներորդ երրորդ՝ ասաց տէրն վասն հոգւոյն սրբոյ, «աշխարհս ո՛չ տեսանէ զնա, և ո՛չ *ճանաչէ*. բայց դուք *ճանաչէք*. զի առ ձեզ բնակեսցի»: - 99. Արդ՝ եթէ առաքեալքն որ բնակարանք են հոգւոյն՝ *ճանաչեն* զհոգին աստուած, և մարդկութիւնն քրիստոսի ո՛չ *ճանաչէ*, փոքր քան զբնակարանքն եղիցի քրիստոս: - 99. Ա՛րդ՝ եթէ *ճանաչելն* զաստուած հայր և զյիսուս քրիստոս կեանք է յաւիտենից, և մարդն քրիստոս ճշմարտութեամբ ո՛չ կարէ *ճանաչել* որպէս դուդ ասես: - 99. Ապա ուրեմն հոգին քրիստոսի ունի անհուն գիտութիւն. զի *ճանաչէ* զանհուն գիտացեալս: - 100. Եւ *ճանաչէր* զամենայն անհունս գերազանց տեսութեամբ: - 100.Եւ թումա վարդապետն իւրեանց ասէ՝ «հոգին քրիստոսի ***ճանաչէ*** զամենայն անհունս»: - 100. Այսպէս զի հոգին քրիստոսի *ճանաչէ* զամենայն բովանդակ կարողութիւնն իւր. և զամենայն յորս կարէ: - 100. Ապա ուրեմն հոգին քրիստոսի *ճանաչէ* զանհունս: - 100. Քանզի ներքին մասամբ ի ձեռն զգայութեանց *ճանաչէ* զերևելիս. որպէս քար: - 103. Եւ է դարձեալ անգիտութիւն՝ յորժամ զմիտս տարածեմք յամենայն եղեալս և զնա ոչ գտանեմք, ժողովեմք ի մինն որ արտաքոյ է սոցա. և այնպէս անգիտութեամբ *ճանաչի* աստուած: - 103. Եւ որովհետև *ծանեար* զայս, պատասխանե՛մք ասելով՝ եթէ կարգաւո՛ր է և յոյժ: - 114. *Ծանիր* և զայս ուշիմ մտօք, զի ամենայն աստուածաբանութիւն նախ յերկուս բաժանի. այսինքն դրութեամբ և բացբարձմամբ: - 123. *Ծանիր* զայս, զի աստուած է միայն իմացական և ո՛չ իմանալի. և հրեշտակք իմացական և իմանալի. զի իմացականք են վերինքն. և իմանալի ներքինքն: - 130. Ասեմք առ այս եթէ՝ զինչէն՝ անուամբ կամ սահմանաւ *ճանաչի*. և անունն յայտնի՛ է ըստ ինքեան: - 140. Նախ՝ զի զծածուկ առաքինութիւն արդարոյն յայտնի արասցէ այլոց ամենեցունց. որպէս զյոբայն և զաբրահամոյն. ըստ այնմ որ ասէր՝ «ա՛յժմ *ծանեայ* թէ երկիւղած ես դու յաստուծոյ». այսինքն այժմ ծանուցի: - 158. Ի փորձութեանց *ծանեար* զշահն որ ասացաւ ի վերոյ...: - 161. Իններորդ՝ զի նախատեսութիւն մեր ի ներքուստ զարտաքոյսն՝ և արտաքուստ զներքոյսն *ճանաչէ*: - 164. Նմանապէս *ծանիր* և զայս կրկին է էակն. մին մշտնջենաւոր և միշտ ներգործութեամբ, որպէս աստուած. հրեշտակք. և արեգակն և հուր: - 173. Ուստի՞ *ճանաչի* անհատն: - 174. Եւ որովհետև *ծանեար* զի անմարմին են սոքա, յա՛յտ է զի բաժանումն սոցա քակէ՛ զնիւթն ի մարմնոյ. ապա ուրեմն ի մի վայր ժողովումն՝ ծնանի զնիւթական մարմինն: - 175. Եւ նովաւ *ճանաչեմք* զաստուած. և յուսամք արքայութեանն. և երկնչիմք ի դատաստանէ՛: - 178. Քանզի ժամանակ ըստ ինքեան ո՛չ *ճանաչի*. այլ միայն մարդկային ներգործութեամբ: - 199. Երկրորդ՝ վասն հպարտութեան մարդոյն. զի յորժամ խայթեսցեն զնա՝ *ծանիցէ* զտկարութիւն իւր. որ և զփարաւօն ո՛չ թէ առիւծք կամ առջք հարին, այլ ճանճք և մժղուկք տանջեցին: - 217. Զի մարդս բազում իրօք զբաղեալ է ի միտս. իսկ նոքա միայն ի բնութիւնս իւրեանց

փութով *ճանաչեն*: - 218. Հինգերորդ՝ օգնական ետ զկենդանիքդ մարդոյն. որպէս ծառայք տեառնն. անուամբ պարտ էր *ճանաչել* զնոսա: - 219. Ասեմք թէ՝ կանխագէ՛տ է աստուած. և նախ *ծանեաւ* զի ո՛չ կարէին աճիլ անմեղութեամբ ի դրախտին որպէս զհրեշտակս. վասն որոյ կազմեաց նոցա մարմին, զի յերկրի անասնապէս աճեսցին: - 226. Ութևժերորդ՝ Մարդն ո՞նց *ճանաչի*: - 228. Եւ ի վախճանի եղև զգալի բանականն իբրև մատնահար և կնիք արարածոց. ունելով զիմացումն և զզգացումն. զի իմաստութեամբն *ծանիցէ* զիմաստութիւն արարչին. և զգալովն զամենակարօղ զօրութիւն նորա՛: - 231. Երրորդ՝ զի երեսն հայելի է սրտին. և նորա փոփոխմամբն զխորհուրդն *ճանաչեմք*. որպէս ՚ի տխրիլն և ՚ի զուարճանալն և յայլն. զի (սրտի բերկրեցելոյ՝ երեսք ծաղկեալ) ասէ առակն: - 234. Չորրորդ՝ զի յերեսա՛ցն *ճանաչեմք* զսիրելիս. վասն որոյ առաւել ցանկալի է: - 234. Երեքն ի սոցանէ գռեհիկք են. որ է շօշափելիք. ճաշակելիք. հոտոտելիք. զի խառնելովն ի զգալի իրն *ճանաչեն*: - 235. Նա՛խ՝ զի անմարմին դիմօք առանձնանան ի միմեանց. և այս յատուկ դիմօքս *ճանաչեն* հոգիքն զմիմեանս. որպէս մեծատունն զղազարու և զաբրահամու հոգին: - 237. Նախ՝ զի ոչ ոք *ճանաչէր* զհայր կամ զեղբայր իւր. այլ ես զքեզ հայր գիտէի, և դու զայլ ոմն եղբայր. և լինէր մեծ շփոթումն: - 238. Չորրորդ՝ զի ո՛չ *ճանաչէր* այր զկին իւր, և ոչ կին զայր իւր. և լինէր անօրէն խառնակումն. որպէս յուդայ զնու իւր զթամար ո՛չ *ճանաչեաց*. և ո՛չ ղովտ զդստերսն իւր: - 238. Վեցերորդ՝ զի ո՛չ պատւաւորքն մեծարեին, և ո՛չ անարգք անպատուեին. այլ ընդդիմակն սոցա. զի ո՛չ կարէին *ճանաչել* զտէրն և զծառայն. զազատն և զանազատն: - 238. Մասունք հոգւոյն ո՞րպէս *ճանաչին*: - 250. Որպէս յարարածս աստուած *ճանաչի*, այսպէս և ի մարմնոյս զհոգին օրինակաւ իմանալ մորթի: - 250. Մարդն ո՞նց *ճանաչի*: - 250. Դարձեալ՝ հասարակ ամենայն մարդ յարակցէն և յարւեստէն *ճանաչի*: - 250. Դարձեալ խորհուրդ մարդոյն *ճանաչի* յերից. այսինքն կամ ի կերպէ՛ և յօրինակէ խօսիցն և ձայնին: - 250. *Ծանիր* և զայս. զի բազում զարմանագործութիւն գոյ ի սմա: - 256. Դարձեալ զանազանութիւն, զի հանճարովն *ճանաչի* աստուած լուսաւորութեամբ լսելոցն ի գիրս սուրբս. իսկ իմաստութեամբ *ճանաչի* աստուած ըստ ինքեան: - 270. Դարձեալ՝ հանճարովն *ճանաչեմք* զաստուած. այլ իմաստութեամբն *ճանաչեմք* զքաղցրութիւն նորա: - 270. Դարձեալ՝ պատկեր եմք աստուծոյ, զի *ճանաչեմք* զճշմարտութիւնն: - 273. Իսկ պատկեր շնորհաց և փառաց է, կատարելապէս *ճանաչել* և սիրել զաստուած. և այս է նմանութիւնն զոր կատարեալքն ունին աստ և ի վերին գաւառին: - 274. Ի լուսաւոր պատմուճանէն, յորժամ կերին ի պտղոյն և *ծանեան* զի մերկ էին և արարին սփածանելիս: - 279. Նա՛խ՝ զի յայնմանէ *ճանաչեցին* թէ անյաղթ և ամենայա՛ղթ է զօրութիւնն աստուծոյ: - 298. Զի տղայ մանուկ երթեալ ո՛չ ոք գիտէր զնա. և ո՛չ նա զոք *ճանաչէր* զի քանանացի՛ էր և աննման վարուց նոցա: - 300. Որոյ պատճառէ, զի անուն վասն այլո՛ց է որ *ճանաչեմք* զայլս: - 312. Իսկ ինքն զինքն ո՛չ անւամբ *ճանաչէ*, այլ իրօք: - 312. Ա՛րդ՝ եթէ է՛ աստուած՝ աստ հաւատով *ճանաչեմք*...: - 331. Եւ մարդս որ վերջին է՝ սա՛ միա՛յն *ծանեաւ* զառաջին պատճառն: - 350. Նա՛խ՝ հաւատով *ճանաչելն* է զերրորդութիւնն մի բնութիւն, և ապա գործով սիրել զնա. որպէս նախ ուսանիլն է և ապա առնել: - 396. Եւ յեօթներորդ երեկոյի վախճանին, *ծանիցեն* և հրէայք զմարդեղութիւն բանին: - 422. Եւ դևք ո՛չ միայն զապագայն ոչ գիտեն, այլ և զներկայ խորհուրդն ո՛չ *ճանաչեն*. նաև զանցեալ ճշմարիտն և զբարին ի միտ ո՛չ ունին: - 428. Եւ նա՛խ՝ զի ո՛չ *ճանաչեաց* վհուկն զսաւուղ...: - 428. Եւ թէ զդէմքն ո՛չ ծանեաւ, զիա՞րդ զխորհուրդն *ճանաչէր*: - 428. Եւ թէ զդէմքն ո՛չ *ծանեաւ*, զիա՞րդ զխորհուրդն *ճանաչէր:* - 428. Ա՛րդ՝ թէ զխաբէութիւնն ո՛չ *ճանաչէր*, զիա՞րդ զճշմարիտ խորհուրդն գիտէր: - 428. Զի թէ ինքն ձևացոյց մարմին և շունչ և յարոյց զնա, զիա՛րդ ոչ *ճանաչէր*: - 428. Երկրորդ՝ ուստի՞ *ճանաչեաց* թէ սամուէլ է. զի ահա՛ կինն ասաց. այլ որպէս կինն երևեցոյց զձևն, նոյնպէս կարծեաց և սաւուղ: - 429. Այլ և *ծանիր*, զի յընտրողութիւնն ոչ էր վաղվաղուկ որպէս եւա: - 465. Այլ և *ծանիր*. զի է բան յիշէ սուրբ գիրք զոր խօսեցաւ աստուածածին կոյսն: - 465. *Ծանի՛ր*, զի վասն չարչարանաց ասացեալ է ի վերոյ ի ժա պրակն աստուածաբանին գրիգորի ընդ դէմ արիոսի: - 489. Դարձեալ՝ ի չարչարանքն քրիստոսի *ծանիր* **ը** քաղցրութիւնս: - 489. Նա՛խ՝ զի *ծանիցի* թէ սոցա արարիչ է անարգեալն. վասն այն լուսեղէնք և օդեղէնք և օդն խաւարեցան. ջուր ի կողիցն բղխեաց. և երկիր շարժեցաւ: - 490. Երկրորդ՝ ասելն «չև ևս ելեալ եմ առ հայր իմ», ցուցանէ թէ՝ զոր այժմ խնդրես, հոգին գայ և զայդ ամենայն *ծանուցանէ* ձեզ: - 517. Չորրորդ՝ զի աշակերտքն զտկարութիւնս իւրեանց փորձիւ *ճանաչեսցեն* և գիտասցեն թէ ոչ վասն իւրեանց արժանաւորութեանն ընտրեցան...: - 521. Եւ բազումք զհոգին ո՛չ կարեն ընդունել. «զի ո՛չ *ճանաչեն* և ո՛չ տեսանեն զնա» որպէս ասաց տէր: - 522. Եւ թէ ոք ասիցէ, *ծանեար* զմիութիւնն. այլ թուի թէ անկատար է քան զբանն աստուծոյ՝ բան աւետարանիս: - 529. Երկրորդ՝ զի թէ *ճանաչիցէ* զհեռաւորն միջնորդութեամբ բարի հոգւոյն. զի թէ յայտնէ միջնորդութեամբ չար հոգւոյն՝ ո՛չ է մարգարէ. այլ ստոցն

ծանօթութիւն...: - 536. Այլ և *ծանի՛ր* զայս: - 549. Իսկ անթողլի մեղաց **զ** են պարագայք. այսինքն յուսահատութիւն. յանդըգնութիւն. մարտնչիլ զճշմարտութիւնն *ծանաչելոյ*. նախանձ ընդ դէմ եղբայրական սիրոյն. խստասրտութիւն և անզղջութիւն մինչ իսպառ: - 567. Ընդ դէմ առաջնոյն է՛ մարտնչիլ զճշմարտութիւնն *ծանաչելոյ*. և ընդ դէմ երկրորդին՝ նախանձն ընդ դէմ եղբայրական սիրոյն: - 567. **Զգուշանալ պարտ է ի բարկութենէ. և առաւել ի ժամ դատաստանին. զի մարդ բարկացեալ ո՛չ *ծանաչէ* զճշմարտութիւնն:** - 570. Եւ այլք՝ «հաւատն է մտաց լուսաւորութիւն. առ ի *ծանաչել* զծայրագոյն ճշմարտութիւն»: - 571. Դարձեալ՝ «հաւատն է ունակութիւն հեղեալ յառաջին լուսոյն ի բանական անձն, առ ի *ծանաչել* զիոգևոր բարիս»: - 571. Եւ *ծանիր*, զի ա՛յլ է խոհեմութիւն աշխարհային. ա՛յլ մարդկային. և ա՛յլ աստուածային: - 580. Իմաստութիւն է որով *ծանաչեմք* զբարութիւնն աստուծոյ. որ տուեալ լինի ընդ դէմ յիմարութեան: - 582. Յանճա՛ր է *ծանաչել* զփրկութեան նշանն. յորմէ ասաց տէր «որ ունիցի ականջս լսելոյ լուիցէ»: - 582. Եւ գիտո՞ւն էր որ կարէր *ծանաչել* զմահու չափ մեղքն և զներելին: - 601. Նա՛խ՝ զի քրիստոսիւ *ծանեար* զհայր: - 634. ...այլ զպահքն այսպիսի անուամբ *ծանաչեմք*: - 650. Տասներորդ, Վասն բաժանման հոգւոցն թէ *ծանաչե՞ն* զմիմեանս. և գիտե՞ն զմեզ. և աղօթե՞ն ի վերայ մեր: - 660. ...ցուցանէ թէ ի նոյն հանդէսն *ծանեցաւ* և վախճան կատարման ընկալաւ: - 672. Յոգիքն *ծանաչե՞ն* զիմիմեանս, թէ ոչ: - 685. Յոգիք արդարոցն *ծանաչեն* զմիմեանս անուամբ և ծննդեամբ և գործով վաստակոցն. որք զարդիւնսն միշտ մերձ տեսանեն: - 685. Իսկ չար հոգիքն *ծանաչեն* այն քան զչարս՝ վասն զի ըստ արժանեաց իւրոց տանջելոց են: - 685. Դարձեալ՝ զչարս և զբարիս *ծանաչեն* անուամբն. որպէս մեծատունն զաբրահամ և զղազար: - 685. և յետ մահու մերձ ի յինքն և առ ինքն տեսանէ և *ծանաչէ*...: - 705. Ո՞րպէս անսխալ *ծանաչէ* հոգին զմարմինն: - 719. Եւ այսու նշանաւ *ծանաչեաց* հոգի մեծատանն զհոգին աբրահամու և զղազարու ի գոգ նորա հանգուցեալ: - 719. Որով անսխալ *ծանաչէ* իւրաքանչիւր հոգի զիւր մարմինն և միաւորի: - 719. և ի դառնալն այսու նշանաւս *ծանաչէ* զքեզ և զտունն. և դու *ծանաչես* քո դրոշմիւն զնա: - 719. Նոյնպէս հոգին բաժանեալ և մարմին լուծեալ ի հասարակ տարրն, այսու խառնեալ դրոշմիւս *ծանաչեն* զմիմեանս անսխալապէս: - 719. **Նա՛խ՝ զի արու և էգ անդ ո՛չ *ծանաչին* մասին անդամօք, այլ յատուկ դիմօք և բարի գործովք և փառօք և անուամբ զանազանին. որպէս դասք կուսանացն ի հայրապետացն**: - 725. **Յինգերորդ հալեալ մոմ ո՛չ ունի զառաջին կերպն այլ զգոյացութիւնն. նոյնպէս և գոյացութիւնն երկրի ո՛չ կորնչի. այլ պատահմունքն այլայլին. զի ո՛չ *ծանաչի* թէ այս այն է:** - 728. Այլ և որք ի մի խնամս վայելեցին յաստուծոյ. յարև և յանձրև. և ի մի տեղիք բնակեցան և մի պիտոյիւք շատացան. և նոքա զտուօղն ո՛չ *ծանաչեցին*: - 738. Երրորդ ուրախութիւնն եղիցի ի տեսութենէ միաւորութեան մարդկային բնութեանն առ աստուածայինն. քանզի սքանչելի ուրախութիւն լինիցի ընտրելոցն, յորժամ *ծանաչիցեն* թէ եղբայր նոցա ըստ մարմնոյ՝ ճշմարիտ աստուած է: - 763. Այժմ *ծանաչեմք* փոքրիշատէ. իսկ յայնժամ *ծանեայց* որպէս ծանուցայ ի նմանէ: - 767. ...զի ո՛չ միայն էառ զբնութիւնս. այլ և զնոսա որ շուրջ զբնութեամբն. զի *ծանիցի* կատարելութիւն առաքինութեանն, և ճշմարտապէս մարդ գոլ: - 781. Երրորդ, զի հաւատն է լուսաւորութիւն մտաց հեղեալ յաստուծոյ ի *ծանաչել* զիոգևոր բարիսն. իսկ դևք ո՛չ ունին զլոյս մտաց և ո՛չ զիեղումն շնորհաց. վասն որոյ ո՛չ *ծանաչեն* զիոգևոր բարիս: - 784

**ՃԱՆԱՉՈՒՄՆ +** Դարձեալ ասեմք թէ՝ որպէս մեք ունիմք կրկին *ծանաչումն* իրաց, այսինքն զի զոմն ճանաչեմք ի յատուկ տեսակն իւր. և զոմն այլով տեսակաւ: - 17. Նոյնպէս և նախագիտութիւնն *ծանաչումն* է չարեաց: - 18. Իսկ «զեսաւն ատել և զյակոբ սիրելն» է՛ որպէս ցուցաւ ի վերոյ. զի զընտիրսն սիրէ և զխոտանսն անարգէ՛ նախատես *ծանաչմամբն*: - 20. Եւ զի մարդոյ *ծանաչումն* է՛ այժմ ընդ լինիլ իրին. այլ աստուած ճանաչէ՛ յաւիտենից և յառաջ քան զլինիլ իրին: - 20. Եւ զի՝ մարդոյ *ծանաչումն* փոփոխի ըստ իրին. իսկ աստուծոյն անփոփոխելի մնայ: - 20. Ո՞րքան է *ծանաչումն* աստուծոյ: - 24. Վասն *ծանաչման* իւրոյ աստուած կազմեաց կրկին կերպիւ օրինակս. այսինքն իմանալի և զգալի. որպէս հոգին, միտքն, և նմանք սոցա. կամ արեգակն, լոյս, և նմանք նոցա: - 24. Քանզի առ իմաստութիւնն է *ծանաչումն* ամենայն աստուածայնոցն: - 97. Եւ առ հանճարն *ծանաչումն* ամենայն աննիւթականաց: - 97. Եւ առ գիտութիւնն *ծանաչումն* եզրակացութեանց: - 97. Եւ առ խորհուրդն *ծանաչումն* ամենայն առնելեաց: - 97. Ապա ուրեմն հոգին քրիստոսի ունի զամենայն *ծանաչումն* լցեալ հոգւովն սրբով: - 97. Քսաներորդ չորրորդ՝ ասեն վարդապետք վասն հրեշտակաց թէ ունին առաւօտեան և երեկոյին *ծանաչումն*: - 99. Քսանևվեցերորդ՝ ասէ տեսնիլն, «Արժանի է գառինն առնուլ զաստուածութիւնն և զգիտութիւնն» որ է *ծանաչումն* ամենայնի: - 99. Նա՜ է առեալ միաւորութեամբ բանին զաստուածութիւնն և *զծանաչումն* ամենայնի: - 100. **Եւ ա՛յս է նոցա առաւօտու և երեկոյի *ծանաչումն*, զի զաստուած տեսանելով՝ նոր լինի նոցա *ծանաչումն* միշտ՝ որ**

**է՛ առաւօտու: - 119.** Երկրորդ՝ զի սերօբէն բորբոքէ ի սէրն որ է անմիջոց կապ. և քերօբէն ի *ճանաչումն* ճշմարտութեան. և աթոռքն ի յուղղութիւնն. և նոքա են վերակացուք դատաստանի իրաւանց: - 135. Դարձեալ ունին հրեշտակք առաւօտեան և երեկոյին *ճանաչումն*. այսինքն զի տեսանելով. զքանն աստուած՝ կոչի առաւօտու *ճանաչումն*: - 145. Եւ ի բանն աստուած տեսեալ զարարածս՝ կոչի երեկոյին *ճանաչումն*: - 145. **Եւ որքան պատւական է *ճանաչումն* այնքան մեծ է սխալումն**: - 150. Նոյնպէս և նշանակէ՛ զիրեշտակաց բնութիւնն, որ նախ ստեղծան անկատար *ճանաչմամբ* և գիտութեամբ. այլ յորժամ երանեցան և տեսին զէութիւնն աստուծոյ անընդմիջաբար, յայնժամ կատարեցան *ճանաչմամբ* և գիտութեամբ: - 192. Տասներորդ՝ զի և բանականս մարդ՝ քան զանբան կենդանիս տգէտ լինէր. վասն զի ամենայն կենդանի ունի բնական *ճանաչումն* իւրոց և օտարաց. ըստ այնմ որ արագիլ արդար՝ կերակրէ զիւր ծնօղսն միայն. և տատրակ մենացեալ ի զուգակցէն, ո՛չ զուգի ընդ ա՛յլ տատրակի: - 238-239. **Զի իմաստութիւնն է *ճանաչումն* աստուծոյ բացարձակապէս. իսկ հանճարն է ճանաչումն համեմատաբար. այսինքն համեմատելով զստեղծեալս առ ստեղծօղն**: - 270. Զի իմաստութիւնն է ճանաչումն աստուծոյ բացարձակապէս. իսկ հանճարն է *ճանաչումն* համեմատաբար. այսինքն համեմատելով զստեղծեալս առ ստեղծօղն: - 270. Նոյնպէս և *ճանաչումն* հասակի ընկալաւ ի փոքրութենէ ի մեծութիւն: - 479. Դարձեալ՝ պատրաստութեանն ի թողութիւն պարտի լինիլ կրկին. այսինքն *ճանաչումն* ճշմարտին՝ և սէր բարւոյն: - 567. Սակայն ներկայ է ըստ *ճանաչման* տեսութեանն: - 574. Գիտութիւն է *ճանաչումն* այն իրացն որում հաւատայն: - 582. Քաանք, *ճանաչման* հոգւոց. և որպիսութեան մարդոյ: - 660. Իսկ առաւօտ և երեկոյ այս է. զի տեսեալ ի բանն աստուծոյ բարձրագոյն և աստուածային իմաստ՝ առաւօտեա՛ն է *ճանաչումն*. իսկ ի նոյն բանն տեսեալ զգիտութիւն արարածոց՝ երեկոյեան *ճանաչումն* է համարեալ: - 767

**ՃԱՆԱՊԱՐՀ +** Զորօրինակ՝ թէ բազում մարդիկ անցանեն *զճանապարհայն*, և մերձ կացեալն տեսանէ նախ զմինն՝ և ապա զերկուսն՝ և որ զկնի: - 15. Վասն զի խղճմտութեամբ յանցաւորին *ճանապարհն* ո՛չ է թիւր. այլ ինքն թիւրի յուղիղ *ճանապարհէն*: - 33. Իսկ որ զկամսն է չարացուցեալ, *զճանապա՛րհն* ունի թիւր. և որքան ընթանայ՝ մոլորի: - 33. Զի տրտմութեամբ մեղանչումն հիւանդութիւն է և գայթակղութիւն. և հիւանդն յառողջութիւն փութայ. և գայթակղեալն՝ ի *ճանապարհ*: - 33. Կիրք՝ վաստակիլն ի *ճանապարհին*: - 85. Լայնութիւնն է ընդարձակ *ճանապարհ* աստուծոյ. որ է նախախնամութիւն նորա յամենայն էքս: - 129. Արաց. ի յունել ծեան զլերինս և զբլուրս, արա՛նց է ասեն այս *ճանապարհ* և ո՛չ կանանց: - 200-201. Եւ կամ հո՛ղմ է արտաքս թիւրեալ ի *ճանապարհէ*՛ իւրմէ. և ի խոռոչս երկրի մտեալ. և վասն թանձրութեան երկրին շարժէ զնա մինչև գտանէ ելս և ապա՛ դադարի: - 206. Երկոտասաներորդ՝ ի կարմիր ծովուն *ճանապարհ* ետ: - 207. Բարին *ճանապարհ*. և Շաւիղ նորա՝ զգուշութիւնն: - 250. Եւ այսմ պատճառ անհա՛ս է մտաց մարդկան. միայն անքննին դատաստանին աստուծոյ է տալի. և անհետազօտելի *ճանապարհաց* նորին. որև սակաւիկ մի յառաջ ասացաւ: - 252. Չորրորդ՝ թշնամիք եղեն հրեշտակք մարդկան. որք պահէին սրով *զճանապարհ* ծառոյն: - 277. Մին *ճանապարհ* գալ՝ և է փախչիլ: - 285. Ա՛րդ՝ առաջին դարն որ էր երևակին՝ ընդ երկա՛ր ապրէին մարդիկքն. զի ունի երևակն յերկար ընթանալ *զճանապարհն* իւր. որ ի **լ** ամն վճարէ զկենդանակերպսն: - 291. Եւ բարձրացուցին զ**ժ** ամսոյ *ճանապարհ* ընդ ելն և ընդ էջն. որչափ բարձրացաւ ջուրն **ճծ** օր, և **ճծ** օր դարձեալ իջաւ: - 296-297. Իսկ զի հրամայէ՛ երից աւուրց *ճանապարհ* տանել, զի մի՛ ապշեալ ինչ կարծեսցի: - 304. Եօթնն**ժ**, որպէս իսահակ արձակեցաւ յետ երից աւուրց, զի ի կամս հօրն յօրէ յայնմանէ էր մեռեալ՝ ուստի սկիզբն եղև *ճանապարհին*: - 306. Մի *ճանապարհ* գալն է. և է զբազումս ասէ ի փախչիլն: - 404. Երկրորդ՝ ի խրատ մեղաւորաց. զի յորժամ գիտենան թէ ո՛չ յաջողի *ճանապարհ* մեղաւորի, արգելուն ի մեղաց: - 408. Եւ ընդ նոյն *ճանապարհն* ոչ դառնալ, զանդառնալի պատուհասն: - 442. Զանսկիզբն սկզբան ի սկզբանէ՛ գոյին, և զանճառելի թաքնութեան և անհաս խորութեան յառաջ *ճանապարհ* ի մեզ միածին բանին: - 456. «Ո՜ խորք մեծութեան և իմաստութեան» անօթն ընտրութեան նորին քարոզէր. առանց քննութեան դատաստանի և *ճանապարհի* եկաւորութեան մարմնով ի վերայ երկրի: - 456. Երկրորդ՝ զվեց կենդանակերպսն կոխեաց, որ էր **եժ**ան աւուր *ճանապարհ* ի կուսէն ի խոյն ընթացեալ: - 490. Եւ կրկին սուտ. զի ուր զձուկն կերին՝ ի գալիլեայ յեզր տիբերիայ ծովուն էր դ աւուր *ճանապարհ* հեռի յերուսաղէմէ՛ և ի լեռնէն ձիթենեաց ուստի համբարձաւ քրիստոս: - 511. Եւ ոմանք ասեն թէ՝ երկու են մագդաղենացիքն. մինն զնաց և ի *ճանապարհին* ետես զտէրն. և միւսն եկաց և ի պարտիզին ետես: - 515. Եւ այսպէս սովորաբար խօսիմք, թէ յուրբաթի կէս օրն ելեալ ոք ի տեղւոջէ՛ մինչև գայ առ մեզ ի լոյս կիրակէին կամ ընդ առաւօտն, ասեմք թէ **գ** օր է *ճանապարհին*. նոյնպէս և յարութիւնն քրիստոսի: - 516. Վասն է՞ր ոչ ետ թոյլ մերձենալ մարիամու. և այն զի ի *ճանապարհին* կալան զոտս նորա և

համբուրեցին ա՛յլ կանայք: - 517. Ութերորդ՝ զի ցուցցէ մեզ *զճանապարհս* երկնից...: - 519. **Եւ յովսէփ փալանացի, և եզնակ կողբացի թարգմանիչք, դարձեալ էին յաթենայ և եկեալ ի կոստանդնուպօլիս. լուան զժողովոյն և գնացին ի քաղկեդոն. զի չէր յոյժ հեռի ի *ճանապարհէն* որով գային ի հայս**...: - 543. **Դարձեալ, զորօրինակ բազումք ընթանան ի մի *ճանապարհ*, և ամենեքեան թողեալ զնոյն՝ ընդ այլս գնասցեն, և մինն մնասցէ ի նոյնն. ո՛չ ասեմք թէ մինն բաժանեցաւ ի *ճանապարհէն*, այլ՝ այլքն:** - 551. **Այսպէս և ամենայն ազգք քրիստոնէից զնոյն ունէին *ճանապարհ* դաւանութեան և աւանդութեան յառաքելոց անտի մինչ ի ժողովն քաղկեդոնի. և յետ անտի բաժանեցան ամենայն ազգք յամենայն իրս, որպէս յա՛յտ է յիւրաքանչիւր եկեղեցիս**: - 551. Այլ և զանազանի յոյսն. զի որք են ի *ճանապարհ* աստի կենաց, յոյս նոցա է՛ հանդերձ ստուգութեամբ կարծեաց որպէս ասացաւ: - 574. Դարձեալ ասեն իմաստունք թէ՝ յերկնից յերկիր բազում տարեն *ճանապարհ* է: - 620. Եւ յաչացն ի յերեսն սակաւ. որ արտասուքն ելանէ. բայց սակաւ *ճանապարհս* այս յաղթէ՛ զայն բազում տարւոյ *ճանապարհն*: - 620. **Զի առաջին կանոն երանելեացն, որք դառնան ի չարէ և *զճանապարհս* օրինացն ընթանան**...: - 629. Դուռն երկնից և *ճանապարհ* արքայութեան: - 639. Զառաջաւոր պահքն ասէ դուռն երկնից և *ճանապարհ* արքայութեան: - 639. Երրորդ՝ Վասն *ճանապարհաց*. և պակասելոյ: - 660. Դնել երիցս ի *ճանապարհին*: - 660. Ո՞րք են *ճանապարհք:* - 665. Նախ *ճանապարհ* կոչի ծնունդն. որով ի կեանս գամք ըստ հասարակութեան ընթացից մարդկան: - 665. Երկրորդ՝ *ճանապարհ* կոչի կուսութեան և անմեղութեան. - 665. Երրորդ՝ *ճանապարհ* կոչի շնորհաց և մաքրութեան...: - 666. Չորրորդ՝ *ճանապարհ* կոչի աստի կեանքս...: - 666. Հինգերորդ՝ *ճանապարհ* կոչի բարեպաշտութեան հաւատոց. - 666. Վեցերորդ՝ *ճանապարհ* կոչի օրինացն և պատուիրանաց...: - 666. ...և ա՛յս է արքունի *ճանապարհն*: - 666. Եօթներորդ՝ *ճանապա՛րհ* է կուրութեան և անհաւատութեան...: - 666. ...և ա՛յս *ճանապարհ* է ի ձախմէն և թիւր: - 666. Իններորդ՝ *ճանապարհ* կոչի և մահն որով ի հանդերձեալն ընթանամք. - 666. Տասներորդ՝ *ճանապարհ* փառաց և երանութեան կոչի տէր մեր. զի առաջնորդէ՛ առ հայր...: - 666. Իսկ վախճանեալն կատարեալ լսի. որպէս թէ ոք սկսանի երթալ ի *ճանապարհ* կամ ի գործ ինչ և ի յաւարտիլն կատարած ասի: - 666. Այսպէս և նոքա կատարեցին *զճանապարհ* կենցաղոյս և զբարեաց գործոց. վասն որոյ վախճանեալ կոչին: - 666. ...իսկ մահն սկիզբն է և *ճանապարհ*...: - 667. ...չար հոգիքն ընդ առաջ ելեալ արգելուն զնա ի *ճանապարհն*...: - 669. Երկրորդ՝ զվերջին ողջոյնն տամք, զի ի հեռու *ճանապարհ* գնայ: - 673. Երրորդն ի դուռն գերեզմանին. վասն որոյ այժմ սովորութեամբ երիցս անգամ դնեն զդագաղն ի *ճանապարհի*: - 675. Երրորդ, զի ի հեռու *ճանապարհ* գնայ. այս է յերկրէ յերկինս. յուղարկաւորեմք մինչ ի գերեզմանն: - 676. Արդ հայրն աբրահամ նշանակէ՛ զհայր աստուած. և հուր և սուր՝ տանջանարանք որ հանդիպին ի *ճանապարհ* օդոյդ: - 681-682. ...զի յերեքօրեայ *ճանապարհ* երթիցեն և երկիր պագցեն աստուծոյն իւրեանց: - 682. ...և գնացին յերեքօրեայ *ճանապարհ*. ի տիւն ամպ հովանի, և գիշերն լոյս գայր...: - 682. *ճանապարհ* կեանս այս. և ոսոխ մարմինն. և դատաւոր միտքն. դահիճ խիղճ մտացն որ չարչարէ՛ զհոգին և ոչ ազատէ մինչև զամենայն պարտսն վճարեսցէ ապաշխարութեամբ: - 704. Եւ նահապետն յակոբ՝ օձ դարանակալ ի *ճանապարհի*: - 707. Զի նա՛ է օձ դարանակալ ի *ճանապարհի* որպէս ասաց յակոբ յազգէն դանայ: - 708. Դիտելի՛ է, զի ի *ճանապարհ* աստի կենաց երկու են ոսոխք. այսինքն դատախազք: - 743. Իսկ Չորրորդն արքայութիւն՝ է՛ յաւիտենականն գաւառ. յորմէ ի ձեռն մեղաց առաջնոյ մարդոյն՝ տարեալք պանդխտիմք յայսմ տառապանաց գբի և ի տիղմ կաւոյ. անարգաբար դեգերեալք ի հովիտս արտասուաց. յանապատի կալով և ո՛չ ի *ճանապարհի*...: - 756. Կամ լինէիր այնպէս ուրախ որպէս զայն որ ի կախաղան ածեալ լինի՝ և յանկարծակի ի *ճանապարհին* թագաւորութիւն ընկալեալ լինի: - 762. Եւ երկնաւորն այն գաւառ՝ լ ամօք արագընթաց աստեղն *ճանապարհ* շնորհէ: - 763. Արդ ահա ա՛յսոքիկ են ծառ կենաց ի յերկինս և յերկրի տնկեալ. փոխանակ ծառոյն կենաց ի դրախտին եդեմայ. յորմէ հրաժարեցոյց և պարսպեաց բոցեղէն սրովն *զճանապարհ* նորին: - 771. Իսկ հաւատ ուղղակի և վարձատրելի՝ է՛ մարդկայինս ազգի ի *ճանապարհ* աստի կենաց. և չորիւք բացակատարի: - 784

**ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ +** Ա՛րդ՝ *ճանապարհո՛րդ* էր ըստ մարմնոյ տնօրէնութեանն մահուամբ և յարութեամբ մտանել ի փառս: - 100. Չորրորդ՝ *զճանապարհորդս* և զարուեստաւորս և զայլս ի գործս յորդորէ: - 185. Եւ կամ որպէս *ճանապարհորդք* հեռացեալք ի տանէ՞ յորժամ դարձցին վերստին ի տունս իւրեանց, նախ թողուն զվերջին բնակետղն ուստի դիմեցինն երթալ: - 280. Երկրորդ՝ զի *ճանապարհո՛րդք* էին: - 427. Եւ ո՛չ միայն *ճանապարհորդ*, այլ և ըմբռնօղ միշտ և յաւիտեան: - 470

**ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԵՄ +** զի մեղքն ի մահ հրաւիրէ, և ապականութիւնն յանգոյութիւն *ճանապարհորդէ՛*: - 496

**ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԻՄ +** Քսաներորդ, յա՛յտ է յա՛յսմանէ՝ որ նախ քան զքրիստոս՝ էր սկիզբն աւուր ծագումն լուսոյն. իսկ յետ յարութեանն քրիստոսի եղև սկիզբն աւուրն ի մէջ գիշերի. զի այժմ ի խաւարէ՛ ի լոյս *ճանապարհորդիմք*: - 515

**ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ +** Վասն որոյ միեղէն տեսանեն և պարզ. որպէս զծագումն լուսոյ առանց *ճանապարհորդութեան* լուսաւորեալ. և միշտ բարձրանան տեսութեամբ: - 119

**ՃԱՆՃ +** Թէ բնական զգեստ և զէն ունին կենդանիք, և մարդս ոչ. և *ճանճք* և այլքն: - 155. Ոմանք պարզաթևք են. որպէս *ճանճք*: - 215. Ստե՞ղծ աստուած հոգաբարձութեամբ *զճանճս* և զմժեղս և զայլսն, թէ ի գոյի՞ց պատահեցան: - 217. Ասեն վարդապետք թէ՝ ա՛յն չափ հոգս տարաւ աստուած ի ստեղծանել *զճանճս* և զմրջմունս որքան հրեշտակաց: - 217. Երկրորդ՝ վասն հպարտութեան մարդոյն. զի յորժամ խայթեսցեն զնա՝ ծանիցէ զտկարութիւն իւր. որ և զփարաւոն ո՛չ թէ առիւծք կամ առջք հարին, այլ *ճանճք* և մժղուկք տանջեցին: - 217. Եւ աւելի և պակասն է ի նոյն թիւն չորից և երից. եթէ աւուրց և եթէ ժամուց մինչև ի *ճանճ* և ի մժեխ: - 263. Նախ՝ զի անմտացան նոքա, և *զճանճս* և զսողունս և զգետս և զանասունս պաշտէին...: - 333. Չորրորդ՝ շանաճանճն. զի շնաբարոյք էին և մոլէին յառնականայս շնութեամբ. զի շանց է ոչ զուգակցիլ որպէս զայլ կենդանիս. վասն որոյ ի շանց ելեալ թունալից *ճանճք* խայթէին զնոսա: - 334

**ՃԱՇ +** Հինգերորդ՝ զորօրինակ մեծատուն ոմն զոք ի *ճաշ* կոչիցէ, նախ պատրաստէ՛ զամենայն պէտս կերակրոց և ըմպելեաց. և ապա՛ մեծարէ՛ զկոչնականսն: - 230. *Ճաշքն*՝ չափ առաքինութեանցն: - 346. Նոյնպէս և առաւօտու երգն, և մեսեդի *ճաշույն*, և տասանորդ նաշհոյն **ժ** զգայարանաց մարմնոյն ճնշելն: - 375. Իսկ ի նորս երեք անգամ է. այսինքն յառաւօտուն, և ի *ճաշոյն*, և յերեկոյն. և իւրաքանչիւրքն **գ գ**: - 618. Իսկ և ի *ճաշոյն* պատարագն **գ** անգամ. մին քահանայն. և **բ** սարկաւագն: - 618. Երեք ի գիշերն. և **բ** ի *ճաշոյն*. և **գ** յերեկոյն: - 627. Եւ մեսեդի *ճաշոյն* և երեկոյեան, չորրորդ մասն դորակի գինւոյն. որպէս ասացաւ ի վերոյ ի հա գլուխն **ծբ** համարն: - 629. Եւ *ճաշոյն* մեսեդի **զ** թուով, ի խորհուրդ վեց դարուս: - 629. Չորրորդ «որ խաչեցար». յուրբաթի *ճաշոյն* ասա: - 634. Իսկ թէ նուազ է, որպէս մանկունքն *ճաշուն*, և համբարձին. որիշ ասեմք զփառքն և զայժմն: - 636. Այլ և այս գիտելի՛ է, զի սաղմոսն յարաժամ երգի. յառաւօտն, ի *ճաշոյն*, և յերեկոյն: - 643. Զի՞նչ է *ճաշն* և ընթրիսն: - 656. Եւ նշանակէ՛ *ճաշն* զաստիս, և ընթրիսն զհանդերձեալն: - 656. Եւ դարձեալ *ճաշքն* ցուցանեն յերիս հասակս զբարեգործսն. և ընթրիսն զվերջին հասակին յորում ննջեմք ի գերեզմանի: - 656

**ՃԱՇԱԿ +** Եւ քաղցր ջուրն է ի բերանն վասն առնելոյ *զճաշակ* համոցն: - 240. Որպէս բժիշկք յորժամ հիւանդաց դեղ տան, նախ ինքեա՛նք *զճաշակն* առնուն զի հաւատարիմ լիցի: - 316. Եւ **ե** երրորդն՝ յորոյ վերայ խնկաղացն և նուիրանոցն և *ճաշակն*: - 364. Իններորդ՝ ետ զխորիսխ քաղցր հօր և մօր իւրոյ ի *ճաշակ*: - 422

**ՃԱՇԱԿԵԼԻՔ +** Եւ *ճաշակելիքն* զհամն միայն՝ արտաքոյ մնալով հոտոյն և գունոյն: - 75. *Ճաշակելիքն* ջրոյն՝ ի վերոյ քան զնա: - 215. Զի շօշափելիքն ի ներքո՛յ է որպէս երկիր. և *ճաշակելիքն* ի վերոյ որպէս ջուր. լսելիքն յօդն է. և տեսանելիքն հուրն ի վերոյ: - 235. Երեքն ի սոցանէ գռեհիկք են. որ է շօշափելիք. *ճաշակելիք*. հոտոտելիք. զի խառնելովն ի զգալի իրն ճանաչեն: - 235. Եւ է՛ արտաքին զգայութիւնքն **ե**. որ է մասնական զգայութիւն. այսինքն է տեսանելիքն. լսելիքն. հոտոտելիքն. *ճաշակելիքն*. և շօշափելիքն: - 249. Ութերորդ՝ զխաբէութիւնս որ *ճաշակելեօք* և տեսանելեօք է՝ ի բաց մերժել, և զամենայն զգայութեանցս ընտրողութիւն: - 281. Զի որկորստութիւն է *ճաշակելեաց*. և Պոռնկութիւն շօշափելեաց: - 560. Զգաստութիւնն կայանայ առ *ճաշակելիսն*. ի յորում դնէ զկապն և զչափն: - 581. Եւ **ե** արտաքին զգայութիւն. այսինքն տեսանելիք. լսելիք. հոտոտելիք. *ճաշակելիք*. և շօշափելիք: - 622. Եւ ի *ճաշակելեաց* և շօշափելեաց, շօշափման բանի և ճաշակման պարարուն. և ուրախութեան նարդոս և կերակուր անմահութեան: - 771

**ՃԱՇԱԿԵՄ +** Ընդէ՞ր ապա զնորա մարմինն *ճաշակեմք.* և ի նա մկրտիմք և նովաւ յառնեմք և այլն ևս: - 95. Ո՛չ մի ժամանակս կատարեալ. քանզի «ի ճշմարտութեան ո՛չ եկաց» ասէ տէրն. այլ վաղվաղակի իբրև ստեղծաւ՝ անկաւ և ո՛չ յամեաց. և ո՛չ ի յաւիտենական քաղցրութենէն *ճաշակեաց*. վասն որոյ ո՛չ երանեցաւ և ո՛չ մնաց ի բարութեան: - 147. Եւ մարմինն քրիստոսի անապակա՛ն է զոր *ճաշակեմք*: - 225. Ութերորդ՝ որպէս և աբրահամ *ճաշակեաց* զպատարագն մելքիսեդեկի և ո՛չ հաղորդեցաւ ընչիցն սոդոմայ: - 301. Եւ է՛ որ մատուցօղն մեծ է քան զընդունօղն. որպէս մելքիսեդեկ քան զաբրահամ. և քահանայն մեծ է քան զժողովուրդն որ *ճաշակէ*: - 306. Երկրորդ՝ յօրինակ ժողովրդեանն իսրայէլի. զի սրբութեամբ էջ յեգիպտոս և պղծեցաւ ի գործոց նոցա. մինչև սրբեցաւ յամպն և ի ծովն. և *ճաշակեաց*

զմանանայն: - 333. Երրորդ՝ յօրինակ հեթանոսաց որք զազրացեալ էին մեղօք մինչև ջրով աւազանին սրբեցան և *ճաշակեցին* զմանանայն կենաց ի յերկնից իջեալ: - 333. Եւ զհաց մարմնոյն քրիստոսի՝ որք զբոլոր և որք զմասն *ճաշակեն* միո՛յ կենաց հաղորդին: - 339. Եւ զի անապակա՛ն է գոյացութիւն հացին՝ աստի՛ յայտ է, զի կեանք և անմահութիւն տայ *ճաշակողացն*: - 339. Երրորդ՝ նախ զխառնեալ ջուրն ցանեաց ի վերայ ժողովրդեանն որ էր մկրտութիւնն. և սոքա *ճաշակեն* զջուրն և զարիւնն: - 341. Մետասաներորդ, նոքա ո՛չ իշխէին *ճաշակել* զպատարագս իւրեանց. այլ արտաքոյ յարէին. իսկ տէրն մեր և մեք *ճաշակեմք* զպատարագ նորոյս...: - 355. Որպէս այժմ մին նշխարն ի հաղորդութիւն սուրբ մարմնոյն, և զայլ նշխարքն արժանացեալք արհութեամբ *ճաշակեն*: - 358. Վեցերորդ՝ ո՛չ միայն հաց է հաղորդութիւնն. այլ հոգւովն սրբով օրհնեալ և միաւորեալ ի բանն աստուած, որով անմահ կենդանութիւն տայ *ճաշակողացն*: - 397. Չորրորդ՝ ի տիպ մարմնոյն փրկական. զի ոչ յաւելու ի բազում պատարագելն. և ոչ նւազէ ի *ճաշակելն*: - 444. Իններորդ՝ զի ի հոգի՝ ի նմանամասունս և յաննմանամասունս այլ և ա՛յլ գործէ. ըստ որում ակն տեսանէ և ո՛չ լսէ. բերանն *ճաշակէ*՛ և ո՛չ հոտոտէ: - 479. Ըմպելեաւ, յորժամ *ճաշակեաց* քացախ ընդ լեղի: - 491. Եւ է՛ որ մատուցօղն մեծ է քան զընդունօղն. որպէս մելքիսեդեկ քան զաբրահամ. և քահանայն մեծ է քան զժողովուրդն որ *ճաշակէ*: - 491. Զոր օրինակ՝ բժիշկն յորժամ հիւանդին զդեղն տայ, նախ ինքն *ճաշակէ* զի հաւատալի լիցի: - 497. Նոյնպէս և զկամաւոր մահն որ է՛ դեղ և առիթ յաւիտենական կենացն, նախ ինքն *ճաշակեաց* և ուսոյց հետևողաց իւրոց: - 497. Խաղաղութիւնն արտաքսէ՛ զբղջախոհութիւնն. քանզի ընդ *ճաշակելն* զհոգևորն՝ անհամանայ նմա ամենայն մարմնաւոր: - 583. Վասն որոյ *ճաշակեմք* զմարմինն և զարիւնն աստուծոյ և ո՛չ մարդոյ. և *ճաշակելով* լինիմք աստուած ըստ կարողութեան և ո՛չ թէ լինիմք մարդ: - 598. Երրորդ՝ բաժան ի միմեանց օրհնեմք զհացն և զբաժակն. և յետոյ միաւորեմք ի *ճաշակելն*. - 598. Մեք այսպէս լուաք ի սուրբ գրոց թէ՝ անարժան ուտելն առնէ յուդա. և ո՛չ թէ միաւորութեամբ զմարմին և զարիւնն *ճաշակել*: - 598. ...նոյնպէս և դու մի՛ *ճաշակեր*. այլ հաւատա՛ ի մարմինն զարիւնն կապեալ: - 600. Այլ մեք զբաժակ օրհնութեան *ճաշակեմք* զչափաւորն. և ո՛չ զանչափն որ է մեղաց՝ և արբեցութիւն: - 656. իբր թէ այսպիսի սղալումն ի *ճաշակելոյ* պտղոյն եղև. որ ձեռօք հատեալ եդ ի բերանն: - 670. Դարձեալ, ծառ կենաց և անմահական պտուղ՝ մարմին և արիւնն սուրբ. յորմէ *ճաշակեալ* հանապազ՝ անմահ կենացն վիճակէ զմեզ...: - 768. Դարձեալ, ծառ կենաց է աւետարանն սուրբ տնկեալ ի մէջ եկեղեցւոյ դրախտին. բերելով պտուղ կենաց զիմաստութիւնն երկնաւոր. որ կեանս տայ *ճաշակողացն* զնա. և միշտ շնորհս բժշկութեան և թողութեան մեղաց: - 768. Այսօր վերստին հրամայեաց հաւատացելոց իւրոց *ճաշակել* ի պտղոյն կենաց. և մնալ յաւիտեան և անմահ կենդանութեամբ ի քրիստոս յիսուս ի տէր մեր: - 771

**ՃԱՇԱԿՈՒՄՆ +** Վեցերորդ՝ նախ ցօղն կարապետ իջանէր. և ի մեզ շնորհքն նախապատրաստութեան *ճաշակմանն*: - 339. Այլ և ի վերայ այսր ամենայնի անասելի բարութիւն. զարիւնն իւր ետ ի փրկութիւն մեզ. ուստի ի հնոյն արգելեաց զարիւն զենմանցն. մեզ զիւրն արիւն ետ ի *ճաշակումն*: - 398. Նախ՝ խորհրդաբար. ի **ե** շաբաթօջ աւուրն յերեկոյն թաղեցաւ ի սիրտ առաքելոցն *ճաշակմամբ* մարմնոյն. և յերեկոյի կիրակէին տեսին զտէրն յորժամ դրօքն փակելովք եմուտ առ նոսա: - 516. Դարձեալ ասեմք, ընդէ՞ր ժողովրդեանն հաւատ քարոզես, և դու անհաւատանաս ի *ճաշակումն* արեանն. - 600. Ա՛րդ՝ ջուր և գինին և մեռոնն նշանակեն ի մեզ զջուր սրբութեան աւազանին. և մեռոնն որով օծաք և դրոշմեցաք. և ապա *ճաշակմամբ* մեղսաքաւիչ արեանն կատարեցաք: - 615. Որպէս նախաստեղծիցն ի *ճաշակմանէն*: - 621. Է և ա՛յլ իմն տեսութիւն վերագոյն. զի արարողութիւն սրգոյս ցուցանէ զառաջին անկումն մեր ի լուսեղէն կենացն ի խաւար աշխարհ տրտմութեամբ և ցաւօք մահու մեռեալք և ի հող դարձեալք. և այս ի *ճաշակմանէ* պտղոյն: - 670. Եւ ի ճաշակելեաց և շօշափելեաց, շօշափման բանի և *ճաշակման* պարարուն. և ուրախութեան նարդոս և կերակուր անմահութեան: - 771

**ՃԱՌ +** Եւ զայլ ամենայն բնախօսութիւն յաղագս բարւոյ և չարի՝ գտցես ի Դիոնէսիոսի ի չորս գլուխն յաստուածային անուանսն. և ի ստորոգութիւնսն ի հակակայից *ճառն*. և ի սահմանս դաւթի ի վերջն որ է «ամենայն չար տանջելի»: - 24. Դարձեալ ի որդւոյ *ճառին* ասէ՝ «վասն այսորիկ ի վերայ մերոց սահմանաց կալով՝ զանձինն ի ներքս ածեմք՝ և զծնեալն՝ և որ ի հօրէ արտաքս առաքեալ»: - 65. Նմանապէս և աստուածաբանն ասէ ի *ճառն* երկրորդ առ կլօդիանոս՝ «ո՞ւր են այնոքիկ ուրացօղք որք յայտնապէս բաժանեն զքիստոսն յերկու կամս և **յբ** գործս»: - 85. Իսկ գործ պոռնկութեանն զկնիք կուսութեանն շրջէ և զբնութիւնն ապականէ. որպէս ասէ սուրբն դիոնէսիոս յերկրորդ *ճառն* որ յաղագս երկնայնոց քահանայեապետութեանց...: - 165. Չորրորդ՝ յաւելուլն է յառաջին *ճառն*: - 323. Զի սա՛ ի կանոնաց

թեթևացեալ է որպէս յառաջիկայդ ցուցանի ի խոստովանութեան *ճառն*: - 432. Այլ և աստուածաբանն ի քրիստոս ծնեալ *ճառին* ասէ, այսօ՛ր աստուծոյ յայտնութեանս տօնէ: - 482. Եւ բարսեղ ի քրիստոսի ծնունդն յիւրական *ճառին* ասէ, անուն դիցուք տօնիս աստուածայայտնութիւն: - 482. Յնգետասաներորդ՝ ի մէջ գիշերի՛ է յարութիւնն. որպէս ասէ ոսկէբերանն ի յարութեան *ճառին*, և սուրբն նիւսացին, և բարսեղ կեսարացին, և գրիգոր սկևռացին, և այլք, - 514. Եւ այլ ևս գտցես յաստուածաբանին *ճառն* յառաջքն գրոցս ի եօթն գլուխն՝ ի **ժգ** համարն: - 518. Դարձեալ կոչին և բարոյական և տնտեսական և քաղաքական առաքինութիւնք. որպէս ասացաւ ի վերոյ ի *ճառս* խոհեմութեան: - 582. Եւ ի նոյն *ճառն* ուր թուէ **ը** քաղցրութիւնս չարչարանացն քրիստոսի, զչորրորդն ասէ՝ ելումն արեան և ջրոյն ի լուացումն մեր: - 594-595. ...զի *ճառ* խաչին պատւակա՛ն է առ աստուած և առ մարդիկ. և փառք քրիստոսի է խաչն և կատարումն ամենայն տնօրէնութեանցն: - 634. Եւ հայրապետն ներսէս ի *ճառս* հրեշտակապետաց: - 687. Եւ սուրբն կալիստրատոս վկայն ի *ճառս* իւր: - 687. որպէս ասացաւ ի վերոյ ի *ճառս* խոստովանութեան: - 701. Այլ և վասն դժոխոց ասացաւ ի վերոյ ի մարդեղութեան *ճառն*. ասի և յառաջիկայդ ի կատարածի: - 705. Եւ դարձեալ ի *ճառս* անառակին և կորուսեալ դրամին և մոլորեալ միոյ ոչխարին և անկելոյն ի ձեռս աւազակին, զնոյնս ուսուցանեն մեզ հարքն հոգելիցք արտայայտել: - 775

**ՃԱՌԱԳԱՅԹ +** Որք զաչս իմաստից յիմանալի *ճառագայթիցն* խուսափեցին թիւր կամօք, և խոտոր մտօք. զանուղղայս խորհելով, և զանպատշաճս բարբառելով. յարձակեալ անկապ լեզւաւ և անդուռն շրթամբք բացեալ յերկինս. ցոպ բերանով ի բարձունս բարբանջելով. և յածեալ ընդ երկրաւ լեզուագարելով. որոց դատաստանն ի բնէ ո՛չ դատարկանայ. և կորուստն ո՛չ նիրհեսցէ: - 31. Զի որպէս *ճառագայթ* յարեգակն է՛, և որդի ծնեալ ի հօրէ: - 108. Զի յաւիտենական բղխէ ի հօրէ առ որդի. և նովաւ առ մեզ գայ. որպէս ջերմութիւն *ճառագայթիւ* արեգականն: - 108. **Դարձեալ՝ և այսպէս տեսանի աստուած. յորժամ միտք յամենայն եղելոց որոշեսցի. նաև յինքենէ՛ զի եղակա՛ն է. թողեալ զինքն միաւորեսցի յաստուածային *ճառագայթն* որ անքննելի լոյսն է և իմաստութիւնն: - 119.** Վասն առաջնոյն գիտելի՛ է, զի ամենայն շնորհ բղխո՛ւմն է և *ճառագայթ*, յանեղական լուսոյն իջեալ առ էակս ամենայն իմանալի և զգալի. և զարդարէ՛ զսոսա ըստ նմանութեան այնմ պարգևեալ շնորհի. եթէ ըստ բնութեան՝ և եթէ անձնական. ի հրեշտակս և ի մարդիկս: - 140. Եւ խօսի հրեշտակն ընդ հրեշտակի. ցուցանելով նմա զտեսութիւն մտացն միջնորդութեամբ հոգևոր իմն *ճառագայթիւք*. և այսպէս խօսին հրեշտակք ընդ միմեանս: - 145. Եւ որպէս յինն ժամու ուրբաթուն լոյս ծագեաց հոգւոցն ի դժոխս, նոյնպէս և յինն ժամու շաբաթուն լոյս ծագէ *զճառագայթս* իւր արեգակն արդարութեան քրիստոս. մինչ յառաւօտուն բոլորապէս տեսանի ինքն յարուցեալ ի մեռելոց: - 509. Բայց կրկին է զրկումն լուսոյ. մի՝ որ ի *ճառագայթէ՛* լուսոյն զակն խփէ և խաւարի. և բ՝ որ ընդ դէմ բոլորակի արեգականն հայիցի՝ կորուսանէ զլոյսն և խաւարի: - 562. Նոյն զօրութիւն է ամենայն խաչի. որպէս բազում *ճառագայթք* արևուն. - 639. Նա՛խ՝ այն է գալարիլն երկնի, զի եթերն որպէս մագաղաթ ծալեալ նուազի և նսեմանայ վասն առաւել *ճառագայթից* լուսաւորացն հրեշտակաց և սրբոցն յերկնէ երևեալ: - 729. և Դարձեալ՝ զոր օրինակ բազում *ճառագայթք* շողից ի լոյսն արևու միաւորին. - 732. այսինքն յորժամ *զճառագայթ* բազում նշանացս առ ինքն ժողովէ խաչն սուրբ՝ յայնժամ ամենայն կարծիք լուծանին: - 732. Այսպէս և խաչն իւր աստ տգեղ երևի, և ի կարապետութեանն իւրոյ արեգակնափայլ *ճառագայթիւք*: - 734

**ՃԱՌԱԳԱՅԹԵՄ +** Եւ ճառելի է յառաջ *ճառագայթեալ* հաղորդութիւնն ամենայն եղելոց: - 103. Երրորդ՝ համակ հանապազորդ ներգործական դարձումն բոլոր մարդոյն առ աստուած. որով մարդն աստուածային քաղցրութեամբն զմայլի. որպէս հրեշտակք ի բոլոր սրտէ՝ յամենայն անձնէ և յամենայն զօրութենէ միշտ ներգործաբար դիմեն առ աստուած. և յիւրաքանչիւրսն *ճառագայթի՛* ի նմա՛ աստուած: - 462. Եւ ոմանք թէ՝ խաչն լուսաւորեալ *ճառագայթէ* որպէս բևեռք և գեղարդն: - 732

**ՃԱՌԵԼԻ** - Զի՞նչ է անճառելի աստուածբանութիւն. և զի՞նչ *ճառելի*: - 103. Անճառելի է բնութեան և էութեանն բան. և *ճառելի* են անուանքն: - 103. Եւ *ճառելի* է յառաջ ճառագայթեալ հաղորդութիւնն ամենայն եղելոց: - 103. Ա՛յս է աստուածաբանութիւնն դրութեամբ և բացբարձմամբ. որ է՛ ըստորասութեամբ և բացասութեամբ. և *ճառելի* և անճառելի: - 123

**ՃԱՌԵՄ +** Առաջին միտք՝ զի ասաց թէ «հայր գործէ՛ և ես գործեմ». և վասն այնր զչարացան հրէայքն, այժմ իբր թէ զնուաստագոյնս *ճառէ* ի զիջումն բորբոքման նոցա: - 45. Եւ վերին խոկմամբ՝ որ ի վե՛ր է քան զմեզ՝ ըստ կարողութեան լուսաւորիմք *ճառել* զանճառէն: - 103. Իսկ յառաւօտն և յերեկոյն պատարագ ո՛չ մատչի. վասն այն ամենայն աղօթից և պաշտմանց կատարումն և աւարտ զխաչէն *ճառեմք:* - 634

**ՃԱՌ +** *ճառ*՝ զկատարումն ասէ. և ստուգաբանի՝ անճառ և անխափան լինի կատարումն նորին: - 270

**ՃԱՌԳ +** Տասներորդ՝ երկոժն անդամքն. և է անդամքն. և երիկամն *ճառպո՛վ* է: - 227. Վասն է՞ր երիկամունքն *ճարպով* պատեալ է, և սիրտն և լեարդն ոչ: - 241. *Ճարպ* երիկամանցն նախ՝ ամրէ՛ զցանկականն. և երկրորդ անվնաս պահէ: - 241. Իսկ սիրտն զի առաւել ջերմ է՝ հալէ՛ *զճարպն*: - 241. Սորա ո՛չ պահեն *զճարպն* որ մասն է օդոյ պարարտացեալ: - 242. Եւ յայսմանէ՝ հանեն մասն զերիկամունս և զլերդափոյթն և զբովանդակ *ճարպն* ի հոտ անուշից տեառն: - 358. *Ճարպն*, զլուսաւոր և զպարարտ առաքինութիւնն: - 360. Եւ այն՝ զի զամենայն *ճարպ* և զամենայն արիւն ո՛չ ուտէին յամենայն տեղիս բնակութեան իւրեանց: - 360. Չորրորդ՝ որով *զճարպն* ի սեղանն հանէին: - 364. Ի ներքուստ՝ սիրտն և երիկամունքն և լերդաբոյթն ընդ *ճարպին* ճենճերեալ ի հոտ անուշից. որպէս հրամայեաց մովսէս: - 367. Չորրորդ՝ ի կենդանեաց. որպէս *ճարպն* առաւել քան զայլսն պարզ և լուսաւոր: - 407. Վասն է՞ր ի տաճարին *զճարպն* վաճառէին, և յեկեղեցիս մոմ: - 617. Պատարագն ի հնումն անբան կենդանիքն էին. վասն որոյ և *զճարպս* նոցա լուցանէին ի տաճարին: - 617

**ՃԱՌՊԱՒՈՐ +** Չորրորդ՝ զի զանարատսն և զպարարտսն մատուցանէր յօրինակ անարատ գառինն քրիստոսի. և *ճարպաւորն* լուսոյ աստուածութեանն: - 286

**ՃԱՌՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ +** Եւ իմաստակ կոչին՝ որք միոյ արհեստի են գլուխ. որպէս քերականութեան. *ճարտասանութեան*. աստղաբաշխութեան. և այլք. որպէս պիհռոնացիք ակադիմեանքն. որք հակառակ կոչին: - 269

**ՃԱՌՏԱՌ +** Առարկութիւնս այս յայտնապէս զորդի կամ զհայր ի բա՛ց մերժէ յաստուածութենէն. *ճարտա՛ր* իմա, ո՛չ ասէ զհօրէ ոչ գոլ աստուած. այլ զանձնելութենէն: - 38

**ՃԱՌՏԱՌԱԽՕՍՈՒԹԻՒՆ +** Ստուգութիւնն որ է *ճարտարախօսութիւնն* ի փայծեղն: - 250

**ՃԱՌՏԱՌԱՊԵՏ +** Եւ *ճարտարապետք* խորանին՝ բեսելիէլ ոսկւոյ և արծաթոյ: - 344. Զի զտեղին յերուսաղւոցն գնեաց դաւիթ. և *ճարտարապետն* քիրամ տիւրացի էր որ շինեաց. և քիրամ արքայ զփայտն առաքեաց: - 440. Նա՛խ առ հրէայսն. որ գիտէին զհոգին սուրբ՝ շնորհաց բաշխօղ. ուստի ելից հոգին զբէսէլիէլ *ճարտարապետ*. և զեօքնարփեան շնորհս թուէ եսայի...: - 566

**ՃԱՌՏԱՌՈՒԹԻՒՆ +** Երկրորդ՝ ցուցմամբ. զի տեսանելն զհաւատն նշանակէ որ է հաստատ. և լսելն զուսումն *ճարտարութեան*: - 239. Ութերորդ՝ զի տեսիլ աչացն առաւել պարզեսցէ զլեզու նորա փոխանակ *ճարտարութեան* լեզուին: - 352

**ՃԳՆԱԶԳԵԱՑ +** Այլ դու ո՛վ այրդ աստուծոյ մաքրամիտ և *ճգնազգեաց* միայնաւոր սուրբ հայրդ սահակ, թէ և զիջանես եղբայրական սիրով խնդրել բանս ի մէնջ. սակայն կարօղ ես և զքերին լնուլ և զյաւելորդն կշռել. և զմեզ օգտեցուցանել ի ներգոյէ՛ քոյին պայծառամիտ սրբութեան սրտի: - 558

**ՃԳՆԱՒՈՐ +** Որպէս դանիէլ առիւծուցն յաղթեաց. և պօղոս իժին. և բազում *ճգնաւորաց* որք անապատս էին՝ գազանք և անասունք սպասաւորէին նոցա: - 220. Ընդ որովք զինուորք *ճգնաւորք*. ընդ նոսին և կուսանք և մարտիրոսք: - 347. Իսկ նաշինն՝ *ճգնաւորք* և կուսանք. որք ի յերկանս ճգնութեան ճընշեն զմարմինս իւրեանց: - 374. Երկրորդ, զի մեծ *ճգնաւորն* բենետիքտոս որ է՛ յազգէ նոցա՝ ասէ, «պահելի է զչորեքշաբաթի օրն մինչև ցինն ժամն»: - 652

**ՃԳՆԻՄ +** Այլ հոգեպէս՝ նաշինն է՛ մարմնական նուէրքն. և կամ չարչարանք մարմնոյ որ ի տօնս *ճգնիմք*...: - 375. ...այլ սիրելիք են բարի գործօք առ հասարակ հաւատացեալքն. և նազելիք կուսութեամբ *ճգնեալքն* և մարտիրոսքն: - 600. Չորրորդ, այլ և մարտիրոսք և *ճգնեալքն* ճաւոր. և ուսուցիչքն կաւոր. և ուսեալքն երեսնաւոր: - 757

**ՃԳՆՈՒԹԻՒՆ +** Որք և ո՛չ ըզգիրս գիտէին, վասն *ճգնութեանցն* աստուածուսոյցք եղեն: - 50. Եւ ի սէր աստուածային շարժեալք՝ ոմանք յիմաստասիրութիւն. այլք ի *ճգնութիւնս*. ի կուսութիւն. և ի զանազան առաքինութիւնս: - 126. Երկրորդ՝ զի աշխատութեամբ զմիտսն լուսաւորեսցէ. կամ *ճգնութեամբ* չարչարեսցէ: - 218. Նաշինն *ճգնութիւն* մարմնոյս որոշեալ յաւելորդաց: - 374. Իսկ նաշինն՝ ճգնաւորք և կուսանք. որք ի յերկանս *ճգնութեան* ճնշեն զմարմինս իւրեանց: - 374. որք կամաւ յանձն առնուն. զի այս մինչև ի մահ *ճգնութիւն* է: - 600. Եւ երկրորդ խոստովանութիւնն է՝ որք նախ ապաշխարեն պահօք և *ճգնութեամբ*...: - 602-603

**ՃԵՂՔԵՄ, ՃԵՂՔՈՒՄ +** Երրորդ՝ յերկուս *ճեղքելոց* էր թագաւորութիւնն իսրայէլի և յուդայի: - 427. Այլ *ճեղքելով* որպէս օրէնն էր անդրանկացն *ճեղքել* և ո՛չ հատանել: - 486

**ՃԵՆՃԵՐ +** Եւ խ օր յօդս զի լգ օր զօդս սրբեսցէ ի *ճենճերից* կռոց. և է օրն ի խորհուրդ է աստեղեան

խորանացն ի կայանս հոգւոցն: - 520-521. Զի զօդս սրբէ ի մեղաց դիւաց և *ճենճերաց*. և զերկիր ի մարդկային մեղաց: - 731

**ՃԵՆՃԵՐԵՄ +** Ի ներքուստ՝ սիրտն և երիկամունքն և լերդաբոյրն ընդ ճարպին *ճենճերեալ* ի հոտ անուշից. որպէս հրամայեաց մովսէս: - 367. Երրորդ՝ զի յառաջ քան *զճենճերիլն* ուտէին. իբր յառաջ քան զժամ պատարագին: - 425

**ՃԵՊԵՄ +** Չորրորդ՝ ցուցանեն զստեղծօղն իւրեանց յերկինս զոլ. վասն այն ի վե՛ր *ճեպին*: - 214

**ՃԻԳՆ +** Նաև որք ի *ճգունս* նահատակին. որպէս պօղոս՝ անտօն՝ և այլքն: - 50

**ՃԻՉ +** Եւ կամ այն թէ՝ «ուրՇօրեայ թլփատեսցես զմանուկն և մի պակաս». զի մի՛ *ճիչ* տղային չարչարեսցէ զգուք մօրն: - 399. Փոխանակ խրախուսթեանց *ճիչ* աղաղակի ընդդէմ հեշտալեաց. անհանգիստ ի խշտի՝ յերեկօրեայ զառաւօտ խնդրէաք. և ի նմա զեռանդ երանեալք: - 789

**ՃԻՌ +** Այլ որ ճճ ամաւ յառաջ եկին ի հայք՝ ասորիք արք քաջաբանք, և կամեցան սերմանել զաղանդն նեստորի. որք նզովեալ որոշեցան. բայց ոմանք ընկալեալ էին և թարգմանեալ ի նոցանէ գիրս սուտս. ...Եւ *զճիռն* օրհնութեան: - 545

**ՃԻՐԱՆ +** Կամ *ճիրանունք*. որպէս արծուի: - 216. Զի թէ մարդն ունէր զընութեամբ զէնս, որպէս թէ եղջիւր ի գլուխն. և սուր զատամունսն. *ճիրանունք* ի ձեռս. և սմբակ կամ կճղակ ոտիւք. և զայլսն, Նախ՝ զի գազանադէմ և դժւարատես լինէր ամենեցուն: - 217

**ՃԻՒԱՂ +** Եւ շրջապարեալ ընդելեաց ի հերատուկ *ճիւաղաց*: - 789

**ՃԻՒՂ +** Կամ որպէս բունն մի է ծառոյն, և *ճուղքն* և տերևքն բազում. նմանապէս և աստուածաբանութիւնն: - 123. Որպէս բունն մի է ծառոյն. և ի բազում *ճիւղս* բաժանի: - 244. Որպէս *ճիւղ* հատեալ ի ծառէ և տնկեալ յերկրի, *ճիւղն* է հատեալ ի ծառէն, այլ կենդանութիւնն ո՛չ. ուստի յա՛յտ է զի տընկեալ *ճիւղն* նոյն կենդանութեամբն բուսանի զոր ունի առ ինքն: - 257. Զի գա՛յ զղջումն և խոստովանութիւն՝ որ զմեղքն բառնայ և զպատիժն ընդ նմին. որպէս հատեալ տունկ՝ չորանան *ճիւղքն*. որ բոլորով սրտիւ զղջայ և խոստովանի և այլ ո՛չ գործէ: - 432. Զորօրինակ եթէ արմատ փայտի եղեալ ի հուր՝ նախ ինքն այրի և ապա *ճիւղքն*: - 777

**ՃՃԻ +** Վեցերորդ՝ որ փոխին այլք յայլոց բնութենէ վասն առատութեան բնութեանն. որպէս կարպասածին *ճըճին* ունի սա ծնունդ սերմամբ իւր զնմանն. և ունի ելումն զկերպասն: - 53

**ՃՃՈՒԵՄ +** Դարձեալ՝ ա՛յն է խառնակիլն, որ ի միոյ խոշոր լեզուէ քաղդէացոցն խառնակեցան և եղեն զանազանք... Սպառնական հոնին. և *ճըճուօղ* հնդիկն: - 297

**ՃՃՈՒՈՂԱԿԱՆ** - Իսկ գեղեցկախօսութիւն լեզուաց, ...*ճըճուողական* հնդիկն: - 299

**ՃՄԼԵՄ +** Դարձեալ՝ ուռն և լծակն՝ խաչն. և Ողկոյզն անապական *ճմլեալ* ի վերայ խաչին հնձանի. և եղև ուրախարար գինի տրտմեցելոցս մեռօր: - 381. Նախ՝ կոչի սիրտ և անձինք մեղաւորաց, ուր ժողովին ամենայն գործք չար որ է՛ խաղող դառնութեան. և ունակացեալ պահէ յինքեան. և հեշտութեամբն *ճմլէ* հանապազ և արբենայ մեղացն գինով: - 748. Երրորդ՝ կոչի հնձան դժոխքն. ուր ամբարիշտքն ժողովին և *ճմլին*...: - 748. Երրորդ հնձան է իւրաքանչիւր սիրտ և անձինք արդարոց. որ հաստատեալ է հաւատով յորթն ճշմարիտ և պտղաբերէ՛ զողկոյզ բարեաց. և չարչարանօք *ճմլէ՛* յինքեան զուրախարարն գինի հրեշտակաց և մարդկան. և այսորիկ բարեա՛ցն են հնձան: - 749. և Եօթներորդ կոչի հնձան եկեղեցի սուրբ. ուր ամենայն առաքինութիւնք մեր ժողովին. ու *ճմլէ* ապաշխարութեամբ և բաշխէ՛ զգինի շնորհաց. - 749. Ութերորդ՝ հնձան կոչի և աւազանն սուրբ. զի ի նմա *ճմլին* և կորնչին ամենայն մեղք մեր...: - 749. Իններորդ՝ կոչի հնձան և խաչն փրկական. յորում ողկոյզն անապական *ճմլեցաւ* և ետ մեզ ուրախարար գինի զանապական արիւնն իւր. - 749. Մետասաներորդ, հնձան կոչի և հաւատն սուրբ. զի ի նա՛ հաւաքի ամենայն բան և գործք մեր. և *ճմլեալ* այսինքն քննեալ՝ լինի գինի ուրախարար աստուծոյ և հրեշտակաց: - 749. Երկոտասաներորդ, հնձան կոչի և վերջին օր դատաստանին. զի անդ հաւաքին ամենայն բարիք և չարք և գործք նոցին. և չարքն *ճմլեալ* արտաքսին ի տանջանս, և բարիքն ի կեանս: - 749

**ՃՆՃՂՈՒԿ +** Եւ ի ձայնէն, որպէս *ճնճղուկ*. ծիծառն. խօսօղ. ագռաւ. և այլն: - 220

**ՃՆՇԵՄ +** Այլ և նաշիհ. զի հաց կենդանարար և հատ ցորենոյ կոչեցեալ. *ճնշեալ* չարչարանօք և որոշեալ ի թեփոյ մեղաց: - 361. Որ զգործեցեալ մեղս ապաշխարութեամբ քաւեմք. *ճնշելով* զանձինս մեր պահօք: - 373. Զոր պահեմք և մեծ չարչարանօք *ճընշեմք* զանձինս: - 373. Իսկ նաշիհին՝ ճգնաւորք և կուսանք. որք ի յերկանս ճգնութեան *ճընշեն* զմարմինս իւրեանց: - 374. Նոյնպէս և առաւօտու երգն, և մեսեդի ճաշոյն, և տասանորդ նաշիհոյն ժ զգայարանաց մարմնոյն *ճընշելն*: - 375

**ՃՇԳՐՏՈՒԹԻՒՆ +** Ուղղակի *ճշգրտութեան* և անստգիւտ իմացման: - 772

**ՃՇՄԱՐԻՏ +** Ըստ իմաստնոյն արիստոտէլի՝ ի հակասութեանց ի հարկէ մին կողմն *ճշմարիտ* է: - 8. Որպէս յորժամ ասեմք, վաղիւն լինի արև, կամ ո՛չ լինի. լինի անձրև, կամ ո՛չ լինի. ի հարկէ մինն *ճշմարիտ* է ի սոցանէ: - 8. Նախ՝ եթէ լինէր բանս մեր ի հարկէ *ճըշմարիտ*, նա ո՛չ մինն միայն, այլև ամենայն բան զինչ ասէաք՝ *ճշմարիտ* լինէր. որպէս շինել քաղաք, կամ ո՛չ շինել. տընկել այգի, կամ ո՛չ տնկել: - 8. Ա՛րդ՝ թէ ամենայն ո՛չ լինի *ճըշմարիտ*, նաև մի բանն ո՛չ լինի *ճշմարիտ:* - 8. Երրորդ՝ եթէ զոր ինչ ասէաք և *ճշմարիտ* էր, յայնժամ բանս մեր ո՛չ հետևէր իրացն. այլ իրն բանիցն հետևէր. որ է՛ յայտնապէս սուտ. զի մնացականն՝ ոչ մնացականին ո՛չ հետևի. այլ անդրադարձեալ. զի հետքն՝ ընթացից ոտիցն հետևին. և ո՛չ ոտքն հետոցն: - 8-9. Չորրորդ՝ զի թէ զոր ինչ ասեմք՝ ի հարկէ *ճշմարիտ* էր, յայնժամ աւելորդ էր խորհիլն մեր. զի խորհուրդն ո՛չ է ի հարկաւորացն. այլ ի ներընդունակացն. զի կարէ՛ լինիլ, և ո՛չ լինիլ. զի թէ առնեմք զայս՝ եղիցի՛ այն. և թէ ո՛չ առնեմք զայս՝ ո՛չ եղիցի այն: - 9. Իսկ բանին արիստոտէլի՝ թէ ի հակասութեանց մի կողմն *ճշմարիտ* է, այսինքն կամ ստորասութիւնն կամ բացասութիւնն: - 9. Ասեմք թէ՝ այո՛ ի հարկէ մինն *ճշմարիտ* է. և մինն սուտ. այլ զանազանապէս ըստ իրին: - 9. Զի ի վերայ մշտնջենաւորացն բացորոշակի յերեք ժամանակս՝ այսինքն յանցեալն ի ներկայն և յապագայն՝ մինն *ճշմարիտ* է և մինն սուտ. որպէս հրոյ ջերմութիւնն և արեգական լոյսն: - 9. Իսկ ի վերայ փոփոխականացս ո՛չ նմանապէս. զի յանցեալ ժամանակս և ի ներկայս բացորոշակի մինն *ճշմարիտ* է և մինն ստէ՛. որպէս ասեմք՝ երէկ անձրև էր, կամ ո՛չ էր. այսօր անձրև է, կամ ո՛չ է: - 9. Եւ որովհետև ծանեաք զայս, արդ պատասխանեմք առարկութեանցն, եթէ որքան է՛ ի հարկաւոր պատճառ է՛, լինի բացորոշապէս բանն *ճշմարիտ*. որպէս բան թագաւորի. և մարդոյն մեռանիլն. և արև ծագելն. և լինիլն գարուն յետ ձմռան: - 10. Երրորդ՝ բարին *ճշմարիտ* է, և *ճշմարիտն* բարի: - 13. Ա՛րդ՝ առաջնովն ճանաչեմք զլոյս. և երկրորդիւն զխաւարն. և առաջնովն ճանաչեմք *զճշմարիտն*. և երկրորդիւ զսուտն: - 17. Եւ ո՛չ են որպէս ստորասութիւնք և բացասութիւնք, որ միայն ի բա՛նն են հակակայք. որպէս *ճշմարիտ*, և սուտ. այլ չար և բարի՝ ի բանս և ի գործս պատահին: - 21. Այս է զի ի լուր պատմութեանց նախնեացն՝ կամ ի կարգէ՛ իրաց՝ կամ ի տեսս զգալեաց՝ ի ծանօթս գամք աստուծոյն *ճշմարտի*. յորմէ հաւատն լուսափայլեսցի: - 25. Իսկ երկրորդ ի կարգէ իրաց իմանալի է *ճշմարիտն* աստուած: - 25. Եօթնևժերրորդ՝ Ծանիցեն զքեզ միայն *ճշմարիտ* աստուած: - 29. Երրորդ՝ Զի *ճշմարիտ* աստուած է քրիստոս ի գլխով: - 30. Վասն այնորիկ ո՛չ երևի *ճշմարիտ* նոցա, զոր ո՛չ ըմբռնէ միտք. և ո՛չ այլ իրիք հաւատան, բայց միայն զայն՝ զոր իմանան: - 31. Ուստի հեշտութիւն և աւանդութիւն յիրաւի խառնեալ ը միմեանս, և հակառակասիրութիւն և ինքնահաճութիւն յառաջ եկեալ, որով զինեալ պնդին ընդդէմ ուղղութեան. զի կարծեն զինքեանս *ճշմարիտ* գոլ քան զայլսն: - 33. Երրորդ՝ զի նոքա զաստուծոյ փառսն առաւելուին թէպէտ *զճշմարիտն* անգիտանային: - 33. Իսկ հերձուածօղքն զփառս *ճշմարտին* աստուծոյ նուազեն: - 33. Տեսցուք և զգործն յաղագս որոյ օծաւ. այսինքն միացաւ մարդկութիւնն աստուածութեամբն. ...*ճշմարիտ* և անաչա՛ռ արար դատաստան. և իրաւա՛մբք զգերեալ բնութիւն մարդկան յազատութիւն դարձելոյց: - 41. Ապա ուրեմն ասեն չարափառքն թէ հայր միա՛յն է *ճշմարիտ* աստուած. և ո՛չ որդի և հոգի: - 47. Նախ՝ որ այժմ ասաց զհայր միայն *ճշմարիտ* աստուած, նոյն և զինքն ասաց ճշմարտութիւն: - 47. Եւ թէ զմիայն *ճշմարիտն* հօր միայն տաս, կորուսեր ապա զորդի ստութեամբ և մահուամբ և խաւարաւ և այլովն: - 47. Եւ զի է՛ որդի, ապա ուրեմն և է՛ *ճշմարիտ* աստուած և թագաւոր թագաւորաց և այլն ըստ առաքելոյն: - 47. Իսկ մի և *ճշմարիտ* ասելովն՝ յատկացնէ՛ ի բազում և ի սուտ աստուածոց հեթանոսաց որ անուամբ միա՛յն են: - 47. Եւ դարձեալ՝ զի այժմ ասէ զհայր *ճշմարիտ* աստուած, և զոր առաքեցեր, *ևն շաղկա՛պ է.* ցուցանէ՛ շաղկապ գրովն և զիւր աստուածութիւնն ընդ հօր: - 47. Զհայրն՝ զի ասէ՝ «*ճշմարիտ* աստուած»: - 47. Իններորդ՝ զի գալստեամբն իւրով եբարձ զանբանութիւնս մեր և զանգիտութիւն. էած զմեզ ի *ճշմարիտ* գիտութիւն աստուածութեան իւրոյ: - 49. Բայց ո՛չ ծնեալ ասեմք՝ և ո՛չ անծին. այլ արտաքս առաքեալ ի հօրէ. որպէս վկայէ քրիստոս թէ՝ «հոգին որ ի հօրէ՛ ելանէ». թերևս *ճշմարիտ* աստուածաբա՛ն իցէ քան զքեզ: - 52. Եւ նախ զվկայութիւնս նոցա լուծցուք, և ապա *զճշմարիտն* արտադրեսցուք բան: - 61. Վեցերորդ՝ զի թէ մեք շնորհիւ՝ որդեգրեալքս կերպանամք առ *ճշմարիտ* և բնութեամբ որդին, և թէ և նա՛ է ըստ մեզ շնորհիւ, պիտո՛յ է նմա վերնագոյն բնութեամբ որդի մարմնացեալ ի յոր կերպասցի և սա՛ ի նմանութիւն նորա շնորհօք որդի: - 67. Եւ թէ զամենայն արտաքուստ և եկամուտ ունի, զիա՞րդ ասէ զինքն *ճշմարիտ* գոլ: - 67. Ապա ուրեմն *ճշմարիտ* աստուած է քրիստոս մարմնովն միավորեալ անբաժանելի յաւիտեան: - 74. Յայս օրինակ և ծնեցեալն ի նմանէ *ճշմարիտ* աստուած և մարդ: - 77. Դարձեալ՝ մի բնութիւն ասեն որք առ աչօք և նմանութեամբ *զճշմարիտ* մարդեղութիւնն համբաւեն: - 82. Ապա ուրեմն յորդիութիւնն և յանունն

խոստովանին միութիւն ի պատրանս պարզամտաց. և *զճշմարիտ* միութիւնն ուրանան և փախչին: - 82. Արդ եթէ էութիւն է անձն, և ընդ անձինն մի ասեն զմարդկային բնութիւնն, մի է և ընդ էութեանն. և թէ մի է ընդ էութեանն. որպէս *ճշմարիտ* միութիւն, մի ասա և բնութիւն. զի էութիւն և բնութիւն մի են: - 86. Ա՛րդ՝ եթէ հայր առաւել գիտէ և որդի նըւազ, այս լինի կամ հօրն նոյնպէս նըւազ գիտել որպէս որդի. և կամ որդի՝ ո՛չ *ճշմարիտ* ասել: - 97. Զի ամենայն *ճշմարիտ* դաւանօղքն զքրիստոս աստուած խոստովանեցան. և ի նոյնն նախատակեցան. և առ ճշմարտութիւնն քրիստոս յերկրէ յերկինս վերափոխեցան: - 101. Երրորդ՝ և բաժանի և զանազանի ի բազումս. և այնպէս շրջագայութեամբ գտանէ *զճշմարիտն*. և այսպէս է բնական քննութիւն իմաստասիրացն: - 120. Եւ այսու զանազանի *ճշմարիտն* և ճշմարտութիւնն՝ այսինքն մասամբ և բոլորիւ. որպէս մարդ և մարդկայնութիւն: - 121. Դարձեալ՝ *ճշմարիտ* է մարդոյս բանն. և ճշմարտութիւն է աստուածային բանն: - 121. Դարձեալ՝ *ճշմարիտն* փոխի երբեմն ի սուտն. որպէս իմաստասիրաց բանքն: - 121. Այսու հաւասարին, զի երկոքինն առ *ճշմարիտն* ունին զդիտումն: - 121. Չորրորդ՝ բանական քննութիւն *զճշմարիտն* ընդ մտա՛ցն քարշէ. իսկ հաւատոյն՝ միտք ընդ ճշմարտութեանն հետևի: - 122. Նոյնպէս զլուսոյ և զհրոյ յատկութիւնս բաղդատել դիւրին է իմանալի լուսոյն *ճշմարտի*. որպէս գրեալ ի ի գլուխն՝ լե համարն տե՛ս անդ: - 127. Հինգերորդ՝ զի տեսեալ զանարգ կերպարանն՝ խնդրեմք *զճշմարիտ* իմացումն: - 132. Այլ՝ առաջին կարծիքն է հասարակ և *ճշմարիտ:* - 134. Յետ ընդդէմ արտաքս աքսորելոյ զարտաքինսն. և ընդ մէջ հերձելոյ զհերձուածօղսն, և *զճշմարիտն* աստուածաբանութիւն հաստատելոյ ի մեզ, բե՛ր սկսցուք զսկիզբն արարչութեան եղելոց մինչ ի վախճան կատարման այժմոյս՝ ըստ կարգի հին և նոր կտակարանաց հետևեալ: - 156. Եւ թէ ոք ասիցէ, որովհետև ներգործութիւնքն բնութեանց հետևին, որպէս հուրն միշտ այրէ, և ջուրն ցրտանայ և ջերմանայ. ապա *ճշմարիտ* երևի բանն դամասկացւոյն՝ եթէ է՛ ի քրիստոս կրկին ներգործութիւն. որպէս և կրկին բնութիւն: - 174. Իսկ թէ ըստ պատուոյ իմանաս, նա՛խ է ներկայն. զի է՛ ստոյգ և *ճշմարիտ*. և ապա՛ անցեալն. և յետոյ ապառնին. և այսպէս շարադասեն քերթօղքն: - 198. Եւ զի երկատեսա՛կ էր բանն՝ այսինքն սուտ և *ճշմարիտ*, լեզուն երկճղի եղև: - 219. Այլ ա՛յս է *ճշմարիտն*. որ մինն ծառ էր կենաց՝ և մինն գիտութեան. և ի դրախտին այլ ո՛չ գոյր նման նմա. թո՛ղ թէ յերկիրս. ո՞րպէս ասեմք թէ այս է՝ կամ այն: - 224. Ասեն սուրբք, եթէ զորօրինակ աստուածածին կոյսն մարիամ կուսութեամբ ծնաւ առանց սերման կատարեալ և *ճշմարիտ*: - 226. Ութերորդ՝ վասն արտաքին զգայութեանցն որ են ի գլուխն. զի այլ կենդանիք միայն հեշտանան կերակրով և ցանկութեամբ. իսկ մարդն հեշտանայ առաւել գեղեցկութեամբ զգալեացս. յորժամ տեսանէ աչօքն զերկին և զերկիր. և ժողովէ՛ *զճշմարիտ* գիտութիւն նոցա և հեշտանայ: - 233. Եւ սուտ առաքեալք *զճշմարտիցն* կերպանային. և այն զի ո՛չ ունէին զնոյն տիպ. իսկ թէ ունիցին զնոյն տիպ՝ ո՞րչափ ևս: - 238. Երևի ապա թէ *ճշմարիտ* են պատկերացոյցքն, որ զբարս մարդոյն յայտնեն: - 246. Ասեմք թէ ո՛չ են *ճշմարիտ* վասն ե պատճառի: - 246. Եւ է՛ *ճշմարիտն* բարի, և բարին *ճշմարիտ*, անդրադարձութեամբ: - 248. Երեքտասաներորդ՝ *ճշմարտի* գիտօղ և սիրօղ է աստուած. և միայն մարդս է ի զգալիս որ *ճշմարիտն* գիտէ և սիրէ: - 272. Եւ զայս սուտ առնէ սուրբն կիւրեղ եթէ՝ որդի է *ճշմարիտ* պատկեր հօր. և մարդն եղեալն է ի պատկեր որդւոյ: - 273. Քսանևք, մանանայն օրինա՛կ է *ճշմարիտ* մարմնոյն քրիստոսի: - 283. Վասն չորրորդին՝ զի առաջին եղև քահանայ ի տիպ *ճշմարիտ* քահանայապետին քրիստոսի: - 286. Եօթներորդ՝ ցնծութիւն եղև իսահակ ազգին իւրում. ըստ որում կոչեցաւ իսահակ որ է՛ ծաղր. և *ճշմարիտ* ցնծութենէ քրիստոս ամենայն հաւատացելոց...: - 307. Նա՛խ՝ զի թէպէտ ի դէմս յոբայ սուտ էր խօսք նոցա, այլ ի դէմս ամենայն մեղաւորաց *ճշմարի՛տ* է: - 325. Այլ ա՛յս է *ճշմարիտն*, զի ամենայն բարեկամքն որ ժողովեցան յետոյ և մխիթարեցին զնա՛, իւրաքանչիւրքն բերին մէն մի որոջ ոչխարի և **դ** դրամ ոսկի անգիր ընծայեցին նմա ի սատար խրախութեանն...: - 326. Եւ քրիստոս գառն *ճշմարիտ* զենաւ և ազատեաց զմեզ ի սատանայէ՛: - 328. Նոյնպէս պաշտօնեայք նորա ցուցանեն ինչ որ չէ *ճշմարիտ*: - 335. Եւ թէ *ճշմարիտ* էր ընդէ՞ր նո՛ր ինչ ոչ առնէին: - 335. Այլ զի տեսանօղքն զարհուրեալք ի *ճշմարիտ* նշանիցն մովսէսի՝ առ աչօք թուէր թէ և կախարդքն այնպէս առնէին: - 335. Սոքա ամենայնքն զբերանս մտաց բացեալ ունին առ մինն և *ճշմարիտ* ջահն քրիստոս: - 347. Չորրորդ՝ ի խորհուրդ վայելչական մարմնոյ *ճշմարիտ* քահանայապետին մերոյ քրիստոսի: - 347. *Ճշմարիտն* աստուած՝ բնութեամբ և գործով և անուամբ կոչի աստուած և տէր: - 350. Եւ *ճշմարիտ* ի խոստացեալ պարգևն սիրելեաց իւրոց: - 351. Զի *ճշմարիտ* պատարագն քրիստոս է: - 371. Նա՛խ՝ զի յորժամ *ճշմարիտ* սրբութիւնն գայցէ, հաւանեսցին որ է՛ արիւնն քրիստոսի...: - 383. Չորրորդ՝ մարմնով զօրինակն ետես, և ապա՛ հոգւով *զճշմարիտ* երկիրն պարգևաց: - 395. Իսկ *ճշմարիտն* աստուած զայս ո՛չ խնդրէ. այլ երկիւղ խնդրէ ի տղայոց որով խորշին ի չարէ. և սէր ի սրտէ փոխանակ անասնոց. և

խաղաղութիւն առ ընկերս և օտարս…: - 396. Երրորդ՝ զի ասէ՝ զպատգամն աստուծոյ ունի և ո՛չ զօտար աստուծոյ. և քրիստոս ասէր, «զոր լուայ ի հօրէ՝ պատմեմ ձեզ». և յանուն հօր եկն. և զհայր ետ փառաւորել միայն *ճշմարիտ* աստուած: - 399. Երրորդ՝ յայտնի և *ճշմարիտ* կեանք քրիստոս է…: - 405. Նոյնպէս և յեսու անուանակիր և օրինակ *ճշմարիտն* յիսուսի: - 417. Եւ անտի քահանայքն մինչ ի յիսուս փրկիչն *ճշմարիտ*: - 421. Եւ անդ դադարեցան առաջնորդք օծեալք. յորում երևեցաւ *ճշմարիտ* օծեալն քրիստոս: - 421. Այլ որպէս յարուցեալն նմանութիւն է և ո՛չ իսկութիւն, նոյնպէս և խօսքն սուտ է և ո՛չ *ճշմարիտ*: - 428. Եւ դնք ո՛չ միայն զապագայն ոչ գիտեն, այլ և զներկայ խորհուրդն ո՛չ ճանաչեն. նաև զանցեալ *ճշմարիտն* և զբարին ի միտ ո՛չ ունին: - 428. Ա՛րդ՝ թէ զխաբէութիւնն ո՛չ ճանաչէր, զիա՞րդ *զճշմարիտ* խորհուրդն գիտէր: - 428. Ա՛րդ՝ թէ *ճշմարիտ* յարոյց կինն զսամուէլ. սաւուղ ո՛չ երկնչէր ի մահու. զի և զնա՛ յարուցանէր. և թէ երկեաւ, ապա սուտ էր կենդանութիւն մեռելոյն: - 429. Ապա յա՛յտ է զի ի մէջ կարծեաց էր նա. զի թէ սուտ համարէր զվհուկն, ո՛չ երկնչէր ի մահու. և թէ *ճշմարիտ*՝ ո՛չ երթայր ի պատերազմ: - 429. Այլ *ճշմարիտ* փրկութիւնն մեր յուսո՛վ է և աղօթիւք: - 429. Նա՛խ՝ եթէ *ճշմարիտ* յարեաւ սամուէլ, ընդէ՞ր ոչ եհար զվհուկն և սատակեաց. և ընդէ՞ր ոչ յանդիմանեաց զսաւուղ եկեալ առ վհուկն: - 429. Բե՛ր տեսցուք և զորպիսութիւն խօսիցն, որ թուի թէ *ճշմարիտ* զապագայն պատմեն դնք: - 430. Իսկ թէ այլ ինչ էր՝ և բարբառն և տեսիլն սամուէլի, սուտ է և ո՛չ *ճշմարիտ*: - 430. Արդ եթէ սամուէլ յարեաւ և մեռաւ և կամ կինն, նա՛ *ճշմարիտ* եղիցի բանն. ապա թէ կինն ոչ մեռաւ և սաւուղ մեռաւ, սուտ խօսեցաւ: - 430. Երկրորդ՝ զի *ճշմարիտ* էր նախատինք. զի սպան զուրիա: - 433. Չորրորդ՝ զի առանց այլ մեղաց ո՛չ մեռցի. և *ճշմարիտ* պահեաց: - 439. Այլ ա՛յս է *ճշմարիտն*. զի պատերազմ և խռովութիւն էր յաւուրս դաւթի մինչ սատակեաց զնոսա. և որդի նորա ի խաղաղութեան ժամու շինեաց զտաճարն: - 439-440. Եւ շուրջ զնովաւ հրեշտակք ամենայն ոչ հաւանեցան. զի նոքա զամենայնն *ճշմարիտ* խօսին. և բարի առնեն մարդկան. և յապաշխարութիւնն խնդան. իսկ սուտ խօսիլն և չար առնելն և ի վիշտս ուրախանալ՝ դիւա՛ցն է որ են չար հոգիքն: - 444. Եւ առաջնորդեն օծեալ քահանայքն յետ դարձին **նձգ** ամ. մինչև բարձան օծեալքն հրէից և ծնաւ *ճշմարիտ* օծեալն քրիստոս: - 449. Ապա ուրեմն հաւատարիմ և *ճշմարիտ* անսուտ խոստումն է աստուծոյ…: - 457. Եւ սոյնպէս և քրիստոս եղև երկուց զարմիցն մի քահանայ և թագաւոր *ճշմարիտ* և մշտնջենաւոր քահանայ և թագաւոր յաւիտեան: - 461. Խորհիլ՝ զի ընտրեսցէ *զճշմարիտն*: - 465. Այլ արդ՝ սուրբ գիրք վկայեն, և *ճշմարիտ* հաւատն բռնադատէ՛ աստուած խոստովանիլ զծնեալն ի կուսէն. ապա ուրեմն և ծնօղն է՛ աստուածածին: - 466. Յաղագս որոյ պատրաստեաց նիւթ արեան, կազմեալ զօրութեամբ հոգւոյն. որով լինիցի *ճշմարիտ* մայր քրիստոսի: - 470-471. Իսկ մկրտութիւն նորա ո՛չ որդեգրութեան էր որպէս մերս. այլ *ճշմարիտ* որդիութեանն յայտնութիւն ըստ ձայնին հօր «դա՛ է որդի իմ սիրելի»: - 474. Առաջին միաւորութիւն ստոյգ և *ճշմարիտ*՝ հոմանիւթ մասնաւորաբար որոշեցելոց. որոց ոչ ինչ տարանիւթ ընդ մէջ երևի. որպէս երկուց ջահից լուցելոց միաւորութիւն լուսոյն: - 476. Այս է ստոյգ և *ճշմարիտ* միաւորութիւն: - 476. Երկրորդ՝ զի ցուցցէ *զճշմարիտ* մարդեղութիւն իւր և ո՛չ կարծեցի առ աչօք. որպէս զրկեալքն ի շնորհաց նորա ասացին: - 485. Ութերորդ՝ մանանայն յանապատի էր օրինակ անապական մարմնոյ փրկչին. և է՛ անապական մինչև ցայսօր ի մէջ ոսկի սափորին. ապա ուրեմն *ճշմարիտ* մարմինն քրիստոսի էր անապական ի կուսական արգանդէ աստուածածին կուսին: - 499. Եւ զի սուտ է ապականացու ասելն, *ճշմարի՛տ* եղիցի անապական խոստովանիլն: - 500. Եւ թէպէտ ասացաւ *ճշմարիտն* թէ անապակա՛ն է մարմինն տեառն, այլ այժմ դիցուք զբանս նոցա թէ վասն է՞ր ասեն ապականացու. և յարմարեսցուք զպատասխանիսն: - 500. Դարձեալ ասեմք, փոփոխումն և աճումն հասակին ո՛չ եթէ ապականութեան էր ցոյցք. այլ զի *զճշմարիտ* մարդեղութիւնն հաստատեսցէ ընտել սովորութեամբ մեր որ ի տղայութենէ զարգանամք: - 501. Զի ըստ որում աստուած՝ ո՛չ կրէր ակամայ. և ըստ որում մարդ *ճշմարիտ* և մարմին բանին՝ կրէր զկամաւորն: - 502. և Դարձեալ ասեմք թէ յանապատին հրամայեցաւ զսպել ի սրբութիւն մանանային որ օրինա՛կ էր *ճշմարիտ* մանանային մարմնոյն սրբութեան: - 502. Նմանապէս և առ այս ասեմք, թէ ո՛չ ինչ է զանազանութիւն. զի յորժամ աւետարանն բանն քրիստոսի է *ճշմարիտ*, և քրիստոս աստուած է *ճշմարիտ*. ապա ուրեմն աւետարանն բանն աստուծոյ է *ճշմարիտ*: - 530. Որպէս խօսեցաւ հոգին սուրբ ի մարգարէսն. և հոգին սուրբ աստուած է *ճշմարիտ*. ապա և խօսեցեալքն ի հոգւոյն սրբոյ *ճշմարիտ* խօսք է աստուծոյ: - 530. Եւ այսպէս բացայայտի, զի երկու իրս խնդրին առ ի *ճշմարիտ* մարգարէ գոլ: - 536. վասն այն ո՛չ կոչին *ճշմարիտ* մարգարէ պարզաբար. այլ բաղադրեալ. որպէս մարգարէ բահաղու. կամ մարգարէ բարձանց կամ անտառին: - 536. Եւ թէ ոք ասիցէ, այլավիճակք այլ և այլ աթոռոց *ճշմարիտ* երևի զի ինքնագլուխք են: - 541. Ես խոստովանիմ զքրիստոս *ճշմարիտ* աստուած և բնութեամբ որդի աստուծոյ. և դու բաժանմամբ

մա՛րդ դաւանիս և շնորհօ՛ք որդի աստուծոյ: - 548. թէ զերկու քորս **բ** եղբարցն տալ. կամ զսանին քոյրն միւս եղբօրն. որպէս քո սուտ պետրոսին կանոն է, և ո՛չ *ճշմարիտ* պետրոսին. և զայլն լռեմ իբրև զամօթալի: - 548. Այլ և ասեն թէ ընդհանրական կանոնքն *ճշմարիտ* է քան զառանձնականն: - 550. Նա՛խ՝ թէ ո՛չ ամենայն ուրէք է ընդհանրականքն *ճշմարտիք*. և ո՛չ ամենայն ուրեք առանձնականքն սուտք: - 550. Ահա՛ սոքա ընդհանրականք են և ո՛չ են *ճշմարիտ.* այլ սուտ: - 550. Ահա՛ սոքա առանձնականք և *ճշմարիտք*. որպէս ասի ըստ իմաստասիրացն: - 550. Դարձեալ՝ գոյ առաւել *ճշմարիտ*, գոյ և նուազ *ճշմարիտ*, որպէս գոյ առաւել բարի, և նուազ բարի: - 550. Այսպէս ասեմք, զի որ ըստ ինքեան է *ճշմարիտ* և ըստ ինքեան բարի՝ առաւել է. և որ ըստ պատահման է *ճշմարիտ* կամ բարի՝ նուա՛զ է. վասն զի ըստ ինքեանն գոյացութեամբ և հարկաւո՛ր է. այսինքն անփոփոխ և միշտ: - 550. Զորօրինակ՝ յորժամ ասիցէ ոք զբարին բարի գոլ, այս ըստ ինքեան *ճշմարիտ* է: - 550. Եւ յորժամ ասիցէ զբարին ոչ չար գոլ, *ճշմարիտ* է և այս. այլ ըստ պատահման է որպէս ցուցաւ: - 550. Ապա յա՛յտ է, զի նըւազ *ճշմարիտն* առաւել *ճշմարտին* հետևեսցի. որպէս նուազ բարին առաւել բարւոյն. եթէ ընդհանուրն և եթէ մասնաւորն: - 550. Այլ արդ՝ ազգս հայոց ունի զառաւել *ճշմարիտն* և զառաւել բարին ի դաւանութիւնն և ի կարգս. այսինքն ի հաւատս և ի գործս: - 550. Դարձեալ՝ *ճշմարիտն* մի է և սուտն բազում. և բարին մի է և չարն բազում. և առաքինութիւնն մի է և մոլորութիւնն բազում: - 550. Դարձեալ՝ որ ոք մերձ է ի ճշմարտութիւնն՝ նա՛ առաւե՛լ է *ճշմարիտ*. որպէս որք մերձ են լուսոյն և ջերմութեան՝ առաւել լոյս են և ջերմ: - 550. Դարձեալ՝ զուտ է և անխառն իսկապէս *ճշմարիտն* քան զխառնեալն ի ստէ: - 550. Եւ զայս վասն է՞ր յերկարել ինձ. զի ցուցանիցի թէ ո՛չ է պարտ միոյն *ճշմարտի* բազում ստոց հետևիլ: - 551. Դարձեալ, բնաւորեալ է մարդոյ՝ զի ամենայն ոք կարծէ զինքն *ճշմարիտ* և արդար. այլ որ ունի զճշմարտութիւնն նա՛ է *ճշմարիտ* և արդար: - 551. Զորօրինակ **բ** ոք ի դատախազից իւրաքանչիւրն զինքն կամի և կարծէ *ճշմարիտ* գոլ. այլ մերձ եկեալ դատաւորին՝ վկայիւք յայտնի *ճշմարիտն*: - 551. Նմանապէս և ամենայն ազգ քրիստոնէից ասէ զինքն *ճշմարիտ*: - 551. Այլ դատաւոր միտն կացուցեալ երկու վկայ զանբիծ հաւատս և զօրէնս որ են հաւատք և գործք. զի առ ո՞ր և իցէ քրիստոս նա՛ է *ճշմարիտ*: - 551. Եւ զի *ճշմարիտ* վկայք են սոքա, և տէր մեր առ կուրացեալ հրէայսն զսոյն կացոյց վկայ...: - 551-552. Ապա ուրեմն յա՛յտ է յայսցանէ՝ թէ առ միոյն իցէ *ճշմարիտ* հաւատ և օրէնք՝ նա՛ է *ճշմարիտ* և ո՛չ այլքն. թէպէտ բաժանեալ լիցի ի նոցանէ: - 552. Ա՛րդ՝ ի սոցանէ ո՞րք իցէ *ճշմարիտ*. և կամ հակառակք են միմեանց թէ ոչ, լուծանել աղաչեմ: - 555. Պատասխանեմ և ասեմ եթէ ո՛չ են միմեանց հակառակ. այլ երկոքեանն *ճշմարիտք* են որպէս ցուցանեմք յետոյ: - 556. Չորրորդ՝ խորհուրդ մեղացն *ճշմարիտ* և բարի ցուցանէ զգործն և սիրելի և հեշտ. վասն որոյ յօժարի և եռայ ի կատարումն: - 558. Իսկ յետ և յահեակ որկորստութիւն և պոռնկութիւն. զի յետս դարձումն է ի *ճշմարիտ* բարւոյն, և զհետ ընթերցումն է առ ահեակ և սուտ բարիս: - 560. այն է հպարտութիւն որ խոտե՛մք և անարգեմք *զճշմարիտ* բարին. և ապա խոտորիմք և հետևիմք զհետ փոփոխելոյ բարւոյս. և այսպէս երևի հպարտութիւնն յամենայն մեղս: - 562. Իններորդ՝ զի ամենայն ոք որ առ պոռնիկն երթայ՝ գիտէ ճշմարտութեամբ թէ վրիպեցաւ ի *ճշմարիտ* արդարութենէն: - 562. Այն է որ գիտէ *ճշմարիտն* և առնէ զսուտն. և այս յերեք դէմս որոշի: - 564. Երրորդ՝ ի յաստուած գիտութիւնն. որ եկեալ իցէ ի հաւատս *ճշմարիտս*. և գիտէ զքրիստոս աստուած *ճշմարիտ*. թողու և գործէ՛ զմեղս կամ զհաւատն: - 564. Դարձեալ՝ պատրաստութեանն ի թողութիւն պարտի լինիլ կրկին. այսինքն ճանաչումն *ճշմարտին* և սէր բարւոյն: - 567. Յուսովն ակն ունիմք ինքեան ողորմութեանն որ խոստացեալ է. զի գթած և *ճշմարիտ* է: - 571. Նա՛խ՝ զի յառաջ եղեալ հանճարոյն է՛ *ճշմարիտն*. և յառաջ եղեալ կամացն բարին: - 572. Եւ զի յառաջ եղեալ հաւատոյն է՛ *ճշմարիտն*. վասն այն հաւատն է՛ յիմացումն որպէս ի ենթակայս. և յառաջ եղեալ յուսոյն և սիրոյն է բարին, վասն այն յոյսն և սէրն են ի կամքն որպէս ի յենթակայս: - 572. Երկրորդ՝ զի փորձէ զայլսն ամենայն ի վերջնոյն մինչև ցառաջինն թէ *ճշմարի՞տ* իցեն արդեօք: - 586. ...զնոյն և ամենայն հեթանոսք առնեն. իսկ թէ ի հեթանոսս այսպիսի պարկեշտութիւն պարտ էր առնել, քանի՞ ևս առաւել յեկեղեցիս պարտ է լինիլ. որ է *ճշմարիտ* կարգաւորութիւն և սրբութեան օրէնք: - 589. Դարձեալ՝ մելքիսեդեկ հաց և գինի մատոյց պատարագ աբրահամու և ո՛չ ջուր. որ նշանակէր *զճշմարիտ* պատարագն քրիստոսի. ապա ուրեմն ո՛չ է պարտ խառնել ջուր: - 595. Եւ այս է *ճշմարիտն*. քանզի յօրհնեալ հացէն որ բաշխեաց և ետ առաքելոցն, այլ ո՛չ մնաց: - 599. Զի մարմին իմ *ճշմարիտ* կերակուր է և արիւն իմ *ճշմարիտ* ըմպելի: - 600. Իսկ յեկեղեցի *ճշմարիտ* գառն պատարագի. վասն որոյ զօրինակն արգելումք: - 617. Դարձեալ՝ առաջին ողորմեայն է՛ առ հոգին սուրբ. վասն այն ասեմք օրհնեալ հոգիդ սուրբ աստուած *ճշմարիտ* զառաջինն: - 633. Երկրորդն առ հայր. վասն որոյ աղերսեմք՝ օրհնեալ հայր սուրբ աստուած *ճշմարիտ* ի միջինն: - 633. Երրորդն առ որդի. վասն որոյ ասեմք՝ օրհնեալ որդիդ սուրբ աստուած *ճշմարիտ*:

- 633. Եւ զի *ճշմարիտ* պահք է չորեքշաբաթն որպէս ուրբաթն յայտ է...: - 652. ...և վասն ներգործականին զուրբաթն. որով սրբասէր լեալ հասցուք առ *ճշմարիտն* և առ բարին ի ծեռն աստուծոյ: - 654. Դարձեալ՝ մատաղն ստուեր և օրինա՛կ է *ճշմարիտ* պատարագին քրիստոսի որ գառն աստուծոյ և եզն պարարակ կոչեցաւ...: - 657. Դարձեալ՝ *ճշմարիտ* պատարագն քրիստոս՝ Նախ կենդանի աղ կոչեցաւ...: - 657. Եւ ո՞ր ի սոցանէ ընտրելի է *ճշմարիտն*: - 687. ...և աղաղակէին բարձր ձայնիւ՝ մինչ յե՞րբ տէր սուրբ և *ճշմարիտ* ո՛չ դատես և առնուս զվրէժ արեան մերոյ: - 694. ...զի հաւատարիմ է խոստացօղն և *ճշմարիտ*: - 695. ...և են առ աստուած ի հանգիստ որպէս լուսք. և *ճշմարիտ* է հանգչիլն ի քանձրութենէն՝ յախտաւոր կրից զերծելոցն և առ աստուած եղելոցն: - 696. Մրդ՝ եթէ *ճշմարիտ* է մարգարէն և առաքեալն, զի ահա՛ ա՛ստ է ընդունել զապաշխարութիւն և փրկել զհոգիս...: - 698. Նաև խոստովանեսցի զինքն գոլ քրիստոս և *ճշմարիտ* որդի աստուծոյ: - 707. Նստցի ի տաճարին զոր շինեսցեն նմա հրէայքն. և ասասցէ թէ, յառաջ քան զիս ո՛չ ոք է *ճշմարիտ* քրիստոնեայ. այլ նեռինք են ամենայնքն: - 707. Արդ ցուցցուք թէ *ճշմարիտ* անապական է սուրբ խաչն բնական քննութեամբ և սուրբ գրոց վկայութեամբ: - 733. Չինգերորդ, զի *ճշմարիտն* և սուտն ի մէջ երկուցն երևին. այսինքն դատաւորին և ոստխացն: - 742. Ապա ուրեմն *ճշմարիտ* է դատաստան նորա: - 743. Այլ չար փոխանակ բարեաց ո՛չ երբէք հատուցանէ. ոչ ի կեանս յայս և ո՛չ ի հանդերձեալն. զի ո՛չ է անիրաւ. այլ արդար յամենայնի և *ճշմարիտ*: - 744. Երրորդ հիմն է իւրաքանչիւր սիրտ և անձինք արդարոց. որ հաստատեալ է հաւատով յորքն *ճշմարիտ* և պտղաբերէ՛ զողկոյզ բարեաց. և չարչարանօք ճմլէ՛ յինքեան զուրախարարն գինի հրեշտակաց և մարդկան. և այսոքիկ բարեա՛ցն են հիմն: - 749. Նախ ի տեսանելն զերեսս աստուածային որ է անճառելի ցնծութիւն. որպէս ասեն վարդապետք, այն է *ճշմարիտ* և միայն ուրախութիւն, և ո՛չ յաղագս ստեղծուածոյ, այլ ի ստեղծողին լինի. զոր իբրև ստանայցես, ո՛չ ոք բարձցէ ի քէն: - 762. Երրորդ ուրախութիւնն եղիցի ի տեսութենէ միաւորութեան մարդկային բնութեանն առ աստուածայինն. քանզի սքանչելի ուրախութիւն լինիցի ընտրելոցն, յորժամ ճանաչիցեն թէ եղբայր նոցա ըստ մարմնոյ՝ *ճշմարիտ* աստուած է: - 763. Անդ եղիցի *ճշմարիտ* փառք, ուր ո՛չ ոք գովեսցէ մոլորութեամբ. և ո՛չ գովեսցի ոք սուտակասպասութեամբ: - 765. *Ճշմարիտ* պապիւ՝ որ ո՛չ ունէք անխայեսցի արժանաւորի: - 765. Ոչ ունիմք վեհագոյն քան զհաւատն. տիպ աստուծոյ *ճշմարտի* դրոշմեալ ի մեզ ի բնէ. մեր հրահանգ և զարդ: - 769. Իսկ շնորհք նորոյս հաստատ և անփոփոխ ի *ճշմարիտ* քահանայապետէն անփոխանցելի պարգևեալ: - 783. Եւ ևս. կրկնեալ սուտք համազգիք *ճշմարիտ*. բաղարկոցի ըստ ասիցդ վերոյ: - 787. Եւ կրկնեալ *ճշմարիտն* նոյն մնայ. զի անփոփո՛խ է ստութեան: - 787

**ՃՇՄԱՐՏԱԽՕՍ +** Աչք դժուարահայեաց՝ *ճշմարտախօ՛ս* է: - 246

**ՃՇՄԱՐՏԱՊԷՍ +** Մեզ *ճշմարտապէս* ստեղծօղ՝ որպէս և նմա ո՛չ բանին՝ այլ երևելոյն: - 43-44. Այսպէս զհոգւոյն թէ յայտնապէս աստուած ասիլ ծածկեցաւ, և այլ իմն բառիւ յայտնեցաւ. որ ցուցանէ զնոյն *ճշմարտապէս* աստուած կատարեալ...: - 55. Զի որպէս այժմ կարեմք ասել *ճշմարտապէս* թէ հոգին սուրբ ելանէ ի հօրէ. և վասն ապառնւոյն կարեմք ասել թէ հոգին սուրբ ո՛չ ելանէ յորդւոյ. մինչ այլ ո՛չ ևս ելանէ. և ո՛չ այնպէս էառ զգոյացութիւն և զճշմարտութիւն իւր՝ զի ո՛չ ևս երբեք առցէ: - 65. Աստ **զ** նշան դնէ մարգարէին որ *ճշմարտապէս* զքրիստոս տէր մեր ցուցանէ: - 399. Եօթներորդ՝ զի թէ *ճշմարտապէս* սամուէլ յառնէր, ո՛չ կամէր կինն. զի կորուսիչ էր նոցա. այլ գիտէր որ նմանութիւնն էր սամուէլի: - 428. Եւ թէ ծնեալն ի նմանէ որդի է աստուծոյ, ապա և ծնօղն աստուածածին է *ճշմարտապէս*: - 466. Եւ բաւական է սակաւս ի բազմաց սուրբ գրոց վկայութիւն եթէ գոյ *ճշմարտապէս* յարութիւն մարդկան: - 716. ...զի ո՛չ միայն էառ զքնութիւնս. այլ և զնոսա որ շուրջ զքնութեամբն. զի ծանիցի կատարելութիւն առաքինութեանն, և *ճշմարտապէս* մարդ գոլ: - 781

**ՃՇՄԱՐՏԱՍԷՐ +** Աղերս ընծայեցի ի զանձանակ ճոխութեան ծերդ մեծութեան. իմաստասէր և *ճշմարտասէր* եկեղեցոյդ հայաստանեայց և ընթերցասէրդ մտաց: - 772

**ՃՇՄԱՐՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ +** Այլ մեր դասք ուղղափառաց, հետևօղք *ճշմարտասիրութեան*, ընդդիմանամք այսմ ասելով թէ աստուած ո՛չ է պատճառ չարեաց. այլ միա՛յն բարեաց: - 13

**ՃՇՄԱՐՏԵԼ +** Ապա ուրեմն յա՛յտ է՝ զի բանն զիրն ո՛չ կարէ *ճշմարտել*. այլ իրն զբանն *ճշմարտէ*. յորժամ գոյ կամ ո՛չ գոյ. որպէս ասէ ՚ի հարկէ՛ գոլ զէակն յորժամ է՛. և ո՛չ գոլ յորժամ ո՛չ է: - 9. Բանքն *ճշմարտեցին*: - 456

**ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ +** Պատասխանեմք այսմ եթէ սո՛ւտ են ասացեալքդ. և պատրուակին *ճշմարտութեամբ*. սակայն յայտնի՛ է իմաստնոց: - 8. Ապա ուրեմն աստուած պատճառ է *ճշմարտութեան*. և ո՛չ ստութեան: - 13. Տասներորդ՝ նեռն քարոզութեամբ պատրէ՝ և ուրական սքանչելեօք. և այլն. և սոքա

քաղցրաբանութեամբ և օրհնութեամբ պատրեն զմիտս անմեղաց. և հրեշտակ լուսոյ կերպարանին որպէս հայրն իւրեանց սատանայ. և ամենայնն ուրական միայն և ո՛չ *ճշմարտութեամբ*. և բոլոր դիտումն նոցա է՛ պատրել զմարդիկ և հանել ի հաւատոց. և լնուլ զորովայնս. և զկանայս շեղջակուտեալս մեղօք յինքեանս գրաւել: - 35. Նախ՝ որ այժմ ասաց զհայր միայն ճշմարիտ աստուած, նոյն և զինքն ասաց *ճշմարտութիւն*: - 47. Զի որպէս այժմ կարեմք ասել ճշմարտապէս թէ հոգին սուրբ ելանէ ի հօրէ. և վասն ապառնւոյն կարեմք ասել թէ հոգին սուրբ ո՛չ ելանէ յորդւոյ. մինչ այլ ո՛չ ևս ելանէ. և ո՛չ այնպէս էառ զգոյացութիւն և *զճշմարտութիւն* իւր՝ զի ո՛չ ևս երբեք առցէ: - 65. Արդ՝ եթէ ինքն *ճշմարտութեամբ* ո՛չ գիտէ, մեզ որպէս ցուցանէ. և թէ ինքն մոլորեալ է՝ զմեզ ո՞րպէս տանի առ հայր: - 97. Ա՛րդ՝ եթէ ճանաչելն զաստուած հայր և զյիսուս քրիստոս կեանք է յաւիտենից, և մարդն քրիստոս *ճշմարտութեամբ* ո՛չ կարէ ճանաչել որպէս դուդ ասես: - 99. Զի ամենայն ճշմարիտ դաւանօղքն զքրիստոս աստուած խոստովանեցան. և ի նոյնն նահատակեցան. և առ *ճշմարտութիւնն* քրիստոս յերկրէ յերկինս վերափոխեցան: - 101. Եւ վասն *ճշմարտութեան*. և հաւատոյ: - 101. Ապա ուրեմն հանգիստ է *ճշմարտութիւնն* և լուծումն՝ և նմանութիւնն: - 104. Եւ միտքն ի բազում օրինակաց ի *ճշմարտութիւն* հաստատեալ: - 104. Յարացոյցն մի է և պարզ. ըստ այնմ որ մի է էութիւնն աստուծոյ, և մի տեսութիւն, և մի *ճշմարտութիւն*: - 112. Այսպէս և տեսականն որ է բանականն՝ սկսեալ է ի *ճշմարտութենէն* որ է՛ բանն աստուծոյ, և կատարի առ նոյն *ճշմարտութիւնն*: - 121. Զի՞նչ է *ճշմարտութիւնն*: - 121. **Նոյն պարզ և աստուածային բանն է *ճշմարտութիւնն*. որ ո՛չ ունի ինչ ստութիւն և հակառակ իւր**: - 121. **Եւ այսու զանազանի ճշմարիտն և *ճշմարտութիւնն* այսինքն մասամբ և բոլորիւ. որպէս մարդ և մարդկայնութիւն**: - 121. Դարձեալ՝ ճշմարիտ է մարդոյս բանն. և *ճշմարտութիւն* է աստուածային բանն: - 121. Իսկ *ճշմարտութիւնն* ո՛չ փոփոխի. որպէս լոյս հաւատոյն: - 121. Զի յայս *ճշմարտութենէս* լոյս հաւատոյն ծագեալ ի միտս հաւատացելոց, անփոփոխ սերտութեամբ հաստատէ՛ զհաւատացեալս ի *ճշմարտութիւնն*. և *զճշմարտութիւնն* ի նոսա: - 121. Նոյնպէս՝ հաւատն միաւորէ *զճշմարտութիւնն* ընդ հաւատացօղն: - 121. Նախ՝ զի բանականն առ երկրաւորս և բազում *ճշմարտութեամբ* կատարի: - 122. Իսկ հաւատն առ մին և աստուածային *ճշմարտութիւնն*: - 122. Երկրորդ՝ զի բանականն մոլորի երբեմն ի *ճշմարտութենէն* և տարակուսի: - 122. Իսկ հաւատն անմոլար և անտարակո՛յս է ի *ճշմարտութիւնն*: - 122. Չորրորդ՝ բանական քննութիւն զճշմարիտն ընդ մտա՛ցն քարշէ. իսկ հաւատոյն՝ միտք ընդ *ճշմարտութեանն* հետևի: - 122. Զի առաջինքն խորհրդով և օրինակաւ՝ և վերջինքս իրօք և *ճշմարտութեամբ* լուսաւորեալք ի նմանէ: - 126. Տասներորդ՝ սկիզբն է օրինացն, և կատարումն *ճշմարտութեանն*. որպէս հնոյն և նորոյս: - 130. **Նախ՝ զի սերօբէն խոկայ զբարութիւնն աստուծոյ. և քերօբէն *զճշմարտութիւնն*. և աթոռք զուղղութիւնն:** - 135. **Երկրորդ՝ զի սերօբէն բորբոքէ ի սէրն որ է անմիջոց կապ. և քերօբէն ի ճանաչումն *ճշմարտութեան*. և աթոռքն ի յուղղութիւնն. և նոքա են վերակացուք դատաստանի իրաւանց**: - 135. Երրորդ՝ զի *ճշմարտութեամբ* են պարփակեալ: - 139. Զի յետ անկմանն եղև խստացեալ և անզեղջ ի չարն. կորացեալ ի *ճշմարտութենէն*. անկեալ ի բարւոյն. տկարացեալ ի զօրութենէն. արտաքսեալ յաստուածային խոկմանէն: - 146. Այլ առ ժամայն հպարտութեամբն ուռուցաւ և ի *ճշմարտութենէ* լուսոյն դարձոյց զանձն իւր և խաւարեցաւ: - 147. Եւ աստ ասէ իրինոս՝ զի թէ յաւիտենական է հուրն, զիա՞րդ վախճան ածեն տանջանաց յաւիտենից ունայնախոհքն. թերևս կարծելով թէ ի հուրն մաքրեսցի. զի մի՛ լիցի աշակերտացն *ճշմարտութեան* խորհիլ և ասել: - 153. Այսպէս և գործ նախախնամութեան. զի կամի՛ զի ամենայն մարդիկ կեցցեն և ի գիտութիւն *ճշմարտութեան* եկեսցեն: - 157. Իսկ այս օրինակ, և նա՛ *ճշմարտութիւն*: - 163. Այլ տեսցուք զայս և յօրինակս *ճշմարտութեան*. զի ադամ յետ միոյ յանցանացն ո՛չ մատոյց պատարագ զամենայն աւուրս կենաց իւրոց. այլ որդւո՛ցն հրամայէր մատուցանել: - 167. Այլ մի է պետրոսն ըստ անձին անհատ գոլոյն. և մի է բնութիւն պետրոսին ըստ միաւորութեան բանին. իսկ սոքա օրինակ՝ և նա՛ *ճշմարտութիւն*: - 176. Եւ ոմանք միայն զգալի և ապականացու և ծորելի որպէս երկիրս այս. և զայսոսիկ ո՛չ ընդունիմք մեք *ճշմարտութեան* հետևօղքս: - 221. Քսաներորդ՝ Վասն էութեան հոգոյն լուծումն հակառակ բանից. և *ճշմարտութեանն* հաստատութիւն զանազան հարցմամբ: - 228. Եւ կատարումն *զճշմարտութիւն:* - 248. *Ճշմարտութիւն* առ բարին: - 248. Քանզի միտք շարժեալ առիմաստս՝ դադարէ՛ ի *ճշմարտութիւնն*: - 248. Եւ երկուցն կատարումն է՛ ի յաստուած. քանզի նա՛ է *ճշմարտութիւնն*. և նա՛ է բարին: - 248. Եւ դարձեալ՝ եթէ տամք զփչումն՝ բանական հոգւոյն ըստ ոմանց, և այսու յետո՛յ իմանալ զհոգին քան զմարմինն մեղանչումն է *ճշմարտութեան* ըստ **Ե** եղանակի: - 253. Դարձեալ՝ պատկեր եմք աստուծոյ, զի ճանաչեմք *զճշմարտութիւնն*: - 273. Այլ *ճշմարտութիւնն* յայտնապէս ի մե՛րս մասիս ցուցանէ: - 294. Երրորդ՝ զի

զանարիւն պատարագն մատուցանէ որ հոգևորն է և *ճշմարտութիւնն*: - 296. Եւ մելքիսեդեկին յերկրէ ծնեալ և յերկինս սնեալ, որ առաւել յարմարի *ճշմարտութեանն* ի յերկնից իջեալ և ի կուսէ ծնեալ: - 301. Զայս և այլ սոյնպիսիս բազմօրինակ ստուերագրութեամբ առ *ճշմարտութիւն* իրին. իսկութեամբ ոչ գոլ անհնարին երկասիրացդ ի սոյն դեգերմամբ զոր ի պարապ ժամու քննութեան: - 306. Չորրորդ՝ սառա օրինակ և ծնունդ իւր. մարիամ *ճշմարտութիւն* և ծնեալն իւր. և եկեղեցի համանմանութիւն և զաւակք իւր: - 307. Եւ յինքեան բերէր *զճշմարտութիւն* աւետարանին: - 321. Իսկ ի հոգւոյ մարդոյն բ իր հեռացուցանեն զդևսն. այսինքն խոնարհութեամբ և *ճշմարտութեամբ*. վասն զի զերկուքս զայս ո՛չ ունի սատանայ. և ամենևին փախչի և ատէ՛ զխոնարհութիւն և *զճշմարտութիւն*: - 324. Նախ՝ ուղղութիւն ընկերաց. **բ** գոհութիւն և համբերութիւն. **գ**՝ իմանալ զչար խորհուրդն սատանայի. **դ**՝ աղօթք և պահք. **ե**՝ խոնարհութիւն և *ճշմարտութիւն*. որ գերագոյն է ամենայն զինուց և իսպառ կորուսանէ զչար որ մայրն է ստութեան և հպարտութեան: - 324. Այսինքն նոքա կամէին որ զնոսա արդարս ասէր յոք՝ և զինքն յանցաւոր՝ և ո՛չ ասաց. զի թէ զնոսա որք անիրաւք էին արդար ասէր՝ մեղանչէր *ճշմարտութեանն*. և թէ զինքն մեղաւոր ասէր՝ մեղանչէր վկայութեանն աստուծոյ: - 324. Երկրորդ՝ թիւրէ *զճշմարտութիւնն* յորժամ զչարն բարի ասէ և զբարին չար: - 325. Տասներորդ՝ օրինա՛կ էր խորանի եկեղեցւոյ. զի նա՛ ստուե՛ր էր և սա՛ *ճշմարտութիւն*. վասն որոյ գեղեցկազարդ կազմեցաւ: - 342. զի ի մովսէս օրինակաւ՝ և ի քրիստոս *ճշմարտութեամբ* կործանեցաւ մահ. և ի յարութեանն առ հասարակ մեր: - 351. Նա՛խ՝ զի հինն ստուեր և օրինա՛կ էր. իսկ նորս էութիւն և *ճշմարտութիւն*: - 353. Վեցերորդ, նոցա ծայնիւ օրինակաւ. և մեզ բանիւ *ճշմարտութեամբ*: - 354. Հինն օրինա՛կ էր, և նորս *ճշմարտութիւն*. հանդերձեալն զի՞նչ փոխի: - 355. Նա՛խ՝ հինն օրինակ էր և նորս *ճշմարտութիւն*. և հանդերձեալն առաւել *ճշմարտութիւն* որպէս սուրբ սրբոց: - 355. Երկրորդ՝ ի յօրինակ նորոյս պատարագի ընկալաւ. զի անդ ստուերն է. և աստ *ճշմարտութիւն*: - 355. Իսկ ի նորս ունիմք *զճշմարտութիւն* ունիմք և զօրինակն: - 356. Ա՛րդ՝ ի *ճշմարտութիւնն* ո՛չ է օրինակ. վասն որոյ ո՛չ խառնի աղ: - 356. Այլ որք յամառելով յօրինակն՝ ա՛ղ խառնեն ի խորհուրդն, պա՛րտ է նոցա խառնել և ծէթ և մուրկ և խունկ և միս գառին. կամ զանգեալ ի կասկարայս, կամ օծեալ ի տապակի, զի զօրինակն կատարեսցեն. և հեռասցին ի *ճշմարտութենէն*: - 357. Իսկ ի նորս *ճշմարտութենէ* պատարագ քրիստոս. որ միշտ բաշխի յեկեղեցի: - 362. Ա՛րդ՝ մեք ունիմք զօրինակ կրկին պատարագաց. զնախնեացն և *զճշմարտութիւնն* քրիստոսի: - 362. Զի իրն փոխեցաւ ի *ճշմարտութիւն*, և խորհուրդն մնաց նոյն. որպէս ջուրն և խունկն. իւղն և նաշիհն: - 369. Ա՛յսպէս փոխեցաւ ստուերն ի լոյս, և օրինակն ի *ճշմարտութիւն*: - 369. Այլ ուղիղն, զի օրէնքն թէպէտ ըստ խորհրդոյն փոխեցաւ, այլ ըստ իրին մնաց յաւիտեան. զի օրինակն էանց, այլ *ճշմարտութիւնն* մնաց: - 369. Այլ խորհուրդն է, Նա՛խ՝ զի օրինակ բազում է, և *ճշմարտութիւնն* մի: - 374. Զայն ցուցանէ որ նուազելոց էր հինն և օրինակն՝ ի գալ նորոյն և *ճշմարտութեանն* քրիստոսի: - 374. Ապաւառն ո՛չ գոյ ի *ճշմարտութիւնն* որպէս յօրինակն: - 383. Ութերորդ՝ նախ օրինակն է, և ապա՛ *ճշմարտութիւնն*: - 385. Նոյնպէս եղիցի և *ճշմարտութիւնն*: - 392. Հինգերորդ՝ զի կրկին է օրէնք հին և նոր. այսինքն օրինակն և *ճշմարտութիւն*: - 393. Չորրորդ՝ նախ օրինակն է. և ապա *ճշմարտութիւնն*: - 395. Այլ և զհասարակքս խնամեաց առաւել քան զնոսա. զի ի մէջ նոցա օրինակօք էր, և ի մէջ մեր *ճշմարտութեամբ*: - 398. Նա՛խ՝ զի զօրինակն ո՛չ ունիմք. այլ *զճշմարտութիւն* օրինացն ունիմք: - 403. Հինգերորդ՝ մովսէս օրինա՛կ էր, և *ճշմարտութիւնն* քրիստոս. առ որ խափանեցաւ մահ, և թագաւորեաց կեանք: - 409. Եւ բազում իրօք օրինակն համեմատի առ *ճշմարտութիւնն*: - 435. Վեցերորդ՝ օրինակն սողոմոն՝ և *ճշմարտութիւնն* քրիստոս՝ կարդաց հայր զաստուած: - 440. Բայց զի յուսացեալ ի բանն *ճշմարտութեան* յաղագս որոյ բանս հարցափորձութեան, հետևելով ուսուցչացն ուղղութեան, և յուսոյ ուսողացդ նպաստութեան. բացցուք զբերանս մտաց, և ծգեսցուք ի մեզ զհոգին շնորհաց: - 456. Չորրորդն է ի տեղի անփոփոխ *ճշմարտութեան*...: - 457. ...իմացեալ լինի ըստ չորրորդ եղանակին անփոփոխ *ճշմարտութիւնն*. իսկ այն ո՛չ պատշաճի: - 457. Քանզի *ճշմարտութիւնն* յառաջանայ ընդ խստութեանն: - 459. Ասեմք եթէ՝ ապացոյցն ո՛չ ամենայն իրօք է նման. ապա թէ ոչ՝ լինէր նոյնն. վասն որոյ նոյնքանաբար տեսանի աննմանութիւն օրինակին առ *ճշմարտութիւնն*: - 478. Հինգերորդ՝ քրիստոս լինելոց էր քահանայ և թագաւոր յաւիտենական. և էգն ո՛չ կարէր օծանիլ քահանայ և թագաւոր. ո՛չ յօրինակն և ո՛չ ի *ճշմարտութիւնս*: - 480. Վասն ստոյն մեռանի *ճշմարտութիւնն*: - 491. ԵօթննԺ՝ ի մէջ գիշերի յարեաւ, զի զօրէնս ստուերական ի լոյս *ճշմարտութեան* փոխեսցէ: - 514. Ունկն՝ աշակերտք *ճշմարտութեան* բանին: - 534. Նա՛խ յաղագս շնորհին և *ճշմարտութեան*. և մարգարէք վասն ստուերին և օրինակին. և վարդապետք ըստ չափոյ պիտոյից նոցին: - 535. և զթէոդորիտոս եդին գլուխ ժողովոյն վասն մարդահաճութեան թագուհւոյն և թագաւորին. և

զղէոսկորոս հայրապետն աղէքսանդրու, և զպետրոս անտիոքու, և զտիմոթէոս և զանատօլ, և զայլս բազումս խոտեցին. և վկայեցին նոքա *ճշմարտութեան*: - 543. Դարձեալ՝ որ ոք մեծ է ի *ճշմարտութիւնն* նա՛ առաւե՛լ է ճշմարիտ. որպէս որք մեծ են լուսոյն և ջերմութեան՝ առաւել լոյս են և ջերմ: - 550. Այլ ա՛րդ՝ *ճշմարտութիւն* է առաքելական կանոնքն և հայրապետականն և երից սուրբ ժողովոցն: - 550. Այլ ա՛րդ՝ յամենայն ազգաց ելին հերձուածօղք որ է սուտ. և խառնեցան ընդ *ճշմարտութեանն*: - 550-551. Վասն այն մնաց ի մեզ *ճշմարտութիւնն* իսկապէս և անխառն ի սըտութենէ: - 551. Դարձեալ, բնաւորեալ է մարդոյ՝ զի ամենայն ոք կարծէ զինքն ճշմարիտ և արդար. այլ որ ունի *զճշմարտութիւնն* նա՛ է ճշմարիտ և արդար: - 551. Բայց պարտ է այնոցիկ որք ո՛չ գիտեն՝ և կամ թէ կամաւ տգիտանան՝ ցուցանել զմիաբանութիւն ազգիս հայոց առ այլ քրիստոնեայսն. զի գիտացեալ յամօթ լիցին յաղթեալք ի *ճշմարտութենէն*: - 553. Իններորդ՝ զի ամենայն ոք որ առ պոռնիկն երթայ՝ գիտէ *ճշմարտութեամբ* թէ վրիպեցաւ ի ճշմարիտ արդարութենէն: - 562. Երկրորդ՝ գործօղն որ ունիցի *զճշմարտութիւն* ինչ կարգի՝ թողու զայն և գործէ՛ զմեղս: - 564. Իսկ անթողլի մեղաց **զ** են պարագայք. այսինքն յուսահատութիւն. յանդըգնութիւն. մարտընչիլ *զճշմարտութիւնն* ճանաչելոյ. նախանձ ընդ դէմ եղբայրական սիրոյն. խստասրտութիւն և անզղջութիւն մինչ իսպառ: - 567. Ընդ դէմ առաջնոյն է՛ մարտնչիլ *զճշմարտութիւնն* ճանաչելոյ. և ընդ դէմ երկրորդին՝ նախանձն ընդ դէմ եղբայրական սիրոյն: - 567. Զգուշանալ պարտ է ի բարկութենէ. և առաւել ի ժամ դատաստանին. զի մարդ բարկացեալ ո՛չ ճանաչէ *զճշմարտութիւնն*: - 570. Սէրն առ *ճշմարտութիւնն* և գեղեցկութիւնն: - 578. Եւ զայս փոխեն ոմանք այսպէս. զսէրն առ բարութիւնն. զյոյսն ի բարձրութիւնն. և զհաւատն առ *ճշմարտութիւնն*: - 578. Եւ մասունք արդարութեան են զ. այսինքն կրօնաւորութիւն. գթութիւն. շնորհ. վրէժխնդրութիւն. պահպանութիւն. և *ճշմարտութիւն*: - 579. *Ճշմարտութիւն* է որ առանց փոփոխման ասին այնք որ են, կամ լինին, կամ լինելո՛ց են: - 579. Այլ գիտելի է, զի ոմանք հետևօղք չար աղանդոյն քաղկեդոնի մոլորեալք ի *ճշմարտութենէն* ջուր խառնեն յանապական բաժակ արեանն քրիստոսի: - 594. Ապա ուրեմն և ի *ճշմարտութիւնն* ո՛չ է պիտոյ ջուր: - 595. Այլ և զհինն իմաստութիւն ընդ նորոյս խառնեալ միաւորեաց քրիստոս. այսինքն զօրինակն ընդ *ճշմարտութիւնս*: - 596. Այսպէս և ի *ճշմարտութիւնս* մի է նշխարն դնելի, և մի բաժակով գինի: - 597. Զամենայն *ճշմարտութեամբ* հարցանէ քահանայն. և այնպէս որ մի՛ լիցի ի հարցանելն մեղք ուսուցանել ժողովրդեանն: - 601. Նոյնպէս և մեք ի *ճշմարտութիւնս*՝ ջրով և գինով և սուրբ մեռոնաւն օծանեմք: - 615. Դարձեալ՝ նախ զօրինակն, և ապա՛ *զճշմարտութիւնն* ուսանիմք աստ, և ապա՛ անդ անըդմիջաբար ի տեառնէ. - 643. Իսկ *ճշմարտութիւնն* ի մեզ, վասն ե զգայարանացս սրբութեան. որով մեղանչեմք՝ սրբիմք պահօք և ապա՛ սրբոցն ի բարեխօս մեզ: - 653. Երրորդ, զի օրինակն նմանեսցի *ճշմարտութեանն*. որ պարարա՛կ էր աստուածութեամբն և կատարեալ մարմնով: - 657. իսկ այս ընտրեցաւ վասն նորոյս և *ճշմարտութեան*: - 658. Իսկ վեցերորդն նման է երկրորդին. այլ մե՛ծ է ի *ճշմարտութիւնն* այնու...: - 687. Զիա՞րդ վախճան ածեն տանջանաց ունայնախոհքն. թէրևս կարծելով թէ ի հուրն մաքրեսցին. զոր մի՛ լիցի աշակերտաց *ճշմարտութեանն* խորհիլ: - 703. Հինգերորդ, ըստ համարոյ իդ տառիցն որովք իմաստնացան և ի գիտութիւն *ճշմարտութեան* հասին: - 711-712. Զի գերազանց գո՛րծ է բանին ուսուցանելն *զճշմարտութիւնն*. և զայս ունին վարդապետքն: - 712. Դարձեալ, զի քրիստոս էր վարդապետ ըստ որում *զճշմարտութիւնն* քարոզեաց. - 712. Եւ միջին փող առաքեալքն կոչելով ի *ճշմարտութիւնն*: - 713. Երրորդ՝ զի առաւել յարմարի օրինակս *ճշմարտութեանն*: - 720. Ա՛րդ՝ սոքա անապականք են յայնմ հետէ և առ յապայ որ օրինակք են. ապա ուրեմն և *ճշմարտութիւնն* անապական է որ է խաչն աստուածընկալ: - 733. Յաղագս երկրորդին *ճշմարտութիւնն* ասէ յաւետարանին, «նման է արքայութիւնն երկնից ուռկանի արկելոյ ի ծով» և այլն: - 754. Այսոքիկ են երեք բազուկքն անգուցեալք իբրև ուռս որթոյ. ուստի *ճշմարտութիւնն* ասէ յաւետարանին, «ես եմ որթն ճշմարիտ, և դուք ուռ»: - 755. Վասն որոյ ի կամս ապաստան ներեսցուք հաւանել *ճշմարտութեանն*: - 759. Եւ զայս կրկին տեղիքս *ճշմարտութիւնն* ցուցանէ: - 760. Նոյն և կամք և կիրք և ներգործութիւն մարդկային ընդ աստուածայինն միաւորեալ. միջնորդելով հոգւոյ բանականի՝ աստուածութեանն՝ և մարմնոյն. որ է՛ ներգործութեամբ միշտ աստուած և փրկիչ բնութեամբ. քրիստոս. նոր ադամ. էմմանուէլ *ճշմարտութեամբ*: - 770

**ՃՈԽ +** Եւ տէր մեր *ճոխ* ի մէջ նոցա. զի բարձր և գերագոյն եղև ի վերայ մեղաց: - 316

**ՃՈԽԱՆԱՄ +** Ի չորեսին եղանակս տարոյն՝ Գարունն այսու *ճոխանայ*: - 196

**ՃՈԽՈՒԹԻՒՆ +** Աղերս ընծայեցի ի գանձանակ *ճոխութեան* ձերդ մեծութեան. իմաստասէր և ճշմարտասէր եկեղեցոյդ հայաստանեայց և ընթերցասէրդ մտաց: - 772

**ՃՈՂՈՊՐԵՄ +** Երկրորդ՝ զի ի զատ *ճողոպրի* ի զգայութեանց. այսինքն ի տեսանելեաց, ի շօշափելեաց, և յայլոց, որ զնիւթականս զգան: - 175

**ՃՉԵՄ +** Ութերորդ՝ զի *ճչեաց* թէ ընդէ՞ր խաբեցեր զիս, դու սաւո՛ւղ ես: - 428

**ՃՐԱԳ +** Իսկ երկրային լոյս՝ է *ճրագն* և պայծառ օդն և լոյս աչաց: - 185. Եւ որպէս հուր *ճրագին* զիւղն կերակրի, և ինքն ո՛չ առաւելու: - 224-225. Ի պատիւ մեծարեաց զմարդն. և նա՛խ՝ պատրաստեաց պէտս զանազան կերակրոց և ըմպելեաց որպէս ասացաք. և վառեաց *զճրագ* լուսաւորացն. և զգեղեցիկ ձայն երգեցողաց թռչնոց. և զզուարճութիւն զանազան ծաղկանց. և ապա՛ զմարդն ի պատիւ էած...: - 230. Նմանապէս և այն. յորժամ զամենայն ինչ թողումք և ի լոյս *ճրագին* նայիմք. զի ազգական է իւր՝ զայն սիրէ և տեսանէ: - 239. Այլ և նստեալն ո՛չ կարէր կանգնիլ. և հուր և լոյս *ճրագի* ո՛չ կարէր ներգործել ի թանձրութենէն: - 334. Եւ **է** ճրագարան և **է** բերան *ճրագացն*, **է** արքն մեծապատիւք զօրավիգք թագաւորին. այսինքն յեսու, զաքարիա, խոդէստուբիա, յեդոյիա, յեշոյիա, և եզր դպիր: - 346. Եւ **է** *ճրագն* **է** արփեան շնորհք հոգւոյն սրբոյ: - 347. Դարձեալ՝ **է** *ճրագն* և **է** բերան *ճրագացն* որ լինի չորեքտասան, նշանակէ՛ զչորեքտասան աստիճան հաւատոյն. է ի յանմարմին բնութիւն աստուծոյ, և է ի տնօրէնութիւն բանին: - 347. Եւ եօթն *ճրագ* շուրջ զնովաւ, եօթնեքին դասք ընտրելոց նորա: - 347. Եւ *ճրագն* է զգայարանքն: - 347. Եւ *ճրագ* տէրն ի վերայ նորա: - 347. Եւ *ճրագ* վառեալ ի նմանէ՝ ծնեալն է արփեան լուսով: - 347. Զորօրինակ՝ *ճրագ* զտեսօղս լուսաւորէ՛, և զտկարս խաւարէ՛. կամ որք ի *ճրագ* նային տեսանեն լոյս. և որք յետս դառնան խաւարին: - 403. Չորրորդ «մկրտիլ ի նմանէ». այսինքն աղբիւրն ի յառուն. լիութիւնն ի կաթիլ մի ջրոյն. մաքուրն ի կաւոյն սրբիլ. և արեգականս արեգակն՝ ի *ճրագէն* լուսաւորիլ: - 487. Նաև համապայծառ լոյս Երրորդութեանն ծածկէ՛ զամենայն լոյս լուսաւորացդ. զա՛յն ասէ խաւարումն արեգական և լուսնի և աստեղաց. զոր օրինակ՝ լոյս *ճրագի* ծածկի մերձ եկեալ լուսոյ արևու: - 728. Երկրորդ զի վառեալ *զճրագն*: - 730. Այլ և վառ ունիլ *զճրագ* մտաց մերոց և նայիլ զտունս մտաց մերոց և նայիլ զտունս մեր. - 730

**ՃՐԱԳԱԼՈՅՑ +** Իններորդ՝ զի և նոքա իսկ որ զայս ասեն՝ առնեն յունվարի **զ** *ճրագալոյց* ընդ մեզ. և *ճրագալոյցն* ո՛չ է մկրտութեան, այլ ծննդեան ի մէջ գիշերի: - 484. Ութևժ՝ ի մէջ գիշերի է յարութիւն փրկչին, վասն որոյ յերեկոյն մերձ ի մուտս գիշերոյն *ճրագալոյց* առնեմք և պատարագ որպէս ի ծննդեանն: - 514. Չորրորդ՝ և յերկոսեան *ճրագալոյցս* ո՛չ առնել պատարագ: - 553. Նա՛խ՝ ի լուծանել *զճրագալոյցսն* ի պանիր՝ ի յիւղ՝ և յա՛յլ այսպիսի կերակուր բաց ի մսոյ: - 554. Որպէս ահա՛ յերկոսեան *ճրագալոյցսն* այսինքն ի ծննդեանն և ի յարութեանն միաբանին հայք և յոյնք և ասորիք. իսկ լատինք ո՛չ: - 554. Երկոքին *ճրագալոյցքն*. որ լինի **ը**: - 649

**ՃՐԱԳԱՐԱՆ +** Եւ **է** *ճրագարան* և **է** բերան ճրագացն, **է** արքն մեծապատիւք զօրավիգք թագաւորին. այսինքն յեսու, զաքարիա, խոդէստուբիա, յեդոյիա, յեշոյիա, և եզր դպիր: - 346

**ՃՐԱԳՈՒ +** Յինգերորդ՝ սպիտակ *ճրագուն*. զի հո՛վ է բնութեամբ զջերմութիւն աչացն բարեխառնէ. նա և գեղեցկացուցանէ՛: - 239

# Մ

**ՄԱԳԱՂԱԹ +** Նա՛խ՝ այն է գալարիլն երկնի, զի եթերն որպէս *մագաղաթ* ծալեալ նուազի և նսեմանայ վասն առաւել ճառագայթից լուսաւորացն հրեշտակաց և սրբոցն յերկնէ երևեալ: - 729. Վասն է՞ր *մագաղաթ* ասէ և ո՛չ այլ ինչ: - 729. Նա՛խ՝ զի *մագաղաթն* ի հուր մերձեալ գալարի. նոյնպէս և երկնայինքն յայնժամ խոնարհին յորժամ երկին և երկիր վառեսցին հրով: - 729. Երկրորդ, զի գիր *մագաղաթին* անջինջ մնայ. նոյնպէս և գործն ի հոգիս մեր գրեալ...: - 729. Արդ՝ ա՛յս գիր գործոց մերոց գրեալ ի հոգի և ի մարմին մեր որպէս ի *մագաղաթի*՝ դատաւորն ընթեռնու ի տես և ի լուր հրեշտակաց և սրբոց: - 741. **Հոգի և մարմինս է որպէս *մագաղաթ*. կամք և իմացումն դպիր և գրօղ. հաւատքն գրիչ. արտասուքն մելան. և գիրն գործք բարի կամ բան աղօթից**: - 741. **Մանաւանդ թէ՝ հոգին սուրբ գրօղ դպիր. և ուղղութիւնն գրիչ գործիք. և որք զմելանն առատ տամք և *զմագաղաթն*, զսուրբ գործս անկեղծաւոր և զբանս աղօթից օրինաւոր, ա՛յնքան առաւել գրիմք ի գիրն կենաց**: - 741

**ՄԱԳԴԱՂԵՆԱՑԻ** - Եւ զչորրորդն յոհաննէս պատմէ միա՛յն *զմագդաղենացին*. և տեսեալ երկու հրեշտակս ի սնարս և յոտս նստեալ: - 515. Եւ այս հարցանելի է, զի թէ *մագդաղենացին* ընդ առաջին կանայսն եկն զոր մատթէոս պատմէ և համբուրեցին զոտն յիսուսի...: - 515. ...բայց *մագդաղենացին* ջե՛րմ էր ի սէրն քրիստոսի՝ եկաց զի ա՛յլ ինչ լուիցէ կամ տեսցէ: - 515. Եւ ոմանք ասեն թէ՝ երկու են *մագդաղենացիքն*. մինն գնաց և ի ճանապարհին ետես զտէրն. և միւսն եկաց և ի պարտիզին ետես: - 515. Երկրորդ՝ *մագդաղենացին* մարիամ յորմէ է դևքն ելին: - 516-517. Երրորդ՝ միւս մարիամ *մագդաղենացի*: - 517. Եւ դարձեալ՝ որպէս զայլ կանայսն արար աւետաւորս յարութեան իւրոյ. սոյնպէս և *զմագդաղենացին* վերանալոյն առ հայր: - 518

**ՄԱԳԻԼ +** Ո՞րք և ո՞յք են բնութեամբ զէնք կենդանեաց... Կամ *մագիլք*. որպէս աքաղաղի: - 216

**ՄԱԳՕԳ** - Ասեմք եթէ՝ գոգ և *մագօգն* հոգևորապէս իմացեալ լինին ամենայն հալածօղք եկեղեցւոյ. զորս սատակեսցէ՛ տէր յիսուս զամենեսեան որպէս ասէ սաղմոսն՝ «որպէս զանօթ բրտի փշրեսցես զնոսա»: - 28. Զի՞նչ է գոգ և *մագօգ*: - 708. Այլք ասեն թէ՝ գօգաւ և *մագօգաւ* իմացեալ լինին զօրք նեռին. - 708. Եւ *մագօգ*՝ որովք յայտնապէ՛ս հալածէ զեկեղեցի: - 708. Իսկ այլք ասեն, գօգ ասին հեթանոսք. և *մագօգ* սատանայ: - 708

**ՄԱԴԱՆ** - Եմրան: Յեկտան: *Մադան*: Մադիան յորմէ մադիանացիք: Եսբոկ: Սովիւէ: - 330

**ՄԱԴԻԱՆ** - Եմրան: Յեկտան: Մադան: *Մադիան* յորմէ մադիանացիք: - 330

**ՄԱԴԻԱՄ** - ...զոր եսպան մովսէս և փախեաւ ի *մադիամ*...: - 330. Եւ **խ** ամ ի *մադիամ* եկաց. և ի հանել զժողովուրդն՝ **խ** ամ յանապատին եկաց: - 330. Եւ զ**ե** թագաւորսն *մադիամու*՝ և զսեհոն՝ և զովգ՝ յայնկոյս յորդանանու: - 414

**ՄԱԴԻԱՆԱՑԻՔ** - Եմրան: Յեկտան: Մադան: Մադիան յորմէ *մադիանացիք*: - 330. Որպէս զաւար *մադիանացոց* մովսէս մասնաւորեաց ի խորանն աստուծոյ: - 390. Այլ **ե** թագաւորք *մադիանացիքն* էին, և **բ** այսոքիկ. որ են **է** դևք **է** գլխաւոր մեղաց. որք ի կեանս պատերազմին, և յետ մահու ընդ հոգւոցն բազումք: - 393. Եւ **յ** արքն ընդ նմա ցամաք մնացին յարենէ *մադիանացւոցն* որ կոտորեցան: - 421

**ՄԱԶ +** Դարձեալ ասեմք թէ՝ ո՛չ է բարի առանց աստուծոյ կամացն. և ո՛չ չար առանց թոյլ տալոյ նորա. ա՛յն է որ ասէ՝ տերև ո՛չ անկանի, և *մազ* մի ի գլխոյ. զի ո՛չինչ կարեմք առնել առանց կամաց՝ կամ առանց գիտութեան՝ կամ առանց թոյլ տալոյն աստուծոյ: - 18. Երրորդ՝ է՛ նրբութիւն իմանալեացն և բնութիւն իմացմանն. որպէս բժոտ աչքն ո՛չ տեսանէ *զմազն* ի հեռաստանէ: - 31. Այլ ասիցէ ոք, թէ բազում ինչ գոն ի յայլս գոյացութիւն և ի յայլս պատահումն. որպէս ջերմութիւն ի հուրն գոյացութենէ, և ի անորակ մարմինն պատահումն. և տերևն ըստ ինքեան գոյացութիւն է, և ի ծառն պատահումն. այսպէս և *մազն*: - 169. Պատասխանեմք առ այս եթէ՝ առանց ջերմութեան անձև և անկերպ է անորակ մարմինն. իսկ տերևն զա՛րդ է ծառոյն. և *մազն* մարմնոյն: - 170. Դարձեալ՝ ա՛յլ է բնութիւն մարմնոյն. ա՛յլ ոսկերացն. և ա՛յլ է ջիլն և երակն և մորթն և *մազն* և իւրաքանչիւր մաղձքն. ըստ այսմ ապա ասա՛ և բազում բնութիւնս քրիստոսի: - 176. Հինգերորդ՝ *մազ*. որպէս այծից: - 216. Կամ *մազ*. որպէս ոզնին: - 216. Ութերորդ՝ Վասն գլխոյն և *մազին*: - 227. *Մազն* բուսոց և տնկոց: - 232. Նախ՝ *մազն* ի վերոյ. և մորթն. և միսն. վերին ոսկրն. և ներքին պինտ ոսկրն. խելապատակ մաշկն. և ուղեղն: - 239. Որ է՛ *մազն*. և մորթն. և միսն. և արիւնն. և ջիլն. և ոսկրն. և ուղեղն ի մէջն: - 240. Իսկ *մազն* արտաքոյ անզգայ՝ ծածկոյթ՝ զգեստ՝ և պահապա՛ն է ամենեցուն: - 240. Իսկ *մազն* է այրեցած արիւնն. որ օդովն ի դուրս փչի. որպէս տունկք յերկրէ: - 240. Վասն այն

յորժամ մարդն տկարանայ՝ և այրեցած արիւնն աւելնայ, *մազն* ծորի՛ և երկայնանայ: - 240. Իսկ յորժամ առողջանայ մարդն և արիւնն յստակի, արիւնն միս լինի, և *մազն* ո՛չ աճէ: - 240. Յորժամ պալղամն շատանայ ի մարդն, *մազն* նօսրանայ. վասն այն մարդն ի ծերութեանն լինի ճաղատ: - 240. Եւ յո՛ր մասն մարմնոյն գիճութիւն և ջերմութիւն առաւել լինի, անդ *մազ* բուսանի: - 240. Եւ ուր ջերմութիւնն շատ է, *մազն* ո՛չ սպիտակի. որպէս արտևանունքն աչացն և յայլ տեղիս: - 240. Եւ սպիտակի *մազն* ի պալղամէն և ի մաղասէն: - 240. Յորժամ ծերանայ մարդն, և սպիտակ ջուրն որ է պալղամն առաւելու, յայնժամ *մազն* ընդ սպիտակ ջուրն ի դուրս անցանէ և սպիտակի՛: - 240. Որ և անդ բաժանի հրատեսակն ի տեսանելիքն. և ծխատեսակն ի *մազ* գլխոյն: - 242. Իսկ զի կէսք քաջ և անմորուք լինին, զի ջլապինտ է մորթ երեսացն որպէս զքաթ ձեռաց. վասն որոյ *մազ* ո՛չ բուսանի: - 245. Եւ համանգամայն երևի ասեմ. զոր օրինակ նիւթն այն ունի առ ինքն ծածկեալ զմասունս մարմնոյ. զձեռս և զոտս, զմիս և *զմազ*, որ յետոյ երևին ի նմանէ: - 255. Երկրորդ՝ զաւելորդ ապաւառն և *զմազն* արտաքս ձգեմք: - 296. Այլ և զոհ ուխտաւորաց *զմազ* հերացն այրել: - 359. Զի պղծոցն ամենայն ինչ պիղծ է. որպէս պիղծ կենդանւոյն շան՝ մորթ և *մազ* և միս և այլն: - 416. Նոյնպէս և սրբոյն ամենայն ինչ սուրբ է. որպէս ոչխարին *մազն* և միսն և այլն: - 416. Որ և պահապանքն շրջապատեալ. որ և զհանդերձն պատատեալ յանկողնի, և լերդ այծեաց և *մազ* ի սնարսն. և ի գիշերի իջեալ ընդ պատուհանն և ելեալ առ սամուէլ զերծաւ ի ձեռաց նոցա: - 513. Զի եթէ *մազն* որ է գեղեցկութիւն մարմնոյն յառնէ ըստ նորին տեառն թէ «ի գլխոյ ձերմէ *մազ* մի ո՛չ կորիցէ» քանի՞ առաւել ևս անդամք որ յէութենէ մարմնոյն են յարիցեն: - 725

**ՄԱԶԱԾԱԾՈՒԿ** - Լանջքն որ փորիւն *մազածածո՛ւկ* է՝ անկրօն է և անկայուն և անգութ: - 247

**ՄԱԶԵՂ +** Եւ թէ լանջքն միայն է *մազեղ*, սրտո՛տ է: - 247

**ՄԱԶԵՂԷՆ +** Իսկ թէ ի կրօնաւորաց իցէ, պատեսցեն իւր զգեստիւն, *մազեղէն* և կնկուղ և այլ որպէս գրեալ է...: - 671

**ՄԱԶՈՐՈՏՔ** - Եւ այս են **իբ** լեզուքն: ...*Մազորոտք*: - 298

**ՄԱԹՈՒՍԱՂԱ** - *Մաթուսաղա* առաքումն: - 299. *Մաթուսաղային* յեղնա՛: - 299. Կամ երկայնակեաց որպէս *զմաթուսաղայ*. որ մերձ ի **ռ** ամն ժամանեաց: - 761

**ՄԱԼԵՄ +** Մետասաներորդ՝ *մալեալն*, տրեալն. պակասն արիութեամբ: - 371

**ՄԱԽԱՂ +** Յնգետասաներորդ, **ե** ողորկ քար էարկ ի *մախաղն*. **ե** զգայութիւնք անբիծ և անարատ մարմնոյն: - 436

**ՄԱԽԱՄ +** Ապա ուրեմն և հայհոյելն մտօք և *մախալն* և նենգելն կատարեալ չարութիւն է և մեղք...: - 557

**ՄԱԽԱՆՔ +** Տեղական անկումն եղև դիւաց ի սկիզբն ստեղծման իւրեանց վասն ամբարտաւանութեան և *մախանաց* ընդդէմ արարչին փառաց. ուստի անկաւ յերկնից ի դասուց հրեշտակաց և ի փառաց իւրեանց որպէս ասացաւ յառաջագոյն: - 153. Եւ ոմանք ասեն՝ թէ սեաւ մաղձն առնէ տրտմութիւն և սրտմտութիւն. և խարտէշն զբարկութիւն և *զմախանք*. արիւնն արի և վայրաբեր. և պալղամն ծոյլ և քնափ: - 245. Երրորդ՝ վասն ախտի. այսինքն փառաց կամ *մախանաց*. կամ ագահութեան ընչից. կամ այլ ինչ այսպիսեացս. ո՛չ կատարին կապանքն: - 539

**ՄԱԾ +** Մատունքն *մած* և վայրակոր, ագա՛հ է և չարաբարոյ: - 247

**ՄԱԾՆՈՒՄ +** Նոյնպէս և ջուրն ունի զսոսա. զի շօշափելի՛ է՝ և *մածեալ*՝ և շարժի՝ և երևի: - 215. Իններորդ՝ նոյն ինքն մարմին կենդանւոյն է՛ շօշափելի և է՛ կալեալ և *մածեալ*. և շարժի և երևի. որպէս ասացաք վասն հողոյն: - 215. Եւ է՛ բնութիւն ոսկերաց ցուրտ և չոր. զի խոնաւն և լոյծն ի ցամաք և ի ցուրտ *մածնու* և լինի ոսկր. որպէս ջերմն և խոնաւն լինի միս: - 244. Ի *մածնուլն* արական և իգական սերմանցն՝ լինի որպէս պանիր մինչև ի **զ** օրն...: - 261. Ութերորդ՝ հուրն և օդն առաւել է յարիւնն զի առնօղք են. և յայտ է ի խառնումն միութեանց. զի հուրն մածուցանէ՛, և ջուրն և հողն *մածնուն*, և օդն սնուցանէ. վասն այն զարարօղն և զսնուցանօղն ո՛չ ուտեմք: - 295. Իսկ լեառն հողեղէն բնութեանս մերում, կամաւ հօր վկայելով ի վերայ նորա՝ և հաճութեամբ սուրբ հոգւոյն աղաւնակերպ իջմամբ, և անքակտելի միացեալ բանիւն եղև լեառն *մածեալ* մշտնջենաւոր և անեզր յաւիտենիւ բարձրացեալ օրհնութեամբ և առաւելեալ: - 320. Սպեղանեաւ, յորժամ երեսք նորա թքով *մածեցան*: - 491. Երրորդ՝ զի խաչն այն *մածեալ* է արեամբն աստուածային. ըստ որում բևեռեցաւ ի նմա: - 733

**ՄԱԾՈՒՄՆ +** Զի առանց հողոյ շօշափումն ո՛չ լինի. և ո՛չ առանց ջրոյ կալումն և *մածումն*. և ո՛չ առանց օդոյ շարժումն. և ո՛չ առանց հրոյ երևումն: - 180. Երրորդ՝ զի ինքն երկիրն ունի զթանձրութիւն որ հողոյն է. և *զմածումն* որ է՛ ջրոյն. և զշարժումն որ է հողմոյն. և զերևիլն որ է հրոյն: - 214-215

**ՄԱԾՈՒՑԱՆԵՄ +** Ութերորդ՝ հուրն և օդն առաւել է յարիւնն զի առնօղք են. և յայտ է ի խառնումն միութեանց. զի հուրն *մածուցանէ՛*, և ջուրն և հողն մածնուն, և օդն սնուցանէ. վասն այն զարարօղն և զսնուցանօղն ո՛չ ուտեմք: - 295

**ՄԱԿ +** Եւ դարձեալ՝ «քանզի աստուածութեամբն միաւորութիւն՝ զտրամորոշութեանցն *մակ* ունին. և ո՛չ ինչ նըւազ է միաւորեալ»: - 84

**ՄԱԿԱԲԱՅԵՑԻՔ +** Զարթիր ի յոյնս, տալով մեզ *զմակաբայեցիսն*: - 28. Երեք գիրք *Մակաբայեցւոց*: Սաղմոսն: Սողոմոնի **դ** գիրք: - 450. Իսկ Սիրաք և Իմաստութիւնն և Յուդիդն և Տուբիդն և Տուբիայն և *Մակաբայեցիքն* և Կտակքն և այլք, չեն յայսմ համարի: - 451. Երկրորդ զօրացուցանէ. որպէս յա՛յտ է ի *մակաբայեցւոցն* զկնոջէն որ ունէր է որդիս՝ ածեալ ի սպանումն ի միումն աւուր տեսեալ. և տանէր այնմ՝ յուսովն որ առ աստուած. նոյնպէս և ամենայն դասք մարտիրոսացն յուսով զօրացան: - 574

**ՄԱԿԱԳՈՅԵՂ +** Իսկ Առինչ կոչի, ո՛չ որպէս առ մեզ առինչք են *մակագոյեղքն*. այլ գոյացական, կամ բաղդատական. որպէս ծնօղ. ծնեալ. բղխօղ. բղխեալ. կամ արարիչ և տէր արարածոց և ծառայից: - 172

**ՄԱԿԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ** - Երրորդ՝ անդ մէկին է ջերմութիւն՝ և աստ կրկին. զի հասեալ ի գոգ երկրի, *մակադարձութեամբ* ժողովին առ նա և լինի շող: - 211

**ՄԱԿԱԼԵԶՈՒ +** Երկրորդ՝ ձայնական գործիքն. որ են է. որպէս Շրթունք. Ատամունք. Լեզու. *Մակալեզու*. Բերան. Խռչափող. Թոք: - 216. Եւ որպէս է է գործիք ձայնին, որ է՛ թոքն. խռչափողն. *մակալեզուն*. բերանն. լեզուն. ատամունքն. և շրթունքն. և սոքա միաբանին ի խօսքն: - 296

**ՄԱԿԱՆ +** *Մակա՛ն* հաստատուն իմոյ տկարութեան ես դու: - 771

**ՄԱԿԱՐ** - Առաջին ժողովն եղև ի նիկիայ սրբոց հարց. զկնի **յժը**՝ կամ **յլ** ամի ծննդեանն քրիստոսի. և ի **ի** ամի թագաւորութեանն կոստանդիանոսի: Եւ Պատրիարգունք էին անդ, Արիստակէս հայոց: *Մակար* երուսաղէմի...: - 542. Զի յառաքելական կանոնս և կղեմայ և *մակարայ* և այլոցն: - 595

**ՄԱԿԱՐԻՈՍ** - *Զմակարիոս* յանտիոքու. և զաշակերտն իւր զստեփաննոս: - 544

**ՄԱԿԲԱՅ + Զի մեծ է յառաջարկութեան եզրակացութիւն. և ո՛չ բայիւք, այլ՝ *մակբայիւք* է փրկութիւն**: - 785

**ՄԱԿԲԵԿՈՒԹԻՒՆ +** Զի որոց բազում աւանդեցաւ. առաւել ինչ պահանջեցաւ. և փքացելոց հպարտութեամբ՝ ստորասուզեալ *մակբեկութեամբ*: - 789

**ՄԱԿԴԱՐՁԱՊԷՍ +** Երեք չուանն յեռեալ ի միմեանս *մակդարձապէս*, է՛ չորեքնիւթեայ բնութիւնս մեր ի տարերց խառնեալ. կամ շնչոյ մարմնոյ և հոգոյ խառնումն: - 645

**ՄԱԿԵԴՈՆ** - Երկոտասաներորդ՝ Առարկութիւնք *մակեդոնի* **ե** գլխով: - 30. Դարձեալ ընդդէմ այնոցիկ որք արարած ասեն զբանն աստուծոյ և զհոգին. որպէս արիոս. և *մակեդոն*. և հրէայք. և այլք: - 55. Այլ այժմ տեսցուք ի սուրբ գրոց զվկայութիւնսն *մակեդոնի*, և յարմարեսցուք զպատասխանիս նոցա: - 59. Նախ՝ ասէ *մակեդոն* եթէ աղօթել և բարեխօսել ո՛չ յարմարի աստուծոյ. զի եթէ *զքրիստոսէ՛* ասի՝ վասն մարդկութեանն է: - 59. Զի եթէ զբնութիւնն, ահա բաժանեցիք զբնութիւնն ի բղխօղ և ի բղխեալ. որպէս ի ծնօղ և ի ծնեալ. որ է *մակեդոնի* և արիոսի: - 62. Տիմոթէոս աղէքսանդրու. Մելիտոս անտիոքայ. **ճծ** հարք ընդ դէմ *մակեդոնի* հայհոյչի հոգւոյն սրբոյ: - 542. Եւ յաւուրս մեծին թէոդոսի **ճծք** որ ի կոստանդինուպօլիս ընդ դէմ հոգէմարտին *մակեդոնի*: - 547. Տասներորդ՝ վասն հոգեմարտին *մակեդոնի* որ հայհոյէր զհոգին սուրբ նուազ ասելով քան զհայր և զորդի, ո՛չ թողցի նմա: - 566

**ՄԱԿԵԴՈՆԱՑԻՔ** - Պատասխանեմք՝ Նախ՝ առ *մակեդոնացիս* որք զորդի խոստովանին աստուած՝ թէ ասացէ՛ք զպատճառ **բ** աստուածոց ձեր: - 54. Եւ առ *մակեդոնացիս* այսքան: - 60. Քանզի եբրայեցիք և *մակեդոնացիք*՝ Զաւելեաց աւուրքն դնեն գլուխ տարւոյ. և ասեն օր առաջին. և **բ**. և **գ**. և **դ**. և **ե**. և վեցն մուտ Նիսան ամսոյ. որ թարգմանի կազմութիւն: - 200. Իսկ ոմանք զարաբացիս և *զմակեդոնացիս*՝ յեբրայեցիս *համարին*՝ և կէսք ոչ: - 299

**ՄԱԿԵԴՈՆԵԱՆ** - Իսկ թէ յանսկզբնէն և ի սկզբնաւորէն յառաջ գայ հոգին, լինի անեղ և եղական որ է *մակեդոնեան* և ծանր հայհոյութիւն: - 63

**ՄԱԿԵՐԵՒՈՅԹ +** Առաջինն ըստ դրութեան, որպէս կէտ. գիծ. *մակերևոյթ*. և մարմին: - 476

**ՄԱԿԵՐԵՒՈՒԹԻՒՆ +** Յետ այսորիկ երկրորդ միաւորութիւն սովորեցաք կոչել թէպէտ և ո՛չ իսկապէս՝ և զանհամանիւթից ոմանց. և կամ զհամանիւթից մարմնոց յարադրութիւն. որոց ընդ մէջ է *մակերևութիւն* միայն: - 476

**ՄԱԿՍՏԱՑԱԿԱՆ +** Իսկ վեցերորդ կոչին *մակստացականք*. այսինքն ի վեր ստացեալ

աշխատութեամբ. որք հետևին միմեանց իբրև զչարս շղթայից: - 582. Ա՛րդ՝ քաղց արդարութեան է առաւել երանութիւն քան զքաղց այլոց *մակստացական* առաքինութեանց: - 584

**ՄԱՅ +** Որպէս ասեն հերձուածօղք՝ զամենայն ինչ մարդկան ի հարկէ՛ գոլ. այսինքն զգործ. զդիպուած. *զմահ*. զկեանք. և զամենայն ինչ: - 7. Դարձեալ ասեն, թէ բազում ինչ հանդիպի արտաքոյ կամաց մերոց. որպէս չար հիւանդութիւն. վատաբախտութիւն. *մահ*. և այլն, ապա ուրեմն նոքա ի հարկէ բախտի և ճակատագրի: - 11. Այլ արդ՝ բազմաց նոյնպէս *մահ*, հիւանդութիւն, և այլն. ապա ուրեմն ո՛չ է ի հարկէ: - 11. Որպէս տուրքն նաբուգոդոնոսորայ. և աղօթքն եզեկիայ. որ յետս դարձոյց *զմահ*. և այլք բազումք. ապա ուրեմն ո՛չ է հարկ: - 11. Այլ և ո՛չ է բնութիւն. ո՛չ մասն և ո՛չ բոլոր. այլ պակասութիւն ունակութեան. զի բարին ունակութիւն է, և չարն պակասութիւն նորին. որպէս խաւարն լուսոյ, և հիվանդութիւնն առողջութեան, և *մահ* կենաց: - 16. Եւ յամենևին նըւազիլ կենաց՝ և *մահն* կորնչի. զի յէութեան ունի զգոլն ներհակապէս: - 22. ...յետ *մահուան* նորա ելին ի վերայ իսրայէլի: - 27. Իսկ ուրախանալն ի չարն *մահ* է և անզգայութիւն. և ընդդէմ բժշկողացն մրցումն...: - 33. Եւ թէ զմիայն ճշմարիտն՝ հօր միայն տաս, կորուսեր ապա զորդի ստութեամբ և *մահուամբ* և խաւարաւ և այլովն: - 47. Իսկ մարդ, զի սրբեսցէ ինքեամբ զմեզ՝ եղև ամենայն յաղագս ամենայնի. այսինքն հոգի և միտք և մարմին. զի յորոց հասարակաց եղև *մահ*, լիցի և կեանք: - 50. Չորեքտասաներորդ՝ զի թէ *մահւամբ* չարչարանօք նորա փրկեցաք մեք ամենեքեան՝ և այն է սոսկ մարդոյ փրկութիւն մեր: - 67. Զի թէ միայն յաստուծոյն, արկանես զանմահ բնութիւնն ընդ *մահուամբ*...: - 69. Իսկ թէ միայն ի մարդոյն բնութիւնն, ահա տակաւին ևս անկատա՛ր ես. զի ի սոսկ մարդոյն *մահ* մկրտեցար: - 69. Զի եթէ ըստ ինքեան բանին, ահա՛ կարգեցեր զանմահին ընդ *մահւան*: - 70. Եօթնևժերորդ՝ ասէ աւետարանն յօհաննու, «այնպէս սիրեաց աստուած զաշխարհս՝ մինչև զորդին իւր միածինն ետ». այսինքն ի *մահ*: - 74. Այլ և նոյն կերպարանն հօր՝ խոնարհեցոյց զինքն ի *մահ*. որ կարի վերջինն էր: - 93. Եւ ի *մահ* խաչի. որ անիծիցն էր: - 93-94. Ա՛րդ՝ ճանապարհո՛րդ էր ըստ մարմնոյ տնօրէնութեանն *մահւամբ* և յարութեամբ մտանել ի փառս: - 100. Եւ մեք զնոյն դաւանութիւնն պինդ կալցուք անշարժ յուսով ի կեանս և ի *մահ* և յետ *մահու*. և նորին խոստացեալ բարեացն արժանի լիցուք ի քրիստոս յիսուս ի տէր մեր: - 101. Եւ զի յետ *մահու* և յարութեան ո՛չ գոն այսորիկ պատճառք՝ անմոռանալի մնայ իմացումն: - 120. Այս է յղացմամբ յարգանդի և ծննդեամբ. և քարոզութեամբ. և *մահւամբ*. և յարութեամբն և համբարձմամբն առ հայր՝ իբր զպսակ տարւոյ կատարեալ բնութեամբ մեր՝ ի ներքին կողմն վարագուրին մտեալ: - 126. Զի աստուած փոխանակ ապաշխարութեան *զմահն* կամեցաւ. և հրեշտակք անմահք են. վասն որոյ առանց փրկութեան մնացին: - 149. Ո՛չ են յաւերժահասունք որպէս ոմանք կարծեն թէ յերկուց տարերց այսինքն ի հրոյ և յօդոյ են բանական կենդանիք և ունին ծնունդ և *մահ*. սուտ է այսպիսի կարծիքս և ընդունայն և հակառակ սուրբ գրոց...: - 150. Երրորդ՝ գլուխ վիշապին՝ է մեղքն, և տուտն *մահ* և դժոխք: - 152. Նշանակէ զհետևեալսն ի *մահ* և ի դժոխս քարշել և արկանել: - 152. Եւ դարձեալ՝ զի նոցա ամենեցուն ներհակ գոյ. որպէս մեծութեան աղքատութիւն. առողջութեան հիվանդութիւն. կենաց *մահ*: - 178. Խաւարի՝ *մահու*՝ և յարութեան է նշան: - 186. Զի տեսեալ մարդիկ զնոր և հին նորա՝ ասացին՝ մե՛զ ես օրինակ ծննդեան և *մահւան*. և կոչեցաւ ամիս: - 190. Դարձեալ՝ յետ *մահու* հոգի մարդոյն ծաղկի և գեղեցկանայ առաքինութեամբն իւրով և բնական պայծառութեամբն: - 213. Ոմանք զդառնութիւնն. այլք զհոտն վատ. և կէսք զվնասս *մահու*. և այլք այլ ինչ: - 217. Վասն է՞ր զթոյնք *մահուն* ի գլուխն ունի: - 219. Ի նշանակել՝ զի *մահու* մարդոյն՝ սկիզբն օձն եղև: - 219. Զի այնպիսի բարին *մահու* լինի առիթ: - 224. Երեսունգ՝ Զի՞նչ պատուիրանն. և *մահու* մեռանիլն: - 228. Զի որ քան եմք ի մարմնի՝ միշտ պարտ է երկնչիլ ի պատժոյ ի գլորելոյ ի *մահու* և այլոցն: - 229. Եւ զմիջին կշեռ *մահու* և կենաց ունելով: - 231. Իսկ թէ ըստ մարմնոյն շեղեսցի՝ ի *մահ* պարտաւորեսցի և տնկեցի ի մարմնաւոր տեղիս. որպէս և եղև իսկ: - 231. Եւ այս դէմքս անփոփո՛խ է ի հոգւոյն ի կեանս և ի *մահ*. ո՛չ աճէ և ո՛չ նուազի: - 237. Եւ թէ ասիցէ ոք, ո՞րպէս է մի, զի ահա ի *մահուանն* բաժանին ի նմանէ: - 260. Ասեմք առ այս, եթէ և յետ *մահուան* ո՛չ բաժանին սոքա ի հոգւոյն ըստ էութեան. զի մի է էութիւն սոցա. այլ ըստ ներգործութեան. զի ո՛չ է մարմին՝ ո՛չ կարէ ներգործել: - 260. Եւ ի **հը-է**ն մինչև ի *մահ*, և կամ ի **ճժբ** ամն, լինի զառամացեալ. որ է եօթնիցս վեշտասան: - 265. Դարձեալ՝ անարգապէս ծնանի. և անստո՛յգ է *մահուանն* աւուր: - 275. Նա՛խ՝ ասի մահու մեռանիլ, իբր թէ է՛ ոմն անձնաւոր *մահ* որ է՛ բանսարկուն. և նովաւ մեռանիցիս ասէ: - 277. Երկրորդ՝ թէ անասունքն մահկանացուք են. նոցա *մահուամբն* մեռանիցիք: - 277. Երրորդ՝ մահու մեռանիլ զհոգւոյ *մահն* ասէ որ մեղօքն մեռանի. զի այն է առաւել *մահ* և յաւիտեան չար...: - 277. Չորրորդ՝ մահու մեռանիլ այն է, որ հոգւով և մարմնով տրտմին. և անմահ չարչարին. որպէս մեղաւորք յայս կեանս և յետ *մահու*. զի որ մեռանի մարմնով՝ զպարտս վճարէ. և որ տրտմի հոգւով՝ անմահ մահանայ:

- 277. Ութերորդ՝ թշնամիք եղեն կիրք պատժոցն. այսինքն *մահ*՝ ապականութիւն՝ տանջանք՝ հիւանդութիւնք՝ սով՝ և ծարաւ՝ և այլն ամենայն սոքա ի կրիցն են: - 277. Գիտելի է, զի որպիսութիւն կենաց մարդոյս տրամատի յերիս. ըստ երից փոփոխմանց մարդոյն. այսինքն նախ քան զմեղքն. և յետ մեղացն. և յետ *մահուն*: - 278. Իսկ յետ *մահուն* ի հանդերձեալն. ո՛չ կարէ մեղանչել, և անկա՛ր է մեղանչել: - 278. Վեցերորդ՝ զի յառաջ քան զիւր վախճանն ետես *զմահ* կնոջն և զորդւոյն: - 279. Եւ այսպէս էր միջասահման կեանք նոցա զոր ասեն ի մէջ *մահու* և անմահութեան: - 282. Եւ ունէր առաջադրեալ իւր զերանութիւնն և զթշուառութիւնն. որ է՛ անմահութիւն և *մահ*: - 282. Զի պահելով զպատուիրանն ի կատարեալ անմահութիւնն ժամանէր յերկինս. իսկ անցանելովն փոխեցաւ ի *մահ* և անկաւ յերկիր: - 282. Չորրորդ՝ Վասն չգիտելոյ մեր զօր *մահուն*. և վասն ցաւագին կենացս: - 283. Տասնէ՝ Բաղդատութիւն *մահու* և յարութեան **ժ** գլխով: - 283. Վասն **է**երորդին, ա՛յն քան սիրեցաւ յաստուծոյ, մինչ զի յետ *մահուանն* վրէժ խնդիր եղև արեան նորա...: - 287. Զանէծքն ո՛չ յինքենէ ասաց զի մի՛ սատակեսցի. այլ յերկիր ետ որ է՛ զէն *մահու* և չարչարիչ՝ և գերեզման յետոյ: - 287. Յինգերորդ՝ *մահ* և բռնութիւն սատանայի տիրեալ էր մարդկան. ի հաւատ կործանման նոցա անմահացոյց զենովք և վերացոյց զեղիա: - 289. Եւ երկրորդ ի *մահու* և յանցաւոր տեղեաց յանմահ և յանանց տեղիս: - 289. Նոյնպէս և անդրանիկ ծնունդքն աշխարհի էին նահապետքն որ նախ քան զջուրն, տևէին ի կեանս այս **թճ** կամ աւելի ամ, և ապա ծնանէին ի հանդերձեալ կեանսն *մահւամբ* ելիւք: - 290. Յինգերորդ ևս յայտնի. աստ կեան նահապետքն ժամանակաւ ընդ ամենայն մարդոյ. և յետ *մահու* ի մշտնջենաւորն ընդ հրեշտակաց. և յետ յարութեանն յանվախճան յաւիտենին թագաւորեալք ընդ աստուծոյ: - 291. Ասեմք թէ ո՛չ էր պատշաճ մեզ գիտել զօր *մահուն*, և ո՛չ զվախճան աշխարհի...: - 292. Նա՛խ՝ եթէ գիտէ՞ր մարդ զօր *մահուն*, ո՛չ շինէր և ո՛չ տնկէր և ոչ ծնանէր զաւակ. և լինէր պատճառ աւերման: - 292. Երրորդ՝ զի թէ և դառնային մերձ ի *մահ*, ամենայնքն ընդ ապաշխարութեամբ մեռանէին. և ո՛չ ոք արդարութեան պսակին արժանաւորէր: - 292. Նա՛խ՝ զի ամենայն ոք պատրաստ լիցի *մահուան* աւուրն և յանկարծակի գալստեանն քրիստոսի...: - 292. Իններորդ՝ ըստ փոփոխման ասի. զի յղացեալ ունիմք *զմահ* անդըստին. և ի վախճան մերձեալ հասանէ երկն ցաւոց. և բաժանեալ հոգին ծնանի ի *մահ*: - 308. Տասներորդ՝ վերջին և կատարեալ ծնունդ յարութեանն. զի *մահ* մարմնոյս է՛ սկիզբն և յղացումն յարութեան: - 308. ...իսկ յետ *մահուն* փոխի և լինի հոգին երէց և անդրանիկ անմահ կենօք...: - 310. Եւ քրիստոս մարմնով ի գերեզման և հոգւով ի դժոխս եմուտ և եբարձ *զմահ* և զապականութիւն: - 313. Նոյնպէս և քրիստոս զզէն և զզօրութիւն սատանայի եբարձ որ էր մեղքն և *մահ* դժոխոցն: - 314. Եւ եգիպտոս յետ *մահու*: - 314. Նոյնպէս ի *մահ* խոնարհեալ դաւանիմք զիւատն, և հաղորդիմք: - 314. Ուստի յայտ է զի բարձր գոչեաց և եհան զոգի. զի ամենայն մարդկան նուազի ձայնն ի ժամ *մահուանն*: - 316. Նախ՝ սատանայ և անհաւատք աստուածութեան նորա. և մեղք և դժոխք հոգւոյ են թշնամիք. *մահ* և ապականութիւն մարմնոյն: - 316. *Զմահ* եբարձ *մահւամբն*, և զապականութիւն կորոյս յարութեամբն, անապական մարմնով յարուցեալ ի գերեզմանէն: - 317. Է՛ և այլ իմն պայծառ տեսութիւն այսմ բանի. զի զգեստ և տաճար կոչի մարմինն ստուգապէս ո՛չ աստուածութեանն քրիստոսի՝ որ ո՛չ բաժանեցաւ ի մարմնոյն ոչ ի *մահ* և ո՛չ ի գերեզմանն: - 319. Երկրորդ՝ և արդարք առնեն ընդ դէմ սմին ի յամօթ չարին. որ հնարեցաւ ի ձեռն մեղացն՝ *մահւամբ* բառնալ զմարդկութիւնս. այլ հրամանաւն արարչին ծննդեամբք տևէ՛ և յերկարէ՛ բնութիւնս: - 321. Նա՛խ՝ գուժ լծոց եզանցն՝ և սպասաւորացն *մահ*. և գուժկան ձևանայր դև մի ի կերպարանս ծառայիցն յոբայ: - 322. Չորրորդ՝ *մահ* զաւակացն: - 322. Եւ այսպէս է էին հարուածքն. այսինքն **ա**՝ եզինքն. **բ**՝ էշքն. **գ**՝ ուղտքն. **դ**՝ անասնոց *մահն*. **ե**՝ սպասաւորաց նոցին. **զ**՝ զաւակաց *մահն*. **է**՝ մարմնոյն հարուածքն: - 322. Եւ ոմանք **ե** ասեն. **ա**, արտաքին ինչքն. **բ**, զաւակաց *մահն*. **գ**, մարմնոյն հարւածքն. **դ**, կնոջն կագն. **ե**, բարեկամաց հակառակիլն: - 322. Առաջին, որպէս ի ծնունդն իւր ապրեցաւ մովսէս յարուախեղդ *մահուանէն փարաւոնի: - 328.* Նա՛ *մահ* անդրանկացն ածէր. և քրիստոս զմեռեալս յարուցանէր: - 328. Ութերորդ՝ խաչն փրկական նախ էր *մահու* գործիք. զոր առեալ ի ձեռն քրիստոս, և եղև կենաց պատճառ: - 332. Յինգերորդ՝ բորոտիլն *զմահն* եգիպտացւոց նշանակէր. և ողջանալն զկենդանանալն որդւոցն իսրայէլի որ ի *մահ* գրաւեալ էին: - 332. Յինգերորդ՝ *մահ* անասնոց: - 333. Տասներորդ՝ *մահ* անդրանկացն. իբր ի փոքունցն կարգաւ ի խստագոյնն ելեալ: - 333. Այսպէս և մարմին և արիւնն քրիստոսի՝ արժանաւորացն կեանք է և սրբութիւն. և անարժանիցն *մահ* և ապականութիւն: - 334. Յինգերորդ, *մա՛հ* անասնոց. քանզի ե զգայարանօք իբրև զանասունս եղեն և կորուսին յինքեանց զբանն: - 334. Տասներորդ հարուածն է *մահ* անդրանկացն: - 334. Յինգերորդ՝ յախորժակս փոխիլն. արժանաւորացն կեանք է և անարժանիցն *մահ*: - 339. Դարձեալ երիցս երևիլն է, զի

աստ ի մարմնի հաւատով տեսանեմք զքրիստոս. և յետ *մահու* յուսով ի հոգիս մեր. և յետ յարութեանն սիրով միաւորիմք ի նա՛: - 341. Այսպէս. զի թէ սևանա՛յր, *մահ* գուշակէր: - 349. Նա՛խ՝ զկերպն ադամայ որ ի դրախտին՝ երևեցոյց յինքեան. զոր ետես *մահ* և ընկէց զթագն իւր: - 352. ...զի ի մովսէս օրինակաւ՝ և ի քրիստոս ճշմարտութեամբ կործանեցաւ *մահ*. և ի յարութեանն առ հասարակ մեր: - 351. Երեքտասաներորդ, նոքա փոփոխականք էին վասն *մահու* արգել լինելոյ. իսկ տէր մեր անփոփոխ և յաւիտեան է քահանայ. վասն յաւիտեան և անմահ գոլոյն: - 355. Նոյնպէս և արդարութիւնն հաւասար է. զի ի գլխո՛յն է կենդանութիւն և *մահ*: - 358. Երկրորդ՝ ցուցանէ զանմեղ *մահն* քրիստոսի վասն մեր մեռեալ. զոր մատամբ ցուցանէին խաչօղքն թէ խաչեսցի դա՛: - 359. Հինգերորդ՝ կրկին ողջակէզն. մին պատարագն է ամենայն աւուր. և միւսն տօն չարչարաց խաչի և *մահու* յամենայն ամի՛ զոր նոյն խորհրդով կատարէ՛ եկեղեցի: - 363. Զի թէ նախ բնական ջերմութիւնն պակասի, այս լինի բնական *մահ*. ո՛չ է ուտելի: - 366. Եւ թէ շունչն քաղի, է՛ հեղձական *մահ*. ո՛չ է ուտելի: - 366. Իսկ թէ արիւնն ելցէ՝ և շունչն և կենդանութիւնն ընդ նմա, ա՛յն է հրամայական *մահ*: - 366. Այլ ամսամուտն է ծննդեան տօն. զի քրիստոս եղև մեզ ամիս ծննդեամբ և *մահուամբ* և յարութեամբն: - 373. Զի ի կեանս յայս հաւատով նուիրիմք. և յետ *մահու* յուսով. և յետ յարութեան կատարեալ սիրով ընդ քրիստոս միաւորիմք: - 375. Վեցերորդ՝ *մահ* ի մէջ ամրոցին: - 376. Իններորդ՝ զի մերձեալ տեսանէ զօր *մահուն* և զքշնամին առաջի աչացն որով պատրաստի: - 378. Երկրորդ, խաչն՝ և *մահն* և յարութիւնն **գ** օրեայ: - 380. Հինգերորդ՝ ի կեանս մեր՝ և յետ *մահու*՝ և յարութեանն հանգչիմք: - 380. Երրորդ, տրտմեալ էր վասն *մահուն* մարիամու: - 386. Որ և տրտմեցաւ տէրն մինչ ի *մահ*. զի զտրտմութիւնս մեր եբարձ: - 387. Եւ զայրացաւ ի գերեզմանն ղազարու ի վերայ *մահուն*: - 387. Եւ դարձեալ՝ ոչ ինչ շնորհ ունէր բան նորա. զի այնքան օրհնեաց զժողովուրդն, ընդէ՞ր ոչ դարձաւ *մահն* և սատակումն: - 388. Եւ քահանայի *մահն* պատարագն քրիստոսի է. մինչ վճարեսցի կանոն ապաշխարութեանն և ապա արժանասցին հաղորդելոյ: - 392. Իսկ յետ *մահու* ա՛յնցիկ հոգւոց որք զղջան կամ խոստովանին զմեղս, քաղաք ապաստանի է նոցա ի կայանս հոգւոցն տրտմութիւն և ցաւն վասն փոխարինաց մինչ մեռանի քահանայն մեծ. որ եկեղեցի սուրբ՝ պատարագաւ և աղօթիւք և ողորմութեամբ հատուցանէ՛ զպարտս նոցա և ազատին: - 392. Եւ երկրորդ՝ զի ո՛չ ինքեամբ՝ այլ ի ձեռն քահանայիցն *մահուն* ազատիւր: - 392. Այլ **Ե** թագաւորք մադիանացիքն էին, և **Բ** այսոքիկ. որ են **Է** դևք **Է** գլխաւոր մեղաց. որք ի կեանս պատերազմին, և յետ *մահու* ընդ հոգւոցն բազումք: - 393. Երկրորդ՝ յանապատն ամաղէկ և այլքն. յետ *մահու* որ ընդ հոգիս պատերազմին. որք են այսք չարութեան ի ներքոյ յերկնից ըստ առաքելոյ: - 393-394. Եւ որք պարտին աստ, նոքա և յետ *մահու* և յարութեանն. զորս կորուսցէ փրկիչն մեր յիսուս: - 394. Եւ յետ *մահու* միայն հոգի անմարմին: - 394. Երկրորդ՝ ընդ երից գոյացութեանց մեր. աստ ընդ մարմնոյս. և ի *մահն* ընդ հոգւոյս. և ի յարութեանն ընդ մտաց տեսութեանն հակառակին: - 394. Երրորդ՝ ըստ օգտութեան աստ. զի փործին ընտրեալքն. և յետ *մահու* շնորհաց. և յարութեանն փառաց լինին առիթք: - 394. Չորրորդ՝ չարութեամբ աստ մեղօք տանջեն. և յետ *մահու* առհաւատչեայ մասնաւոր. և ի յարութեանն յաւիտենական տանջանօք: - 394. Հինգերորդ՝ զրկելով աստ ի խոստմանէն լրոյ. և յետ *մահու* ի տեսութեանցն. և ի յարութեանն ի կատարմանցն: - 394. Եօթներորդ՝ աստ չարախօսէ՛ ի ծածուկ. և յետ *մահու* յայտնի. և յարութեանն ևս յայտնի առաջի դատաւորին և դատախազաց: - 394. Վեցերորդ՝ նախ զկեանս զայս տեսանեմք որ է արևմուտք. և ապա յետ *մահու* զհանդերձեալն որ է՛ արևելք: - 395. Զի օր՝ ժամանակիս այս պատշաճի. և շաբաթ՝ *մահուն* հանգիստն. և ամիս՝ մինչ ի յարութեանն: - 399. Երրորդ՝ զի ինքն օրհնութիւն էր, և անէծքն մերձեալ ի նա յօրհնութիւն փոխեցաւ. որպէս խաւարն ի լոյս փոխի. և մեղքն յարդարութիւն. և *մահ* ի կեանս: - 400. Փակեաց թէ ամենևին ո՛չ բաժանի օրհնեալ պսակն մինչ ի *մահ*: - 401. Զի որպէս քահանային օծումն ի հոգւոյն ո՛չ բաժանի յաւիտեան, և պսակի օրհնութիւնն որ ի մարմինն է՝ ո՛չ բաժանի մինչ ի *մահ* ի մարմնոյն: - 401. Եւ **է** երրորդն սատակիլն և կորուստ. զի կեանքս **զ** շարժմամբ է, և *մահն* է երրորդ արտաքոյ սորա: - 404. Նա՛խ՝ զի ի խղճմտանք մարդոյն կախեալ է կեանքն արժանի *մահու*. և տեսանէ՛ միշտ և ո՛չ հաւատայ և դադարէ ի մեղաց: - 404. Չորրորդ՝ մարմնաւոր *մահն* վախճան է մարմնոյ կենաց և սկիզբն հոգևորին. վասն այն օրհնէ: - 408-409. Երրորդ՝ օրէնքն որ ի ձեռն մովսէսի՝ էր խափանիչ մեղաց և *մահու*: - 409. Չորրորդ, *մահ*՝ այսինքն սատանայ որ յաղթեաց ադամայ. իսկ մարմնոյն մովսէսի ո՛չ կարաց յաղթել հրեշտակային օգնականութեամբն. որպէս ասի յառաջիկայդ: - 409. Հինգերորդ՝ մովսէս օրինա՛կ էր, և ճշմարտութիւնն քրիստոս. առ որ խափանեցաւ *մահ*, և թագաւորեաց կեանք: - 409. Վեցերորդ ըստ մտաց, զի մովսէս ջրածին լսի. զի որք ո՛չ ծնանին աւազանաւ, ընդ *մահու* իշխանութեամբ են: - 409. Տասներորդ՝ ի սկզբանէ հայհոյիչ աստուածամարտ էր սատանայ. և վասն այն զմարդիկ կորուսանէր մեղօք.

որում զվճիռն և զաստն տէրն ետ, և դատապարտեաց զմեղս ի մարմնի իւրում. և եբարձ *մահուամբն զմահ*, և որ զիշխանութիւն *մահուն* ունէր: - 410. Երկրորդ՝ նշանակէ *զմահ* և զյարութիւն մեր. որ ** լ** ամեայ յառնեմք. որպէս ադամ **լ** ամեայ ստեղծաւ: - 411. Եօթնևժ, Սատակումն *մահուն*. որ յերից զմինն խնդրեաց պատուհաս: - 413. Եւ յետ *մահուանն* մարիամու նուազեաց ջուրն. յորում եհար բարկութեամբ զվէմն: - 415. Իսկ յետ *մահուան* ահարօնի նուազեաց մանանայն. յորում տրտնջէին և յօձից սատակեցան: - 415. Իսկ յետ *մահուանն* մովսէսի վերացաւ ամպն. և հրամայեցաւ ժողովրդեանն հեռու կալ կանգունս երկուց հազարաց վասն փառաց տապանակին և վասն զօրութեան նորա: - 415. Եւ տէր մեր աւերեաց զամուրս դժոխոց *զմահ* և զմեղք, և ապա՛ յերկինս հանեալ և անմահացոյց: - 418. Եւ տէրն մեր նեղէ՛ մեղաւորաց աստ ի կեանս և յետ *մահու* գիշերի. և ի ծագել լուսոյ յարութեանն՝ ստուգութեամբ դատապարտէ՛: - 418. Եւ տէր մեր զապաւինեալ հեթանոս կորզեաց ի սրոյ յաւիտենական *մահուն*: - 418. Այլ և զմեղս և *զմահ*: - 424. Երեսունևե, սամփսոն ի *մահն* առաւել սատակեաց քան ի կեանս: - 424. Եւ տէր մեր *մահուամբ* առաւել կորոյս զթշնամին, որ քան ի կեանս գործով հրաշից: - 424. Հինգերորդ՝ զընթացս մեղաց և զգործն որ է սկզբնական և ներգործական մեղք, և զգլուխն որ է՛ *մահ* և ապականութիւն, խորտակեաց քրիստոս...: - 426. Երկրորդ՝ զի այն քան երկեա՛ւ ի *մահու* վիուկն այն, որ այլոց կեանս խոստանայր: - 428. Զի թէ գիտէր զստոյգ *մահն* սաւուղայ՝ ո՛չ կաշառէր զնա: - 428. Ա՛րդ՝ թէ ճշմարիտ յարոյց կինն զսամուէլ. սաւուղ ո՛չ երկնչէր ի *մահու*. զի և զնա՛ յարուցանէր. և թէ երկեաւ, ապա սուտ էր կենդանութիւն մեռելոյն: - 429. Որ և ո՛չ յաղթութիւն, այլ *մահ* խոստացաւ նմա: - 429. Ապա յա՛յտ է զի ի մէջ կարծեաց էր նա. զի թէ սուտ համարէր զվհուկն, ո՛չ երկնչէր ի *մահու*. և թէ ճշմարիտ՝ ո՛չ երթայր ի պատերազմ: - 429. Ա՛րդ՝ զի ասաց մեղայ՝ ապրեցաւ ի սրոյ *մահու*: - 432. Եւ այսպէս ամենայն տղայոց հանդիպի *մահ* ըստ խնամոցն աստուծոյ: - 433. ...իսկ յետ *մահու* պաշտօնք և տուրք աղքատաց և այլն՝ է՛ հատուցումն պատժոց միայն...: - 434. Վասն է՞ր հրամայեաց թուել և *մահ* ածել ժողովրդեանն: - 434. ...նոքա ուխտատազանց եղեն. վասն որոյ *մահ* էած ի վերայ: - 434. Նա՛խ՝ զի **գ** ամ սովն, և **գ** ամիս սուրն՝ սաստիկ էր քան զերեք աւուր *մահն*: - 434. Երկրորդ՝ զի սովն և սուրն զբարի և զչար ի միասին պատժէ. այլ *մահն* ընտրութեամբն աստուծոյ է. և ժողովի ի վերայ յանցաւորացն. ուստի յա՛յտ է զի դաւիթ ո՛չ էր յանցաւոր ո՛չ պատժեցաւ: - 435. Ցուցանէ թէ տարաժամ *մահն* ընտրութեամբ և կամօքն աստուծոյ լինի, և ո՛չ պատահմամբ որպէս ասեն ոմանք: - 435. Իննև**ժ**, սրովն գողիաթու սպան զնա. և տէր մեր սրով *մահուան* սպան զիշխանն *մահու*: - 436. Երեսուն**ը**, **ե** նկանակն և սուրն. այսինքն պատճառ կենաց և *մահու* անարժանից և արժանաւորաց: - 437. Այլ և դաւիթ եգիտ զսաւուղ և զզօրսն նորա ի քուն և ո՛չ վնասեաց. այլ զզէնն էառ. և տէրն ո՛չ կամի *զմահ* որք ննջեն ի մեղս. այլ զպատճառ մեղացն հանէ: - 437. ...և տէրն մարտեաւ ընդ բելիարայ և յաղթեաց *մահու*. և քակեաց զդժխս. էառ աւար զգերեալսն և էհան յարքայութիւնն երկնից. տալով նոցա զանթառամ պսակն: - 438. Դաւիթ յետ յերկուց ամաց ետես զաբիսողոմ. և տէրն զմեղաւորս յետ ապաշխարութեան հոգւոյ և մարմնոյ. այլ և յետ աստեացս և *մահու* տեսանէ ի դատաստանին: - 438. Այլ և գոհացաւ ի վերջոյ ի վերայ ամենայն յաղթութեանցն. և տէր մեր ի վերայ ամենայն ներգործութեանցն. որ և ամենայն օրհնութիւնքն ի տէրն ակնարկէ. որ եղև գլուխ հեթանոսաց. յաղթեաց *մահու* և բարձրացաւ ի գերեզմանէ: - 438. Վաթսուննն՝ **զ** տասն է. նշան նոցա՝ որք զ**ժ** բանեան օրէնսն կատարեն ի **զ** դար կենցաղոյս. այսինքն ի տղայութենէ մինչ ի *մահ*. նոքա թագուհիք և ժառա՛նգ են արքայութեանն: - 440. Դարձեալ՝ մեղք սկզբնական խառնեցաւ ի յաճումն հիւթին. և յետոյ *մահ* և ապականութիւն: - 445. Իսկ մկրտութիւնն բառնայ զերկոսին. այսինքն զմեղս և *զմահ*: - 445. Իսկ ի *մահուն* որ յարոյց զմեռեալն յորժամ մերձեցաւ ի յոսկերսն եղիսէի, ի տիպ *մահուն* քրիստոսի որ *մահուամբն* մեզ կեանք և յարութիւն շնորհեաց: - 446. Զի՞նչ գործեաց *մահն* քրիստոսի: - 454. Եւ թէ զանազանի *մահն* քրիստոսի և մերս: - 455. Եւ վասն կրից և *մահու* և ապականութեան բանք: - 455. Հինգերորդ՝ ողորմութիւնն երևի ի մարդեղութիւն բանին. և արդարութիւնն ի *մահ* նորին: - 458. Եւ յետ *մահւանն* մատթանայ՝ մելքի ի ցեղէն նաթանայ որ որդի էր ղևեայ և եղբայր պանթերայ, առեալ զնոյն կին մատթանայ և ծնաւ զելի: - 460. Մին ի մէջ եւայի և բանսարկուին. որով մուծաւ *մահ* ի ներս: - 465. Չորրորդ՝ զի նա՛ է առաւել օգնական բնութեանս. մարտնչելով աճելութեամբ ընդ դէմ պակասութեան *մահու*: - 469. Պարտ ուրեմն էր բանին կենաց ելանել յայնմ անդամոց, որ պատերազմի՛ ընդ *մահու*: - 469. Որ է որովայն կեանք և *մահն*: - 469. Չորրորդ՝ փրկեաց ի *մահուան*...: - 473. Զի տրտմութիւն արտասուաց ընդ *մահուանն* բարձաւ. իսկ ամօթ և ցաւք մարմնոյ՝ ընդ մեղացն բարձան. որպէս ի հատանիլ արմատոյ՝ չորանան ստեղունքն: - 474. Որ և զչարչարանքն և *զմահն*՝ աստուածոյ մարդացելոյ խոստովանիմք որով փրկեցաքն: - 478. Երրորդ՝ զի իւրաքանչիւր հասակի զմեղս բարձցէ. որպէս

ծննդեամբն զերկունս ելոյծ. և *մահուամբն զմահ*. նոյնպէս և տղայ և մանուկ և երիտասարդ հասակաւ զնոսա արդարացոյց: - 479. Կրկին է գիր. այսինքն կենաց և *մահու*. զի բարի գործովք գրիմք ի դպրութիւնն կենաց. և մեղօք գրիմք ի գիրն *մահու* և դատապարտութեան. որպէս ասեմք թէ զձեռագիր յանցանաց քոց ջնջեսցէ աստուած: - 481. Արդ զգիրն ադամայ պարտուց՝ տէրն որդի եղև նմա և անմեղ *մահուամբն* տարածեալ զձեռս ի խաչին պատառեաց ասելով, նա մեղաւ և մեռաւ. ես զինչ մեղայ. դո՛ւ ես պատճառն: - 482. Որ զապականութիւն և *զմահ* եբարձ աւերելով զնա և ազատելով զհոգիսն: - 489. Գլուխ օձին մեղքն է. և խայթոց՝ կարճին *մահն*: - 489. Եւ ա՛յլ առաքինութեամբք կոխեալ հատանեմք զխայթոցն որ է՛ ներգործական մեղքն և *մահ* հոգւոց և դժոխք: - 489. Դարձեալ նշանակէ *զմահն* քրիստոսի. զոր արեգակն արդարութեան կամեցաւ ի մարմին իւր թաքչիլ. զի զմեզ լուսաւորեսցէ: - 490. Վեցերորդ՝ զի անարգանա՛ց *մահ* էր խաչն. զայս ամենայն կրեալ վասն մեր: - 491. Զի՞նչ գործեաց *մահն* քրիստոսի: - 491. Նա՛խ՝ զի դատապարտեցաւ ընդ *մահու*: - 491. Այլ ա՛րդ՝ բանն աստուած եղև մարդ և անմեղ պահեաց զբնական կիրս. և ներգործական կրիւքն հնազանդ եղև հօր՝ մահու չափ և *մահու* խաչի: - 492. Ա՛րդ՝ գ իր երևի ի *մահն* քրիստոսի: - 492. Զի ըստ այնմ որ կամաւ մեռաւ՝ դատապարտեաց *զմահ*: - 492. Եւ վասն անմեղ *մահուն* հաշտեցաւ հայր աստուած ընդ մարդկան: - 492. Եւ վասն *մահուան* որդւոյ՝ հայր աստուած ետ զհոգին սուրբ պարգևս մարդկան: - 492. Որո՞վ զանազանի *մահն* քրիստոսի և հասարակ ամենայն մարդոյ: - 495. Գիտել պա՛րտ է, զի առ հասարակ *մահն*, հարկաւոր կիրք է մարդկայինս բնութեան. զի ամենայն որ ծնանի՝ մեռանի: - 495. Այլ զանազանութիւն գոյ ի մէջ *մահու* նախաստեղծ մարդոյն, և *մահու* տն մերոյ քրիստոսի, և *մահու* հասարակ մարդկայինս ազգի: - 495. Դարձեալ՝ *մահն* ի յադամ պատժաւո՛ր է. և ի քրիստոս կամաւոր. և ի մեզ հարկաւոր: - 495. Դարձեալ՝ *մահն* ի յադամ պատիժ ինքեան էր. իսկ ի քրիստոս պատիժ այլոց. իսկ ի մեզ պատիժ ինքեան և այլոց. այսինքն զի վասն մեր և վասն ադամա՛յ կրեմք *զմահն*: - 496. Դարձեալ՝ *մահն* ադամայ *զմահ* եմոյծ ի բնութիւնս. և *մահն* քրիստոսի ելոյծ *զմահ* և եբարձ. և *մահ* մեր ո՛չ մուծանէ և ո՛չ լուծանէ: - 496. Այս զանազանութիւն ի մէջ երից *մահուանն*. ադամայ, և քրիստոսի, և մեր մարդկայինս ազգի: - 496. Երկրորդն *մահ*: - 496. Մեղքն է գործ. և *մահն* պատիժ. և ապականութիւնն հետևանք պատժոյն: - 496. Իսկ զմիջին պատուհասն եդ աստուած ի վերայ *զմահն*: - 496. ...զի մեղքն ի *մահ* հրաւիրէ, և ապականութիւնն յանգոյութիւն ճանապարհորդէ: - 496. Իսկ *մահն* ո՛չ է պարզաբար չար. այլ շարամանեալ ընդ բարւոյ անուամբ և իրօք: - 496. Զի որ ասի *մահ*, նոյն և նինջ կոչի ի սուրբ գիրս...: - 496. Նոյն և իր *մահուն* խա՛ռն է ընդ բարւոյ: - 496. Ապա յա՛յտ է որպիսութիւն մեղաց՝ *մահու*՝ և ապականութեան: - 496. Իսկ տէր մեր ի մարդեղութեան իւրում յայյսցանէ եկամուտ կրից միայն *զմահն* կրեաց. իսկ զմեղս և զապականութիւնս ո՛չ կրեաց: - 496. Իսկ *զմահն* կրեաց. որպէս և սոյն մարգարէ վկայեաց...: - 496. Երկրորդ՝ *զմահ* կրեաց. զի ինքն եդ *զմահն* պատիժ ի վերայ մեր. իսկ զմեղքն և զապականութիւն՝ բանսարկուն և ադամ արկին ի բնութիւնս. վասն որոյ զոր ինքն ոչ եդ՝ ո՛չ կրեաց մարմնով իւրով: - 496. Եւ թէ ոք ասիցէ, ապա և ի *մահու* ազատեաց զմեզ, վասն է՞ր կրեաց *զմահ*: - 497. Ասեմք թէ՝ ո՛չ զհարկաւորն, այլ զկամաւոր *մահն* կրեաց որպէս ցուցաւ ի վերոյ: - 497. Նոյնպէս և զկամաւոր *մահն* որ է՛ դեղ և առիթ յաւիտենական կենացն, նախ ինքն ճաշակեաց և ուսոյց հետևողաց իւրոց: - 497. Եւ զի ա՛յլ է կամաւոր *մահն* ի հարկաւորէն. ուստի յա՛յտ է զի հարկաւոր *մահն* է՛ պատիժ. և կամաւորն պսակ և պարգև: - 497. Որպէս այնոքիկ որք զօրացան այսու *մահուամբ* և զորդեգրութեանն ընկալան շնորհ և նահատակեցան, նոքա չարչարակից եղեն քրիստոսի, և փառացն հաղորդակիցք: - 497. Արդ զայս կամաւոր *մա՛հս* կրեաց քրիստոս: - 497. Դարձեալ՝ ասեմք եթէ *մահն* ո՛չ է մեղք և ո՛չ ապականութիւն. այլ լուծիչ մեղաց և ապականութեան: - 497. Այսպէս և քրիստոս *զմահ* կրեաց և ի բաց ջնջեաց զմեղս և զապականութիւն ի մերմէ բնութենէս: - 497. Դարձեալ ասեմք, մեղքն ապականութիւնն են առաջին և վերջին ծայրքն կրից. իսկ *մահն* միջին որպէս ցուցաւ ի վերոյ: - 497. Եւ ունի *մահն* կրկին յատկութիւն որ ընդ դէմ է երկուց ծայրիցն. այսինքն զի է՛ վախճան կենաց՝ և է՛ սկիզբն կենաց: - 497. Զի ապականութիւնն տանի յոչգոյութիւն. իսկ *մահն* առաջնորդէ՛ ի կեանս: - 497. Յաղագս որոյ *զմահն* կրեաց քրիստոս. զի այսպէս բարձցէ յերկուց կողմանց զմեղս և զապականութիւն: - 497. Եւ թէ ոք ասիցէ, որպէս *մահւամբ* *զմահ* եբարձ, այսպէս և ապականութեամբ զապականութիւն: - 497. Զի որպէս *մահուամբ* *զմահ* եբարձ, և ապականութեամբ զապականութիւն, և անիծիւք զանէծք, և մեղօք զմեղս որպէս դու ժայթքե՛ս: - 497. Այսպէս և տէր մեր նմանեաւ, որպէս անիծիւք զանէծս՝ և *մահուամբ զմահ* եբարձ. իսկ հակառակաւն՝ անապական և անմեղ մարմնովն զմեղս և զապականութիւն ելոյծ: - 498. Յայտնի՛ է ամենեցուն և առանց երկբայութեան՝ զի քրիստոս մեռաւ ըստ գրոց. և *մահուամբ* եբարձ *զմահ* և զապականութիւն: - 498. Վասն որոյ նա՛խ ցուցանել պա՛րտ է թէ ո՛չ նոյն

է *մահ* և ապականութիւն: - 498. Եւ զի ա՛յլ է *մահ* և ա՛յլ ապականութիւն՝ յա՛յտ է նախ ի գործոյն. զի ինքեամբ *մահ* ի ներքս մտեալ որոշէ՛ զհոգի և զմարմին. և ա՛յս է գործ նորա: - 498. Այսպէս *մահն* միայն հատանէ ի կենաց. և ապականութիւնն վերստին այլայլէ: - 498. Ապա յա՛յտ է ի գործոյն՝ թէ դժնդա՛կ է ապականութիւն քան *զմահ*: - 498. Դարձեալ ևս յայտնի. *մահն* զանձն քակէ՛ և որոշէ՛. իսկ ապականութիւն զբնութիւնն ապականէ և այլայլէ՛: - 498. Դարձեալ ի սկզբանէն ցուցցուք. *մահն* պատիժ է յարարչէն եղեալ. և ապականութիւնն ի բանսարկուէն արկեալ հետևանք *մահուն*: - 498. Դարձեալ՝ *մահն* խառնեա՛լ է ընդ բարւոյ. և ապականութիւնն ամենևին չար. որպէս ցուցաւ ի գիրս քառասնօրեայ գալստեանն և *մահուն* սիմէօնի. ապա յա՛յտ է թէ ա՛յլ է *մահ* և ա՛յլ ապականութիւն: - 498. Ասեմք առ այս՝ եթէ ո՛չ են նման մահկանացու և ապականացու ասելն. զի ա՛յլ է *մահ* և ա՛յլ ապականութիւն որպէս ցուցաւ ի վերոյ: - 500. Եւ ահա՛ *զմահ* կրեաց կամաւորապէս և չարչարեցաւ: - 500. Դարձեալ՝ եթէ առհասարակ սոքա՝ կերակուր՝ արիւն և խոցուածք և *մահ*՝ ապականութիւնք են որպէս դու ասես, և փրկութիւն աշխարհի սոքօք ներգործեցաւ. այսինքն չարչարանօք՝ *մահուամբ* և խոցւածովքն: - 503. Հինգերորդ՝ ադամ առաջին յանցաւորն էր ի ներքին դժոխս. զի ա՛յն է *մահու* մեռանիլն. այլ արդ եթէ քրիստոս ո՛չ գնաց ի ներքին դժոխքն, ո՛չ ազատեաց զադամ: - 506. Հինգերորդ՝ *մահու մահն* էր դժոխքն. զի *մահ* մարմնոյն՝ ապականութիւնն է, և *մահ* հոգւոյն՝ դժոխքն. ըստ որում վճիռ հատաւ ադամայ *մահու* մեռանիլ: - 506. Այլ ա՛րդ՝ տէրն *մահուամբ զմահ* մեռոյց որ է՛ դժոխքն այժմ. և յարութեամբն եբարձ զապականութիւն մարմնոյ ի հանդերձեալն. ապա ուրեմն աւերեաց զդժոխս: - 506. Վեցերորդ՝ թէ զմասն դժոխոց աւերեաց, և զմասն *մահու* եբարձ, և զմասն անիծից, և զմասն պարտուց և զայլսն: - 506. Եւ թէ ոք ասիցէ, ապա ուրեմն ամենայն հոգիք յետ *մահու* կարեն խոստովանիլ: - 508. Եւ որպէս դևք զկնի անկման իւրեանց ոչ կարեն արդարանալ ըստ ինքեան. զի անկումն նոցա *մա՛հ* է նոցա: - 508. Նոյնպէս և հոգի մարդոյ զկնի *մահու* ո՛չ կարէ արդարանալ ըստ ինքեան. բայց թէ ի ձեռս այլոց վճարի պարտ նոցա և հասանին ողորմութեան: - 508. Չորրորդ՝ ի մէջ գիշերի ըմբռնեցաւ և կապեցաւ ի *մահ*. և ի մէջ գիշերի յարեաւ և արձակեցաւ ի *մահու*: - 512. Իններորդ, գեթէօն՝ այն որ զցօղն ետես ի վերայ գեղման, զհօր իւրոյ զեզն պարարակ հրամանաւ հրեշտակին ի մէջ գիշերին պատարագեալ. և զանտառն և զսեղանն բահաղու կործանեալ և զերծեալ ի ձեռաց նոցա. որ էր օրինակ փրկչին. զի նա՛ է եզն պարարակ պատարագեալ. և ի մէջ գիշերի զբագինսն դժոխոց կործանեալ և յարուցեալ և ապրեալ ի *մահու*: - 513. եթէ քրիստոս յարեաւ ի մէջ գիշերի. զի այց արասցէ մարդկան ազգի. և զանկեալքս ի խաւարի և ի ստուերս *մահու*՝ ի լոյս գիտութեան և շնորհաց յարուսցէ: - 514. Մետասաներորդ, զի ձգեալ զձեռն նայի հնազանդեցոյց զմարմինն զայն ի ներքոյ *մահու*: - 518. Երրորդ՝ վասն մխիթարութեան աշակերտացն. զի **խ** օր մխիթարեսցէ զնոսա փոխանակ **խ** ժամուն որ տրտմեցան ի *մահն* քրիստոսի. որպէս ասացաւ թէ յարութիւնն ի մէջ գիշերի, այլ երևեցաւ ընդ արշալոյսն առաքելոցն...: - 520. Երկրորդ՝ ի կողմանէ ընդունողաց առաքելոցն. զի պատշաճաւորեցան հոգոյն սրբոյ. զի փորձիւ գիտէին զվարդապետութիւնն քրիստոսի, *զմահն* և զյարութիւնն և զայլսն: - 521-522. Զի ո՛չ միայն համարի մեծ և փառաւոր զաստուածութիւն նորա, այլ և զաղքատութիւնն և զանարգանս և *զմահն*. և յայնժամ արժանասցի առատապէս ընդունել զհոգին սուրբ: - 522. Այսպէս նախ եկն քրիստոս և խաչիւ և *մահուամբ* հաշտեցոյց զհայր, և ապա՛ հայր աստուած առաքեաց զհոգին սուրբ պարգև մարդկան: - 522. Այսպէս և առեալք զհոգին սուրբ բղխեն. ոմանց ի *մահ* և ոմանց ի կեանս. որպէս առ տաբիթայն և առ սափիրային: - 523. Երրորդ՝ մարմնաւորն իշխէն միայն ի մարմին և ի կեանս. այլ յետ *մահու* ո՛չ: - 538. Ուստի յայտ է զի պատժէ զմարմին. և կապէ՛ զհոգին ի կեանս և ի *մահ*: - 538. Իսկ յերկրի և յերկինս, այսինքն ի կեանս և յետ *մահու*: - 541. Զի այսպէս սահմանեցին՝ թէ ինքնակալ թագաւոր մի և ինքնագլուխ հայրապետ մի նստցի ի հայս. և թագաւոր մի ինքնակալ՝ և ինքնագլուխ հայրապետ մի ի հռոմ. և ի վերայ միմեանց դիցեն զանձինս ի *մահ*. և սոսկալի գրով եղեն միմեանց եղբարք. թացեալ զգրիչն յահաւոր խորհուրդն: - 548. Զի՞նչ է մեղքն և *մահ* և դառն *մահ*: - 564. Իսկ *մահն* որ տգիտութեամբ մեղանչէ. թէպէտ ո՛չ գիտէ՝ հոգին մահանայ: - 564. Իսկ դառն *մահն* է՛ մահու չափն. որ գիտութեամբ մեղանչէ. այս է դառն *մահն* յաւիտենից: - 564. Եւ կոչի մահացու, զի պարտական առնէ զմարդն յաւիտենից *մահուն*: - 567. Եւ այսու նախաստեղծքն *մահու* մեռան. և վասն այս մեղացսէ որ մեք ևս մեռանիմք...: - 570. Հինգերորդ՝ ըստ որպիսութեան մեր հաւատն է այժմ. յոյսն յետ *մահու*...: - 578. Եւ այս տուեալ լինի յաստուծոյ ընդ դէմ երկիւղին որով նմանին քրիստոսի. զի ո՛չ երկնչէր ի բնական *մահուանէն*...: - 582. Այլ զօրացաւ ընդ դէմ *մահուն*...: - 582. Նա՛խ՝ զի ի հոգին է. **բ**՝ զի վասն հոգւոյն տրտմի և ցաւի. **գ**՝ արտասուս հոսէ. **դ**՝ *զմահ* զդատաստան և զտանջանս ի միտ ածէ՛. - 584. Իսկ ընդ դէմ այսմ, դիւական տրտմութիւնն ի մարմինն է և վասն մարմնոյն. և զարտասուս

ցամաքեցնէ. և տրտմի և ամբոխի. և հետևի նմա ոխ և ատելութիւն. այլ և *մահ* ևս գործէ որպէս ասէ առաքեալն: - 584. ...քանզի խաղաղարարն է առանց հակառակութեան մարմնոյ՝ աշխարհի՝ և սատանայի. յա՛յտ է զի լինիցի պատրաստ ի յաղթել զփորձութիւն *մահու*: - 586. Զի տանելն *մահու* վասն քրիստոսի՝ է՛ նոյն աստիճան ըստ խաղաղութեանն: - 586. Երրորդ՝ զի որ մկրտի՝ ի *մահն* քրիստոսի մկրտի. և քրիստոս միանգամ մեռաւ. և թէ ոք դարձեալ մկրտէ՝ անձանց ի խաչ հանէ զորդին աստուծոյ և դարձեալ խայտառակէ որպէս առաքեալն: - 590. Մեղքն ադամայ այն է որ զարդարութիւն կորոյս. և մեղօք և ցանկութեամբ ծնաւ զորդին. և այն մեղքն սկզբնական կոչի. և ո՛չ թողցի եթէ ոչ ի *մահն* քրիստոսի մկրտեսցի: - 591. Պարտ է զի իւրաքանչիւր ոք ծնցի մկրտութեամբն քրիստոսի. զի սրբեսցի և ազատեսցի ի *մահու*: - 592. Որպէս թէ ոք ի պատուհան ինչ ցուցանէ զինքն յաշխարհի, և վաղվաղակի ի *մահ* դառնայ: - 592. Կրկին է պատիժ մեղաց. այսինքն *մահ* մարմնոյն, և դժոխք հոգւոյն: - 592. Թէ մեղքն ի *մահն* քրիստոսի թողեալ լինի, ընդէ՞ր մկրտիմք մեք: - 592. *Մահուամբն* քրիստոսի լուծան մեղք. բայց մեք ի հաւատ *մահուն* քրիստոսի մկրտիմք. զի տնկակից լիցուք *մահու* նորա: - 592. Եւ թէ ասեն՝ հաղորդութիւնն նշանա՛կ է *մահուն* քրիստոսի յորմէ ել արիւն և ջուր: - 596. Ասեմք թէ՝ արիւնն է՛ ի խորհուրդ հաղորդութեանն. ջուրն ի մկրտութեանն. որով *մահ* տեառն պատմի ըստ առաքելոյ...: - 596. որք կամաւ յանձն առնուն. զի այս մինչև ի *մահ* ճգնութիւն է: - 600. ...զի մի՛ ննջեսցես ի *մահ*. նոյնպէս և այլ զգայութեանցն ըստ իւրաքանչիւր աստիճանին ասէ: - 604. Իսկ թէ զերծանի ի *մահուանէ*, փութով առողջութեան պատճառ լինի...: - 604. ...նախ վասն ա՛յս խորհրդոյս է. և երկրորդ՝ զի մկրտութիւնս մեր ո՛չ ի ջուրն յովաննու, այլ ի *մահն* քրիստոսի է: - 605. Ասեմք թէ՝ որպէս *մահն* է վախճան կենցաղոյս և սկիզբն հանդերձելոյն: - 605. Սակայն ի *մահն* արծակի և քակի շաղկապ պսակին: - 610. ...և կրկին է *մահն* որ պատասխանի տայ նոցին այսպէս: - 610. Իսկ և *մահն* կրկին է, հոգևոր և մարմնաւոր: - 610. Յոգևոր *մահուամբն* արծակի հոգևոր շաղկապն: - 610. Եւ մարմնաւոր շաղկապն արծակի և քակի մարմնաւոր *մահւամբն*...: - 611. Եւ ի մեզ խաչ չարչարանացն քրիստոսի և *մահ*: - 614. Եւ դարձեալ՝ վասն ելից մեր և մտից. որ է՛ *մահ* և կեանք: - 623. Եւ դարձեալ՝ **գ** է որպիսութիւնք մեր և փոփոխմունք. որ է՛ աստի կեանս. և յետ *մահուն*. և յետ յարութեանն...: - 623. ...և խոնարհեսցուք ընդ ձեռամբ նորա. զի դարձուսցէ ի *մահու* ի կեանս: - 629. այլ յետ *մահուն* և յարութեանն առնուն զկատարեալ փառս. - 647. Եւ օրն յորում պղծեցաւ, սրբութեամբ պահեսցէ զնա մինչ *ցմահ* իւր. և ապա՛ հաղորդեսցի: - 652. ...որպէս նոքա որ զդեղ *մահու* խառնեն. վասն որոյ նշանաւ խաչին կնքեմք զնոսա, զի փախիցեն դեքն: - 654. Եւ ոմանք ըստ իւրաքանչիւր պատառոյ *զմահն* ի միտ ածեն և զդատաստանն...: - 655. ...զի մի՛ լիցի այն ի մեղս կամ ի *մահ*: - 656. Եւ վասն *մահու* և ոգէվարի թէ զի՞նչ լինելոց է: - 660. Դարձեալ՝ վասն հիվանդութեան գիտելի է, զի է ի մէջ *մահու* և կենաց: - 665. Եւ թէպէտ մարդ ո՛չ գիտէ զօր *մահուն* իւրոյ, այլ երիս իրս տուեալ է աստուած ի զգուշութիւն մեզ և կարապետ *մահուն*: - 665. Երրորդ զհիւանդութիւնն. զի տեսեալ զսոսա՝ գիտասցուք *զմահն* մերձեալ: - 665. Եւ վասն յերկարութեան կենաց, և վասն ո՛չ գիտելոյ զօր *մահուն* և զկատարածի, ասացեալ է ի վերն առ նախապետսն ի **դ** համարն: - 665. Իններորդ՝ ճանապարհ կոչի և *մահն* որով ի հանդերձեալն ընթանամք...: - 666. ...ընդդիմակն սոցա յաւելու. և ի *մահն* լնանի և դադարի ամենայն: - 666. Զի՞նչ է *մահ*: - 667. *Մահ* է որոշումն հոգւոյ ի մարմնոյ: - 667. Ասեն վարդապետք, որպէս միաւորութիւն նոցա կեանք է, նոյնպէս և որոշումն նոցա *մահ*: - 667. Դարձեալ՝ փոխումն է *մահն* ժամանակի և մուտ յաւիտենին...: - 667. ...իսկ *մահն* մուտն է անփոփոխ յաւիտենին...: - 667. Դարձեալ՝ *մահն* ե՛զր է հանդիսից որք են ի պատերազմ կենցաղոյս որ քան են: - 667. Եւ *մահն* սկիզբն է պսակացն. և յարութիւնն կատարումն...: - 667. Նախ աստ հոգի մարդոյն է ի մէջ չարեաց և բարեաց. իսկ յետ *մահու* ի մէջ բարեաց միայն. և ի յարութեանն ի մէջ բարեաց և փառաց: - 667. ...իսկ *մահն* սկիզբն է և ճանապարհ...: - 667. Եւ դարձեալ՝ աստ հաւատոյն է. իսկ յետ *մահու* յուսոյն. և ի յարութեանն սիրոյն: - 667. ...իսկ յետ *մահու* հաստատուն յուսով տեսանեմք և ուրախանամք...: - 667. Իսկ յետ *մահու* կարէ՛ ոչ մեղանչել: - 667. Եւ յետ *մահուն* կարէ ոչ արդարանալ: - 667. ...այլ դատապարտի՛լ հարկաւոր է. որպէս դիւաց մեղանչումն և անկումն. որ է *մահն* և դատապարտումն որ է՛ պատիժն: - 667. ...զի անկումն նոցա *մահ* է նոցա որպէս ասէ սուրբն գրիգոր նիւսացին: - 667. *Մահն* ի քանի՞ս բաժանի: - 668. *Մահն* բաժանի յերկուս. այսինքն յիմանալի և ի զգալի. որպէս և կեանքն է իմանալի և զգալի: - 668. Ա՛րդ՝ իմանալի *մահ* է՝ ի ձեռն առաքինութեան զմարմինն մեռուցանել և ի ձեռն չարութեան զհոգին: - 668. Իսկ մարմնաւոր *մահն* բաժանի ի **դ**. այսինքն ի բնականն, ի պատահականն, յանձնիշխանականն, և ի խնամականն: - 668. Գտցես և վասն *մահու* առ խաչելութեանն քրիստոսի ի **լ** գլուխն ի **ից** համարն: - 668. Երրորդ *մահու* օրն: - 668. Սակայն այլ է *մահ* մեղաւորին, և ա՛յլ արդարոյն: - 669. Զի արդարոյն *մահ*՝ պատուակա՛ն է առաջի տեառն

որպէս ասէ մարգարէն...: - 669. Իսկ *մահ* մեղաւորին չա՛ր է...: - 669. Է և ա՛յլ իմն տեսութիւն վերագոյն. զի արարողութիւն սըգոյս ցուցանէ զառաջին անկումն մեր ի լուսեղէն կենացն ի խաւար աշխարհ տրտմութեամբ և ցաւօք *մահու* մեռեալք և ի հող դարձեալք. և այս ի ճաշակմանէ պտղոյն: - 670. Դարձեալ՝ նշանակէ *զմահ* մեղաւորացն ի կատարածի...: - 671. Եօթներորդ, ցուցանէ թէ հոգին սուրբ և քրիստոս հանգուցեալ է ի նշխարս սրբոց. որպէս ի կեանքն՝ նոյնպէս և ի *մահն*: - 672. ...զի կնիք է ի հոգին և անքակ. որպէս ի կեանքն՝ նոյնպէս և յետ *մահու* ունի: - 673. Նախ ցուցանէ զանվախութիւնն մեր ի *մահուանէ* ...: - 673. ...որ ցուցանէ թէ մարմինն նորա միշտ յեկեղեցւոջէ և յետ *մահուն*...: - 674. Վեցերորդ, որպիսութիւն կենաց մեր **գ** է. այսինքն այժմու կեանս. և յետ *մահու*. և յետ յարութեանն: - 675. ...և յետ *մահու* կարեմք յառնել...: - 675. Նա՛խ՝ արտաաւեմք զբնութիւնս մեր թէ վասն մեղաց յո՞րպիսի կենաց դրախտին ի *մահ* անկաւ և ի հող դարձաւ: - 676. Նա՛խ՝ զի յետս դառնամք *մահուամբ*, այսինքն ի դրախտն և ի մայր մեր, պա՛րտ է զի նախ ոտքն ընթացցի: - 676. և որպէս ի կեանքն հանդերձիւ ծածկեմք, նոյնպէս ի *մահն* հողով: - 677. Դարձեալ՝ և կրկին է *մահ*. որ է հոգւոյ և մարմնոյ. - 680. Դարձեալ՝ կրկին է օր մարդոյ թէպէտ յերկար ապրեսցի. այսինքն մին օր ծննդեանն, և մին օր *մահուան*: - 680. Երկրորդ՝ զի **գ** օր են ամենայն աւուրք մարդոյ. այսինքն օր ծննդեանն. օր սննդեանն. և օր *մահուանն*: - 681. ...հաւատն նշան է նոցա, և բարի գործքն զարդ. և *մահն* ի հարսանիս ընթանալ...: - 681. Եւ թէպէտ ամենայն մեղաւոր զղջանայ յետ *մահու*, այլ ո՛չ կարէ ապաշխարել...: - 684. Զի այժմ յուսով են յերկինս և առ երկինս. և յետ *մահու* հոգւով. և յետ յարութեանն հոգւով և մարմնով յանճառելի փառսն: - 689. Եւ այսպէս ամենայն առաքինութիւն աստ հանգուցանէ զմիտս. և յետ *մահու* զհոգիս. և յարութեանն զհոգի և զմարմին: - 689. Նոյնպէս կրկին է և տանջանք չարաց. այսինքն տանջանք գործոց ըստ ինքեան, և տանջանք հատուցման, զի զտանջանք գործոցն կրեն յետ *մահու*. և զտանջանք հատուցման ի յարութեանն հոգւով և մարմնով: - 690. Զի գործք չարութեան այժմ դատէ՛ խղճիւ զմիտս. և յետ *մահու* զհոգիս. և յետ յարութեանն զհոգի և զմարմին որպէս ասացաւ: - 690. Արդ այժմ ի մկրտութիւնն հաւատն նշան դնի հարսին. և յետ *մահու* յուսով կոչի ի հարսանիս. և յետ յարութեանն սիրով միաւորի ընդ փեսային: - 693. Զքուն *մահուն* ասէ մինչ ի կատարած. և ի մէջ գիշերի յարութեանն աւուր յարեան ամենայն կուսանքն և կազմեցին զլապտերս: - 693. Երեսուներորդ, յա՛յտ է յորպիսութեանցն չորից որ ասացաւ յառաջագոյն եթէ աստ հոգի մարդոյն է ի մէջ բարեաց և չարեաց. իսկ յետ *մահու* ի մէջ բարեաց միայն. իսկ ի յարութեանն ի մէջ բարեաց և փառաց: - 694. Արդ՝ այս կենացս յոյս՝ ակն ունի ի հեռաւորն. և յետ *մահու* յոյս նոցա ըմբռնէ ի մերձաւորն: - 696. ...և յետ *մահու* յոյս նոցա է՛ հանդերձ ստուգութեամբ գիտութեանն. և կամ տեսութեանն...: - 696. ...և կոչելն *զմահն* ասէ. և վարձ՝ իսկոյն զփոխարէնն: - 696. Զի ասէ մեծն իգնատիոս մեկնիչն յայսմ բանի, եթէ բարեկամ եկեալ՝ զպահանջօղ հրեշտակն ասէ յօր *մահուն*. իսկ առաջին բարեկամ է՛ աստուած: - 697. Իսկ գիշեր զօր *մահուն* ասէ: - 697. ...այլ սկիզբն է ի *մահն*, և կատարումն ի յարութեանն որպէս ասացաւ: - 697. Նա՛խ՝ զի առաքեալսն զանազանեաց զտեսանելն յետ *մահու*՝ և զպսակն ի յարութեանն: - 697. Վեցերորդ, զի *մահն* սկիզբն է անփոփոխ կենացն. զի ո՛չ կարէ փոխիլ ի մեղաց յարդարութիւն...: - 699. Զի անկումն նոցա *մահ* է նոցա ասէ նիւսացին գրիգոր: - 699. իսկ յետ *մահու* ոչ է քաւարան հրոյ: - 700. ...և որ ոք ի պատիժն աստ ոչ ժամանէ կրել, անդ կրէ յետ *մահու* ի հուրն և քաւի: - 701. Դարձեալ՝ թէպէտ վասն հոգւոյն ասեմք որպէս այս, և տեսիլ անտօնին, և այլոց, այն ո՛չ է բերքաթուր. այլ պատերազմ դիւաց. որպէս աստ մարմնով, նոյնպէս և յետ *մահու* առ հոգիսն...: - 703. Զի այժմ կարծեմք. և յետ *մահու* յայտնապէս տեսանեմք զամենայն. և յետ յարութեանն առնումք զամենայն: - 705. ...և յետ *մահու* մերձ ի յինքն և առ ինքն տեսանէ և ճանաչէ ...: - 705....և յետ *մահու* զհոգիսն ի դժոխս տանջէր: - 705. ...և խաչիւն ելոյծ զզօրութիւն *մահու*...: - 705. Եւ յետ *մահուն* և յարութեան նոցա՝ թագաւորեսցէ նեռն այլևս **ժ** և **ե** օր: - 709. Այլ արբանեակք նեռին յետ *մահուան* նորա ուրախասցին և առցեն իւրեանց կանայս. - 709. Եւ ընդ դէմ սմա կրկին է անկումն որ է՛ *մահ*. վասն զի կրկին է մարդն. այսինքն հոգի և մարմին: - 710. Ապա ուրեմն ընդ դէմ այսմ չորեքկին յարութեանս չորեքկին է և *մահ*. այսինքն Նախ մեղաց և անհաւատութեան *մահն*: - 710. Երկրորդ՝ բաժանիլ հոգւոյ ի մարմնոյ. և սոքա կոչին առաջին *մահ*: - 710. Երրորդ *մահ* է երկիւղ դատաստանին: - 710. Չորրորդ, տանջանքն յաւիտենից *մահ* է մշտնջենաւոր. և սոքա կոչին երկրորդ *մահ*: - 710. Ցուցանեն այսոքիկ զկատարեալ և զառաւել հանգիստ սրբոցն այժմ յուսով և յետ *մահու* հոգւով թագաւորեալ ընդ քրիստոսի. և ապա յետ յարութեանն հոգւով և մարմնով ո՛չ **ռ** ամօք. այլ անվախճան կենօք...: - 710. Նոյնպէս և սուրբքն այժմ թագաւորե՛ն և տիրեն ի վերայ ախտից, և յետոյ ի վերայ դիւաց, և ապա ի վերայ *մահու*: - 711. ...որ զմեծամեծս աւետարանեն. և միջնո՛րդ են *մահու* և յարութեան մարդկան: - 713. Եւ այսպէս սահմանի եթէ

յարութիւն է այնմ որ անկաւ մարմնաւոր *մահուամբ*՝ վերստին յառնել անմահութեամբ ի կեանս յաւիտենականս: - 716. ...զի ննջեցելոցն միայն մին գործ է. այսինքն յարութիւնն. իսկ կենդանեացն *մահն* և յարութիւնն. զի նախ մեռանին ի նոյն կէտն և ապա՛ յառնեն: - 717. Եւ երևի որպէս բլուր մեծամարմինք նոցա յաչս իւրեանց. սև և աղտեղի և չարչարելի. զի կրեն անչափ չարչարանս և ցանկան *մահու* և ո՛չ մեռանին. - 723. Եօթներորդ, *մահն* և ապականութիւն ծնունդ է մեղաց...: - 724. Եւ յայնժամ ո՛չ լինի մեղք. վասն որոյ և ո՛չ *մահ*. - 724. Ութերորդ, կեանքն բարի է և անեզր. և *մահն* չար և եզերեալ: - 724. Եւ որպէս ելաք ի բարի կենաց և մտաք ի չար *մահն*, այսպէս և ելեալք ի *մահուանէ* մտաք յանեզր և անվախճան կեանքն և բարութիւն: - 724. Չորրորդ՝ զի յանկարծակի լինի և ի համառօտ ժամն *մահ* մարդոյ և կատարած աշխարհի: - 730. Վասն որոյ տէրն գողոյ նմանեցուցանէ *զմահն* օրհասական: - 730. Եւ այսպէս հսկել և պահել զտունս մեր, զի մի՛ գող *մահուն* և կատարածի՝ գտեալ զմեզ անպատրաստ ի մեղս՝ տանիցի զհոգիս մեր ի տանջանս յաւիտենից: - 730. Դարձեալ յուշ առնէ մարդոյ զչարչարանքն քրիստոսի. և խնդրեսցի ի նոցանէ *մահն* քրիստոսի իբր զգին որ տըւեալ է նոցա, և նոքա յափշտակեցին զինքեանս ի նմանէ: - 732. Երկրորդ՝ զի թէ մարդոյ մարմին որ է՛ բանական և կենդանի՝ ապականի *մահուամբ*. ապա ուրեմն և խաչն ևս ապականի զի ո՛չ կենդանի է և ո՛չ բանական: - 732. Այլ և կենդանութեանց քակտիչ է. զի գործիք է *մահու*: - 732. Ութերորդ՝ զի որ գործարան է *մահու*՝ նա՛ է ապականացու: - 734. Եւ զոր օրինակ փայտն գիտութեան պատճառ *մահու* եղև. պատասխանեալ դեղն ցաւոց: - 734. Եւ մի՛ վասն անարգանաց եղբօրն որոշիլ ի գլխոյն և ի դատաստան *մահու* մատնիլ: - 735. Հինգերորդ, զի դիցէ զքշնամիս իւր ի ներքոյ ոտից իւրոց. այսինքն կորուսցէ զնեռն և զսատանայ և զամենայն գայթակղութիւն մարդկան՝ զմեղս և *զմահ*. - 737. Դարձեալ, ձորն յովսափաթու կոչի ձոր դատաստանի. այսինքն է կալն ուռնայի, ուր դաւթի խոստացաւ անդ առնել դատաստան. յորժամ սեղան շինեաց և պատարագեաց զեզինսն և բարձաւ *մահն*: - 737. Սոքա՛ են բ գիր չարեաց և բարեաց. *մահու* և կենաց: - 741. Ի քաբօր մովսէս և եղիա վկայէին վասն *մահու* նորա: - 742. Դարձեալ հինգերորդ, մեղքն որոշէ ի յաւիտենական կենացն. վասն այն անկանի ի *մահն* յաւիտենական: - 744. Դարձեալ խոցումն ի վայրկեան ժամանակս, ածէ՛ *զմահ* յաւիտենական: - 744. Դարձեալ ըմպումն մահադեղին միում րոպէի՝ ածէ՛ *զմահ* յաւիտենական: - 744. Երկրորդ՝ կամ *մահուամբ* զերծանին. իսկ անդ բարձեալ է *մահ*...: - 750. Ութերորդ՝ *մահն* գլխովին: - 751. Վասն ութերորդին ասէ տեսիլն՝ «եղիցի անդ *մահն* երկրորդ». այսինքն յաւիտենից. զի որպէս աստ է *մահ* ժամանակեայ և անցաւոր. անդ յաւիտենական և անմահ *մահ:* - 751. Բարձումն յուսոյ և ամենայն փրկութեան Նաև գոլն իսկ որում տենչան ամենայն ստեղծուածք՝ է՛ նոցա պատիժ. վասն զի խնդրեսցեն *զմահ* և ո՛չ գտանիցեն: - 751. Վասն իններորդին, որք աստ իւրաքանչիւր մեղօք գոյին շաղախեալք. արդարապէս ունին զիւրաքանչիւր անդամս կապանօք կաշկանդեալս. և ցանկան մեռանիլ և փախիցէ *մահ* ի նոցանէ: - 753. Եւ յետ *մահու* զկաւորն. այսինքն զհանգիստն ի հոգիս: - 758. Կամ լինէիր անհոգ որպէս ենովք և եղիա որ այնպէս անհո՛գ են, որք ոչ ի *մահու* և ո՛չ յայլ ինչ պատահմանէ երկնչին: - 762. Նախ այնու՝ զի ի տանջանաց թշուառութեան այսմ տարագրութեան ազատեալք լիցին. զի անցեալն ի *մահուանէ* ի կեանս՝ զկենացն ուրախութիւն կրկնապատկէ՛: - 764. Ծնունդն, զօրութիւնն, *մահն*, ընդ աջմէ հօր նստիլն, և այլն ամենայն, զաստուած ի մարդում, մանաւանդ զմարդ յաստուածում ըստ սքանչելագործին գրիգորի ցուցանեն: - 770. Իսկ յետ *մահու*՝ յիշելն է միայն ըստ ինքեան զներքոյսն. խափանեալ խառնւածոյ նիւթոյն: - 774. Իսկ յանցանել նորա՝ կորոյս զամենայն. ո՛չ միայն զխոստացեալն, այլ և զպարգևեալն. զի ըստ որում յանմեղութենէն մեղանչական գտաւ, այսպէս *մահու* և ապականութեան գրաւեցաւ: - 776. Ուստի ասացաւ թէ *մահու* մեռցիս. ոչ սոսկ. այլ զկրկնակի նշանակելով *մահ*. այսինքն զմեռանիլն մարմնով և զպատժիլն հոգւով: - 776. Եւ այսպէս պատժոյ նորին հաղորդեալ *մահու* մեռանելոյն հասարակ ամենեցուն որպէս ասացաւ: - 776. Զորօրինակ, քարոզեցաւ նինուէի կործանումն. և նախագուշակ եղև եզեկիայի *մահ*. և ո՛չ մի ի սոցանէ կատարեցաւ: - 779. Երրորդ՝ ժամանակ կենցաղոյս մինչև ի *մահ*, է՛ ընդունելութեան աստուծոյ. ըստ որում բազմեալ է յաթոռ շնորհաց ըստ առաքելոյ. իսկ յետ այնորիկ ո՛չ ևս. զի փոխի յաթոռ դատաստանաց ըստ աւետարանին: - 780. Այլ թէ յետ *մահու* ո՛չ հանդիպի թողութեան, որպէս և ո՛չ դևք: - 780. Երկրորդ, զի անկումն դիւաց *մահ* է նոցա. և յետ *մահու* ո՛չ է հաւատ. ուրեմն և ո՛չ ի դևս: - 784

**ՄԱՀԱԲԵՐ +** Երրորդ՝ զի աղբիւր է *մահաբեր* թունիցն: - 218. Երկրորդ՝ որ հայէր ի յօձն՝ բժշկէր. և որ հաւատայ ի խաչեալն՝ բժշկի ի թունից *մահաբեր* օձին: - 386. Զոր օրինակ զանգուած ինչ թունիւք ապականեալ լինի. ամենայն հաց ի նմանէ նիւթեալք *մահաբերք* են: - 592

**ՄԱՀԱԴԵՂ +** Դարձեալ ըմպումն *մահադեղին* միում րոպէի՝ ածէ՛ զմահ յաւիտենական: - 744

**ՄԱՀԱՆԱԼ +** Այսպէս և անմահ է բանն ըստ իւրում բնութեանն. և նոյնն *մահացեալ* ըստ միաւորութեանն: - 75. Որև մարդկութիւնն անմահ ըստ միաւորութեանն. և *մահացեալ* ըստ իւրոյն յատկութեանն: - 75. Անմահ զաստուածութիւնն՝ և *մահացեալ* զմարդկութիւնն: - 75. Չորրորդ՝ մահու մեռանիլ այն է, որ հոգւով և մարմնով տրտմին. և անմահ չարչարին. որպէս մեղաւորք յայս կեանս և յետ մահու. զի որ մեռանի մարմնով՝ զպարտս վճարէ. և որ տրտմի հոգւով՝ անմահ *մահանայ*: - 277. Նա՛խ զի զանդրանիկ որդիսն աստուծոյ տանջեցին և մեռուցին. վասն որոյ անդրանիկք նոցա *մահացան*...: - 334. Երկրորդ՝ զի զանդրանիկ խորհուրդն աստուածպաշտութեան կորուսին յանձինս իւրեանց. վասն որոյ անդրանիկք նոցա *մահացան* և ապականեցան: - 334. Իսկ մահն՝ որ տգիտութեամբ մեղանչէ. թէպէտ ո՛չ գիտէ՝ հոգին *մահանայ*: - 564. Զի նախ մեղանչեցին յերկինս. և ապա անկան յօդս և *մահացան*...: - 667. Իսկ հող ցանեալ ի գլուխն, գլուխ զմիտքն նշանակէ. որ ինքնիշխան եղև յաստուծոյ. և հնազանդեալ խրատու հողակեր օձին՝ *մահացաւ*...: - 670. Նա՛խ՝ զի ո՛չ է ի չորից տարերց ժողովեալ որ քակտելով *մահանայ*: - 715

**ՄԱՀԱՊԱՐՏ +** Զայն ցուցանէ, զի մեռանիլն քահանային՝ ազատութիւն էր նոցա, յօրինակ քրիստոսի. յորժամ մեռաւ վասն աշխարհի, ազատեցան *մահապարտքն*: - 392. Երկրորդ՝ զի սուրբ գիրն ո՛չ պարտաւորէ զնա իբրև *զմահապարտ*: - 443. Զոր օրինակ՝ *զմահապարտ* ոմն թագաւորն հրամայէ՛ դահճին ի բանտ դնել. դարձեալ զնոյն թագաւորն աղերսեն և նա հրամայէ՛ արձակել ի բանտէն: - 492. Չորրորդ՝ զի ասէ դաւիթ «արձակել զորդիս *մահապարտաց*». այլ *մահապարտք* մեղաւո՛րքն են և ո՛չ արդարքն: - 506. Եօթներորդ՝ որպէս ասացաք յառաջին պատասխանին՝ որդիք *մահապարտաց* և ապստամբք աստուծոյ մեղաւո՛րքն էին նոցա քարոզեաց և ազատեաց: - 507. Իններորդ՝ որպէս թագաւորք նախ հաշտին ընդ *մահապարտս* և ապա՛ պարգևաց արժանի առնեն: - 522

**ՄԱՀԱՑՈՒ +** Եւ ո՛չ *զմահացուն*, զի կո՛յս էր անապական: - 383. Միջինն զներգործական *մահացուն*: - 384. Եւ յորժամ է զօրութեամբք հոգւոյ յաղթիցեն նոցա, փախիցեն յէ զգայարանաց մարդոյն եօթնեկի *մահացու* մեղօք. զայս կատարելո՛ցն է իմանալ. և ո՛չ մեզ տկարացս: - 404. Մեղք անունն մի է, և բոլորապէս յերիս տեսակս որոշի. այսինքն ի սկզբնականն, և ի *մահացուն*, և ի ներելին: - 567. Իսկ *մահացուն* մեղք է գլխաւորօրէն է. կամ ը որպէս ասացաւ: - 567. Եւ կոչի *մահացու*, զի պարտական առնէ զմարդն յաւիտենից մահուն: - 567. Ա՛րդ՝ մեղք սկզբնականին չորիւք զանազանի յայլոցն. այսինքն ի *մահացուէն* և ի ներելոյն. ըստ միութեան. ըստ հասարակութեան. ըստ հաւասարութեան. ըստ որակի տարբերութեան: - 567. Նա՛խ ըստ միութեան. զի մի է մեղքն սկզբնական և ո՛չ բաժանի. որպէս *մահացուն* է. և ներելին **գ**: - 567. Զի *մահացուն* ո՛չ էր ի յերեմիայ և ի յովհաննէս որք սրբեցան յորովայնէ. թէպէտ ո՛չ զերծանեին ի ներելւոյն: - 568. Այլ կոյսն մարիամ աստուածածին՝ էր ազատ ի *մահացուէն* և ի ներելւոյն. բայց ո՛չ ի սկզբնականէն. զոր հոգւովն սրբով մաքրեցաւ: - 568. Եւ զի ո՛չ է որպէս *մահացուն* մեծ կամ փոքր. որպէս շնութիւն մեծ է քան զպոռնկութիւն. և մարդասպանութիւն քան զգողութիւն: - 568. Իսկ զանազանի *մահացուն* և ներելին ըստ առաւելութեան և նուազութեան. որպէս առաւել է հարկանումն օձի քան զլուոյ. և նետի քան զփշի. այսպէս և *մահացուն* է առաւել քան զներելին: - 568. Դարձեալ զանազանին ըստ թուոյ. զի *մահացուն* յեօթն բաժանի. որք են գլխաւորագոյնք: - 568. Իսկ այլք զերեք տեսակ մեղացն. այսինքն սկզբնականն որ է խոտ. և ներելին եղէգն. և *մահացուն* փայտ: - 702. և ոսկեբերանն *զմահացուն* լինիլ ասէ փայտ խոտ և եղէգն. և նիւթ յաւիտենից այրելոյն: - 702

**ՄԱՀԱՑՈՒՑԱՆԵԼ +** Ութերորդ՝ զնա օ՛ձ դարանակալ ասէ ի ճանապարհի. և սոքա առաջին օձին նմանեալ՝ հրապուրեն զբազումս. և արտաքսեն ի դրախտէ եկեղեցւոյ. և թոյնք իժից ի ներքոյ շրթանց ունելով և խայթոց՝ զի առորս մերձենան, ի յսկիզբն բանից կամ ի վերջն՝ *մահացուցանեն* զհոգիս. երկճղի ունելով լեզու նենգաւոր՝ չար և բարի, ծածուկ և յայտնի: - 35

**ՄԱՀԻՃՔ +** Եւ յերեկոյ՝ ծերութիւնն. որ երեկոյացեալ կենաց և ի *մահիճ* զերեզմանի ժամանեալ: - 266

**ՄԱՀԿԱՆԱՑՈՒ +** Ուստի յա՛յտ է ի սահմանէն. ամենայն մարդ կենդանի բանաւոր *մահկանացու* մտաց և հանճարոյ ընդունակ: - 74. Եւ դու պետրոս՝ մարդ կենդանի բանաւոր *մահկանացու* մտաց և հանճարոյ ընդունակ: - 74. Եւ ո՛չ ասի *մահկանացու* վասն մարմնոյն. այլ միշտ անմահ և կենդանարար մարմնովն: - 78. Ասեմք եթէ՝ յորժամ մի ասեմք բնութիւն բանին և մարմնոյն, այս լինի կամ արիոսին. որ զբանն արարած ասէ և զմարմինն արարած. և այսպէս մի բնութիւն է արարածոյն ասէ. և զբանն ընդ մարմնոյն չարչարելի և *մահկանացու*: - 81. Բաղկացական տարբերութիւն է՝ ուստի տեսակքն գոյանան. որպէս բանականն և *մահկանացուն* զբնութիւն մարդոյն կատարեն: - 85. Այլ զանազանին, Նախ՝ զի իմանալին անմա՛հ կեանք է. և զգալին *մահկանացու*: - 117. Ո՛չ են յաւերժահասունք որպէս ոմանք կարծեն թէ յերկուց տարերց

այսինքն ի հրոյ և յօդոյ են բանական կենդանիք և ունին ծնունդ և մահ. սուտ է այսպիսի կարծիքս և ընդունայն և հակառակ սուրբ գրոց. զի բանական կենդանի և *մահկանացու*՝ մարդս միա՛յն է որոյ յարութիւն և դատաստան գոյ: - 150. Երկիր որ հոգւով կառավարի, է՛ մարմին *մահկանացու*: - 210. Դարձեալ՝ մա՛րդն է կենդանի բանաւոր և *մահկանացու*: - 275. Երկրորդ՝ թէ անասունքն *մահկանացուք* են. նոցա մահուամբն մեռանիցիք: - 277. Որ յետ յանցանացն փոխեցաւ և եղև թանձր և ծանր և *մահկանացու* և ընդդիմահար և աղտեղի: - 282. Իններորդ՝ միաւորութիւն մարդոյ՝ է՛ անմահ և *մահկանացու*. յաւիտենական և ժամանակեայ. այսինքն հոգի և մարմին: - 478. Այսպէս և միաւորութիւնն քրիստոսի է՛ յաւիտենից և ժամանակեայ. անմահ և *մահկանացու*. աստուած և մարդ. նոյն ինքն բանն մարմին եղեալ: - 478. Ո՞րպէս ասեմք *մահկանացու* զմարմինն քրիստոսի առանց ապականութեան: - 498. Եւ կարելի՛ է ասել զմարմին կենարարին չարչարելի և *մահկանացու*, այլ ո՛չ կարելի ասել ապականացու: - 498. Երկոտասաներորդ՝ յա՛յտ է յերից իրաց թէ ապականացու ասելն՝ ակնարկէ՛ ի յապագայն իբր թէ ապականելի՛ է. որպէս ասեմք *մահկանացու* և չարչարելի. և ահա չարչարեցաւ և մեռաւ: - 499. Իսկ թէ *մահկանացու* և չարչարելի, ապա և ապականացու: - 500. Ասեմք առ այս՝ եթէ ո՛չ են նման *մահկանացու* և ապականացու ասելն. զի ա՛յլ է մահ և ա՛յլ ապականութիւն որպէս ցուցաւ ի վերոյ: - 500. Ապա ուրեմն կարելի՛ է ասել չարչարելի և *մահկանացու* վասն մեր. այլ անապական և անմեղ մարմին: - 500. Երկրորդ՝ զի ամպն կալաւ զնա յաչաց նոցա. նշանակի թէ ի *մահկանացու* մարմինս ո՛չ կարեմք տեսանել ի բարձունս զքրիստոս: - 520. Սոքա քաղկեդոնին են. որք բաժանեն զբանն ի մարմնոյն. և զխաչեալն՝ մարդ սոսկ և տկար և *մահկանացու* խոստովանին: - 635. Նա՛խ՝ այն կեանքն անապական է և անմահ. և մարդս *մահկանացու* և ապականելի...: - 662. ...որպէս որք *մահկանացու* ասեն զհոգին. և այս խոտելի է ի բաց: - 687. Իսկ առաջին պակասութիւն է մարմնոյն աստ՝ զի է՛ *մահկանացու*՝ յապականացու՝ և չարչարելի. որպէս քաղցն՝ ծարաւն՝ հիւանդանալն և այլն. - 722. Վեցերորդ, կրկին են կեանք. *մահկանացու* և անմահ. և կրկին է մարդն. *մահկանացու* և անմահ: - 724. Եւ որպէս այժմ հոգով և մարմնով *զմահկանացու* կեանս վայելեաց, նոյնպէս և յայնժամ հոգւով և մարմնով զանմահ կեանս ժառանգեսցէ. վասն այն յառնէ: - 724. Թէ ի բերան պատերազմի յել անմահին և ի մուտ *մահկանացուին*. դիցես պահապան բերանոյդ. լար կարմիր շրթանցդ. այսինքն հաւատով սիրով զօրացեալ. և ո՛չ բաժանիլ ի քնասիրութիւն և յարծաթսիրութիւն. յառաքինասիրութիւն. և յախտասիրութիւն. յընկերսիրութիւն և յարատսիրութիւն: - 770-771. Եւ յայս անկեալ որդիս ծնաւ ապականացու և *մահկանացու* ի նմանոյն յառաջ եկեալ: - 776

**ՄԱՀՈՒ ՄԵՌԱՆԻԼ** - Չորրորդ՝ ի ցուցանել զարդար վճիռ հատուցմանն. պահողացն՝ զվայելս դրախտին և զանմահ կեանս. և ոչ պահողացն՝ զարտաքսիլն և *զմահու մեռանիլն*: - 277. Նա՛խ՝ ասի *մահու մեռանիլ*, իբր թէ է՛ ոմն անձնաւոր մահ որ է՛ բանսարկուն. և նովաւ մեռանիցիս ասէ: - 277. Երրորդ՝ *մահու մեռանիլ* զհոգւոյ մահն ասէ որ մեղօքն մեռանի. զի այն է առաւել մահ և յաւիտեան չար. որպէս ասէ քերթօղն՝ «ո՛չ է դա՛ քեզ մահ մահկանացու, այլ անմահ չար...: - 277. Չորրորդ՝ *մահու մեռանիլ* այն է, որ հոգւով և մարմնով տրտմին. և անմահ չարչարին. որպէս մեղաւորք յայս կեանս և յետ մահու. զի որ մեռանի մարմնով՝ զպարտս վճարէ. և որ տրտմի հոգւով՝ անմահ մահանայ: - 277

**ՄԱՀՈՒ ՉԱՓ +** Եւ այնչափ կուրացեալ է՝ մինչ զի պատերազմի ընդ դէմ աստուծոյ. թէպէտ գիտէ զայն լինիլ ինքեան ի չար, զի զոր ինչ չար գործէ անձնիշխան կամօքն, մեղանչէ *մահու չափ*: - 146. Երկոտասաներորդ՝ զի որպէս խահակ հնազանդ գտաւ հօրն *մահո՛ւ չափ*, լաւ համարելով զմեռանիլն՝ քան առանց հնազանդութեան զկալն: - 305. Ակամայն անգիտութեամբ է. որ ներելի՛ է և թողելի՛. իսկ կամաւորն անթողելին և *մահու չափն* է: - 385. Նմանապէս և *մահու չափն* **գ** է: - 385. Երրորդ՝ ներելի մեղքն և փոքր՝ թէ ո՛չ ապաշխարի, լինի *մահու չափ* և անթողլի: - 385. Իսկ ի միտս, *մահու չափ* մեղաց է իշխանք և գունդք դիւաց: - 404. Երկրորդ՝ սրբութիւն արգանդին մերժէ՛ զմեղս և հերքէ՛ զդիւրասահութիւն մեղանչելոյն *մահու չափ.* որպէս երեմիային և յովհաննուն: - 462. Երրորդ՝ սրբութիւն յատկական. որպէս սրբոյ կուսին, բառնայ զսկզբնական մեղս և զարմատն և դիւրասահութիւն մեղանչելոյն *մահու չափ* և ներելապէս: - 462. Եւ ունէր շնորհօք արգելք ի մեղաց *մահու չափ* և ներելապէս. որպէս յովհաննուն և երեմիային: - 463. Այլ ա՛րդ՝ բանն աստուած եղև մարդ և անմեղ պահեաց զբնական կիրս. և ներգործական կրիւքն հնազանդ եղև հօր՝ *մահու չափ* և մահու խաչի: - 492. Եւ որք **դ** ասեն՝ զներքին դժոխքն *մահու չափ* մեղաւորացն ասեն. և զքաւարանն ներելի մեղաւորաց. և զլիմպոսն արդարոց. և զդժոխս ոչ մկրտելոցն: - 504. Նա՛խ՝ մաքրութիւն ի *մահու չափ* մեղաց. զի այլ ո՛չ ևս տիրեցին նոցա յետ հոգւոյն իջման: - 524. Վասն է՞ր նագրիոս ընդ խորհուրդ ասէ մեղաց, և այլ վարդապետք է ասեն *զմահու չափ* մեղսն: - 559. Այս ըստ նոցա որ է ասեն *զմահու չափ* մեղքն:

- 559. Իսկ դառն մահն է՛ *մահու չափն*. որ գիտութեամբ մեղանչէ. այս է դառն մահն յաւիտենից: - 564. Զի **ժ** պատուիրանքն և է *մահու չափ* մեղքն են ըստ գոյացութեան մեղք. որպէս մի՛ շնարն և մի՛ գողանարն և մի սպանաներն և մի՛ սուտ վկայերն: - 565. Նոյնպէս և զամենայն *մահու չափ* մեղս իմացիս: - 565. Նոյնպէս և Կալն և Ունելն զամենայն *մահու չափ* մեղս. թէ գործեալ է և թողեալ. զի որ հաստատեալ է մեղքն յինքն, առաւել մեղանչէ: - 565. Իսկ ներելի մեղքն է յանցանք փոքրագոյն. քանզի ի մանկունս յետ մկրտութեան նախ յառնեն ներելիքն, և ապա՛ *մահու չափքն*: - 567. Ապաշխարութիւնն ընդ դէմ ներգործական *մահու չափ* մեղացն. և Օծումն ընդ դէմ ներելի մեղացն: - 587-588. Եւ գիտո՞ւն էր որ կարէր ճանաչել *զմահու չափ* մեղքն և զներելին: - 601. Որք իցեն ի մեծամեծ մեղս *մահու չափ*, օգո՞ւտ է խոստովանութիւնն նոցա թէ ոչ: - 603. Դարձեալ՝ օծումն հիւանդաց ո՛չ սրբէ *զմահու չափ* մեղս. այլ զներելիս: - 604. Իսկ խոստովանութիւնն *զմահու չափն* և զներելին սրբէ...: - 604. Դարձեալ՝ *մահու չափ* մեղքն բանիւ սրբի ի ձեռն քահանային...: - 604. Ապա թէ քամահելով և նախանձու զանց առնէ, *մահու չափ* է: - 620. Բայց յորժամ երթայ միտքն ի մեղք՝ է՛ *մահու չափ*: - 620. Եւ յորժամ ո՛չ առնէ բնաւ՝ *մահու չափ* մեղանչէ: - 620. Հինգերորդ, զի ասէ մարգարէն (արձակես զորդիս մահապարտաց) այսինքն *զմահու չափ* մեղաւորաց: - 777

**ՄԱՂԱՂԵՂԱ** - Անունք Կանանց Նահապետացն... Կայնանայն *մաղաղեղա*՛: - 299

**ՄԱՂԱՂԻԵԼ** - Անունք Կանանց Նահապետացն... *Մաղաղիէլին* դիմա՛: - 299

**ՄԱՂԱՍ +** Սպիտակն որ է *մաղասն* ի բոլոր մարմին և կամ յերիկամունքն՝ է՛ ջրոյն: - 215. Եւ սպիտակի մազն ի պալղամէն և ի *մաղասէն*: - 240

**ՄԱՂԱՔԻԱ** - Իսկ բաղդատի արեգակն միայն առ բանն մարմնացեալ ըստ *մաղաքիայ*...: -125. Ապա զիա՞րդ ասէ ի ձեռն *մաղաքիայ* թէ «զերկին և զերկիր ե՛ս լնում»...: - 180. Որպէս ասէ *մաղաքիա,* «յամենայն տեղիս մատչի խունկ անուան իմոյ»...: -361. Անգէ: Զաքարիա: *Մաղաքիա:* Երեմիա: Բարուք: Ողբք: Դանիէլ: Եզեկիէլ: - 450. Դարձեալ՝ ասէ մարգարէն *մաղաքիա.* «եկեսցէ օր տեառն իբրև զբոց հալոցի. և իբրև զաճառ լուանալեաց սրբեսցէ զղևտացիս. իբրև զոսկի և զարծաթ»...: -703. ...*մաղաքիա* վասն մեծամեծ մեղացն ասէ: - 703. Ընդ երևիլ նեռինն և թագաւորելն յերուսաղէմ, եկեսցեն ենովք և եղիա որպէս ասէ *մաղաքիա* և դարձուսցեն զսիրտս հարց յորդիս. - 709. Որք դարձուսցեն զսիրտ հարց յորդիս ըստ *մաղաքիայի*. այսինքն ուսուցանեն զհաւատն փրկչին զոր հարքն ունէին. և է՛ վարձաւորելի և կարի քաջ. և թէ այսպէս և թէ այն՝ քրիստոս քարոզի: - 785

**ՄԱՂԵՄ +** Աղալ յերկանս՝ *մաղել* և զանգիլ՝ և ի հուր և յիւղս եփիլ...: - 357

**ՄԱՂՁՄԱՅ +** Հինգերորդ՝ Կիսասարկաւագն. որոյ գործն է զսկիհն և *զմաղզմայն* առ սեղանն տանիլ...: - 606. Իսկ վասն հիմնարկութեան սուրբ տաճարի և ժամահար օրհնելոյ. սկիհ և *մաղզմայ*. և զգիրք. և զկնունք առնելոյ. և խաչօրհնելոյ. և զքառասնորդաց **գ** ժամուց զքարոզքն և զաղօթսն, յոհան մանդակունին է արարեալ...: - 659

**ՄԱՂԹԱՆՔ +** Զի մեք որ ի նեղութիւնս և ի փորձութիւնս ժուժկալեմք աղաչանօք. իսկ մեր *մաղթանքն* նմա՛ վերաբերի: - 48. Քառասունևդ, Մասնաւոր Աղօթք. և Օրհնութիւնք. և Խաղաղութիւն. Քարոզ. և *Մաղթանք* և Գոհութիւն: - 527. Վերինն որ առ աստուած և առ սուրբս, երբեմն յայտնութիւն լսի. երբեմն գոհութիւն և բարեբանութիւն. երբեմն *մաղթանք* և աղաչանք: - 539. Դարձեալ՝ ա՛յլ է քարոզն առ մեզ, և ա՛յլ է աղօթքն առ աստուած, և ա՛յլ է *մաղթանքն* առ սուրբս, և ա՛յլ է գոհութիւնն: - 626. *Մաղթանքն* ներկայիս: - 626. Այլ և հանգստեան ասեմք. նշանակ առ հասարակ յարութեանն. ննջեցելոցն մեր *մաղթանք*: - 642. Զի կա՛ք մի արտասուաց ի կաթիլ դուլէ ձե՛րդ *մաղթանաց* ցօղեսցի ի գերեզման հոգւոյ իմ տառապանաց: - 773. Զի թերևս վասն ձեր սիրալիր *մաղթանացդ*՝ գտայց ողորմութիւն յամէնողորմ փրկչէն մերմէ: - 773. Այլ և վարժապետին իմոյ և մեծ հռետորի հայոց, Յոհաննու Որոտնեցւոյ, եղիցի ի սմա յիշատակ *մաղթանաց* մասին օրհնութեան. և վիճակ ժառանգութեան սրբոցն ի լոյս: - 773

**ՄԱՂԹԵՄ +** Նա՛խ՝ զի յաղօթս զկոյսն սուրբ բարեխօս *մաղթեմք*. և զխաչն սուրբ՝ պահապան: - 642. Այլ և զերջանիկ գաղափարօղսդ *մաղթեմ*. որք ընդօրինակէք զգիր հարցմանցս այսորիկ, գրել և զսակաւ յիշատակս այսցիկ: - 773. Եւ *մաղթե՛մ* եղբայրական սիրով, ըստ բնածին բարեբոյս բարուցդ ածխոյժ մտօք ուղղապէս որոնել. զթերին լնլով և զաւելորդն կշռել: - 789. Ներել *մաղթեմ* աղերս արկեալ. որ ինչ ի սմա սըխալ գրտեալ. ո՛չ գիտելոցն և ոչ տեսեալ. կամ ըստ հընոցն այնպէս թողեալ: - 808

**ՄԱՂԻԱՑԻ** - Մաղիացիք: - 299

**ՄԱՂՁ** (տեքստում նաև՝ **ՄԱՂԾ** ) **+** Դարձեալ՝ ա՛յլ է բնութիւն մարմնոյն. ա՛յլ ոսկերացն. և ա՛յլ է ջիլն և երակն և մորթն և մազն և իւրաքանչիւր *մաղձքն*. ըստ այսմ ապա ասա՛ և բազում բնութիւնս քրիստոսի: -

176. Եւ զի խարտեաշ *մաղցր* առաւելուն ի մեզ: - 197. Եւ զի շարժին կենդանիք ի յղացումն, և սեաւ *մաղցր* առաւելուն ի մեզ: - 197. Հինգերորդ՝ զի ունին կենդանիքդ **դ** *մաղձ* որ են. **դ** տարերքն: - 215. Սեաւ *մաղձն* որ է փայծեղն՝ է՛ հողոյն: - 215. Վեցերորդ՝ ըստ այլոց. զի բոլոր թանձր մարմինն է՛ հողոյ. և ամենայն հիւթք և *մաղձք* է՛ ջրոյ. թոքն է՛ օդոյն. և սիրտն է՛ հրոյն ջերմ գոլով: - 215. Եւ ջուրն **դ** հիւթք. այսինքն արիւնն. պալղամն. սեաւ և խարտեաշ *մաղձն*: - 232. Եօթներորդն է՛ լեղին. որ է խարտեաշ *մաղձն*. տա՛ք է և չոր. և տանուտէր ունի զմառեխն որ է հրատն: - 241. Արդ եթէ ի խարտեաշ *մաղձէն* ի լեարդն է մնացեալ, լերդին համն ի լեղւոյն առնու և բերանն լեղի դառնայ. իսկ եթէ ի սեաւ *մաղձէն* է մնացեալ ի լեարդն. բերանն թթո՛ւ դառնայ. իսկ թէ պալղամն մնայ ի լեարդն, բերանն աղի փոխի. իսկ թէ յըստակ արիւնն մնայ ի լեարդն, լերդին համն անոյշ լինի, և բերանոյն համն անուշ տայ և քաղցր: - 242-243. Այսպէս ի սեաւ *մաղձէն* լինի արտասուքն աղի, զի մի՛ հոտեսցի ակն որպէս ցուցաւ նախ: - 243. Զի խարտեաշ *մաղձն* ընդ արիւնն և ընդ մորթն խառնի: - 245. Նոյնպէս և ի տրտմիլն սևանայ վասն սեաւ *մաղձոյն* որ տայ ի յերեսն: - 245. Զի բարկացօղ են դառնայ *մաղձ* ոտքն: - 245. Եւ ոմանք ասեն՝ թէ սեաւ *մաղձն* առնէ տրտմութիւն և սրտմտութիւն. և խարտէշն զբարկութիւն և զմախանք. արիւնն արի և վայրաբեր. և պալղամն ծոյլ և քնափ: - 245. Իսկ ամառն, և մինչ ի **զ** ժամս աւուրն, և խարտեաշ *մաղձն*, և երիտասարդն՝ ըստ նմանութեան տարրական հրոյ ջերմ և չոր գոլով. վասն որոյ առաւել բարկացօղ և ցանկասէր լինի: - 266. Իսկ աշունն, և մինչ ի **թ** ժամս աւուրն, և սեաւ *մաղձն*, և ալևորն, ըստ նմանութեան երկրի ցուրտ և չոր գոլով՝ ծոյլ և պղերգ գոլով ամենայն ուսմանց և գործոց: - 266. Երրորդ՝ ըստ հիւթին յաւելւածոյ՝ և պակասութեան *մաղձիցն* ի ներքուստ կամ յարտաքուստ, ջերմ և ցուրտ և այլն, զնորին նմանն և զկերպարանն առնու առ ինքն: - 268. Նա՛խ՝ զի ի դառն *մաղձոյն* հոսի յորովայնն ի ներքոյ սրտին և կսկծեցուցանէ զսրտակրանքն...: - 619. Իսկ ի լուր տրտմութեան՝ խուճապի մարմինն. և ի դառն *մաղձոյն* որ է՛ լեղին՝ հոսի ի բերան քաղրդին. - 619-620. Իսկ ի ներքուստ, ի լինիլ տրտմութեանց՝ խուճապեալ մարմնոյն հոսի *մաղձ* դառն ի ստամոքս որովայնի. և վերացեալ գոլորշեաց նորա զօրէն շոգլեաց պուտկի առ խելապատակս գլխոյ. և ծանրացեալ անտի թորի՛ առ բիբն ասացեալական. չոր գոլով և աղէգոյն ի սևատեսա՛կն *մաղձոյ*: - 787

**ՄԱՂՔՈՍ** - Որ էած ապտակ քրիստոսի՝ *մաղքո՛ս* էր անունն: - 495

**ՄԱճ +** Երրորդն Սամէգար. որդի անաթայ. որ *մաճիւն* **ո** այր եսպան՝ ամս **դ.** և Դեբովրա ամս **ե** ընդ այլազգեացն: - 420

**ՄԱճՆԱՒՆ** - Յօշարակաւ *մաճնաւն*, յորժամ զմարմին և զարիւն իւր ետ աշակերտացն յետ ընթրեացն: - 491

**ՄԱՄԲՐԷ** - Ուստի յա՛յտ է յերից արանցն երևելոյն առ կաղնեաւն *մամբրէի*: - 305

**ՄԱՄԵՍՏԻԱՅ** - Եւ վկայ այսոցիկ ի *մամեստիայ* գտեալ քարն. յորում գրեալ էր յունարէն գրով, «սուրբ աստուած սուրբ և հզօր սուրբ և անմահ որ խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ»: - 632

**ՄԱՄՈՆԱՅ +** Եւ քրիստոս յաւետարանին՝ զաստուած և *զմամոնայն* թւակցէ: - 54

**ՄԱՄՈՒԼ +** Զի նա՛ ծնաւ զմեզ ըստ բանի՝ բազմաջան երկօք. կրթեալ ի *մամուլս* վարժարանի և ի յոյսն կենդանի: - 773

**ՄԱՅԻՄՈՆ** - Եւ այս են **իբ** լեզուքն... Մայիմոնք: - 299

**ՄԱՅՐ +** Նախ՝ ոչ ի հօրէ և ո՛չ ի *մօրէ*. որպէս ադամ: - 29. Երկրորդ՝ ի հօրէ՛ և ո՛չ ի *մօրէ*. որպէս եւա: - 29. Երրորդ՝ ի հօրէ՛ և ի *մօրէ՛*. որպէս ամենայն մարդ: - 29. Չորրորդն՝ ի *մօրէ* միայն առանց հօր. որ է քրիստոսին: - 29. Եւ դարձեալ՝ արարա՛ծ է ըստ այլոց. «որպէս կամեցաւ և արար տէր». և Դարձեալ՝ զկամքն ի տեղի *մօ՛ր* ստեղծանեն: - 36. Իսկ որդի մարդոյ կոչի, զի էր ի յարենէն ի զանգւածոյն ադամայ իբր ի նախահօրէ՛. և ի կուսէն՝ իբր ի *մօրէ՛*: - 50. Զի թէ զերկուսն, ահա՛ երկու որդւոյ *մայր* ասացիք: - 68. Եւ թէ մերկ բանին, հետևիս գոյութեան սկիզբն ի *մօրէն* գոլ և ո՛չ յաստուծոյ հօրէ: - 68. Ա՛րդ՝ դու առանձնութեամբ քո որ ունիս զհասարակ բնութիւնդ՝ ծնար այսօր ի *մօրէ՛* կամ մեռար յաշխարհէ՛ և ո՛չ հասարակ մարդկութիւնս: - 74. Ուրեմն և ծնեալ ի *մօրէ* միայն զմարդկութիւնն՝ և ո՛չ զաստուածային էութիւնն: - 75-76. Զի բնութիւնն հասարա՛կ է. և *մայր* նորին՝ Երրորդութեանն լիցի *մայր*: - 76. Որպէս ասեմք զաստուածածին կոյսն *մայր* և կոյս. ո՛չ **բ** բնութիւն կամ **բ** անձն. որ է մասամբ և բաժանմամբ. այլ զմի և զնոյն. ունելով զայս և զայն յատկութիւն: - 77. Եւ կարեմք ասել զմի և զնոյն՝ կուսութեամբն կոյս. և մայրութեամբն *մայր*: - 77. Եւ դարձեալ ասի՝ *մայրն* կոյս, և կոյսն *մայր*: - 77. Եւ դարձեալ՝ ասի՝ կուսութեամբն կոյս, և կուսութեամբն *մայր*: - 77. Եւ մայրութեամբն կոյս, և մայրութեամբն *մայր*: - 77. Դարձեալ՝ ըստ նոյն սարասի՝ բանն աստուած ունի ծնունդ ի հօրէ նախ քան զյաւիտեանս. և ունի ծնունդ ի *մօրէ* ի յետին ժամանակիս. և ո՛չ ասի երկածին. այլ՝

միշտ միածին. այսպէս նոյն բանն ունի զբնութիւն աստուծոյ ի հօրէ. ունի և զբնութիւն մարդոյ ի *մօրէ*. և ո՛չ ասի **բ** բնութիւն. այլ մի բնութիւն վասն միաւորութեանն: - 77. **Այսպէս էր ի հօրէ բնութեամբ՝ և եղև ի *մօրէ* բնութեամբ. և ո՛չ ասի երկաւոր բնութիւն և երկաբուն. այլ միաւոր և միաբուն. մի որդի. և մի բնութիւն. միատեսակ աստուած մարդացեալ:** - 78. Խոստովանիմք զորդին աստուծոյ նախ քան զյաւիտեանս ծնեալ ի հօրէ՛. և յետոյ ի ժամանակի ծնեալ ի *մօրէ*՛: - 83. Ապա ըստ այսմ հետևի՝ զի մարիամ *մայր* քրիստոսի լինի և ո՛չ աստուծոյ. զի լաւ է քրիստոսածին և մարդածին կոչիլ՝ քան թէ աստուածածին: - 91. Ընդէ՞ր *մայր* ո՛չ կոչի յիգական սեռէ: - 109. Եւ տէր մեր յարևելից ի հօրէ, և առ մեզ երևեալ ի *մօրէ*՝ լուսաւորեաց զմեզ: 125-126. Զի ինքնագիտ չարութեամբ նախ ինքն չարացաւ որ ասի գտակ. և ապա զայլս չարացոյց որ ասի *մայր*. որպէս սկիզբն և սերմանօղ չարեաց ի յայլս: - 148. Գիտելի՛ է, զի հոմանուն է զօրութիւնն. այսինքն կարութիւնն. և հոմանունն *մա՛յր* է մոլորութեան. վասն որոյ որոշելի է զնոսա: - 167. Եւ այբն է *մայր* և սկիզբն իմաստութեանս այս: - 178. Մարերի. որպէս թուլանան մայրիք տերևօք և ոստովք. և լինին *մայր* թռչնոց և գազանաց: - 201. Նա՛խ՝ զի *մայր* է մեր, ուստի ծնանիմք ամենեքեան: - 211. Եւ զի *մայր* է պտղոց: - 211. Իսկ *մայրք* անպտուղք՝ են պիտանացու ի վեց իրս: - 212. Այլ կենդանիք յորժամ ծնանին ի *մօրէ* կանգնին, և մարդս ո՛չ: - 228. Իններորդ՝ զի *մայր* մեր հողն է. և սեղան և տեղիք և գերեզման. թէպէտ և այլ տարերքն են մեզ ազգականք. այլ մեք ի *մօրէ*՛ ծնանիմք: - 229. Եւ յետ այնորիկ յեօթներորդէ՛ աւուրն սկսանի արիւնածուծ լինիլ յարգանդէ *մօրն* ընդ պորտն. որպէս դըդում և ծծերուկ ընդ կոթն: - 261. Յինգերորդ՝ **ի յուսումն խոնարհութեան մերոյ. զի տեսանելով զմեզ տկար քան զանասունս, մերկ և աղքատ ի *մօրէ* ծնեալ, խոնարհեալ զիջանիմք ի հնազանդութիւն արարչին. և զի մի՛ եկամուտ հպարտութեամբ կրեսցուք զանկումն արուսեկին:** - 267. Վասն այսր պատճառի կոչեաց զանուն կնոջ իւրոյ կեանս. զի աճումն է և ծնունդն և *մայր* ամենայն կենդանեաց: - 276. Այլ կամ իբր զիրեշտակս, կամ որպէս ի միոյ լուսոյ բազումք, կամ կուսութեամբ ծնունդ. որպէս սուրբ կոյսն մարիամ աստուածածին սրբութեամբ և կուսութեամբ ծնեալ փոխեաց զկարգ բնութեան ծննդեանս որ ի սերմանէ առն և կնոջ. զի սա՛ ծնունդ միայն ի *մօրէ*՛: - 280. Ո՛չ կերին. զի թէպէտ ժողովեաց, սակայն ո՛չ կերին. այլ շնորհօքն աստուծոյ կացին որպէս մանուկն յարգանդի *մօրն* ապրի: - 294. **Եւ խնդրեցին զտապանն և զնա ոչ գտին. զի ո՛չ է հրաման տալ որ մարդն զարգանդ *մօր* իւրոյ տեսցէ:** - 296. Յօրն անունն մելքի, և *մօրն* սաղա. և քաղաքին սաղիմ: - 300. Ութերորդ՝ զի էառ իսահակ զհարսն և ուրախացաւ ի տան *մօրն* իւրում սառայի. որ զվեց ամ փրկեալ գոյր և ո՛չ ոք մտեալ: - 305. Նա՛խ՝ մարմնական. որպէս յղացեալ մանուկն ծնանի ի *մօրէ*՛: - 308. Յաղագս երից որդւոց է լալ *մօրն* հռաքէլի: - 312. Նա՛խ՝ զի ի ծնանիլն բենիամենի՝ մեռաւ *մայրն* և որդի վշտաց եղև նմա: - 312. Վասն նոցա լայր անմխիթար սգով, զի ո՛չ եղև *մայր* նահատակացն: - 312. Զառաջինն մխիթարեցաւ աստուածածին կուսիւն մարիամաւ. որ առանց երկանց և ցաւոց ծնաւ զմիածինն որդի, որ եբարձ զարտասուս վշտաց *մօրն* հռաքէլի: - 312. Եւ անուն *մօր* նորա բոսոր: - 320. Նախ՝ ուղղութիւն ընկերաց. **բ** գոհութիւն և համբերութիւն. **գ**՝ իմանալ զչար խորհուրդն սատանայի. **դ**՝ աղօթք և պահք. **ե**՝ խոնարհութիւն և ճշմարտութիւն. որ գերագոյն է ամենայն զինուց և իսպառ կորուսանէ զչար որ *մայրն* է ստութեան և հպարտութեան: - 324. Քսանեմի, մովսէս **դ** ծնունդ ընկալաւ. ի *մօրէ* և ի ջրոյ՝ ի հրոյ և ի վիմէ: - 329. Նոյնպէս և տէր ի հօրէ և ի *մօրէ*. պայծառութեամբն ի թաբօր. մկրտութեամբն ի ջրոյ. և յարութեամբն ի գերեզմանէ՛: - 329. Զսոյն և մեզ պարգևեաց ծնանիլ ի ջրոյ, և ի հրոյ, և ի հոգւոյ, և յարութեամբն մարմնոյ. իսկ ի *մօրէ*՛ բնականապէս: - 329. Յայրն մովսէսի ամրա՛մ է և *մայրն* յոքաբեթ: - 330. Նաև վասն անարգանաց *մօրն* իւրեանց սառայի: - 336. Նա՛խ ի *մօրէ*. և ապա՛ յաւազանէն, ի հրոյ, և ի հոգւոյ: - 353. Ի նոյն խորհուրդ նոր մանկունք յարգանդի *մօր* եկեղեցւոյ սնանին: - 363. ...և ապա ըստեամբք կերակրէ զնա *մայր* իւր բանիւն աստուծոյ. զոր ասեն յաշխարհի, եթէ զմին դուռն փակէ աստուած, նա զերկուքն բանայ. զի յորժամ զմին դուռն պորտին փակեցաւ, **բ** ստինքն բացան: - 397. Յինգերորդ և մեծն ա՛յս է, զի գառն քրիստոս է. և կաթն օրէնք. և *մայր* ժողովուրդն: - 399. Եւ դնէին ի հող անիծից վասն *մօրն*: - 400. Եւ փոխանակ *մօրն* տարերք ամենայն. որ հեծեն և յոգոց հանեն վասն ապականութեան մեր ըստ առաքելոյ: - 400. Երկրորդ՝ աւետեօք հրեշտակին ծնաւ սամփսոն ի յամուլ *մօրէն*: - 422. Իններորդ՝ ետ զխորիսխ քաղցր հօր և *մօր* իւրոյ ի ճաշակ: - 422. Եւ տէր մեր զհայր ի յերկինս և *զմայր* ի յերկրի քաղցրացոյց փրկութեամբ մարդկան: - 422. Այն որ ուսանո՛ց է, որպէս վակաս քահանային. և որպէս *մայրն* սամուէլի արար: - 425. Յնգետասաներորդ՝ ընդ աջմէ բազմեցաւ *մայրն* սողոմոնի: - 441. Ընդ աջմէ նստի և որդւոյն *մայրն* կոյսն աստուածածին: - 441. Գոդոդիա *մայրն* ամս է: - 452. Զչորքս զայս՝ Զոքոզիա և Զգոդոդիա *մայրն*, և Զյովաս և Զամեսիա ո՛չ գրէ յազգահամարսն աւետարանիչն վասն լինելոյ դուստր և թոռունք եզաբելի: - 452. Եւ յակոբ և ելի եղբարք էին ի միոյ *մօրէ*: -

460. Իսկ ի *մօր* կողմանէ՝ մարիամ էր ի քահանայից ցեղէն, զի մատթան քահանայն բնակէր ի բեթղէհէմ, և ունէր երիս դստերս: - 460. Մարիամ անուանեցաւ ի բեթղէհէմ և ծնաւ զսողոմի զմանկաբարձն յիսուսի. ո՛չ որ *մայր* եղև որդւոցն զեբեթեայ. զի այն. սողովմէ դուստր է յովսեփայ աստուածահօրն...: - 460. Սովիէ ի նոյն բեթղէհէմ ծնաւ զեղիսաբեթ *մայր* մկրտչին...: - 460. Որպէս զի լիցի կոյսն մարիամ յազգէ հարց ի թագաւորական ցեղէն. և յազգէ *մօր* ի քահանայից: - 461. Երրորդ՝ որպէս գերազա՛նց է քան զամենայն պատիւ *մայր* աստուծոյ լինիլ: - 463. Ապա ուրեմն կոյսն որ ծնաւ զէմմանուէլն՝ *մա՛յր* է աստուծոյ մարդացելոյ: - 466. Արդ եթէ որդին աստուծոյ եղեալ է կնոջ որդի, ապա ուրեմն կոյսն սուրբ *մայր* է որդոյն աստուծոյ և աստուածածին: - 466. Նոյնպէս և որ ասէ, «բանն մարմին եղև». յա՛յտ է թէ ի կնոջէ. ապա ուրեմն *մայր* է բանին մարմնացելոյ: - 466. Վեցերորդ, *մայր* մարդոյ ասի կինն որ ծնաւ զմանուկ. թէպէտ հոգին ո՛չ է ի *մօրէն*. այլ վասն միաւորեալ մարմնոյն մարդածին կոչի: - 466. Եւ նոյն է տէրն և աստուածն գոլ. ապա ուրեմն կոյսն սուրբ *մայր* է տն և աստուծոյ: - 466. Այլ արդ՝ քրիստոս ո՛չ է որդի աբրահամու և ո՛չ ի հարցն՝ թէ ոչ է որդի կուսին. ապա ուրեմն ըստ մարմնոյ աստուած է քրիստոս, և աստուածածին է ծնօղն. և *մայր* ըստ մարմնոյն քրիստոսի: - 466. Բազում ինչ անդ բնութիւն կորոյս զօրէնս իւր. այսինքն ի կողմանէ *մօրն*, ի կողմանէ զաւակին, և ի կողմանէ կերպին: - 469. Ա՛րդ՝ սքանչելիք էին ի *մայրն* քրիստոսի որպէս ասեն վարդապետք: - 469. Զի նա՛ եղև *մայր* հօր. և դուստր զաւակին: - 469. Նա միա՛յն էր *մայր* և կոյս. որ ընդ աստուծոյ ունէր զորդին: - 469. Այլ և ունէր հայր ի յերկինս, և *մայր* ի յերկրի. իսկ անդ հայր առանց *մօր*. և աստ *մայր* առանց հօր: - 470. Յաղագս որոյ պատրաստեաց նիւթ արեան, կազմեալ զօրութեամբ հոգւոյն. որով լինիցի ճշմարիտ *մայր* քրիստոսի: - 470-471. Երկրորդն՝ ի *մօրէ*: - 471. Զի ի հօրէ միշտ ծնանի աստուած. ի *մօրէ* միանգամ ծնաւ մարմինն. և ի միտս ծնանի բազում անգամ: - 471. Երրորդ ծնունդն ի *մօրէ*. ըստ որում ծնաւ մարմնով և երևեցաւ մեզ...: - 471. Իններորդ՝ ասի միածին ըստ մարմնաւոր ծննդեանն ի *մօրէ* ծնեալ առանց հօր...: - 472. Այլ և անդրանիկ ծնաւ ի *մօրէ* առաջին ծնունդ. թէպէտ ո՛չ ունի եղբար ի կուսէն, անդրանկութիւն իւր ո՛չ խափանի: - 472. Չորրորդ՝ որպէս արու բռնացա՛ւ տէր ի քակել զօրէնս բնութեան. և խզեաց զկապ կուսանաց և զմայրական. այսինքն զի որ *մա՛յր* է՝ կոյս ո՛չ է. և որ կոյս է՝ *մայր* ո՛չ է: - 480. Այլ սրբուհի աստուածածինն *մայր* է որդւոյ և կոյս անապական: - 480. Իսկ տէրն մեր էր անդրանիկ ի հօրէ և անդրանիկ ի *մօրէ*. և անդրանիկ շնորհաց և արդարութեան. և անդրանիկ յարութեան մեռելոց...: - 486. Զագահութիւնն՝ բազմաբաշխութիւնն. որ ետ զմարմին իւր ի կերակուր և զարիւնն իւր ըմպելի. զհոգին ի գին. զջուր կողին ի լուացումն. զհանդերձն՝ խաչողացն. զմարմինն՝ աշակերտացն. և *զմայրն* յոհաննու: - 489. Հինգերորդ՝ ապականութիւն մեր մարմնոցս է՛ ի սերմանէ հօր ի ձեռն կնոջ խառնեալ. իսկ մարմին բանին ո՛չ է ի սերմանէ հօր և *մօր*. այլ ի կուսական արգանդէ և յանապական արենէ բեղնաւորեալ որպէս ցուցաւ ի վերոյ ի սոյն գլուխ ի **ծ** համարն. ապա ուրեմն անապակա՛ն է մարմին բանին աստուծոյ: - 499. Վեցերորդ՝ զմարիամ *մայր* փրկչին կոյս և անապական խոստովանին հարք ուղղափառութեան. և զայս ո՛չ ըստ գոյացութեան բնութեան, այլ զի ծնաւ զբանն աստուած անապական մարմնով: - 499. Չորրորդ՝ մարիամ յակոբայ և յովսեայ *մայրն*, որ էր կին յովսեփայ կոչեցեալն աստուածահայր: - 517. Արդ մի՛ մերժենար դու յիս անկատար գոլով. որպէս *մայր* քո եւա ի ծառն գիտութեան...: - 518. Իսկ փոխումն՝ աստուածամօրն կուսի. որ որդին յատկապէս սպասաւորէ *մօրն*: - 519. Երրորդ՝ զի պա՛րտ էր քրիստոսի հովուել զպարզամիտ աշակերտսն որպէս հաւ զձագս, և *մայր* զմանկունսն. և թէ ի սկզբանէ զհոգին ընկալեալ էին՝ ո՛չ էր պիտոյ հովուել զնոսա: - 521. Եւ նա ի կոյս *մօրէ*, և մեք յաւազանէ ծնեալք: - 528. Մի կոչի եկեղեցի՝ ո՛չ տեղեաւ մի. այլ միով հաւատով և յուսով կոչմանն. և միոյ *մօր* և մի որովայնի ծնունդ աւազանին. և մի կերակուր որ է տեսութիւն աստուածային գրոց. և մի մարմին և արիւն փրկական. և մի գլուխ և պսակ և զգեստ ունիմք զքրիստոս: - 533. Դարձեալ՝ թէպէտ մի է հայր և *մայր* քրիստոսի և եկեղեցւոյ, այլ զանազան կերպիւ: - 534. Իսկ *մայրն* է եկեղեցի վասն անդամոցն քրիստոսի: - 534. Իսկ **է** երորդ ժողովն եղև ի թագաւորութեանն միւս կոստանդեայ. որոյ *մայրն* եռինէ: - 544. Եւ այլ բազում և զանազան ազգապղծութիւն ընդ հոգևորս և ընդ մարմնաւորս. երկու եղբարց և **բ** քերց. և ընդ քերց հոգևոր *մօր*. և անխտիր ի բազմանկողինս և այլս բազումս որ զազիր է խօսելոյ օրէնքէ նոցա: - 552. Սա՛ է սնուցօղ ամենայն մեղաց, *մայր* դատարակաբանութեան: - 570. Թէ յղի կին մկրտի՝ օգո՞ւտ է այն տղային թէ յարգանդ *մօրն* մեռանի: - 592. Առաջին մեք, և հայրն, և պապն մեր. հօր պապն, և պապու հայրն, և պապուն պապն, և ապպապն. որ է՛ է. նմանապէս և ի *մօր* կողմն: - 611. Զի **բ** են հայր և *մայր* մեր. և **բ** ծնունդ որդին և դուստրն. և **բ** եղբայրն և քոյրն. և մեք ի մէջն **է** երորդ: - 611. Այլ և սա՛ *մայր* կոչի հոգևոր ծննդոցս. և մեք *մայր* և ծնօղ հոգևոր զաւակացս բարեաց: - 614. Այլ և արտասուքն բռնադատէ՛ զաստուած

յողորմութիւն. որպէս բազում որդիք *մօրն*...: - 620. ...և ոմն լեզուն պարզեալ խնդրէ ի *մօրէն*...: - 620. ...և միւսն երախայ և ո՛չ ունի լեզու, միայն լայ. և *մայրն* գթայ ի յարտասուքն և տայ կերակուր: - 620. Այլ և առընթեր յարութեան աւետարանն. զի նո՛յն է խորհուրդ ծննդեանն ի կոյս *մօրէ* և ի կոյս գերեզմանէ: - 628. Նա՛խ՝ զի առ որդին մարմնացեալ՝ և զգութ *մօրն* բարեխօս արկանեմք: - 633-634. **Դարձեալ *մայրն* ընդ որդւոյն պատուեմք**: - 634. Եւ ծնանիլն յիւր *մօրէն*: - 638. Որ է՛ կոյս՝ և *մայր*՝ և ծնօղ աստուծոյ: - 645. Որ և զուստիանէ սրբուհի կոյսն *մա՛յր* արար կանանց հաւատաւորաց: - 658. Նա՛խ՝ զի յետս դառնամք մահուամբ, այսինքն ի դրախտն և ի *մայր* մեր, պա՛րտ է զի նախ ոտքն ընթասցի: - 676. Երկրորդ, զի հողն *մա՛յր* է մեր առաւել քան զայլ տարերք...: - 677. ...ծածկէ՛ զգարշութիւն մեր. որպէս *մայր* մանկան քան զայլ կարևորս: - 677. Սակայն ի յղութեանն իջանէ չար հոգին ի յորովայն *մօրն*. և նմա զօրութեամբն և ներգործութեամբն ծնանի մանուկն և սնանի և հասանէ յերիտասարդութիւն. - 706. Իսկ վիժեալն ի յարգանդէ ըստ որում է սերմ կամ արիւն *մօրն* ի *մա՛յրն* յարիցէ: - 719. Այլ և նոքա որ յարգանդի *մօրն* մեռանին թէ առին զբանական հոգին: - 724. Արդ որ *մայրն* է կենդանութեան, նա անապական է. այսինքն է սուրբ խաչն: - 734. Որպէս զառն *զմայրն*, և նոքա զծնօղս իւրեանց: - 753. Եւ յորժամ առաքին մեղաւորքն ի հուրն յաւիտենից, զտանեն զծնօղս իւրեանց որպէս զառինք *զմարս*, և յաւիտեան խածատեն զնոսա: - 753. Ո՛չ բնաւ, թէպէտ հայր տեսանէ զորդի կամ *մայր* զդուստր. և կամ զեղբայր և զայլս. ո՛չ միայն ո՛չ ցաւին, այլ ա՛յնպէս լինի հեշտալի, որպէս տեսանեմք զձկունս որ խաղան ի վտակս: - 754. Սա՛ է *մայր* մեր եկեղեցի որ հոգևոր որդիս աստուծոյ օրըստօրէ ծնանի. որ հասեալ ժառանգութեանն. ի բաց տանելով զաղախինն և զորդի նորա: - 756. Ո՞րպիսի լիցի օրն այն, մինչ քեզ մարիամ *մայր* տեառն ընդ առաջ ելանէ հանդերձ պարուք կուսանաց: - 764. Երկրորդ՝ բա՛րձր է *մայրն* և արմաւենին. և արդարքն անխոնարհելի՛ են ի մեղս...: - 765. Երրորդ՝ արմաւենին ուշ բերէ պտուղն. և *մայրն* յետոյ պնդի. և փառք արդարոցն է՛ ի կատարած աշխարհի. և պնդիլն անմահութեամբ: - 765. **Իսկ հաւատ ի մարդկութիւն որդւոյ, Ի կուսէն երևեալ անհայր ի *մօրէ*. որպէս անմայր ի հօրէ:** - 769. Եւ արդ, Ո՜ հաւատ մեծ պաշտելի լոյս իմ և տիպ. և գանձ անկողոպուտ. կացցես առ իս. յարգանդէ *մօր* իմոյ խուսափեալս ի ծոց քո: - 771

**ՄԱՅՐԱԿԱՆ +** Եւ զի ո՛չ ասաց սառայի զիրն. զի մի՛ *մայրական* աղետիւ խափա՛ն լիցի գործոյն: - 304. Զի ունի *մայրական* խնդութիւն հանդերձ կուսութեան պատուով: - 463. Եւ որպէս ասացաւ ունի *մայրական* խնդութիւն հանդերձ կուսական պատուով: - 469. Չորրորդ՝ որպէս արու բռնացա՛ւ տէր ի քակել զօրէնս բնութեան. և խզեաց զկապ կուսանաց և *զմայրական*. այսինքն զի որ մա՛յր է՝ կոյս ո՛չ է. և որ կոյս է՝ մայր ո՛չ է: - 480

**ՄԱՅՐԱՔԱՂԱՔ +** Իսկ Հինգերորդ ժողովն եղև ի վիճակս գրիգորիսի. ի *մայրաքաղաքն* աղուանից պարտաւ: - 545

**ՄԱՅՐԱՔԱՂԱՔԱՑԻ +** Երրորդ՝ Մետրապօլիտք. որք են *մայրաքաղաքացիք*. և ունին սըքեմ զնոյն. բայց եմիփորոն գ կրկին: - 607

**ՄԱՅՐԻ +** Մարերի. որպէս թուլանան *մայրիք* տերևօք և ոստովք. և լինին մայր թռչնոց և գազանաց: - 201

**ՄԱՅՐՈՒԹԻՒՆ +** Եւ կարեմք ասել զմի և զնոյն՝ կուսութեամբն կոյս. և *մայրութեամբն* մայր: - 77. Եւ *մայրութեամբն* կոյս, և *մայրութեամբն* մայր: - 77. Այսպէս գերազա՛նց է քան զամենայն շնորհք հեղեալ ի ստեղծուածս. այս է գերագոյն շնորհք. որ պատրաստեաց զկոյսն առ *մայրութիւն* աստուծոյ: - 463

**ՄԱՅՐՕՐՀՆԷՔ** - Զօրհնութիւն կարգաւորութեանցս այսյանցիկ ո՞վ է արարեալ. և ո՞վ է բերեալ յազգս հայոց... Իսկ զկարգ *մայրօրհնէից*՝ սուրբն կիպրիանոս կարգեդրնացի: - 658

**ՄԱՆ +** Եւ զի զե զգայարանս մարդոյն խաբեաց, **Ե** *ման* առնու ի գնալն: - 219

**ՄԱՆԱԶԿԵՐՏ** - Չորրորդ՝ մեծ և արժանաւոր ժողովն եղև ի *մանազկերտ.* ի **ճիդ** թուականին. հրամանաւ և արդեամբք գիտնաւոր և մեծ իմաստասիրին սրբոյն յոհաննու կաթողիկոսին հայոց օձնեցւոյ: - 545

**ՄԱՆԱՅԷՆ** - Եւ *մանայէն* թագաւորն իսրայէլի ետ նմա **դ** տաղանդ արծաթոյ և դարձաւ ի նմանէ: - 446

**ՄԱՆԱՆԱՅ +** Եւ *մանանայն* յանապատին կերակրելի էր. և մնաց անապական ի մէջ սափորին: - 223. Որպէս մարմինն ադամայ յերկրէ է և անապական. և *մանանայն* յօդոյ և անապական. և յա՛յտ է ի մէջ սափորին: - 225. **Քսանեւ**, *մանանայն* օրինա՛կ է ճշմարիտ մարմնոյն քրիստոսի: - 283. Չորեքտասաներորդ, մովսէս հաց *զմանանայն* ետ և լորամարգ ի ծովէ՛: - 329. Երկրորդ՝ յօրինակ ժողովրդեանն իէլի. զի սրբութեամբ էջ յեգիպտոս և պղծեցաւ ի գործոց նոցա. մինչև սրբեցաւ յամպն և ի ծովն. և ճաշակեաց *զմանանայն*: - 333. Երրորդ՝ յօրինակ հեթանոսաց որք զազրացեալ էին մեղօք մինչև

ջրով աւազանին սրբեցան և ճաշակեցին *զմանանայն* կենաց ի յերկնից իջեալ: - 333. Զի՞նչ էր *մանանայն*: - 338. *Մանանայն* թարգմանի՝ «զի՞նչ սա»: - 338. Զոր տեսեալ ժողովրդեանն նոր՝ ասէին ցմիմեանս, զինչ է սա. և կոչեցաւ *մանանայ*: - 338. Արդ՝ *մանանայն* օրինա՛կ է անճառ անուանն աստուծոյ: - 338. Այլ և *զմանանայն* հաց հրեշտակաց կոչէ մարգարէն դաւիթ: - 338. Վասն է՞ր ի զանազան համս փոխէր *մանանայն*: - 339. *Մանանայն* ո՞րպէս է օրինակ մարմնոյն քրիստոսի: - 339. Երկրորդ՝ *զմանանայն* որ շատ ժողովեաց՝ ո՛չ յաւելլաւ. և նւազն ո՛չ պակասեաց: - 339. Երրորդ՝ զի անապական՛ն էր *մանանայն* օրինակ անապական մարմնոյն քրիստոսի: - 339. Դարձեալ՝ յատկութիւն *մանանային*: - 339. Զի՞նչ էր խորհուրդ *մանանային* ի մէջ սափորին: - 339. Դարձեալ՝ ոսկի սափորն է՛ անապական կոյսն. և *մանանայն* բանն աստուած հոգւով և մարմնով միացեալ յարգանդի աստուածածին կուսին: - 340. Եւ *մանանայն* անապական մարմինն: - 345. Եւ զխաչն հրաշագործ՝ զկենսատու *մանանայն*. և բուրվառ զխունկս աղօթից. վէմն սեղանն սուրբ. և քերովբէք քշոցքն **բ**: - 345. Նախ՝ *մանանայն*, ուր ո՛չ խառնիւր աղ...: - 356. Արդ՝ *մանանայն* նշանակէ՝ զփրկական խորհուրդն ուր ո՛չ է աղ: - 356. Տասներորդ՝ զի զքրիստոսի առաջին գալուստն նշանակէր տապանակն և տախտակն և *մանանայն* և այլն. և զվերջինն՝ վէմն աղբիւրացեալ ի յաւիտենից կեանսն: - 385. Եւ նոցա *մանանայ* յերկնից ետ և տրտնջէին և սնոտի՛ հաց կոչէին: - 386. Այլ բանն աստուծոյ ի ծովէ լորամարգ ի վիմէն ջուր և յօդոյ *մանանայիւ* կերակրեաց զնոսա. զի ամենակա՛ր է զօրութիւնն աստուծոյ: - 397. Երկրորդ՝ զի խ ամ յանապատին հաց ո՛չ ետ նոցա. այլ *մանանայ* և զայլսն. զի բանիւն աստուծոյ կերակրեցան հոգւով. և ո՛չ մարմնական հացիւ: - 397. Չորրորդ՝ հաց ի յերկնից իջեալ *մանանայն* կենարար. և բանն աստուծոյ նոյն ինքն տէրն մեր. որպէս ասաց առ փորձիչն թէ՝ ինև կերակրին ամենայն սուրբք և ո՛չ հացիւ: - 397. Եւ այս գիտելի է, զի **գ** պարգևք էր ժողովրդեանն. այսինքն Ամպն, Վէմն, և *Մանանայն*: - 415. Իսկ յետ մահուան ահարօնի նուազեաց *մանանայն*. յորում տրտնջէին և յօձից սատակեցան: - 415. Նուազիլ՝ ո՛չ ասեմ զամենևին պակասիլն. զի առ ջրհորաւն մեծի անյայտ եղև վէմն. և յելսն յորդանանու *մանանայն* ո՛չ գտաւ: - 415. Երկրորդ՝ նշանակէր *զմանանայն* որ նոյնպէս ոչ յաւելոյր և ոչ նուազէր: - 444. Ութերորդ՝ *մանանայն* յանապատի էր օրինակ անապական մարմնոյ փրկչին. և է՛ անապական մինչև ցայսօր ի մէջ ոսկի սափորին. ապա ուրեմն ճշմարիտ մարմինն քրիստոսի էր անապական ի կուսական արգանդէ աստուածածին կուսին: - 499. և Դարձեալ ասեմք թէ յանապատին հրամայեցաւ զսպել ի սրբութիւն *մանանային* որ օրինա՛կ էր ճշմարիտ *մանանային* մարմնոյն սրբութեան: - 502. *Մանանայ* նոցա բանն աստուծոյ. և ջուր հոգին սուրբ: - 682

**ՄԱՆԱՍէ** - Բայց ասեն ոմանք թէ՝ յաւուրս *մանասէի*՝ Նումաս պումիլոս **բ** ամիս յաւել ի տարին հռօմոց. զի յառաջ քան զնա՝ **ժ** էր. և յաւել ի նոսա զյունվար և զփետրվար: - 201. Երրորդ՝ զի ո՛չ գիտէին զանդրանիկն ժամանակաւ, և ո՛չ զկրտսերն. և լինէր փոփոխումն վիճակաց նոցին. որպէս յակոբ էառ զանդրանկութիւնն եսաւայ. և եփրեմ *զմանասէին.* թէ և սոքա տեսչութեամբն աստուծոյ. այլ նոքա ի պատրանաց լինէին: - 238. Որպէս նշանակեցաւ յեփրեմն և ի *մանասէ*. որք փոխեցան յաջ և յահեակ: - 310. Եփրեմ. *Մանասէ.* և Բենիամին. **բժ**ան բիւր և **ըռբճ** զօրք նոցա: - 378. Հինգերորդն Գեդէոն. որդի յովասու ի *մանասէ* է՛ եփրաթացի ամս **խ**: - 420. Եւ զայս թիւ ոմանք առնուն ի գերութենէն *մանասէի*՝ և աւելի՛ է: - 447. *Մանասէ* ամս **ծե**: - 453

**ՄԱՆԱՒԱՆԴ, ՄԱՆԱՒԱՆԴ ԹԷ, ՄԱՆԱՒԱՆԴ ԶԻ +** *Մանաւանդ թէ* առ առաջին պատճառն վերանայ այս անիրաւութիւն, որ ետ զօրութիւն աստեղացն այսպէս անիրաւ բաժանարար գոլ: - 12. *Մանաւանդ թէ*՝ որպէս վասն նեռինն յառաջագոյն պատմեցաւ եկեղեցոյ՝ զի զգուշասցին: - 35. Վեշտասաներորդ՝ *մանաւանդ զի* յոյժ անվայելուչ է կարգել զծառայն ընդ տեառն՝ և զստեղծուածն ընդ ստեղծողին՝ յորժամ ա՛յլ է բնութեամբ: - 67. Զի թէ բանին, անմման ինչ խորհիս. զի նա՛ բնութեամբ ունի. *մանաւանդ* եղեր արիոսեան: - 70. *Մանաւանդ թէ* և բնութիւնքն: - 70. *Մանաւանդ թէ* ամենայն ինչ հասարակ է. բնութիւն. կամք. թագաւորութիւն. և այլն: - 104. *Մանաւանդ թէ* իւրաքանչիւր տարերք **բ** ծայրք որակութեանց ունին. զմինն գոյացական և զմիւսն պատահական. ըստ այսմ պա՛րտ է ասել քեզ մետասան բնութիւն քրիստոսի: - 176. Կարգաւոր էր նախ պատրաստել զարքունիս որ է երկինք և երկիր. և զգահոյս որ է՛ դրախտն. և զսպասաւորքն որ են կենդանիքն. և զմեծութիւնս տնկոց և բուսոց. *մանաւանդ* ոսկւոյ և արծաթոյ և ականց ի սիրտ երկրի գանձել. և ապա՛ թագաւորին բնակիլ: - 230. Եւ *մանաւանդ զի* բնութիւնն յանկարծակի ո՛չ կարէ ներգործել. այլ սակաւ սակաւ հետևելով յանկատարէն ելանէ ի կատարեալն: - 255. Աստ հայր ազգաց բազմաց եղև. *մանաւանդ թէ* և նորին իսկ քրիստոսի ըստ մարմնոյն: - 288. Զի վասն առաջնոյն ասեն վարդապետք, եթէ ադամ ո՛չ եկաց ի դրախտին **ռ** ամ, կամ աւելի և կամ պակաս, այլ մի օր. *մանաւանդ* է

ժամ: - 290. Եւ որպէս հայրն աբրահամ նմանեցաւ աստուծոյ հօր, *մանաւանդ* և որդին իսահակ համեստութեամբ ինչ իրօք նմանի որդւոյ նորա քրիստոսի: - 304. *Մանաւանդ թէ* և միածին. ըստ այնմ «միածին որդին պատմեաց մեզ»...: - 305. *Մանաւանդ թէ* ի մարգարէսն: - 305. Տասներորդ՝ յետ որոյ հնազանդեցան նմա՛ ամենայն իէլ. և տեառն մերոյ զկնի խաչին հաստատեցան ի հաւատս. *մանաւանդ* յետ է դար կենցաղոյս ամենայն լեզու խոստովան լիցի զտէր յիսուս քրիստոս ի փառս աստուծոյ հօր ամէն: - 427. *Մանաւանդ* կանանց: - 466. Երրորդ՝ զի ո՛չ ինչ յորոց ստեղծ աստուած գարշի բնակիլ. *մանաւանդ* յարգանդի զարդարեալ կուսութեամբ. զի զոր ստեղծ ձեռօք, բնակէ՛ ի տան ձեռագործի իւրոյ: - 469. Ո՞չ ապաքէն մովսէս ի հինն որոշեաց զսուրբս և անսուրբս. *մանաւանդ թէ* յաւուրս նոյի գոյր ընտրութիւնս. այսպէս ցուցաւ և մեզ պահելի իբր զբնական օրէնս. այլ սոցա ոչինչ է պիղծ ի կենդանեաց: - 552. Եւ յայտնիկ միաբանութիւնս որ ըստ կանոնի՝ յաւէտ միաբանութիւն զայս է իմանալ՝ որ ըստ բոլորին օրինադրութեանց սահմանաց կամ ըստ գլխաւորագունիցն լինիցի. և ո՛չ մասամբ միով միաբանեալք և բազմօք զանազանեալք. *մանաւանդ* թէ հակառակեալք և ընդդիմացեալք: - 552. *Մանաւանդ* զկեղծաւորեալ վիճիլս: - 553. Ա՛րդ՝ մեղքն որ ընդ դէմ հոգւոյն սրբոյ՝ *մանաւանդ* ելանէ ի չար կամաց անձնիշխանականին. և ուղղակի մարտնչի ընդ դէմ շնորհաց հոգւոյն սրբոյ. և յիրաւի անթողլի՛ է: - 566. Ութերորդ, բարի և չար սերմանիքն ի միասին բուսանին և մնան մինչ ի հունձս. *մանաւանդ* մինչ ի կալն ըստ առակի տեառն...: - 721. *Մանաւանդ թէ*՝ հոգին սուրբ գրօղ դպիր. և ուղղութիւնն գրիչ գործիք. և որք զմելանն առատ տամք և զմագաղաթն, զսուրբ գործս անկեղծաւոր և զբանս աղօթից օրինաւոր, ա՛յնքան առաւել գրիմք ի գիրն կենաց: - 741. Այլ և *մանաւանդ* վասն աստուծոյ ընդ ծառայս իւր սիրով միաւորութեանն: - 757. Ծնունդն, զօրութիւնն, մահն, ընդ աջմէ հօր նստիլն, և այլն ամենայն, զաստուած ի մարդում, *մանաւանդ* զմարդ յաստուածում ըստ սքանչելագործին գրիգորի ցուցանէն: - 770. Այլ ի պատճառս տալ իմաստից. որով ո՛չ յագեսցի ակն ի տեսոյ. ի գլուխ գոլոյ իմաստնոյ. *մանաւանդ* և ի շահ օգտի բանասէր մտաց միեղէն եղբարց: - 773. Ո՛չ ըստ բաւական բանի առեալ զլուծումն. այլ ըստ կարի տկարութեան արտայայտումն. *մանաւանդ* հարկեալ ի սիրոյ քումդ եղբայրական խնդրոյ: - 788

**ՄԱՆԵՄ +** Այլ նարօտն կարմիր և սպիտակ *մանեալ*՝ զարիւն և զջուր կողին քրիստոսի: - 594

**ՄԱՆԷ** - Եւ ըստ այսմ լինին *մանեայ* **բ** աստուածքն. մինն բարւոյ և մինն չարի արարիչ. որ է անաստուածութիւն: - 62. Եւ աւետարանի մեկնութիւն *զմանեայ:* - 545

**ՄԱՆԷՈՆ** - Բանէաս *Մանէոն* և այլքն քնարօք երգէին: - 641

**ՄԱՆԻՔԵՑԻՔ** - Իսկ ընդդէմ *մանիքեցւոցն*՝ որք ասեն **բ** սկիզբն, չար՝ և բարի. այսպէս հանդիպեսցուք և պատասխանեսցուք ի կարճոյ: - 20. Նոքա ի կիսաէշ նման զտնօրէնութիւնն սուրբ համբաւեն. և կամ առ աչօք և ունայնութեամբ. որպէս *մանիքեցւոցն*, և կամ եւտիքի կարծի: - 81

**ՄԱՆԻՔԷՈՍ +** Ասելով թէ պատճառ ամենայնի՝ բարեաց և չարեաց մերոց ո՛չ մեք եմք, այլ է՛ առաջին պատճառն աստուած. որք փախչելով յառաջ ասացեալ բախտէ՛ և ճակատագրէ՛ աստեղացն, փոխանակ նոցա յառաջին պատճառն վերագրեն զիարկն. որպէս զի մի՛ ասիցեն երկու սկիզբն ըստ *մանիքոսի*: - 13. Եւ եթէ երկուցն **բ** է սկիզբն, և այսպէս ի յաստուած երևի երկու սկիզբն, կամ երկու անսկիզբն ըստ *մանիքոսի*: - 14. Չորրորդ ասեն՝ թէ չարն ո՛չ է յաստուծոյ, ապա երևի թէ այլ ոմն է չարի սկիզբն, և այլ ոմն բարւոյ. և լինի **բ** սկիզբն բարի և չար ըստ *մանիքոսի:* - 16

**ՄԱՆԿԱԲԱՐՁ +** Մարիամ ամուսնացաւ ի բեթլէհէմ և ծնաւ զսողոմի *զմանկաբարձն* յիսուսի. ո՛չ որ մայր եղև որդւոցն զեբեթեայ. զի այն. սողովմէ դուստր է յովսեփայ աստուածահօրն...: - 460

**ՄԱՆԿԱԿՈՏՈՐ +** Եւ տէրն մեր քրիստոս ի *մանկակոտոր* սպանմանէն հերովդէի: - 328

**ՄԱՆԿԱՆԱՄ +** Իսկ սաղմոսն՝ *մանկացելոցն* մկրտութեամբ հրամայէ որդիացելոցն օրհնել զհայրն երկնաւոր. որում փառք յաւիտեանս ամէն: - 629

**ՄԱՆԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ +** Ա՛րդ՝ պսակ օրհնութեան դնի յեկեղեցին, և *մանկարարութիւն* ո՛չ: - 225. Նոյնպէս և ի դրախտն եղև պսակ օրհնութեան, և *մանկարարութիւն* ո՛չ: - 225

**ՄԱՆԿՈՒԹԻՒՆ + Յորժամ հիւանդանաս՝ մեռծ ես դու հիւանդութեան քոյ. և յորժամ մանուկ լինիս՝ մեռծ ես *մանկութեանն*. ի յալևորութեանն՝ ծերութեանն ես մեռծ**: - 37. Եւ որդի տգէտ վասն *մանկութեան*: - 105. Նոյնպէս և կեանք մեր. այլայլի ի *մանկութենէ* ի ծերութիւն. յառողջութենէ ի հիւանդութիւն...: - 199. Եւ դարձեալ՝ հասակ մարդոյ չորիցս ունի զփոփոխումն. այսինքն, Ի *մանկութիւն*. Յերիտասարդութիւն. Յալևորութիւն. և Ծերութիւն: - 265. Ա՛րդ՝ *մանկութիւնն* կատարի ի չորեքտասան ամն. և է՛ կատարեալ ծնօղն և ծնունդն: - 265. Երեկոյ է ի տղայութենէ ի *մանկութիւն*: -

265. Եւ հաւախօս՝ *մանկութիւնն*: - 266. Ապա ուրեմն յա՛յտ է՝ զի տղայութիւնն ո՛չ կարէ զնմանն ծնանիլ. այլ *մանկութիւնն* որպէս ասացաւ: - 266. Յեղանակս գարնան, և յառաւօտուն մինչև յերեք ժամս, և հիւթոյ արեան, և *մանկութեան* հասակն ի տղայութենէ ծննդեան և աճման՝ ունին զնմանութիւն օդոյ ջերմ և գէջ գոլով: - 266. Վասն որոյ ի *մանկութեանն* անկա՛ր է զնմանն ծնանիլ: - 266. Ի *մանկութենէ* կռոց նուիրեցաւ, և հրեշտակ աստուծոյ յափշտակեալ սընոյց զնա յանապատի մինչև հասոյց ի կատարումն: - 300. Տասն ամն *մանկութեան* է. և ի՝ պատանեակ զինուորութեան. և **իը**՝ երիտասարդութեան որ է՛ **դէ**: - 343. *Մանկութեան*, երիտասարդութեան, և ծերութեան: - 360. Երկրորդ՝ որ անգիտութեամբն է և ակամայն՝ է՛ մեղք ներելի և այն. որպէս մեղք *մանկութեան* և անգիտութեան: - 385. Այլ և երկիւղի զգայութեան չորս հասակի մարդոյն. ի *մանկութեան*, յերիտասարդութեան, յալիս և ի ծերութեան: - 493. Եւ զդիաթեկ *զմանկութեան* տեառն: - 545. Նոյնպէս մարդս ի *մանկութեանն* անմեղ է, և ի մեռանիլն մոռանայ զաշխարհս...: - 630. Զի թէ *մանկութիւնն* է և թէ մեռանիլն, երկիւղի ժամանակ է. որպէս ծառայ ի տեառնէ: - 631. Երկրորդ ըստ տնկոց ի *մանկութիւն* և ի ծերութիւն: - 663. Հինգերորդ, զի **գ** է հասակ մարդոյս. *մանկութեան* երիտասարդութեան և ծերութեան յորում փոփոխիմք վարուք. վասն սոցա **գ** հանգիստ դնեմք: - 675. Իսկ *մանկութիւնն* թերի է զի ո՛չ եհաս ի կատարումն. և ծերութիւնն պակասութիւն ունի զի անցեալ է զկատարելութեամբն: - 726. Եւ ի մէջ *մանկութեան* և ծերութեան երիտասարդութիւնն է թիւ կատարեալ. - 726. Երկրորդն է *մանկութիւն* անծերանելի...: - 766

**ՄԱՆԿՏԻ +** Զշարականս ո՞վ է ասացեալ: ...Եւ զբազումս ի *մանկտեացն*: Զխաչին և զեկեղեցոյ, սահակն որ գնաց ընդ դէմ տաճկաց: - 637

**ՄԱՆՈՎԷԻ** - Երեքտասաներորդն ի դանա որդի *մանովէի* Սամփսոն. որ կալաւ յաղուէսս, և կապեաց ի նոսա ջահս. և այրեաց զանդաստանս այլազգեացն: - 420. Երրորդ՝ հրեշտակն կրկին երևեալ կնոջն, և ապա՛ *մանովէի*: - 422

**ՄԱՆՈՒԿ +** Կամ է՛ ի ներգործական պատճառն. որ ունիցի խափան ինչ և արգելումն. որպէս *մանուկս* այս երկար ապրեսցի. կամ թէ *մանուկս* այս լինի երաժիշտ, թէ ո՛չ լինի խափանումն իմն: - 9-10. Եւ թէ է ի պատճառն ներգործական՝ որ ունի արգելումն, է՛ որպէս անէծք, կամ օրհնութիւնք, կամ աղօթք. և *մանկանն* յերկար ապրիլ. կամ լինիլ երաժիշտ: - 10. Յորժամ հիւանդանաս՝ մեծ ես դու հիւանդութեան քոյ. և յորժամ *մանուկ* լինիս՝ մեծ ես մանկութեանն. ի յալևորութեանն՝ ծերութեանն ես մեծ: - 37. Նախ՝ ոչ կարել վասն նուազութեան զօրութեան ժամանակի և դիմի. որպէս ո՛չ կարէ *մանուկ* կռուիլ՝ և կորիւն տեսանել: - 44. Որ նշանակէ հին աւուրց զծերն. և *մանուկ* զանծերանալին: - 115. Եւ *մանուկն* զի անփոփոխ և առանց այլայլութեան է: - 115. Երկրորդ՝ ծերն նշանակէ զանսկիզբն գոլն. և *մանուկն* զանվախճանն. զնոյն միմեամբք՝ և ո՛չ այլ և այլ: - 115. Երրորդ՝ այսպէս մեկնեն, եթէ հին աւուրց զնախնի ժամանակս նշանակէ. և *մանուկն* զնախնի թիւն. զի միակն սկիզբն է ամենայն թըւոց. և որ մեծ է միակին՝ սկզբնապետագո՛յն է քան զհեռագոյնն: - 115. Եւ *մանուկն* ըստ թըւոյ: - 115. Զի կամ ի զօրութենէ լինի ներգործութեամբ. որպէս *մանկան* հիւսնել: - 162. Դարձեալ՝ այն զօրութիւնն միշտ է. զի բնաւորեալ է ընդ ներգործութեան. իսկ միւս զօրութիւնն երբեմն է. զի կամ նախ է ներգործութեան. որպէս *մանկան* հիւսնել: - 168. Եւ կամ որպէս ծնեալ *մանուկն* ունի առ ինքն ծածկեալ զհոգին. այլ նա կերակրի և ապա զգայ. և յետոյ խօսի: - 255. Եւ ի հա աւուրցն ի վեր՝ երևեալ շնչոյն ձևակերպէ՛ զկերպ մարդոյ մինչ ի **խ** օր արու *մանկան*. և իսկոյն հեղի ի նա՛ հոգին բանական ի շնորհացն աստուծոյ ծագեալ ի նա: - 261. Այսպէս և արու *մանկանն* յաջ կողմն բեղնաւորեալ՝ վասն ջերմութեան լերդին և լեղւոյն՝ փութով կատարի անդամօք: - 261. Զի բոյսք *մանունք* և չորքոտանիք *մանունք* կարեն ի նոյն ամի զնմանն ծնանիլ ըստ վերոյ ասացեալ երրեակ թուոյ ամսոյ, կամ կրկին վեցեկի: - 264. Զի *մանունքն* յամսօրէից և ի վայր, ի շաբաթս և յաւուրս և ի ժամս ըստ նոյն թուոյ կարեն զնմանն ծնանիլ. և առաւելքն առաւելեալ ամօք կրկին կամ երեքկին որպէս ասացաք: - 264. Եւ այսպէս ի ներքուստ ի վեր կրկնեալ եօթնից որ է չորեքտասան, կատարի ցանկական մասամբն և կարէ՛ զնմանն ծնանիլ և կոչի *մանուկ*: - 264-265. Վասն որոյ յայսմ հասակի տիոց հրաման է յեկեղեցւոյ պսակ դնել այսպիսի *մանկանց*: - 265. *Մանուկ*. Պատանեակ. Երիտասարդ. Ծեր. և Զառամացեալ: - 265. Եւ որպէս փարաւօն վասն հեղցուցեալ *մանկանցն*՝ ջրասոյզ կորեաւ. և յառաջ քան զայս՝ **ժ** հարուածովք պատժեցան: - 288. Երկրորդ՝ որպէս *մանուկն* տևէ՛ յարգանդի **թ** ամիս՝ և **ե** օր անդրանկանն՝ և ապա՛ ծնանի: - 290. Եւ **ծ** կանգունն, զի *մանուկն* յարգանդի խօրեայ հոգևորի և **ծ**օրեայ շարժի: - 293. Ո՛չ կերին. զի թէպէտ ժողովեաց, սակայն ո՛չ կերին. այլ շնորհօքն աստուծոյ կացին որպէս *մանուկն* յարգանդի մօրն ապրի: - 294. Զի տղայ *մանուկ* երթեալ ո՛չ ոք գիտէր զնա. և ո՛չ նա զոք ճանաչէր զի քանանացի՛ էր և աննման վարուց

նոցա: - 300. Նա՛խ՝ մարմնական. որպէս յղացեալ *մանուկն* ծնանի ի մօրէ՛: - 308. Երրորդ՝ կոտորեալ *մանկունքն* բեթղէհէմի ո՛չ էին ի զաւակացն հռաքէլի որպէս ցուցաւ ի վերոյ: - 312. Եւ տէրն մի անգամ կատարեաց ի վերնատունն և ետ յառաքեալսն և ի *մանկունս* եկեղեցւոյ: - 329. Երկրորդ՝ զարու *մանուկն* հեղձնուին: - 335. Դարձեալ՝ **ղ** հասակ փոխի մարդոյս. *մանուկ*. երիտասարդ. կատարեալ հասակ. և ծեր: - 351. Նշանակէ՛ *զմանկունս* ընդ ձեռամբ խրատու վարժեալ և կրթեալ: - 357. Եւ դարձեալ՝ *մանուկն* յարգանդի խօրեայ շնչաբերի հոգւով: - 363. Ի նոյն խորհուրդ նոր *մանկունք* յարգանդի մօր եկեղեցոյ սնանին: - 363. Եւ անկատար *մանուկն* անհաս է և խակ: - 365. Եւ լինի տեռատես, յորժամ *մանուկ* ո՛չ լինի յարգանդին և ի ստինսն զի սնո՛ւնդ է *մանկանն*: - 369. Որ է՛ Տղայ. *Մանուկ*. Պատանեակ. Երիտասարդ. Ալևոր. Ծեր. իսկ երեխայն դեռածինն է: - 378. *Մանուկ* **ժդ** ամեան: - 378. Իններորդ՝ *մանուկն* յարգանդի ո՛չ հացիւ կեայ. այլ հրամանաւն աստուծոյ կերակրի ընդ պորտն զինն ամիս. որպէս տնկականք, և որպէս նոյ ի տապանն. մինչ ելանէ յարգանդէ...: - 397. Երկրորդ՝ բարոյական. զի մին կնոջ ի բազում արանց ո՛չ երևի հարազատ զաւակն. իսկ մի այր ի բազում կանանց կարէ՛ ծնանիլ հարազատ *մանկունս* և սիրել զնոսա: - 401. Հինգերորդ՝ օրհնեալ ի տեառնէ *մանուկն* սամփսոն, և հոգւով զօրութեամբ շրջէր: - 422. Չորրորդ՝ զի ուտելով և ըմպելով անփոյթ առնէին զուխտաւորս ի հեռուստ եկեալ քառասնօրեայ *մանկամբ* և այլ ուխտիւ. և յանձրև և յարև և ի ցուրտ վաստակէին: - 425. Երրորդ՝ ի նախատինս զօրաց իւրոց. զի հովիւ *մանուկն* և որդի յեսսեայ սպան զգողիաթ. և նոքա իշխանք և մեծամեծք ո՛չ կարացին: - 427. Նա՛խ՝ սուրբ էին *մանկունքն*: - 427. Տասներորդ, *մանուկ* խարտեաշ և տեսլեամբ գեղեցիկ...: - 436. Երեսունևէ, զիաց սրբութեանն բաշխեաց *մանկանցն*. և տէրն զիացն սուրբ և երկնային հաւատացելոց: - 437. Կոտորեաց սաւուղ զքահանայս վասն դաւթի. և հերովդէս *զմանկունսն* բեթղէհէմի: - 437. Խաչանման տարածեցաւ ի վերայ *մանկանն* և կծկեցաւ. այսինքն փոքրկացաւ ի չափ *մանկանն*. և ապա յայտնապէս **է** անգամ յօրանչելով և կծկելով կենդանացոյց զնա: - 446. Եւ զդանիէլ՝ և **զգ** *մանկունքն* և **ժռ** այր ի մեծամեծացն գերի տարաւ ի բաբիլօն: - 447. Երրորդ՝ որպէս զստնդիայի *մանուկն* **է** ամ խրատէ՛ դայեակն. այսպէս ժողովուրդն որ ել յերկրէն իւրեանց, երկիրն բաբիլացւոց **հ** ամ ի գիրկս իւր դայեկեաց զնոսա և սնոյց. զի յետ դարձին յերկիրն իւրեանց՝ զբարիս գործեսցեն: - 448. Երբեմն արդարութիւնն յայտնի՝ և ողորմութիւնն ծածկեալ. որպէս պատիժն *մանկանց* առանց մկրտութեան մեռելոց, և յերկրորդ գալուստն քրիստոսի: - 459. Վեցերորդ, մայր մարդոյ ասի կինն որ ծնաւ *զմանուկ*. թէպէտ հոգին ո՛չ է ի մօրէն. այլ վասն միաւորեալ մարմնոյն մարդածին կոչի: - 466. Եւ այն ևս սքանչելիք, որ ի փոքրագոյն մարմինն ընկալեալ եղև հոգի բանական, և տեսակաւորեալ որպէս քառասնօրեայ *մանուկ* յարգանդի: - 470. Երրորդ՝ զի իւրաքանչիւր հասակի զմեղս բարձցէ. որպէս ծննդեամբն զերկունս ելոյծ. և մահուամբն զմահ. նոյնպէս և տղայ և *մանուկ* և երիտասարդ հասակաւ զնոսա արդարացոյց: - 479. Յերկրորդ ամին աստուածածինն տպացաւ ի սեանն, և քառասնօրեայ *մանուկն* յիսուս ի գիրկն. և խաչ ծիրանի յերկոսին ձեռինն: - 485. Ասեմք մեք, թէ արտածորումն մարմնոյ ո՛չ ունէր մարդն ադամ նախ քան զմեղանչելն ի դրախտին. որպէս նոյ ի տապանին. և *մանուկն* իննամսեայ յարգանդին: - 502. Իսկ վերջին դժոխք որ կոչի անջրդի գուբ, նոցա՛ է որք ո՛չ ունին չար և ո՛չ բարի. որպէս *մանկունք* անմկրտեալք. ո՛չ տանջին զի չեն մեղանչեալ. և ո՛չ հանգչին զի չեն արդարացեալ. այլ վասն սկզբնականին մնան յանջրդի գուբն խաւարին: - 505. Զի հեթանոսք զոհէին արեամբ *մանկանց*. և հրէայք արեամբ անբան անասնոց կատարէին զնաւակատիսս իւրեանց: - 509. Երրորդ՝ զի պա՛րտ էր քրիստոսի հովուել զպարզամիտ աշակերտսն որպէս հաւ զձագս, և մայր *զմանկունսն*. և թէ ի սկզբանէ զհոգին ընկալեալ էին՝ ո՛չ էր պիտոյ հովուել զնոսա: - 521. Վարդապետականն՝ *մանկանց* եկեղեցւոյ. զի յամէ օգտեալ վարդապետք՝ զգուշացուցանեն *զմանկունս* սիօնի սրբոյ: - 528. Չորրորդ՝ այժմ *մանկունք* հաւատոյ ի յեկեղեցիս նոր օրհնութիւն տալով **գ** սրբեան ձայնիւ աստուածաբանե՛ն զխաչեալն քրիստոս. և օրհնեն ի վերայ արքայութեան աթոռոյ խաչին: - 529. Երրորդ՝ երևակայութեամբ. որպէս եղիսէին ի տեսանել զզօրս հրեշտակացն, և *մանկանն* ո՛չ տեսանել: - 536. Երկրորդ՝ զի *մանկունս* հասակաւ նախ որկորստութիւնն տիրէ, և ապա՛ յերիտասարդութեանն պոռնկութիւնն զօրանայ: - 561. Իսկ ներելի մեղքն է յանցանք փոքրագոյն. քանզի ի *մանկունս* յետ մկրտութեան նախ յառնեն ներելիքն, և ապա՛ մահու չափքն: - 567. ...ահա՛ ևս յայտնի *զմանկունս* ո՛չ հաղորդեն մինչև լիցի **բժ**ան ամեայ. - 600. *Մանուկ* և անհնազանդ: - 601. Երկրորդ ժամն է՛ օրհնութիւն երից *մանկանցն* ի դէմս որդւոյ. որ նա՛ էջ ի մէջ հնոցի աշխարհիս. և փրկեաց զմեզ: - 621. Ապա՛ զկնի երից *մանկանցն* աղօթից որով քաւիմք ի մեղաց. ի փառս տալն ի բարձունս՝ անուշահոտ բուրմամբ նուիրեմք: - 628. Իսկ թէ նուազ է, որպէս *մանկունքն* ճաշուն, և համբարձին. որիշ ասեմք զփառքն և զայժմն: - 636. Վասն

զի հարցն երից *մանկանցն* է երգ: - 637. Եւ զգլոնդեանց *մանկունքն* դձ, սարկաւագ վարդապետն որ ի հաղբատ: - 638. Այլ և զընծայիլն ի տաճարն. յորում երգէին *մանկունքն* ո՛վսաննայ. որպէս յողոգոմեանն: - 638. Յայր ի յորդանան բնութեամբ որդի իւր դաւանեաց. և *մանկունքն* ի քառասնօրէին և յողոգոմին: - 638. Եւ դարձեալ՝ նոյ և ամենայն կենդանիքն ի տապանն կացին զբոլոր մի ամ և ոչ ինչ կերին. որպէս *մանուկն* յարգանդի: - 652. Չորրորդ, զի *մանկունք* եմք առագաստի և փեսայն քրիստոս ընդ մեզ է ...: - 654. Որպէս և *մանկունք* նախ խնդրեն և ապա՛ ծնօղքն կերակրեն: - 654. ...ծածկէ՛ զգարշութիւն մեր. որպէս մայր *մանկան* քան զայլ կարևորս: - 677. Նախ ասեն թէ՝ յաւուրսն յայնոսիկ յարեան *մանկունքն* յեփեսոս ի վկայութիւն առ հասարակ յարութեանն, զնոյն յիշատակեմք: - 684. ...որպէս փախեաւ կինն որ ծնաւ *զմանուկն* արու ի տեսիլն. և ո՛չ կարաց հրեղէն վիշապն հասանիլ: - 689. Եւ ասեն թէ *մանկունք* ի յանկողնի՝ են արդարքն ընդ քրիստոսի. և մէջ գիշերն է այս կեանքս. ապա ուրեմն առեալ են զվարձս: - 696-697. ...իսկ միտքն տայ պատասխանի՝ դրունքս փակեալ են. այսինքն զգայարանքս խցեալ են և մեղաց *մանկունքս* ընդ ինև ո՛չ տան թոյլ...: - 697. Սակայն ի յղութեանն իջանէ չար հոգին ի յորովայն մօրն. և նմա զօրութեամբն և ներգործութեամբն ծնանի *մանուկն* և սնանի և հասանէ յերիտասարդութիւն...: - 706. Երբեմն ողորմութիւնն ծածկեալ և արդարութիւնն յայտնի. որպէս ի պատիժ *մանկանց* առանց մկրտութեան մեռելոց. և յերկրորդ գալուստն: - 779

**ՄԱՆՈՒՇԱԿ +** Եւ սակաւակեացքն փութով. որպէս նարին խոտն, *մանուշակն*, և այլն: - 214. Այլ և արդեամբք սրբոց ոռոգեցաւ, լիցի որպէս զդրախտ աստուծոյ անուշահոտ ծաղկօք և *մանուշակօք* և մարդօք զարդարեալ և գեղեցկացեալ: - 759

**ՄԱՆՐ +** Չորրորդ՝ *մանր* փոշին ի շո՛ղն երևի: - 125. Եւ մարմնով ո՛չ բաժանին սոքա. թէպէտ և *մանր* փոշի լինին՝ ունին զքանակն զորակն և զայլն. զի անմեկնելի որոշմունք են գոյացութիւն և պատահմունք: - 175. Հինգերորդ՝ բնակութիւնք եղջերուաց և *մանր* և մեծ էրէոց...: - 211. Երրորդ՝ հարուածն է մունն որ է՛ *մանր* տիզ. կամ մծակ. կամ մժեխ. ի ցուցանել զի մանրակծո՛ւ էին բարուք և խոցոտիչք բանիւք: - 334. Չկնակուլքն մեծամեծք են որք կլանեն *զմանունս*: - 365. ...զոր նշանակէ *մանր* վարշամակ վառին: - 676

**ՄԱՆՐԱԿԾՈՒ +** Երրորդ՝ հարուածն է մունն որ է՛ մանր տիզ. կամ մծակ. կամ մժեխ. ի ցուցանել զի *մանրակծո՛ւ* էին բարուք և խոցոտիչք բանիւք: - 334

**ՄԱՆՐԱԿՈՐԻԶ** - Իսկ Թուզն քաղցր և *մանրակորիզ*. բանքն աստուծոյ քա՛ղցր են ի մեզ և մանրաքնին: - 381

**ՄԱՆՐԱՄԱՍՆ +** Իսկ Ցօ՛ղ է գիճութիւն ի պարզոյ իջեալ. զոր աստեղք ի գիշերի քարշեն ի վեր. և ընդ ծագել առաւօտուն՝ յետ ի յերկիր անկեալ *մանրամասն* շիք: - 204. Երրորդ, հայի առ նոյն ինքն արդարապէս հատուցումն *մանրամասն* քննութեամբ բարեացն և չարացն. որք առաւել կամ նուազ ունին. կամ հասարակ յերկուցն կրից: - 746

**ՄԱՆՐԱՄԱՍՆԱԲԱՐ +** Իսկ ներելին թէպէտ որոշի յերիս տեսակս ըստ մեծութեան և նւաղութեան. այլ *մանրամասնաբար* յանթիւս ելանէ. որպէս ծիծաղիլ. վայրաբանել. և այլն: - 568

**ՄԱՆՐԱՔԱՅԼ +** *Մանրաքայլն* և արագն՝ չարաբարոյ և վատուժ ասեն լինիլ: - 247

**ՄԱՆՐԱՔՆԻՆ +** Իսկ Թուզն քաղցր և մանրակորիզ. բանքն աստուծոյ քա՛ղցր են ի մեզ և *մանրաքնին*: - 381

**ՄԱՆՐԵՄ +** Իններորդ՝ օգոստոս կայսր. որ իբրև զերկաթ *մանրեաց* զամենեսին: - 29

**ՄԱՇԵՄ +** Որպէս պատմի ի դատաւորքն. յորժամ գեղէոն զփողսն հնչեցոյց, այլազգիքն ինքեանք զինքեանս ի սուր *մաշեցին* ի գիշերի: - 238. Երրորդ՝ զի ընդդէմ դրախտին բնակեցաւ և ի միշտ նախանձէն *մաշեցաւ*: - 279. Դարձեալ՝ որ քան յերկարի ժամանակս, *մաշի՛* երկիր և ի ծերութիւն երթայ և տկարանայ. որպէս ծեր մարդոյն զօրութիւնն պակասի և ցաւքն առաւելու: - 292-293. Երրորդ՝ զայն ցուցանէ որ կեանք դրախտին դարձաւ առ նոսա յանապատին անկարօտ ամենայնի. զի զգեստն ո՛չ *մաշէր*. այլ աճէ՛ր ընդ տղայոցն. և ոտն բոկ՝ և ոչ՛ կոշկոճէր...: - 397. Եւ այլք ի բազմազան տանջանարանս *մաշեայք*: - 788

**ՄԱՇԿ +** Նախ՝ մազն ի վերոյ. և մորթն. և միսն. վերին ոսկրն. և ներքին պինտ ոսկրն. խեւլապատակ *մաշկն*. և ուղեղն: - 239. *Մաշկն* է կենդանական մորթ. զոր ստեղծեաց աստուած և զգեցոյց զադամ և զևա: - 281. Իսկ *մաշկն* որ է՛ մորթ մեռելոյ, նշանակէ՛ նախ զսուգ և զտրտմութիւն վասն մեղաց: - 281

**ՄԱՇԿԱԹԵՒ +** Եւ ոմանք *մաշկաթևք*. որպէս ջղջիկանք: - 215-216

**ՄԱՇԿԵԱԿ +** Քսանեւզ, Վերացումն եղիայի շարժմամբ. և կառքն և հեծեալք տեսեալ: Ծալեալ *մաշկեակն* և նոր կումն: - 413. Ծալեալ *մաշկեակն*: - 445

**ՄԱՇԿԵՂԷՆ +** Տասներորդ՝ *մաշկեղէն* հանդերձն ադամայ. իսկ այլ զգեստք ի յարւեստից կազմեցան յետոյ: - 216. Երեսուննք՝ *Մաշկեղէն* հանդերձն: - 228. Քառասուներորդ՝ Ո՞րպէս է ի մեր մարմինս *մաշկեղէն* հանդերձն: - 228. Ութերորդ՝ *մաշկեղէն* հանդերձն. ո՛չ ըստ ոմանց թէ մորթ մարմնոյս, զի ունէր զայս ի ստեղծմանէն: - 280. Այլ մորթ *մաշկեղէն* ստեղծեաց և զգեցոյց նմա փոխանակ լուսեղէն զարդուն. զմեռելութիւն նորա նշանակելով: - 280. Երրորդ՝ *զմաշկեղէն* պատմուճանն մերկանալ. այսինքն զխորհուրդս մարմնեղէնս և զմեռելոտիս: - 281. Զի՞նչ է *մաշկեղէն* հանդերձն զոր զգեցոյց աստուած ադամայ: - 281. Ո՞րպէս ասեն *մաշկեղէն* հանդերձ զմարմինս մեր: - 282. Յանդերձն *մաշկեղէն* էր իր, և էր նշանակութիւն: - 282. Ըստ այնմ որ իր է՝ մո՛րթ է *մաշկեղէն* զոր զգեցոյց: - 282. Այսպէս *մշակեղէն* հանդերձն նշանակէ՛ զտխրալի և ախտաւոր մարմինս: - 282. Որպէս ասէ աստուածաբանն թէ՝ ոչ ինչ էր ծածկոյթ ի մէջ նոցա և աստուծոյ. իսկ յետ մեղացն փոխեցան այսոքիկ. վասն որոյ *մաշկեղէն* հանդերձին ցուցմամբն նշանակէ՛ զմարմինս: - 282. Եւ զգեստ կոչի մարմինն որ ծածկէ զհոգին. ըստ որում *մաշկեղէն* հանդերձն ադամայ որ էր արտաքին զգեստ և նշանակէր զմարմինն: - 318

**ՄԱՇՏՈՑ** - Եւ վերստին հաստատեցին զկարգեալսն սրբոյն գրիգորի և ներսէսի և սահակայ և *մաշտոցի*: - 544

**ՄԱՌԱԽՈՒՂ** (տեքստում նաև՝ **ՄԱՌԱԽՈՒԼ) +** Եւ ի սմանէ լինին *մառախուղ*՝ և սառնամանեաց տեսակ, այլ և ամպք և ձիւնաբեր և կարկուտք: - 204. Իսկ *Մառախուղն* է մթագոյն գոլորշի անձնննդական ջուրց. քան զօդ թա՛նձր է, և քան զամպ նօսր: - 204. Եւ որ մերձ յարևմուտս է՝ Լիւա՛նօտոս. առնէ *մառախուղ*. մէգ. և վրդովումն յամպս: - 206

**ՄԱՌԵԽ** (տեքստում նաև՝ **ՄԱՐԵԽ) +** Երրորդ՝ Յրա՛տն. զոր *մարեխ* անւանեն. ջերմ է և չոր. խ օր յամէ՛ ի կենդանակերպն. և ի ժզ ամիսն պատէ՛ զամենայն: - 189. Զզօհալն Կռոնոսի. Զմուշթարին Դիոսի. *Զմառեխն* Արէսի. Զարեգակն Իլիոսի. կամ Զևսիլոսի. Զօհրայն. Ափրոդիտեայ. Զօտարիտն Երմեսի. Զլուսինն Սելինի: - 190. Եօթներորդն է՛ լեղին. որ է խարտեաշ մաղձն. տա՛ք է և չոր. և տանուտէր ունի *զմառեխն* որ է հրատն: - 241

**ՄԱՌԻ** - Փարաւոնի դստերն *մառի* կոչէին. որ արար զմովսէս իւրն որդէգիր: - 330

**ՄԱՍԻՍ** - Ասեն թէ՝ զոն ա՛յլ հոմանուն *մասիս* և արարատ. որպէս կորդուաց լեառն և ի պաղէստին և ի գամիրս: - 294. Այլ ճշմարտութիւնն յայտնապէս ի մե՛րս *մասիս* ցուցանէ: - 294. Յինգերորդ՝ ի լերինն *մասեայ* յորժամ ել նոյ ի տապանէն՝ օրհնեաց աստուած զնա՛ և զորդիսն նորա ասէ գիրն. և հայր և սերմ արար մարդկան ազգի: - 319-320. Վեցերորդ՝ տապանն նոյի յարարատ ի լեառն *մասիս*: - 555

**ՄԱՍՆ +** Այլ և ո՛չ է բնութիւն. ո՛չ *մասն* և ո՛չ բոլոր. այլ պակասութիւն ունակութեան. զի բարին ունակութիւն է, և չարն պակասութիւն նորին. որպէս խաւարն լուսոյ, և հիվանդութիւնն առողջութեան, և մահ կենաց: - 16. Այսքան առ երկաբնակս, և երկրորդ *մասն* գրոցս: - 30. Եւ դարձեալ՝ ըստ ձեզ պարտ էր ասել. թէ՝ ես ի միասին հօր, և *մասն* հօր ի յիս: - 39. Եօթներորդ՝ եթէ *մասն* աստուծոյ կոչի հոգին սուրբ. և աջ և բազուկ է որդին. ապա ուրեմն և ի նմանէ՛ է: - 61. Դարձեալ հարցանեմ, հոգին սուրբ *մասն* ինչ բղխէ ի հօրէ և *մասն* յորդւո՞յ, թէ բոլորն ի հօրէ՝ և բոլորն յորդւոյ: - 63. Դարձեալ՝ հարցանեմ, զի թէ մինն բոլոր բղխումն է հոգւոյն և ո՛չ *մասն*. զի թէ զմինն զայն հայր բղխէ, ապա ուրեմն ո՛չ բղխէ որդի. իսկ թէ զմինն զայն որդի բղխէ, բըղխեալն հոգի թո՛ռն լինի հօր, և ո՛չ բղխումն նմին: - 63. Ո՛չ *զմասն* ինչ առեալ զմարդոյ. այլ զբոլոր բնութիւնն ժողովեալ անհատ մարդկութեամբն. զհոգի բանական՝ և զմիտս՝ և զմարմինս մեր՝ միաւորեաց ընդ իւրում աստուածութեանն անչփոթ և անորոշ միութեամբ: - 83. Այսպէս և մի անձն է քրիստոս և մի անհատ. զի թէ բաժանես զնա՛ յաստուած և ի մարդ, ո՛չ մնայ բոլորն ի նոյն. այլ *մասն* ինչ և *մասն*. կամ ոմն և ոմն: - 87. Կամ որպէս բոլորն է ի հոգին, այսպէս բոլորն է ի մարմինն միաւորեալ. և բոլորն յիրաքանչիւր *մասն* մարմնոյն: - 89. Իսկ որպէս բոլոր ի մասունս, զի որպէս միոյ *մասին* պակասելոյ՝ բոլորն անկատար մնայ: - 89. Յորժամ ձեռն քրիստոսի ոչ է աստուած, ապա ուրեմն և բոլոր մարմինն ո՛չ է աստուած. զի բոլորն ի *մասանցն* բաղկանայ: - 91. Ասեն այսպէս՝ եթէ ձեռն մարդոյ է՝ զի և ոտն մարդոյ՝ և այլ մասունքն մարդոյ է. զի աստուծոյ *մասն* ո՛չ ասի: - 91. Զի թէ ասեմք եթէ ոչ է աստուած, յայնժամ բաժանեալ յաստուածութենէն՝ ո՛չ լինի աստուծոյ ձեռն. և ո՛չ աստուծոյ մարմին. կամ արիւն. զի *մասն* բաժանեալ ի բոլորէն ո՛չ է բոլորին *մասն*. և ո՛չ կոչի. որպէս ձեռն հատեալ յանդամոցն՝ ո՛չ կոչի *մասն* բոլորին: - 92. Նա՛և *մասն* զբոլորին կոչմունքն ստանայ: - 92. Ասեմք նախ եթէ՝ ո՛չ է աննման. զի մի իրն լինի բոլոր և լինի *մասն* առ այլ և այլս: - 92. Որպէս յորժամ ասեմք զձեռն բոլոր և *մասն*. զի *մասն* է բոլոր մարմնոյն, և բոլոր առ մատունս ձեռացն: - 92. Երրորդ՝ զի ո՛չ է նման առ մեզ և առ նա *մասն* և բոլորն. զի թէպէտ մասունք մարդոյ՝ ո՛չ ունին զկոչմունս

բոլորին, սակայն մասունք մարմնոյն քրիստոսի՝ կոչին և ունին զբոլորին էութիւն: - 92. Արդ՝ որպէս օդ լուսաւորեալ՝ ո՛չ ունի *մասն* խաւարի, Նո՛յնպէս հոգին քրիստոսի միաւորեալ ի բանն աստուած՝ ո՛չ ունի *մասն* տգիտութեան: - 100. Եւ յատուկ՝ զի որոշեալ և բաժանեալ է յարարածոց. և ո՛չ մի է ըստ սոսա. ո՛չ *մասն* է արարածոց և ո՛չ բոլոր: - 106. Նախ՝ զի բանն աստուած էառ զմարդկայինս բնութիւն և միաւորեաց ընդ աստուածութեան իւրում. ո՛չ *մասն* առեալ՝ կամ ըստ *մասին* միաւորեալ. այլ բոլորն ընդ բոլորին...: - 106-107. Երրորդ՝ մի է, այսինքն բոլոր և ո՛չ *մասն* և անկատար: - 109. Երրորդ՝ յաւիտեանն ո՛չ ունի *մասն*. այլ բոլորն համանգամայն և կատարեալ. այսպէս և միշտն: - 116. Իսկ ժամանակն **գ** *մասն* ունի. այսինքն անցեալ՝ ներկայ՝ և ապագայ: - 116. Դարձեալ՝ միտք մեր այժմ ի ներքոյ ժամանակի՛ է. և **բ** *մասն* ժամանակին ո՛չէ. այսինքն անցեալն կորուսեալ է, և ապագայն ո՛չէ է: - 117. Վասն որոյ ընդ կորուստ այսպիսի *մասանց*՝ և գիտութիւն մտաց մեր կորնչի: - 117. Նախ՝ զի հրեշտակացն իմանալի և միահաղոյն է տեսութիւն. իսկ մարդկան բանական և *մասն մասն* ժողովելով: - 120. Երկրորդ՝ զի ոտք վերջին է *մասն*. և ի վերջին ժամանակս երևեցաւ մարմնով քրիստոս: - 130. Երրորդ՝ զի անդ բազմաց շրտնու տեսութիւնն. և աստ միայն զօրանայ տեսողական *մասն* միոյն. որպէս աշակերտին եղիսէի: - 133. Քանզի դևք ո՛չ են ի վերին *մասն* օդոյն, զի մի խնդասցեն լուսովն. և ո՛չ ի ստորին *մասն*, զի մի՛ առաւել վնասեսցեն զմարդիկ: - 146. Ձի ոմանք ասեն թէ ի միջին դասուցն անկան **գ** *մասն*, և մինն մնացեալ յիշխանութեանցն խառնեցաւ: - 150. Իսկ բանսարկուն սատիէլ՝ զմի յերից *մասանցն* զչորրորդն քարշեաց ընդ ինքեան և կործանեաց յերկիր...: -152. Երկրորդ՝ զօրաւոր *մասն* է տուտն սողնոց. ցուցանէ զբռնութեամբ քարշելն ընդ ինքեան: - 152. Չորրորդ՝ տուտն նշանակէ զսեռն. որ ի վերջին ժամանակս բռնանայ և քարշէ՛ զերրորդ *մասն* աստեղաց: - 152. Իսկ զոմանս կորուսանէ և պատրէ՛. որ է՛ երրորդ *մասն* կորուսելոցն: - 152. Վասն ժամանակի. և թէ ո՞ր *մասն* է առաջին: - 154. Ասելի է թէ՝ կոյսն և ապականեալն են հակակայք ըստ ունակութեան և պակասութեան. որպէս երեսք և կուրութիւն. որոց ի լինիլն համահետևին երեքին սոքա. այսինքն ժամանակն, և *մասն*, և նոյն: - 165. *Մասն* զի նոյն *մասինն* որոյ էր ունակութիւն՝ նորին եղիցի և պակասութիւն: - 165. Չորրորդ՝ զի *մասն* ապականի, այլ բոլորն կեայ. որպէս իւրաքանչիւր անհատ մարդոյ և ձիոյ մեռանի, այլ բոլորն մնայ. այսպէս և տարերք: - 181. Առաջինն է տարրական հրոյն վերին *մասն*. որ կոչի հրեղէն երկինք. հոմանուն առաջին երկնից: - 183. Երկրորդն՝ ներքին *մասն* հրոյն. որ կոչի օլոմպային երկին. վասն մերձ գոլոյ յօլոմպիոս լեառն: - 183. Երրորդն՝ է վերին *մասն* օդոյն. և կոչի եթերային երկին. զի մերձ ի տարրեղէն հուրն է. և վառի ի նմանէ. զոր թռիչ աստեղաց կոչեմք: - 183. Չորրորդն՝ է ներքին *մասն* օդոյն. և կոչի օդեղէն երկին...: - 183. Երրորդ՝ նրբագոյն է *մասն*: - 184. Մերձ եկեալ ի նոյն կենդանակերպն՝ սակաւ լոյսն առնու ի նմանէ յարևելից կողմանէ. թէպէտ մեզ ի յարևմտիցն երևի. այլ նմա՛ արևելից *մասն* է որ զլոյսն առնու: - 187. Երրորդ՝ աչք մեր որ է՛ լոյս՝ ի վերին *մասն* գլխոյս. և լուսաւորքն յերկինս. զի մերձաւոր նմանն զնմանն տեսցէ: - 188. Եւ օրն ի տիւն միայն՝ **յկե** *մասն*: - 190. Ձի արեգակն յամենայն աւուր զընթացս իւր կատարէ՛ **իդ** ժամ, և **ծ** *մասն* և կէս: - 190. Իսկ կէս *մասն* ի մեկ ամիսն՝ լինի կէս ժամ. և ի մեկ տարին **զ** ժամ. և ի **դ** տարին ժողովեալ՝ լինի օր մի **իդ** ժամ. և ա՛յն առնէ զնահանճն. և շարժէ՛ զտօնս և զեղանակս: - 190. Եւ մէկ ժամն է՛ **լ** *մասն*. և մէկ *մասն* է՛ **կ** րոպէ: - 191. Ապա ուրեմն **ծ** *մասն* է **ո** րոպէ. և մէկ ժամն **ռպ** րոպէ: - 191. Եւ ի մէկ *մասն* մի հոլով առնէ արեգակն. այսինքն մէկ թաւալ: - 191. Իսկ իննևժերեակն է, զի ընթանայ լուսինն ի տարին **յծդ** օր՝ և **ծթ** *մասն*. որ լինի ի **ծթ** ամին՝ յկա *մասն*: - 191. Եւ արա՛ զերեսուն *մասն* մի ժամ, և զերկոտասան ժամն մի օր. և կոչի այս՝ իննև**ժ**երեկի ամ. որ աւելու ի լուսինն մի օր: - 191. Եւ մի *մասն* ժողովեալ՝ ի **ցպխ** ամն՝ լինի **յկ** *մասն*: - 191. Եւ արա՛ զերեսուն *մասն* ժամ մի. և զերկոտասան ժամն օր մի: - 191-192. Եւ ա՛յս է կատարումն *մասանց* լուսնին. զոր ոմանք կատարումն լուսնի ասեն: - 192. Եւ դարձեալ՝ յորժամ վերադիրն լինի **լ**. և **է** երեակն է ի միասին ի միում ամի. ասի այն կատարումն լուսնի. այսինքն *մասանց* թուոյն, և ո՛չ իրին: - 192. Այսպէս և կատարումն *մասանց* լուսնին ի տումարս մեր է և ո՛չ ի յենթակայն նորին: - 192. Յինգերորդ՝ զի անշա՛րժ և անփոփոխ **է** ժամուց *մասանց* և րոպէից: - 193. Ժամանակին ո՞ր *մասն* է առաջին. անցեա՞լն՝ ներկա՞յն թէ ապառնին: - 198. ...զի ժամանակին **բ** *մասն* անհնա՛ր է համանգամայն գոլ ի միասին. զի և **բ** պահք ո՛չ կարեն համանգամայն գոլ: - 199. Եւ դարձեալ՝ զի ի գոլորշեաց է բաղկացեալ՝ արտաքին *մասն* հով է և գէջ, և ներքինն ջերմ և չոր. վասն որոյ զարտաքինսն պահէ՛, և զներքինսն ապականէ: - 204. Երկրորդ՝ զի վերին *մասն* օդոյն պա՛րզ է. և ներքին *մասն* մերձեալ ի յերկիր՝ թանձրանայ ի չորութեանց նորին. և ջերմութիւնն խառնեալ ընդ այն՝ առաւել շող լինի: - 211. Եւ մի և նոյն է. զի շունչ կենդանեաց է թանձր *մասն* օդոյս՝ խառնեալ ընդ ջրոյ. և շունչ նոցա է անօսր *մասն* ջրոյ՝ խառնեալ ընդ օդոյ: - 215. Երկրորդ՝ զի լրումն և *մա՛սն* են աշխարհի: - 217.

Նա՛խ՝ զի օձն ի յայն *մասնէն* սատակի: - 218. Երկրորդ՝ զի ցոր քան իշխէր ինքն ի վերայ անասնական *մասանց* իւրոց որպէս ասացաք, իշխէր և ի վերայ արտաքին անասնոց և գազանաց. իսկ յորժամ ապստամբեցին ներքինքն բանականին տեառն իւրեանց՝ ապստամբեցին և արտաքինքն մարդոյն տեառն իւրեանց: - 220. Զի ի վերին *մասն* օդոյն է մերձեցեալ՝ որ է առաւել բարեսուն. և ամպոց և հողմոց շարժմունք ի միջին *մասն* օդոյս ծնանին. և ի դրախտն ո՛չ հասանեն: - 222. Տկարանայ միտքս թէ յապականացու երկրէ՛ է դրախտն և *մասն* է երկրի, ո՞րպէս է անապական: - 225. Եւ որպէս ակն կենդանւոյն *մա՛սն* է բոլոր մարմնոյն՝ և լուսաւոր: - 225. Նոյնպէս և դրախտն *մասն* է յապականացու երկրէ. և զանապականութիւն վիճակեալ: - 225. Ա՛րդ՝ վերջին հրովն յորում վառին երկինք և երկիր, ըստ նիւթոյ *մասին* պարզի. այլ ըստ ապականութեան մնայ անփոփոխ: - 225. Զձկունս ի թանձրագոյն *մասն* եթող, և զթռչունս յանօսրագոյն *մասն* որ է օդդ՝ վերացոյց: - 227. Չորեքտասաներորդ՝ Պատկերացուցութիւն մարդոյն ըստ *մասին*: - 227. Վեցտասաներորդ՝ *Մասանց* հոգւոյն: - 228. Եօթնևժերորդ՝ Կազմուածոյ *մասանցն*: - 228. Երկոտասան անդամքն՝ կենդանակերպիցն և **բժ**ան *մասին* երկրին: - 232. Եւ է՛ բանն առաջին *մասն* և զօրութիւն հոգւոյն: - 232. Այսպէս և գլուխն ի մարմինն է՛ վերջին *մասն*. որ է՛ գործիք բանին. և սիրտն ի մէջն. և երիկամունքն վերջին: - 232. Երկրորդ՝ պատուական *մասն* մարդոյն գլուխն է. վասն որոյ զվերինն և զառաջինն ընկալաւ տեղի: - 232. Եւ որպէս սակաւ *մասն* ոտիցն ի յերկի՛ր է հպեալ և կոխէ, նոյնպէս և մեզ սակաւ պէտս մարմնոյ...: - 233. Երկրորդ՝ ցուցանէ յերկուց *մասանց* գոլ զբոլոր մարդն. և հոգոյն է զգալն և տեսանել և այլն: - 234. Ութերորդ՝ զի ա՛նդ է ցանկական *մասն* աչաց զարդարեալ գեղով: - 234. Ըստ կարգի տարերց է և դիրք *մասանցն*: - 235. Եւ յո՛ր *մասն* մարմնոյն գիճութիւն և ջերմութիւն առաւել լինի, անդ մազ բուսանի: - 240. Եւ բաժանին **բժ**ան անդամքն ըստ երկոտասան կենդանակերպիցն. և **բժ**ան *մասին* երկրի: - 241. Նոյնպէս և երկրի է՛ **է** *մասն* տիեզերաց. զոր **է** կլեմ կոչեն: - 241. Սոքա ո՛չ պահեն զճարպն որ *մասն* է օդոյ պարարտացեալ: - 242. Եւ նա՛ տայ խաղալ և շարժիլ ոտից և ձեռաց և այլ *մասանց* անդամոցն: - 244. Եւ նա՛ է զգայական. և յոր *մասն* և խառնի՝ առնէ զգացումն: - 244. Եւ կին մարդոյն **ը** երակ աւելի՛ է. **դ** երակ ծննդական *մասին*. և **դ** երակ երկու ստեանցն: - 244. Եւ կամ ի շարժութեանց *մասանց* ոտից և ձեռաց և այլն: - 250-251. Իսկ զբանականն և զիմաստութիւնն՝ կատարեալքն հասակաւ. յորժամ բանին *մասն* կատարի ի մարդն: - 251. Յինգերորդ՝ զի տկարութիւն է զօրութեանն աստուծոյ՝ եթէ զմի էութիւն ըստ *մասին* յայլ և այլ ժամանակս գործեաց: - 254. Նախ՝ զի նիւթն այն ունի առ ինքն բնական զկենդանութիւն տնկականին. և տնկականն *մա՛սն* է զգայականին. և զգայականն բանականին...: - 254. Այլ ի կողմանէ հոգւոյն՝ զօրութեամբ ո՛չ է ի սերմն այն ըստ ինքնութեան բոլորին. այլ ըստ ինքնութեան *մասին*. որ է տնկականն և զգայականն: - 255. Նախ վասն՝ ի մէջն գոլով հաւասարապէս հուպ յամենայն *մասանցն* զօրութիւն առնլոյ: - 256. Զի յորժամ ասես մին՝ այս առաջին *մասն* **է** երրորդին. և երկուքն երկու *մասն*: - 259. Ասեմք թէպէտ նիւթն ի չորից տարերց է, այլ տնկականն զօրացեալ քան զնիւթն՝ ըստ իւրոյ *մասանցն* ծնանի. զի ծնանիլն տնկականին է. այլ և ունի զտարերացն թիւ. զի յամիսս չորս կատարի այն՝ որ յառաջ ծնաւ: - 262-263. Եւ երիցս կրկնեալ **է**-ից մինչև ի **իա**, լինի կատարեալ արիական *մասն* ցասմնականին. և կոչի պատանեակ մինչև ի **իը** ամն: - 265. Եւ չորիցս կրկնեալ **է**-ից մինչև ի **իը** ամն, լինի երիտասարդ. և կատարի բանական *մասն*: - 265. Եւ վասն տնկական և զգայական *մասին* կազմողական զօրութիւնն այլ ևս աճեցուցեալ զմարմինն **ե** ամ և դադարեալ յերեսներորդին, լինի ժամանեալ ի չափ հասակի կատարմանն քրիստոսի, յորում մկրտեցաւ տէրն մեր: - 265. Եւ զի ա՛յս է թիւ կատարեալ չափոյ հասակի մարմնոյ և *մասանց* հոգւոյ: - 265. Եւ անտի յառաջ զբանական *մասին* կատարումն և զկայ՝ ցուցեալ: - 267. Իսկ զի բանական միտքն ո՛չ տեսանէ զերազն, այլ անբան *մասն*, որ է՛ տնկականն ի մեզ. նա՛ յածի յերազն. և ցուցանի այս ի կրկին իրաց: - 268. Մետասաներորդ՝ անտեղի և անո՛ւր է աստուած. և հոգի մարդոյ բոլորն է ի բոլոր մարմինն. և բոլորն յիւրաքանչիւր *մասն*: - 272. Երկրորդ այսպէս. **գ** *մասանց* աւելին և պակասն լինին **զ** չարիք. և մի գործ մարմնոյն որ լինի է նենգութեան խորհուրդ: - 287. Ոմանք ի վերայ մարդոյս մեկնեն զտապանն և յիրաւի. զի տապանն ունէր զբոլոր աշխարհս. և մարդն *մասն* է աշխարհի. պա՛րտ է զի *մասն* նմանեսցի բոլորին: - 293. Դարձեալ՝ զբանջարն ընտրելով ուտեմք. այս է զի զվնասակարն և զդառն և զժահահոտն ի բաց ձգեմք և զչորրորդ *մասն* ուտեմք: - 295. Իսկ զչորրորդ *մասն* որ արտաքո՛յ է սոցա՝ ուտեմք: - 296. Նոյնպէս և ի սուրբ կենդանիս ի **դ** *մասնէն* զմինն ուտեմք: - 296. Իսկ չորրորդ *մասն* միայն զկակուղ միսն ուտեմք: - 296. Մասնական, որպէս *մասանց* առ բոլորն: - 318. Եւ զհաց մարմնոյն քրիստոսի՝ որք զբոլոր և որք *զմասն* ճաշակեն՝ միո՛յ կենաց հաղորդին: - 339. Ա՛րդ՝ **գ** հաց՝ և գառն խորովեալ դնէին յառաւօտուն. և չորրորդ *մասն* դորակի գինւոյ. նոյնպէս և յերեկոյն հանապազորդ: - 346. Եւ կնդրուկն *զմասն* աստուծոյ ընդունելի:

- 357. Եւ յօշելն զանդամս **բժ**ան *մասն* ընդ ցեղիցն. և զոտս և զփորն լուանալն. և ողջակիզել ի վերայ պղնձի սեղանոյն: - 358. Եւ յայսմանէ՝ հանեն *մասն* զերիկամունս և զլերդափոյթն և զբովանդակ ճարպն ի հոտ անուշից տեառն: - 358. Մետասաներորդ, բոլորապտուղ. որ է հանապազորդ գառն խորովեալ յառաւօտն և յերիկոյն մին հացով և **դ** *մասն* դորակի գինով: - 359. Այսինքն զամենայն յաջողուածս հոգևոր և մարմնաւոր, և *զմասն* անմահութեան կենաց յուսոյն, ո՛չ վասն մեր արժանաւորութեան համարել. այլ բարութեան և ողորմութեանն աստուծոյ: - 360. Դարձեալ՝ իւղով զանգեալ բաղարջն և նոյն չափ իւղովն որ չափ *մասն* գինւոյն. այն է՝ զի ընդ օրհնութեան բանին աստուծոյ՝ և հոգին սուրբ իջանէ ի հացն և ի բաժակն և կատարէ՛ մարմին և արիւն քրիստոսի: - 361. Ի զենումն ընտրութիւն է **զ** իրաց. այսինքն Զենօղն, Զենլին, Զենումն, Զէնն, *Մասն*, Դիտաւորութիւն: - 365. Հինգերորդ՝ *մասն*. որ է՛ գլխոյն հատումն ուր ամենայն զգայութիւնքն են. և թէ այլ ինչ *մասն* հատցի՝ կամ գլուխն ջախջախեսցի՝ ո՛չ է ուտելի: - 365. Նա՛խ՝ զարիւնն հանել որ է՛ կենդանութիւն և աստուծոյ *մասն*. և զմնացեալն ուտել որ է տարր միայն: - 366. Հինգերորդ՝ ընտրելի է *մասն* որ է հատումն գլխոյ. յառաջուստ ուր են շնչերակքն՝ արիւնն և այլքն: - 366. Երրորդ՝ զի տացի *մասն* քահանայիցն աստուծոյ **թ** *մասն*: - 366. Որ նշանակէ ի մեզ զերեք *մասանց* թիւրիլն. այսինքն բանից, ցասման, և ցանկութեան հինգ զգայարանօք: - 367. Դարձեալ՝ չորրորդ *մասն* դորակին նշանակ չորից առաքինութեանց: - 374-375. Եւ երրորդ *մասնս* **գ** առաքինութիւնք աստուածայինք: - 375. Եւ զհինգ բաժնէն մի *մասն* տուգանք, զի **ե** զգայութեամբ մեղաւ: - 384. Եւ հինգ *մասն* տուգանքն՝ և խոյն՝ ա՛յն է, որ **ե** զգայարանօքս ապաշխարեմք: - 384. Այն է որ թէ ի *մասանց* հոգւոյն և մարմնոյն այսինքն բանիւ՝ ցասմամբ՝ և ցանկութեամբ, կամ աչօք կամ լսելեօք կամ այլ ինչ գործով մեղանչէ դարձեալ, ուխտն ո՛չ եղև ամբողջ. դարձեալ նո՛ր պարտ է ապաշխարել: - 390. Զի գործ արդարութեան է սպանանել զբշնամիս. նոյնպէս և աւարն արդարութեան *մասն* է: - 390. Նա՛խ՝ զի ո՛չ ամենևին անէծ. այլ և *մասն* մի օրհնութիւն էր: - 409. Եւ դարձեալ՝ զի մի՛ հեռասցի *մասն* երկնից ընդ որում էին լուսաւորքն: - 416. Եւ զի ծնօտ է՛ գործի կերակրոյ. և անսուրբ և անբան կենդանւոյ *մասն*: - 423. Նա՛խ՝ զի միայն *մասին* աշխարհի և սակաւո՛ւց էր տէր իսկ քրիստոս ամենայնի: - 442. Եւ յետ գերութեանն իսրայէլի անցեալ ամք **ճլե**, ել արքայն բաբիլացւոց նաբուգոդոնոսոր ի վերայ երուսաղէմի. ի **ժ** ամի թագաւորութեանն յովակիմայ. և էառ հարկ ի նմանէ. և զմեծ *մասն* սրբութեանց տաճարին աւերեաց: - 447. Քանի՞ է *մասն* խաչին. և քանի՞ է բևեռն: - 454-455. Եւ այսպէս բազումս տեսանի ըստ *մասին* գործ ողորմութեան և արդարութեանն աստուծոյ: - 458. Երկրորդ՝ բոլորովին նուաճումն ստորին *մասանց* բանականին: - 462. Յետ որոյ ծնեալ ի նոյն կուսական արգանդէ և ո՛չ յայլ ինչ *մասնէ*: - 469. Երկրորդ՝ զի ներգործութեամբ *մասն* ո՛չ լինի զօրութեամբ բոլոր. վասն որոյ ոչ է նիւթ ծննդեան: - 470. Երկրորդ՝ զի զօրութեամբ ունի և ոչ է ներգործական *մասն*: - 470. Երկրորդ՝ որպէս բոլոր հոգին է՛ ի բոլոր մարմինն միաւորեալ. և բոլորն է՛ յիւրաքանչիւր *մասն* մարմնոյն: - 477. Այսպէս և բանն աստուած բոլորն է ի բոլորն միաւորեալ. և բոլորն յիրաքանչիւր *մասն* մարմնոյն: - 477. Չորրորդ՝ թէ և ի *մասնէ՛* կոչեմք երբեմն ի հոգւոյ կամ ի մարմնոյ...: - 477. Վեցերորդ՝ զի հոգի և մարմին *մասն* գոլով գոյանայ մի կատարեալ: - 479. Այն է տուտն որ զերրորդ *մասն* աստեղաց ընդ իւր քարշեաց: - 489. Այլ և յեօթն տեղ *մասնէ՛* բղխեաց արիւնն քրիստոսի: - 492. Չորրորդ դարձեալ՝ **դ** թև խաչին նշանակէ զչորս բարերարութիւնս քրիստոսի. զի վերին *մասն* ցուցանէ զբացումն արքայութեանն երկնից. ներքինն զաւերումն դժոխոց. աջն զբաշխումն շնորհաց. ահեակն զթողութիւն մեղաց: - 493. Հինգերորդ՝ նշանակէ՛ զչորս առաքինութիւնս ի յորս պարտի տարածիլ ներքին մարդս մեր. այսինքն վերին *մասն* նշանակէ զսէրն. ներքինն զխոնարհութիւնն. աջն զհնազանդութիւնն. ահեակն զհամբերութիւնն: - 493. Վերին *մասն* միշտ զվերինն խորհիլ ուր քրիստոս նստի...: - 493. Վերին *մասն* զխոհեմ և զհամեստ բանս իբրև աղիւ համեմեալ: - 493. Զի՞նչ նշանակէ չորս *մասն* փայտից Խաչին: - 494. Չորրորդ՝ ապականութիւնն ո՛չ բնութիւն է և ո՛չ *մասն* բնութեան: - 499. Դարձեալ ասեն նոքա, կաթնասուն եղև և կերակուր եկեր. և այս *մա՛սն* է ապականութեան: - 501. Ասեմք եթէ, կերակրիլն ո՛չ է *մասն* ապականութեան. ուստի յա՛յտ է զի ադամ նախ քան զյանցանելն ի դրախտին կերակրիւր և ո՛չ էր ապականացու. այլ անապական: - 501. Եւ դարձեալ ասեմք, թէ կերակուրն *մասն* է ապականութեան, զոր յանմարմնութեանն եկեր առ աբրահամ զի՞նչ ասէք: - 501. Երկրորդ՝ վասն բազում *մասանցն*. որք կրեն զտանջանս մարմնոյ մասամբ և զգայութեամբ. և հոգւոյ զօրութեամբ և մտաց իմացմամբ: - 505. Վեցերորդ՝ թէ *զմասն* դժոխոց աւերեաց, և զմասն մահու եբարձ, և *զմասն* անիծից, և *զմասն* պարտուց և զայլսն: - 506. ...յոյսն է *մասն* հաւատոյն: - 507. Եւ է՛ այսպէս. զի անուամբ բոլորին պարտ է իմանալ զմասնաւորն. զի առաջին օրն անկատա՛ր է. նոյնպէս և երկրորդն անկատա՛ր է և *մասն*. այլ միջինն կատարեալ է: - 516. Եւ թէ զի՞նչ է սահման հաւատոյ. և ի յո՞ր *մասն* է

հոգւոյն: - 526. Զոր օրինակ, բան մարդոյ յիւրաքանչիւր մասնաւոր լսելիս բաժանի, և բոլոր և կատարեալ է և ո՛չ *մասն*: - 530. Առ երրորդն ասեմք թէ՝ երիցս հարցումն սիրոյն և արածելն զոչխարսն՝ վասն երից ուրացութեանցն էր բժշկութիւն. զի ո՛ր *մասն* որ խոցի՝ նորին է բժշկական դեղն դնելի՝ և ո՛չ առողջից: - 547. Դարձեալ՝ թէպէտ ըստ պորփիւրոսի՝ *մասն* բոլորին հետևի. որպէս անհատն տեսակին. և տեսակն սեռին: - 550. Երրորդ՝ զբոլոր հաց պատարագին ո՛չ հանել ի սեղանն. այլ *մասն* ինչ: - 553. Եւ ի հաց պատարագին զբոլորն մատուցանեն և ո՛չ *մասն* ինչ, լատինք և հայք և ասորիք. իսկ յոյնք ո՛չ: - 554. Իսկ գործ մարմնոյն միայն *մասինն* այն է որում պատահեցաւ: - 557. Դարձեալ ասեմք զեօթնեքինն ըստ երից *մասանց* հոգւոյն այսպէս: - 559. Այս ըստ առաջին *մասին* որ ցանկայ ոչ ցանկալեաց: - 561. Եւ այս լինի երրակի ըստ երից *մասանց* հոգւոյն: - 561. Յաւատն ի յո՛ր *մասն* է հոգւոյն իբր ի յենթակայ: - 572. Երկրորդ՝ զի մի բոլոր և ոչ *մասն*: - 573. Իններորդ ըստ հոգւոյն *մասանց*. հաւատն է ի բանն. յոյսն ի ցասումն. սէրն ի ցանկութիւնն: - 578. Այլ և մարգարէն մովսէս դնէր յերեսաց սեղանն գառ մի խորովեալ. և հաց և գինի և չորրորդ *մասն* դորակի հանապազորդ. և ջուր ո՛չ դնէր: - 595. Չորրորդ՝ ի յօրինակն մի հաց և մի գառն խորովեալ լինէր. որ ընդ *մասին* գինւոյ դնէին յերեսաց սեղանն: - 597. Զի շնորհքն աստուծոյ ո՛չ է *մասն մասն*. այլ բոլոր և կատարեալ: - 601. և նոցա որդին որ է՛ թոռն հօրն՝ ունի զկէս արեանն. և թոռին որդին զերրորդ *մասն*. և թոռին թոռն զչորրորդ *մասն*: - 612. Իններորդ, ըստ *մասին* ի սմա խաչն փրկական: - 614. Նա՛խ՝ զի գոհութիւնն պարգև՛ է օրինաւոր ի բարեա՛ց *մասնէ*...: - 626. ...որպէս յամենայն ինչ իրաց՝ *մա՛սն* նուիրելի է աստուծոյ. նոյնպէս և ի բարեաց գործոց զգոհութիւնն: - 626. Եւ մեսեդի ճաշոյն և երեկոյեան, չորրորդ *մասն* դորակի գինւոյն. որպէս ասացաւ ի վերոյ ի **իա** գլուխն **ծբ** համարն: - 629. Որ լինի **ժ** ըստ **ժ** *մասանց* արարածոց: - 639. Չորրորդ, զի *մա՛սն* է հոգւոյն և հանդերձեալ կենացն. պա՛րտ է զպատուականն որոշել քան զմարմնոյս: - 657. Չորրորդ, որպէս *մասն* ինչ է քահանայից և *մասն* աշխարհականաց...: - 658. ...նոյնպէս և մեզ *մասն* ինչ բարւոյ է և աստուծոյ. և *մասն* ինչ աշխարհի. *մասն* ինչ հոգւոյ և *մասն* ինչ մարմնոյ. աստի՛ կենաց և հանդերձելոյն...: - 658. Երկրորդ՝ պատարագն *մասն* է ի կամացն. և կամքն բոլոր: - 658. Վեցերորդ՝ ամենայն պատուական իր՝ ի բարձր տեղւո՛ջէ. որպէս գլուխն զի պատուական *մասն* է. և լուսաւորքն և երկին քան զերկիրս: - 662. Չորրորդ, տայ մեծութիւն և նոցա. որք բազում չարիս՝ և մի *մասն* բարեաց ունին...: - 664. Երկրորդ ի թիւ ամացն. զի որքան յերկարեմք անցանելով, պակասի *մասն* վերին և յաւելու մասն ներքին...: - 666. Երկրորդ ի թիւ ամացն. զի որքան յերկարեմք անցանելով, պակասի մասն վերին և յաւելու *մասն* ներքին...: - 666. Երրորդ ի ժամն. զի անցեալ *մասն* յաւելու. և ներկայն անցանէ. և հանդերձեալն պակասի. և բոլորն կատարի և լցուի: - 666. Ո՛չ միայն մարմնով, այլ և հոգւով. թէ չունի *զմասն* բարութեան: - 670. Եւ թէ *մասն* մարդոյն որ է հոգին՝ տանջի այժմ վասն մեղաց և մարմինն հանգչի, այս ո՛չ է ուղիղ, նոյնպէս և զփառսն: - 694. զի այժմ *մասին* քննութիւն է հոգւոյ և յայնժամ *մասին* մարմնոյ: - 700. Եւ սատակեալ վիշապին տուտն է նեռն. որ ի վերջին ժամանակս քարշէ զերրորդ *մասն* աստեղաց...: - 706. Եւ այս նախ վասն գերազանց գործոյ երից *մասանց* հոգւոյն: - 712. Թէպէտ բան յարութեան է ի *մասնէ* հաւատոյ, որպէս սկիզբն աշխարհի և վախճան. - 714. Երրորդ, մարդն *մասն* և կատարումն է աշխարհի. - 715. ...ըստ որում աշխարի յերից *մասանց* է առկայացեալ. - 715. Երկրորդ, մարդս *մա՛սն* է աշխարհի. զի մարմինն է ի չորից տարերց. - 717. ...և ո՛չ էր պարտ *մասին* փոփոխիլ առանց բոլորին. - 717. ...և նիւթ կերակրոյն՝ այն *մասն* որ փոխեցաւ ի գոյացութիւն մեր՝ յառնէ՛. զի մարմին եղև մարդոյն այլ աւելորդքն ո՛չ յառնեն: - 718. Եւ բաւականութիւն է զարդուցն պատճառի յերից *մասանց* հոգւոյն և ի չորս տարերաց մարմնոյն: - 721-722. Դարձեալ՝ ո՛չ գան ի դատաստան, զի *մասն* բարւոյ ո՛չ ունին որով քննիցին. այլ դատապարտին որպէս ցուցանի յառաջիկայդ: - 725. Նա՛խ՝ զի արու և էգ անդ ո՛չ ճանաչին *մասին* անդամօք, այլ յատուկ դիմօք և բարի գործովք և փառօք և անուամբ զանազանին. որպէս դասք կուսանացն ի հայրապետացն: - 725. Երկրորդ՝ զի թէ արական *մասն* երևի՝ ոչ ինչ նախապատուի կամ էգն անարգի. զի մասունք անդամոց անդ ո՛չ է զազրալի: - 726. Զի վերին մարմինք երկինք և լուսաւորք ամենևին անապակա՛ն են. իսկ **դ** տարերք թէպէտ ըստ *մասին* ապականին, այլ ըստ բոլորին ո՛չ. - 727. Նա՛խ՝ զի ամենևին ապականացո՛ւք են. և *մասն* ինչ ո՛չ ունին անապականութեան: - 727. Յրեղէն ծով ասացեալ են ի հարաւ. վասն այն ջերմ է ասեն *մասն* այն: - 731. Այլ որ ուղիղն է տեսութիւն, յետ յարութեան փոխի ժամանակն ի յաւիտեան. և այլ ո՛չ գտանի *մասն* և րոպէ և ժամ. զի երկնային մարմինք դադարին ի շարժմանէ ուստի ժամանակն գոյանայ: - 747. Անդ տիւ և գիշեր ժամանակի և *մասանց* սորին ո՛չ է. զի անցեալ է ժամանակն և մնացեալ է յաւիտեանն: - 750. Չորրորդ՝ նմանոյն հատումն *մասանց*. որպէս ակն ընդ ական: - 751. Երկրորդ և ապականեալ *մասին*: - 753. Ո՛չ լինի. զի որդունքն այնք ո՛չ են զգայական

կենդանիք. այլ հրեղէն տանջանք են զգայական *մասինն:* - 753. Այլ և վարժապետին իմոյ և մեծ հռետորի հայոց, Յոհաննու Որոտնեցւոյ, եղիցի ի սմա յիշատակ մաղթանաց *մասին* օրհնութեան. և վիճակ ժառանգութեան սրբոցն ի լոյս: - 773. Եւ ոմանք յորոց սրբազան առաջնորդն մեր, պակասութիւն ասաց գոլ զորս յետոյ կրեցին անդամք նորա. այսինքն զհատումն *մասանց*...: - 781. Իսկ ամենայն զգայական կենդանւոյ թէպէտ իգին ըստինք գոն վասն զծննունդս կերակրելոյ. սակայն և արուացն գոյ նոյն *մասն* անդամոց կազմեալ յարարչէն. և այն յի՞նչ պէտս լինի. խնդրել արժան է: - 785. Ո՞ր է *մասն* զօրութեամբ, և ո՞ր *մասն* ներգործութեամբ: - 787. Զի *մասն* որ առ կէտն արևելից` է՛ ներգործութեամբ ի յելս, և զօրութեամբ ի մուտս: - 788. Նոյնպէս և քարինք արձանացեալք հաստատութիւն է երկրի. զոր աշխարհ կոչեմք ի *մասնէ՛*: - 788

***ՄԱՍԱՄԲ +*** Եւ այս ոչ էութիւն և չարութիւն` առ մեզ կարէ՛ երևիլ, զի *մասա՛մբ* ունիմք զկարողութիւն և ո՛չ կատարեալ: - 44. Զի եթէ *մասամբ* անկատա՛ր է բղխումն հոգւոյն: - 63. Երկրորդ` զի թէ նա՛ շնորհիւ ունի զորդիութիւնն և ո՛չ էապէս, ապա ուրեմն *մասամբ* և ըստ կարգի ունի` և ո՛չ զլրումն աստուածութեանն. զի շնորհն է մասնաւո՛ր պարգև: - 66. Այլ խոստովանիմք զբանն աստուած` ոչ *մասամբ*, այլ լրութեամբ իւր մարմնացեալ և մարդացեալ...: - 76. Եւ ոմանք *մասամբ* և բաժանեալ. որպէս քաղկեդոնիկքն ասեն: - 77. Եւ այս ո՛չ *մասամբ* կամ բաժանմամբ. այլ բոլորիւ և միութեամբ: - 77. Որպէս ասեմք զաստուածածին կոյսն մայր և կոյս. ո՛չ **բ** բնութիւն կամ **բ** անձն. որ է *մասամբ* և բաժանմամբ. այլ զմի և զնոյն. ունելով զայս և զայն յատկութիւն: - 77. Իսկ յորժամ կամեցաւ արարիչն մարդ լինիլ, բանն աստուած իւրով կատարելութեամբն անձամբ և էութեամբ` ո՛չ *մասամբ*, այլ լրիւ միացաւ աննճառապէս ի մարմնի: - 82-83. Զի թէ իր, ապա հա՛րկ է ասել քեզ զքրիստոս կամ մի իր և **բ**. կամ *մասամբ* ինչ մի և *մասամբ* ինչ երկու. կամ բոլոր մի և բոլոր **բ**: - 86. Երկրորդ` զի ո՛չ *մասամբ* ինչ ըստ ոմանց ապօղինարի և այլոց. այլ յերկուց կատարեալ բնութեանց է միաւորութիւն փրկչին: - 88. Նախ` որպէս սեռ ի տեսակս բոլորապէս տեսանի և ո՛չ *մասամբ*. այս է` զի գոյացութիւնն որ է սեռ` բոլոր է ի մարմինն և յանմարմինն. և կենդանին բոլոր ի բանականն և բոլոր յանբանն: - 89. Բոլորովիմբն է ընդ դէմ երկաբնակացն. որք *մասամբ* ասեն աստուած և մարդ զքրիստոս. այսինքն յաստուածութենէ և ի մարդկութենէ ժողովեալ աստուած և մարդ: - 90. Քանզի ներքին *մասամբ* ի ձեռն զգայութեանց ճանաչէ զերևելիս. որպէս քար: - 103. Այլ վերին *մասամբ* ծայրիւ իմացութեան ձկտի յաստուածայինսն` հաւատոյն լուսով և վկայութեամբ սուրբ գրոց հաստատել: - 103. Եւ այս ամենայն ընդդէմ է տեսութեան մեր. զի մեք *մասամբ* տեսանեմք. և մի զկնի միոյ. և առաւել և պակաս գիտութեամբ. և ըստ իրին փոփոխմամբ: - 118. Եւ այսու զանազանի ճշմարիտն և ճշմարտութիւնն` այսինքն *մասամբ* և բոլորիւ. որպէս մարդ և մարդկայնութիւն: - 121. Եւ զորօրինակ` մի է բոլորն *մասամբ* իւրով. այսպէս մի է բոլոր հոգի, և սոքա մասունք նորա: - 259. Եւ թէ ոք ասիցէ, երևի ապա թէ յառաջագո՛յն է հոգի քան զմարմին, և յետոյ *մասամբ* երևի: - 260. Եւ թէպէտ զնանիր խոտոյ ասեն ի նոյն ժամն բուսանիլ և կատարիլ և խամրիլ, ի նոյն թւոյս ոչ ելանէ ժամուք կամ *մասամբք*: - 263. Եւ այսպէս ի ներքուստ ի վեր կրկնեալ եօթնից որ է չորեքտասան, կատարի ցանկական *մասամբքն* և կարէ՛ զնմանն ծնանիլ և կոչի մանուկ: - 264-265. Եւ երկրորդ` զի լրիւ աստուածութիւն բանին է՛ բովանդակեալ ի մարմնի և ո՛չ *մասամբ*...: - 319. Նա՛խ` զի տէրն բոլոր մարմնով լուսաւորեցաւ. և նա՛ *մասամբ*...: - 352. ...զգլուխն **ե** երորդ *մասամբքն* ի յետ դարձուցանել որ է՛ տուգանք ե զգայարանացն որ մոռացաւ և ո՛չ զգաց զօրէնս աստուծոյ: - 358. Այլ և զգայութիւնք և միտք և խորհուրդք. ասէ` ամենայն *մասամբքն* սիրեա՛ զաստուած: - 396. Եւ դարձեալ` հոգւովդ և բոլոր մարմնով և բոլոր մտօք սիրեա և ո՛չ *մասամբ*: - 396. Ո՞րք են նմանեալ ադամայ մարմնոյ *մասամբք*: - 434. Բազմօրինակ *մասամբք* և բազմադիմի ստուերակերպութեամբ: - 456. Երկրորդ` վասն բազում մասանցն. որք կրեն զտանջանս մարմնոյ *մասամբ* և զգայութեամբ. և հոգւոյ զօրութեամբ և մտաց իմացմամբ: - 505. Եւ յայսոսիկ միաբանութիւնս որ ըստ կանոնի` յաւէտ միաբանութիւն զայս է իմանալ` որ ըստ բոլորին օրինադրութեանց սահմանաց կամ ըստ գլխաւորագունիցն լինիցի. և ո՛չ *մասամբ* միով միաբանեալք և բազմօք զանազանեալք. մանաւանդ թէ հակառակեալք և ընդդիմացեալք: - 552. Եւ եզով միաբանութիւն. *մասամբ* և ո՛չ յոգնագոյնս: - 554. իսկ թէ մարդս ոչ յառնէ, աշխարհ անկատար մնայ. զի բոլորն *մասամբքն* է կատարեալ: - 715. Իսկ դատապարտեալքն ծանրացեալ *մասամբք* և զազիր անդամօք այր և կին. զի իւրաքանչիւր ոք ի գործիական անդամս իւր կրեսցէ զպատիժն: - 726. Թէ զի՞նչ է ասելն ի սահման հաստատութեանն, *մասամբ* ինչ զօրութեամբ և *մասամբ* ինչ ներգործութեամբ: - 787. Իսկ երրորդն *մասամբ* լուսաւոր և *մասամբ* թափանցանց. որ ասէ զօրութեամբ և ներգործութեամբ: - 788. Այլ և շարժումն երկնից բոլորաձև կարէ՛ ասիլ. *մասամբ* զօրութեամբ, և *մասամբ* ներգործութեամբ: - 788

***ՄԱՍՈՒՆՔ +*** Այլ արդ՝ եդ աստուած զսոսա բնական որակութիւնս ի *մասունս* հոգւոյն. եդ և զանձնիշխան կամքն տէր և իշխան իներքս ի հոգին. զի կառավարէ և առաջնորդէ՛ հոգւոյն. զվատ որակն ի բարին ուղղել, և զբարին ի նոյնն պահել և առաւելուլ. զի այս է գործ անձնիշխանին: - 19. Ութևտասներորդ՝ Զի *մասունքն* քրիստոսի աստուած է, ոտք և ձեռք և գլուխն: - 30. Իսկ անհատ ասի՝ զի ո՛չ քակտի և ո՛չ հատանի որպէս բոլորն ի *մասունս*. զի թէ բաժանես զնա որպէս ի հոգի և ի մարմին, կամ յոտս և ի ձեռս և ի գլուխս, ո՛չ մնայ բոլորն: - 86-87. Բոլոր ի *մասունս*. և այս երկակի. ի նմանամասնեայս՝ և յաննմանամասնեայս: - 87. Այլ և ոչ որպէս բոլոր ի *մասունս*: - 88. Ապա ուրեմն ո՛չ բաժանի որպէս բոլոր ի *մասունս*: - 88. Եւ որպէս ասէ փիլիսոփայն՝ երեք են յասացելոցդ իսկապէս եղանակք բաժանման. այսինքն Որպէս սեռ ի տեսակս. Որպէս բոլոր ի *մասունս*. Որպէս համանուն ձայն: - 89. Իսկ որպէս բոլոր ի *մասունս*, զի որպէս միոյ մասին պակասելոյ՝ բոլորն անկատար մնայ: - 89. Որք *զմասունս* բաժանեն. և զբոլորն ժողովեն: - 90. Զի՞նչ պատասխանեմք երկաբնակացն որք հարցանեն զմեզ, թէ *մասունքն* քրիստոսի աստուած է՝ այսինքն ոտքն և ձեռքն և գլուխն ապա բազմաստուածք էք: - 91. Դարձեալ՝ որպէս ձեռն և ոտն մարդոյ ո՛չ է մարդ, նոյնպէս և ձեռն քրիստոսի ո՛չ է քրիստոս. և ոտն և այլ *մասունքն* ո՛չ են քրիստոս. ապա և բոլոր մարմինն ո՛չ է քրիստոս. և հոգին ո՛չ է քրիստոս. ապա թէ սոքա չեն քրիստոս, և բանն ըստ ինքեան ո՛չ է քրիստոս: - 91. Ասեն այսպէս՝ եթէ ձեռն մարդոյ է՝ զի և ոտն մարդոյ՝ և այլ *մասունքն* մարդոյ է. զի աստուծոյ մասն ո՛չ ասի: - 91. Երևի ապա զի աստուծոյ ո՛չ ասեն *զմասունքն*, այսինքն զձեռն և զոտն. ապա ըստ նոցա և մարմինն չէ աստուծոյ մարմին. և արիւնն չէ աստուծոյ. և հոգին չէ աստուծոյ. այլ ամենեքեան սոքա մարդո՛յ են: - 91. Ապա ուրեմն երևեցաւ՝ զի թէ *մասունքն* քրիստոսի ասին և աստուծոյ ո՛չ ասին, յա՛յտ է թէ զքրիստոս ո՛չ խոստովանին աստուած: - 91. Զա՛յս հարցեր, եթէ *մասունքն* քրիստոսի աստուած են, նաև բազմաստուած էք. զի բազում են *մասունքն*: - 92. Եւ ես ասեմ քեզ. զի թէ *մասունքն* քրիստոսի քրիստոս է, ապա բազմաքրիստոս էք և դուք: - 92. Նմանապէս և մարմինն քրիստոսի աստուած է առ *մասունք* մարմնոյն. և աստուծոյ մարմին առ բոլորն քրիստոս: - 92. Երկրորդ՝ ասեմք եթէ ամենայն *մասունք* է՛ ի գոյացութենէ բոլորին. և որ ունի զնոյն գոյացութիւն, ունի զնոյն կոչումն: - 92. Երրորդ՝ զի ո՛չ է նման առ մեզ և առ նա մասն և բոլորն. զի թէպէտ *մասունք* մարդոյ՝ ո՛չ ունին զկոչմունս բոլորին, սակայն *մասունք* մարմնոյն քրիստոսի՝ կոչին և ունին զբոլորին էութիւն: - 92. Որպէս ի նշխարս մարմնոյն է տեսանել. զի ի բոլորն է բոլոր քրիստոսն. և յիւրաքանչիւր *մասունս* է բոլոր քրիստոսն: - 92. Եւ որպէս մի է զօրութիւն հոգւոյն, և յիւրաքանչիւր *մասունս* մասնաւորի: - 112-113. Ութերորդ՝ ի բոլոր իրն է գոյն և ի *մասունս*. և աստուած ի բոլոր էակս և ի մասնաւորս: - 171. Բաղկացական է, որ ընդ մարմնոյ մասնկանցն գոյանայ ի ներս և ի դուրս. վերոյ և ներքոյ շուրջանակի. զի իւրաքանչիւր *մասունք* ի տեղին ունին զդրութիւնն. և կայացեալ ի բոլորն: - 174. Եւ **ժ** *մասունքն* ժողովեալ ի յամիսն՝ լինի **ժ** ժամ: - 190. Դարձեալ՝ ոչ ինչ պատուական քան զժամանակ. զի զինչ և իցէ յաշխարհի՝ երկու *մասունքն* կարե՛ն համանգամայն գոլ ի միասին բաց ի ժամանակէ և ի հասակէ՛. Տրէ. զի առնու գիշերն յօրէն զժամ և *զմասունքն*. որպէս կրելով յինքն: - 200. Այլ և քաղի ժամք և *մասունքն*. զի քաղոցի տասն ձմեռնամո՛ւտ է: - 200. Վեցերորդ՝ զի անձնիշխա՛ն է մարդն այսինքն իշխէ բանականաւն ցասման և ցանկութեան որք են անասնական *մասունք*: - 220. Այլ *զմասունս* որոշեաց յաւուրս **զ**: - 227. Նա՛խ՝ ըստ փիլիսոփայիցն ներքին *մասունքն* հոգւոյն պատճառե՛ն զարտաքին *մասունս* մարմնոյն. և ըստ պղատոնի՝ հոգին եռամասնեայ գոլով՝ բան և ցասումն և ցանկութիւն: - 232. Երրորդ՝ մարդն նման է բոլոր աշխարհիս. և ի *մասունս* աշխարհի՝ երկինքն է վերին և բարձր. և տարերք ի ներքին վայրս: - 232. Զի բանական *մասունքն* տեսականաւն զարդարի: - 248. *Մասունք* հոգւոյն ո՞րպէս ճանաչին: - 250. Որպէս օրինակաւ *մասունք* հոգւոյ ասացան, նոյնպէս է և *մասունք* մարմնոյն իւրաքանչիւրոցն գործի: - 250. Եւ համանգամայն երևի ասեմ. զոր օրինակ նիւթն այն ունի առ ինքն ծածկեալ *զմասունս* մարմնոյ. զձեռս և զոտս, զմիս և զմազ, որ յետոյ երևին ի նմանէ: - 255. Երկրորդ՝ զի ամենայն *մասունս* համանգամայն առ ինքն ունի: - 256. Իսկ թէ զսոսա **գ** տեսակս ասես, կամ զօրութիւնս, կամ *մասունս* բանական հոգւոյն, մի՛ է տեսութիւնն: - 259. Եւ զորօրինակ՝ մի է բոլորն մասամբ իւրով. այսպէս մի է բոլոր հոգի, և սոքա *մասունք* նորա: - 259. Եւ որպէս ասէ արիստոտէլ զերեք թիւն՝ որ մի ունի զէութիւն իւր. այլ երկուքն և մինն *մասունք* են նորա: - 259. Այսպէս և զգայականն և տնկականն *մասունք* են բանականին՝ նախ եղեալ ի մարմինն. և յորժամ բանականն հեղի ի մարմինն, յայնժամ և սոքա հեղին ընդ նմա. զի զօրութիւնք և *մասունք* են նորա ըստ օրինակի նախասացեալ երրորդ թուոյն: - 259-260. Դարձել **դ** տարր, և տնկականն և զգայականն, և երեք *մասունք* հոգւոյն բան ցասումն և ցանկութիւն, որ լինի **թ**: - 264. Եւ **է** ամեայ ուսումն ստանայ. վասն որոյ մինչև յեօթն ամն երեխայ կոչի. զի **գ** *մասունք* են

հոգւոյն. բան. ցասումն. և ցանկութիւն. ըստ պղատոնի: - 264. Երկրորդ՝ հաւասար *մասունքն*: - 271. Եւ որպէս աստուած է՛ ամենայն ուրեք էապէս. և հոգի մարդոյն է՛ յիւրաքանչիւր *մասունս* մարմնոյն էապէս: - 275. Երրորդ՝ թշնամի են հոգի և մարմին իրերաց և *մասունք* նոցա: - 277. Նախ՝ վասն պարզամտութեանն. զի որպէս տղայք ո՛չ ամաչեն անծածուկ ունելով *զմասունս*. նոյնպէս և նոքա: - 278. Նա՛խ՝ **գ** *մասունք* հոգւոյն, բան՝ ցասումն՝ և ցանկութիւն. և դ տարերաց խառնուածն որովք մեղանչէ մարդ: - 287. Եւ յերկուս *մասունս* բաժանեալ ծովուն, - 338. Իսկ առ մեզ **ժ** *մասունք* և **գ** կիցն, զի **ժ**՝ սուրբ և նըւէ՛ր է աստուծոյ: - 340. Եւ **ժ** *մասունք* արարածոց: - 342. Դարձեալ, տասն են *մասունք* զգալի արարածոց. այսինքն՝ **է** մոլորական գունդք. և **ը**՝ անմոլարքն. և իններորդ ի լուսոյդ ի վայր. և մարդս **ժ** երորդ ի վերայ նոցա. որ է՛ բանական և բաժին աստուծոյ: - 376. Դարձեալ՝ որպէս աչօք տեսանեմք զմարմնոյս *մասունքն* և զտգեղութիւնն զարդարեմք: - 397. Նոյնպէս և մտօք *զմասունսն* հոգւոյս զբան՝ զցասումն՝ և զցանկութիւնն տեսանել և զարթարել: - 397. Երկրորդ՝ զի ժողովուրդն ոտիւք գայր, և զձեռս տարածէր, և զգլուխսն խոնարհեալ երկիր պագանէին. վասն որոյ հատան այնպիսի *մասունքն*: - 426. Դարձեալ, ժամանակն ունի *մասունս* երիս. և մշտնջենաւորն. և դարձեալ յաւիտենական է բանն. և ժամանակեայ մարմինն. և մշտնջենաւոր հոգին. և անքակտելի միութիւնն ցուցանէ մեզ զչորս թուոյն. և ամենայնիւ կատարեալ գոյացութեամբ: - 437-438. Եւ թէպէտ կատարեալ և լի և անթերի էին *մասունք* մարմնոյն քրիստոսի. այլ ա՛յն քան փոքրիկ, մինչ զի հազիւ անկարէր ընդ տեսութեամբ մարդոյ: - 470. Այլ բանն աստուած զբնութիւնս մարդկային էառ և միաւորեաց *զմասունս* նորին և ո՛չ զապականութիւն զի ո՛չ է բնութիւն. ապա ուրեմն անապակա՛ն է: - 499. Զի յատուկ է անմարմնոյ, որպէս ի բազումս բազմանայ և ի միութենէն ո՛չ բաժանի, այսպէս ի *մասունս* մասնաւորի և ի բոլորէն ո՛չ քակտի: - 529-530. Կամ որպէս բոլոր ի *մասունս*. կամ որպէս հոմանուն ձայն. կամ որպէս ի միոջէ և առ մի: - 533. Նա՛խ՝ որպէս բոլորն է մարմին և իւրաքանչիւր *մասունքն*. նոյնպէս և բոլորն մի եկեղեցի՝ և իւրաքանչիւրքն. և բոլորն քրիստոնեայ՝ և մին մարդն. եթէ նման են միմեանց և եթէ աննման: - 533. Զի՞նչ է արդարութիւն և զի՞նչ գործ նորա կամ *մասունք*: - 579. Եւ *մասունք* արդարութեան են **զ**. այսինքն կրօնաւորութիւն. գթութիւն. շնորհ. վրէժխնդրութիւն. պահպանութիւն. և ճշմարտութիւն: - 579. Զի՞նչ է խոհեմութիւնն և զի՞նչ գործ նորա և *մասունք*: - 579. Եւ *մասունք* են խոհեմութեան **գ**. այսինքն հանճարեղութիւն, նախատեսութիւն, և յիշողութիւն: - 580. Զի՞նչ է արիութիւն և զի՞նչ գործ նորա և *մասունք*: - 580. Բայց *մասունք* արիութեան են **դ**. այսինքն մեծագործութիւն. ապաստանութիւն. համբերութիւն. և յարամնայութիւն: - 580. Զի՞նչ է ողջախոհութիւնն և զի՞նչ գործ նորա և *մասունք*: - 581. Այլ *մասունք* ողջախոհութեան են երեք. այսինքն ժուժկալութիւն. անոխակալութիւն. և համեստութիւն: - 581. Իսկ թէ հարկաւոր ժամանակ հանդիպի զպատւական *մասունքն* միայն. և կամ զերեսս միայն բաւական է լուանալ: - 588. Եւ որ զայլ *մասունս* օծանէ՝ յա՛յնմ խորհրդոյ է՝ որ յառաջ քան զմկրտութիւնն օծանեն այլ ազգք քրիստոնէից: - 593. Յաղորդութիւնն է խորհուրդ՝ յորում պարունակի քրիստոս ի ներքոյ ձևի հացի և գինւոյ. և յերկոքին *մասունքն* է բոլոր քրիստոս: - 594. Եւ դարձեալ՝ որպէս բոլոր Նշխարն մի մարմին է, և ի *մասունս* բաժանեալ իւրաքանչիւրն բոլոր և կատարեալ մարմին է քրիստոսի: - 598. Նոյնպէս և բոլոր մարմին և հոգին է մի աստուած ընդ բանին միաւորեալ. և բաժանեալ ամբողջական *մասունքն* է՛ բոլոր և կատարեալ աստուած: - 598. Նաև կատարեալ խոստովանութիւնն ունի զերիս *մասունս* ապաշխարութեան: - 603. ...վասն որոյ երբ յերեք ազգն ժամանէ վճարին **գ** *մասունքն*: - 612. Նոյնպէս և *մասունք* մտացն իմացումն է և կամքն: - 612. Եւ այս է պատճառն, զի աստուած ետ մեզ միտք և բան և ձայնի գործիք և մարմնոյ *մասունք* և ինչք. վասն որոյ յամենայնէ՛ նուիրելի՛ է աստուծոյ: - 619. Չորրորդ՝ զի *մասունք* արարածոց ձայն ունին և բան չունին, - 641. Տասն աղին՝ **ժ** զգայութիւնքն հոգւոյ և մարմնոյ. և **ժ** *մասունք* արարածոց ընդ բան օրինացն: - 641. Երկրորդ՝ զի թէ արական մասն երևի՝ ոչ ինչ նախապատուի կամ էգն անարգի. զի *մասունք* անդամոց անդ ո՛չ է զազրալի: - 726. Վճիռ որ վասն բարեացն է՝ պարունակէ՛ յինքն **է** *մասունս* օրհնութեան: - 740. Իսկ վճիռն որ ընդ դէմ չարեացն, ունի *մասնունս* **զ**: - 740. Յաղագս որոյ որ ինչ գոյ միոյն յայտնի և ներգործական *մասունք*, գոն նոքա և միւսոյն բնաւորապէս ծածուկ և զօրութեամբ: - 786

***ՄԱՍՆ ԻՆՉ*** - Ա՛րդ՝ ի սոցանէ *մասն ինչ* աղօթակա՛ն է և *մասն ինչ* հրաման. վասն զի *մասն ինչ* եկեղեցւոյ կանոնաց մեղանչեմք, և *մասն ինչ* և *մասն ինչ* պատուիրանացն աստուծոյ: - 602

**ՄԱՍՆԱԲԱՐ +** Երրորդ՝ զի վերինքն զներքնոցն ունին բոլորապէս զամենայն. և ներքինքն զվերնոցն *մասնաբար* ըստ չափու իւրեանց. և քահանայապետն ունի զաստիճան ներքնոցն բոլորապէս. և ներքինք զվերին քահանայապետիցն մասնապէս: - 136

**ՄԱՄՆԱԿԱՆ +** Անձն է անհատն և *մասնականն* որպէս պետրոս: - 86. Եւ է՛ արտաքին զգայութիւնքն **ե**. որ է *մասնական* զգայութիւն. այսինքն է տեսանելիքն. լսելիքն. հոտոտելիքն. ճաշակելիքն. և շօշափելիքն: - 249. *Մասնական*, որպէս մասանց առ բոլորն: - 318. Եւ բաց յայսցանէ **գ** այլ *մասնական* կամ տեսական ասա. այսինքն բարոյական. բանական. վարդապետական: - 528. Երկրորդ՝ որպէս հանուրն նախադասի *մասնականաց*, այսպէս առաքեալքն հանուրց աշխարհի լոյս կոչեցան. և մարգարէքն միոյ ազգի...: - 535. Են և այլ շնորհք *մասնականք* պարգևաց հոգւոյն. որպէս բան իմաստութեան և այլն: - 783

**ՄԱՄՆԱԿԻՑ +** Երրորդ՝ կամեցաւ զմարդն ի պատկեր իւր՝ երկրորդ ստեղծմանն աշխարհի գործակից և *մասնակից* լինիլ. վասն որոյ հրամայեաց ի նոցանէ առնուլ զնիւթ կազմելոյն: - 342. Զաստուած *մասնակից* առնել ընչիցն զի այլքն խնամով պահեսցին: - 376. Այլ զի և մեք նոցին բաղձասցուք և նոցա *մասնակից* լիցուք և զնոսա բարեխօս կալցուք և զնոսա՛ օրինակ դիցուք. - 628. Յինգերորդ՝ փափագիմք *մասնակից* նորա լինիլ սրբութեան և փառաց: - 673

**ՄԱՄՆԱԿՑՈՒԹԻՒՆ +** Նովին բանիւն արձակեմ զքեզ յամենայն *մասնակցութենէ* մեղաց. ի խորհրդոց ի բանից և ի գործոց. յանուն հօր և որդոյ և հոգւոյն սրբոյ: - 602

**ՄԱՄՆԱՊԷՍ** - Եւ զայլ *մասնապէս* զբացայայտութիւն կոչմանց ամենայն դասուց՝ գտցես յայլուրեք ի բանն գրեալ որ ասէ՝ «ո՞ արար զհրեշտակս յոգիս»: - 136. Երրորդ՝ զի վերինքն զներքնոցն ունին բոլորապէս զամենայն. և ներքինքն զվերնոցն մասնաբար ըստ չափու իւրեանց. և քահանայապետն ունի զաստիճան ներքնոցն բոլորապէս. և ներքինք զվերին քահանայապետիցն *մասնապէս*: - 136

**ՄԱՄՆԱՒՈՐ +** Ութևտասներորդ՝ ո՛չ ոք իմանալի ստեղծւած և *մասնաւոր*՝ կարէ հաղորդիլ բազմաց: - 59. Երկրորդ՝ զի թէ նա՛ շնորհիւ ունի զորդիութիւնն և ո՛չ էապէս, ապա ուրեմն մասամբ և ըստ կարգի ունի՝ և ո՛չ զլրումն աստուածութեանն. զի շնորհն է *մասնաւո՛ր* պարգև: - 66. Այլ և այսպէս ասելն՝ բոլորին կոչմունքն լինի *մասնաւորին*: - 92. Զի մինն հասարակ է. և միակն *մասնաւոր* և առանձնակի...: - 109. Եւ որպէս մի է զօրութիւն հոգւոյն, և յիւրաքանչիւր մասունս *մասնաւորի*: - 112-113. Ամենահայեացն զբոլոր տեսութիւնն ասէ որ ընդդէմ է *մասնաւոր* տեսութեանս մերոյ չորեքկին: - 119. Իսկ մերս *մասնաւոր*: - 119. Երրորդ՝ զգայութիւն *զմասնաւո՛րն* տեսանէ. որպէս այս ինչ մարդ որ է անհատ. և միտք զընդհանուրն իմանայ՝ որ է բնութիւն. որպէս մարդկութիւն: - 121. Եւ *զմասնաւոր* խորհուրդս բա՛նն յայտնեաց: - 125. Նախ՝ զի հրեշտակն միեղէն և բոլոր իմանայ. իսկ հոգին բան բան և *մասնաւոր*. վասն որոյ բանական կոչի: - 141. Մետասաներորդ՝ մարդոյս գործ *մասնաւոր* և մի զկնի միոյ. իսկ աստուծոյն համանգամայն և բոլորովիմբ: - 157. Ութերորդ՝ ի բոլոր իրն է գոյն և ի մասունս. և աստուած ի բոլոր էակքս և ի *մասնաւորս*: - 171. Իսկ *զմասնաւոր* անհատիցն՝ դնեն իւրաքանչիւր ոք ծնունդք ադամայ: - 220. Ասեմք թէ՝ սոքա ի *մասնաւոր* հոգւոյն բարի են բնաւորեալ նախանձ ցանկութիւն և այլն. և վասն բարւո՛յ են եդեալ. այլ մարդն կամօք իւրովք փոխէ՛ զբնական բարին ի չարն: - 237. *Մասնաւոր* զգայութիւնն: - 249. Եւ այլք զհայոյն՝ ծեքական և թիւր ուսանին. զի *մասնաւո՛ր* է լեզու նոցա: - 297. Յորոց փրկեսցէ զմեզ և զամենայն հաւատացեալս անւան իւրոյ ի յաւիտենական և յանել տանջանաց հրոյն. և *մասնաւոր* աջակողմեան դասուն և ժառանգ արքայութեանն երկնից կացուսցէ յիսուս քրիստոս տէր մեր. որ է օրհնեալ յաւիտեանս Ամէն: - 317. Վասն այն յոբ **Ժ** պատարագաւ սրբէ՛ր զ**Ժ** *մասնաւոր* մեղսն որ գտանին յարբեցութեան. և մին զուարակն ի սրբութիւն վասն ակամայ և խորհրդոյ մեղացն: - 322. և Դարձեալ՝ գութն բովանդակ և կատարեալ սէրն է. և ողորմութիւնն *մասնաւոր*. զի ողորմութիւն ի գթո՛յն յառաջի և սփռի ի մեզ: - 351. Յինգերորդ՝ այն *մասնաւոր* ազգի. այս բոլոր աշխարհի: - 353. Եւ նախ ասեմք զանկենդանն որ կոչի զոհ. որ է՛ *մասնաւոր* նւէրք. որպէս նաշիհ և իւղ և խունկ: - 357. Եւ բաց յայսցանէ *մասնաւորք* այս են: Մուրկն: Երախայրին: - 359. Այլ և նուէրք սրբութեանն տունս, անդաստանս պտղաբերս, անասունս, և այլ *մասնաւոր* նուէրք: - 359. Եւ այսոքիկ *մասնաւոր* նուէրք բովանդակք զոր հրամայեաց մովսէս: - 359. Երկրորդ՝ փոքր ողջակիզացն. յոր *մասնաւոր* պատարագացն էր: - 364. Չորրորդ՝ չարութեամբ աստ մեղօք տանջեն. և յետ մահու առհաւատչեայ *մասնաւոր*. և ի յարութեանն յաւիտենական տանջանօք: - 394. Զի որ յետոյ սիրէ և փոխարինօք և *մասնաւոր* և երբէք, անկատար սէր է և մարմնական: - 396. Երրորդ՝ զի առցեն *մասնաւոր* զառհաւատչեայ հանդերձելոյն. տանջելով աստ ի սով, ի սուր, և ի գերութիւն: - 408. Նախ *մասնաւոր* հրէից. և ապա մեր եկեղեցւոյ. և ի կատարածի բովանդակքն...: - 449. Ապա *մասնաւո՛ր* եղև փրկութիւնն և ո՛չ բոլորից մարդկան: - 506. Ա՛յլ արդ՝ աւարն առ հասարա՛կ է և ո՛չ *մասնաւոր*: - 507. Եւ է՛ այսպէս. զի անուամբ բոլորին պարտ է իմանալ *զմասնաւորն*. զի առաջին օրն անկատա՛ր է. նոյնպէս և երկրորդն անկատա՛ր է և մասն. այլ միջինն կատարեալ է: - 516. Եւ թէ ո՞րք են *մասնաւոր* անդամք եկեղեցւոյ: - 525. Քառասունն**ղ**,

*մասնաւոր* Աղօթք. և Օրհնութիւնք. և Խաղաղութիւն. Քարոզ. և Մաղթանք և Գոհութիւն: - 527. Զի յատուկ է անմարմնոյ, որպէս ի բազումս բազմանայ և ի միութենէն ո՛չ բաժանի, այսպէս ի մասունս *մասնաւորի* և ի բոլորէն ո՛չ քակտի: - 529-530. Զոր օրինակ, բան մարդոյ յիւրաքանչիւր *մասնաւոր* լսելիս բաժանի, և բոլոր և կատարեալ է և ո՛չ մասն: - 530. Այսպէս և բանն աստուծոյ բոլոր և կատարեալ է յիւրաքանչիւր աւետարանս և ո՛չ *մասնաւոր*: - 530. Ո՞րք են *մասնաւոր* անդամք եկեղեցւոյ: - 534. Եւ որոց պարգևի *մասնաւոր* այս շնորհ, թէ և ո՛չ բոլորապէս ըստ նոցայն: - 537. Իսկ անհատն է առաւել և իսկագոյն և առաջին գոյացութիւն. որ է առանձնական և *մասնաւոր* որպէս զազգս մեր: - 550. Ապա յա՛յտ է, զի նըւազ ճշմարիտն առաւել ճշմարտին հետևեսցի. որպէս նուազ բարին առաւել բարւոյն. եթէ ընդհանուրն և եթէ *մասնաւորն*: - 550. Յանգիստն որպէս *մասնաւորքն*. նոյնպէս և տունքն: - 631. Եւ *մասնաւոր* գ: - 663. Իսկ թէ բոլոր և բոլորից դատաստանն է ի կատարածի. ապա ուրեմն այժմ ո՛չ է քննութիւն *մասնաւոր* հոգւոյ: - 700. Այսպէս և դ տարերք ըստ ինքեանց անապականք են. զի *մասնաւորքն* ի նոցանէ ապականին և դարձեալ ի նոսա խառնին. և այսոքիկ ըստ կամացն աստուծոյ են կամ մշտապէս: - 733. և Ոմանք դատին այլ ո՛չ դատապարտին. որպէս միջակ արդարքն. որք ունին ներելի և *մասնաւոր* մեղս: - 739. Դարձեալ ասեմք առաջին կեանք *մասնաւոր*, զոր նախ քան զյանցանելն ունէր. անկարօտութիւն. լուսաւորութիւն. անծերանելի հասակ. անմահ կեանք. և այլն որ ասացաւ ի վերոյ **ժէ** գլուխն **լզ** համարն: - 758. Ա՛րդ՝ սոքա ամենայնքին *մասնաւոր* և փոփոխական են և հակառակաւ. զի՞նչ իմանաս զանտի երանութիւնն. որ բոլորովիմբ է, և անփոփոխ, և առանց հակառակի յաւիտենական: - 762. Վասն մեծի սիրոյն՝ ժառանգութիւնն այն ամենեցուն մի է իւրաքանչիւր ումեք բոլորն և ո՛չ *մասնաւորն*: - 764

**ՄԱՍՆԱՒՈՐԱԲԱՐ +** Եւ արդ որպէս ցուցաւ՝ վերինք մինչ ի միջինս ունին բոլորապէս զներքնոցն. և ներքինքն *մասնաւորաբար* մինչ ի զօրութիւնսն՝ յաղագս առ հասարակ զօրութիւնք կոչին: - 137. Առաջին միաւորութիւն ստոյգ և ճշմարիտ՝ հոմանիւթ *մասնաւորաբար* որոշեցելոց. որոց ոչ ինչ տարանիւթ ընդ մէջ երևի. որպէս երկուց ջահից լուցելոց միաւորութիւն լուսոյն: - 476. Մինչև յօր դատաստանին տեսանեն մեղաւորք փառս արդարոց ընդհանրապէս՝ այլ ո՛չ *մասնաւորաբար*. զի տեսանիցեն զնոսա ի մեծ փառս՝ այլ ո՛չ ի յորպիսիս: - 741

**ՄԱՍՆԱՒՈՐԱՊԷՍ +** Ասեմք նախ՝ եթէ որպէս ասացաք ներքինք զվերնոցն *մասնաւորապէս* ունին. որպէս վերինք զներքնոցն բոլորաբա՛ր: - 137

**ՄԱՍՆԱՒՈՐԻՄ +** Երրորդ՝ զի հատեալն *մասնաւորի*. այլ ընդ ծնանիլ զաւակին՝ ոչ ինչ պակասի ի ծնօղն. բան, կամ շունչ, կամ կենդանութիւն. այլ բոլորն է ի ծնօղն և բոլորն ի ծնեալն: - 257. Որպէս զաւար մադիանացոց մովսէս *մասնաւորեաց* ի խորանն աստուծոյ: - 390. Որոց լիցի մեզ ամենեցուն *մասնաւորիլ* ի փառս արքայութեան երկնից ի քրիստոս յիսուս ի տէր մեր ամէն: - 411. Դարձեալ խրատէ՛ զառաքեալս ի գործ ինչ՝ բոլոր և ամբողջ բերել առ տեարս իւրեանց. և նոքա *մասնաւորեսցեն* նոցա: - 443. Զի որպէս բաշխի մարմինն, նոյնպէս և *մասնաւորեսցի* արիւնն առ հասարակ: - 598. Նա՛խ՝ որպէս մեք ի կիրակէ ուրախացաք և վայելեցաք ի շնորհաց յարութեանն քրիստոսի, ի միւս օրն և զնոսա *մասնաւորեմք*: - 684

**ՄԱՍՆԻԿ +** Նախ՝ զի նոյն ուրացական *մասնիկն* այն՝ այսինքն ո՛չն՝ ներգործէ՛ զուրացումն և զքառնալն: - 124. Պատասխանեմ առաջնոյն, թէպէտ մի և նոյն ուրացական *մասնիկն* որ է ո՛չն՝ գործէ՛ զուրացումն և զքառնալն, այլ ուրացումն և քառնալն ո՛չ է նոյն. զի բազում պատահի որ գործին նոյն է որպէս ձեռն. այլ գործելն ո՛չ է նոյն. որպէս կտրելն և կարելն: - 124. Նախ է տեղի մարմնական. որ ըստ իւրաքանչիւր *մասնկանց* մարմնոյն պատահի: - 172. Բաղկացական է, որ ընդ մարմնոյ *մասնկաննն* գոյանայ ի ներս և ի դուրս. վերոյ և ներքոյ շուրջանակի. զի իւրաքանչիւր մասունք ի տեղին ունին զդրութիւնն. և կայացեալ ի բոլորն: - 174. Վասն այն *մասնկունքն* նորա ո՛չ խստանան. այլ անգայտացեալ ի վա՛յր բերի և կոչի ծին: - 205. Վասն է՞ր *մասնկաննն* դիրք՝ աչքն՝ ի վերոյ է եդեալ. և ականջն ի կողմանէ. և հոտոտելիքն զառ ի վայր. և այլն ըստ կարգի: - 235. Մինչ զի այս քան գտանիցին հեշտութիւնք ի *մասնկան* ստեղծուածոյս, որ քան գտցին ի ստեղծօղն յայն: - 762

**ՄԱՍՏՈՒԹԻՒՆ +** Իսկ հեզութիւնն նոյն է ընդ *մաստութիւնն*. զի ասեն թէ՝ *մաստութիւն* է որ ո՛չ զգայ զդառնութիւն ինչ ոգոյ: - 584. Եւ *մաստութիւնն* է նոյն ընդ համբերութեանն. զի համբերութիւնն է տևումն մարմնաւոր նեղութեանց. իսկ *մաստնութիւնն* է տևումն նախատանաց: - 584

**ՄԱՏԱԹԻԱ** - Եւ ա՛յս են **բժան** ակունք և անւանքն գրեալ: ...Յուդա՛ է և *Մատաթիա*: - 348. Ասաց *մատաթիա*: - 573

**ՄԱՏԱԿ +** Եւ էր մեծութիւն նորա մարմնական... էշք *մատակ* արօտականք **եճ**: - 321

**ՄԱՏԱՂ +** Այլ և ունիմք զմարմնաւոր պատարագս զօրինակին... Ազապս *մատաղաց*. և ոգէհանգիստ: - 362. Նոյնպէս և մեք ի հանդէս տօնից նուիրեմք նաշիհ և գինի պատարագի. ծէթ՝ մոմ՝ խունկ՝ և զենումն *մատաղի*: - 375. Յիսունևիինգ, *Մատաղն* և աղն: - 527. Զի՞նչ է օրհնած աղն *մատաղի*: - 657. *Մատաղն* ստուգաբանի մատո՛ աղ: - 657. Եւ *մատաղն*, Նախ պատարագ և նուէրք է աստուծոյ. որպէս աբէլ՝ նոյ՝ և աբրահամ մատուցանէին: - 657. Դարձեալ՝ *մատաղն* ստուեր և օրինա՛կ է ճշմարիտ պատարագին քրիստոսի որ գառն աստուծոյ և եզն պարարակ կոչեցաւ...: -657. Դարձեալ՝ չորիւք յատկութեամբ *մատաղին* պա՛րտ է զանձինս մեր պատարագել: - 658. Այս քան վասն *մատաղի*: - 658

**ՄԱՏԱՂԵՄ +** Ի յաւարէ պա՞րտ է յեկեղեցիս մատուցանել կամ *մատաղել*, թէ ոչ: - 390

**ՄԱՏԱՆԻ +** Որպէս կնիք *մատանւոյ* ի բազում մոմս: - 106. Եւ որպէս մի է կնիք *մատանւոյն*, և բազմանայ ի կնքեալ մոմս: - 113. Դարձեալ և ի յառակս անառակին որ դարձաւ առ հայրն՝ և ողջմամբ ընկալաւ և զգեցոյց զնա և զարդարեաց *մատանի* ի ձեռս՝ և կօշիկ յոտս. այլ ո՛չ ետ թոյլ նմա պատարագել. այլ հրամայէ՛ այլոցն...: -167. Երրորդ՝ ի գաւազանն և ի *մատանին*. զի ի վերայ իշխանաց և իշխեցելո՛ց է հաստատեալ և յեցեալ: - 271. Եւ դարձեալ զոր օրինակ, գիր *մատանւոյն* մի և նոյն կատարեալն է տպացեալ յամենայն մոմս կնքեալ և ո՛չ աւելի և ո՛չ նուազ: - 530. Եւ որ եպիսկոպոսն զմիթրն և զեմիփորոնն և *զմատանին* զոր զգեցեալն էր ի ձեռնադրութեանն՝ հանէ՛ յորժամ պատարագէ...: - 635-636. Զաստուած ասեն. թէ քահանայապետի *մատանւոյն* աստուած անունն էր գրած. և հաստատեաց թէ աստուած է: - 638. Զոր օրինակ մի պատկերն դրոշմի ի զանազան մոմս. և ի հալիլ մոմոյն դրոշմ պատկերին ժողովի և մնայ ի *մատանւոջն*: - 732. Օրինակ. Աստուած *մատանի*. և միտք մոմ. և հաւատն տիպ ի *մատանոյն*. այս է սուրբ Երրորդութիւնն: - 769. Որ պորփիւր օրինակէ՛ *զմատանին* աստուծոյ. թէ մի է և ի վերայ բազմաց բերի և ի բազումս և ո՛չ ի բազմաց է: - 769. Տէրն զգանձն *մատանեաւ* դրոշմեալ տայ ի ծառայս. և *մատանին* ի ձեռին է. երբ խնդրէ՝ թերին յանդիմանի: - 769

**ՄԱՏԵԱՆ +** Կատարումն Հինգերորդ *Մատենի* Հարցմանցս: - 282. Եւ զանթաքչելի *մատեանս*: - 545. Խնծոր նոր և հին, գիրքն են աստուածայինք. որք հինք են յօրէնս և ի մարգարէս. և նորք յաւետարանն և յառաքելական *մատեանս*: - 756

**ՄԱՏԹԱՆ** - *Մատթանի* որ և սեդեկիա ամս **ժա**: - 453. *Մատթան* **լը**: - 453. Դարձեալ վասն յովսեփայ գիտելի է. զի ի ցեղէն սողոմոնի որդւոյն դաւթի՝ *մատթան* առեալ կին, ծնաւ զյակոբ: - 460. Եւ յետ մահուանն *մատթանայ*՝ մելքի ի ցեղէն նաթանայ որ որդի էր ղևեայ և եղբայր պանթերայ, առեալ զնոյն կին *մատթանայ* և ծնաւ զելի: - 460. Յակոբ ի ցեղէն սողոմոնի որդի *մատթանայ*. և Ելի ի ցեղէն նաթանայ որդի մելքեայ: - 460. Իսկ ի մօր կողմանէ՝ մարիամ էր ի քահանայից ցեղէն, զի *մատթան* քահանայն բնակէր ի բեթլէհէմ, և ունէր երիս դստերս: - 460. Այսպէս և յովակիմ ի յուդայէ՛ էր և ունէր զաննա զդուստր *մատթանայ* ի ցեղէն ղևեայ. վասն այն ազգական մարիամու զեղիսաբեթ ասէր գաբրիէլ: - 461

**ՄԱՏԹԷՈՍ** (Ս. Գրքի չորս ավետարաններից մեկը) - Հինգերորդ՝ ասէ ի *մատթէոսեան* աւետարանն խոստովանելով, «ամենայն ինչ տուաւ ինձ ի հօրէ իմմէ»: - 96. Տասներորդ՝ ասէ ի *մատթէոսն*, «զի՞ խորհիք ի սիրտս ձեր», և յօհաննէս ասէ՝ «ինքն գիտէր զինչ կրէր մարդն»: - 97. Իննևժերորդ՝ ասէ ի *մատթէոսն* «երկինք և երկիր անցանեն՝ և բանք իմ մի՛ անցցեն»: - 98. Հինգերորդ՝ նշանակէ զչորեսին աւետարանիչքն. մարդն *զՄատթէոս*՝ զմարդեղութիւն բանին ցուցեալ առիւծն զՄարկոս՝ արիաբա՛ր աւետարանեալ. «և էր ընդ գազանսն» ասէ. եզն զՂուկաս՝ յերկարաձիգ պատմութեամբ. և եզն պարարակ կոչեցեալ. արծւին ըզՅօհաննէս՝ ի վերուստ զբանն աւետարանեալ: - 132-133. Մարդն *մատթէոս*՝ զօրինաւոր ծնունդն բացայայտեալ: - 133. Յաղագս Չորրորդին ասէ ի *մատթէոսն*, «Երանի հեզոց զի նոքա ժառանգեսցեն զերկիր»: - 210. Սապէս և քրիստոս ըստ մարմնոյ որդի է աբրահամու ըստ *մատթէոսի*: - 304. Շմաւո՛ն է և *Մատթէոս*: - 348. *Մատթէոս*, Մարկոս, Ղուկաս, Յոհաննէս: - 450. Իսկ ըստ ազգաբանութեանն *Մատթէի*, ծնանի յեքոնիա զսաղաթիէլ ամաց **ծզ**: - 453. Եւ յովսէփ արդարն էր ի թագաւորական ցեղէն. որպէս պատմէ՛ աստուածախօսութիւնն *Մատթէոս* և Ղուկաս: - 460. *Մատթէոս* ի սողոմոնէ՛ իջանէ առ յովսէփ, և Ղուկաս ի նաթանայ: - 460. Վասն զի ոմանք՝ որպէս մեծն ներսէս ի մեկնութիւն սաղմոսին որ ասէ «**է** անգամ յաւուր օրհնեցից զքեզ», ասէ թէ՝ յերեկոյի շաբաթուն է յարութիւնն քրիստոսի յորում լուսանայր կիրակէն. ըստ *մատթէոսի* «յերեկոյի շաբաթուն յորում լուսանայր միաշաբաթին»: - 512. Նա՛խ՝ զի *մատթէոս* զերեկոյի շաբաթուն և զլուսանալ միաշաբաթին յիշէ. այսինքն զսկիզբն և զվախճան գիշերին. զի յերկուց մէջն որ է՛ հասարակն և մէջ գիշերին՝ նշանակեսցէ զժամ յարութեանն: - 512. *Մատթէոս* զառաջինն գրէ որ ի մէջ գիշերի եկին. և մի հրեշտակ տեսին. և զվէմն առաջի

նոցա թաւալեցոյց և նստաւ ի վերայ նորա: - 515. Եւ այս հարցանելի է, զի թէ մագդաղենացին ընդ առաջին կանայսն եկն զոր *մատթէոս* պատմէ և համբուրեցին զոտն յիսուսի...: - 515. Եւ յերեկոյի շաբաթուն յորում լուսանայր միաշաբաթին լինի յարութիւնն քրիստոսի ըստ *մատթէոսի*: - 516. Յանտիոք վասն *մատթէոսի*: - 549. Ասաց զայս *մատթէոս*: - 573. ...այսպէս պատմէ *Մատթէոս* և Մարկոս. իսկ Ղուկաս և Յոհաննէս յետ ընթրեա՛ցն նշանակեն զքացեալ պատառն: - 599. Եօթնժ, ասէ ի *մատթէոսն* թէ «արքայութիւնն երկնից նման է առն տանուտեառն, որ ել ընդ առաւօտս ունիլ մշակս յայգի իւր. և իբրև երեկոյ եղև, ասէ ցգաւառապետն տալ նոցա մէն մի դահեկան»: - 692. Ութևժ, և ի *մատթէոսն* ասէ՝ «այր մի գնացեալ ի տարաշխարհ, կոչեաց զծառայսն և ետ նոցա զինչս»: - 692. Իննևժ, դարձեալ ի *մատթէոսն* ասէ՝ «արքայութիւնն նման է առն որ սերմանիցէ սերմն բարի յագարակ իւր» և այլն: - 693. Քսաներորդ, ասէ ի *մատթէոսն* «նման է արքայութիւնն առն թագաւորի որ արար հարսանիս որդւոյ իւրոյ. և ժողովեաց զամենայն զչարս և զբարիս. և լցան» և այլն: - 693. Դարձեալ ասեն, *մատթէոս* ի «ասէ տանուտէրն՝ կոչեա՛ զմշակսն և տո՛ւր նոցա զվարձս»: - 696. ...որպէս ասէ աւետարանն *մատթէի*, «ի մէջ գիշերի եղև բարբառ ահա փեսայ գայ արի՛ք ընդ առաջ նորա»: - 714. Երկրորդ, միտք հոգոյն և մարմնոյն. զորմէ ասէ ի *մատթէոսն* «լե՛ր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն մինչ դեռ իցես ընդ նմա ի ճանապարհին» որպէս ցուցաւ վերագոյն: - 743. Եւ ի *մատթէոսն* «ծառայ բարի և հաւատարիմ մո՛ւտ յուրախութիւն տն քո»: - 762. Եւ ի *մատթէոս*՝ «յայնժամ արդարքն փայլեսցին իբրև զարեգակն յարքայութիւնն հօր»: - 767

**ՄԱՏՆ +** Առ եօթներորդն ասեմք, եթէ՝ *մատն* աստուծոյ երբեմն նշանակէ զերրորդութիւն անձանցն...: - 62. Եւ զի *մատն* աստուծոյ ասի հոգին սուրբ: - 62. Նախ՝ որպէս *մատն* է յէութենէ մարմնոյն, այսպէս և հոգին սուրբ է յէութենէն աստուծոյ: - 62. Երկրորդ՝ զի որպէս *մատամբ* գրեմք կամ գործեմք զամենայն գործս, այսպէս և հոգին սուրբ գրէր ի մարգարէսն...: - 62. Որպէս յորժամ ասեմք զձեռն բոլոր և մասն. զի մասն է բոլոր մարմնոյն, և բոլոր առ *մատունս* ձեռացն: - 92. Եւ այն տխեղծ *մատանց*, տառատիպ գծաց. որ անհրաժեշտն է առարկողաց: - 93. Այսպէս մարմին մարդոյ որ քան է երկայնութեամբ ի գագաթէ՛ գլխոյն մինչև ի ներբանս ոտիցն, նոյն քան է լայնութիւն ի մէջ երկուց երկայն *մատիցն* ձեռաց: - 232. Բազուկն երկայն որ միջին *մատն* հասանէ ի ծունկն՝ ուժե՛ղ է: - 247. *Մատունքն* մած և վայրակոր, ագա՛հ է և չարաբարոյ: - 247. *Մատունքն* փոքր և բարակ, յիմարի՛ է ցոյց: - 247. *Մատունքն* փոքր և ստուար, համարձա՛կ է: - 247. Արուեստն ի *մատունսն*: - 250. Եւ է՛ գործի իմացման նոցա՝ ձեռք և *մատունք*. և ենթակայ՝ նիւթք երկրաւոր: - 269. Չորրորդ յա՛յտ է, զի ինքեանք խոստովանեցան թէ *մատն* աստուծոյ է այս. և ո՛չ կարացին այնպէս առնել: - 335. Ի յա՛յս միտս յորժամ խաչ նկարեմք, զծագ *մատին* աջոյ մերձ ի բոյթն առնեմք որ է՛ ի համարն զերրորդ. զկէս զին նշանակելով: - 345. Երրորդ, դարձեալ խ պահեաց և էառ զկրկին տախտակն գրեալ *մատամբն* աստուծոյ իբրև զառաջինն, և եդ ի տապանակ վկայութեանն: - 352. Երկրորդ՝ ցուցանէ զանմեղ մահն քրիստոսի վասն մեր մեռեալ. զոր *մատամբ* ցուցանէին խաչօղքն թէ խաչեսցի դա՛: - 359. Եւ *մատամբ* յարենէն մերձեալ յեղջիւր սեղանոյն: - 360. Երրորդ՝ միով *մատամբ* զնշանն դրոշմել: - 553. Նա՛խ՝ զի մարդն հոգի է և մարմին, ձայնիւ և ձեռօք երգէր. զերկու *մատունս* ի մի լծակցեալ յօրհնութիւնն աստուծոյ: - 641. ...այլ արար գործի տասն աղի. զի տասն *մատամբն* որպէս խօսս նուագեսցէ աստուծոյ: - 641. Յայս միտս՝ յորժամ փոշիմանիմք ի վերայ բանի կամ տրտմիմք, ատամամբք *զմատն* խածանեմք...: - 670. Նախ զպակասութիւնն. որպէս ի տղայս և յանդամնահատս և նուազեալ անդամք. որպէս դ *մատնի* և այլքն. - 725. Եւ ինքն տէր՝ «ուր եսն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի» ասէ. իբր *մատամբ* ցուցանելով զտեղին: - 759. Եւ այսպէս տրտմեալ սրգով և թախծեալ մտօք ընծայեցի տխեղծ *մատամբ* զխունախոյ նուէրս բանի, իբր զլոմայս այրւոյն՝ քումդ գանձարանի: - 789

**ՄԱՏՆԱՀԱՐ +** Եւ ի վախճանի եղև զգալի բանականն իբրև *մատնահար* և կնիք արարածոց. ունելով զիմացումն և զզգացումն. զի իմաստութեամբն ծանիցէ զիմաստութիւն արարչին. և զգալովն զամենակարող զօրութիւն նորա՛: - 231

**ՄԱՏՆԵՄ +** Վասն որոյ ընդ նմա և իշխանք նորա անկան և ի տանջանս *մատնեցան*: - 149. Չորրորդ՝ անկումն է ի զօրութենէ իւրեանց մինչ անգործ եղեալ *մատնին*. և այս կրկին: - 153. Եւ տէր մեր ի նոյն այրին յազգէ նոցին ըմբռնեալ. և ի զինաւորս պիղատոսի *մատնեալ*: - 423. Իններորդ՝ *մատնի* ի ձեռս նոցա: - 424. *Մատնեաց* զչարս ի գերութիւն. զի ա՛նդ վախճանեսցին, և արդար ծնունդք նոցա դարձցին ի տեղիս իւրեանց: - 448. Յորժամ հայր *մատնեաց* զորդի, ըստ այնմ «որ յիւր որդին ո՛չ խնայեաց. այլ վասն մեր ամենեցուն *մատնեաց* զնա»...: - 491. Հայր *մատնեաց* զնա՛ վասն սիրոյ. և Որդի *մատնեաց* զանձն իւր վասն փրկութեան մերոյ. իսկ յուդա *մատնեաց* վասն ագահութեան: - 491. Զի թէպէտ

սատանայ էր գերեալ զմարդն, սակայն ի գերութիւն նմա հա՛յր *մատնեաց* յորժամ պատժեաց զնա: - 492. Նախ անարգեցաւ ի պարտէզն զկնի արեան քրտանցն յորում *մատնեցաւ* ի յուդայէ. և իբրև աւազակ ըմբռնեցաւ և կապեցաւ: - 492. Չորրորդ՝ յապարանս պիղատոսի. և *մատնեցաւ* որպէս չարագործ: - 492. Եւ զայն ընդ առաւօտն յորում *մատնեցաւ* ի չարչարանս: - 632. Երրորդ «որ *մատնեցար*». ի մեծի ուրբաթի առաւօտին մէն ասի: - 634. ...զի վասն անտի քաւարանին աստ ո՛չ պահեն և ո՛չ աղօթեն. և անդ ի դժոխս *մատնին*: - 698. Եւ մի՛ վասն անարգանաց եղբօրն որոշիլ ի գլխոյն և ի դատաստան մահու *մատնիլ*: - 735. Այլ ինչ ո՛չ օգնել ի գերութիւն վարելոց. որպէս և յայնմ աւուր ի կորուստ *մատնելոց*: - 789

**ՄԱՏՆԻՉ +** Այլ թացեալ պատառն այսպէս էր. զի ի սկաւառակն ընդ վարդապետին փութացաւ *մատնիչն* տանիլ զձեռն լիրբ դիմօք և արիամարհեալ մտօք: - 599. Եւ յետոյ թացեալ պատառովն նշանակեաց *զմատնիչն*: - 599. Ապա յա՛յտ է զի ո՛չ ի մարմնոյ և ո՛չ յարենէն էր թացեալ պատառն. այլ ի այլ ինչ կերակրոյ ի սեղանոյն առեալ թացեալ և տուեալ. զի ցուցցէ *զմատնիչն*: - 599. Ի յաջմէ մեղքն *մատնիչ*, ի ձախմէ դևքն ահագին: - 738

**ՄԱՏՆՈՒԹԻՒՆ +** Եւ *մատնութեանն* յուդայի: - 454. Զի թէ յօրինեալ հացէն այլոցն ամենեցուն ցամա՛ք էր տուեալ և նորա թաց, պատճառ լինէր *մատնութեանն* յուդայի. և յիրաւի: - 599

**ՄԱՏՈՒՌՆ +** Զի յառաջին ամին ջուր բղխեաց ի սեան *մատրանն*: - 485

**ՄԱՏՈՒՑԱՆԵՄ +** Իսկ այլք՝ հոգի զհրեշտակական հոգին ասեն. որ տըւեալ է առ ի պահպանութիւն մեզ. զի նա ուղղէ զմեզ ի բարիս, և զաղօթս մեր *մատուցանէ* աստուծոյ: - 59. Այլ տեսցուք զայս և յօրինակս ճշմարտութեան. զի ադամ յետ միոյ յանցանացն ո՛չ *մատոյց* պատարագ զամենայն աւուրս կենաց իւրոց. այլ որդւո՛ցն հրամայէր *մատուցանել*: - 167. Ի քահանայութենէն, զի ո՛չ իշխեաց պատարագ *մատուցանել* ի կեանս իւր: - 279. Չորրորդ՝ զի զանարատսն և զպարարտսն *մատուցանէր* յօրինակ անարատ գառինն քրիստոսի. և ճարպաւորն՝ լուսոյ աստուածութեանն: - 286. Հինգերորդ՝ զի զանդրանիկսն *մատուցանէր*...: - 286. Իսկ կայեն զի ո՛չ այսպիսի կամօք *մատոյց*՝ անարգեցաւ եօթնիցս ընդդիմակօքն: - 287. Երրորդ՝ զի զանարիւն պատարագն *մատուցանէ* որ հոգևորն է և ճշմարտութիւնն: - 296. Իսկ քահանայ, զի հաց և գինի պատարագ *մատոյց*: - 300. Եօթներորդ՝ մելքիսեդեկ ինքնին *մատոյց* զպատարագն քաղցելոց և ծարաւելոց. որպէս և քրիստոս ո՛չ միջնորդօք հրեշտակաց կամ մարդկան, այլ ինքնին բաշխեաց զմարմին և զարիւն իւր՝ քաղցեալ և ծարաւեալ ազգի: - 301. Ութերորդ՝ զի մելքիսեդեկ պատարագ հաց և գինի *մատոյց* աբրահամու: - 302. Փորձեաց աստուած զաբրահամ ասելով, ա՛ռ զորդիդ քո սիրելի և բե՛ր *մատո՛* ինձ ողջակէզ: - 304. Նա՛խ՝ որպէս յակոբ պատարագ *մատոյց* ի ջրհորն երդման զվերջինն և ապա ել յերկրէն: - 314. Եւ յամենայն աւուր ըստ թուոյ նոցա **ժ** զոհ *մատուցանէր*, և զուարակ մի վասն սրբութեան մտաց: - 321. Վասն որոյ ի յընչիցն պատարագ *մատուցանելով* և աղքատս կերակրելով գոհանան զաստուծոյ: - 321. Վասն է՞ր յոբ յետ խրախութեանն **ժ** պատարագաւ սրբէր զորդիսն. և մի զուարակ վասն մտաց մեղացն *մատուցանէր*: - 322. Նա՛խ՝ զի **ժ** էին թուով. **է** ուստերք և **գ** դստերք. ըստ թըւոյ նոցա *մատուցանէր*: - 322. Երրորդ՝ ի խորհուրդ **ժ** բանեան օրինացն **ժ** պատարագ *մատուցանէր*: - 322. Հինգերորդ, նոքա *մատուցանէին* պատարագ նախ վասն իւրեանց, և ապա՛ վասն ժողովրդեանն անգիտութեան. իսկ տէրն մեր ո՛չ արար մեղս ըստ մարգարէին. այն անմեղն վասն մեղաւորաց պատարագեցաւ...: - 354. Վեցերորդ, նոքա հանապազ *մատուցանէին* վասն հանապազ յանցմանն ի բազմօրինակ մեղս. իսկ տէրն մեր «մի՛ անգամ եմուտ ի սրբութիւնսն յաւիտենական, գտեալ զփրկութիւն»...: - 354. Եօթներորդ, նոքա յօտարա՛ց *մատուցանէին*. այսինքն զուարակ և նոխազ, իսկ քահանայապետն մեր քրիստոս զմարմին իւր պատարագեաց հօր ի հոտ անուշից...: - 354. Ութերորդ, նոքա *մատուցանէին* ի ձեռագործ խորանսն որ ի մովսիսէ՛ կանգնեցաւ, իսկ տէրն մեր անցեալ ի ներքին կողմն վարագուրին. այսինքն յանձեռագործն *մատոյց*...: - 354. Իններորդ, նոքա ծառայաբար *մատուցանէին*. ուստի յա՛յտ է զի ո՛չ կարէին նստիլ ի սրբութիւնսն կամ ի քաւութիւնսն. իսկ քահանայապետն մեր տիրապէս և աստուածաբար նստեալ ի յերկինս ընդ աջմէ աստուծոյ...: - 354. Չորեքտասաներորդ, նոքա յերկրէ և յերկրի *մատուցանէին* պատարագ. իսկ տէրն մեր յերկնից և յերկինս *մատոյց*: - 355. Չորրորդ՝ վասն փրկութեան ի հիւանդութենէ կամ ի պատերազմէ՛ փրկեալք, *մատուսցեն* ասէ պատարագ և նէրս ընծայեսցեն ի սեղանն ի հոտ անուշից: - 358. Երրորդ՝ նշանակէ՛ թէ իւրաքանչիւր ոք իշխա՛ն է *մատուցանել* զինքն բանաւոր պատարագ աստուծոյ: - 359-360. Այլ զանբան պատարագն ուսան հեթանոսք և կռոց *մատուցին*. և այն սովորութեամբն իսրայէլ *մատոյց* աստուծոյ զանբան կենդանիս մինչ եկն քրիստոս և եղև ինքն բանաւոր պատարագ, և զնոյնս աւանդեաց մեզ: - 362. Դարձեալ՝ կրկին ողջակէզն, մին այն է որ

*մատուցանեմք* զպատարագն քրիստոսի մարմնոյ և արեան: - 362. Երկրորդ՝ զի պատարագն զոր *մատուցանէին* անարատք էին. նոյնպէս և սպասաւորքն լիցին: - 370. Եւ որպէս ի տաղաւարքն կողերս՝ տերև՝ և ոստ *մատուցանէին*. զնոյն և քրիստոսի մատուցին յաւուրն ողոգոմեան ի գալուստ նորին յերուսաղէմ: - 374. Եւ որպէս ի տաղաւարքն կողերս՝ տերև՝ և ոստ մատուցանէին. զնոյն և քրիստոսի *մատուցին* յաւուրն ողոգոմեան ի գալուստ նորին յերուսաղէմ: - 374. Երկրորդ՝ նշանակէ՛ զբանաւոր պատարագս մեր. այսինքն զհոգի զմարմին և զմիտս մեր անարատ *մատուցեալ*: - 374. Նա՛խ՝ զի **է** էր պատարագն. վասն զի *մատոյց* **է** զուարակ. և **է** խոյ. վասն որոյ ընկալաւ պարգևս է բանից մարգարէութեան: - 387. Եւ ա՛յս է գերծուլն, զառաջին գործեալ մեղքն սրբել խոստովանութեամբ. և զապաշխարութեան գործն *մատուցանել* աստուծոյ: - 389. Ի յաւարէ պա՞րտ է յեկեղեցիս *մատուցանել* կամ մատաղել, թէ ոչ: - 390. Այլ ի յաւարէ՛ թագաւորաց որ ի յերկրէն թշնամեաց բերեն՝ հալա՛լ է *մատուցի*՛ նուէրք յեկեղեցին: - 390. Զի հին ժողովուրդն զանասունս *մատուցանէր* պատարագ ոչխար և արջառ և այլն: - 396. Իսկ մեզ նորոյս հրամայէ՛ զբանեղէնն *մատուցանել* որ է՛ հոգի և մարմին և կամք...: - 396. Եւ փոխանակ հայհոյութեան զպատարագ օրհնութեան *մատուցանեն* աստուծոյ: - 443. Այլ և նշանակէ զպատարագ նորոյս. զոր ինչ *մատուցանեմք* աստուծոյ հաղորդիմք ի նմանէ: - 443. Յետ որոյ քեղկի քահանայ որ էր հայր երեմիայի՝ եգիտ զերկրորդ օրէնքն և *մատոյց* առ ովսիա. և գնաց առ ողդիկին մարգարէ հարցանել...: - 447. Վասն որոյ նոր օրհնութիւն նորածին աստուծոյ և տեառն *մատուցանեմք* նոր ժողովուրդքս աստուծոյ: - 528. Երկրորդ՝ մի քահանայ երիցս անգամ ի միում աւուր պատարագս *մատուցեալ*: - 553. Երկրորդ՝ ի յաղուհացսն ո՛չ ունել հրաման պատարագ *մատուցանել* բաց ի շաբաթէ՛ և ի կիրակիէ՛: - 554. Վասն զի սոքա պատարագ *մատուցանեն* ի նախատօնակ ծննդեանն և յարութեանն. և լատինք ո՛չ: - 554. Եւ ի հաց պատարագին զբոլորն *մատուցանեն* և ո՛չ մասն ինչ, լատինք և հայք և ասորիք. իսկ յոյնք ո՛չ: - 554. Կրօնաւորութիւնն է աստուծոյ պաշտօն և առանձնակի սպասաւորութիւն *մատուցանել*: - 579. Երրորդ՝ զգոհութեան աղօթսն հանապազ անխափան *մատուցանէ*: - 584. Եօթներորդ, զի մկրտելն է գործ քահանայի. և քահանայութիւնն է սպասաւորութիւն աստուծոյ. իսկ զայս սպասաւորութիւն աստուծոյ և ո՛չ կռապաշտքն ունէին սովորութիւն սնոտի կռոցն ի ձեռն կանանցն *մատուցանել* զպատարագն. - 589. Դարձեալ՝ մելքիսեդեկ հաց և գինի *մատոյց* պատարագ աբրահամու և ո՛չ ջուր. որ նշանակէր զճշմարիտ պատարագն քրիստոսի. ապա ուրեմն ո՛չ է պարտ խառնել ջուր: - 595. Եւ յորժամ զինքն ի խաչին՝ հօր պատարագ *մատոյց*: - 606. Եւ յերուսաղէմ եկեալ պատարագ *մատոյց* զիւրակա՛նն մարմին: - 607. Նա՛խ՝ զի յերի՛ց եմք գոյացեալ ի մարմնոյ, ի հոգւոյ, և ի մտաց, որպէս ասեն ոմանք. վասն որոյ **գ** առանձնական աղօթս *մատուցանեմք*: - 623. Այլ և զերկոտասան գունդս հրեշտակաց յերկինս և զ**բժ**ան առաքեալսն բարեխօս *մատուցանեմք* առ աստուած: - 624. Նա՛խ որպէս սովորութիւն է մարդկան որք զաղերսն ընծայեն ի դրունս մեծամեծացն, և նոքա՛ *մատուցանեն* թագաւորին: - 624. Երկրորդ, որպէս ի հինքն *մատուցանէին* զպատարագն առ քահանայսն. և նոքա նուիրէին աստուծոյ: - 624. Եւ այսպէս վերընծայեն աստուծոյ զօրհնաբանութիւնսն. վերջինքն տալով ի միջինսն. և միջինքն յառաջինսն. և յառաջինքն *մատուցանեն* աստուծոյ: - 624. Արդ սաղմոս երգօղքն տան ի սարկաւագն. և սարկաւագն ի քահանայն. և նա՛ *մատուցանէ* աստուծոյ զօրհնութիւնն. որպէս առաջին դասք քերօբէիցն: - 624. վասն որոյ խառնէ՛ զձայնս նոցա ի բանս իւր և *մատուցանէ* աստուծոյ: - 641. Զոր առեալ ի ձեռս միշտ *մատուցանեմք* աստուծոյ: - 645. Նոյնդ է պատճառն որ պատարագ ո՛չ *մատուցանեմք*. զի անարժա՛ն եմք: - 651. Մատաղն ստուգաբանի *մատո*՛ աղ: - 657. Եւ մատաղն, Նախ պատարագ և նուէրք է աստուծոյ. որպէս աբէլ՝ նոյ՝ և աբրահամ *մատուցանէին*: - 657. ...վասն այն պա՛րտ է զընտիրն և զգէրն *մատուցանել*: - 657. Երրորդ, զիւղ անոյշ *մատուցանեմք*: - 657. Երրորդ, որպէս ողջակէզ նորին, և մեզ պա՛րտ է զանազան փորձանաց և նեղութեան զանձինս *մատուցանել* սիրովն աստուծոյ: - 658. Երրորդ՝ զի այն արտաքուստ անասնոյ է մարմին. և այս ի ներքուստ յինքենէ՛ և զինքն *մատուցանէ* աստուծոյ: - 658. ...նոյնպէս և մեք զհոգևոր դեղն կենաց յերեկեան աւուրն *մատուցար* մեռելոյն. - 680. Երիցունք նախ նշանակէ՛ զքահանայս որք զանձինս իւրեանց *մատուցանեն* պատարագ աստուծոյ: - 711. Բուրվառն ոսկի և խունկն՝ այսինքն զի զաղօթս երկրաւորաց սուրբքն և հրեշտակք *մատուցանեն* քրիստոսի: - 713

**ՄԱՏՈՒՑՈՂ +** Գիտելի է, զի ամենայն պատարագ յերեք դէմս որոշի. այսինքն *մատուցօղն*, և ընդունօղն և պատարագն: - 306. Զի է՛ որ *մատուցօղն* մեծ է քան զպատարագն. որպէս հին օրինաց պատարագն. զի անասունք էին: - 306. Եւ է՛ որ պատարագն մեծ է քան *զմատուցօղն*. որպէս նոր օրինացս՝ մարմինն քրիստոսի մեծ է քան զքահանայն: - 306. Եւ է՛ որ *մատուցօղն* մեծ է քան զընդունօղն. որպէս

մելքիսեդեկ քան զաբրահամ. և քահանայն մեծ է քան զժողովուրդն որ ճաշակէ: - 306. Այսինքն մեծ գոլ *մատուցօղն* և ընդունօղն և պատարագն: - 306-307. Այլ և գիտելի է, զի ամենայն պատարագ յերեք դէմս որոշի. որ է՛ *մատուցօղն*, և ընդունօղն, և պատարագն: - 491. Զի է՛ որ *մատուցօղն* մեծ է քան զպատարագն. որպէս հին օրինաց պատարագն. զի անասունք էին: - 491. Եւ է՛ որ պատարագն մեծ է քան *զմատուցօղն*. որպէս նոր օրինացս մարմինն քրիստոսի մեծ է քան զքահանայն: - 491. Եւ է՛ որ *մատուցօղն* մեծ է քան զընդունօղն. որպէս մելքիսեդեկ քան զաբրահամ. և քահանայն մեծ է քան զժողովուրդն որ ճաշակէ: - 491. Իսկ չորրորդն է՛ պատարագ տն մերոյ քրիստոսի որ ի մի դէմ անձնաւորութեան **գ** երես պատարագին բացայայտեցաւ. այսինքն մեծ գոլ *մատուցօղն* և ընդունօղն և պատարագն: - 491

**ՄԱՏՈՒՑՈՒՄՆ +** Եւ տես, զի սոքա երեքեան տօնքս, այսինքն ամսամուտն, և պասքայն, և յիսներեակն, հաւասար ունին *զմատուցմունքն* տօնից: - 373. Վեցերորդ՝ զի հարկ էր *մատուցմունք* նւիրաց ժողովրդեանն. և կատարեալ էր մի օր պաշտամանն: - 484

**ՄԱՏՉԻՄ +** Նա՛խ՝ զի առաւել *մատչի* առ կատարելութիւնն. զի մեծագոյն առաքինութիւն է: - 577. Աստ անարիւն պատարագն *մատչի*. և ի մեզ բանեղէն պատարագն հոգի և մարմին միշտ նուիրեալ կենդանի: - 614. Իսկ յառաւօտն և յերեկոյն պատարագ ո՛չ *մատչի*. վասն այն ամենայն աղօթից և պաշտմանց կատարումն և աւարտ զխաչէն ճառեմք. - 634. Նոյնպէս և աստ փոխանակ որոտմանն, Ո՞րթի բարձրածայն. որ է՛ յառաջ *մատիր*: - 644. Եօթներորդ՝ շաբաթի օր տօնեմք սրբոցն և պատարագ *մատչի* ըստ նիկիական կանոնին. - 648. Իսկ ի շաբաթն և ի կիրակէն պատարագ *մատչի*: - 651. Այլ ի ժողովն նիկիոյ քարոզեցաւ պահք, բայց պատարագ *մատչիլ*: - 651. Եւ այլ ևս, յորժամ զշաբաթ և զկիրակէ արտաքոյ թուեմք որ պատարագ *մատչի*, **ե** օր առաջաւորն ըստ աղուհացիցն համարեալ՝ լինի **խ** օր: - 651. Իսկ վերին և արտաքին սրահն ուր զենմունք և պատարագն *մատչէին*, է՛ մարմնական աշխարհս այս. - 682

**ՄԱՏՌՈՒԱԿ +** Իսկ *մատռուակն* յոտն կացեալ, նշանակէ՛ զծառայն ի գործ սպասու: - 656. *Մատռուակն* ուրա՛խ էր. և խոհագործն տրտում վասն ցուցման երազոյն: - 689

**ՄԱՐ(Ք) +** Իսկ որ զդպրութիւն գիտէ և գրով վարի՝ **բժ**ան ազգ է. այսինքն Եբրայացիք. Քաղդէացիք. Ասորիք. Պարսիկք. *Մարք*. Հնդիկք.: Փիւնիկեցիք: - 299. Եւ թուի թէ *մարքն* աւելո՛րդ է գրած: - 299

**ՄԱՐԱԽ +** Եւ ոմանք պատենաթևք որպէս *մարախք*: - 215. Ութերորդ՝ *մարախն*: - 333. Ութերորդ՝ *մարախն* թանձր: - 334. Երկրորդ՝ զի անյագ և ամենակե՛ր է *մարախն*. և ի յայլոց վաստակս մտեալ կորուսանէ: - 334. Մեք եմք որպէս *մարախ*. թշնամիք մեր որպէս հսկայս: - 765

**ՄԱՐԱՑԻ** - Եւ այս են **իբ** լեզուքն: ...*Մարացիք*: - 298

**ՄԱՐԳԱՐԷ +** Երրորդ՝ պարգևականնն. որպէս *մարգարէիցն* երևակայութեամբ, կամ ի ձեռն մարմնոյ զգայութեանց: - 24. Եւ զայս կարգաւ ասէ եսայի *մարգարէ*: - 25. Ասեմք թէ՝ զբանս զայս ասէ *մարգաէն* վասն խաղաղութեան...: - 27. Եւ զոր ինչ տեսանէ աչք արծըւին՝ ո՛չ կարէ տեսանել աչք մարդոյ. այնպէս բթամիտն ո՛չ իմանայ, զոր իմանայ նրբահայեացն և ուսեալն յաստուծոյ. զոր եդ աստուած ուսուցիչ այլոց. որպէս *մարգարէքն*, և առաքեալքն, և վարդապետք: - 31. Չորրորդ՝ նա սուտ քրիստոս և սուտ *մարգարէ* կոչի. և սոքա սուտ քահանայք՝ և սուտ վարդապետք՝ և սուտ առաքեալք կոչին: - 35. Եւ գիտեմք հաւաստի թէ որդի էր. զի հրեշտա՛կ անուանէ զնա գիրն. և զի հայր երբէք հրեշտակ ո՛չ կոչեցաւ՝ այլ որդի ըստ եսայեայ *մարգարէի*...: - 40. Սմին նման է զոր ասէ *մարգարէն* յաղագս քրիստոսի, «ո՛չ մեղք իմ և ո՛չ յանցանք»: - 46. Հինգերորդ՝ *մարգարէիցն*: - 50. Զի ա՛յս է ըստ *մարգարէին* «զբերան իմ բացի՝ և առի զհոգի». զի առաւել նախատակիլն է՛ բանալ բերանոյն: - 50. Ա՛րդ կատարեալ է աստուածութիւնն երիս անձինս և մի աստուածութիւն. լոյ՛ս և լո՛յս և լո՛յս. և մի՛ լոյս. որպէս մի աստուած ըստ *մարգարէին* թէ՝ «ի լոյս երեսաց քոց տեսանեմք զլոյս»: - 51. Տասներորդ՝ յայտնի՛ է ի սուրբ գրոց թէ աստուած է որ խօսեցաւ *մարգարէիւքն*...: - 58. Այլ հոգին սուրբ էր որ խօսէր ընդ *մարգարէսն*. որպէս ասէ պետրոս ի կաթողիկէքն...: - 58. Պատասխանեմք եթէ՝ ասէ *մարգարէն* «բարկացաւ սրտմտութեամբ տէր ի վերայ ժողովրդեան»...: - 60. Երկրորդ՝ զի որպէս մատամբ գրեմք կամ գործեմք զամենայն գործս, այսպէս և հոգին սուրբ գրէր ի *մարգարէսն*. ...: - 62. Երրորդ վկայ *մարգարէքն*. որպէս ասէ դաւիթ վասն հոգւոյն՝ «ի քէն է տէր աղբիւր կենդանութեան». և ո՛չ թէ ի ձէնջ: - 64. Ապա ո՛չ եղև աստուծով, այլ մարդով. զոր սո՛ւտ առնէ *մարգարէն* զփրկութիւն մարդոյ: - 67. Երեքտասաներորդ՝ ամենակալ միայն աստուած է ըստ *մարգարէին*, «ամենակալ մեծ անուն տէր»...: - 71. Եւ *մարգարէն* վասն որդւոյ ասէ՝ «ո՛չ արար մեղս, և ո՛չ գտաւ նենգութիւն ի բերան նորա»...: - 72. Ասեմք եթէ՝ տէր ապաւէն եղև ասէ *մարգարէն*. ո՛չ թէ փոփոխեցաւ ի տէրութենէն յապաւինութիւն, այլ եկաց մնաց տէր, և եղև ապաւէն: - 72. Եւ զփառս բանին զրկելով՝ ետուք մարդոյն. և

եղէք մարդապաշտք, և մարդոյ մարմնակերք. և ի մարդ մկրտեալք. և սուտ է փրկութիւն մարդոյ *մարգարէն* կնքեաց: - 90. Նա աստուած օծաւ. և սոքա *մարգարէ* կամ այլինչ: - 95. Երրորդ՝ գրէ՛ առաքեալն, (բազում մասամբք և բազում օրինակօք խօսեցաւ աստուած ընդ հարսն մեր. որ է մարգարէիւք և հրեշտակօք: - 96. Ա՛րդ՝ ամենայն մարդկան՝ *մարգարէից* և սրբոց՝ հրեշտակք ուսուցանեն. և նոքա ի քրիստոս է՛ ուսանին: - 98. Եւ *մարգարէն* վկայէ՛ «ո՛չ արար մեղս». և «արդարացաւ հոգով». «և մարմին նորա ո՛չ ետես զապականութիւն» ասէ: - 99. Ա՛րդ՝ երեքն ո՛չ յարմարին աստուծոյ. զի ո՛չ հնանայ և ո՛չ ծերանայ. և ամք նորա ո՛չ պակասին ըստ *մարգարէին*...: - 114. Իսկ երկրորդն՝ կատարելոցն. որպէս *մարգարէից* և առաքելոցն: - 119. Եւ այսպէս է *մարգարէիցն* և առաքելոցն և հաւատոյն տեսութիւն: - 120. Այսպէս և *մարգարէն* ասէ՝ «լուսով քո տեսանեմք զլոյս»: - 125. Եւ նա՛խ եկաւորի հոգին ամենայն ուրեք. որպէս ի *մարգարէսն* և ի կոյսն սուրբ, և ապա՛ բանն մարմնացաւ. և յետոյ հոգին սուրբ էջ յառաքեալսն և յեկեղեցի մնաց: - 125. Այսպէս և *մարգարէիւք*՝ և վարդապետօք՝ և հրաշիւք՝ և զանազան պատճառօք: - 127. Եւ ի դասս մարդկան՝ որպէս *մարգարէք* և առաքեալք: - 131. Վասն է՞ր աստուածաբան *մարգարէքն* զտեսիլ երկնայնոցն սոյնպէս անարգ կերպիւ տպաւորեցին. որպէս առիւծ. և եզն. աթոռք. և կառք. և այլն: - 131. Երրորդ՝ զի սերօբէն մաքրական լսի և հրաբերծ. ըստ որում մաքրեաց *զմարգարէն*. և քերօբէն իմաստութեամբ լուսաւորիչ. և աթոռքն ուղղութեամբն կատարիչ: - 135. Բոլո՛ր է՝ յորժամ զիմացումն մտաց յամենայն եղելոց առ ինքն ժողովէ՛, և այնպէս բոլորովիմբ յաստուած հպի և միանայ. և ա՛յս է ի բոլոր սրտէ և ի բոլոր մտաց սիրել զաստուած. և զայս ունին ընտրեալքն *մարգարէք* և առաքեալք: - 142. Իսկ գնդակ որ է կողմնաւոր՝ շարժի հոգին, յորժամ բնականապէս լուսափայլի յաստուածային գիտութիւնս տեսութեամբ և մտածութեամբ. և այնպէս հոգէպէս ի յաստուած միաւորի. որպէս աշակերտաց առաքելոց և *մարգարէից*: - 142. Այլ զուղիղ պատճառն բացայայտէ՛ եսայի *մարգարէն*: - 148. Անմ՝ զբարձրութիւնն նշանակէ ի վերայ այլոց. և Դարձեալ՝ անմ *զմարգարէսն*. իբր հրամանատո՛ւ լինիլ *մարգարէիցն*: - 148. Բազումք են. որպէս ասէ *մարգարէն* «երկինք երկնից»...: - 183. Այլ և նախ կոչի երկինք՝ զգալի երևումն աստուծոյ՝ և հրեշտակաց՝ և *մարգարէից* սրբոց: - 183. Վկայէ՛ և *մարգարէն*...: - 184. Լոյս անմատոյց ըստ *մարգարէին*, «Լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս»: - 185. Եւ է՛ իմանալի լոյս՝ որպէս հրեշտակք՝ և հոգի մարդոյ. և պատուիրանն աստուծոյ. զի «պատուիրանք տեառն լոյս են» ասէ *մարգարէն*: - 185. Եօթներորդն է յաջողութեան. ուստի ասէ *մարգարէն*, «արեգակն ի տուէ քեզ մի՛ մեղիցէ»: - 195. Եւ այլքն ըստ կարգի *մարգարէիցն* կոչման: - 200. Եւ ի գիրս սուրբս՝ *մարգարէից* այլոց ազգաց անուանք ո՛չ յիշին բաց ի հայոցս: - 201. Զի թէ զպատկերն աստուծոյ տեսեալ ի մեզ հպարտասցուք, զհողն տեսեալ խոնարհեսցուք. որպէս ասէ *մարգարէն* «խոնարհութիւն քո ի միջի քում է»: - 229. Այսպէս հայցէր *մարգարէն* պահպանիլ յաստուծոյ...: - 239. Ապա կազմէ՛ զծև զգայականին մինչև ի ի օրն. ըստ *մարգարէին* որ ասէ, «ես ո՛րդն եմ և ո՛չ եմ մարդ»: - 261. Նա՛խ՝ զի մարդո՛յն է զանազանել զբարի և զչար. և փախչիլ ի չարէ՛, և երթալ զհետ բարւոյն՝ կատարելոցն է ըստ *մարգարէին*...: - 274. Եօթանասունք, *Մարգարէ* իբրև զիս: - 285. Նմանապէս և մեծն ի *մարգարէս* աստուածախօսն մովսէս որ աստուած կոչեցաւ փարաւոնի. իշխելով տարերցս փոփոխման, որ ջրածինն էր՝ եղև վիմածին և կայծակնածին. որում լուսաւորեցան երեսք: - 288. Եւ ա՛յս է սահմանն ազգաց որպէս ասէ *մարգարէն*, «յորժամ բաժանեաց բարձրեալն զազգս ամենայն, կացոյց սահմանս հեթանոսաց». այսինքն զլեզուս զանազան. «ըստ թուոյ հրեշտակացն աստուծոյ». այսինքն ըստ թուոյ **h** ազգապետացն: - 297. Իսկ *մարգարէ*, զի օրհնեաց զաբրահամ: - 300. Վասն որոյ ասէ *մարգարէն* «ճշմարտութիւն յերկրէ բուսաւ» որ է՛ աբրահամ. «արդարութիւն յերկնից երևեցաւ» մելքիսեդեկ: - 301. Եւ վասն տեառն ասէ *մարգարէն* «զիրաւունս քո արքայի տուր. և զարդարութիւնս քո որդւոյ թագաւորի»: - 302. Եւ տէրն մեր անմայր յերկինս, անհայր յերկրի. «և զազգատոհմն նորա ո՛ պատմեսցէ» ասէ *մարգարէն* եսայի: - 302. Եւ տէրն ո՛չ ի ձեռս հրեշտակաց սերօբէից և քերովբէից, և ո՛չ միջնորդութեամբ մարդկան ընտրելոց նահապետաց *մարգարէից* առաքելոց կամ մարտիրոսաց: - 302. Իսկ աստեղք՝ ծնունդքն իսահակայ պայծառ վարուք և երկնընթացք որպէս *մարգարէքն* քահանայքն՝ և ընտրեալ թագաւորք՝ և այլքն: - 303. Մանաւանդ թէ ի *մարգարէսն*: - 305. Զի հա՛յր ասէ զնա *մարգարէն* հանդերձեալ աշխարհին աստեղափայլ պայծառացելոցն լուսաճաճանչ սլացմամբ: - 306. Հինգերորդ՝ աւետեօք երից արանցն ծնաւ սառա. և աւետեօք հրեշտակին մարիամ. և աւետեօք *մարգարէին* եկեղեցի: - 307. Կոչեցան և մկրտեալքն անւամբ նոր, «զոր տէր անուանեաց» ասէ *մարգարէն*: - 307. Երկրորդ՝ նահապետք և *մարգարէք* կոչին լերինք և բլուրք մշտնջենաւոր վարուք և անշարժ աստուածապաշտութեամբ: - 319. Եւ բաց յայսցանէ և արտաքոյ սոցա, Լեառն պարարտ կոչի սուրբ Երրորդութիւնն ի *մարգարէէն*: - 320. Զոր աղօթէ՛ *մարգարէն* «ի գաղտնեաց

իմոց սուրբ արա զիս տէր»: - 322. Նա՛խ՝ որպէս ասէ *մարգարէն* «վա՜յ որ ասէ զբարին չար՝ և զչարին բարի». և այլն: - 324. Դարձեալ որպէս իշովն բաղամու զօգուտն խօսեցաւ, և ըզլեզու սուտ *մարգարէին* շարժեաց յանիծիցն յօրհնութիւնս: - 325. Այլ և զնմանանայն հաց հրեշտակաց կոչէ *մարգարէն* դաւիթ: - 338. Դարձեալ՝ զայս օրինակ ետես *մարգարէն* զաքարիա և պատասխանեաց հրեշտակին...: - 346. Առաքեալք և *մարգարէք* և հայրապետք: - 347. Չորրորդ՝ նոցա ձայնն միջնորդով օդիւ և *մարգարէիւքն*. և ընդ մեզ բանն աստուած անընդմիջաբար խօսեցեալ: - 353. Հինգերորդ, նոքա մատուցանէին պատարագ նախ վասն իւրեանց, և ապա՛ վասն ժողովրդեանն անգիտութեան. իսկ տէրն մեր ո՛չ արար մեղս ըստ *մարգարէին*. այն անմեղն վասն մեղաւորաց պատարագեցաւ...: - 354. Վասն այն աղերսէ *մարգարէն* զտէր, «մի ընկենուր զիս տէր ի ժամանակս ծերութեան. ի պակասիլ զօրութեան իմոյ մի՛ թողուր զիս»: - 377. Զայս հայցէ *մարգարէն*, «Աստուած մեր ողորմեա՛ մեզ և օրհնեա՛ զմեզ. երևեցո՛ զերեսս քո ի մեզ և ողորմեա՛ մեզ»: - 379-380. Երկրորդ, հին օրէնքն և *մարգարէքն*. որ նախ քան զմկրտութիւնս խորհրդով և օրինակօք յառաջապա՛հք եղեն նորոյս: - 390. Այլ և *մարգարէքն* և առաքեալքն և բազում սուրբք և արդարք յազգէ նոցա եղեն: - 398. Զի՞նչ է նշան *մարգարէին* որ ասէ, «*մարգարէ* յարուցէ ձեզ իբրև զիս նմա՛ լուիջիք»: - 399. Աստ **զ** նշան դնէ *մարգարէին* որ ճշմարտապէս զքրիստոս տէր մեր ցուցանէ: - 399. Զոր ա՛յլ *մարգարէ* ո՛չ արար. որպէս գրեալ է ի **ի** համարն **ի** վերոյ: - 399. Այլ տե՛ս յայտնապէս, զի զայսպիսի նշան վկայութեան ո՛չ ունէին յուդաս և դևդաս. և ո՛չ նեռն ունելոց է դերաքրիստոսն. վասն որոյ ո՛չ են *մարգարէ*, այլ մոլորեցուցիչք և չարք: - 400. Եւ թէ ասեն՝ ամենայն *մարգարէք* անուսնութեամբ ծնան: - 404. Ասա՛ թէ՝ տէրն *մարգարէից* ի կուսէ՛ ծնաւ ըստ եսայեայ «կոյսն յղասցի և ծնցի»: - 404. Եւ *մարգարէն* դաւիթ ի ձախ կողմն **ռք**, և ի յաջն բիւրք ասէ անկանիլ: - 404. Նա՛խ՝ կոչի աւագ, զի մովսէս երէ՛ց է և առաջին քան զամենայն *մարգարէսն*: - 407. Մովսէս նշան կատարեաց մեծամեծ. նոյնպէս և ա՛յլ *մարգարէք.* փրկչին մերոյ ո՞րն է առաւել քան զնոցայն: - 411. Որ և մովսէս եկեալ ի թաբօր վկայէր նմա, և աղերսէր ելանել ի խաչ և բանալ զդուռն արքայութեան. որում *մարգարէքն* սպասէին: - 411. Քսանզ, Վասն ա՛յլ *մարգարէից*: - 413. *Զմարգարէն* սպան առիւծն: - 413. Ծեր *մարգարէն* որ դարձոյց: - 413. Զբահաղու *մարգարէսն* կոտորեաց: - 413. Երրորդ՝ գեղմն *մարգարէքն*, և ցօղ շնորհք մարգարէութեան ի վերայ նոցա: - 421. Եւ այն զի քամեալ լցաւ կուրն և ո՛չ երկիր. զի մնացին և կատարեցան բանք *մարգարէիցն* ամենայն և ո՛չ եղծան. իսկ յետոյ հոգի տեառն ելից զտիեզերս մարգարէութեամբ և շնորհօքն քրիստոսի: - 421. Իսկ անդրանկածին երինջքն են *մարգարէք* և առաքեալք. որ զհաւատացեալս անդրանիկ ծնան. նոքա են ամոլք և պատարագք աստուծոյ: - 426. Երկրորդ՝ անցեալ ընդ լերամբ և ո՛չ գտեալ. մինչև առ տեսանօղն եկեալ. և տէր մեր էանց զլերինս հրեշտակաց և եկն ի *մարգարէս*...: - 426. Հինգերորդ՝ ընդէ՞ր հակառակ աստուծոյ և այլ *մարգարէից* զծածուկն սաւուղի յայտնէր: - 429. Թէ հրամայական էր և վճիռ եհատ, ապա աստուած էր և ո՛չ *մարգարէ*. սուտ ասաց զգոլն սամուէլ: - 430. Վասն է՞ր յանդիմանեաց աստուած զդաւիթ ի ձեռն նաթան *մարգարէի*: - 432. Երեսունզ, դաւիթ *մարգարէ՛* է մարգարէանային. և որդի դաւթի յողոգոմեանն աղաղակէին: - 437. Զի՞նչ էր նշանք սամեայ *մարգարէի* առ սեղանն րոբովամու: - 442. Վասն է՞ր *զմարգարէն* սպան առիւծն. զի նա խաբեցաւ ի ծեր *մարգարէէն*: - 443. Ո՛չ էր պարտ պարզամտութեամբ խաբիլ. պարտ էր հարցանել զնա թէ *մարգարէ՞* է թէ ոչ: - 443. Ծեր *մարգարէն* որ դարձոյց զնա, արեան տէ՞ր է թէ ոչ: - 443. Կամ սուտ լիցի բան *մարգարէին*: - 443. Վասն է՞ր *զմարգարէսն* բահաղու կոտորեաց: - 444. Դարձեալ՝ զարդարութիւն գործէր զի հաշտեսցի աստուած. վասն որոյ ինքնին սպան զամենայն. այս զուգճ յիսունսն, փոխանակ *մարգարէիցն* աստուծոյ զոր եսպան եզաբէլ: - 444. Յետ որոյ քեղկի քահանայ որ էր հայր երեմիայի՝ եգիտ զերկրորդ օրէնքն և մատոյց առ ովսիա. և գնաց առ ողդիկին *մարգարէ* հարցանել...: - 447. Նա՛խ՝ նշանակեն առաջինքն *զմարգարէքն* և զարդարսն. որք ո՛չ կարացին զկործանեալ բնութիւնս շինել արդարութեամբ...: - 448-449. Դարձեալ՝ նշանակեն զերիս կոչմունս. *մարգարէիւք* և առաքելօք. և զվերջինն ի կատարածի հրեշտակօք: - 449. Իսկ այլ ոմանք թուեն զեօթներորդն դանիէլի ի դարեհի որդւոյ արշուրեայ առաջին ամէն. յորում զտեսիլն ետես *մարգարէն*. մինչև ի ծնունդն քրիստոսի ամք **նձգ**: - 449. Եւ տարաձայնութիւն թուոցդ յայնմանէ լինի, որ ձգ ամաւ յառաջեաց բանն աստուած ի մարդանալն քան զնշանակութիւնս *մարգարէիցն*: - 449. Եսայի: Երկոտասան *մարգարէք*: - 450. Որ է՛ օրէնք. *Մարգարէք.* Սրբագիրք: - 451. Եւ *Մարգարէք* ութ: - 451. Ութերորդ՝ Երկոտասան *Մարգարէք*: - 451. Եւ մարդեղութիւն փրկչին ձգ ամաւ յառաջ է քան զբան *մարգարէիցն*: - 451. *Մարգարէք* նախապատմեցին: - 456. Զի՞նչ է որ ասէ *մարգարէն* «տէր յերկինս է ողորմութիւն քո. ճշմարտութիւն քո մինչև յամպս»: - 457. Բարերար և բնութեամբ բարի է աստուած. ուստի ի բարերարութեանց նորա յառաջե՛ն առ մեզ գործ ողորմութեան և գործ արդարութեան. ըստ *մարգարէին*

«ողորմած և արդար է տէր»: - 457. Երկրորդիւն մարդեղութիւնն քրիստոսի. զի խոստացեալ եղև այն *մարգարէիւք* և նահապետօք: - 458-459. Զի օծեալք սոքա էին քահանայք և թագաւորք. յորոց և բազումք *մարգարէք* եղեն: - 461. Իններորդ՝ զի ո՛չ *մարգարէիւ* յայտնեաց կուսին. որ էր աղօտ գիտութիւն համեմատեալ ընդ հրեշտակին: - 464. Տասներորդ՝ այն քան գերազանցեաց պատիւ կուսին, զի այնմ որ *մարգարէք* գուշակէին զլինելոցն. ի սմա ընդ խօսից հրեշտակին եղև կատարումն: - 464. Երկրորդ, *մարգարէն* եսայի ասէ, «կոյսն յղասցի և ծնցի որդի զէմմանուէլն». իսկ էմմանուէլն թարգմանի մարդացեալ աստուած: - 466. Ասեն վարդապետք եթէ՝ որպէս *մարգարէքն* և առաքեալքն զխօսեցեալ բանս իւրեանց ի ձեռս ունին իբր պատգամաբեր յաստուծոյ առ մարդիկ: - 481. Եւ այն զի փաթութած է՝ ըստ հրէական օրինին է. զի կոնդակ և գալարելո՛վ էր նոցա գիրն. իբր թէ ծածո՛ւկ է ի նոցանէ խորհուրդ *մարգարէիցն* և թաքուն: - 481. Եւ նախ առաջին պատճառ, զի «ո՛չ արար մեղս» *մարգարէն* վկայեաց. և «մարմին նորա ո՛չ ետես զապականութիւն» միւս *մարգարէն* կնքեաց: - 496. Իսկ զմահն կրեաց. որպէս և սոյն *մարգարէ* վկայեաց թէ՝ «ի մահ մատնեցաւ անձն նորա. և մեռաւ վասն մերոյ անօրէնութեան»: - 496. Ապա ո՞ր է դժոխք ներքին որ ասէ *մարգարէն* «փրկեցեր զանձն իմ ի դժոխոց ներքնոց»: - 505. Նախ՝ զի ասէ *մարգարէն* դաւիթ ընդ դէմ նոցա «փրկեցեր զանձն իմ ի դժոխոց ներքնոց» և ո՛չ ի վերնոց: - 506. Երրորդ՝ զի ասէ պետրոս ի կաթողիկէն «երթեալ քարոզեաց երբեմն ապստամբելոցն». այլ ապստամբ՝ մեղաւո՛րքն էին և ո՛չ *մարգարէքն*: - 506. Ութերորդ՝ ասէ *մարգարէն* «էառ աւար՝ բաշխեաց պարգևս մարդկան»: - 507. Եւ դարձեալ լոյս եղև յերեք ժամն մինչև յերկոյն ըստ *մարգարէիցն* «մտցէ արեգակն ի մէջ օրէի. և ընդ երեկս եղիցի լոյս. և դարձեալ ո՛չ տիւ իցէ և ո՛չ գիշեր. և եղիցի օր մի»: - 516. Երկրորդ՝ զի որ անդ ի ծածուկ ծանոյց զինքն յանձինս *մարգարէից* նոյն ինքն աստ զերրորդութիւնն յայտնեաց առաքելոցն: - 524. Եւ թէ *մարգարէքն* քնարաւ երգէին: - 527. Եւ պօղոս ասէ զայս, առընթեր դնելով առաքելոց և *մարգարէից* զվարդապետս: - 528. Եւ հանապազ ի տաճարին գովէին և օրհնէին զաստուած նոր օրհնութեամբ համբարձելոյն ի յերկինս տեառն և աստուծոյ. որպէս կանխաւ ասաց *մարգարէն*...: - 528-529. Եւ մի և նոյն բանն խօսեցաւ ի նախահարս և ի *մարգարէս* առանց մարմնոյ: - 529. Որպէս խօսեցաւ հոգին սուրբ ի *մարգարէսն*. և հոգին սուրբ աստուած է ճշմարիտ. ապա և խօսեցեալքն ի հոգւոյն սրբոյ ճշմարիտ խօսք է աստուծոյ: - 530. Իսկ թէ ուրեք առաքեալք և *մարգարէք* հիմն կոչին, քանզի նա՛խ նոքա ժողովեցան ի հաւատս և եղեն հիմունք եկեղեցւոյ, և ապա՛ զայլս ժողովեցին: - 532. Եւ զի քրիստոս է հիմն երկուցն. և դ անկիւն առաքեալք և *մարգարէք*. և հին և նոր կտակարանք ասացեալ նոցա: - 533. Իսկ ակն տեսանօղ՝ *մարգարէքն*. և առաքեալքն ինքնատեսք բանին աստուծոյ: - 534. Իսկ մորուս կոչին *մարգարէք* և առաքեալք և հայրապետք մերձ բերանոյն առ մեզ խօսելով զպատգամս օրինացն աստուծոյ: - 534. Երկրորդ՝ *զմարգարէս*: - 535. Նա՛խ՝ *մարգարէքն* զհայր ծանուցին. ապա՛ առաքեալքն զորդի. և ապա՛ վարդապետք զհոգին սուրբ: - 535. Ի դէմս հօր՝ *մարգարէքն*. ի դէմս որդւոյ՝ առաքեալքն...: - 535. Երրորդ՝ *մարգարէք* որպէս խորհեցեալն բան. առաքեալք որպէս խօսեցեալն. և վարդապետք որպէս գրեալն: - 535. Նա՛խ յաղագս շնորհին և ճշմարտութեան. և *մարգարէք* վասն ստուերին և օրինակին. և վարդապետք ըստ չափոյ պիտոյից նոցին: - 535. Երկրորդ՝ որպէս հանուրն նախադասի մասնականաց, այսպէս առաքեալքն հանուրց աշխարհի լոյս կոչեցան. և *մարգարէքն* միոյ ազգի...: - 535. ...այլ և *մարգարէքն* տալ զհոգին այլում ո՛չ կարէին...: - 535. Երրորդ՝ զի առաքեալք ինքնաք տեսք եղեն քրիստոսի. և *մարգարէք* միջոցաւ ի բացեայ. և վարդապետք յետոյ նոցա: - 535. Չորրորդ՝ զի շինօղ և հաստատօղ եկեղեցւոյ առաքեալքն են. և ձեռնտու նիւթոց *մարգարէքն*. եզր և պարիսպ վարդապետք: - 535. Հինգերորդ՝ առաջին առաքեալքն իբր կատարումն բանից. երկրորդ *մարգարէք* նախածայնք նոցին. երրորդ վարդապետք մեկնիչք և թարգմանք երկուցն քարոզութեանց: - 535. Ութերորդ *զմարգարէսն*: - 536. Իններորդ վասն սրբութեան. ըստ կայծականն *մարգարէին*: - 536. Եւ այսպէս բացայայտի, զի երկու իրս խնդրին առ ի ճշմարիտ *մարգարէ* գոլ: - 536. Նա՛խ՝ զի յայտնեսցէ զծածուկն և զհեռաւոր իրն ժամանակաց. զի թէ զմերձաւոր և զյայտնին ասէ՝ ո՛չ է *մարգարէ*: - 536. Երկրորդ՝ զի թէ ճանաչիցէ զհեռաւորն միջնորդութեամբ բարի հոգւոյն. զի թէ յայտնէ միջնորդութեամբ չար հոգւոյն՝ ո՛չ է *մարգարէ*. այլ ստոգն ծանօթութիւն...: - 536. ...վասն այն ո՛չ կոչին ճշմարիտ *մարգարէ* պարզաբար. այլ բաղադրեալ. որպէս *մարգարէ* բահաղու. կամ *մարգարէ* բարձանց կամ անտառին: - 536. Երրորդ, դիւական. որպէս կռոց սուտ *մարգարէքն*. սեդեկիայն և այլոց բազմաց. որ այժմ երևին ի պատասխանիս կախարդաց. նաև հաւկռիչք և գարէդիւթք. որք են բնաւ սուտք և ոչինչք: - 536. Երրորդ ի շնորհաց հոգւոյն. որպէս *մարգարէիցն* և առաքելոցն: - 537. Այս քան վասն նախկին սպասաւորաց եկեղեցւոյ. այսինքն Առաքելոց *Մարգարէից* և Վարդապետաց: - 537. Եւ սուրբն ղուկիոս սքանչելագործ և

մարգարէաշնորհ, գրեաց առ մարկիանոս, թէ սուգ զգեցուցեր առաքելոց և *մարգարէից*. զի քակտեցեր զնոցա շինուածն. և արգելաւ հոգին սուրբ յօրհնելոյ զպատարագն և զաւազան մկրտութեան: - 543. Եւ երկոտասան *մարգարէքն*: - 546. Ապա ուրեմն և հայհոյելն մտօք և մախալն և նենգելն կատարեալ չարութիւն է և մեղք. զոր *մարգարէն* ընդ մարդասպանս կարգէ...: - 557. Տասներորդ՝ զի ամենայն մեղաւորաց ներէ՛ աստուած ժամանակս ինչ զի զղջասցին. իսկ հպարտին ոչ. զի *մարգարէն* ասէր «տէր ամբարտաւանից հակառակ կայ»: - 562. Անպ *մարգարէքն* են կամ հրեշտակք. և աստեղք վերին դասքն: - 563. Երկրորդ՝ զի գիտէին զնա աստուած ի *մարգարէիցն*: - 566. Երրորդ վկայ ունիմք *զմարգարէս* և զառաքեալս. որպէս ասէ *մարգարէն* դաւիթ «բաժակ քո որպէս անապակ արբեցոյց զիս»: - 595. Այլ և *մարգարէն* մովսէս դնէր յերեսաց սեղանն գառ մի խորովեալ. և հաց և գինի և չորրորդ մասն դորակի հանապազորդ. և ջուր ո՛չ դնէր: - 595. Եւ նմա՛ պատշաճ է կարդալ *զմարգարէքն* և զհին օրէնքն յեկեղեցին: - 606. Եւ ի նազերեթացոց ժողովրդանոցին դպիր ցուցաւ ի կարդալն զեսայի *մարգարէն* յոտն և բացաւ գլխով: - 606. Հինգերորդ, ի սմա՛ երկոտասան քարինք հիմնարկեալք. և **բժ**ան լուսանցոյց ի խորհուրդ *մարգարէիցն* և առաքելոցն...: - 614. Նա՛խ՝ *մարգարէքն*. երկրորդ առաքեալքն. երրորդ հրեշտակապետին վերջին փողն: - 618. Այլ և **թ** են աստիճանք եկեղեցւոյ և զայս ևս *մարգարէն* ուսուցանէ, - 621. Իսկ սկսուածն ընդ երգոյն խառնեալ, Նախ նշանակէ՛ թէ *զմարգարէից* և զառաքելոցն բանս ի միասին խառնեալ ունի նորս եկեղեցի: - 627. Եւ ի վերջին գուբղայսն ո՛չ ասեմք որ ա՛յլ *մարգարէից* է. և ալէլուն միայն սաղմոսին է: - 630. Զբանս զայս՝ *մարգարէն* ի դէմս հօր ասէ. զի յայնժամ միայն զհայր պատմէին: - 632. Ապա ի ժողովն եփեսոսի վերստին հաստատեցին զփառք ի բարձունսն ի սաղմոսէն՝ յաւետարանէն՝ և ի *մարգարէիցն* զայս ինչ, «Տէր ապաւէն եղեր մեր յազգէ յազգ»: - 635. Եւ որ ամէն շարականի սկիզբն ի *մարգարէից* դնեմք, այս է պատճառն, զի զհինն և ըզնորս ի միասին խառնեմք: - 636. Դարձեալ՝ զի զսկիզբն *մարգարէքն* եդին, և առաքեալքն զշինուածն: - 636. Եւ զպէնտակոստէին, և զվարդավառին, և զսուրբ գրիգորին և զյովհաննուն, և *զմարգարէիցն*, և զվարդանանցն, և զառաքելոցն, և թագաւորացն, և զանտօնին: - 637. ...*զմարգարէից* **դձ** հարցն, և զյովհաննու **դձ** հարցն...: - 637. *Մարգարէիցն* ամպով: - 640. Երեքշաբաթի օրն *մարգարէից*: - 642. Եւ յերեքշաբաթին ըստ կարգի՝ *մարգարէիցն* և յովհաննու. որ միջնո՛րդ է օրինաց և շնորհաց: - 642. Իսկ թէ սրբոց, Նա՛խ *մարգարէից*. և ապա՛ առաքելոց. և հայրապետաց. և մարտիրոսաց: - 642. և *զմարգարէսն* ի չորրորդ ձայնս է ըթեռնլի. և ներբողեանն ի վերջին ձայնն: - 643. Զի՞նչ է որ նախ *զմարգարէս*, և ապա զառաքեալս, և ապա՛ զաւետարանն ըթեռնումք: - 643. Ասեմք նա՛խ՝ թէ *մարգարէքն* իբր յառաջասաց՝ պատմեցին զմարդեղութիւն բանին և զփրկութիւն մարդկան: - 643. Դարձեալ՝ *մարգարէքն* ի հեռուստ տեսին. և առաքեալքն մերձ զբանն մարմնացեալ: - 643. Վասն այն և տեղեաւ փոխեմք. *զմարգարէսն* ի մէջ եկեղեցւոյն, և զառաքեալսն մերձ բեմին ըթեռնումք: - 643. Դարձեալ՝ *մարգարէքն* սերմանեցին. և առաքեալքն հնձեցին: - 643. Դարձեալ՝ *մարգարէքն* ասացին. և առաքեալքն կատարեցին: - 643. Զի՞նչ է նախ սաղմոսն և ապա՛ *մարգարէ* կամ առաքեալ: - 643. Յետ մովսիսի դաւիթ է առաջին *մարգարէ*...: - 643. ...և զայլ *մարգարէսն* ի շաբաթն ըթեռնուին. վասն այն միշտ սա՛ երգի յեկեղեցի: - 643. վասն զի ի մէջ *մարգարէիցն* աստուածաբան կոչեցաւ...: - 644. Դարձեալ՝ ցուցանէ *զմարգարէս* և զառաքեալս. և ի գլուխ նոցա երևեալ բանն աստուած և խօսեալ: - 646. Դարձեալ՝ ի վախճանի ի միջոյ առաքելոց և *մարգարէից* խօսեալ և դատեալ: - 646. Որպէս ասէ *մարգարէն* «քեզ սպասեն արդարքն»: - 648. Զի այն պահքն յառաջ քան զգիրս և քան *զմարգարէս* ի նախահարցն եղաւ: - 650. Զի արդարոյն մահ՝ պատուակա՛ն է առաջի տեառն որպէս ասէ *մարգարէն*...: - 669. Իսկ ներքին դժոխք զտանջանաց տեղիքն ասէ *մարգարէն*. - 679. Ասեմք թէ՝ *մարգարէն* ուսուցանէ մեզ զչափ սգոյ մինչ յերեկոյն, և յառաւօտուն ուրախանալ...: - 680. ...այսինքն է որ ի վեր քան զհրամայեալ օրէնսն կատարեցին զգործս. որպէս առաքեալքն, *մարգարէքն*, մարտիրոսքն, կուսանքն, և այլքն: - 687. Եւ գիտելի է, զի հիմն և սկիզբն անդ եկեղեցւոյն եղև տէր մեր յիսուս քրիստոս յարուցեալ ի մեռելոց. և ընդ ինքեան հանեալ և վերացուցեալ զհոգիս սրբոց նահապետաց և *մարգարէից*: - 688. Եւ սկիզբն անդ ժողովելոյ՝ ի յարձակելն քրիստոսի առ ժամանակեայ զհոգիսն անարժանից՝ անդ մնացին և անտի դարձցին մեղաւորք անրդէն ի դժոխս ըստ *մարգարէին*: - 688. Նախ՝ *մարգարէն* եսայի ասէ, և առաքեալն զնոյն երկրորդէ՛: - 698. Ա՛րդ՝ եթէ ճշմարիտ է *մարգարէն* և առաքեալն, զի ահա՛ ա՛ստ է ընդունել զապաշխարութիւն և փրկել զհոգիս...: - 698. Ասեմք նախ՝ եթէ *մարգարէն* դաւիթ վասն բոլոր աշխարհի ասէ որ ջրով և հրով անցանի. և ապա հանգիստ յաւիտենական լինի...: - 701. ...որք աստիճանաւ վեհագոյնք են քան զհասարակաց արդարս. որպէս աբէլ, և առաքեալքն. և *մարգարէքն*. և այլք: - 711. Նա՛խ՝ զի առաջին փող էին *մարգարէքն* կոչելով յօրինակն: - 713. Եւ իշխանք են առաքեալք և

*մարգարէք* որ փոքր են տիեզերաց, նախ զնոսա կոչէ: - 713. Եւ տարերք ամենայն շտեմարանք են աստուծոյ. և տիեզերք ամենայն ի ձեռին նորա՛ են ըստ *մարգարէին*: - 718. Ապա զի՞նչ է որ ասէ *մարգարէն*, «ո՛չ յարիցեն ամբարիշտք ի դատաստան» և այլն: - 724. Նաև վկայէ՛ *մարգարէն* «եղիցի երկիր նոր և երկին նոր» ապա յա՛յտ է զի ո՛չ ապականին և խաւարին. - 728. «Իբրև զտերև յորթոյ» ասէ *մարգարէն*. այսինքն զի որպէս տերևն յիւրում ժամանակին թափի և դարձեալ զարդարի տերևով և մրգով: - 728. ...վասն որոյ հուր գայ առաջի քրիստոսի. զի զոմանս տանջէ այրելովն, և զոմանս պսակէ՛ լուսովն. զի «ձայն տն հատանէ՛ զբոց ի հրոյ» ըստ *մարգարէին*: - 731. Եւ յայլում տեղւոջ ասէ *մարգարէն* «մարտիցեն վասն նորա տիեզերք երկրի ընդ դէմ անզգամաց»: - 735. Նախ՝ այսու զաստուածութիւնն իւր յայտնէ. զի ամենայն *մարգարէք* զաստուած ասացին գոլ դատաւոր...: - 735. Երկրորդ, պա՛րտ է զի կատարեսցին գրեալքն ի *մարգարէից*. - 735. Վասն առաջնոյ աթոռոյն ասէ *մարգարէն* «աստուած նստաւ յաթոռ սրբութեան իւրոյ»: - 736. Վասն երկրորդին ասէ *մարգարէն* «աթոռ քո աստուած յաւիտեանս յաւիտենից. գաւազան ուղղութեան գաւազան արքայութեան քո»: - 736. Վասն երրորդին ասէ *մարգարէն* «ջիրաւունս և արդարութիւն ուղղեալ է աթոռ նորա»: - 736. Ա՛յն է աթոռ՝ զոր *մարգարէքն* տեսին: - 736. Երկրորդ, աթոռակիցքն քրիստոսի. որպէս առաքեալքն և *մարգարէք* և կատարեալքն դատեն զմեղաւորս իբր տեղեակք օրինացն աստուծոյ: - 738. Որք ի վեր քան զօրէնս գործեցին. որպէս առաքեալք, *մարգարէք*, մարտիրոսք, կուսանք, և այլք: - 739. Դարձեալ գիրք են *մարգարէքն*: - 741. Իններորդ, զի բնական օրինացն գ են վկայք. բանն և գիրն և աւետարանն. որ տուաւ նահապետացն և *մարգարէիցն* և առաքելոցն: - 742-743. Իսկ *մարգարէն* ի դէմս քրիստոսի ասէ «ընդ առաւօտս սպանանէի զամենայն մեղաւորս»: - 748. Երկրորդ՝ կոչի հնձան ցասմանն աստուծոյ. որպէս ասէ *մարգարէն*...: - 748. *Մարգարէն* եսայի կրկին ասէ զհատուցումն մեղաց...: - 750. Դարձեալ՝ Առաջին արքայութիւնն է փայտն այն զոր *մարգարէն* ասէ «անկեալ գոլ ի գնացս ջրոց. որ զպտուղ իւր տայ ի ժամանակի»: - 755. Է՛ ուրեմն ասել, եթէ ոչ տն սաբաւովթ, այսինքն զօրութեանց, թողեալ էր մեզ սերմն առաքելօք և *մարգարէիւք* և այլովք սրբովք և վարդապետութեամբ աւետարանին, համերք և ի մեզս լինէաք խստացեալք: - 755. Խնձոր նոր և հին, գիրքն են աստուածայինք. որք հինք են յօրէնս և ի *մարգարէս*. և նորք յաւետարանն և յառաքելական մատեանս: - 756. Եթէ ի խելս և ի խորհուրդ ցնորութիւնք և զայրուք ուռուցանիցեն խխայթեալք. բժշկեսցիս հաւատով. ըստ *մարգարէին* հիացեալ՝ ստուերս և ունայնս դնելով զամենայն անցաւորս: - 770. Եւ *մարգարէն* երանէ զմարդ զոր խրատէ տէր: - 774. Նա՛խ խոստացաւ հրեշտակօք. աւետեաց *մարգարէիւք*. դաստիարակեաց օրինօք. և յետոյ երևեցաւ ի լրումն նոցին: - 776. Եթէ յարդեան ժամանակիս հաւատարիմ է, զի որ ոք և իցէ յանցաւոր, եթէ զղջասցի և ատեսցէ զմեղս ըստ *մարգարէին* խոստովանութեամբն առնու զմաքրութիւն և զվարձս ապաշխարութեան: - 778. Նա՛խ՝ աղօթիցն ժամ. ո՛չ միայն յերեկոյս և ի վաղորդեան՝ ի հասարակն կամ է անգամ աւուր ըստ *մարգարէին*: - 779

**ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ +** Է՛ և է երորդ օրէնք՝ *մարգարէականն*: - 528. Զոր տէրն օրէնք կոչեաց *զմարգարէական* բանն դաւթի...: - 528

**ՄԱՐԳԱՐԷԱՆԱՄ +** Եւ *մարգարէացաւ* եթէ վասն մեղաց մարդկան երկիր կրկին ապականի ջրով և հրով: - 289. Բաղաամ վասն է՞ր է բան *մարգարէացաւ*: - 387. Երեսունգ, դաւիթ մարգարէ՛ է *մարգարէանային*. և որդի դաւթի յողոգոմեանն աղաղակէին: - 437. Ութերորդ՝ զի և նա՛ վասն քրիստոսի *մարգարէանայր*: - 442. ...և առաքեալքն ձեռն դնելովն միայն՝ տային զհոգին սուրբ. և ի լեզուս խօսէին. և *մարգարէանային* ընդունօղքն. իսկ վարդապետք սուրբք՝ քարոզութեան նոցին հետևօղք և որդիք ծնողացն՝ երրորդ կարգին յետ նոցա: - 535. Երեք կարգս այսորիկ գուշակեին երեքումբք արամբքն զորս եզեկիէլ *մարգարէացաւ*. փրկելոցն Նոյիւ Յոբաւ և Դանիէլիւ: - 755. Կոչի և շնորհ գործ նորին. որպէս *մարգարէանալ*: - 783

**ՄԱՐԳԱՐԷԱՇՆՈՐՀ +** Եւ սուրբն ղուկիոս սքանչելագործ և *մարգարէաշնորհ*, գրեաց առ մարկիանոս, թէ սուգ զգեցուցեր առաքելոց և մարգարէից. զի քակտեցեր զնոցա շինուածն. և արգելաւ հոգին սուրբ յօրինելոյ զպատարագն և զաւազան մկրտութեան: - 543

**ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ +** Արծւին երագընթաց մարկոս. ի հոգւոյն *մարգարէութենէն* արարեալ սկիզբն: - 133. Երբեմն զզանազան պարգևս հոգւոյն՝ զոր յաւազանէն տայ *մարգարէութիւն* քահանայութիւն՝ լեզւաց գիտութիւն...: - 140. Եւ ա՛յս է ըստ *մարգարէութեանն* որ ասէ, «եղիցին երկոքեան ի մարմին մի». այսինքն յերկու սերմանց ծնողացն լինի մին մարմին զաւակի: - 261. Երկոտասաներորդ՝ *մարգարէութիւն*: - 279. Իսկ *մարգարէութիւնն* լռեաց, զի ո՛չ ևս երևի բան մի յիշատակ շնորհաց նորա: - 279. Երեք շնորհօք հաւասարք են մելքիսեդեկ և աբրահամ. այսինքն քահանայութեամբ, թագաւորութեամբ, և *մարգարէութեամբ*: - 300. Եւ

յորժամ խօսեցաւ աստուած ընդ նմա, եցոյց *զմարգարէութիւնն*: - 300. Նա՛խ՝ զի է էր պատարագն. վասն զի մատոյց է զուարակ. և է խոյ. վասն որոյ ընկալաւ պարգևս է բանից *մարգարէութեան*: - 387. Երրորդ, զի *մարգարէութեամբ* նորա բազում ազգաց հեթանոսաց օգուտ եղև. զի յայնմանէ եկին մոգք և երկիր պագին քրիստոսի: - 387. Եւ երազահանն, որ ի գիշերի տեսանէ զդևս և *մարգարէութիւն* պատմէ զի պատրեսցէ: - 388. Երկրորդ՝ նշանակէր զքաղաքն եէմ. զի միայն ա՛նդ եղև *մարգարէութիւն* և օրէնքն. և սեղան աստուծոյ ի սիօն: - 421. Երրորդ՝ գեղմն մարգարէքն, և ցօղ շնորհք *մարգարէութեան* ի վերայ նոցա: - 421. Եւ այն զի քամեալ լցաւ կուրն և ո՛չ երկիր. զի մնացին և կատարեցան բանք մարգարէիցն ամենայն և ո՛չ եղծան. իսկ յետոյ հոգի տեառն ելից զտիեզերս *մարգարէութեամբ* և շնորհօքն քրիստոսի: - 421. Չորրորդ՝ զի թէ սամուէլ էր որ ասաց թէ՝ տէր հեռացաւ ի քէն, և այս ո՛չ է *մարգարէութիւն.* զի կրկնեաց զիւր բանն. և թէ ո՛չ էր սամուէլ, այլ զանունն ընկալաւ և ինքն դև էր, սուտ խօսեցաւ ապա: - 430. Հինգերորդ՝ բանն որ ասաց սաւուղայ, կամ հրամայական էր, կամ *մարգարէութիւն*: - 430. Իսկ թէ *մարգարէութիւն* էր և զլինելոցն ասէր, ապա ո՛չ էր աստուած. սուտ կոչեցաւ անունն ի վերայ: - 430. Այլ և *մարգարէութեանց* բաժանումն ի նոր օրէնքն ասացաւ: - 430. Հինգերորդ՝ քրիստոս տուօ՛ղ էր *մարգարէութեանն*. և նա՛ առնօղ ի քրիստոսէ: - 442. Այսինքն թէ՝ ունի *զմարգարէութեանն*, և զքանչելեացն խնդրէ: - 445. Չորրորդ, Վասն սպասաւորաց եկեղեցւոյ. Առաքելութեան *Մարգարէութեան* և Վարդապետության առ հասարակ: - 525. Զի՞նչ է *մարգարէութիւն*: - 536. *Մարգարէութիւն* է կանխագիտութիւն ժամանակաց անցելոց՝ ներկայից և ապագայից, բարի հոգւոյն միջնորդութեամբ: - 536. Ի քանի՞ս բաժանի *մարգարէութիւնն*: - 536. Իսկ հինգերորդ *մարգարէութիւն* է հոգևոր և աստուածային գիտութեամբ. զոր յայտնութեամբ սուրբ հոգւոյն ուսեալք խօսին առ ի զգուշութիւն մարդկան ի հոգևոր շինուածս: - 536. Սոյնպէս և դաւթին *մարգարէութիւն* մտաց լուսաւորութեամբն երգէր զամենայն սաղմոսն ի հոգւոյն սրբոյ: - 537. Նա՛խ՝ զի աշխարհս ջրով և հրով ապականեսցի ըստ *մարգարէութեանն* ենովքայ: - 731. Այլ զբանիս խրթնութիւն առնէ կոչմանցն անորոշութիւն. զի կոչի շնորհ իջեալն պարգև. որպէս *մարգարէութիւնն*: - 783

**ՄԱՐԳԱՐԻՏ +** Եւ դարձեալ ի վեր քարշեալ ժողովին ի ծայրս խոտոց. և ծանրացեալ կախին իբրև *զմարգարիտս*: - 204-205. Վեցերորդ՝ զի պատւական ակն և *մարգարիտ* և ազնիւ ոսկի ի ծովս գտանի: - 207. Երրորդ, վասն վերջնոցն լաւութեան ընտրեցան և խոտանքն. որպէս զհող զքար և զխեցցէ մորթն պատւեմք վասն ոսկւոյ և արծաթոյ և *մարգարտին*: - 398

**ՄԱՐԳԱՑ +** Եւ **բ** ի վերայ եղանակացդ. *Մարգաց*. և Հրոտից: - 200. *Մարգաց*. որ է՛ ժամանակ ածելոյ զմարդ. որ ի դաշտս և ի հովիտս իցեն. յայգեստանս և ի բուրաստանս. յորժամ արեգակն առ շամբն և յետ շանն իցէ. զի ի **ժգ**ն՝ մո՛ւտ է ամռան: - 201

**ՄԱՐԴ +** Որպէս ասեն հերձուածօղք՝ զամենայն ինչ *մարդկան* ի հարկէ՛ գոլ. այսինքն զգործ. զդիպուած. զմահ. զկեանք. և զամենայն ինչ: - 7. Իսկ երկրաւորք մերթ այսպէս և մերթ այնպէս. լինին և ո՛չ լինին. որպէս *մարդ*, ձի, ծառ, և այլն: - 8. Եւ թէ ոք ասիցէ, բազում բանք մեր բացորոշակի լինին ի հանդերձեալն. որպէս թագաւորն յորժամ ասէ շինեսցի քաղաք, և շինի. և ասեմք թէ այսանուն *մարդ* մեռանելոց է, և մեռանի. և աղօթեմք և լինի. և այլն նմանապէս անէծք կամ օրհնութիւնք: - 9. Կամ է ի հարկաւոր պատճառ է. զի անխափան լինիցի. որպէս *մարդ* մեռանելո՛ց է: - 9. Եւ որովհետև ծանեաք զայս, արդ պատասխանեմք առարկութեանցն, եթէ որքան է՛ ի հարկաւոր պատճառ է՛, լինի բացորոշապէս բանն ճշմարիտ. որպէս բան թագաւորի. և *մարդոյն* մեռանիլն. և արև ծագելն. և լինիլն գարուն յետ ձմռան: - 10. Իսկ որք զբախտ և զճակատագիր վերագրեն *մարդկան*, և զամենայն ինչ մեր ի հարկէ ասեն, այսինքն ի զօրուէ աստեղացն - 10. Դարձեալ ասեն թէ՝ և մարմինք *մարդկան* են ստորնայինք. և սնանին և աճին շարժմամբ աստեղացն: - 10. Եւ թէպէտ մարմինք *մարդկան* են տարրականք, այլ բարի և չար ներգործի ըստ կամաց և ո՛չ ըստ բանականութեան: - 10. Դարձեալ ասեն թէ՝ բազումք ի *մարդկանէ* գործեն ի խառնուածոյ մարմնոյն, որք հարկաւորին ի շարժմանէ աստեղացն: - 10. Դարձեալ, թէ ամենայն ինչ ի հարկէ՛ է *մարդոյ* և անասնոյ, ապա ոչինչ զանազանի բանականն և անբանն...: - 11. Դարձեալ, որոյ է իր գործեացն՝ նորա՛ է և ներգործութիւնն. եթէ առնել և եթէ կրել. արդ՝ *մարդո՛յ* է հոգին և մարմինն և ձեռն. *մարդո՛յ* է ուրեմն և գործ նոցին, եթէ չար և եթէ բարի: - 11. Եւ որպէս կիրք ցաւոցն *մարդոյն* են, զի զգա՛յ զկսկիծն. նոյնպէս և կիրք հեշտութեանն նորա՛ են...: - 11. Դարձեալ, թէ է՛ հարկ՝ ո՛չ են իրաւունք դատաստանի և քննութիւն. և ո՛չ օրէնք քաղաքական. և ո՛չ արժանապէս հատուցմունք բարեաց և չարեաց. զի հարկն բռնադատեաց գործել զայս. հարկին եղիցին պատիւք և պատիժք. և ո՛չ *մարդոյն*: - 12. Ասեմք առ այս թէպէտ ունին զօրութիւնս, բայց այլ և այլ կերպիւ. զի բոյսք որք յերկրի են դարմանիչք և բժշկութիւնք մարմնոց. այլ երկնային աստեղքն են արարիչք լուսոյ

և ժամանակաց. և ի նշանս ապագայից. զի յամենայն ուստեք տեսեալ պատրաստեցին *մարդիկք*. որպէս ասէ գիր, եղիցին լուսատու լինիլ երկրի. ի ժամանակս և ի նշանս: - 12. Եւ շարժումն նոցա ո՛չ պատճառէ զչար և զբարիս *մարդկան*. այլ են պատճառք աւուրց և ժամանակաց և եղանակաց. ծնանելոյ և աճելոյ. և նշան ապագայից որպէս ասացաք. այլ նշանն ո՛չ է պատճառ չար լինելոյ ումեք կամ բարի: - 12. Եւ շարժումն նոցա ո՛չ պատճառէ զչար և զբարիս *մարդկան*...: - 12. Ասեմք առ այս, եթէ այսու վկայե՛ս և դու մեզ՝ թէ ո՛չ է հարկ. զի ի բոլոր քաղաքն այնքան բիւր *մարդիկ*՝ ծեր և տղայ՝ ե՛րբ և ո՛ւր ի մի շարժումն աստեղաց ծնան...: - 13. Այլ կառավարի երբեք ի կամս նախախնամութեան առաջին պատճառին. որպէս ասէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս որ յաղագս բնութեան *մարդոյն*: - 13. Ութերորդ՝ եթէ չարն է յաստուծոյ, ո՛չ պատժէ զսատանայ որ չարացաւ. և ո՛չ զչարս ի *մարդկանէ*, այլ ահա՛ պատժէ՛. չար ուրեմն ո՛չ է յաստուծոյ: - 14. Մետասաներորդ՝ եթէ զբարին ոչ կամի, ապա բարի ո՛չ ոք կարէ լինիլ յեղելոցս. ո՛չ *մարդ* և ո՛չ հրեշտակք. զի կամացն աստուծոյ ո՛չ ոք հակառակի: - 14. Եւ ըստ ինքեան չար է՝ որպէս ասեմք զչարն չար. և ըստ պատահման՝ որպէս ասեմք *զմարդն* չար: - 15. Ասեմք առ այս թէ գիտելի է՝ զի ա՛յլ է տեսութիւնն աստուծոյ՝ և այլ է տեսութիւն *մարդոյ*: - 15. Իսկ ի տեսութիւն *մարդոյ* է՛ առաջին և վերջին. զի զանցեալն տեսանէ յիշմամբ, և զներկայն իմացմամբ. և զհանդերձեալն ի պատճառն իւր ըստ ժամանակին փոփոխման որպէս ասացաք: - 15. Զորօրինակ՝ թէ բազում *մարդիկ* անցանեն զճանապարհայն, և մերձ կացեալն տեսանէ նախ զմինն՝ և ապա զերկուսն՝ և որ զկնի: - 15. Այլ և ո՛չ ի բնութենէ. զի բնութիւնք ամենայն հրեշտակաց կամ *մարդկան* բարի՛ են ի բարւոյն յառաջ եկեալ. այլ չարն է՛ յանձնիշխան կամաց եկամուտ ի բնութիւնս: - 16. Դարձեալ ասեմք թէ՝ աստուած ստեղծ զկամքն նաև զհրեշտակս և *զմարդիկ* բարի. և կամի զբարին և բռնադատէ՛ սիրել զբարին: - 17. Եօթներորդ ասեն, թէ յաստուծոյ չէ չարն, վասն էր ներէ սատանայի, և չար *մարդկան*: - 17. Նաև *մարդկան* չարեաց թոյլ տալ. զի կամ ընտրեսցեն զբարիս՝ կամ յետոյ զղջասցին. և այլ պէսպէս նախախնամութեամբ որպէս ինքն գիտէ աստուած՝ ներէ՛ չարեաց. որպէս տեսանելոց եմք յառաջիկայսդ: - 17. Իսկ *մարդիկ* անձնիշխան կամօք և գործովք հասանին այն փրկութեան և շնորհաց և փառաց: - 18. Նոյնպէս և աստուած զամենայն *մարդոյ* փրկութիւն կամի...: - 20. Այլ զի արեգակն անբանապէս տայ զլոյսն. իսկ աստուած բանիւ և իմացմամբ ընտրէ զարժանիսն և փրկէ. որպէս *մարդիկ* զընտրելիս ընտրեն, և ոչ զխոտելիս: - 20. Եւ զի *մարդոյ* ճանաչումն է՛ այժմ ընդ լինիլ իրին. այլ աստուած ճանաչէ՛ յաւիտենից և յառաջ քան զլինիլ իրին: - 20. Եւ զի՝ *մարդոյ* ճանաչումն փոփոխի ը իրին. իսկ աստուծոյն անփոփոխելի մնայ: - 20. Եւ գիտելի է այս, եթէ նախասահմանութիւնն աստուծոյ առնէր հարկ գործոց *մարդկան*, չարի և բարւոյ, լինէր բազում անպատշաճութիւն որ վասն բախտին ասացեալ եղև. զորև աստ կարգեսցուք: - 20. Ընդէ՞ր ոչ յայտնեաց աստուած զէութիւն իւր ի կեանս յայս՝ *մարդկան* ազգի: - 24. Որ զամենայն *մարդիկ* կամի զի կեցցեն: - 24. Եւ վասն առաւել բարութեանն արար ի պատկեր իւր և նման *զմարդն*: - 24. Նմանապէս և *մարդկան* տեսանել զաստուած առանց օրինակի և միջնորդի՝ անհնա՛ր է ի կեանս յայս: - 25. Երրորդ՝ զփոփոխումն ի խորհրդոց և կամաց *մարդկան*. զի բազում ինչ խորհիմք և կամիմք և ո՛չ կատարի: - 26. Ա՛րդ՝ յորժամ ծնաւ քրիստոս՝ այնպէս խաղաղութիւն էր՝ որ մին *մարդ* տիրէր ամենայն աշխարհի: - 27. Երրորդ՝ ի հօրէ՛ և ի մօրէ՛. որպէս ամենայն *մարդ*: - 29. Վեցերորդ՝ Մարդկային բնութեամբն աստուած է, թէ աստուածութեամբն *մարդ*: - 30. Իններորդ՝ Աստուած և *մարդ*: - 30. Եօթնևտասներորդ՝ Զի՞նչ է ասելն համանգամայն աստուած և *մարդ*: - 30. Երկրորդ՝ է՛ դարձուցանել զիմացումն ի հաւատալեացն, և յայնցանէ որ ածեն *զմարդն* առ հաւատալն. այնպիսին խաբեալ է. զի բնութեամբ է *մարդոյ* ո՛չ տեսանել զյետոյս իւր. և ո՛չ առանց աչաց հայելոյ: - 31. Եւ զոր ինչ տեսանէ աչք արծուին՝ ո՛չ կարէ տեսանել աչք *մարդո*...: - 31. Երկրորդ՝ նոքա հակառակ էին քրիստոսի թէ (դու *մարդ* ես՝ և զանձն քո աստուած առնես:) - 34. Եւ սոքա սոսկ *մարդ* դաւանին, և աստուած ասեն միայն կոչմամբ և անձամբ: - 34. Ոմանք սոսկ *մարդ* ասելով բաժանեն զաստուածութիւնն բ բնութիւն, բ կամք, և բաժանեալ գործ, և այլն: - 35. Վեցերորդ՝ հակառակէ քրիստոսի՝ և քրիստոնէից. և սոքա հակառակին սուրբ եկեղեցւոյ և ուղղափառ հաւատոյ. և զոր բանն աստուած առեալ զմարդկայինս բնութիւն միաւորեաց ընդ իւրում աստուածութեանն՝ սոքա ընդդէմ նմին որոշեն զբանն ի մարմնոյն. զի մի՛ իցէ աստուած մարդացեալ ըստ նոցա՝ և մարմինն աստուած. և պատճառս հայթայթելով պատրեն *զմարդիկ*: - 35. ...բոլոր դիտումն նոցա է՛ պատրել *զմարդիկ* և հանել ի հաւատոց. և լնուլ զորովայնս. և զկանայս շեղջակուտեալս մեղօք յինքեանս գրաւել: - 35. Զի թէ կամաւ, կամա՛ցն ես որդի և ոչ հօր. թէ այդպէս է, բարձեր զպատճառն քո զհայր. բարձար և դու ի տեսակաց *մարդկան*: - 36. Զի թէ պատասխանեմք թէ ո՛չ է հարկ թէ սկսեալն ամենայն իրօք և դադարեսցի. որպէս հրեշտակք և հոգիք *մարդկան*. զի են սկսեալք և ո՛չ դադարին. է՛ այս պատասխանի,

այլ ո՛չ բաւական: - 37. Դարձեալ՝ զի յիմարութիւն և իմաստութիւն են ի նոյն և ի մի բնութիւն *մարդոյն*, և ո՛չ ասին հակառակ միմեանց. այլ միապէս ունի յիմարն զիմաստնոյն բնութիւն և զսահման: - 38. Դարձեալ զի և ադամ անծին՝ ո՛չ է միայն մարդկութիւն, այլ և ծնեալն ի նմանէ ասի *մարդ*: - 38. Իսկ միաւորութեանն իմանալ՝ ոչ է ինչ մեծ. այլ է հաւասար որպէս առօղն՝ նոյնպէս և առեալն զոյգ աստուած և *մարդ*: - 39. Եւ թէ գոյր երիցագոյն, լինէր պատճառն և գերագոյն քան զաստուած. իսկ ստեղծանելն երևի պատճառաւ. այսինքն վասն փրկութեան *մարդկան*: - 41. Տեսցուք և զգործն յաղագս որոյ օծաւ. այսինքն միացաւ մարդկութիւնն աստուածութեամբն ...և իրաւա՛մբք զգերեալ բնութիւն *մարդկան* յազատութիւն դարձելոյց: - 41. Որով յա՛յտ է թէ յետ ծերութեան *մարդկան* նոյն ինքն է աստուած. և զայլն նմանապէս իմասցիս: - 42. Ասեմք եթէ՝ օրինականն որպէս *զմարդո՛յ* բարութիւն կարծէր ունել քրիստոսի՝ այլ ո՛չ գերագոյն. զի և *մարդիկք* բարի անուանին...: - 47. Վասն այն տէրն ընկրկեաց զօրինականն թէ միայն ծայրագոյն բարի է՛ աստուած. և ի *մարդկանէ* ո՛չ ոք ունի զայս: - 47. Եւ դու ընդ է՛ր ասես լինել ինձ ըստ *մարդկան* երկրորդաբար բարի. զի աստուածութեամբս եմ ընդ հօր ծայրագոյն բարի: - 47. Այլ ա՛յս է, Զի ճանաչէ՛ իբրև զաստուած. այլ իբրև *զմարդ* անգիտնայ. զի բացարձա՛կ է որդւոյն անունն. այսինքն անորոշակի. զի որոյ և տացես թէ բանին և թէ մարմնոյն՝ կարէ՛ ասիլ: - 48. Իսկ որդի *մարդոյ* կոչի, զի էր ի յարենէն ի զանգւածոյն ադամայ իբր ի նախահօրէ՛. և ի կուսէն՝ իբր ի մօրէ՛: - 50. Իսկ *մարդ*, զի սրբեսցէ ինքեամբ զմեզ՝ եղև ամենայն յաղագս ամենայնի. այսինքն հոգի և միտք և մարմին. զի յորոց հասարակաց եղև մահ, լիցի և կեանք: - 50. Եւ այսոքիւք ամենայնիւ մեղանչէ՛ *մարդ*: - 50. Ասեն դարձեալ թէ՝ և հեթանոսք մի աստուածս անուանեն զամենայն կուռս, այլ բազումք են. որպէս և մարդկութեանս մի ասի բնութիւն, այլ բազումք են *մարդիկք*. ապա և դուք բազմաստւածք էք: - 54. Նաև *մարդիկ* ո՛չ միայն զի ի բազմաց են գոյացեալ, այլ և ժամանակաւ առաւելք մի քան զմի. և կամօք բաժանեալք և ի միմեանց և իրերաց հակառակք: - 54. Են և ո՛չ ասին ի յէքս. որք յանկոխ լերինս և ի խորս ծովուց անտեսք ի *մարդկանէ*: - 55. Երրորդ վանկն, ոչ են և ո՛չ ասին ի յէքս, ոչ եղեալքն ո՛չ ասին. և ո՛չ գունտն քառանկիւնի. կամ *մարդս* պարզ: - 55. Են և ասին ի յէքս, *մարդ*, հրեշտակ, երկինք, երկիր. և որ ի մէջ սոցա է՛ և ասի: - 55. Որպէս հոգի *մարդոյ* և բան *մարդոյ*՝ միայն *մարդո՛յ* է: - 55. Երրորդ՝ սրբել *զմարդիկ*՝ միայն աստուծոյ է ...: - 57. Ութերորդ՝ որպէս հոգի *մարդոյն* է՛ յէութենէ *մարդոյն*, այսպէս և հոգին աստուծոյ է յէութենէն աստուծոյ: - 58. Զի սովորութիւն է սուրբ գրոց՝ աստուծոյ համարել զոր ինչ գո՛րծ է ի *մարդիկ*: - 59. ...և որպէս ադամ յառաջ էած յինքենէ զսէթ և զևա. զմինն ծնունդ և զմիւսն ո՛չ ծնունդ. և ունին երեքեանն զմի և զնոյն բնութիւն *մարդոյ*: - 60. Պատասխանեմք, այն որ ասի հոգի քրիստոսի, և թէ՝ փչեաց, և թէ՝ առաքեաց, յայն սակս ասացան, զի ծաւալումն հոգւոյն սրբոյ յաղագս *մարդկան*՝ գալստեամբն քրիստոսի եղև: - 61. Ուստի մինն տըւօղ և միւսն առօղ ըստ նոցայն. այս է բանն և *մարդն*: - 66. Չորեքտասաներորդ՝ զի թէ մահւամբ չարչարանօք նորա փրկեցաք մեք ամենեքեան՝ և այն է սոսկ *մարդոյ* փրկութիւն մեր: - 67. Ապա ո՛չ եղև ավ, այլ *մարդով*. զոր սո՛ւտ առնէ մարգարէն զփրկութիւն *մարդոյ*: - 67. Եօթնևժերորդ՝ զի թէ ծնեալն ըստ մարմնոյ՝ է առանձնապէս *մարդ* ապա ուրեմն ծնօղ նորին ո՛չ է աստուածածին, այլ՝ մարդածին: - 68. Իննևժերորդ՝ զի թէ առանձնապէս *մարդ* է, ապա հետևի բաժանեալ բնութիւն և **բ** կամք և կրկին ներգործութիւն. յայնժամ ո՛չ լինի բանն *մարդ* եղեալ. այլ *մարդն* բնակութեամբ ի փառս բանին բարձրացեալ: - 68. Քսաներորդ՝ այսպէս Երրորդութիւնն լինի չորրորդութիւն. և թիւ և աւելւած եղեալ ի բնութիւնն և ի դէմքն. եթէ ա՛յլ է առանձնապէս *մարդ* և ա՛յլ աստուած: - 68. Զի թէ ի վերայ բնութեանն, բ կատարելութիւն մուծիք յԵրրորդութիւնն. զի Երրորդութիւնն մի բնութիւն է կատարեալ. և մի բնութիւն *մարդոյ*: - 68. Ո՛վ երկաբնակք, զքրիստոս աստուած մարդացեա՞լ խոստովանիք, թէ *մարդ* աստուածացեալ: - 68. Զի թէ աստուած մարդացեալ, ապա զիա՞րդ ուրանայք և բաժանէք յերկուս բնութիւնս զաստուածն և *մարդն*: - 68. Իսկ թէ *մարդ* աստուածացեալ, ստէ՛ ուրեմն առաքեալն՝ ի լրութենէն ունայնութիւն ասացեալ. զի այս ընդդէմ նորին ի նըւաստութենէ ի բարձրութիւնս ելանէ: - 68. Ո՛վ երկաբնակ՝ դու զո՞ր բնութիւն ի քրիստոս ասես մի տէր. զաստուծոյն՝ թէ *զմարդոյն*: - 68. Իսկ թէ *զմարդն* միայն ասես, զրկեցեր զբանն ի տէրութենէ. և առանձին *մարդո՛վ* ասես եղեալ զամենայն. որ է անհնարին չար: - 69. Եւ հարցանեմ բաժանօղսդ քրիստոսի եթէ՝ յո՛ր բնութիւն մկրտիս. յաստուծոյն թէ ի *մարդոյն*: - 69. Իսկ թէ միայն ի *մարդոյն* բնութիւնն, ահա տակաւին ևս անկատա՛ր ես. զի ի սոսկ *մարդոյն* մահ մկրտեցար: - 69. Եւ դարձեալ՝ զի հաներ զբանն ի կազէ Երրորդութեանն. շարադասելով *զմարդն* ի տեղի նորին: - 69. Իսկ թէ առանձնապէս *զմարդոյն*, զիա՞րդ իցէ կենդանարար մարմինն *մարդոյ*. կամ ո՞րպէս առաքեցաւ նա ի հօրէ. զիա՞րդ իցէ և կենդանի վասն հօր: - 69. Իսկ թէ առանձնապէս *մարդոյն*, ահա նո՛ր իմն և առժամայն մուծանես աստուած՝ հրեշտակաց և *մարդկան* երկրպագելի: - 70. Իսկ թէ *զմարդն* ասես նստեալ, ահա՛

զբանն զոկեցեր յաթոռակցութենէ հօր՝ ո՛վ սիրօղդ առանձնութեան: - 70. Իսկ թէ զերկու բնութիւնն ասիցես, ահա՛ երկու գոլ ասես հօր աթոռակից. մի զաստուածն, և մի *զմարդն*: - 70. Իսկ թէ առանձնապէս *մարդոյն*, զիա՞րդ սոսկ *մարդ* իւրովի մեռանի, և իշխանութեամբ իւրով դարձեալ յառնէ: - 70. Եւ իշխանութիւն ունէր որդի *մարդոյ* թողուլ զմեղս...: - 71. Ա՛րդ՝ որով ամենայն՝ յարմարի բանին. ըստ այնմ ամենայն՝ «ինչ բանիւն եղև». և յիսուս կոչի *մարդն*: - 72. Չորրորդ՝ գաղատացւոց ասէ՝ «առաքեաց աստուած զորդին իւր որ եղև ի կնոջէ». ապա ուրեմն *մարդ* եղեալն ի կնոջէ որդի է աստուծոյ: - 72. Ապա ուրեմն որդին *մարդոյ* որ էն է և յերկինս: - 73. Չորեքտասաներորդ՝ պօղոս ասէ ի փիլիպպեցւոցն (որ ի կերպարանս աստուծոյ էր՝ զկերպարանս ծառայի էառ. ի նմանութիւն *մարդկան* եղև...: - 73. Ապա ուրեմն չարչարեալ և մեռեալ *մարդն* է որդի աստուծոյ: - 74. Ութևժերորդ՝ ամենայն կիրք մարմնոյ՝ *մարդոյն* ասին. այնմ որոյ է՛ մարմին: - 74. Իննևժերորդ՝ թէպէտ *մարդիկ* ոմանք կոչին տէր վասն ունելոյ իշխանութիւն ինչ, այլ տէր միայն աստուած է...: - 74. Այսպէս և խոնարհագոյնքն են աստուծոյ բանին վասն միաւորութեանն. որպէս *մարդ* ծնանիլ ի կուսէ՛ ժամանակեայ. խաչիլ և մեռանիլ...: - 74. Ուստի յա՛յտ է ի սահմանէն. ամենայն *մարդ* կենդանի բանաւոր մահկանացու մտաց և հանճարոյ ընդունակ: - 74. Եւ դու պետրոս՝ *մարդ* կենդանի բանաւոր մահկանացու մտաց և հանճարոյ ընդունակ: - 74. Քրիստոս ըստ մարդկայի՞ն բնութեանն աստուած է, թէ ըստ աստուածային բնութեանն *մարդ*: - 75. Յարցումնս այս է՛ երկաբնակացն. և նմանի այնմ թէ՝ *մարդ* ըստ հոգւոյն բնութեանն մարմին է, թէ ըստ մարմնոյն բնութեանն հոգի: - 75. Յորոյ փախչելով մեր և յերկուց ծայրիցն, զառ ի մէջն ունելով ուղղապէս ընթացք, ասեմք եթէ քրիստոս ըստ անշփոթ միաւորութեանն՝ աստուածային բնութեամբն *մարդ* է, և մարդկային բնութեամբն աստուած է: - 75. Զի նոյն ինքն քրիստոսդ անուն՝ ուսուցանէ զքեզ աստուածութեամբն *մարդ* գոլ, և մարդկութեամբն աստուած: - 75. Ուստի ո՛չ ասի քրիստոս սոսկ *մարդն*, կամ մերկ աստուածն. այլ որպէս ցուցաւ յերկուց միաւորութիւնն: - 75. Վասն որոյ աստուածային բնութեամբն *մարդ* է քրիստոս. և մարդկային բնութեամբն աստուած: - 75. Զի աստուած է իւրում բնութեանն. և նոյն *մարդ* ըստ նորին բնութեամբ միաւորութեանն: - 75. Որև մարդկութիւնն աստուած էր ըստ նորին բնութեամբ միաւորութեանն. և նոյնն *մարդ* ըստ իւրում յատկութեանն: - 75. Իսկ աստուած զաստուածութիւնն՝ և *մարդ* զմարդկութիւնն միայն: - 75. Ո՞րպէս ասեմք աստուած և *մարդ*: - 77. Աստուած և *մարդ* ասել քրիստոսի կրկին է իմացումն: - 77. Ոմանք զբոլորն բաժանեալ ասեն աստուած և *մարդ*. որպէս նեստորականքն: - 77. Այլ մեք զբոլորն և անբաժան ասեմք աստուած և *մարդ*. այսինքն մարդկութեամբն *մարդ*, և աստուածութեամբն աստուած: - 77. Նախ՝ զնոյն ինքն բանն՝ աստուած և *մարդ*. այսինքն մարդկութեամբն *մարդ*, և աստուածութեամբն աստուած: - 77. Երկրորդ՝ ասել զնոյն աստուածն *մարդ*. զնոյն *մարդն* աստուած. ո՛չ փոխարկապէս, այլ փոխատրապէս: - 77. Երրորդ՝ ասի նոյն մարդկութիւնն աստուածութեամբն *մարդ*, և աստուածութեամբն աստուած: - 77. Յայս օրինակ և ծնեցեալն ի նմանէ ճշմարիտ աստուած և *մարդ*: - 77. Այսպէս և ծնեցեալն որդի միաւորեալ մարմնովն է և ասի աստուած և *մարդ*. ի բաղադրեալ միաւորութեանն. և ո՛չ ասի **բ** անձն կամ **բ** բնութիւն: - 77. Դարձեալ՝ ըստ նոյն սարասի՝ բանն աստուած ունի ծնունդ ի հօրէ նախ քան զյաւիտեանս. և ունի ծնունդ ի մօրէ ի յետին ժամանակիս. և ո՛չ ասի երկածին. այլ՝ միշտ միածին. այսպէս նոյն բանն ունի զբնութիւն աստուծոյ ի հօրէ. ունի և զբնութիւն *մարդոյ* ի մօրէ՛. և ո՛չ ասի **բ** բնութիւն. այլ մի բնութիւն վասն միաւորութեանն: - 77. Որպէս արարիչն արարածոց եղև *մարդ*, և ո՛չ ասի արարած. այլ և ո՛չ արարիչ և արարած: - 78. Ո՛չ ասի պարզ և սոսկ *մարդ*. վասն մարդկային կերպին: - 79. Այլ և ո՛չ ասի աստուած և *մարդ* որոշմամբ. այլ աստուած մարդացեալ և մարմնացեալ: - 79. Ապա՛ թէ որոշմամբ ասես աստուած և *մարդ*, ասա՛ և զծնօղն կոյս՝ աստուածածին և մարդածին: - 79. Այլ ո՛չ ասի *մարդ* աստուածացեալ և անմարմնացեալ. զի այս փոխարկութեան է: - 79. Ասի դարձեալ՝ աստուած մարմնազգեաց. այլ ո՛չ ասի աստուած մարդազգեաց. կամ *մարդ* աստուածազգեաց. զի այս որոշմա՛ն է: - 79. Ասի դարձեալ՝ աստուած մարմին եղեալ. և *մարդ* եղեալ. և մարմին առեալ. այլ ո՛չ ասի *մարդ* առեալ: - 79. Եւ ո՛չ ասի *մարդով* ծնեալ. և *մարդով* երևեալ. կամ *մարդով* շրջեալ. և այլն: - 79. Այլ ո՛չ ասի *մարդով* չարչարեալ. և *մարդով* մեռեալ. կամ յարուցեալ. կամ համբարձեալ: - 79. Իսկ միւսն *մա՛րդ* էր բնութեամբ յարարեալ և ստեղծեալ բնութենէ ...: - 79. Իսկ սուրբն կիւրեղ ընդ դէմ նեստորի զինէր. որ ասէր բնակութեամբ զբանն ի մարմնի. և նախ *զմարդն* ծնեալ ի կուսէն և շրջեալ ի յերկրի...: - 79. Վասն որոյ ասէ սուրբն կիւրեղ եթէ՝ ո՛չ *մարդն* աստուածացաւ, այլ աստուած բանն էջ յարգանդ կուսին և առեալ հոգի և մարմին ի նմանէ՝ աստուածն *մարդ* եղև...: - 79. Իսկ աստուածաբանն ընդդէմ՝ ապօղինարի՝ որ միայն մարմին ասաց առանց հոգւոյ առեալ. ասէ, մարմին առանց հոգւոյ անկատա՛ր է *մարդ*: - 80. Այլ՝ էառ զհոգի և զմարմին. որ է կատարեալ բնութիւն *մարդոյ*. որպէս ասէ

բնութիւնք **բ**. այսինքն կատարեալք: - 80. Ո՛չ որպէս ապօղինար կարծեաց. այլ աստուած կատարեալ և *մարդ* կատարեալ. հոգով և մարմնով: - 80. Ըստ որում մերձ դնէ, քանզի մարմին և հոգի. այսինքն թէ ո՛չ կարէ *մարդն* առանց հոգւոյն գոյանալ: - 80. Եւ բարձեալ զխտրոցս բաժանման ասէ՝ երկոքեանն մի՛ են. առնլովն աստուծոյ և մարդանալովն. և *մարդոյն* աստուածանալովն. ահա զբնութեանցն միաւորութիւնն եցոյց: - 80. Իսկ որք յերկուցն մի եղեալ բնութիւն ասեն, որպէս յաստուծոյն և ի *մարդոյն* եղեալ մի բնութիւն ո՛չ աստուծոյ և ո՛չ *մարդոյ*: - 81. Այլ և մի բնութիւն ասեն՝ որք միայն սոսկ *մարդ* խոստովանին զքրիստոս, և ո՛չ աստուած մարդացեալ: - 82. Ա՛րդ՝ սոքա զանունն մի ասեն, և յանունն միաւորեն զբ էութիւնսն. այսինքն զաստուածն և *զմարդն*. և ասեն մի անձն. մի որդի. մի քրիստոս. և այլն: - 82. Իբր թէ բանն և *մարդն* բաժանեալ են էութեամբ և բնութեամբ, իսկ մի են որդիութեամբ: - 82. Զի բանն որդի կոչի, և *մարդն* որդի կոչի: - 82. Եւ բանն քրիստոս կոչի, և յիսուս, և տէր. և աստուած. նոյնպէս և *մարդն* կոչի քրիստոս, և յիսուս, և տէր, և աստուած: - 82. Իսկ երրորդ դասքն, որք յերկուց ասեն եղալ մի բնութիւն, ո՛չ աստուծոյ և ոչ *մարդոյ*: - 82. Իսկ յորժամ կամեցաւ արարիչն *մարդ* լինիլ, բանն աստուած իւրով կատարելութեամբն անձամբ և էութեամբ՝ ո՛չ մասամբ, այլ լրիւ միացաւ անճառապէս ի մարմնի: - 82-83. Ո՛չ զմասն ինչ առեալ *զմարդոյ*. այլ զբոլոր բնութիւնն ժողովեալ անհատ մարդկութեամբն. զհոգի բանական՝ և զմիտս՝ և զմարմինս մեր՝ միաւորեաց ընդ իւրում աստուածութեանն անշփոթ և անորոշ միութեամբ: - 83. Զնոյն գոլ աստուած և որդի աստուծոյ ըստ հոգւոյ. իսկ որդի *մարդոյ* ըստ մարմնոյ: - 83. Ընդէ՞ր *մարդն* երկու բնութիւն է և մի անձն: - 84. Ո՛չ է *մարդն* բ բնութիւն. այլ՝ մի՛ բնութիւն և մի անձն: - 84. Բաղկացական տարբերութիւն է՝ ուստի տեսակքն գոյանան. որպէս բանականն և մահկանացուն՝ զբնութիւն *մարդոյն* կատարեն: - 85. Իսկ բաժանական է՝ որպէս բանականն և անբանն բաժանեն *զմարդ* և զձի: - 85. Ո՞րպէս ասէք մի կամք և մի գործ աստուծոյ և *մարդոյ*: - 85. Որպէս միաւորեալ ասեմք զբնութիւն *մարդոյն* ընդ էութեանն աստուծոյ, այսպէս միաւորեալ և մի է կամք բանին մարդացելոյ: - 85. Զքաղցն՝ զծարաւն՝ *մարդո՛յն* ասեն: - 85. Որպէս մի է ի հոգւոյ և ի մարմնոյ *մարդն* և մի ներգործութիւն *մարդոյն*: - 86. Զի թէ ասես միաւորական, ահա՛ արարեր դու զանձն բնութիւն. զի բնութիւն է միարար ըստ պորփիւրի, տեսակին կցորդութեամբ բազում *մարդիկ* մու: - 86. Այսպէս և մի անձն է քրիստոս և մի անհատ. զի թէ բաժանես զնա՛ յաստուած և ի *մարդ*, ո՛չ մնայ բոլորն ի նոյն. այլ մասն ինչ և մասն. կամ ոմն և ոմն: - 87. Նախ զՆիւթն զմի բնութիւն նիւթական որպէս *մարդ*. և զմիւսն բնութիւն աննիւթ որպէս զաստուած. զՋևն՝ զմինն քանակութեամբ և որակութեամբ տարբերեալ որպէս *մարդոյ*. և զմիւսն ի վեր քան զկերպ և զձև որպէս աստուծոյ: - 87. Բաժանեն և ուրեք զյատուկ անունսն. այսինքն աստուած և *մարդ*. այս է զմարդկային բնութիւնն *մարդ*, և զաստուածային բնութիւնն աստուած. որպէս նեստորի թըւի: - 87. Այլ արդ՝ մարդկային բնութիւնն յաստուածութեանն տեսանի, և աստուածային ի մարդկութեանն, եթէ ի միութիւն բնութեանն, և եթէ ի միութիւն անձինն. զի ո՛չ սոսկ *մարդ* է քրիստոս և ո՛չ մերկ աստուած. այլ աստուած մարդացեալ: - 87-88. Զի եթէ զմարդկայինն ասէք քրիստոս, ահա՛ առանձնապէս որոշեցիք զնա ըստ նեստորի. և սոսկ *մարդ* ասէք զքրիստոս: - 89. Իսկ թէ զաստուածային անձն և զմարդկային բնութիւնն ասէք մի քրիստոս, ահա յա՛յտ է զի բաժանեցիք յաստուածային բնութենէն զքրիստոս. զի անձն աստուծոյ և զբնութիւն *մարդոյ* ասէք մի քրիստոս. և զաստուածային բնութիւնն որոշէք: - 89. Եւ զփառս բանին զրկելով՝ ետուք *մարդոյն*. և եղէք մարդապաշտք, և *մարդոյ* մարմնակերք. և ի *մարդ* մկրտեալք. և սուտ է փրկութիւն *մարդոյ* մարգարէն կնքեաց: - 90. Բոլորովիմբն է ընդդէմ երկաբնակացն. որք մասամբ ասեն աստուած և *մարդ* զքրիստոս. այսինքն յաստուածութենէ և ի մարդկութենէ ժողովեալ աստուած և *մարդ*: - 90. Ասէ սուրբն կիւրեղ ընդ դէմ նոցա թէ՝ «համանգամայն՝» այսինքն բոլորովիմբ աստուած և բոլորովիմբ *մարդ*: - 90. Դարձեալ՝ որպէս ասեն աստուած և *մարդ* անհաւասար. այսինքն հզօր և տկար. անեղ և եղական. բնութեամբ և շնորհօք: - 90. Իսկ աստ հաւասար և զոյգ ասէ աստուած և *մարդ*՝ ըստ Գրիգորի աստուածաբանին. «զոյգ աստուած. որպէս առօղն՝ նոյնպէս և առեալն աստուած»: - 90-91. Իսկ միանգամայնն՝ դարձեալ ընդ դէմ է նոցա Որք զաստուած և *զմարդն* որոշեն ի միմեանց. եթէ բնութեամբ և եթէ անձամբ: - 91. Որպէս ասելն՝ աստուածն *մարդ* է՝ և *մարդն* աստուած: - 91. Այս է միտքն որ ասէ՝ համանգամայն աստուած և *մարդ*. այսինքն բոլորովիմբ և հաւասար և անբաժան աստուած և *մարդ*: - 91. Նմանապէս որ ասէ, մի և նոյն աստուած և *մարդ*: - 91. Ա՛յս է միտքն՝ մի՛ է և ո՛չ **բ** աստուած և *մարդ*. և նոյն է և ո՛չ այլ և այլ աստուած և *մարդ*: - 91. Ասեն զայս թէ՝ և ո՛չ *մարդ* չէ. այսինքն ձեռքն և ոտքն քրիստոսի. թող թէ աստուած: - 91. Այլ զօրօրինակ՝ *մարդոյ* ձեռն և ոտն *մարդ* չէ, այլ՝ *մարդոյ* ձեռն, և *մարդոյ* ոտն. նոյնպէս և զքրիստոս է՛ ասեն: - 91. Դարձեալ՝ որպէս ձեռն և ոտն *մարդոյ* ո՛չ է *մարդ*, նոյնպէս և ձեռն քրիստոսի ո՛չ է քրիստոս. և ոտն և այլ մասունքն ո՛չ են

քրիստոս. ապա և բոլոր մարմինն ո՛չ է քրիստոս. և հոգին ո՛չ է քրիստոս. ապա թէ սոքա չեն քրիստոս, և բանն ըստ ինքեան ո՛չ է քրիստոս: - 91. Ասեն այսպէս՝ եթէ ձեռն *մարդոյ* է՝ զի և ոտն *մարդոյ*՝ և այլ մասունքն *մարդոյ* է. զի աստուծոյ մասն ո՛չ ասի: - 91. Երևի ապա զի աստուծոյ ո՛չ ասեն զմասունքն, այսինքն զձեռն և զոտն. ապա ըստ նոցա և մարմինն չէ աստուծոյ մարմին. և արիւնն չէ աստուծոյ. և հոգին չէ աստուծոյ. այլ ամենեքեան սոքա *մարդո՛յ* են: - 91. Երրորդ՝ զի ո՛չ է նման առ մեզ և առ նա մասն և բոլորն. զի թէպէտ մասունք *մարդոյ*՝ ո՛չ ունին զկոչմունս բոլորին, սակայն մասունք մարմնոյն քրիստոսի՝ կոչին և ունին զբոլորին էութիւն: - 92. Այն որ նըւաստացոյց զինքն ի յունայնութիւն *մարդկան*, եղև ի կերպ ծառայի՝ և գործով և կրիւք և նմանութեամբ *մարդկան*. և կերպարանօք գտաւ *մարդ*. զի ի վեր էր քան զմարդ՝ և քան զկերպարան *մարդոյ*: - 93. Իսկ եթէ ի դէմս *մարդոյն*, ո՞րպէս ունէր զփառս յաւիտենից այն որ այսօր ի կուսէն ծնաւ: - 94. Իսկ առաւել բարձրութիւնն. զի որպէս անհամեմա՛տ է խոնարհութիւն՝ աստուծոյ մարդանալ և չարչարիլ. և անզուգական բարձրութիւն է *մարդոյս* բնութեան ընդ աջմէ աստուծոյ նստիլ և հաւասարիլ: - 94. Զի որպէս նըւաստացաւ և եղև *մարդ*, նոյնպէս և շնորիք տըւաւ նմա յաստուծոյ և ի *մարդկանէ*: - 94. Եւ այժմ զինեցուք առ քեզ՝ քոյին բանիւ. որպէս դուդ ասես՝ շնորհօք տըւաւ *մարդոյն* այն անուն օծութեան և որդիութեան և տէրութեան և իշխանութեան: - 94. Եւ տես ի հոմանունսն. որպէս ի կենդանի *մարդն* և գրեալն: - 95. Ո՞չ ապաքէն ի վեր ասեմք *զմարդն* անուն կենդանի *մարդոյն* քան թէ գրեցելոյն: - 95. Երևի թէ բաժանե՛ս զմարդկութիւնն և ուրիշ իմանաս *զմարդն* և զաստուածն: - 95. Ա՛րդ՝ ի *մարդկանէ* ո՛չ ոք ետես զաստուած, և որդի կուսին ո՛չ ետես որպէս դուդ ասես. սո՛ւտ է ապա և պատմութիւնն զոր ինչ ուսոյց մեզ. զի ո՛չ է տեսեալ և պատմէ. ահա անդունդք հայհոյութեան. զոր ի կարգիս լռե՛մ: - 96. Ապա և որդին *մարդոյ* եղիցի ըստ կարգին հրէից և ո՛չ առաւել: - 96. Ա՛րդ՝ ամենայն *մարդկան* մարգարէից և սրբոց՝ հրեշտակք ուսուցանեն. և նոքա ի քրիստոս է՛ ուսանին: - 98. Ա՛րդ՝ եթէ բանն քրիստոսի բան *մարդոյ* է և տգիտի, ապա անցաւո՛ր է: - 98. Ա՛րդ՝ եթէ մի անձն խոստովանիս քրիստոսի, և բնութիւն *մարդոյն* միացեալ ի յանձն բանին, զոր ինչ բանին է բնութեամբ, ամենայնն եղիցի և մարմնոյն իւրոյ միաւորութեամբ: - 98. Որ ասես սոսկ *մարդ* գոլ զքրիստոս. և տգէտ և տկար. և ապականացու մարմին. և անկեալ ընդ կարեօք *մարդկան*: - 98. Եւ արդ՝ տգէտն զտգիտութիւն ո՛չ կարէ բառնալ. և ո՛չ մեղաւորն զմեղս. և ո՛չ ապականացուն զապականութիւն. և ո՛չ սոսկ *մարդ* *զմարդ* կարէ փրկել. զի սո՛ւտ է փրկութիւն *մարդոյ*: - 99. Ա՛րդ՝ եթէ՝ ի յարութեանն հասարակ արդարք տեսանեն զաստուած դէմ յանդիման որպէս և է, և քրիստոս ո՛չ կարէ տեսանել, փո՛քր լինի գիտութեամբ քան *զմարդ* որ է սուտ: - 99. Ա՛րդ՝ եթէ հրեշտակք տեսանեն զբանն աստուած՝ և առնուն գիտութիւն ի նմանէ, և *մարդն* քրիստոս ո՛չ տեսանէ որպէս ասես նեստո՛րդ, ապա քրիստոս փո՛քր է գիտութեամբ քան զհրեշտակս: - 99. Ա՛րդ՝ եթէ ճանաչելն զաստուած հայր և զյիսուս քրիստոս կեանք է յաւիտենից, և *մարդն* քրիստոս ճշմարտութեամբ ո՛չ կարէ ճանաչել որպէս դուդ ասես: - 99. Ա՛րդ՝ զառն աստուծոյ է՛ որդին *մարդոյ*: - 99. Այլ դատաւորին պարտէ ունիլ անհուն գիտութիւն. զի քննել կարասցէ զամենայն բնութիւն հրեշտակաց և *մարդկան*. և զամենայն գործս եղեալս և զլինելոցն. զխորհուրդս և զբանս բոլորից. զառաջինն՝ զմիջինն՝ և վերջինն: - 100. Այսպէս պարտէ սրտիւ հաւատալ. և բերանով խոստովանիլ. զի «որ խոստովանի զիս առաջի *մարդկան*, խոստովանեցայց և ես զնա առաջի հօր և հրեշտակաց սրբոց. և որ ուրանայ զիս, ուրացեալ լիցի առաջի հրեշտակաց» ասէ ճշմարութիւնն: - 101. Վասն կենաց. և զանազանութեան աստուծոյ. և հրեշտակաց և *մարդկան*. և կենդանեաց: - 101. Վասն տեսութեան աստուծոյ. և հրեշտակաց. և *մարդկան*: - 101. Զի՞նչ զանազանի և հաւասարի տեսութեանն աստուծոյ. և հրեշտակաց. և *մարդկան*: - 101. Քահանայապետութիւն նոցա և *մարդկան*: - 102. Զանազանի հրեշտակն. և հոգի *մարդոյ*. և իմացումն հրեշտակաց: - 102. Զգայարանք *մարդոյս*: - 102. Յաղագս որոյ և անանուն է աստուած. զի անունն զբնութիւնն յայտնէ. որպէս *մարդ*: - 103. Ըստ որում մինն ի սուրբ Երրորդութենէն բանն աստուած հաղորդեցաւ բնութեան մերում անքակ միութեամբ. և եղև աստուածն կատարեալ՝ *մարդ* կատարեալ: - 106. Իսկ հասարակն՝ զի բոլոր բանն աստուած իւրով կատարելութեամբն էառ զբոլոր և կատարեալ մարդկային բնութիւնս. և եղև աստուածն կատարեալ՝ *մարդ* կատարեալ: - 106. Եւ *մարդն* յետին է և վերջին ամենայն եղելոցն: - 107. Երրորդ՝ բանն պատկեր է հօր. և *մարդն* պատկեր բանին. պատկերն զպատկերն էառ կամ նախատիպն զպատկերն: - 107. Չորրորդ՝ բանն գերագոյն է յիմանալիսն. և *մարդն* գերագոյն է ի զգալիսս. վասն որոյ *մարդ* եղև: - 107. Վասն որոյ *մարդ* եղև, զի զբոլորն յինքենէ զյառաջ եկեալն յինքն միաւորեսցէ: - 107. Վեցերորդ՝ որդին աստուծոյ եղև որդի *մարդոյ*. զի զմեզ արասցէ որդիս աստուծոյ: - 107. Եւ զի որդին աստուծոյ բնութեամբ որդի *մարդոյ* եղև, մի՛ յերկուանալ թէ լինիցիս և դու շնորհօք որդի աստուծոյ: - 107. Եօթներորդ՝ աստուածն *մարդ* եղև և յերկիր էջ. զի դու լիցիս

աստուած և յերկինս ելցես: - 107. Զի ո՛չ է որպէս պետրոս՝ և պօղոս՝ և յօհաննէս՝ երեք *մարդ* և մի բնութիւն. այլ մի է անհատութեամբ. ունելով երիս յատկութիւնս դիմաց: - 107. Երրորդ՝ Երրորդութիւնն ցուցանէ երիցն զմի հասարակ բնութիւն. որպէս ասեմք *մարդ* և մարդկութիւն. ծի և ծիութիւն. ընդդէմ արիոսի որ ասէ՝ երեք թիւն ունի երեք բնութիւն, ասեմք երից անձանցն մի բնութիւն: - 108. Եւ ի միոյ աստուծոյ եղեն ժ դասք հրեշտակաց ընդ *մարդկան*. և հարիւր գունդքն ըստ ոչխարաց առակին. և ռ կենդանեաց տեսակքն որ յերկրի. և բիւր անկենդան բուսոց. և անթիւ գոյեղէնք: - 109. Չորրորդ՝ յաւիտենական է աստուած. և մշտնջենաւոր հրեշտակք. և ժամանակեայ *մարդիկ*: - 116. Եւ մշտնջենաւոր՝ որ ունի սկիզբն՝ և ո՛չ կատարած. որպէս հրեշտակք. և հոգի *մարդոյ*: - 116. Ո՞րպէս է տեսութիւն *մարդոյ*: - 120. Կրկին է տեսութիւն *մարդոյ*: - 120. Որո՞վ զանազանի և հաւասարի տեսութիւն հրեշտակաց և *մարդկան*: - 120. Նախ՝ զի հրեշտակացն իմանալի և միահաղոյն է տեսութիւն. իսկ *մարդկան* բանական և մասն մասն ժողովելով: - 120. Երկրորդ՝ հրեշտակք բարձրանան ի տեսութիւնն աստուծոյ. և *մարդիկ* խոնարհին և շեղին ի յիմացւածն: - 120. Երրորդ՝ զգայութիւն զմասնաւո՛րն տեսանէ. որպէս այս ինչ *մարդ* որ է անհատ. և միտք զընդհանուրն իմանայ՝ որ է բնութիւն. որպէս մարդկութիւն: - 121. Եւ այսու զանազանի ճշմարիտն և ճշմարտութիւնն՝ այսինքն մասամբ և բոլորիւ. որպէս *մարդ* և մարդկայնութիւն: - 121. Դարձեալ՝ ճշմարիտ է *մարդոյս* բանն. և ճշմարտութիւն է աստուածային բանն: - 121. Երրորդն է նշանական աստուածաբանութիւն. որ ի զգալի կերպարանաց փոխակցիմք յիմանալի տեսութիւնն. թէ զի՞նչ նշանակէ *մարդ* երևելին. կամ առիւծ. գառն. հուր. լոյս. և այլն: - 122. Այսպէս և ոչն. որպէս անդ՝ ուր ասէ արիստոտէլ՝ «ո՛չ *մարդ*» որ է անորոշելի անուն. և «ո՛չ նստի» որ է՛ բացասութիւն. և ա՛յլ է անորիշ անունն. և այլ բացասութիւն ստորասութեան: - 124. Նոյնպէս հրեշտակաց և դիւաց՝ չարաց ի *մարդկանէ* և բարեաց ընտրութեան հոգի ընկալաք: - 126. Եւ տէրն՝ զառաքինութիւն *մարդկան* հոգիացուցանելով և զթերին լնլով: - 126. Եւ միջնորդ հաշտութեան է քրիստոս աստուծոյ և *մարդկան*. այլև հրեշտակաց և *մարդկան*. նաև հրէից և հեթանոսաց: - 126. Իսկ «ես նախանձոտ, զփառս իմ այլում ո՛չ կամիմ». փառք իւր կոչէ *զմարդն*: - 128. Իսկ այլն՝ սատանա՛յ է ապստամբ վիշապն որ գերեաց *զմարդիկ*:- 128. Սակայն ըստ մեր իմացմանս հասարակ է բարին քան զսէրն. զի ասեմք՝ սէրն բարի է. ազնիւն բարի է. և այլն. որպէս ասեմք՝ *մարդն* կենդանի է. ձին կենդանի է. և այլն: - 128-129. Եւ լայնութիւնն յամենայն յազգս *մարդկան*: - 129. Նախ ա՛յս է միտքն՝ որ այբն առաջին է և քէն վերջին. այսինքն ես եմ առաջին աստուածութեամբս. և ես եմ վերջին մարդկութեամբս. զի *մարդն* վերջին է արարածոց: - 129. Իսկ՝ հոգի *մարդոյ* միայն իմանալի և ո՛չ իմացական. զի իմանան զվերինսն՝ իմանալի՛ են: - 130. Վասն է՞ր զանազանապէս տայ աստուած զպարգևս և ո՛չ հաւասար. որպէս առաւել տայ հրեշտակաց՝ և սակաւ *մարդկան*. և նըւազ կենդանեաց և տնկոց և անշնչից: - 130. Եւ ի դասս *մարդկան* որպէս մարգարէք և առաքեալք: - 131. Նախ՝ զբնական որակութիւն երկնայնոցն նշանակէ. այսինքն *Մարդն* զբանն: - 132. Զի երկնային է արծըւին. և *մարդն* յերկրէ. և կենդանիքն ի ծովու: - 132. Առիւծն գազանաց. և *Մարդն* ամենայն կենդանեաց. և Նստեալն ի վերայ սոցա Թագաւոր թագաւորաց: - 132. *Մարդն*՝ զի այրացեալ աստուած. և արծըւին՝ զի հոգին ի վերուստ պարգևեալ: - 132. Յինգերորդ՝ նշանակէ զչորեսին աւետարանիչքն. *մարդն* զՄատթէոս՝ զմարդեղութիւն բանին ցուցեալ առիւծն զՄարկոս՝ արիաբա՛ր աւետարանեալ. «և էր ընդ գազանսն» ասէ. եզն զՂուկաս՝ յերկարաձիգ պատմութեամբ. և եզն պարարակ կոչեցեալ. արծւին ըզՅօհաննէս՝ ի վերուստ զբանն աւետարանեալ: - 132-133. *Մարդն* մատթէոս՝ զօրինաւոր ծնունդն բացայայտեալ: - 133. Եօթներորդ ի մեզ, *մարդն* բանն. առիւծն ցասումն. եզն ցանկութիւնն. արծըւին գիտութիւն բարձրաթռիչ զվերինն խորհիլ միշտ: - 133. Երկրորդ՝ զի ժերորդ է *մարդս* կարգեալ ի թիւ նոցա ըստ հարիւրերորդ մոլորեալ ոչխարին, և կորուսեալ ժերորդ դրամին: - 134. Դարձեալ՝ առաջինքն կարգաւորեն զգործս հրեշտակաց և տէրութեանց *մարդկան*: - 136. Ապա յա՛յտ է զի ա՛յլ է կարգ շնորհականին, և այլ է կարգ բնականին. զի բնականք ներքինք զվերնոցն բոլորապէս ունին և կոչին. այլ ո՛չ անդրադարձեալ. որպէս անհատն զտեսակն և զսեռն բոլորապէս ունի և կոչի. զի պետրոս *մարդ* է և կենդանի և կոչի. այլ կենդանին *մարդ*՝ կամ *մարդն* պետրոս ո՛չ է և ո՛չ ասի: - 136. Եւ թէ ոք ասիցէ, վասն էր *մարդիկք* հրեշտակք կոչին. նաև հրեշտակք աստուած՝ որ վերնոցն են կոչմունք: - 136. Քահանապետութիւնն ըստ այնմ որ կա՛րգ է՝ մի և նոյն է ի *մարդիկ*՝ ի հրեշտակս՝ և յաստուածպետութիւնն սուրբ: - 138. Երրորդ՝ զի անբաժանելի է յունօղսն. որպէս յաստուած՝ և ի հրեշտակս, այսպէս և ի *մարդն* արժանացեալ. զի ունակութիւն է յարամնայ և կնիք անքակտելի: - 138. Իսկ ի հրեշտակս և ի *մարդն* այլակատար և երկրորդաբար: - 138. Իսկ *մարդս* միշտ առնու: - 138. Իսկ *մարդս* ո՛չ բնութեամբ, այլ յետոյ ստացմամբ և ունակութեամբ: - 138. Իսկ հրեշտակաց և *մարդկան*, Նախ՝ զի

*մարդիկ* միջնորդութեամբ հրեշտակաց առնուն, և ո՛չ անդրադարձեալ. թէ և մարդացեալ բանիւն: - 138. Երկրորդ՝ *մարդկան* քահանայութիւն նիւթական խորհրդով ներգործի. որպէս հացիւ գինեաւ և այլով. իսկ նոցայն աննիւթութեամբ կատարի: - 139. Երրորդ՝ *մարդկան* սրբութիւն է ի յաղտոյ. իսկ հրեշտակք սուրբ են առանց աղտոյ: - 139. Չորօրինակ գիտութիւն *մարդկան* ի սկիզբն և ի մէջն և յեզերն՝ նախ զտգիտութիւն փարատէ՛, և ապա՛ զմիտս լուսաւորէ՛ և կատարէ: - 139. Ապա յա՛յտ է թէ ո՞րպէս է հասարակ և զանազան քահանայապետութիւնն առ աստուած ի հրեշտակս և ի *մարդիկ*: - 139. Վասն առաջնոյն գիտելի՛ է, զի ամենայն շնորհ բղխո՛ւմն է և ճառագայթ, յանեղական լուսոյն իջեալ առ էակս ամենայն իմանալի և զգալի. և զարդարէ՛ զոսսա ըստ նմանութեան այնմ պարգևեալ շնորհի. եթէ ըստ բնութեան՝ և եթէ անձնական. ի հրեշտակս և ի *մարդիկս*: - 140. Վասն երրորդին անչա՞փ է թէ չափաւոր՝ գիտելի՛ է, զի անչա՛փ է շնորհն ըստ իւրում ինքնութեան. այլ չափաւորի՛ ըստ տըւողին կամաց և ըստ ընդունողին կարեաց. որպէս բան *մարդոյ* ի լսելիս: - 140. Որո՞վ զանազանի հրեշտակն և հոգի *մարդոյ*՝ և հաւասարի: - 140. Վասն է՞ր *մարդս* կարօտացաւ գրոյ: - 143. Իսկ հաւասար սիրով սիրէ *մարդ զմարդ*. և ընկեր զընկեր. այլ և *մարդ* զհրեշտակս. և հրեշտակք *զմարդիկ*. և զհաւասար արարածք են: - 143. Այլ և *մարդ* զկենդանիս և զանկենդանս. զի համասեռ գոյեղէնք են. և այս սիրովս շաղկապին առ իրեարս: - 143. Իսկ *մարդս* զի յերկուց է գոյացեալ՝ ունի զգութ բնական՝ և զսէրն աստուածական: - 144. Իսկ բանիւ բերանոյ խօսի *մարդ* ընդ *մարդոյ*, հրեշտակք ընդ *մարդոյ*՝ ծնացեալ մարմնովն: - 145. Իսկ խօսի հրեշտակն ընդ *մարդոյ* կրկին կերպիւ: - 145. Իսկ այլք ասեն թէ՝ հրեշտակն ո՛չ երևի ծնացեալ մարմնովն և ո՛չ խօսի ընդ *մարդոյն*. այլ՝ դնէ զնմանութիւն դիտաւորութեան ի յաչքն կամ ի յականջն *մարդոյն*. և անդ ընդունի հասարակ զգայութիւնն զտեսակս այնմիկ, և տայ յերևակայութիւնն և յիմացականն. այսպէս երևին հրեշտակք և խօսին ընդ *մարդոյ*: - 145. Երկրորդ՝ կերպիւ խօսի հրեշտակն ընդ *մարդոյ* տպաւորութեամբ երեւակայութեան: - 145. Իսկ խօսի դևն ընդ *մարդոյ*՝ կամ փոփոխելով զգոյութիւնն որպէս հրեշտակն կամ զպատկեր նմանութեանն ցուցանէ տեսանելեացն. և կամ տպաւորէ՛ յերևակայութիւնն: - 145. Նաև անբարիշտ կամք նորա դարձել է յատելութիւն և ի նախանձ *մարդոյն*. զի ամենայն ջանիւ նկրտի ի կործանումն նորա բազմադիմի փորձութեամբ: - 146. Վասն է՞ր է հակառակ *մարդոյ*: - 146. Վասն **դ** պատճառի այնպէս որսայ և խաբէ *զմարդիկ*: - 146. Նախ՝ զի հակառա՛կ է աստուծոյ, և *մարդն* պատկեր է աստուծոյ. յորժամ տկարանայ ի նախատիպն՝ ընդ պատկերն հակառակի: - 146. Զի ընդ իւր անկումն ի պատուոյ այնչափ չէ՛ տրտում, որքան ընդ *մարդոյն* փառաւորիլն: - 146. Քանզի դևք ո՛չ են ի վերին մասն օդոյն, զի մի խնդասցեն լուսովն. և ո՛չ ի ստորին մասն, զի մի՛ առաւել վնասեսցեն *զմարդիկ*: - 146. Եւ գործոյն որ ունին կրթել *զմարդիկ*՝ յարմարի օդն որ է՛ մերձ առ մեզ փորձելոյ զմեզ. այլ ո՛չ ի լոյս. զի մի ուրախասցին: - 146. Նոյնպէս և յառնել *մարդոյն* և յանուն դնելն կենդանեաց՝ փառս ետուն աստուծոյ. իսկ նա լռեաց: - 147. Եւ ոմանք ասեն թէ՝ ընդ պատիւ *մարդոյն* նախանձեցաւ և ի խորհուրդ եմուտ թէ սորա կատարումն ի՞նչ լինի, և ո՛չ կարաց հասու լինիլ: - 147. Եւ զնայելոյն պատճառն իրինոս մեկնէ թէ՝ *զմարդոյն* լինիլն ետես այնպէս փառաւոր և ի խորհուրդ եմուտ որպէս ասէ յոբ, «վասն իմ թողին զգործս իւրեանց»: -147-148. Այլ և գործակից նմա *մարդիկ*՝ անուանակից եղեն նմա և չար կոչեցան: - 148. Որև մերձ ի կատարածն դարձեալ յառնելոց է ի վերայ *մարդկան* ի ձեռն նեռինն: - 148. Ընդէ՞ր քրիստոս ո՛չ փրկեաց զնոսա որպէս փրկեաց *զմարդիկ*: - 149. Ամենայն հրեշտակք զուգապէս ստեղծան յաստուծոյ. և ո՛չ մի ի միոյ. որպէս *մարդ* ի *մարդոյ* ծնանի: - 149. Յասարակ կարծիք է թէ՝ **ժ**երորդ դաս հրեշտակացն անկաւ, և *մարդս* զանկելոց տեղին լնու: - 150. Յրեշտակք ի վերոյ ջրո՛յ են. բայց ի ներքոյ հաստատութեան խնամածուք կարգեալ են աշխարհի և *մարդկան*: - 150. Եւ յօհաննէս զսա օդո՛յ դասէ. վասն այն նոյն անուամբն՝ պօղոս իշխան օդոյս կոչէ. կամ զի յօդս են բնակեալ և իշխեն *մարդկան*: - 150. Ո՛չ են յաւերժահասունք որպէս ոմանք կարծեն թէ յերկուց տարերց այսինքն ի հրոյ և յօդոյ են բանական կենդանիք և ունին ծնունդ և մահ. սուտ է այսպիսի կարծիքս և ընդունայն և հակառակ սուրբ գրոց. զի բանական կենդանի և մահկանացու՝ *մարդս* միա՛յն է որոյ յարութիւն և դատաստան գոյ: - 150. Նոյնպէս և յաւերժահասունք՝ զի միշտ պատրեն *զմարդիկ* ուրախութեամբ: - 150. Յինգերորդ՝ զի հոգևոր բնութիւնն միանգամ միայն է շրջելի. վասն զի բոլորովին շրջէ զինքն՝ զոր ո՛չ առնէ *մարդն*. զի մարմինն միշտ մարտնչի ընդ հոգին. որպէս յառաջիկայդ ասի **լբ** գլուխն: - 151. Եւ ոմանք ո՛չ յերկնից բայց յերկինս. որպէս ի *մարդկանէ* սուրբք: - 151. Իսկ **ծ** եղջիւրն է **ծ** պատուիրանին յանցումն, որով պատերազմի ընդ *մարդկան*: - 151. Զի պահպանութիւն օրինացն՝ *մարդոյս* է՛ զէն պատերազմի: - 151. Իսկ յանցումն օրինացն՝ լինի զէն և գործի դիւացն որով պատերազմին ընդ *մարդոյս*: - 151. Եօթն խոյրն զդիւական ներգործութիւնսն նշանակէ. որովք յաղթէ՛ *զմարդ* և պսակի: - 152.

Եւ այս վասն այնորիկ՝ զի չարախօսէ՛ր *զմարդիկ* եթէ ինքնայօժար կամօք և բնութեամբ մեղան և ո՛չ ի պատրանաց իմոց…: - 153. Այսպէս և զամենայն *մարդիկ*: - 153. Զոր եկեալ տէրն անմեղ և անապական մարմնովն նախանջեաց զմեղս, և զարդարութիւն սփռեաց ի վերայ *մարդկան*. և դատապարտեաց զսատանայ իբր զդաւաճանօղ *մարդկան* և կոխան արար ի ներքոյ *մարդկան*: - 153. Նախ՝ խաբէութեամբ *զմարդիկ* ի մեղս և ի կռապաշտութիւն ձգելոյ: - 153. Զանազանութիւն գործոյ աստուծոյ՝ և *մարդոյ*: - 154. Թէ բնական զգեստ և զէն ունին կենդանիք, և *մարդս* ոչ. և ճանճք և այլքն: - 155. Զի՞նչ զանազանի գործ *մարդոյ* ի գործոյ աստուծոյ: - 156. Նախ՝ զի գործ *մարդոյ* շօշափմամբ է. իսկ աստուծոյն առանց շօշափման: - 156. Երկրորդ՝ զի *մարդն* կարօ՛տ է նիւթոյ. իսկ աստուած անկարօ՛տ է նիւթոյ: - 156. Երրորդ՝ զի կայ ի *մարդս* որ ի հարկէ՛ առնէ. իսկ աստուած առանց ամենայն հարկի է: - 156. Չորրորդ՝ *մարդս* պակասութիւն ունի. իսկ աստուած առանց ամենայն պակասութեան է: - 156. Հինգերորդ՝ *մարդ* թէ բնութեամբ և թէ կամօք գործէ՝ կարօ՛տ է օգնականի, իսկ աստուած անկարօ՛տ է օգնականի: - 156. Վեցերորդ՝ *մարդս* կարօ՛տ է ուսմանց և իմաստից. իսկ աստուած անկարօ՛տ է ուսման և իմաստութեան. զի ինքն է աղբիւր գիտութեան և իմաստութեան: - 156. Եօթներորդ՝ *մարդ* կարօ՛տ է ժամանակի. իսկ աստուած ո՛չ է կարօտ ժամանակի. և այլ և զյաւիտեանս արար: - 156. Ութերորդ՝ *մարդկան* գործ աշխատութեամբ է. իսկ աստուծոյն առանց աշխատութեան: - 156-157. Իններորդ՝ *մարդս* սխալակա՛ն է ի գործն. իսկ աստուած առանց սխալման: - 157. Տասներորդ՝ գործ *մարդոյս* նախ զօրութեամբ՝ և յետոյ ներգործութեամբ եղանի. իսկ աստուծոյն միշտ ներգործութեամբ է. որպէս ցուցանի յառաջիկայդ: - 157. Մետասաներորդ՝ *մարդոյս* գործ մասնաւոր և մի զկնի միոյ. իսկ աստուծոյն համանգամայն և բոլորովիմբ: - 157. Երկոտասաներորդ՝ կատարած գործոյ *մարդոյ* ի սկիզբն անգիտելի է. իսկ աստուծոյն ի սկիզբն կատարածն գիտելի է նմա: - 157. Երեքտասաներորդ՝ *մարդ* զինչ որ կամի ո՛չ կարէ. իսկ աստուած զոր ինչ և կամի և կարէ՛: - 157. Չորեքտասաներորդ՝ *մարդն* ո՛չ կարէ արարչագործ լինիլ. իսկ աստուած արարչագործ է՛: - 157. Հնգետասաներորդ՝ զի *մարդ* յետ ստեղծանելոյն ո՛չ է ըստ ստեղծուածս իւր. իսկ աստուած յետ ստեղծանելոյն՝ միշտ է՛ ընդ ստեղծուածս իւր նախախնամութեամբ…: - 157. Այսպէս և գործ նախախնամութեան. զի կամի՛ զի ամենայն *մարդիկ* կեցցեն և ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն: - 157. Ասեն ոմանք թէ փորձութիւնն երեք է. այսինքն ի *մարդկանէ*՛, ի սատանայէ՛, և յաստուծոյ: - 160. Արդ փորձէ *մարդ*՝ զի զստո՛յգն գիտեսցէ: - 160. Նոյնպէս և սատանայ աներևոյթ մօտ՝ ի *մարդն* երթալ. թէ ամուր է հաւատն և կամքն՝ ո՛չ կենայ անդ, յուսահատի և թողու: - 161. Իսկ աստուած փորձէ *զմարդ*՝ զի գիտէ զնա՛ բարի և հաւատարիմ. այլ ծածկեա՛լ է յայլոց. փորձէ՞ զի յայտնի լիցի ամենայն աշխարհի առաքինութիւն նորա: - 161. Ի փորձութեանց ծանեաք զշահն որ ասացաւ ի վերոյ. այլ հասարակ ամենայն *մարդկան* զի՞նչ օգուտ է փորձութիւնն որ ասէ՝ «երանեալ է այր՝ որ համբերէ՛ փորձանաց»: - 161. Զի որպէս հուր զժանկ արծաթոյ՝ և խարտոց զժանկ երկաթոյ, նոյնպէս և նեղութիւն սրբէ զմեղս *մարդոյ*: - 162. Եւ այլ բազում զանազանութիւն է գործոց *մարդկան* և աստուծոյ. զի մեք կարօտ եմք նիւթոյ. ժամանակի. տեղւոյ. օգնականի: - 164. Նախ զայս ասեմք թէ ամենայն ինչ հնարաւոր է աստուծոյ. զի կարէ՛ առնել զոր միտք *մարդկան* տեսանէ. և կարէ՛ զոր ո՛չ տեսանէ: - 173. Եւ է՛ էակ որ երբեմն զօրութեամբ է. որպէս այնոքիկ որ ի լինելութեան և յապականութեան են որք միշտ փոփոխին. որպէս *մարդ* և ոչխար և ծառ: - 173. Այսինքն կամօք է՝ զի գիտութիւնն և կամքն առաջնորդէ՛ գործոյն և հնարաւոր է՛ առնել զայս՝ և առնել զայն, զոր և կամեսցի. որպէս *մարդ* զի տէր է գործոյ իւրոյ՝ առնելոյ և ոչ առնելոյ: - 173. Զի էակքս ամենայն՝ ոմանք բանաւորք են և ո՛չ միշտ ներգործականք. որպէս *մարդս*: - 173. Ասեմք առ այս Նախ՝ եթէ ո՛չ ամենայն գործ բնութեան հետևի, այլ և կամաց. որպէս *մարդոյ*. զի մի է կամք ի քրիստոս, մի է և ներգործութիւնն: - 174. Այլ գոյացութիւնն է ունօղ բնութեանն, կամ ներքոյ կացեալ բնութեան որպէս *մարդ*: - 174. Իսկ ենթադրութիւն է զանազանելին և ո՛չ զանազանեալն բացորոշ յատկութեամբ. որպէս ոմն *մարդ*: - 174. Եւ յա՛յտ է զի եզական և անհատն *մարդ*՝ է զանազանեալ իւր յատուկ որակութեամբն: - 174. Եւ որպէս ի ժողովիլ հոգւոյ և մարմնոյ լինի *մարդ*. և ի բաժանիլն կորնչի. այսպէս և զայս իմա: - 175. Գոյացութիւն որ սկիզբն է ամենեցուն և նախասեռ. և ի նմանէ զուգաբաժանեալ մարմինն. և շնչաւորն. և զգայունն. և կենդանին. և բանաւորն. և *մարդն*. ո՞չ ապաքէն բնութիւն են սոքա այլևայլ. և ժողովեալ գոյացուցանեն զմի անհատն պետրոս անշփոթ միութեամբ: - 176. Եւ զի անշփո՛թ են սոքա յատկութեամբ՝ յայտ է. ուստի ասեմք, պետրոս *մա՛րդ* է և բանաւոր և կենդանի և զգայուն և շնչաւոր և մարմին և գոյացութիւն: - 176. Զայս և սովո՛ր են առնել *մարդիկք* առ մերձաւորս և սիրելիս անընդմիջաբար խօսին. և առ հեռաւորս կամ ատելիս գրով կամ միջնորդով: - 177. Իսկ թէ վասն է՞ր *մարդս* ալփաբէտից կարօտացաւ, գրեա՛լ է ի հրեշտակաց **ճե** համարն:

- 177. Երկրորդ՝ յերից գծից բաղկանայ. որպէս *մարդ* ի հոգւոյ և ի մարմնոյ և ի մտաց: - 178. Դարձեալ՝ որպէս ասեն իմաստունք՝ թէ քան զամենայն պարգևք գերագո՛յն է իմաստութիւնն յաստուծոյ առ *մարդիկ* իջեալ. այսինքն քան զկեանս և զառողջութիւն, և քան զմեծութիւն և զայլսն: - 178. Եւ ևս բազումք. զի աշխարհ կոչի աշխարհարարն. և աշխարհս. և *մարդս* ըստ հոմերոնի: - 179. Աստուած՝ իմանալի աշխարհ. և աշխարհ՝ զգալի. որ և *մարդս* իմանալի և զգալի աշխարհ: - 179. Զորօրինակ՝ **դ** *մարդ* երկու երկու ձեռօք զմիմեանս ըմբռնեն: - 181. Եւ զայլ յերկար քննութիւն տարերաց՝ գտցես ի գիրս նիւսացւոյն որ վասն բնութեան *մարդոյ*: - 181. Չորրորդ՝ զի մասն ապականի, այլ բոլորն կեայ. որպէս իւրաքանչիւր անհատ *մարդոյ* և ձիոյ մեռանի, այլ բոլորն մնայ. այսպէս և տարերք: - 181. Եւ երկիրս անշարժ է տեղեաւ, եւ սմա ապականիլ երեսօք. զի տեսեալ *մարդիկ* եղական և ծառայ իմացեն զնոսա. և մի աստուածս կարծեսցեն և մոլորեսցին. որպէս ասէ նիւսացին ի գիրս կազմութեան: - 182. Եւ է՛ իմանալի լոյս՝ որպէս հրեշտակք՝ և հոգի *մարդոյ*. և պատւիրանն աստուծոյ...: - 185. Իններորդ՝ զերկնային և զերկրաւոր միտս *մարդկան* առ հասարակ լուսաւորէ՛: - 185. Ոմանց որակ գունոց տայ. որպէս խնձորոյ. և զոմանց բառնա՛յ. որպէս *զմարդոյ*: - 186-187. Եւ այլք ասեն թէ՝ կերպն է ցամաք երկրիս. որպէս հայելին *զմարդոյ* կերպն յինքն երևեցնէ: - 187. Զի տեսեալ *մարդիկ* զնոր և հին նորա՝ ասացին՝ մե՛զ ես օրինակ ծննդեան և մահւան. և կոչեցաւ ամիս: - 190. Եւ ի իբն մարտի՝ կազմութիւն *մարդոյն* է: - 191. Եւ ի **ժդ**ն՝ կազմութիւն *մարդոյն* է: - 191. Եւ ի նիսանի մեկն կազմութիւն *մարդոյն* է. զի նիսանն կազմութիւն լսի: - 191. Իսկ որ զերկրաւորքս ըստ կարգի, ամենագութ մարդասիրութեանն է երևումն. ո՞րպէս խնամով զպէտս *մարդկան* յայնքան աւուրս կատարեաց: - 192. Հինգերորդ՝ զի *մարդն* տէր և իշխա՛ն է երկրաւորացս, գիտասցէ ըստ կարգի զիշխանութիւնն իւր ուղղել. և մի՛ անկարգ և անիրաւ: - 192. Հինգերորդ՝ օ՛ր է հասարակ յարութեան *մարդկան*. և գալստեանն քրիստոսի. և հատուցման ըստ իւրաքանչիւր գործոց: - 193. Վեցերորդ՝ մուտն նիսանայ. որ է սկիզբն տարւոյ եբրայեցւոցն. և կազմութիւն *մարդոյ* ի սկզբանն: - 196. Եւ զի անգործութիւն է *մարդկան*, և ամենայն կենդանեաց սղութիւն և տխրութիւն: - 197. Արի *մարդոց* է աւուրքս և ո՛չ թուլից և վատաց: - 201. Ա՛հ է ասեն *մարդիկ* ամենայն ուրեք. զի գետայարո՛յցք է: - 201. Մարգաց. որ է՛ ժամանակ ածելոյ *զմարդ*. որ ի դաշտս և ի հովիտս իցեն. յայգեստանս և ի բուրաստանս. յորժամ արեգակն առ շամբն և յետ շանն իցէ. զի ի **ժգ**ն՝ մո՛ւտ է ամռան: - 201. Եւ վասն առաւել և ազդու զօրութեան և ջերմութեան՝ զգոյացութիւն կենդանեաց և *մարդկան* առ որս դիպի ապականէ՛. և պատահմունքն քանակ և որակ մնան: - 204. Յօրինակ *մարդկան* որ մարզին և կրթին, և ապա՛ պիտոյանան աստուծոյ և *մարդկան*: - 208. Զորօրինակ՝ յորժամ *մարդն* մեռանի՝ ջերմութիւնն ի սիրտն ժողովի և ապա քաղի: - 209. Երրորդ՝ զի ջուրք ծովուն բա՛րձր է քան զերկիր. վասն որոյ հա՛րկ առնէ և ի վե՛ր մղէ և ապա՛ հեղու յերկիր. զորօրինակ *մարդիկք* ի բարձրագոյն լերանց իջուցանեն զջուրն, և ըստ նոյն չափոյ ի միւս կողմն ի վեր հանեն սակաւ ինչ պակաս: - 209. Վեցերորդ՝ յորում *մարդ* սատանայ լինի: - 210. Երկիր որով *մարդ* սատանայ եղանի, է՛ տանջանք դժոխոցն: - 210. Առաջինն է *մարդկան* բնակարան: - 210. Եւ զի ի *մարդոց* և յանասնոց կոխի: - 211. Եւ զի *մարդկամբ* և կենդանեօք գեղեցկանայ: - 211. Նշանակեն զնոսա՝ որք ունին զպտուղս բարի գործոց. և զծաղիկն հաւատոյ. և զհոտ գիտութեան՝ ամենայն *մարդկան* անոյշ: - 212. Դարձեալ՝ յետ մահու հոգի *մարդոյն* ծաղկի և գեղեցկանայ առաքինութեամբն իւրով և բնական պայծառութեամբն: - 213. Վասն է՞ր *մարդս* սպիտակի, և պտուղքն կարմրին ի հասանիլն: - 213. *Մարդս* զկարգ եղանակացդ բերէ յինքն. վասն այն ի վերջին փոխիլն սպիտակի: - 213. Նախ՝ զի ծառայք են միշտ վասն այլոց. որպէս *մարդս* միշտ տէր է. և անասունքն տէր և ծառայք. զի ծառայք են *մարդկան*, և տէր բուսոց. իսկ բոյսք և տունկք միշտ ծառայք են: - 214. Երկրորդ՝ կոչին ծառք, այսինքն ծուռք. զի ընդ դէմ են ձևոյ աշխարհիս և *մարդոյն*: - 214. Զի *մարդն* ունի զգլուխն ի վեր որպէս երկինքն. և զոտքն ի վայր որպէս երկիրս. վասն որոյ ամենայն ծորմունք բնականապէս զառիվա՛յր հոսին. իսկ ծառն ծռեալ ունի զգլուխն ի վայր, և զոտսն ի վեր. կամ թէ ծռեա՛լ ունի զոտս և զստեղունս յայս կոյս և յայն կոյս: - 214. Յորժամ արար աստուած *զմարդն* ի հողոյ, նաև զանասունքն և զգազանքն ի հողոյ. նոյնպէս զլողակս և զթռչունս ի ջրոյ: - 214. Եւ թռչնոյն **բ** թև և **բ** ոտն է. և *մարդոյն* ձեռք և ոտք: - 215. Նշանակեն սոքա զչորս դասս *մարդկան*: - 215. Իսկ *մարդն* բոլորի՛ցն է իշխան և թագաւոր: - 216. Զոր *մարդիկ* բանականութեամբ և արւեստիւք ստացան զզէնս զանազանս ի յերկաթոյ ի պատսպարանս իւրեանց: - 216-217. Վասն է՞ր է զի *մարդս* ո՛չ ունի զբնութեամբ զէնս. կամ զծածկոյթ: - 217. Զի թէ *մարդն* ունէր զբնութեամբ զէնս, որպէս թէ եղջիւր ի գլուխն. և սուր զատամունսն. ճիրանունք ի ձեռս. և սմբակ կամ կճղակ ոտիւք. և զայլսն, Նախ՝ զի գազանադէմ և դժւարատես լինէր ամենեցուն: - 217. Երկրորդ՝ վասն հպարտութեան *մարդոյն*. զի յորժամ խայթեսցեն զնա՝ ծանիցէ զտկարութիւն իւր. որ և

զփարաւօն ո՛չ թէ առիւծք կամ առջք հարին, այլ ճանճք և մժղուկք տանջեցին: - 217. Իսկ *մարդոյս* հնարք և իմաստութիւնն բանականութեամբ է. վասն այն բազում է ի նոսա հնարք. և առաւել և նուազ, և ո՛չ հաւասարք: - 218. Յաղագս այսորիկ անբան կենդանիք փութապէս զգան զառաջին շարժումն և զփոփոխումն օդոյդ քան *զմարդ*. և յառաջագէտ լինին: - 218. Զի *մարդս* բազում իրօք զբաղեալ է ի միտս. իսկ նոքա միայն ի բնութիւնս իւրեանց փութով ճանաչեն: - 218. Չորրորդ՝ զի չէ՛ր բանաւոր, և բանից տեսակով խաբեաց *զմարդն*: - 218. Հինգերորդ՝ զի *մարդն* գլուխ է ամենայն կենդանեաց, զնա սպանանել ջանայ: - 218. 'Ի նշանակել՝ զի մահու *մարդոյն* սկիզբն օձն եղև: - 219. Եւ զի *զմարդն* հողացոյց, ինքն հող եկեր: - 219. Եւ զի զթշնամութիւն էարկ ի մէջ *մարդոյն* և աստուծոյ, զթշնամութիւն եդ ի մէջ *մարդոյն* և օձին: - 219. Եւ զի *զմարդն* ընկէց յերկնից ի յերկիր, ընդ գարշապար ոտից նորա անկանի: - 219. Եւ զի նախանձեցաւ ընդ *մարդոյն*, ի լանջս և յորովայնս սողայ: - 219. Եւ զի զ**ե** զգայարանս *մարդոյն* խաբեաց, **ե** ման առնու ի գնալն: - 219. Չորրորդ՝ զի ցուցցէ անձնիշխան գոլ *զմարդն*, վասն որոյ հրամայէ՛ նմա զի զոր ինչ և կամեսցի՝ անուն դնիցէ: - 219. Հինգերորդ՝ օգնական ետ զկենդանիքդ *մարդոյն*. որպէս ծառայք տեառնն. անուամբ պարտ էր ճանաչել զնոսա: - 219. Զի ի կոչումն անուան՝ չորքս այսոքիկ երևին միանգամայն. բանն և խօսքն և ձայնն և տեսութիւնն. այսոքիւք *զմարդն* կատարեալ երևեցոյց աստուած: - 219. Ո՞րպէս գիտեմք թէ *մարդն* իշխան է ի վերայ անասնոց. զի ահա՛ բազումք անհնազանդք են. որպէս վայրիք և գազանք և այլք: - 220. Եւ զի *մարդն* թագաւոր և իշխան է ամենայն կենդանեաց՝ յա՛յտ է ի բազմաց: - 220. Երկրորդ՝ զի պատկեր աստուծոյ է *մարդն*. այսինքն զի որպէս աստուած իշխան և թագաւոր է ամենայն արարածոց. նոյնպէս և *մարդն* իշխան է ամենայն կենդանեաց: - 220. Երրորդ՝ ի նոյն իսկ ի ձևոյ շինուածոյ *մարդոյն*. զի ուղիղ գոլով՝ զիշխանականն նշանակէ. իսկ կենդանիքն կո՛ր գլխով զծառայականն ցուցանեն: - 220. Չորրորդ՝ յա՛յտ է ի հնազանդեցելոցն որք կան այժմ ընդ ձեռամբ *մարդկան*. որպէս ոչխար, պախրէ՛, և այլն: - 220. Հինգերորդ՝ յա՛յտ է ի փախուցելոցն որ երկնչին ի *մարդկանէ* որպէս զապստամբեալ ծառայս: - 220. Վեցերորդ՝ զի անձնիշխա՛ն է *մարդն* այսինքն իշխէ բանականաւն ցասման և ցանկութեան որք են անասնական մասունք: - 220. Նա՛խ՝ զի յորժամ *մարդն* անհնազանդ եղև տեառն իւրոյ արարչին, յիրաւի անհնազանդք եղեն և *մարդոյն* անասունք տուեալ նմա ի ծառայութիւն: - 220. Երկրորդ՝ զի ցոր քան իշխէր ինքն ի վերայ անասնական մասանց իւրոց որպէս ասացաք, իշխէր և ի վերայ արտաքին անասնոց և գազանաց. իսկ յորժամ ապստամբեցին ներքինքն բանականին տեառն իւրեանց՝ ապստամբեցին և արտաքինքն *մարդոյն* տեառն իւրեանց: - 220. Երրորդ՝ զի իմանալեա՛ցն է տունկ. այսինքն բանականաց. հրեշտակաց կամ *մարդկան*. և ո՛չ զգալի կենդանեաց: - 222. Չորրորդ՝ զի նոյն ինքն դրախտն և տունկն է իմանալի և զգալի. որպէս վայելօղ *մարդն* էր իմանալի և զգալի: - 222. Նա՛խ՝ զի թէ ապականացու էր որպէս երկիրս այս, վասն է՞ր *զմարդն* պատուելով ի դրախտն եդ աստուած: - 222. Երկրորդ՝ և յորժամ *մարդն* ապականեցաւ մեղօք, վասն է՛ր ի դրախտէն հանէր զնա: - 222. Զի ապականեալ *մարդն* ապականեցաւ դրախտին էր վայելչական: - 222. Երրորդ՝ զի համաձայնին ամենեքեան՝ որ նախ քան զյանցանելն *զմարդն* անապական ասեն: - 222. Ա՛րդ՝ եթէ *մարդն* անապական էր՝ յապականացու տեղւոջ ո՛չ բնակէր. ապա թէ ոչ ի տեղւոջէն եղև ապականացու և ո՛չ ի գործոյն: - 223. Եւ զոր գիրք սուրբ ո՛չ է յայտնեալ, զիա՞րդ իշխէ *մարդ* խօսիլ: - 224. Երկրորդ՝ զի դրախտն է տեղիք անապական. և ո՛չ լինէր ի *մարդոյն* ծորումն ինչ աղտեղութեան. և ոչ որպէս տնկոցն: - 225. Չորրորդ՝ զի թէ լինէր անդ ախտական ծնունդ որպէս ի յերկրի, կարօտանայր *մարդն* ամենայն պիտոյից զաւակին: - 225. Զայս այսեն սուրբ վարդապետք եթէ՝ որպէս հրեշտակք աճեցին յերկինս, նոյնպէս և *մարդկան* ազգ ի դրախտին: - 226. Եւ թէ ասեն, հրեշտակք յանէից գոյացան և ո՛չ ի միմեանց. իսկ *մարդկան* ազգ պա՛րտ էր ի միո՛յն ծնանիլ: - 226. Նոյնպէս և ի դրախտին կարէին ծնանիլ կուսութեամբ և առանց սերման. կատարեալ *մարդ* ի բնութենէն ադամայ: - 226. Իսկ յերրորդումն, զգազանս և *զմարդն*. ի վերջին տարրէ՛ այսինքն ի հողոյ կազմեաց: - 227. Երրորդ՝ *Մարդն* աշխարհ կոչի: - 227. Չորրորդ՝ Ձևն ուղիղ է *մարդոյս*: - 227. Իններորդ՝ Չորս է հողմ և ջուր և *մարդս*: - 227. Երկոտասաներորդ՝ Զօդուածք և ջիլք և երակք ի *մարդն*: - 227. Դեղնի երեսն և կարմրի. և մին *մարդն* սև, և մին սպիտակ լինի. և շէկ և ծիծաղկոտ և այլն: - 227. Չորեքտասաներորդ՝ Պատկերացուցութիւն *մարդոյն* ըստ մասին: - 227. Ութն**ժ**երորդ՝ *Մարդն* ո՞նց ճանաչի: - 228. Քսանն**բ**՝ Վասն է՞ր *մարդն* ինն ամիս, և այլ կենդանիք աւելի և պակաս կան յարգանդի: - 228. Եւ աստ **զ** շարժմունքն. և **գ** հասակ *մարդոյս*. և բաղդատութիւն **դ** տարերց և եղանակաց և ժամուց աւուրն: - 228. Քսանն**դ**՝ Այլ կենդանիք յորժամ ծնանին ի մօրէ կանգնին, և *մարդս* ո՛չ: - 228. Քսանն**ը**՝ Վասն բոլոր *մարդոյն*: - 228. Երեսուննա՝ Յատկութիւնք *մարդոյն* **լ** թուով: - 228. Երեսունն**դ**՝ Որպիսութիւն *մարդոյս*: - 228. Եւ վասն զգեստուց *մարդկան*: - 228.

Այսքան վասն *մարդոյս* կազմութեան: - 228. Վասն է՞ր *մարդն* ի հողոյ ստեղծաւ: - 229. Նոյնպէս ի հողեղէն և յապականացու մարմնոյս *մարդկան*՝ էառ բանն աստուած. և միաւորելով ընդ ինքեան ծնաւ անապական մարմնով. անմեղ հոգւով և մտօք. և եղև երկրորդ ադամ Տէր յերնից: - 229. Վասն է՞ր *մարդն* յետոյ արարաւ: - 230. Որպէս առաջին է կառքն և յետո՛յ կառավարն. և առաջին է նաւն, և ապա նաւավարն. և պատուական է *մարդն* քան զնաւն և զկառքն: - 230. Այսպէս և *մարդն* թէպէտ յետոյ ստեղծաւ, մեծ և պատուակա՛ն է քան զամենայն երևելի արարածս: - 230. Եւ վասն բազում պատճառի յետոյ ստեղծաւ *մարդս*: - 230. Նա՛խ՝ զի մեծ և պատուական ասի *մարդն*: - 230. Վասն որոյ պա՛րտ էր լինիլ նոցա նախ որ փոքունք և անպատիւք են, զի երևեսցի մեծն և պատւաւորն այսինքն *մարդն*: - 230. Երկրորդ՝ զի իշխան և զորաւո՛ր է *մարդն*. պիտո՛յ է զի լինիցի զօր և իշխեցեալ. և ապա՛ իշխանն և զօրաւորն. ապա թէ ո՛չ՝ ո՞ւմ լիցի իշխան և զօրավար: - 230. Երրորդ՝ կամեցաւ աստուած՝ թագաւոր ստեղծանել *զմարդն*...: - 230. Ի պատիւ մեծարեաց *զմարդն*. և նա՛խ՝ պատրաստեաց պէտս զանազան կերակրոց և ընպելեաց որպէս ասացաք. և վառեաց զճրագ լուսաւորացն. և զգեղեցիկ ձայն երգեցողաց թռչնոց. և զզուարճութիւն զանազան ծաղկանց. և ապա՛ *զմարդն* ի պատիւ էած...: - 230. Որպէս բոյսք վասն անասնոց. այսինքն է՛ այլոցն. ուստի անասունք կերակրիլով ծառայեն *մարդոյն*: - 230. Եւ *մարդն* ինքակա՛լ է և ո՛չ է այլ ումեք: - 230. Յաղագս որոյ նախ եղեալքն՝ են վասն վերջնոցն. որպէս բոյսք անասնոց, և անասունք վասն *մարդոյն*: - 230. Այսինքն տնկական. և զգայական. և բանական. և զի յանկատարէն ելանեմք ի կատարեալն. վասն որոյ նախ ստեղծաւ տնկականն ոգի, և ապա՛ զգայականն, և ապա՛ բանականն որ է կատարեալ *մարդն*: - 231. Ութերորդ՝ ո՛չ արար նախ *զմարդն*, զի մի՛ արարչակից գիտասցէ զինքն ոչ գոյիցն, և անկցի հպարտութեամբ. այլ գործօղ գոյիցն, զի կացցէ պահպանութեամբն. որպէս ասէ գիր՝ «գործել զնա՛ և պահել»: - 231. Տասներորդ՝ մէջ և կապ ամենայն գոյիցս *մա՛րդն* է կազմեալ. զի ամենայն արարածք ի **բ** դէմս որոշին. այսինքն մինն յիմանալի և միւսն զգալի. և սոքա եղեն յառաջագոյն: - 231. Վասն որոյ յետոյ *մարդն* ստեղծաւ յերկուցն խառնեալ յիմանալւոյն և ի զգալւոյն ի մի էութիւն: - 231. Ա՛րդ՝ վասն այսր և այլ ևս քան զայս պատճառաց ի վերջո՛յ արարաւ *մարդն* ամենայն գոյից: - 231. Վասն է՞ր *մարդն* աշխարհ կոչի...: - 231. Զի նմա՛ն է *մարդն* բոլոր աշխարհի վասն այն աշխարհ կոչի: - 231. Եւ *մարդն* ունի իմանալի հոգի և զգալի մարմին: - 231. Այսպէս մարմին *մարդոյ* որ քան է երկայնութեամբ ի գագաթէ՛ գլխոյն մինչև ի ներբանս ոտիցն, նոյն քան է լայնութիւն ի մէջ երկուց երկայն մատիցն ձեռաց: - 232. Վասն է՞ր *մարդոյս* ձևն ուղիղ. գլուխն ի վերայ. և այլ անդամքն ի ներքոյ: - 232. Երկրորդ՝ պատուական մասն *մարդոյն* գլուխն է. վասն որոյ զվերինն և զառաջինն ընկալաւ տեղի: - 232. Երրորդ՝ *մարդն* նման է բոլոր աշխարհիս. և ի մասունս աշխարհի՝ երկինքն է վերին և բարձր. և տարերք ի ներքին վայրս: - 232. Այսպէս գլուխ *մարդոյս* ունի զնմանութիւն երկնից. զի է՛ բոլոր. և աչքն որպէս լուսաւորքն. և իմացումն ի նմա՛ որպէս իմանալիքն յերկինս: - 232. Չորրորդ՝ ի գլուխ *մարդոյն* սակաւ է հողն և օդն բազում. վասն այն ի վերո՛յ է: - 233. Հինգերորդ՝ զի *մարդն* իշխան և տէր է ամենայն կենդանեաց. վասն որոյ ամենայն կենդանիք գլխակո՛ր են իբրև զծառայ և հնազանդ. և *մարդն* ուղղաձև իբրև ազատ և թագաւոր: - 233. Վեցերորդ՝ զի բաժանեսցի *մարդն* ի կենդանեաց և ի տնկոց. զի տունկք զիակառակն ունին զարմատն որ է՛ գլուխ՝ ի յերկիր, և զոտն ի յերկինս: - 233. Իսկ *մարդս* ուղիղ ի վեր: - 233. Ութերորդ՝ վասն արտաքին զգայութեանցն որ են ի գլուխն. զի այլ կենդանիք միայն հեշտանան կերակրով և ցանկութեամբ. իսկ *մարդն* հեշտանայ առաւել գեղեցկութեամբ զգալեացս. յորժամ տեսանէ աչօքն զերկին և զերկիր. և ժողովէ՛ զճշմարիտ գիտութիւն նոցա և հեշտանայ: - 233. Զի թէ կորագլուխ էր *մարդն*, և երկոքին ձեռքն ի յերկիր հաստատեալ, ո՛չ կարէր գործել: - 233. Այլ և ի միտ ածցուք զփառս երկնային կենաց ուստի անկաք, և անդ դիմելոց եմք. զի տեսութիւն մտացն զհոգին ընդ ինքեան ի վեր տանի. և նա զշունչն. և շունչն ընդ արեանն է կապեալ. և արիւնն ընդ մարմնոյն. զգայարանքն ընդ մարմնոյն. և լինի *մարդն* բոլորովին երկնային: - 233. Եւ յա՛յտ է ի մեռեալ *մարդն*: - 234. Երկրորդ՝ ցուցանէ յերկուց մասանց զոլ զբոլոր *մարդն*. և հոգոյն է զգալն և տեսանել և այլն: - 234. Նա՛խ՝ վասն առաջին փչմանն յերեսս *մարդոյն*: - 234. Երկրորդ՝ զի արարաւ *մարդն* ի պատկեր աստուծոյ, վասն որոյ պատկե՛րն է ցանկալի: - 234. Վասն է՞ր է զի ամենայն անհատք ի *մարդկանէ* համատիպք են միմեանց. և օտարք իրերաց. զի նմանք են, և աննմանք որակութեամբ և ձևով: - 235. Զի դէմքն ըստ որում *մարդոյ* և մարմին՝ գոյացութիւն է: - 236. Եւ նւազեալ յայսցանէ գոյնն՝ մնայ պատկեր ի քանակէ և ի ձևոյ և ի տեղւոյ երևեալ. որպէս յա՛յտ է ի մեռեալ *մարդն*: - 236. Տեսակաւ, որպէս *մարդ* և քար: - 236. Ասեմք թէ՝ սոքա ի մասնաւոր հոգւոյն բարի են բնաւորեալ նախանձ ցանկութիւն և այլն. և վասն բարւո՛յ են եդեալ. այլ *մարդն* կամօք իւրովք փոխէ՛ զբնական բարին ի չարն: - 237. Եւ սոյնպէս *մարդն*

առաւելու ի չարն. ի բանականէն և ի կամացն և ի թունիցն սատանայի չարացեալ որպէս ցուցաւ ի սկիզբն գրոցս: - 237-238. Եօթներորդ՝ զի ո՛չ կարէին ընտրել և խոտել զչարն և զբարին, և զսուրբն և զանսուրբն ի *մարդկանէ*...: - 238. Իններորդ՝ զի և ի հոգևորն՝ փոքունք զմեծամեծաց անուանս կոչէին ինքեանց ի մոլորումն *մարդկան*. որպէս սիմոն կախարդն ասէր զինքենէ՛ թէ քրիստոսն իցէ. մինչև յանդիմանեցաւ ի պետրոսէ: - 238. Տասներորդ՝ զի և բանականս *մարդ*՝ քան զանբան կենդանիս տգէտ լինէր...: - 238-239. Զինչ է յորժամ *մարդ* ի վեր նայի հեշտանայ աչքն. և յորժամ ի վայր՝ դժուարի: - 239. Այս երկու երակս թէ տաք է և չոր, *մարդն* ի մօտն աղէկ տեսնու՝ և ի հեռուն վատ. որպէս տղայն: - 239. Եւ թէ այս երակս հո՛վ է և գէջ, ի հեռուն աղէկ տեսնու և ի մօտն վատ. որպէս ծեր *մարդն*: - 239. Եւ թէ այս բ երակս բռնուի *մարդն* կուրանայ: - 239. Վասն այն յորժամ *մարդն* տկարանայ՝ և այրեցած արիւնն աւելնայ, մազն ծորի՛ և երկայնանայ: - 240. Իսկ յորժամ առողջանայ *մարդն* և արիւնն յստակի, արիւնն միս լինի, և մազն ո՛չ աճէ: - 240. Յորժամ պաղղամն շատանայ ի *մարդն*, մազն նօսրանայ. վասն այն *մարդն* ի ծերութեանն լինի ճաղատ: - 240. Յորժամ ծերանայ *մարդն*, և սպիտակ ջուրն որ է պաղղամն առաւելու, յայնժամ մազն ընդ սպիտակ ջուրն ի դուրս անցանէ և սպիտակի՛: - 240. Նոյնպէս ի **դ** հասակ *մարդոյն* փոփոխին **դ** հողմունքն: - 240. Իսկ դ ջուրն որ է ի *մարդն* ըստ չորս տարերացդ է: - 240. Ո՞ր է **բժ**ան անդամք *մարդոյն*: - 241. Դարձեալ **բժ**ան դրունք է ի *մարդն* որ են այսոքիկ. երկու աչք. **բ** ականջք. **բ** պինչք, բերանն. և պորտն. **բ** ստինք. ջրհեղն. և արտաքնոցն: - 241. Եւ գլխաւո՛ր անդամք են սոքա. զի թէ յայլ անդամքն՝ այսինքն աչքն՝ ականջն՝ ձեռքն՝ և ոտքն՝ կամ այլն վնասի, *մարդն* ապրի: - 241. Ապա թէ յեօթանց ասացելոցս մինն վնասի, իսկոյն մեռանի *մարդն*: - 241. Վասն այն յորժամ ննջէ *մարդն* ի վերայ ձախ կողմանն, շուտո՛վ հալի կերակուրն քան ի վերայ աջ կողմանն: - 242. Վասն է՞ր բերանն *մարդոյն* երբեմն քաղցր լինի. երբեմն դառն. և թթու. և այլ ինչ: - 242. Վասն է՞ր *մարդոյն* աջ կողմն ուժով է քան զձախն: - 243. Զի սրտին արիւնն և լեարդն և լեղին որք ջերմայինք են՝ ի յաջոյ կողմն են *մարդոյն*: - 243. Քանի՞ են զօդուածք և ոսկերք *մարդոյն*: - 243. Ասեն բժիշկք թէ, **բճխը** ոսկր է *մարդոյն*. ջլօք պնտեալ և կապեալ ի մի մարմին. և է՛ այսպէս: - 243. Նա՛խ գլուխ *մարդոյն* **դ** ոսկր է: - 243. Ի սոցանէ երակ կտրէ *մարդն* ի բազկացն: - 244. Ասեմք եթէ երանքն. զի թէ հատանեն զերանսն, *մարդն* լինի որպէս կին. և մորուս ո՛չ բուսանի: - 245. Վասն է՞ր *մարդ* յորժամ երկնչի դեղնի, և յամաչելն շառագունի: - 245. Վասն է՞ր մին *մարդն* սեաւ լինի և մինն սպիտակ, կամ շէկ, և այլն: - 245. Եւ գիտելի՛ է, զի յա՛յսց խառնուածոց լինի բարք իմն և ախտ ի *մարդն*: - 245. Երևի ապա թէ ճշմարիտ են պատկերացոյցքն, որ զբարս *մարդոյն* յայտնեն: - 246. Նա՛խ՝ զի այնպիսի նշանք ո՛չ դնեն հարկ ի *մարդն*. այլ ցուցանեն զձկտումն բնութեանն ի յայնպիսի իրս: - 246. Երկրորդ՝ զի ոչ նոյնպէս աւելի և նուազ. այլ երբեմն՝ և հաւասար ամենայն *մարդկան*: - 246. Հինգերորդ՝ զի կարէ՛ *մարդ* ներհակ սովորութեամբ պահօք և աղօթիւք և կրթութեամբ մարմնոյ սանձել յինքեան զայսպիսիս նշանաց գործ: - 246. Վասն որոյ ո՛չ է պարտ ենթադատել *զմարդ* վատն այսպիսի նշանաց երևման: - 246. Դարձեալ՝ ասէ պղատոն, եթէ *մարդն* որ ունի զնմանութիւն անասնոց ինչ՝ հետևի և բարուց նոցին: - 248. Իսկ մաքսիմոս իմաստասէրն ասէ, Հոգի *մարդոյ* **բ** զօրութիւն ունի. միտք և բան: - 248. Եւ սոքա առնեն *զմարդն* կատարեալ պատկեր աստուծոյ: - 248. Զիմաստութիւնն ո՞ւր գտանէ *մարդ*: - 250. *Մարդն* ո՞նց ճանաչի: - 250. Դարձեալ՝ հասարակ ամենայն *մարդ* յարակցէն և յարւեստէն ճանաչի: - 250. Զի թէ ի սուրբ *մարդ* յարի՝ սրբի. և թէ ի պիղծ՝ պղծի: - 250. Դարձեալ խորհուրդ *մարդոյն* ճանաչի յերից. այսինքն կամ ի կերպէ՛ և յօրինակէ խօսիցն և ձայնին: - 250. Եւ *մարդիկ* սովո՛ր են զհիւանդս և զաղճատս վատ ասել: - 251. *Զմարդոյ* հոգին ո՞րպէս իմանալ մարթի: - 251. Հոգին պատկե՛ր է աստուծոյ. և աստուածապաշտ *մարդոյ*՝ զաստուած քննել ո՛չ մարթի թէ ուստի՞ է. կամ ո՞ւր է կամ ո՞րչափ է. և կամ թէ ո՞րպէս է. կամ թէ մինչ ի յուր է: - 251. Նմանապէս և ո՛չ զհոգի *մարդոյն*: - 251. Այլ զայն ինչ հարցումն որ *զմարդն* ի հերձուածոյ ի զատ տանի՝ պա՛րտ է հարցանել. որպէս յառաջիկայդ հարցումն է սակաւ մի: - 251. Իսկ զբանականն և զիմաստութիւնն՝ կատարեալքն հասակաւ. յորժամ բանին մասն կատարի ի *մարդն*: - 251. Նոյնպէս և ի բանական որակութիւնս հոգւոյն՝ նման և աննման, հաւասար և անհաւասար բացատրեաց. այսինքն խոհեմ և տգէտ. հեզ և բարկացօղ. ողջախոհ և ցանկասէր. և այլ զանազան բարս բնական՝ *մարդոյն*: - 252. Եւ այսմ պատճառ անհա՛ս է մտաց *մարդկան*. միայն անքննին դատաստանին աստուծոյ է տալի. և անհետազօտելի ճանապարհաց նորին. որև սակաւիկ մի յառաջ ասացաւ: - 252. Վասն ոգւոյն *մարդոյ* զանազա՛ն են կարծիք արտաքին իմաստնոց և վարդապետաց եկեղեցւոյ: - 252. Զի որք զհոգի յառաջ ասեն գոյանալ՝ զայս դնեն պատճառ, եթէ յէակքս իմանալիքն յառաջ ստեղծան քան զզգալիքս. ապա և ի *մարդոյն* էութիւն հոգին յառաջ է քան զմարմինն: - 252. Եւ որք ծուլանան, սողոսկեալ անկանին յերկիր ընդ մարմին *մարդոյ* շաղապատեալ: - 252. Եւ

յայնմանէ փոխեալ ի կենդանւոյ մարմին և ի տունկս, և ապա ի *մարդն* դարձեալ: - 252. Զոր ընդ դերևս հանէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս կազմութեան այսպէս եթէ, որք զհոգին յառաջ ասեն գոյանալ քան զմարմին. և վասն մեղաց եղեալ ի մարմին *մարդոյ*. որ է՛ համանման բանականութեամբ. և է՛ իներքոյ երկնային կենաց՝ զի մարմնաւո՛ր է: - 252. Այլ արդ ի մարմնի առաւել մեղանչէ քան յերկնային կեանս. վասն որոյ անկանի ի զգայական մարմին որպէս ասեն՝ որ ներքո՛յ է *մարդոյն*՝ և համանման ախտիւք զի զգայակա՛ն է: - 252. Եւ թէ ասեն՝ եթէ մեք ի տնկոյն ասեմք դարձեալ ի *մարդն* փոխիլ և ո՛չ յանշունչսն: - 252. Այլ ա՛րդ եթէ փոխի ի տնկոյն ի *մարդն*, վատթա՛ր է *մարդոյն* կեանք քան զտնկոյն. ուստի ի մեծագունէն ի նուաստն փոխեցաւ: - 253. Եւ դարձեալ՝ յիւրաքանչիւր կազմուած *մարդոյ*՝ յառա՛ջ է մարմինն քան զհոգին **խ** աւուրբ կամ **ձ**: - 253. Պատասխանեմք առ այս եթէ՝ փչումն ո՛չ զբանական հոգին ասեն սուրբ հարքն. զի *մարդ* ասելով զհոգի և զմարմին նշանակեաց. և զմարմինն զի ի նիւթո՛յ է՝ ի հողոյ ասաց. այսինքն ի **դ** տարերաց որ է՛ ի հողն. և զհոգին ո՛չ նշանակեաց թէ ուստի՞ է. զի յանէից է ստեղծումն նորա: - 253. Եւ արդ ի կատարեալ *մարդն* հոգւով և մարմնով՝ փչեաց զշնորհաց հոգին ի մարդկայինս ազգ. և ունէին որ քան յանմեղութեան էին. և կորուսին ի մեղանչելն: - 253. Եւ ասի *զմարդոյն* թէ վասն նորա է ամենայն. այսինքն անասունք և բոյսք. և անա՛րգ է բոյս քան զանասուն. և անասուն քան *զմարդ*: - 253. Երկրորդ՝ զի մի գոյութիւն է *մարդն* բաղադրեալ ի հոգւոյ և ի մարմնոյ. ոչ է պարտ բ լինիլ սկիզբն. այլ մի էութեանն մի է սկիզբն: - 253-254. Այսպէս և ի կազմուած իւրաքանչիւր *մարդոյ* ո՛չ է մարմին յառաջ քան զհոգի որպէս ցուցանելոց եմք: - 254. Այլ ի միասին համանգամայն ստեղծեալ. ո՛չ ժամանակաւ յառաջ և յետոյ, և ո՛չ բնութեամբ. այլ մի է սկիզբն միոյ գոյութեան *մարդոյն*: - 254. Եւ թէ ոք ասիցէ, զի՞նչ է այն մի սկիզբն գոյութեան *մարդոյ*: - 254. Պատասխանեմք եթէ, սերմնական զօրութիւնն որ է՛ ի մեզ, նոյն է սկիզբն գոյութեան *մարդոյ*: - 254. Եւ այսպէս մի է սկիզբն միոյ գոյութեան *մարդոյն*: - 254. Նախ՝ զի նիւթն այն ունի առ ինքն բնական զկենդանութիւն տնկականին. և տնկականն մա՛սն է զգայականին. և զգայականն բանականին. և սոքա ո՛չ որոշին ի բոլորէն. զի մի են էութեամբ ի *մարդն* թէպէտ ա՛յլ են ներգործութեամբ: - 254. Եւ յորժամ ձևանայ ի կերպ *մարդոյ*, յայնժամ բանական հոգին երևի ի նմա ի խնամոցն աստուծոյ: - 255. Եւ կամ որպէս պատկերագործք մինչ զոտն և զձեռն նկարեն՝ ո՛չ երևի պատկեր *մարդոյ*. այլ ոտից և ձեռաց: - 255. Եւ յորժամ ձևանայ դէմքն, ի նոյն ժամն երևի յինքեան պատկերն *մարդոյ*: - 255. Իսկ բանականս *մարդ* ո՛չ ամենևին նախախնամութեամբ է. զի հոգին ո՛չ ի ծնողաց, այլ ի շնորհացն աստուծոյ պարգևի: - 257. Նմանապէս և արուեստաւորն աստուած նախանկար տեսութեամբն ունի ի միտս իւր նախքան զլինիլն *մարդոյն*՝ զորպիսիութիւնն. զորքանութիւնն. և զայլն. իսկ արուեստն որ է արարչադիր հրամանն, ազդէ՛ ի նիւթն. և զի անկատա՛ր է նիւթն, անկատար տայ և նմա հոգի զտնկականն: - 258. Եւ թէ ոք ասցէ, երևի ապա թէ **գ** հոգի է ի *մարդն* զանազանութեամբ էացեալ: - 258. Ասեմք առ այս թէ՝ ո՛չ են **գ** հոգիք ի *մարդն*. այլ **գ** զօրութիւնք են հոգւոյ: - 259. Իսկ հոգի մի է *մարդոյ* ի միոյ նախախնամութենէ յառաջ բերեալ. յանկատար նիւթն եղեալ զտնկականն և զզգայականն. և ի կատարեալն զհոգի բանական ծագեալ: - 259. Այսինքն բանականն ի *մարդն*. և զգայականն յանասունս. և տընկականն ի բոյսս: - 259. Այլ ի *մարդն* ո՛չ է պարտ ասել **գ** հոգի. այլ մի հոգի և **գ** զօրութիւն: - 259. Եւ յա՛յտ ուրեմն է՝ թէ մի է հոգի *մարդոյն*: - 259. Նա՛խ՝ զի մի գոյութիւն է *մարդն* և մի կենդանի. մի հոգի է միոյ *մարդոյ* և մի կենդանութիւն: - 259. Ապա ուրեմն մի է էութիւն հոգւոյ ի *մարդն*: - 259. Այսպէս և սոքա գոն ի *մարդն*, այլ մի է հոգի *մարդոյ* և ո՛չ երեք: - 259. Այսպէս իմա և զբանական հոգւոյն. որ ի *մարդն* մի է և զանազանապէս ներգործէ: - 260. Այսպէս և հոգի ըստ կամաց խընամողին յետոյ պարգևեալ ըստ թուոյ ծննդեան իւրաքանչիւր *մարդոյ* որպէս ինքն գիտէ: - 260-261. Եւ ի **իա** աւուրցն ի վեր՝ երևեալ շնչոյն ձևակերպէ՛ զկերպ *մարդոյ* մինչ ի **խ** օր արու մանկան. և իսկոյն հեղի ի նա՛ հոգին բանական ի շնորհացն աստուծոյ ծագեալ ի նա: - 261. Արդ՝ **ժ** թիւն կատարեալ է. և չորսն տարրական է. այսինքն զի կատարեալ հոգին բանական ի նո՛յն ժամն խառնեալ միաւորի ընդ մարմնոյն տարրական, և կերպացեալ լինի մի *մարդ* մի դէմ և մի բնութիւն *մարդոյ* ի հոգւոյ և ի մարմնոյ. որպէս քառասունն ի տասանց և ի չորից է գոյացեալ: - 262. Իսկ թէ վասն է՞ր ասիցէ ոք՝ յղացեալ մնան յարգանդի՝ *մարդն* ինն ամիս, և այլ կենդանիք աւելի և կամ պակաս: - 262. Եւ կամ որպէս *մարդ* կատարեալ բերելով ինքեան զ**դ** և զ**ժ** ինն խորհուրդ: - 263. Ուսեալք և զայս, բե՛ր տեսցուք և *զմարդոյն* թէ վասն է՞ր յինն ամիսս ծնանի: - 263. Դարձեալ **թ** խառնուա՛ծ է չորից տարերց ըստ կրկին քառից որակաց առաւել և նուազ, և իններորդն հաւասար է որ է ի *մարդն*. վասն որոյ ինն ամսեայ ծնանի: - 264. Իսկ հինգ օրեայ անդրանկանն յետոյ լինիլ՝ բերէ՛ զնմանութիւն նախնի *մարդոյն*. որ յետ **ե** աւուր ստեղծաւ: - 264. Դարձեալ **ժ**երորդ՝ աստեղագէտք ասեն թէ յղացումն ամենայն *մարդոյ* Զօհալին է. և յիւրաքանչիւր մըլորակս ամիս մի թուեալ՝

լինի ծնունդն ի մուշթարին **թ** ամիս: - 264. Կարգաւո՛ր է և աստ հարցանել թէ վասն է՞ր անասունք յերրորդ ամին կարեն զնմանն ծնանիլ, և *մարդն* ի չորեքտասանն: - 264. Իսկ *մարդոյն* խորհուրդն ըստ չորից տարերց և երից զօրութեանց տնկականին եօթեամբ կատարի. թիւ շնորհալի և մշտակոյս ըստ աթենայ. զի ոչ ծնեալ լինի և ո՛չ զայլս ծնանի: - 264. Վասն որոյ յայսմանէ և յառաջ հաստատի *մարդ* ի հանճարս բանակրութեան և ի տեսութիւն իմացման մինչև ի **խթ** ամն որ է եօթնիցս եօթն: - 265. Եւ այսպէս է ըստ ոմանց վեցեկի շարժմունք հասակի *մարդոյս* որպէս ասացաւ. այսինքն Երեխայ: - 265. Եւ դարձեալ` հասակ *մարդոյ* չորիցս ունի զփոփոխումն. այսինքն, Ի մանկութիւն. Յերիտասարդութիւն. Յալևորութիւն. և Ծերութիւն: - 265. Զի **ժ** ի չորից ծնանի. և չորսն տարրական է. վասն որոյ ի նմա կարէ *մարդ* ծնանիլ զնմանն իւր: - 265. Եւ ա՛յս է բարձր հասակն և կատարեալ. զի ի սմա պապ կարէ լինիլ *մարդն* երեսն ամենի: - 265. Դարձեալ և տէրն բաժանէ զհասակ *մարդոյ* ի **դ**. յերեկոյ. ի մէջ գիշեր. ի հաւախօս. և ընդ առաւօտս: - 265. Եւ դարձեալ ըստ չորից տարերց և եղանակաց և ժամուց աւուր և հիւթոց համեմատաբար փոփոխին և հասակ *մարդկան*: - 266. Իսկ ձմեռն, և յինն ժամէն մինչև յերեկոյ և բոլոր գիշերն, և սպիտակաթոյր հիւր պլղամին, և ծեր *մարդ*, ըստ նմանութեան ջրոյ ցուրտ և գէջ գոլով. վասն որոյ սպիտակի և ցրտանայ և պակասի զօրութեամբ: - 266. Ապա ուրեմն յա՛յտ է թէ վասն է՞ր *մարդն* ի չորեքտասան ամն կարէ ծնանիլ: - 266. Խնդրեմ և զայս ուսանիլ թէ ընդէ՞ր է` զի *մարդս* կատարեալ կենդանի է քան զանասունս. և յորժամ ծնանին նոքա ահա՛ ի նոյն ժամն կանգնին յոտից վերայ և գնան, և այլն. իսկ *մարդն* ոչ: - 266. Իսկ *մարդոյն* ուղեղն գէճ է և հով. զի նկարեսցէ յինքն զիմացումն մտացն. և ջիլքն յառաջեալ ի նման վասն գիճութեան ո՛չ կարէ պնդել զանդամսն. վասն որոյ ո՛չ կանգնի և ոչ գնայ: - 266. Այսպէս և զգայութիւնն առաւել է ի զգայականս քան ի *մարդն*: - 266. Ուստի յա՛յտ է` զի այծեամն առաւել է տեսանելեաւ. և շուն հոտոտելեաւ. և այլն նմանապէս. վասն որոյ փութով շարժին և կանգնին քան *զմարդն*: - 266. Դարձեալ` նախախնամութեանն է այսպէս կարգեալ. զի *մարդս* ունի դայեակ և սնուցօղ, պէտս ունի խնամարկութեան զի հասցէ ի չափ հասակի: - 267. Ի *մարդոյ* և յայլ ինչ կենդանեաց կարէ՛ լինիլ ծնունդ. որպէս ասեն` ի կնոջէ՛ և յարջոյ ծնունդ եղեալ: - 267. Երկրորդ` վասն ժամանակին. զի *մարդն* յինն ամիսն կատարէ զանդամս, և արջն երեք: - 267. Այլ թէ լինին մարդակերպ կենդանիք, վայրիք են և գազանք. և ո՛չ ի խառնուածոյ *մարդոյ*: - 267. Իսկ թէ *մարդ* լինի շանադէմք, և այն ո՛չ է ի խառնուածոյ շանց, այլ նշան է հայրենեաց, կամ սպի անձանց: - 267. Խնդրեմ ուսանիլ թէ զի՞նչ է երազն որ տեսանէ *մարդ*: - 268. Չորրորդ` ըստ բարուցն տեսանէ ոք. զի ա՛յլ է երազ արի *մարդոյ*, և այլ երկչոտին. ա՛յլ գիճասիրին, և այլ պարկեշտին: - 268. Եւ ա՛յս է պատճառն. զի լոյս հաւատոյն հեղումն է յաստուծոյ առ իմացումն *մարդոյ*. և ըստ որում իմացումն է մեր` իմաստութիւն կոչի: - 269. Այսպէս իսկապէս թագաւորն ամենայն աշխարհի` ստեղծեաց *զմարդն* ըստ պատկերի իւրոյ: - 271. Եւ ըստ այսմ բազում եղանակաւ ասի *մարդն* պատկեր աստուծոյ: - 271. Նա՛խ զի աստուած է՛ անձնիշխան և ինքնակալ. նոյնպէս և *մարդս*: - 271. Երկրորդ` աստուած տէ՛ր է և իշխան և ինքնակալ արարածոց. և զամենայն երևելիս հնազանդ և ծառայ արար *մարդոյն*: - 271. Հինգերորդ` զի ամենայն տեսանէ և քննէ աստուած. այսպէս և *մարդն* ներքին և արտաքին զգայարանօք: - 271. Վեցերորդ` ի յաստուած է՛ միտք և իմացումն և կամք. ունի և *մարդս* զայսոսիկ: - 271. Հայր և Որդի և Հոգին սուրբ. այսպէս ի *մարդն* միտքն բանն հոգին. ըստ եզնկացւոյ պլուզ վարդապետին: - 271. Ութերորդ` **գ** անձինք կատարեալք. և թէ մինն պակասիցէ` ո՛չ է կատարեալ աստուած. և *մարդս* երրորդությամբ է կատարեալ. հոգւով և մարմնով և բանիւ. և թէ մինն պակասիցէ` անկատա՛ր է *մարդն* ասէ վարդապետն վարդան: - 271. Իններորդ` անշարժ նոյնութեամբ իւրով զամենայն քննէ և իմանայ. այսպէս և միտք առ *մարդն* գոլով զգիտութիւն էիցս քննէ: - 271. Տասներորդ` մի և նոյն միտք է յաստուած որով զամենայն տեսանէ և զամենայն բարբառ լսէ. նոյնպէս և ի *մարդս* մի իմացումն է որ զանազան զգայարանօք իմանայ: - 271-272. Մետասաներորդ` անտեղի և անո՛ւր է աստուած. և հոգի *մարդոյ* բոլորն է ի բոլոր մարմինն. և բոլորն յիւրաքանչիւր մասն: - 272. Երեքտասաներորդ` ճշմարտի գիտօղ և սիրօղ է աստուած. և միայն *մարդս* է ի զգալիս որ ճշմարիտն գիտէ և սիրէ: - 272. Իննևժ` ուղիղ է ձև *մարդոյ*. և ուղիղ է տէր աստուած մեր: - 272. Քսանն**ե**, ասէ լուսաւորիչն մեր, թէ ձև *մարդոյ* երևեցաւ ի ստեղծանելն, զոր առնելոց էր զնոյն մարմին յետոյ ժամանակի. և ի նոյն պատկերն արար *զմարդն*: - 272. Քսանն**զ**, աստուած յաստուծոյ ծնանի. և *մարդ ի մարդոյ*: - 272. Քսանն**ը**, վասն որոյ ամենայն. այսինքն յաստուծոյ. և վասն *մարդոյն* է ամենայն աշխարհ եղեալ: - 272. Քսանն**թ**, բարի և բարեսէր է աստուած. նոյնպէս և *զմարդն* բարի և բարեսէր ստեղծ: - 272. Երեսուներորդ, մի՛ է պատկերն *մարդ*. և մի սկզբնատիպն աստուած: - 272. Զանազանի պատկեր և նմանութիւն, որպէս *մարդն* և կենդանին. զի ամենայն *մարդ* ասի կենդանի. այլ ո՛չ ամենայն կենդանի *մարդ*:

- 272. Զի իր ինչ յաւելու *մարդն* ի վերայ կենդանւոյն, որ է՛ բանականն: - 272. Զոր օրինակ ո՛չ ասի *մարդ մարդոյ* նման գոլ ըստ մարդկութեան. վասն զի նոյնութիւն է և ոչ նմանութիւն. բայց ասի նման *մարդ մարդոյ* ըստ երեսացն և գունոյն և ձևոյն նմանութեան: - 272. Իսկ *մարդն* ասի պատկեր աստուծոյ ըստ նմանութեանն. վասն զի ո՛չ ունի զնոյն էութիւն. այլ զնմանութիւնն աստուծոյ: - 273. Այսպէս ասեն թէ՝ *մարդն* կազմեալ է ի պատկեր որդւոյ, և ըստ նմանութեան հոգւոյն սրբոյ: - 273. Եւ այս չէ՛ ընդունելի. զի *մարդն* երրորդութեանն է պատկեր եղեալ որպէս ցուցաւ. և ո՛չ միայն որդւոյ և հոգւոյն սրբոյ: - 273. Եւ այլք ասեն թէ՝ *մարդն* ո՛չ է պատկեր աստուծոյ. այլ պատկեր պատկերի. զի որդի է հօր պատկեր, և *մարդն* որդւոյն. վասն այն ասաց նման և պատկերի: - 273. Եւ զայս սուտ առնէ սուրբն կիւրեղ եթէ՝ որդի է ճշմարիտ պատկեր հօր. և *մարդն* եղեալն է ի պատկեր որդւոյ: - 273. Ապա ուրեմն և *մարդն* եղեալ է ի պատկեր հօր: - 273. Դարձեալ՝ ասեմք եթէ **գ** կերպիւ *մարդն* իմանի պատկեր. այսինքն բնական, շնորհաց, և փառաց: - 273. Զի թէ ո՛չ էր ասացեալ ընդ պատկերին զնմանն լինիլ, ամենայն ոք պատճառէր, և *զմարդն* պաշտելով անկանէր ի կռապաշտութիւն. վասն որոյ ասաց զնմանն, թէ յորժամ տեսցեն պատկերակից աստուծոյ *զմարդն* բանականութեամբ անմահութեամբ և այլովքն որ ինչ է ի հոգիս, իմանայցեն և զզանազանութիւնն աստուծոյ: - 274. Բայց վասն կամացն աստուծոյ մշտնջենաւոր մնան հրեշտակք և հոգիք *մարդկան*: - 274. Զի՞նչ է յատկութիւն *մարդոյս*: - 274. Նա՛խ՝ զի *մարդո՛յն* է զանազանել զբարի և զչար. և փախչիլ ի չարէ՛, և երթալ զհետ բարւոյն՝ կատարելոցն է...: - 274. Դարձեալ՝ *մարդո՛յն* է կարգաւորել զկիրս բարկութեան և ցանկութեան ըստ կանոնաց բանականին: - 274. Դարձեալ՝ *մա՛րդն* ամբառնայ զինքն իմացականաւն ի վեր քան զաշխարհս: - 274. Դարձեալ՝ *մարդո՛յն* է յատուկ ունել զամենայն սիրելութիւն առ ամենայն ազգս. առ վերինս և առ ներքինս և առ միջինս: - 274. Դարձեալ *մարդո՛յն* է ունել օրինաւոր ամուսնութիւն առ զուգակիցս իւր: - 274. Դարձեալ՝ *մարդո՛յն* է ամաչել վասն անարժան գործոյ: - 274. Վասն որոյ չարքն անամօթ կոչին. իբր թողեալ զպատիւ *մարդոյն* և անասնոցն նմանեալ: - 274. Դարձեալ՝ *մարդն* է քաղաքական կենդանի. զի լինիցի համաբնակք և կարեկիցք և օգտակարք ի բարին: - 274-275. Դարձեալ՝ *մարդո՛յն* է ընդունակ լինիլ ուսմանց և լինիլ հեզ և խոնարհ սրտիւ: - 275. Դարձեալ՝ *մարդն* միա՛յն է ծիծաղական. և փառաւորիլ վասն ուրախութեան սրտին: - 275. Դարձեալ՝ *մարդո՛յս* է ուղղաձև լինիլ որպէս ցուցաւ: - 275. Դարձեալ՝ *մարդո՛յս* է լայն եղունգն և ճաղատ գոլ: - 275. Դարձեալ՝ *մարդո՛յս* է խօսիլ և բանաւորիլ. զի այլ կենդանեացն նմանութեամբ է և ո՛չ իսկապէս: - 275. Դարձեալ՝ *մա՛րդն* ունի հասարակութիւն ինչ ամենայն ստեղծւածոց: - 275. Դարձեալ՝ *մարդն* ի կրկին բնութեանց է միաւորեալ. այսինքն ի հոգւոյն և ի մարմնոյ: - 275. Դարձեալ՝ *մա՛րդն* է պատուական քան զամենայն մարմնական ստեղծւածս: - 275. Դարձեալ՝ *մա՛րդն* է կենդանի բանաւոր և մահկանացու: - 275. Դարձեալ՝ *մարդո՛յն* է թողութիւն մեղաց վասն մարմնոյն՝ զոր ոչ ունին հրեշտակք: - 275. Դարձեալ՝ *մարդո՛յն* է յարութիւն կենաց. և դատաստանի վասն հոգւոյն՝ զոր ո՛չ ունին այլ կենդանիք: - 275. Դարձեալ՝ *մա՛րդն* է ի պատկեր աստուծոյ եղեալ առաւել քան զհրեշտակս **գ** կերպիւ, ներքոյ և արտաքոյ. զորս ո՛չ ունին հրեշտակք: - 275. Զի որպէս որդի՛ է ի հօրէ նոյն բնութեամբ. և *մարդն ի մարդոյ* նոյն բնութեամբ: - 275. Եւ որպէս աստուած իշխա՛ն է ամենայն ստեղծւածոց. և *մարդն* իշխա՛ն է ամենայն մարմնաւորաց: - 275. Եւ որպէս աստուած է՛ ամենայն ուրեք էապէս. և հոգի *մարդոյն* է՛ յիւրաքանչիւր մասունս մարմնոյն էապէս: - 275. Դարձեալ՝ *մարդս* միա՛յն ունի **գ** աչք: - 275. **Դարձեալ՝ *մարդոյս* միա՛յն է կարգ կանոնաց, բնութեան, կամաց, և հարկի. իսկ անասնոց միայն բնութեան է**: - 275. Դարձեալ՝ *մարդոյս* միա՛յն է լինիլ յերկրէ՝ և յերկինս. և առաքինութեամբ վարձս ըստանալ: - 275. Դարձեալ՝ *մարդոյս* միա՛յն է հնարագէտ գործք և արուեստք զանազան: - 275. Եւ այլ ամենայն գովութիւն *մարդոյն* զոր դնէ նիւսացին ի գիրս բնութեան, յատկութիւն է *մարդոյն*: - 275. Դարձեալ՝ *մարդո՛յն* է հարկ մեռանիլն: - 275. Երկրորդ՝ զի մի՛ անփոյթ և անհնազանդ եղիցի *մարդոյն*. այլ ի նմանէ՛ ի կողիցն, զի որպէս մարմին հնազա՛նդ լիցի գլխոյն: - 276. Վեցերորդ՝ ո՛չ առնու ի գլխոյն և ո՛չ յոտիցն. այլ ի միջացն. զի խրատէ՛ *զմարդիկ* ո՛չ հաւասար գլխոյն պատուել զկինն, և ո՛չ անարգել իբրև զոտք. այլ միջակ պատուով չափաւորել զնա: - 276. Երկրորդ՝ կին, իբր թէ կէս *մարդոյ*: - 276. Վեցերորդ՝ կին, իբր թէ կայանք և հանգիստ *մարդոյն*: - 276. Երկրորդ՝ զի ի ձախ կողէ՛ շինեցաւ կինն. և տկա՛ր է ձախ կողմն *մարդոյս*: - 276. Տասներորդ՝ կին, իբր թէ կեանք. զի որպէս կենօք է տնել. նոյնպէս տեսակ *մարդոյս* ի ձեռն կնոջ ծննդեանն տևէ՛, և կայ մնայ մինչ ի կատարած: - 276. Իսկ թէ վասն է՞ր օրէնս ետ *մարդոյն*: - 277. Նախ՝ առ ի նշանակել զանձնիշխանութիւն *մարդոյն*. իբր թէ ունի կարողութիւն պահել և ո՛չ պահել: - 277. Երկրորդ՝ ցուցանէ զինքն տէր և ստեղծօղ *մարդոյն*: - 277. Երրորդ՝ ի նշանակել զսէր և զհնազանդութիւն *մարդոյն*: - 277. Առաջին իսկապէս թշնամի *մարդկան* ազգի սատանայ է. իսկ ալ թշնամիք ի նմանէ՛ պատճառեցան: - 277. Երկրորդ՝

թշնամիք են *մարդիկ* միմեանց: - 277. Չորրորդ՝ թշնամիք եղեն հրեշտակք *մարդկան*. որք պահէին սրով զճանապարհ ծառոյն: - 277. Գիտելի է, զի որպիսութիւն կենաց *մարդոյս* տրամատի յերիս. ըստ երից փոփոխմանց *մարդոյն*. այսինքն նախ քան զմեղքն. և յետ մեղացն. և յետ մահուն: - 278. Իններորդ՝ սէր և գութ աստուծոյ ի վերայ *մարդոյն* հնազանդութեամբ պատուիրանին որ գայր առ նա՛: - 279. Ի խօսակցութենէն, զի մինչ ի յորդանան այլ ո՛չ ասի հօր աստուծոյ խօսիլ ընդ *մարդկան*: - 279. Բայց սուրբն գրիգոր նիւսացին **ժ** աստիճան դնէ անկման *մարդոյն* ի դրախտէն ի գիրս կուսութեան: - 280. Եւ ըստ այնմ որ նշանակութիւն է, ցուցանէ զմարմինս մեր փոփոխական. որպէս այն որ փչեաց յերեսս *մարդոյն* շունչ կենդանի: - 282. Իսկ ըստ նշանակութեան ցուցանէր զբանական հոգին. որով կենդանացաւ *մարդն*: - 282. Ասեմք եթէ՝ զոր ինչ ի յարութեանն աւուր լինելոց է սրբոցն, զսկիզբն անդանօր սերմանեաց ի նախնի *մարդն* ադամ. զի թէ յիւրում ժամանակին կերեալ էին ի կենաց պտղոյն, լինէին կատարեալ անմահք. և փոխեին յարքայութիւնն: - 282. Եւ ի կազմութենէ *մարդոյն* այս քան: - 282. Յիսունն**է**, Թուղցն. և ծերոցն. և հասակի *մարդոյս*: - 284. Եօթանասունևմի, Ո՛չ հացիւ կեցցէ *մարդ*: - 285. Եւ թէ մին կին բազում այր չառնոյր. այլ *մարդն* առնոյր. և զկին եղբօրն առնուլ: - 285. Դիսկ *մարդոյս* է չարիքն կրկին է: - 287. Նա՛խ՝ **գ** մասունք հոգւոյն, բան՝ ցասումն՝ և ցանկութիւն. և **դ** տարերաց խառնուածն որովք մեղանչէ *մարդ*: - 287. Վասն որոյ վկայեցաւ ենովս որ է *մարդ*: - 288. Երրորդ՝ յուսացաւ կոչել զանուն տեառն աստուծոյ ի յօգնութիւն. զոր *մարդիկ* յուսահատեալ էին եթէ վասն մեղաց մերոց եթող զմեզ աստուած ի ձեռաց. և նա ի յօգնութիւն կոչեաց զանուն տեառն աստուծոյ. այսինքն զի տէր է՝ ո՛չ գարշի ի ծառայից իւրոց. և զի աստուած է՝ էա՛ծ զմեզ աստ ոչ ի կորուսանել, այլ ի կեցուցանել: - 289. Եւ մարգարէացաւ եթէ վասն մեղաց *մարդկան* երկիր կրկին ապականի ջրով և հրով: - 289. Նա՛խ՝ զի հաստատեսցէ զերկու կարծիս թերութեան *մարդկան*: - 289. Հինգերորդ՝ մահ և բռնութիւն սատանայի տիրեալ էր *մարդկան*. ի հաւատ կործանման նոցա անմահացոյց զենովք և վերացոյց զեղիա: - 289. Երրորդ՝ զի կուսութեամբ եկաց. և այսոքիկ երկնայինք են և հանեն *զմարդն* առ աստուած: - 289. Չորրորդ՝ զի պտուղ ո՛չ եկեր. որով նա ուտելովն զրկեցաւ կենաց. և այսպիսիքս յերկինս հանեն *զմարդն*: - 290. Դարձեալ ըստ եփրեմի հինգերորդ՝ զի սուրբ էր սրտիւ. և Վեցերորդ՝ զի միամիտ էր կամօք. և սոքա առնեն *զմարդն* մերձակայ աստուծոյ: - 290. Երրորդ՝ **թ** դաս հրեշտակաց է յերկինս. և **ժ**երրորդն *մարդն* կատարումն թուոյ նոցա. վասն այն ի կեանս այս ո՛չ հասանեն ի **ռ** թիւն կատարեալ. զի աստ ո՛չ լինի կատարումն դասուցն այլ ի հանդերձեալն: - 291. Եւ հարիւրն ժամանակեայն է՛ *մարդն*, որ ունի հոգի: - 291. Հինգերորդ նս յայտնի. աստ կեան նահապետքն ժամանակաւ ընդ ամենայն *մարդոյ*. և յետ մահու ի մշտնջենաւորն ընդ հրեշտակաց. և յետ յարութեանն յանվախճան յաւիտենին թագաւորեալք ընդ աստուծոյ: - 291. Ա՛րդ՝ առաջին դարն որ էր երևակին՝ ընդ երկա՛ր ապրէին *մարդիկքն*. զի ունի երևակն յերկար ընթանալ զճանապարհն իւր. որ ի լ ամն վճարէ զկենդանակերպսն: - 291. Իսկ ի վերջին դարս որ է՛ լուսնին՝ սակաւակեացք են *մարդիկք*. զի նա՛ ի **լ** օրն վճարէ զբոլոր ընթացս իւր: - 291. Նոքա յերկար ապրէին՝ զի յաճախեսցին բարիք և ծնունդք նոցա. և մեք պակաս, զի կարճեսցին չարիք և բազմութիւնք *մարդկան*: - 291. Թիւ կենաց *մարդոյ* չափեա՞լ է՝ թէ պատահմամբ յերկար և սակաւ ապրին: - 291. Ամենայն *մարդոյ* թիւ կենաց չափեալ է առ աստուած. և ո՛չ ոք կարէ սահմանն անցանել...: - 291. **Ընդէ՞ր ոչ գիտէ *մարդ* զկատարած. կենաց իւրոց և զկատարած աշխարհի: - 292. Նա՛խ՝ եթէ գիտէ՞ր *մարդ* զօր մահուն, ո՛չ շինէր և ո՛չ տնկէր և ոչ ծնանէր զաւակ. և լինէր պատճառ աւերման: - 292. Երկրորդ՝ զի *մարդիկք* բազում ամս յաճախէին ի մեղս յուսով վերջին ապաշխարութեանն. և յետոյ սովորեալ ի մեղս ո՛չ կարէին դառնալ, ամենքին կորնչէին**: - 292. Դարձեալ՝ որ քան յերկարի ժամանակս, մաշի՛ երկիր և ի ծերութիւն երթայ և տկարանայ. որպէս ծեր *մարդոյն* զօրութիւնն պակասի և ցաւքն առաւելու: - 292-293. Ի ներքին տունն չորքոտանիք. և ի միջինն *մարդն*. և ի վերինն թռչունք: - 293. **Կանգունն գիրկն է *մարդոյ*. և այլք ը թիզ ասեն. զոր այժմ Ֆռանկք վարին:** - 293. Ոմանք ի վերայ *մարդոյս* մեկնեն զտապանն և յիրաւի. զի տապանն ունէր զբոլոր աշխարհս. և *մարդն* մասն է աշխարհի. պա՛րտ է զի մասն նմանեսցի բոլորին: - 293. Նախ՝ որ անփուտ էր փայտն. և մարմին *մարդոյս* անփուտ և անապական է. և յա՛յտ է ի յարութիւնն անմահ: - 293. Իսկ կցկցեալ. զի յօդեալ և կցեալ են ոսկերք *մարդոյն* առ իրեարս. և ի ներքոյ միս՝ և արտաքոյ մորթն է պատեալ: - 293. Իսկ չորեքկուսի, զի խաչաձև՛ է *մարդն*: - 293. Եւ **լ** կանգուն բարձրութիւնն, զի բարձր հասա՛կ է *մարդոյն*. և պապ լինի երեսնամենի: - 293. Ի սմա՛ ժողովեալ գազանաբարոյ և հանդարտ *մարդկան* ո՛չ մեղանչելով միմեանց: - 294. Չորրորդ՝ ի յարութեանն խնդրի ամենայն արիւն *մարդոյ* և ժողովի. վասն այն այժմ ո՛չ է ուտելի: - 295. Հինգերորդ՝ արեամբն ազգակիցեն *մարդ* և անասուն. վասն որոյ ո՛չ է պարտ *մարդոյ* զհարազատն իւր ուտել: - 295. **Եւ**

**խնդրեցին զտապանն և զնա ոչ գտին. զի ո՛չ է հրաման տայ որ** *մարդն* **զարգանդ մօր իւրոյ տեսցէ:** - 296. Եւ զի մի՛ *մարդիկ* ի պատճառս նորա մեղս գործեսցեն. վասն որոյ ո՛չ կարէին տեսանել զտապանն: - 296. Հայր առ որդի և հոգի սուրբ ասաց, որովք արար *զմարդն* մի ազգ և մի լեզու: - 297. Եւ դարձեալ՝ զի անփոփոխելի է սահմանն. որպէս սահման *մարդոյն* և ծիոյն և այլոցն: - 298. Ասեն վարդապետք եթէ հողմն հնչեաց և ցրուեաց զաշտարակն. զի մի՛ փլուցեալ վնասեսցէ *զմարդիկ*: - 298. Զի ասեն թէ՝ ամենայն *մարդ* կարծէր թէ ե՛ս եմ ըղորդ և ե՛ս ունիմ զառաջին լեզուն: - 299. Ենովս *մարդ* ընտրեալ: - 299. Հինգերորդ՝ մելքիսեդեկ *մարդկան* նւիրեաց. որպէս քրիստոս առաքելոցն և մեզ: - 301. Եօթներորդ՝ մելքիսեդեկ ինքնին մատոյց զպատարագն քաղցելոց և ծարաւելոց. որպէս և քրիստոս ո՛չ միջնորդօք հրեշտակաց կամ *մարդկան*, այլ ինքնին բաշխեաց զմարմին և զարիւն իւր՝ քաղցեալ և ծարաւեալ ազգի: - 301. Եւ տէր մեր յիսուսի քրիստոս է՛ թագաւոր յաւիտենական. և արդարութիւն արար մեզ և հաշտեցոյց զաստուած ընդ *մարդկան*: - 301. Եւ տէրն ո՛չ ի ձեռս հրեշտակաց սերօբէից և քերովբէից, և ո՛չ միջնորդութեամբ *մարդկան* ընտրելոց նահապետաց մարգարէից առաքելոց կամ մարտիրոսաց: - 302. Ո՛չ թէ փործիւ գիտէ աստուած *զմարդ*: - 304. Այլ փործէ՛ աստուած *զմարդ*՝ զի յայտնեսցէ զնա. որպէս զաբրահամուս և զյակոբայն: - 304. Իսկ *մարդ* փործէ՝ զի գիտասցէ: - 304. Ծնաւ և տէր մեր *մարդ* բնութեամբ, քակելով զբնութեան օրէնս: - 305. Զի ըստ որում *մարդ* եղև տնօրէնութեամբ՝ պատարագեաց զինքն: - 307. Նոր ծնանի և աւազանն զորդիս *մարդկան* որդիս աստուծոյ: - 307. Երրորդ՝ անդրանիկ են հրեշտակք քան *զմարդիկ* ըստ կարգի և պատւոյ. թէպէտ բանականեմք որպէս նոքա: - 309. Հինգերորդ՝ անդրանիկն բաժին աստուծոյ է. որպէս եդ ի յօրէնսն զամենայն անդրանիկ *մարդոյ* և անասնոյ բաժին տալ աստուծոյ: - 309. Տասներորդ՝ մկտութեամբն լինիմք որդիք աստուծոյ և եղբարք քրիստոսի. և գերազանցիմք զ ազգաց. այսինքն հասարակ *մարդկան*, և իսրայէլացւոցն, և հրեշտակաց երկնից: - 309. Ա՛րդ՝ դաւանութեամբն գերազա՛նց եմք *մարդկան* հեթանոսաց. և մկրտութեամբն՝ հրէից. և ծննդեամբն ի հոգւոյն՝ հրեշտակաց. զի նոքա ո՛չ ունին ծնանիլ ի հոգւոյն. և ո՛չ եղբայր լինի քրիստոսի: - 309. Երկրորդ՝ հրեշտակք անդրանիկք են քան *զմարդ* ստեղծմամբ. և յորժամ մեղան դևքն՝ խոտեցան և եղեն կրտսերք. և *մարդն* ել ի տեղի նոցա և եղև անդրանիկ: - 310. Հինգերորդ՝ նշանակէ զկրկին ծնունդս *մարդոյ*. առաջինն մարմնաւոր և խոտելի. և վերջինն հոգևոր և ընտրելի: - 310. Տասներորդ՝ ևս մեծագոյն խորհուրդ. զի բանն աստուած որ անդրանիկ էր հօր, եղև կրտսեր *մարդ* ի ժամանակի և փոքր. ըստ որում կոչեաց զինքն «փոքրիկ». զի բնութիւն *մարդոյս* ընդ ինքեան խառնելով արասցէ մեծ և անդրանիկ: - 311. Դարձեալ՝ վարժէ՛ զնա գօտեաւն՝ պատերազմիլ ընդ մեղս և ընդ մեղսասէր *մարդիկ* որ կամին զանմեղն քարշել արտաքոյ օրինացն աստուծոյ: - 311. Երրորդ՝ զի զաստուած ունէր օգնական՝ երկեաւ ի *մարդոյ*: - 311. Զի զինչէն ի գոյացութեան խնդիրն է. որպէս յասելն՝ զի՞նչ է, ասեմք՝ *մարդ* է, կամ կենդանի: - 311. Նոյնպէս և անունն սահմանէ կարճառօտ՝ յայտնիչ բնութեան իրին. որպէս մինչ ասեմք *մարդ*, քար, յայտնեցաւ բնութիւնն: - 311. Յաղագս որոյ որպէս *մարդ* ինքն ինքեան անուն ո՛չ դնէ. նոյնպէս և աստուած ինքն ինքեան անուն ոչ դնէ: - 312. Դարձեալ՝ ամենայն անուն որ կոչի՝ կամ նախ քան զինքն լինի յորմէ անւանի. որպէս հայրն կոչէ՛ զորդին իւր *մարդ*: - 312. Եւ տէր մեր գեղեցիկ տեսլեամբ քան զամենայն որդիս *մարդկան*. զի «եղբօր որդին իմ ասէ՝ կարմիր է և սպիտակ ընտրեալ ի բիւրուց». այսինքն զի աստուած է մարդացեալ: - 313. Եւ տէրն մեր կրկին թուով անաց. զի աստուած և *մարդ* էր վաճառեցաւ լ արծաթոյ: - 313. Եւ տէր մեր գիտէր զինչ կրէր ի *մարդն*. այլ և զծածուկսն հօր յայտնեաց մեզ: - 313. Ուստի յայտ է զի բարձր գոչեաց և եհան զոգի. զի ամենայն *մարդկան* նուազի ձայնն ի ժամ մահուանն: - 316. Այսինքն *մարդիկք* որ անբան տրտմութեամբ և անմիտ ցանկութեամբ ի վայր գտան քան զանասունս: - 316. Տեսական, որպէս *մարդ*: - 318. Նախ՝ կոչի մարմինն զգեստ՝ գոյացական՝ անփոփոխ և անքակ միութեամբն. զի բաժանմամբ մարմնոյն և բանին ո՛չ է քրիստոս. որպէս ի բաժանիլ հոգւոյ և մարմնոյ ո՛չ է *մարդ*: - 318. Այլ կոչի տաճար և զգեստ բանական հոգւոյն մարմինն իւրական որպէս ամենայն *մարդկան*: - 319. Հինգերորդ՝ ի լերինն մասեաց յորժամ ել նոյ ի տապանէն՝ օրհնեաց աստուած զնա՛ և զորդիսն նորա ասէ գիրն. և հայր և սերմ արար *մարդկան* ազգի: - 319-320. Ա՛յս է առաւել օրհնութիւն քան զիրեշտակաց և *մարդկան*: - 320. Երրորդ՝ ժողովին և գոհանան զաստուծոյ՝ որ յոչնչէ՛ գոյացոյց *զմարդն*, և յարգանդէ՛ խաւարին ի լոյս եբեր. և ետ մեզ ինչս մարմնական: - 321. Երրորդ՝ զի զազգաւն զազգակիցն մխիթարէր և ո՛չ խնդրէր բժիշկ. զի մի՛ ի *մարդկանէ* լիցի օգնութիւն նմա: - 323. Սոքա երկոքինս պիտո՛յ են ամենայն *մարդոյ* ի մարտ թշնամւոյն: - 323. Ասեմ՝ թէ պահօք և աղօթիւք հեռանայ ի մարմնոյ *մարդոյն* և ո՛չ լըլկէ: - 324. Իսկ ի հոգւոյ *մարդոյն* **բ** իր հեռացուցանեն զդևսն. այսինքն խոնարհութեամբ և ճշմարտութեամբ. վասն զի զերկուքս զայս ո՛չ ունի սատանայ. և ամենևին փախչի և ատէ՛ զխոնարհութիւն

և զճշմարտութիւն: - 324. Երկրորդ՝ զի լուծցէ զտարակոյսն որ վասն դատաստանին աստուծոյ թէ՝ անգիտելի՛ է *մարդկան*: - 325. Չորրորդ՝ զի ի ստեղծանելն *զմարդն* աստուած ո՛չ վկայեաց թէ բարի է որպէս ա՛յլ ամենայն ստեղծուածոցն: - 325. Երկրորդ՝ զի գիտէր որ եղծանելոց էր *մարդն* զփառս: - 325. Վեցերորդ՝ խօսեցաւ աստուած՝ և զամենայն անճառելի գիտութիւնս վասն արարածոց ուսոյց նմա. զոր ոչ գիտէին *մարդիկ* զլինելութիւն երկնի և երկրի և ծովու և կենդանեաց: - 326. Նախ՝ զի զառաջին վկայութիւնն յոբայ անմարմինքն իմացան. դարձեալ վկայեաց՝ զի լուիցեն *մարդիկք*: - 326. Իսկ որպիսի ինչէն աստուծոյ՝ անգիտելի մնայ աստ և ի հանդերձեալն յամենայն եղական մտաց. թէ հրեշտակաց և թէ *մարդկան*: - 331. Զոր թէ ընկենու ոք, լինի երկրաքարշ *մարդ* և մեղաւոր. և մինչ զղջացեալ դարձեալ ըմբռնէ յետոյ, լինի պատճառ կանգնելոյ և փրկութեան: - 332. Չորրորդ՝ խնայեաց զնոսա իբր ի *մարդիկ* զի զղջասցեն փոքր խրատովն և ի մեծ պատուհասէն զերծանիցին. այլ նոքա խստացան մինչև զամենայնն կրեցին: - 333. Նոյնպէս և մի տէր յիսուս քրիստոս մի բնութեամբ էր աստուած, և եղև *մարդ*. հաւատացելոցն ի կանգնումն, և անհաւատիցն ի գլորումն: - 333. Զի որպէս ստուերն ո՛չ է *մարդ*, այլ նմանութիւն *մարդոյ*: - 335. Զառաջիկայն և զմիտս *մարդկան* ո՛չ ոք գիտէ. ո՛չ հրեշտակք և ո՛չ դևք և ո՛չ *մարդիկք*. բայց միայն աստուած որ քննէ զսիրտս և զերիկամունս: - 336. Եւ ի յայտնութենէն աստուծոյ ուսանին հրեշտակք և *մարդիկք* զառաջիկայն: - 336. Նախ՝ թոյլ տա՛լն է աստուծոյ. որ անձնիշխան կամօք ամրանայ *մարդ* ի չարն, և աստուած ներէ՛ և ո՛չ երկիւղիւ խրատէ զնա: - 336. Որպէս սովորութիւն է *մարդոյ* որ վատացն ասէ, ե՛ս արարի զայդ բանդ որ զքեզ ի քո կամդ թողի և ո՛չ խրատեցի: - 336. Երկրորդ ա՛յն է՝ որ յորժամ լինի կամքն *մարդոյն* չար և խիստ ի ծածուկ, և զայն յայտնէ՛ աստուած...: - 336. Երրորդ, զի մեր ախորժակացս հետագայ և աստուծոյն. զի յորժամ ի բարին լինիմք՝ օգնէ՛. և ի չարն թո՛յլ տայ. ա՛յն է խստացուցանելն զսիրտ *մարդոյ*: - 336. Երրորդ՝ կամեցաւ *զմարդն* ի պատկեր իւր՝ երկրորդ ստեղծմանն աշխարհի գործակից և մասնակից լինիլ...: - 342. Եօթներորդ՝ զի նոր իմն չնաշխարհիկ կազմեաց. նոր ժողովրդեանն և նոր օրինացն, իցէ և նո՛ր տաճար հռչակեալ ընդ ծով և ընդ ցամաք. որպէս պսակ և փառք արդարոցն է՛ զոր ակն ո՛չ ետես և ունկն ո՛չ լուաւ. նոյնպէս և սա՛ ի զգալիսս անհաս ի մտաց *մարդկան*: - 342. *Մարդիկ* և հրեշտակք: - 342. Երրորդ այսպէս. ի լուսնոյդ ի վայր տարրական հուրն և որ ի նմա երեւոյթք լուսոյ. օդն և թռչունք. ջուր և լօղականք. երկիր և բոյսք. *մարդ* և անասունք: - 343. Հինգերորդ, **Թ** դասք հրեշտակաց. և մի դաս *մարդկան* ընտրելոց լինի **Ժ**: - 343. Նոյնպէս և բարձրացեալ են գիտութեամբ առաւել քան *զմարդիկք*, և պակաս քան զաստուծոյ: - 344. Երկրորդ՝ զի բանն աստուած ծնունդ հօր՝ էառ զբնութիւն *մարդոյս* որ վերջին է յարարածս: - 347. Դարձեալ՝ արդար *մարդ* աշտանա՛կ է լուսոյ: - 347. Երրորդ՝ *զմարդն* է իմանալ յետոյս աստուծոյ: - 350. Եւ *մարդս* որ վերջին է՝ սա՛ միա՛յն ծանեաւ զառաջին պատճառն: - 350. Դարձեալ գիտելի է, որք զքրիստոս բաժանեն յերկուս բնութիւնս. և յերկուս գործս սոյնպէս. զմինն աստուած՝ և զմիւսն *մարդ*. հզօր և տկար. և գործ *մարդոյ* և գործ աստուծոյ. որպէս աղանդն քաղկեդոնի: - 350. Նոքա ո՛չ հաւասար մովսէսի ներեն զքրիստոս աստուած. զի մովսէս աստուած կոչեցաւ. և զնա *մարդ* խոստովանին սոսկ: - 350. Մովսէս զգործ աստուծոյ գործ էր. և նոքա *մարդոյ* գործ որիշ և կամք: - 350. Դարձեալ՝ **Դ** հասակ փոխի *մարդոյս*. մանուկ. երիտասարդ. կատարեալ հասակ. և ծեր: - 351. Եւ սմին համաձայնի վանական վարդապետն մեր ասելով, չորս տարր է *մարդոյ* և **Դ** ծնունդ: - 353. Իններորդ, զձայն և անասունք լսեն. և զբանն *մարդ* միայն: - 354. Հասարակ, զի ամենայն քահանայ միջնորդ և հաշտարա՛ր է աստուծոյ և *մարդկան*...: - 354. Իսկ յատուկ, Նա՛խ՝ զի նոքա *մարդիկ* էին անկեալ ընդ տկարութեամբ: - 354. Նախ ցուցանէ զխոհեմութիւն բարուց որ ընդունելի է աստուծոյ և *մարդոյ*. այլ պարզութիւնն է՛ պատարագ: - 356. Եւ ըստ միտս, զի առաքինութիւնն է ի փառս աստուծոյ. այլ և ի պատիւ և ի գովութիւն *մարդկան*. զի բազումք հաղորդին սրբութեան նորա: - 358. Կենդանեաց զենմունքն զի յանունն աստուծոյ էր՝ սրբէր *զմարդ*. վասն է՞ր ապա ոչ սրբեին կռապաշտքն. զի և նոքա յաստուծոյ անունն զոհէին և խնկէին: - 361. Երկրորդ, զի ի նուիրացն աստուծոյ առնուն զբաժին քահանայքն և ո՛չ ի *մարդոյ*. և ամենայն ոք աստուծոյ տայ և ո՛չ *մարդոյ*: - 363. Նա՛խ՝ զմեղքն սրբել ի *մարդոյ*. և ապա՛ ընծայել աստուծոյ: - 363. Որպէս նախ քան զօրէնս, բնական քննութեամբ ընտրէին *մարդիկ*...: - 364. Եւ այսպէս ըստ բարուց *մարդկան* ընտրէր նոյ ի սրբոցն է. և յանսրբոցն բ. որպէս ասացաւ ի վերոյ **ԺԳ** գլուխն ի **Գ** համարն: - 364. Դարձեալ՝ որպէս ծառա՛յ են կենդանիք և սպասաւոր *մարդկան*. նոյնպէս և յօրինակ ընտրութեան *մարդկան* ընտրեցան զսուրբս և զանսուրբս նշանակելով այսպէս: - 364. Թևն առաքինութիւն է որով զերծանի *մարդ* յորոգայթից սատանայի. և թեփն ծածկոյթ ամօթոյն. սուրբ են: - 364. Վեցերորդ՝ դիտաւորութիւնն խնդրի. յաղագս ո՞յր իցէ զենումն. կենդանեա՞ց թէ մեռելոց. վասն աստուծո՞յ թէ վասն *մարդկան*: - 365. Նոյնպէս և

արիւնահեղն արիւնապա՛րտ է *մարդոյ*, ո՛չ հեղու զարիւն անասնոյ: - 366. Վեցերորդ՝ դիտաւորութիւնն խնդրի թէ վասն որո՞յ է զենումն. զի թէ վասն աստուծոյ է կամ հոգւոյ, հասարակա՛ց է. իսկ թէ վասն *մարդկան* և կենդանեաց, կամեցողա՛ց է: - 366. Ութերորդ, ի մարմնոյն է և մնայ ի նոյն. և մեղքն ի *մարդոյն* է և մնա՛յ ի նա: - 367. Երկու նոխազն համատեսակ օրինակ տեառն մերոյ՝ յերկուց միաւորեալ մի անձն. և միաւոր բնութեամբ աստուած և *մարդ*: - 369. Վիճակ սահմանն է. որ նախ քան զյաւիտեանս սահմանեաց հայր զփրկութիւն *մարդկան*: - 369. Այլ և քահանայապետն դատապարտեաց զերևելին *մարդ* խաչիլ: - 369. Եւ **ժ** թիւ կատարեալ նուէր և սուրբ է աստուծոյ. յաղագս որոյ թագաւորք երկրի զընծայս ի *մարդկանէ՛* հնազանդելոց **թ թ** խնդրեն...: - 376. ...զի **ժ** երորդն աստուծոյ է բաժին. և **թ** *մարդկան*. զի անկատարք են: - 376. Նա՛խ՝ զայս նշանակէ թէ ի **ժ** դասուց հրեշտակաց միոյն անկաւ, և *մարդիկ* զտեղի և զթիւ անկելոցն լնուն: - 376. Այլ ա՛յս է ուղիղն. զի բովանդակն ամենայն **թ** դասք են հրեշտակաց. այլ անկեալքն ի նոցանէ՝ են ի չափ միոյ դասու. և *մարդիկ* զնոցա տեղին լնուն: - 376. Դարձեալ, տասն են մասունք զգալի արարածոց. այսինքն՝ է մոլորական գունդք. և **ը**՝ անմոլարքն. և իններորդ ի լուսոյդ ի վայր. և *մարդս* **ժ** երորդ ի վերայ նոցա. որ է՛ բանական և բաժին աստուծոյ: - 376. Դարձեալ, տասն են մասունք զգալի արարածոց. այսինքն՝ է մոլորական գունդք. և **ը**՝ անմոլարքն. և իններորդ ի լուսոյդ ի վայր. և *մարդս* **ժ** երորդ ի վերայ նոցա. որ է՛ բանական և բաժին աստուծոյ: - 376. Վեցերորդ՝ զի մեղքն թողեալ է *զմարդն*. և ո՛չ թէ *մարդ* զմեղքն: - 377. Քանի՞ է հասակ *մարդոյս*: - 378. Զի **ծ** ամն յոբելեան է և ազատութեան. որ ազատի *մարդ* յախտից և յախտաւոր սիրոյ աշխարհի՝ և առ աստուած դառնայ: - 378. Դարձեալ, զի ցուցանէ թէ արիւնքն խնդրին ի *մարդկանէ*...: - 380. Եօթներորդ, աստուած կոչեցեալ էր՝ զի յայտնեսցի տկարութիւն *մարդոյ*: - 386. Ութերորդ՝ զի թէ փրկիչն տկարացաւ զի *մարդ* եղև, քանի՞ առաւել սուրբքն: - 386. Զի ո՞ր ոք և յանցանէ՝ պատուհասի. եթէ հրեշտակք, և եթէ սուրբք ի *մարդկանէ*: - 386. Երրորդ՝ հակառակատիպ տեսանի. զի անդ օձն պղնձի *զմարդ* թշնամիս իւր կեցուցանէր և զօձսն սատակէր. և տէր մեր *զմարդիկ* ազգակից իւր կեցուցանէր, և զթշնամին սատանայ հալածէր: - 386. Եօթներորդ՝ օձն մեռեալ սպանանէր զօձսն. և զհարեալսն կեցուցանէր. և տէրն մեր մեռեալ մարմնովն զմեղս մեռուցանէր, և կենդանի աստուածութեամբն *զմարդիկ* կենագործէր: - 387. Վհուկն ա՛յն է, որ ի վհաց և յանդնդոց մեռեալս կերպարանեն. դևք ի կերպս *մարդկան* երևին. զոր դևակոչ ասեն և հազիմաթ. և Նշանագէտ, որ ի գերեզմանս ննջէ և նշանաւոր *մարդ* կերպարանէ. որպէս զսամուէլ սաւուղայ երևեցոյց հարցուկ կինն: - 388. Եւ յայտնի նշան մոլորութեան նոցա ա՛յս է, զի այնպիսեացն կատարօղք վատթարք են գործովք և մոլի. և առ դևս տանին *զմարդիկք* բռնութեամբ...: - 389. Եւ դարձեալ հրեշտակք և *մարդիկք* մշտնջենաւորք՝ պակաս ունին առ աստուածպետութիւնն յաւիտենական. և նա՛ է կատարումն **ժ**երորդ. անսկիզբն և անվախճան գոլով: - 391. Նշանակէ՛ որ չէ՛ պարտ կռուիլ մեզ ընդ ամենայն *մարդկան*. թէ չար թէ բարի. զի ա՛զգ են մեր և որդիք ադամայ: - 393. Այլ ընդ դևս պատերազմիլ միշտ. զի որոց դիւաց թէ յաղթէ *մարդ*, թէ հպարտութեան և թէ պոռնկութեան, զնոցա տեղիքն ժառանգէ յերկինս: - 393. Նա՛խ՝ վասն ժողովրդեանն ասէ, թէ ոչ միայն հացիւ կեայ *մարդ*. որպէս ասաց ադամայ ուտել զհաց քրտամբք: - 397. Հինգերորդ՝ նոյն ինքն մարմինն սուրբ ո՛չ թէ հացիւ միայն կայր որպէս հասարակ *մարդ*. այլ բանիւն կենդանի ի նմա՛ միացեալ: - 397. Ակնառութիւն ո՛չ է աստուծոյ. զնախնիքն սիրեաց աստուած, զի արժանիք էին. և եցոյց նոցա զինքն. և զխոստումն աւետեաց ուխտեաց նոցա *մարդ* լինիլ ի զաւակէ նոցա յետոյ: - 398. Նոյն և երկիրն վերինն երուսաղէմի յանեզրական ծովէ՝ յամպոյ հոգւոյն և շնորհացն իմաստութեան ռոգի. վերին և ներքին դասք հրեշտակաց՝ և *մարդկան*: - 398-399. Այլ՝ արձակեալ կինն ո՛չ դառնայր յառաջին այրն վերստին. թէպէտ մեռանէր վերջին *մարդն*: - 400. Այլ որ *մարդն* առնոյր բազում կանայս՝ և կինն ո՛չ, ա՛յս է պատճառն: - 401. Երկրորդ՝ նշանակէր կրտսեր եղբայրն զքրիստոս զերկրորդն ադամ. որով յառնեն *մարդիկ* յերկրէ: - 402. Այլ մեք այսպէս խոստովանիմք զքրիստոս. որդի աստուծոյ բնութեամբ. և զնոյն որդի *մարդոյ* բնութեամբ: - 402. Եւ բնութեամբ աստուած՝ *մարդ* եղև: - 402. Ա՛րդ՝ զերկու օրհնութիւնս բ կտակօք բաշխեաց *մարդկան*. զմարմնոյ աճումն և ընչից՝ ետ իէլի. և զհոգւոյ աճումն կուսութեամբ և աղքատութեամբ՝ ետ քրիստոնէից: - 403. Եւ *մարդն* անկեալ ի հրեշտակաց աճմանէն, հրամայեաց նոցա զանասնոց աճումն: - 404. Եւ ի վերայ այսր՝ կուսութեամբ ծնաւ *մարդն* ադամ ի հողոյ...: - 404. Ա՛րդ՝ սոքա համաձայն ի մի կորուստ հոգւոյ դիմեն առ *մարդն*: - 404. Եւ յորժամ է զօրութեամբք հոգւոյ յաղթիցեն նոցա, փախիցեն **յէ** զգայարանաց *մարդոյն* եօթնեկի մահացու մեղօք. զայս կատարելո՛ցն է իմանալ. և ո՛չ մեզ տկարացս: - 404. Նա՛խ՝ զի ի խղճմտանք *մարդոյն* կախեալ է կեանքն արժանի մահու. և տեսանէ՛ միշտ և ո՛չ հաւատայ և դադարէ ի մեղաց: - 404. Երրորդ, ի խնամելոյ *զմարդ* և զանասուն՝ ցուցանի թէ նա՛ է արարիչ

որ խնամէ՛ և դարմանէ՛ զսոսա՛: - 406. Այսպէս և օրհնութիւն *մարդկան* որ գերագոյն է քան զմեզ, շնորհակալութիւն է և գոհութիւն. որպէս սրբոց կամ թագաւորաց և այլն: - 406. Այսու ամենայնիւ ապաշնորհ և ապերախտ լինի ոք եթէ աստուծոյ և եթէ *մարդոյ*: - 406. Եւ սպառնալիքն աստուծոյ և *մարդկան* ո՛չ են նման. զի *մարդոյս* դատարկ բան է. իսկ սպառնալիքն աստուծոյ՝ է՛ բան զարհուրական. յորմէ լսօղքն զերծանին, և անլուրքն ըմբռնին ի նոյն: - 408. Տասներորդ՝ ի սկզբանէ հայհոյիչ աստուածամարտ էր սատանայ. և վասն այն *զմարդիկ* կորուսանէր մեղօք...: - 410. Այլ այնո՛ւ էր առաւել, զի քրիստոս զհոգիս ազատեաց ի դժոխոց. և աստուած էր և *մարդ* եղև և խաչեցաւ. որ մեծ է քան զամենայնին: - 411. Եւ վասն է պատճառի պատժէ աստուած *զմարդն* և զինչսն: - 415. Նա՛խ՝ զի *մարդն* տէ՛ր է և թագաւոր. և անասունքն ծառայ ընդ անցաւոր տէրանց. և ծառայքն պատուհասին. որպէս առ ջրհեղեղաւն: - 416. Երրորդ՝ ի յեղծանիլ պատկերին աստուծոյ որ վասն փառացն աստուծոյ ստեղծաւ, ընդ նմին եղծան և ապականեցան այլ արարածք որ վասն փառաց *մարդոյն* ստեղծան. որ ո՛չ միայն անասունք, այլ և հող և ջուր և օդ երկրին կորուսանեն զպտղածնութիւն. որպէս սոդոմայեցոցն: - 416. Չորրորդ՝ զի և անասունքն գործակից լինին մեղացն. վասն որոյ ընդ *մարդոյն* կորնչին. որպէս ի սոդոմ: - 416. Եւ տէր մեր լրումն աւետեաց ուխտին նախահարցն. և նախ քան զսկիզբն աշխարհի ուխտի աւետեաց *մարդկան* փրկանաց: - 422. Եւ տէր մեր ի սպանօղ մարմնոյս որ է՛ պատառօղ հոգւոյս, սպանելով զսա՛ գտանէր զքաղցր կեանս տալ որդւոց *մարդկան* ազգի: - 422. Եւ տէր մեր զհայր ի յերկինս և զմայր ի յերկրի քաղցրացոյց փրկութեամբ *մարդկան*: - 422. Եւ տէր մեր հաճեցաւ լինիլ մարմին ի *մարդկան* ազգէ: - 422. Եւ տէրն ի մէջ գիշերի զդրունս և զնիգս դժոխոց խորտակեալ յարեաւ ի գերեզմանէն. և զհոգիս *մարդկան* էհան յերկինս: - 423. Եւ ինքն որդիէ՛ զօրութիւն հօր. և ծարաւ փրկութեան *մարդկան*, նովաւ զովացեալ: - 423. Զի սամփսոն ի ժամ գերծելոյ գլխոյն թմրեալ ի ծունկս թալիլայ խոնարհէր. նոյնպէս և ամենայն մեղք զոր գործէ *մարդ*, և առաւել գէճ ցանկութիւն, անարգէ *զմարդ*: - 424. Երրորդ՝ զխիստ բարկութիւնն նշանակէ որ յիւր սրբութիւնն ո՛չ խնայէ վասն մեղաց *մարդկան*: - 425. Նա՛խ՝ որպէս սաւուղ ի խնդիր իշոյ ել և թագաւորութիւն եգիտ. և տէր մեր *մարդկան* ազգի որ հաւասարեաց անբանից, և թագաւորեաց մեզ: - 426. Երրորդ՝ նա՛ ի կրտսեր ազգէ բենիամենի թագաւորեաց ամենայն իէլի. և տէր մեր յազգէ *մարդկան* կրտսերաց առեալ մարմին և թագաւորեալ ամենայն զօրութեանց երկնից: - 426. Ութերորդ՝ նա՛ ուսովք էր բարձր քան զամենայն *մարդ*. և տէր մեր ո՛չ միայն աստուածութեամբն որ գլուխ է, այլ և չարչարանօք իւր՝ գերագոյն և բարձրագոյն ցուցաւ. զի փրկեաց զամենայն: - 427. Իններորդ՝ յետ է աւուր կորոյս *զնաաս* խռովարար, որ բրէր զաջոյ ակն իէլի. և տէր մեր զխռովարար բանսարկուն, որ բրէ՛ զակն իմացականին *մարդոյ*...: - 427. Չորրորդ՝ ընդէ՞ր հաւանեցաւ աստուածս կոչել զինքն և երկրպագել նմա. զի նա *մա՛րդ* էր: - 429. Սակայն հանդերձեալն և սիրտ *մարդոյն* միայն աստուծոյ է գիտելի և ոչ այլ ումեք որպէս ասացաւ ի սկիզբն գրոցս: - 430. Նա՛խ՝ զի մի՛ *մարդիկ* յանդիմանեսցեն չարք և անողորմք. այլ աստուած յանդիմանեաց և ողորմեցաւ: - 432. Ապա ուրեմն պա՛րտ է ամենայն *մարդոյ* ըստ կարգի և որպիսութեան լուծ կարգել: - 432. Որպէս դաւթին յետ զղջմանն յիշատակութիւն մեղացն մնաց, ապա նո՛յնպէս և ամենայն *մարդոյ* մնասցէ՞ թէպէտ և խոստովանի: - 432. Այլ շնորհք նորոյս կարողութեամբ արդարացուցանէ *զմարդ* այնպէս, մինչ զի սպիք մեղացն ջնջին և յիշատակութիւնն ծածկի: - 433. Երկրորդ՝ զի յորժամ ուխտէ *մարդ*, ի նոյն ժամն դադարի ցասումն աստուծոյ. ապա յորժամ կատարեմք՝ երևի մեզ: - 435. Երկրորդ՝ կոչի դաւիթ որ է՛ սիրեցեալ և բաւական ձեռօք. և տէր մեր սիրեցեալ ի հօրէ և ի *մարդկանէ* իբր զորդիս մի եղջերոյ. և նա՛ է բաւական յամենայն գործս և ի պարգևս: - 435. Երրորդ, նա՛ հովիւ հօտից. և տէր մեր հովիւ կոչեցաւ իմանալեացն վերնոց և *մարդկան* մոլորելոց: - 435. Երեքտասաներորդ, եհար զգողիաթ զնախատիչն իլի. և տէրն զսատանայ նախատիչ *մարդկան* ազգի: - 436. Այլ և օրհնութիւն բաշխեաց յաւարէն ամենայն ծանօթից. և տէրն առեալ աւար բաշխեաց պարգևս որդւոց *մարդկան*: - 437. Եւ եփրեմեանցն զկագելն առ յուդա. ի ցոյցս հրեշտակացն յորժամ արար փրկութիւն *մարդկան* ազգի: - 438. Դաւիթ ծարաւեալ ջրոյն բեթլէհէմի ծնիցելոյն ի կուսէ. և ծարաւեալ տէրն ի խաչին փրկութեան *մարդկան* ազգի: - 438. Այսպէս ամենայն *մարդոյ* հանդիպի: - 439. Դարձեալ խաչն երկրպագելի, և խաչ չարչարանաց *մարդկան*: - 441. Իններորդ՝ և մարմնական որդի էր դաւթի ըստ կարգի հասարակ *մարդկան*. իսկ քրիստոս ակնկալութեան և աւետեաց և ի վեր քան զկարգ բնութեան աստուած մարդացեալ: - 442. Տասներորդ՝ զի սողոմոն ի քարանց ձեռագործաց կազմէր տաճար աստուծոյ. իսկ քրիստոս զբանական հոգիս *մարդկան* շինէր օթևան սուրբ երրորդութեանն: - 442. Յօրինակ ամենայն *մարդոյ*. զի պա՛րտ է ստուգել զամենայն բան. և ո՛չ դիւրապատիր լինիլ և թողուլ զհրամանն աստուծոյ: - 443. Կամ ի *մարդոյ* մինչև ցշուն և այլն: - 443. Եւ որդի

այրոյն ազգս *մարդկան*: - 444. Իսկ նստիլն ի յաթոռ՝ ասէր պատրել զաքայաբ, թոյլ տալն է աստուծոյ որ *մարդ* իւր կամօքն հաւանի չարին և պատժի: - 444. Եւ շուրջ զնովաւ հրեշտակք ամենայն ոչ հաւանեցան. զի նոքա զամենայնն ճշմարիտ խօսին. և բարի առնեն *մարդկան*...: - 444. Արդ եղիսիէէ նշանակէ՛ զբանն աստուած. որ փոքրկացաւ և բովանդակեցաւ ի ծոց կուսին ի մարմնի միաւորեալ. և ապա ի խաչն բարձրացեալ կեանս շնորհեաց *մարդկան*: - 446. Նա՛խ՝ զի **ի** ա՛մ է վճիռ կենաց *մարդոյս* ըստ դաւթի: - 448. Եւ վկայքն հաստատեցին մեծ գոլ և ծածուկ՝ հրաշալի խորհուրդ միածնին փրկագործութեան երևումն առ *մարդիկք*: - 456. Այսինքն երդումն աբրահամու և դաւթի՝ *մարդ* լինիլ բանին ի վերայ երկրի ի պտղոյ յորովայնէ նորա. և նստել յաթոռ հօր նորա. և ի նմանէ օրհնիլ ամենայն ազգաց: - 457. Եւ են սոքա կրկին զօրութիւնք. արարչական և արքունական. ըստ փիլոնի որպէս կրկին ձեռք *մարդոյ* աջ և ահեակ: - 457. Իններորդ՝ ողորմութիւն է առ բնութիւն *մարդոյս*. և արդարութիւն է առ իւրաքանչիւր անձինս: - 458. Ոմանք ասեն թէ՝ ողորմութիւնն աստուծոյ է՛ յերկինս առ հրեշտակս. և արդարութիւնն յերկրի առ *մարդիկս*: - 458. Այլ և ազգ *մարդկան* ողորմութեան արժանացան մարդեղութեամբն աստուծոյ: - 458. Նա՛խ՝ զի գործ ողորմութեանն է ի սկիզբն աշխարհի՝ և ի մէջն. և ի կատարումն յարութեամբ *մարդկան* որպէս ցուցաւ ի վերոյ: - 458. Քանզի առ ի կատարել զգործ արդարութեանն՝ պահանջէ ինչ և ի կողմանէ *մարդոյն*. այսինքն պահանջումն ըստ արժանւոյն. - 459. Սակայն ըստ ներգործութեան մեծագոյն է սրբութիւն մկրտութեանն. զի տպաւորէ զկնիքն. այլ և բանայ զդուռն արքայութեան. այլ և պատրաստէ՛ *զմարդն* առ ի խորհուրդս ամենայն. զոր ո՛չ ներգործեն ա՛յլ երկոքին եզական շնորհքն: - 462. Երրորդ՝ համակ հանապազորդ ներգործական դարձումն բոլոր *մարդոյն* առ աստուած. որով *մարդն* աստուածային քաղցրութեամբն զմայլի...: - 462. Վասն է՞ր հրեշտակապետն գաբրիէլ աւետեաց կուսին, և ո՛չ *մարդ* ոք: - 463. Երրորդ՝ զի նորոգումն որ լինելոց էր ծննդեամբ կուսին՝ ո՛չ միայն *մարդկան* էր, այլ և հրեշտակաց. պարտ էր հրեշտակին սպասաւորել կուսին: - 463. Չորրորդ՝ զի անկասկած լիցի ամենևին և անկարծ ի չարեաց զատուցեալ սուրբ կոյսն. ի ձեռն հրեշտակին աւետարանել զյղութիւնն. և ո՛չ ի ձեռն *մարդոյ*: - 463. Նոյնպէս պա՛րտ է ամենայն *մարդոյ* յորժամ լսիցէ զբանն, նախ խորհիլ և հարցանել, և ապա՛ հաւանիլ: - 465. Վեցերորդ, մայր *մարդոյ* ասի կինն որ ծնաւ զմանուկ. թէպէտ հոգին ո՛չ է ի մօրէն. այլ վասն միաւորեալ մարմնոյն մարդածին կոչի: - 466. Եթէ աստուած *մարդ* եղև՝ ցուցաւ յայլում տեղւոջ: - 468. Չորրորդ՝ միտք և հոգին ո՛չ երևին. և բանն երևի և ի դուրս գայ. և *մարդիկք* տեսանեն և գրեն. վասն այն բանն մարմնացաւ, և ո՛չ հայր կամ հոգին: - 468. Հինգերորդ՝ բանն պատկեր է հօր էական. և *մարդն* պատկեր նմանութեան. վասն այն բանն աստուծոյ եղև ի պատկեր *մարդոյ*: - 468. Վեցերորդ՝ դարձուցանել *զմարդն* յորդէգրութիւն աստուծոյ՝ բնական որդւոյն էր պատշաճ. վասն որոյ որդին աստուծոյ որդի *մարդոյ* եղև զի զմեզ արասցէ որդիս աստուծոյ: - 468. Զի *մարդն* ցանկացաւ գիտութեանն աստուծոյ որ է յատուկ որդւոյ՝ և անկաւ. նոյնպէս նովին գիտութեամբն պարտ էր և կանգնիլ: - 468. Այլ և իմաստութեանն հօր պարտ էր նորոգել զխնդրող իմաստութեանն որ է *մարդն*: - 468. Երկրորդ՝ զի ո՛չ ինչ անդամ զազրելի է ի *մարդն*. այլ ամենայնն հաւասար են յարդարութիւն. եթէ ոչ եկամուտ ինչ խառնեսցի ի նմա: - 469. Եւ թէպէտ կատարեալ և լի և անթերի էին մասունք մարմնոյն քրիստոսի. այլ ա՛յն քան փոքրիկ, մինչ զի հազիւ անկարէր ընդ տեսութեամբ *մարդոյ*: - 470. Նա՛խ՝ զի կազմեսցի զօրութեամբ բարձրելոյն ի հոգւոյն սրբոյ և ո՛չ նպաստութեամբ *մարդոյ*: - 470. Եւ զառաջինն կոչի անդրանիկ՝ յորժամ եղև ի բազում եղբարս. լինելով *մարդ* և որդի *մարդոյ*: - 472. Իսկ ամենայն *մարդկան* միտք հաստատեալ են ի խնամս չարի՝ վկայէ՛ աստուած...: - 473. Եւ նեստոր կամէր զմարմինն որոշել և սոսկ *մարդ* դաւանել: - 475. Նա՛խ՝ որպէս *մարդն* յայլ և այլ բնութեանց միաւորեալ՝ մի անձն և մի դէմ և մի բնութիւն կատարի. զի մի ասեմք *զմարդն* և մի զբնութիւն նորա: - 477. Երրորդ՝ որպէս բաժանեալ ի միմեանց՝ ո՛չ գոյ *մարդ*. այլ մեռեալ մարմին կամ մերկ հոգի: - 477. Նոյնպէս և յորոշելն ըստ ոմանց զաստուածն և *զմարդ*՝ ո՛չ է քրիստոս. այլ *մարդ* սոսկ կամ մերկ աստուած: - 477. Այսպէս թէ ուրեք *մարդ* միայն անուանի քրիստոս «զճշմարութիւն խօսեալ». և կամ՝ «աստուած կնքեալ». ո՛չ ինչ ուրէք վնասէ զմիաւորութիւնն իբր *մարդ* սոսկ կամ աստուած միայն. այլ աստուած համանգամայն և *մարդ* խոստովանի միացեալ: - 477. Հինգերորդ՝ որպէս մարմինն զգայական միաւորեալ ընդ բանական հոգոյ՝ ո՛չ է և ոչ ասի զգայական. այլ բանական *մարդ*: - 477. Իններորդ՝ միաւորութիւն *մարդոյ*՝ է՛ անմահ և մահկանացու. յաւիտենական և ժամանակեայ. այսինքն հոգի և մարմին: - 478. Այսպէս և միաւորութիւնն քրիստոսի է՛ յաւիտենից և ժամանակեայ. անմահ և մահկանացու. աստուած և *մարդ*. նոյն ինքն բանն մարմին եղեալ: - 478. Տասներորդ՝ զի ի ծնունդն միաւորութեան մերոյ ո՛չ ասի մարմին ծնեալ. այլ թէ *մարդ* ծնաւ յաշխարհ: - 478. Նոյնպէս ասի այս անուն *մարդ* չարչարեալ և մեռեալ.

որ և յատուկ մարմնո՛յ են սոքա: - 478. Նա՛խ՝ զի միաւորութիւնն *մարդոյ* եղականա՛ց է ընդ միմեանս: - 478. Չորրորդ՝ զի ի *մարդն* է մի միայն միաւորութիւն. այսինքն հոգւոյ և մարմնոյ: - 478. Իսկ ի միաւորութիւն փրկչին բոլորից՝ բանն անդրանիկ կոչի և ի բազում եղբարս. և *մարդն* միածին հօր...: - 479. Նա՛խ՝ զի մի՛ անընտել թուիցի *մարդկան*. զի թէ առ ժամայն ի ծնունդն եղեալ էր երեսնամեայ հասակաւ, առ աչօք համարէին զիրն. և կամ այլ ինչ: - 479. Երկրորդ՝ զի արարիչն ընդ բութեան կարգս եմուտ. որպէս *մարդ* լինիլն և ի կուսէ ծնանիլն: - 479. Եօթներորդ՝ գիրք սուրբք մարդեղութիւն ասեն բանին. այլ *մարդն* կոչումն յատուկ արական է և ո՛չ իգական թէ և հասարակաց կոչի: - 480. Ասեն վարդապետք եթէ՝ որպէս մարգարէքն և առաքեալքն զխօսեցեալ բանս իւրեանց ի ձեռս ունին իբր պատգամաբեր յաստուծոյ առ *մարդիկ*: - 481. Դարձեալ ի ձեռն կուսին՝ կենաց գիր տուաւ ազգի *մարդկան* տէր մեր յիսուս քրիստոս: - 481. Զայս որպէս ձեռին գիր ունէր սատանայ, և նովաւ չարչարէր *զմարդիկ*՝ թէ աստուած ասաց մի ուտել և դու կերեր և մեռար. իմ ի՞նչ մեղք է: - 481. Զի անսերմն յղութեամբ և ի սրբեալ յարենէ կուսին գոյացաւ *մարդ*: - 485. Նա՛խ՝ զի որ բանն *մարդ* եղև՝ ո՛չ գարշի յեդեալ օրինացն իւրոց զի վասն *մարդկան* եդ: - 485. Զի են անուանք որ զբնութիւնն նշանակեն որպէս *մարդ*: - 487. Զի ըստ որում *մարդ* եղև տնօրէնութեամբ պատարագեաց զինքն: - 491. Երկրորդ՝ զի անհաշտ թշնամութիւն եղև հօր աստուծոյ ընդ *մարդոյ*: - 491. Այլ ա՛րդ՝ բանն աստուած եղև *մարդ* և անմեղ պահեաց զբնական կիրս. և ներգործական կրիւքն հնազանդ եղև հօր՝ մահու չափ և մահու խաչի: - 492. Եւ վասն անմեղ մահուն՝ հաշտեցաւ հայր աստուած ընդ *մարդկան*: - 492. Եւ վասն մահուան որդւոյ՝ հայր աստուած ետ զհոգին սուրբ պարգևս *մարդկան*: - 492. Զազգս *մարդկան* սատանայ էր գերեալ. վասն է՞ր քրիստոս զգին արեանն ի հայր ետ: - 492. Զի թէպէտ սատանայ էր գերեալ *զմարդն*, սակայն ի գերութիւն նմա հա՛յր մատնեաց յորժամ պատժեաց զնա: - 492. Յիրաւի ապա տէր մեր զգին արեանն ի հայր ետ. թէպէտ սատանայ էր գերեալ և չարչարէր *զմարդիկ*: - 492. Հինգերորդ՝ նշանակէ՛ զչորս առաքինութիւնս ի յորս պարտի տարածիլ ներքին *մարդս* մեր. այսինքն վերին մասն նշանակէ զսէրն. ներքինն զխոնարհութիւնն. աջն զհնազանդութիւնն. ահեակն զհամբերութիւնն: - 493. Եւ դարձեալ՝ աջն զփրկութիւն *մարդկան*. ահեակն զսաստ դիւացն: - 493. Այլ և երկիւղի զգայութեան չորս հասակի *մարդոյն*. ի մանկութեան, յերիտասարդութեան, յալիս և ի ծերութեան: - 493. Այլ և խաչաձև՛ է *մարդ*, գլուխ տարրական կենդանեաց: - 494. Որ և *մարդիկք* կրկին թևօք ժամանեն ի փառս յաւիտենական կենացն: - 494. Որո՞վ զանազանի մահն քրիստոսի և հասարակ ամենայն *մարդոյ*: - 495. Այլ զանազանութիւն գոյ ի մէջ մահու նախաստեղծ *մարդոյն*, և մահու տն մերոյ քրիստոսի, և մահու հասարակ մարդկայինս ազգի: - 495. Եւ պատճառն ասացաւ ի վերոյ, զոր ինչ ինքն եդ զպատիժ՝ նմանեաւն եբարձ. և զորս յանձնիշխան կամաց *մարդոյն* և ի բանսարկուէն արկածք, զայնոսիկ հակառակաւն ելոյծ տէր մեր յիսուս քրիստոս: - 498. և յետ մեղացն եղև ապականացու և կատարեալ. և երևի թէ ապականութիւնն առնէ կատարեալ *զմարդն* որ այլայլօ՛ղ է և ապականագործ: - 500. Իսկ հասարակ *մարդիկ* կրակա՛ն են կամաւորի և ակամայի. բնութեամբ և կամօք: - 502. Զի ըստ որում աստուած՝ ո՛չ կրէր ակամայ. և ըստ որում *մարդ* ճշմարիտ և մարմին բանին՝ կրէր զկամաւորն: - 502. Նա՛խ՝ զի բանական *մարդ* կամաւորօ՛քն է *մարդ*, և ո՛չ ակամայիւքն. որպէս կատարեալ էր մարմինն ադամայ նախ քան զմեղանչելն: - 502. Եւ դարձեալ զի ակամայքն ի *մարդոյս* բնութիւն յետամտականք են և անասնականք, և ո՛չ բնական բանականիս բնութեան: - 502. Եւ տէրն ի մարդեղութեան իւրում ընկալաւ զոր ինչ բնականն էր *մարդոյս* բնութեան. և ոչ զեկամուտ անասնականն: - 502. Ասեմք մեք, թէ արտածորումն մարմնոյ ո՛չ ունէր *մարդն* ադամ նախ քան զմեղանչելն ի դրախտին. որպէս նոյ ի տապանին. և մանուկն իննամսեայ յարգանդին: - 502. Նա՛խ՝ զի ցուցցէ վասն որոյ *մարդ* եղև և մեռաւ զի ազատեսցէ զհոգիսն: - 503. Չորրորդ՝ որպէս անիրաւութեամբ կապեաց սատանայ զհոգիս *մարդկան*. արդարութեամբն ազատեսցէ քրիստոս զնոսա: - 503. Հինգերորդ՝ զադամաստեղծ ձեռս իւր տարածեաց տէրն ի վերայ խաչին. և արտաքս ընկէց զչար իշխանն. և կորզեաց *զմարդիկ* յիշխանութենէ նորա: - 503. Որ և անդ ժամանեաց տէրն և կապեաց զհզօրն. և զկարծրացեալ ամրոցն աւերեաց. և կողոպտեաց ի նմանէ զհոգիսն *մարդկան* որ յադամայ հետէ ընդ բռամբ ունէր: - 503. Չորրորդ՝ անէծք առաջին *մարդոյն* եղև տանջանք և դատապարտութիւն *մարդոյն*. և քրիստոս գնեաց զմեզ յանիծից օրինաց եղեալ վասն մեր անէծք. ապա ուրեմն քրիստոս աւերեաց զդժոխս: - 506. Ապա մասնաւո՛ր եղև փրկութիւնն և ո՛չ բոլորից *մարդկան*: - 506. Երկրորդ՝ եթէ սկզբնաչարն սատանայ է ամենայն մեղաց պատճառ և ո՛չ տանջի մինչ ի կատարած. նաև ո՛չ *մարդիկ*: - 507. Երկրորդ՝ զի փոխեալ է որպիսութիւն *մարդոյն*. զի ո՛չ կարէ մեռանիլ. նոյնպէս և ո՛չ կարէ արդարանալ ըստ ինքեան. նաև ո՛չ մեղանչել: - 508. Նոյնպէս և հոգի *մարդոյ* զկնի մահու ո՛չ կարէ արդարանալ ըստ ինքեան. բայց թէ ի ձեռս այլոց վճարի

պարտ նոցա և հասանին ողորմութեան: - 508. Չորրորդ վկայ լոյսն զգալի. որ յինն ժամուն ծագէ՛ ի գերեզմանէն ակներև ամենայն *մարդկան*: - 509. Թէպէտ այսօր վասն պատրանաց *մարդկան* և փոխելոյ զտօնս՝ ոչ ինչ ուտեն զնաւակատեաց որ է ծուկն. զոր միշտ զքառասնորդ պահքս պղծեալ են ձկամբ և արբեցութեամբ: - 509. Վասն զի բոլոր *մարդն* երիւք է կայացեալ. որ է հոգի և մարմին, և ի մէջ երկուցն շունչն է խառնեալ: - 510. Տընկականք՝ այսինքն բոյսք և պտուղք յորմէ և հատցին թէ ի *մարդոյ* և թէ յայլ կենդանեաց՝ կերակրելիք են: - 511. Ա՛րդ՝ ներքին այրն նշանակէ՛ զդժոխս. և արտաքինն զգերեզմանն. և սաւուղն զսատանայ որ ըմբռնեալ էր *զմարդիկ*: - 513. Եւ տէրն ի գիշերի ելեալ ի գերեզմանէն բաժանեաց և էառ զհոգիս *մարդկան* ի նմանէ. և արար իւր հանդերձ զսուրբ ժողովուրդ իւր: - 513-514. Ամաղէկ նշանակէ զսատանայ որ գերեաց զհոգիս *մարդկան* հրէից և հեթանոսաց. - 514. և ո՛չ մի հոգի եթող ի դժոխս. այլ զամենայն ազատեաց յարուցեալ ի մեռելոց. և բաշխեաց պարգևս որդւոց *մարդկան*: - 514. ...եթէ քրիստոս յարեաւ ի մէջ գիշերի. զի այց արասցէ *մարդկան* ազգի. և զանկեալքս ի խաւարի և ի ստուերս մահու՝ ի լոյս գիտութեան և շնորհաց յարուսցէ: - 514. Այլ համբարձումն նշանակէ՛ ի միտս համայն բարձր քան զամենայն դասս իմանալեացն. զի նմա՛ երկրպագեն ամենայն երկնայինքն. և անդր քան զտեղի տիրամօրն. զի ի միածին որդւոյ իւրմէ խնդրէ զփրկութիւն *մարդկան*: - 519. Երկրորդ՝ առ ի բարեխօսել վասն *մարդկան* հաւատացելոց: - 519. Հինգերորդ՝ համբարձաւ զուարճութեամբ. որ վերաբերի առ նոսա որք փրկեցան ի դժոխոցն և ընդ նմա ելին յերկինս. զի **բ** բանակօք ել յերկինս այսինքն սպասաւոր հրեշտակք և *մարդկան* փրկելովք: - 520. Երկրորդ՝ զի թէ քրիստոս այնպէս փառաւորեալ էր որպէս յետ խաչին, արգել և խափան լինէր ամենայն չարչարանացն և փրկութեան *մարդկան*: - 521. Այսպէս նախ եկն քրիստոս և խաչիւ և մահուամբ հաշտեցոյց զհայր, և ապա՛ հայր աստուած առաքեաց զհոգին սուրբ պարգև *մարդկան*: - 522. Եւ շնչաւոր *մարդոյ* յիմարութիւն է հոգին. որ և պատժեաց զանանիա և զսափիրայ: - 523. Վեշտասաներորդ, Վասն *մարդկան* մեղաց: - 526. Երեսունն**է**, Վասն առանձնակի եկեղեցոյս մեր կարգաւ. և զի՞նչպէս բաղդատի եկեղեցին՝ *մարդն* և շինեալն: - 526. Սակայն մի և նոյն բանն բազմանայ ի բազումս. որպէս ի հրեշտակս և ի *մարդիկ*. ի հին և ի նոր օրէնս. այլ ի միութենէն ո՛չ բաժանի: - 529. Զոր օրինակ, բան *մարդոյ* յիւրաքանչիւր մասնաւոր լսելիս բաժանի, և բոլոր և կատարեալ է և ո՛չ մասն: - 530. Պատասխանեմք թէ՝ նման է այնմ որ ասեն թէ՝ բան աստուած է պատկեր հօր, և *մարդն* ի պատկեր բանին. ապա *մարդն* ո՛չ է պատկեր աստուծոյ, այլ պատկեր պատկերի: - 530. Որպէս գրեալ է ի գիրս պարապմանց այսպէս. եթէ *մարդն* պատկեր է բանին՝ և բանն է աստուած. ապա և *մարդն* է պատկեր աստուծոյ: - 530. Ա՛րդ՝ տգիտութիւնն բնակա՛ն է *մարդոյ*. փոփոխումն ստացական. և հիւանդութիւնն դիւական: - 531. Նոյնպէս վասն երկրորդին գիտելի է, զի որպէս զփայտ թիւրութեամբ պնդեալ՝ դժուարին է ուղղել. նոյնպէս զչար սովորութիւն *մարդկան* դժուարին է փոփոխել: - 531. Նախ՝ զի երկոքեանն տաճար են աստուծոյ. այսինքն շինեալն և *մարդն*...: - 533. Որպէս սեռիւ մի են ամենայն կենդանիք. և տեսակաւ ամենայն *մարդ*. և անհատիւ մի որպէս պետրոս: - 533. Նա՛խ՝ որպէս բոլորն է մարմին և իւրաքանչիւր մասունքն. նոյնպէս և բոլորն մի եկեղեցի՝ և իւրաքանչիւրքն. և բոլորն քրիստոնեայ՝ և մին *մարդն*. եթէ նման են միմեանց և եթէ աննման: - 533. Երկրորդ, մի անուն՝ և նշանակեալքն բազումք. որպէս խոյ է յերկինս և յերկրի և ի ծովս. նոյնպէս մի կոչի եկեղեցի կենդանի *մարդն* և շինեալն ի քարանց և եկեղեցին անդրանկացն յերկինս. սակայն զանազա՛ն են որպիսութեամբ: - 533. *Մարդ* ի *մարդոյ* առաքեալ: - 535. Կամ *մարդ* ի հրեշտակէ՛: - 535. Կամ *մարդ* յաստուծոյ առաքեալ: - 535. Զորօրինակ՝ մեռեալ *մարդ* ո՛չ ասի պարզաբար *մարդ*, նոյնպէս և այս. որպէս ցուցաւ ի թագաւորութեանցն **իզ** գլուխն. **ժբ** համարն: - 536. Իսկ հինգերորդ մարգարէութիւն է հոգևոր և աստուածային գիտութեամբ. զոր յայտնութեամբ սուրբ հոգւոյն ուսեալք խօսին առ ի զգուշութիւն *մարդկան* ի հոգևոր շինուածս: - 536. Իշխանութիւնք ամենայն ի վերուստ յաստուծոյ են իջեալ առ ի *մարդիկ* վասն կարգաւորելոյ զնոսա...: - 537. Այլ ա՛րդ՝ կրկին է իշխանութիւն. այսինքն հոգևոր և մարմնաւոր. վասն զի կրկին է *մարդն*. հոգի և մարմին: - 537. Յաղագս որոյ կացոյց հոգևոր իշխան զքահանայս. զի հոգէպէս ուղղեսցեն *զմարդիկ* և արգելցեն ի մեղաց: - 537-538. Եւ մարմնաւոր իշխան զթագաւորս և զբռնակալս. զի մարմնապէս կառավարեսցեն *զմարդիկ* և խրատեսցեն վասն մեղաց: - 538. Նախ՝ որպէս սահմանն պարունակէ՛ զընդհանուր սահմանեալսն որպէս սահման *մարդոյ զմարդ*: - 538. Երկրորդ՝ որպէս սահմանն բաժանէ՛ *զմարդն* ի ձիոյ: - 538. Եւ սոքա են սուր երկսայրիք տուեալ ի ձեռս քահանայից զինուորաց քրիստոսի. զի յաջ և յահեակ հարցեն. այսինքն զսատանայ և զչարսն ի *մարդկանէ* որք հակառակին բարեաց: - 538-539. Ես խոստովանիմ զքրիստոս ճշմարիտ աստուած և բնութեամբ որդի աստուծոյ. և դու բաժանմամբ *մա՛րդ* դաւանիս և շնորհօ՛ք որդի աստուծոյ: - 548. Որպէս ասելն, ամենայն

*մարդ* է արդար. ո՛չ ոք *մարդ* է արդար: - 550. Եւ ոմն *մարդ* արդար է. և ոմն *մարդ* ո՛չ է արդար: - 550. Դարձեալ, ի նախաստեղծուածս՝ *մարդն* միա՛յն էր՝ և կենդանիք բազում: - 551. Դարձեալ, բնաւորեալ է *մարդոյ*՝ զի ամենայն ոք կարծէ զինքն ճշմարիտ և արդար. այլ որ ունի զճշմարտութիւնն նա՛ է ճշմարիտ և արդար: - 551. Վասն զի յերից գոյացեալ է *մարդն*. ի մտաց ի հոգւոյ և ի մարմնոյ: - 556. Երրորդ, արբեալն ի խորհրդոց՝ արհամարհէ՛ զօրէնս և զամօթ և զխրատ *մարդկան*: - 557. Որ և սողոմոն անճողոպրելի քարոզէ ամենայն *մարդկային* մտաց. եթէ «ո՞ պարծեսցի միտս սուրբ ունել»: - 558. Զի սատանայ հպարտացաւ յերկինս և նախանձեցաւ ընդ *մարդոյն*. իսկ այլքն ամենայն մարմնականք են ասեն: - 559. Զի առաջին մեղք հպարտութիւնն է որով սատանայ մեղանչեաց յերկինս և անկաւ. և ապա նախանձն զոր ընդ *մարդոյն* արարին: - 561. Նա՛խ՝ զի առաջին *մարդն* ի դրախտին որկորստութեամբ մեղաւ. և այն առաջին մեղք եղև մարդկայինս բնութեան: - 561. Եօթներորդ՝ զի որ հպարտքն են ոչ ունին հանգիստ մտաց և մարմնոյ. քանզի որ քան *մարդ* խոնարհէ՝ այն քան հանգիստ է: - 562. Վասն է՞ր սատանայի մեղքն մեծ է և անթողլի քան *զմարդոյ*: - 562. Այսպէս մեղանչէ սատանայ և *մարդ*. զի զլոյսն աստուծոյ անձնիշխան կամօք և իմացմամբ մերժէ՝ և սիրէ զխաւար: - 562. Ա՛րդ՝ մեղանչելն *մարդոյ* այնպէս է որ զակն խփեաց ի լուսոյն և խաւարեցաւ. սակայն լոյսն ծագէ՛ դեռևս ի վերայ աչացն և սակաւ փայլէ ի ներքս. և յորժամ բանայ վաղվաղակի լոյս տեսանէ: - 562. Այնպէս *մարդ* մեղօք զրկի ի շնորհաց լուսոյն. այլ լոյս խնամոցն աստուծոյ չէ հեռացեալ և սակաւ փայլէ ի ներքս ի տրտնջականն…: - 562-563. Վասն է՞ր զի *մարդոյս* գործ և անասնոցն հասարա՛կ են, և *մարդոյս* միա՛յն է մեղք: - 563. Նա՛խ՝ զի որ կամաւ և գիտութեամբ մեղանչէ, առաւել է քան զակամայն և զտգիտութեան. զի թէպէտ և սոքա մեղք են, այլ պատիժն նուազ. որպէս անասնոյն քան *զմարդոյն*: - 563. …**որպէս առաւել է մեղք հրեշտակին քան *զմարդոյն*. վասն այն մին քահանայի մեղք՝ որ չափ բոլոր ժողովրդեանն է. ուստի յա՛յտ է ի պատարագէ հնոյն**…: - 563. Նա՛խ՝ զի ի նոսա չափաւո՛ր են ախտքս այսորիկ. իսկ ի *մարդն* առաւել և անչափ: - 563-564. Նա՛խ՝ ըստ գոյացութեան և ըստ տեսակին. զի *մարդն* է տեսակ և տեսակն գոյացութիւն. ըստ գոյացութեանն այսպէս: - 565. Եւ թէ **բ** *մարդ* գործեն զմեղս զայսոսիկ, սպանանելն մեծ է քան զսուտ վկայելն. և այլն նմանապէս: - 565. Երկրորդ ըստ որակին. որպէս թէ **բ** *մարդ* գործեն զորովայնամոլութիւն: - 565. Չորրորդ ըստ առընչին. այսինքն թէ առ ի՞նչ իրք գործէ զմեղքն. զի *մարդն* **դ** դիմօք գործէ զմեղս. այսինքն դիմաց աստուծոյ, դիմաց եկեղեցւոյ, դիմաց ընկերին, դիմաց իւր անձինն: - 565. Եօթներորդ՝ թէ առ *մարդ* մեղանչեն՝ առ աստուած բարեխօսեն և հաշտի: - 566. Եւ կոչի մահացու, զի պարտական առնէ *զմարդն* յաւիտենից մահուն: - 567. Երրորդն ըստ հաւասարութեան. զի սկզբնականն հաւասարապէս է ամենայն *մարդկան*: - 568. Վասն որոյ անկանի *մարդ* ի բարկութիւնն աստուծոյ: - 569. Զի որպէս ամբարտաւանութիւնն հանէ՛ *զմարդն* յաստուծոյ, նոյնպէս և նախանձն *զմարդն* զինքն յինքենէ՛ հանէ: - 569. Զգուշանալ պարտ է ի բարկութենէ. և առաւել ի ժամ դատաստանին. զի *մարդ* բարկացեալ ո՛չ ճանաչէ զճշմարտութիւնն: - 570. Այս ազգ գործ՝ խոզնիցն է յատուկ և ո՛չ *մարդկան*: - 570. Ա՛յս է որ *զմարդն* յաստուծոյ հեռացնէ. զի սուրբքն միա՛յն տեսանեն զաստուած: - 570. Իններորդ վասն հոգւոց *մարդկան*: - 572. Չորրորդ՝ յորժամ սիրեմ զիս վասն աստուծոյ. և այս ևս է լաւագոյն. զի ո՛չ խնդրէ *մարդ* զիւրն, այլ զաստուծոյն միայն: - 576. Զի նա պարունակէ՛ զառաքինութիւնս որ կարգեն *զմարդ* առ ընկերն. որպէս ուղղութիւնն և առատաբաշխութիւնն: - 578. Եւ որ կարգեն *զմարդն* առ աստուած. որպէս աստուածապաշտութիւնն և հնազանդութիւնն: - 578-579. Պահպանութիւն է որք արժանաւորին *մարդկան* պատուոյ իմն և պաշտաման: - 579. Եւ գո՛րծ է սորա՝ որ ինքն նենգութիւն ո՛չ առնէ *մարդոյ*, և ո՛չ յայլ *մարդոյ* խաբի: - 579. Խորագիտութեամբ պահէ զինքն յայլ *մարդոյ*. և միամտութեամբն այլոց վնաս ո՛չ առնէ: - 579. Խոհեմ *մարդն* ո՛չ պարտի վաղվաղել ի գործ զինչ և է՛. այլ պա՛րտ է նա՛խ խորհիլ որ ո՛չ խաբի: - 579-580. Իսկ ժուժկալութիւնն առ շօշափելիսն ըստ ծննդական զօրութեանն. ի յորում դնէ զեղանակն. զի առաւել յօժարի *մարդն* ի գոլ անհատութիւնն սննդականաւն, և ի գոլ տեսակին ծննդականաւն. և յօժարութիւնքս այս՝ զսպին զգաստութեամբ և ժուժկալութեամբ: - 581. Զի սոքօք *մարդկան* հոգիք կարգաւորին և ո՛չ այլ կենդանեաց: - 581. Եւ զի դժուարին է հոգւոյ *մարդոյ* կարգաւորել զինքն և սրբել ի մեղաց. վասն այսորիկ օգնութիւն տայ աստուած հոգւոյ *մարդոյ* զեօթն պարգևս հոգւոյն սրբոյ: - 582. Որ տուեալ լինի *մարդոյ* ընդ դէմ ամբարտաւանութեան: - 582. Երկրորդ՝ զերկայնմտութիւն զհամբերութիւն զյոյս և զարիութիւն հաստատէ՛ ի *մարդն*: - 584. …զի թէպէտ ողորմութիւնն առաւել նմանեցուցանէ *զմարդն* աստուծոյ ըստ արտաքին գործոյն, - 585. Երրորդ՝ զիրեշտակս ընդ *մարդիկ*. և զիրեղէն սուրն և զթշնամութիւն եբարձ: - 585. Նա՛խ՝ ըստ զանազանութեան *մարդկան* որ են յեկեղեցի: - 587. Ո՛չ ումեք մեղք յայլմէ խնդրի. այլ ամենայն *մարդ* վասն իւր մեղացն

պատժի: - 591. Աստուած զարդարութիւն յամենայն *մարդոյ* խնդրէ զոր յառաջն ետ. և ադամ եթող զայն: - 591. Յորժամ բոլորովիմբ *մարդն* ի ձեռն մկրտութեանն սրբի, սերմն նորա ո՞րպէս է անսուրբ: - 592. Բոլորովիմբ *մարդ* ի ձեռն մկրտութեանն ներքուստ և արտաքուստ սրբի. բայց դարձեալ սերմն նորա ի ձեռն մարմնոյն ցանկութեանն պղծի: - 592. Դրոշմն է հաստատութեան խորհուրդ. որ տուեալ լինի առ ի զօրացնել և քաջացնել *զմարդն*: - 593. Դարձեալ՝ խառնումն է աստուծոյ իմաստութեանն ընդ *մարդկան*. որ բանիւն խառնեալ միաւորեցան. որպէս ասէ սուրբն դիոնէսիոս: - 596. Վասն որոյ ճաշակեմք զմարմինն և զարիւնն աստուծոյ և ո՛չ *մարդոյ*. և ճաշակելով լինիմք աստուած ըստ կարողութեան և ո՛չ թէ լինիմք *մարդ*: - 598. Դարձեալ թէ՝ ի՞նչ *մարդոյ* խոստովանեցաւ. թէ քահանա՞յ էր. հերձւածո՞ղ էր թէ ուղղափառ: - 601. Եւ գիտելի է, զի *մարդ* որ ի մեղք անկանի և իմանայ զինքն որ մեղք գործեաց, և ունի զխոստովանահայրն պատրաստ ուղղափառ և գիտուն, ի յա՛յն պահն պարտի խոստովանիլ: - 601. Իսկ թէ աշխարհական լինի. հայի քահանայն թէ խոստովանօղն իմաստուն *մարդ* լինի առանց բարի գործոց: - 601. Արդ ըստ այնմ որ է՛ հնարք՝ ո՛չ է օգուտ որ քան է *մարդ* ի մեղս: - 603. Ասեմք թէ, ի հնարից չարին բարձին *մարդիկք* զխոստովանութիւնն որ հարկաւոր էր, յայն ապաւինեալ թէ՝ ի վերջին օրն օծանիմք ձիթով բալասամինաւ և արդարանամք: - 604. Որպէս ազգն յունաց և վրաց և ասորւոց բարձեալ են զխոստովանութիւնն. որ անհնա՛ր է առանց խոստովանելոյ արդարանալ *մարդոյ*: - 604. Այն է՝ յորժամ *մարդն* մեռանի աշխարհի. մտանելով ի կրօնաւորութիւն: - 610. Դարձեալ՝ բանն աստուած փեսայ կոչի հարսին եկեղեցւոյ. և զօտար բնութիւնս *մարդկան* միաւորեաց ընդ ինքեան: - 612. Նա՛խ՝ զի մին կին ետ աստուած մին *մարդոյն* ադամայ՝ ի յօգնութիւն. նոյնպէս և ամենեցուն օրինադրեաց: - 612. Այսպէս և *մարդս* եկեղեցի՝ յոսկերաց և յերակաց և ի մսոյ: - 613. Եւ *մարդս* է եռայարկեան. մարմինն արտաքին. և հոգին ի միջին. և իմացումն առաջին: - 613. Եւ *մարդս* խաչաձև է. - 613. Իսկ *մարդս* եկեղեցի, մկրտի ջրով և դրոշմի սուրբ մեռոնաւ...: - 614. Նա՛խ՝ զի վասն յանցանաց *մարդոյն* ադամայ դատապարտեցան տարերք. հող, ջուր, և այլն...: - 615. ...որ *մարդն* զինքն յառաջ պատրաստէ՛ և ապա՛ աղօթէ ...: - 620. ...եկն ի յերկիր որ է՛ արևմուտք և խաւար. եղև որդի *մարդոյ*: - 621. Զի հասակ ամենայն *մարդոյ* ի չորս փոփոխի: - 622. Եւ սոքօք զամենայն բարի և զչար գործէ *մարդ*. վասն որոյ ի ցերեկն ե անգամ աղօթեմք: - 622. Նա՛խ՝ զի հոգի և մարմին է *մարդն*: - 623. Նա՛խ որպէս սովորութիւն է *մարդկան* որք զաղերսն ընծայեն ի դրունս մեծամեծացն, և նոքա՛ մատուցանեն թագաւորին: - 624. ...զի քահանայն միջնո՛րդ է առ աստուած և առ *մարդիկ*: - 624. Եւ յորժամ քահանայն ասէ զխաղաղութիւնն՝ ա՛յս է պատճառն, զի քահանայն է՛ միջնորդ առ աստուած և առ *մարդիկ*. - 625. Չորրորդ՝ *զմարդկան* և զհրեշտակաց երգն ի միասին խառնեալ: - 627. Եւ ի պահքն առաւել ձայնաւորքն քան զերգս. զի յաւուրս պահոց՝ հրեշտակաց նմանիմք, և յուտիքն *մարդկան*: - 628. Այլ և նշանակէ՛ *զմարդիկ* ընդ հրեշտակաց և զիրէայս և զհեթանոսս խառնեալ ի մի եկեղեցի: - 629. Նոյնպէս *մարդս* ի մանկութեանն անմեղ է, և ի մեռանիլն մոռանայ զաշխարհս...: - 630. Եւ այս է մեկնութիւնն. թէպէտ հրէայքն որպէս յանցաւոր *մարդ* սպանին՝ սուրբ աստուած և ո՛չ սոսկ *մարդ*: - 632. Յայտնապէս բաժանեն զխաչեալն քրիստոս և սոսկ *մարդ* խոստովանին: - 633. ...զի ճառ խաչին պատւակա՛ն է առ աստուած և առ *մարդիկ*. և փառք քրիստոսի է խաչն և կատարումն ամենայն տնօրէնութեանցն: - 634. Սոքա քաղկեդոնին են. որք բաժանեն զբանն ի մարմնոյն. և զխաչեալն՝ *մարդ* սոսկ և տկար և մահկանացու խոստովանին: - 635. Այլ և այսպէս **բ** որմունք լինելոց են ի հանդերձեալն. այսինքն է մին հրեշտակաց և միւսն *մարդկան* սրբոց յաւիտենից փառաբանիչք: - 636. Դարձեալ՝ ի հանդերձեալն յորժամ խառնին հրեշտակք և *մարդիկք* ի լնուլ զտեղի անկելոց՝ կուսանաց սրբոց: - 636. Օդոյն *մարդոյ*: - 640. Առաջին ձայն՝ աստուծոյ, ի ստեղծումն *զմարդն* ի հողոյ: - 640. Նա՛խ՝ զի *մարդն* հոգի է և մարմին, ձայնիւ և ձեռօք երգէր. զերկու մատունս ի մի լծակցեալ յօրհնութիւնն աստուծոյ: - 641. Երրորդ՝ զի քաղցր ձայնիւ հեշտացեալ *մարդիկ*՝ զանխլաբար ուսցին զհոգւոյն բանս: - 641. և *մարդս* գլուխ է արարածոց...: - 641. Այլ երկրորդ են լոյսք յետ արարչին. և առաջին քան *զմարդիկ*...: - 642. Ասեմք նա՛խ՝ թէ մարգարէքն իբր յառաջասաց՝ պատմեցին զմարդեղութիւն բանին և զփրկութիւն *մարդկան*: - 643. Իսկ սաղմոս տուննն է երգ *մարդկան*. այսինքն է զի հրեշտակք և *մարդիկ* միաբանեալ օրհնեմք զաստուած փրկիչն մեր որ խօսի ընդ մեզ: - 644. ...և օրէնս եդ որ հանգչէր *մարդ* ի մարմնական գործոց յաւուրս և ի շաբաթս, յամիսս և ի տարիս...: - 647. Ամենայն պահք աստուծոյ է և ո՛չ *մարդոյ*...: - 650. Խորհուրդ պահոց նախ ի դրախտին եղաւ *մարդոյն*. յամենայնէ ուտել և ի միոյն չուտել: - 652. Երկրորդ, զի կրկին եմք *մարդ*. այսինքն հոգի և մարմին...: - 655. Զի յերից եմք գոյացեալ *մարդ*. հոգի և մարմին և միտք: - 655. Երկրորդ՝ Վասն է փոփոխման *մարդոյն*: - 660. Քսանևմի, Յամանգամայն յառնեմք. և վասն կերակրոյ. և կերեալ *մարդոյ* ի գազանաց: - 660. Քսան**բ**, ճանաչման

հոգւոց. և որպիսութեան *մարդոյ*: - 660. Վասն է՞ր է զի աստուած նախ զայս՝ և ապա զայն կեանքն տայ *մարդոյս*: - 662. Նա՛խ՝ այն կեանքն անապական է և անմահ. և *մարդս* մահկանացու և ապականելի. - 662. Երկրորդ՝ այն տեղի անմարմնո՛ց է ոչ կարէր *մարդս* մարմնով անդ բնակիլ. - 662. Երրորդ՝ կրկին է *մարդս*. որ է՛ հոգի և մարմին. և **բ** աշխարհս. այսինքն երկին և երկիր: - 662. Հինգերորդ՝ *մարդոյս* պիտոյ էր ժամանակաւ աճումն. զի թուով առցէ զկատարումն վերջին ընտրելոյն: - 662. Ո՞ր քան է փոփոխումն *մարդոյ*: - 663. Մեծութիւն *մարդոյ* պատճառի՛ ի չորից: - 664. Նախ՝ զի թէ բարի է *մարդն*, ընտրէ՛ աստուած և տայ զմեծութիւնն որ կարօտելոց ի գո՛րծ ածէ ...: - 664. Երկրորդ, թէ չար *մարդ* լինի, տայ աստուած զմեծութիւնն՝ - 664. Երրորդ, և վա՛տ *մարդոյ* տայ մեծութիւն...: - 664. Երկրորդ, տայ զաղքատութիւնն և փորձէ *զմարդն*. - 664. Նոյնպէս և *մարդն* թէ համբերող է թէ ոչ: - 664. Երրորդ, զլաւ *մարդն* աղքատացնէ և փորձէ, թէ վասն ընչի՞ցն սիրէր զաստուած՝ թէ յաղքատութեանն այլ նոյնպէս է. որպէս յոբայն: - 664. Եւ զի մի՛ *մարդիկ* թիւրեսցին արտաքոյ բնութեանս լեալ: - 665. Եւ թէպէտ *մարդ* ո՛չ գիտէ զօր մահուն իւրոյ, այլ երիս իրս տուեալ է աստուած ի զգուշութիւն մեզ և կարապետ մահուն: - 665. Նախ ճանապարհ կոչի ծնունդն. որով ի կեանս գամք ըստ հասարակութեան ընթացից *մարդկան*: - 665. Նախ աստ հոգի *մարդոյն* է ի մէջ չարեաց և բարեաց. իսկ յետ մահու ի մէջ բարեաց միայն. և ի յարութեանն ի մէջ բարեաց և փառաց: - 667. Նոյնպէս և մեղաւոր *մարդն* աստ մեղանչէ. - 667. ...և *մարդն* կեայ հոգևոր և աստուածային...: - 668. Եւ յորժամ չարութեամբ հոգին նուազի, մարմինն զօրանայ և լինի *մարդն* շնչաւոր և անբան...: - 668. ...վասն այն հող ի գլուխ արկանէ *մարդ* ի ժամ սգոյ. այլ և ի վերայ մեռելոյն: - 670. Եւ որպէս այս բնական եղև ի մեզ ամենայն *մարդոյ*: - 670. Վեցերորդ, զբոլոր *մարդոյն* յարութիւնն և զբոլորին փրկութիւնն և զսրբութիւնն նշանակէ որ է՛ հոգին և մարմինն...: - 672. Երրորդ, զի երիւք մեղանչէ *մարդ*. այսինքն մտօք և բանիւ և գործով մարմնոյ...: - 675. Հինգերորդ, զի **գ** է հասակ *մարդոյս*. մանկութեան երիտասարդութեան և ծերութեան յորում փոփոխիմք վարուք. վասն սոցա **գ** հանգիստ դնեմք: - 675. Իսկ չափաւոր արտասուել պարտ է ամենայն *մարդոյ* ի տեսանել զմեռեալն. - 676. Նախ ի դէմս դրախտին ուստի արտաքսեցաւ *մարդն*: - 677. Նա՛խ՝ պատուեմք *զմարդն* որ է՛ պատկեր աստուծոյ...: - 677. ...որպէս սերմանիքն թաղեալ կենդանանան և բուսանին. նոյնպէս և *մարդոյս* մարմին: - 677. Իսկ վեցերորդ պատճառ վասն հասարակաց ամենայն *մարդկան*, զի ի հողոյ սկսաւ, դարձեալ ի հող վախճանի մարմինն...: - 678. ...պատժեաց *զմարդն* և ետ զնա ի կերակուր օձին...: - 678. ...այլ և մեղօքն կապի *մարդ* յերկինս և յերկրի...: - 680. Դարձեալ՝ կրկին է օր *մարդոյ* թէպէտ յերկար ապրեսցի. այսինքն մին օր ծննդեանն, և մին օր մահուան: - 680. Երկրորդ՝ զի **գ** օր են ամենայն աւուրք *մարդոյ*. այսինքն օր ծննդեանն. օր սննդեանն. և օր մահուանն: - 681. ...իսկ *մարդ* զերեքեանն ունի. վասն որոյ երեքօրեայ յիշատակ կատարեմք: - 681. Իններորդ, **գ** տեղիք *մարդկան* նշանակեցաւ յեռայարկ խորանն մովսէսի. առաջին միջին և վերջինն: - 682. Հոգիքն ո՞րպէս երևին *մարդկան*: - 685. ...նման է պղատոնի մարմնափոխութեանցն. որ ի բանական *մարդոյն* ի զգայականն, և անտի ի տունկն ասեն...: - 687. ...և սոքա ո՛չ գան ի դատաստան. այլ ի դատել զհրեշտակս և *զմարդիկ* ըստ առաքելոյ: - 688. Ապա թէ ոչ՝ ո՛չ կարէ մեղաւոր հոգին ելանել յերկինս. ուստի և հրեշտակք վասն մեղաց անկան. և *մարդն* ի դրախտէն: - 689. Որք ո՛չ թլփատեցան ի հինն և ոչ մկրտեցան ի նորս, կամ չարք ի *մարդկանէ*, ունին զդատապարտութիւնն զոր զրկելոց են ի դատաստանին զանազան տանջանս և ո՛չ այժմ: - 690. Երրորդ, ասէ առաքեալն թաղէոս, եթէ հոգի ամենայն *մարդոյ* որ ելանէ ի մարմնոյ, են նոցա օթևանք և բնակութիւն ի հանգստեան...: - 691. Եւ թէ մասն *մարդոյն* որ է հոգին՝ տանջի այժմ վասն մեղաց և մարմինն հանգչի, այս ո՛չ է ուղիղ, նոյնպէս և զփառսն: - 694. Արդ եթէ սիրելիքն աստուծոյ որք զարիւնս իւրեանց հեղին վասն քրիստոսի՝ ոչ առնուն զվարձս իւրեանց, նմանապէս և ամենայն ազգ *մարդկան*: - 694. **Երեսուներորդ, յա՛յտ է յորպիսութեանցն չորից որ ասացաւ յառաջագոյն եթէ աստ հոգի *մարդոյն* է ի մէջ բարեաց և չարեաց. իսկ յետ մահու ի մէջ բարեաց միայն. իսկ ի յարութեանն ի մէջ բարեաց և փառաց:** - 694. ...իսկ հոգի *մարդոյն* յանհնարինս մտեալ երթայ առ միտս որ է՛ երրորդ բարեկամ և խնդրէ բարիս...: - 697. Ասեմք եթէ՝ ձայնիւն և պսակաւն եցոյց *մարդկան* և լսեցոյց ի յաչս և ի յականջս թէ զայնպիսի կեանս վիճակեցին նոքա որք սուրբք են ի մարդկանէ ...: - 697. Ասեմք եթէ՝ ձայնիւն և պսակաւն եցոյց մարդկան և լսեցոյց ի յաչս և ի յականջս թէ զայնպիսի կեանս վիճակեցին նոքա որք սուրբք են ի *մարդկանէ*. - 697. ...ապա ի յարութեանն ո՛չ է բոլոր *մարդոյն* հատուցումն. այլ մարմնոյն միայն որպէս ցուցաւ: - 700. Ա՛յն է որ սատանայ խաբէութեամբ և բռնութեամբ զօրացեալ էր և իշխան եղեալ ի վերայ *մարդկան*. ի կեանս զանազան չարեօք և կռոց պաշտմամբ...: - 705. Եւ պօղոս՝ *մարդ* անօրէն և ապստամբ և որդի կորստեան ասէ: - 707. Ո՞րպէս պատրէ *զմարդիկ*: - 708. Չորիւք եղանակօք քարշէ ընդ ինքեան *զմարդիկ*. - 708. Բայց

ի կատարածի փոքրիկ լինին հասակք *մարդկան* քան զմերս. որպէս մերս քան զառաջնոցն: - 708. ...զի նուազեսցին դժնդակութիւնք և պատրանք *մարդկան* և սատանայի: - 709. ...եթէ սուրբք որ աստ չարչարեցան, յառնեն յառաջագոյն և փափկանան մարմնով ռ ամ. և ապա հասարակ յարութիւնն ամենայն *մարդկան*: - 710. Եւ ընդ դէմ սմա կրկին է անկումն որ է՛ մահ. վասն զի կրկին է *մարդն*. այսինքն հոգի և մարմին: - 710. Նոյնպէս և զօրք հրեշտակաց և *մարդիկ* երկիր պագանեն սրբոց. վասն որոյ թագաւոր թագաւորաց են և տէր տէրանց. - 711. Երկրորդ, որպէս չորք կենդանիքն զվեհագոյնս և զնախամեծարս երկնայնոցն ցուցանեն. նոյնպէս և իդ երիցունքն զնախամեծարս ընտրելոցն *մարդկան*. - 711. Երրորդ, որպէս **իդ**ն բազում է քան զչորսն. նոյնպէս կարծի վեհագոյնքն ի *մարդկանէ* բազում գոլ քան զվեհագոյնս երկնայնոցն: - 711. ...որ զմեծամեծս աւետարանեն. և միջնո՛րդ են մահու և յարութեան *մարդկան*: - 713. Այնպէս եղիցի լի *մարդկամբ* որպէս այժմ է. և այնպէս յիւրաքանչիւր գործս որպէս այժմ: - 714. Գո՞յ յարութիւն *մարդկան* թէ ոչ: - 714. Երկրորդ, զի հոգին *մարդոյ* անմա՛հ է վասն **բ** պատճառի: - 715. Երրորդ, *մարդն* մասն և կատարումն է աշխարհի. - 715. զի կամ իմանալիք են որպէս հրեշտակք. կամ զգալիք որպէս տարրեղէնք. և կամ յերկուց գոյացեալ որպէս *մարդ*. այսինքն ի հոգւոյ և մարմնոյ...: - 715. ...իսկ թէ *մարդս* ոչ յառնէ, աշխարհ անկատար մնայ. զի բոլորն մասամբն է կատարեալ: - 715. ...որ հեղու զարիւն *մարդոյ* փոխանակ նորա հեղցի արիւն նորա...: - 715. Եւ բաւական է սակաւս ի բազմաց սուրբ գրոց վկայութիւն եթէ գոյ ճշմարտապէս յարութիւն *մարդկան*: - 716. Նաև անդանօր ետես նախանըկար տեսչութեամբ զորքանութիւն *մարդկան* ըստ թւոյ: - 716. Եւ զորպիսութիւն բարեաց և չարեաց. և զերկայնութիւն ժամանակին որով թիւ *մարդկան* զլրումն առցէ: - 716. Եւ ի նոյն կէտ լրմանն որ է՛ վախճան ժամանակի և սկիզբն յաւիտենի՝ լինի վերառութիւն համայնից *մարդկան* որպէս գրէ առաքեալն կորնթացւոց. - 716. Երկրորդ, *մարդս* մա՛սն է աշխարհի. զի մարմինն է ի չորից տարերց. - 717. ...այլ յորժամ բոլոր արարածք ազատեսցին յապականութենէ ծառայութեան որպէս գրէ հռօմ յայնժամ և մարմինք *մարդկան* յանապականութիւն վերափոխեսցին: - 717. Չորրորդ, զի ամենայն մարմինք *մարդկան* միանգամայն ստեղծան ի կողմանէ առաջին նիւթոյն. - 717. ...ըստ այնմ որ արար աստուած *զմարդն* ի հողոյ: - 717. Պարտ է ապա զի ամենայն մարմինք *մարդկան* համանգամայն յարիցեն ի յաւուրն վերջին: - 717. Հինգերորդ, զի մեծ ուրախութիւն է և տօն յորժամ համանգամայն ամենայն *մարդկան* յական թօթափելն լիցի յարութիւն, քան յայլ և այլ ժամանակս. - 717. Ասեմք առ այս, եթէ մարմին *մարդոյ* բաժանեալ ի հոգւոյ, և հոգին գնացեալ ի կայանս հոգւոց առ աստուած որ ետ զնա՛. և մարմինն ի հող լուծեալ կամ յայլ տարերս...: - 718. ...և թէ ի գազանաց և ի թռչնոց և ի ձկանց կամ ի *մարդոյ* ուտի, և նոքա ևս ի տարերս լուծանին: - 718. Կերակուրս զոր ուտեմք՝ յառնէ՞ ի *մարդն* թէ ոչ: - 718. Գիտելի է, զի ոմանք ասեն թէ կերակուրս զոր ինչ ուտեմք ո՛չ յառնէ ի *մարդն*. - 718. Ապա թէ կերակուրքս այսքիկ յառնեն ի *մարդն*, լինի *մարդոյ* մարմինն կարի անհեթեթ: - 718. Եւ դարձեալ՝ ո՛չ միայն *մարդոյս* մարմինն, այլ և անշնչից և շնչաւորաց զոր ինչ ուտեմք յառնէ՛ ասեն որ է՛ անպատշաճ: - 718. Ասեմք առ այս թէ՝ են նիւթ ի *մարդն* որ յառնեն և են որ ո՛չ: - 718. ...և նիւթ կերակրոյն՝ այն մասն որ փոխեցաւ ի գոյացութիւն մեր՝ յառնէ՛. զի մարմին եղև *մարդոյն* այլ աւելորդքն ո՛չ յառնեն: - 718. Զի թէ սկզբնական նիւթն միայն յառնէ, մարմին *մարդոյ* ամենևին փոքրիկ և անկատար լինի: - 718. Եւ տէրն վասն կերակրոյն ո՛չ ասաց թէ ի մարմին *մարդոյն* ո՛չ հաւասարի. այլ զայն թէ՝ դառնութիւն և ծանրութիւնն արտաքս ելանէ ...: - 718. Ապա ուրեմն կենդանեաց մարմինն ոչ յառնէ ի մեզ ըստ բոլոր նիւթոյն, այլ ըստ չափոյ զօրութեանն որ փոխեցաւ ի մեզ և եղև մարմին *մարդոյ*, ա՛յն մարմինն յառնէ: - 718. Թէ զձուկն զայն որ եկեր զմարմին *մարդոյ*՝ ուտէ *մարդ*, և յայնմ սերմանէ ծնանի զա՛յլ *մարդ*. ի յորո՞յ մարմին յարիցէ: - 718. Մարմին *մարդոյն* զոր եկեր ձուկն՝ ո՛չ յառնէ ի ծնեալ *մարդն* այլ ի կերեալն: - 718. Այսպէս և թէ որ *զմարդոյ* մարմին ուտէ և ծնանի ա՛յլ *մարդ*, մարմին *մարդոյն* ո՛չ յառնէ ի ծնեալ *մարդն* և ո՛չ ի ծնօղն որ եկեր, այլ ի կերեա՛լն *մարդ*: - 718-719. Որոյ պատճառ է, զի մարմին կերեալ *մարդոյն* է իւրն նիւթ գոյացական և սոցա եղև նիւթ պատահական: - 719. Ո՞րպէս ի հասարակ տարրէ՛ մարմին *մարդոյ* անխառնապէս ժողովի: - 719. Այսպէս և ի մարմին *մարդոյ* ոչինչ խառնի ի հասարակ տարերաց ի յորս լուծաւ. այլ ինքն միայն գոյացութիւն մարմնոյն խառնեսցի ընդ հոգւոյն: - 719. Նմանապէս և մարմին *մարդոյ* առ հասարակ մեռանին և ի հող լուծանին և յայլ տարերս. և յորժամ յառնեն՝ ո՛չ ունին ի հասարակ տարրէ ընդ ինքեանս. և այս մարմին ի յայն մարմնոյ ոչ ինչ ունի խառնումն: - 719-720. Ոմանք ասացին թէ ի յարութեանն մարմինք *մարդկան* ի հոգի փոխին: - 720. Եւ դարձեալ ոմանք ասացին թէ՝ ի յարութեանն մարմինք *մարդկան* օդային լինին կամ հողմային. զի երբեմն ի գրոց հողմ և օդ հոգի կոչի: - 720. Եւ այլք ոմանք ասացին թէ՝ մարմինք *մարդկան* ո՛չ լինին երկրային, այլ երկնային...: - 720. Եւ դարձեալ ոմանք

հերձուածօղք ասացին թէ՝ այս մարմինս ո՛չ յառնէ և ո՛չ այս *մարդ* որ մեռանի. այլ փոխանակ նորա նոր *մարդ* յառնէ: - 720. Դարձեալ գիտելի է, զի պօղոս ի կորնթացոցն զհատ սերման՝ օրինակ տայ յարութեան *մարդկան*...: - 720. **Նա՛խ՝ զի որպէս նախ սերմանի և ապա բուսանի. այսպէս և *մարդն* նախ մեռանի և ապա՛ կենդանանայ**...: - 720. **Նոյնպէս և մարմինք *մարդկան* մերկ թաղին՝ այլ մերկ ո՛չ յառնեն. բայց գեղեցիկ յոյժ և պատուական զգեստով զարդարեալ:** - 721. Վասն զի *մարդն* յայսմ աշխարհի եօթն պակասութիւն ունի. **գ** հոգւոյ և **դ** մարմնոյ...: - 722. Հինգերորդ, ստեղծաւ *մարդն* հաւասար հրեշտակաց. և յորժամ մեղանչեաց՝ անասնոց հաւասարեցաւ ըստ դաւթի և ընդ նոսա ապականացաւ և պատժեցաւ. - 724. Վեցերորդ, կրկին են կեանք. մահկանացու և անմահ. և կրկին է *մարդն*. մահկանացու և անմահ: - 724. Իններորդ, հոգին և մարմինն են մի անձն *մարդոյ*. վասն որոյ փոխակրեն ի միմեանց զբարիս և զչարիս: - 724. **Տասներորդ, գործք *մարդոյ* անցաւոր է որպէս ինքն. իսկ հատուցմունքն աստուծոյ մշտնջենաւոր որպէս նոյն ինքն. վասն որոյ յարուցանէ անմահ, զի հատուցէ ոմանց զփառս և ոմանց զտանջանս անմահ մարմնով:** - 724. Ամենայն *մարդ* յառնէ՞ ի մեռելոց թէ ոչ: - 724. Ասեն վարդապետք թէ ամենայն *մարդ* յառնէ՛: - 724. Եւ ա՛յս է պատճառ յարութեանն. զի ամենայն *մարդիկ* առնուցուն զվարձ կամ զպատիժ. կամ վասն իւրեանց գործոց, կամ վասն սկզբնականին: - 724. Որոյ պատճառ է, զի *մարդն* հոգւով և մարմնո՛վ է կատարեալ: - 725. Եւ որպէս հոգին ունի զզօրութիւն իւր անպակաս. նոյնպէս և անդամք մարմնոյն պարտ է լինիլ անպակաս զի իցէ կատարեալ *մարդ*: - 725. Եւ թէ ոք ասիցէ, բազում անդամք են կենդանականք, որպէս սիրտն լեարդն թոքն և այլքն որք ի յարութեանն ո՛չ են պէտք. զի ո՛չ է հարկ կենդանութիւն *մարդկան*: - 725. որպէս ստինքն զի ո՛չ է պէտք կաթին, այլ առնէ վասն կատարելութեան և գեղեցկութեան *մարդոյն*: - 725. Զի յարիցեն *մարդիկ* ըստ գոլոյն՝ և ամբողջ գոլոյն՝ և գեղեցիկ գոլոյն: - 725. Գոլն է որպէս *մարդն* հոգի և մարմին: - 725. Յանմարմնոցն հրեշտակք և դևք. և հոգիք *մարդկան*. իսկ ի մարմնոց երկնային մարմինք և **դ** տարերք և մարմինք *մարդկան*. և այլք ամենայնքն ապականին և յիւրաքանչիւր տարերս ժողովին: - 727. Իսկ մարմին *մարդոյս* թէպէտ ապականացո՛ւ է, այլ ի կողմանէ հոգւոյն անապակա՛ն է. վասն որոյ անապական մնան: - 727. Երկրորդ՝ զի կենդանիք և բոյսք ստեղծան վասն մարմնաւոր կենդանութեան *մարդկան*...: - 727. ...իսկ *մարդիկ* ի յարութեանն ո՛չ են կարօտ կերակրոյ զի անմա՛հ են. վասն այնորիկ նոքա ո՛չ յառնեն: - 727. Եւ են ինչ որ պատահմամբ անցանեն և էութեամբ մնան. որպէս երկնային մարմինք և **դ** տարերքս և *մարդոյս* մարմին. սոքա պատահմամբ անցանեն և գոյացութեամբ մնան: - 727. Նա՛խ՝ զի ապականեցան տարերք վասն յանցանաց *մարդոյն*, պա՛րտ է զի ընդ *մարդոյն* նորոգեսցին և նոքա: - 727. Երկրորդ, զի առնեն զվարձս վաստակոցն զոր սպասաւորեցին *մարդկան*: - 727. Երրորդ զի պարզի հալեալ մոմ. այսպէս սևութիւն և թանձրութիւն երկրի ի դժոխս ժողովին և մարմինք *մարդկան* յերեսս երկրի: - 728. Հինգերորդ՝ հոգիք *մարդկան* ի յերկնից խոնարհին և միաւորին ի մարմինս իւրեանց: - 729. Ա՛յս է գալարիլն նոցա, զի երկինք և երկիր տիւ և գիշեր միաբանեալ վկայե՛ն գործոց *մարդկան*: - 729. Զի ուր և գործեցին *մարդիկ*՝ գիտեն երկինք և երկիր: - 729. Թէպէտ ո՛չ ունին բանք և ոչ խօսք, այլ ընդ ամենայն երկիր ել բարբառ վկայութեան նոցա. զի ամենայն տեղիք և ամենայն ժամանակք *մարդկան* առ նոսա է՛ յայտնի: - 729. Երրորդ՝ զի ժամանակ *մարդոյ* մինչ ի վախճան իւր փոքր է և սակաւ: - 730. Չորրորդ՝ զի յանկարծակի լինի և ի համառօտ ժամն մահ *մարդոյ* և կատարած աշխարհի: - 730. Եւ երիւք պատրաստի *մարդ* ի գողոյ: - 730. Եւ յիրաւի նախ ջրով. զի յայնժամ ջերմացեալ էին *մարդիկ* ի ցանկութիւն մեղաց, վասն որոյ ջրով պատժեցան: - 731. Իսկ ի կատարածի ցրտացեալ լինին *մարդիկ* ի սիրոյն աստուծոյ իբր ծերացեալ աշխարհի. վասն այն ջերմ հրով պատժեսցին: - 731. Երկրորդ՝ զի հուրն կրկին ունի զօրութիւն. այսինքն զլոյսն և զայրելն. և կրկին լինին *մարդիկ*. այսինքն արդարք և մեղաւորք. - 731. Դարձեալ յուշ առնէ *մարդոյ* զչարչարանքն քրիստոսի. և խնդրեսցի ի նոցանէ մահն քրիստոսի իբր զգին որ տըւեալ է նոցա, և նոքա յափշտակեցին զինքեանս ի նմանէ: - 732. Երկրորդ՝ զի թէ *մարդոյ* մարմին որ է՛ բանական և կենդանի՝ ապականի մահուամբ. ապա ուրեմն և խաչն ևս ապականի զի ո՛չ կենդանի է և ո՛չ բանական: - 732. Իսկ երկրորդին այսպէս պատասխանեսցուք ընդդիմայարակայութեամբ. զի *մարդոյ* մարմին ապականի. վասն զի քակտի ի նմանէ կենդանացուցիչ նորին հոգին. - 733. Նմանապէս և խաչն աստուծոյ՝ է՛ ի կամացն աստուծոյ և ի նորին ներգործութենէն որ անապական կամի զնա. զի նովաւ արար փրկութիւն ազգի *մարդկան*: - 733. Երրորդ, զի որդի է՛ նման հօր. իսկ հրեշտակք և *մարդիկ* շփոթեցին յինքեանս զնմանութիւնն յոր ստեղծան. - 735. Նախ կոչի աթոռ նշանակ հանգստեան. որպէս հասարակաց *մարդկան*: - 736. Հինգերորդ, զի դիցէ զքշնամիս իւր ի ներքոյ ոտից իւրոց. այսինքն կորուսցէ զնեռն և զսատանայ և զամենայն գայթակղութիւն *մարդկան*՝ զմեղս և զմահ. - 737. Երրորդ՝ կենդանի են դևք. և մեռեալ՝ *մարդիկ*.

որս դատէ՛ աստուած և սուրբք ամենայն: - 740. Նա՛խ՝ զի յերի՛ց է *մարդն*. հոգի մարմին և շունչ գոյացեալ. ի քակտումն սոցա **գ** վկա՛յ է պիտոյ: - 742. ...զի *մարդոյ* ի բարի գործս հակեալ՝ հարստահարի՛ արդարութիւնն յողորմութենէն. և թէ ի չարն հետևիմք՝ ողորմութիւնն յարդարութենէն: - 745. Երկրորդ, զի միջնո՛րդ է հօր աստուծոյ և *մարդկան* հաշտութեան: - 745-746. Երրորդ, զի ի կշիռ արդարութեան դատեաց ի մէջ հրէից և հեթանոսաց. *մարդկան* ազգի և սատանայի: - 746. Չորրորդ, կշիռն նշանակէ՛ զգործս *մարդկան*...: - 747. Իսկ կշռողականն է զոյգ արդարութեամբ կշռել. որպէս յորժամ ողորմելով միոյն՝ պատժէ՛ զընդդիմակն նորին. որպէս փրկեցաւ իսրայէլ և պատժեցաւ եգիպտոս. և յազատիլ բնութեան *մարդոյս*՝ պատժեցաւ սատանայ: - 747. Յարութիւն *մարդկան* ի վայրկեան ժամանակի և յանկարծակի լինի որպէս ցուցաւ ի վերոյ. այլ զյերկարութիւն ժամու քննութեան դատաստանին, ոմանք ժամ մի ասեն. որքան եկաց ընդ ադամայ ի քննութիւն հարցմանց յետ յանցանաց նորին: - 747. Այլ զի մի՛ իրողութիւն դատաստանին և յարութեան ուրուական և առ աչօք թուեսցի ընդհանուր ամենայն *մարդկան*...: - 747. Ուստի երևի **զ** ժամս ի յարութենէն մինչ ի վճիռ հատուցման և կորստեան չարաց չորեքկին. այսինքն գործոց չարաց և պատժոց նոցին. պատճառաց դիւաց և հետևելոց *մարդկան*: - 748. Երկրորդ՝ ի ստեղծումն յարարչութեան բոլորից՝ ուրախ եղև տէր յարարածս իւր և յորդիս *մարդկան* ըստ սողոմոնի: - 748. Երրորդ՝ ի փրկութիւն *մարդկան* ի ձեռն մարդանալոյ բանին: - 748. Երրորդ հնձան է իւրաքանչիւր սիրտ և անձինք արդարոց. որ հաստատեալ է հաւատով յորթն ճշմարիտ և պտղաբերէ՛ զողկոյզ բարեաց. և չարչարանօք ճմլէ՛ յինքեան զուրախարարն գինի հրեշտակաց և *մարդկան*. և այսոքիկ բարեա՛ցն են հնձան: - 749. Նախ վասն *մարդոյս*. զի մին մեղացն կրկին հատուցանի ատ հոգւով և մարմնով. իսկ եօթնպատիկն է՛ ի հուրն յաւիտենից: - 750. Երկրորդ՝ զի *մարդկան* ազգի կրկին է հատուցումն...: - 750. Վասն հինգերորդին, որք աստէն զխրատս ընդունել ո՛չ կամեցան և ընդ *մարդկան* տանջիլ ո՛չ արժանացան. վասն յանորիկ արդարապէս անդ՝ անդադար հարկանին ուռամբ: - 752. Ո՞րպէս գտանեն *զմարդն*: - 753. Եւ վասն այն ասի արքայութիւնն աստուծոյ, զի պատուիրանօքն որ յաւետարանն կամ յայլ գիրս սուրբս գտանին, պահողացն արքայութեանն մուտ բացեալ լինի. և ներքին *մարդս* ամրացեալ հաստատի: - 754. Իսկ Չորրորդն արքայութիւն՝ է՛ յաւիտենականն գաւառ. յորմէ ի ձեռն մեղաց առաջնոյ *մարդոյն*՝ տարեալք պանդխտիմք յայսմ տառապանաց գբի և ի տիղմ կաւոյ. անարգաբար դեգերեալք ի հովիտս արտասուաց. յանապատի կալով և ո՛չ ի ճանապարհի...: - 756. Այլ և արդեամբք սրբոց ոռոգեցաւ, լիցի որպէս զդրախտ աստուծոյ անուշահոտ ծաղկօք և մանուշակօք և *մարդօք* զարդարեալ և գեղեցկացեալ: - 759. Նոյնպէս և ջուրն որ հպեցաւ ի մարմին փրկչին, և ծնաւ *զմարդիկ* որդիս աստուծոյ, նորոգեսցի և պայծառասցի քան զամենայն տեսիլս գեղեցկագոյն ականց: - 759. Եւ դժոխքն տեղիք դիւաց և *մարդկան* չարաց: - 760. Որքան մնացին հրեշտակք ի յերկինս, նոյնքան և բազմութիւնք ի *մարդկանէ* ընտրեսցին: - 760. Զոր ակն ո՛չ ետես, և ունկն ո՛չ լուաւ, և ի սիրտ *մարդոյ* ո՛չ անկաւ, զա՛յն է պատրաստեալ աստուած սիրելեաց իւրոց: - 761. Որպէս ասեն վարդապետք, լցեալ առ ժամայն ամենայն անոյշ և քաղցր ուրախութեամբ, տեսանեն *զմարդն մարդկան* արարիչ: - 763. Որպէս գլուխ *մարդոյ*՝ զբարիս կամ զչարիս հատուցեալս անդամոց իւրոց՝ ինքեան համարի: - 763. Առաւել պարտ էր *մարդկան* վաստակիլ միայն՝ զի կարասցեն գոլ ի միում աւուր ընդ երանելի սրբուհւոյ աստուածածին կուսին. քան բազում վաստակիլ վասն յաւիտենական փառացն: - 763. Երրորդ այնու՝ զի մեղքն որ յոյժ վտանգեաց *զմարդիկ*, եղիցի փակեալ ի դժոխս զկնի աւուրն դատաստանի. զի եղիցի ի դժոխս իբր ի տեղւոջ իւրում. զի ո՛չ կարասցէ մնալ. ո՛չ յերկինս և ո՛չ յերկրի. այլ իջանէ ի դժոխս ներքինս: - 764. Զի նովաւ զովացան ամենայն ազգք. և բժշկեցան վէրք հոգոց *մարդկան:* - 768. Դարձեալ՝ ծառ կենաց է տունկն իմաստութեան որ ի յերկնից առ *մարդիկ* տնկեալ: - 768. Յաւատ ի մի աստուածութենէն ի *մարդիկ* շնորհի: - 769. Յաւատ ի տրնօրէնութենէն որդւոյ ի *մարդիկ* սփռի: - 769. Դարձեալ՝ ի *մարդոյ* ի հայր և յորդի և ի սուրբ հոգին: - 769. Միովն ստուգէ՛ զաստուածութիւնն. և միովն հաստատէ՛ *զմարդն* կատարեալ. և երկրորդիւն անքակ և անշփոթ և անբաժան զմիութիւնն յայտնէ: - 770. Ծնունդն, զօրութիւնն, մահն, ընդ աջմէ հօր նստիլն, և այլն ամենայն, զաստուած ի *մարդում*, մանաւանդ *զմարդ* յաստուածում ըստ սքանչելագործին գրիգորի ցուցանեն: - 770. Զի հասարակա՛ց է ամենայն *մարդոյ* կատարելոց և անկատարից, զի ի յանդիմանութիւն յանդիմանելեացն առհասարակ դժկամա՛կ երևի ի սկիզբն. թէպէտ ընտրողութեամբ լաւին ընդունին զխրատն: - 774. Առ այս ասեմք, թէպէտ է՛ ամենայն իր բնութեամբ նա՛ և հասարակ. որպէս և սևութիւն ագռաւու. այլ ո՛չ անդրադարձեալ. զի է՛ ինչ բնութեամբ, այլ ո՛չ հասարակ. որպէս կնտութիւն *մարդոյ*: - 774. Այսպէս յընդդիմակէն տե՛ս և զայս. զի թէպէտ հասարակա՛ց է *մարդոյ* դժկամակ գոլ խրատու, այլ ո՛չ է բնութեամբ իր: - 774. Եւ մարգարէն երանէ

*զմարդ* զոր խրատէ տէր: - 774. Իսկ ուղղակին. զի մռռացումն բնաւորեալ է առ խառնուած կազմութեան *մարդոյ*. իսկ խրատ՝ յանդիմանութեան է՛ ի ցոյց ինքեան: - 774. Զի հաճելի՛ է բնաւորեալ գովութիւն *մարդոյ*. ըստ որում մեծարեցաւ տիրական պատուով. և է՛ այս հասարակ: - 774. Յասարա՛կ է և բնութեան իր, զի ամենայն ինչ նախնի *մարդոյն* բնութեամբ է ի մեզ և հասարակ իր. և առ յանդիմանութիւն դժկամակ երևեցան նախնիքն մեր. ուստի պատճառեցին զմիմեանս: - 774. Ա՛րդ՝ առաջնոյն ասեմք թէ՝ ի պատկեր արարչին ինքնիշխան տէութեամբ և անմեղութեամբ կազմեցաւ առաջինն *մարդ*: - 776. Եւ այն զի՞նչ իցէ, զի սա միշտ մի և նոյնպէս մնայ. իսկ նա՛ աստանօր ողորմի զղջացելոցն, և ո՛չ ոչ նոյնպիսոյն. իսկ անդանօր ո՛չ զղջացելոց ողորմի *մարդկան* մեղաւորաց և ոչ անզղջից անմարմնոց շեղելոց: - 778. Երկրորդ, ապաշխարութեան ժամանակն ընդունելի է. իսկ որ քան *մարդ* է ի մեղս՝ ո՛չ է հաճոյ աստուծոյ: - 780. Նախ՝ զի ո՛չ է բոլոր *մարդ*. այլ կիսամասնեայ: - 780. Յինգերորդ՝ զի ա՛յլ է որպիսութեամբ *մարդ*: - 780. զի ո՛չ միայն էառ զբնութիւնս. այլ և զնոսա որ շուրջ զբնութեամբն. զի ծանիցի կատարելութիւն առաքինութեանն, և ճշմարտապէս *մարդ* գոլ: - 781. Ամենայն իր բնութեան՝ գոյացակա՛ն է նորին. և ամենայն պարգևք այսինքն շնորհք պատահական է ի զարդ նմին. յաղագս որոյ ո՛չ բառնին գոյացականքն. որպէս անմահութիւն դիւի և բան *մարդոյ*: - 782. Եւ նոյն ինքն տէրն բոլորից վկայ քարոզութեան զգործս կատարէր. զի սովորութիւն է *մարդկան* քան զլուր լսելեաց տեսութեան աչաց հաւանիլ: - 785. Այլ վարկանին ոմանք զքիւ կազմութեան աւուրց պակաս գոլոյ նախնւոյն *մարդոյ*. զորոյ զտիպ յինքն նկարելով և այժմ անդրանիկն ծնունդ՝ յապաղելով զայ աշխարհ: - 785

***ԿԻՆ ՄԱՐԴ +*** Բայց *կին մարդոյն* **դ** ոսկր աւելի՛ է քան զառն. այսինքն է ծննդական անդամոցն: - 243. Եւ *կին մարդոյն* **ը** երակ աւելի՛ է. **դ** երակ ծննդական մասին. և **դ** երակ երկու ստեանցն: - 244. *Կին մարդ* կարէ՞ կնքահայր լինիլ թէ ոչ: - 591. Բայց *կին մարդոյ* ո՛չ է պարտ բանալ զգլուխն, այլ առաւել ծածկել յեկեղեցւոջ: - 635

**ՄԱՐԴԱԴԱՒԱՆ +** Եւ սոքա *մարդադաւան* ուրացօղք խաչին և կրօնից նորոց: - 34. Եւ այժմ առ քեզ խօսեսցուք ըստ վկայութեան կարգիս ո՛վ նեստորական երկաբնակ և *մարդադաւան* որոշօղ քրիստոսի, և որոշեալ ի շնորհաց նորին: - 98. Եւ **բճքն** որ յեփեսոս ժողովեցան ընդ դէմ նեստորի չարափառի և *մարդադաւանի*: - 547

**ՄԱՐԴԱԶԳԵԱՑ** - Ասի դարձեալ՝ աստուած մարմնազգեաց. այլ ո՛չ ասի աստուած *մարդազգեաց*. կամ մարդ աստուածազգեաց. զի այս որոշմա՛ն է: - 79

**ՄԱՐԴԱԾԻՆ +** Եօթնևժերորդ՝ զի թէ ծնեալն ըստ մարմնոյ՝ է առանձնապէս մարդ ապա ուրեմն ծնօղ նորին ո՛չ է աստուածածին, այլ՝ *մարդածին*: - 68. Ապա՛ թէ որոշմամբ ասես աստուած և մարդ, ասա՛ և զծնօղն կոյս՝ աստուածածին և *մարդածին*: - 79. Ապա ըստ այսմ հետևի՝ զի մարիամ մայր քրիստոսի լինի և ո՛չ աստուծոյ. զի լաւ է քրիստոսածին և *մարդածին* կոչիլ՝ քան թէ աստուածածին: - 91. Վեցերորդ, մայր մարդոյ ասի կինն որ ծնաւ զմանուկ. թէպէտ հոգին ո՛չ է ի մօրէն. այլ վասն միաւորեալ մարմնոյն *մարդածին* կոչի: - 466. Յոհան անտիոքայ՝ թղթով միաբանեալ. **բճ** հարք ընդ դէմ նեստորի որ **բ** բնութիւն ասէր և **բ** որդի. կրկին կամք և կրկին ներգործութիւն քրիստոսի. և զաստուածածինն *մարդածին*: - 542

**ՄԱՐԴԱԿԵՐ +** Երկոտասաներորդ՝ զի թէ վասն բնակութեան նորա՝ է մարմին նորա ուտելի որպէս ինքն ասաց՝ «մարմին իմ ճշմարիտ կերակուր է». կերօղքն եղիցին գազանք *մարդակերք*. և ո՛չ մարմնոյ և արեան որդւոյն աստուծոյ: - 67

**ՄԱՐԴԱԿԵՐՊ +** Այլ թէ լինին *մարդակերպ* կենդանիք, վայրիք են և գազանք. և ո՛չ ի խառնուածոյ մարդոյ: - 267

**ՄԱՐԴԱՅԱՃՈՅ +** Երրորդ՝ մարդահաճութիւն է զմեղաւորն արդար ասել. և «տէր ցրուէ՛ զոսկերս *մարդահաճոյից»:* - 325

**ՄԱՐԴԱՅԱՃՈՒԹԻՒՆ +** Երրորդ՝ *մարդահաճութիւն* է զմեղաւորն արդար ասել. և «տէր ցրուէ՛ զոսկերս մարդահաճոյից»: - 325. ...և զքէողորիտոս եղին գլուխ ժողովոյն վասն *մարդահաճութեան* թագուհւոյն և թագաւորին. և զդէոսկորոս հայրապետն աղէքսանդրու, և զպետրոս անտիոքու, և զտիմոթէոս և զանատօլ, և զայլս բազումս խոտեցին. և վկայեցին նոքա ճշմարտութեան: - 543

**ՄԱՐԴԱՄԱՅ +** Չորրորդ՝ թուեաց զնոսա, զի յորժամ *մարդամահն* լինի, գիտասցեն զորքանութիւն մեռելոցն, և զծանրութիւն մեղացն: - 434

**ՄԱՐԴԱՆԱՄ +** Տասներորդ՝ Աստուած *մարդացեալ*: - 30. Վեցերորդ՝ հակառակէ քրիստոսի՝ և քրիստոնէից. և սոքա հակառակին սուրբ եկեղեցւոյ և ուղղափառ հաւատոյ. և զոր բանն աստուած առեալ

զմարդկայինս բնութիւն միաւորեաց ընդ իւրում աստուածութեանն՝ սոքա ընդդէմ նմին որոշեն զբանն ի մարմնոյն. զի մի՛ իցէ աստուած *մարդացեալ* ըստ նոցա՝ և մարմինն աստուած. և պատճառս հայթայթելով պատրեն զմարդիկ: - 35. Եւ գիտեմք հաւաստի թէ որդի էր. զի հրեշտա՛կ անուանէ զնա գիրն. և զի հայր երբէք հրեշտակ ո՛չ կոչեցաւ՝ այլ որդի ըստ եսայեայ մարգարէի, որ «հրեշտակ մեծի խորհրդոյ» կոչէ զորդի. որ եղև մեծ խորհրդոյս սպասաւոր. այսինքն փրկութեան մերոյ՝ *մարդանալովն* իւր: - 40. Որք ուրանան զբնութեամբ միաւորութիւն աստուծոյ *մարդացելոյն*, այլ միայն բնակութեամբ և շնորհիւ որդէգրութեան ելեալ յաստուածութեանն փառս. որպէս ասեն նեստորականքն: - 66. Ո՛վ երկաբնակք, զքրիստոս աստուած *մարդացեա՞լ* խոստովանիք, թէ մարդ աստուածացեալ: - 68. Զի թէ աստուած *մարդացեալ*, ապա զիա՞րդ ուրանայք և բաժանէք յերկուս բնութիւնս զաստուածն և մարդն: - 68. Վասն որոյ հարկաւորիմ ցուցանել նոյն քան զլխով եթէ աստուած է քրիստոս և ըստ մարմնոյն միութեան մարմնացեալ և *մարդացեալ* աստուած: - 72. Ապա ուրեմն մի է տէր և մի քրիստոս բանն *մարդացեալ*: - 72. Ապա ուրեմն մի՛ է որդին աստուծոյ և որդին մարմնացեալ և *մարդացեալ* աստուած: - 73. Այլ խոստովանիմք զբանն աստուած՝ ոչ մասամբ, այլ լրութեամբ իւր մարմնացեալ և *մարդացեալ*...: - 76. Այսպէս էր ի հօրէ բնութեամբ՝ և եղև ի մօրէ բնութեամբ. և ո՛չ ասի երկաւոր բնութիւն և երկաբուն. այլ միաւոր և միաբուն. մի որդի. և մի բնութիւն. միատեսակ աստուած *մարդացեալ*: - 78. Այլ և ո՛չ ասի աստուած և մարդ որոշմամբ. այլ աստուած *մարդացեալ* և մարմնացեալ: - 79. Իսկ թէ ո՛չ, այլ պարզաբար աստուածածին խոստովանիս ընդ մեզ, ապա՛ և զծնեալն ի նմանէ խոստովանեա՛ աստուած մարմնացեալ և *մարդացեալ*: - 79. Դարձեալ՝ ծանի՛ր ուղղապէս. զի ասի աստուած մարմնացեալ և *մարդացեալ*. զի այս միաւորութեան է: - 79. Եթէ՝ բանն աստուած մարմնացաւ և *մարդացաւ*. և մարդկութիւնն աստուածացաւ խառնելով և միանալով բանին: - 79. Սուրբն կիւրեղ ընդդէմ նեստորի՝ որ բ բնութիւն բաժանեալ ասէր քրիստոսի՝ ասաց, մի բնութիւն միաւորեալ աստուած մարմնացեալ և *մարդացեալ*: - 79-80. Եւ բարձեալ զխտրոցս բաժանման ասէ՝ երկոքեանն մի՛ են. առնլովն աստուծոյ և *մարդանալովն*. և մարդոյն աստուածանալովն. ահա զբնութեանցն միաւորութիւնն եցոյց: - 80. Եւ այսպէս փախչելով ի թիւր ծայրիցն, զմիջինն պահելով ընթացք բարեպաշտութեան, անշրոփ և անբաժան միութիւն, խոստովանիմք զքրիստոս՝ աստուած *մարդացեալ*. մի անձն և մի բնութիւն. և մի կամք և գործք ըստ ուղղութեանն բանի: - 81. Այլ նոքա ո՛չ խոստովանին զաստուած *մարդացեալ*. այլ՝ կամ ի նախագոյացեալ անձն բնակեալ ասեն զաստուածայինն բնութիւն, և կամ շնորհօք որդիացեալ որպէս նեստորի բղի: - 81. Այլ և մի բնութիւն ասեն՝ որք միայն սոսկ մարդ խոստովանին զքրիստոս, և ո՛չ աստուած *մարդացեալ*: - 82. Այլ և մեծն դիոնէսիոս ի բազում տեղիս միաւորեալ և մի բնութիւն խոստովանի բանին աստուծոյ *մարդացելոյ*: - 83. Որպէս միաւորեալ ասեմք զբնութիւն մարդոյն ընդ էութեանն աստուծոյ, այսպէս միաւորեալ և մի է կամք բանին *մարդացելոյ*: - 85. Ասեմք եթէ՝ մի և նոյն հրացեալ նիւթո՛յն է կտրելն և այրելն. այսպէս մի և նոյն միաւորութեանն էր այսինքն *մարդացեալ* բանին բարձրագոյնքն և նըւաստականքն: - 85. Այլ արդ՝ մարդկային բնութիւնն յաստուածութեանն տեսանի, և աստուածային ի մարդկութեանն, եթէ ի միութիւն բնութեանն, և եթէ ի միութիւն անձինն. զի ո՛չ սոսկ մարդ է քրիստոս և ո՛չ մերկ աստուած. այլ աստուած *մարդացեալ*: - 87-88. Իսկ առաւել բարձրութիւնն. զի որպէս անհամեմա՛տ է խոնարհութիւն՝ աստուծոյ *մարդանալ* և չարչարիլ. և անզուգական բարձրութիւն է մարդոյս բնութեան ընդ աջմէ աստուծոյ նստիլ և հաւասարիլ: - 94. Արդ՝ եթէ բոլոր աստուածութիւնն ի քրիստոս էացեալ է մարմնապէս, և ծածկէ զգիտութիւնն ի նմանէ, այս լինի կամ ոչ աստուած մարմնացեալ և *մարդացեալ* կամ զէութիւնն տըւեալ և ի գիտութենէն զրկեալ որ է սուտ: - 98. Նախ՝ զի մինն ի սուրբ Երրորդութենէն *մարդացաւ*: - 106. Իսկ հրեշտակաց և մարդկան, Նախ՝ զի մարդիկ միջնորդութեամբ հրեշտակաց առնուն, և ո՛չ անդրադարձեալ. թէ և *մարդացեալ* բանիւն: - 138. և Դարձեալ՝ որպէս մի է բնութիւն բանին *մարդացելոյ* ըստ սրբոյն կիւրղի, մի է և ներգործութիւնն ըստ սրբոյ աստուածաբանին գրիգորի և դիոնէսիոսի: - 174. Վասն որոյ խոստովանիմք ընդ սրբոց հարցն վասն միաւորութեանն մի բնութիւն աստուծոյ բանին *մարդացելոյ*: - 176. Նոր ծնաւ և կոյսն զաստուած *մարդացեալ* յերկրի: - 307. Եւ տէր մեր գեղեցիկ տեսլեամբ քան զամենայն որդիս մարդկան. զի «եղբօր որդին իմ ասէ՝ կարմիր է և սպիտակ ընտրեալ ի բիւրուց». այսինքն զի աստուած է *մարդացեալ*: - 313. Զի պարգևօք և ողորմութեամբ աստուած *մարդացաւ* և փրկեաց զմեզ: - 402. Որ օրինակաւ ակնարկէ՛ ի տէր մեր ի *մարդացեալ* բանն. որոյ գործք ծեռացն արդարութիւն և իրաւունք են: - 435. Եւ այս ի տիպ փրկչին. զի որդին միածին շինեսցէ զտաճար բնութեան մերոյ *մարդանալովն* իւր: - 440. Եւ տէր մեր յերկրի *մարդացաւ*, և յերկինս թագաւորեաց. իսկ նստիլն ի վերայ ջորոջ, որ է խաչն. զի վիրք զխաչն ջուարի կոչեն: - 441. Իններորդ՝ և մարմնական որդի էր դաւթի

ըստ կարգի հասարակ մարդկան. իսկ քրիստոս ակնկալութեան և աւետեաց և ի վեր քան զկարգ բնութեան աստուած *մարդացեալ*: - 442. Եւ տարածայնութիւն թուոցդ յայնմանէ լինի, որ ծգ ամաւ յառաջեաց բանն աստուած ի *մարդանալն* քան զնշանակութիւնս մարգարէիցն: - 449. Զի որպէս ադամ յաստուածանալն փութացաւ, և բանն աստուած ի *մարդանալն* փութացաւ. վասն որոյ ամք թուոց զանազան են եղեալ...: - 451. Զի որ *մարդացաւ* իրաւացի՛ էր մեռանիլ: - 458. Երկրորդ, մարգարէն եսայի ասէ, «կոյսն յղասցի և ծնցի որդի զէմմանուէլն». իսկ էմմանուէլն թարգմանի *մարդացեալ* աստուած: - 466. Ապա ուրեմն կոյսն որ ծնաւ զէմմանուէլն՝ մա՛յր է աստուծոյ *մարդացելոյ*: - 466. Վասն է՞ր ոչ յառաջ և ո՛չ յետոյ *մարդացաւ*: - 467. ...եկն երևեցաւ. այսինքն *մարդացաւ* մարդասէր բժիշկն. և առողջացոյց զկարեվէր խոցեալքս. ըստ որում բժիշկ անուանէր զինքն անկեալ ի ծեռս աւազակաց հիւանդին: - 467. Եւ աստ գիտելի՛ է, զի **գ** ինչ միայն յատուկ է *մարդացելոյն* քրիստոսի. և ո՛չ այլ ումեք պատշաճի մարդկայինս ազգի: - 473. Ամենակատար և անշփոթ *մարդանալովն* ըստ մեզ մարդասիրապէս՝ ի բնութիւնս մեր տեսակացեալ, և առ բաժանականս մեր անայլայլաբար ըստ բնութեան միոյ յառաջ եկեալ: - 477. Այսպէս և բոլոր տնօրէնութիւն *մարդացելոյն* բանի՝ միով զօրութեամբ և կարողութեամբ ըստ միութեանն կամաց մի ներգործութիւն երևի: - 478. Այսպէս և ծնեալ փրկիչն աստուած *մարդացեալ*՝ և զծնօղն աստուածածին դաւանիմք: - 478. Որ և զչարչարանքն և զմահն՝ աստուծոյ *մարդացելոյ* խոստովանիմք որով փրկեցաքն: - 478. Իսկ բանն աստուած *մարդացեալ*՝ էութեամբ է առ հայր. պահպանութեամբ ի բոլոր էակքս. շնորհօք յամենայն սուրբս. և բնութեամբ ի մարմնի միաւորեալ: - 478. Իսկ բանն աստուած կատարեալ լրիւ *մարդացեալ* բովանդակապէս. հոգի մարմին և միտս ունելով անշփոթ կատարելութեամբ և անբաժ ենթակայութեամբ: - 479. Եւ ծնաւ ի կուսէ անմեղ հոգւով և անապական մարմնով *մարդացեալ* աստուած: - 500. Իսկ տէր մեր զի էր աստուած *մարդացեալ*՝ ո՛չ ունէր ականմայ կիրք. այլ զկամաւորն: - 502. Չորրորդ, առ նոյն թագաւորաւն զկնի **իդ** ամի եղև արժանաւոր ժողովն եփեսոսի ընդ դէմ եւտիգի. որ առ աչօք ասէր զէտն *մարդանալն*: - 542. Այլ դաւանութիւն նոցա այս է. որպէս զի մի՛ լիցի ըստ նոցա աստուած *մարդացեալ*. կամ մերս բնութիւն ընդ աստուածութեանն միաւորեալ. որպէս ընդարձակապէս ցուցանէ աստուածաբանն կիւրեղ ի գիրս պարապմանց: - 552. ...զի անխառնակ և անշփոթ երևեցի *մադանալն* բանին յազգէն յուդայ. որպէս ասացաւ ի վերոյ ի **լ** գլուխն, **դ** համարն: - 612. Երկոտասաներորդ՝ զի մարդասէ՛ր է աստուած՝ կամեցաւ միածնին միաւորիլ ի մարմնի և *մարդանալ* յաշխարհի...: - 663

**ՄԱՐԴԱՉԱՓ +** Այլ և զքարինքն *մարդաչափ* ասեն: - 639

**ՄԱՐԴԱՊԱՇՏ +** Իսկ թէ մարդկութեանն միայն, անկա՛ր ընդ *մարդապաշտ* հայհոյութեամբ. և փոխանակ արարչի՝ արարածո՛յ երկրպագեցեր ընդդէմ աստուածային օրինացն: - 68. Եւ զփառս բանին զրկելով՝ ետուք մարդոյն. և եղէք *մարդապաշտք*, և մարդոյ մարմնակերք. և ի մարդ մկրտեալք. և սուտ է փրկութիւն մարդոյ մարգարէն կնքեաց: - 90

**ՄԱՐԴԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ +** Պարտաւորեցան ըստ *մարդապաշտութեամբ* ո՛չ միայն երկրաւորքս՝ այլ և երկնայինքն: - 67

**ՄԱՐԴԱՍԷՐ +** Եւ այս՝ ի խնայելո՛յ ի նոսա. զի *մարդասէ՛ր* է և ոգեսէր աստուած: - 303. Դարձեալ՝ կարօտ էր *մարդասէրն* աստուած, գայ ի համբոյր ծարաւելոյն նմա արդարոյն: - 311. ...եկն երևեցաւ. այսինքն մարդացաւ *մարդասէր* բժիշկն. և առողջացոյց զկարեվէր խոցեալքս. ըստ որում բժիշկ անուանէր զինքն անկեալ ի ծեռս աւազակաց հիւանդին: - 467. Ողորմեսցի քեզ *մարդասէրն* աստուած. - 602. Երկոտասաներորդ՝ զի *մարդասէ՛ր* է աստուած՝ կամեցաւ միածնին միաւորիլ ի մարմնի և մարդանալ յաշխարհի. - 663. Որ և ծեզ յիշողացդ և մեզ յուսողացս առհասարակ ողորմեսցի բարերար և բազում ողորմ *մարդասէրն* աստուած և տէրն մեր յիսուս քրիստոս ամէն: - 773. Իսկ *մարդասիրին* աստուծոյ տեսեալ արտագունեալ զպատկեր իւր, կամեցաւ նորոգել զնա: - 776

**ՄԱՐԴԱՍԻՐԱՊԷՍ +** Ամենակատար և անշփոթ մարդանալովն ըստ մեզ *մարդասիրապէս*՝ ի բութիւնս մեր տեսակացեալ, և առ բաժանականս մեր անայլայլաբար ըստ բնութեան միոյ յառաջ եկեալ: - 477

**ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹԻՒՆ +** Իսկ որ զերկրաւորքս ըստ կարգի, ամենազուք *մարդասիրութեանն* է երևումն. ո՞րպէս խնամով զպէտս մարդկան յայնքան աւուրս կատարեաց: - 192. Եւ յա՛յտ է աստի, զի սքանչելիքն քրիստոսի՝ շնորհք *մարդասիրութեան* է առաւել քան զմովսէսին: - 328. Երկրորդ՝ զի ողորմութիւն և *մարդասիրութիւն* ուսցին. տալ զբաժին աղքատաց և տնանկաց: - 371. Երկոտասաներորդ, զի ուսուցէ մեզ *զմարդասիրութիւնն* և զներելն միմեանց. որպէս աստուած երկայնամիտ եղև առ քանանացիսն որ պատժապա՛րտք էին: - 417. Երրորդն զքաղցր *մարդասիրութիւնն*: - 465. Խնամք *մարդասիրութեանն*

աստուծոյ որ զամենայն յամենայնի տըՆօրինէ՛, արգել զայս. զի մի՛ ունիցին ինչ ի մտի յարուցեալքն ի մեռելոց. ապա թէ ոչ, որ ի սկզբանէ բարէատեացն էր և մարդասպան, բազում և զանազան երևոյթս...: - 775

**ՄԱՐԴԱՍՊԱՆ +** Եւ որպէս ովսէէ ո՛չ է պոռնիկ՝ և ո՛չ սամուէլ *մարդասպան* զի հրամանաւ աստուծոյ էր: - 389. Ապա ուրեմն և հայհոյելն մտօք և մախալն և նենգելն կատարեալ չարութիւն է և մեղք. զոր մարգարէն ընդ *մարդասպանս* կարգէ...: - 557. Խնամք մարդասիրութեանն աստուծոյ որ զամենայն յամենայնի տըՆօրինէ՛, արգել զայս. զի մի՛ ունիցին ինչ ի մտի յարուցեալքն ի մեռելոց. ապա թէ ոչ, որ ի սկզբանէ բարէատեացն էր և *մարդասպան*, բազում և զանազան երևոյթս...: - 775

**ՄԱՐԴԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ +** Եւ զի ո՛չ է որպէս մահացուն մեծ կամ փոքր. որպէս շնութիւն մեծ է քան զպոռնկութիւն. և *մարդասպանութիւն* քան զգողութիւն: - 568

**ՄԱՐԴԵՂՈՒԹԻՒՆ +** Քսաներորդ՝ Յարցմունք երկաբնակացն ի վերայ *մարդեղութեան* բանին: - 30. Իսկ սոցա *մարդեղութիւն* բանին: - 33. Երկրորդ՝ նեռն հայհոյէ զքրիստոս զինքն կոչելով. նմանապէս և հերձուածօղք ոմանք հայհոյեն *զմարդեղութիւնն* Քրիստոսի: - 34. Այլ ասեմք զչորրորդ տեսութիւնս յաղագս *մարդեղութեանն*...: - 41. Եւ դարձեալ՝ հոգին որ ի հօրէ ելանէ և կայանայ յորդի. և ի ձեռն որդւոյ իբր զհայրական բարի ամենայն գոյիցս բաշխի երկնաւորաց և երկրաւորաց. նախ քան զմարմնանալն՝ և ի *մարդեղութեանն*: - 61. Յաղագս երից պատճառաց ուրանան զմիաւորութիւնն ի *մարդեղութիւն* բանին: - 76. Եւ զնոյն բանն աստուած՝ աստուածութեամբն աստուած, և մարդկութեամբն աստուած. զի անբաժանելի՛ է. թէպէտ և էր նախ քան *զմարդեղութիւնն* աստուած, այլ յետ անճառ միաւորութեանն մարմնովն է աստուած: - 77. Դարձեալ՝ մի բնութիւն ասեն որք առ աչօք և նմանութեամբ զճշմարիտ *մարդեղութիւնն* համբաւեն: - 82. Նախ քան *զմարդեղութիւնն* հեռի ի միմեանց. որքան աստուծոյ և արարածոյ. անեղի և եղականի. ժամանակէի և յաւիտենականի: - 82. *Մարդեղութիւնն* քրիստոսի՝ տեսանէ՞ զաստուածութիւնն թէ ո՛չ: - 95. Երեսներորդ՝ զի վարդապետք սուրբք օրինակ տան *մարդեղութեանն* քրիստոսի, որպէս լոյս ընդ օդ՝ և հուր ընդ երկաթ միաւորեալ: - 100. Առաջինն որ է տըպաւորական աստուածաբանութիւն՝ է՛ ի դէմս սուրբ Երրորդութեանն և մի աստուածութեանն. թէ ո՞րպէս է մի. ո՞րպէս երրեակ. և ծնօղ. և ծնունդ. և բղխումն. և վասն *մարդեղութեանն* քրիստոսի: - 122. Յինգերորդ՝ նշանակէ զչորեսին աւետարանիչքն. մարդն զՄատթէոս՝ *զմարդեղութիւն* բանին ցուցեալ առիւծն զՄարկոս՝ արիաբա՛ր աւետարանեալ...: - 132-133. Այսպէս իմա՛ ինձ և զբանին *մարդեղութիւն* յայլևայլ բնութեանց միաւորեալ ի մի էութիւն և ի մի դէմ անձնաւորեալ և ո՛չ շփոթեալ բնութեանցն յատկութիւն: - 176. Եւ դարձեալ՝ զի հաստատեսցի ի մեզ հաւատ *մարդեղութեանն* քրիստոսի. թէ որպէս ի յապականացու հողոյն ստեղծ ադամայ մարմին անապական: - 229. Եօթներորդ՝ ի *մարդեղութեան* իւրում նստաւ ի լերինն ձիթենեաց և զերանութիւնն աւետարանեաց: - 320. Եօթներորդ՝ յօրինակ բանին *մարդեղութեան* գրեցաւ բանն ի տախտակի, և նա՛ կոչեցաւ վէմ կարծրացեալ աստուածութեամբն փոխանակ հողացելոյն ադամայ: - 349. Չորրորդ՝ *զմարդեղութիւն* բանին ի յետին ժամանակս: - 350. Իսկ տէրն ի *մարդեղութեան* զակամայն ո՛չ կրեաց. զի հեռի է յաստուծոյ ակամայն: - 383. Երկրորդ՝ վասն մեծ բարութեանցն ի հեռաստանէ էարկ հիմն *մարդեղութեան* իւրոյ ի զաւակէ՛ նոցա լինիլ: - 398. Եւ յեօթներորդ երեկոյի վախճանին, ծանիցեն և հրէայք *զմարդեղութիւն* բանին: - 422. Եւ *մարդեղութիւն* փրկչին ձգ ամաւ յառաջ է քան զբան մարգարէիցն: - 451. Ութերորդ, Վասն ժամանակաց և *մարդեղութեանն*: - 454. Ուստի և վեհագոյն իմացութեանց էից սերովբէն զքօղեալ զերեսս և զոտս *մարդեղութեան* խորհրդոյն պարուրեալ: - 456. Յինգերորդ՝ ողորմութիւնն երևի ի *մարդեղութիւն* բանին. և արդարութիւնն ի մահ նորին: - 458. Այլ և ազգ մարդկան ողորմութեան արժանացան *մարդեղութեամբն* աստուծոյ: - 458. Երկրորդիւն *մարդեղութիւնն* քրիստոսի. զի խոստացեալ եղև այն մարգարէիւք և նահապետօք: - 458-459. իսկ ի կատարել զգործ ողորմութեանն՝ ո՛չ ինչ պահանջի, եթէ ոչ կամքն նորա, որպէս երևեցաւ ի *մարդեղութիւն* բանին աստուծոյ ի սրբոյ կուսէն մարիամայ: - 459. Այս քան վասն բանին *մարդեղութեան*, զի բազում են պատճառք ասացեալ վարդապետաց. զոր մեք ըզսակաւն եդաք աստ: - 468. Դարձեալ՝ *մարդեղութեամբն* տէրն եղև ծառայ: - 470. Արդ այսպէս ի զ իրաց փրկեաց զմեզ *մարդեղութեամբն* իւր քրիստոս: - 473. Վեցերորդ՝ ի յանմարմին բնութիւնն ո՛չ կոչէր իգական. այլ արական որդի. իսկ թէ ի *մարդեղութիւնն* լինէր իգական, փոփոխումն էր դիմացն և սերիցն: - 480. Եօթներորդ՝ գիրք սուրբք *մարդեղութիւն* ասեն բանին. այլ մարդն կոչումն յատուկ արական է և ո՛չ իգական թէ և հասարակաց կոչի: - 480. Երկրորդ՝ զի ցուցցէ զճշմարիտ *մարդեղութիւն* իւր և ո՛չ կարծեսցի առ աչօք. որպէս զրկեալքն ի շնորհաց նորա ասացին: - 485. Իսկ տէր մեր ի *մարդեղութեան* իւրում յայսցանէ եկամուտ կրից միայն զմահն կրեաց. իսկ զմեղս և զապականութիւնս ո՛չ կրեաց: - 496. Դարձեալ ասեմք,

փոփոխումն և աճումն հասակին ո՛չ եթէ ապականութեան էր ցոյցք. այլ զի զճշմարիտ *մարդեղութիւնն* հաստատեսցէ ընտել սովորութեամբ մեր որ ի տղայութենէ զարգանամք: - 501. Եւ տէրն ի *մարդեղութեանն* զկամաւո՛րն կրեաց յինքեան և ո՛չ զակամայն. զի ո՛չ էր ի ներքոյ հարկի և ծառայութեան բնութեան որպէս մեք. այլ տէր և ազատ յամենայն կրից: - 501. Եւ դարձեալ ասեմք. տէրն մեր՝ *մարդեղութեամբն* եկն զապականութիւն մեր յանապականութիւն փոխարկել. և զիա՞րդ ինքն կրէր զապականութիւն: - 502. Դարձեալ ասեն նոքա, զի թէ մարմին տն զկամայն ո՛չ կրէր, թերեկատար էր *մարդեղութիւնն*: - 502. Եւ տէրն ի *մարդեղութեան* իւրում ընկալաւ զոր ինչ բնականն էր մարդոյս բնութեան. և ոչ զեկամուտ անասնականն: - 502. Իսկ տէր մեր ի *մարդեղութեան* իւրում՝ զակամայն ո՛չ կրեաց. զի հա՛րկ է և ծառայական: - 502. Այսքան վասն *Մարդեղութեան* Փրկչին: - 525. Յետ այսորիկ հարցանելի՛ է ի նոր օրինաց և յեկեղեցւոյ կարգաւորապէս ընդ *մարդեղութեան* բանին յարմարեալ. իբր պատճառելիք առ պատճառ նորին հետևեալ և շարադասեալ: - 528. Յորոց եօթն վերաբերին առ աստուածութիւնն. և եօթն ի *մարդեղութիւնն* քրիստոսի: - 572. Իսկ եօթնեքին աստիճանք առ *մարդեղութիւնն* քրիստոսի են այս: - 573. Չորրորդ՝ զի սովաւ իմասցուք *զմարդեղութիւն* բանին կրկին կերպիւ: - 598. Ասեմք նա՛խ՝ թէ մարգարէքն իբր յառաջասաց՝ պատմեցին *զմարդեղութիւն* բանին և զփրկութիւն մարդկան: - 643. Այլ և վասն դժոխոց ասացաւ ի վերոյ ի *մարդեղութեան* ճառն. ասի և յառաջիկայդ ի կատարածի: - 705

**ՄԱՐԴԿԱՅԻՆ +** Առ այս ասեմք, թէպէտ ստորնային մարմինք կառավարին վերնային մարմնովք, այլ *մարդկային* ներգործութիւնք կառավարին անձնիշխան կամօք. և անձնիշխան կամքն ո՛չ նըւաճի ի ներքոյ երկնային մարմնոց: - 10. Երկրորդ՝ ասեմք եթէ և ոչ աստեղք վայրապար են ըստեղծեալ. զի կառավարք են տարրեղէն մարմնոց որպէս ասացաք. այլ *մարդկային* ներգործութիւնք կառավարին յանձնիշխան կամաց...: - 13. Եօթներորդ՝ և ո՛չ լինէին *մարդկային* կամ աստուածային առաքինութիւնք: - 20. Ջրօրինակ ո՛չ է անզգուշագոյն յառել ի բոլորակս արեգական՝ զի շոտնու և ի սակաւուն զոր ունի. ըստ այսմ խնայեաց աստուած ի յազինս *մարդկային*...: - 24. Վեցերորդ՝ *Մարդկային* բնութեամբն աստուած է, թէ աստուածութեամբն մարդ: - 30. Առաջին է՛ անգիտանալ զտկարութիւն և զփոքրկութիւն *մարդկային* մտաց. կարծեն թէ՝ ամենայնի պարունակօ՛ղ է, և ո՛չ ունի սահման: - 31. Վեցերորդ՝ հակառակէ քրիստոսի՝ և քրիստոնէից. և սոքա հակառակին սուրբ եկեղեցւոյ և ուղղափառ հաւատոյ. և զոր բանն աստուած առեալ *զմարդկայինս* բնութիւն միաւորեաց ընդ իւրում աստուածութեանն...: - 35. Դարձեալ ասի մեծ բանն աստուած քան *զմարդկային* բնութիւնս: - 39. Թէպէտ մեկնեն և այլ ազգ, թէ որ *զմարդկայինս* բնութիւն հաւասարեցոյց փառաց իւրոց և հաղորդ արար աստուածութեանն, ոչ ինչ զրկումն համարեցաւ. զի բնութիւնն մի է: - 39-40. Երրորդ՝ ի խրատ մեզ. զի որպէս չարչարանօքն ազատութիւն արար *մարդկային* բնութեանս...: - 43. Տարակուսելի է առ այս, զի թէ հա՛րկ է որոց բնութիւնքն մի գոլ՝ նոցա և կամքն և ներգործութիւնն մի լինիլ. ընդէ՞ր ապա զի *մարդկային* բնութիւնս մի է և նոյն հօրն և որդւոյն՝ և ո՛չ է կամքն և գործքն մի: - 45. Իսկ թէ ըստ ինքեան *զմարդկայինն*, զիա՞րդ ունէր զփառս յառաջ քան զլինիլն աշխարհի. զի ինքն ի ժամանակի եղև: - 69. Քրիստոս ըստ *մարդկայի՞ն* բնութեանն աստուած է, թէ ըստ աստուածային բնութեանն մարդ: - 75. **Յորոյ փախչելով մեր և յերկուց ծայրիցն, զառ ի մէջն ունելով ուղղապէս ընթացք, ասեմք եթէ քրիստոս ըստ անշփոթ միաւորութեանն՝ աստուածային բնութեամբն մարդ է, և *մարդկային* բնութեամբն աստուած է:** - 75. Վասն որոյ աստուածային բնութեամբն մարդ է քրիստոս. և *մարդկային* բնութեամբն աստուած: - 75. Ո՛չ ասի պարզ և սոսկ մարդ. վասն *մարդկային* կերպին: - 79. Անձն բանին *զմարդկային* ա՞նձն էառ՝ թէ զբնութիւնն: - 84. Բանն աստուած իւրով կատարելութեամբն էառ *զմարդկայինս* բնութիւն. զհոգի և զմարմին և զմիտս. և միաւորեալ ընդ իւրում աստուածութեանն՝ եղև մի անձն կատարեալ և մի դէմ: - 84. Արդ եթէ էութիւն է անձն, և ընդ անձինն մի ասեն *զմարդկային* բնութիւնն, մի է և ընդ էութեանն. և թէ մի է ընդ էութեանն. որպէս ճշմարիտ միութիւն, մի ասա և բնութիւն. զի էութիւն և բնութիւն մի են: - 86. Ապա և բաժանակա՛ն է ընդ *մարդկային* բնութեանն՝ և ո՛չ է միաւորեալ ընդ օտար տարբերեալ բնութիւն. և եղեր նեստորեան. **բ** անձն և **բ** բնութիւն յատուկ ասելով քրիստոսի: - 86. Բաժանեն և ուրեք զյատուկ անունն. այսինքն աստուած և մարդ. այս է *զմարդկային* բնութիւնն մարդ, և զաստուածային բնութիւնն աստուած. որպէս նեստորի թըւի: - 87. Այլ աստուածային բնութիւնն յառաջ է քան *զմարդկայինն*. որք ստեղծողի և ստեղծւածոյ: - 87. Այլ արդ՝ *մարդկային* բնութիւնն յաստուածութեանն տեսանի, և աստուածային ի մարդկութեանն, եթէ ի միութիւն բնութեանն, և եթէ ի միութիւն անձինն. զի ո՛չ սոսկ մարդ է քրիստոս և ո՛չ մերկ աստուած. այլ աստուած մարդացեալ: - 87-88. Ջի եթէ *զմարդկայինն* ասէք քրիստոս, ահա՛ առանձնապէս որոշեցիք զնա ըստ նեստորի. և սոսկ մարդ ասէք զքրիստոս: - 89. Իսկ թէ

զաստուածային անձն և *զմարդկային* բնութիւնն ասէք մի քրիստոս, ահա յա՛յտ է զի բաժանեցիք յաստուածային բնութենէն զքրիստոս...: - 89. Իսկ եթէ աստուածային բնութիւնն և *զմարդկայինն* առանց անձին ասէք քրիստոս, ահա՛ շփոթեցիք զերկու բնութիւնսն առանց անձին միանալոյ ըստ եւտիքեայ: - 90. Իսկ եթէ զաստուածային անձն և զաստուածային բնութիւնն և *զմարդկայինն* ասէք մի քրիստոս, այս լինի կամ միաւորութեամբ կամ բաժանմամբ: - 90. Զի եթէ զաստուածային բնութիւնն պատուէք, հա՛րկ է ձեզ *զմարդկայինն* անարգել՝ և հրէական խտրութեամբ մոլիլ...: - 90. Իսկ թէ *զմարդկային* բնութիւնն պաշտէք, եղէք կռապարիշտք. և նո՛ր և եղական ոմն աստուած մուծանէք յերրորդութեանն կարգ: - 90. Երկրորդ՝ զի միայն ի *մարդկայինս* ազգ է: - 106. Իսկ հասարակն՝ զի բոլոր բանն աստուած իւրով կատարելութեամբն էառ զբոլոր և կատարեալ *մարդկային* բնութիւնս. և եղև աստուածն կատարեալ՝ մարդ կատարեալ: - 106. Զի՞նչ է բաղդատութիւն որ բանն աստուած է էառ *զմարդկայինս* բնութիւն: - 106. Նախ՝ զի բանն աստուած էառ *զմարդկայինս* բնութիւն և միաւորեաց ընդ աստուածութեան իւրում. ո՛չ մասն առեալ՝ կամ ըստ մասին միաւորեալ. այլ բոլորն ընդ բոլորի...: - 106-107. Զի որպէս խաւարն անյայտ է, նոյնպէս և առաւել լոյսն անտեսութիւն առնէ. և նա անտես է ի հրեշտակաց. և անյայտ ի *մարդկային* մտաց. թէ ո՞րպէս կամ զի՞նչ է էութիւն և բնութիւն աստուածութեանն: - 122. Նոյնպէս իմանալի արեգակն քրիստոս ի հայրական ծոցոյ անհա՛ս է բնութեամբ՝ և ի սրբոյ կուսէն իբր ի յարևելից ծագեալ. և ջերմ սիրով ի *մարդկային* ազգս որպէս յարևմուտս խոնարհեալ. և զսառուցեալ բնութիւնս պատեալ. և ի գերեզմանէն ի բարձունս դարձեալ յարևելս առ հայր ամբարձեալ: - 126. Արարած եղև. այսինքն ի *մարդկային* բնութիւնս խառնեալ և միաւորեալ: - 179. Տասներորդ՝ այլև օրինակ և յարացոյց նմանատիպ հասարակաց յարութեան և նորոգման տիեզերաց և *մարդկային* բնութեանս որ յապագայն: - 196-197. Քանզի ժամանակ ըստ ինքեան ո՛չ ճանաչի. այլ միայն *մարդկային* ներգործութեամբ: - 199. Նոյնպէս և *մարդկային* կենցաղս ամենեքեան հասարակաբար հաղորդին...: - 199. Եւ արդ ի կատարեալ մարդն հոգւով և մարմնով՝ փչեաց զշնորհաց հոգին ի *մարդկայինս* ազգ. և ունէին որ քան յանմեղութեան էին. և կորուսին ի մեղանչելն: - 253. Առաջին պատճառ, զի ընդ ինքեան *մարդկայինս* բնութիւն այլայլո՛տ է և ցաւօք. և յորժամ աստուած ևս բազմացուցանէ, ո՞վ կարէ զաղէտն պատմել: - 292. Այս է զոր արարն դարձեալ *մարդկայինս* ազգի զրկելոցս ի սատանայէ՛: - 302. Ութերորդ՝ առ ի ցուցանել թէ *մարդկային* միտք ի քննութիւն աստուածային բանին կա՛ղ գտանին: - 311. Նոյնպէս և սատանայ ապէ՛ր *զմարդկային* բնութիւնս զի ի պատկերն աստուծոյ արարաւ. և հրէայքն ատէին զքրիստոս. զի վկայեաց հայր թէ դա՛ է որդի իմ սիրելի: - 313. Եւ տէր մեր էառ զաւար *զմարդկային* ազգս և գնաց յերկինս: - 315. Աղքատ և տնանկ *զմարդկային* բնութիւնս ասէ. որ հարստահարեցաւ և զրկեցաւ ի սատանայէ՛: - 317. Սոքա *մարդկայինք* են և առ ընկերն և յանցումն: - 340. Եօթներորդ՝ անդ *մարդկային* մովսէսիւ. և աստ աստուածային՚ի ձեռն քրիստոսի: - 353. Նշանակէ՛ անառակ որդին *զմարդկային* բնութիւնս: - 400. Չորրորդ՝ նշանակ իմանալոյն դագոնայ, որ զգլուխ իւր ամբարձ ընդ դէմ աստուծոյ. և ընդ բռամբ էարկ և կոխեաց *զմարդկային* ազգ. զորս խորտակեաց տէր մեր: - 426. Ոմանք եռակի ասեն. այսինքն աստուածային և *մարդկային* և շնորհօք: - 471. Եւ աստ գիտելի՛ է, զի գ ինչ միայն յատուկ է մարդացելոյն քրիստոսի. և ո՛չ այլ ումեք պատշաճի *մարդկայինս* ազգի: - 473. Այսպէս և մարդկութիւնն միաւորեալ ընդ բանին՝ ո՛չ ունի տգիտութիւն ինչ *մարդկային*. այլ գիտէ զամենայն աստուածաբար: - 477. Գիտել պա՛րտ է, զի առ հասարակ մահն, հարկաւոր կիրք է *մարդկայինս* բնութեան. զի ամենայն որ ծնանի՝ մեռանի: - 495. Այլ զանազանութիւն գոյ ի մէջ մահու նախաստեղծ մարդոյն, և մահու տն մերոյ քրիստոսի, և մահու հասարակ *մարդկայինս* ազգի: - 495. Այս զանազանութիւն ի մէջ երից մահուանն. ադամայ, և քրիստոսի, և մեր *մարդկայինս* ազգի: - 496. Այլ բանն աստուած զբնութիւնս *մարդկային* էառ և միաւորեաց զմասունս նորին և ո՛չ զապականութիւն զի ո՛չ է բնութիւն. ապա ուրեմն անապակա՛ն է: - 499. Քսանև, *Մարդկային* առաքինութեանցն սահման: - 526. Նա՛խ՝ զի առաջին մարդն ի դրախտին որկորստութեամբ մեղաւ. և այն առաջին մեղք եղև *մարդկայինս* բնութեան: - 561. Եւ սոքա կոչին *մարդկային* առաքինութիւնք: - 571. Արդարութիւն է զօրութիւն պահող *զմարդկային* ընտրութիւնն: - 579. Եւ ծանիր, զի ա՛յլ է խոհեմութիւն աշխարհային. ա՛յլ *մարդկային*. և ա՛յլ աստուածային: - 580. Նա՛խ՝ կոչին *մարդկային* առաքինութիւնք: - 581. Խրա՛տ է լոյս հոգւոյ առ ի յունել զհոգին. որ յերկրայինս և ի *մարդկայինս* ո՛չ շաղախի: - 582. Երրորդ՝ ի կառավարել զգործնական և զտեսական կեանս. այսպէս աստուածային և *մարդկային* առաքինութիւնքն են որ ասացաւ: - 583. Նա՛խ արար խաղաղութիւն յանձն իւր. զի զաստուածային և *զմարդկային* բնութիւնն միաւորեաց յինքեան ի մի կամս և ի մի ներգործութիւն անբաժանաբար: - 585. Ի յասացելոցս յառաջագոյն այս ինչ հաւաքի, եթէ ունակութիւնք *մարդկային*

առաքինութեանց նախկնաբար պատրաստե՛ն ի վարժումն գործնական կենացն...: - 586. Եւ ապա՛ ի յարևմուտս. զի նստի ընդ արևմուտս որ է՛ *մարդկային* սրբութիւնս. և փառաց աթոռն քահանայութեան աստիճանս. - 673. Երկրորդ, ասեն խնդրէ արդարութիւնն աստուծոյ՝ զի վասն մեղաց պատիժ տացի. որպէս յօրէնս *մարդկային* պատժին յանցաւորք...: - 701. Զի զօդս սրբէ ի մեղաց դիւաց և ճենճերաց. և զերկիր ի *մարդկային* մեղաց: - 731. Եւ քանզի մովսէս որ ջրային կամ ի ջրոյ հանեալ թարգմանի. թէպէտ երբեմն զօրէնս և երբեմն զտէրն նշանակէ. այլ աստ ոչ զօրէնս, այլ զտէրն գուշակէ՛. որ ի ջուրց *մարդկայինս* բնութեան ընկալեալ եղև: - 756. Երրորդ ուրախութիւնն եղիցի ի տեսութենէ միաւորութեան *մարդկային* բնութեանն առ աստուածայինն. քանզի սքանչելի ուրախութիւն լինիցի ընտրելոցն, յորժամ ճանաչիցեն թէ եղբայր նոցա ըստ մարմնոյ՝ ճշմարիտ աստուած է: - 763. Նոյն և կամք և կիրք և ներգործութիւն *մարդկային* ընդ աստուածայինն միաւորեալ. միջնորդելով հոգւոյ բանականի՝ աստուածութեանն՝ և մարմնոյն. որ է՛ ներգործութեամբ միշտ աստուած և փրկիչ բնութեամբ. քրիստոս. նոր ադամ. էմմանուէլ ճշմարտութեամբ: - 770. Իսկ է՛ իր ինչ ի բոլոր տեսակս *մարդկային* բնաւորեալ, և ո՛չ է բնութեամբ. որպէս այս: - 773. Այսպէս սատանայ է մեղադրելի իբր պատճառ և գտակ չարեաց *մարդկայինս* բնութեան և ո՛չ ադամ: - 777. Իսկ հաւատ ուղղակի և վարձատրելի՝ է՛ *մարդկայինս* ազգի ի ճանապարհ աստի կենաց. և չորիւք բացակատարի: - 784

**ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆ +** Դարձեալ զի և ադամ անծին՝ ո՛չ է միայն *մարդկութիւն*, այլ և ծնեալն ի նմանէ ասի մարդ: - 38. Տեսցուք և զգործն յաղագս որոյ օծաւ. այսինքն միացաւ *մարդկութիւնն* աստուածութեամբն...: - 41. Որպէս ասէ առաքեալն՝ «աստուած տէրն մերոյ յիսուսի քրիստոսի և հայրն փառաց». այսինքն՝ աստուած վասն *մարդկութեանն*, և հայր փառացն որ է բանն աստուած ի բնութենէ հօրն ծնեալ անմարմին. որ յետոյ միաւորեցաւ ի մարմին: - 44. Ասեմք զայս ըստ *մարդկութեանն*. զի ո՛չ ունէր բնութիւնս մեր. այլ յորժամ միացաւ ընդ բանին և եղև որպէս առօղն և առեալն իշխան և տէր ամենեցուն: - 46. Եւ թէ ըստ *մարդկութեանն* իմանաս, մի՛ կարծիցես պարգև և շնորհ զտալս զայս. զի այն նեստորին է: - 46. Ո՛չ ցուցանէ այս բ կամք հակառակ միմեանց. զի առողին է բանս և ո՛չ առեցելոյն. այսինքն բանին՝ և ո՛չ *մարդկութեանն*: - 46. Թէ *մարդկութեանն* էր՝ գո՛յր ինչ ասել: - 46. Ասեն դարձեալ թէ՝ և հեթանոսք մի աստուածս անուանեն զամենայն կուռս, այլ բազումք են. որպէս և *մարդկութեանս* մի ասի բնութիւն, այլ բազումք են մարդիկք. ապա և դուք բազմաստուածք էք: - 54. Նախ՝ ասէ մակեդոն եթէ աղօթել և բարեխօսել ո՛չ յարմարի աստուծոյ. զի եթէ զքրիստոսէ՛ ասի՝ վասն *մարդկութեանն* է: - 59. Իսկ թէ *մարդկութեանն* միայն, անկա՛ր ընդ մարդապաշտ հայհոյութեամբ. և փոխանակ արարչի՝ արարածո՛յ երկրպագեցեր ընդդէմ աստուածային օրինացն: - 68. Զի թէ զաստուածութիւնն բնութեամբ ասես, ապա *զմարդկութիւնն* շնորհօ՛ք ասես: - 69. Իսկ եթէ *զմարդկութիւնն* բնութեամբ որդի ասացեր, ահա որ հաներ զբանն յորդիութենէ: - 69. Զի թէ առանձին *մարդկութեանն*, ո՞րպէս է յերկնից իջեալ. զի ի կուսէն ծնաւ մարմինն: - 70. Ա՛րդ՝ դու առանձնութեամբ քո որ ունիս զհասարակ բնութիւնդ՝ ծնար այսօր ի մօրէ՛ կամ մեռար յաշխարհէ՛ և ո՛չ հասարակ *մարդկութիւնս*: - 74. Զի նոյն ինքն քրիստոսդ անուն՝ ուսուցանէ զքեզ աստուածութեամբն մարդ գոլ, և *մարդկութեամբն* աստուած: - 75. Որև *մարդկութիւնն* աստուած էր ըստ նորին բնութեամբ միաւորութեանն. և նոյնն մարդ ըստ իւրում յատկութեանն: - 75. Որև *մարդկութիւնն* անմահ ըստ միաւորութեանն. և մահացեալ ըստ իւրոյն յատկութեանն: - 75. Իսկ աստուած զաստուածութիւնն՝ և մարդ *զմարդկութիւնն* միայն: - 75. Անմահ զաստուածութիւնն՝ և մահացեալ *զմարդկութիւնն*: - 75. Չարչարելի *զմարդկութիւնն*՝ և անչարչարելի զաստուածութիւնն: - 75. Ուրեմն և ծնեալ ի մօրէ միայն *զմարդկութիւնն*՝ և ո՛չ զաստուածային էութիւնն: - 75-76. Երկրորդ՝ զի մի՛ չարչարեալ լիցի աստուածային բնութիւնն ընդ *մարդկութեանն*: - 76. Առաջնոյն ասեմք. թէպէտ բանն աստուած բնութեամբ միաւորեսցի ընդ *մարդկութեանն*, ո՛չ կրէ շփոթումն և կամ խառնակումն ինչ: - 76. Որև ըստ այսմ պարտին նոքա ուրանալ և զանհատ բնութիւնս *մարդկութեան* նորին. զիմի՛ հասարակ *մարդկութիւնս* միաւորեսցի: - 76. Որև ընդ չարչարիլն քրիստոսի՝ չարչարեցաւ և մեռաւ բոլոր *մարդկութիւնս* ըստ նոցա: - 76. Այլ մեք զբոլորն և անբաժան ասեմք աստուած և մարդ. այսինքն *մարդկութեամբն* մարդ, և աստուածութեամբն աստուած: - 77. Նախ՝ զնոյն ինքն բանն՝ աստուած և մարդ. այսինքն *մարդկութեամբն* մարդ, և աստուածութեամբն աստուած: - 77. Երրորդ՝ ասի նոյն *մարդկութիւնն* աստուածութեամբն մարդ, և աստուածութեամբն աստուած: - 77. Եւ զնոյն բանն աստուած՝ աստուածութեամբն աստուած, և *մարդկութեամբն* աստուած. զի անբաժանելի՛ է. թէպէտ և էր նախ քան զմարդեղութիւնն աստուած, այլ յետ անճառ միաւորութեանն մարմնովն է աստուած: - 77. Եթէ՝ բանն աստուած մարմնացաւ և մարդացաւ. և *մարդկութիւնն* աստուածացաւ խառնելով և միանալով բանին: - 79.

Ո՛չ զմասն ինչ առեալ զմարդոյ. այլ զբոլոր բնութիւնն ժողովեալ անհատ *մարդկութեամբն*. զհոգի բանական՝ և զմիտս՝ և զմարմինս մեր՝ միաւորեաց ընդ իւրում աստուածութեանն անչփոթ և անորոշ միութեամբ: - 83. Այլ *մարդկութիւնն* քրիստոսի ո՛չ կարէ կայանալ առանց աստուածային էութեանն: - 87. Այլ արդ՝ մարդկային բնութիւնն յաստուածութեանն տեսանի, և աստուածային ի *մարդկութեանն*, եթէ ի միութիւն բնութեանն, և եթէ ի միութիւն անձինն. զի ո՛չ սոսկ մարդ է քրիստոս և ո՛չ մերկ աստուած. այլ աստուած մարդացեալ: - 87-88. Այլ աստուածութիւնն և *մարդկութիւնն* ո՛չ նման միմեանց. և ո՛չ բոլորին կոչին ըստ ոմանց: - 88. Այլ և ո՛չ որպէս էութիւն ի պատահումն. զի *մարդկութիւնն* քրիստոսի է ի սեռէ գոյացութեան, և ո՛չ ի սեռէ պատահման: - 88. Այլ անձնաւոր գոյացութիւն ի ներքոյ եղեալ ենթակայաբար *մարդկութեան* իւրոյ: - 88. Այլ է՛ որպէս ի միոջէ և առ մի. այսինքն ի միոջէ բանէն՝ առ մի *մարդկութիւն* նորին կամ աստուածութիւն որպէս նոքա կամին: - 88. Նոյնպէս բանն աստուած որպէս է՛ բոլոր յաստուածութիւնն իւր, նոյնպէս բոլորն է ի *մարդկութիւնն* իւր միաւորեալ: - 89. Երկրորդ՝ որպէս անբաժանելի մնայ սե՛ռ ի տեսակս. և բանն աստուած անբաժանելի՛ է միաւորեալ ի *մարդկութիւնն* իւր: - 89. Նոյնպէս և քրիստոսն անուն՝ և տէր՝ և աստուած՝ և այլն՝ զո՛յգ և հաւասա՛ր է *մարդկութեան* իւրոյ և աստուածութեանն. և ո՛չ առաւել և նուազ. կամ տկար և հզօր. կամ անգէտ և ամենագէտ. և որ ինչ այսմ նման: - 89. Բոլորովիմբն է ընդ դէմ երկաբնակացն. որք մասամբ ասեն աստուած և մարդ զքրիստոս. այսինքն յաստուածութենէ և ի *մարդկութենէ* ժողովեալ աստուած և մարդ: - 90. Եւևի թէ բաժանե՛ս *զմարդկութիւնն* և ուրիշ իմանաս զմարդն և զաստուածն: - 95. Եւ դարձեալ՝ քրիստոսն անուն զմիաւորութիւնն նշանակէ երկուց բնութեանց. ըստ որում աստուածութիւնն էօծ *զմարդկութիւնն*. որպէս ասէ աստուածաբանն և սուրբն կիւրեղ: - 95. Ապա ուրեմն *մարդկութիւնն* սուտ խոստովանի «ամենայն ինչ տըւաւ ինձ». զի ո՛չ ետ զգիտութիւնն: - 96. Եւ կամ բանն *զմարդկութիւնն* իւր զրկեաց ի գիտութենէն և ո՛չ ետ: - 96. Ա՛րդ՝ եթէ յայտնեաց զինքն աշակերտաց իւրոց. և *մարդկութեան* իւրոյ ո՛չ յայտնեաց, եղիցի ինքն տգէտ քան զաշակերտսն իւր. և կամ ոչ ինչ յայտնեաց զոր ինքն ո՛չ գիտաց: - 96-97. Եւ թերևս ասիցէ երկաբնակն թէ՝ սոքա ամենեքեան անձինն վերաբերին քրիստոսի և ո՛չ *մարդկութեանն*: - 98. Իսկ թէ ա՛յլ է բանին և այլ է մարմնոյն, ապա բաժանե՛ս *զմարդկութիւնն* ի յանձնէն...: - 98. Արդ՝ եթէ առաքեալքն որ բնակարանք են հոգւոյն՝ ճանաչեն զհոգին աստուած, և *մարդկութիւնն* քրիստոսի ո՛չ ճանաչէ, փոքր քան զբնակարանքն եղիցի քրիստոս: - 99. Ա՛րդ՝ դատէ որդի ո՛չ միայն ըստ աստուածութեան իւրում. այլ և ըստ *մարդկութեանն*: - 100. Բաղդատութիւն բանին աստուծոյ և *մարդկութեանս*: - 101. **Երրորդ՝ Երրորդութիւնն ցուցանէ երիցն զմի հասարակ բնութիւն. որպէս ասեմք մարդ և *մարդկութիւն*. ձի և ձիութիւն. ընդդէմ արիոսի որ ասէ՝ երեք թիւն ունի երեք բնութիւն, ասեմք երից անձանցն մի բնութիւն**: - 108. Երրորդ՝ զգայութիւն զմասնաւո՛րն տեսանէ. որպէս այս ինչ մարդ որ է անհատ. և միտք զընդհանուրն իմանայ՝ որ է բնութիւն. որպէս *մարդկութիւն*: - 121. Եւ այսու զանազանի ճշմարիտն և ճշմարտութիւնն՝ այսինքն մասամբ և բոլորիւ. որպէս մարդ և *մարդկայնութիւն*: - 121. Զի որպէս ո՛չէ սկիզբն աստուածութեան նորա, և ո՛չ վախճան *մարդկութեան* նորա: - 126. Նախ ա՛յս է միտքն՝ որ այքն առաջին է և քէն վերջին. այսինքն ես եմ առաջին աստուածութեամբս. և ես եմ վերջին *մարդկութեամբս*. զի մարդն վերջին է արարածոց: - 129. Հինգերորդ՝ անսկիզբն աստուածութեամբն. և անվախճան *մարդկութեամբն*. զի որպէս ո՛չ է սկիզբն աստուածութեանն, և ո՛չ վախճան *մարդկութեանն*: - 129. Էութիւն և բնութիւն մի են որպէս *մարդկութիւն*. այլ էութիւնն երբեմն նշանակէ զանձն որ ա՛ստ է և այժմ. իսկ բնութիւնն ո՛չ: - 174. Եւ որպէս ընդ հանուր *մարդկութիւնս* լրիւ էացաւ ի տեսութիւնն աստուծոյ յորչափութիւնն և ի թիւն: - 254. Եւ դարձեալ պարզ և յայտնի, այսպէս ասէ սուրբն գրիգոր նիւսացին եթէ, բանականին շնորհ ընդ լրումն *մարդկութեանս* թա՛փ էանց ի տեսութիւնն աստուծոյ՝ որքանութիւնն և որպիսութիւնն...: - 258. Զոր օրինակ ո՛չ ասի մարդ մարդոյ նման գոլ ըստ *մարդկութեան*. վասն զի նոյնութիւն է և ոչ նմանութիւն...: - 272. ...ապրեցաւ ինքն և տունն իւր. և երկրորդ սկիզբն եղև *մարդկութեանն* և աշխարհի շինութեան: - 288. Երկրորդ՝ և արդարք առնեն ընդ դէմ սմին ի յամօթ չարին. որ հնարեցաւ ի ձեռն մեղացն՝ մահւամբ բառնալ *զմարդկութիւնս*. այլ հրամանաւն արարչին ծննդեամբք տևէ՛ և յերկարէ՛ բնութիւնս: - 321. Նա՛խ՝ զի կատարեա՛լ է աստուածութեամբ և *մարդկութեամբն* միացեալ: - 347. Եւ ո՛չ յօշէին զթռչունքն. զի անբաժանելի՛ է յինքեան աստուածութիւնն և *մարդկութիւնն*. այլ և զբազումս հաղորդութեամբն իւրով մի՛ արար անբաժանելի: - 361. Զի պա՛րտ է անպարտ գոլ բոլորովին. զի քրիստոս կատարեալ անարա՛տ է աստուածութեամբ և *մարդկութեամբ*: - 370. Նա՛խ՝ ցուցանէ թէ քրիստոս է առաջին և վերջին. այսինքն սկիզբն և կատարումն եկեղեցւոյ. ո՛չ միայն աստուածութեամբն, այլ և *մարդկութեամբն*: - 385. Իսկ աղն բանն աստուած խառնեալ ընդ *մարդկութիւնս*. որ բժշկեաց զվէրս մեր:

- 445. Տասներորդ գերագոյն սոցա՝ ըստ բնութեան միաւորութեան. որպէս բանին աստուծոյ ընդ *մարդկութիւնս*: - 474. Այսպէս և *մարդկութիւնն* միաւորեալ ընդ բանին՝ ո՛չ ունի տգիտութիւն ինչ մարդկային. այլ գիտէ զամենայն աստուածաբար: - 477. Զի որպէս ո՛չ գոյ սկիզբն աստուածութեան նորա, այսպէս և ոչ կատարումն *մարդկութեան* և աստուածութեան նորա: - 478. Ութերորդ՝ սկիզբն *մարդկութեանս* ա՛յրն է. և կինն ի նմանէ. վասն որոյ այր եղև, զի զբոլորս լինէր առեալ և փրկեալ: - 480. Զի իցէ ինքն սկիզբն և կատարումն ո՛չ միայն ըստ աստուածութեանն, այլ և ըստ *մարդկութեանն*: - 485. Եօթներորդ՝ գլուխն և պատուանդանն նշանակէ՛ միաւորեալ զաստուածութիւնն և *զմարդկութիւնն* քրիստոսի. որ խաչեալն է ի նմա: - 493. Ծալեալ վարշամակն նշանակէ զաստուածութիւնն որ գլուխ է. և կտաւն *զմարդկութիւնն*: - 517. Երկրորդ՝ երբեմն նշանակէ հացն ցամաք զբանն ի յերկնից իջեալ. և գինին *զմարդկութիւնն*. ...: - 598. Նա՛խ՝ որպէս ասեն ոմանք՝ Բուրվառն նշանակէ *զմարդկութիւնն* քրիստոսի. և Հուրն զաստուածութիւնն. Ծխումն զբուրումն հոգւոյն սրբոյ: - 645. Երկրորդ եղանակաւ ամենակալ թագաւո՛ր է քրիստոս ըստ որում անվախճան է *մարդկութեամբն*. - 711. Նա՛խ քրիստոս դատեսցէ աստուածութեամբն և *մարդկութեամբն*: - 738. Զի բոլոր Երրորդութիւնն դատէ՛ զմեղաւորս, և *մարդկութեամբն* խօսի ընդ նոսա քրիստոս: - 738. Իսկ *զմարդկութիւնն* քրիստոսի տեսանեն, նաև զխոցուածն, վասն **բ** պատճառի: - 740. Նա՛խ՝ տեսանեն *զմարդկութիւնն* զի երկիցեն. և մի՛ զաստուածութիւնն զի մի՛ խնդասցեն. զի սրտմտութեամբ հայի ի մեղաւորս. - 741. Նախ ըստ գոյացութեան. զի որպէս անսկիզբն է աստուածութեամբն, նոյնպէս և անվախճան է *մարդկութեամբն* հաւասարեալ: - 745. Երկրորդ ուրախութիւնն լինիցի տեսանելովն *զմարդկութիւնն* քրիստոսի: - 763. Իսկ հաւատ ի *մարդկութիւն* որդւոյ, Ի կուսէն երևեալ անհայր ի մօրէ. որպէս անմայր ի հօրէ: - 769. Երեք գլխօք վարէ՛ զընթացս *մարդկութեանն*: - 770. Մի դէմն յԵրրորդութենէն որդի լինի. մի դէմ ի *մարդկութենէս* ի կուսէ առեալ բնութիւն *մարդկութեան*, աստուածութիւնն բոլորովին յաղագս անհաս միաւորութեանն ըստ ոսկէբերանին յոհաննու: - 770. Նմանապէս և բոլորս *մարդկութիւն* կրեցին զապականութիւն ի նոյն ադամայ. ծնունդ գոլով նորին ցանկութեանն: - 776. *Մարդկութեամբն* աստուած է քրիստոս - 802

**ՄԱՐԴԿՕՐԷՆ +** Նա՛խ՝ ոմանք ասեն թէ *մարդկօրէն* կամէր իմանալ զնա և հարցանել վասն խաչին և դժոխոց և յարութեանն. իսկ այս կատարեալ մտաց պէտք էին և շա՛տ ժամու: - 517

**ՄԱՐԵՄԱՅ** - Եւ զօծումն թագաւորական՝ ի *մարեմայ* քեռէն ղազարու. յորժամ նստաւ ի վերայ յաւանակին: - 474

**ՄԱՐԵՐԻ +** Եւ **գ** դուստր. Արեգի. Աևկի. *Մարերի*: - 200. *Մարերի*. որպէս թուլանան մայրիք տերևօք և ոստովք. և լինին մայր թռչնոց և գազանաց: - 201

**ՄԱՐԶԵՄ +** Յօրինակ մարդկան՝ որ *մարզին* և կրթին, և ապա՛ պիտոյանան աստուծոյ և մարդկան: - 208

**ՄԱՐԶՊԱՆ +** Ժողովեալ **խ** եպիսկոպոսաց և բազում վարդապետաց և ժողովրդոց. կողմակալք և *մարզպանք*, մեծամեծօքն հայոց, և սպարապետն վարդան ազգայնօքն իւր: - 544

**ՄԱՐԹԵՄ +** *Մա՞րթէ* աւելի քան զմին կին առնուլ՝ թէ ոչ: - 612.Այսպէս բաղդատի կոչումն կշռոյ եթէ ումէք հաճոյ *մարթասցի*: - 745

**ՄԱՐԹԵԼԻ +** Դարձեալ այն զօրութիւնն և ներգործութիւնն և հարկաւորն մի է. և հետևին առ միմեանս. զի ամենայն որ հարկաւոր է՝ ներգործութեամբ է. և ամենայն ներգործութիւն զօրութեամբ ներգործէ. իսկ միւս զօրութիւնն և կարելին և ներընդունականն որ է *մարթելի*՝ մի է և հետևին առ իրեարս. զի ամենայն որ զօրութեամբն է՝ կարելի է և *մարթելի*: - 168

**ՄԱՐԹԻ +** Որպէս յարարածս աստուած ճանաչի, այսպէս և ի մարմնոյս զհոգին օրինակաւ իմանալ *մարթի*: - 250. Զմարդոյ հոգին ո՞րպէս իմանալ *մարթի*: - 251. Հոգին պատկե՛ր է աստուծոյ. և աստուածապաշտ մարդոյ՝ զաստուած քննել ո՛չ *մարթի* թէ ուստի՞ է. կամ ո՞ւր է կամ ո՞րչափ է. և կամ թէ ո՞րպէս է. կամ թէ մինչ ի յուր է: - 251

**ՄԱՐԻԱՄ** - Կոյսն *մարիամ* զմիածի՞նն որդի ծնաւ ըստ ինքեան, և թէ զանդրանիկն որդի առանձին, և թէ զերկուսն: - 68. Եւ ազգայինքն՝ միոյն հայր և հօգի. և միւսոյն յովսէփ և *մարիամ*: - 87. Ապա ըստ այսմ հետևի՝ զի *մարիամ* մայր քրիստոսի լինի և ո՛չ աստուծոյ. զի լաւ է քրիստոսածին և մարդածին կոչիլ՝ քան թէ աստուածածին: - 91. **Որպէս եղև առ *մարիամ* բորոտութիւն վասն բանբասելոյն զմովսէս. որ աստ սակաւ ինչ տանջեցաւ, զի մի՛ ելցէ յերկնից ժառանգութենէն**: - 159. Ասեն սուրբք, եթէ զորօրինակ աստուածածին կոյսն *մարիամ* կուսութեամբ ծնաւ առանց սերման կատարեալ և ճշմարիտ: - 226. Ասեմք եթէ՝ էառ քրիստոս մարմին ի կուսէն *մարիամայ* զմերս թանձր և մեղանչական. և միաւորելով ընդ ինքեան՝ եղև առաջին կերպ

անմեղութեանն ադամայ որ էր ի դրախտին:- 282. Նախ՝ ամուլ է սառա. և *մարիամ* կոյս. և եկեղեցի ամուլ և կոյս: - 307. Երկրորդ՝ սառա ամլութեամբ ծնաւ զիսահակ. և *մարիամ* կուսութեամբ զէմմանուէլ. և եկեղեցի միշտ կուսութեամբ ծնանի զծնունդս աւազանին: - 307. Երրորդ՝ սառա կոչի առաքինութիւն. և *մարիամ* լուսաւորութիւն. և եկեղեցի ժողովք հաւատացելոց՝ գործով ունի զառաքինութիւն և զլոյս հաւատոյ: - 307. Չորրորդ՝ սառա օրինակ և ծնունդ իւր. *մարիամ* ճշմարտութիւն և ծնեալն իւր. և եկեղեցի համանմանութիւն և զաւակք իւր: - 307. Հինգերորդ՝ աւետեօք երից արանցն ծնաւ սառա. և աւետեօք հրեշտակին *մարիամ*. և աւետեօք մարգարէին եկեղեցի: - 307. Ջառաջինն մխիթարեցաւ աստուածածին կուսիւն *մարիամաւ*. որ առանց երկանց և ցաւոց ծնաւ զմիածինն որդի, որ եբարձ զարտասուս վշտաց մօրն հռաքէլի: - 312. Նոյնպէս և տեառն մերոյ կոչի տաճար արտաքին բնակարան. որպէս կոյսն *մարիամ*, և հաւատացեալ ժողովուրդք, և շինուածք տաճարաց: - 319. Դարձեալ՝ մորենին էր կոյսն *մարիամ*, որ զիմանալի հուր աստուածութեանն յինքեան կրելով ո՛չ կիզաւ...: - 331. Չորրորդ՝ ամսամուտն նոցա. զոր ի նորանալ լուսնին տօնէին. իսկ մեզ տօն կուսին *մարիամու* որ լուսաւորութիւն լսի ըստ ոմանց: - 372-373. Եւ փոխմանն, ի վախճանիլն *մարիամու*՝ քուերն ահարօնի յանապատին: - 374. Երկրորդ, կոյսն *մարիամ* յարմատոյն յեսսեայ՝ յղացաւ և ծնաւ զբանն աստուած մարմնով: - 382. Երրորդ, տրտմեալ էր վասն մահուն *մարիամու*: - 386. Նոյնպէս ազգն իսրայէլի ընտրեցաւ վասն աստուածածին կուսին *մարիամու*: - 398. Եւ յետ մահուանն *մարիամու* նուազեաց ջուրն. յորում եհար բարկութեամբ զվէմն: - 415. Հինգերորդ՝ գզաթ էր կոյսն *մարիամ*. և ցօղ բանն աստուծոյ. որ աւետեօք հրեշտակապետին էջ ի վերայ նորա առանց ոտնաձայնութեան և ծածուկ: - 421. Նա՛խ՝ զի որդի է յեսսեայ. որ է՛ պտուղ կղզւոյ. և տէրն մեր եղև պտուղ *մարիամու* ցամաքեալ ի խոնաւութեանց կենցաղոյս: - 435. Եւ զի ո՛չ ետ մերձենալ *մարիամու*: - 455. Փառաւորեալ և միշտ կոյսն Աստուածածին *մարիամ* էր ի թագաւորական ցեղէն դաւթի...: - 459. Եւ յովակիմ ծնաւ *զմարիամ* կոյս: - 460. Եւ այսպէս **բ** եղբօր թոռունք էին *Մարիամ* կոյսն և Յովսէփ ի հարց կողմանէ մելքեայ և պանթերի ի նաթանայ: - 460. Իսկ ի մօր կողմանէ՝ *մարիամ* էր ի քահանայից ցեղէն, զի մատթան քահանայն բնակէր ի բեթլէհէմ, և ունէր երիս դստերս: - 460. Առաջինն *մարիամ*. երկրորդն սովփէ. երրորդն աննա: - 460. *Մարիամ* ամուսնացաւ ի բեթլէհէմ և ծնաւ զսողոմի զմանկաբարձն յիսուսի. ո՛չ որ մայր եղև որդւոցն զեբեթեայ. զի այն. սողովմէ դուստր է յովսեփայ աստուածահօրն...: - 460. ...իսկ Աննա ամուսնացաւ ի գալիլեայ ընդ յովակիմայ. և ծնաւ զաստուածածինն *մարիամ* ի պրոպատիկէ ի տունն յովակիմայ. և անտի տարեալ եղև ի տաճարն տեառն: - 460. Եւ այսպէս սողոմի և եղիսաբեթ և *մարիամ* աստուածածինն գ քերց դստերք էին: - 460. Որպէս զի լիցի կոյսն *մարիամ* յազգէ հարց ի թագաւորական ցեղէն. և յազգէ մօր ի քահանայից: - 461. Այսպէս և յովակիմ ի յուդայէ՛ էր և ունէր զաննա զդուստր մատթանայ ի ցեղէն ղևեայ. վասն այն ազգական *մարիամու* զեղիսաբեթ ասէր գաբրիէլ: - 461. Նոյնպէս յովսէփ և *մարիամ* մերկ էին ի մեղաց և առանց խղճի ամօթոյ: - 461. Ջի որպէս սատանայ օձիւն խօսեցաւ առ կոյսն եւա, այսպէս տէր մեր հրեշտակիւն առ կոյսն *մարիամ*: - 463. Իսկ հաւանական պատասխանիք սրբուհւոյ կուսին *մարիամու* են **դ** բանք: - 465. Եւ միւս ի մէջ *մարիամու* և հրեշտակին. յորմէ եղև կեանք: - 465. Ա՛րդ՝ աստի մինչ ի նիսանի **ժէ**, և յապրիլի է՝ կատարի է ամիս. յորում առաքեցաւ գաբրիէլ առ կոյսն *մարիամ* յաւուր չորեքշաբաթու: - 483. Վեցերորդ՝ *զմարիամ* մայր փրկչին կոյս և անապական խոստովանին հարք ուղղափառութեան. և զայս ո՛չ ըստ գոյացութեան բնութեան, այլ զի ծնաւ զբանն աստուած անապական մարմնով: - 499. Քանի՞ են *մարիամք* զոր յիշէ աւետարանն: - 516. Նա՛խ՝ աստուածածին կոյսն *մարիամ*: - 516. Երկրորդ՝ մագդաղենացին *մարիամ* յորմէ է դևքն ելին: - 516-517. Երրորդ՝ միւս *մարիամ* մագդաղենացի: - 517. Չորրորդ՝ *մարիամ* յակոբայ և յովսեայ մայրն, որ էր կին յովսեփայ կոչեցեալն աստուածահայր: - 517. Հինգերորդ՝ *մարիամ* կղէոպեանց որ կայր առ խաչին: - 517. Կղէոպաս եղբա՛յր է յովսեփայ. և *մարիամս* այս դո՛ւստր է նորա: - 517. Վեցերորդ՝ *մարիամ* քոյրն ղազարու. որ էօծ զտէրն իւղով: - 517. Վասն է՞ր ոչ ետ թոյլ մերձենալ *մարիամու*. և այն զի ի ճանապարհին կալան զոտս նորա և համբուրեցին ա՛յլ կանայք: - 517. Չորրորդ ասեն ոմանք թէ՝ դեռ չէր մկրտեալ *մարիամ*. և ոչ մկրտելոցն անհպելի՛ է. թէպէտ և իւրք իցեն: - 517. Վասն այն ո՛չ ետ *մարիամու* մերձենալ. այլ պահեաց զնա բազկին այնմիկ որ նստոյց զնա ընդ աջմէ իւրմէ: - 518. **Երեքտասաներորդ, զի *մարիամ* ո՛չ խոնարհութեամբ կամէր մերձենալ յոտս նորա որպէս այլ կանայքն. այլ յերե՛սն դիմեաց նա հպարտութեամբ առ ի համբուրել զնա. իսկ տէրն կամեցաւ ուսուցանել նմա զխոնարհութիւն՝ արգել զնա:** - 518. **Այլ կոյսն *մարիամ* աստուածածին՝ էր ազատ ի մահացուէն և ի ներելւոյն. բայց ո՛չ ի սկզբնականէն. զոր հոգւովն սրբով մաքրեցաւ:** - 568. Եւ զերկրորդն՝ ծնեալ ի կուսէն *մարիամայ*: - 573. Երրորդ, զի թէ կայր հնար որ ի ձեռն կնոջն տուեալ լինէր շնորհք, աստուածածին կոյսն *մարիամ* ընդէ՛ր ոչ եղև մերձ

մկրտութեան որդւոյն իւրոյ ի յորդանան: - 589. Դարձեալ՝ բուրվառն է կոյսն *մարիամ*. և հուր աստուածութիւնն ի նմա բնակեալ. - 645. որով տէրն մեր եկն առ մեզ կուսութեամբն *մարիամու*: - 665. Ո՞րպիսի լիցի օրն այն, մինչ քեզ *մարիամ* մայր տն ընդ առաջ ելանէ հանդերձ պարուք կուսանաց: - 764. Դարձեալ, ծառ կենա՛ց է աստուածածին կոյսն *մարիամ* բղխեալ յարմատոյն յեսսեայ. երկնուղէշ զարգացմամբ մշտասաղարթ կուսութեամբ ծաղկեալ և պայծառացեալ հոգւոյն սրբոյ եկաւորութեամբն. և պտղաբերեալ մեզ անմահ պտուղ զբանն մարմնացեալ. յորմէ վայելեալք երկնաւորք և երկրաւորք ի շնորհաց նորին զյաւիտենից կեանսն ժառանգեցաք: - 768

**ՄԱՐԻԱՄԱՆՔ +** Վասն *մարիամանցն* և վարշամակին: - 455

**ՄԱՐԻԱՆՈՍ (Ք)** - Եւ այս են իբ լեզուքն... *Մարիանոսք*: - 298

**ՄԱՐԿԵՂՈՍ** - Դարձեալ՝ մի բնութիւն համբաւեն *մարկեղոս* և փոտինոս: - 82. Այլ և ո՛չ որպէս պատահումն ի յէութիւն. զի բանն աստուած ո՛չ է անանձն և ազդումն ինչ որպէս մեր բանս ըստ ոմանց. որպէս *մարկեղոս* և փոտինոս դանդաչեն: - 88

**ՄԱՐԿԻԱՆՈՍ** - Հինգերորդ, յերկրորդ ամի թագաւորութեանն *մարկիանոսի* եղև ժողովն քաղկեդոնի: - 542. Զի պողքէր քոյր թագաւորին թէոդոսի ի կուսանաց վանս էր. և պղծեցաւ պոռնկութեամբ ի *մարկիանոսէ*. և ապա՛ եղև կին նմա. և ասեն թէ ի նեստորէ՛ էր մկրտեալ: - 542. Եւ պետրոս անտիոքու պատրիարգն և սուրբն պարսամ գրեցին ի հայք և զգուշացուցին. և նզովեցին զիւանանեալսն *մարկիանոսի*: - 543. Եւ սուրբն սիմէոն սիւնակեացն այրեաց զթուղթն դաւանութեանն քաղկեդոնի՝ զոր գրեալ էր թագաւորն *մարկիանոս* աղաչանօք առ նա՛. և նզովեաց զթղտատարն որ էր թէոդորիտոս գլուխ ժողովոյն: - 543. Եւ սուրբն դուկիոս սքանչելագործ և մարգարէաշնորհ, գրեաց առ *մարկիանոս*, թէ սուգ զգեցուցեր առաքելոց և մարգարէից. զի քակտեցեր զնոցա շինուածն. և արգելաւ հոգին սուրբ յօրհնելոյ զպատարագն և զաւազան մկրտութեան: - 543. Եւ նզովեցին զաղանդն *մարկիանու* և զարտեմոնի, և զտումարն լևոնի. և միաբանեցան ի մի հաւատս սուրբ առաքելոցն. և ի կանոնս սուրբ ժողովոյն ինչ պետք էին յաւելին գլուխս թ ի զգուշութիւն եկեղեցւոյ: - 544. Այլ զչար և զաստուածուրաց ժողովն քաղկեդոնի որ ի ձեռն *մարկիանոսի* և անիծելոյն պօղքերի՝ ո՛չ ընդունիմք. և զընդունօղսն նզովեմք: - 547

**ՄԱՐԿԻՈՆ** - Եւ աղճատանք լիցի քեզ ծնունդն ըստ *մարկիոնի* ութ աստուծոյն և ութ յաւիտենին: - 52

**ՄԱՐԿՈՍ** - Հինգերորդ՝ նշանակէ զչորեսին աւետարանիչքն. մարդն զՄատթէոս՝ զմարդեղութիւն բանին ցուցեալ առիւծն *զՄարկոս*՝ արիաբա՛ր աւետարանեալ...: - 132-133. Արծւին երագընթաց *մարկոս*. ի հոգւոյն մարգարէութենէն արարեալ սկիզբն: - 133. Մատթէոս, *Մարկոս*, Ղուկաս, Յոհաննէս: - 450. Իսկ ա՛յլ վարդապետք ընդ արշալոյսն առաւօտուն ասեն յարուցեալ ըստ *մարկոսի* և այլ աւետարանչացն: - 512. Իսկ զերրորդն *մարկոս* պատմէ՛ առաւօտուն և յարևագալն յետ ղուկասու. և տեսին երիտասարդ մի ի ներքս ի գերեզմանն ընդ աջմէ նստեալ: - 515. Յաղէքսանդրիայ վասն *մարկոսի*: - 549. այսպէս պատմէ Մատթէոս և *Մարկոս*. իսկ Ղուկաս և Յոհաննէս յետ ընթրեա՛ցն նշանակեն զբացեալ պատառն: - 599

**ՄԱՐՄԱՌՈՏ +** Չորրորդ՝ *մարմառոտն*. որ կաշին պատառեալ և խոց լինի նշանակէ՛ զխոց մեղաց: - 371

**ՄԱՐՄԻՆ +** Եւ ստուերն՝ *մարմնոյ*. և ո՛չ *մարմինն* ստուերին: - 9. Դարձեալ ասեն, թէ ամենայն ստորնային *մարմինք*՝ կառավարին վերնային *մարմնովք*...: - 10. Առ այս ասեմք, թէպէտ ստորնային *մարմինք* կառավարին վերնային *մարմնովք*, այլ մարդկային ներգործութիւնք կառավարին անձնիշխան կամօք. և անձնիշխան կամքն ո՛չ նըւաճի ի ներքոյ երկնային *մարմնոց*: - 10. Դարձեալ ասեն թէ՝ և *մարմինք* մարդկան են ստորնայինք. և սնանին և աճին շարժմամբ աստեղացն: - 10. Ասեմք առ այս, թէ սնունդ և աճումն *մարմնոց*, տնկանին է և ոչ աստեղաց. թէպէտ օգնեալ լինի ի նոցանէ: - 10. Եւ թէպէտ *մարմինք* մարդկան են տարրականք, այլ բարի և չար ներգործի ըստ կամաց և ո՛չ ըստ բանականութեան: - 10. Դարձեալ ասեն թէ՝ բազումք ի մարդկանէ գործեն ի խառնուածոյ *մարմնոյն*, որք հարկաւորին ի շարժմանէ աստեղացն: - 10. Ասեմք առ այս, թէպէտ խառնուածք *մարմնոյն* լինին ի շարժմանէ՛ աստեղացն, այլ բազումք անձնիշխան կամօք նըւաճեն զվատախառնութիւն *մարմնոյն*, և գործեն զբարիս: - 10. Դարձեալ, որոյ է իր գործեացն՝ նորա՛ է և ներգործութիւնն. եթէ առնել և եթէ կրել. արդ՝ մարդո՛յ է հոգին և *մարմինն* և ձեռն. մարդո՛յ է ուրեմն և գործ նոցին, եթէ չար և եթէ բարի: - 11. Ասեմք առ այս թէպէտ ունին զօրութիւնս, բայց այլ և այլ կերպիւ. զի բոյսք որք յերկրի են դարմանիչք և բժշկութիւնք *մարմնոց*...: - 12. Նախ թէ՝ երկնային *մարմինքն* ո՛չ են ի չորից տարրաց. այլ են հինգերորդ տարր կամ էութիւն ըստ արիստոտէլի. և որք են ի պարզ տարրէ միայն ո՛չ հակակային միմեանց: - 12. Երկրորդ՝ ասեմք եթէ և ոչ աստեղք վայրապար են ստեղծեալ. զի կառավարք են տարրեղէն *մարմնոց* որպէս ասացաք...: - 13. Վեցերորդ՝ ասեն հակառակքն,

թէ՝ չարն ոչ է յաստուծոյ, ապա աստուած ո՛չ ճանաչէ զչարն. որպէս մեք նմանեաւ զնմանն ճանաչեմք. այսինքն հոգւով զհոգևորս, և *մարմով* զմարմնաւորս: - 17. Նա՛խ՝ եթէ ուշիմ և ապուշ և այլն ըստ կարգի, սոքա եթէ ի *մարմնոյն* խառնուածոյ պատճառին՝ և եթէ բնական որակութեամբ հոգւոյն՝ նման և աննման գոլ...: - 19. Եւ ի յէութեան է. որպէս հիւանդութիւն ի յողջութեան, և ապականութիւն ի *մարմնի*: - 22. Եւ է չար՝ որ խա՛ռն է ընդ բարւոյ. և ի յէութեան գոյանայ. որպէս հիւանդութիւնն ի յողջութեան. ապականությիւնն ի *մարմնի*: - 22. Զի ի նըւազիլ ողջութեան՝ հիւանդութիւնն երևի. և ի նըւազիլ *մարմնոյ*՝ ապականութիւնն պատահի: - 22. Եւ ծանիր զայս, զի որքան նըւազի ողջութիւնն՝ առաւելու հիւանդութիւնն. և որչափ նըւազի *մարմին*՝ առաւելու ապականութիւն. այլ յամենևին նըւազիլ ողջութեան՝ և հիւանդութիւնն կորընչի: - 22. Երրորդ՝ պարզևականն. որպէս մարգարէիցն երևակայութեամբ, կամ ի ձեռն *մարմնոյ* զգայութեանց: - 24. Չորրորդ՝ զի որք կապեալ եմք ի *մարմնի*՝ անհնա՛ր է անմարմնապէս տեսանել զնա: - 25. Ըստ որում ոմն ի բնախօս արանց նկատմամբ առաջնորդականին՝ վարաթևեաց ի սկիզբն առաջին՝ թէ է՛ ոմն որ շարժէ՛ զերկնային *մարմին*: - 26. Չորրորդ՝ Զի մի՛ է տէր մեր և աստուած *մարմնով*՝ ի գլխով: - 30. Եւ այնպիսիքն տրամաբանել ո՛չ կարեն վասն հոգևորին. որպէս ի ծնէ կոյրն վասն գունոց, քանզի ասեն վարդապետք՝ աստուած լոյս է ո՛չ *մարմնոց*, այլ մտաց. զոր թէ ոք ո՛չ տեսանէ՝ կո՛յր է: - 32. Իսկ մեծութիւն կռապաշտութեան այնքան էր՝ մինչ միածին որդին պատարագեցաւ *մարմնով*, և ապա բարձաւ մեղք կռամոլութեանն յաշխարհէ: - 33. Վեցերորդ՝ հակառակէ քրիստոսի՝ և քրիստոնէից. և սոքա հակառակին սուրբ եկեղեցւոյ և ուղղափառ հաւատոյ. և զոր բանն աստուած առեալ զմարդկայինս բնութիւն միաւորեաց ընդ իւրում աստուածութեանն՝ սոքա ընդդէմ նմին որոշեն զբանն ի *մարմնոյն*. զի մի՛ իցէ աստուած մարդացեալ ըստ նոցա՝ և *մարմինն* աստուած. և պատճառս հայթայթելով պատրեն զմարդիկ: - 35. Ապա ուրեմն ծնունդն նախքան զամենայն բլուրս՝ էր ի սկզբանն ի բնութենէ հօր. իսկ ստեղծումն վասն մարմնալոյն. զի իւր է *մարմինն*: - 41. Դարձեալ ասի անդրանիկ և ըստ *մարմնոյն* ծննդեան: - 41. Իսկ ուր ուրէք զի զգեստ անւանի *մարմինն* յաղագս **բ** իմն պատճառաց: - 43. Նախ՝ զի որպէս զգեստիւն ծածկի *մարմինն*, այսպէս տէրն զաստուածութիւնն իւր ամփոփեաց *մարմնովն* անհաս լինիլ ի փորձողէն...: - 43. Երկրորդ՝ զի որպէս ամէն ոք իւր զգեստիւն ճանաչի, այսպէս և քրիստոս *մարմնով* երևեալ յայտնեցաւ աշխարհի: - 43. Մինն որ է աստուած՝ իսկապէս մեզ, և նմա ըստ *մարմնոյն*: - 43. Իսկ բանն աստուած է՛ ծնեալ ի հօրէ՝ այլ ո՛չ բաժանեալ. որպէս ո՛չ բաժանի բան՝ ի մտաց. թէպէտ ի բազում լսելիք մտանէ. և թէ ի վերայ քարտիսի *մարմին* զգենու: - 45. Զի՞նչ է տալն որդւոյ զկեանս՝ կամ զդատաստան՝ կամ զիշխանութիւն հեթանոսաց և ամէն *մարմնոյ*: - 46. Այլ որպէս բանին սեպհական է և բնութեամբ և ո՛չ ստացմամբ, այսպէս իմացիր և *մարմնոյն* վասն անճառ միաւորութեան բանին զի իւր է *մարմինն*. վասն այն ոչ ինչ բանին է՝ ասի *մարմնոյն*: - 46. Այս յայտնի է զի որդի էր որ յերկրի *մարմին* զգեցաւ: - 47. Այլ ա՛յս է, Զի ճանաչէ՛ իբրև զաստուած. այլ իբրև զմարդ անգիտնայ. զի բացարձա՛կ է որդւոյն անունն. այսինքն անորոշակի. զի որոյ և տացես թէ բանին և թէ *մարմնոյն*՝ կարէ՛ ասիլ: - 48. Իսկ մարդ, զի սրբեսցէ ինքեամբ զմեզ՝ եղև ամենայն յաղագս ամենայնի. այսինքն հոգի և միտք և *մարմին*. զի յորոց հասարակաց եղև մահ, լիցի և կեանք: - 50. Զի՞նչ ասեմ, զի հոգւով հնազանդեցաւ ադամ, և մտօք հաւանեցաւ, և *մարմնով* զգործն ի կատարումն էած: - 50. Նախ՝ որպէս մատն է յէութենէ *մարմնոյն*, այսպէս և հոգին սուրբ է յէութենէն աստուծոյ: - 62. Ա՛րդ՝ հոտն ո՛չ է ի գունոյն. այլ միայն ի *մարմնոյն*: - 64. Երեքտասաներորդ՝ զի թէ վասն բնակարան գոլոյ՝ *մարմին* նորա է կենդանարար: - 67. Ապա ուրեմն եղիցին ամենայն բնակարանացն *մարմինք* կենդանարար զոր անհնար է և զմտաւ ածել: - 67. Եօթնևժերորդ՝ զի թէ ծնեալն ըստ *մարմնոյ*՝ է առանձնապէս մարդ ապա ուրեմն ծնօղ նորին ո՛չ է աստուածածին, այլ՝ մարդածին: - 68. Իսկ թէ առանձնապէս զմարդոյն, զիա՞րդ իցէ կենդանարար *մարմինն* մարդոյ. կամ ո՞րպէս առաքեցաւ նա ի հօրէ. զիա՞րդ իցէ և կենդանի վասն հօր: - 69. Զի թէ առանձին մարդկութեանն, ո՞րպէս է յերկնից իջեալ. զի ի կուսէն ծնաւ *մարմինն*: - 70. Այլ թերևս ասիցէ ոք եթէ՝ վերոյ ասացեալ գործառնութիւնքս պատշաճին քրիստոսի վասն բնութեան բանին, և ո՛չ վասն *մարմնոյն*: - 72. Վասն որոյ հարկաւորիմ ցուցանել նոյն քան գլխով եթէ աստուած է քրիստոս և ըստ *մարմնոյն* միութեան մարմնացեալ և մարդացեալ աստուած: - 72. Իսկ եղևս այս՝ նշանակէ զմիաւորութիւն բանին և *մարմնոյն*: - 72. Նոյնպէս բանն աստուած եկաց մնաց բան, և եղև *մարմին*: - 72. Եւ զի բանն *մարմին* եղև միաւորութեամբն. ուրեմն յայտ է՝ զի *մարմին* բանին բան եղև նոյն միաւորութեամբն: - 72. Ապա ուրեմն աստուած է նոյն *մարմինն* քրիստոսի: - 72. Արդ բանն առանց *մարմնոյն* քրիստոս ո՛չ է. ապա ուրեմն յա՛յտ է զի միացեալ *մարմնովն* է՛ հաւասար և ի կերպարանս աստուծոյ տէր մեր յիսուս քրիստոս: - 72. Ապա ուրեմն շօշափելի *մարմինն* է բան կենաց և աստուած: - 73.

Եօթներորդ՝ իջանելն յերկնից՝ բանին յարմարի. զի միաւորեցաւ ի *մարմնի* այն է իջանելն: - 73. Ապա ուրեմն աստուած է *մարմինն* և յերկնից իջեալ: - 73. Ութերորդ՝ ելանելն յերկինս պատշաճի *մարմնոյն* քրիստոսի. որպէս ի տեսս առաքելոցն վերացաւ յերկինս. և իջանելն՝ բանին որպէս ասացաւ: - 73. Ապա ուրեմն երևեալն *մարմնով* և խոստեցեալն է որդի աստուծոյ և մի ընդ հօր: - 73. Այլ *մարմին* և հոգին քրիստոսի զսկիզբն յաշխարհի ունին...: - 73. Ապա ուրեմն և *մարմինն* այն յատուկ է *մարմին* բանին աստուծոյ. և այս ո՛չ կարէ լինիլ՝ եթէ ո՛չ լիցի միաւորեալ ընդ նմին: - 73. Ապա ուրեմն և մարմինն այն յատուկ է *մարմին* բանին աստուծոյ. և այս ո՛չ կարէ լինիլ՝ եթէ ո՛չ լիցի միաւորեալ ընդ նմին: - 73. Ութևժերորդ՝ ամենայն կիրք *մարմնոյ*՝ մարդոյն ասին. այնմ որոյ է՛ *մարմին*: - 74. Որպէս թէ *մարմինն* պետրոսի խոցի կամ տանջի, ասեմք թէ պետրոս խոցեցաւ և պետրոս տանջեցաւ: - 74. Ապա ուրեմն *մարմինն* քրիստոսի աստուած է: - 74. Քսաներորդ՝ որպէս բարձրագոյնքն կարեն ասիլ *մարմնոյն* վասն միութեանն՝ որպէս աստուած, յարութիւն, և կեանք յաւիտենական: - 74. Ապա ուրեմն ճշմարիտ աստուած է քրիստոս *մարմնովն* միավորեալ անբաժանելի յաւիտեան: - 74. Նոյնպէս իմա՛ և զաստուածն բան. ունելով զնոյն բնութիւն յառանձնութեան իւրում. և միայն միացեալ ի *մարմնի*...: - 74. Սակայն բա՛նն *մարմին* եղև. և ո՛չ հայր և հոգի: - 75. Յարցումնս այս է՛ երկաբնակացն. և նմանի այնմ թէ՝ մարդ ըստ հոգւոյն բնութեանն *մարմին* է, թէ ըստ *մարմնոյն* բնութեանն հոգի: - 75. Զի անմարմին է՝ և միաւորի ընդ *մարմնոյ*. որպէս հոգի և *մարմին* բնութեամբ միաւորին և ո՛չ շփոթին: - 76. Որև գոն ի յեղեալքս միաւորեալք. որպէս հուր և երկաթ. հոգի և *մարմին*. որք չարչարին անչարչարապէս: - 76. Ո՛չ յեղմամբ կամ շփոթմամբ. այլ անշփոթ միաւորութեամբ զբանն *մարմին* եղեալ և միաւորեալ զբնութիւնս մեր կատարելապէս ընդ իւրում աստուածութեանն: - 76. Եւ երևեալ *մարմնովն* մի բնութիւն տեսակացեալ և մի անձնաւորութիւն. մի տէր. մի որդի. ըստ սուրբ հարցն ուղղափառութեան: - 76. Եւ զնոյն բանն աստուած՝ աստուածութեամբն աստուած, և մարդկութեամբն աստուած. զի անբաժանելի՛ է. թէպէտ և էր նախ քան զմարդեղութիւնն աստուած, այլ յետ անճառ միաւորութեանն *մարմնովն* է աստուած: - 77. Այսպէս և ծնեցեալն որդի միաւորեալ *մարմնովն* է և ասի աստուած և մարդ. ի բաղադրեալ միաւորութեանն. և ո՛չ ասի **բ** անձն կամ **բ** բնութիւն: - 77. Այլ ամենևին անեղ և արարիչ *մարմնով* իւրով: - 78. Այլ ամենևին կատարեալ և միշտ մեծ *մարմնով* իւրով: - 78. Եւ ո՛չ ասի ժամանակեայ վասն *մարմնոյն*. այլ մշտնջենաւոր և յաւիտենական *մարմնով*: - 78. **դ**) Ո՛չ ասի հողեղէն և երկրեղէն վասն հողեղէն *մարմնոյն*. այլ միշտ յերկնից *մարմնով* իւրով. և ստեղծիչ հողեղինաց և երկրաւորաց: - 78. Եւ ո՛չ ասի շնչաւոր վասն շնչաւոր *մարմնոյն*. այլ ամենևին հոգևոր: - 78. Եւ ո՛չ ասի ծառայ վասն ծառայական *մարմնոյն*. այլ միշտ տէր և ազատ: - 78. Եւ ո՛չ ասի անիծեալ վասն անիծից *մարմնոյն*. այլ ամենևին օրհնութիւն *մարմնովն*: - 78. Եւ ո՛չ ասի մեղաւոր վասն առնլոյ զմեղաւոր *մարմինս*. այլ միշտ անմեղ *մարմնով* իւրով: - 78. Եւ ո՛չ ասի տգէտ և տկար վասն *մարմնոյն*. այլ ամենագէտ և ամենազօր *մարմնովն*: - 78. Եւ ո՛չ ասի ապականացու վասն առնլոյ յապականացւացս *մարմին*. այլ միշտ անապական *մարմնովն*: - 78. Եւ ո՛չ ասի մահկանացու վասն *մարմնոյն*. այլ միշտ անմահ և կենդանարար *մարմնովն*: - 78. Եւ ո՛չ ասի պարագրելի վասն *մարմնոյն*. այլ անպարագրելի *մարմնովն*: - 78. Ասի դարձեալ՝ աստուած *մարմին* եղեալ. և մարդ եղեալ. և *մարմին* առեալ. այլ ո՛չ ասի մարդ առեալ: - 79. Ասի դարձեալ՝ *մարմնով* ծնեալ. և *մարմնով* երևեալ. և *մարմնով* շրջեալ. և այլն: - 79. Նմանապէս ասի *մարմնով* չարչարեալ. և *մարմնով* մեռեալ. և յարուցեալ. և համբարձեալ: - 79. Իսկ սուրբն կիւրեղ ընդ դէմ նեստորի զինէր. որ ասէր բնակութեամբ զբանն ի *մարմնի*. և նախ զմարդն ծնեալ ի կուսէն և շրջեալ ի յերկրի, և յետոյ բնակեալ բանն աստուած յետ մկրտութեանն. և յետ յարութեանն փառաւորեաց զնա և զօրացոյց յարակցութեամբ ընդ ինքեան: - 79. Վասն որոյ ասէ սուրբն կիւրեղ եթէ՝ ո՛չ մարդն աստուածացաւ, այլ աստուած բանն էջ յարգանդ կուսին և առեալ հոգի և *մարմին* ի նմանէ՝ աստուածն մարդ եղև...: - 79. Իսկ աստուածաբանն ընդդէմ՝ ապօղինարի՝ որ միայն *մարմին* ասաց առանց հոգւոյ առեալ. ասէ, *մարմին* առանց հոգւոյ անկատա՛ր է մարդ: - 80. Այլ՝ էառ զհոգի և *զմարմին*. որ է կատարեալ բնութիւն մարդոյ. որպէս ասէ բնութիւնք բ. այսինքն կատարեալք: - 80. Ո՛չ որպէս ապօղինար կարծեաց. այլ աստուած կատարեալ և մարդ կատարեալ. հոգով և *մարմնով*: - 80. Ըստ որում մերձ դնէ, քանզի *մարմին* և հոգի. այսինքն թէ ո՛չ կարէ մարդն առանց հոգւոյն գոյանալ: - 80. Եւ հաստատեալ այսու եթէ՝ հոգին և *մարմինն* է միաւորեալ ընդ բանին աստուծոյ, կարգէ՛ և զայն. բայց որդիք ասէ ո՛չ **բ**. և ո՛չ աստուածք. զայս վասն դիմաց միաւորութեանն ասէ: - 80. Զբանն աներևոյթ և անժամանակ ասաց. և *զմարմինն* երևելի և ժամանակեայ: - 80. Զի՞նչ տայ իմանալ մի բնութիւն ասելն բանին և *մարմնոյն*: - 81. Արդ՝ որ պարզապէս մի բնութիւն ասեն բանին և *մարմնոյն*՝ կատարեալ ամբարշտութիւն է: - 81. Զի *մարմինն* է՛ ի կուսէն. և կոյսն յազգէն ադամայ.

և ադամ ի հողո՛յ արարած: - 81. Ասեմք եթէ՝ յորժամ մի ասեմք բնութիւն բանին և *մարմնոյն*, այս լինի կամ արիոսին. որ զբանն արարած ասէ և *զմարմինն* արարած. և այսպէս մի բնութիւն է արարածոյն ասէ. և զբանն ընդ *մարմնոյն* չարչարելի և մահկանացու: - 81. Դարձեալ՝ մի բնութիւն ասէ ապօղինար. որ զհոգի և զմիտս ուրացաւ. և միայն *զմարմին* ասէ առեալ, և ի տեղի հոգւոյ զբանն բնակեալ: - 81. Դարձեալ՝ մի բնութիւն ասաց միւս եւտիքէս. ոչինչ առեալ *մարմին* ի կուսէն. այլ իբր ընդ խողովակ անցեալ իբր ի դարիճակի. միայն զձևն ի նմանէ ձևագրեալ: - 81-82. Այլ և մի բնութիւն ասեն՝ որք ի յերկնից բերեալ *զմարմինն* խոստովանին: - 82. Եւ կամ բանն բնութեամբ *մարմնոյ* թանձրացեալ որպէս ջուր սառուցեալ: - 82. Այսոքիկ են չար աղանդաւորացն համբաւօղք մի բնութիւն բանին և *մարմնոյն*: - 82. Իսկ յորժամ կամեցաւ արարիչն մարդ լինիլ, բանն աստուած իւրով կատարելութեամբն անձամբ և էութեամբ՝ ո՛չ մասամբ, այլ լրիւ միացաւ անճառապէս ի *մարմնի*: - 82-83. Ո՛չ զմասն ինչ առեալ զմարդոյ. այլ զբոլոր բնութիւնն ժողովեալ անհատ մարդկութեամբն. զհոգի բանական՝ և զմիտս՝ և *զմարմինս* մեր՝ միաւորեաց ընդ իւրում աստուածութեանն անշփոթ և անորոշ միութեամբ: - 83. Զնոյն գոլ աստուած և որդի աստուծոյ ըստ հոգւոյ. իսկ որդի մարդոյ ըստ *մարմնոյ*: - 83. Բանն աստուած իւրով կատարելութեամբն էառ զմարդկայինս բնութիւն. զհոգի և *զմարմին* և զմիտս. և միաւորեալ ընդ իւրում աստուածութեանն՝ եղև մի անձն կատարեալ և մի դէմ: - 84. Եւ չորրորդ՝ զի ամենայն իր բնութեամբ իւրով միանայ և ո՛չ արտաքոյ բնութեան. որպէս հուր ընդ երկաթ՝ և հոգի ընդ *մարմին* միաւորի: - 85. Թէպէտ բնութեամբ միաւորին՝ տարբերութիւնն ո՛չ բառնի. զի տարբերութեանցն մնալ՝ խափանումն ո՛չ առնէ միաւորութեանն. որպէս հոգւոյ և *մարմնոյ*. ոսկւոյ և հրոյ. և ծանի՛ր՝ զի կրկին է տարբերութիւն. բաղկացական և բաժանական: - 85. Եւ որպէս հոգին և *մարմինն* մի ներգործութիւն կատարեն և ո՛չ երկուս: - 86. Որպէս մի է ի հոգւոյ և ի *մարմնոյ* մարդն՝ և մի ներգործութիւն մարդոյն: - 86. Այսպէս և բանն աստուած կատարէր մի ներգործութիւն *մարմնով* իւրով. զի միաւորութիւն բնութեանցն առանց փոփոխման և բաժանման է: - 86. Իսկ անհատ ասի՝ զի ո՛չ քակտի և ո՛չ հատանի որպէս բոլորն ի մասունս. զի թէ բաժանես զնա որպէս ի հոգի և ի *մարմին*, կամ յոտս և ի ձեռս և ի գլուխս, ո՛չ մնայ բոլորն: - 86-87. Նոյնպէս տեղիք *մարմնոյն* պարունակօղ՝ զմինն պարագրելի, և զմիւսն անպարագրելի: - 87. Իսկ աստ նման միմեանց՝ և բոլորին կոչի քրիստոս. ըստ որում ասի՝ քրիստոս էջ յերկնից. որ է բանն. և քրիստոս եդաւ ի գերեզմանի. որ միայն *մարմինն* է աստուածութեամբն. և քրիստոս էջ ի դժոխս. որ միայն հոգին էր աստուածութեամբն: - 88. Նախ՝ որպէս սեռ ի տեսակս բոլորապէս տեսանի և ո՛չ մասամբ. այս է՝ զի գոյացութիւնն որ է սեռ՝ բոլոր է ի *մարմինն* և յանմարմինն. և կենդանին բոլոր ի բանականն և բոլոր յանբանն: - 89. Կամ որպէս բոլորն է ի հոգին, այսպէս բոլորն է ի *մարմինն* միաւորեալ. և բոլորն յիրաքանչիւր մասն *մարմնոյն*: - 89. Նոյնպէս բանն աստուած և հոգի և *մարմինն* միաւորեալ է բոլոր մի քրիստոս. և ի պակասիլ միոյն՝ ո՛չ մնայ քրիստոս: - 89. Յորժամ ձեռն քրիստոսի ոչ է աստուած, ապա ուրեմն և բոլոր *մարմինն* ո՛չ է աստուած. զի բոլորն ի մասանցն բաղկանայ: - 91. Եւ թէ *մարմինն* քրիստոսի չէ աստուած, և հոգին քրիստոսի չէ աստուած, որպէս նոքա բարբանջեն. ապա և բոլորն քրիստոս չէ աստուած. զի բոլորն քրիստոս յաստուածութենէն միաւորեալ լինի մի քրիստոս. և բաժանեալ ո՛չ է քրիստոս: - 91. Դարձեալ՝ որպէս ձեռն և ոտն մարդոյ ո՛չ է մարդ, նոյնպէս և ձեռն քրիստոսի ո՛չ է քրիստոս. և ոտն և այլ մասունքն ո՛չ են քրիստոս. ապա և բոլոր *մարմինն* ո՛չ է քրիստոս. և հոգին ո՛չ է քրիստոս. ապա թէ սոքա չեն քրիստոս, և բանն ըստ ինքեան ո՛չ է քրիստոս: - 91. Երևի ապա զի աստուծոյ ո՛չ ասեն զմասունքն, այսինքն զձեռն և զոտն. ապա ըստ նոցա և *մարմինն* չէ աստուծոյ *մարմին*. և արիւնն չէ աստուծոյ. և հոգին չէ աստուծոյ. այլ ամենեքեան սոքա մարդո՛յ են: - 91. Ասեն զայս թէ՝ քրիստոսի է *մարմին*. և քրիստոսի է արիւն. և քրիստոսի հոգի. այլ աստուծոյ ո՛չ ասեն: - 91. Զի ասեմք *զմարմինն* քրիստոսի վասն միաւորութեանն աստուած՝ և աստուծոյ *մարմին*: - 92. Զի թէ ասեմք եթէ ոչ է աստուած, յայնժամ բաժանեալ յաստուածութենէն՝ ո՛չ լինի աստուծոյ ձեռն. և ո՛չ աստուծոյ *մարմին*. կամ արիւն. զի մասն բաժանեալ ի բոլորէն ո՛չ է բոլորին մասն. և ո՛չ կոչի. որպէս ձեռն հատեալ յանդամոցն՝ ո՛չ կոչի մասն բոլորին: - 92. Եւ թէ ասես միայնաբար՝ աստուած է *մարմինն*. և աստուած է արիւնն, լինի բազմաստուածութեան ցոյցք: - 92. Այլ ասելն՝ աստուած է և աստուծոյ *մարմին*. հոգի. և այլն. ուղղակի՛ է: - 92. Այսպէս կարեմք ասել *զմարմինն* քրիստոսի թէ՝ աստուած է և աստուծոյ *մարմին* և արիւն. և այլն ամենայն: - 92. Որպէս յորժամ ասեմք զձեռն բոլոր և մասն. զի մասն է բոլոր *մարմնոյն*, և բոլոր առ մատունս ձեռացն: - 92. Նմանապէս և *մարմինն* քրիստոսի աստուած է առ մասունք *մարմնոյն*. և աստուծոյ *մարմին* առ բոլորն քրիստոս: - 92. Որպէս ձեռն ունի զգոյացութիւն բոլոր *մարմնոյն*. և կոչի *մարմինն* առ բոլորն քրիստոս: - 92. Այսպէս *մարմին* և հոգին են ի գոյացութենէն քրիստոսի: - 92. Նմանապէս *մարմինն*

քրիստոսի աստուած է՝ և կոչի աստուած և աստուծոյ *մարմին*: - 92. Երրորդ՝ զի ո՛չ է նման առ մեզ և առ նա մասն և բոլորն. զի թէպէտ մասունք մարդոյ՝ ո՛չ ունին զկոչմունս բոլորին, սակայն մասունք *մարմնոյն* քրիստոսի՝ կոչին և ունին զբոլորին էութիւն: - 92. Որպէս ի նշխարս *մարմնոյն* է տեսանել. զի ի բոլորն է բոլոր քրիստոսն. և յիւրաքանչիւր մասունս է բոլոր քրիստոսն: - 92. Ապա ուրեմն կարեմք ասել *զմարմինն* քրիստոսի աստուած և աստուծոյ *մարմին*, և զայլն նմանապէս: - 92. Այսպէս է համանգամայն ասելն եթէ՝ աստուած է և աստուծոյ *մարմին*: - 92. Իսկ թէ և որոշակի ասես ուղղափառ մտօք, և ո՛չ այն է զարտուղի. յորժամ ասես աստուծոյ *մարմին* և աստուծոյ արիւն. զի որ ինչ է՛ ի յաստուած՝ աստուած է և ո՛չ օտար յաստուծոյ: - 92-93. Նմանապէս *մարմին* և արիւն և ոսկր և այլն աստուծոյ ասել՝ զաստուած ցուցանէ: - 93. Իսկ թէ ասես միայնաբար աստուած է *մարմինն* և աստուած է հոգին. այսու ո՛չ լինիս բազմաստուած. զի մի՛ է աստուածութիւնն ի սոսա միաւորեալ էութեամբ և գոյացութեամբ: - 93. Եւ դարձեալ որպէս ասեմք *զմարմինն* և զարիւնն և զհոգին և զբանն քրիստոս՝ և ո՛չ է բազում քրիստոս: - 93. Նոյնպէս և ասելն թէ՝ *մարմինն* քրիստոսի աստուած է. և արիւնն աստուած է. և հոգին աստուած է. ո՛չ է բազմաստուած. այլ մի աստուած: - 93. Երանելին պօղոս՝ զխորհուրդն աստուածպաշտութեան յայտնի և մեծ ասէ. ըստ որում երևեցաւ բանն *մարմնով*. բնաւին ապա բաժանելն ի *մարմնոյն* ամբարշտութիւն է և իմացմամբ և բանիւ: - 93. Եւ դարձեալ՝ զի մի՛ կարծի միայն յանմարմնութեանն պատկեր հօր, ի վերայ էած և ի լինելութեանն հաւասար աստուծոյ գոլ նովին *մարմնովն* առանց յափշտակութեան: - 93. Զի եթէ բաժանմամբ, այս կամ բանին իմացի, և կամ *մարմնոյն*: - 94. Զի որ խոնարհեցաւ բանն ի *մարմին* նո՛յն բարձրացաւ *մարմնով*. և որ էջն ի ստորինս երկիր, նո՛յն է որ ելն ի վերոյ քան զամենայն երկինս. և որ ունայնացաւ՝ նո՛յն ելից զամենայն: - 94. Զի ո՛չ ասեմք *մարմին* զմարմնացեալն, այլ զբանն *մարմին* եղեալ: - 94. Եւ զայս եթէ բաժանմամբ, ո՛չ է առանձնապէս բանն քրիստոս. զի ո՛չ գոյ մեծագոյն օծանօղ նմա. որ և ո՛չ առանց *մարմնոյ* փրկեաց: - 94. Նա՛և ո՛չ *մարմինն* որիշ յօծողէն կոչեսցի օծեալ: - 94. Ընդէ՞ր ապա զնորա *մարմինն* ճաշակեմք. և ի նա մկրտիմք և նովաւ յառնեմք և այլն ևս: - 95. Եւ այսպէս բազում է ի գիրս հարցմանցս վասն միաւորութեան բանին և *մարմնոյն* ընդ դէմ նեստորի և երկաբնականց. որ բաւական լուծումն է բանիս: - 95. Եւ թէ ասես բանինետ և ո՛չ *մարմնոյն*: - 96. Ա՛րդ՝ եթէ մի անձն խոստովանիս քրիստոսի, և բնութիւն մարդոյն միացեալ ի յանձն բանին, զոր ինչ բանին է բնութեամբ, ամենայնն եղիցի և *մարմնոյն* իւրոյ միաւորութեամբ: - 98. Իսկ թէ ա՛յլ է բանին և այլ է *մարմնոյն*, ապա բաժանե՛ս զմարդկութիւնն ի յանձնէն...: - 98. Որ ասես սոսկ մարդ գոլ զքրիստոս. և տգէտ և տկար. և ապականացու *մարմին*. և անկեալ ընդ կարեօք մարդկան: - 98. Քսանևմիերորդ՝ արդ՝ եթէ քրիստոս տգէտ ունէր միտս, և տկար հոգի, և ապականացու *մարմին* և եկն քրիստոս զի բարձցէ զտկարութիւնս մեր. և լուսաւորեսցէ որ նստէաք ի խաւարի. և նա՛ է զառն աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի և զապականութիւն: - 99. Ա՛րդ՝ ճանապարհո՛րդ էր ըստ *մարմնոյ* տնօրէնութեանն մահուամբ և յարութեամբ մտանել ի փառս: - 100. Այսպէս *մարմինն* քրիստոսի միաւորեալ ընդ բանն աստուած՝ ունի զկարողութիւն և զաստուածութիւն բանին...: - 100. Ոտք է *մարմինն*: - 102. Ո՞րպէս երևի անմարմինքն. *մարմնո՞վ*, առ աչօ՞ք, թէ իսկութեամբ: - 102. Զոր օրինակ, զգալի խաւարս *մարմնոյ* աչացն է: - 103. Նախ՝ որպէս տեսութիւն աչաց ի *մարմինն* հանգչի: - 104. Ութերորդ՝ նա ծնաւ ըստ *մարմնոյ*, զի դու ծնցիս ըստ հոգւոյ: - 107. Եւ զի նա հոգևոր ծնեալ՝ ծնաւ ըստ *մարմնոյ*. զի դու մարմնաւոր ծնեալ՝ ծնցիս վերստին ըստ հոգւոյ: - 107. Զի նախ կենդանի է *մարմնով*. յետոյ անմարմին. և յետոյ միաւորութեամբ յաւիտեան: - 117. Երկրորդ՝ զի հարստահարեալ ի *մարմնոյ* ախտից՝ մոռանայ զբանն: - 120. Նախ՝ զի միտք զանմարմինն տեսանէ, և զգայութիւն *զմարմինն*: - 120. Զի ո՛չ *մարմին* է. և ո՛չ հոգի. և ո՛չ միտ. և ո՛չ այլ ինչ զոր մեք գիտեմք կամ իմանամք: - 122. Երկրորդ՝ ո՛չէ և ասի. որպէս *մարմին*. ձեռն. և ոտն: - 123. Նոյնպէս և բանն *մարմին* եղև. և հոգին ո՛չ: - 125. Վեցերորդ՝ դեղինն զառաքինութիւն *մարմնոյն*. և սպիտակն զանմեղութիւն հոգւոյն: - 125. Նոյնպէս բանն աստուած մի քրիստոս է բովանդակեալ *մարմնովն* անբաժանելի: - 125. Եւ նա՛խ է բանն աստուած, և յետոյ միացաւ ի *մարմնի* անբաժանելի. «յիսուս քրիստոս երէկ և այսօր նոյն և յաւիտեանս»: - 126. Մեծ է տէր մեր և մեծ է զօրութեամբ. այլ քանակեալ *մարմնով* ի չափս մեր տեսանի: - 127. Վասն է՞ր *մարմինն* ոտք կոչի քրիստոսի: - 130. Նախ՝ աստուածաբանն գրիգոր՝ զոտքն *մարմնով* տընօրէնութեանն ասէ նշանակ. զի *մարմնով* եկեալ զփրկութիւն մեր արար. և *մարմնով* համբարձաւ առ հայր: - 130. Երկրորդ՝ զի ոտք վերջին է մասն. և ի վերջին ժամանակս երևեցաւ *մարմնով* քրիստոս: - 130. Երրորդ՝ կրկին ոտքն զհոգի և *զմարմին* նշանակէ: - 130. Չորրորդ՝ ներքին է բոլոր *մարմնոյն*. և հիմն եկեղեցւոյ է քրիստոս ըստ առաքելոյ: - 130. Հինգերորդ՝ ոտքն են հաւատացեալք և առաքեալք նորին. և գլուխ է քրիստոս. զի անդամք և *մարմին* եմք նմա ըստ

առաքելոյ: - 130. Ո՞րպէս երկին անմարմինքն. *մարմնո՞վ*, առ աչօ՞ք, թէ իսկութեամբ: - 133. Իսկ աստ էութիւն հրեշտակին է կերպարանեալ *մարմին* տեսանելի: - 133. Երկրորդ՝ հոգին միաւորի ընդ *մարմնոյն*. և հրեշտակն ո՛չ: - 140. Երրորդ՝ հրեշտակն ըստ ինքեան անձն է. և հոգին *մարմնովն* է կատարեալ անձն: - 141. Իսկ ի յարութեանն և այսպէս հրեշտակաց հաւասարին իմացմամբ՝ կատարեալ անձամբ՝ անքանակ *մարմնով* և անփոփոխ: - 141. Եւ այս առ հրեշտակս՝ կամ առ հոգիս՝ կամ ի *մարմինս*: - 142. Եթէ զգայութեամբ և *մարմնով* սիրեսցես զաստուած՝ լինի կատարեալ սէր: - 143. Իսկ բանիւ բերանոյ խօսի մարդ ընդ մարդոյ, հրեշտակք ընդ մարդոյ՝ ձևացեալ *մարմնովն*: - 145. Նախ՝ ձայնական բանիւ՝ ձևացեալ *մարմնովն:* - 145. Իսկ այլք ասեն թէ՝ հրեշտակն ո՛չ երևի ձևացեալ *մարմնովն* և ո՛չ խօսի ընդ մարդոյն. այլ՝ դնէ զնմանութիւն դիտաւորութեան ի յաչքն կամ ի յականջն մարդոյն. և անդ ընդունի հասարակ զգայութիւնն զտեսակս այնմիկ, և տայ յերևակայութիւնն և յիմացականն. այսպէս երևին հրեշտակք և խօսին ընդ մարդոյ: - 145. Նոյնպէս և խօսի հոգին ընդ հրեշտակն մարմնական կերպիւ զոր իմանայ հրեշտակն որպէս զայլ զգալիս որքան է ի *մարմնի*: - 145. Այլ ի մերկանալն ի *մարմնոյն* կարօտանայ յատուկ իմն զօրութեան որով խօսեցի ընդ հրեշտակին: - 145. Եւ որք ի ջուրս և ի ծնունդս կանանց՝ ա՛լք կոչեցան. զի գէջ ախտիւն զհոգիս կորուսանեն. և ի ծնունդս՝ *զմարմինս* և զհոգին: - 150. Չինգերորդ՝ զի հոգևոր բնութիւնն միանգամ միայն է շրջելի. վասն զի բոլորովին շրջէ զինքն՝ զոր ո՛չ առնէ մարդն. զի *մարմինն* միշտ մարտնչի ընդ հոգին. որպէս յառաջիկայդ ասի լբ գլուխն: - 151. Զոր եկեալ տէրն անմեղ և անապական *մարմնովն* նահանջեաց զմեղս, և զարդարութիւն սփռեաց ի վերայ մարդկան. և դատապարտեաց զսատանայ իբր զդաւաճանօղ մարդկան և կոխան արար ի ներքոյ մարդկան: - 153. Երրորդ՝ որպէս պօղոսի տուաւ խայթ *մարմնոյն* զի մի՛ զ'ի վերուստ առեալ շնորհն և զօրութիւն՝ հպարտութեամբ լքանիցէ...: - 158. Երեքտասաներորդ՝ զի տկար *մարմնով* անմարմին և զօրաւոր թշնամոյն յաղթեսցեն. որով աստուած իսկապէս փառաւորի. տեսանելով զտկարն յաղթել զօրաւորին ըստ այնմ որ զախորժակս իւր յայտնէ՛ր սիրելոյն՝ «շա՛տ է քեզ շնորհ իմ. զի զօրութիւն իմ ի տկարութեան քում կատարի». այսինքն թէ՝ որպէս ես աստուածային *մարմնոյս* զօրութեամբն յաղթեցի փորձողին, նոյնպէս և դու շնորհօք իմովք՝ տկար *մարմնով* քո՝ յաղթես և նկուն առնես զնա: - 159. Չինգերորդ զանազանութիւն՝ զի ծնն անմարմին է ի միտս. իսկ շինեալն *մարմին*: - 163. Եւ զորօրինակ՝ անորակ նիւթն որ է՛ միշտ զօրութեամբ, ամենայն *մարմինք* որ ներգործութեամբ են՝ առ նա զօրութեամբ են: - 169. Այլ ասիցէ ոք, թէ բազում ինչ գոն ի յայլս գոյացութիւն և ի յայլս պատահումն. որպէս ջերմութիւն ի հուրն գոյացութենէ, և ի անորակ *մարմինն* պատահումն. և տերևն ըստ ինքեան գոյացութիւն է, և ի ծառն պատահումն. այսպէս և մազն: - 169. Պատասխանեմք առ այս եթէ՝ առանց ջերմութեան անձև և անկերպ է անորակ *մարմինն*. իսկ տերևն զա՛րդ է ծառոյն. և մազն *մարմնոյն*: - 170. Երկրորդ՝ թէպէտ յետոյ եղեն արարածք, ո՛չ են պատահումն. որպէս և բանն էր յառաջ, և յետոյ եղև *մարմին*. այլ *մարմինն* բանին ո՛չ է պատահումն. և որդի հօրն ո՛չ է պատահումն թէպէտ յետոյ ծնանի զի առ ինչ է հօրն: - 170. Իսկ պատահումն ի յայլս ունի զէութիւնն, և կարօ՛տ է այլոյ ի գոլն. որպէս գոյն ի *մարմնի*: - 170. Ութերորդ՝ զի պատահումն ժողովելով առ գոյացութիւնն լինի *մարմին*: - 170. Նախ է տեղի մարմնական. որ ըստ իւրաքանչիւր մասնկանց *մարմնոյն* պատահի: - 172. Քանի ի՞նչ է պարագրօղ *մարմնոյ*: - 174. Տեղին է պարագրօղ *մարմնոյ*. զի ամենայն մարմին տեղեաւ պարագրի. և ամենայն տեղի է ի պատահական սեռէ: - 174. Տեղին է պարագրօղ մարմնոյ. զի ամենայն *մարմին* տեղեաւ պարագրի. և ամենայն տեղի է ի պատահական սեռէ: - 174. Այլ է՛ բաղկացական *մարմնոյ*, և է՛ տեղի պատահական: - 174. Բաղկացական է, որ ընդ *մարմնոյ* մասնկանցն գոյանայ ի ներս և ի դուրս. վերոյ և ներքոյ շուրջանակի. զի իւրաքանչիւր մասունք ի տեղին ունին զդրութիւնն. և կայացեալ ի բոլորն: - 174. Եւ գիտելի է՝ զզանազանութիւն սոցա. զի հոգին է ի *մարմինն* կալմամբ և սահմանեալ. այլ ո՛չ պարագրեալ. իսկ հրեշտակն ո՛չ կալմամբ ի *մարմին* և ոչ պարագրեալ. այլ սահմանեալ: - 174. Իսկ աստուած արտաքոյ է սոցա. զի ո՛չ է սահմանեալ և ո՛չ պարագրեալ և ո՛չ կալեալ յիմեքէ. ո՛չ իմացմամբ և ո՛չ տեղեաւ կամ *մարմնով*: - 174. Եւ գոյացութիւն ասեմ, որով տարորոշի ընդդէմ ոչ գոյին. և որակութեամբ բացորոշի յանմարմին էութեանց. ուստի բաղկանայ *մարմին* գոյացութեամբ և որակութեամբ: - 175. Եւ ուստի՞ է յայտ ասիցէ ոք. այսինքն զի բանն անմարմին է որ բաժանէ զսոսա. զի այս է կարգն որ *մարմին* *զմարմին* բաժանէ. և անմարմին զանմանմինն: - 175. Եւ *մարմնով* ո՛չ բաժանին սոքա. թէպէտ և մանր փոշի լինին՝ ունին զքանակն զորակն և զայլն. զի անմեկնելի որոշմունք են գոյացութիւն և պատահմունք: - 175. Եւ որովհետև ծանեաք զի անմարմին են սոքա, յա՛յտ է զի բաժանումն սոցա քակէ՛ զնիւթն ի *մարմնոյ*. ապա ուրեմն ի մի վայր ժողովումն՝ ծնանի զնիւթական *մարմինն*: - 175. Ուստի տարերք և տարրեղէն *մարմինք* խառնեցան և

յառաջ եկին ի մի և ի նոյն նիւթոյն: - 175. Երկրորդ՝ զի իր մարմնական են և ի *մարմնի* էանան սոքա՝ և ո՛չ են *մարմին*. այլ անմարմին էութիւն որպէս ասացաք: - 175. Երրորդ՝ ի ժողովիլն սոցա լինի մարմնական էութիւն. և յորոշելն կորնչի *մարմինն*: - 175. Չորրորդ՝ զի իւրաքանչիւր սոքա առանձին սահման ունին և բնութիւն. և ո՛չ միաբանին ընդ միմեանս և ո՛չ ընդ *մարմնի*. այսինքն քանակն որակն. և ծանրութիւնն. և այլքն: - 175. Զի քանակն որակ ո՛չ է և ոչ ասի. և ո՛չ ծանրութիւն. և ո՛չ կարծրութիւնն *մարմին*: - 175-176. Որպէս հոգի և *մարմին* բնութեամբ միաւորին ի մի բնութիւն և ի մի դէմ և ո՛չ շփոթին: - 176. Ապա թէ կամիս զորոշումն բնութեանց ի ներքս բերել ո՛վ երկաբնակ, մի՛ ասեր **բ** բնութիւն. այլ **գ**. այսինքն *զմարմնոյ* և զհոգւոյ և զբանին բնութիւն: - 176. Եւ ո՛չ միայն այս. այլ և **դ** բնութիւն է չորից տարերաց *մարմնոյն*. ջերմ և ցուրտ. չոր և գէճ: - 176. Դարձեալ՝ ա՛յլ է բնութիւն *մարմնոյն*. ա՛յլ ոսկերացն. և ա՛յլ է ջիլն և երակն և մորթն և մազն և իւրաքանչիւր մաղձքն. ըստ այսմ ապա ասա՛ և բազում բնութիւնս քրիստոսի: - 176. Գոյացութիւն որ սկիզբն է ամենեցուն և նախասեռ. և ի նմանէ զուգաբաժանեալ *մարմինն*. և շնչաւորն. և զգայունն. և կենդանին. և բանաւորն. և մարդն. ո՞չ ապաքէն բնութիւն են սոքա այլևայլ. և ժողովեալ գոյացուցանեն զմի անհատն պետրոս անշփոթ միութեամբ: - 176. Եւ զի անշփո՛թ են սոքա յատկութեամբ՝ յայտ է. ուստի ասեմք, պետրոս մա՛րդ է և բանաւոր և կենդանի և զգայուն և շնչաւոր և *մարմին* և գոյացութիւն: - 176. Չորրորդ՝ զի գրովն որ է *մարմին* հասանիմք յանմարմին բանն: - 177. Հինգերորդ՝ զի յետոյ լինելոցն էր բանն աստուծոյ *մարմին*. որպէս գիրն ունի յինքեան զբանն. և խօսի ընդ մեզ: - 177. Որպէս ի նիւթոյ և ի տեսակէ *մարմին*. և ի հոգւոյ և ի *մարմնոյ* կենդանին. և յարուէ՛ և իգէ ծնեալն. նոյնպէս ի ձայնաւորէ՛ և յանձայնէ՛ բանն ծնանի: - 177. Երկրորդ՝ յերից գծից բաղկանայ. որպէս մարդ ի հոգւոյ և ի *մարմնոյ* և ի մտաց: - 178. Դարձեալ՝ իմաստութեամբն տիրեմք ծովու և ցամաքի. և բազում բարութիւն հոգւոյ և *մարմնոյ* ի նմանէ ծնանի: - 178. Ապա թէ ոչ, ո՛չ *մարմին* է աստուծոյ և ո՛չ ոտք: - 180. Եւ այսպէս ի նոցա խառնուածոց լինի գոյացեալ *մարմին* և յառաջ եկեալ: - 181. Նախ՝ ի շարժմանէ՛ երկնային *մարմնոց*. զի միշտ նոյնպէս և անդադար շարժին. առնելով զօր և զամիս՝ և զեղանակս՝ և զտարի՝ ստուգագոյն չափով առանց յաւելուածոյ և պակասութեան: - 181. Առաջին պատճառ, զի երկինքն է պարզ *մարմին*. զի ո՛չ է ի չորից տարերց. այլ եերորդ էութիւն է: - 182. Չորրորդ՝ զի երկինքն է կատարեալ *մարմին*. զի ազդէ՛ յամենայն ստորնային *մարմինս* խնամելով զնոսա: - 182. Ապա ուրեմն բոլորակ ձևն որ կատարեալ է՝ պատշաճի կատարեալ *մամնոյ* երկնից: - 183. Հինգերորդ՝ թէ երկինքն ո՛չ էր բոլորակ՝ այլ քառանկիւնի կամ եռանկիւնի, յորժամ շարժէին անկիւնքն՝ յորմէ տեղւոջէ վերանային՝ մնային առանց տեղւոյ. և տեղի անկեանցն առանց *մարմնոյ*: - 183. Նախ՝ զի *մարմին* է բարձր. որ և ի սահմանս իւր նախադրի: - 184. Իշխէ՛ տարրական *մարմնոց*: - 186. Իսկ այլք ուղղակի՛ ասեն՝ թէ անմոլար աստեղքն ամրացեալ են ի հաստատութեանն որպէս սպի ի վերայ *մարմնոյ*, և ընդ նմա շարժին: - 189. Եւ զի զգայութիւնք *մարմնոյ* զինքեանս խնուն: - 196. Ութերորդ՝ փրկչին մերոյ և աստուծոյ աւետեաց. որ ծնաւ *մարմնով* վասն մեր: - 196. Այսպէս յեգիպտոս հուրն որ ընդ կարկտին իջանէր, վասն ազդու զօրութեանն՝ զկենդանիսն սպանանէր, և *մարմինքն* ամբո՛ղջ մնային: - 204. Ինևոմ՝ թափանծիկ *մարմին* է: - 207. Երկիր որ հոգւով կառավարի, է՛ *մարմին* մահկանացու: - 210. Զի ի չորս տարրէ՛ է գոյացեալ. և ունի զաճումն հողոյն. վասն այն նախ աճէ ենթակայ *մարմինն*: - 213. Երրորդ՝ զի կարօ՛տ է երկնային *մարմնոցն*. վասն այն ի վե՛ր ընթանայ: - 214. Եւ նոյնպէս զգայական *մարմինք* ի փտելոյ և յապականութենէ գոյանան. վասն այն և դարձեալ ապականին: - 214. և Սպիտակն որ է մաղասն ի բոլոր *մարմին* և կամ յերիկամունքն՝ է՛ ջրոյն: - 215. Վեցերորդ՝ ըստ այլոց. զի բոլոր թանձր *մարմինն* է՛ հողոյ. և ամենայն հիւթք և մաղձք է՛ ջրոյ. թոքն է՛ օդոյն. և սիրտն է՛ հրոյն ջերմ գոլով: - 215. Թանձրութիւն *մարմնոյն* հողոյ: - 215. Իններորդ՝ նոյն ինքն *մարմին* կենդանւոյն է՛ շօշափելի և է՛ կալեալ և մածեալ. և շարժի և երևի. որպէս ասացաք վասն հողոյն: - 215. Այլ յայտնապէս կենդանութիւնն է օդոյն և հրոյն. և նիւթ *մարմնոյն* է՛ ջրոյն և հողոյն: - 215. Հինգերորդ՝ զի ի նոցանէ ըստանամք զդեղս բժշկութեան *մարմնոց*: - 217. Երկրորդն *մարմին* պարզ: - 221. Երրորդն *մարմին* թանձր: - 221. Երրորդն է հոգւոց և *մարմնոց* սրբոց: - 221. Այլ ոմանք իմանալի և զգալի. և *մարմին* նիւթական: - 221. Պտուղն որ հատանի և ծասկի և ի *մարմին* փոխարկի. ո՞րպէս է անապական: - 223. Որպէս հաց *մարմնոյն* քրիստոսի ըստ գոյացութեան և ներգործութեան անապական է. թէ և փոփոխի ըստ արտաքին որակացն: - 223. Այլք ասեն թէ՝ խաղո՛ղ էր. կամ ցորեան. զի զգինին ետ գրաւական կենաց՝ և զհաց *մարմնոյն*: - 224. Որպէս *մարմինն* ադամայ յերկրէ է և անապական. և մանանայն յօդոյ և անապական. և յա՛յտ է ի մէջ սափորին: - 225. Եւ *մարմինն* քրիստոսի անապակա՛ն է զոր ճաշակեմք: - 225. Եւ որպէս ակն կենդանւոյն մա՛սն է բոլոր *մարմնոյն*՝ և լուսաւոր: - 225. Ասեմք թէ՝ կանխագէ՛տ է աստուած. և նախ ծանեաւ զի ո՛չ կարէին աճիլ անմեղութեամբ ի դրախտին որպէս

զիրեշտակս. վասն որոյ կազմեաց նոցա *մարմին*, զի յերկրի անասնապէս աճեսցին: - 226. Քառասուներորդ՝ Ո՞րպէս է ի մեր *մարմինս* ճաշկեղէն հանդերձն: - 228. Եւ զի անմեղ *մարմինն* ադամայ՝ անչարչարելի և երագ և պայծառ և թեթև էր, որպէս ասէ աստուածաբանն գրիգոր: - 228. Եւ ի յարութեանն մեր՝ այսպէս լինին ամենայն *մարմինք* սրբոց: - 228. Երկրորդ՝ զի հողն բնակա՛ն ունի զթանձրութիւն, և այլքն խառնմամբ ի նմանէ. և *մարմինս* մեր թա՛նձր է ի հողոյ: - 229. Հինգերորդ՝ զի հողն ապականացո՛ւ է, զապականութիւն *մարմնոյս* մեր նշանակէ: - 229. Վեցերորդ՝ զի տեսցէ ադամ թէ յապականացու հողոյս անապական *մարմին* կազմեցաւ վասն փառաց. և յորժամ կորոյս մեղօքն եղև ապականացու, ինքն իցէ պատճառ ապականութեան իւրոյ: - 229. Եօթներորդ՝ զի հողն ի հողմոյ փոշի լինի. այսպէս յորժամ հողմահումն շնչէ ի *մարմինս* մեր՝ ցրւի և լինի փոշի: - 229. Ութերորդ՝ հողն ի յերկրէ առեալ, զի երկիւղալից է *մարմինս* մեր. վասն այն կոչի երկիր...: - 229. Զի որ քան եմք ի *մարմնի*՝ միշտ պարտ է երկնչիլ ի պատժոյ ի գլորելոյ ի մահու և այլոցն: - 229. Եւ դարձեալ՝ զի հաստատեսցի ի մեզ հաւատ մարդեղութեանն քրիստոսի. թէ որպէս ի յապականացու հողոյն ստեղծ ադամայ *մարմին* անապական: - 229. Նոյնպէս ի հողեղէն և յապականացու *մարմնոյս* մարդկան՝ էառ բանն աստուած. և միաւորելով ընդ ինքեան ծնաւ անապական *մարմնով*. անմեղ հոգւով և մտօք. և եղև երկրորդ ադամ Տէր յերնից: - 229. Եւ այս իսկ է գործն, այսինքն վայելել հոգւով յիմանալիսն, և *մարմնով* ի զգալիսս. պարտ էր նախ գոյանալ նոցա, և ապա՛ գործողին և վայելողին: - 231. Իսկ թէ ըստ *մարմնոյն* շեղեսցի՝ ի մահ պարտաւորեսցի և տնկեցի ի մարմնաւոր տեղիս. որպէս և եղև իսկ: - 231. Եւ մարդն ունի իմանալի հոգի և զգալի *մարմին*: - 231. Այսպէս *մարմին* մարդոյ որ քան է երկայնութեամբ ի գագաթէ՛ գլխոյն մինչև ի ներբանս ոտիցն, նոյն քան է լայնութիւն ի մէջ երկուց երկայն մատիցն ձեռաց: - 232. Նոյնպէս *մարմինն* է ի ներքոյ. և հիւթ արեանցն ի վերոյ. և ապա շունչն օդոյ և հուր լուսաւորացն ի վերոյ: - 232. Հինգերորդ՝ տարր հողոյն է ի մեզ ոսկերքն և բոլոր *մարմինն*: - 232. *Մարմինն* հողոյ: - 232. Նա՛խ՝ ըստ փիլիսոփայիցն ներքին մասունքն հոգւոյն պատճառե՛ն զարտաքին մասունս *մարմնոյն*. և ըստ պղատոնի՝ հոգին եռամասնեայ գոլով՝ բան և ցասումն և ցանկութիւն: - 232. Այսպէս և գլուխն ի *մարմինն* է՛ վերջին մասն. որ է՛ գործիք բանին. և սիրտն ի մէջն. և երիկամունքն վերջին: - 232. Վասն որոյ գլուխն է՛ ի վերոյ. և խռչափողն որ ունի զտուր և զառն՝ օդո՛յդ է նման. և ի ներքոյ այլ *մարմինք* և հիւթ արեան և ջրոյ՝ երկրիս է օրինակ: - 232-233. Տասներորդ՝ զի կիրք *մարմնոյն* հեղուն ի հոգին. որպէս յորժամ *մարմինն* ննջէ՝ և հոգին թմրի և անգործ մնայ...: - 233. Այլ և ի միտ ածցուք զփառս երկնային կենաց ուստի անկաք, և անդ դիմելոց եմք. զի տեսութիւն մտացն զհոգին ընդ ինքեան ի վեր տանի. և նա զշունչն. և շունչն ընդ արեանն է կապեալ. և արիւնն ընդ *մարմնոյն*. զգայարանքն ընդ *մարմնոյն*. և լինի մարդն բոլորովին երկնային: - 233. Եւ որպէս սակաւ մասն ոտիցն ի յերկի՛ր է հպեալ և կոխէ, նոյնպէս և մեզ սակաւ պէտս *մարմնոյ*...: - 233. Իսկ բարոյականն, Նա՛խ՝ զի յերեսն փչեաց զշունչ կենդանի. վասն որոյ յերեսն ունի զգայարանս *մարմնոյ*: - 234. Իսկ *մարմինն* անզգայ և անշա՛րժ է. և յայտ է ի մեռանիլն: - 234. Զի դէմքն ըստ որում մարդոյ և *մարմին*՝ գոյացութիւն է: - 236. Եւ պակասեալ ի սոցանէ *մարմնոյն*, ցուցանի կերպարան ի գոյէ ի քանակէ և յորակէ և ի տեղւոյ շարակցեալ. որպէս յա՛յտ է ի հայելւոջ: - 236. Յաղագս որոյ և արարեալք ի նմանէ *մարմին* և անմարմին՝ կենդանի և անկենդան, զնմանն արարչին յինքեանս կերպագրեալ, նմանք և աննմանք են իրերաց: - 237. Եւ որպէս *մարմնոյն* պատկերք նման և աննման են իրերաց. նոյնպէս և հոգին ըստ միոյ բնութեան ստեղծեալք նման և աննմանք են իրերաց: - 237. Ասեմք թէ՝ և տեսակք և խառնւածք *մարմնոց* են ի տեսչութենէ խնամոցն արարչին: - 237. Ոսկերքն ի ներքոյ սիւն է *մարմնոյն*, և մորթն ծածկո՛յթ է մսոյն և այլոցն: - 240. Եւ յո՛ր մասն *մարմնոյն* գիճութիւն և ջերմութիւն առաւել լինի, անդ մազ բուսանի: - 240. Հալողականն է՝ յորժամ ի ջերմութենէն եփի կերակուրն և հալի որպէս ապուր ի պտկի. և հալի ամենայն կերակուրն մինչև ի **զ** ժամն. և է՛ որ պակաս և աւելի. վասն առողջ և տկար *մարմնոյն*: - 242. Ձդառնութիւնն ի լեղին. և զհոտածն յերիկամունքն. և զմրուրն և զթթուն ի փայծեղն. և զքաղցր արիւնն ի սիրտն. և սիրտն երակովն և շնչովն բաժանէ ի բոլոր *մարմինն*: - 242. Ասեն բժիշկք թէ, **բճխը** ոսկր է մարդոյն. ջլօք պնտեալ և կապեալ ի մի *մարմին*. և է՛ այսպէս: - 243. Կամ զօդուածք ներքին գլխաւոր անդամոցն և արտաքին *մարմնոյն*, որ մորթ և միս և արիւն և այլքն առ միմեանս յօդին՝ լինին նոյնքան: - 244. Նա՛խ՝ խելապատակն սկիզբն է ջլացն. որ միայնաբար ընդ ուղւոյս պարանոցին անցանէ. և բաժանի ի թիկունս, ի ձեռս, և յա՛յլ *մարմինս*: - 244. Եւ սոքօք սփռի ջերմութիւնն և կենդանութիւնն ի բոլոր *մարմինն*: - 244. Զի արիւնն կերակրէ՛. և ջիլն զգայութիւն տայ. և շնչերակն զջերմ կենդանութիւնն բոլոր *մարմնոյն*: - 244. Նոյնպէս յորժամ ամաչէ՝ զարիւնն սփռէ ի *մարմինն*, և քօղ արկանէ վասն ամօթոյն. յայնժամ յարենէն շառագունի մորթ երեսացն: - 245. Եւ որ զհողն ունի, տրտմակեաց է և ծանրաշարժ և ծոյլ

*մարմնով*: - 245. Յինգերորդ՝ զի կարէ՛ մարդ ներհակ սովորութեամբ պահօք և աղօթիւք և կրթութեամբ *մարմնոյ* սանձել յինքեան զայսպիսիս նշանաց գործ: - 246. Որ արագ ընթանայ և զսպէ զինքն՝ և զերեսն կորակնէ՛ և զբոլոր *մարմինն* կծկէ՛, երկնչո՛տ է և ըռիշտ և աղուեսաբարոյ: - 247. Այսքան վասն *մարմնոյն*: - 248. Դարձեալ են զօրութիւնք հոգւոյն բաժանեալք ի *մարմնոյն*. որպէս իմանալն և կամիլն: - 249. Ի յայսոսիկ հոգին ո՛չ առնու ի կիր *զմարմինն*. այլ զկիր առնօղն *մարմնոյն* զտրամախոհութիւն: - 249. Դարձեալ հոգին ունի զօրութիւնս ոմանս անխառն ընդ *մարմնոյն*. որպէս բանն՝ կամքն՝ և սոյնպիսիք: - 249. Եւ զոմանս ունի խառնեալս ընդ *մարմնոյ*. որպէս է բնական զօրութիւն կենդանականն և շնչականն որպէս ասացաւ ի վերոյ: - 249. Զի թէպէտ ըստ ներգործութեանն բաժանին երբեմն ի բաժանելի *մարմնոյն* զի առանց *մարմնոյն* ո՛չ կարեն ներգործել սոքօք, այլ անբաժանելի մնան ըստ էութեանն ի հոգին. որպէս ցուցանելոց եմք յառաջիկայսդ: - 249. Իսկ յանասունսն ամենևին ըստ երկոցունցն կորնչին ընդ *մարմնոյն*: - 249. Որպէս յարարածս աստուած ճանաչի, այսպէս և ի *մարմնոյս* զհոգին օրինակաւ իմանալ մորթի: - 250. *Մարմնոյս*՝ գլուխն: - 250. Որպէս օրինակաւ մասունք հոգւոյ ասացան, նոյնպէս է և մասունք *մարմնոյն* իւրաքանչիւրոցն գործի: - 250. Զի այսոքիկ ի կողմանէ *մարմնո՛յն* են պատճառք: - 251. Իսկ տրամադրութիւնք հոգւոյն՝ խառնուածոյ *մարմնոյն* ո՛չ հետևին: - 251-252. Այլ այս է ուղիղ. զի որպէս նախախնամութիւնն աստուծոյ զդէմքն *մարմնոյն* ի հաւասարութիւնն անհաւասար պահեաց, և ի նմանութիւնն աննման: - 252. Զի ոմանք ասեն զհոգին յառաջ գոյանալ քան *զմարմինն*: - 252. Եւ ոմանք *զմարմինն* քան զհոգի: - 252. Զի որք զհոգի յառաջ ասեն գոյանալ՝ զայս դնեն պատճառ, եթէ յէակքս իմանալիքն յառաջ ստեղծան քան զզգալիքս. ապա և ի մարդոյն էութիւն հոգին յառաջ է քան *զմարմինն*: - 252. Եւ որք ծուլանան, սողոսկեալ անկանին յերկիր ընդ *մարմին* մարդոյ շաղապատեալ: - 252. Եւ յայնմանէ փոխեալ ի կենդանւոյ *մարմին* և ի տունկս, և ապա ի մարդն դարձեալ: - 252. Զոր ընդ դերևս հանէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս կազմութեան այսպէս եթէ, որք զհոգին յառաջ ասեն գոյանալ քան *զմարմին*. և վասն մեղաց եղեալ ի *մարմին* մարդոյ. որ է՛ համանման բանականութեամբ. և է՛ իներքոյ երկնային կենաց՝ զի մարմնաւո՛ր է: - 252. Այլ արդ ի *մարմնի* առաւել մեղանչէ քան յերկնային կեանս. վասն որոյ անկանի ի զգայական *մարմին* որպէս ասեն՝ որ ներքո՛յ է մարդոյն՝ և համանման ախտիւք զի զգայակա՛ն է: - 252. Այլ արդ՝ ի տունկն ո՛չ կարէ սրբիլ. այլ անկանի յանշունչն, որ ներքո՛յ է տնկոյն, և նման նորա զի *մարմին* է: - 252. Կարգաւո՛ր է ապա՝ զի յանշնչոյն փոխեսցի յանէն և յանգոյն. որ մերձակայ և ներքո՛յ է անշունչ *մարմնոյն*: - 252. Այս քան առ նոսա, որք զհոգի յառաջ ասեն քան *զմարմին*: - 253. Իսկ որ *զմարմին* յառաջ ասեն քան զհոգի, վկայ ածելով զմովսէս որ ասէ եթէ՝ էառ զհողն և շինեաց *մարմին*. և յետոյ փչեաց ի նա զշունչն կենդանի, որ է կենդանարար հոգին: - 253. Եւ դարձեալ՝ յիւրաքանչիւր կազմուած մարդոյ՝ յառա՛ջ է *մարմինն* քան զհոգին **խ** աւուրբ կամ **ձ**: - 253. Պատասխանեմք առ այս եթէ՝ փչումն ո՛չ զբանական հոգին ասեն սուրբ հարքն. զի մարդ ասելով զհոգի և *զմարմին* նշանակեաց. և *զմարմինն* զի ի նիւթո՛յ է՝ ի հողոյ ասաց...: - 253. Եւ արդ ի կատարեալ մարդն հոգւով և *մարմնով* փչեաց զշնորհաց հոգին ի մարդկայինս ազգ. և ունէին որ քան յանմեղութեան էին. և կորուսին ի մեղանչելն: - 253. Եւ դարձեալ՝ եթէ տամք զփչումն՝ բանական հոգւոյն ըստ ոմանց, և այսու յետո՛յ իմանալ զհոգին քան *զմարմինն* մեղանչումն է ճշմարտութեան ըստ ե եղանակի: - 253. Նախ եթէ վասն *մարմնո՛յն* եղև հոգի զի շարժեսցէ զնա. ապա անա՛րգ է հոգին քան *զմարմին* որ վասն նորա եղեալն է. և մեծ և պատուական է *մարմին* քան զհոգի: - 253. Այսպէս եթէ հոգի յետո՛յ ստեղծաւ վասն *մարմնոյն*, անա՛րգ է քան *զմարմին*: - 253. Երկրորդ՝ զի մի գոյութիւն է մարդն բաղադրեալ ի հոգւոյ և ի *մարմնոյ*. ոչ է պարտ **բ** լինիլ սկիզբն. այլ մի էութեանն մի է սկիզբն: - 253-254. Երրորդ՝ զի թէ հոգին յետո՛յ է քան *զմարմին*, լինի ինքն առ ինքն խեղ և անկատար: - 254. Այսպէս և ի կազմուած իւրաքանչիւր մարդոյ ո՛չ է *մարմին* յառաջ քան զհոգի որպէս ցուցանելոց եմք: - 254. Իսկ վարդապետք ուղղաձևութեան՝ յանդիմանեալ զերկոսին կողմանց ստախօսութիւն, ո՛չ զհոգի յառաջ քան *զմարմին* ասեն ստեղծեալ, և ո՛չ *զմարմին* քան զհոգի: - 254. Զի է՛ սկիզբն նիւթական *մարմնոյ* կազմուածոյն. և է՛ սկիզբն՝ ծննդեան հոգւոյ: - 254. Ա՛րդ՝ ի նիւթոյն լինի կազմած *մարմնոյն*. և յազդու հրամանէն գոյացութիւն հոգւոյն: - 254. Ապա ուրեմն համանգամայն ի միասին է հոգւոյ և *մարմնոյ* լինելութիւնն: - 255. Այսպէս և հնազանդեալ զօրք հոգոյն՝ զգայականն և տնկականն է. և նոքօ՛ք է հոգին ի *մարմինն*: - 255. Այսպէս և բանական հոգին համանգամայն երևի ընդ ձևանալ *մարմնոյն*: - 255. Եւ համանգամայն երևի ասեմ. զոր օրինակ նիւթն այն ունի առ ինքն ծածկեալ զմասունս *մարմնոյ*. զձեռս և զոտս, զմիս և զմազ, որ յետոյ երևին ի նմանէ: - 255. Նախ՝ զի ի կենդանի *մարմնոյ* է յառաջ եկեալ: - 256. Նիւթ *մարմնոյն* է ի ծնողացն. այլ հոգին ո՛չ է ի ծնոցաղն. այլ ի հրամանէն աստուծոյ գոյանայ և երևի: - 257.

Ապա ուրեմն հոգին ո՛չ հատանի և ո՛չ գոյանայ ի հոգւոյ որպէս *մարմին ի մարմնոյ*: - 257. Այլ հատանի նիւթն ունելով առ ինքն զբոլոր կենդանութիւն. և լինի նիւթ ա՛յլ *մարմնոյ* նովին կենդանութեամբն զոր ունի առ ինքն: - 257. Եւ ո՛չ ամենևին ստեղծմամբ. զի *մարմինն* նախախնամութեամբ փոխանորդի: - 257. Ո՛չ է հին, զի ըստ իւրաքանչիւր *մարմնոյ* համանգամայն ստեղծանի հոգին: - 257. Նախախնամութեամբ՝ ո՛չ որպէս փտելով կամ ծնանելով *զմարմին ի մարմնոց*. այլ յառաջ բերէ զպատկերն իւր որպէս ինքն գիտէ: - 258. Եւ ստեղծմամբ զի ըստ գոյութեան իւրոյ շնորհօքն աստուծոյ նո՛ր պարգևեցաւ ընդ լինելութեան *մարմնոյ*: - 258. Եւ ի կատարիլ *մարմնոյն* հեղու ի նա զհոգի բանական ըստ նախատես գաղափարի այնորիկ որ էր ի միտս արարչին յառաջ քան զլինիլն աշխարհի: - 258. Այսպէս և զգայականն և տնկականն մասունք են բանականին՝ նախ եղեալ ի *մարմինն*. և յորժամ բանականն հեղի ի *մարմինն*, յայնժամ և սոքա հեղին ընդ նմա. զի զօրութիւնք և մասունք են նորա ըստ օրինակի նախասացեալ երրորդ թուոյն: - 259-260. Եւ նա հոգին է որ զգայական և զտնկական զօրութիւնն ի գործ ածէ միայն ի *մարմինն* որքան է ի *մարմնի*: - 260. Իսկ **զ**երրորդ գործն որ է իմանալն և բանաւորիլն, ունի հոգին և յետ անջատելոյն ի *մարմնոյն*: - 260. Ասեմք առ այս, եթէ և յետ մահուան ո՛չ բաժանին սոքա ի հոգւոյն ըստ էութեան. զի մի է էութիւն սոցա. այլ ըստ ներգործութեան. զի ո՛չ է *մարմին* ո՛չ կարէ ներգործել: - 260. Եւ այսպէս ո՛չ է բաժանեալ ի հոգւոյն, այլ ի *մարմնոյն*: - 260. Այլ հակադարձեալ սոքա ըստ կարգի և ըստ դասու՝ յառա՛ջ է տնկականն քան զզգայականն, և նա՛ քան զբանականն ի յերևումն. այլ էութեամբ համանգամայն են. որպէս անդ ուրեմն ասացաք վասն հոգւոյ և *մարմնոյ*: - 260. Եւ թէ ոք ասիցէ, երևի ապա թէ յառաջագո՛յն է հոգի քան *զմարմին*, և յետոյ մասամբ երևի: - 260. Ասեմք առ այս թէ, օն ի բա՛ց տար ի մտաց քոց զհեթանոսական կարծիս. զի ո՛չ է հոգի յառաջ քան *զմարմին*. և ո՛չ *մարմին* նախ քան զհոգի որպէս ի սկիզբն ասացաք: - 260. Այլ է՛ նա՛խ էացեալ ի բանն աստուծոյ, և համանգամայն ընդ *մարմնոյն* երևեալ ի պարգևաց այնմ նախատես բանի: - 260. Եւ թէ զտեսութիւնս զայս կարծես էութիւն հոգւոյ ըստ որում է հոգի, ապա ո՛չ միայն ետես զհոգի, այլ և *զմարմին* և զիւրաքանչիւրոց ընտրութիւն...: - 260. *մարմին* մի.) այսինքն յերկու սերմանց ծնողացն լինի մին *մարմին* զաւակի: - 261. Արդ՝ **ժ** թիւն կատարեալ է. և չորսն տարրական է. այսինքն զի կատարեալ հոգին բանական ի նո՛յն ժամն խառնեալ միաւորի ընդ *մարմնոյն* տարրական, և կերպացեալ լինի մի մարդ մի դէմ և մի բնութիւն մարդոյ ի հոգւոյ և ի *մարմնոյ*. որպէս քառասունն ի տասանց և ի չորից է գոյացեալ: - 262. Արդ՝ որպէս ասացաք՝ *մարմինն* է ի **ղ** տարերաց. և ունի **ե** զգայութիւն. վասն որոյ յինն ամիսս հաստատի անդամօք և ապա ծնանի: - 263. Դարձեալ *մարմինն* է ի **գ** տարերց. և ունի երիս տեսակս ոգւոց: - 263. Իսկ այլ նւազունքն և կամ յաղթանդամքն *մարմնով* առաւել և նուազ: - 264. Եւ վասն տնկական և զգայական մասին՝ կազմողական զօրութիւնն այլ ևս աճեցուցեալ *զմարմինն* **բ** ամ և դադարեալ յերեսներորդին, լինի ժամանեալ ի չափ հասակի կատարմանն քրիստոսի, յորում մկրտեցաւ տէրն մեր: - 265. Եւ զի ա՛յս է թիւ կատարեալ չափոյ հասակի *մարմնոյ* և մասանց հոգւոյ: - 265. Նախ ասեն ոմանք, եթէ ուղեղ գլխոյ անբանիցն ընդ խելապատակին ունի չորութիւն և հովութիւն. և ջիլքն ի նմանէ յառաջեալ յանդամս *մարմնոյն* փութապէս պնդէ՛ և տայ շարժիլ: - 266. Եւ է՛ գործի իմացման նոցա՝ յիշումն. և ենթակայ՝ երկնային *մարմինք*՝ և էութիւնք եղելոց: - 269. Ութերորդ՝ **գ** անձինք կատարեալք. և թէ մինն պակասիցէ՝ ո՛չ է կատարեալ աստուած. և մարդս երրորդությամբ է կատարեալ. հոգւով և *մարմնով* և բանիւ. և թէ մինն պակասիցէ՝ անկատա՛ր է մարդն ասէ վարդապետն վարդան: - 271. Մետասաներորդ՝ անտեղի և անո՛ւր է աստուած. և հոգի մարդոյ բոլորն է ի բոլոր *մարմինն*. և բոլորն յիւրաքանչիւր մասն: - 272. Երկոտասաներորդ՝ անճառ և անպատո՛ւմ է աստուած. և հոգւոյն միացումն ի *մարմնի* ի վեր է քան զբան: - 272. Քսաննե**ե**, ասէ լուսաւորիչն մեր, թէ ձև մարդոյ երևեցաւ ի ստեղծանելն, զոր առնելոց էր զնոյն *մարմին* յետոյ ժամանակի. և ի նոյն պատկերն արար զմարդն: - 272. Ի սոցանէ ոմանք ըստ հոգւոյն միա՛յն են. և ոմանք ըստ հոգւոյն և *մարմնոյն*: - 272. Դարձեալ՝ մարդն ի կրկին բնութեանց է միաւորեալ. այսինքն ի հոգւոյն և ի *մարմնոյ*: - 275. Դարձեալ՝ մարդո՛յն է թողութիւն մեղաց վասն *մարմնոյն* զոր ոչ ունին հրեշտակք: - 275. Եւ որպէս աստուած է՛ ամենայն ուրեք էապէս. և հոգի մարդոյն է՛ յիւրաքանչիւր մասունս *մարմնոյն* էապէս: - 275. *Մարմնոյ*՝ որով տեսանէ զաշխարհս: - 275. Երկրորդ՝ զի մի՛ անփոյթ և անհնազանդ եղիցի մարդոյն. այլ ի նմանէ՛ ի կողիցն, զի որպէս *մարմին* հնազա՛նդ լիցի գլխոյն: - 276. Չորրորդ՝ մահու մեռանիլ այն է, որ հոգւով և *մարմնով* տրտմին. և անմահ չարչարին. որպէս մեղաւորք յայս կեանս և յետ մահու. զի որ մեռանի *մարմնով*՝ զպարտս վճարէ. և որ տրտմի հոգւով՝ անմահ մահանայ: - 277. Երրորդ՝ թշնամի են հոգի և *մարմին* իրերաց և մասունք նոցա: - 277. Է՛ և ներքին և վերին վայր. *մարմին* և անմարմին. և այլք սոյնպիսիք տարբերութիւնք են բնութեան և ո՛չ թշնամիք: - 278. Ութերորդ՝ մաշկեղէն հանդերձն. ո՛չ

ըստ ոմանց թէ մորթ *մարմնոյս*, զի ունէր զայս ի ստեղծմանէն: - 280. Ո՞րպէս ասեն մաշկեղէն հանդերձ *զմարմինս* մեր: - 282. Եւ ըստ այնմ որ նշանակութիւն է, ցուցանէ *զմարմինս* մեր փոփոխական. որպէս այն որ փչեաց յերեսս մարդոյն շունչ կենդանի: - 282. Ըստ իրին նշանակէր զշնորհաց հոգին, զոր ի *մարմին* եղելոցն վերացոյց. և ի վերնատունն դարձեալ փչեաց: - 282. Այսպէս մշակեղէն հանդերձն նշանակէ՛ զտխրալի և ախտաւոր *մարմինս*: - 282. Զոր յանմեղութեանն էր *մարմինն* ադամայ անչարչարելի և երագ և պայծառ և թեթև: - 282. Որպէս ասէ աստուածաբանն թէ՝ ոչ ինչ էր ծածկոյթ ի մէջ նոցա և աստուծոյ. իսկ յետ մեղացն փոխեցան այսուքիկ. վասն որոյ մաշկեղէն հանդերձին ցուցմամբն նշանակէ՛ *զմարմինս*: - 282. Եւ թէ ոք ասիցէ, այսուքիկ ի յարութեանն են լինելոց անկարօտ *մարմնոցն*: - 282. Եւ թէ ոք ասիցէ, և երկրորդն ադամ քրիստոս՝ *զմարմինն* ադամայ ունէր, և էր թա՛նձր և ծա՛նր: - 282. Ասեմք եթէ՝ էառ քրիստոս *մարմին* ի կուսէն մարիամայ զմերս թանձր և մեղանչական. և միաւորելով ընդ ինքեան՝ եղև առաջին կերպ անմեղութեանն ադամայ որ էր ի դրախտին:- 282. Այսպէս ասեմք *զմարմինն* քրիստոսի ունել զադամայն որ էր յանմեղութեանն: - 282. Եւ զչորեքկին որպիսութիւնս զայսոսիկ երևեցոյց ի *մարմինն* ի՛ւր նախ քան զխաչն: - 282. Եւ զանչարչարութիւնն ի վերնատունն. յորժամ *զմարմինն* իւր ուտել ետ աշակերտացն՝ անչարչարելի էր ներգործութեամբ և ոչ թէ զօրութեամբ: - 282. Քսաներորդ՝ Ո՞րպէս զգեստ կոչի *մարմինն*: - 283. Քսանևթ, մանանայն օրինա՛կ է ճշմարիտ *մարմնոյն* քրիստոսի: - 283. Ութսուներորդ, Պատերազմ *մարմնոյն* մովսէսի և գերեզմանի նորա: - 285. Եւ թէ՝ մեծ էր նշանն քրիստոսի որ հոգւոցն արար, քան զմովսէսին որ *մարմնոց*: - 285. Երկրորդ այսպէս. գ մասանց աւելին և պակասն լինին զ չարիք. և մի գործ *մարմնոյն* որ լինի է նենգութեան խորհուրդ: - 287. Իսկ զի ասէ «երերեալ՝» յա՛յտ է իբրև զծառ *մարմնովն*: - 287. Աստ հայր ազգաց բազմաց եղև. մանաւանդ թէ և նորին իսկ քրիստոսի ըստ *մարմնոյն*: - 288. Ի դրախտն, զի թանձր *մարմնով* ո՛չ բնակին յիմանալեացն կայանս. և յօդս կախիլ անպատշա՛ճ էր: - 289. Նախ՝ որ անփուտ էր փայտն. և *մարմին* մարդոյս անփուտ և անապական է. և յա՛յտ է ի յարութիւնն անմահ: - 293. Եւ վեցակողմն, զի *մարմինն* եռակի տարրո՛շ է. ունի վեր և վայր. յետ և առաջք. աջ և ահեակ: - 293. Եւ կերակուրն մի ամենեցուն առհասարակ *մարմին* և արիւնն սուրբ: - 294. Եւ կամ ի գէշք *մարմնոյ* կենդանոյ ինչ: - 294. Իններորդ՝ արիւնն և շունչն է սկիզբն գոյացութեան մերոյ. զի արիւնն փոխի ի սաղմն, և ջերմ օդով խառնի ի հով և ի գէճն, և լինի աճումն և սնունդ *մարմնոյ*: - 295. Տասներորդ՝ արիւն ուտել գազանա՛ց է հմակերաց. զի մի՛ լիցուք անողորմ և գազանասիրտ՝ հրամայէ՛ զարիւնն հանել և զանզգայ *մարմինն* եփել և ուտել: - 295. Եօթներորդ՝ մելքիսեդեկ ինքնին մատոյց զպատարագն քաղցելոց և ծարաւելոց. որպէս և քրիստոս ո՛չ միջնորդօք հրեշտակաց կամ մարդկան, այլ ինքնին բաշխեաց *զմարմին* և զարիւն իւր՝ քաղցեալ և ծարաւեալ ազգի: - 301. Նոյնպէս և որք հաղորդին *մարմնոյն* քրիստոսի, ո՛չ մերձենան ի զանազան ախտս մարմնական անթլփատութեան և զոհից դիւական: - 301. Եւ տէր մեր էառ *մարմին* ի դատապարտեալ ազգէ մարդկային...: - 301. Եւ տէրն մեր նովիմբ աւանդեաց զփրկական *մարմին* և արիւն իւր: - 302. Նոյնպէս և տէրն մեր ետ հաւատացելոցն զկենարար *մարմինն* և արիւնն իւր. յորոց խնդրէ ըզգործս տասնաւոր. այսինքն զկատարեալս. և զկատարումն ժ բանեան օրինացն. ի յորս է՛ մաքրութիւն ժ զգայարանացս որպէս ի վերոյ ասացաւ: - 302. Վեցերորդ՝ պատժեաց զսոդոմայեցիսն *մարմնով*, զի թեթևացին տանջանք նոցա հոգւով: - 303. Եւ դարձեալ՝ աբրահամ ունի *մարմին* և հոգի. և ունի բ զաւակ, այսինքն *մարմնոյ* և հոգւոյ: - 303. Որք հաղորդեցան *մարմնոյ* նորա, եղեն զաւակք ըստ *մարմնոյ*՝ ըստ թլփատութեան և այլոց օրինաց նորա: - 303. Սապէս և քրիստոս ըստ մարմնոյ որդի է աբրահամու ըստ մատթէոսի: - 304. Եւ ի քրիստոս բազմութիւն ամենայն հաւատացելոց սերեալք անդամք յանդամոց նորա և *մարմինք* ի *մարմնոյ* նորա ծննդեամբ ի նմանէ աւազանաւն: - 306. Եւ է՛ որ պատարագն մեծ է քան զմատուցօղն. որպէս նոր օրինացս՝ *մարմինն* քրիստոսի մեծ է քան զքահանայն: - 306. Տասներորդ՝ վերջին և կատարեալ ծնունդ յարութեանն. զի մահ *մարմնոյս* է՛ սկիզբն և յղացումն յարութեան: - 308. Չորրորդ՝ անդրանիկ է հոգին քան *զմարմին* բնութեամբ և պատւով. թէպէտ հաւասարք են ամանակաւ գոյացեալք: - 309. Ութերորդ՝ անդրանիկք են ըստ *մարմնոյ* վերակացուք և տեարք. որպէս թագաւորք, և իշխանք. նոյն և առաջին ծնունդք ելեալ յարգանդէ՛: - 309. Վեցերորդ՝ *մարմինն* երէց է ըստ կարգի քան զհոգին. և յա՛յտ է, զի որ քան կենդանի եմք՝ զերիցագոյն պատիւն *մարմնոյն* տամք...: - 310. Իններորդ՝ ցուցանէ թէ ո՛չ է այն անդրանիկն որ նախածին լինի և *մարմնովն* քաջ. զի ո՛չ հաճի տէր ընդ իրանս առն հսկայի. այլ անդրանիկ է այն՝ որ զհաճոյսն աստուծոյ կատարէ: - 310. Եւ քրիստոս *մարմնով* ի գերեզման և հոգւով ի դժոխս եմուտ և եբարձ զմահ և զապականութիւն: - 313. Եւ տէր մեր *մարմնով* մեռեալ, միշտ կենդանի է աստուածութեամբն: - 313. Նոյնպէս և մեք աստէն քաղցեալ եմք բանիւ մինչ ա՛նդր

երթիցուք, և ապա անդ զկրկին զգեստն զգեցցուք. այսինքն զփառս հոգւոյ և *մարմնոյ*: - 314. Ըստ կարգի է, զի նոյն հոգի և նոյն *մարմին* յառնէ: - 314. Այս է՝ **է** զօրութեամբ հոգւոյն և **ե** զգայարանօք *մարմնոյ* մեռանիմք և յառնեմք **գ** կատարելութեամբ: - 315. Վեցն զկատարելութիւն *մարմնոյն* ցուցանէ, և հարիւրն, զհոգւոյն. և հազարն, զպատիւ կենաց յաւիտենից: - 315. Եւ տէրն մեր որ *զմարմինն* և զարիւնն իւր ետ ամենայն աշխարհի. նախ ինքն եկեր, և ապա ետ առաքելոցն: - 316. Զի մեռեալն *մարմնով* կենդանի էր աստուածութեամբն: - 316. Նախ՝ սատանայ և անհաւատք աստուածութեան նորա. և մեղք և դժոխք հոգւոյ են թշնամիք. մահ և ապականութիւն *մարմնոյն*: - 316. Զմահ եբարձ մահուամբն, և զապականութիւն կորոյս յարութեամբն, անապական *մարմնով* յարուցեալ ի գերեզմանէն: - 317. Է և ա՛յլ կապ բաց յայսցանէ, այսինքն Անձնական, որպէս հոգւոյ և *մարմնոյ*: - 318. Թէ հոգւոյ և թէ *մարմնոյ*՝ գոյ մեղք և գոյ պատիժ: - 318. Վասն է՞ր զգեստ կոչի *մարմինն* փրկական: - 318. Զի զգեստ կոչի արտաքին հանդերձն որ ծածկէ *զմարմինն*: - 318. Եւ զգեստ կոչի *մարմինն* որ ծածկէ զհոգին. ըստ որում մաշկեղէն հանդերձն ադամայ որ էր արտաքին զգեստ և նշանակէր *զմարմինն*: - 318. Եւ զգեստ կոչի մարմինն որ ծածկէ զհոգին. ըստ որում մաշկեղէն հանդերձն ադամայ որ էր արտաքին զգեստ և նշանակէր *զմարմինն*: - 318. Եւ այսպէս զանազանին սոքա. *մարմին* մեր զգեստ է գոյացական. և հանդերձն պատահական: - 318. Եւ դարձեալ՝ *մարմինն* է անփոփոխ. և հանդերձն փոփոխական: - 318. Նախ՝ կոչի *մարմինն* զգեստ՝ գոյացական՝ անփոփոխ և անքակ միութեամբն. զի բաժանմամբ *մարմնոյն* և բանին ո՛չ է քրիստոս. որպէս ի բաժանիլ հոգւոյ և *մարմնոյ* ո՛չ է մարդ: - 318. Եւ մեք նորա կոչիմք զգեստ, զի ընտանի անդամք և ոսկերք եմք *մարմնոյ* նորա: - 318. Իսկ գոյացական *մարմինն* քրիստոսի կոչի զգեստ վայելչական...: - 319. Այսպէս կոչի և զգեստ *մարմնոյն*. զի արտաքին զգեստն որպէս ծիրանին թագւորի ա՛յլ է ի զգեցողէն և պատահական նմա և փոփոխական. այսպէս զգեստ ո՛չ ասի *մարմին* նորա. այլ եկեղեցի սուրբ որպէս ասացաւ: - 319. Այսպէս ուղիղ իմացիր թէ ուրեք և տաճար կոչէ *զմարմին*. զի կրկին է տաճարն: - 319. Զի է՛ տաճար միաւորեալ. որպէս *մարմինն* մեր կոչի տաճար մեզ...: - 319. Եւ կոչի տաճար *մարմինն* միաւորեալ ընդ բանին անբաժանելի: - 319. Նա՛խ՝ զի աստուծոյ է *մարմին* կոչի տաճար իբր կարօղ սրբութեանց. և դարձեալ զի անշփոթ է միաւորեալ՝ կոչի տաճար: - 319. Եւ երկրորդ՝ զի լրիւ աստուածութիւն բանին է՛ բովանդակեալ ի *մարմնի* և ո՛չ մասամբ...: - 319. Է՛ և այլ իմն պայծառ տեսութիւն այսմ բանի. զի զգեստ և տաճար կոչի *մարմինն* ստուգապէս ո՛չ աստուածութեանն քրիստոսի՝ որ ո՛չ բաժանեցաւ ի *մարմնոյն* ոչ ի մահ և ո՛չ ի գերեզմանն: - 319. Այլ կոչի տաճար և զգեստ բանական հոգւոյն *մարմինն* իւրական որպէս ամենայն մարդկան: - 319. Ուստի յա՛յտ է զի բաժանեցաւ հոգին, այլ աստուածութիւնն անբաժանելի մնաց ի բաժանեալ հոգւոյն և ի մեռեալ *մարմնոյն*: - 319. Իսկ թագաւորք յամենայն ամի զնոյն առնեն ուրախութիւն. ուտել և ըմպել և հեշտութիւն *մարմնոյ*. որպէս փարաւոն առնէր և հերովդէս: - 321. Վասն որոյ ի ծննդեան աւուրն ժողովին և օրհնեն զաստուած և *մարմնով* ուրախանան. որպէս յոբայ ուստերքն և դստերքն միաբանեալ գային և ուրախ լինէին գիրն: - 321. ...**բ**՝ արբեցութիւն. **գ**՝ զմայլումն զգայութեանց. **դ**՝ փափկութիւն *մարմնոյ*...: - 322. Յինգերորդ՝ հարուածք *մարմնոյն*: - 322. Եւ այսպէս է էին հարուածքն. այսինքն **ա**՝ եզինքն. **բ**՝ էշքն. **գ**՝ ուղտքն. **դ**՝ անասնոց մահն. **ե**՝ սպասաւորաց նոցին. **զ**՝ զաւակաց մահն. **է**՝ *մարմնոյն* հարուածքն: - 322. Եւ ոմանք **ե** ասեն. **ա**, արտաքին ինչքն. **բ**, զաւակաց մահն. **գ**, *մարմնոյն* հարուածքն. **դ**, կնոջն կագն. **ե**, բարեկամաց հակառակիլն: - 322. Այն է, որ բովանդակ *մարմինն* այնպէս խոցոտեալ էր կեղով՝ և լուծեալ ի շարաւ և ի թարախ. որ ո՛չ կարէր յոտին կալ կամ սողալ ուրեք. և ո՛չ ըմբռնիւր յայլմէ: - 322-323. Նա՛խ՝ զի աղբիւսէ *մարմինս*. և վաղվաղակի յաղբիւսն երթայ...: - 323. Երրորդ՝ զի *մարմնոյն* յիշեցուցէ զնոյն ունել բնութիւն, և ո՛չ այլ ինչ աւելի: - 323. Նա՛խ՝ զի կաւովն քերէր զկաւն որ էր նիւթ *մարմնոյն*: - 323. Չորրորդ՝ զի խեցեաւ սրբէր *զմարմինն*, և աղօթիւք զմիտս և զհոգին: - 323. Ասեմ՝ թէ պահօք և աղօթիւք հեռանայ ի *մարմնոյ* մարդոյն և ո՛չ լլկէ: - 324. Երրորդ՝ զբարի և զչար գործոց հատուցմունքն աստէն կարծէին լինիլ ի *մարմնի*: - 324. Նախ՝ զի հոգի և *մարմին* են: - 326. Վեցերորդ՝ հարուածս կրեալ յոբ ի բոլոր *մարմինն*. և տէր մեր ի ձեռս և յոտս և ի կողս. որ և փշով պսակեալ ապտակեալ և գան հարեալ: - 327. Իններորդ՝ յոբայ *մարմինն* նորոգեցաւ յետոյ. և տէր մեր խաչիւն նորոգեաց զպատկերն ադամայ և զծննդոց նորա յարութեամբն իւրով: - 327. Տասներորդ՝ կրկին եղև կեանքն և պատիւն յոբայ. և տէր մեր ել ի փառս առաջին և նստաւ *մարմնով* ընդ աջմէ հօր: - 327. Իսկ քրիստոս խնամարկեալ իւրոցն ժ սքանչելեօք ի *մարմինս* նոցա բժշկէր զիէլացիսն: - 328. ...**զդ**՝ անդամալոյծ միակողմանց բժշկութիւն. **էդ**՝ բորոտից սրբութիւն. **ըդ**՝ բոլոր *մարմնոյն* հիւանդաց և ջերմացելոց առողջութիւն. **թդ**՝ զդևսն հանէր. **ժդ**՝ զմեռեալսն յարուցանէր: - 328. Նա՛ կեղ և մուն յարուցանէր ի *մարմին*

նոցա. և քրիստոս զբոր և զցաւս սրբէր ի մարմնոցն: - 328. Զսոյն և մեզ պարգևեաց ծնանիլ ի ջրոյ, և ի հրոյ, և ի հոգւոյ, և յարութեամբն *մարմնոյ*. իսկ ի մօրէ՛ բնականապէս: - 329. Զի աստ ի ժամանակի և ի *մարմնի* կապելոց անհնա՛ր է գիտել: - 331. Վեցերորդ՝ նշանակէ՛ զբանն աստուած գաւազան ուղղութեան և թագաւորութեան առ հայր. եկն նա՛ յերկիր և էառ զօծաձև բնութիւնս մեր. և դարձեալ ըմբռնեալ *մարմնովն* ել յերկինս և նստաւ ընդ աջմէ հօր: - 332. Նա՛խ՝ նշանակէ զադամ. որ անմեղ և յստակ ստեղծաւ, և ի մեղանչելն եղև արիւն զազրալի, և *մարմին* անհոգի: - 333. Չորրորդ՝ յօրինակ նոցա որք ի սրբութեանց ի մեղս դառնան և լինին *մարմին* և արիւն...: - 333. Վեցերորդ՝ գետն նշանակէ՛ զբանն աստուած, որ հաղորդիլով ի մեզ՝ եղև *մարմին* և արիւն. և ետ մեզ ըմպելի զարիւն իւր սուրբ. և կերակուր *զմարմինն*: - 333. Այսպէս և *մարմին* և արիւնն քրիստոսի՝ արժանաւորացն կեանք է և սրբութիւն. և անարժանիցն մահ և ապականութիւն: - 334. Վեցերորդ հարուածն է՛ կեղն և խաղաւարտն. զի քերքէշէ՛ր զմորթն, և ի վեր եռացեալ լինէր խաղաւարտն. և մորմոքէր *զմարմինս* նոցա: - 334. Սոյնպէս և ամենայն մեղաւորաց կրկին է հատուցումն. այսինքն հոգւով և *մարմնով*. կամ աստ և ի հանդերձեալն: - 335. Եւ որպէս դարձաւ ժողովուրդն ի հանգրուանն առաջին. և տեառն *մարմինն* եդաւ ի հող երկրի: - 337. Մանանայն ո՞րպէս է օրինակ *մարմնոյն* քրիստոսի: - 339. Եւ զիաց *մարմնոյն* քրիստոսի՝ որք զբոլոր և որք զմասն ճաշակեն՝ միո՛յ կենաց հաղորդին: - 339. Երրորդ՝ զի անապակա՛ն էր մանանայն օրինակ անապական *մարմնոյն* քրիստոսի: - 339. Եթէ խորհրդական *մարմինն* քրիստոսի անապակա՛ն է, ուստի գոյանան կենդանիք և բորբոսք: - 339. Գոյացութիւն հացին փոխեալ է ի գոյացութիւն *մարմնոյն* քրիստոսի և է՛ անապական. իսկ քանակն և որակն մնացեալ է դեռևս փոփոխելի. և յայնմանէ փոխարկեպին այլայլմունք ինչ: - 339. Եւ զի պատահմունքն փոփոխելի է, ուստի յա՛յտ է զի փոփոխի և միաւորի՛ ի *մարմին* կերողացն: - 339. Նոյնպէս և նշխարք *մարմնոյն* բոլոր. առ ի նշանակել թէ բոլոր պարտ է ունել հաւատ կերողացն: - 339. Իններորդ՝ աղալն յերկանս. յաղորիս հոգւոյ և *մարմնոյ* ծասկել: - 339. Տասներորդ՝ **գ** ափկիցն. երրորդութեանն հաւատով սրբել **զժ** զգայարանս հոգւոյ և *մարմնոյ*: - 339. Դարձեալ՝ ոսկի սափորն է՛ անապական կոյսն. և մանանայն բանն աստուած հոգւով և *մարմնով* միացեալ յարգանդի աստուածածին կուսին: - 340. Դարձեալ երիցս երևիլն է, զի աստ ի *մարմնի* հաւատով տեսանեմք զքրիստոս. և յետ մահու յուսով ի հոգիս մեր. և յետ յարութեանն սիրով միաւորիմք ի նա՛: - 341. Եւ **ժ** զգայարանք մեր. հինգ հոգւոյ և հինգ *մարմնոյ*: - 342. Եւ *մարմինս* արտաքին սրահին: - 343. Իսկ չորրորդն որ է՛ *մարմին*, զգալիքս են թանձրացեալ: - 344. Ներքոյ և արտաքոյ ոսկին՝ հոգւոյն և *մարմնոյն* մաքրութիւնն: - 345. Ի յորում **բ** տախտակք են գրեալ. հոգի և *մարմին* միաւորեալ բանիւն: - 345. Եւ մանանայն անապական *մարմինն*: - 345. Դարձեալ ըստ սրբոյն կիւրղի՝ տապանա՛կ է տէրն մեր յիսուս քրիստոս. և անփուտ փայտն անապական *մարմինն*: - 345. Ոսկւով, հոգի և *մարմին* միաւորեալ աստուածութեամբն: - 345. Նոյնպէս և սեղան խնկոց և երեսացն ցուցանէ զհոգիս սրբոց ելեալ ի *մարմնոց* և մտեալ դէմ յանդիման երեսացն աստուծոյ: - 346. Եւ ի են ո՛չ ժամանեալ, պակաս գոլով *մարմնոցն*: - 346. Հացն՝ ողջախոհքն *մարմնով* հոգւով և մտօք: - 346. Վասն այն ա՛ստ ի հաստատութեան երկնից ասեն զկայանս հոգւոցն մինչ ի կատարած յարութեան *մարմնոց*: - 346. Երրորդ՝ զի երևելի սրբութիւն *մարմնոյն* զաներևոյթ սրբութիւն հոգւոյն նշանակէր: - 347. Չորրորդ՝ ի խորհուրդ վայելչական *մարմնոյ* ճշմարիտ քահանայապետին մերոյ քրիստոսի: - 347. Հինգերորդ՝ կրկին օրէնքն հոգւոյ և *մարմնոյ*. վասն այն կրկին էր տախտակն: - 349. Եւ կրկին, զի հոգւով և *մարմնով* մի եղև բանն աստուած: - 349. Նա՛խ՝ զի տէրն բոլոր *մարմնով* լուսաւորեցաւ. և նա՛ մասամբ...: - 352. Մին վասն հաւատոյ օրինաց. և մին վասն հոգւոյս իբր ահարոնի. և մին վասն *մարմնոյս* որպէս ժողովրդեանն: - 353. Եօթներորդ, նոքա յօտարա՛ց մատուցանէին. այսինքն զուարակ և նոխազ, իսկ քահանայապետն մեր քրիստոս *զմարմին* իւր պատարագեաց հօր ի հոտ անուշից...: - 354. Նա՛խ՝ զի մեղրն զհեշտութիւն *մարմնոյն* ցուցանէ: - 355. Ութերորդ, ապականութիւն է խմորն. վասն այն տէրն զանապական *մարմինն* իւր բաղարջով աւանդեաց: - 356. Եւ ո՛չ միայն այս, այլ զեօթն օր անխմոր բաղարջ ուտէին ամենայն ժողովուրդն. և Աբրահամ և ղովտ բաղա՛րջ յօրինեցին զխորհուրդ փրկական *մարմնոյ* տեառն որ ի վերնատունն բաղարջով աւանդեաց: - 356. Իսկ իւղն զանգեալ՝ օրհնութիւնն է որ միանայ ի խորհուրդն և կատարէ՛ *մարմին* և արիւն քրիստոսի: - 357. Եւ դարձեալ՝ նաշիհն է՛ նշանակ խոնարհ *մարմնոյ* մաքրութեան. և խունկն առաքինութեան հոգւոյ. և իւղն զուարթութեան մտաց: - 357. Նշանակէ՛ զամենայն զառաջին բարի գործս մեր եթէ ի *մարմնոյ* և եթէ ի հոգւոյ. և ի մտաց նուիրել աստուծոյ: - 357. Որպէս այժմ մին նշխարն ի հաղորդութիւն սուրբ *մարմնոյն*, և զայլ նշխարքն արժանացեալք արիութեամբ ճաշակեն: - 358. Իսկ փայտն. *մարմնոյ* ցամաքութիւն և պարկեշտութիւն. որ առաւել բորբոքէ զպատարագն: - 360.

Երիկամունքն, զկրկին ցանկութիւնն հոգւոյ և *մարմնոյ*: - 360. Զի միջնո՛ց է *մարմնոյն*, և սկիզբն է կենդանւոյն, և կատարած կենաց: - 360. Եւ զոյգն. զի հոգի և *մարմին* աստուածութեամբն միատեսակ եղեալ: - 361. Եւ մին վասն մեղաց. զի կերակուր ետ *զմարմինն* և զարիւնն իւր: - 361. Դարձեալ` իւղով զանգեալ բաղարջն և նոյն չափ իւղովն որ չափ մասն գինւոյն. այն է` զի ըստ օրհնութեան բանին աստուծոյ` և հոգին սուրբ իջանէ ի հացն և ի բաժակն և կատարէ՛ *մարմին* և արիւն քրիստոսի: - 361. Այլ և ունիմք զբանաւոր պատարագս` զհոգի և *զմարմին* մեր սրբութեամբ փոխանակեալ նմա: - 362. Միջինն ի *մարմնոյն*: - 362. Ա՛յն է որ ի վերնատունն *զմարմինն* և զարիւնն իւր բաշխեաց յառաքեալսն: - 362. Եւ ողջակէզ սրբութեան է` յետ ապաշխարութեան զբարիս գործել. և զբովանդակ զհոգի և *զմարմին* մեր նուիրել աստուծոյ: - 362. Դարձեալ` կրկին ողջակէզն, մին այն է որ մատուցանեմք զպատարագն քրիստոսի *մարմնոյ* և արեան: - 362. Եւ միւսն, որ *զմարմին* մեր պատարագեմք միշտ. սիրտ սուրբ և հոգի խոնարհ ունելով. զոր աստուած ո՛չ արհամարհէ: - 363. Եւ զգեստ քահանայութեանն ո՛չ այրեցաւ յօրինակ այժմնոյս որ հոգւով դատապարտին և *մարմինն* մնայ: - 364. Որոճօղն` քննօղ իմաստութեան. և կճղակն ուղիղ վարք հոգւոյ և *մարմնոյ*. սուրբ են: - 364. Նա՛խ` զի բորն պիսակ` մեռելութիւն է *մարմնոյ*. և մեղքն հոգոյ: - 366. Երկրորդ, բորն պղծէ՛ *զմարմինն*. և մեղքն զհոգին: - 367. Հինգերորդ, կսկի՛ծ է *մարմնոյ*. և մեղքն հոգւոյ: - 367. Ութերորդ, ի *մարմնոյն* է և մնայ ի նոյն. և մեղքն ի մարդոյն է և մնա՛յ ի նա: - 367. Իններորդ, բորն **գ** ազգ է. սպին սպիտակ շիտ. և պալար միատարր. և պաղպաջ շիտ աստ և անդ. որ է՛ մտաց և հոգւոյ և *մարմնոյ* մեղքն: - 367. *Մարմնոյն* բորն, գործոց մեղքն. և գլխոյն, հաւատոցն: - 367. Այլ և *մարմնոյն* ծածուկ մեղքն. և հանդերձին` յայտնի մեղքն: - 367. Դարձեալ` **գ** իրա՛ց էր բորն. *մարմնոյն* հանդերձին` և տանն: - 367. Դարձեալ` մեք *մարմին* եմք քրիստոսի և անդամք նմա. նոյնպէս և զգեստ. այսպէս տուն և տաճար. մկրտութեամբ և հաւատով և բարի գործով: - 367. Ապա թէ բորոտիմք ծածուկ մեղօք ի *մարմնի*` կապեալ բերանով առանց խոստովանելոյ, արտաքսիմք յեկեղեցւոյ` ի հանգստենէ` և ի փառաց արդարոց: - 368. ...յայնժամ քակէ՛ զտունն մեր որ է՛ հոգի և *մարմին*. և արտաքոյ քաղաքին յանսուրբ տեղիս ընկենու որ է՛ դժոխքն արտաքոյ արքայութեանն, և անսուրբ տեղի մեղաց և մեղաւորաց. և անդ արտաքսէ զմեղաւորսն: - 368. Կրկին հաւն կենդանի սուրբ` նշանակէ՛ զհոգւոյ և *զմարմնոյ* կենդանութիւն ի ձեռն ապաշխարութեան: - 368. Զենեալ հաւն, *մարմինն* մեռեալ վասն մեղաց: - 368. Եւ միւս հաւն թաթաւեալ յարիւն, հոգին կենդանի. որ կարեկից լինի *մարմնոյն* և զսրբութիւն նորա հանէ՛ յուսով ի դաշտն որ է՛ յերկինս: - 368. Իսկ կրկին հաւն մեռեալ և կենդանի. քրիստոս մեռեալ *մարմնովն*, և կենդանի աստուածութեամբն: - 368. Այս էր սրբութիւն բորոտին *մարմնոյ*. և ի մեզ հոգւոյ: - 368. Եւ արիւնն, զմեղս մեր բարձեալ յինքեան և տարեալ ի դաշտն առ հայր յերկինս. զի որպէս մեռեալ *մարմնովն* քաւեաց զմեղս. նոյնպէս և անմահ աստուածութեամբն կենդանացոյց և յերկինս եհան: - 369. Վասն է՞ր *զմարմնոյ* արատս խարէին: - 370. Նա՛խ` զի մի պակաս երևեցի քան զհեթանոսս, խտրէին *զմարմնոյ* արատն: - 370. Ա՛րդ` որ առանձինն է` *մարմնոյն* արատն ոչ խտրի. այլ հոգւոյն: - 370. Եւ որ հասարակն, և սմա՛ *մարմնոյն* և հոգւոյն ո՛չ խտրի. զի եղբայր յեղբօրէ օգնեալ` զմիմեանց բառնան զտկարութիւն: - 370. Իսկ որ զքրիստոս պատարագէ, խտրութիւն է արատոյ ի հոգի և ի *մարմին*: - 370. Երկոտասաներորդ` փօշտանկն. որ հատեա՛լ է աղիքն և ի դուր թափեալ. նշանակ հոգեկան ցաւոց ի *մարմինն* երևեալ: - 371. Ի նոր պատարագս այսպիսի *մարմնոյ* ընտրութիւն ո՛չ է: - 371. Դարձեալ շաբաթ շաբաթուց այն էր. որ քաւութիւն մեղաց հոգւոցն էր շաբաթ. որպէս դատարկանալն *մարմնոյն*: - 371. Իսկ ի նորս` զկէս ընչիցն հրամայեցաւ տալ աղքատաց յաւտրնին. որ է՛ հաւասար հոգւոյն և *մարմնոյն*: - 372. Չորրորդ` յետ ելիցն ի *մարմնոյ*...: - 372. Հինգերորդ` հանգիստն կատարեալ հոգւով և *մարմնով*. որ է՛ փողոց հնչմունք. ազատութիւն յապականութեանց. ամ թողութեան և իւրաքանչիւր ուրուք ի ստացուածս իւր դարձումն. որ է՛ գործոց հատուցումն: - 372. Այլ և վասն հոգւոյ և *մարմնոյ* փրկութեան: - 373. Այլ և նաշիհ *մարմին* սուրբ. և գինի արիւնն. և իւղ օծումն աստուածութեանն. որպէս ասացաւ ի վերոյ: - 374. Երկրորդ` նշանակէ՛ զբանաւոր պատարագս մեր. այսինքն զհոգի *զմարմին* և զմիտս մեր անարատ մատուցեալ: - 374. Նաշիհն ճգնութիւն *մարմնոյս* որոշեալ յաւելորդաց: - 374. Իսկ նաշիհն` ճգնաւորք և կուսանք. որք ի յերկանս ճգնութեան ճնշեն *զմարմինս* իւրեանց: - 374. Այլ հոգեպէս` նաշիհն է՛ մարմնական նուէրքն. և կամ չարչարանք *մարմնոյ* որ ի տօնս ճգնիմք...: - 375. Նոյնպէս և առաւօտու երգն, և մեսեդի ճաշոյն, և տասանորդ նաշհոյն **ժ** զգայարանաց *մարմնոյն* ճընշելն: - 375. Դարձեալ զ**է** ժամանակն ասէ. կամ զ**է** հասակս. կամ **է** զգայարանօք *մարմնոյս*. կամ է զօրութեամբ հոգւոյս: - 376. Կամ չողորմել կսկծողաց. իբր պղնձի *մարմին* զգեցողաց: - 376. Եօթներորդ` սովն ուտել *զմարմին* զաւակաց. և գերութիւն ի թշնամեաց: - 376. Վասն զի *մարմնոյ* զինուորն ի ամեայ էր. զ**ե** ամն յաւել ի հոգւոր

զինուորսն վասն ե զգայութեանցն: - 379. Եւ նախ **գ** օրն. **գ** գոյացութիւն նորին. այսինքն աստուածութիւնն՝ հոգին՝ և *մարմինն* միաւորեալ մի: - 380. Տասն զօրութիւնք հոգւոյ և *մարմնոյ* զանգիտօղք և երկրասէրք: - 380. Զի բժշկութիւն հոգւոյս՝ դառնութիւն *մարմնոյս* լինի: - 381. Ապա թէ ոչ՝ հրեշտակք զայրացեալ հրով այրեն կամ *զմարմինն* կամ զհոգին: - 381. Եւ այլք ասեն թէ՝ կորխեանքն այրեցան *մարմնով*, վասն այն հոգւով սրբեցան. և բուրվառք նոցա սրբեցան: - 381-382. Այլք ասեն վասն դաղանեանցն թէ՝ հոգիք նոցա *մարմնով* ի տանջանս կային. ուր ընկեղմեցան մինչև ցաւարումն դժոխոց. ընդ որս և զնոսա ազատեաց քրիստոս իջանելովն ի դժոխս: - 382. Երկրորդ, կոյսն մարիամ յարմատոյն յեսսեայ՝ յղացաւ և ծնաւ զբանն աստուած *մարմնով*: - 382. Չորրորդ՝ զդեղձան հերն և անարատ *մարմնով* և անբիծ հոգով, որ ո՛չ ունէր զլուծ մեղաց: - 383. Երրորդ՝ զի *մարմինն* աճէր և ո՛չ ինչ յաւելոյր ի կերակրոյն: - 383. Առաջին՝ ջուր աւազանին որ լուանայր *զմարմինն*, է՛ ջուր սրբոյ աւազանին մերոյ: - 384. Հինգերորդ՝ թէ յերեք հասակս մեր ոչ արդարանամք. և ո՛չ յէ հասակին արդարանամք յորում լուծեալ ծանրանայ *մարմինն*: - 384. Չորրորդ՝ նա՛խ օրէնքն և ապա ջուրն. զի նախ հոգւով խնամէ՛ և յետոյ *մարմնով*: - 385. Երրորդ, զի անապական *մարմնով*: - 386. Չորրորդ՝ պղինձն ոսկէտեսակ. և տեառն *մարմինն* աստուածատեսակ փառօք և ներգործութեամբ: - 386. Հինգերորդ՝ անփուտ է պղինձն. և անապական *մարմինն* քրիստոսի: - 386. Եօթներորդ՝ օձն մեռեալ սպանանէր զօձսն. և զհարեալսն կեցուցանէր. և տէրն մեր մեռեալ *մարմնովն* զմեղս մեռուցանէր, և կենդանի աստուածութեամբն զմարդիկ կենագործէր: - 387. Երկրորդ՝ ըստ հոգւոյ և ըստ *մարմնոյ*: - 387. Դարձեալ՝ նզովքն *մարմնո՛յն* է, և անէծքն հոգւոյն: - 388. Եւ բաւականութիւն սոցա է այսպէս. զի եմք *մարմին* հոգի և միտք գոյացեալ. և ունիմք կարիս և ինչս և շնորհք և կրօնք: - 389. Եւ է՛ հոգին յաստուծոյ. և *մարմինն* ի ծնողաց. և միտք յուսուցչաց: - 389. Այն է որ թէ ի մասանց հոգւոյն և *մարմնոյն* այսինքն բանիւ՝ ցասմամբ՝ և ցանկութեամբ, կամ աչօք կամ լսելեօք կամ այլ ինչ գործով մեղանչէ դարձեալ, ուխտն ո՛չ եղև ամբողջ. դարձեալ նո՛ր պարտ է ապաշխարել: - 390. Այլ ոմանք մնացեալք ի *մարմնի*, և բազումք ժամանեալք յօթևանս վերին: - 391. Իսկ զ**խ** իջևանքն ոմանք խորհուրդ առնուն յետ ելիցն ի *մարմնոյ* հոգւոյն՝ **խ** աւուրբ հասեալ յօթևանս: - 391. Վեցերորդ՝ առաջին օրէնքն է կանոնաց. որ կարգաւորէ՛ զհոգի. իսկ երկրորդն դատաստանաց. որ կարգաւորէ՛ *զմարմին*: - 393. Առաջին աստ փոփոխիլ ի *մարմին* և ի հոգի: - 394. Եւ յարութեանն անփոփոխ հոգի և *մարմին*: - 394. Երկրորդ՝ ընդ երից գոյացութեանց մեր. աստ ընդ *մարմնոյս*. և ի մահն ընդ հոգւոյս. և ի յարութեանն ընդ մտաց տեսութեանն հակառակին: - 394. Չորրորդ՝ *մարմնով* զօրինակն ետես, և ապա՛ հոգւով զճշմարիտ երկիրն պարգևաց: - 395. Առաջինն՝ զի նախ արտաքին *մարմնոյ* հանդիպիմք որպէս դրան. և ապա հոգւոյն ի ներս: - 395. Իսկ սիրտ՝ զհոգին ասէ. որ ծածուկ է. և տեղիք խորհրդոց. և մի է. և կենդանութիւն *մարմնոյն*: - 396. Եւ դարձեալ՝ հոգւովդ և բոլոր *մարմնով* և բոլոր մտօք սիրեա և ո՛չ մասամբ: - 396. Դարձեալ՝ զերեք տեսակ սիրոյն ցուցանէ. *մարմնով* և հոգւով և մտօք սիրել զաստուած: - 396. Զի *մարմնովն* է երկիւղական սէրն...: - 396. Իսկ մեզ նորոյս հրամայէ՛ զբանեղէնն մատուցանել որ է՛ հոգի և *մարմին* և կամք...: - 396. Հինգերորդ՝ նոյն ինքն *մարմինն* սուրբ ո՛չ թէ հացիւ միայն կայր որպէս հասարակ մարդ. այլ բանիւն կենդանի ի նմա՛ միացեալ: - 397. Եօթներորդ՝ որպէս հացն *մարմնո՛յ* է կերակուր, և բանն իմաստութեան աստուծոյ՝ հոգւոյ...: - 397. Նա՛խ՝ գիտելի է, զի աչք *մարմնոյն* զինքն ո՛չ տեսանէ, այլ զայլքն: - 397. Դարձեալ՝ որպէս աչօք տեսանեմք *զմարմնոյս* մասունքն և զտգեղութիւնն զարդարեմք: - 397. Ըստ *մարմնոյ* յա՛յտ է զի երկիրն եգիպտացւոց դա՛շտ է. վասն այն նեղոս գետն արբուցանէ զնա՛: - 398. Հինգերորդ՝ զի նոքա խնդրէին երևիլ *մարմնով*. զի ո՛չ կարէին տանել աստուածային հրոյն ի լերինն: - 399. Զի որպէս քահանային օծումն ի հոգւոյն ո՛չ բաժանի յաւիտեան, և պսակի օրհնութիւնն որ ի *մարմինն* է՝ ո՛չ բաժանի մինչ ի մահ ի *մարմնոյն*: - 401. Զի բնութեամբ միաւորեցաւ ի *մարմնի*: - 402. Եւ բնութեամբ աստուած՝ *մարմնովն*. և ո՛չ օտար և շնորհօք: - 402. Ա՛րդ՝ զերկու օրհնութիւնս բ կտակօք բաշխեաց մարդկան. *զմարմնոյ* աճումն և ընչից՝ ետ իսրայէլի. և զհոգւոյ աճումն կուսութեամբ և աղքատութեամբ՝ ետ քրիստոնէից: - 403. Եւ թէ ասէ հրէայն, աստուած օրհնեաց զաբրահամ *մարմնով*: - 403. Ասա՛ նմա թէ՝ այն հասարակաց հեթանոսա՛ց է. զի աճին *մարմնով* և ընչիւք. իսկ մերս ո՛չ է հասարակաց. այլ արժանաւորաց և ընտրելոց: - 403. Նա՛խ՝ զի շնորհակալե՛մք հոգւով, և գոհանամք *մարմնով*: - 406. Չորրորդ՝ *մարմին* կենդանեաց որ առաւել պարարտ է քան զամենայն. վասն այն ի մսոյ հատանին պարկեշտք. զի մի՛ առաւել գիրասցին և գազանասցին: - 407. Չորրորդ՝ մարմնաւոր մահն վախճան է *մարմնոյ* կենաց և սկիզբն հոգևորին. վասն այն օրհնէ: - 408-409. Չորրորդ, մահ՝ այսինքն սատանայ որ յաղթեաց ադամայ. իսկ *մարմնոյն* մովսէսի ո՛չ կարաց յաղթել հրեշտակային օգնականութեամբն. որպէս ասի յառաջիկայդ: - 409. Զի՞նչ էր պատերազմն ընդ *մարմնոյն* մովսէսի: - 409.

Փեգովրայ տեղի՛ էր կռոց. և դևքն չտային թոյլ թաղել *զմարմինն*, մինչև սաստեաց միքայէլ հրեշտակապետն...: - 409. Նախ ասեն թէ զնիւթն աստուած կարծեցին, սատանայ խաբէր թէ ի՛մ է այս *մարմինս* իբրև տեառն նիւթոյ...: - 409-410. Երկրորդ՝ զիոգին մովսէսի ո՛չ կարէր յափշտակել սատանայ, փոխանակ հոգւոյն *զմարմինն* ջանայր յափշտակել. և վիճէր ընդ հրեշտակին թէ իմ է ...: - 410. Եւ անջրպետեալ ի մէջ ժողովրդեանն և *մարմնոյն* շուրջանակի. զի մի՛ իմասցեն զթաղումն նորա: - 410. Երրորդ՝ վախճանեալ մովսէս ի լերինն, և միքայէլ փոխադրէր *զմարմինն*. սկսաւ սատանայ հայհոյել զսուրբն և սպանօղ անուանել վասն հարկանելոյն զեգիպտացին. վասն որոյ սաստեաց նմա հրեշտակապետն: - 410. Զայս նշանակէ թէ՝ յետ ելանելոյ հոգւոյ ի *մարմնոյ* և գնալոյ ի վերին շաւիղն...: - 410. Եօթներորդ՝ ոմանք *մարմին* մովսէսի զօրէնսն ասեն. զոր ի բերելն հակառակէր սատանայ, խոտան և անարժան գոլ ժողովրդեանն. վասն որոյ միքայէլ վերակացու ժողովրդեանն հալածէր զնա: - 410. Ութերորդ՝ և ոմանք *զմարմինն* մովսէսի զժողովուրդն կոչեն յելսն եգիպտոսի. որ հակառակէր ազատելոյ զնոսա յեգիպտոսէ՛: - 410. Տասներորդ՝ ի սկզբանէ հայհոյիչ աստուածամարտ էր սատանայ. և վասն այն զմարդիկ կորուսանէր մեղօք. որում զվճիռն և զսաստն տէրն ետ, և դատապարտեաց զմեղս ի *մարմնի* իւրում. և եբարձ մահուամբն զմահ, և որ զիշխանութիւն մահուն ունէր: - 410. Երրորդ՝ զի երեսունն **գ ժ** է. զի **ժ** զգայարանքն *մարմնոյ* և հոգոյ և մտաց՝ քակտի. վասն որոյ **լ** օր սգան: - 411. Եւ ո՞րք են նմանեալ *մարմնով* ադամայ: - 413. Եւ որ շինէ զդժոխս հոգւով և *մարմնով*. նա՛ և անդրանիկ խորհրդով և *մարմնոյ* գործով: - 418. Եւ տէր մեր ի սպանօղ *մարմնոյս* որ է՛ պատառօղ հոգւոյս, սպանելով զսա՛ գտանէր զքաղցր կեանս տալ որդւոց մարդկան ազգի: - 422. Եւ տէր մեր հաճեցաւ լինիլ *մարմին* ի մարդկան ազգէ: - 422. Իսկ տէրն մեր *զմարմին* և զհաւատացեալս իւր ապրեցոյց յիշխանէն այլազգեացն դիւաց: - 423. Եւ տէր մեր խաչիւ և *մարմնով* զբովանդակ թշնամիսն կործանեաց: - 423. Նշանակէ զադամայինս *մարմին* ի կերակրոյ պտղոյն հաւասարեալ անբանից՝ ընդ բեռամբ մեղաց: - 423. Եւ տէր մեր *մարմնով* զպատերազմն վանեալ. և նոյն *մարմնով* մեզ կեանս բղխեալ: - 423. Կամ զնոյն մեռեալ *մարմինն* ի խաչին. և զնոյն կենդանի գոլ աստուածութեամբն: - 423. Քսանև**ը**, մի և նոյն ծնօտն զոգիս մերկանայր այլազգեացն, և զսամփսոնին արկանէր ի *մարմինն*: - 423. Երեսունք, զկառափս իշխանացն խորտակեաց. և արեամբ *զմարմինսն* լուանայր: - 424. Այլ և զապականութիւն և զդժոխս. *մարմնով* և հոգւով կործանէր զամուրն սատանայի: - 424. Նոյնպէս և տկարութեամբ նորին՝ կորստական խոնարհութիւն ցուցանի *մարմնոյ* իւրոյ աշխարհի: - 424. Երկոտասաներորդ՝ զերկանս սպասու *մարմնոյ* գործեսցէ միշտ և ի նոյն մեռանի որպէս սամփսոն: - 424. Երրորդ՝ նա՛ ի կրտսեր ազգէ բենիամենի թագաւորեաց ամենայն իէլի. և տէր մեր յազգէ մարդկան կրտսերաց առեալ *մարմին* և թագաւորեալ ամենայն զօրութեանց երկնից: - 426. ...երիս զօրութեամբ ի վերայ խաչին. որ է՛ ձայնիւն և *մարմնովն* և հոգւովն որ էջ ի դժոխս. կամ գ գոյացութեամբ. այսինքն աստուածութեանն և հոգւոյն և *մարմնոյն*: - 427. Զի թէ ինքն ձևացոյց *մարմին* և շունչ և յարոյց զնա, զիա՛րդ ոչ ճանաչէր: - 428. Ո՞րք են նմանեալ ադամայ *մարմնոյ* մասամբք: - 434. Հնգետասաներորդ, ե ողորկ քար էարկ ի մախաղն. ե զգայութիւնք անբիծ և անարատ *մարմնոյն*: - 436. Քսանև**թ**, հարեալ որմն վկայեաց թէ սպանօ՛ղ է դաւթի սաւուղ. և չարչարեալ և մեռեալ *մարմինն* վկայէ՛ թէ աստուածասպա՛նք են հրէայքն: - 436. Դաւիթ **լգ** ամ թագաւորեաց. և տէր մեր *մարմնով* ի վերայ երկրի: - 437. Դարձեալ, ժամանակն ունի մասունս երիս. և մշտնջենաւորն. և դարձեալ յաւիտենական է բանն. և ժամանակեայ *մարմինն*. և մշտնջենաւոր հոգին. և անքակտելի միութիւնն ցուցանէ մեզ զչորս թուոյն. և ամենայնիւ կատարեալ գոյացութեամբ: - 437-438. Դաւիթ յետ յերկուց ամաց ետես զաբիսողոմ. և տէրն զմեղաւորս յետ ապաշխարութեան հոգւոյ և *մարմնոյ*. այլ և յետ աստեացս և մահու տեսանէ ի դատաստանին: - 438. Եօթանասուներորդ, յերիս առաջս զօրօք յաղթեաց թշնամեաց. և տէրն *մարմնով* և հոգւով և աստուածութեամբն յաղթեաց: - 438. Այլ ի խաղաղութեան հոգւոյ և *մարմնոյ* և այլոցն: - 440. Եւ հաց ոչ ուտել և ջուր ոչ ըմպել. զի անընդունելի՛ էր *մարմին* և արիւն զոհիցն: - 442-443. Չորրորդ՝ ի տիպ *մարմնոյն* փրկական. զի ոչ յաւելու ի բազում պատարագելն. և ոչ նուազէ ի ճաշակելն: - 444. Եւ այս՝ և պատերազմն վասն մովսիսեան *մարմնոյն* ցուցանեն զպատերազմ հոգւոց յետ ելից *մարմնոյն*: - 445. Արդ եղիսիէէ նշանակէ՛ զբանն աստուած. որ փոքրկացաւ և բովանդակեցաւ ի ծոց կուսին ի *մարմնի* միաւորեալ. և ապա ի խաչն բարձրացեալ կեանս շնորհեաց մարդկան: - 446. Իններորդ, Բանն *մարմին* եղև **ժ** պատճառաւ: - 454. Վեշտասաներորդ, Որպէս հոգի և *մարմին* միաւորեալ **ժ** եղանակաւ: - 454. Քսանէէ, Վասն անապականութեան *մարմնոյն* քրիստոսի բազմազան վկայութեամբք: - 455. Ապա յայտ է թէ ըստ *մարմնոյ*՝ կոյսն էր յազգէն յովսէփայ: - 460. Եւ վասն այն խառնեցան **բ** ցեղքն. զի ծնեալն ի նոցանէ քրիստոս ըստ *մարմնոյ*, թագաւոր և քահանայ լինէր: - 461.

Երկրորդ՝ զի հրեշտակք ի հարկէ բնութեան ունին զկուսութիւնն. իսկ աստուածածինն զայն պահեաց մաքրութեամբ *մարմնով* զկուսութիւն ողջախոհութեան: - 463. Նոյնպէս որդին աստուծոյ որդի է կուսին որ էառ *մարմին* ի նմանէ. թէպէտ աստուածութիւնն ի հօրէ է. ապա ուրեմն աստուածածին է կոյսն: - 466. Վեցերորդ, մայր մարդոյ ասի կինն որ ծնաւ զմանուկ. թէպէտ հոգին ո՛չ է ի մօրէն. այլ վասն միաւորեալ *մարմնոյն* մարդածին կոչի: - 466. Նոյնպէս և կոյսն սուրբ աստուածածին է վասն աստուածացեալ *մարմնոյն*: - 466. Այլ արդ՝ քրիստոս ո՛չ է որդի աբրահամու և ո՛չ ի հարցն՝ թէ ոչ է որդի կուսին. ապա ուրեմն ըստ *մարմնոյ* աստուած է քրիստոս, և աստուածածին է ծնօղն. և մայր ըստ *մարմնոյն* քրիստոսի: - 466. Վասն է՞ր բա՛նն *մարմին* եղև. և ո՛չ հայր կամ որդի: - 468. Իսկ թէ մինն համագոյ երրորդութեան բանն *մարմին* եղև՝ ցուցցի այժմ: - 468. Եւ թէպէտ կատարեալ և լի և անթերի էին մասունք *մարմնոյն* քրիստոսի. այլ ա՛յն քան փոքրիկ, մինչ զի հազիւ անկարէր ընդ տեսութեամբ մարդոյ: - 470. Եւ այն ևս սքանչելիք, որ ի փոքրագոյն *մարմինն* ընկալեալ եղև հոգի բանական, և տեսակաւորեալ որպէս քառասնօրեայ մանուկ յարգանդի: - 470. Երկրորդ՝ զի մի՛ ապականութիւն կրեսցէ *մարմին* բարձողին զապականութիւն: - 470. Այլ և ո՛չ կանանցական սերմն եղև նիւթ *մարմնոյն* քրիստոսի: - 470. Ապա ուրեմն պատշա՛ճ էր նիւթ *մարմնոյն* քրիստոսի մաքուր արիւնն կուսին...: - 470. Եւ երեքեան ծնունդ քրիստոս՝ ըստ երից գոյացութեանցն որ ի քրիստոս. այսինքն աստուածութիւնն՝ *մարմինն* և հոգին: - 471. Զի ի հօրէ միշտ ծնանի աստուած. ի մօրէ միանգամ ծնաւ *մարմինն*. և ի միտս ծնանի բազում անգամ: - 471. Երրորդ ծնունդն ի մօրէ. ըստ որում ծնաւ *մարմնով* և երևեցաւ մեզ...: - 471. Աստ գիտելի է, որպէս միածին կոչի անմարմնաբար և ըստ *մարմնոյ*: - 472. ...իսկ մեք ո՛չ ի գործոց, այլ ի հաւատոցն քրիստոսի ընկալաք զսկզբնական արդարութիւնն և զներգործութիւն *մարմնոյ* և զսրբութիւն մտաց: - 473. Զի տրտմութիւն արտասուաց ընդ մահուանն բարձաւ. իսկ ամօթ և ցաւք *մարմնոյ*՝ ընդ մեղացն բարձան. որպէս ի հատանիլ արմատոյ՝ չորանան ստեղունքն: - 474. Եւ նեստոր կամէր *զմարմինն* որոշել և սոսկ մարդ դաւանել: - 475. Այլ և ո՛չ յառաջ քան զյղանալն օծաւ. զի սրբիլ և առաքիլ և իջանել յերկնից ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ *մարմին* լինիլ և *մարմնով* երևիլ բանին: - 475. Եւ են որք անշփոթ միաւորին. որպէս հուր և երկաթ. հոգի և *մարմին*. սեռ ի տեսակս. և տեսակ յանհատս: - 475. Առաջինն ըստ դրութեան, որպէս կէտ. գիծ. մակերևոյթ. և *մարմին*: - 476. Յասիցելոցս ո՛չ ոքն յարմարի միաւորութեան փրկչին. բայց միայն երրորդն առաջնոյն. այսինքն էութիւն առ էութիւն անշփոթ խառնումն. որպէս հոգւոյ և *մարմնոյ*. զոր և յառաջիկայդ ցուցցի: - 476. Յետ այսորիկ երկրորդ միաւորութիւն սովորեցաք կոչել թէպէտ և ո՛չ իսկապէս՝ և զանհամանիւթից ոմանց. և կամ զհամանիւթից *մարմնոց* յարադրութիւն. որոց ընդ մէջ է մակերևութիւն միայն: - 476. Հոգւոյ և *մարմնոյ* միաւորութիւն ո՞րպէս նմանի քրիստոսի: - 476. Սուրբն աթանաս և կիւրեղ և այլք՝ զհոգւոյ և *զմարմնոյ* միաւորութիւնս ասեն բանին մարմնացելոյ: - 477. Այսպէս յայլ և այլ բնութեանց բանն *մարմին* եղեալ՝ մի անձն է և մի դէմ: - 477. Երկրորդ՝ որպէս բոլոր հոգին է՛ ի բոլոր *մարմինն* միաւորեալ. և բոլորն է՛ յիւրաքանչիւր մասն *մարմնոյն*: - 477. Այսպէս և բանն աստուած բոլորն է ի բոլորն միաւորեալ. և բոլորն յիրաքանչիւր մասն *մարմնոյն*: - 477. Երրորդ՝ որպէս բաժանեալ ի միմեանց՝ ո՛չ գոյ մարդ. այլ մեռեալ *մարմին* կամ մերկ հոգի: - 477. Հինգերորդ՝ որպէս *մարմինն* զգայական միաւորեալ ընդ բանական հոգոյ՝ ո՛չ է և ոչ ասի զգայական. այլ բանական մարդ: - 477. Վեցերորդ՝ որպէս անկենդան *մարմինս* միաւորեալ ընդ հոգւոյն՝ կենդանի է և ասի: - 477. Այսպէս միաւորեալն ընդ բանին *մարմին* է՛ և ասի միշտ կենդանի և կենդանարար: - 477. Եօթներորդ՝ որպէս այլայլական և փոփոխելի *մարմինս* կայ և մնայ անփոփոխ և անապական միաւորեալ ընդ հոգւոյն մինչև ցորոշումն: - 477. Գերաբնապէս ապա և բանն *մարմին* եղեալ անփոփոխելի և անապական ներգործեալ *մարմին* ըստ մերոյս բնութեան անբաժ միաւորութեան: - 477. Ութերորդ՝ որպէս ի միաւորիլ հոգւոյ և *մարմնոյ* յառաջագայի ի միոյ կամաց միով զօրութեամբ հանճար և ներգործութիւն: - 478. Իններորդ՝ միաւորութիւն մարդոյ՝ է՛ անմահ և մահկանացու. յաւիտենական և ժամանակեայ. այսինքն հոգի և *մարմին*: - 478. Այսպէս և միաւորութիւնն քրիստոսի է՛ յաւիտենից և ժամանակեայ. անմահ և մահկանացու. աստուած և մարդ. նոյն ինքն բանն *մարմին* եղեալ: - 478. Տասներորդ՝ զի ի ծնունդն միաւորութեան մերոյ ո՛չ ասի *մարմին* ծնեալ. այլ թէ մարդ ծնաւ յաշխարհ: - 478. Նոյնպէս ասի այս անուն մարդ չարչարեալ և մեռեալ. որ և յատուկ *մարմնո՛յ* են սոքա: - 478. Երկրորդ՝ զի հոգի և *մարմին* գոյակիցք են միմեանց անընդհատ ժամանակաւ: - 478. Երրորդ՝ զի հոգի միաւորեալ ընդ *մարմնոյ*՝ է երբէք զի որոշի և դարձեալ միանայ: - 478. Իսկ բանին աստուծոյ քաջ սիրով եռացումն ընդ *մարմնոյ* անբաժ և անորիշ գործեաց միաւորութիւն: - 478. Չորրորդ՝ զի ի մարդն է մի միայն միաւորութիւն. այսինքն հոգւոյ և *մարմնոյ*: - 478. Իսկ ի քրիստոս եռակի գոյ միաւորութիւն. այսինքն աստուծոյ ընդ հոգւոյ. հոգւոյ ընդ *մարմնոյ*.

աստուծոյ ընդ *մարմնոյ*: - 478. Հինգերորդ՝ զի հոգի միաւորեալ ընդ *մարմնոյ*՝ է՛ ի *մարմնումն* էութեամբ և ո՛չ այլ ուրեք թէ և մտօք բազումս տեսանէ: - 478. Իսկ բանն աստուած մարդացեալ՝ էութեամբ է առ հայր. պահպանութեամբ ի բոլոր էակքս. շնորհօք յամենայն սուրբս. և բնութեամբ ի *մարմնի* միաւորեալ: - 478. Վեցերորդ՝ զի հոգի և *մարմին* մասն գոլով գոյանայ մի կատարեալ: - 479. Իսկ բանն աստուած կատարեալ լրիւ մարդացեալ բովանդակապէս. հոգի *մարմին* և միտս ունելով անշփոթ կատարելութեամբ և անբաժ ենթակայութեամբ: - 479. Եօթներորդ՝ զի ի բազմա՛ցելոց հոգի ասէ նիւսացին միաւորի ընդ *մարմնոյ*: - 479. Իսկ աստուածայինն անեղ էութիւն ամենևին պարզ և մաքուր առաւել քան զիմացականն բնութիւն եղական իմն գոյութեամբ. թէ և ո՛չ են միաւորական *մարմնոյ*: - 479. Ութերորդ՝ զի աստ ի միաւորութիւն հոգւոյ ընդ *մարմնոյ*՝ զգայակից և ախտակից լինին միմեանց կրական գոլով: - 479. Իսկ բանն աստուած միաւորեալ *մարմնովն* կրեալ զմերս վասն մեր. անկրելի գոլով ըստ իւրում բնութեանն: - 479. Տասներորդ՝ զի թէ և միաւորի հոգի և *մարմին*՝ այլ ո՛չ հոգին *մարմին* և ո՛չ *մարմինն* հոգի ասի: - 479. Այս քան յաղագս աննմանութեան հոգւոյ և *մարմնոյ*: - 479. Եթէ ոչ էր խաչեալ քրիստոս՝ լինէ՞ր ծեր *մարմնով*: - 479. Իսկ ի քրիստոս ոչ ինչ է անկատարութիւն. ապա և ո՛չ ծերութիւն *մարմնոյ*: - 480. Չորրորդ՝ ծերութիւն և այլայլութիւն *մարմնոյ*՝ էր դատապարտութիւն յանցանացն...: - 480. Իսկ զգիր քրիստոնէից զոր յետ աւազանին մեղանչեմք և գրեմք զյանցանս, զայն պատառէ ապաշխարութիւնն. որ է՛ զղջումն սրտի և խոստովանութիւն լեզուի և հատուցումն գործոց *մարմնոյ*: - 482. Ո՛չ հատանելով զի անպատշա՛ճ էր բաժանիլ ի *մարմնոյ* կամ յարենէ նորա: - 486. Որպէս եսաւ անդրանիկն իսահակայ՝ կցողական դեղօք ողջացոյց *զմարմին* իւր և արար անթլփատ. զի ցրեսցէ զուխտն աստուծոյ: - 486. Չորրորդ՝ բռնաւորօք. որք բառնան *զմարմինն*: - 486. Նախ՝ որ ասէ «դա՛» նշանակէ զմիաւորութիւն բանին առեցեալ *մարմնովն*: - 487. Եւ դարձեալ՝ հաճութիւնն է հանգուցեալ կամքն. այսինքն հոգւովն սրբով հանգեայ ի յորդի առեցեալ *մարմնովն*: - 488. Զագահութիւնն՝ բազմաբաշխութիւնն. որ ետ *զմարմին* իւր ի կերակուր և զարիւնն իւր ըմպելի. զհոգին ի գին. զջուր կողին ի լուացումն. զհանդերձն՝ խաչողացն. *զմարմինն*՝ աշակերտացն. և զմայրն՝ յոհաննու: - 489. Վեցերորդն է մերկացումն *մարմնոյն*. ի նշան խոստովանութեան մերոյ որ պարտ է լինիլ մերկապարանոց: - 489. Դարձեալ նշանակէ զմահն քրիստոսի. զոր արեգակն արդարութեան կամեցաւ ի *մարմին* իւր թաքչիլ. զի զմեզ լուսաւորեսցէ: - 490. Յօշարակաւ մաճնաւն, յորժամ *զմարմին* և զարիւն իւր ետ աշակերտացն յետ ընթրեացն: - 491. Եւ է՛ որ պատարագն մեծ է քան զմատուցօղն. որպէս նոր օրինացս *մարմինն* քրիստոսի մեծ է քան զքահանայն: - 491. Զի զանմեղ *մարմինն* իւր կամաւ պատարագեաց վասն մեր: - 492. Այլ և մաքրութիւն մեղաց ըստ չորից նիւթոց *մարմնոյս*: - 493. Այլ և **դ** սկզբունք տարրական ամենայն *մարմնոց*: - 494. Ոմանք ասեն թէ աւանդիլ հոգւոյն քրիստոսի, աւազակն եմուտ յերկրաւոր դրախտն ուստի ել ադամ. և չէ՛ հաւանելի. զի անդ *մարմնովն* եմուտ յետ յարութեանն: - 495. Երկրորդ՝ զմահ կրեաց. զի ինքն եդ զմահն պատիժ ի վերայ մեր. իսկ զմեղքն և զապականութիւն՝ բանսարկուն և ադամ արկին ի բնութիւնս. վասն որոյ զոր ինքն ոչ եդ՝ ո՛չ կրեաց *մարմնով* իւրով: - 496. Ապա ուրեմն օտա՛ր արկածք էր ապականութիւնն, վասն այն ո՛չ կրեաց ի սուրբ *մարմին* իւր անապական: - 497. Այսպէս և տէր մեր նմանեաւ, որպէս անիծիւք զանէծս՝ և մահուամբ զմահ եբարձ. իսկ հակառակաւն՝ անապական և անմեղ *մարմնովն* զմեղս և զապականութիւն ելոյծ: - 498. Ո՞րպէս ասեմք մահկանացու *զմարմինն* քրիստոսի առանց ապականութեան: - 498. Այլ հերձուածօղք ոմանք որք են դասք երկաբնակաց՝ ապականացո՛ւ ասեն զանապական *մարմինն* կենարարին: - 498. Եւ ապա հետևիլ թէ անապական է *մարմին* փրկչին: - 498. Եւ զի ա՛յլ է մահ և ա՛յլ ապականութիւն՝ յա՛յտ է նախ ի գործոյն. զի ինքեամբ մահ ի ներքս մտեալ որոշէ՛ զհոգի և *զմարմին*. և ա՛յս է գործ նորա: - 498. Իսկ ապականութիւն այլայլութեամբն ի ներքս մտանէ, և զորոշեալն ի միմեանց՝ դարձեալ օցտէ՛ և այլայլէ՛. մինչ *զմարմինն* ի բուն տարերս լուծանէ, և զհոգին յաներևոյթ տեղիս: - 498. Եւ կարելի՛ է ասել *զմարմին* կենարարին չարչարելի և մահկանացու, այլ ո՛չ կարելի ասել ապականացու: - 498. Այլ անապական *մարմին* յանապական կուսէ, ընդ անապական էութեանն աստուծոյ միաւորեալ: - 498. Իսկ զի անապական է *մարմին* կենարարին՝ է՛ ի դաւանութենէ հաւատոյ. զոր ունիմք և եմք անփոփոխ: - 498. Նախ որպէս ասացաւ՝ ապականութիւնն ծունդ է մեղաց՝ և մեղքն չա՛ր է. և մեղք ո՛չ կրեաց սուրբ *մարմինն* քրիստոսի. ապա ուրեմն անապակա՛ն է: - 498. Երկրորդ՝ ապականութիւն և մեղք ո՛չ է գործ արարչի. այլ մեղանչականին ադամայ և արկածք բանսարկուին. վասն որոյ տէրն զարկուածս բանսարկւին ո՛չ հպեցոյց **ի** *մարմինն* իւր. ապա ուրեմն անապակա՛ն է *մարմինն* տեառն: - 498-499. Երրորդ՝ ապականութիւնն ներգործէ՛ հակառակ արարչին. զի արարիչն յանգոյից գոյացուցանէ, իսկ ապականութիւնն զգոյսս ի յանգոյութիւն տարալուծէ և այլայլէ՛.

վասն որոյ անապական է *մարմին* արարչին: - 499. Հինգերորդ՝ ապականութիւն մեր *մարմնոցս* է՛ ի սերմանէ հօր ի ծեռն կնոջ խառնեալ. իսկ *մարմին* բանին ո՛չ է ի սերմանէ հօր և մօր. այլ ի կուսական արգանդէ և յանապական արենէ բեղնաւորեալ որպէս ցուցաւ ի վերոյ ի սոյն գլուխ ի ժ համարն. ապա ուրեմն անապակա՛ն է *մարմին* բանին աստուծոյ: - 499. Վեցերորդ՝ զմարիամ մայր փրկչին կոյս և անապական խոստովանին հարք ուղղափառութեան. և զայս ո՛չ ըստ գոյացութեան բնութեան, այլ զի ծնաւ զբանն աստուած անապական *մարմնով*: - 499. Ա՛րդ՝ եթէ ծնօղն անապական է որպէս և է՛, զիա՞րդ ծնեալն ի նմանէ ապականացու լիցի. ապա ուրեմն անապակա՛ն է բանն աստուած ծնեալ *մարմնովն*: - 499. Եօթներորդ՝ ի տարրական հողոյ ստեղծեաց աստուած ադամայ անապական *մարմին* և եդ ի դրախտին. որ մեղօք յանցեալ՝ եղև ապականացու: - 499. Դու զիա՛րդ երկբայիս թէ ի յապականացու բնութենէս ադամայ անապական բանն աստուած միաւորեաց ընդ իւր և ծնաւ անապական *մարմնով*: - 499. Ութերորդ՝ մանանայն յանապատի էր օրինակ անապական *մարմնոյ* փրկչին. և է՛ անապական մինչև ցայսօր ի մէջ ոսկի սափորին. ապա ուրեմն ճշմարիտ *մարմինն* քրիստոսի էր անապական ի կուսական արգանդէ աստուածածին կուսին: - 499. Տասներորդ՝ ամենայն սուրբ վարդապետք ուղղափառաց որպէս եփրեմ՝ ոսկէբերանն՝ կիւրեղ՝ աթանաս՝ և այլք, անապական գրեն և խոստովանին *զմարմինն* սուրբ: - 499. ...անապակա՛ն է *մարմինն* քրիստոսի: - 499. ...անապակա՛ն է *մարմինն* սուրբ: - 499. Եւ թէպէտ ասացաւ ճշմարիտն թէ անապակա՛ն է *մարմինն* տեառն, այլ այժմ դիցուք զբանս նոցա թէ վասն է՞ր ասեն ապականացու. և յարմարեսցուք զպատասխանիսն: - 500. Նա՛խ ասեն, եթէ անապակա՛ն էր *մարմինն* փրկչին, ապա անմահ և անչարչարելի՛ է: - 500. Ապա ուրեմն կարելի՛ է ասել չարչարելի և մահկանացու վասն մեր. այլ անապական և անմեղ *մարմին*: - 500. Դարձեալ ասեն, եթէ ոչ է ապականացու, ապա անկատար է *մարմինն*: - 500. Ասեմք առ այս, եթէ ապականութիւնն առնէ կատարեալ և անապականութիւնն անկատար, ապա ադամ յառաջ քան զմեղանչելն անկատա՛ր էր զի անապական էր *մարմնով*...: - 500. Դարձեալ ասեմք ըստ ձեզ, թէ յետ խաչին յապականութիւն փոխեցաւ *մարմինն* տն, ապա յառաջ քան զխաչն կատարեալ էր զի ապականացո՛ւ էր. և յետ խաչին անկատար զի անապական եղև որպէս դուքդ ասէք: - 500. Եւ այժմ և յաւիտեանս անկատա՛ր է զի է անապական *մարմնով*: - 500. Դարձեալ ասեն նոքա, մեր *մարմինս* ապականացո՛ւ է. իսկ թէ անապական *մարմին* էառ քրիստոս, ո՛չ արար փրկութիւն մեզ. այլ առաջին բնութեանն ադամայ որ էր անապական ի դրախտին: - 500. Ասեմք եթէ՝ բանն աստուած էառ զմեր ապականակիր *մարմինս* և զմեղանչական հոգի և զմիտս. և մերովս արար փրկութիւն մեզ: - 500. Այլ միաւորեալ ընդ ինքեան բաժանեաց զմեղս ի հոգւոյն և զապականութիւն ի *մարմնոյն*. որպէս հուր ընդ ոսկւոյ միաւորեալ բաժանէ զժանգն ի նմանէ: - 500. Եւ ծնաւ ի կուսէ անմեղ հոգւով և անապական *մարմնով* մարդացեալ աստուած: - 500. Դարձեալ ասեն հակառակքն, եթէ անապական է *մարմինն*, ապա ո՛չ է տարրական. այլ ի յերկնից բերեալ. կամ ինքն ի բնութիւնն իւր թանձրացեալ. որպէս ասէ եւտիքէս: - 500-501. Այլ ո՛չ ասեմք զբանն ի բնութիւնն իւր սառուցեալ, կամ *զմարմինն* ի յերկնից բերեալ: - 501. Այլ զի բան ի յերկնից իջեալ միացաւ ի *մարմնի*...: - 501. Այսպէս և ընդ անապական բանին միաւորեալ՝ անապական էր և բանին *մարմին*: - 501. Դարձեալ ասեն նոքա, եթէ *մարմինն* քրիստոսի փոփոխէր աճելովն որ տեսա՛կ է ապականութեան: - 501. Ասեմք թէ՝ աճումն *մարնոյն* ո՛չ է ապականութեան ցոյցք, այլ հակառակ նմին: - 501. Նոյնպէս և քրիստոս կերակրիւր անապական *մարմնով*: - 501. Նաև յետ յարութեանն եկեր ընդ աշակերտսն անապական *մարմնովն:* - 501. Զի ցուցանիցէ թէ նոյնպէս եկեր և յառաջ քան զխաչն անապական *մարմնով*: - 501. Դարձեալ ասեն նոքա, կրակա՞ն էր *մարմինն* քրիստոսի թէ անկրական: - 501. Եւ այս է նոցա զինուց զէն մեծ զրախօսութեան ի *մարմին* բանին: - 501. Զի ըստ որում աստուած՝ ո՛չ կրէր ակամայ. և ըստ որում մարդ ճշմարիտ և *մարմին* բանին՝ կրէր զկամաւորն: - 502. Զի ապականացու զապականացու մաքրել ո՛չ կարէ. այլ անապական *մարմնովն* եղև մաքրիչ տէրն մեր ապականութեան մերում: - 502. Դարձեալ ասեն նոքա, զի թէ *մարմին* տն զկամայն ո՛չ կրէր, թերեկատար էր մարդեղութիւնն: - 502. Ասեմք մեք, եթէ անմտութիւն է կարծել *զմարմինն* թերեկատար առանց ակամայ կրից: - 502. Նա՛խ՝ զի բանական մարդ կամաւորօ՛քն է մարդ, և ո՛չ ակամայիւքն. որպէս կատարեալ էր *մարմինն* ադամայ նախ քան զմեղանչելն: - 502. Ասեմք մեք, թէ արտածորումն *մարմնոյ* ո՛չ ունէր մարդն ադամ նախ քան զմեղանչելն ի դրախտին. որպէս նոյ ի տապանին. և մանուկն իննամսեայ յարգանդին: - 502. Դարձեալ ասեմք թէ յանապատին հրամայեցաւ զսպել ի սրբութիւն մանանային որ օրինա՛կ էր ճշմարիտ մանանային *մարմնոյն* սրբութեան: - 502. Դեռևս ապա *զմարմին* կենարարին ապականացու խոստովանիս: - 503. Երրորդ՝ որպէս *մարմնով* լոյս ծագեաց մարմնաւորացն և քարոզեաց զփրկութիւն: - 503. Եւ դարձեալ՝ որպէս աստուծոյ կարողութեանն

է զանմարմին հոգին հրով տանջել և *զմարմինն* անմահ պահել ի հուրն: - 504. Երկրորդ՝ վասն բազում մասանցն. որք կրեն զտանջանս *մարմնոյ* մասամբ և զգայութեամբ. և հոգւոյ զօրութեամբ և մտաց իմացմամբ: - 505. Դարձեալ ասեմք, ներքին դժոխք է հոգւոցն. և վերին՝ գերեզման *մարմնոցն*. և նա կոչի դժոխք ի սուրբ գիրս...: - 505. Այլ ա՛րդ՝ տէրն մահուամբ զմահ մեռոյց որ է՛ դժոխքն այժմ. և յարութեամբն եբարձ զապականութիւն *մարմնոյ* ի հանդերձեալն. ապա ուրեմն աւերեաց զդժոխս: - 506. Այլ ա՛րդ՝ տէրն մահուամբ զմահ մեռոյց որ է՛ դժոխքն այժմ. և յարութեամբն եբարձ զապականութիւն *մարմնոյ* ի հանդերձեալն. ապա ուրեմն աւերեաց զդժոխս: - 506. Ասեմք եթէ՝ խոստովանիլն կրկին է. մին ներքին իմացմամբ. և միւսն *մարմնով* արտաձայնութեամբ: - 508. Ա՛րդ՝ ի կենդանեաց երկոքինն պահանջին. իսկ հոգւոցն բաւակա՛ն է միայն ներքին իմացումն զի չունին *մարմին*: - 508. Վասն զի բոլոր մարդն երիւք է կայացեալ. որ է հոգի և *մարմին*, և ի մէջ երկուցն շունչն է խառնեալ: - 510. Պահքն վասն հոգւոյն պատշաճի. և Ուտիքն *մարմնոյն*. իսկ Նաւակատիքն վասն խառնեալ շնչոյն: - 510. Կամ որպէս ասեն ոմանք թէ երկու յաւազոյ և մի ի սերմանէ՛ գոյանան *մարմինք* ծկանցն: - 510. Ասեմք թէ՝ ի վերնատունն զիինն կատարեաց մինչ *զմարմինն* բաշխեաց և նոր օրէնս եդ. և մեք հնոյն ո՛չ եմք պարտական: - 510. Ասեմք թէ՝ պօղոս *մարմին* ասէ և դու ջուր ասես. ...: - 511. Եւ որպէս դարձաւ ժողովուրդն ի հանգրուանն առաջին, և տեառն *մարմինն* եդաւ ի հող երկրի: - 513. ...և յառաւօտին տեսին զայն ամենայն *մարմին* մեռեալ...: - 514. Այլ որ ուղղապէս հանդիպիմք՝ ասեմք թէ **լ** ժամ *մարմինն* եկաց ի գերեզմանի. և հոգին **լգ** ժամ և կէս յամեաց ի դժոխս: - 515. Զի յինն ժամու ուրբաթուն արձակեաց զհոգին և էջ ի դժոխս. և ապա՛ ընդ երեկոյս ի մուտն արևու *մարմինն* եմուտ ի գերեզման: - 516. Եւ ա՛յն է խորհուրդն, զի որ քան ամ *մարմնով* մարմնաւորացն քարոզեաց. նոյնքան ժամս հոգւով հոգւոցն քարոզեաց. այսինքն **լգ** ամ և կէս ի յերկրի. **լգ** ժամ և կէս ի դժոխս...: - 516. ...իսկ *մարմինն* յերեսուն ժամուն ի գերեզմանէն յարեաւ. զի երեսնամեայ մկրտեցաւ *մարմնով* և ել ի ջրոյն: - 516. Նախ՝ խորհրդաբար. ի **ե** շաբաթոջ աւուրն յերեկոյն թաղեցաւ ի սիրտ առաքելոցն ճաշակմամբ *մարմնոյն*. և յերեկոյի կիրակէին տեսին զտէրն յորժամ դրօքն փակելովք եմուտ առ նոսա: - 516. Երրորդ վասն այն արգել, զի ցուցանէ թէ յոյժ պատուեցաւ *մարմինն* այն և ո՛չ է համարձակելի որպէս յառաջն մաքսաւորք և պոռնիկք մերձենային: - 517. Իններորդ, ասէ «մի՛ մերձենար», զի *մարմինն* այն պտուղ էր կանուխ դժոխոցն. և ինքն տէր մեր իբրև քահանայ նոր յամենայն ձեռաց պահէր զգուշութեամբ, զի պահեսցէ զնա ի ձեռինն որ կարօ՛ղ է ընդունել զայնպիսի պատարագն: - 517-518. Մետասաներորդ, զի ձգեալ զձեռն նայի հնազանդեցոյց *զմարմինն* զայն ի ներքոյ մահու: - 518. Երկոտասաներորդ, «մի՛ մերձենար», եցոյց թէ՝ որք յետ յարութեանն և վերանալոյն յերկինս կամին մերձենալ ի *մարմին* նորա առաքինութեամբ և սրբութեամբ, զախտս հոգւոց ի բա՛ց ընկեսցեն և մի ունայնապէս մերձեսցին ի նա: - 518. Արդ մի՛ մերձենար դու յիս անկատար գոլով. որպէս մայր քո եւա ի ծառն գիտութեան. յորժամ առ բնութեամբ իմ հայր՝ և ձեր ըստ շնորհի՝ և աստուած *մարմնոյս* իմոյ ես ելանիցեմ, որոտմամբ իջեալ հոգին զձեզ կատարէ՛. արժանաւորիք յայնժամ առ իս մերձենալ: - 518. Մեզ բոլորիցս աստուած՝ և նմա *մարմնոյն*: - 518. Դարձեալ, հայր է քրիստոսի ըստ էութեանն. և աստուած վասն միաւորութեանն. զի հա՛յր միաւորեաց զբանն ի *մարմնի*...: - 518. Հինգերորդ՝ զի տացէ մեզ համարձակութիւն յուսալոյ ի նոյն. այսինքն մտանել *մարմնով* ի յաւիտենական ժառանգութիւնն: - 519. Երկրորդ՝ զի ամպն կալաւ զնա յաչաց նոցա. նշանակի թէ ի մահկանացու *մարմինս* ո՛չ կարեմք տեսանել ի բարձունս զքրիստոս: - 520. Վեցերորդ, զի եկեղեցի որ է *մարմինն* քրիստոսի՝ յետ չարչարանաց նեռինն որ հանդերձեալ է կրել, զկնի **խ** աւուր յերկինս համբառնալոց հաւատացեալ լինի: - 521. Նա՛խ՝ ի կողմանէ պարգևողին. զի յորժամ քրիստոս նստեալ լինէր ըստ *մարմնոյ* ընդ աջմէ հօր իբր զթագաւոր փառաց յաթոռ թագաւորութեան իւրոյ, յայնժամ մեծագոյն լինէր պարգևք հոգւոյն տուեալ ի փառաւոր քրիստոսէ աստուծոյ: - 521. Իսկ հոգին սուրբ երագ էջ յառաքեալսն. զոր արեգակն քրիստոս բազում ամօք յերկարեալ *մարմնով* ել յերկինս: - 522. Նա՛խ՝ որպէս ծծումն օդոյ կենդանութիւն է *մարմնոյ*: - 523. Եւ հոգին սուրբ բազմաբա՛շխ է և անպակաս հեղումն ի վերայ *մարմնոյ*: - 523. Եօթներորդ՝ մեռեալ *մարմին* ո՛չ առնու և տայ զօդ: - 523. Դարձեալ՝ զի հայր *մարմնով* ո՛չ երևեցաւ որպէս բանն մարմնացեալ. կամ որպէս հոգին սուրբ աղաւնակերպ և հրաձև: - 525. Եւ մի նշխար օրհնեմք և լինի *մարմին* քրիստոսի: - 526. Եւ վասն միաւորութեան. և թացեալ պատառացն. և թէ ո՛չ տան ժողովրդեանն յօրհնեալ *մարմնոյն* քրիստոսի: - 526. Երկրորդ՝ ի վերնատանն դասք առաքելոցն ի վերայ նոր հաղորդութեանն *մարմնոյ* և արեանն՝ նոր օրհնեցին զքրիստոս և ելին ի լեառն ձիթենեաց որպէս ասէ աւետարանն: - 528. Եւ մի և նոյն բանն խօսեցաւ ի նախահարս և ի մարգարէս առանց *մարմնոյ*: - 529. Եւ մի և նոյնն է միաւորեալ ի *մարմնի* և երևեալ մեզ և գրեալ ի քարտիսի յիւրաքանչիւր աւետարանս: - 529.

Ասեմք առ այս, եթէ անմարմին իր անկատար ո՛չ լինի. զի սոյն բան աւետարանիս նոյն կատարեալ բանն է աստուծոյ որ ի *մարմնի* է միացեալ. և նախ քան զյաւիտեանս ծնեալ: - 529. Դարձեալ զորօրինակ, *մարմինն* քրիստոսի մի և նոյն էր ի խաչին բևեռեալ, և մի և նոյն *մարմինն* է ի բազում նշխարս միաւորեալ և ո՛չ բազմացեալ. զի նոյն է գոյացութիւն հացին և գոյացութիւն *մարմնոյն* քրիստոսի: - 530. Դարձեալ յայտնապէս, զի բանն միացեալ ի *մարմնի*՝ էր անբաժանաբար ի հայր. որպէս առ մեզ ներտրամադրեալս բան և գրեալն ի թղթի: - 531. Ա՛րդ՝ ո՛չ է անյարմար եթէ հայր անբաժանելի բանիւն վկայեսցէ բանին որ էր ի *մարմնի*: - 531. Վասն երրորդին գիտելի է, զի գոյ հիւանդութիւն *մարմնոյ*, գոյ և հիւանդութիւն հոգւոյ: - 531. Եւ որպէս անչափ են սպեղանիք և դեղք բժշկականք *մարմնոյ* ի բազում և զանազան ծաղիկս խոտոյ և յարմատս, ի տերևս ի պտուղս. և յայլսն. զի սոքա յայտնեն զբազմութիւն հիւանդութեանց *մարմնոյ*: - 531. Եւ շինուածք են դասք ամենայն արդարոց. նոքին դարձեալ *մարմնով* բնակիչք և հաւատով շինուածք: - 532. Նա՛խ՝ զի իցէ սկիզբն ամենայն *մարմնոյն*. և զի իցէ յէութենէ նորին: - 532. Այլ գիտելի է, զի քրիստոս գլուխ է եկեղեցւոյ, և հաւատացեալք *մարմին* և անդամք նմա...: - 532. Նոյնպէս մի է քրիստոս և մի *մարմին* նորա. որ կոչի մի կաթուղիկէ եկեղեցի. որպէս ի հաւատամքն ասի: - 532. Մի կոչի եկեղեցի՝ ո՛չ տեղեաւ մի. այլ միով հաւատով և յուսով կոչմանն. և միոյ մօր և մի որովայնի ծնունդ աւազանին. և մի կերակուր որ է տեսութիւն աստուածային գրոց. և մի *մարմին* և արիւն փրկական. և մի գլուխ և պսակ և զգեստ ունիմք զքրիստոս: - 533. Նա՛խ՝ որպէս բոլորն է *մարմին* և իւրաքանչիւր մասունքն. նոյնպէս և բոլորն մի եկեղեցի՝ և իւրաքանչիւրքն. և բոլորն քրիստոնեայ՝ և մին մարդն. եթէ նման են միմեանց և եթէ աննման: - 533. Որպէս և առ մեզ է. զի կին որդւոյն դուստր կոչի հօրն վասն մի *մարմնոյն*: - 534. *Մարմին* բոլոր հաւատացեալք և անդամք քրիստոսի: - 534. Այլ ա՛րդ՝ կրկին է իշխանութիւն. այսինքն հոգևոր և մարմնաւոր. վասն զի կրկին է մարդն. հոգի և *մարմին*: - 537. Երրորդ՝ մարմնաւորն իշխէն միայն ի *մարմին* և ի կեանս. այլ յետ մահու ո՛չ: - 538. Իսկ հոգևորն իշխէ՛ ի հոգի և ի *մարմին*: - 538. Ուստի յայտ է զի պատժէ *զմարմին*. և կապէ՛ զհոգին ի կեանս և ի մահ: - 538. Եւ զոր նա՛ կապէ, այլքն ո՛չ արձակեն. որպէս որ կապեաց զհոգիս ի *մարմնի*՝ նա՛ արձակեսցէ: - 542. Եւ դարձեալ՝ որպէս բանն աստուած անէծ զադամ, նոյն բանն դարձեալ օրհնեաց *մարմնովն*. թէպէտ մի է գործ Երրորդութեանն: - 542. Որպէս և քրիստոս արար. որ քան *մարմնով* ընդ առաքեալսն էր՝ եպիսկոպոսունս արար զնոսա. և յետ համբառնալոյն՝ հոգւովն սրբով արար զնոսա կաթողիկոսունս: - 546. Երկոտասան անդամք *մարմնոյ* և դրունք: - 546. Զի ա՛նդ բաժանեցին զբանն ի *մարմնոյ*. և պատառեցին զկանոն սուրբ հարցն: - 547. Եւ փոխանորդ իւր նստոյց յաթոռ զսուրբն արիստակէս համանըման նորին առաքինութեամբ, և որդի ըստ *մարմնոյ*. և ապա՛ գնաց ի հռօմ: - 548. Որպէս զինչ ասեմ համառօտ թէ՝ թերութիւն է մեր բաժանել զբանն ի *մարմնոյն* յերկու բնութիւնս և յերկու դէմս. ի կրկին կամս և ի գործս: - 552. Եւ այն զի խափանեցաւ գործ *մարմնոյն*, ի ժամանակէն կամ ի տեղւոյն կամ ի դիմացն պատճառեցաւ: - 556. Վասն զի յերից գոյացեալ է մարդն. ի մտաց ի հոգւոյ և ի *մարմնոյ*: - 556. Եւ սոքա մտօք և ո՛չ *մարմնով* կատարին. որպէս յայտ է ի բանսարկուն սատանայ որ յանցեաւ հպարտութեամբ և նախանձով: - 556. Նաև զամենայն գլխաւոր մեղս ընդ հզօր խորհուրդ ասէ սուրբն եւագրիոս. վասն զի նախ ի խորհուրդն տնկի ամենայն սերմն մեղաց. և ապա ի *մարմինն* բուսանի և աճէ: - 557. Նա՛խ՝ զի խորհրդոյն չարն ի բոլոր հոգի և ի *մարմինն* սփռի որպէս թոյնք օձից: - 557. Իսկ գործ *մարմնոյն* միայն մասինն այն է որում պատահեցաւ: - 557. Երկրորդ՝ որպէս կառք և կառավարն. եթէ *մարմինն* թիւրի, միտքն ուղղէ՛ զնա: - 557. Դարձեալ ևս յայտնի. որ խորհրդովն է պղծեալ՝ ո՛չ կարծէ զինքն մեղանչական գոլ. այլ ի գործ *մարմնոյն* իմանայ զչարիս իւր զղջա՛յ և ապաշխարէ: - 558. Ապա յա՛յտ է թէ որպէս գործ *մարմնոյն* առ այլս է չար, և խորհուրդ մեղացն առաւել ինքեան է չար: - 558. Վասն որոյ զգուշանալ պարտ է սրտին սրբութեան քան *զմարմնոյն*: - 558. Զի հոգի է աստուած. և յիմացական միտս և ի հոգիս բնակէ. և չէ՛ օգուտ *մարմնոյն* սրբութիւն յորժամ միտքն զբաղեալ է ի չարիս. զի հեռանայ ի սիրոյն աստուծոյ և ի բնակութեանց նորա...: - 558. Եւ միւս՝ որ դառնայ ի հեշտալին որ է՛ հանգիստ *մարմնոյ*. ըստ որում կոչի ծուլութիւն: - 559. Դարձեալ ասեմք թէ՝ այլ վարդապետք է ասեն զմեղս, զի **դ** տարերք են *մարմնոյն*, և **գ** զօրութիւնք հոգւոյն. այսինքն բան, ցասումն, և ցանկութիւն: - 559. Եւ երեքն խառն ի հոգւոյն և ի *մարմնոյն*. որ է բարկութիւն, ծուլութիւն, և ագահութիւն: - 559. Այլ սոցա երեցունց հաւասար է հոգւոյն և *մարմնոյն* բարկութիւն. և առաւել *մարմնոյն* ծուլութիւն. և առաւել հոգւոյն ագահութիւն: - 559. Երրորդ՝ զի **ե** են զգայութիւնք և մի բոլոր *մարմինն*. ուստի ծնանին **զ** խորհուրդք այսպէս: - 560. Տրտմութիւն հոտոտելեաց. և Ձանձրութիւն բոլոր *մարմնոյն*: - 560. Չորրորդ՝ վեց են շարժութիւնք *մարմնոյ*. այսինքն վեր և վայր. յաջ և յահեակ. յառաջ և յետ: - 560. Նա՛խ՝ զի ամենայն մեղք կամ ընդ դէմ իւր *մարմնոյ* է, կամ

ընկերին. իսկ հպարտութիւնն է մեղանչումն ընդ դէմ աստուծոյ. որպէս սատանայի: - 561. Զի յամենայն մեղս երևի հպարտութիւն այսպէս. զի ամենայն մեղք խոտումն է պատուիրանացն աստուծոյ, և խոտորումն զհետ հեշտութեան *մարմնոյ*...: - 562. Եօթներորդ՝ զի որ հպարտքն են ոչ ունին հանգիստ մտաց և *մարմնոյ*. քանզի որ քան մարդ խոնարհէ՝ այն քան հանգիստ է: - 562. Անարգե՛մք զհոգիս որ է՛ պատկեր աստուծոյ. և պատուեմք *զմարմինս* որ պատկեր է անասնոյ: - 564. Երրորդ՝ զի չունէին պատճառս հայհոյութեան հոգւոյն որպէս զորդոյ. զի տեսանէին *մարմին* զգեցեալ, ուտել և ըմպել, տքնիլ և ննջել: - 566. Ա՛րդ՝ թէպէտ հոգին ո՛չ լինի սերեալ ի հօրէն որպէս *մարմինն*, սակայն սկզբնական մեղքն անցանէ ի հոգւոյն յադամայ ի հոգիս զհետ եկելոցն միջնորդութեամբ *մարմնոյն* ցանկութեամբ ծնելոյն: - 567. Զի որպէս ի մեղանչել հոգւոյն ապականեցաւ *մարմինն* ադամայ և եղև դիւրասահ առ վավաշոտ ցանկութիւնն. այսպէս և սերեալ *մարմինն* քարշելով ընդ ինքեան զապականութիւնն՝ աղտեղացուցանէ զհոգին: - 567. Եւ յա՛յտ է՝ զի սկզբնական մեղքն է՛ ի *մարմինն* և ի հոգին: - 567. Այլ ի *մարմինն* նիւթօրէն և սկզբնաբար. իսկ ի հոգին տեսակաբար և իբր նենթակայոջ: - 567. Որոյ պատճառ է, զի ո՛չ ի սերմանէ՝ այլ ի մաքուր արենէ կուսին էառ *մարմին*: - 568. Դարձեալ՝ ըստ ենթակային բաժանի մեղքն յերիս. այսինքն ի մեղք սրտին. ի մեղք բերանոյն. և ի մեղք *մարմնոյն*: - 568. Եւ մեղք *մարմնոյն* է առհասարակ զգայարանացն: - 568. Այլ և մեղք *մարմնոյն* ի հեշտանալն, ի սովորիլն, և ի կապիլն առ մեղս: - 568. Եւ պատիժն ի հոգին կամ ի *մարմինն*: - 568. Երրորդ վասն *մարմնով* ծննդեանն ի կուսէն: - 572. Տասներորդ վասն *մարմնոց* ի մեռելոց յարութեան: - 572. Նաև յարութիւն *մարմնոյ*: - 573. Նաև հոգւոյ և *մարմնոյ* փառաւորութիւն: - 573. Իսկ որք ելեալք են ի *մարմնոյ*, յոյս նոցա է՛ հանդերձ ստուգութեամբ գիտութեան. զի ստուգապէս գիտեն զլինելոց հատուցումն: - 574. Նոյնպէս և այժմ սրբոց և երանելեաց յոյսն է հանդերձ ստուգութեամբ տեսութեանն. զի դեռևս հանդերձեալ է նոցա *մարմնոցն* յարութիւն. և փառք և պսակքն ըստ իրին: - 574. Հինգերորդ՝ *զմարմինս* և զինչս դնէ ի վերայ նորա: - 575. Նա՛խ՝ անկատար սէր է *մարմնոյն*: - 576. Եւ այլ վարդապետք ասեն, սիրել պարտ է նախ զայն որ ի վերո՛յ է քան զմեզ. այսինքն զաստուած. և ապա՛ զմեզ. յետ որոյ զընկերն. և ապա՛ *զմարմինս* մեր. և ի նոյն աստիճանս *զմարմին* ընկերին. զի *մարմինն* երկրորդ է հոգւոյն: - 576. Դարձեալ՝ պարտ է սիրել *զմարմնոյ* թշնամիս մեր: - 577. Երկրորդն ի յօգուտ *մարմնոյն*. և Երրորդն յաստուածային պաշտամունս: - 580. Դարձեալ կոչին ծառայականք, զի և ի խառնուածոյ *մարմնոյն* գոյանան. որք ո՛չ հետևին միմեանց. զի որ ի խառնուածոյն ողջախո՛հ է, նա ո՛չ խոհեմ կամ արդար կամ արի կարէ գոլ: - 581. Եւ այսպիսիքս կոչին ծառայականք. զի ի հարկէ խառնուածոյ *մարմնոյն* լինին ողջախոհ կամ արի և այլն: - 581. Եւ աղքատք հոգւով են ըստ *մարմնոյ* աղքատքն. որք ոչ ինչ ունին և զամենայն ինչ ունին: - 583. Իսկ ընդ դէմ այսմ, դիւական տրտմութիւնն ի *մարմինն* է և վասն *մարմնոյն*. և զարտասուս ցամաքեցնէ. և տրտմի և ամբոխի. և հետևի նմա ոխ և ատելութիւն. այլ և մահ ևս գործէ որպէս ասէ առաքեալն: - 584. Քաղց է ըստ *մարմնոյ*՝ թերութիւն ստամոքսի. իսկ ծարաւ՝ տապութիւն ջերմութեանն: - 584. Խաղաղութիւն է ի կայումն առաքինութեան. յորում է հեշտութիւն ի յաստուած առանց հասարակութեան *մարմնոյ*՝ աշխարհի՝ և սատանայի: - 585. Երրորդ ինքն առ ինքն. որպէս առաքինիքն ի մէջ հոգւոյն և *մարմնոյն* և մտացն առնեն զխաղաղութիւն. և զպատերազմն որով ցանկայ *մարմինն* հակառակ հոգւոյն, հանեն ի միջոյ: - 585. քանզի խաղաղարարն է առանց հակառակութեան *մարմնոյ*՝ աշխարհի՝ և սատանայի. յա՛յտ է զի լինիցի պատրաստ ի յաղթել զփորձութիւն մահու: - 586. Եօթներորդ, յերկինս ասելով՝ ցուցանէ յետ աստեա՛ցս զվարձն և ո՛չ ի *մարմնի*: - 586. Հաղորդութիւնն է՛ խորհուրդ սիրոյ. զի սիրով միաւորիմք և յօդիմք ի գլուխն քրիստոս. *մարմին ի մարմնոյ* նորա և անդամ յանդամոց նորա: - 587. Իսկ լուանալն պարտ է լինիլ ի *մարմինն* բոլոր: - 588. Զի ջուր հակառակ է հրոյ. և զի՞նչ է մեղք, եթէ ոչ հուր. որպէս յոգւոջ բարկութիւն. և ի *մարմնի* ցանկութիւն. ուստի յայտ է զի հրով տանջանաց պատժի. և աստ զի հուրն շիջցի ի ջուր մկրտիմք: - 591. Բոլորովիմբ մարդ ի ձեռն մկրտութեանն ներքուստ և արտաքուստ սրբի. բայց դարձեալ սերմն նորա ի ձեռն *մարմնոյն* ցանկութեանն պղծի: - 592. Արդ ունիմք կրկին ծնօղ. ըստ *մարմնոյ* զադամ. և ըստ հոգւոյ զքրիստոս: - 592. Կրկին է պատիժ մեղաց. այսինքն մահ *մարմնոյն*, և դժոխք հոգւոյն: - 592. Դարձեալ՝ կրկին է գալուստն քրիստոսի. յառաջինն զհոգւոյ պատիժն եբարձ. և յերկրորդն *զմարմնոյն*. զի երկրորդ է *մարմինն* հոգւոյն: - 592. Եւ դարձեալ՝ ինքն քրիստոս նախ մեռաւ *մարմնով*, և ապա կենդանացաւ յետ մկրտութեանն: - 592. Նոյնպէս և մեք նախ մեռանիմք *մարմնով*. և ապա կենդանանամաք ի յարութեանն: - 592. Ո՛չ է օգուտ. զի չև ևս ծնաւ երկրորդ ադամ. զի նախ պա՛րտ էր ըստ *մարմնոյ* ծնանիլ. և ապա ըստ հոգւոյ վերստին ծնունդ: - 592-593. Եւ ի չորրորդ գիրքն ի ի համարն ասէ, ետ *զմարմինն* ի կերակուր. զարիւնն ըմպել. զհոգին ի գին. զջուրն կողին ի լւացումն: - 594. Որ էր խորհուրդ անմահ գառինն. և հացն

և գինին *մարմին* և արիւնն սուրբ: - 595. ...զի որք կամին *զմարմինն* քրիստոսի ապականացու ասել՝ խմոր և ջուր խառնեն. թէպէտ այլ և այլ պատճառեն: - 596-597. Իսկ մեք դասք ուղղափառաց խոստովանիմք զկուսածին *մարմինն* քրիստոսի առանց ապականութեան. - 597. վասն որոյ անխմոր հացիւ և անապական բաժակաւ կատարեմք զխորհուրդ *մարմնոյ* և արեան նորա: - 597. Ո՞րպէս լինի *մարմին* և արիւն քրիստոսի: - 597. Պատահմունք և որակն մնան ի հացն և ի գինին. իսկ գոյացութիւնն փոխարկի ի *մարմին* և արիւնն քրիստոսի վասն դ պատճառի: - 597. Նա՛խ՝ որպէս հացն նոյն է ըստ ձևին, այլ այլ գոյացութիւնն է եղեալ *մարմին* քրիստոսի...: - 598. Եւ դարձեալ՝ որպէս բոլոր նշխարն մի *մարմին* է, և ի մասունս բաժանեալ իւրաքանչիւրն բոլոր և կատարեալ *մարմին* է քրիստոսի: - 598. Նոյնպէս և բոլոր *մարմին* և հոգին է մի աստուած ընդ բանին միաւորեալ. և բաժանեալ ամբողջական մասունքն է՛ բոլոր և կատարեալ աստուած: - 598. Ապա ուրեմն հոգին քրիստոսի աստուած է և *մարմինն* աստուած է և արիւնն աստուած է: - 598. Վասն որոյ ճաշակեմք *զմարմինն* և զարիւնն աստուծոյ և ո՛չ մարդոյ. և ճաշակելով լինիմք աստուած ըստ կարողութեան և ո՛չ թէ լինիմք մարդ: - 598. Վասն է՞ր միաւորեմք զխորհուրդ *մարմնոյ* և արեանն: - 598. Եւ կամ միաւորեալ ընդ *մարմնոյն* և տալ ժողովրդեանն: - 598. Զի որպէս բաշխի *մարմինն*, նոյնպէս և մասնաւորեսցի արիւնն առ հասարակ: - 598. Եւ երբեմն հացն նշանակէ *զմարմինն* սուրբ, և արիւնն զանմահ կենդանութիւնն: - 598. Եւ զինչ և իցէ՝ միաւորեմք ընդ միմեանս և խոստովանիմք զբանն աստուած մարմնացեալ անբաժանելի ի *մարմնոյ* իւրմէ: - 598. Իսկ որք ոչ միաւորեն, բաժան և որիշ նշանակեն զբանն ի *մարմնոյ* իւրմէ. որպէս երկաբնակքն քաղկեդոնիկք: - 598. ...վասն զի աղբիւր արեանն բաժանեալ ի *մարմնոյն* դարձեալ միաւորեցաւ առ ինքն և ժողովեցաւ ի *մարմինն* իւր և ո՛չ ցրուեցաւ ա՛յլ արտաքոյ: - 598. Իսկ յորժամ դուք անօրէն քահանայքդ առնուք զարիւնն ընդ *մարմնոյն* ամենայնքն յուդա էք: - 598. Մեք այսպէս լուաք ի սուրբ գրոց թէ՝ անարժան ուտելն առնէ յուդա. և ո՛չ թէ միաւորութեամբ *զմարմին* և զարիւնն ճաշակել: - 598. ...և յետոյ քան զամենայն բաշխեաց *զմարմինն* իւր...: - 599. ...այսպէս և օգոստինոս վարդապետն Ֆռանկաց ի խորհրդոց գիրս ձա համարն ասէ, թէ յառաջագոյն բաշխեաց զխորհուրդ *մարմնոյ* և արեանն և տուեալ յուդայի: - 599. Ապա յա՛յտ է զի ո՛չ ի *մարմնոյ* և ո՛չ յարենէն էր թացեալ պատառն. այլ ի այլ ինչ կերակրոյ ի սեղանոյն առեալ թացեալ և տուեալ. զի ցուցցէ զմատնիչն: - 599. ...ընդէ՞ր զժողովուրդն զրկէք ի հաղորդութենէ *մարմնոյ* և արեանն քրիստոսի...: - 599. ...զի յայտնապէս զարիւնն ո՛չ տայք, և ծածկապէս *զմարմինն*. զի յօրհնեալ *մարմնոյն* ո՛չ տայք. այլ սոսկ հաց որ ի բեմն: - 599. Թէ օրհնեալ է՝ ընդէ՞ր օրհնէք և թէ ոչ էր օրհնեալ՝ ընդէ՞ր տայք ժողովրդեանն իբր օրհնեալ *մարմին* և մոլորեցնէք զնոսա: - 600. Եւ թէ ասեն՝ բաւակա՛ն է ժողովրդեանն միայն *մարմինն*...: - 600. ...զի հաւատալի է թէ ի *մարմինն* քրիստոսի՝ է՛ և արիւնն կապակցութեամբ. և հոգին համազուգութեամբ. և աստուածութիւնն միաւորութեամբ: - 600. Նա՛խ՝ եթէ ո՛չ *զմարմինն* տան ժողովրդեանն. այլ սոսկ հաց և գինի. զի *մարմին* քրիստոսի այն մինն է որ օրհնեցաւ որպէս ցուցաւ ի վերոյ: - 600. Նա՛խ՝ եթէ ո՛չ զմարմինն տան ժողովրդեանն. այլ սոսկ հաց և գինի. զի *մարմին* քրիստոսի այն մինն է որ օրհնեցաւ որպէս ցուցաւ ի վերոյ: - 600. նոյնպէս և դու մի՛ ճաշակեր. այլ հաւատա՛ ի *մարմինն* զարիւնն կապեալ: - 600. ...որ ո՛չ ուտէ *զմարմին* իմ և ո՛չ ըմպէ զարիւն իմ, ո՛չ ունի կեանս: - 600. Զի *մարմին* իմ ճշմարիտ կերակուր է և արիւն իմ ճշմարիտ ըմպելի: - 600. Որ ուտէ *զմարմին* իմ և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեսցէ և ես ի նմա: - 600. Դարձեալ՝ թէ դու հաւատաս զարիւնն ի *մարմինն* կապեալ, մի՛ հաներ զտեսակ արեանն ի բեմն. այլ նշխար միայն օրհնեա և լիցի *մարմին* և արիւն քրիստոսի: - 600. Եւ ա՛յլ տեսութիւն բանիս. որպէս ասացեր ի *մարմինն* է կապեալ արիւնն և այլն...: - 600. ...նմանապէս և ի յարիւնն է կապեալ *մարմինն* և հոգին համազուգեալ և աստուածութիւնն միաւորեալ...: - 600. ...ապա յորժամ զրկես յարենէն զժողովուրդն, զրկես և ի նոցանէ որ կապեալ են ընդ արիւնն. այսինքն *մարմինն* և հոգին և աստուածութիւնն: - 600. ...զի յայտնի զարիւնն չտաս. և ծածուկ *զմարմինն*...: - 600. ...զի որք արժանի են *մարմնոյն*, արժանի են և արեանն սրբոյ...: - 600. Յայս միտս և տէր մեր բաշխեաց *զմարմինն* և ետ առաքելոցն ի վերնատունն: - 600. Եւ թէ ասեն, միայն *մարմինն* օծանի՝ զի՞նչ ներգործէ ի հոգին: - 605. Ասեմք թէ՝ յորժամ միաւորեալ էր ի *մարմինն* միութեամբ ներգործիւր ի նմա ամենայն մարմնականքն: - 605. Ապա թէ ոչ՝ ժա՛մ է քեզ ասել թէ ամենայն կարգ թաղման *մարմնոյն* ո՛չ է օգուտ հոգւոյ ննջեցելոցն: - 605. Որոյ գործ է զխորհուրդ *մարմնոյ* և արեանն ի վերայ սեղանոյն օրհնել: - 606. Զայս կարգս կացոյց քրիստոս յորժամ ի ժամ ընթրեացն զհացն ի *մարմին* իւր և զգինին ի յարիւն իւր փոխեաց: - 606. Եւ յերուսաղէմ եկեալ պատարագ մատոյց զիւրակա՛նն *մարմին*: - 607. Ա՛րդ՝ բնականն է *մարմնոյն*. և օրինացն խնամութեամբ. և հոգևորն որդեգրութեամբ...: - 611. ...վասն զի ունիմք *զմարմին* և հոգի և օրէնք: - 611. Արդ *մարմնոյ* ազգն բաժանի յերեք դէմս. ի վեր, ի վայր, և ի կողմն:

- 611. Զի **դ** ազգակցութիւն մարմնական. զի *մարմինն* է ի չորից տարերց: - 611. Զի օտար ազգք՝ միջնորդութեամբ փեսային և հարսին որ են մի *մարմին*, լինին և նոքա մի ազգ: - 611. Վասն զի *մարմինն* ի չորից տարերց է. և ի **դ** ծնունդս փոխին **դ** արիւնք տարրականք ըստ այսմ օրինակի: - 612. Զի և նա՛ նս *մարմնոյ* և արեան ազգակից լինի: - 612. Եւ մարդս է եռայարկեան. *մարմինն* արտաքին. և հոգին ի միջին. և իմացումն առաջին: - 613. Եւ ի մեզ **բժ**ան անդամք *մարմնոյ*. և **բժ**ան դրունք զգայութեանց. որպէս **բ** աչք. ականջք. պինչք. բերան. և այլն: - 614. Իսկ ի մեզ դուռն *մարմնոյս* որ յերկիր և ի խաւար հայի, արևմտեանն է: - 614. Աստ անարիւն պատարագն մատչի. և ի մեզ բանեղէն պատարագն հոգի և *մարմին* միշտ նուիրեալ կենդանի: - 614. Այլ և **ե** զգայութիւն հոգւոյ և **ե** *մարմնոյ*. մտօք և կամօք: - 616. Իններորդ, զի եկեղեցի հաւատացելոց՝ ունի զձև խաչին ըստ *մարմնոյ*. - 616. Նա՛խ՝ որպէս զմեռեալս հոգւով՝ արտաքսեմք յեկեղեցւոյ. նոյնպէս և զմեռեալն *մարմնով*: - 617. Եւ թէ ոք ասիցէ, զսրբոց *մարմինս* ընդէ՞ր արգելումք: - 617. Երրորդ՝ զի *մարմինք* սրբոց ի գաւիթս պահին և ո՛չ յեկեղեցի. յօրինակ հոգւոց նոցա որք են ի պահեստ հոգւոյն ի տեղւոջ լուսոյ և հանգստեան: - 617. Այլ զփառս արքայութեան երկնից ի կատարածի ժառանգեսցեն հոգւով և *մարմնով* անվախճան յաւիտենիւ: - 617. ...և ապա՛ ի յերկրէ յարուցանէ *զմարմինս*. որպէս այն որ հրեշտակապետն նստեալ ի վերայ վիմին փողէր զյարութիւնն քրիստոսի: - 618. Երրորդ՝ զի երիցս գոչէ փողն. նախ զհոգիսն ի յերկնից կոչէ. և ապա՛ *զմարմինս* ի հողոյ. և ապա՛ յարուցեալ զհոգի և *զմարմին* ի դատաստան հրաւիրէ: - 618. Եւ այս է պատճառն, զի աստուած ետ մեզ միտք և բան և ձայնի գործիք և *մարմնոյ* մասունք և ինչք. վասն որոյ յամենայնէ՛ նուիրելի՛ է աստուծոյ: - 619. Երկրորդ՝ մեղքն ի հոգւոյն և ի *մարմնոյն* ի վեր ելանէ. իսկ արտասուքն վերուստ ի վայր հոսի և կորուսանէ՛ զնա: - 619. Իսկ ի լուր տրտմութեան՝ խուճապի *մարմինն*. և ի դառն մաղձոյն որ է՛ լեղին՝ հոսի ի բերան քաղրդին. - 619-620. այսինքն մին ի *մարմինն*. **բ** ի միտքն. **գ** ի կամքն. յորժամ սոքա պատրաստին, ապա՛ աղօթքն ընդունելի լինի աստուծոյ: - 620. *Մարմնովն* երեք ազգ: - 620. Զարձակումն խնդրեմք բերանոյ հոգւոյ և *մարմոյ*: - 621. Եւ դարձեալ՝ չորեքնիւթեա՛յ է բնութիւն *մարմնոյս* մերոյ և սոքօք յանցանեմք...: - 622. ...վասն որոյ **դ** անգամ աղօթեմք ի գիշերի ի դէմս *մարմնոյ* մերոյ: - 622. Նա՛խ՝ զի հոգի և *մարմին* է մարդն: - 623. Նա՛խ՝ զի յերի՛ց եմք գոյացեալ ի *մարմնոյ*, ի հոգւոյ, և ի մտաց, որպէս ասեն ոմանք. վասն որոյ **գ** առանձնական աղօթս մատուցանեմք: - 623. ...և մեք հանապազ վեցեկի շարժմամբ հոգւով և *մարմնով* մեղանչեմք. - 624. Եւ կրկին տուն սաղմոսին, զի հոգի և *մարմին* եղև բանն: - 628. Զի այսպէս ասէ ներքառիոս հայրապետն հռօմայ թէ՝ չէր հնար իջուցանել *զմարմինն* տեառն ի խաչէն վասն փայլատակմանցն ի խոցուածոյն: - 631. Եւ զայս երիցս ասացեալ՝ էջ *մարմինն* սուրբ ի վերայ բազկացն յովսեփայ: - 631. Թէպէտ մեռար *մարմնով* և եդար ի գերեզմանի՝ սուրբ և անմահ և անապական ես: - 632. Եւ յամենայն օր **դ** անգամ ասեմք ի սրբութիւն մեր հոգւոյ և *մարմնոյ* և մտաց: - 632. ...և զգործով պատուականն աւարտ ի վերայ բերել. որ է սուրբ *մարմին* և արիւնն փրկչական: - 634. Սոքա քաղկեդոնին են. որք բաժանեն զբանն ի *մարմնոյն*. և զխաչեալն՝ մարդ սոսկ և տկար և մահկանացու խոստովանին: - 635. Իսկ կրկին ասել զշարականս. զի եմք հոգի և *մարմին*: - 636. Եւ հոգւոյ և *մարմնոյ* և մտաց մեր աղե՛րս է: - 637. Դարձեալ՝ առաջին ձայնն ի յերկրէ ի ծնունդն *մարմնով*: - 640. Նա՛խ՝ զի մարդն հոգի է և *մարմին*, ձայնիւ և ձեռօք երգէր. զերկու մատունս ի մի լծակցեալ յօրհնութիւնն աստուծոյ: - 641. Դարձեալ՝ նոցա կրկին աղի. իսկ մերն բան և ձայն. և հոգի և *մարմին*: - 641. Տասն աղին՝ **ժ** զգայութիւնքն հոգւոյ և *մարմնոյ*. և **ժ** մասունք արարածոց ընդ բան օրհնացն: - 641. ...իբր թէ ընկալաք և հնազանդեցաք *մարմնով*...: - 644. ...իսկ խունկն մերձեալ ի հուրն և զհոտն բուրեալ՝ է՛ *մարմինն* միաւորեալ ընդ բանին. և զհոտ անոյշ բուրեալ աշխարհի: - 645. Երեք չուանն յեռեալ ի միմեանս մակդարձապէս, է՛ չորեքնիւթեայ բնութիւնս մեր ի տարերց խառնեալ. կամ շնչոյ *մարմնոյ* և հոգոյ խառնումն: - 645. Վերին ագոյցն իմացականն հոգի. և ներքին կառոյցն *մարմնոյս* բնութիւն: - 645. Դարձեալ, նշանակէ զժողովուրդն աստուծոյ. յորոց ունկն ընթերցեալ լինին միշտ բանք աստուածայինք. հնգիւք զգայութեամբք հոգւոյ և *մարմնոյ* առ միմեանս յեռեալք: - 646. Դարձեալ՝ ի դատաստանի յորժամ դպրութիւնք բանին, որք աստ ի ձախմէ *մարմնոյ*՝ փոխեսցին յաջմէ. և որք յաջմէ՝ յահեկէ՛: - 646. Չորրորդ՝ լրումն օրինաց քրիստոս եղև *մարմնովն*...: - 647. Նոյնպէս և սուրբքն՝ քրիստոսի չարչարակիցք եղեն. և զպակասութիւն չարչարանացն քրիստոսի ի *մարմինս* իւրեանց կրեցին. - 648. ...վասն որոյ տէրն քրիստոս *մարմնով* ի գերեզմանի հանգեաւ. և սուրբքն հոգւով առ աստուած յերկինս: - 648. Նոյնպէս և հոգւոցն ելեալ ի *մարմնոց*՝ այլ միջոց և արգելումն կամ խափան պսակացն չկայ: - 648. Զի հոգի և *մարմին* եմք. ուտիքն է *մարմնոյ*, և պահքն հոգւոյ հեշտալի: - 649. Տօնն ուրախութիւն է. որպէս հոգւոյ՝ նոյնպէս և *մարմնոյ*: - 650. Վասն որոյ յորժամ տօնեմք հոգւով՝ ուրախանամք *մարմնով*: - 650. Նախ այն է՝ որ հրամայէր մովսէս

պղծոցն լուանալ *զմարմինն* և ողողել զհանդերձն և արտաքոյ կալ մինչև յերեկոյ: - 653. Եօթներորդ, ի դէմս հոգւոյ և *մարմնոյ* մերոյ սրբութեամբ պահեմք երկու ի շաբաթուն: - 653. ...և ծ օր ուտեմք վասն *մարմնոյն*: - 654. Երկրորդ, զի աղօթք՝ հոգւոյն է՛ կերակուր, և հացն *մարմնոյն*...: - 654. ...նախ պա՛րտ է զհոգին կերակրել և ապա՛ *զմարմինն*: - 654. Հինգերորդ, քրիստոնէից *մարմինք* սրբութեամբ տաճա՛ր են աստուծոյ, յոր պիղծ ոչ ինչ մտանէ: - 654. Երկրորդ, զի կրկին եմք մարդ. այսինքն հոգի և *մարմին*...: - 655. Զի յերից եմք գոյացեալ մարդ. հոգի և *մարմին* և միտք: - 655. որք հաղո՛րդ եմք *մարմնոյն* քրիստոսի և բաժանորդք արքայութեանն երկնից: - 655. Իսկ պահքն զչարութիւնն. զի նուազի և կարօտի հոգին յամենայն բարեաց. որպէս ի պահոց *մարմինն*: - 657. Երրորդ, զի օրինակն նմանեցի ճշմարտութեանն. որ պարարա՛կ էր աստուածութեամբն և կատարեալ *մարմնով*: - 657. Չորրորդ, զի մա՛սն է հոգւոյն և հանդերձեալ կենացն. պա՛րտ է զպատւականն որոշել քան *զմարմնոյս*: - 657. Չորրորդ՝ անմահ կերակուր ետ *զմարմին* իւր: - 657. ...նոյնպէս և մեզ մասն ինչ բարւոյ է և աստուծոյ. և մասն ինչ աշխարհի. մասն ինչ հոգւոյ և մասն ինչ *մարմնոյ*. աստի՛ կենաց և հանդերձելոյն...: - 658. Երրորդ՝ զի այն արտաքուստ անասնոյ է *մարմին*. և այս ի ներքուստ յինքենէ՛ և զինքն մատուցանէ աստուծոյ: - 658. Քսաներորդ, Վասն յարութեան *մարմնոյ*. և սահմանի նորա: - 660. Քսանէ, Թէ ո՞ր *մարմինք* մնան ի կատարածի և ո՞րք ոչ: - 661. Երկրորդ՝ այն տեղի անմարմնո՛ց է ոչ կարէր մարդս *մարմնով* անդ բնակիլ...: - 662. ...այլ նախ բնակեցէ հոգւով, և ընտանացեալ մտցէ և *մարմնով*: - 662. Երրորդ՝ կրկին է մարդս. որ է՛ հոգի և *մարմին*. և բ աշխարհս. այսինքն երկին և երկիր: - 662. Արդ՝ նա՛խ *մարմնոյս* ետ զերկիր, և ապա հոգւոյն տայ զերկին: - 662. Զի նախ է *մարմին* քան զհոգի. ոչ ժամանակաւ և պատւով. այլ նիւթով և զօրութեամբ: - 662. Երկոտասներորդ՝ զի մարդասէ՛ր է աստուած՝ կամեցաւ միածնին միաւորիլ ի *մարմնի* և մարդանալ յաշխարհի...: - 663. Ըստ *մարմնոյն* ջերմ և սպիտակ: - 664. Հիւանդութիւն է անչափակցութիւն տարերց *մարմնոյ*. որ առաւելու և նուազէ՛. ջերմ և ցուրտ, խոնաւ և ցամաք: - 665. ...յայնժամ լինի բժշկութիւն հոգւոյ և *մարմնոյ* յաստուծոյ և ո՛չ ի դեղոց: - 665. Նախ ի դէմս մեր. զի պակասիմք ի *մարմնոց* և յաւելումք ի հոգիսն: - 666. Մահ է որոշումն հոգւոյ ի *մարմնոյ*: - 667. Զի *մարմինն* բաժանեալ ի հող լուծանի ուստի առաւ...: - 667. Այլ և *մարմին* և ոսկր և ջիլք և այլն քակտին և ի հող լուծանին: - 667. Այս որոշումն է բնութեան *մարմնոյն*: - 667. որպէս ասէ սուրբն դիոնէսիոս եթէ՝ հոգին և *մարմինն* առցէն ի բոլոր յարութեանն: - 667. Ա՛րդ՝ իմանալի մահ է՝ ի ձեռն առաքինութեան *զմարմինն* մեռուցանել և ի ձեռն չարութեան զհոգին: - 668. Զի յորժամ առաքինութեամբ ախտ *մարմնոյն* մեռանի՝ զօրանայ հոգին...: - 668. Եւ յորժամ չարութեամբ հոգին նուազի, *մարմինն* զօրանայ և լինի մարդն շնչաւոր և անբան...: - 668. Նա՛խ՝ ի պնդակազմ *մարմնոյն* դժուարաւ լուծանին տարերքն: - 668. ...զի տեսցուք և ի միտ ածցուք զօր ելիցն մեր ի *մարմնոյ*: - 668. Նա՛խ՝ զի համընթա՛ցք են ասէ ի վաստակն. այսինքն հոգին և *մարմինն*. ի միասին և հանգիցեն և պսակեսցին: - 668-669. Եւ դարձեալ՝ հոգի և *մարմին* զոյգ և ի միասին ստեղծան և ծնան ի մարմնաւոր կեանքս...: - 669. Այսպէս է վախճան մաքուր և սուրբ հոգւոցն. ուրախութեամբ ընթացեալ ի պսակն և զերծեալ ի բանտէ խաւարային *մարմնոյ*: - 669. Որպէս որք ի խաւար բանտից զերծանին և ազատեալք զլոյս տեսանեն. նոյնպէս և հոգին բաժանեալ ի *մարմնոյ*. և են ի լոյս և յերանութեան հանգիստն: - 669. Այլ և ի բաժանիլ չար հոգւոյն ի չարացեալ *մարմնոյն*... - 669. Այլ երկրքինն ունին ի հոգիս իւրեանց մերձ տեսեալ՝ զոր ի յարութեանն առնելո՛ց են կատարեալ անձամբ՝ հոգւով և *մարմնով*...: - 670. Դարձեալ՝ ցուցանէ՝ իբր թէ սիրելոյն որ մեռաւ՝ կցորդիմք և չարչարեմք *զմարմինս*. մերկանալով, ի սով և ի ծարաւ, ի մութն և ի հող որպէս նա ի գերեզմանի եղև: - 670. Ո՛չ միայն *մարմնով*, այլ և հոգւով. թէ չունի զմասն բարութեան: - 670. ...զի անցեալ է ժամանակն ողորմութեան, և դատաւորն առ դուրս հասեալ՝ դնել ի տանջանս դժոխոց. որպէս աստ *զմարմինն* ի գերեզմանի: - 671. Երրորդ կոչի կարգ, զի զոր ինչ մեք առ *մարմին* ննջեցելոցն կատարեմք, զնոյն կարգ և հրեշտակք առ հոգիսն կատարեն այժմ և ի յարութեանն աւուր: - 671. Դարձեալ, մերկ եկն և մերկ գնայ ի *մարմնոյ* զգեստու որպէս ասէ յոբ: - 671. Եւ որպէս հրեշտակքն զհոգին ածեն առ աստուած, նոյնպէս և *զմարմինն* տանին առ քահանայապետն...: - 672. Իսկ ի քահանայաթաղն՝ քահանայապետն հեղու զիւղն ի վերայ *մարմնոյն*. այսինքն ի ճակատն և ի ձեռն...: - 672. ...և ողջունեն առ հասարակ և պատեալ դնեն *զմարմինն* ի տան պատուականի: - 672. Հինգերորդ, ցուցանէ թէ որպէս *մարմինն* օծանի ի քահանայապետէն անուշահոտ իւղով...: - 672. Վեցերորդ, զբոլոր մարդոյն յարութիւնն և զբոլորին փրկութիւնն և զսրբութիւնն նշանակէ որ է՛ հոգին և *մարմինն*...: - 672. ...և *զմարմինն* սուրբ իւղով օծանեմք: - 672. Տասներորդ, նշանակէ զվերջին օծումն. զի ամենայն կարգ զոր *մարմնոյն* կատարեմք՝ հոգւոյն է և *մարմնոյն* որպէս ասացաք: - 673. Ութերորդ՝ զողջութիւնն նշանակէ ողջոյնն բոլոր հոգւոյն և *մարմնոյն* որ է

անբիծ և անարատ: - 673. Տասներորդ՝ զի այսպէս ողջունի և հոգին անդ որպէս *մարմինն* աստ. նախ յաստուածպետութենէն, և ապա ի համակարգ հոգւոց սրբոց: - 673. Իսկ դնել *զմարմինն* ի տան պատւականի որ է՛ գերեզմանն...: - 674. որ ցուցանէ թէ *մարմինն* նորա միշտ յեկեղեցւոջէ և յետ մահուն...: - 674. Եւ նշանակէ նախ զերեք հանգստեանն. մինն *մարմնոյ*. և միւսն հոգւոյ. և միւսն հոգւոյ և *մարմնոյ*: - 675. Երկրորդ, զի երի՛ց եմք գոյացեալ. ի *մարմնոյ,* ի հոգւոյ, և ի մտաց...: - 675. Երրորդ, զի երիւք մեղանչէ մարդ. այսինքն մտօք և բանիւ և գործով *մարմնոյ*...: - 675. ...նոյնպէս յորժամ ի գերեզման դնեն *զմարմինն*, իբր յաշխարհի ծովէ ելեալ զվառն խոնարհեցուցանեն: - 676. Եւ յետ դնելոյ *մարմնոյն* նոյնպէս օրհնէ զհողն ասելով...: - 676. ...և ապա՛ ժողովուրդն ծածկէ՛ հողով *զմարմինն*: - 676. Զի վասն յանցանացն ադամայ անիծաւ երկիր ի գործս նորա. զսուրբ *մարմինն* քրիստոնէի չէ՛ պարտ դնել յանսուրբ հող. - 676. Երրորդ, զի խաչաձև դնի *մարմինն* ի հանգիստն. որ և ձեռքն խաչանմա՛ն է ի վերայ սրտին: - 677. ...և պահեմք *զմարմինն* իբր զգանձ պատւական: - 677. Երկրորդ, զի մի տեսցուք զգարշութիւն *մարմնոյս*...: - 677. ...որպէս սերմանիքն թաղեալ կենդանանան և բուսանին. նոյնպէս և մարդոյս *մարմին*: - 677. Երրորդ, զի *մարմինն* փոխեսցի ի հող մինչև հոգին յանապական և յանփոփոխ սերտութիւնն կայասցի...: - 677. ...ապա և *մարմինն* ընդ նմա անապական և անփոփոխ մնասցէ: - 677. Չորրորդ, *մարմինն* ի հող հանգչի և հոգին ի կայանս հոգւոց...: - 677. Հինգերորդ, *մարմինն* ի հող դնի, մինչև ապականացու տարերք զանապականութիւն ստասցին...: - 677-678. ...ապա և *մարմինն* անապական և հոգին անփոփոխ կացցէ յաւիտեան. նմանելով անապական և անփոփոխ *մարմնոյն* քրիստոսի: - 678. Այս վասն սրբոց *մարմնոց*: - 678. Իսկ վեցերորդ պատճառ վասն հասարակաց ամենայն մարդկան, զի ի հողոյ սկսաւ, դարձեալ ի հող վախճանի *մարմինն*...: - 678. Եօթներորդ, զի հողն ամենևին ներքին ծայրքն է ամենայն տարերաց. անդ դնի *մարմինն*: - 678. ...ցուցանէ թէ անշարժ է մեռեալ *մարմինն* ամենևին ի կենդանական շարժմանէ: - 678. Ասեմք թէ ո՛չ. այլ առաւել վտա՛նգ է նոցա. զի ի բազում անգամ ի ձեռս դիւաց արտաքս ընկեցեալ լինին *մարմինք* նոցա: - 678. ...յա՛յտ է զի նոյն *մարմին* շարժի և շինի ի յարութեան աւուրն: - 678. Իսկ դիրք կոչի. զի ի նմա՛ դնի *մարմինն* իբր ի յանօթ ինչ: - 678. Այլ և գանձարա՛ն է *մարմնոյն*. զի պահէ՛, և դարձեալ ի տէրն տայ: - 678-679. Իսկ հանգիստ կոչի, Նա՛խ՝ զի հանգեաւ յաշխատանաց *մարմնոյն*. այլ և ի չար գործոց: - 679. Երրորդ, զի աստ միայն *մարմինն*, և անդ հոգին և *մարմինն* տանջին: - 679. Նշանաքարն կրկին, Նախ ցուցանէ զհոգի և *մարմին* բաժանեալ ի միմեանց: - 679. Դարձեալ՝ նշանակէ զքանակ հասակի *մարմնոյն* մեռելոյ: - 679. Եւ դարձեալ հոգւոյ և *մարմնոյ*. և շնչոյս պահապան: - 679. Նա՛խ՝ զի մի՛ շարժեսցէ զնա այսն չարութեան որպէս *զմարմին* անհաւատից: - 679. Դարձեալ՝ և կրկին է մահ. որ է հոգւոյ և *մարմնոյ*...: - 680. ...զի մեղօք մեռանի հոգին ի դժոխս. որպէս և *մարմինն*. - 680. ...և յետոյ յէութենէ յոչ էութիւն փոփոխիմք *մարմնով*: - 681. ...և յորժամ բացին զգերեզմանն, գտին թափուր ի սուրբ *մարմնոյն*...: - 681. Այսպէս և բաժանեալ հոգին ի *մարմնոյ*՝ ընթանայ յերկինս և ամփոփի ի տեղւոջ լուսոյ յօթևանս հոգւոց...: - 681. ...մինչ դարձեալ միաւորի ընդ *մարմնոյն*. և իբրև զարեգակն պայծառացեալ ծագէ ընդ քրիստոսի: - 681. Եւ զերծեալ խսահակ և խոյն զենեալ. զի հոգին զերծանի ի տանջանացն և *մարմինն* մեռանի: - 682. Եւ ի հեռուստ տեսեալ զտեղին, զի յետ կատարածի *մարմնով* առնելո՛ց են իւրաքանչիւր ոք զփառս կամ զտանջանս: - 682. Եւ ի ձեռն հրեշտակի բազում պատուհաս և հարուած կրէ աստ *մարմինս*...: - 682. ...և ելեալ ի *մարմնոյն* ընթանայ յօդս: - 682. Երկրորդ ի մեզ. զի **գ** զօրութեամբ հոգւոյ և **դ** նիւթով *մարմնոյ* մեղանչեմք: - 683. Այլ և **յկէ** զօդուածովքս և **բժ**ան անդամօք *մարմնոյս* մեղանչեմք: - 683. Յետ *մարմնոյ* կատարմանց՝ հարցանեմ և վասն բաժանեալ հոգւոց: - 685. Հոգիք ելեալ ի *մարմնոց*՝ ի զգայութեա՞ն են և ի միտս, թէ ոչ: - 685. Ի *մարմնոյ* բաժանեալ հոգին պայծառանայ տեսութեամբ. որպէս որք ի խաւար բանտից ազատին: - 685. Այլ զտեսութիւն սրբոցն առաւելու լոյսն շնորհաց և մաքրութեան. և ազատումն ի թանձրութեանց *մարմնոյն*: - 685. Իսկ մեղաւորացն որ ի *մարմնոյ* արձակեալ, առաւել տեսանեն քան զայժմ. - 685. Այլ ըստ պսակացն որ *մարմնով* կատարին՝ և վասն ընկերացն որ ժողովին՝ պակաս է նոցա. զոր ի կատարածի լինելո՛ց է ի գալուստն քրիստոսի...: - 686. Առաջին նման է այնմ որ ասեն զհոգին ընդ *մարմնոյն* ի հող լուծեալ կամ անդ տանջեալ...: - 687. Զի այժմ հոգւով են առ նա. և յետ յարութեանն հոգւով և *մարմնով*: - 688. Զի այժմ յուսով են յերկինս և առ երկինս. և յետ մահու հոգւով. և յետ յարութեանն հոգւով և *մարմնով* յանճառելի փառսն: - 689. ...և ի յարութեանն առնուն զփառս հատուցմանց հոգւով և *մարմնով*. և այնպէս փառաց ի փառս բարձրանան որպէս ասի յերգս: - 689. Եւ այսպէս ամենայն առաքինութիւն աստ հանգուցանէ զմիտս. և յետ մահու զհոգիս. և յարութեանն զհոգի և *զմարմին*: - 689. Նոյնպէս կրկին է և տանջանք չարաց. այսինքն տանջանք գործոց ըստ ինքեան, և տանջանք հատուցման, զի զտանջանք

գործոցն կրեն յետ մահու. և զտանջանք հատուցման ի յարութեանն հոգւով և *մարմնով*: - 690. Զի գործք չարութեան այժմ դատէ՛ խղճիւ զմիտս. և յետ մահու զհոգիս. և յետ յարութեանն զհոգի և *զմարմին* որպէս ասացաւ: - 690. Իսկ արմաւենիքն զյաղթութիւնն նշանակեն. որք յաղթեցին ցանկութեանց *մարմնոյ* և սատանայի: - 690. ...այլ առցեն յաւուրն դատաստանի հոգւով և *մարմնով*...: - 691. Երրորդ, զի զոյգ և ի միասին ստեղծան և ծնան ի մարմնաւոր կեանքն հոգին և *մարմինն*...: - 691. Երրորդ, ասէ առաքեալն թաղէոս, եթէ հոգի ամենայն մարդոյ որ ելանէ ի *մարմնոյ*, են նոցա օթևանք և բնակութիւն ի հանգստեան...: - 691. բայց վարձ հատուցման ո՛չ կարէ ընդունիլ առանց *մարմնոյն*. զի ո՛չ միայն հոգւոյն է վաստակն, այլ և *մարմնոյն*: - 691. Չորրորդ, ասէ սուրբն եպիփան ի հաւատոց գիրն, եթէ որպէս հոգին միայն դատի ըստ բանի հերձուածողացն զի կարէ՛ ասել *մարմնոյն* եղեալ զյանցանքն: - 691. Նոյնպէս և հոգին պատճառէ՛ *զմարմինն*՝ թէ յորմէ հետէ բաժանեցայ ի նմանէ՝ ո՛չ մեղանչեցի: - 691. Վասն այսորիկ արդար դատաւորն զհոգի և *զմարմին* ի միասին յարուցանէ և դատէ՛. եթէ վասն մեղաց ի տանջանս և եթէ վասն արդարութեան յարքայութիւնն երկնից: - 691. Հինգերորդ, ասէ աստուածաբանն գրիգոր՝ եթէ հաւանիմ իմաստնոյն բանի՝ թէ հոգի բարի և աստուածասէր յորժամ ի *մարմնոյն* արձակի, կայ և մնայ նմա բարին որ լինի: - 691. Եւ փոքր ինչ յետոյ *մարմնովն* զոր զգեցցի ժառանգեսցէ զփառսն զայն...: - 691. Այսինքն մի՛ առաջինքն առանց մեր վերջնոցս, և մի՛ հոգիքն առանց *մարմնոյս* պսակեսցին: - 692. Այրն ի տարաշխարհ գնաց քրիստոսէ. որ *մարմնով* համբարձաւ յերկինս. զի յատուկ տեղի *մարմնոյ* երկիրս է. վասն որոյ ի տարաշխարհ գնալ ասէ յերկինս: - 692-693. ...իսկ հոգին բաժանեալ ի *մարմնոյն* տակաւին ո՛չ է կատարեալ իւր յատուկ կատարելութեամբն: - 694. Քանն**է**, ամենայն ներգործութիւնք կամ ենթակայից են, և կամ անձանց. իսկ հոգին բաժանեալ ի *մարմնոյն*՝ ո՛չ է անձն և ո՛չ ենթակայ: - 694. Ապա հոգին առանց *մարմնոյ* ո՛չ ունի ներգործութեամբ ինչ վարձ կամ պսակ: - 694. Այլ յորժամ հոգին միաւորեսցի ընդ *մարմնի* և յերկուցն լինիցի անձն, յայնժամ կարէ՛ ունել ներգործութեամբ զփառս կամ զտանջանս: - 694. Քանն**գ**, ո՛չ է արդարութիւն աստուծոյ թէ այժմ հատուցանի. զի *մարմին* և հոգին ի միասին գործեցին զչար և զբարի: - 694. Եւ թէ մասն մարդոյն որ է հոգին՝ տանջի այժմ վասն մեղաց և *մարմինն* հանգչի, այս ո՛չ է ուղիղ, նոյնպէս և զփառսն: - 694. Այլ որպէս ի միասին վարեցին զայս կեանս հոգին և *մարմինն*, նոյնպէս և զայն կեանս ընդունիցին: - 694. Նմանապէս հետևի զի *մարմինն* ո՛չ կրեսցէ տանջանս. զի ո՛չ յառնէ ըստ նոցա կարծեացն: - 694. Ասեմք, շինուած տաճար և բնակութիւն երկնից զերանելի *մարմինն* ասէ: - 695. Զի ո՛չ կարեմք հոգւով երանի լինիլ եթէ ոչ *մարմնով* երանելի լիցուք: - 695. Ասեմք առ այս, եթէ ո՛չ է պահել որպէս այժմ ի *մարմնի*. և ո՛չ առնուն որպէս ի կատարածի. - 695. ...այլ զգործելն ի միասին գործեն հոգին և *մարմինն:* - 696. Այսպէս հոգին նախ տեսութեամբն ուրախանայ և փառաւորի, և ապա՛ *մարմնովն* կատարեալ պսակի: - 696. Այլ արկանելիք սպիտակ՝ զծաղկեալ նոցա առաքինութեանն երևեցուցանէ զպայծառութիւն յետ ի թանձրութենէ *մարմնոյս* փոխելոյն. զոր զգեցեալ են նախ քան զխոստացեալ զփառսն...: - 696. Իսկ կոչելն զյառնելն ի մեռելոց ցուցանէ. հոգւոյն և *մարմնոյն* միաւորեալ: - 696. Հինգերորդ, հոգի և *մարմին* ի միասին գործեն զմեղս որպէս ասացաւ ի վերոյ...: - 699. Եւ այն զի պատճառ մեղաց առաւել *մարմինն*՝ քան թէ հոգին լինի: - 699. Եւ ո՛չ է ի դէպ թէ հոգին ըստ ինքեան վճարէ զպարտս *մարմնոյն*. ապա ո՛չ է անդ քաւարան: - 699. Նոյնպէս և հոգին յետ բաժանման *մարմնոյն* ո՛չ կարէ քաւել: - 699. Այլ հոգի դատարկ ի քաւարանին աչս ո՛չ ունի զի լացցէ որով յարատ հայեցաւ. և ո՛չ *մարմին* զի պահեսցէ և աղօթեսցէ. այլ և ո՛չ զղջումն. զի հոգին ինքն ըստ ինքեան ո՛չ կարէ զղջալ: - 699. Ա՛րդ՝ եթէ *մարմինն* ևս գործեաց զմեղս, պա՛րտ է և նմա կրել պատիժ...: - 699. ...և յա՛յտ է զի մեռելութիւնն բնութեանս է պատիժ և ո՛չ *մարմնոյն*: - 699. Իսկ արդ ի յարութեանն հա՛րկ է զի միանգամ տանջեալ հոգին՝ միւս ևս ընդ *մարմնոյն* տանջեսցի որ է՛ անհնար...: - 699. ...կամ ո՛չ է արժան միաւորիլ ընդ *մարմնոյն*...: - 699. ...զի նա քաւեալ է և սա ոչ. մինչև *մարմինն* ևս տանջեսցի և քաւեսցի. որ է՛ անպատշաճ երկոքինն: - 699. Նոյնպէս և այժմ որ քան ի *մարմնի* եմք՝ գոյ հնար քաւութեան. - 700. ...զի այժմ մասին քննութիւն է հոգւոյ և յայնժամ մասին *մարմնոյ*: - 700. Այլ թէ ոչ գոյ դատաստան, նաև ոչ յարութիւն *մարմնոյ*. և ոչ հատուցումն գործոյ. ապա և ո՛չ գալուստն քրիստոսի որպէս ասէ սուրբն կիւրեղ: - 700. Իսկ թէ այժմ հոգւոյն եղեալ է դատաստան, և հատուցումն ըստ գործոց, և արդարոցն փառք և մեղաւորացն տանջանք. և յայնժամ *մարմնոյն* որպէս ասեն նոքա. - 700. ...ապա ի յարութեանն ո՛չ է բոլոր մարդոյն հատուցումն. այլ *մարմնոյն* միայն որպէս ցուցաւ: - 700. Ասեմք նախ՝ եթէ երկինք և երկիր *մարմին* գոլով նորոգին մարմնական հրով. իսկ հոգին զի է՛ անմարմին ՝ նորոգի շնորհօքն քրիստոսի և հոգւովն սրբով: - 701. Ակն պատուական՝ գործք *մարմնոյն*. պահք, աղօթք, ողորմութիւն, և այլն: - 702. ...որով դրոշմեալքն յետ արտաքս ելանելոյ ի

*մարմնոյս,* թռչին յանապատն ի մեղաց յերկինս կերակրիլ անդ յուսով մինչև լնու թիւ կատարման աշխարհի: - 703. Զի ո՛չ ասէ թէ ի գալ հոգւոյս, այլ՝ ի գալս իմում. որ է հոգի և *մարմին*: - 703. Դարձեալ՝ թէպէտ վասն հոգւոյն ասեմք որպէս այս, և տեսիլ անտօնին, և այլոց, այն ո՛չ է բերքաթուր. այլ պատերազմ դիւաց. որպէս աստ *մարմնով*, նոյնպէս և յետ մահու առ հոգիսն...: - 703. ...այլ ասէ՝ «սաստեսցէ՛ ի ձեզ տէր». որպէս միքայէլ վասն մովսիսեան *մարմնոյն*. - 703-704. Ճանապարհ կեանս այս. և ոտոխ *մարմինն*. և դատաւոր միտքն. դահիճ խիղճ մտացն որ չարչարէ՛ զհոգին և ոչ ազատէ մինչև զամենայն պարտսն վճարեսցէ ապաշխարութեամբ: - 704. Երկրորդ, որպէս *մարմինն* ոչ փոխի ի բարւոյ ի չար, կամ ի հակառակն. նոյնպէս և ո՛չ հոգին...: - 704. Իսկ տէրն մեր անմեղ *մարմնովն* դատապարտեաց զնա իբր զպատճառ մեղաց...: - 705. Եւ այսպէս ասէ առաքեալն եթէ՝ մերկութեամբ *մարմնոյն* մերկեաց զիշխանս և զպետս խայտառակեաց: - 705. ...և սուրբքն ելեալք ի *մարմնոյ* և յաղթեալք թշնամոյն՝ թագաւորեն ընդ քրիստոսի որպէս ցուցանի յառաջիկայդ: - 706. Որ և յետ այնորիկ սպանցին ի նեռնէն յէմ. և անկեալ լիցին *մարմինք* նոցա ի հրապարակս զերիս տիւս և զերիս գիշերս: - 709. Եթէ ինքեամբ՝ եթէ ի ձեռն միքայէլի. ի մէջ վրանի և յաթոռն իւր սատակեսցի. և գլորեսցի *մարմինն* ակներև ժողովրդեան իւրոյ. - 709. եթէ սուրբք որ աստ չարչարեցան, յառնեն յառաջագոյն և փափկանան *մարմնով* ռ ամ. և ապա հասարակ յարութիւնն ամենայն մարդկան: - 710. Եւ ընդ դէմ սմա կրկին է անկումն որ է՛ մահ. վասն զի կրկին է մարդն. այսինքն հոգի և *մարմին*: - 710. Եւ դարձեալ յարութիւն է հոգւոյ ելեալ և ազատեալ ի *մարմնոյ* և մտեալ առ աստուած, որ է յոգիս արդարոց կատարելոց: - 710. ...յորժամ հոգին միաւորի ընդ *մարմնոյն* և *մարմնովն* ժառանգէ զփառս և զկեանսն յաւիտենից: - 710. Երկրորդ՝ բաժանիլ հոգւոյ ի *մարմնոյ*. և սոքա կոչին առաջին մահ: - 710. Ցուցանեն այսոքիկ զկատարեալ և զառաւել հանգիստ սրբոցն այժմ յուսով և յետ մահու հոգւով թագաւորեալ ընդ քրիստոսի. և ապա յետ յարութեանն հոգւով և *մարմնով* ո՛չ ռ ամօք. այլ անվախճան կենօք...: - 710. Երկրորդ՝ *մարմնովն* տիրեաց ցանկութեանցն երկրաւոր՝ և իշխանացն դիւաց...: - 711. Եւ ունի բեհեզն վեց յատկութիւնս որ նշանակէ զվայելչութիւն հոգւոց սրբոցն ելեալք ի *մարմնոյ*: - 712. Նա՛խ՝ զի բեհեզն է՛ անօսր. ցուցանէ զանօսր էութիւն և զմտածութիւն սրբոցն առանց թանձրութեան *մարմնոյ*: - 712. Զյաղթութիւն նոցա ցուցանէ. որք յաղթեցին ցանկութեանց *մարմնոյ* աշխարհի և սատանայի: - 712. Հինգերորդ՝ զմեռելութիւն *մարմնոյ* և զկրթութիւն չարչարանաց նոցա ցուցանէ: - 713. Միջնովն ժողովեալ կուտին *մարմինքն*: - 713. Վերջնովն յարիցեն հոգւով և *մարմնով*: - 713. Նախ կոչելով զերկինս ի վերուստ որ են հոգիքն. և զերկիր որ են *մարմինք*: - 713. Նա՛խ՝ զի կոչեսցէ յերկնէ զհոգիս սրբոց և յերկրէ *զմարմինս*. - 714. Եւ որպէս *զմարմինս* մեր ընդունին յաւանդ, նոյնպէս և զգործս մեր խնդրէ ի սոցանէ և յառաջ բերեն: - 714. Զջերմ սէրն հուրն ցուցանէ. թէ առ աստուած և թէ ի *մարմինն*: - 714. Եւ զգործս բոլոր *մարմնոյ* յերկրի հաստատեցաք. թէ երկնաւոր թէ երկրաւոր: - 714. Եւ դարձեալ՝ հոգին և *մարմինն* ի միասին գործեցին զբարի կամ զչար...: - 715. ...այլ արդ եթէ հոգին առանց *մարմնոյ* պսակի կամ պատժի՝ ո՛չ է արդար դատաստան...: - 715. ...այլ պա՛րտ է զի յարիցէ և *մարմինն* և ի միասին առցեն զհատուցումն բարեաց կամ չարեաց: - 715. Այլ արդ՝ յանմահութենէ հոգւոյն պա՛րտ է զի լինիցի և *մարմինն* անմահապէս շարժեալ ի նմանէ...: - 715. ...և այս ո՛չ լինի եթէ ոչ է յարութիւն *մարմնոյ*: - 715. ...զի կամ իմանալիք են որպէս հրեշտակք. կամ զգալիք որպէս տարրեղէնք. և կամ յերկուց գոյացեալ որպէս մարդ. այսինքն ի հոգւոյ և *մարմնոյ*...: - 715. Այս զյարութիւնն ասէ ի ձեռաց գազանաց խնդրելն. զի յառնեն *մարմինք* որ մեռեալ են ի ձեռն գազանաց: - 715. Եւ աստուած ո՛չ է մեռելոց այլ կենդանեաց. որոց հոգիքն ի ձեռս նորա կենդանի են. և *մարմինքն* ի ձեռս նորա կենդանի լինելո՛ց են: - 715. ...այս *զմարմնոյն* ասէ որ ի հող դարձաւ: - 715. Եւ զորպիսութիւն յարութեան մեր ի յաստուածացեալ *մարմինն* իւր երևեցոյց...: - 716. ...ըստ որում երեքօրեայ յարեաւ ի գերեզմանէն անապական *մարմնով*. և զբազումս յարոյց ընդ իւր և մտին ի քաղաքն սուրբ...: - 716. Ուստի և փրկչին ակնունիմք նորոգել *զմարմին* խոնարհութեան մերոյ ըստ *մարմնոյ* փառաց իւրոց: - 716. Եւ ոմանք ասեն՝ հոգոյ և *մարմնոյ* վերստին նորոգիլ: - 716. Այլ արդ՝ *մարմնով* աճումն է ըստ բնութեան. և բնութիւնն ըստ ժամանակի փոփոխման կատարի: - 716. Երկրորդ, մարդս մա՛սն է աշխարհի. զի *մարմինն* է ի չորից տարերց...: - 717. ...այլ յորժամ բոլոր արարածք ազատեսցին յապականութենէ ծառայութեան որպէս գրէ հռօմ յայնժամ և *մարմինք* մարդկան յանապականութիւն վերափոխեսցին: - 717. Չորրորդ, զի ամենայն *մարմինք* մարդկան միանգամայն ստեղծան ի կողմանէ առաջին նիւթոյն...: - 717. Պարտ է ապա զի ամենայն *մարմինք* մարդկան համանգամայն յարիցեն ի յաւուրն վերջին: - 717. ...այլ ի նոյն կէտն է յարութիւն և միաւորութիւն հոգւոյ և նորոգումն *մարմնոյ*: - 717. ...այլ մեռանին և իսկոյն լինի յարութիւն նոցա. յորում ո՛չ *մարմինքն* ի յերկիր անկանին և ո՛չ լուծանին: - 717. Ո՞րպէս ի հող լուծեալ և յա՛յլ տարեր,

և ի գազանաց կերեալ, ժողովի *մարմինն* մեր: - 718. Ասեմք առ այս, եթէ *մարմին* մարդոյ բաժանեալ ի հոգւոյ, և հոգին գնացեալ ի կայանս հոգւոց առ աստուած որ ետ զնա՛. և *մարմինն* ի հող լուծեալ կամ յայլ տարերս...: - 718. ...ռաւել աստուծոյ է կարելի զհոգիս յերկնից և *զմարմինս* ի տարերաց ի մի վայր ժողովել և յարուցանել: - 718. Ապա թէ կերակուրքս այսոքիկ յառնեն ի մարդն, լինի մարդոյ *մարմինն* կարի անհեթեթ: - 718. Եւ դարձեալ` ո՛չ միայն մարդոյս *մարմինն*, այլ և անշնչից և շնչաւորաց զոր ինչ ուտեմք յառնէ՛ ասեն որ է՛ անպատշաճ: - 718. ...և նիւթ կերակրոյն` այն մասն որ փոխեցաւ ի գոյացութիւն մեր` յառնէ՛. զի *մարմին* եղև մարդոյն այլ աւելորդքն ո՛չ յառնեն: - 718. Զի թէ սկզբնական նիւթն միայն յառնէ, *մարմին* մարդոյ ամենևին փոքրիկ և անկատար լինի: - 718. Եւ տէրն վասն կերակրոյն ո՛չ ասաց թէ ի *մարմին* մարդոյն ո՛չ հաւասարի. այլ զայն թէ` դառնութիւն և ծանրութիւնն արտաքս ելանէ ...: - 718. ...և քաղցրութիւն և թեթևութիւնն ի *մարմինն* փոխի: - 718. Ապա ուրեմն կենդանեաց *մարմինն* ոչ յառնէ ի մեզ ըստ բոլոր նիւթոյն, այլ ըստ չափոյ զօրութեանն որ փոխեցաւ ի մեզ և եղև *մարմին* մարդոյ, ա՛յն *մարմինն* յառնէ: - 718. Թէ զձուկն զայն որ եկեր *զմարմին* մարդոյ` ուտէ մարդ, և յայնմ սերմանէ ծնանի զա՛յլ մարդ. ի յորո՞յ *մարմին* յարիցէ: - 718. *Մարմին* մարդոյն զոր եկեր ձուկն` ո՛չ յառնէ ի ծնեալ մարդն այլ ի կերեալն: - 718. Այսպէս և թէ ոք զմարդոյ *մարմին* ուտէ և ծնանի ա՛յլ մարդ, *մարմին* մարդոյն ո՛չ յառնէ ի ծնեալ մարդն և ո՛չ ի ծնօղն որ եկեր, այլ ի կերեա՛լն մարդ: - 718-719. Որոյ պատճառ է, զի *մարմին* կերեալ մարդոյն է իւրն նիւթ գոյացական և սոցա եղև նիւթ պատահական: - 719. Նոյնպէս և նիւթն սկզբնական ո՛չ յառնէ ի ծնօղս որ աւելորդ արտահոսումն է նոցա. այլ յառնէ ի ծնեալ *մարմինն* որոյ հիմն է շինուածոյն: - 719. Ո՞րպէս անսխալ ճանաչէ հոգին *զմարմինն*: - 719. Եւ նշանս այս անքակտելի՛ է ի հոգւոյն և ի *մարմնոյն* խառնեալ. և յորժամ բաժանի հոգին` սա ո՛չ բաժանի ի հոգւոյն և ո՛չ լուծանի ընդ *մարմնոյն*: - 719. Եւ թէպէտ *մարմինն* փոփոխի հասակաւ կամ հիւանդութեամբ, կամ մեղօք հոգին հիւանդանայ. դիմաւոր նշանս այս անփոփոխ մնայ: - 719. Որով անսխալ ճանաչէ իւրաքանչիւր հոգի զիւր *մարմինն* և միաւորի: - 719. Նոյնպէս հոգին բաժանեալ և *մարմին* լուծեալ ի հասարակ տարրն, այսու խառնեալ դրոշմիւս ճանաչեն զմիմեանս անսխալապէս: - 719. Ո՞րպէս ի հասարակ տարրէ՛ *մարմին* մարդոյ անխառնապէս ժողովի: - 719. Այսպէս և ի *մարմին* մարդոյ ոչինչ խառնի ի հասարակ տարերաց ի յորս լուծաւ. այլ ինքն միայն գոյացութիւն *մարմնոյն* խառնեսցի ընդ հոգւոյն: - 719. Նմանապէս և *մարմին* մարդոյ առ հասարակ մեռանին և ի հող լուծանին և յայլ տարերս. և յորժամ յառնեն` ո՛չ ունին ի հասարակ տարրէ ընդ ինքեանս. և այս *մարմին* ի յայն *մարմնոյ* ոչ ինչ ունի խառնումն: - 719-720. Ո՞րպիսի *մարմնով* յառնեն մեռեալք: - 720. Գիտելի՛ է, զի ոմանք հերձուածօղք մոլորեցան վասն յարութեան մեռելոց և ասացին թէ *մարմինն* ո՛չ բաղկանայ ի չորից տարերց. այլ լինի պարզ: - 720. Ոմանք ասացին թէ ի յարութեանն *մարմինք* մարդկան ի հոգի փոխին: - 720. Այլ բանն պօղոսի ո՛չ է այսպէս թէ *մարմինն* էութեամբ հոգի լինի. այլ նման հոգւոյ. զի անմահ լինի որպէս հոգի և անկարօտ կերակրոյ: - 720. Եւ դարձեալ ոմանք ասացին թէ` ի յարութեանն *մարմինք* մարդկան օդային լինին կամ հողմային. զի երբեմն ի գրոց հողմ և օդ հոգի կոչի: - 720. Եւ այլք ոմանք ասացին թէ` *մարմինք* մարդկան ո՛չ լինին երկրային, այլ երկնային...: - 720. Եւ դարձեալ ոմանք հերձուածօղք ասացին թէ` այս *մարմինս* ո՛չ յառնէ և ո՛չ այս մարդ որ մեռանի. այլ փոխանակ նորա նոր մարդ յառնէ: - 720. ...նմանապէս և մերկ *մարմին* մեռելոյ ո՛չ յառնէ մերկ, այլ փառօք. որպէս ցուցանի յառաջիկայդ: - 720. ...և *մարմինն* մեռեալ առաւել նոյն ինքն յառնէ. այլ ո՛չ թէ նմանն մեզ ըստ ազգի մերում...: - 720. ...և *մարմինք* մեռեալք որ յադամայ հետէ` յանկարծակի յական թօթափել ի փող յետին յարիցեն ասէ առաքեալն: - 721. Վեցերորդ, ոմանք ատոքք և կէսք ազազունք և այլք անպտուղք. այսպէս և *մարմինք* ընտրելոցն և ոչ նոյնպիսեացն ըստ չափու զանազանին: - 721. ...նմանապէս և *մարմինք* մեռեալք յերկրի և հոգիք ի կայանս իւրեանց ի միասին կան առհասարակ արդարոց և մեղաւորաց մինչ դատաստանաւն բաժանեսցին օդիքն և այծիք: - 721. Նոյնպէս և *մարմինք* մարդկան մերկ թաղին` այլ մերկ ո՛չ յառնեն. բայց գեղեցիկ յոյժ և պատուական զգեստով զարդարեալ: - 721. Եւ զարդարեալ լինի **է** զարդուք. այսինքն **գ** հոգւոյն և **դ** *մարմնոյն* որպէս ասեն վարդապետք: - 721. Ի յայս միտս մարմնաւոր հարսն է զգեստուք զարդարի. **գ** զարդ գլխոյն և **դ** բոլոր *մարմնոյն*: - 721. Եւ բաւականութիւն է զարդուցն պատճառի յերից մասանց հոգւոյն և ի չորս տարերաց *մարմնոյն*: - 721-722. Վասն զի մարդն յայսմ աշխարհի եօթն պակասութիւն ունի. **գ** հոգւոյ և **դ** *մարմնոյ*...: - 722. Իսկ առաջին պակասութիւն է *մարմնոյն* աստ` զի է՛ մահկանացու` յապականացու` և չարչարելի. որպէս քաղցն` ծարաւն` հիւանդանալն և այլն...: - 722. ...իսկ այս ամենայն բառնի ի *մարմնոյն* և դնի անմահութիւն անապականութիւն և անչարչարութիւն. զի բնաւ ո՛չ չարչարի...: - 722. Երկրորդ պակասութիւն է *մարմնոյն* սևութիւն և աղտեղութիւն. և բաժանի այս ի *մարմնոյն* և զարդարի լուսով որպէս զարեգակն: - 722. Երրորդ

պակասութիւն է *մարմնոյն* զի ծա՛նր է և ծոյլ յամենայն գործս հոգևորս: - 722. Զի ուր կամք հոգւոյն խնդրէ՝ անդ ընթանայ և *մարմինն* անարգել ի յական թօթափելն...: - 722. Չորրորդ պակասութիւն է՝ զի այժմ է՛ *մարմին* մեր թանձր և կոպիտ. այլ յայնժամ բառնի այս ի *մարմնոյ* և լինի անօսր և թափանցիկ. զոր ոչ պարիսպ կամ բանտ ըմբռնել կարիցէ: - 722. Որպէս լոյս արեգակն անցանէ ընդ երկինս առանց ապականութեան. և որպէս քրիստոս յարեաւ *մարմնով* ի գերեզմանէն վիմովն կնքելով. և եմուտ առ աշակերտսն դրօքն փակելովք: - 722. Նոյնպէս *մարմին* սրբոցն ընդ ամենայն երկինս անցանէ զօրութեամբն աստուծոյ մինչև ի հրեղէն երկինս. - 722. Եւ այս գիտելի է, զի տէր մեր քրիստոս նախ քան զյարութիւնն զչորեսինս զայս եցոյց ի *մարմին* իւր: - 722. Զպայծառութիւնն՝ ի թաբօր լեառն. և Զանչարչարութիւնն ի յօրհնելն *զմարմինն* իւր և տալ աշակերտացն ի վերնատունն՝ անչարչարելի էր *մարմինն* քրիստոսի ներգործութեամբ և ո՛չ զօրութեամբ: - 723. Մեղաւորաց *մարմինքն* ո՞չ ունին զզարդս զայսոսիկ: - 723. Վասն այսորիկ ասեն վարդապետք թէ՝ սրբոցն և անսրբոց **բ** իրք հասարա՛կ է. այսինքն յարութիւնն զի առհասարակ յառնեն. և անմահութիւնն զի առհասարակ անմահ և անապական *մարմնով* յառնեն: - 723. Եւ *մարմինք* նոցա լինին առաւել թանձր և ծանր և գարշելիք որպէս աստ: - 723. Զի այժմ հոգիս փոփոխական է. որպէս խորհրդով կամօք և այլն. վասն որոյ զմիաւորութիւնն ընդ *մարմնոյ* փոփոխական ունի...: - 723. ...իսկ ի յարութեանն անփոփոխ սերտութեամբ հաստատի ասէ սուրբն դիոնէսիոս. վասն որոյ անփոփոխ և անմահ միաւորի ընդ *մարմնոյ*: - 723. Երկրորդ, այժմ *մարմինս* մեր յապականացու հողոյ է և տարերց. վասն որոյ և ապականի դարձեալ...: - 723. ...վասն որոյ յանապական տարերց կազմի անապական *մարմին*: - 723. Եւ որպէս այժմ հոգով և *մարմնով* զմահկանացու կեանս վայելեաց, նոյնպէս և յայնժամ հոգւով և *մարմնով* զանմահ կեանս ժառանգեսցէ. վասն այն յառնէ: - 724. Իններորդ, հոգին և *մարմինն* են մի անձն մարդոյ. վասն որոյ փոխակրեն ի միմեանց զբարիս և զչարիս: - 724. Եւ որպէս աստ հոգին ի *մարմնոյն* կրեաց. նոյնպէս և անդ *մարմինն* ի հոգւոյն կրեսցէ եթէ զբարիս և եթէ զչարիս: - 724. Տասներորդ, գործք մարդոյ անցաւոր է որպէս ինքն. իսկ հատուցմունքն աստուծոյ մշտնջենաւոր որպէս նոյն ինքն. վասն որոյ յարուցանէ անմահ, զի հատուսցէ ոմանց զփառս և ոմանց զտանջանս անմահ *մարմնով*: - 724. Ո՛չ յարիցեն ամբարիշտք ի յարութիւնս հոգևորս. այսինքն ի մեղաց ի շնորհքն. այլ յառնեն *մարմնով*: - 724. Որոյ պատճառ է, զի մարդն հոգւով և *մարմնո՛վ* է կատարեալ: - 725. Եւ որպէս հոգին ունի զզօրութիւն իւր անպակաս. նոյնպէս և անդամք *մարմնոյն* պարտ է լինիլ անպակաս զի իցէ կատարեալ մարդ: - 725. Զի եթէ մազն որ է գեղեցկութիւն *մարմնոյն* յառնէ ըստ նորին տեառն թէ «ի գլխոյ ձերմէ մազ մի ո՛չ կորիցէ» քանի՞ առաւել ևս անդամք որ յէութենէ *մարմնոյն* են յարիցեն: - 725. ...զի լցցին նոքա ի բոլոր *մարմնոյն* որպէս գարեղէն նկանակ հացիցն: - 725. Գոլն է որպէս մարդն հոգի և *մարմին*: - 725. Յանմարմնոցն հրեշտակք և դևք. և հոգիք մարդկան. իսկ ի *մարմնոց* երկնային *մարմինք* և **դ** տարերք և *մարմինք* մարդկան. և այլք ամենայնքն ապականին և յիւրաքանչիւր տարերս ժողովին: - 727. Զի՞նչ է պատճառն որ **գ** *մարմինք* միայն մնան ի կատարածի: - 727. Զի վերին *մարմինք* երկինք և լուսաւորք ամենևին անապակա՛ն են. իսկ **դ** տարերք թէպէտ ըստ մասին ապականին, այլ ըստ բոլորին ո՛չ...: - 727. Իսկ *մարմին* մարդոյս թէպէտ ապականացո՛ւ է, այլ ի կողմանէ հոգւոյն անապակա՛ն է. վասն որոյ անապական մնան: - 727. Իսկ այլ ամենայն *մարմինք* շնչաւոր և անշունչ, տունկք և կենդանիք ամենայն ապականին վասն **գ** պատճառի: - 727. Երրորդ պատճառ, ասեն իմաստունքն թէ ծնունդք կենդանեաց և բուսոց լինին ի շարժմանէ երկնային *մարմնոց*. իսկ ի կատարածի խափանի շարժումն նոցա. վասն այն անբան կենդանիք և տունկք խափանին: - 727. Եւ են ինչ որ պատահմամբ անցանեն և էութեամբ մնան. որպէս երկնային *մարմինք* և **դ** տարերքս և մարդոյս *մարմին*. սոքա պատահմամբ անցանեն և գոյացութեամբ մնան: - 727. Երրորդ զի պարզի հալեալ մոմ. այսպէս սևութիւն և թանձրութիւն երկրի ի դժոխս ժողովին և *մարմինք* մարդկան յերեսս երկրի: - 728. ...այլ ա՛յս է՝ զի իւրաքանչիւր *մարմինք* սրբոց պայծառասցին էպատիկ քան զարեգակն. որպէս տն մերոյ ի թաբօր լերինն. և **թ** դասուց հրեշտակաց լոյսն յերկիր ծաւալին. զի զօրութիւնք երկնից շարժեսցին: - 728. Հինգերորդ՝ հոգիք մարդկան ի յերկնից խոնարհին և միաւորին ի *մարմինս* իւրեանց: - 729. Եւ ո՛չ միայն խաչն, այլ և ամենայն գործիք չարչարանացն. այսինքն բևեռքն գեղարդն և այլք. որք բերին առաջի դատաւորին. և ի *մարմին* նորա երևին սպիք խոցուածոց...: - 732. Երկրորդ՝ զի թէ մարդոյ *մարմին* որ է՛ բանական և կենդանի՝ ապականի մահուամբ. ապա ուրեմն և խաչն ևս ապականի զի ո՛չ կենդանի է և ո՛չ բանական: - 732. Իսկ երկրորդին այսպէս պատասխանեսցուք ընդդիմայարակայութեամբ. զի մարդոյ *մարմին* ապականի. վասն զի քակտի ի նմանէ կենդանացուցիչ նորին հոգին. - 733. Ապա ուրեմն ևս առաւել խաչն մնայ անապական զի էութիւն աստուծոյ է ի նմա.

այսինքն բանն աստուած *մարմնովն* որ է՛ սեռեալ ի նմա: - 733. Ուստի յայտ է թէ՝ *զմարմին* բանին ապականացու խոստովանին նոքա՝ որ զխաչն ապականացու ասեն. և են նեստորականք: - 733. Իսկ որք զբանն *մարմնով* անապական խոստովանի, պա՛րտին և զխաչն աստուածընկալ անապական խոստովանիլ: - 733. ...ընդ որում անպատշա՛ճ էր լինիլ խօսակից և զուստն ո՛չ գիտել. այլ պատշա՛ճ էր որդւոյ վասն *մարմնով* երևելոյն: - 735. ...այսինքն բոլոր ամենայն անդամօք *մարմնոյն* յաստուածութիւնն հանգիցէ. զի դադարեսցի եկեղեցի յամենայն աշխատութեանց: - 736. Այլ ի գալուստն քրիստոսի Առաջին փառք է՝ զի փառաւոր երևեսցի սիրելեաց իւրոց, յայտնեալ զաստուածութեան փառս միաւորեալ ի *մարմնի*. որպէս երևեցաւ ի թաբօր: - 736. Արդ՝ ա՛յս գիր գործոց մերոց գրեալ ի հոգի և ի *մարմին* մեր որպէս ի մագաղաթի՝ դատաւորն ընթեռնու ի տես և ի լուր հրեշտակաց և սրբոց: - 741. Յոգի և *մարմինս* է որպէս մագաղաթ. կամք և իմացումն դպիր և գրօղ. հաւատքն գրիչ. արտասուքն մելան. և գիրն գործք բարի կամ բան աղօթից: - 741. Իսկ խոտելոցն գիր, դպիր է պիղծ հոգին դիւական. և չար կամքն իւրեանց և խորհուրդն և հեշտութիւն *մարմնոյն* մելան. և ըստ գործոց առաւել և նուազ գրեն ի գիրն դատապարտութեան: - 741. Նա՛խ՝ զի յերի՛ց է մարդն. հոգի *մարմին* և շունչ գոյացեալ. ի քակտումն սոցա գ վկա՛յ է պիտոյ: - 742. Կենդանի՝ հոգի և *մարմին* մեր. և սուրբք և հրեշտակք և հոգին սուրբ գրիչ: - 743. Նախ հոգին և *մարմինն*. զի ցանկան հակառակ միմեանց ըստ այրւոյ առակին առ անիրաւ դատաւորին: - 743. Երեքթելեան լարքն, հոգին եռամասնեայ և *մարմինն* ի չորս տարերաց: - 744-745. Իսկ երկոքին թաքք կշռոցն՝ հոգի և *մարմին*: - 745. Նախ հոգւոյ ընդ *մարմնոյ* բնական արդարութեամբ հաւասարիլ: - 745. Եւ պա՛րտ է գիտել զի ի միոյ սեռէ բարութեանցն աստուծոյ՝ յառաջե՛ն առ մեզ ողորմութիւն և արդարութիւն. կրկին տեսակ կամ գործք կամ զօրութիւն. որպէս ի մեզ երկոքին ձեռք *մարմնոյ*. և որպէս իմացումն և կամք հոգւոյ: - 745. Այլ որ ուղիղն է տեսութիւն, յետ յարութեան փոխի ժամանակն ի յաւիտեան. և այլ ո՛չ գտանի մասն և րոպէ և ժամ. զի երկնային *մարմինք* դադարին ի շարժմանէ ուստի ժամանակն գոյանայ: - 747. Նախ վասն մարդոյս. զի մին մեղացն կրկին հատուցանի աստ հոգւով և *մարմնով*. իսկ եօթնպատիկն է՛ ի հուրն յաւիտենից: - 750. Զի այնպէս ծանակեալ լիցի *մարմին* մեղաւորին, մինչ զի հոգին գարշեսցի առնուլ զնա. և որպէս ուրուկ և որդնալից այնպէս ո՛չ կամեսցի ունել զնա: - 751. Յերկրորդումն թանձրութեամբ *մարմնոյ* ծանրացեալք: - 755. Ուղղակի ուրեմն փայտս այս ասի գոլ տընկեալ մերձ յընթացս ջուրց. զի ի նմանութիւն *մարմնոյ* մեղաց երևեցաւ. և զամենայն նուաստութիւնս մեր յինքն ընկալաւ: - 755. Կամ փայտիս այսորիկ ոստք կարեն ասիլ միաւորեալ բնութիւնքն քրիստոսի. այսինքն աստուածութիւնն և հոգին և *մարմինն*: - 755. Իսկ Երկրորդն արքայութիւն, նշանակի յազատն սառա. որ ո՛չ ուժգնութեամբ *մարմնոյն*, այլ միայն շնորհօքն աստուծոյ ծնաւ: - 756. Որ է՛ պտուղ առաքինութեան ըստ *մարմնոյ* և հոգւոյ և մտաց մերոց: - 757. Ա՛րդ՝ նորոգեսցի երկիր որ ընկալաւ ի ծոց իւր զտէրունական *մարմինն*: - 759. Նոյնպէս և ջուրն որ հպեցաւ ի *մարմին* փրկչին, և ծնաւ զմարդիկ որդիս աստուծոյ, նորոգեսցի և պայծառասցի քան զամենայն տեսիլս գեղեցկագոյն ականց: - 759. Երրորդ վասն պայծառութեանն. զի *մարմինք* արդարոցն առաւել լուսաւոր են քան զարեգակն...: - 760. Դարձեալ որպէս ասեն վարդապետք, եօթն յատկապէս փառս ունին *մարմինք*, և եօթն հոգիք: - 761. Քանզի՝ ունիցի *մարմինն* Զգեղեցկութիւն. Զարագութիւն. Զուժգնութիւն. Զազատութիւն. Զկամաւորութիւն. Զառողջութիւն. և Զանմահութիւն: - 761. Յաճոյ լինէր քեզ թէ լինէիր գեղեցիկ որպէս զաբիսողոմ. որում ո՛չ գոյր արատ ի *մարմնի*: - 761. Չորրորդ ի *մարմնոյն* փառաւորութենէ: - 762. Երրորդ ուրախութիւնն եղիցի ի տեսութենէ միաւորութեան մարդկային բնութեանն առ աստուածայինն. քանզի սքանչելի ուրախութիւն լինիցի ընտրելոցն, յորժամ ճանաչիցեն թէ եղբայր նոցա ըստ *մարմնոյ*՝ ճշմարիտ աստուած է: - 763. Եւ ըստ իմաստասիրին, յառաջ քան *զմարմինն* յորում է զանազանութիւն լուսոյ՝ է՛ միւսն ի վերոյ յորում է միակերպութիւն լուսոյ: - 763. Զի անդ բոլոր *մարմինն* ընդ այն է՛ երկինն հրեղէն յորում է լոյս յաւէտ: - 763. Չորրորդ վասն *մարմնոյ* փառաւորութեան քառակի լիցի ուրախութիւնն: - 764. Նա՛խ վասն *մարմնոյն* գեղեցկութեան: - 764. Նախ եղիցի ուրախութիւն ի *մարմնի*, բաղդատելով առ այն որ եղիցի մերձ ինքեան. այսինքն զի ա՛յլ *մարմինք* փառաւորեալ առաջի նորա հրճուին: - 764. Երկրորդ բաղդատութեամբ այնորիկ՝ որ եղիցի ի ներքոյ ինքեան. այսինքն զի ներքին *մարմինք մարմնոյ* փառաւորելոյ տեղի՛ տան: - 764. Այս վասն փառաց *մարմնոյն*: - 764. Չորրորդն է ազատութիւնն. առ որ առնեն *մարմնոյ* թեթևութիւնն և նրբութիւնն: - 766. Քանզի *մարմինս* ո՛չ ըմբռնեսցի կամ իւրն ծանրութեամբ կամ այլ *մարմնոյ* ընդդիմահարութեամբ: - 766. Զի ուր կամեսցի հոգին՝ անդ եղիցի առ ժամայն և *մարմինն*: - 766. Եւ գեղեցկութիւն *մարմնոյն* բաղկանայ յերից. այսինքն ի մաքրութիւնն, ի չափաւորութիւնն, ի ձև անդամոցն: - 766. Դարձեալ, ծառ կենաց և անմահական պտուղ՝ *մարմին* և արիւնն սուրբ. յորմէ ճաշակեալ

հանապազ՝ անմահ կենացն վիճակէ զմեզ…: - 768. Որպէս միտք հոգւոյ, և բան մտաց, և ակն *մարմնոյ*, և լոյսական: - 769. Ո՛չ շփոթեալ բանն և ո՛չ ծախեալ *մարմինն*: - 770. Ո՛չ բանն որպէս հալածու կաղապարեալ. և կամ *մարմինն* որպէս բոց ի հրոյ և ծուխ անօսր լուծեալ յօդդ: - 770. Նոյն և կամք և կիրք և ներգործութիւն մարդկային ընդ աստուածայինն միաւորեալ. միջնորդելով հոգւոյ բանականի՝ աստուածութեանն՝ և *մարմնոյն*. որ է՛ ներգործութեամբ միշտ աստուած և փրկիչ բնութեամբ. քրիստոս. նոր ադամ. էմմանուէլ ճշմարտութեամբ: - 770. Որ եսդ տէր տէր հաւատարիմ յիսուս, անբաժանելի լեր ի զգայութեանցս. և յամենայն գոյացութեանց աստի իմոցս. ներկեալ խոստովանութեամբ և շնորհօք հոգի *մարմին* նիարդք իմ և աճառք: - 771. …*մարմնով* մեռելոցն անթիւ օճիրս ստախօսութեան գործէր…: - 775. Իսկ եթէ բաղդատելով ոք ասիցէ, թէ ի *մարմնի* գոլով ապաշխարեալ սրբեցաւ նա ի ներգործականէն իւրմէ մեղաց…: - 775-776. Ուստի ասացաւ թէ մահու մեռցիս. ոչ սոսկ. այլ զկրկնակի նշանակելով մահ. այսինքն զմեռանիլն *մարմնով* և զպատժիլն հոգւով: - 776. Եւ այսպէս քարշեալ եղև ի մեզ սկզբնականն մեղք՝ յանհնազանդութենէ հոգոյն և ի ցանկութենէ *մարմնոյն*. անցեալ ի ծնունդս նորա նիւթապէս ի *մարմինս*, և տեսակաբար ի հոգիս: - 776. Զի անապական *մարմնով* եղաւ ի գերեզմանի. բառնալով զապականութիւն նախնւոյն. և իջանելով ի դժոխս՝ եբարձ զպատիժ նորին: - 776. Մեղքն ադամայ է՛ ներգործական ինքեան. այլ ապաշխարեաց ի *մարմնի* գոլով: - 778. Եւ ո՛չ է տարադէպ ցոյցք ականն արփիաւորի, զի ի միջօրեայ ժամու փոփոխումն *մարմնոյ* և ական արծակէ՛ ստուեր կամ լոյս…: - 779. Այլ ո՛չ զամենայն պակասականքն կրեաց քրիստոս. որ է՛ հիւանդութիւն *մարմնոյ* և ապականութիւն. կամ մեղք հոգւոյ և տգիտութիւն: - 781. Դարձեալ՝ *մարմին* քրիստոսի խորհրդապէս է՛ եկեղեցի. և պա՛րտին չարչարակցիլ նորին՝ հետևելով նմին: - 781. Եւ այլևս յարմար տեղւոյս այսպէս իմանի. զի սուրբ հարքն առաջինք պակաս ունէին զչարչարանս. վասն որոյ ո՛չ կարէին փրկիլ. իսկ քրիստոս եղեալ ըստ *մարմնոյ* որդի նոցա, զպակասութիւն հարցն չարչարանաց յիւրումն *մարմնի* էլից: - 781. Իսկ մեծն ներսէս ասէ, պակասութիւնն այն է, որ կիրք չարչարանացն քրիստոսի թուով և տեսակաւ պակա՛ս էր յառաքեալն պօղոս. այսինքն խաչն, բևեռքն, և այլն. և զայն էլից քարոզութեամբն իւր ի *մարմինս* եկեղեցւոյ: - 781. Իսկ ի ներքուստ, ի լինիլ տրտմութեանց՝ խունճապեալ *մարմնոյն* հոսի մաղձ դառն ի ստամոքս որովայնի. և վերացեալ գոլորշեաց նորա զօրէն շոգլեաց պուտկի առ խելապատակս գլխոյ. և ծանրացեալ անտի թորի՛ առ բիբն ասացեալ ական. չոր գոլով և աղէգոյն ի սևատեսա՛կն մաղձոյ: - 787. Զի առաջնոյն ասէ՝ *մարմին* բարձր լուսաւորեալ ներգործութեամբ որ է՛ հրեղէն. այսինքն լուսաւորն երկին: - 787. Զի որպէս սիւն տան, և ոսկերք *մարմնոյ*, և բրգունք աշտարակի: - 788

**ՄԱՐՄՆԱԶԳԵԱՑ +** Ասի դարձեալ՝ աստուած *մարմնազգեաց*. այլ ո՛չ ասի աստուած մարդազգեաց. կամ մարդ աստուածազգեաց. զի այս որոշմա՛ն է: - 79

**ՄԱՐՄՆԱԿԱՆ +** Երրորդ՝ զի է՛ հնար առնուլ ի վերայ *մարմնական* իմաստութեանց՝ և արհեստից հանճարաց՝ և բնականին ներգործութեանց ի բնութիւն իրին յառաջ ածելով զէութիւնն…: - 40. Ասեմք մարմնասիրեացն եթէ՝ *մարմնակա՛ն* կարծէք զծնունդն ըստ մեզ ո՛վ ծիծաղելիք: - 52. Ապա թէ ո՛չ՝ ընդէ՞ր զանմարմինն ընդ *մարմնականացս* իմանաս, և ընդ մեռեալս զկենդանին խնդրես ըստ եսայեայ: - 53. Ոմանք ասացին զսկզբնապետագոյն տարերքն. ուստի եղեն ամենայն *մարմնական* էութիւնք: - 112. Եւ է սա՛ երրորդ ըստ կարգի. զի յերևելեաց և ի *մարմնականաց* աստուածաբանութիւնս այս յառաջագայի: - 122. Երբեմն *զմարմնական* տուրս շնորհք կոչէ …: - 139. Նմանապէս և *մարմնականն* շարժի եռակաբար: - 142. Եւ եթէ զգայութեամբ սիրեսցես *զմարմնականս*՝ լինի անկատար սէր: - 143. Նոյնպէս և խօսի հոգին ընդ հրեշտակն *մարմնական* կերպիւ զոր իմանայ հրեշտակն որպէս զայլ զգալիս որքան է ի մարմնի: - 145. Յնգետասաներորդ՝ ասէ սուրբն դիոնէսիոս՝ թէ վասն այն տայ աստուած սրբոցն նեղութիւնս և փորձութիւնս, զի նեղութիւնն սիրելի և փափագելի՛ է նոցա. և յայնժամ ուրախանան սուրբքն, յորժամ ի *մարմնական* հեշտութեանց հեռանան. և արիանան ի փորձութիւնս. և սակաւ նեղութեամբ ժամանեն ի մեծ հանգիստն: - 159-160. Նախ է տեղի *մարմնական*. որ ըստ իւրաքանչիւր մասնկանց մարմնոյն պատահի: - 172. Իսկ անմարմնոյն ո՛չ է տեղի *մարմնական*. որպէս աստուծոյ կամ հրեշտակաց. կամ հոգւոց. զի անպարագրելի են: - 174. Այլ և ո՛չ տեղի պատահական. թէպէտ ի նշան պատւոյ ասին յերկինս. այլ ոչ իբր ի *մարմնական* տեղւոջ: - 174. Այլ թէպէտ աննիւթ է աստուած՝ ո՛չ է անկարգ զնիւթականքս յառաջ ածել ըստ այսմ օրինակի. զի նիւթն որ է՛ գոյացութիւն *մարմնական* ունի որակութիւնս իմն մարմնական. որպէս քանակ. որակ. և այլքն: - 175. Այլ թէպէտ աննիւթ է աստուած՝ ո՛չ է անկարգ զնիւթականքս յառաջ ածել ըստ այսմ օրինակի. զի նիւթն որ է՛ գոյացութիւն մարմնական՝ ունի որակութիւնս իմն *մարմնական*. որպէս քանակ. որակ. և այլքն: - 175. Զի աննիւթ և պա՛րզ էութիւն է աստուած. և յառաջ էած յոչընչէ զաննիւթ էութիւնքս. այսինքն

զգոյացութիւն, զքանակ, զորակ, և զայլսն. և իւրով զօրութեամբն ի միասին ժողովեալ կազմեաց *մարմնական* նիւթ: - 175. Երկրորդ՝ զի իր *մարմնական* են և ի մարմնի էանան սոքա՝ և ո՛չ են մարմին. այլ անմարմին էութիւն որպէս ասացաք: - 175. Երրորդ՝ ի ժողովիլն սոցա լինի *մարմնական* էութիւն. և յորոշելն կորնչի մարմինն: - 175. Մին *մարմնական*. որ ի մէնջ տեսանի: - 180. Այլ և ո՛չ ունի տեղի *մարմնական*. և ոչ ի ժամանակի երեքմասնեան. այսինքն յանցեալն՝ ի ներկայս՝ կամ յապառնին: - 180. Եօթներորդ՝ ցուցանէ թէ՝ որպէս *մարմնական* բնութիւնք նախ էին անկատար և անտեսակ՝ և յետոյ կատարեցան յաստուծոյ: - 192. Դարձեալ ասեն վարդապետք թէ՝ ժամանակն է չափումն իրաց *մարմնականաց*: - 198. Յերկրորդումն *մարմնականք*: - 210. Ասեմք թէ՝ ամենայն *մարմնական* կենդանիք ի չորից տարերաց են եղեալ. և յայտ է ի բազում պատճառաց: - 214. Եւ ծառ գիտութեանն զպատրւակեալ բարիս *մարմնական*: - 222. Ի դրախտին լինէ՞ր *մարմնական* ծնունդ որպէս այժմ ի յերկրի, թէ ոչ: - 225. Արդ եթէ ծորումն ոչ լինէր՝ և ո՛չ ապականութիւն *մարմնական*, և ո՛չ ծնունդ ախտական: - 225. Սննդեան. աճելոյ. խնամելոյ. և այլոցն. և այսոքիկ ո՛չ են ի դրախտին. և ոչ զգեստ *մարմնական*: - 225. Նա՛խ՝ զի աշխարհ է կամ իմանալի, որպէս հրեշտակք. կամ զգալի, որպէս *մարմնականք*: - 231. Այսպէս ի հասարակաց ի նուազունս գոլով ի *մարմնականն* տիպ. իսկ անդրադարձեալ: - 235. Եւ բնական, Նա՛խ այսպէս. զի ամենայն իր *մարմնական* ի նոյն տարերաց են բաղկացեալ. վասն որոյ ունին նմանութիւն առ միմեանս: - 236. Նա՛խ՝ ըստ առաջ եղելոյն. զի առաջ եղեալք սորա են աստուածայինքն և իմանալիք. իսկ նոցայն՝ *մարմնականք* և զգալիք: - 269. Դարձեալ՝ մա՛րդն է պատւական քան զամենայն *մարմնական* ստեղծւածս: - 275. Դարձեալ՝ իշխան և տէր է ամենայն *մարմնականաց* որպէս ասացաւ: - 275. Երրորդ՝ զմեռելութիւն ախտից. զի պարտիմք մեռուցանել ի մեզ *զմարմնական* ախտն: - 281. Եւ վասն է՞ր առաջին օրէնքն *մարմնական* էր: - 285. Նոյնպէս և որք հաղորդին մարմնոյն քրիստոսի, ո՛չ մերձենան ի զանազան ախտս *մարմնական* անքլփատութեան և զոհից դիւական: - 301. Երրորդ՝ զի մելքիսեդեկ քահանայ ո՛չ ըստ *մարմնական* ինչ օծմամբ իւղոյ որպէս այլոցն, այլ շնորհօք հոգւոյն անընդմիջաբար: - 301. Նա՛խ՝ *մարմնական*. որպէս յղացեալ մանուկն ծնանի ի մօրէ՛: - 308. Եօթներորդ՝ ըստ ուսման. որպէս աշակերտք ծնունդք կոչին վարժողաց. եթէ ի *մարմնականս*. և եթէ ի հոգեկանս...: - 308. Այլ գիտելի է, զի **դ** սեռիւք որոշի կապ բանականացս. այսինքն հոգեկան և *մարմնական* և միջակօրէն: - 317. Իսկ կապ *մարմնական* և նա՛ բաժանի ի **դ** տեսակս: - 317. Նոյնպէս և *մարմնական* կապովն, զի ազգակից է մեզ և փեսայ հոգևոր. և ցանկամք նմա ակն ունելով վարձուցն հատուցման: - 318. Եւ էր մեծութիւն նորա *մարմնական*, Խաշինք **էռ** ոչխարաց: - 321. Երրորդ՝ ժողովին և գոհանան զաստուծոյ՝ որ յոչնչէ՛ գոյացոյց զմարդն, և յարգանդէ՛ խաւարին ի լոյս եբեր. և ետ մեզ ինչս *մարմնական*: - 321. Երկրորդ՝ զի նոցա հատուցմունքն *մարմնական* էր, իսկ մերս հոգեկա՛ն է: - 337. Ապա թէ ոչ՝ հրեշտակք անկարօ՛տ են *մարմնական* կերակրոց: - 338. Երկրորդ՝ այն *մարմնական*, և այս հոգևոր փրկութիւն: - 353. Դարձեալ ասեն, *մարմնական* մեղքն փոխեցաւ. որպէս ի մեռեալ մերձիլն: - 369. Այլ հոգեպէս՝ նաշիհն է՛ *մարմնական* նուէրքն. և կամ չարչարանք մարմնոյ որ ի տօնս ճգնիմք...: - 375. Վասն է՞ր առաջին *մարմնակա՛ն* էր օրէնք և օրհնութիւն, և վերջինս հոգևոր ամենայն: - 395. Զի որ յետոյ սիրէ և փոխարինօք և մասնաւոր և երբէք, անկատար սէր է և *մարմնական*: - 396. Երկրորդ՝ զի **խ** ամ յանապատին հաց ո՛չ ետ նոցա. այլ մանանայ և զայլսն. զի բանիւն աստուծոյ կերակրեցան հոգւով. և ո՛չ *մարմնական* հացիւ: - 397. Տասներորդ՝ ի յարութեանն ո՛չ է *մարմնական* կերակուր և ըմպելի. այլ բանն աստուծոյ է կերակուր. որպէս այժմ հրեշտակաց յերկինս: - 397. Երկրորդ՝ որպէս զօրհնութիւն նորա *մարմնական* ո՛չ ունիմք. նոյնպէս և ո՛չ զանէծսն: - 403. *Մարմնական* նշանքն զոր կատարէր՝ չէ՛ր պակաս քան զնոցայն: - 411. Եւ **է** զօրութիւնք հոգւոյ. և **է** առաքինութիւնք. **դ** *մարմնականք* և **գ** աստուածայինք: - 431. Երկրորդ՝ վասն տկարութեան օրինացն. զի ի հինն ո՛չ կարէր բառնալ զմեղս առանց *մարմնական* փոխարինաց և յիշատակութեանց: - 433. Իններորդ՝ և *մարմնական* որդի էր դաւթի ըստ կարգի հասարակ մարդկան. իսկ քրիստոս ակնկալութեան և աւետեաց և ի վեր քան զկարգ բնութեան աստուած մարդացեալ: - 442. Եւ ոմանք յաւելուն այլ ևս զամօթ՝ զտրտմութիւն՝ և զցաւս *մարմնական*. որ և սոքա ընդ նոսա են: - 474. Նա՛խ՝ օծումն *մարմնական*. որպէս փափկասիրաց: - 474. Զօծումն *մարմնական* ընկալաւ ի պոռնիկ կնոջէն յորժամ եբեկ զշիշ իւղոյն ի գլուխ նորա ի տան սիմոնի: - 474. *Մարմնական* տեղին զանմարմին հոգին ո՞րպէս արգիլէ: - 504. Որպէս *մարմնական* հուր զանմարմին հոգիսն և զդևսն տանջէ, նոյնպէս և տեղին ըմբռնէ: - 504. Ա՛րդ՝ մեղք մտացն թէպէտ ըստ բանականին և *մարմնականին* չէ կատարեալ, այլ ի տեսակս իւր կատարեալ է: - 556. Վասն որոյ և տէրն յորժամ ասաց զցանկութիւնն շնութիւն, յաւել ի վերայ թէ՝ «ի սրտի իւրում». զի մի՛ կարծեսցի *մարմնական* շնութիւն, այլ հոգէկան և մտաւոր. ապա ուրեմն կատարեալ

է մեղք մտացն: - 556. Եւ ոմանք ասեն թէ յեօթանց անտի հինգն *մարմնականք* են և երկուքն հոգեկանք: - 559. Զի սատանայ հպարտացաւ յերկինս և նախանձեցաւ ընդ մարդոյն. իսկ այլքն ամենայն *մարմնականք* են ասեն: - 559. Եւ ոմանք զեկուսն միա՛յն ասեն *մարմնական*. որ է՛ որկորստութիւն և բղջախոհութիւն. և այլքն ամենայն հոգեկան: - 559. Իսկ երկուքն պարզ *մարմնական*. այսինքն որկորստութիւնն և բղջախոհութիւնն: - 559. Երկրորդ՝ զի այլ ամենայն մեղք *մարմնական* է և գիտեմք թէ մեղք է. իսկ հպարտութիւնն անմարմին է և անօսր. և ո՛չ կարեմք գիտել զմեղանչումն: - 562. Այսպէս մեծ է՛ մեղք հպարտութեան քան զամենայն մեղս *մարմնական*: - 563. Ողջախոհութիւն է հաստատութիւն հոգւոյ. որով արգելու զցանկութիւն զգայական և զհեշտութիւն *մարմնական*: - 581. Եւ գիտեն զպատճառն թէ վասն է՞ր է ողջախոհ. այսինքն զի յանառակ կենաց ժլատութիւնք լինին. և նա ի հարկէ արի գոյ զախտն ստորադասելով. այնպիսին և խոհեմ գոյ գիտելով թէ վասն *մարմնական* հեշտախտութեանց լինի անիրաւութիւն: - 582. Աղքատութիւն հոգւոյ է՛ հրաժարիլն յաշխարհէ. այսինքն ի սիրոյ *մարմնական* հեշտութեանց և ի փարթամութեանց և ի պատուոյ...: - 583. Իսկ որ *մարմնական* խնդութիւնն է և դիւական՝ ընդ դէմ այսմ ամենայնի. և ի վախճանի տրտմութիւն հետևի որպէս ասէ սուրբն եւագրիոս: - 584. Ա՛րդ՝ *մարմնականք* են այսոքիկ. - 585. Օծումն է՛ խորհուրդ ի լրումն արդարութեան. զի ելեաք ի պատերազմէ՛ զփոշին և զքիրտն սրբեմք. որպէս ելեալքն ի *մարմնական* պատերազմէ՛: - 587. Իսկ թէ *մարմնական* խնդրես զխառնումն ջրոյ և պնդիս ի հակառակն, ասեմք քեզ թէ ո՛չ միայն ջրոյ, այլ և կաթին և մեղեր և գինւոյ ասէ խառնումն ի խառնարանն...: - 596. Ասեմք թէ՝ յորժամ միաւորեալ էր ի մարմինն միութեամբ ներգործիւր ի նմա ամենայն *մարմնականքն*: - 605. Իսկ կատարի պսակն օրհնութեամբ քահանային. և *մարմնական* զուգաւորութեամբն: - 609. Իսկ ի կատարումն պսակին՝ նախ է՛ օրհնութիւն քահանային, և ապա՛ *մարմնական* զուգաւորութիւնն: - 610. Զի **դ** ազգակցութիւն *մարմնական*. զի մարմինն է ի չորից տարերց: - 611. Իսկ օրինաց ազգն որ են խնամիքն, և բնականն որ են *մարմնականքն*, ո՛չ լինին խնամիք մինչ ի **դ** ծնունդն: - 612. Որով յա՛յտ է՝ զի ի կէս աւուրն որ է **ժբ** ժամն՝ աղօթելի՛ է մեզ յամենայն օր. և զկէսն այլ՝ *մարմնական* հոգոց պարապիլ. գործոյ աշխատութեան՝ ննջելոյ՝ կամ այլ ինչ իրաց: - 623. ...և օրէնս եդ որ հանգչէր մարդ ի *մարմնական* գործոց յաւուրս և ի շաբաթս, յամիսս և ի տարիս...: - 647. Ութերորդ, զի մի՛ դատարկացին ի *մարմնական* գործոց միշտ տեսանել զմեռեալս: - 677. Իսկ վերին և արտաքին սրահն ուր զենմունք և պատարագն մատչէին, է՛ *մարմնական* աշխարհս այս...: - 682. Եւ անապատ է՛ կայանք հոգւոցն անկարօտ *մարմնական* պիտոյից: - 682. Ութերորդ, ապաշխարութիւնն խնդրէ *մարմնական* տանջանք ի *մարմնական* գործիս: - 699. Ասեմք նախ՝ եթէ երկինք և երկիր մարմին գոլով նորոգին *մարմնական* հրով. իսկ հոգին զի է՛ անմարմին ՝ նորոգի շնորհօքն քրիստոսի և հոգւովն սրբով: - 701. Ոմանք խոտ. որ է ծուխ *մարմնական* հեշտութեանց: - 702. Դարձեալ՝ խոտն մտաւոր մեղք խորհրդոց. և եղէգն յանցանք բանից. և փայտն *մարմնական* մեծամեծ մեղք: - 702. Եւ զայս ասաց տգիտութեամբ զի կրկին յարութիւն *մարմնական* իմացաւ: - 710. Որ և ա՛յն քան գերազանց է միաւորութիւնն քրիստոսի ընդ եկեղեցի քան *զմարմնական* հարսանեաց, որպէս լոյս քան զխաւար. և իւղ անոյշ քան զգարշութիւնս: - 757

**ՄԱՐՄՆԱԿԵՐ +** Եւ զփառս բանին զրկելով՝ ետուք մարդոյն. և եղէք մարդապաշտք, և մարդոյ *մարմնակերք*. և ի մարդ մկրտեալք. և սուտ է փրկութիւն մարդոյ մարգարէն կնքեաց: - 90. Զի սրտիւն ապրին *մարմնակեր* գազանք. և հեշտ ցանկութեամբ բազմածին կենդանիք աճեն. և երկչոտութեամբ ապրին նապաստակք և տկարք ի հզօրից. - 563

**ՄԱՐՄՆԱՆԱՄ +** Հինգերորդ՝ Հայր և Հոգի ո՛չ *մարմնացեալ*. թէպէտ մի բնութիւն է երրորդութեանն: - 30. Ապա ուրեմն ծնունդն նախքան զամենայն բլուրս՝ էր ի սկզբանն ի բնութենէ հօր. իսկ ստեղծումն վասն *մարմնալոյն*. զի իւր է մարմինն: - 41. Եւ զնոյն բանն աստուած *մարմնացեալ*. և շրջեալ ի վերայ երկրի...: - 45-46. Զի որպէս էր հօր ծանօթութիւնն ի նախահարսն, և որդոյն ընդ աղօտ, այլ ի *մարմնանալն* իւր յայտնեցաւ: - 55. Եւ դարձեալ՝ հոգին որ ի հօրէ ելանէ և կայանայ յորդի. և ի ձեռն որդւոյ իբր զհայրական բարի ամենայն գոյիցս բաշխի երկնաւորաց և երկրաւորաց. նախ քան *զմարմնանալն* և ի մարդեղութեանն: - 61. Իսկ թէ՝ «իմս» այս՝ զբղխումն յորդւոյ ասէ, ապա և այլուր ըստ քեզ զհայր *մարմնացեալ* կարծես: - 61. Վեցերորդ՝ զի թէ մեք շնորհիւ՝ որդեգրեալքս կերպանամք առ ճշմարիտ և բնութեամբ որդին, և թէ և նա՛ է ըստ մեզ շնորհիւ, պիտո՛յ է նմա վերնագոյն բնութեամբ որդի *մարմնացեալ* ի յոր կերպասցի և սա՛ ի նմանութիւն նորա շնորհօք որդի: - 67. Ա՛րդ մկրտիմք հաւատացեալքս որպէս ի հայր և ի հոգին սուրբ՝ այսպէս և յորդին *մարմնացեալ* մի տէր մի քրիստոս: - 69. Վասն որոյ հարկաւորիմ ցուցանել նոյն քան գլխով եթէ աստուած է քրիստոս և ըստ մարմնոյն միութեան *մարմնացեալ* և մարդացեալ աստուած: - 72.

Ապա ուրեմն աստուած և որդի աստուծոյ է *մարմնացեալն* քրիստոս: - 73. Ապա ուրեմն մի՛ է որդին աստուծոյ և որդին *մարմնացեալ* և մարդացեալ աստուած: - 73. Եթէ մի է առհասարակ բնութիւն երրորդութեանն և ո՛չ բաժանեալ, ո՞րպէս իմանամք զբանն միայն *մարմնացեալ*. և ո՛չ զհայր և զհոգի: - 74. Անմարմին և *մարմնացեալ*: - 75. Երրորդ՝ զի մի՛ Երրորդութիւնն *մարմնացեալ* երևեսցի: - 76. Այլ զի զանձնաւոր բնութիւն և զանհատն ասեմք *մարմնացեալ*. զի սկիզբն միաւորութեանն է ի բնութիւնն, և կատարումն կայացեալ ի յանձն, յիմարա՛ց ուրեմն և ափշելոց է խնդիր նոցա: - 76. Այլ խոստովանիմք զբանն աստուած՝ ոչ մասամբ, այլ լրութեամբ իւր *մարմնացեալ* և մարդացեալ...: - 76. Եւ թէ՝ մի ասեմք զտէր մեր յիսուս քրիստոս. և մի զբնութիւն նորա. զի մի՛ է բնութիւն բանին *մարմնացելոյ*: - 76 - 77. Զի՞նչ է ծայրագոյն միաւորութիւն բանին *մարմնացելոյ*: - 77. Այլ և ո՛չ ասի աստուած և մարդ որոշմամբ. այլ աստուած մարդացեալ և *մարմնացեալ*: - 79. Իսկ թէ ո՛չ, այլ պարզաբար աստուածածին խոստովանիս ընդ մեզ, ապա՛ և զծնեալն ի նմանէ խոստովանեա՛ աստուած *մարմնացեալ* և մարդացեալ: - 79. Դարձեալ՝ ծանի՛ր ուղղապէս. զի ասի աստուած *մարմնացեալ* և մարդացեալ. զի այս միաւորութեան է: - 79. Եթէ՝ բանն աստուած *մարմնացաւ* և մարդացաւ. և մարդկութիւնն աստուածացաւ խառնելով և միանալով բանին: - 79. Սուրբն կիւրեղ ընդդէմ նեստորի՝ որ բ բնութիւն բաժանեալ ասէր քրիստոսի՝ ասաց, մի բնութիւն միաւորեալ աստուած *մարմնացեալ* և մարդացեալ: - 79-80. Այլ և նոքա որք անանձն և անգո՛յ ասեն զբանն *մարմնացեալ*. որպէս մեր բանս: - 82. Եւ որպէս սուրբ հարքն ասացին՝ մի է բնութիւն բանին աստուծոյ *մարմնացելոյ*: - 83. Եւ այսպէս ասեմք մի բնութիւն և մի կամք և մի ներգործութիւն բանին *մարմնացելոյ*: - 85. Իսկ թէ զաստուածայինն բնութիւն, ահա՛ զԵրրորդութիւնն ասէք *մարմնացեալ*. զի բնութիւնն հաւասար է երից անձանցն: - 89. Զի ո՛չ ասեմք մարմին *զմարմնացեալն*, այլ զբանն մարմին եղեալ: - 94. Արդ՝ եթէ բոլոր աստուածութիւնն ի քրիստոս էացեալ է մարմնապէս, և ծածկէ զգիտութիւնն ի նմանէ, այս լինի կամ ոչ աստուած *մարմնացեալ* և մարդացեալ կամ զէութիւնն տըւեալ և ի գիտութենէն զրկեալ որ է սուտ: - 98. ...որպէս ասէ աստուածաբանն Գրիգոր, (համարձակիմ և ասեմ հաւասար աստուած՝ որպէս առօղն՝ նոյնպէս և առեալն. զի անմարմինն *մարմնացաւ*...: - 100. Եւ նա՛խ եկաւորի հոգին ամենայն ուրեք. որպէս ի մարգարէսն և ի կոյսն սուրբ, և ապա՛ բանն *մարմնացաւ*. և յետոյ հոգին սուրբ էջ յառաքեալսն և յեկեղեցի մնաց: - 125. Նմանապէս և հոգին սուրբ ի գիշեր կենցաղոյս լուսով աւետարանին առաջնորդէ՛ մինչև հասուցանէ յայգն հանդերձեալ աւուր ի ցօղաւոր ամպն որ է՛ բանն *մարմնացեալ*. որ է հովանի և հանգիստ ամենայն սրբոց: - 338. Եօթներորդ, անդ ի հօրէ. և աստ ի *մարմնացեալն* բան է. և անդ ի հոգւոյն սրբոյ: - 355. Նոյնպէս և բանն աստուած թէ կարի իսկ յառաջին դարս էր *մարմնացեալ*, որպէս յաւուրս նոյի՝ աբրահամու և կամ մովսէսի՝ լինէր կրկին վնաս: - 467. Նա՛խ՝ անպատշա՛ճ էր թէ հայր էր *մարմնացեալ*. զի հայր անսկիզբն է. և յայնժամ ո՛չ ոք լինէր առանց սկզբան: - 468. Երկրորդ՝ զի թէ հոգին սուրբ էր *մարմնացեալ*, յայնժամ լինէին **բ** որդիք: - 468. Երրորդ՝ զի թէ հայր էր *մարմնացեալ*, մի և նոյն լինէր հայր և որդի: - 468. Չորրորդ՝ միտք և հոգին ո՛չ երևին. և բանն երևի և ի դուրս գայ. և մարդիկք տեսանեն և գրեն. վասն այն բանն *մարմնացաւ*, և ո՛չ հայր կամ հոգին: - 468. Օծօղն է հայր. և Օծումն որպէս իւղ հոգին սուրբ. և Օծեալն բանն *մարմնացեալ*: - 475. Սուրբն աթանաս և կիւրեղ և այլք՝ զհոգւոյ և զմարմնոյ միաւորութիւնս ասեն բանին *մարմնացելոյ*: - 477. Որդին *մարմնացեալ*: - 487. Ասեմք եթէ, բանն *մարմնացաւ* ի կուսէն. և կոյսն էր ի բնութենէն ադամայ ի հողոյ ստեղծեալ: -501. Դարձեալ՝ զի հայր մարմնով ո՛չ երևեցաւ որպէս բանն *մարմնացեալ*. կամ որպէս հոգին սուրբ աղաւնակերպ և հրաձև: - 525. Եւ մի և նոյն բանն է ներտրամադրեալն ի սրտի. զի ըստ բան գոլոյն ո՛չ զանազանի. սակայն ըստ որպիսութեան որակին. զի էր անմարմին ի սրտի՝ և այժմ *մարմնացաւ* ի քարտիսի: - 529. Եւ թէ ոք ասիցէ, ո՞րպէս է մի բանն աստուծոյ. զի ահա՛ բանն *մարմնացեալ* էր. և հայր բանիւ վկայեաց ի վերայ որդւոյն. և անյարմար է ինքն ինքեան վկայել: - 530. Եւ զինչ և իցէ՝ միաւորեմք ընդ միմեանս և խոստովանիմք զբանն աստուած *մարմնացեալ* անբաժանելի ի մարմնոյ իւրմէ: - 598. ...և ապա հաւանեցաւ և ասէ «կամ աղախին տեառն». և ապա՛ յղացաւ և ծնաւ զբանն աստուած *մարմնացեալ*: - 610. Զի որդին *մարմնացաւ* և նա՛ նուիրէ զբարեգործութիւնս մեր առ հայր: - 625. ...և կատարումն ամենայն աղօթից առ բանն *մարմնացեալ*. որպէս ասացաւ: - 633. Նա՛խ՝ զի առ որդին *մարմնացեալ*՝ և զգութ մօրն բարեխօս արկանեմք: - 633-634. Դարձեալ՝ մարգարէքն ի հեռուստ տեսին. և առաքեալքն մերձ զբանն *մարմնացեալ*: - 643. Դարձեալ, ծառ կենա՛ց է աստուածածին կոյսն մարիամ բղխեալ յարմատոյն յեսսեայ. երկնուղէշ զարգացմամբ մշտասաղարթ կուսութեամբ ծաղկեալ և պայծառացեալ հոգւոյն սրբոյ եկաւորութեամբն. և պտղաբերեալ մեզ անմահ

պտուղ զբանն *մարմնացեալ*. յորմէ վայելեալք երկնաւորք և երկրաւորք ի շնորհաց նորին զյաւիտենից կեանսն ժառանգեցաք: - 768

**ՄԱՐՄՆԱՊԷՍ +** Զի թէ *մարմնապէս* տեսանես. ուրախութեան էր ժամանակն գալստեան և ո՛չ սգոյ որ է պահք և ապաշխարանքն: - 44. Եւ կամ յորժամ որպէս զիւր բարի շնորհէր իւրայնոցն՝ *մարմնապէս* փչեալ ի նոսա...: - 69. Արդ՝ եթէ բոլոր աստուածութիւնն ի քրիստոս էացեալ է *մարմնապէս*, և ծածկէ զգիտութիւնն ի նմանէ, այս լինի կամ ոչ աստուած մարմնացեալ և մարդացեալ կամ զէութիւնն տըւեալ և ի գիտութենէն զրկեալ որ է սուտ: - 98. Իսկ Կաղ՝ ո՛չ զկալն կամ զնստիլն *մարմնապէս*. այլ զհաստատիլն անշարժ էութեամբ. զի ո՛չ շարժի. ո՛չ բնութեամբ, ո՛չ կամաւ, և ո՛չ տեղեաւ: - 172. Ասեմք նախ եթէ՝ ծնունդն և յարութիւնն մարմնաւոր էր. վասն որոյ *մարմնապէս* տօնեմք: - 373. Եւ մարմնաւոր իշխան զթագաւորս և զբռնակալս. զի *մարմնապէս* կառավարեսցեն զմարդիկ և խրատեսցեն վասն մեղաց: - 538. Եւ թէ կամիս ուղղել *մարմնապէս*: - 745. Ո՛չ նոյնն *մարմնապէս*, այլ նմանն հոգէպէս. ծարաւումն, խաւարն, հրախառն կարկուտն, ժահահոտն, և այլն ըստ կարգի: -751. Ո՛չ ի յամիսս անցաւոր. և ո՛չ ի յամն մշտնջենաւոր. զի աստ *մարմնապէս* և անդ հոգէպէս: - 768. Այլ և ոմանք ասեն և է գոլ սեանց ընդ շինեալ տունն ի սողոմոնէ. կանգնեալ սիւնս է *մարմնապէս*. թէպէտ ա՛յլ է իմացումն հոգէպէս: - 788

**ՄԱՐՄՆԱՍԷՐ +** Ասեմք *մարմնասիրեացն* եթէ՝ մարմնակա՛ն կարծէք զծնունդն ըստ մեզ ո՛վ ծիծաղելիք: - 52. Դարձեալ նշանակէ՛ զամենայն կուրութիւնս *մարմնասիրաց* ի մէջ եկեղեցւոյ: - 490. Չորրորդ՝ զռամիկս և *զմարմնասէրս* ահիւ և տանջանօք պատրեսցէ. - 708

**ՄԱՐՄՆԱՒՈՐ +** Երկրորդ՝ ասեմք եթէ և ոչ աստեղք վայրապար են ստեղծեալ. զի կառավարք են տարրեղէն մարմնոց որպէս ասացաք. այլ մարդկային ներգործութիւնք կառավարին յանձնիշխան կամաց. և անձնիշխան կամքն որ անմարմին է՝ ո՛չ նըւաճի ըստ շարժմամբ *մարմնաւոր* աստեղաց: - 13. Վեցերորդ՝ ասեն հակառակքն, թէ՝ չարն ոչ է յաստուծոյ, ապա աստուած ո՛չ ճանաչէ զչարն. որպէս մեք նմանեաւ զնմանն ճանաչեմք. այսինքն հոգւով զհոգևորս, և մարմնով *զմարմնաւորս*: - 17. Եւ զի նա հոգևոր ծնեալ՝ ծնաւ ըստ մարմնոյ. զի դու *մարմնաւոր* ծնեալ՝ ծնցիս վերստին ըստ հոգւոյ: - 107. Այլ բազո՛ւմ է և զանազան ըստ պատկերի և նմանութեան յարացուցելոցս որք են բազումք. զի աստուած միով յարացուցիւ զբազումս տեսանէ. որպէս անմարմնութեամբն *զմարմնաւորս* տեսանէ. և յաւիտենիւ զժամանակեայս: - 112. Այսպէս անժամանակն զժամանակեայս. անմարմինն *զմարմնաւորս*. անփոփոխն զփոփոխելիս. անսկիզբն զսկզբնաւորքն. և զայլսն նմանապէս: - 113. Նմանապէս և իմանալի արեգակն արդարութեան քրիստոս՝ ըստ հաւասարութեան բաշխէ *զմարմնաւորս*...: -127. Եւ այսպէս են *մարմնաւոր* բարիք. որպէս ոսկի և այլ ինչ. որ ի ձեռն ողորմութեան պատճառէ՛ զհանդերձեալ բարիսն: - 160. Եւ լինի աղանդն այնոցիկ՝ որք ասեն *մարմնաւոր* արքայութիւն, և կերակուր և ամուսնութիւն, և այլ աղճատանք: - 226. Յերկրորդն՝ զհոգևոր ստեղծուածսն որոշեաց ի *մարմնաւորէն*: - 227. Իսկ թէ ըստ մարմնոյն շեղեսցի՝ ի մահ պարտաւորեսցի և տնկեցի ի *մարմնաւոր* տեղիս. որպէս և եղև իսկ: - 231. Այսմ դնի պատճառ *մարմնաւոր* և հոգևոր: - 234. Արդ յա՛յտ է թէ որ գործ չառնէ հոգևոր կամ *մարմնաւոր*՝ վա՛տ ասի: - 251. Զոր ընդ դերևս հանէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս կազմութեան այսպէս եթէ, որք զհոգին յառաջ ասեն գոյանալ քան զմարմին. և վասն մեղաց եղեալ ի մարմին մարդոյ. որ է՛ համանման բանականութեամբ. և է՛ իներքոյ երկնային կենաց՝ զի *մարմնաւո՛ր* է: - 252. Դարձեալ թ թիւն պակա՛ս է ի ժերորդէն. և մեք պակասեցաք յինն դասուց հրեշտակաց, որ նախ հաւասար էաք ի դրախտին. և կարօտացաք *մարմնաւոր* ծննդեան, նմանելով անասնոց...: - 264. Եւ որպէս աստուած իշխա՛ն է ամենայն ստեղծուածոց. և մարդն իշխա՛ն է ամենայն *մարմնաւորաց*: - 275. Եօթանասունևեւ, Տալ զօրէնս հեթանոսաց. և օրհնութիւն և անէծք. և բան ընդդէմ հրէիցն որք *մարմնաւոր* ունին զօրհնութիւնս: - 285. Եւ *մարմնաւոր* երկին է և աննահութեան տեղիք: - 289. Յինգերորդ՝ զի ունի զվերոյ ասացեալն խորհուրդ տասնեակ թւով. վասն որոյ յիրաւի անդրանիկն պատուեալ լինէր թէ ի հոգևորն և թէ ի *մարմնաւորն*: - 310. Յինգերորդ՝ նշանակէ զկրկին ծնունդս մարդոյ. առաջինն *մարմնաւոր* և խոտելի. և վերջինն հոգևոր և ընտրելի: - 310. Եւ արտաքին սրահն՝ երկիրս *մարմնաւոր* տեղի: - 343. Երրորդ՝ այն *մարմնաւոր*. և աստ *մարմնաւոր* և հոգևոր. և անդ միայն հոգևոր: - 355. Սա՛ փոխեալ ի նորս նշանակէ՛ *զմարմնաւոր* նուէրս. որպէս պահք աղօթք, ողորմութիւն: - 357. Այսինքն զամենայն յաջողուածս հոգևոր և *մարմնաւոր*, և զմասն անմահութեան կենաց յուսոյն, ո՛չ վասն մեր արժանաւորութեան համարել. այլ բարութեան և ողորմութեանն աստուծոյ: - 360. Այլ և ունիմք *զմարմնաւոր* պատարագս զօրհնակին. զեննունք վասն կենդանեաց և մեռելոց: - 362. Միջինն հոգևոր և *մարմնաւոր*: - 362. Վերջինն *մարմնաւոր*: - 362. Ասեմք նախ եթէ՝ ծնունդն և յարութիւնն *մարմնաւոր* էր. վասն որոյ մարմնապէս տօնեմք: - 373. Ըստ

այնմ նախ *զմարմնաւոր* օրէնս ետ, և ապա զհոգևորն: - 395. Երկրորդ՝ ի հոգևոր կենաց դրախտէն անկաք ի *մարմնաւորս*. և յայսմանէ դառնամք ի հոգևորսն: - 395. Օրհնութիւնն աստուծոյ բաժանի յերկուս. որ է՛ երկնաւորաց և երկրաւորաց. որ է՛ հոգևոր և *մարմնաւոր*. անցաւոր և անանց: - 403. Երկրորդ՝ հոգևորին շնորհակալութիւն, և *մարմնաւորին* գոհութիւն: - 406. Նա՛խ՝ զի կտակովն *զմարմնաւորքն* կարգաւորեն, և օրհնութեամբն զհոգևորսն: - 408. Երրորդ՝ զի սկսեալ ի *մարմնաւորն*, վախճանի ի հոգևորն: - 408. Չորրորդ՝ *մարմնաւոր* մահն վախճան է մարմնոյ կենաց և սկիզբն հոգևորին. վասն այն օրհնէ: - 408-409. Հինգերորդ՝ ցուցանէ թէ *մարմնաւոր* օրհնացն վախճան հոգևոր և օրհնութիւնն է որ եղև քրիստոսիւ: - 409. Երկրորդ ըստ իրին. զի յեսու փրկեաց զժողովուրդն ի *մարմնաւոր* թշնամեաց: - 417. Իններորդ՝ ասի միածին ըստ *մարմնաւոր* ծննդեանն ի մօրէ ծնեալ առանց հօր...: - 472. Եւ աստ գիտելի է, զի կրկին է թլփատութիւն. *մարմնաւոր* և հոգևոր: - 486. Եւ որպէս *զմարմնաւոր* թլփատութիւնն աւանդեաց աբրահամու, նոյնպէս զհոգևորն որ է՛ թլփատութիւն սրտի՝ հրամայեաց ի ձեռն մովսէսի...: - 486. Երրորդ՝ որպէս մարմնով լոյս ծագեաց *մարմնաւորացն* և քարոզեաց զփրկութիւն: - 503. Բնական օրն է *մարմնաւոր*. որ բաժանէ զպահս և զուտիսս: - 508. Եւ ա՛յն է խորհուրդն, զի որ քան ամ մարմնով *մարմնաւորացն* քարոզեաց. նոյնքան ժամս հոգւով հոգւոցն քարոզեաց. այսինքն **լգ** ամ և կէս ի յերկրի. **լգ** ժամ և կէս ի դժոխս...: - 516. ...զի ցուցցէ թէ աստուածային ուրախութիւնն գերազա՛նց է քան *զմարմնաւոր* տրտմութիւնս: - 520. Այլ ա՛րդ՝ կրկին է իշխանութիւն. այսինքն հոգևոր և *մարմնաւոր*. վասն զի կրկին է մարդն. հոգի և մարմին: - 537. Եւ *մարմնաւոր* իշխան զթագաւորս և զբռնակալս. զի մարմնապէս կառավարեսցեն զմարդիկ և խրատեսցեն վասն մեղաց: - 538. Նա՛խ՝ զի *մարմնաւորին* հնազանդիմք յոչ կամաց. բռնութեամբ և ի հարկէ: - 538. Երկրորդ՝ զի *մարմնաւորն* իշխէ՛ որքան մեծ է և ձեռնհաս: - 538. Երրորդ՝ *մարմնաւորն* իշխէն միայն ի մարմին և ի կեանս. այլ յետ մահու ո՛չ: - 538. Եւ այլ բազում և զանազան ազգապղծութիւն ընդ հոգևորս և ընդ *մարմնաւորս*. երկու եղբարց և **բ** քերց. և ընդ քերց հոգևոր մօր. և անխտիր ի բազմանկողինս և այլս բազումս որ զազիր է խօսելոյ օրէնքէ նոցա: - 552. Երկրորդ յա՛յտ է ի բաժանմանէ. զի յերիս բաժանի տեսակ մեղաց. այսինքն ի մտաւորն, ի բանաւորն, և ի *մարմնաւորն*: - 556. Խաղաղութիւնն արտաքսէ՛ զբղջախոհութիւնն. քանզի ընդ ճաշակելն զհոգևորն՝ անհամանայ նմա ամենայն *մարմնաւոր*: - 583. Իսկ դիւական տրտմութիւն և խնդութիւնն *մարմնաւո՛ր* է և չար: - 584. Եւ մաստութիւնն է նոյն ընդ համբերութեանն. զի համբերութիւնն է տևումն *մարմնաւոր* նեղութեանց. իսկ մաստնութիւնն է տևումն նախատանաց: - 584. Իսկ գործ ողորմութեան են չորեքտասան. այսինքն եօթն *մարմնաւոր* և եօթն հոգևոր: - 584. Եօթներորդ պսակն. որ է՛ խորհուրդ նոր զինուորս ի ներս մուծանելոյ ի ձեռն *մարմնաւոր* ծննդեան: - 587. Ութերորդ, զի թէ զզենումն կենդանեաց ո՛չ ունին հրաման զենուլ ազգ կանանց որ է՛ խտրութիւն *մարմնաւոր* սրբութեանց. զիա՞րդ պատշաճի տալ հրաման կանանց ազգի մերձենալ ի կարգ հոգևոր սրբութեան: - 589. Նա՛խ՝ զի *մարմնաւոր* ծնունդն նշանա՛կ է հոգևոր ծննդեանն. և որպէս մի է *մարմնաւոր* ծնունդն, այսպէս մի է և հոգևորն: - 590. Եւ գիտելի է, զի ի ծնունդ սուրբ աւազանին երևի ե զարմանալի գործ որ ո՛չ է ի *մարմնաւոր* ծնունդս: - 590. Ա՛րդ մկրտեալն ի քրիստոս՝ վասն հոգևոր հօրն ազատի ի հոգևոր պատժոյն. և վասն *մարմնաւոր* հօրն կրէ՛ *զմարմնաւոր* պատիժն: - 592. ...զի բազում արգելմունք գոն պսակին. որպէս ազգակցութիւնն հոգևոր կամ *մարմնաւոր*. կամ տկարութիւն բնութեանն. կամ պոռնկութիւնն. կամ այսահարութիւնն. կամ ծառայութիւնն. կամ բռնութեամբն. կամ այլ ինչ այսպիսի պատճառ. որով բաժանին այրն և կինն: - 610. Զի է՛ շաղկապ հոգևոր. այսինքն սրտիցն. և է՛ շաղկապ *մարմնաւոր*՝ խառնմամբ սերիցն: - 610. Իսկ և մահն կրկին է, հոգևոր և *մարմնաւոր*: - 610. Եւ *մարմնաւոր* շաղկապն արձակի և քակի *մարմնաւոր* մահւամբն. - 611. Ա՛րդ՝ նահապետքն առնուին բազում կանայս վասն որդէծնութեան և լրման *մարմնաւոր* օրհնութեանն: - 613. Իսկ ի նորս փոխեցաւ ի հոգևոր օրհնութիւն և ծնունդ. և *զմարմնաւորն* ի սկզբան չափաւորն կապեաց. որպէս ադամ և եւա: - 613. Նա՛խ՝ զի կրկին պարգևս ետ մեզ. այսինքն հոգևոր և *մարմնաւոր*...: - 655. Իսկ *մարմնաւոր* մահն բաժանի ի **դ**. այսինքն ի բնականն, ի պատահականն, յանձնիշխանականն, և ի խնամականն: - 668. Եւ դարձեալ՝ հոգի և մարմին զոյգ և ի միասին ստեղծան և ծնան ի *մարմնաւոր* կեանքս...: - 669. Չորրորդ, արտասուօք թողութիւն խնդրեմք զոր մեղաք նմա ի *մարմնաւոր* կեանս, - 676. Չորրորդ՝ ի *մարմնաւորս* **գ** օր լինի հարսանիք. - 681. Երրորդն ի տգիտա՛ց է ասացեալ. զի կայանք *մարմնաւոր*՝ անմարմին հոգւոց ո՛չ է պիտոյ: - 687. Երրորդ, զի զոյգ և ի միասին ստեղծան և ծնան ի *մարմնաւոր* կեանքն հոգին և մարմինն...: - 691. Առաջին յարութիւնն է՛ հոգևոր, և երկրորդն *մարմնաւոր*: - 710. Եւ երկրորդ յարութիւնն որ է մարմնաւոր, և այն ևս կրկին է. նախ յարութիւն կենաց, և ապա յարութիւն փառաց...: - 710. Եւ զբանս օղն ունի. եթէ հոգևոր եթէ *մարմնաւոր*. զի

օդով խօսեցաք: - 714. Այլ գիտելի է, զի կրկին է *մարմնաւոր* յարութիւն: - 716. Եւ այսպէս սահմանի եթէ յարութիւն է այնմ որ անկաւ *մարմնաւոր* մահուամբ՝ վերստին յառնել անմահութեամբ ի կեանս յաւիտենականս: - 716. Ի յայս միտս *մարմնաւոր* հարսն է զգեստուք զարդարի. **գ** զարդ գլխոյն և **դ** բոլոր մարմնոյն: - 721. Երկրորդ՝ զի կենդանիք և բոյսք ստեղծան վասն *մարմնաւոր* կենդանութեան մարդկան. - 727. Եւ կշիռ ողորմութեանն ըստ ինքեան մարմնաւորի և հոգևորի. զի աստ *մարմնաւորն* և անդ հոգևորն կշռի և միտէ՛: - 746. Վասն չորից անհանգիստ տանջին մեղաւորքն յաւիտեան. որպէս տեսանի ի *մարմնաւոր* տանջանացս: - 750. Ապա թէ ո՛չ, լիցի աղանդն կերինթոսի և սադուկեցւոցն. որք *մարմնաւոր* ասէին զարքայութիւնն: - 758-759

**ՄԱՐՄՆԱՒՈՐԱՊԷՍ +** Եւ **ի**երորդ՝ որպէս խոստացաւ թէ՝ «զաւակք քո զքաղաքս հակառակորդաց քոց ժառանգեսցեն». որպէս և եղև նոցա *մարմնաւորապէս* ժառանգել զերկիր ամոնացւոց, մովաբացւոց, և քանանացւոց: - 306. Վասն որոյ նախ քահանայն օրհնէ հոգևորապէս, և ապա *մարմնաւորապէս* զուգակցին: - 610

**ՄԱՐՄՆԱՒՈՐԻԼ +** Եւ կշիռ ողորմութեանն ըստ ինքեան *մարմնաւորի* և հոգևորի. զի աստ մարմնաւորն և անդ հոգևորն կշռի և միտէ՛: - 746

**ՄԱՐՄՆԱՓՈԽՈՒԹԻՒՆ +** Եւ որք զայս ասեն՝ հետևին մոլորութեանցն պղատոնի *մարմնափոփոխութեանցն*. որ ասէ քաղաք ի յերկինս. և հոգիքն անդ ժողովեալ իբրև զզօր և զդասս: - 252. ...նման է պղատոնի *մարմնափոխութեանցն.* որ ի բանական մարդոյն ի զգայականն, և անտի ի տունկն ասեն...: - 687

**ՄԱՐՄՆԵՂԷՆ +** Չորրորդ՝ զի ամենեքեան խնամարկուք են *մարմնեղինաց*: - 137. Երրորդ՝ զմաշկեղէն պատմուճանն մերկանալ. այսինքն զխորհուրդս *մարմնեղէնս* և զմեռելոտիս: - 281

**ՄԱՐՏ +** Յորմէ և *մարտ* ի մէջ Երրորդութեանն: - 70. Սոքա երկոքինս պիտո՛յ են ամենայն մարդոյ ի *մարտ* թշնամւոյն: - 323. Իսկ զօծումն *մարտի*՝ յորժամ վարեցաւ ի հոգւոյն յանապատ և յաղթեաց հակառակին: - 474. Եօթներորդ՝ աստ հանդէս *մարտի* է, և անդ յաղթանակ պսակի: - 662. ...նոյնպէս և աստ ի *մարտ* մտանէ ընդ օդային այսոց՝ նախ օծանի հոգևոր իւղովն: - 672

**ՄԱՐՏ** (ամիս) **+** Զի ըստ հոռոմ համարին այսպէս է. *մա՛րտի* **ժէ**՝ Առաջին օր արարչութեան է, յորում եղև լոյսն: - 191. Եւ ի **իբ**ն *մարտի*՝ կազմութիւն մարդոյն է: - 191. Իսկ *մարտն* և ապրիլն՝ իմաստասիրա՛ց անուանքն են. և Օգոստոսն թագաւորի: - 201. Եւ անտի մինչ ի *մարտի* **իե**ն համարեն **գ** ամիս, և անդ ասեն զաւետիսն: - 483. Եւ ի *մարտի* **իե** էն մինչ ի դեկտեմբերի **իե**ն համարեն **թ** ամիս և **ե** օր, և ա՛նդ ասեն զծնունդն: - 483

**ՄԱՐՏԱԿԱՆ +** Երկրորդ՝ օծումն *մարտական*. որպէս ըմբշամարտից: - 474

**ՄԱՐՏԻԿ +** Զորօրինակ *զմարտիկ* որ յետ հանդիսին դարձեալ լուանան ի փոշոյն և օծանեն: - 672

**ՄԱՐՏԻՐՈՍ +** Դարձեալ սիրեցաւ յաստուծոյ, զի առաջին *մարտիրոս* սա՛ եղև. թէպէտ թոյլ ետ իջանել ի դժոխս, զի ի պատճառս նորա խնդրեսցին այլքն. որպէս ի պատճառս դովտայ զերծան սոդոմայեցիքն աբրահամաւ: - 287. Այսպէս և ի նորս սուրբն ստեփաննոս որ եղև առաջին *մարտիրոս* և վկայ քրիստոսի՝ հեղլով զարիւն իւր. տեսանէր բացեալ զերկինս և զյիսուս ընդ աջմէ աստուծոյ: - 288. Եւ տէրն ո՛չ ի ձեռս հրեշտակաց սերոբէից և քերովբէից, և ո՛չ միջնորդութեամբ մարդկան ընտրելոց նահապետաց մարգարէից առաքելոց կամ *մարտիրոսաց*: - 302. **Ձ**երրորդն՝ զի բազում եղեն յազգէ նորա *մարտիրոսք* վասն քրիստոսի յետոյ: - 313. Երրորդ՝ զի ձեռամբ թշնամւոյն նահատակեցան. որպէս այլ ամենայն *մարտիրոսք*: - 322. Ընդ որովք զինուորք ճգնաւորք. ընդ նոսին և կուսանք և *մարտիրոսք*: - 347. Եւ զանգեալ նաշհին զյիշատակ *մարտիրոսացն* ուր խառնեմք աղ ի հատ պատարագին և իւղ անոյշ ի խորհուրդ նոցա: - 356-357. Յատ պատարագի *մարտիրոսաց*: - 362. Գինին՝ *մարտիրոսքն* սուրբք. և Իւղն՝ լուսատու վարդապետքն ուղղափառք: - 374. Այլ և կոյսքն ամբողջք՝ և *մարտիրոսքն* են նուռն: - 381. Եւ որ ոք ո՛չ խոստովանի զքրիստոս աստուած, զտօն նորա ըստ հասարակ *մարտիրոսացն* առնէ ի մէջ գիշերոյն ի վեր: - 509. Եւ ի յայս միտս զտօն ամենայն սրբոց *մարտիրոսաց* ի մէջ գիշերի սկսանեմք **զ** ժամով յառաջ քան զծագումն լուսոյն հասարակ աւուր: - 515. Երկրորդ զօրացուցանէ. որպէս յա՛յտ է ի մակաբայեցւոցն զկնոջէն որ ունէր է որդիս՝ ածեալ ի սպանումն ի միումն աւուր տեսեալ. և տանէր այնմ՝ յուսովն որ առ աստուած. նոյնպէս և ամենայն դասք *մարտիրոսացն* յուսով զօրացան: - 574. այլ սիրելիք են բարի գործօք առ հասարակ հաւատացեալքն. և նազելիք կուսութեամբ ճգնեալքն և *մարտիրոսքն*: - 600. Եւ **ծ**՝ *մարտիրոսացն*. զի ազատութիւն է: - 621. Զհանգստեանն, և *զմարտիրոսացն*, պետրոս գետադարձն: - 637. Իսկ թէ սրբոց, Նա՛խ

մարգարէից. և ապա՛ առաքելոց. և հայրապետաց. և *մարտիրոսաց*: - 642. Այսինքն երեքն ի մին շաբաթն. որ է՛ Պահոց, *Մարտիրոսաց*, և Կիրակէն այլածև կարգ. Առաջաւորցն. Աղուհացիցն. և Յինանցն կարգ: - 649. ...այսինքն է որ ի վեր քան զիրամայեալ օրէնսն կատարեցին զգործս. որպէս առաքեալքն, մարգարէքն, *մարտիրոսքն*, կուսանքն, և այլքն: - 687. ...նոյնպէս և սուրբք ժամանակին այնորիկ լինիցին զօրեղագոյն քան զամենայն յառաջագոյն *մարտիրոսսն*: - 708. Պատասխանեն վարդապետք եթէ երից ոմանց. այսինքն կուսանաց. և *մարտիրոսաց*. և վարդապետաց: - 712. Եւ գերազանց գործ ցասմանն է համբերել չարչարանաց. և զայս ունին *մարտիրոսքն*: - 712. ...և էր *մարտիրոս* ըստ որում չարչարանաց համբերեաց...: - 712. Որք ի վեր քան զօրէնս գործեցին. որպէս առաքեալք, մարգարէք, *մարտիրոսք*, կուսանք, և այլք: - 739. Չորրորդ, այլ և *մարտիրոսք* և ճգնեալքն **ճ**աւոր. և ուսուցիչքն **կ**աւոր. և ուսեալքն երեսնաւոր: - 757

**ՄԱՐՏԻՐՈՍՈՒԹԻՒՆ +** Ութերորդ՝ թոյլ տալով սրբոց չարչարիլ՝ վասն պսակացն առաւելութեան է. զի կենցաղս այս հանդէ՛ս է նահատակութեան. և ըստ չափոյ համբերութեան՝ առցէ զյաղթանակն. որպէս սրբոյն ստեփաննոսի. զի ունէր զսարկաւագութեան և զառաքելութեան պատիւն, ընկալաւ և *զմարտիրոսութեան* պսակն ի քարկոծումն իւր. այսպէս և այլքն...: - 159. ...իսկ զկուսութիւն և *զմարտիրոսութիւն* նազելեացն հրամայէ...: - 600

**ՄԱՐՏՆՉԻՄ +** Չորրորդ՝ դարձեալ թէ լինէին երկու սկիզբն և հակառակ, *մարտնչէին* ընդ միմեանս՝ և ընդ սկսեալս իւրեանց. և ոչ ինչ մնայր ի խաղաղութեան: - 21. Որպէս յովաբ ո՛չ ընդ դաւթի՝ այլ ընդ աբիսողո՛մ *մարտեաւ*: - 44. Հինգերորդ՝ զի հոգևոր բնութիւնն միանգամ միայն է շրջելի. վասն զի բոլորովին շրջէ զինքն՝ զոր ո՛չ առնէ մարդն. զի մարմինն միշտ *մարտնչի* ընդ հոգին. որպէս յառաջիկայդ ասի **լբ** գլուխն: - 151. Եւ *մարտեաւ* ընդ նմա այր, զչափ ուժոյ և զկերպարանքն եսաւայ զգեցեալ. զի կրթեսցի և մի երկիցէ ի նմանէ: - 311. Նախ՝ զի շարժեալք էին ի բանսարկուէին. որպէս երբեմն ի ձեռն կնոջն. և յայնժամ բարեկամօքն *մարտնչէր* ընդ յոբայ: - 324. Երկրորդ՝ զի թոյլ տուաւ փործողին *մարտնչիլ* որպէս ընդ ադամայ՝ այսպէս ընդ յոբայ: - 327. Երրորդ՝ զի ի ձեռն կնոջն *մարտեաւ*: - 327. ...զի որ ընդ ադամայ *մարտեաւ* և յաղթեաց. աստ նկուն եղեալ յաղթահարեցաւ: - 410. Վասն որոյ ասաց դաւիթ, ամենայն որ *մարտնչի* սրով ընդ կաղս և ընդ կոյրս...: - 431. Նա՛խ՝ թուել հրամայեաց, որպէս այն որ թոյլ ետ իսրայէլի *մարտնչիլ* ընդ բենիամենի, և անկան **լռ** ի դասուց նոցա: - 434. Վաթսուներորդ, *մարտեաւ* ընդ ադրիազարու և սպան զնա և քակեաց զկառս նորա, և զթագն եդ ի գլուխ իւր...: - 438. ...և տէրն *մարտեաւ* ընդ բելիարայ և յաղթեաց մահու. և քակեաց զդժխս. էառ աւար զգերեալսն և էհան յարքայութիւնն երկնից. տալով նոցա զանթառամ պսակն: - 438. Չորրորդ՝ զի նա՛ է առաւել օգնական բնութեանս. *մարտնչելով* աճելութեամբ ընդ դէմ պակասութեան մահու: - 469. Ա՛րդ՝ մեղքն որ ընդ դէմ հոգւոյն սրբոյ՝ մանաւանդ ելանէ ի չար կամաց անձնիշխանականին. և ուղղակի *մարտնչի* ընդ դէմ շնորհաց հոգւոյն սրբոյ. և յիրաւի անթողլի՛ է: - 566. Իսկ անթողլի մեղաց **զ** են պարագայք. այսինքն յուսահատութիւն. յանդըգնութիւն. *մարտընչիլ* զճշմարտութիւնն ճանաչելոյ. նախանձ ընդ դէմ եղբայրական սիրոյն. խստասրտութիւն և անզղջութիւն մինչ իսպառ: - 567. Ընդ դէմ առաջնոյն է՛ *մարտնչիլ* զճշմարտութիւնն ճանաչելոյ. և ընդ դէմ երկրորդին՝ նախանձն ընդ դէմ եղբայրական սիրոյն: - 567. Եւ եղջիւրս **ժ**. այսինքն զայնոսիկ որք *մարտնչին* ընդ **ժ** բանեան օրինացն: - 707. ...որ ի կատարածի աշխարհի *մարտնչին* ընդ եկեղեցւոյ: - 708. Այժմ կա՛լ ասի և *մարտնչիլ* վասն հարսին եկեղեցւոյ: - 736

**ՄԱՔԱՌԻՄ +** Վասն զի իմաստունք *մաքառին* ընդ դէմ հաւատոց. և քննութեամբ մտաց ո՛չ կարեն հասանիլ. և զրկին ի փրկութենէ իւրեանց: - 96

**ՄԱՔՈՒՐ +** Վասն է՞ր հրեշտակք *մաքուր* և ազատ են յամենայն չարեաց: - 139. Իսկ պարզն և *մաքուրն* մնայ ի յուղեղն ի փափկոց խելացն: - 242. Երկրորդ՝ սպիտակ. և նոյնպէս նշխարն. զի անաղտ և *մաքուրս* գործեն: - 339. Իսկ պատելն ոսկի ներքոյ և արտաքոյ, զի աստուածատեսա՛կք են և *մաքուր*: - 344. Երկրորդ՝ երկուքն ևս ահարօնի. զի բուրվառն ոսկի *զմաքուր* քահանայութիւնն ցուցանէ. և զաւազանն զիշխանութիւնն: - 382. Ապա ուրեմն պատշա՛ճ էր նիւթ մարմնոյն քրիստոսի *մաքուր* արիւնն կուսին...: - 470. Իսկ աստուածայինն անեղ էութիւն ամենևին պարզ և *մաքուր*...: - 479. Չորրորդ «մկրտիլ ի նմանէ» այսինքն աղբիւրն ի յառուն. լիութիւնն ի կաթիլ մի ջրոյն. *մաքուրն* ի կաւոյն սրբիլ. և արեգականս արեգակն՝ ի ճրագէն լուսաւորիլ: - 487. Որոյ պատճառ է, զի ո՛չ ի սերմանէ՝ այլ ի *մաքուր* արենէ կուսին էառ մարմին: - 568. Արծաթ՝ *մաքուր* վարքն: - 645. Յորժամ սրբազան և *մաքուր* հոգին հասանէ ի վախճան՝ ուրախութեամբ ցնծայ իբր ի հանդիսից զերծեալ և ի պսակն

ընթացեալ. և որպէս յանփոփոխ կեանըն հետևեալ: - 668. Այսպէս է վախճան *մարուր* և սուրբ հոգւոցն. ուրախութեամբ ընթացեալ ի պսակն և զերծեալ ի բանտէ խաւարային մարմնոյ: - 669

**ՄԱՔՍԱՒՈՐ +** Երրորդ վասն այն արգել, զի ցուցանէ թէ յոյժ պատուեցաւ մարմինն այն և ո՛չ է համարձակելի որպէս յառաջն *մաքսաւորք* և պոռնիկք մերձենային: - 517. Եւ «աստուած քաւեա՛ զիս զմեղաւորս» առ Երրորդութիւնն սուրբ. որպէս տէրն ուսոյց *մաքսաւորին*: - 621

**ՄԱՔՍԻՄԻԱՆՈՍ - ...**որպէս ասէ աստուածաբանն գրիգոր առ *մաքսիմիանոս* եթէ «մեք կենդանիքս քաւեմք զպարտս մեռելոյն զոր նոքա ո՛չ կարեն և հատուցանեմք»: - 701

**ՄԱՔՍԻՄՈՍ** - Իսկ *մաքսիմոս* իմաստասէրն ասէ, Յոգի մարդոյ **բ** զօրութիւն ունի. միտք և բան: - 248

**ՄԱՔՐԱԳՈՅՆ +** Այս է՝ ըզիրատեսակն յերակս աչաց. և զօդատեսակն լսելեաց. և զայլսն նմանապէս. և *զմաքրագոյնն* սոցա ի խելս ի զգուշութիւն զգայութեանց: - 786

**ՄԱՔՐԱԿԱՆ +** Երրորդ՝ զի սերոբէն *մաքրական* լսի և հրաբերծ. ըստ որում մաքրեաց զմարգարէն. և քերոբէն իմաստութեամբ լուսաւորիչ. և աթոռքն ուղղութեամբն կատարիչ: - 135. Երրորդ՝ օծումն *մաքրական*. որպէս հիւանդաց: - 474. Այսպէս ասէ սուրբն դիոնէսիոս եթէ՝ մաքրելիք են **ե** դասք. յորոց վերայ իշխէ սարկաւագն և գործէ՛ *զմաքրականն*: - 608

**ՄԱՔՐԱՄԻՏ +** Այլ դու ո՛վ այրդ աստուծոյ *մաքրամիտ* և ճգնազգեաց միայնաւոր սուրբ հայրդ սահակ, թէ և զիջանես եղբայրական սիրով խնդրել բանս ի մէնջ. սակայն կարօղ ես և զթերին լնուլ և զյաւելորդն կշռել. և զմեզ օգտեցուցանել ի ներգոյէ՛ քոյին պայծառամիտ սրբութեան սրտի: - 558

**ՄԱՔՐԵԼԻՔ** - Այսպէս ասէ սուրբն դիոնէսիոս եթէ՝ *մաքրելիք* են **ե** դասք. յորոց վերայ իշխէ սարկաւագն և գործէ՛ զմաքրականն: - 608

**ՄԱՔՐԵՄ +** Յինգերորդ՝ *մաքրեն* լուսաւորեն՝ և կատարեն: - 134. Երրորդ՝ զի սերոբէն մաքրական լսի և հրաբերծ. ըստ որում *մաքրեաց* զմարգարէն. և քերոբէն իմաստութեամբ լուսաւորիչ. և աթոռքն ուղղութեամբն կատարիչ: - 135. Որև այժմ ի յեկեղեցի ի նոյն խորհուրդ՝ սերոբէին պատկեր որ է քշոցն՝ ի ձեռն սարկաւագին աւանդի՝ որ է՛ *մաքրօղն*. և երրորդ կարգ յետ քահանային և քահանայապետին: - 135. Վեցերորդ՝ ներգործութեամբ. ըստ որում *մաքրեն* և *մաքրին* և այլն: - 138. Այսպէս, Նախ՝ զի *մաքրել* և լուսաւորել և կատարելագործել հասարակ է ի սոսա: - 138. Երկրորդ՝ զի նախ *մաքրելն* է, և ապա՛ լուսաւորելն, և ապա՛ կատարելագործելն. և այս կարգ հասարա՛կ է ի նոսա: - 138. Եւ աստ ասէ իրինոս՝ զի թէ յաւիտենական է հուրն, զիա՞րդ վախճան ածեն տանջանաց յաւիտենից ունայնախոհքն. թերևս կարծելով թէ ի հուրն *մաքրեսցի*. զի մի՛ լիցի աշակերտացն ճշմարտութեան խորհիլ և ասել: - 153. Քանզի՝ *մաքրէ*՛ զաղտ: - 207. Ա՛յս է խորհուրդ հին պատարագացն և քրիստոսիւ *մաքրեցին*: - 361. Երրորդ, երկրորդ սեղան է սիրտ քահանային. որպէս սեղանն զողջակէզն *մաքրէ*՛, նոյնպէս իշխանութիւն քահանային: - 363. Ջուրն աւազանն որ *մաքրեաց* զմեզ յադամայ մեղացն: - 368. Եւ ասեն յետ տարւոյ մի եկեալ նոխազն *մաքրեալ* յարենէն: - 369. Եւ *մաքրեալ* յարենէն, որք աւազանաւն մկրտին՝ *մաքրին* յարենէն...: - 369. Եւ ո՛չ զներելին, զի հոգւովն *մաքրեցաւ*: - 383. Այլ ապաւառ է՛ մեղքն մեր զոր ընկալաւ յինքն և *մաքրեաց* զմեզ: - 383. Որ և միով հպմամբ ի լանջսն՝ *մաքրեցաւ* աշակերտն յայսպիսի կրից. քանի՞ առաւել որ եբարձ զապականութիւնս ազատ լիցի յայսպիսի կրից: - 383. Երկրորդ, մկրտութիւնն է **գ** օրն. զի ունի հրաժարիլն և զդաւանելն և *զմաքրիլն*. և ապա՛ եօթն խորհուրդ եկեղեցւոյ: - 384. Որ և յերկրորդ գալուստն նախ դատեսցէ. և ապա թագաւորեսցէ անվախճան. ընդ որով քահանայագործութեամբ *մաքրէ*՛ և լուսաւորէ՛ և կատարեալս առնէ միշտ անզրաւ յաւիտենիւ: - 450. ...ըստ որում որ էջ հոգին սուրբ յորովայն անարատ կուսին և *մաքրեաց* զնա, և կազմեաց ի նմանէ զարիւնն. և սրբեաց և օծեաց զնա միաւորելով պատկերապէս: - 475. Զի ապականացու զապականացու *մաքրել* ո՛չ կարէ. այլ անապական մարմնովն եղև մաքրիչ տէրն մեր ապականութեան մերում: - 502. Դարձեալ ասեմք, եթէ միով հպմամբ լանջացն յիսուսի *մաքրեցաւ* աշակերտն յայսպիսի կրից. քանի՞ առաւել բարձօղն ապականութեանց ազատ լիցի յայսպիսի կրից: - 502. Եւ նախ *մաքրելն* է ի մեղաց, և ապա լուսաւորելն ի շնորհաց: - 540. Այլ կոյսն մարիամ աստուածածին՝ էր ազատ ի մահացուէն և ի ներելւոյն. բայց ո՛չ ...ի սկզբնականէն. զոր հոգւովն սրբով *մաքրեցաւ*: - 568. Սրբութիւն սրտին է որով պայծառանայ և *մաքրի* սիրտն առ ի տեսանել զաստուած. և առ ի սիրել յոյժ ջերմ եռանդապէս: - 585. Ա՛րդ՝ առեալ լինի աստ սրբութիւն սրտին ո՛չ վասն առաքինութեան, այլ վասն որպիսութեան իմն *մաքրեալ* հոգւոյն: - 585. Եւ թէ իցէ ինչ՝ անզօ՛ր է. ապա յա՛յտ է զի խաղաղութիւնն է յո՛յժ *մաքրեալ* հոգւոյն: - 585. Բայց արքեղայոս դարձեալ *մաքրեաց* զամենայն որ ուսաւ ի ծովային կենդանեաց: - 640. ...և որք միջակք են, և նոքա ի քաւարանին *մաքրին* և յերկինս ելանեն: - 686.

Երկրորդ, ասէ սուրբն դիոնէսիոս ի ննջեցելոց կատարմանց գլուխն՝ եթէ *մաքրելոց* հոգին հասեալ ի վախճան՝ յայտնի և մերձակայ տեսանէ զամենայն փառս և զպսակ զոր ընդունելո՛ց են նոքա ի յարութեան աւուրն: - 691. Զիա՞րդ վախճան ածեն տանջանաց ունայնախոհքն. թէրևս կարծելով թէ ի հուրն *մաքրեսցին*. զոր մի՛ լիցի աշակերտաց ճշմարտութեանն խորհիլ: - 703. Որդիքն ահարօնի՝ են սուրբքն. որք նախ քան զվերափոխիլն ի սենեակ վերին արքային, աստուածայնովքն բանիւք յամենայն հպարտութենէ մեղաց *մաքրին*: - 756. Այլ և են ոմանք որ ասեն զերկիրս *մաքրեալ* երեսնաւոր. և զդրախտն վաթսունաւոր. և զվերինն եէմ հարիւրաւոր: - 758. Ունելով տերև և ծաղիկ և պտուղ. այսինքն *մաքրել*, լուսաւորել, և կատարեալս առնել ըստ մեծին դիոնիսի: - 767. Նա՛խ՝ զի *մաքրեսցին* զգայարանք: - 786

**ՄԱՔՐԻՉ +** Զի ապականացու զապականացու մաքրել ո՛չ կարէ. այլ անապական մարմնովն եղև *մաքրիչ* տէրն մեր ապականութեան մերում: - 502

**ՄԱՔՐՈՒԹԻՒՆ +** Տասներորդ՝ յորժամ ջնջի ամպն, վերըստին պայծառանայ օդն յառաջին *մաքրութիւնն* իւր: - 206. Նախ՝ *մաքրութիւն* ի մեղաց: - 251. Այլ անճառ երանութիւնն և առաքինութիւնն է աստուծոյ գեղեցկութիւնն զոր մեզ պարգևեաց. այսինքն *մաքրութիւն*, անախտութիւն, և ի չարէն օտարութիւն ասէ նիւսացին սուրբ գրիգոր: - 271. Նոյնպէս և տէրն մեր ետ հաւատացելոցն զկենարար մարմինն և արիւնն իւր. յորոց խնդրէ զգործս տասնաւոր. այսինքն զկատարեալս. և զկատարումն **Ժ** բանեան օրինացն. ի յորս է՛ *մաքրութիւն* **Ժ** զգայարանացս որպէս ի վերոյ ասացաւ: - 302. Նոյնպէս և քրիստոս իմաստութեամբն իւրով կերակրէ՛ զնոսա և զգեցուցանէ որպէս **իդ** երիցանցն, որ տուաւ նոցա արկանելիս սպիտակս. այս է շնորհին *մաքրութեան* զոր ընկալան ի քրիստոսէ: - 315. Եւ ներքոյ, զի բնութեամբ առին ընդ լինիլն իւրեանց *զմաքրութիւնն*: - 344. Ներքոյ և արտաքոյ ոսկին՝ հոգւոյն և մարմնոյն *մաքրութիւնն*: - 345. Ի կենդանիս. որպէս ոչխար և այլն յաղագս *մաքրութեան* ոգւոց: - 357. Եւ դարձեալ՝ նաշիհն է՛ նշանակ խոնարհ մարմնոյ *մաքրութեան*. և խունկն առաքինութեան հոգւոյ. և իւղն զուարթութեան մտաց: - 357. Երկրորդ՝ զի հրեշտակք ի հարկէ բնութեան ունին զկուսութիւնն. իսկ աստուածածինն զայն պահեաց *մաքրութեամբ* մարմնով զկուսութիւն ողջախոհութեան: - 463. Նա՛խ՝ զի ո՛չ վայելէր *մաքրութեան* կուսին: - 470. Եւ զայս հրոյ իմանի որ առ գալստեամբն քրիստոսի ոմանց *մաքրութիւն* ներելեացն լինիլ և առաւել պայծառանալ. որք ոսկի և արծաթ և ականս պատուականս շինեցին: - 488. Այլ և *մաքրութիւն* մեղաց ըստ չորից նիւթոց մարմնոյս: - 493. Նա՛խ՝ *մաքրութիւն* ի մահու չափ մեղաց. զի այլ ո՛չ ևս տիրեցին նոցա յետ հոգւոյն իջման: - 524. Այլ և խաղաղականն որ է ի կարդալն՝ է՛ է փոխ. ի պահպանութիւն **է** զգայարանցս. և ի *մաքրութիւն* անցեալ գործելեացն: - 622. Երրորդ՝ ճանապարհ կոչի շնորհաց և *մաքրութեան*. - 666. Զի աղօթիւք և զանազան *մաքրութեամբ* սրբեմք զմեզ, - 682. Այլ զտեսութիւն սրբոցն առաւելու լոյսն շնորհաց և *մաքրութեան*. և ազատումն ի թանձրութեանց մարմնոյն: - 685. ...որպէս ասէ մեկնիչն տեսլեան. եթէ սպիտակ հանդերձն շնորհացն քրիստոսի *մաքրութիւնն* է. որ սրբութիւն մեղաց մերոց արար քրիստոս. յոր ամենայնքն վայելեցաք. զի յորժամ սրբի հոգին, բնական ունի զպայծառութիւնն: - 690. Ասէ մեկնիչն, սպիտակ հանդերձն զոր զգեցեալ էին՝ շնորհացն քրիստոսի *մաքրութիւնն* է. յորմէ ամենեքեան վայելեցաք որպէս ասէ առաքեալն...: - 696. Դարձեալ՝ ոսկի է հաւատն և դաւանութիւնն անապական. և Արծաթ՝ անաղտ *մաքրութիւնն* ի մեղաց. և Պատւական ակունք՝ զանազան առաքինութիւնք: - 702. Դարձեալ, Արծաթ *մաքրութիւն* սրտի և խորհրդոյն: - 702. Պայծառ հանդերձն զոր զգեցեալ են՝ շնորհացն քրիստոսի *մաքրութիւնն* է յոր ամենայնքն վայելեցաք. - 712. Երրորդ զի սուրբ է. ցուցանէ *զմաքրութիւն* նոցա առանց աղտեղութեան: - 712. ...և էր կոյս ըստ որում պահեաց *զմաքրութիւնն.* վասն որոյ նմանակիցք նորին՝ թագիւ պսակին ընդ նմին: - 712. Երկրորդ վասն տեղւոյն *մաքրութեան*: - 763. Եւ գեղեցկութիւն մարմնոյն բաղկանայ յերից. այսինքն ի *մաքրութիւնն*, ի չափաւորութիւնն, ի ձև անդամոցն: - 766. Եթէ յարդեան ժամանակիս հաւատարիմ է, զի որ ոք և իցէ յանցաւոր, եթէ զղջասցի և ատեսցէ զմեղս ըստ մարգարէին՝ խոստովանութեամբն առնու *զմաքրութիւն* և զվարձս ապաշխարութեան: - 778. Զի որպէս բան պատկերին, այսպէս և բան շնորհացն եռակի. զի միապէս սոքա եղծանին մեղօք, և նմանապէս արծարծին *մաքրութեամբ* առ որ ոք և իցէ: - 782

**ՄԵԹՈԴԻՈՍ** - *Մեթոդիոս* ասէ՝ «հաւատն է առաքինութիւն՝ որով հաւատան զանտեսանելին»: - 571

**ՄԵԼԱՆ + Յոգի և մարմինս է որպէս մագաղաթ. կամք և իմացումն դպիր և գրօղ. հաւատքն գրիչ. արտասուքն *մելան*. և գիրն գործք բարի կամ բան աղօթից**: - 741. Մանաւանդ թէ՝ հոգին սուրբ գրօղ դպիր. և ուղղութիւնն գրիչ գործիք. և որք *զմելանն* առատ տամք և զմագաղաթն, զսուրբ գործս անկեղծաւոր և զբանս աղօթից օրինաւոր, ա՛յնքան առաւել գրիմք ի գիրն կենաց: - 741. Իսկ խոտելոցն

գիր, դպիր է պիղծ հոգին դիւական. և չար կամքն իւրեանց և խորհուրդն և հեշտութիւն մարմնոյն *մելան*. և ըստ գործոց առաւել և նւազ գրեն ի գիրն դատապարտութեան: - 741

**ՄԵԼԻՏՈՍ** - Տիմոթէոս աղէքսանդրու. *Մելիտոս* անտիոքայ. **ճծ** հարք ընդ դէմ մակեդոնի հայհոյչի հոգւոյն սրբոյ: - 542

**ՄԵԼՔԱ** - Անունք Կանանց Նահապետացն... Սերուքայն *մելքա*: - 299

**ՄԵԼՔԻ** - Նախ՝ զի *մելքի* թագաւոր լսի: - 50. Յորն անունն *մելքի*, և մօրն սաղա. և քաղաքին սաղիմ: - 300. Նոյնպէս և մելքիսեդեկ թագաւոր էր սաղիմայ. որպէս և անունն յայտնէ. *մելքի*՝ որ է՛ թագաւոր: - 300. Զի *մելքի*՝ որ է թագաւոր. և սեդեկ՝ արդար. և սաղիմն խաղաղութիւն թարգմանի: - 301. Չորրորդ՝ ըստ անուանակոչութեանն. զի *մելքի*՝ որ է՛ թագաւոր. և թագաւորէր սաղիմայ: - 301-302. Զի ի ցեղէն նաթանայ որդւոյ դաւթի այրն ոմն անուն ղևի՝ ծնաւ երկուս որդիս. *զմելքի* և զպանթեր: - 460. Եւ ծնաւ *մելքի* զհեղի: - 460. Եւ յետ մահուանն մատթանայ՝ *մելքի* ի ցեղէն նաթանայ որ որդի էր ղևեայ և եղբայր պանթերայ, առեալ զնոյն կին մատթանայ և ծնաւ զելի: - 460. Յակոբ ի ցեղէն սողոմոնի որդի մատթանայ. և Ելի ի ցեղէն նաթանայ որդի *մելքեայ*: - 460. Եւ այսպէս **բ** եղբօր թոռունք էին Մարիամ կոյսն և Յովսէփ ի հարց կողմանէ *մելքեայ* և պանթերի ի նաթանայ: - 460

**ՄԵԼՔԻՍԵԴԵԿ** - *Մելքիսեդեկ*՝ **ժ** գլխով: - 29. Զի քրիստոս Քահանա՛յ է ըստ կարգին *մելքիսեդեկի* **ժ** կերպիւ: - 50. Եւ ասեն դո՛ւ ես քահանայ յաւիտեան ըստ կարգին *մելքիսեդեկի*: - 144. Իններորդ՝ *Մելքիսեդեկի*. բաղդատութիւն առ քրիստոս, և յաբրահամ: - 283. Ուստի՞ է *մելքիսեդեկ*: - 300. Ապա՛ ի թաբօր լերինն ամպ խոնարհեալ և ծեռն կարկառեալ ծեռնադրեաց զնա ասելով, այս *մելքիսեդեկ* անհայր անմայր չհամարեալ յազգս՝ նմանեալ որդւոյն աստուծոյ: - 300. Զի՞նչ է որ եփրեմ ի գիրս կցորդաց ասէ, *Մելքիսեդեկ*՝ որ նա՛ ինքն է սեմ: - 300. *Մելքիսեդեկ* զնորա դէմն առեալ՝ զնորա գործն էլից. օրհնեաց զաբրահամ՝ և սեմ կոչեցաւ: - 300. Զի՞նչ զանազանի քահանայութիւնն *մելքիսեդեկի* և աբրահամու: - 300. Երեք շնորհօք հաւասարք են *մելքիսեդեկ* և աբրահամ. այսինքն քահանայութեամբ, թագաւորութեամբ, և մարգարէութեամբ: - 300. Նոյնպէս և *մելքիսեդեկ* թագաւոր էր սաղիմայ. որպէս և անունն յայտնէ. մելքի՝ որ է՛ թագաւոր: - 300. Նախ՝ զի *մելքիսեդեկ* ունէր պատարագ հաց և գինի. և աբրահամ ո՛չ ունէր: - 300. Այլ *մելքիսեդեկին* էր նշանակ յաւիտենական պատարագին քրիստոսի ի տեսակ հացի և գինւոյ: - 301. Այլ *մելքիսեդեկին* անխիղճ. որ միշտ ուտի անշունչ և անարիւն: - 301. Եւ *մելքիսեդեկին* յերկրէ ծնեալ և յերկինս սնեալ, որ առաւել յարմարի ճշմարտութեանն ի յերկնից իջեալ և ի կուսէ ծնեալ: - 301. Յինգերորդ՝ *մելքիսեդեկ* մարդկան նւիրեաց. որպէս քրիստոս առաքելոցն և մեզ: - 301. Վեցերորդ՝ նուիրեաց *մելքիսեդեկ* զպատարագն և ընկալաւ զտասանորդն. որպէս քրիստոս պարգևէ՛ հաւատացելոց զշնորհս, և առնու զտասնեակս զկատարեալ և զբարի գործս. կամ զտասն բանեան օրէնս ժ զգայարանօք: - 301. Եօթներորդ՝ *մելքիսեդեկ* ինքնին մատոյց զպատարագն քաղցելոց և ծարաւելոց. որպէս և քրիստոս ո՛չ միջնորդօք հրեշտակաց կամ մարդկան, այլ ինքնին բաշխեաց զմարմին և զարիւն իւր՝ քաղցեալ և ծարաւեալ ազգի: - 301. Ութերորդ՝ որպէս և աբրահամ ճաշակեաց զպատարագն *մելքիսեդեկի* և ո՛չ հաղորդեցաւ ընչիցն սոդոմայ: - 301. Իններորդ՝ քահանայութիւն և պատարագն *մելքիսեդեկի* առաջին էր և երկնաւոր: - 301. Տասներորդ՝ զի *մելքիսեդեկ* ո՛չ միայն պատարագաւն, այլ և անուամբ և տեղեաւ ևս օրինակ էր քրիստոսի: - 301. Այսքան զանազանութիւն է քահանայութեանն *մելքիսեդեկի* և աբրահամու: - 301. Օրինակաւ համեմատութիւն *մելքիսեդեկի* առ քրիստոս: - 301. Նա՛խ՝ որպէս *մելքիսեդեկ* ի յանցաւոր և յանիծեալ ազգէն քանանու: - 301. Երկրորդ՝ *զմելքիսեդեկ* քահանայ առաջին վկայէ՛ գիր ըստ մովսէսի...: - 301. Երրորդ՝ զի *մելքիսեդեկ* քահանայ ո՛չ ըստ մարմնական ինչ օծմամբ իւղոյ որպէս այլոցն, այլ շնորհօք հոգւոյն անընդմիջաբար: - 301. Եօթներորդ՝ զի *մելքիսեդեկ* անհայր անմայր չհամարեալ յազգս: - 302. Ութերորդ՝ զի *մելքիսեդեկ* պատարագ հաց և գինի մատոյց աբրահամու: - 302. Տասներորդ՝ որպէս *մելքիսեդեկ* ետ զայն և ընկալաւ յաբրահամէ՛ զտասանորդսն: - 302. Վասն քրիստոսի և *մելքիսեդեկի*, ասացեալ է և յայլ ուրեք ի վերոյ ի գիրս աստուածաբանութեան ե գլուխն՝ ի համարքն: - 302. Եւ է՛ որ մատուցօղն մեծ է քան զընդունօղն. որպէս *մելքիսեդեկ* քան զաբրահամ. և քահանայն մեծ է քան զժողովուրդն որ ճաշակէ: - 306. Եւ է՛ որ մատուցօղն մեծ է քան զընդունօղն. որպէս *մելքիսեդեկ* քան զաբրահամ. և քահանայն մեծ է քան զժողովուրդն որ ճաշակէ: - 491. Դարձեալ՝ *մելքիսեդեկ* հաց և գինի մատոյց պատարագ աբրահամու և ո՛չ ջուր. որ նշանակէր զճշմարիտ պատարագն քրիստոսի. ապա ուրեմն ո՛չ է պարտ խառնել ջուր: - 595

**ՄԵԼՔՕՂ** - Երեսունևե, հաստատեաց զուխտն առ յովնաթան և *մելքօղ*. և տէրն եղբարց իւրոց և եկեղեցւոյ...: - 437

**ՄԵԾ +** Առընչական. որպէս *մեծ* և փոքր: - 21. Եօթներորդ՝ Հայր իմ *մեծ* քան զիս. և պատասխանիք նոցա ը գլխով: - 29. Ուստի յա՛յտ է մեծութիւն յանցանացն. քանզի ի հինն զինչև մեղանչէր ոք *մեծ* կամ փոքր՝ պատարագաւն սրբէր. թռչնօք և անասնօք: - 33. Որ է տարակուսանք այս, եթէ գոյր ոմն *մեծ* քան զհայր՝ զի բռնադատեաց զնա՛: - 36. ...զքանն չա՛փ իմացիր՝ թէ *մեծ* է որչափ ես. որպէս ասէ որդի...: - 39. Եւ թէ հայր *մեծ* է քան զորդի, զիա՞րդ տանի փոքրն *զմեծն*: - 39. Եւ զիա՞րդ կարիցէ ձկտիլ նըւազն առ *մեծն* լնուլ զհայր: - 39. Եւ զի ո՛չ է հնար որպէս ասացի, ապա ուրեմն ո՛չ է *մեծ* հայր քան զորդի. զի ի միմեանց տանին, և ի միմեանց լնուն: - 39. Դարձեալ ասի *մեծ* ըստ պատճառին, և հաւասար ըստ բնութեանն: - 39. Դարձեալ ո՛չ ասի անպատճառ պատճառն քան զպատճառելին *մեծ*. զի և որդի նոյն պատճառի հօր փառաց և մեծութեանն է հաղորդ: - 39. Դարձեալ ասի *մեծ* բանն աստուած քան զմարդկային բնութիւնս: - 39. Իսկ միաւորութեանն իմանալ՝ ոչ է ինչ *մեծ*. այլ է հաւասար որպէս առօղն՝ նոյնպէս և առեալն զոյգ աստուած և մարդ: - 39. Դարձեալ քննեսցուք ըստ մեզ. զի ո՛չ են հակառակ առաքելոյն բանն և աւետարանին, թէ հայր *մեծ* է քան զորդի...: - 40. Զի ո՛չ էր հայր *մեծ* քան զնա՝ ի յոր երդնոյր. զի որք երդնուն՝ ի մեծագոյնսն քան զինքեանս երդնուն. ապա ուրեմն հաւասա՛ր է որդի հօր և ո՛չ փոքր որպէս ասէ առաքեալն: - 40. ...որ եղև *մեծ* խորհրդոյս սպասաւոր. այսինքն փրկութեան մերոյ՝ մարդանալովն իւր: - 40. ...*մեծ* է նմա հալածիլն՝ քան թէ մեր վերջանալն թշուառութեամբ: - 43. *Մեծ* է հայր. *մեծ* է և որդի. անբովանդակելի է և հոգին սուրբ...: - 56. Երկրորդ ասեն, առաքիլն փոքրագունին է ի *մեծ* է: - 60. Եւ կամ թէ զո՛չ ոքն ասիցէք, ահա նո՛ր աղանդ չարափառութեան և խափանումն տընօրէնութեան *մեծի* խորհրդոյն: - 68. Ա՛րդ՝ որպէս կարծեն ինքեանք զէն *մեծ* ունիլ առ երկոսին կողմանս, կամ հարկիւ անկանիլ ի նեստորին բնութիւն և բնութիւն, և կամ ըստ եւտիքեայ շփոթել զբնութիւնսն: - 75. Զի *մեծն* աստուածաբան ընդ դէմ արիոսի պատերազմի. որ արարած ասէր զբանն՝ աստուածացեալ յետոյ: - 79. Երանելին պօղոս՝ զխորհուրդն աստուածպաշտութեան յայտնի և *մեծ* ասէ. ըստ որում երևեցաւ բանն մարմնով. բնաւին ապա բաժանելն ի մարմնոյն անբարշտութիւն է և իմացմամբ և բանիւ: - 93. Համագոյ և միասնական սուրբ Երրորդութեանն ո՛չ է առաջին և վերջին. ո՛չ *մեծ* և փոքր. և ո՛չ երէց և կրտսեր: - 109. Երկրորդ՝ ըստ չափոյ մտիցն քանականայ *մեծ* կամ փոքր: - 125. Ութևժերորդ՝ բազմապատիկ *մեծ* է քան զերկիր. և փո՛քր քանակով ցուցանի: - 127. *Մեծ* է տէր մեր և *մեծ* է զօրութեամբ. այլ քանակեալ մարմնով ի չափս մեր տեսանի: - 127. Այլ և *մեծ* առ հաւատացեալս, և չափաւոր անհաւատիցն երևի: - 127. Երկրորդ՝ է՛ գործ արդարութեան. զի ըստ արժանեաց հատուցի *մեծաց* և փոքունց. և առաջնոց և երկրորդաց: - 130. Եւ այսպէս խօսին *մեծք* առ փոքունսն. և փոքունքն առ *մեծսն*: - 145. Եւ այլք ասեն այսպէս հակառակիլ ընդ աստուծոյ, յորժամ ետես զինքն փառօք և վայելչութեամբ քան զամենայն դասս գերազանցեալ, կամեցաւ *մեծ* լինիլ ի վերայ ամենայնի և հաւասար աստուծոյ: - 149. Եւ որքան պատւական է ճանաչումն՝ այնքան *մեծ* է սխալումն: - 150. ...և յայնժամ ուրախանան սուրբքն, յորժամ ի մարմնական հեշտութեանց հեռանան. և արիանան ի փորձութիւնս. և սակաւ նեղութեամբ ժամանեն ի *մեծ* հանգիստն: - 159-160. Ո՛չ ըստ տարաչափութեան քանակի ասեմք. այլ ըստ ամենազօր կարողութեան և անչափ անհասութեան ասեմք զնա *մեծ*: - 171. Ո՞վ *մեծի* աղետիս և վշտալից տարակուսի. զի այսպիսիքս զմի միաւորութիւն տեառն ուրանան...: - 176. Վեցերորդ՝ *մեծ* է քան զաշխարհս: - 186. Հինգերորդ՝ զի դիրքն իւր *մեծ* է. թէպէտ և առ *մեզ* փոքր: - 186. Իսկ վրացն Ախալծիլ, որ ստուգաբանի Ախացայ. այսինքն թէ *մեծ* պարոնացի. Սեթալի. որ է՛ սոնթեցի: - 201. Հինգերորդ՝ բնակութիւնք եղջերուաց և մանր և *մեծ* էրէոց...: - 211. Այսպէս և մարդն թէպէտ յետոյ ստեղծաւ, *մեծ* և պատուակա՛ն է քան զամենայն երևելի արարածս: - 230. Նա՛խ՝ զի *մեծ* և պատուական ասի մարդն: - 230. Եւ այս առինչ է. զի *մեծն* ցուցանէ զփոքրն. և պատուականն զանապատիւն: - 230. Վասն որոյ պա՛րտ էր լինիլ նոցա նախ որ փոքունք և անպատիւք են, զի երևեսցի *մեծն* և պատուաւորն այսինքն մարդն: - 230. Զի *մեծ* է և անճառ և անպատում զօրութիւն և իմաստութիւն աստուծոյ...: - 231. Զորօրինակ՝ բնութեան յատուկն և անձին. զի բնութեան տարբերն հեռագոյն է և *մեծ*. որպէս կենդանին և բանականն. և դիմաց յատուկն մերձ և նուազ. որպէս յատուկն մերձ և նուազ. որպէս պատկեր և տիպ: - 235. Նախ՝ զի ոչ ոք ճանաչէր զհայր կամ զեղբայր իւր. այլ ես զքեզ հայր գիտէի, և դու զայլ ոմն եղբայր. և լինէր *մեծ* շփոթումն: - 238. Գլուխն *մեծ*, ցուցանէ զդէշն: - 246. Իսկ քառակուսի և չափաւոր *մեծն* իմաստուն է և մեծահոգի: - 246. *Մեծ* աչքն և մթագոյն, բղջախո՛հ է: - 246. *Մեծ* ականջն դէ՛շ է և շատախօս: - 246. Շրթունքն բարակ և բերանն *մեծ*, ուժեղ է և մեծասիրտ: - 247. Բերանն *մեծ*՝ բազմակո՛ւլ է և անգութ և անհնազանդ: - 247. Վասն է՞ր

տղայն առաւել ուսանի քան *զմեծն*: - 251. Ընդ դէմ այսմ երևի *մեծին*: - 251. Նախ եթէ վասն մարմնո՛յն եղև հոգի զի շարժեսցէ զնա. ապա անա՛րգ է հոգին քան զմարմին որ վասն նորա եղեալն է. և *մեծ* և պատուական է մարմին քան զհոգի: - 253. Անապատ *մեծ*...: - 285. Եւ թէ՝ *մեծ* էր նշանն քրիստոսի որ հոգւոցն արար, քան զմովսէսին որ մարմնոց: - 285. Նմանապէս և *մեծն* ի մարգարէս աստուածախօսն մովսէս որ աստուած կոչեցաւ փարաւոնի. իշխելով տարերցս փոփոխման, որ ջրածինն էր՝ եղև վիմածին և կայծակնածին. որում լուսաւորեցան երեսք: - 288. Եւ նախնին կրօնաւորաց *մեծն* անտօն. և այլք բազումք ըստ տեառն հրամանի, թէ «որ արասցէ և ուսուսցէ, նա *մեծ* կոչեսցի»: - 288. Զի զամենայն կենդանեաց սերմն կրելոյ էր՝ պիտո՛յ էր *մեծ* տուն: - 293. Զի է՛ որ մատուցօղն *մեծ* է քան զպատարագն. որպէս հին օրինաց պատարագն. զի անասունք էին: - 306. Եւ է՛ որ պատարագն *մեծ* է քան զմատուցօղն. որպէս նոր օրինացս՝ մարմինն քրիստոսի *մեծ* է քան զքահանայն: - 306. Եւ է՛ որ մատուցօղն *մեծ* է քան զընդունօղն. որպէս մելքիսեդեկ քան զաբրահամ. և քահանայն *մեծ* է քան զժողովուրդն որ ճաշակէ: - 306. Այսինքն *մեծ* գոլ մատուցօղն և ընդունօղն և պատարագն: - 306-307. Տասներորդ՝ ևս մեծագոյն խորհուրդ. զի բանն աստուած որ անդրանիկ էր հօր, եղև կրտսեր մարդ ի ժամանակի և փոքր. ըստ որում կոչեաց զինքն «փոքրիկ». զի բնութիւն մարդոյս ընդ ինքեան խառնելով արասցէ *մեծ* և անդրանիկ: - 311. Իննև**ժ**, յովսէփ ստացաւ ոսկի և զարծաթ և զերկիրն եգիպտացւոց՝ փարաւոնի. այսինքն զզէնս սատանայի. զի փարթամութիւնն *մեծ* զէն է սատանայի որովք գործէ՛ զամենայն պղծութիւնս. որպէս երկիրն սոդոմայ պարարտութեամբ գործէր զմեղս: - 314. ...և նա՛ կոչի հրեշտակ *մեծի* խորհրդոյ ըստ *մեծին* եսայեայ...: - 330-331. Չորրորդ՝ խնայեաց զնոսա իբր ի մարդիկ զի զղջասցեն փոքր խրատովն և ի *մեծ* պատուհասէն զերծանիցին. այլ նոքա խստացան մինչև զամենայնն կրեցին: - 333. Եւ տէր մեր արար զզատիկն յերիկունն *մեծի* **ե** շաբաթին: - 337. ...**բ** Վահանակն՝ լուսաւորքն *մեծ*...: - 348. Երկոտասաներորդ, ոչխար տարևոր *մեծի* զատկին յելսն եգիպտոսի, խորովեալ հրով. և բաղարջ ընդ եղեգի կերեալ: - 359. Առաջին, ողջակիզաց *մեծն*. յոր զհասարակացն տօնէին: - 364. Երրորդ՝ որ զմիսն ի վերայ յօշէին և ի *մեծ* սեղանն հանէին: - 364. Որպէս նախ քան զօրէնս, բնական քննութեամբ ընտրէին մարդիկ. կամ զանճռնի *մեծն*, կամ զամենևին փոքրն, կամ զգարշն տեսութեամբ, կամ զվնասակարն, ուտելոյ պիղծ ասէին զսոսա: - 364. Երկրորդ՝ ի յօրինակ *մեծի* և անարատ պատարագինն: - 370. Այլ ըստ ոմանց՝ տօն քաւութեան որթագործութեանն, նշանակէ ի մեզ զտօն *մեծ* քառասնորդացն պահոց: - 373. Այլ և նշանակէ՛ զօր *մեծի* ուրբաթուն չարչարանացն քրիստոսի. որով քաւեցաք ի մեղաց: - 373. Զոր պահեմք և *մեծ* չարչարանօք ճընշեմք զանձինս: - 373. Դարձեալ՝ խը քաղաք՝ *մեծ* պաքնէ քառասնիցն: - 392. Իսկ յետ մահու ա՛յնոցիկ հոգւոց որք զղջան կամ խոստովանին զմեղս, քաղաք ապաստանի է նոցա ի կայանս հոգւոցն տրտմութիւն և ցաւն վասն փոխարինաց մինչ մեռանի քահանայն *մեծ*. որ եկեղեցի սուրբ՝ պատարագաւ և աղօթիւք և ողորմութեամբ հատուցանէ՛ զպարտս նոցա և ազատին: - 392. Զի՞նչ նշանակէ անապատն *մեծ* և ահագին: - 393. *Մեծ*, զի **խ** ամ շրջեցան: - 393. Երկրորդ՝ վասն *մեծ* բարութեանցն ի հեռաստանէ էարկ հիմն մարդեղութեան իւրոյ ի զաւակէ՛ նոցա լինիլ: - 398. Հինգերորդ և *մեծն* ա՛յս է, զի գառն քրիստոս է. և կաթն օրէնք. և մայր ժողովուրդն: - 399. Այլ այնո՛ւ էր առաւել, զի քրիստոս զհոգիս ազատեաց ի դժոխոց. և աստուած էր և մարդ եղև և խաչեցաւ. որ *մեծ* է քան զամենայնին: - 411. Վեցերորդ՝ *մեծ* սքանչելիք էր որ յետ դարձաւ, քան զցամաքիլն: - 414. Նուազիլ՝ ո՛չ ասեմ զամենևին պակասիլն. զի առ ջրհորաւն *մեծի* անյայտ եղև վէմն. և յելսն յորդանանու մանանայն ո՛չ գտաւ: - 415. Եւ ի *մեծի* ուրբաթի խաչին, լուսինն ընթացաւ և ձգեցաւ յարևն, և յետս դարձաւ. որպէս ցուցանի յառաջիկայդ առ խաչելութեամբն ի **լ** գլուխն ի **իզ** համարն: - 416. Երեսուներորդ, ի տեառնէ յաջողեալ զօրութեամբ ծնօտին, և նովաւ զօրացեալ *մեծ* ծարաւն սամփսոնի: - 423. Եւ յետ գերութեանն իսրայէլի անցեալ ամք **ճլե**, ել արքայն բաբիլացւոց նաբուգոդոնոսոր ի վերայ եէմի. ի **ժ** ամի թագաւորութեանն յովակիմայ. և էառ հարկ ի նմանէ. և *զմեծ* մասն սրբութեանց տաճարին աւերեաց: - 447. Եւ ի ծննդենէն քրիստոսի ի թուականն *մեծ*՝ **շծգ** ամ: - 451. Քսանև**թ**, *Մեծի* շաբաթուն նաւակատեաց: - 455. Եւ վկայքն հաստատեցին *մեծ* գոլ և ծածուկ՝ հրաշալի խորհուրդ միածնին փրկագործութեան երևումն առ մարդիկք: - 456. Եւ *մեծն* ի ծնունդս որովայնի՝ խրաց մի կօշկաց նորին լուծելոյ ոչ բաւէր: - 456. Առաջինն նշանակէ *զմեծ* խոհեմութիւնն: - 465. Չորեքտասաներորդ՝ ըստ *մեծին* գրիգորի աստուածաբանի և սրբոյն բարսղի կեսարացւոյ որպէս ասացաւ ի վերոյ: - 484. Զի է՛ որ մատուցօղն *մեծ* է քան զպատարագն. որպէս հին օրինաց պատարագն. զի անասունք էին: - 491. Եւ է՛ որ պատարագն *մեծ* է քան զմատուցօղն. որպէս նոր օրինացս մարմինն քրիստոսի *մեծ* է քան զքահանայն: - 491. Եւ է՛ որ մատուցօղն *մեծ* է քան զընդունօղն. որպէս մելքիսեդեկ քան զաբրահամ. և քահանայն *մեծ* է

քան զժողովուրդն որ ճաշակէ: - 491. Իսկ չորրորդն է՛ պատարագ տն մերոյ քրիստոսի որ ի մի դէմ անձնաւորութեան գ երես պատարագին բացայայտեցաւ. այսինքն *մեծ* գոլ մատուցօղն և ընդունօղն և պատարագն: - 491. Եւ այս է նոցա զինուց զէն *մեծ* զրախօսութեան ի մարմին բանին: - 501. Վեցերորդ վկայ նոյն ինքեանք ազգն Ֆռանկաց. որ յամենայն շաբաթ օր վիճիլ ասեն. և միս ո՛չ ուտեն ի խորհուրդ նաւակատեաց *մեծի* շաբաթուս: - 509. Նոյնպէս ըստ օրինակին արար տէր մեր զատիկն յերեկոյի *մեծի* **ե** շաբաթին. և ի մէջ գիշերին յորում ըմբռնեցաւ՝ եհար զանդրանիկսն դիւաց: - 513. Զի ո՛չ միայն համարի *մեծ* և փառաւոր զաստուածություն նորա, այլ և զաղքատութիւնն և զանարգանս և զմահն. և յայնժամ արժանացի առատապէս ընդունել զհոգին սուրբ: - 522. Յիսուն**գ**, Վկայութիւն պահոցն *մեծի*. և շաբաթու. և չորեքշաբաթին. և զի յինանցն ո՛չ պահեմք: - 527. Ի *մեծէն*. ի կամացն. յիշխանութենէն ի փոքոյն. ի հնազանդութենէն. և ի գործոյն: - 535. Այլ հրամանաւ *մեծի* թագաւորին ուստիանեայ ժողովեցան յունաց և հռոմոց և հայոց և վրաց և աղուանից եպիսկոպոսունք. և կաթողիկոսն հայոց սահակ…: - 544. Երրորդ ժողովն է դվնայ, ի չորրորդ ամի թագաւորութեանն կոստանդեայ հռոմոց. հրամանաւ *մեծի* կաթողիկոսին հայոց ներսէսի շինողի…: - 544. Չորրորդ՝ *մեծ* և արժանաւոր ժողովն եղև ի մանազկերտ. ի **ճիդ** թուականին. հրամանաւ և արդեամբք գիտնաւոր և մեծ իմաստասիրին սրբոյն յոհաննու կաթողիկոսին հայոց օձնեցւոյ: - 545. Եւ որպէս ի մէջ աւետարանչացն ո՛չ է *մեծ* և փոքր: - 547. Նոյնպէս, ի մէջ առաքելոցն ո՛չ է *մեծ* և փոքր իշխանութեամբ: - 547. Տասներորդ՝ և այսմ կողմանէ՛ շարժին լուսաւորքդ ի յընթացս իւրեանց. որ են կարապետ *մեծին* լուսոյ ծագմանն: - 555. Ապա անհաւատութիւն և յուսահատութիւն և ատելութիւն է՛ ի միտս. և սոքա *մեծ* են քան զամենայն չարիս որպէս ուսուցանեն գիրք սուրբք: - 557. Վասն է՞ր սատանայի մեղքն *մեծ* է և անթողլի քան զմարդոյ: - 562. Յայնժամ լոյս իմացականին կորեաւ և շիջաւ ի սատանայէ՛. և լոյս շնորհացն ո՛չ ներգործեաց ի նա. և ի նոյն սերտեալ հաստատեցաւ անզղջապէս. վասն որոյ *մեծ* են մեղք սատանայի և թողութեան ո՛չ հանդիպի: - 563. Այսպէս *մեծ* է՛ մեղք հպարտութեան քան զամենայն մեղս մարմնական: - 563. Ոմանք բազում եղանակս ասեն. այսինքն Պատճառաւ *մեծ*. որպէս մեղք արուսեկին: - 565. Եւ թէ **բ** մարդ գործեն զմեղս զայսոսիկ, սպանանելն *մեծ* է քան զսուտ վկայելն. և այլն նմանապէս: - 565. Ահա՛ որ *մեծ* է քան զամենայն մեղք: - 565. Որ յեկեղեցին գործէ՝ *մեծ* է քան զայլն: - 565. Վեցերորդ ըստ երբին. այսինքն թէ ե՞րբ գործեն զմեղքն. ի տղայութեա՞ն, թէ ի ծերութեան որ *մեծ* մեղք է. ի սո՞սկ աւուրս, թէ ի տէրունական տօնս. զի որ ի տօնս մեղք գործէ, առաւել պատժի քան զմիւսն: - 565. Եւ զի ո՛չ է որպէս մահացուն *մեծ* կամ փոքր. որպէս շնութիւն *մեծ* է քան զպոռնկութիւն. և մարդասպանութիւն քան զգողութիւն: - 568. Երբեմն զնշանակ սիրոյն. ըստ այսմ որ ասէ՝ «մեծագոյն սէր ո՛չ ոք ունիցի». այսինքն *մեծ* նշան սիրոյ: - 575. **Դարձեալ՝ կատարեալ սէր է, յորժամ է ունակութեամբ *մեծ*. ներքին շարժմամբն ուղիղ. արտաքին գործքն ժիր. արմատովն հաստատեալ. ջերմ եռանդութեամբն խոհեմ. և քաղցրութեամբն մխիթարական:** - 576. Ա՛րդ՝ մեծագործութիւնն է *մեծ* և վեհագոյն իրողութեանց ի խորհուրդ և ի գործ ածումն ընդարձակ մտադրութեամբ հոգւոյն: - 580. Ապաստանութիւն է որով հոգին ի *մեծ* և ի համեստ իրս ստոյգ յուսովն հաստատի յինքեան: - 580. Այլ թէ որ հասակաւ *մեծ* է, խնդրի յատուկ հաւատ. իսկ թէ տղայ է՝ բաւական է խորհուրդն եկեղեցւոյ: - 588. Որ և է՛ այս հերձուած *մեծ* և յանդուգն հայհոյութիւն ընդ դէմ կարգաց եկեղեցւոյ: - 589. …քանի՞ ևս առաւել հերձուած *մեծ* է կանանց. որոյ ասաց աստուած թէ «առ այր քո դարձ քո և նա տիրեսցէ քեզ» հրաման տալ զգործ քահանայի առնել որ ազատա՛ց է և ո՛չ ծառայից: - 589. Եւ եթէ թեթև փործութեամբ անկաւ և եթէ *մեծ*: - 601. Այլ ի *մեծի* **ե** շաբաթին օրհնեմք իւղ, զի մի՛ մեռոնն սուրբ ի հասարակաց ոտս մերձեսցի: - 605. Պսակն է խորհուրդ *մեծ*. որով օրհնութիւնն աստուծոյ կատարեալ լինի…: - 609. Եւ **ե** երորդն առ մովսէս *մեծ* եղև զօրութիւնն: - 629. Նա՛խ՝ երեխայքն ուխտեցին հրաժարիլ ի սատանայէ՛. և ի *մեծի* զատկին մկրտելովն իսրայէլ. և ապա ուխտ ապաշխարութեան պահոցն. և յարութեանն տեսանել զքրիստոս. աստ և անդ: - 629. Օրհնեա՛ անձն իմ զտէր. տէր աստուած իմ *մեծ* եղեր յոյժ: - 630. Այսպէս ասէ *մեծ* իմաստասէրն և երկրորդ աւետարանիչն մեր և կաթողիկոսն սուրբ յոհան յօձնեայ թէ՝ պատարագին ժամն խորհուրդ է խաչին քրիստոսի. - 634. Երրորդ «որ մատնեցար». ի *մեծի* ուրբաթի առաւօտին մէն ասի: - 634. Հինգերորդ «որ թաղեցար». յուրբաթի երեկոյն, և յառաւօտն շաբաթուն *մեծի*: - 634. Վեցերորդ «որ յարեար». ի *մեծի* շաբաթ երեկոյն, և յամենայն կիրակմտի և ի կիրակէ աւուր: - 634. Զմեղաք յամենայնին, և զկարգ *մեծ* տօնիցն, յոհան օձնեցին: - 637. Զի *մեծ* զատկի կիրակէն առաջի ձայն լիցի. որ զյարութեանն ունի խորհուրդ: - 641. Եւ շաբաթն տօն *մեծ* որպէս ասացաք: - 642. Չորրորդ չարչարանացն ի *մեծի* աւագ շաբաթին: - 649. Եւ դարձեալ՝ առաջաւոր կոչի, զի սա՛ է առաջին շաբաթ *մեծի* պահոց աղուհացիցն…: - 650. Զսկիզբն պահոցն *մեծի*՝ կիրակէն է…: - 651. Ասեմք թէ՝ ի յաղուհացսն կրկին

կարգ է. այսինքն *մեծ* և փոքր: - 651. *Զմեծ* կարգն` է՛ կանոնեալ տն եղբայրն յակոբոս որ զընթերցուածն կարգեաց...: - 651. Վասն այն տէր ամենակալն ի *մեծ* կարգն սկսանի: - 651. Ապա պա՛րտ է քեզ ի փոքր կարգն ուտել զամենայն աւուրս և *զմեծն* պահել: - 651. Իսկ տեառն մերոյ քառասնիցն սկիզբն է երկրորդ շաբաթն, և կատարումն չարչարանք *մեծի* ուրբաթուն: - 651. Եւ ո՛չ միայն լուծանեն զսկիզբն *մեծի* պահոցն, այլ և զամենայն չորեքշաբաթս որ յառաքելո՛ցն է կանոնեալ, լուծանեն ի բոլոր տարին, և լինին ընդ անիծիւք նոցին: - 652. Երկրորդ, զի *մեծ* ճգնաւորն բենետիքտոս որ է՛ յազգէ նոցա` ասէ, «պահելի է զչորեքշաբաթի օրն մինչև ցինն ժամն»: - 652. Իսկ ապաշխարօղսն կարգել. և դարձեալ ի *մեծի* ե շաբաթի աւուրն արձակել...: - 658. Եւ ի *մեծ* բարեկենդանին` դ շաբաթն և ուրբաթն հանգստեան: - 660. Այլ կան և սպասեն *մեծի* հարսանեացն քրիստոսի և կատարածի աւուր...: - 669. ...զի ի *մեծի* ծագման առաւօտուն կրեսցեն զպատիժն ըստ գործոց իւրեանց: - 669. ...ուր սուրբք ամենայն սպասեն *մեծի* հարսանեաց գալստեանն փրկչին: - 675. Դարձեալ` երէկ վասն մեռելոյն կսկծոյ կոծ *մեծ* արարաք. և այն դժուարութիւն էր աստուծոյ...: - 680. Ի *մեծի* ուրբաթին: - 684. Վասն որոյ խաչիւ և աւետարանաւ աւետեմք ննջեցելոցն *զմեծ* օր աւետեաց նոցա և կնքեմք զգերեզմանն: - 684. Զի այնպիսիքն դատաստան ընդունելոց են անձանց իւրեանց ի *մեծի* ատենին քրիստոսի: - 684. Եւ զի՞նչ է որ ի *մեծի* բարեկենդանին զբ չորեքշաբաթ և զուրբաթն հանգստեան ասեմք: - 684. ...զի ահ *մեծ* է անկանիլ ի ձեռս աստուծոյ կենդանւոյ յանաչառ դատաստանին և ո՛չ այժմ: - 699. Անդ ի քունն ձայն լսէ թէ` կին դու յղասցիս *մեծ* ոմն: - 706. Հինգերորդ, զի *մեծ* ուրախութիւն է և տօն յորժամ համանգամայն ամենայն մարդկան յական թօթափելն լիցի յարութիւն, քան յայլ և այլ ժամանակս. - 717. Այլ համահասակ քանակաւ ո՛չ. զի աստ ոմն *մեծ* լինի և ոմն փոքր ի ջերմութենէն որ անհաւասա՛ր է ի նոսա. նոյնպէս և անդ: - 726. Այլ որ առաւել *մեծն* է և հսկայանդամ, և կարի փոքր և փանաքի, յերեսնամեայ հասակն իւրեանց չափաւորին: - 726. Եւ *մեծ* և փոքր ի յարութեանն եռակի ասի: - 726. Երկրորդ վասն *մեծացն* գործոց...: - 726. Զի հուր *մեծ* ընթանայ ի գալստեանն քրիստոսի. և վառեսցին երկինք և երկիր հրովն այն, որպէս ասէ պետրոս: - 727-728. Եօթներորդ, զի առաքեսցէ զհրեշտակս իւր փողով *մեծաւ*. - 730. Դարձեալ զոր օրինակ բազում ստուերք ի *մեծ* ստուերն միաւորին: - 732. Վեցերորդ, զի ահագին փառօք գայցէ փողով *մեծաւ* և ամպախաղաց որոտմամբ և շարժմամբ և հրով բորբոքելոյ որպէս ի սինայ: - 737. Մինչև յօր դատաստանին տեսանեն մեղաւորք փառս արդարոց ընդհանրապէս` այլ ո՛չ մասնաւորաբար. զի տեսանիցեն զնոսա ի *մեծ* փառս` այլ ո՛չ ի յորպիսիս: - 741. Զի՞նչ է որ ասէ տեսիլն, «կթեա՛ զխաղողն և ա՛րկ ի հնձանն աստուծոյ ի *մեծ*»: - 748. Այս է հնձան *մեծ* որ զամենայն մեղաւորս ընդունի յինքեան: - 748. Եւ վասն այն կոչի եկեղեցի արքայութիւն, զի որ ի ներկայիս եկեղեցւոյ արքայութիւն առնէ և գործէ՛, ունի զվախճան *մեծի* փառաց: - 754. ...յայն ճանապարհ է օտարացեալք, զոր մարգարէն *մեծաւ* տենչմամբ հայցէր ասելով` «զմի խնդրեցի ի տեառնէ և զսո՛յն աղաչեմ բնակիլ ինձ ի տան տեառն ընդ երկայն աւուրս»: - 756-757. Այլ քանզի վարդապետաց մերոց և *մեծաց* է ասացեալ բանքն` ո՛չ ընդդիմանամք: - 759. Վասն *մեծի* սիրոյն` ժառանգութիւնն այն ամենեցուն մի է իւրաքանչիւր ումեք բոլորն և ո՛չ մասնաւորն: - 764. Եւ որ քան *մեծ* վիշտ եղև ի պատերազմին, ա՛յն քան է մեծագոյն ուրախութիւն ի յաղթութենէն: - 765. Այս հաւատ *մեծ* յուսով. և կատարի սիրով: - 770. Եւ արդ, Ո՜ հաւատ *մեծ* պաշտելի լոյս իմ և տիպ. և գանձ անկողոպուտ. կացցես առ իս. յարգանդէ մօր իմոյ խուսափեալս ի ծոց քո: - 771. Եւ ապա ի սէր և անձուկ ժտելոյ նորին, ապաստանեալ ի նոյն որ զօրացոյց զտկարս, ձեռն ի գործ արկեալ աւարտեցաւ բազում միջոցաւ. և փախստեամբ ի տեղիս. և *մեծ* ջանիւ փութացեալ: - 772. Այլ և վարժապետին իմոյ և *մեծ* հռետորի հայոց, Յոհաննու Որոտնեցւոյ, եղիցի ի սմա յիշատակ մաղթանաց մասին օրհնութեան. և վիճակ ժառանգութեան սրբոցն ի լոյս: - 773. Այսպէս և եպիփանն *մեծ*: - 777. Զի *մեծ* է յառաջարկութեան եզրակացութիւն. և ո՛չ բայիւք, այլ` մակբայիւք է փրկութիւն: - 785. Ոչ ինչ ընդհատ բերելով ի մեզ զօրինակ *մեծի* սաստկասարսուռն ատենի: - 788

**ՄԵԾՆ ԱԹԱՆԱՍ** - *Մեծն աթանաս* և յոհան ոսկեբարանն և սուրբն բարսեղ և մերն լուսաւորիչ: - 595

**ՄԵԾՆ ԱՆԴՐԷԱՍ** - Եւ ա՛յսպէս մեկնեն զանուանս **բժ**ան ականցն սուրբն Եպիփան և *մեծն Անդրէաս* ի գիրս տեսլեանն Յոհաննու: - 349. Այլ որք ուղիղ դատեցան վարդապետք եկեղեցւոյ ըստ տեսլեանն յոհաննու. որպէս *մեծն անդրէաս* և համախոհք նմին սուրբն իրինոս, եպիփան, և բասիլիոս: - 687. Սակայն զփառսն չև ևս են ընկալեալ մինչև ի սքանչելի երկրորդն գալուստ. այսպէս *մեծն անդրէաս*: - 696

**ՄԵԾՆ ԱՆՏՕՆ** - Եւ նախնին կրօնաւորաց *մեծն անտօն*. և այլք բազումք ըստ տեառն հրամանի, թէ «որ արասցէ և ուսուսցէ, նա մեծ կոչեսցի»: - 288. Իսկ զքեմայ կարգն` սուրբն դիոդորոս եպիսկոպոս

պամփիւլացոց քաղաքի. յառաջին ամի իւրոյ. հրամանաւ *մեծին անտոնի* և **բ** թեբայեցոցն. և **բ** սկիւթացւոց լերինն: - 659

**ՄԵԾՆ ԴԻՈՆԵՍԻՈՍ** - Չորրորդ վկայ և *մեծն դիոնէսիոս*. որ յաստուածային անուանսն ասէ՝ «ի յաննիւթ և յաներոշելի բարւոյն ծագեաց երկու լուսափայլութիւն»: - 64. Այլ և *մեծն դիոնէսիոս* ի բազում տեղիս միաւորեալ և մի բնութիւն խոստովանի բանին աստուծոյ մարդացելոյ: - 83. Եւ արտաքոյ, զի օրըստօրէ յաւելուն լուսափայլ իմաստիւք ըստ *մեծին դիոնիսեայ*: - 344. Զնոյնս կամի և *մեծն դիոնէսիոս*՝ նախախնամութեամբն աստուծոյ եղեալ ամենայն արարածոց: - 457. Զի այսպէս միատեսակ բնութեամբ խոստովանի ընդ մեզ և այլ ժողովուրդ ուղղափառաց ըստ ուսուցման *մեծին դիոնիսեայ* յերկրորդ գլուխն եկեղեցական քահանայապետութեանն ասել...: - 477. Եւ ըստ յունաց թէ աստիճանն. և ըստ *մեծին դիոնիսեայ*. և մինչ ի **դ դ** կարգն փոքր է. հրաման ամուսնութեան: - 526. Եւ *մեծն դիոնէսիոս* ի գիրս աստուածային անուանց սահմանէ թէ՝ «հաւատն է հաստատ կայումն հաւատացելոց. որ զարդարս կացուցանէ ի ճշմարտութիւնն և զճշմարտութիւնն ի նոսա»: - 571. Իսկ ըստ *մեծին դիոնիսեայ* այսպէս: - 608. Ասեմք եթէ՝ բնութեամբ բարին մի է. որպէս ասէ *մեծն դիոնէսիոս*. այլ ներգործութեամբ բազում է ի զանազան կամաց յառաջ եկեալ: - 758. Ունելով տերև և ծաղիկ և պտուղ. այսինքն մաքրել, լուսաւորել, և կատարեալս առնել ըստ *մեծին դիոնիսի*: - 767

**ՄԵԾՆ ԹԷՈԴՈՍ** - Իսկ երեսունն, մինչ ի *մեծն թէոդոս*. որ եբարձ զամենայն մեհեանս կռոցն և բարձրացաւ սուրբ խաչն ի գլուխս գմբեթարդ սուրբ եկեղեցեաց: - 294. Եւ յաւուրս *մեծին թէոդոսի* **ճծբ** որ ի կոստանդինուպօլիս ընդ դէմ հոգէմարտին մակեդոնի: - 547

**ՄԵԾՆ ԻԳՆԱՏԻՈՍ** - Զի՞նչ է որ ասէ *մեծն իգնատիոս* վասն արեգական՝ թէ յամենայն օր ի բաց դնէ զլոյսն և զջերմութիւն, և միւս անգամ յարփոյն առնու: - 186. Եւ սոկրատ պատմագիրն ասէ թէ՝ *մեծն իգնատիոս* աստուածազգեացն ետես երկնային_զօրս. և լուաւ ի նոցանէ...: - 631. Զի ասէ *մեծն իգնատիոս* մեկնիչն յայսմ բանի, եթէ բարեկամ եկեալ՝ զպահանջօղ հրեշտակն ասէ յօր մահուն. իսկ առաջին բարեկամ է՛ աստուած: - 697

**ՄԵԾՆ ԿԻՒՐԵՂ** - Եւ զփոքր կարգն *մեծն կիւրեղ* եեմի հայրապետն. է՛ սկիզբն **բ** շաբաթի, և աւարտն ի **ե** շաբաթի: - 651

**ՄԵԾՆ ԿՈՍՏԱՆԴԻԱՆՈՍ** - Եւ փոխանակ **յ** կանգնոյն՝ **յ** ամբն ի քրիստոսէ մինչև ի *մեծն կոստանդիանոս*. ուր յայտնեցաւ խաչն փրկչական: - 294. Որ ի նիկիայ յաւուրս *մեծին կոստանդիանոսի* ընդ դէմ արիոսի ժողովեցան հարքն սուրբ՝ **յժը**: - 547. Զոր յետոյ *մեծն կոստանդիանոս* զայս աթոռս յեփեսոսէ՛ ի կոստանդնուպօլիս փոխեաց: - 549

**ՄԵԾՆ ՄԵՍՐՈՊ** - Նա՛խ՝ *մեծն մեսրոպ* զկարգն ապաշխարութեան. և սուրբն սահակ զաւազ շաքաթեանն: - 637

**ՄԵԾՆ ՄՈՎՍԷՍ** - Ա՛րդ՝ բազմազան եղանակաւ համեմատի *մեծն մովսէս* փրկչին մերոյ քրիստոսի...: - 328. Սոքա **բժ**ան ազգ նուէրք գլխաւոր պատարագք կարգեալ ի *մեծէն մովսիսէ*: - 359. Պա՛րտ է տալ զսոսա ի քահանայսն որպէս կարգեաց *մեծն մովսէս* ի հինն, և սուրբն գրիգոր ի նորս: - 367

**ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ** - Եւ զայս գիտել պարտ է. զի *մեծն ներսէս* զհաստատութիւնն՝ արփի ասէ և եթեր կոչէ. զոր արտաքինքն **ե**երորդ տարր ասացին որ ո՛չ երևի մեզ: - 184. Այլ *մեծն Ներսէս* այսմ ո՛չ է հաւան: - 251. Զայս ասէ *մեծն ներսէս* երեք քառասունք մովսէսի ըստ թուոյ ամաց նորին: - 353. Իսկ մեր վարդապետք ասեն որպէս *մեծն ներսէս*, թէ ի **զ**երորդ աւուր արարաւ առաջին ադամն ի պատկեր տիրական: - 467. Վասն զի ոմանք՝ որպէս *մեծն ներսէս* ի մեկնութիւն սաղմոսին որ ասէ «**է** անգամ յաւուր օրհնեցից զքեզ». ասէ թէ՝ յերեկոյի շաբաթուն է յարութիւնն քրիստոսի յորում լուսանայր կիրակէն...: - 512. Եւ սոքա լինին է ազգ ըստ *մեծին ներսէսի*: - 611. Զայս ամենայն *մեծն ներսէս* է ասացեալ կլայեցին: - 637. Եւ նախ ըստ աւուրց տօնից, որպէս *մեծն ներսէս* ասացեալ է զերգն: - 641. Այլ սուրբն ստեփաննոս սիւնեաց, և *մեծն ներսէս*, վասն պատուոյ՝ նախ զխաչի տունն են ասացեալ, և ապա՛ զաստուածածնին: - 642. Դարձեալ, **ժ** շաբաթ պահոց այն է՝ որ *մեծն ներսէս* կանոնեաց յամենայն ամսամուտս պահել շաբաթ մի: - 650. Այլ *մեծն ներսէս* ասէ թէ՝ սուրբքն ի ձեռն պահապան՝ հրեշտակացն երևին. թէ յերազս թէ յարթնութեան. և օգնեն մեզ. և խօսին. և լսեն զաղօթս մեր: - 685. Իսկ *մեծն ներսէս* ասէ, պակասութիւնն այն է, որ կիրք չարչարանացն քրիստոսի թուով և տեսակաւ պակա՛ս էր յառաքեալսն պօղոս. այսինքն խաչն, բևեռքն, և այլն. և զայն էլից քարոզութեամբն իւր ի մարմինս եկեղեցւոյ: - 781

**ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ** - Ո՞րպէս ասէ *մեծն Ներսէս շնորհալին*. ընդ ծառոց երկրի զգալեաց. տընկեաց և զտունկս իմանալեաց: - 221

**ՄԵԾՆ ՍԱՀԱԿ** - Առաջին ժողովն եղև ի տանս թորգոմայ յարևելից կողմանս. զկնի է երորդ ամի վախճանելոյ *մեծին սահակայ*: - 544

**ՄԵԾՆ ՍԿԻԻԹ** - Գոճազմ. կապո՛յտ է. և գտանի ի *մեծն սկիւթ*: - 348

**ՄԵԾՆ ՎԱՐԴԱՆ** - Այլ և զկարգն յարութեան՝ սորա՛ է ասացեալ *մեծն վարդան* ի տեսութիւն անթառամ ծաղկին: - 637

**ՄԵԾԱԲՌՅՍ +** Իսկ տունկք որք են *մեծաբոյսք*՝ և չորքոտանիք մեծամեծք՝ յերրորդ ամին ծնանին զննմանն. որ է թիւ կրկին ամսոյ ընդ երրեակ վեցից: - 264

**ՄԵԾԱԳՈՅՆ +** Զի ո՛չ էր հայր մեծ քան զնա՝ ի յոր երդնոյր. զի որք երդնուն՝ ի *մեծագոյնսն* քան զինքեանս երդնուն. ապա ուրեմն հաւասա՛րէ որդի հօր և ո՛չ փոքր որպէս ասէ առաքեալն: - 40. Սոյնպէս և զգիտութիւն *մեծագունիս* ի պատճառն ի հայր վերաբերէ ի պատիւ ծնողին: - 48. Եւ զայս եթէ բաժանմամբ, ո՛չ է առանձնապէս բանն քրիստոս. զի ո՛չ գոյ *մեծագոյն* օծանօղ նմա. որ և ո՛չ առանց մարմնոյ փրկեաց: - 94. Երկրորդքն՝ *մեծագոյնս* աւետարանեն, որպէս գաբրիէլ: - 136. Ո՞րպէս հաւասար և *մեծագոյն*: - 149. Վեցերորդ՝ զի թէ երկինքն ո՛չ էր բոլորակ, յայնժամ արեգակն և այլ աստեղք յորժամ գային ի մէջ երկնից, *մեծագոյն* երևէին. քանզի ի միջին կիտէն երկնից առ մեզ է ուղղական գիծ. իսկ յարևելից առ մեզ է՛ խոտորնակի գիծ. և ուղղական գիծն կա՛րճ է քան զխոտորնակ գիծն: - 183. Ապա ուրեմն ո՛չ երբէք *մեծագոյն* երևի աստղ՝ յորժամ է ի միջին կէտն՝ քան յորժամ է յարևելս կամ յարևմուտս: - 183. Վասն առաջնոյն պա՛րտ է գիտել, զի առաւել հասարակն հեռի՛ է և *մեծագոյն*. և առաւել յատուկն մերձ է մեզ և նուազագոյն: - 235. Այլ ա՛րդ եթէ փոխի ի տնկոյն ի մարդն, վատթա՛ր է մարդոյն կեանք քան զտնկոյն. ուստի ի *մեծագունէն* ի նուաստն փոխեցաւ: - 253. Ինններորդ՝ ևս *մեծագոյն* խորհուրդ. զի անդրանիկ բանն աստուած ի հօրէ՛ ծնեալ՝ եկն ի բնութիւնս մեր և եղև գլուխ մեր...: - 309. Ա՛րդ՝ զայս քան *մեծագոյն* պատիւ և խորհուրդ անդրանկութեանն անարգեաց եսաւ ընդ պոռնկութեան. և վաճառեաց ընդ կերակրոյ: - 309. Տասներորդ՝ ևս *մեծագոյն* խորհուրդ. զի բանն աստուած որ անդրանիկ էր հօր, եղև կրտսեր մարդ ի ժամանակի և փոքր...: - 311. Եւ գիտելի է, զի թէպէտ *մեծագո՛յն* է ըստ ինքեան սրբութիւն արգանդին քան զսրբութիւն մկրտութեանն. այնու, զի բառնայ զդիւրասահութիւն մեղանչելոյն: - 462. **Սակայն ըստ ներգործութեան *մեծագոյն* է սրբութիւն մկրտութեանն. զի տպաւորէ զկնիքն. այլ և բանայ զդուռն արքայութեան. այլ և պատրաստէ՛ զմարդն առ ի խորհուրդս ամենայն. զոր ո՛չ ներգործեն ա՛յլ երկոքին եզական շնորհքն:** - 462. Հինգերորդն *զմեծագոյն* սէրն: - 465. Նա՛խ՝ ի կողմանէ պարգևողին. զի յորժամ քրիստոս նստեալ լինէր ըստ մարմնոյ ընդ աջմէ հօր իբր զթագաւոր փառաց յաթոռ թագաւորութեան իւրոյ, յայնժամ *մեծագոյն* լինէր պարգևք հոգւոյն տուեալ ի փառաւոր քրիստոսէ աստուծոյ: - 521. Այն որ փափագանօք անկալ՝ *մեծագոյն* է քան զմիւսն: - 565. Այն որ բազում գործեաց՝ *մեծագոյն* պատիժ զմիւսն: - 565. Եւ ա՛յս է *մեծագոյն* չար աշխարհի. զի չէ աւելի աղքատ քան զայն որ ցանկայ աւելի ունել: - 570. Նա՛խ՝ զի առաւել մատչի առ կատարելութիւնն. զի *մեծագոյն* առաքինութիւն է: - 577. Եւ որ քան մեծ վիշտ եղև ի պատերազմին, ա՛յն քան է *մեծագոյն* ուրախութիւն ի յաղթութենէն: - 765. Ընդ հովանեաւ երկնահանգէտ *մեծարագոյ* ուխտի Սիւնեաց նահանգի: - 772

**ՄԵԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ +** Բայց մասունք արիութեան են դ. այսինքն *մեծագործութիւն*. ապաստանութիւն. համբերութիւն. և յարամնայութիւն: - 580. Ա՛րդ՝ *մեծագործութիւնն* է մեծ և վեհագոյն իրողութեանց ի խորհուրդ և ի գործ ածումն ընդարձակ մտադրութեամբ հոգւոյն: - 580

**ՄԵԾԱԽՈՐՀՈՒՐԴ +** Երկայնամազ և քանձրն՝ գազանաբարո՛յ է և *մեծախորհուրդ*: - 248

**ՄԵԾԱՀԱՆԴԷՍ +** Զոր յառաջին ամին յորժամ նստաւ կաթողիկոս տէր սիմէոնի, ի ձեռն տէր եղիայի *մեծահանդէս* ժողովմամբ պայծառացոյց զեկեղեցի կանոնական հաստատութեամբ ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս ամէն: - 545

**ՄԵԾԱՀԱՍԱԿ +** Քաղելով գործելն այն է, որ **ժե** կանգուն հաւասար բարձրացոյց, զի *մեծահասակ* կենդանիքն հանգիցեն: - 293

**ՄԵԾԱՀՈԳԻ +** Իսկ քառակուսի և չափաւոր մեծն՝ իմաստուն է և *մեծահոգի*: - 246

**ՄԵԾԱՀՐԱՇ +** Վասն բազում պատճառի *մեծահրաշ* սքանչելիքս եղև առ մովսէս: - 352. Իսկ զխորհուրդն անճառ, և *զմեծահրաշն*, գրիգոր վկայասէրն: - 638

**ՄԵԾԱՄԱՐՄԻՆ +** Եւ երևի որպէս բլուր *մեծամարմինք* նոցա յաչս իւրեանց. սև և աղտեղի և չարչարելի. զի կրեն անչափ չարչարանս և ցանկան մահու և ո՛չ մեռանին. - 723

**ՄԵԾԱՄԵԾ +** Երրորդ՝ է՛ գործ նախախնամութեան. զի ըստ ընտանի կարողութեան իւրեանց՝ համեմատապէս զպարգեւս ընկալցին. զի մի վնասեսցին փոքունքն *մեծամեծօք*. և թերի մնացին *մեծամեծքն* սակաւուք: - 130. Իններորդ՝ ոմանք *մեծամեծ* իրողութեանց են միջնորդք ուղղութեան, և այլք նըւաստից սպասաւորական: - 138. Իսկ վերնագոյն սիրով սիրեն արարածք զարարիչն. և վերջին հրեշտակք զառաջինսն. և որդիք զհարս. և նւազք *զմեծամեծս*. և այս սիրովս միաւորին ընդ նոսա: - 143. Վասն որոյ տօն առաջին աւուրն ի մէջ գիշերի սկսանի. և *մեծամեծ* տօնքն յերեկօրեայ որպէս ասեմք զշաբաթի երեկոյն կիրակմուտ: - 194. Իններորդ՝ զի և ի հոգևորն՝ փոքունք *զմեծամեծաց* անուանս կոչէին ինքեանց ի մոլորումն մարդկան. որպէս սիմոն կախարդն ասէր զինքենէ՛ թէ քրիստոսն իցէ. մինչև յանդիմանեցաւ ի պետրոսէ: - 238. Այլ երեքն ի սոցանէ *մեծամեծք* են: - 244. Վասն որոյ զխրատ և զուսումն ո՛չ լսեն *մեծամեծք*: - 251. Իսկ տունկք որք են մեծաբոյսք՝ և չորքոտանիք *մեծամեծք*՝ յերրորդ ամին ծնանին զնմանն. որ է թիւ կրկին ամսոյ ընդ երրեակ վեցից: - 264. Եւ մի՛ աստ ընդ դէմ բերցի բանիս թէ՝ ամենայն *մեծամեծք* գուք ունին փոքունց. զի և այս նախախնամութեանն է. որ եդ ի բնութեանս խնամ տանիլ նոցա, մինչ ինքեանք ևս ի չափ հասակի եկեսցեն և զերծանիցեն ի վնասուց: - 267. ...որպէս դաւիթ կրտսեր էր և հաճեցաւ տէր. այլ եղբարքն *մեծամեծք* խոտանք եղեն: - 310. Քսաներորդ, և որպէս յովսէփ եթող զքուրմն և զերկիր նոցա, զոր քրիստոս էր բառնալոց *զմեծամեծ* մեղսն և զկռապաշտութիւնն. զի ըստ առն և զօրութիւն իւր. և ըստ աստուծոյ և գործք իւր: - 314. Չկնակուլքն *մեծամեծք* են որք կլանեն զմանունս: - 365. Մովսէս նշան կատարեաց *մեծամեծ*. նոյնպէս և ա՛յլ մարգարէք. փրկչին մերոյ ո՞րն է առաւել քան զնոցայն: - 411. Երրորդ՝ ի նախատինս զօրաց իւրոց. զի հովիւ մանուկն և որդի յեսսեայ սպան զգողիաթ. և նոքա իշխանք և *մեծամեծք* ո՛չ կարացին: - 427. Եւ զդանիէլ՝ և զգ մանկունքն՝ և ժռ այր ի *մեծամեծացն* գերի տարաւ ի բաբիլօն: - 447. Վեցերորդ՝ ամուրն սատանայի է ներքին դժոխքն. ուր են դրունք պղնձիք և նիգք երկաթիք. որ է՛ մեղքն *մեծամեծք* և յուսահատութիւնք. և ա՛յն էր ամրոց նորա: - 506. Ժողովեալ խ եպիսկոպոսաց և բազում վարդապետաց և ժողովրդոց. կողմնակալք և մարզպանք, *մեծամեծօքն* հայոց, և սպարապետն վարդան ազգայնօքն իւր: - 544. Ժողովեալ բազում եպիսկոպոսաց յամենայն կողմանց. և իշխանաց և *մեծամեծաց* հայոց. կարգեցին սահմանս կանոնականս իբ գլխով. և պայծառացուցին զեկեղեցի սուրբ: - 545. Եւ տէր սիոն հայոց կաթողիկոսն անդր հասեալ բազում եպիսկոպոսօք և *մեծամեծ* ազատօք հայոց և իշխանօք նոցին. ընդ դէմ աղանդոց ա՛յնր ժամանակի, և թուլութեան կարգաւորաց եկեղեցւոյ, և բռնութեան իշխանաց: - 545. Կամ այլ ազգ. սէրն է սկիզբն գործոց բարեաց, զի շարժէ առ այն. որպէս ասեն վարդապետք՝ սէրն գործէ՛ *մեծամեծս* թէ է՛. և թէ դադարէ ի գործելոյն՝ ո՛չ է սէր: - 575. **Համբերութիւն է կամաւոր և միշտ տեսողութիւն *մեծամեծ* և դժուարին իրաց վասն օգտութեան և համեստութեան:** - 580. Որք իցեն ի *մեծամեծ* մեղս մահու չափ, օգո՞ւտ է խոստովանութիւնն նոցա թէ ոչ: - 603. Նա՛խ որպէս սովորութիւն է մարդկան որք զաղերսն ընծայեն ի դրունս *մեծամեծացն*, և նոքա՛ մատուցանեն թագաւորին: - 624. Շաբաթ *մեծամեծ* տօն սրբոց. որք են ի հանգիստն երկնից. - 642. Յաղագս որոյ ի շաբաթի աւուր տօնեմք *մեծամեծ* սրբոց: - 648. Դարձեալ՝ խոտն մտաւոր մեղք խորհրդոց. և եղէգն յանցանք բանից. և փայտն մարմնական *մեծամեծ* մեղք: - 702. մաղաքիա վասն *մեծամեծ* մեղացն ասէ: - 703. քանզի *մեծամեծ* և խստագոյն չարչարանս տացէ պաշտօնէիցն աստուծոյ: - 708. Երրորդ՝ առատ պարգևաց տրօք պատրեսցէ *զմեծամեծս* և զագահս. - 708. որ *զմեծամեծս* աւետարանեն. և միջնո՛րդ են մահու և յարութեան մարդկան: - 713. Հինգերորդ, զի եղիցին նշանք *մեծամեծք* և արհաւիրք յերկինս և յերկիր և ի ծովս: - 730. Վեցերորդ՝ զի գործ աստուծոյ է ի նւաստ և ի փոքր ինչ իր *զմեծամեծսն* ներգործել. որպէս կաւովն զկուրին աչքն եբաց, և ի վիմէն ջուր բղխեցոյց բժան. և այլ բազումս: - 733-734

***ՄԵԾԱՄԵԾՍ ԲԱՐԲԱՌԵԼ +*** Եօթներորդ՝ զնա փոքր եղջիւր կոչէ դանիէլ. խեթկի և *մեծամեծս բարբառելով*. և սոքա խեթկեն զեկեղեցի. և բանան զհայհոյիչ բերանս իւրեանց յերկինս, և զլեզուս ածէին զերկրաւ: - 35

**ՄԵԾԱՆԱՄ +** Երկրորդ՝ զփոփոխումն թագաւորաց, զաղքատաց *մեծանալն*, և զփարթամացն տնանկանալ: - 26. Զի իմաստունն թէ *մեծանայ*, գիտէ՛ կարգաւորել: - 178. Եւ զի գիշերն *մեծանայ*: - 197. Երրորդ՝ զի փառք տախտակացն *մեծասցի* ի լոյս երեսացն: - 352. Երկրորդ՝ զի *մեծասցի* օրէնքն յաչս հրէից: - 402. Քսանևէ, *մեծացաւ* իմաստութեամբ և փառօք: - 442

**ՄԵԾԱՆՁՆՈՒԹԻՒՆ +** Զպակասն ուղղեա՛ և զաւելիսն կշռեա՛ աղաչեմ ի ներգոյէ՛ քոյինդ *մեծանձնութեան*: - 95

**ՄԵԾԱՊԱՏԻՒ +** Եւ է ճրագարան և է բերան ճրագացն, է արքն *մեծապատիւք* զօրավիգք թագաւորին. այսինքն յեսու, զաքարիա, խողէստուբիա, յեդոյիա, յեշոյիա, և եզր դպիր: - 346

**ՄԵԾԱՍԻՐՏ +** Շրթունքն բարակ և բերանն մեծ, ուժեղ է և *մեծասիրտ:* - 247. Արծակաքայլն՝ *մեծասիրտ* է: - 247

**ՄԵԾԱՏՈՒՆ +** Դարձեալ, թէ է՛ հարկ՝ անիրաւք են և ինքեանք աստեղքն. զի ոմանց բարիս գրեն, և ոմանց չարիս. զոմանս *մեծատունս* և զոմանս աղքատս. հեշտ կեանս և դժւարս. երկարակեացս և սակաւակեացս. բազում անգամ անարժանիցն բարիս խոստանան, և արժանեացն չարիս: - 12. Երկոտասաներորդ՝ ասեն թէ աստուած առնէ զոմն աղքատ և զոմն *մեծատուն* տէր՝ և ծառայ. իշխան՝ և իշխեցեալ: - 19. Նախ՝ եթէ աղքատութիւն և մեծութիւն տիրելն և ծառայելն, է՛ յաստուծոյ. սակայն ոմանց կամելով՝ և ոմանց ներելով և թոյլ տալով. այսինքն զբարի *մեծատունս* և զաղքատս կամելով առնէ. և զչարսն ներելով և թոյլ տալով առնէ: - 19. Դարձեալ ասեմք, եթէ առնէ աստուած *մեծատուն* և աղքատ, տէր և ծառայ և այլն, զի ի միմեանց օգտեսցին: - 19. Չորրորդ՝ թոյլ տայ փորձութեան արդարոց ի յուղղութիւն այլոց. որպէս ղազարոյն և *մեծատանն.* զի տեսանելով զղազարոս՝ և լսելով վասն *մեծատանն* զարիւրիմք և գամք յուղղութիւն: - 158. Հինգերորդ՝ զորօրինակ *մեծատուն* ոմն զոք ի ճաշ կոչիցէ, նախ պատրաստէ՛ զամենայն պէտս կերակրոց և ըմպելեաց. և ապա՛ մեծարէ՛ զկոչնականսն: - 230. Նա՛խ՝ զի անմարմին դիմօք առանձնանան ի միմեանց. և այս յատուկ դիմօքս ճանաչեն հոգիքն զմիմեանս. որպէս *մեծատունն* զղազարու և զաբրահամու հոգին: - 237. Իսկ յովակիմ արդարն էր ի թագաւորական ցեղէն յուդայի լը երորդ ի թոռանց նաթանայ որդւոյն դաւթի փառաւոր և *մեծատուն* յոյժ: - 460-461. Վասն է՞ր ոմանք *մեծատունք* են և ոմանք աղքատք: - 664. որպէս *մեծատունն* որ ընկալաւ զբարիսն ի յայս կեանքս: - 664. Նա՛խ՝ զոմանս աղքատ առնէ աստուած, զի զարքայութիւնն *մեծատանց* վաճառեսցեն: - 664. Դարձեալ՝ զչարս և զբարիս ճանաչեն անւամբն. որպէս *մեծատունն* զաբրահամ և զղազար: - 685. Իսկ *մեծատունն* վասն եղբարցն աղօթէր, զի մի՛ տանջանքն իւր առաւելասցի վասն նոցա: - 685. Նախ ընդ դէմ բերեն զբան *մեծատանն* և զղազարու. որ մինն ի գոգն աբրահամու և միւսն ի տանջանքն էջ: - 695. ...որպէս յա՛յտ է ի *մեծատանէն*: - 700. Եւ զի ո՛չ գոյ հնար՝ ասաց աբրահամ առ *մեծատունն*, - 700. Եւ այսու նշանաւ ճանաչեաց հոգի *մեծատանն* զհոգին աբրահամու և զղազարու ի գոգ նորա հանգուցեալ: - 719. Եւ առ այս եկն սով քաջ՝ զուգակշիռ հասարակութեանց *մեծատանց* և աղքատաց: - 789

**ՄԵԾԱՐԱՆՔ +** վասն որոյ նախ հրաւիրէ՛ զայլս ի *մեծարանս* և վկայս որդւոյ իւրոյ: - 643

**ՄԵԾԱՐԳՈՅ + ...**և որկրամոլութեամբ մնան բազմամարմինք. և ատելութեամբ զերծանի ոչխարն ի գայլէ. և խրոխտումն *մեծարգոյ* առնէ զծին. և այլն նմանապէս: - 563

**ՄԵԾԱՐԵՄ +** Հինգերորդ՝ զորօրինակ մեծատուն ոմն զոք ի ճաշ կոչիցէ, նախ պատրաստէ՛ զամենայն պէտս կերակրոց և ըմպելեաց. և ապա՛ *մեծարէ՛* զկոչնականսն: - 230. Ի պատիւ *մեծարեաց* զմարդն...: - 230. Վեցերորդ՝ զի ո՛չ պատւաւորքն *մեծարեին*, և ո՛չ անարգք անպատուեին. այլ ընդդիմակն սոցա. զի ո՛չ կարէին ճանաչել զտէրն և զծառայն. զազատն և զանազատն: - 238. Նա՛խ՝ զի հեզութեամբ և քաղցրութեամբ *մեծարեաց* զնա զի մի՛ սովեսցի և մեռցի: - 443. Երկրորդ, զի ուսցուք այսպէս զամենայն ինչս մեր հաղորդել ի պէտս կարօտելոց. և զմիմեանս *մեծարել* և պատուել սիրով: - 655. Տասներորդ, քրիստոս գլուխ է մեր և մեք անդամք. և զի քրիստոս է դատաւոր՝ պարտիմք մեք զմիմեանս *մեծարել* և սիրել...: - 735. Զի հաճելի՛ է բնաւորեալ գովութիւն մարդոյ. ըստ որում *մեծարեցաւ* տիրական պատուով. և է՛ այս հասարակ: - 774

**ՄԵԾԱՑՈՒՑԱՆԵՄ +** Իսկ *մեծացուցէն* ի կիրակէի, զբնաւ տնօրէնութիւնն պատմէ. զի թէ ոչ էր ծնեալ՝ և ո՛չ էր խաչեալ. և ո՛չ յարուցեալ. և ո՛չ զմեզ փրկեալ: - 628. Նոյնդ է և *մեծացուցէին* պատճառն: - 636. Մովսէս քերթօղն զծննդեանն, և *զմեծացուցէրն*, և զտեառնընդառաջին, և զփոխման առաջին պատկերն: - 637. Իսկ *մեծացուցէրն*, և խաչի, և հանգստեան, հանապազո՛րդք են. զի միշտ բարեխօսք են: - 642

**ՄԵԾՈՒԹԻՒՆ +** Նախ՝ եթէ աղքատութիւն և *մեծութիւն* տիրելն և ծառայելն, է՛ յաստուծոյ. սակայն ոմանց կամելով՝ և ոմանց ներելով և թոյլ տալով. այսինքն զբարի մեծատունս և զաղքատս կամելով առնէ. և ըզչարսն ներելով և թոյլ տալով առնէ: - 19. Զորօրինակ ո՛չ է անզգուշագոյն յառել ի բոլորակս արեգական՝ զի շրտնու և ի սակաւուն զոր ունի. ըստ այսմ խնայեաց աստուած ի յազինս մարդկային, զի մի՛ կրիցեմք զկիրս զանկելոյ արուսեկին. որ ո՛չ կարացեալ տանիլ *մեծութեան* փառացն՝ զրկեցաւ և ի չափաւորէն: - 24. Նախ՝ զլայնատարած *մեծութիւնն* և զհաստատ կամարաձգութիւնն երկնից: - 26. Արդ՝ զորօրինակ զգալի աչք մեր ո՛չ կարէ ըմբռնել զքանակութիւն արեգականն և այլ լուսաւորացն. այլ մտօք իմանամք *զմեծութիւն* նոցա: - 31. **Ուստի յա՛յտ է *մեծութիւն* յանցանացն. քանզի ի հինն զինչև մեղանչէր ոք մեծ կամ փոքր՝ պատարագաւն սրբէր. թռչնօք և անասնօք: - 33. Իսկ *մեծութիւն* կռապաշտութեան այնքան էր՝ մինչ միածին**

**որդին պատարագեցաւ մարմնով, և ապա բարձաւ մեղք կռամոլութեանն յաշխարհէ**: - 33. Դարձեալ ո՛չ ասի անպատճառ պատճառն քան զպատճառելին մեծ. զի և որդի նոյն պատճառի հօր փառաց և *մեծութեանն* է հաղորդ: - 39. Նմանապէս ասա՛ և զայս. զբնութեա՞մբն որդի ասես ընդ աջմէ *մեծութեանն* նստեալ, թէ որ շնորհօքն որդիացեալ ըստ քեզ: - 70. Դարձեալ՝ յառաջինսն տիրէ աստուած իբր *մեծութիւն*. ի յերկրորդսն կառավարէ իբր զօրութիւն. ի յերրորդսն պարսպէ՛ իբր փրկութիւն: - 135. **Իսկ թէ կամիս ուսանիլ թէ զի՞նչ է նիւթ պսակին. որ ինչ առ աստուածութեան իւրում *մեծութիւն* գտանի, զա՛յն պատրաստեաց սիրելեաց իւրոց. զոր ո՛չ կարեմ զմտաւ ածել. կամ վայրապար լսելեօք լսել**: - 161. **Դարձեալ՝ որպէս ասեն իմաստունք՝ թէ քան զամենայն պարգևք գերագո՛յն է իմաստութիւնն յաստուծոյ առ մարդիկ իջեալ. այսինքն քան զկեանս և զառողջութիւն, և քան *զմեծութիւն* և զայլսն**: - 178. Եւ դարձեալ՝ զի նոցա ամենեցուն ներհակ գոյ. որպէս *մեծութեան* աղքատութիւն. առողջութեան հիվանդութիւն. կենաց մահ: **...Իսկ իմաստութեան ոչ ինչ է ներհակ: Զի իմաստունն թէ մեծանայ, գիտէ՛ կարգաւորել: Թէ առողջ է, գոհանայ զաստուծոյ: Թէ հիւանդանայ, փառաւորէ՛ զաստուած որպէս զյոբ: Թէ կեայ, յաւելու արդարութիւնն: Եւ թէ մեռանի, անխիղճ գնայ յաշխարհէս:** - 178. Վեցերորդ՝ *մեծութեամբ* քանակեալ: - 184. Չորրորդն փառաց և *մեծութեան*: - 210. Կամ *մեծութիւն*. որպէս ուղտու: - 216. Կարգաւոր էր նախ պատրաստել զարքունիս որ է երկինք և երկիր. և զգահոյս որ է՛ դրախտն. և զսպասաւորքն որ են կենդանիքն. և *զմեծութիւնս* տնկոց և բուսոց. մանաւանդ ոսկւոյ և արծաթոյ և ականց ի սիրտ երկրի գանձել. և ապա՛ թագաւորին բնակիլ: - 230. Երկրորդ՝ զի ոչ հարազատ որդին սեպհականէր զժառանգութիւնս հօր. այլ օտարն ի *մեծութիւն* հասանէր, և իւրն չքաւորութեամբ տառապէր: - 238. Վեցերորդ՝ ի սոցանէ երևի և գործ արդարութեան. որ ընտիրսն աստուծոյ նուիրէր գիտելով *զմեծութիւն* նորա և զբոլորիցն տուրսն. և զխոտանն ի՛ւր թողլով: - 286. Եւ էր *մեծութիւն* նորա մարմնական, Խաշինք **էռ** ոչխարաց: - 321. Եւ սոցին նման այլ սպասք և արծաթք և *մեծութիւնք*: - 321. Վասն երրորդին ասէր յոբ զբարի և չար գործոց հատուցմունքն լինիլ առհասարակ յետո՛յ ի հանդերձեալն. զի աստ են մեղաւորք և հնացեալք ի *մեծութեան*. և ներէ՛ նոցա աստուած վասն կրկին պատճառի: - 324. Զի՞նչ է որ ըստ տօնից *մեծութեանն* առաւելոյր նաշիհն և իւղն և գինին: - 375. Երեսուներորդ, նաւք թարսսեաց բերէին *զմեծութիւն*. և աթոռ կազմեաց զարմանալի: - 442. Եւ տն մերոյ ի հեթանոսաց փառք և *մեծութիւն*. որ նստի յանգուգական աթոռ դատողութեան **բժ**ան թագաւորօք դատել զամենայն: - 442. Որ և նովաւ զնորայս վասն նորա խօսեսցուք. և ի գովեստ *մեծութեան* փառաց նորին յանկեսցուք: - 456. Այլ որ ստուգիւ տեսութիւն է բանս, յերկինս ասել զողորմութիւն, զառաւել *մեծութիւնն* նշանակէ: - 458. Նոյնպէս և ճանաչումն հասակի ընկալաւ ի փոքրութենէ ի *մեծութիւն*: - 479. Չորրորդ՝ զարգացաւ հասակաւ, ի նշանակել թէ զբնութիւնս մեր ի նուազութենէ ի *մեծութիւն* և ի փառս է՛ հանելոց: - 479. Եօթներորդ՝ պարտ էր *մեծութեան* այսմ պարգևի յայտնի լինի **գ** կերպիւ: - 521. Եօթն**ժ**, Վասն *մեծութեան* մեղաց: - 526. Ո՞րպէս է *մեծութիւն* մեղաց: - 565. Այլ ես հաւանիմ որք ասեն **ժ** գոլ *զմեծութիւն* մեղաց. և այն համեմատի ընդ **ժ** ստորոգութիւնն: - 565. Իսկ ներելին թէպէտ որոշի յերիս տեսակս ըստ *մեծութեան* և նւաղութեան. այլ մանրամասնաբար յանթիւս ելանէ. որպէս ծիծաղիլ. վայրաբանել. և այլն: - 568. Վասն երկրորդին՝ յայտնեմք զփառս և *զմեծութիւն* նորա: - 624. Եւ *մեծութեան* և աղքատութեան: - 660. ...զի յորժամ տեսցուք զանցաւոր կեանս, իմասցուք *զմեծութիւն* պատւոյն ա՛յնր կենացն: - 663. Այլ վասն ողջութեան և հիւանդութեան՝ *մեծութեան* և աղքատութեան՝ այժմ ասասցի: - 664. *Մեծութիւն* մարդոյ պատճառի՛ ի չորից: - 664. Եւ տայ աստուած *զմեծութիւն* վասն դ պատճառի: - 664. Նախ՝ զի թէ բարի է մարդն, ընտրէ՛ աստուած և տայ *զմեծութիւնն* որ կարօտելոց ի գո՛րծ ածէ...: - 664. Երկրորդ, թէ չար մարդ լինի, տայ աստուած *զմեծութիւնն* - 664. Երրորդ, և վա՛տ մարդոյ տայ *մեծութիւն*. - 664. Չորրորդ, տայ *մեծութիւն* և նոցա. որք բազում չարիս՝ և մի մասն բարեաց ունին...: - 664. Եւ յայնժամ յաղթեալ զքշնամին և զհարսն առ ինքն ընկալեալ յաթոռ *մեծութեան* նստցի. - 736. Որպէս *մեծութիւնն* աստուծոյ անչափ է՝ և փառքն անհաս...: - 736. Հինգերորդ՝ *զմեծութիւն* թագաւորութեան որ ասէ «զարքայութիւնն»: - 740. Եթէ ումեք տւեալ իցէ շնորհ հասարակ կամ յատուկ, որպէս մկրտութիւնն և հաւատքն. քանքար և տաղանդ. իշխան և առաջնորդ. *մեծութիւն* և ինչք. կեանք լոյս ամանակ և այլն ամենայն. այսու եղանակաւ կշռոյ հատուսցի: - 747. Եւ վասն այն ասի արքայութիւն, զի ամենայն երանութեանց և փառաց է՛ կատարումն և ծայրագոյն *մեծութիւն*: - 754. *Մեծութիւն* այսմ ուրախութեան կարէ՛ զմտաւ ածիլ յայնմանէ, զոր սովո՛ր են ծնօղք յորժամ որդիք նոցա լինին եպիսկոպոսունք կամ թագաւորք: - 763. Աղերս ընծայեցի ի գանձանակ ճոխութեան ձերդ *մեծութեան*. իմաստասէր և ճշմարտասէր եկեղեցոյդ հայաստանեայց և ընթերցասէրդ մտաց: - 772

**ՄԵԿՆԵՄ +** Թէպէտ *մեկնեն* և այլ ազգ, թէ որ զմարդկայինս բնութիւն հաւասարեցոյց փառաց իւրոց և

հաղորդ արար աստուածութեանն, ոչ ինչ զրկումն համարեցաւ. զի բնութիւնն մի է: - 39-40. Զբանս զայս չարափառքն այսպէս *մեկնեն*, թէ միութիւն բանին ընդ դէմ է միութեան Երրորդութեանն. զի անդ բնութիւնն մի՝ և **գ** անձինք. իսկ աստ **բ** բնութիւն և մի անձն: - 80. Վարանեցայ ի տարակոյսս. *մեկնեա՛* զբանդ: - 81. Երրորդ՝ այսպէս *մեկնեն*, եթէ հին աւուրց զնախնի ժամանակս նշանակէ. և մանուկն զնախնի թիւն. զի միակն սկիզբն է ամենայն թըւոց. և որ մերձ է միակին՝ սկզբնապետագո՛յն է քան զհեռագոյնն: - 115. Զայս ոմանք ի վերայ սուրբ Երրորդութեանն *մեկնեն* այսպէս. սիրօղ է հայր. սիրելի որդի. և սէր հոգին սուրբ: - 128. Քանի՞ հրեշտակապետի անուն ասի կամ *մեկնի*: - 144. Եւ զնայելոյն պատճառն իրինոս *մեկնէ* թէ՝ զմարդոյն լինիլն ետես այնպէս փառաւոր և ի խորհուրդ եմուտ...: - 147-148. Զոր ի տեսիլն անտօնի խոստովանէին զբանս զայս *մեկնելով* ի վերայ ինքեանց. այս վասն առաջնոյն: - 153. Տասներորդ՝ զանկեղծ սէրն նշանակէ զոր ունին առ քրիստոս, փոխանակ չարչարանաց նորա չարչարանս կրել. և ի սիրոյ նորա ոչ *մեկնիլ*...: - 159. Դարձեալ այսպէս *մեկնեն* եթէ՝ փորձութիւնն ըստ ինքեան ո՛չ է բարի. այլ պատահմամբ լինի բարի...: - 160. Արբանեակ լինի և *մեկնէ* զխորհուրդս թագաւորաց: - 177. Զի նախախնամութեամբ հաղորդեալ են յարարածս. և իսկական բնութեամբն *մեկնեալ* և որոշեալ և յանհասս գերամբարձեալ: - 178. Իսկ սուրբն գրիգոր նիւսացին գեղեցիկ իմն կարգաւ *մեկնէ՛*: - 274. **Ոմանք ի վերայ մարդոյս *մեկնեն* զտապանն և յիրաւի. զի տապանն ունէր զբոլոր աշխարհս. և մարդն մասն է աշխարհի. պա՛րտ է զի մասն նմանեսցի բոլորին**: - 293. Եւ ա՛յսպէս *մեկնեն* զանուանս **բժ**ան ականցն սուրբն Եպիփան և մեծն Անդրէաս ի գիրս տեսլեանն Յոհաննու: - 349. Եւ այլք այսպէս *մեկնեն* թէ՝ ամենայն անիծեալ կախեալ կայցէ զփայտէ. այլ ո՛չ ամենայն կախեալ զփայտէ՝ անիծեալ է. որպէս խոյն ի սաբեկայ կախեալ ո՛չ է անիծեալ: - 400. Մովսէս օրէնս ետ՝ զի գիր տացեն *մեկնելոյ* զայր և զկին: - 400. Անիծեալն՝ սատակեալ և սպանեալ ասի. որ է *մեկնեալ* և հեռացեալ ի կենաց աստուծոյ...: - 403. Հինգերորդ՝ թէ ո՞րպէս գեղեցկաբար *մեկնեաց* զեղանակ յղութեանն...: - 465. Հինգերորդ՝ զանբաժանելի միացումն ի սէրն քրիստոսի. զի որ ի խաչին թողին և փախեան, յետ իջման հոգւոյն՝ ամենեքեան վասն անուան նորա չարչարեցան և մեռան...: - 524-525. ...և ա՛յսպէս *մեկնեն* առ հասարակ վարդապետք եկեղեցւոյ. - 599. Երկրորդ, զի ի սուրբ գրոց ածեն վկայութիւնս և *մեկնեն* ըստ կամաց իւրեանց...: - 701. Ասեմք նախ՝ եթէ սուրբն ոսկեբերան *մեկնէ* զբանս զայս աստի դատաւորաց և հատուցմանց այսպէս: - 704. Դարձեալ ասեմք թէ՝ այլ վարդապետք *մեկնեն* ի դատաստանին օրն...: - 704. Ասեմք առ այս, եթէ բան սաղմոսին այսպէս *մեկնի*: - 724. Եւ զի՞նչ իցեն այդոքիկ, ընդարձակագո՛յն *մեկնեա*: - 761. Եւ այժմ աղաչեմ զքեզ, մի՛ *մեկնիր* յինէն մերձաւորիչդ իմ: - 771

**ՄԵԿՆԻՉ +** Դարձեալ ի վերայ սաղմոսին որ ասէ, «զարթիր փառք իմ». ասէ *մեկնիչն* և աւանդութիւն հրէիցն թէ՝ խօսի աստ ի վերայ չորից թագաւորացն որք հալածեցին զիսրայէլ: - 28. Պատասխանեմք, ո՛վ յանդուգն *մեկնիչ*...: - 41-42. Եւ այլ ևս. ի վերայ սաղմոսին «մերձեցաւ անձն իմ ի հող» ասէ *մեկնիչն*, այժմ ծերացեալ է բնութիւնս՝ վասն որոյ փութայ ի հող: - 291. Եւ է՛ ինչ ի *մեկնչաց* ուղղեալ. այլ միտքն նո՛յն է: - 407. Ատամունք՝ վարդապետք և *մեկնիչք* և ծասկիչք հոգևոր կերակրոյն: - 534. Հինգերորդ՝ առաջին առաքեալքն իբր կատարումն բանից. երկրորդ մարգարէք նախաձայնք նոցին. երրորդ վարդապետք *մեկնիչք* և թարգմանք երկուցն քարոզութեանց: - 535. Եւ դու խառնեա զսոսա ի խորհուրդ պատարագին. զի իցես ուղղակի *մեկնիչ* և գրոյն հետևօղ: - 596. Հինգերորդ, ի նորս **զ** ազգ է որպէս ասէ *մեկնիչն* վարդան այսպէս: - 611. Որպէս գանձակեցին գրէ ընթերցուածոց *մեկնիչն*: - 651. ...որպէս ասէ *մեկնիչն* տեսլեան. եթէ սպիտակ հանդերձն շնորհացն քրիստոսի մաքրութիւնն է. որ սրբութիւն մեղաց մերոց արար քրիստոս. յոր ամենայնքն վայելեցաք. զի յորժամ սրբի հոգին, բնական ունի զպայծառութիւնն: - 690. Ասէ *մեկնիչն*, սպիտակ հանդերձն զոր զգեցեալ էին՝ շնորհացն քրիստոսի մաքրութիւնն է. յորմէ ամենեքեան վայելեցաք որպէս ասէ առաքեալն. - 696. Զի ասէ մեծն իգնատիոս *մեկնիչն* յայսմ բանի, եթէ բարեկամ եկեալ՝ զպահանջօղ հրեշտակն ասէ յօր մահուն. իսկ առաջին բարեկամ է՛ աստուած: - 697. Եւ *մեկնիչն* ասէ, աստուածապա՛շտ են որք խոստովանին զմեղս. զոր գիտէ տէր յայսմ աշխարհի փրկել առանց քաւարանի հրոյ: - 699. ...այսինքն ո՛չ դառնայ յայժմու վարս աշխարհի և ո՛չ ապաշխարել կարէ ասէ *մեկնիչն:* - 699. Դարձեալ մեր վարդապետք ասեն, որպէս ի տեսլեան *մեկնիչն* **լդ** գլուխն ասէ այսպէս: - 703. Եւ ի **խե** գլուխն ի վերայ այնմ բանի «ո՛չ ոք կարէ մտանել ի տաճարն մինչև կատարեսցին եօթն հարուածք յեօթն հրեշտակացն», ասէ *մեկնիչն*. ոչ արդարոցն հանգչելոյն աղաչանք, և ո՛չ մեղաւորացն ի տանջանս հառաչանք...: - 703

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ +** Եւ ի *մեկնութիւն* ծննդոց **ա** ասէ բերեսիաթաս թէ՝ «**ժ** թագաւորք տիրեսցեն ի սկզբանէ մինչև ի կատարած աշխարհի»: - 28. Պատասխանեմք թէ՝ մի՛ պատառեր զգիրս աստուածաշունչ. տե՛ս և

*զմեկնութիւն* բանիդ թէ՝ «որ առաքեացն զիս հայր՝ ընդ իս է»: - 39. Այս է *մեկնութիւնն* թէ՝ հաւասարն աստուծոյ՝ յափշտակութիւն և զրկումն չհամարէր իւր զծառայի կերպարանս առնուլ. զի ո՛չ ունէր յայլմէ կասկած խլելոյ զփառսն. զի ի՛ւրն է սեպհական: - 39. Այս է *մեկնութիւն* երկրորդ ժողովոյն: - 41. Յայտնի *մեկնութիւն* բանիս եղաւ ի չորրորդ գլուխն: - 43. Որև ի *մեկնութեան* տեսլեանն յօհաննու ասէ՝ «զոմն ջրոյ և զոմն հրոյ»...: - 150. Վասն գրոյ և իմաստից. և *մեկնութիւն* այբին: - 154. Վեցերորդ՝ բանն խօսեցեալ յայտնի *մեկնութեամբ*: - 177. Դարձեալ՝ հանճարն է ի գիրս արտաքին. իմաստութիւնն ի սուրբ գիրս. գիտութիւնն ի *մեկնութիւն* նոցին: - 270. Եւ այս է *մեկնութիւնն*: - 312. Չորրորդ՝ առաջինն որպէս բնաբան. և երկրորդն որպէս *մեկնութիւն* զի իմասցեն մտօք: - 393. Չորեքտասաներորդ՝ առակախօս *մեկնութեամբ* զգեցոյց զիարսնածոյս: - 422. Վասն զի ոմանք՝ որպէս մեծն ներսէս ի *մեկնութիւն* սաղմոսին որ ասէ «**է** անգամ յաւուր օրհնեցից զքեզ», ասէ թէ՝ յերեկոյի շաբաթուն է յարութիւնն քրիստոսի յորում լուսանայր կիրակէն...: - 512. Տասներորդ վասն տեսութեան *մեկնութեանն*. որպէս առ դանիէլին: - 536. Իսկ *մեկնութեամբ* կոչի սահման: - 538. Եւ աւետարանի *մեկնութիւն* զմանեայ: - 545. Այլ բազմադիմի է *մեկնութիւնն* «որ ասիցէ բան զորդւոյ մարդոյ՝ թողցի»...: - 566. Եւ այլ սահմանք զոր դնեն վարդապետք՝ պարունակեալ են ի սահմանն պօղոսի. զի վարդապետաց սահմանն *մեկնութիւն* և յայտնութիւն է սահմանին պօղոսի: - 571-572. Եւ այս է *մեկնութիւնն*. թէպէտ հրէայքն որպէս յանցաւոր մարդ սպանին՝ սուրբ աստուած և ո՛չ սոսկ մարդ: - 632. Վասն որոյ ի թագաւորութեանցն սկսանի ընթերցուածն. որպէս յա՛յտ է ի *մեկնութիւն* նորին: - 651. Այլ և պատմութիւնք և *մեկնութիւնք* սրբոց՝ նորին հոգւոյն են որք ուսուցանեն մեզ զնոյնս: - 778. Եւ կատարեալ տեսութիւն բացերևականն բանի յայտնի՛ է աշխատասէր մտաց. որ յաղագս *մեկնութեան* լուծումն գրոց. և գո՛ն առ քեզ: - 787

**ՄԵԿՈՒՍԻ +** Վեցերորդ՝ եթէ է ամբոխումն ինչ ի մէջ նոցա, ոչինչ էին *մեկուսի* ի մէնջ. այլ դժուարածեռն որպէս զմեզ և հակառակ: - 21

**ՄԵՀԵԱՆ +** Իսկ երեսունն, մինչ ի մեծն թէոդոս. որ եբարձ զամենայն *մեհեանս* կռոցն և բարձրացաւ սուրբ խաչն ի գլուխս գմբեթարդ սուրբ եկեղեցեաց: - 294. Նա՛խ՝ բերել ի դուռն խորանին և տաճարին. և ո՛չ ի բագում *մեհեանս*. զի ցուցցէ զմինն աստուած՝ և յանուն նորա ընծայել: - 359

**ՄԵՀԵԿԻ +** *Մեհեկի*. զի տունկք և բոյսք որպէս զմեռեալ զլինին եղեմնապատ և ծիւնաթաղ. *մէհէկի*. այսինքն աճի: - 201

**ՄԵՂԱԴՐԵԼԻ** - Այսպէս սատանայ է *մեղադրելի* իբր պատճառ և գտակ չարեաց մարդկայինս բնութեան և ո՛չ ադամ: - 777

**ՄԵՂԱՅ +** Վեցերորդ՝ զի ո՛չ զղջացաւ *մեղա՛յ* ասելով: - 279. Աքար զարմեան և սաւուղ կիսեան և յուդա սիմոնեան *մեղայ* ասելով ո՛չ արդարացան: - 415. Յորժամ *մեղայ* ասաց՝ վասն է՞ր ոչ եբարձ զպատիժն. զի ահա՛ խայտառակեցան կանայք նորա: - 432. Նա՛խ՝ զի *մեղայն* դաւթի՝ զպատիժն յաւիտենից՝ արար ժամանակեայ խրատ: - 432. Ա՛րդ՝ զի ասաց *մեղայ*՝ ապրեցաւ ի սրոյ մահու: - 432. Եւ ընդ ասելն «*մեղայ*», անցոյց աստուած զմեղքն. այսինքն անցաւ և փոխեցաւ յաւիտենից պատուհասն ի ժամանակեայն. - 602

**ՄԵՂԱՆՉԱԿԱՆ +** Տասներորդ՝ գործ բութեան ո՛չ ինչ ունի մեղք. զի ըստ բնութեան գործելով ոչ ոք մեղանչէ ասէ փիլիսոփայն. իսկ կամացն գործ՝ *մեղանչական* է. վասն որոյ կամաւորին գով և պարսաւ հետևի: - 156. Ասեմք եթէ՝ էառ քրիստոս մարմին ի կուսէն մարիամայ զմերս թանձր և *մեղանչական*. և միաւորելով ընդ ինքեան՝ եղև առաջին կերպ անմեղութեանն ադամայ որ էր ի դրախտին:- 282. Երկրորդ՝ ապականութիւն և մեղք ո՛չ է գործ արարչի. այլ *մեղանչականին* ադամայ և արկածք բանսարկուին. վասն որոյ տէրն զարկուածս բանսարկւին ո՛չ հպեցոյց ի մարմինն իւր. ապա ուրեմն անապակա՛ն է մարմինն տեառն: - 498-499. Ասեմք եթէ՝ բանն աստուած էառ զմեր ապականակիր մարմինս և *զմեղանչական* հոգի և զմիտս. և մերովս արար փրկութիւն մեզ: - 500. Դարձեալ ևս յայտնի. որ խորհրդովն է պղծեալ՝ ո՛չ կարծէ զինքն *մեղանչական* գոլ. այլ ի գործ մարմնոյն իմանայ զչարիս իւր զղջա՛յ և ապաշխարէ: - 558. զի բոլոր բնութիւնս մեր ի յանձն ադամայ *մեղանչական* եղև ցանկութեամբն...: - 591-592. Իսկ յանցանել նորա՝ կորոյս զամենայն. ո՛չ միայն զխոստացեալն, այլ և զպարգևեալն. զի ըստ որում յանմեղութենէն *մեղանչական* գտաւ, այսպէս մահու և ապականութեան գրաւեցաւ: - 776. ...զի սկզբնաչար և պատճառ ամենայն մեղաց սատանայ է. այլ ադամ այնչափ՝ զի առաջին եղև *մեղանչական* ի նմանէ: - 777

**ՄԵՂԱՆՉԵՄ +** Նախ առհասարակ հանդիպիմք ընդդիմութեանցն, եթէ որք զայս ասեն՝ *մեղանչեն* չորիւք եղանակօք: - 8. Դարձեալ ասեմք թէ՝ ըստ ինքեան սոքա ոչ են չար. այլ բարի. որպէս տգէտն ի մեղաց. և բարկութիւնն ընդդէմ չարեաց. և ցանկացօղն բարեաց. զի ըստ բնութեան գործելով ոչ ոք *մեղանչէ* ասէ

փիլիսոփայն: - 19. Ուստի յա՛յտ է մեծութիւն յանցանացն. քանզի ի հինն զինչև *մեղանչէր* ոք մեծ կամ փոքր՝ պատարագաւն սրբէր. թռչնօք և անասնօք: - 33. Յուսով *մեղանչեն* և անյոյս կորնչին: - 34. Եւ այսոքիւք ամենայնիւ *մեղանչէ՛* մարդ: - 50. Եւ այնչափ կուրացեալ է՝ մինչ զի պատերազմի ընդ դէմ աստուծոյ. թէպէտ գիտէ զայն լինիլ ինքեան ի չար, զի զոր ինչ չար գործէ անձնիշխան կամօքն, *մեղանչէ* մահու չափ: - 146. Եւ այլք զի՞նչ *մեղան* որք ընդ նմա անկան: - 149. Վասն է՞ր ո՛չ ստեղծ զնոսա այնպէս զի մի՛ կարիցեն *մեղանչել*: - 149. Զի թէ այնպիսիք էին որ ո՛չ կարէին *մեղանչել*՝ իբր կապեալք լինէին և բռնադատեալք, և վարձս ո՛չ առնուին: - 149. Այլ ետ նոցա անձնիշխան կամս՝ զի կամովին ընտրեսցեն զբարին և արդարապէս զհատուցումն ընկալցին զի մի՛ երբեք *մեղանչել* կարիցեն: - 149. Նախ՝ զի ասեն վարդապետք թէ ո՛չ ունէք խրատու *մեղանչեաց*, և ո՛չ ունէք օգնութեամբ նորոգեսցի: - 150. Երկրորդ՝ զի որպէս ծառայ առ տէրն՝ ընդդէմ աստուածակերպ իմացմանն *մեղանչեաց*: - 150. Տասներորդ՝ գործ բութեան ո՛չ ինչ ունի մեղք. զի ըստ բնութեան գործելով ոչ ոք *մեղանչէ* ասէ փիլիսոփայն. իսկ կամացն գործ՝ մեղանչական է. վասն որոյ կամաւորին գով և պարսաւ հետևի: - 156. Եւ թէ ոք ասիցէ, ընդէ՞ր այլ *մեղուցեալն* զղջացեալ մտանէ ի կարգ, որպէս հպարտն և ագահն և պոռնիկն ո՞չ: - 166. Ասեմք առ այս Նախ զառաքելոյն, եթէ «ամենայն որ *մեղանչէ*՝ արտաքոյ մարմնոյ իւրոյ է, իսկ որ պոռնկի՝ յիւր մարմին *մեղանչէ»*. ապա ուրեմն յիրաւի ապականեալ մարմին ո՛չ մտցէ ի կարգ: - 166. Այլ արդ ի մարմնի առաւել *մեղանչէ* քան յերկնային կեանս. վասն որոյ անկանի ի զգայական մարմին որպէս ասեն՝ որ ներքո՛յ է մարդոյն՝ և համանման ախտիւք զի զգայակա՛ն է: - 252. Եւ արդ ի կատարեալ մարդն հոգւով և մարմնով՝ փչեաց զշնորհաց հոգին ի մարդկայինս ազգ. և ունէին որ քան յանմեղութեան էին. և կորուսին ի *մեղանչելն*: - 253. Զի նախ քան *զմեղանչելն* ի դրախտին՝ մարդն կարէ՛ր *մեղանչել*, և կարէր ոչ *մեղանչել*. կարէր մեռանիլ, և կարէր ոչ մեռանիլ: - 278. Իսկ յետ մեղացն յաշխարհիս այս՝ կարէ՛ *մեղանչել*, և ո՛չ կարէ ոչ *մեղանչել*: - 278. Իսկ յետ մահուն ի հանդերձեալն. ո՛չ կարէ *մեղանչել*, և անկա՛ր է *մեղանչել*: - 278. Դարձեալ է յանցանօք *մեղաւ* կայեն. վասն որոյ և եօթնիցս պատժեցաւ: - 287. Նա՛խ՝ **գ** մասունք հոգւոյն, բան՝ ցասումն՝ և ցանկութիւն. և **դ** տարերաց խառնուածն որովք *մեղանչէ* մարդ: - 287. Ի սմա՛ ժողովեալ գազանաբարոյ և հանդարտ մարդկան ո՛չ *մեղանչելով* միմեանց: - 294. Երկրորդ՝ հրեշտակք անդրանիկք են քան զմարդ ստեղծմամբ. և յորժամ *մեղան* դևքն՝ խոտեցան և եղեն կրտսերք. և մարդն ել ի տեղի նոցա և եղև անդրանիկ: - 310. Այսինքն նոքա կամէին որ զնոսա արդարս ասէր յոբ՝ և զինքն յանցաւոր՝ և ո՛չ ասաց. զի թէ զնոսա որք անիրաւք էին արդար ասէր՝ *մեղանչէր* ճշմարտութեանն. և թէ զինքն մեղաւոր ասէր՝ *մեղանչէր* վկայութեանն աստուծոյ: - 324. Երրորդ՝ թագաւորական գաւազան էր ադամ ի դրախտին. և յորժամ *մեղաւ*՝ անկաւ ի յերկիր և եղև օձ մեղաւոր: - 332. Նա՛խ՝ նշանակէ զադամ. որ անմեղ և յըստակ ստեղծաւ, և ի *մեղանչելն* եղև արիւն զազրալի, և մարմին անհոգի: - 333. Հինգերորդ՝ ի խորհուրդ սրբութեան. զառաջինն պարգևէ՛ աւազանաւն. և յետ *մեղանչելոյն* ապաշխարութեամբ և վաստակօք պարգևէ՛ զնոյնն: - 350. **Եւ դարձեալ՝ դ են սեռք *մեղանչելոյ*. այսինքն խորհուրդ, խօսք, գործ, և յամառութիւն ի մեղս**: - 351. Եւ գլուխն, զի **ե** զգայութեամբ *մեղանչեմք*: - 367. Իսկ թէ ի հանդերձն յայտնի *մեղանչեմք* առանց ապաշխարութեան, լուցկի առնէ հրոյն որպէս ասացաւ ի վերոյ: - 368. Իսկ թէ ի տունն ի ժողովուրդս նորա. կամ յեկեղեցիս *մեղանչեմք*. յետ **է** ժամանակի փոխելոյ՝ որ է՛ **է** հասակ մեր. և **է** դար կենցաղոյս...: - 368. Իսկ դադան քրէական *մեղանչեաց* որ է՛ յանցումն ի թագաւոր. զոր անհնարին պատուհասին. գոյիւք և ազգօք ջնջին: - 381. Քանի՞ առաւել որք յաստուած՝ և ի մովսէս *մեղան* որ աստուած կոչեցեալ էր և իշխան ժողովրդեանն: - 381. Ոմանք ասեն թէ՝ դադան քրէական *մեղանչեաց*. վասն այն դառն տանջեցաւ: - 381. Իսկ կորխ ի քահանայս *մեղանչեաց*: - 381. Յորժամ և զձեռն դնեն ի գլուխ *մեղուցելոյն*: - 384. Եւ զհինգ բաժնէն մի մասն տուգանք, զի **ե** զգայութեամբ *մեղաւ*: - 384. Զի՞նչ է որ զակամայ *մեղուցեալն* քաւէր պատարագօք. և զկամաւոր յանցաւորն սատակել տայր ժողովրդեանն: - 385. Երրորդ՝ յորժամ ի խոստովանութիւն և յապաշխարութիւն գայ, լինի ներելի և ակամայ. զի թէ նախ քան *զմեղանչելն* ակամայն, և եթէ յետ մեղացն ակամայն, լինի զղջմամբն ներելի և թողելի: - 385. Այն է որ թէ ի մասանց հոգւոյն և մարմնոյն այսինքն բանիւ՝ ցասմամբ՝ և ցանկութեամբ, կամ աչօք կամ լսելեօք կամ այլ ինչ գործով *մեղանչէ* դարձեալ, ուխտն ո՛չ եղև ամբողջ. դարձեալ նո՛ր պարտ է ապաշխարել: - 390. ...ըստ որում մեզ ասաց, բարկանայք բանիւ, և մի՛ *մեղանչէք* գործով. նոյնպէս բարկութիւնն աստուծոյ՝ սպառնա՛լն է. և սրտմտիլն գործն: - 408. Չորրորդ՝ զի ցուցանէ եթէ՝ խ ամ թագաւորեաց, և զայն մինն միա՛յն *մեղանչեաց*: - 432. Նա՛խ՝ ի յոյս թողութեան *մեղուցելոց*. զի և մեք զղջացեալ ապաշխարեմք զմեղս: - 433. Նախ զայն ցուցանէ առ նորս, եթէ ոք յանգիտութեան *մեղանչէ՛* թողու աստուած. և որ դարձեալ կրկնէ, և զառաջինն պահանջէ ասէ: - 439. Երկրորդ՝ զկանոնս

ապաշխարութեան նշանակէ զոր խոստովանահայրն կարգէ. զի թէ յանցանէ ոք՝ *մեղանչէ*: - 439. Ասեմք եթէ՝ մովսէս արիւն եհեղ. և յեսու բազում. և սամուէլ. և ո՛չ *մեղանչեցին*: - 439. Սակայն արմատ մեղացն որ է՛ ցանկութիւնն և դիւրասահութիւնն ի *մեղանչելն* մնայ. որպէս յա՛յտ է ի մկրտեալսն որք կարեն *մեղանչել*: - 462. Երկրորդ՝ սրբութիւն արգանդին մերժէ՛ զմեղս և հերքէ՛ զդիւրասահութիւն *մեղանչելոյն* մահու չափ. որպէս երեմիային և յովհաննուն: - 462. Երրորդ՝ սրբութիւն յատկական. որպէս սրբոյ կուսին, բառնայ զսկզբնական մեղս և զարմատն և դիւրասահութիւն *մեղանչելոյն* մահու չափ և ներելապէս: - 462. Արդ զգիրն ադամայ պարտուց՝ տէրն որդի եղև նմա և անմեղ մահուամբն տարածեալ զձեռս ի խաչին պատառեաց ասելով, նա *մեղաւ* և մեռաւ. ես զինչ *մեղայ*. դո՛ւ ես պատճառն: - 482. Իսկ զգիր քրիստոնէից զոր յետ աւազանին *մեղանչեմք* և գրեմք զյանցանս, զայն պատառէ ապաշխարութիւնն. որ է՛ զղջումն սրտի և խոստովանութիւն լեզուի և հատուցումն գործոց մարմնոյ: - 482. Ապա զի՞նչ *մեղաւ* յուդա: - 491. Ասեմք առ այս, եթէ ապականութիւնն առնէ կատարեալ և անապականութիւնն անկատար, ապա ադամ յառաջ քան *զմեղանչելն* անկատա՛ր էր զի անապական էր մարմնով...: - 500. Նա՛խ՝ զի բանական մարդ կամաւորօ՛քն է մարդ, և ո՛չ ակամայիւքն. որպէս կատարեալ էր մարմինն ադամայ նախ քան *զմեղանչելն*: - 502. Ասեմք մեք, թէ արտածորումն մարմնոյ ո՛չ ունէր մարդն ադամ նախ քան *զմեղանչելն* ի դրախտին. որպէս նոյ ի տապանին. և մանուկն իննամսեայ յարգանդին: - 502. Իսկ վերջին դժոխք որ կոչի անջրդի գուբ, նոցա՛ է որք ո՛չ ունին չար և ո՛չ բարի. որպէս մանկունք անմկրտեալք. ո՛չ տանջին զի չեն *մեղանչեալ*. և ո՛չ հանգչին զի չեն արդարացեալ. այլ վասն սկզբնականին մնան յանջրդի գուբն խաւարին: - 505. Երկրորդ՝ զի փոխեալ է որպիսութիւն մարդոյն. զի ո՛չ կարէ մեռանիլ. նոյնպէս և ո՛չ կարէ արդարանալ ըստ ինքեան. նաև ո՛չ *մեղանչել*: - 508. Եւ զի **ե** են զգայարանք մեր որով *մեղանչեմք*, **ե** օր է նաւակատեաց ի բոլոր տարին ի քաւութիւն **ե** զգայութեանցս: - 510. Ա՛րդ՝ որք զնոյն ախտանան մտօք՝ զնոյն *մեղանչեն* և ընդ նմին պատժին...: - 556. Եւ զանազանութիւն սոցա է՛ ի մեղս *մեղուցելոյն*: - 556. Զի առաջին մեղք հպարտութիւնն է որով սատանայ *մեղանչեաց* յերկինս և անկաւ. և ապա նախանձն զոր ընդ մարդոյն արարին: - 561. Նաև ասեն թէ՝ վասն փառաց աստուածանալոյն *մեղանչեաց* ադամ. և վասն նախանձու առն՝ կինն նախ եկեր զպտուղն: - 561. Նա՛խ՝ զի առաջին մարդն ի դրախտին որկորստութեամբ *մեղաւ*. և այն առաջին մեղք եղև մարդկայինս բնութեան: - 561. Այսպէս *մեղանչէ* սատանայ և մարդ. զի զլոյսն աստուծոյ անձնիշխան կամօք և իմացմամբ մերժէ՝ և սիրէ զխաւար: - 562. **Ա՛րդ՝ *մեղանչելն* մարդոյ այնպէս է որ զակն խփեաց ի լուսոյն և խաւարեցաւ. սակայն լոյսն ծագէ՛ դեռևս ի վերայ աչացն և սակաւ փայլէ ի ներքս. և յորժամ բանայ վաղվաղակի լոյս տեսանէ:** - 562. Իսկ *մեղանչելն* սատանայի այնպէս է որ ընդ դէմ արեգականն հայի և զլոյսն կորուսանէ և խաւարի: - 563. Այսպէս ապա գիտելի է, զի և հրեշտակք վասն այն *մեղանչեն* որ են բանականք և անձնիշխանք: - 563. **Նա՛խ՝ զի որ կամաւ և գիտութեամբ *մեղանչէ*, առաւել է քան զակամայն և զտգիտութեան.** զի թէպէտ և սոքա մեղք են, այլ պատիժն նուազ. որպէս անասնոյն քան զմարդոյն: - 563. Երկրորդ ի միտ առ, զի որ առաւել գիտութեամբ և կամօք *մեղանչէ*, առաւել պատժի քան զայն որ նուազ գիտութիւն ունի և կամք...: - 563. Իսկ մահն՝ որ տգիտութեամբ *մեղանչէ*. թէպէտ ո՛չ գիտէ՝ հոգին մահանայ: - 564. Իսկ դառն մահն է՛ մահու չափն. որ գիտութեամբ *մեղանչէ*. այս է դառն մահն յաւիտենից: - 564. Ո՞րն է գիտութեամբ *մեղանչելն*: - 564. Ա՛րդ՝ **դ** են գիտութեամբ *մեղանչելն*. ...: - 564. Նոյնպէս և Կալն և Ունելն զամենայն մահու չափ մեղս. թէ գործեալ է և թողեալ. զի որ հաստատեալ է մեղքն յինքն, առաւել *մեղանչէ*: - 565. Այլ յատկապէս ըստ երից դիմացն, որ տկարութեամբ *մեղանչէ*՝ է՛ ընդ դէմ հօր. և տգիտութեամբն ընդ դէմ որդւոյ. և չարութեամբն ընդ դէմ հոգւոյն սրբոյ...: - 566. Եօթներորդ՝ թէ առ մարդ *մեղանչեն* առ աստուած բարեխօսեն և հաշտի: - 566. Զի որպէս ի *մեղանչել* հոգւոյն ապականեցաւ մարմինն ադամայ և եղև դիւրասահ առ վավաշոտ ցանկութիւնն. այսպէս և սերեալ մարմինն քարշելով ընդ ինքեան զապականութիւնն՝ աղտեղացուցանէ զհոգին: - 567. Եւ այսու նախաստեղծքն մահու մեռան. և վասն այս *մեղացսէ* որ մեք ևս մեռանիմք...: - 570. Զի որպէս **գ** կերպիւ *մեղանչեմք*. այսինքն ի խորհուրդս, ի բանս, և ի գործս: - 601. Թէ կնոջ տէ՞ր էր յորժամ *մեղանչեաց*՝ թէ ազա՛պ էր: - 601. ...վասն անցեալ մեղացն ցաւի. և խոստանայ այլ ո՛չ *մեղանչել* զանցեալ մեղքն: - 602. Ա՛րդ՝ ի սոցանէ մասն ինչ աղօթակա՛ն է և մասն ինչ հրաման. վասն զի մասն ինչ եկեղեցւոյ կանոնաց *մեղանչեմք*, և մասն ինչ և մասն ինչ պատուիրանացն աստուծոյ: - 602. ...զի յորժամ *մեղանչեմք*, գրիմք ի պատիժն յաւիտենից. այլ ի զղջանալն և փոխիլն մեր, փոխէ՛ աստուած և զպատիժն ի ժամանակեայս: - 602. ...այս է որ ի միտ ունի խոստովանիլ և դարձեալ *մեղանչել*. - 603. Եւ է՛ խոստովանութիւն որ զարմատ մեղացն քակէ՛ ի սրտէն և զղջացեալ ի մեղաց, հաստա՛տ է ի կամս և ի միտս այլ ո՛չ *մեղանչել*. - 603. Այս սուրբ օծմամբս և իւր գթութեամբն աստուած թողու

քեզ զոր *մեղանչեցեր* տեսլեամբդ. նոյնպէս ասէ և այլ զգայութեանցն: - 604. Եւ յորժամ ո՛չ առնէ բնաւ՝ մահու չափ *մեղանչէ*: - 620. ...և մեք հանապազ վեցեկի շարժմամբ հոգւով և մարմնով *մեղանչեմք*. - 624. Եւ ծննդեամբն ազատեցաւ նախամայրն որ նախ *մեղաւ*: - 642. Իսկ ճշմարտութիւնն ի մեզ, վասն ե զգայարանացն սրբութեան. որով *մեղանչեմք*՝ սրբիմք պահօք և ապա՛ սրբոցն ի բարեխօս մեզ: - 653. Վեցերորդ, ըստ թուոյն. զի չորեքնիւթեայ բնութեամբ *մեղանչեմք*...: - 653. Ա՛րդ՝ թէ յերկինս էաք *մեղանչեալ*՝ ո՛չ կարէաք բշժկիլ որպէս դևքն: - 663. Ա՛րդ՝ ի յերկրի *մեղանչեալք*՝ դարձեալ ապաշխարութեամբ անդ ժամանեմք: - 663. Եւ չորրորդ որպիսութիւն, զի աստ հոգին կարէ՛ *մեղանչել*՝ կարէ՛ և ոչ *մեղանչել*: - 667. Իսկ յետ մահու կարէ՛ ոչ *մեղանչել*: - 667. Եւ յետ յարութեան ո՛չ կարէ *մեղանչել* զի անկա՛ր է *մեղանչել*: - 667. Զի նախ *մեղանչեցին* յերկինս. և ապա անկան յօդս և մահացան. - 667. Նոյնպէս և մեղաւոր մարդն աստ *մեղանչէ*. - 667. Երրորդ, զի երիւք *մեղանչէ* մարդ. այսինքն մտօք և բանիւ և գործով մարմնոյ. - 675. Չորրորդ, արտասուօք թողութիւն խնդրեմք զոր *մեղաք* նմա ի մարմնաւոր կեանս...: - 676. Երրորդ՝ զի **գ** են տեսակք հոգւոց. տնկական, զգայական, բանական. և սոքօք *մեղանչեմք*: - 681. Նա՛խ՝ որպէս ասացաւ ի քահանայաթաղն վասն **է** շնորհաց հոգւոյն, և **է** խորհրդոց եկեղեցւոյ, և **է** առաքինութեանց, և **է** գլխաւորագոյն մեղաց, և **է** զգայարանօք *մեղանչեմք*, և **է** փոփոխմամբ հասակի...: - 683. Երկրորդ ի մեզ. զի **գ** զօրութեամբ հոգւոյ և **դ** նիւթով մարմնոյ *մեղանչեմք*: - 683. Իսկ ամիսն որ է՛ **գժ,** տասն զգայութեամբ մեր մտօք և բանիւ և գործով *մեղանչեմք*: - 683. Այլ և **յկե** զօդուածովքս և **բժ**ան անդամօք մարմնոյս *մեղանչեմք*: - 683. Նոյնպէս և հոգին պատճառէ՛ զմարմինն՝ թէ յորմէ հետէ բաժանեցայ ի նմանէ՝ ո՛չ *մեղանչեցի*: - 691. Իսկ որք հաստատե՛ն զքաւարան հրոյ՝ չորիւք *մեղանչեն* ինքեանց: - 698. ...զի գիտասցուք թէ որպէս արդարոց փափկութիւնն է յաւիտենական, ա՛յսպէս և *մեղուցելոց* տանջանքն: - 703. Յինգերորդ, ստեղծաւ մարդն հաւասար հրեշտակաց. և յորժամ *մեղանչեաց*՝ անասնոց հաւասարեցաւ ըստ դաւթի և ընդ նոսա ապականացաւ և պատժեցաւ. - 724. Որք արտաքոյ օրինաց *մեղանչեցին* որպէս կռապաշտք՝ և հրէայքն որք յետ խաչելութեանն քրիստոսի. զի յետ խաչին պահպանութիւն օրինացն ի կռապաշտութիւն է համարեալ նոցա: - 739. Նա՛խ՝ քանզի *մեղանչեաց* յիւր յաւիտեանին, արժանապէս պատժի ի յաւիտենին աստուծոյ: - 744. Դարձեալ՝ *մեղանչեն* ընդ դէմ յաւիտենականին աստուծոյ. վասն որոյ յաւիտեան պատժէ զնոսա: - 744. Եւ թէ այս ո՛չ է գրեալ, նա՛ և ո՛չ այն եթէ *մեղանչեաց* ուրէք զամենայն կեանս իւր բաց ի միոյն. և ո՛չ *մեղանչելն* կրկին՝ ապաշխարութիւն է առաջնոյն: - 778. Երբեմն երկոքեանն յայտնի. որպէս ի հատուցումն իւրաքանչիւր արդարոց և *մեղուցելոց*: - 779. Իններորդ, հաւատով հնազանդի ոք օրինացն աստուծոյ. այլ դևն հակառակ կայ օրինացն և աստուծոյ. թէպէտ գիտէ զայն լինիլ ինքեան չար, այլ գիտութեամբ *մեղանչէ* : - 784

**ՄԵՂԱՆՉՈՒՄՆ +** Զի տրտմութեամբ *մեղանչումն* հիւանդութիւն է և գայթակղութիւն. և հիւանդն յառողջութիւն փութայ. և գայթակղեալն՝ ի ճանապարհ: - 33. Իսկ պաշտօն կռոցն՝ *մեղանչումն* է ընդդէմ էութեանն աստուծոյ և փառաց: - 33. Եւ դարձեալ՝ եթէ տամք զփչումն՝ բանական հոգւոյն ըստ ոմանց, և այսու յետո՛յ իմանալ զհոգին քան զմարմինն *մեղանչումն* է ճշմարտութեան ըստ **ե** եղանակի: - 253. Նա՛խ՝ զի ամենայն մեղք կամ ընդ դէմ իւր մարմնոյ է, կամ ընկերին. իսկ հպարտութիւնն է *մեղանչումն* ընդ դէմ աստուծոյ. որպէս սատանայի: - 561. Երկրորդ՝ զի այլ ամենայն մեղք մարմնական է և գիտեմք թէ մեղք է. իսկ հպարտութիւնն անմարմին է և անօսր. և ո՛չ կարեմք գիտել *զմեղանչումն*: - 562. ...այլ դատապարտի՛լ հարկաւոր է. որպէս դիւաց *մեղանչումն* և անկումն. որ է մահն և դատապարտումն որ է՛ պատիժն: - 667

**ՄԵՂԱՊԱՐՏ +** Եւ տէրն արդար դատաստանաւ ըստ նմանութեան մեղացն պատժէ՛ *զմեղապարտն*: - 387

**ՄԵՂԱՒՈՐ +** Այսպէս առնէ զոմն արդար և զոմն *մեղաւոր*. չար՝ և բարի: - 19. Այսպէս և զարդարս և *զմեղաւորս*. զչարս և զբարիս. զոմանս կամելով առնէ բարիս, և զոմանս թոյլ տալով առնէ չար. ապա ուրեմն ո՛չ են ի կամացն աստուծոյ չարութիւնք և ո՛չ մեղքն: - 19. Ա՛յսպէս առնէ զչարս և *զմեղաւորս*, զի ի ձեռն բարեաց օգտեսցին և ի լաւութիւն գայցեն: - 19-20. Նոյնպէս՝ թէ ասի տրտմութիւն հոգւոյն. զի որպէս տրտմեալն հեռանա՛յ ի տրտմեցուցողէն, այսպէս և հոգին սուրբ հեռանայ ի *մեղաւորէն*: - 60. Եւ ո՛չ ասի *մեղաւոր* վասն առնլոյ *զմեղաւոր* մարմինս. այլ միշտ անմեղ մարմնով իւրով: - 78. Անմեղ և *մեղաւոր*. և այլն ամենայն: - 78. Եւ արդ՝ տգէտն զտգիտութիւն ո՛չ կարէ բառնալ. և ո՛չ *մեղաւորն* զմեղս. և ո՛չ ապականացուն զապականութիւն. և ո՛չ սոսկ մարդ զմարդ կարէ փրկել. զի սո՛ւտ է փրկութիւն մարդոյ: - 99. Երկրորդ՝ զի զամենայն տեսանէ. այսինքն զարդարս և *զմեղաւորս*: - 119. Եւ հոգւոյն շնորհք իջանէ ի *մեղաւորս* և լուսաւորէ: - 125. Չորրորդ՝ զի ահ և երկիւղ են *մեղաւորաց*: - 217. Չորրորդ՝ մահու մեռանիլ այն է, որ հոգւով

և մարմնով տրտմին. և անմահ չարչարին. որպէս *մեղաւորք* յայս կեանս և յետ մահու. զի որ մեռանի մարմնով՝ զպարտս վճարէ. և որ տրտմի հոգւով՝ անմահ մահանայ: - 277. Հինգերորդ՝ նշանակ ահագին դատաստանացն աստուծոյ. զի այնպէս լինելոց է ամենայն *մեղաւորաց* այնպիսեաց: - 303. Վասն երրորդին ասէր յոբ զբարի և չար գործոց հատուցմունքն լինիլ առհասարակ յետո՛յ ի հանդերձեալն. զի աստ են *մեղաւորք* և հնացեալք ի մեծութեան. և ներէ՛ նոցա աստուած վասն կրկին պատճառի: - 324. Այսինքն նոքա կամէին որ զնոսա արդարս ասէր յոբ՝ և զինքն յանցաւոր՝ և ո՛չ ասաց. զի թէ զնոսա որք անիրաւք էին արդար ասէր՝ մեղանչէր ճշմարտութեաննն. և թէ զինքն *մեղաւոր* ասէր՝ մեղանչէր վկայութեաննն աստուծոյ: - 324. Եւ աստ գիտելի՛ է, զի դ ազգ վնա՛ս է որ զարդարն *մեղաւոր* ասեն և *զմեղաւորն* արդար: - 324. Երրորդ՝ մարդահաճութիւն է *զմեղաւորն* արդար ասել...: - 325. Ասեմք եթէ՝ բազում շահ և օգտութիւն է ի բանս նոցա յաշխարհի արդարոց և *մեղաւորաց*: - 325. Նա՛խ՝ զի թէպէտ ի դէմս յոբայ սուտ էր խօսք նոցա, այլ ի դէմս ամենայն *մեղաւորաց* ճշմարի՛տ է: - 325. Երրորդ՝ թագաւորական գաւազան էր ադամ ի դրախտին. և յորժամ մեղաւ՝ անկաւ ի յերկիր և եղև օձ *մեղաւոր*: - 332. Զոր թէ ընկենու ոք, լինի երկրաքարշ մարդ և *մեղաւոր*. և մինչ զղջացեալ դարձեալ ըմբռնէ յետոյ, լինի պատճառ կանգնելոյ և փրկութեան: - 332. Սոյնպէս և ամենայն *մեղաւորաց* կրկին է հատուցումն. այսինքն հոգւով և մարմնով. կամ աստ և ի հանդերձեալն: - 335. Այծն՝ *մեղաւորա՛ցն* է նշանակ. որք դառնան ի մեղաց և նւիրին աստուծոյ: - 358. Եւ մի է քաւութեան պատարագն քրիստոսի. *մեղաւորին* և յանցաւորին: - 362. ...յայնժամ քակէ՛ զտունն մեր որ է՛ հոգի և մարմին. և արտաքոյ քաղաքին յանսուրբ տեղիս ընկենու որ է՛ դժոխքն արտաքոյ արքայութեաննն, և անսուրբ տեղի մեղաց և *մեղաւորաց*. և անդ արտաքսէ *զմեղաւորսն*: - 368. Նա՛խ՝ զի բերան *մեղաւորի* մի՛ բացցի ի ժողովրդեաննն աստուծոյ: - 388. Երկրորդ՝ քաղց և ծարաւ *մեղաւորաց*. և առանց վաստակելոյ և գործելոյ: - 393. Երրորդ՝ վասն կատարածի և վերջին օրհնութեաննն պատմէ. արդարոց զպատիւ, և *մեղաւորաց* զտանջանս: - 407. Երկրորդ՝ ի խրատ *մեղաւորաց*. զի յորժամ գիտենան թէ ո՛չ յաջողի ճանապարհ *մեղաւորի*, արգելուն ի մեղաց: - 408. Եւ կէս գետոյն բաժանեալ և մտեալ ի ծովն աղի. նշանակ կորստեան *մեղաւորաց* և անհաւատից ի յատակս դժոխոց: - 414-415. Եւ տէրն մեր ներէ՛ *մեղաւորաց* աստ ի կեանս և յետ մահու գիշերի. և ի ծագել լուսոյ յարութեաննն՝ ստուգութեամբ դատապարտէ՛: - 418. Հինգերորդ՝ զի ցուցանէ թէ՝ որ ի սիրելին իւր դաւիթ ոչ խնայեաց, նոյնպէս և զամենայն *մեղաւորս* յանդիմանէ՛: - 432. Վեցերորդ՝ ի յոյս և յօրինակ ամենայն *մեղաւորաց*. որք զղջան և գտանեն զթողութիւն մեղաց: - 432. իսկ «տեսլեամբ գեղեցիկ», զի նստի յերկինս և հայի յանդունդս. և հայելով ի հիւանդս բուժէր, և *զմեղաւորս* սրբէր: - 436. Մետասաներորդ, ի բերանոց գազանաց կորզէր զհօտս. և տէր մեր փշրելով զժանիս *մեղաւորին*, կորզեաց զհաւատացեալս իւր: - 436. Դաւիթ յետ յերկուց ամաց ետես զաբիսողոմ. և տէրն *զմեղաւորս* յետ ապաշխարութեան հոգւոյ և մարմնոյ. այլ և յետ աստեացս և մահու տեսանէ ի դատաստանին: - 438. Երրորդն երևի յորժամ աստուած արդարացուցանէ *զմեղաւորն*. յորժամ պատրաստէ՛ զինքն առ շնորհին գործելով զբարին: - 459. Աջն զշնորհս արդարոց. ահեակն զպատուհաս *մեղաւորացն*: - 493. Այլ հուրն յաւիտենից՝ է՛ այժմ դժոխք սատանայի և *մեղաւորաց*: - 504. Եւ որք դ ասեն՝ զներքին դժոխքն մահու չափ *մեղաւորացն* ասեն. և զքաւարանն ներելի *մեղաւորաց*. և զլիմպոսն արդարոց. և զդժոխս ոչ մկրտելոցն: - 504. Նոյնպէս մի հուր դժոխոցն զանազանապէս տանջէ *զմեղաւորսն*: - 505. Իսկ միջին դժոխք որ կոչի բանտ դժոխոց՝ է՛ միջակ *մեղաւորաց*. որք ունին հաւատ և ո՛չ գործք. որպէս չար հաւատացեալք. կամ գործք և ո՛չ հաւատ. որպէս թերահաւատք և անհաւատք: - 505. Ուստի յա՛յտ է զի արդարք և *մեղաւորք* ի դժոխս էին: - 506. Երրորդ՝ մեղքն էր դժոխք և տանջանք *մեղաւորաց*. և քրիստոս եբարձ զմեղս. ապա աւերեա՛ց զդժոխս: - 506. Երկրորդ՝ պատճառ պարտաւորութեան *մեղաւորաց* էր ադամ. և նա ազատեցաւ. ապա ուրեմն ամենայն պատճառելիքն ազատեցին: - 507. Չորրորդ՝ որպէս ադամաւ առ հասարակ մեռան արդարք և *մեղաւորք*: - 507. Նոյնպէս և քրիստոսիւ ամենայնքն փրկեցան արդարք և *մեղաւորք* ըստ առաքելոյ: - 507. ...արդարքն ո՛չ ունէին զկապանս մեղաց և ոչ զխաւար նախնական, այլ *մեղաւորքն*: - 507. Եօթներորդ՝ որպէս ասացաք յառաջին պատասխանին՝ որդիք մահապարտաց և ապստամբք աստուծոյ *մեղաւո՛րքն* էին նոցա քարոզեաց և ազատեաց: - 507. վասն զի շնորհաց և ազատութեան էր ժամանակն. պա՛րտ էր *մեղաւորացն* ընդ արդարոցն վայելել ի շնորհին: - 507. Որպէս բազում անգամ ի ժամանակս պատժոց մեղաց՝ և արդարք ընդ *մեղաւորացն* կրեն զպատուհասն: - 507. Եւ դարձեալ՝ դարձցին *մեղաւորք* անդրէն ի դժոխս թէ ի նոյն տեղի ըստ ոմանց, կամ յայլ տեղի տանջանաց ընդ գործոց հատուցման: - 508. Այլ և դարձ նորա և կանգնումն՝ հաստատութիւն եղև ամենայն ուրացողաց և *մեղաւորաց:* - 547. Տասներորդ՝ զի ամենայն *մեղաւորաց* ներէ՛ աստուած ժամանակս ինչ զի զղջասցին. իսկ հպարտին ոչ...: -

562. Զի թէպէտ անպատեհ է ասել զբարկութիւնն առ աստուած զի անփոփոխելի քաղցրութիւն է. այլ կամքն որով *մեղաւորքն* վասն չար գործոցն տանջեալ լինին՝ բարկութիւն ասի աստուծոյ: - 569. Որդի քրիստոնէին զիա՞րդ լինի *մեղաւոր* յորժամ սրբեալ է հայրն մկրտութեամբ: - 592. Իսկ յորժամ *մեղաւորն* խոստովանի, պա՛րտ է հայիլ քահանային թէ կրօնաւո՞ր է թէ աշխարհական: - 601. Դատաւոր *մեղաւոր*: - 601. ...յորժամ զարհուրեալ տագնապին ամենայն *մեղաւորք* յահաւոր ատենին. և յանաչառ դատաստանին: - 630. Եւ տեսանեն արդարք *զմեղաւորս*: - 661. Նոյնպէս և *մեղաւոր* հոգին աստ կարէ՛ արդարանալ և կարէ ոչ արդարանալ: - 667. Նոյնպէս և *մեղաւոր* մարդն աստ մեղանչէ. - 667. Իսկ յորժամ *մեղաւոր* հոգին հասանէ ի վախճան, տրտմութեամբ և ակամայ իբրև զանասուն ի սպանդ վարեալ...: - 669. Սակայն այլ է մահ *մեղաւորին*, և ա՛յլ արդարոյն: - 669. Իսկ մահ *մեղաւորին* չա՛ր է...: - 669. ...նոյնպէս և *մեղաւորք* ո՛չ են առեալ զկատարեալ տանջանս իւրեանց: - 669-670. Ապա ուրեմն յա՛յնմ աւուր լինի հատուցումն արդարոց և *մեղաւորաց*...: - 670. Դարձեալ՝ նշանակէ զմահ *մեղաւորացն* ի կատարածի...: - 671. ...ուր արդարք և *մեղաւորք* ի միասին բնակին կարօտ կերակրոց և ըմպելեաց: - 682. Եւ թէպէտ ամենայն *մեղաւոր* զղջանայ յետ մահու, այլ ո՛չ կարէ ապաշխարել...: - 684. Իսկ *մեղաւորացն* որ ի մարմնոյ արձակեալ, առաւել տեսանեն քան զայժմ...: - 685. Իսկ *մեղաւորքն* ոչ. զի չարակամք են և նախանձուք: - 685. Այլ *մեղաւորքն* ո՛չ երևին ամենևիմբ: - 685. Իսկ *մեղաւոր* հոգին դարձեալ ի ձեռն հրաշտակաց. զի աղաչէր զնա երևիլ. կամ ի ձեռն դիւաց կերպարանին նոքա: - 686. Այլք այլ իմն ասեն. իբր թէ իւրաքանչիւր *մեղաւոր* հոգի ի գերեզմանս իւրեանց կամ ի յերկրի տանջին...: - 686. Եւ այլք ասեն ի դրախտին լինիլ զկայանս հոգւոց արդարոց և *մեղաւորաց* մինչ ի կատարած աշխարհի: - 686. Իսկ արդարքն և *մեղաւորքն* միջակք՝ որք առին զօրէնսն և ըստ օրինացն գործեցին զբարիս. կամ սխալեցին...: - 687. ...զի զարդարս և *զմեղաւորս* ի դատաստանին ասեն որոշիլ: - 687. Այս է խորանն առ երկնիւ ուր ժողովին արդարք և *մեղաւորք* հոգիք հաւատացելոց. որք դատաստանաւն կատարին, ակնունելով ողորմութեանն աստուծոյ: - 688. Իսկ ծախակողմեան խորան՝ է՛ ի յօդս յաներևոյթ տեղիս. ուր ժողովին հոգիք չարաց և *մեղաւորաց*. որք դատաստանաւն դատապարտին: - 688. Եւ սկիզբն անդ ժողովելոյ՝ ի յարձակելն քրիստոսի առ ժամանակեայ զհոգիսն անարժանից՝ անդ մնացին և անտի դարձցին *մեղաւորք* անրդէն ի դժոխս ըստ մարգարէին: - 688. Ի մի ասացին գոլ խորանս ի ներքոյ երկնից զարդարս և *զմեղաւորս*. որք դատաստանաւն որոշին: - 689. Այլ թէպէտ մի է տեղեաւ, այլ արդարքն յուսով ուրա՛խ են, և *մեղաւորքն* տանջին: - 689. Դարձեալ՝ մի ասի կայանք երկուցն վասն միոյ ակնկալութեան. զի արդարքն ակնունին պսակաց, և *մեղաւորքն* տանջանաց: - 689. Ապա թէ ոչ՝ ո՛չ կարէ *մեղաւոր* հոգին ելանել յերկինս. ուստի և հրեշտակք վասն մեղաց անկան. և մարդն ի դրախտէն: - 689. Յոգիք արդարոց կամ *մեղաւորաց* ունի՞ն այժմ զփառս կամ զտանջանս թէ ոչ: - 689. Ապա ո՞րպէս են ի դժոխս հոգիք *մեղաւորաց*...: - 690. **Դժոխքն նշանակէ զդժուարին և զնեղ տեղիս որ է՛ խորանն ծախակողմեան.** ուր *մեղաւորքն* կրկին ունին զտանջանս: - 690. Զի՞նչ է աներևոյթ տեղի *մեղաւորաց*: - 690. Ապա ուրեմն մինչ ի դատաստան ընտրեալքն ո՛չ ունին կեանս, և ո՛չ *մեղաւորքն* տանջանս: - 693. ...այսինքն բաժանեսցէ զարդարս և *զմեղաւորս*: - 693. Ապա ուրեմն մինչ ի վերջին օրն ո՛չ է բաժանումն արդարոց և *մեղաւորաց:* - 693. Եւ մինչ այս ոչ կատարի, ո՛չ առնուն արդարք զփառս, և ո՛չ *մեղաւորք* զտանջանս: - 693. Նմանապէս և *մեղաւորքն* անդ ի յարութեանն ի մէջ չարեաց և տանջանաց: - 694. Պատասխանեմք առ այս որպէս ասէ սուրբն կիւրեղ ի գիրս պարապմանց եթէ առակ օրինակ են սոքա արդարոց և *մեղաւորաց* որ այսպէս լինելոց է ի կատարածի: - 695. Ուստի յա՛յտ է զի նախ քան զքրիստոս արդարք և *մեղաւորք* ի դժոխս էին: - 695. Չորեքտասաներորդ, զի թէ *մեղաւորացն* գոյ հնար արտաքս գալ ի հրոյն և երթալ յարքայութիւնն...: - 700. Իսկ թէ այժմ հոգւոյն եղեալ է դատաստան, և հատուցումն ըստ գործոց, և արդարոցն փառք և *մեղաւորացն* տանջանք. և յայնժամ մարմնոյն որպէս ասեն նոքա...: - 700. Այլ զապաշխարանքն դնէ կանոնքն, զի ցանկ և պարիսպ է *մեղաւորին*...: - 701. ...մինչև կատարեսցին հարուածք բարկութեանն աստուծոյ ի վերայ երկրի. որով փորձին և արդարք և *մեղաւորք.* - 703. Որ արարն յոչ էից, գիտէ անխառնապէս որոշել զիւրաքանչիւր փոշիս արդարոց և *մեղաւորաց*. զի հատուսցէ իւրաքանչիւր ըստ գործոց: - 719. ...նմանապէս և մարմինք մեռեալք յերկրի և հոգիք ի կայանս իւրեանց ի միասին կան առհասարակ արդարոց և *մեղաւորաց* մինչ դատաստանաւն բաժանեսցին օդիքն և այծիք: - 721. Եթէ փայտ խոտ եղէգն որ են *մեղաւորքն*, զի անդէն մնան: - 721. *Մեղաւորաց* մարմինքն ո՞չ ունին զզարդս զայսոսիկ: - 723. Վասն այն հոգիք *մեղաւորաց* լինին ի խաւարն անգիտութեան. և ի տրտմութիւն յաւիտենական. և որոշեալք յաստուծոյ: - 723. ...պակասին սոքա և ժողովին ի ներքոյ երկրի և լինին տանջանարանք *մեղաւորաց* որպէս ասէ սուրբն բասիլիոս: - 728.

եւ համընթաց հուրն զհիւսիսիւ և պատէ՛ *զմեղաւորս*: - 731. Եւ վերջընթացն է հրեղէն ծովն ի հարաւ. ուր առաքէ՛ *զմեղաւորս* ի հուրն յաւիտենից: - 731. Երկրորդ՝ զի հուրն կրկին ունի զօրութիւն. այսինքն զլոյսն և զայրելն. և կրկին լինին մարդիկ. այսինքն արդարք և *մեղաւորք*...: - 731. Եօթներորդ, զի ահագնակերպ երևի ի վերայ *մեղաւորաց*. մինչ ասիցեն լերանց թէ անկերուք ի վերայ մեր. և բլրոց թէ ծածկեցէք զմեզ յերեսաց բարկութեանն աստուծոյ որ նստի յաթոռ. որպէս ասէ տեսիլն: - 737. Նա՛խ՝ զի տեղիք դատաստանին ո՛չ է յերկինս ուր *մեղաւորք* ո՛չ կարեն ելանել: - 737. Իսկ *մեղաւորքն* ի ձախմէ. այսինքն վայր ի յերկիր ծանրացեալ մեղօքն. որպէս կապար ի յերկիր հակեալ. ուր բոլորով սրտիւ սիրեցին զնա: - 738. Եւ տե՛ս թէ ո՜րպէս անձուկ և ահագին է յամենայն կողմանէ *մեղաւորացն*: - 738. Զի բոլոր Երրորդութիւնն դատէ՛ *զմեղաւորս*, և մարդկութեամբն խօսի ընդ նոսա քրիստոս: - 738. Երկրորդ, աթոռակիցքն քրիստոսի. որպէս առաքեալքն և մարգարէք և կատարեալքն դատեն *զմեղաւորս* իբր տեղեակք օրինացն աստուծոյ: - 738. Չորրորդ, յայտնելով մեղացն. և այսպէս *մեղաւորք* և չարք զմիմեանս դատեսցեն: - 738. Ոմանք ո՛չ դատին այլ դատապարտին որպէս բուն չարքն և յայտնի *մեղաւորքն*...: - 738-739. Եւ բանիւ բերանոյ խօսի ընդ միջակ արդարս և ընդ *մեղաւորս*...: - 739. Երկրորդ՝ կենդանի են արդարքն. և մեռեալ *մեղաւորքն*: - 740. Նա՛խ՝ տեսանեն զմարդկութիւնն զի երկիցեն. և մի՛ զաստուածութիւնն զի մի՛ խնդասցեն. զի սրտմտութեամբ հայի ի *մեղաւորս*. - 741. Ապա յա՛յտ է յասացելոցս թէ՝ քրիստոս երևեսցի արդարոցն քաղցրատես, և *մեղաւորացն* դառնակերպ. որ նշանակեցաւ ի սիւն ամպոյն ի տուէ և ի հուրն ի գիշերի: - 741. Զփառս արդարոցն տեսանե՞ն *մեղաւորքն* թէ ոչ: - 741. Մինչև յօր դատաստանին տեսանեն *մեղաւորք* փառս արդարոց ընդհանրապէս՝ այլ ո՛չ մասնաւորաբար...: - 741. Ասեն վարդապետք թէ արդարապէ՛ս պատժի *մեղաւորն* յաւիտեան: - 744. Դարձեալ՝ չար կամք *մեղաւորին* է յաւիտենական...: - 744. Այլ և յորժամ ի վեր քան զչափն պատուէ զսուրբս, և ի վայր քան զչափն պատժէ *զմեղաւորս*: - 746. Նախ՝ կոչի սիրտ և անձինք *մեղաւորաց*, ուր ժողովին ամենայն գործք չար որ է՛ խաղող դառնութեան. և ունակացեալ պահէ յինքեան. և հեշտութեամբն ճմլէ հանապազ և արբենայ մեղացն գինով: - 748. ...զի որպէս ի հնձանի ամբարեալ է ի գիտութիւնն աստուծոյ՝ *մեղաւորացն* պատիժ...: - 748. Զի արտաքոյ երկնային քաղաքին եէմի է՛ տանջանաց տեղի, ուր *մեղաւորքն* ժողովին: - 748. Այս է հնձան մեծ որ զամենայն *մեղաւորս* ընդունի յինքեան: - 748. Կամ ցուցանէ զչափով տանջանս *մեղաւորացն*. որք չափով աստ տանջին, չափով կրեն զհանդերձեալ պատիժն. զի ընդ պակասիլ ծխոյն՝ և հուրն նուազի: - 749. Երկրորդ՝ զտանջօղ բարկութիւնն զոր ածէ՛ ի վերայ *մեղաւորաց*: - 749. Երրորդ՝ զի նիւթ հրոյն և այրելիքն որ է աղտ մեղացն՝ նաև մեղաւորքն՝ են յաւիտենական: - 750. Վասն չորից անհանգիստ տանջին *մեղաւորքն* յաւիտեան. որպէս տեսանի ի մարմնաւոր տանջանացս: - 750. Զի այնպէս ծանակեալ լիցի մարմին *մեղաւորին*, մինչ զի հոգին գարշեսցի առնուլ զնա. և որպէս ուրուկ և որդնալից այնպէս ո՛չ կամեսցի ունել զնա: - 751. Եւ յորժամ առաքին *մեղաւորքն* ի հուրն յաւիտենից, գտանեն զծնօղս իւրեանց որպէս գառինք զմարս, և յաւիտեան խածատեն զնոսա: - 753. Տեսանե՞ն արդարքն *զմեղաւորս* յայնպիսի տանջանս թէ ոչ: - 754. Մինչ ի յօրն դատաստանի աղօթեն արդարք վասն *մեղաւորաց*. այլ յետ այնորիկ վասն դատապարտելոցն ո՛չ խնդրեն ինչ. զի ընդ դէմ աստուծոյ գոլ իմանան վասն նոցա զխնդիրն: - 754. Այսքան վասն *մեղաւորացն* և տանջանաց նոցա: - 754. Երթիցեն արդարքն ի կեանսն յաւիտենից. և *մեղաւորքն* ի տանջանս յաւիտենից: - 760. Իսկ թէ նա որ սկիզբն կորստեան ամենեցուն մեզ եղև և պատճառ ամենայն *մեղաւորաց*՝ ապրեցաւ շնորհօքն քրիստոսի. - 775. Նա՛խ՝ որպէս ի վերոյ ասացաւ. զի թէ ադամ որ սկիզբն և պատճառ էր *մեղաւորաց*՝ ազատեցաւ. ապա ուրեմն և որդիքն որ վասն յանցանաց նորա՝ ազատեսցին: - 776. Չորրորդ, զի որպէս ադամաւ ամենեքին մեռան արդարք և *մեղաւորք*. այսպէս և քրիստոսիւ ամենեքին կենդանացան. այսինքն ազատեցան: - 777. Եւ այն զի՞նչ իցէ, զի սա միշտ մի և նոյնպէս մնայ. իսկ նա՛ աստանօր ողորմի զղջացելոցն, և ո՛չ ոչ նոյնպիսոյն. իսկ անդանօր ո՛չ զղջացելոց ողորմի մարդկան *մեղաւորաց* և ոչ անզղջից անմարմնոց շեղելոց: - 778. Այլ զանազանի. զի դևք ամենևին ո՛չ ունին զղջումն և ոչ կարեն. վասն որոյ ո՛չ հանդիպին թողութեան. իսկ *մեղաւորն* ունի զղջումն այլ ո՛չ կարէ վարձաւորիլ: - 780

**ՄԵՂԿԱՆԱՄ +** Նա՛խ՝ զի մեղքն յարմարի մարմնոյն. որ *մեղկանայ* և թուլանայ: - 555. Եւ երկրորդ յանցումնէ՝ որք մտօքն հեշտացեալ *մեղկանան* ընդ տեսութեանն. և հաւանին խոկացեալք ի նոյն: - 558

**ՄԵՂԿԵՄ +** Եւ թէ յաջոյ յաջուածոց խեննեշութիւն *մեղկէ*, վերնոյն հեշտալեաց հաւատա՛ և ո՛չ խաբիս: - 770

**ՄԵՂԿԻՄ +** Ի ջրոյ պոռնկութիւն և փառասիրութիւն. որ գէճ է և թոյլ. և փառասէրն յայլոյ բանս *մեղկի* և թուլանայ: - 560

**ՄԵՂՈՅՇ +** Չորրորդ՝ ի նոցունց այլք. որպէս մեղուք ի *մեղուշ* արջառոյ. թէպէտ այժմ ի ծաղկանց լինին: - 53. Հինգերորդ՝ ի մեռեալ կենդանւոյ է մեղուն. որպէս ասեն ի *մեղուշ* արջառաց: - 356

**ՄԵՂՈՒ +** Չորրորդ՝ ի նոցունց այլք. որպէս *մեղուք* ի մեղուշ արջառոյ. թէպէտ այժմ ի ծաղկանց լինին: - 53. Զի ունին ծնունդ զնմանն իւրեանց, և ունին զելումն բաց ի ծննդենէն. որպէս ի ձիոյն ձիակապիկն. և յարջառոյն *մեղու*. և յայլոցն որդն: - 53. Կամ խայթոց. որպէս *մեղուի*: - 216. Չորրորդ՝ ի բազում անսուրբ իրաց առնու *մեղուն*. ի սուրբ իրացէ նւէրքն աստուծոյ: - 356. Հինգերորդ՝ ի մեռեալ կենդանւոյ է *մեղուն*. որպէս ասեն ի մեղուշ արջառաց: - 356. Զոր և ես զօրէն մշակաց բազմահաւաք պտղոց. կամ փունջ մի անուշահոտ բազմերանգ ծաղկանց. կամ չնչին թռչնոյ զխորիսխ *մեղու*. կամ որպէս զլոմայս այրւոյն տառապեալ գոյիւ: - 772

**ՄԵՂՈՒՇԱԳՈՅՆ** - Թէ լինի սակաւ մի *մեղուշագոյն*, արդարամիտ է և քաջ ուշիմ: - 246

**ՄԵՂՍԱՍԷՐ +** Դարձեալ՝ վարժէ՛ զնա գօտեաւն՝ պատերազմիլ ընդ մեղս և ընդ *մեղսասէր* մարդիկ որ կամին զանմեղն քարշել արտաքոյ օրինացն աստուծոյ: - 311. Եւ ուխտաւորն ի տուն սգոյ ո՛չ երթայ. այն է որ ի մեղքն այլ ո՛չ դառնայ. և ո՛չ ընդ *մեղսասէր* գործակիցս: - 390. Իսկ կապելն ի դէմս մեղացն է և *մեղսասիրաց*. որպէս տէր մեր բևեռեաց զմեղս և զսատանայ ընդ խաչափայտին: - 540. Երրորդ՝ զի զայլ մեղս *մեղսասէրքն* գործեն. իսկ զիպարտութիւնն սուրբք և ընտիրք. որպէս հրեշտակք յերկինս: - 562. ուր բելիարն նստի. զորս աւերեաց քրիստոս, և շինեն *մեղսասէրք*: - 679

**ՄԵՂՍԱՔԱՒԻՉ +** Ա՛րդ՝ ջուր և գինին և մեռոնն նշանակեն ի մեզ զջուր սրբութեան աւազանին. և մեռոնն որով օծաք և դրոշմեցաք. և ապա ճաշակմամբ *մեղսաքաւիչ* արեանն կատարեցաք: - 615

**ՄԵՂՐ +** Եւ էր ինքն բոլոր և սպիտակ նման գնձի. և քաղցր որպէս *զմեղր*: - 338. Վասն է՞ր *մեղր* ո՛չ ելանէր ի սեղանն: - 355. Նա՛խ՝ զի *մեղրն* զհեշտութիւն մարմնոյն ցուցանէ: - 355. Երրորդ՝ *մեղրն* ո՛չ է վաստակ. ի մեր աշխատանա՛ց է նուիրելի աստուծոյ: - 356. Իսկ այն որ *զմեղրովն* պտուղն նուիրէին քահանայից, բայց ի սեղանն ոչ: - 356. Եւ սա՛ բղխէ զկաթն և *զմեղր*. որ է՛ քաղցրութիւն և թողութիւն մեղաց. նոյնպէս և զժ բանեան օրէնս: - 395. Երրորդ առ այսոքիւք՝ միաւորութիւն անուանեմք և զխառնուածս երկուց նայից ըստ զանազան որակութեանց. յորում ո՛չ ոք ի խառնեցելոցն զիւր ծայրագոյն որակութիւնն սեռաբար կարող է պահել. այլ շփոթեալ անկանի ի ծայրագոյն որակութենէն. որպէս զջուրց և զգինեացն խառնուած, և *զմեղերաց*: - 476. Իսկ թէ մարմնական խնդրես զխառնումն ջրոյ և պնդիս ի հակառակն, ասեմք քեզ թէ ո՛չ միայն ջրոյ, այլ և կաթին և *մեղեր* և գինւոյ ասէ խառնումն ի խառնարանն. - 596

**ՄԵՂՔ +** ...*մեղքն* և չարն ո՛չ են յաստուծոյ. այլ յոչընչէ՝ որ է՛ սկիզբն նոցա: - 16. Դարձեալ ասեմք թէ՝ ըստ ինքեան սոքա ոչ են չար. այլ բարի. որպէս տգէտն ի *մեղաց*...: - 19. Այսպէս և զարդարս և զմեղաւորս. զչարս և զբարիս. զոմանս կամելով առնէ բարիս, և զոմանս թոյլ տալով առնէ չար. ապա ուրեմն ո՛չ են ի կամացն աստուծոյ չարութիւնք և ո՛չ *մեղքն*: - 19. Վեցերորդ՝ է՛ պատրուակ *մեղացն*. զի ոմանք չար գործով ի բաց մերժեն յինքեանց զլոյս արեգականն արդարութեան...: - 32. Եւ որպէս ասեն վարդապետք՝ քան զամենայն *մեղս* ծանրագոյն գոլ զպաշտօն կռոցն վասն երկուց: - 33. Երկրորդ՝ զի ամենայն *մեղք* զերկիւղն աստուծոյ սանձ ունի. որով և զղջանայ: - 33. Իսկ մեծութիւն կռապաշտութեան այնքան էր՝ մինչ միածին որդին պատարագեցաւ մարմնով, և ապա բարձաւ *մեղք* կռամոլութեանն յաշխարհէ: - 33. ...բոլոր դիտումն նոցա է՛ պատրել զմարդիկ և հանել ի հաւատոց. և լնուլ զորովայնս. և զկանայս շեղջակուտեալս *մեղօք* յինքեանս գրաւել: - 35. Այլ որ եղև փոխանակ հնոյն նոր անդամ. և նզովք կոչեցաւ վասն իմ և *մեղք* այն որ ո՛չ արար *զմեղս*, և ելոյծ զանէծս և եբարձ *զմեղս*: - 42. Երրորդ՝ ի խրատ մեզ. զի որպէս չարչարանօքն ազատութիւն արար մարդկային բնութեանս, այսպէս ամէն ոք չարչարանօք իւրովք ազատեսցի ի պատժոց ներգործական *մեղացն*: - 43. Երրորդ՝ ո՛չ կարեմ ոչ ինչ. այսինքն *մեղք* և չար: - 45. Իսկ յորժամ դառնամք ի *մեղաց*՝ յորդորէ՛ զմեզ ի ծածուկ իմաստիւքն իւրովք, ժուժկալ լինել ի փորձութիւնս և համբերել տանջանաց որով ինքն զփորձ էառ: - 48. Էառ փրկիչն զամենայն, զի փրկեսցէ զամենայն. բաց ի *մեղաց*. զի *մեղքն* եկամուտ է և ո՛չ է ի բնութենէս. զի բնութիւնս անմեղ ստեղծաւ յաստուծոյ: - 50. Քսանևմիերորդ՝ արդ՝ եթէ քրիստոս տգէտ ունէր միտս, և տկար հոգի, և ապականացու մարմին և եկն քրիստոս զի բարձցէ զտկարութիւնս մեր. և լուսաւորեսցէ որ նստէաք ի խաւարի. և նա՛ է գառն աստուծոյ որ բառնայ *զմեղս* աշխարհի և զապականութիւն: - 99. Եւ արդ՝ տգէտն զտգիտութիւն ո՛չ կարէ բառնալ. և ո՛չ մեղաւորն *զմեղս*. և ո՛չ ապականացուն զապականութիւն. և ո՛չ սոսկ մարդ զմարդ կարէ փրկել. զի սո՛ւտ է փրկութիւն մարդոյ: - 99. Ապա ուրեմն բարձօղն տգիտութեանց ո՛չ ունէր տգիտութիւն. և բարձօղն *մեղաց* և ապականութեանց՝ ո՛չ *մեղք* և ո՛չ ապականութիւն: - 99. *Մեղքն* անթողլի՛ է նոցա: - 102. Երկրորդին պատասխանեմք եթէ՝ ո՛չէ նոյն

դրութիւն և խոստովանութիւն. որպէս յորժամ ասեմք դնելով թէ՝ չա՛ր է. խաւա՛ր է. և *մե՛ղք* է. ահա այս ուրացութիւն է և պակասութիւն: - 124. Եւ յորժամ ասեմք ո՛չէ չար. ո՛չէ խաւար. ո՛չէ *մեղք*. ահա այս խոստովանութիւն է և ո՛չ դրություն: - 124. Երկայնութիւն է համբերութիւնն. որով տանի զչարսն. և վասն ապաշխարութեան անտես առնէ *զմեղս*: - 129. Վասն այն աշխարհ ամենայն այժմ ի չարի կայ, և խաւարեալ զանազան *մեղօք*: - 139. Իսկ թէ դառնային ի ներքոյ ինքեանց առ փոփոխական բարին, անկանէին ի չար *մեղացն* և ի չար պատժոցն. որպէս այժմ դևք և ի կատարածի: - 146. Յոգնորն այն է՝ զի անկաւ անձնիշխան կամօք ի բարւոյն ի չարն, ի լուսոյն ի խաւարն, ի գիտութենէն յանգիտութիւն, յանմեղութենէն ի *մեղս*, յերանութենէն ի թշուառութիւն, ի սիրոյն յատելութիւն: - 146. Վասն զի ի դևն երիս իրս նկատելի է. այսինքն բնութիւնն՝ գործն՝ և *մեղքն*: - 146. Այլ *մեղացն* պատշաճի ստորին տեղիք որ է դժոխքն: - 147. Ա՛յս է՝ *մեղք* հպարտութեանն որ է երկրային ախտ, ծանրացոյց և ընկէց յերկիր: - 148. Երկրորդ՝ զի պա՛րտ էր տեսանել այլոցն *զմեղս* նոցա և զպատիժ և մնալ ի բարին: - 149. Վասն է՞ր սատանայի *մեղքն* է անթողլի: - 150. Երկրորդն՝ *մեղացն*: - 151. Երրորդ՝ գլուխ վիշապին՝ է *մեղքն*, և տուտն մահ և դժոխք: - 152. Զոր եկեալ տէրն անմեղ և անապական մարմնովն նահանջեաց *զմեղս*, և զարդարութիւն սփռեաց ի վերայ մարդկան. և դատապարտեաց զսատանայ իբր զդաւաճանօղ մարդկան և կոխան արար ի ներքոյ մարդկան: - 153. Նախ՝ խաբէութեամբ զմարդիկ ի *մեղս* և ի կռապաշտութիւն ձգելոյ: - 153. Բաղդատութիւն ամպոյ և *մեղաց*. ամպոյ և սուրբ կուսին. և յատկութիւնք փայլման ի հոգին սուրբ: - 155. Տասներորդ՝ գործ բութեան ո՛չ ինչ ունի *մեղք*. զի ըստ բնութեան գործելով ոչ ոք մեղանչէ ասէ փիլիսոփայն. իսկ կամացն գործ՝ մեղանչական է. վասն որոյ կամաւորին գով և պարսաւ հետևի: - 156. Եօթներորդ՝ թոյլ տուեալ լինի և ոմանց անկանիլ ի *մեղս* ինչ...: - 159. Կրկին է փորձութիւն. այսինքն ներքին և արտաքին. որ է՛ *մեղաց* և պատժոց: - 160. Արդ ներքին է՝ որ ի փափկութեանց և ի հեշտութեանց փորձի բնութիւնս մեր և այլայլի ի զանազան տեսակս *մեղաց*. զոր պա՛րտ է հանապազ աստուածային խնամոյն՝ զի մի՛ թողցէ յայսպիսի փորձութիւնս զմեզ ընկղմիլ: - 160. Եւ ըստ ա՛յսմ կերպի է փորձութիւնն բարի. զի բնութեամբ չար է. և պատճառէ՛ զչար *մեղքն*. բայց պատահեցաւ ոմանց զի յաղթեցին փորձութեանց և ընտրիք երևեցան: - 160. Ապա թէ զկամքն երետ՝ ուրախանայ և կենայ ի մօտն մինչև *զմեղքն* գործել տայ և հանէ ի բարւոյն: - 161. ...ի մէջ նեղութեանց լինելով՝ յանցեալ *մեղացն* զղջանամք և սրբիմք. և յապագայն զգուշութեամբ պարսպիմք. և ի ներկայն՝ արի՛ և կա՛զմ պատրաստիմք: - 162. Զի որպէս հուր զժանկ արծաթոյ՝ և խարտոց զժանկ երկաթոյ, նոյնպէս և նեղութիւն սրբէ *զմեղս* մարդոյ: - 162. Եւ թէ ոք ասիցէ, եթէ աստուած զոր ոչ կամի՝ ո՛չ կարէ, որպէս զչար զի ո՛չ կամի և ո՛չ կարէ. նոյնպէս *զմեղս* և զայլսն. ապա երևի անկարութիւն ի յաստուած գոլ: - 163. Ապա յա՛յտ է զի զչարն և *զմեղս* ո՛չ կամի, վասն այն ո՛չ կարէ: - 163. Դարձեալ ասեմք թէ ո՛չ միապէս է *մեղքն* նախ քան զշնորհքն և յետ շնորհացն. զի առաջինն անգիտութեամբ էր, և վերջինն գիտութեամբ. և առաջինն հաւատովք սրբի, և վերջինս ապաշխարութեամբ և սրբութեամբ: - 166. Դարձեալ ասեմք թէ՝ ամենայն *մեղաց* մտածումն՝ զղջո՛ւմն է նորին. իսկ պոռնկութեան մտածումն՝ վերստին նորոգո՛ւմն է ախտին: - 166. Ապա ո՛չ է նմանապէս ամենայն *մեղաց* զղջումն և ապաշխարութիւն: - 166. Դարձեալ ասեմք թէ՝ ամենայն *մեղաց* անչա՛փն *մեղք* է. իսկ չափաւորն ո՛չ է ի *մեղանս*. որպէս չափաւոր ագահութիւնն. և չափաւոր բարկութիւնն. և այլն: - 166. Իսկ պոռնկութեան չափաւորն և անչափն *մեղք* են...: - 166. Ապա ուրեմն ո՛չ է նմանապէս ամենայն *մեղաց* թողութիւն. որպէս և ո՛չ է նման գործն: - 167. Նախ վասն հեռաւորութեանն որ *մեղօք* հեռացաք յաստուծոյ: - 177. Երկրորդ՝ զտրտմութիւն *մեղաց* փարատէ՛: - 185. Ութերորդ՝ որք խստացեալ են անհաւատութեամբ և թանձրացեալ *մեղօք*՝ անգործ մնան ի նմանէ: - 185. Դարձեալ *մեղաց* և ապաշխարութեան: - 186. Այս է պատճառն. զի ի սկզբանէ տիւն առաջանայր գիշերոյն. զի ադամ ի լուսոյ շնորհացն անկաւ ի խաւար *մեղաց*: - 194. Երկրորդ՝ և յորժամ մարդն ապականեցաւ *մեղօք*, վասն է՛ր ի դրախտէն հանէր զնա: - 222. Զի որպէս ջրհեղեղն ո՛չ եմուտ ի դրախտն զի ո՛չ էր ապականեալ *մեղօք*: - 225. Վեցերորդ՝ զի տեսցէ ադամ թէ յապականացու հողոյս անապական մարմին կազմեցաւ վասն փառաց. և յորժամ կորոյս *մեղօքն* եղև ապականացու, ինքն իցէ պատճառ ապականութեան իւրոյ: - 229. Ի քիթն հոտեալ. որ զհոտ *մեղացն* արտաքսեսցէ: - 243. Նախ՝ մաքրութիւն ի *մեղաց*: - 251. Երկրորդ՝ բոյս *մեղաց* և հոգ կենցաղոյս ի սիրտն բազո՛ւմ է: - 251. Զոր ընդ դերևս հանէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս կազմութեան այսպէս եթէ, որք զհոգին յառաջ ասեն գոյանալ քան զմարմին. և վասն *մեղաց* եղեալ ի մարմին մարդոյ. որ է՛ համանման բանականութեամբ. և է՛ ինէրքոյ երկնային կենաց՝ զի մարմնաւո՛ր է: - 252. Այլ ա՛րդ ի յանբանսն ո՛չ է առաքինութիւն որով սրբի ի *մեղաց*. ապա պարտ է զի փոխեսցի ի ներքինն իւր որ է՛ տունկն. և նման կենդանւոյն զի աճէ՛: - 252. Ասեմք առ այս եթէ որպէս դու օրէնս եդեր փոխանցիլ ի

բարձրագունէն ի նւաստագոյն կեանս վասն *մեղաց*: - 252-253. Մէջ գիշեր՝ երիտասարդութիւնն ի խորս *մեղաց* ննջեալ: - 266. Դարձեալ՝ մարդո՛յն է թողութիւն *մեղաց* վասն մարմնոյն՝ զոր ոչ ունին հրեշտակք: - 275. Երրորդ՝ մահու մեռանիլ զհոգւոյ մահն ասէ որ *մեղօքն* մեռանի...: - 277. Եօթներորդ՝ թշնամի եղև գործն մեր. որ նա՛ ի *մեղս* փոխեաց անցանելով զպատուիրանն: - 277. Գիտելի է, զի որպիսութիւն կենաց մարդոյս տրամատի յերիս. ըստ երից փոփոխմանց մարդոյն. այսինքն նախ քան *զմեղքն*. և յետ *մեղացն*. և յետ մահուն: - 278. Իսկ յետ *մեղացն* յաշխարհիս այս՝ կարէ՛ մեղանչել, և ո՛չ կարէ ոչ մեղանչել: - 278. Երկրորդ՝ վասն անմեղութեանն. զի ամօթն յետ *մեղա՛ցն* է: - 278. Եւ եերրորդ՝ ո՛չ ևս թզենեաւ՝ այսինքն դառն վարուք ստուերանալ. զի տերև թզենւոյն դա՛ռն է և փշոտ ըստ *մեղացն* առակի: - 281. Վեցերորդ՝ զի անկասկած լիցուք ի վատթար երկիւղէ. յորում երկիւղազգածք չարչարին ըմբռնեալք ի *մեղս*: - 281. Իսկ մաշկն որ է՛ մորթ մեռելոյ, նշանակէ՛ նախ զսուգ և զտրտմութիւն վասն *մեղաց*: - 281. Երկրորդ՝ զմեռելութիւն *մեղաց*: - 281. Որպէս ասէ աստուածաբանն թէ՝ ոչ ինչ էր ծածկոյթ ի մէջ նոցա և աստուծոյ. իսկ յետ *մեղացն* փոխեցան այսոքիկ. վասն որոյ մաշկեղէն հանդերձին ցուցմամբն նշանակէ՛ զմարմինս: - 282. Վաթսունեմի, Թէ զի՞նչ է ներելի *մեղքն*, և անթողլի: - 285. Եւ սատանային յայտնի են է չար խորհուրդքն որ կոչին գլխաւոր *մեղք*: - 287. Երրորդ՝ յուսացաւ կոչել զանուն տեառն աստուծոյ ի յօգնութիւն. զոր մարդիկ յուսահատեալ էին եթէ վասն *մեղաց* մերոց եթող զմեզ աստուած ի ձեռաց. և նա ի յօգնութիւն կոչեաց զանուն տեառն աստուծոյ. այսինքն զի տէր է՝ ո՛չ գարշի ի ծառայից իւրոց. և զի աստուած է՝ էա՛ծ զմեզ աստ ոչ ի կորուսանել, այլ ի կեցուցանել: - 289. Եւ մարգարէացաւ եթէ վասն *մեղաց* մարդկան երկիր կրկին ապականի ջրով և հրով: - 289. Չորրորդ՝ **բ** ելին ի դրախտէն *մեղօք*. նոյնպէս և **բ** մտին ի դրախտն անմեղութեամբ: - 289. Այլ *մեղքն* նուազէ՛ զկեանքն և ո՛չ տայ հասանիլ ի կէտ կոչմանն: - 291. Այլ գիտելի է, զի *մեղքն* երբեմն յերկարէ՛ զկեանս՝ զի չարչարեսցի իբրև զկայեն: - 292. Նաև յեգիպտպոս **ղճ** ամ խոստացաւ ծառայութեան. և զերեսուն ամն յաւել վասն *մեղաց* ժողովրդեանն: - 292. Եւ ա՛յս է պատճառ յերկարելոյ և կարճելոյ կենաց. այսինքն արդարութիւնն կամ *մեղքն* որպէս ցուցաւ: - 292. Երկրորդ՝ զի մարդիկք բազում ամս յաճախէին ի *մեղս* յուսով վերջին ապաշխարութեանն. և յետոյ սովորեալ ի *մեղս* ո՛չ կարէին դառնալ, ամենքին կորնչէին: - 292. Այլ և եկեղեցի սուրբ շինեալ ի քրիստոսէ հոգևոր տապան մեզ ի մէջ ծովու աշխարհիս՝ որ զհոգիս մեր փրկէ ի ջուրց *մեղաց*: - 293. Եւ դարձեալ՝ այլազգին զհոգին իւր սպանեալ է *մեղօք*. և մեռելոյ զենեալն ո՛չ ուտի. որպէս ի քարէ անկեալն կամ ի կարկատէ՛ հարեալն ո՛չ ուտի: - 296. Եւ զի մի՛ մարդիկ ի պատճառս նորա *մեղս* գործեսցեն. վասն որոյ ո՛չ կարէին տեսանել զտապանն: - 296. Զի վասն *մեղաց* տանջիւր ինքն՝ և առաւելոյր ի բարին: - 302. Զալէկոծեալսն *մեղօք* և զծանրացեալսն՝ աւա՛զ կոչէ. որպէս զորդիսն իսմայէլի: - 303. Ութերորդ՝ ըստ *մեղաց*. զի սերմ առեալք ի սատանայէ՛ յղանամք զցաւս և ծնանիմք զանօրէնութիւն: - 308. Եւ թէ լան և զղջան բոլոր սրտիւ ի ձեռն ապաշխարութեան, գտանեն վերըստին զշնորհն անդրանկութեան, և հասանին թողութեան *մեղաց*: - 309. Դարձեալ՝ վարժէ՛ զնա գօտեաւն՝ պատերազմիլ ընդ *մեղս* և ընդ մեղսասէր մարդիկ որ կամին զանմեղն քարշել արտաքոյ օրինացն աստուծոյ: - 311. Իննև**ժ**, յովսէփ ստացաւ ոսկի և զարծաթ և զերկիրն եգիպտացւոց՝ փարաւոնի. այսինքն զզէնս սատանայի. զի փարթամութիւնն մեծ զէն է սատանայի որովք գործէ՛ զամենայն պղծութիւնս. որպէս երկիրն սոդոմայ պարարտութեամբ գործէր *զմեղս*: - 314. Նոյնպէս և քրիստոս զզէն և զզօրութիւն սատանայի եբարձ որ էր *մեղքն* և մահ դժոխոցն: - 314. Քսաներորդ, և որպէս յովսէփ եթող զքուրմն և զերկիր նոցա, զոր քրիստոս էր բառնալոց զմեծամեծ *մեղսն* և զկռապաշտութիւնն. զի ըստ առն և զօրութիւն իւր. և ըստ աստուծոյ և գործք իւր: - 314. Եւ տէր մեր ճոխ ի մէջ նոցա. զի բարձր և գերագոյն եղև ի վերայ *մեղաց*: - 316. Նախ՝ սատանայ և անհաւատք աստուածութեան նորա. և *մեղք* և դժոխք հոգւոյ են թշնամիք. մահ և ապականութիւն մարմնոյն: - 316. Ո՛չ արար *մեղս*, և զդժոխս աւերեաց: - 317. Եւ կապ ցանկութեան որպէս *մեղաց*: - 317. Թէ հոգւոյ և թէ մարմնոյ՝ գոյ *մեղք* և գոյ պատիժ: - 318. Երկրորդ՝ և արդարք առնեն ընդ դէմ սմին ի յամօթ չարին. որ հնարեցաւ ի ձեռն *մեղացն*՝ մահւամբ բառնալ զմարդկութիւնս. այլ հրամանաւն արարչին ծննդեամբք տևէ՛ և յերկարէ՛ բնութիւնս: - 321. Վասն է՞ր յոբ յետ խրախութեանն **ժ** պատարագաւ սրբէր զորդիսն. և մի զուարակ վասն մտաց *մեղացն* մատուցանէր: - 322. Եւ ըստ նմանութեանն քրիստոսի մի զուարակ. որ վասն *մեղաց* մերոց մեռաւ: - 322. Չորրորդ՝ ի խրախութիւն գինւոյ՝ **ժ** *մեղք* գործին. այսինքն Նա՛խ՝ բազմակերութիւն...: - 322. Վասն այն յոբ **ժ** պատարագաւ սրբէ՛ր զ**ժ** մասնաւոր *մեղսն* որ գտանին յարբեցութեան. և մին զուարակն ի սրբութիւն վասն ակամայ և խորհրդոյ *մեղացն*: - 322. Երևի թէ ո՛չ. զի յուտել և ըմպել մեռան որ է *մեղք*: - 322. Իսկ այնմ որ ասեն թէ յարբեցութեան մեռան, պատասխանեմք եթէ՝ *զմեղս* յամենայն աւուր արիւն պատարագացն սրբէ՛ր. իսկ զայնմ աւուր՝ արիւնն իւրեանց: - 322. Եւ տէր մեր

խաչիւն զծով *մեղաց* աշխարհի: - 329. Երկրորդ՝ բնութիւնս ադամայ եղ ի դրախտէն և բորոտացաւ զանազան *մեղօք*. մինչև բանն էարկ ի ծոց աստուածութեան իւրոյ և հաստատեցաւ յառաջինն: - 332. Երրորդ՝ զի չափով և թւով և կշռով տայ աստուած զտանջանս *մեղաց*. թէպէտ մեզ անգիտելի՛ է: - 333. Երրորդ՝ յօրինակ հեթանոսաց որք զազրացեալ էին *մեղօք* մինչև ջրով աւազանին սրբեցան և ճաշակեցին զմանանայն կենաց ի յերկնից իջեալ: - 333. Չորրորդ՝ յօրինակ նոցա որք ի սրբութեանց ի *մեղս* դառնան և լինին մարմին և արիւն...: - 333. Նախ ցուցանէ թէ՝ զազիր են գործօք և բորոտեալ *մեղօք*. վասն որոյ գարշ կենդանեօք ապականէր զնոսա: - 334. Եւ այն նոցա *մեղք* ո՛չ եղև վասն **բ** պատճառի: - 337. Նա՛խ՝ զի հրամանաւն աստուծոյ էր. որպէս պոռնկութիւնն ովսէի և սպանութիւնն փենեհէսի ո՛չ էր *մեղք*: - 337. Չորրորդ՝ քաղցր համն. զի քաղցրանայ ի մեզ դառնութիւն *մեղաց*: - 339. Եօթներորդ՝ առաւօտին. զի առաւօտ գործէ կերողացն հալածելով զխաւար *մեղաց*: - 339. Դարձեալ՝ տապանակն է եկեղեցի սուրբ անփուտ ի *մեղաց* գիճութեանց: - 345. Նա՛խ՝ ի դէմքն. զի գթութիւնն անմե՛ղ կացելոցն է. և ողորմութիւնն դարձելոց ի *մեղաց*: - 350. Բազում ողորմ առ բազմապարտ դարձեալսն ի *մեղաց*. որպէս պարտապանն բիւր քանքարոյ: - 351. Եւ թեթևացնէ՛ զպարտս *մեղաց*. որպէս արար ողորմութիւն միածին բանն աստուած յիշելոյ զառաջին արդարսն...: - 351. Այսինքն մինչև **գ** ազգն ներեմ. կամ **գ** դարս. և ի չորրորդն ո՛չ դառնամ ի վրէժ խնդրելոյ. այլ հատուցանեմ *զմեղս* հարց յորդիս: - 351. Ո՛չ թէ *զմեղս* հարց յորդւոցն խնդրէ. այլ *մեղաց* հարցն ներէ երկայնամիտ լինելով մինչև յորդոց յորդիս զի դարձցին ի *մեղաց*: - 351. Որպէս յորժամ լցան *մեղք* ամուր հացւոցն ի չորրորդ դարուն՝ սատակեցան ի ձեռն յեսուայ: - 351. Այլ ո՛չ թէ զհարց *մեղքն* որդիք վճարեն: - 351. Ասեմք եթէ՝ կրկին է *մեղք*. բնութեան և անձին. որ է սկզբնական և ներգործական: - 351. Ա՛րդ՝ բնութիւնս մեր ի յադամ ապականեցաւ *մեղօք*. վասն այն որպէս նա՛ պատժեցաւ, նոյնպէս և մեք պատժիմք: - 351. Այլ զներգործական *մեղս* անձին հօր՝ ո՛չ հատուցանէ անձն որդւոյ. ապա թէ ոչ՝ չար ծնողաց ո՛չ լինէր բարի զաւակ: - 351. Եւ դարձեալ՝ **դ** են սեռք մեղանչելոյ. այսինքն խորհուրդ, խօսք, գործ, և յամառութիւն ի *մեղս*: - 351. Ապա ուրեմն յերրորդ և ի չորրորդ ազգն հատուցանէ աստուած *զմեղս*՝ յորժամ վասն գործեաց զյամառեալսն ի *մեղս* պատժէ՛: - 351. Երբ զերեք հասակի *մեղսն* ներէ աստուած՝ և թէ ի չորրորդն ո՛չ զղջանայ, յայնժամ պատուհասէ՛: - 351. Դարձեալ՝ աստուած յառաջնումն ծննդեան յորժամ զյանցաւորս ըստ բնական *մեղացն* ջրհեղեղաւն ջնջեաց. յերկրորդումն ծննդեան յորժամ զյանցաւորս ի կռապաշտութիւն՝ կարմիր ծովովն ընկղմեաց. յերրորդումն ծննդեան տուժեաց, յորժամ զյանցաւորս գրաւորական օրինացն պատերազմօք սատակեաց: - 351. Ի չորրորդում ծննդեանն *զմեղս* դատապարտեսցէ յորժամ զարհամարհօղս աւետարանին՝ վերջին հրովն այրեսցէ: - 351-352. Հինգերորդ, նոքա մատուցանէին պատարագ նախ վասն իւրեանց, և ապա՛ վասն ժողովրդեանն անգիտութեան. իսկ տէրն մեր ո՛չ արար *մեղս* ըստ մարգարէին...: - 354. Վեցերորդ, նոքա հանապազ մատուցանէին վասն հանապազ յանցմանն ի բազմօրինակ *մեղս*...: - 354. Երրորդ, շարաւահոտ և քացախո՛ւտ է. այս *մեղաց* հոտ է և համ: - 356. Չորրորդ, ի բազում ամանս փոփոխի. փոփոխականն *մեղքն* է: - 356. Իսկ որ վասն *մեղաց* նաշիհ իւղ և խունկ ոչ դնէին. զի տրտմութիւն և խաւար է *մեղքն*, և գարշ հոտ գայ ի խղճմտանացն մինչև ապաշխարեսցէ: - 357. Այծն՝ մեղաւորա՛ցն է նշանակ. որք դառնան ի *մեղաց* և նւիրին աստուծոյ: - 358. Իբր թէ հաւասա՛ր ծանր է *մեղք* քահանայապետին և բոլոր ժողովրդեանն: - 358. Հինգերորդ, վասն *մեղաց* պատարագ, ի մեռելոտի կամ ի պիղծ ինչ մերձեցեալ. ոչխարով և թռչնով և նաշիով առանց իւղոյ և խնկոյ քաւէին: - 358. *Մեղք* կամաւո՛րն է. և յանցանք ակամայն: - 358. Նա՛խ՝ ցուցանէ թէ սա՛ անմեղ է՝ վասն իմ *մեղացս* մեռանի. զոր ձեռօք ի սա՛ տամ *զմեղս*: - 359. Այլ ի կողմ հիւսիսոյ զողջակէզս և զվասն *մեղացն*: - 360. Եւ զմորթն ի բաց հանել. զծածկոյթ *մեղացն*: - 360. Անգամ անդամ յօշելն. զերկոտասան անդամոց սրբելն և հատանել ի *մեղաց*: - 360. Եւ թէ ոք ասիցէ, ո՞րն է խորհուրդն քրիստոսի որով սրբիւր իսրայէլ ի *մեղաց*: - 361. Նոխազ, զի *մեղս* մեր եբարձ: - 361. Եւ մին վասն *մեղաց*. զի կերակուր ետ զմարմինն և զարիւնն իւր: - 361. Այլ և նաշիհ. զի հաց կենդանարար և հատ ցորենոյ կոչեցեալ. ճնշեալ չարչարանօք և որոշեալ ի թեփոյ *մեղաց*: - 361. Նա՛ է ողջակէզ և փրկութիւն և գոհութիւն, և վասն *մեղաց* և յանցանաց. և յամենայն նւիրաց կատարումն և գլուխ նա՛ է: - 362. Դարձեալ՝ կրկին է ողջակէզն. մին վասն *մեղաց* որ է՛ կամաւոր. և միւսն յանցանաց որ է՛ ակամայն: - 362. Դարձեալ՝ կրկին ողջակէզն. մին վասն *մեղաց*. և միւսն վասն սրբութեան: - 362. Վասն *մեղա՛ց* է՝ որ խոստովանութեամբ արտաքոյ ելեալ ի *մեղաց* և ապաշխարութեամբ քաւեմք զմեզ ներքին խորհրդով և արտաքին գործով: - 362. Եւ զմորթ *մեղաց* մերկացեալ ի մէնջ որ է՛ հաճոյ աստուծոյ ի հոտ անուշից: - 362. Հասք և իրաւունք քահանայից *մե՞ղք* է թէ ոչ: - 363. Յորժամ զգործ քահանայի ունիցին՝ ո՛չ է *մեղք*. այլ սրբութիւն: - 363. Զի որպէս ստամոքն

զկերակուրն հալէ, նոյնպէս և քահանայն *զմեղքն*: - 363. Նա՛խ՝ *զմեղքն* սրբել ի մարդոյ. և ապա՛ ընծայել աստուծոյ: - 363. Եւ որք անարժա՛ն են գործոյն, դնեն *զմեղս* ի վերայ *մեղաց* իւրեանց: - 363. Նոյնպէս քրիստոնեայն որ *մեղօք* մեռանի՝ և անհաւատն միապէս պիղծ են առաջի աստուծոյ: - 365. Եւ անհաւատն սպանեալ է զհոգին *մեղօք*. և կամ ունի զգործ իգական՝ պիղծ է: - 366. Եւ զմորթն որ է ծածկոյթ *մեղաց*՝ ի քահանայսն տայ...: - 367. Բորն նշանակէ՛ *զմեղքն*: - 367. Նա՛խ՝ զի բորն պիսակ՝ մեռելութիւն է մարմնոյ. և *մեղքն* հոգոյ: - 366. Երկրորդ, բորն պղծէ՛ զմարմինն. և *մեղքն* զհոգին: - 367. Երրորդ, աճէ բորն. նոյնպէս և *մեղքն* ի բոլոր անձն: - 367. Չորրորդ, փոխի՛ բորն. և *մեղքն* ի միմեանս: - 367. Հինգերորդ, կսկի՛ծ է մարմնոյ. և *մեղքն* հոգւոյ: - 367. Վեցերորդ, յարաժամ քորի. և յանա՛գ է *մեղքն*: - 367. Եօթներորդ, և գա՛րշ է. և *մեղքն* զազիր: - 367. Ութերորդ, ի մարմնոյն է և մնայ ի նոյն. և *մեղքն* ի մարդոյն է և մնա՛յ ի նա: - 367. Իններորդ, բորն **գ** ազգ է. սպին սպիտակ շիտ. և պալար միատարր. և պաղպաջ շիտ աստ և անդ. որ է՛ մտաց և հոգւոյ և մարմնոյ *մեղքն*: - 367. Տասներորդ, սրբի բորն դեղով. ջնջի և *մեղքն* ապաշխարութեամբ: - 367. Մարմնոյն բորն, գործոց *մեղքն*. և գլխոյն, հաւատոցն: - 367. Այլ և մարմնոյն՝ ծածուկ *մեղքն*. և հանդերձին՝ յայտնի *մեղքն*: - 367. Նշանակէ՛ թէ՝ եթէ ի է հասակս *մեղքն* առաւելու, գեհեանն այրէ: - 367. Որ է՛ անզեղջ *մեղքն* այրելիք հրոյն: - 367. Որ յետ խոստովանութեան դառնայ ի նոյն *մեղս*, իբր շուն դառնայ ի փըսխած իւր. և սա՛ ևս այրի հրով. զի զառաջինն ևս խնդրեսցեն աստ առաքեալն: - 367. Այսինքն յորժամ խոստովանին և փոխին յապաշխարութեան վարս, պատառեն *զմեղս* և սրբին ի գործեցեալ *մեղացն*: - 367. Ապա թէ բորոտիմք ծածուկ *մեղօք* ի մարմնի՝ կապեալ բերանով առանց խոստովանելոյ, արտաքսիմք յեկեղեցւոյ՝ ի հանգստենէ՝ և ի փառաց արդարոց: - 368. ...յայնժամ քակէ՛ զտունն մեր որ է՛ հոգի և մարմին. և արտաքոյ քաղաքին յանսուրբ տեղիս ընկենու որ է՛ դժոխքն արտաքոյ արքայութեանն, և անսուրբ տեղի *մեղաց* և մեղաւորաց. և անդ արտաքսէ զմեղաւորսն: - 368. Ջեռեալ հաւն, մարմինն մեռեալ վասն *մեղաց*: - 368. Ջուրն աւազանն որ մաքրեաց զմեզ յադամայ *մեղացն*: - 368. Զի գործնականաւն մեռանիմք ընդդէմ *մեղացն*. և տեսնականաւն մտօք թռչիմք ի դրախտն որ է՛ դաշտ երկնային: - 368. Ոմանք ասեն՝ գործ *մեղաց* մնաց նոյն. այլ գործ սրբութեանն փոխեցաւ ի հոգևորն: - 369. Դարձեալ ասեն, մարմնական *մեղքն* փոխեցաւ. որպէս ի մեռեալ մերձիլն: - 369. Այլ *մեղքն* հոգեկան նոյն է աստ և անդ. որպէս շնալ և գողանալ: - 369. Դարձեալ ասեն, բնական *մեղքն* խտրութեան մնաց ի գրաւորն, նոյնպէս ի նորս. որպէս սերմնակաթն և դաշտանին. այլ պատիժն փոխեցաւ հինն ի նորս: - 369. Եւ նոխազն վասն *մեղաց* մերոց: - 369. Եւ արիւնն, *զմեղս* մեր բարձեալ յինքեան և տարեալ ի դաշտն առ հայր յերկինս. զի որպէս մեռեալ մարմնովն քաւեաց *զմեղս*. նոյնպէս և անմահ աստուածութեամբն կենդանացոյց և յերկինս եհան: - 369. Որ և զՍաւուղ ազատեաց ի *մեղաց*. և զայլ խաչօղսն որք հաւատացին ի նա՛: - 369. Մետասաներորդ՝ քաղցկեղ. որ զայլս փոխէ՛ ի *մեղս*: - 370. Ցուցանէ թէ՝ մինչ ի *մեղս* իցեն քահանայքն՝ ո՛չ զհասն կերիցեն և ո՛չ ի սուրբ խորհուրդն մերձեսցին: - 370. Եւ ո՛չ սրբին մինչև զղջասցին և խոստովանեսցին *զմեղսն*: - 370. Չորրորդ՝ մարմառոտն. որ կաշին պատառեալ և խոց լինի նշանակէ՛ զխոց *մեղաց*: - 371. Որ մտօքն է՛ մոլի, և *մեղօք* հիւանդ, չէ՛ ընդունելի: - 371. Արիւն ուտելն՝ և հեղձուցանելն՝ և գազանաբեկն՝ մի էր *մեղք*՝ որպէս ասացաւ ի վերոյ **ժը** գլուխն ի **զ** համարն: - 371. Դարձեալ շաբաթ շաբաթուց այն էր. որ քաւութիւն *մեղաց* հոգւոցն էր շաբաթ. որպէս դատարկանալն մարմնոյն: - 371. Եօթներորդ՝ ստուերապէս նշանակէր զազատութիւնն որ եղև մեզ ի ձեռն քրիստոսի. որ ազատեաց յօրինացն դժւարութեանց, և ի *մեղացն*, զթողութիւն շնորհելով: - 372. Առաջին՝ շաբաթն. յորժամ դադարիմք **զ** շարժմամբ և **ե** զգայութեամբ ի *մեղաց* գործոց: - 372. Երրորդ՝ ի թողութիւն *մեղաց*: - 372. Որ զգործեցեալ *մեղս* ապաշխարութեամբ քաւեմք. ճնշելով զանձինս մեր պահօք: - 373. Այլ և նշանակէ՛ զօր մեծի ուրբաթուն չարչարանացն քրիստոսի. որով քաւեցաք ի *մեղաց*: - 373. Երկրորդ՝ *մեղք* եօթնից զգայարանացն պակասի. և արդարութիւն որ մինն է հաստատի առ զղջացեալս: - 374. Զուարակն է պատարագեալ. և խոյ մեզ ծնեալ. և գառն կերակրելի. և նոխազ *զմեղս* մեր առեալ: - 374. Նոխազն դարձելոցն ի *մեղաց*: - 374. Նոխազք՝ դարձեալքն ի *մեղաց* և ապաշխարեալք: - 374. Նա՛խ՝ էպատիկ՝ զբազմ՛ւմն նշանակէ. իբր թէ ըստ բազում *մեղաց* մերոց բազում և առաւել է պատուհասն: - 376. Վեցերորդ՝ զի *մեղքն* թողեալ է զմարդն. և ո՛չ թէ մարդ *զմեղքն*: - 377. Իսկ գովութիւն ծերոյ, Նա՛խ՝ զի խափանեալ է ամենայն *մեղաց* շարժմունքն: - 378. Դարձեալ՝ ուռն և լծակն՝ խաչն. և Ողկոյզն անապական ճմլեալ ի վերայ խաչին հնձանի. և եղև ուրախարար գինի տրտմեցելոցս *մեղօք*: - 381. Դարձեալ, քահանայից *մեղքն* զերկին շարժէ որպէս անդ: - 381. Չորրորդ, քրիստոնէական ժողովուրդն դալարացեալ ի *մեղաց*. շառաւիղեալ ծննդօք. ծաղկեալ հաւատով և պտղաբերեալ: - 382. Չորրորդ՝ զդեղձան հերն և անարատ մարմնով և անբիծ հոգով, որ ո՛չ ունէր զլուծ *մեղաց*: - 383. Այլ ապաւառ է՛ *մեղքն* մեր զոր ընկալաւ

յինքն և մաքրեաց զմեզ: - 383. Եւ զանգոսնելիսն ո՛չ կրեաց. զի տեսա՛կ է *մեղաց*. և տէրն ո՛չ արար *մեղս*: - 383. Երինջն ըստ իրաւանցն ունէր *զմեղս* ժողովրդեանն. և խորհրդովն քրիստոսի՝ սրբութիւն գործէր: - 384. Երկրորդ՝ ողողելոյ զհանդերձն, է՛ ջուր խոստովանութեանն և թողութեան *մեղաց*: - 384. Առաջին ջուրն սրբէ զսկզբնական *մեղքն*: - 384. Զի գողացեալ *մեղքն* միայն խոստովանելով ոչ քաւի. այլ հատուցանել պարտ է զգողօնքն. կամ ի տէրն, կամ յազգականս նորա. կամ ի քահանայն. զի միջնո՛րդ է մեռելոց և կենդանեաց: - 384. Եւ երեք է ներելի *մեղք*: - 385. Երկրորդ՝ որ անգիտութեամբն է և ակամայն՝ է՛ *մեղք* ներելի և այն. որպէս *մեղք* մանկութեան և անգիտութեան: - 385. Երրորդ՝ յորժամ ի խոստովանութիւն և յապաշխարութիւն գայ, լինի ներելի և ակամայ. զի թէ նախ քան զմեղանչելն ակամայն, և եթէ յետ *մեղացն* ակամայն, լինի զղջմամբն ներելի և թողելի: - 385. Նա՛խ՝ որ ստոյգ չարութեամբ լինի *մեղքն*. այսինքն կամաւ և գիտութեամբ և կարողութեամբ, անթողելի՛ է: - 385. Երրորդ՝ ներելի *մեղքն* և փոքր՝ թէ ո՛չ ապաշխարի, լինի մահու չափ և անթողլի: - 385. Իսկ կրկին պատարագն. մին վասն բոլոր ժողովրդեանն, և մին վասն անձին ակամայիցն. ցուցանէ զկրկին խոստովանութիւնն. մին յայտնի առհասարակ եկեղեցոյն. և միւսն ծածուկ առանձին *մեղաց*: - 385. Իսկ քարկոծումն այն է, որ անզեղջն ի *մեղաց*՝ արտաքսի՛ յեկեղեցւոյ և անիծանի: - 385. Երկրորդ՝ զի պահապան է յառաջին և վերջին թշնամեաց որ է սատանայ և *մեղքն*: - 385. Եւ վէմ կոչի, Նա՛խ՝ զի ադամ հողացաւ *մեղօք*. և քրիստոս վէմ անմեղութեամբն: - 386. Վեցերորդ՝ առանց դառնութեան և թունից էր օձն. և տէր մեր առանց դառնութեան *մեղաց*: - 386-387. Եօթներորդ՝ օձն մեռեալ սպանանէր զօձսն. և զհարեալսն կեցուցանէր. և տէրն մեր մեռեալ մարմնովն *զմեղս* մեռուցանէր, և կենդանի աստուածութեամբն զմարդիկ կենագործէր: - 387. Իններորդ՝ գլուխ և տուտն ցասումն է և տրտմութիւնն զկնի. և ամենայն *մեղաց* յետ գործոցն տրտմութիւն հետևի: - 387. Եւ տէրն արդար դատաստանաւ ըստ նմանութեան *մեղացն* պատժէ՛ զմեղապարտն: - 387. Ուխտաւոր է որ ապաշխարէ վասն *մեղաց*: - 389. Եւ ա՛յս է գերծուլն, զառաջին գործեալ *մեղքն* սրբել խոստովանութեամբ. և զապաշխարութեան գործն մատուցանել աստուծոյ: - 389. Եւ ուխտաւորն ի տուն սգոյ ո՛չ երթայ. այն է որ ի *մեղքն* այլ ո՛չ դառնայ. և ո՛չ ընդ մեղսասէր գործակիցս: - 390. Դարձեալ՝ ակամայ սպանօղն ցուցանէ զզղջացեալն ի *մեղաց*: - 392. Իսկ յետ մահու ա՛յնոցիկ հոգւոց որք զղջան կամ խոստովանին *զմեղս*, քաղաք ապաստանի է նոցա ի կայանս հոգւոցն տրտմութիւն և ցաւն վասն փոխարինաց մինչ մեռանի քահանայն մեծ. որ եկեղեցի սուրբ՝ պատարագաւ և աղօթիւք և ողորմութեամբ հատուցանէ՛ զպարտս նոցա և ազատին: - 392. Նա՛խ՝ շուրջ թշնամիք դևք. և գազանք խիղճ մտաց. և ծով *մեղաց*. և ամայութիւն բարեաց: - 393. Այլ ե թագաւորք մադիանացիքն էին, և **բ** այսոքիկ. որ են **է** դևք է գլխաւոր *մեղաց*. որք ի կեանս պատերազմին, և յետ մահու ընդ հոգւոցն բազումք: - 393. Չորրորդ՝ չարութեամբ աստ *մեղօք* տանջեն. և յետ մահու առհաւատչեայ մասնաւոր. և ի յարութեանն յաւիտենական տանջանօք: - 394. Իններորդ՝ զի ինքն սատանայ ունի բնութիւն և *մեղք* և պատիժ. բնութեամբ աստ զինի. և *մեղօք* յետոյ. և յարութեանն պատժակից իւր առնելով: - 394. Եօթներորդ՝ արևմուտք *մեղք* և տգիտութիւնն է. զոր թողեալ դառնամք առ աստուած ապաշխարութեամբ: - 395. Եւ սա՛ բղխէ զկաթն և զմեղր. որ է՛ քաղցրութիւն և թողութիւն *մեղաց.* նոյնպէս և զԺ բանեան օրէնս: - 395. Նա՛խ՝ որպէս եղև *մեղք* և եբարձ *զմեղս*. նոյնպէս եղև անէծք և եբարձ զանէծս: - 400. Երրորդ՝ զի ինքն օրհնութիւն էր, և անէծքն մերձեալ ի նա յօրհնութիւն փոխեցաւ. որպէս խաւարն ի լոյս փոխի. և *մեղքն* յարդարութիւն. և մահ ի կեանս: - 400. Տասներորդ՝ ի գարեզին. որ է՛ լեառն թլփատութեան. զի ելեալ ի լեառն հաւատոց՝ զաւելորդ *մեղացն* ի բաց ընկեսցեն, և զօրհնութիւնն աստուծոյ առցեն: - 402. Իսկ ի միտս, մահու չափ *մեղաց* է իշխանք և գունդք դիւաց: - 404. Եւ յորժամ է զօրութեամբք հոգւոյ յաղթիցեն նոցա, փախիցեն յէ զգայարանաց մարդոյն եօթնեկի մահացու *մեղօք*. զայս կատարելո՛ցն է իմանալ. և ո՛չ մեզ տկարացս: - 404. Նա՛խ՝ զի ի խղճմտանք մարդոյն կախեալ է կեանքն արժանի մահու. և տեսանէ՛ միշտ և ո՛չ հաւատայ և դադարէ ի *մեղաց*: - 404. Ուստի յա՛յտ է, զի յորժամ ի սպառնալն դառնամք ի *մեղաց*, ո՛չ սրտմտի նա: - 408. Երկրորդ՝ ի խրատ մեղաւորաց. զի յորժամ գիտենան թէ ո՛չ յաջողի ճանապարհ մեղաւորի, արգելուն ի *մեղաց*: - 408. Երրորդ՝ օրէնքն որ ի ձեռն մովսէսի՝ էր խափանիչ *մեղաց* և մահու: - 409. Չորրորդ՝ տեսեալ զմովսէս առաւել փառաւորեալ, և յետ վախճանին թոյլ ետ ներողութիւնն աստուծոյ ժպրհիլ բանսարկուին ստգտանօք *մեղաց*. զի մի՛ տացեն նմա զգերազանց պատիւն աստուած կարծելով: - 410. Տասներորդ՝ ի սկզբանէ հայհոյիչ աստուածամարտ էր սատանայ. և վասն այն զմարդիկ կորուսանէր *մեղօք*. որում զվճիռն և զսաստն տէրն ետ, և դատապարտեաց *զմեղս* ի մարմնի իւրում. և եբարձ մահուամբն զմահ, և որ զիշխանութիւն մահուն ունէր: - 410. Ա՛րդ նա՛խ՝ զայն հասակն լ ամեայ յորմէ զրկեցաւ *մեղօք*՝ լան: - 411. Ութերորդ՝ Զի՞նչ եփուտն և թերափն. և զի՞նչ *մեղք* որդւոցն հեղեայ: - 412.

Յնգետասաներորդ՝ Վասն *մեղացն* դաւթի և թողութեան: - 412. Եւ զի խոստովանեալ *մեղքն* կորնչի: - 412. Զի ըստ սրբոյն եփրեմի՝ ապաշխարութիւնն է վճարք *մեղաց* և նիւթ պսակաց: - 413. Նմանապէս և **բժ**ան քարինքն հանեալ ի ցամաք և կանգնեալ սեղան՝ հաւատացեալքն են. որք ի ձեռն **բժ**ան առաքելոցն հաւատացին և ելին ի *մեղաց*. և եղեն սրբութեան սեղան աստուծոյ **բժ**ան անդամօք և **բժ**ան առաքելովք: - 415. Եւ **բժ**ան քարինքն դարձեալ ի գետն եդեալ, նշանակէ՛ *զմեղս* ի խորս անդնդոց ընկղմեալ: - 415. Չորրորդ՝ զի և անասունքն գործակից լինին *մեղացն*. վասն որոյ ընդ մարդոյն կորնչին. որպէս ի սոդոմ: - 416. Յինգերորդ՝ զի քրէական *մեղքն* ազգաջինջ առնէ. որպէս զդադան և զաբիրոն. զի ընդ մովսէսի և աստուծոյ հակառակ կացին, ազգօք և աղխիւք ընկղմեցան զի այլքն երկիցեն: - 416. Եւ տէր մեր զհաւատացեալս իւր հանեալ ի *մեղաց* շինեաց սեղան և եկեղեցի սուրբ. և *զմեղս* երկոտասան անդամոցն ընկղմեալ կորոյս: - 418. Եւ տէր մեր աւերեաց զամուրս դժոխոց զմահ և *զմեղք*, և ապա՛ յերկինս հանեալ և անմահացոյց: - 418. Զի սկիզբն *մեղաց*՝ հիմն է դժոխոց. և կատարումն՝ դուռն. և յամելն՝ փակ: - 418. Նշանակէ զադամայինս մարմին ի կերակրոյ պտղոյն հաւասարեալ անբանից՝ ընդ բեռամբ *մեղաց*: - 423. Եւ տէր մեր զխորհրդոց և զգործոց՝ և յետոյ զպատիժն *մեղաց* ջնջէր: - 424. Եւ տէր մեր զսկզբնական և զներգործական *մեղսն*: - 424. Այլ և *զմեղս* և զմահ: - 424. Զի սամփսոն ի ժամ գերծելոյ գլխոյն թմրեալ ի ծունկս թալիլայ խոնարհէր. նոյնպէս և ամենայն *մեղք* զոր գործէ մարդ, և առաւել գէճ ցանկութիւն, անարգէ զմարդ: - 424. Նա՛խ՝ զի խաբի ի *մեղաց* և յայտնէ՛ զծածուկս սրտին: - 424. Երրորդ՝ ծառայ լինի *մեղացն*: - 424. Մետասաներորդ՝ դնի ի բանտ, և կապի՛ ի շղթայս *մեղաց*: - 424. Զի՞նչ էր *մեղքն* որդոցն հեղեայ: - 425. Ետես զայս չափ *մեղս* առ աստուած ասէ՝ հեղի: - 425. Երրորդ՝ զխիստ բարկութիւնն նշանակէ որ յիւր սրբութիւնն ո՛չ խնայէ վասն *մեղաց* մարդկան: - 425. Յինգերորդ՝ զընթացս *մեղաց* և զգործն որ է սկզբնական և ներգործական *մեղք*...: - 426. Երրորդ՝ զի որք լսեցին *զմեղսն* դաւթի, տեսցեն և զզղջումն: - 432. Վեցերորդ՝ ի յոյս և յօրինակ ամենայն մեղաւորաց. որք զղջան և գտանեն զթողութիւն *մեղաց*: - 432. Զի գա՛յ զղջումն և խոստովանութիւն՝ որ *զմեղքն* բառնայ և զպատիժն ընդ նմին. որպէս հատեալ տունկ՝ չորանան ճիւղքն. որ բոլորով սրտիւ զղջայ և խոստովանի և այլ ո՛չ գործէ: - 432. Եւ է՛ որ *զմեղքն* թողու՝ և զպատիժն կրէ. որք յայլմէ բռնաբա՛ր խոստովանին և պատահմամբ, և դարձեալ սխալին. այսպիսեաց *մեղքն* միայն թողլի: - 432. Եւ է՛ որ խոստովանի. և ոչ *մեղքն* միայն թողուի. որք թերի են սրտիւ. և *զմեղս* թերի խոստովանին. և ի միտս եդեալ են դարձեալ գործել. այսպիսեաց ոչ *մեղքն* թողուի և ոչ պատիժն. զի որպէս զշուն դառնայ ի փսխած իւր: - 432. Որպէս դաւթին յետ զղջմանն յիշատակութիւն *մեղացն* մնաց, ապա նո՛յնպէս և ամենայն մարդոյ մնասցէ՞ թէպէտ և խոստովանի: - 432. Ասեմ թէ ոչ, զի կատարեալ խոստովանութիւնն թողու *զմեղս*, բառնայ զպատիժն, և ջնջէ՛ զյիշատակ *մեղացն*. մինչ զի ո՛չ երևի ի դատաստանին աստուծոյ: - 432. Եւ յայս ասեն հերձուածօղ ազգն Ֆռանգաց, թէպէտ խոստովանի՛ն աստ, յիշատակի՛ *մեղքն* ի դատաստանին: - 433. Իսկ *մեղքն* դաւթի յիշատակեցաւ վասն երկու պատճառի: - 433. Նա՛խ՝ ի յոյս թողութեան մեղուցելոց. զի և մեք զղջացեալ ապաշխարեմք *զմեղս*: - 433. Երկրորդ՝ վասն տկարութեան օրինացն. զի ի հինն ո՛չ կարէր բառնալ *զմեղս* առանց մարմնական փոխարինաց և յիշատակութեանց: - 433. Այլ շնորհք նորոյս կարողութեամբ արդարացուցանէ զմարդ այնպէս, մինչ զի սպիք *մեղացն* ջնջին և յիշատակութիւնն ծածկի: - 433. Եւ որպէս շնորհք մկրտութեան առաւել է քան զբլփատութիւն նոցա, զի *զմեղս* սրբէ և զարքայութիւնն բանայ: - 433. Եւ թէ ասիցեն՝ զխոստովանեալ *մեղս* այլ ո՞չ յիշեմք: - 433. Ասեմք թէ՝ մեզ պա՛րտ է ի մտի պահել և ի լեզուի *զմեղս*. և ցաւիլ և հոգալ հանապազ վասն անցեալ մեղացն և չգործելոյ բարեացն: - 433. Ասեմք թէ՝ մեզ պա՛րտ է ի մտի պահել և ի լեզուի զմեղս. և ցաւիլ և հոգալ հանապազ վասն անցեալ *մեղացն* և չգործելոյ բարեացն: - 433. Ութերորդ՝ զի առանց *մեղաց* ել յաշխարհէ: - 433. Այլ աստ ասէ սուրբն եփրեմ եթէ՝ խրատն դաւթի եղև հատուցումն *մեղացն*. այլ և պարտք բարեաց առ աստուած ի ցոյց օրինի ամենայն ապաշխարողաց: - 434. Զի մի և նոյն ապաշխարութիւն է՛ հատուցումն *մեղաց*, և նիւթ բարեաց առ աստուած: - 434. Չորրորդ՝ թուեաց զնոսա, զի յորժամ մարդամահն լինի, գիտասցեն զորքանութիւն մեռելոցն, և զծանրութիւն *մեղացն*: - 434. Այլ և դաւիթ եգիտ զսաւուղ և զզօրսն նորա ի քուն և ո՛չ վնասեաց. այլ զզէնն էառ. և տէրն ո՛չ կամի զմահ որք ննջեն ի *մեղս*. այլ զպատճառ *մեղացն* հանէ: - 437. Չորրորդ՝ զի առանց այլ *մեղաց* ո՛չ մեռցի. և ճշմարիտ պահեաց: - 439. Զի անդ որ գործէր *զմեղս*՝ և որ վրէժ ոչ խնդրէր՝ միապէս էր յանցանք: - 439. Երեքտասաներորդ՝ զառաջին *մեղքն* եթող զադոնիայ, և յերկրորդին սպան: - 441. Դարձեալ՝ *մեղք* սկզբնական խառնեցաւ ի յաճումն հիւթին. և յետոյ մահ և ապականութիւն: - 445. Իսկ մկրտութիւնն բառնայ զերկոսին. այսինքն *զմեղս* և զմահ: - 445. Ի տիպ խորհրդոյ օրինակի մերոյս տաճարի գերեալ ի *մեղաց* և աւերեալ տաճար

սրբութեանս եօթնիւք զգայութեամբք: - 448. Եւ յորժամ զղջանամք ի *մեղաց*՝ նախ խոստովանութեամբ շինեմք զտաճար սրբութեան մերոյ. և ապաշխարութեամբն որ է՛ փոխարէնքն՝ կանգնեմք զպարիսպն եօթնիւք զգայութեամբքք: - 448. Ութերորդ՝ ողորմութիւն է ի թողութիւն *մեղաց.* և արդարութիւն ի ներումն պատժոց: - 458. Նոյնպէս յովսէփ և մարիամ մերկ էին ի *մեղաց* և առանց խղճի ամօթոյ: - 461. Առաջին որ է հասարակաց սրբութիւն մկրտութեան, մերժէ՛ *զմեղս* և տայ զշնորհս: - 462. Սակայն արմատ *մեղացն* որ է՛ ցանկութիւնն և դիւրասահութիւնն ի մեղանչելն՝ մնայ. որպէս յա՛յտ է ի մկրտեալսն որք կարեն մեղանչել: - 462. Երկրորդ՝ սրբութիւն արգանդին մերժէ՛ *զմեղս* և հերքէ՛ զդիւրասահութիւն մեղանչելոյն մահու չափ. որպէս երեմիային և յովհաննուն: - 462. Երրորդ՝ սրբութիւն յատկական. որպէս սրբոյ կուսին, բառնայ զսկզբնական *մեղս* և զարմատն և դիւրասահութիւն մեղանչելոյն մահու չափ և ներելապէս: - 462. Զի ի խորհուրդ մկրտութեանն ի յառնուլ ջուր, հոգին սուրբ և զօրութիւն բարձրելոյն և ողջոյն հօրն ի ձեռն հրեշտակին որ հերքէր *զմեղս* ըստ մկրտութեան: - 462. Եւ ունէր շնորհօք արգելք ի *մեղաց* մահու չափ և ներելապէս. որպէս յովհաննուն և երեմիային: - 463. Այլ և ի վերայ ա՛յնր՝ ունէր և զերրորդն սրբութիւն. որ կուսութեան իւրոյ էր յատկական. ջնջումն ի սկզբնական և յարմատոյ *մեղաց*: - 463. Զի գալ հոգւոյն սրբոյ պատճա՛ռ էր կրկին ներգործութեան. այսինքն սրբութեան արմատոյ *մեղաց*. և պտղաբերութեան կուսածին զաւակին. ծնանիլ և կոյս մնալ յետ ծննդեանն: - 463. Հինգերորդ՝ զի սրբեսցէ զբոլոր բնութիւնս մեր ի *մեղաց*. ի սկիզբն ի մէջն և ի կատարումն: - 469. Վասն որոյ սրբեսցէ զսկզբնականն *մեղք*՝ յարգանդէ կուսական հոգւով սրբութեան ծնաւ: - 469. Երրորդ՝ զի մի՛ իցէ ի ներքոյ սկզբնական *մեղաց*: - 470. Երկրորդ՝ անդրանիկ է սրբութեամբ. որ ո՛չ արար *մեղս*. և արդարացոյց զմեզ: - 473. Զի տրտմութիւն արտասուաց ընդ մահուանն բարձաւ. իսկ ամօթ և ցաւք մարմնոյ՝ ընդ *մեղացն* բարձան. որպէս ի հատանիլ արմատոյ՝ չորանան ստեղունքն: - 474. Երրորդ՝ զի իւրաքանչիւր հասակի *զմեղս* բարձցէ. որպէս ծննդեամբն զերկուսն ելոյծ. և մահուամբն զմահ. նոյնպէս և տղայ և մանուկ և երիտասարդ հասակաւ զնոսա արդարացոյց: - 479. Ա՛րդ՝ տէր մեր ո՛չ արար *մեղս*, և ո՛չ էառ զդատապարտութիւն *մեղացն*: - 480. Կրկին է գիր. այսինքն կենաց և մահու. զի բարի գործովք գրիմք ի դպրութիւնն կենաց. և *մեղօք* գրիմք ի գիրն մահու և դատապարտութեան. որպէս ասեմք թէ զձեռագիր յանցանաց քոց ջնջեսցէ աստուած: - 481. Եւ երբ ոչ պահեաց, գրեցաւ գիր *մեղաց* և դատապարտութեան: - 481. Զայս որպէս ձեռին գիր ունէր սատանայ, և նովաւ չարչարէր զմարդիկ՝ թէ աստուած ասաց մի ուտել և դու կերեր և մեռար. իմ ի՞նչ *մեղք* է: - 481. Զի ո՛չ սկզբնական և ո՛չ ներգործական *մեղս* ինչ ունէր: - 485. Երրորդ՝ զի լուացէ *զմեղս*. և զիհնն ադամ թաղեսցէ ի ջուրն: - 486. ...իսկ քրիստոս ո՛չ ունէր *զմեղս*. վայն այն վաղվաղակի ել ի ջրոյն. և նշանակէ ի մեզ զշնորհաց հեղումն. որ մկրտեալն ազատի ի *մեղաց* և իսկոյն ելանէ յառաքինութիւնս: - 487. Առաջին մկրտութիւն ջրհեղեղն. որ եբարձ հատանելով *զմեղս* յաշխարհէ: - 488. Գլուխ օձին *մեղքն* է. և խայթոց՝ կարճին մահն: - 489. Եւ սկզբնական *մեղքն* գէճ ցանկութեամբն տարածի: - 489. Եւ այժմ մեք ջրով մկրտութեանն ջախջախեմք զգլուխն. այսինքն զսկզբնական *մեղքն*: - 489. Եւ ա՛յլ առաքինութեամբք կոխեալ հատանեմք զխայթոցն որ է՛ ներգործական *մեղքն* և մահ հոգւոց և դժոխք: - 489. Իսկ այժմ վասն խաչին նախ գիտելի է, զի չարչարանքն քրիստոսի ընդ դէմ է և բարձօղ է մոլորութեանց *մեղաց*: - 489. Երկրորդն է՛ տարածումն բազկացն ի գիրկ արկանել. և նշան ընդունելոյ զդարձեալսն ի *մեղաց*: - 489. Այլ և հանգուցեալ ի գիրկս իւր զվաստակեալսն *մեղօք*...: - 490. Չորրորդ դարձեալ՝ դ թև խաչին նշանակէ զչորս բարերարութիւնս քրիստոսի. զի վերին մասն ցուցանէ զբացումն արքայութեանն երկնից. ներքինն զաւերումն դժոխոց. աջն զբաշխումն շնորհաց. ահեակն զթողութիւն *մեղաց*: - 493. Այլ և մաքրութիւն *մեղաց* ըստ չորից նիւթոց մարմնոյս: - 493. Որոց առաջինն է *մեղք*: - 496. *Մեղքն* է գործ. և մահն պատիժ. և ապականութիւնն հետևանք պատժոյն: - 496. *Զմեղքն* գործեաց ադամ: - 496. Ես սոքա այսպէս զանազանին դարձեալ՝ *մեղքն* է առաջին ծայր. սկսեալ յանձնիշխան կամացն ադամայ: - 496. Արդ՝ երկոքին ծայրքն՝ այսինքն *մեղքն* և ապականութիւնն են պարզաբար և ամենևիմբ չար անուամբ և իրօք...: - 496. ...զի *մեղքն* ի մահ հրաւիրէ, և ապականութիւնն յանգոյութիւն ճանապարհորդէ՛: - 496. Ապա յա՛յտ է որպիսութիւն *մեղաց*՝ մահու՝ և ապականութեան: - 496. Իսկ տէր մեր ի մարդեղութեան իւրում յայսցանէ եկամուտ կրից միայն զմահն կրեաց. իսկ *զմեղս* և զապականութիւնս ո՛չ կրեաց: - 496. Երկրորդ՝ զմահ կրեաց. զի ինքն եդ զմահն պատիժ ի վերայ մեր. իսկ *զմեղքն* և զապականութիւն՝ բանսարկուն և ադամ արկին ի բնութիւնս. վասն որոյ զոր ինքն ոչ եդ՝ ո՛չ կրեաց մարմնով իւրով: - 496. Երրորդ պատճառ, կամեցաւ բանն աստուած ազատել զմեզ ի *մեղաց* և յապականութեանց: - 497. Զի թէ կրեալ էր *զմեղս* և զապականութիւն, ո՛չ կարէր ազատել զմեզ. ինքն ի ներքոյ անկեալ կրից և ապականութեանց: - 497. Դարձեալ՝ ասեմք եթէ մահն ո՛չ է

*մեղք* և ո՛չ ապականութիւն. այլ լուծիչ *մեղաց* և ապականութեան: - 497. Այսպէս և քրիստոս զմահ կրեաց և ի բաց ջնջեաց *զմեղս* և զապականութիւն ի մերմէ բնութենէս: - 497. Դարձեալ ասեմք, *մեղքն* ապականութիւնն են առաջին և վերջին ծայրքն կրից. իսկ մահն միջին որպէս ցուցաւ ի վերոյ: - 497. Սկիզբն կենաց՝ ըստ այնմ որ վախճա՛ն է կենաց՝ վախճա՛ն է *մեղաց*: - 497. Յաղագս որոյ զմահն կրեաց քրիստոս. զի այսպէս բարձցէ յերկուց կողմանց *զմեղս* և զապականութիւն: - 497. Զի որպէս մահուամբ զմահ եբարձ, և ապականութեամբ զապականութիւն, և անիծիւք զանէծք, և *մեղօք զմեղս* որպէս դու ժայթքե՛ս: - 497. Այսպէս և տէր մեր նմանեաւ, որպէս անիծիւք զանէծս՝ և մահուամբ զմահ եբարձ. իսկ հակառակաւն՝ անապական և անմեղ մարմնովն *զմեղս* և զապականութիւն ելոյծ: - 498. Նախ որպէս ասացաւ՝ ապականութիւնն ծնունդ է *մեղաց*՝ և *մեղքն* չա՛ր է. և *մեղք* ո՛չ կրեաց սուրբ մարմինն քրիստոսի. ապա ուրեմն անապակա՛ն է: - 498. Երկրորդ՝ ապականութիւն և *մեղք* ո՛չ է գործ արարչի. այլ մեղանչականին ադամայ և արկածք բանսարկուին. վասն որոյ տէրն զարկուածս բանսարկուին ո՛չ հպեցոյց ի մարմինն իւր. ապա ուրեմն անապակա՛ն է մարմինն տն: - 498-499. Եօթներորդ՝ ի տարրական հողոյ ստեղծեաց աստուած ադամայ անապական մարմին և եդ ի դրախտին. որ *մեղօք* յանցեալ՝ եղև ապականացու: - 499. ...և յետ *մեղացն* եղև ապականացու և կատարեալ. և երևի թէ ապականութիւնն առնէ կատարեալ զմարդն որ այլայլօ՛ղ է և ապականագործ: - 500. Այլ միաւորեալ ընդ ինքեան բաժանեաց *զմեղս* ի հոգւոյն և զապականութիւն ի մարմնոյն. որպէս հուր ընդ ոսկւոյ միաւորեալ բաժանէ զժանգն ի նմանէ: - 500. Ա՛րդ՝ եթէ յանմեղութեանն ապականացու էր ադամ, ապա յառաջ քան *զմեղքն* էր դատապարտեալ ընդ ապականութեամբ: - 501. Եւ ո՛չ զանգոսնելիսն կրեաց զի տեսա՛կ է *մեղաց*. ուրեմն ապա կրեաց զկամաւորն և զանանգոսնելիսն: - 502. և *մեղօք* ծանրացեալ էջ ի ներքին կէտս դժոխոցն, և այլ ո՛չ կարէր բարձրանալ. մինչ ի վերին կիտէն բանն աստուած էջ ի ներքին կէտն. և ապա ել ադամ ի վերին կէտն երկնից: - 503. Եւ չարչարանքն քրիստոսի երկու իրս ներգործեաց. նախ զպարտիս *մեղաց* վճարեաց. երկրորդ զդրունս երկնից եբաց: - 503. Դրունք և նիգք յետուստ են. այսինքն կամ սկզբնական և ներգործական *մեղօք* կապեաց յետոյ, կամ *մեղօք* և յուսահատութեամբ: - 504. Եւ դարձեալ՝ *մե՛ղքն* ծանրացուցանէր և փակէր ի դժոխս: - 504. Ասեմք ներքին դժոխք զհոգւոցն. և միջին զգերեզմանս. և վերին *զմեղքն* որ է՛ ի հոգիս: - 505. Վեցերորդ՝ ամուրն սատանայի է ներքին դժոխքն. ուր են դրունք պղնձիք և նիգք երկաթիք. որ է՛ *մեղքն* մեծամեծք և յուսահատութիւնք. և ա՛յն էր ամրոց նորա: - 506. Նախ ասեմք եթէ՝ առաջին դժոխք հոգւոցն ո՛չ էր վասն ներգործական *մեղացն* հասարակ. այլ վասն պարտուցն ադամայ: - 506. Երրորդ՝ *մեղքն* էր դժոխք և տանջանք մեղաւորաց. և քրիստոս եբարձ *զմեղս*. ապա աւերեա՛ց զդժոխս: - 506. Նախ ասեմք, եթէ դժոխքն է պատիժ *մեղաց*. և կրկին է *մեղք*. այսինքն սկզբնական և ներգործական: - 507. Երկրորդ՝ եթէ սկզբնաչարն սատանայ է ամենայն *մեղաց* պատճառ և ո՛չ տանջի մինչ ի կատարած. նաև ո՛չ մարդիկ: - 507. Հինգերորդ՝ որպէս *մեղքն* զամենեսին մեռոյց, և շնորհքն առաւել զամենեսին կեցոյց որ գերազօ՛րն է ի վերայ *մեղաց*: - 507. Որպէս բազում անգամ ի ժամանակս պատժոց *մեղաց*՝ և արդարք ընդ մեղաւորացն կրեն զպատուհասն: - 507. Եւ պատճառե՛ն զպատճառս *մեղաց* գործօղքն անօրէնութեանց: - 510. Նա՛խ՝ մաքրութիւն ի մահու չափ *մեղաց*. զի այլ ո՛չ ևս տիրեցին նոցա յետ հոգւոյն իջման: - 524. Երկոտասաներորդ, Վասն *մեղաց* և անօրէնութեան: - 525. Երեքտասաներորդ, Եւագր ը ասէ զխորհուրդս *մեղաց*, և այլք է: - 525. Չորեքտասաներորդ, Թէ ո՞րն է առաջին *մեղք*: - 526. Հնգետասաներորդ, *Մեղքն* սատանայի անթողլի է: - 526. Վեշտասաներորդ, Վասն մարդկան *մեղաց*: - 526. Եօթնևժ, Վասն մեծութեան *մեղաց*: - 526. Ութևժ, Անթողլի *մեղք* ո՞րն է: - 526. Իննևժ, Զանազանութիւն *մեղաց*: - 526. Քսաներորդ, Սահմանք առ հասարակ *մեղաց*: - 526. Երեսունք, Վասն ապաշխարութեան և արձակման *մեղաց*: - 526. Յաղագս որոյ կացոյց հոգևոր իշխան զքահանայս. զի հոգէպէս ուղղեսցեն զմարդիկ և արգելցեն ի *մեղաց*: - 537-538. Եւ մարմնաւոր իշխան զթագաւորս և զբռնակալս. զի մարմնապէս կառավարեսցեն զմարդիկ և խրատեսցեն վասն *մեղաց*: - 538. Նոյնպէս և որք անբիծ են հաւատովք և սուրբ գործովք. և կամ որք զղջացեալ յետս դառնան ի *մեղաց* և ի հերձուածողաց. նոցա՛ է արձակումն և օրհնութիւնն: - 540. Իսկ կապելն ի դէմս *մեղացն* է և մեղսասիրաց. որպէս տէր մեր բևեռեաց *զմեղս* և զսատանայ ընդ խաչափայտին: - 540. Դարձեալ՝ կապի *մեղքն*, և լուծեալ ազատի անձն որ կապեալն էր: - 540. Դարձեալ՝ արձակեալ ի *մեղաց*, և կապեալ ի պատիժս: - 540. Եւ նախ մաքրելն է ի *մեղաց*, և ապա լուսաւորելն ի շնորհաց: - 540. Իսկ քահանայք ժողովրդեանն՝ նա կանոնս դնէ՝ որ խոստովանահա՛յր է և գիտէ զկարն և զորքանն *մեղաց*: - 541-542. Ո՞րպէս զանազանին *մեղք*. անօրէնութիւնք, և յանցանք: - 555. Նա՛խ՝ զի *մեղքն* յարմարի մարմնոյն. որ մեղկանայ և թուլանայ: - 555. Իսկ *մեղք* է յօրինաց կատարումն ո՛չ հասանիլ: - 555.

Դարձեալ՝ որ ինչ նախ քան զօրէնս գործեին՝ *մեղք* կոչիւր. որպէս ի դարս նոյի. և այլս: - 555. Դարձեալ՝ *մեղքն* կամաւո՛րն է, և յանցանք ակամայն: - 555. Եւ բերէին զպատարագն որպէս վասն *մեղաց*՝ նոյնպէս և վասն յանցանաց: - 555. Ոմանք զյանցանս մտաց կատարեալ *մեղս* դնեն...: - 555. Եւ ոմանք ոչ ինչ համարին զյանցանս մտաց. և ո՛չ դնեն ի կարգս *մեղաց*. օրինակ տալով իբր զդատարկ սեղան ոչ ինչ կերակրել. և իբր զպտուղ ծառոց տեսութեամբ միայն վայելել: - 555. Բայց նախ զայս ասասցուք. զի *մեղք* մտացն կատարեալ *մեղք* է վասն բազում պատճառաց: - 556. Եւ այս յիրաւի իսկ. զի որ հայեցաւ ցանկական մտօք՝ ի կամս իւր գործեաց *զմեղս*: - 556. Ապա ուրեմն կատարեալ է *մեղք* մտացն: - 556. Երկրորդ յա՛յտ է ի բաժանմանէ. զի յերիս բաժանի տեսակ *մեղաց*. այսինքն ի մտաւորն, ի բանաւորն, և ի մարմնաւորն: - 556. Ա՛րդ՝ մեղք *մտացն* թէպէտ ըստ բանականին և մարմնականին չէ կատարեալ, այլ ի տեսակս իւր կատարեալ է: - 556. Վասն որոյ և տէրն յորժամ ասաց զցանկութիւնն շնութիւն, յաւել ի վերայ թէ՝ «ի սրտի իւրում». զի մի՛ կարծեսցի մարմնական շնութիւն, այլ հոգէկան և մտաւոր. ապա ուրեմն կատարեալ է *մեղք* մտացն: - 556. Երրորդ՝ հպարտութիւն և նախանձ և սոցին նմանքն *մեղք* են: - 556. Իսկ արդ եթէ յանցանք մտացն խոստովանելի, ապա ուրեմն *մեղք* է: - 556. Հինգերորդ՝ զի *մեղքն* զանազանի ի կամայն և յակամայն. ի գիտութեան և յանգիտութեան: - 556. Ուստի զանազանին և պատիժք *մեղացն*...: - 556. Եւ զանազանութիւն սոցա է՛ ի *մեղս* մեղուցելոյն: - 556. Ապա ուրեմն կատարեալ *մեղք* է մտաց *մեղքն*. զի զոմանս առաւել պատժէ, և զոմանս սակաւ: - 556. Վեցերորդ՝ սկիզբն և արմատ ամենայն *մեղաց* զմիտս ասաց տէրն. ըստ այնմ «ի սրտէն յառաջ գայ չարակնութիւն՝ ցանկութիւն» և այլն: - 556. Ա՛րդ՝ եթէ ծնունդն *մեղք* է՛ ապա և ծնօղն այսպիսի ծննդոցս առաւել *մեղք*: - 556. Ապա ուրեմն կատարեալ *մեղք* է ի խորհրդոց մտացն: - 557. Ապա ուրեմն և հայհոյելն մտօք և մախալն և նենգելն կատարեալ չարութիւն է և *մեղք*...: - 557. Ապա ուրեմն կատարեալ *մեղք* է: - 557. Ա՛րդ՝ եթէ շարժումն ախտիցն *մեղք* է ըստ որում է՛, ապա և շարժումն մտացն *մեղք* է որպէս ցուցաւ: - 557. Նաև զամենայն գլխաւոր *մեղս* ընդ հզօր խորհուրդ ասէ սուրբն եւագրիոս. վասն զի նախ ի խորհուրդն տնկի ամենայն սերմն *մեղաց*. և ապա ի մարմինն բուսանի և աճէ: - 557. Դարձեալ ասեն վարդապետք եթէ՝ խորհրդոցն *մեղք*՝ որ ընտրէ և կամաւ հեշտանայ, առաւել չար է քան զգործոցն ըստ պատահմանն: - 557. Իսկ գործ *մեղացն* բերէ յինքն զտրտմութիւն, զստրջանք, զապաշաւ, և զերկիւղ: - 557. Չորրորդ՝ խորհուրդ *մեղացն* ճշմարիտ և բարի ցուցանէ զգործն և սիրելի և հեշտ. վասն որոյ յօժարի և եռայ ի կատարումն: - 558. Վասն որոյ յետոյ տրտմի և նեղի. ատէ՛ զպատճառ *մեղացն* և դառնայ ինքեան. որպէս ամոնի եղև: - 558. Ապա յա՛յտ է թէ որպէս գործ մարմնոյն առ այլս է չար, և խորհուրդ *մեղացն* առաւել ինքեան է չար: - 558. Եւ այսպէս լինի կատարեալ. *մեղք* խառնեալ օտարին գաղտնապէս, ընդ մտածութեանն բնաւորապէս: - 558. Վասն է՞ր նագրիոս ընդ խորհուրդ ասէ *մեղաց*, և այլ վարդապետք է ասեն զմահու չափ *մեղսն*: - 559. Դարձեալ, զի ամենայն *մեղք* նախ ի խորհուրդն սերմանի և ապա բուսանի և աճէ գործելովն: - 559. Դարձեալ ասեմք թէ՝ այլ վարդապետք է ասեն *զմեղս*, զի **դ** տարերք են մարմնոյն, և **գ** զօրութիւնք հոգւոյն. այսինքն բան, ցասումն, և ցանկութիւն: - 559. Վասն որոյ է են *մեղք* գլխաւորք: - 559. Այս ըստ նոցա որ է ասեն զմահու չափ *մեղքն*: - 559. Նա՛խ՝ ըստ չորից տարերց այլ և այլ որակութեանց լինին **ը** խորհուրդ *մեղաց*: - 560. Հինգերորդ՝ որպէս ասեն այլ վարդապետք, թէ լինելութիւն *մեղաց* է յանկարգութենէ կամաց. և անկարգութիւն կամացն է կրկին...: - 560. Վասն է՞ր ա՛յլ վարդապետք առաջին *մեղք* ասեն զհպարտութիւնն. իսկ նագրիոս զորկորստութիւնն: - 561. Զի առաջին *մեղք* հպարտութիւնն է որով սատանայ մեղանչեաց յերկինս և անկաւ. և ապա նախանձն զոր ընդ մարդոյն արարին: - 561. Նա՛խ՝ զի առաջին մարդն ի դրախտին որկորստութեամբ մեղաւ. և այն առաջին *մեղք* եղև մարդկայինս բնութեան: - 561. Երրորդ՝ զի շղթայք *մեղաց* այսպէս ունին զկարգն. զի նախ որկորստութեամբ լնու զորովայնն. և յետ այնորիկ պոռնկութեամբ թափէ՛ զնա. և ապա՛ արծաթ ժողովէ զի լնու զորովայնն և պոռնկի...: - 561. Եւ է՛ հպարտութիւնն առաւել *մեղք* քան զամենայն վասն բազում պատճառի: - 561. Նա՛խ՝ զի ամենայն *մեղք* կամ ընդ դէմ իւր մարմնոյ է, կամ ընկերին. իսկ հպարտութիւնն է մեղանչումն ընդ դէմ աստուծոյ. որպէս սատանայի: - 561. Երկրորդ՝ զի այլ ամենայն *մեղք* մարմնական է և գիտեմք թէ *մեղք* է. իսկ հպարտութիւնն անմարմին է և անօսր. և ո՛չ կարեմք գիտել զմեղանչումն: - 562. Երրորդ՝ զի զայլ *մեղս* մեղսասէրքն գործեն. իսկ զհպարտութիւնն սուրբք և ընտիրք. որպէս հրեշտակք յերկինս: - 562. **Չորրորդ՝ զի ա՛յլ *մեղօք* կամք մեր անկարգանայ. այլ հպարտութեամբ՝ իմացմամբն յիմարիմք և ապշիմք. և ապա կամօք անկարգանամք**: - 562. **Հինգերորդ՝ զի յամենայն *մեղս* գտանի հպարտութիւն. զի որպէս առանց սիրոյ այլ առաքինութիւնք ոչ ինչ են, նոյնպէս առ հպարտութեան ամենայն մոլութիւնք ոչ ինչ են**: - 562. Զի յամենայն *մեղս* երևի հպարտութիւն այսպէս. զի ամենայն *մեղք* խոտումն է պատուիրանացն աստուծոյ, և

խոտորումն զհետ հեշտութեան մարմնոյ...: - 562. ...այն է հպարտութիւն որ խոտե՛մք և անարգեմք զճշմարիտ բարին. և ապա խոտորիմք և հետևիմք զհետ փոփոխելոյ բարւոյս. և այսպէս երևի հպարտութիւնն յամենայն *մեղս*: - 562. **Իսկ ամբարտաւանն ո՛չ իմանայ *զմեղսն* զոր գործէ հպարտութեամբ. այլ գիտէ նա թէ առաքինութիւն է:** - 562. Վասն է՞ր սատանայի *մեղքն* մեծ է և անթողլի քան զմարդոյ: - 562. Այնպէս մարդ *մեղօք* զրկի ի շնորհաց լուսոյն. այլ լոյս խնամոցն աստուծոյ չէ հեռացեալ և սակաւ փայլէ ի ներքս ի տրտնջականն...: - 562-563. ...և յորժամ դառնայ ի *մեղաց*, վաղվաղակի շնորհաց լուսոյն արժանի լինի: - 563. Յայնժամ լոյս իմացականին կորեաւ և շիջաւ ի սատանայէ՛. և լոյս շնորհացն ո՛չ ներգործեաց ի նա. և ի նոյն սերտեալ հաստատեցաւ անզղջապէս. վասն որոյ մեծ են *մեղք* սատանայի և թողութեան ո՛չ հանդիպի: - 563. Այսպէս մեծ է՛ *մեղք* հպարտութեան քան զամենայն *մեղս* մարմնական: - 563. Վասն է՞ր զի մարդոյս գործ և անասնոցն հասարա՛կ են, և մարդոյս միա՛յն է *մեղք*: - 563. Նա՛խ՝ զի որ կամաւ և գիտութեամբ մեղանչէ, առաւել է քան զակամայն և զտգիտութեան. զի թէպէտ և սոքա *մեղք* են, այլ պատիժն նուազ. որպէս անասնոյն քան զմարդոյն: - 563. ...որպէս առաւել է *մեղք* հրեշտակին քան զմարդոյն. վասն այն մին քահանայի *մեղք*՝ որ չափ բոլոր ժողովրդեանն է. ուստի յա՛յտ է ի պատարագէ հնոյն...: - 563. Զի՞նչ է պատճառն որ սրտմտութիւն և ցանկութիւն և այլն ի յանբան կենդանիսդ գործ է. իսկ ի մեզ ախտ և *մեղք*: - 563. Իսկ գործքս այսոքիկ որ նոցա պահպանօղք են՝ մեզ կորուստ և *մեղք* են: - 563. Այսպէս և զայլն ամենայն յաւելու անչափութեամբ. վասն որոյ ախտ և *մեղք* կոչին առ մեզ: - 564. Զսէրն որ առ աստուած պարտ էաք, փոխե՞մք առ երկրաւորս և ի *մեղս*: - 564. Ատել պարտ էր *զմեղս*. այժմ ատեմք զարդարութիւն: - 564. Զի՞նչ է *մեղքն* և մահ և դառն մահ: - 564. *Մեղքն* այն է՝ յորժամ ի կրօնս լինի ոք և գթէ՛ *մեղօք* և դարձեալ ապաշխարէ: - 564. Նա՛խ՝ ի գործն և ի պատիժն. յորժամ գիտէ ոք թէ այն գործն *մեղք* է և գործէ՛. և գիտէ՛ զպատիժ այն *մեղացն* որ ծա՛նր է: - 564. Երկրորդ՝ գործօղն որ ունիցի զճշմարտութիւն ինչ կարգի՝ թողու զայն և գործէ՛ *զմեղս*: - 564. Երրորդ՝ ի յաստուած գիտութիւնն. որ եկեալ իցէ ի հաւատս ճշմարիտս. և գիտէ զքրիստոս աստուած ճշմարիտ. թողու և գործէ՛ *զմեղս* կամ զհաւատն: - 564. Իսկ կամաւոր *մեղքն* գրա՛ծ է ի հին օրէնքն **իբ** գլուխն տես: - 564. Ո՞րպէս է մեծութիւն *մեղաց*: - 565. Ոմանք բազում եղանակս ասեն. այսինքն Պատճառաւ մեծ. որպէս *մեղք* արուսեկին: - 565. Դժուարաթողութեամբ, որպէս *մեղքն* որ ընդ դէմ հոգւոյն սրբոյ: - 565. Այլ ես հաւանիմ որք ասեն **ժ** զոլ զմեծութիւն *մեղաց*. և այն համեմատի ընդ **ժ** ստորոգութիւնն: - 565. Զի **ժ** պատուիրանքն և **է** մահու չափ *մեղքն* են ըստ գոյացութեան *մեղք*. որպէս մի՛ շնարն և մի՛ գողանարն և մի սպանաներն և մի՛ սուտ վկայերն: - 565. Եւ թէ **բ** մարդ գործեն *զմեղս* զայսոսիկ, սպանանելն մեծ է քան զսուտ վկայելն. և այլն նմանապէս: - 565. Նոյնպէս և զամենայն մահու չափ *մեղս* իմասցիս: - 565. Չորրորդ ըստ առընչին. այսինքն թէ առ ի՞նչ իրք գործէ *զմեղքն*. զի մարդն **դ** դիմօք գործէ *զմեղս*. այսինքն դիմաց աստուծոյ, դիմաց եկեղեցւոյ, դիմաց ընկերին, դիմաց իւր անձինն: - 565. Ահա՛ որ մեծ է քան զամենայն *մեղք*: - 565. Հինգերորդ ըստ ուրին. թէ ուր գործեն *զմեղքն*. կամ ի վանք, կամ յեկեղեցի որ է տուն աստուծոյ. կամ ի գեօղ, կամ ի քաղաք, կամ ի պոռնկատուն: - 565. Վեցերորդ ըստ երբին. այսինքն թէ ե՞րբ գործեն *զմեղքն*. ի տղայութեա՞ն, թէ ի ծերութեան որ մեծ *մեղք* է. ի սո՞սկ աւուրս, թէ ի տէրունական տօնս. զի որ ի տօնս *մեղք* գործէ, առաւել պատժի քան զմիւսն: - 565. Նոյնպէս և Կալն և Ունելն զամենայն մահու չափ *մեղս*. թէ գործեալ է և թողեալ. զի որ հաստատեալ է *մեղքն* յինքն, առաւել մեղանչէ: - 565. Զի՞նչ է *մեղքն* ընդ դէմ հոգւոյն սրբոյ որ ո՛չ թողցի: - 566. Ամենայն *մեղք* հասարակաբար է՛ ընդ դէմ աստուծոյ երիցն և միոյ: - 566. Ա՛րդ՝ *մեղքն* որ ընդ դէմ հոգւոյն սրբոյ՝ մանաւանդ ելանէ ի չար կամաց անձնիշխանականին. և ուղղակի մարտնչի ընդ դէմ շնորհաց հոգւոյն սրբոյ. և յիրաւի անթողլի՛ է: - 566. Եւ զի ո՛չ թողու *զմեղս*՝ անհաշտ լինի. վասն այն *մեղքն* անջինջ և անթողլի մնայ: - 566. Իսկ անթողլի *մեղաց* **զ** են պարագայք. այսինքն յուսահատութիւն. յանդըգնութիւն. մարտնչիլ զճշմարտութիւնն ճանաչելոյ. նախանձ ընդ դէմ եղբայրական սիրոյն. խստասրտութիւն և անզղջութիւն մինչ իսպառ: - 567. Զի՞նչ է զանազանութիւն *մեղաց*: - 567. *Մեղք* անունն մի է, և բոլորապէս յերիս տեսակս որոշի. այսինքն ի սկզբնականն, և ի մահացուն, և ի ներելին: - 567. Ա՛րդ՝ թէպէտ հոգին ո՛չ լինի սերեալ ի հօրէն որպէս մարմինն, սակայն սկզբնական *մեղքն* անցանէ ի հոգւոյն յաղամայ ի հոգիս զհետ եկելոցն միջնորդութեամբ մարմնոյն ցանկութեամբ ծնելոյն: - 567. Եւ յա՛յտ է՝ զի սկզբնական *մեղքն* է՛ ի մարմինն և ի հոգին: - 567. Իսկ ներելի *մեղքն* է յանցանք փոքրագոյն. քանզի ի մանկունս յետ մկրտութեան նախ յառնեն ներելիքն, և ապա՛ մահու չափքն: - 567. Իսկ մահացուն *մեղք* **է** գլխաւորօրէն է. կամ **ը** որպէս ասացաւ: - 567. Ա՛րդ՝ *մեղք* սկզբնականին չորիւք զանազանի յայլոցն. այսինքն ի մահացուէն և ի ներելոյն. ըստ միութեան. ըստ հասարակութեան. ըստ հաւասարութեան. ըստ որակի տարբերութեան: - 567. Նա՛խ ըստ միութեան. զի մի

է *մեղքն* սկզբնական և ո՛չ բաժանի. որպէս մահացուն **է**. և ներելին **զ**: - 567. Յաղագս որոյ այն որ ըստ բնութեան է *մեղք*՝ ըստ բնութեանն և յորդիս անցանէ: - 568. Այս բաժանումս է՛ ըստ տեսակի *մեղաց*: - 568. Դարձեալ՝ ըստ ենթակայից բաժանի *մեղքն* յերիս. այսինքն ի *մեղք* սրտից. ի *մեղք* բերանոյն. և ի *մեղք* մարմնոյն: - 568. *Մեղք* սրտին է *մեղք* խորհրդոցն: - 568. *Մեղք* բերանոյն է *մեղք* լեզւին: - 568. Եւ *մեղք* մարմնոյն է առհասարակ զգայարանացն: - 568. Դարձեալ զանազանին սոքա. զի *մեղք* խորհրդոյն կայանայ յերիս. ի տեսանելն, ի հաւանիլն, և ի կամիլն: - 568. Եւ *մեղք* լեզուին՝ ի սուտն, ի զուրն, և յանիրաւելն: - 568. Այլ և *մեղք* մարմնոյն՝ ի հեշտանալն, ի սովորիլն, և ի կապիլն առ *մեղս*: - 568. Այսպէս զանազանին *մեղք* ըստ նիւթոյն և ենթակային: - 568. Դարձեալ ըստ կատարման բաժանի *մեղքն* յերիս. այսինքն ի գործ *մեղացն*, և յունակութիւնն, ի պատիժն: - 568. Նախ՝ զի գործ *մեղաց* է՛ ի զգայութիւնս ներքին կամ արտաքին: - 568. Դարձեալ զանազանին. զի գործ *մեղացն* է յայլմէ՛ առ մեզ՝ կամ ի մէնջ առ այլս. այսինքն ի պատրանաց բանսարկուին և ի չարաց ոմանց առ մեզ. և ի մէնջ առ ընկերակիցս մեր: - 569. Իսկ ունակութիւն *մեղացն* է ի մէնջ և առ մեզ. զի կամաւորապէս կրեցաք և կամաւոր պահեմք ի մեզ: - 569. Դարձեալ զանազանին սոքա ըստ սեռին. զի գործ *մեղացն* է ի սեռս առնելոյն. և պատիժն ի սեռս կրելոյն. և ունակութիւն ի սեռս ունելոյն: - 569. Եւ որպէս ա՛յլ է ունելն և առնելն և կրելն. այսպէս ա՛յլ է ունակութիւն *մեղաց*. և առնել *զմեղս*. և կրել զպատիժս: - 569. Այս քան ըստ տեսակի և ըստ նիւթոյ և ըստ կատարման զանազանութիւն *մեղաց*: - 569. Զի՞նչ է *մեղք*: - 569. *Մեղքն* սահմանօրէն այս է: - 569. *Մեղք* է դարձուցանել զերեսս յանփոփոխելի բարւոյն որ է՛ առ աստուած. և դառնալ առ փոփոխելի բարին որ է արարածքս: - 569. Դարձեալ՝ *մեղքն* է խօսք և գործք և ցանկութիւն որ լինի ընդ դէմ օրինացն աստուծոյ: - 569. Եւ սկիզբն ամենայն *մեղաց* ամբարտաւանութիւնն է որպէս ասէ սիրաք: - 569. Զի սատանայ այլ *մեղք* ո՛չ գործեաց, քան թէ խորհեցաւ զյատուկ բարձրանալն իւր...: - 569. Սա՛ է սնուցօղ ամենայն *մեղաց*, մայր դատարակաբանութեան: - 570. Այս քան վասն *մեղաց* սակաւիկ: - 570. Եւ այսպիսի ասացեալ տկարութեան *մեղաց* առողջութիւն է բժշկարան է զօրութիւնք որ կոչին առաքինութիւնք. որ են այսորիկ: - 571. Զի թողութիւն *մեղաց* որ է՛ կենդանութիւն հոգւոյ՝ աստուածային զօրութեամբն լինի: - 573. Եւ զի դժուարին է հոգւոյ մարդոյ կարգաւորել զինքն և սրբել ի *մեղաց*. վասն այսորիկ օգնութիւն տայ աստուած հոգւոյ մարդոյ զեօրն պարգևս հոգւոյն սրբոյ: - 582. Սուգն զնախանձն. զի որ սգայ վասն *մեղաց* այլոց, ո՛չ նախանձի ընդ նոսա: - 583. Սուգն է սգալ վասն *մեղաց* և ատել զնա մինչ զի եղծանել զնոսա: - 583. Այս է՝ *զմեղքն* զկամքն չար՝ և զսատանայ՝ որ խռովարարք էին եբարձ ի միջոյ. և արար խաղաղութիւն յերկինս և յերկրի: - 585. Չորրորդն ապաշխարութիւնն. որ է՛ վերստին կանգնելոցն, որք անկանին *մեղօք* և վերստին կանգնին ապաշխարութեան գործովք: - 587. Ապաշխարութիւնն է՛ խորհուրդ արդարութեան. զի ի ձեռն զղջման և խոստովանութեան և այլոցն արդարանամք ի *մեղաց*: - 587. Դարձեալ՝ է և այլ պատճառ. զի կարգին ընդ դէմ երից *մեղացն* և ընդ դէմ չորեքկին պատժոցն: - 587. Մկրտութիւնն է ընդ դէմ սկզբնական *մեղացն*: - 587. Ապաշխարութիւնն ընդ դէմ ներգործական մահու չափ *մեղացն*. և Օծումն ընդ դէմ ներելի *մեղացն*: - 587-588. Բայց գիտելի է, զի գործ մկրտութեանն է սրբել զհոգիս յամենայն *մեղաց* զոր ունիցի. թէ բնական թէ ներգործական և ի պատժոց *մեղացն*. զի թէ նոր մկրտեալն մեռանի, առ ժամայն թռչի ի կեանս յաւիտենականս: - 590. Երկրորդ՝ զի մկրտութիւնն է ընդ դէմ սկզբնական *մեղաց*. և սկզբնական *մեղքն* մի է և ո՛չ կրկին: - 590. Զգաւակս այլազգեաց մկրտել պարտ է. զի թէ մեռանի ազատեալ է ի սկզբնական *մեղաց* և ի պատժոց դժոխոց: - 591. Զի ջուր հակառակ է հրոյ. և զի՞նչ է *մեղք*, եթէ ոչ հուր. որպէս յոգւոց բարկութիւն. և ի մարմնի ցանկութիւն. ուստի յայտ է զի հրով տանջանաց պատժի. և աստ զի հուրն շիջցի ի ջուր մկրտիմք: - 591. Այսպէս շնորհք հոգւոյն սրբոյ ի մկրտութեանն զաղտս *մեղաց* լուանայ. զծարաւ հոգւոյն բանիւն աստուծոյ շիջուցանէ. և զկորուսեալ պատկերն աստուծոյ դարձուցանէ: - 591. Փոքրիկ տղային զի՞նչ է *մեղք*: - 591. Սկզբնական *մեղն* որ յադամայ հետէ: - 591. Տղայն իւր կամաւն ո՛չ գործէ. վասն է՞ր է պարտական *մեղացն* ադամայ: - 591. *Մեղքն* ադամայ այն է որ զարդարութիւն կորոյս. և *մեղօք* և ցանկութեամբ ծնաւ զորդին. և այն *մեղքն* սկզբնական կոչի. և ո՛չ թողցի եթէ ոչ ի մահն քրիստոսի մկրտեսցի: - 591. Գրեալ է «որդի ո՛չ տարցի զանօրէնութիւն հօր». վասն է՞ր ի *մեղս* ծնողաց որդին տանջի: - 591. Ո՛չ ունէք *մեղք* յայլմէ խնդրի. այլ ամենայն մարդ վասն իւր *մեղացն* պատժի: - 591. Եւ վասն այն ամենայն որ ունի զսկզբնական *մեղքն*. - 591. ...և առանց ցանկութեան *մեղաց* ո՛չ որ կարէ ծնանիլ. բայց միայն տէր մեր որ առանց ցանկութեան ի կուսական արգանդէ ծնաւ՝ ո՛չ ունէր *զմեղս* սկզբնական: - 592. Թէ *մեղք* հօրն ի մկրտութեանն թողեալ լինի, վասն էր մկրտին որք ի նոցանէ ծնանին: - 592. Կրկին է պատիժ *մեղաց*. այսինքն մահ մարմնոյն, և դժոխք հոգւոյն: - 592. Թէ *մեղքն* ի մահն քրիստոսի թողեալ լինի, ընդէ՞ր

մկրտիմք մեք: - 592. Մահուամբն քրիստոսի լուծան *մեղք*. բայց մեք ի հաւատ մահուն քրիստոսի մկրտիմք. զի տնկակից լիցուք մահու նորա: - 592. Զի տանջանք հրոյն ներգործական *մեղա՛ցն* է և ո՛չ սկզբնականին պատիժ: - 593. Վտա՞նգ են *մեղք* ծնողացն որդոց. կամ որդոց *մեղքն* ծնողաց: - 593. Այլ թէ ծնօղք որդուոց՝ կամ որդիք ծնողաց *մեղացն* կամակիցք և համախոհք լինին ի *մեղս* չա՛րք են ընդ նոսին...: - 593. ...և այնուհետև ո՛չ վասն այլոց, այլ վասն ինքեանց *մեղացն* պատժին իւրաքանչիւրքն: - 593. Եւ վասն այն է գրեալ՝ յերրորդ կամ ի չորրորդ ազգս *մեղաց* վրէժ խնդրեսցի. յորժամ հայրն և որդին և թոռունքն զնոյն *մեղս* գործեսցեն: - 593. Որ տուեալ լինի ի մկրտութիւնն հոգի սուրբ որով *մեղքն* քաւեալ լինի: - 593. Եւ գո՛րծ է այսմ խորհրդոյ՝ յաւելցնել զշնորհն, և դեղ հանապազորդ *մեղացն*: - 594. Ապաշխարութիւնն է ցաւիլ վասն *մեղացն* զոր գործեաց...: - 601. Եւ զամենայն *մեղք* ըստ կարգի վերոյ գրելոց խոստովանեսցի: - 601. ...այսինքն յի՞նչ տեղ կամ յի՞նչ ժամանակ գործեաց *զմեղքն*: - 601. Ո՞րքան յամեաց ի *մեղքն*: - 601. Եւ գիտո՞ւն էր որ կարէր ճանաչել զմահու չափ *մեղքն* և զներելին: - 601. Դարձեալ զգուշասցի զի մի՛ յամօթէ՛ կամ երկիւղէ՛ քահանային յուսահատութեամբ ծածկէ *զմեղքն*...: - 601. ...և կամ *զմեղքն* բաժանէ. և զկէսն մին քահանային ասէ և զկէսն մին: - 601. Եւ գիտելի է, զի մարդ որ ի *մեղք* անկանի և իմանայ զինքն որ *մեղք* գործեաց, և ունի զխոստովանահայրն պատրաստ ուղղափառ և գիտուն, ի յա՛յն պահն պարտի խոստովանիլ: - 601. Զի որպէս հուրն դիզին վնասակա՛ր է, նոյնպէս *մեղքն* հոգւոյն: - 601. Զամենայն ճշմարտութեամբ հարցանէ քահանայն. և այնպէս որ մի՛ լիցի ի հարցանելն *մեղք* ուսուցանել ժողովրդեանն: - 601. ...տայ խրատ և զգուշացուցանէ ի *մեղացն* որ այլ չգործէ. - 602. վասն անցեալ *մեղացն* ցաւի. և խոստանայ այլ ո՛չ մեղանչել զանցեալ *մեղքն*: - 602. Յայնժամ արձակէ՛ ի *մեղացն* այս ձևովս: - 602. Նովին բանիւն արձակեմ զքեզ յամենայն մասնակցութենէ *մեղաց.* ի խորհրդոց ի բանից և ի գործոց. յանուն հօր և որդոյ և հոգւոյն սրբոյ: - 602. Եթէ խոստովանութեամբ թողլի *մեղքն*, վասն է՞ր դնի ապաշխարանքն: - 602. Եւ ընդ ասելն «մեղայ», անցոյց աստուած *զմեղքն*. այսինքն անցաւ և փոխեցաւ յաւիտենից պատուհասն ի ժամանակեայն...: - 602. Այժմ պատասխանեսցուք նախ՝ եթէ խոստովանութեամբն թողութիւն լինի ամենայն *մեղաց*...: - 602. Դարձեալ՝ խոստովանութիւնն սրբէ՛ *զմեղս* որ ո՛չ տանջի...: - 602. Դարձեալ՝ խոստովանութիւնն սրբէ զանցեալ *մեղս*...: - 602. Զի է՛ որ խոստովանին *զմեղս* և արմատն հաստա՛տ է...: - 603. ...զի խոստովանեալ *մեղքն* բարձուի, այլ պատիժն ո՛չ: - 603. Եւ է՛ խոստովանութիւն որ զարմատ *մեղացն* քակէ՛ ի սրտէն և զղջացեալ ի *մեղաց*, հաստա՛տ է ի կամս և ի միտս այլ ո՛չ մեղանչել...: - 603. այսպիսիս կատարեալ խոստովանութիւն է. և զայսպիսոյ *մեղս* թողու քահանայական իշխանութիւնն. և զպատիժն ընդ նմին: - 603. Զի պատժոյ արմատն *մեղքն* է...: - 603. ...ընդ բառնիլ *մեղացն* բարձաւ և պատիժ գեհենին. որպէս տէր մեր եթող *զմեղս* անդամալուծին. և բարձան պատիժքն: - 603. Զի ատելութիւն *մեղաց* զղջումն է սրտին. և խոստովանի բերանով. և զամօթն կրէ փոխանակ պատժոյն: - 603. Յիրաւի ապա այսպիսի խոստովանութիւնս կատարելապէս թողու *զմեղս* և զպատիժս...: - 603. Որք իցեն ի մեծամեծ *մեղս* մահու չափ, օգո՞ւտ է խոստովանութիւնն նոցա թէ ոչ: - 603. Արդ ըստ այնմ որ է՛ հնարք՝ ո՛չ է օգուտ որ քան է մարդ ի *մեղս*: - 603. Զխոստովանեալ *մեղքն* պա՞րտ է կրկնել թէ ոչ: - 603. Երկրորդ՝ թէ տգէտ լիցի քահանայն և ո՛չ կարէր ընտրել զծանրութիւն *մեղացն* և զանազանել: - 603. զի առանց խոստովանութեան *մեղքն* ո՛չ թողուի: - 603. Եւ գործ ա՛յս խորհրդոյս է՛, որ զմնացեալ ներելի *մեղքն* թողու: - 604. ...քան թէ բառնալ զխոստովանութիւնն որ հարկաւոր է. առանց որոյ ո՛չ գոյ ներգործական *մեղացն* թողութիւն գտանել: - 604. Դարձեալ՝ օծումն հիւանդաց ո՛չ սրբէ զմահու չափ *մեղս*. այլ զներելիս: - 604. Դարձեալ՝ մահու չափ *մեղքն* բանիւ սրբի ի ձեռն քահանային...: - 604. Նոյնպէս և օծումնս այս է՛ վերջին որ զփոշետեսակ և զներելի *մեղսն* սրբէ...: - 605. Առաջինն է արտաքս հանել յեկեղեցւոյ զոչ մկրտեալն և զախտացեալս *մեղօք*. և զայս առնէ դռնապանն: - 608. Չորրորդն՝ որք կիսակատար դարձեալք են ի *մեղաց*. և զոսա լուսաւորէ ջահընկալն: - 608. Հինգերորդ՝ որք բոլորովիմբ զղջացեալք և թողեալք *զմեղս*՝ գործեն զբարիս. զնոսա հովուէ՛ դպիրն սաղմոսիւք և ալէլուիւք: - 608. Զի ողորմութիւնն ի կողմանէ յորժամ անտես առնէ *զմեղս*՝ դուռն է հարաւոյն: - 614. Զի յորժամ *մեղօք* ինչ սրբութիւնս մեր ապականի, կամ շարժի ոք ի հաւատոյ, վերստին կարէ՛ հաստատիլ ի հաւատս, և դարձեալ կրկնել զխոստովանութիւն և զապաշխարութիւն: - 615. Նա՛խ՝ զի զմի օր նոցա տօնեմք. և է յաւելեալ վասն է զգայարանաց. և վասն եօթնեկի *մեղաց* քաւութեան: - 616. Երկրորդ՝ եկեղեցի՝ դրախտին է օրինակ. որ զմեռեալսն *մեղօք* արտաքսեաց: - 617. Նաև յարքայութենէն արտաքսին ամենայն *մեղօք* մեռեալք: - 617. Եւ տապանն նշանակէ՛ զեկեղեցի. որք ի ձայն ժամահարին ժողովին և ապրին ի ջուրց հեղեղաց *մեղաց*: - 618. Վասն է՞ր արտասուքն լուանայ և ջնջէ *զմեղս* առաւել...: - 619. Արդ որպէս ի սրտէն յառաջ գայ հեշտութիւն *մեղաց*,

շնութիւն՝ ազահութիւն՝ և այլն. որպէս աւետարանն հրամայէ: - 619. Երկրորդ՝ *մեղքն* ի հոգւոյն և ի մարմնոյն ի վեր ելանէ. իսկ արտասուքն վերուստ ի վայր հոսի և կորուսանէ՛ զնա: - 619. Երրորդ՝ զի ջուր արտասուացն զհուր *մեղացն* շիջուցանէ: - 619. Վեցերորդ՝ արտասուքն զզղջումն և զսուգն նշանակէ՛ զոր ունիմք վասն *մեղաց*: - 619. Այլ գիտելի է, զի **գ** է արտասուքն հոգևոր. մին վասն *մեղաց*. որ է՛ ապաշխարութիւն: - 620. Նա՛խ՝ թէ ո՛չ գիտէ զկերպ աղօթիցն, կամ ծունր կրկնել, կամ զձեռն տարածել. և սոյնպիսիք ո՛չ *մեղք* են և ո՛չ արդարութիւն: - 620. Թէ գիտէ և մոռանայ, ներելի *մեղք* է: - 620. Իսկ մտօքն, յորժամ աղօթէ և միտքն ո՛չ է ի ներս. ո՛չ *մեղք* է և ո՛չ արդարութիւն: - 620. Բայց յորժամ երթայ միտքն ի *մեղք*՝ է՛ մահու չափ: - 620. Յորժամ յոչ կամայ՝ ո՛չ վարձք և ո՛չ *մեղք*: - 620. Եւ այս է միտքն, որ *մեղօք* կապեցաւ: - 621. Մէջ գիշերին է՛ երիտասարդութիւնն. յորում առաւել թմրիմք ի *մեղս*: - 622. Չորրորդ՝ վասն հասարակ և յայտնի *մեղաց*՝ պա՛րտ է հասարակ և յայտնի աղօթել...: - 623. Նոյն սարասիւք այժմ ի ձեռն փրկչին մերոյ յիսուսի՝ տապանակաւ խաչին և աղօթիւք սուրբ եկեղեցւոյս՝ բարձրացեալ պարիսպն չարութեան եօթնից զգայութեանց *մեղաց* որոշօղ ի մէջ մեր և աստուծոյ, կործանեսցի ի սպառ: - 627. Իսկ յառնելն մեր ի յօրհնութիւն, նշանակէ նախ ի մեռելութենէ *մեղաց* և ի ծառայութենէ յառնելն: - 627. Ապա՛ զկնի երից մանկանցն աղօթից որով քաւիմք ի *մեղաց*. ի փառս տալն ի բարձունսն՝ անուշահոտ բուրմամբ նուիրեմք: - 628. Եւ ի գումն կալն, վասն կործանման *մեղացն*: - 628. Նոյնպէս և երկրորդն որ ասէ ոչ նախանձիլ ընդ չարս որ են անզգամք. և զի ո՛չ գոյր նոցա աստ փոխարէն *մեղաց*. վասն այն հրովն յաւիտենից այրեսցէ զնոսա: - 629. *Մեղաց* պատարագին խունկ և իւղ չէր հրամայեալ օրէնքն. զի տրտում և ժահահո՛տ է: - 630. Անբիծքն վասն *մեղաց* պատարա՛գ է. նոյնպէս և յիսներորդ ողորմեայն վասն *մեղաց* է ալէլու ո՛չ ասի: - 630. Վերջին և առաջին գուբղայն յանմեղութենէ ասացեալ. և միջինն յետ *մեղանացն*. այս ընդ իրեար միաւորեցաւ: - 630. *Զմեղար* յամենայնին, և զկարգ մեծ տօնիցն, յոհան օծնեցին: - 637. Չորեքկերպեան կենդանիքն է՛ խաչն. և տեսեալն ի վերայ նորա՝ գառն որ բառնայ *զմեղս* աշխարհի: - 638. ...և այլ պահք ամենայն վասն ներգործեալ *մեղաց* մերոց: - 650. ...պահեմք զչորեքշաբաթն. և վեցիւք շարժմամբ ի *մեղս* ընթանամք, պահեմք զուրբաթն: - 653. Երրորդ, աղուհացքն այսմ կենաց խորհուրդ, որ եմք ի սուգ վասն *մեղաց*...: - 654. Նա՛խ՝ զի բաժանիցուք յայնցանէ որք զգհին *մեղաց* ըմպեն. և վասն *մեղաց* արբենան և շռայլին: - 656. Այլ մեք զբաժակ օրհնութեան ճաշակեմք զչափաւորն. և ո՛չ զանչափն որ է *մեղաց*՝ և արբեցութիւն: - 656. զի մի՛ լիցի այն ի *մեղս* կամ ի մահ: - 656. Երկրորդ, փրկութեան է յոյս և թողութեան *մեղաց*: - 657. Յինգերորդ՝ քաւութիւն *մեղաց* շնորհեցաւ: - 657. Յինգերորդ՝ ազատիմք ի *մեղաց*: - 657. Չորրորդ, որոյ ամէն գործքն բարի լինի և մին *մեղք* է գործեալ...: - 664. ...և այն մին *մեղքն* վճարի և այն կենացն սուրբ և արժանաւոր ժառանգորդ լինի: - 664. Երկրորդ, որ անզեղջ են ի *մեղս*՝ տայ աստուած զհիւանդութիւն ի խրատ ուղղութեան: - 665. Եւ անմեղութեան, որ ո՛չ որք է առանց *մեղաց*. բայց նա՛ միայն որ ծնաւ առանց *մեղաց*...: - 666. Նախ զերանական կեանս արդարոց ուստի զրկեցաւ *մեղօք:* - 669. ...զի քահանայական աղօթիւք և պատարագօք կամ առաւելունս պսակքն, կամ ջնջին *մեղք* նոցա: - 674. Չորրորդ, զի **գ** է ժամանակ յորում գործեմք *զմեղս*. այսինքն անցեալն ներկայն և հանդերձեալն...: - 675. Նա՛խ՝ արտասուեմք զբնութիւնս մեր թէ վասն *մեղաց* յո՞րպիսի կենաց դրախտին ի մահ անկաւ և ի հող դարձաւ: - 676. Երկրորդ, արտասուօք լուանամք *զմեղս* նորա, - 676. Այլ և մտաց և բանից և գործոց *մեղացն* քաւութեան: - 679. ...զի *մեղօք* մեռանի հոգին ի դժոխս. որպէս և մարմինն...: - 680. Դարձեալ՝ ամենայն *մեղաց* պատիժ գոյ. և ա՛յլ է *մեղքն* և ա՛յլ է պատիժն որ հետևի *մեղացն*...: - 680. ...զի *մեղքն* առնելն է, և պատիժն կրելն. յերեկեան օրն վասն *մեղաց* խնդրեցաք. այսօր վասն պատժոց: - 680. Դարձեալ՝ գիտութեամբ և կամօք գործեցաք *զմեղս*...: - 680. ...այլ և *մեղօքն* կապի մարդ յերկինս և յերկրի. - 680. վասն որոյ կրկին անգամ ի կրկին *մեղաց* և ի կրկին կապանաց արձակումն խնդրեմք: - 680. Նաև երիւք լինի թողութիւն *մեղաց*. այսինքն զղջմամբ խոստովանութեամբ և ապաշխարութեամբ. որ լինի մտօք բանիւ և գործով: - 681. Արդ եգիպտոս նշանակէ՛ զաշխարհս որ է՛ հալոց չարութեան և տեղի ծառայութեան *մեղաց* և սատանայի որ է՛ փարաւոն: - 682. Այլ յորժամ սիրտն կապեալ է ի *մեղս* աշխարհի և ոչ կարաց ապաշխարութեամբ քաւել, ո՛չ մտանէ յարքայութիւնն երկնից: - 683. ...և զղջացան և խոստովանեցան *զմեղս*...: - 683. Իսկ թէ անզեղջ կամօք և առանց խոստովանութեան ի *մեղս* մեռան, ո՛չ է օգուտ նոցա. թէպէտ մկրտեալ իցեն և հաւատացեալ...: - 683. Նա՛խ՝ որպէս ասացաւ ի քահանայաթաղն վասն **է** շնորհաց հոգւոյն, և **է** խորհրդոց եկեղեցւոյ, և **է** առաքինութեանց, և **է** գլխաւորագոյն *մեղաց*, և **է** զգայարանօք մեղանչեմք, և **է** փոփոխմամբ հասակի...: - 683. ...և մե՛ք քաւեմք *զմեղս* նոցա և ո՛չ նոքա: - 684. ...այլ խաւար *մեղացն* արգելու զտեսութիւնն. և չա՛ր է կարծիք նոցա, և երկիւղ տանջանաց: - 685. ...որք ունին զհին օրէնս և ո՛չ զնորս. այլ ի ներքոյ մնացեալ

սկզբնական *մեղաց*՝ նոքա ի տանջանս ընթանան: - 678. Իսկ ի ներքոյ երկնից առ երկնիւ է կայանք հոգւոց կիսամասնեայ արդարոց այնոցիկ որոց պակա՛ս է արդարութիւն քան *զմեղս* և կամ առաւել: - 688. ...այսինքն *զմեղօք* մեռեալ հոգիսն ի դատաստան ըստ գործոց: - 689. Ապա թէ ոչ՝ ո՛չ կարէ մեղաւոր հոգին ելանել յերկինս. ուստի և հրեշտակք վասն *մեղաց* անկան. և մարդն ի դրախտէն: - 689. ...որպէս ասէ մեկնիչն տեսլեան. եթէ սպիտակ հանդերձն շնորհացն քրիստոսի մաքրութիւնն է. որ սրբութիւն *մեղաց* մերոց արար քրիստոս...: - 690. Ոչ մկրտեալքն կամ չարքն ո՞չ ունին տանջանս վասն սկզբնական կամ ներգործական *մեղաց:* - 690. Երրորդ, աներևոյթ են *մեղօք* և ո՛չ ունին զպայծառութիւն բարեաց. որպէս այն որ ո՛չ ունէր զհանդերձ հարսանեաց: - 691. Վասն այսորիկ արդար դատաւորն զհոգի և զմարմին ի միասին յարուցանէ և դատէ՛. եթէ վասն *մեղաց* ի տանջանս և եթէ վասն արդարութեան յարքայութիւնն երկնից: - 691. Եւ թէ մասն մարդոյն որ է հոգին՝ տանջի այժմ վասն *մեղաց* և մարմինն հանգչի, այս ո՛չ է ուղիղ, նոյնպէս և զփառսն: - 694. ...իսկ միտքն տայ պատասխանի՝ դրունքս փակեալ են. այսինքն զգայարանքս խցեալ են և *մեղաց* մանկունքս ընդ ինև ո՛չ տան թոյլ. - 697. Չորրորդ, զի յայտնապէս զրկէ զժողովուրդն ի փրկութենէ, և ծուլութեամբ ընկղմէ ի *մեղս*...: - 698. Նախ՝ զի քակե՛ն զխոստովանութիւնն յեկեղեցւոյ և ի քաւարանն ապաւինեալ կորնչին *մեղօք*: - 698. Երկրորդ, զի առանց ահի և ամօթոյ *զմեղս* գործեն. - 698. Երրորդ, զահ դատաստանին որ ամենեցուն երկնչիլ տայ ի *մեղաց*...: - 698. Եւ մեկնիչն ասէ, աստուածապա՛շտ են որք խոստովանին *զմեղս*. զոր գիտէ տէր յայսմ աշխարհի փրկել առանց քաւարանի հրոյ: - 699. Եւ անիրաւք որ ո՛չ խոստովանին *զմեղս*, նոքա ո՛չ զերծանին ի ձեռաց. այսինքն պատժոցն աստուծոյ...: - 699. Ապա ուրեմն խոստովանութեամբ քաւին *մեղքն* և ո՛չ հրով: - 699. Ապա ուրեմն որք աստ խոստովանութեամբ արձակին ի *մեղաց*, անդ ազատեալ են ի տանջանաց: - 699. Հինգերորդ, հոգի և մարմին ի միասին գործեն *զմեղս* որպէս ասացաւ ի վերոյ...: - 699. ...իսկ հոգին միայն ո՛չ կարէ քաւել զանչափ *մեղս*: - 699. Եւ այն զի պատճառ *մեղաց* առաւել մարմինն՝ քան թէ հոգին լինի: - 699. Վեցերորդ, զի մահն սկիզբն է անփոփոխ կենացն. զի ո՛չ կարէ փոխիլ ի *մեղաց* յարդարութիւն...: - 699. Ա՛րդ՝ եթէ մեռեալք ո՛չ խոստովանին և ո՛չ օրհնեն. ապա և ո՛չ ապաշխարեն և ո՛չ քաւեն ըստ ինքեան *զմեղս*: - 699. Իններորդ, հուր քաւարանին պատիժ է *մեղացն* ըստ նոցա: - 699. Ա՛րդ՝ եթէ մարմինն ևս գործեաց *զմեղս*, պա՛րտ է և նմա կրել պատիժ...: - 699. Տասնևմի, պատժոյն *մեղաց* չափ և ժամանակ գոյ ըստ իւրաքանչիւրիցն. որպէս յա՛յտ է ի կանոնս: - 700. Տասնգ, ողորմութեամբ աստուծոյ զերծանի ոք ի *մեղաց*. և արժանաւորի արքայութեան: - 700. Նա՛խ եթէ ի խոստովանութիւն *մեղացն* մնայ պատիժն զոր ապաշխարութիւնն քաւէ. որպէս յայտ է ի կանոնս. - 701. Ասեմք եթէ՝ պատիժ չարեաց պտուղ է *մեղաց*: - 701. Եւ ի խոստովանիլ *մեղաց*՝ լուծանի և պտուղն չար: - 701. Երկրորդ, ասեն խնդրէ արդարութիւնն աստուծոյ՝ զի վասն *մեղաց* պատիժ տացի. որպէս յօրէնս մարդկային պատժին յանցաւորք...: - 701. Ասեմք նախ՝ եթէ գ են *մեղք*. այսինքն անգիտութեամբն և գիտութեամբն և չարութեամբ: - 701. Եւ արդ՝ անգիտութեամբն ներելի՛ է. իսկ գիտութեամբն ապաշխարելի. իսկ չարութեամբ *մեղքն* է պատժելի. կամ աստ ժամանակեայ, կամ անդ յաւիտենական: - 701. Դարձեալ ասեմք եթէ ջուր զմկրտութիւնն ասէ, և հուր զխոստովանութիւնն *մեղաց:* - 701. Դարձեալ՝ ոսկի է հաւատն և դաւանութիւնն անապական. և Արծաթ՝ անաղտ մաքրութիւնն ի *մեղաց*. և Պատուական ակունք՝ զանազան առաքինութիւնք: - 702. Եւ այլ վարդապետք փայտ խոտ և եղէգն զներելի *մեղս* ասեն. և առաւել և նուազ և միջակ: - 702. Իսկ այլք զերեք տեսակ *մեղացն*. այսինքն սկզբնականն որ է խոտ. և ներելին եղէգն. և մահացուն փայտ: - 702. Դարձեալ՝ խոտն մտաւոր *մեղք* խորհրդոց. և եղէգն յանցանք բանից. և փայտն մարմնական մեծամեծ *մեղք:* - 702. ....տարերք սրբեսցին ի *մեղաց* դիւաց և մարդկան: - 702. Նա՛խ՝ զի աստ յայժմու կեանս շնորհքն է, իսկ անդ փառքն. որպէս աստ *մեղքն* է և անդ պատիժն. այլ ո՛չ քաւարան: - 702. ...մաղաքիա վասն մեծամեծ *մեղացն* ասէ: - 703. ...որով դրոշմեալքն յետ արտաքս ելանելոյ ի մարմնոյս, թռչին յանապատն ի *մեղաց* յերկինս կերակրիլ անդ յուսով մինչև լնու թիւ կատարման աշխարհի: - 703. Նա՛խ՝ որպէս ո՛չ է անդ գործ *մեղաց*, նոյնպէս և ո՛չ թողութիւն: - 704. Ասեմք առ այս նախ՝ եթէ անդ *մեղաց* թողութիւն ո՛չ է զոր աստ ոչ թողութիւն: - 704. Այլ ամենայն *մեղք* որ աստ թողութիւն՝ և անդ...: - 704. Դարձեալ ասեմք, *մեղք* աստ զպատիժն ասէ...: - 704. զի թէ ոք աստ զպատիժ *մեղաց* ոչ կարասցէ վճարել, անդ վճարեսցէ և թողցի: - 704. Եւս յայտնի, աստեացս ամենայնի կատարումն է՛ ի հանդերձեալն. այսինքն *մեղաց* և արդարութեան. պատժի և պարգևի. կապելոյ և արձակելոյ: - 704. Իսկ տէրն մեր անմեղ մարմնովն դատապարտեաց զնա իբր զպատճառ *մեղաց*...: - 705. Եւ բևեռմամբ ձեռացն բևեռեաց ընդ խաչափայտին զսատանայ և *զմեղս* մեր: - 705. Զի զգլուխ վիշապին ի ջուրսն յորդանանու ջախջախեաց ըստ յոբայ որ է *մեղքն*...: - 705. Նա՛խ՝ յարութիւն է շնորհաց. որ զթողութիւնն *մեղաց* ընկալաք և զհաւատն քրիստոսի: - 710.

Ապա ուրեմն ընդ դէմ այսմ չորեքկին յարութեանս չորեքկին է և մահ. այսինքն Նախ *մեղաց* և անհաւատութեան մահն: - 710. Զի յորժամ սրբի հոգին ի *մեղաց*, բնական ունի զպայծառութիւնն: - 712. Նոյնպէս կատարեալ խոստովանութեամբն կորնչի *մեղքն* և բուսանի արդարութիւնն: - 714. Եւ զորօրինակ զկնի մկրտութեանն սկզբնական *մեղքն* ոչ երևի. նոյնպէս զկնի ապաշխարութեան ներգործական *մեղքն* ծածկի և կորնչի...: - 714. Եւ թէպէտ մարմինն փոփոխի հասակաւ կամ հիւանդութեամբ, կամ *մեղօք* հոգին հիւանդանայ. դիմաւոր նշանս այս անփոփոխ մնայ: - 719. Երկրորդ պակասութիւն է թուլութիւն և մոռացումն մտաց. զի աստ զաստուած մոռանամք և որոշիմք *մեղօք* ի նմանէ...: - 722. Եւ յայնժամ ո՛չ լինի *մեղք*. վասն որոյ և ո՛չ մահ. - 724. Այլ արդ՝ երեխայքն որ յառաջ քան զմկրտիլն մեռանին, վասն ադամայ *մեղացն* պատժին: - 724. Ո՛չ յարիցեն ամբարիշտք ի յարութիւնս հոգևորս. այսինքն ի *մեղաց* ի շնորհքն. այլ յառնեն մարմնով: - 724. Դարձեալ՝ ո՛չ յարիցեն ի դատաստան, այսինքն ո՛չ կանգնեսցին ի դատաստանի զի *մեղօք* կործանեալք են: - 724-725. Նոյնպէս և մեզ պա՛րտ է լինիլ արթուն ի *մեղաց*...: - 730. Եւ այսպէս հսկել և պահել զտունս մեր, զի մի՛ գող մահուն և կատարածի՝ գտեալ զմեզ անպատրաստ ի *մեղս*՝ տանիցի զհոգիս մեր ի տանջանս յաւիտենից: - 730. ...և վառեսցեն զերկինս որ է՛ օդն. և զերկիր և զլերինս և զդաշտս և զբոյսս և զկենդանիս. և զժանկս *մեղաց* որպէս ասէ աստուածաբանն գրիգոր: - 731. Զի զօդս սրբէ ի *մեղաց* դիւաց և ճենճերաց. և զերկիր ի մարդկային *մեղաց*: - 731. Եւ յիրաւի նախ ջրով. զի յայնժամ ջերմացեալ էին մարդիկ ի ցանկութիւն *մեղաց*, վասն որոյ ջրով պատժեցան: - 731. Հինգերորդ, զի դիցէ զքշնամիս իւր ի ներքոյ ոտից իւրոց. այսինքն կորուսցէ զնեռն և զսատանայ և զամենայն զայթակղութիւն մարդկան՝ *զմեղս* և զմահ. - 737. Իսկ մեղաւորքն ի ծախմէ. այսինքն վայր ի յերկիր ծանրացեալ *մեղօքն*. որպէս կապար ի յերկիր հակեալ. ուր բոլորով սրտիւ սիրեցին զնա: - 738. Ի յաջմէ *մեղքն* մատնիչ, ի ծախմէ դևքն ահագին: - 738. Չորրորդ, յայտնելով *մեղացն*. և այսպէս մեղաւորք և չարք զմիմեանս դատեսցեն: - 738. Ոմանք դատին այլ ո՛չ դատապարտին. որպէս միջակ արդարքն. որք ունին ներելի և մասնաւոր *մեղս*: - 739. Հաւատացեալ արդարք. որք ըստ օրինաց հնոյն կամ նորոյս գործեցին զարդարութիւն. կամ որք սխալեցին և ապաշխարեցին *զմեղս* զղջմամբ խոստովանութեամբ պահօք աղօթիւք ողորմութեամբ և այլովք: - 739. Ապա վասն է՞ր սակս ժամանակեայ *մեղաց*՝ յաւիտեան պատժէ աստուած: - 744. Դարձեալ՝ չար կամք մեղաւորին է յաւիտենական. զի կամին յաւիտենական հեշտանալ ի *մեղս* թէ կարէին. ապա ուրեմն պատիժն լինի յաւիտենական: - 744. Դարձեալ՝ նիւթ հրոյն որ աղտ *մեղաց*, է՛ յաւիտենական. վասն այն յաւիտեան տանջէ զնոսա: - 744. Դարձեալ հինգերորդ, *մեղքն* որոշէ ի յաւիտենական կենացն. վասն այն անկանի ի մահն յաւիտենական: - 744. Նախ՝ կոչի սիրտ և անձինք մեղաւորաց, ուր ժողովին ամենայն գործք չար որ է՛ խաղող դառնութեան. և ունակացեալ պահէ յինքեան. և հեշտութեամբն ճմլէ հանապազ և արբենայ *մեղացն* գինով: - 748. Ութերորդ՝ հնձան կոչի և աւազանն սուրբ. զի ի նմա ճմլին և կորնչին ամենայն *մեղք* մեր...: - 749. Նախ ցուցանէ *զմեղս* անհաւատիցն լցեալ զտաճար ներողութեանն աստուծոյ. զի լցեալ և յաղթահարի ողորմութիւնն յարդարութենէն: - 749. Երրորդ՝ զի նիւթ հրոյն և այրելիքն որ է աղտ *մեղացն*՝ նաև մեղաւորքն՝ են յաւիտենական: - 750. Մարգարէն եսայի կրկին ասէ զհատուցումն *մեղաց*. նոյնպէս և ի տեսիլն. և վասն էր դաւիթ եօթնպատիկ ասէ հատուցանել ի ծոց նոցա: - 750. Նախ վասն մարդոյս. զի մին *մեղացն* կրկին հատուցանի աստ հոգւով և մարմնով. իսկ եօթնպատիկն է՛ ի հուրն յաւիտենից: - 750. Երկրորդ՝ զի մարդկան ազգի կրկին է հատուցումն. այսինքն յայժմու կեանս և ի հանդերձեալն. իսկ դիւացն եօթնեկի է հատուցումն վասն եօթնեկի յանցանաց նոցա. և եօթն գլխաւորագոյն *մեղացն*: 750. Վասն երկրորդին ասէ տէր, «դատաւորն մատնեսցէ դահճի, և արկանիցի ի բանտ և ո՛չ ելանիցէ անտի». զի ո՛չ է հատուցումն *մեղաց* և ո՛չ զրաւ տանջանաց: - 751. Զի որպէս աստ եղև ծառայ *մեղաց*, լիցի և անդ հարկատու պատժոց: - 751. Եօթներորդ՝ ամօթ *մեղացն*. որք անդ ամենայնքն յայտ լիցին և զինքեանս թաքուցանել չկարեն: - 752. Վասն վեցերորդին, որք զխաւար *մեղաց* աստէն սիրեցին և առ լոյսն քրիստոս գալ ո՛չ կամեցան. վասն այնորիկ ահագին խաւարաւ անդ նսեմանան: - 752. Վասն եօթներորդին, որք *զմեղս* խոստովան լինիլ ո՛չ կամեցան զորս առնել ո՛չ էր պարտ. վասն այնորիկ անդանօր ամենեցուն մերկացեալ և բացեալ յաւիտեան յամօթ լինին: - 752-753. Վասն իններորդին, որք աստ իւրաքանչիւր *մեղօք* գոյին շաղախեալք. արդարապէս ունին զիւրաքանչիւր անդամս կապանօք կաշկանդեալս. և ցանկան մեռանիլ և փախիցէ մահ ի նոցանէ: - 753. Եւ ի *մեղաց* աղտէն: - 753. Եւ խոստովանութեամբ *մեղաց* սատակին և նոքա: - 753. Զի այսպէս ասեն վարդապետք՝ թէ յորժամ յղանայ ոք ի միտս իւր զխորհուրդ *մեղացն*, ի սատանայէ՛ սերմն առեալ որպէս կին յառնէ. և ի ծնանիլ *մեղացն*՝ ծնանին և որդունքն ի հրեղէն ծովն որ է՛ ի հարաւ: - 753. Եւ որ քան գործեմք *զմեղս*, այնքան բազմանայ ծնունդն

նոցա. և ծուլութիւն և հեշտութիւն մեր սնունդ է նոցա: - 753. Ուղղակի ուրեմն փայտս այս ասի գոլ տընկեալ մերձ յընթացս ջուրց. զի ի նմանութիւն մարմնոյ *մեղաց* երևեցաւ. և զամենայն նուաստութիւնս մեր յինքն ընկալաւ: - 755. Է՛ ուրեմն ասել, եթէ ոչ տն սաբաւովթ, այսինքն զօրութեանց, թողեալ էր մեզ սերմն առաքելօք և մարգարէիւք և այլովք սրբովք և վարդապետութեամբ աւետարանին, համերք և ի *մեղս* լինէաք խստացեալք: - 755. Որդիքն ահարօնի՝ են սուրբքն. որք նախ քան զվերափոխիլն ի սենեակ վերին արքային, աստուածայնովքն բանիւք յամենայն հպարտութենէ *մեղաց* մաքրին: - 756. Իսկ Չորրորդն արքայութիւն՝ է՛ յաւիտենականն գաւառ. յորմէ ի ձեռն *մեղաց* առաջնոյ մարդոյն՝ տարեալք պանդխտիմք յայսմ տառապանաց գբի և ի տիղմ կաւոյ. անարգաբար դեգերեալք ի հովիտս արտասուաց. յանապատի կալով և ո՛չ ի ճանապարհի. - 756. Երրորդ, կուսութիւնն ճաւո՛ր է. և ամուսնութիւնն վաթսունաւոր. և դարձեալքն ի *մեղաց* երեսնաւոր: - 757. Զի ո՛չ զգալի գիշեր և ո՛չ իմանալի. *մեղաց* կամ անհաւատութեան կամ տգիտութեան գտանի անդ: - 761. Երրորդ այնու՝ զի *մեղքն* որ յոյժ վտանգեաց զմարդիկ, եղիցի փակեալ ի դժոխս զկնի աւուրն դատաստանի. զի եղիցի ի դժոխս իբր ի տեղւոջ իւրում. զի ո՛չ կարասցէ մնալ. ո՛չ յերկինս և ո՛չ յերկրի. այլ իջանէ ի դժոխս ներքինս: - 764. և Երկոտասան պտուղ, զի ո՛չ խափանէ զնոսա ձմեռն *մեղաց*: - 765. Երկրորդ՝ բա՛րձր է մայրն և արմաւենին. և արդարքն անխոնարհելի՛ են ի *մեղս*...: - 765. Եւ յերկոտասան ամիսս, զի յետ *մեղանացն* վերստին պտղաբերի ապաշխարութեամբ: - 765. Դարձեալ, ծառ կենաց է աւետարանն սուրբ տնկեալ ի մէջ եկեղեցւոյ դրախտին. բերելով պտուղ կենաց զիմաստութիւնն երկնաւոր. որ կեանս տայ ճաշակողացն զնա. և միշտ շնորհս բժշկութեան և թողութեան *մեղաց*: - 768. Եւ լուասցէ զբազմաշարաւ զազրացեալ ոսկերս՝ *մեղօք* մեռելոյս: - 773. Իսկ եթէ բաղդատելով ոք ասիցէ, թէ ի մարմնի գոլով ապաշխարեալ սրբեցաւ նա ի ներգործականէն իւրմէ *մեղաց*. և այս ո՛չ ուրէք երևի ցոյցք ի գիրս սուրբս: - 775-776. Եւ յիրաւի այս. զի այն ոք որ առնէ զոր ինչ ոչ է պարտ, յիրաւապէս կրեսցէ զոր ինչ պա՛րտն է. զի *մեղքն* է առնել, իսկ պատիժն է՛ կրել: - 776. Եւ այսպէս քարշեալ եղև ի մեզ սկզբնականն *մեղք*՝ յանհնազանդութենէ հոգոյն և ի ցանկութենէ մարմնոյն. անցեալ ի ծնունդս նորա նիւթապէս ի մարմինս, և տեսակաբար ի հոգիս: - 776. Զի *մեղքն* ադամայ թէպէտ սկզբնապէս առհասարակ բնութիւնս տարածեցաւ. այլ ո՛չ առաւել քան զայլոցն եղև. այսինքն որդւոցն նորա...: - 777. ...զի սկզբնաչար և պատճառ ամենայն *մեղաց* սատանայ է. այլ ադամ այնչափ՝ զի առաջին եղև մեղանչական ի նմանէ: - 777. Եւ ո՛չ այս միայն, այլ և *մեղքն* ադամայ նուազ ևս քան զծննդոց նորա ըստ այսմ օրինակի: - 777. Քանակաւ, զի նա՛ գործով, իսկ նոքա և գործով և հասեալ *մեղօք*...: - 777. ...իսկ Բաղդատութեամբ. որպէս է սկզբնականն առ ներգործականն *մեղք*. այսպէս ադամայն առ որդւոցն նորա: - 777. Ապա ուրեմն յիրաւի, զի որք առաւել եղեն *մեղօք*, առաւելասցին և պատժօք: - 777. Եւ այլ ևս. որպէս ասացաւ կրկին է *մեղքն*. սկզբնական և ներգործական: - 777. Յիրաւի դարձեալ՝ դարձցին յետոյ ի պատիժս անձնիշխան կամաց ներգործական *մեղաց*: - 778. *Մեղքն* ադամայ է՛ ներգործական ինքեան. այլ ապաշխարեաց ի մարմնի գոլով: - 778. Եթէ յարդեան ժամանակիս հաւատարիմ է, զի որ ոք և իցէ յանցաւոր, եթէ զղջասցի և ատեսցէ *զմեղս* ըստ մարգարէին՝ խոստովանութեամբն առնու զմաքրութիւն և զվարձս ապաշխարութեան: - 778. Երկրորդ, ապաշխարութեան ժամանակն ընդունելի է. իսկ որ քան մարդ է ի *մեղս*՝ ո՛չ է հաճոյ աստուծոյ: - 780. Իսկ թէ որ ի կեանս յայս զղջասցին ատելով *զմեղս* և խոստովանին, առցեն զվարձս ապաշխարութեան որ է՛ թողութիւն *մեղաց*. առանց երկբայութեան է այս: - 780. Այլ ո՛չ զամենայն պակասականքն կրեաց քրիստոս. որ է՛ հիւանդութիւն մարմնոյ և ապականութիւն. կամ *մեղք* հոգւոյ և տգիտութիւն: - 781. Ասեմք նա՛խ՝ եթէ ամենայն շնորհ զինչ և իցէ տուեալ բնութեան, ո՛չ քակտի ի նմանէ. թէպէտ ծածկի երբեմն վասն *մեղաց*: - 782. Զի որպէս բան պատկերին, այսպէս և բան շնորհացն եռակի. զի միապէս սոքա եղծանին *մեղօք*, և նմանապէս արծարծին մաքրութեամբ առ որ ոք և իցէ: - 782. Դարձեալ, ամենայն շնորհք առ ո ոք և իցէ՝ բառնի վասն *մեղաց*. ո՛չ ըստ ունակութեան՝ այլ ըստ ներգործութեան կամ նշանակութեան: - 782. Զի որպէս բառնի վասն *մեղաց*, նոյնպէս տացի վասն զղջմանն: - 783. Զի կարէր կորուսանել *մեղօք*, և կարէր պահել անմեղութեամբ. որպէս զանմահութիւն և զայլսն: - 783

**ՄԵՌԱՆԻՄ +** Եւ թէ ոք ասիցէ, բազում բանք մեր բացորոշակի լինին ի հանդերձեալն. որպէս թագաւորն յորժամ ասէ շինեսցի քաղաք, և շինի. և ասեմք թէ այսանուն մարդ *մեռանելոց* է, և *մեռանի*. և աղօթեմք և լինի...: - 9. Կամ է ի հարկաւոր պատճառ է. զի անխափան լինիցի. որպէս մարդ *մեռանելո՛ց* է: - 9. Եւ որովհետև ծանեաք զայս, արդ պատասխանեմք առարկութեանցն, եթէ որքան Է՛ ի հարկաւոր պատճառ է՛, լինի բացորոշապէս բանն ճշմարիտ. որպէս բան թագաւորի. և մարդոյն *մեռանիլն*. և արև ծագելն. և լինիլն գարուն յետ ձմռան: - 10. **Որպէս յիմար հիւանդն ասիցէ, կամիմ ուտել և ըմպել զհաճոյսն իմ. եթէ**

**առողջանալո՛յ եմ՝ առողջացայց. և եթէ *մեռանելո՛յ՝ մեռայց***: - 18-19. Իսկ թէ առանձնապէս մարդոյն, զիա՞րդ սոսկ մարդ իւրովի *մեռանի*, և իշխանութեամբ իւրով դարձեալ յառնէ: - 70. Այսպէս և խոնարհագոյնքն են աստուծոյ բանին վասն միաւորութեանն. որպէս մարդ ծնանիլ ի կուսէ՛ ժամանակեայ. խաչիլ և *մեռանիլ*...: - 74. Ա՛րդ՝ դու առանձնութեամբ քո որ ունիս զհասարակ բնութիւնդ՝ ծնար այսօր ի մօրէ՛ կամ *մեռար* յաշխարհէ՛ և ո՛չ հասարակ մարդկութիւնս: - 74. Որև ընդ չարչարիլն քրիստոսի՝ չարչարեցաւ և *մեռաւ* բոլոր մարդկութիւնս ըստ նոցա: - 76. Եթէ զաստուածային անձն և զնորին բնութիւնն ասէք մի քրիստոս, դեռևս կայք յառաջ ասացեալ տարակուսանսդ. զի զաստուածային անձն և զբնութիւնն ասէք չարչարեալ և մեռեալ. զի քրիստոս խաչեցաւ և *մեռաւ* ըստ գրոց: - 89. Դարձեալ՝ և ո՛չ զնա միայն փրկէր զի *մեռանիլ* ո՛չ կարէր: - 149. Եւ թէ *մեռանի*, անխիղճ գնայ յաշխարհէս: - 178. Չորրորդ՝ զի մասն ապականի, այլ բոլորն կեայ. որպէս իւրաքանչիւր անհատ մարդոյ և ձիոյ *մեռանի*, այլ բոլորն մնայ. այսպէս և տարերք: - 181. Եւ զի երկիրս և ծառք *մեռանին*: - 197. Եւ այլք ասեն թէ՝ բազում աղբիւրք բղխեն ի ծովն. որպէս *մեռայի* ջուրն, և փոխեն զծովն ի դառն: - 208. Զորօրինակ՝ յորժամ մարդն *մեռանի*՝ ջերմութիւնն ի սիրտն ժողովի և ապա քաղի: - 209. Զի վարդապետք ասեն եթէ՝ կերակուր գազանաց այլ կենդանիք են. վասն որոյ խնամքն աստուծոյ ետ նոցա առաւել հնարս և զօրութիւնս, զի կարասցեն ըմբռնել. զայլ կենդանիս և մի՛ ի սովոյ *մեռցին*: - 218. Զի՞նչ պատուիրանն. և մահու *մեռանիլն*: - 228. Իսկ մարմինն անզգայ և անշա՛րժ է. և յայտ է ի *մեռանիլն*: - 234. Ապա թէ յեօթանց ասացելոցս մինն վնասի, իսկոյն *մեռանի* մարդն: - 241. Եւ թէ ոք ասիցէ, յորժամ ունի զկենդանութիւն սերմն այն՝ ընդէ՞ր ի վիժումն *մեռանի*: - 256. Եւ որպէս սիրտն նա՛խ գոյանայ, նոյնպէս և յետո՛յ *մեռանի* վասն ջերմութեան նորին: - 261. Դարձեալ՝ մարդո՛յն է հարկ *մեռանիլն*: - 275. Նա՛խ՝ ասի մահու մեռանիլ, իբր թէ է՛ ոմն անձնաւոր մահ որ է՛ բանսարկուն. և նովաւ *մեռանիցիս* ասէ: - 277. Երկրորդ՝ թէ անասունքն մահկանացուք են. նոցա մահուամբն *մեռանիցիք*: - 277. Երրորդ՝ մահու մեռանիլ զհոգւոյ մահն ասէ որ մեղօքն *մեռանի*. զի այն է առաւել մահ և յաւիտեան չար...: - 277. Չորրորդ՝ մահու մեռանիլ այն է, որ հոգւով և մարմնով տրտմին. և անմահ չարչարին. որպէս մեղաւորք յայս կեանս և յետ մահու. զի որ *մեռանի* մարմնով՝ զպարտս վճարէ. և որ տրտմի հոգւով՝ անմահ մահանայ: - 277. Զի նախ քան զմեղանչելն ի դրախտին՝ մարդն կարէ՛ր մեղանչել, և կարէր ոչ մեղանչել. կարէր *մեռանիլ*, և կարէր ոչ *մեռանիլ*: - 278. Կարէ՛ *մեռանիլ*, և ո՛չ կարէ ոչ *մեռանիլ*: - 278. Ո՛չ կարէ *մեռանիլ*. և անկա՛ր է *մեռանիլ*. և այլն նմանապէս: - 278. Երրորդ՝ զի թէ և դառնային մերձ ի մահ, ամենայնքն ընդ ապաշխարութեամբ *մեռանէին*. և ո՛չ ոք արդարութեան պսակին արժանաւորէր: - 292. Երկոտասաներորդ՝ զի որպէս իսահակ հնազանդ գտաւ հօրն մահո՛ւ չափ, լաւ համարելով *զմեռանիլն* քան առանց հնազանդութեան զկալն: - 305. Եւ անդանօր լինի անմահ և անապական ծնունդ և որդիք յարութեան. զի *մեռանիլ* ո՛չ ևս կարեն ասէ ...: - 308. Նա՛խ՝ զի ի ծնանիլն բենիամենի՝ *մեռաւ* մայրն և որդի վշտաց եղև նմա: - 312. Նոյնպէս և ամենայնքն *մեռանիմք* և ամենայնքն յառնեմք: - 314. Այս է՝ է զօրութեամբ հոգւոյն և **ե** զգայարանօք մարմնոյ *մեռանիմք* և յառնեմք **գ** կատարելութեամբ: - 315. Զի թէպէտ հրէա՛յքն խաչեցին, այլ իւր կամաւն *մեռաւ*: - 316. Եւ ըստ նմանութեանն քրիստոսի մի զուարակ. որ վասն մեղաց մերոց *մեռաւ*: - 322. Որդիքն յոբայ որք *մեռան* արդա՞րք էին թէ ոչ: - 322. Երևի թէ ո՛չ. զի յուտել և ըմպել *մեռան* որ է մեղք: - 322. Իսկ այնմ որ ասեն թէ յարբեցութեան *մեռան*, պատասխանեմք եթէ՝ զմեղս յամենայն աւուր արիւն պատարագացն սրբէ՛ր. իսկ զայնմ աւուր՝ արիւնն իւրեանց: - 322. Չորրորդ՝ մին ձեռն մովսէսի *մեռաւ* բորոտութեամբ. զի մին ազգ փրկեցաւ նովաւ: - 332. Իսկ տէրն մեր բոլոր անդամօք *մեռաւ*. զի զբոլոր բնութիւնս փրկեաց: - 332. Նա՛խ՝ ցուցանէ թէ սա՛ անմեղ է՝ վասն իմ մեղացս *մեռանի*. զոր ձեռօք ի սա՛ տամ զմեղս: - 359. Նոյնպէս քրիստոնեայն որ մեղօք *մեռանի*՝ և անհաւատն միապէս պիղծ են առաջի աստուծոյ: - 365. Ապա յա՛յտ է թէ՝ որ անկանի ընդ քար կամ ի վիհ և *մեռցի*, ո՛չ է ուտելի: - 366. Իսկ թէ այլ ինչ անդամն հատցի և *մեռցի* կենդանին, ո՛չ է ուտելի. ո՛չ հատեալ անդամն և ո՛չ բոլորն: - 366. Զի գործնականաւն *մեռանիմք* ընդդէմ մեղացն. և տեսնականաւն մտօք թռչիմք ի դրախտն որ է՛ դաշտ երկնային: - 368. Եւ զկենդանին ներկեալ՝ և կարմիր կապեալ ի պարանոցն, ցուցանէր *զմեռանիլն* աստուծոյ վասն մեր: - 369. Եւ թէ *մեռանի* ոք ի տուն ուխտաւորին, պղծեցաւ ուխտն. և անհամար լիցին առաջին աւուրքն, և նո՛ր սկսցի: - 390. Զի ակամայ սպանօղք զերծանիցին անդ մինչ քահանայն կենդանի իցէ. և յորժամ *մեռանիցի* քահանայն, ապա գնասցեն ի տեղիս իւրեանց: - 392. Զայն ցուցանէ, զի *մեռանիլն* քահանային՝ ազատութիւն էր նոցա, յօրինակ քրիստոսի. յորժամ *մեռաւ* վասն աշխարհի, ազատեցան մահապարտքն: - 392. Իսկ յետ մահու ա՛յնոցիկ հոգւոց որք զղջան կամ խոստովանին զմեղս, քաղաք ապաստանի է նոցա ի կայանս հոգւոցն տրտմութիւն և ցաւն վասն փոխարինաց մինչ *մեռանի* քահանայն մեծ. որ եկեղեցի սուրբ՝ պատարագաւ և

աղօթիւք և ողորմութեամբ հատուցանէ՛ զպարտս նոցա և ազատին: - 392. Այլ՝ արծակեալ կինն ո՛չ դառնայր յառաջին այրն վերստին. թէպէտ *մեռանէր* վերջին մարդն: - 400. Երկրորդ՝ թէ կրտսե՛ր է եղբայրն. որպէս առակն է եղբարց, որ առաջինն էառ և *մեռաւ*. և ապա երկրորդն, և որ ի կարգին: - 402. Վեցտասաներորդ՝ Զաւակն բերսաբէի *մեռաւ*: - 413. Գիշերի սատակեցան զօրքն ռափսակայ. և վասն յովսիայ զի հարաւ և *մեռաւ*: - 413. Երկոտասաներորդ՝ զերկանս սպասու մարմնոյ գործեսցէ միշտ և ի նոյն *մեռանի* որպէս սամփսոն: - 424. Եւ զի հեղի ո՛չ խրատէր զնոսա սաստիւ և տանջանօք. վասն որոյ և ինքն պատժեցաւ և *մեռաւ*. և քահանայութիւնն յազգէ նորա փոխեցաւ յաւուրս սողոմոնի: - 425. Վեցերորդ՝ ընդէ՞ր ոչ քաջալերեաց զնա ասելով, եթէ *մեռանիս*՝ վիուկդ յարուցանէ՛ զքեզ որպէս զիս: - 429. Արդ եթէ սամուէլ յարեաւ և *մեռաւ* և կամ կինն, նա՛ ճշմարիտ եղիցի բանն. ապա թէ կինն ոչ *մեռաւ* և սաւուղ *մեռաւ*, սուտ խօսեցաւ: - 430. Վասն է՞ր *մեռաւ* ոզիա: - 431. Առաջին զաւակն բերսաբէի վասն է՞ր *մեռաւ*: - 433. Դաւիթ չորս ամ բնակեցաւ ի գէթ մինչ *մեռաւ* սաւուղ. և տէր մեր յեգիպտոս՝ մինչ *մեռաւ* հերովդէս: - 437. Երկրորդ՝ զի ի նոյն օրն ո՛չ *մեռցի*: - 439. Չորրորդ՝ զի առանց այլ մեղաց ո՛չ *մեռցի*. և ճշմարիտ պահեաց: - 439. Այլ որ հրամայեցաւ սիմէի ոչ ելանել յէէմէ. և յորժամ ել *մեռաւ*: - 439. Նա՛խ՝ զի հեզութեամբ և քաղցրութեամբ մեծարեաց զնա զի մի՛ սովեսցի և *մեռցի*: - 443. Յետ ի ամի գերութեանն *մեռաւ* նաբուգոդոնոսոր: - 453. Եւ ի փայտի *մեռաւ*: - 454. Զի որ մարդացաւ՝ իրաւացի՛ էր *մեռանիլ*: - 458. Տասներորդ՝ արդարութիւն է ի *մեռանիլն* մեր. և ողորմութիւնն առհասարակ յարութեանն: - 458. Եւ ելի *մեռաւ* անորդի որ էր յազգէն նաթանայ: - 460. Զօրութիւնն երկնից՝ տկարանայ. և կեանքն ամենեցուն *մեռանի*: - 470. Զայս որպէս ծեռին գիր ունէր սատանայ, և նովաւ չարչարէր զմարդիկ՝ թէ աստուած ասաց մի ուտել և դու կերեր և *մեռար*. իմ ի՞նչ մեղք է: - 481. Արդ զգիրն ադամայ պարտուց՝ տէրն որդի եղև նմա և անմեղ մահուամբն տարածեալ զձեռս ի խաչին պատառեաց ասելով, նա մեղաւ և *մեռաւ*. ես զինչ մեղայ. դո՛ւ ես պատճառն: - 482. Վասն ստոյն *մեռանի* ճշմարտութիւնն: - 491. Վասն մեռելոյ *մեռանի* կեանքն: - 491. Վասն է՞ր կամեցաւ ի փայտի բարձրանալ և *մեռանիլ*: - 491. Նա՛խ՝ *մեռանիլն*. և անմեղ *մեռանիլն*. և կամաւ *մեռանիլն*: - 492. Զի ըստ այնմ որ կամաւ *մեռաւ*՝ դատապարտեաց զմահ: - 492. Գիտել պա՛րտ է, զի առ հասարակ մահն, հարկաւոր կիրք է մարդկայինս բնութեան. զի ամենայն որ ծնանի՝ *մեռանի*: - 495. Յայտնի՛ է ամենեցուն և առանց երկբայութեան՝ զի քրիստոս *մեռաւ* ըստ գրոց. և մահուամբ եբարձ զմահ և զապականութիւն: - 498. Երկոտասաներորդ՝ յա՛յտ է յերից իրաց թէ ապականացու ասելն՝ ակնարկէ՛ ի յապագայն իբր թէ ապականելի՛ է. որպէս ասեմք մահկանացու և չարչարելի. և ահա չարչարեցաւ և *մեռաւ*: - 499. Նա՛խ՝ զի ցուցցէ վասն որոյ մարդ եղև և *մեռաւ* զի ազատեսցէ զհոգիսն: - 503. Հինգերորդ՝ ադամ առաջին յանցաւորն էր ի ներքին դժոխս. զի ա՛յն է մահու *մեռանիլն*. այլ արդ եթէ քրիստոս ո՛չ գնաց ի ներքին դժոխքն, ո՛չ ազատեաց զադամ: - 506. Հինգերորդ՝ մահու մահն էր դժոխքն. զի մահ մարմնոյն՝ ապականութիւնն է, և մահ հոգւոյն՝ դժոխքն. ըստ որում վճիռ հատաւ ադամայ մահու *մեռանիլ*: - 506. Այլ ա՛րդ՝ տէրն մահուամբ զմահ *մեռոյց* որ է՛ դժոխքն այժմ. և յարութեամբն եբարձ զապականութիւն մարմնոյ ի հանդերձեալն. ապա ուրեմն աւերեաց զդժոխս: - 506. Չորրորդ՝ որպէս ադամաւ առ հասարակ *մեռան* արդարք և մեղաւորք: - 507. Հինգերորդ՝ որպէս մեղքն զամենեսին *մեռոյց*, և շնորհքն առաւել զամենեսին կեցոյց որ գերազօ՛րն է ի վերայ մեղաց: - 507. Երկրորդ՝ զի փոխեալ է որպիսութիւն մարդոյն. զի ո՛չ կարէ *մեռանիլ*. նոյնպէս և ո՛չ կարէ արդարանալ ըստ ինքեան. նաև ո՛չ մեղանչել: - 508. Զի թէպէտ *մեռանին* թէ իշխանն և թէ իշխեցեալն, իշխանութիւնն ո՛չ խափանի: - 538. Եւ տե՛ս, զի սիմէի որքան յամեաց ի քաղաքն ըստ հրամանի սողոմոնի ո՛չ *մեռաւ* զերիս ամս: - 540. Եւ որպէս օձ յայգւոյ ծաղկէն *մեռանի*, նոյնպէս նախանձոտն սատակի ի տեսանել զբարի ընկերին: - 569. Եւ այսու նախաստեղծքն մահու *մեռան*. և վասն այս մեղացն որ մեք ևս *մեռանիմք*...: - 570. Բայց գիտելի է, զի գործ մկրտութեանն է սրբել զհոգիս յամենայն մեղաց զոր ունիցի. թէ բնական թէ ներգործական և ի պատժոց մեղացն. զի թէ նոր մկրտեալն *մեռանի*, առ ժամայն թռչի ի կեանս յաւիտենականս: - 590. Երրորդ՝ զի որ մկրտի՝ ի մահն քրիստոսի մկրտի. և քրիստոս միանգամ *մեռաւ*. և թէ ոք դարձեալ մկրտէ՝ անձանց ի խաչ հանէ զորդին աստուծոյ և դարձեալ խայտառակէ որպէս առաքեալն: - 590. Զզաւակս այլազգեաց մկրտել պարտ է. զի թէ *մեռանի* ազատեալ է ի սկզբնական մեղաց և ի պատժոց դժոխոց: - 591. Թէ ամենեքեան յադամայ *մեռան*, զիա՞րդ ծնանին կենդանիք: - 592. Թէ մկրտութիւնն ազատէ՛ ի պատժոց, վասն է՞ր *մեռանի* մկրտեալն: - 592. Եւ դարձեալ՝ ինքն քրիստոս նախ *մեռաւ* մարմնով, և ապա կենդանացաւ յետ մկրտութեանն: - 592. Նոյնպէս և մեք նախ *մեռանիմք* մարմնով. և ապա կենդանանամք ի յարութեանն: - 592. Թէ յղի կին մկրտի՝ օգո՞ւտ է այն տղային թէ յարգանդ մօրն *մեռանի*: - 592. ...և բազումք անհաղորդ *մեռանին* և զրկին ի քրիստոսէ: - 600. Եւ այս յորժամ *մեռանի*: - 604. Այն է՝

յորժամ մարդն *մեռանի* աշխարհի. մտանելով ի կրօնաւորութիւն: - 610. Իսկ այժմ ի մէջ քրիստոնէից` ի *մեռանիլ* միոյն` միւսն ևս ածեն. - 613. Նոյնպէս մարդս ի մանկութեանն անմեղ է, և ի *մեռանիլն* մոռանայ զաշխարհս...: - 630. Զի թէ մանկութիւնն է և թէ *մեռանիլն*, երկիւղի ժամանակ է. որպէս ծառայ ի տնէ: - 631. Թէպէտ *մեռար* մարմնով և եդար ի գերեզմանի` սուրբ և անմահ և անապական ես: - 632. և ապա *մեռանի* և բաժանի ի հոգւոյն. - 667. Զի յորժամ առաքինութեամբ ախտ մարմնոյն *մեռանի*` զօրանայ հոգին, - 668. Զի՞նչ է ոմանք յերկար ոգէվարին, և ոմանք յանկարծակի *մեռանին*: - 668. ...զի չարութեամբ կեցեալ ոգին` չարութեամբ և *մեռանի*: - 669. Դարձեալ` ցուցանէ` իբր թէ սիրելոյն որ *մեռաւ*` կցորդիմք և չարչարեմք զմարմինս. մերկանալով, ի սով և ի ծարաւ, ի մուրն և ի հող որպէս նա ի գերեզմանի եղև: - 670. Զի այժմ կարե՛մք *մեռանիլ*...: - 675. ...և յետ յարութեանն ո՛չ կարեմք *մեռանիլ* և յառնել...: - 675. զի մեղօք *մեռանի* հոգին ի դժոխս. որպէս և մարմինն...: - 680. Եւ զերծեալ իսահակ և խոյն զենեալ. զի հոգին զերծանի ի տանջանացն և մարմինն *մեռանի*: - 682. Իսկ թէ անզեղջ կամօք և առանց խոստովանութեան ի մեղս *մեռան*, ո՛չ է օգուտ նոցա. թէպէտ մկրտեալ իցեն և հաւատացեալ. - 683. ...և ասասցեն` թէպէտ *մեռաւ* իշխանն մեր, սակայն մեք ունիմք անհոգութիւն և խաղաղութիւն: - 709. Նա՛խ` զի կարէ՛ որ յառնել միանգամ և դարձեալ *մեռանի*...: - 716. ...որպէս վեց մեռեալքն որք յարեան նախքան զքրիստոս. և յարութիւնս այս անկատար է. զի դարձեալ *մեռան*: - 716. Երկրորդ` է՛ յարութիւն զի յառնէ ոք միանգամ և այլ ո՛չ ևս *մեռանի*. և յարութիւնս այս կատարեալ է: - 716. ...որպէս ասէ պօղոս ի կորնթացւոցն «գիտեմք եթէ քրիստոս յարուցեալ է ի մեռելոց. այսուհետև ո՛չ *մեռանի* և մահ նմա ոչ ևս տիրէ»: - 716. զի ննջեցելոցն միայն մին գործ է. այսինքն յարութիւնն. իսկ կենդանեացն մահն և յարութիւնն. զի նախ *մեռանին* ի նոյն կէտն և ապա՛ յառնեն: - 717. այլ *մեռանին* և իսկոյն լինի յարութիւն նոցա. յորում ո՛չ մարմինքն ի յերկիր անկանին և ո՛չ լուծանին: - 717. Նմանապէս և մարմին մարդոյ առ հասարակ *մեռանին* և ի հող լուծանին և յայլ տարերս. և յորժամ յառնեն` ո՛չ ունին ի հասարակ տարրէ ընդ ինքեանս. և այս մարմին ի յայն մարմնոյ ոչ ինչ ունի խառնումն: - 719-720. Եւ դարձեալ ոմանք հերձուածօղք ասացին թէ` այս մարմինս ո՛չ յառնէ և ո՛չ այս մարդ որ *մեռանի.* այլ փոխանակ նորա նոր մարդ յառնէ: - 720. Նա՛խ` զի որպէս նախ սերմանի և ապա բուսանի. այսպէս և մարդն նախ *մեռանի* և ապա՛ կենդանանայ...: - 720. Եւ երևի որպէս բլուր մեծամարմինք նոցա յաչս իւրեանց. սև և աղտեղի և չարչարելի. զի կրեն անչափ չարչարանս և ցանկան մահու և ո՛չ *մեռանին*. - 723. Այլ և նոքա որ յարգանդի մօրն *մեռանին* թէ առին զբանական հոգին: - 724. Այլ արդ` երեխայքն որ յառաջ քան զմկրտիլն *մեռանին*, վասն ադամայ մեղացն պատժին: - 724. Եւ որք մկրտեալ *մեռանին*, առնուն վարձ ի խորհրդոյ եկեղեցւոյ և ի չարչարանացն քրիստոսի յոր մկրտեցան: - 724. ...այսինքն ի քթթելական *մեռանին* և յառնեն. զնոսա` և զյառաջագոյն մեռեալսն դատէ՛: - 740. Վասն իններորդին, որք աստ իւրաքանչիւր մեղօք գոյին շաղախեալք. արդարապէս ունին զիւրաքանչիւր անդամս կապանօք կաշկանդեալս. և ցանկան *մեռանիլ* և փախիցէ մահ ի նոցանէ: - 753. Սա՛ է ջուրն յաղեալ. որ զդառնութիւն ջուրցն այնոցիկ որք գտանին ի *մեռայն*` քաղցրացոյց: - 756. Ուստի ասացաւ թէ մահու *մեռցիս*. ոչ սոսկ. այլ զկրկնակի նշանակելով մահ. այսինքն *զմեռանիլն* մարմնով և զպատժիլն հոգւով: - 776. Եւ այսպէս պատժոյ նորին հաղորդեալ մահու *մեռանելոյն* հասարակ ամենեցուն որպէս ասացաւ: - 776. Չորրորդ, զի որպէս ադամաւ ամենեքին *մեռան* արդարք և մեղաւորք. այսպէս և քրիստոսիւ ամենեքին կենդանացան. այսինքն ազատեցան: - 777

**ՄԵՌԵԱԼ +** Եւ թէ էր այսպէս` հետևէր ապա հօր զի արարեալ իցէ ա՛յլ աշխարհ. և հանդերձեալ. և շրջեալ յաշխարհի. սրբեալ զախտաժէտս. *մեռեալս* յարուցեալ. և ի վերայ ծովու գնացեալ: - 45. Ապա թէ ո՛չ` ընդէ՞ր զանմարմինն ընդ մարմնականացս իմանաս, և ընդ *մեռեալս* զկենդանին խնդրես ըստ եսայեայ: - 53. Ապա ուրեմն մի աստուած է և մի որդի հաստիչն ամենայնի և անդրանիկն *մեռելոց*: - 73. Ապա ուրեմն չարչարեալ և *մեռեալ* մարդն է որդի աստուծոյ: - 74. Նմանապէս ասի մարմնով չարչարեալ. և մարմնով *մեռեալ*. և յարուցեալ. և համբարձեալ: - 79. Այլ ո՛չ ասի մարդով չարչարեալ. և մարդով *մեռեալ*. կամ յարուցեալ. կամ համբարձեալ: - 79. Եւ *մեռեալ* ի խաչին զանձն միայն ասէք. որպէս երգէք յերեք սրբեանն ձեր, քրիստոս որ խաչեցար ողորմե՛ա մեզ: - 89. Եթէ զաստուածային անձն և զնորին բնութիւնն ասէք մի քրիստոս, դեռևս կայք յառաջ ասացեալ տարակուսանսդ. զի զաստուածային անձն և զբնութիւնն ասէք չարչարեալ և *մեռեալ*. զի քրիստոս խաչեցաւ և մեռաւ ըստ գրոց: - 89. Մեհեկի. զի տունկք և բոյսք որպէս *զմեռեալ* զլինին եղեմնապատ և ձիւնաթաղ. մէհէկի. այսինքն ածի: - 201. Եւ յա՛յտ է ի *մեռեալ* մարդն: - 234. Եւ նւազեալ յայսցանէ գոյնն` մնայ պատկեր ի քանակէ և ի ձևոյ և ի տեղւոյ երևեալ. որպէս յա՛յտ է ի *մեռեալ* մարդն: -

236. Չորրորդ՝ զի ո՛չ է այն մեռելութիւն միայն՝ որ բանականն կամ շունչն պակասի. այլ և որ տնկականն պակասի. որպէս քար. ա՛յն է իսկապէս *մեռեալ*: - 256. Իսկ **ժ**երրորդ՝ յորում ամուսնութիւնն մխիթարութիւն տուաւ *մեռելոյն*...: - 280. Իսկ մաշկն որ է՛ մորթ *մեռելոյ*, նշանակէ՛ նախ զսուգ և զտրտմութիւն վասն մեղաց: - 281. Եւ թէ՝ ի յարութեանն ո՛չ յառնեն *մեռեալք*: - 289. Արդ որպէս հաւատով իմանամք հաստատեալ զյաւիտեանս որպէս ասէ առաքեալն. և նովին հաւատով իմանամք զկատարած կենցաղոյս և զյարութիւն *մեռելոց* և զդատաստան հատուցմանն: - 292. Վեցերորդ՝ սկայքն անխտիր ուտէին թէ *մեռեալ* և թէ հեղձուցեալ. վասն որոյ զի որոշեսցէ ի նոցանէ՝ ասէ արեամբ շնչոյ մի՛ ուտիցէք: - 295. Եւ դարձեալ՝ այլազգին զհոգին իւր սպանեալ է մեղօք. և *մեռելոյ* զենեալն ո՛չ ուտի...: - 296. Եօթն**ժ**, որպէս իսահակ արծակեցաւ յետ երից աւուրց, զի ի կամս հօրն յօրէ յայնմանէ էր *մեռեալ*՝ ուստի սկիզբն եղև ճանապարհին: - 306. Եւ տէր մեր մարմնով *մեռեալ*, միշտ կենդանի է աստուածութեամբն: - 313. Նոյնպէս և քրիստոս եկն առ եղբարս իւր որ էին որդիք դաւթի և աբրահամու և առաջնորդք ժողովրդեանն. և յուդա վաճառեց զնա. և տէր եղև կենդանեաց և *մեռելոց* և կերակրիչ. զի ազատեաց զհոգիսն ի սովոյ դժոխոցն: - 313. Զի *մեռեալն* մարմնով կենդանի էր աստուածութեամբն: - 316. Ուստի յա՛յտ է զի բաժանեցաւ հոգին, այլ աստուածութիւնն անբաժանելի մնաց ի բաժանեալ հոգւոյն և ի *մեռեալ* մարմնոյն: - 319. ...**զդ**՝ անդամալոյծ միակողմանց բժշկութիւն. **էդ**՝ բորոտից սրբութիւն. **ըդ**՝ բոլոր մարմնոյն հիւանդաց և ջերմացելոց առողջութիւն. **թդ**՝ զդևսն հանէր. **ժդ**՝ *զմեռեալսն* յարուցանէր: - *328.* Նա՛ մահ անդրանկացն ածէր. և քրիստոս *զմեռեալս* յարուցանէր: - 328. Երրորդ՝ զի հաւատ *մեռելոյն* յանդիմանէր զթերեհաւատ կենդանիսն որք սրտիւք յեգիպտոս դառնային: - 338. Զորօրինակ թագաւոր ոք յորժամ լսէ՛ զգոյժ որդւոյ իւրոյ *մեռելոյ*, խորտակէ՛ զթագն, և զամենայն ինչ որ վասն նորա՛ է: - 349-350. Երրորդ՝ զի անարժանք էին *մեռեալքն* հոգւով՝ կենդանի բանին աստուծոյ տեսանել ա՛յն աչօքն որ տեսին զորթն. և համբուրել շրթամբք: - 350. Հինգերորդ՝ ի *մեռեալ* կենդանւոյ է մեղուն. որպէս ասեն ի մեղուշ արջառաց: - 356. Երկրորդ՝ ցուցանէ զանմեղ մահն քրիստոսի վասն մեր *մեռեալ*. զոր մատամբ ցուցանէին խաչօղքն թէ խաչեսցի դա՛: - 359. Զի նորահաս պտուղ եղև յարութեամբն *մեռելոց*, և նստելով ընդ աջմէ հօր: - 361. Այլ և ունիմք զմարմնաւոր պատարագս զօրինակին. զենմունք վասն կենդանեաց և *մեռելոց*: - 362. Երկրորդ՝ զենլին. զի լիցի կենդանի. զի *մեռեալն* և անկենդանն որպէս քար՝ ո՛չ զենի: - 365. Վեցերորդ՝ դիտաւորութիւնն խնդրի. յաղագս ո՞յր իցէ զենումն. կենդանեա՞ց թէ *մեռելոց*. վասն աստուծո՞յ թէ վասն մարդկան: - 365. Նա՛խ՝ զի իցէ կենդանի յորմէ ելցէ արիւն. իսկ *մեռեալն* կամ անշունչ քար ո՛չ ունի արիւն: - 366. Զենեալ հաւն, մարմինն *մեռեալ* վասն մեղաց: - 368. Իսկ կրկին հաւն *մեռեալ* և կենդանի. քրիստոս *մեռեալ* մարմնովն, և կենդանի աստուածութեամբն: - 368. Դարձեալ ասեն, մարմնական մեղքն փոխեցաւ. որպէս ի *մեռեալ* մերձիլն: - 369. Եւ արիւնն, զմեղս մեր բարձեալ յինքեան և տարեալ ի դաշտն առ հայր յերկինս. զի որպէս *մեռեալ* մարմնովն քաւեաց զմեղս. նոյնպէս և անմահ աստուածութեամբն կենդանացոյց և յերկինս եհան: - 369. Չորրորդ՝ բուրվառն աղօթք *մեռելոց*. և գաւազանն խրատ կենդանեաց: - 382. Զի գողացեալ մեղքն միայն խոստովանելով ոչ քաւի. այլ հատուցանել պարտ է զգողօնքն. կամ ի տէրն, կամ յազգականս նորա. կամ ի քահանայն. զի միջնո՛րդ է *մեռելոց* և կենդանեաց: - 384. Եօթներորդ՝ օձն *մեռեալ* սպանանէր զօձսն. և զհարեալսն կեցուցանէր. և տէրն մեր *մեռեալ* մարմնովն զմեղս մեռուցանէր, և կենդանի աստուածութեամբն զմարդիկ կենագործէր: - 387. Վհուկն ա՛յն է, որ ի վիհաց և յանդնդոց *մեռեալս* կերպարանեն. դևք ի կերպս մարդկան երևին. զոր դևակոչ ասեն և հազիմաթ. և Նշանագէտ, որ ի գերեզմանս ննջէ և նշանաւոր մարդ կերպարանէ. որպէս զսամուէլ սաւուղայ երևեցոյց հարցուկ կինն: - 388. Չորրորդ՝ նշան թէ՝ զոր ասէ և լինի. և տէր մեր զգործս աստուծոյ գործէր առ կաղս և կոյրս և հիւանդս և *մեռեալս*. զոր ասէր բանիւ՝ կատարէր գործով: - 399. Նա՛խ՝ թէ *մեռեալ* իցէ եղբայրն: - 402. Չորրորդ՝ այժմ տեսանեն աչօք զեկեղեցի սուրբ որ զկախեալ ի նոցանէ՝ աստուած հաւատայ զնոյն *մեռեալ* և կենդանի, և ո՛չ հաւատան: - 405. Երկրորդ՝ զներքինս օրհնեմք, և աստուծոյ բարութեանցն կցորդեմք. ողորմութեան, պարգևաց, կամ այլ ինչ շնորհաց. և այսու եղանակաւ օրհնեմք զքահանայս. զժողովուրդս. *զմեռեալս* և զկենդանիս: - 406. Նա՛խ՝ զի մի՛ արհամարհեսցի աստուածն *մեռեալ*: - 411. Որ ի կաւոյ աչք ստեղծ. և *մեռեալս* յարոյց. և զանշունչ նկանակս աճեցոյց. զոր ոչ արար մովսէս: - 411. Կամ զնոյն *մեռեալ* մարմինն ի խաչին. և զնոյն կենդանի գոլ աստուածութեամբն: - 423. Վհուկք և դևք ո՛չ զառաջիկայն գիտեն և ո՛չ *մեռեալս* յարուցանեն: - 428. Ա՛րդ՝ յորժամ կենդանի էր դառնութեամբ և սգով իջոյց ի գերեզման. այժմ *մեռելո՛յն* երկրպագէ: - 429. Ա՛րդ՝ թէ ճշմարիտ յարոյց կինն զսամուէլ. սաւուղ ո՛չ երկնչէր ի մահու. զի և զնա՛ յարուցանէր. և թէ երկեաւ, ապա սուտ էր կենդանութիւն *մեռելոյն*: - 429. Ապա յայսմ ամենայն է յա՛յտ է՝ զի

ոչ ինչ գիտեն զառաջիկայն դևք. և ո՛չ իմանան զներկայական խորհուրդս. և ո՛չ յառնեն *մեռեալք*. այլ սուտ կերպարանին: - 430. Չորրորդ՝ թուեաց զնոսա, զի յորժամ մարդամահն լինի, գիտասցեն զորքանութիւն *մեռելոցն*, և զծանրութիւն մեղացն: - 434. Քսանևք, հարեալ որմն վկայեաց թէ սպանօ՛ղ է դաւթի սաւուղ. և չարչարեալ և *մեռեալ* մարմինն վկայէ՛ թէ աստուածասպա՛նք են հրէայքն: - 436. Դաւիթ երիցս սուգ էառ *մեռելոյ*. և տէրն ի վերայ եէմի և ի գերեզմանն ղազարու և մերձ ի խաչն: - 438. Ցուպն եղիսէի օրինակ էր խաչին. վասն է՞ր ոչ յարոյց *զմեռեալն*: - 445. Զի՞նչ է կծկիլին. և է անգամ յօրանչելն ի վերայ *մեռեալ* պատանոյն: - 446. Իսկ ի մահուն որ յարոյց *զմեռեալն* յորժամ մերձեցաւ ի յոսկերսն եղիսէի, ի տիպ մահուն քրիստոսի որ մահուամբն մեզ կեանք և յարութիւն շնորհեաց: - 446. Երբեմն արդարութիւնն յայտնի՝ և ողորմութիւնն ծածկեալ. որպէս պատիժն մանկանց առանց մկրտութեան *մեռելոց*, և յերկրորդ գալուստն քրիստոսի: - 459. Եօթներորդ *մեռելոց* դարն: - 467. Չորրորդ՝ օծումն զմռոյ. որպէս *մեռելոց*: - 474. Երրորդ՝ որպէս բաժանեալ ի միմեանց՝ ո՛չ գոյ մարդ. այլ *մեռեալ* մարմին կամ մերկ հոգի: - 477. Նոյնպէս ասի այս անուն մարդ չարչարեալ և *մեռեալ*. որ և յատուկ մարմնո՛յ են սոքա: - 478. Իսկ տէրն մեր էր անդրանիկ ի հօրէ և անդրանիկ ի մօրէ. և անդրանիկ շնորհաց և արդարութեան. և անդրանիկ յարութեան *մեռելոց*...: - 486. Վասն *մեռելոյ* մեռանի կեանքն: - 491. Ութերորդ՝ նշանակէ՛ զչորս տարբերութիւն փրկելոցս նովաւ. այսինքն երկնաւորք և երկրաւորք, կենդանիք և *մեռեալք*: - 493. Եւ փայտն որ քաղցրացոյց զջուրն ի *մեռայն*. և ի վիմէն ջուր բղխեցոյց: - 494. Այլ արդ՝ *մեռեալքն* ո՛չ են ի դէմ յանդիման տեսութեան. վասն որոյ պիտո՛յ էր նոցա հաւատ: - 507. Եւ դարձեալ յոյս գոյ ի *մեռեալսն*...: - 507. Եւ որպէս յինն ժամու ուրբաթուն լոյս ծագեաց հոգւոցն ի դժոխս, նոյնպէս և յինն ժամու շաբաթուն լոյս ծագէ զճառագայթս իւր արեգակն արդարութեան քրիստոս. մինչ յառաւօտուն բոլորապէս տեսանի ինքն յարուցեալ ի *մեռելոց*: - 509. Այլ *մեռեալն* և գազանաբեկն ո՛չ: - 511. Յորո՞ւմ ժամու յարեաւ քրիստոս. և քանի՞ ժամ եկաց *մեռեալ*: - 512. Եւ յորում ժամու ել մովսէս յեգիպտոսէ և եհան զժողովուրդն, ի նոյն ժամն յարեաւ քրիստոս ի *մեռելոց* և եհան ազատեաց զհոգիսն ի հրահալոց չարութենէ դժոխոցն և ի բռնութեանց իմանալի փարաւոնին: - 512. և ո՛չ մի հոգի եթող ի դժոխս. այլ զամենայն ազատեաց յարուցեալ ի *մեռելոց*. և բաշխեաց պարգևս որդւոց մարդկան: - 514. և յառաւօտին տեսին զայն ամենայն մարմին *մեռեա*...: - 514. Իսկ թէ քանի՞ ժամս եկաց *մեռեալ*: - 515. Եօթներորդ՝ *մեռեալ* մարմին ո՛չ առնու և տայ զօդ: - 523. Երեսունևք, Ոչխար ո՛չ մտանէ յեկեղեցին. և *մեռեալ* ո՛չ թաղեմք յեկեղեցին: - 527. Զորօրինակ՝ *մեռեալ* մարդ ո՛չ ասի պարզաբար մարդ, նոյնպէս և այս. որպէս ցուցաւ ի թագաւորութեանցն իզ գլուխն. ժբ համարն: - 536. Եւ զպղոքոնոս աշակերտաց բազմաց վարդապետ. և ծեր, որ *զմեռեալս* յարուցանէր սքանչելեօք: - 544. Կենդանի *մեռեալ*: - 570. Վեցերորդ վասն յարութեանն ի *մեռելոց*: - 572. Տասներորդ վասն մարմնոց ի *մեռելոց* յարութեան: - 572. Վեցերորդ՝ «յարութիւն *մեռելոց*» ասաց թադէոս: - 573. Երրորդն՝ որդին աստուծոյ վասն մեր չարչարեալ և *մեռեալ*: - 573. Եօթներորդն՝ դատել զկենդանիս և *զմեռեալս*. որ է՛ զբարիս և զչարս: - 573. ...և է՝ թաղել *զմեռեալս*: - 585. ...և պատարագ և խաչ օրհնեմք. եթէ կենդանեաց և եթէ *մեռելոց*: - 605. Եւ խաչիւ չարչարեալ և յարուցեալ ի *մեռելոց*. և առ աշակերտսն մտեալ եպիսկոպոս եցոյց զինքն: - 607. Նոյն պատճառաւ *զմեռեալս* յեկեղեցին ո՛չ թաղեմք: - 617. Նա՛խ՝ որպէս *զմեռեալս* հոգւով՝ արտաքսեմք յեկեղեցւոյ. նոյնպէս և *զմեռեալն* մարմնով: - 617. Երկրորդ՝ եկեղեցի՝ դրախտին է օրինակ. որ *զմեռեալսն* մեղօք արտաքսեաց: - 617. Նաև յարքայութենէն արտաքսին ամենայն մեղօք *մեռեալք*: - 617. Զի՞նչ է որ յըմպելն զգինին՝ թափեն յանուն *մեռելին*: - 656. Հեթանոսաց սովորութիւն էր որ զինչս *մեռելոյն* ընդ նմա՛ դնէին ի գերեզմանն...: - 656. ...զի առաջին աղօթք յամենայն կարգադրութիւնս՝ գոհանամք պարտ է դնել. բայց առաւել ի կնքելն՝ և ի թաղել *մեռելոյն*: - 659. Իններորդ, Վասն է օրէիցն. և *մեռելոցն*. և գերեզման օրհնելն. և տուն օրհնել: - 660. Դարձեալ՝ նշանակէ՛ յետ *մեռելոյն* զփոխումն ուրախութեան մեր ի սուգ և ի մերկութիւն. և ի սև հանդերձս. ի խաւար տունս և այլն: - 670. Է և ա՛յլ իմն տեսութիւն վերագոյն. զի արարողութիւն սըգոյս ցուցանէ զառաջին անկումն մեր ի լուսեղէն կենացն ի խաւար աշխարհ տրտմութեամբ և ցաւօք մահու *մեռեալք* և ի հող դարձեալք. և այս ի ճաշակմանէ պտղոյն: - 670. ...վասն այն հող ի գլուխ արկանէ մարդ ի ժամ սգոյ. այլ և ի վերայ *մեռելոյն*: - 670. Նոյնպէս և սուգն ի վերայ *մեռելոյ* զնոյնն նշանակէ: - 670. ապտակեալ. և նախատեալ. և բևեռեալ. և լուսաւորացն խաւարեալ. և այլն. զոր մեք ի վերայ *մեռելոյն* նշանակեմք: - 670-671. Զի՞նչ է որ առ հասարակ ամենեքեան. այր և կին՝ ծեր և տղայ ընդ *մեռելոյն* ընթանան ի գերեզմանն: - 675. Իսկ չափաւոր արտասուել պարտ է ամենայն մարդոյ ի տեսանել *զմեռեալն*...: - 676. Վասն է՞ր զոտքն յառաջ տանիմք *մեռելոյն*: - 676. Իսկ ի վեր կոյս ունել զերեսս *մեռելոյն*...: - 676. Վասն է՞ր թաղեմք *զմեռեալս*: - 677. Չորրորդ, զի մի՛ լիցին փողոցք և տունք մեր

գերեզմանատուն *մեռելոց*...: - 677. ...զի կենդանիք բնակին ի վերայ յերկրի, և *մեռեալք* ի ներքոյ երկրի: - 677. Ութերորդ, զի մի՛ դատարկացին ի մարմնական գործոց միշտ տեսանել *զմեռեալս*: - 677. Իններորդ, զի մի՛ պաշտեսցեն զդիս *մեռեալ* սիրելեաց իւրեանց...: - 677. ...ցուցանէ թէ անշարժ է *մեռեալ* մարմինն ամենևին ի կենդանական շարժմանէ: - 678. Իսկ շիրիմն՝ յիշատակ այնոցիկ ուր զազգին *մեռեալքն* դնէին: - 678. Դարձեալ՝ նշանակէ զքանակ հասակի մարմնոյն *մեռելոյ*: - 679. Իսկ տապանաքարն, Նա՛խ՝ զի մի՛ գործեսցի երկիրն այն յայլ ինչ գործ, կամ քակտեսցի վասն այլ *մեռելոյ*: - 679. Երկրորդ, զի քարն անպտուղ՝ ցուցանէ զանգործութիւն *մեռելոյն*: - 679. Երրորդ, և որպէս այն քար անպիտան է գործոյ, նոյնպէս և *մեռեալն* անպիտան է աշխարհի: - 679. Չորրորդ, անշա՛րժ է քարն, ցուցանէ զանշարժութիւն *մեռելոյն*...: - 679. Դարձեալ՝ երէկ վասն *մեռելոյն* կսկծոյ կոծ մեծ արարաք. և այն դժուարութիւն էր աստուծոյ...: - 680. ...նոյնպէս և մեք զհոգևոր դեղն կենաց յերեկեան աւուրն մատուցաք *մեռելոյն*...: - 680. ...զի հաւատք առանց գործոց *մեռեալ* են: - 683. Զի՞նչ է զատկի երկուշաբաթի օրն *մեռելոց* առնելն: - 684. Զի բշաբաթին *մեռելո՛ց* է և ո՛չ գերեզմանօրհնէք: - 684. Եւ գիտելի է, զի հիմն և սկիզբն անդ եկեղեցւոյն եղև տէր մեր յիսուս քրիստոս յարուցեալ ի *մեռելոց*. և ընդ ինքեան հանեալ և վերացուցեալ զհոգիս սրբոց նահապետաց և մարգարէից: - 688. ...այսինքն զմեղօք *մեռեալ* հոգիսն ի դատաստան ըստ գործոց: - 689. Իսկ կոչելն զյառնելն ի *մեռելոց* ցուցանէ. հոգւոյն և մարմնոյն միաւորեալ: - 696. Ա՛րդ՝ եթէ *մեռեալք* ո՛չ խոստովանին և ո՛չ օրհնեն. ապա և ո՛չ ապաշխարեն և ո՛չ քաւեն ըստ ինքեան զմեղս: - 699. ...իսկ *մեռեալ* և անդ գնացեալ արդարութիւնն է յայտնի և ոչ ողորմութիւնն...: - 700. Դարձեալ ասեմք, եթէ զպատիժ *մեռելոյն* զոր նա ո՛չ կարէ քաւել...: - 701. մինչ խօսիլ տայ բազնեաց, և լերանց գնալ, և ծառոց ծաղկիլ և չորանալ. և *մեռելոց* յառնել. և հրոյ իջանել յերկնից. և չար հոգւովն խօսիլ տայ այլ և այլ լեզուս: - 708. Եւ կախարդութեամբ երևեցուցէ զինքն *մեռեալ* և երեքօրեայ յարուցեալ. և զայս ամենայն արասցէ դիւական երևմամբ և կախարդական արուեստիւք: - 708. Այս զյարութիւնն ասէ ի ձեռաց գազանաց խնդրելն. զի յառնեն մարմինք որ *մեռեալ* են ի ձեռն գազանաց: - 715. Եւ աստուած ո՛չ է *մեռելոց* այլ կենդանեաց. որոց հոգիքն ի ձեռս նորա կենդանի են. և մարմինքն ի ձեռս նորա կենդանի լինելո՛ց են: - 715....որպէս վեց *մեռեալքն* որք յարեան նախքան զքրիստոս. և յարութիւնս այս անկատար է. զի դարձեալ մեռան: - 716. Դարձեալ՝ կենդանիքն ո՛չ ժամանեն ննջեցելոցն, այսինքն նոցա որ *մեռեալ* են և ի հող փտեալ և փոշիացեալ. - 717. Ո՞րպիսի մարմնով յառնեն *մեռեալք*: - 720. Գիտելի՛ է, զի ոմանք հերձուածօղք մոլորեցան վասն յարութեան *մեռելոց* և ասացին թէ մարմինն ո՛չ բաղկանայ ի չորից տարերց. այլ լինի պարզ: - 720. ...նմանապէս և մերկ մարմին *մեռելոյ* ո՛չ յառնէ մերկ, այլ փառօք. որպէս ցուցանի յառաջիկայդ: - 720. ...և մարմինն *մեռեալ* առաւել նոյն ինքն յառնէ. այլ ո՛չ թէ նմանն մեզ ըստ ազգի մերում...: - 720. ...և մարմինք *մեռեալք* որ յադամայ հետէ՝ յանկարծակի յական թօթափել ի փող յետին յարիցեն ասէ առաքեալն: - 721. ...ջրարբիք են հաւատով և յուսով *մեռեալքն*. և հանապազ յեկեղեցի սուրբ յիշատակութիւն նոցա կատարի...: - 721. ...իսկ անյոյս *մեռեալքն* անջրդիք են: - 721. ...նմանապէս և մարմինք *մեռեալք* յերկրի և հոգիք ի կայանս իւրեանց ի միասին կան առհասարակ արդարոց և մեղաւորաց մինչ դատաստանաւն բաժանեսցին օդիքն և այծիք: - 721. Ամենայն մարդ յառնէ՞ ի *մեռելոց* թէ ոչ: - 724. Ապա ուրեմն պա՛րտ է զի ամենայնքն յարիցեն ի *մեռելոց*...: - 724. Դարձեալ՝ երկրորդն ադամ յայս թիւս յարեաւ ի *մեռելոց*. վասն որոյ և մեք ամենեքեան յայնմ թուի յառնեմք...: - 726. Երրորդ՝ քանակաւ հասակին. զի իւրաքանչիւր ոք յիւրն երեսնամեայ յարիցէ. որպէս հարիւրամեան անցեալ և քառասնօրեայ *մեռեալ*. որ լինելոց էր երեսնամեայ, ի նոյն հասակն յառնեն: - 726. Յետ որոյ փող հարկանի և *մեռեալք* յառնեն: - 732. Եւ հրեշտակք զխաչն բարձեալ առաջի երթիցեն. և *զմեռեալս*՝ փողով և ձայնիւ ընդ առաջ նորա զարթուցեն: - 734. Զի՞նչ է ասելն՝ դատել զկենդանիս և *զմեռեալս*: - 740. ...այսինքն ի քթթել ական մեռանին և յառնեն. զնոսա՝ և զյառաջագոյն *մեռեալսն* դատէ՛: - 740. Երկրորդ՝ կենդանի են արդարքն. և *մեռեալ* մեղաւորքն: - 740. Երրորդ՝ կենդանի են դևք. և *մեռեալ*՝ մարդիկ. որս դատէ՛ աստուած և սուրբք ամենայն: - 740. Եւ լուասցէ զբազմաշարաւ զազրացեալ ոսկերս՝ մեղօք *մեռելոյս*: - 773. Որք տեսչութեամբն աստուծոյ՝ ի *մեռելոցն* զառհաւատաչեայն ընկալան յարութեան, թէ զիա՞րդ ոչ ունէին ի մտի զանտի կենացն ծանօթութիւն. պատմել մեզ խնդրի: - 774. Խնամք մարդասիրութեանն աստուծոյ որ զամենայն յամենայնի տընօրինէ՛, արգել զայս. զի մի՛ ունիցին ինչ ի մտի յարուցեալքն ի *մեռելոց*. ապա թէ ոչ, որ ի սկզբանէ բարէատեացն էր և մարդասպան, բազում և զանազան երևոյթս...: - 775. ...մարմնով *մեռելոցն* անթիւ օճիրս ստախօսութեան գործէր...: - 775. Կամ զինչ անհնարին սաստ, եթէ ոք խոտեսցէ զսուրբ հոգւոյն խօսեցեալս ի գիրս սուրբս. ընտրելով զոմն յարուցեալ ի *մեռելոց*...: - 775. Երբեմն ողորմութիւնն ծածկեալ և արդարութիւնն յայտնի. որպէս ի պատիժ մանկանց

առանց մկրտութեան *մեռելոց.* և յերկրորդ գալուստն: - 779. Եւ դարձեալ, ի կատարածի՝ կենդանեաց և *մեռելոց* է խոստովանիլ զոր սանդարամետք կոչէ: - 785. Արդ ծունր կենդանեաց վարձաւո՛ր է. և *մեռելոցն* ո՛չ: - 785. Որպէս և այժմ *մեռելոց* զղջումն և խոստովանիլն անվա՛րձ է ամենևին և ակամայ: - 785. Զի՞նչ է սիւնքն աշխարհիս որ դողային ի յարութեանն քրիստոսի ի *մեռելոց*: - 788

**ՄԵՌԵԼՈՏԻ +** Երրորդ՝ զմաշկեղէն պատմուճանն մերկանալ. այսինքն զխորհուրդս մարմնեղէնս և *զմեռելոտիս*: - 281. Նա՛խ թէ՝ *զմեռելոտի* խորհուրդն հա՛ն ի մտաց քոց: - 331. Հինգերորդ, վասն մեղաց պատարագ, ի *մեռելոտի* կամ ի պիղծ ինչ մերձեցեալ. ոչխարով և թռչնով և նաշիով առանց իւղոյ և խնկոյ քաւէին: - 358

**ՄԵՌԵԼՈՒԹԻՒՆ +** Չորրորդ՝ զի ո՛չ է այն *մեռելութիւն* միայն՝ որ բանականն կամ շունչն պակասի. այլ և որ տնկականն պակասի. որպէս քար. ա՛յն է իսկապէս մեռեալ: - 256. Ապա ուրեմն հիւթն այն, նախ ունի զկեալն որ է՛ ունակութիւն. և ո՛չ զպակասն որ է *մեռելութիւն*: - 256. Այլ մորթ մաշկեղէն ստեղծեաց և զգեցոյց նմա փոխանակ լուսեղէն զարդուն. *զմեռելութիւն* նորա նշանակելով: - 280. Երկրորդ՝ *զմեռելութիւն* մեղաց: - 281. Երրորդ՝ *զմեռելութիւն* ախտից. զի պարտիմք մեռուցանել ի մեզ զմարմնական ախտն: - 281. Նա՛խ՝ զի բորն պիսակ՝ *մեռելութիւն* է մարմնոյ. և մեղքն հոգոյ: - 366. Իսկ յառնելն մեր ի յօրհնութիւն, նշանակէ նախ ի *մեռելութենէ* մեղաց և ի ծառայութենէ յառնելն: - 627. և յա՛յտ է զի *մեռելութիւնն* բնութեանս է պատիժ և ո՛չ մարմնոյն: - 699. Հինգերորդ՝ *զմեռելութիւն* մարմնոյ և զկրթութիւն չարչարանաց նոցա ցուցանէ: - 713

**ՄԵՌՈՆ +** Չորրորդ՝ զի նիւթք եղեն երկնաւոր խորհրդոյն. որպէս ի տնկոց փայտ խաչին. և յայլ բուսոց հաց պատարագին և գինի. և ձէթ *մեռոնի* կազմեցաւ: - 212. **Եւ ի գալն յերկիրս հայոց, ետուն նմա օգնական զիւղն օծման զոր քրիստոս օրհնեալ էր. և զգեղարդն. և այլոց ազգաց չկա՛յ այս պարծանքս. զի մեր *մեռոնս* հանապազ և միշտ զնոյն շնորհ ունի:** - 549. Եւ դնէ զայս քահանայն սուրբ *մեռոնաւն* ի ճակատ նուիրելոյն ասելով այսպէս. ըստ այլազգաց եկեղեցեաց. թէ ի ներքոյ ձևիս այս ես կու նշանեմ զքեզ նշանաւ խաչի...: - 593. Զի՞նչ նշանակէ *մեռոնաւն* սուրբ օծանել: - 593. Եւ ձեռն քահանային է՛ օծեալ և սրբեալ *մեռոնաւն*...: - 605. Ասեմք թէ՝ և զայս ունիմք ծածկապէս. որպէս այն որ ի ջուր աւազանին խաչանման *մեռոնն* խառնի...: - 605. Եւ վասն այն զանազան իւղ ո՛չ ունիմք, բայց միայն *զմեռոնն* սուրբ...: - 605. Այլ ի մեծի **ե** շաբաթին օրհնեմք իւղ, զի մի՛ *մեռոնն* սուրբ ի հասարակաց ոտս մերձեսցի: - 605. Իսկ մարդս եկեղեցի, մկրտի ջրով և դրոշմի սուրբ *մեռոնաւ*...: - 614. Նոյնպէս և մեք ի ճշմարտութիւնս՝ ջրով և գինով և սուրբ *մեռոնաւն* օծանեմք: - 615. Ա՛րդ՝ ջուր և գինին և *մեռոնն* նշանակեն ի մեզ զջուր սրբութեան աւազանին. և *մեռոնն* որով օծաք և դրոշմեցաք. և ապա ճաշակմամբ մեղսաքաւիչ արեանն կատարեցաք: - 615

**ՄԵՌՈՒՑԱՆԵՄ +** Նոյնպէս և առ մեզ՝ որք մրցին և ջանան ընդ դէմ բանսարկուին և *մեռուցանեն* զ**է** գլուխ նորա...: - 152. Երրորդ՝ զմեռելութիւն ախտից. զի պարտիմք *մեռուցանել* ի մեզ զմարմնական ախտն: - 281. Ութերորդ՝ յովսէփ զերկու երազատեսքն զմինն կեցոյց և զմինն *մեռոյց*: - 313. Նա՛խ զի զանդրանիկ որդիսն աստուծոյ տանջեցին և *մեռուցին*. վասն որոյ անդրանիկք նոցա մահացան...: - 334. Եօթներորդ՝ օձն մեռեալ սպանանէր զօձսն. և զիարեալսն կեցուցանէր. և տէրն մեր մեռեալ մարմնովն զմեղս *մեռուցանէր*, և կենդանի աստուածութեամբն զմարդիկ կենագործէր: - 387. Ա՛րդ՝ իմանալի մահ է՝ ի ձեռն առաքինութեան զմարմինն *մեռուցանել* և ի ձեռն չարութեան զհոգին: - 668

**ՄԵՍԵԴԻ +** *Մեսեդին* **բ** տուն. և **բ** տուն ուղղիցին խնկօքն: - 375. Նոյնպէս և առաւօտու երգն, և *մեսեդի* ճաշոյն, և տասանորդ նաշիոյն **ժ** զգայարանաց մարմնոյն ճնշելն: - 375. Եւ զո՛րծ է նոցա ալէլուիայ և *մեսեդի* ասել և սաղմոս: - 608. Եւ *մեսեդի* ճաշոյն և երեկոյեան, չորրորդ մասն դորակի գինւոյն. որպէս ասացաւ ի վերոյ ի **իա** գլուխն **ծբ** համարն: - 629. Եւ ճաշոյն *մեսեդի* **զ** թուով, ի խորհուրդ վեց դարուս: - 629. Եւ այն որ **բ** ձայնիցն մի է *մեսեդին*. զի դարն ադամայ և ենովքայ միապէս բնական օրինօքն վարեին: - 629. Եւ որ նա՛խ է վերջին տունն ի *մեսեդի* կամ կցորդ. այն է զի քրիստոսիւ դարձաք յառաջինն և ի բարձրագոյնսն. ուստի ադամաւ խոնարհեցաք...: - 629

**ՄԵՍԻԱ կմ ՄԵՍԻԱՅ** (տեքստում նաև՝ **ՄԷՍԻԱ) +** Կուրացեալ հրէայքն առարկեն ընդդէմ մեր թէ՝ դեռևս ոչ է եկեալ *մէսիայն*: - 27. Նախ՝ ի բանէն եսայեայ որ ասէ, «եղիցի յաւուրս յետինս յայտնի լեառն տեառն». խօսի վասն գալստեան *մէսիային*: - 27. Ա՛րդ՝ բազում աւուրք անցին յետ *մէսիային* ձերոյ, այսինքն աւելի՛ քան զհազար և չորս հարիւր ամ. ապա և ո՛չ էր նա *մէսիայն*: - 27. Չորրորդ առարկեն, ասէ եսայի վասն ժամանակի գալստեան *մէսիային*, «գայլ ընդ գառին ճարակեսցի. և ինձ առ ուլու մակաղեսցի». - 27. Իսկ ի գալստեան *մէսիային* ձեր առաւել ցրուեցան և կորեան: - 28. Քանզի ասէ թէ՝ ջհուտն թարքմանի խոստովանօղ. քանզի խոստովանօղքն *մեսիային* փրկեսցին: - 28. Եւ այսպէս յա՛յտ է որ *մեսիայն* եկեալ

է: - 28. Զարթիր ի հռօմ, տալով մեզ *զմեսիայն*: - 28. Տասներորդ՝ *Մեսիայն* որ է՛ առաջին և վերջին: - 29. Ըստ լեզուիս մեր՝ օծեալ. ի հոռոմն քրիստոս. և յեբրայեցին *մեսիա* թարգմանի: - 474

**ՄԵՏԱՂՔ +** Որ և մեր նստելով իբր ի *մետաղս* կամաւոր դիպաւոր՝ շահապօնս կոչեցեալ ամրոցի: - 788

**ՄԵՏԱՍԱՆՕՐԵԱՅ +** Զի լուսինն ընդ երեկս երևացաւ և *մետասանօրեայ* ստեղծաւ: - 191. Եւ վասն այն ստեղծաւ *մետասանօրեայ*, զի յաւուր ուրբաթի յորում ադամ ստեղծանիւր, լինէր լուսինն բոլոր և ժդօրեայ: - 191

**ՄԵՏՐԱՊՕԼԻՏ +** Եւ գո՛րծ է նոցա ձեռնադրեալ *զմետրապօլիտսն*. և օրհնել զձէթ կնքոյ: - 607. Երրորդ՝ *Մետրապօլիտք*. որք են մայրաքաղաքացիք. և ունին սըքեմ զնոյն. բայց եմիփորոն գ կրկին: - 607. Եւ գ *մետրապօլիտք* ունին իշխանութիւն ձեռնադրել զարքեպիսկոպոսունս իւրեանց: - 607. Եւ գ ի նոցանէ ձեռնադրեն զիւրեանց *մետրապօլիտն*: - 607

**ՄԵՏՐՈՓԱՆՈՍ** - *Մետրոփանոս* կոստանդնուպօլսի, Աղէքսանդրոս աղէքսանդրու...: - 542

**ՄԵՐԱՅԻՆ +** Որպէս և ոմն ի Պետաց *մերային* ազգաց՝ զիւաւտն դրուատեաց ասելով, Յաւատ ի հօրէ սկսեալ յորդի և ի հոգի վերաբերի: - 769

**ՄԵՐԱՐԻ** - Զի գ էին որդիք Ղեւայ. Գեթսոն. Կահաթ. և *Մերարի*: - 378. *Մերարեայն* ի հիւսիսոյ. և Կահաթուն որ է՛ ցեղն քահանայից ի հարաւոյ: - 378-379. Նա՛խ՝ գ որդիքն ղեւայ գեթսոն, կահաթ, և *մերարի*, յօրինակ նորոյս դ դասուց: - 379. Չորրորդ՝ գեթսոնի ազգն դռնապա՛նք էին. և *մերարեայ* երդմնեցուցիչք ընդ իշխանութեամբն իթամարայ քահանայի. և կահաթու գունդն աւագ պաշտօնեայք: - 379. Եւ ապա ցեղին ղեւայ՝ գաթսոնի և կահաթու և *մերարեայ* զա՛յլ աստիճանքն ետ: - 609. Երրորդն ասեն եթէ՝ բ ազգն գեթսոնի և բ գունդն *մերարեայ*՝ զչորս փոքրիկ աստիճանս ունէին ի խորանն. զպահպանութիւնն մինչ ի ջահընկալն որ զաշտանակն բառնային. և որդիքն կահաթու էին բարձրագոյնք: - 609

**ՄԵՐԹ +** Իսկ երկրաւորք *մերթ* այսպէս և *մերթ* այնպէս. լինին և ո՛չ լինին. որպէս մարդ, ձի, ծառ, և այլն: - 8. Դարձեալ քան զժամանակն ոչ ինչ այլայլի. քանզի *մերթ* ցուրտ է և *մերթ* ջերմն. ամպ և պարզ: - 199

**ՄԵՐԺԵԼ +** Վեցերորդ՝ է՛ պատրուակ մեղացն. զի ոմանք չար գործով ի բաց *մերժեն* յինքեանց զլոյս արեգականն արդարութեան...: - 32. Առարկութիւնս այս յայտնապէս զորդի կամ զհայր ի բա՛ց *մերժէ* յաստուածութենէն. ճարտա՛ր իմա, ո՛չ ասէ զհօրէ ոչ գոլ աստուած. այլ զանձնելութենէն: - 38. Իսկ թէ և նա արտաքուստ ունի զորդիութիւն և զայլսն, գոյ կասկած երբեմն ի բաց *մերժել* զոր էառն: - 66. Իսկ դևք զանհաստատսն մտօք՝ ի ստորևս քարշեն և յերկիր կործանեն զերկրաւորս խորհելով. և ընդ ինքեան ի յատակս դժոխոց *մերժեն*: - 152. Երրորդ՝ *մերժէ*՛ զխաւար: - 196. Եւ զի *մերժի* լոյսն, և տարածի խաւարն: - 196. Վասն որոյ ջերմութեամբ զցրտութիւն լուծանէ որ յերկաթն և ի սառն. և չորութեամբ զհիւթն *մերժէ* որ ի ձու հաւի և յայլսն: - 202. Ութերորդ՝ զխաբէութիւնս որ ճաշակելեօք և տեսանելեօք է՛ ի բաց *մերժել*, և զամենայն զգայութեանցս ընտրողութիւն: - 281. Մետասաներորդ՝ առաջինն կին *մերժեցաւ* և երկրորդն մերձեցաւ որ կոչիւր դալիլա: - 422. Եւ տէր մեր *մերժեաց* զհրէայս և ժողովեաց զհեթանոս որ էր աղքատ ի բարեաց: - 422. Այլ և *մերժէր* զայլս, և մերձաւորէ՛ր զիւրս: - 423. Եւ որք ծարաւին նմա՝ լիանան. և հակառակքն ունա՛յն *մերժեսցին*: - 423. Առաջին որ է հասարակաց սրբութիւն սկրտութեան, *մերժէ*՛ զմեղս և տայ զշնորհս: - 462. Երկրորդ՝ սրբութիւն արգանդին *մերժէ*՛ զմեղս և հերքէ՛ զդիւրասահութիւն մեղանչելոյն մահու չափ. որպէս երեմիային և յովհաննուն: - 462. ...զի մի՛ *մերժեսցեն* զնա իբրև զօտար և ոչ վկայեալ ի մարգարէիցն: - 485. Վասն թշուառականին ի բաց *մերժի* երջանկութիւնն: - 491. Այսպէս մեղանչէ սատանայ և մարդ. զի զլոյսն աստուծոյ անձնիշխան կամօք և իմացմամբ *մերժէ*՛ և սիրէ զխաւար: - 562. Վրէժխնդրութիւն է ջատագով լինիլ. որով բռնութիւն և անիրաւութիւն և ամենայն վնասակար ի բաց *մերժի*: - 579. Ապա ուրեմն յիրաւի՝ զի բնական արդարութիւն ի տղայն ո՛չ գտանի, յարդարութենէն աստուծոյ արդարապէս *մերժի* և ընդ անիրաւսն տանջի: - 591. Եւ այն է կեանք՝ ուստի *մերժեալ* են ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք: - 762. Զի ա՛յն է կեանք՝ ուստի *մերժեալ* են ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք: - 767. Զոր և բիբն անուանեալ պահապան, զառաջինն ո՛չ զգուշացեալ, լինի դարձեալ ձեռնտու, զաւելորդսն արտաքս *մերժելով*. որ անուանի արտասուք. այսինքն արտաքսեալ: - 787

**ՄԵՐԺՈՒՄՆ +** Դարձեալ՝ տարածումն ձեռացն *զմերժումն* և զհերքումն թշնամւոյն, այլ և զիշխանութիւն նորա արտաքս ընկենու...: - 489

**ՄԵՐԿ +** Եւ թէ *մերկ* բանին, հետևիս գոյութեան սկիզբն ի մօրէն գոլ և ո՛չ յաստուծոյ հօրէ: - 68. Ուստի ո՛չ ասի քրիստոս սոսկ մարդն, կամ *մերկ* աստուածն. այլ որպէս ցուցաւ յերկուց միաւորութիւնն: - 75. Այլ արդ՝ մարդկային բնութիւնն յաստուածութեանն տեսանի, և աստուածային ի մարդկութեանն, եթէ ի

միութիւն բնութեանն, և եթէ ի միութիւն անձինն. զի ո՛չ սոսկ մարդ է քրիստոս և ո՛չ *մերկ* աստուած. այլ աստուած մարդացեալ: - 87-88. Չինգերորդ՝ նախ քան զյանցանելն՝ էին ադամ և կինն *մերկ* և ո՛չ ամաչէին. վասն զի ո՛չ ունէին ցանկութիւն հեշտութեան: - 225. ...զի տեսանելով զմեզ տկար քան զանասունս, *մերկ* և աղքատ ի մօրէ ծնեալ, խոնարհեալ զիջանիմք ի հնազանդութիւն արարչին. և զի մի՛ եկամուտ հպարտութեամբ կրեսցուք զանկումն արուսեկին: - 267. Վեցերորդ՝ զի թէպէտ ի ձեռագործ հանդերձից *մե՛րկ* էին, սակայն ի լուսոյ շնորհաց զարդարեա՛լ էին: - 278. Տասներորդ՝ որպէս ի դրախտին *մերկ* էին ադամ և եւա և ո՛չ ամաչէին զի անմեղք էին: - 461. Նոյնպէս յովսէփ և մարիամ *մերկ* էին ի մեղաց և առանց խղճի ամօթոյ: - 461. Երրորդ՝ որպէս բաժանեալ ի միմեանց՝ ո՛չ գոյ մարդ. այլ մեռեալ մարմին կամ *մերկ* հոգի: - 477. Նոյնպէս և յորոշելն ըստ ոմանց զաստուածն և զմարդ՝ ո՛չ է քրիստոս. այլ մարդ սոսկ կամ *մերկ* աստուած: - 477. ...**զ**՝ զգեստաւորել *զմերկս*. - 585. Զոր օրինակ ցորեան *մերկ* սերմանի և խոտոք և պատենօք բուսանի: - 592. Դարձեալ, *մերկ* եկն և *մերկ* գնայ ի մարմնոյ զգեստու որպէս ասէ յոբ: - 671. Եւ դարձեալ, ի հոգևորն *մերկ* եկն և սուրբ հանդերձիւ զգեցեալ գնաց: - 671. Երկրորդ, որպէս հատ *մերկ* անկանի և բուսանի ծաղկեալ և զարդարեալ տերևով. - 720. Նմանապէս և *մերկ* մարմին մեռելոյ ո՛չ յառնէ *մերկ*, այլ փառօք. որպէս ցուցանի յառաջիկայդ: - 720. Դարձեալ որպէս հատն *մերկ* սերմանի և *մերկ* ո՛չ բուսանի. այլ զարդարեալ խոտով և տերևով եօթն թուով: - 721. Նոյնպէս և մարմինք մարդկան *մերկ* թաղին՝ այլ *մերկ* ո՛չ յառնեն. բայց գեղեցիկ յոյժ և պատուական զգեստով զարդարեալ: - 721

**ՄԵՐԿԱՆԱՄ +** Այլ ի *մերկանալն* ի մարմնոյն՝ կարօտանայ յատուկ իմն զօրութեան որով խօսեցի ընդ հրեշտակին: - 145. Եւ զի մերկացոյց զնախաստեղծքն ի փառաց, զխորխ իւր *մերկանայ*: - 219. Ոմանք թուզ ասեն. թէ ի նոյն ժամն որ կերաւ և *մերկացաւ*՝ և կարեաց ի տերևոյ նորա. և վկայ բերեն թէ՝ վասն այն անէծ զթզենին յէմ: - 224. Եւ յայնժամ *մերկանայ* զպատիւն իւր, և առնէ զյատկութիւնս անասնոց: - 274. Նա՛խ՝ զի *մերկացաւ* յանմահութենէն և յանասնոց կարգ անկաւ: - 279. Երրորդ՝ զմաշկեղէն պատմուճանն *մերկանալ*. այսինքն զխորհուրդս մարմնեղէնս և զմեռելոտիս: - 281. Երրորդ, օրինակաւ կօշկին՝ զկինն հրամայէր *մերկանալ* յինքենէ: - 331. Եւ զմորթ մեղաց *մերկացեալ* ի մէնջ որ է՛ հաճոյ աստուծոյ ի հոտ անուշից: - 362. Քսանևը, մի և նոյն ծնօտն զոգիս *մերկանայր* այլազգեացն, և զսամփսոնին արկանէր ի մարմինն: - 423. Երկրորդ՝ ի յանդիմանութիւն խաչողացն. զի լուսաւորքն տեսեալ զտէրն իւրեանց *մերկացեալ*, պատկառեցին և քօղ արկին զխաւարն: - 490. Իսկ ի սրբութիւն սրբոցն *մերկանալ* զայն և զգեստ սպասաւորի զգենուլ միայն սպիտակ կտաւի և խնկարկել անդ: - 636. Դարձեալ՝ ցուցանէ՝ իբր թէ սիրելոյն որ մեռաւ՝ կցորդիմք և չարչարեմք զմարմինս. *մերկանալով*, ի սով և ի ծարաւ, ի մութն և ի հող որպէս նա ի գերեզմանի եղև: - 670. ...և *մերկանամբ* զզգեստս...: - 670. ...այսպէս *մերկացեալ* ի բարեաց...: - 671. Ա՛րդ՝ զգեստին հանելն նախ նշանակէ թէ՝ զկենցաղ աշխարհի *մերկացաւ* և զգեցաւ զգեստ լուսեղէն որ ի դրախտին: - 671. Վասն եօթներորդին, որք զմեղս խոստովան լինիլ ո՛չ կամեցան զորս առնել ո՛չ էր պարտ. վասն այնորիկ անդանօր ամենեցուն *մերկացեալ* և բացեալ յաւիտեան յամօթ լինին: - 752-753. Իսկ զոր ինչ շնորհօք լինի ոք ստացեալ, կարէ՛ և *մերկանալ*...: - 782. Որպէս ծառ *մերկացեալ* ի պտղոյ՝ այլ ո՛չ ըստ ունակութեանց. և նովին ունակութեամբ վերստին պտղաբերի ինքն: - 782-783

**ՄԵՐԿԱՊԱՐԱՆՈՑ +** Բարձրութիւն իմաստութիւնն է. որ գերազա՛նց է քան զամենայն միտս. և ամենայն ինչ *մերկապարանո՛ց* կայ առաջի նորա: - 129. Զի հոգին խօսի ընդ աստուծոյ բաղձանօքն որ *մերկապարանո՛ցն* է առաջի նորա: - 145. Վեցերորդն է մերկացումն մարմնոյն. ի նշան խոստովանութեան մերոյ որ պարտ է լինիլ *մերկապարանոց*: - 489

**ՄԵՐԿԱՑՈՒՄՆ +** Վեցերորդն է *մերկացումն* մարմնոյն. ի նշան խոստովանութեան մերոյ որ պարտ է լինիլ մերկապարանոց: - 489

**ՄԵՐԿԱՑՈՒՑԱՆԵՄ +** Եւ զի *մերկացոյց* զնախաստեղծքն ի փառաց, զխորխ իւր մերկանայ: - 219. Ապա զի՞նչ է այն՝ որ զշնորհս աւազանին ոչ ուրացութիւն և ո՛չ այլ ինչ նոյնպիսի *մերկացուցանել* կարէ: - 782

**ՄԵՐԿԵՄ +** Եւ այսպէս ասէ առաքեալն եթէ՝ մերկութեամբ մարմնոյն *մերկեաց* զիշխանս և զպետս խայտառակեաց: - 705

**ՄԵՐԿՈՒԹԻՒՆ +** Թողում զգերծումն *մերկութեան* և զթօշումն անարգութեան և տկարութեան խաչին. զայպանելն խաչողաց. և զխաւար լուսաւորացն. և յայլ դէմս դարձուցից զբանս: - 424. Դարձեալ՝ նշանակէ՛ յետ մեռելոյն զփոխումն ուրախութեան մեր ի սուգ և ի *մերկութիւն*. և ի սև հանդերձս. ի խաւար տունս և այլն: - 670. Այլ և նշանակէ սուգն զտեառն *մերկութիւնն* ի խաչին...: - 670. Եւ այսպէս ասէ առաքեալն եթէ՝ *մերկութեամբ* մարմնոյն մերկեաց զիշխանս և զպետս խայտառակեաց: - 705

**ՄԵՐՁ +** Որպէս արեգակն զի ո՛չ այրէ որ է հեռաւոր պատճառ. այլ հուրն ի նմանէ առեալ զջերմութիւն ի *մերձ* գոլով այրէ՛. որպէս յա՛յտ է ի հայելւոջն, որ առեալ զնշոյլս յարեգականէն՝ այրէ՛. ա՛յսպէս և բանս մեր ի հարկէ նոցա լինի՝ զոր ստորասեմք կամ բացասեմք: - 8. Զորօրինակ՝ թէ բազում մարդիկ անցանեն զճանապարհայն, և *մերձ* կացեալն տեսանէ նախ զմինն՝ և ապա զերկուսն՝ և որ զկնի: - 15. Դարձեալ թէ՝ յորժամ եղեր՝ *մե՞րձ* էիր դու քեզ, և այժմ հո՞ւպ ես քեզ, թէ ոչ: - 37. Յորժամ հիւանդանաս՝ *մերձ* ես դու հիւանդութեան քոյ. և յորժամ մանուկ լինիս՝ *մերձ* ես մանկութեանն. ի յալևորութեանն՝ ծերութեանն ես *մերձ*: - 37. Այլ այս չէ բաւական. զի զմի իրն ինքեան *մերձ* ասէ որ անհնա՛ր է: - 37. Թէ ոչ՝ Զի թէ *մերձ* էիր դու քեզ որպէս ոք առ ոք, բաժանեցար ընդ երկու. և զիա՞րդ մի իցես: - 37. Իսկ թէ ոչ յայնժամն *մերձ*՝ և ո՛չ այժմ հուպ քեզ, ոչ ես իսկ և ո՛չ կաս: - 37. Բայց թըւի թէ՝ էն և Աստուածն *մերձ* է աստուծոյ բնութեանն քան զայլսն: - 49. Ըստ որում *մերձ* դնէ, քանզի մարմին և հոգի. այսինքն թէ ո՛չ կարէ մարդն առանց հոգւոյն գոյանալ: - 80. Եւ *մերձ* բանին իմանալեացն քննութիւն: - 103. Երրորդ՝ այսպէս մեկնեն, եթէ հին աւուրց զնախնի ժամանակս նշանակէ. և մանուկն զնախնի թիւն. զի միակն սկիզբն է ամենայն թըւոց. և որ *մերձ* է միակին՝ սկզբնապետագո՛յն է քան զհեռագոյնն: - 115. Ոմանք *մերձ* են էութեամբ արարչին. և ոմանք հեռի. որպէս իմացականքն քան զբանականս. և սա՛ քան զկենդանիս. և նոքա քան զտունկս. և հուսկ յետոյ անշունչ գոյացութիւնքն. ըստ *մերձ* և հեռաւոր բնութեանց՝ զանազանապէս առնուն: - 131. Երկրորդ՝ զի ձայնին ընդունարան է լսելիքն *մերձ* գոլով օդոյն: - 131. Նախ՝ զի զաքոռն *մերձ* նստողին տեսին եզէկիէլ և եսայի, և շուրջ զքերօբէքն և զսերօբէքն: - 135. Եւ գործոյն որ ունին կրթել զմարդիկ՝ յարմարի օդն որ է՛ *մերձ* առ մեզ փորձելոյ զմեզ. այլ ո՛չ ի լոյս. զի մի ուրախասցին: - 146. Որև *մերձ* ի կատարածն դարձեալ յառնելոց է ի վերայ մարդկան ի ձեռն նեռինն: - 148. Դարձեալ այսպէս մեկնեն եթէ՝ փորձութիւնն ըստ ինքեան ո՛չ է բարի. այլ պատահմամբ լինի բարի. յորժամ համբերութիւնն *մերձ* դնի և յաղթիցէ. իսկ յորժամ համբերութիւն ոչ լիցի, ըստ ինքեան չար և վատ է փորձութիւնն. վասն այն տէրն արգելուլ հրամայէ: - 160. Չորրորդ՝ և որպէս որք *մերձն* են զառաջին սկիզբն ո՛չ տեսանեն որ ի միտս շինողին: - 164. Երկրորդն՝ ներքին մասն հրոյն. որ կոչի օլոմպային երկին. վասն *մերձ* գոլոյ յօլոմպիոս լեառն: - 183. Ութևժերորդ՝ լուսով և ջերմութեամբ *մե՛րձ* է յամենայնսն. և բոլորակութեամբ հեռի: - 186. *Մերձ* եկեալ ի նոյն կենդանակերպն՝ սակաւ լոյսն առնու ի նմանէ յարևելից կողմանէ. թէպէտ մեզ ի յարևմտիցն երևի. այլ նմա՛ արևելից մասն է որ զլոյսն առնու: - 187. Եւ գիտելի՛ է, զի ընդ ամենևին հեռանալն լուսինն խաւարի. և ամենևիմբ *մերձ* եկեալ ի նոյն կենդանակերպն և ուղղապէս ընդ դէմ անցեալ արեգականն՝ խաւարէ՛ զնա. զի ընդ դիմատիպ է անօթ լուսնոյն: - 187. Ի *մերձն* առաւել: - 202. Ո՛չ է աստղ. այլ գոլորշի վառեալ ի տարրական հրոյն յորժամ *մերձի* ի նա՛: - 203. Սա՛ ոչ դառնայ ի ամպ կամ ի անձրև. այլ մղի ի վայր կոյս և մնայ *մերձ* երկրի: - 204. Որ *մերձ* ի հիւսիս հնչէ, Կիկիաս կոչի. չո՛ր է և ցամաքեցուցիչ: - 205. Եւ որ *մերձ* ի հարաւ հնչէ, Եւրոս կոչի. գէ՛ճ է. և տաղատարա՛փ բերէ: - 205. Որ *մերձ* ի հիւսիս է, Արգէստէս կոչի. կազմէ սա զամպս: - 205. Եւ որ *մերձ* ի հարաւ է, լիփս կոչի. անձրևաբե՛ր է: - 205. Այն որ *մերձ* յարևելս է, Վոռէա՛ս կոչի. նեղէ՛ զամպս, և կապէ՛ զանձրևս: - 205. Եւ որ *մերձ* յարևմուտս է, Թրասկիաս կոչի. առնէ զձիւնն: - 205-206. Յարաւայինք որք Նօտոսք կոչին, Այն որ *մերձ* յարևելս է, Եւրո՛ նօտոս կոչի. հալէ՛ զպաղս: - 206. Եւ որ *մերձ* յարևմուտս է՝ Լիւա՛ նօտոս. առնէ մառախուղ. մէգ. և վրդովումն յամպս: - 206. Արդ՝ յորժամ աղբիւրք ջրոյ՝ մերձին յերակն հրոյ որ է՛ ծծումբն, ջերմանան խիստ կամ թոյլ. *մերձ* կամ հեռի անցանելովն: - 208. Վասն է՞ր ի ստորոտս լերանց առաւել շող լինի քան ի գլուխն որ *մե՛րձ* է արեգական: - 211. Նա՛խ՝ զի բոյսք և խոտք *մե՛րձ* են երկրի, զշարժումն նորա դիւրա՛ւ ընդունին: - 214. Տղայն *զմերձն* տեսնու, և ծերն զհեռուն: - 227. Եւ այն զի *մերձ* է բերանոյն. և զի հոտն և համն ազգակից են միմեանց. ի ջրոյ գոլով երկուցն. վասն այն զգայարանք նոցա առ միմեանս են մերձեցեալ: - 235. Վասն առաջնոյն պա՛րտ է գիտել, զի առաւել հասարակն հեռի՛ է և մեծագոյն. և առաւել յատուկն *մերձ* է մեզ և նւազագոյն: - 235. Զորօրինակ՝ բնութեան յատուկն և անձին. զի բնութեան տարբերն հեռագոյն է և մեծ. որպէս կենդանին և բանականն. և դիմաց յատուկն *մերձ* և նուազ. որպէս յատուկն *մերձ* և նուազ. որպէս պատկեր և տիպ: - 235. Զի՞նչ է որ տղայն *զմերձն* աղէկ տեսնու. և ծերն զհեռուն: - 239. Երրորդ՝ զի թէ և դառնային *մերձ* ի մահ, ամենայնքն ընդ ապաշխարութեամբ մեռանէին. և ո՛չ ոք արդարութեան պսակին արժանաւորէր: - 292. Եւ այն որ շուրջ զսեղանովն, նշանակէ՛ զքահանայս. որ *մերձ* սեղանոյն որ է՛ քրիստոս՝ միշտ սպասաւորե՛ն և պատերազմին արեամբ չափ ընդ ախտս և ընդ դևս: - 341. Ի յա՛յս միտս յորժամ խաչ նկարեմք, զծագ մատին աջոյ *մերձ* ի բոյթն առնեմք որ է՛ ի համարն զերորդ. զկէս զին նշանակելով: - 345. Վասն է՞ր *մերձ* ի վախճանն հարք և առաջնորդք օրհնեն զմնացորդս. որպէս մովսէս և յակոբ և այլ նահապետք: - 408. Դաւիթ երիցս սուգ էառ

մեռելոյ. և տէրն ի վերայ եէմի և ի գերեզմանն ղազարու և *մերձ* ի խաչն: - 438. Եւ որ ո՛չ եթող զոք *մերձ*. զի ո՛չ ոք լինի գործակից յարութեան մերոյ. որպէս և ո՛չ ստեղծմանն: - 444. Դարձեալ պատճառեն թէ՝ յորժամ զնկանակն և զձուկն աճեցոյց քրիստոս՝ *մե՛րձ* էր զատիկն: - 510. Ութևձ՝ ի մէջ գիշերի է յարութիւն փրկչին, վասն որոյ յերեկոյն *մերձ* ի մուտս գիշերոյն ճրագալոյց առնեմք և պատարագ որպէս ի ծննդեանն: - 514. Վեցերորդ՝ զփորուածս լնու և ամենայն ումեք *մերձ* է: - 523. Իսկ մորուս կոչին մարգարէք և առաքեալք և հայրապետք *մերձ* բերանոյն առ մեզ խօսելով զպատգամս օրինացն աստուծոյ: - 534. Երկրորդ՝ զի մարմնաւորն իշխէ՛ որքան *մերձ* է և ձեռնհաս: - 538. Երկրորդ՝ զի *մերձ* ի համբարձումն ձեռն եդ ի վերայ նոցա և օրհնեաց զնոսա և արար զնոսա առ հասարակ եպիսկոպոսունս: - 546. Դարձեալ՝ որ ոք *մերձ* է ի ճշմարտութիւնն՝ նա՛ առաւե՛լ է ճշմարիտ. որպէս որք *մերձ* են լուսոյն և ջերմութեան՝ առաւել լոյս են և ջերմ: - 550. Եւ որ սոցա առաւել *մերձ* է և անշարժ մնացեալ՝ է ազգս հայոց: - 550. Զորօրինակ **բ** ոք ի դատախազից իւրաքանչիւրն զինքն կամի և կարծէ ճշմարիտ գոլ. այլ *մերձ* եկեալ դատաւորին՝ վկայիւք յայտնի ճշմարիտն: - 551. Իններորդ՝ խնդայ ընդ *մերձ* գոլն նորա: - 575. Երրորդ, զի թէ կայր հնար որ ի ձեռն կնոջն տուեալ լինէր շնորհք, աստուածածին կոյսն մարիամ ընդէ՛ր ոչ եղև *մերձ* մկրտութեան որդւոյն իւրոյ ի յորդանան: - 589. ...և այսպիսիքս, որպէս նոքա որք *մերձ* ի զատիկն խոստովանին և սրբութեանց արժանաւորին: - 603. Եւ յերեքին յաւետարանսն *մերձ* կացեալ խնկօք բուրելեօք: - 618. Յաւախօսն է ալևորութիւնն. և Առաւօտն ծերն է. որ *մերձ* է ծագման հանդերձելոյ աշխարհին: - 622. Դարձեալ՝ մարգարէքն ի հեռուստ տեսին. և առաքեալքն *մերձ* զբանն մարմնացեալ: - 643. Վասն այն և տեղեաւ փոխեմք. զմարգարէսն ի մէջ եկեղեցւոյն, և զառաքեալսն *մերձ* բեմին ընթեռնումք: - 643. Որպէս ժողովուրդն գնաց *մերձ* ի լեառնն, և մեզ պա՛րտ է յոտաց կալ և յառաջ գնալ և լսել: - 644. Զի *մերձ* յինքեանս և յինքեան տեսանեն զփառս և զհանգիստ: - 648. Եւ այնպէս յարաժամ տեսանէ զցաւս *մերձ* ինքեան և առ ինքն ի չար գործս իւր անբաժանելի ի նմանէ մինչ ի յարութեանն օր...: - 669. Եւ տեսանեն զպատիժս *մերձ* ինքեանց...: - 669. Այլ երկոքինն ունին ի հոգիս իւրեանց *մերձ* տեսեալ՝ զոր ի յարութեանն առնելո՛ց են կատարեալ անձամբ՝ հոգւով և մարմնով...: - 670. ...և նա դնէ յեկեղեցին *մերձ* ի դուռն և աղօթէ՛: - 671. ...և նա դնէ յեկեղեցին *մերձ* առ դուռն որ նշանակէ զկայանք հոգւոցն յերկինս ի վերջին տեղւոջ մինչ ի յարութեանն օր: - 672. Յոգիք արդարոցն ճանաչեն զմիմեանս անուամբ և ծննդեամբ և գործով վաստակոցն. որք զարդիւնսն միշտ *մերձ* տեսանեն: - 685. Իսկ վեցերորդն նման է երկրորդին. այլ *մե՛րձ* է ի ճշմարտութիւնն այնու...: - 687. Ո՞ հա՛յրդ ես որոց ի վեր քան զերկինս. այսինքն հոգւոց սրբոց կատարելոցն որ ի վերեն քան զդասս հրեշտակաց *մերձ* քրիստոսի որպէս քահանայք առ քահանայապետ, և անդամք առ գլուխն. և որդիք առ հայր: - 688. ...և յետ մահու *մերձ* ի յինքն և առ ինքն տեսանէ և ճանաչէ...: - 705. Չորրորդ, արձակէ՛ զսատանայ, զի տեսցէ զիւր ժամանակ տանջանացն մերձեալ. և մոլի որպէս գազան *մերձ* ի սատակումն. և շուն կատաղեալ: - 706. Նաև համապայծառ լոյս Երրորդութեանն ծածկէ՛ զամենայն լոյս լուսաւորացդ. զա՛յն ասէ խաւարումն արեգական և լուսնի և աստեղաց. զոր օրինակ՝ լոյս ճրագի ծածկի *մերձ* եկեալ լուսոյ արևու: - 728. Քանզի լեառն ձիթենեաց նշանակէ՛ զողորմութիւնն որ *մե՛րձ* է ի ձորն այն: - 738. Ուղղակի ուրեմն փայտս այս ասի գոլ տընկեալ *մերձ* յընթացս ջուրց. զի ի նմանութիւն մարմնոյ մեղաց երևեցաւ. և զամենայն նուաստութիւնս մեր յինքն ընկալաւ: - 755. Կամ երկայնակեաց որպէս զմաթուսաղայ. որ *մերձ* ի **ռ** ամն ժամանեաց: - 761. Նախ եղիցի ուրախութիւն ի մարմնի, բաղդատելով առ այն որ եղիցի *մերձ* ինքեան. այսինքն զի ա՛յլ մարմինք փառաւորեալ առաջի նորա հրճուին: - 764

**ՄԵՐՁԱԿԱՅ +** Չորրորդ՝ զգայութիւնն տեսանէ *զմերձակա՛յն*. որպէս ա՛ստ, և այժմ. և միտք զհեռաւորն և զանցեալն և զհանդերձեալն: - 121. Նախ *մերձակայ* և հեռաւորն գոլ: - 131. Նոյնպէս յերևումն հրեշտակաց զոր մինն տեսանէ՝ այլ *մերձակայքն* ո՛չ տեսանեն. որպէս յա՛յտ է ի պատանեակն եղիսէի: - 145. Կարգաւո՛ր է ապա՝ զի յանշնչոյն փոխեսցի յանէն և յանգոյն. որ *մերձակայ* և ներքո՛յ է անշունչ մարմնոյն: - 252. Դարձեալ ըստ եփրեմի հինգերորդ՝ զի սուրբ էր սրտիւ. և Վեցերորդ՝ զի միամիտ էր կամօք. և սոքա առնեն զմարդն *մերձակայ* աստուծոյ: - 290. ...յայնժամ յայտնի և *մերձակայ* տեսանէ զամենայն փառս և զպսակ զոր ընդունելոց են նոքա ի յարութեանն աւուր...: - 668. Երկրորդ, ասէ սուրբն դիոնէսիոս ի ննջեցելոց կատարմանց գլուխն՝ եթէ մաքրելոց հոգին հասեալ ի վախճան՝ յայտնի և *մերձակայ* տեսանէ զամենայն փառս և զպսակ զոր ընդունելո՛ց են նոքա ի յարութեան աւուրն: - 691

**ՄԵՐՁԱՒՈՐ +** Երկրորդ՝ զի թէ ի ներկայս ասեմք ի վերայ քարի թէ լինիցի փայտ. ո՛չ լինի այնպէս. արդ՝ թէ ասելն մեր զներկայն ո՛չ փոփոխէ, նա և ո՛չ զհանդերձեալ. կարէ փոխել. ո՛չ *զմերձաւոր* հանդերձեալն՝ և

ո՛չ զհեռաւորն: - 8. Նախ՝ զի աստուած *մերձաւո՛ր* է նոցա: - 139. Զայս և սովո՛ր են առնել մարդիկք առ *մերձաւորս* և սիրելիս անընդմիջաբար խօսին. և առ հեռաւորս կամ ատելիս գրով կամ միջնորդով: - 177. Երրորդ՝ աչք մեր որ է՛ լոյս՝ ի վերին մասն գլխոյս. և լուսաւորքն յերկինս. զի *մերձաւոր* նմանն զնմանն տեսցէ: - 188. Չորրորդ՝ բնութեամբ բարին *մերձաւո՛ր* է: - 251. Եւ զնդակն է քարոզութիւն նոցա որ ըմբռնէ *զմերձաւորսն*: - 317. Իսկ դկք խօսին *զմերձաւոր* հանդերձեալն: - 336. Երրորդ, զի ո՛չ միայն *մերձաւորք*, այլ և հեռաւորք մինչ ի յակն տեսցեն զաքանչելիսն: - 414. Նա՛խ՝ զի յայտնեսցէ զծածուկն և զհեռաւոր իրն ժամանակաց. զի թէ *զմերձաւոր* և զյայտնին ասէ՝ ո՛չ է մարգարէ: - 536. Իսկ հոգևորն իշխէ՛ ի *մերձաւորս* և ի հեռաւորս: - 538. Զի է՛ յոյս ակնունիլ ի հեռաւորն. և է՛ յոյս ըմբռնել ի *մերձաւորն*: - 695. Արդ՝ այս կենացս յոյս՝ ակն ունի ի հեռաւորն. և յետ մահու յոյս նոցա ըմբռնէ ի *մերձաւորն*: - 696

**ՄԵՐՁԱՒՈՐԵՄ +** Այլ և մերժէր զայլս, և *մերձաւորէ՛ր* զիւրս: - 423. Իսկ արծակելն որ է՛ *մերձաւորել* և հաղորդել՝ է՛ յատուկ քահանային: - 538

**ՄԵՐՁԱՒՈՐԻՉ +** Եւ այժմ աղաչեմ զքեզ, մի՛ մեկնիր յինէն *մերձաւորիչդ* իմ: - 771

**ՄԵՐՁԵՆԱՄ +** Ութերորդ՝ զնա օ՛ծ դարանակալ ասէ ի ճանապարհի. և սոքա առաջին օձին նմանեալ՝ հրապուրեն զբազումս. և արտաքսեն ի դրախտէ եկեղեցւոյ. և թոյնք իժից ի ներքոյ շրթանց ունելով և խայթոց՝ զի առորս *մերձենան*...: - 35. Առաջին պատճառն, զի յինչիրս և *մերձենայր* չարչարանօքն՝ ծախէ՛ր զչարչարանքն իմ: - 42. Որպէս յորժամ ասեմք՝ լո՛յս կեանք՝ և այլն, արտաքո՛յ մնամք գիտութեանն. և յորժամ անժամանակ՝ անիմանալի, առաւել *մերձենամք*: - 132. Երկրորդ՝ *զմերձեցեալս* յինքն՝ տանջէ՛ և այրէ յաւիտենական հրովն: - 151. Նախ զի փրկական է խորհուրդն ամենեցուն. այլ անարժան *մերձեցեալն* կորնչի. յիրաւի արգելցի ի սպասաւորութենէն: - 167. Չորեքտասաներորդ՝ *մերձենալով* նորոգէ, և հեռանալով ապականէ՛: - 186. Նոյն և սա՛ գոլորշի՛ է վերացեալ հողմոց. և *մերձեցեալ* ի հուռն՝ վառի՛ ի նմանէ. և բնութեամբ հողմոյն վարեալ երևի իբրև զբռիչ աստղ և փութով շիջանի: - 203. Զի ի վերին մասն օդոյն է *մերձեցեալ*՝ որ է առաւել բարեսուն...: - 222. Մինն պարզ և զուտ բարին ներքոյ և արտաքոյ. որպէս առաքինութիւն. և հոգևոր գործն. յայսպիսիքս հրամայէ՛ մեզ *մերձենալ*: - 224. Եւ է՛ միւս բարի խառնակն և պատրուակեալն. որպէս է աշխարհական բարին. զի գունով և երևելեաւ բարի է, այլ ի ներքոյ ծածկեալ չա՛ր է. յայսմանէ հրաժարէ՛ զմեզ ոչ *մերձենալ*: - 224. Եւ այն զի մերձ է բերանոյն. և զի հոտն և համն ազգակից են միմեանց. ի ջրոյ գոլով երկուցն. վասն այն զգայարանք նոցա առ միմեանս են *մերձեցեալ*: - 235. Տասներորդ՝ առ յատուկ բարին *մերձենալ*. այսինքն առ ամենևին զուտ բարին որ է՛ աստուած. խորհրդով բանիւ և գնացիւք: - 281. Եւ դարձեալ՝ որ քան մերձիմք կատարածի, այնքան *մերձենամք* ի ցաւս դժոխոցն. որպէս յերիկունն սակաւ սակաւ առաւելու խաւարն և ցուրտ: - 293. Նոյնպէս և որք հաղորդին մարմնոյն քրիստոսի, ո՛չ *մերձենան* ի զանազան ախտս մարմնական անբլփատութեան և զոհից դիւական: - 301. Եւ թէ որ ասիցէ՝ ունէր զայս յոք. վասն է՞ր *մերձեցաւ* ի նա: - 324. Եւ հանել զկօշիկս յոտից, այսինքն ի վերջին խորհրդոց յերկրաւորս *մերձեցեալ*: - 331. Հինգերորդ, վասն մեղաց պատարագ, ի մեռելոտի կամ ի պիղծ ինչ *մերձեցեալ*. ոչխարով և թռչնով և նաշիով առանց իւղոյ և խնկոյ քաւէին: - 358. Չորրորդ յայտ է՝ զի նուէրքն աստուծոյ՝ սրբութիւն է. և որ ոք *մերձենայ* ի նա՝ սրբի: - 363. Նախ ինքն գործն պիղծ է. և պղծէ՛ զգործօղն. և պղծէ՛ *զմերձեցեալսն* ի նա՛: - 369. Ցուցանէ թէ՝ մինչ ի մեղս իցեն քահանայքն՝ ո՛չ զհասն կերիցեն և ո՛չ ի սուրբ խորհուրդն *մերձեսցին*: - 370. Ապա թէ ոչ՝ պղծեն յորս *մերձանան*: - 370. Յորժամ սուրբ էր մոխիր երնջոցն, վասն է՞ր *զմերձեցեալսն* պղծէր: - 384. Իսկ է ի յայն խորհուրդն, զի որ ի պիղծ *մերձենայր*՝ է օր արտաքոյ բանակին կալով յերրորդ և յէերորդ օրն սրբէր, և ապա՛ մտանէր. վասն որոյ գ օրէք և է օրէք կատարեմք: - 391. Մետասաներորդ՝ առաջինն կին մերժեցաւ և երկրորդն *մերձեցաւ* որ կոչիւր դալիլա: - 422. Իսկ ի մահուն որ յարոյց զմեռեալն յորժամ *մերձեցաւ* ի յոսկերսն եղիսէի, ի տիպ մահուն քրիստոսի որ մահուամբն մեզ կեանք և յարութիւն շնորհեաց: - 446. Հինգերորդ՝ ի նմին իրացն յայտնի է՝ զի ռամիկ ժողովուրդն ի տօնի քաւութեանն երեքօրեայ սրբութեամբ *մերձենային* առ դուռն տաճարին: - 483. Վասն է՞ր ոչ ետ թոյլ *մերձենալ* մարիամու. և այն զի ի ճանապարհին կալան զոտս նորա և համբուրեցին ա՛յլ կանայք: - 517. Երրորդ վասն այն արգել, զի ցուցանէ թէ յոյժ պատուեցաւ մարմինն այն և ո՛չ է համարձակելի որպէս յառաջն մաքսաւորք և պոռնիկք *մերձենային*: - 517. Վեցերորդ, ոմանք ասեն թէ պարզևս խնդրէր հոգևորական. վասն այն ասէ ելանեմ առ հայր իմ և իջանէ հոգին և լնու զձեզ ծրի պարգևօք. այժմ յաղագս այդորիկ մի՛ *մերձենար*: - 517. Եօթներորդ, կամ թէ եգիտ ի նա երկեւան ինչ թերութեան վասն յարութեանն. իբր զի ասէ յայսմ գիշերի *մերձեցայք* յոտս իմ և ո՛չ հաւատացեր. վասն այն կրկին անգամ ո՛չ հրամայէ *մերձենալ*: - 517. Տասներորդ, զի ցուցէ թէ թշնամեաց նորա ո՛չ է իշխանութիւն

բուռն հարկանել զնմանէ. իսկ բարեկամաց նորա զոյ իշխանութիւն այլով իւիք *մերձենալ* ի նա. այսինքն սիրով և երկիւղիւ յայնմիկ զոր ուտեն զնա: - 518. Վասն այն ո՛չ ետ մարիամու *մերձենալ*. այլ պահեաց զնա բազկին այնմիկ որ նստոյց զնա ընդ աջմէ իւրմէ: - 518. Երկոտասաներորդ, «մի՛ *մերձենար*», եցոյց թէ՝ որք յետ յարութեանն և վերանալոյն յերկինս կամին *մերձենալ* ի մարմին նորա առաքինութեամբ և սրբութեամբ, զախտս հոգւոց ի բա՛ց ընկեսցեն և մի ունայնապէս *մերձեսցին* ի նա: - 518. Երեքտասաներորդ, զի մարիամ ո՛չ խոնարհութեամբ կամէր *մերձենալ* յոտս նորա որպէս այլ կանայքն. այլ յերե՛սն դիմեաց նա հպարտութեամբ առ ի համբուրել զնա. իսկ տէրն կամեցաւ ուսուցանել նմա զխոնարհութիւն՝ արգել զնա: - 518. Չորեքտասաներորդ, զի ցուցցէ թէ յայսմ հետէ արքն միա՛յն ունին իշխանութիւն *մերձենալ* առ ի պատարագել. և ո՛չ զոյ համարձակութիւն կանանց յայս գործ: - 518. Հնգետասաներորդ, զի բաւական համարեցաւ ի պատիւ կանանց զայն՝ զի յառաջագոյն *մերձեցաւ* ի նոսա ծննդեամբ. իսկ յետ յարութեանն կամի՛ զի ա՛րք նախ *մերձեսցին* ի նա մինչ դեռ ո՛չ է ելեալ նա առ հայր: - 518. Արդ մի՛ *մերձենար* դու յիս անկատար գոլով. որպէս մայր քո եւս ի ծառն գիտութեան. յորժամ առ բնութեամբ իմ հայր՝ և ձեր ըստ շնորհի՝ և աստուած մարմնոյս իմոյ ես ելանիցեմ, որոտմամբ իջեալ հոգին զձեզ կատարէ՛. արժանաւորիք յայնժամ առ իս *մերձենալ*: - 518. Ութերորդ, զի թէ զգենումն կենդանեաց ո՛չ ունին հրաման զենուլ ազգ կանանց որ է՛ խտրութիւն մարմնաւոր սրբութեանց. զիա՞րդ պատշաճի տալ հրաման կանանց ազգի *մերձենալ* ի կարգ հոգևոր սրբութեան: - 589. Երկրորդ՝ զի մեք կարասցուք *մերձենալ* ի սրբութիւնն, վասն այն մնան պատահմունքն...: - 597. ...զի թէ յայտնի կերպարանօք լինէր միս և արիւն, ո՛չ ոք իշխէր *մերձենալ*: - 597. Եւ թէ ոք ասիցէ, պա՛րտ է զի ձեռն քահանային *մերձեսցի* ի զգայարանսն: - 605. ...և տայ զշնորհս սրբութեան առ որ *մերձենայ*: - 605. Այլ ի մեծի **Ե** շաբաթին օրհնեմք իւղ, զի մի՛ մեռոնն սուրբ ի հասարակաց ոտս *մերձեսցի*: - 605. Ութերորդ՝ սրբեմք զեկեղեցիս, զի լիցի սրբութիւն սրբոց. զի որք *մերձեսցին* ի սա՛ սրբեսցին: - 615. Երկրորդ՝ ի լեառն սինա թէ անասուն *մերձենայր* քարկոծ լինէր: - 617. Հինգերորդ, է օրեայ սրբութիւնք բորոտացն և կալ արտաքոյ բանակին՝ ի պիղծ *մերձեցեալք*: - 653. Ի վախճան *մերձեցեալքն* տեսանե՞ն զանտի կենացն ինչ՝ թէ ոչ: - 668. Իսկ որ ասէ «ծուխ նոցա ելցէ յաւիտեան», նախ կոչէ զներքին խորոց հառաչանս տանջելոցն. և երկրորդ զանընդմիջաբար այրեցումն հրոյն. որպէս նիւթ փայտի *մերձեցեալ* ի հուր: - 750

**ՄԵՐՁԻՄ +** Դարձեալ, թէ է հարկ, վասն է՞ր աղօթք և պատարագք և ողորմութիւնք և այլն՝ դարձուցանեն *զմերձեալ* չարիսն, և փոխեն ի բարիս: - 11. *Մերձեալ* յարեգակն լուսաւորի. այլ և եղջիւրաւորի՛: - 186. Նախ՝ զի արեգակն առ մեզ *մերձի*: - 197. Արդ՝ յորժամ աղբիւրք ջրոյ՝ *մերձին* յերակն հրոյ որ է՛ ծծումբն, ջերմանան խիստ կամ թոյլ. մերձ կամ հեռի անցանելովն: - 208. Դարձեալ՝ արեգակն ի ծմեռն հեռանայ յերեսաց երկրի՝ և *մերձի* ի ներքոյ երկրի: - 209. Նմանապէս յամառն *մերձի* յերեսս երկրի, և հեռանայ ի ներքուստ: - 209. Երկրորդ՝ զի վերին մասն օդոյն պա՛րզ է. և ներքին մասն *մերձեալ* ի յերկիր՝ թանձրանայ ի չորութեանց նորին. և ջերմութիւնն խառնեալ ընդ այն՝ առաւել շող լինի: - 211. Առաւօտ՝ որ է՛ տղայութիւնն. այն ինչ ի լոյս *մերձեալ*: - 265-266. Եւ դարձեալ՝ որ քան *մերձիմք* կատարածի, այնքան մերձենամք ի ցաւս դժոխոցն. որպէս յերիկունն սակաւ սակաւ առաւելու խաւարն և ցուրտ: - 293. Իններորդ՝ ըստ փոփոխման ասի. զի յղացեալ ունիմք զմահ անդրստին. և ի վախճան *մերձեալ* հասանէ երկն ցաւոց. և բաժանեալ հոգին ծնանի ի մահ: - 308. Եւ մատամբ յարենէն *մերձեալ* յեղջիւր սեղանոյն: - 360. Զի *մերձեալ* ի քրիստոս աղօթք մեր լինի քաւութիւն մեզ: - 360. Դարձեալ ասեն, մարմնական մեղքն փոխեցաւ. որպէս ի մեռեալ *մերձիլն*: - 369. Հինգերորդ՝ զի նուազեա՛լ են ամք կենացն և *մերձեալ* ի վախճան: - 377. Իններորդ՝ զի *մերձեալ* տեսանէ զօր մահուն և զքշնամին առաջի աչացն որով պատրաստի: - 378. Երրորդ՝ զի ինքն օրհնութիւն էր, և անէծքն *մերձեալ* ի նա յօրհնութիւն փոխեցաւ. որպէս խաւարն ի լոյս փոխի. և մեղքն յարդարութիւն. և մահ ի կեանս: - 400. Երրորդ՝ ի չարեաց հեռանալ պարտ է, և ապա ի բարին *մերձիլ*: - 403. Անմարթ էր թողուլ զժողովուրդն ի դրան տաճարին և *մերձիլ* յանկողինս. և ըստ օրինացն զօրեայ սրբութիւն ստանալ. որ անհնա՛ր է ամենևին. թէպէտ ասեն՝ զոյր ա՛յլ քահանայապետ որ զկարգ պաշտամանն կատարէր: - 484. Ասեմք թէ՝ յարաժամ աջ քահանային *մերձի* ի գլուխ քրիստոնէին ուր արմատն է բոլոր զգայութեանցն: - 605. Իսկ և եօթներորդն խոստովան լինիլ բարութեան և արդարութեան տեառն. և *մերձիլ* խնդրուածովք. և օրհնել զաստուած նոր օրհնութեամբ յետ աստեացս: - 630. ...իսկ խունկն *մերձեալ* ի հուրն և զհոտն բուրեալ՝ է՛ մարմինն միաւորեալ ընդ բանին. և զհոտ անոյշ բուրեալ աշխարհի: - 645. ...վասն որոյ նոքա միշտ *մերձին* գրակալին յորժամ ընթեռնուն: - 646. Երրորդ զհիւանդութիւնն. զի տեսեալ զսոսա՝ գիտասցուք զմահն *մերձեալ*: - 665. Չորրորդ, արծակէ՛ զսատանայ, զի տեսցէ զիւր

ժամանակ տանջանացն *մերձեալ*. և մոլի որպէս գազան մերձ ի սատակումն. և շուն կատաղեալ: - 706. Նա՛խ՝ զի մագաղաթն ի հուր *մերձեալ* գալարի. նոյնպէս և երկնայինքն յայնժամ խոնարհին յորժամ երկին և երկիր վառեսցին հրով: - 729. Յաղագս առաջնոյն ասի՝ «ապաշխարեցէ՛ք զի *մերձեալ* է արքայութիւնն երկնից». այսինքն որդին աստուծոյ: - 754

**ՄՁՆԱՁԵԻ** (տեքստում՝ **ՄՁՂՆԱՁԵԻ**) **+** Չորրորդ՝ *մզղնածն* մորթն: - 239

**ՄԷԳ +** Եւ զի ամպ և *մէգ* և մութն պատէ՛: - 197. Եւ *Մէգն* այն է, որ մնաց յանձրևահոս ամպոց. վասն այնորիկ *մէգն* նշա՛ն է պարզոյ: - 204. Եւ որ մերձ յարևմուտս է՝ Լիւա՛ նոտոս. առնէ մառախուղ. *մէգ*. և վրդովումն յամպս: - 206. Երկրորդ՝ զի ամպ և *մէգն* խառնէ՛ զպարզ օդն և խաւարէ՛: - 206. Եւ **դ** է քառասունքն մովսէսի բաց ի յեւսայն արտաքոյ *միգին*: - 352. Իսկ մեք **խ** զմովսէսին պահեմք որ ի լեառն սինա, և յեսու արտաքոյ *միգին*: - 363

**ՄԷՁ +** Նոյնպէս ընդ ներքին դուռն զաւելորդն արտաքս վտարէ ընդ աղիսն. և յայսմանէ ջրատեսակն ընդ ցնցուղ քաղրթին ի փալաբուշտն իջանէ և լինի *մէզ*: - 242

**ՄԷԿ** (տեքստում նաև՝ **ՄԵԿ**) **+** Իսկ կէս մասն ի *մեկ* ամիսն՝ լինի կէս ժամ. և ի *մեկ* տարին **զ** ժամ. և ի **դ** տարին ժողովեալ՝ լինի օր մի **իդ** ժամ. և ա՛յն առնէ զնահանճն. և շարժէ՛ զտօնս և զեղանակս: - 190. Եւ ի նիսանի *մեկն* կազմութիւն մարդոյն է. զի նիսանն կազմութիւն լսի: - 191. Եւ *մէկ* ժամն է՛ **լ** մասն. և *մէկ* մասն է՛ **կ** րոպէ: - 191. Եւ ժողովեալ *մէկ* օրն **իդ** ժամ՝ լինի **դ** բիւր և **սբճ** րոպէ: - 191. Եւ ի *մէկ* մասն՝ մի հոլով առնէ արեգակն. այսինքն *մէկ* թաւալ: - 191. Այլ մեզ այսպէս իմանալի է. զի թշրինի *մէկն* նուիրեալ օր սուրբ տեառն կոչեսցի ասացաւ. որ է՛ սեպտեմբերի **ժը**: - 483

**ՄԷԿԻՆ +** Ութերորդ՝ թէ արարա՛ծ է բանն աստուծոյ և հոգին, ապա կրկին է և ո՛չ *մէկին*. զի բանն արարած՝ և արարչի բան. և հոգին արարած՝ և արարչի հոգի: - 56. Իններորդ՝ թէ արարիչ է աստուած՝ և բան իւր և հոգին արարած, ապա և ինքն ո՛չ է պարզ և *մէկին*՝ այլ բաղադրեալ և ի բազմաց գոյացեալ: - 56. Երրորդ՝ անդ *մէկին* է ջերմութիւն՝ և աստ կրկին. զի հասեալ ի գոգ երկրի, մակադարձութեամբ ժողովին առ նա և լինի շող: - 211

**ՄԷՃԼԻՍ** - Զի՞նչ է որ ի *մէճլիսն* յանկարծ ժամ մի լռեն: - 656

**ՄԷՆ +** Այլ ա՛յս է ճշմարիտն, զի ամենայն բարեկամքն որ ժողովեցան յետոյ և մխիթարեցին զնա՛, իւրաքանչիւրքն բերին *մէն* մի որոջ ոչխարի և **դ** դրամ ոսկի անգիր ընծայեցին նմա ի սատար խրախութեանն...: - 326. Երրորդ «որ մատնեցար». ի մեծի ուրբաթի առաւօտին *մէն* ասի: - 634

**ՄԷՋ, ՄԷՋՔ +** Յէից՝ որպէս դու ի քո հօր *մէջքն* էիր զօրութեամբ, և յետոյ ծնար նոր գործութեամբ: - 37. Դարձեալ՝ հոգին ելանէ իբրև զշաղկապ և միաւորիչ. մի իբրև *զմէջ* որ շաղկապէ՛ զերկու եզերն. և միւս իբրև երեք՝ և եզր: - 64. Միաւորութիւնն քրիստոսի ունի սկիզբն. և *մէջ*. և կատարումն: - 84. Սկիզբն յերկուց բնութեանց. և *մէջ*՝ որ է՛ միաւորութիւնն մի բնութիւն. և եզր և կատարումն՝ մի անձն: - 84. Նախ՝ զի **գ** թիւն կատարեալ է. զի ունի սկիզբն. և *մէջ* և կատարումն: - 107. Երկրորդ՝ զի նա՛ է սկիզբն՝ և *մէջ*՝ և վախճան: - 111. Վեշտասաներորդ՝ *մէջ* գոլով աստեղացն և լուսաւորէ. որպէս միջին ստեղն եօթնաջահեանն լուսոյ: - 126. Այսպէս բարին է սկիզբն մեր. և *մէջ*. և վախճան: - 128. Զորօրինակ գիտութիւն մարդկան ի սկիզբն և ի *մէջն* և յեզերն՝ նախ զտգիտութիւն փարատէ՛, և ապա՛ զմիտս լուսաւորէ՛ և կատարէ: - 139. Որպէս ո՛չ արտաբերի հնչումն ձայնական գործեաց և ո՛չ փոփոխէ զօդն որ ի *մէջն*: -145. Արդ՝ ներքին հողմն ի վեր ձգէ զերկիր. և վերին հողմն ի վայր. և այսպէս ի *մէջն* հաստատ մնայ երկիր: - 181-182. Չորրորդ՝ հաւասարակշիռ է երկիրս բոլորակի. և յամենայն կողմանէ ծանրութիւնն ի *մէջն* ժողովի. և այսպէս ինքն ի վերայ իւր հաստատեալ է: - 182. Եւ բնականն Նախ այսպէս. զի օդն որ ի *մէջէ* մտեալ և փեռեկեալ զներքին և զվերին կիսագունդն, նա՛ է պատճառ շարժութեան երկնից: - 182. Դարձեալ՝ կէտ երկրիս անշարժ է ի *մէջն*. և պատճառէ՛ զշարժութիւնն երկնի: - 182. ...մեծագոյն երևէին. քանզի ի *միջին* կիտէն երկնից առ մեզ է ուղղական գիծ. իսկ յարևելից առ մեզ է՛ խոտորնակի գիծ. և ուղղական գիծն կա՛րճ է քան զխոտորնակ գիծն: - 183. Եւ յորժամ առնու զլոյսն յարևոյն, ի յեզրն երկրիս ձևն բոլորակ է՝ խաւար մնա *մէջն*: - 187. Իսկ ա՛յժմ քրիստոնէիցս կրկին է սկիզբն բնական աւուր. այսինքն *մէջ* գիշերն, և առաւօտն: - 194. Եւ զի հաւասար և *մէջ* է տուընջեան: - 196. Փայլակն լինի ի շիջեալ հրոյն ջրով ամպոյն և հողմով որ ի *մէջն* է, վերստին արծարծի և արտաքս բացափայլէ: - 203. Զի են որ զկեղևն ունեն և ո՛չ *զմէջն*. որպէս ծիրան: - 213. Եւ են որ *զմէջն* ունեն և ո՛չ զկեղևն. որպէս նուռն: - 213. Եւ են որ ո՛չ *մէջն* ունի և ո՛չ կեղևն. որպէս գղթորն: - 213. Նա՛խ՝ զի սերմնական զօրութիւնն է ի *մէջն* բնաւորեալ. ուստի բոլորապէս և հաւասար տայ շարժիլ տնկոյն: - 213. Տասներորդ՝ *մէջ* և կապ ամենայն գոյիցս մա՛րդն է կազմեալ. զի ամենայն արարածք ի **բ** դէմս

որոշին. այսինքն մինն յիմանալի և միւսն զգալի. և սոքա եղեն յառաջագոյն: - 231. Այսպէս և գլուխն ի մարմինն է՛ վերջին մասն. որ է՛ գործիք բանին. և սիրտն ի *մէջն*. և երիկամունքն վերջին: - 232. Որ է՛ մազն. և մորթն. և միսն. և արիւնն. և ջիլն. և ոսկրն. և ուղեղն ի *մէջն*: - 240. Զի ուղեղն ի *մէջն* սնուցանէ զոսկրն. և ջիլն կապէ՛ առ միմեանս զի մի քակտեսցին ոսկերքն. և արիւնն կերակո՛ւր է նոցա: - 240. Եւ հոտած ջուրն ի *մէջքն* է վասն գոյութեան ծննդեանն: - 240. Եւ թէ ոք հարցանէ, ընդէ՞ր է զի ամենայն սերմն ի *մէջն* է: - 256. Պատասխանեմք եթէ՝ ոմանք յարմատս ունին զսերմն. ոմանք ի ծայրքն. կէսք ի տերևն. այլք ի կեղևն. թէպէտ և սոցա սերմնական զօրութիւնն է՛ ի *մէջն*, այլ առաւել կենդանւոյն: - 256. Նախ վասն՝ ի *մէջն* գոլով հաւասարապէս հուպ յամենայն մասանցն զօրութիւն առնլոյ: - 256. Երկրորդ՝ ի *մէջն* գոլով՝ մի վնասեսցի յարտաքին պատահարից: - 256. Դարձեալ՝ ո՛չ հեռի է ի նախախնամութեանց, և ո՛չ հեռի ի ստեղծմանց. այլ է՛ ի *մէջն*: - 257. Եւ նախ սիրտն կազմի քան զայլ անդամսն. զի ջերմութիւն սերմանն ի *մէջն* ժողովի և կազմէ՛ զսիրտն: - 261. *Մէջ* գիշեր է երիտասարդութիւնն: - 265. *Մէջ* գիշեր՝ երիտասարդութիւնն ի խորս մեղաց ննջեալ: - 266. Դարձեալ՝ հանճարն է ի սկիզբն. իմաստութիւնն ի *մէջն*. գիտութիւնն ի կատարումն: - 270. Դարձեալ՝ *մէջ* և ե՛զր է ամենայն ստեղծւածոց որպէս ասացաւ ի վերոյ: - 275. Վեցերորդ՝ ո՛չ առնու ի գլխոյն և ո՛չ յոտիցն. այլ ի *միջացն*. զի խրատէ՛ զմարդիկ ո՛չ հաւասար գլխոյն պատուել զկինն, և ո՛չ անարգել իբրև զոտք. այլ միջակ պատուով չափաւորել զնա: - 276. **Իններորդ՝ զի որպէս կողից երեսն որ ի փորն նայի՝ կոկ գոլով և մզղնատեսակ. իսկ *մէջն* փուչ և մրրախառն. այսպէս սէրն զոր ցուցանէ առ այրն, նօսր առ ի ցոյցս՝ և երեսս միայն ունի. իսկ ի սիրտն զմրուր դառնութեան**: - 276. Կամ լեարդն ի ներքոյ. սիրտն ի *մէջն*. և թոքն թեթև ի վերոյ: - 293. Դարձեալ՝ ցանկութիւնն ի ներքոյ. ցասմնականն ի *մէջն*. և բանն թռչուն ի վերոյ: - 293. Եւ **բ** երեսին *մէջն* **ծ** կանգնոյ լայնութիւն: - 297. Գօտին զօրութիւն նշանակէ որ էր ի *մէջքն*. այլ և ի յաղօթս կայր և գօտեաւ պնդեալ էր: - 311. Եւ սրբութիւն սրբոցն ի յարևելք. զի երուսաղէմ՝ կողմ արևելից է նոցա. և սրբութիւնն ի *մէջն*. և սրահն յարևմուտս. որպէս մերս եկեղեցի: - 343. Ուր բեմն է. և *մէջ* եկեղեցւոյն. և արտաքին գաւիթն. կամ ժամատունն: - 343. Այլ թէ հարցանեն զորքանութիւն սիւնիցն. **ծ** սիւն ի մէջ խորանին. և **թ** սիւն վարագուրացն. և մի թափանց ի *մէջն* յարևելից յարևմուտս. որ լինի **կ.** և **ձ** սփռիչ. և **խ** նիգք. և ամենայնն ոսկեպատ. որ բովանդակն լինի **ճձ** ի ներքս: - 343. Զի՞նչ կայր ի սրբութեան *մէջն*: - 346. Երկրորդ՝ սեղան խնկոցն ի *մէջն*: - 346. Երրորդ՝ վեցեքեանն ունին լոյս, և առնուն զիւղն ի *միջոյն*. և ամէն մոլորակք ունին լոյս. և այլ առնուն յարևու: - 346. Վեցերորդ, այն սկիզբն. և աստ *մէջ*. և անդ եզր և կատարումն: - 355. Եւ ի յայս *մէջս* չուէր խորանն: - 378. Եւ դարձեալ, երկոտասան արո եպիսկոպոսք. և կաթողիկոսն ի *մէջն*. նոյնպէս և արք եպիսկոպոսն **բժ**ան ունի գաւազան: - 382. Նա՛խ՝ զի գործ ողորմութեանն է ի սկիզբն աշխարհի՝ և ի *մէջն*. և ի կատարումն յարութեամբ մարդկան որպէս ցուցաւ ի վերոյ: - 458. Հինգերորդ՝ զի սրբեսցէ զբոլոր բնութիւնս մեր ի մեղաց. ի սկիզբն ի *մէջն* և ի կատարումն: - 469. Եւ ոմանք ասեն թէ՝ յերկնաւոր դրախտն եմուտ հոգւովն մինչ ի կիրակէ *մէջ* գիշերին. և ի նոյն ժամն էջ ի դժոխս և ազատեալ զհոգիսն յարեաւ ի գերեզմանէն: - 495. Նա՛խ՝ զի մատթէոս զերեկոյի շաբաթուն և զլուսանալ միաշաբաթին յիշէ. այսինքն զսկիզբն և զվախճան գիշերին. զի յերկուց *մէջն* որ է՛ հասարակն և *մէջ* գիշերին՝ նշանակեսցէ զժամ յարութեանն: - 512. **Ասեմք թէ՝ վաղ առաւօտն և խոր երեկոյն *զմէջ* գիշերն նշանակեն**...: - 515. Դարձեալ՝ սէրն է սկիզբն բարեաց. զի յաստուծոյ է. և է՛ *մէջ* բարեաց. զի ըստ աստուծոյ է. և է՛ վախճան բարեաց. զի վասն աստուծոյ է: - 575. Ասի և *մէջ*. զի տեսակաւորէ՛ զգործս: - 575. Ա՛րդ՝ *մէջս* այս իմացեալ լինի ի մէջ աւելորդութեան և նուազութեան: - 578. Զի **բ** են հայր և մայր մեր. և **բ** ծնունդ որդին և դուստրն. և **բ** եղբայրն և քոյրն. և մեք ի *մէջն* **է** երրորդ: - 611. Զի **դ** ծնունդ ի *մէջն* է ըստ չորից տարերց կատարման: - 611. Երկրորդ, որպէս նա եռայարկեան խորան, որ է՛ գաւիթն, և *մէջն* և բեմն: - 613. Նա՛խ՝ նշանակէ՛ զերեք ժամն. *մէջ* գիշերին, առաւօտին, և արևագալն: - 618. Եւ այս գիտելի է, զի ի գիշերն **դ** անգամ կատարի. այսինքն է հանգստեանն, *մէջ* գիշերին, առաւօտին, և արևագալին: - 622. Երկրորդ՝ պահն է *մէջ* գիշերն: - 622. *Մէջ* գիշերին է՛ երիտասարդութիւնն. յորում առաւել թմրիմք ի մեղս: - 622. Դարձեալ՝ սկիզբն աղօթիցն է՛ առ հայր. և *մէջն* որ է՛ խաղաղութիւնն առ հոգին սուրբ. որպէս ասացաւ ի վերոյ. - 633. Եւ ոմանք երեքկին օրհնեն. ի սկիզբն. ի *մէջն*, և յետ կերակրոյն: - 655. Գօտի ի *մէջն*, ի նշան արիութեան: - 674. Նա՛խ՝ զի **գ** թիւն խորհրդաւոր է. որ ունի սկիզբն և *մէջ* և կատարումն: - 681. Եւ ասեն թէ մանկունք ի յանկողնի՝ են արդարքն ընդ քրիստոսի. և *մէջ* գիշերն է այս կեանքս. ապա ուրեմն առեալ են զվարձս: - 696-697. Այլ և գօտով պնդել *զմէջս* որ են բարի գործք: - 730. Ուր ինքն տէրն խաչեցաւ և յարեաւ. և սոքա ամենեքեան ձոր յովսափաթու կոչին, որ յերկու ձորի *մէջն* է յերուսաղէմ: - 737. Նա՛խ՝ զի տեղիք դատաստանին պա՛րտ է զի ի հասարակ վայրի լիցի և երուսաղէմ է՛ *մէջ* աշխարհի: - 738

***ԸՆԴ ՄԷՋ +*** Ո՞ ոք է *ընդ մէջ* որդւոյ և հօր շաղկապ՝ զի հրաւիրեսցէ զնա յորդէգրութիւն հօր. և զի ո՛չ ոք: - 39. Յետ ընդդէմ արտաքս աքսորելոյ զարտաքինսն. և *ընդ մէջ* հերձելոյ զհերձուածօղսն, և զճշմարիտն աստուածաբանութիւն հաստատելոյ ի մեզ, բե՛ր սկսցուք զսկիզբն արարչութեան եղելոց մինչ ի վախճան կատարման այժմնոյս՝ ըստ կարգի հին և նոր կտակարանաց հետևեալ: - 156. Ստուեր երկրի *ընդ մէջ* անցեալ արեգական՝ խաւարէ՛ զլուսինն: - 187. Ջուրք ծո՛վուց *ընդ մէջ* երկրի անցանեն և պարզին ի ժանկոյն և ի դառնութեանցն. զի երկիր և աւազք զդառնութիւնն յինքեանս քարշեն, և մնայ քաղցր ջուրն: - 208. Կամ ո՛չ լսել աղաղակի մերոյ. իբր երկաթի երկինք *ընդ մէջ* գոլով: - 376. Առաջին միաւորութիւն ստոյգ և ճշմարիտ՝ հոմանիւթ մասնաւորաբար որոշեցելոց. որոց ոչ ինչ տարանիւթ *ընդ մէջ* երևի. որպէս երկուց ջահից լուցելոց միաւորութիւն լուսոյն: - 476. Իսկ կնկուղ ի գլուխ կրօնաւորաց և օդ յոտս և գօտի *ընդ մէջ*. զսպառազինիլն և զարիութեամբ ընթանալն ի պատերազմ: - 671. Քսանևմի, և յառակս տնտեսին զոր կացոյց տէր ի վերայ ծառայիցն տալ կերակուր. զոր յետոյ տէրն եկեալ գտցէ այնպէս՝ երանի է ծառային այնմիկ. ապա թէ ոչ՝ *ընդ մէջ* կտրեսցէ: - 693

***Ի ՄԷՋ +*** Վեցերորդ՝ եթէ է ամբոխումն ինչ *ի մէջ* նոցա, ոչինչ էին մեկուսի ի մէնջ. այլ դժուարածեռն որպէս զմեզ և հակառակ: - 21. Եւ ո՛չ լինի *ի մէջ* մի և նոյն էութեանն կամք և ոչ կամութիւն: - 36. Երրորդ՝ զի ունակութիւն և պակասութիւն եղեր *ի մէջ* աստուածութեանն: - 38. Առորս ասելի է թէ՝ ո՛չ է այլ էութիւն *ի մէջ* արարչին և արարածոյն. այլ հա՛րկ է զի լիցի աստուած՝ կամ արարած: - 52. Են և ասին ի յէքս, մարդ, հրեշտակ, երկինք, երկիր. և որ *ի մէջ* սոցա է՛ և ասի: - 55. Յորմէ և մարտ *ի մէջ* Երրորդութեանն: - 70. Յորոյ փախչելով մեր և յերկուց ծայրիցն, զառ *ի մէջն* ունելով ուղղապէս ընթացք, ասեմք եթէ քրիստոս ըստ անշփոթ միաւորութեանն՝ աստուածային բնութեամբն մարդ է, և մարդկային բնութեամբն աստուած է: - 75. Իսկ հոգի ո՛չ է արարիչ ժամանակաց. և ո՛չ յառաջ քան զժամանակս. զի *ի մէջ* ժամանակի՛ է: - 114. Այլ զանազանութիւն է *ի մէջ* երկնաւորացն: - 138. Զամենայն հրեշտակս բարի արար աստուած, այլ ո՛չ ծայրագոյն բարիս. այլ միջակս. որ է *ի մէջ* անփոփոխ և փոփոխական բարւոյն. այնպէս՝ զի թէ դառնային և սիրէին զայն՝ որ ի վեր քան զինքեանս, ելանէին յորպիսութիւն շնորհաց և փառաց. որպէս այժմ են հրեշտակք բարիք: - 146. ...*ի մէջ* նեղութեանց լինելով՝ յանցեալ մեղացն զղջանամք և սրբիմք. և յապագայն զգուշութեամբ պարսպիմք. և ի ներկայն՝ արի՛ և կա՛զմ պատրաստիմք: - 162. Եւ պարզ գոյացութիւն է միայն անեղ գոյին *ի մէջ* ամենայն եղելոց: - 171. Զի ըստ իմաստ նոյն է՛ աստուած ամենայն ուրէք և ո՛չ ուրէք. ոչ ի տեղւոջ իմիք՝ և ո՛չ բացեայ ի տեղւոջէ իմիք. այլ վերոյ սորա, և ներքոյ սորա. *ի մէջ* սորա, և արտաքոյ սորա: - 180. Որպէս կրիտէս թագաւորն կրէատացւոց կախեաց *ի մէջ* տաճարին անդամանդ քարեայ ամենայն ուստէք ըմբռնեալ: - 180. Ո՞րպէս է երկիրս *ի մէջ* երկնից հաստատեալ և անշարժ մնայ: - 181. Նախ այսպէս ասեն եթէ՝ տարերքն գնդաձև պատեալ են զմիմեանս և ամրացեալ. զի բոլորակ հուրն պատեալ է զօդ. և օդ զջուր. և *ի մէջ* ջրոյն երկիր է՛ հաստատեալ: - 181. Իսկ բոլորակ ձևն *ի մէջ* ամենայն ձևոց է կատարեալ: - 182. Երրորդ՝ զի վեցեակ թիւն *ի մէջ* ամենայն թուոց առաջին կատարեալ է. և **զ** թիւն է ի բոլորակ ձևն. զի որ քան է ի միջին կիտէն ի բոլոր ծիրն, վեց այնչափ է իւր բոլորակ ծիրն: - 182-183. Վեցերորդ՝ զի թէ երկինքն ո՛չ էր բոլորակ, յայնժամ արեգակն և այլ աստեղք յորժամ գային *ի մէջ* երկնից...: - 183. Եւ այս **բժ**ան կենդանակերպից վեցն է *ի մէջ* երկնից ի հիւսիսոյ կողմս առ մեզ, և ի մին կիսագունդն: - 189. Իսկ սուրբն եփրեմ ասէ, մետասան թիւ գտանի *ի մէջ* երից աւուրցն՝ ստեղծման լուսնին: - 191. Վասն զի *ի մէջ* գիշերի ծնաւ քրիստոս. և *ի մէջ* գիշերի յարեաւ ի գերեզմանէն: - 194. Վասն որոյ տօն առաջին աւուրն *ի մէջ* գիշերի սկսանի. և մեծամեծ տօնքն յերեկօրեայ որպէս ասեմք զշաբաթի երեկոյն կիրակմուտ: - 194. Իսկ գէջն լինի ամպ. և չորն *ի մէջ* ամպոյն նեղեալ պատառելով զծալմունս ամպոյն՝ լինի որոտ և փայլատակունք ևս: - 204. Զի՞նչ է շանթքն որ *ի մէջ* ամպոյն: - 204. Շանթքն լինի *ի մէջ* գոլորշեացն որ *ի մէջ* ամպոյն. և ջերմութեամբն չորացեալ. քանզի հո՛ւր է քարացեալ: - 204. Եւ է՛ որ *ի մէջ* օդոյդ գայ և շիջանի: - 204. Եւ բազումք տեսանեն զսուրն *ի մէջ* պատենիցն հալեալ, և պատեանքն անխանձ մնացեալ: - 204. Իսկ Զիւնն ծնանի ի ջերմացեալ ամպս *ի մէջ* երկուց ներհակ հողմոց: - 205. Իններորդ՝ դառն ջուրն *ի մէջ* ամպոյն փոխի քաղցր և ախորժելի: - 206. Որպէս *ի մէջ* երկրի գոն երակք ջրոց, նոյնպէս և հողմոց, ուստի ի վեր փչեն: - 208. Չորրորդ՝ ցոյցք է ամենահրաշ խնամոց արարչին. որ զհոսանուտ ջուրս ներքին՝ *ի մէջ* լերանց ի վե՛ր հանէ ի պէտս կենդանեաց որ ա՛նդ են. այլ և յոռոգումն ուր գետք ոչ ելանեն: - 209. Երրորդ՝ զի կրէ՛ զջուր *ի մէջ* իւր, և յեզերս, և ի վերայ երեսացն: - 210. Չորրորդ՝ երկիր. այսինքն զի յերերման և ի տատանմա՛ն է *ի մէջ* փորձանաց: - 210. Եւ զի զթշնամութիւն էարկ *ի մէջ* մարդոյն և աստուծոյ, զթշնամութիւն եդ *ի մէջ* մարդոյն և օձին: - 219. Վասն զի բնական լուսաւո՛ր է օդս որ

*ի մէջ* դրախտին: - 222. Եւ մանանայն յանապատին կերակրելի էր. և մնաց անապական *ի մէջ* սափորին: - 223. Որպէս մարմինն ադամայ յերկրէ է և անապական. և մանանայն յօդոյ և անապական. և յա՛յտ է *ի մէջ* սափորին: - 225. Այսպէս մարմին մարդոյ որ քան է երկայնութեամբ ի գագաթէ՛ գլխոյն մինչև ի ներբանս ոտիցն, նոյն քան է լայնութիւն *ի մէջ* երկուց երկայն մատիցն ձեռաց: - 232. Որպէս ջուրն *ի մէջ* ամպոյն փրփրի և լինի սպիտակ ձիւն: - 242. Եւ որպէս արիւն հոսմանն *ի մէջ* երակացն փոխի և լինի սպիտակ կաթն, և ժողովի ի ստինսն: - 242. Գոյնն միջակ *ի մէջ* սպիտակին և սևին՝ ցուցանէ զուշիմն և զբարեբարոյն: - 247. Եւ դարձեալ սիրտն է *ի մէջ* բոլոր անդամոցն որպէս կէտ կարակնին: - 261. Դարձեալ և տէրն բաժանէ զհասակ մարդոյ ի **դ**. յերեկոյ. *ի մէջ* գիշեր. ի հաւախօս. և ընդ առաւօտս: - 265. Որպէս ասէ աստուածաբանն թէ՝ ոչ ինչ էր ծածկոյթ *ի մէջ* նոցա և աստուծոյ...: - 282. Եւ այսպէս էր միջասահման կեանք նոցա զոր ասեն *ի մէջ* մահու և անմահութեան: - 282. Վասն է՞ր այնչափ *ի մէջ* ցաւոց և տրտմութեան եմք առաւել քան զառաջինսն: - 292. Այլ և եկեղեցի սուրբ շինեալ ի քրիստոսէ հոգևոր տապան մեզ *ի մէջ* ծովու աշխարհիս՝ որ զհոգիս մեր փրկէ ի ջուրց մեղաց: - 293. Երրորդ՝ զի առաքինութիւնն ղովտայ առաւել երևեցի *ի մէջ* չարացն: - 302. Նոյնպէս յորժամ բնակին բարեպաշտք *ի մէջ* անհաւատից, Նա՛խ՝ զի աղօթք նոցա պահապան է նոցա: - 302. Չորրորդ՝ զի բարիքն ամբողջ մնալով *ի մէջ* չարացն, զօրութիւնն և արդարութիւնն աստուծոյ երևեցի: - 302. Անդրանիկ է իսահակ *ի մէջ* բազմացն: - 308. Անդրանիկ և մեք *ի մէջ* եղբարց ի դասս անդրանկաց յերկինս: - 308. Նոյնպէս և յակոբ, եփրեմ, դաւիթ, կրտսեր *ի մէջ* եղբարցն և թագաւորացն. խնդրե՛մ ուսանիլ: - 309. Չորրորդ՝ զի մի է և միակ անդրանիկն *ի մէջ* բազում եղբարց. որպէս մի է գլուխն և բազում անդամք: - 310. Եւ տէր մեր ճոխ *ի մէջ* նոցա. զի բարձր և գերագոյն եղև ի վերայ մեղաց: - 316. Եւ է՛ *ի մէջ* արաբիոյ և եդոմայ. զոր այժմ կոչի թիլգուրան. ուր գերեզման նորա՛ է: - 327. Ութերորդ, մովսէս **խ** օր *ի մէջ* ամպոյն կալով էառ զպատուիրանսն: - 328. Եւ որպէս նա՛ *ի մէջ* գիշերի էհան զժողովուրդն: - 330. Եւ տէրն *ի մէջ* գիշերի յարեաւ և ազատեաց զարգելեալսն ի բանտէն: - 330. Երկրորդ՝ զի մի ինչ *ի մէջ* քո և աստուծոյ անասնական լիցի. բարկութիւն կամ ցանկութիւն կամ ա՛յլ ինչ: - 331. Եւ *ի մէջ* գիշերին յորում ըմբռնեցաւ, էհար զանդրանիկս դիւաց: - 337. Յորում աւուր կիրակէին *ի մէջ* գիշերի ընդ առաւօտս յարեաւ տէր ի գերեզմանէն, ազատելով զհոգիսն ի դժոխոց: - 337. Եւ յա՛յտ է՝ զի *ի մէջ* սափորին մնաց անապական: - 339. Զի՞նչ էր խորհուրդ մանանային *ի մէջ* սափորին: - 339. Եւ արտաքին սրահին պատուարն *ի մէջ* ունելով զխորանն յամենայն կողմանց **ճ** կանգուն երկայն ի հիւսիսոյ և ի հարաւոյ կողմն: - 343. Այլ թէ հարցանեն զորքանութիւն սիւնիցն. **ծ** սիւն *ի մէջ* խորանին...: - 343. Նոյնպէս և Ղևտացիքն շուրջ զխորանաւն բանակէին *ի մէջ* **բժ**ան ցեղիցն...: - 343. Յինգերորդ՝ աշտանակն *ի մէջ* սրբութեանն տայր լոյս. և լուսաւորքն ի յերկրի: - 346. Վեցերորդ՝ մահ *ի մէջ* ամրոցին: - 376. Չորրորդ՝ զի յայտնեսցի թէ՝ *ի մէջ* ծառայութեանն յեգիպտոս այնքան բազմացոյց զնոսա խնամքն աստուծոյ. այսքան բազմութիւնս ի տեղիս իւրեանց խաղաղութեամբ բնակեալ՝ ո՞րքան անթիւ բազմասցին: - 377. Ի **դ** կողմն խորանին բանակեցան **բժ**ան ցեղքն. և *ի մէջ* նոցա խորանն էր Ղևտական ցեղօքն: - 378. Զի երկոտասան վիճակացն առաքեալք. և նախ քրիստոս *ի մէջ* նոցա: - 382. Նա՛խ՝ զի հուր աստուածութեանն կիզոյր զնա՛. որպէս ջուր *ի մէջ* ապակոյ ի տապոյ արևուն պակասի: - 383. Այլ և զհասարակքս խնամեաց առաւել քան զնոսա. զի *ի մէջ* նոցա օրինակօք էր, և *ի մէջ* մեր ճշմարտութեամբ: - 398. Եւ թէ մովսէսի ոչ հաւատայք որ փառաւո՛րն է *ի մէջ* ձեր, ինձ զիա՞րդ հաւատայք որ թշնամի կարծէք: - 405. Եւ անջրպետեալ *ի մէջ* ժողովրդեանն և մարմնոյն շուրջանակի. զի մի՛ իմասցեն զթաղումն նորա: - 410. Քսաներորդ, սամփսոն *ի մէջ* գիշերի զփակեալ դուռսն կորզեաց և էհան ի լեառն: - 423. Եւ տէրն *ի մէջ* գիշերի զդրունս և զնիգս դժոխոց խորտակեալ յարեաւ ի գերեզմանէն. և զհոգիս մարդկան էհան յերկինս: - 423. Եւ ողորմութիւնն *ի մէջ* արդարութեանն առաւելու ժտիւ խնդրողաց: - 424. Վեցերորդ՝ զնա վկայէ՛ բարի և լաւ և անձնեայ *ի մէջ* իսրայէլի. և տէր մեր բարի և ընտրեալ *ի մէջ* բիւրաւոր արարածոց: - 426-427. Ապա յա՛յտ է զի *ի մէջ* կարծեաց էր նա. զի թէ սուտ համարէր զվհուկն, ո՛չ երկնչէր ի մահու. և թէ ճշմարիտ՝ ո՛չ երթայր ի պատերազմ: - 429. Երեսունն**թ**, դաւիթ այլակերպեցաւ *ի մէջ* այլազգեաց. և տէրն անարգեցաւ ի խաչին: - 437. Իսկ *ի մէջ* ծնկաց գլուխն՝ այն է, որ զծունկն ի գետինն եդ, և զգլուխն հանդէպ նմին. և յայսկոյս և յայնկոյս զձեռսն խաչանման ի գետինն: - 444. Յորո՞ւմ ժամու յարեաւ *ի մէջ* գիշերի ի վկայութեամբ: - 455. Մին *ի մէջ* եւայի և բանսարկուին. որով մուծաւ մահ ի ներս: - 465. Եւ միւս *ի մէջ* մարիամու և հրեշտակին. յորմէ եղև կեանք: - 465. Ո՞ր քան ևս քահանայապետին որ զերկոտասան օր պարտ էր խնկօք պաշտել *ի մէջ* տաճարին ի ժամ աղօթիցն. թէպէտ ի սուրբն սրբոց միանգամ ի տարւոջն: - 483-484. Իններորդ՝ զի և նոքա իսկ որ զայս ասեն՝ առնեն յունվարի **զ** ճրագալոյց ընդ մեզ. և ճրագալոյցն ո՛չ է մկրտութեան, այլ ծննդեան *ի մէջ* գիշերի: - 484. Դարձեալ

նշանակէ՛ զամենայն կուրութիւնս մարմնասիրաց *ի մէջ* եկեղեցւոյ: - 490. Երրորդ՝ զի *ի մէջ* ծանօթից էր և սիրելեաց: - 490. Չորրորդ՝ զի ի տօնի զատկին *ի մէջ* բազում ժողովրդոց: - 490. Եւ չորիւքս այս առաւելու ամօթն. իսկ Յինգերորդ՝ զի *ի մէջ* չարագործ աւազակա՛ցն էր համարեալ: - 490. Դարձեալ վայելո՛ւչ էր փրկութեան մեր լինիլ ի ձեռն փայտի. որ ցուցանէ զփայտն կենաց *ի մէջ* դրախտին: - 494. Այլ զանազանութիւն գոյ *ի մէջ* մահու նախաստեղծ մարդոյն, և մահու տեառն մերոյ քրիստոսի, և մահու հասարակ մարդկայինս ազգի: - 495. Այս զանազանութիւն *ի մէջ* երից մահուանն. ադամայ, և քրիստոսի, և մեր մարդկայինս ազգի: - 496. Ութերորդ՝ մանանայն յանապատի էր օրինակ անապական մարմնոյ փրկչին. և է՛ անապական մինչև ցայսօր *ի մէջ* ոսկի սափորին. ապա ուրեմն ճշմարիտ մարմինն քրիստոսի էր անապական ի կուսական արգանդէ աստուածածին կուսին: - 499. Այլ յարութիւնն քրիստոսի յաւուր միաշաբաթու *ի մէջ* գիշերի է: - 508. Եւ բնական աւուր սկիզբն է ծագումն լուսոյն. և շնորհականին *ի մէջ* գիշերն: - 508. Եւ որ ոք ո՛չ խոստովանի զքրիստոս աստուած, զտօն նորա ըստ հասարակ մարտիրոսացն առնէ *ի մէջ* գիշերոյն ի վեր: - 509. Վասն զի բոլոր մարդն երիւք է կայացեալ. որ է հոգի և մարմին, և *ի մէջ* երկուցն շունչն է խառնեալ: - 510. Այլ որք ուղղաձնութեան են աշակերտք՝ *ի մէջ* գիշերի ասեն զժամ յարութեանն քրիստոսի ի գերեզմանէն. որոց հետևիմք և մեք և հաստատեմք բազում վկայութեամբ և օրինակաւ: - 512. ...սովո՛ր էր յայլ աւուրս ընդ առաւօտն կալ յաղօթս, և կիրակէն *ի մէջ* գիշերի: - 512. Երրորդ՝ *ի մէջ* գիշերի ծնաւ ի կուսական արգանդէն որպէս յա՛յտ է ի հովւացն և հրեշտակացն: - 512. Եւ ի նոյն ժամն *ի մէջ* գիշերի ծնաւ ի կոյս գերեզմանէն: - 512. Չորրորդ՝ *ի մէջ* գիշերի ըմբռնեցաւ և կապեցաւ ի մահ. և *ի մէջ* գիշերի յարեաւ և արձակեցաւ ի մահու: - 512. Ապա ուրեմն յարութիւնն քրիստոսի է՛ *ի մէջ* գիշերի յաւուր կիրակէի որպէս ասացաւ: - 512. Վեցերորդ՝ *ի մէջ* գիշերի հրեշտակն եհար զեգիպտոս. և մովսէս եհան զորդիսն իէլի. որ էր օրինակ աւերման դժոխոցն և ազատութեան հոգւոց: - 512. Նոյնպէս և քրիստոս *ի մէջ* գիշերի եհար զսատանայ և կապեաց: - 512. Նոյնպէս ըստ օրինակին արար տէր մեր զատիկն յերեկոյի մեծի **ե** շաբաթին. և *ի մէջ* գիշերին յորում ըմբռնեցաւ՝ եհար զանդրանիկսն դիւաց: - 513. Յորում աւուր կիրակէի *ի մէջ* գիշերի ընդ առաւօտն յարեաւ տէրն ի գերեզմանէն. հանելով զհոգիսն յանապատն երկնից. և խաչանիշ գաւազանաւն ընկղմեցաւ փարաւօն յանդունդս դժոխոց: - 513. Եւ *ի մէջ* գիշերի զարթեաւ և զդրունս փակեալ նգօքն և սեմօք եհան յուսն և ել ի լեառն: - 513. Որ նշանակէ՛ զյարութիւնն քրիստոսի *ի մէջ* գիշերի զդրունս դժոխոցն խորտակեալ. և զհոգիսն հանեալ ի լեառն երկնային: - 513. Իններորդ, գեթէօն՝ այն որ զցօղն ետես ի վերայ գեղման, զհօր իւրոյ զեզն պարարակ հրամանաւ հրեշտակին *ի մէջ* գիշերին պատարագեալ. և զանտառն և զսեղանն բահաղու կործանեալ և զերծեալ ի ձեռաց նոցա. որ էր օրինակ փրկչին. զի նա՛ է եզն պարարակ պատարագեալ. և *ի մէջ* գիշերի զբագինսն դժոխոց կործանեալ և յարուցեալ և ապրեալ ի մահու: - 513. Յորում *ի մէջ* գիշերի թողեալ զկտաւսն ի գերեզմանի և յարեաւ ել առ հայր ի յերկինս: - 513. Յնգետասաներորդ՝ *ի մէջ* գիշերի՛ է յարութիւնն. որպէս ասէ ոսկէբերանն ի յարութեան ճառին, և սուրբն նիւսացին, և բարսեղ կեսարացին, և գրիգոր սկեռացին, և այլք, - 514. ...եթէ քրիստոս յարեաւ *ի մէջ* գիշերի. զի այց արասցէ մարդկան ազգի. և զանկեալքս ի խաւարի և ի ստուերս մահու՝ ի լոյս գիտութեան և շնորհաց յարուսցէ: - 514. Վեշտասաներորդ՝ *ի մէջ* գիշերի յարեաւ, զի զհոգիսն ի խաւարային բանտէն ի լոյս կենաց շրջեսցէ: - 514. Եօթնևժ՝ *ի մէջ* գիշերի յարեաւ, զի զօրէնս ստուերական ի լոյս ճշմարտութեան փոխեսցէ: - 514. Ութևժ՝ *ի մէջ* գիշերի է յարութիւն փրկչին...: - 514. Իննևժ՝ պատշա՛ճ էր *ի մէջ* գիշերի յառնել. զի ի նոյն ժամն սկսանի արեգակն բարձրանալ, և յառաւօտն ծագէ՛ առ մեզ: - 515. Քսաներորդ, յա՛յտ է յա՛յսմանէ՝ որ նախ քան զքրիստոս՝ էր սկիզբն աւուր ծագումն լուսոյն. իսկ յետ յարութեանն քրիստոսի եղև սկիզբն աւուրն *ի մէջ* գիշերի...: - 515. Եւ ի յայս միտս զտօն ամենայն սրբոց մարտիրոսաց *ի մէջ* գիշերի սկսանեմք **զ** ժամով յառաջ քան զծագումն լուսոյն հասարակ աւուր: - 515. Ասեմք նախ՝ թէ յարութիւնն *ի մէջ* գիշերի է որպէս ցուցաւ. այլ երևիլն ընդ արշալո՛յսն է: - 515. Մատթէոս զառաջինն գրէ որ *ի մէջ* գիշերի եկին. և մի հրեշտակ տեսին. և զվէմն առաջի նոցա թաւալեցոյց և նստաւ ի վերայ նորա: - 515. Այս է, զի յորժամ *ի մէջ* գիշերին հրամայեաց հրեշտակն գնալ և պատմել աշակերտացն, ա՛յլ կանայքն որ ընդ նմայն էին՝ գնացին...: - 515. Ա՛րդ՝ շաբաթի գիշերն և տիւն **իդ** ժամ. և **զ** ժամ ի կիրակէէն մինչ *ի մէջ* գիշերն. որ լինի **լ** ժամ. իսկ հոգին **դ** ժամ և կէս նախ իջեալ ի դժոխս որ լինի **լգ** ժամ և կէս: - 516. Երրորդ՝ վասն մխիթարութեան աշակերտացն. զի **խ** օր մխիթարեսցէ զնոսա փոխանակ **խ** ժամուն որ տրտմեցան ի մահն քրիստոսի. որպէս ասացաւ թէ յարութիւնն *ի մէջ* գիշերի, այլ երևեցաւ ընդ արշալոյսն առաքելոցն...: - 520. Այլ որպէս *ի մէջ* համակարգից քահանայից մինն լինի հայր: - 546. Ասեմք առ այս, թէ որպէս *ի մէջ* սերովբէից և քերովբէից և աթոռոց ո՛չ

ասի վերնագոյն և նուաստագոյն, զի համակա՛րգ են և շուրջ զաստուծով: - 547. Եւ որպէս *ի մէջ* աւետարանչացն ո՛չ է մեծ և փոքր: - 547. Նոյնպէս, *ի մէջ* առաքելոցն ո՛չ է մեծ և փոքր իշխանութեամբ: - 547. Սակայն կարգ գոյ *ի մէջ* նոցա և պատիւ և հնազանդութիւն և սէր. այլ իշխանութեամբ համահաւասարք են: - 547. Որ և յարազուարճ բարերջանկութեամբ լի և ամենազան քաղցրորակ պտղաւէտութեամբ տնկեցիս ծառ բարձրաբերձ յընթացս հոգւոյն *ի մէջ* եկեղեցւոյ տանս թորգոմեան ազգիս հայկազնեան: - 558. Դարձեալ զանազանութիւն է *ի մէջ* սիրոյ աստուծոյ և ընկերին: - 575. Ա՛րդ` *մէջս* այս իմացեալ լինի *ի մէջ* աւելորդութեան և նուազութեան: - 578. Քանզի առնէ զմիտսն անյաղթելի և անփոփոխելի *ի մէջ* յաջողութեանց և թշւառութեանց ամենայնի: - 578. Խոհեմութիւնն է զօրութիւն հոգւոյ, որով ընտրութիւն առնէ *ի մէջ* չարին և բարւոյն: - 579. Երրորդ ինքն առ ինքն. որպէս առաքինիքն *ի մէջ* հոգւոյն և մարմնոյն և մտացն առնեն զխաղաղութիւն...: - 585.  Որով լինի պսակս այս դաշն և կապ *ի մէջ* առն և կնոջն. որով լինի անքակ միութիւն: - 609. Եւ որպէս *ի մէջ* արենազգացն ո՛չ լինի խնամութիւն մինչև ի չորրորդ ծնունդն: - 611. Նոյնպէս և *ի մէջ* խնամոցն ո՛չ լինի այլ խնամութիւն մինչ ի դ ազգն: - 611. Իսկ այժմ *ի մէջ* քրիստոնէից` ի մեռանիլ միոյն` միւսն ևս ածեն. - 613. Եւ ապա՛ *ի մէջ* գիշերին: - 621. Եւ է՛ առաջին ժամ աղօթիցն *ի մէջ* գիշերի. վասն զի *ի մէջ* գիշերի յարեաւ քրիստոս. և *ի մէջ* գիշերի հասարակ յարութիւն մեր. - 621. Երկրորդ ժամն է՛ օրհնութիւն երից մանկանցն ի դէմս որդւոյ. որ նա՛ էջ *ի մէջ* հնոցի աշխարհիս. և փրկեաց զմեզ: - 621. Իսկ ոմանք ևս կատարեալք ամենայնիւ` յերեք ժամանակս աղօթեն առանձնակի. մի *ի մէջ* գիշերի յառաջ քան զհասարակաց ժամն. և մի յայգն. և մի ի ցերեկն: - 623. Նոյն սարասիւք այժմ ի ձեռն փրկչին մերոյ յիսուսի` տապանակաւ խաչին և աղօթիւք սուրբ եկեղեցւոյս` բարձրացեալ պարիսպն չարութեան եօթնից զգայութեանց մեղաց որոշօղ *ի մէջ* մեր և աստուծոյ, կործանեսցի ի սպառ: - 627. Վասն այն և տեղեաւ փոխեմք. զմարգարէսն *ի մէջ* եկեղեցւոյն, և զառաքեալսն մերձ բեմին ընթեռնումք: - 643. ...վասն զի *ի մէջ* մարգարէիցն աստուածաբան կոչեցաւ...: - 644. Այլ տօն նոցա է վաղն *ի մէջ* գիշերոյ ի վեր: - 647. ...վասն որոյ *ի մէջ* գիշերոյ ի վեր սկսանի տօն նահատակութեան նոցա: - 647. Զի որպէս *ի մէջ* շաբաթուն և ի կիրակէին այլ միջոց օր չկայ: - 648. Յորժամ զսարսափելի գլուխն յովհաննու մկրտչին` բերին *ի մէջ* բազմականացն հերովդէի...: - 656. Դարձեալ` վասն հիվանդութեան գիտելի է, զի է *ի մէջ* մահու և կենաց: - 665. զի որ քան էր ի ժամանակս *ի մէջ* փոփոխման էր հոգին...: - 667. Նախ աստ հոգի մարդոյն է *ի մէջ* չարեաց և բարեաց. իսկ յետ մահու *ի մէջ* բարեաց միայն. և ի յարութեանն *ի մէջ* բարեաց և փառաց: - 667. ...և դնեն *ի մէջ* եկեղեցւոյն ի ներքոյ բեմին: - 671. Դարձեալ` դնեն զքահանայս առաջի սեղանոյն ի վերայ բեմին, և զկրօնաւորս *ի մէջ* եկեղեցւոյն, և զաշխարհականս առ դուռն, նշանակէ զզանազան տեղիս: - 672. Զքուն մահուն ասէ մինչ ի կատարած. և *ի մէջ* գիշերի յարութեանն աւուր յարեան ամենայն կուսանքն և կազմեցին զլապտերս: - 693. Երեսուներորդ, յա՛յտ է յորպիսութեանցն չորից որ ասացաւ յառաջագոյն եթէ աստ հոգի մարդոյն է *ի մէջ* բարեաց և չարեաց. իսկ յետ մահու *ի մէջ* բարեաց միայն. իսկ ի յարութեանն *ի մէջ* բարեաց և փառաց: - 694. Նմանապէս և մեղաւորքն անդ ի յարութեանն *ի մէջ* չարեաց և տանջանաց: - 694. Ասեն ոմանք թէ **ժ** ցեղքն իսրայէլի որ փակեցան *ի մէջ* լերանցն կասբից, - 708. Եթէ ինքեամբ` եթէ ի ձեռն միքայէլի. *ի մէջ* վրանի և յաթոռն իւր սատակեսցի. և գլորեսցի մարմինն ակներև ժողովրդեան իւրոյ. - 709. Իսկ թէ ո՞րքան է միջոցն *ի մէջ* **խե** աւուրցն` ո՛չ ոք գիտէ: - 709. յորժամ գայ աստուած *ի մէջ* աստուածացելոցն և լինի ամենայն և յամենայնի աստուած: - 711. Ի գարնան եղանակի ի զատկի կիրակէին *ի մէջ* գիշերի յորում ժամու յարեաւ քրիստոս և հրեշտակն թաւալեցոյց զվէմն և գոչէր զյարութիւնն քրիստոսի. - 714. ...ի նոյն ժամն *ի մէջ* գիշերի հարկանի փողն...: - 714. Զոր օրինակ նշան դրոշմի կայ *ի մէջ* քո` և անասնոյն` և տանն. զի ելեալ ի տանէ երթայ խառնի ի հասարակ նախիրն...: - 719. Եւ *ի մէջ* մանկութեան և ծերութեան երիտասարդութիւնն է թիւ կատարեալ...: - 726. Չորրորդ յա՛յտ է յօրինակաց. զի գաւազանն ահարօնի որ ծաղկեցաւ` օրինա՛կ էր խաչին. և տախտակքն բանին. և ծառն կենաց որ *ի մէջ* դրախտին: - 733. Ա՛րդ` յայտնեալ է նա և որոշեալ *ի մէջ* ամենայն փայտից գոլ արմատ արդարութեան որով փրկեցաք ի բանսարկուէն: - 734. *Ի մէջ* գիշերի. յորում ժամու հրեշտակն զեգիպտոս եհար, և տէրն զդժոխս աւերեաց. յայն ժամու զընտրեալս իւր յաշխարհէ ազատեսցէ: - 734. Հինգերորդ, զի ճշմարիտն և սուտն *ի մէջ* երկուցն երևին. այսինքն դատաւորին և ոսոխացն: - 742. Երրորդ, զի ի կշիռ արդարութեան դատեաց *ի մէջ* հրէից և հեթանոսաց. մարդկան ազգի և սատանայի: - 746. Եւ զայս յայտնեն գիրք սուրբք. զի աւետարանն *ի մէջ* գիշերի ասէ զժամ յարութեանն...: - 747-748. Եւ ասի սա նման փայտին կենաց որ է՛ *ի մէջ* դրախտին. այսինքն քրիստոս` որ է՛ *ի մէջ* եկեղեցւոյ կարգեալ: - 755. Շուշանն *ի մէջ* փշոց: - 756. Սիրելին *ի մէջ* դստերաց: - 756. Երրորդ յաղագս սիրելութեան ընկերացն այնոցիկ. զի այն քան եղիցի սէր *ի մէջ*

նոցա, մինչ զի զուրախութիւնս նոցա ինքեանց համարեսցեն: - 764. Երկրորդ՝ ծառ կենաց են բնակիչք վերնոյն սիօնի. տնկեալք յաղբիւրն կենաց որ իջանէ յաթոռոյն աստուծոյ *ի մէջ* նոցա. ունելով զանմահ կեանս յաւիտենից: - 765. Դարձեալ ի վեր յառաջին բանն մեր երթիցուք որ էր ծառ կենաց *ի մէջ* դրախտին: - 767. Դարձեալ, ծառ կենաց է աւետարանն սուրբ տնկեալ *ի մէջ* եկեղեցւոյ դրախտին. բերելով պտուղ կենաց զիմաստութիւնն երկնաւոր. որ կեանս տայ ճաշակողացն զնա. և միշտ շնորհս բժշկութեան և թողութեան մեղաց: - 768

**Ի ՄԻՋԻ +** Եւ զի ո՛չ շիջանին հրամանաւ արարչին. *ի միջի* գոլով երկուց ներհակացն օդեղէնն երկին...: -188. Եւ յանգոյից, զի անցեալն ապականեալ է, և ապագայն ո՛չ է *ի միջի*, և ներկայն անզգայաբար անցանէ: - 198. Եօթներորդ՝ լուսերակն. և ապա՛ լոյսն *ի միջի*: - 239. Իսկ նշանակէ նախ զժամանակն. զի անցեալն և հանդերձեալն ո՛չ է *ի միջի* այլ ներկայն: - 267. Յիսուսնզ, Բանակետղ ժողովրդեանն խաչաձև. և վրան ժամուն *ի միջի*: - 284. Նոյնպէս և Ղևտացիքն շուրջ զխորանաւն բանակէին ի մէջ **բժ**ան ցեղիցն. և խորանն *ի միջի* նոցա այսպէս: - 378. Երրորդ՝ ի բանակիլն խաչաձև բանակեցան երկոտասան ցեղքն, և խորանն *ի միջի*. որ նշանակէ՛ զխորանն եկեղեցւոյ՝ խորհրդով խաչին քարոզեալ ընդ **դ** կողմ աշխարհի: - 616. Ղամպարք ի միում տան. և ուրուք շարժեցելոյ՝ ի նոցանէ լոյսն ո՛չ շարժի և ոչ բաժանի և ո՛չ հատանի թէ անջրպետ ոչ կայցէ *ի միջի*. և անդ ո՛չ է միջոց: - 770. Փեռեկելով զերկոսին կիսագունդս ներքոյ և վերոյ և *ի միջի* հաստատ կացելոյ երկրի: - 788

**Ի ՄԻՋՈՅ +** Ութերորդ՝ *ի միջոյ* ամպոյն փայլէ որ ծածկեալ էր ի նմա՛: - 207. Նոյնպէս և քերովբէքն ի վերայ քաւութեանն հովանացեալ, և *ի միջոյ* նոցա աստուածախօսութիւնն: - 345. Երրորդ՝ զի յորում ժամու մտանէր մովսէս աղօթս առնել և խնդրուածս, աստուածախօսութիւնք լինէին *ի միջոյ* քերովբէիցն որ կային անդ: - 379. Իններորդ՝ *ի միջոյ* ամպոյն փայլէ որ ծածկեալ էր ի նմա: - 523. ...և զպատերազմն որով ցանկայ մարմինն հակառակ հոգւոյն, հանեն *ի միջոյ*: - 585. Այս է՝ զմեղքն՝ զկամքն չար՝ և զսատանայ՝ որ խռովարարք էին եբարձ *ի միջոյ*. և արար խաղաղութիւն յերկինս և յերկրի: - 585. Դարձեալ՝ ի վախճանի *ի միջոյ* առաքելոց և մարգարէից խօսեալ և դատեալ: - 646. Ոմանք այսպէս կարծեն թէ՝ հաստատութիւնդ բարձցի *ի միջոյ* մինչ վերին երկինքն երևի: - 729

**ՄԷՏ +** Զի որպէս ի կշիռն արդար՝ *մէտ* մի յաւելուածն հարստահարէ՛ զդիմակն և ի խոնարհ ձգէ, այսպէս և դատաստանն աստուծոյ. - 745

**ՄԹԱԳՈՅՆ +** Իսկ Մառախուլն է *մթագոյն* գոլորշի անձնննդական ջուրց. քան զօդ թա՛նձր է, և քան զամպ նօսր: - 204. Մեծ աչքն և *մթագոյն*, բղջախո՛հ է: - 246

**ՄԹԵՐ +** Եթէ յաւելուածքն չար, և *մթերքն* չար: - 556

**ՄԹՈՒԹԻՒՆ +** Վեցերորդն խաւար *մթութեան*: - 210

**ՄԺԵԽ, ՄԺՂՈՒԿ +** Ստե՞ղծ աստուած հոգաբարձութեամբ զճանճս և *զմժեղս* և զայլսն, թէ ի գոյի՞ց պատահեցան: - 217. Երկրորդ՝ վասն հպարտութեան մարդոյն. զի յորժամ խայթեսցեն զնա՝ ծանիցէ զտկարութիւն իւր. որ և զփարաւոն ո՛չ թէ առիւծք կամ առջք հարին, այլ ճանճք և *մժղուկք* տանջեցին: - 217. Եւ աւելի և պակասն է ի նոյն թիւն չորից և երից. եթէ աւուրց և եթէ ժամուց մինչև ի ճանճ և ի *մժեխ*: - 263. Երրորդ՝ հարուածն է մունն որ է՛ մանր տիզ. կամ մոծակ. կամ *մժեխ*. ի ցուցանել զի մանրակըծո՛ւ էին բարուք և խոցոտիչք բանիւք: - 334

**Մի (արգելական) +** Դարձեալ՝ յորժամ ասի, թէ լսիցէ «ի հօրէ», և կամ «առնուցու», *մի՛* իմասցի այնու թէ բղխումն հոգւոյն սրբոյ տակաւին ապառնի էր. զի յաւիտենակա՛ն էր: - 65. Նախ է՛ գործ իմաստութեան աստուծոյ. որով զանազանեսցին արարածք՝ առաւել և նըւազ ընդունելով. և *մի՛* խառնափնդոր և անզանազանապէս: - 130. Մետասաներորդ՝ որպէս հայրն զորդին գան հարու զի զգաստացեալ *մի՛* զրկեսցի ի ժառանգութենէ հայրենեացն. այսպէս և աստուած զսուրբս և զսիրելիս իւր խրատէ՛: - 159. Ապա թէ կամիս զորոշումն բնութեանց ի ներքս բերել ո՛վ երկաբնակ, *մի՛* ասեր **բ** բնութիւն. այլ **գ**. այսինքն զմարմնոյ և զհոգւոյ և զբանին բնութիւն: - 176. Երրորդ՝ զի արարած լսելով՝ *մի՛* կարծեսցես օտար ի նմանէ զեղեալքս, կոչէ՛ ծնունդ. և յորժամ ծնունդ լիցես, *մի՛* կարծեսցես յէութենէն աստուծոյ զեղեալքս՝ ի վերայ բերէ արարած: - 179. Չորրորդ՝ երկիրս այս տեղիք ուսմա՛ն է մեր՝ ըստ կարգի կատարեցան. զի մեք զամենայն ինչ ըստ կարգի ուսցուք. և *մի՛* անկարգ և շփոթեալ: - 192. Հինգերորդ՝ զի մարդն տէր և իշխա՛ն է երկրաւորացս, գիտասցէ ըստ կարգի զիշխանութիւնն իւր ուղղել. և *մի՛* անկարգ և անիրաւ: - 192. Զի վարդապետք ասեն եթէ՝ կերակուր գազանաց այլ կենդանիք են. վասն որոյ խնամքն աստուծոյ ետ նոցա առաւել հնարս և զօրութիւնս, զի կարասցեն ըմբռնել. զայլ կենդանիս և *մի՛* ի սովոյ մեռցին: - 218.

Յինգերորդ՝ ընդ հերձուածողաց և սատանայի *մի՛* պարզմտութեամբ՝ այլ հնարիւք խօսեսցի: - 218. Այլ մեզ զոր գիրք սուրբք լռեալ են՝ լռութեամբ պատուեսցի. և *մի՛* մտացածին բանիւք վտարանդեալ ի գուբ կորըստեան անկցուք: - 226. Յականջն դառն. որ զչար բանս *մի՛* լուիցէ: - 243. Երկրորդ՝ ի մէջն գոլով՝ *մի* վնասեսցի յարտաքին պատահարից: - 256. Եւ *մի՛* աստ ընդ դէմ բերցի բանիս թէ՝ ամենայն մեծամեծք գութ ունին փոքունց. զի և այս նախախնամութեանն է. որ եդ ի բնութեանս խնամ տանիլ նոցա, մինչ ինքեանք ևս ի չափ հասակի եկեսցեն և զերծանիցեն ի վնասուց: - 267. Եւ զուստին *մի՛* հարցանէր թէ ի կենդանւո՞յ էառ, և թէ նո՛ր գոյացոյց. զի ամենայն ինչ կարելի՛ է աստուծոյ: - 281. Եւ *մի՛* եփել զգառն ի կաթն: - 285. Վեցերորդ՝ սկայքն անխտիր ուտէին թէ մեռեալ և թէ հեղձուցեալ. վասն որոյ զի որոշեսցէ ի նոցանէ՝ ասէ արեամբ շնչոյ *մի՛* ուտիցէք: - 295. Ի յայս միտս և տէրն աշակերտացն պատուիրեաց *մի՛* ագանել կօշիկս: - 331. Յինգերորդ՝ ե միշտ է և առ միշտ. որպէս *մի՛* սպանաներն. և *մի՛* գողանարն և այլն: - 340. Նա՛խ՝ զի ամենայն որ յինքն ձգեսցէ զբանս օրինացն. և *մի՛* ծուլասցի թէ հասարակա՛ց է կատարելի: - 340. Եւ ո՛չ յօշէին զթռչունքն. զի անբաժանելի՛ է յինքեան աստուածութիւնն և մարդկութիւնն. այլ և զբազումս հաղորդութեամբն իւրով *մի՛* արար անբաժանելի: - 361. Բայց յենքեանց սատակեալն՝ և գազանաբեկն՝ և գիշատեալն ի հաւուց՝ *մի՛* ուտիցի: - 366. Զի՞նչ էր յերրորդ օրն սրբիլ. և յեօթն սրբիլ. և թէ յերրորդն ոչ սրբեսցի, և *մի՛* յեօթն սրբեսցի: - 384. Վասն է՞ր ասէ *մի* եթար, և յետոյ ասէ ե՛րթ և *մի՛* անիծաներ: - 388. Նա՛խ՝ զի բերան մեղաւորի *մի՛* բացցի ի ժողովրդեանն աստուծոյ: - 388. Եւ դարձեալ՝ հայեաց ի քեզ. և *մի՛* մոռանար զտկարութիւն և զպակասութիւն քո: - 398. Եւ *մի՛* մոռանար զզօրութիւնն աստուծոյ և զերախտիսն զոր արա՛ր հասարակ և առանձնակի: - 398. Ի խրատ՝ զի սնուցօղն *մի* լիցի չարչարօղ. և բանն օրհնութեան *մի՛* անիծեսցէ զոք: - 399. Երկրորդ՝ ի յղութեան մինչ յորովայնի լինի՝ *մի՛* զենցես ասէ: - 399. Երրորդ՝ մինչ գառն լինի ի կաթն մօր՝ *մի՛* զենցես ասէ. զի գութն առաւե՛լ է: - 399. Չորրորդ, նշանակէ՛ թէ՝ *մի՛* ընդ յանցանաց ծնողին չարչարեսցես զզաւակն: - 399. Դարձեալ՝ և դուք զծածուկն աստուծոյ *մի՛* համարձակիք քննել. այլ զոր ինչ յայտնէ ձեզ՝ ուսուցէք որդւոց ձերոց: - 405. Դարձեալ՝ ի սուրբ գիրս զդժուարն և զծածուկն *մի՛* քննէք: - 405. ...ըստ որում մեզ ասաց, բարկանայք բանիւ, և *մի՛* մեղանչէք գործով. նոյնպէս բարկութիւնն աստուծոյ՝ սպառնա՛լն է. և սրտմտիլն գործն: - 408. Երկրորդ՝ և *մի՛* փոքր կասցի օրէնքն, տեսանելով զլոյս երեսացն նւաղեալ: - 411. Չորրորդ՝ և *մի՛* այլազգիքն ցուեսցեն զոսկերսն: - 411. Յինգերորդ՝ և *մի՛* ժողովուրդն առցէ ի նշխարացն և պատկեր կազմեսցէ: - 411. Նա՛խ՝ դարձաւ գետն, զի ա՛հ և երկիւղ լիցի քանանացւոցն. և *մի՛* հակառակեսցին յեսուայ և անկցին ի սուր նորա: - 414. Ա՛յն է որ կաղք և կոյրք ընդ դէմ դարձան դաւթի և անարգանօք ասէին՝ *մի՛* մտցէ դաւիթ ի քաղաքս. որ նա՛ ինքն է երեսուղէմ. որ եղև տուն տեառն: - 431. Կամ զի օրէնքն գրեալ էր՝ կուրի և կաղի *մի՛* դնել գայթակղութիւն, ասէին նախատելով թէ՝ որպէս ո՛չ կարես կոխել զդոսա, նոյնպէս ո՛չ կարես առնուլ զամուրն յեբուսայ: - 431. Երկրորդ՝ զի իջցէ ի գերեզման և *մի՛* տեսցէ զչարիքն որ ի ձեռն նաբուգոդոնոսորայ գալո՛ց էր ի վերայ եէմի. որպէս յայտ է ի պատմութիւնն: - 446. Զայս որպէս ձեռին գիր ունէր սատանայ, և նովաւ չարչարէր զմարդիկ՝ թէ աստուած ասաց *մի* ուտել և դու կերեր և մեռար. իմ ի՞նչ մեղք է: - 481. Արդ *մի՛* մերձենար դու յիս անկատար գոլով. որպէս մայր քո եւա ի ծառն գիտութեան. յորժամ առ բնութեամբ իմ հայր՝ և ձեր ըստ շնորհի՝ և աստուած մարմնոյս իմոյ ես ելանիցեմ, որոտմամբ իջեալ հոգին զձեզ կատարէ՛. արժանաւորիք յայնժամ առ իս մերձենալ: - 518. Զի **ժ** պատուիրանքն և **է** մահու չափ մեղքն են ըստ գոյացութեան մեղք. որպէս *մի՛* շնարն և *մի՛* գողանարն և *մի* սպանաներն և *մի՛* սուտ վկայերն: - 565. ...նոյնպէս և դու *մի՛* ճաշակեր. այլ հաւատա՛ ի մարմինն զարիւնն կապեալ: - 600. Դարձեալ՝ թէ դու հաւատաս զարիւնն ի մարմինն կապեալ, *մի՛* հաներ զտեսակ արեանն ի բեմն. այլ նշխար միայն օրհնեա և լիցի մարմին և արիւն քրիստոսի: - 600. Զամենայն ճշմարտութեամբ հարցանէ քահանայն. և այնպէս որ *մի՛* լիցի ի հարցանելն մեղք ուսուցանել ժողովրդեանն: - 601. Իսկ թէ քահանայ ոք հանդիպի ի նոյն չարիս, *մի՛* պաշտեսցէ զքահանայութիւնն...: - 652. Նա՛խ՝ զի բաժինն աստուծոյ ընտիրն լիցի և *մի՛* անարգն: - 657. Երկրորդ, զի հաճո՛յ լիցի որպէս աբելին և *մի՛* որպէս կայենին: - 657. Այսինքն *մի՛* առաջինքն առանց մեր վերջնոցս, և *մի՛* հոգիքն առանց մարմնոյս պսակեսցին: - 692. ...զի լաւագոյն համարեցաւ աստուած *մի՛* առանց մեր պսակիլ: - 696. Զիա՞րդ վախճան ածեն տանջանաց ունայնախոհքն. թէրևս կարծելով թէ ի հուրն մաքրեսցին. զոր *մի՛* լիցի աշակերտաց ճշմարտութեանն խորհիլ: - 703. Առասպել *մի՛* համարիր զայն որ ասեն թէ ի վիրապն հարկանի: - 713. ...ապա պա՛րտ է ի նա՛ ընկենուլ զդատաստան չարչարողացն մերոց և հալածողաց. և ուրախութեամբ տանիլ զըլկանս. և *մի՛* մեզէն վրէժխնդիր լինիլ մեզ. - 735. Եւ *մի՛* վասն անարգանաց եղբօրն որոշիլ ի գլխոյն և ի դատաստան մահու մատնիլ: - 735. Նա՛խ՝ տեսանեն

զմարդկութիւնն զի երկիցեն. և *մի՛* զաստուածութիւնն զի մի՛ խնդասցեն. զի սրտմտութեամբ հայի ի մեղաւորս...: - 741. Եւ թէ ծախողակի վրիպութիւնք ամփոփե՛ն տրտմականօք, ի հաւատն սփոփեսցիս և *մի* անկցիս յուսահատեալ: - 770. Եւ այժմ աղաչեմ զքեզ, *մի՛* մեկնիր յինէն մերձաւորիչդ իմ: - 771

**Մի (թվական) +** Ա՛րդ՝ թէ ամենայն ո՛չ լինի ճշմարիտ, նաև *մի* բանն ո՛չ լինի ճշմարիտ: - 8. Իսկ բանին արիստոտէլի՝ թէ ի հակասութեանց *մի* կողմն ճշմարիտ է, այսինքն կամ ստորասութիւնն կամ բացասութիւնն: - 9. Ասեմք առ այս, եթէ այսու վկայե՛ս և դու մեզ՝ թէ ո՛չ է հարկ. զի ի բոլոր քաղաքն այնքան բիւր մարդիկ՝ ծեր և տղայ՝ ե՛րբ և ո՛ւր ի *մի* շարժումն աստեղաց ծնան, որք ի միասին կործանեցան. կամ բազմութիւն զօրացն. կամ որք ի նաւին կային. զի սոքա ամենեքեան յայլևայլ ժամանակս և այլևայլ շարժումն աստեղաց էին ծնեալք. ապա ուրեմն ո՛չ է հարկ բախտի և ճակատագրի: - 13. Այլ թէ գործ և կամք կրկին յաստուած, ո՛չ է պարզ *մի*. այլ բաղադրեալ. որ է անտեղի: - 14. Վեշտասաներորդ՝ զի թէ չարն է յաստուծոյ որպէս բարին, և երկուցն սկիզբն է աստուած, և արդ՝ եթէ միևնոյն է սկիզբն երկուցն, անկարելի է ներհակացն ի միասին ունիլ *մի* սկիզբն. զի լինէր սկիզբն այն ո՛չ պարզ. այլ երկատեսակ. և ո՛չ միեղէն՝ այլ բաժանեալ և այլայլեալ. նաև լինէր ինքն ինքեան հակառակ, և յառաջ եկելոցն ի նմանէ: - 14. Եօթնևժերորդ՝ զի թէ չարն և բարին ունին *մի* սկիզբն, որպէս ընդդիմաբաժանեալ տեսակքն զսեռն: - 14. Դարձեալ ասեմք թէ՝ ո՛չ է բարի առանց աստուծոյ կամացն. և ո՛չ չար առանց թոյլ տալոյ նորա. ա՛յն է որ ասէ՝ տերև ո՛չ անկանի, և մազ *մի* ի գլխոյ. զի ո՛չինչ կարեմք առնել առանց կամաց՝ կամ առանց գիտութեան՝ կամ առանց թոյլ տալոյն աստուծոյ: - 18. Երրորդ՝ թէ լինէին երկու սկիզբն հակառակ միմեանց, *մի* *զմիոյ* ստեղծուածս ապականէին. և ո՛չ լինէին արարածք ինչ: - 20-21. Եօթներորդ դարձեալ՝ թէ էին **բ** սկիզբն՝ լինէր այս կամ համանգամայն. կամ *մի* յետոյ *միոյ*: - 21. Եւ եթէ է *մի* զկնի *միոյն*, յայտ ուրեմն է թէ նախկինն է սկիզբն: - 21. Իսկ թէ հաղորդին, ո՛չ կարէ լինիլ չար. զի չարն բարւոյն պակասութիւնէ. և սոյնպէս *մի* է սկիզբն: - 21. Եւ բարին *մի* է և ի *միո՛յ* պատճառ է որէ աստուած. քէպէտ առ մեզ ի բազումս բազմանայ: - 23. Երրորդ՝ ի միակէ, զի ամենայն բազմութիւն է ի միակէ՛. որպէս տեսակն յանհատէ. և գիծն ի կիտէ. և բազում թիւ է՛ ի *միոյն*: - 25. Ա՛րդ՝ եթէ միակս այս շարադրի բազմաց, ո՛չ մնաց մին. իսկ եթէ ոչ շարադրի, ո՛չ գոն բազումք. այլ *մի և մի*. և այս որպէս այս: - 25-26. Եւ *մի* է, և անմարմին է, և անբաւազօ՛ր է, և անեղ է. յայն սակս և անվախճան է. և նա՛ է արարիչ ամենայն եղելոց. և նմա՛ է տալի պաշտօն: - 26. Ութևժերորդ՝ Չիք ոք բարի. բայց *մի* աստուած: - 29. Իններորդ՝ զիա՞րդ *մի* և **գ** ասէք. և պատասխանիք սոցա ամենեցուն: - 30. Հինգերորդ՝ Հայր և Հոգի ո՛չ մարմնացեալ. քէպէտ *մի* բնութիւն է երրորդութեանն: - 30. Չորեքտասաներորդ՝ Զի՞նչ *մի* բնութիւն. և զի՞նչ երկուս. և զի՞նչ երկուցն եղեալ *մի* բնութիւն: - 30. Հնգետասաներորդ՝ Հարցումն երկաբնակացն առ մեզ **ժ** թւով. և անդ վասն *մի* կամաց՝ և *մի* գործոց՝ և կրից: - 30. Երրորդ՝ հրէայքն ո՛չ խոստովանին երեք անձինք և *մի* բնութիւն: - 34. Եւ սոքա ուրանան զերրորդութիւն անձանցն ի *միում* բնութեան: - 34. Եւ ո՛չ լինի ի մէջ *մի* և նոյն էութեանն կամք և ոչ կամութիւն: - 36. Այլ մեզ *մի* է որ շարժիցին և շարժումն. որպէս *մի* է ասումն և բան. «զի զամենայն զոր կամեցաւ և արար» ըստ մարգարէին: - 36. Այլ այս չէ բաւական. զի *զմի* իրն ինքեան մերձ ասէ որ անհնա՛ր է: - 37. Թէ ոչ՝ Զի թէ մերձ էիր դու քեզ որպէս ոք առ ոք, բաժանեցար ընդ երկու. և զիա՞րդ *մի* իցես: - 37. Ապա ուրեմն ո՛չ է անծնելութիւնն և ծնելութիւնն որիշ որիշ բնութիւն. այլ ի նոյն ի *մի* բնութեանն աստուծոյ: - 38. Հինգերորդ առարկեն, թէ իցէ մի և նոյն բնութիւն հօր և որդւոյ, և որդի ծնեալ ի նոյն բնութենէ, կարէ՛ ասիլ և հօր ծնանիլ ի յորդւոյ ի նոյն բնութենէն. զի բնութիւնն *մի* է: - 38. Թէ բնութեանն է, ապա ասեն որդի ո՛չ ունի զնոյն բնութիւնն. զի բնութիւնն *մի* է աստուծոյ: - 39. Թէպէտ մեկնեն և այլ ազգ, թէ որ զմարդկայինս բնութիւն հաւասարեցոյց փառաց իւրոց և հաղորդ արար աստուածութեանն, ոչ ինչ զրկումն համարեցաւ. զի բնութիւնն *մի* է: - 39-40. Իսկ զի ասէ՝ «առաքեցայ» ո՛չ թէ տեղւոջէ ի տեղի. որպէս մեք բովանդակեալքս ի *մի* տեղի...: - 40. Հինգերորդ՝ զի զօրութիւն՝ կարողութիւն՝ ուստի առնելն է՝ և աստուածութիւն՝ տէրութիւն՝ իշխանութիւն և այլք այսպիսիք՝ ո՛չ են առանձին անձնաւորութեանց. այլ հասարա՛կ են. և ո՛չ մին առաւել քան *զմի*. վասն այն ո՛չ կարէ որդի առնել ինչ յանձնէ իւրմէ թարց հօր որպէս ասացաք: - 45. Տե՛ս՝ զի ի *մի* բնութիւն օտարութիւն ո՛չ ասի. վասն այն է աստուծոյ կամքն *մի* և ներգործութիւնքն *մի*. զի բնութիւնն *մի* է: - 45. Տարակուսելի է առ այս, զի թէ հա՛րկ է որոց բնութիւնքն մի գոլ՝ նոցա և կամքն և ներգործութիւնն մի լինիլ. ընդէ՞ր ապա զի մարդկային բնութիւնս *մի* է և նոյն հօրն և որդւոյն՝ և ո՛չ է կամքն և գործքն *մի*: - 45. Եւ պատճառն է այս. զի քէպէտ *մի* է բնութիւն ծնողաց և ծնիցելոց, բայց ոչ ունին *զմի* կամս. զի հատեալ բաժանեցաւ որդին ի հօրէն: - 45. Այս ապա անբաժանութիւնս առնէ զկամքն *մի*: - 45. Զի *մի՛* է կամք որդւոյ և հօր: - 46. Ըստ քում բանիդ աստ հօ՛ր տաս զաստուածութիւնն և բառնաս յորդւոյ. և ի մարգարէն՝ որդւոյ ասես զաստուածութիւնն և բառնաս ի հօրէ,

ապա հա՛րկ է քեզ լինիլ անաստուած. զի *միովն* միւսոյն յաղթութիւն տաս: - 47. Այլ ա՛յս է լուծումն, զի յորժամ լսես թէ *մի* է աստուած, զընդ աստուած ասելոյն՝ զԵրրորդութիւնն իմացիր. զի ո՛չ է առանձին, այլ հասարա՛կ է աստուածութիւնն: - 47. Իսկ *մի* և ճշմարիտ ասելովն՝ յատկացնէ՛ ի բազում և ի սուտ աստուածոց հեթանոսաց որ անուամբ միա՛յն են: - 47. Ա՛րդ կատարեալ է աստուածութիւնն երիս անձինս և *մի* աստուածութիւն. լոյ՛ս և լո՛յս և լո՛յս. և *մի*՛ լոյս...: - 51. Իսկ որք բառնան զաստուածութիւնն ի *միոյն* և ո՛չ երկոցունց տան զաստուածութիւնն, իմա՛, ըստ առաքելոյն զօրութիւն և իմաստութիւն է հօր որդի. և բան՝ ըստ աւետարանին յոհաննու: - 51. Տե՛ս՝ զի *միովն* բառնի երկուքն. և ասեմք թէ երեքն: - 51. Եւ ո՛չ այս կարէ լինիլ ի յերկուցն հատումն. այսինքն զի լիցի յաստուծոյ և արարածէն՝ և լինիլ *մի* էութիւն. որպէս ո՛չ է էութիւն եղջերուաքաղն որ յեղջերէ՛ և ի քաղէ ստեղծանի. ապա ուրեմն ո՛չ լինի էութիւն յարարչէն և յարարածէն: - 52. Պատասխանեմք թէ ցո՛յց մեզ սոյնպէս աստուած երեք անձինք ի *մի* բնութիւն. և ես ցուցանեմ զմինն ծնունդ և զմիւսն ո՛չ ծնունդ: - 53. Եւ ապա՛ զաղամ, զի ունի զսէթ ծնունդ՝ և զևա ո՛չ ծնունդ. այլ հատումն ի նոյն բնութենէ. և ընդ *միով* սահմանաւ գոլ ծնողին և հատմանն և ծնիցելոյն: - 53. Իսկ արիոսի՝ զի նա միայն զհա՛յր ասէր աստուած. զայս ասեմք թէ, ո՛չ են մեզ երեք աստուածք՝ այլ *մի* աստուած և երեք անձինք. և երկուքն ի *մի* և ի նոյն էութենէն յառաջ եկեալ. կամօք *մի* և զօրութեամբ *մի*: - 54. Որպէս տեսանեմք ի բոլորակս արեգականն և *մի* ասեմք զարեգակն. իսկ թէ հայիմք ի լոյսն և ի ջերութիւնն **գ** իմանամք: - 54. Այսպէս և աստուածութիւն *մի* տեսանեմք և անձինք երեք: - 54. Ասեն դարձեալ թէ՝ և հեթանոսք *մի* աստուածս անուանեն զամենայն կուռս, այլ բազումք են. որպէս և մարդկութեանս *մի* ասի բնութիւն, այլ բազումք են մարդիկք. ապա և դուք բազմաստուածք էք: - 54. Պատասխանեմք թէ՝ ո՛չ են հեթանոսաց աստուածքն *մի*, այլ բազումք և միմեանց հակառակք կամօք պաշտմանն և զոհիւք խնդրոյն: - 54. Նաև մարդիկ ո՛չ միայն զի ի բազմաց են գոյացեալ, այլ և ժամանակաւ առաւելք *մի* քան *զմի*. և կամօք բաժանեալք և ի միմեանց և իրերաց հակառակք: - 54. Իսկ աստուած ո՛չ այսպէս. այլ որպէս *մի* է բնութեամբ՝ և կամօք և զօրութեամբ *մի*: - 54. Եւ այսքան է միաւորթիւնն, զի որքան *մին* ինքն առ ինքն ունի զբնութիւնն և զզօրութիւնն և զկամքն, նոյնքան և ունի առ երկուսն. թէ զհայր իմանաս՝ թէ զորդի՝ թէ զհոգին: - 54. Դարձեալ հարցանեն թէ՝ զիա՞րդ ասէք երեք և *մի* բնութիւն. զի **գ** *միոյ* բնութեանն ո՛չ հաղորդի. այլ մինն հաղորդի *միոյ* բնութեանն, և երկուքն երկուքին. և երեքն երեքին. զի որքան է թիւն, այնքան բնութեան թըւակից լինի: - 54. Եւ այլ անուն՝ այլոյ բնութեան ո՛չ թըւակցի. որպէս ո՛չ *մի* երկուին և կամ՝ երկուքն երեքին: - 54. Ապա ուրեմն զի դուք **գ** ասէք՝ հայր և որդի և հոգի, ըստ թւոյն և երեք բնութեան հաղորդին և ո՛չ *միոյն*: - 54. Իսկ մովսէս՝ որ *միոյ* բնութեան էին հաղորդք և *միոյն* անուան քերովբէքն, *մի* յաջմէ և *մի* յահեկէ ասէ: - 54. Նաև բնական քննութեամբ. զի յորժամ ասես՝ *մի* և *մի*՝ եղև երկու. և այժմ ունի զերկուին բնութիւն: - 55. Իսկ յորժամ քակես՝ լինի *մի* և *մի*. քակեցաւ այժմ ի յառաջին բնութենէն ըստ քեզ՝ և ունի դեռևս զնոյն համարն: - 55. Տասներորդ՝ թէ բանն աստուծոյ և հոգին արարա՛ծ են և այլ բնութիւն, յայնժամ ո՛չ լինի *մի* աստուած. այլ բազում և զանազան աստուած. զի յոլովութիւնն յոլովութիւն է աստուծոյ. որպէս թէ երեք բնութիւնն երեք աստուած, և երկու բնութիւնն երկու աստուած: - 56. Եւ ցուցանէ *զմիոյն* ի բազումս ծաւալումն շնորհաց հոգոյն: - 60. Եւ դարձեալ, զի ամենայն ինչ որ հօր է՝ այն որդւոյ է որպէս ասէ տէր. ապա ուրեմն հոգի հօր՝ հոգի է որդւոյ վասն *միոյ* էութեանն: - 61. Այլ զայսպիսի ի *միում* գոյութեանն յոյժ յիմարութիւն է կարծել կամ ասել: - 62. Երկրորդ հարցանեմ եթէ, յԵրրորդութիւնն *մի* է սկիզբն՝ թէ **բ**: - 62. Զի թէ *մի* է սկիզբն, սո՛ւտ է նոցա ասելն զհոգին ի հօրէ և յորդւոյ բղխեալ: - 62. Զի եթէ զոյգ և հաւասար, ո՛չ գոյ առ նոսա կատարեալ բղխօղ. զի երկոքինն ի *մի* բղխողի տեղի են: - 63. Եթէ զնոյն բղխեն՝ աւելո՛րդ է *միոյն* բղխումն որպէս ցուցաւ: - 63. Իսկ թէ այլ բղխէ հայր՝ և ա՛յլ որդի, կրկնապատիկ է հոգին և ո՛չ *մի*: - 63. Նախ՝ զի բղխումն հոգոյն՝ է՛ ելումն. իսկ ելումն շարժումն *միոյն* ի միւսոյն: - 63. Դարձեալ՝ հոգին ելանէ իբրև զշաղկապ և միաւորիչ. *մի* իբրև զմէջ որ շաղկապէ՛ զերկու եզերն. և միւս իբրև երեք՝ և եզր: - 64. Ա՛րդ՝ **բ** լոյսն ի *միոյ* ելանեն և ո՛չ *մի* ի միւսոյն: - 64. Ապա ուրեմն որդի և հոգին սուրբ ի հօրէ ելանեն իբր **բ** շառաւիղ. և ըստ այսմ ո՛չ ելանէ *մի* ի միւսոյն: - 65. Երրորդ՝ զի ո՛չ *մի* որդի և տէր յիսուս քրիստոս խոստովանին որպէս ասեն առաքեալքն և հարքն սուրբք: - 66. Զի թէ ի վերայ բնութեանն, **բ** կատարելութիւն մուծիք յԵրրորդութիւնն. զի Երրորդութիւնն *մի* բնութիւն է կատարեալ. և *մի* բնութիւն մարդոյ: - 68. Ո՛վ երկաբնակ՝ դու զո՞ր բնութիւն ի քրիստոս ասես *մի* տէր. զաստուծոյն՝ թէ զմարդոյն: - 68. Իսկ թէ և զերկու բնութիւնն ասես տէր, ընդդէմ խօսիս առաքելոյն որ *մի* ասաց զտէր մեր յիսուս քրիստոս՝ որպէս և զհայր: - 69. Ա՛րդ մկրտիմք հաւատացեալքս որպէս ի հայր և ի հոգին սուրբ՝ այսպէս և յորդին մարմնացեալ *մի* տէր *մի* քրիստոս: - 69. Իսկ թէ զերկու բնութիւնն ասիցես, ահա՛ երկու գոլ ասես հօր աթոռակից. *մի* զաստուածն, և

*մի* զմարդն: - 70. Ապա ուրեմն *մի* է տէր և *մի* քրիստոս բանն մարդացեալ: - 72. Տասներորդ՝ դերանուանքն որպէս ես. դու. նա՛. յատկապէս *զմի* անձն նշանակեն: - 73. Ապա ուրեմն երևեալն մարմնով և խօսեցեալն է որդի աստուծոյ և *մի* ընդ հօր: - 73. Ապա ուրեմն *մի՛* է որդին աստուծոյ և որդին մարմնացեալ և մարդացեալ աստուած: - 73. Ապա ուրեմն *մի* աստուած է և *մի* որդի հաստիչն ամենայնի և անդրանիկն մեռելոց: - 73. Եթէ *մի* է առհասարակ բնութիւն երրորդութեանն և ո՛չ բաժանեալ, ո՞րպէս իմանամք զբանն միայն մարմնացեալ. և ո՛չ զհայր և զհոգի: - 74. Ա՛րդ՝ ըննդէմ քումդ խոհեմութեան ո՛րպէս իմանաս ի *միում* հասարակ բնութեան զբանն ծնեալ և զհոգին բղխեալ. իսկ հայր ոչ ծնեալ կամ բղխեալ. և անդրադարձեալ ևս: - 74. Որպէս *մի* էութիւն է խնծորն. և ունի երեք յատկութիւնս որակաց. զհամն, և զհոտն, և զգոյնն ընդ ձևոյն: - 74. Ա՛րդ՝ զանազան զգայութեամբ զանազանապէս զգամք, և ո՛չ ամենայնիւ զմինն՝ կամ *միովն* զամենայն: - 75. Իսկ շօշափելիքն զգայ զջերմութիւնն՝ և տեսանելիքն զլոյսն միայն ի *միում* էութեան: - 75. Երրորդ՝ զի *մի՛* Երրորդութիւնն մարմնացեալ երևեսցի: - 76. Եւ երևեալ մարմնովն *մի* բնութիւն տեսակացեալ և *մի* անձնաւորութիւն. *մի* տէր. *մի* որդի. ըստ սուրբ հարցն ուղղափառութեան: - 76. Եւ թէ՝ *մի* ասեմք զտէր մեր յիսուս քրիստոս. և *մի* զբնութիւն նորա. զի *մի՛* է բնութիւն բանին մարմնացելոյ: - 76 - 77. Դարձեալ՝ ըստ նոյն սարասի՝ բանն աստուած ունի ծնունդ ի հօրէ նախ քան զյաւիտեանս. և ունի ծնունդ ի մօրէ ի յետին ժամանակիս. և ո՛չ ասի երկածին. այլ՝ միշտ միածին. այսպէս նոյն բանն ունի զբնութիւն աստուծոյ ի հօրէ. ունի և զբնութիւն մարդոյ ի մօրէ՛. և ո՛չ ասի **բ** բնութիւն. այլ *մի* բնութիւն վասն միաւորութեանն: - 77. Եւ ո՛չ է և ո՛չ ասի բ որդի կամ բ դէմ և այլն. այլ *մի* որդի և *մի* անհատ յատկութեամբ իւրով. և *մի* դէմ. և *մի* անձն. և *մի* կերպ. և այլն: - 77-78. Այսպէս էր ի հօրէ բնութեամբ՝ և եղև ի մօրէ բնութեամբ. և ո՛չ ասի երկաւոր բնութիւն և երկաբուն. այլ միաւոր և միաբուն. *մի* որդի. և *մի* բնութիւն. միատեսակ աստուած մարդացեալ: - 78. Սուրբն կիւրեղ ընդդէմ նեստորի՝ որ **բ** բնութիւն բաժանեալ ասէր քրիստոսի՝ ասաց, *մի* բնութիւն միաւորեալ աստուած մարմնացեալ և մարդացեալ: - 79-80. Եւ բարձեալ զխտրոցս բաժանման ասէ՝ երկոքեանն *մի՛* են. առնլովն աստուծոյ և մարդանալովն. և մարդոյն աստուածանալովն. ահա զբնութեանցն միաւորութիւնն եցոյց: - 80. Զբանս զայս չարափառքն այսպէս մեկնեն, թէ միութիւն բանին ընդ դէմ է միութեան Երրորդութեանն. զի անդ բնութիւնն *մի*՝ և **գ** անձինք. իսկ աստ **բ** բնութիւն և *մի* անձն: - 80. Զի սա ընդ դէմ վասն *մի* բնութեանն ասէ որ յԵրրորդութիւնն է և ի անօրէնութիւնն բանին. սոքա զընդդէմն վասն բաժանմանն իմանան: - 80. Իսկ աստ թէպէտ միութիւն է, բայց ոչ է բաժանումն անձանց. այլ ըստ միութեան բնութեանն *մի՛* է անձն: - 80. Արդ՝ յաջ և յահեակ խոտորին հերձւածօղք. որպէս սաբէլ յաջ խոտորեալ՝ ի *մի* բնութիւն և ի *մի* անձն ժողովեաց զԵրրորդութիւնն սուրբ: - 80. Իսկ եկեղեցի սուրբ՝ ընդ դէմ արիոսի *մի* բնութիւն խոստովանի. և ընդ դէմ սաբէլի **գ** անձինք: - 81. Եւ այսպէս փախչելով ի թիւր ծայրիցն, զմիջինն պահելով ընթացք բարեպաշտութեան, անշփոթ և անբաժան միութիւն, խոստովանիմք զքրիստոս՝ աստուած մարդացեալ. *մի* անձն և *մի* բնութիւն. և *մի* կամք և գործք ըստ ուղղութեանն բանի: - 81. Զի՞նչ տայ իմանալ *մի* բնութիւն ասելն բանին և մարմնոյն: - 81. Եւ կամ զի՞նչ յերկուցն եղեալ *մի* բնութիւն: - 81. Իսկ թէ զի՞նչ իմանի *մի* բնութիւն ասելն. և զի՞նչ երկու. և կամ յերկուցն *մի* բնութիւն: - 81. Արդ՝ որ պարզապէս *մի* բնութիւն ասեն բանին և մարմնոյն՝ կատարեալ ամբարշտութիւն է: - 81. Իսկ որք յետ միաւորութեանն **բ** ասեն բնութիւնս ի քրիստոս, և բաժանեն զկամս, և զգործս, և զկիրս, թէպէտ և անձն *մի* համբաւեն: - 81. Իսկ որք յերկուցն *մի* եղեալ բնութիւն ասեն, որպէս յաստուծոյն և ի մարդոյն եղեալ *մի* բնութիւն ո՛չ աստուծոյ և ո՛չ մարդոյ: - 81. Ասեմք եթէ՝ յորժամ *մի* ասեմք բնութիւն բանին և մարմնոյն, այս լինի կամ արիոսին. որ զբանն արարած ասէ և զմարմինն արարած. և այսպէս *մի* բնութիւն է արարածոյն ասէ. և զբանն ընդ մարմնոյն չարչարելի և մահկանացու: - 81. Դարձեալ՝ *մի* բնութիւն ասէ ապօղինար. որ զհոգի և զմիտս ուրացաւ. և միայն զմարմին ասէ առեալ, և ի տեղի հոգւոյ զբանն բնակեալ: - 81. Այլ և *մի* բնութիւն ասաց եւտիքէս. շփոթեալ և խառնակեալ զտարբերութեան յատկութիւնս բնութեանցն: - 81. Դարձեալ՝ *մի* բնութիւն ասաց միւս եւտիքէս. ոչինչ առեալ մարմին ի կուսէն. այլ իբր ընդ խողովակ անցեալ իբր ի դարիճակի. միայն զձևն ի նմանէ ձևագրեալ: - 81-82. Դարձեալ՝ *մի* բնութիւն ասեն որք առ աչօք և նմանութեամբ զճշմարիտ մարդեղութիւնն համբաւեն: - 82. Այլ և *մի* բնութիւն ասեն՝ որք ի յերկնից բերեալ զմարմինն խոստովանին: - 82. Դարձեալ՝ *մի* բնութիւն համբաւեն մարկեղոս և փոտինոս: - 82. Այլ և *մի* բնութիւն ասեն՝ որք միայն սոսկ մարդ խոստովանին զքրիստոս, և ո՛չ աստուած մարդացեալ: - 82. Այսոքիկ են չար աղանդաւորացն համբաւօղք *մի* բնութիւն բանին և մարմնոյն: - 82. Եւ ոմանք որպէս քաղկեդոնիկքն՝ *մի* անձն համբաւեն, և յերկու բնութիւնս բաժանեն *զմի* քրիստոսն. և **բ** կամք. և **բ** գործք. որպէս անիծեալն լևոն. և փլաբիանոս, և ընկերք նոցա: - 82. Ա՛րդ՝ սոքա զանունն *մի* ասեն, և յանունն

միաւորեն զբ էութիւնսն. այսինքն զաստուածն և զմարդն. և ասեն *մի* անձն. *մի* որդի. *մի* քրիստոս. և այլն: - 82. Իբր թէ բանն և մարդն բաժանեալ են էութեամբ և բնութեամբ, իսկ *մի* են որդիութեամբ: - 82. Իսկ երրորդ դասքն, որք յերկուց ասեն եղալ *մի* բնութիւն, ո՛չ աստուծոյ և ոչ մարդոյ: - 82. Եւ կամ *զմի* բնութիւնն ուրացեալ. և կամ առ աչօք ասացեալ. զորս նզովէ՛ սուրբ եկեղեցի աստուծոյ: - 82. Եւ զայս միաւորութիւնս խոստովանիմք մեք *մի* անձն. և *մի* դէմ. և *մի* կերպ. և *մի* բնութիւն. և *մի* կամք, և *մի* ներգործութիւն: - 83. Եւ թէպէտ համաձայն մեզ այլք ասացին *մի* անձն՝ բայց թիւրապէս: - 83. Եւ թէպէտ և ոմանք նմանապէս մեզ ասեն *մի* բնութիւն՝ բայց շփոթեալ: - 83. Եւ որպէս սուրբ հարքն ասացին՝ *մի* է բնութիւն բանին աստուծոյ մարմնացելոյ: - 83. Այլ և մեծն դիոնէսիոս ի բազում տեղիս միաւորեալ և *մի* բնութիւն խոստովանի բանին աստուծոյ մարդացելոյ: - 83. Զի *մի* յատկասցին **բ** անձինք ի քրիստոս. զի թէ **բ** բնութիւն բաժանեմք ի հարկէ երկու անձն բաժանի: - 84. Ընդէ՞ր մարդն երկու բնութիւն է և *մի* անձն: - 84. Ո՛չ է մարդն **բ** բնութիւն. այլ՝ *մի*՛ բնութիւն և *մի* անձն: - 84. Ի յերկուց զո՞րն ուրանաս և *մի* ասես բնութիւն: - 84. Ո՛չ ուրացմամբ, և ո՛չ կորուսմամբ. այլ՝ միաւորութեամբ *մի* բնութիւն: - 84. Բնութեամբ միաւորեալ՝ և *մի* անձն կատարեալ: - 84. Սկիզբն յերկուց բնութեանց. և մէջ՝ որ է՛ միաւորութիւնն *մի* բնութիւն. և եզր և կատարումն՝ *մի* անձն: - 84. Ապա ընդէ՞ր ո՛չ ասէք *մի* անձն և **բ** բնութիւն: - 84. Բանն աստուած իւրով կատարելութեամբն էառ զմարդկայինս բնութիւն. զհոգի և զմարմին և զմիտս. և միաւորեալ ընդ իւրում աստուածութեանն՝ եղև *մի* անձն կատարեալ և *մի* դէմ: - 84. Արդ՝ դուք որ **բ** բնութիւնս ասէք քրիստոսի, զբաժանական տարբերութիւնս ասէք. և մեք *մի* խոստովանիմք զբաղկացականս միաւորութիւն: - 85. Ո՞րպէս ասէք *մի* կամք և *մի* գործ աստուծոյ և մարդոյ: - 85. Որպէս միաւորեալ ասեմք զբնութիւն մարդոյն ընդ էութեանն աստուծոյ, այսպէս միաւորեալ և *մի* է կամք բանին մարդացելոյ: - 85. Ապա ուրեմն *մի*՛ է ներգործութիւնն ի *միոյ* կամաց *միոյն* քիստոսի յառաջ եկեալ և գործեալ: - 85. Եւ դարձեալ՝ զորպիսութիւնն հարցեր *մի* գործոյն: - 85. Ո՛չ ասեմք *մի* ներգործութիւն որպէս թէ չկայ բարձրագոյն և նուաստագոյն: - 85. Այլ *մի* ասեմք զներգործութիւնսն վասն *մի* միութենէն ներգործելոյ. որպէս մի ձեռն կտրէ՛ և կարէ՛. գրէ՛ և ջնջէ՛: - 85. Ծանիր և զայս. զի՝ *մի* բնութիւն ասեմք քրիստոսի՝ վասն կատարմանն և ո՛չ սկզբանն. և *մի* գործ ասեմք վասն սկզբանն և ո՛չ վասն կատարման գործոյն: - 85. Իսկ զկամքն իմասցիս *մի*՝ վասն կամելոյն և վասն միաւորելոյն որ է սկիզբն և կատարումն: - 85. Եւ այսպէս ասեմք *մի* բնութիւն և *մի* կամք և *մի* ներգործութիւն բանին մարմնացելոյ: - 85. Իսկ *մի* գոլ ներգործութիւնք և կիրք. որպէս քնարն՝ և որ շարժէ զքնարն՝ *մի* ներգործութիւն կատարեն և ո՛չ երկուս: - 86. Եւ որպէս որ շարժէ զգրիչն՝ և գրիչն՝ *մի* ներգործութիւն կատարեն և ո՛չ երկուս: - 86. Եւ որպէս հոգին և մարմինն *մի* ներգործութիւն կատարեն և ո՛չ երկուս: - 86. Որպէս մի է ի հոգւոյ և ի մարմնոյ մարդն՝ և *մի* ներգործութիւն մարդոյն: - 86. Այսպէս և բանն աստուած կատարէր *մի* ներգործութիւն մարմնով իւրով. զի միաւորութիւն բնութեանցն առանց փոփոխման և բաժանման է: - 86. *Մի*՞ է քրիստոս, թէ **բ**: - 86. Ըստ անձին *մի* է, և ըստ բնութեանն երկու: - 86. Անձն այն զոր *մի* ասես՝ ի՞ր է թէ անիր: - 86. Զի թէ իր, ապա հա՛րկ է ասել քեզ զքրիստոս կամ *մի* իր և **բ**. կամ մասամբ ինչ *մի* և մասամբ ինչ երկու. կամ բոլոր *մի* և բոլոր **բ**: - 86. Իսկ թէ անիր, ապա միայն անուա՛մբ է *մի* և ո՛չ իրօք. որպէս հոմանուն ձայն՝ անուամբ հաղորդեալ և բնութեամբ այլև այլ: - 86. Արդ եթէ էութիւն է անձն, և ընդ անձինն *մի* ասեն զմարդկային բնութիւնն, *մի* է և ընդ էութեանն. և թէ *մի* է ընդ էութեանն. որպէս ճշմարիտ միութիւն, *մի* ասա և բնութիւն. զի էութիւն և բնութիւն *մի* են: - 86. Եւ բնութեամբ է հայր և որդի և հոգի *մի*: - 86. Այսպէս և *մի* անձն է քրիստոս և *մի* անհատ. զի թէ բաժանես զնա՛ յաստուած և ի մարդ, ո՛չ մնայ բոլորն ի նոյն. այլ մասն ինչ և մասն. կամ ոմն և ոմն: - 87. Յորոց թէ *մի* ի սոցանէ գտցի ումեք, որոշեսցէ՝ ի միմեանց: - 87. Նախ զնիւթն *զմի* բնութիւն նիւթական որպէս մարդ. և զմիւսն բնութիւն աննիւթ որպէս զաստուած. զՁևն՝ զմինն քանակութեամբ և որակութեամբ տարբերեալ որպէս մարդոյ. և զմիւսն ի վեր քան զկերպ և զձև որպէս աստուծոյ: - 87. Նոյնպէս զաւառն՝ *միոյն* երկին, և միւսոյն երկիր: - 87. Եւ ազգայինքն՝ *միոյն* հայր և հոգի. և միւսոյն յովսէփ և մարիամ: - 87. Եւ է՛ ուրեք զի միաւորեն զանունսն՝ մի քրիստոս՝ *մի* տէր՝ *մի* որդի՝ և *մի* անձն ասելով որպէս քաղկեդոնի թըւի երկաբնակ ժողովոյն: - 87. Ա՛յս է նոցա ասելն՝ *մի* անձն և **բ** բնութիւն: - 87. Կամ ի *միոջէ* և առ *մի*: - 87. Արդ՝ տեսցուք թէ ըստ որո՞յ եղանակի բաժանէք *զմի* անձն յերկուս բնութիւնս: - 87. Իսկ աստ **բ** բնութիւն ի *մի* թիւ անձին որպէս համբաւեն ոմանք: - 88. Այլ է՛ որպէս ի *միոջէ* և առ *մի*. այսինքն ի *միոջէ* բանէն՝ առ *մի* մարդկութիւն նորին կամ աստուածութիւն որպէս նոքա կամին: - 88. Ըստ որոյ կերպի և իցէ, թիւ ի ներքոյ բերէ *միոջէն* և առ մին. և նոյնէ անձն որոշեալ թըւով: - 88. Ահա տե՛ս յայտնապէս. զի որք բաժանեն *զմի* քրիստոսն յերկուս բնութիւնս, ո՛չ պահեն զմիաւորութիւնն անբաժանելի: - 88. Այլ բաժանմամբ բնութեանցն՝ բաժանին և անձինքն ի քրիստոս. թէպէտ պատճառելով անձն *մի* համբաւեն: -

88. Զի զոչ առեալն ասեն *մի* ի քրիստոս՝ և ո՛չ զառեալն. այսինքն զանձն՝ որ ո՛չ է առեալ՝ *մի* ասեն. իսկ զառեալ բնութիւնն որոշեալ պահեն և յերկուս քակտեն: - 88. Ա՛յս է նոցա ասելն՝ *մի* անձն և **բ** բնութիւն: - 88. Իսկ որպէս բոլոր ի մասունս, զի որպէս *միոյ* մասին պակասելոյ՝ բոլորն անկատար մնայ: - 89. Նոյնպէս բանն աստուած և հոգի և մարմինն միաւորեալ է բոլոր *մի* քրիստոս. և ի պակասիլ *միոյն* ո՛չ մնայ քրիստոս: - 89. Ի յերից սոցա զո՞րն ասէք *մի* քրիստոս. զաստուածային անձն ըստ ինքեա՞ն, եթէ զաստուածային բնութիւնն: - 89. Եթէ զաստուածային անձն և զնորին բնութիւնն ասէք *մի* քրիստոս, դեռևս կայք յառաջ ասացեալ տարակուսանսդ. զի զաստուածային անձն և զբնութիւնն ասէք չարչարեալ և մեռեալ. զի քրիստոս խաչեցաւ և մեռաւ ըստ գրոց: - 89. Իսկ թէ զաստուածային անձն և զմարդկային բնութիւնն ասէք *մի* քրիստոս, ահա յա՛յտ է զի բաժանեցիք յաստուածային բնութենէն զքրիստոս. զի անձն աստուծոյ և զբնութիւն մարդոյ ասէք *մի* քրիստոս. և զաստուածային բնութիւնն որոշէք: - 89. Իսկ եթէ զաստուածային անձն և զաստուածային բնութիւնն և զմարդկայինն ասէք *մի* քրիստոս, այս լինի կամ միաւորութեամբ կամ բաժանմամբ: - 90. Զի եթէ միաւորութեամբ, ահա՛ շփոթումն եղև. զի զանձն և զբնութիւնսն *մի* ասացիք: - 90. Եւ կամ լինի *մի* քրիստոս ըստ կոչմանն, և **գ** ըստ էութեանն: - 90. Այսպէս և նեստոր *մի* ասէր զքրիստոս ո՛չ ըստ իրին միութեան, այլ ըստ անուանն համաձայնութեան. որպէս հոմանուն ձայն *մի* ունելով զկոչմունս, և զանազան բնութիւնս ի ներքոյ *մի* անուանն: - 90. Երկոքին բնութիւնքն պաշտելի՞ են թէ *մի*: - 90. Ահա՛ այս ի կարճոյ բացայայտութիւն ծածկեալ ամբարշտութեանց, որք **բ** բնութիւնս սահմանեն ի վերայ *միոյն* քրիստոսի. թէպէտ անձն *մի* համբաւեն համաձայն մեզ, սակայն որոշմամբ բնութեանց լինին տարաձայն մեզ և եկեղեցեացն աստուծոյ: - 90. Նոյնպէս և այս ընդ դէմ նոցա է՝ որք *մի* ասեն անձն, և յերկուս բնութիւնս բաժանեն: - 91. Իսկ սուրբն կիւրեղ *մի* ասէ վասն անձինն, և նոյն ասէ վասն բութեանն: - 91. Ա՛յս է միտքն՝ *մի*՛ է և ո՛չ **բ** աստուած և մարդ. և նոյն է և ո՛չ այլ և այլ աստուած և մարդ: - 91. Ապա ուրեմն յայտնապէս նոքա ուրանան զայս, և ասեն թէ՝ ձեռքն քրիստոսի ոչ է աստուած. և գլուխն քրիստոսի ո՛չ է աստուած. և այլն. զի *մի* բազմաստուածք լիցին: - 91. Եւ թէ մարմինն քրիստոսի չէ աստուած, և հոգին քրիստոսի չէ աստուած, որպէս նոքա բարբանջեն. ապա և բոլորն քրիստոս չէ աստուած. զի բոլորն քրիստոս յաստուածութենէն միաւորեալ լինի *մի* քրիստոս. և բաժանեալ ո՛չ է քրիստոս: - 91. Իսկ թէ ասես միայնաբար աստուած է մարմինն՝ և աստուած է հոգին. այսու ո՛չ լինիս բազմաստուած. զի *մի*՛ է աստուածութիւնն ի սոսա միաւորեալ էութեամբ և գոյացութեամբ: - 93. Դարձեալ՝ որպէս ասելն զհայր աստուած, և որդի աստուած, և հոգի աստուած, ո՛չ է բազմաստուած. այլ *մի* աստուած: - 93. Նոյնպէս և ասելն թէ՝ մարմինն քրիստոսի աստուած է. և արիւնն աստուած է. և հոգին աստուած է. ո՛չ է բազմաստուած. այլ *մի* աստուած: - 93. Ա՛րդ՝ եթէ *մի* անձն խոստովանիս քրիստոսի, և բնութիւն մարդոյն միացեալ ի յանձն բանին, զոր ինչ բանին է բնութեամբ, ամենայնն եղիցի և մարմնոյն իւրոյ միաւորութեամբ: - 98. *Մի*. և միակ. և բազում: - 101. Վասն յարացուցի. *մի* է. և բազում: - 101. Ո՛չ թիւ ասեմ. ապա թէ ո՛չ, *մի* հայր. *մի* որդի. *մի* հոգի: - 105. Երրորդ՝ հասարա՛կ է ի յԵրրորդութիւնն միութիւնն սուրբ. զի *մի* է հայր. *մի* որդի. *մի* հոգի: - 106. Չորրորդ՝ հասարակ է ի *միոյ* բարերար կամաց յառաջ եկելոց հաղորդեալ անհաղորդաբար ըստ համեմատութեան: - 106. Եւ յատուկ՝ զի որոշեալ և բաժանեալ է յարարածոց. և ո՛չ *մի* է ըստ սոսա. ո՛չ մասն է արարածոց և ո՛չ բոլոր: - 106. Եւ որպէս գիծն կոչեցեալ այբ՝ ի բազում վանգս բաժանեալ. և մնացեալ *մի*: - 106. Նոյնպէս և էութիւնն աստուծոյ ի յէքս բազմացեալ. և աստուած անունն ի բազում աստուածս. և մնացեալ նոյն *մի* աստուած ըստ պօղոսի, «մեզ *մի* է աստուած հայր յորմէ ամենայն»: - 106. Ըստ այսմ ապա և բազմութիւն արարածոցս *միո՛յ* են հաղորդեալ. *մի* սկզբան. *մի* աստուծոյ. և *մի* խնամողի: - 106. Եւ զի որդին աստուծոյ բնութեամբ որդի մարդոյ եղև, *մի*՛ յերկուանալ թէ լինիցիս և դու շնորհօք որդի աստուծոյ: - 107. Երկրորդ՝ մինն սկիզբն է, և երկուքն ի *միոյն*: - 107. Նոյնպէս հայր սկիզբն է. և որդի և հոգի ի *միոյ* սկզբնէ: - 107. Երրորդ՝ զի **գ** *մի* է. այսինքն *մի*. *մի*. և *մի*. նոյնպէս *մի* հայր. *մի* որդի. *մի* հոգի: - 107. Նախ՝ զի **գ** թիւն **գ** է և ո՛չ *մի*: - 107. Իսկ Երրորդութիւն, որ է՛ **գ** միութիւն. և *մի* Երրորդութիւն. այսինքն *մի* **գ**. և **գ** *մի*: - 107. Զի ո՛չ է որպէս պետրոս՝ և պօղոս՝ և յօհաննէս՝ երեք մարդ և *մի* բնութիւն. այլ *մի* է անհատութեամբ. ունելով երիս յատկութիւնս դիմաց: - 107. Որպէս *մի* է արեգակն և սպիտակ և դեղին լոյս իւր: - 107. Եւ *մի* է հուր և լոյս և ջերմութիւն իւր: - 107. Եւ որպէս *մի* է հոգի և բան և կենդանութիւն իւր. որ է՛ խօսքն և շունչն: - 107. Եւ *մի* է միտք և իմացումն և կամք իւր: - 107. Ուստի յա՛յտ է յորժամ ասեմք Երրորդութիւն աստուած. Երրորդութիւն անեղ. այլ ո՛չ ասեմք **գ** աստուած. կամ **գ** անեղ. այլ *մի* աստուած և *մի* անեղ: - 107. Իսկ երեք թիւն՝ *մի* զկնի *միոյ*: - 108. Երրորդ՝ Երրորդութիւնն ցուցանէ երիցն *զմի* հասարակ բնութիւն. որպէս ասեմք մարդ և մարդկութիւն. ձի և ձիութիւն. ընդդէմ արիոսի որ ասէ՝ երեք թիւն ունի երեք բնութիւն, ասեմք երից անձանցն *մի* բնութիւն: - 108.

Չորրորդ՝ երեք թիւն փոփոխմամբ է. յորժամ ասեմք *մի* և **բ** և **գ**, փոխեցաւ ի *միոյն* և եղև երկու. և փոխեցաւ յերկուցն և եղև **գ**: - 108. Հինգերորդ՝ զի **գ** թիւն բաժանին ի միմեանց. զի յորժամ բաժանես *գմի* թիւն՝ ո՛չ է երկուքն ընդ նմա: - 108. Եւ զի անձամբ յատկացեալք են և բնութեամբ *մի*. վասն այն Երրորդութիւն ո՛չ ասի *միոյ* անձին. այլ աստուած կամ աստուածութիւն ըստ միութեան բնութեանն: - 108. Եւ զի անձամբ յատկացեալք են և բնութեամբ մի. վասն այն Երրորդութիւն ո՛չ ասի *միոյ* անձին. այլ աստուած կամ աստուածութիւն ըստ միութեան բնութեանն: - 108. Զի մինն հասարակ է. և միակն մասնաւոր և առանձնակի. զի ամենայն միակ՝ *մի* է. այլ ամենայն *մի* միակ ո՛չ է. որպէս յորժամ ասեմք՝ *մի* հօտ. *մի* շեղջ. *մի* լիտր. այսպիսիքս *մի* են. այլ միակ ո՛չ են: - 109. Իսկ աստուած *մի* կոչի: - 109. Նախ՝ զի ո՛չ է բազում, այլ *մի*: - 109. Երրորդ՝ *մի* է, այսինքն բոլոր և ո՛չ մասն և անկատար: - 109. Չորրորդ՝ *մի* է և միակ. զի ո՛չ բաժանի. և ո՛չ քակտի: - 109. Հինգերորդ՝ *մի* կոչի. որպէս միակն սկիզբն է թըւոց և ո՛չ թիւ. և աստուած սկիզբն է արարածոց և ո՛չ արարած: - 109. Եւ ի *միոյ* աստուծոյ եղեն **ժ** դասք հրեշտակաց ընդ մարդկան. և հարիւր գունդքն ըստ ոչխարաց առակին. և **ռ** կենդանեաց տեսակքն որ յերկրի. և բիւր անկենդան բուսոց. և անթիւ գոյեղէնք: - 109. Նոյնպէս և ի *միոյն* աստուծոյ իջեալ յարարածս ընդարձակի տեսութիւն մեր. և ի սոցանէ ի նա դարձեալ նեղի: - 110. Երկոտասաներորդ՝ զի ընդ բազումս բազմանայ, և ի միութեան իւրում կայ և մնայ ըստ *միոյն* օրինակի: - 110. Երրորդ՝ թիւն ընդ գիտութեամբ մեր է. իսկ աստուած ընդ գիտութեամբ մեր ո՛չ պարունակի որպէս ասացաք. ապա ուրեմն ի վեր է քան *գմի* և զմիակ: - 110. Զի է՛ *մի*՝ որ սկիզբն է թըւոյ. և այսպէս *մի* ո՛չ ասի աստուծոյ. զի այս քանա՛կ է. և պատահումն ո՛չ գոյ յաստուած: - 110. Եւ է *մի*՝ որ անդրադարձի էի. և այսպէս ասի *մի* աստուած իբր թէ է՛. զի պատահումն ո՛չ ցուցանէ: - 110. Եւ սահման *միոյն* է այս. *մի* է որ յինքեան անբաժանելի է, և յայլմէ բաժանեալ: - 110. Նախ՝ զի *մի* անձն հօր բազմացաւ ի յանձն որդւոյ. և բազմապատկի ի յանձն հոգւոյն սրբոյ: - 110. Յարացոյցս այս *մի*՞ է՝ թէ բազում: - 112. Յարացոյցն *մի* է և պարզ. ըստ այնմ որ *մի* է էութիւնն աստուծոյ, և *մի* տեսութիւն, և *մի* ճշմարտութիւն: - 112. Այլ բազո՛ւմ է և զանազան ըստ պատկերի և նմանութեան յարացուցելոցս որք են բազումք. զի աստուած *միով* յարացուցիւ զբազումս տեսանէ ...: - 112. Այսպէս *մի* է յարացոյցն ի մինն աստուած: - 112. Զորօրինակ՝ միակ թիւն ի բազումս բազմանայ, և *մի* է ըստ ինքեան: - 112. ...զորօրինակ՝ *մի* է սեռն՝ և ի բազում տեսակս բազմանայ: - 112. Եւ որպէս *մի* է զօրութիւն հոգւոյն, և յիւրաքանչիւր մասունս մասնաւորի: - 112-113. Եւ որպէս *մի* է արեգակն, և բազմանայ ի ներգործութիւնս իւր: - 113. Եւ որպէս *մի* է ձայնն, բազմանայ ի բազում լսելիս: - 113. Եւ որպէս *մի* է կնիք մատանւոյն, և բազմանայ ի կնքեալ մոմս: - 113. Այսպէս *մի* է յարացոյցն ըստ ինքեան. և բազմանայ ըստ բազմացելոցն ի նմանէ: - 113. Ասեմք եթէ՝ *մի* է յաւիտեան անսկիզբն և անվախճան. որ նոյն ինքն է աստուած. բոլորն համանգամայն և կատարեալ. և նախ քան զյաւիտեանս. և ամենայն յաւիտենից արարիչ: - 116. Եւ զանազանին *միով*. այսինքն փոփոխմամբ. զի հրեշտակն նոյն և անփոփոխ կենդանի է: - 117. Այսու հաւասա՛ր են, զի ի *միոյ* կենդանական պատճառէ՛ են սկսեալք: - 117. Եւ այս ամենայն ընդդէմ է տեսութեան մեր. զի մեք մասամբ տեսանեմք. և *մի* զկնի *միոյ*. և առաւել և պակաս գիտութեամբ. և ըստ իրին փոփոխմամբ: - 118. Պարզ և միեղէն, զի զնիւթաւորքս և զբաժանեալքս *միով* և պարզ տեսանեն: - 119. Չորրորդ՝ միեղէն է նոցա տեսութիւնն և ի *միոյ*. իսկ մերս բազում և ի բազմաց. զի բաժանեալ զգայարանօք զբաժանեալ իրս տեսանեմք: - 120. Առաջինն որ է տպաւորական աստուածաբանութիւն՝ է՛ ի դէմս սուրբ Երրորդութեանն և *մի* աստուածութեանն. թէ ո՞րպէս է *մի*. ո՞րպէս երրեակ. և ծնօղ. և ծնունդ. և բղխումն. և վասն մարդեղութեանն քրիստոսի: - 122. Կամ որպէս բունն *մի* է ծառոյն, և ճուղքն և տերևքն բազում. նմանապէս և աստուածաբանութիւնն: - 123. Ո՛չ են *մի* բացբարձականքն և ուրացականքն: - 124. Զի՝ *մի* արեգակն սկիզբն է **բ** լուսոյն. այսինքն դեղնին և սպիտակին: - 124. Նախ՝ զի ի *միոյ* սկզբնէ են: - 125. Երկրորդ՝ զի որպէս *մի* արեգակն կոչի տարրեղէն ամանն լուսովն և հրովն: - 125. Նոյնպէս բանն աստուած *մի* քրիստոս է բովանդակեալ մարմնովն անբաժանելի: - 125. Երրորդ՝ զի անդ բազմաց շրտնու տեսութիւնն. և աստ միայն զօրանայ տեսողական մասն *միոյն*. որպէս աշակերտին եղիսէի: - 133. Նախ՝ թէ անկեալքն ի նոցանէ են չափով *միոյ* դասի: - 134. Իսկ է երկինք զիրեշտակաց դասուցն ասէ, *մի* քան *զմի* բարձրագոյն յիրաքանչիւր երկինս: - 134. Վասն երկրորդ *մի*՞ է թէ բազում, ասեմք եթէ՝ ի սկիզբն *մի* է ըստ էութեան ի *միոյ* պատճառէ՛ յառաջ եկեալ. և ի բազումս բազմացեալ ըստ որակութեան. որպէս է արփեան և ըստ աստիճանաց: - 140. Եւ դարձեալ, **ճ** տասն՝ հազա՛ր է. և **ճ** հարիւրն՝ **ժ** հազար է. որ է՛ բիւր *մի*. և **ճ** հազարն՝ **ժ** բիւր է. և **ռ** հազարն՝ **ճ** բիւր է. և **ռ** բիւրն՝ **ժճռ** է: - 141. Եւ ըստ որում *մի* է սկիզբն և կատարումն և թափանցումն. վասն որոյ *միով* և ինքեամբ գիտէ զբազումս. և ո՛չ որպէս մեք բազմօք զբազումս: - 142. Իսկ ուղիղ՝ զի իջանեն առ երկրորդսն

նախախնամապէս ո՛չ ի նոյնէ ի նոյն, այլ ի *միոյ* ի միսն: - 142. Ամենայն հրեշտակք զուգապէս ստեղծան յաստուծոյ. և ո՛չ *մի ի միոյ*. որպէս մարդ ի մարդոյ ծնանի: - 149. Վասն այն թէ քրիստոս *զմի* հրեշտակի բնութիւն ընդունէր՝ զնա միա՛յն փրկէր և այլքն արտաքոյ մնային փրկութեան: - 149. Եւ այլք ասեն թէ՝ ի տէրութեանց դասուն ի վայր ի ներքոյ քերօբէիցն յամենայն դասուցն անկան դասու *միոյ* չափ: - 150. Իսկ բանսարկուն սատիէլ՝ *զմի* յերից մասանցն զչորրորդն քարշեաց ընդ ինքեան և կործանեաց յերկիր…: - 152. *Մի* է աշխարհ. և չունի զգայարանք. և թէ ուր էր աստուած. և ուր էր աշխարհ. և յի՞նչ պատճառի ստեղծաւ: - 154. Օր *մի*. և յատկութիւն միաշաբաթի, և վերջին աւուրն: - 154. Հինգերորդ՝ գործ բնութեանն է *մի* առ բազումս. իսկ կամացն բազում առ բազումս: - 156. Մետասաներորդ՝ մարդոյս գործ մասնաւոր և *մի* զկնի *միոյ*. իսկ աստուծոյն համանգամայն և բոլորովիմբ: - 157. Յասարակութիւն է, Նախ՝ զի ի *միոյ* բարերար կամաց յառաջ եկին գործ արարչութեան…: - 157. Ութերորդ՝ զի բազմօք զբազումս տեսանեմք, կամ բազմօք *զմի*: - 164. Իսկ նախատեսութիւնն աստուծոյ *միով* զբազումս տեսանէ, և *միով զմի*: - 164. Երկրորդ՝ զի բազումք գայթակղութեամբ կորնչին. արդ ի հարկէ որպէս ասացաւ՝ կամ *միոյ* կամ բազմաց լինի կորուստ: - 167. Այլ տեսցուք զայս և յօրինակս ճշմարտութեան. զի ադամ յետ *միոյ* յանցանացն ո՛չ մատոյց պատարագ զամենայն աւուրս կենաց իւրոց. այլ որդւո՛ցն հրամայէր մատուցանել: - 167. Արդ՝ է՛ զօրութիւն *մի*՝ որ հանդերձ ներգործութեամբ է. և է՛ զօրութիւն որ առանց ներգործութեան է: - 167. Դարձեալ այն զօրութիւնն և ներգործութիւնն և հարկաւորն *մի* է. և հետևին առ միմեանս. զի ամենայն որ հարկաւոր է՝ ներգործութեամբ է. և ամենայն ներգործութիւն զօրութեամբ ներգործէ. իսկ միւս զօրութիւնն և կարելին և ներընդունականն որ է մարթելի՝ *մի* է և հետևին առ իրեարս. զի ամենայն որ զօրութեամբն է՝ կարելի է և մարթելի: - 168. Հինգերորդ՝ գոյացութիւն *մի* է, և պատահումն բազում: - 170. Զի թէ գոյր պատահումն ի յաստուած, լինէր բազում և ո՛չ մի. իսկ աստուած *մի* է և ո՛չ բազում…: - 170. Իսկ անեղ և պարզ էութեանն պատշաճի միայն նմանապէս համեմատութեամբ. զի Է կոչի աստուած, ըստ այնմ «ես եմ որ էն». և ո՛չ ըստ այնմ որ բաժանի ի գոյացութիւն և ի պատահումն. որպէս հոմանուն կամ փաղանուն. կամ ի *միոջէ* և առ *մի*. որպէս ընդհանուր էակն է՝ բաժանի առ մեզ: - 171. Եօթներորդ՝ *մի* է գոյն՝ և բազում պատահմունք. և *մի* է աստուած՝ և բազում եղեալքս: - 171. Եւ ո՛չ թիւ պատահական կամ բան տարալուծական. այլ *մի* երրեակ. և երրեակ *մի*. ըստ որում սկիզբն է թուոց՝ և ո՛չ թիւ. և բաժանեալ յա՛յլ էակաց: - 171. Ասեմք առ այս Նախ՝ եթէ ո՛չ ամենայն գործ բնութեան հետևի, այլ և կամաց. որպէս մարդոյ. զի *մի* է կամք ի քրիստոս, *մի* է և ներգործութիւնն: - 174. և Դարձեալ՝ որպէս *մի* է բնութիւն բանին մարդացելոյ ըստ սրբոյն կիւրղի, *մի* է և ներգործութիւնն ըստ սրբոյ աստուածաբանին գրիգորի և դիոնէսիոսի: - 174. Էութիւն և բնութիւն *մի* են որպէս մարդկութիւն. այլ էութիւնն երբեմն նշանակէ զանձն որ ա՛ստ է և այժմ. իսկ բնութիւնն ո՛չ: - 174. Եւ որովհետև ծանեաք զի անմարմին են սոքա, յա՛յտ է զի բաժանումն սոցա քակէ՛ զնիւթն ի մարմնոյ. ապա ուրեմն ի *մի* վայր ժողովումն՝ ծնանի զնիւթական մարմինն: - 175. Հինգերորդ՝ զի առանձին բնութեամբ սոքա ի *մի* էութիւն ժողովեալ խառնին. և *մի* բնութիւն նիւթոյ կատարեն. և ի բնութիւնս իւրեանց ո՛չ շփոթին և այլայլին: - 176. Որպէս հոգի և մարմին բնութեամբ միաւորին ի *մի* բնութիւն և ի *մի* դէմ և ո՛չ շփոթին: - 176. Այսպէս իմա՛ ինձ և զբանին մարդեղութիւն յայլևայլ բնութեանց միաւորեալ ի *մի* էութիւն և ի *մի* դէմ անձնաւորեալ և ո՛չ շփոթեալ բնութեանցն յատկութիւն: - 176. Վասն որոյ խոստովանիմք ընդ սրբոց հարցն վասն միաւորութեանն *մի* բնութիւն աստուծոյ բանին մարդացելոյ: - 176. Ո՜վ մեծի աղետիս և վշտալից տարակուսի. զի այսպիսիքս *զմի* միաւորութիւն տեառն ուրանան…: - 176. Ապա ընդէ՞ր սոքա՝ գոյացութիւն, որակ, քանակ, և այլքն, եղական գոլով ո՛չ շփոթին ի *մի* բնութիւն խառնեալ: - 176. Գոյացութիւն որ սկիզբն է ամենեցուն և նախասեռ. և ի նմանէ զուգաբաժանեալ մարմինն. և շնչաւորն. և զգայունն. և կենդանին. և բանաւորն. և մարդն. ո՞չ ապաքէն բնութիւն են սոքա այլևայլ. և ժողովեալ գոյացուցանեն *զմի* անհատն պետրոս անշփոթ միութեամբ: - 176. Եւ ժողովեալ սոքա լինին *մի* բնութիւն պետրոսին: - 176. Այլ *մի* է պետրոսն ըստ անձին անհատ գոլոյն. և *մի* է բնութիւն պետրոսին ըստ միաւորութեան բանին. իսկ սոքա օրինակ՝ և նա՛ ճշմարտութիւն: - 176. Նոյնպէս և այբն խառնի ի թաւ և ի լերկ, ի սուղ և յերկար, և միաբանի ընդ նոսա, և ի *մի* բնութենէ իւրմէ ո՛չ որոշի կամ այլայլի: - 178. Իսկ Չորրորդն զի ունի ձև, գ ստեղն ի *մի* խառնեալ: - 178. Նա՛խ՝ նշանակէ զաստուածութիւնն երեք անձինք ի *միում* բնութեան: - 178. Ընդէ՞ր *մի* աշխարհ ստեղծ, և ո՛չ **բ**, կամ այլևս: - 179. Ասեմք Նախ՝ եթէ ո՛չ *մի* է. այլ **բ**. այսինքն ներկայս, և հանդերձեալ աշխարհին: - 179. Երկրորդ՝ պատասխանեմք թէ՝ յիրաւի որպէս *մի* է աստուած, և *մի* աշխարհ: - 179. Ապա ուրեմն հա՛րկ է *մի* գոլ աշխարհի և ո՛չ բազում: - 179. Հինգերորդ՝ երկինքն թեթև է ի վեր քարշէ. և երկիրս ծանր ի վայր հակէ. և այսպէս *մի զմի* հաստատուն պահեն: - 182. Եւ երկիրս անշարժ է տեղեաւ, ետ սմա

ապականիլ երեսօք. զի տեսեալ մարդիկ եղական և ծառայ իմացեն զնոսա. և *մի* աստուածս կարծեսցեն և մոլորեսցին. որպէս ասէ նիւսացին ի գիրս կազմութեան: - 182. Իսկ բոլորակ ձևն ի *միոյ* գծոյ բաղկանայ: - 182. Երրորդ՝ զի բոլորակն սո՛ւր է ի շարժումն. և երկինքն սրագո՛յն է ի շարժումն, որ ի շրջիլն իւրում շօշափէ՛ զերկիր ի *մի* կէտ: - 182. Նախ՝ զի միատեսա՛կ է և *մի*: - 186. Չորրորդ՝ **գ** է յատկութեամբ և *մի* բնութեամբ: - 186. Նախ՝ զի *մի* բնութիւն է աստեղաց: - 186. Վեցերորդ՝ զի ի միտ ածցուք զառաջին փառսն մեր և ցանկասցուք. և *մի՛* որպէս զանասուն յերկիր կորասցուք: - 188. Զի յարևելից կիտէ՛ ի նոյն կէտ շրջեալ՝ լինի օր *մի*. որ է **իդ** ժամ. երկու ժամ *միոյ* կենդանակերպի: - 190. Իսկ կէս մասն ի մեկ ամիսն՝ լինի կէս ժամ. և ի մեկ տարին **զ** ժամ. և ի **դ** տարին ժողովեալ՝ լինի օր *մի* **իդ** ժամ. և ա՛յն առնէ զնահանճն. և շարժէ՛ զտօնս և զեղանակս: - 190. Եւ ի մէկ մասն՝ *մի* հոլով առնէ արեգակն. այսինքն մէկ թաւալ: - 191. Եւ արա՛ զերեսուն մասն *մի* ժամ, և զերկոտասան ժամն *մի* օր. և կոչի այս՝ իննևժերեկի ամ. որ աւելու ի լուսինն *մի* օր: - 191. Եւ *մի* մասն ժողովեալ՝ ի **ցպխ** ամն՝ լինի **յկ** մասն: - 191. Եւ արա՛ զերեսուն մասն ժամ *մի*. և զերկոտասան ժամն օր *մի*: - 191-192. Եւ դարձեալ՝ յորժամ վերադիրն լինի **լ**. և **է** երեակն է ի միասին ի *միում* ամի. ասի այն կատարումն լուսնի. այսինքն մասանց թուոյն, և ո՛չ իրին: - 192. Նա՛խ՝ զորքանութիւն աւուրցն ցուցանէ, թէ տիւ և գիշեր իդ ժամն լինի օր *մի* բնական: - 193. Չորրորդ՝ նշանակէ՛ զփութանցութիւն աւուրցս մեր. զի ամենայն ժամանակք մեր անցանեն իբրև *զմի* օր անզգայաբար: - 193. Հինգերորդ՝ այս մին օրս է որ կրկնելով կատարէ՛ զշաբաթ և զամիս և զտարի և զդարս կենցաղոյս, և հասանէ՛ ի վերջին օրն. որ է՛ *մի* օր աներեկ և անփոխանորդ: - 193. Զի և ներկայ ժամանակս որ յայտնի երևի, այսպէս անյայտ և անկայուն է. զի ո՛չ ոք կարէ զվայրկեան ժամանակի *մի* ստուգել...: - 199. Եւ զորօրինակ՝ լիտր *մի* ցորեան, կամ այլ ինչ. յորժամ ձեռօքդ բաժանես և ցրուես զհատսն, ո՛չ մնայ կշիռն: - 202. Եւ զի բնութեամբ ունին յայտ է, զի ամենայն տեսակն զմի և զնոյն ունի հնարս. վասն զի *մի* բնութենէ ի նոսա: - 218. Եւ թէ ասեն, հրեշտակք յանէից գոյացան և ո՛չ ի միմեանց. իսկ մարդկան ազգ պա՛րտ էր ի *միո՛յն* ծնանիլ: - 226. Ասեն սուրբք, որպէս ի *միոյ* լուսոյ բազում լոյսք վառին: - 226. Վասն որոյ յետոյ մարդն ստեղծաւ յերկուցն խառնեալ յիմանալւոյն և ի զգալոյն ի *մի* էութիւն: - 231. Եւ յայսմանէ ցուցանի եթէ *մի* է արարիչ բոլոր ամենայն գոյից: - 231. Վասն է՞ր դէմք մեր ի *մի* կողմանէ է. և միւսն թիկունք: - 234. Նա՛խ ցուցանի զի *մի* է արարիչ սոցա, և բազում արարածք. յաղագս որոյ նմանին և զանազանին: - 237. Զի արարիչն սոցա *մի* է բնութեամբ. և ըստ բնութեան հաւասար, և անձամբ յատուկ: - 237. Եւ որպէս մարմնոյն պատկերք նման և աննման են իրերաց. նոյնպէս և հոգին ըստ *միոյ* բնութեան ստեղծեալք նման և աննմանք են իրերաց: - 237. Ասեմք թէ՝ նոյն է պատասխանին. զի պատահումն առ մե՛զ հանդիպի. այլ առ աստուած ոչ ինչ է պատահմամբ. այլ ամենայն ինչ գիտութեամբ. զի ո՛չ տերև *մի* ի ծառոյ անկանի առանց գիտութեանն աստուծոյ: - 237. Վասն է՞ր *մի* ջուրն ի բերանն քաղցր լինի, և յաչքն աղի. յունչն հոտեալ. և յականջն դառն: - 243. Ասեն բժիշկք թէ, **բճխը** ոսկր է մարդոյն. ջլօք պնտեալ և կապեալ ի *մի* մարմին. և է՛ այսպէս: - 243. Որպէս բունն *մի* է ծառոյն. և ի բազում ճիւղս բաժանի: - 244. Ասեմք եթէ՝ ամենայն արարածք համանգամայն գոյացան յարարչէն. և ո՛չ մի զկնի *միոյ*...: - 253. Իսկ որ ի **զ** օրն ասեմք ստեղծեալ զարարածս, այս զկարգ և զդասն նշանակէ *մի* քան *զմի* յետոյ. այլ ստեղծումն համանգամայն եղև: - 253. Երկրորդ՝ զի *մի* գոյութիւն է մարդն բաղադրեալ ի հոգւոյ և ի մարմնոյ. ոչ է պարտ **բ** լինիլ սկիզբն. այլ *մի* էութեանն *մի* է սկիզբն: - 253-254. Հինգերորդ՝ զի տկարութիւն է զօրութեանն աստուծոյ՝ եթէ *զմի* էութիւն ըստ մասին յայլ և այլ ժամանակս գործեաց: - 254. Այլ ի միասին համանգամայն ստեղծեալ. ո՛չ ժամանակաւ յառաջ և յետոյ, և ո՛չ բնութեամբ. այլ *մի* է սկիզբն *միոյ* գոյութեան մարդոյն: - 254. Եւ թէ ոք ասիցէ, զի՞նչ է այն *մի* սկիզբն գոյութեան մարդոյ: - 254. Եւ այսպէս *մի* է սկիզբն *միոյ* գոյութեան մարդոյն: - 254. Նախ՝ զի նիւթն այն ունի առ ինքն բնական զկենդանութիւն տնկականին. և տնկականն մա՛սն է զգայականին. և զգայականն բանականին. և սոքա ո՛չ որոշին ի բոլորէն. զի *մի* են էութեամբ ի մարդն թէպէտ ա՛յլ են ներգործութեամբ: - 254. Եօթներորդ՝ զի *մի* գոլով սկիզբն ենթակային և կենդանութեանն որպէս ասացաք: - 256. Զի թէպէտ *մի* իրէ նախախնամութիւնն աստուծոյ առ արարածս, այլ զամենայնս ո՛չ միապէս պահէ և նախախնամէ: - 258. Իսկ հոգի *մի* է մարդոյ ի *միոյ* նախախնամութենէ յառաջ բերեալ. յանկատար նիւթն եդեալ զտնկականն և զզգայականն. և ի կատարեալն զհոգի բանական ծագեալ: - 259. Թէպէտ յայլ և այլ ժամանակս երևին սոքա. այլ *մի* են էութեամբ: - 259. Այլ ի մարդն ո՛չ է պարտ ասել **գ** հոգի. այլ *մի* հոգի և **գ** զօրութիւն: - 259. Եւ յա՛յտ ուրեմն է՝ թէ *մի* է հոգի մարդոյն: - 259. Նա՛խ՝ զի *մի* գոյութիւն է մարդն և *մի* կենդանի. *մի* հոգի է *միոյ* մարդոյ և *մի* կենդանութիւն: - 259. Երկրորդ՝ զի թէ այլ և այլ էր հոգի, ի յայլ հոգւոյ տեղիս ո՛չ բնակէր այլ հոգի որպէս յայլո՛յ կաղապար. և ա՛յլ դրօշած ի յա՛յլ կնիք. այլ *մի* է. վասն այն որ յետոյ երևի, յառաջնոյն խառնուածն

կարէ՛ բնակիլ: - 259. Ապա ուրեմն *մի* է էութիւն հոգւոյ ի մարդն: - 259. Իսկ թէ զսոսա **գ** տեսակս ասես, կամ զօրութիւնս, կամ մասունս բանական հոգւոյն, *մի*՛ է տեսութիւնն: - 259. Եւ զորօրինակ՝ ի զգայականն գոյ տըննկականն, այլ *մի* է հոգի զգայականին և ո՛չ **բ**: - 259. Այսպէս և սոքա գոն ի մարդն, այլ *մի* է հոգի մարդոյ և ո՛չ երեք: - 259. Եւ զորօրինակ՝ *մի* է էութիւն իմացման, այլ ի **ե** զգայութիւնս բաժանի ըստ ներգործութեանն: - 259. Այսպէս *մի* է էութիւն հոգւոյն ըստ ինքեան, և յերիս բաժանի ըստ ներգործութեան: - 259. Եւ զորօրինակ՝ *մի* է բոլորն մասամբ իւրով. այսպէս *մի* է բոլոր հոգի, և սոքա մասունք նորա: - 259. Եւ որպէս ասէ արիստոտէլ զերեք թիւն՝ որ *մի* ունի զէութիւն իւր. այլ երկուքն և մինն մասունք են նորա: - 259. Այսպէս իմա և զբանական հոգւոյն. որ ի մարդն *մի* է և զանազանապէս ներգործէ: - 260. Եւ թէ ասիցէ ոք, ո՞րպէս է *մի*, զի ահա ի մահուանն բաժանին ի նմանէ: - 260. Ասեմք առ այս, եթէ և յետ մահուան ո՛չ բաժանին սոքա ի հոգւոյն ըստ էութեան. զի *մի* է էութիւն սոցա. այլ ըստ ներգործութեան. զի ո՛չ է մարմին՝ ո՛չ կարէ ներգործել: - 260. Եւ թէ ասիցէ ոք, երևի ապա թէ հոգին ինքն առ ինքն նախկին է և յետոյ եթէ *մի* է հոգի: - 260. Ասեմք առ այս, թէ *մի* է հոգի հաւաստեաւ. և ո՛չ է ինքն ինքեան առաջին և վերջին. զի *մի* էութեան՝ առաջին և վերջին ո՛չ է. այլ ըստ ներգործութեան. զի ըստ առաջին և վերջին զօրութեանն՝ առաջին և վերջին ներգործէ: - 260. Արդ՝ **ժ** թիւն կատարեալ է. և չորսն տարրական է. այսինքն զի կատարեալ հոգին բանական ի նո՛յն ժամն խառնեալ միաւորի ընդ մարմնոյն տարրական, և կերպացեալ լինի *մի* մարդ *մի* դէմ և *մի* բնութիւն մարդոյ ի հոգւոյ և ի մարմնոյ. որպէս քառասունն ի տասանց և ի չորից է գոյացեալ: - 262. Դարձեալ **ժ**երրորդ՝ աստեղագէտք ասեն թէ յղացումն ամենայն մարդոյ Զօհալին է. և յիւրաքանչիւր մոլորակս ամիս *մի* թուեալ՝ լինի ծնունդն ի մուշթարին **թ** ամիս: - 264. Եւ իմաստակ կոչին՝ որք *միոյ* արհեստի են գլուխ. որպէս քերականութեան. ճարտասանութեան. աստղաբաշխութեան. և այլք. որպէս պիհռոնացիք ակադիմեանքն. որք հակառակ կոչին: - 269. Տասներորդ՝ մի և նոյն միտք է յաստուած որով զամենայն տեսանէ և զամենայն բարբառ լսէ. նոյնպէս և ի մարդս *մի* իմացումն է որ զանազան զգայարանօք իմանայ: - 271-272. Երեսուներորդ, *մի*՛ է պատկերն մարդ. և *մի* սկզբնատիպն աստուած: - 272. Իսկ նման, զի *մի* է երիցն էութիւն և բնութիւն. այնու նմա՛ն եմք աստուծոյ: - 273. Երրորդ՝ կին, իբր թէ կող *մի*. որ է՛ զօրութիւն սիւն: - 276. Իսկ մարգարէութիւնն լռեաց, զի ո՛չ ևս երևի բան *մի* յիշատակ շնորհաց նորա: - 279. Այլ կամ իբր զիրեշտակս, կամ որպէս ի *միոյ* լուսոյ բազումք, կամ կուսութեամբ ծնունդ. որպէս սուրբ կոյսն մարիամ աստուածածին սրբութեամբ և կուսութեամբ ծնեալ փոխեաց զկարգ բնութեան ծննդեանս որ ի սերմանէ առն և կնոջ. զի սա՛ ծնունդ միայն ի մօրէ՛: - 280. Երկրորդ այսպէս. **գ** մասանց աւելին և պակասն լինին **զ** չարիք. և *մի* գործ մարմնոյն որ լինի է նենգութեան խորհուրդ: - 287. Զի վասն առաջնոյն ասեն վարդապետք, եթէ ադամ ո՛չ եկաց ի դրախտին **ռ** ամ, կամ աւելի և կամ պակաս, այլ *մի* օր. մանաւանդ **է** ժամ: - 290. Եւ վասն երկրորդին ասեն, եթէ կարծեօ՛ք է՝ թէ համանգամա՞յն փոխիլոց էին, թէ *մի* զհետ *միոյ*: - 290. Նախ՝ եթէ **ռ** ամն մեր՝ յաչս տեառն որպէս օր *մի* է: - 290. Եւ **ժե** նրբեցոյց ի *մի* կանգուն, զի ջուրն վիժեսցի: - 293. Եւ կերակուրն *մի* ամենեցուն առհասարակ մարմին և արիւնն սուրբ: - 294. Բոլոր տարի *մի*. զի այսպէս ասէ գիրն թէ՝ **ճծ** օր բարձրացաւ ջուրն. և յետոյ **ճծ** օր ցածուցաւ. որ լինի **ժ** ամիս: - 294. Եւ **գ** եօթն է որ արձակեաց զաղաւնին որ լինի **իա**. և **ե** օր աւելեացն որ լինի տարի *մի*: - 294. Յայր առ որդի և հոգի սուրբ ասաց, որովք արար զմարդն *մի* ազգ և *մի* լեզու: - 297. Դարձեալ՝ ա՛յն է խառնակիլն, որ ի *միոյ* խոշոր լեզուէ քաղդէացոցն խառնակեցան և եղեն զանազանք: - 297. Եւ առաքելօքն դարձեալ զեօթանասուներկուքն ի *մի* հաւաքեաց: - 298. Աղն և այրեցածն *մի* են: - 303. Երրորդ՝ զի հալեսցի և *մի* ի պաշտօն առցի: - 303. Եւ գիտելի է, զի **ժ** փորձանացն աբրահամու որք էին ձոյլարան նորա՝ *մի* է և այս: - 304. Իսկ չորրորդն է՛ պատարագ տեառն մերոյ քրիստոսի որ ի *մի* դէմ անձնաւորութեան **գ** երես պատարագին բացայայտեցաւ: - 306. Իններորդ՝ միամա՛յր է որդի սառայի. միածին է և որդի կուսին. *մի* ծնանիմք և մեք յաւազանէն: - 307. Չորրորդ՝ զի *մի* է և միակ անդրանիկն ի մէջ բազում եղբարց. որպէս *մի* է գլուխն և բազում անդամք: - 310. Եւ մարտեաւ ընդ նմա այր, զչափ ուժոյ և զկերպարանքն եսաւայ զգեցեալ. զի կրթեսցի և *մի* երկիցէ ի նմանէ: - 311. Չորրորդ՝ զի խղճասցէ եսաւ և *մի* սպանցէ: - 311. Եւ յամենայն աւուր ըստ թուոյ նոցա **ժ** զոհ մատուցանէր, և զուարակ *մի* վասն սրբութեան մտաց: - 321. Վասն է՞ր յոբ յետ խրախութեանն **ժ** պատարագաւ սրբէր զորդիսն. և *մի* զուարակ վասն մտաց մեղացն մատուցանէր: - 322. Եւ ըստ նմանութեանն քրիստոսի *մի* զուարակ. որ վասն մեղաց մերոց մեռաւ: - 322. Նա՛խ՝ գուժ լծոց եզանցն՝ և սպասաւորացն մահ. և գուժկան ձևանայր դև *մի* ի կերպարանս ծառայիցն յոբայ: - 322. Այլ ոմանք ասեն ի ձեռն հրեշտակաց ի *միում* աւուր ժողովեցան. որպէս ի ձեռն դիւաց ցրուեցան: - 326. Այլ ա՛յս է ճշմարիտն, զի ամենայն բարեկամքն որ ժողովեցան յետոյ և մխիթարեցին զնա՛,

իւրաքանչիւրքն բերին մէն *մի* որոջ ոչխարի և **դ** դրամ ոսկի անգիր ընծայեցին նմա ի սատար խրախութեանն...: - 326. Խաշինքն բիւր *մի* և **դռ**: - 326. Այլ աշխարհն օսիդ՝ գաւա՛ռ **է** եսաւայ. զի օսիդն *մի* է յորդւոցն եսաւայ յորոյ անուն կոչեցաւ երկիրն օսիդ: - 327. Եօթներորդ՝ որպէս ջուր էր բնութեամբ *մի*՝ և եղև արիւն: - 333. Նոյնպէս և *մի* տէր յիսուս քրիստոս *մի* բնութեամբ էր աստուած, և եղև մարդ. հաւատացելոցն ի կանգնումն, և անհաւատիցն ի գլորումն: - 333. Երրորդ, զի կործնելոց էին անդրանիկ ծնունդքն սատանայի. որ էր հպարտութիւնն և կռապաշտութիւն. զի խոնարհութեամբ էր գալուստն քրիստոսի և ի *մի* աստուածպաշտութիւն հրաւիրեաց և կործանէ զպաշտօնն դիւական: - 334. Երկրորդ՝ զի գաւազանն մովսէսի *մի* վիշապ եղեալ կլանէր զբազում վիշապս նոցա որ և հե՛տն միանգամայն ո՛չ երևէր. ընդէ՞ր ապա և նոցայն ո՛չ եկուլ զմովսէսին. քանզի սո՛ւտ էր: - 335. Ուստի յա՛յտ է զի ի *մի* նիւթ ժողովեաց զամենայն որակս համոց: - 339. Եւ զիաց մարմնոյն քրիստոսի՝ որք զբոլոր և որք զմասն ճաշակեն՝ *միո՛յ* կենաց հաղորդին: - 339. Նա՛խ՝ զի **ե** բանն ի *միում* տախտակի էր աստուածային...: - 340. Վասն է՞ր եզական դնէ զօրէնս իբր առ *մի* դէմս ասելով՝ «մի՛ սպանաներ և այլն»: - 340. Երկրորդ՝ զի *մի* ոք որ կատարէ զօրէնս, պատուակա՛ն է աստուծոյ քան զամենայն աշխարհս. վասն այն ընդ մինն խօսի: - 340. Հինգերորդ, **թ** դասք հրեշտակաց. և *մի* դաս մարդկան ընտրելոց լինի **ժ**: - 343. Այլ թէ հարցանեն զորքանութիւն սիւնիցն. **ծ** սիւն ի մէջ խորանին. և **թ** սիւն վարագուրացն. և *մի* թափանց ի մէջն յարևելից յարևմուտս. որ լինի **կ**. և **ձ** սփռիչ. և **խ** նիգք. և ամենայնն ոսկեպատ. որ բովանդակն լինի **ճձ** ի ներքս: - 343. Սիկղն և սատերն և երկդրամեանն *մի* են. **ի** դանկ է. և *մի* դանկն **բ** գարւոյ կշիռ է: - 343. Լինի բովանդակն տարի *մի*: - 344. Եւ կրկին, զի հոգւով և մարմնով *մի* եղև բանն աստուած: - 349. Երկրորդ՝ վասն անգիտութեան և ակամայիցն զուարակ *մի* քահանային. և զուարակ *մի*՝ բոլոր ժողովրդեանն ի տօնի քաւութեանն: - 358. Հանապազորդ քահանայիցն գրիւ *մի* զանգեալ. կէս յառաւօտն և կէս յերիկոյն: - 359. Այլ և ի տօնի քաւութեանն զուարակ *մի* և **բ** նոխազ վիճակով. մին տեառն և միւսն արձակման յանապատ: - 359. Եւ *մի* է քաւութեան պատարագն քրիստոսի. մեղաւորին և յանցաւորին: - 362. Եւ ի սոցանէ ո՛ր և իցէ, արտա՛քս է յեկեղեցւոյ և ի սրբութեանց, օր *մի* կամ **բ** կամ աւելի. և սրբի խոստովանութեան ջրովն: - 368. Երկու նոխազն համատեսակ օրինակ տեառն մերոյ՝ յերկուց միաւորեալ *մի* անձն. և միաւոր բնութեամբ աստուած և մարդ: - 369. Եւ ասեն յետ տարւոյ *մի* եկեալ նոխազն մաքրեալ յարենէն: - 369. Արիւն ուտելն՝ և հեղձուցանելն՝ և գազանաբեկն՝ *մի* էր մեղք՝ որպէս ասացաւ ի վերոյ **ժը** գլուխն ի **զ** համարն: - 371. Նա՛խ՝ զի **ը** էին նւէրք պատարագացն. **է** գառն. և *մի* խոյ: - 373. Եւ եօթնից **է** տօնեմք յարութեան. նոյնպէս *զմի* օր օրինացն տըւչութեան, տօնեմք **ը** օր հոգւոյն գալստեան: - 373. Այլ խորհուրդն է, Նա՛խ՝ զի օրինակ բազում է, և ճշմարտութիւնն *մի*: - 374. Դարձեալ՝ այն որ *մի* քան *զմի* առաւել են չափով դորակին, նշանակէ՛ զհաւատն և զյոյսն և զսէրն առաւել: - 375. Այլ ա՛յս է ուղիղն. զի բովանդակն ամենայն **թ** դասք են հրեշտակաց. այլ անկեալքն ի նոցանէ՝ են ի չափ *միոյ* դասու. և մարդիկ զնոցա տեղին լնուն: - 376. Դարձեալ ցուցանէ՝ ի լրման ժամանակի տասանց *միոյ* կորուսեալ դրամին ի խնդիր ելեալ: - 376. Եւ նախ **գ** օրն. **գ** գոյացութիւն նորին. այսինքն աստուածութիւնն՝ հոգին՝ և մարմինն միաւորեալ *մի*: - 380. Զի աթոռք՝ քերովբէք՝ սերովբէք՝ հաւասարապատիւք են՝ *մի* համարի դասս. և վեցն զկնի նոցա: - 380. Որ և *միով* հպմամբ ի լանջսն՝ մաքրեցաւ աշակերտն յայսպիսի կրից. քանի՞ առաւել որ եբարձ զապականութիւնս ազատ լիցի յայսպիսի կրից: - 383. Վասն է՞ր յորժամ զգողացեալն խոստովանի ասէ՝ և խոյ *մի* աստուծոյ նուիրէ՛: - 384. Եւ զհինգ բաժնէն *մի* մասն տուգանք, զի **ե** զգայութեամբ մեղաւ: - 384. Եւ թէ ոչ էր զղջացեալ, *միոյն* **դ** և **ե** էր տուգանք գողին: - 384. Երրորդ՝ զի ամենայն ազգ ի *մի* կողմ երկրպագէին. և յետոյ քրիստոնեայք յարևելս: - 395. Նա՛խ՝ հաւատով ճանաչելն է զերրորդութիւնն *մի* բնութիւն, և ապա գործով սիրել զնա. որպէս նախ ուսանիլն է և ապա առնել: - 396. Իսկ սիրտ՝ զհոգին ասէ. որ ծածուկ է. և տեղիք խորհրդոց. և *մի* է. և կենդանութիւն մարմնոյն: - 396. Երկրորդ՝ բարոյական. զի մին կնոջ ի բազում արանց ո՛չ երևի հարազատ զաւակն. իսկ *մի* այր ի բազում կանանց կարէ՛ ծնանիլ հարազատ մանկունս և սիրել զնոսա: - 401. Չորրորդ՝ խորհրդական. զի *մի* է քրիստոս փեսայ. և զեկեղեցիս հրէից և հեթանոսաց ընկալաւ իւր հարսն սուրբ: - 401. Եւ *մի* է աստուած և արարածք բազումք: - 401. Եւ *մի* հաւատ և հաւատացեալք բազումք: - 401. Ըստ այնմ «մեզ *մի* է աստուած հայր և *մի* տէր յիսուս քրիստոս. և *մի* հաւատ և *մի* մկրտութիւն բազմացս». ասէ առաքեալն: - 401. Իսկ *մի* այր և բազում հաւատք և բազում աստուածք՝ շնութիւն է հոգևոր: - 401. Այս է՝ ի *միոյ* բարի էութենէն աստուծոյ յառաջ գայ արարչական և արքունական զօրութիւն. իբր աջ և ահեակ ձեռն: - 403. Եւ ի սոցանէ ողորմութեան և արդարութեան գործ. որ է՛ օրինութիւն և անէծք ի *մի* պատուիրանն աստուծոյ տրամակայեալ: - 403. *Մի* ճանապարհ գալն է. և է զբազումս ասէ ի փախչիլն: - 404. Դարձեալ՝ ի *մի*

խորհուրդ թշնամութեամբ: - 404. Դարձեալ՝ *մի* չար կամք է ամենայնցն որպէս ասացաւ: - 404. Ա՛րդ՝ սոքա համաձայն ի *մի* կորուստ հոգւոյ դիմեն առ մարդն: - 404. Նա՛խ՝ զի ո՛չ ամենևին անէծ. այլ և մասն *մի* օրհնութիւն էր: - 409. Իսկ ըստ նաեբեայ վչծ ամք. թիւ *մի* պակաս: - 411. Քսաներորդ, Ո՛չ հրամայեցաւ դաւթի շինել զտաճարն. ի Հազարս գտի այր *մի*. և ի կանանց ո՛չ մի: - 413. Եւ հաւատարիմ է այս. զի առ յեսու սքանչելիքն լինէր ի կամարն երկնից. և *մի* տիւն՝ ժամս **լզ**: - 416. Քսաներորդ՝ յեսու զլուսաւորսն կապեաց և արար *զմի* օրն **բ**: - 418. Եւ տէր մեր ի ժամ խաչին խաւարեցոյց զնոսա և *մի* օրն եղև **բ**: - 418. Գեղմն և ցօղն *մի* էր. բայց նշանն կրկին: - 421. Եւ յետոյ բաշխումն նշխարաց. որպէս դաւիթ բաշխեաց ամենայն իսրայէլի բլիթ *մի* հաց, և պատառ *մի* ի տապակէ՛ և ի կասկարայիցն: - 431. Ապա թէ ոչ՝ ի *միում* աւուրն **եճ** և **կռ** կամէր կոտորել այսու համարով. և ոչ ինչ մնայր ի ժողովրդենէն: - 435. Երկրորդ՝ կոչի դաւիթ որ է՛ սիրեցեալ և բաւական ձեռօք. և տէր մեր սիրեցեալ ի հօրէ և ի մարդկանէ իբր զորդիս *մի* եղջերոյ. և նա՛ է բաւական յամենայն գործս և ի պարգևս: - 435. Եօթնև**ժ**, անդ *միով* քարամբ էհար. և աստ *մի* բանիւ բերանոյ ի պարսէ՛ լեզուին: - 436. Զի՞նչ է ի հազարս գտի այր *մի*. ի կանանց և ո՛չ մի: - 440. Այլ զայն ասէ՝ թէ յամենայն ազգս արանց գտաւ այր *մի* քրիստոս, ազատ ի պարտուց սկզբնականին. և ի կանանց և ո՛չ մի: - 440. Վասն է՞ր թիւ *մի* պակաս լինի թագաւորացն: - 443. Զի յորժամ գայր ագռաւն ի *միոյն* բերանն հաց դնէր աստուած, և ի *միոյն* միս. և ամբողջ բերէին առ նա: - 443. Նա՛խ՝ զի ուսուցէ, եթէ *մի* անգամն ո՛չ լսի՝ պա՛րտ է անձանձիր աղօթել. որպէս այրին որ ժտելովն էառ: - 444. Երկրորդ՝ զի **հ** ամն իբրև *զմի* օր համարեցաւ նոցա. զի հանգիցեն ի չար գործոց, և երկիրն ի չար գործելոյ: - 448. Որ լինի **ծ**, պակաս *մի*. սոյնպէս թւեալ: - 450. Եւ մեծն ի ծնունդս որովայնի՝ խրաց *մի* կօշկաց նորին լուծելոյ ոչ բաւէր: - 456. Եւ յակոբ և ելի եղբարք էին ի *միոյ* մօրէ: - 460. Եւ սոյնպէս և քրիստոս եղև երկուց զարմիցն *մի* քահանայ և թագաւոր ճշմարիտ և մշտնջենաւոր քահանայ և թագաւոր յաւիտեան: - 461. Եւ զանազան ձայնք քնարի՝ *մի* ենթակայ օդով միաւորին: - 476. Այլ և ոսկր միս ջիլ և մորթ՝ *մի* անդամ շարադրեն: - 476. Նա՛խ՝ որպէս մարդն յայլ և այլ բնութեանց միաւորեալ՝ *մի* անձն և *մի* դէմ և *մի* բնութիւն կատարի. զի *մի* ասեմք զմարդն և *մի* զբնութիւն նորա: - 477. Այսպէս յայլ և այլ բնութեանց բանն մարմին եղեալ՝ *մի* անձն է և *մի* դէմ: - 477. Ամենակատար և անշփոթ մարդանալովն ըստ մեզ մարդասիրապէս՝ ի բնութիւնս մեր տեսակացեալ, և առ բաժանականս մեր անայլայլաբար ըստ բնութեան *միոյ* յառաջ եկեալ: - 477. Ութերորդ՝ որպէս ի միաւորիլ հոգւոյ և մարմնոյ յառաջագայի ի *միոյ* կամաց *միով* զօրութեամբ հանճար և ներգործութիւն: - 478. Այսպէս և բոլոր տրնօրէնութիւն մարդացելոյն բանի՝ *միով* զօրութեամբ և կարողութեամբ ըստ միութեանն կամաց *մի* ներգործութիւն երևի: - 478. Վեցերորդ՝ զի հոգի և մարմին մասն գոլով գոյանայ *մի* կատարեալ: - 479. Վասն է՞ր ազգս հայոց զտօն ծննդեանն քրիստոսի և մկրութեան ի *միում* աւուր կատարեմք: - 482. Քանզի ո՛չ կարէին ի *միում* աւուր յերկոսեան ուխտսն կատարել զտօնսն հեռի գոլով ի միմեանց. երուսաղէմացիքն այսր աղագաւ փոխեցին. և փոքր փոքր աճմամբ ընկալան և ա՛յլ եկեղեցիք զնոյն: - 482. Վեցերորդ՝ զի հարկ էր մատուցմունք նւիրաց ժողովրդեանն. և կատարեալ էր *մի* օր պաշտամանն: - 484. Չորրորդ «մկրտիլ ի նմանէ». այսինքն աղբիւրն ի յառուն. լիութիւնն ի կաթիլ *մի* ջրոյն. մաքուրն ի կաւոյն սրբիլ. և արեգականս արեգակն՝ ի ճրագէն լուսաւորիլ: - 487. Զի ո՛չ ասաց թէ որ ի դմա՛ է կամ դոքա ըստ բաժանողաց. այլ թէ դա՛. որ *մի* անձն բնութեամբ միացեալ նշանակէ: - 487. Իսկ չորրորդն է՛ պատարագ տն մերոյ քրիստոսի որ ի *մի* դէմ անձնաւորութեան **գ** երես պատարագին բացայայտեցաւ. այսինքն մեծ գոլ մատուցօղն և ընդունօղն և պատարագն: - 491. Արդ զապարանքն պիղատոսի իբր *զմի* տեղի առեալ. թէպէտ կրկնեալ եղև. և խաչելութեանն տեղի լինի զ. և գերեզմանն յորում հանգեաւ է: - 493. Զորօրինակ՝ *մի* ոմն ծառ հատանէ, և այլ ոմն զհատեալն դարձեալ հերձու և բաժանէ՛ և տայ յայրումն: - 498. Դարձեալ ասեմք, եթէ *միով* հպմամբ լանջացն յիսուսի մաքրեցաւ աշակերտն յայսպիսի կրից. քանի՞ առաւել բարձօղն ապականութեանց ազատ լիցի յայսպիսի կրից: - 502. Այլ *մի*՛ է դժոխքն. որպէս *մի* է արքայութիւնն: - 504. Եւ որպէս ի *մի* արքայութիւնն օթևանք և փառք բազում են ըստ գործոցն. այսինքն երեսնաւոր. վաթսնաւոր. և ճաւոր: - 504-505. Եւ որպէս *մի* հուրն զանազանապէս այրէ զդալար փայտ՝ և զչոր խոտ՝ և զեղէգն: - 505. Նոյնպէս *մի* հուր դժոխոցն զանազանապէս տանջէ զմեղաւորսն: - 505. Ուստի յա՛յտ է թէ *մի* է դժոխք հոգւոցն: - 505. Եւ խորհուրդ նաւատակեաց ի դրախտին աւանդեցաւ յամենայն պտղոյ ուտել և ի *միոյն* ոչ: - 510. Եւ որպէս ադամ յամենէէն ո՛չ եկեր, այլ ի *միոյն* եկեր և դատապարտեցաւ: - 510. Կամ որպէս ասեն ոմանք թէ երկու յաւազոյ և *մի* ի սերմանէ՛ գոյանան մարմինք ձկանցն: - 510. Եւ տե՛ս և ի միտ առ. զի սոքա ի *մի* կարգի՛ են եղեալ. այսինքն ձուկն և ձու և կաթն. և որ ուտէ զմինն՝ կերիցէ և զմիւսն: - 510. Տասներորդ՝ յաւուր *միում* այսահարեալ սաւուղ՝ կամէր նիզակաւն բևեռել զդաւիթ յորմն. յորմէ զերծեալ ապրեցաւ և գնաց ի տունն:

- 513. Երեքտասաներորդ՝ անաղեկացիք գերեցին զկողմն հրէաստանի և զայլազգիս. և դաւիք զհետ մտեալ յետ գ աւուր և հարեալ ի գիշերի և ի վաղիւն մինչ յերեկոյ. և դարձուցեալ զերկուսին կանայս իւր. և ո՛չ մնաց գերի և ո՛չ *մի*. և յաւարէ աստի բաշխեաց ամենայն սիրելեաց իւրոց: - 514. ...և ո՛չ *մի* հոգի եթող ի դժոխս. այլ զամենայն ազատեաց յարուցեալ ի մեռելոց. և բաշխեաց պարգևս որդւոց մարդկան: - 514. Մատթէոս զառաջինն գրէ որ ի մէջ գիշերի եկին. և *մի* հրեշտակ տեսին. և զվէմն առաջի նոցա թաւալեցոյց և նստաւ ի վերայ նորա: - 515. Իսկ զերրորդն մարկոս պատմէ՛ առաւօտուն և յարևագալն յետ ղուկասու. և տեսին երիտասարդ *մի* ի ներքս ի գերեզմանն ընդ աջմէ նստեալ: - 515. Դարձեալ՝ որպէս ծալեալն ծածո՛ւկ է և *մի* կողմն երևի: - 517. Վեցերորդ, ոմանք ասեն թէ պարգևս խնդրէր հոգևորական. վասն այն ասէ ելանեմ առ հայր իմ և իջանէ հոգին և լնու զծեզ ծրի պարգևօք. այժմ յաղագս այդորիկ *մի*՛ ներծենար: - 517. ...զախտս հոգւոց ի բա՛ց ընկեսցեն և *մի* ունայնապէս ներծեսցին ի նա: - 518. Երրորդ՝ համարծակութիւն քարոզութեան առանց երկիւղի խօսիլ զբանն առաջի ազգաց և ազանց և թագաւորաց. որպէս պետրոս ի *միում* ժամու զերեք հազարսն հաւատացոյց: - 524. Այնց է իմանալ, ուր ժողով լինէր *մի* լեզուաւ խօսէր որ առաքեալ, և ամենայն որ լսէր իւր ծայնիւն: - 525. Նախ զայս ասեմք թէ՝ համաքուն և համապատիւ է Երրորդութիւնն սուրբ. զի *միոյն* փառքն երիցն է և երիցն *միոյն*: - 525. Երկրորդ, *մի* է՝ թէ բազում բանն աստուծոյ և սուրբ գրոց: - 525. Եւ ո՞րպէս է *մի* կաթուղիկէ եկեղեցի: - 525. Եւ *մի* նշխար օրհնեմք և լինի մարմին քրիստոսի: - 526. Նախ այն է՝ որ զորդի ընդ հօր և սուրբ հոգւոյն փառաւորեմք և օրհնեմք գ անձինք ի *միում* բնութեան. և ո՛չ որպէս հինքն հրէական օրհնութիւնս. որք ո՛չ օրհնէին զորդի և զհոգի: - 528. Բանն աստուծոյ *մի* է թէ բազում. զի բազում երևի ի հին և ի նոր կտակս և յիւրաքանչիւր թուղթս գրեալ...: - 529. իսկ թէ *մի* է, ո՞րպէս կարասցուք ասել մի և զնոյն բանն աստուծոյ որ նախ քան զյաւիտեանս. և այսօր գրեալ ի քարտիսի: - 529. *Մի* է բանն աստուծոյ անծնաւոր էութիւն և գոյացութիւն. որ էր ի ծոց հօր անմարմին. որով ամենայնքն ի լինելութիւն եկին: - 529. Եւ թէ որ ասիցէ, երևի այսպէս ասելդ թէ՝ *մի* է և բազում. և այս ո՞րպէս լինի: - 529. Ասեմք առ այս, եթէ ո՛չ է արտաքոյ ուղիղ տեսութեան եթէ *մի* է առ հօր և բազում է առ մեզ: - 529. Զի *մի* է ըստ իւրում անծնաւոր գոյութեանն. և բազմանայ ի բազումս երևեալ: - 529. Զոր օրինակ, ներտրամադրեալ բանն *մի* է՝ և յառաջ բերեալ բազմանայ ի լսելիս և ի գիրս: - 529. Եւ դարձեալ զոր օրինակ, բան թագաւորին *մի* է, այլ ի բազում լեզուս և ի բազում լսելիս և ի բազում թուղթս որակացեալ և բազմացեալ, յիւրում միութենէն ո՛չ է քակտեալ: - 529. Զոր օրինակ, *մի*՛ է արեգակն անծամբ և գոյութեամբ, և ի բազում լուսանցս և ի հայելւոջ երևեալ նոյն *մի* անծամբ և գոյութեամբ և ո՛չ բազում: - 530. Եւ թէ որ ասիցէ, ո՞րպէս է *մի* բանն աստուծոյ. զի ահա՛ բանն մարմնացեալ էր. և հայր բանիւ վկայեաց ի վերայ որդւոյն. և անյարմար է ինքն ինքեան վկայել: - 530. Ասեմք առ այս, թէ յերրորդութիւնն սուրբ *մի* է բանն և իմաստութիւնն և բնութիւն և կեանք և ներգործութիւն և այլն ամենայն. բաց յառանձնութենէն որ է ծնող ծնեալ և բղխեալ: - 530. Նա՛խ՝ որպէս *մի* է գլուխ, և անդամք բազում: - 532. Նոյնպէս *մի* է տէր մեր յիսուս քրիստոս և ո՛չ երկու ըստ բաժանողաց ոմանց: - 532. Երկրորդ՝ *միով* գլխով բոլոր անդամք ամենայն *մի* են հաղորդութեամբ նմա: - 532. Նոյնպէս *մի* է քրիստոս և *մի* մարմին նորա. որ կոչի *մի* կաթուղիկէ եկեղեցի. որպէս ի հաւատամքն ասի: - 532. Ո՞րպէս է *մի* կաթուղիկէ եկեղեցի ընդ ոլորտս տիեզերաց: - 532. Այժմ ասասցուք թէ ո՞րպէս կոչի *մի* եկեղեցի յայտնապէս ի կարճոյ: - 533. *Մի* կոչի եկեղեցի՝ ո՛չ տեղեաւ *մի*. այլ *միով* հաւատով և յուսով կոչմանն. և *միոյ* մօր և *մի* որովայնի ծնունդ աւազանին. և *մի* կերակուր որ է տեսութիւն աստուածային գրոց. և *մի* մարմին և արիւն փրկական. և *մի* գլուխ և պսակ և զգեստ ունիմք զքրիստոս: - 533. Սակայն տեսցուք զի ըստ փիլիսոփային *մի* ասի գ եղանակաւ: - 533. Որպէս սեռիւ *մի* են ամենայն կենդանիք. և տեսակաւ ամենայն մարդ. և անհատիւ *մի* որպէս պետրոս: - 533. Ա՛րդ՝ *մի* է ամենայն ընդհանուր եկեղեցիք որ է բոլոր քրիստոնեայք ըստ հաւատոյն և կոչմանն յուսոյն որպէս սեռիւ: - 533. Եւ *մի* է ըստ խորհրդոյն՝ այսինքն մկրտութեամբ՝ պատարագելով՝ կարգիւ՝ և այլովն՝ որպէս տեսակաւ: - 533. Եւ *մի* է ըստ ծնոյն արարողութեան պահոց աղօթից որպէս անհատիւ: - 533. Կամ որպէս բոլոր ի մասունս. կամ որպէս հոմանուն ծայն. կամ որպէս ի *միոջէ* և առ *մի*: - 533. Նա՛խ՝ որպէս բոլորն է մարմին և իւրաքանչիւր մասունքն. նոյնպէս և բոլորն *մի* եկեղեցի՝ և իւրաքանչիւրքն. և բոլորն քրիստոնեայ՝ և մին մարդն. եթէ նման են միմեանց և եթէ աննման: - 533. Երկրորդ, *մի* անուն՝ և նշանակեալքն բազումք. որպէս խոյ է յերկինս և յերկրի և ի ծովս. նոյնպէս *մի* կոչի եկեղեցի կենդանի մարդն և շինեալն ի քարանց և եկեղեցին անդրանկացն յերկինս. սակայն զանազա՛ն են որպիսութեամբ: - 533. Երրորդն ի *միոջէ* և առ *մի*. որպէս բժշկական դեղ և գործիք. նոյնպէս *մի* է եկեղեցի յիւրաքանչիւր ազգս. զմի և զնոյն ունելով գործ և իր ի *միոյ* գլխոյն առ *մի* անդամս. ի *միոյն* քրիստոսէ առ *մի* քրիստոնեայս. ի *միոյ* հաւատոյն առ *մի*

հաւատացեալքս...: - 533. ...և այլ նմանապէս առ այսոքիւք երրորդ եկեղեցի որով կարո՛ղ են հաւաքել ամենայն տիեզերք երկրի և լինիլ *միով* հաւատովն *մի* հաւատացեալք որպէս ասացաւ: - 533. Որպէս և առ մեզ է. զի կին որդւոյն դուստր կոչի հօրն վասն *մի* մարմնոյն: - 534. Դարձեալ՝ թէպէտ *մի* է հայր և մայր քրիստոսի և եկեղեցւոյ, այլ զանազան կերպիւ: - 534. Երկրորդ՝ որպէս հանուրն նախադասի մասնականաց, այսպէս առաքեալքն հանուրց աշխարհի լոյս կոչեցան. և մարգարէքն *միոյ* ազգի...: - 535. Ասեմք, եթէ որք ի հաւատս ունին թիւրութիւն. որպէս հերձուածօղք և վնասիչք եկեղեցւոյ. և որք ի զագիր վարս պղծեալ են գործովք և վնասեն զինքեանս. և անզեղջք են առ երկոսին. յետ *մի* անգամ և երկիցս խրատելոյ, որոշեցին յեկեղեցւոյ և պատժեսցին: - 540. Եւ դարձեալ՝ որպէս բանն աստուած անէծ զադամ, նոյն բանն դարձեալ օրհնեաց մարմնովն. թէպէտ *մի* է գործ Երրորդութեանն: - 542. Եւ պատճառ սոցա այն էր, զի քրիստոսի *մի* բնութիւն ասէին. և ինքեանք սահմանեցին **բ** բնութիւն. **բ** գործք. և **բ** կամք: - 544. Եւ նզովեցին զաղանդն մարկիանու և զարտեմոնի, և զտումարն լևոնի. և միաբանեցան ի *մի* հաւատս սուրբ առաքելոցն. և ի կանոնս սուրբ ժողովոյն ինչ պետք էին յաւելին գլուխս **թ** ի զգուշութիւն եկեղեցւոյ: - 544. Զի այսպէս սահմանեցին՝ թէ ինքնակալ թագաւոր *մի* և ինքնագլուխ հայրապետ *մի* նստցի ի հայս. և թագաւոր *մի* ինքնակալ՝ և ինքնագլուխ հայրապետ *մի* ի հռօմ. և ի վերայ միմեանց դիցեն զանձինս ի մահ. և սոսկալի գրով եղեն միմեանց եղբարք. թացեալ զգրիչն յահաւոր խորհուրդն: - 548. Դարձեալ՝ ճշմարիտն *մի* է և սուտն բազում. և բարին *մի* է և չարն բազում. և առաքինութիւնն *մի* է և մոլորութիւնն բազում: - 550. Դարձեալ՝ յայտնապէս ասել ո՛չ է հարկ՝ է ամենայն բազում պատուական է քան զմին. զի ահա՛ գոյացութիւնն *մի* է և պատահումն բազում. և արեգակն *մի* է և աստեղք բազում. և գլուխն *մի* է և անդամք բազում: - 551. Նմանապէս և ազգս հայոց թէպէտ *մի* է, կարէ՛ պատուական գոլ բազմաց: - 551. Եւ զայս վասն է՞ր յերկարել ինձ. զի ցուցանիցի թէ ո՛չ է պարտ *միոյն* ճշմարտի բազում ստոց հետևիլ: - 551. Եւ լաւ է *մի* ակն պաուական՝ քան զբազում քարինս անպիտան: - 551. Դարձեալ, զորօրինակ բազումք ընթանան ի *մի* ճանապարհ, և ամենեքեան թողեալ զնոյն՝ ընդ այլս գնասցեն, և մինն մնասցէ ի նոյնն. ո՛չ ասեմք թէ մինն բաժանեցաւ ի ճանապարհէն, այլ՝ այլքն: - 551. Եւ յայսոսիկ միաբանութիւնս որ ըստ կանոնի՝ յաւէտ միաբանութիւն զայս է իմանալ՝ որ ըստ բոլորին օրինադրութեանց սահմանաց կամ ըստ գլխաւորագունիցն լինիցի. և ո՛չ մասամբ *միով* միաբանեալք և բազմօք զանազանեալք. մանաւանդ թէ հակառակեալք և ընդդիմացեալք: - 552. Երկրորդ՝ *մի* քահանայ երիցս անգամ ի *միում* աւուր պատարագս մատուցեալ: - 553. Երրորդ՝ և զայն ի *միում* եկեղեցւոջ առանց խտրութեան: - 553. Երրորդ՝ *միով* մատամբ զնշանն դրոշմել: - 553. Երկրորդ՝ ի քրիստոս բնութեանցն միացելոց *մի* ասել բնութիւն ըստ սրբոյն աթանասի և կիւրեղի: - 554. Զի և սա՛ *մի* է ի խորհրդականաց տօնից կենարարին մերոյ: - 554. Նախ ասեմք թէ՝ համածա՛յն են միմեանց. զի և սա նազիրոս է ասէ. զի տրտմութիւն և ծանծրութիւն *մի* երևին. զի տրտմութիւն ի պակասութենէ բարւոյն լինի, իսկ ծանծրութիւն յաւելուածոյ բարւոյն: - 559. Երրորդ՝ զի **ե** են զգայութիւնք և *մի* բոլոր մարմինն. ուստի ծնանին **գ** խորհուրդք այսպէս: - 560. Ութերորդ՝ զի ամենայն տեսակք ախտիցն ի՛ր *մի* երևեցուցանեն մեզ. որպէս գողութիւն զինչս, և պոռնկութիւն զհեշտութիւն. իսկ հպարտութեանն ո՛չ գոյ ամենևին ակնկալութիւն: - 562. Բայց կրկին է զրկումն լուսոյ. *մի*՝ որ ի ճառագայթէ՛ լուսոյն զակն խփէ և խաւարի. և **բ**՝ որ ընդ դէմ բոլորակի արեգականն հայիցի՝ կորուսանէ զլոյսն և խաւարի: - 562. Երրորդ, ըստ քանակին այսպէս. զի ոմն *մի* գործեաց զպոռնկութիւն, և ոմն **ռ**: - 565. Ամենայն *մեղք* հասարակաբար է՛ ընդ դէմ աստուծոյ երիցն և միոյ: - 566. Չորրորդ՝ որք միայն զորդւոյ ասեն բան՝ սակաւ պատիժն, զի *մի* է յերրորդութենէն. իսկ որ զփառակիցն ևս՝ կրկնապատիկ հատուցանի նմա: - 566. Մեղք անունն *մի* է, և բոլորապէս յերիս տեսակս որոշի. այսինքն ի սկզբնականն, և ի մահացուն, և ի ներելին: - 567. Նա՛խ ըստ միութեան. զի *մի* է մեղքն սկզբնական և ո՛չ բաժանի. որպէս մահացուն է. և ներելին **գ**: - 567. Նա՛խ՝ զի ի մին աստուածն է և ի *մի* քրիստոսն: - 573. Երկրորդ՝ զի *մի* բոլոր և ոչ մասն: - 573. Երրորդ՝ զի ամենեցուն *մի* է: - 573. Երկրորդ զօրացուցանէ. որպէս յա՛յտ է ի մակաբայեցւոցն զկնոջէն որ ունէր է որդիս՝ ածեալ ի սպանումն ի *միումն* աւուր տեսեալ. և տանէր այնմ՝ յուսովն որ առ աստուած. նոյնպէս և ամենայն դասք մարտիրոսացն յուսով զօրացան: - 574. Զի *միով* ունակութեամբ սիրոյ սիրի աստուած և ընկերն: - 575. Գիտելի է, որպէս պատկեր աստուածութեանն կայանայ ի *մի* էութիւն և յերիս անձինս: - 577. Նա՛խ արար խաղաղութիւն յանձն իւր. զի զաստուածային և զմարդկային բնութիւնն միաւորեաց յինքեան ի *մի* կամս և ի *մի* ներգործութիւն անբաժանաբար: - 585. Չորրորդ՝ զիրէայս և զիեթանոսս ի *մի* եկեղեցի ժողովեաց: - 585. Չորրորդ, զի թէ ի ձեռն փիլիպպոսի առաքելոյ որ էր *մի* յեօթանց անտի սարկաւագացն ո՛չ եղև իջեալ հոգին ի վերայ ներքինւոյն մինչև յափշտակեցաւ յազովտոս...: - 589. Վեցերորդ, զի թէ կինն

կարէ մկրտել ի հարկաւոր ժամանակի, սուրբն գրիգոր լուսաւորիչն քանի ևս առաւել պատւական էր քան *զմի* կին...: - 589. Նա՛խ՝ զի մարմնաւոր ծնունդն նշանա՛կ է հոգևոր ծննդեանն. և որպէս *մի* է մարմնաւոր ծնունդն, այսպէս *մի* է և հոգևորն: - 590. Երկրորդ՝ զի մկրտութիւնն է ընդ դէմ սկզբնական մեղաց. և սկզբնական մեղքն *մի* է և ո՛չ կրկին: - 590. Նախ՝ զի կարէ՛ միանգամայն ծնանիլ բոլոր ազգ *մի*. եթէ **ռ**, եթէ բիւր...: - 590. Այլ և մարգարէն մովսէս դնէր յերեսաց սեղանն գառ *մի* խորովեալ. և հաց և գինի և չորրորդ մասն դորակի հանապազորդ. և ջուր ո՛չ դնէր: - 595. Ասեմք թէ՝ յատկութիւն պատահմունք են. այլ խորհուրդն ի յէութիւնն է կացուցեալ որ *մի* է, և ո՛չ ի պատահմունքն որ բազումք են: - 596. Զի՞նչ է որ յեկեղեցիս մեր *մի* նշխար օրհնեմք. և ա՛յլ ազգ բազում: - 597. *Մի* նշխարն է խորհրդաւոր և ո՛չ բազումն: - 597. Նա՛խ՝ զի քրիստոս *մի* հաց էառ ի ձեռն ի սեղանոյն և օրհնեաց. նոյնպէս և *զմի* գինի: - 597. Չորրորդ՝ ի յօրինակն *մի* հաց և *մի* գառն խորովեալ լինէր. որ ընդ մասին գինւոյ դնէին յերեսաց սեղանն: - 597. Այսպէս և ի ճշմարտութիւնս *մի* է նշխարն դնելի, և *մի* բաժակով գինի: - 597. Եւ դարձեալ՝ որպէս բոլոր նշխարն *մի* մարմին է, և ի մասունս բաժանեալ իւրաքանչիւրն բոլոր և կատարեալ մարմին է քրիստոսի: - 598. Նոյնպէս և բոլոր մարմին և հոգին է *մի* աստուած ընդ բանին միաւորեալ. և բաժանեալ ամբողջական մասունքն է՛ բոլոր և կատարեալ աստուած: - 598. զի պարտ է զոր ի մտի ունի՝ զբոլորն *միոյ* քահանայի խոստովանիլ: - 603. Եպիսկոպոսն և քահանայն, զոսա ի *մի* կարգ թուէ ի դէմս վերնագոյն դասուց երկնաւորաց. որք են Աթոռք. Քերովբէք. և Սերովբէք: - 608. Նոյնպէս աստուծոյ բանն է որ առնէ զերկոսեանն *մի*՝ զայրն և զկինն: - 610. Զի օտար ազգք՝ միջնորդութեամբ փեսային և հարսին որ են *մի* մարմին, լինին և նոքա *մի* ազգ: - 611. Զի կնքահայրն և սանամայրն ծնունդ *մի*. և նոցա զաւակն բ. և նոցա թոռն **գ**. և չորսն որ է՛ թոռին թոռն՝ լինին խնամիք: - 611. Մին կին է *միոյ* առն օրինադրեալ և ո՛չ աւելի, յաղագս բազում պատճառի: - 612. Երկրորդ, զի *մի* կող էառ և ի նմանէ շինեաց: - 612. Եօթներորդ, զի և քրիստոս ո՛չ ընդ բազում, այլ ընդ *մի* Կաթուղիկէ եկեղեցի միաւորի: - 612. Այսպէս և աստուածային օրինօք *մի* այր ընդ *միոյ* կնոջ զուգաւորի և ընկերակցի: - 612. Իսկ այժմ ի մէջ քրիստոնէից՝ ի մեռանիլ *միոյն* միւսն ևս ածեն. - 613. Եկեղեցին *մի* անուն է և **բ** իրս նշանակէ. զշինեալն և զշինօղսն: - 613. Ա՛րդ՝ **բ** եկեղեցւոյս մին է անուն. և ունին բազում բաղդատութիւն ըստ *մի* անուանն: - 613. Կամ ի զանազան դիմաց և ազգաց. որպէս այր, կին, ծեր, տղայ, ժողովեալ կոչի *մի* եկեղեցի: - 613. Ասեմք նախ եթէ՝ ո՛չ երկոտասան. այլ *մի* օր կատարէին: - 616. Նա՛խ՝ զի *զմի* օր նոցա տօնեմք. և **է** յաւելեալ վասն է զգայարանաց. և վասն եօթնեկի մեղաց քաւութեան: - 616. Երկրորդ, զի **է** է խորհուրդ եկեղեցոյ. և **է** արփեան է շնորհք հոգւոյն. և *մի* կատարմունքն ի մեզ, որ լինի **ը**: - 616. Դարձեալ, **ը** օր եկեղեցւոյ տօնեմք. և *մի* գլխոյն եկեղեցւոյ. և անդամոց նորա: - 616. Զի յառաւօտն մին խնկարկի ի տէր եթէ շրթունքն. և այն ևս **գ** անգամ պար առեալ. և *մի* յօրհնութիւնն ևս **գ** անգամ. և *մի* ի փառք ի բարձունսն ևս **գ** անգամ: - 618. Եւ **ճ** տէրողորմեայն, ըստ թուոյ **ճ** ոչխարացն *միոյն* մոլորելոյ: - 621. Իսկ ոմանք ևս կատարեալք ամենայնիւ՝ յերեք ժամանակս աղօթեն առանձնակի. *մի* ի մէջ գիշերի յառաջ քան զհասարակաց ժամն. և *մի* յայգն. և *մի* ի ցերեկն: - 623. Զի տիւ և գիշերն է՛ **իդ** ժամ. լինի ապա ընդ **բ** ժամն *մի* անգամ աղօթք: - 623. Այլ և նշանակէ՛ զմարդիկ ընդ հրեշտակաց և զհրէայս և զհեթանոսս խառնեալ ի *մի* եկեղեցի: - 629. Եւ այն որ **բ** ձայնիցն *մի* է մեսեդին. զի դարն ադամայ և ենովքայ միապէս բնական օրինօքն վարեին: - 629. Նոյնպէս նոյ և աբրահամ *մի* ունէին օրէնք: - 629. Զի՞նչ է որ ա՛յլ ազգք ի դէմս Երրորդութեանն ասեն. և վկայ ածեն զսերովբէսն **գ** սուրբ և *մի* տէր ասելովն: - 632. Թէպէտ բազում ուրէք զսոյն բանս ի դաւանութիւն երից անձանց և *միոյ* բնութեանն խոստովանիմք: - 633. Այլ զոր ինչ հասարա՛կ է երից անձնացն, աստուած, և հզօր, և անմահ և այլն ամենայն, կարելի՛ է ասել *միոյ* անձինն և *միոյ* դիմաց. աստուած հզօր և այլն: - 633. ...և *մի* դէմ զքրիստոսն որ խաչեցաւ. որ լինի չորրորդ դէմ և անձն ըստ նոցա: - 633. Եւ անդ յաւուր կիրակէի յառաւօտին միաբան ի *մի* բարբառ յաւելին յերգս հրեշտակացն...: - 635. Նշանակէ այս զմիութիւն հրէից և հեթանոսաց ի *մի* հօտ և ի *մի* պաշտօն: - 636. Եւ ա՛յս է պատճառն, զի *մի* տան շարականի **դ** տուն սաղմոսի պիտոյ է յերկու դասս. և մին շարականն **ժբ** տամբ աւարտի: - 636. Եւ *մի* ձայն է այլ ամենայն տաղք և երգք: - 639. Իսկ թիմգիանոս արար *մի* գործի և **իզ** աղի: - 640. Նա՛խ՝ զի մարդն հոգի է և մարմին, ձայնիւ և ձեռօք երգէր. զերկու մատունս ի *մի* լծակցեալ յօրհնութիւնն աստուծոյ: - 641. Իսկ *մի* տախտակն յերկուս բաժանեալ և հնգիւք փակեալ. - 646. Դարձեալ՝ *մի* տախտակն է՛ մի և նոյն քարոզութիւնն առաքելական ի չորեք ծագեան տիեզերս տարածեալ: - 646. Դարձեալ, **ժ** շաբաթ պահոց այն է՝ որ մեծն ներսէս կանոնեաց յամենայն ամսամուտս պահել շաբաթ *մի*: - 650. Խորհուրդ պահոց նախ ի դրախտին եդաւ մարդոյն. յամենայնէ ուտել և ի *միոյն* չուտել: - 652. Եւ դարձեալ՝ նոյ և ամենայն կենդանիքն ի տապանն կացին զբոլոր *մի* ամ և ոչ ինչ կերին. որպէս մանուկն յարգանդի: - 652. ...զի

երկուքն բաժանեն *զմի* հացն...: - 655. Զի՞նչ է որ ի մէճլիսն յանկարծ ժամ *մի* լռեն: - 656. Իսկ վասն քահանայօրհնէիցն, սուրբն սահա՛կ է արարեալ. յառաջին ամի եպիսկոպոսութեան իւրոյ. ի նաւասարդի ամսեանն որ օր *մի* էր. և յիշատակ սուրբ կարապետին արար զքահանայօրհնէքն: - 659. Չորրորդ, տայ մեծութիւն և նոցա. որք բազում չարիս՝ և *մի* մասն բարեաց ունին...: - 664. Ութերորդ, գ պսակ տայ աստուած արդարոցն. մին զկուսութեան. և *մի* զողջախոհութեան. և միւս զապաշխարութեան. - 675. Դարձեալ, ի տիպ պահապան հրեշտակին որ նստէր *մի* ի սնարից և *մի* յանոտից տեառն գերեզմանին...: - 679. Այլ և ոմանք ի մէնջ որպէս վարդապետն վարդան և այլք ասեն գոլ ի *միում* տեղւոջ զամենայն հոգիս...: - 686. ...են հոգիք նոցա ի *միում* խորանի մինչ դատաստանն ընտրեսցէ զնոսա և որոշեսցէ. որպէս ցուցանի յառաջիկայդ: - 687. Ապա ո՞րպէս *մի* կայանք հոգւոցն որ ասացաւ յառաջն: - 689. Ի *մի* ասացին գոլ խորանս ի ներքոյ երկնից զարդարս և զմեղաւորս. որք դատաստանաւն որոշին: - 689. Այլ թէպէտ *մի* է տեղեաւ, այլ արդարքն յուսով ուրա՛խ են, և մեղաւորքն տանջին: - 689. Դարձեալ՝ *մի* ասի կայանք երկուցն վասն *միոյ* ակնկալութեան. զի արդարքն ակնունին պսակաց, և մեղաւորքն տանջանաց: - 689. Ապա ուրեմն *մի* է օր դատաստանին և ո՛չ հանապազ: - 692. Եւ վասն զի *մի* օր է հատուցումն և ոչ յամենայն օր ասացաւ ի վերոյ: - 698. Ահա՛ ժամանակ ընդունելի. ահա՛ օր փրկութեան. *մի և մի* իւիք տայցէք պատճառս. զի մի՛ արատեսցի պաշտօնն: - 698. Իսկ թէ ժամանակեայ, ընդ դէմ ասէք աստուածային բանին. զի տէրն *մի* հուր ասաց. և զայն յաւիտենից. - 700. Նա՛խ՝ զի նոքա ժամանակեայ հուր ասեն և տանջանք հոգւոց. իսկ ոսկեբերանն *մի* հուր և տանջանք յաւիտենից: - 702. Յօր անունն ռոմելոս ասեն. զմին ձեռն և զոտն երկայն և մինն կարճ. *զմի* ակն խաժ, և զմիւսն սև: - 706. Երրորդ, ասեն թէ *միովն* զարթուցանէ որպէս ի քնոյ. և *միովն* յառնեն...: - 713. ...և *միովն* ընդ առաջ քրիստոսի վերանան: - 713. ...առաւել աստուծոյ է կարելի զհոգիս յերկնից և զմարմինս ի տարերաց ի *մի* վայր ժողովել և յարուցանել: - 718. Ասեմք եթէ՝ զորօրինակ սնդիկ լուծեալ և ի հող խառնեալ գնդապէս և փոշիացեալ. յորժամ ի *մի* վայր ժողովես՝ թողու զփոշիսն ի յորս խառնեալ է և պարզ միայն սնդիկն ժողովի: - 719. Եւ դարձեալ՝ որպէս զանազան սերմանիք ցորեան կորեակ և այլք՝ հասարակ ի *մի* վայր սերմանին. և հասարակ ջրով և ջերմութեամբ սնանին. և ի յազգս իւրեանց կատարին. ցորեանն ի ցորեանն և այլն: - 719. Չորրորդ, յայլ և այլ ժամանակս սերմանին և ի *մի* ժամանակ կատարի. - 720-721. Իններորդ, ամենայն սերմանիք բուսեալք՝ ի *մի* հասակ այսինքն ի կատարելութեանն իւրեանց ժամանեն ի հունձս...: - 721. ...այսպէս և ննջեցեալք ամենայն ծեր և տղայ՝ յառնեն ի *մի* չափ հասակի երեսնամեայ որ է կատարեալ հասակ որպէս ցուցանի յառաջիկայդ: - 721. Իններորդ, հոգին և մարմինն են *մի* անձն մարդոյ. վասն որոյ փոխակրեն ի միմեանց զբարիս և զչարիս: - 724. Վարդապետք ասեն թէ՝ ամենեքեան կատարեալ հասակաւ յառնեն և *մի* թուով երեսնամեայ: - 726. Այլ ի գալուստն քրիստոսի երե՛ք են ասացեալ հուր *մի* զհետ *միոյ*: - 731. Զոր օրինակ *մի* պատկերն դրոշմի ի զանազան մոմս. և ի հալիլ մոմոյն դրոշմ պատկերին ժողովի և մնայ ի մատանւոջն: - 732. Այլ և որք ի *մի* խնամս վայելեցին յաստուծոյ. յարև և յանձրև. և ի *մի* տեղիք բնակեցան և *մի* պիտոյիւք շատացան. և նոքա զտուօղն ո՛չ ճանաչեցին: - 738. *Միո՞վ* բանիւ խօսի ընդ բ դասքն՝ թէ կրկին: - 739. Որպէս առաքեալքն ի *մի* լեզու քարոզէին և ամենեքեան ի լեզուս իւրեանց լսէին: - 739. Նոյնպէս և ի *միոյ* ձայնէն ոմանք զօրհնութիւնս և այլք զանէծսն լսեն: - 739. և Դարձեալ, որպէս *մի* շնչմամբ օդոյ՝ ցորեանն ժողովի և յարդն հոսի: - 739. Նոյնպէս ի *միոյ* վճռէն՝ եկա՛յք և գնացէ՛ք լսի: - 739. Դարձեալ ըմպումն մահադեղին *միում* րոպէի՝ ածէ՛ զմահ յաւիտենական: - 744. Եւ պա՛րտ է գիտել զի ի *միոյ* սեռէ բարութեանցն աստուծոյ՝ յառաջե՛ն առ մեզ ողորմութիւն և արդարութիւն...: - 745. Զի որպէս ի կշիռն արդար՝ մէտ *մի* յաւելուածն հարստահարէ՛ զդիմակն և ի խոնարհ ձգէ, այսպէս և դատաստանն աստուծոյ. - 745. Եւ աւազակն *միով* խոստովանութեամբ եմուտ ի դրախտն: - 745. Իսկ կշռողականն է զոյգ արդարութեամբ կշռել. որպէս յորժամ ողորմելով *միոյն* պատժէ՛ զընդդիմակն նորին. որպէս փրկեցաւ իսրայէլ և պատժեցաւ եգիպտոս. և յազատիլ բնութեան մարդոյս՝ պատժեցաւ սատանայ: - 747. Յարութիւն մարդկան ի վայրկեան ժամանակի և յանկարծակի լինի որպէս ցուցաւ ի վերոյ. այլ զյերկարութիւն ժամու քննութեան դատաստանին, ոմանք ժամ *մի* ասեն. որքան եկաց ընդ ադամայ ի քննութիւն հարցմանց յետ յանցանաց նորին: - 747. Որպիսութեան կրիցն չափ ո՛չ է անտի տանջանացն. զի բոլոր աստի նեղութիւնս համեմատեալ այնմ՝ է՛ որպէս կաթիլ *մի* ի ծովէ և կայծ *մի* ի հնոցէ: - 751. Այլ զայս ո՛չ իմանան հասարակ կարծիք. զի արքայութիւնն երկնից *մի* է. այլ փառք և պսակքն են զանազանք առաւել և նուազ: - 758. *Մի՛* է արքայութիւն, և *մի* ընդ դիմակ նորա դժոխք: - 758. Արդ՝ եթէ արքայութիւնն երկնից *մի* է, այլ փառքն գ. պա՛րտ է ապա զի լիցի և դժոխքն գ, որ է՛ սուտ: - 758. Ապա ուրեմն *մի* է արքայութիւն և *մի* դժոխք: - 758. Եւ նոքա որք բազում համբաւեն դժոխս, *մի* ասեն գոլ արքայութիւն.

պատճառելով եթէ՝ բարին *մի* է և չարն բազում: - 758. Ասեմք եթէ՝ բնութեամբ բարին *մի* է. որպէս ասէ մեծն դիոնէսիոս. այլ ներգործութեամբ բազում է ի զանազան կամաց յառաջ եկեալ: - 758. Ապա ուրեմն *մի* է բարի արքայութիւնն. և *մի* դժոխք պակասութիւն նմին: - 758. Եւ այլ բազում վկայութեամբ կարէ՛ հաստատիլ եթէ *մի* է արքայութիւնն երկնից որ է կեանքն յաւիտենից: - 759. Եւ թէպէտ *մի* իցէ արքայութիւն սրբոց, սակայն զանազանեսցին փառօք և պսակաւ և հանգստեամբ: - 760. Զորօրինակ, ի *մի* երկինս աստղ քան զաստղ առաւե՛լ է փառօք: - 760. Նմանապէս իմասցի և վասն *մի* դժոխոցն՝ գոլ զանազան տանջանք և տանջանարանք: - 760. Կամ միաբանութիւն որպէս առաքելոցն. որոց էր սիրտ և անձն *մի*: - 761. Զի նւազունք են ամենայն փափկութիւնք որ լինին յաշխարհի մինչև ցօրն դատաստանի, բաղդատեալ առ այն քաղցրութիւն. որպէս կաթիլ *մի* ջրոյ առ համեմատութիւն ընդ հանուր ծովու: - 762. Առաւել պարտ էր մարդկան վաստակիլ միայն՝ զի կարասցեն գոլ ի *միում* աւուր ընդ երանելի սրբուհւոյ աստուածածին կուսին. քան բազում վաստակիլ վասն յաւիտենական փառացն: - 763. Վասն մեծի սիրոյն՝ ժառանգութիւնն այն ամենեցուն *մի* է իւրաքանչիւր ումեք բոլորն և ո՛չ մասնաւորն: - 764. Յաւատ ի *մի* աստուածութենէն ի մարդիկ շնորհի: - 769. Որ պորփիւր օրինակէ՛ զմատանին աստուծոյ. թէ *մի* է և ի վերայ բազմաց բերի և ի բազումս և ո՛չ ի բազմաց է: - 769. Եւ երկու կատարումն. *մի* զնկրտութիւնն. և *մի* զյարութիւնն որում սպասեալ ակն ունիմք: - 769. Ղամպարք ի *միում* տան. և ուրուք շարժեցելոյ՝ ի նոցանէ լոյսն ո՛չ շարժի և ոչ բաժանի և ո՛չ հատանի թէ անջրպետ ոչ կայցէ ի միջի. և անդ ո՛չ է միջոց: - 770. *Միովն* ստուգէ՛ զաստուածութիւնն. և *միովն* հաստատէ՛ զմարդն կատարեալ. և երկրորդիւն անքակ և անշփոթ և անբաժան զմիութիւնն յայտնէ: - 770. *Մի* դէմն յԵրրորդութենէն որդի լինի. *մի* դէմ ի մարդկութենէս ի կուսէ առեալ բնութիւն մարդկութեան, աստուածութիւնն բոլորովին յաղագս անհաս միաւորութեանն ըստ ոսկէբերանին յոհաննու: - 770. Եւ թէ այս և թէ այն, դու ընկա՛լ զխնդիր մտաց քոց առանց ամենայն երկբայութեանց. իբր ի *միոյ* կենեղուտ աղբերէ կենաց ուռճալրացեալ և պտղաւէտեալ: - 772. Զոր և ես զօրէն մշակաց բազմահաւաք պտղոց. կամ փունջ *մի* անուշահոտ բազմերանգ ծաղկանց. կամ չնչին թռչնոյ զխորիսխ մեղու. կամ որպէս զլոմայս այրւոյն տառապեալ գոյիւ: - 772. Զի կա՛թ *մի* արտասուաց ի կաթիլ դուլէ ձե՛րդ մաղթանաց ցօղեսցի ի գերեզման հոգւոյ իմ տառապանաց: - 773. Որպէս ասեն երբեմն ժամանակի ի կոստանդնուպօլիս հռչակեալ քաղաքի, մոլորեալ յոյնք ի մոլորեալ երիտասարդէ՛ *միոջէ*, բարձին յեկեղեցւոյ զերգ երեքսրբենին: - 775. Եւ դարձեալ ի ճառս անառակին և կորուսեալ դրամին և մոլորեալ *միոյ* ոչխարին և անկելոյն ի ձեռս աւազակին, զնոյնս ուսուցանեն մեզ հարքն հոգելիցք արտայայտել: - 775. Երկրորդ, զի դժոխքն այն պատիժ բնութեանս էր և ո՛չ առանձին գործոց. զի հաստատեաց օր *մի* յորում դատելո՛ց է զամենայն ըստ պօղոսի: - 776. Եւ որպէս թէ բազումք զմիմեանց *զմիոջէ* կախեալք զվախէ՛. և եթէ ոք խզեսցէ զառաջնոյն զկապ, միապէս անկանին. թէպէտ մինն առաջին: - 777. Որքանութեամբ, զի նա *միով* և միանգամ. իսկ նոքա բազմօք և բազում անգամ: - 777. Վասն որոյ կրկին է և պատիժն. զառաջինն ի նախնւոյն հասեալ. և ապա յետոյ յօր *մի* հաստատեալ ըստ առաքելոյ: - 777. Եւ թէ այս ո՛չ է գրեալ, նա՛ և ո՛չ այն եթէ մեղանչեաց ուրէք զամենայն կեանս իւր բաց ի *միոյն*. և ո՛չ մեղանչելն կրկին՝ ապաշխարութիւն է առաջնոյն: - 778. Ապա ուրեմն ողորմութեամբ և արդարութեամբ ազատեցաւ նախահայրն յաւիտեան. իսկ այլքն առ ժամանակ *մի* ողորմութեամբ վասն նորա որպէս ասացաւ: - 778. Եւ այն զի՞նչ իցէ, զի սա միշտ *մի* և նոյնպէս մնայ. իսկ նա՛ աստանօր ողորմի զղջացելոցն, և ո՛չ ոչ նոյնպիսոյն...: - 778. Զի որպէս քրիստոս չարչարանօքն փրկեաց զեկեղեցի և հարսնացոյց, նոյն և առաքեալն քարոզութեամբ իբր զկոյս *մի* սուրբ յանդիման արար փեսային քրիստոսի: - 781. Իսկ որք *զմի* քանքար հաւատոյ կամ զնկրտութեանն շնորհի ի բաց կորուսանեն, ո՛չ զկնիքն խորհրդապէս, այլ զարժանն վարձու իրողապէս: - 783. Յաղագս որոյ որ ինչ գոյ *միոյն* յայտնի և ներգործական մասունք, գոն նոքա և միւսոյն բնաւորապէս ծածուկ և զօրութեամբ: - 786. Ընդ այսմ և որ ի ձէնջ արկեալ եղև. թէ վասն է՞ր է զի երկու բացասութիւն լինի *մի* ստորասութիւն. իսկ **բ** ստորասութիւն ո՛չ կազմէ *մի* բացասութիւն: - 787. Դարձեալ՝ զորօրինակ **բ** անկատարք լինին *մի* կատարեալ. իսկ կատարեալն թէ և կրկնեսցի՝ ո՛չ է անկատար. այսպէս և ասացեալքդ: - 787

***Մի Մի +*** Յարիւր խարիսխք արծաթիք. և իւրաքանչիւրքն ի *մի մի* տաղանդէ՛ կշռոյ: - 343. Զի՞նչ էր որ ի տաղաւարահարքն ըստ *միոյ միոյ* աւուրց *մի մի* զուարակ պակասէին ի տօնս. և յութերորդ օրն ի մինն յանգէին: - 374. Զի իւրաքանչիւր իշխանք և ցեղք *մի մի* օր նաւակատիս առնէին: - 616. Դարձեալ՝ ունիմք **բժ**ան անդամք. ըստ իւրաքանչիւրոցն *մի մի* ժամս աղօթեմք: - 624. Այլ թէ ի սոցանէ *մի մի* ուրուք տուեալ լինէր, փոխանակ թագաւորութեան համարէր. իսկ թէ սոքօք ամենեքումբք վայելեսցէ, գերագոյն բոլոր աշխարհի լինէր: - 761. Եւ են *մի* քան *զմի* առաւել գերագոյն սոքա և վարձատրելիք: - 785

**ՄԻԱԲԱՆ +** Երկրորդ՝ զի հաւասարութիւն և միաբանութիւն տարերաց անլուծանելի է. ըստ որում ներհակ որակօք հաւասարք են հակակայ. և միւսովն *միաբանք*: - 181. Որպէս և տօն ծննդեանն զոր *միաբան* ասեն տօնել այլոց քրիստոնէից բաց ի հայոց. և զի և այն աւանդութիւն է և տօնախմբութիւն և ո՛չ հաւատ: - 554. Եւ անդ յաւուր կիրակէի յառաւօտին *միաբան* ի մի բարբառ յաւելին յերգս հրեշտակացն և զայս. «օրհնութիւն քեզ ի բարձունս»: - 635

**ՄԻԱԲԱՆԵՄ +** Չորրորդ՝ զի իւրաքանչիւր սոքա առանձին սահման ունին և բնութիւն. և ո՛չ *միաբանին* ընդ միմեանս և ո՛չ ընդ մարմնի. այսինքն քանակն որակն. և ծանրութիւնն. և այլքն: - 175. Նոյնպէս և այբն խառնի ի թաւ և ի լերկ, ի սուղ և յերկար, և *միաբանի* ընդ նոսա, և ի մի բնութենէ իւրմէ ո՛չ որոշի կամ այլայլի: - 178. Եւ որպէս **է** է գործիք ձայնին, որ է՛ թոքն. խռչափողն. մակալեզուն. բերանն. լեզուն. ատամունքն. և շրթունքն. և սոքա *միաբանին* ի խօսքն: - 296. Նոյնպէս և **հ** տանուտեարքն *միաբանեցան* ի չարն: - 296. Երկրորդ՝ զի մի՛ *միաբանեալ* ի չարն անզղջապէս գործեսցեն: - 298. Վասն որոյ ի ծննդեան աւուրն ժողովին և օրհնեն զաստուած և մարմնով ուրախանան. որպէս յոբայ ուստերքն և դստերքն *միաբանեալ* գային և ուրախ լինէին գիրն: - 321. Եօթներորդ՝ կարկուտն հրախառն. զի **բ** հակառակն *միաբանեալ* ջուր և հուր ի կորուստ ամբարշտացն և ո՛չ ապականէին զմիմեանս: - 334. Եւ Պատրիարգունք էին անդ, Սահակ հայոց՝ թղթով *միաբանեալ*: - 542. Յոհան անտիոքայ՝ թղթով *միաբանեալ*. **բճ** հարք ընդ դէմ նեստորի որ **բ** բնութիւն ասէր և **բ** որդի. կրկին կամք և կրկին ներգործութիւն քրիստոսի. և զաստուածածինն մարդածին: - 542. Եւ նզովեցին զաղանդն մարկիանու և զարտեմոնի, և զտումարն լևոնի. և *միաբանեցան* ի մի հաւատս սուրբ առաքելոցն. և ի կանոնս սուրբ ժողովոյն ինչ պետք էին յաւելին գլուխս **թ** ի զգուշութիւն եկեղեցւոյ: - 544. Զի՞նչ պատասխանեմք որք բամբասեն զազգս հայոց ո՛չ *միաբանիլ* այլոց: - 550. Եւ յայսոսիկ միաբանութիւնս որ ըստ կանոնի՝ յաւէտ միաբանութիւն զայս է իմանալ՝ որ ըստ բոլորին օրինադրութեանց սահմանաց կամ ըստ գլխաւորագունիցն լինիցի. և ո՛չ մասամբ միով *միաբանեալք* և բազմօք զանազանեալք. մանաւանդ թէ հակառակեալք և ընդդիմացեալք: - 552. Բայց ոմանք բերանաբաց եղեալ հակառակին՝ զծնունդն և որ ըստ նորին ամենեցուն առ հասարակ *միաբանեալ* բաց ի հայոց: - 554. Որպէս ահա՛ յերկոսեան ճրագալոյցսն այսինքն ի ծննդեանն և ի յարութեանն *միաբանին* հայք և յոյնք և ասորիք. իսկ լատինք ո՛չ: - 554. Եւ ո՛չ *միաբանին* յայս տօնախմբութիւն ամենայն հաւատացելոց ժողովուրդք: - 554. Իսկ սաղմոս տունն է երգ մարդկան. այսինքն է զի հրեշտակք և մարդիկ *միաբանեալ* օրհնեմք զաստուած փրկիչն մեր որ խօսի ընդ մեզ: - 644. Ա՛յս է գալարիլն նոցա, զի երկինք և երկիր տիւ և գիշեր *միաբանեալ* վկայե՛ն գործոց մարդկան: - 729

**ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ +** Երկրորդ՝ զի հաւասարութիւն և *միաբանութիւն* տարերաց անլուծանելի է. ըստ որում ներհակ որակօք հաւասարք են հակակայ. և միւսովն միաբանք: - 181. Մետասաներորդ, *Միաբանութեան* և բաժանման ամէն եկեղեցւոյ ազգաց: - 525. Ասեմք առ այս՝ թէ լուսաւորիչն գնաց ի հռօմ ո՛չ վասն ձեռնադրութեան, այլ վասն սիրոյ և *միաբանութեան* երկուց ազգաց և ուղղափառ թագաւորացն տրդատայ և կոստանդիանոսի: - 548. Ասեմք առ այս թէ՝ ո՛չ է հարկաւոր այս ամենայն ուրէք. զի գո՛յ և տարաձայնութիւն բարի՝ քան զհամաձայնութիւն ընդ հերձուածօղս. և լաւ է բաժանումն ի չար ժողովոց՝ քան *զմիաբանութիւն*: - 551. Եւ բաժանումն յաւէտ զքան գաւառաւ և լեզուաւ՝ կանոնական սահմանաւն ասացեալ լինի. այսպէս և առ *միաբանութիւնս* է իմանալ. առաւել *միաբանութիւն* ասել զորս կանոնական սահմանադրութեամբ է, քան որ գաւառաւ և լեզուաւ: - 552. Եւ յայսոսիկ *միաբանութիւնս* որ ըստ կանոնի՝ յաւէտ *միաբանութիւն* զայս է իմանալ՝ որ ըստ բոլորին օրինադրութեանց սահմանաց կամ ըստ գլխաւորագունիցն լինիցի. և ո՛չ մասամբ միով միաբանեալք և բազմօք զանազանեալք. մանաւանդ թէ հակառակեալք և ընդդիմացեալք: - 552. Եւ այն որ ի գլխաւորագոյնս ո՛չ ասի *միաբանութիւն*, և զիա՞րդ *միաբանութիւն* ասիցէ ոք զայս: - 552. Եւ այսպէս բազում ունելով իւրաքանչիւր ոք սահմանս առանձին, միայն հայք նախատեալ լինին որպէս ո՛չ ունել *միաբանութիւն* ընդ այլս ի քրիստոնէից. այլ առանձին միայնաբար ընթանալ. և այսու որպէս հակառակ եպերեալ: - 553. Բայց պարտ է այնոցիկ որք ո՛չ գիտեն՝ և կամ թէ կամաւ տգիտանան՝ ցուցանել *զմիաբանութիւն* ազգիս հայոց առ այլ քրիստոնեայսն. զի գիտացեալ յամօթ լիցին յաղթեալք ի ճշմարտութենէն: - 553. Եւ եզով *միաբանութիւն*. մասամբ և ո՛չ յոգնագոյնս: - 554. Եւ ըստ այսմ *միաբանութեան* և զմէրս տեսանեմք եկեղեցի ունել եզով *միաբանութիւն* առ այլ քրիստոնեայս: - 554. Իսկ հոգին՝ Զիմաստութիւն. Զսիրելութիւն. *Զմիաբանութիւն*. Զիշխանութիւն. Զպատիւ. Զանհոգութիւն. և Զուրախութիւն: - 761. Կամ *միաբանութիւն* որպէս առաքելոցն. որոց էր սիրտ և անձն մի: - 761

**ՄԻԱԲՈՒՆ +** Այսպէս էր ի հօրէ բնութեամբ՝ և եղև ի մօրէ բնութեամբ. և ո՛չ ասի երկաւոր բնութիւն և երկաբուն. այլ միաւոր և *միաբուն*. մի որդի. և մի բնութիւն. միատեսակ աստուած մարդացեալ: - 78

**ՄԻԱԺԱՄ** - Իսկ ի ծիոյ և յիշոյ լինի ջորի. զի ընտակերք են և *միաժամք* ծնանին: - 267

**ՄԻԱԾԻՆ +** Իսկ մեծութիւն կռապաշտութեան այնքան էր՝ մինչ *միածին* որդին պատարագեցաւ մարմնով, և ապա բարձաւ մեղք կռամոլութեանն յաշխարհէ: - 33. Ուստի որդի ո՛չ միայն ասի անդրանիկ՝ այլ և *միածին*: - 41. Երրորդ՝ զի *միածին* է. զի զայլ որ ո՛չ ծնանի: - 49. Կոյսն մարիամ *զմիածի՞նն* որդի ծնաւ ըստ ինքեան, և թէ զանդրանիկն որդի առանձին, և թէ զերկուսն: - 68. Դարձեալ՝ ըստ նոյն սարասի՝ բանն աստուած ունի ծնունդ ի հօրէ նախ քան զյաւիտեանս. և ունի ծնունդ ի մօրէ ի յետին ժամանակիս. և ո՛չ ասի երկածին. այլ՝ միշտ *միածին*. այսպէս նոյն բանն ունի զբնութիւն աստուծոյ ի հօրէ. ունի և զբնութիւն մարդոյ ի մօրէ՛. և ո՛չ ասի **բ** բնութիւն. այլ մի բնութիւն վասն միաւորութեանն: - 77. Եւ *միածին* որդի գիտացաք զբանն ծնեալ ի հօրէ. և եղեալ որդի կուսին: - 96. Ա՛րդ՝ նոյնութեամբ պատկեր ասի *միածին* բանն՝ հօր...: - 272. Չորրորդ՝ զի իսահակ էր անդրանիկ որդի և *միածին* սառայի: - 304. Իններորդ՝ միամա՛յր է որդի սառայի. *միածին* է և որդի կուսին. մի ծնանիմք և մեք յաւազանէն: - 307. Որդի և *միածինն* յիսուս: - 308. Զառաջինն մխիթարեցաւ աստուածածին կուսիւն մարիամաւ. որ առանց երկանց և ցաւոց ծնաւ *զմիածինն* որդի, որ եբարձ զարտասուս վշտաց մօրն հռաքէլի: - 312. Վեցերորդ՝ ձեռն հօր է՛ *միածին* որդին որ ել ի ծոցոյ հօր և էառ զօձաձև բնութիւնս մեր. և դարձեալ ել առ հայր, ի նոյն բնութենէն ո՛չ կացեալ ի բաց: - 332. Վեցերորդ՝ ձեռն հօր է՛ *միածին* որդին որ ել ի ծոցոյ հօր և էառ զօձաձև բնութիւնս մեր. և դարձեալ ել առ հայր, ի նոյն բնութենէն ո՛չ կացեալ ի բաց: - 333. Եւ թեթևացնէ՛ զպարտս մեղաց. որպէս արար ողորմութիւն *միածին* բանն աստուած յիշելոյ զառաջին արդարսն...: - 351. Եւ հայր աստուած որ ո՛չ կատարի կամք նորա ի մեզ. յայնժամ ըստ բազում գթութեան իւրոյ առաքեաց *զմիածին* որդին որ փոխանակ մեր կախեցաւ զփայտէն և ազատեաց զմեզ յանծիցն օրինաց...: - 400. Եւ այս ի տիպ փրկչին. զի որդին *միածին* շինեսցէ զտաճար բնութեան մերոյ մարդանալովն իւր: - 440. Երկոտասաներորդ, *Միածին* որդին **ծ** թուով: - 454. Զանսկիզբն սկզբան ի սկզբանէ՛ գոյին, և զանճառելի թաքնութեան և անհաս խորութեան յառաջ ճանապարհի ի մեզ *միածին* բանին: - 456. Եւ վկայքն հաստատեցին մեծ գոլ և ծածուկ՝ հրաշալի խորհուրդ *միածնին* փրկագործութեան երևումն առ մարդիկք: - 456. Երբեմն արդարութիւն կոչի բանն *միածին*...: - 457. Ո՞րպէս է *միածին* որ այս քան ծնունդ ունի: - 472. Նախ ասի *միածին* զի նա միա՛յն է համագոյ ծնողին ծնունդ...: - 472. Իններորդ՝ ասի *միածին* ըստ մարմնաւոր ծննդեանն ի մօրէ ծնեալ առանց հօր. ըստ այնմ որ ասաց հրեշտակն՝ «որ ծնանելոցն է ի քէն՝ ի հոգւոյն սրբոյն»: - 472. Աստ գիտելի է, որպէս *միածին* կոչի անմարմնաբար և ըստ մարմնոյ: - 472. Այլ համբարձումն նշանակէ՛ ի միտս համայն բարձր քան զամենայն դասս իմանալեացն. զի նմա՛ երկրպագեն ամենայն երկնայինքն. և անդր քան զտեղի տիրամօրն. զի ի *միածին* որդւոյ իւրմէ խնդրէ զփրկութիւն մարդկան: - 519. Եւ սուրբն կիւրեղ աղէքսանդրու հայրապետն ի ժողովն եփեսոսի ասաց *զմիածին* որդի ժամամուտն: - 631. Եւ սուրբն կիւրեղ ասաց ի ժողովն եփեսոսի. *զմիածին* որդին ձայնիւ ընդ դէմ նեստորի: - 632. Երկոտասաներորդ՝ զի մարդասէ՛ր է աստուած՝ կամեցաւ *միածնին* միաւորիլ ի մարմնի և մարդանալ յաշխարհի...: - 663. Իսկ՝ նախ ի յարնելս, ցուցանէ *զմիածինն* որ իբր յարնելից ի ծոցոյ հօր ծագեցաւ մեզ արեգակն արդարութեան - 673. Զի այս ո՛չ է ի կարգէ դատաստանին. այլ ի սքանչելեաց *միածնին*. որպէս արեգական խաւարիլն, և գերեզմանաց բանիլն, և այլն: - 697. Եւ այս ո՛չ թէ լոյս միայն է. զի զլոյսն ո՛չ ետ մեզ նշան. այլ զխաչն փայտեղէն յորոյ վերայ զձեռն իւր տարածեաց *միածին* բանն: - 734

**ՄԻԱԿ +** Նմանապէս և աստուած *միակ* միջնորդութեամբ ճանաչէ զբարին ըստ ինքեան ի յատուկ տեսակն իւր. և ճանաչէ զչարն կրկին միջոցաւ. այսինքն զի է՛ հակակայ բարւոյն. և է՛ պակասութիւն նմին որպէս ասացաւ: - 17. Նախ՝ երկեակն ո՛չ կարէ սկիզբն լինիլ. զի ի թիւ՝ երկեակն ի *միակէն* բաղկանայ: - 20. Երկրորդ՝ երկեակն բաղադրեալ է, իսկ *միակն* պարզ. այլ ամենայն բաղադրեալ ի պարզէ՛ է: - 20. Ապա ուրեմն ո՛չ է երկեակն սկիզբն որ է՛ բաղադրեալ. այլ *միակն* որ է՛ պարզ: - 20. Երրորդ՝ ի *միակէ*: - 25. Երրորդ՝ ի *միակէ*, զի ամենայն բազմութիւն է ի *միակէ*՛. որպէս տեսակն յանհատէ. և գիծն ի կիտէ. և բազում թիւ է՛ ի միոյն: - 25. Ա՛րդ՝ եթէ *միակս* այս շարադրի բազմաց, ո՛չ մնաց մին. իսկ եթէ ոչ շարադրի, ո՛չ գոն բազումք. այլ մի և մի. և այս որպէս այս: - 25-26. Սակայն շարադրի *միակն* պատկութեամբ, և անշարադրելի՛ է ինքնութեամբ: - 26. Ա՛րդ՝ ըստ որում յոլովք են բազումք, ուրեմն և *միակք*: - 26. Զի ո՛չ նա այսմ և ո՛չ սա այնմ կարէ *միակ* գոլ. վասն որոյ հա՛րկ է գոլ այնպիսի *միակ*՝ որ և ամենայն բազմութեան և *միակաց* է՛ *միակ*. որ է աստուած: - 26. Մի. և *միակ*. և բազում: - 101. Հինգերորդ՝ որպէս *միակ* է հայր. զի սկիզբն է ամենայն թւոց.

և երկեակ որդի. և երրեակ հոգի ըստ աստուածաբանին: - 105. Գիտելի է՝ զի ա՛յլ է մինն, և ա՛յլ է *միակն*: - 109. Զի մինն հասարակ է. և *միակն* մասնաւոր և առանձնակի. զի ամենայն *միակ*՝ մի է. այլ ամենայն մի *միակ* ո՛չ է. որպէս յորժամ ասեմք՝ մի հոտ. մի շեղջ. մի լիտր. այսպիսիքս մի են. այլ *միակ* ո՛չ են: - 109. Չորրորդ՝ մի է և *միակ*. զի ո՛չ բաժանի. և ո՛չ քակտի: - 109. Հինգերորդ՝ մի կոչի. որպէս *միակն* սկիզբն է թըւոց և ո՛չ թիւ. և աստուած սկիզբն է արարածոց և ո՛չ արարած: - 109. Վեցերորդ՝ *միակն* պատկելով բազմանայ. և աստուած է շարունակօղ բազմութեան էից: - 109. Եօթներորդ՝ *միակն* է կատարումն ամենայն թըւոց. և ամենայն գոյից կատարումն է աստուած: - 109. Տասներորդ՝ որպէս *միակն* է ի ներքոյ տասնեկին և հարիւրեկին և հազարեկին և բիւրեկին, այսպէս և ի վերոյ նոցա՛ է: - 110. Երրորդ՝ թիւն ընդ գիտութեամբ մեր է. իսկ աստուած ընդ գիտութեամբ մեր ո՛չ պարունակի որպէս ասացաք. ապա ուրեմն ի վեր է քան զմի և *զմիակ*: - 110. Զորօրինակ՝ *միակ* թիւն ի բազումս բազմանայ, և մի է ըստ ինքեան: - 112. Երրորդ՝ այսպէս մեկնեն, եթէ հին աւուրց զնախնի ժամանակս նշանակէ. և մանուկն զնախնի թիւն. զի *միակն* սկիզբն է ամենայն թըւոց. և որ մերձ է *միակին* սկզբնապետագո՛յն է քան զհեռագոյնն: - 115. Երկրորդ՝ զի առաջին և սկիզբն է թուոց. որպէս *միակն* թիւ բազմանայ և խառնի յայլս, այսինքն՝ ի **ժ.** ի **ճ.** ի **ռ.** և ի բիւրն. և ի միութենէն իւրմէ ո՛չ որոշի: - 178. Չորրորդ՝ զի մի է և *միակ* անդրանիկն ի մէջ բազում եղբարց. որպէս մի է գլուխն և բազում անդամք: - 310. Չորրորդ, հասարակ աղօթքն է *միակի* պատիւ և փառք. և առանձնականն կրկնակի: - 623. Ապա և ո՛չ լրումն թուոյն. զի *միակն* յառաջ է քան զբազումն: - 662. Դարձեալ՝ հարիւրեակ **զ.** և տասնեակ **զ.** և *միակ* **զ**: - 707

**ՄԻԱԿԱՄՈՒԹԻՒՆ +** Չորրորդ՝ այսու առաւել *զմիակամութիւն* ցուցանէ. զի մի՛ է կամք իւր և հօրն. վասն այն ո՛չ կարէ առանց հօր. զի ո՛չ է որդւոյ այլ կամք զի զոր ինչ կամեսցի բաց ի հօրէ արասցէ: - 45. Այլ այս առաւել *զմիակամութիւնն* ընդ հօր և որդւոյ ցուցանէ. զի ասէ՝ ո՛չ իմ կամք այլ որիշ զի առնեմ, այլ զա՛յդ կամքդ առնեմ զի հասարա՛կ է: - 46. Նմանապէս և այն՝ «ո՛չ իմ կամք՝ այլ քո՛յդ լիցի». աստանօր ո՛չ յատուկ կամք ցուցանէ բաժանեալ ի հօրէ. այլ առաւել *զմիակամութիւնն* հօր: - 46

**ՄԻԱԿԱՐԳ** - Ասեմք եթէ՝ նորա երեքեան դասքն՝ այսինքն աթոռք՝ քերօբէք՝ և սերօբէք՝ *միակարգ* միապատիւ և գերազանց էութիւնք են. զի անընդմիջաբար յաստուծոյ ամենայն լուսափայլութիւնք իմաստք և շնորհք ի նոսա հեղանին համակարգապէս. և ապա նոքօք յայլ ամենայն գոյս երկնաւոր և երկրաւոր: - 135

**ՄԻԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ** - Եւ ըստ իմաստասիրին, յառաջ քան զմարմինն յորում է զանազանութիւն լուսոյ՝ է՛ միւսն ի վերոյ յորում է *միակերպութիւն* լուսոյ: - 763

**ՄԻԱԿՈՂՄԱՆԻ +** Հինգերորդ՝ *Միակողմանի*՛ է դէմքն: - 227

**ՄԻԱԿՈՂՄՆ +** ...զդ՝ անդամալոյծ *միակողմանց* բժշկութիւն. **էդ**՝ բորոտից սրբութիւն. **ըդ**՝ բոլոր մարմնոյն հիւանդաց և ջերմացելոց առողջութիւն. **թդ**՝ զդևսն հանէր. **ժդ**՝ զմեռեալսն յարուցանէր: - 328

**ՄԻԱՀԱՂՈՅՆ +** Նախ՝ զի հրեշտակացն իմանալի և *միահաղոյն* է տեսութիւն. իսկ մարդկան բանական և մասն մասն ժողովելով: - 120. Զի ի կատարածի աշխարհի յորժամ դադարի գործ դիւացն՝ ամենեքեան *միահաղոյն* փակեսցին ի դժոխս: - 147. Վասն որոյ յերկրի աստ բազմանան թուով. և ապա՛ *միահաղոյն* մտցեն անդ որպէս բազմութիւնք հրեշակաց: - 662

**ՄԻԱՀԱՄՈՒՌ +** Իսկ թէ ոք ի բարձր աշտարակ կայցէ՝ տեսանէ զամենայն *միահամուռ*: - 15. Երկրորդ՝ զի զամենեսեան *միահամուռ* ունի և պահէ՛. և այսպէս գիտէ զորս ունի առ ինքն և պահէ՛: - 141. Երեսունենե, ի Ծնունդն Քրիստոսի *միահամուռ*: - 413. *Միահամուռ* հին և նոր կտակարանքն՝ **դ ա՞. էռ. չի** տուն է: - 451

**ՄԻԱՁԵՒ +** Եւ թէ՝ դատաստանն աստուծոյ է՛ *միաձև* բազմաձև և ամենաձև. և այլ սոյնպիսիք եթէ բերեն վկայութիւն. և թէ մտացածին բանիւ հաւանութիւն տան: - 705

**ՄԻԱՄԱՅՐ +** Իններորդ՝ *միամա՛յր* է որդի սառայի. միածին է և որդի կուսին. մի ծնանիմք և մեք յաւազանէն: - 307

**ՄԻԱՄԻՏ +** Դարձեալ ըստ եփրեմի հինգերորդ՝ զի սուրբ էր սրտիւ. և Վեցերորդ՝ զի *միամիտ* էր կամօք. և սոքա առնեն զմարդն մերձակայ աստուծոյ: - 290. Տատրակ՝ ողջախոհքն են. և Աղաւնի՝ *միամիտքն* և անմենգքն: - 358

**ՄԻԱՄՏՈՒԹԻՒՆ +** Խորագիտութեամբ պահէ զինքն յայլ մարդոյ. և *միամտութեամբն* այլոց վնաս ո՛չ առնէ: - 579

**ՄԻԱՅՆ +** Նա՛խ, զի ըստ սոցա ոչինչ է զանազանութիւն մշտնջենաւորացն և փոփոխականացն. որք են երկնայինք և երկրաւորք. զի նոքա *միա՛յն* են ի հարկէ...: - 8. Նախ՝ եթէ լինէր բանս մեր ի հարկէ ճշմարիտ,

նա ո՛չ մինն *միայն*, այլև ամենայն բան զինչ ասէաք՝ ճշմարիտ լինէր. որպէս շինել քաղաք, կամ ո՛չ շինել. տնկել այգի, կամ ո՛չ տնկել: - 8. Այլ մեք դասք ուղղափառաց, հետևօղք ճշմարտասիրութեան, ընդդիմանամք այսմ ասելով թէ աստուած ո՛չ է պատճառ չարեաց. այլ *միա՛յն* բարեաց: - 13. Եւ արդ՝ բաւական է այսչափ որպէս ցուցաւ, թէ աստուած ո՛չ է պատճառ չարեաց, այլ բարեաց *միայն*: - 15. Եթէ ո՛չ իշխեն, ո՛չ ոք ի նոցանէ է աստուած. և եթէ իշխեն, որ ոք և իշխէ *միայն* նա՛ է աստուած: - 21. Եւ ո՛չ են որպէս ստորասութիւնք և բացասութիւնք, որ *միայն* ի բա՛նն են հակակայք...: - 21. Չորրորդ՝ առանձնակի տեսութեան՝ *միայն* իմացմանն՝ վասն առանձնակի արժանաւորութեան. որպէս մովսէսին: - 24. Երրորդ՝ զի կամեցաւ աստուած ո՛չ *միայն* ողորմութեամբ՝ այլև ըստ արդարութեան, վարձս նահատակութեան տացէ ըստ գործոցն համբերութեան: - 25. Չորրորդն՝ ի մօրէ *միայն* առանց հօր. որ է քրիստոսին: - 29. Եօթնևժերրորդ՝ Ծանիցեն զքեզ *միայն* ճշմարիտ աստուած: - 29. Չորեքտասաներորդ՝ Յոգին *միայն* ի հօրէ՛ է բղխումն՝ **ժ** հարցմամբ, և **զ** օրինակաւ, և **ը** վկայութեամբ: - 30. Վեցերորդ՝ զի նոքա հեթանոսք *միա՛յն* էին մոլորեալ: - 34. Եւ սոքա *զմիայն* տէրն ուրացեալ՝ քրիստոսամարտ լեզուաւ զանձինս կորուսանեն: - 34. Եւ սոքա սոսկ մարդ դաւանին, և աստուած ասեն *միայն* կոչմամբ և անձամբ: - 34. Տասներորդ՝ նեռն քարոզութեամբ պատրէ՝ և ուրական սքանչելեօք. և այլն. և սոքա քաղցրաբանութեամբ և օրհնութեամբ պատրեն զմիտս անմեղաց. և հրեշտակ լուսոյ կերպարանին որպէս հայրն իւրեանց սատանայ. և ամենայնն ուրական *միայն*...: - 35. Պատասխանեմք թէ՝ անծնելութիւնն և կամ ծնելութիւնն ո՛չ ասի *միայն* աստուածութիւն. զի աստուածութիւնն հաւասա՛ր է Երրորդութեանն: - 38. Դարձեալ զի և ադամ անծին՝ ո՛չ է *միայն* մարդկութիւն, այլ և ծնեալն ի նմանէ ասի մարդ: - 38. Այսպէս և ո՛չ *միայն* հայր աստուած, այլ և ծնեալն ի նմանէ աստուած: - 38. Եթէ որպէս հօր, է՛ հայրութիւն *միայն*. իւր լինի և բնութիւնն: - 39. Ապա ուրեմն ասեն չարափառքն թէ հայր միա՛յն է *ճշմարիտ* աստուած. և ո՛չ որդի և հոգի: - 47. Նախ՝ որ այժմ ասաց զհայր *միայն* ճշմարիտ աստուած, նոյն և զինքն ասաց ճշմարտութիւն: - 47. Եւ թէ *զմիայն* ճշմարիտն՝ հօր *միայն* տաս, կորուսեր ապա զորդի ստութեամբ և մահուամբ և խաւարաւ և այլովն: - 47. Իսկ մի և ճշմարիտ ասելովն՝ յատկացնէ՛ ի բազում և ի սուտ աստուածոց հեթանոսաց որ անուամբ *միա՛յն* են: - 47. Վասն այն տէրն ընկրկեաց զօրինականն թէ *միայն* ծայրագոյն բարի է՛ աստուած. և ի մարդկանէ ո՛չ ոք ունի զայս: - 47. Այսպէս և քահանայապետն մեր *միայն* եմուտ ի ներքին կողմն վարագուրին: - 50. Եւ թէ արարած է՝ զիա՞րդ հաւատամք և կատարիմք. այսինքն յորժամ խնդրեմք և առնումք. զի ո՛չ տան մեզ ըզհայցուածքն որք են արարածք. որպէս անուամբ *միայն* աստուածք հեթանոսացն: - 52. Իսկ արիոսի՝ զի նա *միայն* զհա՛յր ասէր աստուած...: - 54. Արդ՝ Նա՛խ՝ բան աստուծոյ՝ և հոգի աստուծոյ՝ ո՛չ պատշաճի արարածոյ. այլ *միայն* աստուծոյ: - 55. Որպէս հոգի մարդոյ և բան մարդոյ՝ *միայն* մարդո՛յ է: - 55. Եւ հոգի հրեշտակի և բան հրեշտակի՝ *միայն* հրեշտակի՛ է: - 55. Երկրորդ՝ պաշտօն որ յաստուած վերաբերի՝ *միայն* աստուծոյ պատշաճի...: - 57. Երրորդ՝ սրբել զմարդիկ՝ *միայն* աստուծոյ է ...: - 57. Յինգերորդ՝ յարուցանել՝ *միայն* աստուծոյ պատշաճի...: - 57. Վեցերորդ՝ ստեղծանելն՝ *միայն* աստուծոյ է...: - 57. Մետասաներորդ՝ աստուծոյ *միա՛յն* է յայտնել զգաղտնիս...: - 58. Երկոտասաներորդ՝ ուսուցանել զմիտս մարդոյն ի ներքս՝ *միայն* աստուծոյ է ըստ սաղմոսին...: - 58. Երեքտասաներորդ՝ բնակիլ ի սիրտ սրբոց *միայն* աստուծոյ է ...: - 58. Չորեքտասաներորդ՝ լինիլ ամենայն ուրեք՝ աստուծոյ *միա՛յն* է ...: - 58. Վեշտասաներորդ՝ գիտել զգաղտնիս սրտից՝ *միայն* աստուծոյ է...: - 58. Եօթնևժերորդ՝ որդեգրել զմարդիկ աստուծոյ՝ *միայն* աստուծոյ է...: - 58. Երբեմն զմի անձն *միայն*...: - 62. Երկրորդ՝ զի խօսքն *միայն* ի բանէն ձևանայ և ո՛չ ի մտացն: - 62. Ապա ուրեմն այսպէս կարծելն՝ զհոգին *միայն* յորդւոյ ցուցանէ՛ և ո՛չ ի հօրէ որ է անհնարին հերձուած: - 62. Եւ զի հոգին սուրբ է *միայն* ի հօրէ բղխումն, տեսցուք զայս Նախ՝ ի հարցմանէ: - 62. Ապա ուրեմն յանսկզբնական հօրէ *միայն* բղխէ անեղ և անվախճան հոգին սուրբ: - 63. Իսկ եթէ զոչ բղխեալն բղխէ, ահա ի հօրէ ո՛չ ասէք զբղխումն, այլ *միայն* յորդոյ. որ է սուտ: - 63. Ա՛րդ՝ տեսանեմք զջերմութիւնն զի ո՛չ բղխէ ի լուսոյ, այլ *միայն* ի հրոյ: - 64. Նոյնպէս հոգին սուրբ ոչ բղխէ յորդւոյ, այլ *միայն* ի հօրէ: - 64. Ա՛րդ՝ հոտն ո՛չ է ի գունոյն. այլ *միայն* ի մարմնոյն: - 64. Նոյնպէս և հոգի ո՛չ է յորդւոյ՝ այլ *միայն* ի հօրէ: - 64. Որք ուրանան զբնութեամբ միաւորութիւն աստուծոյ մարդացելոյն, այլ *միայն* բնակութեամբ և շնորհիւ որդէգրութեան ելեալ յաստուածութեանն փառս. որպէս ասեն նեստորականքն: - 66. Պարտաւորեցան ըստ մարդապաշտութեամբ ո՛չ *միայն* երկրաւորքս՝ այլ և երկնայինքն: - 67. Տասներորդ՝ զի թէ նա վասն բնակութեանն երկրպագելի է և աստուած, ո՛չ *միայն* եղիցի նա՛ աստուած, այլև ամենայն երկնաւորք և երկրաւորքս. որք բնակեալ ունին զաստուած և կոչին անուամբ աստուածք: - 67. Իսկ թէ մարդկութեանն *միայն*, անկա՛ր ընդ մարդապաշտ հայհոյութեամբ. և փոխանակ արարչի՝ արարածո՛յ երկրպագեցեր ընդդէմ

աստուածային օրինացն: - 68. Զի թէ զաստուծոյն *միայն* անկար ի յարիոսին. զի զբանն առանձին քրիստոս ասացեր. այսինքն օծեալ և սրբեալ ի հօրէ. յորմէ իմանի պակաս գոլ քան զհայր: - 68-69. Իսկ թէ զմարդն *միայն* ասես, զրկեցեր զբանն ի տէրութենէ. և առանձին մարդո՛վ ասես եղեալ զամենայն. որ է անհնարին չար: - 69. Զի թէ *միայն* յաստուծոյն, արկանես զանմահ բնութիւնն ընդ մահուամբ...: - 69. Իսկ թէ *միայն* ի մարդոյն բնութիւնն, ահա տակաւին ևս անկատա՛ր ես. զի ի սոսկ մարդոյն մահ մկրտեցար: - 69. Եւ թէ *միայն* բանին որ ի յերկնից իջեալ, ահա՛ որ երկու կամք ընդ դէմ միմեանց խոստովանիս. ծնողին և բանին: - 70. Իններորդ՝ սքանչելագործելն *միայն* աստուծոյ է ...: - 71. Տասներորդ՝ աստուծոյ *միա՛յն* է թողուլ զմեղս...: - 71. Երեքտասաներորդ՝ ամենակալ *միայն* աստուած է ...: - 71. Չորեքտասաներորդ՝ ամենայն ուրեք աստուծոյ *միայն* է լինիլ...: - 71. Հնգետասաներորդ՝ տաճար *միայն* աստուծոյ սրբի...: - 71. Վեշտասաներորդ՝ աստուծոյ *միա՛յն* է ընդ կամելոյն և կարելն...: - 72. Եօթնևժերորդ՝ ամենևիմբ սրբութեամբ արդարութիւն *միայն* աստուծոյ է...: - 72. Ութևժերորդ՝ ճշմարիտ *միայն* աստուած է ...: - 72. Իննևժերորդ՝ տէր փառաց *միայն* աստուած է...: - 72. Քսաներորդ՝ յառաքելութիւն հրաւիրել *միայն* աստուծոյ է ...: - 72. Իննևժերորդ՝ թէպէտ մարդիկ ոմանք կոչին տէր վասն ունելոյ իշխանութիւն ինչ, այլ տէր *միայն* աստուած է...: - 74. Եթէ մի է առհասարակ բնութիւն երրորդութեանն և ո՛չ բաժանեալ, ո՞րպէս իմանամք զբանն *միայն* մարմնացեալ. և ո՛չ զհայր և զհոգի: - 74. Նոյնպէս իմա՛ և զաստուածն բան. ունելով զնոյն բնութիւն յառանձնութեան իւրում. և *միայն* միացեալ ի մարմնի և ո՛չ հայր և հոգի...: - 74. Եւ ճաշակելիքն զիամն *միայն* արտաքոյ մնալով հոտոյն և գունոյն: - 75. Իսկ շօշափելիքն զգայ զջերմութիւնն՝ և տեսանելիքն զլոյսն *միայն* ի միում էութեան: - 75. Իսկ աստուած զաստուածութիւնն՝ և մարդ զմարդկութիւնն *միայն*: - 75. Ուրեմն և ծնեալ ի մօրէ *միայն* զմարդկութիւնն՝ և ո՛չ զաստուածային էութիւնն: - 75-76. Վասն է՞ր քաղկեդոնիկքն և նեստորականքն ուրանան զբնութեամբ միաւորութիւնն. այլ անձամբ *միայն* և յատկութեամբ ասեն: - 76. Իսկ աստուածաբանն ընդդէմ՝ ապօղինարի՝ որ *միայն* մարմին ասաց առանց հոգւոյ առեալ. ասէ, մարմին առանց հոգւոյ անկատա՛ր է մարդ: - 80. Դարձեալ՝ մի բնութիւն ասէ ապօղինար. որ զհոգի և զմիտս ուրացաւ. և *միայն* զմարմին ասէ առեալ, և ի տեղի հոգւոյ զբանն բնակեալ: - 81. Դարձեալ՝ մի բնութիւն ասաց միւս եւտիքէս. ոչինչ առեալ մարմին ի կուսէն. այլ իբր ընդ խողովակ անցեալ իբր ի դարիճակի. *միայն* զձևն ի նմանէ ծևագրեալ: - 81-82. Այլ և մի բնութիւն ասեն՝ որք *միայն* սոսկ մարդ խոստովանին զքրիստոս, և ո՛չ աստուած մարդացեալ: - 82. Եւ սոքա էութեամբ և բնութեամբ ո՛չ խոստովանին զմիութիւնն. այլ՝ անձամբ *միայն*: - 82. Իսկ անձն առանց բնութեան՝ *միայն* անուն է սոսկ. որպէս որդի՝ կամ քրիստոս՝ կամ յիսուս: - 82. Զի անձն առանց բնութեան՝ կոչումն *միա՛յն* է ո՛չ էութիւն: - 84. Երրորդ՝ զի թէ *միայն* անձամբ միանայ և ո՛չ բնութեամբ, ապա քրիստոս անձամբ և կոչմամբ *միա՛յն* է որդի աստուծոյ և ո՛չ բնութեամբ: - 84-85. Իսկ թէ անիր, ապա *միայն* անուա՛մբ է մի և ո՛չ իրօք. որպէս հոմանուն ձայն՝ անուամբ հաղորդեալ և բնութեամբ այլև այլ: - 86. Իսկ աստ բնութիւնք բ *միայն*. կամ գ ըստ ոմանց: - 88. Իսկ աստ նման միմեանց՝ և բոլորին կոչի քրիստոս. ըստ որում ասի՝ քրիստոս էջ յերկնից. որ է բանն. և քրիստոս եդաւ ի գերեզմանի. որ *միայն* մարմինն է աստուածութեամբն. և քրիստոս էջ ի դժոխս. որ *միայն* հոգին էր աստուածութեամբն: - 88. Նախ՝ զի հոմանուն ձայնն *միայն* անւանն և ո՛չ իրի հաղորդի: - 88. Եւ մեռեալ ի խաչին զանձն *միայն* ասէք. որպէս երգէք յերեք սրբեանն ձեր, քրիստոս որ խաչեցար ողորմե՛ա մեզ: - 89. Եւ դարձեալ՝ զի մի՛ կարծի *միայն* յանմարմնութեանն պատկեր հօր, ի վերայ էած և ի լինելութեանն հաւասար աստուծոյ գոլ նովին մարմնովն առանց յափշտակութեան: - 93. Եւ ո՛չ այս *միայն*: - 93. Զիա՞րդ *միայն* ի դէմս բանին իջէ այն՝ որ ի կերպարանս հօր է և հաւասար աստուծոյ: - 94. Ընդէ՞ր ապա նա *միա՛յն* երկրպագի յերկնաւորաց և երկրաւորաց: - 95. Իսկ թէ *միայն* անուն առանց էութեան. ապա անւամբ խոստովանիս աստուած զքրիստոս և ո՛չ գոյացութեամբ. և հաւասարե՛ս զնա մովսէսի. որ անուամբ աստուած կոչեցաւ և ո՛չ էութեամբ: - 95. Եւ զծածուկ սրտին գիտել *միայն* աստուծոյ է ...: - 97. Ոմանց գոյութիւն *միայն*. և այլոց կեանք. և բան. և իմացումն. որպէս տիպ կնքեալ ի մոմի: - 106. Երկրորդ՝ զի *միայն* ի մարդկայինս ազգ է: - 106. Հինգերորդ՝ ի բանէն կրկին էութիւնք յառաջեցան. այսինքն իմանալի և զգալի. զի թէ *միայն* ի հրեշտակաց էր առեալ՝ պակասէ՛ր զգալին. և թէ ի կենդանեաց՝ պակասէ՛ր իմանալին: - 107. Իսկ հրեշտակք ո՛չ են կենդանարար այլոց. այլ *միայն* կենդանի: - 117. Իսկ այս *միայն* կենացն է յատկութիւն: - 117. Եւ զանազանին, Նախ՝ զի տնկականն *միայն* ի ջերմութենէ հրո՛յ է: - 117. Ապա և երկոքին անեղութիւնքս *միայն* աստուծոյ են գիտելիք: - 118. Զի ինքն *միա՛յն* գիտէ զինքն: - 118. Եւ ինքն *միայն* գիտէ զո՛չէսն: - 118. Զի աստուած ո՛չ արտաքոյ ինքեան ունի զտեսութիւնն. այլ ի ներքս *միայն*. զի զինքն ի յինքն տեսանէ՝ և զայլս ի յինքն. ապա զեղեալքս ի յարացոյցն որ է տեսութիւնն աստուծոյ որպէս ասացաք: -118-

119. Իսկ մեք զներկայն *միայն*: - 119. Իսկ նախանձն աստուծոյ պարզապէս *միայն* ունի սիրել և զայլս և ո՛չ ատել. զի նախանձն աստուծոյ՝ սիրոյ առաւելութիւնն է. որպէս բոցն հրոյ: - 128. Երկայնութիւն՝ որ ո՛չէ լայն և ընդարձակ. այլ *միայն* երկայն. զի երկարագծի զօրութեամբ ի բոլորս: - 129. Ծանիր զայս, զի աստուած է *միայն* իմացական և ո՛չ իմանալի. և հրեշտակք իմացական և իմանալի. զի իմացականք են վերինքն. և իմանալի ներքինքն: - 130. Իսկ՝ հոգի մարդոյ *միայն* իմանալի և ո՛չ իմացական. զի իմանան զվերինսն՝ իմանալի՛ են: - 130. Երրորդ՝ զի անդ բազմաց շրտնու տեսութիւնն. և աստ *միայն* զօրանայ տեսողական մասն միոյն. որպէս աշակերտին եղիսէի: - 133. Չորրորդ՝ այն փոփոխումն *միայն* տեսութեանն լինի: - 133. Հինգերորդ՝ այն հրաշք *միայն* խաբէութիւն տեսութեան է: - 133. Տասներորդ՝ դարձեալ զանազանի, զի երևմունքն *միայն* փոխեն զհասարակ զգայութիւնն: - 133. Իսկ աստուած կարէ՛ փոխել և զկամքն՝ որ է՛ ախորժակ ի չարէն առ բարին. զոր հրեշտակք ո՛չ կարեն փոխել. այլ *միայն* զարթուցանեն զախորժակն և օգնեն: - 133. Դարձեալ՝ աստուածք կոչին ո՛չ փաղանունաբար, այլ հոմանունութեամբ. այսինքն անուամբ *միայն*, այլ ո՛չ բնութեամբ: - 137. Եւ ա՛յսպէս խօսին *միայն* վերինքն առ ստորինս. զի հաղորդեսցեն զնոսա աստուածային յայտնութեանցն: - 145. Սակայն զչար խորհուրդն ո՛չ կարէ ածել ի ներքս որ *միայն* հաւանութեամբն է չար: - 145. Իսկ «առաւօտի», զի ի սկիզբն ստեղծման աշխարհի ընդ բաժանիլ ի մէջ լուսոյն և խաւարին՝ յայնժամ *միայն* ծագեցին յառաջին օրն յանկարծակի և անկան յերկնից. թէպէտ ոմանք յերկրորդ օրն ասեն: - 148. Վասն այն թէ քրիստոս զմի հրեշտակի բնութիւն ընդունէր՝ զնա *մի՛այն* փրկէր և այլքն արտաքոյ մնային փրկութեան: - 149. Դարձեալ՝ և ո՛չ զնա *միայն* փրկէր զի մեռանիլ ո՛չ կարէր: - 149. ...բանական կենդանի և մահկանացու՝ մարդս *մի՛այն* է որոյ յարութիւն և դատաստան գոյ: - 150. Հինգերորդ՝ զի հոգևոր բնութիւնն միանգամ *միայն* է շրջելի. վասն զի բոլորովին շրջէ զինքն՝ զոր ո՛չ առնէ մարդն. զի մարմինն միշտ մարտնչի ընդ հոգին. որպէս յառաջիկայդ ասի **լբ** գլուխն: - 151. Իսկ ծուլութիւն՝ ագահութիւն՝ որկորստութիւն՝ և բղջախոհութիւն՝ *միայն* առ մոլիսն գտանին: - 152. Զի ի հարկէ՛ էակ է, որ զգոլն *միայն* ունի. իսկ զչգոլն ո՛չ ունի. ապա ուրեմն անփոփո՛խ է էութեամբ: - 162. Դարձեալ այն զօրութիւնն անփոփոխ է. զի *միայն* ի գոլն կարէ, և ի չգոլն անկար: - 168. Գոյացութիւն և պատահումն անմեկնելի որոշմունք են. վասն է՞ր ի յաստուած *միայն* գոյացութիւն է և ո՛չ պատահումն: - 170. Եւ զի յայտ եղև այս, ծանուցի և այն, թէ վասն է՞ր աստուած *միայն* գոյացութիւն է և ո՛չ պատահումն: - 170. Նախ՝ զի աստուած *մի՛այն* է ինքն ինքեամբ. և ո՛չ յայլմէ հաստատեալ...: - 170. Եւ զի յաստուած ո՛չ գոյ առաւել և նուազ. վասն որոյ *միայն* գոյացութիւն է և ո՛չ ունի պատահումն: - 171. Իսկ անեղ և պարզ էութեանն պատշաճի *միայն* նմանապէս համեմատութեամբ. զի է կոչի աստուած, ըստ այնմ «ես եմ որ էն». և ո՛չ ըստ այնմ որ բաժանի ի գոյացութիւն և ի պատահումն. որպէս հոմանուն կամ փաղանուն. կամ ի միոջէ և առ մի. որպէս ընդհանուր էակն է՝ բաժանի առ մեզ: - 171. Եւ դարձեալ՝ է կոչի աստուած, զի նա *մի՛այն* է տեսակ առանց նիւթոյ. և գոյ առանց պատահման: - 171. Իսկ Գոյացութիւն կոչի աստուած, ո՛չ ըստ որում ներհակ պատահմանց է ընդունական որպէս մեք. այլ ըստ որում բաժանի ընդդէմ պատահմանց. որ է՛ *միայն* պարզ գոյացութիւն որպէս ասացուք: - 171. Տասներորդ՝ գոյն բաժանի ընդդէմ պատահմանց *միայն* պարզ գոյացութիւն: - 171. Եւ պարզ գոյացութիւն է *միայն* անեղ գոյին ի մէջ ամենայն եղելոց: - 171. Իսկ մշտնջենաւոր էակն *միայն* մին ունի զօրութիւն որ է առինքն ներգործութեամբ. որպէս հրոյ ջեռուցանելն. և արեգական լոյսն. և հրեշտակին անապականութիւնն: - 173. Եւ անձն ունիլ ասի *միայն* ի պատիւ բանական բնութեանն: - 174. Եօթներորդ՝ ներքին իմաստքն ամենևին խոր և բարձրագոյն տեսութիւն. զոր ըստ ինքեան *միայն* իմացումն տեսանէ և ի դուրս արտաբերէ՛: - 177. Արդ հնչէ զձայնն ըստ ինքեան *միայն*. և ծնանի զբանն շարադրեալ ընդ բաղաձայնս: - 177. Տասներորդ՝ և որ վեհագոյնն է. զի ապարանք և հանգիստ է *միայն* աստուծոյ պատշաճեալ: - 184. Եւ օրն ի տիւն *միայն* **յկե** մասն: - 190. Իսկ արուեստական օրն *միայն* տիւ ասացաւ: - 194. Քանզի ժամանակ ըստ ինքեան ո՛չ ճանաչի. այլ *միայն* մարդկային ներգործութեամբ: - 199. Եւ ոմանք ասեն՝ ի տարրական հրոյն բաժանի կիզումն. և լոյսն *մի՛այն* իջանէ...: - 203. Նախ՝ զի թէպէտ զջուր կամ զհող *միայն* յիշէ աստուած...: - 214. Եւ ո՛չ այս *միայն*, այլ և բոյսք և տունկք ունին բնութեամբ զէնս պահապան ինքեանց: - 217. Զի մարդս բազում իրօք զբաղեալ է ի միտս. իսկ նոքա *միայն* ի բնութիւնս իւրեանց փութով ճանաչեն: - 218. Երկրորդն անշարժ է *միայն* բնութեամբ: - 221. Եւ ոմանք *միայն* զգալի և ապականացու և ծորելի որպէս երկիրս այս. և զայսոսիկ ո՛չ ընդունիմք մեք ճշմարտութեան հետևողքս: - 221. Ութերորդ՝ վասն արտաքին զգայութեանցն որ են ի գլուխն. զի այլ կենդանիք *միայն* հեշտանան կերակրով և ցանկութեամբ. իսկ մարդն հեշտանայ առաւել գեղեցկութեամբ զգալեացս. յորժամ տեսանէ աչօքն զերկին և զերկիր. և ժողովէ՛ զճշմարիտ գիտութիւն նոցա և հեշտանայ:

- 233. Երրորդ՝ զի զաստուածային բանս և զհոգևորս ականջն *միա՛յն* լսէ: - 235. Տասներորդ՝ զի և բանականս մարդ՝ քան զանբան կենդանիս տգէտ լինէր. վասն զի ամենայն կենդանի ունի բնական ճանաչումն իւրոց և օտարաց. ըստ այնմ որ արագիլ արդար՝ կերակրէ զիւր ծնօղսն *միայն*. և տատրակ մենացեալ ի զուգակցէն, ո՛չ զուգի ընդ ա՛յլ տատրակի: - 238-239. Եւ թէ լանջքն *միայն* է մազեղ, սրտո՛տ է: - 247. Եւ այսմ պատճառ անիմա՛ս է մտաց մարդկան. *միայն* անքննին դատաստանին աստուծոյ է տալի. և անհետազօտելի ճանապարհաց նորին. որև սակաւիկ մի յառաջ ասացաւ: - 252. Երրորդ՝ ևս յայտնի. զի ընդ նիւթոյ կազմութեանն համանգամա՛յն է և երևումն ոգւոյ. զի յորժամ անկատա՛ր է նիւթն, *միայն* կերակրիլն երևի ի նմա: - 255. Չորրորդ՝ զի ո՛չ է այն մեռելութիւն *միայն* որ բանականն կամ շունչն պակասի. այլ և որ տնկականն պակասի. որպէս քար. ա՛յն է իսկապէս մեռեալ: - 256. Եւ նա հոգին է որ զգայական և զտնկական զօրութիւնն ի գործ ածէ *միայն* ի մարմինն որքան է ի մարմնի: - 260. Ի ծնանիլն նախ խնդրէ *միայն* կերակուր և աճէ՛. յետ որոյ տեսանէ՛ կանգնի՛ և գնայ. յետ որոյ խօսի և իմանայ: - 267. Նոյնպէս և յղանալն հանդերձեալ է, և վախճանեալ անցեալն, որ ո՛չ երևին. այլ *միայն* ծնեալն երևի որ է՛ ներկայ: - 267-268. Իսկ տնկականն *միայն* գործ է ի կերակրիլն և աճիլն, նա նկարէ յինքեան ի զգայութեանցն և ի մտացն ըստ տկարութեան իւրոյ անկարգաբար երևեցուցեալ ի յիշատակարանս մտացն որպէս ասացաք: - 268. Իսկ իմաստութիւն *միայն* քրիստոս ասի...: - 269. Երեքտասաներորդ՝ ճշմարտի գիտօղ և սիրօղ է աստուած. և *միայն* մարդս է ի զգալիս որ ճշմարիտն գիտէ և սիրէ: - 272. Ի սոցանէ ոմանք ըստ հոգւոյն *միա՛յն* են. և ոմանք ըստ հոգւոյն և մարմնոյն: - 272. Իսկ դրամն և տախտակն ուր գրեալ է պատկեր թագաւորին՝ *միայն* նման է թագաւորին ըստ ձևոյն. այլ ո՛չ ըստ բնութեանն: - 273. Զի անասունք զայս ո՛չ գիտեն. այլ *միայն* զհեշտալին ընտրեն: - 274. Իսկ անասունք սիրեն *միայն* զսննդակիցս իւրեանց: - 274. Դարձեալ՝ մարդն *միա՛յն* է ծիծաղական. և փառաւորիլ վասն ուրախութեան սրտին: - 275. Դարձեալ՝ մարդս *միա՛յն* ունի գ աչք: - 275. Դարձեալ՝ մարդոյս *միա՛յն* է կարգ կանոնաց, բնութեան, կամաց, և հարկի. իսկ անասնոց *միայն* բնութեան է: - 275. Դարձեալ՝ մարդոյս *միա՛յն* է լինիլ յերկրէ՝ և յերկինս. և առաքինութեամբ վարձս ըստանալ: - 275. Դարձեալ՝ մարդոյս *միա՛յն* է հնարագէտ գործք և արուեստք զանազան: - 275. Իններորդ՝ զի որպէս կողից երեսն որ ի փորն նայի՝ կոկ գոլով և մզղնատեսակ. իսկ մէջն փուչ և մրրախառն. այսպէս սէրն զոր ցուցանէ առ այրն, նօսր առ ի ցոյցս՝ և երեսս *միայն* ունի. իսկ ի սիրտն զմրուր դառնութեան: - 276. Այլ կամ իբր զհրեշտակս, կամ որպէս ի միոյ լուսոյ բազումք, կամ կուսութեամբ ծնունդ. որպէս սուրբ կոյսն մարիամ աստուածածին սրբութեամբ և կուսութեամբ ծնեալ փոխեաց զկարգ բնութեան ծննդեանս որ ի սերմանէ առն և կնոջ. զի սա՛ ծնունդ *միայն* ի մօրէ՛: - 280. Եօթանասունք, Վասն է՞ր զազգն հրէից *միայն* սիրեաց: - 285. Իսկ չորրորդ մասն *միայն* զկակուղ միսն ուտեմք: - 296. Եւ մեք առանց արծաթոյ *միայն* ձրի շնորհօքն քրիստոսի լինիմք փրկեալք և ապրեալք: - 314. Քսանևթ, մովսէս *միայն* եմուտ յեգիպտոս և բազմօք ել: - 329. Եւ փրկիչն *միա՛յն* էջ ի դժոխս, և ազատեաց զամենայն հոգիսն ի հրահալոց տանջանացն սատանայի: - 329. Երկրորդ՝ ընդ դէմ չէիցն է որք *միայն* անուանին, այլ էութեամբ ո՛չ են աստուածք. այլ նիւթ են եղական: - 332. Եւ է՛ որ զկերպն և զձևն *միա՛յն* փոխէ, և կոչի առաչօք. որպէս յանէսն և յամրէսն առնէին կախարդութեամբ դիւական: - 335. Եւ մարդս որ վերջին է՝ սա՛ *միա՛յն* ծանեաւ զառաջին պատճառն: - 350. Իսկ կուռքն *միայն* անուամբ. ո՛չ բնութեամբ և ո՛չ գործով: - 350. Երրորդ՝ զձայնն *միայն* լսեցին և զտեսիլն ո՛չ տեսին. և մեք լուաք և տեսաք և շօշափեցաք զբանն կենաց: - 353. Իններորդ, զձայն և անասունք լսեն. և զբանն մարդ *միայն*: - 354. Երրորդ՝ այն մարմնաւոր. և աստ մարմնաւոր և հոգևոր. և անդ *միայն* հոգևոր: - 355. Եւ *միայն* յողջակէզ. ի խաչ սեղանոյն ի հոտ անուշից հօր և հոգւոյն սրբոյ: - 361. Նա՛խ՝ զարիւնն հանել որ է՛ կենդանութիւն և աստուծոյ մասն. և զմնացեալն ուտել որ է տարր *միայն*: - 366. Նա՛խ՝ զի յայնմ ժամու *միա՛յն* էր պիտանի մինչ յանապա՛տն էին: - 379. Երկրորդ՝ զի *միայն* ժամու և աղօթից էր պիտանի խորանն այն, և ո՛չ այլ ինչ իրաց: - 379. Տասն հարւածք էր եգիպտոսի, վասն է՞ր *միայն* զանդրանկաց փոխարէնն խնդրէ: - 380. Իսկ այլ տասունքն իմաստասիրաց բանքն. որպէս պղատոնին. արիստոտէլին. պիթագորին և այլք. որք *միայն* զաստեա՛ցս պատմեն մեզ: - 380. Զի գողացեալ մեղքն *միայն* խոստովանելով ոչ քաւի. այլ հատուցանել պարտ է զգողօնքն. կամ ի տէրն, կամ յազգականս նորա. կամ ի քահանայն. զի միջնո՛րդ է մեռելոց և կենդանեաց: - 384. Եւ յետ մահու *միայն* հոգի անմարմին: - 394. Հինգերորդ՝ նոյն ինքն մարմինն սուրբ ո՛չ թէ հացիւ *միայն* կայր որպէս հասարակ մարդ. այլ բանիւն կենդանի ի նմա՛ միացեալ: - 397. Վասն է՞ր հասարակաց արարիչն զազգս հրէից *միայն* սիրեաց այնպիսի օրհնօք՝ նշանօք՝ և այլն...: - 398. Երկրորդ՝ զի *միայն* մովսէս կոչեցաւ աստուած. և ո՛չ անուամբ *միայն*, այլ և գործով իշխէր ի վերայ տարերաց ի վեր և ի խոնարհ. վասն այն աւագ օրհնութիւն կոչի: - 407. Ոմանք

ասեն *միայն* զլուսաւորս արգելեալ և զկամարն շրջեալ մինչ հասեալ ի նոյն կէտն: - 416. Երկրորդ՝ նշանակէր զքաղաքն երուսաղէմ. զի *միայն* ա՛նդ եղև մարգարէութիւն և օրէնքն. և սեղան աստուծոյ ի սիօն: - 421. Եւ թէ նա՛ յարուցանէր, ընդէ՞ր երկու եհան. զի նա՛ *միայն* զսամուէլ խնդրէր: - 428. Նա՛խ՝ զի ո՛չ ետես զնա. այլ *միայն* կինն. ապա յա՛յտ է զի սուտ նմանութիւնն էր: - 429. Երկրորդ՝ ընդէ՞ր ոչ երևեցաւ սաւուղայ. այլ *միայն* կնոջն որպէս ասացաւ ի վերոյ: - 429. Սակայն հանդերձեալն և սիրտ մարդոյն՝ *միայն* աստուծոյ է գիտելի և ոչ այլ ումեք որպէս ասացաւ ի սկիզբն գրոցս: - 430. Չորրորդ՝ զի ցուցանէ եթէ՝ **խ** ամ թագաւորեաց, և զայն մինն *միա́յն* մեղանչեաց: - 432. Եւ է՛ որ զմեղքն թողու՝ և զպատիժն կրէ. որք յայլմէ բռնաբա՛ր խոստովանին և պատահմամբ, և դարձեալ սխալին. այսպիսեաց մեղքն *միայն* թողլի: - 432. Եւ է՛ որ խոստովանի. և ոչ մեղքն *միայն* թողուի. որք թերի են սրտիւ. և զմեղս թերի խոստովանին. և ի միտս եղեալ են դարձեալ գործել. այսպիսեաց ոչ մեղքն թողուի և ոչ պատիժն. զի որպէս զշուն դառնայ ի փսխած իւր: - 432. Սոյնպէս և շնորհք ապաշխարութեան նորոյս առաւե՛լ է քան զհնոյն. զի առանց գործոց հատուցման ո՛չ կարէին արդարանալ. իսկ աստ շնորհօք թողութեանն *միայն*, կարէ՛ արդարանալ: - 433. իսկ յետ մահու պաշտօնք և տուրք աղքատաց և այլն՝ է՛ հատուցումն պատժոց *միայն*...: - 434. Եւ այն զի դաւիթ *միայն* ետես զկոտորօղ հրեշտակն, զի միջնորդեսցէ: - 435. Նա՛խ՝ զի *միայն* մասին աշխարհի և սակաւո՛ւց էր տէր իսկ քրիստոս ամենայնի: - 442. Այլ և ո՛չ անդ է գրեալ բոլորն, այլ ի թագաւորութեանցն որ չէ թարգմանեալ ի մերս. այլ *միայն* **բ** մնացորդացն զոր եզր գրեաց: - 443. Որ ո՛չ ըստ բնութեան կարգի, այլ ըստ անբաւազօր կարողութեանն աստուծոյ *միայնոյ*: - 469. Նա *միա́յն* էր մայր և կոյս. որ ընդ աստուծոյ ունէր զորդին: - 469. Նախ ասի միածին՝ զի նա *միա́յն* է համագոյ ծնողին ծնունդ...: - 472. Երկրորդ՝ զի նա՛ *միա́յն* ի հօրէ ծնեալ է անմայր...: - 472. Երրորդ՝ զի նա՛ *միա́յն* է ի հօրէ ծնեալ. և չունի եղբայր: - 472. Չորրորդ՝ զի նա՛ *միա́յն* է ծնունդ անբաժան ի ծնողէն...: - 472. Հինգերորդ՝ նա՛ *միա́յն* է ծնունդ համահաւասար կատարելութեամբ զօրութեամբ և իմաստութեամբ ընդ հօր...: - 472. Վեցերորդ՝ նա՛ *միայն* է ծնունդ անուր և աներբ...: - 472. Եօթներորդ՝ նա՛ *միա́յն* է միշտ և անդադար ծնունդ. զի ո՛չ սակաւ ի ժամանակի, և ո՛չ ի ժամանակի դադարի. այլ որպէս լոյս ի հրոյ միշտ և անհատապէս ծնանի: - 472. Ութերորդ՝ նա՛ *միա́յն* է ծնունդ ի հօրէ և ո՛չ երբէք հայրանայ. զի ո՛չ ունի յինքենէ ծնունդ որպէս նա՛ ի հօրէ: - 472. Եւ աստ գիտելի՛ է, զի **գ** ինչ *միայն* յատուկ է մարդացելոյն քրիստոսի. և ո՛չ այլ ումեք պատշաճի մարդկայինս ազգի: - 473. Երկրորդ՝ նա՛ *միայն* ի գործոց արդարացաւ...: - 473. Երրորդ՝ ի նա՛ *միա́յն* գտաւ մտաց սրբութիւն...: - 473. Յետ այսորիկ երկրորդ միաւորութիւն սովորեցաք կոչել թէպէտ և ո՛չ իսկապէս՝ և զանհամանիւթից ոմանց. և կամ զհամանիւթից մարմնոց յարադրութիւն. որոց ընդ մէջ է մակերևութիւն *միայն*: - 476. Այսպէս թէ ուրեք մարդ *միայն* անուանի քրիստոս «զճշմարութիւն խօսեալ». և կամ՝ «աստուած կնքեալ». ո՛չ ինչ ուրէք վնասէ զմիաւորութիւնն իբր մարդ սոսկ կամ աստուած *միայն*. այլ աստուած համանգամայն և մարդ խոստովանի միացեալ: - 477. Իսկ տէր մեր ի մարդեղութեան իւրում յայսցանէ եկամուտ կրից *միայն* զմահն կրեաց. իսկ զմեղս և զապականութիւնս ո՛չ կրեաց: - 496. Այսպէս մահն *միայն* հատանէ ի կենաց. և ապականութիւնն վերստին այլայլէ: - 498. Աւա՜ղ անբան մտահաճութեան նոցա. որք *զմիայն* տէրն ուրացեալ, ածեն ի վերայ ինքեանց զարագահասն կորուստ: - 503. Ոմանք ասեն թէ ի չորրորդ դժոխքն էջ ուր էին արդարոց հոգիքն արտաքոյ ասացեալ երիցս, և զնա *միայն* աւերեաց. և զարդարսն *միայն* եհան. և զայլսն եթող անդ: - 505. Երկրորդ ասեն թէ զայն *միայն* աւերեաց և զայլսն եթող: - 506. Երրորդ ասեն թէ զարդարսն *միայն* հանեալ և զայլսն թողեալ: - 506. Իսկ առ երկրորդն որ ասեն թէ *միայն* զլիմպոսն աւերեաց և զայլսն եթող: - 506. Իսկ առ երրորդն որ ասեն թէ *միայն* զարդարսն եհան և զայլսն եթող անդ: - 507. Ա՛րդ՝ ի կենդանեաց երկոքինն պահանջին. իսկ հոգւոցն բաւակա՛ն է *միայն* ներքին իմացումն զի չունին մարմին: - 508. Իսկ հոգիքն ի դժոխս յորժամ տեսին զքրիստոս, այն էր ժամանակ փրկութեան նոցա և ընդունելոյ զողորմութիւն. յաղագս որոյ հաւատովք արդարացան նոքա *միայն* ի նոյն ժամն: - 508. Իսկ կենդանիք զենեալ յառնէ *միայն* կերակրելիք են. այլ ի կնոջէ ո՛չ: - 511. Եւ զչորրորդն յօհաննէս պատմէ *միա́յն* զմագդաղենացին. և տեսեալ երկու հրեշտակս ի սնարս և յոտս նստեալ: - 515. Նոյնպէս և ծածուկ է աստուածային էութիւնն և անհաս յամենայն եղանակաց. *միայն* խնամօք երևի որոց կամի: - 517. Չորեքտասաներորդ, զի ցուցցէ թէ յայսմ հետէ արքն *միա́յն* ունին իշխանութիւն մերձենալ առ ի պատարագել. և ո՛չ գոյ համարձակութիւն կանանց յայս գործ: - 518. ...և առաքեալքն ձեռն դնելովն *միայն* տային զհոգին սուրբ. և ի լեզուս խօսէին. և մարգարէանային ընդունօղքն. իսկ վարդապետք սուրբք՝ քարոզութեան նոցին հետևօղք և որդիք ծնողացն՝ երրորդ կարգին յետ նոցա: - 535. Չորրորդ՝ զմիտս լուսաւորելով յայտնապէս առանց երևակայութեան՝ *միայն* միտքն լուսաւորեալ ի շնորհաց հոգւոյն...: - 536.

Երրորդ՝ մարմնաւորն իշխէն *միայն* ի մարմին և ի կեանս. այլ յետ մահու ո՛չ: - 538. Իսկ թէ ձեռնադրողն իցէ անարժան, *միայն* ինքն ոչ օգտի. այլ դատապարտի. իսկ շնորհն կատարի՛ ի յընդունօղն: - 540. Զի եպիսկոպոսն փեսա՛յ է և վիճակն հարսն. նա՛ *միա՛յն* իշխէ: - 541. Դարձեալ, ի նախաստեղծուածս՝ մարդն *միա՛յն* էր՝ և կենդանիք բազում: - 551. Եւ նոյ *միայն* ապրեցաւ, և բազումք կորեան: - 551. Եւ եբեր *միայն* պահեաց անխառնակ զնախնական լեզուն: - 551. Աբրահամ *միայն* էր աստուածապաշտ, և քանանացիք բազում: - 551. Յոբ *միայն* համբերօղ, և ազգն բազում: - 551. Յովսէփ *միայն*, և եգիպտացիք բազում: - 551. Եւ այսպէս բազում ունելով իւրաքանչիւր ոք սահմանս առանձին, *միայն* հայք նախատեալ լինին որպէս ո՛չ ունել միաբանութիւն ընդ այլս ի քրիստոնէից. այլ առանձին միայնաբար ընթանալ. և այսու որպէս հակառակ եպերեալ: - 553. Եւ ոմանք ոչ ինչ համարին զյանցանս մտաց. և ո՛չ դնեն ի կարգս մեղաց. օրինակ տալով իբր զդատարկ սեղան ոչ ինչ կերակրել. և իբր զպտուղ ծառոց տեսութեամբ *միայն* վայելել: - 555. Տե՛ս զի ո՛չ բանիւ և ո՛չ գործով էր, այլ *միայն* ի միտս ունէին և յանդիմանեցան ի տնէ: - 557. Ութերորդ յընդդիմակէն. զի թէ յաղօթելն *միայն* մտօք և սուրբ պահել զմիտս առաքինութիւն է կատարեա...: - 557. Իսկ գործ մարմնոյն *միայն* մասինն այն է որում պատահեցաւ: - 557. Առաջինն է սակաւ ինչ *միայն* յանցուած տեսութեան ըստ բնաւորական մտածութեան նորա առ ամենայն իրս: - 558. Եւ ոմանք զեկուսն *միա՛յն* ասեն մարմնական. որ է՛ որկորստութիւն և բղջախոհութիւն. և այլքն ամենայն հոգեկան: - 559. Վասն է՞ր զի մարդոյս գործ և անասնոցն հասարա՛կ են, և մարդոյս *միա՛յն* է մեղք: - 563. ...զի վասն բոլոր ժողովրդեանն մին էր զուարակ. և վասն *միայն* քահանայապետին մին. և զշնացեալ դուստր քահանային այրէին. և զժողովրդեանն քարկոծէին. և վա՜յ ինձ զի անձամբ զանձն իմ դատապարտեմ: - 563. Չորրորդ՝ որք *միայն* զորդւոյ ասեն բան՝ սակաւ պատիժն, զի մի է յերրորդութենէն. իսկ որ զփառակիցն նս՝ կրկնապատիկ հատուցանի նմա: - 566. Ա՛յս է որ զմարդն յաստուծոյ հեռացնէ. զի սուրբքն *միա՛յն* տեսանեն զաստուած: - 570. Դարձեալ՝ հաւատովն հաւատամք՝ որ *միայն* իւր բարութեամբն զմեզ ստեղծեաց և վերստին փրկեաց և ո՛չ ի հարկէ: - 571. Իսկ յոյսն վասն հանդերձելոյն *միայն*: - 574. Դարձեալ՝ հաւատան է ի բարեաց ինքեան և այլոց. իսկ յոյսն է ի բարեացն ինքեան *միայն*: - 574. Չորրորդ՝ յորժամ սիրեմ զիս վասն աստուծոյ. և այս նս է լաւագոյն. զի ո՛չ խնդրէ մարդ զիւրն, այլ զաստուծոյն *միայն*: - 576. Չորրորդ՝ հաւատն է յանցեալն և ի հանդերձեալն որպէս ասացաւ. յոյսն *միայն* ի հանդերձեալն. և սէրն ի ներկայն որ է միշտն: - 577. Ըստ այնմ որ յետս դարձուցանէ ի սիրեցելոյն է՛ *միայն* սիրոյն: - 583. Վասն այսորիկ ասեն վարդապետք թէ **ը** են երանութիւնքն ըստ էութեանն. այլ է *միայն* ըստ զանազանութեան աստիճանացն: - 586. Իսկ թէ հարկաւոր ժամանակ հանդիպի զպատւական մասունքն *միայն*. և կամ զերեսս *միայն* բաւական է լուանալ: - 588. Եւ ոչ այս *միայն* այլ և ի ժամ մկրտութեանն ո՛չ է պարտ մնալ կնոջ յեկեղեցւոջն: - 591. Խաւարն *միայն*. թէ այժմ և թէ ի հանդերձեալն: - 593. Այս ըստ հակառակասիրութեան նոցա ասի. այլ ըստ ուղղութեան՝ քահանայն ունի իշխանութիւն զեօթն խորհուրդ եկեղեցւոյ կատարել. և եպիսկոպոսն առաւել ունի. զի *միայն* տայ զկարգն, եկեղեցի օրհնէ և սեղան: - 594. Եւ սպասաւոր այսմ խորհրդոյ *միայն* քահանայն լինի: - 594. Եւ թէ ասեն՝ բաւակա՛ն է ժողովրդեանն *միայն* մարմինն...: - 600. Դարձեալ՝ թէ դու հաւատաս զարիւնն ի մարմինն կապեալ, մի՛ հաներ զտեսակ արեանն ի բեմն. այլ նշխար *միայն* օրհնեա և լիցի մարմին և արիւն քրիստոսի: - 600. Որ և հարցանէր որդւոցն զեբեթեայ թէ՝ կարո՞ղ էք ըմպել զբաժակն. այլ ո՛չ թէ *միայն* նոցա ետ և յայլ առաքելոցն արգել: - 600. Եւ թէ ասեն, *միայն* մարմինն օծանի՝ զի՞նչ ներգործէ ի հոգին: - 605. Նա՛խ՝ զի *միայն* զհեշտ ցանկութիւնն սիրեն հանապազ. ինքն և գործակիցն իւր: - 613. ...և միւսն երախայ և ո՛չ ունի լեզու, *միայն* լայ. և մայրն գթայ ի յարտասուքն և տայ կերակուր: - 620. *միայն* արտասուօք խնդրեմք յաստուծոյ զողորմութիւն. ի հարկէ գթայ և տայ: - 620. Իսկ թագաւորքն առաջին և վերջին. զի կիրակին է թագաւորելն աստուծոյ. այժմ առաջին, և զկնի վերջին. կամ աստ կամողացն *միայն*, և անդ կամողաց և ո՛չ կամողաց: - 627-628. Յամբոյր աւետարանին, կոչելն *միայն* զպետրոս յանուանէ: - 628. Եբրայեցիքն առաջին դասքն չասէին ալէլու. այլ զոր *միայն* քահանայքն երգէին ալէլուով էր...: - 630. Եւ ի վերջին գուբղայսն ո՛չ ասեմք որ ա՛յլ մարգարէից է. և ալէլուն *միայն* սաղմոսին է: - 630. Զբանս զայս՝ մարգարէն ի դէմս հօր ասէ. զի յայնժամ *միայն* զհայր պատմէին: - 632. Իսկ ի սրբութիւն սրբոցն մերկանալ զայն և զգեստ սպասաւորի զգենուլ *միայն* սպիտակ կտաւի և խնկարկել անդ: - 636. Հինգերորդ, յաղագս ջերմ սիրոյն առ աստուած՝ ո՛չ բաւական համարեցաւ *միայն* լեզուաւ երգել աստուծոյ...: - 641. Վասն է՞ր ութօրէք *միայն* ծննդեանն է և յարութեանն առանց պահոց չորեքշաբաթի և ուրբաթի: - 649. Որ և այժմ ոմանք յազգէ ասորւոց և յունաց՝ զշաբաթ և զկիրակէ *միա՛յն* լուծանեն ձկամբ: - 651. Եւ հայր ո՛չ դատէ, այլ *միա՛յն* որդին: - 661. Զի մի՛ *միայն* ողորմութեամբ՝ այլ և արդարութեամբ վայելեսցուք: - 663. Նախ աստ հոգի մարդոյն է ի

մէջ չարեաց և բարեաց. իսկ յետ մահու ի մէջ բարեաց *միայն*. և ի յարութեանն ի մէջ բարեաց և փառաց: - 667. Վասն է՞ր զքահանայս *միայն* օծանեմք...: - 672. Նա՛խ՝ զի նա՛ *միայն* օծաւ յառնուլ կարգին: - 672. Երրորդ, զի աստ *միայն* մարմինն, և անդ հոգին և մարմինն տանջին: - 679. Ո՛չ. զի ըստ այնմ որ զերծան ի չարեաց, *միայն* ի հոգիս իւրեանց ունին զուրախութիւնն: - 686. Զնոսա ասել գոլ առ **ը** երորդ կամարն երկնից. ամբարձեալ յիշխանութենէ սատանայի որք ի յօդս և ի տարերս *միայն* իշխեն: - 688. Չորրորդ, ասէ սուրբն եպիփան ի հաւատոց գիրն, եթէ որպէս հոգին *միայն* դատի ըստ բանի հերձուածողացն զի կարէ՛ ասել մարմնոյն եղեալ զյանցանքն: - 691. Երեսուներորդ, յա՛յտ է յորպիսութեանցն չորից որ ասացաւ յառաջագոյն եթէ աստ հոգի մարդոյն է ի մէջ բարեաց և չարեաց. իսկ յետ մահու ի մէջ բարեաց *միայն*. իսկ ի յարութեանն ի մէջ բարեաց և փառաց: - 694. Այլ *միայն* վարդապետք Ֆռանկաց տարաձայնեցեալ ամենեցունց համաբաւեն զբերքաթուրն: - 698. ...իսկ հոգին *միայն* ո՛չ կարէ քաւել զանչափ մեղս: - 699. ...ապա ի յարութեանն ո՛չ է բոլոր մարդոյն հատուցումն. այլ մարմնոյն *միայն* որպէս ցուցաւ: - 700. Եւ ոմանք յետ **զռ** ամին զեօթներորդն որ վախճանն է՝ յարութիւն ասեն *միայն* սրբոցն և կապիլ սատանայի: - 706. ...զի ննջեցելոցն *միայն* մին գործ է. այսինքն յարութիւնն. իսկ կենդանեացն մահն և յարութիւնն. զի նախ մեռանին ի նոյն կէտն և ապա՛ յառնեն: - 717. Զի թէ սկզբնական նիւթն *միայն* յառնէ, մարմին մարդոյ ամենևին փոքրիկ և անկատար լինի: - 718. Իսկ նշանս այս անմարմին է և մնացական և ծածուկ, ինքեանց *միա՛յն* գիտելի: - 719. Ասեմք եթէ՝ զորօրինակ սընդիկ լուծեալ և ի հող խառնեալ գնդապէս և փոշիացեալ. յորժամ ի մի վայր ժողովես՝ թողու զփոշիսն ի յորս խառնեալ է և պարզ *միայն* սնդիկն ժողովի: - 719. Այսպէս և ի մարմին մարդոյ ոչինչ խառնի ի հասարակ տարերաց ի յորս լուծաւ. այլ ինքն *միայն* գոյացութիւն մարմնոյն խառնեսցի ընդ հոգւոյն: - 719. Զի՞նչ է պատճառն որ **գ** մարմինք *միայն* մնան ի կատարածի: - 727. Եւ այս ո՛չ թէ լոյս *միայն* է. զի զլոյսն ո՛չ ետ մեզ նշան. այլ զխաչն փայտեղէն յորոյ վերայ զձեռն իւր տարածեաց միածին բանն: - 734. Իսկ Երկրորդն արքայութիւն, նշանակի յազատն սառա. որ ո՛չ ուժգնութեամբ մարմնոյն, այլ *միայն* շնորհօքն աստուծոյ ծնաւ: - 756. Ոմանց խաւար *միայն*: - 760. Նախ ի տեսանելն զերեսս աստուածային որ է անճառելի ցնծութիւն. որպէս ասեն վարդապետք, այն է ճշմարիտ և *միայն* ուրախութիւն, և ո՛չ յաղագս ստեղծուածոյ, այլ ի ստեղծողին լինի. զոր իբրև ստանայցես, ո՛չ ոք բարձցէ ի քէն: - 762. Առաւել պարտ էր մարդկան վաստակիլ *միայն* զի կարասցեն գոլ ի միում աւուր ընդ երանելի սրբուհւոյ աստուածածին կուսին. քան բազում վաստակիլ վասն յաւիտենական փառացն: - 763. *Միայն միայնոյ* և միշտ էին Յօր և Որդւոյ և Յոգւոյն սրբոյ: - 771. Այլ զպիտանիս եկեղեցւոյ և վարդապետաց ոգէշահ խնդիր հաւատոյ *միա՛յն* հոգ տարեալ: - 772. Իսկ յետ մահու՝ յիշելն է *միայն* ըստ ինքեան զներքոյսն. խափանեալ խառնւածոյ նիւթոյն: - 774. Եւ ո՛չ այս *միայն*, այլ և մեղքն ադամայ նուազ ևս քան զծննդոց նորա ըստ այսմ օրինակի: - 777. Զի առաջին ծեռամբն աստուծոյ նա՛ արարաւ, և նա՛ *միայն* յանցեաւ. և նմա՛ խոստացաւ փրկութիւն: - 778. Եւ ո՛չ այս *միայն*, այլ և ի կոչմանն զօրութենէ առ որդւովքն սկևեայ հալածեին նոքա: - 784. Էր և տեսանել աստ աղիողորմ տեսիլ. *միայն* արտասուալի դիմօք և կականաբարձ հառաչմամբ. ազգք և սիրելիք. ծնօղք և եղբարք: - 789. *Միայն* բարեսէր կամօք յիշատակ բարի առ քոյդ արձանագրեսցի ի տէր: - 789

***ՄԻԱՅՆ ԹԷ*** **+** Իսկ ենովքայն թէպէտ գիրք ո՛չ յայտնեն, բայց *միայն թէ՝* «ենովք հաճոյ եղեալ աստուծոյ՝ փոխեցաւ յերկինս...: - 290

***ՄԻ ՄԻԱՅՆ*** - Յինգերորդ՝ զի գործ արարչութեան է *մի միայն* առնելն. իսկ գործ խնամելոյն է՛ առնել և թոյլ տալ երբեմն երբեմն ըստ պիտոյից բարեգործութեան: - 158. Չորրորդ՝ զի ի մարդն է *մի միայն* միաւորութիւն. այսինքն հոգւոյ և մարմնոյ: - 478. Երկրորդ, զի աստ *մի միա՛յն* տանջանք, և անդ բազում և ազգի ազգի: - 679

**ՄԻԱՅՆԱԲԱՐ +** Եւ թէ ասես *միայնաբար*՝ աստուած է մարմինն. և աստուած է արիւնն, լինի բազմաստուածութեան ցոյցք: - 92. Իսկ թէ ասես *միայնաբար* աստուած է մարմինն՝ և աստուած է հոգին. այսու ո՛չ լինիս բազմաստուած. զի մի՛ է աստուածութիւնն ի սոսա միաւորեալ էութեամբ և գոյացութեամբ: - 93. Նա՛խ՝ խելապատակն սկիզբն է ջլացն. որ *միայնաբար* ընդ ուղուղս պարանոցին անցանէ. և բաժանի ի թիկունս, ի ձեռս, և յա՛յլ մարմինս: - 244. Եւ այսպէս բազում ունելով իւրաքանչիւր ոք սահմանս առանձին, միայն հայք նախատեալ լինին որպէս ո՛չ ունել միաբանութիւն ընդ այլս ի քրիստոնէից. այլ առանձին *միայնաբար* ընթանալ. և այսու որպէս հակառակ եպերեալ: - 553

**ՄԻԱՅՆԱԿԵԱՑ +** Յորում զորոգինէի գրեալսն խոտեցին. և զսուրբն եւագրիոս *միայնակեաց*՝ և

զիրաշալի այրն աստուծոյ զդիդիմոս՝ նզովեցին: - 543. Երրորդն *Միայնակեացք*. որք կոչին կամարարք: - 608. Վասն այն ասէ սուրբն Նագրիոս առ *միայնակեացս* թէ «գինի ամենեւին մի՛ ըմպիցես»...: - 656

**ՄԻԱՅՆԱՆԱՄ +** Իսկ *միայնացեալ* որակ ի ձեւոյն, երեւի աննման. զի նմանն ի վերայ որակութեան ասի. որպէս ծանրութիւն: - 236

**ՄԻԱՅՆԱՒՈՐ +** Այլ դու ո՛վ այրդ աստուծոյ մաքրամիտ և ճգնազգեաց *միայնաւոր* սուրբ հայրդ սահակ, թէ և զիջանես եղբայրական սիրով խնդրել բանս ի մէնջ. սակայն կարօղ ես և զքերին լնուլ և զյաւելորդն կշռել. և զմեզ օգտեցուցանել ի ներգոյէ՛ քոյին պայծառամիտ սրբութեան սրտի: - 558

**ՄԻԱՆԱՄ +** Այսմ տեսութեանս որք արժանաւորին, նոքա երանին և անքակ *միանան* ի սէր նորին որպէս հրեշտակք: - 24. Վասն այն կամեցաւ աստուած զի ի տեսանելն զնա՝ անի բաց դնելի սիրով *միասցուք* ընդ նմա: - 24. Տեսցուք և զգործն յաղագս որոյ օծաւ. այսինքն *միացաւ* մարդկութիւնն աստուածութեամբն...: - 41. Ասեմք զայս ըստ մարդկութեանն. զի ո՛չ ունէր բնութիւնս մեր. այլ յորժամ *միացաւ* ընդ բանին և եղև որպէս առօղն և առեալն իշխան և տէր ամենեցուն: - 46. Արդ բանն առանց մարմնոյն քրիստոս ո՛չ է. ապա ուրեմն յա՛յտ է զի *միացեալ* մարմնովն է՛ հաւասար և ի կերպարանս աստուծոյ տէր մեր յիսուս քրիստոս: - 72. Նոյնպէս իմա՛ և զաստուածն բան. ունելով զնոյն բնութիւն յառանձնութեան իւրում. և միայն *միացեալ* ի մարմնի և ո՛չ հայր և հոգի ըստ առաքելոյ...: - 74. Եւ դու այսպէս ընկալ և հաստատեա՛ ի քեզ. և լեր *միացեալ* ամենայն դիմօք և խաղալեօք ի համայնից գլուխն միշտ պաշտաճութեամբ ի քրիստոս: - 76. Եթէ՝ բանն աստուած մարմնացաւ և մարդացաւ. և մարդկութիւնն աստուածացաւ խառնելով և *միանալով* բանին: - 79. Իսկ յորժամ կամեցաւ արարիչն մարդ լինիլ, բանն աստուած իւրով կատարելութեամբն անձամբ և էութեամբ՝ ո՛չ մասամբ, այլ լրիւ *միացաւ* անճառապէս ի մարմնի: - 82-83. Ապա ընդէ՞ր ո՛չ ասէք անձամբ *միացեալ*: - 84. Եւ դարձեալ՝ անձին միաւորութեան՝ բաժանումն հետեւի. և բնութիւնն անբաժ *միանայ*: - 84. Երրորդ՝ զի թէ միայն անձամբ *միանայ* և ո՛չ բնութեամբ, ապա քրիստոս անձամբ և կոչմամբ միա՛յն է որդի աստուծոյ և ո՛չ բնութեամբ: - 84-85. Եւ չորրորդ՝ զի ամենայն իր բնութեամբ իւրով *միանայ* և ո՛չ արտաքոյ բնութեան. որպէս հուր ընդ երկաթ՝ և հոգի ընդ մարմին միաւորի: - 85. Թէ բնութեամբ *միացան*, ապա տարբերութիւնք բնութեանցն բարձան: - 85. Իսկ եթէ աստուածային բնութիւնն և զմարդկայինն առանց անձին ասէք քրիստոս, ահա՛ շփոթեցիք զերկու բնութիւնսն առանց անձին *միանալոյ* ըստ եւտիքեայ: - 90. Սակայն նա բնութեամբ և էութեամբ *միացաւ*. և սոքա շնորհօք և ժամանակաւ: - 95. Ա՛րդ՝ եթէ մի անձն խոստովանիս քրիստոսի, և բնութիւն մարդոյն *միացեալ* ի յանձն բանին, զոր ինչ բանին է բնութեամբ, ամենայնն եղիցի և մարմնոյն իւրոյ միաւորութեամբ: - 98. Այսպէս է միութեամբ որոշեալ և բաժանեալ. և բազմութեամբ *միացեալ*: - 106. Եւ նա՛խ է բանն աստուած, և յետոյ *միացաւ* ի մարմնի անբաժանելի. «յիսուս քրիստոս երէկ և այսօր նոյն և յաւիտեանս»: -126. Նախ՝ զի պետութիւնք պատշաճին առ հայր. և հրեշտակապետքն առ որդի իբր յերկուց *միացեալ*. և հրեշտակքն ի դէմս հոգւոյն իբր նախ եկաւորեալք յամենայն ուրեք, և ապա յորդի և ի հայր բնակեալ: - 136. Բոլո՛ր է՝ յորժամ զիմացումն մտաց յամենայն եղելոց առ ինքն ժողովէ՛, և այնպէս բոլորովիմբ յաստուած հպի և *միանայ*. և ա՛յս է ի բոլոր սրտէ և ի բոլոր մտաց սիրել զաստուած. և զայս ունին ընտրեալքն մարգարէք և առաքեալք: - 142. Եւ քրիստոսն օծեալ ո՛չ ըստ իւղոյ ինչ երևութապէս օծման, այլ *միանալով* ընդ բանին աստուծոյ՝ ասի օծեալ: - 301. Իսկ լեառն հողեղէն բնութեանս մերում, կամաւ հօր վկայելով ի վերայ նորա՝ և հաճութեամբ սուրբ հոգւոյն աղաւնակերպ իջմամբ, և անքակտելի *միացեալ* բանիւն եղև լեառն մածեալ մշտնջենաւոր և անեզր յաւիտենիւ բարձրացեալ օրհնութեամբ և առաւելեալ: - 320. Դարձեալ՝ ոսկի սափորն է՛ անապական կոյսն. և մանանայն բանն աստուած հոգւով և մարմնով *միացեալ* յարգանդի աստուածածին կուսին: - 340. Նա՛խ՝ զի կատարեա՛լ է աստուածութեամբ և մարդկութեամբն *միացեալ*: - 347. Իսկ իւղն զանգեալ՝ օրհնութիւնն է որ *միանայ* ի խորհուրդն և կատարէ՛ մարմին և արիւն քրիստոսի: - 357. Հինգերորդ՝ նոյն ինքն մարմինն սուրբ ո՛չ թէ հացիւ միայն կայր որպէս հասարակ մարդ. այլ բանիւն կենդանի ի նմա՛ *միացեալ*: - 397. Երրորդ՝ զի հոգի միաւորեալ ընդ մարմնոյ՝ է երբէք զի որոշի և դարձեալ *միանայ*: - 478. Զի ո՛չ ասաց թէ որ ի դմա՛ է կամ դոքա ըստ բաժանողաց. այլ թէ դա՛. որ մի անձն բնութեամբ *միացեալ* նշանակէ: - 487. Այլ զի բան ի յերկնից իջեալ *միացաւ* ի մարմնի...: - 501. Ասեմք առ այս, եթէ անմարմին իր անկատար ո՛չ լինի. զի սոյն բան աւետարանիս նոյն կատարեալ բանն է աստուծոյ որ ի մարմնի է *միացեալ*. և նախ քան զյաւիտեանս ծնեալ: - 529. Դարձեալ յայտնապէս, զի բանն *միացեալ* ի մարմնի՝ էր անբաժանաբար ի հայր. որպէս առ մեզ ներտրամադրեալս բան և գրեալն ի թղթի: - 531. Երկրորդ՝ ի քրիստոս բնութեանցն *միացելոց* մի ասել բնութիւն ըստ սրբոյն աթանասի և կիւրեղի: - 554. Չորրորդ՝ զբաժանեալքս *միացնէ* ի տէր և առ

միմեանս: - 573. Ասեմք թէ՝ եկեղեցին սիրով և հաւատով է *միացեալ* ընդ հաղորդութիւնն քրիստոսի և ո՛չ ջրով: - 596. Եւ այս աճման սկիզբն պսակն է. որ *միանայ* հարսն ընդ փեսային. և լինի ըստ սահմանադրութեանն աստուծոյ ծննդագործութիւն: - 609. ...կամ *միացար* ընդ քեզ հոգւով: - 644. Եօթներորդ՝ զի սիրելի և համբուրելի է նշխարքն սուրբ որ ի քրիստոս *միացաւ* և օծաւ, և քրիստոսի եղև բաժին: - 673. ...և յարութիւնն *միանալ* սիրով ընդ փեսային քրիստոսի և մտանել յառագաստն ընդ իմաստուն կուսիցն: - 681. Եւ են յիմացումն և յուշի. որպէս ասէ առաքեալն թաղէոս. և յոյս նոցա լի է անմահութեամբ. և սիրով առ աստուած *միացեալ*: - 685. Երկրորդ, ընդ նոսա այլ ընդ այլո՛յ է *միացեալ*. իսկ ընդ եկեղեցի՝ առ բնութենակից և գոյակից: - 757. Երրորդ՝ զի միջնորդութեամբն քրիստոսի միաւորի եկեղեցի ընդ հօր աստուծոյ. և լինի աստուած ընդ աստուածս *միացեալ*...: - 757. Նոր և սքանչելի խառնմամբ *միացեալ* բնութեամբ: - 769

**ՄԻԱՆԳԱՄ +** Հինգերորդ՝ զի հոգևոր բնութիւնն *միանգամ* միայն է շրջելի. վասն զի բոլորովին շրջէ զինքն՝ զոր ո՛չ առնէ մարդն. զի մարմինն միշտ մարտնչի ընդ հոգին. որպէս յառաջիկայդ ասի **լբ** գլուխն: - 151. Իսկ պոռնկութեան չափաւորն և անչափն մեղք են. որպէս *մի՛ անգամ* կոյսն ապականեալ՝ և *մի՛ անգամ* պոռնկեալ՝ կոչի պոռնիկ և ապականեալ: - 166. Եօթնն**ժ**, մովսէս *մի անգամ* պատարագեաց և ետ ցահարոն և ցորդիսն: - 329. Եւ տէրն *մի անգամ* կատարեաց ի վերնատունն և ետ յառաքեալսն և ի մանկունս եկեղեցւոյ: - 329. Ութերորդ՝ *մի՛ անգամ* յաւուրն. և *մի անգամ* պատարագեմք զքրիստոս ըստ աւուրց: - 339. Այլ որ ուղիղն է, մովսէս յամենայն ժամ մտանէր ի սուրբն սրբոց. և ահարոն *մի՛ անգամ* ի տարւոջն. և քահանայքն ո՛չ մտանէին: - 364. Երկրորդ՝ զի եօթնիցս եղև արժանի տեսլեան Երրորդութեանն. կրկին անգամ զհայր ի գիշերի. և կրկին զորդին ի տիւն. և հոգի աստուծոյ ի վերայ նորա երկիցս անգամ. և *մի անգամ* զհրեշտակն ետես: - 387. Զի ի հօրէ միշտ ծնանի աստուած. ի մօրէ *միանգամ* ծնաւ մարմինն. և ի միտս ծնանի բազում անգամ: - 471. Ո՞ր քան ևս քահանայապետին որ զերկոտասան օր պարտ էր խնկօք պաշտել ի մէջ տաճարին ի ժամ աղօթիցն. թէպէտ ի սուրբն սրբոց *միանգամ* ի տարւոջն: - 483-484. Իսկ զէութիւն բանին որ է՛ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ՝ ասելն *մի՛անգամ* պարտ է ասել և ո՛չ կրկնել տգիտաբար: - 588. *Զմի անգամ* մկրտեալն պա՞րտ է կրկին անգամ մկրտել թէ ոչ: - 590. Երրորդ՝ զի որ մկրտի՝ ի մահն քրիստոսի մկրտի. և քրիստոս *միանգամ* մեռաւ. և թէ ոք դարձեալ մկրտէ՝ անձանց ի խաչ հանէ զորդին աստուծոյ և դարձեալ խայտառակէ որպէս առաքեալն: - 590. Ասեն վարդապետք թէ՝ *զմի անգամ* խոստովանեալն բարի հաւատով և կատարեալ զղջմամբ՝ ո՛չ է պարտ կրկնել. եթէ ոչ վասն չորից պատճառաց: - 603. զոր *միանգամ* կապիցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս. - 698. Իսկ արդ ի յարութեանն հա՛րկ է զի *միանգամ* տանջեալ հոգին՝ միւս ևս ընդ մարմնոյն տանջեսցի որ է՛ անհնար...: - 699. Զի զամենայն ոք *միանգամ* սպանանեն և ո՛չ **բ**: - 701. Նա՛խ՝ զի կարէ՛ որ յառնել *միանգամ* և դարձեալ մեռանիլ. - 716. Երկրորդ՝ է՛ յարութիւն զի յառնէ ոք *միանգամ* և այլ ո՛չ ևս մեռանի. և յարութիւնս այս կատարեալ է: - 716. ...իսկ Որքանութեամբ, զի նա միով և *միանգամ.* իսկ նոքա բազմօք և բազում անգամ: - 777

**ՄԻԱՆԳԱՄԱՅՆ +** Համանգամայն՝ այսինքն բոլորովիմբ. կամ զոյգ և հաւասար. կամ *միանգամայն*: - 90. Իսկ *միանգամայնն* դարձեալ ընդ դէմ է նոցա Որք զաստուած և զմարդն որոշեն ի միմեանց. եթէ բնութեամբ և եթէ անձամբ: - 91. Իսկ սա ասէ *միանգամայն*. այսինքն է համանգամայն հակադարձին առ միմեանս և հետևին միմեանց: - 91. Զի ի կոչումն անուան՝ չորքս այսոքիկ երևին *միանգամայն*. բանն և խօսքն և ձայնն և տեսութիւնն. այսոքիւք զմարդն կատարեալ երևեցոյց աստուած: - 219. Եւ *միանգամայն* **մխը** ամ: - 327. Երկրորդ՝ զի գաւազանն մովսէսի մի վիշապ եղեալ կլանէր զբազում վիշապս նոցա որ և հե՛տն *միանգամայն* ո՛չ երևէր. ընդէ՞ր ապա և նոցայն ո՛չ եկուլ զմովսէսին. քանզի սո՛ւտ էր: - 335. *Միանգամայն* ի սկզբանէ գրոց արարածոցն ժողովին **ե** գլխոյն՝ անուանք արարչին: - 412. Եւ *միանգամայն* յաղամայ ի ծնունդն քրիստոսի ամք **րճղը**. ըստ եօթանասնիցն որպէս ասացաւ ի վերոյ: - 453. Այլ և եղև այր, զի որպէս ծնօղն աստուածածին ազգի կանանց, և ի նմանէ ծնեալն աստուած՝ արանց *միանգամայն* և հանուրց լիցի փրկութեան պատճառ: - 480. Նախ՝ զի կարէ՛ *միանգամայն* ծնանիլ բոլոր ազգ մի...: - 590. ...և ապա յետ յարութեանն ի կատարածի *միանգամայն* մտանեմք ի սուրբն սրբոց որ է արքայութիւնն երկնից: - 682. Չորրորդ, զի ամենայն մարմինք մարդկան *միանգամայն* ստեղծան ի կողմանէ առաջին նիւթոյն...: - 717. Որով և ընդ որում հօր *միանգամայն* և հոգւոյն սրբոյ վայելէ փառք և պատիւ և իշխանութիւն և զօրութիւն. այժմ և միշտ և յաւիտենից յաւիտեանս Ամէն: - 771. *Միանգամայն* և իղձք փրկական և հրաման հարկի ժամանեալ էհաս առ ներգևեալս ոգի և թաւազարբ թզենի: - 773

**ՄԻԱՇԱԲԱԹ, ՄԻԱՇԱԲԱԹԻ +** Օր մի. և յատկութիւն *միաշաբաթի*, և վերջին աւուրն: - 154. Զի՞նչ է

յատկութիւն *միաշաբաթ* աւուրն որ է կիրակէն: - 193. Այլ յարութիւնն քրիստոսի յաւուր *միաշաբաթու* ի մէջ գիշերի է: - 508. Նա՛խ՝ զի մատթէոս զերեկոյի շաբաթուն և զլուսանալ *միաշաբաթին* յիշէ. այսինքն զսկիզբն և զվախճան գիշերին. զի յերկուց մէջն որ է՛ հասարակն և մէջ գիշերին՝ նշանակեսցէ զժամ յարութեանն: - 512. Եւ յերեկոյի շաբաթուն յորում լուսանայր *միաշաբաթին* լինի յարութիւնն քրիստոսի ըստ մատթէոսի: - 516

**ՄԻԱՉՔ** - Եւ այս են **իբ** լեզուքն... *Միաչք*: - 298

**ՄԻԱՊԱՏԻՒ +** Ասեմք եթէ՝ նոքա երեքեան դասքն՝ այսինքն աթոռք՝ քերոբէք՝ և սերոբէք՝ միակարգ *միապատիւ* և գերազանց էութիւնք են. զի անընդմիջաբար յաստուծոյ ամենայն լուսափայլութիւնք իմաստք և շնորհք ի նոսա հեղանին համակարգապէս. և ապա նոքօք յայլ ամենայն գոյս երկնաւոր և երկրաւոր: - 135. ...որպէս ասէ առաքեալն, «չիք խտիր ո՛չ հրէի և ո՛չ հեթանոսի. ո՛չ ծառայի և ո՛չ ազատի». զի դուք *միապատիւ* էք ի քրիստոս յիսուս և համաժառանգք արքայութեանն: - 590

**ՄԻԱՊԷՍ +** Յինգերորդ՝ է՛ ո՛չ խնդրել զօգնութիւնն աստուծոյ ի հաւատալն. զի հաւատն ո՛չ է բնական. զի ըստ այսմ *միապէս* լինէր ամենեցուն...: - 32. Դարձեալ՝ զի յիմարութիւն և իմաստութիւն են ի նոյն և ի մի բնութիւն մարդոյն, և ո՛չ ասին հակառակ միմեանց. այլ *միապէս* ունին յիմարն զիմաստնոյն բնութիւն և զսահման: - 38. Զորօրինակ լոյսն որ միևնոյն է, այլ պայծառ՝ և բժոտեալ ակն ոչ *միապէս* տեսանէ: - 166. Դարձեալ ասեմք թէ ո՛չ *միապէս* է մեղքն նախ քան զշնորհքն և յետ շնորհացն. զի առաջինն անգիտութեամբ էր, և վերջինն գիտութեամբ. և առաջինն հաւատովք սրբի, և վերջինս ապաշխարութեամբ և սրբութեամբ: - 166. Զի թէպէտ մի իրէ նախախնամութիւնն աստուծոյ առ արարածս, այլ զամենայնս ո՛չ *միապէս* պահէ և նախախնամէ: - 258. Եւ *միապէս* է մեր և կենդանեաց. վասն որոյ ո՛չ է պարտ զսկիզբն գոյացութեան մերոյ ուտել: - 295. Զպատիժն որ է վայրըն՝ *միապէս* գնէ: - 324. Եւ տե՛ս, զի անսուրբ կենդանին սատակեալ և սուրբ կենդանին սատակեալ *միապէս* պիղծ են: - 365. Նոյնպէս քրիստոնեայն որ մեղօք մեռանի՝ և անհաւատն *միապէս* պիղծ են առաջի աստուծոյ: - 365. Զի անդ որ գործէր զմեղս՝ և որ վրէժ ոչ խնդրէր՝ *միապէս* էր յանցանք: - 439. Զի *միապէս* միաւորին արտաքս և ի ներքս. զի ամենայն կերակուր և ըմպելի ի ներքս միաւորի: - 598. Եւ այն որ բ ձայնիցն մի է մեսեդին. զի դարն ադամայ և ենովքայ *միապէս* բնական օրինօքն վարեին: - 629. ...այլ *միապէս* զընտրութիւնն ի դատաստանին ասեն: - 687. Եւ որպէս թէ բազումք զմիմեանց զմիոջէ կախեալք զվախէ՛. և եթէ ոք խզեսցէ զառաջնոյն զկապ, *միապէս* անկանին. թէպէտ մինն առաջին: - 777. Զի որպէս բան պատկերին, այսպէս և բան շնորհացն եռակի. զի *միապէս* սոքա եղծանին մեղօք, և նմանապէս արծարծին մաքրութեամբ առ որ ոք և իցէ: - 782

**ՄԻԱՍԻՆ +** Ասեմք առ այս, եթէ այսու վկայե՛ս և դու մեզ՝ թէ ո՛չ է հարկ. զի ի բոլոր քաղաքն այնքան բիւր մարդիկ՝ ծեր և տղայ՝ ե՛րբ և ո՛ւր ի մի շարժումն աստեղաց ծնան, որք *ի միասին* կործանեցան... ապա ուրեմն ո՛չ է հարկ բախտի և ճակատագրի: - 13. Վեշտասաներորդ՝ զի թէ չարն է յաստուծոյ որպէս բարին, և երկուցն սկիզբն է աստուած, և արդ՝ եթէ միևնոյն է սկիզբն երկուցն, անկարելի է ներհակացն *ի միասին* ունիլ մի սկիզբն. զի լինէր սկիզբն այն ո՛չ պարզ. այլ երկպատեսակ. և ո՛չ միհեղէն՝ այլ բաժանեալ և այլայլեալ. նաև լինէր ինքն ինքեան հակառակ, և յառաջ եկելոցն ի նմանէ: - 14. Այլ համանգամայն ո՛չ կարեն լինիլ. զի **բ** հակառակք *ի միասին* ոչ կարեն լինիլ: - 21. Եւ դարձեալ՝ ըստ ձեզ պարտ էր ասել. թէ՝ ես *ի միասին* հօր, և մասն հօր ի յիս: - 39. Ապա ուրեմն համանգամայն *ի միասին* լինին երկու հակակայք. այսինքն ուղղական և հոլովական. զի ասելն աստուած ուղղական է. և աստուծոյ՝ սեռական հոլով: - 92. Զի աննիւթ և պա՛րզ էութիւն է աստուած. և յառաջ էած յոչընչէ զաննիւթ էութիւնքս. այսինքն զգոյացութիւն, զքանակ, զորակ, և զայլսն. և իւրով զօրութեամբն *ի միասին* ժողովեալ կազմեաց մարմնական նիւթ: - 175. Եւ դարձեալ՝ յորժամ վերադիրն լինի **լ**. և **է** երեակն է *ի միասին* ի միում ամի. ասի այն կատարումն լուսնի. այսինքն մասանց թուոյն, և ո՛չ իրին: - 192. Եւ որպէս իննև**ժ**երեակն լուսնի, և **իը** երեակն արեգական *ի միասին* ժողովեալ՝ առնէ զհինգ հարիւրեակ շրջանն ի **շլբ** ամին. զի **ժթ** **իը** երեակ է. և **իը** **ժթ** երեակ: - 192. Դարձեալ՝ ոչ ինչ պատուական քան զժամանակ. զի զինչ և իցէ յաշխարհի՝ երկու մասունքն կարե՛ն համանգամայն գոլ *ի միասին* բաց ի ժամանակէ և ի հասակէ՛. զի ժամանակին **բ** մասն անհնա՛ր է համանգամայն գոլ *ի միասին*. զի և **բ** պահք ո՛չ կարեն համանգամայն գոլ: - 199. Այլ *ի միասին* համանգամայն ստեղծեալ. ո՛չ ժամանակաւ յառաջ և յետոյ, և ո՛չ բնութեամբ. այլ մի է սկիզբն միոյ գոյութեան մարդոյն: - 254. Ապա ուրեմն համանգամայն *ի միասին* է հոգւոյ և մարմնոյ լինելութիւնն: - 255. Զի՞նչ է որ որդիքն յոբայ պատուէին զօր ծննդեան իւրեանց *ի միասին* ժողովիլով: - 321. Երկրորդ՝ զի շնչերակք և արեան երակք և կենդանականքն անդ *ի միասին* բաժանին: - 366. Յինգերորդ՝ տաղաւարահարքն. որ է՛ եկեղեցւոյ տօն. վասն այն զխաչին և

զեկեղեցւոյն *ի միասին* տօնեմք: - 372. Վասն որոյ ի առաջին ընտրեալք և վերջին արդարք *ի միասին* ժառանգեսցեն զաւետիսն: - 391. Վասն որոյ *ի միասին* տօնեմք խաչի և եկեղեցւոյ. որպէս ասացաւ ի **լե** գլուխն, **լը** համարն: - 373. Զի Զնոյնս նշանակէ **բ** ցեղն յայնկոյս յորդանանու. որք այլոցն պատերազմակից եղեն, և ապա՛ *ի միասին* զժառանգութիւնն առին: - 394. Իսկ *ի միասին* կարգէ՛, զի կամ երկիցեն յանիծիցն, և կամ ցանկասցին օրհնութեանն և պահեսցեն զօրէնսն աստուծոյ: - 403. Երկրորդ՝ զի սովն և սուրն զբարի և զչար *ի միասին* պատժէ. այլ մահն ընտրութեամբն աստուծոյ է. և ժողովի ի վերայ յանցաւորացն. ուստի յա՛յտ է զի դաւիթ ո՛չ էր յանցաւոր ո՛չ պատժեցաւ: - 435. Եւ յա՛յսմանէ յա՛յտ է, զի սուրբքն զծնունդն և զյայտնութիւնն *ի միասին* տօնէին. և յետոյ բաժանեցին ոմանք վասն բեթլէհէմի և յորդանանու: - 482. Այլ ո՛չ կատարէր զ**գ** աւուրն *ի միասին*: - 484. Եւ թէ խաչի և եկեղեցւոյ *ի միասին* տօնեմք: - 526. Վասն է՞ր խաչի և եկեղեցւոյ *ի միասին* տօնեմք: - 616. Նա՛խ՝ զի ի հինն զտօն քաւութեան և զտաղաւարահարացն *ի միասին* տօնէին ի թշրինի **ժ**: - 616. Իսկ մեր քաւութեան տօն խաչն է. և տաղաւարահարն եկեղեցին. վասն այն զխաչի և եկեղեցւոյ *ի միասին* տօնեմք: - 616. ...կարգեաց **ը** օր նաւակատիս խաչի և եկեղեցոյ *ի միասին* տօնել: - 617. Զոր այժմոյս **գ** ողորմեայն և պատարագն *ի միասին* կատարի: - 622. Իսկ սկսուածն ընդ երգոյն խառնեալ, Նախ նշանակէ՛ թէ զմարգարէից և զառաքելոցն բանս *ի միասին* խառնեալ ունի նորս եկեղեցի: - 627. Չորրորդ՝ զմարդկան և զհրեշտակաց երգն *ի միասին* խառնեալ: - 627. Եւ յետ այսորիկ *ի միասին* համաձայն երգել զփառս ի բարձունս աստուծոյ, որ փրկեաց զմեզ: - 628. Վասն է՞ր երբեմն զփառքն և զայժմն *ի միասին* երգեմք. և երբեմն ո՛չ: - 636. Եւ որ ամէն շարականի սկիզբն ի մարգարէից դնեմք, այս է պատճառն, զի զհինն և ըզնորս *ի միասին* խառնեմք: - 636. Այլ գիտելի՛ է, թէ սաղմոսն շարականաց որ **բժ**ան տուն է՝ զփառքն և զայժմն *ի միասին* երգեմք. որպէս զօրհնութիւնն, հարցն, ողորմեայն, տէր յերկնիցն: - 636. Դարձեալ այլ իմն պատճառ. որոց շարականաց փառքն և այժմն *ի միասին* է...: - 636. Վասն որոյ վառեալ մոմեղինիւ *ի միասին* համաձայն պաշտեմք: - 647. Առաջին և երկրորդն՝ ծննդեան և մկրտութեանն. զոր *ի միասին* տօնեմք ըստ կանոնաց սուրբ հարցն և տեառն եղբօրն յակոբայ: - 649. Նա՛խ՝ զի համըընթա՛ցք են ասէ ի վաստակն. այսինքն հոգին և մարմինն. *ի միասին* և հանգիցեն և պսակեսցին: - 668-669. Եւ դարձեալ ասէ՝ զուգագրեալք են ի գիրն յաւիտենից, *ի միասին* և ժամանեսցին: - 669. Եւ դարձեալ՝ հոգի և մարմին զոյգ և *ի միասին* ստեղծան և ծնան ի մարմնաւոր կեանքս...: - 669. զոյգ և *ի միասին* մտցեն ի հոգևոր կեանքն: - 669. ...զի ի յարութեանն *ի միասին* պսակեսցին և փառաւորեսցին: - 677. ...ուր արդարք և մեղաւորք *ի միասին* բնակին կարօտ կերակրոց և ըմպելեաց: - 682. Երրորդ, զի զոյգ և *ի միասին* ստեղծան և ծնան ի մարմնաւոր կեանքն հոգին և մարմինն...: - 691. ...զոյգ և *ի միասին* մտցեն ի հոգևոր կեանքն որպէս ասացաւ ի վերոյ: - 691. Վասն այսորիկ արդար դատաւորն զհոգի և զմարմին *ի միասին* յարուցանէ և դատէ՛. եթէ վասն մեղաց ի տանջանս և եթէ վասն արդարութեան յարքայութիւնն երկնից: - 691. Քսանև**զ**, ո՛չ է արդարութիւն աստուծոյ թէ այժմ հատուցանի. զի մարմին և հոգին *ի միասին* գործեցին զչար և զբարի: - 694. Այլ որպէս *ի միասին* վարեցին զայս կեանս հոգին և մարմինն, նոյնպէս և զայն կեանս ընդունիցին: - 694. ...այլ զգործելն *ի միասին* գործեն հոգին և մարմինն: - 696. Հինգերորդ, հոգի և մարմին *ի միասին* գործեն զմեղս որպէս ասացաւ ի վերոյ...: - 699. Եւ դարձեալ՝ հոգին և մարմինն *ի միասին* գործեցին զբարի կամ զչար. - 715. այլ պա՛րտ է զի յարիցէ և մարմինն և *ի միասին* առցեն զհատուցումն բարեաց կամ չարեաց: - 715. Ութերորդ, բարի և չար սերմանիքն *ի միասին* բուսանին և մնան մինչ ի հունձս. մանաւանդ մինչ ի կալն ըստ առակի տեառն...: - 721. ...նմանապէս և մարմինք մեռեալք յերկրի և հոգիք ի կայանս իւրեանց *ի միասին* կան առհասարակ արդարոց և մեղաւորաց մինչ դատաստանաւն բաժանեսցին օդիքն և այծիք: - 721. Եւ ի կատարածի՝ տարրական հուրն և հրեղէն ծովն և ամենայն հուրք որ են յերկրի՝ ժողովեսցին *ի միասին* - 731

**ՄԻԱՍՆԱԿԱՆ +** Համագոյ և *միասնական* սուրբ Երրորդութեանն ո՛չ է առաջին և վերջին. ո՛չ մեծ և փոքր. և ո՛չ երէց և կրտսեր: - 109. Եւ այնք որ ո՛չ խոստովանին *զմիասնական* սուրբ Երրորդութիւնն, մկրտելի է զմկրտեալն ի նոցանէ ի փառս ամենասուրբ Երրորդութեանն: - 590. Հաւատ ի *միասնական* սուրբ Երրորդութիւնն: - 769

**ՄԻԱՏԱՐՐ +** Իններորդ, բորն **գ** ազգ է. սպին սպիտակ շիտ. և պալար *միատարր*. և պաղպաջ շիտ աստ և անդ. որ է՛ մտաց և հոգւոյ և մարմնոյ մեղքն: - 367

**ՄԻԱՏԵՍԱԿ +** Այսպէս էր ի հօրէ բնութեամբ՝ և եղև ի մօրէ բնութեամբ. և ո՛չ ասի երկաւոր բնութիւն և երկաբուն. այլ միաւոր և միաբուն. մի որդի. և մի բնութիւն. *միատեսակ* աստուած մարդացեալ: - 78. Նմանապէս և սէրն է *միատեսակ* և բազմատեսակ: - 143. *Միատեսակ* է՝ յորժամ ըստ ինքեան ժողովէ

յամենայն զգայարանաց, և բոլոր և միեղէն սիրով հպի յաստուած. և է՛ այս գերակատար սէր: - 143. Նախ՝ զի *միատեսակ* է և մի: - 186. Եւ զոյգն. զի հոգի և մարմին՝ աստուածութեամբն *միատեսակ* եղեալ: - 361. Զի այսպէս *միատեսակ* բնութեամբ խոստովանի ընդ մեզ և այլ ժողովուրդ ուղղափառաց ըստ ուսուցման մեծին դիոնիսեայ յերկրորդ գլուխն եկեղեցական քահանայապետութեանն ասել, - 477

**ՄԻԱՐԱՐ +** Զի թէ ասես միաւորական, ահա՛ արարեր դու զանձն բնութիւն. զի բնութիւն է *միարար* ըստ պորփիւրի, տեսակին կցորդութեամբ բազում մարդիկ մու: - 86. Նա՛խ՝ զի տարրակա՛ն է հուր ...*Միարա՛ր* է: - 202

**ՄԻԱՑՈՒՄՆ** - Իսկ կողմնաւոր՝ ի խնամելոցն առ աստուած դարձողապէս *միացումն* յառաջին սկիզբն: - 142. Երկոտասաներորդ՝ անճառ և անպատո՛ւմ է աստուած. և հոգւոյն *միացումն* ի մարմնի ի վեր է քան զբան: - 272. Հինգերորդ՝ զանբաժանելի *միացումն* ի սէրն քրիստոսի. զի որ ի խաչին թողին և փախեան, յետ իջման հոգւոյն՝ ամենեքեան վասն անուան նորա չարչարեցան և մեռան...: - 524-525

**ՄԻԱՑՈՒՑԱՆԱՄ +** Դարձեալ քննեցուք ըստ մեզ. զի ո՛չ են հակառակ առաքելոյն բանն և աւետարանին, թէ հայր մեծ է քան զորդի. զի երկոքին նոյն ինքն աստուածութեանն իմանին. ըստ այնմ որ զմեր նուաստ և տկար բնութիւնս *միացոյց* ընդ իւրում աստուածութեանն, և անտեսանելին տեսանիւր՝ և ծառայի կերպիւ շրջէր վասն տնօրէնութեան՝ ասի փոքր յայս միաւորութեանս քան զհայր. իսկ ըստ այնմ որ է՛ անճառ և նախքան զյաւիտեանս ծնունդ ի հօրէ՛, հաւասա՛ր է հօր և ոչ փոքր: - 40

**ՄԻԱՒՈՐ +** Այսպէս էր ի հօրէ բնութեամբ՝ և եղև ի մօրէ բնութեամբ. և ո՛չ ասի երկաւոր բնութիւն և երկաբուն. այլ *միաւոր* և միաբուն. մի որդի. և մի բնութիւն. միատեսակ աստուած մարդացեալ: - 78. Երկու նոխազն համատեսակ օրինակ տեառն մերոյ՝ յերկուց միաւորեալ մի անձն. և *միաւոր* բնութեամբ աստուած և մարդ: - 369

**ՄԻԱՒՈՐԱԿԱՆ +** Անձն այն բաժանակա՞ն է՝ թէ *միաւորական*: - 86. Զի թէ ասես *միաւորական*, ահա՛ արարեր դու զանձն բնութիւն. զի բնութիւն է միարար ըստ պորփիւրի, տեսակին կցորդութեամբ բազում մարդիկ մու: - 86. Իսկ աստուածայինն անեղ էութիւն ամենևին պարզ և մաքուր առաւել քան զիմացականն բնութիւն եղական իմն գոյութեամբ. թէ և ո՛չ են *միաւորական* մարմնոյ: - 479. Վասն է՞ր ասի դժոխք բազմաւորական. և ոչ դժոխ *միաւորական*: - 505

**ՄԻԱՒՈՐԻՄ +** Վեցերորդ՝ հակառակէ քրիստոսի՝ և քրիստոնէից. և սոքա հակառակին սուրբ եկեղեցւոյ և ուղղափառ հաւատոյ. և զոր բանն աստուած առեալ զմարդկայինս բնութիւն *միաւորեաց* ընդ իւրում աստուածութեանն՝ սոքա ընդդէմ նմին որոշեն զբանն ի մարմնոյն. զի մի՛ իցէ աստուած մարդացեալ ըստ նոցա՝ և մարմինն աստուած. և պատճառս հայթայթելով պատրեն զմարդիկ: - 35. Այլ զի խոնարհեցաւ ի բարձրութենէ փառացն և ընդ նուաստ բնութեան մերում *միաւորեցաւ*. ա՛յս է որ առաքեալ ասի: - 40. Բայց է և այլ իմն տեսութիւն խորին և գեղեցիկ. զի նա՛ վասն սրբութեան չարչարեցաւ. և որ ոք ևս չարչարեսցի վասն սրբութեան՝ մի և նոյն է դիտաւորութիւն երկուցն. յայնժամ օգնեսցէ նմա. այսինքն *միաւորեսցի* ընդ նա՛ սրբութեամբն, և եղիցի աստուած ամենայն յամենայնի. այսինքն կատարեսցէ զնա աստուածս առնելովն. և եղիցին աստուածք ամենայնքն: - 43. Երրորդ՝ զի *միաւորեալ* է ի միտն: - 49. Եօթներորդ՝ իջանելն յերկնից՝ բանին յարմարի. զի *միաւորեցաւ* ի մարմնի այն է իջանելն: - 73. Այլ մարմին և հոգին քրիստոսի զսկիզբն յաշխարհի ունին. այլ վասն *միաւորեալ* մարմնոյն ասէ բանն աստուած՝ «ելի ի հօրէ և եկի յաշխարհ»: - 73. Ապա ուրեմն և մարմինն այն յատուկ է մարմին բանին աստուծոյ. և այս ո՛չ կարէ լինիլ՝ եթէ ո՛չ լիցի *միաւորեալ* ընդ նմին: - 73. Ապա ուրեմն և ո՛չ էր յարութիւն և ո՛չ կենաց տըւօղ, եթէ ո՛չ էր *միաւորեալ* ընդ կեանքն յաւիտենական: - 74. Ապա ուրեմն ճշմարիտ աստուած է քրիստոս մարմնովն *միավորեալ* անբաժանելի յաւիտեան: - 74. Զի անմարմին է՝ և *միաւորի* ընդ մարմնոյ. որպէս հոգի և մարմին բնութեամբ *միաւորին* և ո՛չ շփոթին: - 76. Որև զոն ի յեղեալքս *միաւորեալք*. որպէս հուր և երկաթ. հոգի և մարմին. որք չարչարին անչարչարապէս: - 76. Զի թէ անանձն բնութիւն ասէաք *միաւորեալ* որ էր հասարակ, գո՛յր ինչ նոցա ասել առ այս: - 76. Որև ըստ այսմ պարտին նոքա ուրանալ և զանհատ բնութիւնս մարդկութեան նորին. զիմի՛ հասարակ մարդկութիւնս *միաւորեսցի*: - 76. Ո՛չ յեղմամբ կամ շփոթմամբ. այլ անշփոթ միաւորութեամբ զբանն մարմին եղեալ և *միաւորեալ* զբնութիւնս մեր կատարելապէս ընդ իւրում աստուածութեանն: - 76. Այսպէս և ծնեցեալն որդի *միաւորեալ* մարմնովն է և ասի աստուած և մարդ. ի բաղադրեալ միաւորութեանն. և ո՛չ ասի **բ** անձն կամ **բ** բնութիւն: - 77. Սուրբն կիւրեղ ընդդէմ նեստորի՝ որ **բ** բնութիւն բաժանեալ ասէր քրիստոսի՝ ասաց, մի բնութիւն *միաւորեալ* աստուած մարմնացեալ և մարդացեալ: - 79-80. Եւ հաստատեալ այսու եթէ՝ հոգին և մարմինն է *միաւորեալ* ընդ բանին աստուծոյ,

կարգէ՛ և զայն. բայց որդիք ասէ ո՛չ **բ**. և ո՛չ աստուածք. զայս վասն դիմաց միաւորութեանն ասէ: - 80. Իսկ բաժանմունքն յորոց փրկիչն՝ ընդդէմ է այնմ. զի բնութեամբ է *միաւորեալ*. որ ո՛չ է հնար շփոթելոյ: - 80. Ա՛րդ՝ սոքա զանունն մի ասեն, և յանունն *միաւորեն* զ**բ** էութիւնսն. այսինքն զաստուածն և զմարդն. և ասեն մի անձն. մի որդի. մի քրիստոս. և այլն: - 82. Այսպէս սոքա կոչմամբ և ձայնիւ *միաւորեն*, և իրօք և բնութեամբ բաժանեն և որոշեն: - 82. Ո՛չ զմասն ինչ առեալ զմարդոյ. այլ զբոլոր բնութիւնն ժողովեալ անհատ մարդկութեամբն. զհոգի բանական՝ և զմիտս՝ և զմարմինս մեր՝ *միաւորեաց* ընդ իւրում աստուածութեանն անշփոթ և անորոշ միութեամբ: - 83. Զի *միաւորեալն* ո՛չ բաժանի. վասն զի միութիւնն եբա՛րձ զերկուութիւնն: - 83. Այլ և մեծն դիոնէսիոս ի բազում տեղիս *միաւորեալ* և մի բնութիւն խոստովանի բանին աստուծոյ մարդացելոյ: - 83. Բնութեամբ ասես *միաւորեալ*՝ թէ անձամբ: - 84. Բնութեամբ *միաւորեալ*՝ և մի անձն կատարեալ: - 84. Զի *միաւորեալն* ո՛չ երկատի. զի **բ** բնութիւն ասել կամ իմանալ՝ երկատութիւն և բաժանումն է քրիստոսի: - 84. Բանն աստուած իւրով կատարելութեամբն էառ զմարդկայինս բնութիւն. զհոգի և զմարմին և զմիտս. և *միաւորեալ* ընդ իւրում աստուածութեանն՝ եղև մի անձն կատարեալ և մի դէմ: - 84. Եւ չորրորդ՝ զի ամենայն իր բնութեամբ իւրով միանայ և ո՛չ արտաքոյ բնութեան. որպէս հուր ընդ երկաթ՝ և հոգի ընդ մարմին *միաւորի:* - 85. Թէպէտ բնութեամբ *միաւորին* տարբերութիւնն ո՛չ բառնի. զի տարբերութեանցն մնալ՝ խափանումն ո՛չ առնէ միաւորութեանն...: - 85. Որպէս *միաւորեալ* ասեմք զբնութիւն մարդոյն ընդ էութեանն աստուծոյ, այսպէս *միաւորեալ* և մի է կամք բանին մարդացելոյ: - 85. Իսկ զկամքն իմացիս մի՝ վասն կամելոյն և վասն *միաւորելոյն* որ է սկիզբն և կատարումն: - 85. Որք *միաւորէք* անձամբ. և յերկուս բնութիւնս բաժանէք: - 86. Ապա և Երրորդութիւնն է *միաւորեալ* ըստ քեզ: - 86. Ապա և բաժանակա՛ն է ընդ մարդկային բնութեանն՝ և ո՛չ է *միաւորեալ* ընդ օտար տարբերեալ բնութիւն. և եղեր նեստորեան. **բ** անձն և **բ** բնութիւն յատուկ ասելով քրիստոսի: - 86. Եւ է՛ ուրեք զի *միաւորեն* զանունն՝ մի քրիստոս՝ մի տէր՝ մի որդի՝ և մի անձն ասելով որպէս քաղկեդոնի թըւի երկաբնակ ժողովոյն: - 87. Նոյնպէս բանն աստուած որպէս է՛ բոլոր յաստուածութիւնն իւր, նոյնպէս բոլորն է ի մարդկութիւնն իւր *միաւորեալ*: - 89. Կամ որպէս բոլորն է ի հոգին, այսպէս բոլորն է ի մարմինն *միաւորեալ*. և բոլորն յիրաքանչիւր մասն մարմնոյն: - 89. Երկրորդ՝ որպէս անբաժանելի մնայ սե՛ռ ի տեսակս. և բանն աստուած անբաժանելի՛ է *միաւորեալ* ի մարդկութիւնն իւր: - 89. Նոյնպէս բանն աստուած և հոգի և մարմինն *միաւորեալ* է բոլոր մի քրիստոս. և ի պակասիլ միոյն՝ ո՛չ մնայ քրիստոս: - 89. Եւ թէ մարմինն քրիստոսի չէ աստուած, և հոգին քրիստոսի չէ աստուած, որպէս նոքա բարբանջեն. ապա և բոլորն քրիստոս չէ աստուած. զի բոլորն քրիստոս յաստուածութենէն *միաւորեալ* լինի մի քրիստոս. և բաժանեալ ո՛չ է քրիստոս: - 91. Իսկ թէ ասես միայնաբար աստուած է մարմինն՝ և աստուած է հոգին. այսու ո՛չ լինիս բազմաստուած. զի մի՛ է աստուածութիւնն ի սոսա *միաւորեալ* էութեամբ և գոյացութեամբ: - 93. Այո՛ բնութեամբ բաժանե՛մ, այլ անձամբ *միաւորե՛մ*: - 95. Զի թէ գոյացութիւն՝ և *միաւորեալ* է ընդ գոյացութիւն բանին, զիա՞րդ ո՛չ գիտէ զաստուածութիւն իւր: - 95. Երեսներորդ՝ զի վարդապետք սուրբք օրինակ տան մարդեղութեանն քրիստոսի, որպէս լոյս ընդ օդ՝ և հուր ընդ երկաթ *միաւորեալ:* - 100. Արդ՝ որպէս օդ լուսաւորեալ՝ ո՛չ ունի մասն խաւարի, Նո՛յնպէս հոգին քրիստոսի *միաւորեալ* ի բանն աստուած՝ ո՛չ ունի մասն տգիտութեան: - 100. Եւ որպէս հուր յերկաթ *միաւորեալ* բառնայ ի նմանէ զցրտութիւնն և զսևութիւնն և մնայ ծանրութիւնն, - 100. Այսպէս մարմինն քրիստոսի *միաւորեալ* ընդ բանն աստուած՝ ունի զկարողութիւն և զաստուածութիւն բանին...: - 100. Եւ դարձեալ՝ քննութեամբ մտաց ո՛չ լինի հասեալ անհասանելին. այլ հաւատով լինի իմացեալ. և յուսով ըմբռնեալ. և սիրով *միաւորեալ:* - 101. Եւ թէ՝ բանս մեր *միաւորեալ* է ընդ ձայնի: - 102. Զորօրինակ երեք լոյս լապտերաց *միաւորեալ*՝ և որոշմամբ յատկացեալ: - 106. Նախ՝ զի բանն աստուած էառ զմարդկայինս բնութիւն և *միաւորեաց* ընդ աստուածութեան իւրում. ո՛չ մասն առեալ՝ կամ ըստ մասին *միաւորեալ*...: - 106-107. Վասն որոյ մարդ եղև, զի զբոլորն յինքենէ զյառաջ եկեալն յինքն *միաւորեսցէ*: - 107. Եւ դարձեալ՝ որպէս ամենայն գիծ բոլորակին՝ ի միջին կէտն *միաւորին* առ միմեանս. և հեռացեալք ի միջին կէտէն բաժանին ի միմեանց. և զորօրինակ՝ մի է սեռն՝ և ի բազում տեսակս բազմանայ: - 112. Դարձեալ՝ և այսպէս տեսանի աստուած. յորժամ միտք յամենայն եղելոց որոշեսցի. նաև յինքենէ՛ զի եղակա՛ն է. թողեալ զինքն *միաւորեսցի* յաստուածային ճառագայթն որ անքննելի լոյսն է և իմաստութիւնն: - 119. Որպէս գիտութիւնն *միաւորէ* զգիտացօղն և զգիտելին: - 121. Նոյնպէս՝ հաւատն *միաւորէ* զճշմարտութիւնն ընդ հաւատացօղն: - 121. Այսպէս վասն գերազանց սիրոյն զոր ունի աստուած առ էսս՝ զարմանալ ասի. այսինքն արտաքս ելանել՝ թափիլ և հեղուլ ի յէսս. և *միաւորիլ* անփոխաբուն բնութեամբ: - 127. Զի՞նչ է պատճառ՝ որ արտաբերեալ բանս մեր *միաւորեալ* է ընդ ձայնի. և բացակայքն զձայնն լսեն՝

և զբանն ո՛չ: - 131. Ա՛յլ է բանն՝ և ա՛յլ է ձայնն. զի բանն անմարմին ծնունդն է մտաց. և ձայնն է՛ շարժումն օդոյ ի ձայնական գործեաց ի յօդս բախեալ. իսկ ի սրտի *միաւորին* նոքա՝ այսինքն բանն և ձայնն...: - 131. Եւ դարձեալ՝ զբազումքս *միաւորէ՛* ինքեամբ՝ առ պատճառն իւր. որպէս լոյս արևու ի բազում տեսութիւնս: - 140. Երկրորդ՝ հոգին *միաւորի* ընդ մարմնոյն. և հրեշտակն ո՛չ: - 140. Իսկ գնդակ որ է կողմնաւոր՝ շարժի հոգին, յորժամ բնականապէս լուսափայլի յաստուածային գիտութիւնս տեսութեամբ և մտածութեամբ. և այնպէս հոգէպէս ի յաստուած *միաւորի*. որպէս աշակերտաց առաքելոց և մարգարէից: - 142. Իսկ վերնագոյն սիրով սիրեն արարածք զարարիչն. և վերջին հրեշտակք զառաջինսն. և որդիք զհարս. և նւազք զմեծամեծս. և այս սիրովս *միաւորին* ընդ նոսա: - 143. Որպէս հոգի և մարմին բնութեամբ *միաւորին* ի մի բնութիւն և ի մի դէմ և ո՛չ շփոթին: - 176. Այսպէս իմա՛ ինձ և զբանին մարդեղութիւն յայլևայլ բնութեանց *միաւորեալ* ի մի էութիւն և ի մի դէմ անձնաւորեալ և ո՛չ շփոթեալ բնութեանցն յատկութիւն: - 176. Պատճառելով՝ եթէ *միաւորեալ* ասեմք զբնութիւնսն, շփոթումն լինի: - 176. և Արարած եղև. այսինքն ի մարդկային բնութիւնս խառնեալ և *միաւորեալ*: - 179. Եւ այսպէս ջերմ և ցուրտ, չոր և գէճ, թշնամիք են անհաշտելիք. և լինին *միաւորեալք* դարձեալ ծայրիւքն և մնան սիրելիք անքակտելիք այսպէս: - 181. Նոյնպէս ի հողեղէն և յապականացու մարմնոյս մարդկան՝ էառ բանն աստուած. և *միաւորելով* ընդ ինքեան ծնաւ անապական մարմնով...: - 229. Զի տնկական հոգին յօժարի՛ գոլ. և զգայականն բարեպէս գոլ. և բանականն ևս բարեպէս գոլ. զի ո՛չ երբէք հանգչի, մինչև *միաւորեսցի* ընդ ևս բարեգունին: - 249. Արդ՝ **ժ** թիւն կատարեալ է. և չորսն տարրական է. այսինքն զի կատարեալ հոգին բանական ի նո՛յն ժամն խառնեալ *միաւորի* ընդ մարմնոյն տարրական...: - 262. Դարձեալ՝ մարդն ի կրկին բնութեանց է *միաւորեալ*. այսինքն ի հոգւոյն և ի մարմնոյ: - 275. Ասեմք եթէ՝ էառ քրիստոս մարմին ի կուսէն մարիամայ զմերս թանձր և մեղանչական. և *միաւորելով* ընդ ինքեան՝ եղև առաջին կերպ անմեղութեանն ադամայ որ էր ի դրախտին: - 282. Զի է՛ տաճար *միաւորեալ*. որպէս մարմինն մեր կոչի տաճար մեզ...: - 319. Եւ կոչի տաճար մարմինն *միաւորեալ* ընդ բանին անբաժանելի: - 319. Նա՛խ՝ զի աստուծոյ է մարմին՝ կոչի տաճար իբր կարօղ սրբութեանց. և դարձեալ զի անշփոթ է *միաւորեալ*՝ կոչի տաճար: - 319. Եւ զի պատահմունքն փոփոխելի է, ուստի յա՛յտ է զի փոփոխի և *միաւորի՛* ի մարմին կերողացն: - 339. Դարձեալ երիցս երևիլն է, զի աստ ի մարմնի հաւատով տեսանեմք զքրիստոս. և յետ մահու յուսով ի հոգիս մեր. և յետ յարութեանն սիրով *միաւորիմք* ի նա՛: - 341. Ի յորում **բ** տախտակք են գրեալ. հոգի և մարմին *միաւորեալ* բանիւն: - 345. Ոսկւով, հոգի և մարմին *միաւորեալ* աստուածութեամբն: - 345. Երկու նոխազն համատեսակ օրինակ տեառն մերոյ՝ յերկուց *միաւորեալ* մի անձն. և միաւոր բնութեամբ աստուած և մարդ: - 369. Զի ի կեանս յայս հաւատով նուիրիմք. և յետ մահու յուսով. և յետ յարութեան կատարեալ սիրով ընդ քրիստոս *միաւորիմք*: - 375. Եւ նախ **գ** օրն. **գ** գոյացութիւն նորին. այսինքն աստուածութիւնն՝ հոգին՝ և մարմինն *միաւորեալ* մի: - 380. Վեցերորդ՝ ո՛չ միայն հաց է հաղորդութիւնն. այլ հոգւովն սրբով օրհնեալ և *միաւորեալ* ի բանն աստուած, որով անմահ կենդանութիւն տայ ճաշակողացն: - 397. Զի բնութեամբ *միաւորեցաւ* ի մարմնի: - 402. Եւ եօթեամբ դարոյս հարսանեաց յութերորդին *միաւորեսցին*: - 422. Արդ եղիսիէէ նշանակէ՛ զբանն աստուած. որ փոքրկացաւ և բովանդակեցաւ ի ծոց կուսին ի մարմնի *միաւորեալ*. և ապա ի խաչն բարձրացեալ կեանս շնորհեաց մարդկան: - 446. Վեշտասաներորդ, Որպէս հոգի և մարմին *միաւորեալ* **ժ** եղանակաւ: - 454. Վեցերորդ, մայր մարդոյ ասի կինն որ ծնաւ զմանուկ. թէպէտ հոգին ո՛չ է ի մօրէն. այլ վասն *միաւորեալ* մարմնոյն մարդածին կոչի: - 466. Դարձեալ ի սկիզբն յղութեան անդ բանական հոգւով գիտաց զամենայն *միաւորեալ* ընդ բանին: - 470. Եւ տե՛ս, զի բնութեամբ *միաւորեցաւ*՝ իմանի քրիստոս. յայտ է զի յորոշելն ըստ ոմանց՝ ո՛չ ևս մնայ քրիստոս: - 474. Իսկ զօծումն բնութեանն միաւորութեան՝ ընկալաւ ի կուսական արգանդին. ուր խառնեալ *միաւորեաց* զմերս բնութիւն ընդ իւրում աստուածութեանն և ծնաւ քրիստոս որ թարգմանի օծեալ: - 475. ...ըստ որում որ էջ հոգին սուրբ յորովայն անարատ կուսին և մաքրեաց զնա, և կազմեաց ի նմանէ զարիւնն. և սրբեաց և օծեաց զնա *միաւորելով* պատկերապէս: - 475. Զի կամ *միաւորի* էութիւն ընդ էութիւն. կամ պատահումն ընդ պատահման. կամ էութիւն ընդ պատահման: - 475. Զի էութիւն ընդ պատահման միշտ անշփոթ *միաւորի*. որպէս որակ և քանակ ի գոյացութեան. զի անմեկնելի որոշմունք են: - 475. Իսկ պատահումն ընդ պատահման միշտ շփոթմամբ *միաւորին*. որպէս գոլն ի սևէ և ի սպիտակէ՛: - 475. Եւ այնք որ էութիւն ընդ էութիւն *միաւորին*՝ են որք շփոթմամբ *միաւորին*. որպէս ջուր ընդ գինի. և **դ** տարերք: - 475. Եւ են որք անշփոթ *միաւորին*. որպէս հուր և երկաթ. հոգի և մարմին. սեռ ի տեսակս. և տեսակ յանհատս: - 475. Զի են որ *միաւորեալքն* էութիւնք են և շաղկապն պատահումն. որպէս երկուք ոմանք անջատեալք ի միմեանց՝ պատահմամբ սիրոյ շաղկապին: - 476. Եւ զանազան ձայնք քնարի՝ մի

ենթակայ օդով *միաւորին:* - 476. Նա՛խ՝ որպէս մարդն յայլ և այլ բնութեանց *միաւորեալ*՝ մի անձն և մի դէմ և մի բնութիւն կատարի. զի մի ասեմք զմարդն և մի զբնութիւն նորա: - 477. Երկրորդ՝ որպէս բոլոր հոգին է՛ ի բոլոր մարմինն *միաւորեալ*. և բոլորն է՛ յիւրաքանչիւր մասն մարմնոյն: - 477. Այսպէս և բանն աստուած բոլորն է ի բոլորն *միաւորեալ*. և բոլորն յիրաքանչիւր մասն մարմնոյն: - 477. Հինգերորդ՝ որպէս մարմինն զգայական *միաւորեալ* ընդ բանական հոգոյ՝ ո՛չ է և ոչ ասի զգայական. այլ բանական մարդ: - 477. Այսպէս և մարդկութիւնն *միաւորեալ* ընդ բանին՝ ո՛չ ունի տգիտութիւն ինչ մարդկային. այլ գիտէ զամենայն աստուածաբար: - 477. Վեցերորդ՝ որպէս անկենդան մարմինս *միաւորեալ* ընդ հոգւոյն՝ կենդանի է և ասի: - 477. Այսպէս *միաւորեալն* ընդ բանին մարմին՝ է՛ և ասի միշտ կենդանի և կենդանարար: - 477. Եօթներորդ՝ որպէս այլայլական և փոփոխելի մարմինս կայ և մնայ անփոփոխ և անապական *միաւորեալ* ընդ հոգւոյն մինչև ցորոշումն: - 477. Ութերորդ՝ որպէս ի *միաւորիլ* հոգւոյ և մարմնոյ յառաջագայի ի միոյ կամաց միով զօրութեամբ հաննար և ներգործութիւն: - 478. Երրորդ՝ զի հոգի *միաւորեալ* ընդ մարմնոյ՝ է երբէք զի որոշի և դարձեալ միանայ: - 478. Հինգերորդ՝ զի հոգի *միաւորեալ* ընդ մարմնոյ՝ է՛ ի մարմնումն էութեամբ և ո՛չ այլ ուրեք թէ և մտօք բազումս տեսանէ: - 478. Իսկ բանն աստուած մարդացեալ՝ էութեամբ է առ հայր. պահպանութեամբ ի բոլոր էակս. շնորհօք յամենայն սուրբս. և բնութեամբ ի մարմնի *միաւորեալ*: - 478. Եօթներորդ՝ զի ի բազմա՛ցելոց հոգի ասէ նիւսացին *միաւորի* ընդ մարմնոյ: - 479. Իսկ բանն աստուած *միաւորեալ* մարմնովն կրեալ զմերս վասն մեր. անկրելի գոլով ըստ իւրում բնութեանն: - 479. Տասներորդ՝ զի թէ և *միաւորի* հոգի և մարմին՝ այլ ո՛չ հոգին մարմին և ո՛չ մարմինն հոգի ասի: - 479. Եօթներորդ՝ գլուխն և պատուանդանն նշանակէ՛ *միաւորեալ* զաստուածութիւնն և զմարդկութիւնն քրիստոսի. որ խաչեալն է ի նմա: - 493. Այլ անապական մարմին յանապական կուսէ, ընդ անապական էութեանն աստուծոյ *միաւորեալ*: - 498. Այլ բանն աստուած զբնութիւնս մարդկային էառ և *միաւորեաց* զմասունս նորին և ո՛չ զապականութիւն զի ո՛չ է բնութիւն. ապա ուրեմն անապակա՛ն է: - 499. Դու զիա՛րդ երկբայիս թէ ի յապականացու բութենէս ադամայ անապական բանն աստուած *միաւորեաց* ընդ իւր և ծնաւ անապական մարմնով: - 499. Այլ *միաւորեալ* ընդ ինքեան բաժանեաց զմեղս ի հոգւոյն և զապականութիւն ի մարմնոյն. որպէս հուր ընդ ոսկւոյ *միաւորեալ* բաժանէ զժանգն ի նմանէ: - 500. Այլ *միաւորելով* ընդ ինքեան՝ էհան յառաջին անմեղ և անապական բնութիւնն ադամայ: - 500. Այսպէս և ընդ անապական բանին *միաւորեալ*՝ անապական էր և բանին մարմին: - 501. Դարձեալ, հայր է քրիստոսի ըստ էութեանն. և աստուած վասն միաւորութեանն. զի հա՛յր *միաւորեաց* զբանն ի մարմնի...: - 518. Եւ մի և նոյնն է *միաւորեալ* ի մարմնի և երևեալ մեզ և գրեալ ի քարտիսի յիւրաքանչիւր աւետարանս: - 529. Դարձեալ զորօրինակ, մարմինն քրիստոսի մի և նոյն էր ի խաչին բևեռեալ, և մի և նոյն մարմինն է ի բազում նշխարս *միաւորեալ* և ո՛չ բազմացեալ. զի նոյն է գոյացութիւն հացին և գոյացութիւն մարմնոյն քրիստոսի: - 530. Ընդ քրիստոսի *միաւորեալ*. որպէս փեսայն որդի է, և հարսն դուստր կոչի աստուծոյ հօր: - 534. Այլ դաւանութիւն նոցա այս է. որպէս զի մի՛ լիցի ըստ նոցա աստուած մարդացեալ. կամ մերս բնութիւն ընդ աստուածութեանն *միաւորեալ*. որպէս ընդարձակապէս ցուցանէ աստուածաբանն կիւրեղ ի գիրս պարապմանց: - 552. Յունովն ըմբռնի. և Սիրովն *միաւորի* աստուած: - 571. Ութերորդ՝ հաւատն տեսանէ. յոյսն ըմբռնէ. սէրն *միաւորէ*: - 578. Զի արդարութեամբն անընդմիջաբար *միաւորիմք* ընդ աստուծոյ. որ ո՛չ լինի այլ առաքինութեամբք: - 584. Զի արդարութիւն որ ասէ աստ՝ պարունակէ՛ զհաւատն զյոյսն և զսէրն. որք անընդմիջաբար *միաւորեն* զմեզ ընդ աստուծոյ: - 584. Նա՛խ արար խաղաղութիւն յանձն իւր. զի զաստուածային և զմարդկային բնութիւնն *միաւորեաց* յինքեան ի մի կամս և ի մի ներգործութիւն անբաժանաբար: - 585. Հաղորդութիւնն է՛ խորհուրդ սիրոյ. զի սիրով *միաւորիմք* և յօդիմք ի գլուխն քրիստոս. մարմին ի մարմնոյ նորա և անդամ յանդամոց նորա: - 587. Այսպէս ջրովն մկրտիմք ի քրիստոս և որդիք աստուծոյ կոչիմք. և իւղովն ի շնորհք հոգւոյն սրբոյ *միաւորիմք:* - 593. Դարձեալ՝ խառնելն *զմիաւորելն* նշանակէ զարեան ընդ մարմնոյն որպէս մեր է սովորութիւն: - 596. Դարձեալ՝ խառնումն է աստուծոյ իմաստութեանն ընդ մարդկան. որ բանիւն խառնեալ *միաւորեցան*. որպէս ասէ սուրբն դիոնէսիոս: - 596. Այլ և զիինն իմաստութիւն ընդ նորոյս խառնեալ *միաւորեաց* քրիստոս. այսինքն զօրինակն ընդ ճշմարտութիւնս: - 596. ...նոյնպէս վերերևոյթ կերպարանքն նոյն է ըստ ձևին. այլ բնութիւնն *միաւորեալ* է ընդ բանին աստուծոյ և եղեալ աստուած: - 598. Նոյնպէս և բոլոր մարմին և հոգին է մի աստուած ընդ բանին *միաւորեալ*. և բաժանեալ ամբողջական մասունքն է՛ բոլոր և կատարեալ աստուած: - 598. Վասն է՞ր *միաւորեմք* զխորհուրդ մարմնոյ և արեանն: - 598. Եւ կամ *միաւորեալ* ընդ մարմնոյն և տալ ժողովրդեանն: - 598. Եւ զինչ և իցէ՝ *միաւորեմք* ընդ միմեանս և խոստովանիմք զբանն աստուած

մարմնացեալ անբաժանելի ի մարմնոյ իւրմէ: - 598. Իսկ որք ոչ *միաւորեն*, բաժան և որիշ նշանակեն զբանն ի մարմնոյ իւրմէ. որպէս երկաբնակքն քաղկեդոնիկք: - 598. Երրորդ՝ բաժան ի միմեանց օրհնեմք զհացն և զբաժակն. և յետոյ *միաւորեմք* ի ճաշակելն...: - 598. ...վասն զի աղբիւր արեանն բաժանեալ ի մարմնոյն՝ դարձեալ *միաւորեցաւ* առ ինքն և ժողովեցաւ ի մարմինն իւր և ո՛չ ցրուեցաւ ա՛յլ արտաքոյ: - 598. Յաղագս այսորիկ *միաւորեմք* զխորհուրդն: - 598. Զի միապէս *միաւորին* արտաքս և ի ներքս. զի ամենայն կերակուր և ըմպելի ի ներքս *միաւորի*: - 598. Ա՛րդ՝ *միաւորել* զսուրբ խորհուրդն ո՛չ է նորագիւտ ինչ եկամուտ մեզ ինքեանց: - 598. Նոյնպէս և ի տեսակ արեանն *միաւորեալ* այսոքիկ: - 600. նմանապէս և ի յարիւնն է կապեալ մարմինն և հոգին համազուգեալ և աստուածութիւնն *միաւորեալ*...: - 600. Ասեմք թէ՝ յորժամ *միաւորեալ* էր ի մարմինն միութեամբ ներգործիւր ի նմա ամենայն մարմնականքն: - 605. Եւ ապա՛ *միաւորի* ընդ եկեղեցի սուրբ ի ժառանգութիւն արաքայութեանն: - 610. Դարձեալ՝ բանն աստուած փեսայ կոչի հարսին եկեղեցւոյ. և զօտար բնութիւնս մարդկան *միաւորեաց* ընդ ինքեան: - 612. Եօթներորդ, զի և քրիստոս ո՛չ ընդ բազում, այլ ընդ մի Կաթուղիկէ եկեղեցի *միաւորի*: - 612. Վերջին և առաջին գուբդայն յանմեղութենէ ասացեալ. և միջինն յետ մեղանացն. այս ընդ իրեար *միաւորեցաւ*: - 630. ...իսկ զմիջին ժամանակն ապաշխարութեամբ քաւեալ *միաւորեցաւ*: - 630. ...իսկ խունկն մերձեալ ի հուրն և զհոտն բուրեալ՝ է՛ մարմինն *միաւորեալ* ընդ բանին. և զհոտ անոյշ բուրեալ աշխարհի: - 645. ...որ է կրկին տախտակն մովսէսի. յանձնառական և հրաժարական օրհնօքն *միաւորեալ*: - 646. ...և *միաւորեաց* զերկինս և զերկիր, զհրէայս և զհեթանոսս...: - 646. Երկոտասներորդ՝ զի մարդասէ՛ր է աստուած՝ կամեցաւ միածնին *միաւորիլ* ի մարմնի և մարդանալ յաշխարհի...: - 663. ...իսկ յետ յարութեան սերտ և անքակտելի սիրով *միաւորիմք*...: - 667. ...մինչ դարձեալ *միաւորի* ընդ մարմնոյն. և իբրև զարեգակն պայծառացեալ ծագէ ընդ քրիստոսի: - 681. Արդ այժմ ի մկրտութիւնն հաւատն նշան դնի հարսին. և յետ մահու յուսով կոչի ի հարսանիս. և յետ յարութեանն սիրով *միաւորի* ընդ փեսային: - 693. Այլ յորժամ հոգին *միաւորեսցի* ընդ մարմնի և յերկուցն լինիցի անձն, յայնժամ կարէ՛ ունել ներգործութեամբ զփառս կամ զտանջանս: - 694. Իսկ կոչելն զյառնելն ի մեռելոց ցուցանէ. հոգւոյն և մարմնոյն *միաւորեալ:* - 696. ...կամ ո՛չ է արժան *միաւորիլ* ընդ մարմնոյն...: - 699. ...յորժամ հոգին *միաւորի* ընդ մարմնոյն և մարմնովն ժառանգէ զփառս և զկեանսն յաւիտենից: - 710. Որով անսխալ ճանաչէ իւրաքանչիւր հոգի զիւր մարմինն և *միաւորի:* - 719. ...իսկ ի յարութեանն անփոփոխ սերտութեամբ հաստատի ասէ սուրբն դիոնէսիոս. վասն որոյ անփոփոխ և անմահ *միաւորի* ընդ մարմնոյ: - 723. Հինգերորդ՝ հոգիք մարդկան ի յերկնից խոնարհին և *միաւորին* ի մարմինս իւրեանց: - 729. Դարձեալ զոր օրինակ բազում ստուերք ի մեծ ստուերն *միաւորին*: - 732. և Դարձեալ՝ զոր օրինակ բազում ճառագայթք շողից ի լոյսն արևու *միաւորին...:* - 732. Այսպէս և այս ո՛չ է ըստ բնութեան կարգի. զի նոյն բանն աստուած ի սա՛ է *միաւորեալ* անբաժանապէս: - 733. Այլ ի գալուստն քրիստոսի Առաջին փառք է՝ զի փառաւոր երևեսցի սիրելեաց իւրոց, յայտնեալ զաստուածութեան փառս *միաւորեալ* ի մարմնի. որպէս երևեցաւ ի թաբօր: - 736. Եւ դարձեալ այնպէս *միաւորեալք* են ընդ աստուծոյ, որ դատաստանն աստուծոյ ամենայն իրօք հաճոյ թուի նոցա. վասն այսորիկ այնոքիւք ուրախ լինին: - 754. Կամ փայտիս այսորիկ ոստք կարեն ասիլ *միաւորեալ* բնութիւնքն քրիստոսի. այսինքն աստուածութիւնն և հոգին և մարմինն: - 755. Նա՛խ՝ զի առ նոսա *միաւորեալ* է քրիստոս իբր տէր ընդ ծառայս. իսկ *միաւորի* ընդ եկեղեցի իբր փեսայ ընդ հարսին. և գլուխ ընդ անդամոց: - 757. Երրորդ՝ զի միջնորդութեամբն քրիստոսի *միաւորի* եկեղեցի ընդ հօր աստուծոյ. և լինի աստուած ընդ աստուածս միացեալ. - 757. Որ և անբաժանելի և անքակ միութեամբ *միաւորին* յօդեալք ի գլուխն քրիստոս անզրաւ յաւիտենիւ: - 757. Այլ հզօրագունին յաղթելով. որպէս լոյս արեգականն ընդ իւր *միաւորէ՛* զամենայն լոյս անչփոթ և անծախ: - 770. Նոյն և կամք և կիրք և ներգործութիւն մարդկային ընդ աստուածայինն *միաւորեալ*. միջնորդելով հոգւոյ բանականի՝ աստուածութեանն՝ և մարմնոյն. որ է՛ ներգործութեամբ միշտ աստուած և փրկիչ բնութեամբ. քրիստոս. նոր ադամ. էմմանուէլ ճշմարտութեամբ: - 770.

**ՄԻԱՒՈՐԻՉ +** Դարձեալ՝ հոգին ելանէ իբրև զշաղկապ և *միաւորիչ*. մի իբրև զմէջ որ շաղկապէ՛ զերկու եզերն. և միւս իբրև երեք՝ և եզր: - 64. Եւ կոչի սէր, զի շարժէ՛ զմեզ. և յառաջածու զօրութիւն է. և երևեցուցիչ. և *միաւորիչ*. զի այսոքիկ սիրոյ ներգործութիւնք են. վասն այն կոչի սէր: - 128. Զի իցէ *միաւորիչ* և կա՛պ իմն բոլոր արարածոց: - 231

**ՄԻԱՒՈՐՈՒԹԻՒՆ +** Եօթներորդ՝ Վասն է՞ր ուրանան քաղկեդոնիկք զբնութեամբ միաւորութիւնն: - 30. Իսկ *միաւորութեանն* իմանալ՝ ոչ է ինչ մեծ. այլ է հաւասար որպէս առօղն՝ նոյնպէս և առեալն զոյգ աստուած և մարդ: - 39. Դարձեալ քննեսցուք ըստ մեզ. զի ո՛չ են հակառակ առաքելոյն բանն և աւետարանին, թէ հայր

մեծ է քան զորդի. զի երկոքին նոյն ինքն աստուածութեանն իմանին. ըստ այնմ որ զմեր նուաստ և տկար բնութիւնս միացոյց ընդ իւրում աստուածութեանն, և անտեսանելին տեսանիւր՝ և ծառայի կերպիւ շրջէր վասն տնօրէնութեան՝ ասի փոքր յայս *միաւորութեանս* քան զհայր. իսկ ըստ այնմ որ է՛ անճառ և նախքան զյաւիտեանս ծնունդ ի հօրէ՛, հաւասա՛ր է հօր և ոչ փոքր: - 40. Եւ ինքն աստուած ի վերայ ամենայնին՝ *միաւորութեամբ* գլխոյն ընդ անդամոցն: - 43. Այլ որպէս բանին սեպհական է և բնութեամբ և ո՛չ ստացմամբ, այսպէս իմացիր և մարմնոյն վասն անճառ *միաւորութեան* բանին զի իւր է մարմինն. վասն այն ոչ ինչ բանին է՝ ասի մարմնոյն: - 46. Եւ այսքան է *միաւորթիւնն*, զի որքան մին ինքն առ ինքն ունի զբնութիւնն և զզօրութիւնն և զկամքն, նոյնքան և ունի առ երկուսն. թէ զհայր իմանաս՝ թէ զորդի՝ թէ զհոգին: - 54. Այս է *միաւորութեանն* բան: - 54. Որք ուրանան զբնութեամբ *միաւորութիւն* աստուծոյ մարդացելոյն, այլ միայն բնակութեամբ և շնորհիւ որդէգրութեան ելեալ յաստուածութեանն փառս. որպէս ասեն նեստորականքն: - 66. Այսքան հարցուածս է ընդդէմ երկաբնակացն որք ուրանան *զմիաւորութիւն* բնութեանցն քրիստոսի: - 70. Իսկ եղևս այս՝ նշանակէ *զմիաւորութիւն* բանին և մարմնոյն: - 72. Եւ զի բանն մարմին եղև *միաւորութեամբն*. ուրեմն յայտ է՝ զի մարմին բանին բան եղև նոյն *միաւորութեամբն*: - 72. Այսպէս և խոնարհագոյնքն են աստուծոյ բանին վասն *միաւորութեանն*. որպէս մարդ ծնանիլ ի կուսէ՛ ժամանակեայ. խաչիլ և մեռանիլ...: - 74. Յորոյ փախչելով մեր և յերկուց ծայրիցն, զառ ի մէջն ունելով ուղղապէս ընթացք, ասեմք եթէ քրիստոս ըստ անշփոթ *միաւորութեանն* աստուածային բնութեամբն մարդ է, և մարդկային բնութեամբն աստուած է: - 75. Ուստի ո՛չ ասի քրիստոս սոսկ մարդն, կամ մերկ աստուածն. այլ որպէս ցուցաւ յերկուց *միաւորութիւնն*: - 75. Ո՛չ փոխարկապէս, այլ փոխատրապէս. այսինքն զի ի *միաւորութեանն* եկաց մնաց որ ինչ էրն, և եղև որ ինչ ո՛չն էր: - 75. Զի աստուած է իւրում բնութեանն. և նոյն մարդ ըստ նորին բնութեամբ *միաւորութեանն:* - 75. Որև մարդկութիւնն աստուած էր ըստ նորին բնութեամբ *միաւորութեանն*. և նոյնն մարդ ըստ իւրում յատկութեանն: - 75. Այսպէս և անմահ է բանն ըստ իւրում բնութեանն. և նոյնն մահացեալ ըստ *միաւորութեանն:* - 75. Որև մարդկութիւնն անմահ ըստ *միաւորութեանն*. և մահացեալ ըստ իւրոյն յատկութեանն: - 75. Այսպէս իմասցիս ըստ *միաւորութեան* բանին և անշփոթելի խառնմանն: - 75. Զի այս է ուղղակի դաւանութիւն *միաւորութեանն* քրիստոսի: - 75. Վասն է՞ր քաղկեդոնիկքն և նեստորականքն ուրանան զբնութեամբ *միաւորութիւնն*. այլ անձամբ միայն և յատկութեամբ ասեն: - 76. Յաղագս երից պատճառաց ուրանան *զմիաւորութիւնն* ի մարդեղութիւն բանին: - 76. Նախ՝ զի մի՛ շփոթեսցին բնութիւնքն ի *միաւորութիւնն* որպէս ասաց եւտիքէս: - 76. Առաջնոյն ասեմք. թէպէտ բանն աստուած բնութեամբ *միաւորեսցի* ընդ մարդկութեանն, ո՛չ կրէ շփոթումն և կամ խառնակումն ինչ: - 76. Այլ զի զանձնաւոր բնութիւն և զանհատն ասեմք մարմնացեալ. զի սկիզբն *միաւորութեանն* է ի բնութիւնն, և կատարումն կայացեալ ի յանձն, յիմարա՛ց ուրեմն և ափշելոց է խնդիր նոցա: - 76. Ո՛չ յեղմամբ կամ շփոթմամբ. այլ անշփոթ *միաւորութեամբ* զբանն մարմին եղեալ և միաւորեալ զբնութիւնս մեր կատարելապէս ընդ իւրում աստուածութեանն: - 76. Զի՞նչ է ծայրագոյն *միաւորութիւն* բանին մարմնացելոյ: - 77. Երկրորդ՝ զի անեղի ընդ եղելոյ է *միաւորութիւնն:* - 77. Երրորդ՝ զի անփոփոխ է *միաւորութիւնն:* - 77. Զոր յայսմանէ երևի երեք եղանակ *միաւորութեանն* զանազանապէս: - 77. Եւ զնոյն բանն աստուած՝ աստուածութեամբն աստուած, և մարդկութեամբն աստուած. զի անբաժանելի՛ է. թէպէտ և էր նախ քան զմարդեղութիւնն աստուած, այլ յետ անճառ *միաւորութեանն* մարմնովն է աստուած: - 77. Այսոքիկ հային առ բնութեամբ *միաւորութիւնն:* - 77. Այսպէս և ծնեցեալն որդի միաւորեալ մարմնովն է և ասի աստուած և մարդ. ի բաղադրեալ *միաւորութեանն*. և ո՛չ ասի **բ** անձն կամ **բ** բնութիւն: - 77. Դարձեալ՝ ըստ նոյն սարասի՝ բանն աստուած ունի ծնունդ ի հօրէ նախ քան զյաւիտեանս. և ունի ծնունդ ի մօրէ ի յետին ժամանակիս. և ո՛չ ասի երկածին. այլ՝ միշտ միածին. այսպէս նոյն բանն ունի զբնութիւն աստուծոյ ի հօրէ. ունի և զբնութիւն մարդոյ ի մօրէ՛. և ո՛չ ասի **բ** բնութիւն. այլ մի բնութիւն վասն *միաւորութեանն:* - 77. Դարձեալ՝ ծանի՛ր ուղղապէս. զի ասի աստուած մարմնացեալ և մարդացեալ. զի այս *միաւորութեան* է: - 79. Եւ հաստատեալ այսու եթէ՝ հոգին և մարմինն է միաւորեալ ընդ բանին աստուծոյ, կարգէ՛ և զայն. բայց որդիք ասէ ո՛չ **բ**. և ո՛չ աստուածք. զայս վասն դիմաց *միաւորութեանն* ասէ: - 80. Եւ ապա ի բարձր հանէ վարդապետութիւն զբնութեանցն *միաւորութիւն*. ասէ՝ այլ և այլ յորոց փրկիչն. եթէ ոչ՝ նո՛յն է երևելին և աներևոյթն. անժամանակն և ընդ ժամանակաւն: - 80. Եւ բարձեալ զխտրոցս բաժանման ասէ՝ երկոքեանն մի՛ են. առնլովն աստուծոյ և մարդանալովն. և մարդոյն աստուածանալովն. ահա զբնութեանցն *միաւորութիւնն* եցոյց: - 80. Նախ այսպէս, ասէ թէ բաժանմունք որ յէրրորդութիւնն է, ո՛չ է հնար *միաւորութեան*. զի ա՛յլ ոմն է և ա՛յլ: - 80. Դարձեալ՝ զի ասէ թէ, ա՛յս *միաւորութիւնս* որ ի քրիստոս է, ո՛չ է իբրև զայն որ յէրրորդութիւնն է. զի անդ միութիւն է, բայց բաժանումն անձանց: - 80. Ընդ դէմ նեստորի անբաժանելի խոստովանին. և ընդ դէմ

եւտիքի անշփոթ *միաւորութիւն:* - 81. Իսկ որք յետ *միաւորութեանն* **բ** ասեն բնութիւնս ի քրիստոս, և բաժանեն զկամս, և զգործս, և զկիրս, թէպէտ և անձն մի համբաւեն: - 81. Իսկ որք յետ *միաւորութեանն* **բ** բնութիւնս խոստովանին, և սոքա են **բ** դասք: - 82. Եւ զայս *միաւորութիւնս* խոստովանիմք մեք մի անձն. և մի դէմ. և մի կերպ. և մի բնութիւն. և մի կամք, և մի ներգործութիւն: - 83. Այլ հետևիմք հարցն սրբոց, որք առանց կարծեաց և խոտորմանց՝ *զմիաւորութիւնն* քրիստոսի անշա՛րժ պահեն: - 83. Ո՛չ ուրացմամբ, և ո՛չ կորուսմամբ. այլ՝ *միաւորութեամբ* մի բնութիւն: - 84. *Միաւորութիւնն* քրիստոսի ունի սկիզբն. և մէջ. և կատարումն: - 84. Սկիզբն յերկուց բնութեանց. և մէջ՝ որ է՛ *միաւորութիւնն* մի բնութիւն. և եզր և կատարումն՝ մի անձն: - 84. Եւ դարձեալ՝ անձին *միաւորութեան* բաժանումն հետևի. և բնութիւնն անբաժ միանայ: - 84. Թէպէտ բնութեամբ միաւորին՝ տարբերութիւնն ո՛չ բառնի. զի տարբերութեանցն մնալ՝ խափանումն ո՛չ առնէ *միաւորութեանն*. որպէս հոգւոյ և մարմնոյ. ոսկւոյ և հրոյ. և ծանի՛ր՝ զի կրկին է տարբերութիւն. բաղկացական և բաժանական: - 85. Ա՛րդ՝ դուք որ **բ** բնութիւնս ասէք քրիստոսի, զբաժանական տարբերութիւնս ասէք. և մեք մի խոստովանիմք զբաղկացականս *միաւորութիւն*: - 85. Ասեմք եթէ՝ մի և նոյն հրացեալ նիւթո՛յն է կտրելն և այրելն. այսպէս մի և նոյն *միաւորութեանն* էր այսինքն մարդացեալ բանին բարձրագոյնքն և նըւաստականքն: - 85. Այսպէս և բանն աստուած կատարէր մի ներգործութիւն մարմնով իւրով. զի *միաւորութիւն* բնութեանցն առանց փոփոխման և բաժանման է: - 86. Իսկ *զմիաւորութիւն* երկուց բնութեանցն ուրանան երկաբնակքն: - 88. Երկրորդ՝ զի ո՛չ մասամբ ինչ ըստ ոմանց ապօղինարի և այլոց. այլ յերկուց կատարեալ բնութեանց է *միաւորութիւն* փրկչին: - 88. Ահա տե՛ս յայտնապէս. զի որք բաժանեն զմի քրիստոսն յերկուս բնութիւնս, ո՛չ պահեն *զմիաւորութիւնն* անբաժանելի: - 88. Բե՛ր յարմարեսցուք այժմ զերիս եղանակս սոցա՝ *միաւորութեան* փրկչին ուղղակի իմն տեսութեամբ. որ ո՛չ ախորժելի է այլոց: - 89. Այլ ամենազոյգ և հաւասա՛ր է *միաւորութիւն* փրկչին: - 89. Իսկ եթէ զաստուածային անձն և զաստուածային բնութիւնն և զմարդկայինն ասէք մի քրիստոս, այս լինի կամ *միաւորութեամբ* կամ բաժանմամբ: - 90. Զի եթէ *միաւորութեամբ*, ահա՛ շփոթումն եղև. զի զանձն և զբնութիւնսն մի ասացիք: - 90. Զի ասեմք զմարմինն քրիստոսի վասն *միաւորութեանն* աստուած՝ և աստուծոյ մարմին: - 92. Եւ դարձեալ՝ քրիստոսն անուն *զմիաւորութիւնն* նշանակէ երկուց բնութեանց. ըստ որում աստուածութիւնն էօծ զմարդկութիւնն. որպէս ասէ աստուածաբանն և սուրբն կիւրեղ: - 95. Եւ այսպէս բազում է ի գիրս հարցմանցս վասն *միաւորութեան* բանին և մարմնոյն ընդ դէմ նեստորի և երկաբնականց. որ բաւական լուծումն է բանիս: - 95. Ա՛րդ՝ եթէ մի անձն խոստովանիս քրիստոսի, և բնութիւն մարդոյն միացեալ ի յանձն բանին, զոր ինչ բանին է բնութեամբ, ամենայնն եղիցի և մարմնոյն իւրոյ *միաւորութեամբ*: - 98. Նա՜ է առեալ *միաւորութեամբ* բանին զաստուածութիւնն և զճանաչումն ամենայնի: - 100. Եւ ըմբռնօղ՝ զի բանական իմացմամբ մտաց զմայլեալ էր *միաւորութեամբ* աստուածային փառացն: - 100. Զի՞նչ է *միաւորութիւն* և որոշումն. այսինքն հասարակ և յատուկ աստուածային: - 104. Դարձեալ՝ ա՛յն է հասարակն՝ որ մի՛ է երիցն. և երկուքն ո՛չ աւելի. և մինն ո՛չ ունի պակաս: - 104. Զի նախ կենդանի է մարմնով. յետոյ անմարմին. և յետոյ *միաւորութեամբ* յաւիտեան: - 117. Երկոտասաներորդ) Պա՛րզ է աստուած. յորս և բնութեամբ *միաւորութիւն:* - 154. Վասն որոյ խոստովանիմք ընդ սրբոց հարցն վասն *միաւորութեանն* մի բնութիւն աստուծոյ բանին մարդացելոյ: - 176. Ո՞վ մեծի աղետիս և վշտալից տարակուսի. զի այսպիսիքս զմի *միաւորութիւն* տեառն ուրանան...: - 176. Այլ մի է պետրոսն ըստ անձին անհատ գոլոյն. և մի է բնութիւն պետրոսին ըստ *միաւորութեան* բանին. իսկ սոքա օրինակ՝ և նա՛ ճշմարտութիւն: - 176. Հնգետասաներորդ, Եղանակք *միաւորութեանց:* - 454. Նախ՝ անբաժանելի *միաւորութիւն* բանականին առ աստուած: - 462. Իսկ զչորրորդ սրբութիւնն որ է՛ *միաւորութիւն* բանականին առ աստուած, և միշտ ներգործապէս դիմել առ աստուած որպէս հրեշտակք. ընկալաւ աստուածածին կոյսն ի յղանալն զորդին աստուծոյ: - 463. Տասներորդ գերագոյն սոցա՝ ըստ բնութեան *միաւորութեան*. որպէս բանին աստուծոյ ընդ մարդկութիւնս: - 474. Իսկ զօծումն բնութեանն *միաւորութեան* ընկալաւ ի կուսական արգանդին. ուր խառնեալ միաւորեաց զմերս բնութիւն ընդ իւրում աստուածութեանն և ծնաւ քրիստոս որ թարգմանի օծեալ: - 475. Այսպէս *միաւորութեամբ* բանն աստուած օծաւ և սրբեցաւ ի հօրէ, ի ձեռն հոգւոյն սրբոյ գործակցութեամբ: - 475. Ո՞ր քան է եղանակ *միաւորութեան:* - 475. *Միաւորութիւնն* սեռաբար տրամատի յերիս. ի յանշաղկապն և ի շաղկապեալն և ի շաղադրեալն: - 475. Ա՛րդ՝ անշաղկապ *միաւորութիւնն* բաժանի յերիս տեսակս: - 475. Իսկ *միաւորութիւնն* որ է շաղկապաւ, և սա՛ բաժանի յերիս: - 476. Իսկ շաղադրեալն *միաւորութիւն* և սա՛ բաժանի յերիս. այսինքն ըստ դրութեան. ըստ ժողովման. ըստ կոչման: - 476. Յասիցելոցս ո՛չ ոքն յարմարի *միաւորութեան* փրկչին. բայց միայն երրորդն առաջնոյն. այսինքն էութիւն առ էութիւն անշփոթ խառնումն. որպէս հոգւոյ և մարմնոյ. զոր և յառաջիկայդ ցուցցի: - 476. Բայց վարդապետք ասեն *զմիաւորութիւնն* **Ե** եղանակաւ: - 476. Առաջին

*միաւորութիւն* ստոյգ և ճշմարիտ՝ հոմանիւթ մասնաւորաբար որոշեցելոց. որոց ոչ ինչ տարանիւթ ընդ մէջ երևի. որպէս երկուց ջահից լուցելոց *միաւորութիւն* լուսոյն: - 476. Այս է ստոյգ և ճշմարիտ *միաւորութիւն:* - 476. Յետ այսորիկ երկրորդ *միաւորութիւն* սովորեցաք կոչել թէպէտ և ո՛չ իսկապէս՝ և զանհամանիւթից ոմանց. և կամ զհամանիւթից մարմնոց յարադրութիւն. որոց ընդ մէջ է մակերևութիւն միայն: - 476. Երրորդ առ այսոքիւք՝ *միաւորութիւն* անուանեմք և զխառնուածս երկուց նայից ըստ զանազան որակութեանց...: - 476. Չորրորդ՝ *միաւորութիւն* ասեմք գոլ և զզանգումն որ ի նա է՛ և ի չորո՛յ բնաւորեցաւ լինիլ. յորում ո՛չ ամբողջ պահի բան որակութեանն: - 476. Հինգերորդ՝ *միաւորութիւն* սովորեցաք կոչել յորժամ նիւթ ինչ աննիւթով կերպարանեալ տեսանի տեսակաւ: - 476. Այս քան վասն *միաւորութեան*: - 476. Հոգւոյ և մարմնոյ *միաւորութիւն* ո՞րպէս նմանի քրիստոսի: - 476. Սուրբն աթանաս և կիւրեղ և այլք՝ զհոգւոյ և զմարմնոյ *միաւորութիւնս* ասեն բանին մարմնացելոյ: - 477. Այսպէս թէ ուրեք մարդ միայն անուանի քրիստոս «զճշմարութիւն խօսեալ». և կամ՝ «աստուած կնքեալ». ո՛չ ինչ ուրէք վնասէ *զմիաւորութիւնն* իբր մարդ սոսկ կամ աստուած միայն. այլ աստուած համանգամայն և մարդ խոստովանի միացեալ: - 477. Գերաբնապէս ապա և բանն մարմին եղեալ անփոփոխելի և անապական ներգործեալ մարմին ըստ մերոյս բնութեան անբաժ *միաւորութեան:* - 477. Իններորդ՝ *միաւորութիւն* մարդոյ՝ է՛ անմահ և մահկանացու. յաւիտենական և ժամանակեայ. այսինքն հոգի և մարմին: - 478. Այսպէս և *միաւորութիւնն* քրիստոսի է՛ յաւիտենից և ժամանակեայ. անմահ և մահկանացու. աստուած և մարդ. նոյն ինքն բանն մարմին եղեալ: - 478. Տասներորդ՝ զի ի ծնունդն *միաւորութեան* մերոյ ո՛չ ասի մարմին ծնեալ. այլ թէ մարդ ծնաւ յաշխարհ: - 478. Նա՛խ՝ զի *միաւորութիւնն* մարդոյս եղականա՛ց է ընդ միմեանս: - 478. Իսկ բանին աստուծոյ քաջ սիրով եռացումն ընդ մարմնոյ անբաժ և անորիշ գործեաց *միաւորութիւն:* - 478. Չորրորդ՝ զի ի մարդն է մի միայն *միաւորութիւն*. այսինքն հոգւոյ և մարմնոյ: - 478. Իսկ ի քրիստոս եռակի գոյ *միաւորութիւն*. այսինքն աստուծոյ ընդ հոգւոյ. հոգւոյ ընդ մարմնոյ. աստուծոյ ընդ մարմնոյ: - 478. Ութերորդ՝ զի աստ ի *միաւորութիւն* հոգւոյ ընդ մարմնոյ՝ զգայակից և ախտակից լինին միմեանց կրական գոլով: - 479. Իսկ ի *միաւորութիւն* փրկչին բոլորից՝ բանն անդրանիկ կոչի և ի բազում եղբարս. և մարդն միածին հօր...: - 479. Նախ՝ որ ասէ «դա՛» նշանակէ *զմիաւորութիւն* բանին առեցեալ մարմնովն: - 487. Վեցերորդ որ ասէ՝ «հաճեցայ». նշանակէ *զմիաւորթիւնն* ընդ հօր: - 487-488. Եւ վասն *միաւորութեան*. և թացեալ պատառացն. և թէ ո՛չ տան ժողովրդեանն յօրինեալ մարմնոյն քրիստոսի: - 526. Երկրորդ՝ վասն գերազանց և ծայրագոյն *միաւորութեանն* քրիստոսի ընդ եկեղեցի: - 534. Երկրորդ դարձեալ՝ զի **դ** են տարերք. և **դ** ազդումն *միաւորութեանց* հոգւոյն յիւրաքանչիւր տարերս ըստ այսմ օրինակի: - 560. Եւ ըստ *միաւորութեան* հոգւոյն ի տարերս, Յոգւոյ և ի հրոյ բարկութիւնն: - 560. Մեք այսպէս լուաք ի սուրբ գրոց թէ՝ անարժան ուտելն առնէ յուդա. և ո՛չ թէ *միաւորութեամբ* զմարմին և զարիւնն ճաշակել: - 598. ...զի հաւատալի է թէ ի մարմինն քրիստոսի՝ է՛ և արիւնն կապակցութեամբ. և հոգին համազուգութեամբ. և աստուածութիւնն *միաւորութեամբ:* - 600. Ասեն վարդապետք, որպէս *միաւորութիւն* նոցա կեանք է, նոյնպէս և որոշումն նոցա մահ: - 667. ...այլ ի նոյն կէտն է յարութիւն և *միաւորութիւն* հոգւոյ և նորոգումն մարմնոյ: - 717. Զի այժմ հոգիս փոփոխական է. որպէս խորհրդով կամօք և այլն. վասն որոյ *զմիաւորութիւնն* ընդ մարմնոյ փոփոխական ունի...: - 723. Երկրորդ՝ զի աստուած զամենայն արարածս կրէ բանիւ զօրութեան իւրոյ ասէ առաքեալն և ի նոյնութեան պահէ. և սոքա պահին առանց *միաւորութեան* էութեան նորա: - 733. Չորրորդն երկոցունցն ծայրագոյն *միաւորութիւն:* - 755. Այլ և մանաւանդ վասն աստուծոյ ընդ ծառայս իւր սիրով *միաւորութեանն:* - 757. Որ և ա՛յն քան գերազանց է *միաւորութիւնն* քրիստոսի ընդ եկեղեցի քան զմարմնական հարսանեաց, որպէս լոյս քան զխաւար. և իւղ անոյշ քան զգարշութիւնս: - 757. Երրորդ ուրախութիւնն եղիցի ի տեսութենէ *միաւորութեան* մարդկային բնութեանն առ աստուածայինն. քանզի սքանչելի ուրախութիւն լինիցի ընտրելոցն, յորժամ ճանաչիցեն թէ եղբայր նոցա ըստ մարմնոյ՝ ճշմարիտ աստուած է: - 763. Մի դէմն յԵրրորդութենէն որդի լինի. մի դէմ ի մարդկութենէս ի կուսէ առեալ բնութիւն մարդկութեան, աստուածութիւնն բոլորովին յաղագս անհաս *միաւորութեանն* ըստ ոսկէբերանին յոհաննու: - 770

**ՄԻԵՂԷՆ +** ...զի լինէր սկիզբն այն ո՛չ պարզ. այլ երկատեսակ. և ո՛չ *միեղէն* այլ բաժանեալ և այլայլեալ. նաև լինէր ինքն ինքեան հակառակ, և յառաջ եկելոցն ի նմանէ: - 14. Այսպէս և բարին՝ է՛ որ պարզ և *միեղէն* բարի է. որպէս աստուած. զի անփոփոխ և միշտ բարի է. զի էութեամբ բարի է. և բարին էութիւն է աստուծոյ: - 22. Նախ՝ զի *միեղէն* է և հասարակ՝ գերադրականքն. որպէս գերագոյն աստուած. և տէր տէրանց: - 106. Թէպէտ առ մեզ տեսանի անսկիզբն յառաջին կողմն, և անվախճանն ի վերջինն. այլ ի նա ո՛չէ առաջին և վերջին. զի պա՛րզ և *միեղէ՛ն* է: - 115. Դարձեալ՝ զնիւթեղէնսն աննիւթապէս տեսանէ. և զբաղադրեալսն

պարզ. և զժամանակեայսն յաւիտենական. և զբազումս և զբաժանեալս *միեղէն* և անբաժան: - 118. Աստուածատեսա՛կ է նոցա տեսութիւնն. այսինքն պարզ և *միեղէն* և գերամբարձ: - 119. Պարզ և *միեղէն*, զի զնիւթաւորքս և զբաժանեալքս միով և պարզ տեսանեն: - 119. Վասն որոյ *միեղէն* տեսանեն և պարզ. որպէս զծագումն լուսոյ առանց ճանապարհորդութեան լուսաւորեալ. և միշտ բարձրանան տեսութեամբ: - 119. Այսու հաւասար է, զի պա՛րզ է և *միեղէն* և բարձրագոյն տեսութիւն որպէս ասացաք: - 119. Իսկ շնորհականն է ընդդէմ այսոցիկ. զի պարզ և *միեղէն* իմացմամբ բարձրանայ յաստուածային գիտութիւնն. և այնպէս ի զարմացման լինի տեսութեամբ նորին: - 120. Չորրորդ՝ *միեղէն* է նոցա տեսութիւնն և ի միոյ. իսկ մերս բազում և ի բազմաց. զի բաժանեալ զգայարանօք զբաժանեալ իրս տեսանեմք: - 120. Նախ՝ զի հրեշտակն *միեղէն* և բոլոր իմանայ. իսկ հոգին բան բան և մասնաւոր. վասն որոյ բանական կոչի: - 141. Միատեսակ է՝ յորժամ ըստ ինքեան ժողովէ յամենայն զգայարանաց, և բոլոր և *միեղէն* սիրով հպի յաստուած. և է՛ այս գերակատար սէր: - 143. Այլ ի պատճառս տալ իմաստից. որով ո՛չ յագեսցի ակն ի տեսոյ. ի գլուխ գոլոյ իմաստնոյ. մանաւանդ և ի շահ օգտի բանասէր մտաց *միեղէն* եղբարց: - 773

**ՄԻՋԵՄ +** Չորեքտասաներորդ՝ ի գոչմանէ առիւծուն սարսին այլ կենդանիք և արիւն *միզեն:* - 316. Որ *միզիցէ* զորմով : - 413. Որ *միզիցէ* զորմով: - 443

**ՄԻԹԷ +** Երկրորդ՝ *մի՞ թէ* բազում: - 140

**ՄԻԹՐ +** Խոյրն, վարշամակն. և *Միթրն* և թիթեղն ոսկի, պատկերք սրբոցն նկարեալ. և երկոքին Բազպանն, փոխանակ անդրավարտեաց: - 348. և **բ** Ակունք ուսոյն՝ կրկին կիսագունդք երկնից. ունելով զ**գ** կենդանակերպս. և Վակաս լանջացն **բժ**ան ակամբք նոյն կենդանակերպք ի լանջս երկնից *Միթրն* պսակ քահանայապետութեան. և Թիթեղն՝ մտաց թեթևութեան: - 348. Եւ որ եպիսկոպոսն *զմիթրն* և զեմիփորոնն և զմատանին զոր զգեցեալն էր ի ձեռնադրութեանն՝ հանէ՛ յորժամ պատարագէ...: - 635-636

**ՄԻԽԱՅԷԼ** - Եւ զայլ ամենայն որպիսութիւն չար ժողովոյն քաղկեդոնի գտցես ի պատմագիրս *միխայէլի:* - 543

**ՄԻՄԵԱՆՑ +** Այլ և սոքա ո՛չ զանազանին ի *միմեանց*, որպէս բանական և անբան. եթէ է ամենայն ի հարկէ: - 8. Դարձեալ ասեն թէ՝ աստեղք ունին բնութիւնս ներհակս *միմեանց*. չար և բարի. և *միմեանց* դիպեալ ներհականան իրերաց...: - 12. Նախ թէ՝ երկնային մարմինքն ո՛չ են ի չորից տարրաց. այլ են հինգերորդ տարր կամ էութիւն ըստ արիստոտէլի. և որք են ի պարզ տարրէ միայն ո՛չ հակակային *միմեանց*: - 12. Նախ՝ զի բարին էութիւն է. ուստի յա՛յտ է՝ զի հակադարձին առ *միմեանս*...: - 13. Դարձեալ ասեմք, եթէ առնէ աստուած մեծատուն և աղքատ, տէր և ծառայ և այլն, զի ի *միմեանց* օգտեսցին: - 19. Երրորդ՝ թէ լինէին երկու սկիզբն հակառակ *միմեանց*, մի զմիոյ ստեղծուածս ապականէին. և ո՛չ լինէին արարածք ինչ: - 20-21. Չորրորդ՝ դարձեալ թէ լինէին երկու սկիզբն և հակառակ, մարտնչէին ընդ *միմեանս*՝ և ընդ սկսեալս իւրեանց. և ոչ ինչ մնայր ի խաղաղութեան: - 21. Այլ արդ՝ է քրիստոս ամենայն՝ սիրով յօդեալ են ի *միմեանս*՝ և բարեկարգեալք: - 21. Ութերորդ՝ թէ են **բ** սկիզբն, կամ իշխեն ի վերայ *միմեանց*, կամ ո՛չ իշխեն: - 21. Իններորդ՝ թէ են **բ** սկիզբն չար և բարի, կամ հաղորդին *միմեանց*՝ կամ ոչ: - 21. Արդ՝ բարի և չար ո՛չ են հակակայք որպէս առինչք. զի առինչքն համանգամա՛յն են. և ի *միմեանց* բաղկանան. իսկ բարին և չարն ո՛չ են համանգամայն. և չարն ի բարւոյն ո՛չ գոյանայ. և ո՛չ բարին ի չարէն: - 21. Եւ թէ ոք ասիցէ, այս ներհակա՛ց է որք փոխեն *զմիմեանս*. և ո՛չ ունակութեանց և պակասութեանց: - 21. Ասեմք առ այս եթէ՝ բարի և չար ըստ ենթակային ներհակք են *միմեանց*...: - 21. Ուստի հեշտութիւն և աւանդութիւն յիրաւի խառնեալ ընդ *միմեանս*, և հակառակասիրութիւն և ինքնահաճութիւն յառաջ եկեալ, որով զինեալ պնդին ընդդէմ ուղղութեան. զի կարծեն զինքեանս ճշմարիտ գոլ քան զայլսն: - 33. Դարձեալ առարկեն, եթէ աստուած է հայր՝ և անծին է բնութեամբ, և որդի ծնեալ է, ապա ուրեմն ո՛չ է որդի աստուած. զի ծնելութիւն և անծնելութիւն հակառա՛կ են *միմեանց*. որպէս սեաւ սպիտակի կամ լոյս խաւարի: - 38. Դարձեալ՝ զի յիմարութիւն և իմաստութիւն են ի նոյն և ի մի բնութիւն մարդոյն, և ո՛չ ասին հակառակ *միմեանց*. այլ միապէս ունի յիմարն զիմաստնոյն բնութիւն և զսահման: - 38. Այսպէս անծնելութիւն և ծնելութիւն ո՛չ են հակառակ *միմեանց* բնութիւնք այլ ի մի և ի նոյն բնութիւնն: - 38. Եւ զի ո՛չ է հնար որպէս ասացի, ապա ուրեմն ո՛չ է մեծ հայր քան զորդի. զի ի *միմեանց* տանին, և ի *միմեանց* լնուն: - 39. Այս օտարութիւն անուանցս լծակցեալ ընդ *միմեանս*՝ առնէ զմոլորութիւն հերձուածողացն: - 43. Ո՛չ ցուցանէ այս **բ** կամք հակառակ *միմեանց*. զի առողին է բանս և ո՛չ առեցելոյն. այսինքն բանին՝ և ո՛չ մարդկութեանն: - 46. Զի թէ անծին, ասեն երկու անսկզբունք են և հակառակ *միմեանց:* - 52. Պատասխանեմք թէ՝ ո՛չ են հեթանոսաց աստուածքն մի, այլ բազումք և *միմեանց* հակառակք կամօք պաշտմանն և զոհիւք խնդրոյն: - 54. Նաև մարդիկ ո՛չ միայն զի ի բազմաց են գոյացեալ, այլ և ժամանակաւ առաւելք մի քան զմի. և կամօք

բաժանեալք և ի *միմեանց* և իրերաց հակառակք: - 54. Այլ այսորիկ *զմիմեանց* գործակից լինիլն յայտնեն: - 61. Եւ թէ միայն բանին որ ի յերկնից իջեալ, ահա՛ որ երկու կամք ընդ դէմ *միմեանց* խոստովանիս. ծնողին և բանին: - 70. Այլ և այլ վարդապետութիւնք ընդ դէմ այլ և այլ հերձուածո՛ց են, և ո՛չ ընդ դէմ *միմեանց:* - 79. Նախ քան զմարդեղութիւնն հեռի ի *միմեանց*. որքան աստուծոյ և արարածոյ. անեղի և եղականի. ժամանակէի և յաւիտենականի: - 82. Յորոց թէ մի ի սոցանէ գտցի ումեք, որոշեցէ՛ ի *միմեանց:* - 87. Ոչ նմանամասնաբար. զի նոքա բոլորին՝ և *միմեանց* հոմանունաբար ասին. որպէս փայտ ի բազում փայտս: - 88. Այլ աստուածութիւնն և մարդկութիւնն ո՛չ նման *միմեանց*. և ո՛չ բոլորին կոչին ըստ ոմանց: - 88. Եւ ո՛չ աննմանամասնաբար. որպէս պետրոս՝ յոտս և ի ձեռս և ի գլուխս. զի նոքա ո՛չ *միմեանց* և ո՛չ բոլորին հոմանունաբար ասին: - 88. Իսկ աստ նման *միմեանց*՝ և բոլորին կոչի քրիստոս. ըստ որում ասի՝ քրիստոս էջ յերկնից. որ է բանն. և քրիստոս եդաւ ի գերեզմանի. որ միայն մարմինն է աստուածութեամբն. և քրիստոս էջ ի դժոխս. որ միայն հոգին էր աստուածութեամբն: - 88. Իսկ միանգամայնն՝ դարձեալ ընդ դէմ է նոցա Որք զաստուած և զմարդն որոշեն ի *միմեանց*. եթէ բնութեամբ և եթէ անձամբ: - 91. Իսկ սա ասէ միանգամայն. այսինքն է համանգամայն հակադարձին առ *միմեանս* և հետևին *միմեանց:* - 91. Երկրորդ՝ հաւասարա՛կ է ի *միմեանս* գոլ անձանցն. որպէս որդի ի հայր. և հայր յորդւոջ. և հոգի ի հայր և յորդի. և անդրադարձեալ: - 106. Եւ յատուկ է անշփոթ որոշումն ի *միմեանց:* - 106. Հինգերորդ՝ զի **գ** թիւն բաժանին ի *միմեանց*. զի յորժամ բաժանես զմի թիւն՝ ո՛չ է երկուքն ընդ նմա: - 108. Եւ դարձեալ՝ որպէս ամենայն գիծ բոլորակին՝ ի միջին կէտն միաւորին առ *միմեանս*. և հեռացեալք ի միջին կէտէն բաժանին ի *միմեանց*. և զօրօրինակ՝ մի է սեռն՝ և ի բազում տեսակս բազմանայ: - 112. Ութերորդ՝ զի խորանն առաջին և երկրորդ և երրորդ՝ վարագո՛յր էր. և ծածկէին *զմիմեանս* և յայտնէին. այսպէս առաջին խորանն է աստուածայինքն. և երկրորդն հրեշտակացն. և երրորդն մերս՝ վարագուրիւք ծածկեալ՝ որ յայտնեն *զմիմեանս:* - 132. Համաձայնին *միմեանց* սուրբ վարդապետք. զի դիոնէսիոս ինն դասս ասէ հրեշտակաց. այլ առաջին դասքն անընդմիջաբա՛ր են յաստուածային իմացումն, համապատիւք և համափառք: - 134. Երկրորդ՝ ամենեքեան հրեշտակք կոչին. իբր *միմեանց* ուսուցիչք և յայտնօղք: - 137. Նախ՝ տարորշումն անձնական. և զի անձամբ յատկացեալք են ի *միմեանց:* - 137. Իսկ կողմնաւոր՝ որպէս փոխանցեալքն ի *միմեանց*. որդի ի հօրէ՛. և լօղակք ի ջրոյ: - 142. Եւ խօսի հրեշտակն ընդ հրեշտակի. ցուցանելով նմա զտեսութիւն մտացն միջնորդութեամբ հոգևոր իմն ճառագայթիւք. և այսպէս խօսին հրեշտակք ընդ *միմեանս:* - 145. Իսկ առ աստուած կամքն և կարն հաւասա՛րք գոն. վասն որոյ հակադարձին ի *միմեանս*. զի զոր ինչ կամի՝ կարէ՛. և զոր կարէ՝ զնոյն և կամի՛: - 163. Իսկ ներհական հակակայքն և այլքն կարեն փոփոխիլ ի *միմեանս*. որպէս չարն և բարին. ջերմն և ցուրտն: - 165. **Դարձեալ ասեմք, թէ կոյսն և պոռնիկն՝ առաքինութեան և չարութեան են տեսակք, և ներհանք են առաքինութիւն և չարութիւն. զի փոփոխեն *զմիմեանս*. ըստ այնմ և թողութեան հանդիպին**: - 165. Դարձեալ այն զօրութիւնն և ներգործութիւնն և հարկաւորն մի է. և հետևին առ *միմեանս*. ...: - 168. Հինգերորդ՝ զօրութեամբ և ներգործութեամբ փոփոխեն *զմիմեանս:* - 168. Իսկ բանք փիլիսոփայիցն ո՛չ են ընդդէմ եկեղեցւոյ. այլ համաձայնին *միմեանց:* - 173. Չորրորդ՝ զի իւրաքանչիւր սոքա առանձին սահման ունին և բնութիւն. և ո՛չ միաբանին ընդ *միմեանս* և ո՛չ ընդ մարմնի. այսինքն քանակն որակն. և ծանրութիւնն. և այլքն: - 175. Զօրօրինակ՝ **դ** մարդ երկու երկու ձեռօք *զմիմեանս* ըմբռնեն: - 181. Նախ այսպէս ասեն եթէ՝ տարերքն գնդաձև պատեալ են *զմիմեանս* և ամրացեալ. զի բոլորակ հուրն պատեալ է զօդ. և օդ զջուր. և ի մէջ ջրոյն երկիր է՛ հաստատեալ: - 181. Եւ վասն բարձր գիճութեանն՝ ի տե՛ս գայ. և սեղմացեալ ի վերայ *միմեանց* լինի ամպ: - 204. Կամ են **բ** հողմունք ընդ դէմ *միմեանց* հանդիպեալք և *զմիմեանս* պատեալք: - 206. Ութերորդ՝ զի նաւք ի վերայ ջուրց ընթանան փութով. և զպէտս *միմեանց* լնուն: - 207. Եւ թէ ասեն, հրեշտակք յանէից գոյացան և ո՛չ ի *միմեանց*. իսկ մարդկան ազգ պա՛րտ էր ի միո՛յն ծնանիլ: - 226. Եւ այն զի մերձ է բերանոյն. և զի հոտն և համն ազգակից են *միմեանց*. ի ջրոյ գոլով երկուցն. վասն այն զգայարանք նոցա առ *միմեանս* են մերձեցեալ: - 235. Վասն է՞ր է զի ամենայն անհատք ի մարդկանէ համատիպք են *միմեանց*. և օտարք իրերաց. զի նմանք են, և աննմանք որակութեամբ և ձևով: - 235. Եւ բնական, Նա՛խ այսպէս. զի ամենայն իր մարմնական ի նոյն տարերաց են բաղկացեալ. վասն որոյ ունին նմանութիւն առ *միմեանս*: - 236. Եւ են աննմանք՝ ըստ որում են գոյացութիւնք յատկացեալք ի *միմեանց:* - 236. Ա՛րդ՝ վասն զի գոն յամենայն իրս նոյնութիւն և այլութիւն որպէս ցուցաւ, յաղագս որոյ են նմանք և աննմանք *միմեանց:* - 236. Եւ ևս, զի **գ** դէմք Երրորդութեանն սուրբ՝ նոյն և նման գոն *միմեանց:* - 237. Նա՛խ՝ զի անմարմին դիմօք առանձնանան ի *միմեանց*. և այս յատուկ դիմօքս ճանաչեն հոգիքն *զմիմեանս*. որպէս մեծատունն զղազարու և զաբրահամու հոգին: - 237. Եւ թէ ոք ասիցէ, խառնուածոցն է այս, կամ յատուկ տեսակաց. որպէս ձայնք և տերևք և կենդանիք չեն նման *միմեանց:* - 237. Ութերորդ՝ զի

ո՛չ երևէր բարեկամն և թշնամին. սիրելին և ատելին. և լինէին բազում սպանութիւնք և աւերք. զի ոչ զգուշանային *միմեանց:* - 238. Զի ուղեղն ի մէջն սնուցանէ զոսկրն. և ջիլն կապէ՛ առ *միմեանս* զի մի քակտեսցին ոսկերքն. և արիւնն կերակո՛ւր է նոցա: - 240. Կամ զօդուածք ներքին գլխաւոր անդամոցն և արտաքին մարմնոյն, որ մորթ և միս և արիւն և այլքն առ *միմեանս* յօդին՝ լինին նոյնքան: - 244. Եւ դարձեալ թիւ ոսկերացն **մխը**. և **բժ**ան անդամքն, և **ե** զգայարանքն յօդեալ առ *միմեանս*, լինին յ**կե** զօդուածք: - 244. Եւ գիտելի է, զի հետևին *միմեանց* երեքեան սոքա. այսինքն ջիլն. և շնչերակն. և արեան երակն: - 244. Եւ այսպէս խառնին ընդ *միմեանս:* - 248. Նա՛խ՝ զի բանականի և անբանի սերմ ո՛չ խառնին ի *միմեանս:* - 267. Չորեքտասաներորդ՝ սէ՛ր է աստուած և աղբիւր սիրոյ. և մեզ պատուիրեաց սիրել *զմիմեանս:* - 272. Եւ դարձեալ՝ որպէս ծու հաւի և ծու քարեայ՝ նման ասին *միմեանց*, այլ ո՛չ պատկեր. զի ո՛չ են ի *միմեանց* ելեալ. և ո՛չ զնոյն էութիւն ունին: - 273. Երկրորդ՝ թշնամիք են մարդիկ *միմեանց:* - 277. Եւ այսպէս **ը** դիմօ՛ք է թշնամութիւն մեր ընդ *միմեանս*. և ամենայնին պատճառ սատանայ եղև, որ բնութեանս է թշնամի: - 278. Եւ բաց յայսցանէ՝ բնական որակօք ներհա՛կք են *միմեանց* **դ** տարերքդ որպէս ցուցաւ ի վերոյ: - 278. Այսինքն յօդեալ և կցկցեալ ի *միմեանս:* - 293. Ի սմա՛ ժողովեալ գազանաբարոյ և հանդարտ մարդկան ո՛չ մեղանչելով *միմեանց:* - 294. Իսկ խառնակել՝ ո՛չ զշփոթելն ասէ որ անլո՛ւր էին *միմեանց* լեզուին: - 297. Եւ սահման կոչէ զլեզուս որ բաժանէ՛ ի *միմեանց* զազգս և զազինս. որպէս որք պարըսպով և նշանիւ սահման դնեն և զանդս բաժանեն: - 298. Եւ ի հողմոյն յայնմանէ հոտ անուշութեան դրախտին բուրեաց ի նոսա. և տեսիլ իմանալի տեսին, և լուր իմանալի լուան. և յայնմանէ մոռացան զառաջինն. և որպէս ի քնոյ զարթուցեալք ո՛չ լսէին զլեզուս *միմեանց:* - 298. Եւ կարելի՛ է ամենայն կապիւս զոր ունիմք առ *միմեանս*՝ փոխիլ առ աստուած և կապիլ ի նա: - 317. Եօթներորդ՝ կարկուտն հրախառն. զի **բ** հակառակն միաբանեալ ջուր և հուր ի կորուստ ամբարշտացն և ո՛չ ապականէին *զմիմեանս:* - 334. Զոր տեսեալ ժողովրդեանն նոր՝ ասէին *ցմիմեանս*, զինչ է սա. և կոչեցաւ մանանայ: - 338. Չորրորդ, փոխի՛ բորն. և մեղքն ի *միմեանս:* - 367. Եւ որ հասարակն, և սմա՛ մարմնոյն և հոգւոյն ո՛չ խտրի. զի եղբայր յեղբօրէ օգնեալ՝ *զմիմեանց* բառնան զտկարութիւն: - 370. Երրորդ՝ զի ծերոյն լուծեա՛լ են տարերքն ի *միմեանց*. և ապականեալ առողջութիւնն: - 377. Նախ՝ զի փորձեսցին և ընտրեսցին ի *միմեանց* հաստատունքն ի հաւատս և տկարքն: - 388. Երկոտասաներորդ, զի ուսուսցէ մեզ զմարդասիրութիւնն և զներելն *միմեանց*. որպէս աստուած երկայնամիտ եղև առ քանանացիսն որ պատժապա՛րտք էին: - 417. Զի թէպէտ փակեալ էր օրէնքն խառնիլ երկուց ցեղիցն ընդ *միմեանս*, սակայն ղևտացւոցն ո՛չ գոյր ժառանգութիւն և բաժին, խառնէին երբեմն ընդ թագաւորական ազգն յուդայ: - 461. Զի են որ միաւորեալքն էութիւնք են և շաղկապն պատահումն. որպէս երկուք ոմանք անջատեալք ի *միմեանց*՝ պատահմամբ սիրոյ շաղկապին: - 476. Երրորդ՝ որպէս բաժանեալ ի *միմեանց*՝ ո՛չ գոյ մարդ. այլ մեռեալ մարմին կամ մերկ հոգի: - 477. Նա՛խ՝ զի միաւորութիւնն մարդոյս եղականա՛ց է ընդ *միմեանս:* - 478. Երկրորդ՝ զի հոգի և մարմին գոյակիցք են *միմեանց* անընդհատ ժամանակաւ: - 478. Ութերորդ՝ զի աստ ի միաւորութիւն հոգւոյ ընդ մարմնոյ՝ զգայակից և ախտակից լինին *միմեանց* կրական գոլով: - 479. Քանզի ո՛չ կարէին ի միում աւուր յերկոսեան ուխտսն կատարել զտօնսն հեռի գոլով ի *միմեանց.* երուսաղէմացիքն այսր աղագաւ փոխեցին. և փոքր փոքր աճմամբ ընկալան և ա՛յլ եկեղեցիք զնոյն: - 482. Իսկ ապականութիւն այլայլութեամբն ի ներքս մտանէ, և զորոշեալսն ի *միմեանց*՝ դարձեալ օցտէ՛ և այլայլէ՛. մինչ զմարմինն ի բուն տարերս լուծանէ, և զհոգին յաներևոյթ տեղիս: - 498. Իմաստունք զտեղին յերկուս բաժանեն. ի վերին և ի ներքին. զի սոքա են հակակայք և առինչք *միմեանց*. իսկ միջին տեղի ո՛չ է...: - 505. Նա՛խ՝ որպէս բոլորն է մարմին և իւրաքանչիւր մասունքն. նոյնպէս և բոլորն մի եկեղեցի՝ և իւրաքանչիւրքն. և բոլորն քրիստոնեայ՝ և մին մարդն. եթէ նման են *միմեանց* և եթէ աննման: - 533. Վասն որոյ զայս **գ** ժողովքս տիեզերական և *միմեանց* համաձայն ընդունիմք. այլ զքաղկեդոնին ո՛չ ընդունիմք. զի ընդ դէմ է առաջնոցն և կաքտումն դաւանութեան տօնից կարգաց և կանոնաց ամենայնիւ: - 541. Զի այսպէս սահմանեցին՝ թէ ինքնակալ թագաւոր մի և ինքնագլուխ հայրապետ մի նստցի ի հայս. և թագաւոր մի ինքնակալ՝ և ինքնագլուխ հայրապետ մի ի հռօմ. և ի վերայ *միմեանց* դիցեն զանձինս ի մահ. և սոսկալի գրով եղեն *միմեանց* եղբարք. թացեալ զգրիչն յահաւոր խորհուրդն: - 548. Ա՛րդ՝ ի սոցանէ ո՞րք իցէ ճշմարիտ. և կամ հակառակք են *միմեանց* թէ ոչ, լուծանել աղաչեմ: - 555. Պատասխանեմ և ասեմ եթէ ո՛չ են *միմեանց* հակառակ. այլ երկոքեանն ճշմարիտք են որպէս ցուցանեմք յետոյ: - 556. Ապա ուրեմն յա՛յտ է լուծումն տարակուսանացդ ըստ կարգի. և ոչ ոքն ի նոցանէ հակառակ գոն *միմեանց* որպէս ասացաւ: - 558. Նախ ասեմք թէ՝ համաձա՛յն են *միմեանց*. զի և սա Նազրիոս է ասէ. զի տրտմութիւն և ծանծրութիւն մի երևին. զի տրտմութիւն ի պակասութենէ բարւոյն լինի, իսկ ծանծրութիւն յաւելուածոյ բարւոյն: - 559. Ապա յա՛յտ է թէ համաձայն են *միմեանց:* - 559. Չորրորդ՝ զբաժանեալքս միացնէ ի տէր և առ *միմեանս:* - 573.

Դարձեալ կոչին ծառայականք, զի և ի խառնուածոյ մարմնոյն գոյանան. որք ո՛չ հետևին *միմեանց*. զի որ ի խառնուածոյն ողջախո՛հ է, նա ո՛չ խոհեմ կամ արդար կամ արի կարէ գոլ: - 581. Դարձեալ կոչին յանձնառականք. որ ի պատուիրելոյ ումեք գոյ ողջախոհ. այլ զպատճառն ո՛չ գիտէ. նաև ո՛չ հետևին *միմեանց:* - 582. Իսկ վեցերորդ կոչին մակստացականք. այսինքն ի վեր ստացեալ աշխատութեամբ. որք հետևին *միմեանց* իբրև զչարս շղթայից: - 582. Եւ զինչ և իցէ՝ միաւորեմք ընդ *միմեանս* և խոստովանիմք զբանն աստուած մարմնացեալ անբաժանելի ի մարմնոյ իւրմէ: - 598. Երրորդ՝ բաժան ի *միմեանց* օրհնեմք զհացն և զբաժակն. և յետոյ միաւորեմք ի ճաշակելն...: - 598. Զի բռնութեամբ և առանց հաւանելոյ *միմեանց*՝ այսինքն փեսային և հարսին՝ ո՛չ հաստատի պսակն: - 610. ...այսինքն զի տեսեալ հաւանեսցին *միմեանց*: - 610. Զայս ունի խորհուրդ, որ հարսն և փեսայն յառաջ քան զպսակն տեսանեն *զմիմեանս*. և հաւանին սրտիւք և կամօք և ապա՛ պսակին: - 610. Նախ որպէս ծայնիւ եղանակաւ նման *միմեանց*. որպէս զողորմեայքն առ նոյն. և զտէր յերկնիցն առ նոյն: - 642. Երեք չուանն յեռեալ ի *միմեանս* մակդարձապէս, է՛ չորեքնիւթեայ բնութիւնս մեր ի տարերց խառնեալ. կամ շնչոյ մարմնոյ և հոգոյ խառնումն: - 645. Դարձեալ, նշանակէ զժողովուրդն աստուծոյ. յորոց ունկն ընթերցեալ լինին միշտ բանք աստուածայինք. հնգիւք զգայութեամբք հոգւոյ և մարմնոյ առ *միմեանս* յեռեալք: - 646. Երկրորդ, զի ուսցուք այսպէս զամենայն ինչս մեր հաղորդել ի պէտս կարօտելոց. և *զմիմեանս* մեծարել և պատուել սիրով: - 655. Զի՞նչ է յորժամ զհնի ըմպեմք, օրհնեմք և շնորհակալեմք *միմեանց.* և յայլ կերակուրս և ըմպելիս ո՛չ առնեմք նոյնպէս: - 655. Նախ՝ զի հաւասարութիւն ունիմք առ *միմեանս*. այլ և կարգ. որ է՛ առաջին միջին և վերջին: - 656. Տասներորդ, Վասն բաժանման հոգւոցն թէ ճանաչե՞ն *զմիմեանս*. և գիտե՞ն զմեզ. և աղօթե՞ն ի վերայ մեր: - 660. զի որպէս հոգևոր սիրով կեցաք. նոյնպէս սիրով բաժանիմք. և թէ իցէ քէն ինչ, զայն շնորհմեք *միմեանց:* - 673. Վեցերորդ՝ ի *միմեանս* յանձին լինիմք. մեք ի նա՛ և նա՛ ի մեզ. - 673. Նշանաքարն կրկին, Նախ ցուցանէ զհոգի և մարմին բաժանեալ ի *միմեանց*: - 679. Յոգիքն ճանաչե՞ն *զհիմիմեանս*, թէ ոչ: - 685. Յոգիք արդարոցն ճանաչեն *զմիմեանս* անուամբ և ծննդեամբ և գործով վաստակոցն. որք զարդիւնսն միշտ մերձ տեսանեն: - 685. Երկրորդ՝ զի պատկանեալ են և համաշունչ յերգն աստուածային՝ և ի սէրն առ *միմեանս* և առ աստուած: - 713. Նոյնպէս հոգին բաժանեալ և մարմին լուծեալ ի հասարակ տարրն, այսու խառնեալ դրոշմիւ ճանաչեն *զմիմեանս* անսխալապէս: - 719. Իններորդ, հոգին և մարմինն են մի անձն մարդոյ. վասն որոյ փոխակրեն ի *միմեանց* զբարիս և զչարիս: - 724. Երրորդ՝ ուղղի մոլորութիւնն որ է՛ խանգարումն անդամոցն ի *միմեանս* սխալեալ ըստ բնութեան տկարութեանն: - 725. Տասներորդ, քրիստոս գլուխ է մեր և մեք անդամք. և զի քրիստոս է դատաւոր՝ պարտիմք մեք *զմիմեանս* մեծարել և սիրել...: - 735. Եւ այսպէս բաժանեսցին ի *միմեանց* տեղեաւ և փառօք. որպէս օդիք և այծիք յաջմէ և յահեկէ քրիստոսի: - 738. Չորրորդ, յայտնելով մեղացն. և այսպէս մեղաւորք և չարք *զմիմեանս* դատեսցեն: - 738. Ապա յա՛յտ է զի տեսանիմք ի մէնջ և ի *միմեանց* և ի դատաւորէն աստուծոյ: - 741. Նախ հոգին և մարմինն. զի ցանկան հակառակ *միմեանց* ըստ այրւոյ առակին առ անիրաւ դատաւորին: - 743. Չորրորդ զբարի և զչար գործս մեր առ *միմեանս* հաւասարել. կամ միտել ի չարս և ի բարիս: - 745. Եւ միտումն երբէք և ուրէք հարստահարելով և հաւասարելով ընդ *միմեանս*՝ այսպէս. - 746. Թիկունս առ *միմեանս* դարձուցեալս: - 753. Վասն որոյ առհասարակ դժկամակ թուի. մինչ ընտրեսցեն ի *միմեանց*. զի ինքեանց գիտակքն իմաստունք են: - 774. Յասարա՛կ է և բնութեան իր, զի ամենայն ինչ նախնի մարդոյն բնութեամբ է ի մեզ և հասարակ իր. և առ յանդիմանութիւն դժկամակ երևեցան նախնիքն մեր. ուստի պատճառեցին *զմիմեանս:* - 774. Եւ որպէս թէ բազումք *զմիմեանց* զմիոջէ կախեալք զվախէ՛. և եթէ ոք խզեսցէ զառաջնոյն զկապ, միապէս անկանին. թէպէտ մինն առաջին: - 777. Եւ այսոքիկ որք երևին ընդ դէմ *միմեանց,* կամ առ այլս կամ երբեմն, ո՛չ փոփոխումն ինչ ցուցանեն անփոփոխելոյն. առ մեզ փոփոխելոց ըստ արժանոյն գութ կամ հատուցումն. թէ աստ՝ թէ ի հանդերձեալն: - 779. Եւ զանազան տեսութիւնք վարդապետաց չեն ընդ դէմ *միմեանց*. այլ զորօրինակ ոմն զական պատւականութիւն, և այլ ոմն զբնութեան, և կէսք զասդողութեան, և ոմանք զորակացն գեղեցկութեանց, պատմեն զմի և զնոյն ական իր: - 781-782. Եւ ըստ այլ կերպի փոփոխին սոքա ի *միմեանս* և լինի ստորասութիւնն բացասութիւն, և բացասութիւնն ստորասութիւն: - 787

**ՄԻՆ +** Զոր օրինակ՝ յորժամ ասեմք՝ լինի անձրև կամ ո՛չ, ի հարկէ *մինն* ի նոցանէ լինի: - 8. Ըստ իմաստնոյն արիստոտէլի՝ ի հակասութեանց ի հարկէ *մին* կողմն ճշմարիտ է: - 8. Որպէս յորժամ ասեմք, վաղիւն լինի արև, կամ ո՛չ լինի. լինի անձրև, կամ ո՛չ լինի. ի հարկէ *մինն* ճշմարիտ է ի սոցանէ: - 8. Նախ՝ եթէ լինէր բանս մեր ի հարկէ ճշմարիտ, նա ո՛չ *մինն* միայն, այլև ամենայն բան զինչ ասէաք՝ ճշմարիտ լինէր. որպէս շինել քաղաք, կամ ո՛չ շինել. տնկել այգի, կամ ո՛չ տնկել: - 8. Ասեմք թէ՝ այո՛ ի հարկէ *մինն* ճշմարիտ է. և *մինն* սուտ. այլ զանազանապէս ըստ իրին: - 9. Զի ի վերայ մշտնջենաւորացն բացորոշակի յերեք

ժամանակս՝ այսինքն յանցեալն ի ներկայն և յապագայն՝ *մինն* ճշմարիտ է և *մինն* սուտ. որպէս հրոյ ջերմութիւնն և արեգական լոյսն: - 9. Զի ի վերայ մշտնջենաւորացն բացորոշակի յերեք ժամանակս՝ այսինքն յանցեալն ի ներկայն և յապագայն՝ *մինն* ճշմարիտ է և *մինն* սուտ. որպէս հրոյ ջերմութիւնն և արեգական լոյսն: - 9. Իսկ ի վերայ փոփոխականացս ո՛չ նմանապէս. զի յանցեալ ժամանակս և ի ներկայս բացորոշակի *մինն* ճշմարիտ է և *մինն* ստէ՛. որպէս ասեմք՝ երէկ անձրև էր, կամ ո՛չ էր. այսօր անձրև է, կամ ո՛չ է: - 9. Իսկ ի վաղիւն ո՛չ գիտեմք թէ անձրև է թէ ոչ. զի գիտեմք որ *մինն* լինի. այս՝ կամ այն՝ որ և հանդիպի. անձրև՝ կամ ո՛չ. այլ ի հարկէ բացորոշակի ո՛չ գիտեմք *զմինն:* - 9. Զորօրինակ՝ իրն ի ներկայս որ է նիւթ ներընդունակ՝ ունի կրկին զօրութիւն. որպէս հանդերձն կարէ՛ պատառիլ, և կարէ՛ ո՛չ պատառիլ. և ջուրն կարէ ջերմն գոլ, և կարէ՛ ո՛չ գոլ. և *մինն* ի նոցանէ՛ լինի ներգործութեամբ որն և հանդիպի: - 9. Ա՛յսպէս և որ ի հանդերձեալն լինելոցն է՝ ունի կրկին զօրութիւն լինելոյ և ո՛չ լինելոյ. և հանդիպմամբ *մինն* յառաջէ՛ ի նոցանէ և լինի ներգործութեամբ: - 9. Զորօրինակ՝ թէ բազում մարդիկ անցանեն զճանապարհայն, և մերձ կացեալն տեսանէ նախ *զմինն* և ապա զերկուսն՝ և որ զկնի: - 15. *Մինն* է արդարութեան այժմու կենացս, որ է փոփոխական. յորմէ կարէ՛ ոք ջընջիլ: - 18. Եթէ ոչ հաղորդին, *մինն* է ի նոցանէ էակ. և այնպէս ո՛չ երկու սկիզբն: - 21. Ա՛րդ՝ եթէ միակս այս շարադրի բազմաց, ո՛չ մնաց *մին*. իսկ եթէ ոչ շարադրի, ո՛չ գոն բազումք. այլ մի և մի. և այս որպէս այս: - 25-26. Ա՛րդ՝ յորժամ ծնաւ քրիստոս՝ այնպէս խաղաղութիւն էր՝ որ *մին* մարդ տիրէր ամենայն աշխարհի: - 27. *Մինն* որ է աստուած՝ իսկապէս մեզ, և նմա ըստ մարմնոյն: - 43. Եւ ո՛չ կարողանայ *մինն* առանց միւսոյն զի լծակիցք են: - 44. Հինգերորդ՝ զի զօրութիւն՝ կարողութիւն՝ ուստի առնելն է՝ և աստուածութիւն՝ տէրութիւն՝ իշխանութիւն և այլք այսպիսիք՝ ո՛չ են առանձին անձնաւորութեանց. այլ հասարա՛կ են. և ո՛չ *մին* առաւել քան զմի...: - 45. Զի ասեն *զմինն* արարիչ՝ զօրութեամբ և բնութեամբ անսահմանելի: - 51. Ասեն դարձեալ, օրինակ տուք զի լիցի ի նոյն բնութենէն *մինն* ծնունդ՝ և միւսն ո՛չ ծնունդ. և ապա՛ հաւատամք աստուած զհոգին: - 53. Պատասխանեմք թէ ցո՛յց մեզ սոյնպէս աստուած երեք անձինք ի մի բնութիւն. և ես ցուցանեմ *զմինն* ծնունդ և զմիւսն ո՛չ ծնունդ: - 53. Դարձեալ հարցանեն թէ՝ զիա՞րդ ասէք երեք և մի բնութիւն. զի **գ** միոյ բնութեանն ո՛չ հաղորդի. այլ *մինն* հաղորդի միոյ բնութեանն, և երկուքն երկուքին. և երեքն երեքին. զի որքան է թիւն, այնքան բնութեան թըւակից լինի: - 54. Պատասխանեմք եթէ՝ թէպէտ հոգին ունի զբնութիւնն ի հօրէ՝ սակայն ո՛չ ծննդեամբ որպէս որդի, այլ բղխմամբ. որպէս շունչն և բանն ունին զէութիւնն հոգւոյն այլ և այլ կերպիւ. և որպէս ադամ յառաջ էած յինքենէ զսէթ և զևա. *զմինն* ծնունդ և զմիւսն ո՛չ ծնունդ. և ունին երեքեանն զմի և զնոյն բնութիւն մարդոյ: - 60. Իսկ եթէ զանձն ասացիք բղխեալ, ահա **բ** անձն ասացիք հոգւոյն. *մինն* ի հօրէ բղխեալ, և *մինն* ի յորդւոյ. և այսպէս լինի երրորդութիւնն չորրորդութիւն: - 62. Եւ ըստ այսմ լինին մանեայ **բ** աստուածքն. *մինն* բարւոյ և *մինն* չարի արարիչ. որ է անաստուածութիւն: - 62. Զի թէ կարգաւոր, երբեմն *մինն* և յետոյ միւսն. որ յառաջին բղխօղ է՝ նա՛ է բղխօղ. և ո՛չ վերջինն: - 63. Դարձեալ՝ հարցանեմ, զի թէ *մինն* բոլոր բղխումն է հոգւոյն և ո՛չ մասն. զի թէ *զմինն* զայն հայր բղխէ, ապա ուրեմն ո՛չ բղխէ որդի. իսկ թէ *զմինն* զայն որդի բղխէ, բըղխեալն հոգի թո՛ռն լինի հօր, և ո՛չ բըղխումն նմին: - 63. *Զմինն* ծնօղ և յառաջ առաքօ՛ղ ասեմք անախտաբար և անժամանակ: - 65. Ուստի *մինն* տըւօղ և միւսն առօղ ըստ նոցայն. այս է բանն և մարդն: - 66. Եւ այն զի ո՛չ ինչ ունի *մինն* նըւազ քան զերկուքն, և ո՛չ երկուքն առաւել քան *զմին*, բաց յառանձնութեանցն: - 74. Ա՛րդ՝ զանազան զգայութեամբ զանազանապէս զգամք, և ո՛չ ամենայնիւ *զմինն* կամ միովն զամենայն: - 75. Վասն որոյ ասէր՝ *մինն* աստուած էր բնութեամբ բանն. աստուած արարիչ և ստեղծիչ: - 79. Որք **բ** անձն և **բ** բնութիւնս՝ և **բ** կամս՝ և **բ** գործս բաժանեն քրիստոսի. **բ** որդի՝ և **բ** քրիստոս յայտնապէս ասեն. *զմինն* տէր, և *զմինն* ծառայ, *զմինն* բնութեամբ որդի աստուծոյ, և զմիւսն շնորհօք. և այլն: - 82. Ո՛չ երկուս բնութիւնս *զմին* որդին ասելի...: - 83. Նախ զնիւթն զմի բնութիւն նիւթական որպէս մարդ. և զմիւսն բնութիւն աննիւթ որպէս զաստուած. զԶնն՝ *զմինն* քանակութեամբ և որակութեամբ տարբերեալ որպէս մարդոյ. և զմիւսն ի վեր քան զկերպ և զձև որպէս աստուծոյ: - 87. Եւ ժամանակն՝ *մինն* յաւիտենից, և միւսն ժամանակեայ: - 87. Նոյնպէս տեղիք մարմնոյն պարունակօղ՝ *զմինն* պարագրելի, և զմիւսն անպարագրելի: - 87. Երկրորդ՝ զի յընդդիմաբաժանեալ տեսակս՝ ո՛չ ունի պէտս *մինն* միւսոյն առ ի բաղկանալ: - 87. Երրորդ՝ զի յընդդիմաբաժանեալ տեսակս՝ ո՛չ ուրեք *մինն* ի միւսումն տեսանի. և ո՛չ անբանն ի բանականումն: - 87. Ապա ուրեմն ո՛չ բաժանի *մին* քրիստոս որպէս տեսակ յանհատս: - 88. Ըստ որոյ կերպի և իցէ, թիւ ի ներքոյ բերէ միոջէն և առ *մին*. և նոյնէ անձն որոշեալ թըւով: - 88. Իսկ թէ *զմինն*, հարցանեմ ձեզ՝ զո՞րն պատուէք. և կամ զո՞րն անարգէք: - 90. *Մինն* է ընդ դէմ երկուին և բազմին. և նոյնն է ընդ դէմ այլին: - 91. Զի *մինն* ախորժելի է արիոսի. և միւսն նեստորի: - 94. Կրկին է անգիտութիւնն. *մինն* է ի հեղգութեան ուսման: - 103. Եւ է դարձեալ անգիտութիւն՝ յորժամ զմիտս տարածեմք յամենայն եղեալս և

զնա ոչ գտանեմք, ժողովեմք ի *մինն* որ արտաքոյ է սոցա. և այնպէս անգիտութեամբ ճանաչի աստուած: - 103. Իսկ սուրբ գիտութիւնն ընդ դէմ այսմ լուսաւորէ՛ զմիտս և ուղղէ՛. և ընդարձակէ զտեսութիւնն և թեթեւացնէ առ վերինն. և ժողովէ ի *մինն*. և կատարէ զպատկերն: - 104. Եօթներորդ՝ աչք հեշտանայ յորժամ ի *մինն* հաստատի: - 104. Դարձեալ՝ ա՛յն է հաւասարակն՝ որ մի՛ է երիցն. և երկուքն ո՛չ աւելի. և *մինն* ո՛չ ունի պակաս: - 104. Իսկ յատուկ այլ է երիցն. և երկուքն աւելի՛. և նըւազ քան *զմինն*: - 104. Եւ յատուկ՝ զի *մինն* ծնօղ է և բղխօղ. և *մինն* ծնեալ և ո՛չ բղխեալ. և *մինն* բղխեալ և ո՛չ ծնեալ: - 106. Ըստ որում *մինն* ի սուրբ Երրորդութենէն բանն աստուած հաղորդեցաւ բնութեան մերում անքակ միութեամբ. և եղև աստուածն կատարեալ՝ մարդ կատարեալ: - 106. Նախ՝ զի *մինն* ի սուրբ Երրորդութենէն մարդացաւ: - 106. Երկրորդ՝ *մինն* սկիզբն է, և երկուքն ի միոյն: - 107. Երկրորդ՝ յերեք թիւն *մինն* պակաս ունի քան զերկուքն. և երկուքն աւելի քան *զմինն:* - 108. Իսկ ի սուրբ Երրորդութիւնն՝ *մինն* պակաս չունի քան զերկուքն. և ո՛չ երկուքն աւելի քան զմինն. զի հայր ունի զամենայն լիութիւն որդւոյ և հոգւոյ: - 108. Երրորդ՝ զի *մին* թիւն անկատա՛ր է քան զերկուքն. և երկուքն քան զերեքն: - 108. Գիտելի է՝ զի ա՛յլ է *մինն*, և ա՛յլ է միակն: - 109. Զի *մինն* հասարակ է. և միակն մասնաւոր և առանձնակի. զի ամենայն միակ՝ մի է. այլ ամենայն մի միակ ո՛չ է. որպէս յորժամ ասեմք՝ մի հօտ. մի շեղջ. մի լիտր. այսպիսիքս մի են. այլ միակ ո՛չ են: - 109. Ութերորդ՝ *մինն* պատկելով առնէ զտասն՝ և զհարիւր՝ և զհազար՝ և զբիւրն. և զանթիւն: - 109. Իններորդ՝ *մինն* յայտնի է ի տասն և ի հարիւրն և ի հազարն և ի բիւրն ընդ աղօտ և ծածուկ: - 109. Մետասաներորդ՝ որպէս *մինն* ի բազումս եկեալ ընդարձակի. և ի բազմաց ի *մինն* ընթացեալ նեղի: - 110. Դարձեալ՝ գիտելի է՝ զի կրկին կերպիւ առեալ լինի *մինն:* - 110. *Մին* զի նա՛խ է քան զամենայն գոյ. թէ սկիզբն և թէ էութիւն: - 111. Այսպէս մի է յարացոյցն ի *մինն* աստուած: - 112. Իսկ մեք *զմինն* - 119. Իսկ հաւատն առ *մին* և աստուածային ճշմարտութիւնն: - 122. Իսկ ի ներքուստ ի վեր՝ ի բազմութենէ առ *մինն* ընթանայ. որպէս խորհրդական աստուածաբանութիւնն արտաքոյ թողեալ զբազումութիւն էից և ի *մինն* ընթացեալ, որ ամենեւին անբանութիւն է և անիմացութիւն. անճառելի. անիմանալի. և լռութեամբ պատուի յամենայն արարածոց: - 123. Ասեմք եթէ՝ տպաւորութիւնն լինի կրկնակի. *մինն* նման նմանութեամբ. որպէս լոյս. հուր. և այլն: - 131. Իսկ թէ ոմանք գո՛ւ ասեն **ժ** դասք և *զմինն* անկեալ, ո՛չ պարզապէս, այլ կրկին է իմացումն: - 134. Երկրորդ՝ թէ *մինն* ի տասն դասուցն անկաւ և մնաց ինն: - 134. Վասն այն իրինոս զնոսա ի *մին* դասակարգութիւն ասէ: - 134. Նոյնպէս յերեւումն հրեշտակաց զոր *մինն* տեսանէ՝ այլ մերձակայքն ո՛չ տեսանեն. որպէս յա՛յտ է ի պատանեակն եղիսէի: - 145. Այլ այս ո՛չ է հաւասարակ թէ **ժ** դաս էր հրեշտակաց և *մինն* անկաւ: - 150. Զի ոմանք ասեն թէ ի միջին դասուցն անկան **գ** մասն, և *մինն* մնացեալ յիշխանութեանցն խառնեցաւ: - 150. Երրորդ՝ և թէպէտ իցեն բազում արբանեակք շինուածոյն, այլ *մինն* է արհեստաւորն և պատճառ: - 164. Նոյնպէս թէ և իցեն հրեշտակք արբանեկեալք ի ստեղծումն գոյից, սակայն *մինն* է աստուած պատճառ ամենայն գոյից: - 164. Ուստի յա՛յտ է զի կարելին ունի զգոլն և զչգոլն. և անկարն *զմինն*. կամ զգոլն կամ զչգոլն: - 165. Այլ արդ՝ կուսութիւնն է ի կարելոյն որ ունի զգոլն և զչգոլն. իսկ ապականութիւնն է յանկարելւոյն. որ ունի *զմինն* և ո՛չ կարէ հակադարձիլ առ միւսն: - 165. Երրորդ՝ զի ի հարկէ՛ էակ է աստուած. և հարկն *զմինն* ունի ի հակադրութեանց. այսինքն կամ զգոլն կամ զչգոլն: - 168. *Մին* է՝ զի միշտ ոչ ինչ է. զի ոչ զօրութեամբ և ո՛չ ներգործութեամբ ունի զգոլն. և յայս ոչ էակէս ոչ ինչ լինի: - 173. Նմանապէս ծանիր և զայս կրկին է էակն. *մին* մշտնջենաւոր և միշտ ներգործութեամբ, որպէս աստուած. հրեշտակք. և արեգակն և հուր: - 173. Իսկ մշտնջենաւոր էակն միայն *մին* ունի զօրութիւն որ է առինքն ներգործութեամբ. որպէս հրոյ ջեռուցանելն. և արեգական լոյսն. և հրեշտակին անապականութիւնն: - 173. Մանաւանդ թէ իւրաքանչիւր տարերք **բ** ծայրք որակութեանց ունին. *զմինն* գոյացական և զմիւսն պատահական. ըստ այսմ պա՛րտ է ասել քեզ մետասան բնութիւն քրիստոսի: - 176. *Մին* մարմնական. որ ի մէնջ տեսանի: - 180. Ի բաց դնելն կրկին է. *մին* ըստ տեսակի, և միւսն ներգործութեամբ: - 186. Վարդապետք ասեն. որպէս սուրբն բարսեղ՝ թէ որպէս երկբերանի քսա՛կ է լուսինն. ընդ *մինն* ելանէ և ի վերի թիկունքն ժողովի և պակասի ի մէնջ լոյսն. և ի միւսն ի ներքս մտանէ և լուսաւորէ՛ զմեզ: - 187. Եւ թէ ասեն՝ յանօթո՛յն է որ *մինն* առաւել լոյս տայ և *մինն* նուազ, և ո՛չ ի լուսոյն. որպէս յստա՛կ ապիկի առաւել լուսաւորէ: - 188. Եւ այս **բժ**ան կենդանակերպից վեցն է ի մէջ երկնից ի հիւսիսոյ կողմս առ մեզ, և ի *մին* կիսագունդն: - 189. Երկրորդ՝ Լուսնթագն. զոր մուշթարի կոչեն. ջե՛րմ է և գէճ. *մին* ամ յամէ՛ ի կենդանակերպն. և ի **ժբ** ամն պատէ՛ զամենայն: - 189. Եւ ի *մին* հոլովն՝ **շ** ասպարէզ ընթանայ: - 191. Հինգերորդ՝ այս *մին* օրս է որ կրկնելով կատարէ՛ զշաբաթ և զամիս և զտարի և զդարս կենցաղոյս, և հասանէ՛ ի վերջին օրն. որ է՛ մի օր աներեկ և անփոխանորդ: - 193. Զորօրինակ՝ լիտր *մին* շաքար ի լիտր *մին* ջուր անկեալ, նոյն *մին* լիտր մնայ կշռեալ: - 202. Երկու գոլորշիք վերանան յերկրէ. *մինն* չոր և ծխատեսակ. և միւսն խոնաւ ի գէճ բնութեանց

վերացեալ: - 204. Ապա ուրեմն երևի թէ ի *մին* տարրէ գոյացան ի հողոյ կամ ի ջրոյ: - 214. Տե՛ս` ի չորից բաժանմանցդ *մինն* է ընտրելի, և **գն** խոտելիք են: - 215. *Մինն* պարզ և զուտ բարին ներքոյ և արտաքոյ. որպէս առաքինութիւն. և հոգևոր գործն. յայսպիսիքս հրամայէ՛ մեզ մերձենալ: - 224. Այլ ա՛յս է ճշմարիտն. որ *մինն* ծառ էր կենաց` և *մինն* գիտութեան. և ի դրախտին այլ ո՛չ գոյր նման նմա. թո՛ղ թէ յերկիրս. ո՞րպէս ասեմք թէ այս է` կամ այն: - 224. Դեղնի երեսն և կարմրի. և *մին* մարդն սև, և *մին* սպիտակ լինի. և շէկ և ծիծաղկոտ և այլն: - 227. Տասներորդ` մէջ և կապ ամենայն գոյիցս մա՛րդն է կազմեալ. զի ամենայն արարածք ի **բ** դէմս որոշին. այսինքն *մինն* յիմանալի և միւսն զգալի. և սոքա եղեն յառաջագոյն: - 231. Դարձեալ ոմանք ասեն *զմին* ձեռքն երեք անդամ. այս է` մինչ ի խաղալիկն *մին*. և մինչ յարմունկն **բ**. և մինչ ի կուռն երեք: - 241. Ապա թէ յեօթանց ասացելոցս *մինն* վնասի, իսկոյն մեռանի մարդն: - 241. Ներքին կզակն և վերին. և **բ** քնատեղն *մին* ոսկր. և գագաթն: - 243. Եւ բաց յայսցանէ` ի յուղեղէն **բ բ** երակ գայ յիւրաքանչիւր զգայարանս. **բ** յաչքն. **բ** յականջն. **բ** ի քիթն. **ա** ի բերանն. *մին* ի լեզուն. **բ** ի ձեռքն. **բ** ի յոտքն. որ լինի **ժբ**: - 244. Եւ **ժէ** գլխաւոր ջիլքն, և *մին* բուն ջիլն. որ լինի բովանդակն յկզ ջիլք: - 244. Վասն է՞ր *մին* մարդն սեաւ լինի և *մինն* սպիտակ, կամ շէկ, և այլն: - 245. Տէրն յաւետարանին զչարն և զվատն *մին* ասէ: - 251. Վասն է՞ր *մին* տղայն ուշիմ և մտացի լինի. և *մինն* ապուշ և բռնամիտ: - 251. Եւ որպէս ասէ արիստոտէլ զերեք թիւն` որ մի ունի զէութիւն իւր. այլ երկուքն և *մինն* մասունք են նորա: - 259. Զի յորժամ ասես *մին* այս առաջին մասն է երրորդին. և երկուքն երկու մասն: - 259. ...այսինքն յերկու սերմանց ծնողացն լինի *մին* մարմին զաւակի: - 261. Նոյնպէս և յառիւծոյ և յիշոյ ո՛չ լինի ծնունդ. զի *մինն* մսակեր է և միւսն ընտակեր: - 267. Ութերորդ` **գ** անձինք կատարեալք. և թէ *մինն* պակասիցէ` ո՛չ է կատարեալ աստուած. և մարդս երրորդությամբ է կատարեալ. հոգւով և մարմնով և բանիւ. և թէ *մինն* պակասիցէ` անկատա՛ր է մարդն ասէ վարդապետն վարդան: - 271. Եւ թէ *մին* կին բազում այր չառնոյր. այլ մարդն առնոյր. և զկին եղբօրն առնուլ: - 285. *Մին* ճանապարհ գալ` և **է** փախչիլ: - 285. Երկրորդ` *զմին* յառաջ քան զջրհեղեղն, և զմիւսն յետոյ. զի ցուցցէ թէ յերկոսին ժամանակս ընտրեալքն հաճոյ եղեն աստուծոյ: - 289. Երրորդ` *մինն* կուսութեամբ, և միւսն ողջախոհ ամուսնութեամբ. զի ցուցցէ թէ ի կուսից և յամուսնացելոց մտցեն յարքայութիւնն երկնից: - 289. Նոյնպէս և ի սուրբ կենդանիս ի **դ** մասնէն *զմինն* ուտեմք: - 296. Եւ որպէս անդ հոգին ի նմանութիւն հողմոյ եկեալ *զմինն* **հբ** բաժանեաց: - 298. Ութերորդ` յովսէփ զերկու երազատեսքն *զմինն* կեցոյց և *զմինն* մեռոյց: - 313. Եւ տէր մեր յերկուց աւազակացն *զմինն* ի փառս էած, և *զմինն* ի դատապարտութիւն: - 313. **Նա՛խ` որպէս հասարակ շինականք ի ծննդեան զաւակաց *զմին* օրն պատուեն աղարուք կոչելով:** - 321. Վասն այն յոբ **ժ** պատարագաւ սրբէ՛ր զ**ժ** մասնաւոր մեղսն որ գտանին յարբեցութեան. և *մին* զուարակն ի սրբութիւն վասն ակամայ և խորհրդոյ մեղացն: - 322. Չորրորդ` *մին* ձեռն մովսէսի մեռաւ բորոտութեամբ. զի *մին* ազգ փրկեցաւ նովաւ: - 332. Երկրորդ` զի մի ոք որ կատարէ զօրէնս, պատուակա՛ն է աստուծոյ քան զամենայն աշխարհս. վասն այն ընդ *մինն* խօսի: - 340. Սոքա ամենայնքն զբերանս մտաց բացեալ ունին առ *մինն* և ճշմարիտ ջահն քրիստոս: - 347. Դարձեալ գիտելի է, որք զքրիստոս բաժանեն յերկուս բնութիւնս. և յերկուս գործս սոյնպէս. *զմինն* աստուած` և զմիւսն մարդ. հզօր և տկար. և գործ մարդոյ և գործ աստուծոյ. որպէս աղանդն քաղկեդոնի: - 350. *Մին* վասն օրինաց տախտակին: - 352. Եւ *մին* վասն ահարօնի հաշտութեանն ելանել կրկին ի լեառնն: - 352-353. Եւ *մին* յորժամ զլրտեսքն առաքեցին ի կագիսա. և **խ** օր յամեցին և մովսէս զ**խ** պահեաց: - 353. *Մին* վասն հաւատոյ օրինաց. և *մին* վասն հոգւոյս իբր ահարօնի. և *մին* վասն մարմնոյս որպէս ժողովրդեանն: - 353. *Մինն* ըստ բնութեան ծնողաց: - 353. Որպէս այժմ *մին* նշխարն ի հաղորդութիւն սուրբ մարմնոյն, և զայլ նշխարքն արժանացեալք արիութեամբ ճաշակեն: - 358. Մետասաներորդ, բոլորապտուղ. որ է հանապազորդ գառն խորովեալ յառաւօտն և յերիկոյն *մին* հացով և **դ** մասն դորակի գինով: - 359. Բորոտից սրբիլն **բ** հաւ. *զմինն* զենուլ և *զմինն* յարիւն թաթաւել և թողուլ. և գառն և տատրակ և աղաւնի: - 359. Այլ և ի տօնի քաւութեանն զուարակ մի և **բ** նոխազ վիճակով. *մին* տեառն և միւսն արձակման յանապատ: - 359. Նա՛խ` բերել ի դուռն խորանին և տաճարին. և ո՛չ ի բազում մեհեանս. զի ցուցցէ *զմինն* աստուած` և յանուն նորա ընծայել: - 359. Եւ *մին* վասն մեղաց. զի կերակուր ետ զմարմինն և զարիւնն իւր: - 361. Կրկին էր ողջակէզն. *մին* որ արտաքոյ այրէին: - 362. Դարձեալ` կրկին է ողջակէզն. *մին* վասն մեղաց որ է՛ կամաւոր. և միւսն յանցանաց որ է՛ ակամայն: - 362. Դարձեալ` կրկին ողջակէզն. *մին* վասն մեղաց. և միւսն վասն սրբութեան: - 362. Դարձեալ` կրկին ողջակէզն, *մին* այն է որ մատուցանեմք զպատարագն քրիստոսի մարմնոյ և արեան: - 362. Հինգերորդ` կրկին ողջակէզն. *մին* պատարագն է ամենայն աւուր. և միւսն տօն չարչարաց խաչի և մահու յամենայն ամի՛ զոր նոյն խորհրդով կատարէ՛ եկեղեցի: - 363. Իսկ ի ներսն, **ա**` հացին երեսաց և գառին. **բ**` խնկոցն. **գ**` շօթին և զհացին. **դ**` *մին* ա՛յլ **զ** հացին. զի **ժբ** հաց էր. և **բ** սեղան: - 364. Եւ որք *զմինն* ունին, որպէս

գիտութիւն առանց գործոց, և գործս առանց հաւատոց, անսուրբք են: - 364. Զի՞նչ է **բ** հաւն ի սրբիլ բորոտին. *մին* զենեալ, և *միւսն* արեամբն թաթաւեալ և ի բաց թողեալ: - 368. Չորրորդ՝ զի ցուցցէ նոցա՝ յեօթանց *զմինն* աղքատաց և կարօտելոց բաշխել: - 372. Որպէս և այլ ուր զ**ժ** էն *մինն* աստուծոյ բաժին: - 371. Զի՞նչ էր որ ի տաղաւարահարքն ըստ միոյ միոյ աւուրց մի մի զուարակ պակասէին ի տօնս. և յութերորդ օրն ի *մինն* յանգէին: - 374. Չորրորդ՝ **է** դար կենցաղոյս պակասի. և *մինն* հաստատի: - 374. Նա՛խ՝ զայս նշանակէ թէ ի **ժ** դասուց հրեշտակաց *մինն* անկաւ, և մարդիկ զտեղի և զթիւ անկելոցն լնուն: - 376. *Մինն* անկատա՛ր է և պակաս. և *մինն* թերացեալ և պակաս: - 377. Տասներորդ՝ *զմին* ոտն ի գերեզմանէ դրեալ ծերութեամբն և պակասութեամբ: - 378. *Մին* քահանայապետք և քահանայք. և վեց պաշտօնեայք: - 380. Եւ տե՛ս զշնորհս խոստովանութեան. վասն այն որ զղջացաւ և յայտնեաց, ի հնգէն *զմին* տայ տուգանք: - 384. Իսկ կրկին պատարագն. *մին* վասն բոլոր ժողովրդեանն, և *մին* վասն անձին ակամայիցն. ցուցանէ զկրկին խոստովանութիւնն. *մին* յայտնի առհասարակ եկեղեցոյն. և միւսն ծածուկ առանձին մեղաց: - 385. Եւ այսպէս բաժանեսցեն զաւարն. ի **ճ**էն *զմինն* տայցեն քահանայապետին. և յիսնէն *զմինն* քահանայից և աղքատաց. և հնգէն *զմինն* թագաւորաց բաժին. և կէսն աւար բերողացն է զինուորացն. և կէսն այլ հեծելիցն. որպէս բաժանեաց մովսէս: - 390. *Մին*՝ զի հոգին եռամասնեա՛յ է: - 396. ...և ապա ստեամբք կերակրէ զնա մայր իւր բանիւն աստուծոյ. զոր ասեն յաշխարհի, եթէ *զմին* դուռն փակէ աստուած, նա զերկուքն բանայ. զի յորժամ *զմին* դուռն պորտին փակեցաւ, **բ** ստինքն բացան: - 397. Եւ թէ *մինն* է պատճառ՝ որ և իցէ թէ այրն և թէ կինն, առանց ամուսութեան մնասցէ. և միւսն զուգեսցի այլոյ որ չէր պատճառ: - 401. Վասն է՞ր է որ *մին* կին թէ բազում այր առնէ՝ պոռնիկ է. և թէ այրն բազում կանայս առնէր, չէր պոռնիկ որպէս ի հինն օրէնս: - 401. Եւ *մին* այր կարէ՛ ի բազում կանանց ծնանիլ զաւակ. այլ *մին* կնոջ ի բազում արանց ո՛չ բազմանայ ծնունդ: - 401. Երկրորդ՝ բարոյական. զի *մին* կնոջ ի բազում արանց ո՛չ երևի հարազատ զաւակն. իսկ մի այր ի բազում կանանց կարէ՛ ծնանիլ հարազատ մանկունս և սիրել զնոսա: - 401. Երրորդ՝ օրինական. զի որպէս *մին* գլխոյ բազում անդամ կարէ՛ լինիլ. այլ ո՛չ անդրադարձեալ: - 401. Եօթն**ժ**, Սատակումն մահուն. որ յերից *զմինն* խնդրեաց պատուհաս: - 413. Չորրորդ՝ *մինն* տեսակին, և միւսն անհատին էր պատիժ: - 426. Չորրորդ՝ զի ցուցանէ եթէ՝ **խ** ամ թագաւորեաց, և զայն *մինն* միա՛յն մեղանչեաց: - 432. Վասն է՞ր յերից պատուհասից *զմինն* խնդրեաց: - 434. Երեսունեէ զօրավարք դաւթի. և **լէ** թիւ հնոյն օրինաց. և այլ նորոց կտակի. և կամ **իբ** գլխաւո՛ր են գրոց հնոց. և **ժ** բան օրինաց. և չորից աւետարանաց. և *մինն* առաքելական: - 438. Ասեն թէ՝ **ռ** կին էր սողոմոնի. **է ճ** տիկնայք, և **գ ճ** հարճք. և նոցա **ռ** պահապան. իսկ ի փորձելն խաբեաց զհազար կանայսն. և ի յարանցն *մին* ո՛չ խաբեցաւ. այս առասպե՛լ է: - 440. Այլ զերկոտասանքն *մին* գիրք, և զերեմիայն *մին* գիրք համարեալ, լինի **լզ** գիրք հին կտակքն բովանդակ: - 450. *Մին* ի մէջ եւայի և բանսարկուին. որով մուծաւ մահ ի ներս: - 465. Իսկ թէ *մինն* համագոյ երրորդութեան բանն մարմին եղև՝ ցուցցի այժմ: - 468. Եւ այս ևս կրկին է գիր և դպրութիւն. *մին* անջինջ և յաւիտենից որ առ աստուած. և միւսն ժամանակեայ և ջնջելի որ առ մեզ. զոր մեր գործօք և կամօք գրեմք և ջնջեմք. թէ զչար թէ զբարի: - 481. Վասն այն ի փրկչական պատկերն նկարեալ է ի *մին* ձեռն գիր և ի միւսն խաչ: - 482. Զոր օրինակ՝ անցեալ լինի *մին* ժամն յաւուր՝ կիրակէ կոչի. թէպէտ **իգ** ժամն պակա՛ս է: - 484. Ասեն թէ *մին* աչքն կո՛յր էր. և խոցեաց թէ ստամեռուկ չլինի: - 495. Զի հակակայք են. և որ քան ասի *մինն*, նոյն քան ասի և միւսն: - 504. Ասեմք եթէ՝ խոստովանիլն կրկին է. *մին* ներքին իմացմամբ. և միւսն մարմնով արտածայնութեամբ: - 508. Զի **բ** օր ասացեալ է ի վարդապետաց. *մին* բնական օր և միւսն շնորհական: - 508. Եւ տե՛ս և ի միտ առ. զի սոքա ի մի կարգի՛ են եղեալ. այսինքն ձուկն և ձու և կաթն. և որ ուտէ *զմինն* կերիցէ և զմիւսն: - 510. Եւ ոմանք ասեն թէ՝ երկու են մազդաղենացիքն. *մինն* գնաց և ի ճանապարհին ետես զտէրն. և միւսն եկաց և ի պարտիզին ետես: - 515. Նա՛խ՝ որպէս բոլորն է մարմին և իւրաքանչիւր մասունքն. նոյնպէս և բոլորն մի եկեղեցի՝ և իւրաքանչիւրքն. և բոլորն քրիստոնեայ՝ և *մին* մարդն. եթէ նման են միմեանց և եթէ աննման: - 533. *Մին* զկապանաց, և միւսն զհակառակութեան: - 540. Այլ որպէս ի մէջ համակարգից քահանայից *մինն* լինի հայր: - 546. Եւ որպէս ի դասս հրեշտակաց *մինն* գնդապետ **բժ**ան գնդին: - 547. Այլ և արդ կարելի՛ է զի *մինն* բազմաց հակառակեսցի և յաղթեսցէ. որպէս ազգս հայոց զայլս ամենայն որ բազո՛ւմ են և ո՛չ մի: - 550. Դարձեալ՝ յայտնապէս ասել ո՛չ է հարկ՝ է ամենայն բազում պատուական է քան *զմին*. զի ահա՛ գոյացութիւնն մի է և պատահումն բազում. և արեգակն մի է և աստեղք բազում. և գլուխն մի է և անդամք բազում: - 551. Դարձեալ, զորօրինակ բազումք ընթանան ի մի ճանապարհ, և ամենեքեան թողեալ զնոյն՝ ընդ այլս գնասցեն, և *մինն* մնասցէ ի նոյնն. ո՛չ ասեմք թէ *մինն* բաժանեցաւ ի ճանապարհէն, այլ՝ այլքն: - 551. Ապա ուրեմն յա՛յտ է յայսցանէ՝ թէ առ *մինն* իցէ ճշմարիտ հաւատ և օրէնք՝ նա՛ է ճշմարիտ և ո՛չ այլքն. թէպէտ բաժանեալ լիցի ի նոցանէ: - 552. Վասն այն այլ

վարդապետք կոչեն զայս ախտ՝ ծուլութիւն. զի ծուլութիւնն յերկու իրաց երևի. *մին* որ յետս դառնայ ի հոգևոր բարւոյն և ծանրանայ ի գործելն. այսինքն պահել՝ աղօթել և այլն. և ըստ այսմ կոչի տրտմութիւն: - 559. Ի վայր շարժումն է տրտմութիւն և ձանձրութիւն. որ է՛ ծուլութիւն. զի *մինն* ծանրանայ և ո՛չ գործէ զբարիս. և միւսն տրտմի և պակասի: - 560. ...որպէս առաւել է մեղք հրեշտակին քան զմարդոյն. վասն այն *մին* քահանայի մեղք՝ որ չափ բոլոր ժողովրդեանն է. ուստի յա՛յտ է ի պատարագէ հնոյն...: - 563. ...զի վասն բոլոր ժողովրդեանն *մին* էր զուարակ. և վասն միայն քահանայապետին *մին*. և զշնացեալ դուստր քահանային այրէին. և զժողովրդեանն քարկոծէին. և վա՜յ ինձ զի անձամբ զանձն իմ դատապարտեմ: - 563. *Մինն* կամէր լնուլ զպէտս իւր և անգիտութեամբ անկաւ յորովայնամոլութիւն. և *մինն* յօժարութեամբ և փափագանօք անկաւ: - 565. Արիստոտէլ **գ** սեռս զօրութեան ասէ հոգւոյն. այսինքն է *մինն* անհնազանդ բանին. և *մինն* հնազանդ. և *մինն* բան էութեամբ: - 572. Նա՛խ՝ զի ի *մին* աստուածն է և ի մի քրիստոսն: - 573. զի *մին* կաթ ջուրն և *մին* սափորն հաւասար են բնութեամբ: - 595. Ասեմք թէ **դ**. զի թէ *մինն* պակաս լինի, խորհուրդն ո՛չ կատարի: - 597. Ասեմք թէ՝ կարողութիւնն է ի դիտաւորութիւն. և դիտաւորութիւնն է ի կոպարն որ է *մին* հացն...: - 597. Եւ թէ ասեն՝ կարէ՛ *մին* քահանայն ի *մին* ժամս բազում տղայս մկրտել. ապա և կարէ՛ բազում հացս օրհնել: - 597. Եւ այսպէս պարտ է կամ զօրհնելն դարձեալ օրհնել որ է սուտ. կամ ամենայն հացն ո՛չ է օրհնեալ այլ *մինն*: - 597. Նա՛խ՝ եթէ ո՛չ զմարմինն տան ժողովրդեանն. այլ սոսկ հաց և գինի. զի մարմին քրիստոսի այն *մինն* է որ օրհնեցաւ որպէս ցուցաւ ի վերոյ: - 600. ...և կամ զմեղքն բաժանէ. և զկէսն *մին* քահանային ասէ և զկէսն *մին*: - 601. *Մին* է որ նախ խոստովանին և յետոյ ապաշխարեն. - 602. Այս է *մին* եղանակ է պորտից պարզապէս: - 611. Մա՞րթ է աւելի քան *զմին* կին առնուլ՝ թէ ոչ: - 612. *Մին* կին է միոյ առն օրհնադրեալ և ո՛չ աւելի, յաղագս բազում պատճառի: - 612. Նա՛խ՝ զի *մին* կին ետ աստուած *մին* մարդոյն ադամայ՝ ի յօգնութիւն. նոյնպէս և ամենեցուն օրհնադրեաց: - 612. *Մինն* բնակութիւնն, և միւսն բնակեալն. որ է՛ ժողովուրդ և ժողովարան: - 613. Ա՛րդ՝ **բ** եկեղեցոյս *մին* է անուն. և ունին բազում բաղդատութիւն ըստ մի անուանն: - 613. Զի յառաւօտն *մին* խնկարկի ի տէր եթէ շրթունքն. և այն ևս **գ** անգամ պար առեալ. և մի յօրհնութիւնն ևս **գ** անգամ. և մի ի փառք ի բարձունսն ևս **գ** անգամ: - 618. Իսկ և ի ճաշոյն պատարագն **գ** անգամ. *մին* քահանայն. և **բ** սարկաւագն: - 618. Այլ գիտելի է, զի **գ** է արտասուքն հոգևոր. *մին* վասն մեղաց. որ է՛ ապաշխարութիւն: - 620. ...այսինքն *մին* ի մարմինն. **բ** ի միտքն. **գ** ի կամքն. յորժամ սոքա պատրաստին, ապա՛ աղօթքն ընդունելի լինի աստուծոյ: - 620. Եւ դարձեալ՝ *մինն* սկիզբն և վախճան է գիշերոյ. և միւսն տըւընջեան: - 623. Տա՛սն է. ինն ի դէմս քրիստոսի. և *մինն* ի հոգին սուրբ ի հոգէգալուստն: - 634. Այլ և այսպէս **բ** որմունք լինելոց են ի հանդերձեալն. այսինքն է *մին* հրեշտակաց և միւսն մարդկան սրբոց յաւիտենից փառաբանիչք: - 636. Եւ ա՛յս է պատճառն, զի մի տան շարականի **դ** տուն սաղմոսի պիտոյ է յերկու դասս. և *մին* շարականն **ժբ** տամբ աւարտի: - 636. Այլ և **բ** ստեղիք. *մինն* աւագ կողմին. և միւսն վերջին: - 639. Իսկ կցորդ և սկիզբն, այն *մին* տունն է խորհրդաւոր ըստ պատշաճի աւուրն: - 643. Եւ բոլոր սաղմոսն՝ այն *մին* տանն համաձայնք և վկայք. վասն այն ասի սաղմոս կցորդ: - 643. Նոյնպէս և *մինն* այն ի մէնջ համբուրէ՛ զաւետարանն, - 644. Դարձեալ՝ կրկին է տօն. *մինն* տէրունական, և միւսն հասարակ սրբոց: - 646. Այսինքն երեքն ի *մին* շաբաթն. որ է՛ Պահոց, Մարտիրոսաց, և Կիրակէն այլածև կարգ. Առաջաւորցն. Աղուհացիցն. և Յինանցն կարգ: - 649. *Մին* ի տօնս տէրունականս: - 649. *Մին* զքրիստոսին. որ է՛ աղուհացքն: - 653. Եւ *մին* զմովսիսին. որ է՛ վարդավառին: - 653. Եւ *մին* զեղիային. որ է՛ ծննդեանն քառասունքն: - 653. Տասներորդ, **բ** են բանականաց տեսակ. *մինս* տարրական. և միւսն գերաշխարհիկ ի վերոյ քան զհինգերորդ էութիւնս երկնից...: - 654. Չորրորդ, որոյ ամէն գործքն բարի լինի և *մին* մեղք է գործեալ...: - 664. ...և այն *մին* մեղքն վճարի և այն կենացն սուրբ և արժանաւոր ժառանգորդ լինի: - 664. Կոչի կարգ, Նախ զի քրիստոնէից *մին* կարգ՝ ննջեցելոց կատարումն է ի վերայ է խորհրդոցս. ութերորդ խորհուրդ և կարգ. վասն ութերորդին կենաց: - 671. Եւ նշանակէ նախ զերեք հանգստեանն. *մինն* մարմնոյ. և միւսն հոգւոյ. և միւսն հոգւոյ և մարմնոյ: - 675. Ութերորդ, **գ** պսակ տայ աստուած արդարոցն. *մին* զկուսութեան. և մի զողջախոհութեան. և միւս զապաշխարութեան. - 675. Դարձեալ՝ կրկին է օր մարդոյ թէպէտ յերկար ապրեսցի. այսինքն *մին* օր ծննդեանն, և *մին* օր մահուան: - 680. Ի *մին* օրն մտանեմք յաշխարհ, և ի *մին* օրն ելանեմք աշխարհէ: - 680. Զի կենցաղս այս որպէս երկդռնի քաղաք է. ի *մինն* մտանեմք և ի միւսն ելանեմք...: - 680. ...իսկ հրեշտակք *զմինն* ունին. զի յոչ է է՛ եղեն. և զերկուքն չունին...: - 681. ...իսկ դևք զերկուքն ունին. զի յոչ էից եղէն. և փոխեցան ի բարւոյն ի չար. այլ *զմինն* չունին...: - 681. Կրկին ասեն զշաւիղս ընթացից հոգւոց. այսինքն *մինն* ի վեր յերկինս, և միւսն ի ներքոյ երկնից: - 688. Նախ ընդ դէմ բերեն զբան մեծատանն և զղազարու. որ *մինն* ի գոգն աբրահամու և միւսն ի տանջանքն էջ: - 695. Յօր անունն ռոմելոս ասեն. *զմին* ձեռն և զոտն երկայն և *մինն* կարճ. զմի ակն խաժ, և զմիւսն սև: - 706. ...զի

ննջեցելոցն միայն *մին* գործ է. այսինքն յարութիւնն. իսկ կենդանեացն մահն և յարութիւնն. զի նախ մեռանին ի նոյն կէտն և ապա՛ յառնեն: - 717. *Մին* յաւիտենից առ աստուած. ըստ որում «ի գիրս քո ամենեքեան գրեցան». և գիրս այս անջնջելի՛ է ի տեսութիւնն աստուծոյ. թէ չարեաց և թէ բարեաց. - 741. Երրորդ, յատեան դատաստանի դ խնդրին վկայք. զի *մինն* կարէ՛ ոք խաբել և սուտ վկայել. այլ զերկու և զերեքն ո՛չ: - 742. Չորրորդ, զի երեք են դատելիքն. *մին* դատաւորն, և **բ** դատախազքն. պիտո՛յ է այսինքն **գ** վկայք: - 742. Վեցերորդ, զի **գ** է բանին տեղիք. *մին* միտք դատաւորին. և **բ**՝ լսելիք դաւողացն: - 742. Նախ վասն մարդոյս. զի *մին* մեղացն կրկին հատուցանի աստ հոգւով և մարմնով. իսկ եօթնպատիկն է՛ ի հուրն յաւիտենից: - 750. Զի ի հակակայիցն որքանաբար ասի *մինն*, նոյն քան և միւսն: - 758. *Մին* ամենայն դասք հրեշտակաց: - 760. ՚Ի ծովուց ջուրց ի չորից նաւաց հազիւ *մինն* կորնչի. և ի ծովու այսմ աշխարհի ի չորից նաւաց հազիւ *մինն* ի նաւահանգիստ փրկութեան հասանէ: - 764. Չորրորդ՝ վասն արմատոյն խոշորութեան. և խոշորութիւնն է **բ** կերպիւ. *մին* վասն մտացն մտածութեան...: - 765-766. Եւ որպէս թէ բազումք զմիմեանց զմիոջէ կախեալք զվախէ՛. և եթէ ոք խզեսցէ զառաջնոյն զկապ, միապէս անկանին. թէպէտ *մինն* առաջին: - 777. Եւ դարձեալ՝ զորօրինակ, լոյսն և ջերմութիւն են էութիւն նորին զուգասփիւռ. այլ երբեմն *մինն* ծածուկ, և երբեմն երկոքին յայտնիք, և ընդ դէմ սորա: - 779. Եւ այլք թէ՝ պատրուակ գոն ի խինձս արգանդի բնաւորեալ. յիւրաքանչիւր աւուրս հնգից՝ *մին մին* քակտին երկամբք. և ապա՛ արձակի ծնունդն: - 785. Իսկ արտասուքն աղի և ջրատեսակ. զի բարեխառնեսցէ *մինն* զջերմութիւն հրոյ, և միւսն՝ զի մի՛ նեխիցին պարուտակք աչաց. շրջապատեալ երակացն լուսոյ: - 786. Այլ և ի դռան Կլայիս սակաւ ինչ դանդաղեալ, *մինն* փրկեալ և միւսն գերեալ: - 789

**ՄԻՆՉ +** Զորօրինակ՝ արուեստաւոր ոք *մինչ* գործէ զայլ, և ի հեռուստ տեսանէ ոք զոր նա՛ գործէ, այլ ո՛չ տեսութիւնն հարկեաց զայլն լինիլ այնպէս. այլ կամք արուեստաւորին: - 16. Իսկ մեծութիւն կռապաշտութեան այնքան էր՝ *մինչ* միածին որդին պատարագեցաւ մարմնով, և ապա բարձաւ մեղք կռամոլութեանն յաշխարհէ: - 33. Այլ զայս երկբայիս յաղագս ոչ գիտելոյ քոյ թէ «մինչդ» ամենուրէք ո՛չ որոշէ ընդդէմ հանդերձելոյն. զի թէպէտ նշանակէ՛ զկէտն ուր *մինչն* է եղեալ, այլ զոր ա՛նդր է քան զնա՝ ո՛չ ուրանայ: - 42. Երրորդ՝ ըստ ո՛չ պատշաճի. որպէս ո՛չ կարեն պահել որդիք առագաստի *մինչ* ընդ նոսա իցէ փեսայն որ է քրիստոս: - 44. Զի որպէս այժմ կարեմք ասել ճշմարտապէս թէ հոգին սուրբ ելանէ ի հօրէ. և վասն ապառնւոյն կարեմք ասել թէ հոգին սուրբ ո՛չ ելանէ յորդւոյ. *մինչ* այլ ո՛չ ևս ելանէ. և ո՛չ այնպէս էառ զգոյացութիւն և զճշմարտութիւն իւր՝ զի ո՛չ ևս երբեք առցէ: - 65. Ուստի ընդ հաւատացեալս է *մինչ* ի կատարած աշխարհի: - 71. Այսինքն երկայնութիւն սիրոյն *մինչ* ի կատարած անվախճան: - 129. Եւ արդ որպէս ցուցաւ՝ վերինք *մինչ* ի միջինս ունին բոլորապէս զներքնոցն. և ներքինքն մասնաւորաբար *մինչ* ի զօրութիւնսն՝ յաղագս առ հասարակ զօրութիւնք կոչին: - 137. ...զի *մինչ* ո՛չ էին կործանեալ՝ **դ** կարգ էին իւրաքանչիւր դասուցն. որպէս յա՛յտ է ի չորեքկերպեան կենդանեացն: - 152. Երրորդ՝ անկումն նոցա է՛ր ակնկալութիւն տանջանցն. և զայս *մինչ* ի քրիստոս ո՛չ գիտացին զպատրաստեալ տանջանս իւրեանց...: - 153. Չորրորդ՝ անկումն է ի զօրութենէ իւրեանց *մինչ* անգործ եղեալ մատնին. և այս կրկին: - 153. Երկրորդ՝ բռնութեամբ զհոգիս ի տանջանս տանելոյ *մինչ* ի քրիստոս: - 153. ...բե՛ր սկսցուք զսկիզբն արարչութեան եղելոց *մինչ* ի վախճան կատարման այժմոյս՝ ըստ կարգի հին և նոր կտակարանաց հետևեալ: - 156. Եւ դարձեալ այսպէս զանազանին սոքա երեքեան աւուրք. այսինքն առաջին օր ստեղծման. և միջին *մինչ* ի կատարած. և վերջին օր յարութեան: - 193. Եւ գիտելի է, զի ի սկզբանէ աշխարհիս *մինչ* ի քրիստոս լո՛յսն առաջանայր գիշերոյն. իսկ յետ քրիստոսի *մինչ* ի վախճան՝ գիշե՛րն առաջանայ լուսոյն: - 194. Վասն որոյ գիշերն յառաջէ՛ տունջեան *մինչ* ի կատարած: - 194. Եւ թէ յառաւօտուն իջանէ *մինչ* ի կէս օրն, արևելեան կոչի. և անտի մինչև յերեկոյն, արևմտեան: - 203. Դարձեալ ոմանք ասեն զմին ձեռքն երեք անդամ. այս է՝ *մինչ* ի խաղալիկն մին. և *մինչ* յարմունկն **բ**. և *մինչ* ի կուռն երեք: - 241. Եւ *մինչ* ի խռչափողն արիւն գայ, և անդ ի սպիտակ ջուր փոխի: - 242. Դարձեալ, **ը** ոսկր է ի թիկանցն *մինչ* ի խաղալիքն այսպէս: - 243. Դարձեալ, **ը** ոսկր *մինչ* ի թաթ ոտիցն այսպէս: - 243. Յոգին պատկե՛ր է աստուծոյ. և աստուածապաշտ մարդոյ՝ զաստուած քննել ո՛չ մարթի թէ ուստի՞ է. կամ ո՞ւր է կամ ո՞րչափ է. և կամ թէ ո՞րպէս է. կամ թէ *մինչ* ի յուր է: - 251. Եւ կամ որպէս պատկերագործք *մինչ* զոտն և զձեռն նկարեն՝ ո՛չ երևի պատկեր մարդոյ. այլ ոտից և ձեռաց: - 255. Եւ ոչ նոր, զի մի և նոյն ի սկզբանէ հրամանն արարչադիր առանց տկարութեան ներգործէ *մինչ* ի կատարած. և ըստ իւրաքանչիւր հոգւոյ՝ նոր հրաման ստեղծանելոյ ո՛չ արժակի: - 257. Եւ ի **իա** աւուրցն ի վեր՝ երևեալ շնչոյն ձևակերպէ՛ զկերպ մարդոյ *մինչ* ի **խ** օր արու մանկան. և իսկոյն հեղի ի նա՛ հոգին բանական ի շնորհացն աստուծոյ ծագեալ ի նա: - 261. Եւ այլք ունելով և զկերակրականին զօրութիւնս՝ յապաղեն *մինչ* **բժ**ան ամիսս: - 262. Իսկ ամառն, և *մինչ* ի **զ** ժամս աւուրն, և խարտեաշ մաղձն,

և երիտասարդն՝ ըստ նմանութեան տարրական հրոյ ջերմ և չոր գոլով. վասն որոյ առաւել բարկացօղ և ցանկասէր լինի: - 266. Իսկ աշունն, և *մինչ* ի **թ** ժամս աւուրն, և սեաւ մաղձն, և ալևորն, ըստ նմանութեան երկրի ցուրտ և չոր գոլով՝ ծոյլ և պղերգ գոլով ամենայն ուսմանց և գործոց: - 266. Եւ մի՛ աստ ընդ դէմ բերցի բանիս թէ՝ ամենայն մեծամեծք գութ ունին փոքունց. զի և այս նախախնամութեանն է. որ եդ ի բնութեանս խնամ տանիլ նոցա, *մինչ* ինքեանք ևս ի չափ հասակի եկեսցեն և զերծանիցեն ի վնասուց: - 267. Տասներորդ՝ կին, իբր թէ կեանք. զի որպէս կենօք է տնել. նոյնպէս տեսակ մարդոյս ի ձեռն կնոջ ծննդեանն տնէ՛, և կայ մնայ *մինչ* ի կատարած: - 276. Ի խօսակցութենէն, զի *մինչ* ի յորդանան այլ ո՛չ ասի հօր աստուծոյ խօսիլ ընդ մարդկան: - 279. Իսկ երեսունն, *մինչ* ի մեծն թէոդոս. որ եբարձ զամենայն մեհեանս կռոցն և բարձրացաւ սուրբ խաչն ի գլուխս գմբեթարդ սուրբ եկեղեցեաց: - 294. Եւ *մինչ* զգիրն յառաջ կալան թէ այսո՛ւ փորձիմք, այլ ո՛չ ոք գիտաց կարդալ՝ բաց յեբրայեցւոցն. վասն այն ասի եբեր, թէ զառաջին լեզուն նա՛ եբեր: - 299. Եւ զհետ տեառն պետրոս և յովհաննէս *մինչ* ի սրահ քահանայապետին: - 306. Յնգետասաներորդ՝ որպէս ի վերայ խաւակայ եդեալ եղև փայտ պատարագին *մինչ* ի տեղի զենմանն: - 306. Եւ տէրն եբարձ ի յուս իւր զփայտ խաչին *մինչ* ի նոյն տեղի գողգոթային ուր զենանէր իսահակ: - 306. Նոյնպէս և անունն սահմանէ կարճառօտ՝ յայտնիչ բնութեան իրին. որպէս *մինչ* ասեմք մարդ, քար, յայտնեցաւ բնութիւնն: - 311. Որ յերուսաղէմէ՛ *մինչ* ի լիւրիկէ որ է՛ եզր աշխարհի՝ էլից զաւետարանն. և ստացաւ ժառանգութիւն նմին: - 312-313. Նոյնպէս և մեք աստէն քաղցեալ եմք բանիւ *մինչ* ա՛նդր երթիցուք, և ապա անդ զկրկին զգեստն զգեցցուք. այսինքն զփառս հոգւոյ և մարմնոյ: - 314. Զոր թէ ընկենու ոք, լինի երկրաքարշ մարդ և մեղաւոր. և *մինչ* զղջացեալ դարձեալ ըմբռնէ յետոյ, լինի պատճառ կանգնելոյ և փրկութեան: - 332. Վասն այն ա՛ստ ի հաստատութեան երկնից ասեն զկայանս հոգւոցն *մինչ* ի կատարած յարութեան մարմնոց: - 346. Այլ զանբան պատարագն ուսան հեթանոսք և կռոց մատուցին. և այն սովորութեամբն իսրայէլ մատոյց աստուծոյ զանբան կենդանիս *մինչ* եկն քրիստոս և եղև ինքն բանաւոր պատարագ, և զնոյնս աւանդեաց մեզ: - 362. Ցուցանէ թէ՝ *մինչ* ի մեղս իցեն քահանայքն՝ ո՛չ զհասն կերիցեն և ո՛չ ի սուրբ խորհուրդն մերձեսցին: - 370. Եւ կէս դորակին՝ զի յայժմու կեանս կիսակատա՛րք են ամենայն նուէրք մեր *մինչ* ի հանդերձեալն: - 375. Առաջին *մինչ* ի **ի** ամն տղայ: - 378. Միջին *մինչ* ի **ծ** ամն կատարեալ հասակ: - 378. Եւ անտի *մինչ* ի ամն վերջին և ծեր: - 378. Նա՛խ՝ զի յայնմ ժամու միա՛յն էր պիտանի *մինչ* յանապա՛տն էին: - 379. Որ *մինչ* ի **ծ** ամն կատարէր զգործն իւր, և անդանօր դադարէ՛ր: - 379. Եւ *մինչ* ի **կ** ա՛մն գործեն զքահանայութիւնն որպէս սուրբ հա՛րցն է կանոնեալ: - 379. Եւ խաչօղքն անսուրբք էին *մինչ* յերեկոյանալ օրինացն հնոյն և ծագել նորոյն. մինչև սրբեցան աւազանաւն և խոստովան եղեն զքրիստոս: - 383. Որ և տրտմեցաւ տէրն *մինչ* ի մահ. զի զտրտմութիւնս մեր եբարձ: - 387. Զի ակամայ սպանօղք զերծանիցին անդ *մինչ* քահանայն կենդանի իցէ. և յորժամ մեռանիցի քահանայն, ապա գնասցեն ի տեղիս իւրեանց: - 392. Եւ քահանայի մահն՝ պատարագն քրիստոսի է. *մինչ* վճարեսցի կանոն ապաշխարութեանն և ապա արժանասցին հաղորդելոյ: - 392. Իսկ յետ մահու ա՛յնոցիկ հոգւոց որք զղջան կամ խոստովանին զմեղս, քաղաք ապաստանի է նոցա ի կայանս հոգւոցն տրտմութիւն և ցաւն վասն փոխարինաց *մինչ* մեռանի քահանայն մեծ. որ եկեղեցի սուրբ՝ պատարագաւ և աղօթիւք և ողորմութեամբ հատուցանէ՛ զպարտս նոցա և ազատին: - 392. Նա՛խ՝ մովսէս նշանակէ՛ զհին օրէնքն. որ *մինչ* ի մկրտութիւնն եկն և վճարեցաւ: - 394. Իններորդ՝ մանուկն յարգանդի ո՛չ հացիւ կեայ. այլ հրամանաւն աստուծոյ կերակրի ընդ պորտն զինն ամիս. որպէս տնկականք, և որպէս նոյ ի տապանն. *մինչ* ելանէ յարգանդէ...: - 397. Զի օր՝ ժամանակիս այս պատշաճի. և շաբաթ՝ մահուն հանգիստն. և ամիս՝ *մինչ* ի յարութեանն: - 399. Երկրորդ՝ ի յղութեան *մինչ* յորովայնի լինի՝ մի՛ զենցես ասէ: - 399. Երրորդ՝ *մինչ* գառն լինի ի կաթն մօր՝ մի՛ զենցես ասէ. զի գութն առաւե՛լ է: - 399. Փակեաց թէ ամենևին ո՛չ բաժանի օրհնեալ պսակն *մինչ* ի մահ: - 401. Զի որպէս քահանային օծումն ի հոգւոյն ո՛չ բաժանի յաւիտեան, և պսակի օրհնութիւնն որ ի մարմինն է՝ ո՛չ բաժանի *մինչ* ի մահ ի մարմնոյն: - 401. Երրորդ, զի ո՛չ միայն մերձաւորք, այլ և հեռաւորք *մինչ* ի յակն տեսցեն զքանչելիսն: - 414. Ոմանք ասեն միայն զլուսաւորս արգելեալ և զկամարն շրջեալ *մինչ* հասեալ ի նոյն կէտն: - 416. Չորրորդ՝ մովսէս եբեր *մինչ* ի յորդանան, և փոխանորդեաց յեսու: - 417. Յնգետասաներորդ՝ յեսու ներեաց աքարայ զտիւն և զգիշերն *մինչ* լուսով առաւօտին վիճակաւ յանդիմանեցաւ: - 418. Եօթնևժ՝ յեսու կանգնեաց զգայիսոնն ի գայի, *մինչ* կոտորեցան թշնամիքն. որպէս մովսէս տարածմամբ ձեռաց զամաղէկ: - 418. Եւ այսմ վկայէ՛ պօղոս ի գործքն եթէ՝ յետոյ յեսուայ իշխեցին դատաւորք *մինչ* ի սաւուղ ամս չորեք հարիւր և յիսուն՝ այսպէս: - 420. Զի **նժ** ամք դատաւորացն, և խ ամ հեղեայն *մինչ* ի սաւուղ. որ լինի **նծ** ամ: - 420. Եւ ապա ըստ կարգի թագաւորք. Դաւիթ. Սողոմոն. և այլք *մինչ* ի գերութիւնն: - 421. Առաջին դատաւորքն *մինչ* ի սաւուղ: - 421. Երկրորդ՝ թագաւորք *մինչ* ի զօրաբաբէլ. և յեսու քահանայ: - 421. Եւ

անտի քահանայքն *մինչ* ի յիսուս փրկիչն ճշմարիտ: - 421. Իններորդ՝ զիա՞րդ զարհուրեցաւ կինն յետ երդմանն, և անկաւ յերեսս *մինչ* քաջալերեաց սաւուղ և եհարց: - 428. Եւ այն զի յառաւօտէն *մինչ* յերեք ժամն՝ **իռ** սատակեցաւ ըստ արդարութեան վճռին: - 435. Եւ *մինչ* ընթացաւ ի կալն ուռնայի և գնեաց զեզինսն և ողջակիզեաց, եհաս ի **զ** ժամն. որ յառաջն դադարեալ էր սուրն: - 435. Քսանեմի, հարին մինչև ի դրունս գեթայ. և հաւատացեալք *մինչ* ի դրունս դժոխոց. և եղեն ի տեսիլ ամենայն մսեղեաց: - 436. Դաւիթ չորս ամ բնակեցաւ ի գէթ *մինչ* մեռաւ սաւուղ. և տէր մեր յեգիպտոս՝ *մինչ* մեռաւ հերովդէս: - 437. Այլ ա՛յս է ճշմարիտն. զի պատերազմ և խռովութիւն էր յաւուրս դաւթի *մինչ* սատակեաց զնոսա. և որդի նորա ի խաղաղութեան ժամու շինեաց զտաճարն: - 439-440. Վաթսունն՝ **զ** տասն է. նշան նոցա՝ որք **զժ** բանեան օրէնսն կատարեն ի **զ** դար կենցաղոյս. այսինքն ի տղայութենէ *մինչ* ի մահ. նոքա թագուհիք և ժառա՛նգ են արքայութեանն: - 440. Տնեալ ամս **ն**. *մինչ* ի սեդեկիա որ գերեցաւ ի բաբիլօն. և հրձիգ եղև տաճարն և երուսաղէմ: - 446. Տնեցին զամս մծ. *մինչ* յովսէէ որդի ելայ. որ գերի վարեցաւ յասորեստան. և բարձաւ թագաւորութիւնն իսրայէլի: - 446. Եւ ի գերութենէն իսրայէլի *մինչ* ի գերութիւնն յուդայ **ճծ** ամ: - 446. Դարձեալ՝ ի վերջին գերութենէն սեդեկիայ *մինչ* ի դարեհի **բ** ամն կատարի **հ** ամ. որ արձակեաց զզօրաբաբէլ: - 447. *Մինչ* ի դարեհի **բ** ամն արձակեցաւ զօրաբաբէլ, և ի **դ** ամն շինեաց զտաճարն: - 448. Վասն է՞ր նախ դատաւորք և ապա թագաւորք և ապա քահանայք առաջնորդեցին *մինչ* ի տէր մեր յիսուս քրիստոս: - 449. Ի յադամայ *մինչ* ի ծնունդն քրիստոսի՝ է՛ ըստ եպիփանու **բչ** ամ: - 451. Հինգերորդն ի գերութենէն *մինչ* ի քրիստոս: - 467. Վեցերորդն ի քրիստոսէ *մինչ* ի կատարած աշխարհի: - 467. Զի *մինչ* յերեսուն ամն շարժի աճիլ. և յայնմ հետէ ի նուազիլ: - 479-480. Հինգերորդ՝ դարձեալ այլք ասեն եթէ՝ *մինչ* յաբրահամ ո՛չ էր ալիք ծերութեան...: - 480. Նոյնպէս և քրիստոսի *մինչ* զտղայական հասակն նկարեն, փաթութեալ հանեն զթուղթն ի ձեռն. իբր ի հրէից ծնեալ զամենայն ինչ ըստ օրինացն առնել: - 481. Բայց անյա՛յտ էր գրեալն. *մինչ* խաչիւ և չարչարանօք զգիրն պատրանաց նախաստեղծիցն պատառեաց, և ապա՛ զայս գիր ետ յայտնապէս: - 481. Եւ անտի *մինչ* ի մարտի **իե**ն համարեն **զ** ամիս, և անդ ասեն զաւետիսն: - 483. Եւ ի մարտի **իե** էն *մինչ* ի դեկտեմբերի **իե**ն համարեն **թ** ամիս և **ե** օր, և ա՛նդ ասեն զծնունդն: - 483. Ա՛րդ՝ աստի *մինչ* ի նիսանի **ժէ**, և յապրիլի է՝ կատարի **է** ամիս. յորում առաքեցաւ գաբրիէլ առ կոյսն մարիամ յաւուր չորեքշաբաթու: - 483. Երրորդ՝ զի **գ** ժամ ընդ արեգականն ընթացաւ և խաւարեցոյց զնա *մինչ* ի **թ** ժամն: - 490. Երրորդ՝ կապեալ ածաւ ի տունն կայիափայ. և անդ զթուքն կալաւ յերեսն. և *մինչ* ի վաղիւն հսկեաց: - 492. Եւ ոմանք ասեն թէ՝ յերկնաւոր դրախտն եմուտ հոգւովն *մինչ* ի կիրակէ մէջ գիշերին. և ի նոյն ժամն էջ ի դժոխս և ազատեալ զհոգիսն յարեաւ ի գերեզմանէն: - 495. Զոր օրինակ ի բարձր ուստէք քար հոլովեսցի, և որ մօտն կացցէ ասէ ցնա՝ երթալ ունիս *մինչ* ի ներքին վայր տեղիս և ապա դադարիս: - 497. Իսկ ապականութիւն այլայլութեամբն ի ներքս մտանէ, և զորոշեալն ի միմեանց՝ դարձեալ օգտէ՛ և այլայլէ՛. *մինչ* զմարմինն ի բուն տարերս լուծանէ, և զհոգին յաներևոյթ տեղիս: - 498. ...և մեղօք ծանրացեալ էջ ի ներքին կէտս դժոխոցն, և այլ ո՛չ կարէր բարձրանալ. *մինչ* ի վերին կիտէն բանն աստուած էջ ի ներքին կէտն. և ապա ել ադամ ի վերին կէտն երկնից: - 503. Ուր արկեալ էր սատանայ զաթոռ իւրոյ իշխանութեանն. և անդ արգելեալ բանտէ՛ր զհոգիսն որ յադամայ. *մինչ* ի գնալ անդ անմահ թագաւորին մերոյ և աստուծոյ յիսուսի քրիստոսի: - 504. Երկրորդ՝ եթէ սկզբնաչարն սատանայ է ամենայն մեղաց պատճառ և ո՛չ տանջի *մինչ* ի կատարած. նաև ո՛չ մարդիկ: - 507. Երկրորդ՝ եթէ սկզբնաչարն սատանայ է ամենայն մեղաց պատճառ և ո՛չ տանջի *մինչ* ի կատարած. նաև ո՛չ մարդիկ: - 507. Տե՛ս զի ի ժողովն եփեսոսի հասարակ ամենայն ազգ այսօր նաւակատիս առնէին *մինչ* ի ժողովն քաղկեդոնի ուր փոխեցան տօնք և պահք և դաւանութիւնք: - 509. Եւ որպէս յինն ժամու ուրբաթուն լոյս ծագեաց հոգւոցն ի դժոխս, նոյնպէս և յինն ժամու շաբաթուն լոյս ծագէ զճառագայթս իւր արեգակն արդարութեան քրիստոս. *մինչ* յառաւօտուն բոլորապէս տեսանի ինքն յարուցեալ ի մեռելոց: - 509. Ասեմք թէ՝ ի վերնատունն զհինն կատարեաց *մինչ* զմարմինն բաշխեաց և նոր օրէնս եդ. և մեք հնոյն ո՛չ եմք պարտական: - 510. Նա՛խ՝ զի յետ յարութեանն ո՛չ էր պահք. այլ զատիկ *մինչ* փեսայն ընդ նոսա էր որպէս ինքն հրամայեաց: - 511. Զի **ե** անգամ ի **ե** կիրակէն երևեցաւ քրիստոս աշակերտացն *մինչ* ի համբարձումն: - 511. Երեքտասաներորդ՝ ամաղեկացիք գերեցին զկողմն հրէաստանի և զայլազգիս. և դաւիթ զհետ մտեալ յետ **գ** աւուր և հարեալ ի գիշերի և ի վաղիւն *մինչ* յերեկոյ. և դարձուցեալ զերկոսին կանայս իւր. և ո՛չ մնաց գերի և ո՛չ մի. և յաւարէ աստի բաշխեաց ամենայն սիրելեաց իւրոց: - 514. Ա՛րդ՝ շաբաթի գիշերն և տիւն **իդ** ժամ. և **զ** ժամ ի կիրակէէն *մինչ* ի մէջ գիշերն. որ լինի **լ** ժամ. իսկ հոգին **դ** ժամ և կէս նախ իջեալ ի դժոխս որ լինի **լգ** ժամ և կէս: - 516. ...զի և մշակն յետ սերմանելոյն իսկոյն ո՛չ հնձէ. այլ համբերէ *մինչ* ի հասումն պտղոյն: - 520. Եւ ըստ յունաց թէ աստիճանն. և ըստ մեծին դիոնիսեայ. և *մինչ* ի **դ դ** կարգն փոքր է. հրաման ամուսնութեան:

- 526. Որպէս *մինչ* անարժան քահանայն պատարագէ, այլքն հաղորդին սրբութեան. այլ ինքն դատապարտի: - 540. *Մինչ* եկաց երկրորդ լուսաւորիչն հայոց և կրկին կիւրղոս սուրբ իմաստասէրն յոհան. և լուսաւորեաց զեկեղեցի: - 545. Եւ վասն այն այլազգ ո՛չ հաւատան. զի յառաջն չկայր *մինչ* ի նա՛. և առաւել վասն այն անուանեցաւ լուսաւորիչ: - 549. Այսպէս և ամենայն ազգք քրիստոնէից զնոյն ունէին ճանապարհ դաւանութեան և աւանդութեան յառաքելոց անտի *մինչ* ի ժողովն քաղկեդոնի. և յետ անտի բաժանեցան ամենայն ազգք յամենայն իրս, որպէս յա՛յտ է յիւրաքանչիւր եկեղեցիս: - 551. Տասներորդ՝ յա՛յտ է ի համազօրութենէ. զի երբեմն շարժէ՛ ախտ զմիտս. և երբեմն շարժի ի մտացն ախտ. որպէս ասէ երանելին եւագրիոս. եթէ *մինչ* յերեսնամեայ հասակս ախտն շարժէ զմիտս ի ցանկութիւն. և անտի յառաջ միտքն շարժէ զախտն: - 557. Իսկ անթողլի մեղաց **զ** են պարագայք. այսինքն յուսահատութիւն. յանդըգնութիւն. մարտընչիլ զճշմարտութիւնն ճանաչելոյ. նախանձ ընդ դէմ եղբայրական սիրոյն. խստասրտութիւն և անզղջութիւն *մինչ* իսպառ: - 567. ...ընդ դէմ առաջնոյն է՛ խստասրտութիւնն. և ընդ դէմ երկրորդին անզղջութիւնն *մինչ* իսպառ: - 567. Երկրորդ՝ զի փորձէ զայլսն ամենայն ի վերջնոյն *մինչև* ցառաջինն թէ ճշմարի՞տ իցեն արդեօք: - 586. Յայս միտս ժողովիմք քահանայքս և պաշտօն առնեմք յերեկօրեայ *մինչ* ի լոյս...: - 604-605. Վասն է՞ր **ե** կարգ է *մինչ* ի սարկաւագն. և նա՛ **զ**երորդ: - 608. Վասն է՞ր *մինչ* ի չորրորդ կարգն փոքրիկ ջահընկալութեանն կարեն ամուսնանալ, և յայնմ հետէ ոչ: - 609. Երրորդն ասեն եթէ՝ **բ** ազգն գեթսոնի և **բ** գունդն մերարեայ՝ զչորս փոքրիկ աստիճանս ունէին ի խորանն. զպահպանութիւնն *մինչ* ի ջահընկալն որ զաշտանակն բառնային. և որդիքն կահաթու էին բարձրագոյնք: - 609. Վասն այն *մինչ* յայս ամուսնանալ կարեն. և ի հինգն ելեալ վերագոյն դասուց՝ ո՛չ ամուսնանան: - 609. Նոյնպէս և ի մէջ խնամոցն ո՛չ լինի այլ խնամութիւն *մինչ* ի **դ** ազգն: - 611. ...եթէ ի հոգեւոր ազգն ո՛չ լինի խնամութիւն *մինչ* ի **գ** ծնունդն այսպէս: - 611. Իսկ որդէգիրն որ բանիւ և կամօք լինի, ո՛չ լինին խնամիք *մինչ* ի կրկին ծնունդն...: - 612. Իսկ օրինաց ազգն որ են խնամիքն, և բնականն որ են մարմնականքն, ո՛չ լինին խնամիք *մինչ* ի **դ** ծնունդն: - 612. Նոյնպէս և օրինաւոր ազգն խնամութեան, պահի *մինչ* ի **դ** ծնունդն: - 612. Եւ վեց կիսափոխն՝ յաւելեալ ժամուցն *մինչ* ի հանգստեանն: - 622. Եւ *մինչ* ի ժողովն նիկիոյ զայս ասացին: - 635. Եւ *մինչ* ի ժողովն կոստանդնուպօլսի զա՛յս ասացին: - 635. Եւ ա՛յս է խորհուրդն. զի որ քան են սուրբք ի յերկրի կենդանի, ո՛չ տօնեմք նոցա *մինչ* ի հանդէս նահատակութեան են...: - 647. Եւ որ յինանցն պահէ *մինչ* ի համբարձումն, ընդ դէմ է կանոնաց հարցն և աւետարանին որ ասէ...: - 649. ...և աստի *մինչ* ի զատիկն **հ** օր է...: - 650. Ասեմք թէ՝ քրիստոս **խ** օր պահեաց, և **խ** օր է *մինչ* ի ղազարու տօնն: - 651. Եւ օրն յորում պղծեցաւ, սրբութեամբ պահեսցէ զնա *մինչ* ցմահ իւր. և ապա՛ հաղորդեսցի: - 652. ...ո՛չ պահեմք սուգ *մինչ* վերասցի և ապա՛ պահեմք. որպէս աւետարանն ասէ: - 654. Վասն որոյ յետ համբարձմանն պահելի է զդշաբաթ և զուրբաթ. և կամ զինն օր *մինչ* ի հոգւոյ գալուստն: - 654. Կերակուրն *մինչ* ի **զ** ժամն կոչի. և անտի յառաջ ընթրիս: - 656. Եւ այնպէս յարաժամ տեսանէ զցաւս մերձ ինքեան և առ ինքն ի չար գործս իւր անբաժանելի ի նմանէ *մինչ* ի յարութեանն օր...: - 669. ...*մինչ* աւանդօղ հրեշտակն սաստեսցէ ի նոսա...: - 669. ...և նա դնէ յեկեղեցին մերձ առ դուռն որ նշանակէ զկայանք հոգւոցն յերկինս ի վերջին տեղւոջ *մինչ* ի յարութեանն օր: - 672. Երրորդ, զի ի հեռու ճանապարհ գնայ. այս է յերկրէ յերկինս. յուղարկաւորեմք *մինչ* ի գերեզմանն: - 676. Ասեմք թէ՝ մարգարէն ուսուցանէ մեզ զչափ սըգոյ *մինչ* յերեկոյն, և յառաւօտուն ուրախանալ...: - 680. ...*մինչ* դարձեալ միաւորի ընդ մարմնոյն. և իբրև զարեգակն պայծառացեալ ծագէ ընդ քրիստոսի: - 681. Եւ **խ** ամն է՛ **ղժ**. այսինքն *մինչ* ի կատարումն չորեքնիւթեայ կենցաղոյս: - 682. Ամիսն նշանակէ *մինչ* ի դատաստանն. և տարին զյարութիւնն յաւիտենից...: - 683. Եւ դարձեալ, զի ի **խ** օր պահոցն *մինչ* ի յարութիւնն ղազարու այլ հանգստեան ո՛չ տօնեմք: - 684. Այլ չար հոգիքն ոչ կարեն գալ առ մեզ *մինչ* ի դատաստանի օրն...: - 686. Եւ այլք ասեն ի դրախտին լինիլ զկայանս հոգւոց արդարոց և մեղաւորաց *մինչ* ի կատարած աշխարհի: - 686. են հոգիք նոցա ի միում խորանի *մինչ* դատաստանն ընտրեսցէ զնոսա և որոշեսցէ. որպէս ցուցանի յառաջիկայդ: - 687. Անդ ժողովեցան առաքեալք և վկայք սուրբք և կատարեալք *մինչ* ի միւսանգամ գալուստն. - 688. Եւ ո՛չ ոքն է առեալ արդեամբ զգործոց հատուցումն *մինչ* ի գալուստն դատաւորին որպէս ասէ աւետարանն: - 689. Եւ զի դժւարաւ խլին չարքն առանց վնասելոյ բարեաց, վասն որոյ թոյլ ետ *մինչ* ի ժամանակի հնձոցն: - 693. Ապա ուրեմն *մինչ* ի դատաստան ընտրեալքն ո՛չ ունին կեանս, և ո՛չ մեղաւորքն տանջանս: - 693. Ջքուն մահուն ասէ *մինչ* ի կատարած. և ի մէջ գիշերի յարութեանն աւուր յարեան ամենայն կուսանքն և կազմեցին զլապտերս: - 693. Ապա ուրեմն *մինչ* ի վերջին օրն ո՛չ է բաժանումն արդարոց և մեղաւորաց: - 693. Եւ *մինչ* այս ոչ կատարի, ո՛չ առնուն արդարք զփառս, և ո՛չ մեղաւորք զտանջանս: - 693. ...և աղաղակէին բարձր ձայնիւ՝ *մինչ* յե՞րբ տէր սուրբ և ճշմարիտ ո՛չ դատես և առնուս զվրէժ արեան մերոյ: - 694. Այսպէս և աստ մինչև՝ զոր *մինչ* առ ինքն նշանակէ, և զհանդերձեալն

ո՛չ լքանէ: - 704. ...*մինչ* ի յարութիւնն առցէ բոլորիւ բոլորապէս զփառս և զպսակս զանվախճան տեսութիւնն աստուծոյ: - 705. Իսկ զհազար ամն, ոմանք ասեն զերեք ամն և զկէս ի մկրտութենէն *մինչ* ի համբարձումն: - 706. ...*մինչ* խօսիլ տայ բազնեաց, և լերանց գնալ, և ծառոց ծաղկիլ և չորանալ. և մեռելոց յառնել. և հրոյ իջանել յերկնից. և չար հոգւովն խօսիլ տայ այլ և այլ լեզուս: - 708. Այլ հրէայքն յայնժամ դարձցին ի հաւատս քրիստոսի. և եկեղեցի սուրբ խաղաղութեամբ հանգիցէ *մինչ* ի կատարած աշխարհի...: - 709. Այլ և **ռ** ամն է յառաջին գալստենէն քրիստոսի *մինչ* յերկրորդն. զի զբազում և զառաւելն նշանակէ: - 710. Ութերորդ, բարի և չար սերմանիքն ի միասին բուսանին և մնան *մինչ* ի հունձս. մանաւանդ *մինչ* ի կալն ըստ առակի տեառն...: - 721. ...նմանապէս և մարմինք մեռեալք յերկրի և հոգիք ի կայանս իւրեանց ի միասին կան առհասարակ արդարոց և մեղաւորաց *մինչ* դատաստանաւն բաժանեսցին օդիքն և այծիք: - 721. Ոմանք այսպէս կարծեն թէ՝ հաստատութիւնդ բարձցի ի միջոյ *մինչ* վերին երկինքն երևի: - 729. Նա՛խ նշանակէ զփոքր ժամանակն *մինչ* ի գալուստն միւս անգամ...: - 730. Երրորդ՝ զի ժամանակ մարդոյ *մինչ* ի վախճան իւր փոքր է և սակաւ: - 730. Եօթներորդ, զի ահագնակերպ երևի ի վերայ մեղաւորաց. *մինչ* ասիցեն լերանց թէ անկերուք ի վերայ մեր. և բլրոց թէ ծածկեցէք զմեզ յերեսաց բարկութեանն աստուծոյ որ նստի յաթոռ. որպէս ասէ տեսիլն: - 737. Այլ զի մի՛ իրողութիւն դատաստանին և յարութեան ուրուական և առ աչօք թուեսցի ընդհանուր ամենայն մարդկան, վասն որոյ ասեն վարդապետք ի յարութենէն *մինչ* ի գալուստն և քննութիւնն և հրով նորոգիլն և այլն՝ յերկարի միջոցաւ որքան ժամս **գ**: - 747. Ուստի երևի **գ** ժամս ի յարութենէն *մինչ* ի վճիռ հատուցման և կորստեան չարաց չորեքկին. այսինքն գործոց չարաց և պատժոց նոցին. պատճառաց դիւաց և հետևելոց մարդկան: - 748. *Մինչ* ի յօրն դատաստանի աղօթեն արդարք վասն մեղաւորաց. այլ յետ այնորիկ վասն դատապարտելոցն ո՛չ խնդրեն ինչ. զի ընդ դէմ աստուծոյ գոլ իմանան վասն նոցա զխնդիրն: - 754. Ո՞րպիսի լիցի օրն այն, *մինչ* քեզ մարիամ մայր տն ընդ առաջ ելանէ հանդերձ պարուք կուսանաց: - 764. *Մինչ* զկնի կարմիր ծովուն՝ յընկղմիլն փարաւոնի հանդերձ զօրօքն, զթմբուկն ունելով երգէ՛ զերգն...: - 764. Իններորդ՝ վասն պտղոյն յամրութեան. զի ասեն թէ ո՛չ կարէ պտղաբերել *մինչ* ի հարիւր ամն: - 766. Որում Գոհացողական Օրհնութիւն. և Բարեբանօղ Փառատրութիւն. Յամենայն գոյեղէն բնութեանց. ի վեհագունից *մինչ* ի հուսկ յետինս: - 771. Վասն որոյ առհասարակ դժկամակ թուի. *մինչ* ընտրեսցեն ի միմեանց. զի ինքեանց գիտակքն իմաստունք են: - 774. Իսկ որք տեսչութեամբն աստուծոյ ընկալան զթերակատարն յարութիւն, ի վե՛ր է քան զբնութիւն. զի «ոգի որ ելանէ՝ այլ ոչ դառնայ» *մինչ* նորոգին վերստին: - 775

***ՄԻՆՉ ԶԻ +*** Եւ այնչափ կուրացեալ է՝ *մինչ զի* պատերազմի ընդ դէմ աստուծոյ. թէպէտ գիտէ զայն լինիլ ինքեան ի չար, զի զոր ինչ չար գործէ անձնիշխան կամօքն, մեղանչէ մահու չափ: - 146. Առ այնոսիկ որք ասեն՝ անկա՛ր է աստուծոյ առնել զաշխարհս ոչ ինչ. *մինչ զի* ո՛չ երևիլ սկիզբն լինելութեան սորա: - 162. Իսկ որ ասէ, *մինչ զի* ո՛չ երևիլ սկիզբն լինելութեան սորա: - 163. Ասէ զայս, զի բնութեամբ անբովանդակելի է. և ոչ տեղեաւ ըմբռնի. *մինչ զի* ինքն զամենայն տեղիս պարունակէ. յորում կեամք և շարժիմք և եմք: - 180. Վասն էերորդին, ա՛յն քան սիրեցաւ յաստուծոյ, *մինչ զի* յետ մահուանն վրէժ խնդիր եղև արեան նորա...: - 287. Ասեմ թէ ոչ, զի կատարեալ խոստովանութիւնն թողու զմեղս, բառնայ զպատիժն, և ջնջէ՛ զյիշատակ մեղացն. *մինչ զի* ո՛չ երևի ի դատաստանին աստուծոյ: - 432. Այլ շնորհք նորոյս կարողութեամբ արդարացուցանէ զմարդ այնպէս, *մինչ զի* սպիք մեղացն ջնջին և յիշատակութիւնն ծածկի: - 433. Եւ թէպէտ կատարեալ և լի և անթերի էին մասունք մարմնոյն քրիստոսի. այլ ա՛յն քան փոքրիկ, *մինչ զի* հազիւ անկարէր ընդ տեսութեամբ մարդոյ: - 470. Սուգն է սըգալ վասն մեղաց և ատել զնա *մինչ* զի եղծանել զնոսա: - 583. ...այլ յորժամ խըստանայ ի չարիս *մինչ* զի զպաշտօնն աստուծոյ յինքն ձգեսցէ...: - 707. Զի այնպէս ծանակեալ լիցի մարմին մեղաւորին, *մինչ զի* հոգին զարշեսցի առնուլ զնա. և որպէս ուրուկ և որդնալից այնպէս ո՛չ կամեսցի ունել զնա: - 751. ...և ամենայն որ ինչ փափկութիւն գտանիցի՝ աշխատութիւն. *մինչ* զի բարութիւնն աստուծոյ յանհունս գերազանցէ՛ քան զամենայն ստեղծեալ բարութիւնս: - 762. *Մինչ* զի այս քան գտանիցին հեշտութիւնք ի մասնկան ստեղծուածոյս, որ քան գտցին ի ստեղծօղն յայն: - 762. Եւ այնպիսի քաղցր է տեսութիւնն աստուծոյ, *մինչ* զի չարքն թէ կարէին՝ յօժարէին ի դժոխս կալ և զաստուած տեսանել. քան արտաքոյ տանջանաց լինիլ և զաստուած ո՛չ տեսանել: - 763. Երրորդ յաղագս սիրելութեան ընկերացն այնոցիկ. զի այն քան եղիցի սէր ի մէջ նոցա, *մինչ զի* զուրախութիւնս նոցա ինքեանց համարեսցեն: - 764

**ՄԻՆՉԴԵՌ +** Յնգետասաներորդ, զի բաւական համարեցաւ ի պատիւ կանանց զայն՝ զի յառաջագոյն մերձեցաւ ի նոսա ծննդեամբ. իսկ յետ յարութեանն կամի՛ զի ա՛րք նախ մերձեսցին ի նա *մինչ դեռ* ո՛չ է ելեալ նա առ հայր: - 518. Եւ *մինչդեռ* ասասցեն զայս, յանկարծակի եկեսցէ ի վերայ նոցա սատակումն որպէս

յաւուրսն նոյի ըստ հրամանի փրկչին: - 709. Երկրորդ, միտք հոգոյն և մարմնոյն. զորմէ ասէ ի մատթէոսն՝ «լե՛ր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն *մինչ դեռ* իցես ընդ նմա ի ճանապարհին» որպէս ցուցաւ վերագոյն: - 743

**ՄԻՆՉԵՒ +** Զորօրինակ **բ** թշնամիք ոմանք ի յարկս թագաւորին ո՛չ իշխեն վնասել իրերաց, *մինչև* թագաւորն հրամայեսցէ: - 12. Ասեմք թէ՝ զբանս զայս ասէ մարգարէն վասն խաղաղութեան որ եղև սակաւ մի յառաջ քան զգալուստն քրիստոսի՝ և ի բոլոր ժամանակս քրիստոսի, և յետ նորա **խ** ամ *մինչև* ապստամբեցին հրէայքն հռօմայեցւոց տէրութեանն: - 27. Տասներորդ՝ Թագաւորել *մինչև* ի ժամանակս ասեն. և վասն հնազանդութեանն: - 29. Տասներորդ՝ առարկութիւն արիանոսացն՝ Պարտէ ասեն թագաւորել սմա *մինչև* ի ժամանակաց փոփոխումն ըստ առաքելոյն: - 41. Ասեմք առ այս. թէ *մինչև* ցայժմ զբնութիւնն բաժանէիր, և այժմ զանձն ևս: - 98. Իսկ թէ ա՛յլ է բանին և այլ է մարմնոյն, ապա բաժանե՛ս զմարդկութիւնն ի յանձնէն. և ասես **բ** անձն. և երկու բնութիւն. ըստ նեստորի առաջնորդին քոյ. և պօղոսի սամոստացւոյ. որ *մինչև* ցայժմ ծածուկ է իր նեստորեան, և այժմ յայտնեցեր զքեզ: - 98. Խորութիւն որ *մինչև* յերկիր և դժոխս էջ: - 129. Ա՛յլ է բանն՝ և ա՛յլ է ձայնն. զի բանն անմարմին ծնունդն է մտաց. և ձայնն է՛ շարժումն օդոյ ի ձայնական գործեաց ի յօդս բախեալ. իսկ ի սրտի միաւորին նոքա՝ այսինքն բանն և ձայնն. և լեզուաւ յօ՛դս բախեալ՝ հասանէ *մինչև* ի լսելիս, և անդ ձայնն արտաքոյ մնացեալ, և բանն անմարմին ի միտս լսողացն նստեալ: - 131. Երկրորդ՝ զի առաջինքն առանց տարակուսութեան առնուն զգիտութիւն. և այլքն նախ տարակուսին և ապա առնուն. զի այն որ առաջին դասն նախ էառ՝ տարակո՛յս է նոցա՝ *մինչև* ինքեանք ևս առցեն: - 138. Եւ ասեն՝ արքայութիւն քո արքայութիւն յաւիտենից՝ և տէրութիւն քո յազգէ *մինչև* յազգ: - 144. Զորօրինակ՝ որպէս տղայ որ տեսանիցէ ցից ի յորմում, երբայ ի մօտ. թէ ամո՛ւր է՝ թողու. վասն զի ո՛չ կարէ հանել. և երթայ առ միւսն. թէ շարժի՝ ի մօտ կենայ *մինչև* հանէ՛: - 160-161. Ապա թէ զկամքն երետ՝ ուրախանայ և կենայ ի մօտն *մինչև* զմեղքն գործել տայ և հանէ ի բարւոյն: - 161. Զի առաջին օրն ցուցանէ զառաջին դարն՝ որ յադամայ *մինչև* ցնոյ: - 193. Իսկ օր արուեստակա՛ն է ծագումն լուսոյ *մինչև* յերեկոյ՝ առհասարակ յամենայն ազգս: - 194. Եւ թէ յառաւօտուն իջանէ մինչ ի կէս օրն, արևելեան կոչի. և անտի *մինչև* յերեկոյն, արևմտեան: - 203. Եւ կամ հո՛ղմ է արտաքս թիւրեալ ի ճանապարհէ՛ իւրմէ. և ի խոռոչս երկրի մտեալ. և վասն թանձրութեան երկրին շարժէ զնա *մինչև* գտանէ ելս և ապա՛ դադարի: - 206. Երրորդ՝ զի աշխարհ որ քան է ի բեւեռէ՛ հիւսիսոյ *մինչև* ի բեւեռն հարաւոյ, նոյն քան է յարևելից *մինչև* յարևմուտս: - 231-232. Այսպէս մարմին մարդոյ որ քան է երկայնութեամբ ի գագաթէ՛ գլխոյն *մինչև* ի ներբանս ոտիցն, նոյն քան է լայնութիւն ի մէջ երկուց երկայն մատիցն ձեռաց: - 232. Իններորդ՝ զի և ի հոգևորն՝ փոքունք զմեծամեծաց անուանս կոչէին ինքեանց ի մոլորումն մարդկան. որպէս սիմոն կախարդն ասէր զինքենէ՛ թէ քրիստոսն իցէ. *մինչև* յանդիմանեցաւ ի պետրոսէ: - 238. Յալողականն է՝ յորժամ ի ջերմութենէն եփի կերակուրն և հալի որպէս ապուր ի պտկի. և հալի ամենայն կերակուրն *մինչև* ի **զ** ժամն. և է՛ որ պակաս և աւելի. վասն առողջ և տկար մարմնոյն: - 242. Զի տնկական հոգին յօժարի՛ գոլ. և զգայականն բարեպէս գոլ. և բանականն ևս բարեպէս գոլ. զի ո՛չ երբէք հանգչի, *մինչև* միաւորեսցի ընդ ևս բարեգունին: - 249. Ի մածնուլն արւական և իգական սերմանցն՝ լինի որպէս պանիր *մինչև* ի **զ** օրն...: - 261. Ապա կազմէ՛ զձև զգայականին *մինչև* ի **ի** օրն...: - 261. Եւ աւելի և պակասն է ի նոյն թիւն չորից և երից. եթէ աւուրց և եթէ ժամուց *մինչև* ի ճանճ և ի մժեխ: - 263. Եւ է ամեայ ուսումն ստանայ. վասն որոյ *մինչև* յեօթն ամն երեխայ կոչի. զի **գ** մասունք են հոգւոյն. բան. ցասումն. և ցանկութիւն. ըստ պղատոնի: - 264. Եւ երիցս կրկնեալ **է**-ից *մինչև* ի **իա**, լինի կատարեալ արիական մասն ցասմնականին. և կոչի պատանեակ *մինչև* ի **իը** ամն: - 265. Եւ չորիցս կրկնեալ **է**-ից *մինչև* ի **իը** ամն, լինի երիտասարդ. և կատարի բանական մասն: - 265. Վասն որոյ յայսմանէ և յառաջ հաստատի մարդ ի հանճարս բանակրութեան և ի տեսութիւն իմացման *մինչև* ի **խբ** ամն որ է եօթնիցս եօթն: - 265. Եւ ի յիսներորդէն *մինչև* ի **հէ** որ է՛ մետասան **է**, լինի հասակ ծերութեան: - 265. Եւ ի **հը**-էն *մինչև* ի մահ, և կամ ի **ճժբ** ամն, լինի զառամացեալ. որ է եօթնիցս վեշտասան: - 265. Եւ կրկնեալ ի հնգետասանէն *մինչև* ի **լ**, կատարի երիտասարդական հասակն. որ է **գ** տասամբ կատարեալ. ունելով զցանկականն և զցասմնականն և զբանականն լիով առ ինքեան: - 265. Եւ այսպէս միջին հասակս կատարեալ, ձգի *մինչև* ի **խզ** ամն. որ է **դ ժզ**. և վեցն կատարեալ թիւ է. և աստ տիրէ ալիք և սկիզբն լինի ծերութեան *մինչև* ի **հբ** ամն. յորում է ծայրք կենաց ըստ դաւթի, և թիւ երկոտասան վեցից խորհրդաւոր: - 265. Յեղանակս գարնան, և յառաւօտուն *մինչև* յերեք ժամս, և հիւթոյ արեան, և մանկութեան հասակն ի տղայութենէ ծննդեան և աճման՝ ունին զնմանութիւն օդոյ ջերմ և գէջ գոլով: - 266. Իսկ ձմեռն, և յինն ժամէն *մինչև* յերեկոյ և բոլոր գիշերն, և սպիտակաթոյր հիւր պլղամին, և ծեր մարդ, ըստ նմանութեան ջրոյ ցուրտ և գէջ գոլով. վասն որոյ սպիտակի և ցրտանայ և պակասի զօրութեամբ: - 266. Զայս կարգ պահէ՛ և ի

զարգացման հասակին. զի *մինչև* ցեօթն ամն ատամն բուսանելով և փոփոխելով՝ նշանակէ՛ զկերակրականն: - 267. Եւ անտի *մինչև* ցերեսուն ամն՝ զարիականն: - 267. Ջոր օրինակ վարժ մշակացն է՛ *մինչև* յերեկոյն. այլ թէ հիւանդութիւն կամ այլ ինչ դիպի, հանէ՛ ի վարձուն և ի մշակութեանցն: - 291. Եւ փոխանակ **յ** կանգնոյն՝ **յ** ամքն ի քրիստոսէ *մինչև* ի մեծն կոստանդիանոս. ուր յայտնեցաւ խաչն փրկչական: - 294. Եւ **ծ** ամն՝ որ առ որդւով նորին կոստանդեաւ յերկնից լուսափայլեալ ի լեռնէն ծիթենեաց *մինչև* ի սուրբ գողգոդա: - 294. Եւ զ**խ** ամ շինեցին յամառն և ձմեռն ըստ բարեխառնութեան տեղւոյն. *մինչև* հասին յործկուտ օդն թանձրացեալ ի գոլորշեաց և ջերմացեալ յարևուն: - 297. Ի մանկութենէ կռոց նուիրեցաւ, և հրեշտակ աստուծոյ յափշտակեալ սընոյց զնա յանապատի *մինչև* հասոյց ի կատարումն: - 300. Վեշտասաներորդ՝ եղբարքն յովսեփու ո՛չ լցան հացիւ *մինչև* եկին առ յովսէփ: - 314. Նոյնպէս և աստ հոլովմամբ ժամանակաց ընթանամք *մինչև* ընկերեսցի անիւն ի գուբն: - 314. Իննև**ժ**, ո՛չ յառնէ առիւծն ի տեղւոջէն *մինչև* հնազանդէ՛ զքշնամիս իւր: - 316. Երկրորդ՝ բնութիւնս ադամայ ել ի դրախտէն և բորոտացաւ զանազան մեղօք. *մինչև* բանն էառկ ի ծոց աստուածութեան իւրոյ և հաստատեցաւ յառաջինն: - 332. Երրորդ՝ ժողովուրդն չարախայտ եղև յեգիպտոս. *մինչև* արկաւ ի ծոց խնամոցն աստուծոյ և ողջացաւ: - 332. Չորրորդ՝ խնայեաց զնոսա իբր ի մարդիկ զի զղջասցեն փոքր խրատովն և ի մեծ պատուհասէն զերծանիցին. այլ նոքա խստացան *մինչև* զամենայնն կրեցին: - 333. Երկրորդ՝ յօրինակ ժողովրդեանն իէլի. զի սրբութեամբ էջ յեգիպտոս և պղծեցաւ ի գործոց նոցա. *մինչև* սրբեցաւ յամպն և ի ծովն. և ճաշակեաց զմանանայն: - 333. Երրորդ՝ յօրինակ հեթանոսաց որք զազրացեալ էին մեղօք *մինչև* ջրով աւազանին սրբեցան և ճաշակեցին զմանանայն կենաց ի յերկնից իջեալ: - 333. Բոլորն ամենայն դճլ ա՛մ է յաւետեացն աբրահամու *մինչև* յելսն յեգիպտոսէ՛. այլ զերկու **ճե** ամն հարքն յերկրին քանանու բնակեցան. և **զբ ճիե** ամն որդիքն յեգիպտոս կացին...: - 337. Յադամայ *մինչև* յելսն յեգիպտոսէ են ամք **դռպթ**: - 337. Յադամայ *մինչև* ի նոյ, **սմխբ** ամ: - 337. Որ լինի բովանդակն *մինչև* յելսն եգիպտոսի, գռձթ ամ ըստ եօթանասնիցն: - 337. Նմանապէս և հոգին սուրբ ի գիշեր կենցաղոյս լուսով աւետարանին առաջնորդէ՛ *մինչև* հասուցանէ յայգն հանդերձեալ աւուր ի ցօղաւոր ամպն որ է՛ բանն մարմնացեալ. որ է հովանի և հանգիստ ամենայն սրբոց: - 338. Նշանակէ՛ ըստ փիլոնի, զի անմարմինքն *մինչև* յերեքն հասանին. որպէս երկրաչափքն գրեն նիշ՝ գիծ՝ երևոյթ. ա՛յս է իմանալեացն չափ: - 344. Այսինքն *մինչև* **գ** ազգն ներեմ. կամ **գ** դարս. և ի չորրորդն ո՛չ դառնամ ի վրէժ խնդրելոյ. այլ հատուցանեմ զմեղս հարց յորդիս: - 351. Ո՛չ թէ զմեղս հարց յորդւոցն խնդրէ. այլ մեղաց հարցն ներէ երկայնամիտ լինելով *մինչև* յորդոց յորդիս զի դարձցին ի մեղաց: - 351. Երկոտասաներորդ, լուսաւորեցաւ՝ զի քօղ արկցէ երեսացն. որ օրինակէ՛ զհին կտակարանս. որ քօ՛ղ է արկեալ և առագաստ մտաց նոցա. *մինչև* դարձցին առ տէր հոգիքն որպէս զմովսէս. և ապա վերասցի քօղն և յայտնեսցի լոյս գիտութեան նոցա: - 352. Իսկ որ վասն մեղաց նաշիհ իւղ և խունկ ոչ դնէին. զի տրտմութիւն և խաւար է մեղքն, և գարշ հոտ գայ ի խղճմտանացն *մինչև* ապաշխարեսցէ: - 357. Ալոջ, և Որոջ. ունելով զկէս ամն աւելի քան զերեք ամն ի ծննդենէն *մինչև* ի խաչն: - 361. Եւ ի դարձեալ երևիլն դարձեալ լուանալ, այն է՝ որ դարձեալ խոստովանիմք և կրկնեմք զերկն ապաշխարութեան *մինչև* նկարեսցի ի մեզ քրիստոս: - 367. Եւ ո՛չ սրբին *մինչև* զղջասցին և խոստովանեսցին զմեղսն: - 370. Երկրորդ՝ զի զգին ծերոյն պակաս հրամայեաց. զի **ե** ամեայ տղայոյ երկդրամեան էր. և ի ամենին ի երկդրամեան. և անտի *մինչև* ի **կ** ամն **ծ** երկդրամեան. և ի **կ** էն յառաջ **ժե** երկդրամեան: - 377. Այլք ասեն վասն դադանեանցն թէ՝ հոգիք նոցա մարմնով ի տանջանս կային. ուր ընկեղմեցան *մինչև* ցաւարումն դժոխոց. ընդ որս և զնոսա ազատեաց քրիստոս իջանելովն ի դժոխս: - 382. Եւ խաչօղքն անսուրբք էին մինչ յերեկոյանալ օրինացն հնոյն և ծագել նորոյն. *մինչև* սրբեցան աւազանաւն և խոստովան եղեն զքրիստոս: - 383. Աչք տեառն ի սկզբանէ տնօրէնութեանն և *մինչև* ցկատարումն տարւոյն ի վերայ նորա: - 398. Ջայն ցուցանէ որ պատճառաւ իրիք կամ պոռնկութեամբ կամ այլ ինչ յորժամ բաժանին, առանց ամուսնութեան մնասցեն թէ երկուքն են բաժանմանն պատճառ, *մինչև* հաշտեսցին: - 401. Երեսուն**գ**, Ամք ադամայ *մինչև* ի քրիստոս: - 413. Եւ տէրն մեր կանգնեաց զխաչն ի գողգոթայ *մինչև* յերեկոյ և վանեաց զքշնամին մեր: - 418. Եւ յետ յեսուայ դատաւորք դատեցին առաջնորդութեամբ զիսրայէլ **նժ** ըստ եօթանասնիցն թուով երեքտասան դատաւորք *մինչև* ի հեղի քահանայ: - 420. Երկրորդ՝ անցեալ ընդ լերամբ և ո՛չ գտեալ. *մինչև* առ տեսանօղն եկեալ. և տէր մեր էանց զլերինս հրեշտակաց և եկն ի մարգարէս. և նոքա աւետեցին զգիւտն **գ** օրեայ կորստեան իշոյն...: - 426. Նա՛խ՝ նշանակէ՛ զսեղան խաչին քրիստոսի. որ յերեք ժամուն *մինչև* ի **զ** ժամն խաչեցաւ, և հաշտեցաւ աստուած: - 435. Քսաննմի, հարին *մինչև* ի դրունս գեթայ. և հաւատացեալք մինչ ի դրունս դժոխոց. և եղեն ի տեսիլ ամենայն մսեղեաց: - 436. Կամ ի մարդոյ *մինչև* ցշուն և այլն: - 443. Արդ յերեքտասան ամէ՛ ովսիա *մինչև* ցմետասան ամն սեդեկիայ որ վերջին գերեցաւ՝ լինի **խ** ամ. և

նաբուգոդոնոսորայն **ի** ամ. և որդւոց և թոռանց նորին **ժ** ամ. որ կատարի **հ** ամ *մինչև* յառաջին ամն կիւրոսի որ արձակեաց զգերիսն: - 447. Զի ի րոբովամէ՛ որ զերինջսն գործեաց՝ վեց եօթանասուն ամ է *մինչև* զգերութիւնն սակաւ ինչ պակաս. վասն որոյ եօթանասուն ամ շաբաթեցոյց զնոսա ի գերութեան: - 448. Եւ առաջնորդեն օծեալ քահանայքն յետ դարձին **նձգ** ամ. *մինչև* բարձան օծեալքն հրէից և ծնաւ ճշմարիտ օծեալն քրիստոս: - 449. Իսկ այլ ոմանք թուեն զեօթներորդն դանիէլի ի դարեհի որդւոյ արշուրեայ առաջին ամէն. յորում զտեսիլն ետես մարգարէն. *մինչև* ի ծնունդն քրիստոսի ամք **նձգ**: - 449. Չորրորդն զյուդայ և զիէլի թագաւորութիւնն *մինչև* ցգերութիւնն: - 450. Ժողովին ի մովսիսէ՛ և յելիցն յեգիպտոսէ *մինչև* ցշինուած տաճարին ամք **դճծ**: - 452. Եւ առնին ի նորոգմանէ տաճարին *մինչև* ի ծնունդն քրիստոսի ամք **շժը**: - 453. Առաջին դարն յադամայ *մինչև* ի նոյ: - 467. Երկրորդն ի նոյէ՛ *մինչև* յաբրահամ: - 467. Երրորդն յաբրահամէ՛ *մինչև* ի դաւիթ: - 467. Չորրորդն ի դաւթէ՛ *մինչև* ցգերութիւնն բաբիլացւոց: - 467. Տասներորդ՝ ասի ոմանց թէ ի ժամ ծննդեանն քրիստոսի արգելման ամենայն ծնունդք *մինչև* ծնաւ բարձօղն երկանց ամենայն ծննդոց. զի նա՛ լինէր անդրանիկ ամենայն ծննդոց: - 472. Եօթներորդ՝ որպէս այլայլական և փոփոխելի մարմինս կայ և մնայ անփոփոխ և անապական միաւորեալ ընդ հոգւոյն *մինչև* ցորոշումն: - 477. Եւ թշրինի **ժե**՝ սկիզբն տօնի տաղաւարահարաց, որ է՛ հոկտեմբերի **բ**. և անտի *մինչև* ի **իբ**ն թշրինի՝ և ի հոկտեմբերի **թ** կատարումն տօնին: - 483. Եւ անտի *մինչև* ի տբէթի **իա**՝ և յունվարի **զ**՝ կատարի **թ** ամիս և **ե** օր: - 483. Տասներորդ՝ զի և ազգն հռոմայեցւոց *մինչև* ցայսօր յայտնապէս ի վեցն յունվարի զերից տօնից յիշատակս կատարեն: - 484. զի զքառասնօրեայ գալուստն ի տաճարն՝ ըստ ծննդեանն տօնեցեն և ո՛չ ըստ յայտնութեանն. որ է՛ յունվարի վեցն. զոր մեք տօնեմք **խ** օր թուեալ *մինչև* ի **ժդ**ն փետրվարի: - 485. Չորրորդ՝ զի յինն ժամէն *մինչև* յերեկոյ ի տեղի իւր դարձաւ: - 490. Ութերորդ՝ մանանայն յանապատի էր օրինակ անապական մարմնոյ փրկչին. և է՛ անապական *մինչև* ցայսօր ի մէջ ոսկի սափորին...: - 499. Երկրորդ այսպէս, զի յուրբաթի գիշերն ըմբռնեցին *մինչև* ցվեց ժամն որ խաւար եղև *մինչև* ցինն ժամն: - 516. Եւ դարձեալ լոյս եղև յերեք ժամն *մինչև* յերկոյն...: - 516. Եւ այսպէս սովորաբար խօսիմք, թէ յուրբաթի կէս օրն ելեալ ոք ի տեղւոջէ՛ *մինչև* գայ առ մեզ ի լոյս կիրակէին կամ ընդ առաւօտն, ասեմք թէ **գ** օր է ճանապարհին. նոյնպէս և յարութիւնն քրիստոսի: - 516. *Մինչև* ցամպս այնու կերպիւ որ նախ քան զչարչարանս: - 520. Այսուցիկ սուրբ հարց և սիւնհոդոսաց հնազա՛նդ եմք. և զնոցա կանոնքն ունիմք և զդաւանութիւն, և պահեմք *մինչև* յելս շնչոյ մերոյ: - 547. Վասն որոյ ասաց արիստոտէլ աղէքսանդրու, յապաղեա՛ ի վրէժխնդրութիւնն *մինչև* անցցէ բարկութիւն: - 570. Չորրորդ, զի թէ ի ձեռն փիլիպպոսի առաքելոյ որ էր մի յեօթանց անտի սարկաւագացն ո՛չ եղև իջեալ հոգին ի վերայ ներքինւոյն *մինչև* յափշտակեցաւ յազովտոս...: - 589. ...ընդէ՞ր ոչ մկրտեաց զոք ի հաւատացելոցն. *մինչև* գնաց ի կեսարիա ձեռնադրեցաւ. և ապա եկեալ զհազարս հազարաց և զբիւրս մկրտեաց ի գետն: - 589. ...ահա՛ նա յայտնի զմանկունս ո՛չ հաղորդեն *մինչև* լիցի **բժ**ան ամեայ...: - 600. ...որք կամաւ յանձն առնուն. զի այս *մինչև* ի մահ ճգնութիւն է: - 600. Եւ հօր եղբայր, և քոյր. և մօրաքոյր, և եղբայր. և ծնունդք նոցա *մինչև* յեօթն ազգն: - 611. Եւ որպէս ի մէջ արենազգացն ո՛չ լինի խնամութիւն *մինչև* ի չորրորդ ծնունդն: - 611. Այլ և ասորիք ասեն ըստ մեզ զսուրբ աստուածն որ խաչեցար՝ *մինչև* ցայսօր: - 632. Յասարակ, որպէս ի սկզբանէ *մինչև* ցաւարտումն առ Երրորդութիւնն սուրբ աղերսեմք: - 633. Եւ ապա ի գիշերին դնին սրբութիւնքն ի վերայ բազմոցին *մինչև* յառաւօտն անշարժապէս որպէս ասացաք: - 647. Եւ ասացաւ նոցա հանգչիլ. *մինչև* լցցին ծառայակիցք և ընկերք նոցա: - 648. Նախ արարչութեանն շաբաթ՝ էր սրբութիւն և պահք *մինչև* ստեղծաւ ադամ և ելոյծ զպահքն: - 653. ...*մինչև* ի հրեշտակէն յուսադրեցաւ և էառ կերակուր: - 653. Երրորդ, եօթնօրեայ ժողովիլ կենդանեացն առ դուռն տապանին անսուաղ *մինչև* տեղեաց անձրևն. և **է** է կենդանիք սուրբք: - 653. Նախ այն է՝ որ հրամայէր մովսէս պղծոցն լուանալ զմարմինն և ողողել զհանդերձն և արտաքոյ կալ *մինչև* յերեկոյ: - 653. Յերկրորդ ամէ՛ սրբոյն սահակայ *մինչև* ի **ժզ** ամն նորին՝ կատարեցան ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ: - 659. Եւ նոյն զքահանայթաղէքն, որ ունի է աւետարան. և զաշխարհական թաղումն, ի յայրարատ գաւառի ի վաղարշապատ քաղաքի ի վկայարանս սրբոյն հռիփսիմի. յետ **ճժա** ամի սրբոյն գրիգորի. զի *մինչև* ցայն հնովն վարեին: - 659. Այս քան *մինչև* ցայս վայր՝ վասն այժմոյս, և կարգաց եկեղեցւոյ...: - 659. ...ո՛չ էր յարմար թէ ապականացուն յանապական տեղիս բնակեսցի. *մինչև* սա ևս յանապականութիւն վերափոխեսցի: - 662. Երրորդ, զի մարմինն փոխեսցի ի հող *մինչև* հոգին յանապական և յանփոփոխ սերտութիւնն կայասցի...: - 677. Հինգերորդ, մարմինն ի հող դնի, *մինչև* ապականացու տարերք զանապականութիւն ստասցին...: - 677-678. Դարձեալ՝ հանգիստ է, զոր *մինչև* ցայժմ ժողովէր արդարութեամբ, այժմ կամի վայելել: - 679. ...զի լոյսն անմարմին սփռիւր ի յերկինս և լուսաւորէր *մինչև* ցերեկոյ...: - 681. Ուստի յա՛յտ է զի *մինչև* յօր դատաստին ո՛չ առնուն: - 692. Սակայն զփառսն չև ևս են

ընկալեալ *մինչև* ի սքանչելի երկրորդն գալուստ. այսպէս մեծն անդրէաս: - 696. ...որով իմանան արդարքն թէ այնպիսի փառս պատրաստեալ է նոցա. և յուսով վայելեն *մինչև* օր դատաստանին: - 697. ...զի նա քաւեալ է և սա ոչ. *մինչև* մարմինն ևս տանջեսցի և քաւեսցի. որ է՛ անպատշաճ երկրքինն: - 699. ...զի *մինչև* զօրն ցայն ասեն զքաւարանն. այլ առ ժամայն ի փառս կամ ի տանջանս: - 700. ...որով դրոշմեալքն յետ արտաքս ելանելոյ ի մարմնոյս, թռչին յանապատն ի մեղաց յերկինս կերակրիլ անդ յուսով *մինչև* լնու թիւ կատարման աշխարհի: - 703. ...*մինչև* կատարեսցին հարուածք բարկութեանն աստուծոյ ի վերայ երկրի. որով փորձին և արդարք և մեղաւորք...: - 703. ճանապարհ կեանս այս. և ոստխ մարմինն. և դատաւոր միտքն. դահիճ խիղճ մտացն որ չարչարէ՛ զհոգին և ոչ ազատէ *մինչև* զամենայն պարտսն վճարեսցէ ապաշխարութեամբ: - 704. Իսկ *մինչևն* անդ ո՛չ է կոպար ժամանակի. այլ յաւիտենի: - 704. Այսպէս և աստ *մինչևս*՝ զոր մինչ առ ինքն նշանակէ, և զհանդերձեալն ո՛չ լքանէ: - 704. Այլ ռ ամ է յառաջին գալստենէն քրիստոսի *մինչև* յերկրորդն. - 706. Նոյնպէս մարմին սրբոցն ընդ ամենայն երկինս անցանէ զօրութեամբն աստուծոյ *մինչև* ի հրեղէն երկինս...: - 722. *Մինչև* յօր դատաստանին տեսանեն մեղաւորք փառս արդարոց ընդհանրապէս՝ այլ ո՛չ մասնաւորաբար. զի տեսանիցեն զնոսա ի մեծ փառս՝ այլ ո՛չ ի յորպիսիս: - 741. Զի նուազունք են ամենայն փափկութիւնք որ լինին յաշխարհի *մինչև* զօրն դատաստանի, բաղդատեալ առ այն քաղցրութիւն. որպէս կաթիլ մի ջրոյ առ համեմատութիւն ընդ հանուր ծովու: - 762. Որպէս ասեն վարդապետք, ի վերջին ծովէն սպանիու *մինչև* ի հնդիկս սակաւ աւուրց բացատ գոյ թէ վարեսցէ հողմ զնաւն: - 763. Երրորդ՝ ժամանակ կենցաղոյս *մինչև* ի մահ, է՛ ընդունելութեան աստուծոյ. ըստ որում բազմեալ է յաքոռ շնորհաց ըստ առաքելոյ. իսկ յետ այնորիկ ո՛չ ևս. զի փոխի յաքոռ դատաստանաց ըստ աւետարանին: - 780

**ՄԻՆՉ ՉԷԻ +** Երկրորդ ծնունդ իջումն բանին յարգանդ կուսին *մինչ չև* ծնեալ ի մօրէ ...: - 471

**ՄԻՇՏ +** Նա՛խ, զի ըստ սոցա ոչինչ է զանազանութիւն մշտնջենաւորացն և փոփոխականացն. որք են երկնայինք և երկրաւորք. զի նոքա միա՛յն են ի հարկէ, որք *միշտ* նոյնպէս ունին...: - 8. Երկրորդ և թէպէտ իցեն տարրականք և ներհակ որակք՝ յիմիասին դիպիլն՝ ո՛չ *միշտ* հակակային իրերաց. այլ եթէ կամք խնամողին հրաման տացէ: - 12. Քաններորդ՝ զի ի հարկէ բարի է աստուած. որպէս ի հարկէ էա՛կ է. այլ արդ՝ հարկաւոր բարին է *միշտ* բարի և գոյացական բարի և զուտ բարի: - 15. Եւ զի *միշտ* է բարի՝ անկա՛ր է լինիլ ո՛չ բարի: - 15. Այսպէս և բարին՝ է՛ որ պարզ և միեղէն բարի է. որպէս աստուած. զի անփոփոխ և *միշտ* բարի է ...: - 22. Եւ որպէս լոյսն *միշտ* լոյս է, թէպէտ պակասեցաւ ի յօդոյն. ուստի յայտ է՝ զի դարձեալ լուսաւորէ: - 23. Նոյնպէս և բարին *միշտ* բարի է. թէպէտ ի հոգւոյն պակասեցաւ, դեռևս ի յէութեան է. զի **է** է բարին. և էութիւն ո՛չ կորնչի: - 23. Այլ մեր պատասխանին առ այս՝ է՛ այս ինչ, թէ *միշտ* ծնունդ է ի հօրէ ըստ բնութեանն որդի. այլ անծամբ կատարեալ. որպէս լոյս ի հրոյն *միշտ* ծնանի և ոչ է անկատար՝ յօրինակ որդւոյ: - 37. Եւ *միշտ* բղխէ՛ զջերմութիւնն յօրինակ բղխման հոգւոյն անսպառապէս: - 37-38. Վեցերորդ՝ զի պահանջէ՛ ի սիրողաց իւրոց *միշտ* զայն խորհիլ. զի որպէս ինքն վասն սիրոյ զանձն իւր եդ ի վերայ մեր, և մեք վասն սիրոյ նորա փոխարէն դիցուք ի վերայ նորա: - 43. Զի *միշտ* է է, ո՛չ ոչ էանայ. և միշտ բարի և լոյս է, ո՛չ չարանայ և խաւարի: - 44. Զի միշտ է է, ո՛չ ոչ էանայ. և *միշտ* բարի և լոյս է, ո՛չ չարանայ և խաւարի: - 44. Իսկ էն՝ *զմիշտ* լինիլն ցուցանէ ...: - 49. Եւ դու այսպէս ընկալ և հաստատեա՛ ի քեզ. և լեր միացեալ ամենայն դիմօք և խաղալեօք ի համայնից զլուխն *միշտ* պաշտածութեամբ ի քրիստոս: - 76. Դարձեալ՝ ըստ նոյն սարասի՝ բանն աստուած ունի ծնունդ ի հօրէ նախ քան զյաւիտեանս. և ունի ծնունդ ի մօրէ ի յետին ժամանակիս. և ո՛չ ասի երկածին. այլ՝ *միշտ* միածին...: - 77. Այլ ամենևին կատարեալ և *միշտ* մեծ մարմնով իւրով: - 78. Ո՛չ ասի հողեղէն և երկրեղէն վասն հողեղէն մարմնոյն. այլ *միշտ* յերկնից մարմնով իւրով. և ստեղծիչ հողեղինաց և երկրաւորաց: - 78. Եւ ո՛չ ասի ծառայ վասն ծառայական մարմնոյն. այլ *միշտ* տէր և ազատ: - 78. Եւ ո՛չ ասի մեղաւոր վասն առնլոյ զմեղաւոր մարմինս. այլ *միշտ* անմեղ մարմնով իւրով: - 78. Եւ ո՛չ ասի ապականացու վասն առնլոյ յապականացուացս մարմին. այլ *միշտ* անապական մարմնովն: - 78. Եւ ո՛չ ասի մահկանացու վասն մարմնոյն. այլ *միշտ* անմահ և կենդանարար մարմնովն: - 78. Տասներորդ՝ աչքն ի *միշտ* տեսանելն հեշտանայ: - 104. Նոյնպէս և միտք ի *միշտ* իմանալն: - 104. Վեցերորդ՝ ոչէ ասին և բացարձակքն որ ի հանդերձեալն. զի դեռևս ո՛չ են. այլ՝ լինելոց են *միշտ*: - 111. Նախ՝ զի *միշտ* է. և ո՛չ երբեմն է և երբեմն ոչ է: - 111. Երբեմն յարացոյց. իբր *միշտ* ի տեսութիւնն աստուծոյ: - 112. Իսկ անե՛ղ է աստուած արծակապէս և գերազանց. զի անեղէ է՝ և *միշտ* գոյ՝ և ինքնակատար: - 113. Զի անեղ է՛ գոլով՝ տարրորշի յանեղ ոչընչէն. և *միշտ* գոյ՝ ի հրեշտակաց. և ինքնակատարն՝ յայնցանէ որ կարօ՛տ են սկզման և կատարման: - 113. Երրորդն *միշտ* յաւիտեան: - 115. Ա՛յժմ և *միշտ*. որ է՛ ժամանակեայն և *միշտն:* - 116. Այլ՝ կոչի աստուած յաւիտեան. և *միշտ*. և ժամանակ. զի պատճառ է սոցա որպէս ասացաւ ի վերոյ: - 116.

Դարձեալ՝ գիտելի է, զի յաւիտեանն և *միշտ* և ժամանակն՝ վեցիւք զանազանին: - 116. Եւ *միշտն* ունի սկիզբն, այլ ո՛չ վախճան: - 116. Երկրորդ՝ յաւիտեանն պարունակէ *զմիշտն*. և *միշտն* զժամանակն. և ժամանակն յերկուցն պարունակի: - 116. Երրորդ՝ յաւիտեանն ո՛չ ունի մասն. այլ բոլորն համանգամայն և կատարեալ. այսպէս և *միշտն*: - 116. Չինգերորդ՝ ժամանակն է զգալեաց. և *միշտն* իմանալեաց. և յաւիտեանն անիմանալեաց: - 116. Վեցերորդ՝ ժամանակն է ի ներքոյ երկնից. և *միշտն* ի վերոյ երկնից. և յաւիտեանն ի վերոյ քան զամենայն երկինս: - 116. Վասն որոյ միեղէն տեսանեն և պարզ. որպէս զծագումն լուսոյ առանց ճանապարհորդութեան լուսաւորեալ. և *միշտ* բարձրանան տեսութեամբ: - 119. Եւ ա՛յս է նոցա առաւօտու և երեկոյի ճանաչումն, զի զաստուած տեսանելով՝ նոր լինի նոցա ճանաչումն *միշտ*՝ որ է՛ առաւօտու: - 119. Դարձեալ՝ հրեշտակք *միշտ* առաւելուն ի տեսութիւնս իւրեանց: - 120. Եօթներորդ ի մեզ, մարդն բանն. առիւծն ցասումն. եզն ցանկութիւնն. արծըւին գիտութիւն բարձրաթռիչ զվերինն խորհիլ *միշտ:* - 133. Երկրորդ՝ զի աստուած *միշտ* տայ և ո՛չ առնու: - 138. Իսկ մարդս *միշտ* առնու: - 138. Անմարմին՝ զի յատկացեալ. և լոյս՝ զի պատրեցէ. և անմահ՝ զի տանջեցի *միշտ*: - 147. Նոյնպէս և յաւերժահասունք՝ զի *միշտ* պատրեն զմարդիկ ուրախութեամբ: - 150. Չինգերորդ՝ զի հոգևոր բնութիւնն միանգամ միայն է շրջելի. վասն զի բոլորովին շրջէ զինքն՝ զոր ո՛չ առնէ մարդն. զի մարմինն *միշտ* մարտնչի ընդ հոգին. որպէս յառաջիկայդ ասի **լբ** գլուխն: - 151. Չորրորդ՝ գործ բնութեանն է *միշտ*. իսկ կամացն երբեմն: - 156. Տասներորդ՝ գործ մարդոյս նախ զօրութեամբ՝ և յետոյ ներգործութեամբ եղանի. իսկ աստուծոյն *միշտ* ներգործութեամբ է. որպէս ցուցանի յառաջիկայդ: - 157. Չնգետասաներորդ՝ զի մարդ յետ ստեղծանելոյն ո՛չ է ընդ ստեղծուածս իւր. իսկ աստուած յետ ստեղծանելոյն՝ *միշտ* է՛ ընդ ստեղծուածս իւր նախախնամութեամբ...: - 157. Զի յատուկ է առաջին պատճառին որ է՛ աստուած՝ ի հարկէ էակ գոլ՝ և *միշտ* ներգործութեամբ, և իսկապէս ներգործութեամբ. որովք տարորոշի յայսցանէ՝ որ կարելի՛ են էակ գոլ. և երբեմն ներգործութեամբ և հանդերձ զօրութեամբ: - 162. Եւ *միշտ* ներգործութեամբ է. զի ո՛չ կարօտի սկզբան և կատարածի զօրութեամբ գոլ. ապա ուրեմն անսկիզբն է և անվախճան: - 162. Նախ որպէս ցուցաւ *միշտ* է աստուած էութեամբ և ներգործութեամբ. առ ինքեան *միշտ* է, և ներգործութիւն իւր առ ա՛յլս: - 162. Զորօրինակ հուր *միշտ* ներգործութեամբ է ըստ ինքեան, և *միշտ* ներգործէ առ յայլս: - 162. Իսկ նախախնամութիւնն առ աստուած գոյացական է և *միշտ*. զի պատահումն ո՛չ գոյ յաստուած: - 164. Եւ այս ո՛չ պատճառի ի տկարութենէ շնորհացն որ *միշտ* նոյնպէս է նախ և յետոյ. այլ ի տկարութենէ անձինն շրջելոյ: - 166. Դարձեալ՝ այն զօրութիւնն *միշտ* է...: - 168. Ապա յա՛յտ է զանազանութիւն սոցա, զի ոմն զօրութիւն հարկաւոր է և ներգործութեամբ և անփոփոխ և *միշտ*. որպէս հրոյ ջեռուցանել, և արեգական լուսաւորել: - 168. Երկրորդ՝ զի *միշտ* ներգործութիւն է աստուած. ապա թէ գոյ ինչ զօրութեամբ, ո՛չ լինի *միշտ* ներգործութիւն. այլ երբեմն: - 168. Է՛ որ *միշտ* ներգործութեամբ. որպէս աստուած. և է՛ որ *միշտ* զօրութեամբ...: - 169. Իսկ առ նախատեսութիւն արարչին՝ *միշտ* ներգործութեամբ: - 169. Եւ զորօրինակ՝ անորակ նիւթն որ է՛ *միշտ* զօրութեամբ, ամենայն մարմինք որ ներգործութեամբ են՝ առ նա զօրութեամբ են: - 169. Այլ կոչի է, ըստ այնմ որ *միշտ* է՛, ո՛չ ունելով սկիզբն և ո՛չ վախճան. այլ ինքն է ամենեցուն սկիզբն և վախճան. որպէս ասէր՝ «ես եմ ալֆա և օմեգա»: - 171. Մին է՝ զի *միշտ* ոչ ինչ է. զի ոչ զօրութեամբ և ո՛չ ներգործութեամբ ունի զգոլն. և յայս ոչ էակէս ոչ ինչ լինի: - 173. Նմանապէս ծանիր և զայս կրկին է էակն. մին մշտնջենաւոր և *միշտ* ներգործութեամբ, որպէս աստուած. հրեշտակք. և արեգակն և հուր: - 173. Եւ է՛ էակ որ երբեմն զօրութեամբ է. որպէս այնոքիկ որ ի լինելութեան և յապականութեան են որք *միշտ* փոփոխին. որպէս մարդ և ոչխար և ծառ: - 173. Զի էակքս ամենայն՝ ոմանք բանաւորք են և ո՛չ *միշտ* ներգործականք. որպէս մարդս: - 173. Եւ ոմանք *միշտ* ներգործեն և ո՛չ են բանաւոր. որպէս հուրն: - 173. Իսկ աստուածայինն է ընդդէմ սոցա. զի է բանաւոր և է *միշտ* ներգործական որպէս ասացաւ: - 173. Եւ թէ ոք ասիցէ, որովհետև ներգործութիւնքն բնութեանց հետևին, որպէս հուրն *միշտ* այրէ, և ջուրն ցրտանայ և ջերմանայ. ապա ճշմարիտ երևի բանն դամասկացւոյն՝ եթէ է՛ ի քրիստոս կրկին ներգործութիւն. որպէս և կրկին բնութիւն: - 174. Նախ՝ ի շարժմանէ՛ երկնային մարմնոց. զի *միշտ* նոյնպէս և անդադար շարժին. առնելով զօր և զամիս՝ և զեղանակս՝ և զտարի՝ ստուգագոյն չափով առանց յաւելուածոյ և պակասութեան: - 181. Ուստի պատճառի լինելութիւն էիցս *միշտ* և անխափան. որպէս ասի ի գիրս աշխարհաց: - 181. Տասներորդ՝ *միշտ* տայ և ո՛չ առնու: - 184. Եւ զի ո՛չ հանապազ խաւարին. զի ո՛չ *միշտ* ընդ նոյն շաւիղս ընթանան. թէպէտ հանդիպին ընդ նոյն կենդանակերպն: - 187. Վեցերորդ Փայլածուն. զոր օտարիտ կոչեն. *միշտ* շրջի ընդ արեգականն. և սակաւ հեռանայ ի նմանէ. զընթացս իւր կատարէ՛ **յլը** աւուրս. **ժ** օր պակաս քան զլուսաբերն. և այլք թէ **գ** ամիս: - 189. Վասն այնորիկ յորժամ զիրս հոսականս և շարժունս չափէ՛, հա՛րկ է զի ի նոսին հոսեսցի. քանզի *միշտ* ժամանակն անցանէ և հոսի. յանցելոյն ի ներկայս. և ի ներկայէս

յապառնին: - 199. Չորրորդ՝ զի տունկք և բոյսք ի ներքին հիւթոյ և ի վերին անձրևոյ *միշտ* դալար մնասցեն: - 207. Չորրորդ՝ *զմիշտ* և զհանապազն: - 212. Նախ՝ զի ծառայք են *միշտ* վասն այլոց. որպէս մարդս *միշտ* տէր է. և անասունքն տէր և ծառայք. զի ծառայք են մարդկան, և տէր բուսոց. իսկ բոյսք և տունկք *միշտ* ծառայք են: - 214. Ո՛չ թէ քան զտարրական հուրն ի վե՛ր է անցեալ. այլ զի լուսինն և արեգակն *միշտ* ի հարաւոյ կողմանէ ի ստորոտէ լերինն ելանեն. և ի հիւսիսոյ կողմն լերինն *միշտ* գիշեր լինի. որպէս աղէքսանդրու պատմութիւնն ասէ. և ի գլուխն *միշտ* լոյս. և ի հարաւոյ կողմն տիւ և գիշեր: - 222. Զի որ քան եմք ի մարմնի՝ *միշտ* պարտ է երկնչիլ ի պատժոյ ի գլորելոյ ի մահու և այլոցն: - 229. Երրորդ՝ զի զդէմս ունիցիմք *միշտ* ի յերկինս. և զթիկունս յերկիր. և հանապազ ի բարին յառաջեմք ոտիւք և ձեռօք և ո՛չ դառնամք ի չարն: - 234. Դարձեալ՝ յատկութիւն ի տկարութենէ. զի հանապազորդ ունի զպակասութիւն. և անկա՛ր է ի *միշտ* կանգնիլն: - 275. Դարձեալ՝ զոր ինչ ունիմք՝ յայլմէ՛ ունիմք. և անկատա՛ր ունիմք. և *միշտ* կարեմք կորուսանել: - 275. Երրորդ՝ զի ընդդէմ դրախտին բնակեցաւ և ի *միշտ* նախանձէն մաշեցաւ: - 279. Եւ տատանեալ իբրև զծով ալեկոծեալ *միշտ* խորհրդովն: - 287. Այլ մելքիսեդեկին անխիղճ. որ *միշտ* ուտի անշունչ և անարիւն: - 301. Երկրորդ՝ սառա ամլութեամբ ծնաւ զիսահակ. և մարիամ կուսութեամբ զէմմանուէլ. և եկեղեցի *միշտ* կուսութեամբ ծնանի զծնունդս աւազանին: - 307. Եւ տէր մեր մարմնով մեռեալ, *միշտ* կենդանի է աստուածութեամբն: - 313. Ոմանք ասեն թէ՝ *միշտ* միջնորդութեամբ հրեշտակաց երևի աստուած...: - 330. Երրորդ՝ էն՝ *զմիշտն* ցուցանէ. իբր անսկիզբն և անվախճան: - 332. Հինգերորդ՝ **Ե** *միշտ* է և առ *միշտ*. որպէս մի՛ սպանաներն. և մի՛ գողանարն և այլն: - 340. Եւ **Ե** *միշտ*՝ և առ ո՛չ *միշտ*. զի կերպն փոխեցաւ առ նորս: - 340. Եւ այն որ շուրջ զսեղանովն, նշանակէ՛ զքահանայս. որ մերձ սեղանոյն որ է՛ քրիստոս՝ *միշտ* սպասաւորե՛ն և պատերազմին արեամբ չափ ընդ ախտս և ընդ դևս: - 341. Եւ *միշտ* յամենայն օր ի թոշակ հանգուցեալոցն: - 346. Երրորդ՝ զի *միշտ* ընթերցեալ մնասցէ ի միտս նոցա: - 349. Այլ և *միշտ* և անփոփոխ. և անմիջաբար դեմ յանդիման քահանայագործութիւն է անդ ըստ իմանալեացն օրինի: - 355. Իսկ ի նորս ճշմարտութենէ պատարագ քրիստոս. որ *միշտ* բաշխի յեկեղեցի: - 362. Եւ միւսն, որ զմարմին մեր պատարագեմք *միշտ*. սիրտ սուրբ և հոգի խոնարհ ունելով. զոր աստուած ո՛չ արհամարհէ: - 363. Այլ ընդ դևս պատերազմիլ *միշտ*. զի որոց դիւաց թէ յաղթէ մարդ, թէ հպարտութեան և թէ պոռնկութեան, զնոցա տեղիքն ժառանգէ յերկինս: - 393. Զայն ցուցանէ իբր *միշտ* թշնամի են մեր և հակառակ: - 394. Եւ երկրորդ՝ բոլոր սիրել և *միշտ* սիրել: - 396. Եւ տարին անդ՝ յաւիտեանն է և *միշտն*. որ պարունակէ՛ զժամանակս: - 399. Նա՛խ՝ զի ի խղճմտանք մարդոյն կախեալ է կեանքն արժանի մահու. և տեսանէ՛ *միշտ* և ո՛չ հաւատայ և դադարէ ի մեղաց: - 404. Երկոտասաներորդ՝ զերկանս սպասու մարմնոյ գործեսցէ *միշտ* և ի նոյն մեռանի որպէս սամփսոն: - 424. Իսկ սայլն՝ կրկին կտակքն. որ *միշտ* հոլովին առ մեզ: - 426. Որ և յերկրորդ գալուստն նախ դատեսցէ. և ապա թագաւորեսցէ անվախճան. ընդ որով քահանայագործութեամբ մաքրէ՛ և լուսաւորէ՛ և կատարեալս առնէ *միշտ* անզրաւ յաւիտենիւ: - 450. Փառաւորեալ և *միշտ* կոյսն Աստուածածին մարիամ՝ էր ի թագաւորական ցեղէն դաւթի...: - 459. ...որպէս հրեշտակք ի բոլոր սրտէ՝ յամենայն անձնէ և յամենայն զօրութենէ *միշտ* ներգործաբար դիմեն առ աստուած. և յիւրաքանչիւրսն ճառագայթի՛ ի նմա՛ աստուած: - 462. Իսկ զչորրորդ սրբութիւնն որ է՛ միաւորութիւն բանականին առ աստուած, և *միշտ* ներգործապէս դիմել առ աստուած որպէս հրեշտակք. ընկալաւ աստուածածին կոյսն ի յղանալն զորդին աստուծոյ: - 463. Եւ զմայլեալ ի բոլոր սրտէ և յամենայն անձնէ և ի զօրութենէ *միշտ* ներգործապէս դիմեալ առ աստուած հաստատեցաւ: - 463. Եւ ո՛չ միայն ճանապարհորդ, այլ և ըմբռնօղ *միշտ* և յաւիտեան: - 470. Զի ի հօրէ *միշտ* ծնանի աստուած. ի մօրէ միանգամ ծնաւ մարմինն. և ի միտս ծնանի բազում անգամ: - 471. Եօթներորդ՝ նա՛ միա՛յն է *միշտ* և անդադար ծնունդ. զի ո՛չ սակաւ ի ժամանակի, և ո՛չ ի ժամանակի դադարի. այլ որպէս լոյս ի հրոյ *միշտ* և անհատապէս ծնանի: - 472. Զի էութիւն ընդ պատահման *միշտ* անշփոթ միաւորի. որպէս որակ և քանակ ի գոյացութեան. զի անմեկնելի որոշմունք են: - 475. Իսկ պատահումն ընդ պատահման *միշտ* շփոթմամբ միաւորին. որպէս գոյն ի սևէ և ի սպիտակէ՛: - 475. Այսպէս միաւորեալն ընդ բանին մարմին՝ է՛ և ասի *միշտ* կենդանի և կենդանարար: - 477. Եւ թշրինի **Ժ** *միշտ* առաջին օր քաւութեան. յորում մտանէր քահանայապետն ի սուրբն սրբոց: - 483. Հինգերորդն է բևեռք ոտիցն և ձեռացն. առ *միշտ* յիշատակելոյ զմեզ ի միտս իւր...: - 489. Վերին մասն *միշտ* զվերինն խորհիլ ուր քրիստոս նստի...: - 493. Թէպէտ այսօր վասն պատրանաց մարդկան և փոխելոյ զտօնս՝ ոչ ինչ ուտեն զնաւակատեաց որ է ձուկն. զոր *միշտ* զքառասնորդ պահքս պղծեալ են ձկամբ և արբեցութեամբ: - 509. Այսպէս և մեք փառս տամք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. այժմ և *միշտ* և յաւիտեանս յաւիտենից: - 522. Եւ ի գալն յերկիրս հայոց, ետուն նմա օգնական զիւղն օծման զոր քրիստոս օրհնեալ էր. և զգեղարդն. և այլոց ազգաց չկա՛յ այս պարծանքս. զի

մեր մեռոնս հանապազ և *միշտ* զնոյն շնորհ ունի: - 549. Այսպէս ասեմք, զի որ ըստ ինքեան է ճշմարիտ և ըստ ինքեան բարի՝ առաւել է. և որ ըստ պատահման է ճշմարիտ կամ բարի՝ նուա՛զ է. վասն զի ըստ ինքեանն գոյացութեամբ և հարկաւո՛ր է. այսինքն անփոփոխ և *միշտ:* - 550. Որովք *միշտ* երանութեամբ զաստուած տեսցես. հայելով յօրէնս նորա ի տուէ և ի գիշերի: - 558. Իսկ հոգին սուրբ *միշտ* շնորհաբաշխ և պարգևատու: - 566. Եւ ունակութիւնն է՛ մնացեալ *միշտ:* - 568. Երեք. այսինքն զի բոլոր սրտիւ սիրէ և *միշտ* սիրէ և առանց փոխարինաց սիրէ. որպէս ասացաւ յերկրորդ օրէնքն: - 576. Չորրորդ՝ հաւատն է յանցեալն և ի հանդերձեալն որպէս ասացաւ. յոյսն միայն ի հանդերձեալն. և սէրն ի ներկայն որ է *միշտն:* - 577. Համբերութիւն է կամաւոր և *միշտ* տեսողութիւն մեծամեծ և դժուարին իրաց վասն օգտութեան և համեստութեան: - 580. Յարամնայութիւն է հաստատ և *միշտ* յարակայութիւն ի բարեպէս քննել բանականութեանն: - 580. Չորրորդ թէ ի լուսաւորութեան են *միշտ:* - 586. Հինգերորդ թէ առ աստուած հայիցին *միշտ* և զնա՛ տեսանեն: - 586. Երրորդ՝ զի *միշտ* անդրանիկ ծնանի և ո՛չ կրտսեր. զի պատկեր քրիստոսի ստանամք որ է՛ անդրանիկ հօր: - 590. Չորրորդ՝ զի *միշտ* որդի ծնանիմք աստուծոյ և ո՛չ դուստր և էգ. զի ի քրիստոս յիսուս արու և էգ ո՛չ է ասէ առաքեալն. և զայս ցուցանէ աւազանն ի յաջ կողմն եկեղեցւոյն: - 590. ...որպէս ազգն Ֆռանկաց ունին զայսպիսի խոստովանութիւնս *միշտ* քահանայքն և ժողովուրդքն. և այսպիսիս անկատար առնու զթողութիւն...: - 603. Աստ անարիւն պատարագն մատչի. և ի մեզ բանեղէն պատարագն հոգի և մարմին *միշտ* նուիրեալ կենդանի: - 614. Վասն որոյ և մեք *միշտ* ի նոյն քանիս ամսոյն սուրբ խաչին և եկեղեցւոյ տօն կատարեմք: - 617. Իսկ ամենեցունն՝ *զմիշտն* և զանբաժանելի հոգին սուրբ: - 625. Եւ ըստ **թ** դասուց եկեղեցւոյ որ աստուածաբանեն *միշտ*, զխաչեալն պաշտելով: - 632. Վասն որոյ տէրունի՛ է տօնելի *միշտ*: - 642. Իսկ մեծացուսցէքն, և խաչի, և հանգստեան, հանապազո՛րդք են. զի *միշտ* բարեխօսք են: - 642. Երրորդ, և նոյն ինքն տիրամայրն՝ խաչին երկիր պագանէր *միշտ:* - 642. և զայլ մարգարէսն ի շաբաթն ընթեռնուին. վասն այն *միշտ* սա՛ երգի յեկեղեցի: - 643. Նմանապէս և զեսայի *միշտ* ի կիրակէս ընթեռնումք...: - 644. Ջոր առեալ ի ձեռս *միշտ* մատուցանեմք աստուծոյ: - 645. վասն որոյ նոքա *միշտ* մերձին գրակալին յորժամ ընթեռնուն: - 646. Դարձեալ, նշանակէ զժողովուրդն աստուծոյ. յորոց ունկն ընթերցեալ լինին *միշտ* բանք աստուածայինք. հնգիւք զգայութեամբք հոգւոյ և մարմնոյ առ միմեանս յեռեալք: - 646. Յայս միտս այլ ազգք *միշտ* ի վերայ գրակալին պահեն զգիրս. զի արժա՛ն է *միշտ* ուսանիլ: - 646. Տասներորդ, և աստի ընտրեալքն յաջմէ, և խոտելիքն ի ձախմէ *միշտ* նշանակին: - 646. Եւ զայն աշխարհն տեսութեամբ և իմացմամբ *միշտ* յաւիտեան. անվախճան պատրաստէ՛ զիանգիստ և զերանութիւն նոցա: - 647. ...զոր *միշտ* և յաւիտեան պատրաստէ՛ և կազմէ՛ աստուած: - 647. և *միշտ* անպարապ լիցին աղօթից: - 655. ...և աճին *միշտ* լուսափայլ իմաստութեամբն աստուծոյ: - 663. ...*միշտ* ի մտի ունելով. և պատրաստ տանելով սահմանեալ ժամանակին: - 673. որ ցուցանէ թէ մարմինն նորա *միշտ* յեկեղեցւոջէ և յետ մահուն...: - 674. Ութերորդ, զի մի՛ դատարկասցին ի մարմնական գործոց *միշտ* տեսանել զմեռեալս: - 677. ...և յէութեանս *միշտ* փոփոխիմք վասն կարօտութեան. - 681. Հոգիք արդարոցն ճանաչեն զմիմեանս անուամբ և ծննդեամբ և գործով վաստակոցն. որք զարդիւնսն *միշտ* մերձ տեսանեն: - 685. Արդարքն վասն իւրեանց սիրելեացն *միշտ* աղօթեն զի ազատեսցին ի փորձանաց և ուղղեսցին ի մոլորութեանց և ընկեր փառաց նոցա լինիցին: - 685. Եւ առաւօ՛տ է օր դատաստանին. զի *միշտ* առաւօ՛տ է և ո՛չ երբէք փոխէ զնա երեկոյ: - 692. Նմանապէս և չարեացն վկայ՝ ոսոխն մեր սատանայ և գործակիցքն. և խիղճ մտացս որով տանջիմք *միշտ:* - 743. Այլ նախ ասի *միշտ* տիւ ի վերին երես երկրի. ուր արեգակն և լուսին զկա՛յէ առեալ. իսկ ներքինն *միշտ* գիշեր և խաւար անփոփոխելի: - 750. Չորրորդ՝ զի այս խաւար երբէք է և ուրեք. և այն *միշտ* և ամենեցուն: - 753. Երկրորդ՝ բա՛րձր է մայրն և արմաւենին. և արդարքն անխոնարհելի՛ են ի մեղս. *միշտ* «զվերինն խորհելով ուր քրիստոս նստի ընդ աջմէ աստուծոյ»: - 765. Նոյնպէս և *միշտ* զգուշասցի արդարն զի մի անկցի...: - 766. Իբրև ի հակառակս լ ամեայ *միշտ* մնասցեն...: - 766. Երրորդ՝ ծառ կենաց իմանին տունկք իմանալի դրախտին. այսինքն բանակք երկնաւոր զօրացն. *միշտ* յարազուարճ բերկրանօք բարձրացեալ ի փառս: - 767. Ի գնացս հոգւոյն զօրացեալ, զի ըստ տնօրէնութեանն խորհրդոյ *միշտ* հոգւով սրբով ներգործէր. ունելով տերև զաշխարհակեցոյց վարդապետութիւնն: - 768. Դարձեալ, ծառ կենաց է աւետարանն սուրբ տնկեալ ի մէջ եկեղեցւոյ դրախտին. բերելով պտուղ կենաց զիմաստութիւնն երկնաւոր. որ կեանս տայ ճաշակողացն զնա. և *միշտ* շնորհս բժշկութեան և թողութեան մեղաց: - 768. Նոյն և կամք և կիրք և ներգործութիւն մարդկային ընդ աստուածայինն միաւորեալ. միջնորդելով հոգւոյ բանականի՝ աստուածութեանն՝ և մարմնոյն. որ է՛ ներգործութեամբ *միշտ* աստուած և փրկիչ բնութեամբ. քրիստոս. նոր ադամ. էմմանուէլ ճշմարտութեամբ: - 770. Այլ բոլորովին զիամագոյ և ըզիամառօտ և զանաւելորդ

Երրորդութիւնն փառաւորեա *միշտ* և հանապազ: - 771. Որ *միշտ* օրհնեալ ես և գովեալ յաւիտեան: - 771. Որով և ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ վայելէ փառք և պատիւ և իշխանութիւն և զօրութիւն. այժմ և *միշտ* և յաւիտենից յաւիտեանս Ամէն: - 771. Միայն միայնոյ և *միշտ* էին Յօր և Որդւոյ և Յոգւոյն սրբոյ: - 771. Իսկ հրեշտակական կենաց է հրաշափառապէս գիտել և ո՛չ մոռանալ *միշտ*...: - 774. Ապա բնաւորապէս ընդ դէմ գոյ երից որպիսութեանց սա՛ մեզ չորրորդ գոլով. ոչ ունել ինչ ի մտի. մոռանալով *միշտ*. ո՛չ գիտել և ո՛չ յիշել ինչ զանտի կենաց: - 775. Եւ այն զի՞նչ իցէ, զի սա *միշտ* մի և նոյնպէս մնայ. իսկ նա՛ աստանօր ողորմի զղջացելոցն, և ո՛չ ոչ նոյնպիսոյն. իսկ անդանօր ո՛չ զղջացելոց ողորմի մարդկան մեղաւորաց և ոչ անզղջից անմարմնոց շեղելոց: - 778. Եւ ո՛չ է տարադէպ ցոյցք ականն արփիաւորի, զի ի միջօրեայ ժամու փոփոխումն մարմնոյ ևական արձակէ՛ ստուեր կամ լոյս. այլ ինքն *միշտ* լոյս գոլով ո՛չ փոփոխի: - 779. Եւ թէ նայիս մտօք, թէպէտ առ մեզ փոփոխին տիւ և գիշեր. այլ նա *միշտ* լոյս և *միշտ* գիշեր կազմէ...: - 779. ...նոյնպէս ողորմութեան և արդարութեան է *միշտ* բարերարելն և պատժելն ըստ նախասահման գիտութեան նորին նախքան զլինիլն էիցս ըստ առաքելոյ: - 779. Եւ յայսմանէ բացայայտի այս, զի աստուած *միշտ* անփոփոխ է. իսկ ժամանակն *միշտ* փոփոխական է. իսկ մեք երբեմն փոփոխական և երբեմն ո՛չ: - 779. Զի նկատմամբ առ անփոփոխն՝ *միշտ* անփոփոխ գոն նախ օրինակաւ. այլ առ ժամանակն՝ փոփոխական: - 779

**ՄԻՈՐՁԻ +** Երկոտասաներորդ՝ *միործի*. պակաս զօրութեամբ և անգործ: - 370

**ՄԻՈՒԹԻՒՆ +** Արդ ասի որդին ծնեալ և ստեղծեալ. զի ի ստեղծմանէն իմանի անփոփոխութիւն հօրն. և ի ծննդենէն *միութիւն* բնութեանն հօր և որդւոյ: - 41. Եւ այս վասն *միութեան* բնութեան և կամաց հօր և որդւոյ: - 42. Պատասխանեմք եթէ՝ որպէս ասի որդի առաքեալ ի հօրէ և ի հոգւոյն, ըստ այնմ «տէր տէր առաքեաց զիս և հոգի նորա». և այս ո՛չ վասն փոքրկութեան, այլ վասն *միութեան* կամացն: - 60. Այլ այսուքիկ *զմիութիւնն* մեզ ցուցանեն: - 61. Վասն որոյ հարկաւորիմ ցուցանել նոյն քան զլխով եթէ աստուած է քրիստոս և ըստ մարմնոյն *միութեան* մարմնացեալ և մարդացեալ աստուած: - 72. Քսաներորդ՝ որպէս բարձրագոյնքն կարեն ասիլ մարմնոյն վասն *միութեանն* որպէս աստուած, յարութիւն, և կեանք յաւիտենական: - 74. Իսկ ընդ դէմ եւտիքեայ անշփոթ ասել՝ պահէ՛ զյատկութիւն բնութեանցն՝ ի *միութիւն* խառնեալ էութեանցն: - 75. Այսուքիկ և այսպէս ասել՝ քակէ՛ և ուրանայ *զմիութեանն* բան: - 76. Եւ այս ո՛չ մասամբ կամ բաժանմամբ. այլ բոլորիւ և *միութեամբ:* - 77. Այսուքիկ հային առ *միութիւն* անձինն աստուածային: - 77. Այսուքիկ հային առ *միութիւն* էութեանն: - 77. Դարձեալ՝ որպէս բացբարձութեամբն ասի հայր աստուած՝ անսկիզբն և անվախճան. ունելով զայս և զայն ի պարզ *միութեան* իւրում. և ո՛չ է **բ** անձն կամ **բ** բնութիւն: - 77. Զբանս զայս չարափառքն այսպէս մեկնեն, թէ *միութիւն* բանին ընդ դէմ է *միութեան* Երրորդութեանն. զի անդ բնութիւնն մի՝ և **գ** անձինք. իսկ աստ **բ** բնութիւն և մի անձն: - 80. Դարձեալ՝ զի ասէ թէ, ա՛յս միաւորութիւնս որ ի քրիստոս է, ո՛չ է իբրև զայն որ յԵրրորդութիւնն է. զի անդ *միութիւն* է, բայց բաժանումն անձանց: - 80. Իսկ աստ թէպէտ *միութիւն* է, բայց ոչ է բաժանումն անձանց. այլ ըստ *միութեան* բնութեանն մի՛ է անձն: - 80. Իսկ աստ թէպէտ միութիւն է, բայց ոչ է բաժանումն անձանց. այլ ըստ *միութեան* բնութեանն մի՛ է անձն: - 80. Եւ այսպէս փախչելով ի թիւր ծայրիցն, զմիջինն պահելով ընթացք բարեպաշտութեան, անշփոթ և անբաժան *միութիւն*, խոստովանիմք զքրիստոս՝ աստուած մարդացեալ. մի անձն և մի բնութիւն. և մի կամք և գործք ըստ ուղղութեանն բանի: - 81. Եւ սոքա էութեամբ և բնութեամբ ո՛չ խոստովանին *զմիութիւնն*. այլ՝ անձամբ միայն: - 82. Ապա ուրեմն յորդիութիւնն և յանունն խոստովանին *միութիւն* ի պատրանս պարզամտաց. և զճշմարիտ *միութիւնն* ուրանան և փախչին: - 82. Ո՛չ զմասն ինչ առեալ զմարդոյ. այլ զբոլոր բնութիւնն ժողովեալ անհատ մարդկութեամբն. զհոգի բանական՝ և զմիտս՝ և զմարմինս մեր՝ միաւորեաց ընդ իւրում աստուածութեանն անշփոթ և անորոշ *միութեամբ:* - 83. Զի միաւորեալն ո՛չ բաժանի. վասն զի *միութիւնն* եբա՛րձ զերկուութիւնն: - 83. Այլ մի ասեմք զներգործութիւնսն վասն մի *միութենէն* ներգործելոյ. որպէս մի ձեռն կտրէ՛ և կարէ՛. գրէ՛ և ջնջէ՛: - 85. Արդ եթէ էութիւն է անձն, և ընդ անձինն մի ասեն զմարդկային բնութիւնն, մի է և ընդ էութեանն. և թէ մի է ընդ էութեանն. որպէս ճշմարիտ *միութիւն*, մի ասա և բնութիւն. զի էութիւն և բնութիւն մի են: - 86. Ա՛րդ՝ յատուկ անուամբ *զմիութիւն* խոստովանին. և ո՛չ իսկական բնութեամբ: - 87. Այլ արդ՝ մարդկային բնութիւնն յաստուածութեանն տեսանի, և աստուածային ի մարդկութեանն, եթէ ի *միութիւն* բնութեանն, և եթէ ի *միութիւն* անձինն. զի ո՛չ սոսկ մարդ է քրիստոս և ո՛չ մերկ աստուած. այլ աստուած մարդացեալ: - 87-88. Այսպէս և նեստոր մի ասէր զքրիստոս ո՛չ ըստ իրին *միութեան*, այլ ըստ անուանն համաձայնութեան. որպէս հոմանուն ձայն մի ունելով զկոչմունս, և զանազան բնութիւնս ի ներքոյ մի անուանն: - 90. Իսկ ասելն «զնա», կամ ըստ *միութեան* իմանի. և կամ

ըստ այլոց բաժանմամբ: - 94. Իսկ ըստ *միութեան* յոյժ վայելչապէս: - 94. Եւ այս ըստ *միութեանն*: - 94. *Միութիւն* և որոշումն: - 101. Նախ գիտելի է, զի *միութիւն* ի գոյացութիւնն՝ առնէ զնոյնութիւն: - 104. Եւ *միութիւնն* ի յորակն՝ առնէ զնմանութիւն: - 104. Եւ *միութիւնն* ի քանակն՝ առնէ զհասարակութիւն: - 104. Եւ *միութիւնն* ի յառինչն՝ առնէ զյատկութիւն: - 104. Ա՛րդ՝ *միութիւն* սուրբ Երրորդութեանն բազում է և յայտնի: - 104. Այսքան յընդհանուր վարդապետաց վասն *միութեան* և որոշման սրբաբանեալ: - 105. Երրորդ՝ հասարա՛կ է ի յԵրրորդութիւնն *միութիւնն* սուրբ. զի մի է հայր. մի որդի. մի հոգի: - 106. Այսպէս է *միութեամբ* որոշեալ և բաժանեալ. և բազմութեամբ միացեալ: - 106. Հինգերորդ՝ ըստ այլ եղանակի է՛ *միութիւն* և յատկութիւն: - 106. Ըստ որում մինն ի սուրբ Երրորդութենէն բանն աստուած հաղորդեցաւ բնութեան մերում անքակ *միութեամբ*. և եղև աստուածն կատարեալ՝ մարդ կատարեալ: - 106. Այսպէս է *միութիւնք* և որոշմունք որ է հասարակ և յատուկ ի սուրբ Երրորդութիւնն: - 106. Իսկ Երրորդութիւն, որ է՛ **գ** *միութիւն*. և մի Երրորդութիւն. այսինքն մի **գ**. և **գ** մի: - 107. Եւ զի անձամբ յատկացեալք են և բնութեամբ մի. վասն այն Երրորդութիւն ո՛չ ասի միոյ անձին. այլ աստուած կամ աստուածութիւն ըստ *միութեան* բնութեանն: - 108. Երկոտասաներորդ՝ զի ընդ բազումս բազմանայ, և ի *միութեան* իւրում կայ և մնայ ըստ միոյն օրինակի: - 110. Զի ուղղաձևութեան ուսուցիչք ի բաժանմանէ ի *միութիւն* եկեալ խոստովանին զքրիստոս. և սոքա ի միութենէ ի բաժանումն որոշեն: - 176. Զի ուղղաձևութեան ուսուցիչք ի բաժանմանէ ի միութիւն եկեալ խոստովանին զքրիստոս. և սոքա ի *միութենէ* ի բաժանումն որոշեն: - 176. Գոյացութիւն որ սկիզբն է ամենեցուն և նախասեռ. և ի նմանէ զուգաբաժանեալ մարմինն. և շնչաւորն. և զգայունն. և կենդանին. և բանաւորն. և մարդն. ո՞չ ապաքէն բնութիւն են սոքա այլևայլ. և ժողովեալ գոյացուցանեն զմի անհատն պետրոս անշփոթ *միութեամբ:* - 176. Երկրորդ՝ զի առաջին և սկիզբն է թուոց. որպէս միակն թիւ բազմանայ և խառնի յայլս, այսինքն՝ ի **ժ**. ի **ճ**. ի **ռ**. և ի բիւրն. և ի *միութենէն* իւրմէ ո՛չ որոշի: - 178. Այլ արդ՝ օրինակաւ տեսցուք *զմիութիւն* հոգւոյն: - 259. Ութերորդ՝ հուրն և օդն առաւել է յարիւնն զի առնօղք են. և յայտ է ի խառնումն *միութեանց*. զի հուրն մածուցանէ՛, և ջուրն և հողն մածնուն, և օդն սնուցանէ. վասն այն զարարօղն և զսնուցանօղն ո՛չ ուտեմք: - 295. Նախ՝ կոչի մարմինն զգեստ՝ գոյացական՝ անփոփոխ և անքակ *միութեամբն*. զի բաժանմամբ մարմնոյն և բանին ո՛չ է քրիստոս. որպէս ի բաժանիլ հոգւոյ և մարմնոյ ո՛չ է մարդ: - 318. Դարձեալ, ժամանակն ունի մասունս երիս. և մշտնջենաւորն. և դարձեալ յաւիտենական է բանն. և ժամանակեայ մարմինն. և մշտնջենաւոր հոգին. և անքակտելի *միութիւնն* ցուցանէ մեզ զչորս թուոյն. և ամենայնիւ կատարեալ գոյացութեամբ: - 437-438. Նա՛խ՝ ի *միութենէն* աստուծոյ: - 457. Այսպէս և բոլոր տընօրէնութիւն մարդացելոյն բանի՝ միով զօրութեամբ և կարողութեամբ ըստ *միութեանն* կամաց մի ներգործութիւն երևի: - 478. Սակայն մի և նոյն բանն բազմանայ ի բազումս. որպէս ի հրեշտակս և ի մարդիկ. ի հին և ի նոր օրէնս. այլ ի *միութենէն* ո՛չ բաժանի: - 529. Եւ դարձեալ զոր օրինակ, բան թագաւորին մի է, այլ ի բազում լեզուս և ի բազում լսելիս և ի բազում թուղթս որակացեալ և բազմացեալ, յիւրում *միութենէն* ո՛չ է քակտեալ: - 529. Եւ թէ ոք ասիցէ, ծանեաք *զմիութիւնն*. այլ թուի թէ անկատար է քան զբանն աստուծոյ՝ բան աւետարանիս: - 529. Զի յատուկ է անմարմնոյ, որպէս ի բազումս բազմանայ և ի *միութենէն* ո՛չ բաժանի, այսպէս ի մասունս մասնաւորի և ի բոլորէն ո՛չ քակտի: - 529-530. Զի բազմանայ և ի *միութեան* մնայ. բովանդակի անբովանդակապէս. և բաժանի անբաժանապէս. որ է մի և նոյն տեսակաւ և գոյացութեամբ որպէս ցուցաւ: - 530. Դարձեալ և այլապէս երևի *միութիւն* ի բաժանմանէ **գ** եղանակաց: - 533. Եւ թէ ոք ասիցէ, ապա ուրեմն լա՛ւ է տարածայնութիւն քան զհամաձայնութիւն. և բաժանումն քան *զմիութիւն:* - 551. Այսինքն է, զազգս քրիստոնէից տեսանեմք զի ո՛չ ըստ անուանն և *զմիութիւն* կանոնական սահմանի ունել: - 553. Ա՛րդ՝ մեղք սկզբնականին չորիւք զանազանի յայլոցն. այսինքն ի մահացուէն և ի ներելոյն. ըստ *միութեան*. ըստ հասարակութեան. ըստ հաւասարութեան. ըստ որակի տարբերութեան: - 567. Ա՛րդ՝ մեղք սկզբնականին չորիւք զանազանի յայլոցն. այսինքն ի մահացուէն և ի ներելոյն. ըստ *միութեան*. ըստ հասարակութեան. ըստ հաւասարութեան. ըստ որակի տարբերութեան: - 567. Նա՛խ ըստ *միութեան*. զի մի է մեղքն սկզբնական և ո՛չ բաժանի. որպէս մահացուն է. և ներելին **գ**: - 567. Առաջինն է հաւատալ *զմիութիւն* աստուածային բնութեանն: - 573. Այսպէս և պատկեր վերստին ստեղծմանն ի մեզ կայանայ ի *միութիւն* շնորհին և յերիս ունակութիւնս: - 577. Ասեմք թէ՝ յորժամ միաւորեալ էր ի մարմինն *միութեամբ* ներգործիւր ի նմա ամենայն մարմնականքն: - 605. Եւ այս *միութիւնս* լինի ի ձեռն պսակին: - 609. Նշանակէ այս *զմիութիւն* հրէից և հեթանոսաց ի մի հօտ և ի մի պաշտօն: - 636. Վերին ազդյցն *միութիւնն*: - 645. Այլ և քան զանմարմնոց *միութիւնս* գերազանցեալ է: - 757. Որ և անբաժանելի և անքակ *միութեամբ* միաւորին յօդեալք ի գլուխն քրիստոս անզրաւ յաւիտենիւ: - 757. Այն քան եղիցի *միութիւն* գլխոյն և

անդամոցն, զի անդամքն զպատիւ գլխոյն իւրեանց՝ ինքեանց համարեսցեն: - 763. Միովն ստուգէ՛ զաստուածութիւնն. և միովն հաստատէ՛ զմարդն կատարեալ. և երկրորդիւն անքակ և անշփոթ և անբաժան *զմիութիւնն* յայտնէ: - 770

**ՄԻՋԱԿ +** Զամենայն հրեշտակս բարի արար աստուած, այլ ո՛չ ծայրագոյն բարիս. այլ *միջակս*. որ է ի մէջ անփոփոխ և փոփոխական բարւոյն. այնպէս՝ զի թէ դառնայինն և սիրէին զայն՝ որ ի վեր քան զինքեանս, ելանէին յորպիսութիւն շնորհաց և փառաց. որպէս այժմ են հրեշտակք բարիք: - 146. Նախ՝ զի *միջա՛կ* է արեգական և աստեղաց: - 186. Եւ դարձեալ արեգակն *միջակ* գոլով հաղորդի ամենայն մոլորակաց. և զայն անցուցանէ ի լուսինն լուսո՛վն հանդերձ: - 187. Իսկ գարուն և աշուն է՛ *միջակ* և ջերմ և գէջ՝ բուսուցանէ: - 197. Եօթներորդ՝ զի **գ** տեսակ հոգոց բացայայտեսցին. որ է՛ անկատար՝ և *միջակ*՝ և կատարեալ: - 231. Ուստի *միջակ* գոլով ըստ էութեան՝ և ի *միջակ* վայրս դրախտին բնակեալ: - 231. Գոյնն *միջակ* ի մէջ սպիտակին և սևին՝ ցուցանէ զուշիմն և զբարեբարոյն: - 247. Վեցերորդ՝ ո՛չ առնու ի գլխոյն և ո՛չ յոտիցն. այլ ի միջացն. զի խրատէ՛ զմարդիկ ո՛չ հաւասար գլխոյն պատուել զկինն, և ո՛չ անարգել իբրև զոտք. այլ *միջակ* պատուով չափաւորել զնա: - 276. Նմանապէս և *միջակ* կապիւն, զի ուսանիմք յաստուծոյ ընկալեալք զկարգ կրօնիցն. և ունիմք ուխտ և դաշին և հնազանդութեան նմա...: - 318. Երկրորդ՝ զի ադամ ի *միջակ* լուծն կշռոց այսինքն յանձնիշխանութիւնն ստեղծաւ...: - 503. Իսկ միջին դժոխք որ կոչի բանտ դժոխոց՝ է՛ *միջակ* մեղաւորաց. որք ունին հաւատ և ո՛չ գործք. որպէս չար հաւատացեալք. կամ գործք և ո՛չ հաւատ. որպէս թերահաւատք և անհաւատք: - 505. Եւ զի **գ** է օր ի բոլոր տարին. կամ ամենևին պահք. կամ ուտիք. կամ *միջակ*. որպէս նաւակատիկք: - 510. Իսկ նաւակատեաց կերակուր այն է՝ որ *միջակ* է սոցա երկոցունց. այսինքն ի կենդանւոյ և ի տնկոյ. որպէս ձուկն, ձու, և կաթն: - 510. Ոչ գիտել և ոչ ասել *միջակն* է: - 537. Երրորդ ի պատահմանէ դիպւածոյ. և այս *միջա՛կ* է: - 664. ...և որք *միջակք* են, և նոքա ի քաւարանին մաքրին և յերկինս ելանեն: - 686. Իսկ արդարքն և մեղաւորքն *միջակք*՝ որք առին զօրէնսն և ըստ օրինացն գործեցին զբարիս. կամ սխալեցին. - 687. իսկ *միջակ* արդարքն որ են ի կայանս հոգւոցն՝ և զտեսանելն պայծառապէս ընկալցին ի յարութեանն դէմ յանդիման որպէս և էն. - 697-698. Եւ այլ վարդապետք փայտ խոտ և եղէգն զներելի մեղս ասեն. և առաւել և նուազ և *միջակ:* - 702. Եւ այլ վարդապետք փայտ խոտ և եղէգն զներելի մեղս ասեն. և առաւել և նուազ և *միջակ:* - 702. և Ոմանք դատին և դատապարտին. որպէս *միջակք* որք ունին հաւատ և ո՛չ գործք. որպէս չար հաւատացեալք. և որք ունին գործք և ո՛չ հաւատ. զի աստ հատուցաւ նոցա: - 739. և Ոմանք դատին այլ ո՛չ դատապարտին. որպէս *միջակ* արդարքն. որք ունին ներելի և մասնաւոր մեղս: - 739. Եւ բանիւ բերանոյ խօսի ընդ *միջակ* արդարս և ընդ մեղաւորս...: - 739

**ՄԻՋԱԿՕՐԷՆ** - Այլ գիտելի է, զի **դ** սեռիւք որոշի կապ բանականացս. այսինքն հոգեկան և մարմնական և *միջակօրէն:* - 317. Նոյնպէս և կապն *միջակօրէն* տրամատի ի **դ**: - 317

**ՄԻՋԱՍԱՀՄԱՆ +** Եւ այսպէս էր *միջասահման* կեանք նոցա զոր ասեն ի մէջ մահու և անմահութեան: - 282. Այլ ի *միջասահման* տեղւոջ աշխարհի որ է՛ երկիրս: - 737

**ՄԻՋԵՐԿՐԱՅ +** Եւ հիւսիսայնոցն ո՛չ բուսանի վասն խիստ ցրտոյն. և *միջերկրայքս* վասն բարեխառնութեանն մորուս ունին: - 245

**ՄԻՋԻՆ +** Ա՛րդ՝ եթէ ելանէ ի հօրէ և յորդւոյ, լինի իբրև եզր և **գ**. և ո՛չ իբրև *զմիջին*: - 64. Ընթացք աստուածպաշտութեան՝ *զմիջինն* ուսուցանեն մեզ գիրք սուրբք...: - 80. Եւ այսպէս փախչելով ի թիւր ծայրիցն, *զմիջինն* պահելով ընթացք բարեպաշտութեան, անշթոփ և անբաժան միութիւն, խոստովանիմք զքրիստոս՝ աստուած մարդացեալ. մի անձն և մի բնութիւն. և մի կամք և գործք ըստ ուղղութեանն բանի: - 81. Այլ դատաւորին պարտէ ունիլ անհուն գիտութիւն. զի քննել կարասցէ զամենայն բնութիւն հրեշտակաց և մարդկան. և զամենայն գործս եղեալս և զլինելոցն. զխորհուրդս և զբանս բոլորից. զառաջինն՝ *զմիջինն* և վերջինն: - 100. Եւ դարձեալ՝ որպէս ամենայն գիծ բոլորակին՝ ի *միջին* կէտն միաւորին առ միմեանս. և հեռացեալք ի *միջին* կէտէն բաժանին ի միմեանց. և զորօրինակ՝ մի է սեռն՝ և ի բազում տեսակս բազմանայ: - 112. Վեշտասաներորդ՝ մէջ գոլով աստեղացն և լուսաւորէ. որպէս *միջին* ստեղն եօթնաջահեանն լուսոյ: - 126. Որպէս ի դասս հրեշտակաց՝ առաջին երրեակ դասքն առաւել են փառօք քան *զմիջինսն* և զվերջինսն: - 131. Որ են *միջին* դասք: - 134. Եւ են առաջինքն իմացականք. և վերջինքն իմանալիք. և *միջինքն* իմացականք և իմանալիք. որպէս ա՛յլ եղանակաւ ասացաւ ի վերոյ: - 134. Երկրորդ՝ զի թիւ է կատարեալ. առաջին *միջին* և վերջին: - 134. Ութերորդ՝ ոմանք քահանայապետե՛ն, ոմանք քահանայապետին, և *միջինքն* քահանայապետին և քահանայապետեն: - 134. Տասներորդ՝ յիւրաքանչիւր դասս դասապետն՝ և *միջինն* և վերջինն: - 134. Նմանապէս և ի *միջին* կարգ քահանայապետութեանն՝ առաջին է տէրութիւնքն. և ապա զօրութիւնք. և ընդ նմին իշխանութիւնք: - 135. Այս է *միջին* կարգ քահանայապետութեան նոցա և

գործ նոցա: - 136. Երրորդ պատճառ. զի զօրութիւնք *միջին* են դասակարգեալ բոլորից. ի նոցունց դասուց և երիցն: - 137. Եւ արդ որպէս ցուցաւ՝ վերինք մինչ ի *միջինս* ունին բոլորապէս զներքնոցն. և ներքինքն մասնաւորաբար մինչ ի զօրութիւնսն՝ յաղագս առ հասարակ զօրութիւնք կոչին: - 137. Նախ՝ զի առաջին դասքն անընդմիջաբար առնուն յաստուծոյ. իսկ *միջինքն* և վերջինքն միջնորդութեամբ: - 138. Իսկ *միջինն* որ է՛ բնականն՝ ո՛չ գովելի և ո՛չ պարսաւելի: - 143. Ա՛րդ՝ տեղական անկումն դիւին եղև կամ ի դժոխս՝ կամ ի յօդս աղջամղջին որ է՛ *միջին* կայարան օդոյն: - 146. Զի ոմանք ասեն թէ ի *միջին* դասուցն անկան **գ** մասն, և մինն մնացեալ յիշխանութեանցն խառնեցաւ: - 150. Զանկումն սատանայի եռակի՛ է իմանալ. առաջին՝ և *միջին* և վերջին: - 152. Երկրորդ՝ առաջին ստեղն է հայր. ոչ յումեքէ. *միջինն* որդի ծնունդ ի հօրէ. վերջինն հոգի բղխումն ի հօրէ և ելումն յորդւոյ. զի որդւովն երևի. և հարթ հաւասար աստուածութեամբ և արարչութեամբ: - 178. Եւ զի ո՛չ է ի տեղւոջ աստի յայտ է, զի տեղին է վերին և ներքին և *միջին*. և արտաքոյ աշխարհիս ո՛չ երևին սոքա: - 180. Երրորդ՝ զի վեցեակ թիւն ի մէջ ամենայն թուոց առաջին կատարեալ է. և **զ** թիւն է ի բոլորակ ձևն. զի որ քան է ի *միջին* կիտէն ի բոլոր ծիրն, վեց այնչափ է իւր բոլորակ ծիրն: - 182-183. Վեցերորդ՝ զի թէ երկինքն ո՛չ էր բոլորակ, յայնժամ արեգակն և այլ աստեղք յորժամ գային ի մէջ երկնից, մեծագոյն երևէին. քանզի ի *միջին* կիտէն երկնից առ մեզ է ուղղական գիծ. իսկ յարևելից առ մեզ է՛ խոտորնակի գիծ. և ուղղական գիծն կա՛րճ է քան զխոտորնակ գիծն: - 183. Ապա ուրեմն ո՛չ երբէք մեծագոյն երևի աստղ՝ յորժամ է ի *միջին* կէտն՝ քան յորժամ է յարևելս կամ յարևմուտս: - 183. Իսկ երկրաւորքս ժամանակեայ. և ժամանակն կարգ ունի, առաջին՝ *միջին* և վերջին: - 192. Եւ դարձեալ այսպէս զանազանին սոքա երեքեան աւուրք. այսինքն առաջին օր ստեղծման. և *միջին* մինչ ի կատարած. և վերջին օր յարութեան: - 193. Զի առաջին օրն եղև անառաւօտ. և վերջինն աներեկոյ. և *միջինն* ամենայն աւուրք ունին առաւօտ և երեկոյ: - 193. Իսկ *միջինն* Ապէլիօդ. բարեխառն. անձրև, և արև: - 205. Իսկ *միջինն* է Զեփիւռն. շարժէ՛ զծաղիկս: - 205. Իսկ *միջինն* Ապարքտիաս. ցուրտ և կարկտաբե՛ր է: - 206. Իսկ *միջինն* է՛ Նոտոսն. առնէ որոտ. և փայլակն. և անձրև խիստ: - 206. Եւ զի *միջին* կէտ է արարածոց: - 211. Եւ զի ի *միջին* կիտէն իւր ըմբռնի անշարժ: - 211. Զի տղայութիւնն օդո՛յ է. և *միջին* հասակն հրոյ և հողոյ. և վերջինն ջրոյ. վասն այն սպիտակի. որպէս ցուցանի յառաջիկայդ **ժզ** գլուխն՝ **իզ** համարն: - 213. Զի ի վերին մասն օդոյն է մերձեցեալ՝ որ է առաւել բարեսուն. և ամպոց և հողմոց շարժմունք ի *միջին* մասն օդոյս ծնանին. և ի դրախտն ո՛չ հասանեն: - 222. Յերկրորդ օրն՝ ի *միջին* տարրէ՛ ջրոյն զծկունս և զթռչունս: - 227. Եւ *զմիջին* կշեռ մահու և կենաց ունելով: - 231. Եւ ցասումն *միջին*. և ցանկութիւնն վերջին: - 232. Իսկ այլ անդամքն ըստ կարգի *զմիջին* և զվերջին: - 232. Նմանապէս և *զմիջին* դուռն բանայ, և զպարզ կերակուրն ի լեարդն յուղարկէ. և նա ներկէ յարիւն և բաժանէ: - 242. Եւ կոչին վերին երակն քալասիկ է. և *միջինն* ասայիկ է: - 244. Բազուկն երկայն որ *միջին* մատն հասանէ ի ծունկն՝ ուժե՛ղ է: - 247. Վասն այնորիկ զօրութեամբ սիրոյն շարժի առ աստուած ի *միջին* կէտ իւր. զի գերազանցապէս հեշտասցի ի նա՛: - 249. Զի լոյս Բանին և պայծառախօսութիւն՝ ի խելքն ծագէ. և Իմացականն՝ ի *միջին* փորուած գլխոյն: - 250. Դարձեալ **թ** թիւն է երիցս երրեակ. և երեք թիւն է կատարեալ. ունելով առաջին *միջին* և վերջին. ի նմանութիւն **թ** դասուց հրեշտակաց: - 264. Եւ այսպէս *միջին* հասակս կատարեալ, ձգի մինչև ի **խզ** ամն. որ է **դ ժզ**. և վեցն կատարեալ թիւ է. և աստ տիրէ ալիք և սկիզբն լինի ծերութեան մինչև ի **հբ** ամն. յորում է ծայրք կենաց ըստ դաւթի, և թիւ երկոտասան վեցից խորհրդաւոր: - 265. Դարձեալ՝ մարդո՛յն է յատուկ ունել զամենայն սիրելութիւն առ ամենայն ազգս. առ վերինս և առ ներքինս և առ *միջինս*: - 274. Ի ներքին տունն չորքոտանիք. և ի *միջինն* մարդն. և ի վերինն թռչունք: - 293. Եւ *միջինն* սարկաւագաց և դպրաց: - 294. Արդ՝ առաջինն և վերջինն վայելչակա՛ն է յոբայ և աստուծոյ. իսկ *միջին* երկուքն բարեկամացն յոբայ, և չար բանսարկուին յարմարի: - 323. Եւ *միջին* խորհուրդ է, յորժամ ի քննութիւն էիցս պարապի: - 331. *Միջինն* տէրութեանցն: - 343. Եւ սարկաւագունք և սպասաւորք *միջին*: - 343. Ցուցանէ՛ զառաջին՝ *զմիջին* և զյետին ժամանակս տալ աստուծոյ: - 360. Զի *միջնո՛ց* է մարմնոյն, և սկիզբն է կենդանւոյն, և կատարած կենաց: - 360. *Միջինն* հոգևոր և մարմնաւոր: - 362. *Միջինն* ի մարմնոյն: - 362. *Միջինն* մեք վասն քրիստոսի: - 362. *Միջնոյն* ըստ արժանեաց: - 375. *Միջինն* գործ աշխատութեան: - 375. Հինգերորդ՝ թիւն զընտրութիւն՝ զդաս՝ և զկարգն ցուցանէ. զի գո՛յ ի նմա՛ առաջին *միջին* և վերջին. որպէս զինուորք. իսկ անթիւն խոտան և անկա՛րգ է. որպէս ծերք և տղայք: - 377. Եւ այլք **գ** բաժանեն. յառաջին. *միջին*. և վերջին: - 378. *Միջին* մինչ ի **ծ** ամն կատարեալ հասակ: - 378. *Միջինն* վարձկանաց: - 381. *Միջինն* զներգործական մահացուն: - 384. Այլ մեզ ուղղափառ եկեղեցւոյս *միջինն* է ընդունելի: - 391. Զի աւելին ագահութիւն հեթանոսաց էր. և պակասն անհաւատից. այլ *միջինն* քրիստոնէից...: - 444. Այլ *միջինն* ուղիղ է և բարի: - 465. Իսկ *զմիջին* պատուհասն եդ աստուած ի վերայ զմահն: - 496. և Դարձեալ ասեմք, մեղքն ապականութիւնն են առաջին և վերջին

ծայրքն կրից. իսկ մահն *միջին* որպէս ցուցաւ ի վերոյ: - 497. Ա՛րդ՝ թէ գոյ ներքին, գո՛յ և վերին և *միջին* դժոխք: - 505. Իմաստունք զտեղին յերկուս բաժանեն. ի վերին և ի ներքին. զի սոքա են հակակայք և առինչք միմեանց. իսկ *միջին* տեղի ո՛չ է...: - 505. ...զի վերնոյն ներքին է, և ներքնոյն վերին. ապա սո՛ւտ է ասելդ թէ գոյ ներքին և վերին և *միջին* դժոխք: - 505. Ասեմք ներքին դժոխք զհոգւոցն. և *միջին* զգերեզմանս. և վերին զմեղքն որ է՛ ի հոգիս: - 505. Իսկ *միջին* դժոխք որ կոչի բանտ դժոխոց՝ է՛ միջակ մեղաւորաց. որք ունին հաւատ և ո՛չ գործք. որպէս չար հաւատացեալք. կամ գործք և ո՛չ հաւատ. որպէս թերահաւատք և անհաւատք: - 505. Եւ է՛ այսպէս. զի անուամբ բոլորին պարտ է իմանալ զմասնաւորն. զի առաջին օրն անկատա՛ր է. նոյնպէս և երկրորդն անկատա՛ր է և մասն. այլ *միջինն* կատարեալ է: - 516. Ա՛րդ՝ առաջինն ինքն առ ինքն խաղաղութիւն. և վերջինն ինքեան ընդ այլս խաղաղութիւն. և *միջին* երեքն, այլոյ ընդ ա՛յլ է խաղաղութիւն: - 586. Եւ մարդս է եռայարկեան. մարմինն արտաքին. և հոգին ի *միջին*. և իմացումն առաջին: - 613. Հինգերորդ՝ ժամն՝ *միջին* ողորմեայն է և պատարագն: - 622. Երրորդ, որպէս յերկինս յերիս երրեակս որոշին դասքն. այսինքն առաջին՝ աթոռոցն. *միջին*՝ տէրութեանցն. և վերջին՝ հրեշտակացն: - 624. Եւ այսպէս վերընծայեն աստուծոյ զօրհնաբանութիւնսն. վերջինքն տալով ի *միջինսն*. և *միջինքն* յառաջինսն. և յառաջինքն մատուցանեն աստուծոյ: - 624. Առաջին՝ քահանայք. և *միջին*՝ սարկաւագունք. և վերջին են սաղմոսօղք: - 624. ...զի առաջին փոխն է ի դէմս հօր. և *միջինն* առ որդի. և վերջինն առ հոգին սուրբ: - 628. Վերջին և առաջին գուբղայն յանմեղութենէ ասացեալ. և *միջինն* յետ մեղանացն. այս ընդ իրեար միաւորեցաւ: - 630. ...իսկ *զմիջին* ժամանակն ապաշխարութեամբ քաւեալ միաւորեցաւ: - 630. Երկրորդն առ հայր. վասն որոյ աղերսեմք՝ օրհնեալ հայր սուրբ աստուած ճշմարիտ ի *միջինն*: - 633. Եւ յորժամ յետոյ սուրբ հարքն *զմիջին* երկոքին շաբաթս բարեկենդանացուցին, - 650. Նախ՝ զի հաւասարութիւն ունիմք առ միմեանս. այլ և կարգ. որ է՛ առաջին *միջին* և վերջին: - 656. Իններորդ, գ տեղիք մարդկան նշանակեցաւ յեռայարկ խորանն մովսէսի. առաջին *միջին* և վերջինն: - 682. Եւ *միջին* սրբութին է կայանք հոգւոցն. ուր աշտանակն լուսոյ և խունկն և հաց երեսացն: - 682. և Դարձեալ նշանակէ զամենայն ապստամբութիւնս որ յառաջին, և *միջին*, և վերջին ժամանակս լինելոց է: - 707. Եւ *միջին* փող առաքեալքն կոչելով ի ճշմարտութիւնն: - 713. *Միջնովն* ժողովեալ կուտին մարմինքն: - 713. Եւ որք ի *միջին* հասակէն՝ զվաթսունեաւորն: - 757. Զի առաջինն է անկատար. և *միջին* երկուքն կատարեալ. և վերջինն գերակատար: - 785

**ՄԻՋՆԱՏՈՒՆ +** Ոմանք ի վերայ մարդոյս մեկնեն զտապանն... Եւ *միջնատունն*՝ քաղերթն: - 293

**ՄԻՋՆՈՐԴ +** Նմանապէս և մարդկան տեսանել զաստուած առանց օրինակի և *միջնորդի*՝ անհնա՛ր է ի կեանս յայս: - 25. Երկրորդ՝ իմանալին անընդմիջաբա՛ր է ի պատճառէն. իսկ զգալին *միջնորդիւ* տարերց: - 117. Հինգերորդ՝ միտքն տեսանէ որպէս ներգործական պատճառ և արհեստաւոր. և զգայութիւնն որպէս գործիական պատճառ և *միջնորդ*: - 121. Եւ *միջնորդ* հաշտութեան է քրիստոս աստուծոյ և մարդկան. այլև հրեշտակաց և մարդկան. նաև հրէից և հեթանոսաց: - 126. Իննևժերորդ՝ զոմանս ըստ ինքեան՝ և զայլս *միջնորդով* լուսաւորէ: - 127. Իններորդ՝ ոմանք մեծամեծ իրողութեանց են *միջնորդք* ուղղութեան, և այլք նըւաստից սպասաւորական: - 138. Զայս և սովո՛ր են առնել մարդիկք առ մերձաւորս և սիրելիս անընդմիջաբար խօսին. և առ հեռաւորս կամ ատելիս գրով կամ *միջնորդով*: - 177. Եօթներորդ՝ *միջնորդով* զայլս լուսաւորէ. որպէս ընդ օդ և ընդ ապիկի: - 185. Եօթներորդ՝ *միջնորդով* զայլս լուսաւորէ՛. որպէս տէրն մեր ասէր՝ «ե՛ս եմ լոյս աշխարհի»: - 185. Եւ զի ո՛չ շիջանին հրամանաւ արարչին. ի միջի գոլով երկուց ներհակացն օդեղէնն երկին. որպէս ստորին տարերքս հուր և ջուր *միջնորդ* օդիւն կապակցեալ: - 188. Ի հակառակն *միջնորդաւ*: - 202. Եօթներորդ՝ մելքիսեդեկ ինքնին մատոյց զպատարագն քաղցելոց և ծարաւելոց. որպէս և քրիստոս ո՛չ *միջնորդօք* հրեշտակաց կամ մարդկան, այլ ինքնին բաշխեաց զմարմին և զարիւն իւր՝ քաղցեալ և ծարաւեալ ազգի: - 301. Չորրորդ՝ նոցա ձայնն *միջնորդով* օդիւ և մարգարէիւքն. և ընդ մեզ բանն աստուած անընդմիջաբար խօսեցեալ: - 353. Հասարակ, զի ամենայն քահանայ *միջնորդ* և հաշտարա՛ր է աստուծոյ և մարդկան. զընծայս ժողովրդեանն աստուծոյ նուիրելով և յաստուծոյ շնորհս և քաւութիւն ժողովրդեանն առնելով: - 354. Երկոտասաներորդ, նոքա հին ուխտին էին *միջնորդ*. իսկ տէրն նորոյս...: - 355. Զի գողացեալ մեղքն միայն խոստովանելով ոչ քաւի. այլ հատուցանել պարտ է զգողօնքն. կամ ի տէրն, կամ յազգականս նորա. կամ ի քահանայն. զի *միջնո՛րդ* է մեռելոց և կենդանեաց: - 384. Իններորդ՝ յայնժամ ո՛չ ոք լինէր արանց *միջնորդ* և բարեխօս: - 480. Նախ որ խաղաղութիւն առնէ այլոց ընդ այլ. որպէս *միջնորդք*: - 585. ...զի քահանայն *միջնո՛րդ* է առ աստուած և առ մարդիկ: - 624. Եւ յորժամ քահանայն ասէ զխաղաղութիւնն՝ ա՛յս է պատճառն, զի քահանայն է՛ *միջնորդ* առ աստուած և առ մարդիկ. - 625. Այլ և զերիս նահապետսն *միջնորդ* դնէ. այսինքն զաբրահամ զիսահակ և զյակոբ: - 637. Եւ

յերեքշաբաթին ըստ կարգի՝ մարգարէիցն և յովհաննու. որ *միջնո՛րդ* է օրինաց և շնորհաց: - 642. Ընթերցող սարկաւագն, որ է՛ հրեշտակն *միջնորդ*...: - 644. Եւ դարձեալ՝ յորժամ պահեցաք զշաբաթն, յաւարտումն զնոսա *միջնորդ* աղաչեմք. - 650. որ զմեծամեծս աւետարանեն. և *միջնո՛րդ* են մահու և յարութեան մարդկան: - 713. Երկրորդ, զի *միջնո՛րդ* է հօր աստուծոյ և մարդկան հաշտութեան: - 745-746

**ՄԻՋՆՈՐԴԵՄ +** Եւ այն զի դաւիթ միայն ետես զկոտորող հրեշտակն, զի *միջնորդեսցէ*: - 435. ...զի նա որ ոչ ունի զհաւատ, այլոց ո՛չ կարէ *միջնորդել:* - 591. Նոյն և կամք և կիրք և ներգործութիւն մարդկային ընդ աստուածայիննն միաւորեալ. *միջնորդելով* հոգւոյ բանականի՝ աստուածութեաննն՝ և մարմնոյն. որ է՛ ներգործութեամբ միշտ աստուած և փրկիչ բնութեամբ. քրիստոս. նոր ադամ. էմմանուէլ ճշմարտութեամբ: - 770

**ՄԻՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ +** Նմանապէս և աստուած միակ *միջնորդութեամբ* ճանաչէ զբարին ըստ ինքեան ի յատուկ տեսակն իւր. և ճանաչէ զչարն կրկին միջոցաւ. այսինքն զի է՛ հակակայ բարւոյն. և է՛ պակասութիւն նմին որպէս ասացաւ: - 17. Եւ կամ առանց *միջնորդութեան* օդոյս տեսանել ինչ: - 25. Չորրորդ՝ սկիզբն է առաջնոցն. և պատճառ վերջնոցս. որք *միջնորդութեամբ* գոյանան. որպէս ի տարերաց կամ ի ծնողաց: - 110. Նախ՝ զի առաջին դասքն անընդմիջաբար առնուն յաստուծոյ. իսկ միջինքն և վերջինքն *միջնորդութեամբ*: - 138. Իսկ հրեշտակաց և մարդկան, Նախ՝ զի մարդիկ *միջնորդութեամբ* հրեշտակաց առնուն, և ո՛չ անդրադարձեալ. թէ և մարդացեալ բանիւն: - 138. Եւ խօսի հրեշտակն ընդ հրեշտակի. ցուցանելով նմա զտեսութիւն մտացն *միջնորդութեամբ* հոգւոր իմն ճառագայթիւք. և այսպէս խօսին հրեշտակք ընդ միմեանս: - 145. Իսկ ծառք *միջնորդութեամբ* փայտին ի հեռուստ ընդունին: - 214. Եւ տէրն ո՛չ ի ձեռս հրեշտակաց սերոբէից և քերովբէից, և ո՛չ *միջնորդութեամբ* մարդկան ընտրելոց նահապետաց մարգարէից առաքելոց կամ մարտիրոսաց: - 302. Ոմանք ասեն թէ՝ միշտ *միջնորդութեամբ* հրեշտակաց երևի աստուած...: - 330. Յինգերորդ՝ օծումն քահանայից. վասն *միջնորդութեան:* - 474. Մարգարէութիւն է կանխագիտութիւն ժամանակաց անցելոց՝ ներկայից և ապագայից, բարի հոգւոյն *միջնորդութեամբ:* - 536. Երկրորդ՝ զի թէ ճանաչիցէ զհեռաւորն *միջնորդութեամբ* բարի հոգւոյն. զի թէ յայտնէ *միջնորդութեամբ* չար հոգւոյն՝ ո՛չ է մարգարէ. այլ ստոցն ծանօթութիւն...: - 536. Ո՛րդ՝ թէպէտ հոգին ո՛չ լինի սերեալ ի հօրէն որպէս մարմինն, սակայն սկզբնական մեղքն անցանէ ի հոգւոյն յաղամայ ի հոգիս զհետ եկելոցն *միջնորդութեամբ* մարմնոյն ցանկութեամբ ծնելոյն: - 567. Նախ՝ զի մեք զգայարանօք՝ *միջնորդութեամբ* պատահմանցն հասանիմք ի գոյացութիւնն. զի անմեկնելի որոշմունք են ի գոյացութեանց սոքա: - 597. Զի օտար ազգք՝ *միջնորդութեամբ* փեսային և հարսին որ են մի մարմին, լինին և նոքա մի ազգ: - 611. Երրորդ՝ զի *միջնորդութեամբն* քրիստոսի միաւորի եկեղեցի ընդ հօր աստուծոյ. և լինի աստուած ընդ աստուածս միացեալ. - 757. Եւ զի *միջնորդութիւն* ժամանակի կարգաւորիչ է ամենայն գործոց: - 780

**ՄԻՋՈՑ +** Նմանապէս և աստուած միակ միջնորդութեամբ ճանաչէ զբարին ըստ ինքեան ի յատուկ տեսակն իւր. և ճանաչէ զչարն կրկին *միջոցաւ*. այսինքն զի է՛ հակակայ բարւոյն. և է՛ պակասութիւն նմին որպէս ասացաւ: - 17. Եւ զի եդեր ըզկամքն *միջոց*, ի բա՛ց պարսպեցար յողորմութեանց նորին առ իւր արարածքս. զի եդեր ա՛յլ իմն զկամիլն և զկամքն: - 36. Ութերորդ՝ պատճառէ՛ զհաստատութիւն *միջոցիս*: - 184. Լայն և ընդարձակ *միջոցաւ*: - 456. Երրորդ՝ զի առաքեալք ինքնատեսք եղեն քրիստոսի. և մարգարէք *միջոցաւ* ի բացեայ. և վարդապետք յետոյ նոցա: - 535. Զի որպէս ի մէջ շաբաթուն և ի կիրակէին այլ *միջոց* օր չկայ: - 648. Նոյնպէս և հոգւոցն ելեալ ի մարմնոց՝ այլ *միջոց* և արգելումն կամ խափան պսակացն չկայ: - 648. Եւ յայս քան *միջոցս* լինի հալածումն եկեղեցոյ: - 709. Իսկ թէ ո՞րքան է *միջոցն* ի մէջ **խե** աւուրցն՝ ո՛չ ոք գիտէ: - 709. Այլ զի մի՛ իրողութիւն դատաստանին և յարութեան ուրուական և առ աչօք թուեսցի ընդհանուր ամենայն մարդկան, վասն որոյ ասեն վարդապետք ի յարութենէն մինչ ի գալուստն և քննութիւնն և հրով նորոգիլն և այլն՝ յերկարի *միջոցաւ* որքան ժամս **զ**: - 747. Ղամպարք ի միում տան. և ուրուք շարժեցելոյ՝ ի նոցանէ լոյսն ո՛չ շարժի և ոչ բաժանի և ո՛չ հատանի թէ անջրպետ ոչ կայցէ ի միջի. և անդ ո՛չ է *միջոց*: - 770. Եւ ապա ի սէր և անձուկ ժտելոյ նորին, ապաստանեալ ի նոյն որ զօրացոյց զտկարս, ձեռն ի գործ արկեալ աւարտեցաւ բազում *միջոցաւ*. և փախստեամբ ի տեղիս. և մեծ ջանիւ փութացեալ: - 772

**ՄԻՋՕՐԵԱՅ +** Եւ ո՛չ է տարադէպ ցոյցք ականն արփիաւորի, զի ի *միջօրեայ* ժամու փոփոխումն մարմնոյ և ական արձակէ՛ ստուեր կամ լոյս. այլ ինքն միշտ լոյս գոլով ո՛չ փոփոխի: - 779

**ՄԻՍ +** Զպահս լուծեալ ի *միս* ձկան, և նաւակատեաց *զմիս* առանց ոսկր ուտեն: - 34. Եւ յոչ էից՝ զի սակաւ հիւթն այն՝ ո՛չ կայր *միս* և ոսկր և ջիլ. կամ մորթ: - 37. Իսկ մեք *զմիսն*: - 119. Իսկ զազանացն *միս* է՛ զօրեղ. վասն այն ի խելս նոցա առաւել յարմարի և ուժովացնէ՛ զնոսա: - 218. Նախ՝ մազն ի վերոյ. և մորթն.

և *միսն*. վերին ոսկրն. և ներքին պինտ ոսկրն. խեղապատակ մաշկն. և ուղեղն: - 239. Որ է՛ մազն. և մորթն. և *միսն*. և արիւնն. և ջիլն. և ոսկրն. և ուղեղն ի մէջն: - 240. Ոսկերքն ի ներքոյ սիւն է մարմնոյն, և մորթն ծածկո՛յթ է *մսոյն* և այլոցն: - 240. Իսկ յորժամ առողջանայ մարդն և արիւնն յստակի, արիւնն *միս* լինի, և մազն ո՛չ աճէ: - 240. Ստամոքն ջիլ է և *միս:* - 242. *Միսն* տաք է և ջիլն հով. զի ջիլն ձկտի յորժամ յագենայ. և կծկի յորժամ քաղցենայ: - 242. Եւ *միսն* զի տաք է՝ հալէ՛ զկերակուրն որ ի յինքն ժողովեալ: - 242. Կամ զօդուածք ներքին գլխաւոր անդամոցն և արտաքին մարմնոյն, որ մորթ և *միս* և արիւն և այլքն առ միմեանս յօդին՝ լինին նոյնքան: - 244. Եւ է՛ բնութիւն ոսկերաց ցուրտ և չոր. զի խոնաւն և լոյծն ի ցամաք և ի ցուրտ մածնու և լինի ոսկր. որպէս ջերմն և խոնաւն լինի *միս*: - 244. Եւ համանգամայն երևի ասեմ. զոր օրինակ նիւթն այն ունի առ ինքն ծածկեալ զմասունս մարմնոյ. զձեռս և զոտս, *զմիս* և զմազ, որ յետոյ երևին ի նմանէ: - 255. Վաթսուննե, Վասն ուխտաւորաց որ *միս* չուտէին և ո՛չ գինի: - 285. Իսկ կցկցեալ. զի յօդեալ և կցեալ են ոսկերք մարդոյն առ իրեարս. և ի ներքոյ *միս*՝ և արտաքոյ մորթն է պատեալ: - 293. Իսկ չորրորդ մասն միայն զկակուղ *միսն* ուտեմք: - 296. Այլ որք յամառելով յօրինակն՝ ա՛ղ խառնեն ի խորհուրդն, պա՛րտ է նոցա խառնել և ձէթ և մուրկ և խունկ և *միս* գառին. կամ զանգեալ ի կասկարայս, կամ օծեալ ի տապակի, զի զօրինակն կատարեսցեն. և հեռասցին ի ճշմարտութենէն: - 357. Իններորդ, պատարագ ուխտի. որ ո՛չ վասն երախտեաց ինչ, այլ իւր կամաւ ուխտեալ. որ յերկրորդ օրն ևս ուտէին *զմիսն:* - 359. Երրորդ՝ որ *զմիսն* ի վերայ յօշէին և ի մեծ սեղանն հանէին: - 364. Ութերորդ՝ թաղամսաւորն. որ թաղիացեալ է *միսն* ի կաշին և չքերթուի. որ անորի՛շ է ի խառնակ կենաց: - 371. Եւ ի յանապատն *միս* ուտելոյ հրաման ո՛չ ունէին. որպէս և ո՛չ ի դրախտին: - 390. Ապա յա՛յտ է՝ զի որ ընդ ապաշխարութեամբ է և կրօնաւոր, ի գինւոյ ի մրգոյ և ի *մսոյ* պահեսցէ: - 390. Չորրորդ՝ մարմին կենդանեաց որ առաւել պարարտ է քան զամենայն. վասն այն ի *մսոյ* հատանին պարկեշտք. զի մի՛ առաւել գիրասցին և գազանասցին: - 407. Զի պղծոցն ամենայն ինչ պիղծ է. որպէս պիղծ կենդանւոյն շան՝ մորթ և մազ և *միս* և այլն: - 416. Նոյնպէս և սրբոյն ամենայն ինչ սուրբ է. որպէս ոչխարին մազն և *միսն* և այլն: - 416. Նա՛խ՝ երեքժանի մսահանաւ հանել *զմիսն* որ չէր օրէն: - 425. Երկրորդ՝ զի խորովելոյ *միս* առնուին և յաղէին: - 425. Զի յորժամ գայր ագռաւն ի միոյն բերանն հաց դնէր աստուած, և ի միոյն *միս*. և ամբողջ բերէին առ նա: - 443. Այլ և ո՛չ ի *մսոյ* կամ յոսկերաց որպէս եւա ի կողէն: - 470. Այլ և ոսկր *միս* ջիլ և մորթ՝ մի անդամ շարադրեն: - 476. Վեցերորդ վկայ նոյն ինքեանք ազգն Ֆռանկաց. որ յամենայն շաբաթ օր վիճիլ ասեն. և *միս* ո՛չ ուտեն ի խորհուրդ նաւակատեաց մեծի շաբաթուս: - 509. Վասն է՞ր ի նաւակատիսս ձուկն ուտի և *միսն* ոչ: - 509. Այսպէս և մեզ աւանդեցաւ յամենայն կերակրոց ուտել և *զմիս* ոչ: - 510. Նոյնպէս և որ ոք յայս օրս պահէ և յամենայն կերակրոց չուտէ, կամ *միս* ուտէ, ընդ դատապարտութեամբ է: - 510. *Զմիս* կենդանւոյ, որ կատարեալ կենդանի է և ի կենդանւոյ յառաջ եկեալ. այն է կատարեալն որ **ե** զգայարանս ունի և շարժի և շունչ ունի. և է՛ այս կերակուր ուտեաց և զատկի: - 510. Եւ լուծին զպահքն ի ձուկն և ի *միս:* - 547. Նա՛խ՝ ի լուծանել զճրագալոյցսն ի պանիր՝ ի յիւղ՝ և յա՛յլ այսպիսի կերակուր բաց ի *մսոյ*: - 554. զի թէ յայտնի կերպարանօք լինէր *միս* և արիւն, ո՛չ ոք իշխէր մերձենալ: - 597. Եւ թէ հրէա ոմն ետես զի հում *միս* արիւնաթաթախ տայր ժողովրդեանն. և զղջացաւ անկաւ յոտս սրբոյն և մկրտեցաւ: - 599. Այսպէս և մարդս եկեղեցի՝ յոսկերաց և յերակաց և ի *մսոյ:* - 613

**ՄԻՍԱՅԷԼ** - Վասն առաջնոյն ասէ՝ «զարթի՛ր փառք իմ». ի բաբիլօն տալով մեզ *զմիսայէլ*, զանանիա, և զազարիա: - 28

**ՄԻՏ(Ք) +** Վասն ճանաչման իւրոյ աստուած կազմեաց կրկին կերպիւ օրինակս. այսինքն իմանալի և զգալի. որպէս հոգին, *միտքն*, և նմանք սոցա. կամ արեգակն, լոյս, և նմանք նոցա: - 24. Եւ թէ ո՛չ՝ ի կարգէ իրացն իմասցին *մտօք:* - 25. Որք զաչս իմաստից յիմանալի ճառագայթիցն խուսափեցին թիւր կամօք, և խոտոր *մտօք*...: - 31. Առաջին է՛ անգիտանալ զտկարութիւն և զփոքրկութիւն մարդկային *մտաց*. կարծեն թէ՝ ամենայնի պարունակօ՛ղ է, և ո՛չ ունի սահման: - 31. Վասն այնորիկ ո՛չ երևի ճշմարիտ նոցա, զոր ո՛չ ըմբռնէ *միտք*. և ո՛չ այլ իրիք հաւատան, բայց միայն զայն՝ զոր իմանան: - 31. Արդ՝ զորօրինակ զգալի աչք մեր ո՛չ կարէ ըմբռնել զքանակութիւն արեգականն և այլ լուսաւորացն. այլ *մտօք* իմանամք զմեծութիւն նոցա: - 31. Նոյնպէս զիմանալի խորհուրդս և զգիտութիւնս զոր տկարանայ *միտք*, կարողանայ հաւատքն տեսանել. այլ ո՛չ ունի հաւատ՝ քան զտեսութիւն *մտացն*: - 31. Նոյնպէս ո՛չ կարէ իմանալ յորժամ ի սուրբ գրոց և ի սքանչելեաց և ի բանից սուրբ վարդապետաց՝ դարձուցանէ *զմիտքն*. որպէս ասէ առակն՝ պակասամիտն ոչ ընդունի զբանս խոհեմութեանց. բայց միայն զայն՝ որ շրջին ի *միտս* նորա: - 31. Եւ այնպիսիքն տրամաբանել ո՛չ կարեն վասն հոգևորին. որպէս ի ծնէ կոյրն վասն գունոց, քանզի ասեն վարդապետք՝ աստուած լոյս է ո՛չ մարմնոց, այլ *մտաց*. զոր թէ ոք ո՛չ տեսանէ՝ կո՛յր է: - 32. Ութերորդ՝ է՛ անկարգ ախորժակն. որ քարշէ՛ *զմիտսն* առ ներհակս հաւատոյն. այսինքն է երկիւղն՝ սէրն՝ և ատելութիւնն:

- 32. Այլ և ատելութիւնն դարձուցանէ *զմիտս* բազմաց ի հաւատոցն...: - 32. Տասներորդ՝ նեռն քարոզութեամբ պատրէ՝ և ուրւական սքանչելեց. և այլն. և սոքա քաղցրաբանութեամբ և օրհնութեամբ պատրեն *զմիտս* անմեղաց...: - 35. Առաջին *միտք*՝ զի ասաց թէ «հայր գործէ՛ և ես գործեմ». և վասն այնր զչարացան հրէայքն, այժմ իբր թէ զնուաստագոյնս ճառէ ի զիջումն բորբոքման նոցա: - 45. Բայց և այս բան՝ հանգոյն առաջնո՛յն է իմանալ. որք *միտս* ունին և ո՛չ նուազին: - 45. Իսկ բանն աստուած է՛ ծնեալ ի հօրէ՝ այլ ո՛չ բաժանեալ. որպէս ո՛չ բաժանի բան՝ ի *մտաց*. թէպէտ ի բազում լսելիք մտանէ. և թէ ի վերայ քարտիսի մարմին զգենու: - 45. Վասն այն հեզն յամենայնի արհամարհեաց զփառամոլ *միտս* նորա խոնարհ պատասխանեօք: - 47. Չորրորդ՝ զի անորոշելի է ի հօրէ որպէս բան ի *մտաց*: - 49. Նախ՝ զի բանն *մտա՛ցն* է ծնունդ: - 49. Երրորդ՝ զի միաւորեալ է ի *միտն*: - 49. Չորրորդ՝ զի պատմօղ է *մտացն*: - 49. Եօթներորդ՝ զի թէ և լռեալ է բանն և ոչ արտաբերեալ, բա՛ն է *մտացն*: - 49. Տասներորդ՝ զի որպէս բանն թարգման և պատմօղ է *մտացն*, այսպէս և որդի հօր: - 49. Է՛ և այլ բազում *միտք* վասն բանին. զոր մեք զսակաւն գրեցաք: - 49. Իսկ մարդ, զի սրբեսցէ ինքեամբ զմեզ՝ եղև ամենայն յաղագս ամենայնի. այսինքն հոգի և *միտք* և մարմին. զի յորոց հասարակաց եղև մահ, լիցի և կեանք: - 50. Զի՞նչ ասեմ, զի հոգւով հնազանդեցաւ ադամ, և *մտօք* հաւանեցաւ, և մարմնով զգործն ի կատարումն էած: - 50. Եւ աստուածաբանքն հեթանոսաց՝ որպէս *միտս* ամենեցուն՝ և *միտս* արտաքոյ գոլ ասացին լցեալ ըզփորուածս երկնից: - 51. Եւ *միտն* արտաքոյ ամենեցուն՝ մեզ շնորհէ զտեսութիւն և զկարողութիւն յիւրաքնաչիւր արհեստ: - 51. Ութներորդ՝ որպէս խօսքն ի *մտացն* է և ի բանէն. այսպէս և հոգին ի հօրէ՛ է և յորդւոյ: - 61. Ուղիղ է, զի որպէս խօսքն թարքման է *մտաց* և բանի, այսպէս և հոգին սուրբ՝ հօր և որդւոյ...: - 62. Երկրորդ՝ զի խօսքն միայն ի բանէն ձևանայ և ո՛չ ի *մտացն*: - 62. Դարձեալ՝ հոգին սուրբ է ի հօրէ որպէս կամք ի *մտաց*. և որդի որպէս իմացումն: - 64. Նախ՝ զի խօսքն է ի *մտացն* յառաջ եկեալ, որպէս ներտրամադրեալ բանն ծնեալ. և հոգին սուրբ ի հօրէ բղխեալ. որպէս բանն ծնեալ: - 66. Երկրորդ՝ խօսքն ունի զիմաստ բանին և *զմտացն*. և հոգին սուրբ զիմաստութիւն հօր և որդւոյ: - 66. Երրորդ՝ խօսքն պատմէ՛ զգիտութիւն բանին և *զմտացն*: - 66. Չորրորդ՝ խօսքն նոյն է բնութեամբ ընդ բանին և *մտացն*. և հոգին սուրբ նոյն է բնութեամբ ընդ հօր և որդւոյ: - 66. Հինգերորդ՝ որպէս այլ է անձն՝ այլ է խօսքն՝ և այլ *միտքն*. նոյնպէս ա՛յլ է անձն հօր, և ա՛յլ բանին, և ա՛յլ հոգւոյն սրբոյ: - 66. Ուստի յա՛յտ է ի սահմանէն. ամենայն մարդ կենդանի բանաւոր մահկանացու *մտաց* և հանճարոյ ընդունակ: - 74. Եւ դու պետրոս՝ մարդ կենդանի բանաւոր մահկանացու *մտաց* և հանճարոյ ընդունակ: - 74. Եւ որպէս զայդ ուսար ուղղափառ դաւանութեամբ՝ ի *միտ* առ զոր ասեմս: - 79. Ծածուկ և զանխո՛ւլ է աստուածաբանութեան տեսութիւն հասարակ *մտաց*. և հազիւ ճանաչի կիրթ խորհրդոց՝ և նուրբ քննութեանց սրբոց: - 81. Դարձեալ՝ մի բնութիւն ասէ ապօղինար. որ զհոգի և *զմիտս* ուրացաւ. և միայն զմարմին ասէ առեալ, և ի տեղի հոգւոյ զբանն բնակեալ: - 81. Ո՛չ զմասն ինչ առեալ զմարդոյ. այլ զբոլոր բնութիւնն ժողովեալ անհատ մարդկութեամբն. զհոգի բանական՝ և *զմիտս*՝ և զմարմինս մեր՝ միաւորեաց ընդ իւրում աստուածութեանն անշփոթ և անորոշ միութեամբ: - 83. Բանն աստուած իւրով կատարելութեամբն էառ զմարդկայինս բնութիւն. զհոգի և զմարմին և *զմիտս*. և միաւորեալ ընդ իւրում աստուածութեանն՝ եղև մի անձն կատարեալ և մի դէմ: - 84. Այս է *միտքն* որ ասէ՝ համանգամայն աստուած և մարդ. այսինքն բոլորովիմբ և հաւասար և անբաժան աստուած և մարդ: - 91. Ա՛յս է *միտքն*՝ մի՛ է և ո՛չ բ աստուած և մարդ. և նոյն է և ո՛չ այլ և այլ աստուած և մարդ: - 91. Իսկ թէ և որոշակի ասես ուղղափառ *մտօք*, և ո՛չ այն է զարտուղի. յորժամ ասես աստուծոյ մարմին և աստուծոյ արիւն. զի որ ինչ է՛ ի յաստուած՝ աստուած է և ո՛չ օտար յաստուծոյ: - 92-93. Որպէս ասի ներտրամադրեալ բանն պատկեր *մտացն*. նոյն և յառաջ բերեալն բան և թանձրացեալ՝ է՛ պատկեր նորին և հաւասար *մտացն*: - 93. Վասն զի իմաստունք մաքառին ընդ դէմ հաւատոց. և քննութեամբ *մտաց* ո՛չ կարեն հասանիլ. և զրկին ի փրկութենէ իւրեանց: - 96. Ա՛րդ՝ եթէ քրիստոս տգէտ է և նոքա *զմիտս* տգիտի ունէին. ո՞րպէս լինէին հազարապետք աստուծոյ խորհրդոցն. կամ հազարապետքն առաւել են քան զխորհուրդն աստուծոյ: - 96. Քսանևմիերորդ՝ արդ՝ եթէ քրիստոս տգէտ ունէր *միտս*, և տկար հոգի, և ապականացու մարմին և եկն քրիստոս զի բարձցէ զտկարութիւնս մեր. և լուսաւորեսցէ որ նստէաք ի խաւարի. և նա՛ է գառն աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի և զապականութիւն: - 99. Եւ ըմբռնօղ՝ զի բանական իմացմամբ *մտաց* զմայլեալ էր միաւորութեամբ աստուածային փառացն: - 100. Ա՛րդ՝ քննել *մտօք* յանդգնութիւն է. և հաւատալն կեանք. զի ի հաւատո՛ցն է փրկութիւն: - 101. Եւ դարձեալ՝ քննութեամբ *մտաց* ո՛չ լինի հասեալ անհասանելին. այլ հաւատով լինի իմացեալ. և յուսով ըմբռնեալ. և սիրով միաւորեալ: - 101. Եւ տգիտութիւնն է խաւար *մտաց*: - 101. Զի՞նչ է հանգիստ *մտաց*: - 101. Զանազանութիւն տեսութեան *մտաց*. և զգայութեանց: - 101. Երկրորդ՝ զի տեսութիւն *մտաց* հասարակի ընդ գոյութեան էութեան. և ուր եզերի բնութիւն՝ անդ և մտաւորութիւն: -

103. Եւ այսպիսի տգիտութիւնս խաւա՛ր է *մտացն* և կուրութիւն: - 103. Եւ է դարձեալ անգիտութիւն՝ յորժամ *զմիտս* տարածեմք յամենայն եղեալս և զնա ոչ գտանեմք, ժողովեմք ի միոն որ արտաքոյ է սոցա. և այնպէս անգիտութեամբ ճանաչի աստուած: - 103. Տգիտութիւն ո՞րպէս խաւար է *մտացն:* - 103. Նոյնպէս և տգիտութիւնն *մտա՛ցն* է խաւար և մոլորութիւն. և կապ. և ծանրութիւն. և անջատօղ. և տգեղութիւն: 103-104. Զի խաւարի *միտքն*. և մոլորի՛ իմացումն. և կապի ընդարձակ տեսութիւնն. և ծանրանայ թեթեւութիւնն. և անջատի ի բազումս. և տգեղանայ պատկերն: - 104. Իսկ սուրբ գիտութիւնն ընդ դէմ այսմ լուսաւորէ՛ *զմիտս* և ուղղէ՛. և ընդարձակէ զտեսութիւնն և թեթեւացնէ առ վերինն. և ժողովէ ի միոն. և կատարէ զպատկերն: - 104. Զի՞նչ է հանգիստ *մտացն:* - 104. Գիտելի է, զի չարչարանք *մտացն* է սուտն՝ և տարակոյսն՝ և աննմանն: - 104. Այսպէս տեսութիւն *մտաց* յանմարմինն. որ է նման: - 104. Եւ *միտք* զվերինս խորհելով հեշտանայ: - 104. Եւ *միտք* յիմանալին՝ որ նմա՛ է ազգակից: - 104. Չորրորդ՝ աչքն ի գեղեցկութիւնն հեշտանայ, և *միտք* ի գեղեցկութիւն բանին: - 104. Հինգերորդ՝ աչք ի զանազան տեսութիւնս, և *միտք* ի զանազան իմաստս: - 104. Եւ *միտք* որքան առաւել իմանայ: - 104. Եւ *միտքն* ի բազում օրինակաց ի ճշմարտութիւն հաստատեալ: - 104. Ութերորդ՝ աչքն յորժամ ընդարձակի՝ հեշտանայ. և *միտքն* լուծեալ ի կարծեաց: - 104. Եւ *միտքն* ի չափաւոր աստուածաբանութիւնն: - 104. Նոյնպէս և *միտք* ի միշտ իմանալն: - 104. Յայս *միտս* երկոտասան են աստիճանք հաւատոյն: - 105. Եւ մի է *միտք* և իմացումն և կամք իւր: - 107. Իսկ ի յերրորդութիւնն ո՛չ է քանակ և չափ, և ո՛չ պատահումն, և ո՛չ գիտելի եղական *մտաց*: - 108. Եւ այս նոյն է ըստ առաջին *մտացն:* - 117. *Միտք* մեր **բ** պակասութիւն ունի. այսինքն զմոռացումն և զտգիտութիւն. զի զանցեալն մոռանայ. և զապագայն ո՛չ գիտէ: - 117. Դարձեալ՝ *միտք* մեր այժմ ի ներքոյ ժամանակի՛ է. և **բ** մասն ժամանակին ո՛չէ. այսինքն անցեալն կորուսեալ է, և ապագայն ո՛չէ է: - 117. Վասն որոյ ընդ կորուստ այսպիսի մասանց՝ և գիտութիւն *մտաց* մեր կորնչի: - 117. Իսկ *միտքն* աստուծոյ ի վեր է քան զժամանակ. վասն որոյ ներկայաբար զանցեալն և զհանդերձեալն տեսանէ: - 117. Զի ուր բնութիւն ո՛չ հասանի, անդ և *միտք* մեր ո՛չ կարեն հասանիլ: - 118. Եւ զի ունի *միտ* և հանճար՝ ասէ սողոմոն...: - 118. Ա՛րդ՝ աստուածայինն *միտ* չորիւք յատկութեամբ տեսանի այսպէս. համանգամայն. ներկայապէս կատարեալ. և անփոփոխ: - 118. Երրորդ՝ զի ամենայն գործսն տեսանէ ի ներս և ի դուրս. *զմտաց* և զբանից և զայլն: - 119. Դարձեալ՝ և այսպէս տեսանի աստուած. յորժամ *միտք* յամենայն եղելոց որոշեսցի. նաև յինքենէ՛ զի եղակա՛ն է. թողեալ զինքն միաւորեսցի յաստուածային ճառագայթն որ անքննելի լոյսն է և իմաստութիւնն: - 119. Հինգերորդ՝ նոցա անմոռանալի՛ է տեսութիւնն. իսկ մերս հանդերձ մոռացմամբ. որքան զգայութեամբս տեսանէ *միտքն:* - 120. Նախ՝ զի լպրծի՛ *միտք* մեր և մոռանայ զբանն. զի հով և գէջ է պարուտակն և ուղեղ գլխոյն: - 120. Որո՞վ զանազանի տեսութիւն *մտաց* և տեսութիւն զգայութեանց: - 120. Նախ՝ զի *միտք* զանմարմինն տեսանէ, և զգայութիւն զմարմինն: - 120. Երկրորդ՝ *միտք* զգոյացութիւն իրին տեսանէ որ է ի ներքոյ եդեալ. և զգայութիւն զպատահմունքն ի վերայ եկեալ...: - 120. Երրորդ՝ զգայութիւն զմասնաւո՛րն տեսանէ. որպէս այս ինչ մարդ որ է անհատ. և *միտք* զընդհանուրն իմանայ՝ որ է բնութիւն. որպէս մարդկութիւն: - 121. Չորրորդ՝ զգայութիւնն տեսանէ զմերձակա՛յն. որպէս ա՛ստ, և այժմ. և *միտք* զհեռաւորն և զանցեալն և զհանդերձեալն: - 121. Հինգերորդ՝ *միտքն* տեսանէ որպէս ներգործական պատճառ և արհեստաւոր. և զգայութիւնն որպէս գործիական պատճառ և միջնորդ: - 121. Դարձեալ՝ գործնականին սկիզբն կամքն է. և տեսականին իմացական զօրութիւն *մտացն:* - 121. Զի յայս ճշմարտութենէս լոյս հաւատոյն ծագեալ ի *միտս* հաւատացելոց, անփոփոխ սերտութեամբ հաստատէ՛ զհաւատացեալս ի ճշմարտութիւնն. և զճշմարտութիւնն ի նոսա: - 121. Չորրորդ՝ բանական քննութիւն զճշմարիտն ընդ *մտա՛ցն* քարշէ. իսկ հաւատոյն՝ *միտք* ընդ ճշմարտութեանն հետևի: - 122. Իսկ չորրորդն է խորհրդական աստուածաբանութիւն. յորժամ զամենայն զգալի և զիմանալի էութիւն արտաքոյ թողեալ, ի խորս ընթանամք *մտօք* և մտանեմք յամպն և ի մէգն ըստ մովսէսի. և ապա տեսանեմք զնա արտաքս որոշեալ յամենայն էից: - 122. Զի ո՛չ մարմին է. և ո՛չ հոգի. և ո՛չ *միտ*. և ո՛չ այլ ինչ զոր մեք գիտեմք կամ իմանամք: - 122. Զի որպէս խաւարն անյայտ է, նոյնպէս և առաւել լոյսն անտեսութիւն առնէ. և նա անտես է ի հրեշտակաց. և անյայտ ի մարդկային *մտաց.* թէ ո՞րպէս կամ զի՞նչ է էութիւն և բնութիւն աստուածութեանն: - 122. Նախ՝ զի խորհրդով և հաւատով տեսանի և ո՛չ քննութեամբ *մտաց:* - 123. Երրորդ՝ զի խորհրդով և ծածուկ է պահելի ի հերձւածողաց և ի հեթանոսաց և յանվարժ *մտաց* ախմարաց...: - 123. Ծանիր և զայս ուշիմ *մտօք*, զի ամենայն աստուածաբանութիւն նախ յերկուս բաժանի. այսինքն դրութեամբ և բացբարձմամբ: - 123. Իսկ բացբարձականքն ի խորհրդական աստուածաբանութեանն է. նախ որ է՛ և ո՛չ ասի. որպէս անսկիզբն և անվախճան. ո՛չ բան և ո՛չ *միտ*. ո՛չէ և այլն: - 123. Որպէս յորժամ ասեմք բառնալով՝ ո՛չէ, ո՛չ բան, ո՛չ *միտ*, ո՛չ որդիութիւն, ո՛չ հայրութիւն. և այլն: - 124. Իսկ բացբարձականն ըստ գերազանցութեան է. զի գերազա՛նց

բան է՝ և գերագունա՛կ *միտ*. և գերագոյն և առաւել հայր՝ և որդի. և ո՛չ ըստ մեր կարգիս որպէս մեր բանս է և *միտք:* - 124. Երկրորդ՝ ըստ չափոյ *մտիցն* քանականայ մեծ կամ փոքր: - 125. Զարմանալ և հիանալ ասի մեզ՝ թափումն և արտաքսելումն ի *մտացն:* - 127. Ձորօրինակ՝ թափումն ի զգայութեանց թմրիլ՝ կամ ընդարմանալ ասի. այսպէս թափումն ի *մտաց*՝ զարմանալ ասի. ըստ պօղոսի որ յափշտակեցաւ. և ըստ դաւթի որ զարմացաւ. կամ ըստ ադամայ որ թմրեցաւ: - 127. Իսկ զարմացումն լինի ի սիրոյ առ սիրելին. զի *զմիտս* զկեանս և զամենայն ինչ թողու սիրողն՝ և սիրելւոյն համարի: - 127. Բարձրութիւն իմաստութիւնն է. որ գերազա՛նց է քան զամենայն *միտս*. և ամենայն ինչ մերկապարանո՛ց կայ առաջի նորա: - 129. Նախ ա՛յս է *միտքն* որ այբն առաջին է և քէն վերջին. այսինքն ես եմ առաջին աստուածութեամբս. և ես եմ վերջին մարդկութեամբս. զի մարդն վերջին է արարածոց: - 129. Ա՛յլ է բանն՝ և ա՛յլ է ձայնն. զի բանն անմարմին ծնունդն է *մտաց*. և ձայնն է՛ շարժումն օդոյ ի ձայնական գործեաց ի յօդս բախեալ. իսկ ի սրտի միաւորին նոքա՝ այսինքն բանն և ձայնն. և լեզուաւ յօ՛դս բախեալ՝ հասանէ մինչև ի լսելիս, և անդ ձայնն արտաքոյ մնացեալ, և բանն անմարմին ի *միտս* լսողացն նստեալ: - 131. Իսկ բանին ընդունարան է *միտքն* ի խո՛ր և ի հեռի կացեալ: - 131. ...և Նախ՝ զի նոցայն՝ էութիւն ո՛չ է. այլ առ աչօք ուրուական ցուցմունք. որպէս ի *միտս* ցնորք: - 133. Ձորօրինակ գիտութիւն մարդկան ի սկիզբն և ի մէջն և յեզերն՝ նախ զտգիտութիւն փարատէ՛, և ապա՛ *զմիտս* լուսաւորէ՛ և կատարէ: - 139. Բոլո՛ր է՝ յորժամ զիմացումն *մտաց* յամենայն եղելոց առ ինքն ժողովէ՛, և այնպէս բոլորովիմբ յաստուած հպի և միանայ. և ա՛յս է ի բոլոր սրտէ և ի բոլոր *մտաց* սիրել զաստուած. և զայս ունին ընտրեալքն մարգարէք և առաքեալք: - 142. Եւ այլ իմն եղանակաւ զանազանի տեսութիւն *մտաց:* - 142. Է՛ որ իմացումն *մտացն* առ ինքն ժողովի ի յիշողականէ՞ ի տրամախոհութեանցն՝ ի կարծեաց՝ և յայլոցն...: - 142. Եւ կարօտի սա բ իրաց. այսինքն զի զգայութիւնն առո՛ղջ իցէ, և զգալի առաջի եղեալ իրն յստա՛կ. ապա թափանցէ՛ յինքն ի սոցանէ՛ պա՛րզ տեսութիւն. ապա թէ ո՛չ՝ ո՛չ կարէ *միտքն* յստակապէս տեսանել սոքօք: - 143. Ո՞րպէս ասեն վարդապետք՝ երեքկին է բանն. *մտաց*. բերանոյ, և գործոյ: - 144. Ա՛րդ՝ բանիւ *մտացն* խօսի աստուած ընդ հրեշտակաց. նո՛յնպէս և հրեշտակք ընդ աստուծոյ: - 144. Եւ խօսի հրեշտակն ընդ հրեշտակի. ցուցանելով նմա զտեսութիւն *մտացն* միջնորդութեամբ հոգևոր իմն ճառագայթիւք. և այսպէս խօսին հրեշտակք ընդ միմեանս: - 145. Իսկ դևք զանհաստատսն *մտօք*՝ ի ստորևս քարշեն և յերկիր կործանեն զերկրաւորս խորհելով. և ընդ ինքեան ի յատակս դժոխոց մերժեն: - 152. Ձորօրինակ եթէ կամիցի ոք տաճար շինել. նախ ձևանայ ի *միտքն* և յետոյ շինէ զտաճարն ըստ այնմ ձևոյ: - 163. Արդ՝ տաճարիս այս է՛ կրկին սկիզբն. նախ *միտքն* շինողին, և յետոյ սկիզբն և կատարումն շինուածոյն: - 163. Երկրորդ զանազանութիւն՝ զի նախկին սկիզբն համանգամա՛յն է ի *միտքն*. և երկրորդ սկիզբն նա՛խ է՝ և կատարումն յետոյ: - 163. Երրորդ զանազանութիւն՝ զի թէ շինի տաճարն և թէ ոչ՝ առաջին սկիզբն որ ի *միտքն* մնայ՝ նոյն ո՛չ առաւելու և ո՛չ նուազէ: - 163. Հինգերորդ զանազանութիւն՝ զի ձևն անմարմին է ի *միտս*. իսկ շինեալն մարմին: - 163. Չորրորդ՝ և որպէս որք մերձն են զառաջին սկիզբն ո՛չ տեսանեն որ ի *միտս* շինողին: - 164. Չորրորդ՝ զի շինուածն ի *միտս* զօրութեամբ է և սոսկ մտածմունք: - 164. Հինգերորդ՝ պատահական է ի *միտս* և երբեմն: - 164. Եւ յայտնի եղեալ որպիսութիւն սոցա ի *միտ* առ. զի անհաւատն այժմ եկեալ ի հաւատս կարէ՛ լինիլ և քահանայ. իսկ չար հաւատացեալն ո՛չ կարէ լինիլ քահանայ: - 166. Նախ՝ զի զգոլն իւրեանց ունէին ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ. թէպէտ յետո՛յ ընկալան գոյացութիւնս յինքեանս. որպէս տաճար ի *միտս* շինողին: - 170. Հինգերորդ՝ *մտա՛ց* իմանի գոյն. և աստուած իմանալեացն: - 171. Երրորդ՝ տեղի ասի և հասումն *մտաց*. ըստ որում պարունակէ՛ իմացմամբ զէութիւն իմացեալ իրին: - 172. Յայսցանէ ազա՛տ է ամենայնիւ աստուածայինն էութիւն. զի անմարմին է և անսահման և անհաս *մտաց:* - 172. Նախ զայս ասեմք թէ ամենայն ինչ հնարաւոր է աստուծոյ. զի կարէ՛ առնել զոր *միտք* մարդկան տեսանէ. և կարէ՛ զոր ո՛չ տեսանէ: - 173. Եւ ո՛չ ուրեք երբեք *միտք* ուղղափառաց բաժանմամբ տեսանէ. ո՛չ զբնութիւնս և ո՛չ զկամս և ո՛չ ներգործութիւնս որ յառաջն հարցափորձեցաք սակաւիկ: - 174. Իմա՛ ինձ և ա՛յլ ևս՝ սո՛ւր ես *մտօք* և բաժանասէր: - 176. Երկրորդ՝ զի ձեռամբ գրչի մտանէ ի բառ. և առանց բերանոյ բարբառի. և տեսանի աչաց. և լսի ականջաց. և ուսուցանէ *զմիտս:* - 177. Երկրորդ՝ յերից գծից բաղկանայ. որպէս մարդ ի հոգւոյ և ի մարմնոյ և ի *մտաց*: - 178. Իններորդ՝ զերկնային և զերկրաւոր *միտս* մարդկան առ հասարակ լուսաւորէ՛: - 185. Վեցերորդ՝ զի ի *միտ* ածցուք զառաջին փառսն մեր և ցանկասցուք. և մի՛ որպէս զանասուն յերկիր կորասցուք: - 188. Այս է յորժամ ընթեռնումք յերկար զպատմութիւնն և լսեմք. իբրու թէ տեսանեմք աչօք. և *մտօք* վայելեմք: - 192. Զի մարդս բազում իրօք զբաղեալ է ի *միտս*. իսկ նոքա միայն ի բնութիւնս իւրեանց փութով ճանաչեն: - 218. Երկրորդ՝ զի աշխատութեամբ *զմիտսն* լուսաւորեսցէ. կամ ճգնութեամբ չարչարեսցէ: - 218. Նախ՝ զի անուամբն գոյանայ իրն ի *միտս* մեր. և անանունն իբր յանգոյս է համարեալ մեզ: - 219. Տկարանայ *միտքս* թէ

յապականացու երկրէ՛ է դրախտն և մասն է երկրի, ո՞րպէս է անապական: - 225. Նոյնպէս ի հողեղէն և յապականացու մարմնոյս մարդկան՝ էառ բանն աստուած. և միաւորելով ընդ ինքեան ծնաւ անապական մարմնով. անմեղ հոգւով և *մտօք*. և եղև երկրորդ ադամ Տէր յերնից: - 229. Տասներորդ՝ զի կիրք մարմնոյն հեղուն ի հոգին. որպէս յորժամ մարմինն ննջէ՝ և հոգին թմրի և անգործ մնայ. վասն որոյ արարաւ ձևն ուղիղ, զի *միտքն* ընդ նմա՛ ուղղեսցի ի վեր առ աստուած...: - 233. Այլ և ի միտ ածցուք զփառս երկնային կենաց ուստի անկաք, և անդ դիմելոց եմք. զի տեսութիւն *մտացն* զհոգին ընդ ինքեան ի վեր տանի...: - 233. Նմանապէս տարբերութեամբ յատկիւ և պատահմամբ. այլ են քննօղ *մտաց:* - 236. Եւ առ հասարակ ասեմ զայս դնել ի մտի. զի չափաւորութիւն անդամոցն ըստ ձևոյն և ըստ գունոյն և ըստ քանակութեան և ըստ կազուածոյն և ըստ շարժմանն, նշանակէ զբարի *մտացն* ընդաբոյս յարմարութիւնն: - 248. Գիտնականին են՝ *Միտք*. Տրամախոհութիւն. Կարծիք. Երևակայութիւն. և Հասարակ զգայութիւն: - 248. Բանականք են *Միտք*. Տրամախոհութիւն. Կարծիք. Կամք. Ընտրողութիւն: - 248. Իսկ մաքսիմոս իմաստասէրն ասէ, Հոգի մարդոյ բ զօրութիւն ունի. *միտք* և բան: - 248. Եւ սոքա ե ե զօրութիւնս ունին. *Մտացն*. Իմաստութիւն. Տեսողութիւն. Ուսողութիւն. Անմոռացութիւն: - 248. Քանզի *միտք* շարժեալ առիմաստս՝ դադարէ՛ ի ճշմարտութիւնն: - 248. Իսկ ներքինն՝ որ է հասարակ զգայութիւնն. երևակայութիւնն. կարծիքն. տրամախոհութիւնն. յիշողութիւնն որ է *միտք*. զի ամենայն ինչ ի յիշողականն մտանէ: - 249. Հոգւոյն գլուխ՝ *միտքն:* - 250. Իմացական *միտս* մեր՝ առ անիմանալին աստուած ո՞րպէս վերանայ: - 251. Եւ այսմ պատճառ անհա՛ս է *մտաց* մարդկան. միայն անքննին դատաստանին աստուծոյ է տալի. և անհետազօտելի ճանապարհաց նորին. որև սակաւիկ մի յառաջ ասացաւ: - 252. Զորօրինակ՝ արուեստաւոր ոք կամիցի դրօշել ի քարեայ պատկեր, նախ նկարէ՛ ի *միտս* իւր զձև պատկերին. և ապա հատանէ զքարն և տաշէ՛ և դրօշմէ՛ զկերպն ըստ այնմ նմանութեանն որ էր ի *միտս* ծնացեալ: - 258. Նմանապէս և արուեստաւորն աստուած նախանկար տեսութեամբն ունի ի *միտս* իւր նախքան զլինիլն մարդոյն՝ զորպիսիութիւնն. զորքանութիւնն. և զայլն. իսկ արուեստն որ է արարչադիր հրամանն, ազդէ՛ ի նիւթն. և զի անկատա՛ր է նիւթն, անկատար տայ և նմա հոգի զտնկականն: - 258. Եւ ի կատարիլ մարմնոյն՝ հեղու ի նա զհոգի բանական ըստ նախատես գաղափարի այնորիկ որ էր ի *միտս* արարչին յառաջ քան զլինիլն աշխարհի: - 258. Ասեմք առ այս թէ, օն ի բա՛ց տար ի *մտաց* քոց զհեթանոսական կարծիս. զի ո՛չ է հոգի յառաջ քան զմարմին. և ո՛չ մարմին նախ քան զհոգի որպէս ի սկիզբն ասացաք: - 260. Իսկ մարդոյն ուղեղն գէճ է և հով. զի նկարեսցէ յինքն զիմացումն *մտացն*. և ջիլքն յառաջեալ ի նման վասն գիճութեան ո՛չ կարէ պնդել զանդամսն. վասն որոյ ո՛չ կանգնի և ոչ գնայ: - 266. Նոյնպէս և արւեստն նախ նկարի ի *միտքն* և ապա ներգործի և կատարի: - 268. Որ ի խորհրդական *միտսն* վասն օգտի զլինելոցն ցուցանէր: - 268. Իսկ զի բանական *միտքն* ո՛չ տեսանէ զերազն, այլ անբան մասն, որ է՛ տնկականն ի մեզ. նա՛ յածի յերազն. և ցուցանի այս ի կրկին իրաց: - 268. Նա՛խ՝ զի խորհրդական *միտքն* կարգաւոր և առանց տարակուսանաց տեսանէ. իսկ երազն անկարգ և տարակուսանօք և զանհնարն տեսանէ որպէս ի վերայ օդոյ թռչիլ, և ի ծովու գնալն, և աղքատաց թագաւորել, և այլն: - 268. Երկրորդ՝ զի բանական *միտքն* և զգայականն խափանեալ է ի գործոյ յորժամ ննջէ ոք: - 268. Իսկ տընկականն միայն գործ է ի կերակրիլն և աճիլն, նա նկարէ յինքեան ի զգայութեանցն և ի *մտացն* ըստ տկարութեան իւրոյ անկարգաբար երևեցուցեալ ի յիշատակարանս *մտացն* որպէս ասացաք: - 268. Զիմաստութիւնն հոմանուն է և ի բազում տեսակս որոշի. և բնաւքն ամենայն՝ *մտա՛ցն* են ներգործութիւն. վասն այն կոչի իմաստութիւն որ է իմացութիւն: - 269. Վեցերորդ՝ ի յաստուած է՛ *միտք* և իմացումն և կամք. ունի և մարդս զայսոսիկ: - 271. Հայր և Որդի և Հոգին սուրբ. այսպէս ի մարդն *միտքն* բանն հոգին. ըստ եզնկացւոյ պլուզ վարդապետին: - 271. Իններորդ՝ անշարժ նոյնութեամբ իւրով զամենայն քննէ և իմանայ. այսպէս և *միտք* առ մարդն գոլով զգիտութիւն էիցս քննէ: - 271. Տասներորդ՝ մի և նոյն *միտք* է յաստուած որով զամենայն տեսանէ և զամենայն բարբառ լսէ. նոյնպէս և ի մարդս մի իմացումն է որ զանազան զգայարանօք իմանայ: - 271-272. Եւ դարձեալ ասեն թէ՝ հոգին է պատկեր աստուծոյ ըստ զօրութեանցն. զի ունի *միտք* և իմացումն և կամք: - 273. *Մտաց*՝ որով տեսանէ զիմանալիս: - 275. Հինգերորդ՝ զի *մտօք* յաստուածային խոկումն էին վերացեալ, և զգայարանօք ընդ գործս հրաշիցն. և ոչ էին պարապեալ քննութեան անձին...: - 278. Երրորդ՝ *միտք:* - 279. Իսկ ի մերս տապանի՝ ա՛կն է լուսատու և *միտքն:* - 294. Զաշտարակն ո՞րպիսի *մտօք* շինէին: - 296. Ութերորդ՝ առ ի ցուցանել թէ մարդկային *միտք* ի քննութիւն աստուածային բանին կա՛ղ գտանին: - 311. Նոյնպէս և սրբոցն *միտք* լուսաւորին յաջոյն քրիստոսի. զոր աստ շանմանդաղ տեսանէին զփառս, անդ յայտնապէս տեսցեն: - 314. Եւ յամենայն աւուր ըստ թուոյ նոցա ժ զոհ մատուցանէր, և զուարակ մի վասն սրբութեան *մտաց:* - 321. Վասն է՞ր յոբ յետ խրախութեանն ժ պատարագաւ սրբէր զորդիսն. և մի զուարակ վասն *մտաց* մեղացն

մատուցանէր: - 322. Այլ ըստ *մտաց*՝ ունի **գ** խորհուրդս: - 323. Չորրորդ՝ զի խեցեաւ սրբէր զմարմինն, և աղօթիւք *զմիտս* և զհոգին: - 323. Նա՛խ թէ՝ զմեռելոտի խորհուրդն հա՛ն ի *մտաց* քոց: - 331. Զի առաջին խորհուրդ է մեր, յորժամ *միտքն* առ աստուած ամբառնայ զվերինն խորհելով: - 331. Ի յայս *միտս* և տէրն աշակերտացն պատուիրեաց մի՛ ագանել կօշիկս: - 331. Իսկ որպիսի ինչէն աստուծոյ՝ անգիտելի մնայ աստ և ի հանդերձեալն յամենայն եղական *մտաց*. թէ հրեշտակաց և թէ մարդկան: - 331. Իսկ դեքն փոխեն զերևակայութիւնն և զզգայարանս, այլ ո՛չ *զմիտս:* - 336. Իսկ հրեշտակք կարե՛ն փոխել *զմիտս* և շրջել ի բարին. նաև զերևակայութիւնս և զզգայարանս, այլ ո՛չ զկամս: - 336. Զառաջիկայն և *զմիտս* մարդկան ո՛չ ոք գիտէ. ո՛չ հրեշտակք և ո՛չ դեք և ո՛չ մարդիկք. բայց միայն աստուած որ քննէ զսիրտս և զերիկամունս: - 336. Եւ ա՛յն է մտանել ի *միտս* անարգութեան ըստ առաքելոյ: - 336. Երրորդ՝ սառնատեսակ. զի թափա՛նց է խաչ նշխարին. և ի մեզ լուսաւոր *միտք*: - 339. Նա՛խ՝ հրամայեաց աստուած գրել զլինելութիւն աշխարհի. և ձևացոյց ի *միտսն* մովսէսի. զի մի՛ մոռասցին հանգամանքն. վասն որոյ զգալի խորան հրամայէ կազմել: - 342. Եօթներորդ՝ զի նոր իմն չնաշխարհիկ կազմեաց. նոր ժողովրդեանն և նոր օրինացն, իցէ և նո՛ր տաճար հռչակեալ ընդ ծով և ընդ ցամաք. որպէս պսակ և փառք արդարոցն է՛ զոր ակն ո՛չ ետես և ունկն ո՛չ լուաւ. նոյնպէս և սա՛ ի զգալիսս անհաս ի *մտաց* մարդկան: - 342. Ի յա՛յս *միտս* յորժամ խաչ նկարեմք, զծագ մատին աջոյ մերձ ի բոյթն առնեմք որ է՛ ի համարն զերրորդ. զկէս զհն նշանակելով: - 345. Յացն՝ ողջախոհքն մարմնով հոգւով և *մտօք:* - 346. Սոքա ամենայնքն զբերանս *մտաց* բացեալ ունին առ մինն և ճշմարիտ ջահն քրիստոս: - 347. և **բ** Ակունք ուսոյն՝ կրկին կիսագունդք երկնից. ունելով զ**գ** կենդանակերպս. և Վակաս լանջացն **բժ**ան ակամբք նոյն կենդանակերպք ի լանջս երկնից Միթրն՝ պսակ քահանայապետութեան. և Թիթեղն՝ *մտաց* թեթևութեան: - 348. Երրորդ՝ զի միշտ ընթերցեալ մնասցէ ի *միտս* նոցա: - 349. Երկոտասաներորդ, լուսաւորեցաւ՝ զի քօղ արկցէ երեսացն. որ օրինակէ՛ զհին կտակարանս. որ քօ՛ղ է արկեալ և առագաստ *մտաց* նոցա. մինչև դարձցին առ տէր հոգիքն որպէս զմովսէս. և ապա վերասցի քօղն և յայտնեսցի լոյս գիտութեան նոցա: - 352. Եւ դարձեալ՝ նաշհին է՛ նշանակ խոնարհ մարմնոյ մաքրութեան. և խունկն առաքինութեան հոգւոյ. և իւղն զուարթութեան *մտաց:* - 357. Նշանակէ՛ զամենայն զառաջին բարի գործս մեր եթէ ի մարմնոյ և եթէ ի հոգւոյ. և ի *մտաց* նւիրել աստուծոյ: - 357. Եւ ըստ *միտս*, զի առաքինութիւնն է ի փառս աստուծոյ. այլ և ի պատիւ և ի գովութիւն մարդկան. զի բազումք հաղորդին սրբութեան նորա: - 358. Գլուխ՝ *զմիտքն* նշանակէ. և Ոտք զվարքն: - 360. Խլուրդն՝ կո՛յրն է *մտօք:* - 365. Իններորդ, բորն **գ** ազգ է. սպին սպիտակ շիտ. և պալար միատարր. և պաղպաջ շիտ աստ և անդ. որ է՛ *մտաց* և հոգւոյ և մարմնոյ մեղքն: - 367. Զի գործնականաւն մեռանիմք ընդդէմ մեղացն. և տեսնականաւն *մտօք* թռչիմք ի դրախտն որ է՛ դաշտ երկնային: - 368. Երկրորդ՝ կոյր. որ *մտօքն* են խաւար: - 370. Երրորդ՝ պտղակն ելուստ ի պտղոյն. որ բիծ ունի ի *միտքն:* - 370. Նա՛խ՝ կոյրն. իսկ ի մեզ որ *մտօ՛քն* իցէ: - 371. Իններորդ՝ ականջատն. որ խուլ է *մտօք:* - 371. Որ *մտօքն* է՛ մոլի, և մեղօք հիւանդ, չէ՛ ընդունելի: - 371. Այսպէս և մեք խոնարհ *մտօք* և ուրախ սրտիւք տօնեմք զտօն պահոցն: - 373. Երկրորդ՝ նշանակէ՛ զբանաւոր պատարագս մեր. այսինքն զհոգի զմարմին և *զմիտս* մեր անարատ մատուցեալ: - 374. Իւղն լոյս և զուարթութիւնն *մտաց:* - 374. Նա՛խ՝ տարակուսանք *մտաց* և ցաւ աչաց. զի մոլորեցին ի փախչիլն: - 376. Եօթներորդ՝ զի *միտքն* զախտն շարժէ ի չարն. և ո՛չ ախտն *զմիտքն*. որպէս ասի, խորհուրդք ծերոց զքարինս պատառեն: - 377. *Միտք* և կամք բարեսէրք: - 380. Յինգերորդ, ըստ փիլոնի գաւազանն է իմաստութիւնն. դալարեալ *մտօք* և ծաղկեալ ուսմամբն. և պտուղ՝ ուսուցմամբ աշակերտաց: - 382. Ի յայս *միտս* զվարդապետաց գաւազան յեկեղեցւոյ ի դուրս բերեմք զարդարեալ: - 382. Եւ բաւականութիւն սոցա է այսպէս. զի եմք մարմին հոգի և *միտք* գոյացեալ. և ունիմք կարիս և ինչս և շնորհք և կրօնք: - 389. Եւ է՛ հոգին յաստուծոյ. և մարմինն ի ծնողաց. և *միտք* յուսուցչաց: - 389. Շնորհքն է զարդ հոգւոյն և կրօնքն *մտաց*. և կամքն իշխան և կառավար սոցա: - 389. Գլուխն նշանա՛կ է *մտաց*. զոր չէ պարտ յաւելուլ՝ և ո՛չ պակասել. որպէս մուրճ ո՛չ գործէր ի սեղանն զի մի՛ պղծեսցի: - 390. Ի յայս *միտս* **խ** կատարեն ննջեցելոց: - 391. Չորրորդ՝ առաջինն որպէս բնաբան. և երկրորդն որպէս մեկնութիւն զի իմասցեն *մտօք:* - 393. Երկրորդ՝ ընդ երից գոյացութեանց մեր. աստ ընդ մարմնոյս. և ի մահն ընդ հոգւոյս. և ի յարութեանն ընդ *մտաց* տեսութեանն հակառակին: - 394. Եւ զօրութիւն է, զի զգայարանքս զօրութիւն է հոգւոյն և *միտքն:* - 396. Այլ և զգայութիւնք և *միտք* և խորհուրդք. ասէ՝ ամենայն մասամբքն սիրեա՛ զաստուած: - 396. Եւ դարձեալ՝ հոգւովդ և բոլոր մարմնով և բոլոր *մտօք* սիրեա և ո՛չ մասամբ: - 396. Դարձեալ՝ զերեք տեսակ սիրոյն ցուցանէ. մարմնով և հոգւով և *մտօք* սիրել զաստուած: - 396. Եւ *մտօքն* յօժարութեամբ սիրել և յորդիութիւն նորա ելանել: - 396. Վեցերորդ՝ *միտք* բանիս այս է, որ պա՛րտ է կատարեալ սիրով սիրել զաստուած: - 396. Բոլոր *մտօք*, այսինքն անմոռաց յիշմամբ: - 396. *Մտացն* ասէ հայիլ ի հոգին: - 397. Այլ *միտքն* տեսանէ

զինքն և զայլս: - 397. Նոյնպէս և *մտօք* զմասունսն հոգւոյս զբան՝ զգասումն՝ և զցանկութիւնն տեսանել և զարթարել: - 397. Իսկ ի *միտս*, մահու չափ մեղաց է իշխանք և գունդք դիւաց: - 404. Եւ է՛ ինչ ի մեկնչաց ուղղեալ. այլ *միտքն* նո՛յն է: - 407. Նախ այս է *միտքն*, որ զյարութիւնն աստ ասաց: - 409. Վեցերորդ ըստ *մտաց*, զի մովսէս ջրածին լսի. զի որք ո՛չ ծնանին աւազանաւ, ընդ մահու իշխանութեամբ են: - 409. Յայս *միտս* զքահանայից թաղումն վարագուրաւ ծածկեմք: - 411. Երրորդ՝ զի երեսունն գ ժ է. զի ժ զգայարանքն մարմնոյ և հոգոյ և *մտաց*՝ քակտի. վասն որոյ լ օր սգան: - 411. Եւ դևք ո՛չ միայն զապագայն ոչ գիտեն, այլ և զներկայ խորհուրդն ո՛չ ճանաչեն. նաև զանցեալ ճշմարիտն և զբարին ի *միտ* ո՛չ ունին: - 428. Վեցերորդ՝ զի եհարց ի սաւուղ թէ «զո՞ խնդրես». և թէ զառաջիկայն գիտէր, զներկայ *միտքն* ընդէ՛ր ո՛չ գիտաց: - 428. Յայս *միտս* ի բերել ընծային ի սեղանն՝ է դասք քահանայից կան ի սպասու. և երգեն եղանակաւ. և քշոց և բուրվառ և զանգակ հնչէ: - 431. Այլ ի դատաստանն քննութեան ջնջեալ է զոր ինչ մեք ի *մտի* ունիմք. որպէս ասացաւ ի վերոյ: - 433. Յայս *միտս* ի կենդանագիր կուսին՝ ի ձախոյ գիրկս լինի փրկչական պատկերն. նոյնպէս և առ ի խաչին ի յաջակողմն կացեալ: - 441. Ո՞ր քան առաւել մերս անկրթութեան *մտօք* և իրօք պարտ էր հրաժարիլ և ի բաց փախչիլ որպէս խռիւ ի հրոյ և զաչացու ի լուսոյ: - 456. Բայց զի յուսացեալ ի բանն ճշմարտութեան յաղագս որոյ բանս հարցափորձութեան, հետևելով ուսուցչացն ուղղութեան, և յուսոյ ուսողացդ նպաստութեան. բացցուք զբերանս *մտաց*, և ձգեսցուք ի մեզ զհոգին շնորհաց: - 456. Չորրորդ՝ *միտք* և հոգին ո՛չ երևին. և բանն երևի և ի դուրս գայ. և մարդիկք տեսանեն և գրեն. վասն այն բանն մարմնացաւ, և ո՛չ հայր կամ հոգին: - 468. Երրորդն ի *միտս* սրբոցն: - 471. Զի ի հօրէ միշտ ծնանի աստուած. ի մօրէ միանգամ ծնաւ մարմինն. և ի *միտս* ծնանի բազում անգամ: - 471....իսկ մեք ո՛չ ի գործոց, այլ ի հաւատոցն քրիստոսի ընկալաք զսկզբնական արդարութիւնն և զներգործութիւն մարմնոյ և զսրբութիւն *մտաց:* - 473. Հինգերորդ՝ զի հոգի միաւորեալ ընդ մարմնոյ՝ է՛ ի մարմնումն էութեամբ և ո՛չ այլ ուրեք թէ և *մտօք* բազումս տեսանէ: - 478. Իսկ բանն աստուած կատարեալ լրիւ մարդացեալ բովանդակապէս. հոգի մարմին և *միտս* ունելով անշփոթ կատարելութեամբ և անբաժ ենթակայութեամբ: - 479. Եւ ակն խառնուած չորից թևոցն, խառնեալ զգայութեանց և *մտաց:* - 493. Այլ և խաչաձև թռչին օդապարիկ թռչունք. որ է տեսական *միտք*. զթև տարածեալ յերկոսին կողմանս: - 494. Ասեմք եթէ՝ բանն աստուած էառ զմեր ապականակիր մարմինս և զմեղանչական հոգի և *զմիտս*. և մերովս արար փրկութիւն մեզ: - 500. Երկրորդ՝ վասն բազում մասանցն. որք կրեն զտանջանս մարմնոյ մասամբ և զգայութեամբ. և հոգւոյ զօրութեամբ և *մտաց* իմացմամբ: - 505. Դարձեալ՝ եթէ հարկիւ պահանջես ըստ *մտաց* քոց գ դժոխք: - 505. Եւ ի յայս *միտս* զտօն ամենայն սրբոց մարտիրոսաց ի մէջ գիշերի սկսանեմք զ ժամով յառաջ քան զծագումն լուսոյն հասարակ աւուր: - 515. Նա՛խ՝ ոմանք ասեն թէ մարդկօրէն կամէր իմանալ զնա և հարցանել վասն խաչին և դժոխոց և յարութեանն. իսկ այս կատարեալ *մտաց* պէտք էին և շա՛տ ժամու: - 517. Իսկ զտեղի համբարձմանն քրիստոսի *միտք* ո՛չ կարէ ցուցանել. զի ի լոյս անմատոյց է բնակեալ և ի ներքին կողմն վարագուրին ըստ առաքելոյն: - 519. Այլ համբարձումն նշանակէ՛ ի *միտս* համայն բարձր քան զամենայն դասս իմանալեացն. զի նմա՛ երկրպագեն ամենայն երկնայինքն. և անդր քան զտեղի տիրամօրն. զի ի միածին որդւոյ իւրմէ խնդրէ զփրկութիւն մարդկան: - 519. Եւ եհան ի լեառն ձիթենեաց. զի լերամբն ցուցանի համբարձումն *մտաց* ի խոկումն աստուածային: - 519. Զբերան *մտացն* ասէ. այսինքն է՛ յօժարութիւն հոգւոյն որ առնու զհոգին սուրբ...: - 523. Եւ վասն յանցանաց *մտաց:* - 525. Չորրորդ՝ *զմիտս* լուսաւորելով յայտնապէս առանց երևակայութեան՝ միայն *միտքն* լուսաւորեալ ի շնորհաց հոգւոյն...: - 536. Սոյնպէս և դաւթին մարգարէութիւն՝ *մտաց* լուսաւորութեամբն երգէր զամենայն սաղմոսն ի հոգւոյն սրբոյ: - 537. Յայս *միտս* տէրն յորժամ խոստացաւ տալ զիշխանութիւնս պետրոսի...: - 539. Ասեմք առ այս, եթէ համակարգ և համիշխանք են վերջինն ընդ առաջնոյն ի կարգել և ի յուղղել. այլ ո՛չ ի թիւրել և ի քակել. զի առաջնոյն աւանդապա՛հ է վերջինն նո՛յն *մտօք* և նո՛յն կամօք: - 541. Այլ դատաւոր *միտն* կացուցեալ երկու վկայ զանբիծ հաւատս և զօրէնս որ են հաւատք և գործք. զի առ ո՞ր և իցէ քրիստոս նա՛ է ճշմարիտ: - 551. Ա՛րդ՝ բե՛ր ածցուք զվկայս առ դատաւոր *միտս*, և դատեսցուք ուղղութեամբ, այլ ո՛չ զրպարտութեամբ: - 552. Իսկ յանցումն՝ *մտաց* տեսութեան: - 555. Ոմանք զյանցանս *մտաց* կատարեալ մեղս դնեն...: - 555. Եւ ոմանք ոչ ինչ համարին զյանցանս *մտաց*. և ո՛չ դնեն ի կարգս մեղաց. օրինակ տալով իբր զդատարկ սեղան ոչ ինչ կերակրել. և իբր զպտուղ ծառոց տեսութեամբ միայն վայելել: - 555. Բայց նախ զայս ասասցուք. զի մեղք *մտացն* կատարեալ մեղք է վասն բազում պատճառաց: - 556. Եւ այս յիրաւի իսկ. զի որ հայեցաւ ցանկական *մտօք*՝ ի կամս իւր գործեաց զմեղս: - 556. Ապա ուրեմն կատարեալ է մեղք *մտացն:* - 556. Վասն զի յերից գոյացեալ է մարդն. ի *մտաց* ի հոգւոյ և ի մարմնոյ: - 556. Ա՛րդ՝ մեղք *մտացն* թէպէտ ըստ բանականին և մարմնականին չէ կատարեալ, այլ ի տեսակս իւր կատարեալ է: - 556. ...ուրեմն կատարեալ

է մեղք *մտացն:* - 556. Եւ սոքա *մտօք* և ո՛չ մարմնով կատարին. որպէս յայտ է ի բանսարկուն սատանայ որ յանցեաւ հպարտութեամբ և նախանձով: - 556. Իսկ արդ եթէ յանցանք *մտացն* խոստովանելի, ապա ուրեմն մեղք է: - 556. Ապա ուրեմն կատարեալ մեղք է *մտաց* մեղքն. զի զոմանս առաւել պատժէ, և զոմանս սակաւ: - 556. Վեցերորդ՝ սկիզբն և արմատ ամենայն մեղաց *զմիտս* ասաց տէրն...: - 556. Տե՛ս զի ո՛չ բանիւ և ո՛չ գործով էր, այլ միայն ի *միտս* ունէին և յանդիմանեցան ի տնէ: - 557. Ապա ուրեմն կատարեալ մեղք է ի խորհրդոց *մտացն:* - 557. Ութերորդ յընդդիմակէն. զի թէ յաղօթելն միայն *մտօք* և սուրբ պահել *զմիտս* առաքինութիւն է կատարեալ ըստ առաքելոյ թէ՝ «սաղմոս ասացից *մտօք*» և այլն: - 557. Ապա ուրեմն և հայհոյելն *մտօք* և մախալն և նենգելն կատարեալ չարութիւն է և մեղք. զոր մարգարէն ընդ մարդասպանս կարգէ...: - 557. Ապա անհաւատութիւն և յուսահատութիւն և ատելութիւն է՛ ի *միտս*. և սոքա մեծ են քան զամենայն չարիս որպէս ուսուցանէն գիրք սուրբք: - 557. Տասներորդ՝ յա՛յտ է ի համազօրութենէ. զի երբեմն շարժէ՛ ախտ *զմիտս*. և երբեմն շարժի ի *մտացն* ախտ. որպէս ասէ երանելին եւագրիոս. եթէ մինչ յերեսնամեայ հասակս ախտն շարժէ *զմիտս* ի ցանկութիւն. և անտի յառաջ *միտքն* շարժէ զախտն: - 557. Ա՛րդ՝ եթէ շարժումն ախտիցն մեղք է ըստ որում է՛, ապա և շարժումն *մտացն* մեղք է որպէս ցուցաւ: - 557. Երկրորդ՝ որպէս կառք և կառավարն. եթէ մարմինն թիւրի, *միտքն* ուղղէ՛ զնա: - 557. Զի հոգի է աստուած. և յիմացական *միտս* և ի հոգիս բնակէ. և չէ՛ օգուտ մարմնոյն սրբութիւն յորժամ *միտքն* զբաղեալ է ի չարիս...: - 558. Զի կրկին է յանցումն *մտաց*: - 558. Որ և սողոմոն անճողոպրելի քարոզէ ամենայն մարդկային *մտաց*...: - 558. Եւ երկրորդ յանցումնէ՝ որք *մտօքն* հեշտացեալ մեղկանան ընդ տեսութեանն. և հաւանին խոնկացեալք ի նոյն: - 558. Փառասիրութիւն և հպարտութիւն են հոգւոյ և *մտաց.* որ լինի **ը**: - 560. Եօթներորդ՝ զի որ հպարտքն են ոչ ունին հանգիստ *մտաց* և մարմնոյ. քանզի որ քան մարդ խոնարհէ՝ այն քան հանգիստ է: - 562. Յայսմանէ ապա ի *միտ* առ **բ** ինչ: - 563. Երկրորդ ի *միտ* առ, զի որ առաւել գիտութեամբ և կամօք մեղանչէ, առաւել պատժի քան զայն որ նուազ գիտութիւն ունի և կամք...: - 563. Եւ զայս առնէ *միտքն* իբրև մշակ. որ առեալ զսերմն և բազմաբեղունս աճեցուցանէ. այսպէս և *միտքն* խորհելով զչարն՝ զայսոսիկ ախտս առաւելու ի մեզ: - 564. Նոյնպէս և զորկրամոլութիւնն յաւելու *միտքն* հնարելով զանազան կերակուրս և ըմպելիս: - 564. Դարձեալ՝ յոյսն է ունակութիւն *մտաց* յղացեալ յառատութենէն աստուծոյ. ունելով կեանս յաւիտենական՝ բարի արդեամբք: - 574. Քանզի առնէ *զմիտսն* անյաղթելի և անփոփոխելի ի մէջ յաջողութեանց և թշւառութեանց ամենայնի: - 578. Դարձեալ՝ առաքինութիւն է բարի ունակութիւն *մտաց*, որով ուղիղ կեայ. և ո՛չ ոք չարաչար առնու ի կիր...: - 578. Երրորդ ինքն առ ինքն. որպէս առաքինիքն ի մէջ հոգւոյն և մարմնոյն և *մտացն* առնեն զխաղաղութիւն. և զպատերազմն որով ցանկայ մարմինն հակառակ հոգւոյն, հանեն ի միջոյ: - 585. Դարձեալ խնդրի որ մկրտօղն ունիցի դիտաւորութիւն որ այն *մտօքն* մկրտէ զոր բոլոր եկեղեցին: - 588. ...վասն որոյ պա՛րտ է աչօք տեսանել զզգալիսն, և *մտօք* հայիլ յիմանալին և երանիլ: - 597. Այլ թացեալ պատառն այսպէս էր. զի ի սկաւառակն ընդ վարդապետին փութացաւ մատնիչն տանիլ զձեռն լիրբ դիմօք և արհամարհեալ *մտօք:* - 599. Յայս *միտս* և տէր մեր բաշխեաց զմարմինն և ետ առաքելոցն ի վերնատունն: - 600. ...այս է որ ի *միտ* ունի խոստովանիլ և դարձեալ մեղանչել. - 603. Եւ է՛ խոստովանութիւն որ զարմատ մեղացն քակէ՛ ի սրտէն և զղջացեալ ի մեղաց, հաստա՛տ է ի կամս և ի *միտս* այլ ո՛չ մեղանչել...: - 603. ...զի պարտ է զոր ի *մտի* ունի՝ զբոլորն միոյ քահանայի խոստովանիլ: - 603. Յայս *միտս* ժողովիմք քահանայքս և պաշտօն առնեմք յերեկօրեայ մինչ ի լոյս...: - 604-605. Եւ որպէս բազում են ներելիքն և անթիւ որ ի զգայարանս և ի *միտս:* - 605. Եւ որպէս հրեշտակապետն գաբրիէլ, նախ ետ զաւետիս սրբոյ կուսին, և նա՛ խորհէր ի *միտս*... - 610. Նոյնպէս և մասունք *մտացն* իմացումն է և կամքն: - 612. Եւ դուռն *մտացն* որ յերկինս և ի լոյս հայի, հարաւայինն է: - 614. Յայս *միտս* ի վերայ սեղանոյն խունկ վառեմք. որպէս ասացաւ ի վերոյ **իա** գլուխն, **խգ** համարն: - 615. Այլ և **ե** զգայութիւն հոգւոյ և **ե** մարմնոյ. *մտօք* և կամօք: - 616. Եւ յայս *միտս* ի կիրակէ գիշերն **գ** անգամ աւետարան ընթեռնուն: - 618. Նա՛խ է *մտօք* աղօթել...: - 618. Եւ այս է պատճառն, զի աստուած ետ մեզ *միտք* և բան և ձայնի գործիք և մարմնոյ մասունք և ինչք. վասն որոյ յամենայնէ՛ նուիրելի՛ է աստուծոյ: - 619. ...այսինքն մին ի մարմինն. **բ** ի *միտքն*. **գ** ի կամքն. յորժամ սոքա պատրաստին, ապա՛ աղօթքն ընդունելի լինի աստուծոյ: - 620. Իսկ *մտօքն*, յորժամ աղօթէ և *միտքն* ո՛չ է ի ներս. ո՛չ մեղք է և ո՛չ արդարութիւն: - 620. Եւ յորժամ *միտքն* երթայ յաշխարհական հոգս թէ զինչ կերիցուք և արբցուք, է՛ ներելի: - 620. Բայց յորժամ երթայ *միտքն* ի մեղք՝ է՛ մահու չափ: - 620. Յայս *միտս* մեք ազգս քրիստոնէից յելս արևու և ի մուտս համաձայն վերին զուարթնոցն աղօթեմք առ աստուած: - 621. Եւ այս է *միտքն*, որ մեղօք կապեցաւ: - 621. ...որ է՛ հասարակ զգայութիւն. երևակայութիւն. կարծիք. տրամախոհութիւն. և *միտք* որ է՛ յիշողութիւն: - 622. Երրորդ, հասարակն զգայարանօք կատարի. իսկ առանձնականն ի *միտս* լուսափայլի: - 623. Նա՛խ՝ զի

յերի՛ց եմք գոյացեալ ի մարմնոյ, ի հոգւոյ, և ի *մտաց,* որպէս ասեն ոմանք. վասն որոյ **գ** առանձնական աղօթս մատուցանեմք: - 623. Ա՛յս է *միտքն* որ ասեմք «օրհնեա՛»: - 624. Ի յայս *միտս* և զեօթն օր շաբաթուն փոխեցին առաքեալքն ի կիրակէ. որ ը երորդ է ըստ կարգի: - 627. Ի յայս *միտս* զվեց գուբղայն ի թիւ ասեմք. և զեօթներորդն ձայնիւ փողոյ: - 627. Եւ յամենայն օր **դ** անգամ ասեմք ի սրբութիւն մեր հոգւոյ և մարմնոյ և *մտաց:* - 632. Եւ դարձեալ թէ՝ այսպէս սուրբ ունիմք *զմիտս* և զհոգիս մեր: - 635. Եւ հոգւոյ և մարմնոյ և *մտաց* մեր աղե՛րս է: - 637. Յայս *միտս* սարկաւագն նախ առաջի քահանային ընթեռնու իբր ի նմանէ՛ ուսեալ...: - 644. Այսու *մտօք* և տէր մեր զհարւածեալսն ի յուրբաթու՝ բժշկէր ի շաբաթու: - 648. Զի յերից եմք գոյացեալ մարդ. հոգի և մարմին և *միտք:* - 655. Որպէս լեզուն *մտաց*՝ և ձեռքն սրտին է գործի. նոյնպէս ունկն կամա՛ց է. հնազանդութեան և կամ ոչ: - 658. Եօթներորդ՝ Վասն երկրորդ աւուրն. այգալացքն ի **ժ** *միտս*: - 660. Ութերորդ՝ Վասն երեք աւուրն **ժ** *միտք:* - 660. Եւ ըստ *մտացն* իմաստութիւն և տգիտութիւն: - 664. ...և ասէ ի *միտս* իւր՝ թէ ես անարժա՛ն եմ և զայս ետ ինձ աստուած...: - 664. ...յայնժամ տեսանէ ա՛յլ աչօք, այսինքն *մտօքն:* - 669. Իսկ հող ցանեալ ի գլուխն, գլուխ *զմիտքն* նշանակէ. որ ինքնիշխան եղև յաստուծոյ. և հնազանդեալ խրատու հողակեր օձին՝ մահացաւ...: - 670. Յայս *միտս*՝ յորժամ փոշիմանիմք ի վերայ բանի կամ տրտմիմք, ատամամբք զմատն խածանեմք...: - 670. միշտ ի *մտի* ունելով. և պատրաստ տանելով սահմանեալ ժամանակին: - 673. Երկրորդ, զի երի՛ց եմք գոյացեալ. ի մարմնոյ, ի հոգւոյ, և ի *մտաց*...: - 675. Երրորդ, զի երիւք մեղանչէ մարդ. այսինքն *մտօք* և բանիւ և գործով մարմնոյ...: - 675. Եւ յայս *միտս* նախ օրհնեմք ըզջուրն և ապա մկրտեմք զերեխայն: - 676. Այլ և *մտաց* և բանից և գործոց մեղացն քաւութեան: - 679. Նաև երիւք լինի թողութիւն մեղաց. այսինքն զղջմամբ խոստովանութեամբ և ապաշխարութեամբ. որ լինի *մտօք* բանիւ և գործով: - 681. յայս *միտս* գամք ի գերեզմանս ննջեցելոցն. - 681. Իսկ ամիսն որ է՛ **գժ**, տասն զգայութեամբ մեր *մտօք* և բանիւ և գործով մեղանչեմք: - 683. Յայս *միտս* ամսագլուխ և տարեգլուխ առնեմք: - 683. Հոգիք ելեալ ի մարմնոց՝ ի զգայութեա՞ն են և ի *միտս*, թէ ոչ: - 685. Երկրորդ՝ ի հաւատն եղեն ապաստան. որոյ վարձքն հետևի. և ո՛չ ի քննութիւն *մտաց*...: - 687. Եւ այսպէս ամենայն առաքինութիւն աստ հանգուցանէ *զմիտս*. և յետ մահու զհոգիս. և յարութեանն զհոգի և զմարմին: - 689. Նա՛խ՝ զի աներևո՛յթ են ի մէնջ. այլ և ի *մտացն* աստուծոյ. ի հրեշտակաց և ի սրբոց մոռացեալ: - 690. Ասեմք առ այս, եթէ նախ է բարին ի հոգին ըստ տեսութեան *մտացն* և կամացն...: - 696. ...իսկ հոգի մարդոյն յանհնարինս մտեալ երթայ առ *միտս* որ է՛ երրորդ բարեկամ և խնդրէ բարիս...: - 697. ...իսկ *միտքն* տայ պատասխանի՝ դրունքս փակեալ են. այսինքն զգայարանքս խցեալ են և մեղաց մանկունքս ընդ ինև ո՛չ տան թոյլ...: - 697. ...զոր վասն յոյժ ժտելոյն՝ յարուցեալ *միտքն* տացէ զխոստովանութիւն հաւատոյ սուրբ Երրորդութեանն. զոր յերիս նկանակս յառակեաց: - 697. Ճանապարհ կեանս այս. և ոտոխ մարմինն. և դատաւոր *միտքն*. դահիճ խիղճ մտացն որ չարչարէ՛ զհոգին և ոչ ազատէ մինչև զամենայն պարտսն վճարեսցէ ապաշխարութեամբ: - 704. Ի յայս *միտս* մարմնաւոր հարսն է զգեստուք զարդարի. **գ** զարդ գլխոյն և **դ** բոլոր մարմնոյն: - 721. Երկրորդ պակասութիւն է թուլութիւն և մոռացումն *մտաց*. զի աստ զաստուած մոռանամք և որոշիմք մեղօք ի նմանէ. - 722. Ա՛յս է գալարիլն երկնից ըստ *մտաց:* - 729. Այլ և վառ ունիլ զճրագ *մտաց* մերոց և նայիլ զտունս *մտաց* մերոց և նայիլ զտունս մեր. - 730. Դարձեալ որպէս ի վեր անդր ի հրեշտակացն՝ բանն յերիս որոշեցաւ. այսինքն է՛ բան *մտաց* և բան լեզուի և բան գործոյ: - 739. Արդ բանիւ *մտաց* խօսի ընդ բուն արդարս և ընդ հրեշտակս որք դատենն զայլս: - 739. Վեցերորդ, զի **գ** է բանին տեղիք. մին՝ *միտք* դատաւորին. և **բ**՝ լսելիք դաւողացն: - 742. Զի այսպէս ասեն վարդապետք՝ թէ յորժամ յղանայ ոք ի *միտս* իւր զխորհուրդ մեղացն, ի սատանայէ՛ սերմն առեալ որպէս կին յառնէ. և ի ծնանիլ մեղացն՝ ծնանին և որդունքն ի հրեղէն ծովն որ է՛ ի հարաւ: - 753. Որ է՛ պտուղ առաքինութեան ըստ մարմնոյ և հոգւոյ և *մտաց* մերոց: - 757. Տասներորդ, այլ և ի ժամանակս յայս առցեն սուրբք զերեսնաւորն. այսինքն զխնդութիւնն ի *միտս:* - 758. Ի յայս *միտս* ի ստորինս եկեղեցի այժմ կրկին են դասք պաշտամանց. որ և նոյնպէս է լինելոց ի վերնումն սիօնի յեկեղեցիս անդրանկաց: - 760. Չորրորդ՝ վասն արմատոյն խոշորութեան. և խոշորութիւնն է **բ** կերպիւ...: - 765-766. Որպէս *միտք* հոգւոյ, և բան *մտաց*, և ակն մարմնոյ, և լոյսական: - 769. Օրինակ. Աստուած մատանի. և *միտք* մոմ. և հաւատն տիպ ի մատանոյն. այս է սուրբ Երրորդութիւնն: - 769. Եւ թէ այս և թէ այն, դու ընկա՛լ զխնդիր *մտաց* քոց առանց ամենայն երկբայութեանց. իբր ի միոյ կենեղուտ աղբերէ կենաց ուռճալրացեալ և պտղաւէտեալ: - 772. Աղերս ընծայեցի ի գանձանակ ճոխութեան ձերդ մեծութեան. իմաստասէր և ճշմարտասէր եկեղեցւոյդ հայաստանեայց և ընթերցասէրդ *մտաց:* - 772. Այլ ի պատճառս տալ իմաստից. որով ո՛չ յագեսցի ակն ի տեսոյ. ի գլուխ գոլոյ իմաստնոյ. մանաւանդ և ի շահ օգտի բանասէր *մտաց* միեղէն եղբարց: - 773. Որք տեսչութեամբն աստուծոյ՝ ի մեռելոցն զառհաւատաչեայն ընկալան յարութեան, թէ զիա՞րդ ոչ ունէին ի *մտի*

զանտի կենացն ծանօթութիւն. պատմել մեզ խնդրի: - 774. Տեսանելի՛ է թէ՝ զի՞նչ արդեօք իցէ ոչ ունելն ի *մտի* որ է՛ մոռանալ. այսինքն զանցեալն ո՛չ յիշել. և զհանդերձեալն ոչ տեսանել. իսկ զներկայն ո՛չ գիտել: - 774. Ապա բնաւորապէս ընդ դէմ գոյ երից որպիսութեանց սա՛ մեզ չորրորդ գոլով. ոչ ունել ինչ ի *մտի*. մոռանալով միշտ. ո՛չ գիտել և ո՛չ յիշել ինչ զանտի կենաց: - 775. Յիրաւի ապա ըստ այսմ օրինակի՝ որք ի մշտնջենաւորէն փոխանցին առ երազ սնոտեաց, ոչ ունիցին ինչ ի *մտի*. թէ և անդրադարձեալ աստի անդ մնասցէ յիշատակութիւն որպէս ասացաւ: - 775. Խնամք մարդասիրութեանն աստուծոյ որ զամենայն յամենայնի տընօրինէ՛, արգել զայս. զի մի՛ ունիցին ինչ ի *մտի* յարուցեալքն ի մեռելոց...: - 775. Եւ թէ նայիս *մտօք*, թէպէտ առ մեզ փոփոխին տիւ և գիշեր. այլ նա միշտ լոյս և միշտ գիշեր կազմէ ...: - 779. Այլ որ քան և կարասցէ ոք *զմիտս* ուղղել. խօսակցելով առ նա, հաճո՛յ է աստուծոյ: - 779. Եւ բառնին շնորհականքն. որպէս եռակին ասացեալ ադամայ. և լոյս *մտաց*. և երանութիւն դիւաց: - 782. Երրորդ, զի հաւատն է լուսաւորութիւն *մտաց* հեղեալ յաստուծոյ ի ճանաչել զհոգևոր բարիսն. իսկ դևք ո՛չ ունին զլոյս *մտաց* և ո՛չ զհեղումն շնորհաց. վասն որոյ ո՛չ ճանաչեն զհոգևոր բարիս: - 784. Եւ ապա ի պահապան *մտից* ի վնասակար զեռնոց: - 786. Եւ կատարեալ տեսութիւն բացերևականն բանի յայտնի՛ է աշխատասէր *մտաց*. որ յաղագս մեկնութեան լուծումն գրոց. և գո՛ն առ քեզ: - 787. Որ և խիղճ որդանց անհանգիստ *մտաց:* - 789. Եւ այսպէս տրտմեալ սրգով և թախծեալ *մտօք* ընծայեցի տըխեղծ մատամբ զխունախոյ նուէրս բանի, իբր զլոմայս այրւոյն՝ քումդ գանձարանի: - 789. Եւ մաղթե՛մ եղբայրական սիրով, ըստ բնածին բարեբոյս բարուցդ ածխոյժ *մտօք* ուղղապէս որոնել. զթերին լնլով և զաւելորդն կշռել: - 789

***ՄԻՏ ԴՆԵԼ +*** *Միտ դիր*: - 257. Եւ է՛ որ խոստովանի. և ոչ մեղքն միայն թողուի. որք թերի են սրտիւ. և զմեղս թերի խոստովանին. և ի *միտս եղեալ են* դարձեալ գործել. այսպիսեաց ոչ մեղքն թողուի և ոչ պատիժն. զի որպէս զշուն դառնայ ի փսխած իւր: - 432

***Ի ՄԻՏ ԱՌՆՈՒԼ +*** Եւ զայսոսիկ պա՛րտ է բանասէր անձանց ի *միտ առնուլ:* - 218. Եւ տե՛ս և ի *միտ առ*. զի սոքա ի մի կարգի՛ են եղեալ. այսինքն ծունկն և ծու և կաթն. և որ ուտէ զմինն՝ կերիցէ և զմիւսն: - 510

***ԶՄՏԱՒ ԱԾԵԼ, Ի ՄԻՏ ԱԾԵԼ +*** Ապա ուրեմն եղիցին ամենայն բնակարանացն մարմինք կենդանարար զոր անհնար է և *զմտաւ ածել:* - 67. Իսկ թէ կամիս ուսանիլ թէ զի՞նչ է նիւթ պակին. որ ինչ առ աստուածութեան իւրում մեծութիւն գտանի, զա՛յն պատրաստեաց սիրելեաց իւրոց. զոր ո՛չ կարեմ *զմտաւ ածել*. կամ վայրապար լսելեօք լսել: - 161. Այլ և *ի միտ ածցուք* զփառս երկնային կենաց ուստի անկաք, և անդ դիմելոց եմք. զի տեսութիւն մտացն զհոգին ընդ ինքեան ի վեր տանի. և նա զշունչն. և շունչն ընդ արեանն է կապեալ. և արիւնն ընդ մարմնոյն. զգայարանքն ընդ մարմնոյն. և լինի մարդն բոլորովին երկնային: - 233. Նա՛խ՝ զի իմաստութեան են պատճառք. զի տեսանելով զսոսա՞ զարարչութիւնն աստուծոյ *ի միտ ածեմք:* - 295. Երրորդ՝ բազում անգամ *ի միտ ածէ:* - 575. Նախ խոհեմութիւն սրտին. և այս ի կարգաւորել զներկայն, *ի միտ ածել* զանցեալն, և նախատես լինիլ ապագային...: - 580. Նա՛խ՝ զի ի հոգին է. **բ**՝ զի վասն հոգւոյն տրտմի և ցաւի. **գ**՝ արտասուս հոսէ. **դ**՝ զմահ զդատաստան և զտանջանս *ի միտ ածէ՛*...: - 584. Եւ ոմանք ըստ իւրաքանչիւր պատառոյ զմահն *ի միտ ածեն* և զդատաստանն...: - 655. ...զի տեսցուք և *ի միտ ածցուք* զօր ելիցն մեր ի մարմնոյ: - 668. Եւ սոյնպէս զկարօտութիւն և զպակասութիւն ախորժակացս նշանակէ. որ քան *ի միտ ածեմք* և սըգամք: - 670. Մեծութիւն այսմ ուրախութեան կարէ՛ *զմտաւ ածիլ* յայնմանէ, զոր սովո՛ր են ծնօղք յորժամ որդիք նոցա լինին եպիսկոպոսունք կամ թագաւորք: - 763

***Ի ՄԻՏ ՊԱՀԵԼ*** - Նա՛խ՝ զի անհաւա՛ն էր ժողովուրդն և անկատար, զգալի տեսլեամբ և ձայնիւ զարհուրեցոյց. զի մի՛ մոռասցին. այլ հաւանեսցին և *ի միտ պահեսցեն*: - 341. Ասեմք թէ՝ մեզ պա՛րտ է *ի մտի պահել* և ի լեզուի զմեղս. և ցաւիլ և հոգալ հանապազ վասն անցեալ մեղացն և չգործելոյ բարեացն: - 433. Պա՛րտ է ամենայն որ աղօթէ, զայսոսիկ *ի միտ պահել* և ապա՛ աղօթել. վասն որոյ ի սկիզբն գրեցի զխրատս: - 620

**ՄԻՏԵՄ +** Իսկ կշռորդն է՛ օրէնքն աստուածային, և գործք մեր նմին հաւասարեալ և *միտեալ* հաւատով: - 745. Չորրորդ զբարի և զչար գործս մեր առ միմեանս հաւասարել. կամ *միտել* ի չարս և ի բարիս: - 745. Եւ որպէս մեք յարաժամ *միտեմք* ի գործ բարութեան կամ չարութեան. և գործ նորա *միտէ՛* յողորմութեան կամ արդարութեան հատուցումն...: - 745. Այսպէս ի *միտելն* սակաւ ի չարն՝ յաղթահարեաց արդարութիւնն: - 745. Այսպէս ի *միտելն* ի բարին՝ յաղթահարեաց ողորմութիւնն: - 745. Իսկ *միտելն* զչափ թաթաղուն զեղուն երկոցունց կողմանց. այսինքն բարեաց և չարեաց: - 745. Եւ սոքա երբեմն հաւասարին. որպէս յորժամ արդարապէս հատուսցէ բարեաց և չարաց. և *միտեն* յարաժամ անվախճան պատուէ և պատժէ: - 746. Եւ կշիռ ողորմութեանն ըստ ինքեան մարմնաւորի և հոգևորի. զի աստ մարմնաւորն և անդ հոգևորն

կշռի և *միտէ՛:* - 746. Եւ երբեմն *միտէ՛*. որպէս ի փրկել զբարիս կամ զչարս. և փարթամանալ բարեաց կամ չարաց: - 746. Իսկ անդ հաւասարի կշիռն ըստ յուսոյ, և *միտէ՛* ողորմութիւնն ըստ սիրոյ: - 746. Այսպէս հաւասարի և *միտէ՛* կշիռ ողորմութեանն ըստ ինքեան առ նոյնս և առ այլս: - 746. Զայս ցուցանէ հաւասարութիւն կշռոյն և *միտելն:* - 747. Եւ թէ ունիցին ըստ օրինացն հաւասարեալ ի գործս կամ ի հաւատս, և եթէ *միտեալ* և կամ նուազեալ, ըստ նոցին օրինացն հատուցանել. և կամ արտաքոյ օրինացն կորնչիլ ի յայսմ կշռոյ է հատուցումն: - 747

**ՄԻՏՈՒՄՆ +** Իսկ *միտումն* է՛ առանձնութիւն դիմացն. որ է՛ անծին և ծնեալ և բղխեալ: - 746. Եւ *միտումն* երբէք և ուրէք հարստահարելով և հաւասարելով ընդ միմեանս՝ այսպէս...: - 746

**ՄԻՐԳ +** Ապա յա՛յտ է՝ զի որ ընդ ապաշխարութեամբ է և կրօնաւոր, ի գինւոյ ի *մրգոյ* և ի մսոյ պահեսցէ: - 390. «Իբրև զտերև յորթոյ». ասէ մարգարէն. այսինքն զի որպէս տերևն յիւրում ժամանակին թափի և դարձեալ զարդարի տերևով և *մրգով:* - 728

**ՄԻՒՍ +** Նախ ի պատճառէ, զի ամենայն պատճառելեաց խնդրի պատճառս. և այնպէս պատճառի *միւս* պատճառ. և այսպէս բացաքայլութեամբ յանհունս ո՛չ է գիտութիւն: - 25. Եւ ի *միւս* բանին թէ՝ «հայր իմ մեծ է քան զիս». զքանն չա՛փ իմացիր՝ թէ մեծ է որչափ ես. որպէս ասէ որդի, «ես և հայր իմ մի եմք»: - 39. Իսկ զի ասէ՝ «առաքեցայ» ո՛չ թէ տեղւոջէ ի տեղի. որպէս մեք բովանդակեալքս ի մի տեղի. զի առաքիմք շարժմամբ ի *միւսն:* - 40. Եւ ո՛չ կարողանայ միևն առանց *միւսոյն* զի լծակիցք են: - 44. Ըստ քում բանիդ աստ հօ՛ր տաս զաստուածութիւնն և բառնաս յորդւոյ. և ի մարգարէն՝ որդւոյ ասես զաստուածութիւնն և բառնաս ի հօրէ, ապա հա՛րկ է քեզ լինիլ անաստուած. զի միովն *միւսոյն* յաղթութիւն տաս: - 47. Իսկ *զմիւսն* գործակից՝ զօրութեամբ անսահմանելի. զի իւր ասեն արար գործակից. իսկ բնութեամբ սահմանելի. զի արարած է: - 51. Իսկ *զմիւսն* զօրութեամբ և բնութեամբ սահմանելի...: - 51. Զի թէ կարգաւոր, երբեմն միևն՝ և յետոյ *միւսն*. որ յառաջին բղխօղ է՝ նա՛ է բղխօղ. և ո՛չ վերջինն: - 63. Նախ՝ զի բղխումն հոգւոյն՝ է՛ ելումն. իսկ ելումն շարժումն միոյն ի *միւսոյն:* - 63. Ա՛րդ՝ եթէ հոգին ելանէ յորդւոյ, պարտ է զի ելցէ յորդւոյ ի հայր. կամ ի *միւս* անձն: - 63. Եւ ո՛չ ի *միւս* անձն. զի չկա՛յ *միւս* անձն: - 63. Ա՛րդ՝ **բ** լոյսն ի միոյ ելանեն և ո՛չ մի ի *միւսոյն:* - 64. Ապա ուրեմն որդի և հոգին սուրբ ի հօրէ ելանեն իբր **բ** շառաւիղ. և ըստ այսմ ո՛չ ելանէ մի ի *միւսոյն:* - 65. Իսկ *միւսն* մա՛րդ էր բնութեամբ յարարեալ և ստեղծեալ բնութենէ ...: - 79. Դարձեալ՝ մի բնութիւն ասաց *միւս* ետիքէս. ոչինչ առեալ մարմին ի կուսէն. այլ իբր ընդ խողովակ անցեալ իբր ի դարիճակի. միայն զձևն ի նմանէ ձևագրեալ: - 81-82. Երկրորդ՝ զի յընդդիմաբաժանեալ տեսակս՝ ո՛չ ունի պէտս միևն *միւսոյն* առ ի բաղկանալ: - 87. Երրորդ՝ զի յընդդիմաբաժանեալ տեսակս՝ ո՛չ ուրեք միևն ի *միւսումն* տեսանի. և ո՛չ անբանն ի բանականումն: - 87. Իսկ ուղիղ՝ զի իջանեն առ երկրորդսն նախախնամապէս ո՛չ ի նոյնէ ի նոյն, այլ ի միոյ ի *միւսն:* - 142. Դարձեալ առնէ հրեշտակն առաջի *միւս* հրեշտակին զոր նախ ո՛չ իմանայր: - 145. Զորօրինակ՝ որպէս տղայ որ տեսանիցէ ցից ի յորմում, երթայ ի մօտ. թէ ամո՛ւր է՝ թողու. վասն զի ո՛չ կարէ հանել. և երթայ առ *միւսն*...: - 160-161. Այլ արդ՝ կուսութիւնն է ի կարելոյն որ ունի զգոլն և զչգոլն. իսկ ապականութիւնն է յանկարելւոյն. որ ունի զմինն և ո՛չ կարէ հակադարձիլ առ *միւսն:* - 165. ...իսկ *միւս* զօրութիւնն և կարելին և ներընդունականն որ է մարթելի՝ մի է և հետևին առ իրեարս. զի ամենայն որ զօրութեամբն է՝ կարելի է և մարթելի: - 168. Իսկ *միւս* զօրութիւնն որ է փոփոխական՝ ի գոլն և ի չգոլն կարէ՛. և անկար առ ո՛չ ոք է: - 168. Դարձեալ՝ այն զօրութիւնն միշտ է. զի բնաւորեալ է ընդ ներգործութեան. իսկ *միւս* զօրութիւնն երբեմն է. զի կամ նախ է ներգործութեան. որպէս մանկան հիւսնել: - 168. Իսկ *միւս* զօրութիւնն որ կարելի է՝ և ներընդունի զգոլն և զչգոլն՝ և երբեմն՝ ասի ի վերայ փոփոխական բնութեանց...: - 168. Երկրորդ՝ զի հաւասարութիւն և միաբանութիւն տարերաց անլուծանելի է. ըստ որում ներհակ որակօք հաւասարք են հակակայ. և *միւսովն* միաբանք: - 181. Վարդապետք ասեն. որպէս սուրբն բարսեղ՝ թէ որպէս երկբերանի քսա՛կ է լուսինն. ընդ մինն ելանէ և ի վերի թիկունքն ժողովի և պակասի ի մէնջ լոյսն. և ի *միւսն* ի ներքս մտանէ և լուսաւորէ՛ զմեզ: - 187. Եւ յորժամ ի *միւս* կիսագունդն հասանէ, ընդ **զ** կենդանակերպս հետևեալ՝ բոլորի լոյսն ի նմա. զի ուղղապէս զլոյսն ընդունի: - 187. Եւ վեցն ի կողմն հարաւոյ ի *միւս* կիսագունդն: - 189. Իսկ *միւսն* է ընդ ծագումն լուսոյն. յորում զպահք և զուտիք բաժանեն. այսինքն լոյսն և գիշերն: - 194. Ուստի յա՛յտ է՝ զի երեկոյ շաբաթուն որ կոչի կիրակմուտ՝ պատուակա՛ն է քան *զմիւս* գիշերն որ ըզհետագայ կիրակէին: - 194. Իսկ տեղիքն, զի յա՛յս կիսագունդս լինի լոյս, և ի *միւսն* խաւար: - 194. Եւ ժամանակն, որ ի յայս ժամս լինի աստ լոյս, և ի *միւս* ժամն խաւար: - 194. Երրորդ՝ զի ջուրք ծովուն բա՛րձր է քան զերկիր. վասն որոյ հա՛րկ առնէ և ի վե՛ր մղէ և ապա՛ հեղու յերկիր. զորօրինակ մարդիկք ի բարձրագոյն լերանց իջուցանեն զջուրն, և ըստ նոյն չափոյ ի *միւս* կողմն ի վեր հանեն սակաւ ինչ պակաս: - 209. Եւ է՛ *միւս* բարի խառնական և պատրուակեալն. որպէս է

աշխարհական բարին. զի գունով և երևելեաւ բարի է, այլ ի ներքոյ ծածկեալ չա՛ր է. յայսմանէ հրաժարէ՛ զմեզ ոչ մերձենալ: - 224. Եւ նոյն քան *միւ* ձեռքն՝ որ լինի **գ**: - 241. Եւ նոյնչափ ի *միւ* դիհն է: - 243. Նոյնչափ *միւ* ոտքն. որ լինի **գ** քառասուն: - 243. Եւ ի *միւ* տարին ի նոյն քանիս ամսոյն որ մտին ի նոյնն ելին ի տապանէն: - 294. Իսկ *միւ* խոյն կատարմանն, քահանայիցն կերակուր և նուէրքն մովսէսի: - 362. Եւ **թ** *միւ* որմունք ըստ դասուցն իմանալեացն փառաբանիչք: - 391. Վասն այն ի փրկչական պատկերն նկարեալ է ի մին ձեռն գիր և ի *միւսն* խաչ: - 482. Եւ բոլորն **ժե** ժամու յառաջ ի *միւ* աւուրն՝ սկսեալ նախատօնակ առնեմք. և զայս յամենայն ուրեք: - 509. Երրորդ՝ *միւ* մարիամ մագդաղենացի: - 517. Իսկ է երորդ ժողովն եղև ի թագաւորութեանն *միւ* կոստանդեայ. որոյ մայրն եռինէ: - 544. թէ զերկու քորս բ եղբարցն տալ. կամ զսանին քոյրն *միւ* եղբօրն. որպէս քո սուտ պետրոսին կանոն է, և ո՛չ ճշմարիտ պետրոսին. և զայլն լռեմ իբրև զամօթալի: - 548. Այն որ փափագանօք անկաւ՝ մեծագոյն է քան *զմիւսն:* - 565. Այն որ բազում գործեաց՝ մեծագոյն պատիժք *զմիւսն:* - 565. Վեցերորդ ըստ երբին. այսինքն թէ ե՞րբ գործեն զմեղքն. ի տղայութեա՞ն, թէ ի ծերութեան որ մեծ մեղք է. ի սո՞սկ աւուրս, թէ ի տէրունական տօնս. զի որ ի տօնս մեղք գործէ, առաւել պատժի քան *զմիւսն:* - 565. Իսկ այժմ ի մէջ քրիստոնէից՝ ի մեռանիլ միոյն՝ *միւսն* ևս ածեն. - 613. Դարձեալ՝ որպէս բժիշկք դեղ տան հիւանդաց՝ և ի *միւ* օրն դարձեալ հարցանեն. - 680. Զի կենցաղս այս որպէս երկդռնի քաղաք է. ի մինն մտանեմք և ի *միւսն* ելանեմք. - 680. Նա՛խ՝ որպէս մեք ի կիրակէ ուրախացաք և վայելեցաք ի շնորհաց յարութեանն քրիստոսի, ի *միւ* օրն և զնոսա մասնաւորեմք: - 684. Իսկ արդ ի յարութեանն հա՛րկ է զի միանգամ տանջեալ հոգին՝ *միւ* ևս ընդ մարմնոյն տանջեսցի որ է՛ անհնար...: - 699. Յօր անունն ռոմելոս ասեն. զմին ձեռն և զոտն երկայն և մինն կարճ. զմի ակն խաժ, և *զմիւսն* սև: - 706. Եւ ըստ իմաստասիրին, յառաջ քան զմարմինն յորում է զանազանութիւն լուսոյ՝ է՛ *միւսն* ի վերոյ յորում է միակերպութիւն լուսոյ: - 763. Յաղագս որոյ որ ինչ գոյ միոյն յայտնի և ներգործական մասունք, գոն նոքա և *միւսոյն* բնաւորապէս ծածուկ և զօրութեամբ: - 786

***ԵՒ ՄԻՒՍ +*** *Եւ միւսն* է յաւիտենական նախասահմանումն աստուծոյ. յորմէ ո՛չ ոք կարէ ջնջիլ: - 18. *Եւ միւսն* որ է՛ հայր՝ նմա իսկապէս, և մեզ պիտակապէս: - 43. Ասեն դարձեալ, օրինակ տուք զի լիցի ի նոյն բնութենէն մինն ծնունդ՝ *և միւսն* ո՛չ ծնունդ. և ապա՛ հաւատամք աստուած զհոգին: - 53. Պատասխանեմք թէ ցո՛յց մեզ սոյնպէս աստուած երեք անձինք ի մի բնութիւն. և ես ցուցանեմ զմինն ծնունդ *և զմիւսն* ո՛չ ծնունդ: - 53. Պատասխանեմք եթէ՝ թէպէտ հոգին ունի զբնութիւնն ի հօրէ՝ սակայն ո՛չ ծննդեամբ որպէս որդի, այլ բղխմամբ. որպէս շունչն և բանն ունին զէութիւնն հոգւոյն այլ և այլ կերպիւ. և որպէս ադամ յառաջ էած յինքենէ զսէթ և զևա. զմինն ծնունդ *և զմիւսն* ո՛չ ծնունդ. և ունին երեքեանն զմի և զնոյն բնութիւն մարդոյ: - 60. Դարձեալ՝ հոգին ելանէ իբրև զշաղկապ և միաւորիչ. մի իբրև զմէջ որ շաղկապէ՛ զերկու եզերն. *և միւ* իբրև երեք՝ և եզր: - 64. Որք **բ** անձն և **բ** բնութիւնս՝ և **բ** կամս՝ և **բ** գործս բաժանեն քրիստոսի. **բ** որդի՝ և **բ** քրիստոս յայտնապէս ասեն. զմինն տէր, և զմինն ծառայ, զմինն բնութեամբ որդի աստուծոյ, *և զմիւսն* շնորհօք. և այլն: - 82. Նախ զնիւթն զմի բնութիւն նիւթական որպէս մարդ. *և զմիւսն* բնութիւն աննիւթ որպէս զաստուած. զՁևն՝ զմինն քանակութեամբ և որակութեամբ տարբերեալ որպէս մարդոյ. *և զմիւսն* ի վեր քան զկերպ և զձև որպէս աստուծոյ: - 87. Նոյնպէս գաւառն՝ միոյն երկին, *և միւսոյն* երկիր: - 87. Եւ ազգայինքն՝ միոյն հայր և հոգի. *և միւսոյն* յովսէփ և մարիամ: - 87. Եւ ժամանակն՝ մինն յաւիտենից, *և միւսն* ժամանակեայ: - 87. Նոյնպէս տեղիք մարմնոյն պարունակօղ՝ զմինն պարագրելի, *և զմիւսն* անպարագրելի: - 87. Զի մինն ախորժելի է արիոսի. *և միւսն* նեստորի: - 94. Նախ՝ յորժամ սերօբէն ասէր սուրբ, *և միւսն* երկրորդէր զնոյն. և սա՛ լռեաց զփառաբանութիւն ընկերին երկրորդել աստուծոյ, թէ փառքն ի վերայ իւր անկանի և աստուածանայ որպէս ասաց պօղոս: - 147. Մանաւանդ թէ իւրաքանչիւր տարերք **բ** ծայրք որակութեանց ունին. զմինն գոյացական *և զմիւսն* պատահական. ըստ այսմ պա՛րտ է ասել քեզ մետասան բնութիւն քրիստոսի: - 176. *Եւ միւսն* հոգևոր. յորում հոգևոր գոյացութիւնք. այսինքն հրեշտակք բնակին: - 180. Ի բաց դնելն կրկին է. մին ըստ տեսակի, *և միւսն* ներգործութեամբ: - 186. Երկու գոլորշիք վերանան յերկրէ. մինն չոր և ծխատեսակ. *և միւսն* խոնաւ ի գէճ բնութեանց վերացեալ: - 204. Տասներորդ՝ մէջ և կապ ամենայն գոյիցս մա՛րդն է կազմեալ. զի ամենայն արարածք ի **բ** դէմս որոշին. այսինքն մինն յիմանալի *և միւսն* զգալի. և սոքա եղեն յառաջագոյն: - 231. Վասն է՞ր դէմք մեր ի մի կողմանէ է. *և միւսն* թիկունք: - 234. Նոյնպէս և յառիւծոյ և յիշոյ ո՛չ լինի ծնունդ. զի մինն մսակեր է *և միւսն* ընտակեր: - 267. Երկրորդ՝ զմին յառաջ քան զջրհեղեղն, *և զմիւսն* յետոյ. զի ցուցցէ թէ յերկոսին ժամանակս ընտրեալքն հաճոյ եղեն աստուծոյ: - 289. Երրորդ՝ մինն կուսութեամբ, *և միւսն* ողջախոհ ամուսնութեամբ. զի ցուցցէ թէ ի կուսից և յամուսնացելոց մտցեն յարքայութիւնն երկնից: - 289. Դարձեալ գիտելի է, որք զքրիստոս բաժանեն յերկուս բնութիւնս. և յերկուս գործս սոյնպէս. զմինն աստուած՝ *և զմիւսն* մարդ. հզօր և տկար. և գործ մարդոյ և գործ

աստուծոյ. որպէս աղանդն քաղկեդոնի: - 350. Այլ և ի տօնի քաւութեանն զուարակ մի և **բ** նոխազ վիճակով. մին տեառն *և միւսն* արձակման յանապատ: - 359. *Եւ միւսն* ի սեղանն ի հոտ անուշից: - 362. Դարձեալ՝ կրկին է ողջակէզն. մին վասն մեղաց որ է՛ կամաւոր. *և միւսն* յանցանաց որ է՛ ակամայն: - 362. Դարձեալ՝ կրկին ողջակէզն. մին վասն մեղաց. *և միւսն* վասն սրբութեան: - 362. *Եւ միւսն*, որ զմարմին մեր պատարագեմք միշտ. սիրտ սուրբ և հոգի խոնարհ ունելով. զոր աստուած ո՛չ արհամարհէ: - 363. Յինգերորդ՝ կրկին ողջակէզն. մին պատարագն է ամենայն աւուր. *և միւսն* տօն չարչարաց խաչի և մահու յամենայն ամի՛ զոր նոյն խորհրդով կատարէ՛ եկեղեցի: - 363. Զի՞նչ է **բ** հաւն ի սրբիլ բորոտին. մին զենեալ, *և միւսն* արեամբն թաթաւեալ և ի բաց թողեալ: - 368. *Եւ միւ* հաւն թաթաւեալ յարիւն, հոգին կենդանի. որ կարեկից լինի մարմնոյն և զսրբութիւն նորա հանէ՛ յուսով ի դաշտն որ է՛ յերկինս: - 368. Իսկ կրկին պատարագն. մին վասն բոլոր ժողովրդեանն, և մին վասն անձին ակամայիցն. ցուցանէ զկրկին խոստովանութիւնն. մին յայտնի առհասարակ եկեղեցոյն. *և միւսն* ծածուկ առանձին մեղաց: - 385. Եւ թէ մինն է պատճառ՝ որ և իցէ թէ այրն և թէ կինն, առանց ամուսութեան մնացէ. *և միւսն* զուգեսցի այլոյ որ չէր պատճառ: - 401. Չորրորդ՝ մինն տեսակին, *և միւսն* անհատին էր պատիժ: - 426. *Եւ միւ* ի մէջ մարհամու և հրեշտակին. յորմէ եղև կեանք: - 465. Եւ այս ևս կրկին է գիր և դպրութիւն. մին անջինջ և յաւիտենից որ առ աստուած. *և միւսն* ժամանակեայ և ջնջելի որ առ մեզ. զոր մեր գործօք և կամօք գրեմք և ջնջեմք. թէ զչար թէ զբարի: - 481. Զի հակակայք են. և որ քան ասի մինն, նոյն քան ասի *և միւսն*: - 504. Ասեմք եթէ՝ խոստովանիլն կրկին է. մին ներքին իմացմամբ. *և միւսն* մարմնով_արտաձայնութեամբ: - 508. Զի բ օր ասացեալ է ի վարդապետաց. մին բնական օր *և միւսն* շնորհական: - 508. Եւ տե՛ս և ի միտ առ. զի սոքա ի մի կարգի՛ են եղեալ. այսինքն ծուկն և ծու և կաթն. և որ ուտէ զմինն՝ կերիցէ *և զմիւսն:* - 510. Եւ ոմանք ասեն թէ՝ երկու են մագդաղենացիքն. մինն գնաց և ի ճանապարհին ետես զտէրն. *և միւսն* եկաց և ի պարտիզին ետես: - 515. Մին զկապանաց, *և միւսն* զհակառակութեան: - 540. *Եւ միւ*՝ որ դառնայ ի հեշտալին որ է՛ հանգիստ մարմնոյ. ըստ որում կոչի ծուլութիւն: - 559. Ի վայր շարժումն է տրտմութիւն և ծանծրութիւն. որ է՛ ծուլութիւն. զի մինն ծանրանայ և ո՛չ գործէ զբարիս. *և միւսն* տրտմի և պակասի: - 560. Մինն բնակութիւնն, *և միւսն* բնակեալն. որ է՛ ժողովուրդ և ժողովարան: - 613. ...*և միւսն* երախայ և ո՛չ ունի լեզու, միայն լայ. և մայրն գթայ ի յարտասուքն և տայ կերակուր: - 620. Եւ դարձեալ՝ մինն սկիզբն և վախճան է գիշերոյ. *և միւսն* տըւընջեան: - 623. Այլ և այսպէս **բ** որմունք լինելոց են ի հանդերձեալն. այսինքն է մին հրեշտակաց *և միւսն* մարդկան սրբոց յաւիտենից փառաբանիչք: - 636. Այլ և **բ** ստեղիք. մինն աւագ կողմին. *և միւսն* վերջին: - 639. Դարձեալ՝ կրկին է տօն. մինն տէրունական, *և միւսն* հասարակ սրբոց: - 646. Որպէս յաղուհացս զառաջին շաբաթն թէոդորոսի կոչեմք. *և զմիւսն* ղազարու. կամ այլ ինչ: - 650. Տասներորդ, **բ** են բանականաց տեսակ. մինս տարրական. *և միւսն* գերաշխարհիկ ի վերոյ քան զհինգերորդ էութիւնս երկնից...: - 654. Եւ նշանակէ նախ զերեք հանգստեանն. մինն մարմնոյ. *և միւսն* հոգւոյ. *և միւսն* հոգւոյ և մարմնոյ: - 675. Ութերորդ, **գ** պսակ տայ աստուած արդարոցն. մին զկուսութեան. և մի զողջախոհութեան. *և միւ* զապաշխարութեան. - 675. *Եւ միւ* ներսէս ի հանգիստն յոհաննու: - 687. Կրկին ասեն զշաւիղս ընթացից հոգւոց. այսինքն մինն ի վեր յերկինս, *և միւսն* ի ներքոյ երկնից: - 688. Նախ ընդ դէմ բերեն զբան մեծատանն և ղազարու. որ մինն ի գոգն աբրահամու *և միւսն* ի տանջանքն էջ: - 695. *Եւ միւ* գիր է գործոց փոփոխական և ջնջելի ըստ ժամանակիս: - 741. Զի ի հակակայիցն որքանաբար ասի մինն, նոյն քան *և միւսն*: - 758. Իսկ արտասուքն աղի և ջրատեսակ. զի բարեխառնեսցէ մինն զջերմութիւն հրոյ, *և միւսն* զի մի՛ նեխիցին պարուտակք աչաց. շրջապատեալ երակացն լուսոյ: - 786. Այլ և ի դռան Կլայիս սակաւ ինչ դանդաղեալ, մինն փրկեալ *և միւսն* գերեալ: - 789

***ՄԻՒ ԱՆԳԱՄ, ՄԻՒՍԱՆԳԱՄ +*** Զի՞նչ է որ ասէ մեծն իգնատիոս վասն արեգական՝ թէ յամենայն օր ի բաց դնէ զլոյսն և զջերմութիւն, և *միւ անգամ* յարփոյն առնու: - 186. Երկրորդ՝ ի յօրինակ *միւ անգամ* գալստեանն փողով և հրով իջանելն ի դատաստան: - 341. Խաղաղութիւնն ի *միւ անգամ* գալուստն: - 379. Եօթներորդ վասն *միւսանգամ* գալստեանն: - 572. Եւ այս է պատճառն, զի կիրակին տէրունի թարգմանի. և օր է ստեղծման աշխարհի, և յարութեանն քրիստոսի, և *միւ անգամ* գալստեանն: - 642. Անդ ժողովեցան առաքեալք և վկայք սուրբք և կատարեալք մինչ ի *միւսանգամ* գալուստն. - 688. Ա՛րդ՝ դարձեալ տեսանելն *զմիւսանգամ* գալուստն նշանակէ. որով ուրախ լիցին առանց տրտմութեան: - 692. Այս է ի *միւսանգամ* գալուստն. որք զարծաթ բանին շահեցան, տալ զփառս և զմուտն ուրախութեան. և որք ո՛չ՝ նոյնպէս զտանջանս: - 693. Նա՛խ նշանակէ զփոքր ժամանակն մինչ ի գալուստն *միւ անգամ*...: - 730. Զի որպէս խաչեալն ի ժամ խաչելութեանն տգեղ երևէր, և ի *միւսանգամ* գալստեանն փառօք հօր և ընդ ամպս: - 734

**ՄԻՔԱՅԷԼ** - Դարձեալ՝ առաջինքն կառավարեն ազգի և թագաւորութեան, որպէս *միքայէլ:* - 136.

Երկրորդ՝ *միրայէլ*. որպէս զաստուած կամ հզօր: - 144. Փեգովրայ տեղի՛ էր կռոց. և դևքն չտային թոյլ թաղել զմարմինն, մինչև սաստեաց *միրայէլ* հրեշտակապետն ասելով, «սաստեսցէ՛ ի քեզ տէր». որպէս յա՛յտ է ի կաթուղիկէից վերջին թուղթն: - 409. Երրորդ՝ վախճանեալ մովսէս ի լերինն, և *միրայէլ* փոխադրէր զմարմինն. սկսաւ սատանայ հայհոյել զուրբն և սպանօղ անուանել վասն հարկանելոյն զեգիպտացին. վասն որոյ սաստեաց նմա հրեշտակապետն: - 410. Վեցերորդ՝ ի թաղումն մովսէսի *միրայէլ* սպասաւորեաց. որում սատանայ հակառակ կայր ներողութեամբն աստուծոյ: - 410. Եօթներորդ՝ ոմանք մարմին մովսէսի զօրէնսն ասեն. զոր ի բերելն հակառակէր սատանայ, խոտան և անարժան գոլ ժողովրդեանն. վասն որոյ *միրայէլ* վերակացու ժողովրդեանն հալածէր զնա: - 410. այլ ասէ՝ «սաստեսցէ՛ ի ձեզ տէր». որպէս *միրայէլ* վասն մովսիսեան մարմնոյն. - 703-704. Եթէ ինքեամբ՝ եթէ ի ձեռն *միրայէլի*. ի մէջ վրանի և յաթոռն իւր սատակեսցի. և գլորեսցի մարմինն ակներև ժողովրդեան իւրոյ. - 709

**ՄԻՔԻԱ** - Ամովս: *Միքիա:* Յովէլ: Աբդիու: Յովնան: Նաւում: Ամբակում: - 450. Ութերորդ՝ զի ցուցցէ մեզ զճանապարհս երկնից. ըստ *միքիայ* որ ասէ «համբարձաւ առ ի ցուցանել մեզ ճանապարհ»: - 519

**ՄԽԻԹԱՐԱԿԱՆ +** Դարձեալ՝ կատարեալ սէր է, յորժամ է ունակութեամբ մեծ. ներքին շարժմամբն ուղիղ. արտաքին գործքն ժիր. արմատովն հաստատեալ. ջերմ եռանդութեամբն խոհեմ. և քաղցրութեամբն *մխիթարական:* - 576

**ՄԽԻԹԱՐԵՄ +** Տասներորդ՝ հովւական բանիւ *մխիթարէ՛* զնոսա: - 49. Ա՛րդ՝ զայս **գ** սգոյս *մխիթարեցաւ* յետոյ: - 312. Զառաջինն *մխիթարեցաւ* աստուածածին կուսիւն մարիամաւ. որ առանց երկանց և ցաւոց ծնաւ զմիածինն որդի, որ եբարձ զարտասուս վշտաց մօրն հռաքէլի: - 312. Զերկրորդն *մխիթարեցաւ* առաքելաւն պօղոսիւ որ էր որդի նմին: - 312. Եւ այսպէս *մխիթարեցաւ* յայս երից վշտացս տրտմութեանց: - 313. Եօթներորդ՝ յովսէփ *մխիթարէ՛ր* զբանտարկեալսն: - 313. Ոմանք ասեն թէ՝ բարեկամքն իւր որ էին յազգէն եսաւայ ելիփազ. սովփար. և բաղդատ. որք եկին *մխիթարել* զնա ի վշտացն...: - 320. Երրորդ՝ զի զազգաւն զազգակիցն *մխիթարէր* և ո՛չ խնդրէր բժիշկ. զի մի՛ ի մարդկանէ լիցի օգնութիւն նմա: - 323. Նախ՝ զի ունէր զամենայն առաքինութիւնս և համբերեաց նախատողացն. վասն որոյ խօսեցաւ աստուած և *մխիթարեաց* զնա: - 325. Այլ ա՛յս է ճշմարիտն, զի ամենայն բարեկամքն որ ժողովեցան յետոյ և *մխիթարեցին* զնա՛, իւրաքանչիւրքն բերին մէն մի որոջ ոչխարի և **դ** դրամ ոսկի անգիր ընծայեցին նմա ի սատար խրախութեանն...: - 326. Երրորդ՝ վասն մխիթարութեան աշակերտացն. զի **խ** օր *մխիթարեսցէ* զնոսա փոխանակ **խ** ժամուն որ տրտմեցան ի մահն քրիստոսի. որպէս ասացաւ թէ յարութիւնն ի մէջ գիշերի, այլ երևեցաւ ընդ արշալոյսն առաքելոցն...: - 520. Եւ այլք ասեն թէ՝ **խ** օր յերկրաւոր դրախտին եկաց ինքն և յարուցեալքն ընդ նմա. և *մխիթարեաց* զեղիա և զենովք: - 521

**ՄԽԻԹԱՐԻՉ +** Այլ և ի նոյն ինքն *մխիթարիչ* հոգին այսպէս ուղղակի՛ է բանս: - 59

**ՄԽԻԹԱՐՈՒԹԻՒՆ +** Իսկ **ժ**երորդ՝ յորում ամուսնութիւնն *մխիթարութիւն* տուաւ մեռելոյն...: - 280. Եօթներորդ՝ զի նախ զօրէնսն կատարեմք, և յետոյ *զմխիթարութիւնն* առնումք: - 385. Երրորդ՝ վասն *մխիթարութեան* աշակերտացն. զի **խ** օր մխիթարեսցէ զնոսա փոխանակ **խ** ժամուն որ տրտմեցան ի մահն քրիստոսի. որպէս ասացաւ թէ յարութիւնն ի մէջ գիշերի, այլ երևեցաւ ընդ արշալոյսն առաքելոցն...: - 520. Զի հոգիք սրբոցն ո՛չ են առանց *մխիթարութեան*. այլ հանգչին և ուրախանան ի գործս իւրեանց և յուսով փառացն հատուցման...: - 690

**ՄԿՐՏԵԼԻ** - Եւ *մկրտելի* է այսու ձևով: - 588. Եւ այնք որ ո՛չ խոստովանին զմիասնական սուրբ Երրորդութիւնն, *մկրտելի* է զմկրտեալն ի նոցանէ ի փառս ամենասուրբ Երրորդութեանն: - 590. Զաւակս այլազգեաց *մկրտելի*՞ է թէ ոչ: - 591

**ՄԿՐՏԵՄ +** Ա՛րդ *մկրտիմք* հաւատացեալքս որպէս ի հայր և ի հոգին սուրբ՝ այսպէս և յորդին մարմնացեալ մի տէր մի քրիստոս: - 69. Եւ հարցանեմ բաժանօղսդ քրիստոսի եթէ՝ յո՛ր բնութիւն *մկրտիս*. յաստուծոյն թէ ի մարդոյն: - 69. Իսկ թէ միայն ի մարդոյն բնութիւնն, ահա տակաւին ես անկատա՛ր ես. զի ի սոսկ մարդոյն մահ *մկրտեցար*: - 69. Ուստի *մկրտիմք* յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն սրբոյ: - 69. Եւ կամ թէ՝ *մկրտիմք* յանուն հօր՝ և որդւոյ **բ** բնութեանցն՝ և հոգւոյն սրբոյ. և որ սոցին նման: - 90. Եւ զփառս բանին զրկելով՝ ետուք մարդոյն. և եղէք մարդապաշտք, և մարդոյ մարմնակերք. և ի մարդ *մկրտեալք*. և սուտ է փրկութիւն մարդոյ մարգարէն կնքեաց: - 90. Ընդէ՞ր ապա զնորա մարմինն ճաշակեմք. և ի նա *մկրտիմք* և նովաւ յառնեմք և այլն ևս: - 95. Եւ վասն տնկական և զգայական մասին՝ կազմողական զօրութիւնն այլ ևս աճեցուցեալ զմարմինն **բ** ամ և դադարեալ յերեսներորդին, լինի ժամանեալ ի չափ հասակի կատարմանն քրիստոսի, յորում *մկրտեցաւ* տէրն մեր: - 265. Կոչեցան և *մկրտեալքն* անուամբ նոր...: - 307. Եւ տէրն մեր **լ** ամեայ *մկրտեցաւ*. զորմէ հրամայեաց հայր՝ դմա՛ լուարուք ամենայքն: - 313. Եւ այս ևս գիտելի է, զի տէրն

մեզ կոչի զգեստ փրկութեան և պատմուճան ուրախութեան ի ձեռն մկրտութեան...: - 318. Եւ որպէս երեխայն նախ քան *զմկրտիլն* **խ** օր ուսանի զխորհուրդն: - 363. Եւ մաքրեալ յարենէն, որք աւազանաւն *մկրտին*՝ մաքրին յարենէն...: - 369. Երրորդ՝ զի աւետարանիչքն յայտնապէս ասեն թէ՝ ընդ *մկրտիլ* տեառն՝ նոյն ժամայն հոգին հանէ՛ զնա յանապատ. և պահեաց զ**խ** տիւ և զ**խ** գիշեր: - 373. Երրորդ՝ հեթանոսաց ազգ. որ նախ քան *զմկրտիլն* բնական բարութեամբ և երկիւղիւ գան յաստուածապաշտութիւն և *մկրտին:* - 390-391. Չորրորդ՝ ազգս քրիստոնէից. հաւասար անցեալք ընդ յորդանան և *մկրտեալք:* - 391. Վեցերորդ՝ դարձեալ տէր մեր յիսուս քրիստոս որ եղև զգեստ հաւատացելոց իւրոց. *մկրտեցաւ* ի յորդանան. և ձայն հօր վկայեաց. և աղաւնակերպ հոգին էջ ի վերայ նորա: - 421. Եւ նոյնպէս ամենայն հաւատացեալք *մկրտին*. և զնոյն շնորհք պարգևաց ընդունին: - 421. Դաւիթ երեսնամեայ թագաւորեաց. և տէր մեր լամեայ *մկրտեցաւ* և ի գերեզմանէն յարեաւ: - 437. Եւ տէր մեր զեկեղեցիս ասէր քարոզել և *մկրտել:* - 441. Սակայն արմատ մեղացն որ է՛ ցանկութիւնն և դիւրասահութիւնն ի մեղանչելն՝ մնայ. որպէս յա՛յտ է ի *մկրտեալսն* որք կարեն մեղանչել: - 462. Իսկ ըստ կոչման, որպէս քրիստոնեայք. *մկրտեալք*. ծառայք. և ստեղծեալք: - 476. Եւ յորժամ հաւատան ի քրիստոս և *մկրտին*, ջնջի գիր նոցա և անէծքն: - 482. Վասն է՞ր *մկրտեցաւ* քրիստոս: - 486. ...զի ամենայն ոք որ *մկրտէր* ի յովհաննէ ի ջուրն՝ խոստովանէր զմեղս իւր և ապա՛ ելանէր...: - 487. ...իսկ քրիստոս ո՛չ ունէր զմեղս. վայն այն վաղվաղակի ել ի ջրոյն. և նշանակէ ի մեզ զշնորհաց հեղումն. որ *մկրտեալն* ազատի ի մեղաց և իսկոյն ելանէ յառաքինութիւնս: - 487. Երկրորդն որ ասէ «բացաւ երկինս» որ ցուցանէ թէ *մկրտելոյն* առ ժամայն բացեալ է դուռն արքայութեանն: - 487. Դարձեալ՝ ի մկրտութիւնն քրիստոսի նշանակին գոյացութիւնք մերոյս մկրտութեան. այսինքն *Մկրտօղն, Մկրտեալն*, Նիւթն, Տեսակն, և Դիտաւորութիւնն: - 487. *Մկրտօղն* էր յովհաննէս. որպէս սպասաւոր քահանայքն: - 487. *Մկրտեալն* քրիստոս. որ սրբեաց ջզուրն և զօրացոյց վերստին ծնանիլ զմեզ: - 487. Հոգին սուրբ աղաւնակերպ. իսկ Դիտաւորութիւնն հետևիլն ձայնին առ որ *մկրտի:* - 487. Չորրորդ՝ մկրտութիւնն յովհաննու որ *մկրտէր* ի յապաշխարութիւն. զի կարասցեն ընդունել զհոգւով մկրտութիւնն. վասն այն յառաջէ՛ր և սրբէ՛ր ջրովն: - 488. Հինգերորդ՝ մկրութիւն տեառն այն որ ինքն *մկրտեցաւ*. այլ *մկրտիմք* և մեք զկատարեալ մկրտութիւն տն ջրով և հոգւով: - 488. Եօթներորդ՝ արեամբ և վկայութեամբ. զոր և ինքն քրիստոս *մկրտեցաւ* վասն մեր իբրև յոյժ գովելի և երանելի այս մկրտութիւնս քան զառաջինսն: - 488. Ներքինոյն զոր փիլիպպոս *մկրտեաց* փոթամո՛ս էր: - 495. Եւ որք **դ** ասեն՝ զներքին դժոխքն մահու չափ մեղաւորացն ասեն. և զքաւարանն ներելի մեղաւորաց. և զլիմպոսն արդարոց. և զդժոխս ոչ *մկրտելոցն:* - 504. իսկ մարմինն յերեսուն ժամուն ի գերեզմանէն յարեաւ. զի երեսնամեայ *մկրտեցաւ* մարմնով և ել ի ջրոյն: - 516. Չորրորդ ասեն ոմանք թէ՝ դեռ չէր *մկրտեալ* մարիամ. և ոչ *մկրտելոցն* անհպելի՛ է. թէպէտ և իւրք իցեն: - 517. Աղաւնին աւետաբեր է շնորհաց. որպէս ի տապանն նոյի եբեր զշիւղ ձիթենւոյն. որ ցուցանէ զշնորհս *մկրտելոցն:* - 525. Զի պողքէր քոյր թագաւորին թէոդոսի ի կուսանաց վանս էր. և պղծեցաւ պոռնկութեամբ ի մարկիանոսէ. և ապա՛ եղև կին նմա. և ասեն թէ ի նեստորէ՛ էր *մկրտեալ:* - 542. Ուստի յա՛յտ է, զի առեալ էր զքահանայութիւն. և *մկրտեալ* զթագաւորն և լուսաւորեալ զազգս, և շինեալ եկեղեցիս: - 548. Տասներորդ՝ կանանց մկրտութիւն առնել. և աշխարհականաց խոստովանիլ. այլ և կրկին *մկրտել:* - 553. Զի մկրտութիւնն է՛ խորհուրդ հաւատոյ. ուստի յա՛յտ է զի նախ հաւատամք և ապա՛ *մկրտիմք:* - 587. Զոր և ազգն Ֆռանկաց այլայլելով ասեն, ես կու *մկրտեմ* զքեզ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: - 588. Զոր և անյարմար շարաբանութեամբ զկո՛ւն ցուցանեն *մկրտել* և ո՛չ զնուիրեալն: - 588. Եւ երկրորդ անպատշաճութիւն, զի յասելն թէ՝ ես «կու *մկրտեմ»*. երևի թէ նուիրեալն ո՛չ իւր կամաւն է եկեալ ի մկրտութիւն, այլ բռնութեամբ և ի հարկէ՛ «կու *մկրտեմ»*: - 588. Որ և ըստ այսմ կերպիս ո՛չ լինի տուեալ շնորհք հոգւոյն ի *մկրտողէն* առ *մկրտեալն*...: - 588. Ապա ուրեմն ո՛չ վայելէ ասել թէ ե՛ս կու *մկրտեմ:* - 588. Դարձեալ խնդրի որ *մկրտօղն* ունիցի դիտաւորութիւն որ այն մտօքն *մկրտէ* զոր բոլոր եկեղեցին: - 588. Դարձեալ գիտելի է, զի աստ ասեն հերձուածօղ ազգն Ֆռանկաց թէ՝ թէպէտ մկրտութիւնն գործ քահանայի է, բայց ի հարկաւոր ժամանակն թէ քահանայ ո՛չ լինի ամենայն ոք որ գիտէ զձև մկրտութեան՝ կարէ *մկրտել:* - 588. Եւ թէ այր մարդ ոչ լինի և տղայն մերձ ի մեռանիլ լինի, կինն կարէ՛ *մկրտել* թէ գիտէ զձև բանին զոր քրիստոս ուսոյց «յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ». ցանէ՛ զջուրն և ասէ՝ *մկրտեալ* լինի: - 588-589. և ապա՛ էջ հոգին ի *մկրտեալն* նորա. զիա՞րդ ի ձեռն կնոջ լինի տուեալ շնորհք հոգւոյն լուացմամբ ջրոյն: - 589. **Հինգերորդ, զի թէ գո՛յր հնար կնոջ վասն հարկին առնել զգործ քահանայի, ընդէ՛ր ոչ կարաց նունի կոյսն *մկրտել* զոք ի վրաց յորժամ դարձոյց յաստուածգիտութիւն**...: - 589. ...այլ առաքեաց առ սուրբն գրիգոր և խնդրեաց քահանայս *մկրտել* զնոսա: - 589. **Վեցերորդ, զի թէ կինն կարէ *մկրտել* ի հարկաւոր ժամանակի, սուրբն գրիգոր լուսաւորիչն քանի ևս առաւել պատական էր քան զմի**

**կին...: - 589. ...ընդէ՞ր ոչ *մկրտեաց* զոք ի հաւատացելոցն. մինչև գնաց ի կեսարիա ձեռնադրեցաւ. և ապա եկեալ զհազարս հազարաց և զբիւրս *մկրտեաց* ի գետն:** - 589. Եօթներորդ, զի *մկրտելն* է գործ քահանայի. և քահանայութիւնն է սպասաւորութիւն աստուծոյ. իսկ զայս սպասաւորութիւն աստուծոյ և ո՛չ կռապաշտքն ունէին սովորութիւն սնոտի կռոցն ի ձեռն կանանցն մատուցանել զպատարագն. - 589. Բայց գիտելի է, զի գործ մկրտութեանն է սրբել զհոգիս յամենայն մեղաց զոր ունիցի. թէ բնական թէ ներգործական և ի պատժոց մեղացն. զի թէ նոր *մկրտեալն* մեռանի, առ ժամայն թռչի ի կեանս յաւիտենականս: - 590. Զմի անգամ *մկրտեալն* պա՞րտ է կրկին անգամ *մկրտել* թէ ոչ: - 590. **Ասեմք թէ ո՛չ է պարտ կրկին *մկրտել զմկրտեալն* վասն դ պատճառի: - 590. Երրորդ՝ զի որ *մկրտի*՝ ի մահն քրիստոսի *մկրտի*. և քրիստոս միանգամ մեռաւ. և թէ ոք դարձեալ *մկրտէ*՝ անձանց ի խաչ հանէ զորդին աստուծոյ և դարձեալ խայտառակէ որպէս առաքեալն:** - 590. Չորրորդ՝ զի մկրտութիւնն է անքակտելի կնիք ի հոգին. որպէս կարգն և դրոշմն. վասն որոյ ո՛չ կրկնին որք յանուն սուրբ Երրորդութեանն *մկրտեցան:* - 590. Այլ թէ արիոսեան լիցի կամ մակեդոնեան կամ նեստորական՝ *մկրտեսցի:* - 590. Եւ այնք որ ո՛չ խոստովանին զմիասնական սուրբ Երրորդութիւնն, մկրտելի է *զմկրտեալն* ի նոցանէ ի փառս ամենասուրբ Երրորդութեանն: - 590. Զզաւակս այլազգեաց *մկրտել* պարտ է. զի թէ մեռանի ազատեալ է ի սկզբնական մեղաց և ի պատժոց դժոխոց: - 591. Վասն է՞ր ի ջուր *մկրտիմք:* - 591. Զի ջուր հակառակ է հրոյ. և զի՞նչ է մեղք, եթէ ոչ հուր. որպէս յոգւոջ բարկութիւն. և ի մարմնի ցանկութիւն. ուստի յայտ է զի հրով տանջանաց պատժի. և աստ զի հուրն շիջցի ի ջուր *մկրտիմք:* - 591. Մեղքն ադամայ այն է որ զարդարութիւն կորոյս. և մեղօք և ցանկութեամբ ծնաւ զորդին. և այն մեղքն սկզբնական կոչի. և ո՛չ թողցի եթէ ոչ ի մահն քրիստոսի *մկրտեսցի:* - 591. Թէ մեղք հօրն ի մկրտութեանն թողեալ լինի, վասն էր *մկրտին* որք ի նոցանէ ծնանին: - 592. Թէ մկրտութիւնն ազատէ՛ ի պատժոց, վասն է՞ր մեռանի *մկրտեալն:* - 592. Ա՛րդ *մկրտեալն* ի քրիստոս՝ վասն հոգևոր հօրն ազատի ի հոգևոր պատժոյն. և վասն մարմնաւոր հօրն կրէ՛ զմարմնաւոր պատիժն: - 592. Թէ մեղքն ի մահն քրիստոսի թողեալ լինի, ընդէ՞ր *մկրտիմք* մեք: - 592. Մահուամբն քրիստոսի լուծան մեղք. բայց մեք ի հաւատ մահուն քրիստոսի *մկրտիմք*. զի տնկակից լիցուք մահու նորա: - 592. Թէ յղի կին *մկրտի*՝ օգո՞ւտ է այն տղային թէ յարգանդ մօրն մեռանի: - 592. Զայն ցուցանէ թէ յորժամ *մկրտեցաւ* քրիստոս՝ հոգին սուրբ էջ ի վերայ նորա...: - 593. Այսպէս ջրովն *մկրտիմք* ի քրիստոս և որդիք աստուծոյ կոչիմք. և իւղովն ի շնորհք հոգւոյն սրբոյ միաւորիմք: - 593. Ասեմք թէ՝ առնեմք ըստ ազգին յունաց. որ որպէս քահանայն պատարագէ և *մկրտէ*, նոյնպէս և դրոշմէ ըստ սրբոյն դիոնիսեայ: - 594. Եւ քահանայապետ ասէ զնա՝ որ պատարագէ և *մկրտէ* և դրոշմէ. զի նա՛ է պետ և աւագ ի կատարմունս խորհրդոյն: - 594. Երկրորդ՝ զի թէ խառն բղխեաց ըստ քեզ վասն այն ի պատարագն ջուր խառնես, ապա և ի ջուրն գինի խառնեա և այնպէս *մկրտեա՛:* - 595. Եւ թէ ասեն՝ կարէ՛ մին քահանայն ի մին ժամս բազում տղայս *մկրտել*. ապա և կարէ՛ բազում հացս օրհնել: - 597. Ասեմք թէ՝ կացոյց քրիստոս զբազումս *մկրտել*...: - 597. Եւ թէ հրէա ոմն ետես զի հում միս արիւնաթաթախ տայր ժողովրդեանն. և զղջացաւ անկաւ յոտս սրբոյն և *մկրտեցաւ:* - 599. ...զոր ասացաք ի վերոյ թէ՝ զդրոշմն և զառաջին օծումն և զվերջին օծումն կատարեմք ի *մկրտեալն:* - 604. Եւ թէ ոք ասիցէ, զառաջին օծումն որ նախ քան *զմկրտելն* ո՛չ ունիմք: - 605. Եւ սուրբ ժողովուրդն՝ և երեխայն որ դեռևս *մկրտի*, զայսոսիկ նւիրեալք կոչէ: - 608. Առաջինն է արտաքս հանել յեկեղեցւոյ զոչ *մկրտեալն* և զախտացեալս մեղօք. և զայս առնէ դռնապանն: - 608. Նոյնպէս և մեք ո՛չ առնեմք խնամութիւն ընդ այլազգիս որք ո՛չ են *մկրտեալք:* - 612. Իսկ մարդս եկեղեցի, *մկրտի* ջրով և դրոշմի սուրբ մեռոնաւ...: - 614. Նա՛խ՝ երեխայքն ուխտեցին հրաժարիլ ի սատանայէ՛. և ի մեծի զատկին *մկրտելովն* իսպայէլ. և ապա ուխտ ապաշխարութեան պահոցն. և յարութեանն տեսանել զքրիստոս. աստ և անդ: - 629. Երկրորդն ի *մկրտիլն* ջրով: - 640. Եւ յայս միտս նախ օրհնեմք ըզջուրն և ապա *մկրտեմք* զերեխայն: - 676. ...վասն որոյ որպէս ի մկրտութիւնն ուղիղ *մկրտիմք* գլուխ ի վեր և ոչ ի վայր որպէս արիոսեանք: - 676. Իսկ թէ անզեղջ կամօք և առանց խոստովանութեան ի մեղս մեռան, ո՛չ է օգուտ նոցա. թէպէտ *մկրտեալ* իցեն և հաւատացեալ...: - 683. Ոչ *մկրտեալքն* կամ չարքն ո՞չ ունին տանջանս վասն սկզբնական կամ ներգործական մեղաց: - 690. Որք ո՛չ թլփատեցան ի հինն և ոչ *մկրտեցան* ի նորս, կամ չարք ի մարդկանէ, ունին զդատապարտութիւնն զոր զրկելոց են ի դատաստանին զանազան տանջանս և ո՛չ այժմ: - 690. Այլ արդ՝ երեխայքն որ յառաջ քան *զմկրտիլն* մեռանին, վասն ադամայ մեղացն պատժին: - 724. Եւ որք *մկրտեալ* մեռանին, առնուն վարձ ի խորհրդոյ եկեղեցւոյ և ի չարչարանացն քրիստոսի յոր մկրտեցան: - 724. Եւ որք մկրտեալ մեռանին, առնուն վարձ ի խորհրդոյ եկեղեցւոյ և ի չարչարանացն քրիստոսի յոր *մկրտեցան:* - 724. Եւ յայտ յուրացողացն է. զի ի դարձին վերստին ո՛չ *մկրտեմք:* - 782. Այսպէս և ժանգ յանցանաց *մկրտելոց* և քահանայից՝ բառնայ զգործ՝ կամ

զնշանակութիւն շնորհացն. իսկ յետ սրբութեան զղջմամբ՝ զիա՞րդ կրկնի ունակացեալն ի նմա՛: - 782. Կնոջ *մկրտել* ո՛չ հրամայի - 800

**ՄԿՐՏԻՉ +** և Սովիէ ի նոյն բեթլէհէմ ծնաւ զեղիսաբեթ մայր *մկրտչին*...: - 460. Չորրորդ՝ զի սրբեսցէ *զմկրտիչն* և զջուրն: - 486. Այլ և հրով *մկրտիչ* ասի քրիստոս. ըստ որում «յոհաննէս մկրտեաց ի ջուր. այլ դուք մկրտիցիք ի հոգին սուրբ և ի հուր. ո՛չ յետ բազում ինչ աւուրցս այսոցիկ»: - 488

**ՄԿՐՏՈՒԹԻՒՆ +** Երկրորդ՝ զի ի ջուրն հանգստեան սնուցանէ. այսինքն է աւազանին *մկրտութեամբն* ի հոգի սուրբ: - 49. Իսկ սուրբն կիւրեղ ընդ դէմ նեստորի զինէր. որ ասէր բնակութեամբ զբանն ի մարմնի. և նախ զմարդն ծնեալ ի կուսէն և շրջեալ ի յերկրի, և յետոյ բնակեալ բանն աստուած յետ *մկրտութեանն*. և յետ յարութեանն փառաւորեաց զնա և զօրացոյց յարակցութեամբ ընդ ինքեան: - 79. Դարձեալ զպայծառացեալսն *մկրտութեամբ* որպէս զաստեղս և յերկինս եղեալ զխորհուրդս իւրեանց: - 152. Երկրորդ՝ և զնիւթս *մկրտութեան* շնորհեաց: - 207. Տասներորդ՝ *մկտութեամբն* լինիմք որդիք աստուծոյ և եղբարք քրիստոսի. և գերազանցիմք **գ** ազգաց. այսինքն հասարակ մարդկան, և իսրայէլացւոցն, և հրեշտակաց երկնից: - 309. Զի *մկրտութիւնն* է **գ** իր: - 309. Երկրորդ՝ *մկրտութիւն* ջրոյն: - 309. Ա՛րդ՝ դաւանութեամբն գերազա՛նց եմք մարդկան հեթանոսաց. և *մկրտութեամբն* հրէից. և ծննդեամբն ի հոգւոյն՝ հրեշտակաց. զի նոքա ո՛չ ունին ծնանիլ ի հոգւոյն. և ո՛չ եղբայր լինի քրիստոսի: - 309. Զի ի գալստեան տեառն կնատքն և թոյլքն ո՛չ թուին. այլ արիագոյնքն անխտիր. զի ի քրիստոս յիսուս արու և էգ ո՛չ է. ո՛չ ի *մկրտութեանն* և ո՛չ ի յարութեանն: - 315. Եւ այս ևս գիտելի է, զի տէրն մեզ կոչի զգեստ փրկութեան և պատմուճան ուրախութեան ի ձեռն *մկրտութեան*...: - 318. Իսկ քրիստոս անխայելով յեկեղեցի՝ փոխեաց ի *մկրտութիւն*: - 329. Նոյնպէս և տէր ի հօրէ և ի մօրէ. պայծառութեամբն ի թաբօր. *մկրտութեամբն* ի ջրոյ. և յարութեամբն ի գերեզմանէ՛: - 329. Վասն որոյ յետ *մկրտութեանն* հաղորդեմք զկնքեալն: - 341. Նա՛խ՝ զի մովսէս յայտնապէս զկէս արեանն անապական եհեղ զսեղանովն որ նշանակէր զանապական խորհուրդ արեանն. և զկէսն խառնեաց ի ջուր որպէս ցուցաւ ի խորհուրդ *մկրտութեան* և հաղորդութեանն խառնեալ: - 341. Երկրորդ՝ զի նախ ջուրն էր ի խառնարանն և եհե՛ղ զարիւնն ի վերայ որ է՛ ցոյց *մկրտութեանն*: - 341. Երրորդ՝ նախ զխառնեալ ջուրն ցանեաց ի վերայ ժողովրդեանն որ էր *մկրտութիւնն*. և սոքա ճաշակեն զջուրն և զարիւնն: - 341. Եւ յայտ է զի յետ *մկրտութեանն* պա՛րտ է հաղորդել, և նոքա ո՛չ առնեն որպէս ցուցաւ: - 341. Եւ ի նմանէ լուսաւորեալք՝ պայծառացուցանեն վարդապետութեամբքն իւրեանց զերկու ժողովուրդս որք ի հրէից և որք ի հեթանոսաց օծեցան *մկրտութեամբն*: - 347. Դարձեալ՝ որպէս քրիստոս յետ *մկրտութեանն* ի լեառն պահեաց **խ** օր: - 363. Դարձեալ՝ մեք մարմին եմք քրիստոսի և անդամք նմա. նոյնպէս և զգեստ. այսպէս տուն և տաճար. *մկրտութեամբ* և հաւատով և բարի գործով: - 367. Իսկ ի նորս՝ ի կատարեալ հասակն երեսնամեայ լինին քահանայք. ի հասակ *մկրտութեանն* քրիստոսի: - 379. Երկրորդ, *մկրտութիւնն* է **գ** օրն. զի ունի հրաժարիլն և զդաւանելն և զմաքրիլն. և ապա՛ եօթն խորհուրդ եկեղեցւոյ: - 384. Երկրորդ, հին օրէնքն և մարգարէքն. որ նախ քան *զմկրտութիւնս* խորհրդով և օրինակօք յառաջապա՛հք եղեն նորոյս: - 390. Նա՛խ՝ մովսէս նշանակէ՛ զհին օրէնքն. որ մինչ ի *մկրտութիւնն* եկն և վճարեցաւ: - 394. Ութերորդ՝ ի *մկրտութեանն* նախ հրաժարիմք յարևմտից, և հաւատամք յարևելս: - 395. Զի քրիստոնէութիւն որպէս *մկրտութիւն* և այլն՝ անբաժանելի՛ է ի հոգւոյն. թէպէտ ուրանայ լեզուաւ և գործով: - 401. Եօթներորդ՝ յորժամ անցանեն ընդ յորդանան *մկրտութեամբ*: - 402. Այլ այս անէծքս յայտնապէս ի վերայ հրէիցն է. որք ո՛չ կատարեն զօրէնս, և ո՛չ ունին *զմկրտութիւնն* քրիստոսի: - 403. Եւ հին օրէնքն արգելաւ ի *մկրտութիւնն*, և փոխեաց քրիստոս: - 417. Նոյնպէս անցեալ ընդ *մկրտութիւն* և յաղթեալ փորձութեանցն և եկեալ ի քրիստոնէութիւն: - 419. Եւ որպէս շնորհք *մկրտութեան* առաւել է քան զբլփատութիւն նոցա, զի զմեղս սրբէ և զարքայութիւնն բանայ: - 433. Իսկ *մկրտութիւնն* բառնայ զերկոսին. այսինքն զմեղս և զմահ: - 445. **Քսանևե**, Վասն *մկրտութեանն* քրիստոսի **Ժ** պատճառաւ: - 454. Եւ գոյացութիւն *մկրտութեանս* մերոյ. և քանի՞ է եղանակ *մկրտութեան*: - 454. *Մկրտութիւնն* յովհաննու և տեառն: - 454. Երբեմն արդարութիւնն յայտնի՝ և ողորմութիւնն ծածկեալ. որպէս պատիժն մանկանց առանց *մկրտութեան* մեռելոց, և յերկրորդ գալուստն քրիստոսի: - 459. Նա՛խ՝ սրբութիւն հասարակ. որպէս շնորհք *մկրտութեան* և խոստովանութեան. զի որք անցանեն ընդ նա՞ սրբին: - 462. Առաջին որ է հասարակաց սրբութիւն *մկրտութեան*, մերժէ՛ զմեղս և տայ զշնորհս: - 462. Եւ գիտելի է, զի թէպէտ մեծագո՛յն է ըստ ինքեան սրբութիւն արգանդին քան զսրբութիւն *մկրտութեանն.* այնու, զի բառնայ զդիւրասահութիւն մեղանչելոյն: - 462. Սակայն ըստ ներգործութեան մեծագոյն է սրբութիւն *մկրտութեանն*...: - 462. Ա՛րդ՝ ունէր սուրբ կոյսն զհասարակ շնորհացն *մկրտութիւն*: - 462. Զի ի խորհուրդ *մկրտութեանն* ի յառնուլ ջուր, հոգին սուրբ և զօրութիւն բարձրելոյն և ողջոյն հօրն ի ձեռն հրեշտակին որ հերքէր զմեղս ըստ *մկրտութեան*: - 462. Իններորդ՝ օծումն

որդէգրութեան. որպէս *մկրտութիւնն:* - 474. Իսկ *մկրտութիւն* նորա ո՛չ որդեգրութեան էր որպէս մերս. այլ ճշմարիտ որդիութեանն յայտնութիւն ըստ ձայնին հօր «դա՛ է որդի իմ սիրելի»: - 474. Վասն է՞ր ազգս հայոց զտօն ծննդեանն քրիստոսի և *մկրութեան* ի միում աւուր կատարեմք: - 482. Յառաջագոյն ամենայն ազգք քրիստոնէից սկսեալ յառաքելոցն այսպէս տօնէին. ի վեցն յունվարի զծնունդն, և ի նմին աւուր *զմկրտութիւնն* ըստ աւետարանին վկայութեան: - 482. Եւ այս ամենայն ազգաց յա՛յտ է, որ ի յունվարի վեցն տօնեն *մկրտութեան*. ապա ուրեմն նոյն օրն է և ծննդեանն: - 484. Ութերորդ՝ զի թէ հաւատան աւետարանին և ոչ ստեն լ ամաց գալ քրիստոսի ի *մկրտութիւն*, ի հարկէ՛ պա՛րտին կատարել և *զմկրտութիւնն* ի նոյն ի տօնի ծննդեանն իւրեանց ի դեկտեմբերի **իե** որ իցեն ամենևիմբ սուտ: - 484. Իններորդ՝ զի և նոքա իսկ որ զայս ասեն՝ առնեն յունվարի **զ** ճրագալոյց ընդ մեզ. և ճրագալոյցն ո՛չ է *մկրտութեան*, այլ ծննդեան ի մէջ գիշերի: - 484. Երկրորդ՝ *զմկրտութեանն:* - 484. Երեքտասաներորդ՝ ականատես տնօրէնութեանն եղբայր տեառն յակոբոս որ կարգեաց զընթերցուածն, յունվարի վեցն աւանդեաց զտօնն ծննդեանն. և ի նոյն օրն դարձեալ *զմկրտութեանն:* - 484. Այլ և ո՛չ օրէնս դնէր որպէս *մկրտութիւնն* ի մեզ: - 485. Ա՛րդ՝ զիհնն զամենայն կատարեաց և վճարեաց. և ապա՛ նորոյս սկիզբն էարկ *մկրտութեան* և շնորհաց: - 485. *Մկրտութիւնն* քրիստոսի ո՛չ վասն կարօտութեան էր. զի ամենամաքուր և սուրբ է բնութեամբ և սրբիչ ամենայնի: - 486. Եօթներորդ՝ զի օրինակ լիցի մեզ գալ ի *մկրտութիւն:* - 486. Այլ և օգտութիւն *մկրտութեան* մերոյ ցուցանի ի *մկրտութիւնն* քրիստոսի չորիւք: - 487. Դարձեալ՝ ի *մկրտութիւնն* քրիստոսի նշանակին գոյացութիւնք մերոյս *մկրտութեան*. այսինքն Մկրտօղն, Մկրտեալն, Նիւթն, Տեսակն, և Դիտաւորութիւնն: - 487. Նիւթն ջուրն է. որ առաւել յարմարի *մկրտութեան* քան զայլ ամենայն հեղուկ նիւթ: - 487. Քանի՞ է եղանակ *մկրտութեան:* - 488. Առաջին *մկրտութիւն* ջրհեղեղն. որ եբարձ հատանելով զմեղս յաշխարհէ: - 488. Երկրորդ *մկրտութիւն* ջրովն և ամպովն առ մովսէսիւ ըստ պօղոսի «հարքն մեր յամպն և ի ծովն մկրտեցան». զի օրինա՛կ էր ամպն հոգւոյ, և ծովն ջրոյ: - 488. Չորրորդ՝ *մկրտութիւնն* յովհաննու որ մկրտէր ի յապաշխարութիւն. զի կարասցեն ընդունել զհոգւով *մկրտութիւնն*. վասն այն յառաջէ՛ր և սրբէ՛ր ջրովն: - 488. Հինգերորդ՝ *մկրութիւն* տեառն այն որ ինքն մկրտեցաւ. այլ մկրտիմք և մեք զկատարեալ *մկրտութիւն* տն ջրով և հոգւով: - 488. Վեցերորդ՝ *մկրտութիւն* որ ապաշխարութեան է և արտասուաց և յոյժ տաժանելի: - 488. Եօթներորդ՝ արեամբ և վկայութեամբ. զոր և ինքն քրիստոս մկրտեցաւ վասն մեր իբրև յոյժ գովելի և երանելի այս *մկրտութիւնս* քան զառաջինսն: - 488. *Մկրութիւնն* քրիստոսի և յովհաննու որո՞վ համաձայնին և զանազանին: - 488. Այլ զանազանին Նախ ի ձևն. զի *մկրտութիւնն* յոհաննու տուեալ լինէր յանուն այնմ որ գալոցն էր. իսկ քրիստոսին յանուն Երրորդութեանն: - 488. Երկրորդ՝ ի ներգործութիւնն. զի *մկրտութիւնն* քրիստոսի արդարացուցանէ և զդուռն երկնից բանայ. և յովհաննուն ո՛չ: - 488. Երրորդ՝ ի վախճանն. զի յովհաննուն ունէր կարգեալ առ *մկրտութիւնն* քրիստոսի. զի յա՛յն սովորեցուցանէր զժողովուրդն որ էր կատարեալ *մկրտութիւն*: - 488. Զոր *մկրտութեամբն* իւր քրիստոս սրբեաց զջուրն, և արար սրբութեան նիւթ և կենաց: - 489. Եւ այժմ մեք ջրով *մկրտութեանն* ջախջախեմք զգլուխն. այսինքն զսկզբնական մեղքն: - 489. Քսանևթ, Վասն *մկրտութեան*: - 526. Եւ ընդ դէմ երկաբնակաց որոց կանայքն *մկրտութիւն* առնեն: - 526. Այլ և այսու, զի մեք *մկրտութեամբ* և հաղորդութեամբն լինիմք տաճար աստուծոյ: - 533. Եւ մի է ըստ խորհրդոյն՝ այսինքն *մկրտութեամբ*՝ պատարագելով՝ կարգիւ՝ և այլովն՝ որպէս տեսակաւ: - 533. Եւ սուրբն ղուկիոս սքանչելագործ և մարգարէաշնորհ, գրեաց առ մարկիանոս, թէ սուտ զգեցուցեր առաքելոց և մարգարէից. զի քակտեցեր զնոցա շինուածն. և արգելաւ հոգին սուրբ յօրհնելոյ զպատարագն և զաւազան *մկրտութեան:* - 543. Եւ սուրբն ղուկիոս սքանչելագործ և մարգարէաշնորհ, գրեաց առ մարկիանոս, թէ սուտ զգեցուցեր առաքելոց և մարգարէից. զի քակտեցեր զնոցա շինուածն. և արգելաւ հոգին սուրբ յօրհնելոյ զպատարագն և զաւազան *մկրտութեան:* - 543. Տասներորդ՝ կանանց *մկրտութիւն* առնել. և աշխարհականաց խոստովանիլ. այլ և կրկին մկրտել: - 553. Իսկ ներելի մեղքն է յանցանք փոքրագոյն. քանզի ի մանկունս յետ *մկրտութեան* նախ յառնեն ներելիքն, և ապա՛ մահու չափքն: - 567. Առ աստիճանս այս պարունակի է խորհուրդ եկեղեցւոյ. որ է՛ *Մկրտութիւնն*. Դրոշմն. Պատարագն. Ապաշխարութիւնն. Կարգ քահանայութեանն. Պսակն. և Օծումն: - 573. Նա՛խ՝ *մկրտութիւն:* - 587. Առաջին խորհուրդն է՛ *մկրտութիւնն* որ է նոր մտելոցն յեկեղեցի: - 587. Զի *մկրտութիւնն* է՛ խորհուրդ հաւատոյ. ուստի յա՛յտ է զի նախ հաւատամք և ապա՛ մկրտիմք: - 587. *Մկրտութիւնն* է ընդ դէմ սկզբնական մեղացն: - 587. Զի՞նչ է *մկրտութիւն:* - 588. Եւ երկրորդ անպատշաճութիւն, զի յասելն թէ՝ ես կու մկրտեմ. երևի թէ նուիրեալն ո՛չ իւր կամաւն է եկեալ ի *մկրտութիւն*, այլ բռնութեամբ և ի հարկէ՛ կու մկրտեմ: - 588. Դարձեալ գիտելի է, զի աստ ասեն հերձուածօղ ազգն Ֆռանկաց թէ՝ թէպէտ *մկրտութիւնն* գործ քահանայի է, բայց ի հարկաւոր ժամանակն թէ քահանայ ո՛չ լինի ամենայն ոք որ գիտէ զձև *մկրտութեան* կարէ մկրտել: - 588. Երրորդ, զի

թէ կայր հնար որ ի ձեռն կնօջն տուեալ լինէր շնորհք, աստուածածին կոյսն մարիամ ընդէ՛ր ոչ եղև մերձ *մկրտութեան* որդւոյն իւրոյ ի յորդանան: - 589. Իններորդ, զի *մկրտութիւնն* է գործ քահանայութեան. և քահանայութիւնն է ազատ և ո՛չ ընդ ումեք հարկի ներքոյ. իսկ կինն ծառայ և ոտք է առն. վասն այսր հարկի ո՛չ է պարտ ծառային առնել զգործ տեառն...: - 589. Տասներորդ, զի *մկրտութիւնն* է գործ քահանայի որ աղօթիւք կատարի...: - 589-590. Բայց գիտելի է, զի գործ *մկրտութեանն* է սրբել զհոգիս յամենայն մեղաց զոր ունիցի. թէ բնական թէ ներգործական և ի պատժոց մեղացն. զի թէ նոր մկրտեալն մեռանի, առ ժամայն թռչի ի կեանս յաւիտենականս: - 590. Եւ ասացեալ են գոյացականք *մկրտութեանն* ի վերոյ ի *մկրտութիւն* տեառն ի **ի**ե համարն գտցես: - 590. Երկրորդ՝ զի *մկրտութիւնն* է ընդ դէմ սկզբնական մեղաց. և սկզբնական մեղքն մի է և ո՛չ կրկին: - 590. Չորրորդ՝ զի *մկրտութիւնն* է անքակտելի կնիք ի հոգին. որպէս կարգն և դրոշմն. վասն որոյ ո՛չ կրկնին որք յանուն սուրբ Երրորդութեանն մկրտեցան: - 590. Եւ ոչ այս միայն այլ և ի ժամ *մկրտութեանն* ո՛չ է պարտ մնալ կնոջ յեկեղեցւոջն: - 591. Զի և տիրամայր կոյսն ո՛չ էր ի ժամ *մկրտութեանն* ընդ քրիստոսի ի յորդանան որպէս ասացաւ ի վերոյ: - 591. Այսպէս շնորհք հոգւոյն սրբոյ ի *մկրտութեանն* զաղտս մեղաց լուանայ. գծարաւ հոգւոյն բանիւն աստուծոյ շիջուցանէ. և զկորուսեալ պատկերն աստուծոյ դարձուցանէ: - 591. Որդի քրիստոնէին զիա՞րդ լինի մեղաւոր յորժամ սրբեալ է հայրն *մկրտութեամբ:* - 592. Յորժամ բոլորովիմբ մարդն ի ձեռն *մկրտութեանն* սրբի, սերմն նորա ո՞րպէս է անսուրբ: - 592. Բոլորովիմբ մարդ ի ձեռն *մկրտութեանն* ներքուստ և արտաքուստ սրբի. բայց դարձեալ սերմն նորա ի ձեռն մարմնոյն ցանկութեանն պղծի: - 592. Թէ մեղք հօրն ի *մկրտութեանն* թողեալ լինի, վասն էր մկրտին որք ի նոցանէ ծնանին: - 592. Պարտ է զի իւրաքանչիւր ոք ծնցի *մկրտութեամբն* քրիստոսի. զի սրբեսցի և ազատեսցի ի մահու: - 592. Թէ *մկրտութիւնն* ազատէ՛ ի պատժոց, վասն է՞ր մեռանի մկրտեալն: - 592. Եւ դարձեալ՝ ինքն քրիստոս նախ մեռաւ մարմնով, և ապա կենդանացաւ յետ *մկրտութեանն*: - 592. Ոչ ինչ ամենևին՝ թէ ընկալցին *զմկրտութիւնն*. որպէս և ոչ ցորենոյն է վտանգ թէ գողունի իցէ և սերմանի ի ձեռն գողի: - 593. Այս քան վասն *մկրտութեան:* - 593. Որ տուեալ լինի ի *մկրտութիւնն* հոգի սուրբ որով մեղքն քաւեալ լինի: - 593. Եւ որ զայլ մասունս օծանէ՝ յա՛յնմ խորհրդոյ է՝ որ յառաջ քան *զմկրտութիւնն* օծանեն այլ ազգք քրիստոնէից: - 593. Եւ հաղորդելն, որպէս անդամ ի գլուխն յօդէ. զի ամենայն կատարմանց կատարումն հաղորդութիւնն է. այսինքն կարգին՝ պսակին՝ խոստովանութեան՝ *մկրտութեան* և այլն: - 594. Ապա թէ ոչ՝ ջուրն է ի *մկրտութիւն*, և անապական արիւնն ի հաղորդութիւն: - 595. Ասեմք թէ՝ արիւնն է՛ ի խորհուրդ հաղորդութեանն. ջուրն ի *մկրտութեանն*. որով մահ տն պատմի ըստ առաքելոյ...: - 596. Ասեմք թէ, ունիմք զխորհուրդ օծմանն, այլ ծածկապէս. որպէս ի *մկրտութիւնն*...: - 604. Այլ և ի *մկրտութեանն* տն յաւուր յայտնութեան: - 604. ...նախ վասն ա՛յս խորհրդոյս է. և երկրորդ՝ զի *մկրտութիւնս* մեր ո՛չ ի ջուրն յովաննու, այլ ի մահն քրիստոսի է: - 605. Ի ժամ *մկրտութեանն* քրիստոս եցոյց զքրիստոնէութեան խորհուրդն. զի մեք *մկրտութեամբն* լինիմք քրիստոնեայք: - 606. Զի մե՛ք կատարեմք զխորհուրդս. և ի մեզ կրեմք դարձեալ. որպէս *մկրտութիւնն*. դրոշմն. պատարագն. և այլն: - 614. Ութերորդ՝ զի ամենայն խորհուրդ եկեղեցւոյ՝ խաչիւն կատարի. *Մկրտութիւն*. Դրոշմն. Պատարագն. և այլն: - 616. Իսկ սաղմոսն՝ մանկացելոցն *մկրտութեամբ* հրամայէ որդիացելոցն օրհնել զհայրն երկնաւոր. որում փառք յաւիտեանս ամէն: - 629. Առաջին «որ յայտնեցար». աւետեաց, ծննդեան, *մկրտութեան*, և թլփատութեան, զա՛յս ասա: - 634. Ի հինգերորդ օր արարչութեանն ի խորհուրդ *մկրտութեան* ջրային կենդանիք և թռչունք յօդս ելին: - 638. Առաջին և երկրորդն՝ ծննդեան և *մկրտութեանն*. զոր ի միասին տօնեմք ըստ կանոնաց սուրբ հարցն և տն եղբօրն յակոբայ: - 649. Երկրորդ, ցուցանէ թէ՝ որպէս ի *մկրտութիւնն* նախ օծաւ և ապա թաղեցաւ ի ջուր...: - 672. Իններորդ, երիցս օծանի. այսինքն ի *մկրտութիւնն*, ի կարգն, և ի թաղումն...: - 673. ...վասն որոյ որպէս ի *մկրտութիւնն* ուղիղ մկրտիմք գլուխ ի վեր և ոչ ի վայր որպէս արիոսեանք: - 676. Եւ *մկրտութեանն* շնորհք և դաւանութիւնն սուրբ՝ հովանի և լուսատու լինի հոգւոյն: - 682. Արդ այժմ ի *մկրտութիւնն* հաւատն նշան դնի հարսին. և յետ մահու յուսով կոչի ի հարսանիս. և յետ յարութեանն սիրով միաւորի ընդ փեսային: - 693. Դարձեալ ասեմք եթէ ջուր *զմկրտութիւնն* ասէ, և հուր զխոստովանութիւնն մեղաց: - 701. Իսկ զհազար ամն, ոմանք ասեն զերեք ամն և զկէս ի *մկրտութենէն* մինչ ի համբարձումն: - 706. Եւ զորօրինակ զկնի *մկրտութեանն* սկզբնական մեղքն ոչ երևի. նոյնպէս զկնի ապաշխարութեան ներգործական մեղքն ծածկի և կորնչի...: - 714. **Եթէ ումեք տուեալ իցէ շնորհ հասարակ կամ յատուկ, որպէս *մկրտութիւնն* և հաւատքն. քանքար և տաղանդ. իշխան և առաջնորդ. մեծութիւն և ինչք. կեանք լոյս ամանակ և այլն ամենայն. այսու եղանակաւ կշռոյ հատուցի:** - 747. Կամ թէ ոստք փայտիս այսորիկ ասին եօթանքս այսոքիկ. այսինքն՝ քրիստոսի ծնունդն, *մկրտութիւնն*, չարչարանքն, ի դժոխս իջումն,

յարութիւն, յերկինս համբարձումն, և հոգւոյն սրբոյ պարգևումն: - 755. Եւ երկու կատարումն. մի *<u>զմկրտութիւնն</u>*. և մի զյարութիւնն որում սպասեալ ակն ունիմք: - 769. Երբեմն ողորմութիւնն ծածկեալ և արդարութիւնն յայտնի. որպէս ի պատիժ մանկանց առանց *<u>մկրտութեան</u>* մեռելոց. և յերկրորդ գալուստն: - 779. Որոց սկիզբն է հաւատն առ *<u>մկրտութեամբն</u>*. և կատարումն հայի առ գործն. և սոքա փոփոխականք են ըստ քանքարացն յարգելոյ և պակասելոյ: - 783. Իսկ որք զմի քանքար հաւատոյ կամ *<u>զմկրտութեանն</u>* շնորհի ի բաց կորուսանեն, ո՛չ զկնիքն խորհրդապէս, այլ զարժանն վարձու իրողապէս: - 783

**ՄՂԵՄ +** Սա՛ ոչ դառնայ ի ամպ կամ ի անձրև. այլ *<u>մղի</u>* ի վայր կոյս և մնայ մերձ երկրի: - 204. Երրորդ՝ զի ջուրք ծովուն բա՛րձր է քան զերկիր. վասն որոյ հա՛րկ առնէ և ի վե՛ր *<u>մղէ</u>* և ապա՛ հեղու յերկիր. զորօրինակ մարդիկք ի բարձրագոյն լերանց իջուցանեն զջուրն, և ըստ նոյն չափոյ ի միւս կողմն ի վեր հանեն սակաւ ինչ պակաս: - 209. Եւ շուրջ զինքեամբ բարի հրեշտակքն որ *<u>մղեն</u>* ի դժոխս: - 738

**ՄՂՈՆ +** Զոր ոմանք լ ստադիոն ասեն զբարձրութիւնն և զլայնութիւնն շուրջանակի **խդռ** քայլք. այսինքն **խդ** *<u>մղոն</u>* ձգեալ ասի: - 297

**ՄՂՏԱՏԵՍԱԿ** - Եւ զոր այժմ *<u>մղտատեսակ</u>* և հեռու տեսանէր...: - 668

**ՄՆԱՄ +** Եւ զի՝ մարդոյ ճանաչումն փոփոխի **ը** իրին. իսկ աստուծոյն անփոփոխելի *<u>մնայ</u>:* - 20. Չորրորդ՝ դարձեալ թէ լինէին երկու սկիզբն և հակառակ, մարտնչէին ընդ միմեանս՝ և ընդ սկսեալս իւրեանց. և ոչ ինչ *<u>մնայր</u>* ի խաղաղութեան: - 21. Եւ թէ ոք ասիցէ, ջերմն ապականէ՛ զցուրտ՝ և ինքն *<u>մնայ</u>*. սոյնպէս և չարն: - 22. Ասեմք առ այս եթէ՝ ջերմն ապականէ զցուրտ՝ և ինքն *<u>մնայ</u>* ի յենթակայն. զի էութիւն է և որակ: - 22. Իսկ չարն ոչ *<u>մնայ</u>*. զի չարն ոչ է էութիւն. այլ պակասութիւն: - 22. Ասեմք զառաջինն թէ ո՛չէ է չար. զի ապականիչ և կորուսիչ է որպէս ցուցաւ. ա՛րդ՝ ընդ ապականել զայլսն՝ ապականէ և զինքն. և ո՛չ *<u>մնայ</u>* ի յէութեան: - 22. Ա՛րդ՝ եթէ միակս այս շարադրի բազմաց, ո՛չ *<u>մնաց</u>* մին. իսկ եթէ ոչ շարադրի, ո՛չ գոն բազումք. այլ մի և մի. և այս որպէս այս: - 25-26. Իսկ սոքա անզեղջ *<u>մնան</u>* որպէս սատանայ՝ զինքեանս ուղիղ կարծելով: - 33. Երկրորդ և ոչ վասն յետին յանցանացն կռապաշտութեան եպերեմք զիմաստութիւն նորա և ո՛չ ընդունիմք. թէպէտ և հնա՛ր է պատճառել թէ այնքան իմաստութիւնն, զնա ո՛չ պահեաց հաճոյ *<u>մնալ</u>* աստուծոյ: - 40. Ասեմք եթէ՝ տէր ապաւէն եղև ասէ մարգարէն. ո՛չ թէ փոփոխեցաւ ի տէրութենէն յապաւինութիւն, այլ եկաց *<u>մնաց</u>* տէր, և եղև ապաւէն: - 72. Նոյնպէս բանն աստուած եկաց *<u>մնաց</u>* բան, և եղև մարմին: - 72. Եւ ճաշակելիքն զիամն միայն՝ արտաքոյ *<u>մնալով</u>* հոտոյն և գունոյն: - 75. Ո՛չ փոխարկապէս, այլ փոխատրապէս. այսինքն զի ի միաւորութեանն եկաց *<u>մնաց</u>* որ ինչ էրն, և եղև որ ինչ ո՛չն էր: - 75. Ուրեմն նա ինքն հաւատարիմ *<u>մնայ</u>*, ուրանալ զանձն իւր ո՛չ կարէ: - 76. Թէպէտ բնութեամբ միաւորին՝ տարբերութիւնն ո՛չ բառնի. զի տարբերութեանցն *<u>մնալ</u>*՝ խափանումն ո՛չ առնէ միաւորութեանն. ...: - 85. Իսկ անհատ ասի՝ զի ո՛չ քակտի և ո՛չ հատանի որպէս բոլորն ի մասունս. զի թէ բաժանես զնա որպէս ի հոգի և ի մարմին, կամ յոտս և ի ձեռս և ի գլուխս, ո՛չ *<u>մնայ</u>* բոլորն: - 86-87. Այսպէս և մի անձն է քրիստոս և մի անհատ. զի թէ բաժանես զնա՛ յաստուած և ի մարդ, ո՛չ *<u>մնայ</u>* բոլորն ի նոյն. այլ մասն ինչ և մասն. կամ ոմն և ոմն: - 87. Երկրորդ՝ որպէս անբաժանելի *<u>մնայ</u>* սե՛ռ ի տեսակս. և բանն աստուած անբաժանելի՛ է միաւորեալ ի մարդկութիւնն իւր: - 89. Իսկ որպէս բոլոր ի մասունս, զի որպէս միոյ մասին պակասելոյ՝ բոլորն անկատար *<u>մնայ</u>:* - 89. Նոյնպէս բանն աստուած և հոգի և մարմինն միաւորեալ է բոլոր մի քրիստոս. և ի պակասիլ միոյն՝ ո՛չ *<u>մնայ</u>* քրիստոս: - 89. Եւ որպէս հուր յերկաթ միաւորեալ բառնայ ի նմանէ զցրտութիւնն և զսևութիւնն և *<u>մնայ</u>* ծանրութիւնն...: - 100. Երկոտասաներորդ՝ զի ընդ բազումս բազմանայ, և ի միութեան իւրում կայ և *<u>մնայ</u>* ըստ միոյն օրինակի: - 110. Որպէս նախ քան զլինիլն մեր՝ էր սկիզբն մեր. և այժմ է՛ նոյն սկիզբն. և յետոյ ի կատարածի անփոփոխելի *<u>մնայ</u>* ի սկիզբն գոլոյ: - 112. Եւ զի յետ մահու և յարութեան ո՛չ գոն այսոքիկ պատճառք՝ անմոռանալի *<u>մնայ</u>* իմացումն: - 120. Եւ նա՛խ եկաւորի հոգին ամենայն ուրեք. որպէս ի մարգարէսն և ի կոյսն սուրբ, և ապա՛ բանն մարմնացաւ. և յետոյ հոգին սուրբ էջ յառաքեալսն և յեկեղեցի *<u>մնաց</u>:* - 125. Երրորդ՝ է՛ գործ նախախնամութեան. զի ըստ ընտանի կարողութեան իւրեանց՝ համեմատապէս զպարգևս ընկալցին. զի մի վնասեսցին փոքունքն մեծամեծօք. և թերի *<u>մնասցին</u>* մեծամեծքն սակաւուք: - 130. Որպէս յորժամ ասեմք՝ լո՛յս կեանք՝ և այլն, արտաքո՛յ *<u>մնամք</u>* գիտութեանն. և յորժամ անժամանակ՝ անիմանալի, առաւել մերձենամք: - 132. Երկրորդ՝ թէ մինն ի տասն դասուցն անկաւ և *<u>մնաց</u>* ինն: - 134. Իսկ առ հրեշտակս բոլոր շարժումն է ի նոյնէ ի նոյն. որպէս անիւն զոր ետես եզեկիէլ. այսինքն ի նոյն աստուծոյ են սկսեալք, և ի նոյն անվախճանապէս *<u>մնան</u>:* - 142. ...վասն որոյ ո՛չ երանեցաւ և ո՛չ *<u>մնաց</u>* ի բարութեան: - 147. Ուստի բնութիւն նոցա էր անմարմին և լոյս և անմահ՝ և *<u>մնաց</u>* ի նոյն: - 147. ...և մինն անդ *<u>մնաց</u>* և յիշխանութեանց դասն խառնեցաւ: - 148. Նախ՝ զի գոյին այնպիսի հրեշտակք որք *<u>մնացին</u>* ի բարին: - 149. Երկրորդ՝ զի պա՛րտ էր տեսանել այլոցն զմեղս նոցա և զպատիժ և *<u>մնալ</u>* ի բարին:

- 149. Վասն այն թէ քրիստոս զմի հրեշտակի բնութիւն ընդունէր՝ զնա միա՛յն փրկէր և այլքն արտաքոյ *մնային* փրկութեան: - 149. Զի աստուած փոխանակ ապաշխարութեան զմահն կամեցաւ. և հրեշտակք անմահք են. վասն որոյ առանց փրկութեան *մնացին:* - 149. Եւ թէպէտ անկան և եղեն դևք՝ գոյացականքն *մնացին* առ նոսա. և հրեշտակ լուսոյ կերպարանին ըստ առաքելոյն: - 151. Երրորդ զանազանութիւն՝ զի թէ շինի տաճարն և թէ ոչ՝ առաջին սկիզբն որ ի միտքն *մնայ*՝ նոյն ո՛չ առաւելու և ո՛չ նուազէ: - 163. Դարձեալ ասեմք, թէպէտ զթողութիւն ընկալաւ իսկապէս, և զպատիժս կրեաց հատուցմամբն, սակայն *մնաց* կնիք ապականութեանն ի յանձն որպէս ասացաք: - 166. Ուստի յա՛յտ է զի ի լինիլն աշխարհի՝ նախագաղափար տեսութիւնն նոյնպէս եկաց *մնաց* առանց յաւելուածոյ և պակասութեան: - 169. Եւ այսպէս ջերմ և ցուրտ, չոր և գէճ, թշնամիք են անհաշտելիք. և լինին միաւորեալք դարձեալ ծայրիւքն և *մնան* սիրելիք անքակտելիք այսպէս: - 181. Եւ այսպէս շրջաստեղծութեամբ անվախճան *մնան:* - 181. Չորրորդ՝ զի մասն ապականի, այլ բոլորն կեայ. որպէս իւրաքանչիւր անհատ մարդոյ և ձիոյ մեռանի, այլ բոլորն *մնայ*. այսպէս և տարերք: - 181. Ո՞րպէս է երկիրս ի մէջ երկնից հաստատեալ և անշարժ *մնայ*: - 181. Արդ՝ ներքին հողմն ի վեր ձգէ զերկիր. և վերին հողմն ի վայր. և այսպէս ի մէջն հաստատ *մնայ* երկիր: - 181-182. Յինգերորդ՝ թէ երկինքն ո՛չ էր բոլորակ՝ այլ քառանկիւնի կամ եռանկիւնի, յորժամ շարժէին անկիւնքն՝ յորմէ տեղւոջէ վերանային՝ *մնային* առանց տեղւոյ. և տեղի անկեանցն առանց մարմնոյ: - 183. Ութերորդ՝ ի թանձր և ի կարծր նիւթն անգործ *մնայ*. որպէս ի քար և ի հող: - 185. Ութերորդ՝ որք խստացեալ են անհաւատութեամբ և թանձրացեալ մեղօք՝ անգործ *մնան* ի նմանէ: - 185. Եւ յորժամ առնու զլոյսն յարևոյն, ի յեզրն երկրիս ձևն բոլորակ է՝ խաւար *մնա* մէջն: - 187. Իններորդ՝ ի վեց օրն ստեղծեալ աշխարհ. նշանակէ՛ զզ դարս. որով *մնայ* աշխարհ: - 193. Զորօրինակ՝ լիտր մին շաքար ի լիտր մին ջուր անկեալ, նոյն մին լիտր *մնայ* կշռեալ: - 202. Եւ զորօրինակ՝ լիտր մի ցորեան, կամ այլ ինչ. յորժամ ձեռօքդ բաժանես և ցրուես զհատսն, ո՛չ *մնայ* կշիռն: - 202. Եւ վասն առաւել և ազդու զօրութեան և ջերմութեան՝ զգոյացութիւն կենդանեաց և մարդկան առ որս դիպի ապականէ՛. և պատահմունքն քանակ և որակ *մնան:* - 204. Այսպէս յեգիպտոս հուրն որ ընդ կարկտին իջանէր, վասն ազդու զօրութեանն՝ զկենդանիսն սպանանէր, և մարմինքն ամբո՛ղջ *մնային:* - 204. Եւ Մէգն՝ այն է, որ *մնաց* յանձրևահոս ամպոց. վասն այնորիկ մէգն նշա՛ն է պարզոյ: - 204. Սա՛ ոչ դառնայ ի ամպ կամ ի անձրև. այլ մղի ի վայր կոյս և *մնայ* մերձ երկրի: - 204. Չորրորդ՝ զի փայլատակեալն անբաժանելի *մնայ:* - 207. Չորրորդ՝ զի տունկք և բոյսք ի ներքին հիւթոյ և ի վերին անձրևոյ միշտ դալար *մնասցեն:* - 207. Ջուրք ծո՛վուց ընդ մէջ երկրի անցանեն և պարզին ի ժանկոյն և ի դառնութեանցն. զի երկիր և աւազք զդառնութիւնն յինքեանս քարշեն, և *մնայ* քաղցր ջուրն: - 208. Իններորդ՝ անանուն անպատեհ էր *մնալ* իրաց: - 219. Պտուղքն դրախտին շօշափելիք են և կերակրելիք. հատանի և ծասկի և փոփոխի ըստ պատահական որակացն. և անապական *մնայ* ըստ գոյացութեանն և ներգործութեանն ի կերօղն: - 223. Եւ մանանայն յանապատին կերակրելի էր. և *մնաց* անապական ի մէջ սափորին: - 223. Եթէ յամենայն ամի նորն զհինն փոխէ, այս լինի կամ թափիլ պտղոյն ի ծառոյն. և կամ *մնալ* հինն ընդ նորոյն: - 224. Ա՛րդ՝ եթէ *մնայ* հինն ընդ նորոյն հանապազ. նա՛ ծանրանայ. և ո՛չ կարէ զայն քան ամաց բազմութիւն պտղոցն կրել, և այսպէս լինին ամենայն ծառքն կոտորեալ և ապականեալ...: - 224. Եւ որպէս ոսկին յերկրէ՛ է և անապական. և քարինք կարծրացեալ ի հրոյ և անապական *մնան:* - 225. Ա՛րդ՝ վերջին հրովն յորում վառին երկինք և երկիր, ըստ նիւթոյ մասին պարզի. այլ ըստ ապականութեան *մնայ* անփոփոխ: - 225. Տասներորդ՝ զի կիրք մարմնոյն հեղուն ի հոգին. որպէս յորժամ մարմինն ննջէ՝ և հոգին թմրի և անգործ *մնայ*. վասն որոյ արարաւ ձևն ուղիղ, զի միտքն ընդ նմա՛ ուղղեսցի ի վեր առ աստուած...: - 233. Եւ նւազեալ յայսցանէ գոյնն՝ *մնայ* պատկեր ի քանակէ և ի ձևոյ և ի տեղւոյ երևեալ. որպէս յա՛յտ է ի մեռեալ մարդն: - 236. Եւ տեսանելն *մնայ* հաստատ, զոր ա՛յժմ իմանալ տայ: - 239. Իսկ պարզն և մաքուրն *մնայ* ի յուղեղն ի փափկոց խելացն: - 242. Արդ եթէ ի խարտեաշ մաղձէն ի լեարդն է մնացեալ, լերդին համն ի լեղւոյն առնու և բերանն լեղի դառնայ. իսկ եթէ ի սեաւ մաղձէն է մնացեալ ի լեարդն. բերանն թթո՛ւ դառնայ. իսկ թէ պալղամն *մնայ* ի լեարդն, բերանն աղի փոխի. իսկ թէ յստակ արիւնն *մնայ* ի լեարդն, լերդին համն անոյշ լինի, և բերանոյն համն անուշ տայ և քաղցր: - 242-243. Սիրտն իշխա՛ն է անձինն. յորժամ երկնչի՝ զարիւնն առ ինքն ժողովէ իբր զօրք առ թագաւորն. և *մնայ* մորթն բնական գունովն դեղին: - 245. Զի թէպէտ ըստ ներգործութեանն բաժանին երբեմն ի բաժանելի մարմնոյն՝ զի առանց մարմնոյն ո՛չ կարեն ներգործել սոքօք, այլ անբաժանելի *մնան* ըստ էութեանն ի հոգին. որպէս ցուցանելոց եմք յառաջիկայսդ: - 249. Եւ եթէ այս սուտ է հա՛րկ է ասել քեզ կամ *մնալ* ի թուփն, կամ փոխիլ յանէն և անգոյանալ որպէս ցուցաւ: - 253. Եւ ըստ որում իմանայ և խորհի, կոչի բանական հոգի. որպէս այլուր բաժանի ի տեսողական զօրութիւնն. և յիմացականն. և ի յիշողականն. *մնալով* անբաժանելի ներգործէ՛ ի նոսա: - 259. Իսկ թէ վասն է՞ր ասիցէ ոք՝ յղացեալ *մնան*

յարգանդի՝ մարդն ինն ամիս, և այլ կենդանիք աւելի և կամ պակաս: - 262. Բայց վասն կամացն աստուծոյ մշտնջենաւոր *մնան* հրեշտակք և հոգիք մարդկան: - 274. Տասներորդ՝ կին, իբր թէ կեանք. զի որպէս կենօք է տևել. նոյնպէս տեսակ մարդոյս ի ձեռն կնոջ ծննդեանն տևէ՛, և կայ *մնայ* մինչ ի կատարած: - 276. Որով և որդիքս վասն պարտուց հօր՝ արտաքոյ *մնացաք*: - 280. Երկու ցեղ և կէսն *մնացին* յայնկոյս, թէ զի՞նչ նշանակէր: - 285. Երկրորդ՝ զի խոնարհ և հնազանդ էր յամենայնի. ուստի *մնաց* եղբօրն պատարագի...: - 286. Զի թէ նախ ջրով ապականեսցի պղնձի սիւնն *մնասցէ*. և թէ հրով՝ աղիւսն: - 289. Եթէ ադամ ի դրախտին ո՛չ կարէր *մնալ* անմահ: - 289. Ասեմք եթէ՝ քաղդէացին որ է՛ արապն. զի *մնաց* առ եբեր և ո՛չ խառնակեցաւ: - 298. Եւ երրորդ՝ զի մի՛ վասն աշտարակին ի նոյն տեղին *մնասցեն*՝ և աշխարհ ամենայն աւերակ կացցէ: - 298. Չորրորդ՝ զի բարիքն ամբողջ *մնալով* ի մէջ չարացն, զօրութիւնն և արդարութիւնն աստուծոյ երևեսցի: - 302. Երկրորդ՝ զի **խ** քաղաք առհին ի բենիամենէ՛ յուդայի ցեղքն վասն շնութեան կնոջն պատահելոյ. և կոտորեցին զնոսա առ հասարակ **հեռ** արս. և *մնաց* վեց հարիւր այր զոր յետոյ ստացան ժառանգութիւն իւրեանց. որպէս յա՛յտ է ի դատաւորաց վերջքն: - 312. Երրորդ՝ ի քանան ո՛չ *մնաց* ոք ի նոցանէ, և ո՛չ ոք ի յելսն յեգիպտոսէ: - 314. Ուստի յա՛յտ է զի բաժանեցաւ հոգին, այլ աստուածութիւնն անբաժանելի *մնաց* ի բաժանեալ հոգւոյն և ի մեռեալ մարմնոյն: - 319. Եւ այսպէս օրհնութիւն սոցա ընդ տեղւոյն իւրեանց կայ և *մնայ* մշտնջենաւոր յիշատակութեամբ: - 320. Իսկ որպիսի ինչէն աստուծոյ՝ անգիտելի *մնայ* աստ և ի հանդերձեալն յամենայն եղական մտաց. թէ հրեշտակաց և թէ մարդկան: - 331. Երկրորդ, զի հաստատուն *մնասցեն* հաւատացեալքն և վարձատրեսցին: - 336. ...իսկ զաստուծոյ հարցանելն զի՞նչ է՝ անգիտելի *մնայ*. որպէս եհարց յակոբ, «զի՞նչ է անուն քո. և նա՛ ասէ՝ զի՞ հարցանես զանուն իմ. զի սքանչելի՛ է»: - 338. Եւ յա՛յտ է՝ զի ի մէջ սափորին *մնաց* անապական: - 339. Առ նոսա՝ զի անմոռաց *մնասցէ* յիշատակ սքանչելեացն: - 339-340. Երրորդ՝ զի միշտ ընթերցեալ *մնասցէ* ի միտս նոցա: - 349. Երրորդ՝ ի խորհուրդ նոր օրինացս որ հաստատ *մնաց*: - 350. Երկրորդ՝ զի դէմ յանդիման ետես զտէր և նշան լուսոյն *մնաց* ի տեսութիւնն: - 352. Եօթներորդ՝ զի որ աշակերտի մովսէսի՝ զլոյս ընդունի. և որ ո՛չ աշակերտի՝ ի խաւար *մնասցէ* որպէս քանանացիքն: - 352. Ութերորդ, ձայն փոփոխի. և բանն *մնայ:* - 354. Ահարօն և որդիքն **է** օր *մնացին* ի խորանն. վասն է՞ր մեք **խ**: - 363. Եւ զգեստ քահանայութեանն ո՛չ այրեցաւ յօրինակ այժմոյս որ հոգւով դատապարտին և մարմինն *մնայ:* - 364. Ութերորդ, ի մարմնոյն է և *մնայ* ի նոյն. և մեղքն ի մարդոյն է և *մնա՛յ* ի նա: - 367. Երկրորդ, թէ նոյն *մնայր*՝ այրէին: - 367. Ոմանք ասեն՝ գործ մեղաց *մնաց* նոյն. այլ գործ սրբութեանն փոխեցաւ ի հոգևորն: - 369. Դարձեալ ասեն, բնական մեղքն խտրութեան *մնաց* ի գրաւորն, նոյնպէս ի նորս. որպէս սերմնակաթն և դաշտանին. այլ պատիժն փոխեցաւ հինն ի նորս: - 369. Զի իրն փոխեցաւ ի ճշմարտութիւն, և խորհուրդն *մնաց* նոյն. որպէս ջուրն և խունկն. իւղն և նաշիհն: - 369. Եւ դարձեալ թէ՝ յիշատակութիւն օրինացն յաւիտեան *մնաց*: - 369. Այլ ուղիղն, զի օրէնքն թէպէտ ըստ խորհրդոյն փոխեցաւ, այլ ըստ իրին *մնաց* յաւիտեան. զի օրինակն էանց, այլ ճշմարտութիւնն *մնաց:* - 369. Նա՛խ՝ զի զա՛յլ հարուածոց փոխն կրեցին զչարչարանքն յեգիպտոս. իսկ անդրանկացն *մնաց:* - 380. Այլ որ զուղիղն ասեն ա՛յս է, կորխ՝ եցոյց զօրինակ զղջման. զի լուաւ խրատուն մովսէսի և *մնաց* ընտրութեանն աստուծոյ ի դուռն խորանին: - 382. Իսկ դադան ամենևին անզեղջ *մնաց*. թէպէտ գնաց մովսէս ի խորան նոցա՝ ո՛չ զղջացան: - 382. Երկրորդ՝ որ անզեղջ *մնայ* և ո՛չ խոստովանի, անթողելի՛ է: - 385. Զի՞նչ նշանակէ որ **բ** ցեղն և կէսն *մնացին* յայնկոյս յորդանանու և ժառանգեցին, և այլքն անցին ի քանանացիքն: - 390. Երկրորդ՝ զի առաջին օրէնքն անկատար *մնացին*. ետ զերկրորդն զի կատարեսցին: - 393. Զայն ցուցանէ որ պատճառաւ իրիք կամ պոռնկութեամբ կամ այլ ինչ յորժամ բաժանին, առանց ամուսնութեան *մնասցեն* թէ երկուքն են բաժանմանն պատճառ, մինչև հաշտեսցին: - 401. Եւ թէ մինն է պատճառ՝ որ և իցէ թէ այրն և թէ կինն, առանց ամուսնութեան *մնասցէ*. և միւսն զուգեսցի այլոյ որ չէր պատճառ: - 401. Զի հաւատամք զեթէ էն. այլ՝ ինչ և որպիսի ինչն ծածկեալ *մնայ:* - 406. Տասներորդ՝ զի ուսցին նոքա ի նոցանէ զբարիսն, և *մնասցեն* ժառանգ երկրին. որպէս գաբաւոնացիքն: - 417. Եւ յ արքն ընդ նմա ցամաք *մնացին* յարենէ մադիանացւոցն որ կոտորեցան: - 421. Եւ այն զի քամեալ լցաւ կուրն և ո՛չ երկիր. զի *մնացին* և կատարեցան բանք մարգարէիցն ամենայն և ո՛չ եղծան. իսկ յետոյ հոգի տեառն ելից զտիեզերս մարգարէութեամբ և շնորհօքն քրիստոսի: - 421. Այլ ո՛չ այսպէս. զի ե՞րբ եկաց և *մնաց* ընդ արև, կամ յառաջ քան զլուսին սողոմոն. այլ տէրն նորա: - 421. Որպէս դաւթին յետ զղջմանն յիշատակութիւն մեղացն *մնաց*, ապա նո՛յնպէս և ամենայն մարդոյ *մնասցէ՞* թէպէտ և խոստովանի: - 432. Ապա թէ ոչ՝ ի միում աւուրն եճ և կռ կամէր կոտորել այսու համարով. և ոչ ինչ *մնայր* ի ժողովրդենէն: - 435. Կամ փակեալ *մնասցէ* երկինքն: - 443. Սակայն արմատ մեղացն որ է՛ ցանկութիւնն և դիւրասահութիւնն ի մեղանչելն՝ *մնայ*. որպէս յա՛յտ է ի մկրտեալսն որք կարեն մեղանչել: - 462. Զի գալ հոգւոյն սրբոյ պատճա՛ռ էր կրկին ներգործութեան.

այսինքն սրբութեան արմատոյ մեղաց. և պտղաբերութեան կուսածին զաւակին. ծնանիլ և կոյս *մնալ* յետ ծննդեանն: - 463. Այլ որդին որդի եղև և անշփոթ *մնացին* երրորդութեանն դէմք: - 468. Եւ տե՛ս, զի բնութեամբ միաւորեցաւ՝ իմանի քրիստոս. յայտ է զի յորոշելն ըստ ոմանց՝ ո՛չ ևս *մնայ* քրիստոս: - 474. Եօթներորդ՝ որպէս այլայլական և փոփոխելի մարմինս կայ և *մնայ* անփոփոխ և անապական միաւորեալ ընդ հոգւոյն մինչև ցորոշումն: - 477. ...այլ վասն սկզբնականին *մնան* յանջրդի գուբն խաւարին: - 505. Երեքտասաներորդ՝ ամաղեկացիք գերեցին զկողմն հրէաստանի և զայլազգիս. և դաւիթ զհետ մտեալ յետ գ աւուր և հարեալ ի գիշերի և ի վաղիւն մինչ յերեկոյ. և դարձուցեալ զերկոսին կանայս իւր. և ո՛չ *մնաց* գերի և ո՛չ մի. և յաւարէ աստի բաշխեաց ամենայն սիրելեաց իւրոց: - 514. Զի արտաքս հանելով ցուցցէ ո՛չ ունել քաղաք որ աստէն *մնալոց* իցէ: - 519. Եւ յետ այսորիկ ո՛չ այլ ինչ *մնայ*. այլ վերացումն հոգւոյն յերկինս: - 519. Չորրորդ՝ զի փայլատակեալն անբաժանելի *մնայ* յինքենէ. այսպէս և շնորհք հոգոյն սրբոյ անբաժանելի գոլով բաժանեցաւ յառաքեալսն: - 522. Զի բազմանայ և ի միութեան *մնայ*. բովանդակի անբովանդակապէս. և բաժանի անբաժանապէս. որ է մի և նոյն տեսակաւ և գոյացութեամբ որպէս ցուցաւ: - 530. Եւ թէ ոք ասիցէ, անպատշա՛ճ է աստուծոյ իշխանութեանն անկատար *մնալ:* - 539. Ասեմք առ այս թէ՝ անկատար *մնայ* ըստ այնմ որ ի յանիծելն ո՛չ կատարի. այլ ըստ որում դառնայ ի յանիծօղն կատարի: - 539. Վասն այն *մնաց* ի մեզ ճշմարտութիւնն իսկապէս և անխառն ի սրտութենէ: - 551. Դարձեալ, զորօրինակ բազումք ընթանան ի մի ճանապարհ, և ամենեքեան թողեալ զնոյն՝ ընդ այլս գնասցեն, և մինն *մնասցէ* ի նոյնն. ո՛չ ասեմք թէ մինն բաժանեցաւ ի ճանապարհէն, այլ՝ այլքն: - 551. Իսկ մերս դաւանութիւն ամենայնիւ նոյնն եկաց *մնաց* զոր ունէր նախ ի սրբոյն գրիգորէ՛ լուսաւորչէ և ի նմանեաց նորա: - 551. ...և որկրամոլութեամբ *մնան* բազմամարմինք. և ատելութեամբ զերծանի ոչխարն ի գայլէ. և խրոխտումն մեծարգոյ առնէ զձին. և այլն նմանապէս: - 563. Իսկ թէ աստուծոյ՝ առ ո՞վ աղաչեն. ապա ուրեմն անհաշտ *մնայ*: - 566. Եւ զի ո՛չ թողու զմեղս՝ անհաշտ լինի. վասն այն մեղքն անջինջ և անթողլի *մնայ:* - 566. Եւ երկրորդ՝ զի *մնասցէ* ի վերին գաւառն ըստ էութեանն և ըստ գործոյն. իսկ այլ առաքինութիւնքն թէպէտ *մնան* ըստ էութեանն, այլ ո՛չ ըստ գործոյն: - 579. Դարձեալ խաղաղութիւն, սիրով առ հոմացեղսն կալ *մնալ:* - 585. Եւ ոչ այս միայն այլ և ի ժամ մկրտութեանն ո՛չ է պարտ *մնալ* կնոջ յեկեղեցւոջն: - 591. Այլ և առաքեալքն և հետևօղք նոցա հարքն սուրբք՝ ո՛չ գիտէին զխառնարանն. և դու ուսար և խառնես ջուր և ընդ անիծիւք նոցա *մնաս* որպէս ցուցաւ ի վերոյ: - 596. Իսկ ջուրն *մնաց* սոսկ ջուր և անկատար: - 596. Պատահմունք և որակն *մնան* ի հացն և ի գինին. իսկ գոյացութիւնն փոխարկի ի մարմին և արիւնն քրիստոսի վասն դ պատճառի: - 597. Երկրորդ՝ զի մեք կարասցուք մերձենալ ի սրբութիւնն, վասն այն *մնան* պատահմունքն...: - 597. Եւ այս է ճշմարիտն. քանզի յօրինեալ հացէն որ բաշխեաց և ետ առաքելոցն, այլ ո՛չ *մնաց:* - 599. Նոյնպէս և զօրինեալ բաժակն առին առաքեալքն և բաժանեցին և յայնմանէ ո՛չ *մնաց:* - 599. ...աստուծոյ *մնայ* պատիժն զոր պահօք և աղօթիւք վճարէ որպէս ասեն ոմանք: - 602. Երրորդ, բարեաց գանձն մեր անվնաս *մնայ*: - 626. ...*մնաց* շաբաթս այն անփոխ և առաջաւոր պահք և մուտ աղուհացից պահոցն: - 650. Եւ այս նշանակութիւն *մնաց* ամենայն ուրէք: - 656. Քսանևէ, Թէ ո՞ր մարմինք *մնան* ի կատարածի և ո՞րք ոչ: - 661. Արդ՝ եթէ նախ զայն էր տուեալ, այսպիսի իմն հանդիպէր. կամ *մնալով* անփոփոխ՝ զրկէր զերկիր: - 662. Իններորդ՝ առաւել ամենահնար գթութեան է ցոյցք. զի եղական բնութիւնս ո՛չ կարէր անմեղ *մնալ*. զի անեղն է անմեղ: - 663. ...և այնպէս դառնացեալ տրտմութեամբ և սարսռելի երկիւղիւ յուսահատեալ *մնան*...: - 669. ...ապա և մարմինն ընդ նմա անապական և անփոփոխ *մնասցէ:* - 677. Եւ դարձեալ՝ ցուցանէ թէ այսպէս և հոգի նորա անշարժ կայ և *մնայ* ի յաւիտենական փառս և ի մշտնջենաւոր հանգիստն ամէն: - 679. ...և հոգին անվնաս *մնայ* որպէս զիսրայէլ...: - 682. ոչ թողու արդար իրաւունքն աստուծոյ ելանել յերկինս. այլ կան և *մնան* ի ներքոյ. ակնունելով հանդերձեալ դատաստանին...: - 688. Եւ սկիզբն անդ ժողովելոյ՝ ի յարձակելն քրիստոսի առ ժամանակեայ զհոգիսն անարժանից՝ անդ *մնացին* և անտի դարձցին մեղաւորք անդրէն ի դժոխս ըստ մարգարէին: - 688. Նոյնպէս և հոգիք արդարոց ո՛չ *մնան* ուրեք ընդ ներքոյ դատապարտեալ տարերաց. - 689. Հինգերորդ, ասէ աստուածաբանն գրիգոր՝ եթէ հաւանիմ իմաստնոյն բանի՝ թէ հոգի բարի և աստուածասէր յորժամ ի մարմնոյն արձակի, կայ և *մնայ* նմա բարին որ լինի: - 691. ...որպէս թէ այժմ ակն ունին և *մնան* գալստեանն քրիստոսի և վարձուց հատուցման: - 691. Եւ յայնմ աւուր իմաստունքն մտին յառագաստ փեսային, և յիմարքն արտաքոյ *մնացին:* - 693. Նա՛խ եթէ ի խոստովանութիւն մեղացն *մնայ* պատիժն զոր ապաշխարութիւնն քաւէ. որպէս յայտ է ի կանոնս...: - 701....ի գարունն ո՛չ թէ դժնիկն խլեալ բուսանի, այլ տնկեալ վարդենին. եթէ արմատն ոչ *մնայ* դժնկին: - 714. ...իսկ թէ մարդս ոչ յառնէ, աշխարհ անկատար *մնայ*. զի բոլորն մասամբն է կատարեալ: - 715. Այսպէս և հողն ուստի շինեցաւ ադամ, ո՛չ *մնայ* ի տարերս. այլ յառնէ ի յադամ որ սկիզբն եղև գոյութեան նմա: - 719. Եւ թէպէտ մարմինն փոփոխի

hասակաւ կամ hիւանդութեամբ, կամ մեղօք hոգին hիւանդանայ. դիմաւոր նշանս այս անփոփոխ *մնայ:* - 719. Ութերորդ, բարի և չար սերմանիքն ի միասին բուսանին և *մնան* մինչ ի hունձս. մանաւանդ մինչ ի կալն ըստ առակի տն. - 721. Եթէ փայտ խոտ եղէգն որ են մեղաւորքն, զի անդէն *մնան:* - 721. Վասն է՞ր ի յարութեան անմահ և անապական *մնամք:* - 723. Իսկ զի նիւթ խաչին *մնայ* ըստ ոմանց՝ այս ո՛չ է ըստ բնութեան կարգի, այլ սքանչելեաց hարկի որպէս ցուցանի յառաջիկայդ: - 727. Զի՞նչ է պատճառն որ **գ** մարմինք միայն *մնան* ի կատարածի: - 727. Իսկ մարմին մարդոյ թէպէտ ապականացո՛ւ է, այլ ի կողմանէ hոգւոյն անապակա՛ն է. վասն որոյ անապական *մնան:* - 727. Եւ են ինչ որ պատահմամբ անցանեն և էութեամբ *մնան*. որպէս երկնային մարմինք և դ տարերքս և մարդոյ մարմին. սոքա պատահմամբ անցանեն և գոյացութեամբ *մնան:* - 727. Զի՞նչ որակ պակասի ի տարերացդ և զինչ *մնայ:* - 728. Գոյացական որակքն *մնան* և պատահականքն պակասին որպէս ասացաւ: - 728. Դարձեալ՝ էութիւնն *մնայ*, այլ ներգործութիւնն պակասի...: - 728. Երկրորդ, զի գիր մագաղաթին անջինջ *մնայ*. նոյնպէս և գործն ի hոգիս մեր գրեալ...: - 729. Զոր օրինակ մի պատկերն դրոշմի ի զանազան մոմս. և ի hալիլ մոմոյն դրոշմ պատկերին ժողովի և *մնայ* ի մատանւոջն: - 732. Նախ դիմակայութեամբ եթէ՝ ո՛չ է ըստ օրինի բնութեան անապական *մնալ* նմա, այլ սքանչելիք աստուածային: - 733. Ապա ուրեմն ևս առաւել խաչն *մնայ* անապական զի էութիւն աստուծոյ է ի նմա. այսինքն բանն աստուած մարմնովն որ է՛ սևեռեալ ի նմա: - 733. Դարձեալ անկանիլ ի խորխորատ՝ է՛ ժամանակաւոր. այլ *մնալն* անդ՝ է՛ յաւիտենական: - 744. Նա՛խ՝ զի այրեցումն բաժանի ի լուսոյն և *մնայ* անփոփոխ ի hուրն: - 750. Երրորդ առ մեզ *մնայ* կենդանի: - 753. Եւ առ մեզ *մնան*: - 753. Կանայք առաջի դրան խորանին նստեալք՝ են hաւատացեալքն. որք դրան երկնաւոր պալատին բանիլ ինքեանց ակն կալեալ *մնան*: - 756. Եւ այնպէս *մնասցեն* յաւիտեան որպէս ցուցաւ ի վերոյ: - 760. Որքան *մնացին* hրեշտակք ի յերկինս, նոյնքան և բազմութիւնք ի մարդկանէ ընտրեսցին: - 760. Երրորդ այնու՝ զի մեղքն որ յոյժ վտանգեաց զմարդիկ, եղիցի փակեալ ի դժոխս զկնի աւուրն դատաստանի. զի եղիցի ի դժոխս իբր ի տեղւոջ իւրում. զի ո՛չ կարասցէ *մնալ*. ո՛չ յերկինս և ո՛չ յերկրի. այլ իջանէ ի դժոխս ներքինս: - 764. Իբրև ի hակառակս լ ամեայ միշտ *մնասցեն*...: - 766. Եւ թէ ի թիկանց նետք մուխք սատանայի, սովաւ զգուշացիր և անքոյդ *մնաս*: - 770. Այսօր վերստին hրամայեաց hաւատացելոց իւրոց ճաշակել ի պտղոյն կենաց. և *մնալ* յաւիտեան և անմահ կենդանութեամբ ի քրիստոս յիսուս ի տէր մեր: - 771. Յիրաւի ապա ըստ այսմ օրինակի՝ որք ի մշտնջենաւորէն փոխանցին առ երազ սնոտեաց, ոչ ունիցին ինչ ի մտի. թէ և անդրադարձեալ աստի անդ *մնասցէ* յիշատակութիւն որպէս ասացաւ: - 775. Իսկ եթէ ոք զփոփոխումն ի մեզ ասիցէ ըստ օրինակի արեգական. որ զչորեսին եղանակս կազմէ՛ և ինքն անյեղ *մնայ*: - 778. Եւ այն զի՞նչ իցէ, զի սա միշտ մի և նոյնպէս *մնայ*...: - 778. Այլ ամբարշտեալ կամք դիւին *մնայ* անկատար: - 784. Յա՛յտ է զի ի բառնիլ ոչէին՝ էութիւն hաստատի բացասութեամբ կրկին. իսկ ստորասութեամբ նոյն *մնայ*: - 787. Եւ կրկնեալ ճշմարիտն նոյն *մնայ*. զի անփոփո՛խ է ստութեան: - 787

**ՄՆԱՍ +** Եւ տասն *մնասն*, և **ժ** քաղաքաց իշխել: - 640. Նոյնպէս և յառակս որ զքանքարն ետ և *զմնասն*. յետոյ եկն և արար խնդիր: - 693

**ՄՆԱՑԱԿԱՆ +** Երրորդ՝ եթէ զոր ինչ ասէաք և ճշմարիտ էր, յայնժամ բանս մեր ո՛չ hետևէր իրացն. այլ իրն բանիցն hետևէր. որ է՛ յայտնապէս սուտ. զի *մնացականն* ոչ *մնացականին* ո՛չ hետևի. այլ անդրադարձեալ. զի hետքն՝ ընթացից ոտիցն hետևին. և ո՛չ ոտքն hետոցն: - 8-9. Երկրորդ՝ զի վերջին խրատն և օրհնութիւնն *մնացակա՛ն* է: - 408. Իսկ նշանս այս անմարմին է և *մնացական* և ծածուկ, ինքեանց միա՛յն գիտելի: - 719. Ի գոյից ո՞րք են *մնացականք* յետ յարութեանն: - 727

**ՄՆԱՑԵԱԼ (տ. ՄՆԱՄ) +** Եւ որպէս գիծն կոչեցեալ այբ՝ ի բազում վանգս բաժանեալ. և *մնացեալ* մի: - 106. Նոյնպէս և էութիւնն աստուծոյ ի յէքս բազմացեալ. և աստուած անունն ի բազում աստուածս. և *մնացեալ* նոյն մի աստուած...: - 106. Եւ *զմնացեալն* ցուցցուք յառաջիկայսդ: - 113. Ա՛յլ է բանն՝ և ա՛յլ է ձայնն. զի բանն անմարմին ծնունդն է մտաց. և ձայնն է՛ շարժումն օդոյ ի ձայնական գործեաց ի յօդս բախեալ. իսկ ի սրտի միաւորին նոքա՝ այսինքն բանն և ձայնն. և լեզուաւ յօ՛դս բախեալ՝ hասանէ մինչև ի լսելիս, և անդ ձայնն արտաքոյ *մնացեալ*, և բանն անմարմին ի միտս լսողացն նստեալ: - 131. Զի ոմանք ասեն թէ ի միջին դասուցն անկան **գ** մասն, և մինն *մնացեալ* յիշխանութեանցն խառնեցաւ: - 150. Ոմանք ասացին ի խաւարմանէ խաչելութեանն է *մնացեալ* նշան: - 187. *Մնացեալ* ա՛մպ է շուրջ զաստեղօքն. որ քարշէ յինքն զսպիտակ լոյս մոլորակացն և լուսաւորի: - 203. Եւ բազումք տեսանեն զսուրն ի մէջ պատենիցն hալեալ, և պատեանքն անխանձ *մնացեալ*: - 204. Երկրորդ՝ ասէ արիստոտէլ՝ թէ ջերմութիւն լուսաւորացդ և տարրական hրոյն և օդոյն մտանեն ի ծովն և քարշեն ի նմանէ զքաղցր և զպարզ hիւթն. և *մնացեալն* լինի դառն և աղի: - 208. Եւ օրինակ տայ զկերակուրն որ ի ստամոքսն եփի. և գոլոշիկքն ի

գլուխն ելանէ և պարզ ջուրն ի լեարդն. իսկ *մնացեալ* թանձրն լինի դառն և աղի: - 208. Արդ եթէ ի խարտեաշ մաղձէն ի լեարդն է *մնացեալ*, լերդին համն ի լեղւոյն առնու և բերանն լեղի դառնայ. իսկ եթէ ի սեաւ մաղձէն է *մնացեալ* ի լեարդն. բերանն թթու դառնայ. իսկ թէ պաղդամն մնայ ի լեարդն, բերանն աղի փոխի. իսկ թէ յստակ արիւնն մնայ ի լեարդն, լերդին համն անոյշ լինի, և բերանոյն համն անուշ տայ և քաղցր: - 242-243. Եօթներորդ՝ արիւնն հուրն է՝ և շունչն օդն. պա՛րտ է հանել զբ տարրն. իսկ *մնացեալն* ջուր է և հող՝ ուտելի է: - 295. Գոյացութիւն հացին փոխեալ է ի գոյացութիւն մարմնոյն քրիստոսի և է՛ անապական. իսկ քանակն և որակն *մնացեալ* է դեռևս փոփոխելի. և յայնմանէ փոխարկեպին այլայլմունք ինչ: - 339. Եւ *զմնացեալ* նշխարսն ուտէին. քահանայքն և արուք նոցա ի սուրբ տեղւոջ: - 358. Եւ ի սմանէ առցեն ասէ զիաս իրաւանցն. և *զմնացեալն* եփեսցեն ի սուրբ տեղւոջ և կերիցեն քահանայքն զեօթն օր: - 359. Նա՛խ՝ զարիւնն հանել որ է՛ կենդանութիւն և աստուծոյ մասն. և *զմնացեալն* ուտել որ է տարր միայն: - 366. Այլ ոմանք *մնացեալք* ի մարմնի, և բազումք ժամանեալք յօթևանս վերին: - 391. Իսկ խորտակեալ տախտակն մովսէսին և *մնացեալն*՝ նո՛ր օրէնս: - 395. Եւ յորժամ ուտէր՝ նոցա փշրէր *զմնացեալն:* - 443. Եւ որ սոցա առաւել մեծ է և անշարժ *մնացեալ*՝ է ազգս հայոց: - 550. Եւ ունակութիւնն է՛ *մնացեալ* միշտ: - 568. Եւ գործ ա՛յս խորհրդոյս է՛, որ *զմնացեալ* ներելի մեղքն թողու: - 604. ...որք ունին զհին օրէնս և ո՛չ զնորս. այլ ի ներքոյ *մնացեալ* սկզբնական մեղաց՝ նոքա ի տանջանս ընթանան: - 678. Անդ տիւ և գիշեր ժամանակի և մասանց սորին ո՛չ է. զի անցեալ է ժամանակն և *մնացեալ* է յաւիտեանն: - 750. Զի թէ և սակաւ ժամ լինի *մնացեալ* ի կենացն որ քան աւազակին ի յելս շնչոյն. և նա՛ յառաջ քան զամենայն արդարս եմուտ ի դրախտն աստուծոյ ընդ տեառն: - 758

**ՄՆԱՑՈՐԴ +** Նա՛խ՝ զի *մնացորդք* գործոց և խորհրդոց կերպարանին ի յիշատակարանս հոգոյն զոր ինչ գործեաց ի անցելումն, կամ խորհեցաւ վասն հանդերձելոյն: - 268. Վասն է՞ր մեծ ի վախճանն հարք և առաջնորդք օրհնեն *զմնացորդս*. որպէս մովսէս և յակոբ և այլ նահապետք: - 408. Դարձեալ՝ *զմնացորդ* դասուն որ անկաւ յերկիւղէն կնքեաց և հաստատեաց: - 639

**ՄՆԱՑՈՐԴԱՑ ԳԻՐՔ (Ս. Գրքի մաս)** - ...և թուեցան ընդ ղևտացիս որպէս պատմէ *մնացորդացն* գիրք: - 330. Զոր յիշէ աւետարանն ղուկասու, և *մնացորդացն* գիրք. և ո՛չ յիշէ մովսէս. զի զսկիզբն կռապաշտութեան ի նմանէ՛ ասեն լինիլ: - 411. Ա՛յս է՝ իբր թէ աստ ո՛չ է գրեալ բոլորն՝ ա՛նդ է գրեալ որ է *մնացորդացն* յուդայի թագաւորացն: - 443. Այլ և ո՛չ անդ է գրեալ բոլորն, այլ ի թագաւորութեանցն որ չէ թարգմանեալ ի մերս. այլ միայն **բ** *մնացորդացն* զոր եզր գրեաց: - 443. Երկու *մնացորդացն:* Երկու եզրաս: Նէեմի: Եսթեր: Յուդիդ: Տուբիդ և տուբիա. որ լինի **ի** երորդ: - 450. Եօթ՝ երկու *մնացորդացն:* - 451

**ՄՆԱՑՈՒԱԾ +** Չորրորդ՝ *մնացուած* պատարագին. որպէս ինքեանք քաջ գիտեն: - 553

**ՄՇԱԿ +** Եւ զի առնուն *մշակք* զվարձս: - 196. Յոռի. զի հորե՛ն երկրագործք և *մշակք* զցորեան և զգինի, յշտեմարանս ժողովեալ. զի **թ** հոռի՝ մօ՛տ է աշնան: - 200. Զոր օրինակ վարձ *մշակացն* է՛ մինչև յերեկոյն. այլ թէ հիւանդութիւն կամ այլ ինչ դիպի, հանէ՛ ի վարձուն և ի մշակութեանցն: - 291. Երկրորդ՝ արուեստաւորք, և *մշակք*, և վարձկանք: - 375. Նա՛խ՝ զի երկիւղ ծառայիցն է, և վարձ *մշակաց:* - 403. ...զի և *մշակն* յետ սերմանելոյն իսկոյն ո՛չ հնձէ. այլ համբերէ մինչ ի հասումն պտղոյն: - 520. Ասեմք թէ՝ ոչ ինչ է այս նախատինք մեզ. զի հեթանոսք յետոյ հաւատացին և լաւագոյնք են քան զիրէայս. և վերջին *մշակքն* ընդ առաջինսն առին զվարձս. և որք նախանձեցան կորեան: - 549. Եւ զայս առնէ միտքն իբրև *մշակ*. որ առեալ զսերմն և բազմաբեղունս աճեցուցանէ. այսպէս և միտքն խորհելով զչարն՝ զայսոսիկ ախտս առաւելու ի մեզ: - 564. Որպէս յա՛յտ է ի տրտմիլն. զի խորհուրդն *մշակ* եղեալ յետոյ ի յոխս և ի քէնս և ի նախանձս յաւելու: - 564. Որպէս *մշակն* յորժամ սերմանէ, ո՛չ ի գործն՝ այլ յաստուած ապաւինի: - 665. Նաև *մշակ* ասելն, զի հոգին առանց մարմնոյն ո՛չ ինչ է աշխատեալ. վասն որոյ և զվարձն հոգւոյն և մարմնոյն տայ: - 696. Նաև զվարձն համանգամայն ետ *մշակացն:* - 696. Եօթներորդ՝ վասն բարձրութեանն ի ջանուց *մշակաց*. զի որ քան առաւել բրի ի ներքոյ երկիրն և քարինս դնի, այն քան առաւել բարձրանայ: - 766. Զոր և ես զօրէն *մշակաց* բազմահաւաք պտղոց. կամ փունջ մի անուշահոտ բազմերանգ ծաղկանց. կամ չնչին թռչնոյ զխորիսխ մեղու. կամ որպէս զլոմայս այրւոյն տառապեալ գոյիւ: - 772

**ՄՇԱԿՈՒԹԻՒՆ +** Ութերորդ՝ *մշակութիւն* աստուծոյ. այսինքն անմահ տնկոցն երկրագործ և պահապան: - 279. Զոր օրինակ վարձ մշակացն է՛ մինչև յերեկոյն. այլ թէ հիւանդութիւն կամ այլ ինչ դիպի, հանէ՛ ի վարձուն և ի *մշակութեանցն:* - 291. Երրորդ ի *մշակութիւն*. որպէս՝ «զծառայսն յայգին»: - 535

**ՄՇՏԱԿԱՅ +** Իններորդ՝ զի *մշտակա՛յ* է ի պարունակութիւնս իւր. այսինքն զի ո՛չ ունի այլայլումն և փոփոխումն ըստ անարգ շարժութեան երկրի: - 184. Եւ յամ և յամիս *մշտակայ* բոլորածև՝ շարժումն նոցա: - 767. Այժմ և *մշտակայ* յաւիտենիւ Ամէն: - 771

**ՄՇՏԱԿԱՆԱՉ** - Եւ թէ տկարանաս ի զօրութիւնն աստուծոյ՝ առ մե՛զ ևս գոն քեզ հաստատութեան նշան՝ անփուտ փայտ. և անթառամ ծաղիկ. և *մշտականաչ* սաղարթ. և անթափ պտուղ: - 223

**ՄՇՏԱԿՈՅՍ +** Իսկ մարդոյն խորհուրդն ըստ չորից տարերց և երից զօրութեանց տնկականին եօթեամբ կատարի. թիւ շնորհալի և *մշտակոյս* ըստ աթենայ. զի ոչ ծնեալ լինի և ո՛չ զայլս ծնանի: - 264

**ՄՇՏԱՇԱՐԺ +** Տասներորդ՝ զի *մշտաշարժք* են երեքկին. այսինքն բոլոր՝ ուղիղ՝ և կողմնաւոր. որպէս ցուցցի յառաջիկայսդ: - 137. Չորրորդ՝ զի *մշտաշա՛րժ* է: - 186. Վերընթաց: Վերածօղ: *Մշտաշարժ*: Ինքնաշարժ: Շարժօղ: Անփոփոխ: Սո՛ւր: Զգո՛յշ: Անշե՛ղ: Անթոյլ: Անպարունակ: Թափանցիկ: Աներևոյթ: - 202. Եւ դարձեալ զի հոգին ինքնաշա՛րժ է. և ինքնաշարժն *մշտաշա՛րժ* է. և *մշտաշարժն* անմահ. - 715

**ՄՇՏԱՊԷՍ** - Այսպէս և **դ** տարերք ըստ ինքեանց անապականք են. զի մասնաւորքն ի նոցանէ ապականին և դարձեալ ի նոսա խառնին. և այսոքիկ ըստ կամացն աստուծոյ են կամ *մշտապէս:* - 733

**ՄՇՏԱՍԱՂԱՐԹ +** Ունելով *մշտասաղարթ* ծաղիկ որ է՛ կարմիր երանգն գունոյ, և երկնագոյն հիւթով զարդարեալ: - 768. Դարձեալ, ծառ կենա՛ց է աստուածածին կոյսն մարիամ բղխեալ յարմատոյն յեսսեայ. երկնուղէշ զարգացմամբ *մշտասաղարթ* կուսութեամբ ծաղկեալ և պայծառացեալ հոգւոյն սրբոյ եկաւորութեամբն. և պտղաբերեալ մեզ անմահ պտուղ զբանն մարմնացեալ. յորմէ վայելեալք երկնաւորք և երկրաւորք ի շնորհաց նորին զյաւիտենից կեանսն ժառանգեցաք: - 768. Այլ և տերև է *մշտասաղարթ* գիտութիւն հաւատոյն. ծաղկեալ դաւանութեամբ և պտղաբերեալ գործով առաքինութեան: - 769

**ՄՇՏԱՓԱՅԼ +** Նմանապէս և հուրն որով հրեղէն լեզուօք երևեցաւ սրբութեան հոգին, բաժանեցի այրեցումն և *մշտափայլ* լուսով փայլեցի որպէս զարփին և որպէս զարեգակն: - 759-760

**ՄՇՏՆՋԵՆԱՒՈՐ +** Նա՛խ, զի ըստ սոցա ոչինչ է զանազանութիւն *մշտնջենաւորացն* և փոփոխականացն...: - 8. Զի ի վերայ *մշտնջենաւորացն* բացորոշակի յերեք ժամանակս՝ այսինքն յանցեալն ի ներկայն և յապագայն՝ մինն ճշմարիտ է և մինն սուտ. որպէս հրոյ ջերմութիւնն և արեգական լոյսն: - 9. Եւ ո՛չ ասի ժամանակեայ վասն մարմնոյն. այլ *մշտնջենաւոր* և յաւիտենական մարմնով: - 78. Եւ որպէս *մշտնջենաւոր* որդի ի հօրէ սկսեալ և անվախճան. որպէս ժամանակ հոգի ի հօրէ սկսեալ և յորդի դադարեալ: - 105. Զի աստուած պարագրէ զյաւիտեանն. որպէս յաւիտեանն զժամանակն. և ասի աստուած *մշտնջենաւոր*. զի ո՛չ ունի վախճան: - 114. Ասին և *մշտնջենաւորք*. զի ունին սկիզբն, այլ ո՛չ վախճան: - 114. Չորրորդ՝ յաւիտենական է աստուած. և *մշտնջենաւոր* հրեշտակք. և ժամանակեայ մարդիկ: - 116. Որ է յաւիտենական. և *մշտնջենաւոր*. և ժամանակեայ: - 116. Եւ *մշտնջենաւոր*՝ որ ունի սկիզբն՝ և ո՛չ կատարած. որպէս հրեշտակք. և հոգի մարդոյ: - 116. Նախ՝ զի որպէս արեգակն ունի *մշտնջենաւոր* զլոյսն՝ և առնէ ի վերոյ երկրի տիւ և գիշեր: - 125. Այսպէս բանն աստուած զվերին աշխարհն *մշտնջենաւոր* պահէ, և զներքինս ժամանակաւ չափելով պահէ՛ և խնամէ: - 125. Հինգերորդ՝ անմահք են *մշտնջենաւորք*: - 137. Եւ զի անապական և *մշտնջենաւոր* են բնութիւնք աստեղացն: - 148. Վասն որոյ արար զաշխարհս գործ *մշտնջենաւոր*. և *մշտնջենաւոր* հարկաւո՛ր է. և հարկաւորն ի գոլն կարէ, և ի չգոլն անկա՛ր: - 162. Յաղագս որոյ աշխարհ գոյացեալ. երբեմն *մշտնջենաւոր* գոյութեամբ, անգոյանալ երբէք ո՛չ կարէ: - 162. Եւ զայսպիսի զօրութիւնս ո՛չ երբէք ասեմք ի վերայ աստուծոյ. զի *մշտնջենաւոր* էութիւն է. և ոչ ընդունի զգոլն և զչգոլն: - 168. Ապա թէ ոչ՝ *մշտնջենաւորն* լինի փոփոխական որ սուտ է: - 168. Իսկ Երբ ո՛չ ասի աստուծոյ. զի անժամանա՛կ է և ո՛չ ունի փոփոխումն. այլ ասի յաւիտենական. ըստ որում բոլորն համանգամա՛յն է և կատարեալ. զի ոչ կարօտի սկզբան և վախճանի. որպէս ժամանակն. և ո՛չ միայն սկզբան որպէս *մշտնջենաւորն*. այլ անսկիզբն է և անվախճան. վասն որոյ կոչի յաւիտենական: - 172. Նմանապէս ծանիր և զայս կրկին է էակն. մին *մշտնջենաւոր* և միշտ ներգործութեամբ, որպէս աստուած. հրեշտակք. և արեգակն և հուր: - 173. Իսկ *մշտնջենաւոր* էակն միայն մին ունի զօրութիւն որ է առինքն ներգործութեամբ. որպէս հրոյ ջեռուցանելն. և արեգական լոյսն. և հրեշտակին անապականութիւնն: - 173. Նախ՝ զի իմանալիքն *մշտնջենաւո՛րք* են, ի սակաւ վայրկենի կատարեցան: - 192. Ժամանակն թէ ո՞րպէս բաժանի ի *մշտնջենաւորն* և յաւիտեանցն՝ ասացաւ ի վերոյ ի **ը** գլուխն՝ **ժբ** համարն: - 198. Զի յառաջնումն աւուր արարաւ *մշտնջենաւոր* լոյսն: - 227. Եւ զի անեղ է. ի հարկէ *մշտնջենաւոր* և անվախճան է: - 274. Բայց վասն կամացն աստուծոյ *մշտնջենաւոր* մնան հրեշտակք և հոգիք մարդկան: - 274. Քսանևմի, *Մշտնջենաւոր* լերինքն: - 283. Արդ բիւրն պատշաճի յաւիտենին աստուծոյ, որ պարունակէ՛ *զմշտնջենաւորն* որ են հրեշտակք: - 291. Վասն այն նահապետքն զհարիւրն պատկե՛ն որ է՛ ժամանակեան. և ի հազարն ո՛չ հասանին որ *մշտնջենաւորն* է: - 291. Հինգերորդ ևս յայտնի. աստ կեան նահապետքն ժամանակաւ ընդ ամենայն մարդոյ. և յետ մահու ի *մշտնջենաւորն* ընդ հրեշտակաց. և յետ յարութեանն յանվախճան յաւիտենին թագաւորեալք ընդ աստուծոյ: - 291. Եւ ընդ դէմ է *մշտնջենաւորին* որ ունի սկիզբն և ո՛չ

վախճան: - 312. Նա՛խ՝ լերինք և բլուրք *մշտնջենաւորք* կոչին հրեշտակացն դասք բարձրացեալք յերկինս և անշարժութեամբ սերտեալք...: - 319. Երկրորդ՝ նահապետք և մարգարէք կոչին լերինք և բլուրք *մշտնջենաւոր* վարուք և անշարժ աստուածապաշտութեամբ: - 319. Եւ այսպէս օրհնութիւն սոցա ըստ տեղւոյն իւրեանց կայ և մնայ *մշտնջենաւոր* յիշատակութեամբ: - 320. Իսկ լեառն հողեղէն բնութեանս մերում, կամաւ հօր վկայելով ի վերայ նորա՝ և հաճութեամբ սուրբ հոգւոյն աղաւնակերպ իջմամբ, և անքակտելի միացեալ բանիւն եղև լեառն մածեալ *մշտնջենաւոր* և անեզր յաւիտենիւ բարձրացեալ օրհնութեամբ և առաւելեալ: - 320. Այլ են *մշտնջենաւորք:* - 344. Երկրորդ, զի նոցա նոցայն ժամանակեայ և խափանելի, իսկ տեառն մերոյ *մշտնջենաւոր* և յաւիտենական...: - 354. Եւ դարձեալ հրեշտակք և մարդիկք *մշտնջենաւորք*՝ պակաս ունին առ աստուածպետութիւնն յաւիտենական. և նա՛ է կատարումն ժերորդ. անսկիզբն և անվախճան գոլով: - 391. Դարձեալ, ժամանակն ունի մասունս երիս. և *մշտնջենաւորն*. և դարձեալ յաւիտենական է բանն. և ժամանակեայ մարմինն. և *մշտնջենաւոր* հոգին. և անքակտելի միութիւնն ցուցանէ մեզ զչորս թուոյն. և ամենայնիւ կատարեալ գոյացութեամբ: - 437-438. Եւ սոյնպէս և քրիստոս եղև երկուց զարմիցն մի քահանայ և թագաւոր ճշմարիտ և *մշտնջենաւոր* քահանայ և թագաւոր յաւիտեան: - 461. Երկրորդ՝ ասելն «է» նշանակէ՛ *զմշտնջենաւոր* գոլն. ըստ այնմ «յիսուս քրիստոս երէկ և այսօր նոյն և յաւիտեան»: - 487. Զի որ վախճա՛ն է կենաց, նոյն և սկիզբն կենաց. այսինքն վախճան ժամանակին, և սկիզբն *մշտնջենաւորին:* - 496. Եւ արդարութիւնն է *մշտնջենաւոր*. որպէս ասէ սիրեցէքն: - 579. Նա՛խ՝ զի *մշտնջենաւոր* առնէ զհոգին հաստատելով ի բարին: - 579. Երկրորդ թէ *մշտնջենաւո՛ր* են և անանց: - 586. Հրեշտակք առին զէութիւնն *մշտնջենաւոր:* - 639. Նոյնպէս և սուրբք որ ա՛յժմ են ի հանգիստ՝ ի կիրակէ գալստեանն ի կատարեալ փառս և ի հանգիստ *մշտնջենաւոր* փոխին. ի հանգչելոյ ի հանգիստ. ի փառաց ի փառս: - 648. Եւ դարձեալ՝ ցուցանէ թէ այսպէս և հոգի նորա անշարժ կայ և մնայ ի յաւիտենական փառս և ի *մշտնջենաւոր* հանգիստն ամէն: - 679. Որք են անուշահոտ հոգիք սրբոցն հանդէպ երեսացն քրիստոսի ի տեղւոջ *մշտնջենաւոր* լուսոյն: - 682. Չորրորդ, տանջանքն յաւիտենից մահ է *մշտնջենաւոր*. և սոքա կոչին երկրորդ մահ: - 710. Տասներորդ, գործք մարդոյ անցաւոր է որպէս ինքն. իսկ հատուցմունքն աստուծոյ *մշտնջենաւոր* որպէս նոյն ինքն. վասն որոյ յարուցանէ անմահ, զի հատուսցէ ոմանց զփառս և ոմանց զտանջանս անմահ մարմնով: - 724. Դարձեալ ժամանակաւ փորումն աչաց՝ առնէ *մշտնջենաւոր* կուրութիւն: - 744. Երանութիւն *մշտնջենաւոր:* - 761. Նա՛խ՝ ծառն կենաց են հաւատացելոց անձինքն տնկեալք ի վտակս հոգւոյն՝ ջրով աւազանին. հետևեալ ի *մշտնջենաւոր* կեանս: - 765. Ո՛չ ի յամիսս անցաւոր. և ո՛չ ի յամն *մշտնջենաւոր*. զի աստ մարմնապէս և անդ հոգէպէս: - 768. Յիրաւի ապա ըստ այսմ օրինակի՝ որք ի *մշտնջենաւորէն* փոխանցին առ երազ սնոտեաց, ոչ ունիցին ինչ ի մտի. թէ և անդրադարձեալ աստի անդ մնասցէ յիշատակութիւն որպէս ասացաւ: - 775

**ՄՇՏՆՋԵՆԱՒՈՐԱԿԱՆ +** Վախճան է ժամանակի. և սկիզբն յաւիտենին և *մշտնջենաւորականացն*: - 193

**ՄՇՏՆՋԵՆԱՒՈՐԱԿԻՑ +** Ապա ուրեմն հոգին սուրբ է հաւասար աստուած ըստ հօր և ըստ որդւոյ. արարչակից և *մշտնջենաւորակից* և փառակից: - 60

**ՄՈԳ +** Վաքսունենդ, Վասն բաղամ *մոգին*. նզովք և անէծք: - 285. Բաղաամ *մո՛գ* էր և կախարդ. և սովո՛ր էր ըստ դևս խօսիլ. վասն որոյ յառաջեաց աստուած և խօսեցաւ: - 387. Երրորդ, զի մարգարէութեամբ նորա բազում ազգաց հեթանոսաց օգուտ եղև. զի յայնմանէ եկին *մոգք* և երկիր պագին քրիստոսի: - 387. Եւ նոյնպէս թագաւորքն *մոգուց* բերին ընծայ քրիստոսի: - 441. Չորրորդ՝ հովւացն և *մոգուց* գալն: - 471

**ՄՈԼԱՐ +** Երրորդ՝ կամքն կանգնեալ է *մոլար* ընթացից ջատագով: - 251

**ՄՈԼԵԿԱՆ +** Երկրորդն բնական. և Երրորդն *մոլեկան*: - 143

**ՄՈԼԻ +** Իսկ ծուլութիւն՝ ագահութիւն՝ որկորստութիւն՝ և բղջախոհութիւն՝ միայն առ *մոլիսն* գտանին: - 152. Որ մտօքն է՛ *մոլի*, և մեղօք հիւանդ, չէ՛ ընդունելի: - 371. Եւ յայտնի նշան մոլորութեան նոցա ա՛յս է, զի այնպիսեացն կատարօղք վատթարք են գործովք և *մոլի*. և առ դևս տանին զմարդիկք բռնութեամբ...: - 389. Չորրորդ, արծակէ՛ զսատանայ, զի տեսցէ զիւր ժամանակ տանջանացն մերձեալ. և *մոլի* որպէս գազան մերձ ի սատակումն. և շուն կատաղեալ: - 706

**ՄՈԼԻՄ +** Զի եթէ զաստուածային բնութիւնն պատուէք, հա՛րկ է ձեզ զմարդկայինն անարգել՝ և հրէական խտրութեամբ *մոլի*...: - 90. Չորրորդ՝ շանաճանճն. զի շնաբարոյք էին և *մոլէին* յառնականաւս շնութեամբ. զի շանն է ոչ զուգակցիլ որպէս զայլ կենդանիս. վասն որոյ ի շանց ելեալ թունալից ճանճք խայթէին զնոսա: - 334

**ՄՈԼՈՐԱԿ +** Դարձեալ ասեն, ի հակառակ շարժմանց՝ լինի և հակառակ ներգործութիւն. ահա *մոլորակք* շարժին հակառակ. ապա ուրեմն և գործեն հակառակս: - 12. Եւ **է** երկինք՝ **է** գօտիքն են է *մոլորականն*. որ

է Զոհա՛լն. Երևա՛կն. Հրա՛տն. Արեգա՛կն. Լուսնթա՛գն. Փայլածո՛ւն և Լուսինն: - 183. Զամենայն *մոլորակաց* զօրութիւն ունի: - 187. Եւ դարձեալ արեգակն միջակ գոլով հաղորդի ամենայն *մոլորակաց*. և զայն անցուցանէ ի լուսինն լուսո՛վն հանդերձ: - 187. Իսկ *մոլորակքն* ի գօտիս իւրեանց շարժականք են. զի բարձրանան և խոնարհին: - 189. Եւ է՛ առաջին և վերջին *մոլորակացն* Երևակն. զոր պարսիկք զօհալ կոչեն. ցուրտ է և չոր. **բ** ամ և կէս յամէ ի կենդանակերպն. և յերեսուն ամն վճարէ՛ զամենայն: - 189. Ասացեալ *մոլորակացս*՝ զօր՝ և զամիս՝ և զտարիս՝ ո՛րն առնէ: - 190. Իսկ շաբաթն որ է՛ **է** օր՝ կոչեցաւ յեօթն *մոլորակաց*: - 190. Զի հինքն զեօթն *մոլորակսն*՝ է տուն աստուածոց կոչէին: - 190. Մնացեալ ա՛մպ է շուրջ զաստեղօքն. որ քարշէ յինքն զսպիտակ լոյս *մոլորակացն* և լուսաւորի: - 203. Եօթն ծակ գլխոյն եօթն *մոլորակացն:* - 232. Իսկ **է** գլխաւոր անդամքն են այսորիկ ըստ է *մոլորակացն* ունելով զբնութիւնս նոցա: - 241. Եւ որպէս է են գլխաւոր անդամք՝ և է *մոլորակք* յերկինս: - 241. Դարձեալ ժերորդ՝ աստեղագէտք ասեն թէ յղացումն ամենայն մարդոյ Զօհալին է. և յիւրաքանչիւր *մոլորակս* ամիս մի թուեալ՝ լինի ծնունդն ի մուշթարին **թ** ամիս: - 264. Ասեն աստեղագէտք եթէ՝ **է** դարուց կեցաղոյս վերակացուք են **է** աստեղքն որք կոչին *մոլորակք*: - 291. Չորրորդ՝ է *մոլորակաց* գօտիք. և **ը** հաստատութիւնն. և ջրեղէն և լուսեղէն երկինքն: - 343. Երրորդ՝ վեցեքեանն ունին լոյս, և առնուն զիւղն ի միջոյն. և ամէն *մոլորակք* ունին լոյս. և այլ առնուն յարևու: - 346

**ՄՈԼՈՐԱԿԱՆ +** Ասեմք առ այս, *մոլորականքն* ո՛չ եթէ զի ունին ներհակ շարժումն վասն այն կոչին *մոլորականք*, կամ պատճառք են չարեաց, այլ զի մեք մոլորիմք ի շարժումն նոցա. զի ունին հասարակ շարժումն, և ունին յատուկ շարժումն: - 12. Կենդանակերպք, և *մոլորականք*: - 154. Նմանապէս և զայլ *մոլորականսն* ծածկէ յորժամ ուղղապէս ընդ դէմ անկանի: - 187. Եւ է *մոլորականքն* ընդ սոսա գնալով խոնարհին և բարձրանան: - 189. Դարձեալ, տասն են մասունք զգալի արարածոց. այսինքն՝ **է** *մոլորական* գունդք. և **ը**՝ անմոլարքն. և իններորդ ի լուսոյդ ի վայր. և մարդս **ժ** երորդ ի վերայ նոցա. որ է՛ բանական և բաժին աստուծոյ: - 376

**ՄՈԼՈՐԵԱԼ +** Իններորդ՝ զի նոցա բանականն է *մոլորեալ*. և ո՛չ ցասումն և ցանկութիւնն. յորոց վերայ բանն բռնադատէ խղճիւն, և ստիպէ զնոսա յուղղութիւն. այլ ինքն կառավարն խոհեմութիւնն *մոլորեալ* ո՛չ ուղղի: - 32. Վեցերորդ՝ զի նոքա հեթանոսք միա՛յն էին *մոլորեալ:* - 34. Հինգերորդ՝ զի *զմոլորեալն* դարձուցանէ: - 49. Արդ՝ եթէ ինքն ճշմարտութեամբ ո՛չ գիտէ, մեզ որպէս ցուցանէ. և թէ ինքն *մոլորեալ* է՝ զմեզ ո՞րպէս տանի առ հայր: - 97. Երկրորդ՝ զի **ժ**երորդ է մարդս կարգեալ ի թիւ նոցա ըստ հարիւրերորդ *մոլորեալ* ոչխարին, և կորուսեալ **ժ**երորդ դրամին: - 134. Եւ զհարիւրորդ *մոլորեալ* ոչխարն խնդրեալ տեառն մերոյ յիսուս քրիստոսի: - 376. Երրորդ, նա՛ հովիւ հօտից. և տէր մեր հովիւ կոչեցաւ իմանալեացն վերնոց և մարդկան *մոլորելոց*: - 435. Ուղղութիւն *մոլորելոց:* - 474. Այլ գիտելի է, զի ոմանք հետևօղք չար աղանդոյն քաղկեդոնի *մոլորեալք* ի ճշմարտութենէն՝ ջուր խառնեն յանապական բաժակ արեանն քրիստոսի: - 594. Որպէս ասեն երբեմն ժամանակի ի կոստանդնուպօլիս հռչակեալ քաղաքի, *մոլորեալ* յոյնք ի *մոլորեալ* երիտասարդէ՛ միոջէ՛, բարձին յեկեղեցւոյ զերգ երեքսրբենին: - 775. Եւ դարձեալ ի ճառս անառակին և կորուսեալ դրամին և *մոլորեալ* միոյ ոչխարին և անկելոյն ի ձեռս աւազակին, զնոյնս ուսուցանեն մեզ հարքն հոգելիցք արտայայտել: - 775. Որ և ամենայն վերոյ գրեալքդ առակք, անառակին, *մոլորելոյն*, կորուսելոյն և այլն ևս, այսպէս ուղղին. այսինքն նմա՛, վասն նմա՛, որպէս նմա՛: - 778

**ՄՈԼՈՐԵՑՈՒՑԻՉ +** Երրորդ՝ *մոլորեցուցիչ* կոչի. և հերձւածօղք մոլորեն զուղիղ հաւատս քրիստոնէին. և զբարի գործս նոցա: - 35. Այլ տե՛ս յայտնապէս, զի զայսպիսի նշան վկայութեան ո՛չ ունէին յուդաս և դևդաս. և ո՛չ նեռն ունելոց է դերաքրիստոսն. վասն որոյ ո՛չ են մարգարէ, այլ *մոլորեցուցիչք* և չարք: - 400

**ՄՈԼՈՐԻՄ +** Ասեմք առ այս, մոլորականքն ո՛չ եթէ զի ունին ներհակ շարժումն վասն այն կոչին մոլորականք, կամ պատճառք են չարեաց, այլ զի մեք *մոլորիմք* ի շարժումն նոցա. զի ունին հասարակ շարժումն, և ունին յատուկ շարժումն: - 12. Իսկ որ զկամսն է չարացուցեալ, զճանապա՛րհն ունի թիւր. և որքան ընթանայ՝ *մոլորի:* - 33. Երրորդ՝ մոլորեցուցիչ կոչի. և հերձւածօղք *մոլորեն* զուղիղ հաւատս քրիստոնէին. և զբարի գործս նոցա: - 35. Ոչ *մոլորիմք* մեք ի հոմանուն ձայնս նոցա: - 83. Զի խաւարի միտքն. և *մոլորի*՛ իմացումն. և կապի ընդարձակ տեսութիւնն. և ծանրանայ թեթևութիւնն. և անջատի ի բազումս. և տգեղանայ պատկերն: - 104. Երկրորդ՝ զի բանականն *մոլորի* երբեմն ի ճշմարտութենէն և տարակուսի: - 122. Եւ երկիրս անշարժ է տեղեաւ, ետ սմա ապականիլ երեսօք. զի տեսեալ մարդիկ եղական և ծառայ իմասցեն զնոսա. և մի աստուածս կարծեսցեն և *մոլորեսցին*. որպէս ասէ նիւսացին ի գիրս կազմութեան: - 182. Երրորդ՝ զհաւատն որ է գլուխ՝ պահեսցէ, զի մի՛ *մոլորեսցի* զհետ հերձուածողաց: - 218. Նա՛խ՝ զի *մոլորեսցին* հաւանեալք նոցա և կորիցեն: - 336. Նա՛խ՝ տարակուսանք մտաց և ցաւ աչաց. զի *մոլորեսցին* ի փախչիլն: - 376. Դարձեալ նշանակէ՛ զխաւարումն այնմ

ժամանակի, յորում եթէ գուցէ հնար՝ ընտրեալքն *մոլորեսցին:* - 490. Թէ օրհնեալ է՝ ընդէ՞ր օրհնէք և թէ ոչ էր օրհնեալ՝ ընդէ՞ր տայք ժողովրդեանն իբր օրհնեալ մարմին և *մոլորեցնէք* զնոսա: - 600. Եւ ճ տէրողորմեայն, ըստ թուոյ ճ ոչխարացն միոյն *մոլորելոյ:* - 621. ...և բազումք *մոլորին* զհետ բանից նոցա և յառասպելս նոցա կործանին: - 701. Գիտելի՛ է, զի ոմանք հերձուածօղք *մոլորեցան* վասն յարութեան մեռելոց և ասացին թէ մարմինն ո՛չ բաղկանայ ի չորից տարերց. այլ լինի պարզ: - 720

**ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆ +** Ձորոց պատճառս *մլորութեանն* **ը** են ասացեալ հետեւօղք ուղղափառութեան: - 31. Վասն այն ո՛չ կարեն իմանալ՝ զի ասէ տէրն, (կոյր կուրի առաջնորդէ՛, երկոքին ի խորխորատ անկանին. այսպէս որ առնէ զգայարանս առաջնորդ իմացման՝ անկանի ի *մոլորութիւն:* - 31. Եւ որպէս աչք ո՛չ տեսանէ զպակասութիւնն իւր, նոյնպէս բանականն ո՛չ տեսանէ *զմոլորութիւնն* իւր: - 32. Հինգերորդ՝ զի նոցա պատճառ երևի սատանայ *մոլորութեամբն:* - 33. Այս օտարութիւն անուանցս լծակցեալ ընդ միմեանս՝ առնէ *զմոլորութիւն* հերձուածողացն: - 43. Եկեսցուք այժմ և տեսցուք *զմոլորութիւնս* նոցա՝ որք ասեն զհոգին սուրբ բղխումն ի հօրէ և յորդւոյ: - 61. Առ երրորդն ասեմք՝ թէ յիմարութիւն է ամենևիմբ և *մոլորութիւն* իսկ ի լսել զայս: - 76. Ա՛րդ՝ յայտնեցաւ նոցայն *մոլորութիւն:* - 91. Նոյնպէս և տգիտութիւնն մտա՛ցն է խաւար և *մոլորութիւն*. և կապ. և ծանրութիւն. և անջատօղ. և տգեղութիւն: 103-104. Այլք ասեն թէ՝ է՛ ի յաստուած լայնութիւն սիրոյ, որով յետս դարձուցանէ զմեզ ի *մոլորութեանց* վասն առաւել սիրոյն: - 129. Գիտելի՛ է, զի հոմանուն է զօրութիւնն. այսինքն կարութիւնն. և հոմանունն մա՛յր է *մոլորութեան*. վասն որոյ որոշելի է զնոսա: - 167. Գոյնն հրային լուսափայլեալ աչօք՝ առ *մոլորութիւն* ծկտի: - 247. Եւ որք զայս ասեն՝ հետևին *մոլորութեանցն* պղատոնի մարմնափոփոխութեանցն. որ ասէ քաղաք ի յերկինս. և հոգիքն անդ ժողովեալ իբրև զզօր և զդասս: - 252. Իսկ դիւականն ընդդէմ այսմ՝ վասն *մոլորութեան* զանազան երևմունս ցուցանէ աղտեղութեան...: - 268. Եւ յայտնի նշան *մոլորութեան* նոցա ա՛յս է ...: - 389. Իսկ այժմ վասն խաչին նախ գիտելի է, զի չարչարանքն քրիստոսի ընդ դէմ է և բարձօղ է մոլորութեանց մեղաց: - 489. Դարձեալ՝ ճշմարիտն մի է և սուտն բազում. և բարին մի է և չարն բազում. և առաքինութիւնն մի է և *մոլորութիւնն* բազում: - 550. Նա՛խ՝ զի սոքօք արտաքսեցին է *մոլորութիւնքն* որպէս ասացաւ: - 583. Ա՛րդ՝ է երանութեամբս այս՝ արտաքսին է գլխաւոր *մոլութիւնքն:* - 583. Արդարքն վասն իւրեանց սիրելեացն միշտ աղօթեն զի ազատեսցին ի փորձանաց և ուղղեսցին ի *մոլորութեանց* և ընկեր փառաց նոցա լինիցին: - 685. Երրորդ՝ ուղղի *մոլորութիւնն* որ է՛ խանգարումն անդամոցն ի միմեանս սխալեալ ըստ բնութեան տկարութեանն: - 725. Անդ եղիցի ճշմարիտ փառք, ուր ո՛չ ոք գովեսցէ *մոլորութեամբ*. և ո՛չ գովեսցի ոք սուտակասպասութեամբ: - 765

**ՄՈԼՈՐՈՒՄՆ +** Իններորդ՝ զի և ի հոգևորն՝ փոքունք զմեծամեծաց անուանս կոչէին ինքեանց ի *մոլորումն* մարդկան. որպէս սիմոն կախարդն ասէր զինքենէ՛ թէ քրիստոսն իցէ. մինչև յանդիմանեցաւ ի պետրոսէ: - 238. Սուտ են բնաւ և *մոլորումն* է նոցա այն և անօրէնութիւն: - 651

**ՄՈԼՈՒԹԻՒՆ +** Հինգերորդ՝ զի յամենայն մեղս գտանի հպարտութիւն. զի որպէս առանց սիրոյ այլ առաքինութիւնք ոչ ինչ են, նոյնպէս առ հպարտութեան ամենայն *մոլութիւնք* ոչ ինչ են: - 562

**ՄՈԽԻՐ +** Վաքսուն, *Մոխիր* երնջոցն. և սրբութեան ջուրն: - 285. Վասն է՞ր *մոխրով* սրբէին: - 383. *Մոխրով*, այսինքն ոչընչով: - 383. Դարձեալ՝ *մոխիր* և ջուրն՝ նշանակէր զարտասուս և զխոնարհութիւն ապաշխարութեան որով սրբիմք: - 383. Յորժամ սուրբ էր *մոխիր* երնջոցն, վասն է՞ր զմերձեցեալն պղծէր: - 384

**ՄՈԽՐԱԿՈՅՏ +** Եւ զայլն բովանդակ մորթով և փորոտիւք և գլխով հանեն ի *մոխրակոյտն* և այրեն անդ: - 358

**ՄՈԾԱԿ** - Երրորդ՝ հարուածն է մունն որ է՛ մանր տիզ. կամ *մոծակ*. կամ մժեխ. ի ցուցանել զի մանրակըծո՛ւ էին բարուք և խոցոտիչք բանիւք: - 334

**ՄՈՂԷՋ +** Ասեմք եթէ՝ *մողէզն* և կոկորդիլոսն որ քարթոշ ասեն, և յերկրի ազգի ազգի զեռունք արիւն ո՛չ ունին: - 511

**ՄՈՂՈՔ** - Ութերորդ՝ զի թէ թողցեն զվայելչութիւն խորանիս այս և այլոց հետևեսցին, անպատասխանի լիցին ի պատուհասն. որպէս եթող զապերախտ ժողովուրդն և էառ զվրանն *մողոքայ* և զաստղն հռեմփայ ի դատապարտութիւն ինքեանց: - 342

**ՄՈՄ +** Ոմանց գոյութիւն միայն. և այլոց կեանք. և բան. և իմացումն. որպէս տիպ կնքեալ ի *մոմի:* - 106. Որպէս կնիք մատանւոյ ի բազում *մոմս:* - 106. Եւ որպէս մի է կնիք մատանւոյն, և բազմանայ ի կնքեալ *մոմս:* - 113. Եւ պակասեալ ի սմանէ տեղին, լինի տիպ ի քանակէ և ի ձևոյ բաղկացեալ. որպէս յա՛յտ է ի *մոմն* տպացեալ: - 236. Նա՛խ՝ զի զգայարանքն նորա որպէս զկակուղ *մոմ* առաւել ընդունի զտիպն: - 251. Եւ

վասն ուխտի, խաչի, և եկեղեցւոյ: Պտուղս: Շօթ: Նաշիհ: Զէթ: *Մոմ:* Խունկ. և այլն: - 362. Նոյնպէս և մեք ի հանդէս տօնից նուիրեմք նաշիհ և գինի պատարագի. ձէթ` *մոմ* խունկ` և զենումն մատաղի: - 375. իսկ Կախարդն` որ անօթ ինչ թաղէ ի հող. կապս, կամ *մոմ*, կամ երկաթ, և պէս պէս ժժանօք յարմարե՛ն զարուեստն: - 388. Երրորդ` ի ծաղկանց. որպէս *մոմ:* - 407. Եւ դարձեալ զոր օրինակ, գիր մատանւոյն մի և նոյն կատարեալն է տըպացեալ յամենայն *մոմս* կնքեալ և ո՛չ աւելի և ո՛չ նուազ: - 530. Վասն է՞ր ի տաճարին զճարպն վաճառէին, և յեկեղեցիս *մոմ:* - 617. ...վասն որոյ յանարիւն կենդանւոյ զլոյսն վառեմք. զի կենդանին այն անարիւն է յորմէ *մոմն* գոյանայ: - 617. Զի՞նչ է աւետարանին, Ո՛րթի. և *մոմ* վառեմք. և բուրվառ շարժեմք: - 644. Երկրորդ զի հաւասարի հալեալ *մոմ*. այնպէս լերինք և բլուրք հարթեալ հալին և հասաւարին: - 728. Երրորդ զի պարզի հալեալ *մոմ*. այսպէս սևութիւն և թանձրութիւն երկրի ի դժոխս ժողովին և մարմինք մարդկան յերեսս երկրի: - 728. Հինգերորդ հալեալ *մոմ* ո՛չ ունի զառաջին կերպն այլ զգոյացութիւնն. նոյնպէս և գոյացութիւնն երկրի ո՛չ կորնչի. այլ պատահմունքն այլայլին. զի ո՛չ ճանաչի թէ այս այն է: - 728. Զոր օրինակ մի պատկերն դրոշմի ի զանազան *մոմս*. և ի հալիլ *մոմոյն* դրոշմ պատկերին ժողովի և մնայ ի մատանւոջն: - 732. Օրինակ. Աստուած մատանի. և միտք *մոմ*. և հաւատն տիպ ի մատանոյն. այս է սուրբ Երրորդութիւնն: - 769

**ՄՈՄԵՂԷՆ +** Չորրորդ կարգ է Ջահավառքն. այսինքն դպրութիւն առնել և *մոմեղէնս* վառել ի սեղանն: - 606. Եւ գո՛րծ է նոցա առաքեալ կարդալ, և *մոմեղէնս* կրել, և գրակալ. և զխաչագլուխ գաւազանն կրել: - 608. Եւ զմեզ ի լոյս էած, նշանակեն վառեալ *մոմեղէնքն:* - 646. Վասն որոյ վառեալ *մոմեղինիւ* ի միասին համաձայն պաշտեմք: - 647

**ՄՈՇԱՎԱՅՐԻ +** Այլ` *մոշավայրին* է բարակ և անպտուղ: - 330

**ՄՈՌԱՆԱՄ +** Միտք մեր բ պակասութիւն ունի. այսինքն զմոռացումն և զտգիտութիւն. զի զանցեալն *մոռանայ*. և զապագայն ո՛չ գիտէ: - 117. Նախ` զի լպրծի՛ միտք մեր և *մոռանայ* զբանն. զի հով և գէջ է պարուտակն և ուղեղ գլխոյն: - 120. Երկրորդ` զի հարստահարեալ ի մարմնոյ ախտից` *մոռանայ* զբանն: - 120. Երրորդ` ի պատրանաց թշնամւոյն *մոռանայ* զբարի բանս: - 120. Չորրորդ` *մոռացեալ* է զբարին...: - 251. Եւ ի հողմոյն յայնմանէ հոտ անուշութեան դրախտին բուրեաց ի նոսա. և տեսիլ իմանալի տեսին, և լուր իմանալի լուան. և յայնմանէ *մոռացան* զառաջինն. և որպէս ի քնոյ զարթուցեալք ո՛չ լսէին զլեզուս միմեանց: - 298. Եւ այլք ասեն թէ մովսէս գրեաց ի յանդիմանութիւն որդւոցն յակոբայ. որք առին զօրէնս և ո՛չ պահեցին. և զաստուծոյ զամենայն երախտիսն *մոռացան:* - 320. Հինգերորդ` նշանակէ թէ զարիւն տղայոցն չէ *մոռացեալ* աստուած զոր հեղձուցին ի գետն. զայն ըմպել տայ նոցա: - 333. Նա՛խ` զի անհաւա՛ն էր ժողովուրդն և անկատար, զգալի տեսլեամբ և ձայնիւ զարհուրեցոյց. զի մի՛ *մոռասցին*. այլ հաւանեսցին և ի միտ պահեսցեն: - 341. Նա՛խ` հրամայեաց աստուած գրել զլինելութիւն աշխարհի. և ձևացոյց ի միտսն մովսէսի. զի մի՛ *մոռասցին* հանգամանքն. վասն որոյ զգալի խորան հրամայէ կազմել: - 342. ...զգլուխն ե երորդ մասամբն ի յետ դարձուցանել որ է՛ տուգանք **ե** զգայարանացն որ *մոռացաւ* և ո՛չ զգաց զօրէնս աստուծոյ: - 358. Երրորդ` զի հոգիքն ի դժոխքն չէ՛ *մոռացեալ* ի նմանէ: - 371. Եւ որպէս ննջեցեալն քնով` ո՛չ տեսանէ զինքն. և որպէս յաւելի կերակրոյ խնուն զգայարանքն. նոյնպէս ագահութիւն և փարթամութիւն և հպարտութիւն *մոռանալ* տայ զինքն. վասն այն ասեն թէ` ինքեանց գիտակքն իմաստունք են: - 397-398. Եւ դարձեալ` հայեաց ի քեզ. և մի՛ *մոռանար* զտկարութիւն և զպակասութիւն քո: - 398. Եւ մի՛ *մոռանար* զզօրութիւնն աստուծոյ և զերախտիսն զոր արա՛ր հասարակ և առանձնակի: - 398. Որ զգլուխն ընթերցար, զիամակարգն ընդէ՞ր *մոռացար:* - 546. ...և թողութիւն շնորհեսցէ յամենայն յանցանաց քոց. խոստովանելոցն և *մոռացելոցն:* - 602. Չորրորդ` եթէ անփոյթ արար և *մոռացաւ* զկարգեալ ապաշխարութիւն փոխարինացն, պա՛րտ է կրկին խոստովանիլ. - 603. Թէ գիտէ և *մոռանայ*, ներելի մեղք է: - 620. Նոյնպէս մարդս ի մանկութեանն անմեղ է, և ի մեռանիլն *մոռանայ* զաշխարհս...: - 630. Նա՛խ` զի աներևո՛յթ են ի մէնջ. այլ և ի մտացն աստուծոյ. ի հրեշտակաց և ի սրբոց *մոռացեալ*: - 690. Երկրորդ պակասութիւն է թուլութիւն և մոռացումն մտաց. զի աստ զաստուած *մոռանամք* և որոշիմք մեղօք ի նմանէ...: - 722. ...և այս բառնի ի հոգւոյն և լինի ամրութիւն և հաստատութիւն. զի զաստուած հաստատապէս ըմբռնեմք և բնաւ ո՛չ բաժանիմք ի նմանէ և ոչ *մոռանամք*: - 722. Եւ իւրաքանչիւր ոք զգործս իւր ընթեռնու յայտնապէս և ո՛չ կարէ ուրանալ և *մոռանալ:* - 741. Տեսանելի՛ է թէ` զի՞նչ արդեօք իցէ ոչ ունելն ի մտի որ է՛ *մոռանալ*. այսինքն զանցեալն ո՛չ յիշել. և զհանդերձեալն ոչ տեսանել. իսկ զներկայն ո՛չ գիտել: - 774. Զի յայսմ կենցաղոյս զուգաւորին յիշելն երբեմն և *մոռանալ* զներքոյս և զարտաքոյս. ըստ որում փոխանցապէս ունիմք զերից ժամանակաց գիտութիւն: - 774. Այլ ներկայական ոչ ինչ է առ նոսա. զի զյետոյսն *մոռացեալ* են: - 774. Իսկ հրեշտակական կենաց է հրաշափառապէս գիտել և ո՛չ *մոռանալ*

միշտ...: - 774. Ապա բնաւորապէս ընդ դէմ գոյ երից որպիսութեանց սա՛ մեզ չորրորդ գոլով. ոչ ունել ինչ ի մտի. *մոռանալով* միշտ. ո՛չ գիտել և ո՛չ յիշել ինչ զանտի կենաց: - 775

**ՄՈՌԱՑԿՈՏ +** Ի գինւոյ և ի ցքոյ պահել, զի *մոռացկոտ* և քնու և ծոյլ և ապուշ առնէ գինին: - 389

**ՄՈՌԱՑՈՒԹԻՒՆ +** Իսկ հրեշտակք ո՛չ յինքենէ՛, այլ յաստուծոյ սկսեալ և անվախճան. զի առանց *մոռացութեան* ունին: - 120. Երրորդ՝ վասն տկարութեան և *մոռացութեան* մերոյ: - 177

**ՄՈՌԱՑՈՒՄՆ +** Միտք մեր բ պակասութիւն ունի. այսինքն *զմոռացումն* և զտգիտութիւն. զի զանցեալն մոռանայ. և զապագայն ո՛չ գիտէ: - 117. Հինգերորդ՝ նոցա անմոռանալի՛ է տեսութիւնն. իսկ մերս հանդերձ *մոռացմամբ*. որքան զգայութեամբս տեսանէ միտքն: - 120. Սէք ջրարբ. կամ *մոռացումն* չարի: - 299. Երկրորդ պակասութիւն է թուլութիւն և *մոռացումն* մտաց. զի աստ զաստուած մոռանամք և որոշիմք մեղօք ի նմանէ. - 722. Իսկ ուղղակին. զի *մոռացումն* բնաւորեալ է առ խառնուած կազմութեան մարդոյ. իսկ խրատ՝ յանդիմանութեան է՛ ի ցոյց ինքեան: - 774

**ՄՈՎԱԲԱՑԻ** - Եւ **ի**երրորդ՝ որպէս խոստացաւ թէ՝ «զաւակք քո զքաղաքս հակառակորդաց քոց ժառանգեսցեն». որպէս և եղև նոցա մարմնաւորապէս ժառանգել զերկիր ամոնացւոց, *մովաբացւոց*, և քանանացւոց: - 306. Բոյոս ամաց **ճը**՝ ծնանի զովբէթ. առեալ բոյոսս իւր կին զհռութ *մովաբացի*: - 452

**ՄՈՎՍԷՍ** - Չորրորդ՝ առանձնակի տեսութեան՝ միայն իմացմանն՝ վասն առանձնակի արժանաւորութեան. որպէս *մովսէսին*: - 24. Չորրորդ՝ հրէայքն դաւանին *զմովսէս*՝ և ուրանան զքրիստոս, զխաչն և զօրէնս նորա: - 34. Իսկ *մովսէս*՝ որ միոյ բնութեան էին հաղորդք և միոյն անւան քերովբէքն, մի յաջմէ և մի յահեկէ ասէ: - 54. *Մովսէս* ասէ, «հոգի աստուծոյ». և դաւիթ՝ «բան տեառն». և յոբ, «հոգի աստուածեղէն»: - 55. Իսկ թէ ոք ասիցէ՝ եղեն զփոփոխումն ցուցանէ. որպէս այն թէ՝ գաւազանն *մովսէսի* օձ եղև: - 72. Իններորդ՝ Որ էն՝ աստուած կոչի. ըստ այնմ *որ* ասացաւ *մովսէսի*, «ես եմ որ էնն»: - 73. Իսկ թէ միայն անուն առանց էութեան. ապա անւամբ խոստովանիս աստուած զքրիստոս և ո՛չ գոյացութեամբ. և հաւասարե՛ս զնա *մովսէսի*. որ անուամբ աստուած կոչեցաւ և ո՛չ էութեամբ: - 95. Զի անդրանիկ է էն անուն՝ քան զամենայն բարի և ազնիւ և այլն. վասն որոյ ասաց *մովսէսի*՝ «ես եմ որ էնն»: - 111. Եւ վասն օրինացն *մովսէսի* ասէ օրէնքն, «յաւիտենական լիցի». որ նշանակէ զբազում ժամանակս: - 115-116. Իսկ չորրորդն է խորհրդական աստուածաբանութիւն. յորժամ զամենայն զգալի և զիմանալի էութիւն արտաքոյ թողեալ, ի խորս ընթանամք մտօք և մտանեմք յամպն և ի մէգն ըստ *մովսէսի*. և ապա տեսանեմք զնա արտաքս որոշեալ յամենայն էից: - 122. Արդ՝ որ քան սրբութեամբ և իմացմամբ աստուածատեսակ լինին՝ աստուածք կոչին. եթէ հրեշտակք և եթէ արք սուրբք որպէս *մովսէս*: - 137. Որպէս եղև առ մարիամ բորոտութիւն վասն բանբասելոյն *զմովսէս*. որ աստ սակաւ ինչ տանջեցաւ, զի մի՛ ելցէ յերկնից ժառանգութենէն: - 159. Վասն էր՞ աստուած գրով խօսի ընդ մեզ որպէս *մովսէսի* և այլոցն: - 177. Նոյնպէս և աստուած ընդ արժանիսն դէմ յանդիման խօսեցաւ. որպէս առ ադամ. և առ նոյ. և առ աբրահամ. և առ *մովսէս*: - 177. Վասն է՞ր առաջին գիրքն *մովսէսի*՝ Ծնունդ կոչի և Արարած: - 179. Երրորդ երկին՝ կատարեալ տեսութիւն իմացականին. որ դէմ յանդիման տեսանէին զաստուած. որպէս *մովսէս* և դաւիթ: - 183. Նոյնպէս և այլքն ըստ կարգի. Աբրաբամ. *Մովսէս*. Դաւիթ. և Քրիստոս: - 193. Երրորդ՝ բազում աստուածախօսութիւնք ի նմա եղեն. յելանելն նոյի ի տապանէն. և առ աբրահամ. և առ *մովսէս* ի սինա լեառն. և տուչութիւն օրինացն ի կիրակէ եղև: - 193. Այլ և *մովսէս* հրամայեաց յամենայն ամսամուտս տօնել և փող հարկանել...: - 200. Եւ որպէս այս, նոյնպէս ի հոգևորն. վասն որոյ *մովսէս* ցանկայր տեսանել զերեսս աստուծոյ: - 234. Իսկ որ զմարմին յառաջ ասեն քան զհոգի, վկայ ածելով *զմովսէս* որ ասէ եթէ՝ էառ զհողն և շինեաց մարմին. և յետոյ փչեաց ի նա զշունչն կենդանի, որ է կենդանարար հոգին: - 253. Եւ մտանէ ի կարգ զինուորաց. վասն որոյ *մովսէս* ի ի ամենեցն ի վեր թուէր զզինուորսն: - 265. Քսանգ, Բաղդատութիւն *մովսէսի* և տեառն **լ** գլխով. և ազգահամարն աբրահամու: - 283. Եւ *մովսէս* զի՞նչ էր բարձեալ. և զի՞նչ ասաց ի ծովուն: - 283. Եւ զանազանութիւն *մովսէսի* որ աստուած կոչեցաւ: - 284. Եւ քանի՞ անգամ ել ի լեառն. և **գ** քառասուն պահեաց. և **դ** ծնունդն *մովսէսի*: - 284. Վաթսուննթ, *Մովսէս* ետես զերկիրն և ո՛չ եմուտ: - 285. Ութսուներորդ, Պատերազմ մարմնոյն *մովսէսի* և զերեզմանի նորա: - 285. Եւ թէ՝ քանի՞ ամաց պատմութիւն է **ե** գիրքն *մովսէսի*: - 285. Եւ թէ՝ մեծ էր նշանն քրիստոսի որ հոգւոցն արար, քան *զմովսէսին* որ մարմնոց: - 285. Եւ որպէս կորխ դադան և աբիրոն վասն հակառակութեանցն ընդ *մովսէս* և ահարոն՝ հրով և բացմամբ երկրի դատապարտեցան: - 288. Եւ նոյ՝ վասն կուսութեան սրբութեանն **զչ** ամն, և վասն արդար գոլոյն, որում վկայէ՛ *մովսէս*, «Նո՛յ էր այր արդար կատարեալ յազգի անդ իւրում». վասն որոյ ապրեցաւ ինքն և տունն իւր. և երկրորդ սկիզբն եղև մարդկութեանն և աշխարհի շինութեան: - 288. Նմանապէս և մեծն ի մարգարէս աստուածախօսն *մովսէս* որ աստուած կոչեցաւ փարաւոնի. իշխելով տարերցս փոփոխման, որ ջրածինն էր՝ եղև վիմածին և

կայծակնածին. որում լուսաւորեցան երեսք: - 288. Եւ թէ ոք ասիցէ, *մովսէսի* ընդէ՞ր ասաց՝ ա՛յս է անուն իմ յաւիտեան: - 312. Երանելին յոբ՝ էր ի ժամանակս *մովսէսի*. **ճ** ամաւ յառաջ՝ աւելի և կամ պակաս: - 320. Եւ այլք ասեն թէ *մովսէս* գրեաց ի յանդիմանութիւն որդւոցն յակոբայ. որք առին զօրէնս և ո՛չ պահեցին. և զաստուծոյ զամենայն երախտիսն մոռացան: - 320. Այլ որ ըստոյգն է ասեն թէ՝ *մովսէս* գրեաց որպէս պատմութիւն, և սողոմոն ստիքսեաց որպէս զիւր բանսն. յետոյ գրեաց և եզրաս հոգւովն աստուծոյ երբ ծախեցան գրեանքն ի հրէից: - 321. Առաջին, որպէս ի ծնունդն իւր ապրեցաւ *մովսէս* յարուախեղդ մահուանէն փարաւոնի: - 328. Երկրորդ՝ *մովսէս* քարոզէր ժողովրդեանն թէ՝ աստուած հարցն ձերոց առաքեաց զիս. և յերկրպագութիւն նմա հրաւիրէր: - 328. Երրորդ, *մովսէս* **ժ** հարուածովք տանջէր զեգիպտացիսն: - 328. Եւ յա՛յտ է աստի, զի սքանչելիքն քրիստոսի՝ շնորհք մարդասիրութեան է առաւել քան զմովսէսին: - 328. Յինգերորդ՝ *մովսէս* զծովն պատառեաց: - 328. Վեցերորդ, *մովսէս* զդառն ջուրն քաղցրացոյց և զգետն յարիւն դարձոյց: - 328. Եօթներորդ՝ *մովսէս* **խ** օր անսըւաղ պահեաց ի լերինն: - 328. Ութերորդ, *մովսէս* **խ** օր ի մէջ ամպոյն կալով էառ զպատուիրանսն: - 328. Տասներորդ, *մովսէս* զեռայարկ խորանն կանգնէր ի չորից նիւթոց: - 328. Մետասաներորդ, *մովսէս* զառաջին տախտակն խորտակեաց և ի նորն գրեաց զօրէնսն: - 328. Երկոտասաներորդ, *մովսէս* **հ** ծերս ընտրեաց և ետ ի հոգւոյն: - 328. Չորեքտասաներորդ, *մովսէս* հաց զմանանայն ետ և լորամարգ ի ծովէ՛: - 329. Վեշտասաներորդ, *մովսէս* ետ զթլփատութիւնն և զլուացումն ջրոյ: - 329. Եօթնևժ, *մովսէս* մի անգամ պատարագեաց և ետ ցահարօն և ցորդիսն: - 329. Ութևժ, *մովսէս* զօձն բարձրացոյց որ զօձահարսն բժշկէր: - 329. Իննևժ, *մովսէս* տարածմամբ ձեռացն զամաղէկ պարտէր: - 329. Քսանևմի, *մովսէս* **դ** ծնունդ ընկալաւ. ի մօրէ և ի ջրոյ՝ ի հրոյ և ի վիմէ: - 329. Քսանբ, *մովսէս* աստուած կոչեցաւ և իշխէր տարերաց: - 329. Քսանգ, *մովսէս* հուր իջոյց: - 329. Քսանևե, *մովսէս* զկախարդաց օձն կորոյս: - 329. Քսանևզ, *մովսէս* որդի կոչեցաւ դստերն փարաւոնի և փրկեաց զնա: - 329. Քսանևէ, *մովսէս* ի վախճանիլն իւր՝ կտակ գրեաց զլինելոցն, և զեկեղեցին յանձնեաց ի կոյսն յեսու: - 329. Քսանևը, *մովսէս* խաչանիշ գաւազանաւն զծովն պատառեաց: - 329. Քսանևթ, *մովսէս* միայն եմուտ յեգիպտոս և բազմօք ել: - 329. Երեսուներորդ, *մովսէս* ձեռն եդ ի վերայ եսուայ: - 330. Եւ ամպն ծածկեաց *զմովսէս*: - 330. Որպէս *մովսէս* լուաւ զպատգամն և ետ ժողովրդեանն: - 330. Յաբրահամէ՛ ի *մովսէս* քանի՞ ազգ է: - 330. Աբրահամ: Իսահակա: Յակոբ: Ղևի: Կահաթ: Ամրամ: *Մովսէս*: - 330. Յայրն *մովսէսի* ամրա՛մ է և մայրն յոքաբեթ: - 330. Փարաւոնի դստերն մառի կոչէին. որ արար *զմովսէս* իւրն որդէգիր: - 330. զոր եսպան *մովսէս* և փախեաւ ի մադիամ. - 330. *Մովսէս* խ ամեա էր յորժամ փախեաւ: - 330. Եւ այլք ասեն թէ՝ բանն աստուած էր. որպէս խօսեցաւ առ աբրահամ և առ *մովսէս*...: - 330. Դարձեալ՝ մորենին անարգ թուփ՝ նշանակէր զխոնարհութիւնն *մովսէսի* յոր հանգեաւ աստուած...: - 331. Դարձեալ՝ ամենայն որ ի լեառն աստիճանէ բարձրանայ որպէս *զմովսէս* և կամ այլ ինչ, պա՛րտ է սրբութեամբ պաշտել: - 331. Նախ գիտելի է, զի **գ** նշան տայ *մովսէս* ի դէմս սրբոյ Երրորդութեանն: - 332. Եւ ի ձեռն *մովսէսի* դարձեալ եղև գաւազան թագաւորական և քահանայութեան: - 332. Ըմբռնելն յուսադրեաց *զմովսէս* յաղթել ցփարաւոնի և հանդարտել: - 332. Եւ ի ձեռն խաչին ներգործին ամենայն սքանչելիք որպէս ի ձեռն գաւազանին *մովսէսի:* - 332. Չորրորդ՝ մին ձեռն *մովսէսի* մեռաւ բորոտութեամբ. զի մին ազգ փրկեցաւ նովաւ: - 332. Է՛ որ զէութիւնն փոխէ. որպէս *մովսէս* զգետն յարիւն դարձոյց և զգաւազանն յօձ. և այս կոչի սքանչելիք: - 335. Նա՛խ՝ զի կախարդքն զա՛յն առնէին զոր *մովսէսն* առնէր: - 335. Այլ զի տեսանօղքն զարհուրեալք ի ճշմարիտ նշանիցն *մովսէսի*՝ առ աչօք թուէր թէ և կախարդքն այնպէս առնէին: - 335. Երկրորդ՝ զի գաւազանն *մովսէսի* մի վիշապ եղեալ կլանէր զբազում վիշապս նոցա որ և հե՛տն միանգամայն ո՛չ երևէր. ընդէ՞ր ապա և նոցայն ո՛չ եկուլ *զմովսէսին*. քանզի սո՛ւտ էր: - 335. Երրորդ՝ կեղն և խաղաւարտն եղև և ի կախարդսն և զայլ հարուածսն կրեցին. և ո՛չ կարէին ի *մովսէս* և յահարոն դարձուցանել զնոյնս: - 335. Եւ կաւագործութիւնն խստացաւ ի *մովսիսի* **իբ** ամէն ի վեր. որ լինի **ծթ** ամ խիստ ծառայութիւն նոցա: - 337. Իսկ ըստ նսեբեայ, վպթ ա՛մ է. զկայնան **ճի** ամ ի ներս առեալ, որ է՛ որդի արփաքսաթայ՝ և հայր սաղայի. զոր յիշէ աւետարանն, և ո՛չ յիշէ *մովսէս:* - 337. *Մովսէս* զի՞նչ ասաց ի պատառել ծովուն: - 338. *Մովսէս* զի՞նչ ունէր բարձեալ: - 338. Եւ թէ ոք ասիցէ, պա՛րտ է ջուր խառնել ի խորհուրդն որպէս և *մովսէս:* - 341. Նա՛խ՝ զի *մովսէս* յայտնապէս զկէս արեանն անապական եհեղ զսեղանովն որ նշանակէր զանապական խորհուրդ արեանն. և զկէսն խառնեաց ի ջուր որպէս ցուցաւ ի խորհուրդ մկրտութեան և հաղորդութեանն խառնեալ: - 341. Նա՛խ՝ հրամայեաց աստուած գրել զլինելութիւն աշխարհի. և ձևացոյց ի միտսն *մովսէսի*...: - 342. Երեմիա և աշակերտն՝ տարան ի գիշերի զտապանակն և որ առ նմայն էին՝ ի լեառն սինա. և անդ կնքեցին ի վիմին անուամբն աստուծոյ ասելով, ո՛չ ոք բացցէ զսա՞ թէ ոչ *մովսէս* որ եբերն. և ո՛չ ոք բացցէ՝ թէ ոչ ահարօն: - 345. Երկրորդ՝ զի ի տախտակէն

խօսեցի ընդ *մովսէս:* - 349. Զի՞նչ զանազանի որ *մովսէս*՝ աստուած և տէր կոչեցաւ: - 350. Իսկ *մովսէս* ո՛չ բնութեամբ՝ այլ անուամբ և գործով. զի բարի առնէր և պատուհասէր: - 350. Նոքա ո՛չ հաւասար *մովսէսի* ներեն զքրիստոս աստուած. զի *մովսէս* աստուած կոչեցաւ. և զնա մարդ խոստովանին սոսկ: - 350. Եւ յանուանէն զօրացեալ էր *մովսէս*. և նոքա տկար և տգէտ: - 350. *Մովսէս* զգործ աստուծոյ գործ էր. և նոքա մարդոյ գործ որիշ և կամք: - 350. Վասն է՞ր լուսաւորեցան երեսքն *մովսէսի:* - 352. Վասն բազում պատճառի մեծահրաշ սքանչելիքս եղև առ *մովսէս:* - 352. ...զի ի *մովսէս* օրինակաւ՝ և ի քրիստոս ճշմարտութեամբ կործանեցաւ մահ. և ի յարութեանն առ հասարակ մեր: - 351. Չորրորդ՝ զի զարհուրեսցի ժողովուրդն և հնազանդեսցի *մովսէսի:* - 352. Եօթներորդ՝ զի որ աշակերտի *մովսէսի*՝ զլոյս ընդունի. և որ ո՛չ աշակերտի՝ ի խաւար մնացէ որպէս քանանացիքն: - 352. Իններորդ՝ ի յօրինակ արդարոցն լուսոյն. որ ո՛չ կարօտին արտաքին լուսոյ, սոյնպէս և *մովսէս* ո՛չ կարօտէր. զի ո՛չ բնական էր լոյսն. զի աչք բնական տեսութիւն ունի, այլ ո՛չ թէ լոյս: - 352. Դարձեալ՝ տէրն այլոց տայ զլոյսն. և *մովսէս* ո՛չ կարէ: - 352. Երկոտասաներորդ, լուսաւորեցաւ՝ զի քօղ արկցէ երեսացն. որ օրինակէ՛ զհին կտակարանս. որ քօ՛ղ է արկեալ և առագաստ մտաց նոցա. մինչև դարձցին առ տէր հոգիքն որպէս *զմովսէս*. և ապա վերասցի քօղն և յայտնեսցի լոյս գիտութեան նոցա: - 352. Քանի՞ անգամ ել ի լեառն *մովսէս:* - 352. Եւ **դ** է քառասունքն *մովսէսի* բաց ի յեւայն արտաքոյ միգին: - 352. Եւ մին յորժամ զլրտեսքն առաքեցին ի կագիսա. և **խ** օր յամեցին և *մովսէս* զխ պահեաց: - 353. Զայս ասէ մեծն ներսէս երեք քառասունք *մովսէսի* ըստ թուոյ ամաց նորին: - 353. Կամ զքրիստոսի քառասունքն պահեմք և *զմովսիսին* և զեղիային: - 353. *Մովսէսի* ասի գոլ **դ** ծնունդ: - 353. *Մովսէս* յամպոյն: - 353. Եօթներորդ՝ անդ մարդկային *մովսէսիւ*. և աստ աստուածային ի ձեռն քրիստոսի: - 353. Ութերորդ, նոքա մատուցանէին ի ձեռագործ խորանսն որ ի *մովսիսէ՛* կանգնեցաւ, իսկ տէրն մեր անցեալ ի ներքին կողմն վարագուրին...: - 354. Հնգետասաներորդ, նոցայն քահանայապետ *մովսէս* և ահարօն ո՛չ կարացին մտանել յերկիրն պարգևաց. իսկ քահանայապետն մեր էանց ընդ երկինս երկնից...: - 355. Եւ այսոքիկ մասնաւոր նուէրք բովանդակք զոր հրամայեաց *մովսէս:* - 359. Իսկ միւս խոյն կատարմանն, քահանայիցն կերակուր և նուէրքն *մովսէսի:* - 362. Իսկ մեք **խ** *զմովսէսին* պահեմք որ ի լեառն սինա, և յեսու արտաքոյ միգին: - 363. Նա՛խ ի սեղանն աբրահամու. և ապա՛ *մովսիսին* և ապա՛ դաւթին ի կալն ուռնայի. և ապա՛ ի տաճարին սողոմոնի. յետոյ ի սեղանն եղիայի: - 363. Այլ որ ուղիղն է, *մովսէս* յամենայն ժամ մտանէր ի սուրբն սրբոց. և ահարօն մի՛ անգամ ի տարւոջն. և քահանայքն ո՛չ մտանէին: - 364. Ի ներքուստ՝ սիրտն և երիկամունքն և լերդաբոյթն ընդ ճարպին ճենճերեալ ի հոտ անուշից. որպէս հրամայեաց *մովսէս:* - 367. Զի վարդավառին ա՛յն է, յորժամ կրկին խ պահեաց *մովսէս* ի լեառն և լուսաւորեցան երեսքն. վասն այն զկնի երկու յիսնակացն տօնեմք: - 373-374. Իսկ *մովսէս* և ահարօն և ա՛յլ քահանայք յարնելից կուսէ ուր սուրբն սրբոց էր պաշտէին: - 379. Երրորդ՝ զի յորում ժամու մտանէր *մովսէս* աղօթս առնել և խնդրուածս, աստուածախօսութիւնք լինէին ի միջոյ քերովբէիցն որ կային անդ: - 379. Երրորդ՝ ութն գունդ են ղևեայ գ որդւոցն, և *մովսէս* իններորդ: - 379. Քանի՞ առաւել որք յաստուած՝ և ի *մովսէս* մեղան որ աստուած կոչեցեալ էր և իշխան ժողովրդեանն: - 381. Այլ որ զուղիղն ասեն ա՛յս է, կորխ՝ եցոյց զօրինակ զղջման. զի լուաւ խրատուն *մովսէսի* և մնաց ընտրութեանն աստուծոյ ի դուռն խորանին: - 382. Իսկ դադան ամենևին անզեղջ մնաց. թէպէտ գնաց *մովսէս* ի խորան նոցա՝ ո՛չ զղջացան: - 382. Նա՛խ՝ բուրվառն օրինա՛կ էր ահարօնի, և գաւազանն՝ *մովսէսի:* - 382. Իսկ որ ի խորանէն բերին *մովսէս* և ահարօն զգաւազանն ծաղկեալ. զի ի սիօնէ՛ ելցէ օրէնք. որ է՛ յեկեղեցւոյ ամենայն իշխանութիւն: - 382. Երկրորդ, կարծէին թէ *մովսէ՛ս* տայ զջուրն: - 386. Վեցերորդ, *մովսէս* նշանակէր զհին օրէնքն որ բարկութեամբ բարի առնէր: - 386. Իսկ *մովսէս* հրամանաւն աստուծոյ արար պղնձի օձ. և բարձրացոյց ի դուռն խորանին. և որ հայէր ի նա՝ ապրէր ի թունից օձիցն: - 386. Զոր եզեկիա խարտեաց. որպէս *մովսէս* զգլուխ որթոյն և կորոյս: - 387. Որպէս զաւար մադիանացոց *մովսէս* մասնաւորեաց ի խորանն աստուծոյ: - 390. Եւ այսպէս բաժանեսցեն զաւարն. ի **ճէ**ն զմինն տայցեն քահանայապետին. և յիսնէն զմինն քահանայից և աղքատաց. և հնգէն զմինն թագաւորաց բաժին. և կէսն աւար բերողացն է զինւորացն. և կէսն այլ հեծելիցն. որպէս բաժանեաց *մովսէս:* - 390. Զի զահարօն և *զմովսէս* **լ** օր լացին: - 391. Զի՞նչ է որ *մովսէս* ետես զերկիրն և ո՛չ եմուտ: - 394. Նա՛խ՝ *մովսէս* նշանակէ՛ զհին օրէնքն. որ մինչ ի մկրտութիւնն եկն և վճարեցաւ: - 394. Զի՞նչ է որ *մովսէս* ետես նախ զծովն որ յարևմուտս, և զհիւսիս և զհարաւ, և ապա՛ զարևելս: - 394. Նախ՝ որպէս արեգակն եղև տեսութիւնն *մովսէսի*. զի յառաջ զարևմուտս տեսանէ. և վերացեալ զհիւսիս և զհարաւ. և ապա՛ զարևելս: - 394. Առաջինն ի դէմս նշանացն *մովսէսի:* - 395. Իսկ անապատ՝ գրաւոր օրէնքն ի ձեռն *մովսէսի:* - 395. Իսկ խորտակեալ տախտակն *մովսէսին* և մնացեալն՝ նո՛ր օրէնս: - 395. ...որպէս ասաց *մովսէսի* թէ՝ «լո՛յծ զկոշիկս քո». և ո՛չ կերակրոյ հացի ունէին պէտք. այլ բանն աստուծոյ կերակրէր զնոսա

որպէս ասացաւ...: - 397. ...վասն որոյ յայսմանէ ասեն ոմանք թէ՝ **գ** ամ կամ **խ** օր յամեաց ադամ ի դրախտին. որպէս ժողովուրդն ի յանապատին. կամ որպէս *մովսէս* ի լեառն: - 397. Ութերորդ՝ *մովսէս* ի լեառն եկաց **խ** տիւ և **խ** գիշեր անսուաղ. և կերակրիւր բանիւն աստուծոյ. նոյնպէս և եղիա. նաև տէր մեր ի փորձութեան լերինն: - 397. Երկրորդ՝ զի ասէ «իբրև զիս». իբրևն օրինա՛կ է. որպէս *մովսէս* աստուած կոչեցաւ, և տէր մեր էմմանուէլ. և զնա՛ հայր կնքեաց աստուած. և որպէս *մովսէս* իշխէր տարերաց, և տէր ի ծովուն գնայր, և ի վերայ օդոյն: - 399. *Մովսէս* օրէնս ետ՝ զի գիր տացեն մեկնելոյ զայր և զկին: - 400. *Մովսէսին* պատճառն վասն խստասրտութեան նոցա է որպէս տէրն ասաց. զի մի՛ սպանումն լիցի: - 401. Մեք ո՛չ կատարեմք զօրէնս *մովսէսի*, զի՞նչ լինիմք: - 403. զոր կախեցին զցայգ և զցերեկ յաւուրն ուրբաթու, և ո՛չ հաւատացին *մովսէսի* և զաքարիայ...: - 405. ...այսինքն կեանքն՝ որ ասաց *մովսէս* «տեսանիցէք կախեալ». զի *մովսէս* վասն իմ գրեաց զայն: - 405. Եւ թէ *մովսէսի* ոչ հաւատայք որ փառաւո՛րն է ի մէջ ձեր, ինձ զիա՞րդ հաւատայք որ թշնամի կարծէք: - 405. Զի հանապազ քօղ երեսացն *մովսէսի* առագա՛ստ է ի վերայ սրտից նոցա. և ոչ իմանան զտեսութիւն բանին. վասն որոյ ո՛չ հաւատան: - 405. Նա՛խ՝ կոչի աւագ, զի *մովսէս* երէ՛ց է և առաջին քան զամենայն մարգարէսն: - 407. Երկրորդ՝ զի միայն *մովսէս* կոչեցաւ աստուած. և ո՛չ անուամբ միայն, այլ և գործով իշխէր ի վերայ տարերաց ի վեր և ի խոնարհ. վասն այն աւագ օրհնութիւն կոչի: - 407. Վասն է՞ր մերձ ի վախճանն հարք և առաջնորդք օրհնեն զմնացորդս. որպէս *մովսէս* և յակոբ և այլ նահապետք: - 408. Զռուբէն անէծ յակոբ. *մովսէս* վասն է՞ր օրհնէ: - 409. Հինգերորդ՝ բարձրագոյն էր *մովսէս* քան զյակոբ. կամ հաւասար նմին: - 409. Երրորդ՝ օրէնքն որ ի ձեռն *մովսէսի*՝ էր խափանիչ մեղաց և մահու: - 409. Չորրորդ, մահ՝ այսինքն սատանայ որ յաղթեաց ադամայ. իսկ մարմնոյն *մովսէսի* ո՛չ կարաց յաղթել հրեշտակային օգնականութեամբն. որպէս ասի յառաջիկայդ: - 409. Հինգերորդ՝ *մովսէս* օրինա՛կ էր, և ճշմարտութիւնն քրիստոս. առ որ խափանեցաւ մահ, և թագաւորեաց կեանք: - 409. Վեցերորդ ըստ մտաց, զի *մովսէս* ջրածին լսի. զի որք ո՛չ ծնանին աւազանաւ, ընդ մահու իշխանութեամբ են: - 409. Զի՞նչ էր պատերազմն ընդ մարմնոյն *մովսէսի:* - 409. Երկրորդ՝ զիոգին *մովսէսի* ո՛չ կարէր յափշտակել սատանայ, փոխանակ հոգւոյն զմարմինն ջանայր յափշտակել. և վիճէր ընդ հրեշտակին թէ իմ է...: - 410. Երրորդ՝ վախճանեալ *մովսէս* ի լերինն, և միքայէլ փոխադրէր զմարմինն. սկսաւ սատանայ հայհոյել զսուրբն և սպանօղ անւանել վասն հարկանելոյն զեգիպտացին. վասն որոյ սաստեաց նմա հրեշտակապետն: - 410. Չորրորդ՝ տեսեալ *զմովսէս* առաւել փառաւորեալ, և յետ վախճանին թոյլ ետ ներողութիւնն աստուծոյ ժպրհիլ բանսարկուին ստգտանօք մեղաց. զի մի՛ տացեն նմա զգերազանց պատիւն աստուած կարծելով: - 410. Վեցերորդ՝ ի թաղումն *մովսէսի* միքայէլ սպասաւորեաց. որում սատանայ հակառակ կայր ներողութեամբն աստուծոյ: - 410. Եօթներորդ՝ ոմանք մարմին *մովսէսի* զօրէնսն ասեն. զոր ի բերելն հակառակէր սատանայ, խոտան և անարժան գոլ ժողովրդեանն. վասն որոյ միքայէլ վերակացու ժողովրդեանն հալածէր զնա: - 410. Ութերորդ՝ և ոմանք զմարմինն *մովսէսի* զժողովուրդն կոչեն յելսն եգիպտոսի. որ հակառակէր ազատելոյ զնոսա յեգիպտոսէ՛: - 410. Իններորդ՝ ի ժամ այլակերպութեան տեառն ի բերել հրեշտակապետին *զմովսէս*, ասէ սատանայ ցհրեշտակն, ստեաց աստուած *զմովսէս* մուծանել յերկիրն ուր երդուաւ ո՛չ մտանել նմա: - 410. Վասն է՞ր ո՛չ գիտեն զգերեզմանն *մովսէսի*: - 411. Վասն է՞ր ո՛չ թարշամեցան ծնօտքն *մովսէսի:* - 411. Քանի՛ ամաց պատմութիւն է ե գիրքս *մովսէսի:* - 411. Զոր յիշէ աւետարանն ղուկասու, և մնացորդացն գիրք. և ո՛չ յիշէ *մովսէս*. զի զսկիզբն կռապաշտութեան ի նմանէ՛ ասեն լինիլ: - 411. *Մովսէս* նշան կատարեաց մեծամեծ. նոյնպէս և ա՛յլ մարգարէք. փրկչին մերոյ ո՞րն է առաւել քան զնոցայն: - 411. Որ ի կաւոյ աչք ստեղծ. և մեռեալս յարոյց. և զանշունչ նկանակս աճեցոյց. զոր ոչ արար *մովսէս:* - 411. Որ և *մովսէս* եկեալ ի թաբօր վկայէր նմա, և աղերսէր ելանել ի խաչ և բանալ զդուռն արքայութեան. որում մարգարէքն սպասէին: - 411. Ընդ *մովսէսի* **ճկռ:** - 412. *Մովսէսի* և ահարօնի **ժե**: - 412. *Մովսէսի* և ահարօնի և մարիամու **ա**: - 412. *Մովսէսի* և եղիազարու **բ**: - 412. Ո՞րքան կոչին անուանք արարչին ի գիրս *մովսէսի*: - 412. Կատարեցաւ Վեցերորդ Հատոր Հարցմանցս Հինգ Գրոցն *Մովսէսի*. ի Փառս Յիսուս Քրիստոսի Աստուծոյ մերոյ: - 412. Յետ վախճանելոյն *Մովսէսի*՝ առաջնորդեաց ժողովրդեանն փոխանորդ նորին Յեսու որդի նաւեայ. ի ցեղէն եփրեմի: - 414. Վասն է՞ր յետ *մովսէսի* եղև զօրավար յեսու: - 414. Երկրորդ՝ զի չարչարակից եղև *մովսէսի*. պահելով զերեք քառասունս ընդ նմա: - 414. Իսկ յետ մահուանն *մովսէսի* վերացաւ ամպն. և հրամայեցաւ ժողովրդեանն հեռու կալ կանգունս երկուց հազարաց վասն փառաց տապանակին և վասն զօրութեան նորա: - 415. Հինգերորդ՝ զի քրէական մեղքն ազգաջինջ առնէ. որպէս զդադան և զաբիրոն. զի ընդ *մովսէսի* և աստուծոյ հակառակ կացին, ազգօք և աղխիւք ընկղմեցան զի այլքն երկիցեն: - 416. Բարձրամեծարն գործոյ ներմարդութեան բանին աստուծոյ՝ բազում եղեն նախատիպք խորհրդոյ. որպէս *մովսէս*, յովսէփ, իսահակ: - 417. Երրորդ՝ *մովսէս* զձեռն եդ ի վերայ եսուայ և

կացոյց զնա՛ առաջնորդ: - 417. Չորրորդ` *մովսէս* եբեր մինչ ի յորդանան, և փոխանորդեաց յեսու: - 417. Եօթնեժ` յեսու կանգնեաց զգայիսոնն ի գայի, մինչ կոտորեցան թշնամիքն. որպէս *մովսէս* տարածմամբ ձեռաց զամաղէկ: - 418. Քսանևը` զոր ինչ պատուիրեաց *մովսէս*` զնոյն և արար յեսու: - 419. Որպէս և *մովսէս* զտախտակն աստուածագիծ խորտակեաց վասն յանցանաց ժողովրդեանն: - 425. Կրկին կործանիլն դագոնայ, զի նախ` օրինօքն *մովսէսի* անկաւ, և քրիստոսիւ կործանեցաւ: - 425. Ասեմք եթէ` *մովսէս* արիւն եհեղ. և յեսու բազում. և սամուէլ. և ո՛չ մեղանչեցին: - 439. Եւ տես, զի վրէժխնդիրն օրինացն *մովսէսի*` նախ ի՛նքն լուծանէր զօրէնս. զի ագռաւն պիղծ էր օրինացն: - 443. Եւ վասն այն գնաց ի սաբեփթա յայլազգիս. զի և զնոցա նեղութիւնն տեսցէ. որք չէին անցեալ զօրինօքն *մովսէսի*: - 443-444. Յետոյ վասն գազանաց երկրին` հնազանդեցաւ գրոյն *մովսէսի*. և ծածկեցին զաստուածս իւրեանց ի լերին սոմորոն. և անդ երկիր պագին սամարացիք: - 447. Չին կտակարանք` հինգ գիրք *մովսէսի* ա՛յս են: - 450. Օրէնք է *մովսիսի* **ե** գիրքն որ ասացաւ: - 451. Ամինադաբ ամաց խե` ծնանի զնայասօն. և էր ասէ ամինադաբ սպարապետ զօրուն յուդայի ի հանել *մովսէսի* զորդիսն իէլի յեգիպտոսէ: - 452. Ժողովին ի *մովսիսէ*՛ և յելիցն յեգիպտոսէ մինչև ցշինուած տաճարին ամք դճձ: - 452. Նոյնպէս և բանն աստուած թէ կարի իսկ յառաջին դարս էր մարմնացեալ, որպէս յաւուրս նոյի` աբրահամու և կամ *մովսէսի*` լինէր կրկին վնաս: - 467. Եւ զբնականն աբրահամու. իսկ զգրաւորն *մովսիսի*: - 467. Չինգերորդն *Մովսէսի*. իսկ Վեցերորդ դարն` յորում ծնաւ Փրկիչն մեր Քրիստոս. և փրկեաց և բժշկեաց զմեզ: - 467. Է՛ և այլ եղանակ ծննդեան տն բաղդատութեամբ առ *մովսէս* ասացեալ ի վերոյ ի **ի** գլուխն, ի **իզ** համարն: - 472. Եւ որպէս զմարմնաւոր թլփատութիւնն աւանդեաց աբրահամու, նոյնպէս զհոգևորն որ է՛ թլփատութիւն սրտի` հրամայեաց ի ձեռն *մովսէսի*...: - 486. Գրաւորն *մովսէսի*. իսկ Աւետարանն չորրորդ ի ձեռն խաչին: - 494. Այլ և տարածումն ձեռացն *մովսէսի* ընդ դէմ ամաղէկայ: - 494. Այլ և տապանն նոյի. և տապանակն *մովսէսի* և քաւութիւնն ի վերայ: - 494. Այլ և գաւազանն հրաշագործ ի ձեռն *մովսէսի*: - 494. Այլ ա՛րդ` *մովսէս* բովանդակ զժողովուրդն եհան յանապատ: - 507. Վեցերորդ` ի մէջ գիշերի հրեշտակն եհար զեգիպտոս. և *մովսէս* եհան զորդիսն իէլի. որ էր օրինակ աւերման դժոխոցն և ազատութեան հոգւոց: - 512. Եւ յորում ժամու ել *մովսէս* յեգիպտոսէ և եհան զժողովուրդն, ի նոյն ժամն յարեաւ քրիստոս ի մեռելոց և եհան ազատեաց զհոգիսն ի հրահալոց չարութենէ դժոխոցն և ի բռնութեանց իմանալի փարաւոնին: - 512. Եօթներորդ` դարձեալ յաւուր կիրակէի էանց *մովսէս* ընդ ծովն կարմիր. և ընկղմեցաւ փարաւօն ի տիպ յարութեանն քրիստոսի և կորստեան սատանայի: - 512-513. Նա՛խ` զի յայսմ աւուր երևեցաւ աստուած *մովսէսի* ի սինա լեռինն: - 523-524. Երկրորդ` և յայսմ աուր տուաւ նոցա օրէնք ի ձեռն *մովսէսի*: - 524. Գրաւորականն` *մովսէսիւ* իսրայէլի: - 528. ...որ եզր եղև հաւատոյ ուղղութեան. և հրամանաւ հերակլի հաւանեցաւ ժողովոյն քաղկեդոնի. կացեալ զ կաթողիկոսք նոյն աղանդովն որ են այսոքիկ. Եզր. *Մովսէս*. Անաստաս. Իսրայէլ. Սահակ. Եղիա: - 545. Այլ թէ գիր չունէր մեր ազգս, տե՛ս զի յաստուծոյ տուաւ մեզ գիր, որպէս *մովսէսիւ* իսրայէլի. և այլ ո՞ր ազգ պարծի այսու: - 549. Ո՞չ ապաքէն *մովսէս* ի հինն որոշեաց զսուրբս և անսուրբս. մանաւանդ թէ յաւուրս նոյի գոյր ընտրութիւնս. այսպէս ցուցաւ և մեզ պահելի իբր զբնական օրէնս. այլ սոցա ոչինչ է պիղծ ի կենդանեաց: - 552. Այլ և մարգարէն *մովսէս* դնէր յերեսաց սեղանն զառ մի խորովեալ. և հաց և գինի և չորրորդ մասն դորակի հանապազորդ. և ջուր ո՛չ դնէր: - 595. Իսկ ի թաբօր լերինն ձայնիւ հայրական և հովանեաւ հոգւոյն եղև քահանայ. ցուցեալ *մովսէս* և եղիա սարկաւագունք յաջմէ և յահեկէ: - 607. Ոմանք ասեն եթէ` *մովսէս* զդատաւորսն ի **դ** բաժանեաց ամենայն ժողովրդեանն. որ էր **ժ**ապետ. յիսնապետ. **ճ**ապետ. և **ռ**ապետ: - 609. ...որպէս *մովսէս* եղև որդէգիր դստերն փարաւօնի: - 611. Զի եկեղեցին ժողովո՛յ է անուն. որպէս հրամայեաց աստուած *մովսէսի*` - 613. Երրորդ` զի *մովսէս* ի կանգնել զխորանն օրինակի` արեամբ նոխազաց և ջրով և իւղովն էօծ և սրբեաց: - 615. Չորրորդ` զի սողոմոն յորժամ շինեաց զտաճարն` յաղօթս եկաց և նոյնպէս օրհնեաց և օծ. որպէս *մովսէս*...: - 615. Չորրորդ` զի խորանն *մովսէսի* խաչաձև էր կանգնեալ որպէս մերս եկեղեցի: - 616. Այլ *մովսէս* օրինադրեաց ի թիւքն առնել կրկին փողս արծաթի. և կոչեաց զնոսա փողս ազդեցութեան. որպէս դեռևս գոն ի դրունս թագաւորաց կրկին փողք: - 618. Գիտելի՛ է, զի ի հին օրէնսն *մովսէսի* է ժամ էր աղօթից...: - 621. Եւ **ե** երորդն առ *մովսէս* մեծ եղև զօրութիւնն: - 629. Եւ ի **ե** դարն *մովսէսի* և սողոմոնի արարուածքն: - 638. Զաքարիա Սիմա Ելիա *Մովսէս* տաւղօք երգէին: - 641. Յետ *մովսիսի* դաւիթ է առաջին մարգարէ...: - 643. ...զի սուրբ գիրք կամ զառաջինսն պատմեն. որպէս *մովսէսին*. կամ զվերջինսն կանխաճառեն. որպէս եսայեայն և այլոցն: - 643. Եւ *մովսէսիւ* խօսեցաւ զօրէնս: - 644. կամ *մովսէս* որ պատմեաց զօրէնսն աստուծոյ...: - 644. Որ և *մովսէս* նկարեաց զքերովբէսն հովանի ունել ի վերայ քաւութեանն: - 645. Նա՛խ` գրակալն նշանակէ՛ *զմովսէս*. որ ընկալեալ զպատգամն աստուծոյ` խօսէր առ ժողովուրդն: - 646. ...որ է կրկին տախտակն *մովսէսի*. յանձնառական և հրաժարական օրինօքն

միաւորեալ: - 646. Դարձեալ՝ *մովսէս* զ օր արտաքոյ ամպոյն և հրոյն եկաց - 651. Եւ ևս՝ եղիայի և *մովսէսի* քառասնիցն, սկիզբն է առաջին շաբաթն. և կատարումն տօնն ղազարու: - 651. Իսկ վասն քառասնից պահոց, Նախ *մովսէս* պահեաց կրկին խ ի լերինն. և յետու ըստ նմա: - 652. Եւ մին *զմովսիսին*. որ է՛ վարդավառին: - 653. Նախ այն է՝ որ հրամայէր *մովսէս* պղծոցն լուանալ զմարմինն և ողողել զհանդերձն և արտաքոյ կալ մինչև յերեկոյ: - 653. ...յորժամ այս ամենայն հաստատեալ նորոգեցաւ հրամանաւ սրբոյն սահակայ պարթևի ի փառս քրիստոսի. ձեռամբ իմով *մովսիսի* գրչի սահակայ: - 659. Եւ վարագոյր ծածկոյթն, որպէս ի թաղումն *մովսէսի* ամպն ծածկեաց...: - 674. Իններորդ, զ տեղիք մարդկան նշանակեցաւ յեռայարկ խորանն *մովսէսի.* առաջին միջին և վերջինն: - 682. Տասներորդ՝ զ օրս այս նշանակեցաւ որ ասէր *մովսէս* ցփարաւոն՝ արձակեա՛ զիսրայէլ. - 682. Եւ ծովն պատառեալ ի ձեռն *մովսիսի* այսինքն խաւարային անդունդք օդոյդ ի ձեռն առաջնորդ հրեշտակին: - 682. Զի դիոնէսիոս հաստատէ՛ *զմովսէսի* բանն թէ «կացոյց սահմանս հեթանոսաց ըստ թւոյ հրեշտակաց աստուծոյ»: - 713. Պատասխանեն վարդապետք թէ՝ որպէս *մովսէս* թանձրամիտ ժողովրդեանն իսրայէլի պատմէր զլինելութիւն արարածոց ի զ օրս, - 717. Ի թաբօր *մովսէս* և եղիա վկայէին վասն մահու նորա: - 742. Իսկ Երրորդն արքայութիւն, գուշակի յաւազանն պղնձի. զոր հրամայեաց *մովսէս* առնել ի հայելեացն կանանց որ նստէին առաջի դրան խորանին. յորում լւանային որդիքն ահարոնի նախ քան զմտանելն ի սուրբն սրբոց: - 756. Եւ քանզի *մովսէս* որ ջրային կամ ի ջրոյ հանեալ թարգմանի. թէպէտ երբեմն զօրէնս և երբեմն զտէրն նշանակէ. այլ աստ ոչ զօրէնս, այլ զտէրն գուշակէ՛. որ ի ջուրց մարդկայինս բնութեան ընկալեալ եղև: - 756. Կամ առողջ որպէս *զմովսէս*. որում ո՛չ վատեցին աչքն և ո՛չ շարժեցաւ ատամն: - 761

**ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ** - Երանելին *մովսէս խորենացի*՝ որ էր գրիչ սրբոյն սահակայ պարթևի, յետ ճժ ամի սրբոյն գրիգորի՝ եղև սկիզբն թարգմանութեան ի հայոց լեզու: - 658

**ՄՈՎՍԷՍ ՔԵՐԹՈՂ** - *Մովսէս քերթողն* զծննդեանն, և զմեծացուսցէքն, և զտեառնընդառաջին, և զփոխման առաջին պատկերն: - 637

**ՄՈՎՍ** - Նա՛խ՝ զի խնայեաց աստուած ի ծերութիւն նորա որպէս ի *մովսին:* - 416

**ՄՈՎՍԻՍԵԱՆ +** Եւ այս՝ և պատերազմն վասն *մովսիսեան* մարմնոյն՝ ցուցանեն զպատերազմ հոգւոյ յետ ելից մարմնոյն: - 445. ...այլ ասէ՝ «սաստեսցէ՛ ի ձեզ տէր». որպէս միքայէլ վասն *մովսիսեան* մարմնոյն. - 703-704

**ՄՈՏԱՄՆԱՑԻՔ** - Եւ այս են հք լեզուքն... *Մոտամնացիք*: - 298

**ՄՈՐԵՆԻ +** Քանանդ, Վասն *մորենւոյն*. և Որէ՛նն անուն: - 283. Զի՞նչ էր *մորենին* վառեալ: - 330. Եւ զի ո՛չ նկարեցաւ ի պատկեր կռոց և ո՛չ պաշտեցաւ *մորենին*. վասն այն տէր երևեցաւ ի նմա: - 330. Նա՛խ՝ *մորենին* է՛ նշանակ ժողովրդեանն իսրայէլի յեգիպտոս, որ վառեալ տանջիւր և ո՛չ սպառիւր. այլ առաւելոյր օրհնութեամբն աստուծոյ: - 331. Դարձեալ՝ *մորենին* անարգ թուփ՝ նշանակէր զխոնարհութիւնն մովսէսի յոր հանգեաւ աստուած...: - 331. Դարձեալ՝ *մորենին* էր կոյսն մարիամ, որ զիմանալի հուր աստուածութեանն յինքեան կրելով ո՛չ կիզաւ...: - 331. Եւ տեղեակքն ասէին, սա՛ է որ ի *մորենւոջն* և ի ծովուն զաքանչելիսն արար: - 638

**ՄՈՐԹ +** Եւ յոչ էից՝ զի սակաւ հիւթն այն՝ ո՛չ կայր միս և ոսկր և ջիլ. կամ *մորթ:* - 37. Դարձեալ՝ ա՛յլ է բնութիւն մարմնոյն. ա՛յլ ոսկերացն. և ա՛յլ է ջիլն և երակն և *մորթն* և մազն և իւրաքանչիւր մաղձքն. ըստ այսմ ապա սա՛ և բազում բնութիւնս քրիստոսի: - 176. Երրորդ՝ *մորթ*. որպէս սողնոց: - 216. Չորրորդ՝ մզղնաձև *մորթն:* - 239. Նախ՝ մազն ի վերոյ. և *մորթն*. և միսն. վերին ոսկրն. և ներքին պինտ ոսկրն. խելապատակ մաշկն. և ուղեղն: - 239. Որ է՛ մազն. և *մորթն*. և միսն. և արիւնն. և ջիլն. և ոսկրն. և ուղեղն ի մէջն: - 240. Ոսկերքն ի ներքոյ սիւն է մարմնոյն, և *մորթն* ծածկո՛յթ է մսոյն և այլոցն: - 240. Կամ զօդուածք ներքին գլխաւոր անդամոցն և արտաքին մարմնոյն, որ *մորթ* և միս և արիւն և այլքն առ միմեանս յօդին՝ լինին նոյնքան: - 244. Իսկ զի կէսք քարց և անմորուք լինին, զի ջլապինտ է *մորթ* երեսացն որպէս զթաթ ձեռաց. վասն որոյ մազ ո՛չ բուսանի: - 245. Սիրտն իշխա՛ն է անձինն. յորժամ երկնչի՝ զարիւնն առ ինքն ժողովէ իբր զօրք առ թագաւորն. և մնայ *մորթն* բնական գունովն դեղին: - 245. Նոյնպէս յորժամ ամաչէ՝ զարիւնն սփռէ ի մարմինն, և քօղ արկանէ վասն ամօթոյն. յայնժամ յարենէն շառագունի *մորթ* երեսացն: - 245. Զի խարտեաշ մաղձն ընդ արիւնն և ընդ *մորթն* խառնի: - 245. Ութերորդ՝ մաշկեղէն հանդերձն. ո՛չ ըստ ոմանց թէ *մորթ* մարմնոյս, զի ունէր զայս ի ստեղծմանէն: - 280. Այլ *մորթ* մաշկեղէն ստեղծեաց և զգեցոյց նմա փոխանակ լուսեղէն զարդուն. զմեռելութիւն նորա նշանակելով: - 280. Մաշկն է կենդանական *մորթ*. զոր ստեղծեաց աստուած և զգեցոյց զադամ և զևա: - 281. Իսկ մաշկն որ է՛ *մորթ* մեռելոյ, նշանակէ՛ նախ զսուգ և զտրտմութիւն վասն մեղաց: - 281. Ըստ

այնմ որ իր է՝ *մո՛րք* է մաշկեղէն զոր զգեցոյց: - 282. Իսկ կցկցեալ. զի յօդեալ և կցեալ են ոսկերք մարդոյն առ իրեարս. և ի ներքոյ միս՝ և արտաքոյ *մորթն* է պատեալ: - 293. Վեցերորդ հարուածն է՛ կեղն և խաղաւարտն. զի քերքեշէ՛ր *զմորթն*, և ի վեր եռացեալ լինէր խաղաւարտն. և մորմոքէր զմարմինս նոցա: - 334. Եւ զայլն բովանդակ *մորթով* և փորոտիւք և գլխով հանեն ի մոխրակոյտն և այրեն անդ: - 358. Եւ *զմորթն* ի բաց հանել. զծածկոյթ մեղացն: - 360. Եւ *զմորթ* մեղաց մերկացեալ ի մէնջ որ է՛ հաճոյ աստուծոյ ի հոտ անուշից: - 362. Եւ զայս ցուցանէ *զմորթն* ի բաց հանելն և ապա՛ պատարագել: - 363. Եւ *զմորթն* որ է ծածկոյթ մեղաց...: - 367. Զի պղծոցն ամենայն ինչ պիղծ է. որպէս պիղծ կենդանւոյն շան՝ *մորթ* և մազ և միս և այլն: - 416. Այլ և ոսկր միս ջիլ և *մորթ*՝ մի անդամ շարադրեն: - 476

**ՄՈՐԹԵԼ +** Սպանանել՝ է՛ զենուլն. և *մորթելն* քերթե՛լն է: - 358

**ՄՈՐԹԻ +** Որպէս յարարածս աստուած ճանաչի, այսպէս և ի մարմնոյս զհոգին օրինակաւ իմանալ *մորթի:* - 250

**ՄՈՐՄՈՔԵԼ +** Վեցերորդ հարուածն է՛ կեղն և խաղաւարտն. զի քերքեշէ՛ր զմորթն, և ի վեր եռացեալ լինէր խաղաւարտն. և *մորմոքէր* զմարմինս նոցա: - 334. Եօթներորդ, զի մի՛ յարաժամ տեսցեն կենդանիքն և *մորմոքեսցին* սիրտք նոցա: - 677

**ՄՈՐՈՍ +** Նա՛խ՝ ի սեռս իւր ներելի և փոքր. որպէս դատարկաբանելն և *մորոսն:* - 385. Նմանապէս այն որ ասէ եղբօր իւրում *մօրոս*, պարտաւոր լիցի աստի դատաստանի և գեհենի խղճի մտացն: - 704

**ՄՈՐՈՒՔ +** Ասեմք եթէ երանքն. զի թէ հատանեն զերանսն, մարդն լինի որպէս կին. և *մորուս* ո՛չ բուսանի: - 245. Վասն է՞ր թաթարին *մորուս* ո՛չ բուսանի: - 245. Հնդկացւոցն *մորուս* ո՛չ բուսանի վասն սաստիկ ջերմոյն: - 245. Եւ հիւսիսայնոցն ո՛չ բուսանի վասն խիստ ցրտոյն. և միջերկրայքս վասն բարեխառնութեանն *մորուս* ունին: - 245. Իսկ *մորուս* կոչին մարգարէք և առաքեալք և հայրապետք մերձ բերանոյն առ մեզ խօսելով զպատգամս օրինացն աստուծոյ: - 534. Իններորդ՝ կին ո՛չ առնուլ քահանայից. և *զմորուսն* ածիլել. և զգլորեալն կանգնել անխտիր: - 553

**ՄՈՒ +** Զի թէ ասես միաւորական, ահա՛ արարեր դու զանձն բնութիւն. զի բնութիւն է միարար ըստ պորփիւրի, տեսակին կցորդութեամբ բազում մարդիկ *մու:* - 86

**ՄՈՒԹՆ +** Եւ զի ամպ և մէգ և *մութն* պատէ՛: - 197. Դարձեալ՝ ցուցանէ՝ իբր թէ սիրելոյն որ մեռաւ՝ կցորդիմք և չարչարեմք զմարմինս. մերկանալով, ի սով և ի ծարաւ, ի *մութն* և ի հող որպէս նա ի գերեզմանի եղև: - 670

**ՄՈՒԽ +** Որպէս բան ի ձայն՝ և բան ի գիր՝ և լոյս յօդ՝ և տեսութիւն յակն՝ և հուր յերկաթ՝ և *մուխ* ի պողպատ: - 769-770. Եւ թէ ի թիկանց նետք *մուխք* սատանայի, սովաւ զգուշացիր և անքոյթ մնաս: - 770

**ՄՈՒԾԱՆԵԼ +** Վկայ անիրաւ զտնէ՛ հայհոյեն. և դա՛տ խռովութեան ի ժողովս *մուծանեն:* - 34. Զի թէ ի վերայ բնութեանն, **բ** կատարելութիւն *մուծիք* յերրորդութիւնն. զի Երրորդութիւնն մի բնութիւն է կատարեալ. և մի բնութիւն մարդոյ: - 68. Իսկ թէ առանձնապէս մարդոյն, ահա նո՛ր իմն և առժամայն *մուծանես* աստուած՝ հրեշտակաց և մարդկան երկրպագելի: - 70. Իսկ թէ զմարդկային բնութիւնն պաշտէք, եղէք կռապարիշտք. և նո՛ր և եղական ոմն աստուած *մուծանէք* յերրորդութեանն կարգ: - 90. Եւ տէրն զհարսնացեալ եկեղեցի *եմոյծ* վերըստին ի դրախտն որ զվեց դարիւ արգելեալ էր և փակեալ: - 305. Իններորդ՝ ի ժամ այլակերպութեան տեառն ի բերել հրեշտակապետին զմովսէս, ասէ սատանայ ցհրեշտակն, ստեաց աստուած զմովսէս *մուծանել* յերկիրն ուր երդուաւ ո՛չ մտանել նմա: - 410. Մին ի մէջ եւայի և բանսարկուին. որով *մուծաւ* մահ ի ներս: - 465. Դարձեալ՝ մահն ադամայ զմահ *եմոյծ* ի բնութիւնս. և մահն քրիստոսի ելոյծ զմահ և եբարձ. և մահ մեր ո՛չ *մուծանէ* և ո՛չ լուծանէ: - 496. Եօթներորդ պսակն. որ է՛ խորհուրդ նոր զինուորս ի ներս *մուծանելոյ* ի ծնեռն մարմնաւոր ծննդեան: - 587. ...զի մի՛ համարձակեսցին քահանայք և զծէք օրհնելն վերստին *մուծցեն* յեկեղեցիս մեր: - 605. Երրորդ՝ զի չորրորդութիւն *մուծանեն* յերրորդութիւնն սուրբ...: - 633. Նա՛խ՝ զի շնորհն աստուածային պատկերին որ համանգամայն կամեցաւ զբոլոր բնութիւնս ըստ հրեշտակացն օրինակի *մուծանել* ի կեանս. - 716. Իսկ զի և արուի թէպէտ ո՛չ նոյն պիտոյիւք. սակայն ո՛չ ընդ վայր կազմեցաւ. ի լրումն **բժ**ան դրանց անդամոց. ի ներքս *մուծանելոյ* և արտաքս հոսելոյ զպակաս և զաւելորդս ինչ. անվնաս կելով կենդանւոյն: - 786

**ՄՈՒԿՆ +** Երկրորդ՝ յայլմէ այլք. որպէս ջորիք. և յարեգակնէ և յերկրէ գորտք և *մկունք:* - 53. *Մկունք*՝ գողքն: - 365. Զի՞նչ է որ զերաստանս ուռոյց, և *զմուկն* եռացոյց: - 426. Երրորդ՝ զի առ աքիմելէք նոյնպէս եղև. և որպէս յեգիպտոս գորտն. նոյնպէս և անդ *մուկն:* - 426

**ՄՈՒՑԱԿ +** Հրմայն է՝ որ զտեսս աչաց կամ զձայն հմայէ՛. և զբռիչս և զկըռիչս հաւուց. և զձայն կրակի և զաճառաց. և զդրան, կամ աքիս տեսեալ. կամ բէճ. կամ *մուճակ*. կամ այլ ինչ այսպիսի...: - 388

**ՄՈՒՆ +** Նա՛ կեղ և *մուն* յարուցանէր ի մարմին նոցա. և քրիստոս զբոր և զցաւս սրբէր ի մարմնոցն: - 328. Երրորդ՝ *մունն:* - 333. Երրորդ՝ հարուածն է *մունն* որ է՛ մանր տիզ. կամ մոծակ. կամ մժեխ. ի ցուցանել զի մանրակրծո՛ւ էին բարուք և խոցոտիչք բանիւք: - 334

**ՄՈՒՆԴ** - Եւ այս են **իբ** լեզուքն... *Մունդք:* - 298. Ծաղրական *մունդն:* - 299

**ՄՈՒՇԹԱՐԻ +** Երկրորդ՝ Լուսնթագն. զոր *մուշթարի* կոչեն. ջե՛րմ է և գէճ. մին ամ յամէ՛ ի կենդանակերպն. և ի ժբ ամն պատէ՛ զամենայն: - 189. Զզօհալն Կռօնոսի. *Զմուշթարին* Դիոսի. Զմառեխն Արէսի. Զարեգակն Իլիոսի. կամ Զևսիլոսի. Զօհրայն. Ափրոդիտեայ. Զօտարիտն Երմեսի. Զլուսինն Սելինի: - 190. Երրորդն լեա՛րդն է, աղբիւր արեանն. տա՛ք է և գէճ՝ ունելով զբնութիւն *մուշթարոյն*, որ տանուտէր է նմա: - 241. Դարձեալ **ժ**երորդ՝ աստեղագէտք ասեն թէ յղացումն ամենայն մարդոյ Զօհալին է. և յիւրաքանչիւր մոլորակս ամիս մի թուեալ՝ լինի ծնունդն ի *մուշթարին* **թ** ամիս: - 264

**ՄՈՒԽԱՍ** - Եւ այս են իբ լեզուքն... *Մուսաար*: - 298

**ՄՈՒՏ(Ք) +** Երեքտասաներորդն է՛ արուեստական օր՝ յարևելից մինչև ի *մուտս* արևու...: - 195. Վեցերորդ՝ *մուտն* Նիսանայ. որ է սկիզբն տարւոյ եբրայեցւոցն. և կազմութիւն մարդոյ ի սկզբանն: - 196. Քանզի եբրայեցիք և մակեդոնացիք՝ Զաւելեաց աւուրքն դնեն գլուխ տարւոյ. և ասեն օր առաջին. և **բ**. և **գ**. և **դ**. և **ե**. և վեցն *մուտ* Նիսան ամսոյ. որ թարգմանի կազմութիւն: - 200. Յոռի. զի հորե՛ն երկրագործք և մշակք զցորեան և զգինի, յշտեմարանս ժողովեալ. զի **թ** հոռի՝ *մո՛ւտ* է աշնան: - 200. Մարգաց. որ է՛ ժամանակ ածելոյ զմարդ. որ ի դաշտս և ի հովիտս իջեն. յայգեստանս և ի բուրաստանս. յորժամ արեգակն առ շամբն և յետ շանն իջէ. զի ի **ժգ**ն՝ *մո՛ւտ* է ամռան: - 201. Այլ և բազում բաղդատութիւն է *մուտն* իսրայէլի յեգիպտոս և ելն անտի: - 314. Եօթներորդ՝ ո՛չ ի *մուտն* և ոչ ի յելն՝ զկանայս նոցա ո՛չ թուէ. այլ զծնունդքն և զարսն: - 315. Իսկ **ե** կանգուն և կէսն. զի գալուստն քրիստոսի և փրկական խաչն և եկեղեցի՝ է՛ ի **ե**երորդ դարն և կէսն երևեալ ի *մուտ* **զռ** ամին: - 345. Այլ և յիսներեկին է է գառինս. և ի նոր *մտիցն* կրկին հաց ևս: - 359. Ութևժ՝ ի մէջ գիշերի է յարութիւն փրկչին, վասն որոյ յերեկոյն մերձ ի *մուտս* գիշերոյն ճրագալոյց առնեմք և պատարագ որպէս ի ծննդեանն: - 514. Զի յինն ժամու ուրբաթուն արձակեաց զհոգին և էջ ի դժոխս. և ապա՛ ընդ երեկոյս ի *մուտն* արևու մարմինն եմուտ ի գերեզման: - 516. ...որպէս այնք որք խոստովանին ի *մուտս* քառասնորդաց պահոց. որպէս ասէ եսայի: - 602. Յայս միտս մեք ազգս քրիստոնէից յելս արևու և ի *մուտս* համաձայն վերին զուարթնոցն աղօթեմք առ աստուած: - 621. Եւ դարձեալ՝ վասն ելից մեր և *մտից*. որ է՛ մահ և կեանք: - 623. Դարձեալ՝ փոխումն է մահն ժամանակի և *մուտ* յաւիտենին. - 667. իսկ մահն *մուտն* է անփոփոխ յաւիտենին. - 667. Զի արեգական ծագելն զծնանիլն մեր նշանակէ. և *մուտն* զգերեզմանն. իսկ այս առաւօտ զյարութիւնն հասարակաց: - 680. Այս է ի միւսանգամ գալուստն. որք զարծաթ բանին շահեցան, տալ զփառս և *զմուտն* ուրախութեան. և որք ո՛չ՝ նոյնպէս զտանջանս: - 693. Եւ վասն այն ասի արքայութիւնն աստուծոյ, զի պատուիրանօքն որ յաւետարանն կամ յայլ գիրս սուրբս գտանին, պահողացն արքայութեանն *մուտ* բացեալ լինի. և ներքին մարդս ամրացեալ հաստատի: - 754. Թէ ի բերան պատերազմի յել անմահին և ի *մուտ* մահկանացուին. դիցես պահապան բերանոյդ. լար կարմիր շրթանցդ. այսինքն հաւատով սիրով զօրացեալ. և ո՛չ բաժանիլ ի քնասիրութիւն և յարծաթսիրութիւն. յառաքինասիրութիւն. և յախտասիրութիւն. յընկերսիրութիւն և յարատսիրութիւն: - 770-771. Զի մասն որ առ կէտն արևելից՝ է՛ ներգործութեամբ ի յելս, և զօրութեամբ ի *մուտս:* - 788

***ՄՈՒՏ ԵՒ ԵԼ +*** Նոյնպէս և զամբողջութիւն կուսին՝ *մուտ և ել* աստուածն բան ո՛չ խախտեաց: - 469

**ՄՈՒՐԹՔԷ** - Զարթիր, ի սուգ տալով մեզ *զմուրթքէ*, և զեսթեր: - 28

**ՄՈՒՐԿ +** Եւ թէ զի՞նչ է պանն և *մուրկն* և այլն: - 284. Այլ որք յամառելով յօրինակն՝ ա՛ղ խառնեն ի խորհուրդն, պա՛րտ է նոցա խառնել և ձէթ և *մուրկ* և խունկ և միս գառին. կամ զանգեալ ի կասկարայս, կամ օծեալ ի տապակի, զի զօրինակն կատարեսցեն. և հեռասցին ի ճշմարտութենէն: - 357. Իսկ *մուրկ* փխրեալ՝ եղին է փշրեալ: - 357. Եւ բաց յայսցանէ մասնաւորք այս են: *Մուրկն:* Երախայրին: - 359. Իսկ *Մուրկ* նորահաս, և Երախայրիք կալոյ: - 361

**ՄՈՒՐՃ +** Գլուխն նշանա՛կ է մտաց. զոր չէ պարտ յաւելուլ՝ և ո՛չ պակասել. որպէս *մուրճ* ո՛չ գործէր ի սեղանն զի մի՛ պղծեսցի: - 390

**ՄՍԱԼԻՐ** - Կշտերն *մսալիր*՝ անխելամուտ է: - 247

**ՄՍԱԿԵՐ +** Նոյնպէս և յառիւծոյ և յիշոյ ո՛չ լինի ծնունդ. զի մինն *մսակեր* է և միւսն ընտակեր: - 267. Երկրորդ՝ թէ *մսակե՛ր* է: - 296. Նոյնպէս ի թռչունսն, կռաշուրթն և *մսակերն* նոքա են, որ պատառեն զընկերս՝ պիղծ են: - 365

**ՄՍԱԿՈՅՑ** - Լանջքն *մսակոյտ*՝ տխմա՛ր է: - 247

**ՄՍԱՀԱՆ +** Նա՛խ՝ երեքժանի *մսահանաւ* հանել զմիսն որ չէր օրէն: - 425

**ՄՍԵՂԻ +** Քսանեմի, հարին մինչև ի դրունս գեթայ. և հաւատացեալք մինչ ի դրունս դժոխոց. և եղեն ի տեսիլ ամենայն *մսեղեաց*: - 436

**ՄՍՈՒՐ +** Որ նստի ի քերովբէս՝ ի *մսուր* դնի: - 470

**ՄՏԱԲԵՐԵՄ +** Նա՛խ՝ զի ի հրեղէնսն *մտաբերեցին:* - 302

**ՄՏԱԴԻՒՐՈՒԹԻՒՆ +** Նաև ի յայն որում թողեալ լինի՝ **բ** ինչ պահանջի. այսինքն ցաւ վասն գործելոցն, և *մտադիւրութիւն* վասն ոչ գործելոցն...: - 567.

**ՄՏԱԴՐՈՒԹԻՒՆ +** Ա՛րդ՝ մեծագործութիւնն է մեծ և վեհագոյն իրողութեանց ի խորհուրդ և ի գործ ածումն ընդարձակ *մտադրութեամբ* հոգւոյն: - 580

**ՄՏԱԽՈՀ *(ԼԻՆԵԼ)*** - Եւ ո՞վ կարիցէ *մտախոհ լինիլ:* - 470

**ՄՏԱԾԵՄ +** Իսկ թէ իցէ հաւատ դիւաց, զո՛յ *մտածել* տղայական կարծեօք՝ թէ անկումն նոցա եղև հաւատոց պատճառ է որ է՛ սուտ: - 784

**ՄՏԱԾՈՒԹԻՒՆ +** Ա՛րդ՝ ո՛չէ ի յաստուած անձնաւոր էութիւն. որպէս երրորդական անձինքն. և ո՛չ բաժանեալ ի նմանէ. որպէս հրեշտակաց դասքն. և ո՛չ որպէս սոսկ *մտածութիւն* ի տեսութիւնն աստուծոյ: - 112. Իսկ գնդակ որ է կողմնաւոր՝ շարժի հոգին, յորժամ բնականապէս լուսափայլի յաստուածային գիտութիւնս տեսութեամբ և *մտածութեամբ*. և այնպէս հոգէպէս ի յաստուած միաւորի. որպէս աշակերտաց առաքելոց և մարգարէից: - 142. Որպէս և իմաստունքն ասացին զամենայն երևելիս յարացոյց իմանալեացն. զոր գոյ և որակ կոչեն. և զնիւթս պատկեր գոյին. զի որակն և գոյք անմարմին են և աննիւթաբար ի *մտածութիւնս* երևին: - 236. Առաջինն է սակաւ ինչ միայն յանցուած տեսութեան ըստ բնաւորական *մտածութեան* նորա առ ամենայն իրս: - 558. Եւ այսպէս լինի կատարեալ. մեղք խառնեալ օտարին գաղտնապէս, ընդ *մտածութեանն* բնաւորապէս: - 558. Նա՛խ՝ զի բեհեզն է՛ անօսր. ցուցանէ զանօսր էութիւն և *զմտածութիւն* սրբոցն առանց թանձրութեան մարմնոյ: - 712. Չորրորդ՝ վասն արմատոյն խոշորութեան. և խոշորութիւնն է **բ** կերպի...: - 765-766

**ՄՏԱԾՈՒՄՆ +** Չորրորդ՝ զի շինուածն ի միտս զօրութեամբ է և սոսկ *մտածմունք*: - 164. Իսկ առ աստուած ներգործութեամբ. զօրութեամբ և սոսկ *մտածմունք* ո՛չ բնաւ: - 164. Դարձեալ ասեմք թէ՝ ամենայն մեղաց *մտածումն* զղջո՛ւմն է նորին. իսկ պոռնկութեան *մտածումն* վերստին նորոգո՛ւմն է ախտին: - 166. Փորոտին զծածուկ խորհուրդն. զոր լուանալ հրամայէ՛ ջրով. այսինքն խոհականաւն զգարշելի *մտածմունս* սրբել: - 360

**ՄՏԱԿՈՒՐՈՒԹԻՒՆ +** Ո՞րպէս է մեծութիւն մեղաց... *Մտակուրութեամբ*. որպէս բարկութիւնն: - 565

**ՄՏԱՀԱՃՈՒԹԻՒՆ +** Աւա՜ղ անբան *մտահաճութեան* նոցա. որք զմիայն տէրն ուրացեալ, ածեն ի վերայ ինքեանց զարագահասն կորուստ: - 503

**ՄՏԱՆԵՄ +** Իսկ բանն աստուած է՛ ծնեալ ի հօրէ՝ այլ ո՛չ բաժանեալ. որպէս ո՛չ բաժանի բան՝ ի մտաց. թէպէտ ի բազում լսելիք *մտանէ*. և թէ ի վերայ քարտիսի մարմին զգենու: - 45. Այսպէս և քահանայապետն մեր միայն *եմուտ* ի ներքին կողմն վարագուրին: - 50. Ութներորդ՝ զոր դորքն փակելօք *եմուտ:* - 50. Ա՛րդ՝ ճանապարհո՛րդ էր ըստ մարմնոյ տնօրէնութեանն մահւամբ և յարութեամբ *մտանել* ի փառս: - 100. Իսկ չորրորդն է խորհրդական աստուածաբանութիւն. յորժամ զամենայն զգալի և զիմանալի էութիւն արտաքոյ թողեալ, ի խորս ընթանամք մտօք և *մտանեմք* յամպն և ի մէգն ըստ մովսէսի. և ապա տեսանեմք զնա արտաքս որոշեալ յամենայն էից: - 122. Նախ՝ զի դեղին լոյսն ձևանայ ընդ երբս կամ ընդ լուսանցս *մտեալ*, իսկ սպիտակն ոչ: - 125. Զի ընդ ժամանակաւ *եմուտ* և զստւեր օրինացն կատարեաց: - 125. Այս է յղացմամբ յարգանդի և ծննդեամբ. և քարոզութեամբ. և մահւամբ. և յարութեամբն և համբարձմամբն առ հայր՝ իբր զպսակ տարւոյ կատարեալ բնութեամբ մեր՝ ի ներքին կողմն վարագուրին *մտեալ:* - 126. Եւ ոմանք ասեն թէ՝ ընդ պատիւ մարդոյն նախանձեցաւ և ի խորհուրդ *եմուտ* թէ սորա կատարումն ի՞նչ լինի, և ո՛չ կարաց հասու լինիլ: - 147. Եւ զնայելոյն պատճառն իրինս մեկնէ թէ՝ զմարդոյն լինիլն ետես այնպէս փառաւոր և ի խորհուրդ *եմուտ* որպէս ասէ յոբ...: - 147-148. Եւ եթէ ոք ասիցէ, եթէ պոռնիկն դարձեալ ի կարգ քահանայութեան ոչ *մտանէ*, ապա չեղև իսկապէս թողութիւն: - 165. Ասեմք առ այս Նա՛խ՝ եթէ թողութիւնն է ի զղջումն. և կարգն է ի յանձն ապականեալ. ապա ուրեմն իրաւի թէպէտ զթողութիւն ընկալաւ զղջմամբն, սակայն ի կարգն ո՛չ *մտանէ* ապականեալ և շրջեալ անձամբ և բնութեամբ, զորօրինակ բեկեալ և կցեալ անօթ՝ ո՛չ թւի ի կարգ անարատիցն: - 166. Եւ թէ ոք ասիցէ, ընդէ՞ր այլ մեղուցեալն զղջացեալ *մտանէ* ի կարգ, որպէս հպարտն և ագահն և պոռնիկն ո՞չ: - 166....ապա ուրեմն յիրաւի ապականեալ մարմին ո՛չ *մտցէ*

ի կարգ: - 166. Երկրորդ՝ զի ձեռամբ գրչի *մտանէ* ի բառ. և առանց բերանոյ բարբառի. և տեսանի աչաց. և լսի ականջաց. և ուսուցանէ զմիտս: - 177. Վեցերորդ՝ զի ի բազում բանս *մտանէ* և գրի քան զայլ ձայնաւորս. և յա՛յտ է, զի բազում իմաստութիւնս ծնանի: - 178. Եւ բնականն Նախ այսպէս. զի օդն որ ի մէջէ *մտեալ* և փեռեկեալ զներքին և զվերին կիսագունդն, նա՛ է պատճառ շարժութեան երկնից: - 182. Վարդապետք ասեն. որպէս սուրբն բարսեղ՝ թէ որպէս երկբերանի քսա՛կ է լուսինն. ընդ մինն ելանէ և ի վերի թիկունքն ժողովի և պակասի ի մէնջ լոյսն. և ի միւսն ի ներքս *մտանէ* և լուսաւորէ՛ զմեզ: - 187. Նա՛խ՝ զի սկիզբն է տարւոյ. յորժամ արեգակն ի խոյն *մտանէ*: - 197. Եւ կամ հո՛ղմ է արտաքս թիւրեալ ի ճանապարհէ՛ իւրմէ. և ի խոռոչս երկրի *մտեալ*. և վասն թանձրութեան երկրին շարժէ զնա մինչև գտանէ ելս և ապա՛ դադարի: - 206. Յնգետասաներորդ՝ մի և նոյն գոլով *մտանէ* ի բուրաստանս, և զանազան գոյնս և համս և հոտս յառաջ բերէ: - 207. Եւ թէ ծարաւին գետք որ ի ծով *մտանեն*. և անձրևք հանգուցանեն զնոսա: - 208. Երկրորդ՝ ասէ արիստոտէլ՝ թէ ջերմութիւն լուսաւորացդ և տարրական հրոյն և օդոյն *մտանեն* ի ծովն և քարշեն ի նմանէ զքաղցր և զպարզ հիւթն. և մնացեալն լինի դառն և աղի: - 208. Ութերորդ՝ օրինակ՝ զի գլուխ օձին է չար խորհուրդն որ *մտանէ* ի մեզ. պա՛րտ է սպանանել զնա: - 219. Զի որպէս ջրհեղեղն ո՛չ *եմուտ* ի դրախտն զի ո՛չ էր ապականեալ մեղօք: - 225. Դարձեալ ի հողոյ ստեղծ ի նախատինս սատանայի. զի յամօթ լիցի յորժամ տկարս այս և կաւեղէնս ի փառսն *մտանէր* յորմէ նա՛ որ փառաւորն էր անկաւ: - 229. Իսկ ներքինն՝ որ է հասարակ զգայութիւնն. երևակայութիւնն. կարծիքն. տրամախոհութիւնն. յիշողութիւնն որ է միտք. զի ամենայն ինչ ի յիշողականն *մտանէ:* - 249. Դարձեալ՝ ջերմ և գէջ չափաւորեալ է ի նիւթն այն. և որ արտաքուստ *մտանէ*՝ անչափութեամբն վնասեսցէ՛ զսերմնական զօրութիւնն ընդ նիւթոյն: - 256. Եւ արդ՝ ուսեալք զայս, *մտցուք* և ի ներքս բանիցս այսոցիկ և տեսցուք: - 261. Եւ *մտանէ* ի կարգ զինուորաց. վասն որոյ մովսէս ի ի ամենիցն ի վեր թուէր զզինուորսն: - 265. Եօթներորդ՝ զի լուծաւ և *եմուտ* յարգանդ երկրի. այսինքն ի գերեզման: - 279. Վաթսունն**ք**, Մովսէս ետես զերկիրն և ո՛չ *եմուտ:* - 285. Եւ երկիրն յոր դուք *մտանէք:* - 285. Ապա ուրեմն ի դրախտն *մտնի*. զի դրախտն երկին կոչի: - 289. Իսկ զի **բ** սոքա *մտին*, այս վասն **ե** պատճառի: - 289. Երրորդ՝ մինն կուսութեամբ, և միւսն ողջախոհ ամուսնութեամբ. զի ցուցցէ թէ ի կուսից և յամուսնացելոց *մտցեն* յարքայութիւնն երկնից: - 289. Չորրորդ՝ **բ** ելին ի դրախտէն մեղօք. նոյնպէս և **բ** *մտին* ի դրախտն անմեղութեամբ: - 289. Եւ դուռն յետուստ կողմանէ, զի դիւրա՛ւ *մտցեն* կենդանիքն: - 293. Եւ ի միւս տարին ի նոյն քանիս ամսոյն որ *մտին* ի նոյնն ելին ի տապանէն: - 294. Ութերորդ՝ զի էառ իսահակ զհարսն և ուրախացաւ ի տան մօրն իւրում սառայի. որ զվեց ամ փրկեալ գոյր և ո՛չ ոք *մտեալ:* - 305. Տասներորդ՝ ի ցուցանել թէ կաղանալ պարտիմք աշխարհի, և ապա ի հանդէսն աստուծոյ *մտանել:* - 311. Երրորդ՝ յովսէփ ի կրկին գուբ *եմուտ* և ապրեցաւ: - 313. Եւ քրիստոս մարմնով ի գերեզման և հոգւով ի դժոխս *եմուտ* և եբարձ զմահ և զապականութիւն: - 313. Վեցերորդ՝ հե *մտին*, և **զճռք** ելին: - 315. Ութերորդ՝ որպէս իջեալքն յեգիպտոս ընդ հարաւ *մտին* ի գեսեմ ի պարարտ երկիր: - 315. Նա՛խ՝ զի անդ ի հանգիստ *մտցեն*: - 324. Քսանն**ք**, մովսէս միայն *եմուտ* յեգիպտոս և բազմօք ել: - 329. Երկրորդ՝ զի անյագ և ամենակե՛ր է մարախն. և ի յայլոց վաստակս *մտեալ* կորուսանէ: - 334. Եւ ա՛յն է *մտանել* ի միտս անարգութեան ըստ առաքելոյ: - 336. Նախ *եմուտ* ցեղն բենիամենի: - 338. Նոյնպէս և սեղան խնկոց և երեսացն ցուցանէ զհոգիս սրբոց ելեալ ի մարմնոց և *մտեալ* դէմ յանդիման երեսացն աստուծոյ: - 346. Եւ բաց յայսցանէ **բ** ակն յանդիմանութեան զոր անդամանդեայ կոչէին, և էր ի պճղնաւոր զգեստին ի վերայ ուսոց քահանայապետին յորժամ *մտանէր* ի սուրբն սրբոց երիցս ի տարւոջն, ի տօնի զատկին և յիսներորդացն և ի քաւութեանն: - 349. Յնգետասաներորդ, նոցայն քահանայապետ մովսէս և ահարօն ո՛չ կարացին *մտանել* յերկիրն պարգևաց. իսկ քահանայապետն մեր էանց ընդ երկինս երկնից...: - 355. Այլ որ ուղիղն է, մովսէս յամենայն ժամ *մտանէր* ի սուրբն սրբոց. և ահարօն մի՛ անգամ ի տարւոջն. և քահանայքն ո՛չ *մտանէին*: - 364. Երրորդ՝ զի յորում ժամու *մտանէր* մովսէս աղօթս առնել և խնդրածս, աստուածախօսութիւնք լինէին ի միջոյ քերովբէիցն որ կային անդ: - 379. Իսկ է ի յայն խորհուրդն, զի որ ի պիղծ մերձենայր՝ **է** օր արտաքոյ բանակին կալով յերրորդ և յ**է**երորդ օրն սրբէր, և ապա՛ *մտանէր*. վասն որոյ **գ** օրէք և **է** օրէք կատարեմք: - 391. Դարձեալ, եկեղեցի սուրբ՝ է՛ քաղաք ապաստանի. և քահանայապետ ի նմա՛ պատարագն. յոր *մտեալ* աղօթեմք և թողութիւն գտանեմք: - 392. Եւ դեռևս ունին ազգն վրաց. զի գիթվորն *մտեալ* յեկեղեցի ազա՛տ են: - 392. Զի՞նչ է որ մովսէս ետես զերկիրն և ո՛չ *եմուտ:* - 394. Ասա՛ թէ՝ քահանայիցն հրամայեաց ի բաց կալ յամուսնութենէ յորժամ *մտանէին* ի տաճարն և ի խորանն. և յորժամ լսէին զօրէնս աստուծոյ զօրեայ սրբեցան: - 404. Եօթներորդ՝ ի կատարածի ասէ՝ «եկա՛յք օրհնեալք հօր իմոյ». և *մտանեն* ի փառս. զայս նշանակէ կտակ և օրհնութիւնն ի վախճանի: - 409. Իններորդ՝ ի ժամ այլակերպութեան տեառն ի բերել հրեշտակապետին զմովսէս, ասէ սատանայ ցհրեշտակն, ստեաց

աստուած զմովսէս մուծանել յերկիրն ուր երդուաւ ո՛չ *մտանել* նմա: - 410. Եւ կէս գետոյն բաժանեալ և *մտեալ* ի ծովն աղի. նշանակ կորստեան մեղաւորաց և անհաւատից ի յատակս դժոխոց: - 414-415. Մետասաներորդ՝ նախ կործանեաց զերիքով, և ապա՛ յերկիրն *եմուտ:* - 418. Ա՛յն է որ կաղք և կոյրք ընդ դէմ դարձան դաւթի և անարգանօք ասէին՝ մի՛ *մտցէ* դաւիթ ի քաղաքս. որ նա՛ ինքն է երեսուղէմ. որ եղև տուն տեառն: - 431. Երկրորդ՝ ընդ *մտանելն* յարգանդ բանին՝ շնչաւորիլն և գտանիլն որպէս քառասնօրեայ: - 471. Երկրորդ՝ զի արարիչն ընդ բութեան կարգս *եմուտ*. որպէս մարդ լինիլն և ի կուսէ ծնանիլն: - 479. Եւ թշրինի **Ժ** միշտ առաջին օր քաւութեան. յորում *մտանէր* քահանայապետն ի սուրբն սրբոց: - 483. Երրորդ՝ օրինակն. զի ամենայն անսուրբ ջրով լուացեալ սրբիւր. և ողողեալ զհանդերձս այնպէս *մտանէր* ի բանակն. և յաւազանն խոստովանութեան ջրովն: - 488. Նա՛խ՝ զի երևելի էր և ո՛չ անարգ ոք. որ և սակաւ ինչ յառաջ փառօք *եմուտ* ի քաղաքն: - 490. Ոմանք ասեն թէ աւանդիլ հոգւոյն քրիստոսի, աւազակն *եմուտ* յերկրաւոր դրախտն ուստի ել ադամ. և չէ՛ հաւանելի. զի անդ մարմնովն *եմուտ* յետ յարութեանն: - 495. Եւ ոմանք ասեն թէ՝ յերկնաւոր դրախտն *եմուտ* հոգւովն մինչ ի կիրակէ մէջ գիշերին. և ի նոյն ժամն էջ ի դժոխս և ազատեալ զհոգիսն յարեաւ ի գերեզմանէն: - 495. Եւ զի ա՛յլ է մահ և ա՛յլ ապականութիւն՝ յա՛յտ է նախ ի գործոյն. զի ինքեամբ մահ ի ներքս *մտեալ* որոշէ՛ զհոգի և զմարմին. և ա՛յս է գործ նորա: - 498. Իսկ ապականութիւն այլայլութեամբն ի ներքս *մտանէ* ...: - 498. Ասեմք եթէ, ապականութիւնն յետ յանցանա՛ցն *եմուտ* ի բնութիւնս: - 501. Յայնժամ փախուցեալ սատանայ իբր զապստամբ ծառայ. և *մտեալ* յորջն դժոխոց կարծէր ամրանալ անդ և ունել զհոգիսն: - 503. Որպէս յօրինակէն տեսանի. որ թէպէտ առ հասարակ ելին յեգիպտոսէ յանապատն, այլ ոմանք *մտին* յերկիրն պարգևաց: - 508. Երեքտասաներորդ՝ ամաղեկացիք գերեցին զկողմն հրէաստանի և զայլազգիս. և դաւիթ զհետ *մտեալ* յետ **Գ** աւուր և հարեալ ի գիշերի և ի վաղիւն մինչ յերեկոյ...: - 514. Զի յինն ժամու ուրբաթուն արձակեաց զհոգին և էջ ի դժոխս. և ապա՛ ընդ երեկոյս ի մուտն արևու մարմինն *եմուտ* ի գերեզման: - 516. Նախ՝ խորհրդաբար. ի **Ե** շաբաթոջ աւուրն յերեկոյն թաղեցաւ ի սիրտ առաքելոցն ճաշակմամբ մարմնոյն. և յերեկոյի կիրակէին տեսին զտէրն յորժամ դրօքն փակելովք *եմուտ* առ նոսա: - 516. Հինգերորդ՝ զի տացէ մեզ համարձակութիւն յուսալոյ ի նոյն. այսինքն *մտանել* մարմնով ի յաւիտենական ժառանգութիւնն: - 519. Երեսունևք, Ոչխար ո՛չ *մտանէ* յեկեղեցին. և մեռեալ ո՛չ թաղեմք յեկեղեցին: - 527. Երբեմն ժամանակաց, ուր ուրէք *մտանէին* հերձուածօղք և սերմանէին զորոմն աղանդոց: - 544. Զի ամենայնն ի բերան *մտանէ* և ընդ արտաքս ելանէ ասեն: - 552. Թէ անպատկառ *մտեալ* յեկեղեցին. և ի յաղօթք կանգնեալ: - 601. զի օծանեմք զնոսա որպէս զըմբիշս. զի ի հանդէս *մտցէ* ընդ այսս չարութեան օդոյդ: - 605. Եւ խաչիւ չարչարեալ և յարուցեալ ի մեռելոց. և առ աշակերտսն *մտեալ* եպիսկոպոս եցոյց զինքն: - 607. Այն է՝ յորժամ մարդն մեռանի աշխարհի. *մտանելով* ի կրօնաւորութիւն: - 610. Վասն է՞ր ոչխար յեկեղեցին ո՛չ *մտանէ:* - 617. Նա՛խ՝ զի եկեղեցին է ի խորհուրդ դրախտին. ուր անասունն ո՛չ *մտանէր*. նոյնպէս և յեկեղեցի ո՛չ *մտանէ*: - 617. Եւ եկեղեցի է լեառն անմատոյց. վասն որոյ անասունք և անարժանք ո՛չ *մտանեն:* - 617.. Եւ առ դաւիթ խորհուրդ հեթանոսաց *եմուտ:* - 629. Որպէս ի գալ թագաւորին նախ կարապետք և աւետաւորք *մտանեն*...: - 646. ...մնաց շաբաթս այն անփոխ և առաջաւոր պահք և *մուտ* աղուհացից պահոցն: - 650. Զի արտա՛քս եմք որպէս ադամ ի դրախտէն՝ և ի սուգ *մտեալ:* - 650-651. Եւ յեկեղեցիս ո՛չ *մտանեմք:* - 651. Եւ թէ ոք ասիցէ, տէր ամենակալն ի չորեքշաբաթի *մտանէ:* - 651. ...և ապա՛ ի ներքս *մտեալ*՝ **Խ** օր աւարտեաց ընդ աստուած խօսելով: - 651. Նոյնպէս և առաջին շաբաթն պահոց՝ մեզ *մուտէ* **Խ** աւուրցն...: - 651. Հինգերորդ, քրիստոնէից մարմինք սրբութեամբ տաճա՛ր են աստուծոյ, յոր պիղծ ոչ ինչ *մտանէ:* - 654. ...այլ նախ բնակեսցէ հոգւով, և ընտանացեալ *մտցէ* և մարմնով: - 662. Վասն որոյ յերկրի աստ բազմանան թուով. և ապա՛ միահաղոյն *մտցեն* անդ որպէս բազմութիւնք հրեշակաց: - 662. Վասն որոյ բռունք յափշտակեն. և բազում նեղութեամբ *մտանեն:* - 663. ...զոյգ և ի միասին *մտցեն* ի հոգևոր կեանքն: - 669. Երրորդ, նշանակէր անդ ի հանդէս *մտանել* ...: - 672. ...նոյնպէս և աստ ի մարտ *մտանէ* ընդ օդային այսոց՝ նախ օծանի հոգևոր իւղովն: - 672. ...և Անդրիավարտիս ըստ հնոյն, զի ի սրբութիւն *մտանէ*...: - 674. Ի մին օրն *մտանեմք* յաշխարհ, և ի մին օրն ելանեմք աշխարհէ: - 680. Զի կենցաղս այս որպէս երկդռնի քաղաք է. ի մինն *մտանեմք* և ի միւսն ելանեմք. - 680. և յարութիւնն միանալ սիրով ընդ փեսային քրիստոսի և *մտանել* յառագաստն ընդ իմաստուն կուսիցն: - 681. ...և յետ աստեացս *մտանեմք* ի կայանս հոգւոց...: - 682. և ապա յետ յարութեանն ի կատարածի միանգամայն *մտանեմք* ի սուրբն սրբոց որ է արքայութիւնն երկնից: - 682. Եւ ապա՛ ի ձեռն յիսուսի արժանաւորքն *մտանեն* յարքայութիւնն երկնից և ժառանգեն զնա՛. - 682. Իսկ անարժանքն որ ունէին զսիրտն յեգիպտոս, սատակեցան յանապատին և ո՛չ *մտին* յերկիրն պարգևաց: - 682. Այլ յորժամ սիրտն կապեալ է ի մեղս աշխարհի և ոչ կարաց ապաշխարութեամբ քաւել, ո՛չ *մտանէ* յարքայութիւնն

երկնից: - 683. Դարձեալ, ի կիրակէ յարութեանն քրիստոսի տօնեմք. և յերկուշաբաթին՝ նոցա սրբոցն որք ընդ քրիստոսի յարեան և *մտին* ի քաղաքն սուրբ: - 684. Եւ ի նոյն օրն ի գերեզման *եմուտ* և էջ ի դժոխս և քարոզեաց: - 684. Այսպէս և ի տնօրինէքն ընծայք խաչին և աւետարանին որ ի նոցա տունն *մտանէ*...: - 684. Այն է որ յետ յարութեանն քրիստոս *եմուտ* ի վերնատունն և օրհնեաց զաշակերտսն: - 684. ...և ի տնկոցն յերկինս վերափոխիլ. և սոքա ի հուրն ասեն *մտեալ* և անտի յերկինս վերափոխեալ: - 687. ...զոյգ և ի միասին *մտցեն* ի հոգևոր կեանքն որպէս ասացաւ ի վերոյ: - 691. Եւ յայնմ աւուր իմաստունքն *մտին* յառագաստ փեսային, և յիմարքն արտաքոյ մնացին: - 693. Ասեմք եթէ՝ *մտանելն* առ աստուած այն է՝ որ հեռանայ ի չարութեանց և լինի ի բարութեան և ո՛չ փոփոխի ի չար, աստուծոյ պահելովն. - 695. ...իսկ հոգի մարդոյն յանհնարինս *մտեալ* երթայ առ միտս որ է՛ երրորդ բարեկամ և խնդրէ բարիս. - 697. Զի յորժամ ոմանք քաւին և *մտցեն* յարքայութիւնն, և ոմանք ի տանջանս յաւիտենից, ա՛յս է հատուցումն: - 698. Եւ դարձեալ յարութիւն է հոգւոյ ելեալ և ազատեալ ի մարմնոյ և *մտեալ* առ աստուած, որ է յոգիս արդարոց կատարելոց: - 710. ...ըստ որում երեքօրեայ յարեաւ ի գերեզմանէն անապական մարմնով. և զբազումս յարոյց ընդ իւր և *մտին* ի քաղաքն սուրբ. - 716. ....և ի դադարիլ ժամանակին՝ ի նոյն կէտն համանգամայն վերառեցեալ *մտանեն* ի կեանս առաջին ըստ խոստման բանին: - 716-717. Որպէս լոյս արեգակն անցանէ ընդ երկինս առանց ապականութեան. և որպէս քրիստոս յարեաւ մարմնով ի գերեզմանէն փիմովն կնքելով. և *եմուտ* առ աշակերտսն դրօքն փակելովք: - 722. Եւ որպէս ելաք ի բարի կենաց և *մտաք* ի չար մահն, այսպէս և ելեալք ի մահուանէ *մտար* յանեզր և անվախճան կեանքն և բարութիւն: - 724. Որպէս յորժամ կայսր *մտեալ* ի քաղաք՝ թագ և այլ նշանք առաջի տարցին, որով գալուստ նորա ցուցանիցի: - 734. Եւ աւազակն միով խոստովանութեամբ *եմուտ* ի դրախտն: - 745. Չորրորդ յորժամ անկանի՝ յայլս ո՛չ *մտանէ:* - 753. Իսկ Երրորդն արքայութիւն, գուշակի յաւազանն պղնձի. զոր հրամայեաց մովսէս առնել ի հայելեացն կանանց որ նստէին առաջի դրան խորանին. յորում լւանային որդիքն ահարօնի նախ քան *զմտանելն* ի սուրբն սրբոց: - 756. Զի թէ և սակաւ ժամ լինի մնացեալ ի կենացն որ քան աւազակին ի յելս շնչոյն. և նա՛ յառաջ քան զամենայն արդարս *եմուտ* ի դրախտն աստուծոյ ընդ տեառն: - 758. Եւ յետ նոցա ամենայն բազմութեանց ժողովելոց յամենայն ազգաց ասէ. որք եկին ի բազում վշտաց աշխարհի. այսինքն որք զանազան առաքինութեամբ և բազում նեղութեամբ *մտին* ի հանգիստն: - 760. Ելս ի սրտի դնելով ի սուրբն սրբոց *մտանել* այսու լուսով առաջնորդեալք: - 769. Որպէս յա՛յտ է ի ծխոյ և ի փոշւոյ և յայլոց. ընդ դէմ գոլոյ պարզութեանցն լուսոյ՝ ի ներքս *մտեալ* զկծեցուցանէ զնա: - 786-787

**ՄՏԱՑԱԾԻՆ +** Արդ՝ մեք ո՛չ *մտացածին* բանիւ ինչ իշխեմք յաւելո՛ւլ կամ պակասեցուցանել: - 84. Եւ բազում *մտացածին* բանս տողեն: - 225. Այլ մեզ զոր գիրք սուրբք լռեալ են՝ լռութեամբ պատուեսցի. և մի՛ *մտացածին* բանիւք վտարանդեալ ի գուբ կորըստեան անկցուք: - 226. Եւ ո՛չ որպէս շաղակրատեն ոմանք *մտացածին* բանիւ. թէ երեք օրն՝ կամ յեօթն՝ կամ յամիսն՝ և կամ ի տարին ելանեն ի քաւարանէն: - 683-684. Եւ թէ՝ դատաստանն աստուծոյ է՛ միաձև բազմաձև և ամենաձև. և այլ սոյնպիսիք եթէ բերեն վկայութիւն. և թէ *մտացածին* բանիւ հաւանութիւն տան: - 705

**ՄՏԱՑԻ +** Վասն է՞ր մին տղայն ուշիմ և *մտացի* լինի. և մինն ապուշ և բռնամիտ: - 251

**ՄՏԱՒՈՐ +** Երկրորդ յա՛յտ է ի բաժանմանէ. զի յերիս բաժանի տեսակ մեղաց. այսինքն ի *մտաւորն*, ի բանաւորն, և ի մարմնաւորն: - 556. Վասն որոյ և տէրն յորժամ ասաց զցանկութիւնն շնութիւն, յաւել ի վերայ թէ՝ «ի սրտի իւրում». զի մի՛ կարծեսցի մարմնական շնութիւն, այլ հոգէկան և *մտաւոր*. ապա ուրեմն կատարեալ է մեղք մտացն: - 556. Դարձեալ՝ խոտն *մտաւոր* մեղք խորհրդոց. և եղէգն յանցանք բանից. և փայտն մարմնական մեծամեծ մեղք: - 702

**ՄՏԱՒՈՐԱԲԱՐ +** Կարծեմ թէ և քեզ ծանր թուի հարցումնս այս. սակայն *մտաւորաբար* լո՛ւր: - 180

**ՄՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ +** Երկրորդ՝ զի տեսութիւն մտաց հասարակի ընդ գոյութեան էութեան. և ուր եզերի բնութիւն՝ անդ և *մտաւորութիւն*: - 103

**ՄՏԵՄ +** Առաջին խորհուրդն է՛ մկրտութիւնն որ է նոր *մտելոցն* յեկեղեցի: - 587. Ասեմք ըստ սրբոյն անդրէի մեկնչի՝ եթէ սուրբքն զաշխարհի վախճան խնդրեցին. որոց ցուցանէ զպատճառս երկայն *մտելոյն*. - 696

**ՄՐՈՒՐ +** Տասներորդ՝ զի չարն իւրովի ատեաց զնոսա և հեռացաւ, և իբրև *զմրուր* յերկիրս զետեղեցաւ: - 139. Զդառնութիւնն ի լեղին. և զհոտածն յերիկամունսն. և *զմրուրն* և զթքուն ի փայծեղն. և զքաղցր արիւնն ի սիրտն. և սիրտն երակովն և շնչովն բաժանէ ի բոլոր մարմինն: - 242. Իններորդ՝ զի որպէս կողից երեսն որ ի փորն նայի՝ կոկ գոլով և մզղնա տեսակ. իսկ մէջն փուչ և մրրախառն.

այսպէս սէրն զոր ցուցանէ առ այրն, նօսր առ ի ցոյցս՝ և երեւս միայն ունի. իսկ ի սիրտն *զմրուր* դառնութեան: - 276. Ցորեան ընդ յարդի. կնճիռն ընդ գինւոյ. *մրուր* ընդ ձիթոյ. յուդա ընդ յառաքեալսն. նիկօլայոս հերեսիոտ ընդ աշակերտսն: - 756

**ՄՐՋԻՒՆ +** Ասեն վարդապետք թէ՝ ա՛յն չափ հոգս տարաւ աստուած ի ստեղծանել զճանճս և *զմրջմունս* որքան հրեշտակաց: - 217. Երրորդ՝ ստեղծան նոքա՝ զի ի նոցա՛ ջանից ընթերցմանց և բարեաց գործոց օրինակ առցուք. որպէս են *մրջմունք* և սարդք, և այլք այսպիսիք: - 217. Որպէս *մրջիւն* նախ քան զլինիլն անձրևի՝ զկերակուրն պատրաստէ: - 218. Առաջին՝ ի բնական. որպէս երէոց, անասնոց, թռչնոց, և *մրջմանց*. որպէս ցուցաւ ի վերոյ ի **ժգ** գլուխն, **ծա** համարն: - 536

**ՄՐՐԱԽԱՌՆ +** Իններորդ՝ զի որպէս կողից երեսն որ ի փորն նայի՝ կոկ գոլով և մզղնատեսակ. իսկ մէջն փուչ և *մրրախառն*. այսպէս սէրն զոր ցուցանէ առ այրն, նօսր առ ի ցոյցս՝ և երեւս միայն ունի. իսկ ի սիրտն զմրուր դառնութեան: - 276

**ՄՐՐԻԿ +** Իսկ *մրրիկ* հո՛ղմ է ի յամպոյն ելեալ և առ ինքն ի յամպն ներման առեալ և շրջեալ: - 206. Վասն է՞ր յամպոյ և ի *մրրկէ՛* խօսեցաւ: - 326. Չորրորդ՝ որոտն և *մրրիկն* յամպոյն՝ զսպառնալիս բարեկամացն նշանակէ: - 326. Այլ և ամենայն տարերք խռովեցին. *մրրիկ* ծմերան և ցրտոյ՝ հրախառն յամենայն ուրէք սաստկացեալ. - 735

**ՄՐՑԻՄ +** Եւ որպէս ո՛չ ոմն նուազ զօրութեամբ ընդ առաւելն *մրցի*. այլ ընդ համացեղսն: - 44. Նոյնպէս և առ մեզ՝ որք *մրցին* և ջանան ընդ դէմ բանսարկուին...: - 152. Հինգերորդ՝ զանազանութիւն՝ զի սատանայ ի փորձելն ո՛չ գիտէ զառաջիկայն թէ յաղթէ և թէ յաղթի. և եթէ էր տեղեակ՝ ո՛չ *մրցէր* ընդ կատարելոցն որք յաղթահարեն զնա. որպէս ընդ ստեփաննոսի, անտօնի, և այլոցն, որք յաղթեցին սատանայի: - 161

**ՄՐՑՈՒՄՆ +** Իսկ ուրախանալն ի չարն մահ է և անզգայութիւն. և ընդդէմ բժշկողացն *մրցումն*. որպիսիք էին հեթանոսքն ի կուռս իւրեանց. և հրէայքն յօրէնսն. և փաղանք հերետիկոսացն յաղանդս իւրեանց: - 33

**ՄՕՏ +** Զորօրինակ՝ որպէս տղայ որ տեսանիցէ ցից ի յորմում, երբայ ի *մօտ*. թէ ամո՛ւր է՝ թողու. վասն զի ո՛չ կարէ հանել. և երբայ առ միւսն. թէ շարժի՝ ի *մօտ* կենայ մինչև հանէ՛: - 160-161. Նոյնպէս և սատանայ աներևոյթ *մօտ*՝ ի մարդն երթալ. թէ ամուր է հաւատն և կամքն՝ ո՛չ կենայ անդ, յուսահատի և թողու: - 161. Ապա թէ զկամքն երեւ՝ ուրախանայ և կենայ ի *մօտն* մինչև զմեղքն գործել տայ և հանէ ի բարւոյն: - 161. Այս երկու երակս թէ տաք է և չոր, մարդն ի *մօտն* աղէկ տեսնու՝ և ի հեռուն վատ. որպէս տղայն: - 239. Եւ թէ այս երակս հո՛վ է և գէջ, ի հեռուն աղէկ տեսնու և ի *մօտն* վատ. որպէս ծեր մարդն: - 239. Երկրորդ՝ նոքա զձայնն ի հեռուստ լսէին. և մեք զբանն ի *մօտոյ*: - 353. Զոր օրինակ ի բարձր ուստէք քար հոլովեսցի, և որ *մօտն* կացցէ ասէ ցնա՝ երթալ ունիս մինչ ի ներքին վայր տեղիս և ապա դադարիս: - 497. Երկու ենթակայ ունիմք հաւատոյ. *մօտ* և հեռի: - 769. *Մօտ* զտնօրէնութիւն տեառն. և հեռի զարարչութիւնն: - 769

**ՄՕՏԱՒՈՐ +** Ուսաք յիմաստնոց թէ՝ ի բաժանիլ լեզուաց **իբ** տանուտերանց, և ի գնալն յիւրաքանչիւր տեղիս ի հեռու կամ ի *մօտաւոր* աշխարհս. զօրն զայն տարեմուտս կարգեցին. և ուսուցին որդւոց իւրեանց պատուեալ զօրն զայն տրօք ընչից: - 200

**ՄՕՐԱՔՈՅՐ +** Եւ հօր եղբայր, և քոյր. և *մօրաքոյր*, և եղբայր. և ծնունդք նոցա մինչև յեօթն ազգն: - 611

# Յ

**ՅԱԲԵԹ** - Հայկն *յաբեթի*. և Բէլն ի քամայ որսորդ նոցա: - 297. Անունք Նախահարցն: ...*Յաբեթ* գեղեցկութիւն: - 299

**ՅԱԳԵՆԱՄ +** Միսն տաք է և ջիլն հով. զի ջիլն ձկտի յորժամ *յագենայ*. և կծկի յորժամ քաղցենայ: - 242

**ՅԱԳԵՑՈՒՄՆ +** Երրորդն է *յագեցումն* առանց տաղտկանալոյ...: - 766. Որպէս ասեն վարդապետք, յագեալ ցանկասցուք, զի մի՛ *յագեցումն* ծնսի զտաղտկութիւն. ցանկացեալ յագեսցուք, զի մի՛ ձանձրութեամբ իցէ ցանկութիւնն: - 766

**ՅԱԳԻՄ +** ...զի զկերակուրն ի հարկաւոր ժամանակին պարտ է ուտել. այսինքն որ քաղցեալ լինի. այլ ո՛չ յամենայն ժամ որ *յագեալ* լինի: - 570. Որպէս ասեն վարդապետք, *յագեալ* ցանկասցուք, զի մի՛ յագեցումն ծնսի զտաղտկութիւն. ցանկացեալ *յագեսցուք*, զի մի՛ ձանձրութեամբ իցէ ցանկութիւնն: - 766. Այլ ի պատճառս տալ իմաստից. որով ո՛չ *յագեսցի* ակն ի տեսոյ. ի գլուխ գոլոյ իմաստնոյ...: - 773

**ՅԱԶՈՎՏՈՍ** - Չորրորդ, զի թէ ի ձեռն փիլիպպոսի առաքելոյ որ էր մի յեօթանց անտի սարկաւագացն ո՛չ եղև իջեալ հոգին ի վերայ ներքինւոյն մինչև յափշտակեցաւ *յազովտոս*...: - 589

**ՅԱԾԻՄ +** Իսկ զի բանական միտքն ո՛չ տեսանէ զերազն, այլ անբան մասն, որ է՛ տնկականն ի մեզ. նա՛ *յածի* յերազն. և ցուցանի այս ի կրկին իրաց: - 268

**ՅԱԿԻՆԹ +** *Յակինթ*. կարմիր է. գտանի առ բաբիլոնիւ: - 348

**ՅԱԿՈԲ** - Այսպէս և *յակոբ* յօրհնելն ըզյուդա՝ նմանեցոյց զնա առիւծու: - 27-28. Երրորդ՝ զի ո՛չ գիտէին զանդրանիկն ժամանակաւ, և ո՛չ զկրտսերն. և լինէր փոփոխումն վիճակաց նոցին. որպէս *յակոբ* էառ զանդրանկութիւնն եսաւայ. և եփրեմ զմանասէին. թէ և սոքա տեսչութեամբն աստուծոյ. այլ նոքա ի պատրանաց լինէին: - 238. Այն որ աստուածայինն է տեսիլ կոչի. որպէս Աբրահամուն. *Յակոբայն*. Յովսեփայն. և Դանիէլին: - 268. Առաջինն խոհեմք և իմաստունք բնականապէս. որպէս նահապետքն առաջինք. աբրահամ. իսահակ. *յակոբ*. յոբ. կուռնէլիոս. և այլքն: - 269. Տասնե՝ Գօտէմարտիլն *յակոբայ*. և անուանն սքանչելի. և հռաքէլ լայր զորդիս իւր: - 283. Վասն եերրորդին՝ զի զանդրանկութեան օրհնութիւնն ընկալաւ որպէս *յակոբ* զեսաւայն: - 286. *Յակոբայն* ռաքէլ և լիա՛: - 299. Այլ փորձէ՛ աստուած զմարդ՝ զի յայտնեսցէ զնա. որպէս զաբրահամուս և *զյակոբայն*: - 304. Նոյնպէս և *յակոբ*, եփրեմ, դաւիթ, կրտսեր ի մէջ եղբարցն և թագաւորացն. խնդրե՛մ ուսանիլ: - 309. Որպէս վաճառեաց եսաւ և գնեաց *յակոբ* զանդրանկութիւն նորա: - 310. Վասն է՞ր գօտէմարտեցաւ ընդ *յակոբայ* և կաղացոյց: - 311. **Ասեմք թէ *յակոբ* ո՛չ զներգործութեան անունն հարցանէր աստուծոյ, զի գիտէր որ աստուած էր և ինքն իսրայէլ կոչեցաւ որ է աստուածատես. այլ անուամբ զբնութիւնն և զգոյացութիւնն աստուծոյ կամէր ուսանիլ**: - 311. Նա՛խ՝ որպէս *յակոբ* պատարագ մատոյց ի ջրհորն երդման զվերջինն և ապա ել յերկրէն: - 314. Որպէս ասէր *յակոբ*, «առիւծ և կորիւն առիւծու»: - 315. Եւ այլք ասեն թէ մովսէս գրեաց ի յանդիմանութիւն որդւոցն *յակոբայ*. որք առին զօրէնս և ո՛չ պահեցին. և զաստուծոյ զամենայն երախտիսն մոռացան: - 320. Արդ զոր ադամայ ո՛չ վկայեաց, խօսեցաւ ընդ *յակոբ* և վկայեաց արդար և անարատ գոլ: - 325-326. Աբրահամ: Իսահակա: *Յակոբ:* Ղևի: Կահաթ: Ամրամ: Մովսէս: - 330. Եւ այլն ասացաւ ի գօտէմարտիլն *յակոբայ* ի **ԺԵ** համարն ա՛նդ տեսցես: - 332. Նա՛խ՝ զի օտարք և հիւրք էին որդիքն *յակոբայ*՝ և ատեցին զնոսա: - 335. ...իսկ զաստուծոյ հարցանելն զի՞նչ է՝ անգիտելի մնայ. որպէս եհարց *յակոբ*, «զի՞նչ է անուն քո. և նա՛ ասէ՝ զի՞ հարցանես զանուն իմ. զի սքանչելի՛ է»: - 338. Զի **Խ** վասն այն կատարեմք, որ առաջինքն զննջեցեալքն **Խ** օր լային անմխիթար. որպէս զնահապետն *յակոբ* լացին **Խ** օր: - 391. Վասն է՞ր կոչի աւագ օրհնութիւն. զի *յակոբ* ևս օրհնեաց զորդիսն. նոյնպէս և իսահակ. և այլն: - 407. Վասն է՞ր մերձ ի վախճանն հարք և առաջնորդք օրհնեն զմնացորդս. որպէս մովսէս և *յակոբ* և այլ նահապետք: - 408. Զռուբէն անէծ *յակոբ*. մովսէս վասն է՞ր օրհնէ: - 409. Չորրորդ՝ զի վախճանեալ էր *յակոբ*: - 409. Հինգերորդ՝ բարձրագոյն էր մովսէս քան *զյակոբ*. կամ հաւասար նմին: - 409. Ընդ *յակոբայ* հինգ: - 412. Էառ և զերկիրն պարգևաց. զոր խոստացաւ աստուած աբրահամու իսահակայ և *յակոբայ*: - 414. Նա՛խ՝ վասն օրհնութեանն *յակոբայ*. տալով զանդրանկութիւնն եփրեմի: - 414. Որոց առաջին *Յակոբայ*: Երկու պետրոսի: Երեք յոհաննու: - 450. Որ է՛ ընթերցուածն *յակոբայ*: - 450. Իսահակ լեալ ամաց վաթսնից՝ ծնաւ զեսաւ և *զյակոբ*: - 452. *Յակոբ* ամաց **ԾԲ**՝ ծնանի զյուդա: - 452. Եւ հեղի *զյակոբ*: - 460. Եւ *յակոբ* զյովսէփ: - 460. Դարձեալ վասն յովսեփայ գիտելի է. զի ի ցեղէն սողոմոնի որդւոյն դաւթի՝ մատթան առեալ կին, ծնաւ

*զյակոբ*: - 460. Եւ *յակոբ* և ելի եղբարք էին ի միոյ մօրէ: - 460. *Յակոբ* ի ցեղէն սողոմոնի որդի մատթանայ. և Ելի ի ցեղէն նաթանայ որդի մելքեայ: - 460. Իսկ *յակոբ* որ էր յազգէն սողոմոնի՝ առեալ զկին եղբօրն ըստ օրինացն զի յարուցէ զաւակ եղբօրն. և ծնաւ զյովսէփ: - 460. Եւ այսպէս յովսէփ բնութեամբ որդի էր *յակոբայ* և ի ցեղէն սողոմոնի. և օրինօք որդի էր ելեայ որ ի նաթանայ: - 460. Այլ և սանդուղքն *յակոբայ* և տէր հաստատեալ ի նմա: - 494. Այլ և ցուպն *յակոբայ* անցեալ ընդ յորդանան. և սանդուղքն ասացեալ: - 494. Չորրորդ՝ մարիամ *յակոբայ* և յովսեայ մայրն, որ էր կին յովսեփայ կոչեցեալն աստուածահայր: - 517. Եւ *յակոբ* ի յօրհնելն զյուդա ի դէմս քրիստոսի ասէ...: - 595. Այլ և զերիս նահապետսն միջնորդ դնէ. այսինքն զաբրահամ զիսահակ և *զյակոբ*: - 637. Առաջին և երկրորդն՝ ծննդեան և մկրտութեանն. զոր ի միասին տօնեմք ըստ կանոնաց սուրբ հարցն և տեառն եղբօրն *յակոբայ*: - 649. Իսկ վասն տեառնականին և աղօրհնէիցն, սուրբն յոստո՛ս է արարեալ. որ չորրորդ եպիսկոպոս էր յերուսաղէմ յառաքելոյն *յակոբայ*: - 659. Հինգերորդ, զի և նախահարցն քարեայ էր գերեզմանն. աբրահամու. սահակայ. և *յակոբայ*. նոյնպէս և գերեզման տեառն. և կափարիչ վէմն...: - 679. Եւ նահապետն *յակոբ*՝ օձ դարանակալ ի ճանապարհի: - 707. Զի նա՛ է օձ դարանակալ ի ճանապարհի որպէս ասաց *յակոբ* յազգէն դանայ: - 708. Զի տակաւին է՛ իմնայէլ ընդ իսահակայ, և *յակոբ* ընդ եսաւայ ի նմին արգանդի: - 756

**ՅԱԿՈԲ ԿԼԱՅԵՑԻ** - Զշարականս ո՞վ է ասացեալ: ...Զերգեցէքն, տէր *յակոբ կլայեցին*: - 638

**ՅԱԿՈԲՈՍ** - Ութերորդ՝ «մի է օրէնսդիր և դատաւոր» ասէ *յակոբոս*. և ինքն քրիստոս դնելով զօրէնսն ասէր, ասացաւ առաջնոցն այս ինչ, բայց ես ասեմ զայս ինչ և զայս: - 71. Զի՞նչ է զոր տէրն հրամայէ աղօթել՝ «մի՛ տար զմեզ ի փորձութիւն». և առաքեալն *յակոբոս*՝ ուրախ լինիլ ասէ՝ «յորժամ ի պէս պէս փորձութեան մէջ անկանիցիք»: - 160. Զինչ է որ ասէ՝ «փորձեաց աստուած զաբրահամ». և *յակոբոս* ասէ՝ «աստուած անփորձէ չարեաց. փորձէ՛ և ո՛չ զոք»: - 160. Բենիամին է՛ և *Յակօբոս*: - 349. Եւ որպէս կարգեաց տեառն եղբայրն *յակոբոս* զընթերցուածն. և ի նմին աւուր զերկու տօնս: - 482. Երեքտասաներորդ՝ ականատես տնօրէնութեանն եղբայր տեառն *յակոբոս* որ կարգեաց զընթերցուածն, յունվարի վեցն աւանդեաց զտօնն ծննդեանն. և ի նոյն օրն դարձեալ զմկրտութեանն: - 484. Ասաց զերկոսինս զայս *յակոբոս* զեբեթեայ: - 573. Ասաց *յակոբոս* ալփեան: - 573. Որպէս ասէ *յակոբոս*՝ «կոչեսցեն զերիցունս, և արասցեն աղօթս և թողցի նմա»: - 604. Զմեծ կարգն՝ է՛ կանոնեալ տեառն եղբայրն *յակոբոս* որ զընթերցուածն կարգեաց...: - 651

**ՅԱԿՈՎԲ** - Իսկ ըստ ազգաբանութեանն Մատթէի, ծնանի յեքոնիա զաաղաթիէլ ամաց **ծզ**... *Յակովբ* վաթսուն: - 453

**ՅԱՂԱԳՍ +** Այլ կառավարի երբեք ի կամս նախախնամութեան առաջին պատճառին. որպէս ասէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս որ *յաղագս* բնութեան մարդոյն: - 13. Եւ զայլ ամենայն բնախօսութիւն *յաղագս* բարւոյ և չարի՝ գտցես ի Դիոնէսիոսի ի չորս գլուխն յաստուածային անուանսն...: - 24. Այլ զայս երկբայիս *յաղագս* ոչ գիտելոյ քոյ թէ «մինչդ» ամենուրէք ո՛չ որոշէ ընդդէմ հանդերձելոյն. զի թէպէտ նշանակէ՛ զկէտն ուր մինչն է եդեալ, այլ զոր ա՛նդր է քան զնա՝ ո՛չ ուրանայ: - 42. Իսկ ուր ուրէք զի զգեստ անուանի մարմինն *յաղագս* **բ** իմն պատճառաց: - 43. Սմին նման է զոր ասէ մարգարէն *յաղագս* քրիստոսի...: - 46. Պատասխանեմք, այն որ ասի հոգի քրիստոսի, և թէ՝ փչեաց, և թէ՝ առաքեաց, յայն սակս ասացան, զի ծաւալումն հոգւոյն սրբոյ *յաղագս* մարդկան՝ գալստեամբն քրիստոսի եղև: - 61. Նախ՝ զի ասէ փրկիչն յաւետարանն յօհաննու *յաղագս* հոգոյն թէ...: - 64. *Յաղագս* երից պատճառաց ուրանան զմիաւորութիւնն ի մարդեղութիւն բանին: - 76. Այսքան *յաղագս* աստուածաբնութեան: - 102. Եւ երկրորդն որ է պատճառաբանականն՝ առաւել է քան զառաջինն. զի *յաղագս* աստուածային անուա՛նցն է քննութիւն: - 123. Այսքան *յաղագս* երից անձանցն: - 125. Եւ արդ որպէս ցուցաւ՝ վերինք մինչ ի միջինս ունին բոլորապէս զներքնոցն. և ներքինքն մասնաւորաբար մինչ ի զօրութիւնսն՝ *յաղագս* առ հասարակ զօրութիւնք կոչին: - 137. Կատարումն *Յաղագս* Արարածոց Վեցօրէից: - 155. Իսկ ի նոյն ինքն՝ առաջին է նախախնամութիւնն առ աստուած, և ապա՛ ստեղծումն. զի վասն նախախնամական բարութեանն կամեցաւ ստեղծանել զեղեալքս. որպէս ասէ սուրբն դիոնէսիոս ի **դ** գլուխն որ *յաղագս* երկնայնոցն քահանայապետութեանց: - 157-158. *Յաղագս* այսորիկ կանոնեցին սուրբ հարքն վասն այնպիսեացն ո՛չ կատարել դարձեալ զկարգ քահանայութեան: - 165. Իսկ գործ պոռնկութեանն զկնիք կուսութեանն շրջէ և զբնութիւնն ապականէ. որպէս ասէ սուրբն դիոնէսիոս յերկրորդ ճառն որ *յաղագս* երկնայնոց քահանայեապետութեանց...: - 165. Այսքան *յաղագս*

երկնից: - 184. *Յաղագս* Առաջնոյն ասի «որ արբուցէ բաժակ մի ջուր ցուրտ»: - 209. *Յաղագս* Երկրորդին ասի «ջուրք բազում ժողովուրդ բազում»: - 209. *Յաղագս* Երրորդին ասի «անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր»: - 209. *Յաղագս* Չորրորդին ասի՝ «կեցո՛ղիս աստուած զի հասին ջուրք յանձն իմ»: - 209. *Յաղագս* Հինգերորդին ասի «որ ըմպէ ի ջրոյս յայսմանէ՝ դարձեալ ծարաւեսցի»: - 209. *Յաղագս* Վեցերորդին ասի, «ռուբէն հեղաւ որպէս ջուր. և այլն»: - 209. *Յաղագս* Եօթներորդին ասի՝ «լւասցին ջրով և մի՛ մեռցին»: - 209. *Յաղագս* Ութերորդին ասի, «առաքե՛ա զձեռն քո և փրկեա՛ զիս ի ջուրց բազմաց, և ի ձեռաց որդւոց օտարաց»: - 209. *Յաղագս* Իններորդին ասի «ամենայն որ ծառաւի էք՝ եկայք առ ջուրս»: - 209. *Յաղագս* Տասներորդին ասի «գիտութեամբ տեառն լցաւ երկիր իբրև ջուրք բազումք որ ծածկեն զծովս»: - 209. *Յաղագս* **ժա**ին ասի՝ «ջրով իմաստութեան փրկութեան արբուսցէ զնա՛»: - 209. *Յաղագս* **ժբ**ին ասի՝ «որպէս փափագէ՛ եղջերու յաղբերս ջուրց»: - 209. *Յաղագս* Առաջնոյն ասի ի սաղմոսին, «Տեառն է երկիր լրիւ իւրով»: - 210. *Յաղագս* Երկրորդին ասի յարարածքն, «Փուշ և տատասկ բուսուսցէ քեզ երկիր»: - 210. *Յաղագս* Երրորդին ասէ աւետարանն, «Սերմն որ անկաւ յերկիր բարի»: - 210. *Յաղագս* Չորրորդին ասէ ի մատթէոսն, «Երանի հեզոց զի նոքա ժառանգեսցեն զերկիր»: - 210. *Յաղագս* Հինգերորդին ասի ի ծննդոցն, «Հող կերիցես զամենայն աւուրս կենաց քոց»: - 211. *Յաղագս* Վեցերորդին ասէ յոբ, «թոյլ տուր ինձ զի լացից սակաւ մի՝ մինչչև երթեալ իցեմ ուստի ո՛չ ևս դառնայցեմ. յերկիր խաւարի և մթին»: - 211. *Յաղագս* այսորիկ անբան կենդանիք փութապէս զգան զառաջին շարժումն և զփոփոխումն օդոյդ քան զմարդ. և յառաջագէտ լինին: - 218. Կատարումն *յաղագս* արարածոց **գ** օրէից: - 227. Եւ զանազանութիւն ներքին և արտաքին զգայութեանցն ասացաւ ի վերոյ *յաղագս* հրեշտակաց ի **ը** գլուխն, ի **ժգ** համարն: - 249. *Յաղագս* երից որդւոց է լալ մօրն հռաքէլի: - 312. Ի կենդանիս. որպէս ոչխար և այլն *յաղագս* մաքրութեան ոգւոց: - 357. Եւ յանկենդանս, որպէս նաշիհ՝ իւղ և այլն *յաղագս* զգայարանաց սրբութեան: - 357. Վեցերորդ՝ դիտաւորութիւնն խնդրի. *յաղագս* ո՞յր իցէ զենումն. կենդանեա՞ց թէ մեռելոց. վասն աստուծո՞յ թէ վասն մարդկան: - 365. Եւ *յաղագս* երից պատճառաց **ը** օր տօնեմք գալստեան սուրբ հոգւոյն: - 373. Եւ գիտելի է, յորժամ ասի *յաղագս* աստուծոյ հաւատարիմ գոլ...: - 457. *Յաղագս* այսորիկ նւազ և փոքր լսի գործ արդարութեան քան զգործ ողորմութեան: - 458. Այս քան *յաղագս* աննմանութեան հոգւոյ և մարմնոյ: - 479. Վեցերորդ, ոմանք ասեն թէ պարգևս խնդրէր հոգևորական. վասն այն ասէ ելանեմ առ հայր իմ և իջանէ հոգին և լնու զձեզ ձրի պարգևօք. այժմ *յաղագս* այդորիկ մի՛ մերձենար: - 517. Նաև մեք *յաղագս* երից պատճառաց պատւեմք զօրս զայս: - 524. Եօթներորդ, *Յաղագս* առ հասարակ ժողովրդոց: - 525. Նա՛խ *յաղագս* շնորհին և ճշմարտութեան. և մարգարէք վասն ստուերին և օրինակին. և վարդապետք ըստ չափոյ պիտոյից նոցին: - 535. Ի նիկիայ *յաղագս* զպատկերս անարգելոյ: - 544. Եւ դարձեալ՝ ողորմութիւն է կամաւոր ցաւակցութիւն *յաղագս* այլոյ թշուառութեանց: - 584. *Յաղագս* այսորիկ միաւորեմք զխորհուրդն: - 598. Մին կին է միոյ առն օրինադրեալ և ո՛չ աւելի, *յաղագս* բազում պատճառի: - 612. Գոհութիւնն վասն անցելոյն *յաղագս* առաւել պարգևացն է: - 626. Հինգերորդ, *յաղագս* ջերմ սիրոյն առ աստուած՝ ո՛չ բաւական համարեցաւ միայն լեզուաւ երգել աստուծոյ...: - 641. ...որպէս ցուցաւ ի վերոյ ուր *յաղագս* անկման դիւաց ասացաւ: - 708. *Յաղագս* առաջնոյն ասի՝ «ապաշխարեցէ՛ք զի մերձեալ է արքայութիւնն երկնից». այսինքն որդին աստուծոյ: - 754. *Յաղագս* երկրորդին ճշմարտութիւնն ասէ յաւետարանին, «նման է արքայութիւնն երկնից ուռկանի արկելոյ ի ծով» և այլն: - 754. *Յաղագս* երրորդին ասի, «բարձցի ի ձէնջ արքայութիւնն». այսինքն աւետարանն կամ այլ գիրք աստուածայինք: - 754. *Յաղագս* չորրորդին ասէ երանութիւնն «երանի աղքատաց հոգւով. զի նոցա է արքայութիւնն երկնից»: - 754. *Յաղագս* առաջնոյն ասէ եսայի՝ «զթագաւորն ի վայելչութեան իւրում տեսցեն»: - 762. Նախ ի տեսանելն զերեսս աստուածային որ է անճառելի ցնծութիւն. որպէս ասեն վարդապետք, այն է ճշմարիտ և միայն ուրախութիւն, և ո՛չ *յաղագս* ստեղծուածոյ, այլ ի ստեղծողին լինի. զոր իբրև ստանայցես, ո՛չ ոք բարձցէ ի քէն: - 762. Երրորդ *յաղագս* սիրելութեան ընկերացն այնոցիկ. զի այն քան եղիցի սէր ի մէջ նոցա, մինչ զի զուրախութիւնս նոցա ինքեանց համարեսցեն: - 764. Մի դէմն յԵրրորդութենէն որդի լինի. մի դէմ ի մարդկութենէս ի կուսէ առեալ բնութիւն մարդկութեան, աստուածութիւնն բոլորովին *յաղագս* անհաս միաւորութեանն ըստ ոսկէբերանին յոհաննու: - 770. *Յաղագս* այսմ զանազան են տեսութիւնք հարց պետաց: - 781. Եւ կատարեալ տեսութիւն բացերևականն բանի յայտնի՛ է աշխատասէր մտաց. որ *յաղագս* մեկնութեան լուծումն գրոց. և գո՛ն առ քեզ: - 787. Եւ այս *յաղագս* այսորիկ ա՛յսքան: - 788

***ՅԱՂԱԳՍ ՈՐՈՅ*** - Տեսցուք և զգործն *յաղագս որոյ* օծաւ...: - 41. Զի անե՛ղ է՝ *յաղագս որոյ* ո՛չ կրէ յեղումն ինչ և փոփոխումն կրից: - 76. *Յաղագս որոյ* և անանուն է աստուած. զի անունն զբնութիւնն յայտնէ. որպէս մարդ: - 103. Եւ արդ՝ զի հասարակ են էութեամբ՝ և յատուկ առանձնաւորութեամբ, *յաղագս որոյ* զանազանելի է զյատկութիւնս ըստ երկուց լուսոյն: - 125. Ա՛րդ՝ ասեմք նախ եթէ՝ ձայնն ծածկո՛յթ է բանին. *յաղագս որոյ* հեռաւորքն զծածկո՛յթն տեսանեն, և զծածկեալն ո՛չ: - 131. *Յաղագս որոյ* աշխարհ գոյացեալ. երբեմն մշտնջենաւոր գոյութեամբ, անգոյանալ երբէք ո՛չ կարէ: - 162. Եւ վասն զի բնութիւնն հարկաւոր է և նո՛յն առ ամենայնսն *յաղագս որոյ* ամենայնքն ի հարկէ զնո՛յն գործեն: - 173. Արդ ամենայն ինչ որ զգալի է՝ ի ներքս ի սմա՛ է. ձա՛յն. գո՛յն. հո՛տ. հա՛մ. ծա՛նր և թեթև. և ո՛չ ինչ է արտաքոյ սորա. *յաղագս որոյ* և ո՛չ զգայարանաց կարօտի: - 179. *Յաղագս որոյ* երրորդ երկին կոչէ պօղոս զդրախտն: - 221. *Յաղագս որոյ* նախ եղեալքն՝ են վասն վերջնոցն. որպէս բոյսք անասնոց, և անասունք վասն մարդոյն: - 230. Ա՛րդ՝ վասն զի գոն յամենայն իրս նոյնութիւն և այլութիւն որպէս ցուցաւ, *յաղագս որոյ* են նմանք և աննմանք միմեանց: - 236. Նա՛խ ցուցանի զի մի է արարիչ սոցա, և բազում արարածք. *յաղագս որոյ* նմանին և զանազանին: - 237. *Յաղագս որոյ* և արարեալք ի նմանէ մարմին և անմարմին՝ կենդանի և անկենդան, զնմանն արարչին յինքեանս կերպագրեալ, նմանք և աննմանք են իրերաց: - 237. *Յաղագս որոյ* որպէս մարդ ինքն ինքեան անուն ո՛չ դնէ. նոյնպէս և աստուած ինքն ինքեան անուն ոչ դնէ: - 312. Եւ **ժ** թիւ կատարեալ նուէր և սուրբ է աստուծոյ. *յաղագս որոյ* թագաւորք երկրի զընծայս ի մարդկանէ՛ հնազանդելոց **թ թ** խնդրեն...: - 376. Բայց զի յուսացեալ ի բանն ճշմարտութեան *յաղագս որոյ* բանս հարցափործութեան, հետևելով ուսուցչացն ուղղութեան, և յուսոյ ուսողացդ նպաստութեան. բացցուք զբերանս մտաց, և ձգեսցուք ի մեզ զհոգին շնորհաց: - 456. *Յաղագս որոյ* պատրաստեաց նիւթ արեան, կազմեալ զօրութեամբ հոգւոյն. որով լինիցի ճշմարիտ մայր քրիստոսի: - 470-471. *Յաղագս որոյ* ծնաւ արու և ո՛չ էգ: - 480. *Յաղագս որոյ* յետ երկոտասան աւուրց կատարեմք զծնունդն: - 483. *Յաղագս որոյ* զմահն կրեաց քրիստոս. զի այսպէս բարձցէ յերկուց կողմանց զմեղս և զապականութիւն: - 497. Իսկ հոգիքն ի դժոխս յորժամ տեսին զքրիստոս, այն էր ժամանակ փրկութեան նոցա և ընդունելոյ զողորմութիւն. *յաղագս որոյ* հաւատովք արդարացան նոքա միայն ի նոյն ժամն: - 508. *Յաղագս որոյ* կացոյց հոգևոր իշխան զքահանայս. զի հոգէպէս ուղղեսցեն զմարդիկ և արգելցեն ի մեղաց: - 537-538. *Յաղագս որոյ* ո՛չ կարեմք զառաջնոյն հայրապետաց կարգ կամ զկանոնս զպահք կամ զայլ ինչ թիւրել և փոխել: - 541. *Յաղագս որոյ* այն որ ըստ բնութեան է մեղք՝ ըստ բնութեանն և յորդիս անցանէ: - 568. *Յաղագս որոյ* եկեղեցի սուրբ ուսեալ յաւետարանչէն և ի սրբոց հայրապետացն, երգեմք զերեքսրբեանն ի դէմս որդւոյ: - 633. *Յաղագս որոյ* ի շաբաթի աւուր տօնեմք մեծամեծ սրբոց: - 648. *Յաղագս որոյ* Նախ օրհնեալ աղ տամք կենդանւոյն: - 657. Ամենայն իր բնութեան՝ գոյացակա՛ն է նորին. և ամենայն պարգևք այսինքն շնորհք պատահական է ի զարդ նմին. *յաղագս որոյ* ո՛չ բառնին գոյացականքն. որպէս անմահութիւն դիւի և բան մարդոյ: - 782. *Յաղագս որոյ* որ ինչ գոյ միոյն յայտնի և ներգործական մասունք, գոն նոքա և միւսոյն բնաւորապէս ծածուկ և զօրութեամբ: - 786

**ՅԱՂԵՄ +** Երկրորդ՝ զի խորովելոյ միս առնուին և *յաղէին*: - 425. Սա՛ է ջուրն *յաղեալ*. որ զդառնութիւն ջուրցն այնոցիկ որք գտանին ի մեռայն՝ քաղցրացոյց: - 756

**ՅԱՂԹԱՀԱՐԵՄ +** Վեցերորդ՝ զի լինի զօրանալ պակասութեանն՝ և *յաղթահարել* զունակութիւնն: - 38. Նոյնպէս և առ մեզ՝ որք մրցին և ջանան ընդ դէմ բանսարկուին և մեռուցանեն **զէ** գլուխ նորա՝ նոքա զնոյն պսակն ժուժկալութեամբ և առաքինութեամբ ընդունին ի գլուխս իւրեանց յիւրաքանչիւրոցն զօրս կոխեն և *յաղթահարեն*...: - 152. Հինգերորդ՝ զանազանութիւն՝ զի սատանայ ի փործելն ո՛չ գիտէ զառաջիկայն թէ յաղթէ և թէ յաղթի. և եթէ էր տեղեակ՝ ո՛չ մրցէր ընդ կատարելոցն որք *յաղթահարեն* զնա. որպէս ընդ ստեփաննոսի, անտօնի, և այլոցն, որք յաղթեցին սատանայի: - 161. Հինգերորդ այս է, որպէս ասէ պօղոս «թագաւորեաց մահ յադամայ մինչև ցմովսէս». զի որ ընդ ադամայ մարտեաւ և յաղթեաց. աստ նկուն եղեալ *յաղթահարեցաւ*: - 410. Այսպէս ի միտելն սակաւ ի չարն՝ *յաղթահարեաց* արդարութիւնն: - 745. Այսպէս ի միտելն ի բարին՝ *յաղթահարեաց* ողորմութիւնն: - 745. Նախ ցուցանէ զմեղս անհաւատիցն լցեալ զտաճար ներողութեանն աստուծոյ. զի լցեալ և *յաղթահարի* ողորմութիւնն յարդարութենէն: - 749

**ՅԱՂԹԱՆԱԿ +** Ութերորդ՝ թոյլ տալով սրբոց չարչարիլ՝ վասն պսակացն առաւելութեան է. զի կենցաղս այս հանդէ՛ս է նահատակութեան. և ըստ չափոյ համբերութեան՝ առցէ *զյաղթանակն*...: - 159. Վեցերորդ՝ աստ ի հանդիսից սխալէ. և յետոյ ի յընթացից. և ի յարութեանն *յաղթանակաց* պսակէն: -

394. Վասն այսորիկ զիններորդ *յաղթանակն* ասէ «վարձք ձեր բազո՛ւմ են յերկինս»: - 586. Եօթներորդ՝ աստ հանդէս մարտի է, և անդ *յաղթանակ* պսակի: - 662

**ՅԱՂԹԱՆԴԱՄ +** Իսկ այլ նւազունքն և կամ *յաղթանդամքն* մարմնով՝ առաւել և նուազ: - 264

**ՅԱՂԹԵՄ +** Երրորդ՝ զի ի սիրոյն աստուծոյ զրկեսցէ զմեզ. զի կարասցէ *յաղթել*: - 146. Յաճոյ թուեցաւ նոցա բարձրութիւն նորա. խորհելով՝ զի թէ նա աստուծոյ *յաղթեալ* էր, նոքա ևս այլոցն իշխէին կարողութեամբ: - 149. Եօթն խոյրն զդիւական ներգործութիւնսն նշանակէ. որովք *յաղթէ՛* զմարդ և պսակի: - 152. Զի զորս քրտամբք և աշխատութեամբ *յաղթէ՝* զնոյն պսակն ի գլուխն իւր դնէ: - 152. Երեքտասաներորդ՝ զի տկար մարմնով անմարմին և զօրաւոր թշնամոյն *յաղթեսցեն*. որով աստուած իսկապէս փառաւորի. տեսանելով զտկարն *յաղթել* զօրաւորին ըստ այնմ որ զախորժակս իւր յայտնէ՛ր սիրելոյն՝ «շա՛տ է քեզ շնորհ իմ. զի զօրութիւն իմ ի տկարութեան քում կատարի». այսինքն թէ՝ որպէս ես աստուածային մարմնոյս զօրութեամբն *յաղթեցի* փորձողին, նոյնպէս և դու շնորհօք իմովք՝ տկար մարմնով քո՝ *յաղթես* և նկուն առնես զնա: - 159. Չորեքտասաներորդ՝ զի գիտասցէ սատանայ զտկարութիւն իւր՝ թէ ո՛չ միայն յաստուծոյ, այլ և ի մարդկանէ *յաղթի*...: - 159. Դարձեալ այսպէս մեկնեն եթէ՝ փորձութիւնն ըստ ինքեան ո՛չ է բարի. այլ պատահմամբ լինի բարի. յորժամ համբերութիւնն մերձ դնի և *յաղթիցէ*...: - 160. Եւ ըստ ա՛յսմ կերպի է փորձութիւնն բարի. զի բնութեամբ չար է. և պատճառէ՛ զչար մեղքն. բայց պատահեցաւ ոմանց զի *յաղթեցին* փորձութեանց և ընտրիք երևեցան: - 160. Յինգերորդ՝ զանազանութիւն՝ զի սատանայ ի փորձելն ո՛չ գիտէ զառաջիկայն թէ *յաղթէ* և թէ *յաղթի*. և եթէ էր տեղեակ՝ ո՛չ մրցէր ընդ կատարելոցն որք յաղթահարեն զնա. որպէս ընդ ստեփաննոսի, անտօնի, և այլոցն, որք *յաղթեցին* սատանայի: - 161. Երկրորդ՝ զի արդարութեամբ տացէ զպսակն կամ զտանջանքն. թէ *յաղթեն* և թէ *յաղթին*: - 161. Ուստի յա՛յտ է, որք վերստին *յաղթեն* ախտիցն որք յինքեանս, այսինքն ցասման և ցանկութեան. *յաղթին* և հնազանդին նոցա արտաքին գազանք և անասունք: - 220. Որպէս դանիէլ առիւծուցն *յաղթեաց*. և պօղոս իժին. և բազում ճգնաւորաց որք անապատս էին՝ գազանք և անասունք սպասաւորէին նոցա: - 220. Վեցերորդ՝ ո՛չ *յաղթեաց* պոռնիկ կինն ողջախոհին յովսեփայ: - 313. Եւ դժոխք ո՛չ *յաղթեաց* տեառն մերոյ. այլ զերծաւ ի նմանէ բոլոր հաւատացելովքն: - 313. Զհակառակն *յաղթեալ* ի փորձութիւնն. և զանհաւատն ի հաւատ էած: - 316-317. Որ ի փորձութիւնն սատանայի *յաղթօղ* երևեալ: - 321. Դարձեալ գիտելի՛ է, զի յոբ կրկնելով զբանսն՝ ուղղէ՛ր զբարեկամսն և ընկրկէ՛ր զսատանայ. զի այսպէս ամենայն ոք կարէ՛ *յաղթել* սատանայի յորժամ զընկերն ուղղէ ի բանս կամ ի գործս կամ ի հաւատս և յայլսն. յայնժամ սատանայ թիւրի և հեռանայ: - 323. Դարձեալ՝ **բ** իրօք *յաղթեաց* յոբ զսատանայ. գոհութեամբ բանի՝ և համբերութեամբ գործոյն: - 323. Դարձեալ՝ *յաղթեաց* զսատանայ այնու, զի իմացաւ զչար հնարսն նորա և պատասխանէր զընդ դէմ. որպէս կնոջն և բարեկամացն և որք զգուժն բերէին. զի գիտէր ի բանսարկուէն լինիլ: - 323. Դարձեալ՝ պահօք և աղօթիւք հնար է *յաղթել* փորձողին...: - 324. Ապա ուրեմն բովանդակ երևեցաւ **ե** զէն որով *յաղթեմք* թշնամոյն: - 324. Վասն առաջնոյն, զի գիտէր զնոսա շարժեալ ի չարասիրէն. և *յաղթելով* զնոսա *յաղթեաց* զբանսարկուն սատանայ: - 324. Զի և մեզ օրինակ տացէ այսպէս արիութեամբ *յաղթել* սատանայի: - 324. Չորրորդ՝ զի ախոյեան լիցի և *յաղթեսցէ* զհպարտացեալն սատանայ: - 325. Երրորդ՝ զի մի հպարտասցի յետ յաղթութեանն սատանայի, խօսեցաւ աստուած և *յաղթեաց* բանիւ. զի տեսցէ զտկարութիւն իւր և խոնարհեսցի: - 325. Նա՛խ՝ զի *յաղթեաց* փորձողին որպէս յոբ՝ նոյնպէս և տէր մեր: - 327. Ըմբռնելն յուսադրեաց զմովսէս *յաղթել* ցփարաւոնի և հանդարտել: - 332. Դարձեալ՝ քաղեբ և յեսու. հին և նոր կտակարանք. որք զհանդերձեալն մեզ պատմեն. և *զյաղթելն* անմարմին թշնամւոյն: - 380. Այլ ընդ դևս պատերազմիլ միշտ. զի որոց դիւաց թէ *յաղթէ* մարդ, թէ հպարտութեան և թէ պոռնկութեան, զնոցա տեղիքն ժառանգէ յերկինս: - 393. Եւ յորժամ է զօրութեամբք հոգւոյ *յաղթիցեն* նոցա, փախիցեն յ**է** զգայարանաց մարդոյն եօթնեկի մահացու մեղօք. զայս կատարելո՛ցն է իմանալ. և ո՛չ մեզ տկարացս: - 404. Չորրորդ, մահ՝ այսինքն սատանայ որ *յաղթեաց* ադամայ. իսկ մարմնոյն մովսէսի ո՛չ կարաց *յաղթել* հրեշտակային օգնականութեամբն. որպէս ասի յառաջիկայդ: - 409. ...զի որ ընդ ադամայ մարտեաւ և *յաղթեաց*. աստ նկուն եղեալ յաղթահարեցաւ: - 410. ...յարդարոցն *յաղթին* հրեշտակին օգնութեամբն. որպէս և անտօն ետես. զի իմացեալ և մեք զգուշասցուք այնմ: - 410. Քսանն**ա**՝ յեսու *յաղթեաց* ըզդիս և զդիակունս հեթանոսաց. զի զլուսաւորսն պաշտէին: - 418. Եւ տէր մեր *յաղթեաց* իշխանին դիւաց. և եհատ զնորայն բռնութիւն աջոյ. և զոմանս եթող ձախիւ թիւրելոյ և զընտիրս որոշելոյ: - 419. Քսանն**է**՝ դարան գործեաց

ի գայի և *յաղթեաց* նոցա: - 419. Եւ տէր ծածուկ տնօրէնութեամբն գործոց *յաղթեաց* բանսարկուին: - 419. Նոյնպէս անցեալ ընդ մկրտութիւն և *յաղթեալ* փորձութեանցն և եկեալ ի քրիստոնէութիւն: - 419. ...և տէրն մարտեաւ ընդ բելիարայ և *յաղթեաց* մահու. և քակեաց զդոժխս. էառ աւար զգերեալսն և էհան յարքայութիւնն երկնից. տալով նոցա զանթառամ պսակն: - 438. Եօթանասուներորդ, յերիս առաջս զօրօք *յաղթեաց* թշնամեաց. և տէրն մարմնով և հոգւով և աստուածութեամբն *յաղթեաց*: - 438. *Յաղթեաց* դաւիթ հնգից հսկայիցն. և տէրն մեր իշխանացն զգայութեանց: - 438. Այլ և գոհացաւ ի վերջոյ ի վերայ ամենայն յաղթութեանցն. և տէր մեր ի վերայ ամենայն ներգործութեանցն. որ և ամենայն օրհնութիւնքն ի տէրն ակնարկէ. որ եղև գլուխ հեթանոսաց. *յաղթեաց* մահու և բարձրացաւ ի գերեզմանէ: - 438. Տասներորդ՝ *յաղթելն* փորձչին: - 471. Իսկ զօծումն մարտի՝ յորժամ վարեցաւ ի հոգւոյն յանապատ և *յաղթեաց* հակառակին: - 474. Զի զայն որ փայտիւն *յաղթեաց՝ յաղթեսցէ*. և զայն որ փայտիւն անկաւ՝ փրկեսցէ: - 491. Այլ և արդ կարելի՛ է զի մինն բազմաց հակառակեսցի և *յաղթեսցէ*. որպէս ազգս հայոց զայլս ամենայն որ բազո՛ւմ են և ո՛չ մի: - 550. Բայց պարտ է այնոցիկ որք ո՛չ գիտեն՝ և կամ թէ կամաւ տգիտանան՝ ցուցանել զմիաբանութիւն ազգիս հայոց առ այլ քրիստոնեայսն. զի գիտացեալ յամօթ լիցին *յաղթեալք* ի ճշմարտութենէն: - 553. Իսկ փառասիրութիւն և հպարտութիւն ո՛չ են այսց կարգաց. այլ յորժամ զվեցեքին սոքա *յաղթէ*, ապա՛ փառասիրի և հպարտանայ: - 561. ...քանզի խաղաղարարն է առանց հակառակութեան մարմնոյ՝ աշխարհի՝ և սատանայի. յա՛յտ է զի լինիցի պատրաստ ի *յաղթել* զփորձութիւն մահու: - 586. Եւ յաչացն ի յերեսն սակաւ. որ արտասուքն ելանէ. բայց սակաւ ճանապարհս այս *յաղթէ՛* զայն բազում տարւոյ ճանապարհն: - 620. Իսկ արմաւենիքն զյաղթութիւնն նշանակեն. որք *յաղթեցին* ցանկութեանց մարմնոյ և սատանայի: - 690. ...և սուրբքն ելեալք ի մարմնոյ և *յաղթեալք* թշնամոյն՝ թագաւորեն ընդ քրիստոսի որպէս ցուցանի յառաջիկայդ: - 706. Զյաղթութիւն նոցա ցուցանէ. որք *յաղթեցին* ցանկութեանց մարմնոյ աշխարհի և սատանայի: - 712. Եւ յայնժամ *յաղթեալ* զթշնամին և զհարսն առ ինքն ընկալեալ յաթոռ մեծութեան նստցի...: - 736. Եւ այնպէս *յաղթէ* զնիւթականս զայս հուր, որպէս այս զնկարեալն պատկեր հրոյ: - 752. Եւ վասն այնորիկ պղնձի, զի ընդ դէմ ախտիցն *յաղթի*՝ հզօրս առնեն: - 756. Այլ հզօրագունին *յաղթելով*. որպէս լոյս արեգականն ընդ իւր միաւորէ՛ զամենայն լոյս անշփոթ և անծախ: - 770

**ՅԱՂԹՈՒԹԻՒՆ +** Ըստ քում բանիդ աստ հօ՛ր տաս զաստուածութիւնն և բառնաս յորդւոյ. և ի մարգարէն՝ որդւոյ ասես զաստուածութիւնն և բառնաս ի հօրէ, ապա հա՛րկ է քեզ լինիլ անաստուած. զի միովն միւսոյն *յաղթութիւն* տաս: - 47. Վասն այսորիկ ո՛չ է պարտ խնդրել զփորձութիւնն և ո՛չ զարգելումն. այլ *զյաղթութիւնն*: - 160. Այլ յորժամ զընկերն թիւրեմք չար *յաղթութեամբ*, յայնժամ սատանայ ուղղի և ուրախանայ: - 323. Երրորդ՝ զի մի հպարտասցի յետ *յաղթութեանն* սատանայի, խօսեցաւ աստուած և յաղթեաց բանիւ. զի տեսցէ զտկարութիւն իւր և խոնարհեսցի: - 325. Եւ տէր մեր զառաքեալս ընդ ծագս. որք համբաւեցին մեզ *զյաղթութիւնն* սատանայի և դժոխոց: - 417. Որ և ո՛չ *յաղթութիւն*, այլ մահ խոստացաւ նմա: - 429. Երկրորդ՝ զի այնու դիտասցէ *զյաղթութիւն* թշնամեացն: - 434. Այլ և գոհացաւ ի վերջոյ ի վերայ ամենայն *յաղթութեանցն*. և տէր մեր ի վերայ ամենայն ներգործութեանցն. որ և ամենայն օրհնութիւնքն ի տէրն ակնարկէ. որ եղև գլուխ հեթանոսաց. յաղթեաց մահու և բարձրացաւ ի գերեզմանէ: - 438. Իսկ արմաւենիքն *զյաղթութիւնն* նշանակեն. որք յաղթեցին ցանկութեանց մարմնոյ և սատանայի: - 690. Իսկ արմաւենեօքն զոր բարձեալ են ի ձեռս՝ *զյաղթութիւնն* նկարագրեն: - 696. *Զյաղթութիւն* նոցա ցուցանէ. որք յաղթեցին ցանկութեանց մարմնոյ աշխարհի և սատանայի: - 712. Երրորդ անդուստ՝ զի իբրև նոքա որ այն քան տկարքն էին՝ սակայն յա՛յնպիսի թշնամին այն քան *յաղթութիւնս* գործեցին ըստ յոբայ: - 765. Եւ որ քան մեծ վիշտ եղև ի պատերազմին, ա՛յն քան է մեծագոյն ուրախութիւն ի *յաղթութենէն*: - 765

**ՅԱՃԱԽ +** Եւ երկրորդ, ընդ դէմ օրհնացն աստուծոյ կորուսանի բեղնաւորիլն վասն *յաճախ* սերմանցն: - 613

**ՅԱՃԱԽԵՄ +** Իսկ առաքեալն վասն արտաքին փորձութեանցն ասէ. որ ի հալածչաց հասանէ ի վերայ մեր. յորում ուրախանալ պարտիմք. զի որքան *յաճախէ* փորձութիւնն, ա՛յնքան առաւելու և պսակն: - 160. Նոքա յերկար ապրէին՝ զի *յաճախեսցին* բարիք և ծնունդք նոցա. և մեք պակաս, զի կարճեսցին չարիք և բազմութիւնք մարդկան: - 291. Երկրորդ՝ զի մարդիկք բազում ամս *յաճախէին* ի մեղս յուսով վերջին ապաշխարութեանն. և յետոյ սովորեալ ի մեղս ո՛չ կարէին դառնալ, ամենքին կորնչէին: - 292

**ՅԱՄԱՌԵՄ +** Ապա ուրեմն յերրորդ և ի չորրորդ ազգն հատուցանէ աստուած զմեղս՝ յորժամ վասն գործեաց *զյամառեալն* ի մեղս պատժէ՛: - 351. Այլ որք *յամառելով* յօրինակն՝ ա՛ղ խառնեն ի խորհուրդն, պա՛րտ է նոցա խառնել և ծէթ և մուրկ և խունկ և միս գառին. կամ զանգեալ ի կասկարայս, կամ օծեալ ի տապակի, զի զօրինակն կատարեսցեն. և հեռասցին ի ճշմարտութենէն: - 357

**ՅԱՄԱՌՈՒԹԻՒՆ +** Եւ դարձեալ՝ **դ** են սեռք մեղանչելոյ. այսինքն խորհուրդ, խօսք, գործ, և *յամառութիւն* ի մեղս: - 351

**ՅԱՄԵՄ +** ...այլ վաղվաղակի իբրև ստեղծաւ՝ անկաւ և ո՛չ *յամեաց*. և ո՛չ ի յաւիտենական քաղցրութենէն ճաշակեաց. վասն որոյ ո՛չ երանեցաւ և ո՛չ մնաց ի բարութեան: - 147. Երկրորդ՝ ասեն թէ՝ ի սկիզբն աշխարհիս արար զբնութիւնն յանկարծակի. այլ բնութիւնն *յամելով* և ըստ կարգի յանկատարութենէ ելանէ ի կատարումն: - 192. Վեցերորդ՝ որքան *յամէ*՝ լոյսն պայծառանայ, և խաւարն նուազի՛: - 196. Վասն որոյ և յաւուրս զաքարիայի հօրն յովհաննու յորժամ *յամեաց* ի տաճարին և ել, ակնունէր ժողովուրդն տեսանել զա՛կնն և տե՛սին լուսափայլ սպիտակացեալ իբրև զձիւն. և լի՛ եղեն խնդութեամբ. զի երկնաւոր արքայութեան նշոյլքն պայծառացուցին զակն: - 349. Եւ մին յորժամ զլրտեսքն առաքեցին ի կագիսա. և **խ** օր *յամեցին* և մովսէս զ**խ** պահեաց: - 353. Այլ ոմանք **է** օր ասեն *յամել* ի **է** գօտիս. վասն որոյ **է** օրէք առնեն: - 391. ...վասն որոյ յայսմանէ ասեն ոմանք թէ՝ **գ** ամ կամ **խ** օր *յամեաց* ադամ ի դրախտին. որպէս ժողովուրդն ի յանապատին. կամ որպէս մովսէս ի լեառն: - 397. Զի սկիզբն մեղաց՝ հիմն է դժոխոց. և կատարումն՝ դուռն. և *յամելն* փակ: - 418. Այլ որ ուղղապէս հանդիպիմք՝ ասեմք թէ **լ** ժամ մարմինն եկաց ի գերեզմանի. և հոգին **լգ** ժամ և կէս *յամեաց* ի դժոխս: - 515. Եւ տե՛ս, զի սիմէի որքան *յամեաց* ի քաղաքն ըստ հրամանի սողոմոնի ո՛չ մեռաւ զերիս ամս: - 540. Ո՞րքան *յամեաց* ի մեղքն: - 601

**ՅԱՄՐ +** Այլ ձայնն *յա՛մր* հասանէ ի լսելիս քան զփայլակն. վասն որոյ յետո՛յ լսի: - 204. Երկրորդ՝ որք երկարակեացք են՝ որպէս տունկք, յապաղելով աճին և *յա՛մր* ծնանին: - 214. Եւ ո՛չ ի հաւանելն *յամր* որպէս սառա: - 465. Եւ թէ ամենևին անհաւան և *յամր* լինին՝ պատժին որպէս զաքարիա: - 465

**ՅԱՄՐԱԽՕՍ +** Ոմն *յամրախօս*. և ոմն ցոփ և շուտափոյթ: - 251

**ՅԱՄՐԵՂ +** Այտքն թանձր՝ *յամրեղ* և գինարբո՛ւ է: - 246

**ՅԱՄՐԷՍ** - Եւ է՛ որ զկերպն և զձևն միա՛յն փոխէ, և կոչի առաչօք. որպէս յանէսն և *յամրէսն* առնէին կախարդութեամբ դիւական: - 335

**ՅԱՅԵԼԻ** - Այլ և ցիցն ի ձեռին *յայելի* զոր վարսեաց ընդ ծամելիսն սիսարայ: - 494

**ՅԱՅԻՐ** - Ութերորդն *Յայիր* գաղայադացի ամս **իբ**. և այլազգիքն ամս **ժը**: - 420

**ՅԱՅԼՈՒՐԵՔ** - Եւ զայլ մասնապէս զբացայայտութիւն կոչմանց ամենայն դասուց՝ գտցես *յայլուրեք* ի բանն գրեալ որ ասէ՝ «ո՞ արար զհրեշտակս յոգիս»: - 136

**ՅԱՅՆԺԱՄ +** Երրորդ՝ եթէ զոր ինչ ասէաք և ճշմարիտ էր, *յայնժամ* բանս մեր ո՛չ հետևէր իրացն. այլ իրն բանիցն հետևէր. որ է՛ յայտնապէս սուտ. զի մնացականն՝ ոչ մնացականին ո՛չ հետևի. այլ անդրադարձեալ. զի հետքն՝ ընթացից ոտիցն հետևին. և ո՛չ ոտքն հետոցն: - 8-9. Չորրորդ՝ զի թէ զոր ինչ ասեմք՝ ի հարկէ ճշմարիտ էր, *յայնժամ* աւելորդ էր խորհիլն մեր...: - 9. Իններորդ՝ եթէ չարն է յաստուծոյ, ապա և կամի՛ զչարն. *յայնժամ* լինի կրկին կամք աստուծոյ. չար և բարի. զի կրկին գործ՝ ի կրկին կամաց առաջագայի: - 14. Իսկ թէ ոչ *յայնժամն* մերձ՝ և ո՛չ այժմ հուպ քեզ, ոչ ես իսկ և ո՛չ կաս: - 37. Իսկ յորժամ հնազանդին ամենայն անդամք գլխոյն քրիստոսի գիտութեամբ և փոփոխմամբ, *յայնժամ* և ինքն լնու զհնազանդութիւնն, ընծայելով զհնազանդեալքս հօր: - 42. ...*յայնժամ* օգնեսցէ նմա. այսինքն միաւորեսցի ընդ նա՛ սրբութեամբն, և եղիցի աստուած ամէն յամէնի. այսինքն կատարեսցէ զնա աստուածս առնելովն. և եղիցին աստուածք ամենքն: - 43. Տասներորդ՝ թէ բանն աստուծոյ և հոգին արարա՛ծ են և այլ բնութիւն, *յայնժամ* ո՛չ լինի մի աստուած. այլ բազում և զանազան աստուած. զի յոլովութիւնն յոլովութիւն է աստուծոյ. որպէս թէ երեք բնութիւնն երեք աստուած, և երկու բնութիւնն երկու աստուած: - 56. ...*յայնժամ* ո՛չ լինի բանն մարդ եղեալ. այլ մարդն բնակութեամբ ի փառս բանին բարձրացեալ: - 68. Զի թէ ասեմք եթէ ոչ է աստուած, *յայնժամ* բաժանեալ յաստուածութենէն՝ ո՛չ լինի աստուծոյ ձեռն. և ո՛չ աստուծոյ մարմին. կամ արիւն...: - 92. Իսկ «առաւօտի», զի ի սկիզբն ստեղծման աշխարհի ընդ բաժանիլ ի մէջ լուսոյն և խաւարին՝ *յայնժամ* միայն ծագեցին յառաջին օրն յանկարծակի և անկան յերկնից. թէպէտ ոմանք յերկրորդ օրն ասեն: - 148. ...*յայնժամ* ուրախանան սուրբքն, յորժամ ի մարմնական հեշտութեանց հեռանան. և արիանան ի

փորձութիւնս. և սակաւ նեղութեամբ ժամանեն ի մեծ հանգիստն: - 159-160. Վեցերորդ՝ զի թէ երկինքն ո՛չ էր բոլորակ, *յայնժամ* արեգակն և այլ աստեղք յորժամ գային ի մէջ երկնից, մեծագոյն երևէին. քանզի ի միջին կիտէն երկնից առ մեզ է ուղղական գիծ. իսկ յարևելից առ մեզ է՛ խոտորնակի գիծ. և ուղղական գիծն կա՛րճ է քան զխոտորնակ գիծն: - 183. Եւ զի *յայնժամ* էր ի դասս հրեշտակաց յերկինս: - 184. Նոյնպէս և նշանակէ՛ զհրեշտակաց բնութիւնն, որ նախ ստեղծան անկատար ճանաչմամբ և գիտութեամբ. այլ յորժամ երանեցան և տեսին զէութիւնն աստուծոյ անընդմիջաբար, *յայնժամ* կատարեցան ճանաչմամբ և գիտութեամբ: - 192. Եւ պիտոյանայր լեզու երկայն և շրթունք ստուար, զի ժողովեսցէ զկերակուր. և *յայնժամ* ո՛չ կարէր սպասաւորել բանի որպէս ա՛յժմ: - 233. Յորժամ ծերանայ մարդն, և սպիտակ ջուրն որ է պալղամն առաւելու, *յայնժամ* մազն ընդ սպիտակ ջուրն ի դուրս անցանէ և սպիտակի՛: - 240. Նոյնպէս յորժամ ամաչէ՝ զարիւնն սփռէ ի մարմինն, և քօղ արկանէ վասն ամօթոյն. *յայնժամ* յարենէն շառագունի մորթ երեսացն: - 245. Եւ յորժամ ծնանայ ի կերպ մարդոյ, *յայնժամ* բանական հոգին երևի ի նմա ի խնամոցն աստուծոյ: - 255. Եւ յորժամ ասես **գ**, *յայնժամ* զառաջին թիւսն ունելով յինքեան՝ կատարումն եղև նոցա: - 259. Այսպէս և զգայականն և տնկականն մասունք են բանականին՝ նախ եղեալ ի մարմինն. և յորժամ բանականն հեղի ի մարմինն, *յայնժամ* և սոքա հեղին ընդ նմա. զի զօրութիւնք և մասունք են նորա ըստ օրինակի նախասացեալ երրորդ թւոյն: - 259-260. Եւ *յայնժամ* զգայականն և տնկականն ո՛չ ունին զներգործութիւն իւրեանց ի կազմողական զօրութենէն. այլ ի նոյն ինքն ի հոգոյն: - 260. Եւ յորժամ ծագէ՛ արեգակն, *յայնժամ* և նշոյլքն իւր ընդ իւր ծագեն և ինքեամբ լուսաւորեն զմեզ որպէս նախ նշուլիւքն: - 260. Եւ *յայնժամ* մերկանայ զպատիւն իւր, և առնէ զյատկութիւնս անասնոց: - 274. Եւ յորժամ փոփոխի այս, այսինքն ի հանդերձեալն, *յայնժամ* ի լեզուս հրեշտակաց խօսիցիմք: - 298. ...*յայնժամ* սատանայ թիւրի և հեռանայ: - 323. Այլ յորժամ զընկերն թիւրեմք չար յաղթութեամբ, *յայնժամ* սատանայ ուղղի և ուրախանայ: - 323. Նախ՝ զի շարժեալք էին ի բանսարկուէին. որպէս երբեմն ի ձեռն կնոջն. և *յայնժամ* բարեկամօքն մարտնչէր ընդ յոբայ: - 324. Եւ նոքա *յայնժամ* էին տկարք ի հաւատոց և անպտուղք ի բարեաց գործոց: - 331. Ապա թէ որդիք և թոռունք չօգտին ի ներելոյն, *յայնժամ* պատուհասէ՛ և ջնջէ զյիշատակ չար ազգին: - 351. Երբ զերեք հասակի մեղսն ներէ աստուած՝ և թէ ի չորրորդն ո՛չ զղջանայ, *յայնժամ* պատուհասէ՛: - 351. ...*յայնժամ* քակէ՛ զտունն մեր որ է՛ հոգի և մարմին. և արտաքոյ քաղաքին յանսուրբ տեղիս ընկենու որ է՛ դժոխքն արտաքոյ արքայութեանն, և անսուրբ տեղի մեղաց և մեղաւորաց. և անդ արտաքսէ զմեղաւորսն: - 368. Եւ հայր աստուած որ ո՛չ կատարի կամք նորա ի մեզ. *յայնժամ* ըստ բազում գթութեան իւրոյ առաքեաց զմիածին որդին որ փոխանակ մեր կախեցաւ զփայտէն և ազատեաց զմեզ յանծիցն օրինաց...: - 400. ...իսկ յորժամ սպասաւորեաց հրեշտակապետն՝ զտիրական անունն ի սաստ կոչելով. *յայնժամ* ամպ ինչ լուսաւոր ծագեալ ի տեղւոջն, շիջոյց զերևումն չարին: - 410. Զի մի՛ սպանցեն զեղիայ *յայնժամ*: - 443. Նա՛խ՝ անպատշա՛ճ էր թէ հայր էր մարմնացեալ. զի հայր անսկիզբն է. և *յայնժամ* ո՛չ ոք լինէր առանց սկզբան: - 468. Երկրորդ՝ զի թէ հոգին սուրբ էր մարմնացեալ, *յայնժամ* լինէին **բ** որդիք: - 468. Իններորդ՝ *յայնժամ* ո՛չ ոք լինէր արանց միջնորդ և բարեխօս: - 480. *Յայնժամ* փախուցեալ սատանայ իբր զապստամբ ծառայ. և մտեալ յորջն դժոխոց կարծէր ամրանալ անդ և ունել զհոգիսն: - 503. Արդ մի՛ մերժեսցես դու յիս անկատար գոլով. որպէս մայր քո եւա ի ծառն գիտութեան. յորժամ առ բնութեամբ իմ հայր՝ և ձեր ըստ շնորհի՝ և աստուած մարմնոյս իմոյ ես ելանիցեմ, որոտմամբ իջեալ հոգին զձեզ կատարէ՛. արժանաւորիք *յայնժամ* առ իս մերձենալ: - 518. Նա՛խ՝ ի կողմանէ պարգևողին. զի յորժամ քրիստոս նստեալ լինէր ըստ մարմնոյ ընդ աջմէ հօր իբր զթագաւոր փառաց յաթոռ թագաւորութեան իւրոյ, *յայնժամ* մեծագոյն լինէր պարգևք հոգւոյն տուեալ ի փառաւոր քրիստոսէ աստուծոյ: - 521. Զի ո՛չ միայն համարի մեծ և փառաւոր զաստուածություն նորա, այլ և զաղքատութիւնն և զանարգանս և զմահն. և *յայնժամ* արժանասցի առատապէս ընդունել զհոգին սուրբ: - 522. Եւ թէ ոք ասիցէ, երևի ապա թէ նոյն անձնաւոր բանն աստուծոյ է յաւետարանս խօսեցեալ *յայնժամ* բազմացեալ է անձամբ և գոյութեամբ: - 530. Ո՛չ թէ *յայնժամ* ետ, այլ *յայնժամ* խոստացաւ և յետո՛յ ետ. որպէս խոստացաւ նստուցանել յերկոտասանն աթոռ և յետոյ ետ. նոյնպէս և զայն: - 547. *Յայնժամ* լոյս իմացականին կորեաւ և շիջաւ ի սատանայէ՛. և լոյս շնորհացն ո՛չ ներգործեաց ի նա. և ի նոյն սերտեալ հաստատեցաւ անզղջապէս. վասն որոյ մեծ են մեղք սատանայի և թողութեան ո՛չ հանդիպի: - 563. Իսկ թէ նկատիցեմք առ այն որք են իբր արմատս հաւատալեաց, *յայնժամ* են չորեքտասան աստիճանք: - 572. *Յայնժամ* արձակէ՛ ի մեղացն այս ձևովս: - 602. Երկրորդ,

յորժամ արմըտիքն ժողովեին յաշնանն, *յայնժամ* տօնէին զերկու տօնն: - 616. Զբանս զայս՝ մարգարէն ի դէմս հօր ասէ. զի *յայնժամ* միայն զհայր պատմէին: - 632. Նա՛խ՝ զի պատարագն է՛ խաչելութեան ժամն. և *յայնժամ* ո՛չ ասաց յովսէփ: - 634. Ասեմք թէ՝ այժմ ի հանգիստ գործո՛ցն են, և *յայնժամ* փոխին ի հանգիստ փառաց և պսակաց: - 648. ...*յայնժամ* լինի բժշկութիւն հոգւոյ և մարմնոյ յաստուծոյ և ո՛չ ի դեղոց: - 665. ...*յայնժամ* յայտնի և մերձակայ տեսանէ զամենայն փառս և զպսակ զոր ընդունելոց են նոքա ի յարութեանն աւուր...: - 668. ...*յայնժամ* տեսանէ ա՛յլ աչօք, այսինքն մտօքն: - 669. Եւ խաչն բարձրացեալ զի նշան խաչին քրիստոսի *յայնժամ* ընդ երկնիւք ծագեսցէ և զչորս կողմ աշխարհի լցուսցէ: - 676. Իբր թէ *յայնժամ* առնուն զգործոց հատուցումն: - 692. ...ապա *յայնժամ* առնուն զդահեկան երանութեանն: - 692. Եւ *յայնժամ* զորոմն քաղել առ ի յայրել ի հուրն. և զցորեանն ի շտեմարանն ժողովել ի կեանս: - 693. Այլ յորժամ հոգին միաւորեսցի ընդ մարմնի և յերկուցն լինիցի անձն, *յայնժամ* կարէ՛ ունել ներգործութեամբ զփառս կամ զտանջանս: - 694. ...զի այժմ մասին քննութիւն է հոգւոյ և *յայնժամ* մասին մարմնոյ: - 700. Իսկ թէ այժմ հոգւոյն եղեալ է դատաստան, և հատուցումն ըստ գործոց, և արդարոցն փառք և մեղաւորացն տանջանք. և *յայնժամ* մարմնոյն որպէս ասեն նոքա...: - 700. ...*յայնժամ* ի բաց կացցէ ի նմանէ հրեշտակն...: - 707. Այլ հրէայքն *յայնժամ* դարձցին ի հաւատս քրիստոսի. և եկեղեցի սուրբ խաղաղութեամբ հանգիցէ մինչ ի կատարած աշխարհի...: - 709. Եղիցի՞ *յայնժամ* ոք յաշխարհի: - 714. ...այլ յորժամ բոլոր արարածք ազատեսցին յապականութենէ ծառայութեան որպէս գրէ հռօմ *յայնժամ* և մարմինք մարդկան յանապականութիւն վերափոխեսցին: - 717. Չորրորդ պակասութիւն է՝ զի այժմ է՛ մարմին մեր թանձր և կոպիտ. այլ *յայնժամ* բառնի այս ի մարմնոյ և լինի անօսր և թափանցիկ. զոր ոչ պարիսպ կամ բանտ ըմբռնել կարիցէ: - 722. ...Իսկ *յայնժամ* յանապական ծնողէ՛ յաստուծոյ ծնանիմք...: - 723. Եւ որպէս այժմ հոգով և մարմնով զմահականացու կեանս վայելեաց, նոյնպէս և *յայնժամ* հոգւով և մարմնով զանմահ կեանս ժառանգեսցէ. վասն այն յառնէ: - 724. Եւ *յայնժամ* ո՛չ լինի մեղք. վասն որոյ և ո՛չ մահ...: - 724. Նա՛խ՝ զի մագաղաթն ի հուր մերձեալ գալարի. նոյնպէս և երկնայինքն *յայնժամ* խռնարհին յորժամ երկին և երկիր վառեսցին հրով: - 729. Եւ յիրաւի նախ ջրով. զի *յայնժամ* ջերմացեալ էին մարդիկ ի ցանկութիւն մեղաց, վասն որոյ ջրով պատժեցան: - 731. ...այսինքն յորժամ զճառագայթ բազում նշանացս առ ինքն ժողովէ խաչն սուրբ՝ *յայնժամ* ամենայն կարծիք լուծանին: - 732. Ութերորդ, զի որ զնա՛ խաչեցին և սպանին, տեսցեն *յայնժամ* և իմասցեն թէ աստուածասպանք եղեն...: - 735. Եւ *յայնժամ* յաղթեալ զթշնամին և զհարսն առ ինքն ընկալեալ յաթոռ մեծութեան նստցի...: - 736. Որք որպէս գիրք *յայնժամ* բացեալք եղիցին. քանզի վարդապետութիւնք նոցա և օրինակք՝ ամենեցունց յայտնեսցին. ի յորս ամենեքեան իբրև ի գիրս տեսցեն թէ զի՞նչ պարտ էր առնել կամ խոտել ինքեանց: - 742. Ա՛րդ՝ եթէ ա՛յժմ են յերկինս և *յայնժամն* ի սրբեալ երկիր, զի՞նչ է փառաց փառքն: - 759. Այլ *յայնժամ* լցցի ի բարութենէ ցանկութիւն: - 766. Այժմ ճանաչեմք փոքրիշատէ. իսկ *յայնժամ* ծանեայց որպէս ծանուցայ ի նմանէ: - 767. Թէ ասիցէ ոք, թէ աստուած յողորմութենէ կամացն փոխի *յայնժամ* յանողորմութեան յաթոռ: - 778. Իսկ ի ժամանակի փոփոխիլն առ յաւիտեան, *յայնժամ* և մեք լիցուք անփոփոխք և յաւիտենականք: - 779

**ՅԱՅՆԿՈՅՍ +** Երկու ցեղ և կէսն մնացին *յայնկոյս*, թէ զի՞նչ նշանակէր: - 285. Զի՞նչ նշանակէ որ **բ** ցեղն և կէսն մնացին *յայնկոյս* յորդանանու և ժառանգեցին, և այլքն անցին ի քանանացիքն: - 390. Այլ ոմանք՝ ճաւոր զերկին, և վաթսնաւոր զդրախտն, և երեսնաւոր զերկիրս ասեն նշանակեալ **բ** ցեղիցն *յայնկոյս* յորդանանու, և **թ** ցեղիցն յերկիրն քանանացւոց: - 391. Վեց քաղաքաց հրամայեաց որոշել ապաստանի և տալ քահանայից. **գ** յերկիրն քանանու և **գ** *յայնկոյս* յորդանանու: - 392. Զի՞նչ է որ զերկու թագաւորսն զսեհոն և զովք *յայնկոյս* յորդանանու կորոյս, և զայլսն ի քանանացիսն: - 393. Զնոյնս նշանակէ **բ** ցեղն *յայնկոյս* յորդանանու. որք այլոցն պատերազմակից եղեն, և ապա՛ ի միասին զժառանգութիւնն առին: - 394. Եւ զ**ե** թագաւորսն մադիամու՝ և զսեհոն՝ և զովգ՝ *յայնկոյս* յորդանանու: - 414. Իսկ ի մէջ ծնկաց գլուխն՝ այն է, որ զծունկն ի գետինն եդ, և զգլուխն հանդէպ նմին. և յայսկոյս և *յայնկոյս* զձեռսն խաչանման ի գետինն: - 444

**ՅԱՅՆՄ ՀԵՏԷ (տ. ՀԵՏԷ) +** Վասն է՞ր մինչ ի չորրորդ կարգն փոքրիկ ջահընկալութեանն կարեն ամուսնանալ, և *յայնմ հետէ* ոչ: - 609. Զի *յայնմ հետէ* հարսն փեսային լինի նշանեալ, և փեսայն հարսինն է՛ յատկացեալ: - 609-610. Ա՛րդ՝ սոքա անապականք են *յայնմ հետէ* և առ յապայ որ օրինակք են. ապա ուրեմն և ճշմարտութիւնն անապական է որ է խաչն աստուածընկալ: - 733

**ՅԱՅՏ +** ...*յա՛յտ է* ի հայելւոջն, որ առեալ զնշոյլս յարեգականէն՝ այրէ՛. ա՛յսպէս և բանս մեր ի հարկէ

նոցա լինի՝ զոր ստորասեմք կամ բացասեմք: - 8. Եւ զի լինին և են սոքա՝ *յա՛յտ է* յայսցանէ, զի ո՛չ կարեն ոչ գոլ: - 8. Ապա ուրեմն *յա՛յտ է*՝ զի բանն զիրն ո՛չ կարէ ճշմարտել. այլ իրն զբանն ճշմարտէ...: - 9. Ապա *յա՛յտ է*՝ թէ զոր ինչ խորհիմք՝ ի հանդերձեալն զնոյն առնեմք. և ո՛չ ի հարկէ բանն մեր որպէս ցուցաւ: - 9. Դարձեալ ասեն, թէ ամենայն ստորնային մարմինք՝ կառավարին վերնային մարմնովք. որպէս *յա՛յտ է* ի չորս եղանակս տարւոյն...: - 10. Նախ՝ զի բարին էութիւն է. ուստի *յա՛յտ է*՝ զի հակադարձին առ միմեանս. զի ամենայն որ բարի՛ է՝ է է. և ամենայն որ է է՝ բարի՛ է: - 13. Եւ որպէս լոյսն միշտ լոյս է, թէպէտ պակասեցաւ ի յօդոյն. ուստի *յայտ է*՝ զի դարձեալ լուսաւորէ: - 23. Ապա ուրեմն *յա՛յտ է* զի բարին ըստ ենթակային և ըստ ինքեան՝ էութիւն է: - 23. Եւ այսպէս *յա՛յտ է* որ մեսիայն եկեալ է: - 28. Ուստի *յա՛յտ է* մեծութիւն յանցանացն. քանզի ի հինն զինչև մեղանչէր ոք մեծ կամ փոքր՝ պատարագաւն սրբէր. թռչնօք և անասնօք: - 33. Երկրորդ՝ զի նոքա զղջումն ունին. և *յա՛յտ է* ի հեթանոսաց հաւատացելոց: - 33. Իսկ սոքա և զիրեշտակս ընդ մեզ դասեն. որպէս *յայտ է* ի գիրս պարապմանցն Կիւրեղի: - 34. Եւ զի բանն մարմին եղև միաւորութեամբն. ուրեմն *յայտ է*՝ զի մարմին բանին բան եղև նոյն միաւորութեամբն: - 72. Արդ բանն առանց մարմնոյն քրիստոս ո՛չ է. ապա ուրեմն *յա՛յտ է* զի միացեալ մարմնովն է՛ հաւասար և ի կերպարանս աստուծոյ տէր մեր յիսուս քրիստոս: - 72. Ուստի *յա՛յտ է* ի սահմանէն. ամենայն մարդ կենդանի բանաւոր մահկանացու մտաց և հանճարոյ ընդունակ: - 74. Իսկ թէ բաժանական է անձն՝ որպէս *յա՛յտ է* ի սահմանէն՝ անհաղորդելի կայացութիւն: - 86. Այլ և ո՛չ է որպէս պատահումն ի պատահումն. և այս *յա՛յտ է* յասացելոցդ: - 88. Իսկ թէ զաստուածային անձն և զմարդկային բնութիւնն ասէք մի քրիստոս, ահա *յա՛յտ է* զի բաժանեցիք յաստուածային բնութենէն զքրիստոս. զի անձն աստուծոյ և զբնութիւն մարդոյ ասէք մի քրիստոս. և զաստուածային բնութիւնն որոշէք: - 89. Ուստի *յա՛յտ է* յորժամ ասեմք Երրորդութիւն աստուած. Երրորդութիւն անեղ. այլ ո՛չ ասեմք **գ** աստուած. կամ **գ** անեղ. այլ մի աստուած և մի անեղ: - 107. Ապա *յա՛յտ է* զի հին աւուրցն նշանակէ նախ քան զժամանակ և զյաւիտեան. և բարձրագոյն և արարիչ ժամանակի և յաւիտենի. և պարունակօղ յաւիտենի. որպէս յաւիտեանն ժամանակի: - 115. Ապա *յայտ է* որդիութիւն կարգին: - 135. Ապա *յա՛յտ է* զի ա՛յլ է կարգ շնորհականին, և այլ է կարգ բնականին...: - 136. Զի թիւ մեր նիւթեղէն և տկա՛ր և չափաւո՛ր է. վասն որոյ զանբաւութիւն նոցա ո՛չ կարէ չափել. ուստի *յայտ է*՝ զի և ո՛չ զթիւ մեր կարեմք գիտել: - 141. Ապա *յա՛յտ է*՝ զի գիրն ներգործակա՛ն է իմացութեանցն որ ըստ ինքեանն զոր ի վերոյ ասացաք: - 143. Նոյնպէս յերեւումն հրեշտակաց զոր մինն տեսանէ՝ այլ մերձակայքն ո՛չ տեսանեն. որպէս *յա՛յտ է* ի պատանեակն եղիսէի: - 145. ...զի մինչ ո՛չ էին կործանեալ՝ **դ** կարգ էին իւրաքանչիւր դասուցն. որպէս *յա՛յտ է* ի չորեքկերպեան կենդանեացն: - 152. Ապա *յա՛յտ է* զի զչարն և զմեղս ո՛չ կամի, վասն այն ո՛չ կարէ: - 163. Ապա *յա՛յտ է* ցուցումն առաջնոյն: - 165. Ապա *յա՛յտ է* զի կուսութիւնն է ունակութիւն. և ապականութիւնն պակասութիւն նմին: - 165. Ուստի *յա՛յտ է* զի կարելին ունի զգոլն և զչգոլն. և անկարն զմինն. կամ զգոլն կամ զչգոլն: - 165. **Ուստի *յա՛յտ է* զի էրէցն երկրորդ ամուսնութեամբն ո՛չ կարէ քահանայագործել. յիրաւի և ապա պոռնկեալն էրէց կամ աբեղայ՝ ո՛չ կարէ քահանայագործել. զի ուխտազա՛նց է**: - 167. Ապա *յա՛յտ է* զանազանութիւն սոցա, զի ոմն զօրութիւն հարկաւոր է և ներգործութեամբ և անփոփոխ և միշտ. որպէս հրոյ ջեռուցանել, և արեգական լուսաւորել: - 168. Ապա ուրեմն *յա՛յտ է* ի բաժանման է թէ ի յաստուած ո՛չ գոյ իր ինչ զօրութեամբ. այլ բովանդակն ներգործութեամբ որպէս ցուցաւ: - 169. Ուստի *յա՛յտ է* զի ի լինիլն աշխարհի՝ նախագաղափար տեսութիւնն նոյնպէս եկաց մնաց առանց յաւելուածոյ և պակասութեան: - 169. Իսկ Առնելն՝ յարարածոց *յայտ է*. և Կրել զնոսա բանիւ զօրութեան իւրոյ ըստ առաքելոյ: - 172. Եւ *յա՛յտ է* զի եզական և անհատն մարդ՝ է զանազանեալ իւր յատուկ որակութեամբն: - 174. Եւ որովհետև ծանեաք զի անմարմին են սոքա, *յա՛յտ է* զի բաժանումն սոցա քակէ՛ զնիւթն ի մարմնոյ...: - 175. Եւ զի անշփո՛թ են սոքա յատկութեամբ՝ *յայտ է*. ուստի ասեմք, պետրոս մա՛րդ է և բանաւոր և կենդանի և զգայուն և շնչաւոր և մարմին և գոյացութիւն: - 176. Վեցերորդ՝ զի ի բազում բանս մտանէ և գրի քան զայլ ձայնաւորս. և *յա՛յտ է*, զի բազում իմաստութիւնս ծնանի: - 178. Եւ զի ո՛չ է ի տեղւոջ աստի *յայտ է*, զի տեղին է վերին և ներքին և միջին. և արտաքոյ աշխարհիս ո՛չ երևին սոքա: - 180. Ասեմք եթէ *յա՛յտ է* ապա որ անօթ լուսաւորացն տարրական է. թէ ոմն պարզ է և ոմն թանձր: - 188. Երկրորդ՝ *յա՛յտ է* զի ունին ջերմութիւն և ցրտութիւն. չորութիւն և գիճութիւն. որ յայտնապէս տարրական է որակութիւն: - 188. Որպէս *յա՛յտ է* ի լուսինն յորժամ ծնանի յարևմուտս. և գայ յարևելս ըստ կարգի կենդանակերպիցն: - 189. Ուստի *յա՛յտ է*՝ զի երեկոյ շաբաթուն որ կոչի կիրակմուտ՝ պատուակա՛ն է քան զմիւս գիշերն որ զիետագայ կիրակէին: - 194. Եւ *յա՛յտ է* յայսմանէ՝ զի ժամանակն

առ մե՛զ է և ո՛չ յերկինս: - 198. Եւ զի քարշեն լուսաւորք զգոլորշին յերկրէ՝ *յայտ է* ի ցօղ առաւօտուն և յեղեամն...: - 208. Երկրորդ՝ զի ամենայն ուրեք հողն ընդ ջրոյն խա՛ռն է. և *յա՛յտ է* ի ջրհոս. և ջուրն այն որ բարձրացեալ է ընդ հողոյն՝ իջանէ ի խոնարհ և բղխէ աղբիւր: - 209. Ասեմք թէ՝ ամենայն մարմնական կենդանիք ի չորից տարերաց են եղեալ. և *յայտ է* ի բազում պատճառաց: - 214. Ապա ուրեմն *յա՛յտ է* զի ամենայն կենդանիք ի չորից տարերց են: - 215. Եւ զի բնութեամբ ունին *յայտ է*, զի ամենայն տեսակն զմի և զնոյն ունի հնարս. վասն զի մի բնութենէ ի նոսա: - 218. Եւ զի մարդն թագաւոր և իշխան է ամենայն կենդանեաց՝ *յա՛յտ է* ի բազմաց: - 220. Չորրորդ՝ *յա՛յտ է* ի հնազանդեցելոցն որք կան այժմ ընդ ձեռամբ մարդկան. որպէս ոչխար, պախրէ՛, և այլն: - 220. Հինգերորդ՝ *յա՛յտ է* ի փախուցելոցն որ երկնչին ի մարդկանէ որպէս զապստամբեալ ծառայս: - 220. Ուստի *յա՛յտ է*, որք վերստին յաղթեն ախտիցն որք յինքեանս, այսինքն ցասման և ցանկութեան. յաղթին և հնազանդին նոցա արտաքին գազանք և անասունք: - 220. ...*յա՛յտ է* զի գիշեր ո՛չ լինի անդ. և ո՛չ եղանակք փոփոխին: - 222. Որպէս մարմինն ադամայ յերկրէ է և անապական. և մանանայն յօդոյ և անապական. և *յա՛յտ է* ի մէջ սափորին: - 225. Եւ *յա՛յտ է* ի մեռեալ մարդն: - 234. Եւ *յա՛յտ է* զի ի դիմաց կուսէ առաւել հեշտանայ ամենայն կենդանի: - 234. Իսկ մարմինն անզգայ և անշա՛րժ է. և *յայտ է* ի մեռանիլն: - 234. Եւ պակասեալ ի սոցանէ մարմնոյն, ցուցանի կերպարան ի գոյէ ի քանակէ և յորակէ և ի տեղւոյ շարակցեալ. որպէս *յա՛յտ է* ի հայելւոջ: - 236. Եւ նւազեալ յայսցանէ գոյնն՝ մնայ պատկեր ի քանակէ և ի ձևոյ և ի տեղւոյ երևեալ. որպէս *յա՛յտ է* ի մեռեալ մարդն: - 236. Եւ պակասեալ ի սմանէ տեղին, լինի տիպ ի քանակէ և ի ձևոյ բաղկացեալ. որպէս *յա՛յտ է* ի մոմն տպացեալ: - 236. Եւ նուազեալ ի սմանէ քանակին, լինի նման և աննմանն ցուցեալ. որպէս *յա՛յտ է* ի տառն գրեալ. զի նման և աննմանն ուրոյն են որակի: - 236. Ապա ուրեմն *յա՛յտ է* զի աննմանն և օտարն են ի սեռի որակութեան և յատուկ ձևոյ որակի: - 236. Որպէս ճիւղ հատեալ ի ծառէ և տընկեալ յերկրի, ճիւղն է հատեալ ի ծառէն, այլ կենդանութիւնն ո՛չ. ուստի *յա՛յտ է* զի տընկեալ ճիւղն նոյն կենդանութեամբն բուսանի զոր ունի առ ինքն: - 257. Եւ ուստի՞ է *յայտ* ասիցէ ոք. այսինքն զի բանն անմարմին է որ բաժանէ զսոսա. զի այս է կարգն որ մարմին զմարմին բաժանէ. և անմարմին զանմանմինն: - 175. Եւ *յա՛յտ* ուրեմն է՝ թէ մի է հոգի մարդոյն: - 259. Ապա ուրեմն *յա՛յտ է*՝ զի տղայութիւնն ո՛չ կարէ զնմանն ծնանիլ. այլ մանկութիւնն որպէս ասացաւ: - 266. Ուստի *յա՛յտ է*՝ զի յառաւել կերակրի և աւելի աճէ և բազումս ծնանի տունկն քան զանասունս: - 266. Ուստի *յա՛յտ է*՝ զի այծեամն առաւել է տեսանելեաւ. և շուն հոտոտելեաւ. և այլն նմանապէս. վասն որոյ փութով շարժին և կանգնին քան զմարդն: - 266. Նա՛խ զի սիրտ սուրբ և աննենգ ունէր. ուստի *յա՛յտ է* յանմեղութեամբ գնալոյն ընդ եղբօրն ի դաշտն: - 286. Իսկ զի ասէ «երերեալ՝» *յա՛յտ է* իբրև զծառ մարմնովն: - 287. Նախ՝ որ անփուտ էր փայտն. և մարմին մարդոյս անփուտ և անապական է. և *յա՛յտ է* ի յարութիւնն անմահ: - 293. Չորրորդ՝ *յա՛յտ է*, զի աշխարհս հայոց բ գետով և տապանաւն առաւելու քան զբազումս: - 295. Ութերորդ՝ հուրն և օդն առաւել է յարիւնն զի առնօղք են. և *յայտ է* ի խառնումն միութեանց...: - 295. Ուստի *յա՛յտ է* յերից արանցն երևելոյն առ կաղնեաւն մամբրէի: - 305. Վեցերորդ՝ մարմինն երէց է ըստ կարգի քան զհոգին. և *յա՛յտ է*, զի որ քան կենդանի եմք՝ զերիցագոյն պատիւն մարմնոյն տամք...: - 310. Ապա *յա՛յտ է*՝ զի աստուած ինքն ինքեան նախկին և վերջին՝ հաւասար կամ անհաւասար ո՛չ ասի. վասն այն իւր անուն ո՛չ դնէ: - 312. Երկրորդ՝ զի **խ** քաղաք առին ի բենիամենէ՛ յուդայի ցեղքն վասն շնութեան կնոջն պատահելոյ. և կոտորեցին զնոսա առ հասարակ **հեռ** արս. և մնաց վեց հարիւր այր զոր յետոյ ստացան ժառանգութիւն իւրեանց. որպէս *յա՛յտ է* ի դատաւորաց վերջքն: - 312. Ուստի *յայտ է* զի բարձր գոչեաց և եհան զոգի. զի ամենայն մարդկան նուազի ձայնն ի ժամ մահուանն: - 316. Ուստի *յա՛յտ է* զի բաժանեցաւ հոգին, այլ աստուածութիւնն անբաժանելի մնաց ի բաժանեալ հոգւոյն և ի մեռեալ մարմնոյն: - 319. Եւ մեզ պա՛րտ է իմանալ զչար խորհուրդ խորամանկին ի զանազան հնարս, և պատասխանել ի սուրբ գրոց. որպէս *յայտ է* ի գիրս ևագրեայ: - 323. *Յայտ է* զի յառաջ քան զհարւածն **հ** ամաց էր. և **լը** ամ եկաց ի հիւանդութեանն. և այսպէս կրկին աճեցին կեանքն որպէս և ամենայն ինչքն: - 327. Եւ այլն ամենայն բանք և գործք յոբայ ի տիպ օրինակի էր նորն ադամայ չարչարանաց թաղման և յարութեան որպէս *յա՛յտ է* ի գիրս պատմութեան նորա: - 327. Եւ *յա՛յտ է* աստի, զի սքանչելիքն քրիստոսի՝ շնորհք մարդասիրութեան է առաւել քան զմովսէսին: - 328. Եւ *յա՛յտ է* ի չորից: - 335. Չորրորդ *յա՛յտ է*, զի ինքեանք խոստովանեցան թէ մատն աստուծոյ է այս. և ո՛չ կարացին այնպէս առնել: - 335. Ուստի *յա՛յտ է* զի ի մի նիւթ ժողովեաց զամենայն որակս համոց: - 339. Եւ *յա՛յտ է*՝ զի ի մէջ սափորին մնաց անապական: - 339. Եւ զի անապակա՛ն է գոյացութիւն հացին՝ աստի՛ *յայտ է*, զի կեանք և անմահութիւն տայ ճաշակողացն: - 339. Եւ զի պատահմունքն փոփոխելի է, ուստի *յա՛յտ է* զի

փոփոխի և միաւորի՛ ի մարմին կերողացն: - 339. Եւ *յայտ է* զի յետ մկրտութեանն պա՛րտ է հաղորդել, և նոքա ո՛չ առնեն որպէս ցուցաւ: - 341. Իններորդ, նոքա ծառայաբար մատուցանէին. ուստի *յա՛յտ է* զի ո՛չ կարէին նստիլ ի սրբութիւնսն կամ ի քաւութիւնսն...: - 354. Չորրորդ *յայտ է*՝ զի նուէրքն աստուծոյ՝ սրբութիւն է. և որ ոք մերձենայ ի նա՞ սրբի: - 363. Ապա *յա՛յտ է* զի և ո՛չ այլ կարգաւորք զենցեն կենդանիս. որք են սարկաւագունք և այլք. զի անարիւն զենմանն կարգեալ են սպասաւորք: - 366. Ուրեմն *յա՛յտ է* զի կրեաց զկամաւորն. և զանանգոսնելին, որպէս և ծարաւն: - 383. Եւ *յա՛յտ է*, զի ոչ ինչ զօրութիւն ունէր բան նորա: - 388. Ապա *յա՛յտ է* զի անօրինին ո՛չ անէծքն ունի զօրութիւն. և ո՛չ օրհնութիւնն շնորհք: - 388. Ապա *յա՛յտ է*՝ զի որ ընդ ապաշխարութեամբ է և կրօնաւոր, ի գինւոյ ի մրգոյ և ի մսոյ պահեսցէ: - 390. Ըստ մարմնոյ *յա՛յտ է* զի երկիրն եգիպտացւոց դա՛շտ է. վասն այն նեղոս գետն արբուցանէ զնա՛: - 398. Ուստի *յա՛յտ է* զի փոխեաց զփայտն անիծից և զգերեզմանն, և արար աղբիւր օրհնութեան փայտի և գերեզմանի: - 400. Այլ և աղքատութեամբ. ուստի *յա՛յտ է* զի անէ՛ծ զգէեզի վասն ընչիցն նէեմանայ: - 404. Եւ *յա՛յտ է* յայսմանէ, զի հուր բորբոքեալ է ի բարկութենէ. ո՛չ յէութենէ և ո՛չ ի կամաց իմ, այլ ի բարկութենէ: - 408. Երրորդ՝ *յա՛յտ է* յայսմանէ. զի նոյն ինքն բարկութիւնն ո՛չ եկեալ ի գործ՝ չէ՛ չար...: - 408. Չորրորդ *յա՛յտ է*, զի թէպէտ սրտմտի՝ ո՛չ յինքենէ. այլ մե՛ք հարկանե՛մք զնա ի գործն, անդարձ լինելով մեր: - 408. Ուստի *յա՛յտ է*, զի յորժամ ի սպառնալն դառնամք ի մեղաց, ո՛չ սրտմտի նա: - 408. Չորրորդ *յայտ է* յայսցանէ, զի բարկութիւն սպառնալեացն բարի՛ է և դարձուցանօղ: - 408. Յորոց յայսցանէ *յա՛յտ է*, զի եթէ ապաշխարեալ լինի արգելեալն. կամ վախճանեալ է կապօղն. այլ ոք որ գերագոյն է կամ հաւասար կապողին, կարէ՛ արձակել զնա՛: - 409. **Փեգովրայ տեղի՛ էր կռոց. և դևքն չտային թոյլ թաղել զմարմինն, մինչև սաստեաց միքայէլ հրեշտակապետն ասելով**, «սաստեսցէ՛ ի քեզ տէր». որպէս *յա՛յտ է* ի կաթուղիկէից վերջին թուղթն: - 409. Եւ նա՛խ՝ զի ո՛չ ճանաչեաց վիուկն զսաւուղ աստի՛ *յայտ է*, զի գովեաց զնա՛ և պարսաւեաց...: - 428. Ապա *յա՛յտ է* թէ՝ որպէս սաւուղ խաբէր զկինն, նոյնպէս և կինն խաբէր զսաւուղ նմանութեամբն սամուէլի: - 428. Ապա ուրեմն *յա՛յտ է* սոքօք երկոտասան գլխով թէ վիուկն ո՛չ գիտէր զառաջիկայն: - 428. Նա՛խ՝ զի ո՛չ ետես զնա. այլ միայն կինն. ապա *յա՛յտ է* զի սուտ նմանութիւնն էր: - 429. Ա՛րդ՝ թէ աստուած ծածկեաց և սամուէլ յայտնէր հակառակ աստուծոյ, ահա՛ զի բարկացուցանէր զնա. ապա *յա՛յտ է* զի սո՛ւտ է և ո՛չ սամուէլ: - 429. Ապա *յա՛յտ է* զի ի մէջ կարծեաց էր նա. զի թէ սուտ համարէր զվիուկն, ո՛չ երկնչէր ի մահու. և թէ ճշմարիտ՝ ո՛չ երթայր ի պատերազմ: - 429. Ապա *յա՛յտ է* զի զապագայն ո՛չ ասաց: - 430. Ապա յայսմ ամենայն է *յա՛յտ է*՝ զի ոչ ինչ գիտեն զառաջիկայն դևք. և ո՛չ իմանան զներկայական խորհուրդս. և ո՛չ յառնեն մեռեալք. այլ սուտ կերպարանին: - 430. Ուստի *յա՛յտ է*, զի ցեղն իսրայէլի **ըճռ** էին. և ցեղն յուդայ **եճռ**. և ցեղն քահանայից և բենիամենի ո՛չ անկաւ ի թիւ: - 434. Երկրորդ՝ զի սովն և սուրն զբարի և զչար ի միասին պատժէ. այլ մահն ընտրութեամբն աստուծոյ է. և ժողովի ի վերայ յանցաւորացն. ուստի *յա՛յտ է* զի դաւիթ ո՛չ էր յանցաւոր ո՛չ պատժեցաւ: - 435. **Ուստի *յա՛յտ է*, զի որակ ծնողացն խառնի ի բեղնաւորիլն. ի դաշտանւոյն գօղի. ի հիւանդութենէ, ի շիկութենէ. որպէս ադամ տրտմութեամբ ծնաւ զորդին կայէն. ցաւած ծնողացն ցաւածին որդի**: - 439. Երկրորդ՝ զի իջցէ ի գերեզման և մի՛ տեսցէ զչարիքն որ ի ձեռն նաբուգոդոնոսորայ գալո՛ց էր ի վերայ երուսաղէմի. որպէս *յայտ է* ի պատմութիւնն: - 446. Սակայն արմատ մեղացն որ է՛ ցանկութիւնն և դիւրասահութիւնն ի մեղանչելն՝ մնայ. որպէս *յա՛յտ է* ի մկրտեալսն որք կարեն մեղանչել: - 462. Ապա *յա՛յտ է* որպիսութիւն սրբութեան կուսին: - 463. Տասներորդ, *յա՛յտ է* ի սքանչելեաց ծննդեանն. զի անսերմն յղացումն. և անապական ծնունդ. և անխախտ կուսութիւն: - 466. Եւ տե՛ս, զի բնութեամբ միաւորեցաւ՝ իմանի քրիստոս. *յայտ է* զի յորոշելն ըստ ոմանց՝ ո՛չ ևս մնայ քրիստոս: - 474. Եւ յա՛յսմանէ *յա՛յտ է*, զի սուրբքն զծնունդն և զյայտնութիւնն ի միասին տօնէին. և յետոյ բաժանեցին ոմանք վասն բեթղէհէմի և յորդանանու: - 482. Եւ այս ամենայն ազգաց *յա՛յտ է*, որ ի յունվարի վեցն տօնեն մկրտութեան. ապա ուրեմն նոյն օրն է և ծննդեանն: - 484. Մետասաներորդ՝ *յա՛յտ է* յամիսս նոցա. զի առաջին ամիս սեպտեմբե՛ր է նոցա. և վասն ծննդեանն քրիստոսի՝ փոխեցին և եդին զյունվար առաջին ամիս: - 484. Երկոտասաներորդ՝ *յա՛յտ է* յանւանէ ամսոյն որ կոչի յունվարի. և յունվար ի հոռոմն թարգմանի ծննդեան ամիս: - 484. Հնգետասաներորդ՝ *յա՛յտ է* յայսմանէ. զի վասն տօնի տեառնընդառաջին առաքեաց յուստիանոս կայսրն յերուսաղէմ զօրս բազում երիցս անգամ...: - 484-485. Ապա *յա՛յտ է* որպիսութիւն մեղաց՝ մահու՝ և ապականութեան: - 496. Ուստի *յա՛յտ է* զի ո՛չ ասաց ի հող դարձիր. այլ թէ՝ «դարձցիս»: -496-497. Եւ զի ա՛յլ է կամաւոր մահն ի հարկաւորէն. ուստի *յա՛յտ է* զի հարկաւոր մահն է՛ պատիժ. և կամաւորն պսակ և պարգև: - 497. Եւ զի ա՛յլ է մահ և ա՛յլ ապականութիւն՝ *յա՛յտ է* նախ ի գործոյն. զի ինքեամբ մահ ի ներքս մտեալ որոշէ՛

զհոգի և զմարմին. և ա՛յս է գործ նորա: - 498. Ապա *յա՛յտ է* ի գործոյն՝ թէ դժնդա՛կ է ապականութիւն քան զմահ: - 498. ...որպէս *յա՛յտ է* ի գիրս իւրեանց. և որ ոք կամեսցի դիւրաւ գտցէ. ապա ուրեմն անապակա՛ն է մարմինն քրիստոսի: - 499. Երկոտասաներորդ՝ *յա՛յտ է* յերից իրաց թէ ապականացու ասելն՝ ակնարկէ՛ ի յապագայն իբր թէ ապականելի՛ է ...: - 499. Ասեմք եթէ, կերակրիլն ո՛չ է մասն ապականութեան. ուստի *յա՛յտ է* զի ադամ նախ քան զյանցանելն ի դրախտին կերակրիւր և ո՛չ էր ապականացու. այլ անապական: - 501. Ուստի *յա՛յտ է* զի յորժամ կամէր՝ քաղցնոյր և ծարաւէր: - 501. Ուստի *յա՛յտ է* զի մեք կրեմք զամենայն զայսոսիկ: - 502. Ուստի *յա՛յտ է* զի արդարք և մեղաւորք ի դժոխս էին: - 506. Իններորդ՝ *յա՛յտ է* յօրինակէն. զի եգիպտոս հալոց երկաթի կոչի. նշանակէ՛ զդժոխքն որ տանջէր զհոգիսն: - 507. Ապա *յա՛յտ է* կերակուր նաւակատեացն: - 510. Ապա *յա՛յտ է* զի ո՛չ ի չորեքշաբաթի եկեր զծուկն. այլ ի յանցեալ կիրակէն: - 511. Երրորդ՝ ի մէջ գիշերի ծնաւ ի կուսական արգանդէն որպէս *յա՛յտ է* ի հովւացն և հրեշտակացն: - 512. Քսաներորդ, *յա՛յտ է* յա՛յսմանէ՝ որ նախ քան զքրիստոս՝ էր սկիզբն աւուր ծագումն լուսոյն. իսկ յետ յարութեանն քրիստոսի եղև սկիզբն աւուրն ի մէջ գիշերի. զի այժմ ի խաւարէ՛ ի լոյս ճանապարհորդիմք: - 515. Ա՛րդ՝ յորժամ ամենայն ինչ նոյն է սուրբ Երրորդութեանն, որով *յա՛յտ է*՝ թէ հայր խօսի, և թէ որդի, և թէ հոգին սուրբ, մի և նոյն բանիւն խօսին...: - 530-531. Ուստի *յայտ է* զի պատժէ զմարմին. և կապէ՛ զհոգին ի կեանս և ի մահ: - 538. Եւ *յա՛յտ է* ի չորից: - 546. Եւ *յա՛յտ է* յայսմանէ, որ կաթողիկոսն ո՛չ կարէ կաթողիկոս ձեռնադրել. այլ եպիսկոպոս առնէ: - 546. Չորրորդ՝ *յա՛յտ է*, զի իւրաքանչիւր առաքեալ յիւր վիճակն ընթացեալ ձեռնադրեցին եպիսկոպոսունս: - 546. Եւ **լզ** բիւրս սպանին յուղղափառաց դասուց. որպէս *յա՛յտ է* ի պատմութիւնս սրբոյն միխայէլի: - 547. Ուստի *յա՛յտ է*, զի առեալ էր զքահանայութիւն. և մկրտեալ զթագաւորն և լուսաւորեալ զազգս, և շինեալ եկեղեցիս: - 548. Եւ *յա՛յտ է* զի ագաթանգեղ, «յայնժամ լուաւ տրդատ եթէ հաւատաց ի քրիստոս կոստանդիանոս որդին կոստայ»: - 549. «Ղէբէոս որ անուանեցաւ թադէոս». *յայտ է* ի քրիստոսէ զանունն փոխեալ. որպէս զպետրոսին և զորդւոցն որոտման: - 549. Ապա *յա՛յտ է*, զի նըւազ ճշմարիտն առաւել ճշմարտին հետևեսցի. որպէս նուազ բարին առաւել բարւոյն. եթէ ընդհանուրն և եթէ մասնաւորն: - 550. **Այսպէս և ամենայն ազգք քրիստոնէից զնոյն ունէին ճանապարհ դաւանութեան և աւանդութեան յառաքելոց անտի մինչ ի ժողովն քաղկեդոնի. և յետ անտի բաժանեցան ամենայն ազգք յամենայն իրս, որպէս *յա՛յտ է* յիւրաքանչիւր եկեղեցիս**: - 551. Ապա ուրեմն *յա՛յտ է* յայսցանէ՝ թէ առ միոն իցէ ճշմարիտ հաւատ և օրէնք՝ նա՛ է ճշմարիտ և ո՛չ այլքն. թէպէտ բաժանեալ լիցի ի նոցանէ: - 552. Երկրորդ *յա՛յտ է* ի բաժանմանէ. զի յերիս բաժանի տեսակ մեղաց. այսինքն ի մտաւորն, ի բանաւորն, և ի մարմնաւորն: - 556. Եւ սոքա մտօք և ո՛չ մարմնով կատարին. որպէս *յայտ է* ի բանսարկուն սատանայ որ յանցեաւ հպարտութեամբ և նախանձով: - 556. Տասներորդ՝ *յա՛յտ է* ի համազօրութենէ. զի երբեմն շարժէ՛ ախտ զմիտս. և երբեմն շարժի ի մտացն ախտ. որպէս ասէ երանելին եւագրիոս. եթէ մինչ յերեսնամեայ հասակս ախտն շարժէ զմիտս ի ցանկութիւն. և անտի յառաջ միտքն շարժէ զախտն: - 557. Եւ *յա՛յտ է* ի չորից: - 557. Ապա ուրեմն *յա՛յտ է* լուծումն տարակուսանացդ ըստ կարգի. և ոչ ոքն ի նոցանէ հակառակ գոն միմեանց որպէս ասացաւ: - 558. ...որպէս առաւել է մեղք հրեշտակին քան զմարդոյն. վասն այն մին քահանայի մեղք՝ որ չափ բոլոր ժողովրդեանն է. ուստի *յա՛յտ է* ի պատարագէ հնոյն...: - 563. Որպէս *յա՛յտ է* ի տրտմիլն. զի խորհուրդն մշակ եղեալ յետոյ ի յոխս և ի քէնս և ի նախանձս յաւելու: - 564. Եւ *յա՛յտ է*՝ զի սկզբնական մեղքն է՛ ի մարմինն և ի հոգին: - 567. Երկրորդ զօրացուցանէ. որպէս *յա՛յտ է* ի մակաբայեցւոցն զկնոջէն որ ունէր է որդիս՝ ածեալ ի սպանումն ի միումն աւուր տեսեալ. և տանէր այնմ՝ յուսովն որ առ աստուած. նոյնպէս և ամենայն դասք մարտիրոսացն յուսով զօրացան: - 574. Եւ թէ իցէ ինչ՝ անզօ՛ր է. ապա *յա՛յտ է* զի խաղաղութիւնն է յո՛յժ մաքրեալ հոգւոյն: - 585. ...քանզի խաղաղարարն է առանց հակառակութեան մարմնոյ՝ աշխարհի՝ և սատանայի. *յա՛յտ է* զի լինիցի պատրաստ ի յաղթել զփործութիւն մահու: - 586. Զի մկրտութիւնն է՛ խորհուրդ հաւատոյ. ուստի *յա՛յտ է* զի նախ հաւատամք և ապա՛ մկրտիմք: - 587. Զի ջուր հակառակ է հրոյ. և զի՞նչ է մեղք, եթէ ոչ հուր. որպէս յոգւոջ բարկութիւն. և ի մարմնի ցանկութիւն. ուստի *յայտ է* զի հրով տանջանաց պատժի. և աստ զի հուրն շիջցի ի ջուր մկրտիմք: - 591. Ապա *յա՛յտ է* զի ո՛չ ի մարմնոյ և ո՛չ յարենէն էր թացեալ պատառն. այլ ի այլ ինչ կերակրոյ ի սեղանոյն առեալ թացեալ և տուեալ. զի ցուցցէ զմատնիչն: - 599. Որով *յա՛յտ է*՝ զի ի կէս աւուրն որ է **ժբ** ժամն՝ աղօթելի՛ է մեզ յամենայն օր. և զկէսն այլ՝ մարմնական հոգոց պարապիլ. գործոյ աշխատութեան՝ ննջելոյ՝ կամ այլ ինչ իրաց: - 623. Նա՛խ ի տէրունական բանիցն է *յայտ.* որպէս ուսոյց հասարակ աղօթել. - 623. ...որպէս *յա՛յտ է* ի սաղմոսն ասափայ և կորխայ

և այլոցն. - 636. Եւ նախապատուութիւնս այս *յա՛յտ է* յերից: - 642. Ուստի *յա՛յտ է*՝ զի ուր և ալէլու ասեմք, սաղմոս տուն գոյ ընդ նմա: - 644. ...որ և *յա՛յտ է* ի փակելոյ դրանց եկեղեցւոյ: - 650. Վասն որոյ ի թագաւորութեանցն սկսանի ընթերցուածն. որպէս *յա՛յտ է* ի մեկնութիւն նորին: - 651. Եւ զի ճշմարիտ պահք է չորեքշաբաթն որպէս ուրբաթն *յայտ է*...: - 652. Եւ ի նորս՝ ի չորեքշաբաթ և յուրբաթ փոխեցին առաքեալքն. որպէս *յա՛յտ է* յառաքելական կանոնս. նաև ի նիկիականն: - 652. ...*յա՛յտ է* զի նոյն մարմին շարժի և շինի ի յարութեան աւուրն: - 678. ...որպէս *յա՛յտ է* յառաջիկայդ ի զանազան վկայութեանց վարդապետաց սրբոց և ի հին և ի նոր աստուածաշունչ կտակաց: - 691. Ուստի *յա՛յտ է* զի մինչև յօր դատաստին ո՛չ առնուն: - 692. Քանզի, տանջանք և փառք այնմ կենաց *յա՛յտ է* զի ո՛չ է ժամանակեայ, այլ յաւիտենական: - 694. Երեսուներորդ, *յա՛յտ է* յորպիսութեանցն չորից որ ասացաւ յառաջագոյն եթէ աստ հոգի մարդոյն է ի մէջ բարեաց և չարեաց. իսկ յետ մահու ի մէջ բարեաց միայն. իսկ ի յարութեանն ի մէջ բարեաց և փառաց: - 694. Ուստի *յա՛յտ է* զի նախ քան զքրիստոս արդարք և մեղաւորք ի դժոխս էին: - 695. Եւ զի ա՛յլ է այս՝ և այլ այն՝ *յա՛յտ է* յերկուց: - 697. ...և *յա՛յտ է* զի մեռելութիւնն բնութեանս է պատիժ և ո՛չ մարմնոյն: - 699. Տասնևմի, պատժոյն մեղաց չափ և ժամանակ գոյ ըստ իւրաքանչիւրիցն. որպէս *յա՛յտ է* ի կանոնս: - 700. Եւ զի ո՛չ գոյ ողորմութիւն անդ՝ *յա՛յտ է* ի յիմար կուսանացն. և ո՛չ զերծումն ի տանջանաց...: - 700. ...որպէս *յա՛յտ է* ի մեծատանէն: - 700. Նա՛խ եթէ ի խոստովանութիւն մեղացն մնայ պատիժն զոր ապաշխարութիւնն քաւէ. որպէս *յայտ է* ի կանոնս. - 701. ...ուստի *յայտ է* զի քաւարանն ջուր ո՛չ է: - 701. Ապա ուրեմն *յա՛յտ է* որպիսութիւն թագաւորելոցն սրբոց: - 711. Չորրորդ *յա՛յտ է* յօրինակաց. զի գաւազանն ահարօնի որ ծաղկեցաւ՝ օրինա՛կ էր խաչին. և տախտակքն բանին. և ծառն կենաց որ ի մէջ դրախտին: - 733. Հինգերորդ՝ զի ո՛չ ոք ապականացու զայլ ոք ամբողջ կարէ պահել որպէս *յայտ է* ի նիւթական իրս ամենայն: - 733. որպէս *յա՛յտ է* ի սերովբէսն որ ի ներքոյ փառաց աթոռոյն, այսինքն է խաչին. թևասքօղեալ զերեքսրբեանն վերածայնէին: - 734. Ապա *յա՛յտ է* յասացելոցս թէ՝ քրիստոս երևեցի արդարոցն քաղցրատես, և մեղաւորացն դառնակերպ. որ նշանակեցաւ ի սիւն ամպոյն ի տուէ և ի հուրն ի գիշերի: - 741. Ապա *յա՛յտ է* զի տեսանիմք ի մէնջ և ի միմեանց և ի դատաւորէն աստուծոյ: - 741. Եւ զի ուղիղ է դատաստանն աստուծոյ՝ *յա՛յտ է* ի վկայութեանց սուրբ գրոց: - 743. Եւ այս *յա՛յտ է* բազում օրինակաւ: - 744. Եւ են ամենայն հարցմունքդ **դժ**ան գլխով. որպէս *յա՛յտ է* ի կարգիդ: - 773. Դարձեալ՝ ծածկութիւն յանցանաց՝ է՛ բնականապէս մեզ ի տերևոյ անտի. իսկ յանդիմանութիւն է ծածկելոց *յայտ* արարողութիւն. վասն որոյ ամենքեան դժկամակ երևին: - 774. Եւ այս *յայտ է* բազում վկայութեամբ ի հարցմանցդ վերոյ: - 776. Իսկ թէ ընդ նախահօրն ազատութեան ընդ նմին ազատեցան և որդիք, *յա՛յտ է* ի բազմաց: - 776. Ուստի *յա՛յտ է* զի ելեալ էին երբեմն և վերըստին դառնան ի նոյն: - 777. Որով *յա՛յտ է* ի գործոյն և ի պատժոյն: - 777. *Յայտ է* յաշխարհակազմութեանն. ըստ որում իւրաքանչիւրքն պատշաճապէս ներգործեցան: - 780. Իսկ առ լուծումն խնդրոյս թէ վասն է՞ր արդեօք առ նորս շնորհ՝ որպէս աւազանին և կարգին ո՛չ բառնի ընդ բառնիլ շաղկապին. իսկ առ հնովն բարձաւ. որպէս *յա՛յտ է* ի վերոյ ասիցդ ադամայ և յայլոցն: - 782. Ապա *յա՛յտ է* համաձևանալ այսու՝ հնոյն շնորհ առ նորոյս: - 782. Եւ *յայտ* ի դիւա՛ցն է. որ ո՛չ կորուսին զանմահութիւն և զանձնիշխանութիւն և զայլս: - 782. Եւ *յայտ* յուրացողացն է. զի ի դարձին վերստին ո՛չ մկրտեմք: - 782. Գիտելի՛ է, զի դք ո՛չ ունին հաւատս իսկապէս. և *յա՛յտ է* ի բազմաց: - 784. Որպէս *յա՛յտ է* ի ծխոյ և ի փոշւոյ և յայլոց. ընդ դէմ գոլոյ պարզութեանցն լուսոյ՝ ի ներքս մտեալ զկծեցուցանէ զնա: - 786-787. Եւ այսպէս *յա՛յտ է* լուծումն երկրորդին: - 787. *Յա՛յտ է* զի ի բառնիլ ոչէին՝ էութիւն հաստատի բացասութեամբ կրկին. իսկ ստորասութեամբ նոյն մնայ: - 787

***ՅԱՅՏ ԱՌՆԵԼ +*** Եւ դարձեալ՝ զերրորդութիւնն աստ *յայտ առնէ* : - 47. Յայսմիկ *յայտ արար* թէ ի յարութեան անդ ո՛չ դառնայ ոք յոք. ո՛չ հայր յորդիս՝ և ո՛չ որդիք առ հարս իւրեանց. այլ դառնան ամենեքեան յայս. զի արժանի լիցին ողորմութեամբ ելանել առ հայր: - 517. Ջվիշտս *յայտ առնէ* անցելոցն նուազութիւն և կորուսելոցն բազմութիւն: - 764

***ՅԱՅՏ ԼԻՆԵԼ*** - Եւ զի *յա՛յտ եղև* այս, այժմ պատասխանեսցուք հարցմանն: - 162. Եւ զի *յայտ եղև* այս, ծանուցի և այն, թէ վասն է՞ր աստուած միայն գոյացութիւն է և ո՛չ պատահումն: - 170. Եօթներորդ՝ ամօթ մեղացն. որք անդ ամենայնքն *յայտ լիցին* և զինքեանս թաքուցանել չկարեն: - 752

***ՅԱՅՏ Է ԹԷ +*** Ուստի *յա՛յտ է թէ* սերմանեաց ի բնութիւնս զբարին, և օրէնս եդ բարւոյ. այլ և խրատ և յորդորումն և պարգևս բարեաց: - 17. Յորմէ *յա՛յտ է թէ* և ի կատարածին ո՛չ հեռանայ: - 42. Որով *յա՛յտ է թէ* յետ ծերութեան մարդկան՝ նոյն ինքն է աստուած. և զայլն նմանապէս իմասցիս: - 42. Իսկ եթէ **բ** են սկզբունք, *յա՛յտ է թէ* **բ** են ներգործութիւնք: - 62. Ապա ուրեմն երևեցաւ՝ զի թէ մասունքն քրիստոսի

ասին և աստուծոյ ո՛չ ասին, *յա՛յտ է թէ* զքրիստոս ո՛չ խոստովանին աստուած: - 91. Ապա ուրեմն *յա՛յտ է թէ*՝ որպէս յանեղէն եղականքս, և յանսկզբնէն սկզբնաւորքս եղեն: - 114. Ապա *յա՛յտ է թէ* ո՞րպէս է հասարակ և զանազան քահանայապետութիւնն առ աստուած ի հրեշտակս և ի մարդիկ: - 139. Եւ յայսմանէ *յայտ է թէ* երեքկին է որպիսութիւն հրեշտակաց: - 151. Եւ որովհետև գիտացեալ եղև այս, ապա *յա՛յտ է թէ* անկա՛ր է ոչ երևիլ սկիզբն լինելութեան աշխարհի. ըստ այնմ որ էր ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ: - 164-165. Արդ՝ եթէ անմարմին բանիւ բաժանին սոքա, *յա՛յտ է թէ* անմարմին են և բաժանեալքն: - 175. Ուստի *յա՛յտ է թէ*՝ և իշխէ՛ արտաքին անասնոց: - 220. Արդ *յա՛յտ է թէ* որ գործ չառնէ հոգևոր կամ մարմնաւոր՝ վա՛տ ասի: - 251. Ապա ուրեմն *յա՛յտ է թէ* վասն է՞ր մարդն ի չորեքտասան ամն կարէ ծնանիլ: - 266. Ապա *յա՛յտ է թէ*՝ որ անկանի ընդ քար կամ ի վիհ և մեռցի, ո՛չ է ուտելի: - 366. Ապա *յա՛յտ է թէ* որ վասն աստուծոյ լիցի զենումն, - 366. Ապա *յա՛յտ է թէ*՝ որպէս սաւուղ խաբէր զկինն, նոյնպէս և կինն խաբէր զսաւուղ նմանութեամբն սամուէլի: - 428. Ապա *յայտ է թէ* ըստ մարմնոյ՝ կոյսն էր յազգէն յովսէփայ: - 460. Դարձեալ՝ մահն խառնեա՛լ է ընդ բարւոյ. և ապականութիւնն ամենևին չար. որպէս ցուցաւ ի գիրս քառասնօրեայ գալստեանն և մահուն սիմէօնի. ապա *յա՛յտ է թէ* ա՛յլ է մահ և ա՛յլ ապականութիւն: - 498. Ուստի *յա՛յտ է թէ* մի է դժոխք հոգւոցն: - 505. Ապա *յա՛յտ է թէ* համահաւասա՛րք են երկոտասանքն իշխանութեամբ: - 546. Ապա *յա՛յտ է թէ* ո՛չ ազգս հայոց եթող և բաժանեցաւ, այլ նոքա թողին զուղիղն և բաժանեցան: - 551. Ապա ուրեմն *յա՛յտ է թէ*՝ առաւել չա՛ր է խորհուրդն արբեալ որ շարժէ՛ ի գործն. քան զգործն որ շարժէ՛ ի զղջումն: - 558. Ապա *յա՛յտ է թէ* որպէս գործ մարմնոյն առ այլս է չար, և խորհուրդ մեղացն առաւել ինքեան է չար: - 558. Ապա *յա՛յտ է թէ* համաձայն են միմեանց: - 559. Եւ *յա՛յտ է թէ* վասն է՞ր են **ը** խորհուրդք: - 561. Ութերորդ, ո՛չ ասաց՝ թէ խնդրեսցէ ապաշխարութեամբ՝ արգելից զգութ և զողորմութիւն. այլ թէ՝ «ո՛չ թողցի». որով *յա՛յտ է թէ* առանց զղջման և տանջանաց ո՛չ թողցի: - 566. Նա՛խ՝ զի ջուրն և արիւնն որիշ բղխեաց և ո՛չ խառնեալ. ապա *յա՛յտ է թէ* որիշ է խորհուրդ ջրոյն և որիշ արեանն: - 595. Ուստի *յայտ է թէ*՝ զմարմին բանին ապականացու խոստովանին նոքա՝ որ զխաչն ապականացու ասեն. և են նեստորականք: - 733. Ապա *յա՛յտ է թէ* ո՞րպէս է անհանգիստ տանջանք դատապարտելոցն: - 750. Յորոց *յա՛յտ է թէ*՝ որք աստի կենօքս ի սուգ տրտմութեան անցուցանին զի ուրախութեան հասցեն: - 775

***ՅԱՅՏ ՈՒՐԵՄՆ Է*** - Եւ եթէ է մի զկնի միոյն, *յայտ ուրեմն է* թէ նախկինն է սկիզբն: - 21. *Յայտ ուրեմն է*, զի որ ի վեր է քան զէութիւն, ի վե՛ր է քան զգիտութիւն: - 103. Ապա *յայտ ուրեմն է* զի սուտ երևումն էր սամուէլի ձևացեալ: - 429. *Յայտ ուրեմն է* թէ ո՛չ է առակս վասն հատուցման արդարոց: - 697. *Յա՛յտ ուրեմն է* յասացելոցս, զի դևք ո՛չ ունին հաւատս վարձաւոր. այլ ունին գիտութիւն նրբահայեաց որով սարսին յառաջ քան զտանջանս: - 784

**ՅԱՅՏՆԱԳՈՅՆ +** Երրորդ՝ է՛ *յայտնագոյն* նշան սիրոյ. զի է՛ ընդ դէմ շարժման բնութեանն: - 577

**ՅԱՅՏՆԱՊԷՍ +** Երրորդ՝ եթէ զոր ինչ ասէաք և ճշմարիտ էր, յայնժամ բանս մեր ո՛չ հետևէր իրացն. այլ իրն բանիցն հետևէր. որ է՛ *յայտնապէս* սուտ...: - 8-9. Առարկութիւնս այս *յայտնապէս* զորդի կամ զհայր ի բա՛ց մերժէ յաստուածութենէն. ճարտա՛ր իմա, ո՛չ ասէ զհօրէ ոչ զոլ աստուած. այլ զանծնելութենէն: - 38. Այսպէս զհոգւոյն թէ *յայտնապէս* աստուած ասիլ ծածկեցաւ, և այլ իմն բառիւ յայտնեցաւ. որ ցուցանէ զնոյն ճշմարտապէս աստուած կատարեալ...: - 55. Այսոքիկ և այլ սոյնպիսիք *յայտնապէս* աստուած ցուցանեն զհոգին: - 55. Եօթներորդ՝ վկայ դամասկացին որ ասէ. որ և նա ևս քաղկեդոնիկ է. եթէ *յայտնապէս* զհոգին սուրբ ի հօրէ՛ ասեմք. և զնա հոգի հօր անուանեմք: - 64. Որք **բ** անձն և **բ** բնութիւնս՝ և **բ** կամս՝ և **բ** գործս բաժանեն քրիստոսի. **բ** որդի՝ և **բ** քրիստոս *յայտնապէս* ասեն. զմինն տէր, և զմինն ծառայ, զմինն բնութեամբ որդի աստուծոյ, և զմիւսն շնորհօք. և այլն: - 82. Ահա տե՛ս *յայտնապէս*. զի որք բաժանեն զմի քրիստոսն յերկուս բնութիւնս, ո՛չ պահեն զմիաւորութիւնն անբաժանելի: - 88. Իսկ թէ յայնցանէ փախչիք իբր *յայտնապէս* որոշումն՝ և այլիմն պատճառաւ որպէս գառնենեաւ ծածկէք զգայլենիս ձեր: - 89. Ապա ուրեմն *յայտնապէս* նոքա ուրանան զայս, և ասեն թէ՝ ձեռքն քրիստոսի ոչ է աստուած. և գլուխն քրիստոսի ո՛չ է աստուած. և այլն. զի մի բազմաստուածք լիցին: - 91. *Յայտնապէս* ցուցանէ գիտութեամբ զինքն հաւասար հօր: - 97. Երկրորդ՝ յա՛յտ է զի ունին ջերմութիւն և ցրտութիւն. չորութիւն և գիճութիւն. որ *յայտնապէս* տարրական է որակութիւն: - 188. Այսպիսի ժամանակ է *յայտնապէս* կեանք մեր. զի զոր ինչ ժամանակ կենցաղոյս չափէ բնութեամբ՝ ապականէ և փոփոխէ ...: - 199. Ութերորդ՝ ամպն առեալ ի ծովէն ծածկաբար, և ապա ցօղէ՛ յերկիր *յայտնապէս*. և լցուցանէ զնա ամենայն բարութեամբ: - 206. Այլ *յայտնապէս* կենդանութիւնն է օդոյն և

հրոյն. և նիւթ մարմնոյն է՛ ջրոյն և հողոյն: - 215. Տե՛ս, զի *յայտնապէս* ցուցանէ սուրբն, զի թէ պահպանութեամբ կացեալ էին ի դրախտին, ո՛չ ևս ամուսնութեամբ լինէր աճումն: - 280. Այլ ճշմարտութիւնն *յայտնապէս* ի մե՛րս մասիս ցուցանէ: - 294. Նոյնպէս և սրբոցն միտք լուսաւորին յաջոյն քրիստոսի. զոր աստ շանմանդաղ տեսանէին զփառս, անդ *յայտնապէս* տեսցեն: - 314. Նա՛խ՝ զի մովսէս *յայտնապէս* զկէս արեանն անապական եհեղ զսեղանովն որ նշանակէր զանապական խորհուրդ արեանն...: - 341. Ահա՛ *յայտնապէս* այլ է ձև արարողութեան սոցա ի յօրինակէն: - 341. Երրորդ՝ զի աւետարանիչքն *յայտնապէս* ասեն թէ՝ ընդ մկրտիլ տեառն՝ նոյն ժամայն հոգին հանէ՛ զնա յանապատ. և պահեաց զխ տիւ և զխ գիշեր: - 373. Այլ տե՛ս *յայտնապէս*, զի զայսպիսի նշան վկայութեան ո՛չ ունէին յուդաս և դևդաս. և ո՛չ նեռն ունելոց է դերաքրիստոսն. վասն որոյ ո՛չ են մարգարէ, այլ մոլորեցուցիչք և չարք: - 400. Այլ այս անէծքս *յայտնապէս* ի վերայ հրէիցն է. որք ո՛չ կատարեն զօրէնս, և ո՛չ ունին զմկրտութիւնն քրիստոսի: - 403. Երրորդ՝ եցոյց *յայտնապէս* զպատերազմն առաջի այսոց օդոցս. վասն այն պիտոյ էր հեծեալք: - 445. Խաչանման տարածեցաւ ի վերայ մանկանն և կծկեցաւ. այսինքն փոքրկացաւ ի չափ մանկանն. և ապա *յայտնապէս* է անգամ յօրանչելով և կծկելով կենդանացոյց զնա: - 446. Դարձեալ՝ առաջին գալուստն ծածուկ փրկութիւն և կեանս շնորհեաց. իսկ յերկրորդին *յայտնապէս* յարուցանէ: - 446. Բայց անյա՛յտ էր գրեալն. մինչ խաչիւ և չարչարանօք զգիրն պատրանաց նախաստեղծիցն պատառեաց, և ապա՛ զայս գիր ետ *յայտնապէս*: - 481. Տասներորդ՝ զի և ազգն հռոմայեցւոց մինչև ցայսօր *յայտնապէս* ի վեցն յունվարի զերից տօնից յիշատակս կատարեն: - 484. Զի կիրք՝ եղականի՛ է *յայտնապէս*: - 502. Այլ ես ասեմ թէ արիւն ունին *յայտնապէս*, թէպէտ փուքով ցամաքի: - 511. Նա՛խ՝ զի աւետարանն *յայտնապէս* ո՛չ ասէ զժամ յարութեանն. որպէս զխաչին և զթաղմանն: - 512. Դարձեալ *յայտնապէս*, զի բանն միացեալ ի մարմնի՝ էր անբաժանաբար ի հայր. որպէս առ մեզ ներտրամադրեալս բան և գրեալն ի թղթի: - 531. Այժմ ասասցուք թէ ո՞րպէս կոչի մի եկեղեցի *յայտնապէս* ի կարճոյ: - 533. Չորրորդ՝ զմիտս լուսաւորելով *յայտնապէս* առանց երևակայութեան՝ միայն միտքն լուսաւորեալ ի շնորհաց հոգւոյն...: - 536. Դարձեալ՝ *յայտնապէս* ասել ո՛չ է հարկ՝ է ամենայն բազում պատուական է քան զմին. զի ահա՛ գոյացութիւնն մի է և պատահումն բազում. և արեգակն մի է և աստեղք բազում. և գլուխն մի է և անդամք բազում: - 551. ...զի *յայտնապէս* զարիւնն ո՛չ տայք, և ծածկապէս զմարմինն. զի յօրինեալ մարմնոյն ո՛չ տայք. այլ սոսկ հաց որ ի բեմն: - 599. Եւ թէ ընդէ՞ր ո՛չ *յայտնապէս* որպէս այլազգաց: - 604. *Յայտնապէս* բաժանեն զխաչեալն քրիստոս և սոսկ մարդ խոստովանին: - 633. Իսկ թէ ո՞ւր իցեն սոքա երկոքեանս, տեսիլն յօհաննու *յայտնապէս* ցուցանէ. սրբոց խորանս ասէ զվերինն սիօն և զհրեշտակացն դասս: - 688. Նոյնպէս և լուսեղէն պսակքն որ իջանէր ի վերայ նոցա՝ *յայտնապէս* ցուցումն է իմանալի պսակացն: - 697. Չորրորդ, զի *յայտնապէս* զրկէ զժողովուրդն ի փրկութենէ, և ծուլութեամբ ընկղմէ ի մեղս. - 698. Ահա՛ *յայտնապէս* զփայտ զխոտ և զեղէգն զոր նոքա վասն քաւարանին ասեն, - 703. Զի այժմ կարծեմք. և յետ մահու *յայտնապէս* տեսանեմք զամենայն. և յետ յարութեանն առնումք զամենայն: - 705. Եւ մագօգ՝ որովք *յայտնապէ՛ս* հալածէ զեկեղեցի: - 708. Եւ ինքն տէրն *յայտնապէս* ասէ զյարութիւն մարմնոյ...: - 715. Եւ իւրաքանչիւր ոք զգործս իւր ընթեռնու *յայտնապէս* և ո՛չ կարէ ուրանալ և մոռանալ: - 741

**ՅԱՅՏՆԵՄ +** Ընդէ՞ր ոչ *յայտնեաց* աստուած զէութիւն իւր ի կեանս յայս՝ մարդկան ազգի: - 24. Նա՛խ՝ զի գո՛րծ է նեռինն ուրանալ զաստուած, որպէս իւր անունն *յայտնէ* ...: - 34. Իսկ թէ ոչ կամաւ. ո՛ է որ զնա բռնադատեաց. զի բնութիւնն ողջախո՛հ է. և *յայտնէ* զայս կուսութեամբ կեալն բազմաց: - 36. Երկրորդ՝ զի որպէս ամէն ոք իւր զգեստիւն ճանաչի, այսպէս և քրիստոս մարմնով երևեալ *յայտնեցաւ* աշխարհի: - 43. Իսկ և զինքն անուամբ *յայտնէ* թէ «զյիսուս քրիստոս»: - 47. Այլ և *յայտնեաց* զծածուկ պատրւակեալ խօսս նորա: - 47. Իսկ այլք արարած վասն ո՛չ *յայտնելոյ* ի գիրս աստուած զհոգին: - 51. Այսպէս զհոգւոյն թէ յայտնապէս աստուած ասիլ ծածկեցաւ, և այլ իմն բառիւ *յայտնեցաւ*...: - 55. Զի որպէս էր հօր ծանօթութիւնն ի նախահարսն, և որդոյն ընդ աղօտ, այլ ի մարմնանալն իւր *յայտնեցաւ*: - 55. Նոյնպէս և հոգին յիւրում ժամանակին. յետ խաչելութեանն քրիստոսի և համբառնալոյն առ հայր. և ապա իջանելոյ հոգւոյն. և *յայտնելոյ* զաստուածութիւնն իւր: - 55. Մետասաներորդ՝ աստուծոյ միա՛յն է *յայտնել* զգաղտնիս...: - 58. Այլ այսորիկ զմիմեանց գործակից լինիլն *յայտնեն*: - 61. Ա՛րդ՝ *յայտնեցաւ* նոցայն մոլորութիւն: - 91. Երանելին պօղոս՝ զխորհուրդն աստուածպաշտութեան *յայտնի* և մեծ ասէ ...: - 93. Բայց կամեցաւ և *յայտնեաց* զինքն որդի և զհայր՝ ի ձեռն նշանաց աշակերտաց իւրոց. որպէս

ի պտղոյն ծառն երևի: - 96. Ա՛րդ՝ եթէ *յայտնեաց* զինքն աշակերտաց իւրոց. և մարդկութեան իւրոյ ո՛չ *յայտնեաց*, եղիցի ինքն տգէտ քան զաշակերտսն իւր. և կամ ոչ ինչ *յայտնեաց* զոր ինքն ո՛չ գիտաց: - 96-97. ...ապա բաժանե՛ս զմարդկութիւնն ի յանձնէն. և ասես **բ** անձն. և երկու բնութիւն. ըստ նեստորի առաջնորդին քոյ. և պօղոսի սամոստացւոյ. որ մինչև ցայժմ ծածուկ է իր նեստորեան, և այժմ *յայտնեցեր* զքեզ: - 98. Յաղագս որոյ և անանուն է աստուած. զի անունն զբնութիւնն *յայտնէ*. որպէս մարդ: - 103. Եւ զմասնաւոր խորհուրդս բա՛նն *յայտնեաց:* - 125. Եւ զհայր որդի՛ *յայտնէ*: - 125. Ութերորդ՝ զի խորանն առաջին և երկրորդ և երրորդ՝ վարագո՛յր էր. և ծածկէին զմիմեանս և *յայտնէին.* այսպէս առաջին խորանն է աստուածայինքն. և երկրորդն հրեշտակացն. և երրորդն մերս՝ վարագուրիւք ծածկեալ՝ որ *յայտնեն* զմիմեանս: - 132. Երկրորդ՝ հրեշտակն պատգամաբեր և *յայտնօ՛ղ* լսի. և առհասարակ զծածուկս առնուն յառաջնոցն և *յայտնեն* երկրորդիցն: - 136. Երկրորդ՝ ամենեքեան հրեշտակք կոչին. իբր միմեանց ուսուցիչք և *յայտնօղք*: - 137. ...որ զախորժակս իւր *յայտնէ՛ր* սիրելոյն...: - 159. Եւ այսու զանազանի փորձութիւնն աստուծոյ և սատանայի, Նախ՝ որպէս ասացաք՝ աստուած փորձէ՛ զի *յայտնեսցէ* զբարութիւնն. և սատանայ փորձէ զի հանցէ ի բարւոյն: - 161. Այլ և ըստ համարոյն՝ կնքէ՛ զինչս թագաւորաց. և չտայ գողանալ ծառայից. և զգողացեալն *յայտնէ* և յանդիմանէ: - 178. Ձնոյն *յայտնէ* և ի մերս. զի ուրբաթ ասի որ է՛ կազմութիւն: - 200. Եւ զոր գիրք սուրբ ո՛չ է *յայտնեալ*, զիա՞րդ իշխէ մարդ խօսիլ: - 224. Երևի ապա թէ ճշմարիտ են պատկերացոյցքն, որ զբարս մարդոյն *յայտնեն*: - 246. Սևամորթն՝ զխորամանկն *յայտնէ* : - 247. Եւ թէ ասիցէ ոք. արդ *յայտնեա՛*, նախախնամութեա՞մբ է լինելութիւն հոգւոյ, թէ ստեղծմամբ: - 257. Եւ չորրորդ՝ *յայտնել* խոստովանութեամբ զգաղտնիս ամօթոյն: - 281. Իսկ ենովքայն թէպէտ գիրք ո՛չ *յայտնեն*, բայց միայն թէ «ենովք հաճոյ եղեալ աստուծոյ՝ փոխեցաւ յերկինս»: - 290. Եւ փոխանակ **յ** կանգնոյն՝ **յ** ամքն ի քրիստոսէ մինչև ի մեծն կոստանդիանոս. ուր *յայտնեցաւ* խաչն փրկչական: - 294. Նոյնպէս և մելքիսեդեկ թագաւոր էր սաղիմայ. որպէս և անունն *յայտնէ*. մելքի՝ որ է՛ թագաւոր: - 300. Այլ փորձէ՛ աստուած զմարդ՝ զի *յայտնեսցէ* զնա. որպէս զաբրահամու և զյակոբայն: - 304. Երկրորդ՝ զի իսահակ աւետեաց է որդի և խնդութեան զաւակ որպէս անունն *յայտնէ* իսահակ, որ է՛ ծաղր: - 304. Մետասաներորդ՝ որպէս իսահակաւ *յայտնեցաւ* կատարեալ սէրն աբրահամու առ աստուած...: - 305. Ութևժ, որպէս վասն իսահակայ եղև ձայն յերկնից. այսինքն «օրհնելով օրհնեցից». որ է՛ *յայտնեցից* երկնի և երկրի: - 306. Նոյնպէս և անունն սահմանէ կարճառօտ՝ յայտնիչ բնութեան իրին. որպէս մինչ ասեմք մարդ, քար, *յայտնեցաւ* բնութիւնն: - 311. Եւ տէր մեր գիտէր զինչ կրէր ի մարդն. այլ և զծածուկսն հօր *յայտնեաց* մեզ: - 313. Եւ զայս *յայտնեն* կրկին վտակքն բղխեալ արիւն և ջուր: - 316. Ութերորդ՝ ի լեառն թաբօր *յայտնեաց* զփառս աստուածութեան իւրոյ և օրհնեաց: - 320. Որ էնն ո՛չ թէ զէութիւնն աստուծոյ *յայտնէ*: - 331. Երկրորդ ա՛յն է՝ որ յորժամ լինի կամքն մարդոյն չար և խիստ ի ծածուկ, և զայն *յայտնէ՛* աստուած. որպէս նաբուգոդոնոսորայ. որ ունէր սիրտ գազանի՝ ի կերպարանս գազանաց փոխեցաւ: - 336. ...*յայտնեսցի* լոյս գիտութեան նոցա: - 352. Իններորդ՝ անդ խոստացաւ. և աստ *յայտնեաց* աստուած զսէրն իւր ի մեզ: - 353. Չորրորդ՝ զի *յայտնեսցի* թէ՝ ի մէջ ծառայութեանն յեգիպտոս այնքան բազմացոյց զնոսա խնամքն աստուծոյ. այսքան բազմութիւնս ի տեղիս իւրեանց խաղաղութեամբ բնակեալ՝ ո՞րքան անթիւ բազմասցին: - 377. Եւ տե՛ս զշնորհս խոստովանութեան. վասն այն որ զղջացաւ և *յայտնեաց*, ի հնգէն զմին տայ տուգանք: - 384. Եօթներորդ, աստուած կոչեցեալ էր՝ զի *յայտնեսցի* տկարութիւն մարդոյ: - 386. Եօթներորդ՝ աստ չարախօսէ՛ ի ծածուկ. և յետ մահու *յայտնի*. և յարութեանն ևս *յայտնի* առաջի դատաւորին և դատախազաց: - 394. Իսկ օրհնեալն՝ *յայտնեալ* և յարեալ յաստուած որ է՛ կեանք և երանութիւն: - 403. Եւ զոր *յայտնեաց* մեզ, ծանուցաք որդւոցդ մեր: - 405. Դարձեալ՝ զաստուածայինս ամենայն՝ ո՛չ կարեմ քննել. այլ զոր ինչ *յայտնէ՝* պատմեմ ձեզ: - 405. Դարձեալ՝ և դուք զծածուկն աստուծոյ մի՛ համարձակիք քննել. այլ զոր ինչ *յայտնէ* ձեզ՝ ուսուցէք որդւոց ձերոց: - 405. Դարձեալ՝ օրէնքս յայտնի էր զոր ուսոյց. և աւետարանն ծածկեալ, զոր հոգին սուրբ *յայտնէ* որ քննէ զխորս աստուծոյ: - 405. Եւ դժուարն որ քան *յայտնէ* մեզ: - 406. Երրորդ՝ *յայտնել* թարգմանի. իբր թէ յայտնի՛ է աստուած և ո՛չ ծածուկ կամ թաքուն: - 406. Երրորդ՝ *յայտնեմք* զփառս և զպատիւ և զհանգիստ նոցա և զայլն: - 406. Վեշտասաներորդ՝ է աւուր յերեկոյի հարսանեացն *յայտնեցաւ* առակն՝ հարսին: - 422. Նա՛խ՝ զի խաբի ի մեղաց և *յայտնէ՛* զծածուկս սրտին: - 424. Ա՛րդ՝ թէ աստուած ծածկեաց և սամուէլ *յայտնէր* հակառակ աստուծոյ, ահա՛ զի բարկացուցանէր զնա. ապա յա՛յտ է զի սո՛ւտ է և ո՛չ սամուէլ: - 429. Յինգերորդ՝ ընդէ՞ր հակառակ

աստուծոյ և այլ մարգարէից զծածուկն սաւուղի *յայտնէր*: - 429. Չորրորդ՝ զոր ծածկեաց նաթան՝ *յայտնեաց* սիմէի և ելից: - 433. Իններորդ՝ զի ո՛չ մարգարէիւ *յայտնեաց* կուսին. որ էր աղօտ գիտութիւն համեմատեալ ընդ հրեշտակին: - 464. Զի՞նչ *յայտնէ* պատգամ հրեշտակին: - 464. Վեց իրս *յայտնէ* մեզ աստանօր պատգամ հրեշտակապետին: - 464. «Եղիցի ինձ» *յայտնէ* զբորբոքեալ սէրն: - 465. Ութերորդ՝ զի *յայտնեսցէ* անդ զխորհուրդ Երրորդութեանն: - 486. Դարձեալ ևս *յայտնի*. մահն զանձն քակէ՛ և որոշէ՛. իսկ ապականութիւն զբնութիւնն ապականէ և այլայլէ՛: - 498. Եւ *յայտնեսցի* բանս մեզ ի բաժանմանէ: - 502. Երկրորդ՝ զի որ անդ ի ծածուկ ծանոյց զինքն յանձինս մարգարէից նոյն ինքն աստ զԵրրորդութիւնն *յայտնեաց* առաքելոցն: - 524. Եւ որպէս անչափ են սպեղանիք և դեղք բժշկականք մարմնոյ ի բազում և զանազան ծաղիկս խոտոյ և յարմատս, ի տերևս ի պտուղս. և յայլսն. զի սոքա *յայտնեն* զբազմութիւն հիւանդութեանց մարմնոյ: - 531. Նա՛խ՝ զի *յայտնեսցէ* զծածուկն և զհեռաւոր իրն ժամանակաց...: - 536. Զի քահանայն արդարութեանն աստուծոյ հրեշտա՛կ է. այսինքն *յայտնօղ* և թարգման...: - 539. Որպէս թէ զվերնագոյնն կամ զանարժանս կամ վասն ախտի ինչ օրհնել կամ ձեռնադրել. այլ զոր հոգին *յայտնեսցէ* զարժանիսն՝ նմա՛ կատարի: - 539. Եւ թէ ոք ասիցէ, *յայտնեա՛* ապա զո՞րս պարտ է կապել կամ արձակել: - 540. Դարձեալ ևս *յայտնի*. որ խորհրդովն է պղծեալ՝ ո՛չ կարծէ զինքն մեղանչական գոլ. այլ ի գործ մարմնոյն իմանայ զչարիս իւր զղջա՛յ և ապաշխարէ: - 558. Եւ յայսցանէ *յայտէ*, զի յետ յարութեանն ի վերինն գաւառ ոչ գոյ յոյս...: - 574. ...հաստատի հաւանութեամբ սրտիցն յորժամ *յայտնեն* բանիւ. - 609. Երկրորդ *յայտնել* ասի. իբր չէ ծածուկ այլ յայտնի է աստուածութիւն նորա յարարածս իւր: - 624. Վասն երկրորդին՝ *յայտնեմք* զփառս և զմեծութիւն նորա: - 624. ...այսինքն գոհացիր զաստուծոյ. և *յայտնեա՛* զփառս նորա...: - 624. Ութերորդն նոյնպէս զերկոցունց կողմանց *յայտնէ* զփրկելոց և զկորուսելոց...: - 630. Դարձեալ՝ ի յեբրայեցի լեզուն «ալ», ասէ թէ՝ գայ *յայտնեսցի.* «էլ», աստուած. «ուիայ», օրհնեցէք և գովեցէք զկենդանին աստուած: - 644. Նոյնպէս և ի յարութեանն մեռելոց «օրն ընտրեսցէ» ասէ առաքեալն. զի հուրբ *յայտնելոց* է: - 721. Ա՛րդ՝ *յայտնեալ* է նա և որոշեալ ի մէջ ամենայն փայտից գոլ արմատ արդարութեան որով փրկեցաք ի բանսարկուէն: - 734. Նախ՝ այսու զաստուածութիւնն իւր *յայտնէ* ...: - 735. Այլ ի գալուստն քրիստոսի Առաջին փառք է՝ զի փառաւոր երևեցի սիրելեաց իւրոց, *յայտնեալ* զաստուածութեան փառս միաւորեալ ի մարմնի. որպէս երևեցաւ ի թաբօր: - 736. Չորրորդ, *յայտնելով* մեղացն. և այսպէս մեղաւորք և չարք զմիմեանս դատեսցեն: - 738. Որք որպէս գիրք յայնժամ բացեալք եղիցին. քանզի վարդապետութիւնք նոցա և օրինակք՝ ամենեցունց *յայտնեսցին*...: - 742. Եւ զայս *յայտնեն* գիրք սուրբք. զի աւետարանն ի մէջ գիշերի ասէ զժամ յարութեանն...: - 747-748. Եւ ոչ օրինակս կարէ *յայտնել* զոր ինչ էն: - 770. Միովն ստուգէ՛ զաստուածութիւնն. և միովն հաստատէ՛ զմարդն կատարեալ. և երկրորդիւն անքակ և անշփոթ և անբաժան զմիութիւնն *յայտնէ*: - 770. Եւ է՛ ինչ ի ներգործութեանց հոգւոյն աստուծոյ շնորհաց. որ ծածկէ՛ յիմաստնոց և *յայտնէ* տղայոց յիւրաքանչիւր ժամանակս ըստ կամաց իւրոց: - 772

**ՅԱՅՏՆԻ +** Պատասխանեմք այսմ եթէ սո՛ւտ են ասացեալքդ. և պատուակին ճշմարտութեամբ. սակայն *յայտնի՛* է իմաստնոց: - 8. Իսկ թէ է ի պատճառն ներընդունական, *յայտնի՛* է որ հաւասար ունի զգոլն և զո՛չ գոլն որպէս ասացաւ: - 10. Արդ՝ ժամանակեայ արդարութիւնն *յայտնի* է որ անձնիշխան կամօք փոփոխի. երբեմն ի չար և երբեմն ի բարի. և ժամանէ փրկութեան կամ դատապարտութեան: - 18. ...սոքա առաջին օձին նմանեալ՝ հրապուրեն զբազումս. և արտաքսեն ի դրախտէ եկեղեցւոյ. և թոյնք իժից ի ներքոյ շրթանց ունելով և խայթոց՝ զի առորս մերձենան, ի յսկիզբն բանից կամ ի վերջն՝ մահացուցանեն զհոգիս. երկճղի ունելով լեզու նենգաւոր՝ չար և բարի, ծածուկ և *յայտնի*: - 35. *Յայտնի* մեկնութիւն բանիս եղաւ ի չորրորդ գլուխն: - 43. Այս *յայտնի* է զի որդի էր որ յերկրի մարմին զգեցաւ: - 47. Տասներորդ՝ *յայտնի՛* է ի սուրբ գրոց թէ աստուած է որ խօսեցաւ մարգարէիւքն...: - 58. Եւ *յայտնի* եղև թէ և զքրիստոս գոլն ուրանան. և զաստուածն ուրանան այսպիսի առարկութեամբ: - 91. Ա՛րդ՝ միութիւն սուրբ Երրորդութեանն բազում է և *յայտնի*: - 104. Իններորդ՝ մինն *յայտնի* է ի տասն և ի հարիւրն և ի հազարն և ի բիւրն ընդ աղօտ և ծածուկ: - 109. Եւ աստուած *յայտնի* է ի բանականքս իմացմամբ և պատկերաւ. այլ ի կենդանիս և ի բոյսս և ի գոյսս սակաւ ինչ նմանութեամբ: - 109-110. Եւ յատկութիւն արեգականն *յայտնի* է, զի սկիզբն է **բ** լուսոյն: - 124. Ի յերկրորդսն *յայտնի* իբրև զլոյս: - 136. Ասեմք առ այս եթէ՝ զինչէն՝ անուամբ կամ սահմանաւ ճանաչի. և անունն *յայտնի՛* է ըստ ինքեան: - 140. Նախ՝ զի զծածուկ առաքինութիւն արդարոյն *յայտնի* արասցէ այլոց ամենեցունց...: - 158.

Վեցերորդ՝ թողեալ լինին ոմանք չարչարեալ առ ի նախանձ այլոց. զի պատիւ չարչարելոցն *յայտնի* լիցի վասն հանդերձեալ յուսոյն…: - 158. Իսկ աստուած փորձէ զմարդ՝ զի գիտէ զնա՛ բարի և հաւատարիմ. այլ ծածկեա՛լ է յայլոց. փորձէ՞ զի *յայտնի* լիցի ամենայն աշխարհի առաքինութիւն նորա: - 161. Եւ *յայտնի* եղեալ որպիսութիւն սոցա ի միտ առ. զի անհաւատն այժմ եկեալ ի հաւատս կարէ՛ լինիլ և քահանայ. իսկ չար հաւատացեալն ո՛չ կարէ լինիլ քահանայ: - 166. Յաւցանէ *յայտնի* է զի զղջացեալ այնպիսին կարէ՛ հաղորդիլ ի ձեռն այլոց. այլ ո՛չ ինքն պատարագել: - 167. Եւ դարձեալ է՛ ոչ էակ՝ որ թէպէտ ներգործութեամբ ո՛չ է, սակայն զօրութեամբ ունի զգոլն. և յայսպիսի յոչնչէ եղեն արարածք ամենայն. ապա ուրեմն *յայտնի* է հարցումնդ: - 173. Վեցերորդ՝ բանն խօսեցեալ *յայտնի* մեկնութեամբ: - 177. **Զի և ներկայ ժամանակս որ *յայտնի* երևի, այսպէս անյայտ և անկայուն է. զի ո՛չ ոք կարէ զվայրկեան ժամանակի մի ստուգել**…: - 199. *Յայտնի՛* է: - 202. Պատասխանեմք *յայտնի* տեսութեամբ, թէ զոր ինչ այրէ հուր, ծախէ՛ և կորուսանէ զամենայն որակսն. այսինքն զգոյն. զհամ. զհոտ. նոյնպէս և զծանրութիւն: - 202. Եւ են որ ո՛չ ունին հաւատս և ո՛չ գործք. որպէս անօրէնք և չարք. և *յայտնի* անպիտանք են: - 215. Դարձեալ և ի կարգէ՛ իրացն *յայտնի՛* է: - 222. Երրորդ՝ ևս *յայտնի*. զի ընդ նիւթոյ կազմութեանն համանգամա՛յն է և երևումն ոգւոյ. զի յորժամ անկատա՛ր է նիւթն, միայն կերակրիլն երևի ի նմա: - 255. Այսպէս և հոգին է ի նմա ծաղկեալ, և յետոյ *յայտնի* ըստ կարգի: - 255. Եւ դարձեալ պարզ և *յայտնի*, այսպէս ասէ սուրբն գրիգոր նիւսացին եթէ, բանականին շնորհ ընդ լրումն մարդկութեանս թա՛փ էանց ի տեսութիւնն աստուծոյ՝ որքանութիւնն և որպիսութիւնն…: - 258. Ապա ուրեմն *յայտնի* է հարցումնդ: - 258. *Յայտնիքն* մեզ, և ծածուկքն աստուծոյ: - 285. Եւ սատանային *յայտնի* են է չար խորհուրդքն որ կոչին գլխաւոր մեղք: - 287. Ասեն վարդապետք եթէ՝ եղիային *յայտնի* է: - 289. Հինգերորդ ևս *յայտնի*. աստ կեան նահապետքն ժամանակաւ ընդ ամենայն մարդոյ. և յետ մահու ի մշտնջենաւորն ընդ հրեշտակաց. և յետ յարութեանն յանվախճան յաւիտենին թագաւորեալք ընդ աստուծոյ: - 291. Չորրորդ՝ զի յորժամ փրկեսցի ղովտ ի սոդոմայ, զօրութիւն աստուծոյ *յայտնի* լիցի: - 302. Երրորդ՝ համարձակ և *յայտնի* պատժեցան: - 303. Երկրորդ՝ զի ծածուկ համբերութիւն նորա *յայտնի* լիցի. և ամենեցուն վարժարան եղիցի: - 325. Այլ և մարմնոյն՝ ծածուկ մեղքն. և հանդերձին՝ *յայտնի* մեղքն: - 367. Իսկ թէ ի հանդերձն *յայտնի* մեղանչեմք առանց ապաշխարութեան, լուցկի առնէ հրոյն որպէս ասացաւ ի վերոյ: - 368. Հինգերորդ՝ քոսն. որ *յայտնին* է: - 371. Եւ այլքն *յայտնի* են: - 378. Իսկ կրկին պատարագն. մին վասն բոլոր ժողովրդեանն, և մին վասն անձին ակամայիցն. ցուցանէ զկրկին խոստովանութիւնն. մին *յայտնի* առհասարակ եկեղեցոյն. և միւսն ծածուկ առանձին մեղաց: - 385. Եւ *յայտնի* նշան մոլորութեան նոցա ա՛յս է …: - 389. Երրորդ՝ *յայտնի* և ճշմարիտ կեանք քրիստոս է …: - 405. Դարձեալ՝ օրէնքս *յայտնի* էր զոր ուսոյց. և աւետարանն ծածկեալ, զոր հոգին սուրբ յայտնէ որ քննէ զխորս աստուծոյ: - 405. Երկրորդ՝ ծածո՛ւկ է հանդերձեալն գործ. և *յայտնի* անցեալն և ներկայն: - 406. Չորրորդ՝ ծածո՛ւկ են աստուածայինքն ամենայն. այլ *յայտնի* արարածոցս գիտութիւն: - 406. Հինգերորդ՝ ծածո՛ւկ է աստուածային բնութեանն բան. և *յայտնի* դիմացն և անձանց: - 406. Երրորդ՝ յայտնել թարգմանի. իբր թէ *յայտնի՛* է աստուած և ո՛չ ծածուկ կամ թաքուն: - 406. Եւ յերից է *յայտնի* գոլն աստուծոյ: - 406. Չորրորդ՝ նախ օծաւ ծածուկ, և ապա՛ *յայտնի* ի գաղգաղայ. և տէր մեր նախ օծաւ յարգանդի, և ապա՛ ի յորդանան ի յովհաննէ: - 426. Իսկ նոր կտակքն *յայտնի՛* են: - 450. Այլ արդարութիւնն երբեմն ծածկեալ՝ և ողորմութիւնն *յայտնի*, որպէս յարդարացուցանել զամբարիշտն, և յառաջին գալուստն քրիստոսի: - 459. Երբեմն արդարութիւնն *յայտնի*՝ և ողորմութիւնն ծածկեալ. որպէս պատիժն մանկանց առանց մկրտութեան մեռելոց, և յերկրորդ գալուստն քրիստոսի: - 459. Իսկ երբեմն երկոքեանն *յայտնի*. որպէս ի հատուցումն արդարոց. և ի պատիժ անարգելոցն…: - 459. Եւ այսպէս է *յայտնի* պատմութիւնս: - 460. Հինգերորդ՝ ի նմին իրացն *յայտնի* է՝ զի ռամիկ ժողովուրդն ի տօնի քաւութեանն երեքօրեայ սրբութեամբ մերձենային առ դուռն տաճարին: - 483. *Յայտնի՛* է ամենեցուն և առանց երկբայութեան՝ զի քրիստոս մեռաւ ըստ գրոց. և մահուամբ եբարձ զմահ և զապականութիւն: - 498. Իսկ պատանքն ո՛չ ծալեալ. զի խորհուրդ տըրնօրէնութեանն ո՛չ ամենևիմբ *յայտնի* է և ո՛չ անյայտ. որպէս կտաւն բազո՛ւմ ունէր փոթուածս: - 517. Եօթներորդ՝ պարտ էր մեծութեան այսմ պարգևի *յայտնի* լինի **գ** կերպիւ: - 521. Այսպէս պարտ էր յառաջագոյն հօր *յայտնի* լինիլ և ապա՛ որդոյ և հոգւոյն սրբոյ: - 522. Նա՛խ՝ զի յայտնեսցէ զծածուկն և զհեռաւոր իրն ժամանակաց. զի թէ զմերձաւոր և *զյայտնին* ասէ՝ ո՛չ է մարգարէ: - 536. Այսօքիկ են *յայտնի* ժողովք ազգաց: - 544. Այլ և ի սրբոց հռիփսիմեանց գալոյն *յայտնի* է: - 549.

Զորօրինակ **բ** ոք ի դատախազից իւրաքանչիւրն զինքն կամի և կարծէ ճշմարիտ գոլ. այլ մերձ եկեալ դատաւորին՝ վկայիւք *յայտնի* ճշմարիտն: - 551. Եւ թէ ո՞րպէս, ի բուն գիրս *յայտնի* է աշխատողաց անդ գտցես: - 583. ...զի թէ *յայտնի* կերպարանօք լինէր միս և արիւն, ո՛չ ոք իշխէր մերձենալ: - 597. Ապա ուրեմն ծածուկ և *յայտնի* զրկես զժողովուրդն ի հաղորդութենէն քրիստոսի...: - 600. ...զի *յայտնի* զարիւնն չտաս. և ծածուկ զմարմինն...: - 600. ...ահա՛ ևս *յայտնի* զմանկունս ո՛չ հաղորդեն մինչև լիցի **բժ**ան ամեայ...: - 600. Չորրորդ՝ վասն հասարակ և *յայտնի* մեղաց՝ պա՛րտ է հասարակ և *յայտնի* աղօթել...: - 623. Երկրորդ յայտնել ասի. իբր չէ ծածուկ այլ *յայտնի* է աստուածութիւն նորա յարարածս իւր: - 624. Դարձեալ՝ քարոզն ըստ ինքեան *յայտնի* է զի յորդորո՛ւմն է մեզ: - 626. Եւ ա՛յս է խորհուրդն. եթէ մեր ամենայն ինչ *յայտնի* և բա՛ց է ծածկագիտին: - 635. Չորրորդ *յայտնի* և հաստատուն, որ ամենայն ազգ քրիստոնէից պահեն զչորեքշաբաթն և զուրբաթն վասն խաչելութեանն որ սո՛ւգ է և պահք: - 652. ...յայնժամ *յայտնի* և մերձակայ տեսանէ զամենայն փառս և զպսակ զոր ընդունելոց են նոքա ի յարութեանն աւուր...: - 668. Եւ այս զանազան կարծիքս վասն այն է, զի գիրք սուրբք չե՛ն *յայտնի* բացայայտեալ զնուսա: - 687. Երկրորդ, ասէ սուրբն դիոնէսիոս ի ննջեցելոց կատարմանց գլուխն՝ եթէ մաքրելոց հոգին հասեալ ի վախճան՝ *յայտնի* և մերձակայ տեսանէ զամենայն փառս և զպսակ զոր ընդունելո՛ց են նոքա ի յարութեան աւուրն: - 691. ...իսկ մեռեալ և անդ գնացեալ արդարութիւնն է *յայտնի* և ոչ ողորմութիւնն...: - 700. Եւս *յայտնի*, աստեացս ամենայնի կատարումն է՛ ի հանդերձեալն. այսինքն մեղաց և արդարութեան. պատժի և պարգևի. կապելոյ և արձակելոյ: - 704. Եւ այս **բ** սահմանս *յայտնի* են ըստ ինքեան: - 716. Նա՛խ՝ զի ամենեցուն *յայտնի*՛ է ամենայն ուրեք գոլով: - 720. Թէպէտ ո՛չ ունին բանք և ոչ խօսք, այլ ընդ ամենայն երկիր ել բարբառ վկայութեան նոցա. զի ամենայն տեղիք և ամենայն ժամանակք մարդկան առ նոսա է՛ *յայտնի*: - 729. Երկրորդ, զի դատաստանն պա՛րտի *յայտնի* լինի. այլ՝ արդ՝ երուսաղէմ է՛ առաւել *յայտնի* վասն փրկութեանն որ անդ կատարեցաւ: - 738. Ոմանք ո՛չ դատին այլ դատապարտին որպէս բուն չարքն և *յայտնի* մեղաւորքն...: - 738-739. Կշռիք գործիական առ մեզ *յայտնի*՛ է. որ զարդար հաւասարութիւն նշանակէ ի ձեռս մեր: - 744. ...զի երբեմն ծածկէ՛ ողորմութիւնն զարդարութիւն. և երբեմն արդարութիւնն զողորմութիւն. և երբեմն հաւասար երկուքն *յայտնի* և կամ ծածուկ...: - 746. Ապա ուրեմն *յայտնի*՛ է որպիսութիւն հարցմանս: - 774. Եւ դարձեալ՝ զորօրինակ, լոյսն և ջերմութիւն են էութիւն նորին զուգասփիւռ. այլ երբեմն մինն ծածուկ, և երբեմն երկոքին *յայտնիք*, և ընդ դէմ սորա: - 779. Այսպէս և յամենայն գործս աստուծոյ գտանի արդարութիւն և ողորմութիւն որպէս ասեն ոմանք. այլ երբեմն արդարութիւնն ծածկեալ և ողորմութիւնն *յայտնի*. որպէս յարդարացուցանելն ամբարշտին՝ և յառաջին գալուստն քրիստոսի: - 779. Երբեմն ողորմութիւնն ծածկեալ և արդարութիւնն *յայտնի*. որպէս ի պատիժ մանկանց առանց մկրտութեան մեռելոց. և յերկրորդ գալուստն: - 779. Երբեմն երկոքեանն *յայտնի*. որպէս ի հատուցումն իւրաքանչիւր արդարոց և մեղուցելոց: - 779. Յաղագս որոյ որ ինչ գոյ միոյն *յայտնի* և ներգործական մասունք, գոն նոքա և միւսոյն բնաւորապէս ծածուկ և զօրութեամբ: - 786. Եւ կատարեալ տեսութիւն բացերևականն բանի *յայտնի*՛ է աշխատասէր մտաց. որ յաղագս մեկնութեան լուծումն գրոց. և գո՛ն առ քեզ: - 787

**ՅԱՅՏՆԻՉ** - Անանուն անուանելի է աստուած. զի անունն սահմա՛ն է. և սահմանն *յայտնիչ* բնութեանն: - 49. Հինգերորդ՝ զի բանն է սահման. և որպէս *յայտնիչ* է սահմանն սահմանելոյն, այսպէս և որդի սահմանէ՛ զէութիւն հօր...: - 49. Պատասխանեմք թէ՝ ամենայն թիւ ո՛չ բնութեան է *յայտնիչ*՝ այլ քանիութեան ներքոյ արկելոյ թըւին: - 54. Երկրորդ՝ անունն սահմա՛ն է կարճառօտ *յայտնիչ* բնութեան ենթակայ իրին որպէս ասէ իմաստունն: - 219. Նոյնպէս և անունն սահմանէ կարճառօտ՝ *յայտնիչ* բնութեան իրին. որպէս մինչ ասեմք մարդ, քար, յայտնեցաւ բնութիւնն: - 311

**ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ +** Իններորդ՝ փանուէլ. *յայտնութիւն* աստուծոյ: - 144. Եւ ա՛յսպէս խօսին միայն վերինքն առ ստորինս. զի հաղորդեսցեն զնոսա աստուածային *յայտնութեանցն:* - 145. Այլ թէ վերջինքս կոչեմք նմա անուն աստուած՝ արարիչ՝ և այլն. ներգործութեանն է ցոյցք և ո՛չ թէ գոյացութեան կամ բնութեանն է *յայտնութիւն:* - 312. Եւ ի *յայտնութենէն* աստուծոյ ուսանին հրեշտակք և մարդիկք զառաջիկայն: - 336. Երկրորդ՝ ի *յայտնութենէ* վերնագոյն հրեշտակաց: - 336. Կապուտն նշանակէ՛ զխորհուրդ *յայտնութեանն* քրիստոսի: - 379. Իսկ մկրտութիւն նորա ո՛չ որդեգրութեան էր որպէս մերս. այլ ճշմարիտ որդիութեանն *յայտնութիւն* ըստ ձայնին հօր «դա՛ է որդի իմ սիրելի»: - 474. Այլ և աստուածաբանն ի քրիստոս ծնեալ ճառին ասէ, այսօ՛ր աստուծոյ *յայտնութեանս* տօնէ: - 482. Եւ

ա՛յն է *յայտնութիւնն* որ հայր վկայեաց ի վերայ որդւոյն, և հոգին սուրբ աղաւնակերպ իջմամբ: - 482. Եւ յա՛յսմանէ յա՛յտ է, զի սուրբքն զծնունդն և *զյայտնութիւնն* ի միասին տօնէին. և յետոյ բաժանեցին ոմանք վասն բեթլէհէմի և յորդանանու: - 482. Ա՛րդ՝ ցուցից տումարաւ զտօնս մեր և զնոցայն. զի տօնախմբութիւն նոցա այսպէս կատարի առ *յայտնութիւնն*: - 483. զի զքառասնօրեայ գալուստն ի տաճարն՝ ըստ ծննդեանն տօնեցեն և ո՛չ ըստ *յայտնութեանն*. որ է՛ յունվարի վեցն. զոր մեք տօնեմք **խ** օր թուեալ մինչև ի **ժդ**ն փետրվարի: - 485. Իսկ հինգերորդ մարգարէութիւն է հոգևոր և աստուածային գիտութեամբ. զոր *յայտնութեամբ* սուրբ հոգւոյն ունեալք խօսին առ ի զգուշութիւն մարդկան ի հոգևոր շինուածս: - 536. **Զի քահանայն արդարութեանն աստուծոյ հրեշտա՛կ է. այսինքն յայտնօղ և թարգման.** ըստ այնմ «հրեշտակ տեառն աստուծոյ ամենակալի՛ է». ըստ *յայտնութեան* կամաց տեառն պարտ է որոշել կամ լուծանել: - 539. Որ նշանակէ՛ թէ ի *յայտնութենէն* աստուծոյ և ի շարժմանէ հոգւոյն սրբոյ պարտ է ներգործել զայդ իշխանութիւն: - 539. Վերինն որ առ աստուած և առ սուրբս, երբեմն *յայտնութիւն* լսի. երբեմն գոհութիւն և բարեբանութիւն. երբեմն մաղթանք և աղաչանք: - 539. Եւ այլ սահմանք զոր դնեն վարդապետք՝ պարունակեալ են ի սահմանն պօղոսի. զի վարդապետաց սահմանն մեկնութիւն և *յայտնութիւն* է սահմանին պօղոսի: - 571-572. Այլ և ի մկրտութեանն տն յաւուր *յայտնութեան*: - 604. Եւ զայս գործ արար քրիստոս յորժամ զինքն լոյս ի *յայտնութիւն* հեթանոսաց ետ. և ասաց թէ «ես եմ լոյս աշխարհի»: - 606. Զի՞նչ է տուն օրհնելն ի զատկի և *յայտնութեանն*: - 684. Առ երկրորդն ասեմք թէ՝ ի տեսիլն ո՛չ զիատուցումն ասէ, այլ *զյայտնութիւն* գիտութեանն: - 697

**ՅԱՆԳԻՄ +** Զի՞նչ էր որ ի տաղաւարահարքն ըստ միոյ միոյ աւուրց մի մի զուարակ պակասէին ի տօնս. և յութերորդ օրն ի մինն *յանգէին*: - 374

**ՅԱՆԴԳՆԻՄ +** Չորրորդ՝ որ ո՛չ գիտէ. և գիտէ որ ոչ գիտէ, բայց սնափառ հպարտութեամբն լըլկի և *յանդըգնի* խօսիլ զոր ո՛չ գիտէ: - 537. ...ապա քանի՞ դատապարտութիւն է հրաման տալ նոցա և ի գործ քահանայութեան *յանդգնիլ*: - 590

**ՅԱՆԴԳՆՈՒԹԻՒՆ +** Ա՛րդ՝ քննել մտօք *յանդգնութիւն* է. և հաւատալն կեանք. զի ի հաւատո՛ցն է փրկութիւն: - 101. Եւ գլուխն տափակ, նշանա՛կ է *յանդգնութեան*: - 246. Եւ զպղինձն ի բուրվառացն կորխեանց **մծ** իցն. յորմէ արար զնուարտանն ծածկոյթ պղնձի սեղանոյն. նշան *յանդգնութեան* նոցա: - 344. **Իսկ անթողլի մեղաց զ են պարագայք. այսինքն յուսահատութիւն. *յանդգնութիւն.* մարտնչիլ զճշմարտութիւնն ճանաչելոյ. նախանձ ընդ դէմ եղբայրական սիրոյն. խստասրտութիւն և անզղջութիւն մինչ իսպառ**: - 567. Ա՛րդ՝ ի թողուլն երկու են. այսինքն ողորմութիւն և արդարութիւն. ընդ դէմ առաջնոյն է՛ յուսահատութիւնն. և ընդ դէմ երկրորդին *յանդըգնութիւնն*: - 567. Զի յուսալ յիր ինչ առանց արդեանց ո՛չ է յոյս. այլ *յանդգնութիւն*: - 573

**ՅԱՆԴԵՐԱ** - Անունք Կանանց Նահապետացն: ...Եննվքայն *յադներա՛*: - 299

**ՅԱՆԴԻ** - Ասացեալն նմանապէս և աստ կատարեալ. ո՛չ միայն *յանդի* հեռաստան, կամ աղալ յերկան: - 789

**ՅԱՆԴԻՄԱՆ ԱՌՆԵԼ +** Զի որպէս քրիստոս չարչարանօքն փրկեաց զեկեղեցի և հարսնացոյց, նոյն և առաքեալն քարոզութեամբ իբր զկոյս մի սուրբ *յանդիման արար* փեսային քրիստոսի: - 781

**ՅԱՆԴԻՄԱՆԵՄ +** Դարձեալ՝ փորձիչս այս փառասիրութեամբ յառաջեաց առ քրիստոս. ուստի և ի բանից իւրոց երևի թէ ամենայն պատուիրանացն պահպանօղ եմ. զոր տէրն պակաս լինել *յանդիմանեաց*: - 47. Այլ և ըստ համարոյն՝ կնքէ՛ զինչս թագաւորաց. և չտայ գողանալ ծառայից. և զգողացեալն յայտնէ և *յանդիմանէ* : - 178. Իններորդ՝ զի և ի հոգևորն՝ փոքունք զմեծամեծաց անուանս կոչէին ինքեանց ի մոլորումն մարդկան. որպէս սիմոն կախարդն ասէր զինքենէ՛ թէ քրիստոսն իցէ. մինչև *յանդիմանեցաւ* ի պետրոսէ: - 238. Իսկ վարդապետք ուղղաձևութեան՝ *յանդիմանեալ* զերկոսին կողմանց ստախօսութիւն, ո՛չ զհոգի յառաջ քան զմարմին ասեն ստեղծեալ, և ո՛չ զմարմին քան զհոգի: - 254. Երրորդ՝ զի հաւատ մեռելոյն *յանդիմանէր* զբերեհաւատ կենդանիսն որք սրտիւք յեգիպտոս դառնային: - 338. Երկրորդ՝ զի իշովն *յանդիմանեսցէ* զանմտութիւն նորա. և զանօրէնութիւնն արգելցէ. որպէս ասի ի կաթողիկէքն: - 388. Յնգետասաներորդ՝ յեսու ներեաց աքարայ զտիւն և զգիշերն մինչ լուսով առաւօտին վիճակաւ *յանդիմանեցաւ*: - 418. Նա՛խ՝ եթէ ճշմարիտ յարեաւ սամուէլ, ընդէ՞ր ոչ եհար զվհուկն և սատակեաց. և ընդէ՞ր ոչ *յանդիմանեաց* զսաւուղ եկեալ առ վհուկն: - 429. Վասն է՞ր *յանդիմանեաց* աստուած զդաւիթ ի ձեռն նաթան մարգարէի: - 432. Նա՛խ՝ զի մի՛ մարդիկ

*յանդիմանեսցեն* չարք և անողորմք. այլ աստուած *յանդիմանեաց* և ողորմեցաւ: - 432. Յինգերորդ՝ զի ցուցանէ թէ՝ որ ի սիրելին իւր դաւիթ ոչ խնայեաց, նոյնպէս և զամենայն մեղաւորս *յանդիմանէ*: - 432. Որպէս դիմոփիլոս կիսասարկաւագ զքահանայ ոմն արտաքսեաց յեկեղեցւոյ. զոր *յանդիմանէ* սուրբն դիոնէսիոս յութերորդ թուղթն իւր: - 539. Տե՛ս զի ո՛չ բանիւ և ո՛չ գործով էր, այլ միայն ի միտս ունէին և *յանդիմանեցան* ի տեառնէ: - 557. ...ք՝ *յանդիմանել* զմեղուցեալս. - 585. Տէրն զգանձն մատանեաւ դրոշմեալ տայ ի ծառայս. և մատանին ի ձեռին է. երբ խնդրէ՝ թերին *յանդիմանի*: - 769. Մեր գործքն և յաստուծոյ տուեալ բարին հաւատով կնքի. և պակասն *յանդիմանի* այժմ ի խղճէ մտաց որպէս ի գրոյ. և անդ ի դատաւորէն, որ չար ծառայ կոչէ: - 769. Զի հասարակա՛ց է ամենայն մարդոյ կատարելոց և անկատարից, զի ի յանդիմանութիւն *յանդիմանելեացն* առհասարակ դժկամա՛կ երևի ի սկիզբն. թէպէտ ընտրողութեամբ լաւին ընդունին զխրատն: - 774. Վասն որոյ *յանդիմանեալք* առհասարակ դժկամակ լինին: - 774

**ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ +** Զանկումն սատանայի եռակի՛ է իմանալ. առաջին՝ և միջին և վերջին: ...երկրորդն *յանդիմանութեան*: - 152. Իսկ *յանդիմանութեան* անկումն դիւաց եղև գալստեամբն քրիստոսի ի ձեռն խաչին. և այս չորեքկին: - 152. Իններորդ՝ ի *յանդիմանութիւն* բնութեան մերոյ. զի մի՛ կարծեսցէ թէ առաքինութեամբն և սիրովն առ աստուած՝ հաւասարիլ կարէ՛ սիրոյն աստուծոյ որ առ մեզ. այլ կաղ գտանի: - 311. Եւ այլք ասեն թէ մովսէս գրեաց ի *յանդիմանութիւն* որդւոցն յակոբայ. որք առին զօրէնս և ո՛չ պահեցին. և զաստուծոյ զամենայն երախտիսն մոռացան: - 320. Եւ բաց յայյտնանէ **բ** ակն *յանդիմանութեան* զոր անդամանդեայ կոչէին, և էր ի պճղնաւոր զգեստին ի վերայ ուսոց քահանայապետին յորժամ մատանէր ի սուրբն սրբոց երիցս ի տարւոջն, ի տօնի զատկին և յիսներորդացն և ի քաւութեանն: - 349. Երկրորդ՝ ի *յանդիմանութիւն* խաչողացն. զի լուսաւորքն տեսեալ զտէրն իւրեանց մերկացեալ, պատկառեցին և քօղ արկին զխաւարն: - 490. Եօթներորդ՝ յա՛յտ է ի *յանդիմանութեանց* տեառն...: - 556-557. Զի հասարակա՛ց է ամենայն մարդոյ կատարելոց և անկատարից, զի ի *յանդիմանութիւն* յանդիմանելեացն առհասարակ դժկամա՛կ երևի ի սկիզբն. թէպէտ ընտրողութեամբ լաւին ընդունին զխրատն: - 774. Իսկ ուղղակին. զի մոռացումն բնաւորեալ է առ խառնուած կազմութեան մարդոյ. իսկ խրատ՝ *յանդիմանութեան* է՛ ի ցոյց ինքեան: - 774. Յասարա՛կ է և բնութեան իր, զի ամենայն ինչ նախնի մարդոյն բնութեամբ է ի մեզ և հասարակ իր. և առ *յանդիմանութիւն* դժկամակ երևեցան նախնիքն մեր. ուստի պատճառեցին զմիմեանս: - 774. Դարձեալ՝ ծածկութիւն յանցանաց՝ է՛ բնականապէս մեզ ի տերևոյ անտի. իսկ *յանդիմանութիւն* է ծածկելոց յայտ արարողութիւն. վասն որոյ ամենքեան դժկամակ երևին: - 774

**ՅԱՆԴՈՒԳՆ +** Պատասխանեմք, ո՛վ *յանդուգն* մեկնիչ դու...: - 41-42. Է և այլ իմն աննմանութիւն հոգւոյ ըստ իմացմանն. առաւել և նուազ. ուշիմ և ապուշ. չկամ և կամեցօղ. հեզ և *յանդուգն*. ցանկացօղ և ողջախոհ. ըստ բնական բարոյիցն որակացեալ. նման և աննման զոլով իրերաց: - 237. Վիզն վերամբարձ *յանդուգն* է և ապստամբ: - 247. Որ և է՛ այս հերձուած մեծ և *յանդուգն* հայհոյութիւն ընդ դէմ կարգաց եկեղեցւոյ: - 589. Օեր և *յանդուգն*: - 601. Եւ լինիցի *յանդուգն*. զի ո՛չ համարի պատժիլ ի յաստուծոյ. զի յապաղէ դատաստանն...: - 707

**ՅԱՆԷՍ** - Եւ է՛ որ զկերպն և զձևն միա՛յն փոխէ, և կոչի առաչօք. որպէս *յանէսն* և յամրէսն առնէին կախարդութեամբ դիւական: - 335

**ՅԱՆԿ +** Այս է ի գլխաւորութիւն ամենայնի զռ եղելոյ ապստամբութեանն. զի որ քան աւուրք եղև աշխարհ, այն քան ամօք *յանկ* ելանէ: - 707

**ՅԱՆԿԱՐԾ +** Նախ՝ զի *յանկարծ* փայլէ: - 206. Զի՞նչ է որ ի մէճլիսն *յանկարծ* ժամ մի լռեն: - 656

**ՅԱՆԿԱՐԾԱԿԻ +** ...յայնժամ միայն ծագեցին յառաջին օրն *յանկարծակի* և անկան յերկնից. թէպէտ ոմանք յերկրորդ օրն ասեն: - 148. Երկրորդ՝ ասեն թէ՝ ի սկիզբն աշխարհիս արար զբնութիւնն *յանկարծակի*. այլ բնութիւնն յամելով և ըստ կարգի յանկատարութենէ ելանէ ի կատարումն: - 192. Եւ մանաւանդ զի բնութիւնն *յանկարծակի* ո՛չ կարէ ներգործել. այլ սակաւ սակաւ հետևելով յանկատարէն ելանէ ի կատարեալն: - 255. Նա՛խ՝ զի ամենայն ոք պատրաստ լիցի մահւան աւուրն և *յանկարծակի* գալստեանն քրիստոսի. որպէս ինքն ասէր՝ «յորում ժամու ակն ոչ ունիցիք՝ գա՛յ որդի մարդոյ»: - 292. Չորրորդ՝ ըստ գերազանցութեան. զի *յանկարծակի* ծագէ՛ ի մեզ շնորհն աստուծոյ եթէ ի հաւատս՝ և եթէ յայլ ինչ գործս ի հաճոյսն աստուծոյ: - 308. Նա՛խ՝ զի *յանկարծակի*՛ փայլէ. նոյնպէս և հոգին սուրբ *յանկարծակի* էջ: - 522. Զի՞նչ է ոմանք յերկար ոգէվարին, և ոմանք *յանկարծակի* մեռանին: - 668. Եւ

մինչդեռ ասասցեն զայս, *յանկարծակի* եկեսցէ ի վերայ նոցա սատակումն որպէս յաւուրսն նոյի ըստ հրամանի փրկչին: - 709. Իսկ աստուած անհուն է զօրութեամբ՝ *յանկարծակի* ի նոյն կէտ վայրկեան ժամանակի յարուցանէ: - 717. ...և մարմինք մեռեալք որ յադամայ հետէ՝ *յանկարծակի* յական թօթափել ի փող յետին յարիցեն ասէ առաքեալն: - 721. Չորրորդ՝ զի *յանկարծակի* լինի և ի համառօտ ժամն մահ մարդոյ և կատարած աշխարհի: - 730. Յարութիւն մարդկան ի վայրկեան ժամանակի և *յանկարծակի* լինի որպէս ցուցաւ ի վերոյ. այլ զյերկարութիւն ժամու քննութեան դատաստանին, ոմանք ժամ մի ասեն. որքան եկաց ընդ ադամայ ի քննութիւն հարցմանց յետ յանցանաց նորին: - 747. Կամ լինէիր այնպէս ուրախ որպէս զայն որ ի կախաղան ածեալ լինի՝ և *յանկարծակի* ի ճանապարհին թագաւորութիւն ընկալեալ լինի: - 762

**ՅԱՆԿԱՐԾԱՀԱՍ +** Նմանապէս և աստ յաւուր նոր կիրակէի ասացեալն կրկնո՛յ զատկի, *յանկարծահաս* ժամու շարժեալ հեղեղաց ուղխից խռովութեանց: - 789

**ՅԱՆԿԱՐԾԱՄԱՀ +** Նմանապէս և *յանկարծակամահ* լինի, կամ ի խստութենէ ցաւոյն...: - 668

**ՅԱՆԿԱՐԾՕՐԷՆ +** Եւ այս ո՛չ զիտ իրերաց. այլ համանգամայն *յանկարծօրէն* ի վայրկեան ժամու զօրութեամբ հոգւոյն սրբոյ. որոյ *յանկարծօրէն* է ներգործելն աստուծոյ: - 470

**ՅԱՆԿԵՍ** - Որ և նովաւ զնորայս վասն նորա խօսեսցուք. և ի գովեստ մեծութեան փառաց նորին *յանկեսցուք*: - 456

**ՅԱՆՁՆ ԱՌՆՈՒԼ +** Վասն երկրորդին հակառակէր ընդ նոսա, զի մի՛ սուտ լիցի վկայութիւն աստուծոյ ի վերայ նորա. զի և մեք ուսցուք՝ վասն վկայութեանն աստուծոյ այնչափ նախատինս *յանձն առնուլ* և ո՛չ ուրանալ. որպէս վկայից դասքն նահատակեցան: - 324

**ՅԱՆՁՆԱՌԱԿԱՆ +** Երկրորդ՝ զի **ե** *յանձնառական* է. և **ե** հրաժարական: - 340. Դարձեալ կոչին *յանձնառականք*. որ ի պատուիրելոյ ումեք գոյ ողջախոհ. այլ զպատճառն ո՛չ գիտէ. նաև ո՛չ հետևին միմեանց: - 582. որ է կրկին տախտակն մովսէսի. *յանձնառական* և հրաժարական օրինօքն միաւորեալ: - 646

**ՅԱՆՁՆԵՄ +** Քանանէ, մովսէս ի վախճանին իւր՝ կտակ գրեաց զլինելոցն, և զեկեղեցին *յանձնեաց* ի կոյսն յեսու: - 329. Եւ տէր մեր զգալուստ հոգւոյն և զկատարած աշխարհի պատմեաց, և *յանձնեաց* զկոյս տաճար իւր ի կոյսն յօհաննէս: - 329. Վեցերորդ՝ համբարձաւ ձայնիւ փողով ըստ դաւթի. և այս վերաբերի յառաքեալսն. որ *յանձնեցաւ* նոցա երթալ քարոզել ամենայն հեթանոսաց. և փողք եղեն տիեզերաց...: - 520

**ՅԱՆՑ +** Բիւրեղն, ծովագոյն յօդանման. գտանի ի տորոս *յանցս* եփրատ գետոյն: - 349. Վասն է՞ր հրամայեաց գրել զօրէնս ի *յանցս* յորդանանու: - 402

**ՅԱՆՑԱՆԵՄ +** Երրորդ՝ զի համաձայնին ամենեքեան՝ որ նախ քան *զյանցանելն* զմարդն անապական ասեն: - 222. Հինգերորդ՝ նախ քան *զյանցանելն* էին ադամ և կինն մերկ և ո՛չ ամաչէին. վասն զի ո՛չ ունէին ցանկութիւն հեշտութեան: - 225. Վասն այն արդարադատն աստուած է պատիժս եդ. ի վերայ կայենի. վասն զի է չարութեամբ *յանցեաւ*: - 287. Զի ո՞ր ոք և *յանցանէ*՝ պատուհասի. եթէ հրեշտակք, և եթէ սուրբք ի մարդկանէ: - 386. **Եւ որպէս կնոջ ընդ հրամանս առնն իւրոյ *յանցանել* պոռնկութենէ, նոյնպէս և զաւակաց, և ծառայից, և աշակերտաց, և հնազանդելոց, և ժողովրդոց. նոյնպէս և հոգիս մեր ելեալ ի հրամանացն աստուծոյ՝ պոռնկութիւն է նմա. եթէ ըստ գործոց. եթէ ըստ հաւատոց**: - 389. Երկրորդ՝ զկանոնս ապաշխարութեան նշանակէ զոր խոստովանահայրն կարգէ. զի թէ *յանցանէ* ոք՝ մեղանչէ՛: - 439. Այլ ո՛չ էր արդար թէ *յանցանէր* զօրինօքն աստուծոյ: - 460. Այլ և քահանայքն ո՛չ *յանցանէին* զօրինօքն և յօտար ազգէ տային նմա կին: - 460. Եւ *յանցանելն* զպատուիրանն՝ կործանեցաւ ի կորուստն ապականութեան: - 467. Եւ ասին սոքա բնականք, զի նախ քան *զյանցանելն* ի դրախտին՝ բնաւորապէս գոյին առ ադամ: - 496. Ասեմք եթէ, կերակրիլն ո՛չ է մասն ապականութեան. ուստի յա՛յտ է զի ադամ նախ քան *զյանցանելն* ի դրախտին կերակրիւր և ո՛չ էր ապականացու. այլ անապական: - 501. Եւ դարձեալ՝ չորեքնիւթեա՛յ է բնութիւն մարմնոյս մերոյ և սոքօք *յանցանեմք*...: - 622. ...նշանակէ զհանգիստ ապաշխարողաց. որք յուրբաթի *յանցեաք* ընդ ադամայ. ի շաբաթի հանգչիմք ընդ քրիստոսի: - 648. Դարձեալ ասեմք առաջին կեանք մասնաւոր, զոր նախ քան *զյանցանելն* ունէր. անկարօտութիւն. լուսաւորութիւն. անծերանելի հասակ. անմահ կեանք. և այլն որ ասացաւ ի վերոյ **ժէ** գլուխն **լզ** համարն: - 758. Զի նախ քան *զյանցանելն* ադամ ունէր զկիրս բնական և անգոսնելի. որպէս կերակրիլն, ննջելն, և այլն: - 759. Իսկ *յանցանել* նորա՝ կորոյս

զամենայն. ո՛չ միայն զխոստացեալն, այլ և զպարգևեալն. զի ըստ որում յանմեղութենէն մեղանչական գտաւ, այսպէս մահու և ապականութեան գրաւեցաւ: - 776

**ՅԱՆՑԱՆՔ +** Ուստի յա՛յտ է մեծութիւն *յանցանացն*. քանզի ի հինն զինչև մեղանչէր ոք մեծ կամ փոքր՝ պատարագաւն սրբէր. թռչնօք և անասնօք: - 33. Երկրորդ և ոչ վասն յետին *յանցանացն* կռապաշտութեան եպերեմք զիմաստութիւն նորա և ո՛չ ընդունիմք. թէպէտ և հնա՛ր է պատճառել թէ այնքան իմաստութիւնն, զնա ո՛չ պահեաց հաճոյ մնալ աստուծոյ: - 40. Այլ զի մեք թողեալք և անտես եղեալք յաստուծոյ վասն *յանցանացն*, զդէմս մեր տպաւորէ՛ յինքեան. բնութենակից գոլով մեր և գլուխ անդամոցս: - 42. Այլ տեսցուք զայս և յօրինակս ճշմարտութեան. զի ադամ յետ միոյ *յանցանացն* ո՛չ մատոյց պատարագ զամենայն աւուրս կենաց իւրոց. այլ որդւո՛ցն հրամայէր մատուցանել: - 167. Երկիր որ փոխիլ հրամայի, է՛ *յանցանք* դատապարտելի: - 210. Երեսունն է՝ եօթն շնորհքն, և եօթն *յանցանք*, և եօթն պատիժն ադամայ: - 228. Եւ զի՞նչ է եօթն *յանցանքն*: - 279. Որ յետ *յանցանացն* փոխեցաւ և եղև թանձր և ծանր և մահկանացու և ընդդիմահար և աղտեղի: - 282. Դարձեալ է *յանցանօք* մեղաւ կայեն. վասն որոյ և եօթնիցս պատժեցաւ: - 287. Առաջին *յանցանք*՝ անարժան պատարագն: - 287. Վեցերորդ, վասն *յանցանաց* ի նուէրս սրբութեանցն, և կամ յօրէնս աստուծոյ, և կամ յընկերս վնասու...: - 358. Մեղք կամաւո՛րն է. և *յանցանք* ակամայն: - 358. Նա՛ է ողջակէզ և փրկութիւն և գոհութիւն, և վասն մեղաց և *յանցանաց*. և յամենայն նւիրաց կատարումն և գլուխ նա՛ է: - 362. Դարձեալ՝ կրկին է ողջակէզն. մին վասն մեղաց որ է՛ կամաւոր. և միւսն *յանցանաց* որ է՛ ակամայն: - 362. Չորրորդ, նշանակէ՛ թէ՝ մի՛ ընդ *յանցանաց* ծնողին չարչարեսցես զզաւակն: - 399. Որպէս և մովսէս զտախտակն աստուածագիծ խորտակեաց վասն *յանցանաց* ժողովրդեանն: - 425. Զի անդ որ գործէր զմեղս՝ և որ վրէժ ոչ խնդրէր՝ միապէս էր *յանցանք*: - 439. Եւ ի *յանցանս* ուրիայի ո՛չ էր անկեալ: - 439. Երրորդ՝ զի քրիստոս զչափ հասակի զադամայն ունէր, որ նախ քան *զյանցանս* և ադա՛մ ոչ ունէր հիւանդութիւն և ո՛չ ծերութեան փոփոխումն: - 480. Չորրորդ՝ ծերութիւն և այլայլութիւն մարմնոյ՝ էր դատապարտութիւն *յանցանացն*...: - 480. Կրկին է գիր. այսինքն կենաց և մահու. զի բարի գործովք գրիմք ի դպրութիւնն կենաց. և մեղօք գրիմք ի գիրն մահու և դատապարտութեան. որպէս ասեմք թէ զձեռագիր *յանցանաց* քոց ջնջեսցէ աստուած: - 481. Իսկ զգիր քրիստոնէից զոր յետ աւազանին մեղանչեմք և գրեմք *զյանցանս*, զայն պատառէ ապաշխարութիւնն. որ է՛ զղջումն սրտի և խոստովանութիւն լեզուի և հատուցումն գործոց մարմնոյ: - 482. Ասեմք եթէ, ապականութիւնն յետ *յանցանա՛ցն* եմուտ ի բնութիւնս: - 501. Եւ վասն *յանցանաց* մտաց: - 525. Ո՞րպէս զանազանին մեղք. անօրէնութիւնք, և *յանցանք*: - 555. Երկրորդ՝ *յանցանք* է կոխել զօրէնս և անցանել: - 555. Դարձեալ՝ մեղքն կամաւո՛րն է, և *յանցանք* ակամայն: - 555. Եւ բերէին զպատարագն որպէս վասն մեղաց՝ նոյնպէս և վասն *յանցանաց*: - 555. Ոմանք *զյանցանս* մտաց կատարեալ մեղս դնեն. բերելով վկայութիւն ի տեառնէ թէ՝ «շնացաւ ի սրտի իւրում»: - 555. Եւ ոմանք ոչ ինչ համարին *զյանցանս* մտաց. և ո՛չ դնեն ի կարգս մեղաց. օրինակ տալով իբր զդատարկ սեղան ոչ ինչ կերակրել. և իբր զպտուղ ծառոց տեսութեամբ միայն վայելել: - 555. Իսկ արդ եթէ *յանցանք* մտացն խոստովանելի, ապա ուրեմն մեղք է: - 556. Իսկ ներելի մեղքն է *յանցանք* փոքրագոյն. քանզի ի մանկունս յետ մկրտութեան նախ յառնեն ներելիքն, և ապա՛ մահու չափքն: - 567. ...և թողութիւն շնորհեսցէ յամենայն *յանցանաց* քոց. խոստովանելոցն և մոռացելոցն: - 602. Նա՛խ՝ զի վասն *յանցանաց* մարդոյն ադամայ դատապարտեցան տարերք. հող, ջուր, և այլն...: - 615. Իսկ ողորմեայն է՛ որպէս հարցն վասն *յանցանացն* ադամայ: - 628. Իսկ պահքն սուգ է և ապաշխարութիւն վասն *յանցանաց* նախաստեղծիցն...: - 650. Զի ընդ ապաշխարութեամբ եմք վասն *յանցանաց* մեր...: - 650. իսկ թէ յայլ երիցն է, նայիլ պարտ է առ ինքն թէ ո՞ր *յանցանք* առաւել զօրացեալ է յինքն, զայն պակասեցուցանել...: - 665. Բարեաց՝ զի քաւեսցին փոշետեսակ *յանցանք* ինչ. և կամ զի պսակքն բազմասցին: - 668. Զի վասն *յանցանացն* ադամայ անիծաւ երկիր ի գործս նորա. զսուրբ մարմինն քրիստոնէի չէ՛ պարտ դնել յանսուրբ հող...: - 676. Չորրորդ, ասէ սուրբն եպիփան ի հաւատոց գիրն, եթէ որպէս հոգին միայն դատի ըստ բանի հերձուածողացն զի կարէ՛ ասել մարմնոյն եղեալ *զյանցանքն*: - 691. Դարձեալ՝ խոտն մտաւոր մեղք խորհրդոց. և եղէգն *յանցանք* բանից. և փայտն մարմնական մեծամեծ մեղք: - 702. Նա՛խ՝ զի ապականեցան տարերք վասն *յանցանաց* մարդոյն, պա՛րտ է զի ընդ մարդոյն նորոգեսցին և նոքա: - 727. Յարութիւն մարդկան ի վայրկեան ժամանակի և յանկարծակի լինի որպէս ցուցաւ ի վերոյ. այլ զյերկարութիւն ժամու քննութեան դատաստանին,

ոմանք ժամ մի ասեն. որքան եկաց ընդ ադամայ ի քննութիւն հարցմանց յետ *յանցանաց* նորին: - 747. Երկրորդ` զի մարդկան ազգի կրկին է հատուցումն. այսինքն յայժմու կեանս և ի հանդերձեալն. իսկ դիւացն եօթնեկի է հատուցումն վասն եօթնեկի *յանցանաց* նոցա. և եօթն գլխաւորագոյն մեղացն: 750. Դարձեալ` ծածկութիւն *յանցանաց*` է՛ բնականապէս մեզ ի տերևոյ անտի. իսկ յանդիմանութիւն է ծածկելոց յայտ արարողութիւն. վասն որոյ ամենքեան դժկամակ երևին: - 774. Նախ խնդրելի է թէ վասն ի՞նչ պատճառի նախահօրն *յանցանաց* պատժապարտ եղեն և որդիքն: - 776. Նա՛խ` որպէս ի վերոյ ասացաւ. զի թէ ադամ որ սկիզբն և պատճառ էր մեղաւորաց` ազատեցաւ. ապա ուրեմն և որդիքն որ վասն *յանցանաց* նորա` ազատեսցին: - 776. Այսպէս և ժանգ *յանցանաց* մկրտելոց և քահանայից` բառնայ զգործ` կամ զնշանակութիւն շնորհացն. իսկ յետ սրբութեան զղջմամբ` զիա՞րդ կրկնի ունակացեալն ի նմա՛: - 782

**ՅԱՆՑԱՒՈՐ +** Վասն զի խղճմտութեամբ *յանցաւորին* ճանապարհն ո՛չ է թիւր. այլ ինքն թիւրի յուղիղ ճանապարհէն: - 33. Այս ո՛չ թէ ունիլ զկիրս նշանակէ յաստուած, այլ զպատիժ վասն գործոյ *յանցաւորացն*: - 60. Իսկ առ *յանցաւորսն* գրով խօսի: - 177. Եւ երկրորդ ի մահու և *յանցաւոր* տեղեաց յանմահ և յանանց տեղիս: - 289. Նա՛խ` որպէս մելքիսեդեկ ի *յանցաւոր* և յանիծեալ ազգէն քանանու: - 301. Չորրորդ` կամէին զինքեանս արդա՛ր ցուցանել, և *յանցաւոր* զյոբ. և վասն այսմ կարգէին ընդ յոբայ: - 324. Այսինքն նոքա կամէին որ զնոսա արդարս ասէր յոբ` և զինքն *յանցաւոր*` և ո՛չ ասաց. զի թէ զնոսա որք անիրաւք էին արդար ասէր` մեղանչէր ճշմարտութեանն. և թէ զինքն մեղաւոր ասէր` մեղանչէր վկայութեանն աստուծոյ: - 324. Դարձեալ` աստուած յառաջնումն ծննդեան յորժամ *զյանցաւորս* ըստ բնական մեղացն` ջրհեղեղաւն ջնջեաց. յերկրորդումն ծննդեան յորժամ *զյանցաւորս* ի կռապաշտութիւն` կարմիր ծովովն ընկղմեաց. յերրորդումն ծննդեան տուժեաց, յորժամ *զյանցաւորս* գրաւորական օրինացն պատերազմօր սատակեաց: - 351. Եւ մի է քաւութեան պատարագն քրիստոսի. մեղաւորին և *յանցաւորին*: - 362. Զի՞նչ է որ զակամայ մեղուցեալն քաւէր պատարագօք. և զկամաւոր *յանցաւորն* սատակել տայր ժողովրդեանն: - 385. Չորրորդ` ցուցանէ թէ որ ի սրբութիւնն իւր ո՛չ խնայէ, և ո՛չ ի ձեզ *յանցաւորքդ* թէ ոչ դառնայք: - 425. Երկրորդ` զի սովն և սուրն զբարի և զչար ի միասին պատժէ. այլ մահն ընտրութեամբն աստուծոյ է. և ժողովի ի վերայ *յանցաւորացն*. ուստի յա՛յտ է զի դաւիթ ո՛չ էր *յանցաւոր* ո՛չ պատժեցաւ: - 435. Չինգերորդ` ադամ առաջին *յանցաւորն* էր ի ներքին դժոխս. զի ա՛յն է մահու մեռանիլն. այլ արդ եթէ քրիստոս ո՛չ գնաց ի ներքին դժոխքն, ո՛չ ազատեաց զադամ: - 506. Նա՛խ` թողուլ *յանցաւորին*...: - 585. Եւ այս է մեկնութիւնն. թէպէտ հրէայքն որպէս *յանցաւոր* մարդ սպանին` սուրբ աստուած և ո՛չ սոսկ մարդ: - 632. Եւ ամիսն **գ** տասամբ բաղկանայ. զոր ի հաւատ սուրբ Երրորդութեանն և **ժ** բանեան օրինացն *յանցաւոր* գտաք: - 683. Երկրորդ, ասեն խնդրէ արդարութիւնն աստուծոյ` զի վասն մեղաց պատիժ տացի. որպէս յօրէնս մարդկային պատժին *յանցաւորք*...: - 701. Երրորդ, հաւաստի արդարութեամբ. և այսպէս ամենայն սուրբք և հրեշտակք դատեսցեն զնոսա որք ի նոյն շաւիղն *յանցաւոր* գտան: - 738. ...իսկ Օրինակաւ, զի նմա ո՛չ գոյր օրինակ *յանցաւորաց*. իսկ նոքա տեսին զնա պատժեալ: - 777. Եթէ յարդեան ժամանակիս հաւատարիմ է, զի որ ոք և իցէ *յանցաւոր*, եթէ զղջասցի և ատեսցէ զմեղս ըստ մարգարէին` խոստովանութեամբն առնու զմաքրութիւն և զվարձս ապաշխարութեան: - 778

**ՅԱՆՑԵԼ + ...զի ի մէջ նեղութեանց լինելով` *յանցեալ* մեղացն զղջանամք և սրբիմք. և յապագայն զգուշութեամբ պարսպիմք. և ի ներկայն` արի՛ և կա՛զմ պատրաստիմք:** - 162. Եւ զխոյն աստուծոյ, զի զօրէնս նորա *յանցեաւ*: - 384. Եօթներորդ` ի տարրական հողոյ ստեղծեաց աստուած ադամայ անապական մարմին և եդ ի դրախտին. որ մեզօք *յանցեալ*` եղև ապականացու: - 499. Եւ սոքա մտօք և ո՛չ մարմնով կատարին. որպէս յայտ է ի բանսարկուն սատանայ որ *յանցեաւ* հպարտութեամբ և նախանձով: - 556. Զի առաջին ձեռամբն աստուծոյ նա՛ արարաւ, և նա՛ միայն *յանցեաւ*. և նմա՛ խոստացաւ փրկութիւն: - 778

**ՅԱՆՑՈՒԱԾ +** Առաջինն է սակաւ ինչ միայն *յանցուած* տեսութեան ըստ բնաւորական մտածութեան նորա առ ամենայն իրս: - 558.

**ՅԱՆՑՈՒՄՆ +** Զի զոր ինչ բնութեամբ ունէին դևք` եթող ի նոսա աստուած յետ *յանցմանն*. և զոր ինչ երանութեամբ ստանալոց էին` զրկեցան: - 147. Զի՞նչ էր *յանցումն* և պատճառ կորստեան նոցա: - 147. Իսկ **ժ** եղջիւրն է **ժ** պատուիրանին *յանցումն*, որով պատերազմի ընդ մարդկան: - 151. Իսկ *յանցումն* օրինացն` լինի զէն և գործի դիւացն որով պատերազմին ընդ մարդոյս: - 151. Վեցերորդ, նոքա

հանապազ մատուցանէին վասն հանապազ *յանցմանն* ի բազմօրինակ մեղս...: - 354. *Յանցումն* ադամայ երիս վնաս էարկ ի բնութիւնս: - 491. Իսկ *յանցումն*՝ մտաց տեսութեան: - 555. Զի կրկին է *յանցումն* մտաց: - 558. Եւ երկրորդ *յանցումնէ*՝ որք մտօքն հեշտացեալ մեղկանան ընդ տեսութեանն. և հաւանին խոկացեալք ի նոյն: - 558

**ՅԱՆՕԹ ԱՌՆՈՒԼ +** Եւ ամառն, որ *յանօ՛թ առնուն*: - 197

**ՅԱՉԱՂԵՄ +** Զի փառասէրն զիւր փառքն և զիւր բարին սիրէ. և զայլոց փառք և զբարիս *յաչաղէ* և ատէ: - 559

**ՅԱՊԱՂԵՄ +** Երկրորդ՝ որք երկարակեացք են՝ որպէս տունկք, *յապաղելով* աճին և յա՛մր ծնանին: - 214. Պատճառ *յապաղելոյ* և փութալոյ սերմնականին զօրութեան **գ** են: - 261. Ոմանք ըստ ազգի և տեսակի իւրեանց հով և ջերմ՝ չոր և գէջ գոլով, փութով կամ *յապաղելով* բուսանին: - 261. Եւ էգն հոգւորի յետ **ձ** աւուրն՝ որպէս ասացաք զպատճառն վասն տեղւոյն ցրտութեան որ է՛ ձախ կողմն արգանդին. որ ցուրտ գոլով վասն փայծաղանն՝ *յապաղէ*՛ զկազմուած նիւթոյն ի կրկնապատիկ ժամանակս **ձ** աւուրց: - 261. Եւ այլք ունելով և զկերակրականին զօրութիւնս՝ *յապաղեն* մինչ **բժ**ան ամիսս: - 262. Այս է պատճառն. զի ոմանք *յապաղեն*. և ոմանք փութով տան զպտուղն որպէս ասացաք: - 263. Եւ կամ ըստ ազգի իւրեանց և ըստ տեղւոյն և ժամանակին փութան և *յապաղեն* զծնունդն: - 263. Վասն որոյ ասաց արիստոտէլ աղէքսանդրու, *յապաղեա՛* ի վրէժխնդրութիւնն մինչև անցցէ բարկութիւն: - 570. Տասներորդ՝ *յապաղեաց* զայն, զի փափագն առաւելասցի. աստ հաւատով և յուսով ակն ունել. և ապա՛ դէմ յանդիման երևիլ: - 663. ...իսկ ներգործութեամբ չարին *յապաղեաց* ժամանակաւ. - 716. Երրորդ, զի որ քան *յապաղէ*՛ ժամանակն, այն քան վարձք հաւատոյն աճէ՛. - 717. Առաքեալն պօղոս ո՛չ զայն ասէ թէ *յապաղելով* լինի յարութիւնն, այլ զկարգն ցուցանէ ոչ ժամանել ննջեցելոցն: - 717. Եւ վասն իմոյ տկարութեան և ժամանակիս վրդովման զխնդիրն *յապաղէի*: - 772. Որ և առանց *յապաղելոյ* ապաստանեալ մեր՝ յօժանդակութիւն խնդրոյդ: - 773. Ասեն զայս՝ անընտել գոլ սնուցողականին, *յապաղելով* աւելի պահէ: - 785. Այլ վարկանին ոմանք զթիւ կազմութեան աւուրց պակաս գոլոյ նախնւոյն մարդոյ. զորոյ զտիպ յինքն նկարելով և այժմ անդրանիկն ծնունդ՝ *յապաղելով* գայ աշխարհ: - 785

**ՅԱՊԱՅ +** Դարձեալ հանճար ասի, զի *առ յապայն* ունի զկատարումն: - 270. Դարձեալ՝ ուխտն *յապա՛յն* է, և սահմանն ի ներկայն: - 389. Զի թէ զամենայն բան քննեմք, աստուծոյ զի՞նչ թողումք *յապայ*: - 405. Ա՛րդ՝ սոքա անապականք են յայնմ հետէ և *առ յապայ* որ օրինակք են. ապա ուրեմն և ճշմարտութիւնն անապական է որ է խաչն աստուածընկալ: - 733

**ՅԱՋՈՂԱԿ +** Աջոյ երին. *յաջողակ* բարի գործն. և Երբուծն դօշն է. որ ունի զսիրտն: - 360. Երկրորդն Աւովդ. յերկուց ձեռաց *յաջողակ* եմինացի յեփրեմայ ամս **ձ**. և այլազգիքն ամս **ի**: - 420. Որք աստ ունին *զյաջողակ* գործս բարեաց կամ ձախողակ. և նոյնպէս դասին յաջակողմն և ձախակողմն քրիստոսի: - 689

**ՅԱՋՈՂԵՄ +** Ութերորդ, վասն գոհութեան. հեռաւորն եկեալ կամ բարւոյ *յաջողեալ*: - 358. Երկրորդ՝ ի խրատ մեղաւորաց. զի յորժամ գիտենան թէ ո՛չ *յաջողի* ճանապարհ մեղաւորի, արգելուն ի մեղաց: - 408. Երեսուներորդ, ի տեառնէ *յաջողեալ* զօրութեամբ ծնօտին, և նովաւ զօրացեալ մեծ ծարաւն սամփսոնի: - 423

**ՅԱՋՈՂՈՒԱԾ +** Այսինքն զամենայն *յաջողուածս* հոգւոր և մարմնաւոր, և զմասն անմահութեան կենաց յուսոյն, ո՛չ վասն մեր արժանաւորութեան համարել. այլ բարութեան և ողորմութեանն աստուծոյ: - 360

**ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆ +** Օր ասի **ժե** կերպիւ: ...Եօթներորդն *յաջողութեան*: - 195. Եօթներորդն է *յաջողութեան*. ուստի ասէ մարգարէն, «արեգակն ի տուէ քեզ մի՛ մեղիցէ»: - 195. Քանզի առնէ զմիտսն անյաղթելի և անփոփոխելի ի մէջ *յաջողութեանց* և թշւառութեանց ամենայնի: - 578

**ՅԱՌԱՋ +** Ասելով թէ պատճառ ամենայնի՝ բարեաց և չարեաց մերոց ո՛չ մեք եմք, այլ է՛ առաջին պատճառն աստուած. որք փախչելով *յառաջ* ասացեալ բախտէ՛ և ճակատագրէ՛ աստեղացն, փոխանակ նոցա յառաջին պատճառն վերագրեն զիարկն. որպէս զի մի՛ ասիցեն երկու սկիզբն ըստ մանիքոսի: - 13. Զորօրինակ՝ անհնա՛ր է *յառաջ* ընթանալով կոխել զստւերն: - 25. Արդ՝ թէ ինն ամսով *յառաջ* թագաւորեալ էր թագաւորն չար, ապա ուրեմն ի ժամանակս Օգոստոս կայսեր ծնաւ քրիստոս. զոր և վկայէ՛ աւետարանն սուրբ: - 29. Զմինն ծնօղ և *յառաջ* առաքօ՛ղ ասեմք անախտաբար և անժամանակ: - 65. Եթէ զաստուածային անձն և զնորին բնութիւնն ասէք մի քրիստոս, դեռևս կայք *յառաջ* ասացեալ տարակուսանսդ. զի զաստուածային անձն և զբնութիւնն ասէք չարչարեալ և

մեռեալ. զի քրիստոս խաչեցաւ և մեռաւ ըստ գրոց: - 89. Եւ ճառելի է *յառաջ* ճառագայթեալ հաղորդութիւնն ամենայն եղելոց: - 103. Այլ ի ստեղծումն էիցս՝ սէրն առաջին է քան զբարին. զի ի սիրո՛յ շարժեցաւ *յառաջ* բարերարել և խնամել: - 129. Նախ՝ զի շինօղն էր *յառաջ*, և յետոյ ետես զշինուածն: - 164. Երկրորդ՝ թէպէտ յետոյ եղեն արարածք, ո՛չ են պատահումն. որպէս և բանն էր *յառաջ*, և յետոյ եղև մարմին...: - 170. Եւ ո՛չ ուրեք երբեք միտք ուղղափառաց բաժանմամբ տեսանէ. ո՛չ զբնութիւնս և ո՛չ զկամս և ո՛չ ներգործութիւնս որ *յառաջն* հարցափործեցաք սակաւիկ: - 174. Չորրորդ՝ զի ծնանիմք ի բարի կամացն աստուծոյ *յառաջ* գիտութեամբ նորին. և ապա գոյանամք արդեամբ և գոյացութեամբ ըստ իւրաքանչիւր տեսակաց: - 179. Եօթներորդ՝ վասն զգայութեանցն, որ ամենեքին *յառաջ* հեղուն յուղեղէն, և ազատապէս տեսանեն և իմանան. զի թէ գլուխն և ուղիղն ի վա՛յր էր քարշեալ և կորացեալ՝ ո՛չ կարէր ուղղակի զգալ և իմանալ. որպէս այլ կենդանիք: - 233. Զայս ցուցանէ դէմք ի նմին կողմն, և զոտս *յառաջ* փոխել և զձեռս: - 234. Ա՛րդ՝ սկիզբն *յառաջ* շարժութեան հոգւոյն է՛ հայր...: - 65. Եւ այսմ պատճառ անհա՛ս է մտաց մարդկան. միայն անքննին դատաստանին աստուծոյ է տալի. և անհետազօտելի ճանապարհաց նորին. որև սակաւիկ մի *յառաջ* ասացաւ: - 252. Զի որք զհոգի *յառաջ* ասեն գոյանալ՝ զայս դնեն պատճառ, եթէ յէակքս իմանալիքն յառաջ ստեղծան քան զզգալիքս. ապա և ի մարդոյն էութիւն հոգին յառաջ է քան զմարմինն: - 252. Այլ ի միասին համանգամայն ստեղծեալ. ո՛չ ժամանակաւ *յառաջ* և յետոյ, և ո՛չ բնութեամբ. այլ մի է սկիզբն միոյ գոյութեան մարդոյն: - 254. Ասեմք թէպէտ նիւթն ի չորից տարերց է, այլ տնկականն զօրացեալ քան զնիւթն՝ ըստ իւրոյ մասանցն ծնանի. զի ծնանիլն տնկականին է. այլ և ունի զտարերացն թիւ. զի յամիսս չորս կատարի այն՝ որ *յառաջ* ծնաւ: - 262-263. Վասն որոյ յայսմանէ և *յառաջ* հաստատի մարդ ի հանճարս բանակրութեան և ի տեսութիւն իմացման մինչև ի **խք** ամն որ է եօթնիցս եօթն: - 265. Եւ անտի *յառաջ* զբանական մասին կատարումն և զկայ՝ ցուցեալ: - 267. Վաթսունբ, Տապանակն *յառաջ* գնայր և վէմն զհետ՝ որ էր քրիստոս: - 285. Եւ մինչ զգիրն *յառաջ* կալան թէ այսո՛ւ փործիմք, այլ ո՛չ ոք գիտաց կարդալ՝ բաց յեբրայեցւոցն. վասն այն ասի եբեր, թէ զառաջին լեզուն նա՛ եբեր: - 299. Երանելին յոբ՝ էր ի ժամանակս մովսէսի. **ճ** ամաւ *յառաջ*՝ աւելի և կամ պակաս: - 320. Երկրորդ՝ զի զգին ծերոյն պակաս հրամայեաց. զի **ե** ամեայ տղայոյ երկդրամեան էր. և ի ամենին ի երկդրամեան. և անտի մինչև ի **կ** ամն **ծ** երկդրամեան. և ի **կ** էն *յառաջ* **ժե** երկդրամեան: - 377. Զի՞նչ ցուցանէր **գ** օր *յառաջ* գնալ տապանակին դիտեալ զհանգիստ: - 380. Վասն է՞ր տապանակն *յառաջ* ընթանայր և վէմն զհետ բանակին: - 385. Հինգերորդ՝ *յառաջ* տապանակն գնայր և դիտէր հանգիստ. և զհետ վէմն տայր ջուր. զի այժմ զհանգիստ պատրաստէ՛, և յետոյ զվայելչութիւն տայ: - 385. Նախ՝ որպէս արեգակն եղև տեսութիւնն մովսէսի. զի *յառաջ* զարևմուտս տեսանէ. և վերացեալ զհիւսիս և զհարաւ. և ապա՛ զարևելս: - 394. Զոր յայսմ օրէ և *յառաջ*՝ ասեն զամպ հովանին վերացեալ ի նոցանէ: - 410. Եւ մինչ ընթացաւ ի կալն ուռնայի և գնեաց զեզինսն և ողջակիզեաց, եհաս ի **զ** ժամն. որ *յառաջն* դադարեալ էր սուրն: - 435. Զանսկիզբն սկզբան ի սկզբանէ՛ գոյին, և զանճառելի թաքնութեան և անհաս խորրութեան *յառաջ* ճանապարհ ի մեզ միածին բանին: - 456. Վասն է՞ր ոչ *յառաջ* և ո՛չ յետոյ մարդացաւ: - 467. Նա՛խ՝ զի երևելի էր և ո՛չ անարգ ոք. որ և սակաւ ինչ *յառաջ* փառօք եմուտ ի քաղաքն: - 490. Եւ բոլորն **ժե** ժամու *յառաջ* ի միւս աւուրն՝ սկսեալ նախատօնակ առնեմք. և զայս յամենայն ուրեք: - 509. Եւ տե՛ս, զի լուսաւորիչն կարգեաց զնաւակատիսս յայսմ աւուր որ էր յաւուրս նիկիական ժողովոյն. զոր *յառաջն* ունէին ամենայն ազգ, զնոյն կարգեաց մեզ: - 509. Երրորդ վասն այն արգել, զի ցուցանէ թէ յոյժ պատուեցաւ մարմինն այն և ո՛չ է համարձակելի որպէս *յառաջն* մաքսաւորք և պոռնիկք մերձենային: - 517. Եւ այլ ևս գտցես յաստուածաբանին ճառն *յառաջքն* գրոցս ի եօթն գլուխն՝ ի **ժգ** համարն: - 518. Որ կանոնական գլխօք պայծառացոյց զկարգ եկեղեցւոյ և զուղղափառութիւն հաւատոյ. զոր **զ** ամաւ *յառաջ* եղծեալ էր եզրի կաթողիկոսի...: - 545. Եւ վասն այն այլազգ ո՛չ հաւատան. զի *յառաջն* չկայր մինչ ի նա՛. և առաւել վասն այն անուանեցաւ լուսաւորիչ: - 549. Եւ *յառաջ* տրդատ հաւատաց և ապա՛ կոստանդիանոս: - 549. Տասներորդ՝ յա՛յտ է ի համազօրութենէ. զի երբեմն շարժէ՛ ախտ զմիտս. և երբեմն շարժի ի մտացն ախտ. որպէս ասէ երանելին եւագրիոս. եթէ մինչ յերեսնամեայ հասակս ախտն շարժէ զմիտս ի ցանկութիւն. և անտի *յառաջ* միտքն շարժէ զախտն: - 557. Չորրորդ՝ վեց են շարժութիւնք մարմնոյ. այսինքն վեր և վայր. յաջ և յահեակ. *յառաջ* և յետ: - 560. *Յառաջ* շարժումն է բարկութիւն. զի վասն չարեաց ասէ բարեկամ: - 560. Այլ զայն ասացեալ *յառաջն* զձև բանիցն. որ և արժանաւորապէս տուեալ լինի շնորհք հոգւոյն: - 588. Եւ ո՛չ զկարգն փոխել. որպէս թէ *յառաջ* զհոգւոյ անունն ասել և ապա

զորդւոյ և ապա՛ զհօր: - 588. Աստուած զարդարութիւն յամենայն մարդոյ խնդրէ զոր *յառաջն* ետ. և ադամ եթող զայն: - 591. Ասեմք առ այս, թէ *յառաջ* խառնումն ջրոյն ո՛չ է ըստ խորհրդոյն. որպէս և ո՛չ առ մեզ, թէ վաճառօղն խառնեսցէ ջուր. այլ քրիստոս ո՛չ խառնեաց: - 596. ...որ մարդն զինքն *յառաջ* պատրաստէ՛ և ապա՛ աղօթէ...: - 620. Երրորդ, ի յարութեանն յորժամ փողն գոչէ՝ յառնեմք և *յառաջ* ընթանամք քրիստոսի: - 627. Այսինքն ի հօրէ *յառաջ* բղխէ հոգին առ որդի. և նովաւ բաշխի մեզ: - 639. Նոյնպէս և աստ փոխանակ որոտմանն, Ո՛րթի բարձրաձայն. որ է՛ *յառաջ* մատիք: - 644. Որպէս ժողովուրդն գնաց մերձ ի լեառնն, և մեզ պա՛րտ է յոտաց կալ և *յառաջ* գնալ և լսել: - 644. ...որպէս *յառաջն* ունէին ամենայն ազգք քրիստոնէից. և դեռևս պահէ՛ ազգն դպտի և հապաշի: - 650. Զի *յառաջն* զսոսա լուծանէին որք յառաջաւորացն ի վեր պահէին **հ** օր: - 651. Կերակուրն մինչ ի **զ** ժամն կոչի. և անտի *յառաջ* ընթրիս: - 656. Իսկ խաչն վառել և ժամահարն *յառաջ*. նշանակէ՛ զվերջին գոչումն փողոյ հրեշտակապետին: - 676. Վասն է՞ր զոտքն *յառաջ* տանիմք մեռելոյն: - 676. Ապա ո՞րպէս մի կայանք հոգւոցն որ ասացաւ *յառաջն*: - 689. Դարձեալ ասեն՝ հոգին *յառա՛ջ* գործէ զբարին զի նախ իմանայ և կամի: - 696. Եւ ամենեքեան անցանեն ընդ հուրն որ *յառաջ* ընթանայ գալստեանն քրիստոսի: - 702. Զի ո՛չ *յառաջ* և ո՛չ յետոյ գիտաց զնա: - 704

***ՅԱՌԱՋ ՔԱՆ +*** Իսկ սկիզբն և կատարումն ի մեզ, որպէս նախածանօթ ընտրեալքն *յառաջ քան* զլինիլն աշխարհի. որ այժմ բարի գործովք կատարեսցին ըստ նախասահմանելոյն իւրեանց: - 18. Եւ զի մարդոյ ճանաչումն է՛ այժմ ընդ լինիլ իրին. այլ աստուած ճանաչէ՛ յաւիտենից և *յառաջ քան* զլինիլ իրին: - 20. Ասեմք թէ՝ զբանս զայս ասէ մարգաէն վասն խաղաղութեան որ եղև սակաւ մի *յառաջ քան* զգալուստն քրիստոսի՝ և ի բոլոր ժամանակս քրիստոսի, և յետ նորա խ ամ մինչև ապստամբեցին հրէայքն հռոմայեցւոց տէրութեանն: - 27. Ապա ուրեմն որդի է *յառաջ քան* զկամքն: - 36. Զի թէ կամաւ, կամքն էր ապա *յառաջ քան* զէութիւնն. որ անհնար է և յեղեալքս: - 36. Զի թէ ասեն էր *յառաջ քան* զծնունդն որդի. իսկ էութիւնն հօր հայրութիւն է. և թէ ոչ էր որդւոյ հայր՝ բառնի յէութենէն իւրմէ, իսկ թէ ոչ էր և յետոյ ծնաւ՝ ո՞ւմ արդեօք իցէր հայր. զի ո՛չ էր որդի: - 36-37. Ասելովն ծնունդ ի հօրէ, ցուցանէ ոչ լինիլ *յառաջ քան* զհայր: - 37. ...զի *յառաջ* էր *քան* զմարմնական ծնունդն քրիստոսի բազում ամօք. ապա ուրեմն զառաջին լինելութիւնն ասէ ստեղծուած քան զամենայն եղելոց ասեն: - 40. Իսկ թէ ըստ ինքեան զմարդկայինն, զիա՞րդ ունէր զփառս *յառաջ քան* զլինիլն աշխարհի. զի ինքն ի ժամանակի եղև: - 69. Երկոտասաներորդ՝ այն որ սկիզբն յաշխարհի ունի՝ և ո՛չ է *յառաջ քան* զլինիլն իւր յաշխարհի՝ ո՛չ ասի գալ յաշխարհս: - 73. Նախ՝ զի յընդդիմաբաժանեալ տեսակս սեռի՝ ո՛չ գոյ առաջին և վերջին. որպէս բաժանի կենդանին ի բանականն և յանբանն. և ո՛չ է ասել թէ՝ բանականն *յառաջ* է *քան* զանբանն. այլ զոյգ և համայնք են: - 87. Այլ աստուածային բնութիւնն *յառաջ* է *քան* զմարդկայինն. որք ստեղծողի և ստեղծւածոյ: - 87. Դարձեալ՝ անեղն և անսկիզբն աստուած հայր՝ յինքենէ *յառաջ քան* զյաւիտեանս ծնաւ և բղխեաց զանեղակից որդին՝ և զսուրբ հոգին: - 114. Երկրորդ՝ զի *յառաջ* է *քան* զժամանակս: - 114. Իսկ հոգի ո՛չ է արարիչ ժամանակաց. և ո՛չ *յառաջ քան* զժամանակս. զի ի մէջ ժամանակի՛ է: - 114. Զի աստուած արարիչ է յաւիտենից. և *յառաջ քան* զյաւիտեանս. և գեր ի վերոյ յաւիտենին: - 114. Եւ *յառաջ քան* զյաւիտեանս ծնաւ զբանն: - 116. Զի աստուած նախ քան զգործն՝ և *յառաջ քան* զկամիլն՝ և նախ քան զէանալն տեսանէ...: - 118. Եւ թէպէտ ի յէութիւնս իւրեանց յետոյ, սակայն ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ, գոյին *յառաջ քան* ըզլինիլն իւրեանց էութեամբ, և յետոյ եղեն ըստ նոյն նմանութեան: - 172. Նախ՝ զի ասեմք եթէ աշխարհ *յառաջ քան* զլինիլն իւր գոյր ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ. ապա ուրեմն ո՛չ է յոչ ուրեքէ յոչ երբեքէ: - 173. *Յառաջ քան* զլինիլն աշխարհի աստուած ո՞ւր էր: - 179. Երրորդ՝ տեսակն *յառաջ* է *քան* զնիւթն: - 186. Եւ այնուհետև նուազի որքան *յառաջ* է՛ *քան* զարեգակն և թեքի ի նմանէ: - 187. Եթէ մի և նոյն իմանաս զժամանակն, ապառնին *յառա՛ջ* է *քան* զայլսն: - 198. Բայց ասեն ոմանք թէ՝ յաւուրս մանասէի՝ Նումաս պումիլոս **բ** ամիս յաւել ի տարին հռոմոց. զի *յառաջ քան* զնա՝ **ժ** էր. և յաւել ի նոսա զյունվար և զփետրվար: - 201. Զի ոմանք ասեն զհոգին *յառաջ* գոյանալ *քան* զմարմինն: - 252. Զի որք զհոգի յառաջ ասեն գոյանալ՝ զայս դնեն պատճառ, եթէ յէակքս իմանալիքն *յառաջ* ստեղծան *քան* զզգալիքս. ապա և ի մարդոյն էութիւն հոգին *յառաջ* է *քան* զմարմինն: - 252. Զոր ընդ դերևս հանէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս կազմութեան այսպէս եթէ, որք զհոգին *յառաջ* ասեն գոյանալ *քան* զմարմին. և վասն մեղաց եդեալ ի մարմին մարդոյ. որ է՛ համանման բանականութեամբ. և է՛ իներքոյ երկնային կենաց՝ զի մարմնաւո՛ր է: - 252. Եւ այժմ պատասխանեսցուք այնմ որ ասեն՝ յարարածքս զիմանալիս *յառաջ* ստեղծեալ *քան*

զգգալիս: - 253. Այս քան առ նոսա, որք զհոգի *յառաջ* ասեն *քան* զմարմին: - 253. Իսկ որ զմարմին *յառաջ* ասեն *քան* զհոգի, վկայ ածելով զմովսէս որ ասէ եթէ՝ էառ զհողն և շինեաց մարմին. և յետոյ փչեաց ի նա զշունչն կենդանի, որ է կենդանարար հոգին: - 253. Եւ դարձեալ՝ յիւրաքանչիւր կազմուած մարդոյ՝ *յառա՛ջ* է մարմինն *քան* զհոգին **խ** աւուրբ կամ **ծ**: - 253. Այսպէս և ի կազմուած իւրաքանչիւր մարդոյ ո՛չ է մարմին *յառաջ քան* զհոգի որպէս ցուցանելոց եմք: - 254. Իսկ վարդապետք ուղղափառութեան՝ յանդիմանեալ զերկոսին կողմանց ստախօսութիւն, ո՛չ զհոգի *յառաջ քան* զմարմին ասեն ստեղծեալ, և ո՛չ զմարմին քան զհոգի: - 254. Եւ ի կատարիլ մարմնոյն՝ հեղու ի նա զհոգի բանական ըստ նախատես գաղափարի այնորիկ որ էր ի միտս արարչին *յառաջ քան* զլինիլն աշխարհի: - 258. Այլ հակադարձեալ սոքա ըստ կարգի և ըստ դասու՝ *յառա՛ջ* է տնկականն քան զզգայականն, և նա՛ *քան* զբանականն ի յերևումն. այլ էութեամբ համանգամայն են. որպէս անդ ուրեմն ասացաք վասն հոգւոյ և մարմնոյ: - 260. Ասեմք առ այս թէ, օն ի բա՛ց տար ի մտաց քոց զհեթանոսական կարծիս. զի ո՛չ է հոգի *յառաջ քան* զմարմին. և ո՛չ մարմին նախ քան զհոգի որպէս ի սկիզբն ասացաք: - 260. Վեցերորդ՝ զի *յառաջ քան* զիւր վախճանն ետես զմահ կնոջն և զորդւոյն: - 279. Երկրորդ՝ զի խոնարհ և հնազանդ էր յամենայնի. ուստի մնաց եղբօրն պատարագի. որ իւրն գ ամսով *յառա՛ջ* էր հասեալ *քան* զեղբօրն. այսինքն ծնունդ ոչխարացն քան զպտուղ երկրին...: - 286. Եւ որպէս փարաւօն վասն հեղցուցեալ մանկանցն՝ ջրասոյզ կորեաւ. և *յառաջ քան* զայս՝ **ժ** հարուածովք պատժեցան: - 288. Երկրորդ՝ զմին *յառաջ քան* զջրհեղեղն, և զմիւսն յետոյ. զի ցուցցէ թէ յերկոսին ժամանակս ընտրեալքն հաճոյ եղեն աստուծոյ: - 289. Նա՛խ՝ զի յանդրանիկ տեսութիւնս իւր ընտրեաց զնոսա *յառաջ քան* զլինիլն աշխարհի, և յետոյ զնոյն անդրանիկսն պատուեաց: - 309. Որք **է** ամ ասեն զփորձանսն՝ սոյնպէս թուեն. զի յետ փորձանացն ասէ գիրն **ճհ** ամ. և *յառաջ քան* զփորձն **հ** ամ. և **ը** ամ փորձանացն և դարձին: - 326-327. Յայտ է զի *յառաջ քան* զհարուածն հ ամաց էր. և **լը** ամ եկաց ի հիւանդութեանն. և այսպէս կրկին աճեցին կեանքն որպէս և ամենայն ինչքն: - 327. Եւ նահապետք *յառաջ քան* զօրէնս ի նմա: - 395. Այլ ո՛չ այսպէս. զի ե՞րբ եկաց և մնաց ընդ արև, կամ *յառաջ քան* զլուսին սողոմոն. այլ տէրն նորա: - 421. Երրորդ՝ զի *յառաջ քան* զճենճերիլն ուտէին. իբր *յառաջ քան* զժամ պատարագին: - 425. Եւ մարդեղութիւն փրկչին **ծգ** ամաւ *յառաջ* է *քան* զբան մարգարէիցն: - 451. Իսկ ա՛յլ վարդապետք ասեն, թէ ետ զբնական օրէնս որպէս նոյի և *յառաջ քան* զնա: - 467. Նա՛խ՝ ծնաւ ի հօրէ բանն աստուած *յառաջ քան* զյաւիտեանս անճառ և անպատում...: - 471. Նախ ասի միածին՝ զի նա միա՛յն է համագոյ ծնողին ծնունդ. ըստ որում, «բանն էր ի սկզբանէ առ աստուած». իսկ այլ ամենայն ծնօղ՝ *յառա՛ջ* է *քան* զծնեալն: - 472. Զի նա՛ *յառաջ քան* զյաւիտեանս. և մեք ի ժամանակի: - 472. Զի հերձւածօղք ոմանք օծեալ ասեն զքրիստոս *յառաջ քան* զյղացումն: - 475. Այլ և ո՛չ *յառաջ քան* զյղանալն օծաւ. զի սրբիլ և առաքիլ և իջանել յերկնից ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ մարմին լինիլ և մարմնով երևիլ բանին: - 475. Այլ ա՛րդ՝ *յառաջ քան* զխաչն ո՛չ ապականացու, և ո՛չ ի խաչին, և ո՛չ ի գերեզմանի որպէս մեք խոստովանիմք: - 500. Ասեմք առ այս, եթէ ապականութիւնն առնէ կատարեալ և անապականութիւնն անկատար, ապա ադամ *յառաջ քան* զմեղանչելն անկատա՛ր էր զի անապական էր մարմնով...: - 500. Դարձեալ ասեմք ըստ ձեզ, թէ յետ խաչին յապականութիւն փոխեցաւ մարմինն տն, ապա *յառաջ քան* զխաչն կատարեալ էր զի ապականացո՛ւ էր. և յետ խաչին անկատար զի անապական եղև որպէս դուքդ ասէք: - 500. Ա՛րդ՝ եթէ յանմեղութեանն ապականացու էր ադամ, ապա *յառաջ քան* զմեղքն էր դատապարտեալ ընդ ապականութեամբ: - 501. Զի ցուցանիցէ թէ նոյնպէս եկեր և *յառաջ քան* զխաչն անապական մարմնով: - 501. Եւ շնորհականն հոգևոր. ուր սկսանին ամենայն տօնք սրբոց զ ժամով *յառաջ քան* զբնական օրն: - 508. Իսկ զտէրունական տօնս երեկօրեայ յինն ժամ է աւուրն սկսանեմք. որ է՛ **թ** ժամաւ *յառաջ քան* զհասարակաց տօնս: - 508-509. Եւ ի յայս միտս զտօն ամենայն սրբոց մարտիրոսաց ի մէջ գիշերի սկսանեմք **զ** ժամով *յառաջ քան* զծագումն լուսոյն հասարակ աւուր: - 515. Եւ որ զայլ մասունս օծանէ՝ յա՛յնմ խորհրդոյ է՝ որ *յառաջ քան* զմկրտութիւնն օծանեն այլ ազգք քրիստոնէից: - 593. Զայս ունի խորհուրդ, որ հարսն և փեսայն *յառաջ քան* զպսակն տեսանեն զմիմեանս. և հաւանին սրտիւք և կամօք և ապա՛ պսակին: - 610. *Յառաջ քան* զայլսն հարցանեմ, ո՞րքան է եղանակ աղօթից: - 619. Իսկ ոմանք ևս կատարեալք ամենայնիւ՝ յերեք ժամանակս աղօթեն առանձնակի. մի ի մէջ գիշերի *յառաջ քան* զհասարակաց ժամն. և մի յայգն. և մի ի ցերեկն: - 623. ...վասն որոյ յերկրորդ օրն *յառաջ քան* զամենայն նոցա տօնեմք: - 642. Եւ *յառա՛ջ* է ասելն *քան* զվկայելն: - 643. Զի այն պահքն *յառաջ քան* զգիրս և *քան* զմարգարէս ի նախահարցն

եղաւ: - 650. Ապա և ո՛չ լրումն թուոյն. զի միակն *յառաջ* է *քան* զբազումն: - 662. Արդ՝ ըստ կարգի՝ սերմանքն *յառաջ* են *քան* զարդիւնսն. և նահատակքն *քան* զպսակն. վասն որոյ որք աստ փորձ գտանին, անդ առցեն զպսակն կենաց: - 662-663. Նստցի ի տաճարին զոր շինեսցեն նմա հրէայքն. և ասասցէ թէ, *յառաջ քան* զիս ո՛չ ոք է ճշմարիտ քրիստոնեայ. այլ նեռինք են ամենայնքն: - 707. Այլ արդ՝ երեխայքն որ *յառաջ քան* զմկրտիլն մեռանին, վասն ադամայ մեղացն պատժին: - 724. Նախ՝ *յառաջ քան* զլինիլն աշխարհի՝ որդի ի հօրէ՛ և հայր յորդւո՛յ: - 748. Նախ կոչի հնձան նախածանօթ տեսութիւնն աստուծոյ. ուր ընտրէ՛ և ժողովէ՛ զսուրբս իւր *յառաջ քան* զլինիլն իւրեանց. - 748. Զի թէ և սակաւ ժամ լինի մնացեալ ի կենացն որ քան աւազակին ի յելս շնչոյն. և նա՛ *յառաջ քան* զամենայն արդարս եմուտ ի դրախտն աստուծոյ ընդ տեառն: - 758. Եւ ըստ իմաստասիրին, *յառաջ քան* զմարմինն յորում է զանազանութիւն լուսոյ՝ է՛ միւսն ի վերոյ յորում է միակերպութիւն լուսոյ: - 763. ...իսկ ժամանակն, զի իցէ *յառաջ քան* զկիրս: - 780. Յա՛յտ ուրեմն է յասացելոցս, զի դևք ո՛չ ունին հաւատս վարձաւոր. այլ ունին գիտութիւն նրբահայեաց որով սարսին *յառաջ քան* զտանջանս: - 784

**ՅԱՌԱՋԱԳԱՅԻՄ +** Եւ է սա՛ երկրորդ. զի ի պատճառէ՛ ստեղծման էիցս՝ աստուածաբանութիւնս այս *յառաջագայի*: - 122. Եւ է սա՛ երրորդ ըստ կարգի. զի յերևելեաց և ի մարմնականաց աստուածաբանութիւնս այս *յառաջագայի*: - 122. Ո՞րպէս է զի աստուած պարզ է և աննիւթ, զնիւթականքս յառաջ էած. զի այս է կարգն որ նիւթն ի նիւթոյ, և աննիւթն յաննիւթոյ *յառաջագայի*: - 175. Ութերորդ՝ որպէս ի միաւորիլ հոգւոյ և մարմնոյ *յառաջագայի* ի միոյ կամաց միով զօրութեամբ հանճար և ներգործութիւն: - 478

**ՅԱՌԱՋԱԳԷՏ +** Յաղագս այսորիկ անբան կենդանիք փութապէս զգան զառաջին շարժումն և զփոփոխումն օդոյդ քան զմարդ. և *յառաջագէտ* լինին: - 218

**ՅԱՌԱՋԱԳՈՅՆ +** Մանաւանդ թէ՝ որպէս վասն նեռինն *յառաջագոյն* պատմեցաւ եկեղեցոյ՝ զի զգուշասցին: - 35. Նոյնպէս և վասն սոցա *յառաջագոյն* ասացաւ յառաքելոց և ի վարդապետաց. զի մի՛ յանգէտս խոտորեսցին ընդ նոսա: - 35. Տեղական անկումն եղև դիւաց ի սկիզբն ստեղծման իւրեանց վասն ամբարտաւանութեան և մախանաց ընդդէմ արարչին փառաց. ուստի անկաւ յերկնից ի դասուց հրեշտակաց և ի փառաց իւրեանց որպէս ասացաւ *յառաջագոյն*: - 153. Տասներորդ՝ մէջ և կապ ամենայն գոյիցս մա՛րդն է կազմեալ. զի ամենայն արարածք ի **բ** դէմս որոշին. այսինքն մինն յիմանալի և միւսն զգալի. և սոքա եղեն *յառաջագոյն*: - 231. Եւ թէ ոք ասիցէ, երևի ապա թէ *յառաջագո՛յն* է հոգի քան զմարմին, և յետոյ մասամբ երևի: - 260. Նա՛խ զայս ունի խորհուրդ, զի *յառաջագոյն* ընտրեալքն՝ յետոյ եղեն ի ժամանակի: - 310. Եւ ոմանք ըստ չորրորդ եղանակի ասեն. երեքն *յառաջագոյն* եղեալ, և չորրորդ ծնունդն փրկչին: - 471. *Յառաջագոյն* ամենայն ազգք քրիստոնէից սկսեալ յառաքելոցն այսպէս տօնէին. ի վեցն յունվարի զծնունդն, և ի նմին աւուր զմկրտութիւնն ըստ աւետարանին վկայութեան: - 482. Հնգետասաներորդ, զի բաւական համարեցաւ ի պատիւ կանանց զայն՝ զի *յառաջագոյն* մերձեցաւ ի նոսա ծննդեամբ. իսկ յետ յարութեանն կամի՛ զի ա՛րք նախ մերձեսցին ի նա մինչ դեռ ո՛չ է ելեալ նա առ հայր: - 518. Սոյնպէս և աստ *յառաջագոյն* ասէ վասն վերանալոյն իւրոյ: - 518. Հինգերորդ՝ զի գիտասցեն թէ քրիստոսիւ պարգևեցաւ. թէ *յառաջագոյն* էին ընկալեալ, պարզապէս յաստուծոյ կարծէին զտուչութիւն հոգւոյն և ո՛չ ի քրիստոսէ: - 521. Այսպէս պարտ էր *յառաջագոյն* հօր յայտնի լինիլ և ապա՛ որդոյ և հոգւոյն սրբոյ: - 522. Ի յասացելոցս *յառաջագոյն* այս ինչ հաւաքի, եթէ ունակութիւնք մարդկային առաքինութեանց նախկնաբար պատրաստե՛ն ի վարժումն գործնական կենացն. իսկ ունակութիւնք պարգևացն պատրաստե՛ն ի վարժումն տեսական կենացն: - 586. ...այսպէս և օգոստինոս վարդապետն Ֆռանկաց ի խորհրդոց գիրս **ծա** համարն ասէ, թէ *յառաջագոյն* բաշխեաց զխորհուրդ մարմնոյ և արեանն և տուեալ յուդայի: - 599. ...որպէս ասացաւ *յառաջագոյն* ի թագաւորութեանց **իէ** գլուխն. **ժե** համարն տես: - 603. Որ և զեկեղեցւոյ անունս աստուած կոչեաց *յառաջագոյն*: - 613. ...և բերէր ի խորանն հանգուցանէր. որպէս ցուցաւ *յառաջագոյն* յերկրորդ թագաւորութեանց **ժդ** համարն: - 645. Եւ այլն *յառաջագոյն* ասացաւ **գ** հանգստեան դնելոյ: - 683. Երեսուներորդ, յա՛յտ է յորպիսութեանցն չորից որ ասացաւ *յառաջագոյն* եթէ աստ հոգի մարդոյն է ի մէջ բարեաց և չարեաց. իսկ յետ մահու ի մէջ բարեաց միայն. իսկ ի յարութեանն ի մէջ բարեաց և փառաց: - 694. Ասեմք եթէ՝ այսմ պատասխանի ասացաւ *յառաջագոյն*...: - 696. Եւ որպէս նեռն լինիցի անողորմ քան զամենայն հալածիչս *յառաջագոյն*. - 708. ...նոյնպէս և սուրբք ժամանակին այնորիկ լինիցին զօրեղագոյն քան զամենայն *յառաջագոյն* մարտիրոսսն: - 708. ...եթէ սուրբք որ աստ

չարչարեցաւ, յառնեն *յառաջագոյն* և փափկանան մարմնով **ռ** ամ. և ապա հասարակ յարութիւնն ամենայն մարդկան: - 710. Յոգին սուրբ բերանով սիրելեաց և թշնամեաց *յառաջագոյն* օրհնեաց զարժանաւորս...: - 740. ...այսինքն ի քթթելական մեռանին և յառնեն. զնոսա՝ և *զյառաջագոյն* մեռեալսն դատէ՛: - 740. Եօթն զարդ հարսին որպէս ցուցաւ. և օժիտք յաւիտենիցն կենացն. պսակք և արկանելիք, ասացան մեզ փոքրիշատէ *յառաջագոյն* ի բանից սրբոց: - 761

**ՅԱՌԱՋԱԳՈՒՇԱԿ +** Եւ ի կարմրանալ երկնից ընդ երեկս և ընդ առաւօտս, զերաշտոց և զանձրևոց ի փորձոյ ուսեալք *յառաջագուշակ* լինին: - 536

**ՅԱՌԱՋ ԱԾԵԼ (տ. ՅԱՌԱՋ) +** Երրորդ՝ զի է՛ հնար առնուլ ի վերայ մարմնական իմաստութեանց՝ և արհեստից հանճարաց՝ և բնականին ներգործութեանց ի բնութիւն իրին *յառաջ ածելով* զէութիւնն...: - 40. Պատասխանեմք եթէ՝ թէպէտ հոգին ունի զբնութիւնն ի հօրէ՝ սակայն ո՛չ ծննդեամբ որպէս որդի, այլ բղխմամբ. որպէս շունչն և բանն ունին զէութիւնն հոգւոյն այլ և այլ կերպիւ. և որպէս ադամ *յառաջ էած* յինքենէ զսէթ և զևա...: - 60. Ո՛ր անեղն զեղականքս *յառաջ էած*. զի եղականն յեղականէ՛ և անեղն յանեղէ՛ կարգաւորի: - 113. Նախ՝ եթէ անեղ է աստուած՝ ըստ որում անսկիզբն և անեղ էին արարածք ըստ անգոյին՝ կարգաւո՛ր է և յոյժ որպէս դու ասացեր. զի անեղ էն աստուած *յառաջ էած* զանեղն ի յէութիւն: - 113. Այլ արդ՝ ըստ անեղ էութեանն *յառաջ էած* զանեղ էութիւնն որդւոյ և հոգւոյ. և ըստ անհուն զօրութեանն *յառաջ էած* զեղականն էութիւն. զի անհուն զօրութիւնն կարօ՛ղ է ամենայն ընդդիմակաց. ըստ որում ամենազօ՛ր է: - 113. Ո՞րպէս է զի աստուած պարզ է և աննիւթ, զնիւթականքս *յառաջ էած*. զի այս է կարգն որ նիւթն ի նիւթոյ, և աննիւթն յաննիւթոյ յառաջագայի: - 175. Այլ թէպէտ աննիւթ է աստուած՝ ո՛չ է անկարգ զնիւթականքս *յառաջ ածել* ըստ այսմ օրինակի. զի նիւթն որ է՛ գոյացութիւն մարմնական՝ ունի որակութիւնս իմն մարմնական. որպէս քանակ. որակ. և այլքն: - 175. Զի աննիւթ և պա՛րզ էութիւն է աստուած. և *յառաջ էած* յոչընչէ զաննիւթ էութիւնքս. այսինքն զգոյացութիւն, զքանակ, զորակ, և զայլսն. և իւրով զօրութեամբն ի միասին ժողովեալ կազմեաց մարմնական նիւթ: - 175. Ապա ուրեմն գործ նախախնամութեան է զիւրաքանչիւր ոգի *յառաջ ածել.* և նախատպին պատկերակից առնել: - 258. Իսկ *յառաջ ածեալն* նոր գոյացաւ: - 258

**ՅԱՌԱՋԱԾՈՒ +** Նախ՝ որպէս պատճառ՝ *յառաջածու*՝ և ծնօղ: - 128. Երրորդ՝ զի ինքն ինքեա՛մբ է *յառաջածու*, վասն որոյ կոչի սիրօղ: - 128. Եւ կոչի սէր, զի շարժէ՛ զմեզ. և *յառաջածու* զօրութիւն է. և երևեցուցիչ. և միաւորիչ. զի այսոքիկ սիրոյ ներգործութիւնք են. վասն այն կոչի սէր: - 128

**ՅԱՌԱՋԱՆԱՄ +** Չորրորդ՝ զի ի դևն շրջեալ է տրտնջականն ըստ *յառաջանալոյ* ի բարին: - 151. Ողորմութիւնն *յառաջանայ* ի կամացն. և արդարութիւնն յիմաստութեանցն: - 457. Քանզի ճշմարտութիւնն *յառաջանայ* ընդ խստութեանն: - 459. Նա՛ ևս գերազանցեալ քան զիրեշտակս այսու, զի նոքա ի գոյացական վարձս ո՛չ աճիլ կարեն և ո՛չ նուազիլ. իսկ երանուհի կոյսն կարէր *յառաջանալ* յարդիւնս և ո՛չ նուազիլ: - 463

**ՅԱՌԱՋԱՍԱՑ +** Ասեմք նա՛խ՝ թէ մարգարէքն իբր *յառաջասաց*՝ պատմեցին զմարդեղութիւն բանին և զփրկութիւն մարդկան: - 643

**ՅԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ +** Զի մեծ է *յառաջարկութեան* եզրակացութիւն. և ո՛չ բայիւք, այլ՝ մակբայիւք է փրկութիւն: - 785

**ՅԱՌԱՋ ԲԵՐԵՄ** - Որպէս ասի ներտրամադրեալ բանն պատկեր մտացն. նոյն և *յառաջ բերեալն* բան և թանձրացեալ՝ է՛ պատկեր նորին և հաւասար մտացն: - 93. Զորօրինակ՝ ներտրամադրեալ բանն է՛ նախ ի խորհուրդն կատարեալ. և յետոյ ժամանակաւ լինի *յառաջ բերեալ* և գրեալ բան. և նո՛յն բանն էր *յառաջ բերեալս* և գրեալս որ էր նախ ի խորհուրդն: - 169. Յնգետասաներորդ՝ մի և նոյն գոլով մտանէ ի բուրաստանս, և զանազան գոյնս և համս և հոտս *յառաջ բերէ* : - 207. Նախախնամութեամբ՝ ո՛չ որպէս փտելով կամ ծնանելով զմարմին ի մարմնոց. այլ *յառաջ բերէ* զպատկերն իւր որպէս ինքն գիտէ: - 258. Իսկ հոգի մի է մարդոյ ի միոյ նախախնամութենէ *յառաջ բերեալ*. յանկատար նիւթն եդեալ զտնկականն և զզգայականն. և ի կատարեալն զհոգի բանական ծագեալ: - 259. Եւ բան կոչի ներտրամադրեալն՝ և *յառաջ բերեալն*: - 297. Զոր օրինակ, ներտրամադրեալ բանն մի է՝ և *յառաջ բերեալ* բազմանայ ի լսելիս և ի գիրս: - 529. Եւ բանն կրկին է. այսինքն ներտրամադրեալն և *յառաջ բերեալն*. - 612. Եւ որպէս զմարմինս մեր ընդունին յաւանդ, նոյնպէս և զգործս մեր խնդրէ ի սոցանէ և *յառաջ բերեն*: - 714. Այսպէս **դ** տարերք զչորեքին գործս մեր ընդ էութեանս ունին յաւանդի և *յառաջ բերեն*: - 714. Եւ որպէս կարելի է քեզ ի քում ափիդ զսերմանս զանազանել, և զեդեալն ի շտեմարանս քո յիւրաքանչիւր անկեան *յառաջ բերել...:* - 718

**ՅԱՌԱՋ ԳԱԼ (տ. ՅԱՌԱՋ) +** Վեշտասաներորդ՝ զի թէ չարն է յաստուծոյ որպէս բարին, և երկուցն սկիզբն է աստուած, և արդ՝ եթէ միևնոյն է սկիզբն երկուցն, անկարելի է ներհակացն ի միասին ունիլ մի սկիզբն. զի լինէր սկիզբն այն ո՛չ պարզ. այլ երկատեսակ. և ո՛չ միեղէն՝ այլ բաժանեալ և այլայլեալ. նաև լինէր ինքն ինքեան հակառակ, և *յառաջ եկելոցն* ի նմանէ: - 14. Ութևժերորդ՝ զի թէ չարնէ յաստուծոյ, այս լինի կամ հակակայութեամբ *յառաջ եկեալ*. որպէս սպիտակն յո՛չ սպիտակէն. կամ բաղդատութեամբ. որպէս կենդանին ի կենդանւոյ: - 14. Ասեմ զառաջինն եթէ՝ չար ո՛չ է յաստուծոյ. զի աստուած բարի՛ է բնութեամբ. և ի բարւոյն չար ո՛չ *գայ յառաջ*. որպէս ո՛չ ի լուսոյն խաւար: - 16. Այլ և ո՛չ ի բնութենէ. զի բնութիւնք ամենայն հրեշտակաց կամ մարդկան բարի՛ են ի բարւոյն *յառաջ եկեալ*. այլ չարն է՛ յանձնիշխան կամաց եկամուտ ի բնութիւնս: - 16. Ուստի հեշտութիւն և աւանդութիւն յիրաւի խառնեալ ընդ միմեանս, և հակառակասիրութիւն և ինքնահաճութիւն *յառաջ եկեա*...: - 33. Յա՛րց դու զնոսա՝ թէ դու ի քո հօրէն *յառաջ եկեալ* կամա՞ւ ծնար թէ ակամայ: - 36. Իսկ արիոսի՝ զի նա միայն զհա՛յր ասէր աստուած. զայս ասեմք թէ, ո՛չ են մեզ երեք աստուածք՝ այլ մի աստուած և երեք անձինք. և երկուքն ի մի և ի նոյն էութենէն *յառաջ եկեալ*. կամօք մի և զօրութեամբ մի: - 54. Իսկ թէ անկար, և *յառաջ եկեալքն* ի նմանէ անկար. և ո՛չ ոք ի նոցանէ աստուած: - 62. Դարձեալ հարցանեմ, յանսկզբնէ՞ն բղխէ հոգին, թէ ի սկզբնաւորէն. զի որ յանսկզբնէն *յառաջ գայ*, է՛ անեղ և անվախճան. որպէս որդի և հոգի յանսկիզբն հօրէ: - 63. Իսկ թէ ի սկսելոյն *յառաջ գայ*, է՛ եղեալ և արարեալ. որպէս արարածք ամենայն որդւով և հոգւով եղեն: - 63. Իսկ թէ յանսկզբնէն և ի սկզբնաւորէն *յառաջ գայ* հոգին, լինի անեղ և եղական որ է մակեղոնեան և ծանր հայհոյութիւն: - 63. Նախ՝ զի խօսքն է ի մտացն *յառաջ եկեալ*, որպէս ներտրամադրեալ բանն ծնեալ. և հոգին սուրբ ի հօրէ բղխեալ. որպէս բանն ծնեալ: - 66. Ապա ուրեմն մի՛ է ներգործութիւնն ի միոյ կամաց միոյն քիստոսի *յառաջ եկեալ* և գործեալ: - 85. Չորրորդ՝ հասարակ է ի միոյ բարերար կամաց *յառաջ եկելոց* հաղորդեալ անհաղորդաբար ըստ համեմատութեան: - 106. Վասն որոյ մարդ եղև, զի զբոլորն յինքենէ *զյառաջ եկեալն* յինքն միաւորեսցէ: - 107. Յինգերորդ՝ բազմանայ ի նախկինս և ի սկզբնաւորս. և բազմապատկի յածանցեալս ի նոցանէ և *յառաջ եկեալս*: - 110. Զի ի բարւոյն եմք *յառաջ եկեալ*. և ի բարին հաստատեալ. և ի բարին կատարիմք: - 128. Զի մի՛ է ծայնն *յառաջ եկեալ* յասողէն. իսկ լսօղք՝ առաւել և նըւազ ընդունին: - 131. Վասն երկրորդ մի՞ է թէ բազում, ասեմք եթէ՝ ի սկիզբն մի է ըստ էութեան ի միոյ պատճառէ՛ *յառաջ եկեալ*. և ի բազումս բազմացեալ ըստ որակութեան. որպէս է արփեան և ըստ աստիճանաց: - 140. Յասարակութիւն է, Նախ՝ զի ի միոյ բարերար կամաց *յառաջ եկին* գործ արարչութեան...: - 157. Ուստի տարերք և տարրեղէն մարմինք խառնեցան և *յառաջ եկին* ի մի և ի նոյն նիւթոյն: - 175. Եւ այսպէս ի նոցա խառնուածոց լինի գոյացեալ մարմին և *յառաջ եկեալ*: - 181. Եւ *յառաջ գամք* յերկիր. և ապա՛ ելանեմք յերկինս: - 230. Այսպէս և այժմ իւրաքանչիւրքն *յառաջ եկեալ* համանգամայն գոյութեամբ, լնուն զայն թիւն՝ որ նախ էր ի տեսութիւննն աստուծոյ: - 254. Նախ՝ զի ի կենդանի մարմնոյ է *յառաջ եկեալ*: - 256. Երկրորդ՝ զի կենդանի է և *յառաջ եկեալն*: - 256. **Եւ իւրաքանչիւր ոք ծննդեամբ *յառաջ եկեալ* առնու զնոյն պատկերին շնորհ ի ծագմանէն աստուծոյ. և լնուն զնոյն թիւ որքանութեան զոր ետես աստուած նախքան զլինինլն աշխարհի որպէս ասէ առաքեալն:** - 258. Դարձեալ՝ պատկեր է հոգիս մեր. զի բանն և շունչ կենդանութեանն ի նմանէ՛ *յառաջ գայ*: - 273. Եւ հերքն *յառաջ եկեալ*՝ անզգա՛յ է. ո՛չ հեշտանայ և ո՛չ ցաւի: - 390. Այս է՝ ի միոյ բարի էութենէն աստուծոյ *յառաջ գայ* արարչական և արքունական զօրութիւն. իբր աջ և ահեակ ձեռն: - 403. Եւ օրհնութիւն, զի յօրհնել բերանոյ նորա՝ *յառաջ եկն* առ որ բերան ի բերան խօսեցաւ աստուած դէմ յանդիման և ո՛չ առակօք: - 407. **Եօթներորդ՝ բանին էր պատշաճ պատմել զհօրէ. և երևիլ մեզ. որպէս ներտրամադրեալ բանն *յառաջ գայ* և լինի բարբառ և գրեալ ի քարտիսի, երևի և շօշափի:** - 468. Ամենակատար և անշփոթ մարդանալովն ըստ մեզ մարդասիրապէս՝ ի բնութիւնս մեր տեսակացեալ, և առ բաժանականս մեր անայլայլաբար ըստ բնութեան միոյ *յառաջ եկեալ*: - 477. Զմիս կենդանւոյ, որ կատարեալ կենդանի է և ի կենդանւոյ *յառաջ եկեալ*. այն է կատարեալն որ **Ե** զգայարանս ունի և շարժի և շունչ ունի. և է՛ այս կերակուր ուտեաց և զատկի: - 510. Այլ որ **ԾԾ** ամաւ *յառաջ եկին* ի հայր՝ ասորիք արք քաջաբանք, և կամեցան սերմանել զաղանդն նեստորի. որք նզովեալ որոշեցան. բայց ոմանք ընկալեալ էին և թարգմանեալ ի նոցանէ գիրս սուտս, Զգօրտոսակ. Զկիրակոսակ. Զպղի տեսիլն: - 545. Այսպէս *յառաջ գան* ի վեց շարժմանց **Ը** խորհուրդք: - 560. Յոյսն է ստոյգ ակնկալութիւն հանդերձեալ երանութեանն. *յառաջ եկեալ* ի շնորհացն աստուծոյ և ի յատուկ արդեանցն: - 573. Եւ առաջին ծնօղն ուստի *յառաջ*

*եկին* դ ծնունդքն. և **ե** երրորդն որ լինի խնամութիւն. լինի այս **զ** ազգ: - 611. Արդ որպէս ի սրտէն *յառաջ գայ* հեշտութիւն մեղաց, շնութիւն՝ ագահութիւն՝ և այլն. որպէս աւետարանն հրամայէ: - 619. Երկրորդ, հայի՛ առ ի մի և նոյն բարերար կամացն *յառաջ եկեալ* գործքն. աստուածային՝ արարչական՝ և արքունական. որ է գործ ստեղծման և նախախնամութեան: - 746. Ասեմք եթէ՝ բնութեամբ բարին մի է. որպէս ասէ մեծն դիոնէսիոս. այլ ներգործութեամբ բազում է ի զանազան կամաց *յառաջ եկեալ*: - 758. Եւ յայս անկեալ որդիս ծնաւ ապականացու և մահկանացու ի նմանոյն *յառաջ եկեալ*: - 776. Եւ արմատ ծառոյն գոսացեալ՝ չորանան և *յառաջ եկեալ* ստեղունքն: - 776

**ՅԱՌԱՋ ԴՆԵՄ** - Իմանալի է իմացողն. իսկ իմացական իմացեալն. զի իմացականն սնունդ և *յառաջ եդեալ* է իմանալւոյն: - 130. Նա՛խ՝ զի *յառաջ եդեալ* նմա՝ լո՛յսն է որ է վերին տարր. և լսելեացն օդն: - 235. Նախ՝ բնական. զի *յառաջ եդեալն* աչացն անփոփո՛խ է իրօք. և ականջին ձայնն և բանն փոփոխական: - 239. Նա՛խ՝ զի *յառաջ եդեալ* հանճարոյն է՛ ճշմարիտն. և *յառաջ եդեալ* կամացն բարին: - 572. Եւ զի *յառաջ եդեալ* հաւատոյն է՛ ճշմարիտն. վասն այն հաւատն է՛ յիմացումն որպէս ի ենթակայս. և *յառաջ եդեալ* յուսոյն և սիրոյն է բարին, վասն այն յոյսն և սէրն են ի կամքն որպէս ի յենթակայս: - 572

**ՅԱՌԱՋԵՄ, ՅԱՌԱՋԻՄ +** Ա՛յսպէս և որ ի հանդերձեալն լինելոցն է՝ ունի կրկին զօրութիւն լինելոյ և ո՛չ լինելոյ. և հանդեպմամբ մինն *յառաջէ* ի նոցանէ և լինի ներգործութեամբ: - 9. Զի նախախնամութեամբ բազում բարիս *յառաջած* է ի չարէ. որպէս սատանայի թոյլ տայ, զի փորձեսցին բարիքն և յաւելցին պսկքն: - 17. Դարձեալ՝ փորձիչս այս փառասիրութեամբ *յառաջեաց* առ քրիստոս. ուստի և ի բանից իւրոց երևի թէ ամենայն պատուիրանացն պահպանող եմ. զոր տէրն պակաս լինել յանդիմանեաց: - 47. Հինգերորդ՝ ի բանէն կրկին էութիւնք *յառաջեցան*. այսինքն իմանալի և զգալի. զի թէ միայն ի հրեշտակաց էր առեալ՝ պակասէ՛ր զգալին. և թէ ի կենդանեաց՝ պակասէ՛ր իմանալին: - 107. Այլ արդ՝ շնորհքն ըստ իւրում ինքնութեան է՛ անեղ՝ յանեղ է էն *յառաջեալ*, և նախախնամաբար եղելոցս հաղորդի, և յիւրմէ էութենէն ո՛չ փոփոխի: - 140. Վասն որոյ գիշերն *յառաջէ* տունջեան մինչ ի կատարած: - 194. Երրորդ՝ զի զդէմս ունիցիմք միշտ ի յերկինս. և զթիկունս յերկիր. և հանապազ ի բարին *յառաջեմք* ոտիւք և ձեռօք և ո՛չ դառնամք ի չարն: - 234. Իններորդ՝ ա՛նդ են բերան և լեզուն. ուստի ներքին կիրք հոգւոյն և ամենայն բարութիւնք *յառաջեն* ի մեզ: - 234. Նախ ասեն ոմանք, եթէ ուղեղ գլխոյ անբանիցն ընդ խելապատակին ունի չորութիւն և հովութիւն. և ջիլքն ի նմանէ *յառաջեալ* յանդամս մարմնոյն՝ փութապէս պնդէ՛ և տայ շարժիլ: - 266. Իսկ մարդոյն ուղեղն գէճ է և հով. զի նկարեսցէ յինքն զիմացումն մտացն. և ջիլքն *յառաջեալ* ի նման վասն գիճութեան ո՛չ կարէ պնդել զանդամսն. վասն որոյ ո՛չ կանգնի և ոչ գնայ: - 266. Դարձեալ՝ գութն բովանդակ և կատարեալ սէրն է. և ողորմութիւնն մասնաւոր. զի ողորմութիւն ի գթո՛յն *յառաջի* և սփռի ի մեզ: - 351. Բաղաամ մո՛գ էր և կախարդ. և սովո՛ր էր ընդ դևս խօսիլ. վասն որոյ *յառաջեաց* աստուած և խօսեցաւ: - 387. Եւ տարածայնութիւն թուոցդ յայնմանէ լինի, որ ձգ ամաւ *յառաջեաց* բանն աստուած ի մարդանալն քան զնշանակութիւնս մարգարէիցն: - 449. Բարերար և բնութեամբ բարի է աստուած. ուստի ի բարերարութեանն նորա *յառաջե՛ն* առ մեզ գործ ողորմութեան և գործ արդարութեան...: - 457. **Չորրորդ՝ մկրտութիւնն յովհաննու որ մկրտէր ի յապաշխարութիւն. զի կարասցեն ընդունել զհոգւով մկրտութիւնն. վասն այն *յառաջէ՛ր* և սրբէ՛ր ջրովն:** - 488. Ուստի *յառաջեն* ամենայն խորհուրդք այսպէս: - 560. Եւ պա՛րտ է գիտել զի ի միոյ սեռէ բարութեանցն աստուծոյ՝ *յառաջե՛ն* առ մեզ ողորմութիւն և արդարութիւն. կրկին տեսակ կամ գործք կամ զօրութիւն. որպէս ի մեզ երկոքին ձեռք մարմնոյ. և որպէս իմացումն և կամք հոգւոյ: - 745

**ՅԱՌԱՋԸՆՏՐՈՒԹԻՒՆ +** Այսպէս է նախասահմանումն աստուծոյ և *յառաջընտրութիւնն*. և ո՛չ առնէ հարկ ի վերայ ումեք: - 20

**ՅԱՌԱՋԻԿԱՅ (տ. ԱՌԱՋԱԿԱՅ) +** Հինգերորդ՝ զի հոգևոր բնութիւնն միանգամ միայն է շրջելի. վասն զի բոլորովին շրջէ զինքն՝ զոր ո՛չ առնէ մարդն. զի մարմինն միշտ մարտնչի ընդ հոգին. որպէս *յառաջիկայդ* ասի **լբ** գլուխն: - 151. Եւ զայլ քննութիւն զենմանն գտցես *յառաջիկայդ* ի **խե** համարն: - 296. Չորրորդ, մահ՝ այսինքն սատանայ որ յաղթեաց ադամայ. իսկ մարմնոյն մովսէսի ո՛չ կարաց յաղթել հրեշտակային օգնականութեամբն. որպէս ասի *յառաջիկայդ*: - 409. Եւ ի մեծի ուրբաթի խաչին, լուսինն ընթացաւ և ձգեցաւ յարևն, և յետս դարձաւ. որպէս ցուցանի *յառաջիկայդ* առ խաչելութեամբն ի **լ** գլուխն ի **իզ** համարն: - 416. Զի սա՛ ի կանոնաց թեթևացեալ է որպէս *յառաջիկայդ* ցուցանի ի խոստովանութեան ճառն: - 432. Յասիցելոցս ո՛չ ոքն յարմարի միաւորութեան փրկչին. բայց միայն

երրորդն առաջնոյն. այսինքն էութիւն առ էութիւն անշփոթ խառնումն. որպէս հոգւոյ և մարմնոյ. զոր և *յառաջիկայդ* ցուցցի: - 476. Եւ վասն հիւանդութեան ասասցի *յառաջիկայդ* ի **լզ** գլուխն ի **բ** համարն գիտ: - 531. Իսկ վասն շինուածոց ասացեալ է *յառաջիկայդ* ի **լե** գլուխն, ի **լէ** համարն: - 532. Եւ այլ բազում ինչ ունիմք հաւաստութիւն. որպէս ցուցանի *յառաջիկայդ* ի **լը** համարն: - 533. Եւ անապական պատարագեմ զքրիստոս որպէս կանոնքն է առաքելոցն և կղեմայ. և դու ապականես ջրով և զայլն որպէս *յառաջիկայդ* ասացի: - 548. Չորրորդ՝ զտօն սրբոցն *յառաջիկայն* անցուցանել օր: - 553-554. ...որպէս ցուցանի *յառաջիկայդ* բազում վկայութեամբ: - 670. ...ասացեալ եմք ի հարցմունքն գէորգեայ *յառաջիկայդ* տես ի **բ** համարքն: - 686. ...են հոգիք նոցա ի միում խորանի մինչ դատաստանն ընտրեսցէ զնոսա և որոշեսցէ. որպէս ցուցանի *յառաջիկայդ*: - 687. ...որպէս յա՛յտ է *յառաջիկայդ* ի զանազան վկայութեանց վարդապետաց սրբոց և ի հին և ի նոր աստուածաշունչ կտակաց: - 691. Նա՛խ՝ զի ընդ դէմ է սուրբ գրոց և ուղղափառ վարդապետաց որպէս ցուցանի *յառաջիկայդ*: - 698. Այլ և վասն դժոխոց ասացաւ ի վերոյ ի մարդեղութեան ճառն. ասի և *յառաջիկայդ* ի կատարածի: - 705. ...և սուրբքն ելեալք ի մարմնոյ և յաղթեալք թշնամոյն՝ թագաւորեն ընդ քրիստոսի որպէս ցուցանի *յառաջիկայդ*: - 706. Նմանապէս և մերկ մարմին մեռելոյ ո՛չ յառնէ մերկ, այլ փառօք. որպէս ցուցանի *յառաջիկայդ*: - 720. ...այսպէս և ննջեցեալք ամենայն ծեր և տղայ՝ յառնեն ի մի չափ հասակի երեսնամեայ որ է կատարեալ հասակ որպէս ցուցանի *յառաջիկայդ*: - 721. Իսկ զի նիւթ խաչին մնայ ըստ ոմանց՝ այս ո՛չ է ըստ բնութեան կարգի, այլ սքանչելեաց հարկի որպէս ցուցանի *յառաջիկայդ*: - 727. Եւ ըստ ոմանց կարծեաց զի տեղիք լիցին երեսնաւոր արդարոցն. որպէս ցուցանելոց եմք *յառաջիկայդ*: - 727. Իսկ գիր և դպրութիւնքն *յառաջիկայդ* ասացի: - 729

**ՅԱՌԱՋՈՒՍՏ +** Հինգերորդ՝ ընտրելի է մասն որ է հատումն գլխոյ. *յառաջուստ* ուր են շնչերակքն՝ արիւնն և այլքն: - 366. Եւ թէ *յառաջուստ* զգայութեանց, զհաւատն ընդ դէմ դիցես և ո՛չ սխալիս: - 770

**ՅԱՌԵԼ +** Զորօրինակ ո՛չ է անզգուշագոյն *յառել* ի բոլորակս արեգական՝ զի շրտնու և ի սակաւուն զոր ունի...: - 24

**ՅԱՌՆԵԼ +** Երրորդ, զի թէ է՛ ամենայն ի հարկէ, ո՛չ լինի անձնիշխան կամաց գործք. որ հաւասար է յերկոսինն. այսինքն *յառնել* և յո՛չ առնել: - 8. Իսկ թէ առանձնապէս մարդոյն, զիա՞րդ սոսկ մարդ իւրովի մեռանի, և իշխանութեամբ իւրով դարձեալ *յառնէ* : - 70. Ընդէ՞ր ապա զնորա մարմինն ճաշակեմք. և ի նա մկրտիմք և նովաւ *յառնեմք* և այլն ևս: - 95. Նոյնպէս և *յառնել* մարդոյն և յանուն դնելն կենդանեաց՝ փառս ետուն աստուծոյ. իսկ նա լռեաց: - 147. Որև մեծ ի կատարածն դարձեալ *յառնելոց* է ի վերայ մարդկան ի ձեռն նեռինն: - 148. Արեգի. որպէս թէ *յառնեն* բոյսք և բանջարք աստուածային հրամանաւն: - 201. Ահկի. այսինքն ահ անկանի ի *յառնելն* գետոց և թուլանալն ձեան: - 201. Ի գործոյն, որպէս սողուն ի սողալոյն. ի շողոքորթելոյն շունն. ի հեզոյն եզն. *յառնելոյն* առիւծ: - 220. Եւ այս հասակաւ և չափով *յառնելոց* եմք առ հասարակ: - 265. Դարձեալ՝ դիւրաւ անկանի, և դժւարաւ վերստին *յառնէ*: - 275. Նա՛խ՝ զի *յառնէ՛* իւրմէ առաւ: - 276. Եւ թէ՝ ի յարութեանն ո՛չ *յառնեն* մեռեալք: - 289. Զի ո՛չ *յառնէ* կամ ի սերմանէ այլ կուսական ծնունդ: - 305. Նոյնպէս և ամենայնքն մեռանիմք և ամենայնքն *յառնեմք*: - 314. Ըստ կարգի է, զի նոյն հոգի և նոյն մարմին *յառնէ*: - 314. Այս է՝ **է** զօրութեամբ հոգւոյն և **ե** զգայարանօք մարմնոյ մեռանիմք և *յառնեմք* **գ** կատարելութեամբ: - 315. Մետասաներորդ՝ *յառնելոյն* կոչի առիւծ. իբր առից գնացից անհոգ յայլմէ: - 315. Վեշտասաներորդ՝ զառիւծ ննջեալ ոչ ոք իշխէ զարթուցանել. զի իւր կամաւ ննջէ և *յառնէ*: - 316. Եօթնևժ, և ի *յառնել* առիւծուն սարսին ամենայն կենդանիք որդիք ջուրց: - 316. Եւ ի *յառնել* տեառն մերոյ ի գերեզմանէն՝ սարսեցին ամենայն թշնամիք նորա որդիք անդնդոց: - 316. Իննևժ, ո՛չ *յառնէ* առիւծն ի տեղւոջէն մինչև հնազանդէ՛ զթշնամիս իւր: - 316. Երրորդ՝ ի *յառնելն* զարարածս լերամբք և բլրօք. զի լերինք և բլուրք, հիմունք և բրգունք են աշխարհի...: - 319. Դարձեալ՝ ծնանիմք վերջին հրով. և *յառնեմք* ի հողոյ յարութեամբ: - 353. Զի երեսնամեայ *յառնեմք*. զոր և լուսինն նուազի և դարձեալ լուսաւորի: - 399. Երկրորդ՝ նշանակէր կրտսեր եղբայրն զքրիստոս զերկրորդն ադամ. որով *յառնեն* մարդիկ յերկրէ: - 402. Երկրորդ՝ նշանակէ զմահ և զյարութիւն մեր. որ **լ** ամեայ *յառնեմք*. որպէս ադամ **լ** ամեայ ստեղծաւ: - 411. Եօթներորդ՝ զի թէ ճշմարտապէս սամուէլ *յառնէր*, ո՛չ կամէր կինն. զի կորուսիչ էր նոցա. այլ գիտէր որ նմանութիւնն էր սամուէլի: - 428. Ապա յայսմ ամենայն է յա՛յտ է՝ զի ոչ ինչ գիտեն զառաջիկայն դևք. և ո՛չ իմանան զներկայական խորհուրդս. և ո՛չ *յառնեն* մեռեալք. այլ սուտ կերպարանին: - 430. Իսկ կենդանիք զենեալ *յառնէ* միայն կերակրելիք են. այլ ի կնոջէ ո՛չ: - 511. Իննևժ՝

պատշա՛ճ էր ի մէջ գիշերի *յառնել*. զի ի նոյն ժամն սկսանի արեգակն բարձրանալ, և յառաւօտն ծագէ՛ առ մեզ: - 515. Եւ մեք ի հասարակ յարութեանն երեսնամեայ *յառնելոց* եմք: - 516. Իսկ ներելի մեղքն է յանցանք փոքրագոյն. քանզի ի մանկունս յետ մկրտութեան նախ *յառնեն* ներելիքն, և ապա՛ մահու չափքն: - 567. Բարկութիւն է ցասումն հոգւոյ. որով ոք ընդ դէմ այլոց *յառնէ*: - 570. Իսկ *յառնելն* մեր ի յօրհնութիւն, նշանակէ նախ ի մեռելութենէ մեղաց և ի ծառայութենէ *յառնելն*: - 627. Երկրորդ, ընդ քրիստոսի *յառնելն* ի գերեզմանէ: - 627. Երրորդ, ի յարութեանն յորժամ փողն գոչէ՝ *յառնեմք* և յառաջ ընթանամք քրիստոսի: - 627. Քսանևմի, Յամանգամայն *յառնեմք.* և վասն կերակրոյ. և կերեալ մարդոյ ի գազանաց: - 660. Քսանևե, Թէ ամենեքեան *յառնեմք*. և ամենայն անդամօք: - 660. ...և յետ մահու կարեմք *յառնել*...: - 675. ...և յետ յարութեանն ո՛չ կարեմք մեռանիլ և *յառնել*...: - 675. Նմանապէս հետևի զի մարմինն ո՛չ կրեսցէ տանջանս. զի ո՛չ *յառնէ* ըստ նոցա կարծեացն: - 694. Իսկ կոչելն *զյառնելն* ի մեռելոց ցուցանէ. հոգւոյն և մարմնոյն միաւորեալ: - 696. ...մինչ խօսիլ տայ բագնեաց, և լերանց գնալ, և ծառոց ծաղկիլ և չորանալ. և մեռելոց *յառնել*. և հրոյ իջանել յերկնից. և չար հոգւովն խօսիլ տայ այլ և այլ լեզուս: - 708. ...եթէ սուրբք որ աստ չարչարեցան, *յառնեն* յառաջագոյն և փափկանան մարմնով ռ ամ. և ապա հասարակ յարութիւնն ամենայն մարդկան: - 710. Երրորդ, ասեն թէ միովն զարթուցանէ որպէս ի քնոյ. և միովն *յառնեն*. - 713. ...իսկ թէ մարդս ոչ *յառնէ*, աշխարհ անկատար մնայ. զի բոլորն մասամբն է կատարեալ: - 715. Այս զյարութիւնն ասէ ի ձեռաց գազանաց խնդրելն. զի *յառնեն* մարմինք որ մեռեալ են ի ձեռն գազանաց: - 715. Այլ ոմանք ասեն թէ յարութիւն է այնմ որ անկաւ՝ վերստին *յառնել* ի կենդանութիւն յաւիտենական անմահ: - 716. Նա՛խ՝ զի կարէ՛ որ *յառնել* միանգամ և դարձեալ մեռանիլ: - 716. Երկրորդ՝ է՛ յարութիւն զի *յառնէ* ոք միանգամ և այլ ո՛չ ևս մեռանի. և յարութիւնս այս կատարեալ է: - 716. Եւ այսպէս սահմանի եթէ յարութիւն է այնմ որ անկաւ մարմնաւոր մահուամբ՝ վերստին *յառնել* անմահութեամբ ի կեանս յաւիտենականս: - 716. Վասն է՞ր ի վերջին ժամանակս *յառնեմք* համանգամայն: - 716. Այլ արդ՝ թէ օրըստօրէ *յառնէր* իւրաքանչիւր ոք, հաւատ յարութեանն խափանէր. զի հաւատն ոչ երևելեացն է: - 717. Նա՛խ՝ եթէ համանգամա՛յն է յարութիւնն ի նոյն կէտն, այլ ննջեցեալքն նա՛խ *յառնեն* և ապա՛ կենդանիքն ընդ նոսա: - 717. ...զի ննջեցելոցն միայն մին գործ է. այսինքն յարութիւնն. իսկ կենդանեացն մահն և յարութիւնն. զի նախ մեռանին ի նոյն կէտն և ապա՛ *յառնեն*: - 717. Կերակուրս զոր ուտեմք՝ *յառնէ՞* ի մարդն թէ ոչ: - 718. Գիտելի է, զի ոմանք ասեն թէ կերակուրս զոր ինչ ուտեմք ո՛չ *յառնէ* ի մարդն...: - 718. Ապա թէ կերակուրքս այսուքիկ *յառնեն* ի մարդն, լինի մարդոյ մարմինն կարի անհեթեթ: - 718. Եւ դարձեալ՝ ո՛չ միայն մարդոյս մարմինն, այլ և անշնչից և շնչաւորաց զոր ինչ ուտեմք *յառնէ՛* ասեն որ է՛ անպատշաճ: - 718. Ասեմք առ այս թէ՝ են նիւթ ի մարդն որ *յառնեն* և են որ ո՛չ: - 718. ...և նիւթ կերակրոյն՝ այն մասն որ փոխեցաւ ի գոյացութիւն մեր՝ *յառնէ՛*. զի մարմին եղև մարդոյն այլ աւելորդքն ո՛չ *յառնեն*: - 718. Զի թէ սկզբնական նիւթն միայն *յառնէ*, մարմին մարդոյ ամենևին փոքրիկ և անկատար լինի: - 718. Ապա ուրեմն կենդանեաց մարմինն ոչ *յառնէ* ի մեզ ըստ բոլոր նիւթոյն, այլ ըստ չափոյ զօրութեանն որ փոխեցաւ ի մեզ և եղև մարմին մարդոյ, ա՛յն մարմինն *յառնէ*: - 718. Մարմին մարդոյն զոր եկեր ձուկն՝ ո՛չ *յառնէ* ի ծնեալ մարդն այլ ի կերեալն: - 718. Այսպէս և թէ ոք զմարդոյ մարմին ուտէ և ծնանի ա՛յլ մարդ, մարմին մարդոյն ո՛չ *յառնէ* ի ծնեալ մարդն և ո՛չ ի ծնօղն որ եկեր, այլ ի կերեա՛լն մարդ: - 718-719. Նոյնպէս և նիւթն սկզբնական ո՛չ *յառնէ* ի ծնօղս որ աւելորդ արտահոսումն է նոցա. այլ *յառնէ* ի ծնեալ մարմինն որոյ հիմն է շինուածոյն: - 719. Նմանապէս և կողն որ առաւ յադամայ և շինեցաւ կին, ո՛չ *յառնէ* ի յադամ, այլ ի յեւա. որոյ հիմն կազմութեան եղև փոխանակ սերման: - 719. Այսպէս և հողն ուստի շինեցաւ ադամ, ո՛չ մնայ ի տարերս. այլ *յառնէ* ի յադամ որ սկիզբն եղև գոյութեան նմա: - 719. Նմանապէս և մարմին մարդոյ առ հասարակ մեռանին և ի հող լուծանին և յայլ տարերս. և յորժամ *յառնեն*՝ ո՛չ ունին ի հասարակ տարրէ ընդ ինքեանս. և այս մարմին ի յայն մարմնոյ ոչ ինչ ունի խառնումն: - 719-720. Ո՞րպիսի մարմնով *յառնեն* մեռեալք: - 720. Եւ դարձեալ ոմանք հերձուածօղք ասացին թէ՝ այս մարմինս ո՛չ *յառնէ* և ո՛չ այս մարդ որ մեռանի. այլ փոխանակ նորա նոր մարդ *յառնէ*: - 720. ...նմանապէս և մերկ մարմին մեռելոյ ո՛չ *յառնէ* մերկ, այլ փառօք. որպէս ցուցանի յառաջիկայդ: - 720. ...և մարմինն մեռեալ առաւել նոյն ինքն *յառնէ*. այլ ո՛չ թէ նմանն մեզ ըստ ազգի մերում...: - 720. ...այսպէս և ննջեցեալք ամենայն ծեր և տղայ՝ *յառնեն* ի մի չափ հասակի երեսնամեայ որ է կատարեալ հասակ որպէս ցուցանի յառաջիկայդ: - 721. Նոյնպէս և մարմինք մարդկան մերկ թաղին՝ այլ մերկ ո՛չ *յառնեն*. բայց գեղեցիկ յոյժ և պատուական զգեստով զարդարեալ: - 721. Վասն այսորիկ ասեն վարդապետք թէ՝ սրբոցն և անսրբոց **բ** իրք

հաւսարա՛կ է. այսինքն յարութիւնն զի առհասարակ *յառնեն*. և անմահութիւնն զի առհասարակ անմահ և անապական մարմնով *յառնեն:* - 723. Եւ որպէս այժմ հոգով և մարմնով զմահկանացու կեանս վայելեաց, նոյնպէս և յայնժամ հոգւով և մարմնով զանմահ կեանս ժառանգեսցէ. վասն այն *յառնէ*: - 724. Ամենայն մարդ *յառնէ՞* ի մեռելոց թէ ոչ: - 724. Ասեն վարդապետք թէ ամենայն մարդ *յառնէ՛*: - 724. Ո՛չ յարիցեն ամբարիշտք ի յարութիւնս հոգևորս. այսինքն ի մեղաց ի շնորհքն. այլ *յառնեն* մարմնով: - 724. Ամե՞նայն անդամօք *յառնեն* թէ ոչ: - 725. Ասեն վարդապետք թէ՝ բոլոր ամենայն անդամօք *յառնեն* անթերի: - 725. Զի եթէ մազն որ է գեղեցկութիւն մարմնոյն *յառնէ* ...: - 725. Եւ թէ ոք ասիցէ՝ բազում անդամք են ի մեզ լցեալ աղտեղի ապաւառով՝ և նոքա ո՞չ *յառնեն*: - 725. Ասեմք, թէպէտ այնպիսի անդամքն ո՛չ են պիտոյ ի յարութեանն, սակայն *յառնեն* վասն կատարելութեան և գեղեցկութեան...: - 725. Ամենեքեան արո՞ւ *յառնեն*, թէ արու և էգ: - 725. Ոմանք ասեն թէ՝ ամենեքեան արու *յառնեն.* և այլք թէ արու և էգ: - 725. Սակայն իւրաքանչիւր ոք անսխալ անդամօք իւրովք *յառնէ*. այլ ո՛չ երևի թէ սա այր է և նա կին. այն ծեր և այն տղայ. զի որպէս հրեշտակք են յերկինս: - 726. Ո՞րպիսի հասակաւ *յառնեն* և յո՞ր թիւ: - 726. Վարդապետք ասեն թէ՝ ամենեքեան կատարեալ հասակաւ *յառնեն* և մի թուով երեսնամեայ: - 726. Դարձեալ՝ երկրորդն ադամ յայս թիւս յարեաւ ի մեռելոց. վասն որոյ և մեք ամենեքեան յայնմ թուի *յառնեմք*. - 726. Երրորդ՝ քանակաւ հասակին. զի իւրաքանչիւր ոք յիւրն երեսնամեայ յարիցէ. որպէս հարիւրամեան անցեալ և քառասնօրեայ մեռեալ. որ լինելոց էր երեսնամեայ, ի նոյն հասակն *յառնեն*: - 726. ...իսկ մարդիկ ի յարութեանն ո՛չ են կարօտ կերակրոյ զի անմա՛հ են. վասն այնորիկ նոքա ո՛չ *յառնեն*: - 727. Յետ որոյ փող հարկանի և մեռեալք *յառնեն*: - 732. ...այսինքն ի քթթելական մեռանին և *յառնեն*. զնոսա՝ և զյառաջագոյն մեռեալսն դատէ՛: - 740. Զի այսպէս ասեն վարդապետք՝ թէ յորժամ յղանայ ոք ի միտս իւր զխորհուրդ մեղացն, ի սատանայէ՛ սերմն առեալ որպէս կին *յառնէ*. և ի ծնանիլ մեղացն՝ ծնանին և որդունքն ի հրեղէն ծովն որ է՛ ի հարաւ: - 753

**ՅԱՍՊԻՍ +** *Յասպիս*՝ նմա՛ն է զմրխտի դեղնագոյն. գտանի յեզեր թորքոմէ տոս գետոյ յեզր կասբից ծովու: - 348

**ՅԱՏԱԿ +** Իսկ դևք զանհաստատսն մտօք՝ ի ստորևս քարշեն և յերկիր կործանեն զերկրաւորս խորհելով. և ընդ ինքեան ի *յատակս* դժոխոց մերժեն: - 152. իսկ թէ թափի հինն. այս լինի կամ *յատակս* ծառոցն ծորեալ և ապականեալ. և կամ ամենայն ամբարեալ և ժողովեալ և բարձրացեալ քան զծառս դրախտին որ է անպատշաճ: - 224. Եւ կէս գետոյն բաժանեալ և մտեալ ի ծովն աղի. նշանակ կորստեան մեղաւորաց և անհաւատից ի *յատակս* դժոխոց: - 414-415. Դարձեալ՝ առ հասարակ կարծիք, կոչի ներքին դժոխք *յատակ* դժոխոցն...: - 505

**ՅԱՏԿԱԳՈՅՆ +** Եւ թէպէտ աստուած արդար է և ողորմած, սակայն *յատկագոյն* ասի ողորմած քան արդար: - 459

**ՅԱՏԿԱԿԱՆ +** Նախ՝ զի ո՛չ ունի քանակ, որակ, ձև, և այլքն, որ նիւթո՛յ են *յատկականք*: - 175. Ա՛րդ՝ բաժանի երկինքն յերիս. այսինքն ի բնականն. *յատկականն* և ի նմանականն: - 183. Իսկ *Յատկական* երկինքն է **ե**: - 183. Տասն բնական երկինքն. և **ե** *յատկական*. և **ե** ըստ նմանութեան. որ լինին ի երկինք: - 184. Իսկ *յատկականն* ասացեալ եղև: - 318. Երրորդ՝ շնորհք կուսութեան. որ և սա՛ է *յատկական* եղանակ. որպէս սրբոյ կուսին: - 462. Երրորդ՝ սրբութիւն *յատկական*. որպէս սրբոյ կուսին, բառնայ զսկզբնական մեղս և զարմատն և դիւրասահութիւն մեղանչելոյն մահու չափ և ներելապէս: - 462. Այլ և ի վերայ ա՛յնր՝ ունէր և զերրորդն սրբութիւն. որ կուսութեան իւրոյ էր *յատկական*. ջնջումն ի սկզբնական և յարմատոյ մեղաց: - 463. Երկրորդ՝ *յատկական*: - 747

**ՅԱՏԿԱՆԱՄ +** Պատասխանեմք՝ թէ հայր ո՛չ բնութեանն է անուն՝ և ո՛չ արարչութեանն. այլ առանձնաւորութեանն. զի այնու *յատկանայ* յորդւոյ և ի հոգւոյ: - 39. Իսկ մի և ճշմարիտ ասելովն՝ *յատկացնէ՛* ի բազում և ի սուտ աստուածոց հեթանոսաց որ անուամբ միա՛յն են: - 47. Զի մի *յատկասցին* **բ** անձինք ի քրիստոս. զի թէ **բ** բնութիւն բաժանեմք ի հարկէ երկու անձն բաժանի: - 84. Ապա ո՞րպէս է Երրորդութիւնն *յատկացեալ*՝ եթէ ոչ անձամբ: - 86. Զորօրինակ երեք լոյս լապտերաց միաւորեալ՝ և որոշմամբ *յատկացեալ*: - 106. Եւ զի անձամբ *յատկացեալք* են և բնութեամբ մի. վասն այն Երրորդութիւն ո՛չ ասի միոյ անձին. այլ աստուած կամ աստուածութիւն ըստ միութեան բնութեանն: - 108. Իսկ զի ի պատճառէ՛ են՝ այսու *յատկացեալ* են ի հօրէ. զի հայր անպատճառ և անսկիզբն է: - 114. Նախ՝ տարորոշումն անձնական. և զի անձամբ *յատկացեալք* են ի միմեանց: - 137. Անմարմին՝ զի *յատկասցի*. և լոյս՝ զի պատրեսցէ. և անմահ՝ զի տանջեսցի միշտ: - 147. Եւ են աննմանք՝ ըստ որում են

գոյացութիւնք *յատկացեալք* ի միմեանց: - 236. Զի յայնմ հետէ հարսն փեսային լինի նշանեալ, և փեսայն հարսինն է՛ *յատկացեալ*: - 609-610

**ՅԱՏԿԱՊԷՍ +** Տասներորդ՝ դերանուանքն որպէս ես. դու. նա՛. *յատկապէս* զմի անձն նշանակեն: - 73. Իսկ փոխումն՝ աստուածամօրն կուսի. որ որդին *յատկապէս* սպասաւորէ մօրն: - 519. Դարձեալ կարէ ասիլ Ութերորդ պատճառս, առ ի ցուցանել թէ հոգին ո՛չ ունեք առատապէս պարգևի, եթէ ոչ յիսուս ի սիրտ նորա *յատկապէս* փառաւորեսցի: - 522. Այլ *յատկապէս* ըստ երից դիմացն, որ տկարութեամբ մեղանչէ՝ է՛ ընդ դէմ հօր. և տգիտութեամբն ընդ դէմ որդւոյ. և չարութեամբն ընդ դէմ հոգւոյն սրբոյ...: - 566. Իսկ այլք ոմանք *յատկապէս* **բ** ասեն զտանջանք դժոխոցն: - 752. Դարձեալ որպէս ասեն վարդապետք, եօթն *յատկապէս* փառս ունին մարմինք, և եօթն հոգիք: - 761. Իսկ ստինք *յատկապէս* գործի՛ է բնութեան ի պէտս սննդեան այնոցիկ ծննդոց զօրէն սերմանեաց երկրի. յորմէ հիւթոյ արեանն գոյացելոյ, ընդ ազուգայս երակաց արտագունեալ որակօք կաթն փոխակերպեալ: - 786

**ՅԱՏԿՈՒԹԻՒՆ +** Որպէս մի էութիւն է խնձորն. և ունի երեք *յատկութիւնս* որակաց. զհամն, և զհոտն, և զգոյնն ընդ ձևոյն: - 74. Իսկ ընդ դէմ եւտիքեայ անշփոթ ասել՝ պահէ՛ *զյատկութիւն* բնութեանցն՝ ի միութիւն խառնեալ էութեանցն: - 75. Որև մարդկութիւնն աստուած էր ըստ նորին բնութեամբ միաւորութեանն. և նոյնն մարդ ըստ իւրում *յատկութեանն*: - 75. Որև մարդկութիւնն անմահ ըստ միաւորութեանն. և մահացեալ ըստ իւրոյն *յատկութեանն*: - 75. Վասն է՞ր քաղկեդոնիկքն և նեստորականքն ուրանան զբնութեամբ միաւորութիւնն. այլ անձամբ միայն և *յատկութեամբ* ասեն: - 76. Որպէս ասեմք զաստուածածին կոյսն մայր և կոյս. ո՛չ **բ** բնութիւն կամ **բ** անձն. որ է մասամբ և բաժանմամբ. այլ զմի և զնոյն. ունելով զայս և զայն *յատկութիւն*: - 77. Դարձեալ՝ որպէս էր որդի հօր *յատկութեամբ* իւրով, և եղև որդի կուսի *յատկութեամբ* իւրով: - 77. Եւ ո՛չ է և ո՛չ ասի **բ** որդի կամ **բ** դէմ և այլն. այլ մի որդի և մի անհատ *յատկութեամբ* իւրով. և մի դէմ. և մի անձն. և մի կերպ. և այլն: - 77-78. Այլ և մի բնութիւն ասաց եւտիքէս. շփոթեալ և խառնակեալ զտարբերութեան *յատկութիւնս* բնութեանցն: - 81. Արեգա՛կն կոչի աստուած ի *յատկութեամբ*: - 102. Եւ միութիւնն ի յառինչն՝ առնէ *զյատկութիւն*: - 104. Իսկ *յատկութիւն* և որոշումն դիմաց՝ սակաւ ինչ է. վասն այն քըւով տեսանի: - 104. Այսքան վասն որոշման *յատկութեանց*: - 105. Հինգերորդ՝ ըստ այլ եղանակի է՛ միութիւն և *յատկութիւն*: - 106. Եւ աստ երևի կրկին *յատկութիւն* և կրկին հաւասարակութիւն: - 106. Զի ո՛չ է որպէս պետրոս՝ և պօղոս՝ և յոհաննէս՝ երեք մարդ և մի բնութիւն. այլ մի է անհատութեամբ. ունելով երիս *յատկութիւնս* դիմաց: - 107. Հին աւուրց որ է ծերն՝ չորս *յատկութիւն* ունի: - 114. Եւ զայլ *յատկութիւնս* հոգւոյ և հրեշտակի՝ ցուցանելո՛ց եմք յառաջիկայսդ չորիւք: - 117. Իսկ այս միայն կենացն է *յատկութիւն*: - 117. Ա՛րդ՝ աստուածայինն միտ չորիւք *յատկութեամբ* տեսանի այսպէս. համանգամայն. ներկայապէս կատարեալ. և անփոփոխ: - 118. Դարձեալ է՛ *յատկութիւն*, զի նախ տեսութիւնն է աստուծոյ, և ապա էութիւն ամենայն իրի՝ տեսութեանն նորա հետևի: - 118. Ա՛րդ՝ բնականն ունի **գ** *յատկութիւն*: - 120. *Յատկութիւն* արեգականն ասացեալ է յառաջիկայսդ ի գլխով ի **ժբ** գլուխն իա համարն: - 124. Եւ *յատկութիւն* արեգականն յայտնի է, զի սկիզբն է **բ** լուսոյն: - 124. Եւ արդ՝ զի հաւասարակ են էութեամբ՝ և յատուկ առանձնաւորութեամբ, յաղագս որոյ զանազանելի է *զյատկութիւնս* ըստ երկուց լուսոյն: - 125. Եւ այս վասն բազում *յատկութեան*: - 125. Զարեգական *յատկութիւնս* թէ կամիս յաւելուլ, ցուցցի յառաջիկայդ: - 127. Նոյնպէս զլուսոյ և զհրոյ *յատկութիւնս* բաղդատել դիւրին է իմանալի լուսոյն ճշմարտի. որպէս գրեալ է ի **ի** գլուխն՝ **լե** համարն տե՛ս անդ: - 127. Իսկ *յատկութիւն* նոցա: - 137. Են և ա՛յլ հաւասարակութիւն և *յատկութիւն* նոցա. որոց բաւական է այսչափս առ այժմուս: - 138. Վասն *յատկութեան* երկնից. և զի հոմանուն է արփին՝ և եթերն՝ և այլն: - 154. *Յատկութիւն* արեգական և աստեղաց: - 154. Վասն լուսնի՝ և *յատկութեան* նորին: - 154. Օր մի. և *յատկութիւն* միաշաբաթի, և վերջին աւուրն: - 154. *Յատկութիւնք* առաւօտու և հասարակ աւուր. երեկոյի և գիշերոյ. տասն տասն գլխով: - 154. *Յատկութիւնք* գարնան և ամարան, աշնան և ձմերան նոյն թուով: - 154. *Յատկութիւնք* հրոյ քսան գլխով. և հակառակ գործոյ նորին: - 155. *Յատկութիւնք* օդոյ երեսուն քըւով: - 155. Բաղդատութիւն ամպոյ և մեղաց. ամպոյ և սուրբ կուսին. և *յատկութիւնք* փայլման ի հոգին սուրբ: - 155. *Յատկութիւնք* ջուրց ութն թուով. և զի բազում են ջուրք. և դառն է ծով և աղի: - 155. *Յատկութիւնք* երկրի. և վասն լերանց. և ի ստորոտս լերին շո՛ղ լինի: - 155. Իսկ Ունիլ ասի, իմաստութիւն և բան ունի և զարարածս. և ունի *յատկութիւն* որով տարորոշի յարարածոց: - 172. Իսկ ենթադրութիւն է զանազանելին և ո՛չ զանազանեալն բացորոշ *յատկութեամբ*. որպէս ոմն մարդ: - 174. Իսկ անձն է

զանազանեալ հանդերձ բացորոշ *յատկութեամբ*. որպէս պետրոս: - 174. Այսպէս իմա՛ ինձ և զբանին մարդեղութիւն յայլևայլ բնութեանց միաւորեալ ի մի էութիւն և ի մի դէմ անձնաւորեալ և ո՛չ շփոթեալ բնութեանցն *յատկութիւն*: - 176. Եւ զի անշփո՛թ են սոքա *յատկութեամբ*՝ յայտ է. ուստի ասեմք, պետրոս մա՛րդ է և բանաւոր և կենդանի և զգայուն և շնչաւոր և մարմին և գոյացութիւն: - 176. Սոքա հնգեքին կոչին երկինք. զի *զյատկութիւնս* երկնից ունին. և սոքօք լինին հնգետասան երկինք: - 183. Զի՞նչ է *յատկութիւն* երկնից: - 184. Դարձեալ և ա՛յլ *յատկութիւն* երկնից որպէս ասացաւ՝ բարձր: - 184. Բազում ինչ բարութիւն և *յատկութիւն* է լուսին: - 185. Չորրորդ՝ **գ** է *յատկութեամբ* և մի բնութեամբ: - 186. Զի՞նչ է *յատկութիւն* լուսնի: - 186. Զի՞նչ է *յատկութիւն* միաշաբաթ աւուրն որ է կիրակէն: - 193. Զի՞նչ է *յատկութիւն* աւուրն վերջին: - 193. Երկրորդ՝ զի ունի զերեք *յատկութիւնս* երկնից. որ է՛ բարձրութիւն. լուսաւորութիւն. և անմահութիւն: - 221. Երեսուն**ա**՝ *Յատկութիւնք* մարդոյն **լ** թուով: - 228. Զայս **դ** *յատկութիւնս* ունի ջիլն: - 244. Զի՞նչ է *յատկութիւն* մարդոյս: - 274. Եւ յայնժամ մերկանայ զպատիւն իւր, և առնէ *զյատկութիւնս* անասնոց: - 274. Եւ այլ ամենայն գովութիւն մարդոյն զոր դնէ նիւսացին ի գիրս բնութեան, *յատկութիւն է* մարդոյն: - 275. Դարձեալ՝ *յատկութիւն* ի տկարութենէ. զի հանապազորդ ունի զպակասութիւն. և անկա՛ր է ի միշտ կանգնիլն: - 275. Դարձեալ՝ *յատկութիւն* մանանային: - 339. Եւ է՛ *յատկութիւն* կատարեալ սիրոյ **դ**: - 396. Եւ ունի մահն կրկին *յատկութիւն* որ ընդ դէմ է երկուց ծայրիցն. այսինքն զի է՛ վախճան կենաց՝ և է՛ սկիզբն կենաց: - 497. Իսկ հուրն կրկին ունի *յատկութիւն*. որ է լոյս և սրբիչ հաւատացելոց. պատիժ և այրիչ անհաւատից: - 525. Ա՛րդ՝ յորժամ ամենայն ինչ նոյն է սուրբ Երրորդութեանն, որով յա՛յտ է՝ թէ հայր խօսի, և թէ որդի, և թէ հոգին սուրբ, մի և նոյն բանիւն խօսին. ապա ուրեմն ո՛չ է անյարմար եթէ հայր նոյն բանիւն վկայեսցէ ի վերայ որդւոյ. զի որդի և հայր նշանակէ *զյատկութիւն* անձանցն: - 530-531. Այս է. զի հաւատն ունի **գ** *յատկութիւն*. որ է՛ հաւատն. և հաւատալն. և հաւատալին: - 531. Եւ այս վասն բազում *յատկութեանց* գլխոյ: - 532. Այս ո՛չ եթէ բաժանմամբ. այլ նկատմամբ ի *յատկութիւնս* անձանց. ըստ որում սկիզբն է հայր. և փրկութիւն է որդին. և ջերմութիւն հոգին: - 577. Այն որ աստուածային տրտմութիւնն է, ունի **դ** *յատկութիւնս*: - 584. Իսկ աստուածային խնդութիւնն ունի դարձեալ **դ** *յատկութիւնս*: - 584. Եւ թէ ասեն՝ ջուրն կրկին *յատկութիւն* ունի. այսինքն զովացնէ և լուանայ: - 596. Ասեմք թէ՝ *յատկութիւն* պատահմունք են. այլ խորհուրդն ի յէութիւնն է կացուցեալ որ մի է, և ո՛չ ի պատահմունքն որ բազումք են: - 596. Դարձեալ՝ չորիւք *յատկութեամբ* մատաղին պա՛րտ է զանձինս մեր պատարագել: - 658. Եւ ունի բեհեզն վեց *յատկութիւնս* որ նշանակէ զվայելչութիւն հոգւոց սրբոցն ելեալք ի մարմնոյ: - 712. Եւ չորք է *յատկութիւն* որդանցն. զի երևելեօքս աներևոյթն իմանի: - 753

**ՅԱՏՈՒԿ +** Ասեմք առ այս, մոլորականքն ո՛չ եթէ զի ունին ներհակ շարժումն վասն այն կոչին մոլորականք, կամ պատճառք են չարեաց, այլ զի մեք մոլորիմք ի շարժումն նոցա. զի ունին հասարակ շարժումն, և ունին *յատուկ* շարժումն: - 12. Յասարակ շարժումն է ըստ ութերորդ կամարին յարևելից յարևմուտս. իսկ *յատուկ*՝ յարևմտից յարևելս: - 12. Դարձեալ ասեմք թէ՝ որպէս մեք ունիմք կրկին ճանաչումն իրաց, այսինքն զի զոմն ճանաչեմք ի *յատուկ* տեսակն իւր. և զոմն այլով տեսակաւ: - 17. Այսպէս զունակութիւնն ճանաչեմք իւր *յատուկ* տեսակաւն. և զպակասութիւնն այլով տեսակաւ. զի հակակայի ունակութեանն: - 17. Նմանապէս և աստուած միակ միջնորդութեամբ ճանաչէ զբարին ըստ ինքեան ի *յատուկ* տեսակն իւր. և ճանաչէ զչարն կրկին միջոցաւ. այսինքն զի է՛ հակակայ բարւոյն. և է՛ պակասութիւն նմին որպէս ասացաւ: - 17. Այլ այս է *յատուկ* հոգւոյն սրբոյ...: - 58. Ապա ուրեմն և մարմինն այն *յատուկ* է մարմին բանին աստուծոյ. և այս ո՛չ կարէ լինիլ՝ եթէ ո՛չ լիցի միաւորեալ ընդ նմին: - 73. Ապա և բաժանակա՛ն է ընդ մարդկային բնութեանն՝ և ո՛չ է միաւորեալ ընդ օտար տարբերեալ բնութիւն. և եղեր նեստորեան. **բ** անձն և **բ** բնութիւն *յատուկ* ասելով քրիստոսի: - 86. Նիւթն. ձևն. այսինքն է կերպն. Գաւառն. Ազգայինքն. Ժամանակն. Տեղին. և *յատուկ* Անունն: - 87. Բաժանեն և ուրեք *զյատուկ* անունն. այսինքն աստուած և մարդ. այս է զմարդկային բնութիւնն մարդ, և զաստուածային բնութիւնն աստուած. որպէս նեստորի թըւի: - 87. Ա՛րդ՝ *յատուկ* անուամբ զմիութիւն խոստովանին. և ո՛չ իսկական բնութեամբ: - 87. Զի՞նչ հասարակ և *յատուկ* նոցա: - 102. *Յատուկ* անուանք հրեշտակաց: - 102. Զի՞նչ է միաւորութիւն և որոշումն. այսինքն հասարակ և *յատուկ* աստուածային: - 104. Իսկ *յատուկ* այլ է երիցն. և երկուքն աւելի՛. և նըւազ քան զմինն: - 104. Դարձեալ՝ հասարակն և *յատուկն* աստուածային՝ բազմազանապէս ասի ի սրբոյն դիոնիսեայ: - 105. Եւ *յատուկ* է Յայր գոլ և անծին: - 106. Եւ *յատուկ* է անշփոթ որոշումն ի միմեանց: - 106. Եւ *յատուկ*՝ զի մինն ծնօղ է

և բղխօղ. և միՆՆ ծՆեալ և ո՛չ բղխեալ. և միՆՆ բղխեալ և ո՛չ ծՆեալ: - 106. Եւ *յատուկ*՝ զի որոշեալ և բաժաՆեալ է յարարածոց...: - 106. Այսպէս է միութիւՆք և որոշմուՆք որ է հասարակ և *յատուկ* ի սուրբ ԵրրորդութիւՆՆ: - 106. Չորրորդ՝ որ սկիզբՆ ուՆի և կատարած. և թէպէտ հասարակ սոքա յաւիտեաՆք կոչիՆ, այլ ուՆիՆ *յատուկ* աՆուՆս: - 115. Եւ արդ՝ զի հասարակ եՆ էութեամբ՝ և *յատուկ* առաՆձՆաւորութեամբ, յաղագս որոյ զաՆազաՆելի է զյատկութիւՆս ըստ երկուց լուսոյՆ: - 125. Զի՞Նչ է երկՆայՆոցՆ հասարակ՝ և զի՛Նչ *յատուկ*: - 137. Չորրորդ՝ *յատուկ* է Նոցա կարգՆ. զի ոմաՆք բարձրագոյՆք եՆ քաՆ զոմաՆս: - 138. ՏասՆերորդ՝ *յատուկ* առաՆձՆապէս տպաւորութիւՆք խորհրդակաՆ. որպէս քերօբէքՆ բազմաչեայք և ըՆդ թևաՆք. և սերօբէքՆ սրբաբաՆ՝ ըՆդ աթոռոցՆ քառակերպեաՆ: - 138. Եւ զի՝ գուքՆ *յատուկ* տեսաՆի յաՆբաՆ կեՆդաՆիսՆ, և սէրՆ *յատուկ* է առ աստուած: - 144. Այլ ի մերկաՆալՆ ի մարմՆոյՆ՝ կարօտաՆայ *յատուկ* իմՆ զօրութեաՆ որով խօսեցի ըՆդ հրեշտակիՆ: - 145. Զի *յատուկ* է առաջիՆ պատճառիՆ որ է՛ աստուած՝ ի հարկէ էակ գոլ՝ և միշտ ՆերգործութեամԲ, և իսկապէս ՆերգործութեամԲ. որովք տարորոշի յայսցաՆէ՝ որ կարելի՛ եՆ էակ գոլ. և երբեմՆ Ներգործութեամբ և հաՆդերձ զօրութեամբ: - 162. ՅաւատոյՆ *յատուկ* է՝ զի մի՛ աՆգամ է, և կՆի՛ք է ի հոգիՆ ՆախկիՆ: - 166. Եւ յա՛յտ է զի եզակաՆ և աՆհատՆ մարդ՝ է զաՆազաՆեալ իւր *յատուկ* որակութեամբՆ: - 174. Յասարակ և *յատուկ* շարժութիւՆ ուՆի: - 186. Եւ ուՆիՆ կրկիՆ շարժումՆ. հասարակ և *յատուկ*: - 189. Իսկ *յատուկ*՝ յարևմտից յարևելս: - 189. Եւ գիտութեաՆ փայտՆ՝ *զյատուկ* կերակուրՆ կատարեալ արաՆց: - 223-224. ՎասՆ առաջՆոյՆ պա՛րտ է գիտել, զի առաւել հասարակՆ հեռի՛ է և մեծագոյՆ. և առաւել *յատուկՆ* մերձ է մեզ և ՆւազագոյՆ: - 235. ԶորօրիՆակ՝ բՆութեաՆ *յատուկՆ* և աՆձիՆ. զի բՆութեաՆ տարբերՆ հեռագոյՆ է և մեծ. որպէս կեՆդաՆիՆ և բաՆակաՆՆ. և դիմաց *յատուկՆ* մերձ և Նուազ. որպէս *յատուկՆ* մերձ և Նուազ. որպէս պատկեր և տիպ: - 235. Ապա ուրեմՆ յա՛յտ է զի աՆՆմաՆՆ և օտարՆ եՆ ի սեռի որակութեաՆ և *յատուկ* ձևոյ որակի: - 236. Եւ ըստ ա՛յսմ է տարբերութիւՆՆ և *յատուկ* և պատահումՆ ՆոյՆ գոլ: - 236. ՆմաՆապէս տարբերութեամբ *յատկիւ* և պատահմամբ. այլ եՆ քՆՆօղ մտաց: - 236. Զի արարիչՆ սոցա մի է բՆութեամբ. և ըստ բՆութեաՆ հաւասար, և աՆձամբ *յատուկ*: - 237. Իսկ զի աՆձիՆ. և ծՆեալ. և բղխեալ. ըստ այսմ աՆՆմաՆ և *յատուկ* առաՆձՆացեալ: - 237. Նա՛խ՝ զի աՆմարմիՆ դիմօք առաՆձՆաՆաՆ ի միմեաՆց. և այս *յատուկ* դիմօքս ճաՆաչեՆ հոգիքՆ զմիմեաՆս. որպէս մեծատուՆՆ զղազարու և զաբրահամու հոգիՆ: - 237. Եւ թէ ոք ասիցէ, խառՆուածոցՆ է այս, կամ *յատուկ* տեսակաց. որպէս ձայՆք և տերևք և կեՆդաՆիք չեՆ ՆմաՆ միմեաՆց: - 237. Դարձեալ՝ մարդո՛յՆ է *յատուկ* ուՆել զամեՆայՆ սիրելութիւՆ առ ամեՆայՆ ազգս. առ վերիՆս և առ ՆերքիՆս և առ միջիՆս: - 274. ՏասՆերորդ՝ առ *յատուկ* բարիՆ մերձեՆալ. այսիՆքՆ առ ամեՆևիՆ զուտ բարիՆ որ է՛ աստուած. խորհրդով բաՆիւ և գՆացիւք: - 281. Զի՞Նչ հասարակ և զի՞Նչ *յատուկ* քահաՆայութեաՆ տեառՆ մերոյ՝ և հՆոյՆ քահաՆայութեաՆ: - 354. Իսկ *յատուկ*, Նա՛խ՝ զի Նոքա մարդիկ էիՆ աՆկեալ ըՆդ տկարութեամբ: - 354. Դարձեալ՝ ՆայիլՆ և ՅայիլՆ *յատուկ* տեսողութեաՆՆ է. իսկ ՏեսաՆելՆ հասարակ զգայութեաՆ: - 407. Զի մարդՆ ցաՆկացաւ գիտութեաՆՆ աստուծոյ որ է *յատուկ* որդւոյ՝ և աՆկաւ. ՆոյՆպէս ՆովիՆ գիտութեամբՆ պարտ էր և կաՆգՆիլ: - 468. Եւ աստ գիտելի՛ է, զի զ իՆչ միայՆ *յատուկ* է մարդացելոյՆ քրիստոսի. և ո՛չ այլ ումեք պատշաճի մարդկայիՆս ազգի: - 473. ՆոյՆպէս ասի այս աՆուՆ մարդ չարչարեալ և մեռեալ. որ և *յատուկ* մարմՆո՛յ եՆ սոքա: - 478. ԵօթՆերորդ՝ գիրք սուրբք մարդեղութիւՆ ասեՆ բաՆիՆ. այլ մարդՆ կոչումՆ *յատուկ* արակաՆ է և ո՛չ իգակաՆ թէ և հասարակաց կոչի: - 480. ՅամբարձումՆ վերաբերի առ քրիստոս *յատուկ* զօրութեամբՆ իւր: - 519. Զի *յատուկ* է աՆմարմՆոյ, որպէս ի բազումս բազմաՆայ և ի միութեՆէՆ ո՛չ բաժաՆի, այսպէս ի մասուՆս մասՆաւորի և ի բոլորէՆ ո՛չ քակտի: - 529-530. Իսկ *յատուկ*, զի Նա՛ կոչի ժողովարաՆ. և մեք ժողովեալք: - 533. Իսկ արձակելՆ որ է՛ մերձաւորել և հաղորդել՝ է՛ *յատուկ* քահաՆայիՆ: - 538. Ի վեր շարժումՆ է հպարտութիւՆ և փառասիրութիւՆ. զի *յատուկ* է սոցա ի վերամբարձումՆ: - 560. ԱմբարտաւաՆութիւՆ է որ բաղձայ *զյատուկ* բարձրաՆալՆ իւր, և աՆկարգ և աՆսահմաՆ լիՆի: - 569. Զի սատաՆայ այլ մեղք ո՛չ գործեաց, քաՆ թէ խորհեցաւ *զյատուկ* բարձրաՆալՆ իւր...: - 569. Այս ազգ գործ՝ խոզՆիցՆ է *յատուկ* և ո՛չ մարդկաՆ: - 570. ՅոյսՆ է ստոյգ ակՆկալութիւՆ հաՆդերձեալ երաՆութեաՆՆ. յառաջ եկեալ ի շՆորհացՆ աստուծոյ և ի *յատուկ* արդեաՆցՆ: - 573. Երկրորդ առ աստուած վասՆ *յատուկ* իշխաՆութեաՆՆ: - 574. Երկրորդ՝ զոր սիրեմք՝ է՛ *յատուկ* առաքիՆութիւՆ մեր. այլ թէ սիրիմք՝ է՛ առաքիՆութիւՆ այլոց: - 576. ՏասՆերորդ՝ ի *յատուկ* գործոց իւրեաՆց: - 578. Այլ սգալ վասՆ *յատուկ* իՆչ չարի, է՛ իւրաքաՆչիւր առաքիՆութեաՆ. զի իւրաքաՆչիւր առաքիՆութիւՆ սգայ վասՆ ՆերհակիՆ: - 583.

Այլ թէ որ հասակաւ մեծ է, խնդրի *յատուկ* հաւատ. իսկ թէ տղայ է՝ բաւական է խորհուրդն եկեղեցւոյ: - 588. Թէ կրօնաւոր է՝ հարցանէ թէ ծոյլ եղեա՞լ է յաղօթքն. կամ անհնազանդ. թէ բղջախոհ. թէ *յատուկ* իրք ունօղ. թէ պճնօղ. թէ որոնօղ լաւ կերակրոց և ըմպելեաց. թէ քնափ և թէ կռւօղ: - 601. Երրորդ՝ զի ունիմք զբնութիւնս հասարակ՝ պա՛րտ է հասարակ աղօթել. և զի ունիմք անձն և դէմք *յատուկ*՝ պա՛րտ է առանձնակի աղօթել: - 623. Եւ գիտելի է, զի ամենայն ժամս աղօթից է՛ հասարակ և է՛ *յատուկ*: - 633. Իսկ *յատուկ*, Նա՛խ՝ զերեքսրբեանն ի դէմս որդւոյ. զի նա՛ է առաջնորդ որով զհայր տեսանեմք: - 633. Այրն ի տարաշխարհ գնաց քրիստոսէ. որ մարմնով համբարձաւ յերկինս. զի *յատուկ* տեղի մարմնոյ երկիրս է. վասն որոյ ի տարաշխարհ գնալ ասէ յերկինս: - 692-693. Զի ո՛չ վայելէ անկատարից զվախճանական կատարումն առնուլ. եթէ ոչ նախ իւր *յատուկ* կատարելութեամբն կատարեսցի...: - 693-694. ...իսկ հոգին բաժանեալ ի մարմնոյն տակաւին ո՛չ է կատարեալ իւր *յատուկ* կատարելութեամբն: - 694. Նա՛խ՝ զի արու և էգ անդ ո՛չ ճանաչին մասին անդամօք, այլ *յատուկ* դիմօք և բարի գործովք և փառօք և անւամբ զանազանին. որպէս դասք կուսանացն ի հայրապետացն: - 725. Եթէ ումեք տւեալ իցէ շնորհ հասարակ կամ *յատուկ*, որպէս մկրտութիւնն և հաւատքն. քանքար և տաղանդ. իշխան և առաջնորդ. մեծութիւն և ինչք. կեանք լոյս ամանակ և այլն ամենայն. այսու եղանակաւ կշռոյ հատուսցի: - 747. Իսկ *յատուկն* է, որպէս զղջացելոց...: - 747. Կրկին է շնորհքն. ոմն հասարակ և ոմն *յատուկ*: - 783. Եւ է՛ շնորհ *յատուկ* ընրութեամբն աստուծոյ, որ պատճառ է՛ զփառս զանազան ներգործութեամբ. և է՛ սա՛ ան՛ի բաց դնելի անզեղջ խոստմամբ ի կողմանէ տուողին. որպէս է՛ առ մեզ շնորհք աւազանին: - 783

**ՅԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ +** Յետ այսորիկ երկրորդ միաւորութիւն սովորեցաք կոչել թէպէտ և ո՛չ իսկապէս՝ և զանհամամանիւթից ոմանց. և կամ զհամամանիւթից մարմնոց *յարադրութիւն*. որոց ընդ մէջ է մակերևութիւն միայն: - 476

**ՅԱՐԱԶՈՒԱՐՃ +** Որ և *յարազուարճ* բարերջանկութեամբ լի և ամենազան քաղցրորակ պտղաւէտութեամբ տնկեսցիս ծառ բարձրաբերձ յընթացս հոգւոյն ի մէջ եկեղեցւոյ տանս թորգոմեան ազգիս հայկազնեան: - 558. Երրորդ՝ ծառ կենաց իմանին տունկք իմանալի դրախտին. այսինքն բանակք երկնաւոր զօրացն. միշտ *յարազուարճ* բերկրանօք բարձրացեալ ի փառս: - 767

**ՅԱՐԱԶՈՒԱՃՈՒԹԻՒՆ +** Եւ յիսուս անունն՝ են վեց գիր. որ կարեն լինիլ սկիզբն այսպիսի ասութեանց. այսինքն *Յարազուարճութիւն* տրտմեցելոց: - 474

**ՅԱՐԱԺԱՄ +** Վեցերորդ, *յարաժամ* քորի. և յանա՛գ է մեղքն: - 367. Ասեմք թէ՝ *յարաժամ* աջ քահանային մերձի ի գլուխ քրիստոնէին ուր արմատն է բոլոր զգայութեանցն: - 605. Այլ և այս գիտելի՛ է, զի սաղմոսն *յարաժամ* երգի. յառաւօտն, ի ճաշոյն, և յերեկոյն: - 643. Եւ այնպէս *յարաժամ* տեսանէ զցաւս մերձ ինքեան և առ ինքն ի չար գործս իւր անբաժանելի ի նմանէ մինչ ի յարութեանն օր...: - 669. Եօթներորդ, զի մի՛ *յարաժամ* տեսցեն կենդանիքն և մորմոքեսցին սիրտք նոցա: - 677. Ասեն ոմանք թէ՝ սրբոց հոգիքն *յարաժամ* երևին յորժամ կամին և որոց կամին: - 685. Եւ որպէս մեք *յարաժամ* միտեմք ի գործ բարութեան կամ չարութեան. և գործ նորա միտէ՛ յողորմութեան կամ արդարութեան հատուցումն. - 745. Եւ սոքա երբեմն հաւասարին. որպէս յորժամ արդարապէս հատուսցէ բարեաց և չարաց. և միտեն *յարաժամ* անվախճան պատուէ և պատժէ: - 746

**ՅԱՐԱԿԱՅ +** Ըստ որում թէ՝ «եղիցին կատարեալք ի մի». և Նմա փառք և պատիւ *յարակայ* Ամէն: - 450

**ՅԱՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ +** Յարամնայութիւն է հաստատ և միշտ *յարակայութիւն* ի բարեպէս քննել բանականութեանն: - 580

**ՅԱՐԱԿԻՑ +** Դարձեալ՝ հասարակ ամենայն մարդ *յարակցէն* և յարւեստէն ճանաչի: - 250

**ՅԱՐԱԿՑԵՄ, ՅԱՐԱԿՑԻՄ +** Եօթներորդ՝ զի ո՛չ կարէին ընտրել և խոտել զչարն և զբարին, և զսուրբն և զանսուրբն ի մարդկանէ, թէ գործ սորին է այս կամ այն. այլ անմեղութեամբ *յարակցեին* պղծոյն, և զխեղդ ոգւոց նորա ընդունէին: - 238

**ՅԱՐԱԿՑՈՒԹԻՒՆ +** Իսկ սուրբն կիւրեղ ընդ դէմ նեստորի զինէր. որ ասէր բնակութեամբ զբանն ի մարմնի. և նախ զմարդն ծնեալ ի կուսէն և շրջեալ ի յերկրի, և յետոյ բնակեալ բանն աստուած յետ մկրտութեանն. և յետ յարութեանն փառաւորեաց զնա և զօրացոյց *յարակցութեամբ* ընդ ինքեան: - 79

**ՅԱՐԱՁԳԱԿԱՆ +** Առաջինն կոչի *յարաձգական* յաւիտեան: - 115. Յաւիտեանս Յաւիտենից. որ է՛ սկզբնական և *յարաձգական*. զի նա պարունակէ զերեք յաւիտեանն. որ ո՛չ սկիզբն ունի և ո՛չ կատարած: - 116. Եւ թէ ոք ասիցէ, որովհետև աստուած յաւիտեան է անսկիզբն և անվախճան. նոյնպէս և *յարաձգականն*: - 116. Եւ ընդ դէմ է *յարաձգականին* որ ունի վախճան և ո՛չ սկիզբն: - 312

**ՅԱՐԱՄՆԱՅ +** Երրորդ՝ զի անբաժանելի է յունօղսն. որպէս յաստուած՝ և ի հրեշտակս, այսպէս և ի մարդն արժանացեալ. զի ունակութիւն է *յարամնայ* և կնիք անքակտելի: - 138. Երկրորդ՝ այսպիսի ձև հաստատո՛ւն է. զի կիբիկո՛ն է. զի հաստատ և *յարամնա՛յք* են: - 344

**ՅԱՐԱՄՆԱՅՈՒԹԻՒՆ +** Բայց մասունք արիութեան են դ. այսինքն մեծագործութիւն. ապաստանութիւն. համբերութիւն. և *յարամնայութիւն*: - 580. *Յարամնայութիւն* է հաստատ և միշտ յարակայութիւն ի բարեպէս քննել բանականութեանն: - 580. Եւ *յարամնայութիւն* կնքոյն պատճառէ՛ ոմանց գերագոյն պատիւս. և ոմանց խստագոյն պատիժս. ըստ բազում գանից առակի ասիցն: - 783

**ՅԱՐԱՆՈՒՆԱԲԱՐ +** Դարձեալ *յարանունաբար*, յաստուածութենէն աստուած. ի հայրութենէն հայր. արդար. ողորմած. և այլն: - 172

**ՅԱՐԱՑՈՅՑ +** Վասն *յարացուցի*. մի է. և բազում: - 101. Երկրորդ՝ սկիզբն է *յարացուցի*. և պատճառ էից. պատկեր և նմանութիւն նորին *յարացուցի*: - 110. Եւ ի սկիզբնէ. որ է *յարացոյցն* և նախագաղափարն: - 111. Եւ յէութիւն եղելոցս. որ է պատկեր և նմանութիւն *յարացուցի*: - 111. Զի՞նչ է *յարացոյցն*: - 112. Նախ՝ զի *յարացոյցն* պարզ է՝ և երկրպագելի՝ և անապական՝ և անփոփոխ: - 112. Դարձեալ՝ *յարացոյցն* ո՛չ թանձրանայ որպէս տարերք. և ո՛չ որպէս նիւթ և տեսակ կերպանայ. և ո՛չ թէ *յարացոյցն* արար զմեզ: - 112. Այլ է՛ *յարացոյցն* ի յաստուած. և ի տեսութիւն նորա. և ի բարի կամս: - 112. Զի առ աստուած՝ ո՛չէ սոսկ տեսութիւն արտաքոյ. այլ յինքն տեսանելով *զյարացոյցն*. և զմեզ ի *յարացոյցն* մեր իբր լինիլ մեզ նախ ի յաստուած, և ապա ի յէութեան մերում. և ո՛չ որպէս փոփոխումն ինչ ի բարի կամացն: - 112. Երբեմն *յարացոյց*. իբր միշտ ի տեսութիւնն աստուծոյ: - 112. Եւ գիտելի է, զի *յարացուցիս* և նախասահմանութեանս՝ արարողական պատճառ է աստուած...: - 112. *Յարացոյցս* այս մի՞ է՝ թէ բազում: - 112. *Յարացոյցն* մի է և պարզ. ըստ այնմ որ մի է էութիւնն աստուծոյ, և մի տեսութիւն, և մի ճշմարտութիւն: - 112. Այլ բազո՛ւմ է և զանազան ըստ պատկերի և նմանութեան *յարացուցելոցս* որք են բազումք. զի աստուած միով *յարացուցիւ* զբազումս տեսանէ. որպէս անմարմնութեամբն զմարմնաւորս տեսանէ. և յաւիտենիւ զժամանակեայս: - 112. Այսպէս ի մի և ի նոյն սկիզբն որ է՛ *յարացոյցն* զբազում սկսեալքս ըստ *յարացուցին*: - 112. Այսպէս մի է *յարացոյցն* ի մինն աստուած: - 112. Այսպէս մի է *յարացոյցն* ըստ ինքեան. և բազմանայ ըստ բազմացելոցն ի նմանէ: - 113. Զի աստուած ո՛չ արտաքոյ ինքեան ունի զտեսութիւնն. այլ ի ներքս միայն. զի զինքն ի յինքն տեսանէ՝ և զայլս ի յինքն. ապա զեղեալքս ի *յարացոյցն* որ է տեսութիւնն աստուծոյ որպէս ասացաք: -118-119. Նախ՝ հայելով ի կերպարանս և ի նմանութիւնս որ է՛ կարգաւորութիւն արարածոց. և սոքօք ի *յարացոյցն* սոցա ելանել, և ի նմանէ դարձեալ ի նախատիպ *յարացուցին* ելանել. և այնպէս տեսանել թէ է՛ աստուած պատճառ ամենայնի: - 119. Զի ի մի և ի նոյն բանն աստուած տեսանեն զաստուած, և տեսանեն զեղեալքս ի *յարացոյցն* իւրեանց: - 120. Չորրորդ՝ հոգին փոխանցապէս իմանայ և *յարացուցիւ*. իսկ հրեշտակն զնախատիպն առանց *յարացուցի*: - 141. Իսկ ուղիղ շարժի՝ յորժամ ի ձեռն զգայութեանց *յարացուցիւ* և օրինակաւ հպիմբ ի նախատիպն աստուած: - 142. Տասներորդ՝ այլև օրինակ և *յարացոյց* նմանատիպ հասարակաց յարութեան և նորոգման տիեզերաց և մարդկային բնութեանս որ յապագայն: - 196-197. Որպէս և իմաստունքն ասացին զամենայն երևելիս *յարացոյց* իմանալեացն. զոր գոյ և որակ կոչեն. և զնիւթս պատկեր գոյին. զի որակն և գոյք անմարմին են և աննիւթաբար ի մտածութիւնս երևին: - 236. Նմանապէս և արարիչն. այլ նա՛ պարզ և ի վեր քան զձեռակերտս *յարացուցին*: - 236-237. Իսկ այլք ասեն թէ՝ պատկեր եմք աստուծոյ, և նման *յարացոյց* նախագաղափարին: - 273. Եւ այս ևս չէ՛ ընդունելի. զի ցուցաւ ի վերոյ եթէ *յարացոյցն* նոյն ինքն աստուած է ամենեցուն: - 273

**ՅԱՐԳԵՄ +** Դարձեալ, կամեցաւ աստուած այլով իւիք *յարգել* զդաւիթ, և այլով զորդին իւր յետ նորա: - 440. Որոց սկիզբն է հաւատն առ մկրտութեամբն. և կատարումն հայի առ գործն. և սոքա փոփոխականք են ըստ քանքարացն *յարգելոյ* և պակասելոյ: - 783

**ՅԱՐԴ +** Չորրորդ՝ եղեգն փոխանակ *յարդի*: - 335. և կորիցեն անհաւատք որպէս *զյարդ* այրեցեալ ի հուրն: - 706. Դարձեալ, որպէս մի շնչմամբ օդոյ՝ ցրեանն ժողովի և *յարդն* հոսի: - 739. Ցորեան ընդ *յարդի*. կնճիռն ընդ գինւոյ. մրուր ընդ ձիթոյ. յուդա ընդ յառաքեալսն. նիկօլայոս հերեսիոտ ընդ աշակերտսն: - 756

**ՅԱՐԵԴ** - Անունք Նախահարցն: ...*Յարեդ* վերհայեցումն աստուծոյ: - 299. Անունք Կանանց Նահապետացն: ...*Յարեդին* բառաքա՛: - 299

**ՅԱՐԵՄ, ՅԱՐԻՄ +** Վասն զի ի մէջ գիշերի ծնաւ քրիստոս. և ի մէջ գիշերի *յարեաւ* ի գերեզմանէն: -

194. Զի թէ ի սուրբ մարդ *յարի*՝ սրբի. և թէ ի պիղծ՝ պղծի: - 250. Որպէս *յարելով* զինքն յերկրաւորս՝ լինի ստորև քան զաշխարհս: - 274. ...և մեք անդամք ի նա՛ *յարեցար* և եղաք անդրանիկք հրեշտակաց որ էաք կրսեր նոցա. զի ամենայն երկնաւորքն ծունր կրկնեն քրիստոսի և խոստովանին զնա՛ տէր: - 309. Նոյնպէս և կամաւ իւր *յարեաւ*: - 316. Երկրորդ՝ զի *յարիցեն* ի յարութեանն: - 326. Եւ տէրն ի մէջ գիշերի *յարեաւ* և ազատեաց զարգելեալսն ի բանտէն: - 330. Յորում աւուր կիրակէին ի մէջ գիշերի ընդ առաւօտս *յարեաւ* տէր ի գերեզմանէն, ազատելով զհոգիսն ի դժոխոց: - 337. Մետասաներորդ, նոքա ո՛չ իշխէին ճաշակել զպատարագս իւրեանց. այլ արտաքոյ *յարէին*. իսկ տէրն մեր և մեք ճաշակեմք զպատարագ նորոյս...: - 355. Իսկ օրհնեալն՝ յայտնեալ և *յարեալ* յաստուած որ է՛ կեանք և երանութիւն: - 403. Եւ տէրն ի մէջ գիշերի զդրունս և զնիգս դժոխոց խորտակեալ *յարեաւ* ի գերեզմանէն. և զհոգիս մարդկան էհան յերկինս: - 423. Նա՛խ՝ եթէ ճշմարիտ *յարեաւ* սամուէլ, ընդէ՞ր ոչ եհար զվհուկն և սատակեաց. և ընդէ՞ր ոչ յանդիմանեաց զսաւուղ եկեալ առ վհուկն: - 429. Արդ եթէ սամուէլ *յարեաւ* և մեռաւ և կամ կինն, նա՛ ճշմարիտ եղիցի բանն. ապա թէ կինն ոչ մեռաւ և սաւուղ մեռաւ, սուտ խօսեցաւ: - 430. Դաւիթ երեսնամեայ թագաւորեաց. և տէր մեր լամեայ մկրտեցաւ և ի գերեզմանէն *յարեաւ*: - 437. Յորո՞ւմ ժամու *յարեաւ* ի մէջ գիշերի ի վկայութեամբ: - 455. Եւ ոմանք ասեն թէ՝ յերկնաւոր դրախտն եմուտ հոգւովն մինչ ի կիրակէ մէջ գիշերին. և ի նոյն ժամն էջ ի դժոխս և ազատեալ զհոգիսն *յարեաւ* ի գերեզմանէն: - 495. Հինգերորդ վկայ, զի ի բոլոր տարին յերեկոյի շաբաթուն կիրակմուտ անուանեն ամենայն ազգք. նոյնպէս և մեք յամենայն շաբաթս յերեկոյին լոյս զուարթ ասեմք, և սուրբ աստուած որ *յարեար*. ի յայս շաբաթի աւուրս սկիզբն առեալ: - 509. Եւ **է** անգամ ի նոյն օրն յորում *յարեաւ* ի գերեզմանէն. որ լինի **ժ** անգամ: - 511. Յորո՞ւմ ժամու *յարեաւ* քրիստոս.և քանի՞ ժամ եկաց մեռեալ: - 512. Իսկ թէ յորո՞ւմ ժամու *յարեաւ*, այսմ զանազա՛ն են կարծիք: - 512. Վասն զի գերեզմանն կնքեալ էր և *յարեաւ*: - 512. Չորրորդ՝ ի մէջ գիշերի ըմբռնեցաւ և կապեցաւ ի մահ. և ի մէջ գիշերի *յարեաւ* և արձակեցաւ ի մահու: - 512. Եւ յորում ժամու ել մովսէս յեգիպտոսէ և եհան զժողովուրդն, ի նոյն ժամն *յարեաւ* քրիստոս ի մեռելոց և եհան ազատեաց զհոգիսն ի հրահալոց չարութենէ դժոխոցն և ի բռնութեանց իմանալի փարաւոնին: - 512. Յորում աւուր կիրակէի ի մէջ գիշերի ընդ առաւօտն *յարեաւ* տէրն ի գերեզմանէն. հանելով զհոգիսն յանապատն երկնից. և խաչանիշ գաւազանաւն ընկղմեցաւ փարաւօն յանդունդս դժոխոց: - 513. Յորում ի մէջ գիշերի թողեալ զկտաւսն ի գերեզմանի և *յարեաւ* ել առ հայր ի յերկինս: - 513. Ապա ուրեմն ի գիշերի *յարեաւ* և յառաւօտուն երևեցաւ: - 514. ...եթէ քրիստոս *յարեաւ* ի մէջ գիշերի. զի այց արասցէ մարդկան ազգի. և զանկեալքս ի խաւարի և ի ստուերս մահու՝ ի լոյս գիտութեան և շնորհաց յարուսցէ: - 514. Վեշտասաներորդ՝ ի մէջ գիշերի *յարեաւ*, զի զհոգիսն ի խաւարային բանտէն ի լոյս կենաց շրջեսցէ: - 514. Եօթնև**ժ**՝ ի մէջ գիշերի *յարեաւ*, զի զօրէնս ստուերական ի լոյս ճշմարտութեան փոխեսցէ: - 514. Այսպէս իմանալի արեգակն քրիստոս ի նոյն ժամն *յարեաւ* ի գերեզմանէն. և ընդ արշալոյսն երևեցաւ իւղաբերիցն և առաքելոց: - 515. Այս թէ յորո՞ւմ ժամու *յարեաւ* քրիստոս: - 515. ...իսկ մարմինն յերեսուն ժամուն ի գերեզմանէն *յարեաւ*. զի երեսնամեայ մկրտեցաւ մարմնով և ել ի ջրոյն: - 516. Եւ **լ** ժամեայ *յարեաւ* և ել ի գերեզմանէն: - 516. Չորրորդ սոյնպէս ասեն. ուրբաթն և իւր գիշերն որ չարչարեցաւ. և շաբաթն և իւր գիշերն որ թաղեցաւ. կիրակէ և իւր գիշերն որ *յարեաւ*. յորում ժամու և իցէ: - 516. Վասն է՞ր յորժամ *յարեաւ* իսկոյն ո՛չ համբարձաւ այլ յետ **խ** աւուր: - 520. Եւ է՛ առաջին ժամ աղօթիցն ի մէջ գիշերի. վասն զի ի մէջ գիշերի *յարեաւ* քրիստոս. և ի մէջ գիշերի հասարակ յարութիւն մեր...: - 621. Իսկ զայսօր *յարեաւն*, զնորոգեալ կղզիքն, և զթոռանցն, ներսէս լամբրօնացին: - 637. Դարձեալ, ի կիրակէ յարութեանն քրիստոսի տօնեմք. և յերկուշաբաթին՝ նոցա սրբոցն որք ընդ քրիստոսի *յարեան* և մտին ի քաղաքն սուրբ: - 684. Նախ ասեն թէ՝ յաւուրսն յայնոսիկ *յարեան* մանկունքն յեփեսոս ի վկայութիւն առ հասարակ յարութեանն, զնոյն յիշատակեմք: - 684. Զքուն մահուն ասէ մինչ ի կատարած. և ի մէջ գիշերի յարութեանն աւուր *յարեան* ամենայն կուսանքն և կազմեցին զլապտերս: - 693. ...և հրէից ժողովն *յարեսցի* ի նա՛: - 707. Եւ *յարիցեն* և ելանիցեն յերկինս ամպօք: - 709. Վերջնովն *յարիցեն* հոգւով և մարմնով: - 713. Ի գարնան եղանակի ի զատկի կիրակէին ի մէջ գիշերի յորում ժամու *յարեաւ* քրիստոս և հրեշտակն թաւալեցոյց զվէմն և գոչէր զյարութիւնն քրիստոսի...: - 714. ...այլ պա՛րտ է զի *յարիցէ* և մարմինն և ի միասին առցեն զհատուցումն բարեաց կամ չարեաց: - 715. ...ըստ որում երեքօրեայ *յարեաւ* ի գերեզմանէն անապական մարմնով. և զբազումս յարոյց ընդ իւր և մտին ի քաղաքն սուրբ: - 716. ...որպէս վեց մեռեալքն որք *յարեան* նախքան

զքրիստոս. և յարութիւնս այս անկատար է. զի դարձեալ մեռան: - 716. Պարտ է ապա զի ամենայն մարմինք մարդկան համանգամայն *յարիցեն* ի յաւուրն վերջին: - 717. Թէ զծունկն զայն որ եկեր զմարմին մարդոյ՝ ուտէ մարդ, և յայնմ սերմանէ ծնանի զա՛յլ մարդ. ի յորո՞յ մարմին *յարիցէ*: - 718. Իսկ վիժեալն ի յարգանդէ ըստ որում է սերմ կամ արիւն մօրն՝ ի մա՛յրն *յարիցէ* : - 719. ...և մարմինք մեռեալք որ յադամայ հետէ՝ յանկարծակի յական թօթափել ի փող յետին *յարիցեն* ասէ առաքեալն: - 721. Որպէս լոյս արեգակն անցանէ ընդ երկինս առանց ապականութեան. և որպէս քրիստոս *յարեաւ* մարմնով ի գերեզմանէն վիմովն կնքելով. և եմուտ առ աշակերտսն դրօքն փակելովք: - 722. Ապա ուրեմն պա՛րտ է զի ամենայնքն *յարիցեն* ի մեռելոց. - 724. Ո՛չ *յարիցեն* ամբարիշտք ի յարութիւնս հոգևորս. այսինքն ի մեղաց ի շնորհքն. այլ յառնեն մարմնով: - 724. Դարձեալ՝ ո՛չ *յարիցեն* ի դատաստան, այսինքն ո՛չ կանգնեսցին ի դատաստանի զի մեղօք կործանեալք են: - 724-725. Զի *յարիցեն* մարդիկ ըստ գոլոյն՝ և ամբողջ գոլոյն՝ և գեղեցիկ գոլոյն: - 725. Դարձեալ՝ երկրորդն ադամ յայս թիւս *յարեաւ* ի մեռելոց. վասն որոյ և մեք ամենեքեան յայնմ թուի յառնեմք. - 726. Երրորդ՝ քանակաւ հասակին. զի իւրաքանչիւր ոք յիւրն երեսնամեայ *յարիցէ*. որպէս հարիւրամեան անցեալ և քառասնօրեայ մեռեալ. որ լինելոց էր երեսնամեայ, ի նոյն հասակն յառնեն: - 726. Ուր ինքն տէրն խաչեցաւ և *յարեաւ*. և սոքա ամենեքեան ծոր յովսափաթու կոչին, որ յերկու ծորի մէջն է յերուսաղէմ: - 737

**ՅԱՐԿ +** Զորօրինակ **բ** թշնամիք ոմանք ի *յարկս* թագաւորին ո՛չ իշխեն վնասել իրերաց, մինչև թագաւորն հրամայեսցէ: - 12. Եւ քրիստոս *զյարկն* դաւթի որ է՛ եկեղեցի՝ չորիցս առաքինութեամբ եռաբնակ օթևան աստուծոյ կազմեաց: - 328. Սա՛ է *յարկն* այն, յոր մարգարէն մտանել ստուգեալ ասէր, «մտից ի տուն քո. երկիր պագից ի տաճար սուրբ քո»: - 757

**ՅԱՐՁԱԿԵՄ +** Եւ սկիզբն անդ ժողովելոյ՝ ի *յարձակելն* քրիստոսի առ ժամանակեայ զհոգիսն անարժանից՝ անդ մնացին և անտի դարձցին մեղաւորք անրդէն ի դժոխս ըստ մարգարէին: - 688

**ՅԱՐՁԱԿՈՒՄՆ +** Եւ նոյնպէս **դ** անգամ յերեկոյն. ի լոյս զըւարթն, և յուղղեցին, և յերեքսրբեանն. կամ *յարձակմանն* խնկարկեն ոմանք: - 618

**ՅԱՐՄԱՐ +** Տասներորդ՝ անունն *յարմար* նշանակութիւն է կենդանեաց ըստ բարուցն և զանազան կերպիցն եղեալ. զի ամենայն անուն՝ յիրէն և ի գործոյն և ի ծայնէն դնի: - 220. Երրորդ՝ *յարմար* շուքն: - 271. Եւ այսպիսիքս ամէն ո՛չ են *յարմար* ուխտականի: - 390. Զի առաւել *յարմա՛ր* է անապակ բաժակն անապական արեանն քրիստոսի, քան թէ խառնեալն ի ջրոյ և ապականեալն: - 595. ...ո՛չ էր *յարմար* թէ ապականացուն յանապական տեղիս բնակեսցի. մինչև սա ևս յանապականութիւն վերափոխեսցի: - 662. Զի այրի շինուածն որ ո՛չ է *յարմար* այնպիսի հիման հաւատոյ: - 702. Եւ այլևս *յարմար* տեղւոյս այսպէս իմանի. զի սուրբ հարքն առաջինք պակաս ունէին զչարչարանս...: - 781

**ՅԱՐՄԱՐԵՄ, ՅԱՐՄԱՐԻՄ +** Սակայն բե՛ր զառարկութիւնս նոցա տեսցուք. և զեղծումն նոցին *յարմարեսցուք*: - 15. Եւ ընդ անւանցն զշնորհն *յարմարեն*: - 51. Այլ այժմ տեսցուք ի սուրբ գրոց զվկայութիւնսն մակեդոնի, և *յարմարեսցուք* զպատասխանիս նոցա: - 59. Նախ՝ ասէ մակեդոն եթէ աղօթել և բարեխօսել ո՛չ *յարմարի* աստուծոյ. զի եթէ *զքրիստոսէ՛* ասի՝ վասն մարդկութեանն է: - 59. Ա՛րդ՝ որով ամենայն՝ *յարմարի* բանին. ըստ այնմ ամենայն՝ «ինչ բանիւն եղև». և յիսուս կոչի մարդն: - 72. Եօթներորդ՝ իջանելն յերկնից՝ բանին *յարմարի*. զի միաւորեցաւ ի մարմնի այն է իջանելն: - 73. Բե՛ր *յարմարեսցուք* այժմ զերիս եղանակս սոցա՝ միաւորութեան փրկչին ուղղակի իմն տեսութեամբ. որ ո՛չ ախորժելի է այլոց: - 89. Նոյնպէս փչօղ. փչեալ. փչումն. և այլ ծանօթութիւնք աստ *յարմարին*: - 105. Եւ դարձեալ՝ առաքօղ և ո՛չ առաքեալ. առաքեալ և առաքօղ. առաքեալ և ո՛չ առաքօղ. և այլք սոյնպիսիք աստ *յարմարին*: - 105. Եւ սոյնպիսիք աստ *յարմարին*: - 105. Ա՛րդ՝ երեքն ո՛չ *յարմարին* աստուծոյ. զի ո՛չ հնանայ և ո՛չ ծերանայ. և ամք նորա ո՛չ պակասին...: - 114. Եւ գործոյն որ ունին կրթել զմարդիկ՝ *յարմարի* օդն որ է՛ մերձ առ մեզ փորձելոյ զմեզ. այլ ո՛չ ի լոյս. զի մի ուրախասցին: - 146. Իսկ գազանացն միս է՛ զօրեղ. վասն այն ի խելս նոցա առաւել *յարմարի* և ուժովացնէ՛ զնոսա: - 218. Եւ մելքիսեդեկին յերկրէ ծնեալ և յերկինս սնեալ, որ առաւել *յարմարի* ճշմարտութեանն ի յերկնից իջեալ և ի կուսէ ծնեալ: - 301. Արդ՝ առաջինն և վերջինն վայելչակա՛ն է յոբայ և աստուծոյ. իսկ միջին երկուքն բարեկամացն յոբայ, և չար բանսարկուին *յարմարի*: - 323. Բազում է խորհուրդն. բայց նախ հրեշտակաց *յարմարի* ցոյցք տապանին. զի նոքա են անապական և անմահ: - 344. իսկ Կախարդն՝ որ անօթ ինչ թաղէ ի հող. կապս, կամ մոմ, կամ երկաթ, և պէս պէս ժժանօք *յարմարե՛ն* զարուեստն: - 388. Եւ առ այս *յարմարեն* բազում տեսութիւնս վարդապետք եկեղեցւոյ: - 409. Այլ ո՛չ *յարմարի* բանս. զի և

յերկինս տեսանի գործ արդարութեան առ հրեշտակս եղեալ. որք հպարտացեալ կործանեցան: - 458. Յասիցելոցս ո՛չ ոքն *յարմարի* միաւորութեան փրկչին. բայց միայն երրորդն առաջնոյն...: - 476. Նիւթն ջուրն է. որ առաւել *յարմարի* մկրտութեան քան զայլ ամենայն հեղուկ նիւթ: - 487. Եւ թէպէտ ասացաւ ճշմարիտն թէ անապակա՛ն է մարմինն տն, այլ այժմ դիցուք զբանս նոցա թէ վասն է՞ր ասեն ապականացու. և *յարմարեսցուք* զպատասխանիսն: - 500. Յետ այսորիկ հարցանելի՛ է ի նոր օրինաց և յեկեղեցւոյ կարգաւորապէս ընդ մարդեղութեան բանին *յարմարեալ*. իբր պատճառելիք առ պատճառ նորին հետևեալ և շարադասեալ: - 528. Եւ առաւել *յարմարէ* քահանային զշնորհս հոգւոյն սրբոյ բաշխել, քան թէ զանձն: - 625. Այլ և տեսցուք զվկայութիւնս հակառակացն և *յարմարեսցուք* զպատասխանիսն, զի առ ձեռն պատրաստ լիցի: - 695. Երրորդ՝ զի առաւել *յարմարի* օրինակս ճշմարտութեանն: - 720. Երրորդ, *յարմարի* տեղիքն այն՝ դատաստանին աստուծոյ որ անդ լինելոց է. այսինքն գործ ողորմութեան և գործ արդարութեան...: - 738. Իսկ լուծումն հարցմանցս այսոցիկ, ո՛չ ամենևին օտարածայն աւելորդս խուզեալ. և ո՛չ գեղջուկ իմն աշխարհական խօսից *յարմարեալ*: - 772. Եւ այսպէս *յարմարին* սոքա երից որպիսութեանց մերոց: - 774. Առաջինն ադամայ. որ է՛ տիրապէս *յարմարեալ*: - 778. Այսպէս բարւոք տեսցես ինձ յամենայն ուրէք ըստ ժամանակի զգործս *յարմարեալ*: - 780

**ՅԱՐՄԱՐՈՒԹԻՒՆ +** Եւ այսպէս է *յարմարութիւն* դոցա: - 240. Եւ առ հասարակ ասեմ զայս դնել ի մտի. զի չափաւորութիւն անդամոցն ըստ ձևոյն և ըստ գունոյն և ըստ քանակութեան և ըստ կազուածոյն և ըստ շարժմանն, նշանակէ զբարի մտացն ընդաբոյս *յարմարութիւնն*: - 248. Եւ որ ոք կամեսցի զդարձն, անդրէն ի ձեռն նորին *յարմարութեան* այսինքն նորին կարգին կարողանայ ելանել ի նոյն: - 280

**ՅԱՐՈՒԹԻՒՆ +** Դարձեալ անդրանիկ եղև *յարութեամբն*...: - 41. Նա և ո՛չ *զյարութիւն*, և ո՛չ զհրեշտակ: - 51. Կեանք է և որդի որ ասաց, «ե՞ս եմ *յարութիւն* և կեանք»: - 57. Ապա ուրեմն և ո՛չ էր *յարութիւն* և ո՛չ կենաց տըւօղ, եթէ ո՛չ էր միաւորեալ ընդ կեանքն յաւիտենական: - 74. Քսաներորդ՝ որպէս բարձրագոյնքն կարեն ասիլ մարմնոյն վասն միութեանն՝ որպէս աստուած, *յարութիւն*, և կեանք յաւիտենական: - 74. Իսկ սուրբն կիւրեղ ընդ դէմ նեստորի զինէր. որ ասէր բնակութեամբ զբանն ի մարմնի. և նախ զմարդն ծնեալ ի կուսէն և շրջեալ ի յերկրի, և յետոյ բնակեալ բանն աստուած յետ մկրտութեանն. և յետ *յարութեանն* փառաւորեաց զնա և զօրացոյց յարակցութեամբ ընդ ինքեան: - 79. Ա՛րդ՝ եթէ՝ ի *յարութեանն* հասարակ արդարք տեսանեն զաստուած դէմ յանդիման որպէս և է, և քրիստոս ո՛չ կարէ տեսանել, փո՛քր լինի գիտութեամբ քան զմարդ որ է սուտ: - 99. Ա՛րդ՝ ճանապարհո՛րդ էր ըստ մարմնոյ տնօրէնութեանն մահւամբ և *յարութեամբ* մտանել ի փառս: - 100. Եւ զի յետ մահու և *յարութեան* ո՛չ գոն այսոքիկ պատճառք՝ անմոռանալի մնայ իմացումն: - 120. Այս է յղացմամբ յարգանդի և ծննդեամբ. և քարոզութեամբ. և մահւամբ. և *յարութեամբն* և համբարձմամբն առ հայր՝ իբր զպսակ տարւոյ կատարեալ բնութեամբ մեր՝ ի ներքին կողմն վարագուրին մտեալ: - 126. Իսկ ի *յարութեանն* և այսպէս հրեշտակաց հաւասարին իմացմամբ՝ կատարեալ անձամբ՝ անքանակ մարմնով՝ և անփոփոխ: - 141. Նմանապէս և այս փոխի ի *յարութեանն*, և հրեշտակաց հաւասար լինի և հոգւոյն: - 141. Այսպէս և ի *յարութեան* արդարոցն: - 141. Ո՛չ են յաւերժահասունք որպէս ոմանք կարծեն թէ յերկուց տարերց այսինքն ի հրոյ և յօդոյ են բանական կենդանիք և ունին ծնունդ և մահ. սուտ է այսպիսի կարծիքս և ընդունայն և հակառակ սուրբ գրոց. զի բանական կենդանի և մահկանացու՝ մարդս միա՛յն է որոյ *յարութիւն* և դատաստան գոյ: - 150. Խաւարի՝ մահու՝ և *յարութեան* է նշան: - 186. Յարեգական օրն կոչեցին կիրակէ. որ է՛ տէրունական վասն *յարութեան* տեառն: - 190. Չորրորդ՝ պատուեցաւ *յարութեամբն* քրիստոսի. և իջմամբ հոգւոյն սրբոյ ի դասս առաքելոցն: - 193. Հինգերորդ՝ օ՛ր է հասարակ *յարութեան* մարդկան. և գալստեանն քրիստոսի. և հատուցման ըստ իւրաքանչիւր գործոց: - 193. Եւ դարձեալ այսպէս զանազանին սոքա երեքեան աւուրք. այսինքն առաջին օր ստեղծման. և միջին մինչ ի կատարած. և վերջին օր *յարութեան*: - 193. Իսկ գիշեր *յարութեանն* քրիստոսի՝ փոխեաց զայս կարգ. զի *յարութեամբն* իւրով եհան զմեզ ի լոյս շնորհաց և արդարութեան: - 194. Իններորդ՝ կենսատու չարչարանաց ժամանակ. թաղման և *յարութեան*. նաև համբարձմանն: - 196. Տասներորդ՝ այլև օրինակ և յարացոյց նմանատիպ հասարակաց *յարութեան* և նորոգման տիեզերաց և մարդկային բնութեանս որ յապագայն: - 196-197. Եւ յետ *յարութեանն* ընդունի զպտուղ. որ է՛ պարգևք խոստմանց անվախճան կենացն: - 213. Վեցերորդ՝ զի ասէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս կազմութեան եթէ առաջին կեանք դրախտին էր կուսութիւն և անապականութիւն և հրեշտակաց

նմանութիւն. և յետ *յարութեանն* վերըստին դառնամք յառաջին կեանս դրախտին. յանապականութիւն և ի հրեշտակաց հաւասարութիւն: - 225-226. Ա՛րդ՝ եթէ առաջին կեանքն էր անուսնութեամբ և որդէծնութեամբ որպէս նոքա շաղակրատեն. ապա և ի վերջին *յարութեանն* նոյնպէս է՛ լինելոց: - 226. Եւ ի *յարութեանն* մեր՝ այսպէս լինին ամենայն մարմինք սրբոց: - 228. Տասներորդ՝ զի յայսմանէ հաստատեսցի ի մեզ հաւատ *յարութեանն*. որպէս զառաջինն ի հողոյ ստեղծ զմեզ, դարձեալ ի *յարութեանն* ի նոյն հողոյն լուծեալ և փոշիացեալ՝ յարուցանէ աստուած: - 229. Եւ դարձեալ՝ լսելն խափանի ի *յարութեանն*: - 239. Եւ դարձեալ զնոյն շնորհաց հոգին յետ *յարութեանն* փչեաց յառաքեալսն ասելով՝ «առէք հոգի սուրբ»: - 253. Դարձեալ՝ մարդո՛յն է *յարութիւն* կենաց. և դատաստանի վասն հոգւոյն՝ զոր ո՛չ ունին այլ կենդանիք: - 275. Իսկ այն որ ինքն զգեցուցանէ, նշանակէ՛ զինքնազգեստ փառս անմահութեան, զոր այժմ զգեցոյց քրիստոս շնորհօք, և յետ *յարութեանն* զգեցուցանէ փառօք: - 281. Եւ թէ ոք ասիցէ, այսորիկ ի *յարութեանն* են լինելոց անկարօտ մարմնոցն: - 282. Ասեմք եթէ՝ զոր ինչ ի *յարութեանն* աւուր լինելոց է սրբոցն, զսկիզբն անդանօր սերմանեաց ի նախնի մարդն ադամ. զի թէ յիւրում ժամանակին կերեալ էին ի կենաց պտղոյն, լինէին կատարեալ անմահք. և փոխեին յարքայութիւնն: - 282. Տասնէ՝ Բաղդատութիւն մահու և *յարութեան* **ժ** գլխով: - 283. Եւ թէ՝ ի *յարութեանն* ո՛չ յառնեն մեռեալք: - 289. Այլ ի յամօթ առաջին կարծեացն՝ փոխեաց զենովք և ի հաւատ վերջին *յարութեանն*՝ վերացոյց զեղիա: - 289. Յինգերորդ ևս յայտնի. աստ կեան նահապետքն ժամանակաւ ընդ ամենայն մարդոյ. և յետ մահու ի մշտնջենաւորն ընդ հրեշտակաց. և յետ *յարութեանն* յանվախճան յաւիտենին թագաւորեալք ընդ աստուծոյ: - 291. Արդ որպէս հաւատով իմանամք հաստատեալ զյաւիտեանս որպէս ասէ առաքեալն. և նովին հաւատով իմանամք զկատարած կենցաղոյս և *զյարութիւն* մեռելոց և զդատաստան հատուցմանն: - 292. Նախ՝ որ անփուտ էր փայտն. և մարմին մարդոյս անփուտ և անապական է. և յա՛յտ է ի *յարութիւնն* անմահ: - 293. Չորրորդ՝ ի *յարութեանն* խնդրի ամենայն արիւն մարդոյ և ժողովի. վասն այն այժմ ո՛չ է ուտելի: - 295. Բայց յետ *յարութեանն* ասէր «մկրտեցէք զամենայն հեթանոս յանուն Երրորդութեանն»: - 305. Տասներորդ՝ վերջին և կատարեալ ծնունդ *յարութեանն*. զի մահ մարմնոյս է՛ սկիզբն և յղացումն յարութեան: - 308. Տասներորդ՝ վերջին և կատարեալ ծնունդ յարութեանն. զի մահ մարմնոյս է՛ սկիզբն և յղացումն *յարութեան*: - 308. Եւ անդանօր լինի անմահ և անապական ծնունդ և որդիք *յարութեան*. զի մեռանիլ ո՛չ ևս կարեն ասէ. վասն զի յանմահ զօրութենէն աստուծոյ ծնանիմք, և յանապական տարրեղէն նիւթոց. վասն որոյ անմահ և անապական կայանան: - 308. Եւ *յարութիւնն* է՛ սքանչելեօք և ըստ կարգի: - 314. Զի ի գալստեան տեառն կնատքն և թոյլքն ո՛չ թուին. այլ արիագոյնքն անխտիր. զի ի քրիստոս յիսուս արու և էգ ո՛չ է. ո՛չ ի մկրտութեանն և ո՛չ ի *յարութեանն*: - 315. Եւ ի սակաւ զօրութենէն նախքան *զյարութիւնն* չարչարէին դևքն, և աղաչէին թէ «մի՛ յառաջ քան զժամանակն տանջեր զմեզ»: - 316. Զմահ եբարձ մահւամբն, և զապականութիւն կորոյս *յարութեամբն*, անապական մարմնով յարուցեալ ի գերեզմանէն: - 317. Չորրորդ՝ ի խորհուրդ *յարութեան* մերոյ, որ վերըստին գոյացուցանէ ի խաւարէ՛ գերեզմանին և ի լոյս հանէ և ուրախութեամբ զարդարէ՛ և փառաւորէ՛: - 321. Երկրորդ՝ զի յարիցեն ի *յարութեանն*: - 326. Իններորդ՝ յոբայ մարմինն նորոգեցաւ յետոյ. և տէր մեր խաչիւն նորոգեաց զպատկերն ադամայ և զծննդոց նորա *յարութեամբն* իւրով: - 327. Եւ այլն ամենայն բանք և գործք յոբայ ի տիպ օրինակի էր նորն ադամայ չարչարանաց թաղման և *յարութեան* որպէս յա՛յտ է ի գիրս պատմութեան նորա: - 327. Եւ տէրն յետ *յարութեանն* զխ օր ի վերայ օդոյդ: - 328. Նոյնպէս և տէր ի հօրէ և ի մօրէ. պայծառութեամբն ի թաբօր. մկրտութեամբն ի ջրոյ. և *յարութեամբն* ի գերեզմանէ՛: - 329. Զսոյն և մեզ պարգևեաց ծնանիլ ի ջրոյ, և ի հրոյ, և ի հոգւոյ, և *յարութեամբն* մարմնոյ. իսկ ի մօրէ՛ բնականապէս: - 329. Դարձեալ երիցս երևիլն է, զի աստ ի մարմնի հաւատով տեսանեմք զքրիստոս. և յետ մահու յուսով ի հոգիս մեր. և յետ *յարութեանն* սիրով միաւորիմք ի նա՛: - 341. Վասն այն ա՛ստ ի հաստատութեան երկնից ասեն զկայանս հոգւոցն մինչ ի կատարած *յարութեան* մարմնոց: - 346. ...զի ի մովսէս օրինակաւ՝ և ի քրիստոս ճշմարտութեամբ կործանեցաւ մահ. և ի *յարութեանն* առ հասարակ մեր: - 351. Դարձեալ՝ ծնանիմք վերջին հրով. և յառնեմք ի հողոյ *յարութեամբ*: - 353. Իսկ ի *յարութեանն* հրով: - 353. Զի նորահաս պտուղ եղև *յարութեամբն* մեռելոց, և նստելով ընդ աջմէ հօր: - 361. Այլ ամսամուտն է ծննդեան տօն. զի քրիստոս եղև մեզ ամիս ծննդեամբ և մահուամբ և *յարութեամբն*: - 373. Եւ եօթնից է տօնեմք *յարութեան.* նոյնպէս զմի օր օրինացն տըւչութեան, տօնեմք **ը** օր հոգւոյն գալստեան: - 373. Երրորդ՝ զի հաւասարք են **գ** տօնքս. որպէս ծննդեան և *յարութեան*՝ նոյնպէս և

հոգւոյն գալստեան **ը** օր տօնեմք: - 373. Եւ թէ ոք ասիցէ, ընդէ՞ր ծննդեան և *յարութեան* **ը** օրէք առնեմք և հոգւոյ գալստեան ո՛չ: - 373. Ասեմք նախ եթէ՝ ծնունդն և *յարութիւնն* մարմնաւոր էր. վասն որոյ մարմնապէս տօնեմք: - 373. Զի ի կեանս յայս հաւատով նուիրիմք. և յետ մահու յուսով. և յետ *յարութեան* կատարեալ սիրով ընդ քրիստոս միաւորիմք: - 375. Երկրորդ, խաչն՝ և մահն՝ և *յարութիւնն* **գ** օրեայ: - 380. Հինգերորդ՝ ի կեանս մեր՝ և յետ մահու՝ և *յարութեանն* հանգչիմք: - 380. Երրորդ՝ ի քանանացիս. յետ *յարութեանն* ընդ ոտխացն դիւաց: - 394. Եւ որք պարտին աստ, նոքա և յետ մահու և *յարութեանն*. զորս կորուսցէ փրկիչն մեր յիսուս: - 394. Եւ *յարութեանն* անփոփոխ հոգի և մարմին: - 394. Երկրորդ՝ ընդ երից գոյացութեանց մեր. աստ ընդ մարմնոյս. և ի մահն ընդ հոգւոյս. և ի *յարութեանն* ընդ մտաց տեսութեանն հակառակին: - 394. Երրորդ՝ ըստ օգտութեան աստ. զի փորձին ընտրեալքն. և յետ մահու շնորհաց. և *յարութեանն* փառաց լինին առիթք: - 394. Չորրորդ՝ չարութեամբ աստ մեղօք տանջեն. և յետ մահու առհաւատչեայ մասնաւոր. և ի *յարութեանն* յաւիտենական տանջանօք: - 394. Հինգերորդ՝ զրկելով աստ ի խոստմանէն լրոյ. և յետ մահու ի տեսութեանցն. և ի *յարութեանն* ի կատարմանցն: - 394. Վեցերորդ՝ աստ ի հանդիսից սխալէ. և յետոյ ի յըլնթացից. և ի *յարութեանն* յաղթանակաց պսակէն: - 394. Եօթներորդ՝ աստ չարախօսէ՛ ի ծածուկ. և յետ մահու յայտնի. և *յարութեանն* նս յայտնի առաջի դատաւորին և դատախազաց: - 394. Ութերորդ՝ աստ յեկեղեցւոյ ամօթ. և անդ ի սրբոց հոգւոց. և *յարութեանն* առաջի աստուծոյ և հրեշտակաց ոտխ լինելով: - 394. Իններորդ՝ զի ինքն սատանայ ունի բնութիւն և մեղք և պատիժ. բնութեամբ աստ զինի. և մեղօք յետոյ. և *յարութեանն* պատժակից իւր առնելով: - 394. Նոյնպէս յերեք տեղւոջ ոգորի. յերկրի՝ զի հանցէ յերկնից. և յօդ՝ զի արգելցէ. և ի *յարութեանն* զի ընկեսցէ ի հուրն: - 394. Երկրորդ՝ նշանակէ՛ զհոգիս սրբոց. որ տեսանեն զփառս, այլ ի *յարութեանն* առնուն: - 394. Իններորդ՝ թաղումն յարևմուտք է, և *յարութիւնն* արևելք: - 395. Տասներորդ՝ ի *յարութեանն* ո՛չ է մարմնական կերակուր և ըմպելի. այլ բանն աստուծոյ է կերակուր. որպէս այժմ հրեշտակաց յերկինս: - 397. Զի օր՝ ժամանակիս այս պատշաճի. և շաբաթ՝ մահուն հանգիստն. և ամիս՝ մինչ ի *յարութեանն*: - 399. Նշանակէր *զյարութեան* խորհուրդն յոր նոքա ո՛չ հաւատային. աստէն իսկոյն եցոյց *յարութեան* անուամբն. այսինքն «յարուցէ՛» ասելովն: - 402. Եւ ի վերայ այսր՝ կուսութեամբ ծնաւ մարդն ադամ ի հողոյ. և կուսութեամբ ծնանիմք յաւազանէն որդիս աստուծոյ. և կուսութեամբ ծնանիմք ի *յարութեանն* ի կեանս անմահ: - 404. Երրորդ՝ վասն հասարակ *յարութեանն*. զորմէ լուաւ սատանայ և բեկաւ ողն նորա: - 409. Նախ այս է միտքն, որ *զյարութիւնն* աստ ասաց: - 409. Երկրորդ՝ յորժամ երեսքն լուսաւորեցան որպէս ադամայն ի դրախտին՝ և ի *յարութեանն*: - 409. Երկրորդ՝ նշանակէ զմահ և *զյարութիւն* մեր. որ **լ** ամեայ յառնեմք. որպէս ադամ **լ** ամեայ ստեղծաւ: - 411. Երկրորդ՝ զփոփոխելի կեանքս սգան. և յուսով հանդերձեալ *յարութեանն* դադարին ի սըգոյ և ուրախանան: - 411. Երրորդ՝ զհանդերձեալ *յարութեան* խորհուրդն յինքեան ցուցանէր: - 411. **Քսաննե**, *Յարութիւն* որդւոյ այրւոյն: - 413. Եւ տէրն մեր ներէ՛ մեղաւորաց աստ ի կեանս և յետ մահու գիշերի. և ի ծագել լուսոյ *յարութեանն* ստուգութեամբ դատապարտէ՛: - 418. Եւ երիտասարդ հասակով յաւուր *յարութեանն* պսակեսցին: - 422. Ութերորդ՝ որպէս սուտ էր *յարութիւնն*, նոյնպէս սուտ է և խօսքն և կերպարանօք: - 430. ...իսկ յետ *յարութեանն* տանջանք անվճար և առանց հատուցման...: - 434. Զի՞նչ նշանակէ *յարութիւն* որդւոյ այրւոյն: - 444. Եւ որ ո՛չ եթող զոք մերձ. զի ո՛չ ոք լինի գործակից *յարութեան* մերոյ. որպէս և ո՛չ ստեղծմանն: - 444. Իսկ ի մահուն որ յարոյց զմեռեալն յորժամ մերձեցաւ ի յոսկերսն եղիսէի, ի տիպ մահուն քրիստոսի որ մահուամբն մեզ կեանք և *յարութիւն* շնորհեաց: - 446. Երեսուներորդ, Վասն *յարութեանն* քրիստոսի: - 455. Տասներորդ՝ արդարութիւն է ի մեռանիլն մեր. և ողորմութիւնն առհասարակ *յարութեանն*: - 458. Նա՛խ՝ զի գործ ողորմութեանն է ի սկիզբն աշխարհի՝ և ի մէջն. և ի կատարումն *յարութեամբ* մարդկան որպէս ցուցաւ ի վերոյ: - 458. Հինգերորդ ծնունդ՝ *յարութիւնն* ի գերեզմանէն: - 471. Նմանապէս և *յարութիւնն* մեր կոչի ծնունդ ի հանդերձեալ կեանսն...: - 471. Չորրորդ՝ *յարութեամբն*. ըստ որում «եղև անդրանիկ մեռելոց և պտուղ ննջեցելոց»: - 473. Վեցերորդ՝ փրկեաց ի կռամոլ դիւաց, և էած յաստուածպաշտութիւն հաւատոց. որպէս ասէր յետ *յարութեանն* «երթա՛յք մկրտեցէք զամենայն հեթանոս յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. և ուսուցէք նոցա պահել զամենայն»: - 473. Իսկ տէրն մեր էր անդրանիկ ի հօրէ և անդրանիկ ի մօրէ. և անդրանիկ շնորհաց և արդարութեան. և անդրանիկ *յարութեան* մեռելոց. վասն որոյ անդրանկապէս ընկալաւ զօրէնս թլփատութեան: - 486. Ոմանք ասեն թէ աւանդիլ հոգւոյն քրիստոսի, աւազակն եմուտ յերկրաւոր դրախտն ուստի ել ադամ. և չէ՛ հաւանելի. զի անդ մարմնովն

եմուտ յետ *յարութեանն*: - 495. Եւ յետ *յարութեանն* դուք ասէք թէ յանապականութիւն փոխեցաւ: - 500. Նաև յետ *յարութեանն* եկեր ընդ աշակերտսն անապական մարմնովն: - 501. Ասեմք, եթէ խոցուածն և արիւնն ցուցակ ապականութեան են, ապա և զայս խոցուածս եցոյց յետ *յարութեանն*. նաև ի կատարածի ցուցանելոյց է զամենայն խոցուածս վիրացն...: - 502-503. Այլ ա՛րդ՝ տէրն մահուամբ զմահ մեռոյց որ է՛ դժոխքն այժմ. և *յարութեամբն* եբարձ զապականութիւն մարմնոյ ի հանդերձեալն. ապա ուրեմն աւերեաց զդժոխս: - 506. Յերեկոյի շաբաթոյն ո՛չ վասն այն լուծանեմք թէ *յարութիւնն* քրիստոսի ի շաբաթի աւուրն է. ո՜չ. քա՛ւ և մի՛ լիցի: - 508. Այլ *յարութիւնն* քրիստոսի յաւուր միաշաբաթու ի մէջ գիշերի է: - 508. Այլ զշաբաթի երեկոյն նախատօնակ առնեմք *յարութեանն* քրիստոսի: - 508. Նմանապէս և աստ յայսմ աւուր շաբաթու որ ի կիրակէ *յարութեան* տօնեմք, այժմ յինն ժամուն ի վեր նախատօնակ առաեմք *յարութեանն* քրիստոսի. և այս վասն բազում պատճառի: - 509. Դարձեալ պատճառե՛ն թէ՝ յետ *յարութեանն* եկեր ձուկն ընդ աշակերտսն. յորում կրակեաղ կայծականց տեսին և ձուկն խորովեալ և հաց. և օրն էր չորեքշաբաթի. և ի **Ե** շաբաթի համբարձաւ: - 511. Նա՛խ՝ զի յետ *յարութեանն* ո՛չ էր պահք. այլ զատիկ մինչ փեսայն ընդ նոսա էր որպէս ինքն հրամայեաց: - 511. Ասեմք թէ՝ օր *յարութեանն* քրիստոսի կիրակէն է ըստ աւետարանչացն: - 512. Եւ ապա՛ յետ *յարութեանն* իջեալ հրեշտակն թաւալեցոյց զկափարիչ վէմն և նստաւ ի վերայ նորա և աւետեաց իւղաբերիցն: - 512. Երկրորդ՝ զի վարդապետք եկեղեցւոյ ո՛չ համաձայնին *յարութեան* ժամուն: - 512. Վասն զի ոմանք՝ որպէս մեծն ներսէս ի մեկնութիւն սաղմոսին որ ասէ «**է** անգամ յաւուր օրհնեցից զքեզ», ասէ թէ՝ յերեկոյի շաբաթուն է *յարութիւնն* քրիստոսի յորում լուսանայր կիրակէն. ըստ մատթէոսի «յերեկոյի շաբաթուն յորում լուսանայր միաշաբաթին»: - 512. Այլ որք ուղղաձևութեան են աշակերտք՝ ի մէջ գիշերի ասեն զժամ *յարութեանն* քրիստոսի ի գերեզմանէն. որոց հետևիմք և մեք և հաստատեմք բազում վկայութեամբ և օրինակաւ: - 512. Նա՛խ՝ զի մատթէոս զերեկոյի շաբաթուն և զլուսանալ միաշաբաթին յիշէ. այսինքն զսկիզբն և զվախճան գիշերին. զի յերկուց մէջն որ է՛ հասարակն և մէջ գիշերին՝ նշանակեսցէ զժամ *յարութեանն*: - 512. Հինգերորդ՝ պատճառ *յարութեան* մերոյ է *յարութիւնն* քրիստոսի: - 512. Ա՛րդ՝ *յարութիւնն* մեր է՛ ի վերջնումն կիրակէն ի մէջ գիշերի...: - 512. Ապա ուրեմն *յարութիւնն* քրիստոսի է՛ ի մէջ գիշերի յաւուր կիրակէի որպէս ասացաւ: - 512. Եօթներորդ՝ դարձեալ յաւուր կիրակէի էանց մովսէս ընդ ծովն կարմիր. և ընկղմեցաւ փարաւօն ի տիպ *յարութեանն* քրիստոսի և կորստեան սատանայի: - 512-513. Որ նշանակէ՛ *զյարութիւնն* քրիստոսի ի մէջ գիշերի զդրունս դժոխոցն խորտակեալ. և զհոգիսն հանեալ ի լեառն երկնային: - 513. Ապա ուրեմն ի գիշերի է *յարութիւնն* քրիստոսի: - 514. Հնգետասաներորդ՝ ի մէջ գիշերի՛ է *յարութիւնն*. որպէս ասէ ոսկէբերանն ի *յարութեան* ճառին, և սուրբն նիւսացին, և բարսեղ կեսարացին, և գրիգոր սկևռացին, և այլք, - 514. Ութևժ՝ ի մէջ գիշերի է *յարութիւն* փրկչին, վասն որոյ յերեկոյն մերձ ի մուտս գիշերոյն ճրագալոյց առնեմք և պատարագ որպէս ի ծննդեանն: - 514. Ապա թէ ի լոյս կիրակէին էր *յարութիւնն*, պա՛րտ էր յառաւօտին առնել պատարագ և ո՛չ յերեկոյին: - 514. Քսաներորդ, յա՛յտ է յա՛յսմանէ՝ որ նախ քան զքրիստոս՝ էր սկիզբն աւուր ծագումն լուսոյն. իսկ յետ *յարութեանն* քրիստոսի եղև սկիզբն աւուրն ի մէջ գիշերի. զի այժմ ի խաւարէ՛ ի լոյս ճանապարհորդիմք: - 515. Ասեմք նախ՝ թէ *յարութիւնն* ի մէջ գիշերի է որպէս ցուցաւ. այլ երևիլն ընդ արշալո՛յսն է: - 515. Եւ սոյնպէս շաղփաղփ երևէին բանք նոցա. և տեսիլքն սակայն ամենայնք՝ զմի և զնոյն *յարութիւնն* պատմէին: - 515. Եւ մեք ի հասարակ *յարութեանն* երեսնամեայ յառնելոց եմք: - 516. Եւ յերեկոյի շաբաթուն յորում լուսանայր միաշաբաթին լինի *յարութիւնն* քրիստոսի ըստ մատթէոսի: - 516. Երրորդ սոյնպէս ասեն, ընդ տիւն և ընդ գիշերն **գ.** որ է՛ ուրբաթն, և շաբաթի գիշերն, և շաբաթի օրն. և յերեկօրեայ *յարութիւնն*: - 516. Եւ այսպէս սովորաբար խօսիմք, թէ յուրբաթի կէս օրն ելեալ ոք ի տեղւոջէ՛ մինչև գայ առ մեզ ի լոյս կիրակէին կամ ընդ առաւօտն, ասեմք թէ **գ** օր է ճանապարհին. նոյնպէս և *յարութիւնն* քրիստոսի: - 516. Եւ սոքա ամենայն ստուգե՛ն *զյարութիւն* նորա թէ ո՛չ է գողացեալ. զի գողն ո՛չ ծալէր զվարշամակն և զկտաւն զմռեալ: - 517. Նա՛խ՝ ոմանք ասեն թէ մարդկօրէն կամէր իմանալ զնա և հարցանել վասն խաչին և դժոխոց և *յարութեանն*. իսկ այս կատարեալ մտաց պէտք էին և շա՛տ ժամու: - 517. Եօթներորդ, կամ թէ եգիտ ի նա երկեւան ինչ թերութեան վասն *յարութեանն*. իբր զի ասէ յայսմ գիշերի մերձեցայք յոտս իմ և ո՛չ հաւատացեր. վասն այն կրկին անգամ ո՛չ հրամայէ մերձենալ: - 517. Յայսմիկ յայտ արար թէ ի *յարութեան* անդ ո՛չ դառնայ ոք յոք. ո՛չ հայր յորդիս՝ և ո՛չ որդիք առ հարս իւրեանց. այլ դառնան ամենեքեան յայս. զի արժանի լիցին ողորմութեամբ ելանել առ հայր: - 517. Երկոտասաներորդ, «մի՛

մերձենար», եցոյց թէ` որք յետ *յարութեանն* և վերանալոյն յերկինս կամին մերձենալ ի մարմին նորա առաքինութեամբ և սրբութեամբ, զախտս հոգւոց ի բա՛ց ընկեսցեն և մի ունայնապէս մերձեսցին ի նա: - 518. Յնգետասաներորդ, զի բաւական համարեցաւ ի պատիւ կանանց զայն` զի յառաջագոյն մերձեցաւ ի նոսա ծննդեամբ. իսկ յետ *յարութեանն* կամի՛ զի ա՛րք նախ մերձեսցին ի նա մինչ դեռ ո՛չ է ելեալ նա առ հայր: - 518. Իսկ ասելն «չե՛ ևս ելեալ եմ առ հայր իմ», ցուցանէ թէ որպէս նախ զչարչարանսն և *զյարութիւնն* ասաց վասն չարչարանաց և *յարութեանն*: - 518. Եւ դարձեալ` որպէս զայլ կանխայսն արար աւետաւորս *յարութեան* իւրոյ. սոյնպէս և զմագդաղենացին վերանալոյն առ հայր: - 518. Եւ վասն *յարութեանն* քրիստոսի այս քան: - 518. Նա՛խ` զի հաստատեսցի *յարութիւն* իւր բազում կերպիւ: - 520. Երրորդ` վասն մխիթարութեան աշակերտացն. զի **խ** օր մխիթարեսցէ զնոսա փոխանակ **խ** ժամուն որ տրտմեցան ի մահն քրիստոսի. որպէս ասացաւ թէ *յարութիւնն* ի մէջ գիշերի, այլ երևեցաւ ընդ արշալոյսն առաքելոցն...: - 520. Երկրորդ` ի կողմանէ ընդունողաց առաքելոցն. զի պատշաճաւորեցան հոգոյն սրբոյ. զի փորձիւ գիտէին զվարդապետութիւնն քրիստոսի, զմահն և *զյարութիւնն* և զայլն: - 521-522. Այլ և հանդերձելոյն զի է շաբաթէ ի *յարութենէն* քրիստոսի...: - 524. Երկրորդ զատիկ *յարութիւնն*: - 524. Նախ` զի յետ *յարութեանն* հաւասար ետ զիշխանութիւնն. փչեաց ի նոսա...: - 546. **Եւ բաժանեալ զսուրբ տեղիս տնօրինական, ետուն զսուրբ յակոբն պատրիարգարան, և զգողգոթայն, և զսուրբ կարապետոն և զննարսն. և արկեալ վիճակս ի վերայ *յարութեանն*` անկաւ հայոց. և տրտմեցան ոմանք յազգէ նոցա**: - 548. Եւ նա՛ խնդրեաց յաստուծոյ զիջումն լուսոյն ի նշան *յարութեանն* քրիստոսի: - 549. Որպէս ահա՛ յերկոսեան ճրագալոյցսն այսինքն ի ծննդեանն և ի *յարութեանն* միաբանին հայք և յոյնք և ասորիք. իսկ լատինք ո՛չ: - 554. Վասն զի սոքա պատարագ մատուցանեն ի նախատօնակ ծննդեանն և *յարութեանն*. և լատինք ո՛չ: - 554. Վեցերորդ վասն *յարութեանն* ի մեռելոց: - 572. Տասներորդ վասն մարմնոց ի մեռելոց *յարութեան*: - 572. Նաև *յարութիւն* մարմնոյ: - 573. Նոյնպէս և այժմ սրբոց և երանելեաց յոյսն է հանդերձ ստուգութեամբ տեսութեանն. զի դեռևս հանդերձեալ է նոցա մարմնոցն *յարութիւն*. և փառք և պսակքն ըստ իրին: - 574. Եւ յայսցանէ յայտէ, զի յետ *յարութեանն* ի վերինն գաւառ ոչ գոյ յոյս. զի է՛ անդ երանութիւն, որ է ստացումն ամենայն բարեաց. բոլորն համանգամայն և կատարեալ. և ոչ ինչ է ապառնի յոր յուսացեալ լինի: - 574. Նոյնպէս և մեք նախ մեռանիմք մարմնով. և ապա կենդանանամաք ի *յարութեանն*: - 592. Եւ յետ *յարութեանն* փչելովն զհոգին` արար զնոսա Եպիսկոպոսունս: - 607. ...և ապա՛ ի յերկրէ յարուցանէ զմարմինս. որպէս այն որ հրեշտակապետն նստեալ ի վերայ վիմին փողէր *զյարութիւնն* քրիստոսի: - 618. Եւ է՛ առաջին ժամ աղօթիցն ի մէջ գիշերի. վասն զի ի մէջ գիշերի յարեաւ քրիստոս. և ի մէջ գիշերի հասարակ *յարութիւն* մեր. - 621. Եւ դարձեալ` **գ** է որպիսութիւնք մեր և փոփոխմունք. որ է՛ աստի կեանս. և յետ մահուն. և յետ *յարութեանն*...: - 623. Նոյնպէս և **ը** ձայն եղանակաց. և **ը** օրեայ զտօնս գլխաւորս. որպէս ծննդեանն ութն օր. և *յարութեանն*` և հոգւոյն գալստեանն` և խաչի` և եկեղեցւոյ` և այլն: - 627. Երկրորդ, զի *յարութեամբն* իւրով յարոյց զմեզ քրիստոս: - 627. Երրորդ, ի *յարութեանն* յորժամ փողն գոչէ` յառնեմք և յառաջ ընթանամք քրիստոսի: - 627. Այլ և առընթեր *յարութեան* աւետարանն. զի նո՛յն է խորհուրդ ծննդեանն ի կոյս մօրէ և ի կոյս գերեզմանէ: - 628. Արի տէրն, աղերս *յարութեանն:* - 628. Այլ և յետ *յարութեանն* երևեցաւ մեզ: - 628. Նա՛խ` երեխայքն ուխտեցին հրաժարիլ ի սատանայէ՛. և ի մեծի զատկին մկրտելովն իէլ. և ապա ուխտ ապաշխարութեան պահոցն. և *յարութեանն* տեսանել զքրիստոս. աստ և անդ: - 629. Այլ և զկարգն *յարութեան*` սորա՛ է ասացեալ մեծն վարդան ի տեսութիւն անթառամ ծաղկին: - 637. Եւ դարձեալ` վերջին *յարութիւնն* և լիճն հրոյ: - 640. Զի մեծ զատկի կիրակէն առաջի ձայն լիցի. որ *զյարութեանն* ունի խորհուրդ: - 641. Ի կիրակէն *յարութեան:* - 642. Եւ այս է պատճառն, զի կիրակին տէրունի թարգմանի. և օր է ստեղծման աշխարհի, և *յարութեանն* քրիստոսի, և միւս անգամ գալստեանն: - 642. Զի *յարութեանն* փառք` խաչն ցուցաւ: - 642. Այլ և հանգստեան ասեմք. նշանակ առ հասարակ *յարութեանն*. ննջեցելոցն մեր մաղթանք: - 642. Նախ ասել աւետեաց, և ապա՛ ծննդեան. և գալստեան. և խաչի. և *յարութեան*. և համբարձման. և հոգւոյ գալստեան. և վարդավառի. և փոխման: - 642. Այլ և *յարութիւնն* կատարումն է տնօրէնութեանցն. վասն այն զեսայի ընթեռնումք: - 644. Կամ որպէս յետ *յարութեանն* պետրոս նախ ետես զքրիստոս...: - 644. ...այլ յետ մահուն և *յարութեանն* առնուն զկատարեալ փառս...: - 647. Վասն է՞ր ութօրէք միայն ծննդեանն է և *յարութեանն* առանց պահոց չորեքշաբաթի և ուրբաթի: - 649. Յինգերորդ *յարութեանն* եօթնիցս է: - 649. ...այլ վասն *յարութեանն* քրիստոսի բուն բարեկենդան կարգեցաւ...: - 651. և յինունքն

*յարութեան* խորհուրդ. զի ո՛չ է սուրգ և ո՛չ տրտմութիւն և ո՛չ ցաւք: - 654. Եւ յետ *յարութեանն* այն սովորութեամբն ծանեան զնա...: - 655. Եօթնն**ժ**, Վասն առաջին *յարութեանն* հոգևոր: - 660. Քսաներորդ, Վասն *յարութեան* մարմնոյ. և սահմանի նորա: - 660. Այսպէս և ի *յարութեանն* սուրբք զայսպիսի փոփոխմունս ո՛չ ունին...: - 663. ...զոր ի *յարութեանն* աւուր զանփոփոխ սերտութիւնն ստասցի: - 667. Եւ մահն սկիզբն է պսակացն. և *յարութիւնն* կատարումն...: - 667. ...որպէս ասէ սուրբն դիոնէսիոս եթէ՝ հոգին և մարմինն առցէն ի բոլոր *յարութեանն*: - 667. Նախ աստ հոգի մարդոյն է ի մէջ չարեաց և բարեաց. իսկ յետ մահու ի մէջ բարեաց միայն. և ի *յարութեանն* ի մէջ բարեաց և փառաց: - 667. ...և *յարութիւնն* է կատարումն պսակաց և երանութեանց: - 667. Եւ դարձեալ՝ աստ հաւատոյն է. իսկ յետ մահու յուսոյն. և ի *յարութեանն* սիրոյն: - 667. ...իսկ յետ *յարութեան* սերտ և անքակտելի սիրով միաւորիմք. - 667. Եւ յետ *յարութեան* ո՛չ կարէ մեղանչել զի անկա՛ր է մեղանչել: - 667. Եւ յետ *յարութեանն* ո՛չ կարէ արդարանալ զի անկատա՛ր է...: - 667. ...յայնժամ յայտնի և մերձակայ տեսանէ զամենայն փառս և զպսակ զոր ընդունելոց են նոքա ի *յարութեանն* աւուր...: - 668. Եւ այնպէս յարաժամ տեսանէ զցաւս մերձ ինքեան և առ ինքն ի չար գործս իւր անբաժանելի ի նմանէ մինչ ի *յարութեանն* օր...: - 669. Այլ երկոքինն ունին ի հոգիս իւրեանց մերձ տեսեալ՝ զոր ի *յարութեանն* առնելո՛ց են կատարեալ անձամբ՝ հոգւով և մարմնով...: - 670. Երրորդ կոչի կարգ, զի զոր ինչ մեք առ մարմին ննջեցելոցն կատարեմք, զնոյն կարգ և հրեշտակք առ հոգիսն կատարեն այժմ և ի *յարութեանն* աւուր: - 671. ...և **բ** հրեշտակք դարձեալ բերեն ի յերկիր ի *յարութեան* աւուրն: - 671-672. ...և նա դնէ յեկեղեցին մերձ առ դուռն որ նշանակէ զկայանք հոգւոցն յերկինս ի վերջին տեղւոջ մինչ ի *յարութեանն* օր: - 672. Վեցերորդ, զբոլոր մարդոյն *յարութիւնն* և զբոլորին փրկութիւնն և զսրբութիւնն նշանակէ որ է՛ հոգին և մարմինն...: - 672. Զի ցուցցէ թէ նմանապէս լինելոց է ի *յարութեանն* հանգիստ նոցա ի կարգս իւրեանց: - 674. Վեցերորդ, որպիսութիւն կենաց մեր **գ** է. այսինքն այժմու կեանս. և յետ մահու. և յետ *յարութեանն*: - 675. ...և յետ *յարութեանն* ո՛չ կարեմք մեռանիլ և յառնել...: - 675. Տասներորդ, զի թաղելն նշանակէ *զյարութիւնն*...: - 677. ...զի ի *յարութեանն* ի միասին պսակեսցին և փառաւորեսցին: - 677. ...յա՛յտ է զի նոյն մարմին շարժի և շինի ի *յարութեան* աւուրն: - 678. ...այսպէս և քար տապանիս մեր լիցի. նշանակէ՛ զանապական *յարութիւնն*. որ վիմածին լինիմք և առանց ապականութեան որպէս քրիստոս. և ո՛չ հողածին ապականացու որպէս զառաջին ադամն: - 679. ...այսօր հոգևոր ջրով դարձեալ ոռոգանեմք, զի բուսցի ի գարնանաշարժ *յարութեանն*: - 680. և այս առաւօտս է ի խորհուրդ *յարութեան* յառաւօտն վերջին: - 680. Զի արեգական ծագելն զծնանիլն մեր նշանակէ. և մուտն զգերեզմանն. իսկ այս առաւօտ *զյարութիւնն* հասարակաց: - 680. ...և *յարութիւնն* միանալ սիրով ընդ փեսային քրիստոսի և մտանել յառագաստն ընդ իմաստուն կուսիցն: - 681. ...և աւետիս *յարութեան* տամք նոցա. և տեսեալ հոգով ուրախանամք: - 681. ...և ապա յետ *յարութեանն* ի կատարածի միանգամայն մտանեմք ի սուրբն սրբոց որ է արքայութիւնն երկնից: - 682. Ամիսն նշանակէ մինչ ի դատաստանն. և տարին *զյարութիւնն* յաւիտենից. - 683. Նա՛խ՝ որպէս մեք ի կիրակէ ուրախացաք և վայելեցաք ի շնորհաց *յարութեանն* քրիստոսի, ի միւս օրն և զնոսա մասնաւորեմք: - 684. Դարձեալ, ի կիրակէ *յարութեանն* քրիստոսի տօնեմք. և յերկուշաբաթին՝ նոցա սրբոցն որք ընդ քրիստոսի յարեան և մտին ի քաղաքն սուրբ: - 684. Այն է որ յետ *յարութեանն* քրիստոս եմուտ ի վերնատունն և օրհնեաց զաշակերտսն: - 684. Նախ ասեն թէ՝ յաւուրսն յայնոսիկ յարեան մանկունքն յեփեսոս ի վկայութիւն առ հասարակ *յարութեանն*, զնոյն յիշատակեմք: - 684. Եւ դարձեալ, զի ի **խ** օր պահոցն մինչ ի *յարութիւնն* ղազարու այլ հանգստեան ո՛չ տօնեմք: - 684. Զի այժմ հոգւով են առ նա. և յետ *յարութեանն* հոգւով և մարմնով: - 688. Զի այժմ յուսով են յերկինս և առ երկինս. և յետ մահու հոգւով. և յետ *յարութեանն* հոգւով և մարմնով յանճառելի փառսն: - 689. ...և ի *յարութեանն* առնուն զփառս հատուցմանց հոգւով և մարմնով. և այնպէս փառաց ի փառս բարձրանան որպէս ասի յերգս: - 689. Եւ այսպէս ամենայն առաքինութիւն աստ հանգուցանէ զմիտս. և յետ մահու զհոգիս. և *յարութեանն* զհոգի և զմարմին: - 689. Նոյնպէս կրկին է և տանջանք չարաց. այսինքն տանջանք գործոց ըստ ինքեան, և տանջանք հատուցման, զի զտանջանք գործոցն կրեն յետ մահու. և զտանջանք հատուցման ի *յարութեանն* հոգւով և մարմնով: - 690. Զի գործք չարութեան այժմ դատէ՛ խղճիւ զմիտս. և յետ մահու զհոգիս. և յետ *յարութեանն* զհոգի և զմարմին որպէս ասացաւ: - 690. Երկրորդ, ասէ սուրբն դիոնէսիոս ի ննջեցելոց կատարմանց գլուխն՝ եթէ մաքրելոց հոգին հասեալ ի վախճան՝ յայտնի և մերձակայ տեսանէ զամենայն փառս և զպսակ զոր ընդունելո՛ց են նոքա ի

*յարութեան* աւուրն: - 691. Արդ այժմ ի մկրտութիւնն հաւատն նշան դնի հարսին. և յետ մահու յուսով կոչի ի հարսանիս. և յետ *յարութեանն* սիրով միաւորի ընդ փեսային: - 693. Ջքուն մահուն ասէ մինչ ի կատարած. և ի մէջ գիշերի *յարութեանն* աւուր յարեան ամենայն կուսանքն և կազմեցին զլապտերս: - 693. Քսանևէ, զի թէ ամենայն ոք առնու այժմ զվարձս կամ զտանջանս, ապա ո՛չ գոյ *յարութիւն*...: - 694. ...զի *յարութիւն* վասն հատուցման գործոցն է: - 694. Եւ այսմ հետևի աղանդն սադուկեցւոց որ ասէին չիք *յարութիւն*: - 694. Երեսուներորդ, յա՛յտ է յորպիսութեանցն չորից որ ասացաւ յառաջագոյն եթէ աստ հոգի մարդոյն է ի մէջ բարեաց և չարեաց. իսկ յետ մահու ի մէջ բարեաց միայն. իսկ ի *յարութեանն* ի մէջ բարեաց և փառաց: - 694. Նմանապէս և մեղաւորքն անդ ի *յարութեանն* ի մէջ չարեաց և տանջանաց: - 694. ...այլ սկիզբն է ի մահն, և կատարումն ի *յարութեանն* որպէս ասացաւ: - 697. Նա՛խ՝ զի առաքեալն զանազանեաց զտեսանելն յետ մահու՝ և զպսակն ի *յարութեանն*: - 697. ...իսկ միջակ արդարքն որ են ի կայանս հոգւոցն՝ և զտեսանելն պայծառապէս ընկալցին ի *յարութեանն* դէմ յանդիման որպէս և էն...: - 697-698. Իսկ արդ ի *յարութեանն* հա՛րկ է զի միանգամ տանջեալ հոգին՝ միւս ևս ընդ մարմնոյն տանջեսցի որ է՛ անհնար...: - 699. Այլ թէ ոչ գոյ դատաստան, նաև ոչ *յարութիւն* մարմնոյ. և ոչ հատուցումն գործոյ. ապա և ո՛չ գալուստն քրիստոսի որպէս ասէ սուրբն կիւրեղ: - 700. ...ապա ի *յարութեանն* ո՛չ է բոլոր մարդոյն հատուցումն. այլ մարմնոյն միայն որպէս ցուցաւ: - 700. Ասեմք նախ՝ եթէ գնալ առ քրիստոս՝ վասն *յարութեանն* ասէ և զվերջին հուրն. - 703. ...որպէս և ամենայն աղօթք մեր վասն կատարածի և *յարութեանն* է, նոյնպէս և այս: - 703. ...մինչ ի *յարութիւնն* առցէ բոլորիւ բոլորապէս զփառս և զպսակս զանվախճան տեսութիւնն աստուծոյ: - 705. Զի այժմ կարծեմք. և յետ մահու յայտնապէս տեսանեմք զամենայն. և յետ *յարութեանն* առնումք զամենայն: - 705. ...և յետ *յարութեանն* առնու և կատարի: - 705. Եւ *յարութեամբն* իւր ազատեաց զկապեալ հոգիսն: - 705. ...և *յարութեամբն* եբարձ զապականութիւն որ է՛ խայթոց նմին: - 706. Եւ ոմանք յետ **զռ** ամին զեօթներորդն որ վախճանն է՝ *յարութիւն* ասեն միայն սրբոցն և կապիլ սատանայի: - 706. Եւ յետ մահուն և *յարութեան* նոցա՝ թագաւորեսցէ նեռն այլևս **ժ** և **ե** օր: - 709. Զի՞նչ է առաջին *յարութիւնն* և երկրորդն...: - 710. ...որպէս ասէ տեսիլն. այս է *յարութիւնն* առաջին: - 710. Ոմանք հերձուածօղք որպէս որոգինէս, առաջին *յարութիւն* ասաց զհազարամեայ արքայութիւնն...: - 710. ...եթէ սուրբք որ աստ չարչարեցան, յառնեն յառաջագոյն և փափկանան մարմնով **ռ** ամ. և ապա հասարակ *յարութիւնն* ամենայն մարդկան: - 710. Եւ զայս ասաց տգիտութեամբ զի կրկին *յարութիւն* մարմնական իմացաւ: - 710. Զոր վարդապետք եկեղեցւոյ այսպէս իմանան եթէ՝ կրկին է *յարութիւն*. այսինքն կեանք: - 710. Առաջին *յարութիւնն* է՛ հոգևոր, և երկրորդն մարմնաւոր: - 710. Առաջին *յարութիւնն* եղև առաջին գալստեամբ քրիստոսի. և այս երկակի: - 710. Նա՛խ՝ *յարութիւն* է շնորհաց. որ զթողութիւնն մեղաց ընկալաք և զհաւատն քրիստոսի: - 710. Եւ դարձեալ *յարութիւն* է հոգւոյ ելեալ և ազատեալ ի մարմնոյ և մտեալ առ աստուած, որ է յոգիս արդարոց կատարելոց: - 710. Եւ երկրորդ *յարութիւնն* որ է մարմնաւոր, և այն ևս կրկին է. նախ *յարութիւն* կենաց, և ապա *յարութիւն* փառաց...: - 710. Ապա ուրեմն ընդ դէմ այսմ չորեքկին *յարութեանս* չորեքկին է և մահ. այսինքն Նախ մեղաց և անհաւատութեան մահն: - 710. Ցուցանեն այսորքիկ զկատարեալ և զառաւել հանգիստ սրբոցն այժմ յուսով և յետ մահու հոգւով թագաւորեալ ընդ քրիստոսի. և ապա յետ *յարութեանն* հոգւով և մարմնով ո՛չ **ռ** ամօք. այլ անվախճան կենօք...: - 710. Այս քան վասն հոգևոր և առաջին *յարութեանն*: - 713. Նախ ձայն փողոյ է՛ հրամանն քրիստոսի որ հրամայէ՛ *զյարութիւնն*: - 713. ...որ զմեծամեծս աւետարանեն. և միջնո՛րդ են մահու և *յարութեան* մարդկան: - 713. Ի գարնան եղանակի ի զատկի կիրակէին ի մէջ գիշերի յորում ժամու յարեաւ քրիստոս և հրեշտակն թաւալեցոյց զվէմն և գոչէր *զյարութիւնն* քրիստոսի...: - 714. Գո՞յ *յարութիւն* մարդկան թէ ոչ: - 714. Թէպէտ բան *յարութեան* է ի մասնէ հաւատոյ, որպէս սկիզբն աշխարհի և վախճան...: - 714. Սակայն հաստատի *յարութիւնն* բնական քննութեամբ և սուրբ գրոց վկայութեամբ: - 714. ...ապա պիտոյ է և ա՛յլ կեանս զի հատուսցի բարեացն բարի և չարացն չար. և այս ո՛չ լինի եթէ ոչ իցէ *յարութիւն*: - 715. ...և այս ո՛չ լինի եթէ ոչ է *յարութիւն* մարմնոյ: - 715. Ապա ուրեմն գոյ *յարութիւն*. և այս ըստ բնականին: - 715. Այս *զյարութիւնն* ասէ ի ձեռաց գազանաց խնդրելն. զի յառնեն մարմինք որ մեռեալ են ի ձեռն գազանաց: - 715. Եւ հաւատարիմ վկայ ընդհանուր *յարութեանն* զգործս եցոյց. որ զղազար չորեքօրեայ ի գերեզմանէն յարոյց: - 716. Եւ զորպիսութիւն *յարութեան* մեր ի յաստուածացեալ մարմինն իւր երևեցոյց. - 716. Եւ բաւական է սակաւս ի բազմաց սուրբ գրոց վկայութիւն եթէ գոյ ճշմարտապէս *յարութիւն* մարդկան: - 716. Զի՞նչ է *յարութիւն*: - 716. Ոմանք ասեն

թէ՝ *յարութիւն* ո՛չ այլ ինչ է՝ քան թէ վերստին կենդանանալ: - 716. Այլ ոմանք ասեն թէ *յարութիւն* է այնմ որ անկաւ՝ վերստին յառնել ի կենդանութիւն յաւիտենական անմահ: - 716. Այլ գիտելի է, զի կրկին է մարմնաւոր *յարութիւն*: - 716. որպէս վեց մեռեալքն որք յարեան նախքան զքրիստոս. և *յարութիւնս* այս անկատար է. զի դարձեալ մեռան: - 716. Երկրորդ՝ է՛ *յարութիւն* զի յառնէ ոք միանգամ և այլ ո՛չ ևս մեռանի. և *յարութիւնս* այս կատարեալ է: - 716. Եւ այսպէս սահմանի եթէ *յարութիւն* է այնմ որ անկաւ մարմնաւոր մահուամբ՝ վերստին յառնել անմահութեամբ ի կեանս յաւիտենականս: - 716. Եւ այսպէս էր *յարութիւնն* քրիստոսի...: - 716. Այնպէս եղիցի և *յարութիւնն* մեր ի վերջինն աւուր: - 716. Այլ արդ՝ թէ օրըստօրէ յառնէր իւրաքանչիւր ոք, հաւատ *յարութեանն* խափանէր. զի հաւատն ոչ երևելեացն է: - 717. Հինգերորդ, զի մեծ ուրախութիւն է և տօն յորժամ համանգամայն ամենայն մարդկան յական թօթափելն լիցի *յարութիւն*, քան յայլ և այլ ժամանակս. - 717. Վեցերորդ, զի *յարութիւնն* է գործ սքանչելեացն աստուծոյ և ո՛չ բնութեան. զի բութիւնն հունաւորեալ է զօրութեամբ յերկար ժամանակս գործէ: - 717. Ապա վասն է՞ր եզեկիէլ յերկար ժամանակս նշանակէ *զյարութիւնն*...: - 717. Նոյնպէս և եզեկիէլ թանձրամիտ ժողովրդեանն *զյարութիւնն* ննջեցելոցն ի բազումս բաժանեաց...: - 717. ...այլ ի նոյն կէտն է *յարութիւն* և միաւորութիւն հոգւոյ և նորոգումն մարմնոյ: - 717. Առաքեալն պօղոս ո՛չ զայն ասէ թէ յապաղելով լինի *յարութիւնն*, այլ զկարգն ցուցանէ ոչ ժամանել ննջեցելոցն: - 717. Նա՛խ՝ եթէ համանգամա՛յն է *յարութիւնն* ի նոյն կէտն, այլ ննջեցեալքն նա՛խ յառնեն և ապա՛ կենդանիքն ընդ նոսա...: - 717. ...զի ննջեցելոցն միայն մին գործ է. այսինքն *յարութիւնն*. իսկ կենդանեացն մահն և *յարութիւնն*. զի նախ մեռանին ի նոյն կէտն և ապա՛ յառնեն: - 717. ...այլ մեռանին և իսկոյն լինի *յարութիւն* նոցա. յորում ո՛չ մարմինքն ի յերկիր անկանին և ո՛չ լուծանին: - 717. Գիտելի՛ է, զի ոմանք հերձուածօղք մոլորեցան վասն *յարութեան* մեռելոց և ասացին թէ մարմինն ո՛չ բաղկանայ ի չորից տարերց. այլ լինի պարզ: - 720. Ոմանք ասացին թէ ի *յարութեանն* մարմինք մարդկան ի հոգի փոխին: - 720. Եւ դարձեալ ոմանք ասացին թէ՝ ի *յարութեանն* մարմինք մարդկան օդային լինին կամ հողմային. զի երբեմն ի գրոց հողմ և օդ հոգի կոչի: - 720. Դարձեալ գիտելի է, զի պօղոս ի կորնթացոցն զհատ սերման՝ օրինակ տայ *յարութեան* մարդկան...: - 720. Նոյնպէս և ի *յարութեանն* մեռելոց «օրն ընտրեսցէ» ասէ առաքեալն. զի հուրբ յայտնելոց է: - 721. այս է պակասութիւնս ի *յարութեանն* բառնի և եօթն զարդ ընդունի: - 722. Առաջին պակասութիւն է հոգւոյն իմացականին խաւարն և տգիտութիւնն. իսկ ի *յարութեանն* բառնի այս ի հոգւոյն և լինի լոյս պայծառ՝ և գիտութիւն աստուածային տեսութեանն. - 722. Եւ այս գիտելի է, զի տէր մեր քրիստոս նախ քան *զյարութիւնն* զչորեսինս զայս եցոյց ի մարմին իւր: - 722. Վասն այսորիկ ասեն վարդապետք թէ՝ սրբոցն և անսրբոց **բ** իրք հասարա՛կ է. այսինքն *յարութիւնն* զի առհասարակ յառնեն. և անմահութիւնն զի առհասարակ անմահ և անապական մարմնով յառնեն: - 723. Վասն է՞ր ի *յարութեան* անմահ և անապական մնամք: - 723. ...իսկ ի *յարութեանն* անփոփոխ սերտութեամբ հաստատի ասէ սուրբն դիոնէսիոս. վասն որոյ անփոփոխ և անմահ միաւորի ընդ մարմնոյ: - 723. Իսկ ի *յարութեանն* յանփոփոխ յաւիտեանն ծնանիմք. - 723. ...վասն որոյ ի *յարութեան*՝ հրեշտակաց հաւասար յարուցանէ անմահ և առանց կարօտութեան. - 724. Եւ ա՛յս է պատճառ *յարութեանն*. զի ամենայն մարդիկ առնուցուն զվարձ կամ զպատիժ. կամ վասն իւրեանց գործոց, կամ վասն սկզբնականին: - 724. Ո՛չ յարիցեն ամբարիշտք ի *յարութիւնս* հոգևորս. այսինքն ի մեղաց ի շնորհքն. այլ յառնեն մարմնով: - 724. Եւ այս գիտելի է, զի *յարութիւնն* երիս իրս ուղղեսցէ ի բնութիւնն: - 725. Եւ սոքա ուղղին ի *յարութեանն*. զի գո՛րծ է կարօղ զօրութեանն աստուծոյ և ո՛չ տկար բնութեան: - 725. Եւ թէ ոք ասիցէ, բազում անդամք են կենդանականք, որպէս սիրտն լեարդն թոքն և այլքն որք ի *յարութեանն* ո՛չ են պէտք. զի ո՛չ է հարկ կենդանութիւն մարդկան: - 725. Ասեմք, թէպէտ այնպիսի անդամքն ո՛չ են պիտոյ ի *յարութեանն*, սակայն յառնեն վասն կատարելութեան և գեղեցկութեան...: - 725. Այլ և որպէս հրեշտակք զանազանին. նոյնպէս և ի *յարութեանն* փառօք և պսակաւն: - 725. Այլ և որպէս նախաստեղծքն ի դրախտին ո՛չ ամաչէին. նոյնպէս և սուրբք ի *յարութեանն*. զի ծածկեալ են ի ներքուստ հոգւոյն լուսաւորութեամբն, և արտաքուստ պսակաւն և փառօք: - 726. Եւ մեծ և փոքր ի *յարութեանն* եռակի ասի: - 726. Ի գոյից ո՞րք են մնացականք յետ *յարութեանն:* - 727. իսկ մարդիկ ի *յարութեանն* ո՛չ են կարօտ կերակրոյ զի անմա՛հ են. վասն այնորիկ նոքա ո՛չ յառնեն: - 727. Հինգերորդ, զի որդին ծնաւ ի կուսէն և յերկրի շրջեցաւ և քարոզեաց և չարչարանօք փրկեաց և պատճառ եղև ընդհանուր *յարութեան* բնութեանս մերոյ...: - 735. *Յարութիւն* մարդկան ի վայրկեան ժամանակի և յանկարծակի լինի որպէս

ցուցաւ ի վերոյ. այլ զյերկարութիւն ժամու քննութեան դատաստանին, ոմանք ժամ մի ասեն. որքան եկաց ընդ ադամայ ի քննութիւն հարցմանց յետ յանցանաց նորին: - 747. Այլ որ ուղիղն է տեսութիւն, յետ *յարութեան* փոխի ժամանակն ի յաւիտեան. և այլ ո՛չ գտանի մասն և րոպէ և ժամ. զի երկնային մարմինք դադարին ի շարժմանէ ուստի ժամանակն գոյանայ: - 747. Այլ զի մի՛ իրողութիւն դատաստանին և *յարութեան* ուրուական և առ աչօք թուեսցի ընդհանուր ամենայն մարդկան, վասն որոյ ասեն վարդապետք ի *յարութենէն* մինչ ի գալուստն և քննութիւնն և հրով նորոգիլն և այլն՝ յերկարի միջոցաւ որքան ժամս **զ**: - 747. Եւ զայս յայտնեն գիրք սուրբք. զի աւետարանն ի մէջ գիշերի ասէ զժամ *յարութեանն* ...: - 747-748. Ուստի երևի **զ** ժամս ի *յարութենէն* մինչ ի վճիռ հատուցման և կորստեան չարաց չորեքկին. այսինքն գործոց չարաց և պատժոց նոցին. պատճառաց դիւաց և հետևելոց մարդկան: - 748. Ի *յարութեանն* ապա զգայական կենդանի լինի՞: - 753. Կամ թէ ոստք փայտիս այսորիկ ասին եօթանքս այսոքիկ. այսինքն՝ քրիստոսի ծնունդն, մկրտութիւնն, չարչարանքն, ի դժոխս իջումն, *յարութիւն*, յերկինս համբարձումն, և հոգւոյն սրբոյ պարգևումն: - 755. Եւ ի *յարութեանն* զհարիւրաւորն յարքայութեանն երկնից: - 758. Այլ պարզաբար զնոյն ինքն կեանք դրախտին ի *յարութեանն* ո՛չ է իմանալ: - 758. Այսպէս և օդն յորս եկաց փրկիչն յետ *յարութեանն*, փոփոխեսցէ զբնական նսեմութիւնն իւր և պայծառասցի որպէս զեթերն: - 759. Յետ *յարութեանն* ո՞ւր և ո՞ր քան իցէ տեղիք բնակութեան: - 760. Որպէս ի թաբօր ծածկեաց զլոյս նորա. նոյնպէս և ի *յարութեանն:* - 760. Չորրորդ՝ ծառ կենաց կոչի տէր մեր յիսուս քրիստոս. ըստ որում փայտ դալար էր աստուածութեամբն. և մեզ կեանք և կենդանարար եղև *յարութեամբն* իւրով: - 768. Եւ երկու կատարումն. մի զմկրտութիւնն. և մի *զյարութիւնն* որում սպասեալ ակն ունիմք: - 769. Զի քև գեղեցկագոյն ի գերեզմանէն *յարութեան* քո հասից. և անդատապարտ եղէց յատենի քոյ առաջի հօր և հոգւոյդ սրբոյ: - 771. Որք տեսչութեամբն աստուծոյ՝ ի մեռելոցն զառհաւատաչեայն ընկալան *յարութեան*, թէ զիա՞րդ ոչ ունէին ի մտի զանտի կենացն ծանօթութիւն. պատմել մեզ խնդրի: - 774. Իսկ որք տեսչութեամբն աստուծոյ ընկալան զթերակատարն *յարութիւն*...: - 775. ...մարմնով մեռելոցն անթիւ օճիրս ստախօսութեան գործէր. զանտի կենաց *զյարութեան* յուսոյ և զհատուցմանց ըստ գործոց՝ բառնալով. զերկիւղ դժոխոց և զսէր արքայութեան. և զամենայն ինչ որ նմանէ այսմ հոգևոր բարութեան: - 775. Զի՞նչ է սիւնքն աշխարհիս որ դողային ի *յարութեանն* քրիստոսի ի մեռելոց: - 788

**ՅԱՐՈՒՄՆ +** Եւ զարուն, որ է՛ գայ ի *յարումն*: - 197

**ՅԱՐՈՒՑԱՆԵՄ +** Եւ թէ էր այսպէս՝ հետևէր ապա հօր զի արարեալ իցէ ա՛յլ աշխարհ. և հանդերձեալ. և շրջեալ յաշխարհի. սրբեալ զախտաժէտս. մեռեալս *յարուցեալ*. և ի վերայ ծովու գնացեալ: - 45. Հինգերորդ՝ *յարուցանել*՝ միայն աստուծոյ պատշաճի...: - 57. Զի թէ զբնութեամբն ասես, ստեա՛ց ուրեմն առաքեալն և աւետարանն. որք զքրիստոս ասեն *յարուցեալ* և համբարձեալ և նստեալ ընդ աջմէ հօր: - 70. **Նմանապէս ասի մարմնով չարչարեալ. և մարմնով մեռեալ. և *յարուցեալ*. և համբարձեալ: - 79. Այլ ո՛չ ասի մարդով չարչարեալ. և մարդով մեռեալ. կամ *յարուցեալ*. կամ համբարձեալ**: - 79. Տասներորդ՝ զի յայսմանէ հաստատեսցի ի մեզ հաւատ յարութեանն. որպէս զառաջինն ի հողոյ ստեղծ զմեզ, դարձեալ ի յարութեանն ի նոյն հողոյն լուծեալ և փոշիացեալ՝ *յարուցանէ* աստուած: - 229. Որպէս ասեն զշամիրամէ թէ՝ յորժամ սպանաւ արա ի պատերազմին, զայլ ոմն նման նորին պատւեաց և ասաց թէ աստուածքն *յարուցին*: - 238. **Զի աբրահամ հաւատով արդարացաւ. և մեք նովին հաւատովն աւազանաւն արդարանամք**...: - 303. Զմահ եբարձ մահւամբն, և զապականութիւն կորոյս յարութեամբն, անապական մարմնով *յարուցեալ* ի գերեզմանէն: - 317. Քսաներորդ՝ *յարուցեալ* առիւծն ցրուէ զհակառակս իւր: - 317. Նոյնպէս և տէր մեր *յարուցեալ* ի հայրական աթոռոյն՝ գայ ի դատել զերկիր...: - 317. Վասն է՞ր այնչափ դիմամարտս *յարուցանէր* բանսարկուն ի վերայ յոբայ. որպէս զկինն և զբարեկամսն և զծառայքն և զայլսն: - 325. ...**զդ**՝ անդամալոյծ միակողմանց բժշկութիւն. **էդ**՝ բորոտից սրբութիւն. **ըդ**՝ բոլոր մարմնոյն հիւանդաց և ջերմացելոց առողջութիւն. **թդ**՝ զդևսն հանէր. **ժդ**՝ զմեռեալսն յարուցանէր: - 328. Նա՛ կեղ և մուն *յարուցանէր* ի մարմին նոցա. և քրիստոս զբոր և զցաւս սրբէր ի մարմնոցն: - 328. Նա՛ մահ անդրանկացն ածէր. և քրիստոս զմեռեալս *յարուցանէր*: - 328. Զի՞նչ էր խորհուրդն որ յանուն եղբօրն զաւակ *յարուցանէին*: - 402. Որ ի կաւոյ աչք ստեղծ. և մեռեալս *յարոյց*. և զանշունչ նկանակս աճեցոյց. զոր ոչ արար մովսէս: - 411. Վհուկ կինն ո՞րպէս *յարոյց* զսամուէլ. կամ ո՞րպէս զառաջիկայն պատմէր: - 428. Վհուկք և դևք ո՛չ զառաջիկայն գիտեն և ո՛չ մեռեալս *յարուցանեն*: - 428. Այլ որպէս *յարուցեալն* նմանութիւն է և ո՛չ իսկութիւն, նոյնպէս և խօսքն սուտ է և ո՛չ ճշմարիտ: -

428. Եւ թէ նա՛ *յարուցանէր*, ընդէ՞ր երկու եհան. զի նա՛ միայն զսամուէլ խնդրէր: - 428. Զի թէ ինքն ձևացոյց մարմին և շունչ և *յարոյց* զնա, զիա՛րդ ոչ ճանաչէր: - 428. Ա՛րդ՝ թէ ճշմարիտ *յարոյց* կինն զսամուէլ. սաւուղ ո՛չ երկնչէր ի մահու. զի և զնա՛ *յարուցանէր*. և թէ երկեաւ, ապա սուտ էր կենդանութիւն մեռելոյն: - 429. Տեսցուք և այժմ զորպիսութիւն *յարուցելոյն*: - 429. Վեցերորդ՝ ընդէ՞ր ոչ քաջալերեաց զնա ասելով, եթէ մեռանիս՝ վիուկդ *յարուցանէ՛* զքեզ որպէս զիս: - 429. Երեսունեմի, գիշերի ընդ պատուհանն ել, թողեալ զպատանսն յանկողնի. և տէրն ի գիշերի *յարուցեալ* եթող զկտաւն ի գերեզմանին կնքեալ: - 436-437. Ցուպն եղիսէի օրինակ էր խաչին. վասն է՞ր ոչ *յարոյց* զմեռեալն: - 445. Դարձեալ՝ առաջին գալուստն ծածուկ փրկութիւն և կեանս շնորհեաց. իսկ յերկրորդին յայտնապէս *յարուցանէ*: - 446. Իսկ ի մահուն որ *յարոյց* զմեռեալն յորժամ մերձեցաւ ի յոսկերսն եղիսէի, ի տիպ մահուն քրիստոսի որ մահուամբն մեզ կեանք և յարութիւն շնորհեաց: - 446. Իսկ յակոբ որ էր յազգէն սողոմոնի՝ առեալ զկին եղբօրն ըստ օրինացն զի *յարուսցէ* զաւակ եղբօրն. և ծնաւ զյովսէփ: - 460. Ութերորդ *յարուցելոցն*: - 467. Եւ որպէս յինն ժամու ուրբաթուն լոյս ծագեաց հոգւոցն ի դժոխս, նոյնպէս և յինն ժամու շաբաթուն լոյս ծագէ զճառագայթս իւր արեգակն արդարութեան քրիստոս. մինչ յառաւօտուն բոլորապէս տեսանի ինքն *յարուցեալ* ի մեռելոց: - 509. Իսկ ա՛յլ վարդապետք ընդ արշալոյսն առաւօտուն ասեն *յարուցեալ* ըստ մարկոսի և այլ աւետարանչացն: - 512. Իններորդ, գեթէօն՝ այն որ զցօղն ետես ի վերայ գեղման, զհօր իւրոյ զեզն պարարակ հրամանաւ հրեշտակին ի մէջ գիշերին պատարագեալ. և զանտառն և զսեղանն բահաղու կործանեալ և զերծեալ ի ձեռաց նոցա. որ էր օրինակ փրկչին. զի նա՛ է եզն պարարակ պատարագեալ. և ի մէջ գիշերի զբագինսն դժոխոց կործանեալ և *յարուցեալ* և ապրեալ ի մահու: - 513. Եւ *յարուցեալ* ի գիշերի ել ի լեառն երկնային. աղաղակեաց ասելով «ո՞ւր է մա՛հ յաղթութիւն քո. ուր է դժոխք խայթոց քո»: - 514. ...և ո՛չ մի հոգի եթող ի դժոխս. այլ զամենայն ազատեաց *յարուցեալ* ի մեռելոց. և բաշխեաց պարգևս որդւոց մարդկան: - 514. ...և զաւարն ժողովեցին ի տիպ խորհրդոյն քրիստոսի. որ ի գիշերի եհար զզօրութիւնն սատանայի և յառաւօտուն ցուցեալ զինքն աշակերտաց իւրոց և *զյարուցեալսն* ընդ իւր: - 514. եթէ քրիստոս յարեաւ ի մէջ գիշերի. զի այց արասցէ մարդկան ազգի. և զանկեալքս ի խաւարի և ի ստուերս մահու՝ ի լոյս գիտութեան և շնորհաց *յարուսցէ*: - 514. Եւ այլք ասեն թէ՝ **խ** օր յերկրաւոր դրախտին եկաց ինքն և *յարուցեալքն* ընդ նմա. և մխիթարեաց զեղիա և զենովք: - 521. Եւ զպղլոքոնոս աշակերտաց բազմաց վարդապետ. և ծեր, որ զմեռեալս *յարուցանէր* սքանչելեօք: - 544. Հինգերորդն՝ *յարուցեալ* յերրորդ աւուր: - 573. Եւ խաչիւ չարչարեալ և *յարուցեալ* ի մեռելոց. և առ աշակերտսն մտեալ եպիսկոպոս եցոյց զինքն: - 607. ...և ապա՛ ի յերկրէ *յարուցանէ* զմարմինս. որպէս այն որ հրեշտակապետն նստեալ ի վերայ վիմին փողէր զյարութիւնն քրիստոսի: - 618. Երրորդ՝ զի երիցս գոչէ փողն. նախ զհոգիսն ի յերկնից կոչէ. և ապա՛ զմարմինս ի հողոյ. և ապա՛ *յարուցեալ* զհոգի և զմարմին ի դատաստան հրաւիրէ: - 618. Երկրորդ, զի յարութեամբն իւրով *յարոյց* զմեզ քրիստոս: - 627. Երկրորդ՝ նշանակէ զձայն փողոյն, և ապա՛ զօրհնութիւն *յարուցելոցն*: - 627. Իսկ մեծացուսցէն ի կիրակէի, զբնաւ տնօրէնութիւնն պատմէ. զի թէ ոչ էր ծնեալ՝ և ո՛չ էր խաչեալ. և ո՛չ *յարուցեալ*. և ո՛չ զմեզ փրկեալ: - 628. Եւ որպէս իւղաբեր կանայքն նախ եկին ի գերեզմանն և տեսին *յարուցեալ* զքրիստոս, և ապա առաքեալքն. - 680. ...և տեսին *յարուցեալ* զքրիստոս...: - 681. Եւ գիտելի է, զի հիմն և սկիզբն անդ եկեղեցւոյն եղև տէր մեր յիսուս քրիստոս *յարուցեալ* ի մեռելոց. և ընդ ինքեան հանեալ և վերացուցեալ զհոգիս սրբոց նահապետաց և մարգարէից: - 688. Վասն այսորիկ արդար դատաւորն զհոգի և զմարմին ի միասին *յարուցանէ* և դատէ՛. եթէ վասն մեղաց ի տանջանս և եթէ վասն արդարութեան յարքայութիւնն երկնից: - 691. ...զոր վասն յոյժ ժտելոյն՝ *յարուցեալ* միտքն տացէ զխոստովանութիւն հաւատոյ սուրբ Երրորդութեանն. զոր յերիս նկանակս յառակեաց: - 697. Եւ կախարդութեամբ երևեցուսցէ զինքն մեռեալ և երեքօրեայ *յարուցեալ*. և զայս ամենայն արասցէ դիւական երևմամբ և կախարդական արուեստիւք: - 708. Եւ հաւատարիմ վկայ ընդհանուր յարութեանն զգործս եցոյց. որ զղազար չորեքօրեայ ի գերեզմանէն *յարոյց*: - 716. ըստ որում երեքօրեայ յարեաւ ի գերեզմանէն անապական մարմնով. և զբազումս *յարոյց* ընդ իւր և մտին ի քաղաքն սուրբ...: - 716. Իսկ աստուած անհուն է զօրութեամբ՝ յանկարծակի ի նոյն կէտ վայրկեան ժամանակի *յարուցանէ*: - 717. ...առաւել աստուծոյ է կարելի զհոգիս յերկնից և զմարմինս ի տարերաց ի մի վայր ժողովել և *յարուցանել*: - 718. ...վասն որոյ ի յարութեան՝ հրեշտակաց հաւասար *յարուցանէ* անմահ և առանց կարօտութեան...: - 724. Տասներորդ, գործք մարդոյ անցաւոր է որպէս ինքն. իսկ հատուցմունքն աստուծոյ մշտնջենաւոր որպէս նոյն ինքն. վասն որոյ *յարուցանէ* անմահ, զի հատուսցէ

ոմանց զփառս և ոմանց զտանջանս անմահ մարմնով: - 724. Խնամք մարդասիրութեանն աստուծոյ որ զամենայն յամենայնի տնօրինէ՛, արգել զայս. զի մի՛ ունիցին ինչ ի մտի *յարուցեալքն* ի մեռելոց. ապա թէ ոչ, որ ի սկզբանէ բարէատեացն էր և մարդասպան, բազում և զանազան երևոյթս, - 775. Կամ զինչ անհնարին սաստ, եթէ ոք խոտեսցէ զսուրբ հոգւոյն խօսեցեալս ի գիրս սուրբս. ընտրելով զոմն *յարուցեալ* ի մեռելոց...: - 775. Յորում պաշարեալք ի հինից նետողաց կրկին *յարուցեալ* խորա՛զմ անուանեալ ազգաց: - 788

**ՅԱՒԱՆԱԿ +** Երկու *յաւանակն* սիքայի. էշն և *յաւանակն* յիսուսի: - 438. Եւ ապա՛ թագաւոր ի թաբօր և *յաւանակաւն*: - 450. Եւ զօծումն թագաւորական՝ ի մարեմայ քեռէն ղազարու. յորժամ նստաւ ի վերայ *յաւանակին:* - 474. Երրորդն գալստեան. թէպէտ յայլ և այլ աւուրս. որպէս քառասնօրեայն, և *յաւանակաւն*, և յինանց կիրակմտիցն: - 649

**ՅԱՒԵԼՈՒԱԾ +** Ուստի յա՛յտ է զի ի լինիլն աշխարհի՝ նախագաղափար տեսութիւնն նոյնպէս եկաց մնաց առանց *յաւելուածոյ* և պակասութեան: - 169. Այլ արարիչն առանց արարածոց ո՛չ է անկերպ և անզարդ. զի արարածք ոչ ինչ *յաւելուած* են արարչին: - 170. Նախ՝ ի շարժմանէ՛ երկնային մարմնոց. զի միշտ նոյնպէս և անդադար շարժին. առնելով զօր և զամիս՝ և զեղանակս՝ և զտարի՝ ստուգագոյն չափով առանց *յաւելուածոյ* և պակասութեան: - 181. Երրորդ՝ ըստ hիւթին *յաւելլածոյ*՝ և պակասութեան մաղձիցն՝ ի ներքուստ կամ յարտաքուստ, ջերմ և ցուրտ և այլն, զնորին նմանն և զկերպարանն առնու առ ինքն: - 268. Եթէ *յաւելուածքն* չար, և մթերքն չար: - 556. Նախ ասեմք թէ՝ համաձա՛յն են միմեանց. զի և սա նագրիոս է ասէ. զի տրտմութիւն և ձանձրութիւն մի երևին. զի տրտմութիւն ի պակասութենէ բարւոյն լինի, իսկ ձանձրութիւն *յաւելուածոյ* բարւոյն: - 559. Վասն որոյ հայրապետք եկեղեցւոյ լա՛ւ համարեցան զվայելչականն բառնալ որ ո՛չ ի լինիլն *յաւելուած* առնէ...: - 604. ...և օրհնել ձէթ կնքոյ վասն *յաւելուածոյն*. արկանելով յառաքելական ձիթոյն. զոր օրհնէ եկեղեցի *յաւելուածով*: - 607. Զի որպէս ի կշիռն արդար՝ մէտ մի *յաւելուածն* հարստահարէ՛ զդիմակն և ի խոնարհ ձգէ, այսպէս և դատաստանն աստուծոյ. - 745

**ՅԱՒԵԼՈՒՄ +** Իսկ ոմանք *յաւելուն* յևս ամբարշտութիւն. իբր փախչելով ի ձախոյն՝ խոտորին յաջ կողմն: - 13. Զի նախախնամութեամբ բազում բարիս յառաջած է ի չարէ. որպէս սատանայի թոյլ տայ, զի փորձեսցին բարիքն և *յաւելցին* պսկքն: - 17. Արդ՝ մեք ո՛չ մտացածին բանիւ ինչ իշխեմք *յաւելո՛ւլ* կամ պակասեցուցանել: - 84. Իսկ ի սուրբ Երրորդութիւնն հայր կատարեալ. որդի կատարեալ. հոգի կատարեալ. և կատարեալն ո՛չ *յաւելու* և ո՛չ նըւազի: - 108. Զի ոմանց տացի և *յաւելցի*. և յոմանց բարձցի և պակասեսցի ըստ չափու ունակութեան ընդունողաց: - 127. Զարեգական յատկութիւնս թէ կամիս *յաւելուլ*, ցուցցի յառաջիկայդ: - 127. Այլ յորժամ *յաւելաւ* քրիստոնէութիւնն, *յաւելաւ* և կանոնքն: - 166. Թէ կեայ, *յաւելու* արդարութիւնն: - 178. Նախ զի ո՛չ կարէ *յաւելուլ* ի նմա և ո՛չ պակասիլ: - 182. Եւ ա՛յն է որ յամենայն ամի *յաւելումբ* ի վերադիրն: - 191. Եւ զի տենտ և ջերմ *յաւելուն*: - 197. Բայց ասեն ոմանք թէ՝ յաւուրս մանասէի՝ Նումաս պումիլոս **բ** ամիս *յաւել* ի տարին հռոմոց. զի յառաջ քան զնա՝ **ժ** էր. և *յաւել* ի նոսա զյունվար և զփետրվար: - 201. Ի ժամ յղացմանն՝ եթէ ի ծնողացն՝ եթէ ի ժամանակէն՝ և եթէ յախտից՝ որ տարր և *յաւելու* ի խառնուածն, նոյն որակ գունով ծնանի զաւակն: - 245. Վասն որոյ բոյսք առ հասարակ յերեք ամիսս ծնանին, և ի չորրորդումն կատարին *յաւելեալ* ի վերայ զկազմողական զօրութիւնն: - 262. Եւ այլք ևս *յաւելեալ*. զի են ի չորից տարերց՝ **է** և **ը** ամիսս կատարին: - 262. Որև *յաւելեալ* իր ինչ զգայական՝ լինի **զ**. վասն որոյ առ հասարակ ի **զ** ամիսս ծնանին. և ա՛յլք ի **զ** շաբաթս. և կէսք ի **զ** օրս: - 263. Այլ և զգայականին *յաւելեալ* շնչականն և շարժականն և ցասմնականն ընդ ցանկականին՝ լինի **թ**. վասն որոյ ոմանք յինն ամիսս ծնանին կամ ի **ժ**: - 263. Այլ և *յաւելեալ* ի վերայ զշարժականն և զշնչականն և զցասմնականն և զցանկականն, ընդ նմին և զկազմողական նիւթն և զտնկականն, որ լինի **ժը**. վասն որոյ ոմանք ի տարին և կէսն ծնանին որպէս ուղտ: - 263. Եւ *յաւելեալ* զկազմողականն՝ յութն ամիսս ծնանի և ո՛չ ապրի զի անկատա՛ր է: - 263. Եւ տե՛ս, զի **բ բ** են *յաւելեալ* թիւ ի չորեքտասան, յերեք հասակս փոփոխելով: - 265. Զի իր ինչ *յաւելու* մարդն ի վերայ կենդանւոյն, որ է՛ բանականն: - 272. Զի ի վերայ նմանութեան իր ինչ *յաւելու* պատկերն՝ որ է՛ նոյնութիւնն, և ապա՛ է պատկեր. զի պատկերն հոմանուն է: - 272. Նա՛խ՝ ի տեսութենէն, զի ո՛չ ևս *յաւել* տեսանել զերեսս աստուծոյ: - 279. Եւ չորրորդ՝ զի *յաւելեր* անէծս երկրի զկնի հօրն քոյ Ադամայ: - 287. Նաև յեգիտպոս **ղճ** ամ խոստացաւ ծառայութեան. և զերեսուն ամն *յաւել* վասն մեղաց ժողովրդեանն: - 292. Եւ որ քան օրս *յաւելու*, նոյնպէս և ցաւս մեր բազմանայ: - 292. Չորրորդ՝ *յաւելուլն*

է յառաջին ճառն: - 323. Երկրորդ՝ զնմանեայն որ շատ ժողովեաց՝ ո՛չ *յաւելյաւ*. և նւազն ո՛չ պակասեաց: - 339. Եւ արտաքոյ, զի օրըստօրէ *յաւելուն* լուսափայլ իմաստիւք ըստ մեծին դիոնիսեայ: - 344. Նա՛խ՝ թէ յետ է աւուրն *յաւելոյր*՝ այրէին: - 367. Երրորդ՝ ի ցաւոց կամ ի հովութենէ *յաւելու*: - 368. Վասն զի մարմնոյ զինուորն ի ամեայ էր. զե ամն *յաւել* ի հոգևոր զինուորսն վասն **ե** զգայութեանցն: - 379. Իսկ ծաղկեալ գաւազանն չորս ինչ *յաւելու*. Դալարի. Շառաւիղ. Ծաղիկ. և Պտուղն ընկուզ: - 382. Երրորդ՝ զի մարմինն աճէր և ո՛չ ինչ *յաւելոյր* ի կերակրոյն: - 383. Գլուխն նշանա՛կ է մտաց. զոր չէ պարտ *յաւելուլ*՝ և ո՛չ պակասել. որպէս մուրճ ո՛չ գործէր ի սեղանն զի մի՛ պղծեսցի: - 390. Ո՛չ աւէ թէ *յաւելցի*. այլ թէ ո՛չ պակասի: - 444. Երկրորդ՝ նշանակէր զնմանեայն որ նոյնպէս ոչ *յաւելոյր* և ոչ նուազէր: - 444. Չորրորդ՝ ի տիպ մարմնոյն փրկական. զի ոչ *յաւելու* ի բազում պատարագելն. և ոչ նւազէ ի ճաշակելն: - 444. Ասեմք եթէ յետ յղացման բանին յարգանդի կուսին օրինօք և ոչ օրինօք բնութեան, ժուժկալեալ ամսոց ըննից և աւուրց հնգից, ըստ հասարակաց ասեմ և անդրանկաց. ըստ հնգից *յաւելեալ* թւոց նախաստեղծին նախարարչութեան աւուրց: - 469. Եւ ոմանք *յաւելուն* այլ ևս զամօթ՝ զտրտմութիւն՝ և զցաւս մարմնական. որ և սոքա ընդ նոսա են: - 474. Այլ կարէ *յաւելուլ* ի նոյն տեսակն ուղղութիւն և կարգ: - 541. Եւ նզովեցին զաղանդն մարկիանու և զարտեմոնի, և զտումարն լևոնի. և միաբանեցան ի մի հաւատս սուրբ առաքելոցն. և ի կանոնս սուրբ ժողովոյն ինչ պետք էին *յաւելին* գլուխս **թ** ի զգուշութիւն եկեղեցւոյ: - 544. Երրորդ՝ յերեքսրբեանն զխաչեցարն *յաւելուլ*: - 554. Վասն որոյ և տէրն յորժամ ասաց զցանկութիւնն շնութիւն, *յաւել* ի վերայ թէ՝ «ի սրտի իւրում». զի մի՛ կարծեսցի մարմնական շնութիւն, այլ հոգէկան և մտաւոր. ապա ուրեմն կատարեալ է մեղք մտացն: - 556. Որպէս յա՛յտ է ի տրտմիլն. զի խորհուրդն մշակ եղեալ յետոյ ի յոխս և ի քէնս և ի նախանձս *յաւելու*: - 564. Նոյնպէս զցանկութիւնն ի շնութիւն և ի պոռնկութիւն *յաւելու* հանապազ. զոր անասունք յիւրեանց ժամանակին ունին զխառնումն: - 564. Նոյնպէս և զորկրամոլութիւնն *յաւելու* միտքն հնարելով զանազան կերակուրս և ըմպելիս: - 564. Այսպէս և զայլն ամենայն *յաւելու* անչափութեամբ. վասն որոյ ախտ և մեղք կոչին առ մեզ: - 564. Ի հինն ասաց սիրել զընկերն, և ի նորս *յաւել* սիրել զթշնամին: - 577. Եւ գո՛րծ է այսմ խորհրդոյ՝ *յաւելցնել* զշնորհն, և դեղ հանապազորդ մեղացն: - 594. Նա՛խ՝ զի զմի օր նոցա տօնեմք. և **է** *յաւելեալ* վասն է զգայարանաց. և վասն եօթնեկի մեղաց քաւութեան: - 616. Իսկ ի նորս եկեղեցի քրիստոնէիցս ազգի՝ *յաւելեալ* է կրկին ժամ. այսինքն յետ առաւօտին զարևագալն. և յետ երեկոյին՝ զխաղաղականն...: - 621. Եւ վեց կիսափոխն՝ *յաւելեալ* ժամուցն մինչ ի հանգստեանն: - 622. Եւ **ժ**, զի *յաւելումբ* յինն դասս հրեշտակաց: - 640. Զի՞նչ է չորեքկին բառս որ ասեմք, պակասեալ. *յաւելեալ*. լցեալ. և անցեալ զաւուրբք: - 666. Նախ ի դէմս մեր. զի պակասիմք ի մարմնոց և *յաւելումբ* ի հոգիսն: - 666. Երկրորդ ի թիւ ամացն. զի որքան յերկարեմք անցանելով, պակասի մասն վերին և *յաւելու* մասն ներքին...: - 666. Երրորդ ի ժամն. զի անցեալ մասն *յաւելու*. և ներկայն անցանէ. և հանդերձեալն պակասի. և բոլորն կատարի և լցուի: - 666. ...ընդդիմակն սոցա *յաւելու*. և ի մահն լնանի և դադարի ամենայն: - 666. Երկրորդ, զի թէ արժանաւոր է՝ *յաւելցի* պսակն. և թէ անարժան՝ թեթևասցին տանջանքն: - 674. Եւ ոմանք յորոց սրբազան առաջնորդն մեր, պակասութիւն ասաց զոլ զորս յետոյ կրեցին անդամք նորա. այսինքն զհատումն մասանց. այրումն հրոյ. և այլ իմն բազմազան տանջանս. յորմէ թուով պակասեաց ի քրիստոս և *յաւելյաւ* անդամս իւր: - 781

**ՅԱՒԵԼՈՒՄՆ +** Իններորդ՝ անդ երևումն, և ո՛չ ինչ *յաւելումն*: - 133

**ՅԱՒԵՐԺԱՀԱՐՍՈՒՆՔ +** *Յաւերժահասունք* և քաջք և ալն, զի՞նչ են: - 150. Ո՛չ են *յաւերժահասունք* որպէս ոմանք կարծեն թէ յերկուց տարերց այսինքն ի հրոյ և յօդոյ են բանական կենդանիք և ունին ծնունդ և մահ. սուտ է այսպիսի կարծիքս և ընդունայն և հակառակ սուրբ գրոց. զի բանական կենդանի և մահկանացու՝ մարդս միա՛յն է որոյ յարութիւն և դատաստան գոյ: - 150. Նոյնպէս և *յաւերժահասունք*՝ զի միշտ պատրեն զմարդիկ ուրախութեամբ: - 150

**ՅԱՒԷՏ +** Եւ բաժանումն *յաւէտ* զքան գաւառաւ և լեզուաւ՝ կանոնական սահմանաւն ասացեալ լինի. այսպէս և առ միաբանութիւնս է իմանալ. առաւել միաբանութիւն ասել զորս կանոնական սահմանադրութեամբ է, քան որ գաւառաւ և լեզուաւ: - 552. Եւ յայտոսիկ միաբանութիւնս որ ըստ կանոնի՝ *յաւէտ* միաբանութիւն զայս է իմանալ՝ որ ըստ բոլորին օրինադրութեանց սահմանաց կամ ըստ գլխաւորագունիցն լինիցի. և ո՛չ մասամբ միով միաբանեալք և բազմօք զանազանեալք. մանաւանդ թէ հակառակեալք և ընդդիմացեալք: - 552. Զի անդ բոլոր մարմինն ընդ այն է՛ երկինն հրեղէն յորում է լոյս *յաւէտ:* - 763

**ՅԱԻՏԵԱՆ +** Եւ զի մարդոյ ճանաչումն է՛ այժմ ընդ լինիլ իրին. այլ աստուած ճանաչէ՛ *յաւիտենից* և յառաջ քան զլինիլ իրին: - 20. Դարձեալ քննեսցուք ըստ մեզ. զի ո՛չ են հակառակ առաքելոյն բանն և աւետարանին, թէ հայր մեծ է քան զորդի. զի երկոքին նոյն ինքն աստուածութեանն իմանին. ըստ այնմ որ զմեր նուաստ և տկար բնութիւնս միացոյց ընդ իւրում աստուածութեանն, և անտեսանելին տեսանիւր՝ և ծառայի կերպիւ շրջէր վասն տնօրէնութեան՝ ասի փոքր յայս միաւորութեանս քան զհայր. իսկ ըստ այնմ որ է՛ անճառ և նախքան *զյաւիտեանս* ծնունդ ի հօրէ՛, հաւասա՛ր է հօր և ոչ փոքր: - 40. Եւ այլք ո՛չ հաշտեն և ո՛չ անպատւեն. զի զկարգն *յաւիտենին* ո՛չ ստեն որպէս ասացաք: - 51. Եւ աղճատանք լիցի քեզ ծնունդն ըստ մարկիոնի ութ աստուծոյն և ութ *յաւիտենին*: - 52. Այսպէս և խոնարհագոյնքն են աստուծոյ բանին վասն միաւորութեանն. որպէս մարդ ծնանիլ ի կուսէ՛ ժամանակեայ. խաչիլ և մեռանիլ. որպէս ասէ առաքեալն՝ «յիսուս քրիստոս երէկ և այսօր՝ նոյն և *յաւիտեան»:* - 74. Ապա ուրեմն ճշմարիտ աստուած է քրիստոս մարմնովն միավորեալ անբաժանելի *յաւիտեան*: - 74. Դարձեալ՝ ըստ նոյն սարասի՝ բանն աստուած ունի ծնունդ ի հօրէ նախ քան *զյաւիտեանս*. և ունի ծնունդ ի մօրէ ի յետին ժամանակիս. և ո՛չ ասի երկածին. այլ՝ միշտ միածին. այսպէս նոյն բանն ունի զբնութիւն աստուծոյ ի հօրէ. ունի և զբնութիւն մարդոյ ի մօրէ՛. և ո՛չ ասի բ բնութիւն. այլ մի բնութիւն վասն միաւորութեանն: - 77. Կամ *յաւիտենից* և ժամանակեայ: - 78. Որք ասեն զսկիզբն բանին ի կուսէն առեալ. և ո՛չ նախ քան *զյաւիտեանս* ի հօրէ ծնեալ: - 82. Խոստովանիմք զորդին աստուծոյ նախ քան *զյաւիտեանս* ծնեալ ի հօրէ՛. և յետոյ ի ժամանակի ծնեալ ի մօրէ՛: - 83. Եւ ժամանակն՝ մինն *յաւիտենից*, և միւսն ժամանակեայ: - 87. Իսկ եթէ ի դէմս մարդոյն, ո՞րպէս ունէր զփառս *յաւիտենից* այն որ այսօր ի կուսէն ծնաւ: - 94. Քսանեերորդ՝ ասէ յաւետարանին յօհաննու, «Ա՛յս են կեանք *յաւիտենից*՝ զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ աստուած. և զոր առաքեցեր զյիսուս քրիստոս»: - 99. Ա՛րդ՝ եթէ ճանաչելն զաստուած հայր և զյիսուս քրիստոս կեանք է *յաւիտենից*, և մարդն քրիստոս ճշմարտութեամբ ո՛չ կարէ ճանաչել որպէս դուդ ասես: - 99. Ապա զրկեալ է ի *յաւիտենից* կենացն: - 99. Յորժամ ինքն ո՛չ ունի *յաւիտենից* կեանք, այլոց ո՞րպէս տայ: - 99. Որով և ընդ Որում Հօր և Հոգւոյն սրբոյ փառք և պատիւ և իշխանութիւն յամենայն զոյից անբաւ *յաւիտենիւ* ամէն: - 101. Անժամանա՛կ է աստուած. և *յաւիտեան*. և հին աւուրց: - 101. Վասն *յաւիտենից*: - 101. Վեցերորդ՝ որպէս *յաւիտեան* է հայր. զի անսկիզբն է և անվախճան: - 105. Ո՛չ ասեմ ժամանակ. զի արարիչ է ժամանակաց և *յաւիտեանց*. և որպէս ո՛չ ի ժամանակի սկսեալ, և ո՛չ ի ժամանակի դադարի: - 105. Այլ բազո՛ւմ է և զանազան ըստ պատկերի և նմանութեան յարացուցելոցս որք են բազումք. զի աստուած միով յարացուցիւ զբազումս տեսանէ. որպէս անմարմնութեամբն զմարմնաւորս տեսանէ. և *յաւիտենիւ* զժամանակեայս: - 112. Երրորդ ասի անեղ այն՝ որ ի յումե՛ք է, և ի յումեք ո՛չէ. որպէս հրեշտակք *յաւիտենի* եղեալ, և ի ժամանակի անեղ. սա կարօտ և անկարօտ երկոցունց. այսինքն սկզբան և կատարման: - 113. Դարձեալ՝ անեղն և անսկիզբն աստուած հայր՝ յինքենէ յառաջ քան *զյաւիտեանս* ծնաւ և բղխեաց զանեղակից որդին՝ և զսուրբ հոգին: - 114. Այլ արդ՝ որդի և հոգի ըստ որում ի պատճառէն՝ սկիզբն ունին զհայր. և ըստ որում՝ նախ քան *զյաւիտեանս*՝ անսկիզբն են ընդ հօր: - 114. Այլ՝ անժամանակ է. զի ո՛չ է ընդ ժամանակաւ. այլ՝ ընդ *յաւիտենիւ*. և ժամանակն ի *յաւիտեանն* պարագրի: - 114. Զի աստուած արարիչ է *յաւիտենից*. և յառաջ քան *զյաւիտեանս*. և գեր ի վերոյ *յաւիտենին*: - 114. Զի աստուած պարագրէ *զյաւիտեանն*. որպէս *յաւիտեանն* զժամանակն. և ասի աստուած մշտնջենաւոր. զի ո՛չ ունի վախճան: - 114. Իսկ հոգի մեր՝ և հրեշտակք՝ ասին յաւիտենականք. զի ո՛չ են ընդ ժամանակաւ. այլ ընդ *յաւիտենիւ*: - 114. Այլ զի բազմաժամանակեայ է և *յաւիտենից*: - 114. Գիտելի է, զի հին ասելով՝ *զյաւիտեանն* նշանակէ. և օր զժամանակն: - 115. Նախ՝ զի է՛ և զո՛յ աստուած յամենայն *յաւիտեանս*. և յամենայն ժամանակ. և յամենայն օր: - 115. Երկրորդ՝ զի նախ է քան զամենայն *յաւիտեանս*. և քան զժամանակ. և քան զամենայն օր: - 115. Երրորդ՝ պատճառ է *յաւիտենից*. և ժամանակաց. և աւուրց. որպէս լոյս. իմաստութիւն և կեանք կոչի. զի պատճա՛ռ է սոցա: - 115. Ապա յա՛յտ է զի հին աւուրցն նշանակէ նախ քան զժամանակ և *զյաւիտեան*. և բարձրագոյն և արարիչ ժամանակի և *յաւիտենի*. և պարունակօղ *յաւիտենի*. որպէս *յաւիտեանն* ժամանակի: - 115. Քանի՞ են *յաւիտեանք*: - 115. Չորրորդ՝ որ սկիզբն ունի և կատարած. և թէպէտ հասարակ սոքա *յաւիտեանք* կոչին, այլ ունին յատուկ անունս: - 115. Առաջինն կոչի յարաձգական *յաւիտեան*: - 115. Երկրորդն սկզբնական *յաւիտեան*: - 115. Երրորդն միշտ *յաւիտեան*: - 115. Չորրորդն ժամանակեայ *յաւիտեան*: - 115. Կոչին և հոմանուն սոցա *յաւիտեան*. որպէս իւրաքանչիւր դարք: - 115. *Յաւիտեանս Յաւիտենից*. որ է՛ սկզբնական և յարաձգական. զի նա պարունակէ զերեք *յաւիտեանն*. որ ո՛չ սկիզբն ունի և ո՛չ կատարած: - 116. Եւ գիտելի է՝ զի աստուած կոչի *յաւիտեան* անսկիզբն և անվախճան. և է՛ պատճառ պարունակողացն *յաւիտենին*. որ ո՛չ սկիզբն ունի և ո՛չ կատարած: - 116. Այլ՝ կոչի աստուած *յաւիտեան*. և միշտ. և ժամանակ. զի պատճառ է սոցա որպէս ասացաւ ի վերոյ: - 116. Իսկ հրեշտակք

և հոգիք և աշխարհ՝ կոչին յաւիտենականք. զի հաղո՛րդ են *յաւիտենին*. այնմ որ սկսեալ է և անվախճան: - 116. Եւ թէ ոք ասիցէ, որովհետև աստուած *յաւիտեան* է անսկիզբն և անվախճան. նոյնպէս և յարաձգականնն: - 116. Ասեմք եթէ՝ մի է *յաւիտեան* անսկիզբն և անվախճան. որ նոյն ինքն է աստուած. բոլորն համանգամայն և կատարեալ. և նախ քան *զյաւիտեանս*. և ամենայն *յաւիտենից* արարիչ: - 116. Եւ յառաջ քան *զյաւիտեանս* ծնաւ զբանն: - 116. Այլ զայս ստեղծեալ *յաւիտեանս* ասեմք ոչ սկիզբն ունիլ և ո՛չ կատարած. զի պարունակօղ է ա՛յլ *յաւիտենից* որք ունին սկիզբն կամ կատարած. այլ ինքն պարունակի յանստեղծ *յաւիտենէն* որ է՛ աստուած: - 116. Դարձեալ՝ գիտելի է, զի *յաւիտեանն* և միշտ և ժամանակն՝ վեցիւք զանազանին: - 116. Նախ՝ զի *յաւիտեանն* ո՛չ ունի սկիզբն և ո՛չ վախճան: - 116. Երկրորդ՝ *յաւիտեանն* պարունակէ զմիշտն. և միշտն զժամանակն. և ժամանակն յերկուցն պարունակի: - 116. Երրորդ՝ *յաւիտեանն* ո՛չ ունի մասն. այլ բոլորն համանգամայն և կատարեալ. այսպէս և միշտն: - 116. Հինգերորդ՝ ժամանակն է զգալեաց. և միշտն իմանալեաց. և *յաւիտեանն* անիմանալեաց: - 116. Վեցերորդ՝ ժամանակն է ի ներքոյ երկնից. և միշտն ի վերոյ երկնից. և *յաւիտեանն* ի վերոյ քան զամենայն երկինս: - 116. Զի նախ կենդանի է մարմնով. յետոյ անմարմին. և յետոյ միաւորութեամբ *յաւիտեան*: - 117. Եւ է սա՛ առաջին. զի զոր նա՛խ է քան *զյաւիտեանս* և զժամանակս՝ աստուածաբանէ՛ և քննէ՛: - 122. Առիւծն թագաւորական՝ նշանակէ՛ զյօհաննէս. ի սկզբանէ՛ զբանն աստուած և թագաւոր *յաւիտենից* ցուցեալ: - 133. Եւ ասեն դո՛ւ ես քահանայ *յաւիտեան* ըստ կարգին մելքիսեդեկի: - 144. Եւ ասեն՝ արքայութիւն քո արքայութիւն *յաւիտենից*՝ և տէրութիւն քո յազգէ մինչև յազգ: - 144. Եւ ասեն՝ աթոռ քո աստուած *յաւիտեանս յաւիտենից*: - 144. Եւ աստ ասէ իրինոս՝ զի թէ յաւիտենական է հուրն, զիա՞րդ վախճան ածեն տանջանաց *յաւիտենից* ունայնախոհքն. թերևս կարծելով թէ ի հուրն մաքրեսցի. զի մի՛ լիցի աշակերտացն ճշմարտութեան խորհիլ և ասել: - 153. Եօթներորդ՝ մարդ կարօ՛տ է ժամանակի. իսկ աստուած ո՛չ է կարօտ ժամանակի. և այլ և *զյաւիտեանս* արար: - 156. Առաջին է նախագաղափար տեսութիւն արարչին. որպէս նախ քան զժամանակ անսկիզբն *յաւիտենիւ*. և Երկրորդ սկիզբն է ի ժամանակի լինելութեան իւրոյ: - 163. Իսկ նախատեսութիւնն աստուծոյ է՝ անսկիզբն *յաւիտենիւ*: - 164. Ծնունդ, զի ի բնութենէ հօր նախքան *զյաւիտեանս* ծնեալ է: - 179. Վախճան է ժամանակի. և սկիզբն *յաւիտենին* և մշտնջենաւորականացն: - 193. Երրորդն է աստուածութիւնն. կամ կեանքն *յաւիտենից*: - 195. Ժամանակն թէ ո՞րպէս բաժանի ի մշտնջենաւորն և *յաւիտեանցն*՝ ասացաւ ի վերոյ ի **ը** գլուխն՝ **ժբ** համարն: - 198. Չորրորդ՝ որ *յաւիտեան* ստացեալ լինի: - 210. Երկիր որ *յաւիտեան* ստացեալ լինի, է՛ գաւառն երկնաւոր: - 210. Եւ դադարք դիւաց. իսկ յետոյ լուցկի են գեհենին *յաւիտենից*: - 212. Եւ ո՞րպէս օրէնք *յաւիտենից*. և վասն **բ** նոխազացն: - 284. Արդ բիւրն պատշաճի *յաւիտենին* աստուծոյ, որ պարունակէ՛ զմշտնջենաւորն որ են հրեշտակք: - 291. Հինգերորդ ևս յայտնի. աստ կեան նահապետքն ժամանակաւ ընդ ամենայն մարդոյ. և յետ մահու ի մշտնջենաւորն ընդ հրեշտակաց. և յետ յարութեանն յանվախճան *յաւիտենին* թագաւորեալք ընդ աստուծոյ: - 291. Արդ որպէս հաւատով իմանամք հաստատեալ *զյաւիտեանս* որպէս ասէ առաքեալն. և նովին հաւատով իմանամք զկատարած կենցաղոյս և զյարութիւն մեռելոց և զդատաստան հատուցմանն: - 292. Եւ թէ ոք ասիցէ, մովսէսի ընդէ՞ր ասաց՝ ա՛յս է անուն իմ *յաւիտեան*: - 312. Վեցն զկատարելութիւն մարմնոյն ցուցանէ, և հարիւրն, զհոգւոյն. և հազարն, զպատիւ կենաց *յաւիտենից*: - 315. Յորոց փրկեսցէ զմեզ և զամենայն հաւատացեալս անւան իւրոյ ի յաւիտենական և յանել տանջանաց հրոյն. և մասնաւոր աջակողմեան դասուն և ժառանգ արքայութեանն երկնից կացուսցէ յիսուս քրիստոս տէր մեր. որ է օրհնեալ *յաւիտեանս* Ամէն: - 317. Իսկ լեառն հողեղէն բնութեանս մերում, կամաւ հօր վկայելով ի վերայ նորա՝ և հաճութեամբ սուրբ հոգւոյն աղաւնակերպ իջմամբ, և անքակտելի միացեալ բանիւն եղև լեառն մածեալ մշտնջենաւոր և անեզր *յաւիտենիւ* բարձրացեալ օրհնութեամբ և առաւելեալ: - 320. Վասն որոյ այսօր ժողովեալ փառս և պատիւս տամք աստուծոյն մերոյ որ *յաւիտեան* զփառաւորիչս իւր փառաւորէ՛: - 321-322. Երեքտասաներորդ, նոքա փոփոխականք էին վասն մահու արգել լինելոյ. իսկ տէր մեր անփոփոխ և *յաւիտեան* է քահանայ. վասն *յաւիտեան* և անմահ գոլոյն: - 355. Եւ դարձեալ թէ՝ յիշատակութիւն օրհնացն *յաւիտեան* մնաց: - 369. Այլ ուղիղն, զի օրէնքն թէպէտ ըստ խորհրդոյն փոխեցաւ, այլ ըստ իրին մնաց *յաւիտեան*. զի օրինակն էանց, այլ ճշմարտութիւնն մնաց: - 369. Վիճակ սահմանն է. որ նախ քան *զյաւիտեանս* սահմանեաց հայր զփրկութիւն մարդկան: - 369. Որում փառք *յաւիտեանս* ամէն: - 376. Տասներորդ՝ զի զքրիստոսի առաջին գալուստն նշանակէր տապանակն և տախտակն և մանանայն և այլն. և զվերջինն՝ վէմն աղբիւրացեալ ի *յաւիտենից* կեանսն: - 385. Եւ է՛ անփոփոխ *յաւիտենիցն* որ առ աստուած ընտրելոցն է թիւ: - 392. Յորում և զմեզ թուեսցէ ի թիւ սրբոց իւրոց անջինջ դպրութեամբ. և Նմա փառք *յաւիտեանս* ամէն: - 392. Եւ տարին անդ՝ *յաւիտեանն* է և միշտն. որ պարունակէ՛ զժամանակս: - 399. Զի որպէս քահանային օծումն ի հոգւոյն ո՛չ բաժանի *յաւիտեան*, և պսակի օրհնութիւնն որ ի մարմինն է՝ ո՛չ

բաժանի մինչ ի մահ ի մարմնոյն: - 401. Եւ թէ պահեալ էր զպատուիրանն *յաւիտեան* անծերանելի էր կացեալ: - 411. Որ է՛ Օրհնեալ *յաւիտեանս* Ամէն: - 412. էջ ի գերեզմանն և յանդունդս *յաւիտենից* ընկղմեաց զնոսա: - 418. Որ է՛ օրհնեալ *յաւիտեանս* ամէն: - 419. Նա՛խ՝ զի մեղայն դաւթի՝ զպատիժն *յաւիտենից*՝ արար ժամանակեայ խրատ: - 432. և Նմա փառք և գոհութիւն *յաւիտեանս* ամէն: - 438. Եօթներորդ՝ խոստացաւ *յաւիտենից* թագաւորել: - 441. Նմա փառք *յաւիտեանս* Ամէն: - 442. Որ և յերկրորդ գալուստն նախ դատեսցէ. և ապա թագաւորեսցէ անվախճան. ընդ որով քահանայագործութեամբ մաքրէ՛ և լուսաւորէ՛ և կատարեալս առնէ միշտ անզրաւ *յաւիտենիւ*: - 450. Եւ աստանօր Կատարումն հին Կտակարանաց. և Եօթներորդ Հատորի Հարցմանցս. ի Փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ Օրհնելոյն *Յաւիտեանս* Ամէն: - 453. Եւ սոյնպէս և քրիստոս եղև երկուց զարմիցն մի քահանայ և թագաւոր ճշմարիտ և մշտնջենաւոր քահանայ և թագաւոր *յաւիտեան*: - 461. Զբառս զայս ընդունելութեան դնէ՝ ընդ քեզ. այսինքն տէրն յետ ծննդեանն ընդ քեզ *յաւիտեանս յաւիտենից*...: - 464. Եւ ո՛չ միայն ճանապարհորդ, այլ և ըմբռնօղ միշտ և *յաւիտեան*: - 470. Նա՛խ՝ ծնաւ ի հօրէ բանն աստուած յառաջ քան *զյաւիտեանս* անճառ և անպատում...: - 471. Զի նա՛ յառաջ քան *զյաւիտեանս*. և մեք ի ժամանակի: - 472. Այսպէս և միաւորութիւնն քրիստոսի է՛ *յաւիտենից* և ժամանակեայ. անմահ և մահկանացու. աստուած և մարդ. նոյն ինքն բանն մարմին եղեալ: - 478. Զի յիսուս քրիստոս երէկ և այսօր՝ նոյն և *յաւիտեան*: - 478. Եւ այս ևս կրկին է գիր և դպրութիւն. մին անջինջ և *յաւիտենից* որ առ աստուած. և միւսն ժամանակեայ և ջնջելի որ առ մեզ. զոր մեր գործօք և կամօք գրեմք և ջնջեմք. թէ զչար թէ զբարի: - 481. Երկրորդ՝ ասելն «է» նշանակէ՛ ըզմշտնջենաւոր գոլն. ըստ այնմ «յիսուս քրիստոս երէկ և այսօր նոյն և *յաւիտեան»*: - 487. Որում փառք և զօրութիւն *յաւիտեանս* ամէն: - 498. Եւ այժմ և *յաւիտեանս* անկատա՛ր է զի է անապական մարմնով: - 500. ...և Նմա փառք *յաւիտեանս* ամէն: - 503. Զի յայնմանէ ազատեաց քրիստոս իջանելովն անդ. և աւերեաց զնա *յաւիտեան*. և առ հասարակ ազատեաց զհոգիսն: - 504. Ասացեր թէ դժոխքն աւերեալ է *յաւիտեան*. այժմ այլ դժոխք ո՞չ է: - 504. Դժոխքն այն յորում նախ քան զքրիստոս հոգիսն արգելոյր սատանայ՝ աւերեցաւ *յաւիտեան*: - 504. Այլ հուրն *յաւիտենից*՝ է՛ այժմ դժոխք սատանայի և մեղաւորաց: - 504. Ասեմք թէ՝ կրկին է փրկութիւնն. *յաւիտենից* և ժամանակեայ: - 508. Որք հաւատացին՝ *յաւիտենից* փրկեցան. և որք ոչ՝ ժամանակեայ. վասն իջման որդւոյն աստուծոյ ի դժոխս: - 508. Այսպէս և մեք փառս տամք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և *յաւիտեանս յաւիտենից*: - 522. Եւ աստանօր Կատարումն Իններորդ Հատորի Հարցմանցս Այսոցիկ. և Քրիստոսի Փառք *յաւիտեանս* Ամէն: - 527. ...հրեշտակք և մարդիկք, կամ մարդկան ամենայն ազգ և ամենայն լեզուք, գայցեն ի կատարածի յերկրպագութիւն քրիստոսի. և անեզր *յաւիտենիւ* փառաւորեալ օրհնեն զնա: - 529. ...իսկ թէ մի է, ո՞րպէս կարասցուք ասել մի և զնոյն բանն աստուծոյ որ նախ քան *զյաւիտեանս*. և այսօր գրեալ ի քարտիսի: - 529. Եւ այս բազումս որ առ մեզ է, ի բազում թուղթս գրեալ մի և նոյն բանն է որ նախ քան *զյաւիտեանս* ի հօրէ ծնեալ: - 529. Ասեմք առ այս, եթէ անմարմին իր անկատար ո՛չ լինի. զի սոյն բան աւետարանիս նոյն կատարեալ բանն է աստուծոյ որ ի մարմնի է միացեալ. և նախ քան *զյաւիտեանս* ծնեալ: - 529. Զոր յառաջին ամին յորժամ նստաւ կաթողիկոս տէր սիմէոնի, ի ձեռն տէր եղիայի մեծահանդէս ժողովմամբ պայծառացոյց զեկեղեցի կանոնական հաստատութեամբ ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ օրհնելոյն *յաւիտեանս* ամէն: - 545. Իսկ դառն մահն է՛ մահու չափն. որ գիտութեամբ մեղանչէ. այս է դառն մահն *յաւիտենից*: - 564. Եւ զի խիստ էր հայհոյութիւնք նոցա, խստագոյնս քարկոծեցան տանջանօքն *յաւիտենից*: - 566. Եւ կոչի մահացու, զի պարտական առնէ զմարդն *յաւիտենից* մահուն: - 567. Այս է ծառն չար որ պտուղ չար բերէ. և յետոյ հատանի. և ի հուրն *յաւիտենից* արկանի: - 570. Ասեմք թէ՝ այնպէս է շնորհք խոստովանութեանն որ *զյաւիտենից* պատիժն ժամանակեայ առնէ...: - 602. Եւ ընդ ասելն «մեղայ», անցոյց աստուած զմեղքն. այսինքն անցաւ և փոխեցաւ *յաւիտենից* պատուհասն ի ժամանակեայն...: - 602. ...զի յորժամ մեղանչեմք, գրիմք ի պատիժն *յաւիտենից*. այլ ի զղջանալն և փոխիլն մեր, փոխէ՛ աստուած և զպատիժն ի ժամանակեայս: - 602. Այլ զփառս արքայութեան երկնից ի կատարածի ժառանգեսցեն հոգւով և մարմնով անվախճան *յաւիտենիւ*: - 617. Եւ տեառն մերոյ սուրբ եկեղեցի. և վերջինն օրն է *յաւիտենից*: - 629. Իսկ սաղմոսն՝ մանկացելոցն մկրտութեամբ հրամայէ որդիացելոցն օրհնել զհայրն երկնաւոր. որում փառք *յաւիտեանս* ամէն: - 629. Նոյնպէս և երկրորդն որ ասէ ոչ նախանձիլ ընդ չարս որ են անզգամք. և զի ո՛չ գոյր նոցա աստ փոխարէն մեղաց. վասն այն հրովն *յաւիտենից* այրեսցէ զնոսա: - 629. Այլ և այսպէս **բ** որմունք լինելոց են ի հանդերձեալն. այսինքն է մին հրեշտակաց և միւսն մարդկան սրբոց *յաւիտենից* փառաբանիչք: - 636. Երկրորդ, ի կոյսն բնակեցաւ բանն **թ** ամիս. և ի խաչն *յաւիտեանս յաւիտենից*: - 642. Եւ զայն աշխարհն տեսութեամբ և իմացմամբ միշտ *յաւիտեան*. անվախճան պատրաստէ՛ զհանգիստ և զերանութիւն նոցա: - 647. ...զոր միշտ և *յաւիտեան* պատրաստէ՛ և կազմէ՛ աստուած: - 647. Երեսունեէ, Ուղիղ է դատաստանն աստուծոյ. և

*յաւիտեան* տանջէ. և վասն կշռոց դատաստանին: - 661. Եւ աստանօր Աւարտումն Տասներորդ Յատորի Յարցմանցս, ի Փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ *Յաւիտեանս* Ամէն: - 661. Եւ անդ զի *յաւիտեան* է և ո՛չ ժամանակ: - 662. Դարձեալ՝ փոխումն է մահն ժամանակի և մուտ *յաւիտենին*...: - 667. ...իսկ մահն մուտն է անփոփոխ *յաւիտենին*...: - 667. Եւ դարձեալ ասէ՝ զուգագրեալք են ի գիրն *յաւիտենից*, ի միասին և ժամանեսցին: - 669. ...յորում կրեսցէ զվճիռս անվճար պատժոյն *յաւիտենից* տանջանացն: - 669. ...ապա և մարմինն անապական և հոգին անփոփոխ կացցէ *յաւիտեան*. նմանելով անապական և անփոփոխ մարմնոյն քրիստոսի: - 678. Ամիսն նշանակէ մինչ ի դատաստանն. և տարին զյարութիւնն *յաւիտենից*...: - 683. ...յորժամ բաժանին օդիքն և այծիք. որ է արքայութիւնն երկնից և դժոխքն *յաւիտենից*: - 686. Նոքա որ թողին զամենայն և գնացին զհետ քրիստոսի, որոց խոստացաւ զհարիւրապատիկն աստ՝ և զկեանսն *յաւիտենից*: - 688. Երկրորդ, զի զուգագրեալք են ի գիրն *յաւիտենից*: - 691. Զի յորժամ ոմանք քաւին և մտցեն յարքայութիւնն, և ոմանք ի տանջանս *յաւիտենից*, ա՛յս է հատուցումն: - 698. Տասնք, հարցանեմ, հուր քաւարանին ժամանակեա՞յ է թէ *յաւիտենից*: - 700. Զի թէ *յաւիտենից* է, տանջանք է և ո՛չ քաւարան: - 700. Իսկ թէ ժամանակեայ, ընդ դէմ ասէք աստուածային բանին. զի տէրն մի հուր ասաց. և զայն *յաւիտենից*: - 700. Դարձեալ ասեմք եթէ՝ խոստովանողին պատիժ ամօթն է զոր կրէ առաջի քահանային. և ո՛չ կրէ զամօթն *յաւիտենից*: - 701. Նա՛խ՝ զի նոքա ժամանակեայ հուր ասեն և տանջանք հոգւոց. իսկ ոսկեբերանն մի հուր և տանջանք *յաւիտենից*: - 702. ...և ոսկեբերանն զմահացուն լինիլ ասէ փայտ խոտ և եղէգն. և նիւթ *յաւիտենից* այրելոյն: - 702. Իսկ մինչև՝ անդ ո՛չ է կոպար ժամանակի. այլ *յաւիտենի*: - 704. Նա՛խ՝ զի արծակէ ի ժամանակեայ կապիցն և արկանէ ի *յաւիտենից* տանջանս: - 706. Իսկ որք հաւանին նմա՝ կորնչին ի տանջանսն *յաւիտենից*: - 706. ...յորժամ հոգին միաւորի ընդ մարմնոյն և մարմնովն ժառանգէ զփառս և զկեանսն *յաւիտենից*: - 710. Չորրորդ, տանջանքն *յաւիտենից* մահ է մշտնջենաւոր. և սոքա կոչին երկրորդ մահ: - 710. Նոյնպէս և սուրբք ընդ քրիստոսի *յաւիտեանս* թագաւորեն. - 711. Եւ ի նոյն կէտ լրմանն որ է՛ վախճան ժամանակի և սկիզբն *յաւիտենի*՝ լինի վերառութիւն համայնից մարդկան որպէս գրէ առաքեալն կորնթացւոց. - 716. Իսկ ի յարութեանն յանփոփոխ *յաւիտեանն* ծնանիմք. - 723. Իսկ պարզ տարերքն զնդածն դադարին ի տեղիս իւրեանց *յաւիտեան*: - 728. Երկրորդ՝ զի ժամանակ կենցաղոյս համեմատեալ *յաւիտենին* փո՛քր է և սակաւ: - 730. Եւ այսպէս հսկել և պահել զտունս մեր, զի մի՛ գող մահուն և կատարածի՝ գտեալ զմեզ անպատրաստ ի մեղս՝ տանիցի զհոգիս մեր ի տանջանս *յաւիտենից*: - 730. Եւ վերջընթացն է հրեղէն ծովն ի հարաւ. ուր առաքէ՛ զմեղաւորս ի հուրն *յաւիտենից*: - 731. ...և ընդ վճռի դատաւորին իսկոյն քարշին ի տանջանս ի հրեղէն ծովն որ հուրն է *յաւիտենից*: - 731. Նա՛խ՝ զի տեսութիւնն աստուծոյ կեանք է *յաւիտենից*. - 740. Նախ՝ զի անփոփոխ է *յաւիտեանն*. այլ էութիւն մեր. այլ և վկայքն: - 742. Ապա վասն է՞ր սակս ժամանակեայ մեղաց՝ *յաւիտեան* պատժէ աստուած: - 744. Ասեն վարդապետք թէ արդարապէ՛ս պատժի մեղաւորն *յաւիտեան*: - 744. Նա՛խ՝ քանզի մեղանչեաց յիւր *յաւիտեանին*, արժանապէս պատժի ի *յաւիտենին* աստուծոյ: - 744. Դարձեալ՝ մեղանչեն ընդ դէմ յաւիտենականին աստուծոյ. վասն որոյ *յաւիտեան* պատժէ զնոսա: - 744. Դարձեալ՝ նիւթ հրոյն որ աղտ մեղաց, է՛ յաւիտենական. վասն այն *յաւիտեան* տանջէ զնոսա: - 744. Այլ որ ուղիղն է տեսութիւն, յետ յարութեան փոխի ժամանակն ի *յաւիտեան*. և այլ ո՛չ գտանի մասն և րոպէ և ժամ. զի երկնային մարմինք դադարին ի շարժմանէ ուստի ժամանակն գոյանայ: - 747. Երկրորդ վասն ժամանակին. զի փոխեալ է ի *յաւիտեան*: - 750. Վասն չորից անհանգիստ տանջին մեղաւորքն *յաւիտեան*. որպէս տեսանի ի մարմնաւոր տանջանացս: - 750. Անդ տիւ և գիշեր ժամանակի և մասանց սորին ո՛չ է. զի անցեալ է ժամանակն և մնացեալ է *յաւիտեանն*: - 750. Նախ վասն մարդոյս. զի մին մեղացն կրկին հատուցանի աստ հոգւով և մարմնով. իսկ եօթնպատիկն է՛ ի հուրն *յաւիտենից:* - 750. Վասն եօթներորդին, որք զմեղս խոստովան լինիլ ո՛չ կամեցան զորս առնել ո՛չ էր պարտ. վասն այնորիկ անդանօր ամենեցուն մերկացեալ և բացեալ *յաւիտեան* յամօթ լինին: - 752-753. Եւ յորժամ առաքին մեղաւորքն ի հուրն *յաւիտենից*, գտանեն զճնօղս իւրեանց որպէս գառինք զմարս, և *յաւիտեան* խածատեն զնոսա: - 753. Արքայութիւն ասի և կեանքն *յաւիտենից*: - 754. Որ և անբաժանելի և անքակ միութեամբ միաւորին յօդեալք ի գլուխն քրիստոս անզրաւ *յաւիտենիւ*: - 757. Եւ այլ բազում վկայութեամբ կարէ՛ հաստատիլ եթէ մի է արքայութիւնն երկնից որ է կեանքն *յաւիտենից*: - 759. Եւ այնպէս մնասցեն *յաւիտեան* որպէս ցուցաւ ի վերոյ: - 760. Երթիցեն արդարքն ի կեանսն *յաւիտենից*. և մեղաւորքն ի տանջանս *յաւիտենից*: - 760. Եօթն զարդ հարսին որպէս ցուցաւ. և օժիտք *յաւիտենիցն* կենացն. պսակք և արկանելիք, ասացան մեզ փոքրիշատէ յառաջագոյն ի բանից սրբոց: - 761. Երկրորդ՝ ծառ կենաց են բնակիչք վերնոյն սիօնի. տնկեալք յաղբիւրն կենաց որ իջանէ յաթոռոյն աստուծոյ ի մէջ նոցա. ունելով զանմահ կեանս *յաւիտենից*: - 765. Դարձեալ, ծառ կենա՛ց է աստուածածին կոյսն մարիամ բղխեալ յարմատոյն

յեսսեայ. երկնուղէշ զարգացմամբ մշտասաղարթ կուսութեամբ ծաղկեալ և պայծառացեալ հոգւոյն սրբոյ եկաւորութեամբն. և պտղաբերեալ մեզ անմահ պտուղ զբանն մարմնացեալ. յորմէ վայելեալք երկնաւորք և երկրաւորք ի շնորհաց նորին *զյաւիտենից* կեանսն ժառանգեցաք: - 768. Որ միշտ օրհնեալ ես և գովեալ *յաւիտեան*: - 771. Այսօր վերստին հրամայեաց հաւատացելոց իւրոց ճաշակել ի պտղոյն կենաց. և մնալ *յաւիտեան* և անմահ կենդանութեամբ ի քրիստոս յիսուս ի տէր մեր: - 771. Որով և ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ վայելէ փառք և պատիւ և իշխանութիւն և զօրութիւն. այժմ և միշտ և *յաւիտենից յաւիտեանս* Ամէն: - 771. Այժմ և մշտակայ *յաւիտենիւ* Ամէն: - 771. Երրորդ, զի թէ սատանայ որ գտա՛կն է ամենայն չարեաց՝ դեռևս ո՛չ տանջի *յաւիտենից*...: - 776. Ասեմք թէ՝ յիրաւի, որովհետև երևեցաւ տէր մեր ի փրկութիւն ընտրելոց ըստ ամբակումայ, նախահայրն *յաւիտեան*. իսկ այլք ազատեցան ժամանակեայ: - 777. Ապա ուրեմն ողորմութեամբ և արդարութեամբ ազատեցաւ նախահայրն *յաւիտեան.* իսկ այլքն առ ժամանակ մի ողորմութեամբ վասն նորա որպէս ասացաւ: - 778. Իսկ ի ժամանակի փոփոխիլն առ *յաւիտեան*, յայնժամ և մեք լիցուք անփոփոխք և յաւիտենականք: - 779

**ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ +** Եւ միւսն է *յաւիտենական* նախասահմանումն աստուծոյ. յորմէ ո՛չ ոք կարէ ջնջիլ: - 18. Եւ քրիստոս թագաւո՛րէ *յաւիտենական*: - 50. Դարձեալ՝ յորժամ ասի, թէ լսիցէ «ի հօրէ», և կամ «առնուցու», մի՛ իմասցի այնու թէ բղխումն հոգւոյն սրբոյ տակաւին ապառնի էր. զի *յաւիտենակա՛ն* էր: - 65. Այլ այնպէս ասաց առ ի ցուցանել զանչափ *յաւիտենական* աստուածութիւնն՝ որ ըստ ինքեան պարունակէ զամենայն ժամանակս. ըստ որում աստուածային ելմունք ի յապառնի ժամանակս իցեն. և կերպիւ ինչ ներկայաբա՛ր գոն: - 65. Ապա ուրեմն և ո՛չ էր յարութիւն և ո՛չ կենաց տըւօղ, եթէ ո՛չ էր միաւորեալ ընդ կեանքն *յաւիտենական*: - 74. Քսաներորդ՝ որպէս բարձրագոյնքն կարեն ասիլ մարմնոյն վասն միութեանն՝ որպէս աստուած, յարութիւն, և կեանք *յաւիտենական*: - 74. Եւ ո՛չ ասի ժամանակեայ վասն մարմնոյն. այլ մշտնջենաւոր և *յաւիտենական* մարմնով: - 78. Նախ քան զմարդեղութիւնն հեռի ի միմեանց. որքան աստուծոյ և արարածոյ. անեղի և եղականի. ժամանակէի և *յաւիտենականի*: - 82. Զի *յաւիտենական* բղխէ ի հօրէ առ որդի. և նովաւ առ մեզ գայ. որպէս ջերմութիւն ճառագայթիւ արեգականն: - 108. Երրորդ՝ սկիզբն իմանալեաց. և պատճառ զգալեաց. որ են *յաւիտենականք* և ժամանակեայք: - 110. Ո՞րպէս *յաւիտենական* է աստուած. և *յաւիտենական* հոգին: - 114. Նմանապէս և *յաւիտենական*. զի ո՛չ ունի սկիզբն և ո՛չ վախճան: - 114. Իսկ հոգի մեր՝ և հրեշտակք՝ ասին *յաւիտենականք*. զի ո՛չ են ընդ ժամանակաւ. այլ ընդ յաւիտենիւ: - 114. Իսկ հրեշտակք և հոգիք և աշխարհ՝ կոչին *յաւիտենականք*. զի հաղո՛րդ են յաւիտենին. այնմ որ սկսեալ է և անվախճան: - 116. Չորրորդ՝ *յաւիտենական* է աստուած. և մշտնջենաւոր հրեշտակք. և ժամանակեայ մարդիկ: - 116. Որ է *յաւիտենական*. և մշտնջենաւոր. և ժամանակեայ: - 116. *Յաւիտենական* է՝ որ ո՛չ սկիզբն ունի, և ո՛չ կատարած. որպէս աստուած: - 116. Դարձեալ՝ զնիւթեղէնսն աննիւթապէս տեսանէ. և զբաղադրեալսն պարզ. և զժամանակեայսն *յաւիտենական*. և զբազումս և զբաժանեալս միեղէն և անբաժան: - 118. Ո՛չ մի ժամանակս կատարեալ. քանզի «ի ճշմարտութեան ո՛չ եկաց» ասէ տէրն. այլ վաղվաղակի իբրև ստեղծաւ՝ անկաւ և ո՛չ յամեաց. և ո՛չ ի *յաւիտենական* քաղցրութենէն ճաշակեաց. վասն որոյ ո՛չ երանեցաւ և ո՛չ մնաց ի բարութեան: - 147. Երկրորդ՝ զմերձեցելս յինքն՝ տանջէ՛ և այրէ *յաւիտենական* հրովն: - 151. Եւ աստ ասէ իրինոս՝ զի թէ *յաւիտենական* է հուրն, զիա՞րդ վախճան ածեն տանջանաց յաւիտենից ունայնախոհքն...: - 153. Եւ այսպէս խնդրի ապաշխարանքն. որ պատճառէ՛ *զյաւիտենական* կեանքն: - 160. Չորրորդ՝ զի յետ փորձութեան աստուած զպսակն պարգևէ. և յետ փորձութեանն սատանայ, ընդ իւր ի կորուստն *յաւիտենական* սպանանէ: - 161. Իսկ Երբ ո՛չ ասի աստուծոյ. զի անժամանա՛կ է և ո՛չ ունի փոփոխումն. այլ ասի *յաւիտենական*. ըստ որում բոլորն համանգամա՛յն է և կատարեալ. զի ոչ կարօտի սկզբան և վախճանի. որպէս ժամանակն. և ո՛չ միայն սկզբան որպէս մշտնջենաւորն. այլ անսկիզբն է և անվախճան. վասն որոյ կոչի *յաւիտենական*: - 172. Տասներորդ՝ զ թիւն նշանակէ զժամանակս բարեգործութեան. այլ շաբաթն ուր հանգեաւ աստուած՝ զհանգիստն *յաւիտենական*: - 193. Այլ մելքիսեդեկին էր նշանակ *յաւիտենական* պատարագին քրիստոսի ի տեսակ հացի և գինւոյ: - 301. Եւ տէր մեր յիսուսի քրիստոս է՛ թագաւոր *յաւիտենական*. և արդարութիւն արար մեզ և հաշտեցոյց զաստուած ընդ մարդկան: - 301. Եւ տէր մեր է՛ թագաւոր *յաւիտենական*: - 315. Յորոց փրկեսցէ զմեզ և զամենայն հաւատացեալս անւան իւրոյ ի *յաւիտենական* և յանել տանջանաց հրոյն. և մասնաւոր աջակողմեան դասուն և ժառանգ արքայութեանն երկնից կացուսցէ յիսուս քրիստոս տէր մեր. որ է օրհնեալ յաւիտեանս Ամէն: - 317. Երկայնութիւն՝ է՛ կեանք նոցա անմահ. զի գերազանցեալ են

քան զժամանակեայս, և պակաս քան *զյաւիտենականն* աստուած: - 344. Ո՞րպէս ասէ թէ՝ օրէնք *յաւիտենական* եղիցի: - 369. Եւ դարձեալ հրեշտակք և մարդիկք մշտնջենաւորք՝ պակաս ունին առ աստուածպետութիւնն *յաւիտենական*. և նա՛ է կատարումն ժերորդ. անսկիզբն և անվախճան գոլով: - 391. Չորրորդ՝ չարութեամբ աստ մեղօք տանջեն. և յետ մահու առհաւատչեայ մասնաւոր. և ի յարութեանն *յաւիտենական* տանջանօք: - 394. Իսկ տարի՛ է *յաւիտենական* փառքն. որոյ սկիզբն խնամոցէ՛ նախ քան զլինիլն աշխարհի. և կատարումն անվախճան փառքն: - 399. Եւ տէր մեր զապաւինեալ հեթանոս կոչեաց ի սրոյ *յաւիտենական* մահուն: - 418. Երկրորդ՝ զի մի՛ կրեսցէ *զյաւիտենական* պատիժն: - 432. Դարձեալ, ժամանակն ունի մասունս երիս. և մշտնջենաւորն. և դարձեալ *յաւիտենական* է բանն. և ժամանակեայ մարմինն. և մշտնջենաւոր հոգին. և անքակտելի միութիւնն ցուցանէ մեզ զչորս թուոյն. և ամենայնիւ կատարեալ գոյացութեամբ: - 437-438. *Յաւիտենականն* ժամանակաւոր: - 470. Իններորդ՝ միաւորութիւն մարդոյ՝ է՛ անմահ և մահկանացու. *յաւիտենական* և ժամանակեայ. այսինքն հոգի և մարմին: - 478. Հինգերորդ՝ քրիստոս լինելոց էր քահանայ և թագաւոր *յաւիտենական*. և էգն ո՛չ կարէր օծանիլ քահանայ և թագաւոր. ո՛չ յօրինակն և ո՛չ ի ճշմարտութիւնս: - 480. Որ և մարդիկք կրկին թևօք ժամանեն ի փառս *յաւիտենական* կենացն: - 494. Նոյնպէս և զկամաւոր մահն որ է՛ դեղ և առիթ *յաւիտենական* կենացն, նախ ինքն ճաշակեաց և ուսոյց հետևողաց իւրոց: - 497. Հինգերորդ՝ զի տացէ մեզ համարձակութիւն յուսալոյ ի նոյն. այսինքն մտանել մարմնով ի *յաւիտենական* ժառանգութիւնն: - 519. Դարձեալ՝ յոյսն է ունակութիւն մտաց յղացեալ յառատութենէն աստուծոյ. ունելով կեանս *յաւիտենական* բարի արդեամբք: - 574. Բայց գիտելի է, զի գործ մկրտութեանն է սրբել զհոգիս յամենայն մեղաց զոր ունիցի. թէ բնական թէ ներգործական և ի պատժոց մեղացն. զի թէ նոր մկրտեալն մեռանի, առ ժամայն թռչի ի կեանս *յաւիտենականս*: - 590. ...նոյնպէս և սուրբքն ակնունին յետ զ դարուց վճարման կենցաղոյս ժառանգել զհանգիստն *յաւիտենական*...: - 648. Եւ ապա՛ ի կատարածի ի հուրն *յաւիտենական* տանջին ասէ տէր: - 667. ...և ապա տանջի ընդ սատանայի ի հուրն *յաւիտենական* որ պատրաստեալ է նոցա: - 667. Եւ դարձեալ՝ ցուցանէ թէ այսպէս և հոգի նորա անշարժ կայ և մնայ ի *յաւիտենական* փառս և ի մշտնջենաւոր հանգիստն ամէն: - 679. Այլ սակայն զհատուցումն գործոց և զտանջանս *յաւիտենական* ո՛չ են առեալ այժմ...: - 691. Ապա ուրեմն հատուցումն *յաւիտենական* է՛ ի գալուստն քրիստոսի: - 693. Քսանևը, տանջանք և փառք այնմ կենաց յա՛յտ է զի ո՛չ է ժամանակեայ, այլ *յաւիտենական*: - 694. ...ապա ուրեմն դժոխքն է անտի պատիժ որ է *յաւիտենական* և անզերծանելի. և ո՛չ գոյ քաւարան: - 700. Եւ արդ՝ անգիտութեամբն ներելի՛ է. իսկ գիտութեամբն ապաշխարելի. իսկ չարութեամբ մեղքն է պատժելի. կամ աստ ժամանակեայ, կամ անդ *յաւիտենական*: - 701. Ասեմք նախ՝ եթէ մարգարէն դաւիթ վասն բոլոր աշխարհի ասէ որ ջրով և հրով անցանի. և ապա հանգիստ *յաւիտենական* լինի...: - 701. ...զի գիտասցուք թէ որպէս արդարոց փափկութիւնն է *յաւիտենական*, ա՛յսպէս և մեղուցելոց տանջանքն: - 703. Այլ ոմանք ասեն թէ յարութիւն է այնմ որ անկաւ՝ վերստին յառնել ի կենդանութիւն *յաւիտենական* անմահ: - 716. Եւ այսպէս սահմանի եթէ յարութիւն է այնմ որ անկաւ մարմնաւոր մահուամբ՝ վերստին յառնել անմահութեամբ ի կեանս *յաւիտենականս*: - 716. Վասն այն հոգիք մեղաւորաց լինին ի խաւարն անգիտութեան. և ի տրտմութիւն *յաւիտենական*. և որոշեալք յաստուծոյ: - 723. Արդ՝ որոյ գործն *յաւիտենական* է, և նոյն ինքն անապական է ասէ փիլիսոփայն. ապա ուրեմն անապական է սուրբ խաչն: - 734. Դարձեալ՝ չար կամք մեղաւորին է *յաւիտենական*. զի կամին *յաւիտենական* հեշտանալ ի մեղս թէ կարէին. ապա ուրեմն պատիժն լինի *յաւիտենական*: - 744. Դարձեալ՝ մեղանչեն ընդ դէմ *յաւիտենականին* աստուծոյ. վասն որոյ յաւիտեան պատժէ զնոսա: - 744. Դարձեալ՝ նիւթ հրոյն որ աղտ մեղաց, է՛ *յաւիտենական*. վասն այն յաւիտեան տանջէ զնոսա: - 744. Դարձեալ հինգերորդ, մեղքն որոշէ ի *յաւիտենական* կենացն. վասն այն անկանի ի մահն *յաւիտենական*: - 744. Զի գնելն լինի սակաւ մի ժամանակ. այլ ստացուածն է՛ *յաւիտենական*: - 744. Դարձեալ խոցումն ի վայրկեան ժամանակս, ածէ՛ զմահ *յաւիտենական:* - 744. Դարձեալ անկանիլ ի խորխորատ՝ է՛ ժամանակաւոր. այլ մնալն անդ՝ է՛ *յաւիտենական*: - 744. Դարձեալ ըմպումն մահադեղին միում րոպէի՝ ածէ՛ զմահ *յաւիտենական*: - 744. Երրորդ՝ զի նիւթ հրոյն և այրելիքն որ է աղտ մեղացն՝ նաև մեղաւորքն՝ են *յաւիտենական*: - 750. Չորրորդ՝ զի բորբոքումն բարկութեանն աստուծոյ է՛ *յաւիտենական*: - 750. Երրորդ՝ կամ գործիք տանջանացն նուազին. իսկ անդ հուրն է *յաւիտենական* որ ոչ պակասի: - 750. Իսկ Չորրորդն արքայութիւն՝ է՛ *յաւիտենականն* գաւառ. յորմէ ի ձեռն մեղաց առաջնոյ մարդոյն՝ տարեալք պանդխտիմք յայսմ տառապանաց գբի և ի տիղմ կաւոյ. անարգաբար դեգերեալք ի հովիտս

արտասուաց. յանապատի կալով և ո՛չ ի ճանապարհի. - 756. Որ է՛ կեանք *յաւիտենական*: - 761. Ա՛րդ` սոքա ամենայնքին մասնաւոր և փոփոխական են և հակառակաւ. զի՞նչ իմանաս զանտի երանութիւնն. որ բոլորովիմբ է, և անփոփոխ, և առանց հակառակի *յաւիտենական*: - 762. Առաւել պարտ էր մարդկան վաստակիլ միայն` զի կարասցեն զոլ ի միում աւուր ընդ երանելի սրբուհւոյ աստուածածին կուսին. քան բազում վաստակիլ վասն *յաւիտենական* փառացն: - 763. Իսկ աստուած ո՛չ փոխեաց զխորհուրդն իւր որ էր *յաւիտենական*. այլ վճիռն որ հայէր ի պատիժ արժանեաց նոցա: - 779. Իսկ ի ժամանակի փոփոխիլն առ յաւիտեան, յայնժամ և մեք լիցուք անփոփոխք և *յաւիտենականք*: - 779

**ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆԱՊԷՍ** - Այսպէս և հոգին սուրբ էառ *յաւիտենականապէս* զէութիւնն ի հօրէ բղխմամբ, և որդի ծննդեամբ: - 60

**ՅԱՒԻՏԵՆԱԿՈՒԹԻՒՆ** - Եօթներորդ` *զյաւիտենականութիւնն* որ ասէ «ի սկզբանէ աշխարհի»: - 740

**ՅԱՓՇՏԱԿԵՄ +** Զորօրինակ` թափումն ի զգայութեանց թմրիլ` կամ ընդարմանալ ասի. այսպէս թափումն ի մտաց` զարմանալ ասի. ըստ պօղոսի որ *յափշտակեցաւ*. և ըստ դաւթի որ զարմացաւ. կամ ըստ ադամայ որ թմրեցաւ: - 127. Այլ թէ ըստ կարգին իմասցիս` հետևիմք առաջասացեալ սրբոյն դիոնիսեայ. որպէս աւանդեցաւ նմա յառաքելոյն պօղոսէ *յափշտակելոյն* յերրորդ երկինս: - 135. Եւ պօղոս *յափշտակեցաւ* յայս երրորդ երկինս: - 183. Ի մանկութենէ կռոց նուիրեցաւ, և հրեշտակ աստուծոյ *յափշտակեալ* սընոյց զնա յանապատի մինչև հասոյց ի կատարումն: - 300. Երկրորդ` զհոգին մովսէսի ո՛չ կարէր *յափշտակել* սատանայ, փոխանակ հոգւոյն զմարմինն ջանայր *յափշտակել*. և վճէր ընդ հրեշտակին թէ իմ է...: - 410. Շարժումն ոմանք *զյափշտակելն* ասեն. և այլք հողմոյ և երկրի. և կէսք զհնչումն հրեշտակաց: - 445. Երկրորդ` յափշտակողօք. որք *յափշտակեն* զժամանակաւոր բարիս: - 486. Չորրորդ, զի թէ ի ծեռն փիլիպպոսի առաքելոյ որ էր մի յեօթանց անտի սարկաւագացն ո՛չ եղև իջեալ հոգին ի վերայ ներքինւոյն մինչև *յափշտակեցաւ* յազովտոս - 589. Վասն որոյ բռունք *յափշտակեն*. և բազում նեղութեամբ մտանեն: - 663. Դարձեալ յուշ առնէ մարդոյ զչարչարանքն քրիստոսի. և խնդրեսցի ի նոցանէ մահն քրիստոսի իբր զգին որ տըւեալ է նոցա, և նոքա *յափշտակեցին* զինքեանս ի նմանէ: - 732

**ՅԱՓՇՏԱԿՈՂ** (տեքստում նաև` **ՅԱՓՇՏԱԿՕՂ**) **+** Եղունգն կոր և դար, բքամիտ և *յափշտակող* է: - 247. Երկրորդ` *յափշտակողօք*. որք յափշտակեն զժամանակաւոր բարիս: - 486

**ՅԱՓՇՏԱԿՈՒԹԻՒՆ +** Այս է մեկնութիւնն թէ` հաւասարն աստուծոյ` *յափշտակութիւն* և զրկումն չհամարէր իւր զծառայի կերպարանս առնուլ. զի ո՛չ ունէր յայլմէ կասկած խլելոյ զփառսն. զի ի՛րն է սեպհական: - 39. Եւ դարձեալ` զի մի՛ կարծի միայն յանմարմնութեանն պատկեր հօր, ի վերայ էած և ի լինելութեանն հաւասար աստուծոյ գոլ նովին մարմնովն առանց *յափշտակութեան*: - 93. Որպէս թէ ցանկութեամբն ասի խոզ. և բարկութեամբն շուն. *յափշտակութեամբն* գայլ. և այլն: - 274. Երկրորդ ի զրկանաց և *յափշտակութեանց*. և այս չա՛ր է: - 664

**ՅԵԲՈՒՍԱՅ** - Կամ զի օրէնքն գրեալ էր` կուրի և կաղի մի՛ դնել գայթակղութիւն, ասէին նախատելով թէ` որպէս ո՛չ կարես կոխել զդրսա, նոյնպէս ո՛չ կարես առնուլ զամուրն *յեբուսայ*: - 431

**ՅԵԴՆԱ** - Անունք Կանանց Նահապետացն: ...Մաթուսաղային *յեդնա*՛: ...Թարային *յեդնա*՛: - 299

**ՅԵԴՈՅԻԱ** - Եւ է ճրագարան և է բերան ճրագացն, է արքն մեծապատիւք զօրավիգք թագաւորին. այսինքն յեսու, զաքարիա, խոդէստուբիա, *յեդոյիա*, յեշոյիա, և եզր դպիր: - 346

**ՅԵԶԱԲԷԼ** - Եւ այս ևս գիտելի է, զի զվերանալն եղիայի ետես եղիսէ, զի մի՛ ասիցեն թէ սպանաւ *յեզաբէլէ*՛: - 290

**ՅԵԼԼԱԴԱՑԻ** - Իսկ համար անուան. ի *յելլադացոցն* ի մերս թարգմանեալ այս է, **ն. կ. զ**: - 707

**ՅԵԿՏԱՆ** - Սեփովրա էր դուստր ռագուէլի քրմի` որդոյ դեդանայ. որդւոյ *յեկտանայ*. որդւոյ աբրահամու ի քետուրայ կնոջէ: - 330. Եմրան: *Յեկտան*: Մադան: Մադիան յորմէ մադիանացիք: Եսբոկ: Սովիւէ: - 330

**ՅԵՂԱԿԱՐԾ +** Նախ` որպէս անդանօր ողջունեն զխաղաղութեան և շինութեան գոլ. *յեղակարծ* ժամու հասանիլ բարկութեան: - 788-789

**ՅԵՂՈՒՄ +** Մետասաներորդ` եթէ զբարին ոչ կամի, ապա բարի ո՛չ ոք կարէ լինիլ *յեղելոցս*. ո՛չ մարդ և ո՛չ հրեշտակք. զի կամացն աստուծոյ ո՛չ ոք հակառակի: - 14. Որև գոն ի *յեղեալքս* միաւորեալք. որպէս հուր և երկաթ. հոգի և մարմին. որք չարչարին անչարչարապէս: - 76. Եւ զի ո՛չ է ստեղծեալ, և ո՛չ է *յեղեալ* ի չգոյէ ի գոյ. ապա ուրեմն անեղ է: - 274. Եւ զի ո՛չ է անեղ` *յեղեալ* է ի յոչնչէ յէութիւն: - 274

**ՅԵՂՈՒՄՆ +** Զի անե՛ղ է՝ յաղագս որոյ ո՛չ կրէ *յեղումն* ինչ և փոփոխումն կրից: - 76. Ո՛չ *յեղմամբ* կամ շփոթմամբ. այլ անշփոթ միաւորութեամբ զբանն մարմին եղեալ և միաւորեալ զբնութիւնս մեր կատարելապէս ընդ իւրում աստուածութեանն: - 76

**ՅԵՆՈՒՄ +** Երրորդ՝ ի գաւազանն և ի մատանին. զի ի վերայ իշխանաց և իշխեցելո՛ց է հաստատեալ և *յեցեալ*: - 271

**ՅԵՇՈՅԻԱ** - Եւ **է** ճրագարան և **է** բերան ճրագացն, **է** արքն մեծապատիւք զօրավիգք թագաւորին. այսինքն յեսու, զաքարիա, խոդէստուբիա, յեդոյիա, *յեշոյիա*, և եզր դպիր: - 346

**ՅԵՌՈՒՄ +** Երեք չուանն *յեռեալ* ի միմեանս մակդարձապէս, է՛ չորեքնիւթեայ բնութիւնս մեր ի տարերց խառնեալ. կամ շնչոյ մարմնոյ և հոգոյ խառնումն: - 645. Դարձեալ, նշանակէ զժողովուրդն աստուծոյ. յորոց ունկն ընթերցեալ լինին միշտ բանք աստուածայինք. հնգիւք զգայութեամբք հոգւոյ և մարմնոյ առ միմեանս *յեռեալք*: - 646

**ՅԵՍՈՒ** - Որպէս յորժամ արեգակն և լուսին զտեղի առին առ *յեսուաւ*. և յետս դարձաւ արեգակն առ եզեկիայիւ: - 11. Չորրորդ՝ զայլայլումն լուսաւորացդ. այսինքն զի երբեմն խաւարին, որպէս առ խաչելութեամբն. և երբեմն յետս դառնան և կանգնին, որպէս *յեսու* և առ եզեկիա: - 26. Իսկ ի վերն քան զամենայն անուն. թէպէտ և անուանեին և *յեսու*՝ և օծեալք բազումք ի հինն և ի նորս: - 95. Քանզի, մովսէս ի վախճանիլն իւր՝ կտակ գրեաց զլինելոցն, և զեկեղեցին յանձնեաց ի կոյսն *յեսու*: - 329. Եւ **է** ճրագարան և **է** բերան ճրագացն, **է** արքն մեծապատիւք զօրավիգք թագաւորին. այսինքն *յեսու*, զաքարիա, խոդէստուբիա, յեդոյիա, յեշոյիա, և եզր դպիր: - 346. Եւ **բ** ծիթենիքն, զօրաբաբէլ և *յեսու* քահանայ: - 347. Որպէս յորժամ լցան մեղք ամուր հացւոցն ի չորրորդ դարուն՝ սատակեցան ի ձեռն *յեսուայ*: - 351. Եւ **դ** է քառասունքն մովսէսի բաց ի *յեսուայն* արտաքոյ միգին: - 352. Իսկ մեք **խ** զմովսէսին պահեմք որ ի լեառն սինա, և *յեսու* արտաքոյ միգին: - 363. Դարձեալ՝ քաղեբ և *յեսու*. հին և նոր կտակարանք. որք զհանդերձեալն մեզ պատմեն. և զյաղթելն անմարմին թշնամւոյն: - 380. Զի՞նչ նշանակէ եղիազար քահանայ, և *յեսու*, և իշխանքն որք բաժանեցին զերկիրն: - 391. Չորրորդ՝ Բաղդատութիւն *յեսուայ* և տեառն **լ** գլխով: - 412. Յետ վախճանելոյն Մովսէսի՝ առաջնորդեաց ժողովրդեանն փոխանորդ նորին *Յեսու* որդի նաւեայ. ի ցեղէն եփրեմի: - 414. Վասն է՞ր յետ մովսէսի եղև զօրավար *յեսու*: - 414. Նախ՝ դարձաւ գետն, զի ա՛ն և երկիւղ լիցի քանանացւոցն. և մի՛ հակառակեսցին *յեսուայ* և անկցին ի սուր նորա: - 414. Եւ հաւատարիմ է այս. զի առ *յեսու* սքանչելիքն լինէր ի կամարն երկնից. և մի տիւն՝ ժամս **լզ**: - 416. Նոյնպէս և *յեսու* անուանակիր և օրինակ ճշմարիտն յիսուսի: - 417. Նախ ըստ հոմանունն. զի *յեսու*՝ փրկիչ, և յիսուսն փրկիչ լսի ըստ հրեշտակին...: - 417. Երկրորդ ըստ իրին. զի *յեսու* փրկեաց զժողովուրդն ի մարմնաւոր թշնամեաց: - 417. Չորրորդ՝ մովսէս եբեր մինչ ի յորդանան, և փոխանորդեաց *յեսու*: - 417. Հինգերորդ՝ գրեաց *յեսու* զօրէնս ի քարեայ արձանս հեթանոսաց: - 417. Վեցերորդ՝ լրտես առաքեաց *յեսու*: - 417. Եօթներորդ՝ ռահաբ եթող զկուռս և զբազում հոմանիս. և ցանկացաւ *յեսուայ*: - 417. Երեքտասաներորդ՝ անէ՛ծ *յեսու* որ շինէ զերիքով՝ անդ անդրանիկ և կրտսեր որդւով: - 418. Հնգետասաներորդ՝ *յեսու* ներեաց աքարայ զտիւն և զգիշերն մինչ լուսով առաւօտին վիճակաւ յանդիմանեցաւ: - 418. Վեշտասաներորդ՝ *յեսու* ետես զհրեշտակ աստուծոյ յօգնութիւն եկեալ: - 418. Եօթնե**ժ**՝ *յեսու* կանգնեաց զգայիսոնն ի գայի, մինչ կոտորեցան թշնամիքն. որպէս մովսէս տարածմամբ ձեռաց զամաղէկ: - 418. Քաներորդ՝ *յեսու* զլուսաւորսն կապեաց և արար զմի օրն **բ**: - 418. Քանև**ա**՝ *յեսու* յաղթեաց ըղդիս և զդիակունս հեթանոսաց. զի զլուսաւորսն պաշտէին: - 418. Քան**գ**՝ *յեսու* փրկեաց զգաբաւոն ի **ե** թագաւորացն որք պաշարէին: - 419. Քանև**դ**՝ *յեսու* զպարանոցս թագաւորացն կոխան ետ իշխանաց իւրոց և զօրաց: - 419. Քանև**ե**՝ *յեսու* նախ սպան զթագաւորս, և զքաղաքս նոցա աւերեաց: - 419. Քանև**ը**՝ զոր ինչ պատուիրեաց մովսէս՝ զնոյն և արար *յեսու*: - 419. Քանև**թ**՝ խոստումն աւետեաց երկրին կատարեցաւ առ *յեսու*: - 419. Երեսուներորդ, *յեսու* բաժանեաց զերկիրն ամենայն ցեղիցն. և եղիազար քահանայ և իշխանքն ընդ նմա: - 419. Եւ յետ *յեսուայ* դատաւորք դատեցին առաջնորդութեամբ զիսրայէլ **նժ** ըստ եօթանասնիցն թուով երեքտասան դատաւորք մինչև ի հեղի քահանայ: - 420. Եւ այսմ վկայէ՛ պօղոս ի գործքն եթէ՝ յետոյ *յեսուայ* իշխեցին դատաւորք մինչ ի սաւուղ ամս չորեք հարիւր և յիսուն՝ այսպէս: - 420. Եւ այսպէս կարգեցան առաջնորդք. զի յետ *յեսուայ* տիրեցին այլազգիքն ամս **ը**: - 420. Երկրորդ՝ թագաւորք մինչ ի զօրաբաբէլ. և *յեսու* քահանայ: - 421. Ասեմք եթէ՝ մովսէս արիւն եհեղ. և *յեսու* բազում. և սամուէլ. և ո՛չ մեղանչեցին: - 439. *Յեսու* անէծ զերիքով և զշինօղս նորա. և անէծքն այն առնէր

անզաւակ և վաղամահ: - 445. Երկրորդ օրէնք. *Յեսու*. Դատաւորք. և Հռութ: - 450. Որոց առաջինն *Յեսու*: - 451. Եւ էր սաղմոն իշխան ցեղին յուդայ յորժամ անցոյց զժողովուրդն ընդ յորդանան *յեսու*: - 452. Այլև գայիսոնն *յեսուայ*: - 494. Զի որպէս *յեսու* աւերեաց զերիքով և անէծ զի մի՛ շինեսցի...: - 504. Յօրինակ *յեսուայ*, որ տապանակաւն և քահանայիւք և ժողովրդովք զվեց օր շրջեցաւ լռութեամբ...: - 627. Իսկ վասն քառասնից պահոց, Նախ մովսէս պահեաց կրկին **խ** ի լերինն. և *յեսու* ընդ նմա: - 652

**ՅԵՍՍԵԱՅ** - Եւ նոյն գաւազան յարմատոյն *յեսսեայ*. և բուրվառն հօր ի հոտ անուշից: - 345. Ուռն՝ կոյսն յարմատոյն և *յեսսեայ*. և Ողկոյզն տէր մեր ծնեալ ի նմանէ զուարճալի կերակուր մեզ: - 381. Երկրորդ, կոյսն մարիամ յարմատոյն *յեսսեայ*՝ յղացաւ և ծնաւ զբանն աստուած մարմնով: - 382. Երրորդ՝ ի նախատինս զօրաց իւրոց. զի հովիւ մանուկն և որդի *յեսսեայ* սպան զգողիաթ. և նոքա իշխանք և մեծամեծք ո՛չ կարացին: - 427. Նա՛խ՝ զի որդի է *յեսսեայ*. որ է՛ պտուղ կղզւոյ. և տէրն մեր եղև պտուղ մարիամու ցամաքեալ ի խոնաւութեանց կենցաղոյս: - 435. Այլ զի ծերութեան որդի էր *յեսսեայ*, վասն որոյ ի ծերութեանն ցրտացաւ: - 439. Ովբէթ ամաց **ճա**՝ ծնաւ *զյեսսէ* : - 452. *Յեսսէ* ամաց **ճլ**՝ ծնաւ զդաւիթ: - 452. Դարձեալ, ծառ կենա՛ց է աստուածածին կոյսն մարիամ բղխեալ յարմատոյն *յեսսեայ*. երկնուղէշ զարգացմամբ մշտասաղարթ կուսութեամբ ծաղկեալ և պայծառացեալ հոգւոյն սրբոյ եկաւորութեամբն. և պտղաբերեալ մեզ անմահ պտուղ զբանն մարմնացեալ. յորմէ վայելեալք երկնաւորք և երկրաւորք ի շնորհաց նորին զյաւիտենից կեանսն ժառանգեցաք: - 768

**ՅԵՍՔԱ** - Անունք Կանանց Նահապետացն: ...Նաքովրայն *յեսքա*՛: - 299

**ՅԵՏ +** Եւ որովհետև ծանեաք զայս, արդ պատասխանեմք առարկութեանցն, եթէ որքան է՛ ի հարկաւոր պատճառ է՛, լինի բացորոշապէս բանն ճշմարիտ. որպէս բան թագաւորի. և մարդոյն մեռանիլն. և արև ծագելն. և լինիլն գարունն *յետ* ձմռան: - 10. Ա՛րդ՝ բազում աւուրք անցին *յետ* մէսիային ձերոյ, այսինքն աւելի՛ քան զհազար և չորս հարիւր ամ. ապա և ո՛չ էր նա մէսիայն: - 27. Ասեմք թէ՝ զբանս զայս ասէ մարգաէն վասն խաղաղութեան որ եղև սակաւ մի յառաջ քան զգալուստն քրիստոսի՝ և ի բոլոր ժամանակս քրիստոսի, և *յետ* նորա **խ** ամ մինչև ապստամբեցին հրէայքն հռոմայեցւոց տէրութեանն: - 27. Պատասխանեմք թէ՝ ամենայն հաւանութիւն որ է կամք *յետ* խոկմանցէ և իմաստութեանց. և քրիստոս է աստուծոյ իմաստութիւն ըստ առաքելոյ: - 36. Զի որպէս առաջին նա՛ ծնաւ անսերմն ի կուսէ և ի հոգւոյն սրբոյ, այսպէս և մեք *յետ* նորա ի ձեռն հոգւոյն սրբոյ ծնանիմք ի կոյս աւազանէն: - 41. Որով յա՛յտ է թէ *յետ* ծերութեան մարդկան՝ նոյն ինքն է աստուած. և զայլն նմանապէս իմասցիս: - 42. Եօթներորդ՝ զի չարչարանօքն իւրովք յուսադրեաց զմեզ, զի մի՛ *յետ* տկարութեանս և սակաւ չարչարանաց ի փորձողէն՝ կասեսցուք ի նահատակութեանց. այլ օրինակ դիցուք զչարչարիլն նորա մեզ և համբերեսցուք որպէս ասէ: - 43. Նոյնպէս և հոգին յիւրում ժամանակին. *յետ* խաչելութեանն քրիստոսի և համբառնալոյն առ հայր. և ապա իջանելոյ հոգւոյն. և յայտնելոյ զաստուածութիւնն իւր: - 55. Եօթներորդ՝ զի թէ մեք որպէս և եմք ընդ լծով ծառայութեան՝ այսպէս և նա՛, զիա՞րդ յառակսն որ յաւետարանն՝ *յետ* ծառայիցն՝ որդի առաքի...: - 67. Եւ զնոյն բանն աստուած՝ աստուածութեամբն աստուած, և մարդկութեամբն աստուած. զի անբաժանելի՛ է. թէպէտ և էր նախ քան զմարդեղութիւնն աստուած, այլ *յետ* անճառ միաւորութեանն մարմնովն է աստուած: - 77. Իսկ սուրբն կիւրեղ ընդ դէմ նեստորի զինէր. որ ասէր բնակութեամբ զբանն ի մարմնի. և նախ զմարդն ծնեալ ի կուսէն և շրջեալ ի յերկրի, և յետոյ բնակեալ բանն աստուած *յետ* մկրտութեանն. և *յետ* յարութեանն փառաւորեաց զնա և զօրացոյց յարակցութեամբ ընդ ինքեան: - 79. Իսկ որք *յետ* միաւորութեանն **բ** ասեն բնութիւնս ի քրիստոս, և բաժանեն զկամս, և զգործս, և զկիրս, թէպէտ և անձն մի համբաւեն: - 81. Իսկ որք *յետ* միաւորութեանն՝ **բ** բնութիւնս խոստովանին, և սոքա են **բ** դասք: - 82. Եւ մեք զնոյն դաւանութիւնն պինդ կալցուք անշարժ յուսով ի կեանս և ի մահ և *յետ* մահու. և նորին խոստացեալ բարեացն արժանի լիցուք ի քրիստոս յիսուս ի տէր մեր: - 101. Եւ զի *յետ* մահու և յարութեան ո՛չ գոն այսոքիկ պատճառք՝ անմոռանալի մնայ իմացումն: - 120. Իսկ բացբարձականքն՝ ո՛չ զէութիւն կամ զփառս աստուծոյ բառնայ, այլ զոր *յետ* էութեանն աստուծոյ է և ի նմանէ ստեղծեալ՝ և զխոնարհութիւնսն բառնայ: - 124. Եւ *յետ* սորա անմիտ զգայականն է. վասն որոյ ո՛չ է իմացական այլոյ: - 130. Որև այժմ ի յեկեղեցի ի նոյն խորհուրդ՝ սերօբէին պատկեր որ է քշոցն՝ ի ձեռն սարկաւագին աւանդի՝ որ է՛ մաքրօղն. և երրորդ կարգ *յետ* քահանային և քահանայապետին: - 135. Զի *յետ* անկմանն եղև խստացեալ և անզեղջ ի չարն. կորացեալ ի ճշմարտութենէն. անկեալ ի բարւոյն. տկարացեալ ի զօրութենէն. արտաքսեալ յաստուածային խոկմանէն: - 146. Զի զոր ինչ բնութեամբ ունէին դևք՝ եթող ի նոսա աստուած *յետ* յանցմանն. և զոր ինչ երանութեամբ ստանալոց էին՝ զրկեցան:

- 147. Զի *յետ* քրիստոսի դադարեաց սատանայ զհոգիսն ի դժոխս տանելոյ որպէս ասէ սուրբն եպիփան: - 153. ***Յետ* ընդդէմ արտաքս աքսորելոյ զարտաքինսն. և ընդ մէջ հերձելոյ զհերձուածօղսն, և զճշմարիտն աստուածաբանութիւն հաստատելոյ ի մեզ, բե՛ր սկսցուք զսկիզբն արարչութեան եղելոց մինչ ի վախճան կատարման այժմույս՝ ըստ կարգի հին և նոր կտակարանաց հետևեալ:** - 156. Յնգետասաներորդ՝ զի մարդ *յետ* ստեղծանելոյն ո՛չ է ընդ ստեղծուածս իւր. իսկ աստուած *յետ* ստեղծանելոյն՝ միշտ է՛ ընդ ստեղծւածս իւր նախախնամութեամբ...: - 157. Չորրորդ՝ զի *յետ* փորձութեան աստուած զպսակն պարգևէ. և *յետ* փորձութեանն սատանայ, ընդ իւր ի կորուստն յաւիտենական սպանանէ: - 161. Դարձեալ ասեմք թէ ո՛չ միապէս է մեղքն նախ քան զշնորհքն և *յետ* շնորհացն. զի առաջինն անգիտութեամբ էր, և վերջինն գիտութեամբ. և առաջինն հաւատովք սրբի, և վերջինս ապաշխարութեամբ և սրբութեամբ: - 166. Այլ տեսցուք զայս և յօրինակս ճշմարտութեան. զի ադամ *յետ* միոյ յանցանացն ո՛չ մատոյց պատարագ զամենայն աւուրս կենաց իւրոց. այլ որդւո՛ցն հրամայէր մատուցանել: - 167. Կամ *յետ* ներգործութեան. որպէս ի շարժելոյն դադարիլ: - 168. Երկրորդ՝ զի պատահումն *յետ* գոյացութեան է: - 170. Եւ գիտելի է, զի ի սկզբանէ աշխարհիս մինչ ի քրիստոս լո՛յսն առաջանայր գիշերոյն. իսկ *յետ* քրիստոսի մինչ ի վախճան՝ գիշե՛րն առաջանայ լուսոյն: - 194. Մարգաց. որ է՛ ժամանակ աճելոյ զմարդ. որ ի դաշտս և ի հովիտս իցեն. յայգեստանս և ի բուրաստանս. յորժամ արեգակն առ շամբն և *յետ* շանն իցէ. զի ի **ժգ**ն՝ մո՛ւտ է ամռան: - 201. Իսկ Ցօ՛ղ է գիճութիւն ի պարզոյ իջեալ. զոր աստեղք ի գիշերի քարշեն ի վեր. և ընդ ծագել առաւօտուն՝ *յետ* ի յերկիր անկեալ մանրամասն շիթ: - 204. Նոյնպէս և հրոյ. որպէս *յետոն* է լեառն յարևմուտս: - 208. Դարձեալ՝ *յետ* մահու հոգի մարդոյն ծաղկի և գեղեցկանայ առաքինութեամբն իւրով և բնական պայծառութեամբն: - 213. Եւ *յետ* յարութեանն ընդունի զպտուղ. որ է՛ պարգևք խոստմանց անվախճան կենացն: - 213. Եւ համն ջրոյն *յետ* այնորիկ: - 213. Եւ *յետ* ամենայնի գոյնն հրոյն է: - 213. Զի քահանային է անունս դնել *յետ* աւազանին ծննդեանն: - 219. Վեցերորդ՝ զի ասէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս կազմութեան եթէ առաջին կեանք դրախտին էր կուսութիւն և անապականութիւն և հրեշտակաց նմանութիւն. և *յետ* յարութեանն վերըստին դառնամք յառաջին կեանս դրախտին. յանապականութիւն և ի հրեշտակաց հաւասարութիւն: - 225-226. Եւ դարձեալ զնոյն շնորհաց հոգին *յետ* յարութեանն փչեաց յառաքեալսն ասելով՝ «առէք հոգի սուրբ»: - 253. Եւ թէ ոք ասիցէ, զի՞նչ է այս որ *յետ* **խ**, կամ **ձ** աւուր ստեղծանի բանական հոգին: - 254. Զի կազմողական զօրութիւնն որ է՛ ի նիւթն՝ ազդումն առեալ յարարչադիր հրամանէն, նախ կազմէ՛ և պատրաստէ՛ զնիւթն առ ի յընդունելոյ զտնկականն. և ապա զզգայականն. *յետ* որոյ զբանականն ի ծագմանէն աստուծոյ: - 254. Եւ դարձեալ՝ որպէս հատն ցորենոյ ունի առ ինքն զօրութեամբ զխոտն և զծաղիկն և զհասկն. և սոքա համանգամա՛յն են ի հատն այն զօրութեամբ. որ *յետ* ժամանակաւ ըստ դասի երևին: - 255. Իսկ զերրորդ գործն որ է իմանալն և բանաւորիլն, ունի հոգին և *յետ* անջատելոյն ի մարմնոյն: - 260. Ասեմք առ այս, եթէ և *յետ* մահուան ո՛չ բաժանին սոքա ի հոգւոյն ըստ էութեան. զի մի է էութիւն սոցա. այլ ըստ ներգործութեան. զի ո՛չ է մարմին՝ ո՛չ կարէ ներգործել: - 260. Եւ *յետ* այնորիկ յեօթներորդէ՛ աւուրն սկսանի արիւնածուծ լինիլ յարգանդէ մօրն ընդ պորտն. որպէս դդում և ձմերուկ ընդ կոթն: - 261. Եւ էգն հոգևորի *յետ* **ձ** աւուրն՝ որպէս ասացաք զպատճառն վասն տեղւոյն ցրտութեան որ է՛ ձախ կողմն արգանդին. որ ցուրտ գոլով վասն փայծաղանն՝ յապաղէ՛ զկազմուած նիւթոյն ի կրկնապատիկ ժամանակս **ձ** աւուրց: - 261. Եւ թէ վասն է՞ր ասիցէ ոք՝ ոմն *յետ* **զ** աւուր՝ և ոմն ի **ի** և ոմն ի **խ**: - 261. Իսկ տնկականն կերակրի *յետ* **զ** աւուր: - 262. Նմանապէս ծառք և տունկք՝ որ *յետ* երից ամաց կամ չորից ցուցանեն զպտուղս՝ յայսմ թըւոյ ո՛չ ելանեն արտաքս: - 263. Իսկ հինգ օրեայ անդրանկանն յետոյ լինիլ՝ բերէ՛ զնմանութիւն նախնի մարդոյն. որ *յետ* **ե** աւուր ստեղծաւ: - 264. Ի ծնանիլն նախ խնդրէ միայն կերակուր և աճէ՛. *յետ* որոյ տեսանէ՛ կանգնի՛ և գնայ. *յետ* որոյ խօսի և իմանայ: - 267. Երրորդ՝ ըստ կատարման. զի այս *յետ* փոխման զյոյսն ունի լծակցեալ անմահութեան և խնդութեան. իսկ այնոքիկ կորստական և անցաւոր: - 269. Չորրորդ՝ մահու մեռանիլ այն է, որ հոգւով և մարմնով տրտմին. և անմահ չարչարին. որպէս մեղաւորք յայս կեանս և *յետ* մահու. զի որ մեռանի մարմնով՝ զպարտս վճարէ. և որ տրտմի հոգւով՝ անմահ մահանայ: - 277. Գիտելի է, զի որպիսութիւն կենաց մարդոյս տրամատի յերիս. ըստ երից փոփոխմանց մարդոյն. այսինքն նախ քան զմեղքն. և *յետ* մեղացն. և *յետ* մահուն: - 278. Իսկ *յետ* մեղացն յաշխարհիս այս՝ կարէ՛ մեղանչել, և ո՛չ կարէ ոչ մեղանչել: - 278. Իսկ *յետ* մահուն ի հանդերձեալն. ո՛չ կարէ մեղանչել, և անկա՛ր է մեղանչել: - 278. Երկրորդ՝ վասն անմեղութեանն. զի ամօթն *յետ* մեղա՛ցն է: - 278. Իսկ այն որ ինքն զգեցուցանէ,

նշանակէ՛ զինքնազգեստ փառս անմահութեան, զոր այժմ զգեցոյց քրիստոս շնորհօք, և *յետ* յարութեանն զգեցուցանէ փառօք: - 281. Որ *յետ* յանցանացն փոխեցաւ և եղև թանձր և ծանր և մահկանացու և ընդդիմահար և աղտեղի: - 282. Որպէս ասէ աստուածաբանն թէ՝ ոչ ինչ էր ծածկոյթ ի մէջ նոցա և աստուծոյ. իսկ *յետ* մեղացն փոխեցան այսոքիկ. վասն որոյ մաշկեղէն հանդերձին ցուցմամբն նշանակէ՛ զմարմինս: - 282. *Յետ* ելիցն ադամայ ի դրախտէն կենաց, հարցանելի է վասն նախահարցն ըստ կարգի: - 286. Վասն **է**երորդին, ա՛յն քան սիրեցաւ յաստուծոյ, մինչ զի *յետ* մահուանն վրէժ խնդիր եղև արեան նորա...: - 287. Եւ այլք ասեն ընդդէմ այսմ, եթէ *յետ* **ռ** ամին ի դրախտէն փոխիլոց էին յարքայութիւնն թէ պահէին զպատւիրանն. և յորժամ ելին ի դրախտէն՝ ի նոյն թիւն ո՛չ հասին: - 290. Եւ *յետ* նորա **ժ** թիւն կենդանեա՛ցն է, որ ի չորից են բաղկացեալ. որպէս **ժ** ի **դ** թուոց: - 291. Յինգերորդ ևս յայտնի. աստ կեան նահապետքն ժամանակաւ ընդ ամենայն մարդոյ. և *յետ* մահու ի մշտնջենաւորն ընդ հրեշտակաց. և *յետ* յարութեանն յանվախճան յաւիտենին թագաւորեալք ընդ աստուծոյ: - 291. Եւ *յետ* այնորիկ ըստ կարգի: - 291. Եւ վեցակողմն, զի մարմինն եռակի տարրո՛շ է. ունի վեր և վայր. *յետ* և առաջք. աջ և ահեակ: - 293. Եւ *յետ* **խ** աւուր արձակեաց զագռաւն: - 294. Եւ *յետ* **եճ** և **իե** ամաց ջրհեղեղին էր սկիզբն շինուածոյ ամբարտակին ի աշխարհին բաբելօնի ի դաշտին քաղանէ: - 297. Իսկ աբրահամուն *յետ* նորա և երկրաւոր: - 301. Եօթնն**ժ**, որպէս իսահակ արձակեցաւ *յետ* երից աւուրց, զի ի կամս հօրն յօրէ յայնմանէ էր մեռեալ՝ ուստի սկիզբն եղև ճանապարհին: - 306. ...իսկ *յետ* մահուն՝ փոխի և լինի հոգին երէց և անդրանիկ անմահ կենօք...: - 310. Եւ եգիպտոս *յետ* մահու: - 314. Այլ սքանչելին յոբ՝ էր նախքան զօրէնս՝ և գրեցաւ *յետ* օրինացն: - 321. Երրորդ՝ զի մի հպարտասցի *յետ* յաղթութեանն սատանայի, խօսեցաւ աստուած և յաղթեաց բանիւ. զի տեսցէ զտկարութիւն իւր և խոնարհեսցի: - 325. Եւ աստ գիտելի՛ է, զի *յետ* փորձանացն կրկին եղեն ստացւածքն նորա: - 326. Որք **է** ամ ասեն զփորձանսն՝ սոյնպէս թուեն. զի *յետ* փորձանացն ասէ գիրն **ճհ** ամ. և յառաջ քան զփորձն **հ** ամ. և **ը** ամ փորձանացն և դարձին: - 326-327. Եւ որք **լը** ասեն զփորձանսն՝ սոյնպէս թուեն. *յետ* հարւածոցն եկաց յոբ **բ** եօթանասուն. այսինքն **ճխ** ամ: - 327. Եւ այլք ոմանք **մխը** ամ *յետ* փորձանացն ասեն: - 327. Եւ տէրն *յետ* յարութեանն զ**խ** օր ի վերայ օդոյդ: - 328. Երրորդ՝ ի լսելոյ. որպէս զաւետիսն աբրահամու լուաւ *յետ* **դճ** ամի լինիլ: - 336. Դարձեալ երիցս երևիլն է, զի աստ ի մարմնի հաւատով տեսանեմք զքրիստոս. և *յետ* մահու յուսով ի հոգիս մեր. և *յետ* յարութեանն սիրով միաւորիմք ի նա՛: - 341. Վասն որոյ *յետ* մկրտութեանն հաղորդեմք զկնքեալն: - 341. Եւ յայտ է զի *յետ* մկրտութեանն պա՛րտ է հաղորդել, և նոքա ո՛չ առնեն որպէս ցուցաւ: - 341. Այսպէս *յետ* **ծ** աւուրց տւաւ օրէնքն. և **ձ** օր պահքն երեքօրեայ սրբութիւն: - 344. Եւ երեկոյն, զի և անդ *յետ* աստեացս վայելմունք մեր քրիստոս է: - 346. Որ և ցուցանէր *յետ* եօթանասուն ամի զդարձ գերւոյն, և զնորոգիլն հրէական կարգին: - 346-347. Յինգերորդ՝ ի խորհուրդ սրբութեան. զառաջինն պարգևէ՛ աւազանաւն. և *յետ* մեղանչելոյն ապաշխարութեամբ և վաստակօք պարգևէ՛ զնոյնն: - 350. Երկրորդ, ի յարարածոցս երևումն. զի *յետ* արարչին արարածք են: - 350. Զի յորմէ հետէ խոստացաւ աստուած զերկիրն՝ աբրահամու, *յետ* **դճ** ամի ժառանգեցին զնա՛: - 351. ...զգլուխն **ե** երորդ մասամբն ի *յետ* դարձուցանել որ է՛ տուգանք **ե** զգայարանացն որ մոռացաւ և ո՛չ զգաց զօրէնս աստուծոյ: - 358. Եւ ողջակէզ սրբութեան է՝ *յետ* ապաշխարութեան զբարիս գործել. և զբովանդակ զհոգի և զմարմին մեր նուիրել աստուծոյ: - 362. Դարձեալ՝ որպէս քրիստոս *յետ* մկրտութեանն՝ ի լեառն պահեաց **խ** օր: - 363. Նա՛խ՝ թէ *յետ* է աւուրն յաւելոյր՝ այրէին: - 367. Որ *յետ* խոստովանութեան դառնայ ի նոյն մեղս, իբր շուն դառնայ ի փսխած իւր. և սա՛ ևս այրի հրով. զի զառաջինն ևս խնդրեսցեն ասէ առաքեալն: - 367. Իսկ թէ ի տունն ի ժողովուրդս նորա. կամ յեկեղեցիս մեղանչեմք. *յետ* է ժամանակի փոխելոյ՝ որ է՛ է հասակ մեր. և է դար կենցաղոյս...: - 368. Եւ ասեն *յետ* տարւոյ մի եկեալ նոխազն մաքրեալ յարենէն: - 369. Այն է որ *յետ* տարոյն երևեցաւ պօղոսի: - 369. Զի ի կեանս յայս հաւատով նուիրիմք. և *յետ* մահու յուսով. և *յետ* յարութեան կատարեալ սիրով ընդ քրիստոս միաւորիմք: - 375. Յինգերորդ՝ ի կեանս մեր՝ և *յետ* մահու՝ և յարութեանն հանգչիմք: - 380. Երրորդ՝ յորժամ ի խոստովանութիւն և յապաշխարութիւն գայ, լինի ներելի և ակամայ. զի թէ նախ քան զմեղանչելն ակամայն, և եթէ *յետ* մեղացն ակամայն, լինի զղջմամբն ներելի և թողելի: - 385. Իններորդ՝ գլուխ և տուտն ցասումն է և տրտմութիւնն զկնի. և ամենայն մեղաց *յետ* գործոցն տրտմութիւն հետևի: - 387. Իսկ զ**խ** իջևանքն ոմանք խորհուրդ առնուն *յետ* ելիցն ի մարմնոյ հոգւոյն՝ խ աւուրբ հասեալ յօթևանս: - 391. Եւ վկայ ածեն զհամբարձումն քրիստոսի *յետ* **խ** աւուր: - 391. Զի ասեն եթէ՝ **խ** օր էր պայմանն ադամայ. *յետ* **խ** աւուր ուտէր ասեն՝ ի փայտէն գիտութեան և սրբութեամբ որդիս ծնանէր. և ապա՛ ուտէր ի կենաց փայտէն և վերափոխեր. և

այլ բազում բանս տողե՛ն: - 391. Իսկ *յետ* մահու ա՛յնոցիկ հոգւոց որք զղջան կամ խոստովանին զմեղս, քաղաք ապաստանի է նոցա ի կայանս հոգւոցն տրտմութիւն և ցաւն վասն փոխարինաց մինչ մեռանի քահանայն մեծ...: - 392. Այլ **ե** թագաւորք մադիանացիքն էին, և **բ** այսոքիկ. որ են **է** դևք **է** գլխաւոր մեղաց. որք ի կեանս պատերազմին, և *յետ* մահու ընդ հոգւոցն բազումք: - 393. Երկրորդ՝ յանապատն ամաղէկ և այլքն. *յետ* մահու որ ընդ հոգիս պատերազմին. որք են այսք չարութեան ի ներքոյ յերկնից ըստ առաքելոյ: - 393-394. Երրորդ՝ ի քանանացիս. *յետ* յարութեանն ընդ ոսոխացն դիւաց: - 394. Եւ որք պարտին աստ, նոքա և *յետ* մահու և յարութեանն. զորս կորուսցէ փրկիչն մեր յիսուս: - 394. Եւ *յետ* մահու միայն հոգի անմարմին: - 394. Երրորդ՝ ըստ օգտութեան աստ. զի փործին ընտրեալքն. և *յետ* մահու շնորհաց. և յարութեանն փառաց լինին առիթք: - 394. Չորրորդ՝ չարութեամբ աստ մեղօք տանջեն. և *յետ* մահու առհաւատչեայ մասնաւոր. և ի յարութեանն յաւիտենական տանջանօք: - 394. Յինգերորդ՝ զրկելով աստ ի խոստմանէն լրոյ. և *յետ* մահու ի տեսութեանցն. և ի յարութեանն ի կատարմանցն: - 394. Եօթներորդ՝ աստ չարախօսէ՛ ի ծածուկ. և *յետ* մահու յայտնի. և յարութեանն ևս յայտնի առաջի դատաւորին և դատախազաց: - 394. Վեցերորդ՝ նախ զկեանս զայս տեսանեմք որ է արևմուտք. և ապա *յետ* մահու զհանդերձեալն որ է՛ արևելք: - 395. Չորրորդ՝ տեսեալ զմովսէս առաւել փառաւորեալ, և *յետ* վախճանին թոյլ ետ ներողութիւնն աստուծոյ ժպրհիլ բանսարկուին ստգտանօք մեղաց. զի մի՛ տացեն նմա զգերազանց պատիւն աստուած կարծելով: - 410. Զայս նշանակէ թէ՝ *յետ* ելանելոյ հոգւոյ ի մարմնոյ և գնալոյ ի վերին շաւիղն, հակառակ կայ սատանայ և չար զօրութիւնքն ընդ նմա, տանիլ զհետ իւրեանց որ զչա՛րսն են գործեալ. և յարդարոցն յաղթին հրեշտակին օգնութեամբն. որպէս և անտօն ետես. զի իմացեալ և մեք զգուշասցուք այնմ: - 410. Եւ *յետ* է ամսոյն դարձաւ: - 412. *Յետ* վախճանելոյն Մովսէսի՝ առաջնորդեաց ժողովրդեանն փոխանորդ նորին Յեսու որդի նաւեայ. ի ցեղէն եփրեմի: - 414. Վասն է՞ր *յետ* մովսէսի եղև զօրավար յեսու: - 414. Վեցերորդ՝ մեծ սքանչելիք էր որ *յետ* դարձաւ, քան զցամաքիլն: - 414. Եւ *յետ* մահուանն մարիամու նուազեաց ջուրն. յորում եհար բարկութեամբ զվէմն: - 415. Իսկ *յետ* մահուան ահարօնի նուազեաց մանանայն. յորում տրտնջէին և յօձից սատակեցան: - 415. Իսկ *յետ* մահուանն մովսէսի վերացաւ ամպն. և հրամայեցաւ ժողովրդեանն հեռու կալ կանգունս երկուց հազարաց վասն փառաց տապանակին և վասն զօրութեան նորա: - 415. Եւ տէրն մեր նեղէ՛ մեղաւորաց աստ ի կեանս և *յետ* մահու գիշերի. և ի ծագել լուսոյ յարութեանն՝ ստուգութեամբ դատապարտէ՛: - 418. Եւ *յետ* յեսուայ դատաւորք դատեցին առաջնորդութեամբ զիսրայէլ **նժ** ըստ եօթանասնիցն թուով երեքտասան դատաւորք մինչև ի հեղի քահանայ: - 420. Եւ այսպէս կարգեցան առաջնորդք. զի *յետ* յեսուայ տիրեցին այլազգիքն ամս **ը**: - 420. Եւ *յետ* սորա հեղի քահանայ յազգէ ի թամարայ դատեաց զիսրայէլ ամս **խ**: - 420. Եւ *յետ* գերութեանն քահանայք իշխեցին ժողովրդեանն: - 421. Եւ *յետ* այնորիկ իջանէ ի սուրբ սիրտ հաւատացելոց: - 421. Եօթնևժ, երեսունքն թուով *յետ* է աւուրցն զարդարեցան: - 422. Զի՞նչ է որ *յետ* եօթն ամսոյ դարձաւ տապանակն: - 426. Իսկ դարձումն ի *յետ*, յեօթն դարուց կենցաղոյս դարձեալ ուստի ելին ժողովին ամենայն սրբութիւնք: - 426. Իններորդ՝ *յետ* **է** աւուր կորոյս զնաաս խռովարար, որ բրէր զաջոյ ակն իսրայէլի. և տէր մեր զխռովարար բանսարկուն, որ բրէ՛ զակն իմացականին մարդոյ...: - 427. Տասներորդ՝ *յետ* որոյ հնազանդեցան նմա՛ ամենայն իսրայէլ. և տեառն մերոյ զկնի խաչին հաստատեցան ի հաւատս. մանաւանդ *յետ* **է** դար կենցաղոյս ամենայն լեզու խոստովան լիցի զտէր յիսուս քրիստոս ի փառս աստուծոյ հօր ամէն: - 427. Իններորդ՝ զիա՞րդ զարհուրեցաւ կինն *յետ* երդմանն, և անկաւ յերեսս մինչ քաջալերեաց սաւուղ և եհարց: - 428. Որպէս դաւթին *յետ* զղջմանն յիշատակութիւն մեղացն մնաց, ապա նո՛յնպէս և ամենայն մարդոյ մնասցէ՞ թէպէտ և խոստովանի: - 432. ...իսկ *յետ* մահու պաշտօնք և տուրք աղքատաց և այլն՝ է՛ հատուցումն պատժոց միայն...: - 434. ...իսկ *յետ* յարութեանն տանջանք անվճար և առանց հատուցման...: - 434. Դաւիթ *յետ* յերկուց ամաց ետես զաբիսողոմ. և տէրն զմեղաւորս *յետ* ապաշխարութեան հոգւոյ և մարմնոյ. այլ և *յետ* աստեացս և մահու տեսանէ ի դատաստանին: - 438. Դարձեալ, կամեցաւ աստուած այլով իւիք յարգել զդաւիթ, և այլով զորդին իւր *յետ* նորա: - 440. Եւ այս՝ և պատերազմն վասն մովսիսեան մարմնոյն՝ ցուցանեն զպատերազմ հոգւոց *յետ* ելից մարմնոյն: - 445. Եւ *յետ* հնգետասան ամի յաւուրս աքազու՝ եղ թագ ղաթփաղսար արքայ ասորեստանի ի վերայ իսրայէլի...: - 446-447. Եւ դարձեալ՝ *յետ* աւելի քան զերեսուն ամ ի զերորդ ամին եզեկիայ արքայի յուդայ՝ եղ սաղմանասար արքայ ասորեստանեայց ի վերայ սամարիայ...: - 447. Եւ *յետ* գերութեանն իսրայէլի անցեալ ամք **ճլե**, եղ արքայն բաբիլացւոց նաբուգոդոնոսոր ի վերայ եէմի. ի **ժ** ամի թագաւորութեանն յովակիմայ. և էառ հարկ ի նմանէ. և զմեծ

մասն սրբութեանց տաճարին աւերեաց: - 447. Եւ *յետ* **գ** ամի՝ կրկին անգամ ել յերուսաղէմ, զյեքոնիա և զեզեկիէլ գերի վարեաց: - 447. Եւ *յետ* **բ** ամի՝ դարձեալ ել յերուսաղէմ, և **թ** ամ պաշարեաց զքաղաքն ի սով սաստիկ: - 447. Եւ *յետ* **ե** ամսոյ՝ նաբուզարդան դահճապետն հրձիգ արար զերուսաղէմ և զտաճարն և զտուն թագաւորացն. և զպարիսպն կործանեաց. և զսիւնսն պղնձի և զաւազանն և զամենայն կահ պղնձի և արծաթի տարաւ ի բաբիլօն: - 447. *Յետ* որոյ քեղկի քահանայ որ էր հայր երեմիայի՝ եգիտ զերկրորդ օրէնքն և մատոյց առ ովսիա. և գնաց առ ողդիկին մարգարէ հարցանել. - 447. Եւ *յետ* նոյն քան ամաց շինութեան տաճարին աւելի կամ պակաս, նա՛խ արձակեցաւ եզր դպիր. և *յետ* նորա նէեմի: - 447-448. Երրորդ՝ որպէս զստնդիայի մանուկն է ամ խրատէ՛ դայեակն. այսպէս ժողովուրդն որ ել յերկրէն իւրեանց, երկիրն բաբիլացւոց **հ** ամ ի գիրկս իւր դայեկեաց զնոսա և սնոյց. զի *յետ* դարձին յերկիրն իւրեանց՝ զբարիս գործեսցեն: - 448. Եւ *յետ* եօթանասուն ամի շինածոյ տաճարին՝ ապա արձակեալ նէեմի շինէ զպարիսպն էմի ի **լբ** ամին արտաշէսի. որպէս ասէ գիրքն եզրի: - 448. Եւ այսպէս *յետ* աւերածոյն և գերութեանն նախ տաճարն շինեցաւ, և յետոյ պարիսպն կանգնեցաւ: - 448. Եւ *յետ* այնորիկ սպանցի օծեալն. և իրաւունք ո՛չ իցեն ի նմա. և քաղաք և սրբութիւն ապականեսցի: - 449. Եւ առաջնորդեն օծեալ քահանայքն *յետ* դարձին **նձգ** ամ. մինչև բարձան օծեալքն հրէից և ծնաւ ճշմարիտ օծեալն քրիստոս: - 449. Եւ *յետ* հիւրկանեայ ո՛չ ևս ի քահանայից ազգէն կացին օծեալքն առաջնորդք. այլ աննշանք ոմանք ամսօրեայք և տարևորք: - 449. *Յետ* սողոմոնի յերկուս բաժանեցաւ թագաւորութիւնն իէլի: - 452. *Յետ* ի ամի գերութեանն մեռաւ նաբուգոդոնոսոր: - 453. Եւ վասն է՞ր *յետ* **խ** աւուր համբարձաւ. և նստելոյն ընդ աջմէ: - 455. Երեսունք, Վասն գալստեան սուրբ Յոգւոյն *յետ* խաչին, **ժ** պատճառաւ: - 455. Եւ *յետ* մահւանն մատթանայ՝ մելքի ի ցեղէն նաթանայ որ որդի էր ղևեայ և եղբայր պանթերայ, առեալ զնոյն կին մատթանայ և ծնաւ զելի: - 460. Զի գալ հոգւոյն սրբոյ պատճա՛ռ էր կրկին ներգործութեան. այսինքն սրբութեան արմատոյ մեղաց. և պտղաբերութեան կուսածին զաւակին. ծնանիլ և կոյս մնալ *յետ* ծննդեանն: - 463. Զբառս զայս ընդունելութեան դնէ՝ ընդ քեզ. այսինքն տէրն *յետ* ծննդեանն ընդ քեզ յաւիտեանս յաւիտենից...: - 464. Ասեմք եթէ *յետ* յղացման բանին յարգանդի կուսին օրինօք և ոչ օրինօք բնութեան, ժուժկալեալ ամսոց ըննից և աւուրց հնգից, ըստ հասարակաց ասեմ և անդրանկաց. ըստ հնգից յաւելեալ թւոց նախաստեղծին նախարարչութեան աւուրց: - 469. *Յետ* որոյ ծնեալ ի նոյն կուսական արգանդէ և ո՛չ յայլ ինչ մասնէ: - 469. *Յետ* այսորիկ երկրորդ միաւորութիւն սովորեցաք կոչել թէպէտ և ո՛չ իսկապէս՝ և զանհամանիւթից ոմանց. և կամ զհամանիւթից մարմնոց յարադրութիւն. որոց ընդ մէջ է մակերևութիւն միայն: - 476. Իսկ զգիր քրիստոնէից զոր *յետ* աւազանին մեղանչեմք և գրեմք զյանցանս, զայն պատառէ ապաշխարութիւնն. որ է՛ զղջումն սրտի և խոստովանութիւն լեզուի և հատուցումն գործոց մարմնոյ: - 482. Զոր այլք ասեն թէ *յետ* **լ** ամաց: - 482. Յաղագս որոյ *յետ* երկոտասան աւուրց կատարեմք զծնունդն: - 483. Յօշարակաւ մաճնաւն, յորժամ զմարմին և զարիւն իւր ետ աշակերտացն *յետ* ընթրեացն: - 491. Ոմանք ասեն թէ աւանդիլ հոգւոյն քրիստոսի, աւազակն եմուտ յերկրաւոր դրախտն ուստի ել ադամ. և չէ՛ հաւանելի. զի անդ մարմնովն եմուտ *յետ* յարութեանն: - 495. Եւ այլք ասեն՝ դրախտ զտեսութիւն աստուածութեանն կոչէ. զոր *յետ* աւանդելոյ հոգւոյն ետես աւազակն. և այս ուղիղ է. զի ո՛չ ասաց թէ՝ իցեմք, այլ թէ՝ իցես: - 495. Եւ *յետ* յարութեանն դուք ասէք թէ յանապականութիւն փոխեցաւ: - 500. ...և *յետ* մեղացն եղև ապականացու և կատարեալ. և երևի թէ ապականութիւնն առնէ կատարեալ զմարդն որ այլայլօ՛ղ է և ապականագործ: - 500. Դարձեալ ասեմք ըստ ձեզ, թէ *յետ* խաչին յապականութիւն փոխեցաւ մարմինն տն, ապա յառաջ քան զխաչն կատարեալ էր զի ապականացո՛ւ էր. և *յետ* խաչին անկատար զի անապական եղև որպէս դուքդ ասէք: - 500. Ասեմք եթէ, ապականութիւնն *յետ* յանցանա՛ցն եմուտ ի բնութիւնս: - 501. Նաև *յետ* յարութեանն եկեր ընդ աշակերտսն անապական մարմնովն: - 501. Ասեմք, եթէ խոցուածն և արիւնն ցուցակ ապականութեան են, ապա և զայս խոցուածս եցոյց *յետ* յարութեանն. նաև ի կատարածի ցուցանելոյց է զամենայն խոցուածս վիրացն...: - 502-503. Եւ թէ ոք ասիցէ, ապա ուրեմն ամենայն հոգիք *յետ* մահու կարեն խոստովանիլ: - 508. Դարձեալ պատճառե՛ն թէ՝ *յետ* յարութեանն եկեր ձուկն ընդ աշակերտսն. յորում կրակեաղ կայծականց տեսին և ձուկն խորովեալ և հաց. և օրն էր չորեքշաբաթի. և ի **ե** շաբաթի համբարձաւ: - 511. Նա՛խ՝ զի *յետ* յարութեանն ո՛չ էր պահք. այլ զատիկ մինչ փեսայն ընդ նոսա էր որպէս ինքն հրամայեաց: - 511. Եւ ապա՛ *յետ* յարութեանն իջեալ հրեշտակն թաւալեցոյց զկափարիչ վէմն և նստաւ ի վերայ նորա և աւետեաց իւղաբերիցն: - 512. Երեքտասաներորդ՝ ամաղեկացիք գերեցին զկողմն հրէաստանի և զայլազգիս. և դաւիթ զհետ մտեալ *յետ* **գ** աւուր և հարեալ ի գիշերի և

ի վաղիւն մինչ յերեկոյ. և դարձուցեալ զերկոսին կանայս իւր. և ո՛չ մնաց գերի և ո՛չ մի. և յաւարէ աստի բաշխեաց ամենայն սիրելեաց իւրոց: - 514. ...և տէր մեր *յետ* յերից օրինաց՝ այսինքն բնական բանական և գրաւական՝ երևեալ ի գիշեր կենցաղոյս և իջեալ ի դժոխս աւերելով զնա դարձոյց զերկոսին ժողովուրդս իւր...: - 514. Քսաներորդ, յա՛յտ է յա՛յսմանէ՝ որ նախ քան զքրիստոս՝ էր սկիզբն աւուր ծագումն լուսոյն. իսկ *յետ* յարութեանն քրիստոսի եղև սկիզբն աւուրն ի մէջ գիշերի. զի այժմ ի խաւարէ՛ ի լոյս ճանապարհորդիմք: - 515. Իսկ զերրորդն մարկոս պատմէ՛ առաւօտուն և յարևագալն *յետ* դուկասու. և տեսին երիտասարդ մի ի ներքս ի գերեզմանն ընդ աջմէ նստեալ: - 515. Երկոտասաներորդ, «մի՛ մերձենար», եցոյց թէ՝ որք *յետ* յարութեանն և վերանալոյն յերկինս կամին մերձենալ ի մարմին նորա առաքինութեամբ և սրբութեամբ, զախտս հոգւոց ի բա՛ց ընկեսցեն և մի ունայնապէս մերձեսցին ի նա: - 518. Յնգետասաներորդ, զի բաւական համարեցաւ ի պատիւ կանանց զայն՝ զի յառաջագոյն մերձեցաւ ի նոսա ծննդեամբ. իսկ *յետ* յարութեանն կամի՛ զի ա՛րք նախ մերձեսցին ի նա մինչ դեռ ո՛չ է ելեալ նա առ հայր: - 518. Եւ *յետ* այսորիկ ո՛չ այլ ինչ մնայ. այլ վերացումն հոգւոյն յերկինս: - 519. Վասն է՞ր յորժամ յարեաւ իսկոյն ո՛չ համբարձաւ այլ *յետ* **խ** աւուր: - 520. ...զի և մշակն *յետ* սերմանելոյն իսկոյն ո՛չ հնձէ. այլ համբերէ մինչ ի հասումն պտղոյն: - 520. Յինգերորդ՝ *յետ* **խ** աւուր համբարձաւ, զի ցուցցէ թէ որք զ**ժ** բանեան օրէնսն չորիւք աւետարանաւն լնուն, կարեն յերկինս ելանել: - 521. Վեցերորդ, զի եկեղեցի որ է մարմինն քրիստոսի՝ *յետ* չարչարանաց նեռինն որ հանդերձեալ է կրել, զկնի **խ** աւուր յերկինս համբառնալոց հաւատացեալ լինի: - 521. Երկրորդ՝ զի թէ քրիստոս այնպէս փառաւորեալ էր որպէս *յետ* խաչին, արգել և խափան լինէր ամենայն չարչարանացն և փրկութեան մարդկան: - 521. Նա՛խ՝ մաքրութիւն ի մահու չափ մեղաց. զի այլ ո՛չ ևս տիրեցին նոցա *յետ* հոգւոյն իջման: - 524. Յինգերորդ՝ զանբաժանելի միացումն ի սէրն քրիստոսի. զի որ ի խաչին թողին և փախեան, *յետ* իջման հոգւոյն՝ ամենեքեան վասն անուան նորա չարչարեցան և մեռան...: - 524-525. *Յետ* այսորիկ հարցանելի՛ է ի նոր օրինաց և յեկեղեցւոյ կարգաւորապէս ընդ մարդեղութեան բանին յարմարեալ. իբր պատճառելիք առ պատճառ նորին հետևեալ և շարադասեալ: - 528. ...և առաքեալքն ձեռն դնելովն միայն՝ տային զհոգին սուրբ. և ի լեզուս խօսէին. և մարգարէանային ընդունօղքն. իսկ վարդապետք սուրբք՝ քարոզութեան նոցին հետևօղք և որդիք ծնողացն՝ երրորդ կարգին *յետ* նոցա: - 535. Երրորդ՝ մարմնաւորն իշխէն միայն ի մարմին և ի կեանս. այլ *յետ* մահու ո՛չ: - 538. Ասեմք, եթէ որք ի հաւատս ունին թիւրութիւն. որպէս հերձուածօղք և վնասիչք եկեղեցւոյ. և որք ի զազիր վարս պղծեալ են գործովք և վնասեն զինքեանս. և անզեղջք են առ երկոսին. *յետ* մի անգամ և երկիցս խրատելոյ, որոշեսցին յեկեղեցւոյ և պատժեսցին: - 540. Նոյնպէս և որք անբիծ են հաւատովք և սուրբ գործովք. և կամ որք զղջացեալ *յետս* դառնան ի մեղաց և ի հերձուածողաց. նոցա՛ է արձակումն և օրհնութիւնն: - 540. Իսկ յերկրի և յերկինս, այսինքն ի կեանս և *յետ* մահու: - 541. Երկրորդ՝ *յետ* **կե** ամի եղև կոստանդնուպօլսի ժողովն ի չորրորդ ամի թագաւորութեանն թէոդոսի մեծի: - 542. Նախ՝ զի *յետ* յարութեանն հաւասար ետ զիշխանութիւնն. փչեաց ի նոսա...: - 546. Երրորդ՝ զի *յետ* համբարձմանն յորժամ էջ հոգին սուրբ, արար զնոսա կաթողիկոսունս առ հասարակ: - 546. Եւ *յետ* փոխման առաջնոյն՝ նստի կաթողիկոսն երկրորդ: - 546. Որպէս և քրիստոս արար. որ քան մարմնով ընդ առաքեալսն էր՝ եպիսկոպոսունս արար զնոսա. և *յետ* համբառնալոյն՝ հոգւովն սրբով արար զնոսա կաթողիկոսունս: - 546. Այսպէս և ամենայն ազգք քրիստոնէից զնոյն ունէին ճանապարհ դաւանութեան և աւանդութեան յառաքելոց անտի մինչ ի ժողովն քաղկեդոնի. և *յետ* անտի բաժանեցան ամենայն ազգք յամենայն իրս, որպէս յա՛յտ է յիւրաքանչիւր եկեղեցիս: - 551. Իսկ *յետ* օրինացն՝ անօրէնութիւն. որպէս որք յանապատի անդ անօրինեցաւ ժողովուրդն: - 555. **Վասն այն այլ վարդապետք կոչեն զայս ախտ՝ ծուլութիւն. զի ծուլութիւնն յերկու իրաց երևի. մին որ *յետս* դառնայ ի հոգևոր բարւոյն և ծանրանայ ի գործելն. այսինքն պահել՝ աղօթել և այլն. և ըստ այսմ կոչի տրտմութիւն:** - 559. Չորրորդ՝ վեց են շարժութիւնք մարմնոյ. այսինքն վեր և վայր. յաջ և յահեակ. յառաջ և *յետ*: - 560. Իսկ *յետ* և յահեակ որկորստութիւն և պոռնկութիւն. զի յետս դարձումն է ի ճշմարիտ բարւոյն, և զհետ ընթերցումն է առ ահեակ և սուտ բարիս: - 560. Եւ ի կատարեալ հասակն ագահութիւնն. և *յետ* այնորիկ տրտմութիւն, ծուլութիւն, և այլն: - 561. **Երրորդ՝ զի շղթայք մեղաց այսպէս ունին զկարգն. զի նախ որկորստութեամբ լնու զորովայնն. և *յետ* այնորիկ պոռնկութեամբ թափէ՛ զնա. և ապա՛ արծաթ ժողովէ զի լնու զորովայնն և պոռնկի**...: - 561. Իսկ ներելի մեղքն է յանցանք փոքրագոյն. քանզի ի մանկունս *յետ* մկրտութեան նախ յառնեն ներելիքն, և ապա՛ մահու չափքն: - 567. Եւ յայսցանէ յայտէ, զի *յետ* յարութեանն ի վերինն գաւառ ոչ

գոյ յոյս. զի է՛ անդ երանութիւն, որ է ստացումն ամենայն բարեաց. բոլորն համանգամայն և կատարեալ. և ոչ ինչ է ապառնի յոր յուսացեալ լինի: - 574. **Եւ այլ վարդապետք ասեն, սիրել պարտ է նախ զայն որ ի վերո՛յ է քան զմեզ. այսինքն զաստուած. և ապա՛ զմեզ. յետ *որոյ* զընկերն. և ապա՛ զմարմինս մեր. և ի նոյն աստիճանս զմարմին ընկերին. զի մարմինն երկրորդ է հոգւոյն**: - 576. **Հինգերորդ՝ ըստ որպիսութեան մեր հաւատն է այժմ. յոյսն *յետ* մահու ...և սէրն *յետ* յարութեանն**...: - 578. Որոյ գործն այս է, զիւրաքանչիւր ուրուք *յետ* տալ զոր իւրեանն է: - 579. Եօթներորդ, յերկինս ասելով՝ ցուցանէ *յետ* աստեա՛ցս զվարձն և ո՛չ ի մարմնի: - 586. Եւ դարձեալ՝ ինքն քրիստոս նախ մեռաւ մարմնով, և ապա կենդանացաւ *յետ* մկրտութեանն: - 592. Եւ գիտելի է, զի *յետ* օծանելոյն զգեցուցանեն զհանդերձս պայծառ. որ զլուսաւոր վարս և զպայծառ հաւատս և զանմեղութիւնն նշանակէ: - 594. Իսկ ելանելն ի բեմն, զի *յետ* բոլոր անօրէնութեանցն քրիստոս ել յերկինս և նստաւ ընդ աջմէ հօր աստուծոյ: - 594. ...և ապա *յետ* այնորիկ լուաց զոտս աշակերտացն. - 599. այսպէս պատմէ Մատթէոս և Մարկոս. իսկ Ղուկաս և Յոհաննէս *յետ* ընթրեա՛ցն նշանակեն զթացեալ պատառն: - 599. Եւ այլք ասեն թէ՝ թէպէտ *յետ* ընթրեա՛ցն էր...: - 599. Եւ *յետ* յարութեանն փչելովն զհոգին՝ արար զնոսա եպիսկոպոսունս: - 607. Եւ աստ վճարեցաւ արիւնն և ազգն. *յետ* նոցա ի **ե** երորդ ծնունդն խնամութիւն լինի: - 612. *Յետ* այսորիկ հարցանելի՛ է զեկեղեցական կատարմունքս մեր: - 613. Աշխարհամատրանն. և *յետ* գալստեան Հոգւոյն կիրակէն. Տապանակին. Շողակաթին. և **դ** օր ի Խաչին տօնն. **բ** Գալստեանն. Վերնատանն. Եւ նոր կիրակէին: - 616. Իսկ ի նորս եկեղեցի քրիստոնէիցս ազգի՝ յաւելեալ է կրկին ժամ. այսինքն *յետ* առաւօտին զարևագալն. և *յետ* երեկոյին՝ զխաղաղականն...: - 621. Ութերորդ՝ խաղաղականն է *յետ* երեկոյին ժամուն առ հոգին սուրբ. յորում ժամու հոգին քրիստոսի էջ ի դժոխս և խաղաղացոյց զնոսա: - 622. Եւ այս գիտելի է, թէ ոմանք հանապազ *յետ* ամենայն կարգեալ աղօթից առանձնակի աղօթեն: - 623. Եւ դարձեալ՝ **գ** է որպիսութիւնք մեր և փոփոխմունք. որ է՛ աստի կեանս. և *յետ* մահուն. և *յետ* յարութեանն...: - 623. Այլ և *յետ* յարութեանն երևեցաւ մեզ: - 628. Եւ *յետ* այսորիկ ի միասին համաձայն երգել զփառս ի բարձունս աստուծոյ, որ փրկեաց զմեզ: - 628. Իսկ և եօթներորդն խոստովան լինիլ բարութեան և արդարութեան տն. և մերձիլ խնդրուածովք. և օրհնել զաստուած նոր օրհնութեամբ *յետ* աստեացս: - 630. Վերջին և առաջին գուբղայն յանմեղութենէ ասացեալ. և միջինն *յետ* մեղանացն. այս ընդ իրեար միաւորեցաւ: - 630. Այլ *յետ* երկոտասան ամաց ի թաղումն կուսին ասացաւ: - 634. Դարձեալ՝ որպէս *յետ* ամենայն տնօրէնութեանցն ել առ հայր և պարգևեաց զհոգին սուրբ: - 634. Նոյնպէս *յետ* ամենայն խորհրդական աղօթից՝ առ հայր ամբառնամք և աղերսեմք զհոգին սուրբ բաշխել մեզ. - 634. Եւ *յետ* սորա թովնաս երաժիշտ՝ այլակերպ յօրինէր գործի...: - 640. Իսկ *յետ* սորա՝ Սինիգրէս արար զառաջին ձայնն, ի հիւսնականէ՛ գտեալ արուեստից: - 640. Այլ երկրորդ են լոյսք *յետ* արարչին. և առաջին քան զմարդիկ...: - 642. *Յետ* մովսիսի դաւիթ է առաջին մարգարէ ...: - 643. Կամ որպէս *յետ* յարութեանն պետրոս նախ ետես զքրիստոս...: - 644. ...այլ *յետ* մահուն և յարութեանն առնուն զկատարեալ փառս...: - 647. Հինգերորդ, որպէս *յետ* **զ** աւուր լինի շաբաթ և հանգիստ...: - 648. ...նոյնպէս և սուրբքն ակնունին *յետ* **զ** դարուց վճարման կենցաղոյս ժառանգել զհանգիստն յաւիտենական...: - 648. Վեցերորդ՝ *յետ* ուրբաթուն չարչարանաց՝ ի շաբաթի օր տօնեմք սրբոցն. - 648. Ութերորդ՝ որպէս *յետ* շաբաթուց կիրակէն փոխի: - 648. Երկրորդ, *յետ* ելիցն ի դրախտին **ե** օր սուգ պահեաց անսուաղ...: - 653. Վասն որոյ *յետ* համբարձմանն պահելի է զդշաբաթ և զուրբաթ. և կամ զինն օր մինչ ի հոգւոյ գալուստն: - 654. Զի՞նչ է որ *յետ* կերակրոյն դարձեալ կրկին օրհնեմք: - 655. Եւ զայս ուսաք ի քրիստոսէ. որ ի վերնատունն *յետ* ընթրեացն օրհնեցին և ելին ի լեառն ձիթենեաց: - 655. Նոյնպէս և մեք *յետ* սեղանոյն օրհնեմք զաստուած: - 655. Եւ ոմանք երեքկին օրհնեն. ի սկիզբն. ի մէջն, և *յետ* կերակրոյն: - 655. Եւ *յետ* յարութեանն այն սովորութեամբն ծանեան զնա...: - 655. Վասն այն նախքան զըմպելն օրհնեմք. և *յետ* ըմպելոյն դարձեալ շնորհակալեմք. - 656. Երանելին մովսէս խորենացի՝ որ էր գրիչ սրբոյն սահակայ պարթևի, *յետ* **ճծ** ամի սրբոյն գրիգորի՝ եդև սկիզբն թարգմանութեան ի հայոց լեզու: - 658. Որ **ծ** թիւ էր ի սրբոյն գրիգորէ *յետ* **ճծա** ամի անցանելոյ...: - 659. Եւ նոյն զքահանայթաղէքն, որ ունի է աւետարան. և զաշխարհական թաղումն, ի յայրարատ գաւառի ի վաղարշապատ քաղաքի ի վկայարանս սրբոյն հռիփսիմի. *յետ* **ճծա** ամի սրբոյն գրիգորի. զի մինչև ցայն հնովն վարեին: - 659. *Յետ* այսորիկ հարցանելի՛ է վասն հանդերձելոյն: - 662. Նախ աստ հոգի մարդոյն է ի մէջ չարեաց և բարեաց. իսկ *յետ* մահու ի մէջ բարեաց միայն. և ի յարութեանն ի մէջ բարեաց և փառաց: - 667. Եւ դարձեալ՝ աստ հաւատոյն է. իսկ *յետ* մահու յուսոյն. և ի յարութեանն սիրոյն: - 667. իսկ *յետ* մահու հաստատուն յուսով տեսանեմք և ուրախանամք...: - 667.

...իսկ *յետ* յարութեան սերտ և անքակտելի սիրով միաւորիմք...: - 667. Իսկ *յետ* մահու կարէ՛ ոչ մեղանչել: - 667. Եւ *յետ* յարութեան ո՛չ կարէ մեղանչել զի անկա՛ր է մեղանչել: - 667. Եւ *յետ* մահուն կարէ ոչ արդարանալ: - 667. Եւ *յետ* յարութեանն ո՛չ կարէ արդարանալ զի անկատա՛ր է...: - 667. Դարձեալ՝ նշանակէ՛ *յետ* մեռելոյն զփոխումն ուրախութեան մեր ի սուգ և ի մերկութիւն. և ի սև հանդերձս. ի խաւար տունս և այլն: - 670. Զորօրինակ զմարտիկ ոք *յետ* հանդիսին դարձեալ լուանան ի փոշոյն և օծանեն: - 672. ...զի կնիք է ի հոգին և անքակ. որպէս ի կեանքն՝ նոյնպէս և *յետ* մահու ունի: - 673. Նախ ի բեթլէհէմ. և ապա՛ ի քեբրոն. և *յետ* եօթն ամաց ի վերայ ամենայն իսրայէլի օծաւ: - 673. Եւ *յետ* այնորիկ ի հարաւ. զի հարաւով հողմոյ սուրբ հոգւոյն՝ արար մեզ զարուն հոգևոր ազգի հաւատացելոցս...: - 673. ...որ ցուցանէ թէ մարմինն նորա միշտ յեկեղեցւոջէ և *յետ* մահուն...: - 674. Վեցերորդ, որպիսութիւն կենաց մեր գ է. այսինքն այժմու կեանս. և *յետ* մահու. և *յետ* յարութեանն: - 675. ...և *յետ* մահու կարեմք յառնել...: - 675. ...և *յետ* յարութեանն ո՛չ կարեմք մեռանիլ և յառնել...: - 675. Եւ *յետ* դնելոյ մարմնոյն՝ նոյնպէս օրհնէ զհողն ասելով...: - 676. Եւ *յետ* այնորիկ յիշեմք զպատիժ հրամանացն աստուծոյ որ կատարեցաւ ի վերայ նորա...: - 676. Նա՛խ՝ զի *յետս* դառնամք մահուամբ, այսինքն ի դրախտն և ի մայր մեր, պա՛րտ է զի նախ ոտքն ընթասցի: - 676. Հինգերորդ՝ *յետ* գօրեայ թաղմանն քրիստոսի եկին առաքեալքն և կանայքն ի գերեզմանն...: - 681. Վեցերորդ, ի փոփոխումն աստուածածին կուսին *յետ* գ յաւուր ձայն հրեշտակացն դադարեցաւ...: - 681. ...զի հայրն աբրահամ առեալ հուր և սուր, և *յետ* երից աւուրց տեսին զտեղին ի հեռաստանէ որպէս ասէ պատմութիւնն: - 681. Եւ ի հեռուստ տեսեալ զտեղին, զի *յետ* կատարածի մարմնով առնելո՛ց են իւրաքանչիւր ոք զփառս կամ զտանջանս: - 682. ...և *յետ* աստեացս մտանեմք ի կայանս հոգւոց...: - 682. ...և ապա *յետ* յարութեանն ի կատարածի միանգամայն մտանեմք ի սուրբն սրբոց որ է արքայութիւնն երկնից: - 682. Եւ թէպէտ ամենայն մեղաւոր զղջանայ *յետ* մահու, այլ ո՛չ կարէ ապաշխարել...: - 684. Այն է որ *յետ* յարութեանն քրիստոս եմուտ ի վերնատունն և օրհնեաց զաշակերտսն: - 684. *Յետ* մարմնոյ կատարմանց՝ հարցանեմ և վասն բաժանեալ հոգւոց: - 685. Վարդապետք սուրբք՝ զպահեստ հոգւոց յերիս փոփոխմունս գիտեն. այսինքն նախ քան զքրիստոս. և *յետ* քրիստոսի. և *յետ* դատելոյն: - 686. Նախ քան զքրիստոս, առ հասարակ ի դժոխս. բայց *յետ* քրիստոսի, առհասարակ ի կայանս հոգւոց. և երրորդն ի կատարածի...: - 686. Զի այժմ հոգւով են առ նա. և *յետ* յարութեանն հոգւով և մարմնով: - 688. Զի այժմ յուսով են յերկինս և առ երկինս. և *յետ* մահու հոգւով. և *յետ* յարութեանն հոգւով և մարմնով յանճառելի փառսն: - 689. *Յետ* աստեացս փառք երանելեացն կրկին է. այսինքն է փառք գործոց ըստ ինքեան, և փառք հատուցմանց: - 689. Եւ այսպէս ամենայն առաքինութիւն աստ հանգուցանէ զմիտս. և *յետ* մահու զհոգիս. և յարութեանն զհոգի և զմարմին: - 689. Նոյնպէս կրկին է և տանջանք չարաց. այսինքն տանջանք գործոց ըստ ինքեան, և տանջանք հատուցման, զի զտանջանք գործոցն կրեն *յետ* մահու. և զտանջանք հատուցման ի յարութեանն հոգւով և մարմնով: - 690. Զի գործք չարութեան այժմ դատէ՛ խղճիւ զմիտս. և *յետ* մահու զհոգիս. և *յետ* յարութեանն զհոգի և զմարմին որպէս ասացաւ: - 690. Արդ այժմ ի մկրտութիւնն հաւատն նշան դնի հարսին. և *յետ* մահու յուսով կոչի ի հարսանիս. և *յետ* յարութեանն սիրով միաւորի ընդ փեսային: - 693. Երեսուներորդ, յա՛յտ է յորպիսութեանցն չորից որ ասացաւ յառաջագոյն եթէ աստ հոգի մարդոյն է ի մէջ բարեաց և չարեաց. իսկ *յետ* մահու ի մէջ բարեաց միայն. իսկ ի յարութեանն ի մէջ բարեաց և փառաց: - 694. Արդ՝ այս կենացս յոյս՝ ակն ունի ի հեռաւորն. և *յետ* մահու յոյս նոցա ըմբռնէ ի մերձաւորն: - 696. ...և *յետ* մահու յոյս նոցա է՛ հանդերձ ստուգութեամբ գիտութեանն. և կամ տեսութեանն...: - 696. Այլ արկանելիք սպիտակ՝ զծաղկեալ նոցա առաքինութեանն երևեցուցանէ զպայծառութիւն *յետ* ի թանձրութենէ մարմնոյս փոխելոյն. զոր զգեցեալ են նախ քան զխոստացեալ զփառսն...: - 696. Նա՛խ՝ զի առաքեալն զանազանեաց զտեսանելն *յետ* մահու՝ և զպսակն ի յարութեանն: - 697. ...որպէս և հրեշտակք *յետ* անկմանն ո՛չ կարացին փոխիլ յարդարութիւն: - 699. Նոյնպէս և հոգին *յետ* բաժանման մարմնոյն ո՛չ կարէ քաւել: - 699. իսկ *յետ* մահու ոչ է քաւարան հրոյ: - 700. ...և որ ոք ի պատիժն աստ ոչ ժամանէ կրել, անդ կրէ *յետ* մահու ի հուրն և քաւի: - 701. ...որով դրոշմեալքն *յետ* արտաքս ելանելոյ ի մարմնոյս, թռչին յանապատն ի մեղաց յերկինս կերակրիլ անդ յուսով մինչև լնու թիւ կատարման աշխարհի: - 703. Եւ *յետ* սակաւուց ի նոյն գլուխն ասէ, թէ ո՛չ զգայապէս լինի տեսիլ հրեշտակի...: - 703. ...այլ ի սիրտս ամենեցուն խորհուրդ ամբարշտացն պատուհասից կերպարանի. իսկ պատիժն *յետ* արդար դատաստանին: - 703. Դարձեալ՝ թէպէտ վասն հոգւոյն ասեմք որպէս այս, և տեսիլ անտօնին, և այլոց, այն ո՛չ է բերքաթուր. այլ պատերազմ դիւաց. որպէս աստ մարմնով, նոյնպէս և *յետ* մահու առ

հոգիսն...: - 703. ...և *յետ* այնորիկ ո՞չ նստի ընդ աջմէ հօր որդի: - 704. Այն է՝ որ *յետ* աստի կենացս հոգին ի քննութիւն գործոց ժամանէ...: - 705. Զի այժմ կարծեմք. և *յետ* մահու յայտնապէս տեսանեմք զամենայն. և *յետ* յարութեանն առնումք զամենայն: - 705. ...և *յետ* մահու մերձ ի յինքն և առ ինքն տեսանէ և ճանաչէ...: - 705. ...և *յետ* յարութեանն առնու և կատարի: - 705. ...և *յետ* մահու զհոգիսն ի դժոխս տանջէր: - 705. Եւ ոմանք *յետ* զ**ռ** ամին զեօթներորդն որ վախճանն է՝ յարութիւն ասեն միայն սրբոցն և կապիլ սատանայի: - 706. Որ և *յետ* այնորիկ սպանցին ի նեռնէն յէմ. և անկեալ լիցին մարմինք նոցա ի հրապարակս զերիս տիւս և զերիս գիշերս: - 709. Եւ *յետ* մահուն և յարութեան նոցա՝ թագաւորեսցէ նեռն այլևս **ժ** և **ե** օր: - 709. Եւ *յետ* այսորիկ ի լեառն ձիթենեաց ուստի համբարձաւ քրիստոս՝ տէր իշխանութեամբ իւրով սպանցէ զնեռն: - 709. Եւ *յետ* այնորիկ ոչ առ ժամայն գայցէ տէր ի դատաստան...: - 709. Այլ արբանեակք նեռին *յետ* մահուան նորա ուրախասցին և առցեն իւրեանց կանայս. - 709. Ցուցանեն այսոքիկ զկատարեալ և զառաւել հանգիստ սրբոցն այժմ յուսով և *յետ* մահու հոգւով թագաւորեալ ընդ քրիստոսի...: - 710. Ի գոյից ո՞րք են մնացականք *յետ* յարութեանն: - 727. *Յետ* որոյ փող հարկանի և մեռեալք յառնեն: - 732. Որք արտաքոյ օրինաց մեղանչեցին որպէս կռապաշտք՝ և հրէայքն որք *յետ* խաչելութեանն քրիստոսի. զի *յետ* խաչին պահպանութիւն օրինացն ի կռապաշտութիւն է համարեալ նոցա: - 739. Իսկ *յետ* դատաստանին և այս ևս՝ բարձցի ի նոցանէ առ ի տանջանս իւրեանց...: - 741. Յարութիւն մարդկան ի վայրկեան ժամանակի և յանկարծակի լինի որպէս ցուցաւ ի վերոյ. այլ զյերկարութիւն ժամու քննութեան դատաստանին, ոմանք ժամ մի ասեն. որքան եկաց ընդ ադամայ ի քննութիւն հարցմանց *յետ* յանցանաց նորին: - 747. Այլ որ ուղիղն է տեսութիւն, *յետ* յարութեան փոխի ժամանակն ի յաւիտեան. և այլ ո՛չ գտանի մասն և րոպէ և ժամ. զի երկնային մարմինք դադարին ի շարժմանէ ուստի ժամանակն գոյանայ: - 747. Մինչ ի յօրն դատաստանի աղօթեն արդարք վասն մեղաւորաց. այլ *յետ* այնորիկ վասն դատապարտելոցն ո՛չ խնդրեն ինչ. զի ընդ դէմ աստուծոյ գոլ իմանան վասն նոցա զխնդիրն: - 754. Եւ *յետ* մահու զ**կ**աւորն. այսինքն զհանգիստն ի հոգիս: - 758. *Յետ* այնորիկ զի՞նչ լինիցի բնակութիւն աշխարհի: - 759. Այսպէս և օդն յորս եկաց փրկիչն *յետ* յարութեանն, փոփոխեսցէ զբնական նսեմութիւնն իւր և պայծառասցի որպէս զեթերն: - 759. *Յետ* յարութեանն ո՞ւր և ո՞ր քան իցէ տեղիք բնակութեան: - 760. Եւ *յետ* նոցա ամենայն բազմութեանց ժողովելոց յամենայն ազգաց ասէ. որք եկին ի բազում վշտաց աշխարհի. այսինքն որք զանազան առաքինութեամբ և բազում նեղութեամբ մտին ի հանգիստն: - 760. Եւ յերկոտասան ամիսս, զի *յետ* մեղանացն վերստին պտղաբերի ապաշխարութեամբ: - 765. Իսկ *յետ* մահու՝ յիշելն է միայն ըստ ինքեան զներքոյսն. խափանեալ խառնւածոյ նիւթոյն: - 774. Երրորդ՝ ժամանակ կենցաղոյս մինչև ի մահ, է՛ ընդունելութեան աստուծոյ. ըստ որում բազմեալ է յաթոռ շնորհաց ըստ առաքելոյ. իսկ *յետ* այնորիկ ո՛չ ևս. զի փոխի յաթոռ դատաստանաց ըստ աւետարանին: - 780. Այլ թէ *յետ* մահու ո՛չ հանդիպի թողութեան, որպէս և ո՛չ դևք: - 780. Զորօրինակ, ժանգ հայելւոյ ո՛չ զընդունակութիւնն բառնայ, այլ զտեսութիւնն. և *յետ* սրբելոյն, նոյն ծածկեալն երևի ի նմա: - 782. Այսպէս և ժանգ յանցանաց մկրտելոց և քահանայից՝ բառնայ զգործ՝ կամ զնշանակութիւն շնորհացն. իսկ *յետ* սրբութեան զղջմամբ՝ զիա՞րդ կրկնի ունակացեալն ի նմա՛: - 782. Երկրորդ, զի անկումն դիւաց մահ է նոցա. և *յետ* մահու ո՛չ է հաւատ. ուրեմն և ո՛չ ի դևս: - 784. Արդ որպէս յամենայն ժամանակս սոքօք գան ի հաւատս ուղղութեան և է՛ վարձատրելի. այսպէս և ի վերջին ժամանակս որք *յետ* նեռինն՝ ո՛չ միայն ի հարկէ սքանչելեաց, այլ և ի լրոյ քարոզչաց երկուցն վկայից իջելոց սրբոց: - 785

**ՅԵՏԱՄՆԱՑ +** Տասներորդ՝ նախընթաց և *յետամնա՛ց* է սպիտակ լոյսն. որպէս յառաւօտս և յերեկոյս տեսանի: - 125

**ՅԵՏԱՄՏԱԿԱՆ +** Եւ դարձեալ զի ակամայքն ի մարդոյս բնութիւն *յետամտականք* են և անասնականք, և ո՛չ բնական բանականիս բնութեան: - 502

**ՅԵՏԻՆ +** Որոց պատասխանեն վարդապետք եկեղեցւոյ. և ես զնոցայն առեալ ասացից՝ թէ յաւուրս *յետինս*՝ ոչ զկատարած աշխարհի կոչէ, այլ կոչէ աւուրս *յետինս*՝ զպակասութիւն օրինացն և արդարութեան նորա. քանզի օրէնք նոցա պակասեցաւ ի գալստեանն քրիստոսի: - 27. Երկրորդ և ոչ վասն *յետին* յանցանացն կռապաշտութեան եպերեմք զիմաստութիւն նորա և ո՛չ ընդունիմք. թէպէտ և հնա՛ր է պատճառել թէ այնքան իմաստութիւնն, զնա ո՛չ պահեաց հաճոյ մնալ աստուծոյ: - 40. Դարձեալ՝ ըստ նոյն սարասի՝ բանն աստուած ունի ծնունդ ի հօրէ նախ քան զյաւիտեանս. և ունի ծնունդ ի մօրէ ի *յետին* ժամանակիս. և ո՛չ ասի երկածին. այլ՝ միշտ միածին. այսպէս նոյն բանն ունի զբնութիւն աստուծոյ ի հօրէ. ունի և զբնութիւն մարդոյ ի մօրէ՛. և ո՛չ ասի **բ** բնութիւն. այլ մի բնութիւն

վասն միաւորութեանն: - 77. Եւ մարդն *յետին* է և վերջին ամենայն եղելոցն: - 107. Ա՛րդ՝ նախկինն *զյետինն* էառ՝ և արար առաջին: - 107. Վարդապետք ասեն թէ ո՛չ ամենայն առաջին պատուական է, և ո՛չ ամենայն *յետին* անարգ: - 230. Ուստի եղեն *յետինքն* առաջինք. և իէլ նոր և աստուածատեսք եղեն: - 305. Նա՛խ՝ զի *յետին* պատկեր է: - 350. Չորրորդ՝ զմարդեղութիւն բանին ի *յետին* ժամանակս: - 350. Ցուցանէ՛ զառաջին՝ զմիջին՝ և *զյետին* ժամանակս տալ աստուծոյ: - 360. Եւ թէ ոք ասիցէ, ազգս հայոց *յետին* է հաւատացեալ: - 549. Դարձեալ ասեմք թէ զիա՞րդ *յետին*. զի աբգար թագաւորն հայոց նախ քան զխաչն հաւատաց ի քրիստոս և երանեցաւ ի նմանէ: - 549. Եւ ա՛յս է պատճառն որ ոմանք յեօթանասնիցն ասեն. զի եօթանասուն աշակերտացն գլուխ և վարդապետ էր. որպէս պետրոս երկոտասանիցն. և առաջինքն ամենայն ուրեք *յետնոցն* անուամբ կոչեին. այս է ստոյգ պատճառն: - 549. Չորիւք իմանի *յետին* փողն: - 713. Ա՛յս է փողն *յետին:* - 713. ...և մարմինք մեռեալք որ յադամայ հետէ՝ յանկարծակի յական թօթափել ի փող *յետին* յարիցեն ասէ առաքեալն: - 721

**ՅԵՏՈՅ +** Նաև մարդկան չարեաց թոյլ տալ. զի կամ ընտրեսցեն զբարիս՝ կամ *յետոյ* զղջասցին. և այլ պէսպէս նախախնամութեամբ որպէս ինքն գիտէ աստուած՝ ներէ՛ չարեաց...: - 17. Եօթներորդ դարձեալ՝ թէ էին **բ** սկիզբն՝ լինէր այս կամ համանգամայն. կամ մի *յետոյ* միոյ: - 21. Երկրորդ՝ է՛ դարձուցանել զիմացումն ի հաւատալեացն, և յայնցանէ որ ածեն զմարդն առ հաւատալն. այնպիսին խաբեալ է. զի բնութեամբ է մարդոյ ո՛չ տեսանել *զյետոյս* իւր. և ո՛չ առանց աչաց հայելոյ: - 31. ...*յետոյ* գրով աւանդեցին զչար աղանդն այլոց չար յիշատակ և ի կորուստ անձանց իւրեանց: - 33. Զի թէ ասեն էր յառաջ քան զծնունդն որդի. իսկ էութիւնն հօր հայրութիւն է. և թէ ոչ էր որդւոյ հայր՝ բառնի յէութենէն իւրմէ, իսկ թէ ոչ էր և *յետոյ* ծնաւ՝ ո՞ւմ արդեօք իցէր հայր. զի ո՛չ էր որդի: - 36-37. Եւ ի սկզբանն ասելով, ո՛չ *յետոյ* քան զհայր գոլ: - 37. Եւ ոչ *յետոյ* ըստ կարծեացն արիոսի: - 37. Յէից՝ որպէս դու ի քո հօր մէջքն էիր զօրութեամբ, և *յետոյ* ծնար նոր գործութեամբ: - 37. Եւ թէ էր երբեմն հայր առանց բանի և իմաստութեան, ի՞ւ խորհէր *յետոյ* ծնանիլ զորդի: - 51. Զի թէ կարգաւոր, երբեմն մինն՝ և *յետոյ* միւսն. որ յառաջին բղխօղ է՝ նա՛ է բղխօղ. և ո՛չ վերջինն: - 63. Զի մեծն աստուածաբան ընդ դէմ արիոսի պատերազմի. որ արարած ասէր զբանն՝ աստուածացեալ *յետոյ*: - 79. Իսկ սուրբն կիւրեղ ընդ դէմ նեստորի զինէր. որ ասէր բնակութեամբ զբանն ի մարմնի. և նախ զմարդն ծնեալ ի կուսէն և շրջեալ ի յերկրի, և *յետոյ* բնակեալ բանն աստուած յետ մկրտութեանն. և յետ յարութեանն փառաւորեաց զնա և զօրացոյց յարակցութեամբ ընդ ինքեան: - 79. Խոստովանիմք զորդին աստուծոյ նախ քան զյաւիտեանս ծնեալ ի հօրէ՛. և *յետոյ* ի ժամանակի ծնեալ ի մօրէ՛: - 83. Իսկ եթէ շնորհօք, զիա՞րդ *յետոյ* ի ներգործութեանց ասես հանդիպիլ այնոցիկ: - 94. Հինգերորդ՝ ոչէ ասին նիւթականքն որ ի լինելութեան և յապականութեան են. զի երբեմն ո՛չ էին, և *յետոյ* ո՛չ լինելոց են: - 111. Որպէս նախ քան զլինիլն մեր՝ էր սկիզբն մեր. և այժմ է՛ նոյն սկիզբն. և *յետոյ* ի կատարածի անփոփոխելի մնայ ի սկիզբն գոլոյ: - 112. Ա՛րդ՝ եղականքս որ *յետոյ* էացաք անեղ էաք ի յանեղ տեսութիւնն աստուծոյ: - 114. Զի նախ կենդանի է մարմնով. *յետոյ* անմարմին. և *յետոյ* միաւորութեամբ յաւիտեան: - 117. **Եւ նա՛խ եկաւորի հոգին ամենայն ուրեք. որպէս ի մարգարէսն և ի կոյսն սուրբ, և ապա՛ բանն մարմնացաւ. և *յետոյ* հոգին սուրբ էջ յառաքեալսն և յեկեղեցի մնաց:** - 125. Եւ նա՛խ է բանն աստուած, և *յետոյ* միացաւ ի մարմնի անբաժանելի. «յիսուս քրիստոս երէկ և այսօր նոյն և յաւիտեանս»: -126. Իսկ մարդս ո՛չ բնութեամբ, այլ *յետոյ* ստացմամբ և ունակութեամբ: - 138. Տասներորդ՝ գործ մարդոյս նախ զօրութեամբ՝ և *յետոյ* ներգործութեամբ եղանի. իսկ աստուծոյն միշտ ներգործութեամբ է. որպէս ցուցանի յառաջիկայդ: - 157. Զորօրինակ եթէ կամիցի ոք տաճար շինել. նախ ձևանայ ի միտքն և *յետոյ* շինէ զտաճարն ըստ այնմ ձևոյ: - 163. Արդ՝ տաճարիս այս է՛ կրկին սկիզբն. նախ միտքն շինողին, և *յետոյ* սկիզբն և կատարումն շինւածոյն: - 163. Երկրորդ զանազանութիւն՝ զի նախկին սկիզբն համանգամա՛յն է ի միտքն. և երկրորդ սկիզբն նա՛խ է՝ և կատարումն *յետոյ*: - 163. Նոյնպէս և հրեշտակք ո՛չ տեսանեն զնախագաղափար տեսութիւնն որ լինելո՛ց էր *յետոյ*: - 164. Նախ՝ զի շինօղն էր յառաջ, և *յետոյ* ետես զշինուածն: - 164. Երկրորդ՝ զի *յետոյ* ջնջեցա՛ւ նախատեսիլն: - 164. Ժամանակն՝ զի նա՛խ է ունակութիւն. և *յետոյ* պակասութիւն: - 165. Եւ այս ո՛չ պատճառի ի տկարութենէ շնորհացն որ միշտ նոյնպէս է նախ և *յետոյ*. այլ ի տկարութենէ անձինն շրջելոյ: - 166. Այլ արդ՝ լինելութիւն աշխարհի առ ինքն ըստ ինքեան ասի զօրութեամբ և ներգործութեամբ. զի ի զօրութենէ եկն ի ներգործութիւն. զի թէ ոչ գոյր զօրութեամբ նախ՝ ո՛չ լինէր *յետոյ* ներգործութեամբ: - 169. Զորօրինակ՝ ներտրամադրեալ բանն է՛ նախ ի խորհուրդն կատարեալ. և *յետոյ* ժամանակաւ լինի յառաջ բերեալ և գրեալ բան. և նո՛յն բանն էր յառաջ բերեալս և

գրեալս որ էր նախ ի խորհուրդն: - 169. Այլ արդ՝ երևի թէ արարածք պատահումն են ի յարարիչն զի *յետո՛յ* եղեն: - 169. Թէպէտ արարածք *յետոյ* եղեն, այլ ոչ են պատահումն արարչին: - 170. Նախ՝ զի զգոյն իւրեանց ունէին ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ. թէպէտ *յետո՛յ* ընկալան գոյացութիւնս յինքեանս. որպէս տաճար ի միտս շինողին: - 170. Երկրորդ՝ թէպէտ *յետոյ* եղեն արարածք, ո՛չ են պատահումն. որպէս և բանն էր յառաջ, և *յետոյ* եղև մարմին. այլ մարմինն բանին ո՛չ է պատահումն. և որդի հօրն ո՛չ է պատահումն թէպէտ *յետոյ* ծնանի զի առ ինչ է հօրն: - 170. Այլ ի յաստուած ոչ ինչ է *յետոյ*...: - 170. Եւ թէպէտ ի յէութիւնս իւրեանց *յետոյ*, սակայն ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ, գոյին յառաջ քան ըզլինիլն իւրեանց էութեամբ, և *յետոյ* եղեն ըստ նոյն նմանութեան: - 172. Զի երբեմն էր որ ոչ էին. և այժմ են, և *յետոյ* ապականին: - 173. Հինգերորդ՝ զի *յետոյ* լինելոցն էր բանն աստուծոյ մարմին. որպէս գիրն ունի յինքեան զբանն. և խօսի ընդ մեզ: - 177. Եօթներորդ՝ ցուցանէ թէ՝ որպէս մարմնական բնութիւնք նախ էին անկատար և անտեսակ՝ և *յետոյ* կատարեցան յաստուծոյ: - 192. Նոյնպէս և հոգին նախ ի յինքենէ անտեսակ և անկատա՛ր է. և *յետոյ* կատարի յաստուծոյ շնորհօք և առաքինութեամբ և գիտութեամբ: - 192. Զի ժամանակն նա՛խ է հանդերձեալ. և ապա ներկայ, և *յետոյ* լինի անցեալ: - 198. Իսկ թէ զանազանապէս իմանաս զժամանակն, նախ է՛ անցեալն որպէս երէկ. և ապա ներկայն որպէս այսօր. և *յետոյ* ապառնին որպէս վաղիւ: - 198. Իսկ թէ ըստ պատուոյ իմանաս, նա՛խ է ներկայն. զի է՛ ստոյգ և ճշմարիտ. և ապա՛ անցեալն. և *յետոյ* ապառնին. և այսպէս շարադասեն քերթողքն: - 198. Այլ ձայնն յա՛մր հասանէ ի լսելիս քան զփայլակն. վասն որոյ *յետո՛յ* լսի: - 204. Եւ դադարք դիւաց. իսկ *յետոյ* լուցկի են գեհենին յաւիտենից: - 212. Եւ պտուղն ջրոյն՝ որ *յետոյ* հասանի: - 212. Տասներորդ՝ մաշկեղէն հանդերձն ադամայ. իսկ այլ զգեստք ի յարւեստից կազմեցան *յետոյ*: - 216. Երկրորդն՝ Թէ *յետո՛յ* արարաւ: - 227. Վասն է՞ր մարդն *յետոյ* արարաւ: - 230. Որպէս առաջին է կառքն և *յետո՛յ* կառավարն. և առաջին է նաւն, և ապա նաւավարն. և պատուական է մարդն քան զնաւն և զկառքն: - 230. Այսպէս և մարդն թէպէտ *յետոյ* ստեղծաւ, մեծ և պատուակա՛ն է քան զամենայն երևելի արարածս: - 230. Եւ վասն բազում պատճառի *յետոյ* ստեղծաւ մարդս: - 230. Վասն որոյ *յետոյ* մարդն ստեղծաւ յերկուցն խառնեալ յիմանալւոյն և ի զգալոյն ի մի էութիւն: - 231. Իսկ որ ի **զ** օրն ասեմք ստեղծեալ զարարածս, այս զկարգ և զդասն նշանակէ մի քան զմի *յետոյ*. այլ ստեղծումն համանգամայն եղև: - 253. Իսկ որ զմարմին յառաջ ասեն քան զհոգի, վկայ ածելով զմովսէս որ ասէ եթէ՝ էառ զհողն և շինեաց մարմին. և *յետոյ* փչեաց ի նա զշունչն կենդանի, որ է կենդանարար հոգին: - 253. Եւ դարձեալ՝ եթէ տամք զփչումն՝ բանական հոգւոյն ըստ ոմանց, և այսու *յետո՛յ* իմանալ զհոգին քան զմարմինն մեղանչումն է ճշմարտութեան ըստ **ե** եղանակի: - 253. Այսպէս եթէ հոգի *յետո՛յ* ստեղծաւ վասն մարմնոյն, անա՛րգ է քան զմարմին: - 253. Երրորդ՝ զի թէ հոգին *յետո՛յ* է քան զմարմին, լինի ինքն առ ինքն խեղ և անկատար: - 254. Այլ ի միասին համանգամայն ստեղծեալ. ո՛չ ժամանակաւ յառաջ և *յետոյ*, և ո՛չ բնութեամբ. այլ մի է սկիզբն միոյ գոյութեան մարդոյն: - 254. Պատասխանեմք և ասեմք թէ, ո՛չ է հոգին *յետոյ*. ո՛չ ժամանակաւ և ո՛չ բնութեամբ. այլ դասիւ և կարգաւ: - 254. Եւ այս ո՛չ ժամանակաւ *յետոյ* ըստ երից պատճառաց: - 254. Երկրորդ՝ զի զօրութեամբ ունի զհոգին յինքեան ծածկեալ. որ *յետոյ* ներգործութեամբ երևի: - 254. Եւ թէ ասէ ոք, ո՞րպէս է բանական հոգին նախ զօրութեամբ և *յետոյ* ներգործութեամբ: - 254. Եւ օրինակ այսմ, որպէս ի ծագել արևուն՝ նախ նշոյլքն երևին և ապա *յետոյ* արեգակն: - 255. Եւ կամ որպէս զօրք թագաւորի՝ նախ հասանեն յիջևանն, և թագաւորին ասի իջևանն. թէպէտ *յետոյ* գայ: - 255. Եւ համանգամայն երևի ասեմ. զոր օրինակ նիւթն այն ունի առ ինքն ծածկեալ զմասունս մարմնոյ. զձեռս և զոտս, զմիս և զմազ, որ *յետոյ* երևին ի նմանէ: - 255. Այսպէս և հոգին է ի նմա ծաղկեալ, և *յետոյ* յայտնի ըստ կարգի: - 255. Եւ կամ որպէս ծնեալ մանուկն ունի առ ինքն ծածկեալ զհոգին. այլ նա կերակրի և ապա զգայ. և *յետոյ* խօսի: - 255. Չորրորդ՝ զի զօրութիւն է, և *յետոյ* ներգործութեամբ փոխի: - 256. Եւ ըստ անասնոցն հաւասարութեան նախ գոյանայ անասնականն որ է տնկականն և զգայականն. և *յետոյ* բանականն: - 258. Երկրորդ՝ զի թէ այլ և այլ էր հոգի, ի յայլ հոգւոյ տեղիս ո՛չ բնակէր այլ հոգի որպէս յայլո՛յ կաղապար. և ա՛յլ դրօշած ի յա՛յլ կնիք. այլ մի է. վասն այն որ *յետոյ* երևի, յառաջնոյն խառնուածն կարէ՛ բնակիլ: - 259. Եւ թէ ասիցէ ոք, երևի ապա թէ հոգին ինքն առ ինքն նախկին է և *յետոյ* եթէ մի է հոգի: - 260. Եւ թէ ոք ասիցէ, երևի ապա թէ յառաջագո՛յն է հոգի քան զմարմին, և *յետոյ* մասամբ երևի: - 260. Եւ թէ զտեսութիւնս զայս կարծես էութիւն հոգւոյ ըստ որում է հոգի, ապա ո՛չ միայն ետես զհոգի, այլ և զմարմին՝ և զիւրաքանչիւրոց ընտրութիւն, և զհամար հերաց և զթիւն աստեղաց. և սոքա *յետո՛յ* են գոյացեալ ըստ կամաց տեսողին: - 260. Այսպէս և հոգի ըստ կամաց

խընամողին *յետոյ* պարգևեալ ըստ թուոյ ծննդեան իւրաքանչիւր մարդոյ որպէս ինքն գիտէ: - 260-261. Եւ որպէս սիրտն նա՛խ գոյանայ, նոյնպէս և *յետո՛յ* մեռանի վասն ջերմութեան նորին: - 261. Իսկ հինգ օրեայ անդրանկանն *յետոյ* լինիլ՝ բերէ՛ զնմանութիւն նախնի մարդոյն. որ յետ **Ե** աւուր ստեղծաւ: - 264. Երկրորդ՝ ցուցանէ զաշխարհ. որ էր նախ քան զլինիլն ի նախանկար տեսութիւն արարչին՝ և ապա եղև, *յետոյ* վախճանի: - 268. Քսաներ, ասէ լուսաւորիչն մեր, թէ ձև մարդոյ երևեցաւ ի ստեղծանելն, զոր առնելոց էր զնոյն մարմին *յետոյ* ժամանակի. և ի նոյն պատկերն արար զմարդն: - 272. Զանէծքն ո՛չ յինքենէ ասաց զի մի՛ սատակեսցի. այլ յերկիր ետ որ է՛ զէն մահու և չարչարիչ՝ և գերեզման *յետոյ*: - 287. Երկրորդ՝ զմին յառաջ քան զջրհեղեղն, և զմիւսն *յետոյ*. զի ցուցցէ թէ յերկուսին ժամանակս ընտրեալքն հաճոյ եղեն աստուծոյ: - 289. Երկրորդ՝ զի մարդիկք բազում ամս յաճախէին ի մեղս յուսով վերջին ապաշխարութեանն. և *յետոյ* սովորեալ ի մեղս ո՛չ կարէին դառնալ, *ամենքին* կորնչէին: - 292. Բոլոր տարի մի. զի այսպէս ասէ գիրն թէ՝ **ճծ** օր բարձրացաւ ջուրն. և *յետոյ* **ճծ** օր ցածուցաւ. որ լինի **Ժ** ամիս: - 294. Երկրորդ՝ զի աբրահամ *յետոյ* պատարագեաց կենդանիս. որ էր նշանակ ժամանակեայ պատարագին ահարոնի: - 300. Տասներորդ՝ և որպէս իսահակ նախասիրէր զանդրանիկն որդի, բայց *յետոյ* ետ զօրհնութիւնն նորին՝ որդւոյն կրսերոյ: - 305. Վեցերորդ՝ անդրանիկք են և ընտրեալքն աստուծոյ. որք նախքան զլինիլն աշխարհի ընտրեցան. թէպէտ *յետոյ* ի ժամանակի ըստ հասարակաց գոյացան և կատարեցան: - 309. Նա՛խ՝ զի յանդրանիկ տեսութիւնս իւր ընտրեաց զնոսա յառաջ քան զլինիլն աշխարհի, և *յետոյ* զնոյն անդրանիկսն պատուեաց: - 309. Նա՛խ զայս ունի խորհուրդ, զի յառաջագոյն ընտրեալքն՝ *յետոյ* եղեն ի ժամանակի: - 310. Երկրորդ՝ զի **Խ** քաղաք առին ի բենիամենէ՛ յուդայի ցեղքն վասն շնութեան կնոջն պատահելոյ. և կոտորեցին զնոսա առ հասարակ **իեռ** արս. և մնաց վեց հարիւր այր զոր *յետոյ* ստացան ժառանգութիւն իւրեանց. որպէս յա՛յտ է ի դատաւորաց վերջքն: - 312. Ա՛րդ՝ զայս **գ** սգոյս մխիթարեցաւ *յետոյ*: - 312. Ջերրորդն՝ զի բազում եղեն յազգէ նորա մարտիրոսք վասն քրիստոսի *յետոյ*: - 313. Նոյնպէս և տէր մեր *յետոյ* բառնալո՛ց է զչար. գազանն զորդին կորստեան և զպաշտօնեայսն նորա ի կատարածի: - 314. Եւ զի *յետո՛յ* է զգեստ զգեցողին: - 319. Այլ որ ըստոյգն է ասեն թէ՝ մովսէս գրեաց որպէս պատմութիւն, և սողոմոն ստիքսեաց որպէս զիւր բանսն. *յետոյ* գրեաց և եզրաս հոգւովն աստուծոյ երբ ծախեցան գրեանքն ի հրէից: - 321. Վասն երրորդին ասէր յոբ զբարի և չար գործոց հատուցմունքն լինիլ առհասարակ *յետո՛յ* ի հանդերձեալն...: - 324. Երկրորդ՝ զի *յետո՛յ* եկեալ արդարքն վիատեսցին: - 325. Այլ ա՛յս է ճշմարիտն, զի ամենայն բարեկամքն որ ժողովեցան *յետոյ* և մխիթարեցին զնա՛, իւրաքանչիւրքն բերին մէն մի որոջ ոչխարի և **դ** դրամ ոսկի անգիր ընծայեցին նմա ի սատար խրախութեանն...: - 326. Իններորդ՝ յոբայ մարմինն նորոգեցաւ *յետոյ*. և տէր մեր խաչիւն նորոգեաց զպատկերն ադամայ և զծննդոց նորա յարութեամբն իւրով: - 327. Զոր թէ ընկենու ոք, լինի երկրաքարշ մարդ և մեղաւոր. և մինչ զղջացեալ դարձեալ ըմբռնէ *յետոյ*, լինի պատճառ կանգնելոյ և փրկութեան: - 332. Իսկ սոքա նախ հեղուն զարիւնն և *յետո՛յ* զջուրն: - 341. Եւ *յետոյ* ասելն դու կոփեա՛ քեզ տախտակ: - 350. Իսկ *յետոյթէ* աստուծոյ, Նա՛խ՝ հաւատով տեսանել: - 350. Երրորդ՝ զմարդն է իմանալ *յետոյս* աստուծոյ: - 350. Երկրորդ՝ զի *յետոյ* ստեղծաւ: - 350. Նա՛խ ի սեղանն աբրահամու. և ապա՛ մովսիսին և ապա՛ դաւթին ի կալն ուռնայի. և ապա՛ ի տաճարին սողոմոնի. *յետոյ* ի սեղանն եղիայի: - 363. Չորրորդ՝ նա՛խ օրէնքն և ապա ջուրն. զի նախ հոգւով խնամէ՛ և *յետոյ* մարմնով: - 385. Հինգերորդ՝ յառաջ տապանակն գնայր և դիտէր հանգիստ. և զհետ վէմն տայր ջուր. զի այժմ զհանգիստ պատրաստէ՛, և *յետոյ* զվայելչութիւն տայ: - 385. Եօթներորդ՝ զի նախ զօրէնսն կատարեմք, և *յետոյ* զմխիթարութիւնն առնումք: - 385. Իններորդ՝ նոքա գործովք արդարացան զոր նշանակէր օրէնքն. և մեք հաւատով՝ զոր նշանակէր վէմն *յետոյ*: - 385. Վասն է՞ր ասէ մի եթար, և *յետոյ* ասէ ե՛րթ և մի՛ անիծաներ: - 388. Վեցերորդ՝ աստ ի հանդիսից սխալէ. և *յետոյ* ի յընթացից. և ի յարութեանն յաղթանակաց պսակէն: - 394. Իններորդ՝ զի ինքն սատանայ ունի բնութիւն և մեղք և պատիժ. բնութեամբ աստ զինի. և մեղօք *յետոյ*. և յարութեանն պատժակից իւր առնելով: - 394. Երրորդ՝ զի ամենայն ազգ ի մի կողմ երկրպագէին. և *յետոյ* քրիստոնեայք յարևելս: - 395. Հինգերորդ՝ արևմուտք հին օրէնք է. և արևելք նորս *յետոյ*: - 395. Զի որ *յետոյ* սիրէ և փոխարինօք և մասնաւոր և երբէք, անկատար սէր է և մարմնական: - 396. Ակնառութիւն ո՛չ է աստուծոյ. զնախնիքն սիրեաց աստուած, զի արժանիք էին. և եցոյց նոցա զինքն. և զխոստումն աւետեաց ուխտեաց նոցա մարդ լինիլ ի զաւակէ նոցա *յետոյ*: - 398. Եօթներորդ՝ զի և այլք կոտորեսցեն զնոսա *յետոյ*: - 417. Եւ այսմ վկայէ՛ պօղոս ի գործքն եթէ՝ *յետոյ* յեսուայ իշխեցին դատաւորք մինչ ի սաւուղ ամս չորեք հարիւր և յիսուն՝ այսպէս: -

420. Եւ *յետոյ* յամենայն աշխարհ եկեղեցի աստուծոյ և օրէնք և սեղան աստուծոյ կանգնեցան, և երուսաղէմ ցամաքեցաւ: - 421. Եւ այն զի քամեալ լցաւ կուրն և ո՛չ երկիր. զի մնացին և կատարեցան բանք մարգարէիցն ամենայն և ո՛չ եղծան. իսկ *յետոյ* հոգի տեառն ելից զտիեզերս մարգարէութեամբ և շնորհօքն քրիստոսի: - 421. Երեսունգ, սամփսոն զսրունս և զերանս թշնամեաց՝ և *յետոյ* զգլուխն ջախէր: - 424. Եւ տէր մեր զխորհրդոց և զգործոց՝ և *յետոյ* զպատիժն մեղաց ջնջէր: - 424. Երկոտասաներորդ՝ ընդէ՞ր *յետոյ* ստեաց և կինն զտեսիլն զի եղեն զորքն իւր զդիեցիկ: - 428. Որպէս *յետոյ* որդի նորա զկաղս և զկոյրս բժշկեաց ի տաճարին: - 431. Երրորդ՝ զի ո՛չ էր քահանայ. վասն որոյ *յետոյ* ասէր դաւիթ ցքահանայսն, դո՛ւք ղևտացիքդ սրբեցէք և բարձէք զտապանակն. զի մի՛ լիցուք որպէս զոզիա: - 431. Եւ *յետոյ* բաշխումն նշխարաց. որպէս դաւիթ բաշխեաց ամենայն իէլի բլիթ մի հաց, և պատառ մի ի տապակէ՛ և ի կասկարայիցն: - 431. Երեսունբ, *յետոյ* առ սամուէլ ի նաւաթ գնացեալ և հոգի աստուծոյ խաղացեալ. և տէր մեր առ հայր ի յերկինս ելեալ, և յառաքեալսն զհոգին առաքեալ: - 437. Դարձեալ՝ մեղք սկզբնական խառնեցաւ ի յաճումն հիւթին. և *յետոյ* մահ և ապականութիւն: - 445. *Յետոյ* վասն գազանաց երկրին՝ հնազանդեցաւ գրոյն մովսէսի. և ծածկեցին զաստուածս իւրեանց ի լերին սոմորոն. և անդ երկիր պագին սամարացիք: - 447. Եւ այսպէս յետ աւերածոյն և գերութեանն նախ տաճարն շինեցաւ, և *յետոյ* պարիսպն կանգնեցաւ: - 448. Վասն է՞ր ոչ յառաջ և ո՛չ *յետոյ* մարդացաւ: - 467. Այլ յորժամ նկուն եղեն օրէնք ամենայն, և ո՛չ կարեցին փրկել. *յետոյ* եկն և երևեցաւ նոյն ինքն օրէնսդիրն և փրկեաց զմեզ: - 467. Զի թէ *յետոյ* ի մկրտութեանն օծաւ քրիստոս, զի՞նչ աւետարանեաց հրեշտակն եթէ՝ «ծնաւ ձեզ այսօր փրկիչ օծեալ տէր»: - 475. Իսկ բանն աստուած է՛ անսկզբնաբար ի հօրէ. և *յետոյ* սկսեալ ի կուսէ: - 478. Եւ յա՛յսմանէ յա՛յտ է, զի սուրբքն զծնունդն և զյայտնութիւնն ի միասին տօնէին. և *յետոյ* բաժանեցին ոմանք վասն բեթլէհէմի և յորդանանու: - 482. Դրունք և նիգք յետուստ են. այսինքն կամ սկզբնական և ներգործական մեղօք կապեաց *յետոյ*, կամ մեղօք և յուսահատութեամբ: - 504. Այժմ հաւատացեալք, և *յետոյ* առ հասարակ երկինք և երկիր և ամենայն ազգ: - 529. Երրորդ՝ զի առաքեալք իննաք տեսք եղեն քրիստոսի. և մարգարէք միջոցաւ ի բացեայ. և վարդապետք *յետոյ* նոցա: - 535. Եւ *յետոյ* բազումք զղջացան և ասացին, պատառեցաք զկանոնս հաւատոյ: - 543. Երկրորդն է ժողովն թէոդուպօլսի, որ այժմ կոչի կարնոյ քաղաք. ո՛չ այն զոր *յետոյ* հերակլ քաղկեդոնիկ ժողովեաց և խաբեաց զեզր կաթուղիկոսն հայոց: - 544. Ո՛չ թէ յայնժամ ետ, այլ յայնժամ խոստացաւ և *յետո՛յ* ետ. որպէս խոստացաւ նստուցանել յերկոտասան աթոռ և *յետոյ* ետ. նոյնպէս և զայն: - 547. Զոր *յետոյ* մեծն կոստանդիանոս զայս աթոռս յեփեսոսէ՛ ի կոստանդնուպօլիս փոխեաց: - 549. Ասեմք թէ՝ ոչ ինչ է այս նախատինք մեզ. զի հեթանոսք *յետոյ* հաւատացին և լաւագոյնք են քան զհրէայս. և վերջին մշակքն ընդ առաջինսն առին զվարձս. և որք նախանձեցան կորեան: - 549. Պատասխանեմ և ասեմ եթէ ո՛չ են միմեանց հակառակ. այլ երկոքեանն ճշմարիտք են որպէս ցուցանեմք *յետոյ*: - 556. Վասն որոյ *յետոյ* տրտմի և նեղի. ատէ՛ զպատճառ մեղացն և դառնայ ինքեան. որպէս ամոնի եղև: - 558. Որպէս յա՛յտ է ի տրտմիլն. զի խորհուրդն մշակ եղեալ *յետոյ* ի յոխս և ի քէնս և ի նախանձս յաւելու: - 564. Այս է ծառն չար որ պտուղ չար բերէ. և *յետոյ* հատանի. և ի հուրն յաւիտենից արկանի: - 570. Եւ այլք ասեն՝ նախ սիրելոյ է աստուած. երկրորդ ծնօղքն. *յետոյ* որդիքն. ապա՛ ընտանիքն. վերջոյ թշնամիքն: - 576. Երրորդ՝ բաժան ի միմեանց օրհնեմք զհացն և զբաժակն. և *յետոյ* միաւորեմք ի ճաշակելն. - 598. ...և *յետոյ* քան զամենայն բաշխեաց զմարմինն իւր. - 599. Եւ *յետոյ* թացեալ պատառովն նշանակեաց զմատնիչն: - 599. Եւ *յետոյ* դնէ ապաշխարանք թէ զինչ կերպիւ պատեհ է. պահք. թէ աղօթք. թէ ողորմութիւն. պատարագ. և այլ զինչ զոր կարօղ իցէ...: - 602. Մին է որ նախ խոստովանին և *յետոյ* ապաշխարեն...: - 602. և *յետոյ* խոստովանին և հաղորդին...: - 603. *Յետոյ* ալէլուն որ է՛ հրեշտակացն օրհներգութիւն: - 627. Զոր առ հնովքն էր սովորութիւնս այս, և *յետոյ* նուազեցաւ: - 631. Եւ յորժամ *յետոյ* սուրբ հարքն զմիջին երկոքին շաբաթս բարեկենդանացուցին...: - 650. ...և *յետոյ* զբաժին նոցա ի վերայ լնուին. նոյնպէս ի տունս և ի դուրս յորժամ յիշէին: - 656. Եւ *յետոյ* զերծուցէ ի դժոխոց և պարգևեսցէ զարքայութիւնն երկնից ա՛մէն: - 675. ...և *յետոյ* յէութենէ յոչ էութիւն փոփոխիմք մարմնով: - 681. Եւ փոքր ինչ *յետոյ* մարմնովն զոր զգեցցի ժառանգեսցէ զփառսն զայն...: - 691. Քսաներորդ... 

691. Քսանևմի, և յառակս տնտեսին զոր կացոյց տէր ի վերայ ծառայիցն տալ կերակուր. զոր *յետոյ* տէրն եկեալ գտցէ այնպէս՝ երանի է ծառային այնմիկ. ապա թէ ոչ՝ ընդ մէջ կտրեսցէ: - 693. Նոյնպէս և յառակս որ զքանքարն ետ և զմնասն. *յետոյ* եկն և արար խնդիր: - 693. Զի ո՛չ յառաջ և ո՛չ *յետոյ* գիտաց զնա: - 704. Այլ և *յետոյ* ի գէորգեայ հարցմունքն գտցես: - 705. Վասն է՞ր *յետոյ* արծակէ՛ զկապեալն: - 706.

Նոյնպէս և սուրբքն այժմ թագաւորե՛ն և տիրեն ի վերայ ախտից, և *յետոյ* ի վերայ դիւաց, և ապա ի վերայ մահու: - 711. Հինգերորդ, նախ ծաղկի և ապա՛ առնու զպտուղն *յետոյ*...: - 721. ...իսկ հոգիք սրբոցն նախ ծաղկին բնական պայծառութեամբն իւրեանց որպէս ցուցաւ ի վերոյ, և ապա՛ *յետոյ* արդեամբք պտղոյն կատարին ի հանդերձեալ կեանքն: - 721. Այսինքն նախ արմատն. և *յետոյ* խոտն. *յետոյ* ծղօտն. և ծնունդն. և ապա՛ տերև. պատանք. և քիստք. և ապա՛ ցորեանն ատոք ի հասկին: - 721. Երրորդ՝ արմաւենին ուշ բերէ պտուղն. և մայրն *յետոյ* պնդի. և փառք արդարոցն է՛ ի կատարած աշխարհի. և պնդիլն անմահութեամբ: - 765. Այլ ներկայական ոչ ինչ է առ նոսա. զի *զյետոյսն* մոռացեալ են: - 774. Նա՛խ խոստացաւ հրեշտակօք. աւետեաց մարգարէիւք. դաստիարակեաց օրինօք. և *յետոյ* երևեցաւ ի լրումն նոցին: - 776. Վասն որոյ կրկին է և պատիժն. զառաջինն ի նախնւոյն հասեալ. և ապա *յետոյ* յօր մի հաստատեալ ըստ առաքելոյ: - 777. Յիրաւի դարձեալ՝ դարձցին *յետոյ* ի պատիժս անձնիշխան կամաց ներգործական մեղաց: - 778. Եւ ոմանք յորոց սրբազան առաջնորդն մեր, պակասութիւն ասաց գոլ զորս *յետոյ* կրեցին անդամք նորա. այսինքն ըզհատումն մասանց. այրումն հրոյ. և այլ իմն բազմազան տանջանս. յորմէ թուով պակասեաց ի քրիստոս և յաւելաւ անդամս իւր: - 781

**ՅԵՏՈՒՍՏ +** Դրունք և նիգք *յետուստ* են. այսինքն կամ սկզբնական և ներգործական մեղօք կապեաց յետոյ, կամ մեղօք և յուսահատութեամբ: - 504

***ՅԵՏՈՒՍՏ ԿՈՂՄԱՆԷ +*** Եւ դուռն *յետուստ կողմանէ,* զի դիւրա՛ւ մտցեն կենդանիքն: - 293

**ՅԵՏՍ +** Որպէս տուրքն նաբուգոդոնոսորայ. և աղօթքն եզեկիայ. որ *յետս* դարձոյց զմահ. և այլք բազումք. ապա ուրեմն ո՛չ է հարկ: - 11. Որպէս յորժամ արեգակն և լուսին զտեղի առին առ յեսուաւ. և *յետս* դարձաւ արեգակն առ եզեկիայիւ: - 11. Չորրորդ՝ զայլայլումն լուսաւորացդ. այսինքն զի երբեմն խաւարին, որպէս առ խաչելութեամբն. և երբեմն *յետս* դառնան և կանգնին, որպէս յեսու և առ եզեկիա: - 26. Զի որպէս գիջակնութիւնն չտայ թոյլ տեսանել յստակ, այսպէս երկիւղն *յետս* քարշէ զբազումս ո՛չ հաւատալ ի քրիստոս...: - 32. Այլք ասեն թէ՝ է՛ ի յաստուած լայնութիւն սիրոյ, որով *յետս* դարձուցանէ զմեզ ի մոլորութեանց վասն առաւել սիրոյն: - 129. Երրորդքն՝ *յետս* ընկրկեն զիշխանութիւնս դիւաց և չարաց: - 136. Եւ զի քարշեն լուսաւորք զգոլորշին յերկրէ՝ յայտ է ի ցօղ առաւօտուն և յեղեամն. որ ի գիշերն ի վեր քարշին. և ընդ ծագել լուսոյն հատանին և *յետս* յերկիր անկանին. և յաւուրս ձմերան լինի եղեամն. և յամարան ցօղ: - 208. Եւ զի բարեկամութեամբ եկն և շրջեցաւ ի թշնամութիւն, ինքն *յետս* շրջի ի խածանելն: - 219. Նա՛խ՝ զդարձումն *յետս* աստուածային փառացն. և վասն այն շրջեցաւ ի զբօսանս դրախտին: - 280. Զորօրինակ՝ ճրագ ըզտեսօղս լուսաւորէ՛, և զտկարս խաւարէ՛. կամ որք ի ճրագ նային տեսանեն լոյս. և որք *յետս* դառնան խաւարին: - 403. Վասն է՞ր ո՛չ միայն բաժանեցաւ գետն, այլ և *յետս* դարձաւ: - 414. Նոյն և եղիսէոս. այլ ո՛չ *յետս* դարձաւ: - 414. Եւ առ եզեկիա՝ արեգակն *յետս* դարձաւ. տիւն եղև ժամս **լբ**: - 416. Ութերորդ՝ նա՛ տապանակաւն դարձոյց զգետն *յետս*: - 418. Եւ տես, զի պաշտմամբ և պատարագաւ *յետս* դառնայ բարկութեան սուրն: - 435. Իսկ յետ և յահեակ որկորստութիւն և պոռնկութիւն. զի *յետս* դարձումն է ի ճշմարիտ բարւոյն, և զհետ ընթերցումն է առ ահեակ և սուտ բարիս: - 560. Ըստ այնմ որ *յետս* դարձուցանէ ի սիրեցելոյն է՛ միայն սիրոյն: - 583. վասն որոյ ի գիշերի կենցաղոյս լուսաւորէ զհոգիս *յետս* ընկրկելով զթշնամիս: - 629

**ՅԵՐԿԱՐ +** Եւ թէ է ի պատճառն ներգործական՝ որ ունի արգելումն, է՛ որպէս անէծք, կամ օրհնութիւնք, կամ աղօթք. և մանկանն *յերկար* ապրիլ. կամ լինիլ երաժիշտ: - 10. Նոյնպէս և այբն խառնի ի թաւ և ի լերկ, ի սուղ և *յերկար*, և միաբանի ընդ նոսա, և ի մի բնութենէ իւրմէ ո՛չ որոշի կամ այլայլի: - 178. Եւ զայլ *յերկար* քննութիւն տարերաց՝ գտցես ի գիրս նիւսացւոյն որ վասն բնութեան մարդոյ: - 181. Այս է յորժամ ընթեռնումք *յերկար* զպատմութիւնն և լսեմք. իբրու թէ տեսանեմք աչօք. և մտօք վայելեմք: - 192. Ա՛րդ՝ առաջին դարն որ էր երևակին՝ ընդ երկա՛ր ապրէին մարդիկքն. զի ունի երևակն *յերկար* ընթանալ զճանապարհն իւր. որ ի **լ** ամն վճարէ զկենդանակերպսն: - 291. Նոքա *յերկար* ապրէին՝ զի յաճախեսցին բարիք և ծնունդք նոցա. և մեք պակաս, զի կարճեսցին չարիք և բազմութիւնք մարդկան: - 291. Եւ այլ ևս. նոքա չունէին օրէնք գրաւոր, պա՛րտ էր նոցա *յերկար* կեալ և ի բնական օրէնս կրթել զծնունդս և զազգս իւրեանց: - 291. Իսկ ի նախնիքն տղայ և առոյգ էր բնութիւնս՝ վասն որոյ *յերկար* ապրէին: - 291. Թիւ կենաց մարդոյ չափեա՞լ է՝ թէ պատահմամբ *յերկար* և սակաւ ապրին: - 291. Եօթներորդ՝ բարեկամաց թշնամանքն *յերկար* հակառակութեամբ: - 322. Երեսունգ, Վերջին օծումն *յերկա՛ր* բանիւք: - 526. Քառասուներորդ, Վասն արքայութեան բան *յերկար*: - 661. Զի՞նչ է ոմանք *յերկար* ոգէվարին, և ոմանք յանկարծակի մեռանին: - 668. *Յերկար* ոգէվարք լինի

յերից պատճառաց: - 668. Դարձեալ՝ կրկին է օր մարդոյ թէպէտ *յերկար* ապրեսցի. այսինքն մին օր ծննդեանն, և մին օր մահուան: - 680. Վեցերորդ, զի յարութիւնն է գործ սքանչելեացն աստուծոյ և ո՛չ բնութեան. զի բութիւնն հունաւորեալ է զօրութեամբ *յերկար* ժամանակս գործէ: - 717. Ապա վասն է՞ր եզեկիէլ *յերկար* ժամանակս նշանակէ զյարութիւնն. - 717. Ժամ դատաստանին ո՞ր քան է. *յերկա՞ր* թէ սուղ: - 747. Վեցերորդ, արմաւենին *յերկա՛ր* կեայ...: - 766

**ՅԵՐԿԱՐԱՁԻԳ +** Չինգերորդ՝ նշանակէ զչորեսին աւետարանիչքն. մարդն զՄատթէոս՝ զմարդեղութիւն բանին ցուցեալ առիւծն զՄարկոս՝ արիաբա՛ր աւետարանեալ. «և էր ընդ գազանսն» ասէ. եզն զՂուկաս՝ *յերկարաձիգ* պատմութեամբ. և եզն պարարակ կոչեցեալ. արծւին ըզՅօհաննէս՝ ի վերուստ զբանն աւետարանեալ: - 132-133

**ՅԵՐԿԱՐԵՄ, ՅԵՐԿԱՐԻՄ +** Եւ զի *յերկարին* աւուրք: - 197. Եւ համառօտ ասեմ, կեանք մեր և ժամանակ որքան առաւել *յերկարէ՛* և աճէ՛...: - 199. Այլ գիտելի է, զի մեղքն երբեմն *յերկարէ՛* զկեանս՝ զի չարչարեսցի իբրև զկայեն: - 292. Նոյնպէս և արդարութիւնն երբեմն *յերկարէ՛* զկեանս որպէս առ եզեկիա. և երբեմն կարճէ՛ որպէս առ ովսիայ: - 292. Եւ ա՛յս է պատճառ *յերկարելոյ* և կարճելոյ կենաց. այսինքն արդարութիւնն կամ մեղքն որպէս ցուցաւ: - 292. **Դարձեալ՝ որ քան *յերկարի* ժամանակս, մաշի՛ երկիր և ի ծերութիւն երթայ և տկարանայ. որպէս ծեր մարդոյն զօրութիւնն պակասի և ցաւքն առաւելու**: - 292-293. **Երկրորդ՝ և արդարք առնեն ընդ դէմ սմին ի յամօթ չարին. որ հնարեցաւ ի ձեռն մեղացն՝ մահուամբ բառնալ զմարդկութիւնս. այլ հրամանաւն արարչին ծննդեամբք տևէ՛ և *յերկարէ՛* բնութիւնս:** - 321. Եւ թէպէտ զարհուրելի բանս *յերկարեաց* ի խրատս, ո՛չ լուան. վասն որոյ ո՛չ սրբեցան: - 382. Վասն այն *յերկարեցի*, թէ ոք հակառակի՝ այսպէս պատասխանեսցես նոցա. և զեղկելի անձն իմ յիշեսցես ի տէր ուղղակից եղբայր իմ ի քրիստոս: - 511. Իսկ հոգին սուրբ երագ էջ յառաքեալսն. զոր արեգակն քրիստոս բազում ամօք *յերկարեալ* մարմնով ել յերկինս: - 522. **Եւ զայս վասն է՞ր *յերկարել* ինձ. զի ցուցանիցի թէ ո՛չ է պարտ միոյն ճշմարտի բազում ստոց հետևիլ:** - 551. Երկրորդ ի թիւ ամացն. զի որքան *յերկարեմք* անցանելով, պակասի մասն վերին և յաւելու մասն ներքին...: - 666. Այլ զի մի՛ իրողութիւն դատաստանին և յարութեան ուրուական և առ աչօք թուեսցի ընդհանուր ամենայն մարդկան, վասն որոյ ասեն վարդապետք ի յարութենէն մինչ ի գալուստն և քննութիւնն և հրով նորոգիլն և այլն՝ *յերկարի* միջոցաւ որքան ժամս **զ**: - 747. Եւ զայս ո՛չ շաբաթու և աւուրց սպառեալ. այլ ամսոց երից սորին *յերկարեալ*. և գործելոց վրէժ ո՛չ կշիռ հատուցեալ: - 789

**ՅԵՐԿԱՐՈՒԹԻՒՆ +** Եւ վասն *յերկարութեան* կենաց, և վասն ո՛չ գիտելոյ զօր մահուն և զկատարածի, ասացեալ է ի վերն առ նախապետսն ի **դ** համարն: - 665. Յարութիւն մարդկան ի վայրկեան ժամանակի և յանկարծակի լինի որպէս ցուցաւ ի վերոյ. այլ *զյերկարութիւն* ժամու քննութեան դատաստանին, ոմանք ժամ մի ասեն. որքան եկաց ընդ ադամայ ի քննութիւն հարցմանց յետ յանցանաց նորին: - 747

**ՅԵՐԿՈՒԱՆԱՄ +** Եւ զի որդին աստուծոյ բնութեամբ որդի մարդոյ եղև, մի՛ *յերկուանալ* թէ լինիցիս և դու շնորհօք որդի աստուծոյ: - 107

**ՅԵՑՈՒՑԱՆԵՄ +** Եւ թէ ի ներքուստ շաղախմունք ապականութեան, ի վերայ հաւատոյն *յեցցես* և ո՛չ անկցիս: - 770

**ՅԵՓԹԱՅԻ** - Իններորդն *Յեփթայի* պոռնկորդի գաղայադու ամս **զ**: - 420

**ՅԵՔՈՆԻԱ** - Եւ յետ **գ** ամի՝ կրկին անգամ ել յերուսաղէմ, *զյեքոնիա* և զեզեկիէլ գերի վարեաց: - 447. Յովակիմ որ և *յեքոնիա* ամիսս **գ**: - 453. Իսկ ըստ ազգաբանութեանն Մատթէի, ծնանի *յեքոնիա* զսաղաթիէլ ամաց **ծզ**: - 453

**ՅԻՄԱՐ +** Ապա *յիմա՛ր* են այնոքիկ որք ասեն՝ կամիմ առնել զհաճոյսն իմ. զի թէ յընտրելո՛ցն եմ՝ փրկեցայց. և եթէ ո՛չ՝ դատապարտեցայց: - 18. Որպէս *յիմար* հիւանդն ասիցէ, կամիմ ուտել և ըմպել զհաճոյսն իմ. եթէ առողջանալո՛յ եմ՝ առողջացայց. և եթէ մեռանելո՛յ՝ մեռայց: - 18-19. Դարձեալ՝ զի յիմարութիւն և իմաստութիւն են ի նոյն և ի մի բնութիւն մարդոյն, և ո՛չ ասին հակառակ միմեանց. այլ միապէս ունի *յիմարն* զիմաստնոյն բնութիւն և զսահման: - 38. Այլ զի զանձնաւոր բնութիւն և զանհատն ասեմք մարմնացեալ. զի սկիզբն միաւորութեանն է ի բնութիւնն, և կատարումն կայացեալ ի յանձն, *յիմարա՛ց* ուրեմն և ափշելոց է խնդիր նոցա: - 76. Բաց աչքն *յիմա՛ր* է: - 246. Ձայնն նման ոչխարաց և այծից՝ *յիմարի՛* է: - 247. Մատունքն փոքր և բարակ, *յիմարի՛* է ցոյց: - 247. ...**ը**՝ զիմաստունն *յիմարս* առնէ...: - 322. Վասն *յիմարին*՝ ծաղր լինի իմաստութիւնն: - 491. Սա *յիմա՛ր* է ո՛չ գիտէ զտկարութիւն իւր

որպէս չար հիւանդ. զարթո՛ զսա: - 537. ...զի անցեալ է ժամանակն որպէս *յիմար* կուսանացն: - 684. Եւ յայնմ աւուր իմաստունքն մտին յառագաստ փեսային, և *յիմարքն* արտաքոյ մնացին: - 693. Եւ զի ո՛չ գոյ ողորմութիւն անդ՝ յա՛յտ է ի *յիմար* կուսանացն. և ո՛չ զերծումն ի տանջանաց...: - 700. Իսկ դատաւորն նստեալ յաթոռ արդարութեան արդարապէս հատուցանէ ըստ գործոց. ըստ որում *յիմար* կուսիցն փակեցաւ դուռն և ո՛չ առին զխնդիրն: - 742. Այլ և աստ ապաշաւելն ոչ ինչ օգտեալ. որպէս և անդ ո՛չ լսողաց բերանով հաշեալք. որ և ո՛չ գոյր անդրէն դառնալ. և ո՛չ կարի յօժարացն շահավաճառ եղեալ. ո՛չ գիտ և ո՛չ ողորմ. հանգոյն *յիմարացն* օրիորդաց: - 789

**ՅԻՄԱՐԻՄ +** Վասն որոյ հրէայք գայթակղեցան և հեթանոսք *յիմարեցան*...: - 95. Եւ այս կամ *յիմարիլ* և ափշիլ. կամ արտաքս գերազանցիլ: - 127. Չորրորդ՝ զի ա՛յլ մեղօք կամք մեր անկարգանայ. այլ հպարտութեամբ՝ իմացմամբն *յիմարիմք* և ապշիմք. և ապա կամօք անկարգանամք: - 562. Ցանկութիւնն *յիմարեալ*: - 752

**ՅԻՄԱՐՈՒԹԻՒՆ +** Դարձեալ՝ զի *յիմարութիւն* և իմաստութիւն են ի նոյն և ի մի բնութիւն մարդոյն, և ո՛չ ասին հակառակ միմեանց. այլ միապէս ունի յիմարն զիմաստնոյն բնութիւն և զսահման: - 38. Պատասխանեմք թէ՝ կարի՛ *յիմարութիւն* է հարցումնդ. և զի գոյ հայր ըստ քում բանիդ ծնօղ որդւոյ. ապա ուրեմն ո՛չ կարէ ոչ լինիլ և ծնանիլ: - 38. Այլ զայսպիսի ի միում գոյութեանն յոյժ *յիմարութիւն* է կարծել կամ ասել: - 62. Առ երրորդն ասեմք՝ թէ *յիմարութիւն* է ամենևիմբ և մոլորութիւն իսկ ի լսել զայս: - 76. Ո՛վ *յիմարութեանդ*: - 94. Որպէս յորժամ ասեմք անբան և *յիմարութիւն*, գերագոյն ունիլ զբան և զիմաստութիւն քան զմերս: - 118. Եւ շնչաւոր մարդոյ *յիմարութիւն* է հոգին. որ և պատժեաց զանանիա և զսափիրայ: - 523. Իմաստութիւն է որով ճանաչեմք զբարութիւնն աստուծոյ. որ տուեալ լինի ընդ դէմ *յիմարութեան*: - 582

**ՅԻՆՈՒՆՔ +** Յիսունք, Վկայութիւն պահոցն մեծի. և շաբաթու. և չորեքշաբաթին. և զի *յինանցն* ո՛չ պահեմք: - 527. Երկրորդ «որ եկիր և գալոց ես». քառասնօրեայ գալստեանն, և ծաղկազարդին, և բուն *յինանց* կիրակմտին զա՛յս ասա: - 634. Եւ որ *յինանցն* պահէ մինչ ի համբարձումն, ընդ դէմ է կանոնաց հարցն և աւետարանին որ ասէ - 649. Երրորդն գալստեան. թէպէտ յայլ և այլ աւուրս. որպէս քառասնօրեայն, և յաւանակաւն, և *յինանց* կիրակմտիցն: - 649. Այսինքն երեքն ի մին շաբաթն. որ է՛ Պահոց, Մարտիրոսաց, և Կիրակէն այլածև կարգ. Առաջաւորացն. Աղուհացիցն. և *Յինանցն* կարգ: - 649. *Յինանցն* ընդէ՞ր ոչ պահեմք. ո՛չ ուրբաթ և ո՛չ **դ** շաբաթի: - 654. ...և *յինունքն* յարութեան խորհուրդ. զի ո՛չ է սուրգ և ո՛չ տրտմութիւն և ո՛չ ցաւք: - 654

**ՅԻՇԱՏԱԿ +** ...յետոյ գրով աւանդեցին զչար աղանդն այլոց չար *յիշատակ* և ի կորուստ անձանց իւրեանց: - 33. Իսկ մարգարէութիւնն լռեաց, զի ո՛չ ևս երևի բան մի *յիշատակ* շնորհաց նորա: - 279. Առ նոսա՝ զի անմոռաց մնասցէ *յիշատակ* սքանչելեացն: - 339-340. Վասն որոյ ի սոյն ժամանակի առաւելու որոտ կայծակ և կարկուտ զգալապէս՝ *յիշատակ* սքանչելեացն աստուծոյ: - 341. Ապա թէ որդիք և թոռունք չօգտին ի ներելոյն, յայնժամ պատուհասէ՛ և ջնջէ *զյիշատակ* չար ազգին: - 351. Եւ զանգեալ նաշինն *զյիշատակ* մարտիրոսացն՝ ուր խառնեմք աղ ի հատ պատարագին և իւղ անոյշ ի խորհուրդ նոցա: - 356-357. Այլ և ալիւր գարեղէն զոհ *յիշատակի* փործութեան կանանց: - 359. Երրորդ՝ թէ չլինի *յիշատակ* եղբօրն: - 402. Ասեմ թէ ոչ, զի կատարեալ խոստովանութիւնն թողու զմեղս, բառնայ զպատիժն, և ջնջէ՛ *զյիշատակ* մեղացն. մինչ զի ո՛չ երևի ի դատաստանին աստուծոյ: - 432. Եւ աւուրք պաշտամանն էր երկոտասան. **Ե** օր քաւութեանն վասն որթոյն յանապատին. և **Է** օր տաղաւարահարացն ի *յիշատակ* խորանաւ բնակելոյն յանապատին ամս **Խ**. և այլ սքանչելեացն զոր գործեցաւ անդ: - 483. Տասներորդ՝ զի և ազգն հռոմայեցւոց մինչև ցայսօր յայտնապէս ի վեցն յունվարի զերից տօնից *յիշատակս* կատարեն: - 484. Այսպէս սրբեաց զեկեղեցի յամենայն աղանդոյ սուրբն յոհան. որոյ *յիշատակն* օրհնութեամբ եղիցի ամէն: - 545. Շնորհ է *յիշատակ* բարեկամութեանց. և կամք անդրէն հատուցմանց: - 579. Եւ ապա՛ ընթերցմունք *յիշատակ* սրբոցն որք աստ նահատակեցան և անդ պսակեալք թագաւորե՛ն ընդ քրիստոսի: - 628. Վասն որոյ ի պատարագն *յիշատակի* եբրայեցին և յունացն: - 645. Չորրորդ, *յիշատակ* ննջեցելոց: - 657. Իսկ վասն գրակարդացի և նկարեալ եկեղեցւոյ. և վասն զնշխարս ի հանգիստ փոխելոյ. այս ամենայն *յիշատակ* է մեզ ի սրբոյն գրիգորէ՛ լուսաւորչէն մերմէ: - 659. **Իսկ վասն քահանայօրհնէիցն, սուրբն սահա՛կ է արարեալ. յառաջին ամի եպիսկոպոսութեան իւրոյ. ի նաւասարդի ամսեանն որ օր մի էր. և *յիշատակ* սուրբ կարապետին արար զքահանայօրհնէքն:** - 659. Իսկ շիրիմն՝ *յիշատակ* այնոցիկ ուր զազգին մեռեալքն դնէին: - 678. Եւ երեք

աւուր *յիշատակ* ննջեցելոց ունի բազում խորհուրդ: - 681. ...իսկ մարդ զերեքեանն ունի. վասն որոյ երեքօրեայ *յիշատակ* կատարեմք: - 681. ...վասն որոյ **գ** օր *յիշատակ* կատարեմք և գամք ի գերեզմանն: - 681. Ա՛յս է խորհուրդ **գ**օրեայ ննջեցելոց *յիշատակին*: - 683. Առասանքն երեքկղի՝ յերրորդութեանն դիմաց արդարութեան և ողորմութեան զօրութիւնք առ մեզ խոնարհեալ. ունելով *զյիշատակ* բարեացն և չարեացն մերոց: - 745. Որոյ *յիշատակն* օրհնութեամբ եղիցի ամէն: - 772. Այլ և վարժապետին իմոյ և մեծ հռետորի հայոց, Յոհաննու Որոտնեցւոյ, եղիցի ի սմա *յիշատակ* մաղթանաց մասին օրհնութեան. և վիճակ ժառանգութեան սրբոցն ի լոյս: - 773. Այլ և զերջանիկ գաղափարօղսդ մաղթեմ. որք ընդօրինակէք զգիր հարցմանցս այսորիկ, գրել և զսակաւ *յիշատակս* այսոցիկ: - 773. Միայն բարեսէր կամօք *յիշատակ* բարի առ քոյդ արձանագրեսցի ի տէր: - 789

**ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ +** Նա՛խ՝ զի մնացորդք գործոց և խորհրդոց կերպարանին ի *յիշատակարանս* հոգոյն զոր ինչ գործեաց ի անցելումն, կամ խորհեցաւ վասն հանդերձելոյն: - 268. Իսկ տնկականն միայն գործ է ի կերակրիլն և աճիլն, նա նկարէ յինքեան ի զգայութեանցն և ի մտացն ըստ տկարութեան իւրոյ անկարգաբար երևեցուցեալ ի *յիշատակարանս* մտացն որպէս ասացաք: - 268. Քառասունևե, *Յիշատակարան* գրոցս: - 661

**ՅԻՇԱՏԱԿԵՄ +** Եւ յայս ասեն հերձուածօղ ազգն Ֆռանգաց, թէպէտ խոստովանի՛ն աստ, *յիշատակի*՛ մեղքն ի դատաստանին: - 433. Իսկ մեղքն դաւթի *յիշատակեցաւ* վասն երկու պատճառի: - 433. Հինգերորդն է բևեռք ոտիցն և ձեռացն. առ միշտ *յիշատակելոյ* զմեզ ի միտս իւր...: - 489. Եւ զի պարգև խաչին է հոգին սուրբ, նմին իրի *յիշատակեալ* զհոգին սուրբ՝ խաչիւ դրոշմեմք զդէմս մեր: - 522. Ապա ուրեմն պա՛րտ է յորժամ *յիշատակեմք* զհոգին սուրբ ամենայն ուրեք՝ խաչակնքել զդէմս և երկրպագել: - 625. Այսպէս հանապազ *յիշատակեմք* զերախտիս նորա որ վասն մեր խաչեցաւ: - 632. Եւ յորժամ ըմպեմք, զնոյն օրհնութիւնն քրիստոսի *յիշատակեմք*: - 655-656. վասն որոյ նշանաւոր աւուրքս այս *յիշատակեմք* զննջեցեալսն: - 683. Նոյնպէս և յոտնալուայն և ի խաչհամբոյրն՝ գանձանա՛կն է քրիստոսի զոր *յիշատակեմք*: - 684. Նախ ասեն թէ՝ յաւուրսն յայնոսիկ յարեան մանկունքն յեփեսոս ի վկայութիւն առ հասարակ յարութեանն, զնոյն *յիշատակեմք*: - 684

**ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆ** - Եւ այսպէս օրհնութիւն սոցա ընդ տեղւոյն իւրեանց կայ և մնայ մշտնջենաւոր *յիշատակութեամբ*: - 320. Եւ դարձեալ թէ՝ *յիշատակութիւն* օրինացն յաւիտեան մնաց: - 369. Որպէս դաւթին յետ զղջմանն *յիշատակութիւն* մեղացն մնաց, ապա նո՛յնպէս և ամենայն մարդոյ մնասցէ՞ թէպէտ և խոստովանի: - 432. Երկրորդ՝ վասն տկարութեան օրինացն. զի ի հինն ո՛չ կարէր բառնալ զմեղս առանց մարմնական փոխարինաց և *յիշատակութեանց*: - 433. Այլ շնորհք նորոյս կարողութեամբ արդարացուցանէ զմարդ այնպէս, մինչ զի սպիք մեղացն ջնջին և *յիշատակութիւնն* ծածկի: - 433. Վասն որոյ ի սոյն աւուրքս կատարին արդիւնք ննջեցելոցն և *յիշատակութիւնք* նոցա այսու խորհրդով: - 683. ...ջրարբիք են հաւատով և յուսով մեռեալքն. և հանապազ յեկեղեցի սուրբ *յիշատակութիւն* նոցա կատարի...: - 721. Եւ այս ո՛չ միայն փութանցիկ գոլոյ վասն, կամ ներհակաբար հատուցման որպէս սովորութիւն է. այլ զի ո՛չ ինչ կարեն տանիլ ընդ ինքեանս. բայց միայն նշխարհս ինչ *յիշատակութեան* ուրուական տեսլեան: - 775. Յիրաւի ապա ըստ այսմ օրինակի՝ որք ի մշտնջենաւորէն փոխանցին առ երազ սնոտեաց, ոչ ունիցին ինչ ի մտի. թէ և անդրադարձեալ աստի անդ մնասցէ *յիշատակութիւն* որպէս ասացաւ: - 775

**ՅԻՇԵՄ +** Եւ անդ ասի ի հաւատամքն եթէ՝ հոգին սուրբ որ ի հօրէ. և ո՛չ *յիշի* որդի: - 64. Աղաչեմ զոր *յիշեցաւ* ի վերոյ բացայայտել, եթէ ի նախատեսութիւնն աստուծոյ աշխարհ զօրութեամբ ո՛չ ասի: - 167. Եւ ի գիրս սուրբս՝ մարգարէից այլոց ազգաց անուանք ո՛չ *յիշին* բաց ի հայոցս: - 201. Նախ՝ զի թէպէտ զջուր կամ զհող միայն *յիշէ* աստուած. այլ երեքն ընդ միոյն առին հրաման...: - 214. Զերկիր ասելով, զայլ տարերքն ընդ նմա *յիշէ* և առնէ: - 214. Այլք ասեն թէ՝ խնձո՛ր. վասն զի բազում անգամ ի յերգսն խնձոր *յիշի*: - 224. Իսկ ըստ Ասեբեայ, **վպթ** ա՛մ է. զկայնան **ճի** ամ ի ներս առեալ, որ է՛ որդի արփաքսաթայ՝ և հայր սաղայի. զոր *յիշէ* աւետարանն, և ո՛չ *յիշէ* մովսէս: - 337. Եւ թեթևացնէ՛ զպարտս մեղաց. որպէս արար ողորմութիւն միածին բանն աստուած *յիշելոյ* զառաջին արդարսն...: - 351. Զոր *յիշէ* աւետարանն ղուկասու, և մնացորդացն գիրք. և ո՛չ *յիշէ* մովսէս. զի զսկիզբն կռապաշտութեան ի նմանէ՛ ասեն լինիլ: - 411. Կամ զի աքիմելէք **գճ** քահանայիւք սպանաւ ի սաւուղայ. և աբիաթար փախեաւ առ դաւիթ և ընդ նմա՛ էր զամենայն աւուրս թագաւորութեան նորա. և յանուանէ զնա՛ *յիշէ* : - 427. Եւ թէ ասիցեն՝ զխոստովանեալ մեղս այլ ո՞չ *յիշեմք*: - 433. Այլ և ծանիր. զի է բան *յիշէ* սուրբ գիրք

զոր խօսեցաւ աստուածածին կոյսն: - 465. Վասն այն յերկարեցի, թէ ոք հակառակի՝ այսպէս պատասխանեսցես նոցա. և զեղկելի անձն իմ *յիշեսցես* ի տէր ուղղակից եղբայր իմ ի քրիստոս: - 511. Նա՛խ՝ զի մատթէոս զերեկոյի շաբաթուն և զլուսանալ միաշաբաթին *յիշէ*. այսինքն զսկիզբն և զվախճան գիշերին. զի յերկուց մէջն որ է՛ հասարակն և մէջ գիշերին՝ նշանակեսցէ զժամ յարութեանն: - 512. Քանի՞ են մարիամք զոր *յիշէ* աւետարանն: - 516. Հանճարեղութիւն է նկատել զայնս որ են. և Նախատեսութիւն է տեսանել զլինելոցն. այլ Յիշողութիւնն է վերստին *յիշել* զեղեալսն: - 580. Եւ թէ՝ «գինի ուրախ առնէ». և ջուր ո՛չ *յիշէ* : - 595. Եւ յակոբ ի յօրհնելն զյուդա ի դէմս քրիստոսի ասէ՝ «կապեսցէ զորթոյ զյաւանակն. և լուասցէ գինեաւ զպատմուճանն իւր». և ջուր ո՛չ *յիշէ* : - 595. Դարձեալ՝ ի նորս աւետարանն ասէ «էառ զբաժակն ի ձեռն, օրհնեաց և ասէ, ա՛յս է արիւն իմ». և ջուր ո՛չ *յիշէ* : - 595. Սոքա զխորհուրդ պատարագին ասացին և ջուր ո՛չ *յիշեն*: - 595. և յետոյ զբաժին նոցա ի վերայ լնուին. նոյնպէս ի տունս և ի դուրս յորժամ *յիշէին*: - 656. Եւ յետ այնորիկ *յիշեմք* զպատիժ հրամանացն աստուծոյ որ կատարեցաւ ի վերայ նորա. - 676. Երկրորդ, զի սիրելիք նոցա որք անդ ժողովին, տօնեն և *յիշեն* զնոսա աղօթիւք առ աստուած: - 678. Որ և ձեզ *յիշողացդ* և մեզ յուսողացս առհասարակ ողորմեսցի բարերար և բազում ողորմ մարդասէրն աստուած և տէրն մեր յիսուս քրիստոս ամէն: - 773. Տեսանելի՛ է թէ՝ զի՞նչ արդեօք իցէ ոչ ունելն ի մտի որ է՛ մոռանալ. այսինքն զանցեալն ո՛չ *յիշել*. և զհանդերձեալն ոչ տեսանել. իսկ զներկայն ո՛չ գիտել: - 774. Զի յայսմ կենցաղոյս զուգաւորին *յիշելն* երբեմն և մոռանալ զներքոյս և զարտաքոյս. ըստ որում փոխանցապէս ունիմք զերից ժամանակաց գիտութիւն: - 774. Իսկ յետ մահու՝ *յիշելն* է միայն ըստ ինքեան զներքոյսն. խափանեալ խառնուածոյ նիւթոյն: - 774. Ապա բնաւորապէս ընդ դէմ գոյ երից որպիսութեանց սա՛ մեզ չորրորդ գոլով. ոչ ունել ինչ ի մտի. մոռանալով միշտ. ո՛չ գիտել և ո՛չ *յիշել* ինչ զանտի կենաց: - 775

**ՅԻՇԵՑՈՒՑԱՆԵՄ +** Նախ ասեն եթէ ի ծննդեանն կալեալ էր զգարշապարէն՝ եսաւայ, այժմ զփոխն անդրադարձէ՛ և *յիշեցուցանէ* նմա թէ՝ ամենայն իրի հատուցումն գոյ: - 311. Երրորդ՝ զի մարմնոյն *յիշեցուսցէ* զնոյն ունել բնութիւն, և ո՛չ այլ ինչ աւելի: - 323. Եւ զայս *յիշեցուցանէին*, «Ո՛րդի դաւթի ողորմեա՛ մեզ». որպէս և հա՛յր քո արար: - 431

**ՅԻՇՈՂԱԿԱՆՆ +** Է՛ որ իմացումն մտացն առ ինքն ժողովի ի *յիշողականէ*՝ ի տրամախոհութեանցն՝ ի կարծեաց՝ և յայլոցն, և այնպէս ըստ ինքեան տեսութեանն ի աստուած հպի. այս է գերագոյն իմացումն. և կոչի իմացական տեսութիւն: - 142. Երևակայութիւնն: Կարծիքն: Տրամախոհութիւնն. և *Յիշողականն*: - 249. Իսկ ներքինն՝ որ է հասարակ զգայութիւնն. երևակայութիւնն. կարծիքն. տրամախոհութիւնն. յիշողութիւնն որ է միտք. զի ամենայն ինչ ի *յիշողականն* մտանէ: - 249. Եւ ըստ որում իմանայ և խորհի, կոչի բանական հոգի. որպէս այլուր բաժանի ի տեսողական զօրութիւնն. և յիմացականն. և ի *յիշողականն*. մնալով անբաժանելի ներգործէ՛ ի նոսա: - 259. Ըմբռնելիքն ի վերին ծայրքն՝ է՛ *յիշողականն* ի մեզ: - 645

**ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ +** Եւ է՞ յորժամ իմացումն ի *յիշողութիւնն* ի տրամախոհութիւնն և յայլս բաժանի, և նոքօք իմանայ և տեսանէ զաստուած. և այս ևս է կատարեալ տեսութիւն. և կոչի սա բնական տեսութիւն: - 142. Իսկ ներքինն՝ որ է հասարակ զգայութիւնն. երևակայութիւնն. կարծիքն. տրամախոհութիւնն. *յիշողութիւնն* որ է միտք. զի ամենայն ինչ ի յիշողականն մտանէ: - 249. Դարձեալ՝ հանճարն է տրամախոհութեանն. զի կարծիք է կապեալ ընդ ուղիղ խորհրդոյ. իմաստութիւնն իմացմանն. գիտութիւնն *յիշողութեանն*: - 270. Եւ մասունք են խոհեմութեան **գ.** այսինքն հանճարեղութիւն, նախատեսութիւն, և *յիշողութիւն*: - 580. Հանճարեղութիւն է նկատել զայնս որ են. և Նախատեսութիւն է տեսանել զլինելոցն. այլ *Յիշողութիւնն* է վերստին յիշել զեղեալսն: - 580. ...որ է՛ հասարակ զգայութիւն. երևակայութիւն. կարծիք. տրամախոհութիւն. և միտք որ է՛ *յիշողութիւն*: - 622

**ՅԻՇՈՒՄՆ +** Իսկ ի տեսութիւն մարդոյ է՛ առաջին և վերջին. զի զանցեալն տեսանէ *յիշմամբ*, և զներկայն իմացմամբ. և զհանդերձեալն ի պատճառն իւր ըստ ժամանակին փոփոխման որպէս ասացաք: - 15. Եւ է՛ գործի իմացման նոցա՝ *յիշումն*. և ենթակայ՝ երկնային մարմինք՝ և էութիւնք եղելոց: - 269. Բոլոր մտօք, այսինքն անմոռաց *յիշմամբ*: - 396

**ՅԻՋԱՋԵԼ** - Կամ թէ հպարտացան *յիջաջել* հրոյն ի վերայ սեղանոյն: - 364

**ՅԻՍԱՔԱՐՈՒ** - Եօթներորդ Թովլայ *յիսաքարու* սամարացի ամս **իդ**: - 420

**ՅԻՄՆԱԿ +** Զի վարդավառին ա՛յն է, յորժամ կրկին **խ** պահեաց մովսէս ի լեառն և լուսաւորեցան երեսքն. վասն այն զկնի երկու *յիսնակացն* տօնեմք: - 373-374

**ՅԻՍՆԱՊԵՏ +** Ոմանք ասեն եթէ՝ մովսէս զդատաւորսն ի **դ** բաժանեաց ամենայն ժողովրդեանն. որ էր **ժ**ապետ. *յիսնապետ*. **ճ**ապետ. և **ռ**ապետ: - 609

**ՅԻՍՆԵԱԿ +** ...որ լինի *յիսնեակ* ըստ առաքելական կանոնին: - 651. Դարձեալ, **գ** *յիսնեակն* **գ** քաղաք ապաստանաց ի քանանացւոց երկրին: - 653

**ՅԻՍՆԵՐԵԱԿ +** Երկրորդ՝ տըւչութեան օրինացն՝ *յիսներեկի* աւուրն յամռան: - 340. Առաջին, երեքօրեայ սրբութեամբ *յիսներեկի* աւուրն ելից յեգիպտոսէ. որ ընկալաւ զտասնբանեան օրէնս և պատմեաց ժողովրդեանն: - 352. Այլ և *յիսներեկին* է է գառինս. և ի նոր մտիցն կրկին հաց ևս: - 359. Երրորդ՝ *յիսներեկին* տըւչութեան օրինացն. որ է՛ հոգւոյ գալուստն: - 372. Վեցերորդ՝ *յիսներեակն*: - 373. Եւ տես, զի սոքա երեքեան տօնքս, այսինքն ամսամուտն, և պասքայն, և *յիսներեակն*, հաւասար ունին զմատուցմունքն տօնից: - 373. Նո՛յնդ է պատճառ և վասն *յիսներեկին*. զի յաղուհացն զշաբաթ և զկիրակէ պահեաց...: - 649

**ՅԻՍՈՒՍ +** Եւ զորս ես աստ պարկեշտութեամբ լռեմ, յընթանրական թղթին յօհաննէս ի նեռն առակէ ասելով. «արդէն իսկ նեռինք եկեալք են. զի ամենայն որ ուրանայ թէ *յիսուս* չէ՛ Քրիստոսն՝ նա իսկ է նեռն»: - 34. Եկն առ *յիսուս* ասելով՝ «վարդապետ բարի». զի լսիցէ՝ աշակերտ բարի: - 47. Բարի՛ է և որդի. որպէս ասէ՝ «ո՞ որ միայն բարերա՛րդ ես աստուած իմ *յիսուս»:* - 57. Այլ զօրութիւնս այս վերաբերի ի հոգին սուրբ. որպէս ասէ պօղոս ի հռոմայեցւոցն, «հոգի այնորիկ որ յարոյց *զյիսուս* ի մեռելոց. և կենդանացուսցէ զմահկանացու մարմինս ձեր»: - 57. Ըստ այնմ՝ «չև էր հոգի, քանզի *յիսուս* չև էր փառաւորեալ»: - 61. Երկրորդ՝ և պօղոս ի հռօմայեցւոցն ասէ, «հոգի այնորիկ որ յարոյց *զյիսուս»:* - 64. Ա՛րդ՝ որով ամենայն՝ յարմարի բանին. ըստ այնմ ամենայն՝ «ինչ բանիւն եղև». և *յիսուս* կոչի մարդն: - 72. Իսկ անձն առանց բնութեան՝ միայն անուն է սոսկ. որպէս որդի՝ կամ քրիստոս՝ կամ *յիսուս*: - 82. Եւ բանն քրիստոս կոչի, և *յիսուս*, և տէր. և աստուած. նոյնպէս և մարդն կոչի քրիստոս, և *յիսուս*, և տէր, և աստուած: - 82. Դարձեալ ի նոյնն ասէ. «քանզի միութիւնն և պարզութիւնն *յիսուսի* աստուածպետականին բանին ըստ մեզ մարդանալովն՝ առ շարադրութեան երևումն, զմեր նուաստութիւնս ընդ իւրոյ ծայրագունի աստուածութեանն միաւորեաց»: - 83. Եւ դարձեալ ասէ՝ «ամենեցուն պատճառ և լցողական *յիսուսի* աստուածութիւնն, ո՛չ մասն և ո՛չ բոլոր գոլով. և բոլոր և մասն. որպէս զամենայն մասն և բոլոր յինքեան առեալ»: - 83. Դարձեալ ասէ սուրբն դիոնէսիոս՝ ի չորրորդ թուղթն. «*յիսուս*՝ որ անդրանիկ է քան զամենայն, ընդ ամենայն մարդկան էապէս շարակարգեալ. որպէս նոյն ըստ բոլորութեան ճշմարտապէս մարդ եղեալ»: - 83. Եւ դարձեալ ասէ՝ «մեք *զյիսուս* ո՛չ մարդկօրէն որոշեմք»: - 83. Այսպէս և ի նորս սուրբն ստեփաննոս որ եղև առաջին մարտիրոս և վկայ քրիստոսի՝ հեղլով զարիւն իւր. տեսանէր բացեալ զերկինս և *զյիսուս* ընդ աջմէ աստուծոյ: - 288. Իսկ հրեշտակն ասէր, «ծնցի որդի և կոչեսցի *յիսուս*, որ է՛ փրկիչ»: - 305. Եւ ղուկաս ասէ, «կոչեցաւ անուն նորա *յիսուս*, կոչեցեալն ի հրեշտակէն մինչչև յղացեալ էր»: - 305. Որդի և միածինն *յիսուս*: - 308. Որպէս **բժ**ան կենդանակերպք երկնից, և ամիսք տարւոյն. այլ և **բժ**ան առաքեալքն ի լանջսն *յիսուսի*: - 348. ...ըստ այնմ «ունիմք քահանայապետ մեծ անցեալ ընդ երկինս *զյիսուս* զորդին աստուծոյ. և նմա կրկնի ամենայն ծունր. և ամենայն լեզու խոստովան լիցի զնա տէր յիսուս քրիստոս ի փառս հօր ամէն»: - 355. Նա՛խ՝ զի յորժամ ճշմարիտ սրբութիւնն գայցէ, հաւանեսցին որ է՛ արիւնն քրիստոսի. որպէս ասէ պօղոս՝ «եթէ արիւն ցլուցն և նոխազացն և մոխիր երնջոցն սրբէ՛ր զպղծեալսն քանի՞ առաւել արիւնն *յիսուսի»:* - 383. Եւ որք պարտին աստ, նոքա և յետ մահու և յարութեանն. զորս կորուսցէ փրկիչն մեր *յիսուս*: - 394. Իսկ խոստման երկիրն նոր օրինօքս ի ձեռն փրկչին *յիսուսի*: - 395. Ըստ այնմ «զմահն քրիստոսի ի մարմինս մեր կրեսցուք. զի և կեանքն *յիսուսի* յայտնի լիցի ի մահկանացու մարմինս մեր»: - 405. Եւ բաժանեաց **բժ**ան ցեղիցն ի խորհուրդ փրկչին *յիսուսի*: - 414. Երրորդ՝ յօրինակ փրկչին *յիսուսի* որ եղև առ խաչին: - 416. Ութերորդ՝ յօրինակ փրկչին *յիսուսի*, որ զբռնութիւն թշնամւոյն խորտակեաց և զխաբէութիւնն եթող. զի փորձեսցին ընտրեալքն և խոտեսցին վատթարքն: - 417. Նոյնպէս և յեսու անուանակիր և օրինակ ճշմարիտն *յիսուսի*: - 417. Նա՛խ ըստ հոմանունն. զի յեսու՝ փրկիչ, և *յիսուսն* փրկիչ լսի ըստ հրեշտակին, «կոչեսցի *յիսուս*. զի նա՛ փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց»: - 417. Եւ *յիսուս* փրկեաց զմեզ յիմանալւոյն ձեռաց: - 417. Եւ *զյիսուս* փրկիչն՝ հայր սրբեաց և առաքեաց. որ և ի յորդանան վկայեաց «դա՛ է որդի իմ սիրելի, դմա՛ լուարուք»: - 417. Եւ անտի քահանայքն մինչ ի *յիսուս* փրկիչն ճշմարիտ: - 421. «Աճէր և մանուկն *յիսուս* շնորհօք յաստուծոյ և ի մարդկանէ» ասէ: - 422. Թագաւորեաց նախ է ամ ի վերայ յուդայ, և ապա

ամենայն իէլի. և տէր մեր յեօթն դարոյս թագաւորէ՛ հաւատացելոց, և ի վախճանի ամենայնի. յորում «ամենայն լեզու խոստովանեսցի տէր *զյիսուս*» ասէ առաքեալն: - 437. Երկու յաւանակն սիբայի. էշն և յաւանակն *յիսուսի*: - 438. *Յիսուս* ծնանի ի բեթլէհէմ հրէաստանի: - 453. Երեքտասաներորդ, *Յիսուս* կոչի և փրկիչ: - 454. Եւ ո՞վ թլփատեաց *զյիսուս*: - 454. Մարիամ ամուսնացաւ ի բեթլէհէմ և ծնաւ զսողոմի զմանկաբարձն *յիսուսի*. ո՛չ որ մայր եղև որդւոցն զեբեթեայ. զի այն. սողովմէ դուստր է յովսեփայ աստուածահօրն...: - 460. *Յիսուս* կոչեցաւ յիրէ՞ն թէ ի գործոյն: - 473. *Յիսուս*՝ փրկիչ թարգմանի. որպէս ասաց հրեշտակն առ յովսէփ: - 473. Նա՛խ՝ փրկեաց ի մեղաց. ըստ որում «կոչեսցի անուն նորա *յիսուս*. զի նա՛ փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց»: - 473. Եւ *յիսուս* անունն՝ են վեց գիր. որ կարեն լինիլ սկիզբն այսպիսի ասութեանց. այսինքն Յարազուարճութիւն տրտմեցելոց: - 474. Իսկ ոմանք յետ ծննդեանն ի կուսէն ասեն օծեալ զքրիստոս ի մկրտութեանն. վկայ բերելով «*զյիսուս* որ ի նազարեթէ, զոր էօծ աստուած հոգւով և զօրութեամբ»: - 475. Երկրորդ՝ թէ խա՛չն է փառք փրկչին մերոյ. ըստ որում «չև էր հոգի. քանզի *յիսուս* չև էր փառաւորեալ». այսինքն խաչեալ: - 481. Եօթներորդ՝ ասէ աւետարանն թէ՝ «*յիսուս* էր ամաց իբրև երեսնից. երկեալ ի մկրտութիւն»: - 484. Որ ստոյգ նոյն ծննդեան օրն իմանի. ապա թէ ոչ՝ պարտ էր ասել թէ «*յիսուս* էր ամաց իբրև լ և միոյ. սկսեալ ի ծննդենէն եկն ի մկրտութիւն»: - 484. Յերկրորդ ամին աստուածածինն տըպացաւ ի սեանն, և քառասնօրեայ մանուկն *յիսուս* ի գիրկն. և խաչ ծիրանի յերկոսին ձեռինն: - 485. Ո՞վ թլփատեաց *զյիսուս*: - 486. Ա՛րդ՝ խոնարհութիւնն քրիստոսի ցուցանի չորիւք որպէս ասէ աւետարանն «եկն *յիսուս* ի յորդանան առ յովհաննէս մկրտիլ ի նմանէ »: - 486. Նախ ասէ «եկն *յիսուս*». այսինքն տըւօղն փրկութեան և ոչ կարօտն փրկութեան: - 486-487. Զի ասէ աւետարանն, (իբրև մկրտեցաւ *յիսուս*՝ ել վաղվաղակի ի ջրոյն. և ահա՛ բացան նմա երկինք. և սուրբ հոգին իբրև զաղաւնի էջ ի վերայ նորա: - 487. Սեղան ողջակիզացն, և սեղան սրբութեանցն և սեղան խնկոցն. ամենայն քառակուսի նշանա՛կ են քառաթև խաչին *յիսուսի*: - 494. Զի որ ասի մահ, նոյն և նինջ կոչի ի սուրբ գիրս. ըստ այնմ թէ «աստուած զննջեցեալսն՝ ի ձեռն *յիսուսի* ածցէ»: - 496. Դարձեալ ասեմք, եթէ միով հպմամբ լանջացն *յիսուսի* մաքրեցաւ աշակերտն յայսպիսի կրից. քանի՞ առաւել բարձօղն ապականութեանց ազատ լիցի յայսպիսի կրից: - 502. Եւ այս հարցանելի է, զի թէ մագդաղենացին ընդ առաջին կանայսն եկն զոր մատթէոս պատմէ և համբուրեցին զոտն *յիսուսի*»: - 515. Իսկ որ ասէ սուրբն ստեփաննոս «*յիսուս* կայ ընդ աջմէ աստուծոյ», կալն նշանակէ իբր պատերազմակից և յօգնականութիւն գալ որք նահատակին վասն անուան նորա: - 521. Դարձեալ կարէ ասիլ Ութերորդ պատճառս, առ ի ցուցանել թէ հոգին ո՛չ ումեք առատապէս պարգևի, եթէ ոչ *յիսուս* ի սիրտ նորա յատկապէս փառաւորեսցի: - 522. Իւղ անոյշ յանուն *յիսուսի* հեղեալ ի վերայ քոյ կնիք երկնաւոր պարգևաց: - 593. Կնիքս այս որ յանուն *յիսուսի* լուսաւորեսցէ զաչս քո...: - 604. Եւ կինն պոռնիկ արտասուօքն թանայր զոտս *յիսուսի*: - 619. Նոյն սարասիւք այժմ ի ձեռն փրկչին մերոյ *յիսուսի*՝ տապանակաւ խաչին և աղօթիւք սուրբ եկեղեցւոյս՝ բարձրացեալ պարիսպն չարութեան եօթնից զգայութեանց մեղաց որոշօղ ի մէջ մեր և աստուծոյ, կործանեսցի ի սպառ: - 627. Եւ ապա՛ ի ձեռն *յիսուսի* արժանաւորքն մտանեն յարքայութիւնն երկնից և ժառանգեն զնա՛...: - 682. Ա՛յս է զոր պօղոս մեկնէ, թէ «ամենայն լեզու խոստովան լիցի տէր *զյիսուս*»: - 730. Որ եսդ տէր տէր հաւատարիմ *յիսուս*, անբաժանելի լեր ի զգայութեանցս. և յամենայն գոյացութեանց աստի իմոցս. ներկեալ խոստովանութեամբ և շնորհօք հոգի մարմին նիարդք իմ և աճառք: - 771

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ** - Իսկ յորժամ ամէն լեզու խոստովան լիցի տէր *զյիսուս քրիստոս*, անզրաւապէս թագաւորէ՛ ընդ հօր և տնտեսութեամբն: - 42. Որպէս ասէ առաքեալն՝ «աստուած տէրն մերոյ *յիսուսի քրիստոսի* և հայրն փառաց». այսինքն՝ աստուած վասն մարդկութեանն, և հայր փառացն որ է բանն աստուած ի բնութենէ հօրն ծնեալ անմարմին. որ յետոյ միաւորեցաւ ի մարմին: - 44. Զի՛նչ է որ ասէ՝ «զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ աստուած. և զոր առաքեցեր *զյիսուս քրիստոս*»: - 47. Իսկ և զինքն անուամբ յայտնէ թէ «*զյիսուս քրիստոս*»: - 47. Տէր է և որդի ըստ պօղոսի, «մեզ մի՜ է տէր *յիսուս քրիստոս*»: - 57. Երրորդ՝ սրբել զմարդիկ՝ միայն աստուծոյ է. որպէս ասէ ի ղևտացւոցն, «ես եմ տէր՝ որ սրբեմ զձեզ». այլ յառաջին կորնթացւոցն ասի, «սրբեցարուք և արդարացարուք յանուն *տեառն* մերոյ *յիսուսի քրիստոսի* և ի հոգին աստուծոյ»: - 57. Որպէս ասէ առաքեալն, «վասն այսորիկ դնեմ ծունր առ հայր տեառն մերոյ *յիսուսի քրիստոսի* բնակելոյ ի սիրտս մեր»: - 66. Ստէ՛ ուրեմն և առաքեալն. զի «*յիսուսի քրիստոսի*» ասէ: - 68. Իսկ թէ և զերկու բնութիւնն ասես տէր, ընդդէմ խօսիս առաքելոյն որ մի

ասաց զտէր մեր *յիսուս քրիստոս*՝ որպէս և զհայր: - 69. Ապա ուրեմն աստուած է տէր մեր *յիսուս քրիստոս*: - 70. Եւ առաքեալն ասէ՝ «նմա կրկնեսցի ամենայն ծունր երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց. և ամենայն լեզու խոստովան լիցի եթէ տէր է *յիսուս քրիստոս* ի փառս աստուծոյ հօր»: - 71. Երկրորդ՝ յառաջին կորնթացւոցն ասէ՝ «մի տէր մի *յիսուս քրիստոս*՝ որով ամենայն»: - 72. Երրորդ՝ ասէ ի փիլիպպեցւոցն, «զայն խորհեսցի իւրաքանչիւր ոք որ ի *քրիստոս յիսուս*՝ որ ի կերպարանս աստուծոյ էր»: - 72. Արդ բանն առանց մարմնոյն քրիստոս ո՛չ է. ապա ուրեմն յա՛յտ է զի միացեալ մարմնովն է՛ հաւասար և ի կերպարանս աստուծոյ տէր մեր *յիսուս քրիստոս*: - 72. Այսպէս և խոնարհագոյնքն են աստուծոյ բանին վասն միաւորութեանն. որպէս մարդ ծնանիլ ի կուսէ՛ ժամանակեայ. խաչիլ և մեռանիլ. որպէս ասէ առաքեալն՝ «*յիսուս քրիստոս* երէկ և այսօր՝ նոյն և յաւիտեան»: - 74. Եւ թէ՝ մի ասեմք զտէր մեր *յիսուս քրիստոս*. և մի զբնութիւն նորա. զի մի՛ է բնութիւն բանին մարմնացելոյ: - 76 - 77. Ըստ որում, «*յիսուս քրիստոս* երէկ և այսօր նոյն և յաւիտեան»: - 78. Իսկ «շնորհեաց նմա անուն» որ է՛ *յիսուս քրիստոս:* - 94. Եւ ո՞րպէս երկիր պագանեն նմա երկնաւորք և երկրաւորք և սանդարամետականք. և ամենայն լեզու խոստովան լիցի թէ տէր է *յիսուս քրիստոս* ի փառս աստուծոյ հօր: - 99. Քսանեերորդ՝ ասէ յաւետարանին յօհաննու, «Ա՛յս են կեանք յաւիտենից՝ զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ աստուած. և զոր առաքեցեր *զյիսուս քրիստոս*»: - 99. Ա՛րդ՝ եթէ ճանաչելն զաստուած հայր և *զյիսուս քրիստոս* կեանք է յաւիտենից, և մարդն քրիստոս ճշմարտութեամբ ո՛չ կարէ ճանաչել որպէս դուդ ասես: - 99. Եւ մեք զնոյն դաւանութիւնն պինդ կալցուք անշարժ յուսով ի կեանս և ի մահ և յետ մահու. և նորին խոստացեալ բարեացն արժանի լիցուք ի *քրիստոս յիսուս* ի տէր մեր: - 101. Եւ թէ՝ «*յիսուս քրիստոս* երէկ և այսօր». որ է ժամանակ. «նոյն և յաւիտեան»: - 115. Եւ նա՛խ է բանն աստուած, և յետոյ միացաւ ի մարմնի անբաժանելի. «*յիսուս քրիստոս* երէկ և այսօր նոյն և յաւիտեանս»: - 126. Որպէս և առաքեալն զկեանս իւր համարէր քրիստոսի. «կենդանի եմ ասէ, ո՛չ ես, այլ կենդանի՛ է *յիսուս քրիստոս*»: - 127. Եւ տէր մեր *յիսուսի քրիստոս* է՛ թագաւոր յաւիտենական. և արդարութիւն արար մեզ և հաշտեցոյց զաստուած ընդ մարդկան: - 301. «Գիրք ծննդեան *յիսուս քրիստոսի* որդւոյ դաւթի՝ որդւոյ աբրահամու»: - 304. Յորոց փրկեսցէ զմեզ և զամենայն հաւատացեալս անւան իւրոյ ի յաւիտենական և յանել տանջանաց հրոյն. և մասնաւոր աջակողմեան դասուն և ժառանգ արքայութեանն երկնից կացուսցէ *յիսուս քրիստոս* տէր մեր. որ է օրհնեալ յաւիտեանս Ամէն: - 317. ...ըստ այնմ «ունիմք քահանայապետ մեծ անցեալ ընդ երկինս զյիսուս զորդին աստուծոյ. և նմա կրկնի ամենայն ծունր. և ամենայն լեզու խոստովան լիցի զնա տէր *յիսուս քրիստոս* ի փառս հօր ամէն»: - 355. Կատարեցաւ Վեցերորդ Հատոր Հարցմանցս Հինգ Գրոցն Մովսէսի. ի Փառս *Յիսուս Քրիստոսի* Աստուծոյ մերոյ: - 412. Զի *յիսուս քրիստոս* երէկ և այսօր՝ նոյն և յաւիտեան: - 478. Երկրորդ՝ ասելն «է» նշանակէ՛ ըզմշտնջենաւոր գոլն. ըստ այնմ «*յիսուս քրիստոս* երէկ և այսօր նոյն և յաւիտեան»: - 487. Ուր արկեալ էր սատանայ զաթոռ իւրոյ իշխանութեանն. և անդ արգելեալ բանտէ՛ր զհոգիսն որ յադամայ. մինչ ի գնալ անդ անմահ թագաւորին մերոյ և աստուծոյ *յիսուսի քրիստոսի:* - 504. Ըստ այնմ՝ «ունիմք բարեխօս առ հայր *զյիսուս քրիստոս* զարդարն և զանարատն»: - 519. Հինգերորդ՝ զի խոստովանի ամենայն լեզու թէ տէր է *յիսուս քրիստոս* ի փառս հօր աստուծոյ բազմեալ: - 529. Զի՞նչ է հիմն որ եդեալ է *յիսուս քրիստոս*, և շինուածն ոսկի արծաթ և այլն: - 531. Քսանեթ, ի տեսիլն ասէ՝ «տեսի ի ներքոյ աթոռոյն զհոգիս սպանելոցն վասն բանին աստուծոյ և վկայութեանն *յիսուս քրիստոսի*»: - 694. ...ըստ այնմ «ա՛յս են յաւիտենական կեանք՝ զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ աստուած. և զոր առաքեցեր *զյիսուս քրիստոս*»: - 740. Զի «այս են ասէ կեանք յաւիտենական, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ աստուած, և զոր առաքեցեր *զյիսուս քրիստոս*»: - 763. Ասի ի գիրս սուրբս թէ՝ ի կատարածի յանուն *յիսուս քրիստոսի* ամենայն ծունր կրկնեսցի. և ամենայն լեզու խոստովանեսցի զնա աստուած: - 783

**ՅԻՐԱՒԻ +** Ապա թէ ոչ կամեսցին, *յիրաւի* պատժեսցին: - 19. Ուստի հեշտութիւն և աւանդութիւն *յիրաւի* խառնեալ ընդ միմեանս, և հակառակասիրութիւն և ինքնահաճութիւն յառաջ եկեալ, որով զինեալ պնդին ընդդէմ ուղղութեան. զի կարծեն զինքեանս ճշմարիտ գոլ քան զայլսն: - 33. *Յիրաւի*՛ ապա և նմա ասի շնորհել և տալ. եթէ զանուն և եթէ զիր: - 94. Ասեմք առ այս Նախ զառաքելոյն, եթէ «ամենայն որ մեղանչէ՝ արտաքոյ մարմնոյ իւրոյ է, իսկ որ պոռնկի՝ յիւր մարմին մեղանչէ». ապա ուրեմն *յիրաւի* ապականեալ մարմին ո՛չ մտցէ ի կարգ: - 166. Ուստի յա՛յտ է զի էրէցն երկրորդ ամուսնութեամբն ո՛չ կարէ քահանայագործել. *յիրաւի* և ապա պոռնկեալն էրէց կամ աբեղայ՝ ո՛չ կարէ

քահանայագործել. զի ուխտազա՛նց է: - 167. Նախ զի փրկական է խորհուրդն ամենեցուն. այլ անարժան մերձեցեալն կորնչի. *յիրաւի* արգելցի ի սպասաւորութենէն: - 167. Ապա ուրեմն ստուգապէս և *յիրաւի՛* է կանոնեալ սուրբ հարցն, զի զայնպիսին արգելցեն ի սպասաւորութենէ խորհրդոյն: - 167. Երկրորդ՝ պատասխանեմք թէ՝ *յիրաւի* որպէս մի է աստուած, և մի աշխարհ: - 179. Նա՛խ՝ զի յորժամ մարդն անհնազանդ եղև տեառն իւրոյ արարչին, *յիրաւի* անհնազանդք եղեն և մարդոյն անասունք տուեալ նմա ի ծառայութիւն: - 220. Իսկ բարոյականն այս ինչ է. զի զպատկերն արարչական և զառաջին կենաց դրախտին կորուսաք, և զանասնեղէն պատկերն և զերկրորդ և զախտաւոր կենաց ընտրեցաք. *յիրաւի* շրջեցաւ ի մեզ և լինելութիւն հոգւոյն: - 258. Ոմանք ի վերայ մարդոյս մեկնեն զտապանն և *յիրաւի*. զի տապանն ունէր զբոլոր աշխարհս. և մարդն մասն է աշխարհի. պա՛րտ է զի մասն նմանեսցի բոլորին: - 293. Հինգերորդ՝ զի ունի զվերոյ ասացեալն խորհուրդ տասնեակ թւով. վասն որոյ *յիրաւի* անդրանիկն պատուեալ լինէր թէ ի հոգևորն և թէ ի մարմնաւորն: - 310. Տասներորդ՝ յորժամ եկն հեզութեամբ լսէր ի նմանէ. իսկ զայս ամենայն համեմատելով ի վերայ հրէիցն՝ *յիրաւի* ուրեմն դատապարտեսցէ զնոսա ի դատաստանի: - 442. Ութերորդ՝ զի մի՛ հրէայքն համարելով զքրիստոս ո՛չ ունելով օրինաւոր ծնունդ՝ երևեսցին *յիրաւի* ի հալածելն զնա: - 461. *Յիրաւի* ապա տէր մեր զգին արեանն ի հայր ետ. քեպէտ սատանայ էր գերեալ և չարչարէր զմարդիկ: - 492. Եւ այս *յիրաւի* իսկ. զի որ հայեցաւ ցանկական մտօք՝ ի կամս իւր գործեաց զմեղս: - 556. Ա՛րդ՝ մեղքն որ ընդ դէմ հոգւոյն սրբոյ՝ մանաւանդ ելանէ ի չար կամաց անձնիշխանականին. և ուղղակի մարտնչի ընդ դէմ շնորհաց հոգւոյն սրբոյ. և *յիրաւի* անթողլի՛ է: - 566. ...և զրկէին զզօրութիւն հոգւոյն զորմէ ասաց քրիստոս, թէ «հոգւովն աստուծոյ հանեմ զդևս». և նոքա դիւաց տային. *յիրաւի* ոչ թողցի նոցա: - 566. Հինգերորդ՝ նման սատանային լինին որք ուրանան զպատճառն գոյութեան հոգոց իւրեանց. *յիրաւի* ապա որպէս սատանայ ո՛չ ունի թողութիւն ի կենաց յայս և ո՛չ ի հանդերձեալն և գործ ունէի նմին: - 566. *Յիրաւի* որք ո՛չ հաւատան թողութեան խոստովանութեան, ո՛չ թողցի նոցա աստ կամ անդ: - 566. Ապա ուրեմն *յիրաւի՝* զի բնական արդարութիւն ի տղայն ո՛չ գտանի, յարդարութենէն աստուծոյ արդարապէս մերժի և ընդ անիրաւսն տանջի: - 591. Զի թէ յօրինեալ հացէն այլոցն ամենեցուն ցամա՛ք էր տուեալ և նորա թաց, պատճառ լինէր մատնութեանն յուդայի. և *յիրաւի*: - 599. *Յիրաւի* ապա այսպիսի խոստովանութիւնս կատարելապէս թողու զմեղս և զպատիժս...: - 603. Եւ *յիրաւի* նախ ջրով. զի յայնժամ ջերմացեալ էին մարդիկ ի ցանկութիւն մեղաց, վասն որոյ ջրով պատժեցան: - 731. ...*յիրաւի* է ուրեմն որում անիրաւութիւնն եղև առնել դատաստան վասն վրիժու. քեպէտ նմա հայր և հոգին սուրբ գործակից լինին: - 735. Ապա ուրեմն *յիրաւի* և արդարապէս հատուցանէ աստուած չար փոխանակ չարեաց. այսինքն պատիժ վասն անիրաւութեան նոցա. զի արդար է աստուած: - 744. *Յիրաւի* ապա ըստ այսմ օրինակի՝ որք ի մշտնջենաւորէն փոխանցին առ երազ սնոտեաց, ոչ ունիցին ինչ ի մտի. թէ և անդրադարձեալ աստի անդ մնասցէ յիշատակութիւն որպէս ասացաւ: - 775. Եւ *յիրաւի* այս. զի այն ոք որ առնէ զոր ինչ ոչ է պարտ, յիրաւապէս կրեսցէ զոր ինչ պա՛րտն է. զի մեղքն է առնել, իսկ պատիժն է՛ կրել: - 776. Ասեմք թէ՝ *յիրաւի*, որովհետև երևեցաւ տէր մեր ի փրկութիւն ընտրելոց ըստ ամբակումայ, նախահայրն յաւիտեան. իսկ այլք ազատեցան ժամանակեայ: - 777. Ապա ուրեմն *յիրաւի*, զի որք առաւել եղեն մեղօք, առաւելասցին և պատժօք: - 777. *Յիրաւի* դարձեալ՝ դարձցին յետոյ ի պատիժս անձնիշխան կամաց ներգործական մեղաց: - 778. *Յիրաւի* ընդ բառնիլ շաղկապին, բառնի և կապակցեալն նմին: - 782

**ՅՂԱՆԱԼ +** Իսկ թէ վասն է՞ր ասիցէ ոք՝ *յղացեալ* մնան յարգանդի՝ մարդն ինն ամիս, և այլ կենդանիք աւելի և կամ պակաս: - 262. Այսպէս և կենդանիք ոմանք երից ամաց *յղանան* և ծնանին: - 262. Զի՞նչ է որ ամենայն ծնունդ թէ տունկք թէ կենդանիք՝ նախ *յղանան* և ապա ծնանին: - 267. Նոյնպէս և *յղանալն* հանդերձեալ է, և վախճանեալ անցեալն, որ ո՛չ երևին. այլ միայն ծնեալն երևի որ է՛ ներկայ: - 267-268. Ոմանք ասեն թէ խեղդեցաւ ի ջուրն. և ընդ բերանն *յղացեալ* էր զուգակիցն: - 294. Վեցերորդ՝ ուրախութեամբ *յղացաւ* սառա. ըստ որում «ծիծաղեցաւ»: - 307. Նա՛խ՝ մարմնական. որպէս *յղացեալ* մանուկն ծնանի ի մօրէ՛: - 308. Երկրորդ՝ հոգեկան. որ յաւազանէն ծնանիմք ի հոգւոյն սրբոյ. այսինքն *յղացեալք* ի բանէն հաւատոյ՝ ծնանիմք յորդիս աստուծոյ: - 308. Երրորդ՝ ըստ առաքինութեան ի պատուիրանէն տեառն *յղացեալք*, և ծնանիմք առաքինութեամբ զփրկութիւն հոգւոյ»: - 308. Հինգերորդ՝ ըստ բանի՝ *յղացեալք* խոհեմութեամբ և ծնանիմք զիմաստութիւն: - 308. Վեցերորդ՝ ըստ արուեստից՝ *յղացեալք* հանճարով, ծնանիմք զգործս: - 308. Ութերորդ՝ ըստ մեղաց. զի սերմ առեալք

ի սատանայէ՛ *յղանամբ* զցաւս և ծնանիմք զանօրէնութիւն: - 308. Իններորդ՝ ըստ փոփոխման ասի. զի *յղացեալ* ունիմք զմահ անդստին. և ի վախճան մերձեալ հասանէ երկն ցաւոց. և բաժանեալ հոգին ծնանի ի մահ: - 308. Երկրորդ, կոյսն մարիամ յարմատոյն յեսսեայ՝ *յղացաւ* և ծնաւ զբանն աստուած մարմնով: - 382. Իսկ զչորրորդ սրբութիւնն որ է՛ միաւորութիւն բանականին առ աստուած, և միշտ ներգործապէս դիմել առ աստուած որպէս հրեշտակք. ընկալաւ աստուածածին կոյսն ի *յղանալն* զորդին աստուծոյ: - 463. *Յղացեալ* առանց ծանրութեան: - 469. Այլ և ո՛չ յառաջ քան *զյղանալն* օծաւ. զի սրբիլ և առաքիլ և իջանել յերկնից ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ մարմին լինիլ և մարմնով երևիլ բանին: - 475. Այլ մեք այսպէս խոստովանիմք. եթէ օծաւ բանն աստուած ի հոգւոյն սրբոյ յորժամ *յղացաւ* մերովս կերպիւ յորովայնի»: - 475. Զի *յղացեալ* էր ի գերեզմանին թաղէոսի. և սնաւ անդ՝ ուր առաքեալն սկսաւ քահանայագործել. և փոխեաց յինքն զշնորհս նորա անդր եղեալ եպիսկոպոս: - 548. Առաջինն հաւատալ զորդին աստուծոյ *յղացեալ* ի հոգւոյն սրբոյ: - 573. Դարձեալ՝ յոյսն է ունակութիւն մտաց *յղացեալ* յառատութենէն աստուծոյ. ունելով կեանս յաւիտենական՝ բարի արդեամբք: - 574. Զի առանց կոփելոյ էր առաջին տախտակն աստուածագիծ. և կոյսն առանց սերման *յղացաւ*: - 639. Անդ ի քունն ձայն լսէ թէ՝ կին դու *յղասցիս* մեծ ոմն: - 706. *Զյղանալն* ապականութեամբ և կուսութեամբ ասեն. թէ ի ներքինեաց առանց խառնելոյ ի ներքս անցեալ յղութիւն առնէ: - 706. **Եւ այլ վարդապետք ասեն եթէ, նեռն *յղանայ* ի սերմանէ և ծնցի ի բոզէ՛:** - 706. Զոր օրինակ ո՛չ էր բնութեանս անսերմ *յղանալ* և կուսութեամբ ծնանիլ, զոր բանն աստուած սքանչելապէս ներգործեաց: - 733. Զի այսպէս ասեն վարդապետք՝ թէ յորժամ *յղանայ* ոք ի միտս իւր զխորհուրդ մեղացն, ի սատանայէ՛ սերմն առեալ որպէս կին յառնէ. և ի ծնանիլ մեղացն՝ ծնանին և որդունքն ի հրեղէն ծովն որ է՛ ի հարաւ: - 753

**ՅՂԱՑՈՒՄՆ +** Այս է *յղացմամբ* յարգանդի և ծննդեամբ. և քարոզութեամբ. և մահուամբ. և յարութեամբն և համբարձմամբն առ հայր՝ իբր զպսակ տարւոյ կատարեալ բնութեամբ մեր՝ ի ներքին կողմն վարագուրին մտեալ: - 126. Եւ զի շարժին կենդանիք ի *յղացումն*, և սեաւ մաղցք առաւելուն ի մեզ: - 197. Քսանեւ՝ Թէ խառնին սերմն կենդանեաց. և պատճառ *յղացմանն*: - 228. Ի ժամ *յղացմանն* եթէ ի ծնողացն՝ եթէ ի ժամանակէն՝ և եթէ յախտից՝ որ տարր և յաւելու ի խառնուածն, նոյն որակ գունով ծնանի զաւակն: - 245. Դարձեալ **ժ**երորդ՝ աստեղագէտք ասեն թէ *յղացումն* ամենայն մարդոյ Զօհալին է. և յիւրաքանչիւր մոլորակս ամիս մի թուեալ՝ լինի ծնունդն ի մուշթարին **թ** ամիս: - 264. Դարձեալ՝ զկարգ *յղացման* յարգանդին պահէ՛ աստ և ի ծննդեանն. այսինքն զսննդեան և զգայութեան և զբանի ներգործութիւնս այսպէս: - 266-267. Տասներեք՝ Ո՞րքան է *յղացումն* և ծնունդ: - 283. Ո՞րքանաբար է *յղացումն* և ծնունդ: - 308. Տասներորդ՝ վերջին և կատարեալ ծնունդ յարութեանն. զի մահ մարմնոյս է՛ սկիզբն և *յղացումն* յարութեան: - 308. Նոր կուժն ի խորհուրդ աստուածածին կուսին. որ նո՛ր էր *յղացումն* և անապական ծնունդ: - 445. Տասներորդ, յա՛յտ է ի սքանչելեաց ծննդեանն. զի անսերմն *յղացումն*. և անապական ծնունդ. և անխախտ կուսութիւն: - 466. Ասեմք եթէ յետ *յղացման* բանին յարգանդի կուսին օրինօք և ոչ օրինօք բնութեան, ժուժկալեալ ամսոց ըննից և աւուրց հնգից, ըստ հասարակաց ասեմ և անդրանկաց. ըստ հնգից յաւելեալ թւոց նախաստեղծին նախարարչութեան աւուրց: - 469. Զի *յղացումն* տն ո՛չ եղև ի սերմանէ առն: - 470. Նա՛խ՝ զի սկզբնական արդարութեամբ ծնաւ. և պատճառի անսերմն *յղացումն*: - 473. Զի հերձուածօղք ոմանք օծեալ ասեն զքրիստոս յառաջ քան *զյղացումն*: - 475

**ՅՂԻ +** Թէ *յղի* կին մկրտի՝ օգո՞ւտ է այն տղային թէ յարգանդ մօրն մեռանի: - 592

**ՅՂՈՒԹԻՒՆ +** Եւ կամ որպէս *յղութիւն* հարկ է զծնանիլն: - 36. Երկրորդ՝ ի *յղութեան* մինչ յորովայնի լինի՝ մի՛ զենցես ասէ: - 399. Եւ սքանչելիք *յղութեանն* և նշանացն քրիստոսի: - 454. Չորրորդ՝ զի անկասկած լիցի ամենևին և անկարծ ի չարեաց զատուցեալ սուրբ կոյսն. ի ձեռն հրեշտակին աւետարանել *զյղութիւնն*. և ո՛չ ի ձեռն մարդոյ: - 463. Զի՞նչ է սքանչելիք *յղութեանն*: - 469. Դարձեալ ի սկիզբն *յղութեան* անդ բանական հոգւով գիտաց զամենայն միաւորեալ ընդ բանին: - 470. Նա՛խ՝ անսերմն *յղութիւնն*: - 471. Առնեն ի սեպտեմբերի իէ զպապանձումն զաքարիային. և ի նմին աւուր *զյղութիւնն* եղիսաբեթի: - 483. Եւ *յղութիւնն* եղիսաբեթի յաւուր շաբաթու ի լուսանալ **ժ**երորդ ամսոյն որ է թշրինի **իգ**: - 483. Չորրորդ՝ զի որ յամսեանն զերորդի հրեշտակապետն եկն առ կոյսն, ի *յղութենէն* եղիսաբեթի ասաց գոլ **զ** ամիս, և ո՛չ յաւետեացն: - 483. Զի անսերմն *յղութեամբ* և ի սրբեալ յարենէ կուսին գոյացաւ մարդ: - 485. Զյղանալն ապականութեամբ և կուսութեամբ ասեն. թէ ի ներքինեաց առանց խառնելոյ ի ներքս անցեալ *յղութիւն* առնէ: - 706. Սակայն ի *յղութեանն* իջանէ չար հոգին ի

յորովայն մօրն. և նմա զօրութեամբն և ներգործութեամբն ծնանի մանուկն և սնանի և հասանէ յերիտասարդութիւն. - 706

**ՅՈԲ** - Վեցերորդ՝ է՛ պատրուակ մեղացն. զի ոմանք չար գործով ի բաց մերժեն յինքեանց զլոյս արեգականն արդարութեան. զորոց ասէ *յոբ*...: - 32. Երկրորդ՝ ասեն թէ՝ ի լինիլ աստեղաց՝ հրեշտակք օրհնեցին զաստուած ըստ *յոբայ*: - 147. Նախ՝ զի զծածուկ առաքինութիւն արդարոյն յայտնի արասցէ այլոց ամենեցունց. որպէս *զյոբայն* և զաբրահամոյն...: - 158. Եւ այսպէս աբրահամ և *յոբ* և այլք սուրբք փորձութեամբն երևեցան, և գտան արդար և սուրբ և անարատ: - 161. Թէ հիւանդանայ, փառաւորէ՛ զաստուած որպէս *զյոբ*: - 178. Առաջինն խոհեմք և իմաստունք բնականապէս. որպէս նահապետքն առաջինք. աբրահամ. իսահակ. յակոբ. *յոբ*. կուռնէլիոս. և այլքն: - 269. Քսանբ, Վասն *յոբայ* զանազան հարցմունք: - 283. Համբերողն *յոբ* յորո՞ւմ ժամանակի էր, և կամ յո՞ր ազգէ: - 320. Երանելին *յոբ*՝ էր ի ժամանակս մովսէսի. **Ճ** ամաւ յառաջ՝ աւելի և կամ պակաս: - 320. Այսպէս. աբրահամ. իսահակ. եսաւ. ռագուէլ. զարեհ. *Յոբ*: - 320. Եւ նախ կոչիւր յոբաբ, որ է՛ սիրելի աստուծոյ. և կոչեցաւ *յոբ*, որ է՛ հայր. զի հա՛յր եղև համբերութեան: - 320. Ո՞վ գրեաց զգիրն *յոբայ*: - 320. **Զի ասեն թէ՝ *յոբայ* հէճուպն ի պարսիկս փախեաւ, և անդ զրոյց ետ որ գրեցին իւրեանց գրովն. և սողոմոն բերել ետ և սրբագրեաց:** - 320. Այլ սքանչելին *յոբ*՝ էր նախքան զօրէնս՝ և գրեցաւ յետ օրինացն: - 321. Այլ ինքեանք լինին հուր և հողմ. զի «հրեշտակք լուսոյ կերպարանին» որպէս ասէ առաքեալն, առ ի վնասել մարդկան. որպէս ի վերայ տանն *յոբայ* արարին: - 321. Զի՞նչ է որ որդիքն *յոբայ* պատուէին զօր ծննդեան իւրեանց ի միասին ժողովիլով: - 321. Վասն որոյ ի ծննդեան աւուրն ժողովին և օրհնեն զաստուած և մարմնով ուրախանան. որպէս *յոբայ* ուստերքն և դստերքն միաբանեալ գային և ուրախ լինէին գիրն: - 321. Վասն է՞ր *յոբ* յետ խրախութեանն **Ժ** պատարագաւ սրբէր զորդիսն. և մի զուարակ վասն մտաց մեղացն մատուցանէր: - 322. Վասն այն *յոբ* **Ժ** պատարագաւ սրբէ՛ր զԺ մասնաւոր մեղսն որ գտանին յարբեցութեան. և մին զուարակն ի սրբութիւն վասն ակամայ և խորհրդոյ մեղացն: - 322. Որդիքն *յոբայ* որք մեռան արդա՞րք էին թէ ոչ: - 322. Ո՞րքան էր փորձութիւնք *յոբայ*: - 322. Նա՛խ՝ գուժ լծոց եզանցն՝ և սպասաւորացն մահ. և գուժկան ձևանայր դև մի ի կերպարանս ծառայիցն *յոբայ*: - 322. Վասն է՞ր *յոբ* նստաւ յաղբիւսն: - 322. Վեցերորդ՝ ի խորհուրդն ադամայ որ անկաւ յերկիր փշաբեր, անկաւ *յոբ* յերկիր և յաղբիւս: - 323. Արդ՝ առաջինն և վերջինն վայելչակա՛ն է *յոբայ* և աստուծոյ. իսկ միջին երկուքն բարեկամացն *յոբայ*, և չար բանսարկուին յարմարի: - 323. Դարձեալ գիտելի՛ է, զի *յոբ* կրկնելով զբանսն՝ ուղղէ՛ր զբարեկամսն և ընկրկէ՛ր զսատանայ. զի այսպէս ամենայն ոք կարէ՛ յաղթել սատանայի յորժամ զընկերն ուղղէ ի բանս կամ ի գործս կամ ի հաւատս և յայլսն. յայնժամ սատանայ թիւրի և հեռանայ: - 323. Դարձեալ՝ **բ** իրօք յաղթեաց *յոբ* զսատանայ. գոհութեամբ բանի՝ և համբերութեամբ գործոյն: - 323. Եւ թէ որ ասիցէ՝ ունէր զայս *յոբ*. վասն է՞ր մերձեցաւ ի նա: - 324. Վասն է՞ր այնչափ հակառակեցան բարեկամքն ընդ *յոբայ*: - 324. Նախ՝ զի շարժեալք էին ի բանսարկուէին. որպէս երբեմն ի ձեռն կնոջն. և յայնժամ բարեկամօքն մարտնչէր ընդ *յոբայ*: - 324. Երկրորդ՝ զի կամէին սուտ առնել զվկայութիւնն աստուծոյ վասն *յոբայ*. թէ այր արդար և անարատ է: - 324. Չորրորդ՝ կամէին զինքեանս արդա՛ր ցուցանել, և յանցաւոր *զյոբ*. և վասն այսմ կարգէին ընդ *յոբայ*: - 324. Իսկ երանելին *յոբ* չորիցս այսոցիկ ընդդիմամարտէ՛ր և պատասխանի առնէր: - 324. Վասն երրորդին ասէր *յոբ* զբարի և չար գործոց հատուցմունքն լինիլ առհասարակ յետո՛յ ի հանդերձեալն...: - 324. Այսինքն նոքա կամէին որ զնոսա արդարս ասէր *յոբ*՝ և զինքն յանցաւոր՝ և ո՛չ ասաց...: - 324. Նա՛խ՝ զի թէպէտ ի դէմս *յոբայ* սուտ էր խօսք նոցա, այլ ի դէմս ամենայն մեղաւորաց ճշմարի՛տ է: - 325. Սոյնպէս բարեկամք *յոբայ* թէպէտ շարժեալք էին ի բանսարկուէն, այլ աստուծոյ հոգւովն զօգտակարսն բարբառէին. վասն այն գրեցան բանք նոցա ի սուրբ գիրս: - 325. Վասն է՞ր այնչափ դիմամարտս յարուցանէր բանսարկուն ի վերայ *յոբայ*...: - 325. Վասն է՞ր թոյլ ետ սատանայի մարտնչիլ ընդ *յոբայ*: - 325. Վասն է՞ր աստուած խօսեցաւ ընդ *յոբայ*: - 325. Հինգերորդ՝ ըստ առաջին կարգին դարձեալ ասացին բարեկամքն *յոբայ*՝ թէ հաճո՛յ ես աստուծոյ՝ լուիցէ և խօսեսցի աստուած. վասն այն առաջի նոցա խօսեցաւ և վկայեաց: - 326. Երկրորդ՝ ի նշան քաղցրութեանն *յոբայ*. ուստի իջանեն անձրևք: - 326. Վասն է՞ր կրկին վկայեաց *յոբայ*: - 326. Նախ՝ զի զառաջին վկայութիւնն *յոբայ* անմարմինքն իմացան. դարձեալ վկայեաց՝ զի լուիցեն մարդիկք: - 326. Ուստի՞ աճեցին ըստացւածքն *յոբայ:* - 326. Որ լինի բովանդակ կեանքն *յոբայ* **բճխը** ամ: - 327. Եւ որք **լը** ասեն զփորձանսն՝ սոյնպէս թուեն. յետ հարւածոցն եկաց *յոբ* **բ** եօթանասուն. այսինքն **ճխ** ամ: - 327. Ո՞րպէս էր *յոբ* օրինակ հնոյն ադամայ և նորոյն: - 327. Երկրորդ՝ զի թոյլ տուաւ

փործողին մարտնչիլ որպէս ընդ ադամայ՝ այսպէս ընդ *յոբայ*: - 327. Նա՛խ՝ զի յաղթեաց փործողին որպէս *յոբ*՝ նոյնպէս և տէր մեր: - 327. Երկրորդ՝ զի դէտ եղև *յոբ* համբերութեան և տէր մեր կատարման...: - 327. Երրորդ՝ խոնարհեցաւ *յոբ* ի պատւոյն. և տէր մեր էջ ի յերկիր և վասն մեր աղքատացաւ: - 327. Չորրորդ՝ *յոբ* կրկին վկայեալ յաստուծոյ արդար և անարատ. և տէր մեր երկիցս վկայեալ ի հօրէ «դա՛ է որդի իմ ընտրեալ»: - 327. Վեցերորդ՝ հարուածս կրեալ *յոբ* ի բոլոր մարմինն. և տէր մեր ի ձեռս և յոտս և ի կողս. որ և փշով պսակեալ ապտակեալ և գան հարեալ: - 327. Եօթներորդ՝ *յոբ* ի բարեկամացն նախատեալ. և տէր մեր յազգէ իւրմէ չարչարեալ և չարախօսեալ: - 327. Ութերորդ՝ *յոբ* ո՛չ անիծանէր, այլ աղօթիւքն զբարեկամսն փրկէր. և տէր մեր ի վերայ խաչողացն աղօթէր: - 327. Իններորդ՝ *յոբայ* մարմինն նորոգեցաւ յետոյ. և տէր մեր խաչիւն նորոգեաց զպատկերն ադամայ և զծննդոց նորա յարութեամբն իւրով: - 327. Տասներորդ՝ կրկին եղև կեանքն և պատիւն *յոբայ*. և տէր մեր ել ի փառս առաջին և նստաւ մարմնով ընդ աջմէ հօր: - 327. Եւ այլն ամենայն բանք և գործք *յոբայ* ի տիպ օրինակի էր նորն ադամայ չարչարանաց թաղման և յարութեան որպէս յա՛յտ է ի գիրս պատմութեան նորա: - 327. Այսքան ի կարճոյ վասն *յոբայ*: - 327. Սիրաք. և *Յոբն*. որ լինի լ: - 450. Որոց առաջինն *Յոբ*: - 451. Ի վեց իրաց գլխաւորօրէն փրկութիւն ներգործեաց. ըստ *յոբայ* վեցիցս փրկեցաք նովաւ: - 473. Զի՞նչ է «զգլուխ վիշապին ջախջախեաց ի յորդանան» որպէս ասէ *յոբ*: - 488. Դարձեալ՝ վիշապն ի յորդանան էր բունեալ. որպէս ասէ *յոբ* «բեհմովթն ննջէ՛ ի գիճային տեղիս. և զջուրս յակնակապիճս իւր ընդունի». այսինքն ի գէճ ցանկութիւնն: - 489. *Յոբ* միայն համբերօղ, և ազգն բազում: - 551. Երրորդ, զլաւ մարդն աղքատացնէ և փործէ, թէ վասն ընչի՞ցն սիրէր զաստուած՝ թէ յաղքատութեանն այլ նոյնպէս է. որպէս *յոբայն*: - 664. Երրորդ հիւանդութիւն է ընտրելոց, զի փո՛րձ երևեսցին ի յամօթ չարին. որպէս *յոբայն*: - 665. Դարձեալ, մերկ եկն և մերկ գնայ ի մարմնոյ զգեստու որպէս ասէ *յոբ*: - 671. Զի զգլուխ վիշապին ի ջուրսն յորդանանու ջախջախեաց ըստ *յոբայ* որ է մեղքն...: - 705. Չորրորդ, երկինք և երկիր. ըստ *յոբայ*՝ յայտնեսցեն երկինք զանօրէնութիւնս նորա...: - 743. Երեք կարգս այսոքիկ գուշակեին երեքումբք արամբքն զորս եզեկիէլ մարգարէացաւ. փրկելոցն Նոյիւ *Յոբաւ* և Դանիէլիւ: - 755. *Յոբաւ*՝ ժուժկալողացն: - 755. Երրորդ անդուստ՝ զի իբրև նոքա որ այն քան տկարքն էին՝ սակայն յա՛յնպիսի թշնամին այն քան յաղթութիւնս գործեցին ըստ *յոբայ*: - 765

**ՅՈԲԱԲ** - Եւ նախ կոչիւր *յոբաբ*, որ է՛ սիրելի աստուծոյ. և կոչեցաւ յոբ, որ է՛ հայր. զի հա՛յր եղև համբերութեան: - 320

**ՅՈԲԵԼԵԱՆ +** Յինգերորդ՝ *յոբելեանն* յիսներորդում. որ է՛ ամ թողութեան և ազատութեան: - 372. Զի **ծ** ամն *յոբելեան* է և ազատութեան. որ ազատի մարդ յախտից և յախտաւոր սիրոյ աշխարհի՝ և առ աստուած դառնայ: - 378

**ՅՈԲՆԱՂ** - Եւ գլուխ ժողովոյն էր սուրբն Դէոսկորոս աղէքսանդրացի: ...*Յոբնաղ* երուսաղէմի: - 542

**ՅՈԳԷՅԱՆԳԻՍՏ** - Իսկ յօրինակն խառնեմք աղ. որպէս յագապս. *յոգէհանգիստս* և ի տօնական պատարագս: - 356

**ՅՈԳՆԱԳՈՅՆ +** Եւ եզով միաբանութիւն. մասամբ և ո՛չ *յոգնագոյնս:* - 554

**ՅՈԹՈՐ** - Եւ սեփովրա դուստր էր ռագուէլի, և քոյր *յոթորայ*. յազգէ աբրահամու ե երորդ այսպէս: - 330

**ՅՈԼՈՎ +** Ա՛րդ՝ ըստ որում *յոլովք* են բազումք, ուրեմն և միակք: - 26. Եւ *յոլովք* ի գիտողացն ասացին, թէ հաւատք զնեստորին հաստատէք զնա ընդէ՞ր նզովէք: - 543. Եւ այլք զոն *յոլովք*: - 553. Եւ այլք զոն *յոլովք*. զի յորժամ պարապով ոք քննիցէ գտանէ: - 553

**ՅՈԼՈՎԱԳՈՅՆ +** Երկրորդ՝ որպէս *յոլովագոյնն*. ըստ այնմ «ո՛չ կարէ քաղաք թագչել որ ի վերայ լերին կայցէ»: - 44

**ՅՈԼՈՎՈՒԹԻՒՆ +** Տասներորդ՝ թէ բանն աստուծոյ և հոգին արարա՛ծ են և այլ բնութիւն, յայնժամ ո՛չ լինի մի աստուած. այլ բազում և զանազան աստուած. զի *յոլովութիւնն յոլովութիւն* է աստուծոյ. որպէս թէ երեք բնութիւնն երեք աստուած, և երկու բնութիւնն երկու աստուած: - 56

**ՅՈՅԺ +** Այլ զայսպիսի ի միում գոյութեանն *յոյժ* յիմարութիւն է կարծել կամ ասել: - 62. Իսկ եթէ բոլոր, այս լինի կամ **բ** հոգի որպէս ասացաք, կամ աւելորդ գոյ բղխումն որդւոյ որ է *յոյժ* հայհոյութիւն: - 63. Վեշտասաներորդ՝ մանաւանդ զի *յոյժ* անվայելուչ է կարգել զծառայն ընդ տեառն՝ և զստեղծուածն ընդ ստեղծողին՝ յորժամ ա՛յլ է բնութեամբ: - 67. Իսկ ըստ միութեան *յոյժ* վայելչապէս: - 94. Նախ՝ եթէ անեղ է աստուած՝ ըստ որում անսկիզբն և անեղ էին արարածք ըստ անգոյին՝ կարգաւո՛ր է և *յոյժ* որպէս

դու ասացեր. զի անեղ էն աստուած յառաջ էած զանեղն ի յէութիւն: - 113. Եւ որովհետև ծանեաք զայս, պատասխանե՛մք ասելով՝ եթէ կարգաւո՛ր է և *յոյժ*: - 114. Իսկ առ չարն *յո՛յժ* ազդողակա՛նք են. այլ ո՛չ այնքան որչափ և կամին. այլ որքան իբր ի հրեշտակաց թոյլ տացի: - 149. Նախ՝ զի թեթև է ամպն այն. վասն որոյ *յոյժ* բարձրացեալ է: - 206. Եղունկն *յոյժ* կարճ՝ նշանակէ զչարակամն: - 247. Ոտք ստուար և կարճ, *յոյժ* տկարի է: - 247. Իսկ հերն կիսասև և ոչ *յոյժ* բարակ՝ զբարեբարոյն և զբարի կազմուածն ցուցանէ: - 248. Եւ թէ ասիցէ ոք, երևի ապա թէ առաջին զօրութիւն հոգւոյն տնկականն է՝ և վերջին բանականն որ է՛ *յոյժ* անպատշաճ: - 260. Եօթն տեղիս *յոյժ* անարգեցաւ: - 454. Իսկ յովակիմ արդարն էր ի թագաւորական ցեղէն յուդայի **լը** երորդ ի թոռանց նաթանայ որդւոյն դաւթի փառաւոր և մեծատուն *յոյժ*: - 460-461. Զի զսմանէ՛ ասեն աւէ աւետարանիչն յոհաննէս՝ «ի մէնջ ելին զի ո՛չ էին ի մէնջ». և կարի *յոյժ* ստեն նոքա: - 482. Վեցերորդ՝ մկրտութիւն որ ապաշխարութեան է և արտասուաց և *յոյժ* տաժանելի: - 488. Եօթներորդ՝ արեամբ և վկայութեամբ. զոր և ինքն քրիստոս մկրտեցաւ վասն մեր իբրև *յոյժ* գովելի և երանելի այս մկրտութիւնս քան զառաջինսն: - 488. Ի քանի՞ տեղ *յոյժ* անարգեցաւ քրիստոս ի ժամ չարչարանացն: - 492. Յեօթն տեղ *յոյժ* անարգեցաւ: - 492. Հինգերորդ՝ ածաւ առ հերովդէս. և ի հրէից *յոյժ* չարախօսեալ. և սպիտակ հանդերձ զգեցեալ առ ի նախատինս: - 492. Խորութիւն հաւատոյ. որ *յոյժ* իմաստուն և խոնարհ է: - 493. Երրորդ վասն այն արգել, զի ցուցանէ թէ *յոյժ* պատուեցաւ մարմինն այն և ո՛չ է համարձակելի որպէս յառաջն մաքսաւորք և պոռնիկք մերձենային: - 517. Եւ յովսէփ փալանացի, և եզնակ կողբացի թարգմանիչք, դարձեալ էին յաթենայ և եկեալ ի կոստանդնուպօլիս. լուան զժողովոյն և գնացին ի քաղկեդոն. զի չէր *յոյժ* հեռի ի ճանապարհէն որով գային ի հայս...: - 543. Սրբութիւն սրտին է որով պայծառանայ և մաքրի սիրտն առ ի տեսանել զաստուած. և առ ի սիրել *յոյժ* ջերմ եռանդապէս: - 585. Եւ թէ իցէ ինչ՝ անզօ՛ր է. ապա յա՛յտ է զի խաղաղութիւնն է *յո՛յժ* մաքրեալ հոգւոյն: - 585. Օրհնեա՛ անձն իմ զտէր. տէր աստուած իմ մեծ եղեր *յոյժ*...: - 630. ...զոր վասն *յոյժ* ժտելոյն՝ յարուցեալ միտքն տացէ զխոստովանութիւն հաւատոյ սուրբ Երրորդութեանն. զոր յերիս նկանակս յառակեաց: - 697. Նոյնպէս և մարմինք մարդկան մերկ թաղին՝ այլ մերկ ո՛չ յառնեն. բայց գեղեցիկ *յոյժ* և պատուական զգեստով զարդարեալ: - 721. ...և երկոքեան սոքա կարի *յոյժ* վայելեն դատաւորի. այսինքն իմաստութիւն և անմեղութիւն. վասն որոյ քրիստոս լինի դատաւոր: - 735. Երրորդ այնու՝ զի մեղքն որ *յոյժ* վտանգեաց զմարդիկ...: - 764. Արդարև ուրախութիւն է *յոյժ* յայսմ ազատութեան...: - 764. Այսպէս և ի նաւորդսն զկնի վշտաց նաւաբեկութեանն ցնծան *յոյժ.* վասն զի երկեա՛ն *յոյժ*: - 765

**ՅՈՅՆ +** Զարթիր ի *յոյնս*, տալով մեզ զմակաբայեցիսն: - 28. Բայց սոքա և *յոյնք* իւրեանց ամսամտօք ո՛չ վարին. այլ ծառայաբար զհետ երթան այլոց: - 201. Իսկ *յունացն* ի վերայ դիցն անուանցն է: - 201. Եւ նախ ասի իմաստութիւն նոցա, որ զբնութիւն էիցս քննեցին. և զշարժումն լուսաւորացն. որպէս իմաստունքն *յունաց*: - 269. Եւ այս են **իբ** լեզուքն: ...*Յոյնք*: - 298. Ապա ուրեմն սո՛ւտ են ազգն *յունաց* և ասորւոց որ խմոր դնեն ի խորհուրդն: - 356. Ի կրկին թարգմանչա՛ցն է, *յունաց* և ասորւոց: - 407. **Զի սէն՝ *յունա՛ց* է, և շան՝ ասորի. և մի և նոյն է տեսութիւնն որ աւէ, անգոսնեաց, և անգուշնեաց:** - 407. Այլ և քարինք բազումք էին ի վեր և ի վայր՝ բաց ի *յունաց* յոր անցանէին. որ կրթեալ և սրբեալ էին: - 415. Եւ ըստ ասորոց և *յունաց*՝ **ց** ամ: - 451. Որ և այժմ *յոյնք* և ասորիք պենտակոստ կոչեն որ թարգմանի **ե** երորդ և ո՛չ **է** երորդ: - 524. Եւ ըստ *յունաց* թէ աստիճանն. և ըստ մեծին դիոնիսեայ. և մինչ ի **դ դ** կարգն փոքր է. հրաման ամուսնութեան: - 526. Այլ հրամանաւ մեծի թագաւորին ուստիանեայ ժողովեցան *յունաց* և հռոմոց և հայոց և վրաց և աղուանից եպիսկոպոսունք. և կաթողիկոսն հայոց սահակ...: - 544. Իսկ *յոյնք*, Առաջին՝ նախասրբեալ պատարագն: - 553. Հինգերորդ՝ այսմաւուրօք ո՛չ տօնել ըստ *յունաց*. այլ այլո՛վ օրինակաւ տօնել: - 554. Չորրորդ՝ յարդեան ժամանակիս այսմաւուրօք տօնել ոմանց. և այսոքիկ առ *յոյնս*: - 554. **Որպէս ահա՛ յերկոսեան ճրագալոյցսն այսինքն ի ծննդեանն և ի յարութեանն միաբանին հայք և *յոյնք* և ասորիք. իսկ լատինք ո՛չ: - 554. Եւ ի հաց պատարագին զբոլորն մատուցանեն և ո՛չ մասն ինչ, լատինք և հայք և ասորիք. իսկ *յոյնք* ո՛չ**: - 554. **Եւ յառնուլ զաստիճան սարկաւագութեան ո՛չ տան հրաման կին առնուլ հայք և լատինք և *յոյնք*. բայց ասորիք ո՛չ:** - 554. Իսկ վասն ջրոյն զի՞նչ պարտ է ասել. զի *յոյնք* թերի ցուցանեն զլատինացւոց խառնումն, ինքեանց կրկին խառնմամբն. և զայն խորհուրդ առեալ: - 554. Ասեմք թէ՝ առնեմք ըստ ազգին *յունաց*. որ որպէս քահանայն պատարագէ և մկրտէ, նոյնպէս և դրոշմէ ըստ սրբոյն դիոնիսեայ: - 594. **Որպէս ազգն *յունաց* և վրաց և ասորւոց բարձեալ են զխոստովանութիւնն. որ**

**անհնա՛ր է առանց խոստովանելոյ արդարանալ մարդոյ:** - 604. Իսկ ըստ եկեղեցւոյն *յունաց*, Առաջին դասք են Պատրիարգունքն. որ թարգմանին հայրապետ...: - 607. **Պռօսխումէն՝ *յունա՛ց* է. որ է՛ ի վե՛ր նայեցէք**: - 645. Նշնակութիւն է **գ** ազգ գրոյն ի վերայ խաչին. Եբրայեցի. *Յունաց*. և Դաղմատ: - 645. Վասն որոյ ի պատարագն յիշատակի եբրայեցին և *յունացն*: - 645. Որ և այժմ ոմանք յազգէ ասորւոց և *յունաց*՝ գշաբաթ և զկիրակէ միա՛յն լուծանեն ձկամբ: - 651. Որպէս ասեն երբեմն ժամանակի ի կոստանդնուպօլիս հռչակեալ քաղաքի, մոլորեալ *յոյնք* ի մոլորեալ երիտասարդէ՛ միոջէ՛, բարձին յեկեղեցւոյ զերգ երեքսրբենին: - 775. **Յորում ամի եղև ծռատօն զատկաց ազգի կոչեցեալ *յունաց*. ի վերոյ ասացեալն աւուր նորոյս տէրունեաց**: - 789

**ՅՈՅՍ +** Չորրորդ՝ անպիտան լինէր *յոյսն* և աղօթքն: - 20. *Յուսով* մեղանչեն և անյոյս կորնչին: - 34. Եւ դարձեալ՝ քննութեամբ մտաց ո՛չ լինի հասեալ անհասանելին. այլ հաւատով լինի իմացեալ. և *յուսով* ըմբռնեալ. և սիրով միաւորեալ: - 101. Եւ մեք զնոյն դաւանութիւնն պինդ կալցուք անշարժ *յուսով* ի կեանս և ի մահ և յետ մահու. և նորին խոստացեալ բարեացն արժանի լիցուք ի քրիստոս յիսուս ի տէր մեր: - 101. Դարձեալ՝ աստուածային առաքինութիւնք այսո՛ւ թըւով են. այսինքն հաւատ. *յոյս*. սէր: - 105. Երկրորդ՝ անկումն եղև ի փառաց *յուսոյն*...: - 153. Վեցերորդ՝ թողեալ լինին ոմանք չարչարեալ առ ի նախանձ այլոց. զի պատիւ չարչարելոցն յայտնի լիցի վասն հանդերձեալ *յուսոյն*...: - 158. Երրորդ՝ ըստ կատարման. զի այս յետ փոխման *զյոյսն* ունի լծակցեալ անմահութեան և խնդութեան. իսկ այնոքիկ կորստական և անցաւոր: - 269. Դարձեալ ըստ այսմ կարգ ի իմաստութիւն է հաւատն. գիտութիւն *յոյսն*. հանճար սէրն: - 270. Զի՞նչ էր *յոյսն* ենովսայ...: - 288. Ըստ չորից իմանի *յոյսն* ենովսայ: - 288. Եւ այս ցոյցք *յուսո՛յ* է վասն հանդերձելոյն հոգալ և պատրաստել: - 289. Երկրորդ՝ զի մարդիկք բազում ամս յաճախէին ի մեղս *յուսով* վերջին ապաշխարութեանն. և յետոյ սովորեալ ի մեղս ո՛չ կարէին դառնալ, ամենքին կորնչէին: - 292. Ութերորդ՝ *յուսով* ժառանգ երկրին ծնաւ իսահակ...: - 307. Որ է՛ կապ հաւատոյ և *յուսոյ*: - 317. Դարձեալ՝ նա՛ զգենու զմեզ սիրով, և մեք զգենումք զնա հաւատով և *յուսով*: - 319. Դարձեալ երիցս երևիլն է, զի աստ ի մարմնի հաւատով տեսանեմք զքրիստոս. և յետ մահու *յուսով* ի հոգիս մեր. և յետ յարութեանն սիրով միաւորիմք ի նա՛: - 341. Դարձեալ՝ զի անապակա՛ն է հաւատն եկեղեցւոյ, և հաստատ *յոյսն*, և ջերմ սէրն առ քրիստոս: - 347. Այսինքն զամենայն յաջողուածս հոգևոր և մարմնաւոր, և զմասն անմահութեան կենաց *յուսոյն*, ո՛չ վասն մեր արժանաւորութեան համարել. այլ բարութեան և ողորմութեանն աստուծոյ: - 360. Ջոպայն ջերմ, *յոյսն*: - 368. Եւ միւս հաւն թաթաւեալ յարիւն, հոգին կենդանի. որ կարեկից լինի մարմնոյն և զսրբութիւն նորա հանէ՛ *յուսով* ի դաշտն որ է՛ յերկինս: - 368. Այլ և հաւատն և *յոյս* և սէր որպէս ցուցաւ: - 368. Դարձեալ՝ այն որ մի քան զմի առաւել են չափով դորակին, նշանակէ՛ զհաւատն և *զյոյսն* և զսէրն առաւել: - 375. Զի ի կեանս յայս հաւատով նուիրիմք. և յետ մահու *յուսով*. և յետ յարութեան կատարեալ սիրով ընդ քրիստոս միաւորիմք: - 375. Երկրորդ՝ զփոփոխելի կեանքս սգան. և *յուսով* հանդերձեալ յարութեանն դադարին ի սգոյ և ուրախանան: - 411. Եւ զի թերութեամբ էր և ո՛չ *յուսով* թողութեան: - 415. Տասներորդ՝ բրե՛ն զաչս խղճի մտացն և *զյուսոյն*: - 424. Այլ ճշմարիտ փրկութիւնն մեր *յուսո՛վ* է և աղօթիւք: - 429. Վեցերորդ՝ ի *յոյս* և յօրինակ ամենայն մեղաւորաց. որք զղջան և գտանեն զթողութիւն մեղաց: - 432. Նա՛խ՝ ի *յոյս* թողութեան մեղուցելոց. զի և մեք զղջացեալ ապաշխարեսցուք զմեղս: - 433. Բայց զի յուսացեալ ի բանն ճշմարտութեան յաղագս որոյ բանս հարցափորձութեան, հետևելով ուսուցչացն ուղղութեան, և *յուսոյ* ուսողացդ նպաստութեան. բացցուք զբերանս մտաց, և ձգեսցուք ի մեզ զհոգին շնորհաց: - 456. Ողորմութիւնն դիտէ առ հաւատս և առ *յոյսս*: - 458. Երրորդ՝ այնու ցուցանի և պարգևի մեզ Բարձրութիւն *յուսոյ*: - 493. Եւ դարձեալ *յոյս* գոյ ի մեռեալսն. ըստ այնմ «*յոյս* նոցա լի՛ է անմահութեամբ». և *յոյսն* է մասն հաւատոյն: - 507. Քսանբ, Վասն *յուսոյ* և ներգործութեանց նորին: - 526. Մի կոչի եկեղեցի՝ ո՛չ տեղեաւ մի. այլ միով հաւատով և *յուսով* կոչմանն. և միոյ մօր և մի որովայնի ծնունդ աւազանին. և մի կերակուր որ է տեսութիւն աստուածային գրոց. և մի մարմին և արիւն փրկական. և մի գլուխ և պսակ և զգեստ ունիմք զքրիստոս: - 533. Ա՛րդ՝ մի է ամենայն ընդհանուր եկեղեցիք որ է բոլոր քրիստոնեայք ըստ հաւատոյն և կոչմանն *յուսոյն* որպէս սեռիւ: - 533. Իններորդ՝ զի թէ հաւատն և *յոյսն* և սէրն՝ աստուածային առաքինութիւնք են և լաւագոյն քան զամենայն առաքինութիւնս...: - 557. Հաւատ: *Յոյս*: Սէր: - 571. Հաւատն և *յոյսն* և սէրն վասն է՞ր կոչին աստուածայինք: - 571. *Յուսովն* ակն ունիմք գերագոյն բարւոյն: - 571. *Յուսովն* ըմբռնի. և Սիրովն միաւորի աստուած: - 571. *Յուսովն* ակն ունիմք ինքեան ողորմութեանն որ խոստացեալ է. զի

գթած և ճշմարիտ է: - 571. Եւ որպէս հաւատն է ի հանճարն, նոյնպէս *յոյսն* և սէրն են ի կամքն վասն բ պատճառի: - 572. Եւ զի յառաջ եղեալ հաւատոյն է՛ ճշմարիտն. վասն այն հաւատն է՛ յիմացումն որպէս ի ենթակայս. և յառաջ եղեալ *յուսոյն* և սիրոյն է բարին, վասն այն *յոյսն* և սէրն են ի կամքն որպէս ի յենթակայս: - 572. Իսկ փառք և պսակք հետևին *յուսոյն* և սիրոյն: - 572. Ապա ուրեմն հաւատն է յիմացումն. և *յոյսն* և սէրն ի կամքն: - 572. Զի՞նչ է սահմանն *յուսոյ*: - 573. *Յոյսն* է ստոյգ ակնկալութիւն հանդերձեալ երանութեանն. յառաջ եկեալ ի շնորհացն աստուծոյ և ի յատուկ արդեանցն: - 573. Եւ պատճառ *յուսոյն* նախ է շնորհին աստուծոյ. և ապա արդիւնքն մեր: - 573. Զի յուսալ յիր ինչ առանց արդեանց ո՛չ է *յոյս*. այլ յանդգնութիւն: - 573. Դարձեալ՝ *յոյսն* է ունակութիւն մտաց յղացեալ յառատութենէն աստուծոյ. ունելով կեանս յաւիտենական՝ բարի արդեամբք: - 574. Եւ գիտելի է զի հաւատն և *յոյսն* այսպէս զանազանին: - 574. Իսկ *յոյսն* վասն հանդերձելոյն միայն: - 574. Դարձեալ՝ հաւատան է ի բարեաց ինքեան և այլոց. իսկ *յոյսն* է ի բարեացն ինքեան միայն: - 574. Այլ համաձայնին. զի երկոքեանն հաւատն և *յոյսն*՝ են յոչ երևելիսն: - 574. Այլ և զանազանի *յոյսն*. զի որք են ի ճանապարհ աստի կենաց, *յոյս* նոցա է՛ հանդերձ ստուգութեամբ կարծեաց որպէս ասացաւ: - 574. Իսկ որք ելեալք են ի մարմնոյ, *յոյս* նոցա է՛ հանդերձ ստուգութեամբ գիտութեան. զի ստուգապէս գիտեն զլինելոց հատուցումն: - 574. Իսկ *յոյսն* որ էր ի սուրբն ստեփաննոս յորժամ ետես զերկինս բացեալ...: - 574. Նոյնպէս և այժմ սրբոց և երանելեաց *յոյսն* է հանդերձ ստուգութեամբ տեսութեանն...: - 574. Եւ յայսցանէ յայտէ, զի յետ յարութեանն ի վերինն գաւառ ոչ գոյ *յոյս*. զի է՛ անդ երանութիւն, որ է ստացումն ամենայն բարեաց. բոլորն համանգամայն և կատարեալ. և ոչ ինչ է ապառնի յոր յուսացեալ լինի: - 574. Եւ այժմ *յոյս* մեր է՛ կրկին. նախ առ սուրբս վասն օժանդակութեան և բարեխօսութեան: - 574. Եւ բազո՛ւմ է ներգործութիւն *յուսոյն*: - 574. Երկրորդ զօրացուցանէ. որպէս յա՛յտ է ի մակաբայեցւոցն զկնոջէն որ ունէր է որդիս՝ ածեալ ի սպանումն ի միումն աւուր տեսեալ. և տանէր այնմ՝ *յուսովն* որ առ աստուած. նոյնպէս և ամենայն դասք մարտիրոսացն *յուսով* զօրացան: - 574. Այս քան վասն *Յուսոյ*: - 574. Ութևժ, խնդրէ ի նմանէ համարձակ *յուսով*: - 576. Որո՞վ զանազանի հաւատ *յոյս* և սէր: - 577. Որ է՛ հաւատ՝ *յոյս*՝ սէր. և սոքա երեքեան հեղո՛ւմն են յաստուածային շնորհացն ի բանական ոգիս. որով ուղղիմք յերկնային կեանս: - 577. Նա՛խ որպէս ասէ սուրբն եւագրիոս՝ հաւատն ի հայր, *յոյսն* առ որդի, սէրն ի հոգին սուրբ: - 577. Երկրորդ՝ հաւատն է հիմն. *յոյսն* որմ. սէրն շինուածք: - 577. Երրորդ՝ հաւատն է որպէս արմատ ծառոյն որ է հայր. *յոյսն* ստեղունքն որ է որդի. սէրն հոգին սուրբ որ է՛ ծաղիկ և պտուղ ըստ դիոնիսեայ: - 577. Չորրորդ՝ հաւատն է յանցեալն և ի հանդերձեալն որպէս ասացաւ. *յոյսն* միայն ի հանդերձեալն. և սէրն ի ներկայն որ է միշտն: - 577. Հինգերորդ՝ ըստ որպիսութեան մեր հաւատն է այժմ. *յոյսն* յետ մահու...: - 578. *Յոյսն* ի բարութիւնն. ըստ այնմ «ակն կալցուք *յուսոյն* և բարութեանն աստուծոյ»: - 578. Եւ զայս փոխեն ոմանք այսպէս. զսէրն առ բարութիւնն. *զյոյսն* ի բարձրութիւնն. և զհաւատն առ ճշմարտութիւնն: - 578. Եօթներորդ՝ հաւատովն համբերեմք. *յուսովն* հաստատիմք. սիրովն զօրանամք. և զայս ասէ նագրիոս: - 578. Ութերորդ՝ հաւատն տեսանէ. *յոյսն* ըմբռնէ. սէրն միաւորէ՛: - 578. Իններորդ ըստ հոգւոյն մասանց. հաւատն է ի բանն. *յոյսն* ի ցասումն. սէրն ի ցանկութիւնն: - 578. Այս վասն համանման գործոց նոցա այսպէս կարգի որ են ի նոսա. այլ *յոյսն* և սէրն են ի կամքն: - 578. Զի հաւատովն հաւանիմք աստուծոյ. *յուսովն* ապաստանիմք ի յաստուած, և սիրեմք զաստուած: - 578. Ապաստանութիւն է որով հոգին ի մեծ և ի համեստ իրս ստոյգ *յուսովն* հաստատի յինքեան: - 580. Երկրորդ՝ զերկայնմտութիւն զհամբերութիւն *զյոյս* և զարիութիւն հաստատէ՛ ի մարդն: - 584. Զի արդարութիւն որ ասէ աստ՝ պարունակէ՛ զհաւատն *զյոյսն* և զսէրն. որք անընդմիջաբար միաւորեն զմեզ ընդ աստուծոյ: - 584. Որ է հաւատն՝ *յոյս*՝ սէր. խոհեմութիւն և այլն: - 587. Դրօշմն է՛ խորհուրդ *յուսոյ*. զի յուսալով ի զօրութիւն սուրբ հոգւոյն կարողանամք ընդ_դէմ թշնամւոյն: - 587. Զի այժմ *յուսով* լցեալ ունին ի հոգիս իւրեանց զփառս և զպայծառութիւն գործոցն: - 648. Երկրորդ, փրկութեան է *յոյս* և թողութեան մեղաց: - 657. Տասներորդ՝ յապաղեաց զայն, զի փափագն առաւելասցի. աստ հաւատով և *յուսով* ակն ունել. և ապա՛ դէմ յանդիման երևիլ: - 663. Եւ դարձեալ՝ աստ հաւատոյն է. իսկ յետ մահու *յուսոյն*. և ի յարութեանն սիրոյն: - 667. ...այլ ունիմք թերևս փոփոխումն *յուսոյ* և սիրոյ...: - 667. ...իսկ յետ մահու հաստատուն *յուսով* տեսանեմք և ուրախանամք. - 667. Եւ ոչ մի ինչ ունի *յոյս* փրկութեան. ո՛չ օգնական. ո՛չ բարեխօս. ո՛չ ողորմութիւն. և ո՛չ այլ ինչ այնպիսի որ արաժանաւորացն է: - 669. Եւ են յիմացումն և յուշի. որպէս ասէ առաքեալն թաղէոս. և *յոյս* նոցա լի է անմահութեամբ. և սիրով առ աստուած

միացեալ: - 685. Այլ թէպէտ մի է տեղեաւ, այլ արդարքն *յուսով* ուրա՛խ են, և մեղաւորքն տանջին: - 689. Զի այժմ *յուսով* են յերկինս և առ երկինս. և յետ մահու հոգւով. և յետ յարութեանն հոգւով և մարմնով յանճառելի փառսն: - 689. Զի հոգիք սրբոցն ո՛չ են առանց մխիթարութեան. այլ հանգչին և ուրախանան ի գործս իւրեանց և *յուսով* փառացն հատուցման. - 690. Արդ այժմ ի մկրտութիւնն հաւատն նշան դնի հարսին. և յետ մահու *յուսով* կոչի ի հարսանիս. և յետ յարութեանն սիրով միաւորի ընդ փեսային: - 693. ...այլ ընկալեալ ունին *զյոյս* անմահութեան և զերանութեանն ի հոգի: - 695. Ասեմք ըստ նիւսացւոյն գրիգորի, թէ *յոյս* նոցա ո՛չ է տանջանք, այլ վայելչութիւն է նոցա...: - 695. Ասեմք առ այս նախ՝ թէ կրկին է *յոյսն*: - 695. Զի է՛ *յոյս* ակնունիլ ի հեռաւորն. և է՛ *յոյս* ըմբռնել ի մերձաւորն: - 695. Արդ՝ այս կենացս *յոյս*՝ ակն ունի ի հեռաւորն. և յետ մահու *յոյս* նոցա ըմբռնէ ի մերձաւորն: - 696. Եւ դարձեալ ասեմք, թէ աստի կենացն *յոյս* է՛ հանդերձ ստուգութեամբ կարծեաց...: - 696. ...և յետ մահու *յոյս* նոցա է՛ հանդերձ ստուգութեամբ գիտութեանն. և կամ տեսութեանն...: - 696. ...որով իմանան արդարքն թէ այնպիսի փառս պատրաստեալ է նոցա. և *յուսով* վայելեն մինչև օր դատաստանին: - 697. Դարձեալ, Ոսկի է հաւատն սուրբ. և Արծաթ *յոյսն* պայծառ: - 702. ...որով դրոշմեալքն յետ արտաքս ելանելոյ ի մարմնոյս, թռչին յանապատն ի մեղաց յերկինս կերակրիլ անդ *յուսով* մինչև լնու թիւ կատարման աշխարհի: - 703. ...և ըստ իւրաքանչիւրոցն տեսանէ զփառս և *յուսով* վայելէ...: - 705. Ցուցանեն այսորիկ զկատարեալ և զառաւել հանգիստ սրբոցն այժմ *յուսով* և յետ մահու հոգւով թագաւորեալ ընդ քրիստոսի. և ապա յետ յարութեանն հոգւով և մարմնով ո՛չ ռ ամօք. այլ անվախճան կենօք...: - 710. ...ջոարքիք են հաւատով և *յուսով* մեռեալքն. և հանապազ յեկեղեցի սուրբ յիշատակութիւն նոցա կատարի...: - 721. Իսկ անդ հաւասարի կշիռն ըստ *յուսոյ*, և միտէ՛ ողորմութիւնն ըստ սիրոյ: - 746. Զի ըստ առաջնոյն ամբարիշտքն կորուսին զաստուած և զամենայն բարի շնորհս և զփառս. և ոչ ունին *յոյս* ողորմութեանն աստուծոյ...: - 751. Բարձումն *յուսոյ* և ամենայն փրկութեան Նաև զոլն իսկ որում տենչան ամենայն ստեղծուածք՝ է՛ նոցա պատիժ. վասն զի խնդրեսցեն զմահ և ո՛չ գտանիցեն: - 751. Երկրորդ, հաւատն երեսնաւոր. և *յոյսն* վաթսունաւոր. և սէրն կատարեալ հարիւրաւոր: - 757. Այս հաւատ մեծ *յուսով*. և կատարի սիրով: - 770. Զի նա՛ ծնաւ զմեզ ըստ բանի՝ բազմաջան երկօք. կրթեալ ի մանուկս վարժարանի և ի *յոյսն* կենդանի: - 773. ...մարմնով մեռելոցն անթիւ օճիրս ստախօսութեան գործէր. զանտի կենաց զյարութեան *յուսոյ* և զհատուցմանց ըստ գործոց՝ բառնալով. զերկիւղ դժոխոց և զսէր արքայութեան. և զամենայն ինչ որ նմանէ այսմ հոգևոր բարութեան: - 775. Սպառիլ սիրոյ և հատումն *յուսոյ*. բազմանալ անօրէնութեանց և տիրել անզղջութեանց: - 789

**ՅՈՍՏՈՍ** - Բանք *յոստոսի*: - 450. Եւ յառաջին ամին *յօստոս* էր հայրապետ յերուսաղէմ. իսկ յերկրորդն սուրբն մակար: - 485

**ՅՈՎԱԲ** - Որպէս *յովաբ* ո՛չ ընդ դաւթի՝ այլ ընդ աբիսողո՛մ մարտեաւ: - 44. Եւ հրամայեաց սպանանել *զյովաբ* և զսիմէի: - 413. Վասն է՞ր հրամայեաց սպանանել *զյովաբ* և զսիմէի զի երդւեալ էր նմա: - 439. Չորեքտասաներորդ՝ *զյովաբ* սպանօղ և զսիմէի նախատիչ սպան սողոմոն: - 441

**ՅՈՎԱԹԱՄ** - *Յովաթամ* ամս **ժզ**: - 453

**ՅՈՎԱԿԻՄ** - Եւ յետ գերութեանն իւրայէլի անցեալ ամք **ճլե**, եւ արքայն բաբիլացւոց նաբուգոդոնոսոր ի վերայ երուսաղէմի. ի **ժ** ամի թագաւորութեանն *յովակիմայ*. և էառ հարկ ի նմանէ. և զմեծ մասն սրբութեանց տաճարին աւերեաց: - 447. Եւ ոմանք յառաջին գերութենէն *յովակիմայ*՝ և պակա՛ս է: - 447. Եղիակիմ որ և *յովակիմ* ամս **ժբ**. ի սորա **ժ** ամին նաբուգոդոնոսոր զիրէաստան հնազանդեաց. և հարկ առեալ յեղիակիմայ գնաց: - 453. *Յովակիմ* որ և յեքոնիա ամիսս **գ**: - 453. Դարձեալ եւ նաբուգոդոնոսոր և էառ *զյովակիմ* գերի: - 453. Եւ վերապանքեր ծնաւ *զյովակիմ*: - 460. Եւ *յովակիմ* ծնաւ զմարիամ կոյս: - 460. ...իսկ Աննա ամուսնացաւ ի գալիլեայ ընդ *յովակիմայ*. և ծնաւ զաստուածածինն մարիամ ի պրոպատիկէ ի տունն *յովակիմայ*. և անտի տարեալ եղև ի տաճարն տեառն: - 460. Իսկ *յովակիմ* արդարն էր ի թագաւորական ցեղէն յուդայի **լը**երորդ ի թոռանց նաթանայ որդւոյն դաւթի փառաւոր և մեծատուն յոյժ: - 460-461. Այսպէս և *յովակիմ* ի յուդայէ՛ էր և ունէր զաննա զդուստր մատթանայ ի ցեղէն ղեւեայ. վասն այն ազգական մարիամու զեղիսաբեթ ասէր գաբրիէլ: - 461

**ՅՈՎԱՆ** - ...նախ վասն ա՛յս խորհրդոյս է. և երկրորդ՝ զի մկրտութիւնս մեր ո՛չ ի ջուրն *յովաննու*, այլ ի մահն քրիստոսի է: - 605

**ՅՈՎԱՍ** - Հինգերորդն Գեդէոն. որդի *յովասու* ի մանասէ է՛ եփրաթացի ամս խ: - 420. Իսկ ի

hիւանդանալն՝ եղիսէոս եդ զձեռն ի վերայ ձեռաց արքային *յովասու* և զօրացոյց զնա ի պատերազմին ընդ դէմ ասորոցն փոխանակ լալոյն ի վերայ նորա: - 446. *Յովաս* ամս **խ**: - 452. Զչորքս զայս՝ Զոքոզիա և Զգոդողիա մայրն, և *Զյովաս* և Զամեսիա ո՛չ գրէ յազգահամարսն աւետարանիչն վասն լինելոյ դուստր և թոռունք եզաբելի: - 452

**ՅՈՎԱՔԱԶ** - *Յովաքազ* ամիսս **գ**: - 453. *Զյովաքազ* գերի տարաւ նեքաւով փարաւոն. և թագաւորեցոյց զեղիակիմ: - 453

**ՅՈՎԷԼ** - Եւ *յովէլ* ասէ՝ «հեղից յոգւոյ իմոյ ի վերայ ամենայն մարմնոյ»: - 60. Իսկ որ ասէ *յովէլ*՝ «հեղից յոգւոյ իմոյ», հեղումն ո՛չ այլ ինչ է, բայց թէ առաքումն: - 60. Ամովս: Միքիա: *Յովէլ:* Աբդիու: Յովնան: Նաւում: Ամբակում: - 450. Ի ձորն յովսափաթու. քանզի ասէ մարգարէն *յովէլ*, «ժողովեցարո՛ւք առ իս ամենայն ազգ ի ձորն յովսափաթու. զի անդ նստայց և դատեցից ասէ տէր»: - 737

**ՅՈՎԻԴԱ** - Զնա էառ կին *յովիդա* քահանայ. և խառնեցան երկու ցեղք թագաւորաց և քահանայից: - 452. Այլ և *յովիդա* քահանայապետ զդուստր յովրամայ արքայի զքոյր ոքոզիայ: - 461

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ** - Երկրորդ՝ շնորհք եզական. որպէս սրբեալքն յարգանդէ երեմիաս և *յովհաննէս մկրտիչ.* որպէս ասէ գիրն՝ «յարգանդէ՛ սրբեցի զքեզ»: - 462. Յորժամ զսարսափելի գլուխն *յովհաննու մկրտչին* բերին ի մէջ բազմականացն հերովդէի...: - 656

**ՅՈՎՆԱԹԱՆ** - Երեսունենե, հաստատեաց զուխտն առ *յովնաթան* և մելքօղ. և տէրն եղբարց իւրոց և եկեղեցույ...: - 437. Կամ սիրելութիւն որպէս դաւթի և *յովնաթանու*. զոր սիրեաց որպէս զհոգի իւր: - 761

**ՅՈՎՆԱՆ** - Ամովս: Միքիա: Յովէլ: Աբդիու: *Յովնան*: Նաւում: Ամբակում: - 450

**ՅՈՎՍԱԲԵԹ** - Այլ և *յովսաբեթ* դո՛ւստր է յովրամայ և գոդողիայ և քոյր ոքոզիայ: - 452

**ՅՈՎՍԱՓԱԹ** - *Յովսափաթ* ամս **իէ**: - 452. Ի ձորն *յովսափաթու.* քանզի ասէ մարգարէն յովէլ, «ժողովեցարո՛ւք առ իս ամենայն ազգ ի ձորն *յովսափաթու*. զի անդ նստայց և դատեցից ասէ տէր»: - 737. Դարձեալ, ձորն *յովսափաթու* կոչի ձոր դատաստանի. այսինքն է կալն ուռնայի, ուր դաւթի խոստացաւ անդ առնել դատաստան. յորժամ սեղան շինեաց և պատարագեաց զեզինսն և բարձաւ մահն: - 737. Ուր ինքն տէրն խաչեցաւ և յարեաւ. և սոքա ամենեքեան ձոր *յովսափաթու* կոչին, որ յերկու ձորի մէջն է յեէմ: - 737. Եւ *յովսափաթն* թարգմանի դատաստան որ է՛ արդարութիւն: - 738

**ՅՈՎՍԷ** - Չորրորդ՝ մարիամ յակոբայ և *յովսեայ* մայրն, որ էր կին յովսեփայ կոչեցեալն աստուածահայր: - 517

**ՅՈՎՍԷՓ** - Երրորդ՝ *յովսէփ*: - 28. Եւ ազգայինքն՝ միոյն հայր և հոգի. և միւսոյն *յովսէփ* և մարիամ: - 87. Այն որ աստուածայինն է տեսիլ կոչի. որպէս Աբրահամուն. Յակոբայն. *Յովսեփայն*. և Դանիէլին: - 268. Տասնեզ՝ Բաղդատութիւն *յովսէփայ* և տեառն ի գլխով: - 283. Բաղդատութիւն կրից և գործոց *յովսեփու* առ քրիստոս: - 313. Նա՛խ՝ զի գեղեցիկ էր տեսլեամբ *յովսէփ*: - 313. Երկրորդ՝ ատէին եղբարքն *զյովսէփ*, և հայրն սիրէր: - 313. Երրորդ՝ *յովսէփ* ի կրկին գուբ եմուտ և ապրեցաւ: - 313. Չորրորդ՝ *յովսէփ* փոխանակ պոռնիկ կնոջն էառ զասանէթ կոյս գեղեցիկ: - 313. Հինգերորդ՝ *յովսէփ* ի տան հօրն ազա՛տ էր, և յեգիպտոս եղև ծառայ: - 313. Վեցերորդ՝ ո՛չ յաղթեաց պոռնիկ կինն ողջախոհին *յովսեփայ*: - 313. Եօթներորդ՝ *յովսէփ* մխիթարէ՛ր զբանտարկեալսն: - 313. Ութերորդ՝ *յովսէփ* զերկու երազատեսքն զմինն կեցոյց և զմինն մեռոյց: - 313. Իններորդ՝ որպէս զենաւ ուլն և զերծաւ *յովսէփ*: - 313. Տասներորդ՝ հայրն առաքեաց *զյովսէփ* առ եղբարսն որ էին հովիւք և երիցունք տեսանել զնոսա. և բանիւն յուդայի վաճառեցաւ և եղև տէր երկրին և կերակրիչ: - 313. Մետասաներորդ՝ *յովսէփ* **ժե** ամաց վաճառեցաւ **լ** դահեկանի որպէս ասէ ի կտակն: - 313. Երկոտասաներորդ՝ *յովսէփ* **լ** ամեայ իշխանացաւ երկրին: - 313. Երեքտասաներորդ՝ *յովսէփ* ծածկելոց գիտօղ կոչեցաւ: - 313. Չորեքտասաներորդ՝ եգիպտացիքն էին թշնամիք, և երկիր պագին *յովսեփայ*: - 314. Հինգևժերորդ՝ որք աստ երկիր պագանեն քրիստոսի, կենաց հացիւն կերակրին որպէս եղբարքն *յովսեփայ*: - 314. Վեշտասաներորդ՝ եղբարքն *յովսեփու* ո՛չ լցան հացիւ մինչև եկին առ *յովսէփ*: - 314. Ութևժ, յերկրորդումն ետ *յովսէփ* ծանօթս եղբարցն: - 314. Իննևժ, *յովսէփ* ստացաւ ոսկի և զարծաթ և զերկիրն եգիպտացւոց՝ փարաւոնի...: - 314. Քսաներորդ, և որպէս *յովսէփ* եթող զքուրմն և զերկիր նոցա, զոր քրիստոս էր բառնալոց զմեծամեծ մեղսն և զկռապաշտութիւնն. զի ըստ առն և զօրութիւն իւր. և ըստ աստուծոյ և գործք իւր: - 314. Իններորդ՝ *յովսէփ* ել ընդառաջ նոցա և համբուրեաց: - 315. Տասներորդ՝ *յովսէփ* ռոճիկս տայր նոցա. ա՛յս է զգեստս կատարեալ և կերակուրս: - 315. Եւ թէպէտ *յովսէ՛փ* իջոյց ի խաչէն, և *յովսէփ* և նիկոդիմոս պատեցին, այլ ինքն կամաւն էջ ի բազուկսն *յովսեփայ* և պատեցաւ զմռով: -

316. Չորրորդ՝ ի ձեռն *յովսեփայ* ժողովուրդն էջ ի յեգիպտոս և եղև չարութիւն: - 332. Երրորդ՝ զի երախտաւո՛րք էին *յովսեփաւ* և ատեցին: - 335. Զնշխարսն *յովսեփու*: - 338. *Յովսէ՛փ* է՛ և Թումա: - 349. Բարձրամեծարն գործոյ ներմարդութեան բանին աստուծոյ՝ բազում եղեն նախատիպք խորհրդոյ. որպէս մովսէս, *յովսէփ*, իսահակ: - 417. Եւ կրկին աւետեալ կուսին, և ապա՛ *յովսեփու*: - 422. Չորրորդ՝ ի տիպ աստուածահօրն *յովսեփայ* առ անարատ կոյսն: - 439. Եւ այսպէս աստուածահայր կոչի դաւիթ օրինակ *յովսեփու*: - 439. *Յովսէփ* hq: - 453. Երրորդ, Ազգաբանութիւն կուսին և *յովսեփայ*: - 454. Եւ *յովսէփ* արդարն էր ի թագաւորական ցեղէն. որպէս պատմէ՛ աստուածախօսութիւնն Մատթէոս և Ղուկաս: - 460. Մատթէոս ի սողոմոնէ՛ իջանէ առ *յովսէփ*, և Ղուկաս ի նաթանայ: - 460. Եւ *զյովսէփ* արդար վկայէ աւետարանն: - 460. Ապա յայտ է թէ ըստ մարմնոյ՝ կոյսն էր յազգէն *յովսէփայ*: - 460. Եւ *յովսէփ* որդի դաւթի որպէս ցուցաւ: - 460. Եւ յակոբ *զյովսէփ*: - 460. Դարձեալ վասն *յովսեփայ* գիտելի է. զի ի ցեղէն սողոմոնի որդւոյն դաւթի՝ մատթան առեալ կին, ծնաւ զյակոբ: - 460. Իսկ յակոբ որ էր յազգէն սողոմոնի՝ առեալ զկին եղբօրն ըստ օրինացն զի յարուսցէ զաւակ եղբօրն. և ծնաւ *զյովսէփ*: - 460. Եւ այսպէս *յովսէփ* բնութեամբ որդի էր յակոբայ և ի ցեղէն սողոմոնի. և օրինօք որդի էր ելեայ որ ի նաթանայ: - 460. Եւ այսպէս **բ** եղբօր թոռունք էին Մարիամ կոյսն և *Յովսէփ* ի հարց կողմանէ մելքեայ և պանթերի ի նաթանայ: - 460. Մարիամ ամուսնացաւ ի բեթլէհէմ և ծնաւ զսողոմի զմանկաբարձն յիսուսի. ո՛չ որ մայր եղև որդւոցն զեբեթեայ. զի այն. սողովմէ դուստր է *յովսեփայ* աստուածահօրն...: - 460. Երկրորդ՝ զի *յովսեփիւ* ցուցցի ազգաբանութիւն կուսին որ արամբն շարագրի: - 461. Երրորդ՝ զի *յովսէփ* վկայ լիցի ողջախոհութեան կուսին: - 461. Նոյնպէս *յովսէփ* և մարիամ մերկ էին ի մեղաց և առանց խղճի ամօթոյ: - 461. Եւ առ *յովսեփայ* խօսմանն՝ **գ** ամիս եկաց և հրեշտակն աւետեաց: - 461. Յիսուս՝ փրկիչ թարգմանի. որպէս ասաց հրեշտակն առ *յովսէփ*: - 473. Ոմանք ասեն թէ՝ *յովսէփ* թլփատեաց: - 486. Եւ այն էր զի զաքարիա ի վերայ բազկացն *յովսեփու* թլփատեաց զնա: - 486. Չորրորդ՝ մարիամ յակոբայ և յովսեայ մայրն, որ էր կին *յովսեփայ* կոչեցեալն աստուածահայր: - 517. Կղէոպոս եղբա՛յր է *յովսեփայ*. և մարիամս այս դո՛ւստր է նորա: - 517. Իսկ *յովսէփ* և եգնակ եկեալք ի հայս պատմեցին զամենայն ստուգութեամբ: - 543. *Յովսէփ* միայն, և եգիպտացիք բազում: - 551. Եւ զայս երիցս ասացեալ՝ էջ մարմինն սուրբ ի վերայ բազկացն *յովսեփայ*: - 631. Նա՛խ՝ զի պատարագն է՛ խաչելութեան ժամն. և յայնժամ ո՛չ ասաց *յովսէփ*: - 634. Ո՛չ միայն զգլուխս բանամբ, այլ և զձեռս համբառնամք ի վեր. որպէս և *յովսէփ* ասաց: - 635. Որպէս ծառայքն փարաւոնի ի տան բանտին ընդ *յովսեփայ*: - 689. Կամ լինէիր պատուեալ որպէս *զյովսէփ.* որում երկրպագէին եգիպտացիքն որպէս աստուծոյ: - 761

**ՅՈՎՍԷՓ ԱՐԵՄԱԹԱՑԻ** - Զսուրբն աստուածն ո՞վ է ասացեալ: ...*Յովսէփ արեմաթացին*: - 631

**ՅՈՎՍԷՓ ՓԱԼԱՆԱՑԻ** - Եւ *յովսէփ փալանացի*, և եզնակ կողբացի թարգմանիչք, դարձեալ էին յաթենայ և եկեալ ի կոստանդնուպօլիս. լուան զժողովոյն և գնացին ի քաղկեդոն. զի չէր յոյժ հեռի ի ճանապարհէն որով գային ի հայս...: - 543

**ՅՈՎՍԻԱ** - *Յովսիա* ամս **լա**: - 453. Որպէս ո՛չ եղև վնաս *յովսիայ* որով հայրն թիւրէր: - 593

**ՅՈՎՐԱՄ** - *Յովրամ* ամս **ը**: - 452. Այլ և յովսաբեթ դո՛ւստր է *յովրամայ* և գոդողիայ և քոյր ոքոզիայ: - 452. Այլ և յովիդա քահանայապետ զդուստր *յովրամայ* արքայի զքոյր ոքոզիայ: - 461

**ՅՈՐԴ +** Ասեն վարդապետք թէ՝ ի լուր ուրախութեան հեշտանայ լեարդն և տարածեալ լայնանայ. և այնպէս շունչն ելեալ *յորդ* ընդ շնչերակսն և առնէ զծաղրն: - 619

**ՅՈՐԴԱՅՈՍ +** Եւ ծնանին զփայլատակմունս և *զյորդահոս* անձրևս: - 205

**ՅՈՐԴԱՆԱՆ** - Վեցերորդ՝ իջումն ի *յորդանան.* զոր քրիստոս գլուխն մեր էառ և ետ ի յանգամքս: - 50. Զայսմ վիշապէ՛ ասէ՝ զգլուխ վիշապին փրկիչն ջախջախեաց ի *յորդանան*. այն է որ զամենայն ջուրս ծովուն յակնակապիճս իւր ընդունէր: - 151. Ի խօսակցութենէն, զի մինչ ի *յորդանան* այլ ո՛չ ասի հօր աստուծոյ խօսիլ ընդ մարդկան: - 279. Եւ մերոյն փեսային քրիստոսի՝ յովհաննէս ի վերայ *յորդանանու* խօսեցաւ զհարսնացեալ եկեղեցի: - 305. Դարձեալ՝ առհւծաբար ել ի *յորդանանէ*...: - 316. Եւ հւղով զանգեալ և օծեալն, զի հւղով աստուածութեամբն օծաւ. այլ և զհոգին սուրբ ընկալաւ ի *յորդանան*: - 361. Զի՞նչ նշանակէ որ **բ** ցեղն և կէսն մնացին յայնկոյս *յորդանանու* և ժառանգեցին, և այլքն անցին ի քանանացիքն: - 390. Չորրորդ՝ ազգս քրիստոնէից. հաւասար անցեալք ընդ *յորդանան* և մկրտեալք: - 391. Այլ ոմանք՝ **ճ**աւոր զերկին, և վաթսնաւոր զդրախտն, և երեսնաւոր զերկիրս ասեն նշանակեալ **բ** ցեղիցն յայնկոյս *յորդանանու*, և **թ** ցեղիցն յերկիրն քանանացւոց: - 391. Վեց քաղաքաց

հրամայեաց որոշել ապաստանի և տալ քահանայից. **գ** յերկիրն քանանու և **գ** յայնկոյս *յորդանանու*: - 392. Զի՞նչ է որ զերկու թագաւորսն զսեհոն և զովք յայնկոյս *յորդանանու* կորոյս, և զայլսն ի քանանացիսն: - 393. Զնոյնս նշանակէ **բ** ցեղն յայնկոյս *յորդանանու*. որք այլոցն պատերազմակից եղեն, և ապա՛ ի միասին զժառանգութիւնն առին: - 394. Վասն է՞ր հրամայեաց գրել զօրէնս ի յանցս *յորդանանու*: - 402. Եօթներորդ՝ յորժամ անցանեն ընդ *յորդանան* մկրտութեամբ: - 402. Եւ զե թագաւորսն մադիամու՝ և զսեհոն՝ և զովգ՝ յայնկոյս *յորդանանու*: - 414. Նուազիլ՝ ո՛չ ասեմ զամենևին պակասիլն. զի առ ջրհորաւն մեծի անյայտ եղև վէմն. և յելսն *յորդանանու* մանանայն ո՛չ գտաւ: - 415. Եւ զյիսուս փրկիչն՝ հայր սրբեաց և առաքեաց. որ և ի *յորդանան* վկայեաց «դա՛ է որդի իմ սիրելի, դմա՛ լուարուք»: - 417. Չորրորդ՝ մովսէս եբեր մինչ ի *յորդանան*, և փոխանորդեաց յեսու: - 417. Եւ գիտելի՛ է, զի անցեալ ընդ *յորդանան* սատակեցին զորդիսն ենակիմայ. և ապա՛ ժառանգեցին զերկիրն: - 419. Վեցերորդ՝ դարձեալ տէր մեր յիսուս քրիստոս որ եղև զգեստ հաւատացելոց իւրոց. մկրտեցաւ ի *յորդանան*. և ձայն հօր վկայեաց. և աղաւնակերպ հոգին էջ ի վերայ նորա: - 421. Չորրորդ՝ նախ օծաւ ծածուկ, և ապա՛ յայտնի ի գաղգաղայ. և տէր մեր նախ օծաւ յարգանդի, և ապա՛ ի *յորդանան* ի յովհաննէ: - 426. Երիցս օծաւ դաւիթ. և որդի նորա ի յարգանդի, և ի *յորդանան*, և ի վերայ խաչին արեամբ: - 437. Դարձոյց ի *յորդանանու* զբերզելի որ տասամբն կերակրեաց զդաւիթ. ի տիպ հին օրինացն **ժ** բանեան զոր կատարեց քրիստոս: - 438. Այլ պիղծ ագռաւքն ի խորհուրդ հեթանոսաց անցեալ *զյորդանան* և սրբեալ աւազանաւն: - 443. և Երկրորդ՝ զծածուկ խորհուրդն որ ի *յորդանան*: - 445. Եւ էր սաղմոն իշխան ցեղին յուդայ յորժամ անցոյց զժողովուրդն ընդ *յորդանան* յեսու: - 452. Վասն է՞ր ի *յորդանան* աղաւնակերպ էջ, և ի վերնատունն հրով: - 455. Իններորդ՝ հոգին էջ ի *յորդանան* և ձայնն հօր: - 471. Եւ յա՛յսմանէ յա՛յտ է, զի սուրբքն զծնունդն և զյայտնութիւնն ի միասին տօնէին. և յետոյ բաժանեցին ոմանք վասն բեթլէհէմի և *յորդանանու*: - 482. Երկրորդ «ի *յորդանան*». որ ստեղծօղն է տարերաց՝ եդ զինքն ի ներքոյ խոնարհ տարեր ջրոյն: - 487. Որ զադամ խաբեաց օ՛ձ էր. այժմ ի *յորդանան* վիշապ: - 488. Զգլուխն ի *յորդանան* ջախջախեաց, և զտուտն ի գերեզմանն և ի դժոխս: - 488-489. Դարձեալ՝ վիշապն ի *յորդանան* էր բունեալ...: - 489. Այլ և ցուպն յակոբայ անցեալ ընդ *յորդանան*. և սանդուղքն ասացեալ: - 494. Նաև փայտն որով զերկաթն ի *յորդանանէ՛* վերածեաց: - 494. Վասն է՞ր ի *յորդանան* աղաւնակերպ էջ հոգին սուրբ, և ի վերնատունն հրեղէն լեզուաւ: - 525. Երրորդ, զի թէ կայր հնար որ ի ձեռն կնոջն տուեալ լինէր շնորհք, աստուածածին կոյսն մարիամ ընդէ՛ր ոչ եղև մերձ մկրտութեան որդւոյն իւրոյ ի *յորդանան*: - 589. Զի և տիրամայր կոյսն ո՛չ էր ի ժամ մկրտութեանն ընդ քրիստոսի ի *յորդանան* որպէս ասացաւ ի վերոյ: - 591. Հայր ի *յորդանան* բնութեամբ որդի իւր դաւանեաց. և մանկունքն ի քառասնօրէին և յողոգոմին: - 638. Զի զգլուխ վիշապին ի ջուրսն *յորդանանու* ջախջախեաց ըստ յոբայ որ է մեղքն...: - 705

**ՅՈՐԴՈՐԵՄ +** Դարձեալ թե ի հարկէ՛ է ոչ լինին օգուտ խրատք և սպառնալիք և ուսմունք. որովք բազումք *յորդորին* ի բարիս, և հեռանան ի չարեաց կենցաղոյս: - 11. Իսկ յորժամ դառնամք ի մեղաց՝ *յորդորէ՛* զմեզ ի ծածուկ իմաստիւքն իւրովք, ժուժկալ լինել ի փորձութիւնս և համբերել տանջանաց որով ինքն զփորձ էառ: - 48. Զի *յորդորելն* նորա՛ է, որպէս հոգւոյն ասացաք: - 48. Չորրորդ՝ զճանապարհորդս և զարուեստաւորս և զայլս ի գործս *յորդորէ* : - 185. Չորրորդ՝ զիմաստունս և զառաքինիս ի գործս *յորդորէ*: - 185. Առաջինն է՝ զի ի տեսս աշակերտացն վերացաւ. այսինքն զի *յորդորեսցէ* զցանկութիւն գնալոյն առ նա: - 520. Քանզի ի գործս առաքինութեան *յորդորէ՛* զմեզ բնութիւն և բանականութիւն. և շնորհն *յորդորէ՛* զբնութիւնն: - 578

**ՅՈՐԴՈՐՈՒՄՆ +** Ուստի յա՛յտ է թէ սերմանեաց ի բնութիւնս զբարին, և օրէնս եդ բարւոյ. այլ և խրատ և *յորդորումն* և պարգևս բարեաց: - 17. Ութերորդ՝ ընդ վա՛յր էին ուսմունք և *յորդորմունք* ի բարիս. որովք փախչիմք ի չարէն, և հասանիմք բարւոյն: - 20. և Դարձեալ՝ քարոզն ըստ ինքեան յայտնի է զի *յորդորո՛ւմն* է մեզ: - 626

**ՅՈՐԺԱՄ +** Զոր օրինակ՝ *յորժամ* ասեմք՝ լինի անձրև կամ ո՛չ, ի հարկէ մինն ի նոցանէ լինի: - 8. Որպէս *յորժամ* ասեմք, վաղիւն լինի արև, կամ ո՛չ լինի. լինի անձրև, կամ ո՛չ լինի. ի հարկէ մինն ճշմարիտ է ի սոցանէ: - 8. Ապա ուրեմն յա՛յտ է՝ զի բանն զիրն ո՛չ կարէ ճշմարտել. այլ իրն զբանն ճշմարտէ. *յորժամ* գոյ կամ ո՛չ գոյ. որպէս ասէ ի հարկէ՛ գոլ զէակն *յորժամ* է՛. և ո՛չ գոլ *յորժամ* ո՛չ է: - 9. Եւ թէ ոք ասիցէ, բազում բանք մեր բացորոշակի լինին ի հանդերձեալն. որպէս թագաւորն *յորժամ* ասէ շինեսցի քաղաք, և շինի. և ասեմք թէ այսանուն մարդ մեռանելոց է, և մեռանի. և աղօթեմք և լինի. և

այլն նմանապէս անէծք կամ օրհնութիւնք: - 9. Որպէս *յորժամ* արեգակն և լուսին զտեղի առին առ յեսուաւ. և յետս դարձաւ արեգակն առ եզեկիայիւ: - 11. Իսկ որ սկիզբն ի մէնջ՝ և կատարումն ի խնամոցն աստուծոյ, այսինքն *յորժամ* սկսանիմք զբարին՝ և նա՛ աւարտէ՛ ի բարին: - 18. Իսկ չարն կորեաւ *յորժամ* բարձաւ ի հոգւոյն. զի չարն ո՛չ է է՝ և ո՛չ գոյ: - 23. Չորրորդ՝ ոչ էն *յորժամ* էանայ՝ դարձեալ յոչ էութիւն ո՛չ կարէ փոխիլ: - 23. Ա՛րդ՝ *յորժամ* ծնաւ քրիստոս՝ այնպէս խաղաղութիւն էր՝ որ մին մարդ տիրէր ամենայն աշխարհի: - 27. Նոյնպէս ո՛չ կարէ իմանալ *յորժամ* ի սուրբ գրոց և ի սքանչելեաց և ի բանից սուրբ վարդապետաց՝ դարձուցանէ զմիտքն...: - 31. Դարձեալ թէ՝ *յորժամ* եղեր՝ մե՞րձ էիր դու քեզ, և այժմ հո՞ւպ ես քեզ, թէ ոչ: - 37. ***Յորժամ*** **հիւանդանաս՝ մերձ ես դու հիւանդութեան քոյ. և *յորժամ* մանուկ լինիս՝ մերձ ես մանկութեանն. ի յալևորութեանն՝ ծերութեանն ես մերձ:** - 37. Իսկ *յորժամ* ամէն լեզու խոստովան լիցի տէր զյիսուս քրիստոս, անզրաւապէս թագաւորէ՛ ընդ հօր և տնտեսութեամբն: - 42. Իսկ *յորժամ* հնազանդին ամենայն անդամք գլխոյն քրիստոսի գիտութեամբ և փոփոխմամբ, յայնժամ և ինքն լնու զհնազանդութիւնն, ընծայելով զհնազանդեալքս հօր: - 42. Ասեմք զայս ըստ մարդկութեանն. զի ո՛չ ունէր բնութիւնս մեր. այլ *յորժամ* միացաւ ընդ բանին և եղև որպէս առօղն և առեալն իշխան և տէր ամենեցուն: - 46. **Այլ ա՛յս է լուծումն, զի *յորժամ* լսես թէ մի է աստուած, զընդ աստուած ասելոյն՝ զԵրրորդութիւնն իմացիր. զի ո՛չ է առանձին, այլ հասարա՛կ է աստուածութիւնն:** - 47. **Այլ ա՛յս է հոգւոյն բարեխօսելն, զի *յորժամ* կամք յաղօթս՝ ո՛չ գիտեմք զպատշաճն խնդրել. ապա հոգին անմռունչ տայ մեզ իմաստ զպատշաճն աղօթել**: - 48. Զի նա գլուխ է մեր՝ և մեք անդամք. *յորժամ* տեսանէ զմեզ ի մեղս՝ հոգա՛յ և ցաւի վասն մեր: - 48. Իսկ *յորժամ* դառնամք ի մեղաց՝ յորդորէ՛ զմեզ ի ծածուկ իմաստիւքն իւրովք, ժուժկալ լինել ի փորձութիւնս և համբերել տանջանաց որով ինքն զփորձ էառ: - 48. Իսկ *յորժամ* զյայլումն լսեն՝ արձակին ի վերայ մեր ասելով, եթէ յայլո՛ւմ է՝ պատահումն է ի հայր որպէս զօրութիւնս առ մեզ. իսկ եթէ զօրացեալ է՝ և ընդ զօրանալն դադարեսցէ ամենայնիւ. շարժումն եղիցի և ոչ շարժօղ: - 52. Եւ թէ արարած է՝ զիա՞րդ հաւատամք և կատարիմք. այսինքն *յորժամ* խնդրեմք և առնումք. զի ո՛չ տան մեզ ըզհայցւածքն որք են արարածք. որպէս անւամբ միայն աստւածք հեթանոսացն: - 52. Նաև բնական քննութեամբ. զի *յորժամ* ասես՝ մի և մի՝ եղև երկու. և այժմ ունի զերկուին բնութիւն: - 55. Իսկ *յորժամ* քակես՝ լինի մի և մի. քակեցաւ այժմ ի յառաջին բնութենէն ըստ քեզ՝ և ունի դեռևս զնոյն համարն: - 55. Դարձեալ՝ *յորժամ* ասի, թէ լսիցէ «ի հօրէ», և կամ «առնուցու», մի՛ իմասցի այնու թէ բղխումն հոգւոյն սրբոյ տակաւին ապառնի էր. զի յաւիտենակա՛ն էր: - 65. Վեշտասաներորդ՝ մանաւանդ զի յոյժ անվայելուչ է կարգել զծառայն ընդ տեառն՝ և զստեղծուածն ընդ ստեղծողին՝ *յորժամ* ա՛յլ է բնութեամբ: - 67. Եւ կամ *յորժամ* որպէս զիւր բարի շնորհէր իւրայնոցն՝ մարմնապէս փչեալ ի նոսա ասելով՝ «առէք հոգի սուրբ»: - 69. Ասեմք եթէ՝ *յորժամ* մի ասեմք բնութիւն բանին և մարմնոյն, այս լինի կամ արիոսին. որ զբանն արարած ասէ և զմարմինն արարած. և այսպէս մի բնութիւն է արարածոյն ասէ. և զբանն ընդ մարմնոյն չարչարելի և մահկանացու: - 81. Իսկ *յորժամ* կամեցաւ արարիչն մարդ լինիլ, բանն աստուած իւրով կատարելութեամբն անձամբ և էութեամբ՝ ո՛չ մասամբ, այլ լրիւ միացաւ անճառապէս ի մարմնի: - 82-83. *Յորժամ* ձեռն քրիստոսի ոչ է աստուած, ապա ուրեմն և բոլոր մարմինն ո՛չ է աստուած. զի բոլորն ի մասանցն բաղկանայ: - 91. Որպէս *յորժամ* ասեմք զձեռն բոլոր և մասն. զի մասն է բոլոր մարմնոյն, և բոլոր առ մատունս ձեռացն: - 92. Իսկ թէ և որոշակի ասես ուղղափառ մտօք, և ո՛չ այն է զարտուղի. *յորժամ* ասես աստուծոյ մարմին և աստուծոյ արիւն. զի որ ինչ է՛ ի յաստուած՝ աստուած է և ո՛չ օտար յաստուծոյ: - 92-93. Զի՞նչ իցէ տըւեալ, *յորժամ* զկատարեալ գիտութիւնն ո՛չ ետ: - 96. *Յորժամ* ինքն ո՛չ ունի յաւիտենից կեանք, այլոց ո՞րպէս տայ: - 99. Եւ է դարձեալ անգիտութիւն՝ *յորժամ* զմիտս տարածեմք յամենայն եղեալս և զնա ոչ գտանեմք, ժողովեմք ի մինն որ արտաքոյ է սոցա. և այնպէս անգիտութեամբ ճանաչի աստուած: - 103. Եօթներորդ՝ աչք հեշտանայ *յորժամ* ի մինն հաստատի: - 104. Ութերորդ՝ աչքն *յորժամ* ընդարձակի՝ հեշտանայ. և միտքն լուծեալ ի կարծեաց: - 104. Ուստի յա՛յտ է *յորժամ* ասեմք Երրորդութիւն աստուած. Երրորդութիւն անեղ. այլ ո՛չ ասեմք **գ** աստուած. կամ **գ** անեղ. այլ մի աստուած և մի անեղ: - 107. Չորրորդ՝ երեք թիւն փոփոխմամբ է. *յորժամ* ասեմք մի և **բ** և **գ**, փոխեցաւ ի միոյն և եղև երկու. և փոխեցաւ յերկուցն և եղև **գ**: - 108. Հինգերորդ՝ զի **գ** թիւն բաժանին ի միմեանց. զի *յորժամ* բաժանես զմի թիւն՝ ո՛չ է երկուքն ընդ նմա: - 108. Վասն է՞ր *յորժամ* փառս տամք, նախ՝ հօր, ընդ նմին որդոյ, և ապա հոգւոյն: - 109. Զի մինն հասարակ է. և միակն մասնաւոր և առանձնակի. զի ամենայն միակ՝ մի է. այլ ամենայն մի միակ ո՛չ է. որպէս *յորժամ* ասեմք՝ մի հօտ. մի շեղջ. մի լիտր. այսպիսիքս մի են. այլ

միակ ո՛չ են: - 109. Որպէս *յորժամ* ասեմք անբան և յիմարութիւն, գերագոյն ունիլ զբան և զիմաստութիւն քան զմերս: - 118. Եւ *յորժամ* ասեմք ունայնանալ, զառաւել զօրութիւնն նշանակէ: - 118. Դարձեալ՝ և այսպէս տեսանի աստուած. *յորժամ* միտք յամենայն եղելոց որոշեսցի. նաև յինքենէ՛ զի եղակա՛ն է...: - 119. Իսկ չորրորդն է խորհրդական աստուածաբանութիւն. *յորժամ* զամենայն զգալի և զիմանալի էութիւն արտաքոյ թողեալ, ի խորս ընթանամք մտօք և մտանեմք յամպն և ի մէդն ըստ մովսէսի. և ապա տեսանեմք զնա արտաքս որոշեալ յամենայն էից: - 122. Որպէս *յորժամ* ասեմք բառնալով՝ ո՛չէ, ո՛չ բան, ո՛չ միտ, ո՛չ որդիութիւն, ո՛չ հայրութիւն. և այլն: - 124. Երկրորդին պատասխանեմք եթէ՝ ո՛չէ նոյն դրութիւն և խոստովանութիւն. որպէս *յորժամ* ասեմք դնելով թէ՝ չա՛ր է. խաւա՛ր է. և մե՛ղք է. ահա այս ուրացութիւն է և պակասութիւն: - 124. Եւ *յորժամ* ասեմք ո՛չէ չար. ո՛չէ խաւար. ո՛չէ մեղք. ահա այս խոստովանութիւն է և ո՛չ դրություն: - 124. Որպէս *յորժամ* ասեմք՝ լո՛յս կեանք՝ և այլն, արտաքո՛յ մնամք գիտութեանն. և *յորժամ* անժամանակ՝ անիմանալի, առաւել մերձենամք: - 132. Բոլո՛ր է՝ *յորժամ* զիմացումն մտաց յամենայն եղելոց առ ինքն ժողովէ՛, և այնպէս բոլորովիմբ յաստուած հպի և միանայ. և ա՛յս է ի բոլոր սրտէ և ի բոլոր մտաց սիրել զաստուած. և զայս ունին ընտրեալքն մարգարէք և առաքեալք: - 142. Իսկ գնդակ որ է կողմնաւոր՝ շարժի հոգին, *յորժամ* բնականապէս լուսափայլի յաստուածային գիտութիւնս տեսութեամբ և մտածութեամբ. և այնպէս հոգէպէս ի յաստուած միաւորի. որպէս աշակերտաց առաքելոց և մարգարէից: - 142. Իսկ ուղիղ շարժի՝ *յորժամ* ի ձեռն զգայութեանց յարացուցիւ և օրինակաւ հպիմք ի նախատիպն աստուած: - 142. Եւ է՞ *յորժամ* իմացումն ի յիշողութիւնն ի տրամախոհութիւնն և յայլս բաժանի, և նոքօք իմանայ և տեսանէ զաստուած. և այս ևս է կատարեալ տեսութիւն. և կոչի սա բնական տեսութիւն: - 142. Միատեսակ է՝ *յորժամ* ըստ ինքեան ժողովէ յամենայն զգայարանաց, և բոլոր և միեղէն սիրով հպի յաստուած. և է՛ այս գերակատար սէր: - 143. Իսկ բազմատեսա՛կ է՝ *յորժամ* ի զգայութիւնս եկեալ բազմանայ: - 143. Նախ՝ զի հակառա՛կ է աստուծոյ, և մարդն պատկեր է աստուծոյ. *յորժամ* տկարանայ ի նախատիպն՝ ընդ պատկերն հակառակի: - 146. Զի ի կատարածի աշխարհի *յորժամ* դադարի գործ դիւացն՝ ամենեքեան միահաղոյն փակեսցին ի դժոխս: - 147. Նախ՝ *յորժամ* սերօբէն ասէր սուրբ, և միւսն երկրորդէր զնոյն. և սա՛ լռեաց զփառաբանութիւն ընկերին երկրորդել աստուծոյ...: - 147. Եւ այլք ասեն այսպէս հակառակիլ ընդ աստուծոյ, *յորժամ* ետես զինքն փառօք և վայելչութեամբ քան զամենայն դասս գերազանցեալ, կամեցաւ մեծ լինիլ ի վերայ ամենայնի և հաւասար աստուծոյ: - 149. Երրորդ՝ անկումն նոցա է՛ր ակնկալութիւն տանջանցն. և զայս մինչ ի քրիստոս ո՛չ գիտացին զպատրաստեալ տանջանս իւրեանց. այլ *յորժամ* զբացախօսութիւն գեհենին լուան ի քրիստոսէ...: - 153. Յնգետասաներորդ՝ ասէ սուրբն դիոնէսիոս՝ թէ վասն այն տայ աստուած սրբոցն նեղութիւնս և փորձութիւնս, զի նեղութիւնն սիրելի և փափագելի՛ է նոցա. և յայնժամ ուրախանան սուրբքն, *յորժամ* ի մարմնական հեշտութեանց հեռանան. և արիանան ի փորձութիւնս. և սակաւ նեղութեամբ ժամանեն ի մեծ հանգիստն: - 159-160. Դարձեալ այսպէս մեկնեն եթէ՝ փորձութիւնն ըստ ինքեան ո՛չ է բարի. այլ պատահմամբ լինի բարի. *յորժամ* համբերութիւնն մերձ դնի և յաղթիցէ. իսկ *յորժամ* համբերութիւն ոչ լիցի, ըստ ինքեան չար և վատ է փորձութիւնն. վասն այն տէրն արգելուլ հրամայէ: - 160. Եւ թէ ոք ասիցէ՝ *յորժամ* գիտէ՛ աստուած զկատարածն, վասն է՞ր տայ ի փորձանս: - 161. Այլ *յորժամ* յաւելաւ քրիստոնէութիւնն, յաւելաւ և կանոնքն: - 166. Զայս և տէրն աղիւ օրինակեաց. *յորժամ* անհամի՝ ո՛չ ինչ է պիտանի հրամայէ: - 166. *Յորժամ* պատահումն ոչ գոյ յաստուած որպէս ասացեր, զԺ ստորոգութիւնս որպէս ուղղեսցուք առ նա: - 171. Երրորդ՝ զի արարած լսելով՝ մի՛ կարծեսցես օտար ի նմանէ զեղեալքս, կոչէ՛ ծնունդ. և *յորժամ* ծնունդ լուիցես, մի՛ կարծեսցես յէութենէն աստուծոյ զեղեալքս՝ ի վերայ բերէ արարած: - 179. Յինգերորդ՝ թէ երկինքն ո՛չ էր բոլորակ՝ այլ քառանկիւնի կամ եռանկիւնի, *յորժամ* շարժէին անկիւնքն՝ յորմէ տեղւոջէ վերանային՝ մնային առանց տեղւոյ. և տեղի անկեանցն առանց մարմնոյ: - 183. Վեցերորդ՝ զի թէ երկինքն ո՛չ էր բոլորակ, յայնժամ արեգակն և այլ աստեղք *յորժամ* գային ի մէջ երկնից, մեծագոյն երևէին...: - 183. Ապա ուրեմն ո՛չ երբէք մեծագոյն երևի աստղ՝ *յորժամ* է ի միջին կէտն՝ քան *յորժամ* է յարևելս կամ յարևմուտս: - 183. Նոյնպէս *յորժամ* ասեմք թէ արեգակն խաւարեցաւ, ո՛չ ի բնական լուսոյն՝ այլ ի զմեզ լուսաւորելոյն: - 186. Եւ *յորժամ* ի միւս կիսագունդն հասանէ, ընդ զ կենդանակերպս հետևեալ՝ բոլորի լոյսն ի նմա. զի ուղղապէս զլոյսն ընդունի: - 187. Նմանապէս և զայլ մոլորականսն ծածկէ *յորժամ* ուղղապէս ընդ դէմ անկանի: - 187. Եւ *յորժամ* առնու զլոյսն յարևոյն, ի յեզրն երկրիս ձևն բոլորակ է՝ խաւար մնա մէջն: - 187. Նոյնպէս *յորժամ* հնանայ և պակսի լոյսն: - 187.

Որպէս յա՛յտ է ի լուսինՆ *յորժամ* ծնանի յարևմուտս. և գայ յարևելս ըստ կարգի կենդանակերպիցՆ: - 189. Եւ դարձեալ՝ *յորժամ* վերադիրՆ լինի **լ**. և **է** երեակՆ է ի միասիՆ ի միում ամի. ասի այՆ կատարումՆ լուսնի. այսինքՆ մասանց թուոյՆ, և ո՛չ իրիՆ: - 192. Այլ կատարումՆ լուսնի է ի վախճանի աշխարհի. *յորժամ* արեգակՆ և լուսիՆ խաւարեսցիՆ որպէս ասէ աւետարաՆՆ: - 192. Այս է *յորժամ* ընթեռՆումք յերկար զպատմութիւՆՆ և լսեմք. իբրու թէ տեսանեմք աչօք. և մտօք վայելեմք: - 192. Նոյնպէս և Նշանակէ՛ զիրեշտակաց բՆութիւՆՆ, որ Նախ ստեղծաՆ անկատար ճանաչմամբ և գիտութեամբ. այլ *յորժամ* երաՆեցաՆ և տեսիՆ զէութիւՆՆ աստուծոյ անընդմիջաբար, յայՆժամ կատարեցաՆ ճանաչմամբ և գիտութեամբ: - 192. Երրորդ՝ զի *յորժամ* կատարիՆ է աւուրքՆ՝ դառՆամք ի յառաջիՆ օրՆ որ է՛ մի և ՆոյՆ: - 193. Նա՛խ՝ զի սկիզբՆ է տարւոյ. *յորժամ* արեգակՆ ի խոյՆ մտանէ: - 197. ՎասՆ այՆորիկ *յորժամ* զիրս հոսականս և շարժունս չափէ՛, հա՛րկ է զի ի ՆոսիՆ հոսեսցի. քանզի միշտ ժամանակՆ անցանէ և հոսի. յանցելոյՆ ի Ներկայս. և ի Ներկայէս յապառՆիՆ: - 199. Այլ և *յորժամ* սատակեցաւ յուլիանոս, զժողովեալ ինչսՆ սուրբՆ բարսեղ բաժանեաց ժողովրդեանՆ. Նոր տարի անուանեալ ի կեսարիայ: - 200. Մարգաց. որ է՛ ժամանակ ածելոյ զմարդ. որ ի դաշտս և ի հովիտս իցեՆ. յայգեստանս և ի բուրաստանս. *յորժամ* արեգակՆ առ շամբՆ և յետ շանՆ իցէ. զի ի **ժգ**Ն՝ մո՛ւտ է ամռանՆ: - 201. *Յորժամ* փայտՆ այրի, ծանրութիւՆ զի՞Նչ լինի: - 202. Եւ զորօրինակ՝ լիտր մի ցորեաՆ, կամ այլ ինչ. *յորժամ* ձեռօքդ բաժանես և ցրուես զհատսՆ, ո՛չ մՆայ կշիռՆ: - 202. Ո՛չ է աստղ. այլ գոլորշի վառեալ ի տարրական հրոյՆ *յորժամ* մերձի ի Նա՛: - 203. Այլ ԱմպՆ լինի, *յորժամ* զօրութեամբ արեգականՆ ի վեր քարշիՆ գոլորշիքՆ ի ջուրց և ի գէջ տեղեաց: - 204. ԻՆՆերորդ՝ *յորժամ* լուծանի՝ ամենևիՆ յարահետ լինի: - 206. Տասներորդ՝ *յորժամ* ջնջի ամպՆ, վերըստիՆ պայծառանայ օդՆ յառաջիՆ մաքրութիւՆՆ իւր: - 206. Արդ՝ *յորժամ* աղբիւրք ջրոյ՝ մերձիՆ յերակՆ հրոյ որ է՛ ծծումբՆ, ջերմանաՆ խիստ կամ թոյլ. մերձ կամ հեռի անցանելովՆ: - 208. Զորօրինակ՝ *յորժամ* մարդՆ մեռանի՝ ջերմութիւՆՆ ի սիրտՆ ժողովի և ապա քաղի: - 209. Ոմանք ի ջրո՛յ ասեՆ զկանաչՆ. և *յորժամ* պակասի ջուրՆ՝ չորանաՆ և սպիտակիՆ: - 212. ՆմաՆապէս և կոչիՆ փայտ. զի ի փտելոյ և յապականելոյ գոյանաՆ այսպէս. *յորժամ* բորբոսի երկիր՝ Նա՛ զարմատՆ ի վայր արձակէ և զբոյսՆ ի վեր: - 214. *Յորժամ* արար աստուած զմարդՆ ի հողոյ, Նաև զանասունքՆ և զգազանքՆ ի հողոյ. Նոյնպէս զլողակս և զթռչունս ի ջրոյ: - 214. Այլ այժմ ի ձեռՆ արուեստից ստացեալ զզէՆս, *յորժամ* պիտոյանայ՝ առՆու և ի գործ ածէ. և *յորժամ* կամի՝ ի բաց դՆէ և հանգչի: - 217. Երկրորդ՝ վասՆ հպարտութեան մարդոյՆ. զի *յորժամ* խայթեսցեՆ զՆա՝ ծանիցէ զտկարութիւՆ իւր. որ և զփարաւոՆ ո՛չ թէ առիւծք կամ առջք հարիՆ, այլ ճանճք և մժղուկք տանջեցիՆ: - 217. Նա՛խ՝ ի փառս աստուծոյ ստեղծաՆ. զի *յորժամ* զզանազան կերպարանս Նոցա տեսանեմք, փառս տամք արարչիՆ: - 217. Նա՛խ՝ զի *յորժամ* մարդՆ անհՆազանդ եղև տեառՆ իւրոյ արարչիՆ, յիրաւի անհՆազանդք եղեՆ և մարդոյՆ անասունք տուեալ Նմա ի ծառայութիւՆ: - 220. Երկրորդ՝ զի ցոր քաՆ իշխէր ինքՆ ի վերայ անասնական մասանց իւրոց որպէս ասացաք, իշխէր և ի վերայ արտաքիՆ անասնոց և գազանաց. իսկ *յորժամ* ապստամբեցիՆ ՆերքիՆքՆ բանականիՆ տեառՆ իւրեանց՝ ապստամբեցիՆ և արտաքիՆքՆ մարդոյՆ տեառՆ իւրեանց: - 220. Երկրորդ՝ և *յորժամ* մարդՆ ապականեցաւ մեղօք, վասՆ է՛ր ի դրախտէՆ հանէր զՆա: - 222. Դարձեալ ասեՆ ոմանք, Նախ քաՆ զուտելՆ ի պտղոյՆ՝ գիտէր ադամ զբարիՆ փորձիւ, և զչարՆ գիտութեամբ. իսկ *յորժամ* եկեր՝ գիտաց զչարՆ փորձիւ, և զբարիՆ գիտութեամբ. այՆ է գիտութիւՆ բարւոյ և չարի: - 223. Իսկ եթէ ոք հարցանէ, ապա վասՆ է՞ր ստեղծաՆ ծննդական անդամքՆ *յորժամ* ո՛չ ծնանէիՆ ի դրախտիՆ: - 226. Քսանե**դ**՝ Այլ կենդանիք *յորժամ* ծնանիՆ ի մօրէ կանգնիՆ, և մարդս ո՛չ: - 228. Նա՛խ՝ որպէս ասացաւ ի վերոյ, հողՆ ունի զայլ **գ** տարերքՆ ի յինքՆ խառՆեալ. *յորժամ* ի հողոյ ասէ՝ իմանալի զդ տարերս: - 229. Վեցերորդ՝ զի տեսցէ ադամ թէ յապականացու հողոյս անապական մարմիՆ կազմեցաւ վասՆ փառաց. և *յորժամ* կորոյս մեղօքՆ եղև ապականացու, ինքՆ իցէ պատճառ ապականութեաՆ իւրոյ: - 229. Եօթներորդ՝ զի հողՆ ի հողմոյ փոշի լինի. այսպէս *յորժամ* հողմահուՆ շնչէ ի մարմինս մեր՝ ցրուի և լինի փոշի: - 229. Դարձեալ ի հողոյ ստեղծ ի Նախատինս սատանայի. զի յամօթ լիցի *յորժամ* տկարս այս և կաւեղէՆս ի փառսՆ մտանէր յորմէ Նա՛ որ փառաւորՆ էր անկաւ: - 229. ...մարդՆ հեշտանայ առաւել գեղեցկութեամբ զգալեացս. *յորժամ* տեսանէ աչօքՆ զերկիՆ և զերկիր. և ժողովէ՛ զճշմարիտ գիտութիւՆ Նոցա և հեշտանայ: - 233. Տասներորդ՝ զի կիրք մարմՆոյՆ հեղուՆ ի հոգիՆ. որպէս *յորժամ* մարմիՆՆ ՆՆջէ՝ և հոգիՆ թմրի և անգործ մՆայ...: - 233. Որպէս ասեՆ զշամիրամէ թէ՝ *յորժամ* սպանաւ արա ի պատերազմիՆ, զայլ ոմՆ Նման ՆորիՆ պատուեաց և ասաց թէ աստուածքՆ յարուցիՆ: - 238. Որպէս

պատմի ի դատաւորքն. *յորժամ* գեղէոն զփողսն հնչեցոյց, այլազգիքն ինքեանք զինքեանս ի սուր մաշեցին ի գիշերի: - 238. Զինչ է *յորժամ* մարդ ի վեր նայի հեշտանայ աչքն. և *յորժամ* ի վայր` դժուարի: - 239. Նմանապէս և այն. *յորժամ* զամենայն ինչ թողումք և ի լոյս ճրագին նայիմք. զի ազգական է իւր` զայն սիրէ և տեսանէ: - 239. Վասն այն *յորժամ* մարդն տկարանայ` և այրեցած արիւնն աւելնայ, մազն ծորի՛ և երկայնանայ: - 240. Իսկ *յորժամ* առողջանայ մարդն և արիւնն յստակի, արիւնն միս լինի, և մազն ո՛չ աճէ: - 240. *Յորժամ* պալղամն շատանայ ի մարդն, մազն նօսրանայ. վասն այն մարդն ի ծերութեանն լինի ճաղատ: - 240. *Յորժամ* ծերանայ մարդն, և սպիտակ ջուրն որ է պալղամն առաւելու, յայնժամ մազն ընդ սպիտակ ջուրն ի դուրս անցանէ և սպիտակի՛: - 240. Նախ` ի տղայութեան հասակն. *յորժամ* ծնանի տղայն` ունի զհողմն արևելից տաք և գէջ: - 240. Մինն տաք է և ջիլն հով. զի ջիլն ձկտի *յորժամ* յագենայ. և կծկի *յորժամ* քաղցենայ: - 242. Վասն այն *յորժամ* ննջէ մարդն ի վերայ ձախ կողմանն, շուտո՛վ հալի կերակուրն քան ի վերայ աջ կողմանն: - 242. Քարշողականն է` *յորժամ* կծկի և քաղցի, ներքուստ և արտաքուստ խնդրէ կերակուր: - 242. Ունականն է` *յորժամ* ժողովէ զկերակուրն` ձկտի և լայնանայ և փակէ՛ զամենայն դրունսն որ ի ներքոյ և ի վերոյ և ի կողմանէ, զի մի՛ թափեսցի կերակուրն: - 242. Յալողականն է` *յորժամ* ի ջերմութենէն եփի կերակուրն և հալի որպէս ապուր ի պտկի. և հալի ամենայն կերակուրն մինչև ի **զ** ժամն. և է՛ որ պակաս և աւելի. վասն առողջ և տկար մարմնոյն: - 242. Վտարականն է` *յորժամ* եփի և հալի կերակուրն, բանա՛յ զդրունսն և բաժանէ զնոսա: - 242. Վասն է՞ր մարդ *յորժամ* երկնչի դեղնի, և յամաչելն շառագունի: - 245. Սիրտն իշխա՛ն է անձինն. *յորժամ* երկնչի` զարիւնն առ ինքն ժողովէ իբր զօրք առ թագաւորն. և մնայ մորթն բնական գունովն դեղին: - 245. Նոյնպէս *յորժամ* ամաչէ` զարիւնն սփռէ ի մարմինն, և քօղ արկանէ վասն ամօթոյն. յայնժամ յարենէն շառագունի մորթ երեսացն: - 245. Նոյնպէս *յորժամ* բարկանայ` կապուտի: - 245. Երրորդ` զի բանականութեամբ կարեն սանձիլ սոքա, *յորժամ* կամեսցին: - 246. Եւ *յորժամ* զանազան շրջի, չարիք գոն ի սիրտն: - 246. Իսկ զբանականն և զիմաստութիւնն` կատարեալքն հասակաւ. *յորժամ* բանին մասն կատարի ի մարդն: - 251. Երրորդ` ևս յայտնի. զի ընդ նիւթոյ կազմութեանն համանգամա՛յն է և երևումն ոգւոյ. զի *յորժամ* անկատա՛ր է նիւթն, միայն կերակրիլն երևի ի նմա: - 255. Եւ *յորժամ* կազմի զգայութիւնն, շունչն երևի ի նմա: - 255. Եւ *յորժամ* ծնանայ ի կերպ մարդոյ, յայնժամ բանական հոգին երևի ի նմա ի խնամոցն աստուծոյ: - 255. Եւ զոր օրինակ` տունկ ի յերկրի տնկեալ` նախ դալարի. և *յորժամ* հաստատի ծաղկի. և *յորժամ* ևս հաստատի` ապա պտղաբերի: - 255. Այսպէս և հոգին ընդ անկատար նիւթոյն ունի զկերակրիլն. և *յորժամ* հաստատի զգայութեամբն ծաղկի. և յևս հաստատիլն` բանականութեամբ պտղաբերի ի վերին խնամոցն որպէս պտուղն այն յարեգակնէ՛: - 255. Եւ *յորժամ* ծնանայ դէմքն, ի նոյն ժամն երևի յինքեան պատկերն մարդոյ: - 255. Եւ թէ ոք ասիցէ, *յորժամ* ունի զկենդանութիւն սերմն այն` ընդէ՞ր ի վիժումն մեռանի: - 256. Զի *յորժամ* ասես մին` այս առաջին մասն է երրորդին. և երկուքն երկու մասն: - 259. Եւ *յորժամ* ասես **գ**, յայնժամ զառաջին թիւսն ունելով յինքեան` կատարումն եղև նոցա: - 259. Այսպէս և զգայականն և տնկականն մասունք են բանականին` նախ եղեալ ի մարմինն. և *յորժամ* բանականն հեղի ի մարմինն, յայնժամ և սոքա հեղին ընդ նմա. զի զօրութիւնք և մասունք են նորա ըստ օրինակի նախասացեալ երրորդ թուոյն: - 259-260. Եւ *յորժամ* ծագէ՛ արեգակն, յայնժամ և նշոյլքն իւր ընդ իւր ծագեն և ինքեամբ լուսաւորեն զմեզ որպէս նախ նշուլիւքն: - 260. Եւ *յորժամ* բաժանի արեգակն ի մէնջ, նշոյլքն իւր անբաժանելի են ի նմանէ: - 260. Դարձեալ ըստ կարգիս հարցանեմ թէ *յո՞րժամ*, և ի քանի՞ս սկսանի ներգործել տնկականն և զգայականն և բանականն: - 261. **Խնդրեմ և զայս ուսանիլ թէ ընդէ՞ր է` զի մարդս կատարեալ կենդանի է քան զանասունս. և *յորժամ* ծնանին նոքա ահա՛ ի նոյն ժամն կանգնին յոտից վերայ և գնան, և այլն. իսկ մարդն ոչ**: - 266. Երկրորդ` զի բանական միտքն և զգայականն խափանեալ է ի գործոյ *յորժամ* ննջէ ոք: - 268. Զի թէ ո՛չ էր ասացեալ ընդ պատկերին զնմանն լինիլ, ամենայն ոք պատճառէր, և զմարդն պաշտելով անկանէր ի կռապաշտութիւն. վասն որոյ ասաց զնմանն, թէ *յորժամ* տեսցեն պատկերակից աստուծոյ զմարդն բանականութեամբ անմահութեամբ և այլովքն որ ինչ է ի հոգիս, իմանայցեն և զզանազանութիւնն աստուծոյ: - 274. Ի լուսաւոր պատմուճանէն, *յորժամ* կերին ի պտղոյն և ծանեան զի մերկ էին և արարին սփածանելիս: - 279. Եւ կամ որպէս ճանապարհորդք հեռացեալք ի տանէ՝ *յորժամ* դարձցին վերստին ի տունս իւրեանց, նախ թողուն զվերջին բնակետղն ուստի դիմեցինն երթալ: - 280. Եւ զանչարչարութիւնն ի վերնատունն. *յորժամ* զմարմինն իւր ուտել ետ աշակերտացն` անչարչարելի էր ներգործութեամբ և ոչ թէ զօրութեամբ: - 282. Որպէս կայեն *յորժամ* սպան զաբէլ,

պատճառեաց ծնողացն եթէ զնորա պատարագն ընկալաւ աստուած և վերացոյց ի դրախտն: - 290. Եւ *յորժամ* կորոյս զդրախտին կեանքն, այլ ոչ հասին ի նոյն: - 290. Եւ այլք ասեն ընդդէմ այսմ, եթէ յետ **ռ** ամին ի դրախտէն փոխիլոց էին յարքայութիւնն թէ պահէին զպատւիրանն. և *յորժամ* ելին ի դրախտէն՝ ի նոյն թիւն ո՛չ հասին: - 290. Առաջին պատճառ, զի ընդ ինքեան մարդկայինս բնութիւն այլայլո՛տ է և ցաւօք. և *յորժամ* աստուած ևս բազմացուցանէ, ո՞վ կարէ զաղէտն պատմել: - 292. Եւ *յորժամ* փոփոխի այս, այսինքն ի հանդերձեալն, յայնժամ ի լեզուս հրեշտակաց խօսիցիմք: - 298. Զի *յորժամ* աբրահամ սեղան կանգնեաց, եցոյց զքահանայութիւն: - 300. Եւ *յորժամ* կոտորեաց զթագաւորսն քոդող գոմորայ, եցոյց թէ թագաւոր թագաւորա՛ց է: - 300. Եւ *յորժամ* խօսեցաւ աստուած ընդ նմա, եցոյց զմարգարէութիւնն: - 300. Չորրորդ՝ զի *յորժամ* փրկեսցի ղովտ ի սոդոմայ, զօրութիւն աստուծոյ յայտնի լիցի: - 302. Նոյնպէս *յորժամ* բնակին բարեպաշտք ի մէջ անհաւատից, Նա՛խ՝ զի աղօթք նոցա պահապան է նոցա: - 302. Երկրորդ՝ հրեշտակք անդրանիկք են քան զմարդ ստեղծմամբ. և *յորժամ* մեղան դևքն՝ խոտեցան և եղեն կրտսերք. և մարդն ել ի տեղի նոցա և եղև անդրանիկ: - 310. Որպէս բժիշկք *յորժամ* հիւանդաց դեղ տան, նախ ինքեա՛նք զճաշակն առնուն զի հաւատարիմ լիցի: - 316. Յնգետասաներորդ՝ առիւծն *յորժամ* ննջէ՝ բա՛ց ունի զաչսն: - 316. Յինգերորդ՝ ի լերինն մասեայ *յորժամ* ել նոյ ի տապանէն՝ օրհնեաց աստուած զնա՛ և զորդիսն նորա ասէ գիրն. և հայր և սերմ արար մարդկան ազգի: - 319-320. Դարձեալ գիտելի՛ է, զի յոբ կրկնելով զբանսն՝ ուղղէ՛ր զբարեկամսն և ընկրկէ՛ր զսատանայ. զի այսպէս ամենայն ոք կարէ՛ յաղթել սատանայի *յորժամ* զընկերն ուղղէ ի բանս կամ ի գործս կամ ի հաւատս և յայլսն. յայնժամ սատանայ թիւրի և հեռանայ: - 323. Այլ *յորժամ* զընկերն թիւրեմք չար յաղթութեամբ, յայնժամ սատանայ ուղղի և ուրախանայ: - 323. Երկրորդ՝ թիւրէ զճշմարտութիւնն *յորժամ* զչարն բարի ասէ և զբարին չար: - 325. Եւ թէ ոք ասիցէ՝ *յորժամ* սոյնպէս չարք էին՝ զնոցա բանքն ընդէ՞ր գրեաց հոգին սուրբ: - 325. Մովսէս **խ** ամեա էր *յորժամ* փախեաւ: - 330. Զի առաջին խորհուրդ է մեր, *յորժամ* միտքն առ աստուած ամբառնայ զվերինն խորհելով: - 331. Եւ միջին խորհուրդ է, *յորժամ* ի քննութիւն էիցս պարապի: - 331. Իսկ վերջին խորհուրդ է, *յորժամ* վասն հարկաւոր պիտոյից կերակրոյ և հանդերձի՝ յերկրաւորս հպիմք: - 331. Երրորդ՝ թագաւորական գաւազան էր ադամ ի դրախտին. և *յորժամ* մեղաւ՝ անկաւ ի յերկիր և եղև օձ մեղաւոր: - 332. Երկրորդ ա՛յն է՝ որ *յորժամ* լինի կամքն մարդոյն չար և խիստ ի ծածուկ, և զայն յայտնէ՛ աստուած. որպէս նաբուգոդոնոսորայ. որ ունէր սիրտ գազանի՝ ի կերպարանս գազանաց փոխեցաւ: - 336. Եւ *յորժամ* ի զգաստութիւն եկն՝ ասէ «սիրտ մարդոյ տուաւ նմա»: - 336. Երրորդ, զի մեր ախորժակացս հետագայ և աստուծոյն. զի *յորժամ* ի բարին լինիմք՝ օգնէ՛. և ի չարն թո՛յլ տայ. ա՛յն է խստացուցանելն զսիրտ մարդոյ: - 336. Այսպէս և քրիստոնեայք *յորժամ* ելանեն ի կենաց աստի, կողոպտեսցեն զդևս և ապա՛ ելցեն: - 336. Երկրորդ՝ *յորժամ* յերկրի երևին, և պակնուն տեսօղքն երևմամբ նոցա, վկայք լինին փառաց ամենազօրին: - 345. Ի յա՛յս միտս *յորժամ* խաչ նկարեմք, զծագ մատին աջոյ մերձ ի բոյթն առնեմք որ է՛ ի համարն **գ**երորդ. զկէս զին նշանակելով: - 345. Եւ բաց յայսցանէ **բ** ակն յանդիմանութեան զոր անդամանդեայ կոչէին, և էր ի պճղնաւոր զգեստին ի վերայ ուսոց քահանայապետին *յորժամ* մտանէր ի սուրբն սրբոց երիցս ի տարւոջն, ի տօնի զատկին և յիսներորդացն և ի քաւութեանն: - 349. Վասն որոյ և յաւուրս զաքարիայի հօրն յովհաննու *յորժամ* յամեաց ի տաճարին և ել, ակնունէր ժողովուրդն տեսանել զա՛կնն և տե՛սին լուսափայլ սպիտակացեալ իբրև զձիւն...: - 349. Զորօրինակ թագաւոր ոք *յորժամ* լսէ՛ զգոյժ որդւոյ իւրոյ մեռելոյ, խորտակէ՛ զթագն, և զամենայն ինչ որ վասն նորա՛ է: - 349-350. Որպէս *յորժամ* լցան մեղք ամուր հացւոցն ի չորրորդ դարուն՝ սատակեցան ի ձեռն յեսուայ: - 351. Ապա ուրեմն յերրորդ և ի չորրորդ ազգն հատուցանէ աստուած զմեղս՝ *յորժամ* վասն գործեաց զյամառեալն ի մեղս պատժէ՛: - 351. Դարձեալ՝ աստուած յառաջնումն ծննդեան *յորժամ* զյանցաւորս ըստ բնական մեղացն՝ ջրհեղեղաւն ջնջեաց. յերկրորդումն ծննդեան *յորժամ* զյանցաւորս ի կռապաշտութիւն՝ կարմիր ծովովն ընկղմեաց. յերրորդումն ծննդեան տուժեաց, *յորժամ* զյանցաւորս գրաւորական օրինացն պատերազմօք սատակեաց: - 351. Ի չորրորդում ծննդեանն զմեղս դատապարտեսցէ *յորժամ* զարհամարհօղս աւետարանին՝ վերջին հրովն այրեսցէ: - 351-352. Եւ մին *յորժամ* զլրտեսքն առաքեցին ի կագիսա. և **խ** օր յամեցին և մովսէս զ**խ** պահեաց: - 353. Գառն՝ որդիք քրիստոնէի. և Ուլն՝ որդիք հեթանոսի *յորժամ* գան յեկեղեցին սրբին և նւիրին աստուծոյ: - 358. *Յորժամ* զգործ քահանայի ունիցին՝ ո՛չ է մեղք. այլ սրբութիւն: - 363. Այսինքն *յորժամ* խոստովանին և փոխին յապաշխարութեան վարս, պատառեն զմեղս

և սրբին ի գործեցեալ մեղացն: - 367. Որ նշանակէ՛ սերմն զգործն. որ քանի ի մեզ է՝ ո՛չ է պիղծ. և *յորժամ* գործի՝ պղծէ՛: - 369. Եւ լինի տեռատես, *յորժամ* մանուկ ո՛չ լինի յարգանդին և ի ստինսն զի սնո՛ւնդ է մանկանն: - 369. Առաջին՝ շաբաթն. *յորժամ* դադարիմք **զ** շարժմամբ և **ե** զգայութեամբ ի մեղաց գործոց: - 372. Զի վարդավառին ա՛յն է, *յորժամ* կրկին **խ** պահեաց մովսէս ի լեառն և լուսաւորեցան երեսքն. վասն այն զկնի երկու յիսնակացն տօնեմք: - 373-374. Նա՛խ՝ զի *յորժամ* ճշմարիտ սրբութիւնն գայցէ, հաւանեսցին որ է՛ արիւնն քրիստոսի...: - 383. *Յորժամ* սուրբ էր մոխիր երնջոցն, վասն է՞ր զմերձեցեալսն պղծէր: - 384. *Յորժամ* և զծեռն դնեն ի գլուխ մեղուցելոյն: - 384. Վասն է՞ր *յորժամ* զգողացեալն խոստովանի ասէ՝ և խոյ մի ատտուծոյ նուիրէ՛: - 384. Երրորդ՝ *յորժամ* ի խոստովանութիւն և յապաշխարութիւն գայ, լինի ներելի և ակամայ. զի թէ նախ քան զմեղանչելն ակամայն, և եթէ յետ մեղացն ակամայն, լինի զղջմամբն ներելի և թողելի: - 385. Զի թէ անիծեալ էր, *յորժամ* ժողովուրդն անկաւ ի սատակումն ի բելբէքովր, ասէին թէ ի նորա անիծիցն եղև: - 388. Զի ակամայ սպանօղք զերծանիցին անդ մինչ քահանայն կենդանի իցէ. և *յորժամ* մեռանիցի քահանայն, ապա գնասցեն ի տեղիս իւրեանց: - 392. Զայն ցուցանէ, զի մեռանիլն քահանային՝ ազատութիւն էր նոցա, յօրինակ քրիստոսի. *յորժամ* մեռաւ վասն աշխարհի, ազատեցան մահապարտքն: - 392. Նա՛խ՝ յէգիպտոս ընդ փարաւօնի. *յորժամ* եմք աստ: - 393. ...և ապա ըստեամբք կերակրէ զնա մայր իւր բանիւն աստուծոյ. զոր ասեն յաշխարհի, եթէ զմին դուռն փակէ աստուած, նա զերկուքն բանայ. զի *յորժամ* զմին դուռն պորտին փակեցաւ, **բ** ստինքն բացան: - 397. Զայն ցուցանէ որ պատճառաւ իրիք կամ պոռնկութեամբ կամ այլ ինչ *յորժամ* բաժանին, առանց ամուսնութեան մնասցեն թէ երկուքն են բաժանմանն պատճառ, մինչև հաշտեսցին: - 401. Եօթներորդ՝ *յորժամ* անցանեն ընդ յորդանան մկրտութեամբ: - 402. Ասա՛ թէ՝ քահանայիցն հրամայեաց ի բաց կալ յամուսնութենէ *յորժամ* մտանէին ի տաճարն և ի խորանն. և *յորժամ* լսէին զօրէնս աստուծոյ զօրեայ սրբեցան: - 404. Եւ *յորժամ* է զօրութեամբք հոգւոյ յաղթիցեն նոցա, փախիցեն յէ զգայարանաց մարդոյն եօթնեկի մահացու մեղօք. զայս կատարելո՛ցն է իմանալ. և ո՛չ մեզ տկարացս: - 404. Եւ երկոքին սոքա առ մեզ եկեալ, *յորժամ* չարաց բարի առնէ, ողորմութիւն է: - 408. Եւ *յորժամ* բարեացն բարի, և չարացն չար, արդարութիւն է: - 408. Ուստի յա՛յտ է, զի *յորժամ* ի սպառնալն դառնամք ի մեղաց, ո՛չ սրտմտի նա: - 408. Երկրորդ՝ ի խրատ մեղաւորաց. զի *յորժամ* գիտենան թէ ո՛չ յաջողի ճանապարհ մեղաւորի, արգելուն ի մեղաց: - 408. Երկրորդ՝ *յորժամ* երեսքն լուսաւորեցան որպէս ադամայն ի դրախտին՝ և ի յարութեանն: - 409. ...իսկ *յորժամ* սպասաւորեաց հրեշտակապետն՝ զտիրական անունն ի սաստ կոչելով. յայնժամ ամպ ինչ լուսաւոր ծագեալ ի տեղւոջն, շիջոյց զերևումն չարին: - 410. Սա՛ ետես զգեղմն իմանալի *յորժամ* ծեծէր զցորեանն ի կալն: - 420. Երեսունևմի, ջուրն կակուղ եղ ի կարծր ծնօտէն *յորժամ* խնդրեցաւ: - 424. Ա՛րդ՝ *յորժամ* կենդանի էր դառնութեամբ և սգով իջոյց ի գերեզման. այժմ մեռելո՛յն երկրպագէ: - 429. *Յորժամ* մեղայ ասաց՝ վասն է՞ր ոչ եբարձ զպատիժն. զի ահա՛ խայտառակեցան կանայք նորա: - 432. Չորրորդ՝ թուեաց զնոսա, զի *յորժամ* մարդամահն լինի, գիտասցեն զորքանութիւն մեռելոցն, և զծանրութիւն մեղացն: - 434. Երկրորդ՝ զի *յորժամ* ուխտէ մարդ, ի նոյն ժամն դադարի ցասումն աստուծոյ. ապա *յորժամ* կատարեմք՝ երևի մեզ: - 435. Տե՛ս, զի *յորժամ* կոտորեաց զիռսն՝ ասացաւ հրեշտակին արգելուլ զսուրն: - 435. Եւ եփրեմեանցն զկազելն առ յուդա. ի ցոյցս հրեշտակացն *յորժամ* արար փրկութիւն մարդկան ազգի: - 438. Այլ որ հրամայեցաւ սիմէի ոչ ելանել յերուսաղէմէ. և *յորժամ* ել մեռաւ: - 439. Տասներորդ՝ *յորժամ* եկն հեզութեամբ լսէր ի նմանէ. իսկ զայս ամենայն համեմատելով ի վերայ հրէիցն՝ յիրաւի ուրեմն դատապարտեսցէ զնոսա ի դատաստանի: - 442. Զի *յորժամ* գայր ագռաւն ի միոյն բերանն հաց դնէր աստուած, և ի միոյն միս. և ամբողջ բերէին առ նա: - 443. Եւ *յորժամ* ուտէր՝ նոցա փշրէր զմնացեալսն: - 443. Իսկ ի մահուն որ յարոյց զմեռեալն *յորժամ* մերձեցաւ ի յոսկերսն եղիսէի, ի տիպ մահուն քրիստոսի որ մահուամբն մեզ կեանք և յարութիւն շնորհեաց: - 446. Վասն է՞ր հարաւ ովսիայ *յորժամ* խոստացաւ խաղաղութեամբ ննջել: - 446. Եւ *յորժամ* զղջանամք ի մեղաց՝ նախ խոստովանութեամբ շինեմք զտաճար սրբութեան մերոյ. և ապաշխարութեամբն որ է՛ փոխարէնքն՝ կանգնեմք զպարիսպն եօթնիւք զգայութեամբք: - 448. Եւ էր սաղմոն իշխան ցեղին յուդայ *յորժամ* անցոյց զժողովուրդն ընդ յորդանան յեսու: - 452. Եւ գիտելի է, *յորժամ* ասի յաղագս աստուծոյ հաւատարիմ գոլ. ըստ այնմ թէ «աստուած հաւատարիմ է» և այլն...: - 457. Նա՛խ՝ *յորժամ* հատուցանէ ումեք ըստ արժանեաց: - 458. Երկրորդ՝ *յորժամ* խոստացեալն հատուցանի: - 458. Երրորդ՝ *յորժամ* անկատարն կատարի: - 458. Երրորդն երևի *յորժամ* աստուած արդարացուցանէ զմեղաւորն. *յորժամ*

պատրաստէ՛ զինքն առ շնորհն գործելով զբարին: - 459. Եւ *յորժամ* փոխեցաւ առ քրիստոս՝ **կ** ամաց էր: - 461. Նոյնպէս պա՛րտ է ամենայն մարդոյ *յորժամ* լսիցէ զբանն, նախ խորհիլ և հարցանել, և ապա՛ հաւանիլ: - 465. Երրորդ՝ *յորժամ* ետ ողջոյն եղիսաբեթի: - 465. Այլ *յորժամ* նկուն եղեն օրէնք ամենայն, և ո՛չ կարեցին փրկել. յետոյ եկն և երևեցաւ նոյն ինքն օրէնսդիրն և փրկեաց զմեզ: - 467. Եւ զառաջինն կոչի անդրանիկ՝ *յորժամ* եղև ի բազում եղբարս. լինելով մարդ և որդի մարդոյ: - 472. Զօծումն մարմնական ընկալաւ ի պոռնիկ կնոջէն *յորժամ* եբեկ զշիշ իւղոյն ի գլուխ նորա ի տան սիմոնի: - 474. Իսկ զօծումն մարտի՝ *յորժամ* վարեցաւ ի հոգւոյն յանապատ և յաղթեաց հակառակին: - 474. Իսկ զօծումն հիւանդաց եցոյց ինքեամբ յայլս. *յորժամ* զանկեալն ի ձեռս աւազակաց ծիթով և գինւով բժշկեաց: - 474. Եւ զօծումն զմռոյ՝ *յորժամ* թաղեցաւ: - 474. Եւ զօծումն թագաւորական՝ ի մարենայ քեռէն ղազարու. *յորժամ* նստաւ ի վերայ յաւանակին: - 474. Եւ զօծումն զօրութեան՝ *յորժամ* օծաւ արեամբ ի վերայ խաչին և քակեաց զամուրս հզօրին և էառ աւար: - 474. Իսկ զօծումն հոգւոյն սրբոյ՝ *յորժամ* էջ աղաւնակերպ ի վերայ նորա: - 474. Այլ մեք այսպէս խոստովանիմք. եթէ օծաւ բանն աստուած ի հոգւոյն սրբոյ *յորժամ* յղացաւ մերովս կերպիւ յորովայնի...: - 475. Հինգերորդ՝ միաւորութիւն սովորեցաք կոչել *յորժամ* նիւթ ինչ աննիւթով կերպարանեալ տեսանի տեսակաւ: - 476. Եւ *յորժամ* հաւատան ի քրիստոս և մկրտին, ջնջի գիր նոցա և անէծքն: - 482. Եւ քրտամբ *յորժամ* քիրտն հոսէր յերկիր: - 491. Երակ հատեալ, *յորժամ* բևեռօք և գեղարդեամբ խոցեցաւ: - 491. Ընպելեաւ, *յորժամ* ճաշակեաց քացախ ընդ լեղի: - 491. Սպեղանեաւ, *յորժամ* երեսք նորա թքով մածեցան: - 491. Յօշարակաւ մաճնաւն, *յորժամ* զմարմին և զարիւն իւր ետ աշակերտացն յետ ընթրեացն: - 491. *Յորժամ* հայր մատնեաց զորդի, ըստ այնմ «որ յիւր որդին ո՛չ խնայեաց. այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա՛»: - 491. Զի թէպէտ սատանայ էր գերեալ զմարդն, սակայն ի գերութիւն նմա հա՛յր մատնեաց *յորժամ* պատժեաց զնա: - 492. Այլ և խաչաձև ընթանայ նաւ ի վերայ ջուրց *յորժամ* լարէ հողմ զարմիոնն. կամ տարածեալ թևօք հասանին ի նաւահանգիստն: - 494. Զոր օրինակ՝ բժիշկն *յորժամ* հիւանդին զդեղն տայ, նախ ինքն ճաշակէ զի հաւատալի լիցի: - 497. Ուստի յա՛յտ է զի *յորժամ* կամէր՝ քաղցնոյր և ծարաւէր: - 501. Ասեմք եթէ՝ ոչ ինչ գոյր նոցա արգելք հաւատոյ *յորժամ* լոյս ծագեաց քրիստոս ի դժոխս: - 508. Իսկ հոգիքն ի դժոխս *յորժամ* տեսին զքրիստոս, այն էր ժամանակ փրկութեան նոցա և ընդունելոյ զողորմութիւն. յաղագս որոյ հաւատովք արդարացան նոքա միայն ի նոյն ժամն: - 508. Դարձեալ պատճառեն թէ՝ *յորժամ* զնկանակն և զձուկն աճեցոյց քրիստոս՝ մե՛րձ էր զատիկն: - 510. Այս է, զի *յորժամ* ի մէջ գիշերին հրամայեաց հրեշտակն գնալ և պատմել աշակերտացն, ա՛յլ կանայքն որ ընդ նմայն էին՝ գնացին...: - 515. Նախ՝ խորհրդաբար. ի **Ե** շաբաթոջ աւուրն յերեկոյն թաղեցաւ ի սիրտ առաքելոցն ճաշակմամբ մարմնոյն. և յերեկոյի կիրակէին տեսին զտէրն *յորժամ* դրօքն փակելովք եմուտ առ նոսա: - 516. Արդ մի՛ մերձենար դու յիս անկատար գոլով. որպէս մայր քո եւա ի ծառն գիտութեան. *յորժամ* առ բնութեամբ իմ հայր՝ և ձեր ըստ շնորհի՝ և աստուած մարմնոյս իմոյ ես ելանիցեմ, որոտմամբ իջեալ հոգին զձեզ կատարէ՛. արժանաւորիք յայնժամ առ իս մերձենալ: - 518. Վասն է՞ր *յորժամ* յարեաւ իսկոյն ո՛չ համբարձաւ այլ յետ **խ** աւուր: - 520. Նա՛խ՝ ի կողմանէ պարգևողին. զի *յորժամ* քրիստոս նստեալ լինէր ըստ մարմնոյ ընդ աջմէ հօր իբր զթագաւոր փառաց յաթոռ թագաւորութեան իւրոյ, յայնժամ մեծագոյն լինէր պարգևք հոգւոյն տուեալ ի փառաւոր քրիստոսէ աստուծոյ: - 521. Նմանապէս և առ այս ասեմք, թէ ո՛չ ինչ է զանազանութիւն. զի *յորժամ* աւետարանն բանն քրիստոսի է ճշմարիտ, և քրիստոս աստուած է ճշմարիտ. ապա ուրեմն աւետարանն բանն աստուծոյ է ճշմարիտ: - 530. Ա՛րդ՝ *յորժամ* ամենայն ինչ նոյն է սուրբ Երրորդութեանն, որով յա՛յտ է՝ թէ հայր խօսի, և թէ որդի, և թէ հոգին սուրբ, մի և նոյն բանիւն խօսին. ապա ուրեմն ո՛չ է անյարմար եթէ հայր նոյն բանիւն վկայեսցէ ի վերայ որդւոյ. զի որդի և հայր նշանակէ զյատկութիւն անձանցն: - 530-531. Զորօրինակ, *յորժամ* վկայեսցէ թագաւորն ներտրամադրեալ բանիւն ի վերայ գրեալ բանին իւրոյ եթէ՝ ստուգապէս սա՛ է իմ գիր և բան: - 531. Յայս միտս տէրն *յորժամ* խոստացաւ տալ զիշխանութիւնս պետրոսի՝ ասէ «մարմին և արիւն ո՛չ յայտնեաց քեզ. այլ հայրն իմ որ յերկինս է»: - 539. Եւ *յորժամ* առաքելոցն ետ՝ նախ փչեաց ի նոսա զհոգին սուրբ, և ապա ետ իշխանութիւն կապելոյ և արձակելոյ: - 539. Եւ *յորժամ* ել արտաքոյ քաղաքին թողեալ զկապանս սողոմոնի՝ սպանաւ: - 540. Վասն որոյ ի վերնատունն *յորժամ* փչեաց յառաքեալսն՝ նախ ետ զարձակելն և ապա զկապելն: - 541. *Յորժամ* անիծիւք աքսորեցին զներսէս եպիսկոպոս որ եղև աղանդովն ներսէսի, և այլայլեաց զկարգ և զուղղափառութիւն հաւատոյ: - 545. Զոր յառաջին ամին

*յորժամ* նստաւ կաթողիկոս տէր սիմէոնի, ի ձեռն տէր եղիայի մեծահանդէս ժողովմամբ պայծառացոյց զեկեղեցի կանոնական հաստատութեամբ ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս ամէն: - 545. Երրորդ՝ զի յետ համբարձմանն *յորժամ* էջ հոգին սուրբ, արար զնոսա կաթողիկոսունս առ հասարակ: - 546. Եւ թէ ոք ասիցէ, *յորժամ* համակարգ են իշխանութեամբ ամենայն երկոտասանքն, ապա ո՞րպէս է գլուխ առաքելոցն պետրոս: - 546. Զի առաքեալն թադէոս *յորժամ* ձեռնադրեաց զադդէ յուռհայ, և ապա՛ ի կեսարիայ եկն և ձեռնադրեաց առաջին եպիսկոպոս զթէոփիլոս. զայն յորոյ անունն գրեաց Ղուկաս զաւետարանն և զգործքն առ թէոփիլոս: - 548. Զորօրինակ՝ *յորժամ* ասիցէ ոք զբարին բարի գոլ, այս ըստ ինքեան ճշմարիտ է: - 550. Եւ *յորժամ* ասիցէ զբարին ոչ չար գոլ, ճշմարիտ է և այս. այլ ըստ պատահման է որպէս ցուցաւ: - 550. Այլ ա՛րդ՝ հեղձուցեալն՝ սուրբ և կերակրելի է նոցա. և պոռնկութիւնն անխտիր *յորժամ* կանգնեն զգլորեալն: - 552. Եւ այլք գոն յոլովք. զի *յորժամ* պարապով ոք քննիցէ գտանէ: - 553. Վասն որոյ և տէրն *յորժամ* ասաց զցանկութիւնն շնութիւն, յաւել ի վերայ թէ՝ «ի սրտի իւրում». զի մի՛ կարծեսցի մարմնական շնութիւն, այլ հոգէկան և մտաւոր. ապա ուրեմն կատարեալ է մեղք մտացն: - 556. Զի հոգի է աստուած. և յիմացական միտս և ի հոգիս բնակէ. և չէ՛ օգուտ մարմնոյն սրբութիւն *յորժամ* միտքն զբաղեալ է ի չարիս. զի հեռանայ ի սիրոյն աստուծոյ և ի բնակութեանց նորա...: - 558. Իսկ փառասիրութիւն և հպարտութիւն ո՛չ են այսց կարգաց. այլ *յորժամ* զվեցեքին սոքա յաղթէ, ապա՛ փառասիրի և հպարտանայ: - 561. Ա՛րդ՝ մեղանչելն մարդոյ այնպէս է որ զակն խփեաց ի լուսոյն և խաւարեցաւ. սակայն լոյսն ծագէ՛ դեռևս ի վերայ աչացն և սակաւ փայլէ ի ներքս. և *յորժամ* բանայ վաղվաղակի լոյս տեսանէ: - 562. ...և *յորժամ* դառնայ ի մեղաց, վաղվաղակի շնորհաց լուսոյն արժանի լինի: - 563. Մեղքն այն է՝ *յորժամ* ի կրօնս լինի ոք և գթէ՛ մեղօք և դարձեալ ապաշխարէ: - 564. Նա՛խ՝ ի գործն և ի պատիժն. *յորժամ* գիտէ ոք թէ այն գործն մեղք է և գործէ՛. և գիտէ՛ զպատիժ այն մեղացն որ ծա՛նր է: - 564. ...այսինքն չարութեամբն *յորժամ* կամքն կարէ՛ և գիտէ ընդ դէմ կալ չարի իմն, սակայն վասն չարութեան ընտրէ զայն: - 566. *Յորժամ* զայս խորհեցաւ, արտաքսեցաւ յերկնից: - 569. Իսկ *յորժամ* սուրբ հոգին ելանէ, պիղծ հոգին այսինքն սատանայ բանկէ՛ ի նա: - 570. Իսկ յոյսն որ էր ի սուրբն ստեփաննոս *յորժամ* ետես զերկինս բացեալ, և ի պօղոս *յորժամ* ասաց «գիտեմ յո՞ հաւատացեալն եմ, և յոյսն որ էր ի յադամ նախքան զմեղանչելն էին հանդերձ ստուգութեամբ տեսութեանն»: - 574. Արդ *յորժամ* ասեմք կրկին զսէրն, այսինքն աստուծոյ և ընկերին. կրկինս այս ո՛չ է ըստ ունակութեանցն. այլ ըստ ներգործութեանցն: - 575. Նախ՝ *յորժամ* սիրեմ զիս վասն իմ. սէրս այս ո՛չ է բարի: - 576. Երկրորդ՝ *յորժամ* սիրեմ զաստուած վասն իմ. այս է վարձկականն: - 576. Երրորդ՝ *յորժամ* սիրեմ զաստուած վասն ինքեան զի բարի է. և սէրս այս բարի է: - 576. Չորրորդ՝ *յորժամ* սիրեմ զիս վասն աստուծոյ. և այս ևս է լաւագոյն. զի ո՛չ խնդրէ մարդ զիւրն, այլ զաստուծոյն միայն: - 576. Դարձեալ՝ կատարեալ սէր է, *յորժամ* է ունակութեամբ մեծ. ներքին շարժմամբն ուղիղ. արտաքին գործքն ժիր. արմատովն հաստատեալ. ջերմ եռանդութեամբն խոհեմ. և քաղցրութեամբն մխիթարական: - 576. Երրորդ՝ *յորժամ* սիրեմք պարտական առնեմք զայլս. և *յորժամ* սիրիմք պարտական լինիմք այլոց: - 576. Չորրորդ՝ *յորժամ* սիրեմք շահիմք մեզ. այլ *յորժամ* սիրիմք՝ ա՛յլք շահին ինքեանց: - 577. Երկրորդ, զի այս խորհրդոյ նշանակ ի սկզբան արարածոց աստուած ադամայ ետ և ո՛չ կնոջն. *յորժամ* էած զկենդանիսն առ ադամ զի անունս դիցէ նոցա: - 589. Հինգերորդ, զի թէ գո՛յր հնար կնոջ վասն հարկին առնել զգործ քահանայի, ընդէ՛ր ոչ կարաց նունի կոյսն մկրտել զոք ի վրաց *յորժամ* դարձոյց յաստուածգիտութիւն. - 589. Որդի քրիստոնէին զիա՞րդ լինի մեղաւոր *յորժամ* սրբեալ է հայրն մկրտութեամբ: - 592. *Յորժամ* բոլորովիմբ մարդն ի ձեռն մկրտութեանն սրբի, սերմն նորա ո՞րպէս է անսուրբ: - 592. Եւ վասն այն է գրեալ՝ յերրորդ կամ ի չորրորդ ազգս մեղաց վրէժ խնդրեսցի. *յորժամ* հայրն և որդին և թոռունքն զնոյն մեղս գործեսցեն: - 593. Զայն ցուցանէ թէ *յորժամ* մկրտեցաւ քրիստոս՝ հոգին սուրբ էջ ի վերայ նորա...: - 593. Երկրորդ ունիմք վկայութիւն ի քրիստոսէ *յորժամ* ետ զարիւնն ի տեսակ գինւոյն՝ ասաց, «ո՛չ արբից ի բերոյ որթոյ մինչև արբից զդա նոր արքայութեան հօր իմոյ». և ջուրն ո՛չ է բեր որթոյ: - 595. Իսկ *յորժամ* դուք անօրէն քահանայքդ առնուք զարիւնն ընդ մարմնոյն՝ ամենայնքն յուդա էք: - 598. Ոմանք ասեն թէ ի հասարակ ընթրիսն *յորժամ* բազմեցան՝ ի հասարակ սեղանոյն թացեալ զպատառն ետ յուդայի. - 599. ...ապա *յորժամ* զրկես յարենէն զժողովուրդն, զրկես և ի նոցանէ որ կապեալ են ընդ արիւնն. այսինքն մարմինն և հոգին և աստուածութիւնն: - 600. Թէ կնոջ տէ՞ր էր *յորժամ* մեղանչեաց՝ թէ ազա՛պ էր: - 601. Իսկ *յորժամ* մեղաւորն խոստովանի, պա՛րտ է հայիլ քահանային թէ կրօնաւո՞ր է թէ աշխարհական: - 601. Իսկ

*յորժամ* քահանայն լաւ քննէ զխղճմտանքն ժողովրդեանն. խորհի վասն ապաշխարութեանն թէ ո՞րպէս կարէ ապաշխարել. - 601....զի *յորժամ* մեղանչեմք, գրիմք ի պատիժն յաւիտենից. այլ ի զղջանալն և փոխիլն մեր, փոխէ՛ աստուած և զպատիժն ի ժամանակեայս: - 602. Եւ թէ ոք ասիցէ՝ ընդէ՞ր ապա *յորժամ* խոստովանին հաղորդին: - 602. Եւ այս *յորժամ* մեռանի: - 604. Ասեմք թէ՝ *յորժամ* միաւորեալ էր ի մարմինն միութեամբ ներգործիւր ի նմա ամենայն մարմնականքն: - 605. Եւ զայս գործս արար քրիստոս *յորժամ* եհան զգնօղս և զվաճառօղս ի տաճարէն: - 606. Եւ զայս գործս արար քրիստոս *յորժամ* ի տաճարին ընթերցաւ զեսային ասելով «հոգի տն ի վերայ իմ. վասն որոյ և էօծ իսկ զիս»: - 606. Եւ զայս գործս արար քրիստոս *յորժամ* զդիւահարն բժշկեաց: - 606. Եւ զայս գործս արար քրիստոս *յորժամ* զինքն լոյս ի յայտնութիւն հեթանոսաց ետ...: - 606. Զայս գործս արար քրիստոս *յորժամ* սփածաւ զղենջեակ և լուաց զոտս աշակերտացն: - 606. Եւ զայս կարգս առաքեալքն կացուցին. *յորժամ* է սարկաւագունս կարգեցին ի սպասաւորութիւն: - 606. Նաև տէրն կացոյց զայս կարգս. *յորժամ* ի լերինն զարքայութիւնն երկնից աւետարանեաց նոցա: - 606. Զայս կարգս կացոյց քրիստոս *յորժամ* ի ժամ ընթրեացն զհացն ի մարմին իւր և զգինին ի յարիւն իւր փոխեաց: - 606. Եւ *յորժամ* զինքն ի խաչին՝ հօր պատարագ մատոյց: - 606. ...հաստատի հաւանութեամբ սրտիցն *յորժամ* յայտնեն բանիւ...: - 609. Այն է՝ *յորժամ* մարդն մեռանի աշխարհի. մտանելով ի կրօնաւորութիւն: - 610. Զի ողորմութիւնն ի կողմանէ *յորժամ* անտես առնէ զմեղս՝ դուռն է հարաւոյն: - 614. Չորրորդ՝ զի սողոմոն *յորժամ* շինեաց զտաճարն՝ յաղօթս եկաց և նոյնպէս օրհնեաց և օծ. որպէս մովսէս...: - 615. Զի *յորժամ* մեղօք ինչ սրբութիւնս մեր ապականի, կամ շարժի ոք ի հաւատոյ, վերստին կարէ՛ հաստատիլ ի հաւատս, և դարձեալ կրկնել զխոստովանութիւն և զապաշխարութիւն: - 615. Երկրորդ, *յորժամ* արմըտիքն ժողովեին յաշնանն, յայնժամ տօնէին զերկու տօնն: - 616. ...*յորժամ* դնէին զառաւօտու պատարագն ի սեղանն. նոյնպէս յերեկոյն ի դնել պատարագին և ի վառել աշտանակին լուսոյ: - 618. ...այսինքն մին ի մարմինն. **բ** ի միտքն. **գ** ի կամքն. *յորժամ* սոքա պատրաստին, ապա՛ աղօթքն ընդունելի լինի աստուծոյ: - 620. Իսկ մտօքն, *յորժամ* աղօթէ և միտքն ո՛չ է ի ներս. ո՛չ մեղք է և ո՛չ արդարութիւն: - 620. Եւ *յորժամ* միտքն երթայ յաշխարհական հոգս թէ զինչ կերիցուք և արբցուք, է՛ ներելի: - 620. Բայց *յորժամ* երթայ միտքն ի մեղք՝ է՛ մահու չափ: - 620. Իսկ կամօքն, *յորժամ* կամօք առնէ զաղօթքն՝ վարձք առնու: - 620. *Յորժամ* յոչ կամայ՝ ո՛չ վարձք և ո՛չ մեղք: - 620. Եւ *յորժամ* ո՛չ առնէ բնաւ՝ մահու չափ մեղանչէ: - 620. Զի՞նչ է *յորժամ* երկուքն սաղմոսե՛ն, և զօրհնութիւնն այլո՛ց տան: - 624. Եւ *յորժամ* քահանայն ասէ զխաղաղութիւնն՝ ա՛յս է պատճառն, զի քահանայն է՛ միջնորդ առ աստուած և առ մարդիկ. - 625. Ապա ուրեմն պա՛րտ է *յորժամ* յիշատակեմք զհոգին սուրբ ամենայն ուրեք՝ խաչակնքել զդէմս և երկրպագել: - 625. վասն որոյ *յորժամ* հրաւիրէ՛ զմեզ՝ ուսուցանէ այսպէս աղօթել: - 626. Երրորդ, ի յարութեանն *յորժամ* փողն գոչէ՝ յառնեմք և յառաջ ընթանամք քրիստոսի: - 627. ...*յորժամ* զարհուրեալ տագնապին ամենայն մեղաւորք յահաւոր ատենին. և յանաչառ դատաստանին: - 630. ...*յորժամ* ասեն՝ սուրբ աստուած հայր, սուրբ և հզօր բան, սուրբ և անմահ հոգի...: - 633. Իսկ քահանայն՝ *յորժամ* աղօթէ՛ կամ պատարագէ՛: - 635. Իսկ սարկաւագն՝ *յորժամ* քարոզէ՛ կամ խնկարկէ կամ ընթեռնու: - 635. Եւ որ եպիսկոպոսն զմիթրն և զեմիփորոնն և զմատանին զոր զգեցեալն էր ի ձեռնադրութեանն՝ հանէ՛ *յորժամ* պատարագէ...: - 635-636. Դարձեալ՝ ի հանդերձեալն *յորժամ* խառնին հրեշտակք և մարդիկք ի լնուլ զտեղի անկելոց՝ կուսանաց սրբոց: - 636. ...*յորժամ* առ ինքն ժողովէ և ծագէ՛, ամենայն կարծիք լուծանին: - 639. *Յորժամ* թիւն առաջին լինի որ է Ֆարտ...: - 641. Եւ *յորժամ* թիւն երկրորդ լինի որ է՛ ջուխտ...: - 641. Ի խորհուրդ օրինացն. *յորժամ* էջ տէր ի սինա, փող և որոտ, հուր և ծուխ և այլն: - 644. Իսկ թէ զի՞նչ է *յորժամ* վերընծայի խորհուրդն պաշտմամբ և հնչմամբ ժամահարաց: - 645. Այն է՝ *յորժամ* դաւիթ զտապանակ ուխտին հանէր յէմ, **է** դաս պարուց որք են քահանայից դասք. և սրինկ. և փողք. և քնար. և այլն: - 645. վասն որոյ նոքա միշտ մերձին գրակալին *յորժամ* ընթեռնուն: - 646. Դարձեալ՝ ի դատաստանի *յորժամ* դպրութիւնք բանին, որք աստ ի ձախմէ մարմնոյ՝ փոխեսցին յաջմէ. և որք յաջմէ՝ յահեկէ՛: - 646. Վասն որոյ *յորժամ* տօնեմք հոգւով՝ ուրախանամք մարմնով: - 650. ...այլ *յորժամ* ապաշխարութեամբ քաւեմք՝ տօնեմք. եթէ տէրունական և եթէ սրբոց: - 650. Եւ դարձեալ՝ *յորժամ* պահեցաք զշաբաթն, յաւարտումն զնոսա միջնորդ աղաչեմք...: - 650. Զի *յորժամ* ելին ի դրախտէն՝ **ե** օր անսուաղ պահեցին: - 650. Եւ *յորժամ* մերն լուսաւորիչ ել ի վիրապէն, **ե** օր պահք կարգեաց և ապա՛ բժշկեաց ի հարուածոյն...: - 650. Եւ *յորժամ* յետոյ սուրբ հարքն զմիջին երկոքին շաբաթս բարեկենդանացուցին...: - 650. Եւ այլ ևս, *յորժամ*

զշաբաթ և զկիրակէ արտաքոյ թուեմք որ պատարագ մատչի, **Ե** օր առաջաւորն ըստ աղուհացիցն համարեալ՝ լինի **Խ** օր: - 651. Որպէս աղքատք նախ խնդրեն. և *յորժամ* առնուն՝ գոհանան. նոյնպէս և մեք առնեմք: - 655. Զի՞նչ է *յորժամ* գինի ըմպեմք, օրհնեմք և շնորհակալեմք միմեանց. և յայլ կերակուրս և ըմպելիս ո՛չ առնեմք նոյնպէս: - 655. Եւ *յորժամ* ըմպեմք, զնոյն օրհնութիւնն քրիստոսի յիշատակեմք: - 655-656. ...և յետոյ զբաժին նոցա ի վերայ լնուին. նոյնպէս ի տունս և ի դուրս *յորժամ* յիշէին: - 656. *Յորժամ* ըզսարսափելի գլուխն յովհաննու մկրտչին՝ բերին ի մէջ բազմականացն հերովդէի...: - 656. ...*յորժամ* այս ամենայն հաստատեալ նորոգեցաւ հրամանաւ սրբոյն սահակայ պարթևի ի փառս քրիստոսի. ձեռամբ իմով մովսիսի գրչի սահակայ: - 659. ...զի *յորժամ* տեսցուք զանցաւոր կեանս, իմասցուք զմեծութիւն պատւոյն ա՛յնր կենացն: - 663. Որպէս մշակն *յորժամ* սերմանէ, ո՛չ ի գործն՝ այլ յաստուած ապաւինի: - 665. Զի *յորժամ* առաքինութեամբ ախտ մարմնոյն մեռանի՝ զօրանայ հոգին...: - 668. Եւ *յորժամ* չարութեամբ հոգին նուազի, մարմինն զօրանայ և լինի մարդն շնչաւոր և անբան...: - 668. ...*յորժամ* ի գլխաւորագոյն անդամքն դիպին. այսինքն ի սիրտն, կամ ի լեարդն, կամ ի խելապատակն: - 668. *Յորժամ* սրբազան և մաքուր հոգին հասանէ ի վախճան՝ ուրախութեամբ ցնծայ իբր ի հանդիսից զերծեալ և ի պսակն ընթացեալ. և որպէս յանփոփոխ կեանքն հետևեալ: - 668. Իսկ *յորժամ* մեղաւոր հոգին հասանէ ի վախճան, տրտմութեամբ և ակամայ իբրև զանասուն ի սպանդ վարեալ...: - 669. Յայս միտս՝ *յորժամ* փոշիմանիմք ի վերայ բանի կամ տրտմիմք, ատամամբք զմատն խածանեմք...: - 670. Նախ այն է, *յորժամ* բերեն առ քահանայապետն: - 675. Երկրորդն *յորժամ* դնեն յեկեղեցին: - 675. ...նոյնպէս *յորժամ* ի գերեզման դնեն զմարմինն, իբր յաշխարհի ծովէ ելեալ զվառն խոնարհեցուցանեն: - 676. Եւ *յորժամ* դնեն ի գերեզման, քահանայն նախ օրհնէ՛ երիցս ափով զհողն և արկանէ ի գերեզմանն ասելով...: - 676. ...որ այս եղև սկիզբն պարկեշտութեան *յորժամ* զսիրելի զաւակաց պատկերս արարին և պաշտեցին: - 677. ...և *յորժամ* բացին զգերեզմանն, գտին թափուր ի սուրբ մարմնոյն...: - 681. Այլ *յորժամ* սիրտն կապեալ է ի մեղս աշխարհի և ոչ կարաց ապաշխարութեամբ քաւել, ո՛չ մտանէ յարքայութիւնն երկնից: - 683. Ասեն ոմանք թէ՝ սրբոց հոգիքն յարաժամ երևին *յորժամ* կամին և որոց կամին: - 685. ...*յորժամ* բաժանին օդիքն և այծիք. որ է արքայութիւնն երկնից և դժոխքն յաւիտենից: - 686. ...որպէս ասէ մեկնիչն տեսլեան. եթէ սպիտակ հանդերձն շնորհացն քրիստոսի մաքրութիւնն է. որ սրբութիւն մեղաց մերոց արար քրիստոս. յոր ամենայնքն վայելեցաք. զի *յորժամ* սրբի հոգին, բնական ունի զպայծառութիւնն: - 690. Հինգերորդ, ասէ աստուածաբանն գրիգոր՝ եթէ հաւանիմ իմաստնոյն բանի՝ թէ հոգի բարի և աստուածասէր *յորժամ* ի մարմնոյն արձակի, կայ և մնայ նմա բարին որ լինի: - 691. Արդ տանուտէր աստ կոչէ զաստուած, և այգի է եկեղեցի. և գաւառապետ կոչէ զքրիստոս. և առաւօտ յաբելէ առաջին արդարոյն. և երեկոյ օր դատաստանին *յորժամ* ընտրեալքն ամենայն ժողովին. - 692. Այլ *յորժամ* հոգին միաւորեսցի ընդ մարմնի և յերկուցն լինիցի անձն, յայնժամ կարէ՛ ունել ներգործութեամբ զփառս կամ զտանջանս: - 694. ...քանզի *յորժամ* սրբի հոգին՝ բնական ունի զպայծառութիւնն: - 696. Զի *յորժամ* ոմանք քաւին և մտցեն յարքայութիւնն, և ոմանք ի տանջանս յաւիտենից, ա՛յս է հատուցումն: - 698. Երրորդ, զի ընդունայն լինին աղօթք և տուրք և այլ օժանդակութիւնք եկեղեցւոյ՝ *յորժամ* ինքեանք քաւեսցեն: - 698. ...այլ *յորժամ* խըստանայ ի չարիս մինչ զի զպաշտօնն աստուծոյ յինքն ձգեսցէ...: - 707. *յորժամ* հոգին միաւորի ընդ մարմնոյն և մարմնովն ժառանգէ զփառս և զկեանսն յաւիտենից: - 710. ...*յորժամ* գայ աստուած ի մէջ աստուածացելոցն և լինի ամենայն և յամենայնի աստուած: - 711. Զի *յորժամ* սրբի հոգին ի մեղաց, բնական ունի զպայծառութիւնն: - 712. *Յո՞րժամ* և յորում աւուր գոչէ փողն: - 714. ...այլ *յորժամ* բոլոր արարածք ազատեսցին յապականութենէ ծառայութեան որպէս գրէ հռօմ յայնժամ և մարմինք մարդկան յանապականութիւն վերափոխեսցին: - 717. Հինգերորդ, զի մեծ ուրախութիւն է և տօն *յորժամ* համանգամայն ամենայն մարդկան յական թօթափելն լիցի յարութիւն, քան յայլ և այլ ժամանակս...: - 717. Եւ նշանս այս անքակտելի՛ է ի հոգւոյն և ի մարմնոյն խառնեալ. և *յորժամ* բաժանի հոգին՝ սա ո՛չ բաժանի ի հոգւոյն և ո՛չ լուծանի ընդ մարմնոյն: - 719. Ասեմք եթէ՝ զորօրինակ սընդիկ լուծեալ և ի հող խառնեալ գնդապէս և փոշիացեալ. *յորժամ* ի մի վայր ժողովես՝ թողու զփոշիսն ի յորս խառնեալ է և պարզ միայն սնդիկն ժողովի: - 719. Նմանապէս և մարմին մարդոյ առ հասարակ մեռանին և ի հող լուծանին և յայլ տարերս. և *յորժամ* յառնեն՝ ո՛չ ունին ի հասարակ տարրէ ընդ ինքեանս. և այս մարմին ի յայն մարմնոյ ոչ ինչ ունի խառնումն: - 719-720. Հինգերորդ, ստեղծաւ մարդն հաւասար հրեշտակաց. և *յորժամ* մեղանչեաց՝

անասնոց հաւասարեցաւ ըստ դաւթի և ընդ նոսա ապականացաւ և պատժեցաւ. - 724. Նա՛խ՝ զի մագաղաթն ի հուր մերձեալ գալարի. նոյնպէս և երկնայինքն յայնժամ խոնարհին *յորժամ* երկին և երկիր վառեսցին հրով: - 729. ...այսինքն *յորժամ* զճառագայթ բազում նշանացս առ ինքն ժողովէ խաչն սուրբ՝ յայնժամ ամենայն կարծիք լուծանին: - 732. Որպէս *յորժամ* կայսր մտեալ ի քաղաք՝ թագ և այլ նշանք առաջի տարցին, որով գալուստ նորա ցուցանիցի: - 734. Դարձեալ, ծորն յովսափաթու կոչի ծոր դատաստանի. այսինքն է կալն ուռնայի, ուր դաւթի խոստացաւ անդ առնել դատաստան. *յորժամ* սեղան շինեաց և պատարագեաց զեզինսն և բարձաւ մահն: - 737. Իսկ յետ դատաստանին և այս նս՝ բարձցի ի նոցանէ առ ի տանջանս իւրեանց. *յորժամ* անարժան համարեսցին նաև ի տեսանելն զայն: - 741. Եւ սոքա երբեմն հաւասարին. որպէս *յորժամ* արդարապէս հատուցէ բարեաց և չարաց. և միտեն յարաժամ անվախճան պատուէ և պատժէ: - 746. Այլ և *յորժամ* ի վեր քան զչափն պատուէ զսուրբս, և ի վայր քան զչափն պատժէ զմեղաւորս: - 746. Իսկ կշռողականն է զոյգ արդարութեամբ կշռել. որպէս *յորժամ* ողորմելով միոյն՝ պատժէ՛ զընդդիմակն նորին. որպէս փրկեցաւ իէլ և պատժեցաւ եգիպտոս. և յազատիլ բնութեան մարդոյս՝ պատժեցաւ սատանայ: - 747. Չորրորդ՝ ի վախճանի *յորժամ* հնազանդին նմա ամենայն և պսակէ զսուրբս իւր, ուրախ եղիցի տէր յարարածս իւր: - 748. Չորրորդ *յորժամ* անկանի՝ յայլս ո՛չ մտանէ: - 753. Զի այսպէս ասեն վարդապետք՝ թէ *յորժամ* յղանայ ոք ի միտս իւր զխորհուրդ մեղացն, ի սատանայէ՛ սերմն առեալ որպէս կին յառնէ. և ի ծնանիլ մեղացն՝ ծնանին և որդունքն ի հրեղէն ծովն որ է՛ ի հարաւ: - 753. Եւ *յորժամ* առաքին մեղաւորքն ի հուրն յաւիտենից, գտանեն զծնօղս իւրեանց որպէս գառինք զմարս, և յաւիտեան խածատեն զնոսա: - 753. Եւ արդ՝ ի յաւարտիլ դատաստանին *յորժամ* ասէ եկա՛յք, վասն է՞ր իջանեն յերկիր, կամ ի դրախտն բնակին: - 759. Եւ ես *յորժամ* բարձրացայց, զամենեսեան ձգեցից առ իս: - 759. Երրորդ ուրախութիւնն եղիցի ի տեսութենէ միաւորութեան մարդկային բնութեանն առ աստուածայինն. քանզի սքանչելի ուրախութիւն լինիցի ընտրելոցն, *յորժամ* ճանաչիցեն թէ եղբայր նոցա ըստ մարմնոյ՝ ճշմարիտ աստուած է: - 763. Մեծութիւն այսմ ուրախութեան կարէ՛ զմտաւ ածիլ յայնմանէ, զոր սովո՛ր են ծնօղք *յորժամ* որդիք նոցա լինին եպիսկոպոսունք կամ թագաւորք: - 763. Զի *յորժամ* ինքեանք փոխեցան, փոխեցաւ և ըստ նոցա պատիժն ասացեալ. այսպէս և ամենայն ուրէք տեսցես: - 779. Դարձեալ ասեմ, թէ անունս այս՝ պակասութիւն, նոյն է որ լսի չարչարանք. զի *յորժամ* կրէ ոք զչարչարանս զայս ինչ կամ զայն, պակասի ի նմանէ այն ինչ կամ այն. այսինքն առողջութիւն, կեանք, և այլն: - 781. *Յորժամ* պարուկաւ այսինքն հացմամբ ասի. որպէս ասելն, ո՞չ քեզ ասացի զայդ. ահա՛ եղև ստորասութիւն. իբր թէ՝ ասացի՛: - 787

**ՅՈՐՄԷ ՀԵՏԷ +** Զի *յորմէ հետէ* խոստացաւ աստուած զերկիրն՝ աբրահամու, յետ **դճ** ամի ժառանգեցին զնա՛: - 351. Ո՛չինչ բնաւ. քանզի *յորմէ հետէ* քրիստոս ի գերեզման եդաւ ամենայն հողք օրհնեցան. - 678. Նոյնպէս և հոգին պատճառէ՛ զմարմինն՝ թէ *յորմէ հետէ* բաժանեցայ ի նմանէ՝ ո՛չ մեղանչեցի: - 691

**ՅՈՐՄԻ** - զԹադէոս. և զԲարդուղիմէոս. և զՅուդայ յակոբեան. որ կայ ի *յորմի*. որ սեպհական քաղաք է հայոց: - 549

**ՅՈՐՋՈՐՋԵՄ +** Դարձեալ՝ որ զամենայն ստեղծ՝ հայր կոչի. և որ զամենայն պարունակէ՛ զի մի՛ լուծցին՝ որդի. և որ շնչելով կենագործէ և զարդարէ զամենայն՝ հոգի սուրբ *յորջորջի*: - 108

**ՅՈՒԴԱՅ +** Այսպէս և յակոբ յօրհնելն *զյուդա*՝ նմանեցոյց զնա առիւծու: - 27-28. Չորրորդ՝ զի ո՛չ ճանաչէր այր զկին իւր, և ոչ կին զայր իւր. և լինէր անօրէն խառնակումն. որպէս *յուդայ* զնու իւր զթամար ո՛չ ճանաչեաց. և ո՛չ ղովտ զդստերսն իւր: - 238. Թամար՝ որ ծնաւ զփարէս ի *յուդայէ*՛: - 300. Երկրորդ՝ զի **խ** քաղաք առին ի բենիամենէ՛ *յուդայի* ցեղքն վասն շնութեան կնոջն պատահելոյ. և կոտորեցին զնոսա առ հասարակ ի**եռ** արս. և մնաց վեց հարիւր այր զոր յետոյ ըստացան ժառանգութիւն իւրեանց. որպէս յա՛յտ է ի դատաւորաց վերջքն: - 312. Տասներորդ՝ հայրն առաքեաց զյովսէփ առ եղբարսն որ էին հովիւք և երիցունք տեսանել զնոսա. և բանիւն *յուդայի* վաճառեցաւ և եղև տէր երկրին և կերակրիչ: - 313. Նոյնպէս և քրիստոս եկն առ եղբարս իւր որ էին որդիք դաւթի և աբրահամու և առաջնորդք ժողովրդեանն. և *յուդա* վաճառեց զնա. և տէր եղև կենդանեաց և մեռելոց և կերակրիչ. զի ազատեաց զհոգիսն ի սովոյ դժոխոցն: - 313. Եւ ապա՛ *յուդայի*: - 338. Եւ ապա դաւթի յազգէն *յուդայ*: - 338. *Յուդա՛* է և Մատաթիա: - 348. *Յուդա*. Իսաքար. և Զաբողոն. **ժը** բիւր և **ցն** զօրք նոցա: - 378. Նախ՝ զի ասէ՝ «յեղբարց ձերոց». այսինքն ո՛չ յօտարաց, այլ յազգէ նոցա *յուդայէ*՛, և ի ղևեայ եղբարց: - 399. Աքար

զարմեան և սաւուղ կիսեան և *յուդա* սիմոնեան մեղայ ասելով ո՛չ արդարացան: - 415. Եւ դատաւորաց առաջինն Գոդոնիէլ որդի կենեզայ եղբայր քաղեբայ յազգէ *յուդայ* ամս **խ**. և այլազգիքն ամս **ժը**: - 420. Քսանգ, նա՛ յազգէն *յուդայ* ըմբռնեալ և տուեալ յայլազգիս: - 423. Երրորդ՝ յերկուս ճեղքելոց էր թագաւորութիւնն իսրայլի և *յուդայի*: - 427. Երկրորդ՝ զի կամէր զա՛զգն հարցանել թէ *յուդայի* ցեղէն և փարիսէ՞ն իցէ, զի սպանցէ զնա: - 427. Ուստի յա՛յտ է, զի ցեղն իսրայէլի **ըճռ** էին. և ցեղն *յուդայ* **եճռ**. և ցեղն քահանայից և բենիամենի ո՛չ անկաւ ի թիւ: - 434. Քսաներորդ, կոխեցին զայլազգիսն իէլ և *յուդայ*. և խոստովանօղք քրիստոսի զդևս այլազգիս: - 436. Թագաւորեաց նախ **է** ամ ի վերայ *յուդայ*, և ապա ամենայն իսրայէլի. և տէր մեր յեօթն դարոյս թագաւորէ՛ հաւատացելոց, և ի վախճանի ամենայնի...: - 437. Խորհի ակիտոփէլ չար վասն դաւթի և խեղդի. և *յուդա* վասն տեառն խորհեցաւ և խեղդեցաւ: - 438. Եւ եփրեմեանցն զկազելն առ *յուդա.* ի ցոյցս հրեշտակացն յորժամ արար փրկութիւն մարդկան ազգի: - 438. Ա՛յս է՝ իբր թէ աստ ո՛չ է գրեալ բոլորն՝ ա՛նդ է գրեալ որ է մնացորդացն *յուդայի* թագաւորացն: - 443. Արդ ի բաժանիլ թագաւորացն հրէաստանի յերկուս, *յուդայի* և իսրայէլի: - 446. Թագաւորք *յուդայ* նստան յերուսաղէմ. Ռոբովամ. Աբիա. Ասափ. և այլ թագաւորք **իբ**: - 446. Եւ ի գերութենէն իսրայէլի մինչ ի գերութիւնն *յուդայ* **ճծ** ամ: - 446. Ա՛րդ՝ սկիզբն գերութեանն իսրայէլի յաւուրս ոզիայ արքայի *յուդայ*: - 446. Եւ դարձեալ՝ յետ աւելի քան զերեսուն ամ ի զերորդ ամին եզեկիայ արքայի *յուդայ*՝ եկ սաղմանասար արքայ ասորեստանեայց ի վերայ սամարիայ...: - 447. Եւ ըմբռնեաց զսեդեկիա արքա *յուդայ*, և փորեալ զաչսն տարաւ ի բաբիլօն: - 447. Եւ եղև գերութիւնն բաբիլացւոց **հ** ամ ի վերայ *յուդայ* և ո՛չ ի վերայ իսրայէլի որպէս ասէր երեմիա: - 447. Որ եղև յերեքտասան ամի թագաւորութեանն ովսէի բարեպաշտ արքայի *յուդայ*: - 447. Չորրորդն *զյուդայ* և զիսրայէլի թագաւորութիւնն մինչև ցգերութիւնն: - 450. Եւ *յուդայի* վերջին. որ լինի **ժդ**: - 450. Յակոբ ամաց **ծթ**՝ ծնանի *զյուդա*: - 452. *Յուդա* ամաց **խը**՝ ծնանի զփարէս ի թամարայ: - 452. Ամինադաբ ամաց **խե**՝ ծնանի զնայասօն. և էր ասէ ամինադաբ սպարապետ զօրուն *յուդայի* ի հանել մովսէսի զորդիսն իսրայէլի յեգիպտոսէ: - 452. Եւ էր նայասօն իշխան բիւրաւորացն *յուդայ* յանապատին: - 452. Եւ այսպէս խառնեցաւ ազգն *յուդայ* ընդ ազգն ղևեայ խնամութեամբ: - 452. Եւ էր սաղմոն իշխան ցեղին *յուդայ* յորժամ անցոյց զժողովուրդն ընդ յորդանան յեսու: - 452. Եւ սա՛ շինէ զբեթլէհէմ քաղաք ի գետինս *յուդայի*: - 452. Որք կոչեցան թագաւորք *յուդայ*. և ոմանք ի սոցանէ բարիք: - 452. Եւ մատնութեանն *յուդայի*: - 454. Իսկ յովակիմ արդարն էր ի թագաւորական ցեղէն *յուդայի* **լը** երրորդ ի թոռանց նաթանայ որդւոյն դաւթի փառաւոր և մեծատուն յոյժ: - 460-461. Զի թէպէտ փակեալ էր օրէնքն խառնիլ երկուց ցեղիցն ընդ միմեանս, սակայն ղևտացւոցն ո՛չ գոյր ժառանգութիւն և բաժին, խառնեին երբեմն ընդ թագաւորական ազգն *յուդայ*: - 461. Որպէս ահարօն ունէր զդուստրն ամինադաբայ՝ զքոյրն նայասոնի իշխանին *յուդայ*: - 461. Այսպէս և յովակիմ ի *յուդայէ*՛ էր և ունէր զաննա զդուստր մատթանայ ի ցեղէն ղևեայ. վասն այն ազգական մարիամու զեղիսաբեթ ասէր գաբրիէլ: - 461. Ապա զի՞նչ մեղաւ *յուդա*: - 491. Յայր մատնեաց զնա՛ վասն սիրոյ. և Որդի մատնեաց զանձն իւր վասն փրկութեան մերոյ. իսկ *յուդա* մատնեաց վասն ագահութեան: - 491. Նախ անարգեցաւ ի պարտէզն զկնի արեան քրտանցն յորում մատնեցաւ ի *յուդայէ*. և իբրև աւազակ ըմբռնեցաւ և կապեցաւ: - 492. Այլ և գաւազանն *յուդայ* գրաւական ի թամար: - 494. Տգեղութեամբ որպէս *յուդային*: - 565. Եւ յակոբ ի յօրհնելն *զյուդա* ի դէմս քրիստոսի ասէ՝ «կապեսցէ զորթոյ զյաւանակն. և լուասցէ գինեաւ զպատմուճանն իւր». և ջուր ո՛չ յիշէ: - 595. Իսկ որք այլ իմն շաղակրատեն թէ թացեալ պատառնէ՛ *յուդայի*: - 598. Ապա դուք բարուք առնէք չտալ հաղորդ ժողովրդեանն զի մի՛ *յուդա* լիցին: - 598. Իսկ յորժամ դուք անօրէն քահանայքդ առնուք զարիւնն ընդ մարմնոյն՝ ամենայնքն *յուդա* էք: - 598. Մեք այսպէս լուաք ի սուրբ գրոց թէ՝ անարժան ուտելն առնէ *յուդա*. և ո՛չ թէ միաւորութեամբ զմարմին և զարիւնն ճաշակել: - 598. Ոմանք ասեն թէ ի հասարակ ընթրիսն յորժամ բազմեցան՝ ի հասարակ սեղանոյն թացեալ զպատառն ետ *յուդայի*: - 599. Զի թէ յօրհնեալ հացէն այլոցն ամենեցուն ցամա՛ք էր տուեալ և նորա թաց, պատճառ լինէր մատնութեանն *յուդայի*. և յիրաւի: - 599. ...այսպէս և օգոստինոս վարդապետն Ֆռանկաց ի խորհրդոց գիրս **ծա** համարն ասէ, թէ յառաջագոյն բաշխեաց զխորհուրդ մարմնոյ և արեանն և տուեալ *յուդայի*: - 599. ...զի անխառնակ և անշփոթ երևեսցի մադանալն բանին յազգէն *յուդայ*. որպէս ասացաւ ի վերոյ ի **լ** գլուխն, **դ** համարն: - 612. Եօթներորդ՝ զի լի՛րբ է ոչխարն. և լիրբն արտաքսելի՛ է յեկեղեցւոյ. որպէս *յուդա* լրբութեամբ ել արտաքս: - 617. Ցորեան ընդ յարդի. կնճիռն ընդ գինւոյ. մրուր ընդ ձիթոյ. *յուդա* ընդ յառաքեալսն. նիկօլայոս հերեսիոտ ընդ աշակերտսն: - 756

**ՅՈՒԴԱՅ ՅԱԿՈԲԵԱՆ** - զԹադէոս. և զԲարդուղիմէոս. և *զՅուդայ յակոբեան*. որ կայ ի յորմի. որ սեպհական քաղաք է հայոց: - 549

**ՅՈՒԴԱՍ** - Այլ տե՛ս յայտնապէս, զի զայսպիսի նշան վկայութեան ո՛չ ունէին *յուդաս* և դևդաս. և ո՛չ նեռն ունելոց է դերաքրիստոսն. վասն որոյ ո՛չ են մարգարէ, այլ մոլորեցուցիչք և չարք: - 400

**ՅՈՒԴԻԴ** - Երկու մնացորդացն: Երկու եզրաս: Նէեմի: Եսթեր: *Յուդիդ*: Տուբիդ և տուբիա. որ լինի **ի** երորդ: - 450. Իսկ Սիրաք և Իմաստութիւնն և *Յուդիդն* և Տուբիդն և Տուբիայն և Մակաբայեցիքն և Կտակքն և այլք, չեն յայսմ համարի: - 451

**ՅՈՒԶԵՄ +** Նոյնպէս և երբեմն *յուզել* ուրախութեանց. ի փեռեկեալ թոքոյ ի կոտորումն շնչոյն, ի թաղանթէ՛ որ առ լերդաւն՝ հիւթ ինչ ծաւալի առ նոյն ասացեալ տեղի. ելեալ գոլորշեացն նմանապէս առաջնոյն. և լինի քաղցրագոյն արտօսր. վասն ասացեալ հիւթոյն ի քաղցրորակն անօթոյ: - 787

**ՅՈՒԼԻԱՆՈՍ** - Այլ և յորժամ սատակեցաւ *յուլիանոս*, զժողովեալ ինչսն սուրբն բարսեղ բաժանեաց ժողովրդեանն. նոր տարի անուանեալ ի կեսարիայ: - 200

**ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐ +** Իսկ ի դիմաց նորա օրինել *զուղարկաւորսն*...: - 673

**ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐԵՄ** - Երրորդ, զի ի հեռու ճանապարհ գնայ. այս է յերկրէ յերկինս. *յուղարկաւորեմք* մինչ ի գերեզմանն: - 676

**ՅՈՒՂԱՐԿԵՄ +** Նմանապէս և զմիջին դուռն բանայ, և զպարզ կերակուրն ի լեարդն *յուղարկէ*. և նա ներկէ յարիւն և բաժանէ: - 242

**ՅՈՒՆԱՐԷՆ +** Եւ վկայ այսոցիկ ի մամեստիայ գտեալ քարն. յորում գրեալ էր *յունարէն* գրով, «սուրբ աստուած սուրբ և հզօր սուրբ և անմահ որ խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ»: - 632. Եւ *յունարէն* անթէվիոս. այսինքն հակառակ: - 707

**ՅՈՒՆՎԱՐ +** *Յունվարի*. այս յովանն է նախնին իւրեանց: - 201. Բայց ասեն ոմանք թէ՝ յաւուրս մանաւէի՝ Նումաս պումիլոս **բ** ամիս յաւել ի տարին հռօմոց. զի յառաջ քան զնա՝ **ժ** էր. և յաւել ի նոսա *զյունվար* և զփետրվար: - 201. Քսանզ, Վասն տօնի ծննդեանն ի վեցն *յունվարի* **ժե** պատճառաւ: - 454. Յառաջագոյն ամենայն ազգք քրիստոնէից սկսեալ յառաքելոցն այսպէս տօնէին. ի վեցն *յունվարի* զծնունդն, և ի նմին աւուր զմկրտութիւնն ըստ աւետարանին վկայութեան: - 482. Եւ անտի մինչև ի տբէթի **իա**՝ և *յունվարի* **զ**՝ կատարի **թ** ամիս և **ե** օր: - 483. Ա՛րդ՝ կարգեցին բազմազան վկայութիւնս զոր հաստատապէս տօնեմք զծնունդն քրիստոսի ի վեցն *յունվարի*: - 483. Եւ այս ամենայն ազգաց յա՛յտ է, որ ի *յունվարի* վեցն տօնեն մկրտութեան. ապա ուրեմն նոյն օրն է և ծննդեանն: - 484. Իններորդ՝ զի և նոքա իսկ որ զայս ասեն՝ առնեն *յունվարի* **զ** ճրագալոյց ընդ մեզ. և ճրագալոյցն ո՛չ է մկրտութեան, այլ ծննդեան ի մէջ գիշերի: - 484. Տասներորդ՝ զի և ազգն հռօմայեցւոց մինչև ցայսօր յայտնապէս ի վեցն *յունվարի* զերից տօնից յիշատակս կատարեն: - 484. Մետասաներորդ՝ յա՛յտ է յամիսս նոցա. զի առաջին ամիս սեպտեմբե՛ր է նոցա. և վասն ծննդեանն քրիստոսի՝ փոխեցին և եդին *զյունվար* առաջին ամիս: - 484. Երկոտասաներորդ՝ յա՛յտ է յանուանէ ամսոյն որ կոչի *յունվարի*. և *յունվար* ի հռոմն թարգմանի ծննդեան ամիս: - 484. Երեքտասաներորդ՝ ականատես տնօրէնութեանն եղբայր տեառն յակոբոս որ կարգեաց զընթերցուածն, *յունվարի* վեցն աւանդեաց զտօնն ծննդեանն. և ի նոյն օրն դարձեալ զմկրտութեանն: - 484. ...զի զքառասնօրեայ գալուստն ի տաճարն՝ ըստ ծննդեանն տօնեսցեն և ո՛չ ըստ յայտնութեանն. որ է՛ *յունվարի* վեցն. զոր մեք տօնեմք **խ** օր թուեալ մինչև ի **ժդ**ն փետրվարի: - 485. Եւ սուրբն բարսեղ կեսարացի այսպէս բաշխէր ժողովրդեանն. որպէս գրեալ է ի պատմութեան նորին *յունվարի* **ա**: - 599

**ՅՈՒՇ ԱՌՆԵԼ (տ. ՈՒՇ) +** Դարձեալ *յուշ առնէ* մարդոյ զչարչարանքն քրիստոսի. և խնդրեսցի ի նոցանէ մահն քրիստոսի իբր զգին որ տըւեալ է նոցա, և նոքա յափշտակեցին զինքեանս ի նմանէ: - 732

**ՅՈՒՇԿԱՊԱՐԻԿ +** Վասն հոգւոյն են ի գիրս սուրբս՝ զի ո՛չ են և ասին ի յէքս. որպէս եղջերուաքաղն, յարալէզն, *յուշկապարիկն*: - 55

**ՅՈՒՍԱԴՐԵՄ +** Եօթներորդ՝ զի չարչարանօքն իւրովք *յուսադրեաց* զմեզ, զի մի՛ յետ տկարութեանս և սակաւ չարչարանաց ի փորձողէն՝ կասեցուք ի նահատակութեանց. այլ օրինակ դիցուք զչարչարիլն նորա մեզ և համբերեսցուք որպէս ասէ: - 43. Ըմբռնելն *յուսադրեաց* զմովսէս յաղթել ցփարաւոնի և հանդարտել: - 332. մինչև ի հրեշտակէն *յուսադրեցաւ* և էառ կերակուր: - 653

**ՅՈՒՍԱՀԱՏԻՄ +** Նոյնպէս և սատանայ աներևոյթ մօտ՝ ի մարդն երթալ. թէ ամուր է հաւատն և կամքն՝ ո՛չ կենայ անդ, *յուսահատի* և թողու: - 161. Երրորդ՝ աստուած փորձէ՛ և տայ զելն՝ զի մի՛ *յուսահատեսցի*. և սատանայ փորձէ և ծանծրացուցանէ զի ընկեղմեսցին: - 161. Երրորդ՝ յուսացաւ

կոչել զանուն տեառն աստուծոյ ի յօգնութիւն. զոր մարդիկ *յուսահատեալ* էին եթէ վասն մեղաց մերոց եթող զմեզ աստուած ի ձեռաց. և նա ի յօգնութիւն կոչեաց զանուն տեառն աստուծոյ. այսինքն զի տէր է՝ ո՛չ գարշի ի ծառայից իւրոց. և զի աստուած է՝ էա՛ծ զմեզ աստ ոչ ի կորուսանել, այլ ի կեցուցանել: - 289. և այնպէս դառնացեալ տրտմութեամբ և սարսռելի երկիւղիւ *յուսահատեալ* մնան...: - 669. Եւ թէ ձախողակի վրիպութիւնք ամփոփե՛ն տրտմականօք, ի հաւատն սփոփեսցիս և մի անկցիս *յուսահատեալ*: - 770

**ՅՈՒՍԱՀԱՏՈՒԹԻՒՆ +** Նա՛խ՝ զի *յուսահատութեամբ* վրիպէին: - 467. Դրունք և նիգք յետուստ են. այսինքն կամ սկզբնական և ներգործական մեղօք կապեաց յետոյ, կամ մեղօք և *յուսահատութեամբ*: - 504. Վեցերորդ՝ ամուրն սատանայի է ներքին դժոխքն. ուր են դրունք պղնձիք և նիգք երկաթիք. որ է՛ մեղքն մեծամեծք և *յուսահատութիւնք*. և ա՛յն էր ամրոց նորա: - 506. Ապա անհաւատութիւն և *յուսահատութիւն* և ատելութիւն է՛ ի միտս. և սոքա մեծ են քան զամենայն չարիս որպէս ուսուցանեն գիրք սուրբք: - 557. **Իսկ անթողլի մեղաց զ են պարագայք. այսինքն *յուսահատութիւն*. յանդգնութիւն. մարտնչիլ զճշմարտութիւնն ճանաչելոյ. նախանձ ընդ դէմ եղբայրական սիրոյն. խստասրտութիւն և անզղջութիւն մինչ իսպառ:** - 567. Ա՛րդ՝ ի թողուլն երկու են. այսինքն ողորմութիւն և արդարութիւն. ընդ դէմ առաջնոյն է՛ *յուսահատութիւնն*. և ընդ դէմ երկրորդին յանդըգնութիւնն: - 567. Դարձեալ զգուշասցի զի մի՛ յամօթէ՛ կամ երկիւղէ՛ քահանային *յուսահատութեամբ* ծածկէ զմեղքն. - 601. Զայս սովորութեամբ առնեն զոր չէ՛ պարտ. զի *յուսահատութեան* է նշան և հեթանոսաց գործ: - 656. Ոմն լի՛ է անմահութեամբ և խնդրութեամբ. և ոմն լի դառնութեամբ և *յուսահատութեամբ*. որպէս ասացաւ ի վերոյ: - 687. Հինգերորդ, *զյուսահատութիւն* ազատութեանն որ ասէ «յաւիտենական»: - 740

**ՅՈՒՍԱՄ +** Եւ նովաւ ճանաչեմք զաստուած. և *յուսամք* արքայութեանն. և երկնչիմք ի դատաստանէ՛: - 178. Որպէս եռնովս որ *յուսացաւ* կոչել զանուն տեառն աստուծոյ. այսինքն *յուսացաւ* զհանդերձեալ կեանսն որ աներևոյթն էր...: - 288. Նա՛խ՝ զի յաներևոյթ կեանսն և ի հանդերձեալն *յուսացաւ*. և արհամարհեաց զերկրաւորս որ տեսանի...: - 288-289. Երկրորդ՝ զուղղութեան գործոց բուռն էհար. և *յուսացաւ* թէ զո՛յ հաստուցումն գործոց, և բարեաց փոխարէն: - 289. Երրորդ՝ *յուսացաւ* կոչել զանուն տեառն աստուծոյ ի յօգնութիւն...: - 289. Երկրորդ՝ զի *յուսասցին* այլ կենաց և հատուցման գործոց: - 324. Եւ տէր մեր փրկէ *զյուսացեալս* իւր, որք պաշարին հնգիւք զգայութեամբք յիշխանացն դիւաց: - 419. Բայց զի *յուսացեալ* ի բանն ճշմարտութեան յաղագս որոյ բանս հարցափորձութեան, հետևելով ուսուցչացն ուղղութեան, և յուսոյ ուսողացդ նպաստութեան. բացցուք զբերանս մտաց, և ձգեսցուք ի մեզ զհոգին շնորհաց: - 456. Հինգերորդ՝ զի տացէ մեզ համարձակութիւն *յուսալոյ* ի նոյն. այսինքն մտանել մարմնով ի յաւիտենական ժառանգութիւնն: - 519. Զի *յուսալ* յիր ինչ առանց արդեանց ո՛չ է յոյս. այլ յանդգնութիւն: - 573. Եւ յայսցանէ յայտէ, զի յետ յարութեանն ի վերինն գաւառ ոչ գոյ յոյս. զի է՛ անդ երանութիւն, որ է ստացումն ամենայն բարեաց. բոլորն համանգամայն և կատարեալ. և ոչ ինչ է ապառնի յոր *յուսացեալ* լինի: - 574. Դրոշմն է՛ խորհուրդ յուսոյ. զի *յուսալով* ի զօրութիւն սուրբ հոգւոյն կարողանամք ընդ դէմ թշնամւոյն: - 587. Իսկ չորրորդն, ողորմելիքս չորեքնիւթեայ բնութեամբ *յուսասցուք* ի տէր և երկիր պագցուք նմա. և այնու հաստատեսցին սիրտք մեր ի տէր: - 629. Եւ բժշկութիւնն՝ ո՛չ ի դեղն, այլ յաստուած *յուսալ* պարտ է. որ դեղով և առանց դեղոյ կարո՛ղ է բժշկել: - 665. Նմին նման և մեք *յուսասցուք* արժանաւորիլ տեսութեանն քրիստոսի. զի թէ և ի դժոխս իցեմք՝ ա՛յն է արքայութիւն մեր. և ո՛չ թէ յերկրի կամ յայլում տեղւոջ ըստ սրբոյն ոսկէբերանի: - 759. Որ և ձեզ յիշողացդ և մեզ *յուսողացս* առհասարակ ողորմեսցի բարերար և բազում ողորմ մարդասէրն աստուած և տէրն մեր յիսուս քրիստոս ամէն: - 773

**ՅՈՒՍԱՑՈՒՑԱՆԵՄ +** Խոստմամբ *յուսացուցին*: - 456

**ՅՈՒՍՏԻԱՆՈՍ** - Որպէս ասէ սուրբն իրինոս զբանս *յուստիանոսի*, թէ բարւոք ասաց վկայն *յուստիանոս*...: - 153. Ի թագաւորութեանն *յուստիանոսի* եղև դարձեալ **ե** երրորդ ժողով ի կոստանդնուպօլիս: - 543. Արար **զ** երրորդ ժողով՝ ազաթոն պապն հռոմայ. ի թագաւորութեան հօրն *յուստիանու* ի կոստանդնուպօլիս: - 543

**ՅՈՒՍՏԻԱՆՈՍ ԿԱՅՍՐ** - Հնգետասաներորդ՝ յա՛յտ է յայսմանէ. զի վասն տօնի տեառնընդառաջին առաքեաց *յուստիանոս կայսրն* յէմ զօրս բազում երիցս անգամ, - 484-485. Այլ և պետրոս անտիոքայ և տիմօթէոս աղէքսանդրու հրամանաւ *յուստիանոսի կայսեր*՝ հաստատեցին ի սուրբ աստուածն խաչեցար ասել: - 631

**ՅՈՔԱԲԵԹ - Հայրն մովսէսի ամրա՛մ է և մայրն *յոքաբեթ*:** - 330

**ՅՍՏԱԿ +** Զի որպէս գիջակնութիւնն չտայ թոյլ տեսանել *յստակ*...: - 32. Եւ կարօտի սա **բ** իրաց. այսինքն զի զգայութիւնն առո՛ղջ իցէ, և զգալի առաջի եղեալ իրն *յստա՛կ*...: - 143. Եւ թէ ասեն՝ յանօթո՛յն է որ մինն առաւել լոյս տայ և մինն նուազ, և ո՛չ ի լուսոյն. որպէս *յստա՛կ* ապիկի առաւել լուսաւորէ: - 188. ...իսկ թէ *յստակ* արիւնն մնայ ի լեարդն, լերդին համն անոյշ լինի, և բերանոյն համն անուշ տայ և քաղցր: - 242-243. Նա՛խ՝ նշանակէ զաղամ. որ անմեղ և *յստակ* ստեղծաւ, և ի մեղանչելն եղև արիւն զազրալի, և մարմին անհոգի: - 333. Չինգերորդ՝ զի անխառն և *յստա՛կ* է յառաքինութիւն...: - 378. Այլ մեք եղբարք ուղեկիցք իմ և դաւանակիցք եղիցուք. շինեալք և հաստատեալք ի վերայ հաւատոյ հիման. անշարժ խարսխեալք ի վերայ յուսոյն քրիստոսի, սեռն և *յստակ* կատարեալ սիրով սուրբ հոգւոյն: - 503

**ՅՍՏԱԿԱՊԷՍ +** Եւ կարօտի սա **բ** իրաց. այսինքն զի զգայութիւնն առո՛ղջ իցէ, և զգալի առաջի եղեալ իրն յստա՛կ. ապա թափանցէ՛ յինքն ի սոցանէ՛ պա՛րզ տեսութիւն. ապա թե ո՛չ՝ ո՛չ կարէ միտքն *յստակապէս* տեսանել սոքօք: - 143

**ՅՍՏԱԿԵՄ +** Իսկ յորժամ առողջանայ մարդն և արիւնն *յստակի*, արիւնն միս լինի, և մազն ո՛չ աճէ: - 240

**ՅՕՂԵՄ +** Այլ արդ՝ է քրիստոս ամենայն՝ սիրով *յօղեալ* են ի միմեանս՝ և բարեկարգեալք: - 21. Կամ զօղուածք ներքին գլխաւոր անդամոցն և արտաքին մարմնոյն, որ մորթ և միս և արիւն և այլքն առ միմեանս *յօղին* լինին նոյնքան: - 244. Եւ դարձեալ թիւ ոսկերացն **մխը**. և **բժան** անդամքն, և **ե** զգայարանքն *յօղեալ* առ միմեանս, լինին **յկե** զօղուածք: - 244. Այսինքն *յօղեալ* և կցկցեալ ի միմեանս: - 293. Իսկ կցկցեալ. զի *յօղեալ* և կցեալ են ոսկերք մարդոյն առ իրեարս. և ի ներքոյ միս՝ և արտաքոյ մորթն է պատեալ: - 293. Չաղորդութիւնն է՛ խորհուրդ սիրոյ. զի սիրով միաւորիմք և *յօղիմք* ի գլուխն քրիստոս. մարմին ի մարմնոյ նորա և անդամ յանդամոց նորա: - 587. Եւ հաղորդելն, որպէս անդամ ի գլուխն *յօղէ*. զի ամենայն կատարմանց կատարումն հաղորդութիւնն է. այսինքն կարգին՝ պսակին՝ խոստովանութեան՝ մկրտութեան՝ և այլն: - 594. Որ և անբաժանելի և անքակ միութեամբ միաւորին *յօղեալք* ի գլուխն քրիստոս անզրաւ յաւիտենին: - 757

**ՅՕՂՈՒԱԾ +** Եւ նոյն ջիլն կապէ՛ և շարապնդէ՛ զամենայն *յօղուածս* ոսկերացն: - 244

**ՅՕԺԱՐ +** Երրորդ՝ զի էր *յօժար* կամօք և զուարթ սրտիւ. ուստի երևի այս ի նուէրքն...: - 286. Յորմէն, զի իցէ *յօժար* կամօք: - 780

**ՅՕԺԱՐԱԿԱՆ +** Զի ասելն «Աիաւասիկ» ցուցանէ *զյօժարական* հնազանդութիւնն: - 465

**ՅՕԺԱՐԱՑ -** Այլ և աստ ապաշաւելն ոչ ինչ օգտեաւ. որպէս և անդ ո՛չ լսողաց բերանով հաշեալք. որ և ո՛չ գոյր անդրէն դառնալ. և ո՛չ կարի *յօժարացն* շահավաճառ եղեալ. ո՛չ գիտ և ո՛չ ողորմ. հանգոյն յիմարացն օրիորդաց: - 789

**ՅՕԺԱՐԻՄ +** Զի տնկական հոգին *յօժարի*՛ գոլ. և զգայականն բարեպէս գոլ. և բանականն ևս բարեպէս գոլ. զի ո՛չ երբէք հանգչի, մինչև միաւորեսցի ընդ ևս բարեգունին: - 249. Եւ զհոգին որ քան *յօժարին* այն քան և առնուն: - 523. Չորրորդ՝ խորհուրդ մեղացն ճշմարիտ և բարի ցուցանէ զգործն և սիրելի և հեշտ. վասն որոյ *յօժարի* և եռայ ի կատարումն: - 558. ...զի անկարգ *յօժարի* ի կերակուրն. և թէ է ի պահպանութիւն տեսակին, լինի բղջախոհութիւն. զի անկարգ *յօժարի* ի պոռնկութիւն: - 561. Իսկ ժուժկալութիւնն առ շօշափելիսն ըստ ծննդական զօրութեանն. ի յորում դնէ զեղանակն. զի առաւել *յօժարի* մարդն ի գոլ անհատութիւնն սննդականաւն, և ի գոլ տեսակին ծննդականաւն. և յօժարութիւնքս այս՝ զսպին զգաստութեամբ և ժուժկալութեամբ: - 581. Եւ այնպիսի քաղցր է տեսութիւնն աստուծոյ, մինչ զի չարքն թէ կարէին՝ *յօժարէին* ի դժոխս կալ և զաստուած տեսանել. քան արտաքոյ տանջանաց լինիլ և զաստուած ո՛չ տեսանել: - 763

**ՅՕԺԱՐՈՒԹԻՒՆ +** Ասեմք նախ եթէ՝ չարն ո՛չ է յաստուծոյ որպէս բարին. զի բարին ըստ կամա՛ց է. իսկ չարն թոյլ տալով է. և ա՛յլ է կամացն որ *յօժարութեամբ* է, և այլ է թոյլ տալովն որ իբր ի յո՛չ կամացէ: - 17. Իսկ կենդանականին են, Կամք. Ընտրողութիւն. *Յօժարութիւն*. Բարկութիւն. Ցանկութիւն: - 248. Իսկ անբանք՝ Երևակայութիւն. Զգայութիւն. *Յօժարութիւն*. Բարութիւն. Ցանկութիւն: - 248. Եւ մտօքն *յօժարութեամբ* սիրել և յորդիութիւն նորա ելանել: - 396. Զբերան մտացն ասէ. այսինքն է՛ *յօժարութիւն* հոգւոյն որ առնու զհոգին սուրբ...: - 523. Մինն կամէր լնուլ զպէտս իւր և անգիտութեամբ անկաւ յորովայնամոլութիւն. և մինն *յօժարութեամբ* և փափագանօք անկաւ: - 565. Նա՛խ՝ զի սիրելին *յօժարութեամբ* լսէ սիրելոյն: - 575. Երկրորդ՝ *յօժարութեամբ* խօսի զնմանէ: - 575. Իսկ ժուժկալութիւնն առ շօշափելիսն ըստ ծննդական զօրութեանն. ի յորում դնէ զեղանակն. զի առաւել յօժարի մարդն ի

գոլ անհատութիւնն սննդականաւն, և ի գոլ տեսակին ծննդականաւն. և *յօժարութիւնքս* այս՝ զսպին զգաստութեամբ և ժուժկալութեամբ: - 581

**ՅՕՀԱՆՆ, ՅՈՀԱՆՆ** - Իսկ որք բառնան զաստուածութիւնն ի միոյն՝ և ո՛չ երկոցունց տան զաստուածութիւնն, իմա՛, ըստ առաքելոյն զօրութիւն և իմաստութիւն է հօր որդի. և բան՝ ըստ աւետարանին *յօհաննու*: - 51. Ասեն դարձեալ, աւետարանն *յօհաննու* ասէ, «ամենայն ինչ որդովն եղև». ապա ուրեմն և հոգին եղեալ է ի ձեռն որդւոյ. զիա՞րդ է հաւասար որդւոյ կամ հօր: - 53. Նախ՝ զի ասէ փրկիչն յաւետարանն *յօհաննու* յաղագս հոգոյն թէ՝ «հոգին ճշմարտութեան որ ի հօրէ՛ ելանէ. նա՛ ուսուսցէ ձեզ զամենայն»: - 64. Եւ *յօհաննու* աւետարանն ասէ՝ «լըւիցեն ձայնի որդոյն աստուծոյ և եկեսցեն արտաքս:»: - 70. Երրորդ՝ «աստուած դատաւոր արդար» ասէ սաղմոսն. և վասն քրիստոսի ասէ *յօհաննու* աւետարանն, ո՛չ եթէ հայր դատէ զոք, այլ զամենայն դատաստան ետ որդւոյ իւրում: - 70-71. Այլ աւետարանն *յօհաննու* ասէ՝ «ո՛չ ոք ել յերկինս՝ եթէ ոչ որ էջն յերկնից որդին մարդոյ որ էն յերկինս»: - 73. Մետասաներորդ՝ ասէ աւետարանն *յօհաննու*՝ «ես և հայր իմ մի եմք. որ ետես զիս՝ ետես զհայր»: - 73. Եօթնևժերորդ՝ ասէ աւետարանն *յօհաննու*, «այնպէս սիրեաց աստուած զաշխարհս՝ մինչև զորդին իւր միածինն ետ». այսինքն ի մահ: - 74. Վեշտասաներորդ՝ ասէ յաւետարանին *յօհաննու*, «գիտեմ զնա, և զբան նորա պահեմ. և թէ ասեմ ո՛չ գիտեմ զնա՝ ձեզ նման սուտ լինիմ»: - 98. Քսաներորդ՝ ասէ յաւետարանին *յօհաննու*, «Ա՛յս են կեանք յաւիտենից՝ զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ աստուած. և զոր առաքեցեր զյիսուս քրիստոս»: - 99. Եւ *յօհան* ասէ թէ՝ «ի մոլորիլն ի ճանապարհին՝ այլ ընդ այլոյ նայելո՛յն լինի»: - 147. Իսկ *յօհաննու* տեսիլն և մեդոթ ասէ թէ՝ «կամեցաւ զերրորդ մասն աստեղաց ընդ իւր քարշել». այսինքն ի դասէն ի չորիցն երեք բաժինն ի վայր անկաւ. և մինն անդ մնաց և յիշխանութեանց դասն խառնեցաւ: - 148. Որև ի մեկնութեան տեսլեանն *յօհաննու* ասէ՝ «զոմն ջրոյ և զոմն հրոյ»: - 150. Եւ այլք ասեն եթէ՝ պատկեր եղաք այժմ, այլ նման լինելոց եմք ի հանդերձեալն. ըստ *յօհաննու* թէ՝ «նման նմա լինելոց եմք. զի տեսանելո՛ց եմք զնա որպէս էն»: - 273. Եւ ա՛յսպէս մեկնեն զանուանս **բժ**ան ականցն սուրբն Եպիփան և մեծն Անդրէաս ի գիրս տեսլեանն *Յոհաննու*: - 349. Վասն որոյ և յաւուրս զաքարիայի հօրն *յովհաննու* յորժամ յամեաց ի տաճարին և ել, ակնունէր ժողովուրդն տեսանել զա՛կնն և տե՛սին լուսափայլ սպիտակացեալ իբրև զձիւն. և լի՛ եղեն խնդութեամբ. զի երկնաւոր արքայութեան նշոյլքն պայծառացուցին զակն: - 349. Տեսիլն *յոհաննու*, և Ննջումն էր ընդ եղբարսն: - 450. Որոց առաջին Յակոբայ: Երկու պետրոսի: Երեք *յոհաննու*: - 450. Մկրտութիւնն *յովհաննու* և տն: - 454. Երկրորդ՝ սրբութիւն արգանդին մերժէ՛ զմեղս և հերքէ՛ զդիւրասահութիւն մեղանչելոյն մահու չափ. որպէս երեմիային և *յովհաննուն*: - 462. Եւ ունէր շնորհօք արգելք ի մեղաց մահու չափ և ներելապէս. որպէս *յովհաննուն* և երեմիային: - 463. *Յոհան* անտիոքայ՝ թղթով միաբանեալ. **բճ** հարք ընդ դէմ նեստորի որ **բ** բնութիւն ասէր և **բ** որդի. կրկին կամք և կրկին ներգործութիւն քրիստոսի. և զաստուածածինն մարդածին: - 542. Մինչ եկաց երկրորդ լուսաւորիչն հայոց և կրկին կիւրղոս սուրբ իմաստասէրն *յոհան*. և լուսաւորեաց զեկեղեցի: - 545. Այլ որք ուղիղ դատեցան վարդապետք եկեղեցւոյ ըստ տեսլեանն *յօհաննու*. որպէս մեծն անդրէաս և համախոհք նմին սուրբն իրինոս, եպիփան, և բասիլիոս: - 687. Եւ միւս ներսէս ի հանգիստն *յոհաննու*: - 687. Իսկ թէ ո՞ւր իցեն սոքա երկոքեանս, տեսիլն *յօհաննու* յայտնապէս ցուցանէ. սրբոց խորանս ասէ զվերինն սիօն և զհրեշտակացն դասս: - 688. Եւ ի հանգիստն *յօհաննու* ասէ»: - 688. Վեցտասաներորդ, ասէ ի *յոհաննու* աւետարանն, «երթամ և պատրաստե՛մ ձեզ տեղի. դարձեալ գամ և առնում զձեզ առ իս»: - 692. Եւ զամենայնսն դրոշմէ՛ ի ճակատն և յաջոյ ձեռն. որպէս ասէ տեսիլն *յօհաննու*: - 707. ...որպէս ասէ աւետարանն *յօհաննու*, «ամենեքեան լուիցեն ձայնի որդւոյն աստուծոյ և եկեսցեն արտաքս»: - 724. Տասներորդն է ծանօթութիւն առանց տգիտութեան. *յօհան* ի կաթողիկեաց՝ «տեսանելոց եմք զնա որպէս և էն»: - 767

**ՅՈՀԱՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՉ** - Եւ վկա՛յ մեզ *յօհան աւետարանիչն* որ ասէ՝ «Զայս ասաց եսայի զի ետես զփառս նորա և խօսեցաւ վասն նորա»: - 631

**ՅՕՀԱՆ ԴԱՄԱՍԿԱՑԻ** - Զի և *յօհան դամասկացին* ասէ հարկ գոլ ամենայն սկզման ունել դադարումն. այլ զի հրեշտակք և հոգիք ոչ դադարին, այս կամա՛ցն աստուծոյ է պահպանութիւն, և ոչ բնութեան նոցա. զի յո՛չ էից եղեալքն՝ կարեն յոչ էութիւն փոխիլ: - 37

**ՅՈՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ** - Եւ զանսկիզբն, *յոհան մանդակունին*: - 637. Իսկ վասն հիմնարկութեան սուրբ տաճարի և ժամահար օրհնելոյ. սկիհ և մաղզմայ. և զգիրք. և զկնունք առնելոյ. և խաչօրհնելոյ. և զքառասնորդաց **գ** ժամուց զքարոզքն և զաղօթսն, *յոհան մանդակունին* է արարեալ...: - 659

**ՅՈՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ** - Այսմ պատասխանէ պայծառ ջահն եկեղեցւոյ սուրբն *յոհան ոսկեբերանն*, - 467. Մեծն աթանաս և *յոհան ոսկեբարանն* և սուրբն բարսեղ և մերն լուսաւորիչ: - 595. Եւ *յօհան ոսկէբերանն* կարգեաց յաւուրն երիցս անգամ սուրբ աստուած ասել: - 631. Դիոնէսիոս զիաւատն տիպ ասէ. և Աղէքսանդրոս կնիք. և Պօղոս աներևոյթ իրաց երեւ. և *Յօհան ոսկէբերանն*՝ լոյս անյայտ իրաց: - 769. Մի դէմն յերրորդութենէն որդի լինի. մի դէմ ի մարդկութենէս ի կուսէ առեալ բնութիւն մարդկութեան, աստուածութիւնն բոլորովին յաղագս անհաս միաւորութեանն ըստ *ոսկէբերանին յոհաննու*: - 770

**ՅՈՀԱՆՆ ՈՐՈՏՆԵՑԻ** - Այլ և վարժապետին իմոյ և մեծ հռետորի հայոց, *Յոհաննու Որոտնեցւոյ*, եղիցի ի սմա յիշատակ մաղթանաց մասին օրհնութեան. և վիճակ ժառանգութեան սրբոցն ի լոյս: - 773

**ՅՈՀԱՆ ՕՁՆԵՑԻ** - Եւ սուրբն *յոհան օձնեցին* զեզր կաթողիկոսին և զայլոցն որք թիւրեալք էին զկնի քաղկեդոնի: - 541. Չորրորդ՝ մեծ և արժանաւոր ժողովն եղև ի մանազկերտ. ի **ճիդ** թուականին. հրամանաւ և արդեամբք գիտնաւոր և մեծ իմաստասիրին սրբոյն *յոհաննու* կաթողիկոսին հայոց *օձնեցւոյ*: - 545. Զմեղաք յամենայնին, և զկարգ մեծ տօնիցն, *յոհան օձնեցին*: - 637

**ՅՈՀԱՆՆԷՍ ՊԼՈՒԶ** - Իսկ զներսէսին մեծի, և զխոտաճարակացն, *յոհաննէս պլուզն*: - 638

**ՅՕՀԱՆՆԷՍ, ՅՕՎՀԱՆՆԷՍ, ՅՈՀԱՆՆԷՍ** - Զի որպէս գիջակնութիւնն չտայ թոյլ տեսանել յստակ, այսպէս երկիւղն յետս քարշէ զբազումս ո՛չ հաւատալ ի քրիստոս որպէս ասէ *յօհաննէս*. «զայս ասացին ծնօղքն կուրին՝ զի երկնչէին ի հրէիցն խոստովան լինիլ զքրիստոս»: - 32. Եւ զորս ես աստ պարկեշտութեամբ լռեմ, յընթանրական թղթին *յօհաննէս* ի նեռն առակէ ասելով...: - 34. Այլ այս է յատուկ հոգւոյն սրբոյ. որպէս ասէ *յօհաննէս*...: - 58. Ապա զիա՞րդ ասէ *յօհաննէս* թէ՝ «ի լրմանէ նորա մեք ամենեքեան առաք շնորհս»: - 66. Հինգերորդ՝ ասէ յաւետարանն *յօհաննէս*, «ետ նոցա իշխանութիւն որդիւ աստուծոյ լինի»: - 67. Առաջին՝ «բանն մարմին եղև» ասէ *յօհաննէս*: - 72. Այլ *յօհաննէս* ի կաթողիկէն ասէ, «որ էրն ի սկզբանէ զորմէ լըւաքն և ականատես իսկ եղաք. և ձեռք մեր շօշափեցին զբանն կենաց»: - 73. Այլ վասն մարմնոյն ասէ *յօհաննէս*՝ «ես եմ հացն կենաց որ յերկնից իջի»: - 73. Երկրորդ՝ վկայէ՛ սիրելի աշակերտն *յօհաննէս*, «զաստուած ո՛չ ոք ետես. բայց միածին որդին նա՛ պատմեաց մեզ»: - 96. Ութերորդ՝ ասէ ի *յօհաննէսն*, «որպէս գիտէ զիս հայր՝ գիտեմ և ես զհայր»: - 97. Իններորդ՝ ասէ ի *յօհաննէսն*, «հայր սիրէ զորդի՝ և զամենայն ինչ ցուցանէ՛ նմա»: - 97. Տասներորդ՝ ասէ ի մատթէոսն, «զի՞ խորհիք ի սիրտս ձեր», և *յօհաննէս* ասէ՝ «ինքն գիտէր զինչ կրէր մարդն»: - 97. Մետասաներորդ՝ ասէ ի *յօհաննէս*, «ե՛ս եմ ճանապարհ և ճշմարտութիւն». այսինքն՝ որ տանիմ առ հայր և ճշմարտութեամբ ցուցանեմ ձեզ: - 97. Զի լիութեամբ շնորհաց նորա մեք արդարացաք. և իմաստութեամբ նորա իմացաք զաստուած որպէս ասէ *յօհաննէս*. «օրէնք ի ձեռն մովսէսի տըւան. շնորհք և ճշմարտութիւն ի ձեռն քրիստոսի եղեն»: - 97. Քսաներորդ՝ առաքեալն պօղոս և աւետարանիչն *յօհաննէս* վկայեն հանդերձելոյն թէ՝ «տեսանելոց եմք զնա որպէս և էն. և ճանաչեմք զնա որպէս նայն ծանեաւ զիս»: - 99. Եւ *յօհաննէս* ասէ, «կեանքն յաւիտենից յայտնեցաւ մարմնով»: - 99. Քսանևէերորդ՝ ասէ ի *յօհաննէս*. «Ո՛չ եթէ հայր դատէ զոք. այլ զամենայն դատաստան ե՛տ որդւոյ իւրում»: - 100. Այլ ա՛րդ՝ կարէ սրբել զանհուն մեղս. որպէս ասէ *յօհաննէս* ի կաթողիկէքն, «նա՛ է քաւութիւն մեղաց մերոց. և ո՛չ մերոց միայն՝ այլ և բոլոր աշխարհի»: - 100. Զի ո՛չ է որպէս պետրոս՝ և պօղոս՝ և *յօհաննէս*՝ երեք մարդ և մի բնութիւն. այլ մի է անհատութեամբ. ունելով երիս յատկութիւնս դիմաց: - 107. Հինգերորդ՝ նշանակէ զչորեսին աւետարանիչքն. մարդն զՄատթէոս՝ զմարդեղութիւն բանին ցուցեալ առիւծն զՄարկոս՝ արիաբա՛ր աւետարանեալ. «և էր ընդ գազանսն» ասէ. եզն զՂուկաս՝ յերկարաձիգ պատմութեամբ. և եզն պարարակ կոչեցեալ. արծուին *զՅօհաննէս*՝ ի վերուստ զբանն աւետարանեալ: - 132-133. Առիւծն թագաւորական՝ նշանակէ՛ *զյօհաննէս*. ի սկզբանէ՛ զբանն աստուած և թագաւոր յաւիտենից ցուցեալ: - 133. Եւ *յօհաննէս* զսա օդո՛յ դասէ. վասն այն նոյն անուամբն՝ պօղոս իշխան օդոյս կոչէ. կամ զի յօդս են բնակեալ և իշխեն մարդկան: - 150. Եւ զայս իմաստութիւնս տէրն հաւատ կոչէ. և *յօհաննէս* լոյս. և սողոմոն իմաստութիւն: - 269. Եւ մերոյն փեսային քրիստոսի՝ *յովհաննէս* ի վերայ յորդանանու խօսեցաւ զհարսնացեալ եկեղեցի: - 305. Եւ զհետ տեառն պետրոս և *յովհաննէս* մինչ ի սրահ քահանայապետին: - 306. Եւ տէր մեր զգալուստ հոգւոյն և զկատարած աշխարհի պատմեաց, և յանձնեաց զկոյս տաճար իւր ի կոյսն *յօհաննէս*: - 329. Քահանայն *յոհաննէս*: - 368. Զըմրուխտ. կանա՛չ է և դեղնագոյն. գտանի ի փիսոն գետ. Դևի՛ է և *Յոհաննէս*: - 348. Մատթէոս, Մարկոս, Ղուկաս, *Յոհաննէս*: - 450. Այլ կենդանի եղբօր, կամ փոքր եղբօր կինն, կամ գոլով

զաւակ, անօրէնութիւն էր որպէս հերովդին. առ որ ասէր *յովհաննէս*, «չէ արժան քեզ ունել զկին եղբօր քոյ». զի դուստր նորա էր աղջիկն որ կաքաւեաց: - 402. Չորրորդ՝ նախ օծաւ ծածուկ, և ապա՛ յայտնի ի գաղգաղայ. և տէր մեր նախ օծաւ յարգանդի, և ապա՛ ի յորդանան ի *յովհաննէ*: - 426. Դաւթի **գ** արք անուանիք, և աբեսեա չորրորդ ընդ նոսա. **գ** աւետարանիչքն, և *յոհաննէս* որդի սողոմեայ: - 438. Տասներորդ՝ զի սէր հօր երևեցի առ մեզ. որպէս ասէ *յօհաննէս*, «այնպէս սիրեաց աստուած զաշխարհս, մինչև զորդին իւր միածին ետ»: - 468. Այլ և սուրբ յամենայն մեղաց. և լի ամենայն շնորհօք և առաքինութեամբ. զի «ի լիութենէ նորա՝ մեք ամենեքեան առաք զշնորհս» ըստ *յոհաննու*: - 470. Երրորդ՝ *յովհաննու* խայտալն: - 471. Զի զսմանէ՛ ասեն ասէ աւետարանիչն *յոհաննէս*՝ «ի մէնջ ելին զի ո՛չ էին ի մէնջ», և կարի յոյժ ստեն նոքա: - 482. Այլ յապառնին ընկէց թէ՝ «եղիսաբեթ ծնցի որդի և կոչեսցես զանուն նորա *յովհաննէս»:* - 483. Եւ այլք թէ՝ զաքարիա հայրն *յովհաննու*: - 486. Ա՛րդ՝ խոնարհութիւնն քրիստոսի ցուցանի չորիւք որպէս ասէ աւետարանն «եկն յիսուս ի յորդանան առ *յովհաննէս* մկրտիլ ի նմանէ»: - 486. Երրորդ «առ *յովհաննէս».* այսինքն տէրն առ ծառայն, թագաւորն առ սպասաւորն, արեգակն առ արուսեակն: - 487. Առաջինն որ ասէ «ել վաղվաղակի ի ջրոյն». զի ամենայն ոք որ մկրտէր ի *յովհաննէ* ի ջուրն՝ խոստովանէր զմեղս իւր և ապա՛ ելանէր»: - 487. Չորրորդ «ձայնն հօր». նշանակէ թէ մկրտութեամբն լինիմք շնորհօք որդիք աստուծոյ. որպէս ասէ աւետարանն *յոհաննու*. «որք ո՛չ յարենէ և ի կամաց առն, այլ յաստուծոյ ծնան»: - 487. Մկրտօղն էր *յովհաննէս*. որպէս սպասաւոր քահանայքն: - 487. Չորրորդ՝ մկրտութիւնն *յովհաննու* որ մկրտէր ի յապաշխարութիւն. զի կարասցեն ընդունել զհոգւով մկրտութիւնն. վասն այն յառաջէ՛ր և սրբէ՛ր ջրովն: - 488. Այլ և հրով մկրտիչ ասի քրիստոս. ըստ որում «*յոհաննէս* մկրտեաց ի ջուր. այլ դուք մկրտիցիք ի հոգին սուրբ և ի հուր. ո՛չ յետ բազում ինչ աւուրցս այսոցիկ»: - 488. Մկրութիւնն քրիստոսի և *յովհաննու* որո՞վ համաձայնին և զանազանին: - 488. Այլ զանազանին Նախ ի ձևն. զի մկրտութիւնն *յոհաննու* տուեալ լինէր յանուն այնմ որ գալոցն էր. իսկ քրիստոսին յանուն Երրորդութեանն: - 488. Երկրորդ՝ ի ներգործութիւնն. զի մկրտութիւնն քրիստոսի արդարացուցանէ և զդուռն երկնից բանայ. և *յովհաննունն* ո՛չ: - 488. Երրորդ՝ ի վախճանն. զի *յովհաննունն* ունէր կարգեալ առ մկրտութիւնն քրիստոսի. զի յա՛յն սովորեցուցանէր զժողովուրդն որ էր կատարեալ մկրտութիւն: - 488. Զագահութիւնն՝ բազմաբաշխութիւնն. որ ետ զմարմին իւր ի կերակուր և զարիւնն իւր ըմպելի. զհոգին ի գին. զջուր կողին ի լուացումն. զհանդերձն՝ խաչողացն. զմարմինն՝ աշակերտացն. և զմայրն՝ *յոհաննու*: - 489. Եւ զչորրորդն *յօհաննէս* պատմէ միա՛յն զմագդաղենացին. և տեսեալ երկու հրեշտակս ի սնարս և յոտս նստեալ: - 515. *Յոհաննէս* յեփեսոս: - 546. Յեփեսոս վասն *յոհաննու*: - 549. Ա՛րդ՝ դ են գիտութեամբ մեղանչելն. վասն որոյ՝ ասէ *յոհաննէս*, «թէ անգիտութեամբ մեղուցիք, թողո՛ւ ձեզ աստուած. ապա թէ գիտացեալ զնա և այնպէս մեղանչէք, և զառաջինն ևս խնդրեսցէ»: - 564. Զի մահացուն ո՛չ էր ի յերեմիայ և ի *յովհաննէս* որք սրբեցան յորովայնէ. թէպէտ ո՛չ զերծանեին ի ներելույն: - 568. Ասաց զայս *յօհաննէս*: - 573. այսպէս պատմէ Մատթէոս և Մարկոս. իսկ Ղուկաս և *Յոհաննէս* յետ ընթրեա՛ցն նշանակեն զթացեալ պատառն: - 599. Եւ վկայէ՛ մեզ աւետարանիչն *յօհաննէս*. զի ասէ՝ եսայի ետես զփառս նորա և խօսեցաւ վասն նորա»: - 632. Իսկ աւետարանիչն *յօհաննէս* ի դէմս որդոյն ասէ: - 633. Եւ զպէնտակոստէին, և զվարդավառին, և զսուրբ գրիգորին և *զյովհաննուն*, և զմարգարէիցն, և զվարդանանցն, և զառաքելոցն, և թագաւորացն, և զանտօնին: - 637. զմարգարէից **դծ** հարցն, և *զյովհաննու* **դծ** հարցն, - 637. Եւ յերեքշաբաթին ըստ կարգի՝ մարգարէիցն և *յովհաննու*. որ միջնո՛րդ է օրինաց և շնորհաց: - 642. Իսկ աղօթքն զոր *յովհաննէս* ուսոյց աշակերտաց իւրոց այս էր: - 659. Չորեքտասաներորդ, ասէ *յոհաննէս* ի կաթուղիկէքն, «գիտեմ զի յորժամ նայն յայտնեսցի, տեսանելո՛ց եմք զնա որպէս և էն»: - 692. Եօթներորդ ասեն, զի՞նչ է որ ասէ *յոհաննէս* «ի գալս իմում առ քեզ՝ ընկրկեսցի հուրն» և այլն: - 703. Եւ *յօհաննէս*՝ նեռն կոչէ: - 707. Եւ վասն արդեանցն. որպէս ասէ *յոհաննէս*՝ «շնորհս փոխանակ շնորհաց»: - 746

**ՅՈՎԱՆ** - Յունվարի. այս *յովանն* է նախնին իւրեանց: - 201

**ՅՕՆՔ +** Նա՛խ՝ *յօնքն* ի վերոյ՝ զքիրտն արգելէ՛: - 239

**ՅՕՆԱՆ** - Այլ և զառաւել գութն հեթանոսաց տեսցէ. որպէս *յօնան* զնինուէացւոցն ապաշխարութիւնս: - 444

**ՅՕՇԵՄ +** Եւ *յօշելն* զանդամս **բժ**ան մասն ընդ ցեղիցն. և զոտս և զփորն լուանալն. և ողջակիզել ի վերայ պղնձի սեղանոյն: - 358. Անգամ անդամ *յօշելն*. զերկոտասան անդամոց սրբելն և հատանել ի

մեղաց: - 360. Եւ ո՛չ *յօշէին* զբռչունքն. զի անբաժանելի՛ է յինքեան աստուածութիւնն և մարդկութիւնն. այլ և զբազումս հաղորդութեամբն իւրով մի՛ արար անբաժանելի: - 361. Երրորդ՝ որ զմիսն ի վերայ *յօշէին* և ի մեծ սեղանն հանէին: - 364

**ՅՕՐԱՆՉԵՄ +** Զի՞նչ է կծկիլին. և է անգամ *յօրանչելն* ի վերայ մեռեալ պատանոյն: - 446. Խաչանման տարածեցաւ ի վերայ մանկանն և կծկեցաւ. այսինքն փոքրկացաւ ի չափ մանկանն. և ապա յայտնապէս է անգամ *յօրանչելով* և կծկելով կենդանացոյց զնա: - 446

**ՅՕՐԻՆԵՄ +** Իսկ թէ զի՞նչ համբերութիւնն. ասէ՝ «գործ կատարեալ ունիցի». այսինքն թէ՝ նիւթ աստուծոյ գործոյն՝ փորձութիւնն և նեղութիւնն է. և *յօրինող*՝ հաւա՛տն է. և ի կատարումն ածօղ՝ համբերութիւնն է: - 161. Եւ այլք զնշխարս նախահօրն ադամայ ասեն. զի յաստուծոյ ձեռացն էր *յօրինեալ*՝ լո՛յս տայր նոցա: - 294. Եւ ո՛չ միայն այս, այլ զեօթն օր անխմոր բաղարջ ուտէին ամենայն ժողովուրդն. և Աբրահամ և ղովտ բաղա՛րջ *յօրինեցին* զխորհուրդ փրկական մարմնոյ տեառն որ ի վերնատունն բաղարջով աւանդեաց: - 356. Եւ յետ սորա թովնաս երաժիշտ՝ այլակերպ *յօրինէր* գործի...: - 640

# Ն

**ՆԱ +** *Նորա* որք զբախտ և զճակատագիր և զհրամանն համբաւեն, ո՛չ ինչ ասեն ի կամաց մեր գործիլ. այլ զամենայն ի հարկէ՛ ասեն. զի զեղխաբար զկենցաղս վճարեսցեն: - 7. Առաջին պատճառն աստուած՝ եդ զզօրութիւն իւր յաստեղս. և *նորա* ազդե՛ն ի մեզ, և դարձուցանեն զմեզ ըստ իւրեանց շարժութեանն ի չար կամ ի բարի: - 7. Որպէս արեգակն զի ո՛չ այրէ որ է հեռաւոր պատճառ. այլ հուրն ի նմանէ առեալ զջերմութիւն ի մերձ գոլով այրէ՛. որպէս յա՛յտ է ի հայելւոջն, որ առեալ զնշոյլս յարեգականէն՝ այրէ՛. ա՛յսպէս և բանս մեր ի հարկէ *նոցա* լինի՝ զոր ստորասեմք կամ բացասեմք: - 8. Զոր օրինակ՝ յորժամ ասեմք՝ լինի անձրև կամ ո՛չ, ի հարկէ միոյն ի *նոցանէ* լինի: - 8. Ա՛յս է *նոցա* զրախօսութեանն կարգ, որք զհրամանն համբաւեն: - 8. Նա՛խ, զի ըստ սոցա ոչինչ է զանազանութիւն մշտնջենաւորացն և փոփոխականացն. որք են երկնայինք և երկրաւորք. զի *նորա* միա՛յն են ի հարկէ, որք միշտ նոյնպէս ունին...: - 8. Եւ նախ առ *նոսա*՝ որք ասեն զբանս մեր ի հարկէ գոլ կամ ո՛չ գոլ: - 8. Նախ՝ եթէ լինէր բանս մեր ի հարկէ ճշմարիտ, *նա* ո՛չ միոյն միայն, այլև ամենայն բան զինչ ասէաք՝ ճշմարիտ լինէր. որպէս շինել քաղաք, կամ ո՛չ շինել. տընկել այգի, կամ ո՛չ տնկել: - 8. Երկրորդ՝ զի թէ ի ներկայս ասեմք ի վերայ քարի թէ լինիցի փայտ. ո՛չ լինի այնպէս. արդ՝ թէ ասելն մեր զներկայն ո՛չ փոփոխէ, *նա* և ո՛չ զհանդերձեալ. կարէ փոխել. ո՛չ ըզմերձաւոր հանդերձեալն՝ և ո՛չ զհեռաւորն: - 8. Զորօրինակ՝ իրն ի ներկայս որ է նիւթ ներընդունակ՝ ունի կրկին զօրութիւն. որպէս հանդերձն կարէ՛ պատառիլ, և կարէ՛ ո՛չ պատառիլ. և ջուրն կարէ ջերմն գոլ, և կարէ՛ ո՛չ գոլ. և միոյն ի *նոցանէ*՛ լինի ներգործութեամբ որն և հանդիպի: - 9. Ա՛յսպէս և որ ի հանդերձեալն լինելոցն է՝ ունի կրկին զօրութիւն լինելոյ և ո՛չ լինելոյ. և հանդիպմամբ միոյն յառաջէ՛ ի *նոցանէ* և լինի ներգործութեամբ: - 9. Ասեմք առ այս, եթէ ամենայն իր զինչ և իցէ ի ներկայս՝ գիտեմք *զնա* ի յէութեան իւրում. իսկ ի հանդերձեալն ո՛չ գիտեմք ի յէութեան իւրում. սակայն գիտեմք *զնա* ի պատճառ իւր: - 9. Ամենայն ինչ որ լինի՝ ունի պատճառ. և ամենայն պատճառ ի հարկէ է՛ նախքան զպատճառելին. ապա թէ հարկաւոր պատճառս այս ո՛չ է բանն մեր որպէս ցուցաւ, է՛ ուրեմն զօրութիւնն աստեղաց ի շարժմանէ *նոցա* ազդեցեալ: - 10. Դարձեալ ասեն, թէ ամենայն ստորնային մարմինք՝ կառավարին վերնային մարմնովք. որպէս յա՛յտ է ի չորս եղանակս տարւոյն. այլև ծնունդ և աճումն՝ և բոյսք և պտուղք՝ ի շարժմանէ *նոցա* պատճառին. և շարժումն *նոցա* է՛ հարկաւոր. ապա ուրեմն ամենայն ինչ լինի ի հարկէ: - 10. Ասեմք առ այս, թէ սնունդ և աճումն մարմնոց, տնկանին է և ոչ աստեղաց. թէպէտ օգնեալ լինի ի *նոցանէ*: - 10. Դարձեալ ասեն, թէ բազում ինչ հանդիպի արտաքոյ կամաց մերոց. որպէս չար հիւանդութիւն. վատաբախտութիւն. մահ. և այլն, ապա ուրեմն *նորա* ի հարկէ բախտի և ճակատագրի: - 11. Դարձեալ, որոյ է իր գործեացն՝ *նորա*՛ է և ներգործութիւնն. եթէ առնել և եթէ կրել. արդ՝ մարդո՛յ է հոգին և մարմինն և ձեռն. մարդո՛յ է ուրեմն և գործ նոցին, եթէ չար և եթէ բարի: - 11. Եւ որպէս կիրք ցաւոցն մարդոյն են, զի ըզգա՛յ զկսկիծն. նոյնպէս և կիրք հեշտութեանն *նորա*՛ են, եթէ չարեաց և եթէ բարեաց, ապա ուրեմն մեր է ներգործութիւնն և ո՛չ հարկին: - 11. Ասեմք առ այս, մոլորականքն ո՛չ եթէ զի ունին ներհակ շարժումն վասն այն կոչին մոլորականք, կամ պատճառք են չարեաց, այլ զի մեք մոլորիմք ի շարժումն *նոցա*. զի ունին հասարակ շարժումն, և ունին յատուկ շարժումն: - 12. Եւ շարժումն *նոցա* ո՛չ պատճառէ զչար և զբարիս մարդկան...: - 12. Զորօրինակ՝ ի կենդանեաց բազումք նշանակեն զլինելոց իրաց, և ո՛չ են *նորա* պատճառք լինելոյ չարեացն կամ բարեաց: - 12. Ասելով թէ պատճառ ամենայնի՝ բարեաց և չարեաց մերոց ո՛չ մեք եմք, այլ է՛ առաջին պատճառն աստուած. որք փախչելով յառաջ ասացեալ բախտէ՛ և ճակատագրէ՛ աստեղացն, փոխանակ *նոցա* յառաջին պատճառն վերագրեն զհարկն. որպէս զի մի՛ ասիցեն երկու սկիզբն ըստ մանիքոսի: - 13. Հնգետասաներորդ՝ թէ չարն է յաստուծոյ՝ և սկիզբն ամենայնի է աստուած, որև չարեաց ըստ *նոցա*, ապա ո՛չ է սկզբնաչար առաջին գտակն չարեաց սատանայ. որպէս *նորայն* բարբանջեն: - 14. Իսկ թէ ըստ ինքեան է չարն յաստուծոյ, *նա* ո՛չ լինէր բարին յաստուծոյ. զի ըստ ինքեան՝ հարկաւոր է և գոյացական և անփոփոխ: - 15. Սակայն բե՛ր զառարկութիւնս *նոցա* տեսցուք. և զեղծումն *նոցին* յարմարեսցուք: - 15. Դարձեալ ասեմք՝ թէպէտ տեսանէ աստուած զամենայն նախքան զլինիլն իւրեանց, սակայն տեսութիւնն աստուծոյ ո՛չ հարկ է ի վերայ *նոցա* լինիլ չար կամ բարի: - 15-16. Հինգերորդ, ասեն թէ՝ գործունեայք չարին են յաստուծոյ որպէս կամքն. ապա և չարն է յաստուծոյ. զի *նա*՛ ստեղծ զկամքն: - 16. Նախ թէ աստուած ստեղծ զկամքն բարի. և զբարին եդ առաջի կամիլ. իսկ *նա* անձնիշխանութեամբ հեռացեալ ի բարւոյն՝ գտա՛կ եղև չարին. **զի չարն ո՛չ այլ ինչ է, բայց հեռացումն. կամ պակասութիւն բարւոյ.** ապա ուրեմն թէպէտ

բանն և կամքն է աստուծոյ, այլ կամիլն և ընտրելն զչարն՝ ոչ է յաստուծոյ, այլ կամացն և բանին: - 16. **Զորօրինակ՝ արուեստաւոր ոք կազմէ սուր ի պատճառս բարւոյ. այլ որ ներգործեաց չար՝** ***նա*** **եղև չարին պատճառ:** - 16. Դարձեալ, անձնիշխան կամքն է՛ յաստուծոյ. և է՛ յոչնչէ եղեալ. այլ ա՛րդ՝ անձնիշխան կամքն ըստ այնմ՝ որ յաստուծոյ է եղեալ՝ ո՛չ է պատճառ չարի. այլ ըստ այնմ որ յոչընչէ՝ և ցանկայ ոչնչի. այսինքն չարի. վասն այսորիկ մեղքն և չարն ո՛չ են յաստուծոյ. այլ յոչընչէ՝ որ է՛ սկիզբն *նոցա:* - 16. Իսկ որ սկիզբն ի մէնջ՝ և կատարումն ի խնամոցն աստուծոյ, այսինքն յորժամ սկսանիմք զբարին՝ և *նա՛* աւարտէ՛ ի բարին: - 18. Եւ թէ սկսանիմք զչար, և *նա* փոխէ ի բարին ըստ բարի խնամոցն իւրոց: - 18. Դարձեալ ասեմք թէ՝ ո՛չ է բարի առանց աստուծոյ կամացն. և ո՛չ չար առանց թոյլ տալոյ *նորա*...: - 18. Դարձեալ, ասեմք եթէ՝ առնէ՛ աստուած զոմն խոհեմ և զոմն տգէտ, զի *նա՛* ի նմանէ՛ ուսցի: - 19. Այսքան ընդդէմ *նոցա*՝ որք յաստուծոյ ասեն զբարիս. և զչարս: - 20. Հինգերորդ՝ թէ է **բ** սկիզբն և հակառակ, սկսեալքն ի *նոցանէ* անկարգ լինէին և հակառակ: - 21. Վեցերորդ՝ եթէ է ամբոխումն ինչ ի մէջ *նոցա*, ոչինչ էին մեկուսի ի մէնջ. այլ դժուարաձեռն որպէս զմեզ և հակառակ: - 21. Եթէ ո՛չ իշխեն, ո՛չ ոք ի *նոցանէ* է աստուած. և եթէ իշխեն, որ ոք և իշխէ միայն՝ *նա՛* է աստուած: - 21. Եթէ ոչ հաղորդին, մինն է ի *նոցանէ* էակ. և այնպէս ո՛չ երկու սկիզբն: - 21. Վասն ճանաչման իւրոյ աստուած կազմեաց կրկին կերպիւ օրինակս. այսինքն իմանալի և զգալի. որպէս հոգին, միտքն, և նմանք սոցա. կամ արեգակն, լոյս, և նմանք *նոցա:* - 24. Այսմ տեսութեանս որք արժանաւորին, *նորա* երանին և անքակ միանան ի սէր նորին որպէս հրեշտակք: - 24. Վասն այն կամեցաւ աստուած զի ի տեսանելն *զնա*՝ ան ի՛ բաց դնելի սիրով միացուք ընդ *նմա:* - 24. Չորրորդ՝ զի որք կապեալ եմք ի մարմնի՝ անհնա՛ր է անմարմնապէս տեսանել *զնա*: - 25. Եթէ ոք գիր ո՛չ գիտէ, և ո՛չ զվկայութիւն ընդունի սուրբ գրոց, որպէս ցուցանեմք *նմա* թէ է՛ աստուած: - 25. Արդ՝ պիտո՛յ է անպատճառ պատճառ բոլորից պատճառաւորաց, որ *նա* ինքն է աստուած: - 25. Իսկ թէ և *նա՛* սկսեալ՝ պիտո՛յ է և նման սկիզբն: - 25. Երկրորդ՝ զգեղեցկազարդութիւն *նորա:* - 26. Եւ մի է, և անմարմին է, և անբաւազօ՛ր է, և անեղ է. յայն սակս և անվախճան է. և *նա՛* է արարիչ ամենայն եղելոց. և *նմա՛* է տալի պաշտօն: - 26. Ա՛րդ՝ բազում աւուրք անցին յետ մէխիային ծերոյ, այսինքն աւելի՛ քան զհազար և չորս հարիւր ամ. ապա և ո՛չ էր *նա* մէխիայն: - 27. Որոց պատասխանեն վարդապետք եկեղեցւոյ. և ես *զնոցայն* առեալ ասացից՝ թէ յաւուրս յետինս՝ ոչ զկատարած աշխարհի կոչէ, այլ կոչէ աւուրս յետինս՝ զպակասութիւն օրինացն և արդարութեան *նորա*. քանզի օրէնք *նոցա* պակասեցաւ ի գալստեանն քրիստոսի: - 27. Ասեմք թէ՝ զբանս զայս ասէ մարգարէն վասն խաղաղութեան որ եղև սակաւ մի յառաջ քան զգալուստն քրիստոսի՝ և ի բոլոր ժամանակս քրիստոսի, և յետ *նորա* **խ** ամ մինչև ապստամբեցին հրէայքն հռօմայեցւոց տէրութեանն: - 27. ...յետ մահուան *նորա* ելին ի վերայ իսրայէլի: - 27. Այսպէս և յակոբ յօրհնելն զյուդա՝ նմանեցոյց *զնա* առիւծու: - 27-28. Իսկ եզր աստ ցուցանէ *զնոսա* սուտս և ապաշնորհս...: - 28. Դարձեալ ի գիրս հետրին գրեալ է թէ եղիա և աշակերտք *նորա*...: - 28. Եւ վասն *նորա* ասաց աստուած աբրահամու՝ թէ ի չորրորդ ծնունդն ազատեսցին ամենայն զաւակք քո: - 29. Եւ պատասխանիք, և ա՛յլ հարցմունք ուղղափառի առ *նոսա:* - 29. Եօթներորդ՝ Հայր իմ մեծ քան զիս. և պատասխանիք *նոցա* **ը** գլխով: - 29. Ութերորդ՝ Տէր ստացաւ զիս, և պատասխանիք *նոցա* **դ** գլխով: - 29. Իններորդ՝ Անդրանիկն արարածոց. և պատասխանիք *նոցա* **ե** գլխով: - 29. Մետասաներորդ՝ Աստուած աստուած իմ ընդէ՞ր թողեր զիս. և պատասխանիք *նոցա* **ը** գլխով: - 29. Երեքտասաներորդ՝ Ո՛չ կարեմ յանձնէ. և պատասխանիք *նոցա* **ժ** գլխով: - 29. Այլ և ընդդէմ *նոցա*՝ որք արարած ասեն զբանն աստուծոյ, և զհոգին: - 30. Վեշտասաներորդ՝ Հարցմունք ուղղափառաց առ *նոսա* **ժ** թւով: - 30. Վասն այնորիկ ո՛չ երևի ճշմարիտ *նոցա*, զոր ո՛չ ըմբռնէ միտք. և ո՛չ այլ իրիք հաւատան, բայց միայն զայն՝ զոր իմանան: - 31. Արդ՝ զորօրինակ զգալի աչք մեր ո՛չ կարէ ըմբռնել զքանակութիւն արեգականն և այլ լուսաւորացն. այլ մտօք իմանամք զմեծութիւն *նոցա:* - 31. Նոյնպէս ո՛չ կարէ իմանալ յորժամ ի սուրբ գրոց և ի սքանչելեաց և ի բանից սուրբ վարդապետաց՝ դարձուցանէ զմիտքն. որպէս ասէ առակն՝ պակասամիտն ոչ ընդունի զբանս խոհեմութեանց. բայց միայն զայն՝ որ շրջին ի միտս *նորա:* - 31. Իններորդ՝ զի *նոցա* բանականն է մոլորեալ. և ո՛չ ցասումն և ցանկութիւնն. յորոց վերայ բանն բռնադատէ խղճիւն, և ստիպէ *զնոսա* յուղղութիւն. այլ ինքն կառավարն խոհեմութիւնն մոլորեալ ո՛չ ուղղի: - 32. Երկրորդ՝ զի *նորա* զղջումն ունին. և յա՛յտ է ի հեթանոսաց հաւատացելոց: - 33. Արդ՝ կռապաշտն և հերձուածօղն հաւասա՛ր են յամբարիշտ գոլն. զի որպէս շուն դառնայ ի փսխած իւր. այսինքն զի *նա* ո՛չ ունէր, և սա՛ ուրացաւ և դարձաւ անդրէն: - 33. Երրորդ՝ զի *նորա* զաստուծոյ փառսն

առաւելուին թէպէտ զճշմարիտն անգիտանային: - 33. Չորրորդ՝ զի *նորա* իւրաքանչիւր անձանց էին կորուստ, և ի ժամանակս իւրեանց: - 33. Հինգերորդ՝ զի *նոցա* պատճառ երևի սատանայ մոլորութեամբն: - 33. Վեցերորդ՝ զի *նորա* հեթանոսք միա՛յն էին մոլորեալ: - 34. Չորրորդ՝ հրէայքն դաւանին զմովսէս՝ և ուրանան զքրիստոս, զխաչն և զօրէնս *նորա:* - 34. Ընդ կարգաւորս շնալ կանանց՝ սրբութիւն *նոցա* համբաւեն: - 34. Երրորդ՝ մոլորեցուցիչ կոչի. և հերձուածօղք մոլորեն զուղիղ հաւատս քրիստոնէին. և զբարի գործս *նոցա:* - 35. Չորրորդ՝ *նա* սուտ քրիստոս և սուտ մարգարէ կոչի. և սոքա սուտ քահանայք՝ և սուտ վարդապետք՝ և սուտ առաքեալք կոչին: - 35. Հինգերորդ՝ *նա* պղծութիւն կոչի տաճարին: - 35. Նոյնպէս և հերձուածօղք պղծեն զտաճարն աստուծոյ և զհաւատն սուրբ՝ որով քրիստոս ի մեզ բնակի, և մեք ի *նա՛:* - 35. ...զի մի՛ իցէ աստուած մարդացեալ ըստ *նոցա*՝ և մարմինն աստուած. և պատճառս հայթայթելով պատրեն զմարդիկ: - 35. Եօթներորդ՝ *զնա* փոքր եղջիւր կոչէ դանիէլ. խեթկի և մեծամեծս բարբառելով. և սոքա խեթկեն զեկեղեցի. և բանան զհայհոյիչ բերանս իւրեանց յերկինս, և զլեզուս ածէին զերկրաւ: - 35. Ութերորդ՝ *զնա* օ՛ձ դարանակալ ասէ ի ճանապարհի...: - 35. Իններորդ՝ *նա՛* ի տաճարին նստի և ուսուցանէ. և սոքա ի ներքս ի յեկեղեցի. զկերպարանս բարեպաշտի ունելով արտաքոյ՝ ծածկեալ են գառնենեաւ զգայլենիս: - 35. ...բոլոր դիտումն *նոցա* է՛ պատրել զմարդիկ և հանել ի հաւատոց. և լնուլ զորովայնս. և զկանայս շեղջակուտեալս մեղօք յինքեանս գրաւել: - 35. Եւ որպէս նեռնն ազդումն է սատանայի՝ որպէս առաքեալն ասէ. և *նորա* յազդմանէ սատանայի՝ խորհին և խօսին զանազան հերձուածս ըստ չար խորհրդոց *նորա:* - 35. Նոյնպէս և վասն սոցա յառաջագոյն ասացաւ յառաքելոց և ի վարդապետաց. զի մի՛ յանգէտս խոտորեսցին ընդ *նոսա:* - 35. Վասն որոյ և մեք համաձայն գոլով ուղղափառաց հարցն սրբոց՝ դիցուք սուղ ինչ յառարկութեանց *նոցա*, և ընդ նմին զպատասխանիս: - 35. Հա՛րց դու *զնոսա*՝ թէ դու ի քո հօրէն յառաջ եկեալ կամա՞ւ ծնար թէ ակամայ: - 36. Որ է տարակուսանք այս, եթէ գոյր ոմն մեծ քան զհայր՝ զի բռնադատեաց *զնա՛*: - 36. Իսկ թէ ոչ կամաւ. ո՛ է որ *զնա* բռնադատեաց. զի բնութիւնն ողջախո՛հ է. և յայտնէ զայս կուսութեամբ կեալն բազմաց: - 36. Իսկ թէ յոչ կամայ, այլ ուրեմն բռնադատութեամբ քարշեցաւ յաստուածութիւն. և բարձեր զանսկզբնութիւն *նորա:* - 36. Այլ որքան հայրն հայր. նոյնքան և որդին ընդ *նմա* որդի: - 37. Հա՛րց և դու *զնոսա*, թէ հայր յումեքէ՛ է, թէ յոչ ումեքէ է եղեալ: - 37. Իսկ թէ յո՛չ ումեքէ, կարգեցեր *զնա* ընդ յոչ էից գոյացելոց: - 37. Զի և յօհան դամասկացին ասէ հարկ գոլ ամենայն սկզման ունել դադարումն. այլ զի հրեշտակք և հոգիք ոչ դադարին, այս կամա՛ցն աստուծոյ է պահպանութիւն, և ոչ բնութեան *նոցա*. զի յո՛չ էից եղեալքն՝ կարեն յոչ էութիւն փոխիլ: - 37. Ո՞ ոք է ընդ մէջ որդւոյ և հօր շաղկապ՝ զի հրաւիրեսցէ *զնա* յորդէգրութիւն հօր. և զի ո՛չ ոք: - 39. Զի ո՛չ էր հայր մեծ քան *զնա*՝ ի յոր երդնոյր. զի որք երդնուն՝ ի մեծագոյնսն քան զինքեանս երդնուն. ապա ուրեմն հաւասա՛րէ որդի հօր և ո՛չ փոքր որպէս ասէ առաքեալն: - 40. Այլ *նա* ընդ ամենայն է քրիստոս զօրութեամբ և էութեամբ թափանցեալ է ...: - 40. Նախ ասեմք թէ՝ թագաւոր էր այր կերող և արբեցող և վաւաշոտ. զի՞նչ իցէ ի համար բան *նորա*. թէպէտ կարի ասել ո՛չ կարեմք: - 40. Երկրորդ և ոչ վասն յետին յանցանացն կռապաշտութեան եպերեմք զիմաստութիւն *նորա* և ո՛չ ընդունիմք. թէպէտ և հնա՛ր է պատճառել թէ այնքան իմաստութիւնն, *զնա* ո՛չ պահեաց հաճոյ մնալ աստուծոյ: - 40. Այլ ասի անդրանիկ՝ զի *նա՛* էառ ի հօրէ զայն՝ որով ստեղծան ամենայնքն: - 41. Զի որպէս առաջին *նա՛* ծնաւ անսերմն ի կուսէ և ի հոգւոյն սրբոյ, այսպէս և մեք յետ *նորա* ի ձեռն հոգւոյն սրբոյ ծնանիմք ի կոյս աւազանէն: - 41. Պատասխանեմք, ո՛վ յանդուգն մեկնիչ դու ...զինչ վաղճան իցէ թագաւորութեանն *նորա*. ո՛վ ընկեսցէ և յի՛նչ պատճառս. և ո՞չ լուար ի հրեշատակէն, «թագաւորութեան *նորա* վախճան մի՛ լիցի»: - 41-42. Այլ զայս երկբայիս յաղագս ոչ գիտելոյ քոյ թէ «մինչդ» ամենուրէք ո՛չ որոշէ ընդդէմ հանդերձելոյն. զի թէպէտ նշանակէ՛ զկէտն ուր մինչն է եղեալ, այլ զոր ա՛նդր է քան *զնա*՝ ո՛չ ուրանայ: - 42. Որով ցուցանի կատարեալ սէրն *նորա* առ մեզ արդեամբք և ճշմարտութեամբ...: - 43. Վեցերրորդ՝ զի պահանջէ՛ ի սիրողաց իւրոց միշտ զայն խորհիլ. զի որպէս ինքն վասն սիրոյ զանձն իւր եդ ի վերայ մեր, և մեք վասն սիրոյ *նորա* փոխարէն դիցուք ի վերայ *նորա:* - 43. Եօթներորդ՝ զի չարչարանօքն իւրովք յուսադրեաց զմեզ, զի մի՛ յետ տկարութեանս և սակաւ չարչարանաց ի փորձողէն՝ կասեսցուք ի նահատակութեանց. այլ օրինակ դիցուք զչարչարիլն *նորա* մեզ և համբերեսցուք որպէս ասէ: - 43. Բայց է և այլ իմն տեսութիւն խորին և գեղեցիկ. զի *նա՛* վասն սրբութեան չարչարեցաւ. և որ ոք ևս չարչարեսցի վասն սրբութեան՝ մի և նոյն է դիտաւորութիւն երկուցն. յայնժամ օգնեսցէ *նմա*. այսինքն միաւորեսցի ընդ *նա՛* սրբութեամբն, և եղիցի աստուած

ամենայն յամենայնի. այսինքն կատարեսցէ *զնա* աստուածս առնելովն. և եղիցին աստուածք ամենայնքն: - 43. Մինն որ է աստուած՝ իսկապէս մեզ, և *նմա* ըստ մարմնոյն: - 43. Եւ միւսն որ է՛ հայր՝ *նմա* իսկապէս, և մեզ պիտակապէս: - 43. Զի *նմա՛* բնութեամբ է հայր, և մեզ ըստ շնորհաց: - 43. Մեզ ճշմարտապէս ստեղծօղ՝ որպէս և *նմա* ո՛չ բանին՝ այլ երևելոյն: - 43-44. Երրորդ՝ ըստ ո՛չ պատշաճի. որպէս ո՛չ կարեն պահել որդիք առագաստի մինչ ընդ *նոսա* իցէ փեսայն որ է քրիստոս: - 44. Չորրորդ՝ վասն ոչ ախորժողաց՝ իբր ոչ կարաց անդ նշանս առնել վասն անհաւատութեանց *նոցա:* - 44. Թուի թէ և այս յոչ պատշաճէն ասի զի վնասեալք էին հաւատովք՝ ո՛չ էր պատշաճ անել *նոցա* նշանս: - 44. Այսոքիկ մեզ անկա՛ր են և անհնարինք. բայց ոչ յաստուծոյ. այլ հնարաւորք և կարելիք են *նմա:* - 44. Եւ այս ո՛չ թէ ոչ կարութիւն է *նմա*, այլ վասն առաւել կարողութեանն է: - 44. Առաջին միտք՝ զի ասաց թէ «հայր գործէ՛ և ես գործեմ». և վասն այնր զչարացան հրէայքն, այժմ իբր թէ զնուաստագոյնս ճառէ ի զիջումն բորբոքման *նոցա:* - 45. Տարակուսելի է առ այս, զի թէ հա՛րկ է որոց բնութիւնքն մի գոլ՝ *նոցա* և կամքն և ներգործութիւնն մի լինիլ. ընդէ՞ր ապա զի մարդկային բնութիւնս մի է և նոյն հօրն և որդւոյն՝ և ո՛չ է կամքն և գործքն մի: - 45. Վասն այն հեզն յամենայնի արհամարհեաց զփառամոլ միտս *նորա* խոնարհ պատասխանեօք: - 47. Այլ և յայտնեաց զծածուկ պատրուակեալ խօսս *նորա:* - 47. Զի *նա* գլուխ է մեր՝ և մեք անդամք. յորժամ տեսանէ զմեզ ի մեղս՝ հոգա՛յ և ցաւի վասն մեր: - 48. Զի մեք որ ի նեղութիւնս և ի փործութիւնս ժուժկալեմք աղաչանօք. իսկ մեր մաղթանքն նմա՛ վերաբերի: - 48. Զի յորդորելն *նորա՛* է, որպէս հոգւոյն ասացաք: - 48. Տասներորդ՝ հովւական բանիւ մխիթարէ՛ *զնոսա:* - 49. Իններորդ՝ զի անփոխանո՛րդ էր քահանայութիւն *նորա:* - 50. Տասներորդ՝ զի յաստուծոյ էր կոչեցեալ *նա* ի քահանայութիւն: - 50. *Նա* և ո՛չ զյարութիւն, և ո՛չ զհրեշտակ: - 51. Նախ՝ ի *նոցունց* նոյնք. որպէս ի ծիոյ ծի, և յարջառոյ արջառ: - 53. Չորրորդ՝ ի *նոցունց* այլք. որպէս մեղուք ի մեղուշ արջառոյ. թէպէտ այժմ ի ծաղկանց լինին: - 53. Իսկ արիոսի՝ զի *նա* միայն զհա՛յր ասէր աստուած. զայս ասեմք թէ, ո՛չ են մեզ երեք աստուածք՝ այլ մի աստուած և երեք անձինք. և երկուքն ի մի և ի նոյն էութենէն յառաջ եկեալ. կամօք մի և զօրութեամբ մի: - 54. Եւ թէ *նորա* արարածք են, որպէ՞ս արար *զսոսա* անբան և անկենդան: - 55. Ա՛րդ՝ իմաստութիւնն այն որ արար զբանն և զհոգին, *նա՛* է բան աստուծոյ. և հոգի աստուծոյ. և ո՛չ արարած: - 55. Վեցերորդ՝ թէ արարա՛ծ է բանն և հոգին աստուծոյ՝ ապա օտա՛ր է յէութենէ աստուծոյ և եկամուտ և աւելորդ *նմա:* - 56. Եւ այս ցուցանի յառաջին կորընթացւոցն որ ասէ, (ո՛չ ոք գիտէ զմարդոյն՝ եթէ ոչ հոգի մարդոյն որ ի *նմա:* - 58. Այլ այժմ տեսցուք ի սուրբ գրոց զվկայութիւնսն մակեդոնի, և յարմարեսցուք զպատասխանիս *նոցա:* - 59. Իսկ այլք՝ հոգի զհրեշտակական հոգին ասեն. որ տըւեալ է առ ի պահպանութիւն մեզ. զի *նա* ուղղէ զմեզ ի բարիս, և զաղօթս մեր մատուցանէ աստուծոյ: - 59. Եկեսցուք այժմ և տեսցուք զմոլորութիւնս *նոցա՝* որք ասեն զհոգին սուրբ բղխումն ի հօրէ և յորդւոյ: - 61. Եւ նախ զվկայութիւնս *նոցա* լուծցուք, և ապա զճշմարիտն արտադրեսցուք բան: - 61. Տե՛ս՝ փառաւորէ՛ և հայր զորդի որ սկիզբն է *նորա*...: - 61. Զի թէ մի է սկիզբն, սո՛ւտ է *նոցա* ասելն զհոգին ի հօրէ և յորդւոյ բղխեալ: - 62. Իսկ թէ անկար, և յառաջ եկեալքն ի նմանէ անկար. և ո՛չ ոք ի *նոցանէ* աստուած: - 62. Զի եթէ զոյգ և հաւասար, ո՛չ գոյ առ *նոսա* կատարեալ բղխօղ. զի երկոքինն ի մի բղխողի տեղի են: - 63. Իսկ թէ անզոյգ, որ կատարեալն բղխէ՝ *նա՛* է բղխօղ. և ո՛չ անկատարն: - 63. Զի թէ կարգաւոր, երբեմն մինն՝ և յետոյ միւսն. որ յառաջին բղխօղ է՝ *նա՛* է բղխօղ. և ո՛չ վերջինն: - 63. Իսկ եթէ անկարգ բղխեն, և բղխեալն ի *նոցանէ* անկարգ. և այսպէս ո՛չ ոքն աստուած: - 63. Հինգերորդ՝ զի կանոն ընդհանուր ժողովոցն որ եղեն առ *նոսա՝* բաւականաբար դաւանութիւն հաւատոյ տըւեալ է: - 64. Նաև ի կանոն երից սուրբ ժողովոցն՝ *ընդ* բանիւ արգելեալք կան *նորա՝* որ ա՛յլ կերպիւ քարոզեն և այլ կերպիւ ուսուցանեն քան զոր *նորա* ուսուցանեն: - 64. Վեցերորդ վկայ ի ժողովոյն քաղկեդոնի զոր *նորա* ընդունին և ո՛չ մեք. այսպէս է գրեալ թէ՝ որ ոք զհոգին ի հօրէ և յորդւոյ բղխումն ասիցէ՝ նզովեալ լիցի: - 64. Ապա ուրեմն նզովեալք են *նորա* ի կանոնաց իւրեանց: - 64. Եօթներորդ՝ վկայ դամասկացին որ ասէ. որ և *նա* ևս քաղկեդոնիկ է. եթէ յայտնապէս զհոգին սուրբ ի հօրէ՛ ասեմք. և *զնա* հոգի հօր անւանեմք: - 64-65. Ա՛րդ՝ զհոգին սուրբ ի յորդւոյ ո՛չ ասեմք. սակայն *զնա* հոգի որդւոյ անւանեմք: - 65. Առաջին սխալանք *նոցա* է այս: - 66. Եւ թէ և *նա՛* է բնակարան, ապա ո՛չ ինչ ունի քան զմեզ առաւել: - 66. Երկրորդ՝ զի թէ *նա՛* շնորհիւ ունի զորդիութիւնն և ո՛չ էապէս, ապա ուրեմն մասամբ և ըստ կարգի ունի՝ և ո՛չ զլրումն աստուածութեանն. զի շնորհն է մասնաւո՛ր պարգև: - 66. Ուստի մինն տըւօղ և միւսն առօղ ըստ *նոցայն*. այս է բանն և մարդն: - 66. Իսկ թէ և *նա* արտաքուստ ունի զորդիութիւն և զայլսն, գոյ կասկած երբեմն ի բաց մերժել զոր էառն: - 66. Իսկ թէ և *նա* շնորհիւ ունի

զորդիութիւնն, զիա՛րդ կարէ տալ ումեք զոր հազիւն հարստացաւ: - 67. Վեցերորդ՝ զի թէ մեք շնորհիւ՝ որդեգրեալքս կերպանամք առ ճշմարիտ և բնութեամբ որդին, և թէ և *նա*՛ է ըստ մեզ շնորհիւ, պիտո՛յ է *նմա* վերնագոյն բնութեամբ որդի մարմնացեալ ի յոր կերպասցի և սա՛ ի նմանութիւն *նորա* շնորհօք որդի: - 67. Եօթներորդ՝ զի թէ մեք որպէս և եմք ընդ լծով ծառայութեան՝ այսպէս և *նա*՛, զիա՞րդ յառակսն որ յաւետարանն՝ յետ ծառայիցն՝ որդի առաքի. զոր տեսեալ բաժանօղք այգւոյն ասեն՝ «սա՛ է ժառանգն և սպանին *զնա*»: - 67. Տասներորդ՝ զի թէ *նա* վասն բնակութեանն երկրպագելի է և աստուած, ո՛չ միայն եղիցի *նա*՛ աստուած, այլև ամենայն երկնաւորք և երկրաւորքս. որք բնակեալ ունին զաստուած և կոչին անւամբ աստուածք: - 67. Ապա ոչ եղիցի *նա* որպէս զաստուած ի տաճարս իւր. այլ որպէս տաճար ի տաճար: - 67. Երկոտասաներորդ՝ զի թէ վասն բնակութեան *նորա*՝ է մարմին *նորա* ուտելի որպէս ինքն ասաց՝ «մարմին իմ ճշմարիտ կերակուր է». կերօղքն եղիցին գազանք մարդակերք. և ո՛չ մարմնոյ և արեան որդւոյն աստուծոյ: - 67. Երեքտասաներորդ՝ զի թէ վասն բնակարան գոլոյ՝ մարմին *նորա* է կենդանարար: - 67. Չորեքտասաներորդ՝ զի թէ մահւամբ չարչարանօք *նորա* փրկեցաք մեք ամենեքեան՝ և այն է սոսկ մարդոյ փրկութիւն մեր: - 67. Եւ եղիցի *նա*՛ փրկիչ փրկեալ, և ապրեցուցիչ ապրեալ: - 67. Ա՛րդ եթէ է՛ այլ որդի և եղև աթոռակից հօր, ուրեմն ի բաց էհան զբանն ի նստելոյն ընդ աջմէ հօր որ է սեփհական *նմա* և վայելուչ հօր՝ լինիլ աթոռակից և գահակից: - 67. Եօթներորդ՝ էջ հոգին սուրբ ի վերայ քրիստոսի և հանգեաւ ի վերայ *նորա*: - 69. Զի թէ ասես զառ ի յաստուծոյ հօրէ բանն, ահա կարգեցեր *զնա* ընդ եղեալքս կարօտ սրբութեան և շնորհօք որդիութեան: - 69. Եւ կամ յորժամ որպէս զիւր բարի շնորհէր իւրայնոցն՝ մարմնապէս փչեալ ի *նոսա* ասելով՝ «առէք հոգի սուրբ»: - 69. Իսկ թէ առանձնապէս զմարդոյն, զիա՞րդ իցէ կենդանարար մարմինն մարդոյ. կամ ո՞րպէս առաքեցաւ *նա* ի հօրէ. զիա՞րդ իցէ և կենդանի վասն հօր: - 69. Զի թէ բանին, աննման ինչ խորհիս. զի *նա*՛ բնութեամբ ունի. մանաւանդ եղեր արիոսեան: - 70. **Տասներորդ՝ դերանուանքն որպէս ես. դու. *նա*՛. յատկապէս զմի անձն նշանակեն**: - 73. Զայս *նորա*: - 76. Զի թէ անանձն բնութիւն ասէաք միաւորեալ որ էր հասարակ, գո՛յր ինչ *նոցա* ասել առ այս: - 76. Այլ զի զանձնաւոր բնութիւն և զանհատն ասեմք մարմնացեալ. զի սկիզբն միաւորութեանն է ի բնութիւնն, և կատարումն կայացեալ ի յանձն, յիմարա՛ց ուրեմն և ափշելոց է խնդիր *նոցա*: - 76. Որև ըստ այսմ պարտին *նորա* ուրանալ և զանհատ բնութիւնս մարդկութեան նորին. զիմի՛ հասարակ մարդկութիւնս միաւորեսցի: - 76. Որև ընդ չարչարիլն քրիստոսի՝ չարչարեցաւ և մեռաւ բոլոր մարդկութիւնս ըստ *նոցա*: - 76. Եւ թէ՝ մի ասեմք զտէր մեր յիսուս քրիստոս. և մի զբնութիւն *նորա*. զի մի՛ է բնութիւն բանին մարմնացելոյ: - 76 - 77. Իսկ սուրբն կիւրեղ ընդ դէմ նեստորի զինէր. որ ասէր բնակութեամբ զբանն ի մարմնի. և նախ զմարդն ծնեալ ի կուսէն և շրջեալ ի յերկրի, և յետոյ բնակեալ բանն աստուած յետ մկրտութեանն. և յետ յարութեանն փառաւորեաց *զնա* և զօրացոյց յարակցութեամբ ընդ ինքեան: - 79. Այլ *նորա* ո՛չ խոստովանին զաստուած մարդացեալ. այլ՝ կամ ի նախագոյացեալ անձն բնակեալ ասեն զաստուածային բնութիւն, և կամ շնորհօք որդիացեալ որպէս նեստորի թըւի: - 81. *Նորա* ի կիսաէշ նման զտնօրէնութիւնն սուրբ համբաւեն. և կամ առ աչօք և ունայնութեամբ. որպէս մանիքեցւոցն, և կամ եւտիքի կարծի: - 81. Այլ և *նորա* որք անանձն և անգո՛յ ասեն զբանն մարմնացեալ. որպէս մեր բանս: - 82. Եւ ոմանք որպէս քաղկեդոնիկքն՝ մի անձն համբաւեն, և յերկու բնութիւնս բաժանեն զմի քրիստոսն. և **բ** կամք. և **բ** գործք. որպէս անիծեալն լևոն. և փլաբիանոս, և ընկերք *նոցա*: - 82. Մեք ո՛չ պատրիմք. և ո՛չ հաւանիմք *նոցա*: - 83. Ոչ մոլորիմք մեք ի հոմանուն ձայնս *նոցա*: - 83. Իսկ անհատ ասի՝ զի ո՛չ քակտի և ո՛չ հատանի որպէս բոլորն ի մասունս. զի թէ բաժանես *զնա* որպէս ի հոգի և ի մարմին, կամ յոտս և ի ձեռս և ի գլուխս, ո՛չ մնայ բոլորն: - 86-87. Այսպէս և մի անձն է քրիստոս և մի անհատ. զի թէ բաժանես *զնա*՛ յաստուած և ի մարդ, ո՛չ մնայ բոլորն ի նոյն. այլ մասն ինչ և մասն. կամ ոմն և ոմն: - 87. Ա՛յս է *նոցա* ասելն՝ մի անձն և **բ** բնութիւն: - 87. Ոչ նմանամասնաբար. զի *նորա* բոլորին՝ և միմեանց հոմանունաբար ասին. որպէս փայտ ի բազում փայտս: - 88. Եւ ո՛չ աննմանամասնաբար. որպէս պետրոս՝ յոտս և ի ձեռս և ի գլուխս. զի *նորա* ո՛չ միմեանց և ո՛չ բոլորին հոմանունաբար ասին: - 88. Այլ է՛ որպէս ի միոջէ և առ մի. այսինքն ի միոջէ բանէն՝ առ մի մարդկութիւն նորին կամ աստուածութիւն որպէս *նորա* կամին: - 88. Ա՛յս է *նոցա* ասելն՝ մի անձն և **բ** բնութիւն: - 88. Զի եթէ զմարդկայինն ասէք քրիստոս, ահա՛ առանձնապէս որոշեցիք *զնա* ըստ նեստորի. և սոսկ մարդ ասէք զքրիստոս: - 89. Ասէ սուրբն կիւրեղ ընդ դէմ *նոցա* թէ՝ «համանգամայն՝» այսինքն բոլորովիմբ աստուած և բոլորովիմբ մարդ: - 90. Իսկ զոյգ և հաւասար՝ ընդ դէմ է *նոցա*: - 90. Իսկ միանգամայնն՝

դարձեալ ընդ դէմ է *նոցա* Որք զաստուած և զմարդն որոշեն ի միմեանց. եթէ բնութեամբ և եթէ անձամբ: - 91. Նոյնպէս և այս ընդ դէմ *նոցա* է՝ որք մի ասեն անձն, և յերկուս բնութիւնս բաժանեն: - 91. Ապա ուրեմն յայտնապէս *նորա* ուրանան զայս, և ասեն թէ՝ ձեռքն քրիստոսի ոչ է աստուած. և գլուխն քրիստոսի ո՛չ է աստուած. և այլն. զի մի բազմաստուածք լիցին: - 91. Ա՛րդ՝ յայտնեցաւ *նոցայն* մոլորութիւն: - 91. Եւ թէ մարմինն քրիստոսի չէ աստուած, և հոգին քրիստոսի չէ աստուած, որպէս *նորա* բարբանջեն. ապա և բոլորն քրիստոս չէ աստուած. զի բոլորն քրիստոս յաստուածութենէն միաւորեալ լինի մի քրիստոս. և բաժանեալ ո՛չ է քրիստոս: - 91. Երևի ապա զի աստուծոյ ո՛չ ասեն զմասունքն, այսինքն զձեռն և զոտն. ապա ըստ *նոցա* և մարմինն չէ աստուծոյ մարմին. և արիւնն չէ աստուծոյ. և հոգին չէ աստուծոյ. այլ ամենեքեան սոքա մարդո՛յ են: - 91. Երրորդ՝ զի ո՛չ է նման առ մեզ և առ *նա* մասն և բոլորն. զի թէպէտ մասունք մարդոյ՝ ո՛չ ունին զկոչմունս բոլորին, սակայն մասունք մարմնոյն քրիստոսի՝ կոչին և ունին զբոլորին էութիւն: - 92. Նոյնպէս ասելն *զնոսա* աստուած՝ո՛չ է բազում աստուած: - 93. Սակայն աշակերտացն է ուղղութեան՝ ո՛չ յանձնէ խօսիլ. այլ նախնեացն սրբոց հետևիլ և *նրոօր* ուղղել: - 93. Վասն որոյ ասէ՝ ընդ դէմ ասացելոցս խոնարհութեանց՝ Աստուած *զնա* առաւել բարձրացոյց: - 94. Եւ զայս եթէ բաժանմամբ, ո՛չ է առանձնապէս բանն քրիստոս. զի ո՛չ գոյ մեծագոյն օծանօղ *նմա*. որ և ո՛չ առանց մարմնոյ փրկեաց: - 94. Դարձեալ՝ ընդ դէմ բերես զշնորհեացն *նմա:* - 94. Յիրաւի՛ ապա և *նմա* ասի շնորհել և տալ. եթէ զանուն և եթէ զիր: - 94. Զի որպէս նըւաստացաւ և եղև մարդ, նոյնպէս և շնորհք տըւաւ *նմա* յաստուծոյ և ի մարդկանէ: - 94. Եւ ասես՝ վասն չարչարանացն խոնարհութեան՝ առաւել *զնա* բարձրացոյց աստուած: - 94. Եւ դարձեալ՝ եթէ շնորհօք որդի և օծեալ, և ո՛չ աւելի *նա* քան զմեզ. զի և մեք չեմք ծառայ, այլ՝ որդի: - 94. Ընդէ՞ր ապա *նա* միա՛յն երկրպագի յերկնաւորաց և երկրաւորաց: - 95. Ընդէ՞ր ապա *զնորա* մարմինն ճաշակեմք. և ի *նա* մկրտիմք և *նովաւ* յառնեմք և այլն ևս: - 95. Սակայն *նա* բնութեամբ և էութեամբ միացաւ. և սոքա շնորհօք և ժամանակաւ: - 95. *Նա* աստուած օծաւ. և սոքա մարգարէ կամ այլինչ: - 95. Իսկ թէ ասի ուրեք՝ ի հոգւոյն և ի հօրէ օծանիլ *նմա*, վասն տնօրէնութեանն խորհրդոյ ասին: - 95. Ահա և այսու ի վեր է *նա*. զի յէակցէ հոգւոյ իւրմէ՝ և ի բնութեամբ հօրէ: - 95. Իսկ թէ միայն անուն առանց էութեան. ապա անւամբ խոստովանիս աստուած զքրիստոս և ո՛չ գոյացութեամբ. և հաւասարե՛ս *զնա* մովսէսի. որ անուամբ աստուած կոչեցաւ և ո՛չ էութեամբ: - 95. Ա՛րդ՝ քրիստոսն որ է օծեալ աստուածութեամբն, և *նա* աստուծոյ իմաստութիւն է. և ո՛չ ճանաչէ՛ զաստուած. տգիտութեամբ կորուսանէր *զնա* և որոյ է՛ իմաստութիւն: - 96. Ա՛րդ՝ եթէ քրիստոս տգէտ է և *նորա* զմիտս տգիտի ունէին. ո՞րպէս լինէին հազարապետք աստուծոյ խորհրդոցն. կամ հազարապետքն առաւել են քան զխորհուրդն աստուծոյ: - 96. Զի լիութեամբ շնորհաց *նորա* մեք արդարացաք. և իմաստութեամբ *նորա* իմացաք զաստուած...: - 97. Ա՛րդ՝ եթէ պակա՛ս է շնորհք և իմաստութիւն *նորա*, մեք զիա՞րդ լիութեամբ առաք: - 97. Ա՛րդ՝ ամենայն մարդկան՝ մարգարէից և սրբոց՝ հրեշտակք ուսուցանեն. և *նորա* ի քրիստոս է՛ ուսանին: - 98. Եւ թէ զհայր ո՛չ գիտէ, զիա՞րդ զբան *նորա* պահէ առ ինքեան: - 98. Իսկ թէ զամենայն ճանաչէ՝ և զսէրն պետրոսի, ապա ո՛չ է պակաս գիտութիւն *նորա:* - 98. Քսանևմիերորդ՝ արդ՝ եթէ քրիստոս տգէտ ունէր միտս, և տկար հոգի, և ապականացու մարմին և եկն քրիստոս զի բարձցէ զտկարութիւնս մեր. և լուսաւորեսցէ որ նստէաք ի խաւարի. և *նա*՛ է գառն աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի և զապականութիւն: - 99. Ապա ո՞րպէս է գլուխ *նա* ամենայն իշխանութեանց և պետութեանց և ուսուցիչ: - 99. Եւ ո՞րպէս երկիր պագանեն *նմա* երկնաւորք և երկրաւորք և սանդարամետականք. և ամենայն լեզու խոստովան լիցի թէ տէր է յիսուս քրիստոս ի փառս աստուծոյ հօր: - 99. *Նա*՜ է առեալ միաւորութեամբ բանին զաստուածութիւնն և զճանաչումն ամենայնի: - 100. Զի՞նչ հասարակ և յատուկ *նոցա*: - 102. Քահանայապետութիւն *նոցա* և մարդկան: - 102. Շարժումն *նոցա*: - 102. Վասն անկման դիւացն. և հակառակութեան *նոցա*. և լոյս կերպարանին: - 102. Պատճառ կորստեան *նոցա:* - 102. Մեղքն անթողլի՛ է *նոցա:* - 102. Յրեղէն վիշապն. և տուտն *նորա:* - 102. Եւ է դարձեալ անգիտութիւն՝ յորժամ զմիտս տարածեմք յամենայն եղեալս և *զնա* ոչ գտանեմք, ժողովեմք ի միննն որ արտաքոյ է սոցա. և այնպէս անգիտութեամբ ճանաչի աստուած: - 103. Եւ միտք յիմանալին՝ որ *նմա*՛ է ազգակից: - 104. Ըստ որում, «ես ասացի թէ աստուածք իցէք». զի ո՛չ էր ի զուր գալուստ *նորա*. այլ զի մեծամեծ իրս գործեսցէ: - 107. Ութերորդ՝ *նա* ծնաւ ըստ մարմնոյ, զի դու ծնցիս ըստ հոգւոյ: - 107. Եւ զի *նա* հոգևոր ծնեալ՝ ծնաւ ըստ մարմնոյ. զի դու մարմնաւոր ծնեալ՝ ծնցիս վերստին ըստ հոգւոյ: - 107. Երկրորդ՝ Երրորդութիւնն ցուցանէ զհամագոյութիւն երիցն. զի ո՛չ է առաջին և վերջին ի *նոսա.* այլ՝ զո՛յգ

և համանգամայն: - 107-108. Հինգերորդ՝ զի գ թիւն բաժանին ի միմեանց. զի յորժամ բաժանես զմի թիւն՝ ո՛չ է երկուքն ընդ *Նմա:* - 108. Զի *Նա՛* է աղբիւր և սկիզբն յորմէ բղխեն ամենայն: - 108. Զի յաւիտենական բղխէ ի հօրէ առ որդի. և *Նովաւ* առ մեզ գայ. որպէս ջերմութիւն ճառագայթիւ արեգականն: - 108. Ա՛րդ՝ զի հայր պատճա՛ռ է որդւոյ ծննդեան՝ և հոգւոյ բղխման, վասն որոյ հայր նախադասի. իսկ ընդ *Նմա* որդի. ո՛չ որպէս ոմանք կարծեն որդի պատճառ է հոգւոյ բղխման, այլ գ է ուղիղ տեսութիւնն: - 109. Տասներորդ՝ որպէս միակն է ի ներքոյ տասնեկին և հարիւրեկին և հազարեկին և բիւրեկին, այսպէս և ի վերոյ *Նոցա՛* է: - 110. Նոյնպէս և ի միոյն աստուծոյ իջեալ յարարածս ընդարձակի տեսութիւն մեր. և ի սոցանէ ի *Նա* դարձեալ նեղի: - 110. Չորրորդ՝ բազմանայ ի սեռս և ի տեսակս. և բազմապատկի դարձեալ ի տեսակս և յանհատս *Նոցա:* - 110. Հինգերորդ՝ բազմանայ ի նախկինս և ի սկզբնաւորս. և բազմապատկի յածանցեալս ի *Նոցանէ* և յառաջ եկեալս: - 110. Վեցերորդ՝ սկիզբն է ներգործութեան. և պատճառ կատարման. զի ի նմանէ սկսեալք՝ ի *Նա՛* կատարիմք: - 111. Վասն է՞ր կոչեմք *զՆա* էր. և է՛. և եղիցի. ըստ այսմ. «ես եմ որ էն». և «ի սկզբանէ էր բանն». և եղիցի աստուած ամենայն յամենայնի: - 111. Երկրորդ՝ զի *Նա՛* է սկիզբն՝ և մէջ՝ և վախճան: - 111. Երրորդ՝ զի ի *Նմա՛* է անցեալն՝ ներկայն և հանդերձեալն: - 111. Այլ է՛ յարացոյցն ի յաստուած. և ի տեսութիւն *Նորա*. և ի բարի կամս: - 112. Թէպէտ առ մեզ տեսանի անսկիզբն յառաջին կողմն, և անվախճանն ի վերջինն. այլ ի *Նա* ո՛չէ առաջին և վերջին. զի պա՛րզ և միեղէ՛ն է: - 115. Յաւիտեանս Յաւիտենից. որ է՛ սկզբնական և յարաձգական. զի *Նա* պարունակէ զերեք յաւիտեանն. որ ո՛չ սկիզբն ունի և ո՛չ կատարած: - 116. Եւ զտկարանալն ի խաչին, զառաւել զօրութիւն *Նորա*. և այլն ամենայն: - 118. Դարձեալ է՛ յատկութիւն, զի նախ տեսութիւնն է աստուծոյ, և ապա էութիւն ամենայն իրի՝ տեսութեանն *Նորա* հետևի: - 118. Աստուածատեսա՛կ է *Նոցա* տեսութիւնն. այսինքն պարզ և միեղէն և գերամբարձ: - 119. Եւ ա՛յս է *Նոցա* առաւօտու և երեկոյի ճանաչումն, զի զաստուած տեսանելով՝ նոր լինի *Նոցա* ճանաչումն միշտ՝ որ է՛ առաւօտու: - 119. Երկրորդ՝ խառնի ի *Նոսա:* - 120. Երրորդ՝ պա՛րզ է *Նոցա* տեսութիւնն. և մերս բաղադրեալ և նիւթական: - 120. Չորրորդ՝ միեղէն է *Նոցա* տեսութիւնն և ի միոյ. իսկ մերս բազում և ի բազմաց. զի բաժանեալ զգայարանօք զբաժանեալ իրս տեսանեմք: - 120. Հինգերորդ՝ *Նոցա* անմոռանալի՛ է տեսութիւնն. իսկ մերս հանդերձ մոռացմամբ. որքան զգայութեամբս տեսանէ միտքն: - 120. Զի յայս ճշմարտութենէս լոյս հաւատոյն ծագեալ ի միտս հաւատացելոց, անփոփոխ սերտութեամբ հաստատէ՛ զհաւատացեալս ի ճշմարտութիւնն. և զճշմարտութիւնն ի *Նոսա:* - 121. Իսկ չորրորդն է խորհրդական աստուածաբանութիւն. յորժամ զամենայն զգալի և զիմանալի էութիւն արտաքոյ թողեալ, ի խորս ընթանամք մտօք և մտանեմք յամպն և ի մէդն ըստ մովսէսի. և ապա տեսանեմք *զՆա* արտաքս որոշեալ յամենայն էից: - 122. Զի որպէս խաւարն անյայտ է, նոյնպէս և առաւել լոյսն անտեսութիւն առնէ. և *Նա* անտես է ի հրեշտակաց. և անյայտ ի մարդկային մտաց. թէ ո՞րպէս կամ զի՞նչ է էութիւն և բնութիւն աստուածութեանն: - 122. Ա՛յս է զոր ինչ է ի յաստուած՝ դնելով կոչեմք *զՆա:* - 123. Զի որպէս ո՛չէ սկիզբն աստուածութեան *Նորա*, և ո՛չ վախճան մարդկութեան *Նորա:* - 126. Սմին նման և տէր մեր ընտրեաց զառաքեալս և *Նորօք* կոչեաց զհաւատացեալս: - 127. Նախ՝ զի պատկե՛ր է *Նմա*. և ապա զի փառաբանիչ աստուծոյ: - 128. Լայնութիւնն է ընդարձակ ճանապարհ աստուծոյ. որ է նախախնամութիւն *Նորա* յամենայն էքս: - 129. Բարձրութիւն իմաստութիւնն է. որ գերազա՛նց է քան զամենայն միտս. և ամենայն ինչ մերկապարանո՛ց կայ առաջի *Նորա:* - 129. Հինգերորդ՝ ոտքն են հաւատացեալք և առաքեալք նորին. և գլուխ է քրիստոս. զի անդամք և մարմին եմք *Նմա* ըստ առաքելոյ: - 130. Ոմանք մերձ են էութեամբ արարչին. և ոմանք հեռի. որպէս իմացականքն քան զբանականս. և սա՛ քան զկենդանիս. և *Նորա* քան զտունկս. և հուսկ յետոյ անշունչ գոյացութիւնքն...: - 131. Ա՛յլ է բանն՝ և ա՛յլ է ձայնն. զի բանն անմարմին ծնունդն է մտաց. և ձայնն է՛ շարժումն օդոյ ի ձայնական գործեաց ի յօդս բախեալ. իսկ ի սրտի միաւորին *Նորա*՝ այսինքն բանն և ձայնն...: - 131. Նախ՝ զի նիւթեղէն միտք՝ միջնորդութեամբ նիւթո՛յ հասանէ յաննիւթն. որպէս տեսեալ զգիր՝ իմանամք զզօրութիւն *Նորա*. և տեսեալ զորակ և զքանակ՝ իմանամք զգոյացութիւն իրին: - 131. Իսկ *Նոցա՛յն* է արիութիւն և սէր առ աստուած: - 132. Եւ *Նորա* ըստ առաւելութեան. զի ունին զիմացականն բան և զգայութիւն: - 132. Ասեմք թէ՝ երևմունք *Նոցա* ո՛չ են առ աչօք. որպէս նմանագործք ի յաչս ցուցանեն: - 133. և Նախ՝ զի *Նոցայն*՝ էութիւն ո՛չ է. այլ առ աչօք ուրուական ցուցմունք. որպէս ի միտս ցնորք: - 133. Նախ՝ թէ անկեալքն ի *Նոցանէ* են չափով միոյ դասի: - 134. Նախ՝ ըստ սրբոյն դիոնէսիոսի որ ինն ասէ գոլ զդասս կարգապետութեան *Նոցա:* - 134. Երկրորդ՝ զի ժերորդ է մարդս

կարգեալ ի թիւ *նոցա* ըստ հարիւրերորդ մոլորեալ ոչխարին, և կորուսեալ ժերորդ դրամին: - 134. Վասն այն իրինոս *զնոսա* ի մին դասակարգութիւն ասէ: - 134. Ասեմք եթէ՝ *նորա* երեքեան դասքն՝ այսինքն աթոռք՝ քերոբէք՝ և սերոբէք՝ միակարգ միապատիւ և գերազանց էութիւնք են. զի անընդմիջաբար յաստուծոյ ամենայն լուսափայլութիւնք իմաստք և շնորհք ի *նոսա* հեղանին համակարգապէս. և ապա *նորօր* յայլ ամենայն գոյս երկնաւոր և երկրաւոր: - 135. Այլ վասն առանձնութեան դասուցն՝ է՛ կարգ ի *նոսա*, որպէս դիոնէսիոս կարգէ՛: - 135. Եւ քերոբէն որ է՛ բազում գիտութիւն՝ ի դէմս որդւոյ. զի *նա*՛ է իմաստութիւն և գիտութիւն հօր ըստ առաքելոյն: - 135. Եւ սերոբէն որ է՛ ջեռուցիչ՝ ի դէմս հոգւոյն սրբոյ. զի *նա*՛ է հուր սիրոյ զոր էարկ տէր մեր յերկիր: - 135. Երկրորդ՝ զի սերոբէն բորբոքէ ի սէրն որ է անմիջոց կապ. և քերոբէն ի ճանաչումն ճշմարտութեան. և աթոռքն ի յուղղութիւնն. և *նորա* են վերակացուք դատաստանի իրաւանց: - 135. Այլ թէ ըստ կարգին իմացիս՝ հետևիմք առաջասացեալ սրբոյն դիոնիսեայ. որպէս աւանդեցաւ *նմա* յառաքելոյն պօղոսէ յափշտակելոյն յերրորդ երկինս: - 135.Այս է միջին կարգ քահանայապետութեան *նոցա* և գործ *նոցա:* - 136. Երրորդ պատճառ. զի զօրութիւնք միջին են դասակարգեալ բոլորից. ի *նոցունց* դասուց և երիցն: - 137. Իսկ յատկութիւն *նոցա:* - 137. Չորրորդ՝ յատուկ է *նոցա* կարգն. զի ոմանք բարձրագոյնք են քան զոմանս: - 138. Են և ա՛յլ հասարակութիւն և յատկութիւն *նոցա*. որոց բաւական է այսչափս առ այժմուս: - 138. Երկրորդ՝ զի նախ մաքրելն է, և ապա՛ լուսաւորելն, և ապա՛ կատարելագործելն. և այս կարգ հասարա՛կ է ի *նոսա:* - 138. Երկրորդ՝ զի առաջինքն առանց տարակուսութեան առնուն զգիտութիւն. և այլքն նախ տարակուսին և ապա առնուն. զի այն որ առաջին դասն նախ էառ՝ տարակո՛յս է *նոցա*՝ մինչև ինքեանք ևս առցեն: - 138. Երկրորդ՝ մարդկան քահանայութիւն նիւթական խորհրդով ներգործի. որպէս հացիւ գինեաւ և այլով. իսկ *նոցայն* աննիւթութեամբ կատարի: - 139. Եւ *նորա* լոյս գոլով լուսաւորին. իսկ մեք ի խաւարէ՛ ի լոյս գամք: - 139. Եւ *նորա* գերազարդ իմացմամբ աստուածային հանճարովն կատարելագործին. իսկ մեք ի ձեռն հաւատոյ աստիճանաց կատարելագործիմք: - 139. Դարձեալ՝ առ հրեշտակս մի և նոյն իմացումն աստուածային՝ է՛ սրբութիւն՝ լուսաւորութիւն՝ և կատարումն *նոցա*. զի աստուածային գիտութիւնն սրբէ յառաջին տգիտութենէն և լուսաւորէ՛ *զնոսա*, և կատարին նոյն հանճարովն: - 139. Նախ՝ զի աստուած մերձաւո՛ր է *նոցա:* - 139. Երկրորդ՝ զի կամքն աստուծոյ հանգուցեալ է ի *նոսա* և ուղղէ՛: - 139. Տասներորդ՝ զի չարն իւրովի ատեաց *զնոսա* և հեռացաւ, և իբրև զմրուր յերկիրս զետեղեցաւ: - 139. Իսկ *նորա* անախտ և անարա՛տ կոչին: - 139. Զի թիւ մեր նիւթեղէն և տկա՛ր և չափաւո՛ր է. վասն որոյ զանբաւութիւն *նոցա* ո՛չ կարէ չափել. ուստի յայտ է՝ զի և ո՛չ զթիւ մեր կարեմք գիտել: - 141. Այլ ինքեանց վերին էութեանցն գիտելի է թիւ *նոցա*՝ շնորհեալ յամէնիմաստ գիտութենէն: - 141. Եւ է՞ յորժամ իմացումն ի յիշողութիւնն ի տրամախոհութիւնն և յայլս բաժանի, և *նորօր* իմանայ և տեսանէ զաստուած. և այս ևս է կատարեալ տեսութիւն. և կոչի սա բնական տեսութիւն: - 142. Ա՛րդ՝ ներքնագոյն սիրովն խնամէ աստուած զարարածս. և առաջին դասք հրեշտակաց զվերջինսն. և հարք զորդիս. և վարդապետք զաշակերտս. և իշխանք զիշխեցեալս. տեարք զծառայս. և այս սիրովս շարունակին ընդ *նոսա:* - 143. Իսկ վերնագոյն սիրով սիրեն արարածք զարարիչն. և վերջին հրեշտակք զառաջինսն. և որդիք զհարս. և նւազք զմեծամեծս. և այս սիրովս միաւորին ընդ *նոսա:* - 143. Եւ փառաբանութիւն է *նոցա*, փառք ի բարձունս աստուծոյ: - 144. Եւ փառաբանութիւն է *նոցա*, ողորմեա՛ տէր քո արարածոց: - 144. Իսկ բանիւ գործոյ խօսի աստուած ընդ դիւին. նա՛և հրեշտակք ընդ սատանայի. որպէս որոտ և կայծակունք հրոյ ի վերայ *նոցա*...: - 145. Այլ և հրեշտակն խօսի ընդ աստուծոյ. զի զբաղձանս իւր ընծայէ՛ *նմա:* - 145. Եւ խօսի հրեշտակն ընդ հրեշտակի. ցուցանելով *նմա* զտեսութիւն մտացն միջնորդութեամբ հոգևոր իմն ճառագայթիւք. և այսպէս խօսին հրեշտակք ընդ միմեանս: - 145. Եւ ա՛յսպէս խօսին միայն վերինքն առ ստորինս. զի հաղորդեսցեն *զնոսա* աստուածային յայտնութեանցն: - 145. Իսկ խօսի հրեշտակն ընդ դիւին՝ ցուցանելով *նմա* զտեսակս իմացման իւրոյ առանց լուսաւորութեան իմն: - 145. Զի հոգին խօսի ընդ աստուծոյ բաղձանօքն որ մերկապարանո՛ցն է առաջի *նորա:* - 145. Նաև անբարիշտ կամք *նորա* դարձել է յատելութիւն և ի նախանձ մարդոյն. զի ամենայն ջանիւ նկրտի ի կործանումն *նորա* բազմադիմի փորձութեամբ: - 146. Զի՞նչ է տեղական անկումն *նոցա:* - 146. Ա՛րդ՝ բնութեան *նոցա* պատշաճի բարձրագոյն տեղիք որ է երկինքն յորում ստեղծան. զի թէ կացեալ էին կատարելոց էին անդ: - 146. Զի զոր ինչ բնութեամբ ունէին դևք՝ եթող ի *նոսա* աստուած յետ յանցմանն. և զոր ինչ երանութեամբ ստանալոց էին՝ զրկեցան: - 147. Ուստի բնութիւն *նոցա* էր անմարմին և լոյս և անմահ՝ և

մնաց ի նոյն: - 147. Զի՞նչ էր յանցումն և պատճառ կորստեան *նոցա:* - 147. Նոյնպէս և յառնել մարդոյն և յանուն դնելն կենդանեաց՝ փառս ետուն աստուծոյ. իսկ *նա* լռեաց: - 147. Այլ և գործակից *նմա* մարդիկ՝ անւանակից եղեն *նմա* և չար կոչեցան: - 148. Եւ ապա ընկեսցի յերկիր և կորիցէ խաբէութիւնն *նորա*...: - 148. Զլաւագոյն կայս զոր աստուած տուեալ էր *նմա*՝ կամեցաւ ակամայ յաստուծոյ հ՛ւր շորթել. և այլոցն բռնաբար տիրապետել և հրամայել: - 149. Եւ այլք զի՞նչ մեղան որք ընդ *նմա* անկան: - 149. Յաճոյ թուեցաւ *նոցա* բարձրութիւն *նորա.* խորհելով՝ զի թէ *նա* աստուծոյ յաղթեալ էր, *նորա* ևս այլոցն իշխէին կարողութեամբ: - 149. Վասն որոյ ընդ *նմա* և իշխանք *նորա* անկան և ի տանջանս մատնեցան: - 149. Ընդէ՞ր այլ հրեշտակք ո՛չ ստեղծ փոխանակ *նոցա:* - 149. Այլ հրեշտակ ո՛չ էր պարտ ստեղծանել փոխանակ *նոցա:* - 149. Երկրորդ՝ զի պա՛րտ էր տեսանել այլոցն զմեղս *նոցա* և զպատիժ և մնալ ի բարին: - 149. Վասն այն թէ քրիստոս զմի հրեշտակի բնութիւն ընդունէր՝ *զնա* միա՛յն փրկէր և այլքն արտաքոյ մնային փրկութեան: - 149. Դարձեալ՝ և ո՛չ *զնա* միայն փրկէր զի մեռանիլ ո՛չ կարէր: - 149. Վասն է՞ր ո՛չ ստեղծ *զնոսա* այնպէս զի մի՛ կարիցեն մեղանչել: - 149. Այլ ետ *նոցա* անձնիշխան կամս՝ զի կամովին ընտրեսցեն զբարին և արդարապէս զհատուցումն ընկալցին զի մի՛ երբեք մեղանչել կարիցեն: - 149. Եւ զի նախագէ՛տ էր աստուած՝ ընդէ՞ր ստեղծ *զնոսա* որ այնպիսիք եղեն: - 149. Իսկ ոմանք ասեն զտեղի *նորա* ի հաստատութեան երկնից...: - 150. Այլ *նորա* ամենեքեան ա՛զգ են դիւաց. և ըստ զանազան գործոյն՝ զանազան անուան հանդիպեցան. որպէս դևն պոռնկութեան, և հպարտութեան, և բէէղզեբիւղ, բեհմովթ, և այլն: - 150. Եւ **գ** է գոյացութիւն *նոցա*. անմարմին՝ անմահ՝ և հրեղէն գոլն...: - 151. Եւ թէպէտ անկան և եղեն դևք՝ գոյացականքն մնացին առ *նոսա*. և հրեշտակ լուսոյ կերպարանին ըստ առաքելոյն: - 151. Նոյնպէս և առ մեզ՝ որք մրցին և ջանան ընդ դէմ բանսարկուին և մեռուցանեն զէ գլուխ *նորա*՝ *նորա* զնոյն պսակն ժուժկալութեամբ և առաքինութեամբ ընդունին ի գլուխս իւրեանց յիւրաքանչիւրոցն զորս կոխեն և յաղթահարեն...: - 152. Իսկ «տուտն», Նախ՝ նշանակէ զվերջին հետեւեալսն ընդ *նմա*. զի *նա* առաջին ինքնագիւտ էր ի չարն. և այլքն հետևեցան *նմա:* - 152. Երրորդ՝ անկումն *նոցա* է՛ր ակնկալութիւն տանջանցն...: - 153. Եւ վասն երկրորդին ինքն տէրն ասէ՝ կապեալ զիզօրն և զտուն *նորա* աւար հարեալ որ է՛ դժոխքն...: - 153. Յերկինս են լուսաւորքն. և վասն գոյութեանց *նոցա.* և գնան հրեղէնք ընդ ջուրս: - 154. Վասն բուսուց և տնկոց՝ և կանաչութեան *նոցա*. և ծաղկի, և պտղոյ, և համոյ, և հոտոյ *նոցա:* - 155. Երկոտասաներորդ՝ կատարած գործոյ մարդոյ ի սկիզբն անգիտելի է. իսկ աստուծոյն ի սկիզբն կատարածն գիտելի է *նմա:* - 157. Բայց թէ թոյլ տըւութեամբ՝ որ մեզ երևի չար. և է՛ ծածուկ բարութիւն ի *նմա:* - 158. Իններորդ՝ նահատակադիրն քրիստոս է փրկիչն ամենեցուն. և ամենայն սուրբք զինուո՛րք *նորա*. պարտին և զինուորքն զօրավարին նմանիլ և նահատակիլ...: - 159. Տասներորդ՝ զանկեղծ սէրն նշանակէ զոր ունին առ քրիստոս, փոխանակ չարչարանաց *նորա* չարչարանս կրել. և ի սիրոյ *նորա* ոչ մեկնիլ...: - 159. Երկոտասաներորդ՝ զի սուրբքն բանիւ մեզ ուսուցանեն՝ նեղութեան և փորձանաց համբերել. պատրին ինքեանք գործով կատարել զնոյն. զի հաւատարիմ լիցին բանք *նոցա:* - 159. ...այսինքն թէ՝ որպէս ես աստուածային մարմնոյս զօրութեամբն յաղթեցի փորձողին, նոյնպէս և դու շնորհօք իմովք՝ տկար մարմնով քո՝ յաղթես և նկուն առնես *զնա:* - 159. Հնգետասաներորդ՝ ասէ սուրբն դիոնէսիոս՝ թէ վասն այն տայ աստուած սրբոցն նեղութիւնս և փորձութիւնս, զի նեղութիւնն սիրելի և փափագելի՛ է *նոցա*. և յայնժամ ուրախանան սուրբքն, յորժամ ի մարմնական հեշտութեանց հեռանան. և արիանան ի փորձութիւնս. և սակաւ նեղութեամբ ժամանեն ի մեծ հանգիստն: - 159-160. Իսկ աստուած փորձէ զմարդ՝ զի գիտէ *զնա՛* բարի և հաւատարիմ. այլ ծածկեա՛լ է յայլոց. փորձէ՞ զի յայտնի լիցի ամենայն աշխարհի առաքինութիւն *նորա:* - 161. Հինգերորդ՝ զանազանութիւն՝ զի սատանայ ի փորձելն ո՛չ գիտէ զառաջիկայն թէ յաղթէ և թէ յաղթի. և եթէ էր տեղեակ՝ ո՛չ մրցէր ընդ կատարելոցն որք յաղթահարեն *զնա*. որպէս ընդ ստեփաննոսի, անտօնի, և այլոցն, որք յաղթեցին սատանայի: - 161. Իսկ այս օրինակ, և *նա՛* ճշմարտութիւն: - 163. ...ո՛չ հակադարձի առ *նա:* - 165. Դարձեալ և ի յառակս անառակին որ դարձաւ առ հայրն՝ և ողջմամբ ընկալաւ և զգեցոյց *զնա* և զարդարեաց մատանի ի ձեռս՝ և կօշիկ յոտս. այլ ո՛չ ետ թոյլ *նմա* պատարագել. այլ հրամայէ՛ այլոցն...: - 167. Գիտելի՛ է, զի հոմանուն է զօրութիւնն. այսինքն կարութիւնն. և հոմանունն մա՛յր է մոլորութեան. վասն որոյ որոշելի է *զնոսա:* - 167. Այլ արդ՝ եթէ գոյ զօրութեամբ ինչ ի *նա՛* ո՛չ է ի հարկէ էակ. այլ կարելի՛ էակ: - 168. Այլ արդ եթէ է զօրութիւն ի յաստուած լինի փոփոխական և *նա* որ է՛ անտեղի: - 168. Եւ թէ է զօրութիւն ի *նա՛*, լինի յանկատարութենէ ի կատարելութիւն եկեալ, կամ հակադարձեալ. որ է՛ անհնարին հերձուած: - 168. Եւ

թէ գոյր ինչ զօրութեամբ ի *նա՛*, և *նա՛* լինէր ընդ եղելոցս ի ժամանակի որ է սուտ: - 169. Եւ թէ գոյր ինչ այսպիսի զօրութիւն ի *նա*, լինէր վախճանաւոր և *նա*. և թէ էր վախճանաւոր, և էր սկզբնաւոր՝ որ է՛ անպատշաճ: - 169. Եւ զորօրինակ՝ անորակ նիւթն որ է՛ միշտ զօրութեամբ, ամենայն մարմինք որ ներգործութեամբ են՝ առ *նա* զօրութեամբ են: - 169. Յորժամ պատահումն ոչ գոյ յաստուած որպէս ասացեր, զժ ստորոգութիւնս որպէս ուղղեսցուք առ *նա:* - 171. Եւ դարձեալ՝ է կոչի աստուած, զի *նա* միա՛յն է տեսակ առանց նիւթոյ. և գոյ առանց պատահման: - 171. Ո՛չ ըստ տարաչափութեան քանակի ասեմք. այլ ըստ ամենազօր կարողութեան և անչափ անհասութեան ասեմք *զնա* մեծ: - 171. Այլ և ո՛չ տեղի պատահական. որպէս աստ և անդ. զի ոչէ ի տեղոջ իմիք պարունակեալ. և ո՛չ բացեայ ի տեղւոջէ իմիք զատեալ. զի *նա՛* է ամենցուն տեղի: - 172. Իսկ Առնելն՝ յարարածոց յայտ է. և Կրել *զնոսա* բանիւ զօրութեան իւրոյ ըստ առաքելոյ: - 172. Նախ՝ զի սոքա անմարմինք են ըստ ինքեան. այսինքն քանակ, որակ, և այլքն. և յանմարմին էութիւնս ո՛չ տեսանին. որպէս ի հրեշտակս կամ ի հոգիս. զի *նորա* ո՛չ ունին ձև. որակ. քանակ. և զայլսն: - 175. Այլ մի է պետրոսն ըստ անձին անհատ գոլոյն. և մի է բնութիւն պետրոսին ըստ միաւորութեան բանին. իսկ սոքա օրինակ՝ և *նա՛* ճշմարտութիւն: - 176. Նոյնպէս և այբն խառնի ի թաւ և ի լերկ, ի սուղ և յերկար, և միաբանի ընդ *նոսա*, և ի մի բնութենէ իւրմէ ո՛չ որոշի կամ այլայլի: - 178. Եւ *նովաւ* ճանաչեմք զաստուած. և յուսամք արքայութեանն. և երկնչիմք ի դատաստանէ՛: - 178. Նա՛խ՝ զի իմաստութեամբն *զնոսա* կարեմք գտանել. և *նորօք* զիմաստութիւնն ո՛չ: - 178. Եւ դարձեալ՝ զի *նոցա* ամենեցուն ներհակ գոյ. որպէս մեծութեան աղքատութիւն. առողջութեան հիվանդութիւն. կենաց մահ: - 178. Երրորդն իմանալի. յորում Երրորդութիւնն սուրբ ի *նոցանէ* դեմ յանդիման նկատի: - 180. Եւ այսպէս ի *նոցա* խառնուածոց լինի գոյացեալ մարմին և յառաջ եկեալ: - 181. Երրորդ՝ ի լինելութեանց և յապականութեանց. զի անպակասք են. ըստ որում հատեալ ի տարերաց՝ լինելութիւն է ա՛յլ էակաց. և ապականութիւն *նոցա* լնու զհատումն տարերաց: - 181. Եւ բնականն Նախ այսպէս. զի օդն որ ի մէջէ մտեալ և փեռեկեալ զներքին և զվերին կիսագունդն, *նա՛* է պատճառ շարժութեան երկնից: - 182. Երկինքն անապական է բնութեամբ, աստուած եւ *նմա* շարժիլ: - 182. Եւ երկիրս անշարժ է տեղեաւ, եւ սմա ապականիլ երեսօք. զի տեսեալ մարդիկ եղական և ծառայ իմացեն *զնոսա*. և մի աստուածս կարծեսցեն և մոլորեսցին. որպէս ասէ նիւսացին ի գիրս կազմութեան: - 182. Չորրորդ՝ զի երկինքն է կատարեալ մարմին. զի ազդէ՛ յամենայն ստորնային մարմինս խնամելով *զնոսա:* - 182. Նախ զի ո՛չ կարէ յաւելուլ ի *նմա* և ո՛չ պակասիլ: - 182. Երկրորդ՝ զի ո՛չ երևի ի *նմա* սկիզբն և ո՛չ կատարած: - 182. Իսկ *նա՛* կոչի հրեղէն, զի է՛ որպէս զհուր: - 183. Երկրորդ երկին՝ երևակայութեան տեսիլն դարձեալ *նոցա:* - 183. Այլ վասն հրեղէն երկնիցն ասէր ելանել և հաւասարիլ *նմա:* - 184. Այլ զաստղալից երկինս ի յօդոյ ասէ խտացեալ և թանձրացեալ. և ի *նմա՛* են կառուցեալ աստեղք և ընթանան: - 184. Եւ *նորօք* լուսաւորեաց զհաւատացեալս: - 185. Ի լուսոյ *նորա* ծածկի: - 186. Նա՛խ՝ զի ի ներքո՛յ է ամենեցուն. և ամենայնին զօրութիւն առ *նա՛* ժողովի: - 187. Մերձ եկեալ ի նոյն կենդանակերպն՝ սակաւ լոյսն առնու ի նմանէ յարևելից կողմանէ. թէպէտ մեզ ի յարևմտիցն երևի. այլ *նմա՛* արևելից մասն է որ զլոյսն առնու: - 187. Եւ յորժամ ի միւս կիսագունդն հասանէ, ընդ **զ** կենդանակերպս հետևեալ՝ բոլորի լոյսն ի *նմա*. զի ուղղապէս զլոյսն ընդունի: - 187. Եւ այլք ասացին թէ՝ ունի բնական լոյս՝ և առնու զլոյս յարևէ. և այսպէս խառնի **բ** լոյսն ի *նմա՛*. և սնուցանէ զորս յերկրի: - 187. Եւ գիտելի՛ է, զի ընդ ամենևին հեռանալն լուսինն խաւարի. և ամենևիմբ մերձ եկեալ ի նոյն կենդանակերպն և ուղղապէս ընդ դէմ անցեալ արեգականն՝ խաւարէ՛ *զնա*. զի ընդ դիմատիպ է անօթ լուսնոյն: - 187. Ոմանք ասեն որպէս արիստոտէլ, թէ ամենայն աստեղքն բևեռեալ են յերկինս և ընդ *նմա՛* շրջին: - 189. Իսկ այլք ուղղակի՛ ասեն՝ թէ անմոլար աստեղքն ամրացեալ են ի հաստատութեանն որպէս սպի ի վերայ մարմնոյ, և ընդ *նմա* շարժին: - 189. Զի տեսեալ մարդիկ զնոր և հին *նորա*՝ ասացին՝ մե՛զ ես օրինակ ծննդեան և մահուան. և կոչեցաւ ամիս: - 190. Զոր սուրբ հայրապետք փոխեցին զանուանս *նոցա* և եդին բոլոր շաբաթուն եօթն աւուրցն: - 190. Իսկ եբրայեցիքն ո՛չ այսպէս, այլ՝ առաջին օր արարչութեան է՛ *նոցա* աւելացսն **ա**: - 191. Եւ ի հինգն աւելեաց՝ է՛ գարնանամուտ *նոցա*: - 191. Նախ՝ զի սկիզբն և առաջին է ամենայն աւուրց. զի *նա* կրկնելով առնէ զայլ աւուրս որպէս ասացաւ: - 193. Երկրորդ՝ զի ի *նմա* եղեն երկինք և երկիր. հրեշտակք և լոյսն և ա՛յլ տարերք. որ են **է** գործք արարչութեան: - 193. Երրորդ՝ բազում աստուածախօսութիւնք ի *նմա* եղեն. յելանելն նոյի ի տապանէն. և առ աբրահամ. և առ մովսէս ի սինա լեառն. և տուչութիւն օրինացն ի կիրակէ եղև: - 193. Չորրորդ՝ զի օր *զնա* ո՛չ երկրորդէ: - 193. Նա՛խ՝ զի

ի *նմա՛* շրջին գազանք և կերակրին: - 196. Նա՛խ՝ զի արարածոց սկզբնաւորութիւն ի *նմա՛* եղև: - 196. Իսկ աշուն զնմանութիւն գարնան ունի. վասն այն և *նա՛* բուսուցանէ: - 198. Այլ ժամանակն է առաջին շարժումն երկնից, սակայն ո՛չ չափէ *զնա*. այլ չափէ՛ զտարրականս և զներգործութիւնս մեր յորում ո՛չ է: - 198. Բայց ասեն ոմանք թէ՝ յաւուրս մանասէի՝ Նումաս պումիլոս **բ** ամիս յաւել ի տարին հռոմոց. զի յառաջ քան *զնա*՝ **ժ** էր. և յաւել ի *նոսա* զյունվար և զփետրվար: - 201. Գէջ օդն գոգացեալ և դէմ եղեալ արեգականն՝ առնու զլոյսն ի նմանէ ըստ բոլորակ ձևոյ *նորա*: - 203. Եւ խառնուա՛ծ է ի *նոցանէ* ծիրանի և կարմիր գոյնն: - 203. Ո՛չ է աստղ. այլ գոլորշի վառեալ ի տարրական հրոյն յորժամ մերձի ի *նա՛*: - 203. Վասն այն մասնկունքն *նորա* ո՛չ խստանան. այլ անգայտացեալ ի վա՛յր բերի և կոչի ձիւն: - 205. Եւ կամ հո՛ղմ է արտաքս թիւրեալ ի ճանապարհէ՛ իւրմէ. և ի խոռոչս երկրի մտեալ. և վասն թանձրութեան երկրին շարժէ *զնա* մինչև գտանէ ելս և ապա՛ դադարի: - 206. Ութերորդ՝ ամպն առեալ ի ծովէն ծածկաբար, և ապա ցօղէ՛ յերկիր յայտնապէս. և լցուցանէ *զնա* ամենայն բարութեամբ: - 206. Ութերորդ՝ ի միջոյ ամպոյն փայլէ որ ծածկեալ էր ի *նմա՛*: - 207. Ոմանք ասեն թէ՝ զանազան և գարշ կենդանիք են ի ծովն, և ի *նոցանէ* դառնանայ: - 208. Եւ կէսք ասեն թէ՝ երկրի բնութիւնն աղտաղտուկ է և շօր՝ որ ծովն ի վերայէ. և որ առ եզերսն են՝ *զնոսա* լուանան անձրևք և խառնեն ի ծովն: - 208. Նա՛խ՝ զի արարիչն աստուած բնական զծովս աղի և դա՛ռն արար. զի մի՛ հոտեսցին կենդանիքն ի *նմա*: - 208. Եւ թէ ծարաւին գետք որ ի ծով մտանեն. և անձրևք հանգուցանեն *զնոսա*: - 208. Նա՛խ՝ զի երկու իր է. այսինքն հող և ջուր. որ ընտանի՛ է *նմա*: - 210. Եւ զի շուրջ *զնովաւ* բոլոր շարժմամբ երկին և աստեղք շրջագային: - 211. Երրորդ՝ անդ մէկին է ջերմութիւն՝ և աստ կրկին. զի հասեալ ի գոգ երկրի, մակադարձութեամբ ժողովին առ *նա* և լինի շող: - 211. Երրորդ՝ պէտք են իմաստութեանց. զի առակ օրինակի առնումք *զնոսա* ի դէպ ժամու: - 212. Նշանակեն *զնոսա*՝ որք ունին զպտուղս բարի գործոց. և զճաղիկն հաւատոյ. և զհոտ գիտութեան՝ ամենայն մարդկան անոյշ: - 212. Նա՛խ՝ զի բոյսք և խոտք մե՛րձ են երկրի, զշարժումն *նորա* դիւրա՛ւ ընդունին: - 214. Նմանապէս և կոչին փայտ. զի ի փտելոյ և յապականելոյ գոյանան այսպէս. յորժամ բորբոսի երկիր՝ *նա՛* զարմատն ի վայր արձակէ և զբոյսն ի վեր: - 214. Զերկիր ասելով, զայլ տարերքն ընդ *նմա* յիշէ և առնէ: - 214. Ճաշակելիքն ջրոյն՝ ի վերոյ քան *զնա*: - 215. Հոտոտելիքն և լսելիքն օդոյն՝ ի վերոյ *նորա*: - 215. Եւ մի և նոյն է. զի շունչ կենդանեաց է թանձր մասն օդոյս՝ խառնեալ ընդ ջրոյ. և շունչ *նոցա* է անօսր մասն ջրոյ՝ խառնեալ ընդ օդոյ: - 215. Սոքա ի գլուխս *նոցա* նստին: - 216. Երկրորդ՝ զի անհանգիստ և ի չարչարանս լինէր հանապազ. ընդ ինքեան ունելով *զնոսա*: - 217. Երրորդ՝ զի թէ ունէր ի բնութենէ զէնս կամ զգեստս. ո՛չ կարօտէր այլոց կենդանեաց. այլ և ո՛չ խնամէր *զնոսա*: - 217. Երկրորդ՝ վասն հպարտութեան մարդոյն. զի յորժամ խայթեսցեն *զնա*՝ ծանիցէ զտկարութիւն իւր. որ և զփարաւոն ո՛չ թէ առիւծք կամ առջք հարին, այլ ճանճք և մժղուկք տանջեցին: - 217. Երրորդ՝ ստեղծան *նորա*՝ զի ի *նոցա՛* ջանից ընթերցմանց և բարեաց գործոց օրինակ առցուք. որպէս են մրջմունք և սարդք, և այլք այսպիսիք: - 217. Վասն բազում պիտոյից որ գոյ ի *նոսա*: - 217. Նա՛խ՝ ի փառս աստուծոյ ստեղծան. զի յորժամ զզանազան կերպարանս *նոցա* տեսանեմք, փառս տամք արարչին: - 217. Երրորդ՝ զի թոյնք և խայթոցք *նոցա*՝ զէն և պահապան է *նոցա*. զի առիւծքն պատառելովն ապրին. նոյնպէս և այլքն: - 217. Հինգերորդ՝ զի ի *նոցանէ* ըստանամք զդեղս բժշկութեան մարմնոց: - 217. Զի վարդապետք ասեն եթէ՝ կերակուր գազանաց այլ կենդանիք են. վասն որոյ խնամքն աստուծոյ ետ *նոցա* առաւել հնարս և զօրութիւնս, զի կարասցեն ըմբռնել. զայլ կենդանիս և մի՛ ի սովոյ մեռցին: - 218. Այլ իմաստունք ասեն եթէ՝ կերակուր անասնոցն խո՛տ է անզօր. վասն այն *նորա* ապուշք և անզօրք լինին: - 218. Իսկ գազանացն միս է՛ զօրեղ. վասն այն ի խելս *նոցա* առաւել յարմարի և ուժովցնէ՛ *զնոսա*: - 218. Այլ և գիտելի է, զի ամենայն կենդանեաց բնականապէս հնարք ետ աստուած վասն օգտի *նոցա* և փրկութեան: - 218. Եւ զի բնութեամբ ունին յայտ է, զի ամենայն տեսակն զմի և զնոյն ունի հնարս. վասն զի մի բնութենէ ի *նոսա*: - 218. Իսկ մարդոյս հնարք և իմաստութիւնն բանականութեամբ է. վասն այն բազում է ի *նոսա* հնարք. և առաւել և նուազ, և ո՛չ հաւասարք: - 218. Զի մարդս բազում իրօք զբաղեալ է ի միտս. իսկ *նորա* միայն ի բնութիւնս իւրեանց փութով ճանաչեն: - 218. Հինգերորդ՝ զի մարդն գլուխ է ամենայն կենդանեաց, *զնա* սպանանել ջանայ: - 218. Ութերորդ՝ օրինակ՝ զի գլուխ օձին է չար խորհուրդն որ մտանէ ի մեզ. պա՛րտ է սպանանել *զնա*: - 219. Եւ զի զմարդն ընկէց յերկնից ի յերկիր, ընդ գարշապար ոտից *նորա* անկանի: - 219. Չորրորդ՝ զի ցուցցէ անձնիշխան գոլ զմարդն, վասն որոյ հրամայէ՛ *նմա* զի զոր ինչ և կամեսցի՝ անուն դնիցէ: - 219. Հինգերորդ՝ օգնական ետ զկենդանիքդ մարդոյն. որպէս

ծառայք տեառնն. անուամբ պարտ էր ճանաչել *զնոսա:* - 219. Եօթներորդ՝ զի փչեաց ի *նա* զշնորհաց հոգին զանազան պարգևաց, այժմ զքահանայութեան շնորհին երևեցոյց ի *նա*՛: - 219. Նա՛խ՝ զի յորժամ մարդն անհնազանդ եղև տեառն իւրոյ արարչին, յիրաւի անհնազանդք եղեն և մարդոյն անասունք տւեալ *նմա* ի ծառայութիւն: - 220. Ուստի յա՛յտ է, որք վերստին յաղթեն ախտիցն որք յինքեանս, այսինքն ցասման և ցանկութեան. յաղթին և հնազանդին *նոցա* արտաքին գազանք և անասունք: - 220. Որպէս դանիէլ առիւծուցն յաղթեաց. և պօղոս իժին. և բազում ճգնաւորաց որք անապատս էին՝ գազանք և անասունք սպասաւորէին *նոցա:* - 220. Երրորդն է անապական ըստ զօրութեան ներգործողին *զնա:* - 221. Եւ այլք թէ՝ իմանալի՛ է լոյս *նոցա*. և կամ յեթերէն: - 222. Որպէս առաջին հարքն անապական գոլ ասացին. և մեք հետևօղք *նոցին* անապական ուսանիմք: - 222. Երկրորդ՝ և յորժամ մարդն ապականեցաւ մեղօք, վասն է՛ր ի դրախտէն հանէր *զնա:* - 222. Ո՞ւր երևի անապականութիւն *նորա:* - 223. Նոյնպէս և *նա* գիտութեան էր պատճառ բարւոյ և չարի որպէս ասէ սուրբն գրիգոր նիւսացին: - 223. Եւ յիւր ժամանակն ուտելոյ բարի էր ըստ այլ ամենայն պտղոցն. այլ՝ տարաժամ ուտելն, և առանց հրաման՝ արար *զնա* չար...: - 223. Ոմանք թուզ ասեն. թէ ի նոյն ժամն որ կերաւ և մերկացաւ՝ և կարեաց ի տերևոյ *նորա*. և վկայ բերեն թէ՝ վասն այն անէծ զթզենին յերուսաղէմ: - 224. **Այլ ա՛յս է ճշմարիտն. որ միևն ծառ էր կենաց՝ և միևն գիտութեան. և ի դրախտին այլ ո՛չ գոյր նման *նմա*. թո՛ղ թէ յերկիրս. ո՞րպէս ասեմք թէ այս է՝ կամ այն**: - 224. Ա՛րդ՝ եթէ մնայ հինն ընդ նորոյն հանապազ. *նա*՛ ծանրանայ. և ո՛չ կարէ զայն քան ամաց բազմութիւն պտղոցն կրել, և այսպէս լինին ամենայն ծառքն կոտորեալ և ապականեալ...: - 224. Ա՛րդ՝ եթէ առաջին կեանքն էր ամուսնութեամբ և որդէծնութեամբ որպէս *նորա* շաղակրատեն. ապա և ի վերջին յարութեանն նոյնպէս է՛ լինելոց: - 226. Ասեմք թէ՝ կանխագէ՛տ է աստուած. և նախ ծանեաւ զի ո՛չ կարէին աճիլ անմեղութեամբ ի դրախտին որպէս զիրեշտակս. վասն որոյ կազմեաց *նոցա* մարմին, զի յերկրի անասնապէս աճեսցին: - 226. Դարձեալ ի հողոյ ստեղծ ի նախատինս սատանայի. զի յամօթ լիցի յորժամ տկարս այս և կաւեղէնս ի փառսն մտանէր յորմէ *նա*՛ որ փառաւորն էր անկաւ: - 229. Վասն որոյ պա՛րտ էր լինիլ *նոցա* նախ որ փոքունք և անպատիւք են, զի երևեսցի մեծն և պատւաւորն այսինքն մարդն: - 230. Եւ այս իսկ է գործն, այսինքն վայելել հոգւով յիմանալիսն, և մարմնով ի զգալիսս. պարտ էր նախ գոյանալ *նոցա*, և ապա՛ գործողին և վայելողին: - 231. Եւ ի վախճանի եղև զգալի բանականն իբրև մատնահար և կնիք արարածոց. ունելով զիմացումն և զզգացումն. զի իմաստութեամբն ծանիցէ զիմաստութիւն արարչին. և զգալովն զամենակարօղ զօրութիւն *նորա*՛: - 231. Այսպէս գլուխ մարդոյս ունի զնմանութիւն երկնից. զի է՛ բոլոր. և աչքն որպէս լուսաւորքն. և իմացումն ի *նմա*՛ որպէս իմանալիքն յերկինս: - 232. ...յորժամ տեսանէ աչօքն զերկին և զերկիր. և ժողովէ՛ զճշմարիտ գիտութիւն *նոցա* և հեշտանայ: - 233. Տասներորդ՝ զի կիրք մարմնոյն հեղուն ի հոգին. որպէս յորժամ մարմինն ննջէ՝ և հոգին թմրի և անգործ մնայ. վասն որոյ արարաւ ձևն ուղիղ, զի միտքն ընդ *նմա*՛ ուղղեսցի ի վեր առ աստուած...: - 233. Այլ և ի միտ ածցուք զփառս երկնային կենաց ուստի անկաք, և անդ դիմելոց եմք. զի տեսութիւն մտացն զհոգին ընդ ինքեան ի վեր տանի. և *նա* զշունչն. և շունչն ընդ արեանն է կապեալ. և արիւնն ընդ մարմնոյն. զգայարանքն ընդ մարմնոյն. և լինի մարդն բոլորովին երկնային: - 233. Երրորդ՝ զի երեսն հայելի է սրտին. և *նորա* փոփոխմամբն զխորհուրդն ճանաչեմք...: - 234. Եւ այն զի մերձ է բերանոյն. և զի հոտն և համն ազգակից են միմեանց. ի ջրոյ գոլով երկուցն. վասն այն զգայարանք *նոցա* առ միմեանս են մերձեցեալ: - 235. Նա՛խ՝ զի յառաջ եղեալ *նմա*՝ լո՛յսն է որ է վերին տարր. և լսելեացն օդն: - 235. Նմանապէս և արարիչն. այլ *նա*՛ պարզ և ի վեր քան զձեռակերտս յարացուցին: - 236-237. Երրորդ՝ զի ո՛չ գիտէին զանդրանիկն ժամանակաւ, և ո՛չ զկրտսերն. և լինէր փոփոխումն վիճակաց *նոցին*. որպէս յակոբ էառ զանդրանկութիւնն եսաւայ. և եփրեմ զմանասէին. թէ և սոքա տեսչութեամբն աստուծոյ. այլ *նորա* ի պատրանաց լինէին: - 238. Եօթներորդ՝ զի ո՛չ կարէին ընտրել և խոտել զչարն և զբարին, և զսուրբն և զանսուրբն ի մարդկանէ, թէ գործ սորին է այս կամ այն. այլ անմեղութեամբ յարակցեին պղծոյն, և զխեղդ ոգւոց *նորա* ընդունէին: - 238. Նա՛խ՝ զի պահապա՛ն է *նմա* յարտաքին վնասուց: - 239. Զի ուղեղն ի մէջն սնուցանէ զոսկրն. և ջիլն կապէ՛ առ միմեանս զի մի քակտեսցին ոսկերքն. և արիւնն կերակո՛ւր է *նոցա:* - 240. Իսկ է գլխաւոր անդամքն են այսոքիկ ըստ է մոլորակացն ունելով զբնութիւնս *նոցա:* - 241. Երկրորդն ուղեղ գլխոյն է. հով է և գէճ ընդ դէմ սրտին ջերմութեանն և չորութեանն. զի բարեխառնեսցէ՛ *զնոսա*. և իւր տանուտէր լուսինն է: - 241. Երրորդն լեա՛րդն է, աղբիւր արեանն. տա՛ք է և գէճ՝ ունելով զբնութիւն մուշթարոյն, որ տանուտէր է *նմա:* - 241. Իսկ լեարդն

զի ներգործութեամբ է արիւնն ի *նմա:* - 241. Վտարականն է՝ յորժամ եփի և հալի կերակուրն, բանա՛յ զդրունսն և բաժանէ *զնոսա:* - 242. Նմանապէս և զմիջին դուռն բանայ, և զպարզ կերակուրն ի լեարդն յուղարկէ. և *նա* ներկէ յարիւն և բաժանէ: - 242. Եւ *նա՛* տայ խաղալ և շարժիլ ոտից և ձեռաց և այլ մասանց անդամոցն: - 244. Եւ *նա՛* է զգայական. և յոր մասն և խառնի՝ առնէ զգացումն: - 244. Եւ *նա՛* է հնազանդ բանին: - 244. Եւ երկուցն կատարումն է՛ ի յաստուած. քանզի *նա՛* է ճշմարտութիւնն. և *նա՛* է բարին: - 248. Վասն այնորիկ զօրութեամբ սիրոյն շարժի առ աստուած ի միջին կէտ իւր. զի գերազանցապէս հեշտասցի ի *նա:* - 249. Բարին ճանապարհ. և Շաւիղ *նորա*՝ զգուշութիւնն: - 250. Նա՛խ՝ զի զգայարանքն *նորա* որպէս զկակուղ մոմ առաւել ընդունի զտիպն: - 251. Այլ արդ՝ ի տունկն ո՛չ կարէ սրբիլ. այլ անկանի յանշունչն, որ ներքո՛յ է տնկոյն, և նման *նորա* զի մարմին է: - 252. Այս քան առ *նոսա,* որք զհոգի յառաջ ասեն քան զմարմին: - 253. Իսկ որ զմարմին յառաջ ասեն քան զհոգի, վկայ ածելով զմովսէս որ ասէ եթէ՝ էառ զհողն և շինեաց մարմին. և յետոյ փչեաց ի *նա* զշունչն կենդանի, որ է կենդանարար հոգին: - 253. Պատասխանեմք առ այս եթէ՝ փչումն ո՛չ զբանական հոգին ասեն սուրբ հարքն. զի մարդ ասելով զհոգի և զմարմին նշանակեաց. և զմարմինն զի ի նիւթո՛յ է՝ ի հողոյ ասաց. այսինքն ի **դ** տարերաց որ է՛ ի հողն. և զհոգին ո՛չ նշանակեաց թէ ուստի՞ է. զի յանէից է ստեղծումն *նորա:* - 253. Նախ եթէ վասն մարմնո՛յն եղև հոգի զի շարժեսցէ *զնա*. ապա անա՛րգ է հոգին քան զմարմին որ վասն *նորա* եղեալն է. և մեծ և պատուական է մարմին քան զհոգի: - 253. Եւ ասի զմարդոյն թէ վասն *նորա* է ամենայն. այսինքն անասունք և բոյսք. և անա՛րգ է բոյս քան զանասուն. և անասուն քան զմարդ: - 253. Երրորդ՝ ևս յայտնի. զի ընդ նիւթոյ կազմութեանն համանգամա՛յն է և երևումն ոգւոյ. զի յորժամ անկատա՛ր է նիւթն, միայն կերակրիլն երևի ի *նմա:* - 255. Եւ յորժամ կազմի զգայութիւնն, շունչն երևի ի *նմա:* - 255. Եւ յորժամ ծնանայ ի կերպ մարդոյ, յայնժամ բանական հոգին երևի ի *նմա* ի խնամոցն աստուծոյ: - 255. Այսպէս և հնազանդեալ զօրք հոգոյն՝ զգայականն և տնկականն է. և *նորօ՛ք* է հոգին ի մարմինն: - 255. Այսպէս և հոգին է ի *նմա* ծաղկեալ, և յետոյ յայտնի ըստ կարգի: - 255. Եւ կամ որպէս ծնեալ մանուկն ունի առ ինքն ծածկեալ զհոգին. այլ *նա* կերակրի և ապա զգայ. և յետոյ խօսի: - 255. Այլ այժմ տնկականն գո՛յ ի *նմա* թէպէտ ո՛չ շունչն և ոչ բանն: - 256. Վեցերորդ՝ զի զգործն կենդանւոյ տեսանեմք ի *նա* որ է՛ ջերմութիւն, շարժութիւն, և ներգործութիւն. որ երևի ի կազմելն զհիւթն: - 256. ...արուեստն որ է արարչադիր հրամանն, ազդէ՛ ի նիւթն. և զի անկատա՛ր է նիւթն, անկատար տայ և *նմա* հոգի զտնկականն: - 258. Եւ ի կատարիլ մարմնոյն՝ հեղու ի *նա* զհոգի բանական ըստ նախատես գաղափարի այնորիկ որ էր ի միտս արարչին յառաջ քան զլինիլն աշխարհի: - 258. Եւ ըստ որում իմանայ և խորհի, կոչի բանական հոգի. որպէս այլուր բաժանի ի տեսողական զօրութիւնն. և յիմացականն. և ի յիշողականն. մնալով անբաժանելի ներգործէ՛ ի *նոսա:* - 259. Եւ զորօրինակ՝ մի է բոլորն մասամբ իւրով. այսպէս մի է բոլոր հոգի, և սոքա մասունք *նորա:* - 259. Եւ որպէս ասէ արիստոտէլ զերեք թիւն՝ որ մի ունի զէութիւն իւր. այլ երկուքն և մինն մասունք են *նորա:* - 259. Եւ յորժամ ասես **գ**, յայնժամ զառաջին թիւսն ունելով յինքեան՝ կատարումն եղև *նոցա:* - 259. Այսպէս և զգայականն և տնկականն մասունք են բանականին՝ նախ եղեալ ի մարմինն. և յորժամ բանականն հեղի ի մարմինն, յայնժամ և սոքա հեղին ընդ *նմա*. զի զօրութիւնք և մասունք են *նորա* ըստ օրինակի նախասացեալ երրորդ թւոյն: - 259-260. Եւ *նա* հոգին է որ զզգայական և զտնկական զօրութիւնն ի գործ ածէ միայն ի մարմինն որքան է ի մարմնի: - 260. Այլ հակադարձեալ սոքա ըստ կարգի և ըստ դասու՝ յառա՛ջ է տնկականն քան զզգայականն, և *նա՛* քան զբանականն ի յերևումն. այլ էութեամբ համանգամայն են. որպէս անդ ուրեմն ասացաք վասն հոգւոյ և մարմնոյ: - 260. Այսպէս իմա՛ և աստ վասն հոգւոյ և զօրութեանց *նորա:* - 260. Եւ ի **իա** աւուրցն ի վեր՝ երևեալ շնչոյն ձևակերպէ՛ զկերպ մարդոյ մինչ ի **խ** օր արու մանկան. և իսկոյն հեղի ի *նա՛* հոգին բանական ի շնորհացն աստուծոյ ծագեալ ի *նա:* - 261. Սակայն և *նա՛* է ի թիւս յայս. այսինքն զի երիցս պատկելով երեքտասանն՝ լինի **լթ**. և ի քառասներորդումն պտղաբերի: - 263. Իսկ որք ի **խ** աւուրս ծնանին և կամ ի **ի**, որպէս հաւ. ունին *նորա* զխորհուրդ չորից տասանց և չորից հնգից, ըստ **ե** զգայութեանց ներքոյ և **ե** զգայութեանց արտաքոյ որպէս ասացաք: - 263. Զի **ժ** ի չորից ծնանի. և չորսն տարրական է. վասն որոյ ի *նմա* կարէ մարդ ծնանիլ զնմանն իւր: - 265. Խնդրեմ և զայս ուսանիլ թէ ընդէ՞ր է՝ զի մարդս կատարեալ կենդանի է քան զանասունս. և յորժամ ծնանին *նորա* ահա՛ ի նոյն ժամն կանգնին յոտից վերայ և գնան, և այլն. իսկ մարդն ոչ: - 266. Իսկ անասնոցն ո՛չ է դաստիարակ արտաքուստ. վասն որոյ բնութիւնն խնամէ *զնոսա* ի ներքուստ: - 267. Եւ մի՛ աստ ընդ դէմ բերցի բանիս թէ՝ ամենայն մեծամեծք գուբ ունին

փոքունց. զի և այս նախախնամութեանն է. որ եդ ի բնութեանս խնամ տանիլ *նոցա*, մինչ ինքեանք ևս ի չափ հասակի եկեսցեն և զերծանիցեն ի վնասուց: - 267. Այսպէս և զամենայն հակառակ տեսակս իմասցիս ոչ խառնիլ սերմանք *նոցա*: - 267. Իսկ զի բանական միտքն ո՛չ տեսանէ զերազն, այլ անբան մասն, որ է՛ տնկականն ի մեզ. *նա՛* յածի յերազն. և ցուցանի այս ի կրկին իրաց: - 268. Իսկ տնկականն միայն գործ է ի կերակրիլն և աճիլն, *նա* նկարէ յինքեան ի զգայութեանցն և ի մտացն ըստ տկարութեան իւրոյ անկարգաբար երևեցուցեալ ի յիշատակարանս մտացն որպէս ասացաք: - 268. Եւ նախ ասի իմաստութիւն *նոցա*, որ զբնութիւն էիցս քննեցին. և զշարժումն լուսաւորացն. որպէս իմաստունքն յունաց: - 269. Եւ է՛ գործի իմացման *նոցա*՝ յիշումն. և ենթակայ՝ երկնային մարմինք՝ և էութիւնք եղելոց: - 269. Եւ է՛ գործի իմացման *նոցա*՝ ձեռք և մատունք. և ենթակայ՝ նիւթք երկրաւոր: - 269. Եւ է՛ գործի *նոցա*՝ տրամախոհութիւնն. և ենթակայ՝ բանից զանազանութիւնք: - 269. Ի նոյն խոկալով սիրել *զնա՛* և ատել զհեշտութիւն զգայութեանցս: - 269. Նա՛խ՝ ըստ առաջ եղելոյն. զի առաջ եդեալք սորա են աստուածայինքն և իմանալիք. իսկ *նոցայն*՝ մարմնականք և զգալիք: - 269. Դարձեալ՝ հանճարն է ի գիրս արտաքին. իմաստութիւնն ի սուրբ գիրս. գիտութիւնն ի մեկնութիւն *նոցին*: - 270. Դարձեալ՝ իմաստութիւնն է բանին. զի *նորա՛* է իմանալն. գիտութիւնն ցասմանն. զի *նորա* է ընտրելն. և հանճարն ցանկութեանն. զի *նորա* է յանճարն տռփիլ: - 270. Դարձեալ՝ հանճարովն ճանաչեմք զաստուած. այլ իմաստութեամբն ճանաչեմք զքաղցրութիւն *նորա*: - 270. Եւ փոխանակ կօշկաց՝ զամենայն ինչ հնազանդ արար ի ներքոյ ոտից *նորա*: - 271. Ջորօրինակ՝ որդի թագաւորի պատկե՛ր է թագաւորին. զի բնութենակից է *նմա*: - 273. Իսկ հոգւոյն առանձին, Նա՛խ՝ զի ամենայն ոք խոստովանի եղեալ *զնա*: - 274. Եւ ապա զի յոչնչէ եղեալն կարէ՛ *նմա* և ի նոյն փոխիլ եթէ կամքն աստուծոյ թոյլ տացէ: - 274. Հինգերորդ՝ զի կողնէ աման և տեղի երիկամանց. յորմէ շարժի ցանկութիւնն. զի թէպէտ ո՛չ շարժէ *զնա*. այլ ազդումն ինչ ունի զնմանէ: - 276. Վեցերորդ՝ ո՛չ առնու ի գլխոյն և ո՛չ յոտիցն. այլ ի միջացն. զի խրատէ՛ զմարդիկ ո՛չ հաւասար գլխոյն պատուել զկինն, և ո՛չ անարգել իբրև զոտք. այլ միջակ պատուով չափաւորել *զնա*: - 276. Տասներորդ՝ որպէս կողն զզօրութիւնն քարշէ՛ և տայ ի թիկունքն և պնդէ՛ *զնա*. այսպէս կինն զփառս և զինչս առն յինքն քարշելով թանձրացուցանէ և պնդէ՛ զինքն: - 276. Նա՛խ՝ ասի մահու մեռանիլ, իբր թէ է՛ ոմն անձնաւոր մահ որ է՛ բանսարկուն. և *նովաւ* մեռանիցիս ասէ: - 277. Երկրորդ՝ թէ անասունքն մահկանացուք են. *նոցա* մահուամբն մեռանիցիք: - 277. Երրորդ՝ թշնամի են հոգի և մարմին իրերաց և մասունք *նոցա*: - 277. Եօթներորդ՝ թշնամի եղև գործն մեր. որ *նա՛* ի մեղս փոխեաց անցանելով զպատուիրանն: - 277. Նախ՝ վասն պարզամտութեանն. զի որպէս տղայք ո՛չ ամաչեն անծածուկ ունելով զմասունս. նոյնպէս և *նորա*: - 278. Իններորդ՝ սէր և գութ աստուծոյ ի վերայ մարդոյն հնազանդութեամբ պատուիրանին որ գայր առ *նա՛*: - 279. Իսկ մարգարէութիւնն լռեաց, զի ո՛չ ևս երևի բան մի յիշատակ շնորհաց *նորա*: - 279. Այլ մորթ մաշկեղէն ստեղծեաց և զգեցոյց *նմա* փոխանակ լուսեղէն զարդուն. զմեռելութիւն *նորա* նշանակելով: - 280. Որպէս ասէ աստուածաբանն թէ՝ ոչ ինչ էր ծածկոյթ ի մէջ *նոցա* և աստուծոյ. իսկ յետ մեղացն փոխեցան այսոքիկ. վասն որոյ մաշկեղէն հանդերձին ցուցմամբն նշանակէ՛ զմարմինս: - 282. Եւ այսպէս էր միջասահման կեանք *նոցա* զոր ասեն ի մէջ մահու և անմահութեան: - 282. Առաջին հարցումն Վասն աբէլի և կայենի, և պատարագաց *նոցա*: - 283. Ութերորդ՝ Անուանց նախահարցն և կանանց *նոցա*: - 283. *Նորա* գառն դնէին, և մեք ո՛չ: - 284. Վաթսունևէ, Քաղաքացն ապաստանի. և խորհուրդ *նոցա*: - 285. Ութսուներորդ, Պատերազմ մարմնոյն մովսէսի և գերեզմանի *նորա*: - 285. Վեցերորդ՝ ի սոցանէ երևի և գործ արդարութեան. որ ընտիրսն աստուծոյ նուիրէր գիտելով զմեծութիւն *նորա* և զբոլորիցն տուրսն. և զխոտանն ի՛ւր թողլով: - 286. Ջայսոսիկ որպէս ասացաւ ունէր *նա՛* ընդ պատարագելն: - 286. Վասն էերորդին, ա՛յն քան սիրեցաւ յաստուծոյ, մինչ զի յետ մահուանն վրէժ խնդիր եղև արեան *նորա*...: - 287. Դարձեալ սիրեցաւ յաստուծոյ, զի առաջին մարտիրոս սա՛ եղև. թէպէտ թոյլ ետ իջանել ի դժոխս, զի ի պատճառս *նորա* խնդրեսցին այլքն. որպէս ի պատճառս ղովտայ զերծան սոդոմայեցիքն աբրահամաւ: - 287. Ջի ո՛չ հաճեցաւ ի *նա* և ո՛չ ի զոհս *նորա*. և տրտմեցան երեսք *նորա* և այլն: - 287. Եօթներորդ՝ նշանն որ եդաւ չսպանանել *զնա*: - 287. Նախ՝ զի արեա՛մբ շաղախեցեր *զնա*: - 287. Ջի պատկերն աստուծոյ վերստին նորոգեցաւ ի *նմա*: - 288. Ուստի և զորդիսն *նորա*՝ որդիս աստուծոյ անուանէ գիր: - 288. Երրորդ՝ յուսացաւ կոչել զանուն տեառն աստուծոյ ի յօգնութիւն. զոր մարդիկ յուսահատեալ էին եթէ վասն մեղաց մերոց եթող զմեզ աստուած ի ձեռաց. և *նա* ի յօգնութիւն կոչեաց զանուն տեառն աստուծոյ. այսինքն զի տէր է՝ ո՛չ գարշի ի ծառայից իւրոց. և

զի աստուած է՝ էա՛ծ զմեզ աստ ոչ ի կորուսանել, այլ ի կեցուցանել: - 289. Չորրորդ՝ զի **բ** արծան կանգնեաց պղնձի և խեցի և արար գիր. և զոր ինչ ադամ անունս եդ իրաց, զամենայն գրեաց ի *նոսա*. զի մի՛ այլայլեսցին ի գնչուտ և ի լեզուատ արանց: - 289. Հինգերորդ՝ մահ և բռնութիւն սատանայի տիրեալ էր մարդկան. ի հաւատ կործանման *նոցա* անմահացոյց զենովք և վերացոյց զեղիա: - 289. Նոյնպէս և զփոխումն ենովքայ տեսին եղբարքն ուստերքն և դստերք *նորա*. զի մի՛ ասիցեն թէ սպա՛ն *զնա՛* կուրացեալն ղամեք թոռն կայենի: - 290. Զի ասեն թէ՝ այր և երիտասարդն զոր սպան ղամեք և էառ զկանայս *նոցա*. ադդա և սելլա, *նորա* եղբա՛րք էին ենովքայ արդարոյ: - 290. Որպէս կայեն յորժամ սպան զաբէլ, պատճառեաց ծնողացն եթէ *զնորա* պատարագն ընկալաւ աստուած և վերացոյց ի դրախտն: - 290. Երրորդ՝ **թ** դաս հրեշտակաց է յերկինս. և **ժ**երորդն մարդն կատարումն թուոյ *նոցա*. վասն այն ի կեանս այս ո՛չ հասանեն ի **ռ** թիւն կատարեալ. զի աստ ո՛չ լինի կատարումն դասուցն այլ ի հանդերձեալն: - 291. Եւ զի բիւրն պարունակէ՛ զհազարն. և *նա՛* զհարիւրն. և *նա՛* զտասն: - 291. Եւ յետ *նորա* **ժ** թիւն կենդանեա՛ցն է, որ ի չորից են բաղկացեալ. որպէս **ժ** ի **դ** թուոց: - 291. Իսկ ի վերջին դարս որ է՛ լուսնին՝ սակաւակեացք են մարդիկք. զի *նա՛* ի **լ** օրն վճարէ զբոլոր ընթացս իւր: - 291. *Նորա* յերկար ապրէին՝ զի յաճախեսցին բարիք և ծնունդք *նոցա*. և մեք պակաս, զի կարճեսցին չարիք և բազմութիւնք մարդկան: - 291. Եւ այլ ևս. *նորա* չունէին օրէնք գրաւոր, պա՛րտ էր *նոցա* յերկար կեալ և ի բնական օրէնս կրթել զծնունդս և զազգս իւրեանց: - 291. Եւ երբեմն կարճէ՛ ի կենաց որպէս առ նոյիւ. զի **ճի** ամ խոստացաւ *նոցա,* և զի ամն կարճեաց վասն չարեաց *նոցա:* - 292. Եւ այլք զնշխարս նախահօրն ադամայ ասեն. զի յաստուծոյ ձեռացն էր յօրինեալ՝ լո՛յս տայր *նոցա:* - 294. Կամ որպէս ասեն թէ՝ ներսէս անուն արուեստաւոր տապանին՝ շինեաց իւր տուն ի վերոյ կողմանէ. և զի ո՛չ էր հրամանաւն աստուծոյ՝ սատակեցաւ *նա՛*անդ, և *զնորա* գէշն ուտէր ագռաւն: - 294. Վեցերորդ՝ սկայքն անխտիր ուտէին թէ մեռեալ և թէ հեղձուցեալ. վասն որոյ զի որոշեսցէ ի *նոցանէ*՝ ասէ արեամբ շնչոյ մի՛ ուտիցէք: - 295. Զի արիւն և շունչն արակա՛ն է որպէս ցուցաւ. վասն այն ա՛յրն հանէ *զնոսա*. և կինն չէ տուեալ արիւն՝ ո՞րպէս հանէ: - 296. Երկրորդ՝ զի ի հին օրէնքն քահանայքն զենուին. զոր որոշեսցուք ի *նոցանէ:* - 296. Զի որպէս այլասե՛ռք են ցամաքայինք և ջրայինք. նոյնպէս և այլատեսա՛կ են կենդանութեամբ. և այլատեսա՛կ է զենումն *նոցա:* - 296. Եւ խնդրեցին զտապանն և *զնա* ոչ գտին. զի ո՛չ է հրաման տալ որ մարդն զարգանդ մօր իւրոյ տեսցէ: - 296. Եւ զի մի՛ մարդիկ ի պատճառս *նորա* մեղս գործեսցեն. վասն որոյ ո՛չ կարէին տեսանել զտապանն: - 296. Հայկն յաբեթի. և Բէլն ի քամայ որսորդ *նոցա:* - 297. **Եւ այլք զհայոյն՝ ծեքական և թիւր ուսանին. զի մասնաւո՛ր է լեզու** ***նոցա:*** - 297. Եւ ի հողմոյն յայնմանէ հոտ անուշութեան դրախտին բուրեաց ի *նոսա*. և տեսիլ իմանալի տեսին, և լուր իմանալի լուան. և յայնմանէ մոռացան զառաջինն. և որպէս ի քնոյ զարթուցեալք ո՛չ լսէին զլեզուս միմեանց: - 298. Վասն որոյ օրհնութեամբ ցրուեաց *զնոսա* ի վերայ երկրի, զի աճեսցին և բազմասցին և լցցեն զերկիր ծննդօք և շինութեամբ և բարեգործութեամբ ի փառս ամենասուրբ Երրորդութեանն ամէն: - 298. Եւ մինչ զգիրն յառաջ կալան թէ այսո՛ւ փորձիմք, այլ ո՛չ ոք գիտաց կարդալ՝ բաց յեբրայեցւոցն. վասն այն ասի եբեր, թէ զառաջին լեզուն *նա՛*եբեր: - 299. Եւ այլք ասեն թէ՝ գետն առ որով բնակեալ էր *նա*՝ փայտ բերէր, անտի անուանեցաւ եբեր: - 299. Ի մանկութենէ կռոց նուիրեցաւ, և հրեշտակ աստուծոյ յափշտակեալ սընոյց *զնա* յանապատի մինչև հասոյց ի կատարումն: - 300. Ապա՛ ի թաբօր լերինն ամպ խոնարհեալ և ձեռն կարկառեալ ձեռնադրեաց *զնա* ասելով, այս մելքիսեդեկ անհայր անմայր չհամարեալ յազգս՝ նմանեալ որդւոյն աստուծոյ: - 300. Զի տղայ մանուկ երթեալ ո՛չ ոք գիտէր *զնա*. և ո՛չ *նա* զոք ճանաչէր զի քանանացի՛ էր և աննման վարուց *նոցա:* - 300. Ուր եկեալ աբրահամ, և *նա՛*ել ընդ առաջ *նորա* ջերմ բաղարջ հացով և գինեաւ օրինակ տէրունեան խորհրդոյն: - 300. Նոյ օրհնեաց զսեմ, և սեմայ որդի ո՛չ գոյր նման իւր որ օրհնէր *զնա:* - 300. Բայց սեմ չէ՛ր կենդանի որ օրհնէր *զնա՛*. և թարայ չէր օրհնօղ: - 300. Մելքիսեդեկ *զնորա* դէմն առեալ՝ *զնորա* գործն էլից. օրհնեաց զաբրահամ՝ և սեմ կոչեցաւ: - 300. Եւ յորժամ խօսեցաւ աստուած ընդ *նմա*, եցոյց զմարգարէութիւնն: - 300. Իսկ աբրահամուն յետ *նորա* և երկրաւոր: - 301. Նոյնպէս յորժամ բնակին բարեպաշտք ի մէջ անհաւատից, Նա՛խ՝ զի աղօթք *նոցա* պահապան է *նոցա:* - 302. Վեցերորդ՝ պատժեաց զսոդոմայեցիսն մարմնով, զի թեթևասցին տանջանք *նոցա* հոգւով: - 303. Եւ այս՝ ի խնայելո՛յ ի *նոսա*. զի մարդասէ՛ր է և ողեսէր աստուած: - 303. Երկրորդ՝ զի գեղեցիկ էր՝ զի մի ի պատճառս *նորա* սպանցեն զղովտ: - 303. Որք հաղորդեցան մարմնոյ *նորա*, եղեն զաւակք ըստ մարմնոյ՝ ըստ թլփատութեան և այլոց օրինաց *նորա:* - 303. Եւ որք հաղորդեցան հոգւոյ, այսինքն

հաւատոյ *նորա,* եղեն որդիք հաւատոյ *նորա.* որպէս քրիստոնեայք: - 303. Այլ փորձէ՛ աստուած զմարդ՝ զի յայտնեսցէ *զնա*. որպէս զաբրահամուս և զյակոբայն: - 304. Եւ գիտելի է, զի **ժ** փորձանացն աբրահամու որք էին ձոյլարան *նորա*՝ մի է և այս: - 304. Յինգերորդ՝ որ ասացաւ լինիլ զաւակաց *նորա* իբրև զաստեղս՝ և ոչ երկմտեաց: - 304. Եւ որպէս հայրն աբրահամ նմանեցաւ աստուծոյ հօր, մանաւանդ և որդին իսահակ համեստութեամբ ինչ իրօք նմանի որդւոյ *նորա* քրիստոսի: - 304. Եւ ի քրիստոս բազմութիւն ամենայն հաւատացելոց սերեալք անդամք յանդամոց *նորա* և մարմինք ի մարմնոյ *նորա* ծննդեամբ ի նմանէ աւազանաւն: - 306. Զի հա՛յր ասէ *զնա* մարգարէն՝ հանդերձեալ աշխարհին աստեղափայլ պայծառացելոցն լուսաճաճանչ սլացմամբ: - 306. Իսկ մեզ հոգևորապէս ետ պարգև զբնակութիւնս երկնից. ուստի մերժեցաւ հակառակորդն մեր սատանայ. զոր ասէ՝ «տեղի անկելոց հրեշտակաց». թէպէտ և յետո՛յ կատարէ որպէս և *նոցայն* բազում ամօք և չարչարանօք: - 306. Երկրորդ՝ անդրանիկ է բանն աստուած ի հօրէ ծնեալ. և կրտսեր ա՛յլ եղեալքս՝ ի հօրէ՛ գոյացեալ. զի որդի ծնո՛ւնդ է հօր և մեք արարածք. և *նա*՛ ի բնութենէն և մեք ի կամացն: - 309. Երրորդ՝ անդրանիկ են հրեշտակք քան զմարդիկ ըստ կարգի և պատւոյ. թէպէտ բանականեմք որպէս *նորա:* - 309. ...և մեք անդամք ի *նա*՛ յարեցաք և եղաք անդրանիկք հրեշտակաց որ էաք կրսեր *նոցա*. զի ամենայն երկնաւորքն ծունր կրկնեն քրիստոսի և խոստովանին *զնա*՛ տէր: - 309. Ա՛րդ՝ դաւանութեամբն գերազա՛նց եմք մարդկան հեթանոսաց. և մկրտութեամբն՝ հրէից. և ծննդեամբն ի հոգւոյն՝ հրեշտակաց. զի *նորա* ո՛չ ունին ծնանիլ ի հոգւոյն. և ո՛չ եղբայր լինի քրիստոսի: - 309. Նա՛խ՝ զի յանդրանիկ տեսութիւնս իւր ընտրեաց *զնոսա* յառաջ քան զլինիլն աշխարհի, և յետոյ զնոյն անդրանիկսն պատուեաց: - 309. Երկրորդ՝ հրեշտակք անդրանիկք են քան զմարդ ստեղծմամբ. և յորժամ մեղան դևքն՝ խոտեցան և եղեն կրտսերք. և մարդն ել ի տեղի *նոցա* և եղև անդրանիկ: - 310. Որպէս վաճառեաց եսաւ և գնեաց յակոբ զանդրանկութիւն *նորա:* - 310. Եւ մարտեաւ ընդ *նմա* այր, զչափ ուժոյ և զկերպարանքն եսաւայ զգեցեալ. զի կրթեսցի և մի երկիցէ ի նմանէ: - 311. Դարձեալ՝ կարօտ էր մարդասէրն աստուած, գայ ի համբոյր ծարաւելոյն *նմա* արդարոյն: - 311. Դարձեալ՝ վարժէ՛ *զնա* զօտեաւն՝ պատերազմիլ ընդ մեղս և ընդ մեղսասէր մարդիկ որ կամին զանմեղն քարշել արտաքոյ օրինացն աստուծոյ: - 311. Նախ ասեն եթէ ի ծննդեանն կալեալ էր զգարշապարէն՝ եսաւայ, այժմ զփոխն անդրադարձէ՛ և յիշեցուցանէ *նմա* թէ՝ ամենայն իրի հատուցումն գոյ: - 311. Վեցերորդ՝ զի կաղանալո՛ց էին որդիք *նորա* ի շաւղա՛ցն աստուծոյ: - 311. Եօթներորդ՝ զի մի՛ հպարտասցի ի զօտէմարտիլն՝ կաղ առնէ *զնա:* - 311. Իսկ թէ վասն է՞ր ոչ ասաց զանունն *նմա:* - 311. Իսկ յայլմէ ո՛չ դնի աստուծոյ անուն. ո՛չ բնութեան. և ո՛չ անձնական. զի ո՛չ ոք է նախ քան *զնա*, և ո՛չ հաւասար *նմա:* - 312. Այլ թէ վերջինքս կոչեմք *նմա* անուն աստուած՝ արարիչ՝ և այլն. ներգործութեանն է ցոյցք և ո՛չ թէ գոյացութեան կամ բնութեանն է յայտնութիւն: - 312. Նա՛խ՝ զի ի ծնանիլն բենիամենի՝ մեռաւ մայրն և որդի վշտաց եղև *նմա:* - 312. Երկրորդ՝ զի **խ** քաղաք առին ի բենիամենէ՛ յուդայի ցեղքն վասն շնութեան կնոջն պատահելոյ. և կոտորեցին *զնոսա* առ հասարակ **իեռ** արս. և մնաց վեց հարիւր այր զոր յետոյ ստացան ժառանգութիւն իւրեանց. որպէս յա՛յտ է ի դատաւորաց վերջքն: - 312. Վասն *նոցա* լայր անմխիթար սգով, զի ո՛չ եղև մայր նահատակացն: - 312. **Ձ**երրորդն՝ զի բազում եղեն յազգէ *նորա* մարտիրոսք վասն քրիստոսի յետոյ: - 313. Տասներորդ՝ հայրն առաքեաց զյովսէփ առ եղբարսն որ էին հովիւք և երիցունք տեսանել *զնոսա*. և բանիւն յուդայի վաճառեցաւ և եղև տէր երկրին և կերակրիչ: - 313. Նոյնպէս և քրիստոս եկն առ եղբարս իւր որ էին որդիք դաւթի և աբրահամու և առաջնորդք ժողովրդեանն. և յուդա վաճառեց *զնա*. և տէր եղև կենդանեաց և մեռելոց և կերակրիչ. զի ազատեաց զհոգիսն ի սովոյ դժոխոցն: - 313. Եւ ի կատարածի դիցին թշնամիքն քրիստոսի ի ներքոյ ոտից *նորա* ասացաւ: - 314. Քսաներորդ, և որպէս յովսէփ եթող զքուրմն և զերկիր *նոցա*, զոր քրիստոս էր բառնալոց զմեծամեծ մեղսն և զկռապաշտութիւնն. զի ըստ առն և զօրութիւն իւր. և ըստ աստուծոյ և գործք իւր: - 314. Նոյնպէս և տէր մեր յետոյ բառնալո՛ց է զչար. գազանն զորդին կորստեան և զպաշտօնեայսն *նորա* ի կատարածի: - 314. Երկրորդ՝ որպէս *նմա* ասաց աստուած, ես իջից ընդ քեզ և ես հանից անտի: - 314. Երրորդ՝ ի քանան ո՛չ մնաց ոք ի *նոցանէ*, և ո՛չ ոք ի յելսն յեգիպտոսէ: - 314. Եօթներորդ՝ ո՛չ ի մուտն և ոչ ի յելն՝ զկանայս *նոցա* ո՛չ թուէ. այլ զծնունդքն և զարսն: - 315. Իններորդ՝ յովսէփ ել ընդառաջ *նոցա* և համբուրեաց: - 315. Տասներորդ՝ յովսէփ ռոճիկս տայր *նոցա*. ա՛յս է զգեստս կատարեալ և կերակուրս: - 315. Նոյնպէս և քրիստոս իմաստութեամբն իւրով կերակրէ՛ *զնոսա* և զգեցուցանէ որպէս իդ երիցանցն, որ տուաւ *նոցա* արկանելիս սպիտակս. այս է շնորհին մաքրութեան

զոր ընկալան ի քրիստոսէ: - 315. Յորմէ վստահացեալ կոչեն *զնա* նովին անուամբն: - 315. Եւ ի յառնել տեառն մերոյ ի գերեզմանէն՝ սարսեցին ամենայն թշնամիք *նորա* որդիք անդնդոց: - 316. Եւ տէր մեր ճոխ ի մէջ *նոցա*. զի բարձր և գերագոյն եղև ի վերայ մեղաց: - 316. Նախ՝ սատանայ և անհաւատք աստուածութեան *նորա*. և մեղք և դժոխք հոգւոյ են թշնամիք. մահ և ապականութիւն մարմնոյն: - 316. Եւ ուռ՝ ի *նա՛* հաւատացեալ առաքեալքն: - 317. Եւ գնդակն է քարոզութիւն *նոցա* որ ըմբռնէ զմերձաւորսն: - 317. Իսկ կապ մարմնական՝ և *նա՛* բաժանի ի **դ** տեսակս: - 317. Եւ կարելի՛ է ամենայն կապիւս զոր ունիմք առ միմեանս՝ փոխիլ առ աստուած և կապիլ ի *նա:* - 317. Որպէս հաւատով և սիրով և երկիւղիւ և օրինօք *նորա:* - 318. Նոյնպէս և մարմնական կապովն, զի ազգակից է մեզ և փեսայ հոգևոր. և ցանկամք *նմա* ակն ունելով վարձուցն հատուցման: - 318. Նմանապէս և միջակ կապիւն, զի ուսանիմք յաստուծոյ ընկալեալք զկարգ կրօնիցն. և ունիմք ուխտ և դաշին և հնազանդութեան *նմա*...: - 318. Երկրորդ՝ կոչի զգեստ *նմա* արտաքին և փոփոխական՝ հաւատացեալ անդամք քրիստոսի՝ եկեղեցի սուրբ...: - 318. Եւ մեք *նորա* կոչիմք զգեստ, զի ընտանի անդամք և ոսկերք եմք մարմնոյ *նորա:* - 318. Դարձեալ՝ *նա՛* զգենու զմեզ սիրով, և մեք զգենումք *զնա* հաւատով և յուսով: - 319. Այսպէս կոչի և զգեստ մարմնոյն. զի արտաքին զգեստն որպէս ծիրանին թագաւորի ա՛յլ է ի զգեցողէն և պատահական *նմա* և փոփոխական. այսպէս զգեստ ո՛չ ասի մարմին *նորա*. այլ եկեղեցի սուրբ որպէս ասացաւ: - 319. Նա՛խ՝ լերինք և բլուրք մշտնջենաւորք կոչին հրեշտակացն դասք բարձրացեալք յերկինս և անշարժութեամբ սերտեալք. վասն *նոցա* ասէ՝ «լուսատու ես դու սքանչելապէս լերանցն յաւիտենից». և *նորա* ի կամս աստուծոյ անմահապէս օրհնեցան: - 319. Յինգերորդ՝ ի լերինն մասեայ յորժամ ել նոյ ի տապանէն՝ օրհնեաց աստուած *զնա՛* և զորդիսն *նորա* ասէ գիրն. և հայր և սերմ արար մարդկան ազգի: - 319-320. Իսկ լեառն հողեղէն բնութեանս մերում, կամաւ հօր վկայելով ի վերայ *նորա*՝ և հաճութեամբ սուրբ հոգւոյն աղաւնակերպ իջմամբ, և անքակտելի միացեալ բանիւն եղև լեառն մածեալ մշտնջենաւոր և անեզր յաւիտենիւ բարձրացեալ օրհնութեամբ և առաւելեալ: - 320. Եւ անուն մօր *նորա* բոսոր: - 320. Ոմանք ասեն թէ՝ բարեկամքն իւր որ էին յազգէն եսաւայ ելիփազ. սովփար. և բաղդատ. որք եկին մխիթարել *զնա* ի վշտացն, *նորա* գրեցին. որպէս ինքն ասէր, «ո՛ տայր ինձ գրել զբանս իմ յիշատակ յաւիտենից»: - 320. Զի վկայէ՛ աստուած վասն *նորա* «էր ասէ այր ճշմարիտ՝ արդար՝ անարատ՝ աստուածապաշտ, և մեկնեալ յամենայն չարեաց»: - 321. Եւ յամենայն աւուր ըստ թուոյ *նոցա* **ժ** զոհ մատուցանէր, և զուարակ մի վասն սրբութեան մտաց: - 321. Եւ էր մեծութիւն *նորա* մարմնական, Խաշինք **էռ** ոչխարաց: - 321. Եւ *նա* գոհանայր զտեառնէ ...: - 321. Նա՛խ՝ զի **ժ** էին թուով. է ուստերք և **գ** դստերք. ըստ թըւոյ *նոցա* մատուցանէր: - 322. Երկրորդ՝ ի սրբութիւն ժ զգայութեանց *նոցա*: - 322. Այլ ասեմ թէ՝ ի կարգի արդարո՛ցն են *նորա* վասն **գ** պատճառի: - 322. Նա՛խ՝ զի հայր *նոցա* բարեպաշտութեամբ սնուցանէր *զնոսա*. և վկայեցաւ առ աստուած արդար գոլ: - 322. Երկրորդ՝ զի ամենայն աւուր պատարագաւ սրբէ՛ր *զնոսա:* - 322. Եւ այսպէս ամենայն սպասաւորք *նորա* և ծառայքն որք սրով և հրով վախճանեցան: - 322. Չորրորդ՝ զի վայելէ՛ր իսկ *նմա* որպէս զհատ ցորենոյ թաղեալ յաղբիւսն՝ այսինքն յերկիր. և պարարտացեալ հասցէ ի հունձս պտղաբերութեան: - 323. Յինգերորդ՝ ընդ դէմ հպարտացելոյն որ խորհէր զաթոռ իւր դնել յամպս և անկաւ յերկիր. *նա՛* խոնարհեցաւ յերկիր և ել յերկինս: - 323. Երրորդ՝ զի զազգաւն զազգակիցն մխիթարէր և ո՛չ խնդրէր բժիշկ. զի մի՛ ի մարդկանէ լիցի օգնութիւն *նմա:* - 323. Նաև ո՛չ ևս գային զի տկարացեալ էր յախտիցն արուեստ *նոցա:* - 323. Դարձեալ՝ յաղթեաց զսատանայ այնու, զի իմացաւ զչար հնարսն *նորա* և պատասխանէր զընդ դէմ. որպէս կնօջն և բարեկամացն և որք զգուժն բերէին. զի գիտէր ի բանսարկուէն լինիլ: - 323. Եւ թէ որ ասիցէ՝ ունէր զայս յոբ. վասն է՞ր մերձեցաւ ի *նա:* - 324. Վասն առաջնոյն, զի գիտէր *զնոսա* շարժեալ ի չարասիրէն. և յաղթելով *զնոսա* յաղթեաց զբանսարկուն սատանայ: - 324. Վասն երկրորդին հակառակէր ընդ *նոսա*, զի մի՛ սուտ լիցի վկայութիւն աստուծոյ ի վերայ *նորա*. զի և մեք ուսցուք՝ վասն վկայութեանն աստուծոյ այնչափ նախատինս յանձն առնուլ և ո՛չ ուրանալ. որպէս վկայից դասքն նահատակեցան: - 324. Վասն երրորդին ասէր յոբ զբարի և չար գործոց հատուցմունքն լինիլ առհասարակ յետո՛յ ի հանդերձեալն. զի աստ են մեղաւորք և հնացեալք ի մեծութեան. և ներէ՛ *նոցա* աստուած վասն կրկին պատճառի: - 324. Այսինքն *նորա* կամէին որ *զնոսա* արդարս ասէր յոբ՝ և զինքն յանցաւոր՝ և ո՛չ ասաց. զի թէ *զնոսա* որք անիրաւք էին արդար ասէր՝ մեղանչէր ճշմարտութեանն. և թէ զինքն մեղաւոր ասէր՝ մեղանչէր վկայութեանն աստուծոյ: - 324. Եւ թէ ոք ասիցէ՝ յորժամ սոյնպէս չարք էին՝ *զնոցա* բանքն ընդէ՞ր գրեաց հոգին սուրբ: - 325. Ասեմք եթէ՝

բազում շահ և օգտութիւն է ի բանս *նոցա* յաշխարհի արդարոց և մեղաւորաց: - 325. Նա՛խ՝ զի թէպէտ ի դէմս յոբայ սուտ էր խօսք *նոցա*, այլ ի դէմս ամենայն մեղաւորաց ճշմարի՛տ է: - 325. Սոյնպէս բարեկամք յոբայ թէպէտ շարժեալք էին ի բանսարկուէն, այլ աստուծոյ հոգւովն զօգտակարսն բարբառէին. վասն այն գրեցան բանք *նոցա* ի սուրբ գիրս: - 325. Նա՛խ՝ զի ի դնելն *զնա* ամբարիշտ՝ լուծցի ժուժկալութիւն *նորա:* - 325. Երրորդ՝ զի աստուծոյ վկայութիւնն ի սուտ ելցէ վասն *նորա:* - 325. Չորրորդ՝ զի և բանբասօղքն պատիժս կրեսցեն վասն նախատելոյն *զնա:* - 325. Նա՛խ՝ զի առաւելասցին վարձք *նորա:* - 325. Երկրորդ՝ զի ծածուկ համբերութիւն *նորա* յայտնի լիցի. և ամենեցուն վարժարան եղիցի: - 325. Նախ՝ զի ունէր զամենայն առաքինութիւնս և համբերեաց նախատողացն. վասն որոյ խօսեցաւ աստուած և մխիթարեաց *զնա:* - 325. Յինգերորդ՝ ըստ առաջին կարգին դարձեալ ասացին բարեկամքն յոբայ՝ թէ հաճո՛յ ես աստուծոյ՝ լուիցէ և խօսեսցի աստուած. վասն այն առաջի *նոցա* խօսեցաւ և վկայեաց: - 326. Վեցերորդ՝ խօսեցաւ աստուած՝ և զամենայն անճառելի գիտութիւնս վասն արարածոց ուսոյց *նմա*. զոր ոչ գիտէին մարդիկ զլինելութիւն երկնի և երկրի և ծովու և կենդանեաց: - 326. Այլ ա՛յս է ճշմարիտն, զի ամենայն բարեկամքն որ ժողովեցան յետոյ և մխիթարեցին *զնա՛*, իւրաքանչիւրքն բերին մէն մի որոջ ոչխարի և դ դրամ ոսկի անգիր ընծայեցին *նմա* ի սատար խրախութեանն...: - 326. ...և յայնցանէ աճեցոյց տէր զինչս և զանասունս *նորա*. որպէս յանապատին զսակաւն աճեցոյց նկանակ, և զբազումսն կերակրեաց: - 326. Եւ աստ գիտելի՛ է, զի յետ փորձանացն կրկին եղեն ստացւածքն *նորա:* - 326. Իններորդ՝ յոբայ մարմինն նորոգեցաւ յետոյ. և տէր մեր խաչիւն նորոգեաց զպատկերն ադամայ և զծննդոց *նորա* յարութեամբն իւրով: - 327. Եւ այլն ամենայն բանք և գործք յոբայ ի տիպ օրինակի էր նորն ադամայ չարչարանաց թաղման և յարութեան որպէս յա՛յտ է ի գիրս պատմութեան *նորա:* - 327. Ոմանք զսիօն ասեն, և այլք զեդոմ, և այլք զարաբիա. որ և անդ ասեն և այլք զգերեզման *նորա* լինիլ: - 327. Եւ է՛ ի մէջ արաբիոյ և եդոմայ. զոր այժմ կոչի թիլգուրան. ուր գերեզման *նորա՛* է: - 327. Երկրորդ՝ մովսէս քարոզէր ժողովրդեանն թէ՝ աստուած հարցն ձերոց առաքեաց զիս. և յերկրպագութիւն *նմա* հրաւիրէր: - 328. Իսկ քրիստոս խնամարկեալ իւրոցն ժ սքանչելեօք ի մարմինս *նոցա* բժշկէր զիէլացիսն: - 328. Զի *նա* խաւարաւ տանջէր, և քրիստոս զկոյր աչսն լուսաւորէր: - 327. *Նա՛* կեղ և մուն յարուցանէր ի մարմին *նոցա*. և քրիստոս զբոր և զցաւս սրբէր ի մարմնոցն: - 328. *Նա՛* մահ անդրանկացն ածէր. և քրիստոս զմեռեալս յարուցանէր: - 328. Չորրորդ, *նա՛* զգառն զատկին եղեն որով ազատեցան ի փարաւոնէ: - 327. Իններորդ, *նորա* լուսաւորեցան երեսքն ի սինա: - 328. Երեքտասաներորդ, *նա՛* երկոտասան իշխանօք **ժ**ան ցեղիցն առաջնորդեաց: - 329. Յնգետասաներորդ, *նա՛* ի վիմէն ջուր բղխեցոյց: - 329. Քսաներորդ, *նա՛* վասն հակառակօղ ժողովրդեանն աղօթէր առ աստուած: - 329. Քսանև**դ**, *նա՛* զերկիր պատառեաց դադանեանցն: - 329. Քսանև**զ**, մովսէս որդի կոչեցաւ դստերն փարաւոնի և փրկեաց *զնա:* - 329. Եւ տէրն եկեղեցւոյ հեթանոսաց՝ և սրբեաց *զնա՛:* - 329. Եւ որպէս *նա՛* ի մէջ գիշերի էհան զժողովուրդն: - 330. Եւ ամպն ընկալաւ *զնա* յաչաց *նոցա* և վերացաւ առ հայր: - 330. Եւ զի ո՛չ նկարեցաւ ի պատկեր կռոց և ո՛չ պաշտեցաւ մորենին. վասն այն տէր երևեցաւ ի *նմա:* - 330. և *նա՛* կոչի հրեշտակ մեծի խորհրդոյ ըստ մեծին եսայեայ...: - 330-331. Եւ *նորա* յայնժամ էին տկարք ի հաւատոց և անպտուղք ի բարեաց գործոց: - 331. Այլ և լւաց ևս զոտս *նոցա* յամենայն փոշետեսակ աղտեղութեանց: - 331. Վեցերորդ՝ նշանակէ՛ զբանն աստուած գաւազան ուղղութեան և թագաւորութեան առ հայր. եկն *նա՛* յերկիր և էառ զօծաձև բնութիւնս մեր. և դարձեալ ըմբռնեալ մարմնովն ել յերկինս և նստաւ ընդ աջմէ հօր: - 332. Չորրորդ՝ մին ձեռն մովսէսի մեռաւ բորոտութեամբ. զի մին ազգ փրկեցաւ *նովաւ:* - 332. Նախ՝ զի անմտացան *նորա*, և զճանճս և զսողունս և զգետս և զանասունս պաշտէին. վասն այն *նորօ՛ք* տանջեաց *զնոսա*...: - 333. Չորրորդ՝ խնայեաց *զնոսա* իբր ի մարդիկ զի զղջասցեն փոքր խրատովն և ի մեծ պատուհասէն զերծանիցին. այլ *նորա* խստացան մինչև զամենայնն կրեցին: - 333. Երկրորդ՝ յօրինակ ժողովրդեանն իէլի. զի սրբութեամբ էջ յեգիպտոս և պղծեցաւ ի գործոց *նոցա*. մինչև սրբեցաւ յամպն և ի ծովն. և ճաշակեաց զմանանայն: - 333. Չորրորդ՝ յօրինակ *նոցա* որք ի սրբութեանց ի մեղս դառնան և լինին մարմին և արիւն...: - 333. Յինգերորդ՝ նշանակէ թէ զարիւն տղայոցն չէ մոռացեալ աստուած զոր հեղձուցին ի գետն. զայն ըմպել տայ *նոցա:* - 333. Նախ ցուցանէ թէ՝ զագիր են գործօք և բորոտեալ մեղօք. վասն որոյ գարշ կենդանեօք ապականէր *զնոսա:* - 334. Երկրորդ՝ իբր թէ տղայքն զորս ի ջուրն հեղձուին՝ կենդանացեալ տանջեն *զնոսա:* - 334. Չորրորդ՝ շանաճանճն. զի շնաբարոյք էին և մոլէին յառնականայս շնութեամբ. զի շանց

է ոչ զուգակցիլ որպէս զայլ կենդանիս. վասն որոյ ի շանց ելեալ թունալից ճանճք խայթէին *զնոսա:* - 334. Եւ ի խրատ *նոցա*՝ պատժէ՛ զանասունս նոցա. զի զգաստացեալ երկիցեն յանձինս իւրեանց: - 334. Եւ ի խրատ նոցա՝ պատժէ՛ զանասունս *նոցա.* զի զգաստացեալ երկիցեն յանձինս իւրեանց: - 334. Վեցերորդ հարուածն է՛ կեղն և խաղաւարտն. զի քերքեշէ՛ր զմորթն, և ի վեր եռացեալ լինէր խաղաւարտն. և մորմոքէր զմարմինս *նոցա:* - 334. Երկրորդ՝ կարկուտն զիպարտ և զիայիոյիչ բանս *նոցա* խայտառակէ, և հուրն զբարկութիւն սրտին զոր ունէին առ որդիսն իէլի: - 334. Նախ նշանակէ զբազմապատիկ չարութիւն *նոցա:* - 334. Նոյնպէս և *նորա* կախարդութեամբն իւրեանց ի վաստակս որդւոցն իսրայէլի: - 334. Նշանակէր զխաւար անմտութեան *նոցա* որ առաւել էր քան զամենայն երկրի. զի զամենայն գարշ կենդանիս ի պաշտօն առին: - 334. Եւ իսրայէլացւոցն լոյս էր, զաստուածպաշտութիւն *նոցա* նշանակէր: - 334. Նա՛խ զի զանդրանիկ որդիսն աստուծոյ տանջեցին և մեռուցին. վասն որոյ անդրանիկք *նոցա* մահացան...: - 334. և Երկրորդ՝ զի զանդրանիկ խորհուրդն աստուածպաշտութեան կորուսին յանձինս իւրեանց. վասն որոյ անդրանիկք *նոցա* մահացան և ապականեցան: - 334. Նա՛խ՝ զի օտարք և հիւրք էին որդիքն յակոբայ՝ և ատեցին *զնոսա:* - 335. Հինգերորդ՝ ևս առաւել զզաւակս *նոցա* ի ջուրսն հեղձուցին: - 335. Նոյնպէս պաշտօնեայք *նորա* ցուցանեն ինչ որ չէ ճշմարիտ: - 335. Երկրորդ՝ զի գաւազանն մովսէսի մի վիշապ եղեալ կլանէր զբազում վիշապս *նոցա* որ և հե՛տն միանգամայն ո՛չ երևէր. ընդէ՞ր ապա և *նոցայն* ո՛չ եկուլ զմովսէսին. քանզի սո՛ւտ էր: - 335. Իսկ աստուած փոխէ՛ և զկամս ազդելով ի *նոսա* զբարին. և դարձուցանէ՛ ի չարէ՛. և երբեմն թոյլ տալով անձնիշխան կամացն դառնալ ի չարիս: - 336. Նա՛խ՝ զի մոլորեցին հաւանեալք *նոցա* և կորիցեն: - 336. Նախ՝ թոյլ տա՛լն է աստուծոյ. որ անձնիշխան կամօք ամրանայ մարդ ի չարն, և աստուած ներէ՛ և ո՛չ երկիւղիւ խրատէ *զնա:* - 336. Նա՛խ՝ զի իրաւո՛ւնք արար վասն վարձու կաւագործութեանն որ էր առ *նոսա:* - 336. Երրորդ, զի թէ յեգիպտոս դարձցին՝ ո՛չ իշխեսցեն. զի ի գողօ՛նս էր այն *նոցա:* - 336. Եթէ ոք զմեզ զրկէ արդարութի՞ւն է ապա թէ խաբեմք և գողանամք զինչս *նորա:* - 337. Ո՛չ է արդարութիւն. այլ *նա*՛ ընդ զրկողացն դատի, և դու ընդ գողոցն: - 337. Եւ այն *նոցա* մեղք ո՛չ եղև վասն **բ** պատճառի: - 337. Երկրորդ՝ զի *նոցա* հատուցմունքն մարմնական էր, իսկ մերս հոգեկա՛ն է: - 337. Եւ կաւագործութիւնն խստացաւ ի մովսիսի **իբ** ամէն ի վեր. որ լինի **ծբ** ամ խիստ ծառայութիւն *նոցա:* - 337. Իսկ յաւուր **ե** շաբաթոջ երեկունն զգառն զենին և ելին յայգ ուրբաթի. նիսանի **ժե**. որ էր առաջին ամիս *նոցա.* և ի կիրակէ անցին ընդ ծովն որ էր նիսանի **ժէ**: - 337. Եւ ի գիշերն լոյս տայր *նորա*, և պահէր ի վնասէ՛ լուսնոյն և առաջնորդէ՛ր: - 338. Երկրորդ՝ ըստ ախորժակաց *նոցա* պատրաստէր. զի գիտասցեն թէ զկամս *նոցա* կատարէ՛ աստուած: - 339. Առ *նոսա*՝ զի անմոռաց մնասցէ յիշատակ սքանչելեացն: - 339-340. Եւ զի բառնալո՛ց էր ի *նոցանէ* չքնաղ կերակուրն: - 340. Դարձեալ երիցս երևիլն է, զի աստ ի մարմնի հաւատով տեսանեմք զքրիստոս. և յետ մահու յուսով ի հոգիս մեր. և յետ յարութեանն սիրով միաւորիմք ի *նա՛:* - 341. Եւ յայտ է զի յետ մկրտութեանն պա՛րտ է հաղորդել, և *նորա* ո՛չ առնեն որպէս ցուցաւ: - 341. Երրորդ՝ կամեցաւ զմարդն ի պատկեր իւր՝ երկրորդ ստեղծմանն աշխարհի գործակից և մասնակից լինիլ. վասն որոյ հրամայեաց ի *նոցանէ* առնուլ զնիւթ կազմելոյն: - 342. Վեցերորդ՝ սովո՛ր էին զտաճարս կռոցն զարդարել. վասն որոյ առաւել քան *զնոսա* զարդարէ՛ զխորանն: - 342. Տասներորդ՝ օրինա՛կ էր խորանի եկեղեցւոյ. զի *նա*՛ ստուե՛ր էր և սա՛ ճշմարտութիւն. վասն որոյ գեղեցկազարդ կազմեցաւ: - 342. Երրորդ այսպէս. ի լուսնոյդ ի վայր տարրական հուրն և որ ի *նմա* երեւոյթք լուսոյ. օդն և թռչունք. ջուր և լօղականք. երկիր և բոյսք. մարդ և անասունք: - 343. Եւ սրբութիւն սրբոցն ի յարևելք. զի երուսաղէմ՝ կողմ արևելից է *նոցա.* և սրբութիւնն ի մէջն. և սրահն յարևմուտս. որպէս մերս եկեղեցի: - 343. Եւ զպղինձն ի բուրվառացն կորխեանց **մծ** իցն. յորմէ արար զնուարտանն ծածկոյթ պղնձի սեղանոյն. նշան յանդգնութեան *նոցա:* - 344. Բազում է խորհուրդն. բայց նախ հրեշտակաց յարմարի ցոյցք տապանին. զի *նորա* են անապական և անմահ: - 344. Նա՛խ՝ զի ամենայն իր որ ընտի՛ր է՝ չա՛փ ունի և սահման. և ո՛չ շփոթումն. վասն այն կանգնաւ չափէ *զնոսա:* - 344. Երկայնութիւն՝ է՛ կեանք *նոցա* անմահ. զի գերազանցեալ են քան զժամանակեայս, և պակաս քան զյաւիտենականն աստուած: - 344. Չորրորդ՝ և բովանդակն **ե** կանգուն, ցուցանէ թէ ո՛չ են *նորա* ի չորից տարերց. այլ **եերորդ** էութիւն են. որպէս ասեն ոմանք. անմարմին անփոփոխ և անմահ. որ ո՛չ է տարրականացս: - 344. Եւ ծնօտ՝ որ է՛ զիկն բոլորեալ. զիմանալի կերակուրն նշանակէ *նոցա.* զի ծնօտն գործի է կերակրոյ: - 344. Երկրորդ՝ յորժամ յերկրի երևին, և պակնուն տեսօղքն երևմամբ *նոցա*, վկայք լինին փառաց ամենազօրին: - 345. Նոյնպէս և

քերովբէքն ի վերայ քաւութեանն հովանացեալ, և ի միջոյ *նոցա* աստուածախօսութիւնն: - 345. Եւ քաւութիւնն ի վերայ, զի *նա՛* եղև քաւութիւն մեր: - 345. Երկրորդ ի յոսկւոյ, և *նորա* անապակա՛ն են բնութեամբ: - 346. Չորրորդ՝ զանազան նկարք աշտանակին, զանազան ներգործութիւնք ընթացից *նոցա* առ երկիրս, կենդանեաց՝ տնկոց՝ և անշնչից: - 346. Աշտանակ ոսկի, անապական զօրութիւնն աստուծոյ որ խնամէր *զնոսա* և բարձեալ կրէր: - 346. Եւ գունդ ի վերայ *նորա*, թագաւորութիւնն: - 346. Եւ եօթն ճրագ շուրջ *զնովաւ*, եօթնեքին դասք ընտրելոց *նորա:* - 347. Եւ ճրագ տէրն ի վերայ *նորա:* - 347. Եւ **բ** ծիթենիք՝ զօրութիւն հօր, և սուրբ հոգին հովանացեալ ի վերայ *նորա:* - 347. Ակատ. զակատն չգտաք իրք ասացեալ *նմա*. զոսկե՛կն է դրել. և ասէ ոսկէգոյն *զնա*. և գտանի ի քաղդէացիս: - 348. Երրորդ՝ զի միշտ ընթերցեալ մնասցէ ի միտս *նոցա:* - 349. Եօթներորդ՝ յօրինակ բանին մարդեղութեան գրեցաւ բանն ի տախտակի, և *նա՛* կոչեցաւ վէմ կարծրացեալ աստուածութեամբն փոխանակ հողացելոյն ադամայ: - 349. Երկրորդ՝ զի կորուսեալք էին հոգւով, ո՛չ պահեաց զօրէնս *նոցա:* - 349. Ջրօրինակ թագաւոր ոք յորժամ լսէ՛ զգոյժ որդւոյ իւրոյ մեռելոյ, խորտակէ՛ զթագն, և զամենայն ինչ որ վասն *նորա՛*է: - 349-350. Չորրորդ՝ յօրինակ դրախտին ադամայ՝ որ ծրի տուաւ և ո՛չ պահեաց. վասն այն որդւոց *նորա* գործով և աշխատութեամբ պարգևէ: - 350. *Նորա* ո՛չ հաւասար մովսէսի ներեն զքրիստոս աստուած. զի մովսէս աստուած կոչեցաւ. և *զնա* մարդ խոստովանին սոսկ: - 350. Եւ յանւանէն զօրացեալ էր մովսէս. և *նորա* տկար և տգէտ: - 350. Մովսէս զգործ աստուծոյ գործ էր. և *նորա* մարդոյ գործ որիշ և կամք: - 350. Զի յորմէ հետէ խոստացաւ աստուած զերկիրն՝ աբրահամու, յետ **դճ** ամի ժառանգեցին *զնա՛:* - 351. Ա՛րդ՝ բնութիւնս մեր ի յադամ ապականեցաւ մեղօք. վասն այն որպէս *նա՛*պատժեցաւ, նոյնպէս և մեք պատժիմք: - 351. Հինգերորդ՝ խնայեաց ի *նա՛*տէր ո՛չ ցուցանել զերեսս իւր. այն կոչեաց *զնա՛* տէր և արար զաչս *նորա* տէր և պատժօղ: - 352. Ութերորդ՝ զի տեսիլ աչացն առաւել պարզեսցէ զլեզու *նորա* փոխանակ ճարտարութեան լեզուին: - 352. Նա՛խ՝ զի տէրն բոլոր մարմնով լուսաւորեցաւ. և *նա՛*մասամբ...: - 352. Դարձեալ՝ տէրն բնութեամբ ունէր զլոյսն. և *նա՛* արտաքուստ ստացաւ...: - 352. Երկոտասաներորդ, լուսաւորեցաւ՝ զի քօղ արկցէ երեսացն. որ օրինակէ՛ զհին կտակարանս. որ քօ՛ղ է արկեալ և առագաստ մտաց *նոցա*. մինչև դարձցին առ տէր հոգիքն որպէս զմովսէս. և ապա վերասցի քօղն և յայտնեսցի լոյս գիտութեան *նոցա:* - 352. Տասներորդ՝ ընդ *նոսա* ձայնն աստուծոյ խօսեցաւ. և ընդ մեզ բանն: - 353. Երկրորդ՝ *նորա* զձայնն ի հեռուստ լսէին. և մեք զբանն ի մօտոյ: - 353. Չորրորդ՝ *նոցա* ձայնն միջնորդով օդիւ և մարգարէիւքն. և ընդ մեզ բանն աստուած անընդմիջաբար խօսեցեալ: - 353. Հինգերորդ, *նոցա* ձայնն որոտմամբ ահագին. և մեզ բանն հանդարտ և քաղցր: - 354. Վեցերորդ, *նոցա* ձայնիւ օրինակաւ. և մեզ բանիւ ճշմարտութեամբ: - 354. Եօթներորդ, *նոցա* ձայն զգայարանաց. և մեզ բանն իմաստութեան: - 354. Իսկ յատուկ, Նա՛խ՝ զի *նորա* մարդիկ էին անկեալ ընդ տկարութեամբ: - 354. Երկրորդ, զի *նոցա նոցայն* ժամանակեայ և խափանելի, իսկ տեառն մերոյ մշտնջենաւոր և յաւիտենական...: - 354. Չորրորդ, զի *նորա* ոչ կարէին լինիլ ախտակից տկարացելոցն. իսկ տէրն որ զփորձ էառ՝ կարօ՛ղ է և փորձանաւորացն օգնել...: - 354. Հինգերորդ, *նորա* մատուցանէին պատարագ նախ վասն իւրեանց...: - 354. Վեցերորդ, *նորա* հանապազ մատուցանէին վասն հանապազ յանցմանն ի բազմօրինակ մեղս. իսկ տէրն մեր «մի՛ անգամ եմուտ ի սրբութիւնսն յաւիտենական, գտեալ զփրկութիւն»: - 354. Եօթներորդ, *նորա* յօտարա՛ց մատուցանէին. այսինքն զուարակ և նոխազ, իսկ քահանայապետն մեր քրիստոս զմարմին իւր պատարագեաց հօր ի հոտ անուշից...: - 354. Ութերորդ, *նորա* մատուցանէին ի ձեռագործ խորանսն որ ի մովսիսէ՛ կանգնեցաւ, իսկ տէրն մեր անցեալ ի ներքին կողմն վարագուրին...: - 354. Իններորդ, *նորա* ծառայաբար մատուցանէին. ուստի յա՛յտ է զի ո՛չ կարէին նստիլ ի սրբութիւնսն կամ ի քաւութիւնսն...: - 354. Տասներորդ, *նորա* յօրինա՛կն էին և ի ստուերն...: - 354-355. Մետասաներորդ, *նորա* ո՛չ իշխէին ճաշակել զպատարագս իւրեանց. այլ արտաքոյ յարէին. իսկ տէրն մեր և մեք ճաշակեմք զպատարագ նորոյս...: - 355. Երկոտասաներորդ, *նորա* հին ուխտին էին միջնորդ. իսկ տէրն նորոյս...: - 355. Երեքտասաներորդ, *նորա* փոփոխականք էին վասն մահու արգել լինելոյ. իսկ տէր մեր անփոփոխ և յաւիտեան է քահանայ. վասն յաւիտեան և անմահ գոլոյն: - 355. Չորեքտասաներորդ, *նորա* յերկրէ և յերկրի մատուցանէին պատարագ. իսկ տէրն մեր յերկնից և յերկինս մատոյց: - 355. Հնգետասաներորդ, *նոցայն* քահանայապետ մովսէս և ահարօն ո՛չ կարացին մտանել յերկիրն պարգևաց. իսկ քահանայապետն մեր էանց ընդ երկինս երկնից...: - 355. Է՛ և երրորդ պատճառ. զխոզն ուտէին յեգիպտոս, և զարջառ և զոչխար պաշտէին. վասն որոյ հրամայեաց

զաստուածս *Նոցա* զենուլ զի չեն աստուածք. և ի խոզենւոյն հրաժարիլ ամենևին: - 355. Երկրորդ՝ օրինաւոր ամուսնութիւնն պատուական է վասն որդեծնութեան. այլ ո՛չ է *Նա՛* առաքինութիւն. որպէս կուսութիւն՝ պահք՝ և աղօթք: - 356. Եւ զանգեալ նաշիհն զյիշատակ մարտիրոսացն՝ ուր խառնեմք աղ ի հատ պատարագին և իւղ անոյշ ի խորհուրդ *Նոցա:* - 356-357. Այլ որք յամառելով յօրինակն՝ ա՛ղ խառնեն ի խորհուրդն, պա՛րտ է *Նոցա* խառնել և ծէթ և մուրկ և խունկ և միս գառին. կամ զանգեալ ի կասկարայս, կամ օծեալ ի տապակի, զի զօրինակն կատարեսցեն. և հեռասցին ի ճշմարտութենէն: - 357. Նաշիհ և իւղ զանգեալ և ո՛չ եփեալ, նշանա՛կ է *Նոցա՝* որ ի փորձութիւնս մտեալ և փութով ելեալ ի ձեռն աղօթից...: - 357. Եւ զմնացեալ նշխարսն ուտէին. քահանայքն և արուք *Նոցա* ի սուրբ տեղւոջ: - 358. Եւ ըստ միտս, զի առաքինութիւնն է ի փառս աստուծոյ. այլ և ի պատիւ և ի գովութիւն մարդկան. զի բազումք հաղորդին սրբութեան *Նորա:* - 358. Երրորդ՝ վասն անգիտութեան և ակամայի իշխանին և իւրաքանչիւր անձին նոխազ յայծից և ալոջ ի քաւութիւն *Նոցա:* - 358. Նա՛խ՝ բերել ի դուռն խորանին և տաճարին. և ո՛չ ի բազում մեհեանս. զի ցուցցէ զմիհնն աստուած՝ և յանուն *Նորա* ընծայել: - 359. Զի հոգի անմահացեալ շուրջ գայ զաստուծով ի հեղուլ զաղօթս առաջի *Նորա:* - 360. Կենդանեաց զենմունքն զի յանունն աստուծոյ էր՝ սրբէր զմարդ. վասն է՞ր ապա ոչ սրբեին կռապաշտքն. զի և *Նորա* յաստուծոյ անունն զոհէին և խնկէին: - 361. Եւ ըստ այնմ զկուռս կոչէին աստուած՝ դատապարտութիւն էր *Նոցա:* - 361. *Նա՛* է ողջակէզ և փրկութիւն և գոհութիւն, և վասն մեղաց և յանցանաց. և յամենայն նւիրաց կատարումն և գլուխ *Նա՛* է: - 362. Այլ և ունիմք զբանաւոր պատարագս՝ զհոգի և զմարմին մեր սրբութեամբ փոխանակեալ *Նմա:* - 362. Չորրորդ յայտ է՝ զի նուէրքն աստուծոյ՝ սրբութիւն է. և որ ոք մերձենայ ի *Նա՝* սրբի: - 363. Այս *Նոցա՛* է որք սրբութեամբ ունիցին զքահանայութիւնն: - 363. Այլ ըստ գործո՛ց *Նոցա* զանազանին սուրբն և անսուրբն: - 364. Նոյնպէս ի թռչունսն, կռաշուրթն և մսակերն *Նորա* են, որ պատառեն զընկերս՝ պիղծ են: - 365. Զի էգն, և չէ զոտքն, և անկատարն, և անհաւատն, և արիւնահեղն, և կարգաւոր, սոքա վեցեքեան ո՛չ կարեն զենուլ զի պիղծ է զենն *Նոցա:* - 365. Երկրորդ՝ զի անարիւն է զենումն *Նոցա* և ո՛չ ըստ հնոյ քահանայիցն: - 366. Կամ ջրայինն որ ո՛չ ունի զարիւն շնչոյ, այլ զարիւն ջրոյ, ո՛չ զենի. զի զենումն *Նոցա* հանումն ի ջրոյն է: - 366. Երրորդ՝ ընտրութիւն է ի զենումն. զի բաժանեսցի նախ արիւնն, և ընդ *Նմա՛* շունչն և բնական ջերմութիւնն: - 366. Իսկ թէ արիւնն ելցէ՝ և շունչն և կենդանութիւնն ընդ *Նմա*, ա՛յն է հրամայական մահ: - 366. Նա՛խ՝ զի բոլոր զգայարանքն են ի գլուխն. պա՛րտ է բաժանել *զՆոսա:* - 366. Եւ երին աջոյ՝ իւր քահանային, ի նշան աջեա՛յ գործոցն *Նորա:* - 367. Ութերորդ, ի մարմնոյն է և մնայ ի նոյն. և մեղքն ի մարդոյն է և մնա՛յ ի *Նա:* - 367. Դարձեալ՝ մեք մարմին եմք քրիստոսի և անդամք *Նմա*. նոյնպէս և զգեստ. այսպէս տուն և տաճար. մկրտութեամբ և հաւատով և բարի գործով: - 367. Պա՛րտ է զմեզ սրբութեամբ արժանապէս տաճար և զգեստ և անդամս պահել *Նմա:* - 368. Իսկ թէ ի տունն ի ժողովուրդս *Նորա*. կամ յեկեղեցիս մեղանչեմք. յետ է ժամանակի փոխելոյ՝ որ է՛ է հասակ մեր. և է դար կենցաղոյս...: - 368. Եւ միւս հաւն թաթաւեալ յարիւն, հոգին կենդանի. որ կարեկից լինի մարմնոյն և զսրբութիւն *Նորա* հանէ՛ յուսով ի դաշտն որ է՛ յերկինս: - 368. Երրորդ՝ շնորհ ինչ տուեալ յաստուծոյ ի յօգուտ այլոց, ախտիւ ապականեն *զՆա՛:* - 369. Նախ ինքն գործն պիղծ է. և պղծէ՛ զգործօղն. և պղծէ՛ զմերձեցեալսն ի *Նա՛:* - 369. Որ և զՍաւուղ ազատեաց ի մեղաց. և զայլ խաչօղսն որք հաւատացին ի *Նա՛:* - 369. Ի եօթներորդն ամիսն որ է՛ թշրին՝ **Ժ** օր քաւութեան տօնէին. զի **Է** շաբաթ շաբաթուցն ի *Նա՛* է. և **Է**երորդ ամիսն. այլ և **Ժ**երորդ օրն շաբաթ էր: - 371. Երրորդ՝ զի հանգիցէ երկիր և տարերք որ ի չար գործն մեր չարչարին. այլ և պահպանապետ հրեշտակք *Նոցա:* - 372. Չորրորդ՝ զի ցուցցէ *Նոցա՝* յեօթանց զմիհնն աղքատաց և կարօտելոց բաշխել: - 372. Հինգերորդ՝ զի և վայրի անասնոց և գազանաց բաժին լիցի ի վաստակն մեր. զի *Նոցա* է երկիրս այս և տեղիք ուր մեք բնակեցաք: - 372. Երրորդ՝ տօն փողոցն. իսկ մեզ առաքելոցն տօն. զի *Նորա* են փողք տիեզերաց: - 372. Չորրորդ՝ ամսամուտն *Նոցա*. զոր ի նորանալ լուսնին տօնէին. իսկ մեզ տօն կուսին մարիամու որ լուսաւորութիւն լսի ըստ ոմանց: - 372-373. Երրորդ՝ զի աւետարանիչքն յայտնապէս ասեն թէ՝ ընդ մկրտիլ տեառն՝ նոյն ժամայն հոգին հանէ՛ *զՆա* յանապատ. և պահեաց զխ տիւ և զխ գիշեր: - 373. Եւ նշանակէ՛ ի մեզ զտօն սրբոյ խաչին. զի *Նա՛* է քաւութիւն մեր: - 373. Որպէս *Նորա* ի սկիզբն քաւութեան պահօք խոնարհեցուցանէին զանձինս: - 373. Կարդացմունք. քարոզք. ներբողեանք և այլք. որ ըստ տօնից առաւելուլ պարտ է *զՆոսա:* - 375. Ա՛յս է խորհուրդ առաւօտու և երեկոյի գառինն և նուէրք *Նորա:* - 375. Այլ ա՛յս է ուղիղն. զի բովանդակն ամենայն **Թ** դասք են հրեշտակաց. այլ անկեալքն ի *Նոցանէ՝* են ի չափ միոյ դասու. և մարդիկ *զՆոցա* տեղին լնուն: - 376.

Դարձեալ, տասն են մասունք զգալի արարածոց. այսինքն՝ է մոլորական գունդք. և **ը**՝ անմոլարքն. և իններորդ ի լուսոյդ ի վայր. և մարդս **ժ** երորդ ի վերայ *Նոցա*. որ է՛ բանական և բաժին աստուծոյ: - 376. Չորրորդ՝ զի յայտնեսցի թէ՝ ի մէջ ծառայութեանն յեգիպտոս այնքան բազմացոյց *զնոսա* խնամքն աստուծոյ. այսքան բազմութիւնս ի տեղիս իւրեանց խաղաղութեամբ բնակեալ՝ ո՞րքան անթիւ բազմասցին: - 377. Հինգերորդ՝ թիւն զընտրութիւն՝ զդաս՝ և զկարգն ցուցանէ. զի գո՛յ ի *Նմա՛* առաջին միջին և վերջին. որպէս զինւորք. իսկ անթիւն խոտան և անկա՛րգ է. որպէս ծերք և տղայք: - 377. Ի **դ** կողմն խորանին բանակեցան **բժ**ան ցեղքն. և ի մէջ *Նոցա* խորանն էր Ղևտական ցեղօքն: - 378. Յուդա. Իսաքար. և Զաբողոն. **ժը** բիւր և **ցն** զօրք *Նոցա*: - 378. Ռուբէն. Շմաւոն. և Գադ. **ժե** բիւր և **ռնծ** զօրք *Նոցա*: - 378. Եփրեմ. Մանասէ. և Բենիամին. **բժ**ան բիւր և **ըռբճ** զօրք *Նոցա*: - 378. Դան. Ասեր. և Նեփթաղիմ. **ժե** բիւր և **ռո** զօրք *Նոցա*: - 378. Նոյնպէս և Ղևտացիքն շուրջ զխորանաւն բանակէին ի մէջ **բժ**ան ցեղիցն. և խորանն ի միջի *Նոցա* այսպէս: - 378. Երկրորդ՝ **գ** իշխանք *Նոցա* ըստ իշխանութեամբ եղիազարու, **գ** դասքն են պաշտօնէից ըստ իշխանութեամբ քահանայիցն: - 379. Որպէս ետ առաքելոցն, Նոյնպէս և *Նոցա* ի գիր նզովից զկապելն. և յօրհնութիւն ժողովրդեանն զարձակելն: - 379. Անդրանկաց սատակումն եգիպտոսի, նշանակէ՛ զանկումն սատանայի յերկնից. և փոխանակ *Նոցա* ընտրեալ և կոչեալ որդի անդրանիկ զիսրայէլ. և *զնոսա* փոխարկեալ առնու զօծելոց դասս քրիստոնէից ի տեղի *Նոցա:* - 380. Դարձեալ՝ զղջմամբ սատակի չար խորհուրդն. և ապա՛ խոստովանիմք լեզուաւ. և *զնոսա* փոխեալ գործե՛մք զբարիս: - 380. Զի աթոռք՝ քերովբէք՝ սերովբէք՝ հաւասարապատիւք են՝ մի համարի դասս. և վեցն զկնի *Նոցա:* - 380. Եւ այլք ասեն թէ՝ կորխեանքն այրեցան մարմնով, վասն այն հոգւով սրբեցան. և բուրվառք *Նոցա* սրբեցան: - 381-382. Իսկ դադան ամենևին անզեղջ մնաց. թէպէտ գնաց մովսէս ի խորան *Նոցա*՝ ո՛չ զղջացան: - 382. Այլք ասեն վասն դադանեանցն թէ՝ հոգիք *Նոցա* մարմնով ի տանջանս կային. ուր ընկեղմեցան մինչև ցաւարումն դժոխոց. ըստ որս և *զնոսա* ազատեաց քրիստոս իջանելովն ի դժոխս: - 382. Զի երկոտասան վիճակացն առաքեալք. և նախ քրիստոս ի մէջ *Նոցա:* - 382. Եւ *Նա՛* ծնաւ զեզն պարարակ. որ ողջակէզ եղև արտաքոյ քաղաքին ի դէմս տաճարին: - 383. Նա՛խ՝ զի հուր աստուածութեանն կիզոյր *զնա՛*. որպէս ջուր ի մէջ ապակոյ ի տապոյ արևուն պակասի: - 383. Վասն որոյ և պա՛րտ է և *Նմա՛* խոստովանիլ որպէս է՛ ի կանոնս հարցն: - 384. Զի գողացեալ մեղքն միայն խոստովանելով ոչ քաւի. այլ հատուցանել պարտ է զգողօնքն. կամ ի տէրն, կամ յազգականս *Նորա*. կամ ի քահանայն. զի միջնո՛րդ է մեռելոց և կենդանեաց: - 384. Եւ զխոյն աստուծոյ, զի զօրէնս *Նորա* յանցեաւ: - 384. Եւ զխոստովանութիւնն եկեղեցոյն բաժին, զի զկանոնս *Նորա* ելոյծ: - 384. Իններորդ՝ *Նորա* գործովք արդարացան զոր նշանակէր օրէնքն. և մեք հաւատով՝ զոր նշանակէր վէմն յետոյ: - 385. Չորրորդ՝ վասն անհաւատութեան *Նոցա:* - 386. Եւ *Նոցա* մանանայ յերկնից ետ և տրտնջէին և սնոտի՛ հաց կոչէին: - 386. Վասն որոյ բարկացաւ աստուած և լարս առանց բժշկութեան արձակեաց ի *Նոսա:* - 386. Իսկ մովսէս հրամանաւն աստուծոյ արար պղնձի օձ. և բարձրացոյց ի դուռն խորանին. և որ հայէր ի *Նա*՝ ապրէր ի թունից օձիցն: - 386. Երկրորդ՝ զի եօթնիցս եղև արժանի տեսլեան Երրորդութեանն. կրկին անգամ զհայր ի գիշերի. և կրկին զորդին ի տիւն. և հոգի աստուծոյ ի վերայ *Նորա* երկիցս անգամ. և մի անգամ զհրեշտակն ետես: - 387. Երրորդ, զի մարգարէութեամբ *Նորա* բազում ազգաց հեթանոսաց օգուտ եղև. զի յայնմանէ եկին մոգք և երկիր պագին քրիստոսի: - 387. Երկրորդ՝ զի իշովն յանդիմանեսցէ զանմտութիւն *Նորա*. և զանօրէնութիւնն արգելցէ. որպէս ասի ի կաթողիկէքն: - 388. Երրորդ՝ զի ցուցցէ թէ ոչ ինչ զօրութիւն ունի բան *Նորա:* - 388. Զի թէ անիծեալ էր, յորժամ ժողովուրդն անկաւ ի սատակումն ի բելբէքովր, ասէին թէ ի *Նորա* անիծիցն եղև: - 388. Եւ յա՛յտ է, զի ոչ ինչ զօրութիւն ունէր բան *Նորա:* - 388. Եւ դարձեալ՝ ոչ ինչ շնորհ ունէր բան *Նորա*. զի այնքան օրհնեաց զժողովուրդն, ընդէ՞ր ոչ դարձաւ մահն և սատակումն: - 388. Եւ յայտնի նշան մոլորութեան *Նոցա* ա՛յս է, զի այնպիսեացն կատարօղք վատթարք են գործովք և մոլի. և առ դևս տանին զմարդիկք բռնութեամբ...: - 389. Վասն որոյ պա՛րտ է ըստ հրամանաւն կալ *Նոցա*՝ յորմէ և առ որ զկապակցութիւն ունիմք եօթանցն ասացեալ: - 389. Եւ որպէս կնոջ ըստ հրամանս առնն իւրոյ յանցանել պոռնկութենէ, նոյնպէս և զաւակաց, և ծառայից, և աշակերտաց, և հնազանդելոց, և ժողովրդոց. նոյնպէս և հոգիս մեր ելեալ ի հրամանացն աստուծոյ՝ պոռնկութիւն է *Նմա*. եթէ ըստ գործոց. եթէ ըստ հաւատոց: - 389. Նա՛խ՝ նշանակէ՛ զնահապետսն. իե ազգ որ բնական օրինօք արդարացան նախ, և ապա՛ գրաւորն բնականաւն զօրացեալ արդարացոյց *զնոսա:* - 390. Եւ կէսն *զնոսա*, որք ունին թերութիւն ինչ ի հաւատս կամ ի վարս ինչ և յուսմունս: - 391. Եւ դարձեալ հրեշտակք

և մարդիկք մշտնջենաւորք՝ պակաս ունին առ աստուածպետութիւնն յաւիտենական. և *նա՛* է կատարումն ժերորդ. անսկիզբն և անվախճան գոլով: - 391. Զայն ցուցանէ, զի մեռանիլն քահանային՝ ազատութիւն էր *նոցա*, յօրինակ քրիստոսի. յորժամ մեռաւ վասն աշխարհի, ազատեցան մահապարտքն: - 392. Դարձեալ, եկեղեցի սուրբ՝ է՛ քաղաք ապաստանի. և քահանայապետ ի *նմա՛* պատարագն. յոր մտեալ աղօթեմք և թողութիւն գտանեմք: - 392. Իսկ յետ մահու ա՛յնոցիկ հօգւոց որք զղջան կամ խոստովանին զմեղս, քաղաք ապաստանի է *նոցա* ի կայանս հոգւոցն տրտմութիւն և ցաւն վասն փոխարինաց մինչ մեռանի քահանայն մեծ. որ եկեղեցի սուրբ՝ պատարագաւ և աղօթիւք և ողորմութեամբ հատուցանէ՛ զպարտս *նոցա* և ազատին: - 392. Եւ որք զբերքաթուրն համբաւեն, այս ընդ դէ՛մ է *նոցա:* - 392. Յորում և զմեզ թուեսցէ ի թիւ սրբոց իւրոց անջինջ դպրութեամբ. և *Նմա* փառք յաւիտեանս ամէն: - 392. Նոյնպէս առաջին օրէնքն շարժեաց *զնոսա* ի բուսանիլ. և երկրորդն յաճումն և ի պտուղ: - 393. Այլ ընդ դևս պատերազմիլ միշտ. զի որոց դիւաց թէ յաղթէ մարդ, թէ հպարտութեան և թէ պոռնկութեան, *զնոցա* տեղիքն ժառանգէ յերկինս: - 393. Դարձեալ գիտելի է, զի յերիս նշանաւոր տեղիս եղև պատերազմ *նոցա:* - 393. Եւ որք պարտին աստ, *նորա* և յետ մահու և յարութեանն. զորս կորուսցէ փրկիչն մեր յիսուս: - 394. Եւ նահապետք յառաջ քան զօրէնս ի *նմա:* - 395. Նա՛խ՝ հաւատով ճանաչելն է զերրորդութիւնն մի բնութիւն, և ապա գործով սիրել *զնա*. որպէս նախ ուսանիլն է և ապա առնել: - 396. Եւ մտօքն յօժարութեամբ սիրել և յորդիութիւն *նորա* ելանել: - 396. Այլ բանն աստուծոյ ի ծովէ լորամարգ ի վիմէն ջուր և յօդոյ մանանայիւ կերակրեաց *զնոսա*. զի ամենակա՛ր է զօրութիւնն աստուծոյ: - 397. Երրորդ՝ զայն ցուցանէ որ կեանք դրախտին դարձաւ առ *նոսա* յանապատին անկարօտ ամենայնի. զի զգեստն ո՛չ մաշէր. այլ աճէ՛ր ընդ տղայոցն. և ոտն բոկ՝ և ոչ՛ կոշկոճէր...: - 397. ...որպէս ասաց մովսէսի թէ՝ «լո՛յծ զկօշիկս քո». և ո՛չ կերակրոյ հացի ունէին պէտք. այլ բանն աստուծոյ կերակրէր *զնոսա* որպէս ասացաւ...: - 397. Հինգերորդ՝ նոյն ինքն մարմինն սուրբ ո՛չ թէ հացիւ միայն կայր որպէս հասարակ մարդ. այլ բանիւն կենդանի ի *նմա՛* միացեալ: - 397. ...և ապա ըստեամբք կերակրէ *զնա* մայր իւր բանիւն աստուծոյ. զոր ասեն յաշխարհի, եթէ զմին դուռն փակէ աստուած, *նա* զերկուքն բանայ. զի յորժամ զմին դուռն պորտին փակեցաւ, բ ստինքն բացան: - 397. Ակնառութիւն ո՛չ է աստուծոյ. զնախնիքն սիրեաց աստուած, զի արժանիք էին. և եցոյց *նոցա* զինքն. և զխոստումն աւետեաց ուխտեաց *նոցա* մարդ լինիլ ի զաւակէ *նոցա* յետոյ: - 398. Ա՛րդ՝ նախ վասն հարցն սիրոյ զզաւակսն *նոցա* ընտրեաց աստուած: - 398. Երկրորդ՝ վասն մեծ բարութեանցն ի հեռաստանէ էարկ հիմն մարդեղութեան իւրոյ ի զաւակէ՛ *նոցա* լինիլ: - 398. Այլ և մարգարէքն և առաքեալքն և բազում սուրբք և արդարք յազգէ *նոցա* եղեն: - 398. Այլ և զհասարակքս խնամեաց առաւել քան *զնոսա*. զի ի մէջ *նոցա* օրինակօք էր, և ի մէջ մեր ճշմարտութեամբ: - 398. *Նոցա* ամպ հովանի, և մեզ հոգին սուրբ: - 398. *Նոցա* զգալի թշնամիքն ետ կոխան. և մեզ զիմանալին...: - 398. Ո՛չ միայն հրէի կամ հեթանոսի, այլ որք նուիրեն *նմա* զհաւատս ամբողջ սրբութեամբ՝ արժանի լինին շնորհացն *նորա:* - 398. Ըստ մարմնոյ յա՛յտ է զի երկիրն եգիպտացւոց դա՛շտ է. վասն այն նեղոս գետն արբուցանէ *զնա՛:* - 398. Աչք տեառն ի սկզբանէ տնօրէնութեանն և մինչև ցկատարումն տարւոյն ի վերայ *նորա:* - 398. Նա՛խ՝ զի մի՛ սնուցիչն լիցի եփիչ *նորա:* - 399. Նախ՝ զի ասէ՝ «յեղբարց ծերոց». այսինքն ո՛չ յօտարաց, այլ յազգէ *նոցա* յուդայէ՛, և ի ղևեայ եղբարց: - 399. Երկրորդ՝ զի ասէ «իբրև զիս». իբրևն օրինա՛կ է. որպէս մովսէս աստուած կոչեցաւ, և տէր մեր էմմանուէլ. և *զնա՛* հայր կնքեաց աստուած. և որպէս մովսէս իշխէր տարերաց, և տէր ի ծովուն գնայր, և ի վերայ օդոյն: - 399. Հինգերորդ՝ զի *նորա* խնդրէին երևիլ մարմնով. զի ո՛չ կարէին տանել աստուածային հրոյն ի լերինն: - 399. Եւ զի զայս ամենայն վկայութիւնս նշանի տեսին աչօք և լսեցին ականջօք և ո՛չ հաւատացին. վասն այն վրէժ խնդրեաց աստուած ի *նոցանէ* ...: - 400. Եւ հայր աստուած որ ո՛չ կատարի կամք *նորա* ի մեզ. յայնժամ ըստ բազում գթութեան իւրոյ առաքեաց զմիածին որդին որ փոխանակ մեր կախեցաւ զփայտէն և ազատեաց զմեզ յանծիցն օրինաց...: - 400. Եւ անէծքս այս ո՛չ հասին ի *նա* վասն երից: - 400. Երրորդ՝ զի ինքն օրհնութիւն էր, և անէծքն մերձեալ ի *նա* յօրհնութիւն փոխեցաւ. որպէս խաւարն ի լոյս փոխի. և մեղքն յարդարութիւն. և մահ ի կեանս: - 400. Եւ այս վասն խստասրտութեան *նոցա* զի մի՛ սպանումն լիցի: - 400. Եւ թէ *նա՛* ևս թողոյր, այլք զարձակեալ կինն առնուին: - 401. Եւ որ զկին իւր արձակէ՝ *նա՛* տայ *նմա* շնալ: - 401. Մովսէսին պատճառն վասն խստասրտութեան *նոցա* է որպէս տէրն ասաց. զի մի՛ սպանումն լիցի: - 401. Իսկ խորհուրդն, ի յօրէնքն *նոցա* է զի փոփոխական էր օրէնքն *նոցա*. և որ փոխիւր, այլ ո՛չ դառնայր յօրէնս *նոցա:* - 401. Երկրորդ՝ բարոյական. զի մին կնոջ ի բազում արանց ո՛չ

երևի հարազատ զաւակն. իսկ մի այր ի բազում կանանց կարէ՛ ծնանիլ հարազատ մանկունս և սիրել *զնոսա:* - 401. Այլ կենդանի եղբօր, կամ փոքր եղբօր կինն, կամ գոլով զաւակ, անօրէնութիւն էր որպէս հերովդին. առ որ ասէր յովհաննէս, «չէ արժան քեզ ունել զկին եղբօր քոյ». զի դուստր *նորա* էր աղջիկն որ կաքաւեաց: - 402. Նշանակէր զյարութեան խորհուրդն յոր *նորա* ո՛չ հաւատային...: - 402. Թէպէտ ո՛չ կատարեմք զօրէնսն՝ ո՛չ եմք ընդ անիծիւք *նորա* վասն երից: - 403. Երկրորդ՝ որպէս զօրհնութիւն *նորա* մարմնական ո՛չ ունիմք. նոյնպէս և ո՛չ զանէծսն: - 403. Ասա՛ *նմա* թէ՝ այն հասարակաց հեթանոսա՛ց է. զի աճին մարմնով և ընչիւք. իսկ մերս ո՛չ է հասարակաց. այլ արժանաւորաց և ընտրելոց: - 403. Եւ մարդն անկեալ ի հրեշտակաց աճմանէն, հրամայեաց *նոցա* զանասնոց աճումն: - 404. Եւ յորժամ է զօրութեամբբ հոգւոյ յաղթիցեն *նոցա*, փախիցեն յէ զգայարանաց մարդոյն եօթնեկի մահացու մեղօք. զայս կատարելո՛ցն է իմանալ. և ո՛չ մեզ տկարացս: - 404. Որ հաւատայ ի *նա*՛, մի՛ կորիցէ ...: - 405. Չորրորդ՝ այժմ տեսանեն աչօք զեկեղեցի սուրբ որ զկախեալ ի *նոցանէ*՝ աստուած հաւատայ զնոյն մեռեալ և կենդանի, և ո՛չ հաւատան: - 405. Զի հանապազ քօղ երեսացն մովսէսի առագա՛ստ է ի վերայ սրտից *նոցա.* և ոչ իմանան զտեսութիւն բանին. վասն որոյ ո՛չ հաւատան: - 405. Եւ պա՛րտ է մեզ հանապազ զքրիստոս առաջի աչաց տեսանել ի խաչ վասն մեր և հաւատալ. և չարչարակից լինիլ *նմա* յամենայն ժամ: - 405. Երկրորդ՝ ի յարարածոցս տեսանի արարիչն. զի երևելի արարածքս թարգմա՛ն են *նորա:* - 406. Երրորդ, ի խնամելոյ զմարդ և զանասունն՝ ցուցանի թէ *նա*՛ է արարիչ որ խնամէ՛ և դարմանէ՛ զսոսա՛: - 406. Վասն այն յաստուծոյ օրհնեմք *զնոսա* և գոհանամք: - 406. Երրորդ՝ յայտնեմք զփառս և զպատիւ և զհանգիստ *նոցա* և զայլն: - 406. Եւ օրհնութիւն, զի յօրհնել բերանոյ *նորա*՝ յառաջ եկն առ որ բերան ի բերան խօսեցաւ աստուած դէմ յանդիման և ո՛չ առակօք: - 407. Նա՛խ եթէ՝ բնութեամբ բարի է աստուած և ո՛չ ունի բարկութիւն. զի ծառ բարի պտուղ չար ո՛չ առնէ. այլ մեք գործովք մեր զայրացուցանեմք *զնա* և արկանեմք ի բարի կամս *նորա* բարկութիւն: - 408. Չորրորդ յա՛յտ է, զի թէպէտ սրտմտի՝ ո՛չ յինքենէ. այլ մե՛ք հարկանե՛մք *զնա* ի գործն, անդարձ լինելով մեր: - 408. Ուստի յա՛յտ է, զի յորժամ ի սպառնալն դառնամք ի մեղաց, ո՛չ սրտմտի *նա:* - 408. Յորոց յայսցանէ յա՛յտ է, զի եթէ ապաշխարեալ լինի արգելեալն. կամ վախճանեալ է կապօղն. այլ ոք որ գերագոյն է կամ հաւասար կապողին, կարէ՛ արձակել *զնա*՛*:* - 409. Երրորդ՝ վասն հասարակ յարութեանն. զորմէ լուաւ սատանայ և բեկաւ ողն *նորա:* - 409. Եւ անջրպետեալ ի մէջ ժողովրդեանն և մարմնոյն շուրջանակի. զի մի՛ իմասցեն զթաղումն *նորա:* - 410. Զոր յայսմ օրէ և յառաջ՝ ասեն զամպ հովանին վերացեալ ի *նոցանէ:* - 410. Երրորդ՝ վախճանեալ մովսէս ի լերինն, և միքայէլ փոխադրէր զմարմինն. սկսաւ սատանայ հայհոյել զսուրբն և սպանօղ անւանել վասն հարկանելոյն զեգիպտացին. վասն որոյ սաստեաց *նմա* հրեշտակապետն: - 410. Չորրորդ՝ տեսեալ զմովսէս առաւել փառաւորեալ, և յետ վախճանին թոյլ ետ ներողութիւնն աստուծոյ ժպրհիլ բանսարկուին ստգտանօք մեղաց. զի մի՛ տացեն *նմա* զգերազանց պատիւն աստուած կարծելով: - 410. Եւ փոխանակ հոգւոյն՝ հրեշտակական օգնութեանն կարօտացաւ ցուցանել զտիրապէս իշխօղն բնութեան. որ և կշտամբեաց զբռնութեամբ թագաւորելն *նորա:* - 410. Զայս նշանակէ թէ՝ յետ ելանելոյ հոգւոյ ի մարմնոյ և գնալոյ ի վերին շաւիղն, հակառակ կայ սատանայ և չար զօրութիւնքն ընդ *նմա*, տանիլ զհետ իւրեանց որ զչա՛րսն են գործեալ. և յարդարոցն յաղթին հրեշտակին օգնութեամբն. որպէս և անտօն ետես. զի իմացեալ և մեք զգուշասցուք այնմ: - 410. Եօթներորդ՝ ոմանք մարմին մովսէսի զօրէնսն ասեն. զոր ի բերելն հակառակէր սատանայ, խոտան և անարժան գոլ ժողովրդեանն. վասն որոյ միքայէլ վերակացու ժողովրդեանն հալածէր *զնա:* - 410. Ութերորդ՝ և ոմանք զմարմինն մովսէսի զժողովուրդն կոչեն յելսն եգիպտոսի. որ հակառակէր ազատելոյ *զնոսա* յեգիպտոսէ՛: - 410. Իններորդ՝ ի ժամ այլակերպութեան տեառն ի բերել հրեշտակապետին զմովսէս, ասէ սատանայ ցհրեշտակն, ստեաց աստուած զմովսէս մուծանել յերկիրն ուր երդուաւ ո՛չ մտանել *նմա:* - 410. Երրորդ՝ զի մի՛ ժողովուրդն կանգնեսցէ արձան ի վերայ *նորա* ըստ սովորութեան երկրին: - 411. Վասն որոյ ամպ ծածկեաց *զնա:* - 411. Որպէս տեառն մերոյ ի համբառնալն՝ ամպն կալաւ *զնա*՛ յաչաց *նոցա:* - 411. Մովսէս նշան կատարեաց մեծամեծ. նոյնպէս և ա՛յլ մարգարէք. փրկչին մերոյ ո՞րն է առաւել քան *զնոցայն:* - 411. Մարմնական նշանքն զոր կատարէր՝ չէ՛ր պակաս քան *զնոցայն:* - 411. Որ և մովսէս եկեալ ի թաբօր վկայէր *նմա*, և աղերսէր ելանել ի խաչ և բանալ զդուռն արքայութեան. որում մարգարէքն սպասէին: - 411. Եւ ո՛չ ետ պատասխանի սիմէի որ նախատէրն *զնա*՛*:* - 413. Եւ ամենայն աւուրք կենաց *նորա* **ճժ** ամ: - 414. Երկրորդ՝ զի չարչարակից եղև մովսէսի. պահելով զերեք քառասունս ընդ *նմա:* - 414. Նա՛խ՝ դարձաւ

գետն, զի ա՛հ և երկիւղ լիցի քանանացւոցն. և մի՛ հակառակեսցին յեսուայ և անկցին ի սուր *նորա:* - 414. Իսկ յետ մահուանն մովսէսի վերացաւ ամպն. և հրամայեցաւ ժողովրդեանն հեռու կալ կանգունս երկուց հազարաց վասն փառաց տապանակին և վասն զօրութեան *նորա:* - 415. Ութերորդ՝ զի զկարծր սիրտ *նոցա* թլփատեսցէ օրինօքն ի վէմն գրեալ: - 415. Նաև զընտանիսի աքարայ պատժեաց. զի և *նորա* ո՛չ խոստովանեցան զգողօնքն: - 415. Վեցերորդ՝ զի թէ լինի անկարօտ գող և զրկօղ, ընդ տեառն իւրոյ կորուսանէ և զինչսն. որպէս աքարն որ ունէր բազում ստացւածս, և գողացաւ ի նզովիցն երիքովի. տեսին ամենայն ժողովուրդն և ցասեան ի վերայ *նորա* և իրաւունս ետուն սատակմանն: - 416. Նա՛խ՝ զի խնայեաց աստուած ի ծերութիւն *նորա* որպէս ի մովսին: - 416. Երրորդ՝ զի փորձեսցի *նորօր* իսրայէլ: - 416. Չորրորդ՝ զի լիցին *նորա* պատճառ գայթակղութեան *նոցա*, և խոչ ընդ ակն: - 416. Հինգերորդ՝ զի խրատեսցին *նորօր* և չարչարեսցին: - 417. Վեցերորդ՝ զի որդիք *նոցա* ի *նոցանէ* ուսցին զպատերազմ: - 417. Եօթներորդ՝ զի և այլք կոտորեսցեն *զնոսա* յետոյ: - 417. Տասներորդ՝ զի ուսցին *նորա* ի *նոցանէ* զքարիսն, և մնասցեն ժառանգ երկրին. որպէս գաբաւոնացիքն: - 417. Մետասաներորդ, կարծեաց զիշխանութիւն *նոցա*. զի *նորա* կարծեսցին ի չարեացն և թեթևասցին տանջանքն: - 417. Նա՛խ՝ զի տէր ինքն էր բաժին *նոցա*. և զամենայն իրաւունս ի քահանայսն տային: - 417. Երկրորդ՝ զի մի՛ զատեսցին ի ժողովրդենէն. այլ ի քաղաքս ապաստանաց սփռեսցին և ուսուսցեն *զնոսա:* - 417. Երրորդ՝ մովսէս զձեռն եդ ի վերայ եսուայ և կացոյց *զնա՛* առաջնորդ: - 417. Ութերորդ՝ *նա՛* տապանակաւն դարձոյց զգետն յետս: - 418. Զի թլփատութիւնն դրո՛շմ էր *նոցա* և որոշօղ: - 418. Երկոտասաներորդ՝ *նա՛* ապրեցոյց զռահաբ կարմիր նշանաւ: - 418. Եւ որ շինէ զդժոխս հոգւով և մարմնով. *նա՛* և անդրանիկ խորհրդով և մարմնոյ գործով: - 418. Չորեքտասաներորդ՝ *նա* քարկոծեաց զաքար ազգականօք. և զռահաբ փոխանակեաց իւր ազգօքն: - 418. Ութև**ժ**, զթագաւորս *նոցա* կախեաց յերկճղի փայտէ. և յերիկոյն ի գուբն սուզեաց: - 418. էջ ի գերեզմանն և յանդունդս յաւիտենից ընկղմեաց *զնոսա:* - 418. Իննև**ժ**, ապրեցոյց զգաբաւոնացիսն որք երկեան և ապաւինեցան ի *նա:* - 418. Եւ տէր մեր ի ժամ խաչին խաւարեցոյց *զնոսա* և մի օրն եղև **բ**: - 418. Եւ տէր մեր խաչիւն կործանեաց զկուռս և զպաշտամունս *նոցա:* - 418. Քսանն**ե**՝ յեսու նախ սպան զթագաւորս, և զքաղաքս *նոցա* աւերեաց: - 419. Եւ տէր մեր նախ կապեաց զհզօրն ի խաչին և զտուն *նորա* աւերեաց որ էր ամրոց դժոխոցն: - 419. Քսանն**զ**՝ *նա՛* սպան զթագաւորս և զհսկայսն քանանու. և զոմանս եթող ի փորձ ընտրելոց: - 419. Եւ տէր մեր յաղթեաց իշխանին դիւաց. և եհատ *զնորայն* բռնութիւն աջոյ. և զոմանս եթող ձախիւ թիւրելոյ և զընտիրս որոշելոյ: - 419. Քսանն**է**՝ դարան գործեաց ի գայի և յաղթեաց *նոցա:* - 419. Երեսուներորդ, յեսու բաժանեաց զերկիրն ամենայն ցեղիցն. և եղիազար քահանայ և իշխանքն ընդ *նմա:* - 419. Երեքտասաներորդն ի դանա որդի մանովէի Սամփսոն. որ կալաւ **յ** աղուէսս, և կապեաց ի *նոսա* ջահս. և այրեաց զանդաստանս այլազգեացն: - 420. Եւ **յ** արքն ընդ *նմա* ցամաք մնացին յարենէ մադիանացւոցն որ կոտորեցան: - 421. Երրորդ՝ գեղմն մարգարէքն, և ցօղ շնորհք մարգարէութեան ի վերայ *նոցա:* - 421. իսկ ցօղ իմաստութիւնն որ տուաւ *նմա* յաստուծոյ. և թագաւորք արաբայ և սաբայ, ընծայաբերքն *նմա:* - 421. Այլ ո՛չ այսպէս. զի ե՞րբ եկաց և մնաց ընդ արև, կամ յառաջ քան զլուսին սողոմոն. այլ տէրն *նորա:* - 421. Հինգերորդ՝ գզաթ էր կոյսն մարիամ. և ցօղ բանն աստուծոյ. որ աւետեօք հրեշտակապետին էջ ի վերայ *նորա* առանց ոտնածայնութեան և ծածուկ: - 421. Վեցերորդ՝ դարձեալ տէր մեր յիսուս քրիստոս որ եղև զգեստ հաւատացելոց իւրոց. մկրտեցաւ ի յորդանան. և ձայն հօր վկայեաց. և աղաւնակերպ հոգին էջ ի վերայ *նորա:* - 421. Եւ որք գիտեն զտնօրէնութիւն փրկչին, զգեցցին զփրկութիւն նորին. զի *նա՛* է հզօրն յորմէ ել կերակուր քաղցր: - 422. Հնգետասաներորդ՝ *նա՛* զայլազգիսն հարեալ՝ զգեցոյց *զնոսա:* - 422. Քսանն**գ**, *նա՛* յազգէն յուդայ ըմբռնեալ և տուեալ յայլազգիս: - 423. Քսանն**ե**, *նա՛* ծնօտիւք իշոյ զհազարսն խորտակեալ: - 423. Եւ տէր մեր էա՛ռ զնոյն և սրբեաց և *նովաւ* զամենայն հրաշագործեաց: - 423. Եւ որք ծարաւին *նմա*՝ լիանան. և հակառակքն ունա՛յն մերժեսցին: - 423. Երեսուներորդ, ի տեառնէ յաջողեալ զօրութեամբ ծնօտին, և *նովաւ* զօրացեալ մեծ ծարաւն սամփսոնի: - 423. Եւ ինքն որդիէ՛ զօրութիւն հօր. և ծարաւ փրկութեան մարդկան, *նովաւ* զովացեալ: - 423. Երեսունն**դ**, *նա՛* զբ սիւնսն շարժէր և զտունն կործանէր: - 424. Իններորդ՝ մատնի ի ձեռս *նոցա:* - 424. Եւ զի հեղի ո՛չ խրատէր *զնոսա* սաստիւ և տանջանօք. վասն որոյ և ինքն պատժեցաւ և մեռաւ. և քահանայութիւնն յազգէ *նորա* փոխեցաւ յաւուրս սողոմոնի: - 425. Երկրորդ՝ զի մի՛ ի պատճառս *նորա* չարիս գործեսցեն...: - 425. Երրորդ՝ զի ոտք և ձեռք կապեալ բազումք զզաւակս զոհէին *նմա*. նոյնպէս և *նորայն* հատան: - 426. Իսկ

անդրանկածին երինջքն են մարգարէք և առաքեալք. որ զհաւատացեալս անդրանիկ ծնան. *նորա* են ամոլք և պատարագք աստուծոյ: - 426. Երկրորդ՝ անցեալ ընդ լերամբ և ո՛չ գտեալ. մինչև առ տեսանօղն եկեալ. և տէր մեր էանց զլերինս հրեշտակաց և եկն ի մարգարէս. և *նորա* աւետեցին զգիւտն **զ** օրեայ կորստեան իշոյն...: - 426. Երրորդ՝ *նա՛* ի կրտսեր ազգէ բենիամենի թագաւորեաց ամենայն իսրայէլի. և տէր մեր յազգէ մարդկան կրտսերաց առեալ մարմին և թագաւորեալ ամենայն զօրութեանց երկնից: - 426. Հինգերորդ՝ ոմանք չարք ո՛չ հնազանդէին *նմա*....: - 426. Վեցերորդ՝ *զնա* վկայէ՛ բարի և լաւ և անձնեայ ի մէջ իսրայէլի. և տէր մեր բարի և ընտրեալ ի մէջ բիւրաւոր արարածոց: - 426-427. Ութերորդ՝ *նա՛* ուսովք էր բարձր քան զամենայն մարդ. և տէր մեր ո՛չ միայն աստուածութեամբն որ գլուխ է, այլ և չարչարանօք իւր՝ գերագոյն և բարձրագոյն ցուցաւ. զի փրկեաց զամենայն: - 427. Տասներորդ՝ յետ որոյ հնազանդեցան *նմա՛* ամենայն իէլ. և տեառն մերոյ զկնի խաչին հաստատեցան ի հաւատս. մանաւանդ յետ **է** դար կենցաղոյս ամենայն լեզու խոստովան լիցի զտէր յիսուս քրիստոս ի փառս աստուծոյ հօր ամէն: - 427. Երկրորդ՝ զի դաւիթ որ հատանէր զլօդկին սաւուղի, *նա՛* թագաւորէ՛: - 427. Երկրորդ՝ զի կամէր զա՛զգն հարցանել թէ յուդայի ցեղէն և փարիսէ՞ն իցէ, զի սպանցէ *զնա:* - 427. Երրորդ՝ ի նախատինս զօրաց իւրոց. զի հովիւ մանուկն և որդի յեսսեայ սպան զգողիաթ. և *նորա* իշխանք և մեծամեծք ո՛չ կարացին: - 427. Կամ զի աքիմելէք **զճ** քահանայիւք սպանաւ ի սաւուղայ. և աբիաթար փախեաւ առ դաւիթ և ընդ *նմա՛* էր զամենայն աւուրս թագաւորութեան *նորա*. և յանուանէ *զնա՛* յիշէ: - 427. Եւ նա՛խ՝ զի ո՛չ ճանաչեաց վիուկն զաւուղ աստի՛ յայտ է, զի գովեաց *զնա՛* և պարսաւեաց...: - 428. Եօթներորդ՝ զի թէ ճշմարտապէս սամուէլ յառնէր, ո՛չ կամէր կինն. զի կորուսիչ էր *նոցա*. այլ գիտէր որ նմանութիւնն էր սամուէլի: - 428. Եւ թէ *նա՛* յարուցանէր, ընդէ՞ր երկու եհան. զի *նա՛* միայն զսամուէլ խնդրէր: - 428. Զի թէ ինքն ձևացոյց մարմին և շունչ և յարոյց *զնա*, զիա՛րդ ոչ ճանաչէր: - 428. Զի թէ գիտէր զստոյգ մահն սաւուղայ՝ ո՛չ կաշառէր *զնա:* - 428. Նա՛խ՝ զի ո՛չ ետես *զնա*. այլ միայն կինն. ապա յա՛յտ է զի սուտ նմանութիւնն էր: - 429. Երրորդ՝ զի երկիր եպագ *նմա* զոր ո՛չ տեսանէր: - 429. Ա՛րդ՝ թէ աստուած ծածկեաց և սամուէլ յայտնէր հակառակ աստուծոյ, ահա՛ զի բարկացուցանէր *զնա*. ապա յա՛յտ է զի սո՛ւտ է և ո՛չ սամուէլ: - 429. Ա՛րդ՝ թէ ճշմարիտ յարոյց կինն զսամուէլ. սաւուղ ո՛չ երկնչէր ի մահու. զի և *զնա՛* յարուցանէր. և թէ երկեաւ, ապա սուտ էր կենդանութիւն մեռելոյն: - 429. Որ և ո՛չ յաղթութիւն, այլ մահ խոստացաւ *նմա:* - 429. Ապա յա՛յտ է զի ի մէջ կարծեաց էր *նա*. զի թէ սուտ համարէր զվհուկն, ո՛չ երկնչէր ի մահու. և թէ ճշմարիտ՝ ո՛չ երթայր ի պատերազմ: - 429. Երրորդ՝ ընդէ՞ր ինքն ո՛չ ասաց թէ ե՛ս եմ սամուէլ. այլ *նորա* նմանեցուցին: - 429. Չորրորդ՝ ընդէ՞ր հաւանեցաւ աստուածս կոչել զինքն և երկրպագել *նմա*. զի *նա* մա՛րդ էր: - 429. Վեցերորդ՝ ընդէ՞ր ոչ քաջալերեաց *զնա* ասելով, եթէ մեռանիս՝ վհուկդ յարուցանէ՛ զքեզ որպէս զիս: - 429. Եօթներորդ՝ ընդէ՞ր ոչ եկեր ընդ *նոսա* և ոչ նստաւ և ոչ շօշափեցաւ: - 429. Երրորդ՝ զի նոր բան ինչ ո՛չ պատմեաց. այլ զոր ինչ ուսաւ ի սաւուղայ՝ երկրորդեաց *նմա:* - 430. Արդ եթէ սամուէլ յարեաւ և մեռաւ և կամ կինն, *նա՛* ճշմարիտ եղիցի բանն. ապա թէ կինն ոչ մեռաւ և սաւուղ մեռաւ, սուտ խօսեցաւ: - 430. Ասեմք եթէ ժամանակն ի շարժմանէ՛ լուսաւորա՛ցն է. ըստ գնացից *նոցա* զառաջիկայն ասեն սովորապէս: - 430. Կամ զի աղքատասէ՛ր էր դաւիթ և բազումք շրջէին ընդ *նմա*, վասն այն յեփուսացիքն նախանձեցան: - 431. Վասն որոյ ասաց դաւիթ, ամենայն որ մարտնչի սրով ընդ կաղս և ընդ կոյրս որպէս ասացին յեբուսացիքն, *նա՛* ատելի՛ է անձին դաւթի. և խնայեաց ի *նոսա* և փրկեաց: - 431. Որպէս յետոյ որդի *նորա* զկաղս և զկոյրս բժշկեաց ի տաճարին: - 431. Նա՛խ՝ զի պա՛րտ էր ուսով բառնալ զտապանակն որպէս հրամայեաց աստուած. և *նորա* սայլիւ բերէին որպէս այլազգիքն: - 431. Յորժամ մեղայ ասաց՝ վասն է՞ր ոչ եբարձ զպատիժն. զի ահա՛ խայտառակեցան կանայք *նորա:* - 432. Դարձեալ՝ նոյն ինքն քրիստոսի է իշխանութիւնն որ աստ լուծանէ ի ձեռն քահանային. և իշխանութիւն *նորա* ո՛չ տկարանայ երբէք. որպէս զհաց և զգինին կատարէ և զայլ խորհուրդս. նոյնպէս և աստ: - 433. Եւ որպէս շնորհք մկրտութեան առաւել է քան զթլփատութիւն *նոցա*, զի զմեղս սրբէ և զարքայութիւնն բանայ: - 433. Երկրորդ՝ զի զսուր պատժոյն *նա* կրեաց: - 433. Երրորդ՝ զի տէր գրգռեաց *զնա* որպէս զնաթան: - 433. Նա՛խ՝ թուել հրամայեաց, որպէս այն որ թոյլ ետ իսրայէլի մարտնչիլ ընդ բենիամենի, և անկան **լռ** ի դասուց *նոցա:* - 434. Երկրորդ՝ որպէս թուեաց դովեկ զքահանայսն զի մի՛ զերծանիցեն ի սրոյն. նոյնպէս և այս վասն քահանայիցն վրէժխնդրութեան էր. զի կամեցաւ ժողովուրդն փրկել *զնոսա:* - 434. Երրորդ՝ որք թուեցան ընդ աբիսողոմայ և սպանանէին զդաւիթ, այս *նոցա* վրէժն է: - 434. Չորրորդ՝ թուեաց *զնոսա*, զի յորժամ մարդամահն լինի, գիտասցեն

զորքանութիւն մեռելոցն, և զծանրութիւն մեղացն: - 434. ...*նորա* ուխատազանց եղեն. վասն որոյ մահ էած ի վերայ: - 434. Երկրորդ՝ կոչի դաւիթ որ է՛ սիրեցեալ և բաւական ձեռօք. և տէր մեր սիրեցեալ ի հօրէ և ի մարդկանէ իբր զորդիս մի եղջերոյ. և *նա՛* է բաւական յամենայն գործս և ի պարգևս: - 435. Երրորդ, *նա՛* հովիւ հօտից. և տէր մեր հովիւ կոչեցաւ իմանալեացն վերնոց և մարդկան մոլորելոց: - 435. Հինգերորդ, *նա՛* փոքր և կրտսեր եղբարցն. և տէր մեր երկրորդ ադամ. և փոքրիկ կոչեցաւ քան զհրեշտակս և առաւել պատուեցաւ: - 435. Իննևժ, սրովն գողիաթու սպան *զնա*. և տէր մեր սրով մահուան սպան զիշխանն մահու: - 436. Քսանև**դ**, դաւիթ հալածեցաւ ի սաւուղայ. և որդի *նորա* յորդւոց *նորա:* - 436. Քսանև**զ**, դաւիթ դիւրէ՛ր սաւուղայ. և որդի *նորա* որդւոց *նորա:* - 436. Քսանև**ը**, ձգեաց սաւուղ զգեղարդն դաւթի, եհար զորմն և ապրեցաւ դաւիթ. և որդիքն սաւուղայ հարկանել ետուն զկողս տեառն և ո՛չ վնասեցին աստուածութեան *նորա:* - 436. Քառասուներորդ, սաւուղ բազում անգամ խնդրէր զդաւիթ և ո՛չ կարէր ըմբռնել. և որդիքն սաւուղայ զտէրն. զի ո՛չ էր հասեալ ժամ *նորա:* - 437. Այլ և դաւիթ եգիտ զսաւուղ և զզօրսն *նորա* ի քուն և ո՛չ վնասեաց. այլ զզէնն էառ. և տէրն ո՛չ կամի զմահ որք ննջեն ի մեղս. այլ զպատճառ մեղացն հանէ: - 437. Դաւիթ բարի արար չարին սաւււողայ. և որդի դաւթի չարչարողացն *զնա:* - 437. Դաւիթ պաշարեցաւ յայրին. և տէրն մեր ի դժոխս և քակեաց *զնա՛:* - 437. Դաւիթ եթող զհրէաստան և բնակեցաւ յայլազգիս. և որդի *նորա* եթող զհրէայս և հանգեաւ ի հեթանոս: - 437. Դաւիթ դարձոյց զերկու կանայս և զամենայն աւարն. և որդի *նորա* զ**բ** դասս հաւատացելոց և զամենայն հոգիսն ազատեաց: - 437. Երիցս օծաւ դաւիթ. և որդի *նորա* ի յարգանդի, և ի յորդանան, և ի վերայ խաչին արեամբ: - 437. Վաթսուներորդ, մարտեաւ ընդ ադրիազարու և սպան *զնա* և քակեաց զկառս *նորա*, և զթագն եդ ի գլուխ իւր...: - 438. ...և տէրն մարտեաւ ընդ բելիարայ և յաղթեաց մահու. և քակեաց զդժխս. էառ աւար զգերեալսն և էհան յարքայութիւնն երկնից. տալով *նոցա* զանթառամ պսակն: - 438. Դաւթի **գ** արք անւանիք, և աբեսեա չորրորդ ընդ *նոսա*. **գ** աւետարանիչքն, և յոհաննէս որդի սողոմեայ: - 438. ...և *Նմա* փառք և գոհութիւն յաւիտեանս ամէն: - 438. Վասն է՞ր հրամայեաց սպանանել զյովաբ և զսիմէի զի երդւեալ էր *նմա:* - 439. Զի թշնամեաց տեառն սատակումն՝ արդարութիւն էր *նոցա:* - 439. Այլ ա՛յս է ճշմարիտն. զի պատերազմ և խռովութիւն էր յաւուրս դաւթի մինչ սատակեաց *զնոսա*. և որդի *նորա* ի խաղաղութեան ժամու շինեաց զտաճարն: - 439-440. Դարձեալ, կամեցաւ աստուած այլով իւիք յարգել զդաւիթ, և այլով զորդին իւր յետ *նորա:* - 440. Նաև վերակացուք *նոցա* **գռ** և **զճ**: - 440. Ասեն թէ՝ **ռ** կին էր սողոմոնի. **է ճ** տիկնայք, և **գ ճ** հարճք. և *նոցա* **ռ** պահապան. իսկ ի փորձելն խաբեաց զհազար կանայսն. և ի յարանցն մին ո՛չ խաբեցաւ. այս առասպե՛լ է: - 440. Վաթսունն՝ **զ** տասն է. նշան *նոցա*՝ որք **զժ** բանեան օրէնսն կատարեն ի **զ** դար կենցաղոյս. այսինքն ի տղայութենէ մինչ ի մահ. *նորա* թագուհիք և ժառա՛նգ են արքայութեանն: - 440. Հինգերորդ՝ *նա՛* զաթոռն դաւթի: - 440. Ութերորդ՝ *նա՛* տաճար շինեաց: - 441. Երկոտասաներորդ՝ ծերացեալ դաւիթ նստոյց *զնա* յաթոռ: - 441. Եւ ա՛յս է պատճառն, զի յաջ կողմ արգանդի կրէ զորդին. վասն որոյ յաջ կողմն *նորա* նստի: - 441. Ութևժ, *նա՛* հեթանոսացն տայր շինել զտաճարն: - 441. Քսանև**բ**, *նա՛* վասն օտարաց աղօթեաց: - 441. և *Նմա* փառք յաւիտեանս Ամէն: - 442. Տասներորդ՝ յորժամ եկն հեզութեամբ լսէր ի նմանէ. իսկ զայս ամենայն համեմատելով ի վերայ հրէիցն՝ յիրաւի ուրեմն դատապարտեսցէ *զնոսա* ի դատաստանի: - 442. Երկրորդ՝ *նա* երկրաւոր թագաւոր. և քրիստոս երկնաւոր: - 442. Երրորդ՝ և *նորա* գիտութիւնն անցանելի էր. և քրիստոսին անանց: - 442. Չորրորդ՝ *նա՛* վասն քարի և փայտի պատմէր. և քրիստոս վասն արքայութեանն: - 442. Հինգերորդ՝ քրիստոս տուօ՛ղ էր մարգարէութեանն. և *նա՛* առնօղ ի քրիստոսէ: - 442. Վեցերորդ՝ զի *նա՛* զպարգևս երկրային խոստանայր առնողացն զպատուէրս. և քրիստոս զերկնայինն: - 442. Եօթներորդ՝ զի *նա՛* ո՛չ արար փրկութիւն հոգւոց. և քրիստոս ամենայն աշխարհի: - 442. Ութերորդ՝ զի և *նա՛* վասն քրիստոսի մարգարէանայր: - 442. Վասն է՞ր զմարգարէն սպան առիւծն. զի *նա* խաբեցաւ ի ծեր մարգարէէն: - 443. Ո՛չ էր պարտ պարզամտութեամբ խաբիլ. պարտ էր հարցանել *զնա* թէ մարգարէ՞ է թէ ոչ: - 443. Ծեր մարգարէն որ դարձոյց *զնա*, արեան տէ՞ր է թէ ոչ: - 443. Նա՛խ՝ զի հեզութեամբ և քաղցրութեամբ մեծարեաց *զնա* զի մի՛ սովեսցի և մեռցի: - 443. Երկրորդ՝ զի սուրբ գիրն ո՛չ պարտաւորէ *զնա* իբրև զմահապարտ: - 443. Եւ այլքն ամենայն կորեան առ գերութեամբ *նոցա:* - 443. Զի չասացաւ *նմա* ի ձեռաց քահանայիցն կերակրիլ. այլ ի ձեռաց ագռաւուցն: - 443. Զի յորժամ գայր ագռաւն ի միոյն բերանն հաց դնէր աստուած, և ի միոյն միս. և ամբողջ բերէին առ *նա:* - 443. Եւ յորժամ ուտէր՝ *նոցա* փշրէր զմնացեալսն: - 443. Դարձեալ խրատէ՛ զառաքեալս ի գործ ինչ՝ բոլոր և ամբողջ բերել առ տեարս

իւրեանց. և *նորա* մասնաւորեսցեն *նոցա:* - 443. Եւ վասն այն գնաց ի սաբեփթա յայլազգիս. զի և *զնոցա* նեղութիւնն տեսցէ. որք չէին անցեալ զօրինօքն մովսէսի: - 443-444. Եւ շուրջ *զնովաւ* հրեշտակք ամենայն ոչ հաւանեցան. զի *նորա* զամենայնն ճշմարիտ խօսին. և բարի առնեն մարդկան. և յապաշխարութիւնն խնդան. իսկ սուտ խօսիլն և չար առնելն և ի վիշտս ուրախանալ՝ դիւա՛ցն է որ են չար հոգիքն: - 444. Կամ առաջինն եղիա, երկրորդն եղիսէոս լինի քան *զնա՛:* - 445. Եւ այս է նշանն, եթէ տեսցես զվերանալն իմ, ապա լինի՛ պատիժ *նոցա*. ապա թէ ոչ տեսցես՝ չեն արժանի պատժոց. այլ շնորհքն խնայէ՛ ի *նոսա:* - 445. Յեսու անէծ զերիքով և զշինօղս *նորա*. և անէծքն այն առնէր անզաւակ և վաղամահ: - 445. Երկրորդ՝ զի ո՛չ հաւատաց սոմնացին *նմա:* - 445. Խաչանման տարածեցաւ ի վերայ մանկանն և կծկեցաւ. այսինքն փոքրկացաւ ի չափ մանկանն. և ապա յայտնապէս է անգամ յօրանչելով և կծկելով կենդանացոյց *զնա:* - 446. Իսկ ի հիւանդանալն՝ եղիսէոս եդ զձեռն ի վերայ ձեռաց արքային յովասու և զօրացոյց *զնա* ի պատերազմին ընդ դէմ ասորոցն փոխանակ լալոյն ի վերայ *նորա:* - 446. Նա՛խ՝ զի մի՛ զարհուրեսցի եէմ տեսեալ զսուրն որ կոտորեաց *զնոսա:* - 446. Առաջին րոբովամ որդին նաբատայ. և այլք ընդ *նմա* թագաւորք ի: - 446. Եւ մանայէն թագաւորն իսրայէլի ետ *նմա* **դ** տաղանդ արծաթոյ և դարձաւ ի նմանէ: - 446. ...և երեք ամ պաշարեալ էառ *զնա*. և գերի վարեաց զթագաւորն ովսէէ որդի ելայ. և զ**ժ** ցեղն բովանդակ տարաւ յասորեստան: - 447. ...և *նա՛* վկայեաց վասն գերութեան ժողովրդեանն. այլ վասն բարեպաշտութեան ովսիա ո՛չ գնաց գերի: - 447. Եւ յետ նոյն քան ամաց շինութեան տաճարին աւելի կամ պակաս, նա՛խ արձակեցաւ եզր դպիր. և յետ *նորա* նէեմի: - 447-448. Մատնեաց զչարս ի գերութիւն. զի ա՛նդ վախճանեսցին, և արդար ծնունդք *նոցա* դարձցին ի տեղիս իւրեանց: - 448. Երկրորդ՝ զի **հ** ամն իբրև զմի օր համարեցաւ *նոցա*. զի հանգիցեն ի չար գործոց, և երկիրն ի չար գործելոյ: - 448. Զի ի րոբովամէ՛ որ զերինջսն գործեաց՝ վեց եօթանասուն ամ է մինչև զգերութիւնն սակաւ ինչ պակաս. վասն որոյ եօթանասուն ամ շաբաթեցոյց *զնոսա* ի գերութեան: - 448. Երրորդ՝ որպէս զստնդիայի մանուկն **է** ամ խրատէ՛ դայեակն. այսպէս ժողովուրդն որ ել յերկրէն իւրեանց, երկիրն բաբիլացւոց **հ** ամ ի գիրկս իւր դայեկեաց *զնոսա* և սնոյց. զի յետ դարձին յերկիրն իւրեանց՝ զբարիս գործեսցեն: - 448. Եւ յետ այնորիկ սպանցի օծեալն. և իրաւունք ո՛չ իցեն ի *նմա*. և քաղաք և սրբութիւն ապականեսցի: - 449. Ըստ որում թէ՝ «եղիցին կատարեալք ի մի». և *Նմա* փառք և պատիւ յարակայ Ամէն: - 450. ...իսկ եբրայեցիք զամենայն շաբաթսն ո՛չ թուէին ի համարն. վասն որոյ նուազի՛ *նոցայն:* - 451. *Զնա* էառ կին յովիդա քահանայ. և խառնեցան երկու ցեղք թագաւորաց և քահանայից: - 452. Եօթնն**ժ**, Զանազանի ի *նոցանէ* **ժ** եղանակաւ: - 454. Որ և *նովաւ զնորայս* վասն *նորա* խօսեսցուք. և ի գովեստ մեծութեան փառաց նորին յանկեսցուք: - 456. Այսինքն երդումն աբրահամու և դաւթի՝ մարդ լինիլ բանին ի վերայ երկրի ի պտղոյ յորովայնէ *նորա.* և նստել յաթոռ հօր *նորա.* և ի նմանէ օրհնիլ ամենայն ազգաց: - 457. Բարերար և բնութեամբ բարի է աստուած. ուստի ի բարերարութեանց *նորա* յառաջե՛ն առ մեզ գործ ողորմութեան և գործ արդարութեան...: - 457. Եւ է՛ ողորմութիւն *նորա* ձրի շնորհօք և պարգևօք. իսկ արդարութիւնն տուրք փոխարէնք և հատուցումն: - 457. ...զի *զնոսա* փառաւորէ ի վեր քան զարժանն. և զսոսա պատժէ սակաւ քան զարժանն. այսոքիկ ողորմութեանն են: - 459. ...իսկ ի կատարել զգործ ողորմութեանն՝ ո՛չ ինչ պահանջի, եթէ ոչ կամքն *նորա*, որպէս երևեցաւ ի մարդեղութիւն բանին աստուծոյ ի սրբոյ կուսէն մարիամայ: - 459. Այլ և օրէն էր *նոցա*, որ իւրաքանչիւր ոք յազգէ իւրմէ առնոյր իւր կին և ո՛չ յօտարէ: - 460. Այլ և քահանայքն ո՛չ յանցանէին զօրինօքն և յօտար ազգէ տային *նմա* կին: - 460. Եւ վասն այն խառնեցան **բ** ցեղքն. զի ծնեալն ի *նոցանէ* քրիստոս ըստ մարմնոյ, թագաւոր և քահանայ լինէր: - 461. Ութերորդ՝ զի մի՛ հրէայքն համարելով զքրիստոս ո՛չ ունելով օրինաւոր ծնունդ՝ երևեսցին յիրաւի ի հալածելն *զնա:* - 461. Նա՛խ՝ սրբութիւն հասարակ. որպէս շնորհք մկրտութեան և խոստովանութեան. զի որք անցանեն ընդ *նա*՟ սրբին: - 462. Երրորդ՝ համակ հանապազորդ ներգործական դարձումն բոլոր մարդոյն առ աստուած. որով մարդն աստուածային քաղցրութեամբն զմայլի. որպէս հրեշտակք ի բոլոր սրտէ՝ յամենայն անձնէ և յամենայն զօրութենէ միշտ ներգործաբար դիմեն առ աստուած. և յիւրաքանչիւրսն ճառագայթի՛ ի *նմա՛* աստուած: - 462. *Նա՛* ևս գերազանցեալ քան զհրեշտակս այսու, զի *նորա* ի գոյացական վարձս ո՛չ աճիլ կարեն և ո՛չ նուազիլ. իսկ երանուհի կոյսն կարէր յառաջանալ յարդիւնս և ո՛չ նուազիլ: - 463. Երկրորդ՝ թէ ո՞րպէս գերազանց գովեաց *զնա*...: - 464. Երրորդ՝ թէ ո՞րպէս քաղցրութեամբ զօրացոյց *զնա*...: - 465. Որ ցուցանեն զչորեսին առաքինութիւնս *նորա:* - 465. Իսկ ա՛յլ վարդապետք ասեն, թէ ետ զբնական օրէնս որպէս նոյի և յառաջ քան *զնա:* - 467. Երկրորդ՝ զի ո՛չ ինչ

անդամ զազրելի է ի մարդն. այլ ամենայնն հաւասար են յարդարութիւն. եթէ ոչ եկամուտ ինչ խառնեսցի ի *նմա:* - 469. Չորրորդ՝ զի *նա*՛ է առաւել օգնական բնութեանս. մարտնչելով աճելութեամբ ընդ դէմ պակասութեան մահու: - 469. Զի *նա*՛ եղև մայր հօր. և դուստր զաւակին: - 469. *Նա* միա՛յն էր մայր և կոյս. որ ընդ աստուծոյ ունէր զորդին: - 469. Երրորդ՝ զի *նա*՛ միա՛յն է ի հօրէ ծնեալ. և չունի եղբայր: - 472. Վեցերորդ՝ *նա*՛ միայն է ծնունդ անուր և աներբ...: - 472. Եօթներորդ՝ *նա*՛ միա՛յն է միշտ և անդադար ծնունդ. զի ո՛չ սակաւ ի ժամանակի, և ո՛չ ի ժամանակի դադարի. այլ որպէս լոյս ի հրոյ միշտ և անհատապէս ծնանի: - 472. Ութերորդ՝ *նա*՛ միա՛յն է ծնունդ ի հօրէ և ո՛չ երբէք հայրանայ. զի ո՛չ ունի յինքենէ ծնունդ որպէս *նա*՛ ի հօրէ: - 472. Տասներորդ՝ ասի ոմանց թէ ի ժամ ծննդեանն քրիստոսի արգելման ամենայն ծնունդք մինչև ծնաւ բարձօղն երկանց ամենայն ծննդոց. զի *նա*՛ լինէր անդրանիկ ամենայն ծննդոց: - 472. Նա՛խ՝ զի *նա* ի հօրէ՛ է սկսեալ. և եղեալքս ի հօրէ: - 472. Զի *նա*՛ յառաջ քան զյաւիտեանս. և մեք ի ժամանակի: - 472. Եւ *նա*՛ ծնունդ ի հօրէ. իսկ մեք արարածք: - 472. Եւ *նա*՛ բնութեանն ծնունդ. և մեք կամացն: - 472. Երկրորդ՝ *նա*՛ միայն ի գործոց արդարացաւ...: - 473. Երրորդ՝ ի *նա*՛ միա՛յն գտաւ մտաց սրբութիւն...: - 473. Ի վեց իրաց գլխաւորօրէն փրկութիւն ներգործեաց. ըստ յորբայ վեցիցս փրկեցաք *նովաւ:* - 473. Եւ ոմանք յաւելուն այլ ևս զամօթ՝ զտրտմութիւն՝ և զցաւս մարմնական. որ և սոքա ընդ *նոսա* են: - 474. Զօծումն մարմնական ընկալաւ ի պոռնիկ կնոջէն յորժամ եբեկ զշիշ իւղոյն ի գլուխ *նորա* ի տան սիմոնի: - 474. Իսկ զօծումն հոգւոյն սրբոյ՝ յորժամ էջ աղաւնակերպ ի վերայ *նորա:* - 474. Իսկ մկրտութիւն *նորա* ո՛չ որդեգրութեան էր որպէս մերս...: - 474. ...ըստ որում որ էջ հոգին սուրբ յորովայն անարատ կուսին և մաքրեաց *զնա*, և կազմեաց ի նմանէ զարիւնն. և սրբեաց և օծեաց *զնա* միաւորելով պատկերապէս: - 475. Չորրորդ՝ միաւորութիւն ասեմք գոլ և զզանգումն որ ի *նա* է՛ և ի չորո՛յ բնաւորեցաւ լինիլ. յորում ո՛չ ամբողջ պահի բան որակութեանն: - 476. Նա՛խ՝ որպէս մարդն յայլ և այլ բնութեանց միաւորեալ՝ մի անձն և մի դէմ և մի բնութիւն կատարի. զի մի ասեմք զմարդն և մի զբնութիւն *նորա:* - 477. Զի որպէս ո՛չ գոյ սկիզբն աստուածութեան *նորա*, այսպէս և ոչ կատարումն մարդկութեան և աստուածութեան *նորա:* - 478. Երրորդ՝ զի իւրաքանչիւր հասակի զմեղս բարձցէ. որպէս ծննդեամբն զերկունս ելոյծ. և մահուամբն զմահ. նոյնպէս և տղայ և մանուկ և երիտասարդ հասակաւ *զնոսա* արդարացոյց: - 479. Երրորդ՝ զի արուն զօրաւո՛ր է քան զէգն. և նախաստեղծքն գլորեալ էին վասն հեշտութեան իւրեանց. պա՛րտ էր արու լինիլ և կանգնել *զնոսա:* - 480. Տասներորդ՝ քրիստոս փեսայ կոչի և եկեղեցի հարսն հոգևոր. և *նա*՛ գլուխ և մեք անդամք և ժառանգակիցք: - 480. Եւ այն զի փաթութած է՝ ըստ հրէական օրինին է. զի կոնդակ և գալարելո՛վ էր *նոցա* գիրն. իբր թէ ծածո՛ւկ է ի *նոցանէ* խորհուրդ մարգարէիցն և թաքուն: - 481. Զայս որպէս ձեռին գիր ունէր սատանայ, և *նովաւ* չարչարէր զմարդիկ՝ թէ աստուած ասաց մի ուտել և դու կերեր և մեռար. իմ ի՞նչ մեղք է: - 481. Արդ զգիրն ադամայ պարտուց՝ տէրն որդի եղև *նմա* և անմեղ մահուամբն տարածեալ զձեռս ի խաչին պատառեաց ասելով, *նա* մեղաւ և մեռաւ. ես զինչ մեղայ. դո՛ւ ես պատճառն: - 482. Եւ յորժամ հաւատան ի քրիստոս և մկրտին, ջնջի գիր *նոցա* և անէծքն: - 482. Եւ այլք վասն արտեմոնի. զի *նա*՛ փոխեաց զծնունդն ի դեկտեմբերի **իե**: - 482. Ա՛րդ՝ ցուցից տումարաւ զտօնս մեր և *զնոցայն*. զի տօնախմբութիւն *նոցա* այսպէս կատարի առ յայտնութիւնն: - 483. Իններորդ՝ զի և *նոքա* իսկ որ զայս ասեն՝ առնեն յունվարի **զ** ճրագալոյց ընդ մեզ. և ճրագալոյցն ո՛չ է մկրտութեան, այլ ծննդեան ի մէջ գիշերի: - 484. Մետասաներորդ՝ յա՛յտ է յամիսս *նոցա*. զի առաջին ամիս սեպտեմբե՛ր է *նոցա.* և վասն ծննդեանն քրիստոսի՝ փոխեցին և եդին զյունվար առաջին ամիս: - 484. Այսպէս ընկալեալ ի *նոցանէ* և նիկիականն ժողովք՝ հաստատեցին առ մեզ: - 484. Քրիստոս վասն մեր սպասաւոր եղաւ թլփատութեան. և ո՛չ վասն պիտոյից *նորա:* - 485. Այլ պատշա՛ճ էր թլփատութիւն *նորա* վասն բազում պատճառի: - 485. Երկրորդ՝ զի ցուցցէ զճշմարիտ մարդեղութիւն իւր և ո՛չ կարծեսցի առ աչօք. որպէս զրկեալքն ի շնորհաց *նորա* ասացին: - 485. Եւ այն էր զի զաքարիա ի վերայ բազկացն յովսեփու թլփատեաց *զնա:* - 486. Ո՛չ հատանելով զի անպատշա՛ճ էր բաժանիլ ի մարմնոյ կամ յարենէ *նորա:* - 486. Նա՛խ՝ թլփատեաց *զնա* հայրն ի ծնունդն՝ աղքատութեան սրովն: - 486. Երկրորդ՝ թլփատեցին *զնա* իւրքն յաւուրն **ը** երրորդի՝ օրինաց սրովն: - 486. Չորրորդ՝ թլփատեցին *զնա* հրէայքն՝ ի չարչարանս՝ սրով խաչին. և զայս զինուորքն պիղատոսի: - 486. **Եւ են որք զանձն և զբնութիւնն նշանակեն. որպէս դա՛, սա՛, *նա*՛:** - 487. Որ զապականութիւն և զմահ եբարձ աւերելով *զնա* և ազատելով զհոգիսն: - 489. Դարձեալ՝ տարածումն ձեռացն զմերժումն և զհերքումն թշնամւոյն, այլ և զիշխանութիւն *նորա* արտաքս ընկենու...: - 489. Երրորդ՝ զի **գ** ժամ ընդ արեգականն ընթացաւ և

խաւարեցոյց *զնա* մինչ ի Թ ժամն: - 490. Եւ ի ձայնէն վէմք պատառեալ և երկիր շարժեալ, տեղի ետուն իջանել ի *նուա´*. և քարացեալ սիրտ *նոցա* ո՛չ շարժեցաւ: - 490. Եւ գերեզմանք բացան. զի կարօ՛տ էին ննջեցեալքն *նմա*. և *նորա* փակեցին ըզգերեզմանս սրտից իւրեանց: - 490. Եւ վարագոյրն պատառեցաւ. զի յանարգանս փեսային պատառեաց հարսն զքօղն. և կողն աղբիւրացաւ. և *նորա* ո՛չ արտասուեցին: - 490. Սպեղանեաւ, յորժամ երեսք *նորա* թքով ծածեցան: - 491. Հայր մատնեաց *զնա´* վասն սիրոյ. և Որդի մատնեաց զանձն իւր վասն փրկութեան մերոյ. իսկ յուդա մատնեաց վասն ագահութեան: - 491. Զի թէպէտ սատանայ էր գերեալ զմարդն, սակայն ի գերութիւն *նմա* հա՛յր մատնեաց յորժամ պատժեաց *զնա:* - 492. Զոր օրինակ` զմահապարտ ոմն թագաւորն հրամայէ՛ դահճին ի բանտ դնել. դարձեալ զնոյն թագաւորն աղերսեն և *նա* հրամայէ՛ արձակել ի բանտէն: - 492. Եօթներորդ` գլուխն և պատուանդանն նշանակէ՛ միաւորեալ զաստուածութիւնն և զմարդկութիւնն քրիստոսի. որ խաչեալն է ի *նմա:* - 493. Ութերորդ` նշանակէ՛ զչորս տարբերութիւն փրկելոցս *նովաւ*. այսինքն երկնաւորք և երկրաւորք, կենդանիք և մեռեալք: - 493. Այլ և սանդուղքն յակոբայ և տէր հաստատեալ ի *նմա:* - 494. Այլ և աղիւսաձև ակն շափիւղայ ի ներքոյ ոտից *նորա:* - 494. Զոր օրինակ ի բարձր ուստէք քար հոլովեսցի, և որ մօտն կացցէ ասէ *զնա`* երթալ ունիս մինչ ի ներքին վայր տեղիս և ապա դադարիս: - 497. Որպէս այնոքիկ որք զօրացան այսուլ մահուամբ և զորդեգրութեանն ընկալան շնորհ և նախատակեցան, *նորա* չարչարակից եղեն քրիստոսի, և փառացն հաղորդակիցք: - 497. Եւ զի ա՛յլ է մահ և ա՛յլ ապականութիւն` յա՛յտ է նախ ի գործոյն. զի ինքեամբ մահ ի ներքս մտեալ որոշէ՛ զհոգի և զմարմին. և ա՛յս է գործ *նորա:* - 498. Եւ թէպէտ ասացաւ ճշմարիտն թէ անապակա՛ն է մարմինն տեառն, այլ այժմ դիցուք զբանս *նոցա* թէ վասն է՞ր ասեն ապականացու. և յարմարեսցուք զպատասխանիսն: - 500. Դարձեալ ասեն *նորա*, մեր մարմինս ապականացո՛ւ է. իսկ թէ անապական մարմին էառ քրիստոս, ո՛չ արար փրկութիւն մեզ. այլ առաջին բնութեանն ադամայ որ էր անապական ի դրախտին: - 500. Դարձեալ ասեն *նորա*, եթէ մարմինն քրիստոսի փոփոխէր աճելովն որ տեսա՛կ է ապականութեան: - 501. Ապա թէ ոչ` *նա´* որ զադամ երեսնամեայ ստեղծ, կարէ՛ր և նոյն հասակաւն ծնանիլ. այլ այն ո՛չ լինէր ըստ սովորութեան մեր որպէս ցուցաւ ի վերոյ: - 501. Դարձեալ ասեն *նորա*, կաթնասուն եղև և կերակուր եկեր. և այս մա՛սն է ապականութեան: - 501. Դարձեալ ասեն *նորա*, կրակա՞ն էր մարմինն քրիստոսի թէ անկրական: - 501. Եւ այս է *նոցա* զինուց զէն մեծ զրախօսութեան ի մարմին բանին: - 501. Դարձեալ ասեն *նորա*, զի թէ մարմին տեառն զկամայն ո՛չ կրէր, թերեկատար էր մարդեղութիւնն: - 502. Դարձեալ ասեն *նորա*, եթէ կրեաց զակամայս ըստ անգոսնելի ծորմանն: - 502. Դարձեալ ասեն *նորա* թէ` խոցուածն և արիւնն և այլն ցուցակ ապականութեան են: - 502. Ապա ապականութիւնն փրկեաց զմեզ. *զնա* կարդալի է փրկիչ. այսինքն և զապականութիւնն և ո՛չ զքրիստոս: - 503. Աւա՜ղ անբան մտահաճութեան *նոցա*. որք զմիայն տէրն ուրացեալ, ածեն ի վերայ ինքեանց զարագահասն կորուստ: - 503. ...և *Նմա* փառք յաւիտեանս ամէն: - 503. Չորրորդ` որպէս անիրաւութեամբ կապեաց սատանայ զհոգիս մարդկան. արդարութեամբն ազատեսցէ քրիստոս *զնուսա:* - 503. Հինգերորդ` զադամաստեղծ ձեռս իւր տարածեաց տէրն ի վերայ խաչին. և արտաքս ընկէց զչար իշխանն. և կորզեաց զմարդիկ յիշխանութենէ *նորա:* - 503. Որ և զերկոսինս զայսոսիկ խորտակեաց տէր իջմամբն առ *նուսա:* - 504. Զի յայնմանէ ազատեաց քրիստոս իջանելովն անդ. և աւերեաց *զնա* յաւիտեան. և առ հասարակ ազատեաց զհոգիսն: - 504. Դարձեալ ասեմք, ներքին դժոխք է հոգւոցն. և վերին` գերեզման մարմնոցն. և *նա* կոչի դժոխք ի սուրբ գիրս...: - 505. Զի և *նա´* չարչարէ՛ զհոգիս և է կենդանւոյն ի դժոխս ըստ մեզ շրջեալ: - 505. Իսկ վերջին դժոխք որ կոչի անջրդի գուբ, *նոցա´* է որք ո՛չ ունին չար և ո՛չ բարի. որպէս մանկունք անմկրտեալք. ո՛չ տանջին զի չեն մեղանչեալ. և ո՛չ հանգչին զի չեն արդարացեալ. այլ վասն սկզբնականին մնան յանջրդի գուբն խաւարին: - 505. Ոմանք ասեն թէ ի չորրորդ դժոխքն էջ ուր էին արդարոց հոգիքն արտաքոյ ասացեալ երիցս, և *զնա* միայն աւերեաց. և զարդարսն միայն եհան. և զայլսն եթող անդ: - 505. Ա՛րդ` *նորա* որք զայս ասեն` երիւք հակառակին սուրբ գրոց: - 505. Երկրորդ` զի ասէ աստուած մովսէսիւ «հուր բորբոքեցաւ ի բարկութենէ իմմէ. և իջցէ մինչ ի դժոխս ներքինս». ապա սո՛ւտ է լիմպոսն *նոցա:* - 506. Վեցերորդ` ամուրն սատանայի է ներքին դժոխքն. ուր են դրունք պղնձիք և նիգք երկաթիք. որ է՛ մեղքն մեծամեծք և յուսահատութիւնք. և ա՛յն էր ամրոց *նորա:* - 506. Եւ քրիստոս ա՛նդ գնաց և կապեաց զհզօրն և քակեաց զամուրս *նորա* և աւար էառ զհոգիսն: - 506. Երկրորդ` պատճառ պարտաւորութեան մեղաւորաց էր ադամ. և *նա* ազատեցաւ. ապա ուրեմն ամենայն պատճառելիքն ազատեսցին: - 507.

Եօթներորդ՝ որպէս ասացաք յառաջին պատասխանին՝ որդիք մահապարտաց և ապստամբք աստուծոյ մեղաւո՛րքն էին *նոցա* քարոզեաց և ազատեաց: - 507. Ասեմք եթէ՝ ոչ ինչ գոյր *նոցա* արգելք հաւատոյ յորժամ լոյս ծագեաց քրիստոս ի դժոխս: - 508. Այլ արդ՝ մեռեալքն ո՛չ են ի դէմ յանդիման տեսութեան. վասն որոյ պիտո՛յ էր *նոցա* հաւատ: - 507. Եւ որպէս դևք զկնի անկման իւրեանց ոչ կարեն արդարանալ ըստ ինքեան. զի անկումն *նոցա* մա՛հ է *նոցա:* - 508. Նոյնպէս և հոգի մարդոյ զկնի մահու ո՛չ կարէ արդարանալ ըստ ինքեան. բայց թէ ի ձեռս այլոց վճարի պարտ *նոցա* և հասանին ողորմութեան: - 508. Իսկ հոգիքն ի դժոխս յորժամ տեսին զքրիստոս, այն էր ժամանակ փրկութեան *նոցա* և ընդունելոյ զողորմութիւն. յաղագս որոյ հաւատովք արդարացան *նորա* միայն ի նոյն ժամն: - 508. Նա՛խ՝ զի խոստովանիմք զքրիստոս աստուած և զտօն *նորա* ըստ տէրունականացն կատարեմք: - 509. Եւ որ ոք ո՛չ խոստովանի զքրիստոս աստուած, զտօն *նորա* ըստ հասարակ մարտիրոսացն առնէ ի մէջ գիշերոյն ի վեր: - 509. Իսկ առաքեալքն փոխեցին զնաւակատիս մեր առանց արեան զի որոշեսցուք ի *նոցանէ:* - 509. Նա՛խ՝ զի յետ յարութեանն ո՛չ էր պահք. այլ զատիկ մինչ փեսայն ընդ *նոսա* էր որպէս ինքն հրամայեաց: - 511. Վասն այն յերկարեցի, թէ ոք հակառակի՝ այսպէս պատասխանեսցես *նոցա*. և զեղկելի անձն իմ յիշեսցես ի տէր ուղղակից եղբայր իմ ի քրիստոս: - 511. Եւ ապա՛ յետ յարութեանն իջեալ հրեշտակն թաւալեցոյց զկափարիչ վէմն և նստաւ ի վերայ *նորա* և աւետեաց իւղաբերիցն: - 512. Իններորդ, գեթէօն՝ այն որ զցօղն ետես ի վերայ գեղման, զհօր իւրոյ զեզն պարարակ հրամանաւ հրեշտակին ի մէջ գիշերին պատարագեալ. և զանտառն և զսեղանն բահաղու կործանեալ և զերծեալ ի ձեռաց *նոցա*. որ էր օրինակ փրկչին. զի *նա*՛ է եզն պարարակ պատարագեալ. և ի մէջ գիշերի զբագինսն դժոխոց կործանեալ և յարուցեալ և ապրեալ ի մահու: - 513. Որ և պահապանքն շրջապատեալ. որ և զհանդերձն պատատեալ յանկողնի, և լերդ այծեաց և մազ ի սնարսն. և ի գիշերի իջեալ ընդ պատուհանն և ելեալ առ սամուէլ զերծաւ ի ձեռաց *նոցա:* - 513. Եւ ի գիշերին էհատ դաւիթ զդրօշակն սաւուղի. և յառաւօտուն աղաղակեաց առ *նա:* - 513. ...և դաւիթ մտեալ և առեալ զսուրն ի սնարից *նորա*. և ելեալ ի գիշերի ի լեառն աղաղակեաց առ նա «ո՞ւր է սուր քո»: - 514. ...և տէր մեր յետ յերից օրինաց՝ այսինքն բնական բանական և գրաւական՝ երևեալ ի գիշեր կենցաղոյս և իջեալ ի դժոխս աւերելով *զնա* դարձոյց զերկոսին ժողովուրդս իւր...: - 514. Չորեքտասաներորդ՝ այլ և ի գիշերի հրեշտակն տն էհան զզօրսն ռափսակայ. որ պաշարեալ էին զէմ և փրկեաց *զնոսա*...: - 514. Մատթէոս զառաջինն գրէ որ ի մէջ գիշերի եկին. և մի հրեշտակ տեսին. և զվէմն առաջի *նոցա* թաւալեցոյց և նստաւ ի վերայ *նորա:* - 515. Եւ սոյնպէս շաղփաղփ երևէին բանք *նոցա*. և տեսիլքն սակայն ամենայնք՝ զմի և զնոյն յարութիւնն պատմէին: - 515. Նախ՝ խորհրդաբար. ի **Ե** շաբաթօջ աւուրն յերեկոյն թաղեցաւ ի սիրտ առաքելոցն ճաշակմամբ մարմնոյն. և յերեկոյի կիրակէին տեսին զտէրն յորժամ դրօքն փակելովք եմուտ առ *նոսա:* - 516. Կղէոպաս եղբա՛յր է յովսեփայ. և մարիամս այս դո՛ւստր է *նորա:* - 517. Եւ սոքա ամենայն ստուգե՛ն զյարութիւն *նորա* թէ ո՛չ է գողացեալ. զի գողն ո՛չ ծալէր զվարշամակն և զկտաւն զմռեալ: - 517. Վասն է՞ր ոչ ետ թոյլ մերձենալ մարիամու. և այն զի ի ճանապարհին կալան զոտս *նորա* և համբուրեցին ա՛յլ կանայք: - 517. Նա՛խ՝ ոմանք ասեն թէ մարդկօրէն կամէր իմանալ *զնա* և հարցանել վասն խաչին և դժոխոց և յարութեանն. իսկ այս կատարեալ մտաց պէտք էին և շա՛տ ժամու: - 517. Եօթներորդ, կամ թէ եգիտ ի *նա* երկեւան ինչ թերութեան վասն յարութեանն. իբր զի ասէ յայսմ գիշերի մերձեցայք յոտս իմ և ո՛չ հաւատացեր. վասն այն կրկին անգամ ո՛չ հրամայէ մերձենալ: - 517. Ութերորդ, զի ծնունդ էր *նա* նոր և գլխաւոր. և այն՝ զի *նովաւ* կորընչէին ազգք և տոհմք և դարք: - 517. Իններորդ, ասէ «մի՛ մերձենար», զի մարմինն այն պտուղ էր կանուխ դժոխոցն. և ինքն տէր մեր իբրև քահանայ նոր յամենայն ձեռաց պահէր զգուշութեամբ, զի պահեսցէ *զնա* ի ձեռինն որ կարօ՛ղ է ընդունել զայնպիսի պատարագն: - 517-518. Տասներորդ, զի ցուցցէ թէ թշնամեաց *նորա* ո՛չ է իշխանութիւն բուռն հարկանել զնմանէ. իսկ բարեկամաց *նորա* գոյ իշխանութիւն այլով իւիք մերձենալ ի *նա*. այսինքն սիրով և երկիւղիւ յայնմիկ զոր ուտեն *զնա:* - 518. Վասն այն ո՛չ ետ մարիամու մերձենալ. այլ պահեաց *զնա* բազկին այնմիկ որ նստոյց *զնա* ընդ աջմէ իւրմէ: - 518. Երկոտասաներորդ, «մի՛ մերձենար», եցոյց թէ՝ որք յետ յարութեանն և վերանալոյն յերկինս կամին մերձենալ ի մարմին *նորա* առաքինութեամբ և սրբութեամբ, զախտս հոգւոց ի բա՛ց ընկեսցեն և մի ունայնապէս մերձեսցին ի *նա:* - 518. Երեքտասաներորդ, զի մարիամ ո՛չ խոնարհութեամբ կամէր մերձենալ յոտս *նորա* որպէս այլ կանայքն. այլ յերե՛սն դիմեաց նա հպարտութեամբ առ ի համբուրել *զնա*. իսկ տէրն կամեցաւ ուսուցանել *նմա* զխոնարհութիւն՝ արգել

*զնա:* - 518. Չնգետասաներորդ, զի բաւական համարեցաւ ի պատիւ կանանց զայն՝ զի յառաջագոյն մերձեցաւ ի *նոսա* ծննդեամբ. իսկ յետ յարութեանն կամի՛ զի ա՛րք նախ մերձեսցին ի *նա* մինչ դեռ ո՛չ է ելեալ *նա* առ հայր: - 518. Մեզ բոլորիցս աստուած՝ և *նմա* մարմնոյն: - 518. Այլ համբարձումն նշանակէ՛ ի միտս համայն բարձր քան զամենայն դասս իմանալեացն. զի *նմա՛* երկրպագեն ամենայն երկնայինքն. և անդր քան զտեղի տիրամօրն. զի ի միածին որդւոյ իւրմէ խնդրէ զփրկութիւն մարդկան: - 519. Առաջինն է՝ զի ի տեսս աշակերտացն վերացաւ. այսինքն զի յորդորեսցէ զցանկութիւն գնալոյն առ *նա:* - 520. Երկրորդ՝ զի ամպն կալաւ *զնա* յաչաց *նոցա.* նշանակի թէ ի մահկանացու մարմինս ո՛չ կարեմք տեսանել ի բարձունս զքրիստոս: - 520. Չորրորդ՝ օրհնեաց *զնոսա* զինիլ ընդ դէմ թշնամեացն և աճիլ երկնային բարեաւն: - 520. Չինգերորդ՝ համբարձաւ զուարճութեամբ. որ վերաբերի առ *նոսա* որք փրկեցան ի դժոխոցն և ընդ *նմա* ելին յերկինս. զի **բ** բանակօք ել յերկինս այսինքն սպասաւոր հրեշտակք և մարդկան փրկելովք: - 520. Վեցերորդ՝ համբարձաւ ձայնիւ փողով ըստ դաւթի. և այս վերաբերի յառաքեալսն. որ յանձնեցաւ *նոցա* երթալ քարոզել ամենայն հեթանոսաց. և փողք եղեն տիեզերաց...: - 520. Երրորդ՝ վասն մխիթարութեան աշակերտացն. զի **խ** օր մխիթարեսցէ *զնոսա* փոխանակ **խ** ժամուն որ տրտմեցան ի մահն քրիստոսի...: - 520. Եւ այլք ասեն թէ՝ **խ** օր յերկրաւոր դրախտին եկաց ինքն և յարուցեալքն ընդ *նմա.* և մխիթարեաց զեղիա և զենովք: - 521. Իսկ որ ասէ սուրբն ստեփաննոս «յիսուս կայ ընդ աջմէ աստուծոյ», կալն նշանակէ իբր պատերազմակից և յօգնականութիւն գալ որք նահատակին վասն անուան *նորա:* - 521. Երրորդ՝ զի պա՛րտ էր քրիստոսի հովուել զպարզամիտ աշակերտսն որպէս հաւ զձագս, և մայր զմանկունսն. և թէ ի սկզբանէ զհոգին ընկալեալ էին՝ ո՛չ էր պիտոյ հովուել *զնոսա:* - 521. ...զի ուսցին բառնալ զտկարութեան այլոց. որպէս քրիստոս *զնոցայն* եբարձ. իսկ թէ նախ զհոգին առեալ էին՝ ո՛չ կարէին բառնալ զայլոց տկարութիւնն: - 521. Նոյնպէս պա՛րտ էր զսերմն հաւատոյ ընդունել *նոցա* քրիստոսիւ, և ապա փոքր փոքր աճմամբ հասանիլ պարգևաց հոգւոյն, և պտղաբերել և զայլսն: - 521. Երրորդ՝ ի կողմանէ հոգւոյն սրբոյ. զի առաւել հռչակելի և փառաւոր եղև այսպէս. զի ընկալեալ զհոգին՝ վաղվաղակի սքանչելիս առնէին վկայելով քրիստոսի. և զառաքեալսն առատապէս լցուցանելով, և *նորա* զայլսն: - 522. Դարձեալ կարէ ասիլ Ութերորդ պատճառս, առ ի ցուցանել թէ հոգին ո՛չ ումեք առատապէս պարգևի, եթէ ոչ յիսուս ի սիրտ *նորա* յատկապէս փառաւորեսցի: - 522. Զի ո՛չ միայն համարի մեծ և փառաւոր զաստուածություն *նորա*, այլ և զաղքատութիւնն և զանարգանս և զմահն. և յայնժամ արժանասցի առատապէս ընդունել զհոգին սուրբ: - 522. Իններորդ՝ ի միջոյ ամպոյն փայլէ որ ծածկեալ էր ի *նմա:* - 523. Եւ հոգին սուրբ ի քրիստոսէ էջ յառաքեալսն. և *նա՛* է իմաստութիւն հօր: - 523. Այսպէս որք ընկալան զհոգին ևս փափագին *նմա:* - 523. Երկրորդ՝ և յայսմ աւուր տուաւ *նոցա* օրէնք ի ձեռն մովսէսի: - 524. Գլխաւորագոյն վեցեկի պարգևօք լցոյց *զնոսա:* - 524. Նա՛խ՝ մաքրութիւն ի մահու չափ մեղաց. զի այլ ո՛չ ևս տիրեցին *նոցա* յետ հոգւոյն իջման: - 524. Չինգերորդ՝ զանբաժանելի միացումն ի սէրն քրիստոսի. զի որ ի խաչին թողին և փախեան, յետ իջման հոգւոյն՝ ամենեքեան վասն անուան *նորա* չարչարեցան և մեռան...: - 524-525. Քսանգ, Վասն սիրոյ և սահմանի *նորա* և նշանաց *նորա*, և աստիճանացն և այլոցն: - 526. Զի *նա* բնութեամբ է որդի աստուծոյ, և մեք շնորհօք: - 528. Եւ *նա* ի կոյս մօրէ, և մեք յաւազանէ ծնեալք: - 528. Երրորդ՝ ի լեառն ձիթենեաց տեսին զտէրն ելեալ յերկինս՝ երկրպագեցին *նմա:* - 528. ...հրեշտակք և մարդիկք, կամ մարդկան ամենայն ազգ և ամենայն լեզուք, գայցեն ի կատարածի յերկրպագութիւն քրիստոսի. և անեզր յաւիտենիւ փառաւորեալ օրհնեն *զնա:* - 529. Ա՛րդ՝ առաջին հիմն քրիստոս է և գլուխ. և հաւատացեալքն շինուածք ի *նա*. և հայր շինօղ: - 531. Իսկ թէ ուրեք առաքեալք և մարգարէք հիմն կոչին, քանզի նա՛խ *նորա* ժողովեցան ի հաւատս և եղեն հիմունք եկեղեցւոյ, և ապա՛ զայլս ժողովեցին: - 532. Եւ շինուածք են դասք ամենայն արդարոց. *նորին* դարձեալ մարմնով բնակիչք և հաւատով շինւածք: - 532. ...կինն յառնէ՛ն է և բնութիւն *նորա* ունի: - 532. «Եւ գլուխ քրիստոսի աստուած հայր». զի սկիզբն է որդոյ և էակից *նմա:* - 532. Այլ գիտելի է, զի քրիստոս գլուխ է եկեղեցւոյ, և հաւատացեալք մարմին և անդամք *նմա*...: - 532. Երկրորդ՝ միով գլխով բոլոր անդամք ամենայն մի են հաղորդութեամբ *նմա:* - 532. Նոյնպէս մի է քրիստոս և մի մարմին *նորա*. որ կոչի մի կաթուղիկէ եկեղեցի. որպէս ի հաւատամքն ասի: - 532. Նոյնպէս քրիստոսիւ տեսանեմք զհայր աստուած, և առնեմք զկամս *նորա.* և կերակրիմք և զմայլիմք հոգէպէս: - 532. Եւ զի քրիստոս է հիմն երկուցն. և **դ** անկիւն առաքեալք և մարգարէք. և հին և նոր կտակարանք ասացեալ *նոցա:* - 533. Իսկ յատուկ, զի *նա՛* կոչի ժողովարան. և մեք ժողովեալք: - 533. Եւ դարձեալ *նա՛* կոչի դուստր. և մեք

հարսն երկնաւոր փեսային: - 533. Զի *նա* բնութեամբ. և մեք շնորհօք: - 534. Եւ փոխանորդ *նորա* ի յերկրի ի հինն քահանայապետն որպէս ահարօն. և ի նորս կաթողիկոսն իւրաքանչիւր ազգի: - 534. ...և առաքեալքն ձեռն դնելովն միայն՝ տային զհոգին սուրբ. և ի լեզուս խօսէին. և մարգարէանային ընդունօղքն. իսկ վարդապետք սուրբք՝ քարոզութեան նոցին հետևօղք և որդիք ծնողացն՝ երրորդ կարգին յետ *նոցա:* - 535. Երրորդ՝ զի առաքեալք իննաք տեսք եղեն քրիստոսի. և մարգարէք միջոցաւ ի բացեայ. և վարդապետք յետոյ *նոցա:* - 535. Եւ որոց պարգևի մասնաւոր այս շնորհ, թէ և ո՛չ բոլորապէս ըստ *նոցայն:* - 537. Իշխանութիւնք ամենայն ի վերուստ յաստուծոյ են իջեալ առ ի մարդիկ վասն կարգաւորելոյ *զնոսա*...: - 537. Զի տեղիք զիշխանութիւն *նորա* և զսուր ո՛չ արգելուն: - 538. Եւ յորժամ առաքելոցն ետ՝ նախ փչեաց ի *նոսա* զհոգին սուրբ, և ապա ետ իշխանութիւն կապելոյ և արձակելոյ: - 539. Որպէս թէ զվերնագոյնն կամ զանարժանս կամ վասն ախտի ինչ օրհնել կամ ձեռնադրել. այլ զոր հոգին յայտնեսցէ զարժանիսն՝ *նմա՛* կատարի: - 539. Եւ թէ ոք ասիցէ, աստուած վերնագոյն է և հանապազ օրհնեմք *զնա*, և այլ զսուրբս *նորա:* - 539. Նոյնպէս և որք անբիծ են հաւատովք և սուրբ գործովք. և կամ որք զղջացեալ յետս դառնան ի մեղաց և ի հերձուածողաց. *նոցա՛* է արձակումն և օրհնութիւնն: - 540. Զի եպիսկոպոսն փեսա՛յ է և վիճակն հարսն. *նա՛* միա՛յն իշխէ: - 541. Իսկ քահանայք ժողովրդեանն՝ *նա* կանոնս դնէ՝ որ խոստովանա հա՛յր է և գիտէ զկարն և զորքանն մեղաց: - 541-542. Եւ զոր *նա՛* կապէ, այլքն ո՛չ արձակեն. որպէս որ կապեաց զհոգիս ի մարմնի՝ *նա՛* արձակեսցէ: - 542. Եւ որպէս եղիա որ կապեաց զերկինս և փախեաւ ի սիդոն. նոյն *նմա* հրամայեաց աստուած բանալ զերկինս. նմանապէս և այս: - 542. Զի պողքէր քոյր թագաւորին թէոդոսի ի կուսանաց վանս էր. և պղծեցաւ պոռնկութեամբ ի մարկիանոսէ. և ապա՛ եղև կին *նմա*. և ասեն թէ ի նեստորէ՛ էր մկրտեալ: - 542. Եւ էր սիրելի փլաբիանոսի. և լևոնի. և թէոդորիտոսի զորս նզովեցին յեփեսոս. և վասն *նոցա* վրէժխնդրութեանն արարին ժողով **ուզ** եպիսկոպոսաց. և ընկալան զթուղթն լևոնի. և զնզովեալն յեփեսոս զփլաբիանոս ընկալան...: - 542-543. ...և զթէոդորիտոս եդին գլուխ ժողովոյն վասն մարդահաճութեան թագուհւոյն և թագաւորին. և զդէոսկորոս հայրապետն աղէքսանդրու, և զպետրոս անտիոքու, և զտիմոթէոս և զանատօլ, և զայլս բազումս խոտեցին. և վկայեցին *նորա* ճշմարտութեան: - 543. ...և *նորա* զամենայն ինչ ծածկապէս տեղեկացան...: - 543. Եւ յոլովք ի գիտողացն ասացին, թէ հաւատք զնեստորին հաստատէք *զնա* ընդէ՞ր նզովէք: - 543. Եւ սուրբն սիմէոն սիւնակեացն այրեաց զթուղթն դաւանութեանն քաղկեդոնի՝ զոր գրեալ էր թագաւորն մարկիանոս աղաչանօք առ *նա՛*. և նզովեաց զթղտատարն որ էր թէոդորիտոս գլուխ ժողովոյն: - 543. Եւ սուրբն ղուկիոս սքանչելագործ և մարգարէաշնորհ, գրեաց առ մարկիանոս, թէ սուգ զգեցուցեր առաքելոց և մարգարէից. զի քակտեցեր *զնոցա* շինուածն. և արգելաւ հոգին սուրբ յօրհնելոյ զպատարագն և զաւազան մկրտութեան: - 543. **Այլ որ ճծ ամաւ յառաջ եկին ի հայք՝ ասորիք արք քաջաբանք, և կամեցան սերմանել զաղանդն նեստորի. որք նզովեալ որոշեցան. բայց ոմանք ընկալեալ էին և թարգմանեալ ի *նոցանէ* գիրս սուտս, Զգօրտոսակ. Զկիրակոսակ. Զպղի տեսիլն: - 545. Եւ որ հաւատայ *նոցա* նզովի**: - 545. Եւ համակա՛րգ է *նոցա* ըստ առաքելութեան և ըստ քահանայապետութեան...: - 546. Նախ՝ զի յետ յարութեանն հաւասար ետ զիշխանութիւնն. փչեաց ի *նոսա*...: - 546. Երկրորդ՝ զի մերձ ի համբարձումն ձեռն եդ ի վերայ *նոցա* և օրհնեաց *զնոսա* և արար *զնոսա* առ հասարակ եպիսկոպոսունս: - 546. Երրորդ՝ զի յետ համբարձմանն յորժամ էջ հոգին սուրբ, արար *զնոսա* կաթողիկոսունս առ հասարակ: - 546. Որպէս և քրիստոս արար. որ քան մարմնով ընդ առաքեալսն էր՝ եպիսկոպոսունս արար *զնոսա*. և յետ համբառնալոյն՝ հոգւովն սրբով արար *զնոսա* կաթողիկոսունս: - 546. Նա՛խ՝ զի *նմա՛* ասաց «տաց քեզ զփականս»: - 547. Սակայն կարգ գոյ ի մէջ *նոցա* և պատիւ և հնազանդութիւն և սէր. այլ իշխանութեամբ համահաւասարք են: - 547. Առ երկրորդն ասեմք թէ, ընդ ուրացութիւնն պետրոսի՝ սիրտ ամենայն առաքելոցն տրտմեցան և կոտորեցան. և ի զղջումն *նորա* ամենեքեան հաստատեցան վերստին: - 547. Այլ և դարձ *նորա* և կանգնումն՝ հաստատութիւն եղև ամենայն ուրացողաց և մեղաւորաց: - 547. Եւ թէ ոք ասիցէ, երևի ապա թէ ո՛չ է պարտ հնազանդիլ առաքելոյն պետրոսի և աթոռոյ *նորա:* - 547. Առաքելոյն պետրոսի հնազա՛նդ եմք որպէս քրիստոսի. նաև պօղոսի և ամենայն առաքելոցն և աշակերտացն ամենեցուն և հետևողաց *նորա* և աթոռոց *նոցա:* - 547. Այսոցիկ սուրբ հարց և սիւնհոդոսաց հնազա՛նդ եմք. և *զնոցա* կանոնքն ունիմք և զդաւանութիւն, և պահեմք մինչև յելս շնչոյ մերոյ: - 547. Ա՛րդ՝ ե՛կ ես և դու փորձեսցուք թէ ով զդաւանութիւն առաքելոյն ունի և զկանոնքն՝ *նա՛* է հնազանդ *նմա:* - 548. Զի յղացեալ էր ի գերեզմանին թադէոսի. և սնաւ անդ՝ ուր

առաքեալն սկսաւ քահանայագործել. և փոխեաց յինքն զշնորհս *նորա* անդր եղեալ եպիսկոպոս: - 548. **Եւ բաժանեալ զուրբ տեղիս տնօրինական, ետուն զուրբ յակոբն պատրիարգարան, և զգողգոթայն, և զուրբ կարապետն և զննարսն. և արկեալ վիճակս ի վերայ յարութեանն՝ անկաւ հայոց. և տրտմեցան ոմանք յազգէ** ***նոցա:*** - 548. Ապա հե՞զն յամենայնի սուրբն գրիգոր ետ *նոցա*՝ զի *նորա* շինեսցեն ընդարձակ. զի դեռ չէր շինեալ: - 549. **Եւ** ***նա՛*** **խնդրեաց յաստուծոյ զիջումն լուսոյն ի նշան յարութեանն քրիստոսի: - 549. Եւ վասն այն այլազգ ո՛չ հաւատան. զի յառաջն չկայր մինչ ի** ***նա՛*****. և առաւել վասն այն անուանեցաւ լուսաւորիչ**: - 549. **Եւ ի գալն յերկիրս հայոց, ետուն** ***նմա*** **օգնական զիւղն օծման զոր քրիստոս օրհնեալ էր. և զգեղարդն. և այլոց ազգաց չկա՛յ այս պարծանքս. զի մեր մեռոնս հանապազ և միշտ զնոյն շնորհ ունի**: - 549. Դարձեալ՝ որ ոք մերձ է ի ճշմարտութիւնն՝ *նա՛* առաւե՛լ է ճշմարիտ. որպէս որք մերձ են լուսոյն և ջերմութեան՝ առաւել լոյս են և ջերմ: - 550. Իսկ մերս դաւանութիւն ամենայնիւ նոյնն եկաց մնաց զոր ունէր նախ ի սրբոյն գրիգորէ՛ լուսաւորչէ և ի նմանեաց *նորա:* - 551. **Ապա յա՛յտ է թէ ո՛չ ազգս հայոց եթող և բաժանեցաւ, այլ** ***նորա*** **թողին զուղիղն և բաժանեցան:** - 551. Դարձեալ, բնաւորեալ է մարդոյ՝ զի ամենայն ոք կարծէ զինքն ճշմարիտ և արդար. այլ որ ունի զճշմարտութիւնն *նա՛* է ճշմարիտ և արդար: - 551. Այլ դատաւոր միտն կացուցեալ երկու վկայ զանբիծ հաւատս և զօրէնս որ են հաւատք և գործք. զի առ ո՞ր և իցէ քրիստոս *նա՛* է ճշմարիտ: - 551. Զա՛յս ասեմ, զի որ ինչ անօրէնութիւն է ազգիս հայոց, նո՛յն է օրէնք այլազգ քրիստոնէից. և որ մեզ երկբայութիւն է՝ նոյն դաւանութիւն է *նոցա:* - 552. Այլ դաւանութիւն *նոցա* այս է. որպէս զի մի՛ լիցի ըստ *նոցա* աստուած մարդացեալ. կամ մերս բնութիւն ընդ աստուածութեանն միաւորեալ. որպէս ընդարձակապէս ցուցանէ աստուածաբանն կիւրեղ ի գիրս պարապմանց: - 552. Այլ արդ լուծումն պահոցս այսոցիկ օրէնք է *նոցա*. նաև ի ծունկն և ի ծէք և յայլ սոյնպիսիս: - 552. Այլ ա՛րդ՝ հեղձուցեալն՝ սուրբ և կերակրելի է *նոցա*. և պոռնկութիւնն անխտիր յորժամ կանգնեն զգլորեալն: - 552. Եւ այլ բազում և զանազան ազգապղծութիւն ընդ հոգևորս և ընդ մարմնաւորս. երկու եղբարց և **բ** քերց. և ընդ քերց հոգևոր մօր. և անխտիր ի բազմանկողինս և այլս բազումս որ զազիր է խօսելոյ օրէնքէ *նոցա:* - 552. Ապա ուրեմն յա՛յտ է յայսցանէ՝ թէ առ մինն իցէ ճշմարիտ հաւատ և օրէնք՝ *նա՛* է ճշմարիտ և ո՛չ այլքն. թէպէտ բաժանեալ լիցի ի նոցանէ: - 552. Ապա ուրեմն յա՛յտ է յայսցանէ՝ թէ առ մինն իցէ ճշմարիտ հաւատ և օրէնք՝ նա՛ է ճշմարիտ և ո՛չ այլքն. թէպէտ բաժանեալ լիցի ի *նոցանէ*: - 552. Նա՛խ՝ ըստ դրութեան կարգի աղօթիցն որ յեկեղեցիս *նոցա:* - 554. Երկրորդ՝ որպէս կառք և կառավարն. եթէ մարմինն թիւրի, միտքն ուղղէ՛ *զնա:* - 557. Զի հոգի է աստուած. և յիմացական միտս և ի հոգիս բնակէ. և չէ՛ օգուտ մարմնոյն սրբութիւն յորժամ միտքն զբաղեալ է ի չարիս. զի հեռանայ ի սիրոյն աստուծոյ և ի բնակութեանց *նորա*...: - 558. Առաջինն է սակաւ ինչ միայն յանցուած տեսութեան ըստ բնաւորական մտածութեան *նորա* առ ամենայն իրս: - 558. Ապա ուրեմն յա՛յտ է լուծումն տարակուսանացդ ըստ կարգի. և ոչ ոքն ի *նոցանէ* հակառակ գոն միմեանց որպէս ասացաւ: - 558. Որովք միշտ երանութեամբ զաստուած տեսցես. հայելով յօրէնս *նորա* ի տուէ և ի գիշերի: - 558. Եւ դարձեալ՝ զոր *նորա* նախանձ ասեն՝ սա՛ ամբարիաւա՛ծ ասէ. որ է՛ փառասէր: - 559. Այս ըստ *նոցա* որ է ասեն զմահու չափ մեղքն: - 559. Վասն այն առաջին է ամբարտաւանութիւն, և ընդ *նմա* նախանձն, և այլքն ըստ կարգի: - 561. **Երրորդ՝ զի շղթայք մեղաց այսպէս ունին զկարգն. զի նախ որկորստութեամբ լնու զորովայնն. և յետ այնորիկ պոռնկութեամբ թափէ՛** ***զնա*****. և ապա՛ արծաթ ժողովէ զի լնու զորովայնն և պոռնկի**...: - 561. ...ապա՛ ի պակասիլն սոցա տրտմի. և թէ ոք հակառակի՝ բարկանայ ընդ դէմ *նոցա*. ապա յամենայնէ ձանձրանայ: - 561. Որպէս ոք զզգալի ակն խփէ և զրկի ի լուսոյն և առնէ խաւար. նոյնպէս և *նորա:* - 562. Յայնժամ լոյս իմացականին կորեաւ և շիջաւ ի սատանայէ՛. և լոյս շնորհացն ո՛չ ներգործեաց ի *նա*. և ի նոյն սերտեալ հաստատեցաւ անզղջապէս. վասն որոյ մեծ են մեղք սատանայի և թողութեան ո՛չ հանդիպի: - 563. Սոքա ի յանբանսն ո՛չ միայն գո՛րծ են, այլ և պահպանօղ *նոցա:* - 563. Իսկ գործքս այսոքիկ որ *նոցա* պահպանօղք են՝ մեզ կորուստ և մեղք են: - 563. Նա՛խ՝ զի ի *նոսա* չափաւո՛ր են ախտքս այսոքիկ. իսկ ի մարդն առաւել և անչափ: - 563-564. ...և զրկէին զզօրութիւն հոգւոյն զորմէ ասաց քրիստոս, թէ «հոգւովն աստուծոյ հանեմ զդևս». և *նորա* դիւաց տային. յիրաւի ոչ թողցի *նոցա:* - 566. Երկրորդ՝ զի գիտէին *զնա* աստուած ի մարգարէիցն: - 566. Եւ օրէնս եդ *նոցա* թէ որ զաստուած անարգէ՝ քարկոծեսցի: - 566. Եւ զի խիստ էր հայհոյութիւնք *նոցա*, խստագոյնս քարկոծեցան տանջանօքն յաւիտենից: - 566. Չորրորդ՝ որք միայն զորդւոյ ասեն բան՝ սակաւ պատիժն, զի մի է յերրորդութենէն. իսկ որ զփառակիցն նս՝ կրկնապատիկ հատուցանի *նմա:* -

566. Յիրաւի որք ո՛չ հաւատան թողութեան խոստովանութեան, ո՛չ թողցի *նոցա* աստ կամ անդ: - 566. Տասներորդ՝ վասն հոգեմարտին մակեդոնի որ հայհոյէր զհոգին սուրբ նուազ ասելով քան զհայր և զորդի, ո՛չ թողցի *նմա:* - 566. Դարձեալ, բարկութեամբ զպատկերն աստուծոյ կորուսանեմք ի մեզ. և հոգին սուրբ փախչի ի բարկացեալ հոգւոյ. զի խաղաղութիւն է տեղի *նորա:* - 570. ...Իսկ յորժամ սուրբ հոգին ելանէ, պիղծ հոգին այսինքն սատանայ բանկէ՛ ի *նա:* - 570. Սիրովն սիրեմք *զնա* զի ինքն ինքեամբ բարի է: - 571. Եւ մեծն դիոնէսիոս ի գիրս աստուածային անուանց սահմանէ թէ՝ «հաւատն է հաստատ կայումն հաւատացելոց. որ զարդարս կացուցանէ ի ճշմարտութիւնն և զճշմարտութիւնն ի *նոսա»:* - 571. Այլ և զանազանի յոյսն. զի որք են ի ճանապարհի աստի կենաց, յոյս *նոցա* է՛ հանդերձ ստուգութեամբ կարծեաց որպէս ասացաւ: - 574. Իսկ որք ելեալք են ի մարմնոյ, յոյս *նոցա* է՛ հանդերձ ստուգութեամբ գիտութեան. զի ստուգապէս գիտեն զլինելոց հատուցումն: - 574. Նոյնպէս և այժմ սրբոց և երանելեաց յոյսն է հանդերձ ստուգութեամբ տեսութեանն. զի դեռևս հանդերձեալ է *նոցա* մարմնոցն յարութիւն. և փառք և պսակքն ըստ իրին: - 574. Չորրորդ՝ առանց ծանձրութեան ծառայէ՛ *նմա:* - 575. Հինգերորդ՝ զմարմինս և զինչս դնէ ի վերայ *նորա:* - 575. Վեցերորդ՝ զգուշանայ ի վիրաւորելոյ *զնա:* - 575. Եօթներորդ՝ թէ վիրաւորեալ է՝ հաշտեցուցանէ *զնա:* - 575. Ութերորդ՝ լինի ցաւակից *նմա* ի ժամանակի նեղութեան: - 575. Իններորդ՝ խնդայ ընդ մեծ գոյլն *նորա:* - 575. Տասներորդ, ցաւի ընդ հեռանալն *նորա:* - 575. Մետասաներորդ՝ սիրէ՛ զոր ինչ *նա:* - 575. Երկոտասաներորդ՝ ատէ՛ զոր ինչ և *նա:* - 575. Երեքտասաներորդ՝ ջանայ հաճոյանալ *նմա:* - 575. Հնգետասաներորդ՝ քարշէ՛ և զայլս ի սիրելութիւն *նորա:* - 576. Եօթնն, հաւանի խրատուց *նորա:* - 576. Քսանեմի, ի գովելն *զնա* ուրախ լինի: - 576. Քսանեք, որք հայհոյեն զսիրելին՝ խոյս տայ ի *նոցանէ:* - 576. Զթշնամիսն մեր պա՛րտ է սիրել և աղօթել վասն *նոցա.* և զթշնամիսն աստուծոյ ատել...: - 577. Այս վասն համանման գործոց *նոցա* այսպէս կարգի որ են ի *նոսա*. այլ յոյսն և սէրն են ի կամքն: - 578. Զի *նա* պարունակէ՛ զառաքինութիւնս որ կարգեն զմարդ առ ընկերն. որպէս ուղղութիւնն և առատաբաշխութիւնն: - 578. Զի՞նչ է արդարութիւն և զի՞նչ գործ *նորա* կամ մասունք: - 579. Զի՞նչ է խոհեմութիւնն և զի՞նչ գործ *նորա* և մասունք: - 579. Զի՞նչ է արիութիւն և զի՞նչ գործ *նորա* և մասունք: - 580. Զի՞նչ է ողջախոհութիւնն և զի՞նչ գործ *նորա* և մասունք: - 581. Եւ գործ *նորա* այս է. յառաւելութեանն գիտենայ նուազիլ. և ի յաղքատութեանն գիտենայ համբերել...: - 581. Այլ և զձեռս ի հարկանել. յըմբռնել. և զոտս ի գնալ. համեստութիւնն ի *նոսա* ամենայնսն դնէ զեղանակն և զկարգն: - 581. Դարձեալ կոչին ծառայականք, զի և ի խառնուածոյ մարմնոյն գոյանան. որք ո՛չ հետևին միմեանց. զի որ ի խառնուածոյն ողջախո՛հ է, *նա* ո՛չ խոհեմ կամ արդար կամ արի կարէ գոլ: - 581. Եւ գիտեն զպատճառն թէ վասն է՞ր է ողջախոհ. այսինքն զի յանառակ կենաց ժլատութիւնք լինին. և *նա* ի հարկէ արի գոյ զախտն ստորադասելով. այնպիսին և խոհեմ գոյ գիտելով թէ վասն մարմնական հեշտախտութեանց լինի անիրաւութիւն: - 582. Եւ այս տուեալ է յաստուծոյ ընդ դէմ *նոցա* որ հաստ և բութ ունին զիմացումն: - 582. Գթութիւն է գութ ցուցանել առ ընկերն և սիրել *զնա*. վասն զի պատկեր աստուծոյ է: - 582. Սուգն զնախանձն. զի որ սգայ վասն մեղաց այլոց, ո՛չ նախանձի ընդ *նոսա:* - 583. Խաղաղութիւնն արտաքսէ՛ զբղջախոհութիւնն. քանզի ընդ ճաշակելն զհոգևորն՝ անհամանայ *նմա* ամենայն մարմնաւոր: - 583. Սուգն է սգալ վասն մեղաց և ատել *զնա* մինչ զի եղծանել *զնոսա:* - 583. ...և հետևի *նմա* կեանք և խնդութիւն հոգևոր...: - 584. Իսկ ընդ դէմ այսմ, դիւական տրտմութիւնն ի մարմինն է և վասն մարմնոյն. և զարտասուս ցամաքեցնէ. և տրտմի և ամբոխի. և հետևի *նմա* ոխ և ատելութիւն. այլ և մահ ևս գործէ որպէս ասէ առաքեալն: - 584. Եւ վերջինս այս վասն այն ասի գործ ողորմութեան, զի կակուղ և խոնարհ պատասխանին խորտակէ՛ զբարկութիւն ընկերին և շահի՛ *զնա:* - 585. Նա՛խ՝ զի նո՛յն վարձն խոստացեալ լինի և *նմա*. այսինքն արքայութիւնն երկնից: - 586. Հինգերորդ թէ առ աստուած հայիցին միշտ և *զնա՛* տեսանեն: - 586. Հաղորդութիւնն է՛ խորհուրդ սիրոյ. զի սիրով միաւորիմք և յօդիմք ի գլուխն քրիստոս. մարմին ի մարմնոյ *նորա* և անդամ յանդամոց *նորա:* - 587. Երկրորդ, զի այս խորհրդոյ նշանակ ի սկզբան արարածոց աստուած ադամայ ետ և ո՛չ կնոջն. յորժամ էած զկենդանիսն առ ադամ զի անունս դիցէ *նոցա:* - 589. ...և ապա՛ էջ հոգին ի մկրտեալն *նորա*. զիա՞րդ ի ձեռն կնոջ լինի տուեալ շնորհք հոգւոյն լուացմամբ ջրոյն: - 589. ...այլ առաքեաց առ սուրբն գրիգոր և խնդրեաց քահանայս մկրտել *զնոսա:* - 589. ...ապա քանի՞ դատապարտութիւն է հրաման տալ *նոցա* և ի գործ քահանայութեան յանդգնիլ: - 590. Եւ այնք որ ո՛չ խոստովանին զմիասնական սուրբ Երրորդութիւնն, մկրտելի է զմկրտեալն ի *նոցանէ* ի փառս ամենասուրբ Երրորդութեանն: - 590.

...զի *նա* որ ոչ ունի զհաւատ, այլոց ո՛չ կարէ միջնորդել: - 591. Յորժամ բոլորովիմբ մարդն ի ձեռն մկրտութեանն սրբի, սերմն *նորա* ո՞րպէս է անսուրբ: - 592. Բոլորովիմբ մարդ ի ձեռն մկրտութեանն ներքուստ և արտաքուստ սրբի. բայց դարձեալ սերմն *նորա* ի ձեռն մարմնոյն ցանկութեանն պղծի: - 592. Թէ մեղք հօրն ի մկրտութեանն թողեալ լինի, վասն էր մկրտին որք ի *նոցանէ* ծնանին: - 592. Մահուամբն քրիստոսի լուծան մեղք. բայց մեք ի հաւատ մահուն քրիստոսի մկրտիմք. զի տնկակից լիցուք մահու *նորա:* - 592. Որ և շնորհաց *նորա* և թողութեանն հաղորդեսցուք: - 592. Այլ թէ ծնօղք որդւոց՝ կամ որդիք ծնողաց մեղացն կամակիցք և համախոհք լինին ի մեղս չա՛րք են ընդ *նոսին*...: - 593. Ձայն ցուցանէ թէ յորժամ մկրտեցաւ քրիստոս՝ հոգին սուրբ էջ ի վերայ *նորա*...: - 593. Եւ քահանայապետ ասէ *զնա*՝ որ պատարագէ և մկրտէ և դրոշմէ. զի *նա*՛ է պետ և աւագ ի կատարմունս խորհրդոյն: - 594. Դարձեալ ասեմք թէ՝ քահանայքն մեր ունին իշխանութիւն դրոշմելոյ զոր *նոցա* եպիսկոպոսն դնէ. ապա ուրեմն իշխանակիցք են քահանայք մեր և եպիսկոպոսք *նոցա:* - 594. Այս ըստ հակառակասիրութեան *նոցա* ասի. այլ ըստ ուղղութեան՝ քահանայն ունի իշխանութիւն զեօթն խորհուրդ եկեղեցւոյ կատարել. և եպիսկոպոսն առաւել ունի. զի միայն տայ զկարգն, եկեղեցի օրհնէ և սեղան: - 594. Այլ և առաքեալքն և հետևօղք *նոցա* հարքն սուրբք՝ ո՛չ գիտէին զխառնարանն. և դու ուսար և խառնես ջուր և ընդ անիծիւք *նոցա* մնաս որպէս ցուցաւ ի վերոյ: - 596. ...վասն որոյ անխմոր հացիւ և անապական բաժակաւ կատարեմք զխորհուրդ մարմնոյ և արեան *նորա:* - 597. Զի թէ յօրհնեալ հացէն այլոցն ամենեցուն ցամա՛ք էր տուեալ և *նորա* թաց, պատճառ լինէր մատնութեանն յուդայի. և յիրաւի: - 599. Եւ զպատառն զայն զոր ի ձեռն ունէր քրիստոս՝ ետ ի *նա:* - 599. Թէ օրհնեալ է՝ ընդէ՞ր օրհնէք և թէ ոչ էր օրհնեալ՝ ընդէ՞ր տայք ժողովրդեանն իբր օրհնեալ մարմին և մոլորեցնէք *զնոսա:* - 600. Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, *նա* յիս բնակեսցէ և ես ի *նմա:* - 600. ...ապա յորժամ զրկես յարենէն զժողովուրդն, զրկես և ի *նոցանէ* որ կապեալ են ընդ արիւնն. այսինքն մարմինն և հոգին և աստուածութիւնն: - 600. Որ և հարցանէր որդւոցն զեբեթեայ թէ՝ կարո՞ղ էք ըմպել զբաժակն. այլ ո՛չ թէ միայն *նոցա* ետ և յայլ առաքելոցն արգել: - 600. ...և այսպիսիքս, որպէս *նոքա* որք մերձ ի զատիկն խոստովանին և սրբութեանց արժանաւորին: - 603. Որք իցեն ի մեծամեծ մեղս մահու չափ, օգո՞ւտ է խոստովանութիւնն *նոցա* թէ ոչ: - 603. ...որպէս ասէ առաքեալն յակոբոս, (թէ ոք հիւանդանայցէ, կոչեսցէ զերիցունս եկեղեցւոյն. և աղօթեսցեն *նմա* օծանել իւղով...: - 604. ...զի օծանեմք *զնոսա* որպէս զըմբիշս. զի ի հանդէս մտցէ ընդ այսս չարութեան օդոյդ: - 605. Ասեմք թէ՝ յորժամ միաւորեալ էր ի մարմինն միութեամբ ներգործիւր ի *նմա* ամենայն մարմնականքն: - 605. Իսկ այժմ որ բաժա՛ն է՝ բաժանմամբ հասանէ ի *նա* ամենայն սրբութիւն: - 605. Եւ *նմա*՛ պատշաճ է կարդալ զմարգարէքն և զհին օրէնքն յեկեղեցին: - 606. Նաև տէրն կացոյց զայս կարգս. յորժամ ի լերինն զարքայութիւնն երկնից աւետարանեաց *նոցա:* - 606. Եւ ի տօն զատկին որ արար խարազան չուանեայ և եհան զվաճառականսն, ցուցաւ սարկաւագի գործ *նորա:* - 606-607. Եւ ի համբառնալն կալան հրաման վերագոյն. առաքելով *զնոսա* ընդ տիեզերս: - 607. Օրհնեաց *զնոսա* և ցուցան կաթողիկոսք և հայրապետք: - 607. Դպիրք եղեն առաքեալքն սպասաւորելով ժողովրդեանն հրամանաւ. և Սարկաւագունք՝ օծանելով զհիւանդս. հրաման տալով *նոցա* իւղ օրհնել յիւրմէ: - 607. Եւ յառաջին արտորէիցն պտղոց տալով *նոցա* ուտել զոր քահանայքն ուտէին՝ արար *զնոսա* Քահանայս: - 607. Եւ յետ յարութեանն փչելովն զհոգին՝ արար *զնոսա* Եպիսկոպոսունս: - 607. Եւ ի լեառն ձիթենեաց հանեալ *զնոսա* և օրհնեալ՝ արար *զնոսա* Կաթողիկոսունս և Պատրիարգունս, զամենայն շնորհելով *նոցա* լիով: - 607. Եւ գո՛րծ է *նոցա* ձեռնադրել զարք եպիսկոպոսունս. որք են ընդ իւր վիճակաւն ի չորս բաժինս տիեզերաց: - 607. Եւ *նա*՛ հրաման տայ ժողով առնել: - 607. Երկրորդ՝ Արքեպիսկոպոսք. որ թարգմանին եպիսկոպոսապետք. և սքեմ *նոցա* քականօթ և պճղնաւոր. և փիլոն. և ի վերայ նորա եմիփորոն **դ** կրկին խաչիւ շուրջ զիւրև: - 607. Երկրորդ՝ Արքեպիսկոպոսք. որ թարգմանին եպիսկոպոսապետք. և սքեմ նոցա քականօթ և պճղնաւոր. և փիլոն. և ի վերայ *նորա* եմիփորոն **դ** կրկին խաչիւ շուրջ զիւրև: - 607. Եւ գո՛րծ է *նոցա* ձեռնադրեալ զմետրապօլիտսն. և օրհնել զձէթ կնքոյ: - 607. Եւ գո՛րծ է *նոցա* ձեռնադրել եպիսկոպոսունս...: - 607. Եւ գո՛րծ է *նոցա*՝ ձեռնադրել զամենայն վիճակաւորս եկեղեցւոյն իւրեանց: - 607. Եւ **գ** ի *նոցանէ* ձեռնադրեն զիւրեանց մետրապօլիտն: - 607. Եւ սըքեմ *նոցա* զահեակ ուսովն: - 608. Զգեստ է *նոցա*, պատմուճան հոլանի և առանց գօտոյ...: - 608. ...և գո՛րծ է *նոցա*, հրամանաւ քահանային աւետարան կարդալ, քարոզել, և բառնալ քշոց և բուրբառ. և նստիլ ամենևին ո՛չ: - 608. Զգեստ է *նոցա* պատմուճան հոլանի և անգօտի:

- 608. Եւ գո՛րծ է *նոցա* առաքեալ կարդալ, և մոմեղէնս կրել, և գրակալ. և զխաչագլուխ գաւազանն կրել: - 608. Եւ զդրունքն *նորա* պահեն. և զեկեղեցին *նորա* զարդարեն: - 608. Եւ գո՛րծ է *նոցա* ընթեռնուլ զամենայն գիրս: - 608. Եւ գո՛րծ է *նոցա* ալէլուիայ և մեսեդի ասել և սաղմոս: - 608. Վասն է՞ր ե կարգ է մինչ ի սարկաւագն. և *նա՛* **զ**երորդ: - 608. Յինգերորդ՝ որք բոլորովիմբ զղջացեալք և թողեալք զմեղս՝ գործեն զբարիս. *զնոսա* հովուէ՛ դպիրն սաղմոսիւք և ալէլուիւք: - 608. Եւ որպէս հրեշտակապետն գաբրիէլ, նախ ետ զաւետիս սրբոյ կուսին, և *նա՛* խորհէր ի միտս. - 610. Առաջին մեք, և որդին, և թոռն. և թոռին որդին. և թոռին թոռն. և *նորա* որդին. և թոռնիայն. որ է՛ **է**: - 611. Եւ հօր եղբայր, և քոյր. և մօրաքոյր, և եղբայր. և ծնունդք *նոցա* մինչև յեօթն ազգն: - 611. Զի օտար ազգք՝ միջնորդութեամբ փեսային և հարսին որ են մի մարմին, լինին և *նորա* մի ազգ: - 611. Զի կնքահայրն և սանամայրն ծնունդ մի. և *նոցա* զաւակն **բ**. և *նոցա* թոռն **գ**. և չորսն որ է՛ թոռին թոռն՝ լինին խնամիք: - 611. ...և *նոցա* որդին որ է՛ թոռն հօրն՝ ունի զկէս արեանն. և թոռին որդին զերրորդ մասն. և թոռին թոռն զչորրորդ մասն: - 612. Եւ աստ վճարեցաւ արիւնն և ազգն. յետ *նոցա* ի **ե** երորդ ծնունդն խնամութիւն լինի: - 612. Զի և *նա՛* ևս մարմնոյ և արեան ազգակից լինի: - 612. Նա՛խ՝ զի արք վասն *նորա* ի զազիր տեղիսն խոնարհեսցին. - 613. Նա՛խ՝ որպէս *նա* ի քարանց և յայլ նիւթո՛ց է ժողովեալ: - 613. Երկրորդ, որպէս *նա* եռայարկեան խորան, որ է՛ գաւիթն, և մէջն և բեմն: - 613. Նա՛խ՝ զի զմի օր *նոցա* տօնեմք. և **է** յաւելեալ վասն **է** զգայարանաց. և վասն եօթնեկի մեղաց քաւութեան: - 616. Դարձեալ, **ը** օր եկեղեցւոյ տօնեմք. և մի գլխոյն եկեղեցւոյ. և անդամոց *նորա:* - 616. Պատարագն ի հնումն անբան կենդանիքն էին. վասն որոյ և զճարպս *նոցա* լուցանէին ի տաճարին: - 617. Երրորդ՝ զի մարմինք սրբոց ի գաւիթս պահին և ո՛չ յեկեղեցի. յօրինակ հոգւոց *նոցա* որք են ի պահեստ հոգւոյն ի տեղւոջ լուսոյ և հանգստեան: - 617. Այլ մովսէս օրինադրեաց ի թիւքն առնել կրկին փողս արծաթի. և կոչեաց *զնոսա* փողս ազդեցութեան. որպէս դեռևս գոն ի դրունս թագաւորաց կրկին փողք: - 618. Եւ ա՛յն էր նշանակ չւելոյ բանակին կամ ժողովելոյ իշխանացն. կամ ամսամտից և այլ տօնից *նոցա:* - 618. Նոյնպէս ի սրտէն ելանէ կսկիծ արտաասւաց. և զհեշտութիւն *նորա* քաւէ՛: - 619. Երկրորդ՝ մեղքն ի հոգւոյն և ի մարմնոյն ի վեր ելանէ. իսկ արտասուքն վերուստ ի վայր հոսի և կորուսանէ՛ *զնա:* - 619. Եւ էր առաջին ժամն *նոցա* երեկոյին. վասն զի սկիզբն աւուրն զերեկոյն ասէին...: - 621. Այս է՝ նախ զերրորդ ժամուն. և ապա՛ զվեց ժամուն. և ապա՛ զինն ժամուն. որ աւա՛րտ էր *նոցա* աղօթիցն: - 621. ...յորում բազումս նեղեաց զմեզ թշնամին մեր. գանկատիմք *նմա* և խնդրեմք զփրկութիւն: - 621. Երկրորդ ժամն է՛ օրհնութիւն երից մանկանցն ի դէմս որդւոյ. որ *նա՛* էջ ի մէջ հնոցի աշխարհիս. և փրկեաց զմեզ: - 621. Ութերորդ՝ խաղաղականն է յետ երեկոյին ժամուն առ հոգին սուրբ. յորում ժամու հոգին քրիստոսի էջ ի դժոխս և խաղաղացոյց *զնոսա:* - 622. Երկրորդ յայտնել ասի. իբր չէ ծածուկ այլ յայտնի է աստուածութիւն *նորա* յարարածս իւր: - 624. Վասն երկրորդին՝ յայտնեմք զփառս և զմեծութիւն *նորա:* - 624. Վասն երրորդին՝ վկայե՛մք և կցորդիմք բարութեան *նորա* և երանութեան: - 624. ...այսինքն գոհացիր զաստուծոյ. և յայտնեա՛ զփառս *նորա*. - 624. ...զի հաղորդիցուք բարութեան *նորա:* - 624. Նա՛խ որպէս սովորութիւն է մարդկան որք զաղերսն ընծայեն ի դրունս մեծամեծացն, և *նորա՛* մատուցանեն թագաւորին: - 624. ...և *նորա* նըւիրեն աստուծոյ և բերեն մեզ զհաշտութիւն. - 624. Երկրորդ, որպէս ի հինքն մատուցանէին զպատարագն առ քահանայսն. և *նորա* նուիրէին աստուծոյ: - 624. Արդ սաղմոս երգօղքն տան ի սարկաւագն. և սարկաւագն ի քահանայն. և *նա՛* մատուցանէ աստուծոյ զօրհնութիւնն. որպէս առաջին դասք քերօբէիցն: - 624. ...և *նա* վերընծայէ առ աստուած զօրհնութիւնն, և զխաղաղութիւնն բերէ մեզ պարգև: - 625. Վասն որոյ քահանայն աղերսէ՛ զեպիսկոպոսն, և *նա՛* տայ զխաղաղութիւնն: - 625. Զի որդին մարմնացաւ և *նա՛* նուիրէ զբարեգործութիւնս մեր առ հայր: - 625. Չորրորդ, զի բարեաց պատճառ զաստուած իմանամք և ի *նա՛* վերաբերեմք: - 626. Վասն որոյ եօթնից էր շաբաթումն *նոցա* աւուրց ամսոց: - 626. Այս առ *նոսա:* - 626. Այլ զի և մեք նոցին բաղձասցուք և նոցա մասնակից լիցուք և *զնոսա* բարեխօս կալցուք և *զնոսա՛* օրինակ դիցուք. - 628. ...*նորա* սիրեն զտէր. և զօրացեալ ի նմանէ՝ կոխեն զանմարմին թշնամին. որպէս ժողովուրդն զփարաւօն: - 629. Իսկ երկրորդն, որ երկինք պատմեն զփառս աստուծոյ, զայնմ որ դատէ՛ զհակառակն մեր. զի յերկինս է ողորմութիւն *նորա:* - 629. Նոյնպէս և երկրորդն որ ասէ ոչ նախանձիլ ընդ չարս որ են անզգամք. և զի ո՛չ գոյր *նոցա* աստ փոխարէն մեղաց. վասն այն հրովն յաւիտենից այրեսցէ *զնոսա:* - 629. Իսկ չորրորդն, ողորմելիքս չորեքնիւթեայ բնութեամբ յուսասցուք ի տէր և երկիր պագցուք *նմա*. և այնու հաստատեսցին սիրտք մեր ի տէր: - 629. Այսպէս վեցերորդն ապաւինելով ի

տէր խոստովան եղիցուք *նմա*...: - 629. ...և խոնարհեսցուք ընդ ձեռամբ *նորա.* զի դարձուսցէ ի մահու ի կեանս: - 629. Եւ սոկրատ պատմագիրն ասէ թէ՝ մեծն իգնատիոս աստուածազգեացն ետես երկնային զօրս. և լուաւ ի *նոցանէ*...: - 631. Եւ վկայէ՛ մեզ աւետարանիչն յօհաննէս. զի ասէ՝ եսայի ետես զփառս *նորա* և խօսեցաւ վասն *նորա*...: - 632. Այսպէս հանապազ յիշատակեմք զերախտիս *նորա* որ վասն մեր խաչեցաւ: - 632. Իսկ որք ի վերայ Երրորդութեանն ասեն՝ երեք վնաս կայ ի բանս *նոցա:* - 633. ...և մի դէմ զքրիստոսն որ խաչեցաւ. որ լինի չորրորդ դէմ և անձն ըստ *նոցա:* - 633. Իսկ յատուկ, Նա՛խ՝ զերեքսրբեանն ի դէմս որդւոյ. զի *նա՛* է առաջնորդ որով զհայր տեսանեմք: - 633. ...և մեք բաց գլխով զձեռս տարածեալ *զնորա* նմանութիւնն բերեմք ի մեզ: - 635. Եւ ա՛յս է խորհուրդն, զի որ վաստակի յերգս՝ *նա՛* տացէ զփառս արժանապէս: - 636. ...*նոցա* փառ կամ կցորդ գոյ զկնի. և որք որիշ են՝ *նոցա* կցորդ ո՛չ ասի: - 636. ...և իւրաքանչիւր ոք լոյս և հուր վառեալ՝ *նմա՛* նըւիրէին զպաշտօնն իբր արարչի...: - 638. Եւ *նորա* ասեն, կեցո՛ և ապրեցո՛: - 638. Չորեքկերպեան կենդանիքն է՛ խաչն. և տեսեալն ի վերայ *նորա*՝ գառն որ բառնայ զմեղս աշխարհի: - 638. Այսինքն ի հօրէ յառաջ բղխէ հոգին առ որդի. և *նովաւ* բաշխի մեզ: - 639. Իսկ և **դ** կողմունք *նոցա* որ լինի **ը**: - 639. Եւ ստեփաննոսս այս՝ արար գործիք ի**զ** որիշ որիշ. և *նորօք* երգէր: - 640. ...որ զամենայն կենդանեաց ձայնս *նովաւ* երգէին: - 640. և Փոկեղէդէս եղբայր *նորա*՝ արար զերկրորդ ձայնն ի դարբնականէ՛...: - 640. խառնեաց *զնոսա* ի բանս հոգւոյն, - 641. ...վասն որոյ խառնէ՛ զձայնս *նոցա* ի բանս իւր և մատուցանէ աստուծոյ: - 641. Դարձեալ՝ *նոցա* կրկին աղի. իսկ մերն բան և ձայն. և հոգի և մարմին: - 641. ...վասն որոյ յերկրորդ օրն յառաջ քան զամենայն *նոցա* տօնեմք: - 642. ...և *նմա* սաղմոսն էր ի տաճարին. և ապա՛ այլոցն զկնի: - 643. Այլ և բոլոր ամենայն տնօրէնութեանցն պատմօղ. վասն այն յամենայն օր ի տօնս, ի պահս, և յուտիս, ի շաբաթս, և ի կիրակէ, *զնա՛* ընթեռնումք: - 644. ...և *նա՛* աւետեաց ա՛յլ առաքելոցն: - 644. Ուստի յա՛յտ է՝ զի ուր և ալէլու ասեմք, սաղմոս տուն գոյ ընդ *նմա:* - 644. Դարձեալ՝ բուրվառն է կոյսն մարիամ. և հուր աստուածութիւնն ի *նմա* բնակեալ...: - 645. Երեք չուանն՝ եռակի պատիւն *նորա:* - 645. Դարձեալ՝ ցուցանէ զմարգարէս և զառաքեալս. և ի գլուխ *նոցա* երևեալ բանն աստուած և խօսեալ: - 646. Դարձեալ՝ նշանակ խաչին. և քրիստոս ի վերայ *նորա* խաչիւն քարոզեալ: - 646. ...վասն որոյ *նորա* միշտ մերձին գրակալին յորժամ ընթեռնուն: - 646. ...նշանակէ՛ զհանդերձեալն որ դէմ յանդիման տեսանելոց եմք *զնա:* - 646. Այլ տօն *նոցա* է վաղն ի մէջ գիշերոյ ի վեր: - 647. Եւ ա՛յս է խորհուրդն. զի որ քան են սուրբք ի յերկրի կենդանի, ո՛չ տօնեմք *նոցա* մինչ ի հանդէս նահատակութեան են...: - 647. ...վասն որոյ ի մէջ գիշերոյ ի վեր սկսանի տօն նահատակութեան *նոցա:* - 647. Զի առաջակայք եղեն քրիստոսի, աթոռակիցք և զինաւորք *նորա*. - 647. վասն որոյ յերեկոյս տօնեմք զտօն կատարման ելից *նոցա* ի յերկրէ...: - 647. ...և վաղն զտօն պսակաց և փառաց *նոցա:* - 647. Եւ զայն աշխարհն տեսութեամբ և իմացմամբ միշտ յաւիտեան. անվախճան պատրաստէ՛ զհանգիստ և զերանութիւն *նոցա:* - 647. ...և չարչարակից եղեն *նմա*...: - 648. ...զի և փառաց ընդ *նմա* հաղորդեսցիս...: - 648. Այն է որ տուաւ *նոցա* արկանելիս սպիտակս...: - 648. Եւ ասացաւ *նոցա* հանգչիլ. մինչև լցցին ծառայակիցք և ընկերք *նոցա:* - 648. ...*նա* փոխան այնմ զուրբաթ և զչորեքշաբաթ լուծանէ: - 649. Զի յաւարտումն պահոցն՝ *նոցա* տօնեմք...: - 650. ...վասն որոյ պահքն յանուն *նոցա* կոչի: - 650. Եւ դարձեալ՝ յորժամ պահեցաք զշաբաթն, յաւարտումն *զնոսա* միջնորդ աղաչեմք...: - 650. ...զի *նոցա* բարեխօսութեամբն ընկալցի զպահքն մեր: - 650. Սուտ են բնաւ և մոլորումն է *նոցա* այն և անօրէնութիւն: - 651. Եւ զայս ունին սկիզբն և հիմն պահոց ամենայն ազգ քրիստոնէից զոր *նորա* լուծանեն: - 651. Եւ զայս դնեն պատճառ թէ՝ ի ժամանակս ինչ՝ զօրք հեծելոց *նոցա* ո՛չ հասին ի բարեկենդանն...: - 651. ...և ապա *նոցա* հրամայեաց զերկու օրն ուտել: - 651. Երկրորդ, զի մեծ ճգնաւորն բենետիքտոս որ է՛ յազգէ *նոցա*՝ ասէ, «պահելի է զչորեքշաբաթի օրն մինչև ցինն ժամն»: - 652. Եւ օրն յորում պղծեցաւ, սրբութեամբ պահեսցէ *զնա* մինչ ցմահ իւր. և ապա՛ հաղորդեսցի: - 652. Իսկ վասն քառասնից պահոց, Նախ մովսէս պահեաց կրկին **խ** ի լերինն. և յեսու ընդ *նմա:* - 652. ...որ էր *նոցա* **բ** շաբաթին և ե շաբաթին. և մեզ **դ** շաբաթին և ուրբաթին: - 653. ...և ուրբաթն՝ զի ադամ եկեր ի պտղոյն, և մեք պահեմք *զնոսա*: - 653. ...բարեխօս դնելով *զնոսա* զչորեքշաբաթս և զուրբաթս պահեմք: - 654. ...որպէս *նորա* որ զդեղ մահու խառնեն. վասն որոյ նշանաւ խաչին կնքեմք *զնոսա*, զի փախիցեն դեքն: - 654. ...պա՛րտ է վասն ամենեցուն աղօթել և զպարտս *նոցա* վճարել: - 655. Եւ յետ յարութեանն այն սովորութեամբն ծանեան *զնա*...: - 655. Հեթանոսաց սովորութիւն էր որ զինչս մեռելոյն ընդ *նմա՛* դնէին ի գերեզմանն...: - 656. ...և յետոյ զբաժին *նոցա* ի վերայ լնուին. նոյնպէս ի

տունս և ի դուրս յորժամ յիշէին: - 656. Արար սա՛ զգիշերոյն քարոզքն. և *զնոցունց* **ղ** աղօթքն: - 659. Եւ առաջին կանոնին՝ տէր տուընջան. և որ այլ զհետ սոցա աղօթք և փոխք *նոցունց:* - 659. ...*նա* զձեռն ի վեր առեալ գոհանայ զաստուծոյ. նմանապէս թէ պատմի վասն վախճանի ուրուք: - 659. Հինգերորդ, Քահանայաթաղ. և օծման *նոցա.* և ողջունին. **ժ ժ** թուով: - 660. Եւ ուրախութեան *նոցա*. և օքևանացն: - 660. Երեքտասաներորդ, Վկայութիւնք հակառակ ախթարմայիցն. և պատասխանիք *նոցա* **ժե** թուով: - 660. Հնգետասաներորդ, Վկայութիւնք քաւարանին, և լուծումն *նոցա* **ժ** թուով: - 660. Եւ վասն նեռին և պատրանաց *նորա:* - 660. Քսաներորդ, Վասն յարութեան մարմնոյ. և սահմանի *նորա:* - 660. Եւ թիւ ընտրելոցն. և լոյս *նոցա:* - 661. Քառասունն**գ**, Վասն ուրախութեան և փառաց *նոցա:* - 661. Քառասունն**ղ**, Կենաց ծառն և երկոտասան պտուղ *նորա:* - 661. Այլ *նորա* հաստատունք են: - 662. ...և *նովաւ* արժանաւորիլ մեզ վերնոյն գաւառի ըստ անհաս իմաստութեանն իւրոյ: - 663. Այլ ըստ իմացման առաւելուն ի գիտութիւն. և այն ո՛չ է *նոցա* փոփոխումն, այլ աճումն իմաստութեամբ: - 663. ...թէ զպատուիրանս *նորա* պահեմ, և զայն կեանքն տայ: - 664. Չորրորդ, տայ մեծութիւն և *նոցա*. որք բազում չարիս՝ և մի մասն բարեաց ունին...: - 664. ...տայ *նորա* աստուած աղքատութիւն որ այնու չարչարի...: - 664. ...իբր թէ *նա՛* է առաւել պատճառ հիւանդութեան: - 665. Եւ անմեղութեան, որ ո՛չ ոք է առանց մեղաց. բայց *նա՛* միայն որ ծնաւ առանց մեղաց. - 666. Այսպէս և *նորա* կատարեցին զճանապարհ կենցաղոյս և զբարեաց գործոց. վասն որոյ վախճանեալ կոչին: - 666. Ասեն վարդապետք, որպէս միաւորութիւն *նոցա* կեանք է, նոյնպէս և որոշումն *նոցա* մահ: - 667. ...և հոգին երթայ առ աստուած որ ետ *զնա* ասէ սողոմոն: - 667. ...զի անկումն *նոցա* մահ է *նոցա* որպէս ասէ սուրբն գրիգոր նիւսացին: - 667. ...և ապա տանջի ընդ սատանայի ի հուրն յաւիտենական որ պատրաստեալ է *նոցա:* - 667. ...յայնժամ յայտնի և մերձակայ տեսանէ զամենայն փառս և զպսակ զոր ընդունելոց են *նորա* ի յարութեանն աւուր...: - 668. ...չար հոգիքն ընդ առաջ ելեալ արգելուն *զնա* ի ճանապարհն...: - 669. ...զի գործունեա՛յ է *նոցա* և կամարար: - 669. ...մինչ աւանդօղ հրեշտակն սաստեսցէ ի *նոսա*...: - 669. ...և շրջեցին *զնովաւ* կոծօղք և լալականք հրապարակին...: - 669. ...և *նա* ցաւօք և տրտմութեամբ և հեծութեամբ կայ անդ ի խաւարին բանտն ընդ այլ խաւարասէր հոգւոցն: - 669. Զի զգալի լոյս ո՛չ լուսաւորէ *զնոսա*...: - 669. Դարձեալ՝ ցուցանէ՝ իբր թէ սիրելոյն որ մեռաւ՝ կցորդիմք և չարչարեմք զմարմինս. մերկանալով, ի սով և ի ծարաւ, ի մութն և ի հող որպէս *նա* ի գերեզմանի եղև: - 670. ...և *նա* դնէ յեկեղեցին մերձ ի դուռն և աղօթէ՛: - 671. ...և *նա* դնէ յեկեղեցին մերձ առ դուռն որ նշանակէ զկայանք հոգւոցն յերկինս ի վերջին տեղւոջ մինչ ի յարութեանն օր: - 672. Նա՛խ՝ զի *նա*՛ միայն օծաւ յառնուլ կարգին: - 672. ...զի մի՛ ձեռնամուխ լիցի ի *նա* թշնամին...: - 672. ...վասն այն հոգւոյ *նորա* աղօթիւք սրբութիւն և փրկութիւն խնդրեմք...: - 672. Չորրորդ՝ զսէր և զհաշտութիւն նշանակէ զոր ունիմք առ *նա*...: - 673. Հինգերորդ՝ փափագիմք մասնակից *նորա* լինիլ սրբութեան և փառաց: - 673. Վեցերորդ՝ ի միմեանս յանձին լինիմք. մեք ի *նա*՛ և *նա՛* ի մեզ...: - 673. ...զի *նա* կենդանեացս աղօթի՛ց է կարօտ, և մեք նորա բարեխօսութեանն առ քրիստոս...: - 673. ...զի նա կենդանեացս աղօթի՛ց է կարօտ, և մեք *նորա* բարեխօսութեանն առ քրիստոս...: - 673. ...վասն այն *նա՛* մեզ ողջոյն տայ բոլոր եկեղեցւոյս...: - 673. ...և մեք *զնա* ողջունեմք: - 673. ...նոյնպէս և մեք ողջունիւս զհոգին և զշնորհքն *նորա* ընդունիմք ի մեզ: - 673. Իսկ ի դիմաց *նորա* օրհնել զուղարկաւորսն...: - 673. Իսկ տանիլն ի **դ** անկիւնս եկեղեցւոյն, վկայե՛ն *նմա* թէ՝ չորեքին աւետարանչացն խրատու շուրջ եկն զեկեղեցեաւն. - 673. Իսկ որ պատեն *զնա* քահանայական զգեստիւք: - 674. Այլև զգրեալն ընդհանրական թողութիւն ի դիմաց *նորա* ի վերայ գերեզմանին ընթեռնուն: - 674. ...և ի համբարձումն տեառն ամպն կալաւ *զնա* յաչաց *նոցա:* - 674. Եւ համակարգք իւր իջուցեն *զնա* ի հանգիստ...: - 674. Զի ցուցցէ թէ նմանապէս լինելոց է ի յարութեանն հանգիստ *նոցա* ի կարգս իւրեանց: - 674. ...որ ցուցանէ թէ մարմինն *նորա* միշտ յեկեղեցւոջէ և յետ մահուն...: - 674. ...զի քահանայական աղօթիւք և պատարագօք կամ առաւելուն պսակքն, կամ ջնջին մեղք *նոցա:* - 674. ...զի *նորա* ո՛չ չար են գործեալ և ո՛չ բարի. ո՛չ տանջին և ո՛չ պսակին...: - 675. Իսկ պաշտօնք և ողորմութիւնք և պատարագք լինին *նոցա* առիթ պսակաց: - 675. ...զի յայսցանէ ո՛չ արտաքսեսցէ *զնա:* - 675. Երկրորդ, զի ննջեցեալն եղբա՛յր է մեր և ունի բազում պատերազմ, օգնական լինիմք *նմա:* - 676. Երկրորդ, արտասուօք լուանամք զմեղս *նորա*...: - 676. Չորրորդ, արտասուօք թողութիւն խնդրեմք զոր մեղաք *նմա* ի մարմնաւոր կեանս...: - 676. ...զի և *նա* թողցէ մեզ զպարտս մեր: - 676. Զի վասն յանցանացն ադամայ անիծաւ երկիր ի գործս *նորա*. զսուրբ մարմինն քրիստոնէի չէ՛ պարտ դնել յանսուրբ հող...: - 676. Եւ

յետ այնորիկ յիշեմք զպատիժ հրամանացն աստուծոյ որ կատարեցաւ ի վերայ *նորա*...: - 676. ...վասն որոյ թաղեմք *զնոսա:* - 677. Եօթներորդ, զի մի՛ յարաժամ տեսցեն կենդանիքն և մորմոքեսցին սիրտք *նոցա:* - 677. ...վասն որոյ թաղեմք *զնոսա:* - 677. ...ապա և մարմինն ընդ *նմա* անապական և անփոփոխ մնասցէ: - 677. ...պատժեաց զմարդն և ետ *զնա* ի կերակուր օձին...: - 678. Նա՛խ՝ զի ի սրբոցն որ ա՛նդ են թաղեալ՝ օգնութիւնս ընդունին գերեզմանակիցք *նոցա:* - 678. Երկրորդ, զի սիրելիք *նոցա* որք անդ ժողովին, տօնեն և յիշեն *զնոսա* աղօթիւք առ աստուած: - 678. Չարքն ի սուրբ տեղիս թաղեալ օգո՞ւտ է *նոցա:* - 678. Ասեմք թէ ո՛չ. այլ առաւել վտա՛նգ է *նոցա*. զի ի բազում անգամ ի ձեռս դիւաց արտաքս ընկեցեալ լինին մարմինք *նոցա:* - 678. Իսկ դիրք կոչի. զի ի *նմա՛* դնի մարմինն իբր ի յանօթ ինչ: - 678. Նա՛խ՝ զի մի՛ շարժեսցէ *զնա* այսն չարութեան որպէս զմարմին անհաւատից: - 679. Եւ դարձեալ՝ ցուցանէ թէ այսպէս և հոգի *նորա* անշարժ կայ և մնայ ի յաւիտենական փառս և ի մշտնջենաւոր հանգիստն ամէն: - 679. ...հաւատն նշան է *նոցա*, և բարի գործքն զարդ. և մահն ի հարսանիս ընթանալ...: - 681. ...և աւետիս յարութեան տամք *նոցա*. և տեսեալ հոգով ուրախանամք: - 681. ...զի վերափոխեաց *զնա* աստուած ի տեղի ուր ինքն գիտէ...: - 681. ...և *նորա* կացին յանապատ ամս **խ** և այլն: - 682. Մանանայ *նոցա* բանն աստուծոյ. և ջուր հոգին սուրբ: - 682. Եւ ապա՛ ի ձեռն յիսուսի արժանաւորքն մտանեն յարքայութիւնն երկնից և ժառանգեն *զնա՛*. - 682. Եւ թէ ոք ասիցէ, թէ տուրք աղօթք և պատարագ, ո՞չ է օգուտ *նոցա:* - 683. ...*նոցա՛* է օգուտ պաշտօն և պատարագ և այլն...: - 683. ...զի զպարտս *նոցա* մեք հատուցանեմք...: - 683. ...և ազատի *նա* ի պատժոց անտի: - 683. Իսկ թէ անզեղջ կամօք և առանց խոստովանութեան ի մեղս մեռան, ո՛չ է օգուտ *նոցա*. թէպէտ մկրտեալ իցեն և հաւատացեալ. - 683. Զի *նա՛* է արեգակն արդարութեան...: - 683. Վասն որոյ ի սոյն աւուրքս կատարին արդիւնք ննջեցելոցն և յիշատակութիւնք *նոցա* այսու խորհրդով: - 683. Զի աւուրքս այս առ մե՛զ չափին և ո՛չ առ *նոսա*. - 684. և մե՛ք քաւեմք զմեղս *նոցա* և ո՛չ *նորա:* - 684. Նա՛խ՝ որպէս մեք ի կիրակէ ուրախացաք և վայելեցաք ի շնորհաց յարութեանն քրիստոսի, ի միւս օրն և *զնոսա* մասնաւորեմք: - 684. Դարձեալ, ի կիրակէ յարութեանն քրիստոսի տօնեմք. և յերկուշաբաթին՝ *նոցա* սրբոցն որք ընդ քրիստոսի յարեան և մտին ի քաղաքն սուրբ: - 684. Վասն որոյ խաչիւ և աւետարանաւ աւետեմք ննջեցելոցն զմեծ օր աւետեաց *նոցա* և կնքեմք զգերեզմանն: - 684. Այսպէս և ի տնօրինէքն ընծայք խաչին և աւետարանին որ ի *նոցա* տունն մտանէ: - 684. Զի որք ընկալան զշնորհսն, պա՛րտին *նորա* ընչիւք իւրեանց զեկեղեցւոյն լոյսն վառել զաւուրս ութն: - 684. Այս քան ի խորհուրդ ննջեցելոց ի թաղումն և ի կատարումն *նոցա:* - 684. Եւ են յիմացումն և յուշի. որպէս ասէ առաքեալն թադէոս. և յոյս *նոցա* լի է անմահութեամբ. և սիրով առ աստուած միացեալ: - 685. ...այլ խաւար մեղացն արգելու զտեսութիւնն. և չա՛ր է կարծիք *նոցա*, և երկիւղ տանջանաց: - 685. Գիտե՞ն *նորա* զոր ինչ աստ գործեմք, թէ ոչ: - 685. Յոգիք արդարոցն զամենայն գիտեն զոր ինչ վասն *նոցա* գործեմք. և վասն մեր բարեխօսե՛ն և կատարե՛ն զխնդիրս: - 685. Իսկ չարացն ոչ ինչ գիտեն. այլ զոր հրեշտակք կամ դևք *նոցա* պատմեն: - 685. Արդարքն վասն իւրեանց սիրելեացն միշտ աղօթեն զի ազատեսցին ի փորձանաց և ուղղեսցին ի մոլորութեանց և ընկեր փառաց *նոցա* լինիցին: - 685. Իսկ մեծատունն վասն եղբարցն աղօթէր, զի մի՛ տանջանքն իւր առաւելասցի վասն *նոցա:* - 685. Զի՞նչ է աղօթք *նոցա:* - 685. Աղօթք *նոցա* ցանկութիւնն է *նոցա*. զի կամս երկիւղածաց իւրոց կատարէ՛ տէր: - 685. Դարձեալ աղօթքն՝ չարչարանքն և բարի գործքն է *նոցա*, զոր վասն քրիստոսի կրեցին...: - 685. ...զայն աղերսեն *նմա*. սակայն ըստ հաճոյութեան կամացն աստուծոյ խնդրեն և ո՛չ զհակառակն: - 685. Իսկ մեղաւոր հոգին դարձեալ ի ձեռն հրեշտակաց. զի աղաչէր զնա երևիլ. կամ ի ձեռն դիւաց կերպարանին *նորա:* - 686. Այլ ըստ պսակացն որ մարմնով կատարին՝ և վասն ընկերացն որ ժողովին՝ պակաս է *նոցա*. զոր ի կատարածի լինելո՛ց է ի գալուստն քրիստոսի...: - 686. ...այլ զանազանութիւն է *նոցա* յիւրաքանչիւր գործս և ի տեսութիւնս: - 686-687. ...որք ունին ըզհին օրէնս և ո՛չ զնորս. այլ ի ներքոյ մնացեալ սկզբնական մեղաց՝ *նորա* ի տանջանս ընթանան: - 678. ...են հոգիք *նոցա* ի միում խորանի մինչ դատաստանն ընտրեսցէ *զնոսա* և որոշեսցէ. որպէս ցուցանի յառաջիկայդ: - 687. Եւ այս զանազան կարծիքս վասն այն է, զի գիրք սուրբք չե՛ն յայտնի բացայայտեալ *զնոսա:* - 687. *Նորա* որ թողին զամենայն և գնացին զհետ քրիստոսի, որոց խոստացաւ զհարիւրապատիկն աստ՝ և զկեանսն յաւիտենից: - 688. Իսկ հոգիք հաւատացելոց որք ոչ գնացին այսպէս զհետ *նորա*, այլ ընկալան ի ներգործութեանցն սատանայի և ի կրից աշխարհի. - 688. Զի այժմ հոգւով են առ *նա*. և յետ յարութեանն հոգւով և մարմնով: - 688. *Զնոսա* ասել գոլ առ **ը** երորդ կամարն երկնից. ամբարձեալ

յիշխանութենէ սատանայի որք ի յօդս և ի տարերս միայն իշխեն: - 688. Աներևոյթն եռակի՛ է *նոցա:* - 690. Արդ չև է եկեալ դատաւորն. և ոչ է եղեալ դատաստան. *նա* և ո՛չ հատուցումն. ո՛չ բարեաց և ո՛չ չարաց որպէս ասացաւ ի վերոյ: - 691. Երկրորդ, ասէ սուրբն դիոնէսիոս ի ննջեցելոց կատարմանց գլուխն՝ եթէ մաքրելոց հոգին հասեալ ի վախճան՝ յայտնի և մերձակայ տեսանէ զամենայն փառս և զպսակ զոր ընդունելո՛ց են *նորա* ի յարութեան աւուրն: - 691. Երրորդ, ասէ առաքեալն թադէոս, եթէ հոգի ամենայն մարդոյ որ ելանէ ի մարմնոյ, են *նոցա* օթևանք և բնակութիւն ի հանգստեան...: - 691. Հինգերորդ, ասէ աստուածաբանն գրիգոր՝ եթէ հաւանիմ իմաստնոյն բանի՝ թէ հոգի բարի և աստուածասէր յորժամ ի մարմնոյն արձակի, կայ և մնայ *նմա* բարին որ լինի: - 691. ...զի որպէս չարչարանացն հաղորդեցաւ, նոյնպէս և վայելչականացն *նմա:* - 691. Եւ առաւօ՛տ է օր դատաստանին. զի միշտ առաւօ՛տ է և ո՛չ երբէք փոխէ *զնա* երեկոյ: - 692. Նմանապէս հետևի զի մարմինն ո՛չ կրեսցէ տանջանս. զի ո՛չ յառնէ ըստ *նոցա* կարծեացն: - 694. Ասեմք ըստ նիւսացւոյն գրիգորի, թէ յոյս *նոցա* ո՛չ է տանջանք, այլ վայելչութիւն է *նոցա...:* - 695. Արդ՝ այս կենացս յոյս՝ ակն ունի ի հեռաւորն. և յետ մահու յոյս *նոցա* ըմբռնէ ի մերձաւորն: - 696. ...և յետ մահու յոյս *նոցա* է՛ հանդերձ ստուգութեամբ գիտութեանն. և կամ տեսութեանն...: - 696. Այլ արկանելիք սպիտակ՝ զծաղկեալ *նոցա* առաքինութեանն երևեցուցանէ զպայծառութիւն յետ ի թանձրութենէ մարմնոյս փոխելոյն. զոր զգեցեալ են նախ քան զխոստացեալ զփառսն...: - 696. Ա՛րդ՝ եկեալ հրեշտակն խնդրէ ի նմանէ զբարի գործս որով *նա* կերակրի. - 697. ...որով իմանան արդարքն թէ այնպիսի փառս պատրաստեալ է *նոցա.* և յուսով վայելեն մինչև օր դատաստանին: - 697. Նոյնպէս և լուսեղէն պսակքն որ իջանէր ի վերայ *նոցա*՝ յայտնապէս ցուցումն է իմանալի պսակացն: - 697. Ասեմք եթէ՝ ձայնիւն և պսակաւն եցոյց մարդկան և լսեցոյց ի յաչս և ի յականջս թէ զայնպիսի կեանս վիճակեցին *նորա* որք սուրբք են ի մարդկանէ...: - 697. ...*նորա* քաւարան ասելով բառնան զերկիւղ դատաստանին: - 698. Եւ անիրաւք որ ո՛չ խոստովանին զմեղս, *նորա* ո՛չ զերծանին ի ձեռաց. այսինքն պատժոցն աստուծոյ...: - 699. Զի անկումն *նոցա* մահ է *նոցա* ասէ նիւսացին գրիգոր: - 699. Իններորդ, հուր քաւարանին պատիժ է մեղացն ըստ *նոցա:* - 699. Ա՛րդ՝ եթէ մարմինն ևս գործեաց զմեղս, պա՛րտ է և *նմա* կրել պատիժ...: - 699. ...զի *նա* քաւեալ է և սա ոչ. մինչև մարմինն ևս տանջեսցի և քաւեսցի. որ է՛ անպատշաճ երկոքինն: - 699. Իսկ թէ այժմ հոգւոյն եղեալ է դատաստան, և հատուցումն ըստ գործոց, և արդարոցն փառք և մեղաւորացն տանջանք. և յայնժամ մարմնոյն որպէս ասեն *նորա*...: - 700. ...և բազումք մոլորին զհետ բանից *նոցա* և յառասպելս *նոցա* կործանին: - 701. Դարձեալ ասեմք, եթէ զպատիժ մեռելոյն զոր *նա* ո՛չ կարէ քաւել...: - 701. ...եկեղեցի սուրբ և աղօթք քահանայից հատուցանէ զպարտս *նոցա* և քաւէ. - 701....և որ ոք ատ կամաւ ո՛չ պատժի, աստուած պատժէ *զնա* ի հուրն և քաւի: - 701. Ա՛րդ՝ որք կրեն զամօթն առաջի քահանային, ո՛չ կրկնի ի վերայ *նոցա* պատիժ: - 701. Դարձեալ ասեմք, թէ սուրբն ոսկեբերան ըստ չորից հակառակի՛ և ստէ՛ *զնոսա:* - 702. Նա՛խ՝ զի *նորա* ժամանակեայ հուր ասեն և տանջանք հոգւոց. իսկ ոսկեբերանն մի հուր և տանջանք յաւիտենից: - 702. Երկրորդ, *նորա* զարդարս ո՛չ ասեն անցանել ընդ հուրն. այլ ոսկեբերանն ամենեցուն անցանել և պայծառանալ ասէ: - 702. Երրորդ, *նորա* փայտ խոտ և եղէգն զներելիսն ասեն. որք անդ ծախին և ազատին...: - 702. Ահա՛ յայտնապէս զփայտ զխոտ և զեղէգն զոր *նորա* վասն քաւարանին ասեն...: - 703. Զի ո՛չ յառաջ և ո՛չ յետոյ գիտաց *զնա:* - 704. Իսկ տէրն մեր անմեղ մարմնովն դատապարտեաց *զնա* իբր զպատճառ մեղաց...: - 705. Եւ իջմամբ ի դժոխս կապեաց *զնա* և արգելեաց յանդունդս: - 705. Երկրորդ, կապելովն ետ *նմա* զառհաւատչեայն տանջանաց...: - 706. Իսկ որք հաւանին *նմա*՝ կորնչին ի տանջանսն յաւիտենից: - 706. Սակայն ի յղութեանն իջանէ չար հոգին ի յորովայն մօրն. և *նմա* զօրութեամբն և ներգործութեամբն ծնանի մանուկն և սնանի և հասանէ յերիտասարդութիւն...: - 706. ...և հրէից ժողովն յարեսցի ի *նա՛:* - 707. Նստցի ի տաճարին զոր շինեսցեն *նմա* հրէայքն. և ասասցէ թէ, յառաջ քան զիս ո՛չ ոք է ճշմարիտ քրիստոնեայ. այլ նեռինք են ամենայնքն: - 707. ...զի ի *նմա՛* բնակէ գլուխն ամենայն չարեաց: - 707. ...զի *նա՛* է գազանն որ ել ի ծովէն և ունէր գլուխս է. այսինքն զամենայն իշխանս: - 707. Եւ այս գիտելի է, զի անուն նեռին ջնջեալ և կորուսեալ է ի սուրբ գրոց. վասն այն զանազանապէս կոչեն *զնա՛:* - 707. Զի տէրն պղծութիւն կոչէ *զնա* և սուտ քրիստոս: - 707. Զի *նա՛* է օձ դարանակալ ի ճանապարհի որպէս ասաց յակոբ յազգէն դանայ: - 708. ...զի սուտ բարեբաստութեամբ *նոցա* զայլս խաբեսցէ: - 708. Զի գօգ *նորա* են որովք սատանայ գաղտնաբա՛ր հալածէ զհաւատացեալս: - 708. ...այսինքն զի ուսուսցեն վերջնոցն զհաւատս փրկչին. յոր և *նորայն* հաւատացին: - 709. *Նորա՛* են **բ**

ծիթենիք. այսինքն օծեալ հոգւով սրբով: - 709. Որ և յետ այնորիկ սպանցին ի նեռնէն յերուսաղէմ. և անկեալ լիցին մարմինք *Նոցա* ի հրապարակս զերիս տիւս և զերիս գիշերս: - 709. Յետ որոյ սպանօղք *Նոցա* լուիցեն այսպիսի բարբառ...: - 709. Եւ յետ մահուն և յարութեան *Նոցա*՝ թագաւորեսցէ նեռն այլևս **Ժ** և **Ե** օր: - 709. Այլ արբանեակք նեռին յետ մահուան *Նորա* ուրախասցին և առցեն իւրեանց կանայս...: - 709. Եւ մինչդեռ ասասցեն զայս, յանկարծակի եկեսցէ ի վերայ *Նոցա* սատակումն որպէս յաւուրսն նոյի ըստ հրամանի փրկչին: - 709. Չորրորդ, նշանակէ՛ զթիւ աւուրցն ժամուց յորում *Նորա* վաստակեցին և զարդարեցան: - 711. Երկրորդ զի սպիտա՛կ է. նշանակէ՛ զպայծառ առաքինութիւն *Նոցա:* - 712. Երրորդ զի սուրբ է. ցուցանէ զմաքրութիւն *Նոցա* առանց աղտեղութեան: - 712. Հինգերորդ զի կա՛րծր է. ցուցանէ զկարծր և զսերտ առաքինութիւն *Նոցա* առանց քակտելոյ: - 712. Զի՞նչ է արմաւենին ի ձեռս *Նոցա:* - 712. Զյաղթութիւն *Նոցա* ցուցանէ. որք յաղթեցին ցանկութեանց մարմնոյ աշխարհի և սատանայի: - 712. Զի՞նչ է բուրվառն ոսկի և քնարն ի ձեռս *Նոցա:* - 713. Երրորդ՝ զուղղութիւն իմացման *Նոցա* առանց խոտորման: - 713. Հինգերորդ՝ զմեռելութիւն մարմնոյ և զկրթութիւն չարչարանաց *Նոցա* ցուցանէ: - 713. Եւ իշխանք են առաքեալք և մարգարէք որ փողք են տիեզերաց, նախ *զՆոսա* կոչէ: - 713. Զի թէ զչգոյն կոչէ ի գոյ և լսեն *Նմա*, քանի՞ առաւել զգոյն ի գոյից ժողովէ՛ և նորոգէ: - 714. Եւ աստուած ո՛չ է մեռելոց այլ կենդանեաց. որոց հոգիքն ի ձեռս *Նորա* կենդանի են. և մարմինքն ի ձեռս *Նորա* կենդանի լինելո՛ց են: - 715. Նա՛խ՝ եթէ համանգամա՛յն է յարութիւնն ի նոյն կէտն, այլ ննջեցեալքն նա՛խ յառնեն և ապա՛ կենդանիքն ընդ *Նոսա*. - 717. Դարձեալ՝ կենդանիքն ո՛չ ժամանեն ննջեցելոցն, այսինքն *Նոցա* որ մեռեալ են և ի հող փտեալ և փոշիացեալ...: - 717. ...այլ մեռանին և իսկոյն լինի յարութիւն *Նոցա*. յորում ո՛չ մարմինքն ի յերկիր անկանին և ո՛չ լուծանին: - 717. Ասեմք առ այս, եթէ մարմին մարդոյ բաժանեալ ի հոգւոյ, և հոգին գնացեալ ի կայանս հոգւոց առ աստուած որ ետ *զՆա՛*. և մարմինն ի հող լուծեալ կամ յայլ տարերս...: - 718. ...և թէ ի գազանաց և ի թռչնոց և ի ձկանց կամ ի մարդոյ ուտի, և *Նորա* ևս ի տարերս լուծանին: - 718. Եւ տարերք ամենայն շտեմարանք են աստուծոյ. և տիեզերք ամենայն ի ձեռին *Նորա*՛ են ըստ մարգարէին: - 718. Նոյնպէս և նիւթն սկզբնական ո՛չ յառնէ ի ծնօղս որ աւելորդ արտահոսումն է *Նոցա*. այլ յառնէ ի ծնեալ մարմինն որոյ հիմն է շինուածոյն: - 719. Այսպէս և հողն ուստի շինեցաւ ադամ, ո՛չ մնայ ի տարերս. այլ յառնէ ի յադամ որ սկիզբն եղև գոյութեան *Նմա:* - 719. Եւ այսու նշանաւ ճանաչեաց հոգի մեծատանն զհոգին աբրահամու և զղազարու ի գոգ *Նորա* հանգուցեալ: - 719. ...և ի դառնալն այսու նշանաւս ճանաչէ զքեզ և զտունն. և դու ճանաչես քո դրոշմիւն *զՆա:* - 719. Եւ *Նորա* դարձեալ յերիս բաժանեցան: - 720. Իսկ յոբ սուտ առնէ *զՆոսա* զամենայն...: - 720. Եւ դարձեալ ոմանք հերձուածօղք ասացին թէ՝ այս մարմինս ո՛չ յառնէ և ո՛չ այս մարդ որ մեռանի. այլ փոխանակ *Նորա* նոր մարդ յառնէ: - 720. Իսկ յոբ ստէ՛ *զՆոսա* ասելով, թէ «մարմնով իմով տեսանեմ զաստուած փրկիչ իմ և ո՛չ այլ ոք»: - 720. ...ջրարբիք են հաւատով և յուսով մեռեալքն. և հանապազ յեկեղեցի սուրբ յիշատակութիւն *Նոցա* կատարի...: - 721. Երրորդ պակասութիւն տրտմութիւնն է ի հոգին. զի բազում ինչ խնդրէ և ո՛չ կարէ առնուլ. և բազում ինչ ոչ խնդրէ և լինի *Նմա*...: - 722. Եւ մարմինք *Նոցա* լինին առաւել թանձր և ծանր և գարշելիք որպէս աստ: - 723. Եւ երևի որպէս բլուր մեծամարմինք *Նոցա* յաչս իւրեանց. սև և աղտեղի և չարչարելի. զի կրեն անչափ չարչարանս և ցանկան մահու և ո՛չ մեռանին...: - 723. Հինգերորդ, ստեղծաւ մարդն հաւասար հրեշտակաց. և յորժամ մեղանչեաց՝ անասնոց հաւասարեցաւ ըստ դաւթի և ընդ *Նոսա* ապականացաւ և պատժեցաւ. - 724. Այլ և *Նորա* որ յարգանդի մօրն մեռանին թէ առին զբանական հոգին: - 724. ...զի լցցին *Նորա* ի բոլոր մարմնոյն որպէս գարեղէն նկանակ հացիցն: - 725. Եւ թէ ոք ասիցէ՝ բազում անդամք են ի մեզ լցեալ աղտեղի ապաւառով՝ և *Նորա* ո՞չ յառնեն: - 725. Սակայն իւրաքանչիւր ոք անսխալ անդամօք իւրովք յառնէ. այլ ո՛չ երևի թէ սա այր է և *Նա* կին. այն ծեր և այն տղայ. զի որպէս հրեշտակք են յերկինս: - 726. Այլ համահասակ քանակաւ ո՛չ. զի աստ ոմն մեծ լինի և ոմն փոքր ի ջերմութենէն որ անհաւասա՛ր է ի *Նոսա*. նոյնպէս և անդ: - 726. ...իսկ մարդիկ ի յարութեանն ո՛չ են կարօտ կերակրոյ զի անմա՛հ են. վասն այնորիկ *Նորա* ո՛չ յառնեն: - 727. Երրորդ պատճառ, ասեն իմաստունքն թէ ծնունդք կենդանեաց և բուսոց լինին ի շարժմանէ երկնային մարմնոց. իսկ ի կատարածի խափանի շարժումն *Նոցա*. վասն այն անբան կենդանիք և տունկք խափանին: - 727. Նա՛խ՝ զի ապականեցան տարերք վասն յանցանաց մարդոյն, պա՛րտ է զի ընդ մարդոյն նորոգեսցին և *Նորա:* - 727. Վեցերորդ՝ գալարին երկինք՝ պատմելով զփառս աստուծոյ. և հաստատութիւնդ զարդար դատաստան *Նորա* յարարածս իւր: - 729. Ա՛յս է գալարիլն *Նոցա*, զի երկինք

և երկիր տիւ և գիշեր միաբանեալ վկայե՛ն գործոց մարդկան: - 729. Թէպէտ ո՛չ ունին բանք և ոչ խօսք, այլ ընդ ամենայն երկիր ել բարբառ վկայութեան *նոցա*. զի ամենայն տեղիք և ամենայն ժամանակք մարդկան առ *նոսա* է՛ յայտնի: - 729. Այլ և պարզէ՛ *զնոսա* որպէս ասացաւ: - 731. Եւ ո՛չ միայն խաչն, այլ և ամենայն գործիք չարչարանացն. այսինքն բևեռքն գեղարդն և այլք. որք բերին առաջի դատաւորին. և ի մարմին *նորա* երևին սպիք խոցուածոց *նորա*...: - 732. Դարձեալ յուշ առնէ մարդոյ զչարչարանքն քրիստոսի. և խնդրեսցի ի *նոցանէ* մահն քրիստոսի իբր զգին որ տըւեալ է *նոցա*, և *նոքա* յափշտակեցին զինքեանս ի նմանէ: - 732. Նա՛խ՝ զի ամենայն որ ի չորից տարերց է՝ կրէ՛ զապականութիւն. արդ խաչն փա՛յտ է և ի չորից տարերց. ապա ուրեմն ապականի և *նա՛:* - 732. Նախ դիմակայութեամբ եթէ՝ ո՛չ է ըստ օրինի բնութեան անապական մնալ *նմա*, այլ սքանչելիք աստուածային: - 733. Այսպէս և դ տարերք ըստ ինքեանց անապականք են. զի մասնաւորքն ի *նոցանէ* ապականին և դարձեալ ի *նոսա* խառնին. և այսոքիկ ըստ կամացն աստուծոյ են կամ մշտապէս: - 733. Նմանապէս և խաչն աստուծոյ՝ է՛ ի կամացն աստուծոյ և ի նորին ներգործութենէն որ անապական կամի *զնա*. զի *նովաւ* արար փրկութիւն ազգի մարդկան: - 733. Երկրորդ՝ զի աստուած զամենայն արարածս կրէ բանիւ զօրութեան իւրոյ ասէ առաքեալն և ի նոյնութեան պահէ. և սոքա պահին առանց միաւորութեան էութեան *նորա:* - 733. Ապա ուրեմն ևս առաւել խաչն մնայ անապական զի էութիւն աստուծոյ է ի *նմա*. այսինքն բանն աստուած մարմնովն որ է՛ սևեռեալ ի *նմա:* - 733. Երրորդ՝ զի խաչն այն մածեալ է արեամբն աստուածային. ըստ որում բևեռեցաւ ի *նմա:* - 733. Արդ եթէ խաչն ապականի, ապա և արիւնն որ ի *նմա:* - 733. Ուստի յայտ է թէ՝ զմարմին բանին ապականացու խոստովանին *նոքա*՝ որ զխաչն ապականացու ասեն. և են նեստորականք: - 733. Արդ *նա՛* որ զամենայն գերեզման կնքեալ պահէ, զեկեղեցիս օրհնէ՛ և հաստատէ՛ և ամենեցուն զօրաւիգն է ի փորձութիւնս, կարօ՛ղ է անապական լինիլ. զի աստուածային է նշան: - 733. Ա՛րդ՝ յայտնեալ է *նա* և որոշեալ ի մէջ ամենայն փայտից գոլ արմատ արդարութեան որով փրկեցաք ՙի բանսարկուէն: - 734. Ութերորդ՝ զի որ գործարան է մահու՝ *նա՛* է ապականացու: - 734. Արդ որ մայրն է կենդանութեան, *նա* անապական է. այսինքն է սուրբ խաչն: - 734. Իններորդ՝ զի դևք հալածական լինին ի զօրութենէ աստուածեան նշանին. և հրեշտակք սպասաւորեն *նմա*...: - 734. Որպէս յորժամ կայսր մտեալ ի քաղաք՝ թագ և այլ նշանք առաջի տարցին, որով գալուստ *նորա* ցուցանիցի: - 734. Եւ հրեշտակք զխաչն բարձեալ առաջի երթիցեն. և զմեռեալս՝ փողով և ձայնիւ ընդ առաջ *նորա* զարթուսցեն: - 734. ...յիրաւի է ուրեմն որում անիրաւութիւնն եղև առնել դատաստան վասն վրիժու. թէպէտ *նմա* հայր և հոգին սուրբ գործակից լինին: - 735. ...վասն որոյ *նմա՛* պարտ էր դատաւոր լինիլ և հատուցանել ըստ գործոց հաւատացելոց և անհաւատից: - 735. ...զի ի *նմա՛* է ծածկեալ ամենայն գանձք իմաստութեան և գիտութեանն աստուծոյ. վասն որոյ իմաստութիւնն քննէ և դատէ: - 735. Ութերորդ, զի որ *զնա՛* խաչեցին և սպանին, տեսցեն յայնժամ և իմասցեն թէ աստուածասպանք եղեն...: - 735. ...ապա պա՛րտ է ի *նա՛* ընկենուլ զդատաստան չարչարողացն մերոց և հալածողաց. և ուրախութեամբ տանիլ զլլկանս. և մի՛ մեզէն վրէժխնդիր լինիլ մեզ. - 735. Երկրորդ փառք է՝ զի հայր և հոգի ընդ *նմա* ի դատաստան գայցեն...: - 737. Երրորդ, բազմութիւնք երկնաւոր զօրացն ընդ *նմա* իջցեն...: - 737. Իններորդ, փա՛ռք է զդատաստանն առնել. զի *նմա* տըւաւ իշխանութիւն ասէ դանիէլ. և հայր ո՛չ զոք դատէ. այլ զամենայն ետ որդւոյ որպէս ցուցաւ: - 737. Տասներորդ, զի պսակէ՛ զսուրբս իւր և փառաւորի ի մէջ *նոցա*...: - 737. Նստի քրիստոս ի բարձրագոյն աթոռ ի վերայ օդոյդ, և սուրբքն ընդ աջմէ. այսինքն ի վեր ի փառս ընդ *նմա* ի վերայ օդոյդ. հաւատոյ և գործոյ թևո՛քն բարձրացեալ իբր զարծուի: - 738. Իսկ մեղաւորքն ի ձախմէ. այսինքն վայր ի յերկիր ծանրացեալ մեղօքն. որպէս կապար ի յերկիր հակեալ. ուր բոլորով սրտիւ սիրեցին *զնա:* - 738. Զի բոլոր Երրորդութիւնն դատէ՛ զմեղաւորս, և մարդկութեամբն խօսի ընդ *նոսա* քրիստոս: - 738. Այլ և որք ի մի խնամս վայելեցին յաստուծոյ. յարև և յանձրև. և ի մի տեղիք բնակեցան և մի պիտոյիւք շատացան. և *նոքա* զտուօղն ո՛չ ճանաչեցին: - 738. Երրորդ, հաւաստի արդարութեամբ. և այսպէս ամենայն սուրբք և հրեշտակք դատեսցեն *զնոսա* որք ի նոյն շաւիղն յանցաւոր գտան: - 738. Ոմանք դատին և դատապարտին. որպէս միջակք որք ունին հաւատ և ո՛չ գործք. որպէս չար հաւատացեալք. և որք ունին գործք և ո՛չ հաւատ. զի աստ հատուցաւ *նոցա:* - 739. Որք արտաքոյ օրինաց մեղանչեցին որպէս կռապաշտք՝ և հրէայքն որք յետ խաչելութեանն քրիստոսի. զի յետ խաչին պահպանութիւն օրինացն ի կռապաշտութիւն է համարեալ *նոցա:* - 739. Որք առին զօրէնս և ո՛չ պահեցին. որպէս չար քրիստոնեայք ի նորս և չար հրէայքն ի հինն...: - 739. *Նոցա* ասացի «եկա՛յք

օրհնեալք հօր իմոյ» և այլն: - 739. ...այսինքն ի քթթելական մեռանին և յառնեն. *զնոսա*՝ և զյառաջագոյն մեռեալսն դատէ՛: - 740. Ապա առաւել *նորա* որք չարչարեցին. զի մի՛ այլ և այլ կարծեսցեն: - 741. Մինչև յօր դատաստանին տեսանեն մեղաւորք փառս արդարոց ընդհանրապէս՝ այլ ո՛չ մասնաւորաբար. զի տեսանիցեն *զնոսա* ի մեծ փառս՝ այլ ո՛չ ի յորպիսիս: - 741. Իսկ յայսպիսի տեսութենէս ո՛չ ուրախանան, այլ տրտմին. և այս վասն նախանձու *նոցա* ընդ բարեբաստութիւնս այլոց: - 741. Իսկ յետ դատաստանին և այս ևս՝ բարձցի ի *նոցանէ* առ ի տանջանս իւրեանց. յորժամ անարժան համարեսցին նաև ի տեսանելն զայն: - 741. Որք որպէս գիրք յայնժամ բացեալք եղիցին. քանզի վարդապետութիւնք *նոցա* և օրինակք՝ ամենեցունց յայտնեսցին. ի յորս ամենեքեան իբրև ի գիրս տեսցեն թէ զի՞նչ պարտ էր առնել կամ խոտել ինքեանց: - 742. Իսկ գիրք կենաց է գիրքն քրիստոս. ի յորում ամենեքեան իբրև ի գիրս ընթերցցին թէ զինչ ի պատուիրանաց *նորա* արարին: - 742. Ի թաբօր մովսէս և եղիա վկայէին վասն մահու *նորա:* - 742. Երկրորդ, պատուիրանն աստուծոյ և օրէնքն է վկայ պահողացն և անարգողացն *զնա:* - 743. Ապա ուրեմն ճշմարիտ է դատաստան *նորա:* - 743. Ապա ուրեմն ուղիղ է դատաստան *նորա:* - 744. Դարձեալ՝ մեղանչեն ընդ դէմ յաւիտենականին աստուծոյ. վասն որոյ յաւիտեան պատժէ *զնոսա:* - 744. Դարձեալ՝ նիւթ հրոյն որ աղտ մեղաց, է՛ յաւիտենական. վասն այն յաւիտեան տանջէ *զնոսա:* - 744. Ապա ուրեմն յիրաւի և արդարապէս հատուցանէ աստուած չար փոխանակ չարեաց. այսինքն պատիժ վասն անիրաւութեան *նոցա*. զի արդար է աստուած: - 744. Եւ որպէս մեք յարաժամ միտեմք ի գործ բարութեան կամ չարութեան. և գործ *նորա* միտէ՛ յողորմութեան կամ արդարութեան հատուցումն. - 745. Չորրորդ, զի *նա*՛ արդարութեամբ հատուցանէ ի կատարածի. վասն որոյ կոչի կշիռք արդարութեան: - 746. Չորրորդ՝ ի վախճանի յորժամ հնազանդին *նմա* ամենայն և պսակէ զսուրբս իւր, ուրախ եղիցի տէր յարարածս իւր: - 748. ...զի որպէս ի հնձանի ամբարեալ է ի գիտութիւնն աստուծոյ՝ մեղաւորացն պատիժ. որ հեղու ի վերայ *նոցա*...: - 748. Ութերորդ՝ հնձան կոչի և աւազանն սուրբ. զի ի *նմա* ծնլին և կորնչին ամենայն մեղք մեր...: - 749. Մետասաներորդ, հնձան կոչի և հաւատն սուրբ. զի ի *նա*՛ հաւաքի ամենայն բան և գործք մեր. և ճմլեալ այսինքն քննեալ՝ լինի գինի ուրախարար աստուծոյ և հրեշտակաց: - 749. Նախ՝ զի կամ ննջելով հանգչին ի տանջանացն. իսկ անդ հատեալ է քուն յաչաց *նոցա:* - 750. Մարգարէն եսայի կրկին ասէ զհատուցումն մեղաց. նոյնպէս և ի տեսիլն. և վասն էր դաւիթ եօթնպատիկ ասէ հատուցանել ի ծոց *նոցա:* - 750. Երկրորդ՝ զի մարդկան ազգի կրկին է հատուցումն. այսինքն յայժմու կեանս և ի հանդերձեալն. իսկ դիւացն եօթնեկի է հատուցումն վասն եօթնեկի յանցանաց *նոցա*. և եօթն գլխաւորագոյն մեղացն: 750. Զի այնպէս ծանակեալ լիցի մարմին մեղաւորին, մինչ զի հոգին գարշեսցի առնուլ *զնա*. և որպէս ուրուկ և որդնալից այնպէս ո՛չ կամեսցի ունել զնա: - 751. Զի այնպէս ծանակեալ լիցի մարմին մեղաւորին, մինչ զի հոգին գարշեսցի առնուլ զնա. և որպէս ուրուկ և որդնալից այնպէս ո՛չ կամեսցի ունել *զնա:* - 751. Բարձումն յուսոյ և ամենայն փրկութեան նաև գոլն իսկ որում տենչան ամենայն ստեղծուածք՝ է՛ *նոցա* պատիժ. վասն զի խնդրեսցեն զմահ և ո՛չ գտանիցեն: - 751. Զի որպէս ձկունք ի ջուրս, այնպէս *նորա* կան ի հուր: - 752. Վասն երրորդին, զի նախանձ և ատելութիւն աստէն որպէս որդունք խածատեցին զընկերս. արժանապէս որդունքն անդ խածատեն *զնոսա:* - 752. Վասն իններորդին, որք աստ իւրաքանչիւր մեղօք գոյին շաղախեալք. արդարապէս ունին զիւրաքանչիւր անդամս կապանօք կաշկանդեալս. և ցանկան մեռանիլ և փախիցէ մահ ի *նոցանէ*: - 753. Եւ խոստովանութեամբ մեղաց սատակին և *նորա:* - 753. Որպէս գառն զմայրն, և *նորա* զծնօղս իւրեանց: - 753. Եւ որ քան գործեմք զմեղս, այնքան բազմանայ ծնունդն *նոցա*. և ծուլութիւն և հեշտութիւն մեր սնունդ է *նոցա:* - 753. Եւ յորժամ առաքին մեղաւորքն ի հուրն յաւիտենից, գտանեն զծնօղս իւրեանց որպէս գառինք զմարս, և յաւիտեան խածատեն *զնոսա:* - 753. Արդարքն տեսանեն *զնոսա* ի տանջանս և ուրախանան զի զերծան յայնմանէ. որպէս ցուցանի յառաջիկայդ: - 754. Ո՞չ ցաւին արդարքն ի տեսանելն *զնոսա* յայնպիսի տանջանս: - 754. Ո՞չ խնդրեն յաստուծոյ վասն *նոցա:* - 754. Մինչ ի յօրն դատաստանի աղօթեն արդարք վասն մեղաւորաց. այլ յետ այնորիկ վասն դատապարտելոցն ո՛չ խնդրեն ինչ. զի ընդ դէմ աստուծոյ գոլ իմանան վասն *նոցա* զխնդիրն: - 754. Եւ դարձեալ այնպէս միաւորեալք են ընդ աստուծոյ, որ դատաստանն աստուծոյ ամենայն իրօք հաճոյ թուի *նոցա.* վասն այսորիկ այնոքիւք ուրախ լինին: - 754. Այսքան վասն մեղաւորացն և տանջանաց *նոցա:* - 754. Եւ վասն այն ասի արքայութիւն, զի *նովաւ* յերկնաւորսն հանդերձեալ եմք թագաւորել: - 754. Սա՛ է մայր մեր եկեղեցի որ հոգևոր որդիս աստուծոյ օրըստօրէ

ծնանի. որ հասեալ ժառանգութեանն. ի բաց տանելով զաղախինն և զորդի *նորա:* - 756. Նա՛խ՝ զի առ *նոսա* միաւորեալ է քրիստոս իբր տէր ընդ ծառայս. իսկ միաւորի ընդ եկեղեցի իբր փեսայ ընդ հարսին. և գլուխ ընդ անդամոց: - 757. Երկրորդ, ընդ *նոսա* այլ ընդ այլո՛յ է միացեալ. իսկ ընդ եկեղեցի՝ առ բնութենակից և գոյակից: - 757. Զի թէ և սակաւ ժամ լինի մնացեալ ի կենացն որ քան աւազակին ի յելս շնչոյն. և *նա՛* յառաջ քան զամենայն արդարս եմուտ ի դրախտն աստուծոյ ընդ տեառն: - 758. Մի՛ է արքայութիւն, և մի ընդ դիմակ *նորա* դժոխք: - 758. Եւ *նորա* որք բազում համբաւեն դժոխս, մի ասեն գոլ արքայութիւն. պատճառելով եթէ՝ բարին մի է և չարն բազում: - 758. Եւ *նմա* աւանդել՝ յորում ծածկեա՛լ են ամենայն գանձք իմաստութեան. և որ քննէ զխորս աստուծոյ: - 759. Այլ ի *նոցանէ՛* անկաւ, որպէս ցուցաւ ի վերոյ **թ** գլուխն, **իբ** համարն: - 760. Ա՛րդ՝ ի տեղի անկելոց հրեշտակացն՝ ըստ թուոյ *նոցա* խառնելո՛ց են դասք կուսանաց սրբոց: - 760. Եւ յետ *նոցա* ամենայն բազմութեանց ժողովելոց յամենայն ազգաց ասէ. որք եկին ի բազում վշտաց աշխարհի. այսինքն որք զանազան առաքինութեամբ և բազում նեղութեամբ մտին ի հանգիստն: - 760. Երկրորդ վասն տեղւոյն. զի վերինն էմ է՛ ի բարձունս քան զարեգակն. վասն որոյ ո՛չ լուսաւորէ *զնոսա:* - 760. Որպէս ի թաբօր ծածկեաց զլոյս *նորա*. նոյնպէս և ի յարութեանն: - 760. Եւ զա՛յն է իմանալ թօթափիլ լուսաւորացն. զի յառաւել լուսոյ *նոցա*՝ ծածկին և ստուերանան *նորա:* - 760. Ի տեսութենէ արքային եռակի լիցի ուրախութիւն *նոցա:* - 762. Երրորդ ուրախութիւնն եղիցի ի տեսութենէ միաւորութեան մարդկային բնութեանն առ աստուածայինն. քանզի սքանչելի ուրախութիւն լինիցի ընտրելոցն, յորժամ ճանաչիցեն թէ եղբայր *նոցա* ըստ մարմնոյ՝ ճշմարիտ աստուած է: - 763. Մեծութիւն այսմ ուրախութեան կարէ՛ զմտաւ ածիլ յայնմանէ, զոր սովո՛ր են ծնօղք յորժամ որդիք *նոցա* լինին եպիսկոպոսունք կամ թագաւորք: - 763. Ուստի որդին աստուծոյ եկեալ թագաւորական աթոռովն և ամենայն թագակիցք ընդ *նմա:* - 763. Երրորդ յաղագս սիրելութեան ընկերացն այնոցիկ. զի այն քան եղիցի սէր ի մէջ *նոցա*, մինչ զի զուրախութիւնս *նոցա* ինքեանց համարեսցեն: - 764. Նախ եղիցի ուրախութիւն ի մարմնի, բաղդատելով առ այն որ եղիցի մերձ ինքեան. այսինքն զի ա՛յլ մարմինք փառաւորեալ առաջի *նորա* հրճուին: - 764. Երկրորդ այնու՝ զի թշնամիք *նոցա* տանջեսցին...: - 764. Երրորդ անդուստ՝ զի իբրև *նորա* որ այն քան տկարքն էին՝ սակայն յա՛յնպիսի թշնամին այն քան յաղթութիւնս գործեցին ըստ յոբայ: - 765. Ո՛չ է իշխանութիւն ի վերայ երկրի որ համեմատեսցի *նմա* որ եղև. զի ո՛չ յումեքէ երկնչիցի: - 765. Երկրորդ՝ ծառ կենաց են բնակիչք վերնոյն սիօնի. տնկեալք յաղբիւրն կենաց որ իջանէ յաթոռոյն աստուծոյ ի մէջ *նոցա*. ունելով զանմահ կեանս յաւիտենից: - 765. և Երկոտասան պտուղ, զի ո՛չ խափանէ *զնոսա* ձմեռն մեղաց: - 765. Ոռոգեալ ի բղխմանէ կենարար գետոյն. որ հեղու ի *նոսա* անսպառապէս: - 767. Եւ յամ և յամիս մշտակայ բոլորաձև՝ շարժումն *նոցա:* - 767. Իսկ տիւ և գիշեր, այսինքն արևապէս հասումն *նոցա*՝ տիւ է համարեալ. և անհասութիւն խորոցն աստուծոյ՝ գիշեր: - 767. Զի *նովաւ* զովացան ամենայն ազգք. և բժշկեցան վէրք հոգոց մարդկան: - 768. Դարձեալ, ծառ կենաց է աւետարանն սուրբ տնկեալ ի մէջ եկեղեցւոյ դրախտին. բերելով պտուղ կենաց զիմաստութիւնն երկնաւոր. որ կեանս տայ ճաշակողացն *զնա*. և միշտ շնորհս բժշկութեան և թողութեան մեղաց: - 768. Ղամպարք ի միում տան. և ուրուք շարժեցելոյ՝ ի *նոցանէ* լոյսն ո՛չ շարժի և ոչ բաժանի և ո՛չ հատանի թէ անջրպետ ոչ կայցէ ի միջի. և անդ ո՛չ է միջոց: - 770. Այլ ի հասարակ գրոյս՝ հասարակեաց և *նա* զկեանս առօրեայ. հասեալ ի գանձ իմաստից և յաղբիւրն գիտութեանց: - 772. Զի *նա՛* ծնաւ զմեզ ըստ բանի՝ բազմաջան երկօք. կրթեալ ի մամուլս վարժարանի և ի յոյսն կենդանի: - 773. Այլ ներկայական ոչ ինչ է առ *նոսա*. զի զյետոյսն մոռացեալ են: - 774. Իսկ թէ *նա* որ սկիզբն կորստեան ամենեցուն մեզ եղև և պատճառ ամենայն մեղաւորաց՝ ապրեցաւ շնորհօքն քրիստոսի. - 775. ...ասիցէ ոք, ապա զիա՞րդ ա՛յլք ի ծննդոց *նորա* որք ընդ նմա ի բանտէն ազատեցան, պատժապարտք գոլով...: - 75. Իսկ եթէ բաղդատելով ոք ասիցէ, թէ ի մարմնի գոլով ապաշխարեալ սրբեցաւ *նա* ի ներգործականէն իւրմէ մեղաց. և այս ո՛չ ուրէք երևի ցոյցք ի գիրս սուրբս: - 775-776. Իսկ յանցանել *նորա*՝ կորոյս զամենայն. ո՛չ միայն զխոստացեալն, այլ և զպարգևեալն. զի ըստ որում յանմեղութենէն մեղանչական գտաւ, այսպէս մահու և ապականութեան գրաւեցաւ: - 776. Եւ այսպէս քարշեալ եղև ի մեզ սկզբնականն մեղք՝ յանհնազանդութենէ հոգոյն և ի ցանկութենէ մարմնոյն. անցեալ ի ծնունդս *նորա* նիւթապէս ի մարմինս, և տեսակաբար ի հոգիս: - 776. Իսկ մարդասիրին աստուծոյ տեսեալ արտագունեալ զպատկեր իւր, կամեցաւ նորոգել *զնա:* - 776. Նա՛խ՝ որպէս ի վերոյ ասացաւ. զի թէ ադամ որ սկիզբն և պատճառ էր մեղաւորաց՝ ազատեցաւ. ապա ուրեմն և որդիքն որ վասն յանցանաց *նորա*՝ ազատեսցին: - 776.

Իններորդ, զի բռնութիւն սատանայի էր կապեալ *զնոսա*. և տէր մեր կապեաց *զնա* ընդ խաչափայտին. որ նա ինքն էր դրունք դժոխոց. ապա ուրեմն արձակեցան անտի: - 777. Զի մեղքն ադամայ թէպէտ սկզբնապէս առհասարակ բնութիւնս տարածեցաւ. այլ ո՛չ առաւել քան զայլոցն եղև. այսինքն որդւոցն *նորա*...: - 777. Եւ ո՛չ այս միայն, այլ և մեղքն ադամայ նուազ ևս քան զծննդոց *նորա* ըստ այսմ օրինակի: - 777. Քանակաւ, զի *նա՛* գործով, իսկ նոքա և գործով և հասեալ մեղօք...: - 777. Քանակաւ, զի նա՛ գործով, իսկ *նորա* և գործով և հասեալ մեղօք...: - 777. ...իսկ Օրինակաւ, զի *նմա* ո՛չ գոյր օրինակ յանցաւորաց. իսկ *նորա* տեսին զնա պատժեալ: - 777. ...իսկ Որքանութեամբ, զի *նա* միով և միանգամ. իսկ նոքա բազմօք և բազում անգամ: - 777. ...իսկ Պարագայիւ, զի *նա* ականայ և տգիտութեամբ. ուստի ո՛չ ունելով զգիտութիւն բարւոյ և չարի. իսկ *նորա* կամաւ և գիտութեամբ: - 777. ...իսկ Բաղդատութեամբ. որպէս է սկզբնականն առ ներգործականն մեղք. այսպէս ադամայն առ որդւոցն *նորա*: - 777. Զի առաջին ծեռամբն աստուծոյ *նա՛* արարաւ, և նա՛ միայն յանցեաւ. և *նմա՛* խոստացաւ փրկութիւն: - 778. Իսկ այլոցն հետևաբար *նմա՛*: - 778. Որ և ամենայն վերոյ գրեալքդ առակք, անառակին, մոլորելոյն, կորուսելոյն և այլն ևս, այսպէս ուղղին. այսինքն *նմա՛*, վասն *նմա՛*, որպէս *նմա՛*: - 778. Ապա ուրեմն ողորմութեամբ և արդարութեամբ ազատեցաւ նախահայրն յաւիտեան. իսկ այլքն առ ժամանակ մի ողորմութեամբ վասն *նորա* որպէս ասացաւ: - 778. Եւ այն զի՞նչ իցէ, զի սա միշտ մի և նոյնպէս մնայ. իսկ *նա՛* աստանօր ողորմի զղջացելոցն, և ո՛չ ոչ նոյնպիսոյն. իսկ անդանօր ո՛չ զղջացելոց ողորմի մարդկան մեղաւորաց և ոչ անզղջից անմարմնոց շեղելոց: - 778. Իսկ աստուած ո՛չ փոխեաց զխորհուրդն իւր որ էր յաւիտենական. այլ վճիռն որ հայէր ի պատիժ արժանեաց *նոցա*: - 779. Զի յորժամ ինքեանք փոխեցան, փոխեցաւ և ըստ *նոցա* պատիժն ասացեալ. այսպէս և ամենայն ուրէք տեսցես: - 779. Եւ թէ նայիս մտօք, թէպէտ առ մեզ փոփոխին տիւ և գիշեր. այլ *նա* միշտ լոյս և միշտ գիշեր կազմէ...: - 779. Զի *զնոսա* փառաւորէ՛ ի վեր քան զարժանն, և *զնոսա* դատապարտէ՛ սակաւ քան զարժանն. և է՛ այս ողորմութիւն: - 779. Այլ որ քան և կարասցէ ոք զմիտս ուղղել. խօսակցելով առ *նա*, հաճո՛յ է աստուծոյ: - 779. Իսկ այլ բազում ժամք ի դատարկութեան՝ ո՛չ է հաճոյ *նմա*: - 779-780. Ասեմք թէ այո՛. զի անկումն *նոցա* մահ է *նոցա*. այսու հաւասարք: - 780. ...զի ո՛չ միայն էառ զբնութիւնս. այլ և *զնոսա* որ շուրջ զբնութեամբն. զի ծանիցի կատարելութիւն առաքինութեանն, և ճշմարտապէս մարդ գոլ: - 781. Եւ ոմանք յորոց սրբազան առաջնորդն մեր, պակասութիւն ասաց գոլ զորս յետոյ կրեցին անդամք *նորա*...: - 781. Եւ այլևս յարմար տեղւոյս այսպէս իմանի. զի սուրբ հարքն առաջինք պակաս ունէին զչարչարանս. վասն որոյ ո՛չ կարէին փրկիլ. իսկ քրիստոս եղեալ ըստ մարմնոյ որդի *նոցա*, զպակասութիւն հարցն չարչարանաց յիւրում մարմնի էլից: - 781. Եւ ի վճարման պակասութեանց *նոցա* ասաց, «ամենայն ինչ կատարեալ է». այսինքն վճարեալ: - 781. Զի թէ կորուսեալ էր, այսինքն բարձեալ ամենևին յազգէն ադամայ, ուստի՞ գոյր որդւոց *նորա*. կամ ո՞րպէս առ ջրհեղեղաւն բառնիւր բարձեալն: - 782. Զորօրինակ, ժանգ հայելւոյ ո՛չ զընդունակութիւնն բառնայ, այլ զտեսութիւնն. և յետ սրբելոյն, նոյն ծածկեալն երևի ի *նմա*: - 782. Այսպէս և ժանգ յանցանաց մկրտելոց և քահանայից՝ բառնայ զգործ՝ կամ զնշանակութիւն շնորհացն. իսկ յետ սրբութեան զղջմամբ՝ զիա՞րդ կրկնի ունակացեալն ի *նմա՛*: - 782. Շնորհքն որ տւաւ ադամայ, փոփոխական էր ըստ *նմա*: - 783. Նորս խորհրդոյ շնորհք ոմանք են անիբաց դնելիք. զի են կնիք ի հոգին անփոփոխ գոլով ընդ *նմա*. որպէս է՛ շնորհք կնքոյն դրոշմին և կարգին: - 783. Ասի ի գիրս սուրբս թէ՝ ի կատարածի յանուն յիսուս քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի. և ամենայն լեզու խոստովանեսցի *զնա* աստուած: - 783. Իսկ եթէ ոչ են վարձատրելի, ապա զիա՞րդ վասն *նոցա* անհնազանդութեանն անհնազանդ կոչի և ինքն որդի հօր: - 784. Զի՞նչ օգուտ է և հաւատալ *նոցա*: - 784. Իսկ թէ իցէ հաւատ դիւաց, գո՛յ մտածել տղայական կարծեօք՝ թէ անկումն *նոցա* եղև հաւատոց պատճառ է որ է՛ սուտ: - 784. Երկրորդ, զի անկումն դիւաց մահ է *նոցա*. և յետ մահու ո՛չ է հաւատ. ուրեմն և ո՛չ ի դևս: - 784. Տասներորդ, հաւատն է աստիճանք հաւատոյն. այլ դնն ո՛չ հաւատայ *նոցա*: - 784. Եւ է՛ նրբահայեաց գիտութիւն *նոցա*: - 784. Եւ ո՛չ այս միայն, այլ և ի կոչմանն զօրութենէ առ որդւովքն սկևեայ հալածեին *նորա*: - 784. Յորում թէ վասն է՞ր իննամսեայ ծնանին, կամ յաւուր **խ** շնչաբերին, և որպիսութիւնք *նոցա*: - 785. Բարւոք ասացաւ յարարչէն. զի թէ և բնութիւն թարց երևակայութեան, և արհեստ հանդերձ երևակայութեամբ, սակայն կամք արարչական ետ *նոցա* բնական և բանական կարողութիւն. և ոչ ինչ վայրապար կազմեն զտեսակ գոյացական և զտեսակ պատահական. խնդրելով ոմն պարզ նիւթ. և ոմն տեսակացեալ: - 786. Ըստ աստուածեղէն տառից՝

արարաւ էգն ի յարուէն ամենայնիւ նման *նմա* օգնական: - 786. Յաղագս որոյ որ ինչ գոյ միոյն յայտնի և ներգործական մասունք, գոն *նորա* և միւսոյն բնաւորապէս ծածուկ և զօրութեամբ: - 786. Առ այսոքիւք, թէ արտասուքն որ յաչացն հեղու, ընդէ՞ր աղի գոլով, Ո՛չ միայն զվասն էրն խնդրեմ. այլ և զորպէսն դառնալ *նմա* աղի ընդ երակս աչաց: - 786. Որպէս յա՛յտ է ի ծխոյ և ի փոշւոյ և յայլոց. ընդ դէմ գոլոյ պարզութեանցն լուսոյ՝ ի ներքս մտեալ զկծեցուցանէ *զնա:* - 786-787. Իսկ ի ներքուստ, ի լինիլ տրտմութեանց՝ խուճապեալ մարմնոյն հոսի մաղձ դառն ի ստամոքս որովայնի. և վերացեալ գոլորշեաց *նորա* զօրէն շոգոլեաց պուտկի առ խելապատակս գլխոյ...: - 787. Փոխանակ խրախութեանց ճիչ աղաղակի ընդդէմ հեշտալեաց. անհանգիստ ի խշտի՝ յերեկօրեայ զառաւօտ խնդրէաք. և ի *նմա* զեռանդ երանեալք: - 789

***ՆԱ ԻՆՔՆ*** - Ուրեմն *նա ինքն* հաւատարիմ մնայ, ուրանալ զանձն իւր ո՛չ կարէ: - 76. Զի՞նչ է որ եփրեմ ի գիրս կցորդաց ասէ, Մելքիսեդեկ՝ որ *նա՛ ինքն* է սեմ: - 300. Ա՛յն է որ կաղք և կոյրք ընդ դէմ դարձան դաւթի և անարգանօք ասէին՝ մի՛ մտցէ դաւիթ ի քաղաքս. որ *նա՛ ինքն* է երեսուղէմ. որ եղև տուն տեառն: - 431. Իններորդ, զի բռնութիւն սատանայի էր կապեալ զնոսա. և տէր մեր կապեաց զնա ընդ խաչափայտին. որ *նա ինքն* էր դրունք դժոխոց. ապա ուրեմն արձակեցան անտի: - 777

***ՆԱԵՎ +*** Ա՛րդ՝ թէ ամենայն ո՛չ լինի ճշմարիտ, *նաև* մի բանն ո՛չ լինի ճշմարիտ: - 8. Վեշտասաներորդ՝ զի թէ չարն է յաստուծոյ որպէս բարին, և երկուցն սկիզբն է աստուած, և արդ՝ եթէ միևնոյն է սկիզբն երկուցն, անկարելի է ներհակացն ի միասին ունիլ մի սկիզբն. զի լինէր սկիզբն այն ո՛չ պարզ. այլ երկատեսակ. և ո՛չ միեղէն՝ այլ բաժանեալ և այլայլեալ. *նաև* լինէր ինքն ինքեան հակառակ, և յառաջ եկելոցն ի նմանէ: - 14. Որև առարկեն Նախ այսպէս, եթէ պատճառն է հարկաւոր. *նաև* ներգործութիւն նորին: - 15. Դարձեալ ասեմք թէ՝ աստուած ստեղծ զկամքն *նաև* զհրեշտակս և զմարդիկ բարի. և կամի զբարին և բռնադատէ՛ սիրել զբարին: - 17. *Նաև* մարդկան չարեաց թոյլ տալ. զի կամ ընտրեսցեն զբարիս՝ կամ յետոյ զղջասցին. և այլ պէսպէս նախախնամութեամբ որպէս ինքն գիտէ աստուած՝ ներէ՛ չարեաց. որպէս տեսանելոց եմք յառաջիկայսդ: - 17. *Նաև* սէր աշխարհիս և փառաց՝ ո՛չ ետ թոյլ հաւատալ...: - 32. *Նաև* որք ի ճգունս նահատակին. որպէս պօղոս՝ անտօն՝ և այլքն: - 50. *Նաև* մարդիկ ո՛չ միայն զի ի բազմաց են գոյացեալ, այլ և ժամանակաւ առաւելք մի քան զմի. և կամօք բաժանեալք և ի միմեանց և իրերաց հակառակք: - 54. *Նաև* բնական քննութեամբ. զի յորժամ ասես՝ մի և մի՝ եղև երկու. և այժմ ունի զերկուին բնութիւն: - 55. *Նաև* ի կանոն երից սուրբ ժողովոցն՝ *ընդ* բանիւ արգելեալք կան նոքա՝ որ ա՛յլ կերպիւ քարոզեն և այլ կերպիւ ուսուցանեն քան զոր նոքա ուսուցանեն: - 64. *Նաև* աշակերտքն. որպէս պետրոս որ դաւանեաց զքրիստոս որդի աստուծոյ: - 68. *Նաև* հեռանալ ի փրկութենէ նորին: - 90. Զա՛յս հարցեր, եթէ մասունքն քրիստոսի աստուած են, *նաև* բազմաստուած էք. զի բազում են մասունքն: - 92. *Նա՛և* մասն զբոլորին կոչմունքն ստանայ: - 92. *Նա՛և* ո՛չ մարմինն որիշ յօծողէն կոչեսցի օծեալ: - 94. Դարձեալ՝ և այսպէս տեսանի աստուած. յորժամ միտք յամենայն եղելոց որոշեսցի. *նաև* յինքենէ՛ զի եղակա՛ն է. թողեալ զինքն միաւորեսցի յաստուածային ճառագայթն որ անքննելի լոյսն է և իմաստութիւնն: - 119. Եւ միջնորդ հաշտութեան է քրիստոս աստուծոյ և մարդկան. այլև հրեշտակաց և մարդկան. *նաև* հրէից և հեթանոսաց: - 126. Եւ թէ ոք ասիցէ, վասն էր մարդիկք հրեշտակք կոչին. *նաև* հրեշտակք աստուած՝ որ վերնոցն են կոչմունք: - 136. Իսկ բանիւ գործոյ խօսի աստուած ընդ դիւին. *նա՛և* հրեշտակք ընդ սատանայի. որպէս որոտ և կայծակունք հրոյ ի վերայ նոցա...: - 145. *Նաև* անբարիշտ կամք նորա դարձել է յատելութիւն և ի նախանձ մարդոյն. զի ամենայն ջանիւ նկրտի ի կործանումն նորա բազմադիմի փորձութեամբ: - 146. Իններորդ՝ կենսատու չարչարանաց ժամանակ. թաղման և յարութեան. *նաև* համբարձմանն: - 196. Յորժամ արար աստուած զմարդն ի հողոյ, *նաև* զանասունքն և զգազանքն ի հողոյ. նոյնպէս զլողակս և զթռչունս ի ջրոյ: - 214. Հինգերորդ՝ սպիտակ ճրագուն. զի հո՛վ է բնութեամբ զջերմութիւն աչացն բարեխառնէ. *նա և* գեղեցկացուցանէ՛: - 239. *Նաև* կնատ վատասրտաց: - 247. *Նա՛և* այսու թըւով տունկք երից ամաց տան զպտուղս: - 262. *Նաև* ըստ երից դրութեանց տեղեացն. որ է՛ դրախտն. և աշխարհս այս. և հանդերձեալն: - 278. *Նաև* յեգիպտոս **ղճ** ամ խոստացաւ ծառայութեան. և զերեսուն ամն յաւել վասն մեղաց ժողովրդեանն: - 292. *Նաև* ո՛չ ևս գային զի տկարացեալ էր յախտիցն արուեստ նոցա: - 323. Իսկ հրեշտակք կարե՛ն փոխել զմիտս և շրջել ի բարին. *նաև* զերևակայութիւնս և զզգայարանս, այլ ո՛չ զկամս: - 336. *Նաև* վասն անարգանաց մօրն իւրեանց սառայի: - 336. *Նաև* ո՛չ փայտ և ո՛չ արծաթ: - 366. Ութերորդ՝ մովսէս ի լեառն եկաց **խ** տիւ և **խ** գիշեր անսուաղ. և կերակրիւր բանիւն աստուծոյ.

նոյնպէս և եղիա. *Նաւ* տէր մեր ի փործութեան լերինն: - 397. *նաւ* զընտանիսի աքարայ պատժեաց. զի և նոքա ո՛չ խոստովանեցան զգողօնքն: - 415. Եւ դևք ո՛չ միայն զապագայն ոչ գիտեն, այլ և զներկայ խորհուրդն ո՛չ ճանաչեն. *Նաւ* զանցեալ ճշմարիտն և զբարին ի միտ ո՛չ ունին: - 428. *նաւ* վերակացուք նոցա գռ և զճ: - 440. *նաւ* յանձեռագործ խորանն հրաւիրէր զսիրելիս իւր: - 442. *նաւ* ունէր զշնորհս սրբութեան արգանդին. զի յորովայնէ՛ սրբեցաւ յարգանդէ: - 462. Ա՛րդ՝ եթէ ծնեալն աստուած է, *Նա՛ւ* ծնօղն աստուածածին է. և անդրադարձեալ: - 466. *նաւ* փայտն որով զերկաթն ի յորդանանէ՛ վերածեաց: - 494. *նաւ* յետ յարութեանն եկեր ընդ աշակերտսն անապական մարմնովն: - 501. Ասեմք, եթէ խոցուածն և արիւնն ցուցակ ապականութեան են, ապա և զայս խոցուածս եցոյց յետ յարութեանն. *Նաւ* ի կատարածի ցուցանելոյց է զամենայն խոցուածս վիրացն...: - 502-503. Երկրորդ՝ եթէ սկզբնաչարն սատանայ է ամենայն մեղաց պատճառ և ո՛չ տանջի մինչ ի կատարած. *Նաւ* ո՛չ մարդիկ: - 507. Երկրորդ՝ զի փոխեալ է որպիսութիւն մարդոյն. զի ո՛չ կարէ մեռանիլ. նոյնպէս և ո՛չ կարէ արդարանալ ըստ ինքեան. *Նաւ* ո՛չ մեղանչել: - 508. *նա՛ւ* բազում տեսակք են ի ջուրս և ի յօդս. որպէս չղջիկանն առանց արեան է կե՛ր զամենայն: - 511. *նաւ* մեք յաղագս երից պատճառաց պատւեմք զօրս զայս: - 524. Երրորդ՝ վասն զի օրինա՛կ է **է** աւուրցն ի յորս երկիր հիմնեցաւ. *Նաւ* **է** դարու կենցաղոյս: - 524. Երրորդ, դիւական. որպէս կռոց սուտ մարգարէքն. սեդեկիայն և այլոց բազմաց. որ այժմ երևին ի պատասխանիս կախարդաց. *Նաւ* հաւկռիչք և գարէդիւթք. որք են բնաւ սուտք և ոչինչք: - 536. Առաքելոյն պետրոսի հնազա՛նդ եմք որպէս քրիստոսի. *Նաւ* պօղոսի և ամենայն առաքելոցն և աշակերտացն ամենեցուն և հետևողաց նորա և աթոռոց նոցա: - 547. Այլ արդ լուծումն պահոցս այսոցիկ օրէնք է նոցա. *Նաւ* ի ծունկն և ի ձէթ և յայլ սոյնպիսիս: - 552. *նաւ* զամենայն գլխաւոր մեղս ընդ հզօր խորհուրդ ասէ սուրբն եւագրիոս. վասն զի նախ ի խորհուրդն տնկի ամենայն սերմն մեղաց. և ապա ի մարմինն բուսանի և աճէ: - 557. *նաւ* ասեն թէ՝ վասն փառաց աստուածանալոյն մեղանչեաց ադամ. և վասն նախանձու առն՝ կինն նախ եկեր զպտուղն: - 561. *նաւ* ի յայն որում թողեալ լինի՝ **բ** ինչ պահանջի. այսինքն ցաւ վասն գործելոցն, և մտադիւրութիւն վասն ոչ գործելոցն...: - 567. *նաւ* յարութիւն մարմնոյ: - 573. *նաւ* հոգւոյ և մարմնոյ փառաւորութիւն: - 573. Դարձեալ կոչին յանձնառականք. որ ի պատուիրելոյ ումեք զոյ ողջախոհ. այլ զպատճառն ո՛չ գիտէ. *Նաւ* ո՛չ հետևին միմեանց: - 582. *նաւ* կատարեալ խոստովանութիւնն ունի զերիս մասունս ապաշխարութեան: - 603. *նաւ* տէրն կացոյց զայս կարգս. յորժամ ի լերինն զարքայութիւնն երկնից աւետարանեաց նոցա: - 606. *նաւ* յարքայութենէն արտաքսին ամենայն մեղօք մեռեալք: - 617. *նաւ* բերանն դառնանայ և չորանայ տրտմեցելոյն. զի չո՛ր է և դառն...: - 620. *նաւ* ի հայք ի ժողովն դվնայ հաստատեցին ի սուրբն աստուածն խաչեցար ասել ստուգապէս: - 631. *նաւ* պատճառին. թէ խրատական է. թէ աւաղական. թէ սպառնական. թէ ողոքական. թէ ըղձական. և այլ այսպիսիք: - 643. Եւ ի նորս՝ ի չորեքշաբաթ և յուրբաթ փոխեցին առաքեալքն. որպէս յա՛յտ է յառաքելական կանոնս. *Նաւ* ի նիկիականն: - 652. *նաւ* բժշկութիւնն բազում անգամ ժուժկալութիւն ուսուցանէ ընդդէմ անչափութեան կերակրոց. - 665. *նաւ* պաղատիտս թզոյ եդաւ ի վերայ վիրացն եզեկիայի և ողջացաւ: - 665. *նաւ* ի տխրիլն զձեռն ի ծնօտն եդեալ, - 670. *նաւ* **գ** զօրութիւնք են տնկականին. այսինքն կերակրիլն, աճիլն, և ծնանիլն. և մեք ունիմք զայս: - 681. *նաւ* երիւք լինի թողութիւն մեղաց. այսինքն զղջմամբ խոստովանութեամբ և ապաշխարութեամբ. որ լինի մտօք բանիւ և գործով: - 681. *նաւ* ո՛չ դատաստան. զի ո՞ւմ լիցի դատաստան. զի ամենեցուն վճարեալ է: - 694. Եւ հետևի հազարամեայ արքայութիւնն որոգինի. *Նաւ* փոխիլն ի տանջանաց: - 694. *նաւ* մշակ ասելն, զի հոգին առանց մարմնոյն ո՛չ ինչ է աշխատեալ. վասն որոյ և զվարձն հոգւոյն և մարմնոյն տայ: - 696. *նաւ* զվարձն համանգամայն ետ մշակացն: - 696. Այլ թէ ոչ գոյ դատաստան, *Նաւ* ոչ յարութիւն մարմնոյ. և ոչ հատուցումն գործոյ. ապա և ո՛չ գալուստն քրիստոսի որպէս ասէ սուրբն կիւրեղ: - 700. *նաւ* խոստովանեսցի զինքն զոլ քրիստոս և ճշմարիտ որդի աստուծոյ: - 707. *նաւ* անդանօր ետես նախանըկար տեսչութեամբ զորքանութիւն մարդկան ըստ թւոյ: - 716. *նաւ* վկայէ՛ մարգարէն «եղիցի երկիր նոր և երկին նոր» ապա յա՛յտ է զի ո՛չ ապականին և խաւարին...: - 728. *նաւ* համապայծառ լոյս Երրորդութեանն ծածկէ՛ զամենայն լոյս լուսաւորացդ. զա՛յն ասէ խաւարումն արեգական և լուսնի և աստեղաց. զոր օրինակ՝ լոյս ճրագի ծածկի մերձ եկեալ լուսոյ արևու: - 728. Իսկ զմարդկութիւնն քրիստոսի տեսանեն, *Նաւ* զխոցուածն, վասն **բ** պատճառի: - 740. Իսկ յետ դատաստանին և այս ևս՝ բարձցի ի նոցանէ առ ի տանջանս իւրեանց. յորժամ անարժան համարեսցին *Նաւ* ի տեսանելն զայն: - 741. Երրորդ՝ զի նիւթ հրոյն և այրելիքն որ է աղտ մեղացն՝ *Նաւ*

մեղաւորքն՝ են յաւիտենական: - 750. Բարձումն յուսոյ և ամենայն փրկութեան *Նաև* գոլն իսկ որում տենչան ամենայն ստեղծուածք՝ է՛ նոցա պատիժ. վասն զի խնդրեսցեն զմահ և ո՛չ գտանիցեն: - 751. Առ այս ասեմք, թէպէտ է՛ ամենայն իր բնութեամբ *նա՛ և* հասարակ. որպէս և սևութիւն ագռաւու. այլ ո՛չ անդրադարձեալ. զի է՛ ինչ բնութեամբ, այլ ո՛չ հասարակ. որպէս կնտութիւն մարդոյ: - 774. Եւ թէ այս ո՛չ է գրեալ, *նա՛ և* ո՛չ այն եթէ մեղանչեաց ուրէք զամենայն կեանս իւր բաց ի միոյն. և ո՛չ մեղանչելն կրկին՝ ապաշխարութիւն է առաջնոյն: - 778

**ՆԱԲԱԴ, ՆԱԲԱԹ, ՆԱԲԱՏ** - Նոր օրինել քահանայից և եկեղեցոյ. *Նաբադ* և աբիուդ այրեցան: - 284. Վասն է՞ր այրեցան *նաբաթ* և աբիութ որդիքն ահարօնի: - 364. Առաջին րոբոված որդին *նաբատայ*. և այլք ընդ նմա թագաւորք ի: - 446. Եւ եղև քոյր սորա եղիսաբեթ կին ահարօնի քահանայի. յորմէ ծնաւ *նաբաթ* և աբիուդ. եղիազար և իթամար քահանայք: - 452. Իսամարիայ **ժ** ազգին տիրէ՛ րոբոված որդին *նաբատայ*. որք կոչեցան թագաւորք իսրայէլի չարք և ո՛չ բարիք: - 452

**ՆԱԲՈՒԳՈԴՈՆՈՍՈՐ** - Որպէս տուրքն *նաբուգոդոնոսորայ*. և աղօթքն եզեկիայ. որ յետս դարձոյց զմահ. և այլք բազումք. ապա ուրեմն ո՛չ է հարկ: - 11. Հինգերորդ՝ *նաբուգոդոնոսոր*: - 28. Երկրորդ ա՛յն է՝ որ յորժամ լինի կամքն մարդոյն չար և խիստ ի ծածուկ, և զայն յայտնէ՛ աստուած. որպէս *նաբուգոդոնոսորայ*. որ ունէր սիրտ գազանի՝ ի կերպարանս գազանաց փոխեցաւ: - 336. Երկրորդ՝ զի իջցէ ի գերեզման և մի՛ տեսցէ զչարիքն որ ի ձեռն *նաբուգոդոնոսորայ* գալո՛ց էր ի վերայ երուսաղէմի. որպէս յայտ է ի պատմութիւնն: - 446. Եւ յետ գերութեանն իսրայէլի անցեալ ամք **ճլե**, եկ արքայն բաբիլացւոց *նաբուգոդոնոսոր* ի վերայ երուսաղէմի. ի **ժ** ամի թագաւորութեանն յովակիմայ. և էառ հարկ ի նմանէ. և զմեծ մասն սրբութեանց տաճարին աւերեաց: - 447. Արդ յերեքտասան ամէ՛ ովսիա մինչև ցմետասան ամն սեդեկիայ որ վերջին գերեցաւ՝ լինի **խ** ամ. և *նաբուգոդոնոսորայն* ի ամ. և որդւոց և թոռանց նորին **ժ** ամ. որ կատարի **հ** ամ մինչև յառաջին ամն կիւրոսի որ արձակեաց զգերիսն: - 447. Եղիակիմ որ և յովակիմ ամս **ժթ**. ի սորա **ժ** ամին *նաբուգոդոնոսոր* զիրէաստան հնազանդեաց. և հարկ առեալ յեղիակիմայ գնաց: - 453. Դարձեալ եկ *նաբուգոդոնոսոր* և էառ զյովակիմ գերի: - 453. Յերկոտասան ամին սեդեկիայ՝ *նաբուգոդոնոսոր* քաղդէացի էառ զերուսաղէմ և զտաճարն հրձիգ առնէ: - 453. Յետ **ի** ամի գերութեանն մեռաւ *նաբուգոդոնոսոր*: - 453

**ՆԱԲՈՒԶԱՐԴԱՆ** - Եւ յետ **ե** ամսոյ՝ *նաբուզարդան* դահճապետն հրձիգ արար զերուսաղէմ և զտաճարն և զտուն թագաւորացն. և զպարիսպն կործանեաց. և զսիւնսն պղնձի և զաւազանն և զամենայն կահ պղնձի և արծաթի տարաւ ի բաբիլօն: - 447

**ՆԱԶԱՐԵԹ** - Իսկ ոմանք յետ ծննդեանն ի կուսէն ասեն օծեալ զքրիստոս ի մկրտութեանն. վկայ բերելով «զյիսուս որ ի *նազարեթէ*, զոր էօծ աստուած հոգւով և զօրութեամբ»: - 475

**ՆԱԶԵԼԻ +** Համեստութիւն է որով զպարկեշտ ամօթխածութիւնն ստանայ և *զնազելի* պատկառանս: - 581. ...այլ սիրելիք են բարի գործօք առ հասարակ հաւատացեալքն. և *նազելիք* կուսութեամբ ճգնեալքն և մարտիրոսքն: - 600. ...իսկ զկուսութիւն և զմարտիրոսութիւն *նազելեացն* հրամայէ...: - 600. Գիր քոյոյ վսեմամիտ խոհեմութեանդ ո՛վ արփիածին հարազատ, և վերնոյն սիօնի *նազելի* զաւակ Գէորգէոս Րաբունեաց պետ: - 773

**ՆԱԶԵՐԵԹԱՑԻ** - Եւ ի *նազերեթացոց* ժողովրդանոցին դպիր ցուցաւ ի կարդալն զեսայի մարգարէն՝ յոտն և բացաւ գլխով: - 606

**ՆԱԹԱՆ** - Վասն է՞ր յանդիմանեաց աստուած զդաւիթ ի ձեռն *նաթան* մարգարէի: - 432. Եւ վասն զի *նաթան* շարժեաց ի զղջումն՝ զկէս պատժոյն կրեաց: - 432. Երրորդ՝ զի տէր գրգռեաց զնա որպէս *զնաթան*: - 433. Չորրորդ՝ զոր ծածկեաց *նաթան* յայտնեաց սիմէի և եւիգ: - 433. Մատթէոս ի սողոմոնէ՛ իջանէ առ յովսէփ, և Ղուկաս ի *նաթանայ:* - 460. Զի ի ցեղէն *նաթանայ* որդւոյ դաւթի այրն ոմն անուն դևի՝ ծնաւ երկուս որդիս. զմելքի և զպանթեր: - 460. Եւ յետ մահուանն մատթանայ՝ մելքի ի ցեղէն *նաթանայ* որ որդի էր ղևեայ և եղբայր պանթերայ, առեալ զնոյն կին մատթանայ և ծնաւ զելի: - 460. Յակոբ ի ցեղէն սողոմոնի որդի մատթանայ. և Ելի ի ցեղէն *նաթանայ* որդի մելքեայ: - 460. Եւ ելի մեռաւ անորդի որ էր յազգէն *նաթանայ:* - 460. Եւ այսպէս յովսէփ բնութեամբ որդի էր յակոբայ և ի ցեղէն սողոմոնի. և օրինօք որդի էր ելեայ որ ի *նաթանայ:* - 460. Եւ այսպէս **բ** եղբօր թոռունք էին Մարիամ կոյսն և Յովսէփ ի հաւր կողմանէ մելքեայ և պանթերի ի *նաթանայ:* - 460. Իսկ յովակիմ արդարն էր ի թագաւորական ցեղէն յուդայի **լը** երրորդ ի թոռանց *նաթանայ* որդւոյն դաւթի փառաւոր և մեծատուն յոյժ: - 460-461

**ՆԱԽ +** *Նախ* առհասարակ հանդիպիմք ընդդիմութեանցն, եթէ որք զայս ասեն՝ մեղանչեն չորիւք

եղանակօք: - 8. *Նա՛խ*, զի ըստ սոցա ոչինչ է զանազանութիւն մշտնջենաւորացն և փոփոխականացն. որք են երկնայինք և երկրաւորք. զի նոքա միա՛յն են ի հարկէ, որք միշտ նոյնպէս ունին. որպէս հրեշտակք անմահք. և լուսաւորք երկնից. և ջերմութիւն հրոյ: - 8. Եւ *նախ* առ նոսա՝ որք ասեն զբանս մեր ի հարկէ գոլ կամ ո՛չ գոլ: - 8. *Նախ*՝ եթէ լինէր բանս մեր ի հարկէ ճշմարիտ, նա ո՛չ մինն միայն, այլև ամենայն բան զինչ ասէաք՝ ճշմարիտ լինէր. որպէս շինել քաղաք, կամ ո՛չ շինել. տընկել այգի, կամ ո՛չ տնկել: - 8. *Նախ* ա՛յսպէս ընդդիմանան: - 10. Ասեմք առ այս, եթէ՝ ամենայն ինչ որ լինի՝ ունի պատճառ. և *նախ* է պատճառն քան զպատճառելին...: - 10. *Նախ*՝ եթէ չար հիւանդութիւնն և այլն ի հարկէ՛ է, ապա ամենեցուն նոյնպէս պարտ էր գոլ. զի հարկն նոյն է առ ամենեսեան: - 11. *Նախ* թէ՝ երկնային մարմինքն ո՛չ են ի չորից տարրաց. այլ են հինգերորդ տարր կամ էութիւն ըստ արիստոտէլի...: - 12. *Նախ*՝ եթէ դու քեզէ՛ն խոստովանեցար եթէ ոչ գոյ հարկ. այլ՝ աստուած և բնութիւնն և արհեստն նս ներգործեն. ապա թէ է գործ արհեստի և բնութեան, ո՛չ է հարկ բախտի և ճակատագրի: - 13. *Նախ*՝ զի բարին էութիւն է. ուստի յա՛յտ է՝ զի հակադարձին առ միմեանս. զի ամենայն որ բարի՛ է՝ **է է**. և ամենայն որ **է է**՝ բարի՛ է: - 13. Այլ արդ՝ որ հակակայութեամբ լինի՝ *նա՛խ* է զօրութեամբ՝ և ապա՛ ներգործութեամբ լինի: - 14. Որև առարկեն *Նախ* այսպէս, եթէ պատճառն է հարկաւոր. նաև ներգործութիւն նորին: - 15. Ասեմք առ այս *նախ*՝ եթէ կրկին է պատճառ. հուպ և հեռի: - 15. Զորօրինակ՝ թէ բազում մարդիկ անցանեն զճանապարհայն, և մերձ կացեալն տեսանէ *նախ* զմինն՝ և ապա զերկուսն՝ և որ զկնի: - 15. *Նախ*՝ թէպէտ աստուած տեսանէ զամենայն նախատեսութեամբ և ո՛չ ինչէ արտաքոյ տեսութեանն աստուծոյ, սակայն տեսանէ զոմանս ի հարկէ՝ և զոմանս ի ներընդունակութիւնէ լինիլ: - 15. *Նախ* եթէ կամացն աստուծոյ ոչ ոք է ընդդէմ. և որպէս կամի այնպէս առնէ. այլ չար ո՛չ կամի և ո՛չ առնէ: - 16. *Նախ*՝ եթէ չարն ո՛չ է յաստուծոյ և ո՛չ ի բնութենէ և ո՛չ ի բնութեան և ո՛չ է բնութիւն: - 16. *Նախ* թէ աստուած ստեղծ զկամքն բարի. և զբարին եդ առաջի կամիլ...: - 16. *Նախ*՝ թէ ըստ այդմ բանի հա՛րկ է ապա և քեզ ջուր լինիլ և զջուրն գիտել. և քար լինիլ և զքարն ճանաչել, և զայլսն նոյնպէս: - 17. Ասեմք *նախ* եթէ՝ չարն ո՛չ է յաստուծոյ որպէս բարին. զի բարին ըստ կամա՛ց է. իսկ չարն թոյլ տալով է. և ա՛յլ է կամացն որ յօժարութեամբ է, և այլ է թոյլ տալովն որ իբր ի յո՛չ կամացէ: - 17. *Նախ* եթէ՝ ունիմք անձնիշխան կամք. և տէ՛ր եմք գործոց մերոց. առնել և ո՛չ առնել. այլ երբեմն սկիզբն ի մէնջէ, և կատարումն ի նախախնամութիւնն աստուծոյ: - 17. *Նախ* եթէ կրկին է չար. է՛ չար գործոց, և է՛ չար պատժոց: - 18. *Նա՛խ*՝ եթէ ուշիմ և ապուշ և այլն ըստ կարգի, սոքա եթէ ի մարմնոյն խառնուածոյ պատճառին՝ և եթէ բնական որակութեամբ հոգւոյն՝ նման և աննման գոլ, առանց ներգործելոյ ո՛չ չար են և ո՛չ բարի. ո՛չ գով. և ո՛չ պարսաւ հետևի. որպէս և ո՛չ բնական բարուց անաւնոց: - 19. *Նախ*՝ եթէ աղքատութիւն և մեծութիւն տիրելն և ծառայելն, է՛ յաստուծոյ...: - 19. *Նախ*՝ զի ընդունայն լինէին խոստմունքն. բարեացն վարձս և չարեացն պատիժս: - 20. *Նախ*՝ երկեակն ո՛չ կարէ սկիզբն լինիլ. զի ի թիւս՝ երկեակն ի միակէն բաղկանայ: - 20. *Նախ*՝ եթէ չարն ո՛չ է էութիւն, և ո՛չ ի յէս. և ո՛չ ի յէից. և ո՛չ սկիզբն էից: - 22. *Նախ*՝ զի ո՛չ էն փափագի և ցանկայի է լինիլ և գոյ: - 23. *Նախ*՝ բնական քննութեամբ. որպէս իմաստասէրքն գտնի: - 24. *Նախ*՝ ի լսելեաց: - 25. *Նախ*՝ ի պատճառէ՛: - 25. *Նախ* ի պատճառէ, զի ամենայն պատճառելեաց խնդրի պատճառս. և այնպէս պատճառի միւս պատճառ. և այսպէս բացաքայլութեամբ յանհունս ո՛չ է գիտութիւն: - 25. *Նախ*՝ զհաստատութիւն երկրի և զգնացս ջուրց: - 26. *Նախ*՝ զլայնատարած մեծութիւնն՝ և զհաստատ կամարաձգութիւնն երկնից: - 26. *Նախ*՝ ի բանէն եսայեայ որ ասէ, «եղիցի յաւուրս յետինս յայտնի լեառն տեառն». խօսի վասն գալստեան մէսիային: - 27. Այլ ոմանք ասեն թէ՝ *նախ* ասացեալ բանքս՝ ո՛չ լինին զառաջին գալստենէն քրիստոսի ասացեալ, այլ զերկրորդէն: - 27. *Նախ*՝ Աստուած: - 28. *Նախ*՝ ոչ ի հօրէ և ո՛չ ի մօրէ. որպէս ադամ: - 29. *Նախ*՝ որք աստիճան դնեն Երրորդութեանն. և ի յայլումն ասեն զհոգին. որպէս պատահումն: - 29. *Նա՛խ*՝ զի ամենայն մեղք յանցումն է պատւիրանացն աստուծոյ: - 33. *Նախ*՝ զի հեթանոսք անգիտութեամբ կուռս պաշտեցին: - 33. *Նա՛խ*՝ «որք յաստուծոյ աչացն ելին ասէ. և զորդի նորա անարգեցին»: - 34. *Նա՛խ*՝ զի գո՛րծ է նեռինն ուրանալ զաստուած, որպէս իւր անունն յայտնէ. ա՛յսպէս և հերձւածօղն ուրանայ զաստուածութիւն որդւոյ...: - 34. *Նախ* ասեմք թէ՝ թագաւոր էր այր կերօղ և արբեցօղ և վաւաշոտ. զի՞նչ իցէ ի համար բան նորա. թէպէտ կարի ասել ո՛չ կարեմք: - 40. *Նախ*՝ զի որպէս զգեստիւն ծածկի մարմինն, այսպէս տէրն զաստուածութիւնն իւր ամփոփեաց մարմնովն անհաս լինիլ ի փորձողէն...: - 43. *Նախ*՝ ոչ կարել վասն նուազութեան զօրութեան ժամանակի և դիմի. որպէս ո՛չ կարէ մանուկ կռուիլ՝ և կորիւն տեսանել: - 44. *Նախ*՝ զի բազումք են երթևեկքն: - 44. *Նախ*՝ որ այժմ ասաց զհայր միայն

ճշմարիտ աստուած, նոյն և զինքն ասաց ճշմարտութիւն: - 47. Առակի են նման, որպէս թէ ոք որ *նախ* զպարիսպ քաղաքին ինչ իցէ գիտենայ, և զպարսպէն ասէ ո՛չ գիտեմ: - 48. *Նախ*՝ զի է ի բնութենէ հօր: - 49. *Նախ*՝ զի բանն մտա՛ցն է ծնունդ: - 49. *Նախ*՝ զի հովիւն ի դալար վայրի բնակեցուցանէ. այսինքն ի վայրենացեալ գրոց սրբոց գիտութիւնն: - 49. *Նախ*՝ զի մելքի թագաւոր լսի: - 50. *Նախ*՝ փչեաց ի յադամ շունչ կենդանի և եղև: - 50. Բե՛ր *նախ* տեսցուք ըստ քո կարծեացդ թէ արարա՞ծ է հոգին: - 52. *Նախ*՝ ի նոցունց նոյնք. որպէս ի ձիոյ ձի, և յարջառոյ արջառ: - 53. Պատասխանեմք՝ *Նախ*՝ առ մակեդոնացիս որք զորդի խոստովանին աստուած՝ թէ ասացէ՛ք զպատճառ բ աստուածոց ձեր: - 54. Արդ՝ *Նա՛խ*՝ բան աստուծոյ՝ և հոգի աստուծոյ՝ ո՛չ պատշաճի արարածոյ. այլ միայն աստուծոյ: - 55. *Նախ* այսպէս. ո՛չ ումեք սրբի տաճար, բայց միայն աստուծոյ...: - 57. *Նախ*՝ ասէ մակեդոն եթէ աղօթել և բարեխօսել ո՛չ յարմարի աստուծոյ. զի եթէ զքրիստոսէ՛ ասի՝ վասն մարդկութեանն է: - 59. Պատասխանեմք *նախ*, որպէս ասէ ոսկէբերանն թէ՝ նորածնեալքն աւազանաւն՝ ըստ չափու շնորհացն արժանաւորեին իմաստութեան, թարգմանութեան, և այլն. այսպէս և ոմն շնորհս ընդունէր աղօթելոյ կարգաւորապէս. զի ի նմանէ ուսանէին և այլքն աղօթել: - 59. Եւ *նախ* զվկայութիւնս նոցա լուծցուք, և ապա զճշմարիտն արտադրեսցուք բան: - 61. *Նախ* պատճառեն՝ զի ասի հոգի քրիստոսի: - 61. *Նախ*՝ որպէս մատն է յէութենէ մարմնոյն, այսպէս և հոգին սուրբ է յէութենէն աստուծոյ: - 62. *Նախ*՝ զի խօսքն որ է արտաբերեալ բանն, նոյն սա՛ է ներտրամադրեալն բան: - 62. Եւ զի հոգին սուրբ է միայն ի հօրէ բղխումն, տեսցուք զայս *Նախ*՝ ի հարցմանէ: - 62. *Նախ* այսպէս: - 62. *Նախ*՝ զի բղխումն հոգոյն՝ է՛ ելումն. իսկ ելումն շարժումն միոյն ի միւսոյն: - 63. *Նախ*՝ զի ասէ փրկիչն յաւետարանն յոհաննու յաղագս հոգոյն թէ՝ «հոգին ճշմարտութեան որ ի հօրէ՛ ելանէ. նա՛ ուսուսցէ ձեզ զամենայն»: - 64. *Նաև* ի կանոն երից սուրբ ժողովոցն՝ ընդ բանիւ արգելեալք կան նոքա՝ որ ա՛յլ կերպիւ քարոզեն և այլ կերպիւ ուսուցանեն քան զոր նոքա ուսուցանեն: - 64. *Նախ*՝ զի խօսքն է ի մտացն յառաջ եկեալ, որպէս ներտրամադրեալ բանն ծնեալ. և հոգին սուրբ ի հօրէ բղխեալ. որպէս բանն ծնեալ: - 66. *Նախ* այսպէս. գործ աստուծոյ՝ ստեղծանելն է...: - 70. *Նախ*՝ զի մի՛ շփոթեսցին բնութիւնքն ի միաւորութիւնն որպէս ասաց եւտիքէս: - 76. *Նախ*՝ զի սքանչելեօք է. որոյ սահմանն անգիտելի է, և ի վեր քան զբնութիւն: - 77. *Նախ*՝ զնոյն ինքն բանն՝ աստուած և մարդ. այսինքն մարդկութեամբն մարդ, և աստուածութեամբն աստուած: - 77. Իսկ սուրբն կիւրեղ ընդ դէմ նեստորի զինէր. որ ասէր բնակութեամբ զբանն ի մարմնի. և *նախ* զմարդն ծնեալ ի կուսէն և շրջեալ ի յերկրի, և յետոյ բնակեալ բանն աստուած յետ մկրտութեանն. և յետ յարութեանն փառաւորեաց զնա և զօրացոյց յարակցութեամբ ընդ ինքեան: - 79. *Նախ* այսպէս, ասէ թէ բաժանմունք որ յԵրրորդութիւնն է, ո՛չ է հնար միաւորութեան. զի ա՛յլ ոմն է և ա՛յլ: - 80. *Նախ* զՆիւթն զմի բնութիւն նիւթական որպէս մարդ. և զմիւսն բնութիւն աննիւթ որպէս զաստուած. զՁևն՝ զմինն քանակութեամբ և որակութեամբ տարբերեալ որպէս մարդոյ. և զմիւսն ի վեր քան զկերպ և զձև որպէս աստուծոյ: - 87. *Նախ*՝ զի յընդդիմաբաժանեալ տեսակս սեռի՝ ո՛չ գոյ առաջին և վերջին...: - 87. *Նախ*՝ զի անհատքն անհունք և անբաւք են: - 88. *Նախ*՝ զի հոմանուն ձայնն միայն անուանն և ո՛չ իրի հաղորդի: - 88. *Նախ*՝ որպէս սեռ ի տեսակս բոլորապէս տեսանի և ո՛չ մասամբ. այս է՝ զի գոյացութիւնն որ է սեռ՝ բոլոր է ի մարմինն և յանմարմինն. և կենդանին բոլոր ի բանականն և բոլոր յանբանն: - 89. Ասեմք *նախ* եթէ՝ ո՛չ է աննման. զի մի իրն լինի բոլոր և լինի մասն՝ առ այլ և այլս: - 92. *Նախ*՝ անօթն ընտրութեան առաքեալն պօղոս գրէ հաւատացելոցս. «քրիստոս աստուծոյ զօրութիւն. և աստուծոյ իմաստութիւն»: - 96. *Նախ*՝ զի եղականք ամենայն չափաւորեալ գոյացան. եթէ իմանալիք և եթէ զգալիք: - 103. *Նախ*՝ որպէս տեսութիւն աչաց ի մարմինն հանգչի: - 104. *Նախ* գիտելի է, զի միութիւն ի գոյացութիւնն՝ առնէ զնոյնութիւն: - 104. *Նա՛խ*՝ զի ասեմք հայր և որդի և հոգի: - 105. Եւ դարձեալ՝ զի կարողութիւնն *նախ* է քան զիմաստութիւնն. և իմաստութիւնն *նախ* է քան զբարութիւնն: - 105. Նմանապէս և հասարակն թէպէտ բազում է, այլ երկոտասան գլխով նշանակի. *նախ* Բնութիւն. որ նոյն Է էութիւն. ապա Բարութիւն. Կամք. Անմահութիւն. Իմաստութիւն. Լուսաւորութիւն. Գեղեցկութիւն. Անփոփոխութիւն. Յնծութիւն. Փառք. Իշխանութիւն. և Արարչութիւն: - 105. *Նախ*՝ զի միեղէն է և հասարակ՝ գերադրականքն. որպէս գերագոյն աստուած. և տէր տէրանց: - 106. *Նախ*՝ զի մինն ի սուրբ Երրորդութենէն մարդացաւ: - 106. *Նախ*՝ զի բանն աստուած էառ զմարդկայինս բնութիւն և միաւորեաց ընդ աստուածութեան իւրում. ո՛չ մասն առեալ՝ կամ ըստ մասին միաւորեալ...: - 106-107. *Նախ*՝ զի **գ** թիւն կատարեալ է. զի ունի սկիզբն. և մէջ և կատարումն: - 107. *Նախ*՝ զի **գ** թիւն **գ** է և ո՛չ մի: - 107. *Նախ*՝ զի թիւն քանակ է պատահական՝ և գիտելի մեզ: - 108. Վասն է՞ր յորժամ փառս տամք, *նախ*՝ հօր, ընդ

նմին որդոյ, և ապա հոգւոյն: - 109. *Նախ*՝ զի հայր պատճառ է հոգւոյ բղխման՝ և որդւոյ առման. զի հոգին սուրբ բղխէ՝ ի հօրէ՝ և առնու յորդւոյ: - 109. Երրորդ՝ որդին ծնունդ նկատէ ի յէութիւնն, և հոգին ի կեանքն. և *նախ* է գոլ իրին՝ և ապա կենդանի: - 109. *Նախ*՝ զի ո՛չ է բազում, այլ մի: - 109. *Նախ*՝ զի թիւն պատահումն է. որ ի աստուած ո՛չ է: - 110. *Նախ*՝ զի մի անձն հօր բազմացաւ ի յանձն որդւոյ. և բազմապատկի ի յանձն հոգւոյն սրբոյ: - 110. *Նախ*՝ առ համաբունսն՝ հայր սկիզբն է որդւոյ և հոգւոյն սրբոյ. և պատճառ այլ ամենայն արարածոց: - 110. *Նախ*՝ պարզ ոչ էն. որ է ոչ ուրեք և ոչ երբեք. որ ո՛չէր և ո՛չէ և ո՛չ լինի. որպէս ոչ ինչն: - 111. Այլ բաժանի էն *նախ* ի յերիս: - 111. Մին՝ զի *նա՛խ* է քան զամենայն գոյ. թէ սկիզբն և թէ էութիւն: - 111. Երկրորդ՝ զի *նախ*՝ գո՛յ և է է. և ապա բարի և իմաստուն և այլն: - 111. Երրորդ՝ զի նախ՝ էի և գոյացութեան հաղորդեաց զեղեալքս, և ապա կենաց և իմաստութեան և այլն. զի *նախ* է գոլն մեր, և ապա բարի գոլն: - 111. *Նախ*՝ զի միշտ է. և ո՛չ երբեմն է և երբեմն ոչ է: - 111. *Նախ*՝ զի յարացոյցն պարզ է՝ և երկրպագելի՝ և անապական՝ և անփոփոխ: - 112. Զի առ աստուած՝ ո՛չէ սոսկ տեսութիւն արտաքոյ. այլ յինքն տեսանելով զյարացոյցն. և զմեզ ի յարացոյցն մեր իբր լինիլ մեզ *նախ* ի յաստուած, և ապա ի յէութեան մերում. և ո՛չ որպէս փոփոխումն ինչ ի բարի կամացն: - 112. Երբեմն նախասահմանութիւն ըստ պօղոսի՝ «սահմանելոյ որդոյն աստուծոյ». և թէ՝ *նախ* սահմանեաց զմեզ աստուած ի կամս իւր իբր անփոփոխելի սահմանադրութիւն: - 112. Եւ գիտելի է, զի յարացուցիս և նախասահմանութեանս՝ արարողական պատճառ է աստուած. և նիւթական պատճառ իրն այն որ է նախասահմանի. և տեսական պատճառ է՛ կարգն. զի *նախ* տըւեալ լինի շնորհքն աստ. եւ ապա փառքն ի հանդերձեալն. և կատարողական պատճառ՝ զի լինիցիմք սուրբք և անբիծք: - 112. *Նախ* ասի անեղ՝ որ դեռ չէ՛ եղեալ. որպէս այն որ ի հանդերձեալն լինի. որ կարօտ է սկզբան: - 113. *Նախ*՝ եթէ անեղ է աստուած՝ ըստ որում անսկիզբն և անեղ էին արարածք ըստ անգոյին՝ կարգաւո՛ր է և յոյժ որպէս դու ասացեր. զի անեղ էն աստուած յառաջ էած զանեղն ի յէութիւն: - 113. *Նախ*՝ զի արարիչ է ժամանակաց: - 114. *Նախ*՝ զի բազմաժամանակեա՛յ է: - 114. *Նախ*՝ զի է՛ և գո՛յ աստուած յամենայն յաւիտեանս. և յամենայն ժամանակ. և յամենայն օր: - 115. Երկրորդ՝ զի *նախ* է քան զամենայն յաւիտեանս. և քան զժամանակ. և քան զամենայն օր: - 115. *Նախ*՝ նշանակէ ծերն՝ զի սկիզբն է ամենայնի: - 115. Եւ նշանակէ ծերն զժամանակաւ *նախն:* - 115. *Նախ*՝ որ ոչ սկիզբն ունի և ո՛չ կատարած: - 115. *Նախ*՝ զի յաւիտեանն ո՛չ ունի սկիզբն և ո՛չ վախճան: - 116. *Նախ* յերիս: - 116. *Նախ*՝ ի աստուած ինքնակեա՛նք է. զի յինքենէ՛ ունի: - 117. Զի *նախ* կենդանի է մարմնով. յետոյ անմարմին. և յետոյ միաւորութեամբ յաւիտեան: - 117. Այլ զանազանին, *Նախ*՝ զի իմանալին անմա՛հ կեանք է. և զգալին մահկանացու: - 117. Յաւասարին, *Նախ*՝ զի տարրական են: - 117. Եւ զանազանին, *Նախ*՝ զի տնկականն միայն ի ջերմութենէ հրո՛յ է: - 117. Դարձեալ է՛ յատկութիւն, զի *նախ* տեսութիւնն է աստուծոյ, և ապա էութիւն ամենայն իրի՝ տեսութեանն նորա հետևի: - 118. Իսկ մեր տեսութիւնս էութեանն հետևի. զի *նախ* իրն լինի, և ապա՛ մեք տեսանեմք: - 118. *Նախ*՝ զի առ աստուած բոլորն տեսութիւն է՝ և լուր՝ և այլն: - 119. *Նախ*՝ հայելով ի կերպարանս և ի նմանութիւնս որ է՛ կարգաւորութիւն արարածոց. և սոքօք ի յարացոյցն սոցա ելանել, և ի նմանէ դարձեալ ի նախատիպ յարացուցին ելանել. և այնպէս տեսանել թէ է՛ աստուած պատճառ ամենայնի: - 119. *Նախ*՝ բնական: - 120. *Նախ*՝ զի իմացումն խոնարհի ի յիմացւածն որ առաջի իւր: - 120. *Նախ*՝ զի հրեշտակացն իմանալի և միահաղոյն է տեսութիւն. իսկ մարդկան բանական և մասն մասն ժողովելով: - 120. *Նախ*՝ զի լպրծի՛ միտք մեր և մոռանայ զբանն. զի հով և գէջ է պարուտակն և ուղեղ գլխոյն: - 120. *Նախ*՝ զի միտք զանմարմինն տեսանէ, և զգայութիւն զմարմինն: - 120. *Նախ*՝ զի ամենայն բանից և իմաստութեանց է բաշխօղ: - 121. *Նախ*՝ զի բանականն առ երկրաւորս և բազում ճշմարտութեամբ կատարի: - 122. Չորս. այսինքն է՝ *Նախ*՝ տպաւորական: - 122. Եւ է սա՛ առաջին. զի զոր *նա՛խ* է քան զյաւիտեանս և զժամանակս՝ աստուածաբանէ՛ և քննէ՛: - 122. *Նախ*՝ զի խորհրդով և հաւատով տեսանի և ո՛չ քննութեամբ մտաց: - 123. Ծանիր և զայս ուշիմ մտօք, զի ամենայն աստուածաբանութիւն *նախ* յերկուս բաժանի. այսինքն դրութեամբ և բացբարձմամբ: - 123. Իսկ բացբարձականքն ի խորհրդական աստուածաբանութեանն է. *նախ* որ է՛ և ո՛չ ասի. որպէս անսկիզբն և անվախճան. ո՛չ բան և ո՛չ միտ. ո՛չէ և այլն: - 123. *Նախ*՝ զի նոյն ուրացական մասնիկն այն՝ այսինքն ո՛չն՝ ներգործէ՛ զուրացումն և զբառնալն: - 124. *Նախ*՝ զի ուրացականն ըստ պակասութեան է. որ ասէ ո՛չէ աստուած քրիստոս. այսինքն պակա՛ս է և ո՛չէ աստուած. և ո՛չէ հայր. և ո՛չ որդի: - 124. *Նախ*՝ զի ի միոյ սկզբնէ են: - 125. *Նախ*՝ զի դեղին լոյսն ձևանայ ընդ երթս կամ ընդ լուսանցս մտեալ, իսկ սպիտակն ոչ: - 125. Եւ *նա՛խ* եկաւորի հոգին ամենայն ուրեք. որպէս ի մարգարէսն և ի կոյսն սուրբ, և

ապա՛ բանն մարմնացաւ. և յետոյ հոգին սուրբ էջ յառաքեալսն և յեկեղեցի մնաց: - 125. *Նախ*՝ զի որպէս արեգակն ունի մշտնջենաւոր զլոյսն՝ և առնէ ի վերոյ երկրի տիւ և գիշեր: - 125. Յնգետասաներորդ՝ *նախ* է տեսակն քան զնիւթն անի բաց դնելի: - 126. Եւ *նախ* է բանն աստուած, և յետոյ միացաւ ի մարմնի անբաժանելի. «յիսուս քրիստոս երէկ և այսօր նոյն և յաւիտեանս»: -126. *Նախ*՝ զի պատկե՛ր է նմա. և ապա զի փառաբանիչ աստուծոյ: - 128. *Նախ*՝ որպէս պատճառ՝ յառաջածու՝ և ծնօղ: - 128. *Նախ* ա՛յս է միտքն՝ որ այբն առաջին է և քէն վերջին. այսինքն ես եմ առաջին աստուածութեամբս. և ես եմ վերջին մարդկութեամբս. զի մարդն վերջին է արարածոց: - 129. *Նախ*՝ աստուածաբանն գրիգոր՝ զոտքն մարմնով տնօրէնութեանն ասէ նշանակ. զի մարմնով եկեալ զփրկութիւն մեր արար. և մարմնով համբարձաւ առ հայր: - 130. *Նախ* է՛ գործ իմաստութեան աստուծոյ. որով զանազանեցին արարածք՝ առաւել և նըւազ ընդունելով. և մի՛ խառնափնդոր և անզանազանապէս: - 130. *Նախ* մեծակայ և հեռաւորն գոլ: - 131. Ա՛րդ՝ ասեմք *նախ* եթէ՝ ձայնն ծածկո՛յթ է բանին. յաղագս որոյ հեռաւորքն զծածկո՛յթն տեսանեն, և զծածկեալսն ո՛չ: - 131. *Նախ*՝ զի նիւթեղէն միտք՝ միջնորդութեամբ նիւթո՛յ հասանէ յաննիւթն...: - 131. *Նախ*՝ զբնական որակութիւն երկնայնոցն նշանակէ. այսինքն Մարդն զբանն: - 132. և *Նախ*՝ զի նոցայն՝ էութիւն ո՛չ է. այլ առ աչօք ուրուական ցուցմունք. որպէս ի միտս ցնորք: - 133. *Նախ*՝ թէ անկեալքն ի նոցանէ են չափով միոյ դասի: - 134. *Նախ*՝ ըստ սրբոյն դիոնէսիոսի որ ինն ասէ գոլ զդասս կարգապետութեան նոցա: - 134. *Նախ*՝ ի դէմս Երրորդութեանն և համաբուն իսկութեանն: - 134. *Նախ*՝ զաթոռքն. և զհետ զքերօբէքն. և զհետ զսերօբէքն. և այս վասն գ պատճառի: - 135. *Նախ*՝ զի զաթոռն մեծ նստողին տեսին եզէկիէլ և եսայի, և շուրջ զքերօբէքն և զսերօբէքն: - 135. *Նախ*՝ զի սերօբէն խոնկայ զբարութիւնն աստուծոյ. և քերօբէն զճշմարտութիւնն. և աթոռք զուղղութիւնն: - 135. *Նախ*՝ զի տէրութիւնն ակնարկէ՛ առ հայր. և զօրութիւնն առ որդին. և իշխանութիւնն առ իշխանակից սուրբ հոգին: - 135. *Նախ* պետութիւնք. և ապա հրեշտակապետք. և վերջին հրեշտակք. և այս կարգ այսպէս ուղղակի՛ է: - 136. *Նախ*՝ զի պետութիւնք պատշաճին առ հայր. և հրեշտակապետքն առ որդի իբր յերկուց միացեալ. և հրեշտակքն ի դէմս հոգւոյն իբր *նախ* եկաւորեալք յամենայն ուրեք, և ապա յորդի և ի հայր բնակեալ: - 136. *Նախ*՝ զի հաւասա՛րք են բնութեամբ. անմարմինք՝ հրեղէնք՝ իմացական՝ և այլն: - 136. Ասեմք *նախ*՝ եթէ որպէս ասացաք ներքինք զվերնոցն մասնաւորապէս ունին. որպէս վերինք զներքնոցն բոլորաբա՛ր: - 137. *Նախ*՝ զի ընդհանուր դասք և իւրաքանչիւր անհատք ունին էութիւն՝ զօրութիւն՝ և ներգործութիւն. այսինքն ըստ որում էացեալքեն, և կարողութիւն ունին, և ներգործեն: - 137. *Նախ* է հասարակ՝ գոլն հոգի՝ անմարմին՝ և իմացական: - 137. *Նախ*՝ տարորոշումն անձնական. և զի անձամբ յատկացեալք են ի միմեանց: - 137. Այսպէս, *Նախ*՝ զի մաքրել և լուսաւորել և կատարելագործել հասարակ է ի սոսա: - 138. Երկրորդ՝ զի *նախ* մաքրելն է, և ապա՛ լուսաւորելն, և ապա՛ կատարելագործելն. և այս կարգ հասարա՛կ է ի նոսա: - 138. *Նախ*՝ զի յաստուած ինքնակատար և նախակատա՛ր է քահանայապետութիւնն: - 138. *Նախ*՝ զի առաջին դասքն անընդմիջաբար առնուն յաստուծոյ. իսկ միջինքն և վերջինքն միջնորդութեամբ: - 138. Երկրորդ՝ զի առաջինքն առանց տարակուսութեան առնուն զգիտութիւն. և այլքն *նախ* տարակուսին և ապա առնուն. զի այն որ առաջին դասն *նախ* էառ՝ տարակո՛յս է նոցա՝ մինչև ինքեանք ևս առցեն: - 138. Իսկ հրեշտակաց և մարդկան, *Նախ*՝ զի մարդիկ միջնորդութեամբ հրեշտակաց առնուն, և ո՛չ անդրադարձեալ. թէ և մարդացեալ բանիւն: - 138. Զորօրինակ գիտութիւն մարդկան ի սկիզբն և ի մէջն և յեզերն՝ *նախ* զտգիտութիւն փարատէ՛, և ապա՛ զմիտս լուսաւորէ՛ և կատարէ: - 139. *Նախ*՝ զի աստուած մեծաւո՛ր է նոցա: - 139. *Նախ*՝ թէ շնորհս այս անե՞ղ է թէ եղական: - 140. *Նախ*՝ զի հոգին բանական է. և հրեշտակն իմացական: - 140. *Նախ*՝ զի հրեշտակն միեղէն և բոլոր իմանայ. իսկ հոգին բան բան և մասնաւոր. վասն որոյ բանական կոչի: - 141. *Նախ*՝ զի ամենեցուն սկիզբն է և պատճառ, գիտէ զսկսեալսն ի նմանէ: - 141. *Նախ*՝ զի ինքն ըստ ինքեան իմանայ և տեսանէ: - 142. *Նախ*՝ զի գութն բնական է, և սէրն ստացական: - 144. Դարձեալ առնէ հրեշտակն առաջի միւս հրեշտակին զոր *նախ* ո՛չ իմանայր: - 145. *Նախ*՝ ձայնական բանիւ՝ ձևացեալ մարմնովն: - 145. *Նախ*՝ զի հակառա՛կ է աստուծոյ, և մարդն պատկեր է աստուծոյ. յորժամ տկարանայ ի նախատիպն՝ ընդ պատկերն հակառակի: - 146. *Նախ*՝ յորժամ սերօբէն ասէր սուրբ, և միւսն երկրորդէր զնոյն. և սա՛ լռեաց զփառաբանութիւն ընկերին երկրորդել աստուծոյ, թէ փառքն ի վերայ իւր անկանի և աստուածանայ որպէս ասաց պօղոս: - 147. Զի ինքնագիտ չարութեամբ *նախ* ինքն չարացաւ որ ասի գտակ. և ապա զայլս չարացոյց որ ասի մայր. որպէս սկիզբն և սերմանօղ չարեաց ի յայլս: - 148. *Նախ*՝ զչար խորհուրդն սատանայի առարկէ՛:

- 148. *Նախ*՝ զի գոյին այնպիսի հրեշտակք որք մնացին ի բարին: - 149. *Նախ*՝ զի ասեն վարդապետք թէ ո՛չ ումեք խրատու մեղանչեաց, և ո՛չ ումեք օգնութեամբ նորոգեսցի: - 150. *Նախ*՝ զի ուրախ լինի ի վերայ սպանելոցն յինքենէ: - 151. Իսկ «տուտն», *Նախ*՝ նշանակէ զվերջին հետեւեալսն ընդ նմա. զի նա առաջին ինքնագիւտ էր ի չարն. և այլքն հետևեցան նմա: - 152. *Նախ*՝ անկումն դատապարտութեան. ըստ այսմ, «իշխան աշխարհիս դատապարտեալ է»: - 153. *Նախ*՝ խաբէութեամբ զմարդիկ ի մեղս և ի կռապաշտութիւն ձգելոյ: - 153. Եւ *նախ* հարցանեմ, որո՞վ զանազանի գործ բնութեան և գործ կամաց: - 156. *Նախ*՝ զի գործ բնութեան է՛ բնական. իսկ գործ կամացն է պատահական: - 156. *Նախ*՝ զի գործ մարդոյ շօշափմամբ է. իսկ աստուծոյն առանց շօշափման: - 156. Տասներորդ՝ գործ մարդոյս *նախ* զօրութեամբ՝ և յետոյ ներգործութեամբ եղանի. իսկ աստուծոյն միշտ ներգործութեամբ է. որպէս ցուցանի յառաջիկայդ: - 157. Հասարակութիւն է, *Նախ*՝ զի ի միոյ բարերար կամաց յառաջ եկին գործ արարչութեան...: - 157. *Նախ*՝ զի զծածուկ առաքինութիւն արդարոյն յայտնի արասցէ այլոց ամենեցունց. որպէս զյոբայն և զաբրահամոյ...: - 158. Եօթներորդ՝ թոյլ տուեալ լինի և ոմանց անկանիլ ի մեղս ինչ. զի ի հպարտութենէն զոր ունէր վասն առաքինութեան՝ խոնարհեսցի և անկցի առաջի տեառն խոստովանութեամբ. և ընկալցի զթողութիւն. որ *նախ* համասե՛ռ էր սատանայի: - 159. *Նախ* է՛ բարի՝ որ ինքն վասն իւր խնդրի. որպէս առողջութիւն: - 160. Եւ այսու զանազանի փորձութիւնն աստուծոյ և սատանայի, *Նախ*՝ որպէս ասացաք՝ աստուած փորձէ՛ զի յայտնեսցէ զբարութիւնն. և սատանայ փորձէ զի հանցէ ի բարւոյն: - 161. *Նախ*՝ զի մի՛ անձնիշխանութիւնն բարձցի ի մէնջ: - 161. *Նախ* այս որ ասացաւ եթէ՝ «առցէ զպսակն կենաց զոր խոստացաւ աստուած սիրելեաց իւրոց»: - 161. Եւ *նախ* վասն առաջնոյն ցուցցուք բնականապէս և բարոյականապէս: - 162. *Նախ* որպէս ցուցաւ միշտ է աստուած էութեամբ և ներգործութեամբ. առ ինքեան միշտ է, և ներգործութիւն իւր առ ա՛յլս: - 162. Ասեմք առ այս *Նախ*՝ եթէ կամքն և կարն ի մեզ անհաւասա՛րք են. վասն այն զոր ինչ կամիմք՝ ո՛չ կարեմք. և զոր կարեմք՝ զա՛յն կամիմք: - 163. Ձորօրինակ եթէ կամիցի ոք տաճար շինել. *նախ* ծնանայ ի միտքն և յետոյ շինէ զտաճարն ըստ այնմ ձևոյ: - 163. Արդ՝ տաճարիս այս է՛ կրկին սկիզբն. *նախ* միտքն շինողին, և յետոյ սկիզբն և կատարումն շինուածոյն: - 163. Երկրորդ զանազանութիւն՝ զի նախկին սկիզբն համանգամա՛յն է ի միտքն. և երկրորդ սկիզբն *նա՛խ* է՝ և կատարումն յետոյ: - 163. Իսկ հասարակութիւն է *Նախ*՝ զի երկուց սկզբանցն մի և նո՛յն է պատճառ ներգործական. որ է՛ արուեստաւորն: - 163. *Նախ*՝ զի որպէս շինօղ տաճարին զսկիզբն և զկատարումն ետես. այսպէս և արարիչն աստուած ի կրկին սկիզբն գործոյն զկատարումն աշխարհի ետես: - 163. *Նախ*՝ զի շինօղն էր յառաջ, և յետոյ ետես զշինուածն: - 164. Ժամանակն՝ զի *նա՛խ* է ունակութիւն. և յետոյ պակասութիւն: - 165. *Նա՛խ*՝ եթէ թողութիւնն է հետևեալ և կայացեալ ի զղջումն. և զղջումն է ի կամքն. և կամքն է ի կարելեացն. վասն որոյ ներընդունի զթողութիւն ի ձեռն զղջման: - 165. Ասեմք առ այս *Նա՛խ*՝ եթէ թողութիւնն է ի զղջումն. և կարգն է ի յանձն ապականեալ...: - 166. Եւ այս ո՛չ պատճառի ի տկարութենէ շնորհացն որ միշտ նոյնպէս է *նախ* և յետոյ. այլ ի տկարութենէ անձինն շրջելոյ: - 166. Ասեմք առ այս. *Նախ*՝ եթէ նոր եկելոցն ի հաւատս՝ սակաւ դնէին կանոնս. որպէս առաքեալն պատուիրէ «ի բաց կալ ի չորիցս յայսցանէ. ի զոհելոյ, ի պոռնկութենէ յարենէ, և ի հեղձուցելոյ»: - 166. Ասեմք առ այս *Նախ* զառաքելոյն, եթէ «ամենայն որ մեղանչէ՝ արտաքոյ մարմնոյ իւրոյ է, իսկ որ պոռնկի՝ յիւր մարմին մեղանչէ». ապա ուրեմն յիրաւի ապականեալ մարմին ո՛չ մտցէ ի կարգ: - 166. *Նախ*՝ զի գործն իշխանութեան է որ ո՛չ է խափանեալ: - 167. *Նախ* զի փրկական է խորհուրդն ամենեցուն. այլ անարժան մերձեցեալն կորնչի. յիրաւի արգելցի ի սպասաւորութենէն: - 167. Դարձեալ՝ այն զօրութիւնն միշտ է. զի բնաւորեալ է ընդ ներգործութեան. իսկ միւս զօրութիւնն երբեմն է. զի կամ *նախ* է ներգործութեան. որպէս մանկան հիւսնել: - 168. *Նախ*՝ զի պարզ ներգործութիւն է աստուած. զի եթէ գոյ ինչ զօրութեամբ նախատեսութիւնն աստուծոյ՝ ապա բաղադրեա՛լ է և ոչ պարզ ներգործութիւն: - 168. Այլ արդ՝ լինելութիւն աշխարհի առ ինքն ըստ ինքեան ասի զօրութեամբ և ներգործութեամբ. զի ի զօրութենէ եկն ի ներգործութիւն. զի թէ ոչ գոյր զօրութեամբ *նախ*՝ ո՛չ լինէր յետոյ ներգործութեամբ: - 169. Ձորօրինակ՝ ներտրամադրեալ բանն է՛ *նախ* ի խորհուրդն կատարեալ. և յետոյ ժամանակաւ լինի յառաջ բերեալ և գրեալ բան. և նո՛յն բանն էր յառաջ բերեալս և գրեալս որ էր *նախ* ի խորհուրդն: - 169. *Նախ*՝ զի պատահմունքն են յէութենէ իրին երևեալ. այլ արարածք ոչ յէութենէ, այլ ի կամաց արարչին յոչնչէ ներգործեալ են: - 169. *Նախ*՝ զի զգոլն իւրեանց ունէին ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ. թէպէտ յետո՛յ ընկալան գոյացութիւնս յինքեանս. որպէս տաճար ի միտս շինողին: - 170.

*Նախ*՝ զի աստուած միա՛յն է ինքն ինքեամբ. և ո՛չ յայլմէ հաստատեալ. ըստ որում ասէր առ մովսէս՝ «ե՛ս եմ որ էն»: - 170. *Նախ*՝ զի գոյն նախկին է քան զպատահումն. և նախկին է աստուած ամենայնի: - 171. *Նախ* է տեղի մարմնական. որ ըստ իւրաքանչիւր մասնկանց մարմնոյն պատահի: - 172. *Նախ* զայս ասեմք թէ ամենայն ինչ հնարաւոր է աստուծոյ. զի կարէ՛ առնել զոր միտք մարդկան տեսանէ. և կարէ՛ զոր ո՛չ տեսանէ: - 173. *Նախ*՝ զի ասեմք եթէ աշխարհ յառաջ քան զլինիլն իւր գոյր ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ. ապա ուրեմն ո՛չ է յոչ ուրեքէ յոչ երբեքէ: - 173. Ասեմք առ այս եթէ գիտելի է *նախ*՝ թէ զի՞նչ է բնութեամբն և զի՞նչ կամօքն: - 173. Ասեմք առ այս *Նախ*՝ եթէ ո՛չ ամենայն գործ բնութեան հետևի, այլ և կամաց. որպէս մարդոյ. զի մի է կամք ի քրիստոս, մի է և ներգործութիւնն: - 174. *Նախ*՝ զի ո՛չ ունի քանակ, որակ, ձև, և այլքն, որ նիւթո՛յ են յատկականք: - 175. *Նախ*՝ զի սոքա անմարմինք են ըստ ինքեան. այսինքն քանակ, որակ, և այլքն. և յանմարմին էութիւնս ո՛չ տեսանին. որպէս ի հրեշտակս կամ ի հոգիս. զի նոքա ո՛չ ունին ձև. որակ. քանակ. և զայլսն: - 175. *Նախ* վասն հեռաւորութեանն որ մեղօք հեռացաք յաստուծոյ: - 177. *Նախ*՝ զի է գիր: - 177. Եւ *Նախ* զի է գիր՝ ունի գովութիւն երեքկին: - 177. *Նախ*՝ զի հնչէ՛ ձայն: - 177. *Նախ*՝ զի առաջին է և հայր և ծնող ամենայն գրոց ձայնաւորաց և բաղաձայնից: - 178. *Նա՛խ*՝ նշանակէ զաստուածութիւնն երեք անձինք ի միում բնութեան: - 178. *Նախ* զի է ծնող և սկիզբն ամենայն գրոյ և իմաստութեան. որպէս հայր աստուած բոլորից: - 178. *Նա՛խ*՝ զի իմաստութեամբն զնոսա կարեմք գտանել. և նոքօք զիմաստութիւնն ո՛չ: - 178. *Նախ*՝ զի առ ինչք են սոքա. ծնունդն զծնօղն ցուցանէ. և արարածն զարարիչն: - 179. Ասեմք *Նախ*՝ եթէ ո՛չ մի է. այլ **բ**. այսինքն ներկայս, և հանդերձեալ աշխարհն: - 179. *Նախ*՝ ի շարժմանէ՛ երկնային մարմնոց. զի միշտ նոյնպէս և անդադար շարժին. առնելով զօր և զամիս՝ և զեղանակս՝ և զտարի՝ ստուգագոյն չափով առանց յաւելուածոյ և պակասութեան: - 181. *Նախ* այսպէս ասեն եթէ՝ տարերքն գնդաձև պատեալ են զմիմեանս և ամրացեալ...: - 181. Եւ բնականն *Նախ* այսպէս. զի օդն որ ի մէջէ մտեալ և փեռեկեալ զներքին և զվերին կիսագունդն, նա՛ է պատճառ շարժութեան երկնից: - 182. *Նախ* զի ո՛չ կարէ յաւելուլ ի նմա և ո՛չ պակասիլ: - 182. *Նա՛խ*՝ հրեղէն երկինք: - 183. *Նախ* կոչի երկինք ամենասուրբ Երրորդութիւնն. զի անհաս բարձրութեամբ գերազանցեալ է յամենայն եղելոց: - 183. Այլ և *նախ* կոչի երկինք՝ զգալի երևումն աստուծոյ՝ և հրեշտակաց՝ և մարգարէից սրբոց: - 183. *Նախ*՝ զի մարմին է բարձր. որ և ի սահմանս իւր նախադրի: - 184. *Նախ*՝ զի խո՛ր է: - 184. Եւ բաժանի *նախ* յանեղ և յեղական լոյս: - 185. *Նա՛խ*՝ զի հալածէ՛ զխաւարն: - 185. *Նա՛խ*՝ զխաւար անգիտութեանն հալածէ՛: - 185. *Նախ*՝ զի միատեսա՛կ է և մի: - 186. *Նախ*՝ զի մի բնութիւն է աստեղաց: - 186. *Նախ*՝ զի միջա՛կ է արեգական և աստեղաց: - 186. *Նա՛խ*՝ զի ի ներքո՛յ է ամենեցուն. և ամենայնին զօրութիւն առ նա՛ ժողովի: - 187. *Նա՛խ*՝ զի երկինքն բարձր է, և յայնմանէ առաւել զլոյսն ծագէ յերկիր: - 188. *Նա՛խ*՝ զի յոմանս առաւել է լոյսն. որպէս յարեգակն. և յոմանս նուազ. որպէս ի լուսին և յայլ աստեղս: - 188. *Նա՛խ*՝ զի տանի զերկոտասան կենդանակերպսն և վճարէ: - 190. *Նախ*՝ զի իմանալիքն մշտնջենաւո՛րք են, ի սակաւ վայրկենի կատարեցան: - 192. Եօթներորդ՝ ցուցանէ թէ՝ որպէս մարմնական բնութիւնք *նախ* էին անկատար և անտեսակ՝ և յետոյ կատարեցան յաստուծոյ: - 192. Նոյնպէս և հոգին *նախ* ի յինքենէ անտեսակ և անկատա՛ր է. և յետոյ կատարի յաստուծոյ շնորհօք և առաքինութեամբ և գիտութեամբ: - 192. Նոյնպէս և նշանակէ՛ զհրեշտակաց բնութիւնն, որ *նախ* ստեղծան անկատար ճանաչմամբ և գիտութեամբ. այլ յորժամ երանեցան և տեսին զէութիւնն աստուծոյ անընդմիջաբար, յայնժամ կատարեցան ճանաչմամբ և գիտութեամբ: - 192. *Նա՛խ*՝ զորքանութիւն աւուրցն ցուցանէ, թէ տիւ և գիշեր **իդ** ժամն լինի օր մի բնական: - 193. *Նախ*՝ զի սկիզբն և առաջին է ամենայն աւուրց. զի նա կրկնելով առնէ զայլ աւուրս որպէս ասացաւ: - 193. *Նա՛խ*՝ զի վախճա՛ն է և սկիզբն: - 193. *Նախ* գիտելի է, զի կրկին է օր. այսինքն օր բնական, և օր արւեստական: - 194. *Նա՛խ*՝ զի բնական օրն է տիւ և գիշեր: - 194. *Նա՛խ*՝ առաւօտն և երեկոյն. և է՛ առաւօտն վախճան գիշերոյ՝ և սկիզբն տունջեան: - 194. *Նա՛խ*՝ զի սկիզբն է տուընջեան, և վախճան գիշերոյ: - 196. *Նա՛խ*՝ զի պայծա՛ռ է լոյսն: - 196. *Նա՛խ*՝ զի վախճա՛ն է տուընջեան, և սկիզբն գիշերոյ: - 196. *Նա՛խ*՝ զի ի նմա՛ շրջին գազանք և կերակրին: - 196. *Նա՛խ*՝ զի արարածոց սկզբնաւորութիւն ի նմա՛ եղև: - 196. *Նա՛խ*՝ զի սկիզբն է տարւոյ. յորժամ արեգակն ի խոյն մտանէ: - 197. *Նախ*՝ զի արեգակն առ մեզ մերձի: - 197. *Նա՛խ*՝ զի կշիռ և հաւասա՛ր են տիւ և գիշեր: - 197. *Նա՛խ*՝ զի արեգակն հեռանայ ի մէնջ: - 197. *Նա՛խ*՝ զի ամառն կարի՛ ջերմ է և չոր՝ չորացուցանէ՛. և ձմեռն խիստ ցուրտ՝ սառուցանէ՛ զսերմն: - 197. Զի ժամանակն *նա՛խ* է հանդերձեալ. և ապա ներկայ, և յետոյ լինի անցեալ: - 198. Իսկ թէ զանազանապէս իմանաս զժամանակն, *նախ* է՛

անցեալն որպէս երէկ. և ապա ներկայն որպէս այսօր. և յետոյ ապառնին որպէս վաղիւ: - 198. Իսկ թէ ըստ պատուոյ իմանաս, *նա՛խ* է ներկայն. զի է՛ ստոյգ և ճշմարիտ. և ապա՛ անցեալն. և յետոյ ապառնին. և այսպէս շարադասեն քերթօղքն: - 198. *Նա՛խ*՝ զի տարրակա՛ն է հուր: - 202. *Նա՛խ*՝ զի Երագաշա՛րժ է հողմն և շարժօղ այլոց: - 202. Եւ զի *նախ* որո՛տն է և ապա փայլակն: - 204. Իսկ հուրս առ մեզ որ կապեալ է ի նիւթ՝ տկա՛րն ունի զայրելն. վասն որոյ *նախ* զքանակն և զորակն ապականէ, և ապա զգոյացութիւն իրին: - 204. Եւ *նախ* ի չորս դէմս բաժանին ամենայն հողմունք. և իւրաքանչիւրքն դարձեալ յերիս բաժանին. որ լինի բովանդակն **բժ**ան: - 205. *Նա՛խ*՝ զի ամպն յերկրէ ելեալ խափանէ՛ զլոյս և զջերմութիւն արեգական: - 206. *Նախ*՝ զի թեթև է ամպն այն. վասն որոյ յոյժ բարձրացեալ է: - 206. *Նախ*՝ զի յանկարծ փայլէ: - 206. Չինգերորդ՝ *նա՛խ* որոտայ և ապա՛ փայլէ: - 207. *Նա՛խ*՝ զի ի կողէն քրիստոսի աղբիւրացաւ և բղխեաց առ մեզ: - 207. *Նախ*՝ վասն զի մի՛ ջերմութիւն լուսաւորացդ կիզցէ զերկիր և վնասեսցէ: - 207. *Նա՛խ*՝ զի արարիչն աստուած բնական զծովս աղի և դա՛ռն արար. զի մի՛ հոտեսցին կենդանիքն ի նմա: - 208. *Նա՛խ*՝ զի ի ձմեռն ջերմութիւնն ի սիրտ երկրի ժողովի. և յամառն ի վեր յերես սփռի: - 208-209. *Նախ*՝ ասեն ոմանք թէ՝ որքան բարձր է ի վերայ երկրի հողն, նոյնքան ծծո՛ր է ի ներքին կողմն. վասն որոյ ջուրք ծովուն դիւրաւ ելանեն: - 209. *Նա՛խ*՝ զի երկու իր է. այսինքն հող և ջուր. որ ընտանի՛ է նմա: - 210. *Նա՛խ*՝ զի մայր է մեր, ուստի ծնանիմք ամենեքեան: - 211. *Նա՛խ*՝ զի հաստատութիւն և բրգո՛ւնք են աշխարհի: - 211. *Նախ*՝ զի շնչմունք հողմոց ի բարձունս են, և զբարձանց ջերմութիւնն բարեխառնեն: - 211. *Նա՛խ*՝ զի բղխումն ցուցանէ զկատարեալն. որ ամենայն ինչ կատարեալ և լի ստեղծան յարարչէն: - 212. *Նա՛խ*՝ պէտք են բժշկութեան դեղոց և առողջարա՛րք են: - 212. *Նախ*՝ ի շինուածս: - 212. Վասն է՞ր *նա՛խ* ծաղիկն և ապա պտուղն երևի: - 212. Որպէս ի մեզ *նախ* զգայականն երևի, և ապա՛ բանականն: - 212. Դարձեալ՝ ծաղիկն է հրոյն՝ որ *նախ* շարժի և երևի: - 212. Առաջին՝ որպէս յերկինս *նախ* տեսանին աստեղք, և ապա բարութիւնք երկնից. այսպէս և ի բոյսս: - 213. Զի ի չորս տարրէ՛ է գոյացեալ. և ունի զաճումն հողոյն. վասն այն *նախ* աճէ ենթակայ մարմինն: - 213. *Նա՛խ*՝ զի սերմնական զօրութիւնն է ի մէջն բնաւորեալ. ուստի բոլորապէս և հաւասար տայ շարժիլ տնկոյն: - 213. *Նա՛խ*՝ զի օդն վերընթա՛ց է և քարշէ՛ ի վեր և աճէ: - 213. *Նա՛խ*՝ զի բոյսք և խոտք մե՛րձ են երկրի, զշարժումն նորա դիւրա՛ւ ընդունին: - 214. *Նախ*՝ զի ծառայք են միշտ վասն այլոց. որպէս մարդս միշտ տէր է. և անասունքն տէր և ծառայք. զի ծառայք են մարդկան, և տէր բուսոց. իսկ բոյսք և տունկք միշտ ծառայք են: - 214. *Նախ*՝ զի թէպէտ զջուր կամ զհող միայն յիշէ աստուած. այլ երեքն ընդ միոյն առին հրաման...: - 214. *Նախ*՝ օդն. որ էութիւն է ձայնի: - 216. *Նա՛խ*՝ թև, որպէս թռչնոց: - 216. Զի թէ մարդն ունէր զբնութեամբ զէնս, որպէս թէ եղջիւր ի գլուխն. և սուր զատամունսն. ճիրանունք ի ձեռս. և սմբակ կամ կճղակ ոտիւք. և զայլսն, *Նախ*՝ զի գազանադէմ և դժւարատես լինէր ամենեցուն: - 217. *Նա՛խ*՝ զի եղեն ի գովեստ փառաց իւրոց: - 217. *Նա՛խ*՝ ի փառս աստուծոյ ստեղծան. զի յորժամ զզանազան կերպարանս նոցա տեսանեմք, փառս տամք արարչին: - 217. *Նա՛խ*՝ վարդապետաց, և ապա՛ իմաստասիրաց: - 218. *Նա՛խ*՝ զի զդէմքն ընտրեաց՝ և ընդ եւայի՛ խօսեցաւ: - 218. *Նա՛խ*՝ զի զդէմսն ընտրեսցէ, այլ և զտեղի և զժամանակն, և ապա խօսեսցի: - 218. *Նա՛խ*՝ զի օձն ի յայն մասնէն սատակի: - 218. *Նախ*՝ զի անուամբն գոյանայ իրն ի միտս մեր. և անանունն իբր յանգոյս է համարեալ մեզ: - 219. *Նախ*՝ ի նոյն իսկ աստուածային հրամանացն որ ասէ՝ «իշխեսցէ ձկանց ծովու, և գազանաց, և սողնոց»: - 220. *Նա՛խ*՝ զի յորժամ մարդն անհնազանդ եղև տեառն իւրոյ արարչին, յիրաւի անհնազանդք եղեն և մարդոյն անասունք տւեալ նմա ի ծառայութիւն: - 220. *Նախ*՝ որպէս ասացաւ ի վերոյ՝ երեք տեսութիւն սրբոցն է **գ** իրին. այսինքն զգայութեան. երևակայութեան. և իմացման: - 221. *Նա՛խ*՝ պարտ է գիտել թէ վասն դրախտին **գ** է կարծիք վարդապետաց: - 221. *Նա՛խ*՝ եթէ իմանալի է մեզ. զոր ո՛չ կարեմք այժմ զգալապէս տեսանել: - 222. *Նա՛խ*՝ զի թէ ապականացու էր որպէս երկիրս այս, վասն է՞ր զմարդն պատւելով ի դրախտն եդ աստուած: - 222. *Նախ*՝ ասեմք թէ ո՛չ: - 225. Ասեմք թէ՝ կանխագէ՛տ է աստուած. և *նախ* ծանեաւ զի ո՛չ կարէին աճիլ անմեղութեամբ ի դրախտին որպէս զհրեշտակս. վասն որոյ կազմեաց նոցա մարմին, զի յերկրի անասնապէս աճեսցին: - 226. *Նա՛խ*՝ որպէս ասացաւ ի վերոյ, հողն ունի զայլ **գ** տարերքն ի յինքն խանեալ. յորժամ ի հողոյ ասէ՝ իմանալի զ**դ** տարերս: - 229. *Նա՛խ*՝ զի մեծ և պատուական ասի մարդն: - 230. Վասն որոյ պա՛րտ էր լինիլ նոցա *նախ* որ փոքունք և անպատիւք են, զի երևեսցի մեծն և պատւաւորն այսինքն մարդն: - 230. **Կարգաւոր էր *նախ* պատրաստել զարքունիս որ է երկինք և երկիր. և զգահոյս որ է՛ դրախտն. և զսպասաւորքն որ են կենդանիքն. և զմեծութիւնս տնկոց և բուսոց. մանաւանդ ոսկւոյ և արծաթոյ և**

**ականց ի սիրտ երկրի գանձել. և ապա՛ թագաւորին բնակիլ:** - 230. Յինգերորդ՝ զորօրինակ մեծատուն ոմն զոք ի ճաշ կոչիցէ, *նախ* պատրաստէ՛ զամենայն պէտս կերակրոց և ըմպելեաց. և ապա՛ մեծարէ՛ զկոչնականսն: - 230. **Ի պատիւ մեծարեաց զմարդն. և *նա՛խ*՝ պատրաստեաց պէտս զանազան կերակրոց և ըմպելեաց որպէս ասացաք. և վառեաց զճրագ լուսաւորացն. և զգեղեցիկ ձայն երգեցողաց թռչնոց. և զզուարճութիւն զանազան ծաղկանց. և ապա՛ զմարդն ի պատիւ էած**...: - 230. Յաղագս որոյ *նախ* եղեալքն՝ են վասն վերջնոցն. որպէս բոյսք անասնոց, և անասունք վասն մարդոյն: - 230. Այսինքն տնկական. և զգայական. և բանական. և զի յանկատարէն ելանեմք ի կատարեալն. վասն որոյ *նախ* ստեղծաւ տնկականն ոգի, և ապա՛ զգայականն, և ապա՛ բանականն որ է կատարեալ մարդն: - 231. Ութերորդ՝ ո՛չ արար *նախ* զմարդն, զի մի՛ արարչակից գիտասցէ զինքն ոչ գոյիցն, և անկցի հպարտութեամբ. այլ գործօղ գոյիցն, զի կացցէ պահպանութեամբն...: - 231. Եւ այս իսկ է գործն, այսինքն վայելել հոգւով յիմանալիսն, և մարմնով ի զգալիսս. պարտ էր *նախ* գոյանալ նոցա, և ապա՛ գործողին և վայելողին: - 231. *Նա՛խ*՝ զի աշխարհ է կամ իմանալի, որպէս հրեշտակք. կամ զգալի, որպէս մարմնականք: - 231. *Նա՛խ*՝ ըստ փիլիսոփայիցն ներքին մասունքն հոգւոյն պատճառե՛ն զարտաքին մասունս մարմնոյն. և ըստ պղատոնի՝ հոգին եռամասնեայ գոլով՝ բան և ցասումն և ցանկութիւն: - 232. Եւ բնականն, *Նա՛խ*՝ զի նմանիմք երկրի որ յերեսն ունի զգեղեցկութիւն բուսոց, և ի թիկունս ոչ: - 234. Իսկ բարոյականն, *Նա՛խ*՝ զի յերեսն փչեաց զշունչ կենդանի. վասն որոյ յերեսն ունի զգայարանս մարմնոյ: - 234. *Նա՛խ*՝ վասն առաջին փչմանն յերեսս մարդոյն: - 234. Եւ հոտոտելիքն զառ ի վայր է, *նա՛խ*՝ զի հոտն վերընթա՛ց է՝ յինքն ընդունի: - 235. *Նա՛խ*՝ զի յառաջ եղեալ նմա՝ լո՛յսն է որ է վերին տարր. և լսելեացն օդն: - 235. *Նա՛խ*՝ զի ի տիւ և ի գիշեր լսէ: - 235. Յարցումն ա՛յսմ իրի՝ *նախ* գիտելի է՝ թէ ուստի՞ գոյանայ պատկերն և տիպ: - 235. Եւ բնական, *Նա՛խ* այսպէս. զի ամենայն իր մարմնական ի նոյն տարերաց են բաղկացեալ. վասն որոյ ունին նմանութիւն առ միմեանս: - 236. *Նա՛խ* ցուցանի զի մի է արարիչ սոցա, և բազում արարածք. յաղագս որոյ նմանին և զանազանին: - 237. *Նա՛խ*՝ զի անմարմին դիմօք առանձնանան ի միմեանց. և այս յատուկ դիմօքս ճանաչեն հոգիքն զմիմեանս. որպէս մեծատունն զղազարու և զաբրահամու հոգին: - 237. *Նախ*՝ զի ոչ ոք ճանաչէր զհայր կամ զեղբայր իւր. այլ ես զքեզ հայր գիտէի, և դու զայլ ոմն եղբայր. և լինէր մեծ շփոթումն: - 238. *Նախ*՝ բնական. զի յառաջ եղեալն աչացն անփոփո՛խ է իրօք. և ականջին ձայնն և բանն փոփոխական: - 239. *Նա՛խ*՝ զի պահապա՛ն է նմա յարտաքին վնասուց: - 239. *Նա՛խ*՝ յօնքն ի վերոյ՝ զքիրտն արգելէ՛: - 239. *Նախ*՝ մազն ի վերոյ. և մորթն. և միսն. վերին ոսկրն. և ներքին պինտ ոսկրն. խելապատակ մաշկն. և ուղեղն: - 239. *Նախ*՝ ի տղայութեան հասակն. յորժամ ծնանի տղայն՝ ունի զհողմն արևելից տաք և գէջ: - 240. *Նա՛խ*՝ գլուխն: - 241. Ճարպ երիկամանցն *նա՛խ*՝ ամոքէ՛ զցանկականն. և երկրորդ անվնաս պահէ: - 241. *Նա՛խ*՝ բնական: - 243. Այսպէս ի սեաւ մաղձէն լինի արտասուքն աղի, զի մի՛ հոտեսցի ակն որպէս ցուցաւ *նախ*: - 243. *Նա՛խ* գլուխ մարդոյն **դ** ոսկր է: - 243. *Նա՛խ*՝ խելապատակն սկիզբն է ջլացն. որ միայնաբար ընդ ուղուղս պարանոցին անցանէ. և բաժանի ի թիկունս, ի ձեռս, և յա՛յլ մարմինս: - 244. *Նա՛խ*՝ զի այնպիսի նշանք ո՛չ դնեն հարկ ի մարդն. այլ ցուցանեն զձկտումն բնութեանն ի յայնպիսի իրս: - 246. *Նախ*՝ մաքրութիւն ի մեղաց: - 251. *Նա՛խ*՝ զի զգայարանքն նորա որպէս զկակուղ մոմ առաւել ընդունի զտիպն: - 251. *Նախ*՝ զի զգայարանքն պինտ է: - 251. *Նախ* եթէ վասն մարմնո՛յն եղև հոգի զի շարժեսցէ զնա. ապա անա՛րգ է հոգին քան զմարմին որ վասն նորա եղեալն է. և մեծ և պատուական է մարմին քան զհոգի: - 253. Այսպէս և այժմ իւրաքանչիւրքն յառաջ եկեալ համանգամայն գոյութեամբ, լնուն զայն թիւն՝ որ *նախ* էր ի տեսութիւնն աստուծոյ: - 254. Զի կազմողական զօրութիւնն որ է՛ ի նիւթն՝ ազդումն առեալ յարարչադիր հրամանէն, *նախ* կազմէ՛ և պատրաստէ՛ զնիւթն առ ի յընդունելոյ զտնկականն. և ապա զզգայականն. յետ որոյ զբանականն ի ծագմանէն աստուծոյ: - 254. *Նախ*՝ զի նիւթն այն ունի առ ինքն բնական զկենդանութիւն տնկականին. և տնկականն մա՛սն է զգայականին. և զգայականն բանականին. և սոքա ո՛չ որոշին ի բոլորէն. զի մի են էութեամբ ի մարդն թէպէտ ա՛յլ են ներգործութեամբ: - 254. Եւ թէ ասէ ոք, ո՞րպէս է բանական հոգին *նախ* զօրութեամբ և յետոյ ներգործութեամբ: - 254. Եւ այս կազմողական զօրութեանն է որ *նախ* պատրաստէ՛ զնիւթ առ կեանքն. և ապա ի զգայութիւնն. և ապա ի բանաւորութիւնն: - 255. Եւ օրինակ այսմ, որպէս ի ծագել արևուն՝ *նախ* նշոյլքն երևին և ապա յետոյ արեգակն: - 255. Եւ կամ որպէս զօրք թագաւորի՝ *նախ* հասանեն յիջևանն, և թագաւորին ասի իջևանն. թէպէտ յետոյ գայ: - 255. Եւ զոր օրինակ՝ տունկ ի յերկրի տնկեալ՝ *նախ* դալարի. և յորժամ հաստատի ծաղկի. և յորժամ նս հաստատի՝

ապա պտղաբերի: - 255. *Նախ* տնկականն. և ապա զգայականն. և ուր սոքա երևին ի հրամանէն աստուծոյ, երևի և անդ բանականն: - 255. *Նախ*` զի ի կենդանի մարմնոյ է յառաջ եկեալ: - 256. Յինգերորդ` զի ունակութիւնն *նա՛խ* է քան զպակասութիւնն. զի ուր ո՛չ է ունակութիւն, և ո՛չ է անդ պակասութիւն: - 256. Ապա ուրեմն հիւթն այն, *նախ* ունի զկեալն որ է՛ ունակութիւն. և ո՛չ զպակասն որ է մեռելութիւն: - 256. *Նա՛խ*` թէ խանգարեալ իցէ սերմն: - 256. *Նախ* վասն` ի մէջն գոլով հաւասարապէս հուպ յամենայն մասանցն զօրութիւն առնլոյ: - 256. *Նա՛խ*` զի զնման և զաննմանն ծնանի. որպէս հատն զցորեանն և զծեղ: - 256. *Նա՛խ*` զի անմարմին է հոգին. վասն որոյ ո՛չ հատանի. ո՛չ տնկականն. ո՛չ զգայականն. և ո՛չ բանականն: - 257. Զորօրինակ` արուեստաւոր ոք կամիցի դրօշել ի քարեայ պատկեր, *նախ* նկարէ՛ ի միտս իւր զձև պատկերին. և ապա հատանէ զքարն և տաշէ՛ և դրօշմէ՛ զկերպն ըստ այնմ նմանութեանն որ էր ի միտս ձևացեալ: - 258. Եւ թէ ոք ասիցէ, վասն է՞ր *նախ* զտնկականն տայ և ապա զբանական հոգին: - 258. Արդ է՛ այսմ կրկին պատճառ. *նախ* բնական, և երկրորդ բարոյական: - 258. Եւ ըստ անասնոցն հաւասարութեան *նախ* գոյանայ անասնականն որ է տնկականն և զգայականն. և յետոյ բանականն: - 258. *Նա՛խ*` զի մի գոյութիւն է մարդն և մի կենդանի. մի հոգի է միոյ մարդոյ և մի կենդանութիւն: - 259. Այսպէս և զգայականն և տնկականն մասունք են բանականին` *նախ* եղեալ ի մարմինն. և յորժամ բանականն հեղի ի մարմինն, յայնժամ և սոքա հեղին ընդ նմա. զի զօրութիւնք և մասունք են նորա ըստ օրինակի նախասացեալ երրորդ թուոյն: - 259-260. Եւ օրինակ այսմ դարձեալ տե՛ս զնշոյլս արեգականն. որ *նախ* երևի` և ապա արեգակն: - 260. Եւ յորժամ ծագէ՛ արեգակն, յայնժամ և նշոյլքն իւր ընդ իւր ծագեն և ինքեամբ լուսաւորեն զմեզ որպէս *նախ* նշուլիւքն: - 260. Այլ է՛ *նա՛խ* էացեալ ի բանն աստուծոյ, և համանգամայն ընդ մարմնոյն երևեալ ի պարգևաց այնմ նախատես բանի: - 260. Եւ *նախ* սիրտն կազմի քան զայլ անդամսն. զի ջերմութիւն սերմանն ի մէջն ժողովի և կազմէ՛ զսիրտն: - 261. Եւ որպէս սիրտն *նա՛խ* գոյանայ, նոյնպէս և յետո՛յ մեռանի վասն ջերմութեան նորին: - 261. Դարձեալ **թ** թիւն պակա՛ս է ի **ժ**երրորդէն. և մեք պակասեցաք յինն դասուց հրեշտակաց, որ *նախ* հաւասար էաք ի դրախտին. և կարօտացաք մարմնաւոր ծննդեան, նմանելով անասնոց...: - 264. *Նախ* ասեն ոմանք, եթէ ուղեղ գլխոյ անբանիցն ընդ խելապատակին ունի չորութիւն և հովութիւն. և ջիլքն ի նմանէ յառաջեալ յանդամս մարմնոյն` փութապէս պնդէ՛ և տայ շարժիլ: - 266. Ի ծնանիլն *նախ* խնդրէ միայն կերակուր և աճէ՛. յետ որոյ տեսանէ՛ կանգնի՛ և գնայ. յետ որոյ խօսի և իմանայ: - 267. *Նա՛խ*` զի բանականի և անբանի սերմ ո՛չ խառնին ի միմեանս: - 267. Զի՞նչ է որ ամենայն ծնունդ թէ տունկք թէ կենդանիք` *նախ* յղանան և ապա ծնանին: - 267. Իսկ նշանակէ *նախ* զժամանակն. զի անցեալն և հանդերձեալն ո՛չ է ի միջի այլ ներկայն: - 267. Նոյնպէս և արուեստն *նախ* նկարի ի միտքն և ապա ներգործի և կատարի: - 268. *Նա՛խ*` զի մնացորդք գործոց և խորհրդոց կերպարանին ի յիշատակարանս հոգոյն զոր ինչ գործեաց ի անցելումն, կամ խորհեցաւ վասն հանդերձելոյն: - 268. *Նա՛խ*` զի խորհրդական միտքն կարգաւոր և առանց տարակուսանաց տեսանէ. իսկ երազն անկարգ և տարակուսանօք և զանհնարն տեսանէ որպէս ի վերայ օդոյ թռչիլ, և ի ծովու գնալն, և աղքատաց թագաւորել, և այլն: - 268. Եւ *նախ* ասի իմաստութիւն նոցա, որ զբնութիւն էիցս քննեցին. և զշարժումն լուսաւորացն. որպէս իմաստունքն յունաց: - 269. *Նա՛խ*` ըստ առաջ եղելոյն. զի առաջ եղեալք սորա են աստուածայինքն և իմանալիք. իսկ նոցայն` մարմնականք և զգալիք: - 269. *Նա՛խ*` զի իմաստնոց ուղիղ է, և անմտաց կարծիք: - 270. *Նա՛խ*` հանճարն է՛ բնական իմաստութիւնն շնորհական: - 270. *Նախ*` չափաւոր ձևն: - 271. *Նա՛խ*` ի թագն. զի գլուխ և *տէր է* բոլոր հնազանդելոցն: - 271. *Նա՛խ* զի աստուած է՛ անձնիշխան և ինքնակալ. նոյնպէս և մարդս: - 271. *Նա՛խ*` զի խոստովանեալ է յամենեցունց որ ո՛չ է հաստելի. այսինքն ո՛չ ստեղծեալ: - 274. Իսկ հոգւոյն առանձին, *Նա՛խ*` զի ամենայն ոք խոստովանի եղեալ զնա: - 274. *Նա՛խ*` զի մարդո՛յն է զանազանել զբարի և զչար. և փախչիլ ի չարէ՛, և երթալ զհետ բարւոյն` կատարելոցն է ըստ մարգարէին, «խոտորեաց ի չարէ՛ և արա՛ զբարի»: - 274. *Նա՛խ*` զի մի՛ համեմատ առն կարծիցէ զինքն. այլ որպէս ոչ համահասակ և ոչ համահող լիցի: - 276. *Նա՛խ*` զի յառնէ՛ իւրմէ առաւ: - 276. *Նա՛խ*` զի ո՛չ ունի զառնողական զօրութիւնն. որպէս և յամենայն կենդանիս էգն: - 276. *Նա՛խ*` զի հրամանքն է ստեղծողի առ ստեղծուածս: - 277. *Նախ*` առ ի նշանակել զանձնիշխանութիւն մարդոյն. իբր թէ ունի կարողութիւն պահել և ո՛չ պահել: - 277. *Նա՛խ*` ասի մահու մեռանիլ, իբր թէ է՛ ոմն անձնաւոր մահ որ է՛ բանսարկուն. և նովաւ մեռանիցիս ասէ: - 277. *Նախ*` վասն պարզամտութեանն. զի որպէս տղայք ո՛չ ամաչեն անծածուկ ունելով զմասունս. նոյնպէս և նոքա: - 278. *Նախ*` տեսութիւնն աստուծոյ: - 278. *Նախ*` ի տեսութենէն, զի ո՛չ ևս յաւել տեսանել զերեսս

աստուծոյ: - 279. *Նա՛խ*՝ զի արար աստուած: - 279. *Նա՛խ*՝ զի ցանկացաւ աստուածանալ: - 279. *Նա՛խ*՝ զի մերկացաւ յանմահութենէն և յանասնոց կարգ անկաւ: - 279. *Նա՛խ*՝ զդարձումն յետս աստուածային փառացն. և վասն այն շրջեցաւ ի զբօսանս դրախտին: - 280. Եւ կամ որպէս ճանապարհորդք հեռացեալք ի տանէ՞ յորժամ դարձցին վերստին ի տունս իւրեանց, *նախ* թողուն զվերջին բնակետղն ուստի դիմեցինն երթալ: - 280. Եւ ա՛րդ՝ հեռանալոյ մեզ ի դրախտէն կենաց վերջին ամուսնութիւնն եղև. զա՛յն *նախ* պա՛րտ է թողուլ, և ապա՛ յերկրաւոր հոգւոց և տառապանաց հեռանալ: - 281. *Նախ* վասն ամօթո՛յ: - 281. Իսկ մաշկն որ է՛ մորթ մեռելոյ, նշանակէ՛ *նախ* զսուգ և զտրտմութիւն վասն մեղաց: - 281. *Նա՛խ* զի սիրտ սուրբ և աննենգ ունէր. ուստի յա՛յտ է յանմեղութեամբ գնալոյն ընդ եղբօրն ի դաշտն: - 286. *Նա՛խ*՝ **գ** մասունք հոգւոյն, բան՝ ցասումն՝ և ցանկութիւն. և **դ** տարերաց խառնուածն որովք մեղանչէ մարդ: - 287. Իսկ է պատիժքն, *Նախ* անէծքն: - 287. *Նախ*՝ զի արեա՛մբ շաղախեցեր զնա: - 287. *Նա՛խ*՝ զի յաներևոյթ կեանսն և ի հանդերձեալն յուսացաւ. և արհամարհեաց զերկրաւորս որ տեսանի...: - 288-289. Զի թէ *նախ* ջրով ապականեսցի պղնձի սիւնն մնասցէ. և թէ հրով՝ աղիւսն: - 289. *Նա՛խ*՝ զի հաստատեսցէ զերկու կարծիս թերութեան մարդկան: - 289. Զի փոխելն ցուցանէ *նախ* զկարօղ զօրութիւն փոխողին: - 289. *Նախ*՝ զի նախանձախնդիր էր աստուծոյ: - 289. *Նախ*՝ եթէ **ռ** ամն մեր՝ յաչս տեառն որպէս օր մի է: - 290. *Նա՛խ*՝ եթէ գիտէ՞ր մարդ զօր մահուն, ո՛չ շինէր և ո՛չ տնկէր և ոչ ծնանէր զաւակ. և լինէր պատճառ աւերման: - 292. *Նա՛խ*՝ զի ամենայն ոք պատրաստ լիցի մահուան աւուրն և յանկարծակի գալստեանն քրիստոսի...: - 292. *Նախ*՝ որ անփուտ էր փայտն. և մարմին մարդոյս անփուտ և անապական է. և յա՛յտ է ի յարութիւնն անմահ: - 293. *Նախ*՝ զի սա՛ այրարատ լսի: - 294. *Նա՛խ*՝ զի իմաստութեան են պատճառք. զի տեսանելով զսոսա՞ զարարչութիւնն աստուծոյ ի միտ ածեմք: - 295. *Նախ*՝ զի արիւնն և շունչն կենդանութիւնն է որ է աստուծոյ բաժին. վասն այն արիւնն ո՛չ է ուտելի: - 295. *Նա՛խ*՝ որպէս հատանեմք քաղելով զբանջարն և ապա՛ ուտեմք, նոյնպէս զենումք զկենդանին և ապա՛ ուտեմք: - 295. *Նա՛խ*՝ է՛ աննշանն զորս որոշէ՛ օրէնքն. որ ո՛չ ունի կճղակս և որոճ և այլն՝ անսուրբ է: - 295. *Նա՛խ*՝ զարիւնն և զշունչն հանեմք: - 296. *Նա՛խ*՝ զի քահանայն արեան բարեխօս է, և ո՛չ արիւնահեղ: - 296. *Նախ*՝ զի ատէին զաստուած, և երկնչէին ի պատժոցն, և հակառակէին աստուծոյ: - 296. *Նախ* ի գեղեցկութիւն լեզուին. զի որպէս գոյն առ գունով պայծառանայ, և արւեստ առ արուեստ: - 297. *Նա՛խ*՝ զի յայնմանէ ճանաչեցին թէ անյաղթ և ամենայա՛ղթ է զօրութիւնն աստուծոյ: - 298. *Նախ*՝ զի մելքիսեդեկ ունէր պատարագ հաց և գինի. և աբրահամ ո՛չ ունէր: - 300. *Նա՛խ*՝ որպէս մելքիսեդեկ ի յանցաւոր և յանիծեալ ազգէն քանանու: - 301. *Նա՛խ*՝ զի ի պատճառս ղովտայ փրկեսցի սոդոմ ի գերչացն: - 302. Նոյնպէս յորժամ բնակին բարեպաշտք ի մէջ անհաւատից, *Նա՛խ*՝ զի աղօթք նոցա պահապան է նոցա: - 302. *Նա՛խ*՝ զի ի հրեղէնսն մտաբերեցին: - 302. *Նա՛խ*՝ զի վատթա՛ր է դառնալ և ծուլութիւն: - 303. *Նա՛խ*՝ զի որպէս իսահակ է՛ ստուգապէս որդի աբրահամու: - 304. *Նախ*՝ զի զաստուած աստուծոյ պատարագեաց: - 307. *Նախ*՝ ամուլ է սառա. և մարիամ կոյս. և եկեղեցի ամուլ և կոյս: - 307. *Նա՛խ*՝ մարմնական. որպէս յղացեալ մանուկն ծնանի ի մօրէ՛: - 308. *Նա՛խ*՝ զի անդրանիկն երէց ասի: - 308. *Նա՛խ*՝ դաւանութիւն հաւատոյն: - 309. *Նա՛խ*՝ զի յանդրանիկ տեսութիւնս իւր ընտրեաց զնոսա յառաջ քան զլինիլն աշխարհի, և յետոյ զնոյն անդրանիկսն պատուեաց: - 309. Երրորդ՝ զի *նա՛խ* բանայ զարգանդ ծնողին և գայ ի կեանս. որ և **ե** օր աւելի ստանայ զկեանս յարգանդի: - 310. *Նա՛խ* զայս ունի խորհուրդ, զի յառաջագոյն ընտրեալքն՝ յետոյ եղեն ի ժամանակի: - 310. *Նախ* ասեն եթէ ի ծննդեանն կալեալ էր զգարշապարէն՝ եսաւայ, այժմ զփոխն անդրադարձէ՛ և յիշեցուցանէ նմա թէ՝ ամենայն իրի հատուցումն գոյ: - 311. *Նա՛խ*՝ զի էն ներկայակա՛ն է. զի էրն և եղիցին անցեալն և հանդերձեալն է: - 312. *Նա՛խ*՝ զի ի ծնանիլն բենիամենի՝ մեռաւ մայրն և որդի վշտաց եղև նմա: - 312. *Նա՛խ*՝ զի գեղեցիկ էր տեսլեամբ յովսէփ: - 313. *Նա՛խ*՝ որպէս յակոբ պատարագ մատոյց ի ջրհորն երդման զվերջինն և ապա ել յերկրէն: - 314. *Նա՛խ*՝ զի առիւծն թագաւորակա՛ն է: - 315. Եւ տէրն մեր որ զմարմինն և զարիւնն իւր ետ ամենայն աշխարհի. *նախ* ինքն եկեր, և ապա ետ առաքելոցն: - 316. Որպէս բժիշկք յորժամ հիւանդաց դեղ տան, *նախ* ինքեա՛նք զճաշակն առնուն զի հաւատարիմ լիցի: - 316. *Նախ*՝ սատանայ և անհաւատք աստուածութեան նորա. և մեղք և դժոխք հոգւոյ են թշնամիք. մահ և ապականութիւն մարմնոյն: - 316. *Նախ*՝ կոչի մարմինն զգեստ՝ գոյացական՝ անփոփոխ և անքակ միութեամբն. զի բաժանմամբ մարմնոյն և բանին ո՛չ է քրիստոս. որպէս ի բաժանիլ հոգւոյ և մարմնոյ ո՛չ է մարդ: - 318. *Նա՛խ*՝ զի աստուծոյ է մարմին՝ կոչի տաճար իբր կարող սրբութեանց. և դարձեալ զի անշփոթ է միաւորեալ՝ կոչի տաճար: -

319. *Նա՛խ*՝ լերինք և բլուրք մշտնջենաւորք կոչին հրեշտակացն դասք բարձրացեալք յերկինս և անշարժութեամբ սերտեալք...: - 319. **Եւ *նախ* կոչիւր յոբաք, որ է՛ սիրելի աստուծոյ. և կոչեցաւ յոբ, որ է՛ հայր. զի հա՛յր եղև համբերութեան:** - 320. *Նա՛խ*՝ որպէս հասարակ շինականք ի ծննդեան զաւակաց զմին օրն պատուեն աղարուք կոչելով: - 321. *Նա՛խ*՝ զի **ժ** էին թուով. է ուստերք և **գ** դստերք. ըստ թըւոյ նոցա մատուցանէր: - 322. Չորրորդ՝ ի խրախութիւն գինւոյ՝ **ժ** մեղք գործին. այսինքն *Նա՛խ*՝ բազմակերութիւն...: - 322. *Նա՛խ*՝ զի հայր նոցա բարեպաշտութեամբ սնուցանէր զնոսա. և վկայեցաւ առ աստուած արդար գոլ: - 322. *Նա՛խ*՝ գուժ լծոց եզանցն՝ և սպասաւորացն մահ. և գուժկան ձևանայր դև մի ի կերպարանս ծառայիցն յոբայ: - 322. *Նա՛խ*՝ զի աղբիւսէ մարմինս. և վաղվաղակի յաղբիւսն երթայ...: - 323. *Նա՛խ*՝ զի կաւովն քերէր զկաւն որ էր նիւթ մարմնոյն: - 323. *Նա՛խ*՝ նշանակէ՛ զպատասխանին. զի պատասխանին կրկին է ի վերայ հարցմանն: - 323. *Նախ*՝ ուղղութիւն ընկերաց. **բ** գոհութիւն և համբերութիւն. **գ**՝ իմանալ զչար խորհուրդն սատանայի. **դ**՝ աղօթք և պահք. **ե**՝ խոնարհութիւն և ճշմարտութիւն. որ գերագոյն է ամենայն զինուց և իսպառ կորուսանէ զչար որ մայրն է ստութեան և հպարտութեան: - 324. *Նախ*՝ զի շարժեալք էին ի բանսարկուէին. որպէս երբեմն ի ձեռն կնոջն. և յայնժամ բարեկամօքն մարտնչէր ընդ յոբայ: - 324. *Նա՛խ*՝ զի դարձցին և ապաշխարեսցեն: - 324. *Նա՛խ*՝ զի անդ ի հանգիստ մտցեն: - 324. *Նա՛խ*՝ որպէս ասէ մարգարէն՝ «վա՜յ որ ասէ զբարին չար՝ և զչարին բարի». և այլն: - 324. *Նա՛խ*՝ զի թէպէտ ի դէմս յոբայ սուտ էր խօսք նոցա, այլ ի դէմս ամենայն մեղաւորաց ճշմարի՛տ է: - 325. *Նա՛խ*՝ զի ի դնելն զնա ամբարիշտ՝ լուծցի ժուժկալութիւն նորա: - 325. *Նա՛խ*՝ զի առաւելասցին վարձք նորա: - 325. *Նախ*՝ զի ունէր զամենայն առաքինութիւնս և համբերեաց նախատողացն. վասն որոյ խօսեցաւ աստուած և մխիթարեաց զնա: - 325. *Նա՛խ*՝ զի բաւակա՛ն էր ասելն «արար աստուած զմարդն ի պատկեր իւր». զի բարի է աստուած: - 325. *Նախ*՝ զի սովո՛ր է աստուած երևիլ ամպօք...: - 326. *Նախ*՝ զի զառաջին վկայութիւնն յոբայ անմարմինքն իմացան. դարձեալ վկայեաց՝ զի լուիցեն մարդիկք: - 326. *Նախ*՝ զի հոգի և մարմին են: - 326. *Նախ*՝ թագաւորութեամբն ունէր զպատկեր փառացն ադամայ: - 327. *Նա՛խ*՝ զի յաղթեաց փործողին որպէս յոբ՝ նոյնպէս և տէր մեր: - 327. Այսինքն *նախ*՝ կուրաց տեսանել տայր...: - 328. *Նա՛խ*՝ մորենին է՛ նշանակ ժողովրդեանն իսրայէլի յեգիպտոս, որ վառեալ տանջիւր և ո՛չ սպառիւր. այլ առաւելոյր օրհնութեամբն աստուծոյ: - 331. *Նա՛խ* թէ՝ զմեռելոտի խորհուրդն հա՛ն ի մտաց քոց: - 331. *Նա՛խ*՝ իբր թէ է՛ և գո՛յ աստուած որպէս ասացաք: - 331. *Նախ* գիտելի է, զի **գ** նշան տայ մովսէս ի դէմս սրբոյ Երրորդութեանն: - 332. *Նա՛խ*՝ նշանակէ զնոյն ինքն սկզբնաչարն սատանայ. որ էր յերկինս գաւազան ուղղութեան և ընկեցեալ եղև օ՛ձ: - 332. Ութերորդ՝ խաչն փրկական *նախ* էր մահու գործիք. զոր առեալ ի ձեռն քրիստոս, և եղև կենաց պատճառ: - 332. *Նա՛խ* ցուցանէ՛ թէ՝ ձեռքդ այդ գրեսցէ օրէնս որով սրբին պահօղք, և պղծին ո՛չ պահօղք: - 332. *Նախ*՝ զի անմտացան նոքա, և զճանճս և զոռդունս և զգետս և զանասունս պաշտէին. վասն այն նոքօ՛ք տանջեաց զնոսա...: - 333. *Նա՛խ*՝ նշանակէ զադամ. որ անմեղ և յըստակ ստեղծաւ, և ի մեղանչելն եղև արիւն զազրալի, և մարմին անհոգի: - 333. *Նախ* ցուցանէ թէ՝ զազիր են գործօք և բորոտեալ մեղօք. վասն որոյ գարշ կենդանեօք ապականէր զնոսա: - 334. *Նա՛խ* նշանակէ՛, զի ի սիրոյն աստուծոյ ցրտացեալք էին և ի սէր սնոտեացս ջերմացեալք: - 334. *Նախ* նշանակէ զբազմապատիկ չարութիւն նոցա: - 334. *Նա՛խ* զի զանդրանիկ որդիսն աստուծոյ տանջեցին և մեռուցին. վասն որոյ անդրանիկք նոցա մահացան...: - 334. *Նա՛խ*՝ զի ծառայ և գերի պահէին: - 335. *Նա՛խ*՝ զի օտարք և հիւրք էին որդիքն յակոբայ՝ և ատեցին զնոսա: - 335. *Նա՛խ*՝ զի կախարդքն զա՛յն առնէին զոր մովսէսն առնէր: - 335. *Նա՛խ*՝ ի նրբութենէ իմացման: - 336. *Նա՛խ*՝ զի մոլորեսցին հաւանեալք նոցա և կորիցեն: - 336. *Նախ*՝ թոյլ տա՛լն է աստուծոյ. որ անձնիշխան կամօք ամրանայ մարդ ի չարն, և աստուած ներէ՛ և ո՛չ երկիւղիւ խրատէ զնա: - 336. *Նա՛խ*՝ զի իրաւո՛ւնք արար վասն վարձու կաւագործութեանն որ էր առ նոսա: - 336. *Նա՛խ*՝ զի հրամանաւն աստուծոյ էր. որպէս պոռնկութիւնն ովսէի և սպանութիւնն փենեհէսի ո՛չ էր մեղք: - 337. *Նախ* եմուտ ցեղն բենիամենի: - 338. Վասն որոյ *նախ* տուաւ թագաւորութիւնն բենիամենի որ էր սաւուղ: - 338. *Նա՛խ*՝ զի ո՛չ էր աշխատեալ ի կաւ գործոյն, ո՛չ է առ յընչիցն եգիպտոսի: - 338. *Նա՛խ*՝ զի կոչի «զի՞նչ սա՛». զի ամենայն հարցանելոյ լուծումն գոյ և պատասխանի. - 338. *Նա՛խ*՝ զի հրեշտակացեալ սրբոց է կերակուր: - 338. *Նա՛խ*՝ զի երևեսցի քաղցրութիւնն աստուծոյ ի վերայ իսրայէլի: - 339. *Նա՛խ*՝ զի յերկնից է իջեալ. որպէս ինքն ասէր «ա՛յս է հացն որ յերկնից իջեալ»: - 339. *Նա՛խ*՝ զի բոլո՛ր է: - 339. Վեցերորդ՝ *նախ* ցօղն կարապետ իջանէր. և ի մեզ շնորհքն նախապատրաստութեան ճաշակմանն: - 339. ***Նա՛խ*՝ զի ե բանն ի միում**

**տախտակի էր աստուածային. զի ասէր «ե՛ս եմ տէր աստուած քո. և մի՛ արասցես կուռս. և մի սուտ երդնուր. և պահեա՛ զօր շաբաթուն. և պատուեա՛ զհայր և զմայր»**: - 340. *Նա՛խ*՝ զի ամենայն ոք յինքն ձգեսցէ զբանս օրինացն. և մի՛ ծուլասցի թէ հասարակա՛ց է կատարելի: - 340. *Նա՛խ*՝ զի օրէնքն կանոն և սահմա՛ն է առնելեաց և ոչ առնելեաց: - 340. *Նա՛խ*՝ զատիկն ազատութեան ելիցն ի գարնանն: - 340. *Նա՛խ*՝ զի անհաւա՛ն էր ժողովուրդն և անկատար, զգալի տեսլեամբ և ձայնիւ զարհուրեցոյց. զի մի՛ մոռասցին. այլ հաւանեսցին և ի միտ պահեսցեն: - 341. *Նա՛խ*՝ զի մովսէս յայտնապէս զկէս արեանն անապական եհեղ զսեղանովն որ նշանակէր զանապական խորհուրդ արեանն...: - 341. Երկրորդ՝ զի *նախ* ջուրն էր ի խառնարանն և եհե՛ղ զարիւնն ի վերայ որ է՛ ցոյց մկրտութեանն: - 341. Իսկ սոքա *նախ* հեղուն զարիւնն և յետո՛յ զջուրն: - 341. Երրորդ՝ *նախ* զխառնեալ ջուրն ցանեաց ի վերայ ժողովրդեանն որ էր մկրտութիւնն. և սոքա ճաշակեն զջուրն և զարիւնն: - 341. *Նա՛խ*՝ հրամայեաց աստուած գրել զլինելութիւն աշխարհի. և ձևացոյց ի միտսն մովսէսի. զի մի՛ մոռասցին հանգամանքն. վասն որոյ զգալի խորան հրամայէ կազմել: - 342. Իններորդ՝ ի ի նմանէ՛ լինէր երևումն և աստուածախօսութիւն որպէս *նախ* ի յերկնէ. պա՛րտ էր երկնազարդ լինիլ: - 342. *Նա՛խ* այսպէս: - 342. *Նախ*՝ նշանակէր զձև աշխարհի: - 343. Բազում է խորհուրդն. բայց *նախ* հրեշտակաց յարմարի ցոյցք տապանին. զի նոքա են անապական և անմահ: - 344. *Նա՛խ*՝ զի ամենայն իր որ ընտի՛ր է՝ չա՛փ ունի և սահման. և ո՛չ շփոթումն. վասն այն կանգնաւ չափէ զնոսա: - 344. Այլ իմանալեացն դասք վկայք են *Նա՛խ*՝ զի ի դրունս են սուրբ Երրորդութեանն և տեսօ՛ղք են անճառելի փառացն: - 345. *Նա՛խ*՝ սեղան երեսաց հացին և գառին ի հիւսիսոյ կողմն: - 346. *Նա՛խ*՝ սեղան անփուտ՝ է՛ անմահ հոգիք: - 346. *Նախ* նշանա՛կ էր լուսաւորա՛ցդ երկնից որ ի հարաւ ընթանան: - 346. *Նա՛խ*՝ զի կատարեա՛լ է աստուածութեամբ և մարդկութեամբն միացեալ: - 347. *Նա՛խ*՝ զի տղա՛յք էին և ի տե՛սն զուարճանային. որպէս խորանն և ա՛յլ սրբութիւնք. նոյնպէս և զգեստք քահանայութեան: - 347. *Նա՛խ*՝ զոր լաւն զօրէնս ականջօք, տեսցեն և աչօք զի հաստա՛տ է տեսն քան զլուրն: - 349. *Նա՛խ*՝ զի զայրացաւ նախանձուն աստուծոյ. որպէս փենեհէս և եղիա: - 349. *Նա՛խ* եթէ՝ դո՛ւ աշխատեաց ի գործն, զի հաստատ պահեսցես. զի մի՛ դիւրաւ արհամարհիցի: - 350. Իսկ յետոյքէ աստուծոյ, *Նա՛խ*՝ հաւատով տեսանել: - 350. *Նա՛խ*՝ զի յետին պատկեր է: - 350. *Նա՛խ*՝ ի դէմքն. զի գթութիւնն անմե՛ղ կացելոցն է. և ողորմութիւնն դարձելոց ի մեղաց: - 350. *Նա՛խ* ցուցանէ զառատութիւն պարգևացն աստուծոյ, որ ո՛չ զուգակշիռ գործոցն հատուցանէ, այլ բազմապատիկ և հազարաւոր: - 351. *Նա՛խ*՝ զկերպն ադամայ որ ի դրախտին՝ երևեցոյց յինքեան. զոր ետես մահ և ընկէց զթագն իւր: - 352. *Նա՛խ*՝ զի տէրն բոլոր մարմնով լուսաւորեցաւ. և նա՛ մասամբ...: - 352. *Նա՛խ* ի մօրէ. և ապա՛ յաւազանէն, ի հրոյ, և ի հոգւոյ: - 353. *Նա՛խ*՝ զի հինն ստուեր և օրինա՛կ էր. իսկ նորս էութիւն և ճշմարտութիւն: - 353. Առաջին, զի *նախ* ձայնն հասանէ, և ապա՛ բանն իբր կարապետ եղեալ բանին: - 353. Իսկ յատուկ, *Նա՛խ*՝ զի նոքա մարդիկ էին անկեալ ընդ տկարութեամբ: - 354. Հինգերորդ, նոքա մատուցանէին պատարագ *նախ* վասն իւրեանց, և ապա՛ վասն ժողովրդեանն անգիտութեան. իսկ տէրն մեր ո՛չ արար մեղս ըստ մարգարէին. այն անմեղն վասն մեղաւորաց պատարագեցաւ...: - 354. *Նա՛խ*՝ հինն օրինակ էր և նորս ճշմարտութիւն. և հանդերձեալն առաւել ճշմարտութիւն որպէս սուրբ սրբոց: - 355. *Նա՛խ*՝ զի սովոր էին յեգիպտոս կռո՛ց զոհել, զայն նուէրքն ի յինքն ընկալաւ: - 355. *Նա՛խ*՝ զի մեղրն զհեշտութիւն մարմնոյն ցուցանէ: - 355. *Նախ* ցուցանէ զխոհեմութիւն բարուց որ ընդունելի է աստուծոյ և մարդոյ. այլ պարզութիւնն է՛ պատարագ: - 356. *Նա՛խ*՝ զի խմորն զհին չարութիւնն ցուցանէ. որ *նախ* հրաժարիլ պարտէ, և ապա՛ զբարիս գործել: - 356. *Նախ*՝ մանանայն, ուր ո՛չ խառնիւր աղ...: - 356. Գիտել պա՛րտ է, զի ամենայն պատարագ հին օրինացն *նախ* ի յերկուս բաժանի: - 357. Եւ *նախ* ասեմք զանկենդանն որ կոչի զոհ. որ է՛ մասնաւոր նւէրք. որպէս նաշիհ և իւղ և խունկ: - 357. *Նա՛խ*՝ բերել ի դուռն խորանին և տաճարին. և ո՛չ ի բազում մեհեանս. զի ցուցցէ զմին աստուած՝ և յանուն նորա ընծայել: - 359. *Նա՛խ*՝ ցուցանէ թէ սա՛ անմեղ է՝ վասն իմ մեղացս մեռանի. զոր ձեռօք ի սա՛ տամ զմեղս: - 359. *Նա՛խ*՝ զուարակն զենեալ: - 361. *Նա՛խ*՝ զի հրամանաւն աստուծոյ է՛: - 363. *Նա՛խ*՝ զմեղքն սրբել ի մարդոյ. և ապա՛ ընծայել աստուծոյ: - 363. *Նա՛խ* ի սեղանն աբրահամու. և ապա՛ մովսիսին և ապա՛ դաւթին ի կալն ոռնայի. և ապա՛ ի տաճարին սողոմոնի. յետոյ ի սեղանն եղիայի: - 363. *Նա՛խ*՝ զի այրն կատարեալ է. իսկ կինն կէս: - 365. *Նա՛խ*՝ զի ո՛չ ունի կատարեալ զօրութիւն սերման: - 365. *Նա՛խ*՝ զի բարեխօ՛ս են արեան: - 366. *Նա՛խ*՝ զի իցէ կենդանի յորմէ ելցէ արիւն. իսկ մեռեալն կամ անշունչ քար ո՛չ ունի արիւն: - 366. Երրորդ՝ ընտրութիւն է ի զենումն. զի բաժանեսցի *նախ* արիւնն, և ընդ նմա՛ շունչն և բնական

ջերմութիւնն: - 366. Զի թէ *նախ* բնական ջերմութիւնն պակասի, այս լինի բնական մահ. ո՛չ է ուտելի: - 366. *Նա՛խ*՝ զարիւնն հանել որ է՛ կենդանութիւն և աստուծոյ մասն. և զմնացեալն ուտել որ է տարր միայն: - 366. *Նա՛խ*՝ զի բոլոր զգայարանքն են ի գլուխն. պա՛րտ է բաժանել զնոսա: - 366. *Նա՛խ*՝ պարտ է զի լիցի օրհնեալ աղիւ. որ է՛ նշանակ իմաստութեան և սրբութեան: - 366. *Նա՛խ*՝ զի բորն պիսակ՝ մեռելութիւն է մարմնոյ. և մեղքն հոգոյ: - 366. *Նա՛խ*՝ թէ յետ է աւուրն յաւելոյր՝ այրէին: - 367. *Նա՛խ*՝ ի կերակրոյն աւելորդէ՛: - 368. *Նա՛խ*՝ բնականն. որ է բարի իմացուածն և խորհուրդ որ ո՛չ արդիւնանայ: - 368. *Նախ* ինքն գործն պիղծ է. և պղծէ՛ զգործօղն. և պղծէ՛ զմերձեցեալսն ի նա՛: - 369. *Նա՛խ*՝ կաղ. որ նշանակէ՛ զկաղալն ի յօրէնս: - 370. *Նա՛խ*՝ զի մի պակաս երևեսցի քան զհեթանոսս, խտրէին զմարմնոյ արատն: - 370. *Նա՛խ*՝ որ զքրիստոս պատարագէ: - 370. *Նա՛խ*՝ զի հեթանոսքն զանարա՛տն զոհէին: - 370. *Նա՛խ*՝ կոյրն. իսկ ի մեզ որ մտօ՛քն իցէ: - 371. *Նա՛խ*՝ զի զկենդանութիւնն տացեն տուողին կենաց՝ բաժին: - 371. *Նա՛խ*՝ զի խստասի՛րտք էին և անողոմք. և ո՛չ տային հանգչիլ ծառայիցն և անասնոցն: - 371. *Նա՛խ*՝ օր շաբաթուն: - 372. *Նա՛խ*՝ շաբաթն հանապազորդ. և ի նորս կիրակին: - 372. *Նա՛խ*՝ գառն հանապազորդ. և նուէրք յերեսաց սեղանն և յողջակիզաց: - 372. *Նա՛խ*՝ զի **ը** էին նւէրք պատարագացն. է գառն. և մի խոյ: - 373. Ասեմք *նախ* եթէ՝ ծնունդն և յարութիւնն մարմնաւոր էր. վասն որոյ մարմնապէս տօնեմք: - 373. Այլ խորհուրդն է, *Նա՛խ*՝ զի օրինակ բազում է, և ճշմարտութիւնն մի: - 374. *Նա՛խ*՝ նշանակեն զքրիստոս: - 374. Եւ *նախ* զքրիստոս այսպէս: - 374. *Նա՛խ* ասեն թէ՝ արծաթն նիւթ վաճառո՛յ է. և այնու շահի. և ո՛չ տոկոսեօք: - 375. *Նախ* է՝ որ ո՛չ գլուխն խնդրի և ո՛չ շահ. որպէս ողորմութիւն: - 375. *Նա՛խ*՝ երկրագործք, այգէգործք, հովիւք, և սոյնպիսիք: - 375. *Նա՛խ*՝ էպատիկ՝ զբազո՛ւմն նշանակէ. իբր թէ ըստ բազում մեղաց մերոց բազում և առաւել է պատուհասն: - 376. *Նա՛խ*՝ տարակուսանք մտաց և ցաւ աչաց. զի մոլորեցին ի փախչիլն: - 376. *Նա՛խ*՝ զայս նշանակէ թէ ի **ժ** դասուց հրեշտակաց մինն անկաւ, և մարդիկ զտեղի և զթիւ անկելոցն լնուն: - 376. *Նա՛խ*՝ զի ցուցանէ թէ յորմէ՞ ազգէ ծագելոց էր արեգակն արդարութեան քրիստոս: - 377. *Նա՛խ*՝ զի ծերն և տղայն պակա՛ս է ի զօրութենէ: - 377. *Նա՛խ*՝ զի ո՛չ առնու ի համար թըւոց: - 377. Իսկ գովութիւն ծերոյ, *Նա՛խ*՝ զի խափանեալ է ամենայն մեղաց շարժմունքն: - 378. *Նա՛խ*՝ զի յայնմ ժամու միա՛յն էր պիտանի մինչ յանապա՛տն էին: - 379. *Նա՛խ*՝ **գ** որդիքն ղևեայ գեթսոն, կահաթ, և մերարի, յօրինակ նորոյս **դ** դասուց: - 379. *Նա՛խ*՝ զի զա՛յլ հարուածոց փոխն կրեցին զչարչարանքն յեգիպտոս. իսկ անդրանկացն մնաց: - 380. Եւ *նախ* **գ** օրն. **գ** գոյացութիւն նորին. այսինքն աստուածութիւնն՝ հոգին՝ և մարմինն միաւորեալ մի: - 380. *Նախ* տապանակն, և այլքն զկնի: - 380. *Նա՛խ*՝ բուրվառն օրինա՛կ էր ահարօնի, և գաւազանն՝ մովսէսի: - 382. *Նա՛խ*՝ առ տեղեաւն ցուցանէր յահարօնէ՛ լինիլ քահանայ. յորդիս և ի թոռունս յազգէ յազգ: - 382. Զի երկոտասան վիճակացն առաքեալք. և *նախ* քրիստոս ի մէջ նոցա: - 382. Եւ կարմիրն, *Նա՛խ*՝ զողջախոհութիւնն կուսին: - 383. *Նա՛խ*՝ զի հուր աստուածութեանն կիզոյր զնա՛. որպէս ջուր ի մէջ ապակոյ ի տապոյ արևուն պակասի: - 383. *Նա՛խ*՝ զի յորժամ ճշմարիտ սրբութիւնն գայցէ, հաւանեսցին որ է՛ արիւնն քրիստոսի...: - 383. *Նա՛խ*՝ **գ** օրն հաւատն է յերրորդութիւնն սուրբ. և ապա՛ սրբութիւն գործոց է **է** զգայութեամբ: - 384. Երրորդ, զղջումն՝ խոստովանութիւն՝ և թողութիւնն *նա՛խ* է. և ապա՛ ա՛յլ գործք ապաշխարութեան: - 384. *Նա՛խ*՝ ի սեռս իւր ներելի և փոքր. որպէս դատարկաբանելն և մորոսն: - 385. *Նա՛խ*՝ որ ստոյգ չարութեամբ լինի մեղքն. այսինքն կամաւ և գիտութեամբ և կարողութեամբ, անթողելի՛ է: - 385. *Նա՛խ*՝ ցուցանէ թէ քրիստոս է առաջին և վերջին. այսինքն սկիզբն և կատարումն եկեղեցւոյ. ո՛չ միայն աստուածութեամբն, այլ և մարդկութեամբն: - 385. Չորրորդ՝ *նա՛խ* օրէնքն և ապա ջուրն. զի *նախ* հոգւով խնամէ՛ և յետոյ մարմնով: - 385. Եօթներորդ՝ զի *նախ* զօրէնսն կատարեմք, և յետոյ զմխիթարութիւնն առնումք: - 385. Ութերորդ՝ *նախ* օրինակն է, և ապա՛ ճշմարտութիւնն: - 385. Եւ վէմ կոչի, *Նա՛խ*՝ զի ադամ հողացաւ մեղօք. և քրիստոս վէմ անմեղութեամբն: - 386. Իսկ ի ջուր, *Նա՛խ*՝ զի ջուր բղխեաց ի լուացումն և յարբուցումն. որպէս ի կողից փրկչին ջուր և արիւն: - 386. *Նա՛խ*՝ զի կամէին քարկոծել: - 386. *Նա՛խ*՝ զի օձին հող ետ աստուած կերակուր և ո՛չ տրտնջեաց: - 386. *Նա՛խ*՝ որպէս բարձրացաւ օձն ի ձողին. նոյնպէս տէրն մեր ի խաչին: - 386. *Նա՛խ*՝ զի **է** էր պատարագն. վասն զի մատոյց **է** զուարակ. և **է** խոյ. վասն որոյ ընկալաւ պարգևս **է** բանից մարգարէութեան: - 387. Եւ զի կրկին ետես, *Նա՛խ*՝ զի կրկին էր պատարագն. խոյ և զուարակ: - 387. *Նա՛խ*՝ զի մի՛ խօսեսցի դնն և չարիս ուսուսցէ: - 387. *Նա՛խ*՝ զի մի՛ հպարտասցի բաղաամ. զի և էշն ետես զհրեշտակն: - 388. *Նա՛խ*՝ զի բերան մեղաւորի մի՛ բացցի ի ժողովրդեանն աստուծոյ: - 388. *Նա՛խ*՝ զի բարկացեալ՝ զէշն կամէր սպանանել սրով. թէ գոյր ի ձեռին ընդէ՞ր բանիւ ոչ սատակէր: - 388. *Նա՛խ*՝ զի փորձեսցին և ընտրեսցին

ի միմեանց հաստատունքն ի հաւատս և տկարքն: - 388. *Նա՛խ*՝ զաւակաց որք ընդ հրամանաւ են ծնողաց: - 389. *Նախ* գերծու զհերն. և զոր ուխտիւն աճէ՝ զայն ի սեղանն հանել ի կատարումն ուխտին: - 389. Եւ զհերսն պատարագել աստուծոյ, *Նախ* զինքնածին բոյսքն ի յանձնէ իւրմէ, և ապա՛ զայլսն ի յանձասնոց: - 390. *Նա՛խ*՝ նշանակէ՛ զնահապետսն. **իե** ազգ որ բնական օրինօք արդարացան *Նախ*, և ապա՛ գրաւորն բնականաւն զօրացեալ արդարացոյց զնոսա: - 390. *Նա՛խ*՝ զի ո՛չ տանջիւր ակամայ սպանօղն: - 392. *Նա՛խ*՝ անդ զհարքն թուեաց որք կոտորեցան. և աստ զորդիսն որք ժառանգէին զերկիրն: - 392. *Նա՛խ*՝ որպէս կանուխ անձրևն բուսուցանէ և անագանն սնուցանէ և պտղաբերէ՛: - 393. Իսկ ահագին, *Նա՛խ*՝ զի թշնամիք էին շուրջանակի. և գազանք և սողունք. և ծով. և ամայի. և անպարիսպ: - 393. *Նա՛խ*՝ շուրջ թշնամիք դևք. և գազանք խիղճ մտաց. և ծով մեղաց. և ամայութիւն բարեաց: - 393. *Նա՛խ*՝ յէգիպտոս ընդ փարաւօնի. յորժամ եմք աստ: - 393. *Նա՛խ*՝ զի **գ** է որպիսութիւն մեր: - 394. *Նա՛խ*՝ մովսէս նշանակէ՛ զհին օրէնքն. որ մինչ ի մկրտութիւնն եկն և վճարեցաւ: - 394. Զի՞նչ է որ մովսէս ետես *Նախ* զծովն որ յարևմուտս, և զհիւսիս և զհարաւ, և ապա՛ զարևելս: - 394. *Նախ*՝ որպէս արեգակն եղև տեսութիւնն մովսէսի. զի յառաջ զարևմուտս տեսանէ. և վերացեալ զհիւսիս և զհարաւ. և ապա՛ զարևելս: - 394. Վեցերորդ՝ *Նախ* զկեանս զայս տեսանեմք որ է արևմուտք. և ապա յետ մահու զհանդերձեալն որ է՛ արևելք: - 395. Ութերորդ՝ ի մկրտութեանն *Նախ* հրաժարիմք յարևմտից, և հաւատամք յարևելս: - 395. Տասներորդ՝ ի կայանս հոգւոց *Նախ* տեսանի պատիժն, և ապա փառքն: - 395. *Նա՛խ*՝ զօրաւոր նշանք և արուեստքն յեգիպտոս: - 395. *Նա՛խ*՝ բանիւ ասաց. զի նահապետք բնական օրէնք ընկալան. աբրահամ. նոյ. և այլք: - 395. Առաջինն՝ զի *Նախ* արտաքին մարմնոյ հանդիպիմք որպէս դրան. և ապա հոգւոյն ի ներս: - 395. Ըստ այնմ *Նախ* ըզմարմնաւոր օրէնս ետ, և ապա զհոգևորն: - 395. Երրորդ՝ *Նախ* անկատա՛ր բնութիւնս և տղայ. և այժմ կատարեալ: - 395. Չորրորդ՝ *Նախ* օրինակն է. և ապա ճշմարտութիւնն: - 395. Հինգերորդ՝ *Նախ* յերկիր գամք. և ապա յերկինս ելանեմք: - 395. *Նա՛խ*՝ հաւատով ճանաչելն է զԵրրորդութիւնն մի բնութիւն, և ապա գործով սիրել զնա. որպէս *Նախ* ուսանիլն է և ապա առնել: - 396. Առաջինն՝ *Նախ* սիրել. և առանց փոխարինաց: - 396. *Նա՛խ*՝ վասն ժողովրդեանն ասէ, թէ ոչ միայն հացիւ կեայ մարդ. որպէս ասաց ադամայ ուտել զհաց քրտամբք: - 397. *Նա՛խ*՝ գիտելի է, զի աչք մարմնոյն զինքն ո՛չ տեսանէ, այլ զայլքն: - 397. Դարձեալ՝ հայեա՛ց յանձն քո. և *Նախ* զքեզ քննեա և տե՛ս, և ապա՛ զայլս: - 398. Ա՛րդ՝ *Նախ* վասն հարցն սիրոյ զզաւակսն նոցա ընտրեաց աստուած: - 398. *Նա՛խ*՝ զի մի՛ սնուցիչն լիցի եփիչ նորա: - 399. *Նախ*՝ զի ասէ՝ «յեղբարց ձերոց». այսինքն ո՛չ յօտարաց, այլ յազգէ նոցա յուդայէ՛, և ի ղևեայ եղբարց: - 399. *Նա՛խ*՝ որպէս եղև մեղք և եբարձ զմեղս. նոյնպէս եղև անէծք և եբարձ զանէծս: - 400. *Նա՛խ*՝ բնական. զի կամէր աստուած բազմացուցանել զծնունդն: - 401. *Նա՛խ*՝ թէ մեռեալ իցէ եղբայրն: - 402. *Նա՛խ*՝ զի և հեթանոսք վայելեսցեն յողորմութեանցն: - 402. Վասն է՞ր *Նախ* զանէծս և ապա զօրհնութիւնն դնէ: - 403. *Նա՛խ*՝ զի երկիւղ ծառայիցն է, և վարձ մշակաց: - 403. Չորրորդ՝ ադամայ *Նախ* զօրհնութիւն և ապա անէծք ետ. իսկ այժմ դարձուցեալ ի յօրհնութիւնն աւարտէ՛: - 403. *Նա՛խ*՝ զի զօրինակն ո՛չ ունիմք. այլ զճշմարտութիւն օրինացն ունիմք: - 403. *Նա՛խ*՝ զամենայն օրէնսն կատարելով: - 403. *Նա՛խ*՝ զի ի խղճմտանք մարդոյն կախեալ է կեանքն արժանի մահու. և տեսանէ՛ միշտ և ո՛չ հաւատայ և դադարէ ի մեղաց: - 404. Իսկ առ մեզ *Նախ* ծածուկ ներտրամադրեալն բան. զի աստուած քննէ զսիրտս: - 406. *Նա՛խ*՝ շնորհակալութիւն է և գոհութիւն երախտեացն աստուծոյ տրիտուր. ո՛չ իբր կարօտի, այլ անկարօտի որպէս աստուծոյ: - 406. *Նա՛խ*՝ ի պարգևաց բանականաց. որպէս հրեշտակաց և հոգւոյս մեր: - 406. *Նա՛խ*՝ զի շնորհակալե՛մք հոգւով, և գոհանամք մարմնով: - 406. *Նա՛խ*՝ անընդմիջաբար յերկրէ. որպէս նաւթ: - 407. *Նա՛խ*՝ անընդմիջաբար ի հողոյ. որպէս փայտ: - 407. *Նա՛խ*՝ կոչի աւագ, զի մովսէս երէ՛ց է և առաջին քան զամենայն մարգարէսն: - 407. *Նա՛խ* եթէ՝ բնութեամբ բարի է աստուած և ո՛չ ունի բարկութիւն. զի ծառ բարի պտուղ չար ո՛չ առնէ...: - 408. *Նա՛խ*՝ զի մի՛ արհամարհիցեմք զաստն. իբր թէ սոսկ բանք են: - 408. *Նա՛խ*՝ զի կտակովն զմարմնաւորքն կարգաւորեն, և օրհնութեամբն զհոգևորսն: - 408. *Նա՛խ*՝ զի ո՛չ ամենևին անէծ. այլ և մասն մի օրհնութիւն էր: - 409. *Նա՛խ*՝ վասն ցեղին ռուբէնի ասի. փոխելով զանէծքն ի յօրհնութիւն: - 409. *Նախ* այս է միտքն, որ զյարութիւնն աստ ասաց: - 409. *Նախ* ասեն թէ զնիւթն աստուած կարծեցին, սատանայ խաբէր թէ ի՛մ է այս մարմինս իբրև տեառն նիւթոյ...: - 409-410. *Նա՛խ*՝ զի մի՛ արհամարհեսցի աստուածն մեռեալ: - 411. *Նա՛խ*՝ փոփոխմամբ իւր նշանակէ՛ զփոփոխելի կենցաղս այս. իսկ արեգակն անփոփո՛խ է. որ է՛ հանդերձեալն: - 411. Ա՛րդ *Նա՛խ*՝ զայն հասակն **լ** ամեայ յորմէ զրկեցաւ մեղօք՝ լան: - 411. *Նա՛խ*՝ զի ընդ

աստուծոյ խօսեցաւ և ետես և լուաւ զբանն: - 411. Եւ թէ *նախ* դատաւորք և թագաւորք, և ապա՛ քահանայք տիրեցին իսրայէլի: - 413. *Նա՛խ*` վասն օրհնութեանն յակոբայ. տալով զանդրանկութիւնն եփրեմի: - 414. *Նա՛խ*` դարձաւ գետն, զի ա՛հ և երկիւղ լիցի քանանացւոցն. և մի՛ հակառակեսցին յեսուայ և անկցին ի սուր նորա: - 414. *Նա՛խ*` զի դիւրին է կսկիծ վիրացն: - 415. *Նա՛խ*` զի ոչ կամայ էր և բռնութեամբ: - 415. *Նա՛խ*` զի մարդն տէ՛ր է և թագաւոր. և անասունքն ծառայ ընդ անցաւոր տէրանց. և ծառայքն պատուհասին. որպէս առ ջրհեղեղաւն: - 416. *Նա՛խ*` զի մի՛ փախիցեն թշնամիքն. զի ընդ երե՛կս էր: - 416. *Նա՛խ*` զի լինէր առաւել զօրութիւն: - 416. *Նա՛խ*` զի խնայեաց աստուած ի ծերութիւն նորա որպէս ի մովսին: - 416. *Նա՛խ*` զի տէր ինքն էր բաժին նոցա. և զամենայն իրաւունս ի քահանայսն տային: - 417. *Նա՛խ* ըստ հոմանունն. զի յեսու` փրկիչ, և յիսուսն փրկիչ լսի ըստ հրեշտակին, «կոչեսցի յիսուս. զի նա՛ փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց»: - 417. Մետասաներորդ` *նախ* կործանեաց զերիքով, և ապա՛ յերկիրն եմուտ: - 418. Քսաներ` յեսու *նախ* սպան զթագաւորս, և զքաղաքս նոցա աւերեաց: - 419. Եւ տէր մեր *նախ* կապեաց զհզօրն ի խաչին և զտուն նորա աւերեաց որ էր ամրոց դժոխոցն: - 419. *Նա՛խ*` նշանակէր զնոյն ինքն գեդէոն. որ երևմամբ հրեշտակին դատաւոր եղև իսրայէլի: - 421. *Նա՛խ*` ըստ անուանն. զի սամփսոն` արեգակն կամ փրկութիւն լսի: - 421. Խօսեցաւ օրհնօք *նախ* և նշանեաց զեկեղեցի սուրբ հարսն երկնաւորին: - 422. *Նա՛խ*` զի խաբի ի մեղաց և յայտնէ՛ զծածուկս սրտին: - 424. *Նա՛խ*` երեքժանի մսահանաւ հանել զմիսն որ չէր օրէն: - 425. *Նա՛խ*` զի անարժան լինին սպասաւորքն. որպէս ոփնի և փենէհէզ որդիքն հեղեայ: - 425. Կրկին կործանիլն դագոնայ, զի *նա՛խ*` օրհնօքն մովսէսի անկաւ, և քրիստոսիւ կործանեցաւ: - 425. *Նա՛խ*` զի մի՛ համարեսցեն այլազգիք թէ դիքն իւրեանց առաջի ընթացան և գլուխ եղեն զօրացն և հարին զպատերազմն: - 425. *Նա՛խ*` զի գարշելի իրօք տանջէր զգարշելիսն: - 426. *Նա՛խ*` որպէս սաւուղ ի խնդիր իշոյ ել և թագաւորութիւն եգիտ. և տէր մեր մարդկան ազգի որ հաւասարեաց անբանից, և թագաւորեաց մեզ: - 426. Չորրորդ` *նախ* օծաւ ծածուկ, և ապա՛ յայտնի ի գաղգաղայ. և տէր մեր *նախ* օծաւ յարգանդի, և ապա՛ ի յորդանան ի յովհաննէ: - 426. *Նա՛խ*` զի բաժանեցաւ թագաւորութիւնն ի սաւուղայ: - 427. *Նախ* ասեն թէ` փոխեալ էր զզգեստ պատւոյն և զգեցեալ ձորձ հովւութեան և այլագունեալ: - 427. *Նա՛խ*` զի պատարա՛գ է աստուծոյ: - 427. *Նա՛խ*` սուրբ էին մանկունքն: - 427. Եւ *նա՛խ*` զի ո՛չ ճանաչեաց վիուկն զսաւուղ...: - 428. *Նա՛խ*` զի ո՛չ ետես զնա. այլ միայն կինն. ապա յա՛յտ է զի սուտ նմանութիւնն էր: - 429. *Նա՛խ*` եթէ ճշմարիտ յարեաւ սամուէլ, ընդէ՞ր ոչ եհար զվհուկն և սատակեաց. և ընդէ՞ր ոչ յանդիմանեաց զսաւուղ եկեալ առ վհուկն: - 429. *Նախ* այսպէս. զի եհարց թէ ընդէ՞ր հաներ զիս. այլ ո՛չ էր հարցեալ թէ գիտէր զխորհուրդն: - 430. *Նա՛խ*` զի պա՛րտ էր ուսով բառնալ զտապանակն որպէս հրամայեաց աստուած. և նոքա սայլիւ բերէին որպէս այլազգիքն: - 431. *Նա՛խ*` զի մի՛ մարդիկ յանդիմանեսցեն չարք և անողորմք. այլ աստուած յանդիմանեաց և ողորմեցաւ: - 432. *Նա՛խ*` զի մեղայն դաւթի` զպատիժն յաւիտենից` արար ժամանակեայ խրատ: - 432. *Նա՛խ*` զի հեռասցի ի չարէն: - 432. *Նա՛խ*` զի շնութեան էր որդի: - 433. *Նա՛խ*` զի մեզ օրինակ լիցի չտալ պատասխանի որք նախատեն զմեզ...: - 433. *Նա՛խ*` որպէս գեդէոն ջրովն փորձեաց զհաւատս զօրացն. նոյնպէս և դաւիթ: - 434. *Նա՛խ*` թուել հրամայեաց, որպէս այն որ թոյլ ետ իսրայէլի մարտնչիլ ընդ բենիամենի, և անկան **լռ** ի դասուց նոցա: - 434. *Նա՛խ*` զի **գ** ամ սովն, և **գ** ամիս սուրն` սաստիկ էր քան զերեք աւուր մահն: - 434. *Նա՛խ*` նշանակէ՛ զսեղան խաչին քրիստոսի. որ յերեք ժամուն մինչև ի **զ** ժամն խաչեցաւ- և հաշտեցաւ աստուած: - 435. *Նա՛խ*` զի որդի է յեսսեայ. որ է՛ պտուղ կղզւոյ. և տէրն մեր եղև պտուղ մարիամու ցամաքեալ ի խոնաւութեանց կենցաղոյս: - 435. Չորրորդ, ի հովւութենէ օծաւ թագաւոր և տէր մեր *նա՛խ* քարոզեաց, և ապա՛ ժողովեաց. և տիրեաց յերկինս և յերկրի: - 435. Թագաւորեաց *նախ* **է** ամ ի վերայ յուդայ, և ապա ամենայն իսրայէլի. և տէր մեր յեօթն դարոյս թագաւորէ՛ հաւատացելոց, և ի վախճանի ամենայնի...: - 437. *Նա՛խ*` զի պարկեշտ և զգա՛ստ էր: - 439. *Նա՛խ*` զի ինքն ո՛չ սպանցէ: - 439. *Նախ* զայն ցուցանէ առ նորս, եթէ որք յանգիտութեան մեղանչէ` թողու աստուած. և որ դարձեալ կրկնէ, և զառաջինն պահանջէ աւէ: - 439. *Նա՛խ*` զի այլազգի էր: - 442. *Նա՛խ*` զի միայն մասին աշխարհի և սակաւո՛ւց էր տէր իսկ քրիստոս ամենայնի: - 442. *Նա՛խ*` զի հեզութեամբ և քաղցրութեամբ մեծարեաց զնա զի մի՛ սովեսցի և մեռցի: - 443. Եւ տես, զի վրէժխնդիրն օրինացն մովսէսի` *նախ* ի՛նքն լուծանէր զօրէնս. զի ագռաւն պիղծ էր օրինացն: - 443. *Նա՛խ*` ցուցանէ զչափաւոր հարկաւորքն մեր: - 444. *Նա՛խ*` զի վրէժխնդիր եղև օրինացն աստուծոյ. որպէս փենէհէզ սպան զզամբրի և զքասբի. և սամուէլ զագագ: - 444. *Նա՛խ*` զի ուսուսցէ, եթէ մի անգամն ո՛չ լսի` պա՛րտ է անձանձիր աղօթել. որպէս այրին որ ժտելովն էառ: - 444. *Նախ*` թէ կամի՞

զիրաժարիլն. և երկրորդ՝ թէ գիտէ՞ զվերանալն: - 445. *Նա՛խ*՝ իբր զթագաւոր վերացեալ կառօք և զօրօք: - 445. *Նա՛խ*՝ զի այնպէս ծալեսցի ջուրն: - 445. *Նա՛խ*՝ զի անարժա՛ն էր գեէզի: - 445. *Նա՛խ*՝ զի մի՛ զարհուրեսցի երուսաղէմ տեսեալ զսուրն որ կոտորեաց զնոսա: - 446. *Նա՛խ*՝ զի ո՛չ եհարց զաստուած. այլ վաղվաղեաց ի պատերազմ: - 446. *Նախ* փուա արքայ ասորեստանեայց եւ ի վերայ իսրայէլի: - 446. Եւ յետ նոյն քան ամաց շինութեան տաճարին աւելի կամ պակաս, *նա՛խ* արձակեցաւ եզր դպիր. և յետ նորա նէեմի: - 447-448. *Նա՛խ*՝ զի h ա՛մ է վճիռ կենաց մարդոյս ըստ դաւթի: - 448. Եւ այսպէս յետ աւերածոյն և գերութեանն *նախ* տաճարն շինեցաւ, և յետոյ պարիսպն կանգնեցաւ: - 448. Եւ յորժամ զղջանամք ի մեղաց՝ *նախ* խոստովանութեամբ շինեմք զտաճար սրբութեան մերոյ. և ապաշխարութեամբն որ է՛ փոխարէնքն՝ կանգնեմք զպարիսպն եօթնիւք զգայութեամբք: - 448. *Նա՛խ*՝ նշանակեն առաջինքն զմարգարէքն և զարդարսն. որք ո՛չ կարացին զկործանեալ բնութիւնս շինել արդարութեամբ...: - 448-449. *Նախ* մասնաւոր հրէից. և ապա մեր եկեղեցւոյ. և ի կատարածի բովանդակքն. «յորժամ լրումն հեթանոսաց մտցէ»...: - 449. Վասն է՞ր *նախ* դատաւորք և ապա թագաւորք և ապա քահանայք առաջնորդեցին մինչ ի տէր մեր յիսուս քրիստոս: - 449. Ա՛յս է խորհուրդն. զի տէր մեր *նախ* երևեցոյց զդատողութիւնն...: - 449. Որ և յերկրորդ գալուստն *նախ* դատեսցէ. և ապա թագաւորեսցէ անվախճան. ընդ որով քահանայագործութեամբ մաքրէ՛ և լուսաւորէ՛ և կատարեալս առնէ միշտ անզրաւ յաւիտենիւ: - 450. *Նա՛խ*՝ հաւանական ըստ կերպի դաւանութեանն հաւատոյ...: - 457. *Նա՛խ*՝ ի միութենէն աստուծոյ: - 457. *Նա՛խ*՝ զի գործ ողորմութեանն է ի սկիզբն աշխարհի՝ և ի մէջն. և ի կատարումն յարութեամբ մարդկան որպէս ցուցաւ ի վերոյ: - 458. *Նա՛խ*՝ յորժամ հատուցանէ ումեք ըստ արժանեաց: - 458. *Նա՛խ*՝ ասի ողորմութիւն, իբր թէ որոշիչ թշուառութեան սրտին: - 459. *Նա՛խ*՝ զի կոյսն սուրբ՝ նշանակեսցէ զսուրբ եկեղեցի խօսեցեալ քրիստոսի որ նմանապէս է կոյս: - 461. *Նա՛խ*՝ սրբութիւն հասարակ. որպէս շնորհք մկրտութեան և խոստովանութեան. զի որք անցանեն ընդ նա՞ սրբին: - 462. *Նախ*՝ անբաժանելի միաւորութիւն բանականին առ աստուած: - 462. *Նա՛խ*՝ զի աստուած էր որ ծնանէր. պարտ էր զի աւետաւորն հրեշտակ աստուծոյ լինէր: - 463. *Նա՛խ*՝ զի աստուած էր ողջոյնառաքն. որ խօսէր զկոյսն ի հարսնութիւն կուսութեան, կուսաբեր լինիլ պտղովն: - 464. *Նախ* ասի ողջոյն ըղձական առողջութեան. ըստ այնմ «Ո՛ղջ լեր ա՛րքայ»: - 464. *Նախ*՝ թէ ո՜րպէս պատւով ետ զողջոյնն կուսին ասելով «ուրա՛խ լեր լի՛ շնորհօք»: - 464. *Նա՛խ*՝ զընտրողութիւնն. զի «խորհէր թէ ո՞րպիսի ինչ իցէ ողջոյնս այս»: - 465. Նոյնպէս պա՛րտ է ամենայն մարդոյ յորժամ լսիցէ զբանն, *նախ* խորհիլ և հարցանել, և ապա՛ հաւանիլ: - 465. *Նա՛խ*՝ աստուածածին վասն այն ասեմք, զի ծնեալն ի նմանէ աստուած է: - 466. *Նա՛խ*՝ զի ո՛չ խնդրէին, ըստ որում ո՛չ ցանկանային: - 467. *Նա՛խ*՝ զի յուսահատութեամբ վրիպէին: - 467. *Նա՛խ*՝ անպատշա՛ճ էր թէ հայր էր մարմնացեալ. զի հայր անսկիզբն է. և յայնժամ ո՛չ ոք լինէր առանց սկզբան: - 468. *Նա՛խ*՝ զի ո՛չ լինէր այն որդի ըստ բնութեան ծնողին. որպէս և ո՛չ եւա ադամայ. վասն որոյ յարգանդէ ծննդեամբ եղև որդի կուսին: - 469. *Նա՛խ*՝ զի կազմեսցի զօրութեամբ բարձրելոյն ի հոգւոյն սրբոյ և ո՛չ նպաստութեամբ մարդոյ: - 470. *Նա՛խ*՝ զի ո՛չ վայելէր մաքրութեան կուսին: - 470. *Նա՛խ*՝ զի այն ո՛չ ունէր ծնունդ: - 470. *Նա՛խ*՝ զի ո՛չ ապականիւր կուսականն ամբողջութիւն: - 470. *Նա՛խ*՝ անսերմն յղութիւնն: - 471. *Նա՛խ*՝ ծնաւ ի հօրէ բանն աստուած յառաջ քան զյաւիտեանս անճառ և անպատում...: - 471. *Նախ* ասի միածին՝ զի նա միա՛յն է համագոյ ծնողին ծնունդ. ըստ որում, «բանն էր ի սկզբանէ առ աստուած». իսկ այլ ամենայն ծնօղ՝ յառա՛ջ է քան զծնեալն: - 472. *Նա՛խ*՝ ի բազում եղբարս. և երկրորդ՝ երէց և առաջին: - 472. *Նա՛խ*՝ զի նա ի հօրէ՛ է սկսեալ. և եղեալքս ի հօրէ: - 472. Երրորդ՝ կոչի անդրանիկ ըստ հոգւոյն շնորհաց. զոր *նախ* ընկալաւ իբր գլուխ՝ և եհեղ յանդամքս իւր: - 473. *Նա՛խ*՝ զի սկզբնական արդարութեամբ ծնաւ. և պատճառի անսերմն յղացումն: - 473. *Նա՛խ*՝ փրկեաց ի մեղաց...: - 473. *Նա՛խ*՝ օծումն մարմնական. որպէս փափկասիրաց: - 474. *Նա՛խ*՝ որպէս մարդն յայլ և այլ բնութեանց միաւորեալ՝ մի անձն և մի դէմ և մի բնութիւն կատարի. զի մի ասեմք զմարդն և մի զբնութիւն նորա: - 477. *Նա՛խ*՝ զի միաւորութիւնն մարդոյս եղականա՛ց է ընդ միմեանս: - 478. *Նա՛խ*՝ զի մի՛ անընտել թուիցի մարդկան...: - 479. *Նա՛խ*՝ զի ծեր և հին աւուրց նշանակեցաւ հայր աստուած ի դանիէլէ՛. իսկ որդին նորածին և երիտասարդ հասակաւ: - 479. *Նա՛խ*՝ վասն վկայութեանն որ ասաց եթէ՝ «որդի իմ ես դու, և ծնայ զքեզ»: - 480. *Նա՛խ*՝ ցուցանէ թէ կատարումն ամենայն տնօրէնութեանց խա՛չն եղև: - 481. *Նա՛խ*՝ ադամայ. այն է որ ասաց աստուած՝ «յաւուր յորում ուտիցես ի նմանէ՝ մահու մեռանիցիս»: - 481. *Նա՛խ*՝ զի ասէ աւետարանն ղուկասու, «իբրև լցան աւուրք պաշտամանն, գնաց զաքարիա ի տուն իւր»: - 483. *Նա՛խ*՝ զծննդեանն:

- 484. *Նա՛խ*՝ զի որ բանն մարդ եղև՝ ո՛չ գարշի յեղեալ օրինացն իւրոց զի վասն մարդկան եղ: - 485. *Նա՛խ*՝ թլփատեաց զնա հայրն ի ծնունդն՝ աղքատութեան սրովն: - 486. *Նա՛խ*՝ բամբասողօք. որք բառնան զբարեկամս և զբարի համբաւս: - 486. *Նա՛խ*՝ զի զմերն յանձն էառ սրբութիւն. որպէս զայլսն ամենայն տընօրէնութիւն: - 486. *Նախ* ասէ «եկն յիսուս». այսինքն տըւօղն փրկութեան և ոչ կարօտն փրկութեան: - 486-487. *Նախ*՝ որ ասէ «դա՛» նշանակէ զմիաւորութիւն բանին առեցեալ մարմնովն: - 487. Այլ զանազանին *Նախ* ի ձևն. զի մկրտութիւնն յոհաննու տուեալ լինէր յանուն այնմ որ գալոցն էր. իսկ քրիստոսին յանուն Երրորդութեանն: - 488. Իսկ այժմ վասն խաչին *նախ* գիտելի է, զի չարչարանքն քրիստոսի ընդ դէմ է և բարձօղ է մոլորութեանց մեղաց: - 489. *Նախ*՝ երկիր շարժեցաւ: - 490. *Նա՛խ*՝ զի չորեքտասա՛ն էր լուսինն եկն ի ներքին կիսագնդէն ի վերին գունդն և ծգեցաւ առ արեգակն: - 490. *Նա՛խ*՝ զի ծանիցի թէ սոցա արարիչ է անարգեալն...: - 490. *Նա՛խ*՝ զի երևելի էր և ո՛չ անարգ ոք. որ և սակաւ ինչ յառաջ փառօք եմուտ ի քաղաքն: - 490. *Նա՛խ*՝ զի զաստուած աստուծոյ պատարագեաց: - 491. *Նա՛խ*՝ զի դատապարտեցաւ ընդ մահու: - 491. *Նա՛խ*՝ մեռանիլն. և անմեղ մեռանիլն. և կամաւ մեռանիլն: - 492. *Նախ* անարգեցաւ ի պարտէզն զկնի արեան քրտանցն յորում մատնեցաւ ի յուդայէ. և իբրև աւազակ ըմբռնեցաւ և կապեցաւ: - 492. *Նախ* նշանակէ զպէս պէս զօրութիւնս քրիստոսի. որ երբեմն զբարձրագոյնս ներգործէր և երբեմն զնուաստագոյնս երևեցուցանէր յինքեան: - 493. *Նա՛խ*՝ քառադէմ կառքն եզեկիէլի, և տէր բազմեալ ի վերայ: - 494. *Նա՛խ*՝ զի յադամ եղև ներգործեալ. և ի մեզ բնաւորեալ. և ի քրիստոս առեալ: - 495. Եւ այս գիտելի է, զի կրկին են կիրք. *նախ* բնական. և ապա եկամտական: - 496. Զոր օրինակ՝ բժիշկն յորժամ հիւանդին զդեղն տայ, *նախ* ինքն ճաշակէ զի հաւատալի լիցի: - 497. Նոյնպէս և զկամաւոր մահն որ է՛ դեղ և առիթ յաւիտենական կենացն, *նախ* ինքն ճաշակեաց և ուսոյց հետևողաց իւրոց: - 497. Վասն որոյ *նա՛խ* ցուցանել պա՛րտ է թէ ո՛չ նոյն է մահ և ապականութիւն: - 498. Եւ զի ա՛յլ է մահ և ա՛յլ ապականութիւն՝ յա՛յտ է *նախ* ի գործոյն. զի ինքեամբ մահ ի ներքս մտեալ որոշէ՛ զհոգի և զմարմին. և ա՛յս է գործ նորա: - 498. *Նախ* որպէս ասացաւ՝ ապականութիւնն ծունդ է մեղաց՝ և մեղքն չա՛ր է. և մեղք ո՛չ կրեաց սուրբ մարմինն քրիստոսի. ապա ուրեմն անապակա՛ն է: - 498. *Նա՛խ* ասեն, եթէ անապակա՛ն էր մարմինն փրկչին, ապա անմահ և անչարչարելի՛ է: - 500. *Նա՛խ*՝ զի բանական մարդ կամաւորօ՛քն է մարդ, և ո՛չ ակամայիւքն. որպէս կատարեալ էր մարմինն ադամայ նախ քան զմեղանչելն: - 502. *Նա՛խ*՝ զի ցուցցէ վասն որոյ մարդ եղև և մեռաւ զի ազատեսցէ զհոգիսն: - 503. Եւ չարչարանքն քրիստոսի երկու իրս ներգործեաց. *նախ* զպարտիս մեղաց վճարեաց. երկրորդ զդրունս երկնից եբաց: - 503. *Նախ*՝ վասն վճարման պարտուցն լուծան կապանք դժոխոցն...: - 503-504. Դժոխ՝ զդժուար զնեղ և զանձուկն նշանակէ. և կոչի բազմաւոր, *Նախ* վասն բազում կրիցն. ուր լալ աչացն է և կրճել ատամանց և խաւար ներքին և արտաքին և այլն: - 505. *Նախ* ասեն թէ ի չորրորդ դժոխքն գնաց որ է՛ վերին և ո՛չ ներքին: - 505-506. *Նախ* ասեմք եթէ՝ առաջին դժոխք հոգւոցն ո՛չ էր վասն ներգործական մեղացն հասարակ. այլ վասն պարտուցն ադամայ: - 506. *Նախ* ասեմք, եթէ դժոխքն է պատիժ մեղաց. և կրկին է մեղք. այսինքն սկզբնական և ներգործական: - 507. *Նա՛խ*՝ զի անցեալ է ժամանակն և օր փրկութեան ըստ առաքելոյն «ահա՛ ժամանակ ընդունելի, ահա՛ օր փրկութեան»: - 508. *Նա՛խ*՝ զի խոստովանիմք զքրիստոս աստուած և զտօն նորա ըստ տէրունականացն կատարեմք: - 509. *Նա՛խ* այսպէս, եթէ ի վերնատունն քրիստոս ծունկն եկեր. պա՛րտ է ի նմին աւուր ծունկն ուտել: - 510. Ասեմք թէ և այդ ևս է սուտ պատճառ. զի հրէից *նախ* զատիկն էր և ապա բաղարջակերքն պահք: - 510. *Նա՛խ*՝ զի յետ յարութեանն ո՛չ էր պահք. այլ զատիկ մինչ փեսայն ընդ նոսա էր որպէս ինքն հրամայեաց: - 511. *Նա՛խ*՝ զի աւետարանն յայտնապէս ո՛չ ասէ զժամ յարութեանն. որպէս զխաչին և զթաղմանն: - 512. *Նա՛խ*՝ զի մատթէոս զերեկոյի շաբաթուն և զլուսանալ միաշաբաթին յիշէ ...: - 512. Ասեմք *նախ*՝ թէ յարութիւնն ի մէջ գիշերի է որպէս ցուցաւ. այլ երևիլն ընդ արշալո՛յսն է: - 515. Ա՛րդ՝ շաբաթի գիշերն և տիւն **իդ** ժամ. և **զ** ժամ ի կիրակէէն մինչ ի մէջ գիշերն. որ լինի **լ** ժամ. իսկ հոգին **դ** ժամ և կէս *նախ* իջեալ ի դժոխս որ լինի **լգ** ժամ և կէս: - 516. *Նա՛խ*՝ խորհրդաբար. ի **ե** շաբաթոջ աւուրն յերեկոյն թաղեցաւ ի սիրտ առաքելոցն ճաշակմամբ մարմնոյն. և յերեկոյի կիրակէին տեսին զտէրն յորժամ դրօքն փակելովք եմուտ առ նոսա: - 516. *Նա՛խ*՝ աստուածածին կոյսն մարիամ: - 516. *Նա՛խ*՝ ոմանք ասեն թէ մարդկօրէն կամէր իմանալ զնա և հարցանել վասն խաչին և դժոխոց և յարութեանն. իսկ այս կատարեալ մտաց պէտք էին և շա՛տ ժամու: - 517. Հնգետասաներորդ, զի բաւական համարեցաւ ի պատիւ կանանց զայն՝ զի յառաջագոյն մերձեցաւ ի նոսա ծննդեամբ. իսկ յետ յարութեանն կամի՛ զի ա՛րք *նախ* մերձեսցին ի նա մինչ դեռ ո՛չ

է ելեալ նա առ հայր: - 518. Իսկ ասելն «չև՛ ևս ելեալ եմ առ հայր իմ», ցուցանէ թէ որպէս *նախ* զչարչարանսն և զյարութիւնն ասաց վասն չարչարանաց և յարութեանն: - 518. *Նա՛խ*` որպէս ասաց սուրբն ներսէս` քրիստոսի բնութեամբ է հայր` և մեզ շնորհօք: - 518. *Նա՛խ*` զի հանգիցէ ի վաստակոցն զոր **լգ** ամ վաստակեցաւ ի վերայ երկրի: - 519. *Նախ* յերկրի` արդեամբք բարի վարուց: - 520. Երրորդ` ամբարձեալ ձեռօք վերանայր յերկինս վասն երկուց. *նախ*` զի զինքնն ընծայեսցէ հօրն. երկրորդ` զի զբշնամիսն հարկանիցէ զօրաւոր ձեռամբ բարձրացեալ: - 520. *Նա՛խ*` զի հաստատեսցի յարութիւն իւր բազում կերպիւ: - 520. *Նա՛խ*` զի չարչարանքն քրիստոսի պատճառ եղև պարգևաց սուրբ հոգւոյն, պարտ էր նախկին գոլ. որպէս ամենայն պատճառ *նա՛խ* է քան զպատճառելին: - 521. ...զի ուսցին բառնալ զտկարութեան այլոց. որպէս քրիստոս զնոցայն եբարձ. իսկ թէ *նախ* զհոգին առեալ էին` ո՛չ կարէին բառնալ զայլոց տկարութիւնն: - 521. Վեցերորդ` որպէս սերմանելն *նա՛խ* է քան զպտուղն և զհունձն: - 521. *Նա՛խ*` ի կողմանէ պարգևողին. զի յորժամ քրիստոս նստեալ լինէր ըստ մարմնոյ ընդ աջմէ հօր իբր զթագաւոր փառաց յաթոռ թագաւորութեան իւրոյ, յայնժամ մեծագոյն լինէր պարգևք հոգւոյն տուեալ ի փառաւոր քրիստոսէ աստուծոյ: - 521. Իններորդ` որպէս թագաւորք *նախ* հաշտին ընդ մահապարտս և ապա՛ պարգևաց արժանի առնեն: - 522. Այսպէս *նախ* եկն քրիստոս և խաչիւ և մահուամբ հաշտեցոյց զհայր, և ապա՛ հայր աստուած առաքեաց զհոգին սուրբ պարգև մարդկան: - 522. *Նա՛խ*` զի յանկարծակի՛ փայլէ. նոյնպէս և հոգին սուրբ յանկարծակի էջ: - 522. Հինգերորդ` *նախ* որոտայ և ապա՛ փայլէ. այսպէս և հոգին որոտմամբ էջ...: - 522. *Նա՛խ*` որպէս ծծումն օդոյ կենդանութիւն է մարմնոյ: - 523. *Նա՛խ*` զի յայսմ աւուր երևեցաւ աստուած մովսէսի ի սինա լեռինն: - 523-524. *Նա՛խ*` զի յայսմ աւուր էջ հոգին սուրբ յառաքեալսն...: - 524. *Նախ*` զի ցուցանէ թէ որ ետ զօրէնսն` նոյն առաքեաց և զհոգին և ի նոյն տիպն որոտ և փայլատակումն հողմ և հուր երևեալ որպէս անդ ի լերինն: - 524. *Նա՛խ*` մաքրութիւն ի մահու չափ մեղաց. զի այլ ո՛չ ևս տիրեցին նոցա յետ հոգւոյն իջման: - 524. *Նախ* զայս ասեմք թէ` համաբուն և համապատիւ է Երրորդութիւնն սուրբ. զի միոյն փառքն երիցն է և երիցն միոյն: - 525. *Նախ* այն է` որ զորդի ընդ հօր և սուրբ հոգւոյն փառաւորեմք և օրհնեմք **գ** անձինք ի միում բնութեան. և ո՛չ որպէս հինքն հրէական օրհնութիւնս. որք ո՛չ օրհնէին զորդի և զհոգի: - 528. *Նախ* վասն տգիտութեան. **բ** վասն փոփոխման. **գ** վասն հիւանդութեան: - 531. Իսկ թէ ուրեք առաքեալք և մարգարէք հիմն կոչին, քանզի *նա՛խ* նոքա ժողովեցան ի հաւատս և եղեն հիմունք եկեղեցւոյ, և ապա՛ զայլս ժողովեցին: - 532. *Նա՛խ*` զի իցէ սկիզբն ամենայն մարմնոյն. և զի իցէ յէութենէ նորին: - 532. *Նա՛խ*` որպէս մի է գլուխ, և անդամք բազում: - 532. *Նախ*` զի երկոքեանն տաճար են աստուծոյ...: - 533. Նոյնպէս և շինեալն օրհնութեամբ. զի լուանամք *նախ* ջրով և ապա՛ գինւով: - 533. *Նա՛խ*` որպէս բոլորն է մարմին և իւրաքանչիւր մասունքն. նոյնպէս և բոլորն մի եկեղեցի` և իւրաքանչիւրքն. և բոլորն քրիստոնեայ` և մին մարդն. եթէ նման են միմեանց և եթէ աննման: - 533. *Նա՛խ*` վասն կատարեալ սիրոյն քրիստոսի որպէս փեսայի և հարսին: - 534. *Նախ*` զի եղբայր և ժառանգակից եմք քրիստոսի: - 534. *Նախ*` զառաքեալս: - 535. *Նա՛խ*` մարգարէքն զհայր ծանուցին. ապա՛ առաքեալքն զորդի. և ապա՛ վարդապետք զհոգին սուրբ: - 535. *Նախ* յաղագս շնորհին և ճշմարտութեան. և մարգարէք վասն ստուերին և օրինակին. և վարդապետք ըստ չափոյ պիտոյից նոցին: - 535. *Նա՛խ*` զի յայտնեսցէ զծածուկն և զհեռաւոր իրն ժամանակաց. զի թէ զմերձաւոր և զյայտնին ասէ` ո՛չ է մարգարէ: - 536. *Նա՛խ*` երազօք. որպէս սողոմոնի: - 536. *Նախ* բնական խելքն. որ ի բարեխառն կազմուածոյ հանդիպի. որպէս էր` ակիտոփէլին և քուսեայ բարեկամին դաւթի: - 537. *Նախ*` որ գիտէ. և թէպէտ գիտէ, ասէ թէ չեմ բաւական խօսելոյ: - 537. *Նա՛խ*` զի մարմնաւորին հնազանդիմք յոչ կամաց. բռնութեամբ և ի հարկէ: - 538. *Նախ*` որպէս սահմանն պարունակէ՛ զընդհանուր սահմանեալսն որպէս սահման մարդոյ զմարդ: - 538. *Նախ*` զի սահմանն բնութեան է. իսկ կանոնն անձին: - 538. Եւ յորժամ առաքելոցն ետ` *նախ* փչեաց ի նոսա զհոգին սուրբ, և ապա ետ իշխանութիւն կապելոյ և արձակելոյ: - 539. *Նա՛խ*` թէ անկարգաբար կապէ. որպէս քահանայ զեպիսկոպոս կամ զկաթողիկոսս. կամ սարկաւագ զքահանայ. այս ո՛չ կատարի: - 539. Եւ *նախ* մաքրելն է ի մեղաց, և ապա լուսաւորելն ի շնորհաց: - 540. Ջորօրինակ` *նախ* լինի սարկաւագ, և ապա քահանայ: - 541. Եւ որպէս *նախ* զգայականն և ապա բանականն: - 541. Եւ *նա՛խ* զօրութեամբ, և ապա՛ ներգործութեամբ: - 541. Ըստ այսմ կարգի *նախ* կապելն է և ապա արձակելն. որպէս ասաց պետրոսի: - 541. Վասն որոյ ի վերնատունն յորժամ փչեաց յառաքեալսն` *նախ* ետ զարձակելն և ապա զկապելն: - 541. *Նա՛խ*` վասն դաւանութեանն նախկին: - 546. *Նախ*` զի յետ յարութեանն հաւասար ետ

զիջխանութիւնն...: - 546. *Նա՛խ*՝ զի նմա՛ ասաց «տաց քեզ զփականս»: - 547. *Նա՛խ*՝ թէ ո՛չ ամենայն ուրէք է ընդհանրականքն ճշմարտիք. և ո՛չ ամենայն ուրեք առանձնականքն սուտք: - 550. Իսկ մերս դաւանութիւն ամենայնիւ նոյնն եկաց մնաց զոր ունէր *նախ* ի սրբոյն գրիգորէ՛ լուսաւորչէ և ի նմանեաց նորա: - 551. *Նա՛խ*՝ ի բաժակէն ո՛չ տալ ժողովրդեանն: - 553. *Նա՛խ*՝ զիաց պատարագին բաղարջ առնել: - 553. *Նա՛խ*՝ ի լուծանել զճրագալոյցսն ի պանիր՝ ի յիւղ՝ և յա՛յլ այսպիսի կերակուր բաց ի մսոյ: - 554. *Նա՛խ*՝ ըստ դրութեան կարգի աղօթիցն որ յեկեղեցիս նոցա: - 554. *Նա՛խ*՝ զի մեղքն յարմարի մարմնոյն. որ մեղկանայ և թուլանայ: - 555. Բայց *նախ* զայս ասասցուք. զի մեղք մտացն կատարեալ մեղք է վասն բազում պատճառաց: - 556. *Նա՛խ*՝ ի տէրունեան անսուտ հրամանացն. թէ «որ հայի ի կին մարդ ցանկութեամբ՝ անդէն շնացաւ ի սրտի իւրում»: - 556. Նաև զամենայն գլխաւոր մեղս ընդ հզօր խորհուրդ ասէ սուրբն եւագրիոս. վասն զի *նախ* ի խորհուրդն տնկի ամենայն սերմն մեղաց. և ապա ի մարմինն բուսանի և աճէ: - 557. *Նա՛խ*՝ զի խորհրդոյն չարն ի բոլոր հոգի և ի մարմինն սփռի որպէս թոյնք օձից: - 557. *Նախ* ասեմք թէ՝ համաձա՛յն են միմեանց...: - 559. Դարձեալ, զի ամենայն մեղք *նախ* ի խորհուրդն սերմանի և ապա բուսանի և աճէ գործելովն: - 559. *Նա՛խ*՝ ըստ չորից տարերց այլ և այլ որակութեանց լինին ը խորհուրդ մեղաց: - 560. Նաև ասեն թէ՝ վասն փառաց աստուածանալոյն մեղանչեաց ադամ. և վասն նախանձու առն՝ կինն *նախ* եկեր զպտուղն: - 561. *Նա՛խ*՝ զի առաջին մարդն ի դրախտին որկորստութեամբ մեղաւ. և այն առաջին մեղք եղև մարդկայինս բնութեան: - 561. **Երկրորդ՝ զի մանկունս հասակաւ *նախ* որկորստութիւնն տիրէ, և ապա՛ յերիտասարդութեանն պոռնկութիւնն զօրանայ:** - 561. Երրորդ՝ զի շղթայք մեղաց այսպէս ունին զկարգն. զի *նախ* որկորստութեամբ լնու զորովայնն. և յետ այնորիկ պոռնկութեամբ թափէ՛ զնա. և ապա՛ արծաթ ժողովէ զի լնու զորովայնն և պոռնկի...: - 561. ***Նա՛խ*՝ զի ամենայն մեղք կամ ընդ դէմ իւր մարմնոյ է, կամ ընկերին. իսկ հպարտութիւնն է մեղանչումն ընդ դէմ աստուծոյ. որպէս սատանայի**: - 561. *Նա՛խ*՝ զի որ կամաւ և գիտութեամբ մեղանչէ, առաւել է քան զակամայն և զտգիտութեան. զի թէպէտ և սոքա մեղք են, այլ պատիժն նուազ. որպէս անասնոյն քան զմարդոյն: - 563. *Նա՛խ*՝ զի ի նոսա չափաւո՛ր են ախտքս այսոքիկ. իսկ ի մարդն առաւել և անչափ: - 563-564. *Նա՛խ*՝ ի գործն և ի պատիժն. յորժամ գիտէ ոք թէ այն գործն մեղք է և գործէ՛. և գիտէ՛ զպատիժ այն մեղացն որ ծա՛նր է: - 564. *Նա՛խ*՝ ըստ գոյացութեան և ըստ տեսակին. զի մարդն է տեսակ և տեսակն գոյացութիւն. ըստ գոյացութեանն այսպէս: - 565. *Նա՛խ* առ հրէայսն. որ գիտէին զհոգին սուրբ՝ շնորհաց բաշխօղ. ուստի ելից հոգին զբէսէլիէլ ճարտարապետ. և զեօթնարփեան շնորհս թուէ եսայի...: - 566. Իսկ ներելի մեղքն է յանցանք փոքրագոյն. քանզի ի մանկունս յետ մկրտութեան *նախ* յառնեն ներելիքն, և ապա՛ մահու չափքն: - 567. *Նա՛խ* ըստ միութեան. զի մի է մեղքն սկզբնական և ո՛չ բաժանի. որպէս մահացուն **է**. և ներելին **գ**: - 567. *Նա՛խ*՝ զի սկզբնականն հարկիւ և ակամայ տիրէ. իսկ սոքա ըստ կամաց: - 568. *Նա՛խ*՝ զի գործ մեղաց է՛ ի զգայութիւնս ներքին կամ արտաքին: - 568. *Նա՛խ*՝ աստուածային ասին՝ զի երեքին սոքա յաստուած վերաբերին: - 571. *Նա՛խ*՝ զի յառաջ եղեալ հանճարոյն է՛ ճշմարիտն. և յառաջ եղեալ կամացն բարին: - 572. *Նա՛խ* վասն աստուածութեանն հօր: - 572. *Նա՛խ*՝ զի ի մին աստուածն է և ի մի քրիստոսն: - 573. Եւ պատճառ յուսոյն *նախ* է շնորհն աստուծոյ. և ապա արդիւնքն մեր: - 573. Եւ այժմ յոյս մեր է՛ կրկին. *նախ* առ սուրբս վասն օժանդակութեան և բարեխօսութեան: - 574. *Նա՛խ* ազատէ՛ ի նեղութենէ ...: - 574. *Նա՛խ*՝ զի սիրելին յօժարութեամբ լսէ սիրելոյն: - 575. *Նա՛խ*՝ անկատար սէր է մարմնոյն: - 576. *Նախ*՝ յորժամ սիրեմ զիս վասն իմ. սէրս այս ո՛չ է բարի: - 576. **Եւ այլ վարդապետք ասեն, սիրել պարտ է *նախ* զայն որ ի վերո՛յ է քան զմեզ. այսինքն զաստուած. և ապա՛ զմեզ. յետ որոյ զընկերն. և ապա՛ զմարմինս մեր. և ի նոյն աստիճանս զմարմին ընկերին. զի մարմինն երկրորդ է հոգւոյն:** - 576. **Եւ այլք ասեն՝ *նախ* սիրելոյ է աստուած. երկրորդ ծնօղքն. յետոյ որդիքն. ապա՛ ընտանիքն. վերջոյ թշնամիքն**: - 576. *Նա՛խ*՝ զոր ինչ սիրեմք գիտեմք. այլ թէ սիրիմք ո՛չ գիտեմք: - 576. Յերից. *Նա՛խ*՝ ի բնական իրաւանց. ըստ այնմ «զոր ինչ կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արարէք և դուք նոցա»: - 577. *Նա՛խ*՝ զի առաւել մատչի առ կատարելութիւնն. զի մեծագոյն առաքինութիւն է: - 577. *Նա՛խ* որպէս ասէ սուրբն եւագրիոս՝ հաւատն ի հայր, յոյսն առ որդի, սէրն ի հոգին սուրբ: - 577. *Նա՛խ*՝ զի մշտնջենաւոր առնէ զհոգին հաստատելով ի բարին: - 579. *Նա՛խ*՝ սիրով անձինն կամ արծաթոյ. ըստ եսայեայ «վայ որ արդարացուցանէք զամբարիշտն վասն կաշառոյ»: - 579. Խոհեմ մարդն ո՛չ պարտի վաղվաղել ի գործ զինչ և է՛. այլ պա՛րտ է *նա՛խ* խորհիլ որ ո՛չ խաբի: - 579-580. *Նախ* խոհեմութիւն սրտին. և այս ի կարգաւորել զներկայն, ի միտ ածել զանցեալն, և նախատես լինիլ ապագային...: - 580. Դարձեալ՝

արիութիւնն կայանայ ի **Ե**. այսինքն *Նա՛խ* ի ձեռնարկումն բարձրագունից...: - 580. *Նա՛խ*՝ կոչին մարդկային առաքինութիւնք: - 581. *Նա՛խ*՝ իմաստութիւն: - 582. *Նա՛խ*՝ զի սոքօք արտաքսեսցին է մոլորութիւնքն որպէս ասացաւ: - 583. Եւ որպէս ի թուումն պարգևացն է՛ կարգ արհեստական. զի *նախ* դնին արժանաւորագոյնքն: - 583. *Նա՛խ*՝ զի ի հոգին է. **բ**՝ զի վասն հոգւոյն տրտմի և ցաւի. **գ**՝ արտասուս հոսէ. **դ**՝ զմահ զդատաստան և զտանջանս ի միտ ածէ՛. - 584. *Նա՛խ*՝ զի զտրտմութեան դևն զձանձրութեան զկարճմտութեան զսրտմտութիւն և զոխն հանէ՛ ի հոգւոյն: - 584. *Նա՛խ*՝ թողուլ յանցաւորին. - 585. *Նախ* որ խաղաղութիւն առնէ այլոց ընդ այլ. որպէս միջնորդք: - 585. *Նա՛խ* արար խաղաղութիւն յանձն իւր. զի զաստուածային և զմարդկային բնութիւնն միաւորեաց յինքեան ի մի կամս և ի մի ներգործութիւն անբաժանաբար: - 585. *Նա՛խ*՝ զի նո՛յն վարձն խոստացեալ լինի և նմա. այսինքն արքայութիւնն երկնից: - 586. Եւ յերկինս ասելովն, *Նախ* ցուցանէ թէ՝ ո՛չ են երկրաւոր ինչ: - 586. *Նա՛խ*՝ մկրտութիւն: - 587. *Նա՛խ*՝ ըստ զանազանութեան մարդկան որ են յեկեղեցի: - 587. Զի մկրտութիւնն է՛ խորհուրդ հաւատոյ. ուստի յա՛յտ է զի *նախ* հաւատամք և ապա՛ մկրտիմք: - 587. *Նա՛խ*՝ զի այսպիսի չար աղանդս ո՛չ գտանի յայլ եկեղեցիս քրիստոնէից: - 589. *Նա՛խ*՝ զի մարմնաւոր ծնունդն նշանա՛կ է հոգևոր ծննդեանն. և որպէս մի է մարմնաւոր ծնունդն, այսպէս մի է և հոգևորն: - 590. *Նախ*՝ զի կարէ՛ միանգամայն ծնանիլ բոլոր ազգ մի. եթէ **ռ**, եթէ բիւր...: - 590. Եւ դարձեալ՝ ինքն քրիստոս *նախ* մեռաւ մարմնով, և ապա կենդանացաւ յետ մկրտութեանն: - 592. Նոյնպէս և մեք *նախ* մեռանիմք մարմնով. և ապա կենդանանամաք ի յարութեանն: - 592. Ո՛չ է օգուտ. զի չև ևս ծնաւ երկրորդ ադամ. զի *նախ* պա՛րտ էր ըստ մարմնոյ ծնանիլ. և ապա ըստ հոգւոյ վերստին ծնունդ: - 592-593. *Նա՛խ*՝ է՛ վկայութիւն անդուստ իսկ թշնամեացն. քանզի աւէ ալպերտն ի յառաջին գիրքն **ժա** համարին, թէ հոգի ասեմ սրբութեան. արիւն փրկութեան. և ջուր լուացման: - 594. *Նա՛խ*՝ զի ջուրն և արիւնն որիշ բղխեաց և ո՛չ խառնեալ. ապա յա՛յտ է թէ որիշ է խորհուրդ ջրոյն և որիշ արեանն: - 595. *Նա՛խ*՝ զի քրիստոս մի հաց էառ ի ձեռն ի սեղանոյն և օրհնեաց. նոյնպէս և զմի գինի: - 597. *Նա՛խ*՝ զի մեք զգայարանօք՝ միջնորդութեամբ պատահմանցն հասանիմք ի գոյացութիւնն. զի անմեկնելի որոշմունք են ի գոյացութեանց սոքա: - 597. *Նա՛խ*՝ որպէս հացն նոյն է ըստ ձևին, այլ այլ գոյացութիւնն է եղեալ մարմին քրիստոսի...: - 598. *Նա՛խ*՝ զի արիւնն հեղուկ նիւթ է. կամ ո՛չ է տալի որպէս այլ ազգք, և զրկել զժողովուրդն ի փրկական արենէն: - 598. *Նա՛խ*՝ եթէ ո՛չ զմարմինն տան ժողովրդեանն. այլ սոսկ հաց և գինի. զի մարմին քրիստոսի այն մինն է որ օրհնեցաւ որպէս ցուցաւ ի վերոյ: - 600. Այժմ պատասխանեսցուք *նախ*՝ եթէ խոստովանութեամբն թողութիւն լինի ամենայն մեղաց...: - 602. Մին է որ *նախ* խոստովանին և յետոյ ապաշխարեն...: - 602. Եւ երկրորդ խոստովանութիւնն է՝ որք *նախ* ապաշխարեն պահօք և ճգնութեամբ...: - 602-603. *Նա՛խ*՝ թէ խոստովանահայրն չունի իշխանութիւն արձակելոյ. կամ ընդ բանիւ արգելեալ է: - 603. ...*նախ* վասն ա՛յս խորհրդոյս է. և երկրորդ՝ զի մկրտութիւնս մեր ո՛չ ի ջուրն յովաննու, այլ ի մահին քրիստոսի է: - 605. Ասեմք թէ՝ որպէս ծառն որ *նախ* ծաղկի և ապա՛ պտղաբերի: - 609. Եւ որպէս հրեշտակապետն գաբրիէլ, *նախ* ետ զաւետիս սրբոյ կուսին, և նա՛ խորհէր ի միտս...: - 610. Նոյնպէս և *նախ* նշան դնի հարսին: - 610. Իսկ ի կատարումն պսակին՝ *նախ* է՛ օրհնութիւն քահանային, և ապա՛ մարմնական զուգաւորութիւնն: - 610. Որպէս և քրիստոս ի կատարածի՝ *նախ* օրհնէ ասելով՝ «եկայք օրհնեալք հօր իմոյ»: - 610. Վասն որոյ *նախ* քահանայն օրհնէ հոգևորապէս, և ապա մարմնաւորապէս զուգակցին: - 610. Նոյնպէս և ի դրախտին *նախ* օրհնեաց աստուած...: - 610. Գիտելի է, զի *նախ* առաջին բաժանի ազգն ի բնականն՝ և յօրինացն՝ և ի հոգևորն: - 611. Իսկ հոգևոր ազգն է կրկին. *նախ* աւազանին ծննդեամբ. և երկրորդն որդեգրութեամբ...: - 611. *Նա՛խ*՝ զի մին կին ետ աստուած մին մարդոյն ադամայ՝ ի յօգնութիւն. նոյնպէս և ամենեցուն օրինադրեաց: - 612. *Նա՛խ*՝ զի արք վասն նորա ի զազիր տեղիսն խոնարհեսցին...: - 613. *Նա՛խ*՝ զի միայն զհեշտ ցանկութիւնն սիրեն հանապազ. ինքն և գործակիցն իւր: - 613. *Նա՛խ*՝ որպէս նա ի քարանց և յայլ նիւթո՛ց է ժողովեալ: - 613. *Նա՛խ*՝ զի վասն յանցանաց մարդոյն ադամայ դատապարտեցան տարերք. հող, ջուր, և այլն...: - 615. Ասեմք *նախ* եթէ՝ ո՛չ երկոտասան. այլ մի օր կատարէին: - 616. *Նա՛խ*՝ զի զմի օր նոցա տօնեմք. և **է** յաւելեալ վասն **է** զգայարանաց. և վասն եօթնեկի մեղաց քաւութեան: - 616. *Նա՛խ*՝ զի ի հինն զտօն քաւութեան և զտաղաւարահարացն ի միասին տօնէին ի թշրինի **ժ**: - 616. *Նա՛խ*՝ զի եկեղեցին է ի խորհուրդ դրախտին. ուր անասուն ո՛չ մտանէր. նոյնպէս և յեկեղեցի ո՛չ մտանէ: - 617. *Նա՛խ*՝ որպէս զմեռեալս հոգւով՝ արտաքսեմք յեկեղեցւոյ. նոյնպէս և զմեռեալն մարմնով: - 617. Դարձեալ՝ ի խորհուրդ գոչման փողոյն այն որ ի բարձունս. զի *նախ*

յերկնից գոչէ փողն գաբրիէլի և ժողովէ զհոգիսն…: - 618. *Նախ՝* նշանակէ՛ զերեք ժամն. մէջ գիշերին, առաւօտին, և արևագալն: - 618. *Նախ՝* մարգարէքն. երկրորդ առաքեալքն. երրորդ հրեշտակապետին վերջին փողն: - 618. Երրորդ՝ զի երիցս գոչէ փողն. *նախ* զհոգիսն ի յերկնից կոչէ. և ապա՛ զմարմինս ի հողոյ. և ապա՛ յարուցեալ զհոգի և զմարմին ի դատաստան հրաւիրէ: - 618. *Նախ* է մտօք աղօթել…: - 618. *Նախ՝* զի ի դառն մաղձոյն հոսի յորովայնն ի ներքոյ սրտին և կսկծեցուցանէ զսրտակրանքն…: - 619. ***Նախ՝* թէ ո՛չ գիտէ զկերպ աղօթիցն, կամ ծունր կրկնել, կամ զձեռն տարածել. և սոյնպիսիք ո՛չ մեղք են և ո՛չ արդարութիւն**: - 620. Այս է՝ *նախ* զերրորդ ժամուն. և ապա՛ զվեց ժամուն. և ապա՛ զինն ժամուն. որ աւա՛րտ էր նոցա աղօթիցն: - 621. *Նախ՝* վասն զի հոգին եռամասնեայ է. բան, ցասումն, և ցանկութիւն. և ունի իմացումն և կամք: - 622. ***Նախ՝* հասարակ աղօթքն է հարկաւոր. իսկ առանձնականն կամաւոր**: - 623. *Նախ* ի տէրունական բանիցն է յայտ. որպէս ուսոյց հասարակ աղօթել…: - 623. *Նախ՝* զի հոգի և մարմին է մարդն: - 623. *Նախ՝* զի յերի՛ց եմք գոյացեալ ի մարմնոյ, ի հոգւոյ, և ի մտաց, որպէս ասեն ոմանք. վասն որոյ **գ** առանձնական աղօթս մատուցանեմք: - 623. *Նախ* գոհութիւն է և շնորհակալութիւն բազում երախտեացն առ մեզ: - 624. *Նախ* որպէս սովորութիւն է մարդկան որք զաղերսն ընծայեն ի դրունս մեծամեծացն, և նոքա՛ մատուցանեն թագաւորին: - 624. *Նախ՝* զի հոգին սուրբ պարգևք է խաչին քրիստոսի. այլ և ի վերնատունն լուսեղէն խաչիւ հանգեաւ յառաքեալսն: - 625. *Նախ՝* զի գոհութիւնն պարգև՛ է օրհնաւոր ի բարեա՛ց մասնէ…: - 626. *Նախ՝* իբր գոհութիւն և շնորհակալութիւն աստուծոյ որ զօրացոյց զմեզ: - 627. Իսկ սկսուածն ընդ երգոյն խառնեալ, *Նախ* նշանակէ՛ թէ զմարգարէից և զառաքելոցն բանս ի միասին խառնեալ ունի նորս եկեղեցի: - 627. Իսկ յառնելն մեր ի յօրհնութիւն, նշանակէ *նախ* ի մեռելութենէ մեղաց և ի ծառայութենէ յառնելն: - 627. Եւ որ *նա՛խ* է վերջին տունն ի մեսեդի կամ կցորդ. այն է զի քրիստոսիւ դարձաք յառաջինն և ի բարձրագոյնսն. ուստի ադամաւ խոնարհեցաք…: - 629. *Նախ՝* երեխայքն ուխտեցին հրաժարիլ ի սատանայէ՛. և ի մեծի զատկին մկրտելովն իսրայէլ. և ապա ուխտ ապաշխարութեան պահոցն. և յարութեանն տեսանել զքրիստոս. աստ և անդ: - 629. *Նախ՝* զի զհայր աստուած ասեն և ո՛չ հզօր և ո՛չ անմահ: - 633. Իսկ յատուկ, *Նախ՝* զերեքսրբեանն ի դէմս որդւոյ. զի նա՛ է առաջնորդ որով զհայր տեսանեմք: - 633. *Նախ՝* զի առ որդին մարմնացեալ՝ և զգուշ մօրն բարեխօս արկանեմք: - 633-634. *Նախ՝* զի պատարագն է՛ խաչելութեան ժամն. և յայնժամ ո՛չ ասաց յովսէփ: - 634. *Նախ՝* զի քրիստոսիւ ծանեաք զհայր: - 634. Այլ և նշանակէ *նախ* զիրէայսն և զհեթանոսս: - 636. *Նախ՝* մեծն մեսրոպ զկարգն ապաշխարութեան. և սուրբն սահակ զաւագ շաբաթեանն: - 637. Եւ զոր *նախ* իմացն, զ՚ի յանսահման ծովէն, և զթարգմանչաց օրհնութիւնն, և զսուրբ սարգսի օրհնութիւնն, վարդան վարդապետն: - 638. *Նախ՝* ամենևին անձայն. որպէս ներտրամադրեալն ի խորհուրդս: - 639. *Նախ՝* զի մարդն հոգի է և մարմին, ձայնիւ և ձեռօք երգէր. զերկու մատունս ի մի լծակցեալ յօրհնութիւնն աստուծոյ: - 641. *Նախ* ըստ աւուրց: - 641. Եւ *նախ* ըստ աւուրց տօնից, որպէս մեծն ներսէս ասացեալ է զերգն: - 641. *Նախ* որպէս ձայնիւ եղանակաւ նման միմեանց. որպէս զողորմեայքն առ նոյն. և զտէր յերկնիցն առ նոյն: - 642. *Նախ* ասել աւետեաց, և ապա՛ ծննդեան. և գալստեան. և խաչի. և յարութեան. և համբարձման. և հոգւոյ գալստեան. և վարդավառի. և փոխման: - 642. Իսկ թէ սրբոց, *Նախ* մարգարէից. և ապա՛ առաքելոց. և հայրապետաց. և մարտիրոսաց: - 642. *Նախ* աստուածածնի՞ պարտ է ասել շարական. թէ խաչի: - 642. Զի *նախ* ծնաւ, և ապա՛ խաչեցաւ: - 642. Եւ ծննդեամբն ազատեցաւ նախամայրն որ *նախ* մեղաւ: - 642. Այլ սուրբն ստեփաննոս սիւնեաց, և մեծն ներսէս, վասն պատուոյ՝ *նախ* զխաչի տունն են ասացեալ, և ապա՛ զաստուածածնին: - 642. *Նախ՝* զի յաղօթս զկոյսն սուրբ բարեխօս մաղթեմք. և զխաչն սուրբ՝ պահապան: - 642. Զի՞նչ է որ *նախ* զմարգարէս, և ապա զառաքեալս, և ապա՛ զաւետարանն ընթեռնումք: - 643. Ասեմք *նա՛խ՝* թէ մարգարէքն իբր յառաջասաց՝ պատմեցին զմարդեղութիւն բանին և զփրկութիւն մարդկան: - 643. Դարձեալ՝ *նախ* զօրինակն, և ապա՛ զճշմարտութիւնն ուսանիմք աստ, և ապա՛ անդ անընդմիջաբար ի տեառնէ…: - 643. Զի՞նչ է *նախ* սաղմոսն և ապա՛ մարգարէ կամ առաքեալ: - 643. …վասն որոյ *նախ* հրաւիրէ՛ զայլս ի մեծարանս և վկայս որդւոյ իւրոյ: - 643. *Նախ՝* զի սաղմոսն երգ լսի. և ի հինքն յամենայն ժամ զսա՛ երգէին ի տաճարին…: - 643. Յայս միտս սարկաւագն *նախ* առաջի քահանային ընթեռնու իբր ի նմանէ՛ ուսեալ…: - 644. Կամ որպէս յետ յարութեանն պետրոս *նախ* ետես զքրիստոս…: - 644. *Նախ՝* որպէս ասեն ոմանք՝ Բուրվառն նշանակէ զմարդկութիւնն քրիստոսի. և Հուրն զաստուածութիւնն. Ծխումն զբուրումն հոգւոյն սրբոյ: - 645. *Նախ՝* գրակալն նշանակէ՛ զմովսէս. որ ընկալեալ զպատգամն աստուծոյ՝ խօսէր

առ ժողովուրդն: - 646. Որպէս ի գալ թագաւորին *նախ* կարապետք և աւետաւորք մտանեն...: - 646. ...և քաղաքացիքն *նախ* զարդարեն զինքեանս և զփողոցն և կան պատրաստ: - 646. *Նախ*՝ զի ի շաբաթի սկսաւ հանգիստն և երանութիւն սրբոցն. յաւուր որում հանգեաւ աստուած ի գործոց: - 647. *Նախ,* զի առաքելական է աւանդ. որպէս ի հինքն զերկուշաբաթի և զհինգշաբաթի պահէին...: - 652. Խորհուրդ պահոց *նախ* ի դրախտին եղաւ մարդոյն. յամենայնէ ուտել և ի միոյն չուտել: - 652. Իսկ վասն քառասնից պահոց, *Նախ* մովսէս պահեաց կրկին խ ի լերինն. և յեսու ընդ նմա: - 652. *Նախ* արարչութեանն շաբաթ՝ էր սրբութիւն և պահք մինչև ստեղծաւ ադամ և ելոյծ զպահքն: - 653. *Նախ* այն է՝ որ հրամայէր մովսէս պղծոցն լուանալ զմարմինն և ողողել զհանդերձն և արտաքոյ կալ մինչև յերեկոյ: - 653. *Նա՛խ*՝ որպէս աղուհացքն զշաբաթ և զկիրակի պահել ետ...: - 654. *Նա՛խ*՝ որպէս ասէ մարգարէն՝ «աչք ամենեցուն ի քեզ յուսան»: - 654. Որպէս և մանկունք *նախ* խնդրեն և ապա՛ ծնօղքն կերակրեն: - 654. ...*նախ* պա՛րտ է զհոգին կերակրել և ապա՛ զմարմինն: - 654. *Նա՛խ*՝ զի կրկին պարգևս ետ մեզ. այսինքն հոգևոր և մարմնաւոր...: - 655. Որպէս աղքատք *նախ* խնդրեն. և յորժամ առնուն՝ գոհանան. նոյնպէս և մեք առնեմք: - 655. *Նախ* զառեալ պարգևսն հատուցանէ...: - 655. *Նա՛խ*՝ զի այսու՝ խաչին քրիստոսի հաղորդեսցուք. և սուրբ հացին զոր ի վերնատունն բաժանեաց: - 655. *Նա՛խ*՝ զի բաժանիցուք յայնցանէ որք զգինի մեղաց ըմպեն. և վասն մեղաց արբենան և շռայլին: - 656. *Նախ*՝ զի հաւասարութիւն ունիմք առ միմեանս. այլ և կարգ. որ է՛ առաջին միջին և վերջին: - 656. *Նա՛խ*՝ նշանակէ՛ բարեկենդանին արձակութիւնն զպահոց նեղութիւնս...: - 657. Եւ մատաղն, *Նախ* պատարագ և նուէրք է աստուծոյ. որպէս աբէլ՝ նոյ՝ և աբրահամ մատուցանէին: - 657. *Նա՛խ*՝ զի բաժինն աստուծոյ ընտիրն լիցի և մի՛ անարգն: - 657. Դարձեալ՝ ճշմարիտ պատարագն քրիստոս՝ *Նախ* կենդանի աղ կոչեցաւ...: - 657. Յաղագս որոյ *Նախ* օրհնեալ աղ տամք կենդանւոյն: - 657. *Նա՛խ*՝ որպէս ի սուրբ կենդանեաց է պատարագն...: - 658. *Նախ*՝ զի լսելովն զկամս աստուծոյ կատարեմք. իսկ պատարագաւն զմերս: - 658. Առաջին՝ Վասն է՞ր աստուած *նախ* զայս կեանքս, և ապա զհանդերձեալն տայ: - 660. Վասն է՞ր է զի աստուած *նախ* զայս՝ և ապա զայն կեանքն տայ մարդոյս: - 662. *Նա՛խ*՝ այն կեանքն անապական է և անմահ. և մարդս մահկանացու և ապականելի...: - 662. ...այլ *նախ* բնակեսցէ հոգւով, և ընտանացեալ մտցէ և մարմնով: - 662. Արդ՝ *նա՛խ* մարմնոյս ետ զերկիր, և ապա հոգւոյն տայ զերկին: - 662. Զի *նախ* է մարմին քան զհոգի. ոչ ժամանակաւ և պատւով. այլ նիւթով և զօրութեամբ: - 662. Արդ՝ եթէ *նախ* զայն էր տուեալ, այսպիսի իմն հանդիպէր. կամ մնալով անփոփոխ՝ զրկէր զերկիր: - 662. Եւ բնակա՛ն է զի *նախ* ի յանկատարն և ապա՛ ի կատարեալն ելցեն: - 662. Եւ ըստ աստիճանի՝ *նախ* ի ներքինն, և ապա ի վերինն ելք: - 662. Մետասաներորդ, *նախ* ետ զայս կեանքս որ է՛ ցաւալից և բազմաչարչար...: - 663. Այլ ես ասեմ, ատելութեան և անարգանա՛ց էր ցոյցք, եթէ զպատուականն էր տուեալ *նախ*՝ անտի փոխեալ: - 663. Բոլորապէս դ է. այսինքն *Նախ* ըստ տարերց ի լինելութիւն և յապականութիւն: - 663. *Նախ* ըստ իմացման՝ տգիտութիւն և գիտութիւն: - 663. *Նախ* յաշխատութեանց վաստակոց...: - 664. *Նախ*՝ զի թէ բարի է մարդն, ընտրէ՛ աստուած և տայ զմեծութիւնն որ կարօտելոց ի գո՛րծ ածէ, - 664. *Նա՛խ*՝ զոմանս աղքատ առնէ աստուած, զի զարքայութիւնն մեծատանց վաճառեսցեն: - 664. *Նա՛խ*՝ յանպատրաստութենէ կամ ի պակասութենէ հարկաւոր պիտոյից. կամ յարտաքին ստահակութենէ օդոց: - 665. *Նախ* զպիտակութիւն ալեացն: - 665. *Նախ* ճանապարհ կոչի ծնունդն. որով ի կեանս գամք ըստ հասարակութեան ընթացից մարդկան: - 665. *Նախ* ի դէմս մեր. զի պակասիմք ի մարմնոց և յաւելումք ի հոգիսն: - 666. *Նախ* աստ հոգի մարդոյն է ի մէջ չարեաց և բարեաց. իսկ յետ մահու ի մէջ բարեաց միայն. և ի յարութեանն ի մէջ բարեաց և փառաց: - 667. Զի *նախ* մեղանչեցին յերկինս. և ապա անկան յօդս և մահացան. - 667. *Նա՛խ*՝ ի պնդակազմ մարմնոյն դժուարաւ լուծանին տարերքն: - 668. *Նա՛խ*՝ հիւանդութիւնն: - 668. *Նա՛խ*՝ զի համընթա՛ցք են ասէ ի վաստակն. այսինքն հոգին և մարմինն. ի միասին և հանգիցեն և պսակեսցին: - 668-669. *Նախ* զերանական կեանս արդարոց ուստի զրկեցաւ մեղօք: - 669. *Նա՛խ*՝ նշանակէ՛ ի մեզ զջերմեռանդ բորբոք այրեցման սրտին. որ ի բա՛ց հանէ զօձիսն և արտասւէ ...: - 670. Կոչի կարգ, *Նախ* զի քրիստոնէից մին կարգ՝ ննջեցելոց կատարումն է ի վերայ է խորհրդոցս. ութերորդ խորհուրդ և կարգ. վասն ութերորդին կենաց: - 671. Ա՛րդ՝ զգեստին հանելն *նախ* նշանակէ թէ՝ զկենցաղ աշխարհի մերկացաւ և զգեցաւ զգեստ լուսեղէն որ ի դրախտին: - 671. *Նա՛խ*՝ զի նա՛ միայն օծաւ յառնուլ կարգին: - 672. Առաջին, որպէս քրիստոս *նախ* օծաւ իւղով և ապա թաղեցաւ...: - 672. ...այսպէս և քահանայն *նախ* օծանի և ապա՛ թաղի: - 672. Երկրորդ, ցուցանէ թէ՝ որպէս ի մկրտութիւնն *նախ* օծաւ և ապա

թաղեցաւ ի ջուր...: - 672. ...այսպէս և աստ *նախ* օծանի և ապա թաղի ի հող: - 672. ...նոյնպէս և աստ ի մարտ մտանէ ընդ օդային այսոց՝ *նախ* օծանի հոգևոր իւղովն: - 672. *Նախ* ի բեթլէհէմ. և ապա՛ ի քեբրոն. և յետ եօթն ամաց ի վերայ ամենայն իէլի օծաւ: - 673. *Նա՛խ*՝ քահանայապետին և ապա այլոցն: - 673. *Նախ* ցուցանէ զանվախութիւնն մեր ի մահուանէ: - 673. Տասներորդ՝ զի այսպէս ողջունի և հոգին անդ որպէս մարմինն աստ. *նախ* յաստուածպետութենէն, և ապա ի համակարգ հոգւոց սրբոց: - 673. Իսկ՝ *նախ* ի յարնելս, ցուցանէ զմիածինն որ իբր յարնելից ի ծոցոյ հօր ծագեցաւ մեզ արեգակն արդարութեան - 673. *Նա՛խ*՝ զի ամենատեսն աստուած գիտէր զլաւս և զխոտանսն: - 674. *Նախ* այն է, յորժամ բերեն առ քահանայապետն: - 675. Եւ նշանակէ *նախ* զերեք հանգստեանն. մինն մարմնոյ. և միւսն հոգւոյ. և միւսն հոգւոյ և մարմնոյ: - 675. *Նախ* ցուցանէ թէ՝ և այսպէս հասարակ ընթանամք առաջի քրիստոսի: - 675. *Նա՛խ*՝ արտասուեմք զբնութիւնս մեր թէ վասն մեղաց յո՞րպիսի կենաց դրախտին ի մահ անկաւ և ի հող դարձաւ: - 676. Եւ յորժամ դնեն ի գերեզման, քահանայն *նախ* օրհնէ՛ երիցս ափով զհողն և արկանէ ի գերեզմանն ասելով...: - 676. ...այլ *նախ* օրհնել և սրբել անուամբ սուրբ Երրորդութեանն: - 676. Եւ յայս միտս *նախ* օրհնեմք ըզջուրն և ապա մկրտեմք զերեխայն: - 676. *Նա՛խ*՝ զի յետս դառնամք մահուամբ, այսինքն ի դրախտն և ի մայր մեր, պա՛րտ է զի *նախ* ոտքն ընթասցի: - 676. *Նա՛խ*՝ նշանակէ զակնարկութիւնն ի վեր առ աստուած ունիլ: - 676. *Նախ* ի դէմս դրախտին ուստի արտաքսեցաւ մարդն: - 677. *Նա՛խ*՝ պատուեմք զմարդն որ է՛ պատկեր աստուծոյ...: - 677. *Նա՛խ*՝ զի զպարտս դատապարտութեանն վճարեն...: - 677. *Նա՛խ*՝ զի ի սրբոցն որ ա՛նդ են թաղեալ՝ օգնութիւնս ընդունին գերեզմանակիցք նոցա: - 678. Իսկ հանգիստ կոչի, *Նա՛խ*՝ զի հանգեաւ յաշխատանաց մարմնոյն. այլ և ի չար գործոց: - 679. *Նա՛խ*՝ զի նեղ և անձո՛ւկ է. - 679. *Նա՛խ*՝ զի ի սմանէ ելանեմք, և ի նմանէ ո՛չ: - 679. Նշանաքարն կրկին, *Նախ* ցուցանէ զհոգի և մարմին բաժանեալ ի միմեանց: - 679. Իսկ տապանաքարն, *Նա՛խ*՝ զի մի՛ գործեսցի երկիրն այն յայլ ինչ գործ, կամ քակտեսցի վասն այլ մեռելոյ: - 679. Երիցս կնքելն զգերեզմանն, *Նախ* ի խորհուրդ սուրբ Երրորդութեանն: - 679. *Նա՛խ*՝ զի մի՛ շարժեսցէ զնա այսն չարութեան որպէս զմարմին անհաւատից: - 679. Եւ որպէս իւղաբեր կանայքն *նախ* եկին ի գերեզմանն և տեսին յարուցեալ զքրիստոս, և ապա առաքեալքն. - 680. ...նոյնպէս յերկրորդ օրն պարտ է գալ կանանց *նախ* ի գերեզմանն, և ապա արանց. և հոգևոր տեսութեամբ ուրախանալ: - 680. *Նա՛խ*՝ զի **գ** թիւն խորհրդաւոր է. որ ունի սկիզբն և մէջ և կատարումն: - 681. Եւ **գ** փոփոխումն ունիմք. զի *նախ* յոչ է է ի յէութիւն գամք...: - 681. *Նա՛խ*՝ որպէս ասացաւ ի քահանայաթաղն վասն **է** շնորհաց հոգւոյն, և **է** խորհրդոց եկեղեցւոյ, և **է** առաքինութեանց, և **է** գլխաւորագոյն մեղաց, և **է** զգայարանօք մեղանչեմք, և **է** փոփոխմամբ հասակի. - 683. *Նա՛խ*՝ ի ժամանակս. զի **գ**, և **է**, և ամիսն, և տարին՝ լինի **դ**. և **գ** օրն նախկին, որ է՛ եօթն: - 683. *Նա՛խ*՝ որպէս մեք ի կիրակէ ուրախացաք և վայելեցաք ի շնորհաց յարութեանն քրիստոսի, ի միւս օրն և զնոսա մասնաւորեմք: - 684. *Նախ* ասեն թէ՝ յաւուրսն յայնոսիկ յարեան մանկունքն յեփեսոս ի վկայութիւն առ հասարակ յարութեանն, զնոյն յիշատակեմք: - 684. *Նա՛խ*՝ վասն նորընծայ հաւատացելոցն. անկիրթ գոլով կատարեալ տեսութեանց...: - 687. *Նախ* ասեմ, եթէ հանդերձ սպիտակ և պսակք և աթոռք և այլն ամենայն զոր ետես ի տեսիլն՝ ո՛չ ներկային. այլ հանդերձելոյն էր տեսութիւն որ ինչ լինելոց է ի կատարածի. - 690. *Նախ* ի չար գործոց իւրեանց տանջին նոքա...: - 690. *Նա՛խ*՝ զի աներևո՛յթ են ի մէնջ. այլ և ի մտացն աստուծոյ. ի հրեշտակաց և ի սրբոց մոռացեալ: - 690. *Նա՛խ*՝ զի համընթացք են ասէ ի վաստակն: - 691. Զի ո՛չ վայելէ անկատարից զվախճանական կատարումն առնուլ. եթէ ոչ *նախ* իւր յատուկ կատարելութեամբն կատարեսցի. - 693-694. *Նախ* ընդ դէմ բերեն զբան մեծատանն և զղազարու. որ մինն ի գոգն աբրահամու և միւսն ի տանջանքն էջ: - 695. Ասեմք առ այս *նա՛խ*՝ ապա դու զիա՞րդ ասես թէ երթայ ի դժոխս: - 695. Ասեմք առ այս *նա՛խ*՝ թէ կրկին է յոյսն: - 695. Դարձեալ ասեն՝ հոգին յառա՛ջ գործէ զբարին զի *նախ* իմանայ և կամի: - 696. Ասեմք առ այս, եթէ *նախ* է բարին ի հոգին ըստ տեսութեան մտացն և կամացն...: - 696. Այսպէս հոգին *նախ* տեսութեամբն ուրախանայ և փառաւորի, և ապա՛ մարմնովն կատարեալ պսակի: - 696. *Նա՛խ*՝ զի առաքեալն զանազանեաց զտեսանելն յետ մահու՝ և զպսակն ի յարութեանն: - 697. *Նա՛խ*՝ զի ընդ դէմ է սուրբ գրոց և ուղղափառ վարդապետաց որպէս ցուցանի յառաջիկայդ: - 698. *Նախ*՝ զի քակե՛ն զխոստովանութիւնն յեկեղեցւոյ և ի քաւարանն ապաւինեալ կորնչին մեղօք: - 698. *Նախ*՝ մարգարէն եսայի ասէ, և առաքեալն զնոյն երկրորդէ՛: - 698. *Նա՛խ*՝ վասն հեշտ ցանկութեան իւրեանց զոր ոչ կամին ելանել անտի...: - 701. *Նա՛խ* եթէ ի խոստովանութիւն մեղացն մնայ պատիժն զոր ապաշխարութիւնն քաւէ. որպէս յայտ է ի կանոնս.

- 701. Ասեմք *Նախ*՝ եթէ գ են մեղք. այսինքն անգիտութեամբն և գիտութեամբն և չարութեամբ: - 701. Ասեմք *Նախ*՝ եթէ երկինք և երկիր մարմին գոլով նորոգին մարմնական իրով. իսկ հոգին զի է՛ անմարմին ՝ նորոգի շնորհօքն քրիստոսի և հոգւովն սրբով: - 701. Ասեմք *Նախ*՝ եթէ մարգարէն դաւիթ վասն բոլոր աշխարհի ասէ որ ջրով և հրով անցանի. և ապա հանգիստ յաւիտենական լինի...: - 701. Ա՛րդ՝ *Նախ* գիտելի է, զի հիմն հաւատն է ի մեզ. և շինուածն գործքն: - 702. *Նա՛խ*՝ զի աստ յայժմու կեանս շնորհքն է, իսկ անդ փառքն. որպէս աստ մեղքն է և անդ պատիժն. այլ ո՛չ քաւարան: - 702. *Նա՛խ*՝ զի նոքա ժամանակեայ հուր ասեն և տանջանք հոգւոց. իսկ ուսկեբերանն մի հուր և տանջանք յաւիտենից: - 702. Ասեմք *Նախ*՝ եթէ գնալ առ քրիստոս՝ վասն յարութեանն ասէ և զվերջին հուրն...: - 703. Ասեմք *Նախ*՝ եթէ սուրբն ուսկեբերան մեկնէ զբանս զայս աստի դատաւորաց և հատուցմանց այսպէս: - 704. *Նա՛խ*՝ որպէս ո՛չ է անդ գործ մեղաց, նոյնպէս և ո՛չ թողութիւն: - 704. Ասեմք առ այս *Նախ*՝ եթէ անդ մեղաց թողութիւն ո՛չ է զոր աստ ոչ թողութիւն: - 704. *Նա՛խ*՝ զի արծակէ ի ժամանակեայ կապիցն և արկանէ ի յաւիտենից տանջանս: - 706. Եւ հրեշտակ բարի *Նախ* կարգեցի ի պահպանութիւն նեռին...: - 707. *Նա՛խ*՝ պատրեսցէ զեկեղեցականս խորամանկ քարոզութեամբ...: - 708. *Նա՛խ*՝ յարութիւն է շնորհաց. որ զթողութիւնն մեղաց ընկալաք և զհաւատն քրիստոսի: - 710. Եւ երկրորդ յարութիւնն որ է մարմնաւոր, և այն ևս կրկին է. *Նախ* յարութիւն կենաց, և ապա յարութիւն փառաց...: - 710. Ապա ուրեմն ընդ դէմ այսմ չորեքկին յարութեանս չորեքկին է և մահ. այսինքն *Նախ* մեղաց և անհաւատութեան մահն: - 710. *Նախ* աստուածութեամբն թագաւորէ՛ ընդ հօր և հոգւոյն: - 710. Երիցունք *Նախ* նշանակէ՛ զքահանայս որք զանձինս իւրեանց մատուցանեն պատարագ աստուծոյ: - 711. *Նա՛խ*՝ որպէս բժան գունդ հրեշտակացն և չորք կենդանիքն զբոլոր երկնային զօրսն նշանակեն, նոյնպէս և իդ երիցունքն զբոլոր դասս սրբոցն: - 711. *Նա՛խ*՝ զի բեհեզն է՛ անօսր. ցուցանէ զանօսր էութիւն և զմտածութիւն սրբոցն առանց թանձրութեան մարմնոյ: - 712. Եւ այս *Նախ* վասն գերազանց գործոյ երից մասանց հոգւոյն: - 712. Իսկ քնարն *Նախ* նշանակէ՛ զքաղցրածայն երգս փառաբանութեանն աստուծոյ: - 713. *Նա՛խ*՝ զի առաջին փող էին մարգարէքն կոչելով յօրինակն: - 713. *Նախ* կոչելով զերկինս ի վերուստ որ են հոգիքն. և զերկիր որ են մարմինք: - 713. Եւ իշխանք են առաքեալք և մարգարէք որ փողք են տիեզերաց, *Նախ* զնոսա կոչէ: - 713. *Նախ* ձայն փողոյ է՛ հրամանն քրիստոսի որ հրամայէ՛ զյարութիւնն: - 713. *Նա՛խ*՝ զի կոչեսցէ յերկնէ զհոգիս սրբոց և յերկրէ զմարմինս. - 714. Եւ բնական քննութեամբ *Նախ* այսպէս եթէ՝ տեսանեմք ի քաղաքական օրէնս զի գոյ դատաստան. այսինքն բարեացն պատիւ և չարացն պատիժ...: - 715. *Նա՛խ*՝ զի ո՛չ է ի չորից տարերց ժողովեալ որ քակտելով մահանայ: - 715. *Նա՛խ*՝ զի կարէ՛ որ յառնել միանգամ և դարձեալ մեռանիլ...: - 716. *Նա՛խ*՝ զի շնորհն աստուածային պատկերին որ համանգամայն կամեցաւ զբոլոր բնութիւնս ըստ հրեշտակացն օրինակի մուծանել ի կեանս. - 716. *Նա՛խ*՝ եթէ համանգամա՛յն է յարութիւնն ի նոյն կէտն, այլ ննջեցեալքն *Նախ* յառնեն և ապա՛ կենդանիքն ընդ նոսա...: - 717. ...զի ննջեցելոցն միայն մին գործ է. այսինքն յարութիւնն. իսկ կենդանեացն մահն և յարութիւնն. զի *Նախ* մեռանին ի նոյն կէտն և ապա՛ յառնեն: - 717. *Նա՛խ*՝ ամենակարող զօրութեանն աստուծոյ և արարչութեանն է գործ: - 719. *Նա՛խ*՝ զի ամենեցուն յայտնի՛ է ամենայն ուրեք գոլով: - 720. *Նա՛խ*՝ զի որպէս *Նախ* սերմանի և ապա բուսանի. այսպէս և մարդն *Նախ* մեռանի և ապա՛ կենդանանայ...: - 720. Հինգերորդ, *Նախ* ծաղկի և ապա՛ առնու զպտուղն յետոյ...: - 721. ...իսկ հոգիք սրբոցն *Նախ* ծաղկին բնական պայծառութեամբն իւրեանց որպէս ցուցաւ ի վերոյ, և ապա՛ յետոյ արդեամբք պտղոյն կատարին ի հանդերձեալ կեանքն: - 721. Այսինքն *Նախ* արմատն. և յետոյ խոտն. յետոյ ծղօտն. և ծնունդն. և ապա՛ տերև. պատանք. և քիստք. և ապա՛ ցորեանն ատոք ի հասկին: - 721. Ասի այսմ բազում պատճառ. բնական և բարոյական. և *Նախ* բնական: - 723. *Նախ* զպակասութիւնն. որպէս ի տղայս և յանդամնահատս և նուազեալ անդամք. որպէս դ մատնի և այլքն...: - 725. *Նա՛խ*՝ զի արու և էգ անդ ո՛չ ճանաչին մասին անդամօք, այլ յատուկ դիմօք և բարի գործովք և փառօք և անւամբ զանազանին. որպէս դասք կուսանացն ի հայրապետացն: - 725. *Նա՛խ*՝ զի ամենևին ապականացո՛ւք են. և մասն ինչ ո՛չ ունին անապականութեան: - 727. Վասն զի երկին որ շարժի՝ յօր դատաստանին դադարի և հաստատի յայն կարգն յոր *Նախ* ստեղծան. արեգակն յարնելս և լուսինն յարևմուտս: - 727. *Նա՛խ*՝ զի ապականեցան տարերք վասն յանցանաց մարդոյն, պա՛րտ է զի ընդ մարդոյն նորոգեսցին և նոքա: - 727. *Նախ* զի դիւրաւ հալի մոմ ի հրոյ. այսպէս և լերինք յերեսաց բարկութեան հրոյն: - 728. *Նա՛խ*՝ այն է գալարիլն երկնի, զի եթերն որպէս մագաղաթ ծալեալ նուազի և նսեմանայ վասն առաւել ճառագայթից լուսաւորացն հրեշտակաց և

սրբոցն յերկնէ երևեալ: - 729. *Նա՛խ*՝ զի մագաղաթն ի հուր մերձեալ գալարի. նոյնպէս և երկնայինքն յայնժամ խոնարհին յորժամ երկին և երկիր վառեսցին հրով: - 729. *Նա՛խ* նշանակէ զփոքր ժամանակն մինչ ի գալուստն միւս անգամ...: - 730. *Նա՛խ* զի արթուն լիցի: - 730. *Նա՛խ*՝ զի խոնարհ և ցա՛ծ է կողմն հարաւոյ. և լուսաւորքն ա՛նդ շրջին. և աջ կողմ է աշխարհի. վասն այն ջերմ է: - 731. *Նա՛խ*՝ զի աշխարհս ջրով և հրով ապականեսցի ըստ մարգարէութեանն ենովքայ: - 731. Եւ յիրաւի *նախ* ջրով. զի յայնժամ ջերմացեալ էին մարդիկ ի ցանկութիւն մեղաց, վասն որոյ ջրով պատժեցան: - 731. *Նախ* ի պարծանս հաւատացելոց զի բերկրեսցին երկրպագուք խաչին: - 732. *Նա՛խ*՝ զի ամենայն որ ի չորից տարերց է՝ կրէ՛ զապականութիւն. արդ խաչն փա՛յտ է և ի չորից տարերց. ապա ուրեմն ապականի և նա՛: - 732. *Նախ* դիմակայութեամբ եթէ՝ ո՛չ է ըստ օրինի բնութեան անապական մնալ նմա, այլ սքանչելիք աստուածային: - 733. *Նախ* բնականաբար քննութեամբ: - 733. *Նախ*՝ այսու զաստուածութիւնն իւր յայտնէ ...: - 735. *Նախ* կոչի աթոռ նշանակ հանգստեան. որպէս հասարակաց մարդկան: - 736. *Նա՛խ*՝ զի տեղիք դատաստանին ո՛չ է յերկինս ուր մեղաւորք ո՛չ կարեն ելանել: - 737. *Նա՛խ*՝ զի տեղիք դատաստանին պա՛րտ է զի ի հասարակ վայրի լիցի և երուսաղէմ է՛ մէջ աշխարհի: - 738. *Նա՛խ* քրիստոս դատեսցէ աստուածութեամբն և մարդկութեամբն: - 738. *Նախ* քննութեան. և երկրորդն հատուցման: - 738. *Նա՛խ*՝ որ ի յայնմ ժամու կենդանի լիցին...: - 740. *Նա՛խ*՝ զի տեսութիւնն աստուծոյ կեանք է յաւիտենից...: - 740. *Նա՛խ*՝ տեսանեն զմարդկութիւնն զի երկիցեն. և մի՛ զաստուածութիւնն զի մի՛ խնդասցեն. զի սրտմտութեամբ հայի ի մեղաւորս. - 741. *Նա՛խ*՝ ի ժամանակէս զի փոփոխի: - 742. *Նա՛խ*՝ զի անփոփոխ է յաւիտեանն. այլ և էութիւն մեր. այլ և վկայքն: - 742. *Նա՛խ*՝ զի յերի՛ց է մարդն. հոգի մարմին և շունչ գոյացեալ. ի քակտումն սոցա գ վկա՛յ է պիտոյ: - 742. *Նախ* ինքն քրիստոս. որպէս ասէ երեմիա «ես եմ վկայ և դատաւոր ասէ աստուած»: - 743. *Նախ* հոգին և մարմինն. զի ցանկան հակառակ միմեանց ըստ այրւոյ առակին առ անիրաւ դատաւորին: - 743. *Նախ* վասն տգիտութեան: - 744. *Նա՛խ*՝ քանզի մեղանչեաց յիւր յաւիտեանին, արժանապէս պատժի ի յաւիտենին աստուծոյ: - 744. *Նախ* հոգւոյ ընդ մարմնոյ բնական արդարութեամբ հաւասարիլ: - 745. *Նախ* ըստ գոյացութեան. զի որպէս անսկիզբն է աստուածութեամբն, նոյնպէս և անվախճան է մարդկութեամբն հաւասարեալ: - 745. *Նախ* ի նոյն առ ինքն ի դէմս սրբոյ Երրորդութեանն. հասարակ գոլ ամենայնիւ. աստուածութեամբ բնութեամբ կամօք և այլն: - 746. *Նախ* հասարակական: - 747. *Նախ*՝ յառաջ քան զլինիլն աշխարհի՝ որդի ի հօրէ՛ և հայր յորդւո՛յ: - 748. *Նախ*՝ կոչի սիրտ և անձինք մեղաւորաց, ուր ժողովին ամենայն գործք չար որ է՛ խաղող դառնութեան. և ունակացեալ պահէ յինքեան. և հեշտութեամբն ճմլէ հանապազ և արբենայ մեղացն գինով: - 748. *Նախ* կոչի հնձան նախածանօթ տեսութիւնն աստուծոյ. ուր ընտրէ՛ և ժողովէ՛ զսուրբս իւր յառաջ քան զլինիլն իւրեանց...: - 748. Զի ծուխ խնկոցն ի վերայ սեղանոյն, *Նախ* նշանակէ՛ սեղանն զքրիստոս. և ծուխն զաղօթս սրբոցն. զոր արծարծէ՛ հօր ի հոտ անուշից: - 749. Իսկ ծուխն յերեսացն աստուծոյ, *Նախ* նշանակէ զահագին սպառնալիք բարկութեան տանջանացն. որպէս *նա՛խ* է ծուխն քան զհուր, և սպառնալիքն քան զտանջանս: - 749. *Նախ* ցուցանէ զմեղս անհաւատիցն լցեալ զտաճար ներողութեանն աստուծոյ. զի լցեալ և յաղթահարի ողորմութիւնն յարդարութենէն: - 749. *Նա՛խ*՝ զի այրեցումն բաժանի ի լուսոյն և մնայ անփոփոխ ի հուրն: - 750. *Նա՛խ*՝ զի կամ ննջելով հանգչին ի տանջանացն. իսկ անդ հատեալ է քուն յաչաց նոցա: - 750. Այլ *նախ* ասի միշտ տիւ ի վերին երես երկրի. ուր արեգակն և լուսին զկա՛յէ առեալ. իսկ ներքինն միշտ գիշեր և խաւար անփոփոխելի: - 750. *Նախ* վասն մարդոյս. զի մին մեղացն կրկին հատուցանի աստ հոգւով և մարմնով. իսկ եօթնպատիկն է՛ ի հուրն յաւիտենից: - 750. *Նա՛խ*՝ զի արտաքո՛յ է այսմ խաւարի որ է պակասութիւն լուսոյ. այլ այն խաւարն պակասութիւն է բարեաց: - 753. Արդ *նախ*՝ զի ի մէնջ է որդն: - 753. *Նա՛խ*՝ զի առ նոսա միաւորեալ է քրիստոս իբր տէր ընդ ծառայս. իսկ միաւորի ընդ եկեղեցի իբր փեսայ ընդ հարսին. և գլուխ ընդ անդամոց: - 757. *Նա՛խ*՝ սերմ է բանք և քարոզք աւետարանին: - 757. *Նախ* վասն անկարօտութեան. զի սուրբքն իմանալի լոյս ունին զքրիստոս. և ո՛չ են կարօտ զգալի լուսոյ: - 760. *Նախ* յերանելի սուրբ երրորդութենէն: - 762. *Նախ* ի տեսանելն զերեսս աստուածային որ է անճառելի ցնծութիւն. որպէս ասեն վարդապետք, այն է ճշմարիտ և միայն ուրախութիւն, և ո՛չ յաղագս ստեղծուածոյ, այլ ի ստեղծողին լինի. զոր իբրև ստանայցես, ո՛չ ոք բարձցէ ի քէն: - 762. *Նա՛խ* վասն մարմնոյն գեղեցկութեան: - 764. Չորրորդ վասն նորին անչարչարութեանն. որպէս ասացաւ *նախ*, և այժմ ի կարճոյ: - 764. *Նախ* եղիցի ուրախութիւն ի մարմնի, բաղդատելով առ այն որ եղիցի մերձ ինքեան. այսինքն զի ա՛յլ մարմինք փառաւորեալ առաջի նորա հրճուին: - 764. *Նախ* վասն այնորիկ՝

զի ի դժոխոցն զերծան: - 764. *Նախ* այնու՝ զի ի տանջանաց թշուառութեան այսմ տարագրութեան ազատեալք լիցին. զի անցեալն ի մահուանէ ի կեանս՝ զկենացն ուրախութիւն կրկնապատկէ՛: - 764. *Նա՛խ*՝ ծառն կենաց են հաւատացելոց անձինքն տնկեալք ի վտակս հոգւոյն՝ ջրով աւազանին. հետևեալ ի մշտնջենաւոր կեանս: - 765. Եւ կրկին է ունակութիւն կենաց. այսինքն *նախ* ունելով յինքեան զկեանս, և ապա բաշխելով այլոց: - 765. *Նա՛խ*՝ զի արմաւենին ի բարձր դնէ զպտուղս. և արդարքն յերկինս գանձեն զառաքինութիւն...: - 765. *Նախ* խնդրելի է թէ վասն ի՞նչ պատճառի նախահօրն յանցանաց պատժապարտ եղեն և որդիքն: - 776. *Նա՛խ* խոստացաւ հրեշտակօք. աւետեաց մարգարէիւք. դաստիարակեաց օրինօք. և յետոյ երևեցաւ ի լրումն նոցին: - 776. *Նա՛խ*՝ որպէս ի վերոյ ասացաւ. զի թէ ադամ որ սկիզբն և պատճառ էր մեղաւորաց՝ ազատեցաւ. ապա ուրեմն և որդիքն որ վասն յանցանաց նորա՝ ազատեսցին: - 776. Զորօրինակ եթէ արմատ փայտի եդեալ ի հուր՝ *նախ* ինքն այրի և ապա ճիւղքն: - 777. Զի նկատմամբ առ անփոփոխն՝ միշտ անփոփոխ գոն *նախ* օրինակաւ. այլ առ ժամանակն՝ փոփոխական: - 779. *Նա՛խ*՝ աղօթիցն ժամ. ո՛չ միայն յերեկոյս և ի վաղորդեան՝ ի հասարակն կամ է անգամ աւուր ըստ մարգարէին: - 779. *Նա՛խ*՝ ի շինուածոյս մերոյ կազմութեան ըստ նիւսացոյ ասիցն: - 780. *Նախ*՝ զի ո՛չ է բոլոր մարդ. այլ կիսամասնեայ: - 780. Ասեմք *նա՛խ*՝ եթէ ամենայն շնորհ զինչ և իցէ տուեալ բնութեան, ո՛չ քակտի ի նմանէ. թէպէտ ծածկի երբեմն վասն մեղաց: - 782. *Նա՛խ*՝ զի ի վերին գաւառս ուստի էին դևք՝ ո՛չ գոյ հաւատ. այլ դէմ յանդիման տեսութիւն: - 784. *Նախ* սրբութեամբ բնութեանն: - 784. *Նախ* բնական առարկութեամբ ըստ փիլիսոփայիցն հասողութեան. և սա՛ կոչի գիտութիւն: - 784. *Նա՛խ*՝ զի մաքրեսցին զգայարանք: - 786. *Նախ*՝ որպէս անդանօր ողջունեն զխաղաղութեան և շինութեան գոլ. յեղակարծ ժամու հասանիլ բարկութեան: - 788-789

***ՆԱԽ ՔԱՆ (տ. ՅԱՌԱՋ ՔԱՆ) +*** Ամենայն ինչ որ լինի՝ ունի պատճառ. և ամենայն պատճառ ի հարկէ է՛ *նախքան* զպատճառելին...: - 10. Երկրորդ՝ ասեն թէ աստուած *նախքան* զլինիլն մեր՝ ի նախատեսութիւնն իւր ետես զամենայն լինելոցն այնպէս. զչարն չար, և զբարին բարի: - 15. Դարձեալ ասեմք՝ թէպէտ տեսանէ աստուած զամենայն *նախքան* զլինիլն իւրեանց, սակայն տեսութիւնն աստուծոյ ո՛չ հարկ է ի վերայ նոցա լինիլ չար կամ բարի: - 15-16. Դարձեալ քննեսցուք ըստ մեզ. զի ո՛չ են հակառակ առաքելոյն բանն և աւետարանին, թէ հայր մեծ է քան զորդի. զի երկոքին նոյն ինքն աստուածութեանն իմանին. ըստ այնմ որ զմեր նուաստ և տկար բնութիւնս միացոյց ընդ իւրում աստուածութեանն, և անտեսանելին տեսանիւր՝ և ծառայի կերպիւ շրջէր վասն տնօրէնութեան՝ ասի փոքր յայս միաւորութեանս քան զհայր. իսկ ըստ այնմ որ է՛ անճառ և *նախքան* զյաւիտեանս ծնունդ ի հօրէ՛, հաւասա՛ր է հօր և ոչ փոքր: - 40. Ապա ուրեմն ծնունդն *նախքան* զամենայն բլուրս՝ էր ի սկզբանն ի բնութենէ հօր. իսկ ստեղծումն վասն մարմնալոյն. զի իւր է մարմինն: - 41. Եօթներորդ՝ *նախ քան* զխաչն, որ ետ զօրութիւն առաքելոցն: - 50. Եւ դարձեալ՝ հոգին որ ի հօրէ ելանէ և կայանայ յորդի. և ի ձեռն որդւոյ իբր զհայրական բարի ամենայն գոյիցս բաշխի երկնաւորաց և երկրաւորաց. *նախ քան* զմարմնանալն՝ և ի մարդեղութեանն: - 61. Եւ զնոյն բանն աստուած՝ աստուածութեամբն աստուած, և մարդկութեամբն աստուած. զի անբաժանելի՛ է. թէպէտ և էր *նախ քան* զմարդեղութիւնն աստուած, այլ յետ անճառ միաւորութեանն մարմնովն է աստուած: - 77. Դարձեալ՝ ըստ նոյն սարասի՝ բանն աստուած ունի ծնունդ ի հօրէ *նախ քան* զյաւիտեանս. և ունի ծնունդ ի մօրէ ի յետին ժամանակիս. և ո՛չ ասի երկածին. այլ՝ միշտ միածին. այսպէս նոյն բանն ունի զբնութիւն աստուծոյ ի հօրէ. ունի և զբնութիւն մարդոյ ի մօրէ՛. և ո՛չ ասի բ բնութիւն. այլ մի բնութիւն վասն միաւորութեանն: - 77. Որք ասեն զսկիզբն բանին ի կուսէն առեալ. և ո՛չ *նախ քան* զյաւիտեանս ի հօրէ ծնեալ: - 82. *Նախ քան* զմարդեղութիւնն հեռի ի միմեանց. որքան աստուծոյ և արարածոյ. անեղի և եղականի. ժամանակէի և յաւիտենականի: - 82. Խոստովանիմք զորդին աստուծոյ *նախ քան* զյաւիտեանս ծնեալ ի հօրէ՛. և յետոյ ի ժամանակի ծնեալ ի մօրէ՛: - 83. Որպէս *նախ քան* զլինիլն մեր՝ էր սկիզբն մեր. և այժմ է՛ նոյն սկիզբն. և յետոյ ի կատարածի անփոփոխելի մնայ ի սկիզբն գոլոյ: - 112. Դարձեալ անեղ ասի աստուած՝ իբր պատճառ անեղից. և *նախ քան* զամենայն անեղ. և կատարումն. և բովանդակութիւն ամենայն անեղի: - 113. Այլ արդ՝ որդի և հոգի ըստ որում ի պատճառէն՝ սկիզբն ունին զհայր. և ըստ որում՝ *նախ քան* զյաւիտեանս՝ անսկիզբն են ընդ հօր: - 114. Ապա յա՛յտ է զի հին աւուրցն նշանակէ *նախ քան* զժամանակ և զյաւիտեան. և բարձրագոյն և արարիչ ժամանակի և յաւիտենի. և պարունակօղ յաւիտենի. որպէս յաւիտեանն ժամանակի: - 115. Ասեմք եթէ՝ մի է յաւիտեան անսկիզբն և անվախճան.

որ նոյն ինքն է աստուած. բոլորն համանգամայն և կատարեալ. և *նախ քան* զյաւիտեանս. և ամենայն յաւիտենից արարիչ: - 116. Զի աստուած *նախ քան* զգործն՝ և յառաջ քան զկամիլն՝ և *նախ քան* զէանալն տեսանէ...: - 118. Առաջին է նախագաղափար տեսութիւն արարչին. որպէս *նախ քան* զժամանակ անսկիզբն յաւիտենիւ. և Երկրորդ սկիզբն է ի ժամանակի լինելութեան իւրոյ: - 163. Դարձեալ ասեմք թէ ո՛չ միապէս է մեղքն *նախ քան* զշնորհքն և յետ շնորհացն...: - 166. Այլ ի յաստուած ոչ ինչ է յետոյ. այլ ինքն *նախ քան* զամենայն է...: - 170. Ծնունդ, զի ի բնութենէ հօր *նախքան* զյաւիտեանս ծնեալ է: - 179. Իսկ **Ե** օր աւելեացն՝ է՛ **Ե** օր Արարաչութեանն *նախքան* զստեղծումն ադամայ: - 191. Որպէս մրջիւն *նախ քան* զլինիլն անձրևի՝ զկերակուրն պատրաստէ: - 218. Երրորդ՝ զի համաձայնին ամենեքեան՝ որ *նախ քան* զյանցանելն զմարդն անապական ասեն: - 222. Դարձեալ ասեն ոմանք, *նախ քան* զուտելն ի պտղոյն՝ գիտէր ադամ զբարին փորձիւ, և զչարն գիտութեամբ...: - 223. Հինգերորդ՝ *նախ քան* զյանցանելն՝ էին ադամ և կինն մերկ և ո՛չ ամաչէին. վասն զի ո՛չ ունէին ցանկութիւն հեշտութեան: - 225. Եւ զայսոսիկ եցոյց քրիստոս *նախքան* զխաչն: - 228. Եւ իւրաքանչիւր ոք ծննդեամբ յառաջ եկեալ առնու զնոյն պատկերին շնորհ ի ծագմանէն աստուծոյ. և լնուն զնոյն թիւ որքանութեան զոր ետես աստուած *նախքան* զլինինլն աշխարհի որպէս ասէ առաքեալն: - 258. Նմանապէս և արուեստաւորն աստուած նախանկար տեսութեամբն ունի ի միտս իւր *նախքան* զլինիլն մարդոյն՝ զորպիսիութիւնն. զորքանութիւնն. և զայլն...: - 258. Ասեմք առ այս թէ, օն ի բա՛ց տար ի մտաց քոց զհեթանոսական կարծիս. զի ո՛չ է հոգի յառաջ քան զմարմին. և ո՛չ մարմին *նախ քան* զհոգի որպէս ի սկիզբն ասացաք: - 260. Երկրորդ՝ ցուցանէ զաշխարհ. որ էր *նախ քան* զլինիլն ի նախանկար տեսութիւն արարչին՝ և ապա եղև, յետոյ վախճանի: - 268. Գիտելի է, զի որպիսութիւն կենաց մարդոյս տրամատի յերիս. ըստ երից փոփոխմանց մարդոյն. այսինքն *նախ քան* զմեղքն. և յետ մեղացն. և յետ մահուն: - 278. Զի *նախ քան* զմեղանչելն ի դրախտին՝ մարդն կարէ՛ր մեղանչել, և կարէր ոչ մեղանչել. կարէր մեռանիլ, և կարէր ոչ մեռանիլ: - 278. Եւ զչորեքկին որպիսութիւնս զայսոսիկ երևեցոյց ի մարմինն ի՛ւր *նախ քան* զխաչն: - 282. Նոյնպէս և անդրանիկ ծնունդքն աշխարհի էին նահապետքն որ *նախ քան* զջուրն, տևէին ի կեանս այս **ջճ** կամ աւելի ամ, և ապա ծնանէին ի հանդերձեալ կեանսն մահուամբ ելիւք: - 290. Հինգերորդ՝ զի իսահակ *նախքան* զծնանիլն կոչեցաւ անուն: - 305. Վեցերորդ՝ անդրանիկք են և ընտրեալքն աստուծոյ. որք *նախքան* զլինիլն աշխարհի ընտրեցան. թէպէտ յետոյ ի ժամանակի ըստ հասարակաց գոյացան և կատարեցան: - 309. Դարձեալ՝ ամենայն անուն որ կոչի՝ կամ *նախ քան* զինքն լինի յորմէ անւանի. որպէս հայրն կոչէ՛ զորդին իւր մարդ: - 312. Իսկ յայլմէ ո՛չ դնի աստուծոյ անուն. ո՛չ բնութեան. և ո՛չ անձնական. զի ո՛չ ոք է *նախ քան* զնա, և ո՛չ հաւասար նմա: - 312. Եւ ի սակաւ զօրութենէն *նախքան* զյարութիւնն չարչարէին դևքն...: - 316. Այլ սքանչելին յոբ՝ էր *նախքան* զօրէնս՝ և գրեցաւ յետ օրինացն: - 321. Եւ որպէս երեխայն *նախ քան* զմկրտիլն **Խ** օր ուսանի զխորհուրդն: - 363. Որպէս *նախ քան* զօրէնս, բնական քննութեամբ ընտրէին մարդիկ. կամ զանճոռնի մեծն, կամ զամենևին փոքրն, կամ զգարշն տեսութեամբ, կամ զվնասակարն, ուտելոյ պիղծ ասէին զսոսա: - 364. Վիճակ սահմանն է. որ *նախ քան* զյաւիտեանս սահմանեաց հայր զփրկութիւն մարդկան: - 369. Չորրորդ, *նախքան* զօրէնս և յօրէնն և զկնի օրինացն թէ ոչ արդարանամք. և ո՛չ **յէ** դարուն ոք արդարանայ: - 384. Երրորդ՝ յորժամ ի խոստովանութիւն և յապաշխարութիւն գայ, լինի ներելի և ակամայ. զի թէ *նախ քան* զմեղանչելն ակամայն, և եթէ յետ մեղացն ակամայն, լինի զղջմամբն ներելի և թողելի: - 385. Երկրորդ, հին օրէնքն և մարգարէքն. որ *նախ քան* զմկրտութիւնս խորհրդով և օրինակօք յառաջապա՛հք եղեն նորոյս: - 390. Երրորդ՝ հեթանոսաց ազգ. որ *նախ քան* զմկրտիլն բնական բարութեամբ և երկիւղիւ գան յաստուածապաշտութիւն և մկրտին: - 390-391. Իսկ տարի՛ է յաւիտենական փառքն. որոյ սկիզբն խնամոցէ՛ *նախ քան* զլինիլն աշխարհի. և կատարումն անվախճան փառքն: - 399. Եւ տէր մեր լրումն աւետեաց ուխտին նախահարցն. և *նախ քան* զսկիզբն աշխարհի ուխտի աւետեաց մարդկան փրկանաց: - 422. Որ է՛ *նախ քան* զխաչն, և ի խաչին, և ի գերեզմանին հանգուցեալ: - 423. Երրորդ՝ զի քրիստոս զչափ հասակի զադամայն ունէր, որ *նախ քան* զյանցանս և ադա՛մ ոչ ունէր հիւանդութիւն և ո՛չ ծերութեան փոփոխումն: - 480. Եւ ասին սոքա բնականք, զի *նախ քան* զյանցանելն ի դրախտին՝ բնաւորապէս գոյին առ ադամ: - 496. ...*նախ քան* զխաչն անապական էր մարմինն քրիստոսի փրկչին մերոյ: - 499. Ասեմք եթէ, կերակրիլն ո՛չ է մասն ապականութեան. ուստի յա՛յտ է զի ադամ *նախ քան* զյանցանելն ի դրախտին կերակրիւր և ո՛չ էր ապականացու. այլ անապական: - 501. Նա՛խ՝ զի բանական մարդ կամաւորօ՛քն է մարդ, և ո՛չ

ակամայիւքն. որպէս կատարեալ էր մարմինն ադամայ *նախ քան* զմեղանչելն: - 502. Ասեմք մեք, թէ արտածորումն մարմնոյ ո՛չ ունէր մարդն ադամ *նախ քան* զմեղանչելն ի դրախտին. որպէս նոյ ի տապանին. և մանուկն իննամսեայ յարգանդին: - 502. Դժոխքն այն յորում *նախ քան* զքրիստոս հոգիսն արգելոյր սատանայ՝ աւերեցաւ յաւիտեան: - 504. Քսաներորդ, յա՛յտ է յա՛յսմանէ՝ որ *նախ քան* զքրիստոս՝ էր սկիզբն աւուր ծագումն լուսոյն. իսկ յետ յարութեանն քրիստոսի եղև սկիզբն աւուրն ի մէջ գիշերի. զի այժմ ի խաւարէ՛ ի լոյս ճանապարհորդիմք: - 515. Մինչև ցամպս այնու կերպիւ որ *նախ քան* զչարչարանս: - 520. Վասն է՞ր *նախ քան* զխաչն և զհամբարձումն ոչ պարգևեցաւ հոգին սուրբ երևելի նշանօք: - 521. ...իսկ թէ մի է, ո՞րպէս կարասցուք ասել մի և զնոյն բանն աստուծոյ որ *նախ քան* զյաւիտեանս. և այսօր գրեալ ի քարտիսի: - 529. Եւ այս բազումս որ առ մեզ է, ի բազում թուղթս գրեալ մի և նոյն բանն է որ *նախ քան* զյաւիտեանս ի հօրէ ծնեալ: - 529. Ասեմք առ այս, եթէ անմարմին իր անկատար ո՛չ լինի. զի սոյն բան աւետարանիս նոյն կատարեալ բանն է աստուծոյ որ ի մարմնի է միացեալ. և *նախ քան* զյաւիտեանս ծնեալ: - 529. **Դարձեալ ասեմք թէ զիա՞րդ յետին. զի աբգար թագաւորն հայոց *նախ քան* զխաչն հաւատաց ի քրիստոս և երանեցաւ ի նմանէ**: - 549. Դարձեալ՝ որ ինչ *նախ քան* զօրէնս գործեին՝ մեղք կոչիւր. որպէս ի դարս նոյի. և այլս: - 555. Եւ թէ ոք ասիցէ, զառաջին օծումն որ *նախ քան* զմկրտելն՝ ո՛չ ունիմք: - 605. Զի՞նչ է ալէլուն *նախ քան* զաւետարանն: - 644. Վասն այն *նախքան* զըմպելն օրհնեմք. և յետ ըմպելոյն դարձեալ շնորհակալեմք...: - 656. Եօթներորդ՝ **գ** օրս այս նշանակեցաւ յերիս աւուրսն որ *նախ քան* զլինիլն լուսաւորաց...: - 681. Վարդապետք սուրբք՝ զպահեստ հոգւոց յերիս փոփոխմունս գիտեն. այսինքն *նախ քան* զքրիստոս. և յետ քրիստոսի. և յետ դատելոյն: - 686. *Նախ քան* զքրիստոս, առ հասարակ ի դժոխս. բայց յետ քրիստոսի, առհասարակ ի կայանս հոգւոց. և երրորդն ի կատարածի...: - 686. Ուստի յա՛յտ է զի *նախ քան* զքրիստոս արդարք և մեղաւորք ի դժոխս էին: - 695. Այլ արկանելիք սպիտակ՝ զծաղկեալ նոցա առաքինութեանն երևեցուցանէ զպայծառութիւն յետ ի թանձրութենէ մարմնոյս փոխելոյն. զոր զգեցեալ են *նախ քան* զխոստացեալ զփառսն...: - 696. ...որպէս վեց մեռեալքն որք յարեան *նախքան* զքրիստոս. և յարութիւնս այս անկատար է. զի դարձեալ մեռան: - 716. Եւ այս գիտելի է, զի տէր մեր քրիստոս *նախ քան* զյարութիւնն զչորեսինս զայս եցոյց ի մարմին իւր: - 722. Իսկ Երրորդն արքայութիւն, գուշակի յաւազանն պղնձի. զոր հրամայեաց մովսէս առնել ի հայելեացն կանանց որ նստէին առաջի դրան խորանին. յորում լւանային որդիքն ահարօնի *նախ քան* զմտանելն ի սուրբն սրբոց: - 756. Որդիքն ահարօնի՝ են սուրբքն. որք *նախ քան* զվերափոխիլն ի սենեակ վերին արքային, աստուածայնովքն բանիւք յամենայն հպարտութենէ մեղաց մաքրին: - 756. Իններորդ, և որք *նախ քան* զօրէնս՝ զերեսնաւորն. և որք ըստ օրինօքն՝ զկաւորն. և որք ըստ շնորհօքս, զհարիւրաւորն տացեն պտուղ: - 758. Դարձեալ ասեմք առաջին կեանք մասնաւոր, զոր *նախ քան* զյանցանելն ունէր. անկարօտութիւն. լուսաւորութիւն. անծերանելի հասակ. անմահ կեանք. և այլն որ ասացաւ ի վերոյ **ժէ** գլուխն **լզ** համարն: - 758. Զի *նախ քան* զյանցանելն ադամ ունէր զկիրս բնական և անգոսնելի. որպէս կերակրիլն, ննջելն, և այլն: - 759. ...նոյնպէս ողորմութեան և արդարութեան է միշտ բարերարելն և պատժելն ըստ նախասահման գիտութեան նորին *նախքան* զլինիլն էիցս ըստ առաքելոյ: - 779

**ՆԱԽԱԳԱՂԱՓԱՐ +** Երկրորդ՝ բազմանայ ի *նախագաղափարն*. և բազմապատկի յարարչագործութիւն եղելոցս: - 110. Եւ ի սկիզբնէ. որ է յարացոյցն և *նախագաղափարն*: - 111. Երբեմն *նախագաղափար*. իբր նախօրինակ. և մեք պատկեր և նմանութիւն նորին: - 112. Եւ ա՛յս է *նախագաղափար* տեսութիւնն աստուծոյ. ըստ առաքելոյ՝ «ընտրեալ յառաջ քան զլինիլն աշխարհի»: - 113. Երկրորդ՝ զի զամենայն է քրիստոս ի *նախագաղափար* բանն իւր ժողովեալ ունի...: - 121. Աշխարհ ո՛չ լինի ոչէ. և ո՛չ ապականեալն կոյս. և վասն թողութեան. յորս *նախագաղափար* տեսութիւնն աստուծոյ: - 154. Առաջին է *նախագաղափար* տեսութիւն արարչին. որպէս նախ քան զժամանակ անսկիզբն յաւիտենիւ. և Երկրորդ սկիզբն է ի ժամանակի լինելութեան իւրոյ: - 163. Նոյնպէս և հրեշտակք ո՛չ տեսանեն *զնախագաղափար* տեսութիւնն որ լինելո՛ց էր յետոյ: - 164. Արդ այս չափ համեմատութիւն է ի նախկին սկիզբն. *նախագաղափար* տեսութեանն աստուծոյ. և ո՛չ յերկրորդ սկիզբն ի գործ արարչութեան: - 164. Եւ որովհետև գիտացեալ եղև այս, ապա յա՛յտ է թէ անկա՛ր է ոչ երևիլ սկիզբն լինելութեան աշխարհի. ըստ այնմ որ էր ի *նախագաղափար* տեսութիւնն աստուծոյ: - 164-165. Եւ ուսեալք զայս, ընկա՛լ և այժմ զլուծումն խնդրոյն. եթէ լինելութիւն աշխարհի ի *նախագաղափար* տեսութիւնն աստուծոյ ո՛չ է զօրութեամբ՝ այլ ներգործութեամբ վասն բազում

պատճառի: - 168. Ուստի յա՛յտ է զի ի լինիլն աշխարհի՝ *նախագաղափար* տեսութիւնն նոյնպէս եկաց մնաց առանց յաւելուածոյ և պակասութեան: - 169. Նախ՝ զի զգոլն իւրեանց ունէին ի *նախագաղափար* տեսութիւնն աստուծոյ. թէպէտ յետո՛յ ընկալան գոյացութիւնս յինքեանս. որպէս տաճար ի միտս շինողին: - 170. Եւ թէպէտ ի յէութիւնս իւրեանց յետոյ, սակայն ի *նախագաղափար* տեսութիւնն աստուծոյ, գոյին յառաջ քան զլինիլն իւրեանց էութեամբ, և յետոյ եղեն ըստ նոյն նմանութեան: - 172. Նախ՝ զի ասեմք եթէ աշխարհ յառաջ քան զլինիլն իւր գոյր ի *նախագաղափար* տեսութիւնն աստուծոյ. ապա ուրեմն ո՛չ է յոչ ուրեք յոչ երբեք: - 173. Իսկ այլք ասեն թէ՝ պատկեր եմք աստուծոյ, և նման յարացոյց *նախագաղափարին*: - 273

**ՆԱԽԱԳԷՏ +** Եւ զի *նախագէտ* էր աստուած՝ ընդէ՞ր ստեղծ զնոսա որ այնպիսիք եղեն: - 149

**ՆԱԽԱԳԻԾ +** Սոքա աստուածայինք են. վասն որոյ *նախագիծք* եղեն: - 340

**ՆԱԽԱԳԻՏՈՒԹԻՒՆ +** Նոյնպէս և *նախագիտութիւնն* ճանաչումն է չարեաց: - 18

**ՆԱԽԱԳՈՅ +** Վասն էի. և ոչ էի. և *նախագոյի*. և էր. և է. և եղիցի: - 101. Ի յէից էակն. որ է *նախագոյ* պատճառ ամենայնի: - 111. Վասն է՞ր ասի *նախագո՛յ* է առաջին պատճառն: - 111

**ՆԱԽԱԳՈՅԱՆԱԼ +** Այլ նոքա ո՛չ խոստովանին զաստուած մարդացեալ. այլ՝ կամ ի *նախագոյացեալ* անձն բնակեալ ասեն զաստուածայինն բնութիւն, և կամ շնորհօք որդիացեալ որպէս նեստորի քըի: - 81

**ՆԱԽԱԳՈՅՆ +** Զանսկիզբն սկզբան ի սկզբանէ՛ գոյին, և զանճառելի թաքնութեան և անհաս խորութեան յառաջ ճանապարհի ի մեզ միածին բանին... *Նախագոյն* ամօք, և կանուխ ժամանակօք: - 456

**ՆԱԽԱԳՈՐԾԵԼ +** Զի չարչարանքն այսպէս ստուգաբանի, *նախագործեցեալ* չարին չար հատուցմունք: - 42

**ՆԱԽԱԳՈՒՇԱԿ +** Զորօրինակ, քարոզեցաւ նինուէի կործանումն. և *նախագուշակ* եղև եզեկիայի մահ. և ո՛չ մի ի սոցանէ կատարեցաւ: - 779

**ՆԱԽԱԴԱՍԵՄ +** Ա՛րդ՝ զի հայր պատճա՛ռ է որդւոյ ծննդեան՝ և հոգւոյ բղխման, վասն որոյ հայր *նախադասի*. իսկ ընդ նմա որդի. ո՛չ որպէս ոմանք կարծեն որդի պատճառ է հոգւոյ բղխման, այլ գ է ուղիղ տեսութիւնն: - 109. Իսկ առաքեալն փոխէ՛ զայս կարգ բնական ի կարգ արհեստական և զարժանաւորսն *նախադասէ* : - 535. Երկրորդ՝ որպէս հանուրն *նախադասի* մասնականաց, այսպէս առաքեալքն հանուրց աշխարհի լոյս կոչեցան. և մարգարէքն միոյ ազգի...: - 535

**ՆԱԽԱԴՐԵՄ +** Նախ՝ զի մարմին է բարձր. որ և ի սահմանս իւր *նախադրի:* - 184

**ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ +** *Նախադրութեամբն* որ է՛ և ասի. որպէս Հա՜յր. Որդի՜. Հոգի՜. լո՜յս. կեա՜նք. և այլն: - 123

**ՆԱԽԱԽՆԱՄԱԲԱՐ +** Այլ արդ՝ շնորհքն ըստ իւրում ինքնութեան է՛ անեղ՝ յանեղ է էն յառաջեալ, և *նախախնամաբար* եղելոցս հաղորդի, և յիւրմէ էութենէն ո՛չ փոփոխի: - 140

**ՆԱԽԱԽՆԱՄԱԿԱՆ +** Իսկ ի նոյն ինքն՝ առաջին է նախախնամութիւնն առ աստուած, և ապա՛ ստեղծումն. զի վասն *նախախնամական* բարրութեանն կամեցաւ ստեղծանել զեղեալսս. որպէս ասէ սուրբն դիոնէսիոս ի դ գլուխն որ յաղագս երկնայնոցն քահանայապետութեանց: - 157-158

**ՆԱԽԱԽՆԱՄԱՊԷՍ +** Իսկ ուղիղ՝ զի իջանեն առ երկրորդսն *նախախնամապէս* ո՛չ ի նոյնէ ի նոյն, այլ ի միոյ ի միւսն: - 142

**ՆԱԽԱԽՆԱՄԵՄ +** ...այսպէս իմաստութեամբ և *նախախնամէ՛* զբոլորն՝ և զի իւրաքանչիւրսն ըստ իւրում պիտոյից զանազանապէս: - 157. Երկրորդ՝ զի առաջին է ստեղծանելն՝ և ապա՛ *նախախնամելն*. այս ի յեղեալ իրն: - 157. Երրորդ՝ զի առնելն ի սկիզբն նայի ստեղծեալ իրին զի լինիցի. և *նախախնամելն* ի կատարածն զի մի՛ կորիցէ: - 158. Իսկ գործ խնամելոյն միշտ և հանապազ. ըստ այնմ «հայրիմ մինչև ցայժմ գործ է՛ և ես գործեմ». որ է՛ *նախախնամելն:* - 158. Ասեմք առ այս. զի թէպէտ ա՛յլ է գործ ստեղծման և ա՛յլ նախախնամութեան. զի սեղծանելն է առնել իր ինչ ի յոչընչէ. և *նախախնամելն* զեղեալն փոխանորդութեամբ ի նոյն տեսակն պահել: - 257. Զի թէպէտ մի իրէ նախախնամութիւնն աստուծոյ առ արարածս, այլ զամենայնս ո՛չ միապէս պահէ և *նախախնամէ:* - 258

**ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԻՒՆ +** Այլ կառավարի երբեք ի կամս *նախախնամութեան* առաջին պատճառին. որպէս ասէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս որ յաղագս բնութեան մարդոյն: - 13. Զի *նախախնամութեամբ* բազում բարիս յառաջած է ի չարէ. որպէս սատանայի թոյլ տայ, զի փորձեսցին բարիքն և յաւելցին պսակքն: - 17. Նախ եթէ՝ ունիմք անձնիշխան կամք. և տէ՛ր եմք գործոց մերոց. առնել և ո՛չ առնել. այլ երբեմն սկիզբն ի մէնջ, և կատարումն ի *նախախնամութիւնն* աստուծոյ: - 17. Իսկ չար

փոխանակ բարւոյ ո՛չ առնէ ըստ որում անիրաւութիւնէ. այլ առնէ երբեք ըստ որում *նախախնամութիւնէ*. զի ի չարէն լինիցի բարի. թէպէտ մեզ չար երևի, այլ այս ևս բարի է. որպէս հիւանդութիւն. փորձութիւն. և այլն: - 18. Բայց *նախախնամութիւնն* աստուծոյ ճանաչէ զփրկեալսն, և տայ զկերպ փրկելոցն որով փրկին ընտրեալքն: - 18. Ո՛չ թէ նոր իմն տեսակ և կամ նոր աշխարհ. այլ զեղելոցս *նախախնամութիւնն*. և ի նոյնութիւն կալն հայր կամի և որդի կատարէ՛. ոչ ծառայաբար և անուսումնապէս. այլ տիրաբար և հանճարով: - 46. Լայնութիւնն է ընդարձակ ճանապարհ աստուծոյ. որ է *նախախնամութիւն* նորա յամենայն էքս: - 129. Երրորդ՝ ես եմ սկիզբն արարչութեամբ, և կատարումն *նախախնամութեամբ* ամենայն գոյից: - 129. Երրորդ՝ է՛ գործ *նախախնամութեան*. զի ըստ ընտանի կարողութեան իւրեանց՝ համեմատապէս զպարգևս ընկալցին. զի մի վնասեսցին փոքունքն մեծամեծօք. և թերի մնացին մեծամեծքն սակաւուք: - 130. Վեցերորդ՝ զի թէպէտ անա՛րգ են՝ ունին զբարի գոլն ստեղծմամբ և *նախախնամութեամբ*: - 132. Արարչութիւն և *նախախնամութիւն*. յորում և վասն փորձութեանց զանազան: - 154. Յնգետասաներորդ՝ զի մարդ յետ ստեղծանելոյն ո՛չ է ընդ ստեղծուածս իւր. իսկ աստուած յետ ստեղծանելոյն՝ միշտ է՛ ընդ ստեղծուածս իւր *նախախնամութեամբ*...: - 57. Զի՞նչ հասարակութիւն է գործոյ արարչութեան և գործոյ *նախախնամութեան*. և զի՞նչ զանազանութիւն: - 157. Այսպէս և գործ *նախախնամութեան*. զի կամի՛ զի ամենայն մարդիկ կեցցեն և ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն: - 157. Եւ նոյն ինքն *նախախնամութիւնն* է կամք արարչին յարարածս եղեալ: - 157. Երկրորդ՝ զի ուր հասանէ գործ արարչութեան, անդ գոյ և *նախախնամութեան*. և անդրադարձեալ ևս՝ զի ուր գործ *նախախնամութեան* է, անդ և գործ արարչութեան: - 157. ...այսպէս և անգիտելի՛ են գործք *նախախնամութեանն*...: - 157. Յինգերորդ՝ և որպէս ընդ աղօտ ինչ նմանութեամբ ծանօթանամք ի գործն արարչութեան. այսպէս և ստւերակերպ նմանութեամբ ի ծանօթս գամք գործոյ *նախախնամութեանն*. այսինքն առնելոյն և թոյլ տալոյն: - 157. Իսկ թէ զի՞նչ է զանազանութիւն գործոյ արարչութեան և *նախախնամութեան*: - 157. Առաջին՝ զի արարչութիւն է յոչէից ստեղծանել. իսկ *նախախնամութիւն* է զեղեալն ի նոյնութեան պահել: - 157. Իսկ ի նոյն ինքն՝ առաջին է *նախախնամութիւնն* առ աստուած, և ապա՛ ստեղծումն...: - 57-158. Իսկ *նախախնամութիւնն* առ աստուած գոյացական է և միշտ. զի պատահումն ո՛չ գոյ յաստուած: - 164. Եւ բաժանումն ասեմ ո՛չ ըստ *նախախնամութեան*, այլ ըստ գոյացութեան: - 169. Դարձեալ առնելն է գործ ստեղծման. իսկ կրելն գործ *նախախնամութեան*: - 172. Զի *նախախնամութեամբ* հաղորդեալ են յարարածս. և իսկական բնութեամբն մեկնեալ և որոշեալ և յանհասս գերամբարձեալ: - 178. Այլ այս է ուղիղ. զի որպէս *նախախնամութիւնն* աստուծոյ զդէմքն մարմնոյն ի հաւասարութիւնն անհաւասար պահեաց, և ի նմանութիւնն աննման: - 252. Եւ թէ ասիցէ ոք. արդ յայտնեա՛, *նախախնամութեա՞մբ* է լինելութիւն հոգւոյ, թէ ստեղծմամբ: - 257. Ասեմք առ այս. զի թէպէտ ա՛յլ է գործ ստեղծման և ա՛յլ *նախախնամութեան*. զի սեղծանելն է առնել իր ինչ ի յոչընչէ. և նախախնամելն՝ զեղեալն փոխանորդութեամբ ի նոյն տեսակն պահել: - 257. Այլ արդ՝ *նախախնամութեամբ* է տնկականն և զգայականն. որք փտելով և զնմանս ծնանելով պահեն զնոյն տեսակն: - 257. Իսկ բանականս մարդ ո՛չ ամենևին *նախախնամութեամբ* է. զի հոգին ո՛չ ի ծնողաց, այլ ի շնորհացն աստուծոյ պարգևի: - 257. Եւ ո՛չ ամենևին ստեղծմամբ. զի մարմինն *նախախնամութեամբ* փոխանորդի: - 257. Դարձեալ՝ ո՛չ հեռի է ի *նախախնամութեանց*, և ո՛չ հեռի ի ստեղծմանց. այլ է՛ ի մէջն: - 257. Զի *նախախնամութեամբ* ունի զտնկականն և զզգայականն. և ստեղծմամբ զբանական հոգին զպատկերն աստուծոյ: - 257. Ապա ուրեմն բանական հոգին *նախախնամութեամբ* է և ստեղծմամբ: - 258. *Նախախնամութեամբ*՝ ո՛չ որպէս փտելով կամ ծնանելով զմարմին ի մարմնոց. այլ յառաջ բերէ զպատկերն իւր որպէս ինքն գիտէ: - 258. Զի թէպէտ մի իրէ *նախախնամութիւնն* աստուծոյ առ արարածս, այլ զամենայնս ո՛չ միապէս պահէ և նախախնամէ: - 258. Ապա ուրեմն գործ *նախախնամութեան* է զիւրաքանչիւր ոգի յառաջ ածել. և նախատպին պատկերակից առնել: - 258. Ոմն *նախախնամութեամբ*. որպէս տնկականն և զգայականն. և ոմն ստեղծմամբ. որպէս բանականն: - 258. Իսկ հոգի մի է մարդոյ ի միոյ *նախախնամութենէ* յառաջ բերեալ. յանկատար նիւթն եդեալ զտնկականն և զզգայականն. և ի կատարեալն զհոգի բանական ծագեալ: - 259. Դարձեալ՝ *նախախնամութեանն* է այսպէս կարգեալ. զի մարդս ունի դայեակ և սնուցօղ, պէտս ունի խնամարկութեան զի հասցէ ի չափ հասակի: - 267. Եւ մի՛ աստ ընդ դէմ բերցի բանիս թէ՝ ամենայն մեծամեծք գութ ունին փոքունց. զի և այս *նախախնամութեանն* է. որ եդ ի բնութեանս խնամ տանիլ նոցա, մինչ ինքեանք ևս ի չափ հասակի

եկեսցեն և զերծանիցեն ի վնասուց: - 267. Այսպէս և նիւսացին գրիգոր՝ գործ ստեղծման և գործ *նախախնամութեան* բաժանէ ի սեռէ՛ ողորմութեան և արդարութեանն աստուծոյ: - 457. Ձնոյնս կամի և մեծն դիոնէսիոս՝ *նախախնամութեամբն* աստուծոյ եղեալ ամենայն արարածոց: - 457. Չորրորդ *նախախնամութեամբ*. զի մի՛ հպարտասցին. որպէս խէթն առաքելոյն պօղոսի: - 665. Երկրորդ, հայի՛ առ ի մի և նոյն բարերար կամացն յառաջ եկեալ գործքն. աստուածային՝ արարչական՝ և արքունական. որ է գործ ստեղծման և *նախախնամութեան*: - 746

**ՆԱԽԱԾԱՆՕԹ +** Իսկ սկիզբն և կատարումն ի մեզ, որպէս *նախածանօթ* ընտրեալքն յառաջ քան զլինիլն աշխարհի. որ այժմ բարի գործովք կատարեսցին ըստ նախասահմանելոյն իւրեանց: - 18. Երրորդ՝ զի ամենայն իր յէից և յոչ էից են գոյացեալ. յէից՝ ըստ *նախածանօթ* տեսչութեան գաղափարին. և յոչ էից՝ ըստ ինքեան ի ժամանակի հաստատեալք: - 236. Նախ կոչի հնձան *նախածանօթ* տեսութիւնն աստուծոյ. ուր ընտրէ՛ և ժողովէ՛ զսուրբս իւր յառաջ քան զլինիլն իւրեանց...: - 748

**ՆԱԽԱԾԻՆ +** Իններորդ՝ ցուցանէ թէ ո՛չ է այն անդրանիկն որ *նախածին* լինի և մարմնովն քաջ. զի ո՛չ հաճի տէր ընդ իրանս առն հսկայի. այլ անդրանիկ է այն՝ որ զհաճոյսն աստուծոյ կատարէ: - 310

**ՆԱԽԱԿԱՏԱՐ +** Նախ՝ զի յաստուած ինքնակատար և *նախակատա՛ր* է քահանայապետութիւնն: - 138

**ՆԱԽԱՀԱՅՐ +** Իսկ որդի մարդոյ կոչի, զի էր ի յարենէն ի զանգւածոյն ադամայ իբր ի *նախահօրէ՛*. և ի կուսէն՝ իբր ի մօրէ՛: - 50. Զի որպէս էր հօր ծանօթութիւնն ի *նախահարսն*, և որդոյն ընդ աղօտ, այլ ի մարմնանալն իւր յայտնեցաւ: - 55. Արդ՝ եթէ ադամ ոչ էր կոչեալ՝ այլ կրտսեր թոռունքն, նախատինք էր *նախահօրն*: - 219-220. Որ յայսմ թուոջ և *նախահայրն* ադամ ստեղծաւ: - 265. Ութերորդ՝ Անուանց *նախահարցն* և կանանց նոցա: - 283. Ութսունևմի, Ո՞րքան խօսեցաւ աստուած ընդ *նախահարսն*: - 285. Յետ ելիցն ադամայ ի դրախտէն կենաց, հարցանելի է վասն *նախահարցն* ըստ կարգի: - 286. Ընդէ՞ր է զի *նախահարքն* յերկարակեացք էին, և մեք սակաւակեացք: - 291. Եւ այլք զնշխարս *նախահօրն* ադամայ ասեն. զի յաստուծոյ ծեռացն էր յօրինեալ՝ լո՛յս տայր նոցա: - 294. Իսկ սատանայ փորձէ՛ զի խաբեսցէ որպէս *զնախահայրն*: - 304. Եւ տէր մեր լրումն աւետեաց ուխտին *նախահարցն*. և նախ քան զսկիզբն աշխարհի ուխտի աւետեաց մարդկան փրկանաց: - 422. Եւ մի և նոյն բանն խօսեցաւ ի *նախահարս* և ի մարգարէս առանց մարմնոյ: - 529. Եւ խաչիւն *նախահայրն* որ զկնի: - 642. Զի այն պահքն յառաջ քան զգիրս և քան զմարգարէս ի *նախահարցն* եղաւ: - 650. Հինգերորդ, զի և *նախահարցն* քարեայ էր գերեզմանն. աբրահամու. սահակայ. և յակոբայ. նոյնպէս և գերեզման տեառն. և կափարիչ վեմն...: - 679. Զի բազում ուրէք վկայէ՛ գիրն աստուածաշունչ, *զնախահայրն* մեր ադամ ազատեալ ի դժոխոցն: - 775. Նախ խնդրելի է թէ վասն ի՞նչ պատճառի *նախահօրն* յանցանաց պատժապարտ եղեն և որդիքն: - 776. Իսկ թէ ընդ *նախահօրն* ազատութեան ընդ նմին ազատեցան և որդիք, յա՛յտ է ի բազմաց: - 776. Արդ՝ քրիստոս զպատիժ *նախահօրն* կրեաց և զբնութեանս զպարտն վճարեաց: - 776. Ասեմք թէ՝ յիրաւի, որովհետև երևեցաւ տէր մեր ի փրկութիւն ընտրելոց ըստ ամբակումայ, *նախահայրն* յաւիտեան. իսկ այլք ազատեցան ժամանակեայ: - 777. Ապա ուրեմն ողորմութեամբ և արդարութեամբ ազատեցաւ *նախահայրն* յաւիտեան. իսկ այլքն առ ժամանակ մի ողորմութեամբ վասն նորա որպէս ասացաւ: - 778

**ՆԱԽԱՁԱՅՆ +** Հինգերորդ՝ առաջին առաքեալքն իբր կատարումն բանից. երկրորդ մարգարէք *նախաձայնք* նոցին. երրորդ վարդապետք մեկնիչք և թարգմանք երկուցն քարոզութեանց: - 535

**ՆԱԽԱՄԱՅՐ +** Որպէս ասաց *նախամօրն* եւայի, «բազմացուցանելով բազմացուցից զտրտմութիւնս քո և զհեծութիւնս»: - 292. Եւ ծննդեամբն ազատեցաւ *նախամայրն* որ նախ մեղաւ: - 642

**ՆԱԽԱՄԵԾԱՐ +** Երկրորդ, որպէս չորք կենդանիքն զվեհագոյնս և *զնախամեծարս* երկնայնոցն ցուցանեն. նոյնպէս և իդ երիցունքն *զնախամեծարս* ընտրելոցն մարդկան...: - 711

**ՆԱԽԱՆԿԱՐ +** Նմանապէս և արուեստաւորն աստուած *նախանկար* տեսութեամբն ունի ի միտս իւր նախքան զլինիլն մարդոյն՝ զորպիսիութիւնն. զորքանութիւնն. և զայլն. իսկ արուեստն որ է արարչադիր հրամանն, ազդէ՛ ի նիւթն. և զի անկատա՛ր է նիւթն, անկատար տայ և նմա հոգի զտնկականն: - 258. Երկրորդ՝ ցուցանէ զաշխարհ. որ էր նախ քան զլինիլն ի *նախանկար* տեսութիւն արարչին՝ և ապա եղև, յետոյ վախճանի: - 268. Նաև անդանօր ետես *նախանկար* տեսչութեամբ զորքանութիւն մարդկան ըստ թւոյ: - 716

**ՆԱԽԱՆՁ +** Ո՛չ է ըստ չարափառացն ասել ուղղակի՝ թէ *նախանձու* կամ վասն փառաց որպէս ասեն, զի անգիտութեամբն պատուեսցի. ընդունա՛յն է կարծիքս այս. ասել զոր չէ՛ արժան անախտ և պարզ բնութեանն աստուծոյ: - 24. Այլ և ատելութիւնն դարձուցանէ զմիտս բազմաց ի հաւատոցն. որպէս

ատելութիւն և *նախանձ* փարիսեցւոցն՝ ո՛չ տային թոյլ հաւատալ ի քրիստոս...: - 32. Վասն զարմացմանն աստուծոյ. և *նախանձուն*: - 102. Ո՞րպէս է *նախանձն* ի յաստուած. ըստ այնմ, «ես աստուած նախանձո՛տեմ». զի *նախանձն* ա՛խտ է առ մեզ: - 127. Դարձեալ՝ հոմանուն է *նախանձն*. զի *նախա՛նձ* է յաչաղելն և ատելն...: - 128. Եւ *նախա՛նձ* է սիրելն և փափագիլն. ըստ այնմ, «նախանձաւոր լերուք շնորհացն որ լաւն են»: - 128. Այլ սէրն և փափագն ասի *նախանձ* զաստուծոյ: - 128. Դարձեալ՝ բնականապէս ամենայն *նախանձ* ունի սիրել զինքն, և ատել զայլս: - 128. Իսկ *նախանձն* աստուծոյ պարզապէս միայն ունի սիրել և զայլս և ո՛չ ատել. զի *նախանձն* աստուծոյ՝ սիրոյ առաւելութիւնն է. որպէս բոցն հրոյ: - 128. Եւ որպէս զարմացումն առաւելութիւն է իմացմանն, նոյնպէս և *նախանձն* առաւելութիւն է կամացն: - 128. Նաև անբարիշտ կամք նորա դարձել է յատելութիւն և ի *նախանձ* մարդոյն...: - 146. Զի **գ** գլխոյն կրկին է եղջիւր. որ է հպարտութիւն՝ *նախանձ*՝ և բարկութիւն. զի սոքօք յաջ և յահեակ պատերազմի. և առ ընտիրս և առ խոտանս գտանին բազում ուրեք երեքին ախտքս այսոքիկ: 151-152. Վեցերորդ՝ թողեալ լինին ոմանք չարչարեալ առ ի *նախանձ* այլոց...: - 158. Ասեմք թէ՝ սոքա ի մասնաւոր հոգւոյն բարի են բնաւորեալ *նախանձ* ցանկութիւն և այլն. և վասն բարւո՛յ են եղեալ...: - 237. Երրորդ՝ զի ընդդէմ դրախտին բնակեցաւ և ի միշտ *նախանձէն* մաշեցաւ: - 279. Երկրորդ՝ *նախանձն* առ եղբայրն: - 287. Նա՛խ՝ զի զայրացաւ *նախանձուն* աստուծոյ. որպէս փենեհէս և եղիա: - 349. *Զնախանձն* տարածումն բազկացն. որ նշանակէ՛ զգիրկս արկանելն սիրով: - 489. Այսպէս և որդիքն սաւուղայ հարեալ *նախանձու* բևեռեցին զտէրն և խոցեցին նիզակաւ. և պահէին զգերեզմանն: - 513. Երրորդ՝ հպարտութիւն և *նախանձ* և սոցին նմանքն մեղք են: - 556. Եւ սոքա մտօք և ո՛չ մարմնով կատարին. որպէս յայտ է ի բանսարկուն սատանայ որ յանցեաւ հպարտութեամբ և *նախանձով*: - 556. Այլ արդ՝ զղջանալ և խոստովանիլ պարտ է զհպարտութիւն՝ *զնախանձ*՝ զատելութիւն՝ և զայլն, և ապա՛ թողութիւն գտանել: - 556. Եւ դարձեալ՝ զոր նոքա *նախանձ* ասեն՝ սա՛ ամբարիաւա՛ճ ասէ. որ է՛ փառասէր: - 559. Հպարտութիւնն է բանին. *Նախանձն* ցանկութեանն: - 559. Բանին գոլ զհպարտութիւն և *զնախանձ* առ ներքինս և առ վերինս: - 559. Այլ ես ասեմ թէ յեօթանց անտի երկուքն պարզ հոգեկան են. այսինքն հպարտութիւն և *նախանձ*: - 559. Եւ է՛ հպարտութիւնն իմացմանն՝ և *նախանձն* կամացն: - 559. Զի կամ հրաժարէ՛ և թիւրի բանականաւ. ըստ այսմ է՛ *նախանձ*: - 561. Զի առաջին մեղք հպարտութիւնն է որով սատանայ մեղանչեաց յերկինս և անկաւ. և ապա *նախանձն* զոր ընդ մարդոյն արարին: - 561. Նաև ասեն թէ՝ վասն փառաց աստուածանալոյն մեղանչեաց ադամ. և վասն *նախանձու* առն՝ կինն նախ եկեր զպտուղն: - 561. Վասն այն առաջին է ամբարտաւանութիւն, և ընդ նմա *նախանձն*, և այլքն ըստ կարգի: - 561. Որպէս յա՛յտ է ի տրտմիլն. զի խորհուրդն մշակ եղեալ յետոյ ի յոխս և ի քէնս և ի *նախանձս* յաւելու: - 564. Իսկ անթողլի մեղաց **զ** են պարագայք. այսինքն յուսահատութիւն. յանդըգնութիւն. մարտընչիլ զճշմարտութիւնն ճանաչելոյ. *նախանձ* ընդ դէմ եղբայրական սիրոյն. խստասրտութիւն և անզղջութիւն մինչ իսպառ: - 567. Ընդ դէմ առաջնոյն է՛ մարտնչիլ զճշմարտութիւնն ճանաչելոյ. և ընդ դէմ երկրորդին՝ *նախանձն* ընդ դէմ եղբայրական սիրոյն: - 567. Զի՞նչ է *նախանձն*: - 569. *Նախանձն* է նախանձիլ ընդ այլոց բարեբախտութիւն: - 569. Զի որպէս ամբարտաւանութիւնն հանէ՛ զմարդն յաստուծոյ, նոյնպէս և *նախանձն* զմարդն զինքն յինքենէ՛ հանէ: - 569. Զի որպէս *նախանձն* կորուսանէ զինքն, այսպէս և բարկութիւնն փախուցանէ զընկերն: - 570. Երրորդ հեռիւ և *նախանձու*. ըստ այսմ «գիտաց զի առ *նախանձու* մատնեցին զնա»: - 579. Սուգն *զնախանձն*. զի որ սգայ վասն մեղաց այլոց, ո՛չ նախանձի ընդ նոսա: - 583. Ապա թէ քամահելով և *նախանձու* զանց առնէ, մահու չափ է: - 620. Իսկ մեղաւորքն ոչ. զի չարակամք են և *նախանձուք*: - 685. Իսկ յայսպիսի տեսութենէս ո՛չ ուրախանան, այլ տրտմին. և այս վասն *նախանձու* նոցա ընդ բարեբաստութիւնս այլոց: - 741. Կապանք: Երկիւղ: Ցաւ: Ամօթ: *Նախանձ*: Հեռ: Տրտմութիւն: - 751. Վասն երրորդին, զի *նախանձ* և ատելութիւն աստէն որպէս որդունք խածատեցին զընկերս. արժանապէս որդունքն անդ խածատեն զնոսա: - 752

**ՆԱԽԱՆՁԱԽՆԴԻՐ +** Եւ եղիաս *նախանձախնդիրն* աստուծոյ. և այլք բազումք: - 288. Նախ՝ զի *նախանձախնդիր* էր աստուծոյ: - 289. Այլ ի դէ՛պ է զի *նախանձախնդի՛ր* է աստուծոյ ընդդէմ տանն կայենի: - 290. Եւ ղազար թարգման եբեր ի հայս՝ ի **ծգ** ամի թարգմանութեան սրբոյն սահակայ առն աստուծոյ որ էր *նախանձախնդիր* կարգաց եկեղեցոյ: - 659

**ՆԱԽԱՆՁԵԼԻ +** Դարձեալ՝ նախանձո՛տ է և *նախանձելի*. այսինքն նախանձո՛տ է իբր զսիրեցօղ. և *նախանձելի* իբր զսիրելի. զի շարժէ՛ զմեզ ի սէր իւր: - 128

**ՆԱԽԱՆՁԻՄ +** Նոյնպէս *նախանձիլն*. զի ո՛չէ և ասի: - 128. Եւ ոմանք ասեն թէ՝ ընդ պատիւ մարդոյն *նախանձեցաւ* և ի խորհուրդ եմուտ թէ սորա կատարումն ի՞նչ լինի, և ո՛չ կարաց հասու լինիլ: - 147. Եւ զի *նախանձեցաւ* ընդ մարդոյն, ի լանջս և յորովայնս սողայ: - 219. Կամ զի աղքատասէ՛ր էր դաւիթ և բազումք շրջէին ընդ նմա, վասն այն յեփուսացիքն *նախանձեցան*: - 431. Ասեմք թէ՝ ոչ ինչ է այս նախատինք մեզ. զի հեթանոսք յետոյ հաւատացին և լաւագոյնք են քան զիրէայս. և վերջին մշակքն ընդ առաջինսն առին զվարձս. և որք *նախանձեցան* կորեան: - 549. Զի սատանայ հպարտացաւ յերկինս և *նախանձեցաւ* ընդ մարդոյն. իսկ այլքն ամենայն մարմնականք են ասեն: - 559. Նախանձն է *նախանձիլ* ընդ այլոց բարեբախտութիւն: - 569. Սուգն զնախանձն. զի որ սգայ վասն մեղաց այլոց, ո՛չ *նախանձի* ընդ նոսա: - 583. Նոյնպէս և երկրորդն որ ասէ ոչ *նախանձիլ* ընդ չարս որ են անզգամք. և զի ո՛չ գոյր նոցա աստ փոխարէն մեղաց. վասն այն հրովն յաւիտենից այրեսցէ զնոսա: - 629

**ՆԱԽԱՆՁՈՏ +** Դարձեալ՝ *նախանձո՛տ* է և նախանձելի. այսինքն *նախանձո՛տ* է իբր զսիրեցօղ. և նախանձելի իբր զսիրելի. զի շարժէ՛ զմեզ ի սէր իւր: - 128. Իսկ «ես *նախանձոտ*, զփառս իմ այլում ո՛չ կամիմ». փառք իւր կոչէ զմարդն: - 128. Երկայն և բարակ՝ *նախանձո՛տ* է: - 246. Բոլորն՝ *նախանձո՛տ* է: - 246. Կարճ կլափն՝ *նախանձո՛տ* է և ո՛չ հեզ. զի նման է օձի: - 247. Եւ որպէս օձ յայգւոյ ծաղկէն մեռանի, նոյնպէս *նախանձոտն* սատակի ի տեսանել զբարի ընկերին: - 569

**ՆԱԽԱՇԱՒԻՂ +** *Նախաշաւի՛ղ* է ծաղիկն պտղոյն: - 212

**ՆԱԽԱՊԱՏԻՒ +** Ի սեռս էականութեան գոյացութիւն *նախապատիւ* է քան զպատահումն. և զի *նախապատիւ* է աստուած ամենայն գոյից, վասն որոյ գոյացութիւն է և ո՛չ պատահումն: - 170. Եւ այն զի *նախապատիւ* է պատուականն քան զանարգն: - 662. Իսկ որ ասեն՝ *նախապատիւ* է պատուականն քան զանարգն: - 663

**ՆԱԽԱՊԱՏՄԵՄ +** Մարգարէք *նախապատմեցին:* - 456

**ՆԱԽԱՊԱՏՈՒԵՄ +** Երկրորդ՝ զի թէ արական մասն երևի՝ ոչ ինչ *նախապատուի* կամ էգն անարգի. զի մասունք անդամոց անդ ո՛չ է զազրալի: - 726

**ՆԱԽԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ +** Եւ *նախապատուութիւնս* այս յա՛յտ է յերից: - 642

**ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ** - Վեցերորդ՝ նախ ցօղն կարապետ իջանէր. և ի մեզ շնորհքն *նախապատրաստութեան* ճաշակմանն: - 339. Եւ գիտացիր, զի գ է *նախապատրաստութիւն* աղօթիցն...: - 620. Վեցերորդ՝ *զնախապատրաստութիւն* փառացն որ ասէ «որ պատրաստեալ է ձեզ»: - 740

**ՆԱԽԱՊԵՏՈՒԹԻՒՆ +** Դարձեալ, ի յառաջինսն կառավարէ՛ աստուած իբր *նախապետութիւն:* - 136

**ՆԱԽԱՍԱՀՄԱՆ** - նոյնպէս ողորմութեան և արդարութեան է միշտ բարերարելն և պատժելն ըստ *նախասահման* գիտութեան նորին նախքան զլինիլն էիցս ըստ առաքելոյ: - 779

**ՆԱԽԱՍԱՀՄԱՆԵՄ +** Իսկ սկիզբն և կատարումն ի մեզ, որպէս նախածանօթ ընտրեալքն յառաջ քան զլինիլն աշխարհի. որ այժմ բարի գործովք կատարեսցին ըստ *նախասահմանելոյն* իւրեանց: - 18. Եւ գիտելի է, զի յարացուցիս և նախասահմանութեանս՝ արարողական պատճառ է աստուած. և նիւթական պատճառ իրն այն որ է *նախասահմանի*. և տեսական պատճառ է՛ կարգն. զի նախ տըւեալ լինի շնորհքն աստ. եւ ապա փառքն ի հանդերձեալն. և կատարողական պատճառ՝ զի լինիցիմք սուրբք և անբիծք: - 112

**ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒԹԻՒՆ +** Եւ գիտելի է այս, եթէ *նախասահմանութիւնն* աստուծոյ առնէր հարկ գործոց մարդկան, չարի և բարւոյ, լինէր բազում անպատշաճութիւն որ վասն բախտին ասացեալ եղև. զորև աստ կարգեսցուք: - 20. Երբեմն *նախասահմանութիւն* ըստ պօղոսի՝ «սահմանելոյ որդոյն աստուծոյ». և թէ՝ նախ սահմանեաց զմեզ աստուած ի կամս իւր իբր անփոփոխելի սահմանադրութիւն: - 112. Նոյն է և գիր դպրութիւն կենաց. իբր անջնջելի դարձումն ի *նախասահմանութիւնն*: - 112. Եւ գիտելի է, զի յարացուցիս և *նախասահմանութեանս*՝ արարողական պատճառ է աստուած. և նիւթական պատճառ իրն այն որ է նախասահմանի. և տեսական պատճառ է՛ կարգն. զի նախ տըւեալ լինի շնորհքն աստ. եւ ապա փառքն ի հանդերձեալն. և կատարողական պատճառ՝ զի լինիցիմք սուրբք և անբիծք: - 112

**ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒՄՆ** - Եւ միւսն է յաւիտենական *նախասահմանումն* աստուծոյ. յորմէ ո՛չ ոք կարէ ջնջիլ: - 18. Այսպէս է *նախասահմանումն* աստուծոյ և յառաջընտրութիւնն. և ո՛չ առնէ հարկ իվր ումեք: - 20

**ՆԱԽԱՍԱՑԵԱԼ +** Այսպէս և զգայականն և տնկականն մասունք են բանականին՝ նախ եդեալ ի մարմինն. և յորժամ բանականն հեղի ի մարմինն, յայնժամ և սոքա հեղին ընդ նմա. զի զօրութիւնք և

մասունք են նորա ըստ օրինակի *նախասացեալ* երրորդ թուլոյն: - 259-260. Ա՛րդ՝ ի *նախասացելոցս* հաւաքեա՛. զի լինիցի անդ Ձերմութիւն հրոյ: - 751

**ՆԱԽԱՍԵՌ** - Գոյացութիւն որ սկիզբն է ամենեցուն և *նախասեռ*. և ի նմանէ զուգաբաժանեալ մարմինն. և շնչաւորն. և զգայունն. և կենդանին. և բանաւորն. և մարդն. ո՞չ ապաքէն բնութիւն են սոքա այլևայլ. և ժողովեալ գոյացուցանեն զմի անհատն պետրոս անշփոթ միութեամբ: - 176

**ՆԱԽԱՍԻՐԵԼ** - Տասներորդ՝ և որպէս իսահակ *նախասիրէր* զանդրանիկն որդի, բայց յետոյ ետ զօրհնութիւնն նորին՝ որդւոյն կրսերոյ: - 305

**ՆԱԽԱՍՏԵՂԾ +** Եւ զի մերկացոյց *զնախաստեղծքն* ի փառաց, զխորխ իւր մերկանայ: - 219. **Չորրորդ՝ օրհնեաց *զնախաստեղծքն* ի լերինն ադինայ և ասէ «աճեցէք և բազմացարո՛ւք և լցէ՛ք զերկիր»**: - 319. Վեցերորդ՝ զի լիցի և պատկեր քրիստոսի որ անմեղութեամբ դատապարտեցաւ, և յառաջին փառսն դարձոյց *զնախաստեղծն* ծննդօք իւրովք: - 325. Երկրորդ՝ դարձեալ նոյն ինքն սատանա՛յ է օձն. որ փոխեցաւ ի բարեկամի ձև. և պատրեաց *զնախաստեղծսն*: - 332. Եւ ջրովն շիջուցանէ զհուրն *նախաստեղծ* կողին: - 423. Ասեմք եթէ յետ յղացման բանին յարգանդի կուսին օրհնօք և ոչ օրինօք բնութեան, ժուժկալեալ ամսոց ըննից և աւուրց հնգից, ըստ հասարակաց ասեմ և անդրանկաց. ըստ հնգից յաւելեալ թւոց *նախաստեղծին* նախարարչութեան աւուրց: - 469. Երրորդ՝ զի արուն զօրաւո՛ր է քան զէգն. և *նախաստեղծքն* գլորեալ էին վասն հեշտութեան իւրեանց. պա՛րտ էր արու լինիլ և կանգնել զնոսա: - 480. Բայց անյա՛յտ էր գրեալն. մինչ խաչիւ և չարչարանօք զգիրն պատրանաց *նախաստեղծիցն* պատառեաց, և ապա՛ զայս գիր ետ յայտնապէս: - 481. Այլ զանազանութիւն գոյ ի մէջ մահու *նախաստեղծ* մարդոյն, և մահու տն մերոյ քրիստոսի, և մահու հասարակ մարդկայինս ազգի: - 495. Եւ այսու *նախաստեղծքն* մահու մեռան. և վասն այս մեղացւէ որ մեք ևս մեռանիմք...: - 570. Որպէս *նախաստեղծիցն* ի ճաշակմանէն: - 621. Իսկ պահքն սուգ է և ապաշխարութիւն վասն յանցանաց *նախաստեղծիցն*...: - 650. Այլ և որպէս *նախաստեղծքն* ի դրախտին ո՛չ ամաչէին. նոյնպէս և սուրբք ի յարութեանն. զի ծածկեալ են ի ներքուստ հոգւոյն լուսաւորութեամբն, և արտաքուստ պսակաւն և փառօք: - 726

**ՆԱԽԱՍՏԵՂԾՈՒԱԾ** - Դարձեալ, ի *նախաստեղծուածս*՝ մարդն միա՛յն էր՝ և կենդանիք բազում: - 551

**ՆԱԽԱՍՐԲԵԱԼ +** Իսկ յոյնք, Առաջին՝ *նախասրբեալ* պատարագն: - 553

**ՆԽԱՏ +** Չորրորդ՝ զի մի՛ *նախատ* լիցի ծնողացն: - 433

**ՆԽԱՏԱՆՔ +** Եւ ընդ անօրէնս համարեցաւ. որ առաւել *նախատանաց* էր: - 94. Եւ մաստութիւնն է նոյն ընդ համբերութեանն. զի համբերութիւնն է տևումն մարմնաւոր նեղութեանց. իսկ մաստնութիւնն է տևումն *նախատանաց*: - 584

**ՆԽԱՏԵՄ +** Չորրորդ՝ զի և բանբասօղքն պատիժս կրեսցեն վասն *նախատելոյն* զնա: - 325. Նախ՝ զի ունէր զամենայն առաքինութիւնս և համբերեաց *նախատողացն*. վասն որոյ խօսեցաւ աստուած և մխիթարեաց զնա: - 325. Եօթներորդ՝ յոր ի բարեկամացն *նախատեալ*. և տէր մեր յազգէ իւրմէ չարչարեալ և չարախօսեալ: - 327. Եւ ո՛չ ետ պատասխանի սիմէի որ *նախատէրն* զնա՛: - 413. Կամ զի օրէնքն գրեալ էր՝ կուրի և կաղի մի՛ դնել գայթակղութիւն, ասէին *նախատելով* թէ՝ որպէս ո՛չ կարես կոխել զդոսա, նոյնպէս ո՛չ կարես առնուլ զամուրն յերուսայ: - 431. Նա՛խ՝ զի մեզ օրինակ լիցի չտալ պատասխանի որք *նախատեն* զմեզ...: - 433. Հինգերորդ՝ բանիւ և արդեամբ սպան զուրիա, և նոյնպէս վճարի. բանիւ *նախատէ* սիմէի, և արդեամբ աքիսողոմ: - 433. Եւ այսպէս բազում ունելով իւրաքանչիւր ոք սահմանս առանձին, միայն հայք *նախատեալ* լինին որպէս ո՛չ ունել միաբանութիւն ընդ այլս ի քրիստոնէից. այլ առանձին միայնաբար ըսթանալ. և այսու որպէս հակառակ եպերեալ: - 553. Տե՛ս զի բազում ասէ զվարձս բամբասանաց որչափ *նախատիցին*: - 586. ապտակեալ. և *նախատեալ*. և բևեռեալ. և լուսաւորացն խաւարեալ. և այլն. զոր մեք ի վերայ մեռելոյն նշանակեմք: - 670-671

**ՆԽԱՏԵՍ +** Իսկ «զեսաւն ատել և զյակոբ սիրելն» է՛ որպէս ցուցաւ ի վերոյ. զի զընտիրսն սիրէ և զխոտանսն անարգէ՛ *նախատես* ճանաչմամբն: - 20. Եւ ի կատարիլ մարմնոյն՝ հեղու ի նա զհոգի բանական ըստ *նախատես* գաղափարի այնորիկ որ էր ի միտս արարչին յառաջ քան զլինիլն աշխարհի: - 258. Այլ է՛ նա՛խ էացեալ ի բանն աստուծոյ, և համանգամայն ընդ մարմնոյն երևեալ ի պարգևաց այնմ *նախատես* բանի: - 260. Դարձեալ ասեն թէ՝ հանճարովն եմք *նախատեսք*. այլ իմաստութեամբն հասունք: - 270. Քսաներորդ՝ զի *նախատե՛ս* է: - 272. Նախ խոհեմութիւն սրտին. և այս ի կարգաւորել զներկայն, ի միտ ածել զանցեալն, և *նախատես* լինիլ ապագային...: - 580. Հանճարովն *նախատեսք*: - 583

**ՆԱԽԱՏԵՍԻԼ** - Երկրորդ՝ զի յետոյ ջնջեցա՛ւ *նախատեսիլն:* - 164

**ՆԱԽԱՏԵՍՈՒԹԻՒՆ +** Երկրորդ՝ ասեն թէ աստուած նախքան զլինիլն մեր՝ ի *նախատեսութիւնն* իւր ետես զամենայն լինելոցն այնպէս. զչարն չար, և զբարին բարի: - 15. Նախ՝ թէպէտ աստուած տեսանէ զամենայն *նախատեսութեամբ* և ո՛չ ինչէ արտաքոյ տեսութեանն աստուծոյ, սակայն տեսանէ զոմանս ի հարկէ՝ և զոմանս ի ներընդունակութիւնէ լինիլ: - 15. Նախ՝ թէպէտ աստուած տեսանէ զամենայն *նախատեսութեամբ* և ո՛չ ինչէ արտաքոյ տեսութեանն աստուծոյ, սակայն տեսանէ զոմանս ի հարկէ՝ և զոմանս ի ներընդունակութիւնէ լինիլ: - 15. Իսկ *նախատեսութիւնն* աստուծոյ է՝ անսկիզբն յաւիտենիւ: - 164. Իսկ առ աստուած անջնջելի՛ է գիր *նախատեսութեանն*: - 164. Այլ *նախատեսութիւնն* աստուծոյ զամենայն գիտէ ...: - 164. Իսկ առ աստուած *նախատեսութիւնն* անշա՛րժ է և անզղջական: - 164. Եօթներորդ՝ զի ուսմամբ է *նախատեսութիւնն* որ առ մեզ: - 164. Իսկ *նախատեսութիւնն* աստուծոյ միով զբազումս տեսանէ, և միով զմի: - 164. Իններորդ՝ զի *նախատեսութիւն* մեր ի ներքուստ զարտաքոյսն՝ և արտաքուստ զներքոյսն ճանաչէ: - 164. Աղաչեմ զոր յիշեցաւ ի վերոյ բացայայտել, եթէ ի *նախատեսութիւնն* աստուծոյ աշխարի զօրութեամբ ո՛չ ասի: - 167. Նախ՝ զի պարզ ներգործութիւն է աստուած. զի եթէ գոյ ինչ զօրութեամբ *նախատեսութիւնն* աստուծոյ՝ ապա բաղադրեա՛լ է և ոչ պարզ ներգործութիւն: - 168. Ապա ուրեմն *նախատեսութիւնն* աստուծոյ ո՛չ է զօրութեամբ. այլ ներգործութեամբ: - 168. Իսկ առ *նախատեսութիւն* արարչին՝ միշտ ներգործութեամբ: - 169. Եւ մասունք են խոհեմութեան գ. այսինքն հանճարեղութիւն, *նախատեսութիւն*, և յիշողութիւն: - 580. Հանճարեղութիւն է նկատել զայնս որ են. և *Նախատեսութիւն* է տեսանել զլինելոցն. այլ Յիշողութիւնն է վերստին յիշել զեղեալսն: - 580

**ՆԱԽԱՏԻՆՔ +** Արդ՝ եթէ ադամ ոչ էր կոչեալ՝ այլ կրտսեր թոռունքն, *նախատինք* էր նախահօրն: - 219-220. Դարձեալ ի հողոյ ստեղծ ի *նախատինս* սատանայի. զի յամօթ լիցի յորժամ տկարս այս և կաւեղէնս ի փառսն մտանէր յորմէ նա՛ որ փառաւորն էր անկաւ: - 229. Վասն երկրորդին հակառակէր ընդ նոսա, զի մի՛ սուտ լիցի վկայութիւն աստուծոյ ի վերայ նորա. զի և մեք ուսցուք՝ վասն վկայութեանն աստուծոյ այնչափ *նախատինս* յանձն առնուլ և ո՛չ ուրանալ. որպէս վկայից դասքն նահատակեցան: - 324. Երրորդ՝ ի *նախատինս* զօրաց իւրոց. զի հովիւ մանուկն և որդի յեսսեայ սպան զգողիաթ. և նոքա իշխանք և մեծամեծք ո՛չ կարացին: - 427. Երկրորդ՝ զի ճշմարիտ էր *նախատինք*. զի սպան զուրիա: - 433. Հինգերորդ՝ ածաւ առ հերովդէս. և ի հրէից յոյժ չարախօսեալ. և սպիտակ հանդերձ զգեցեալ առ ի *նախատինս:* - 492. Ասեմք թէ՝ ոչ ինչ է այս *նախատինք* մեզ. զի հեթանոսք յետոյ հաւատացին և լաւագոյնք են քան զհրէայս. և վերջին մշակքն ընդ առաջինսն առին զվարձս. և որք նախանձեցան կորեան: - 549. Զի ասեն վարդապետք թէ որպիսի իւրաքանչիւր ոք ծածկեալ իցէ յինքեան. փո՛րձ է տուեալ *նախատինքն:* - 586. Զի խաչն պսակ և փառք է քրիստոսի և պարծանք քրիստոնէից և ո՛չ *նախատինք*...: - 632. Տեսիլ դիւաց: Աղաղակ: *Նախատինք:* Պապակումն ծարաւոյ: - 751

**ՆԱԽԱՏԻՉ +** Երեքտասաներորդ, եհար զգողիաթ *զնախատիչն* իսրայելի. և տէրն զսատանայ *նախատիչ* մարդկան ազգի: - 436. Այլ և դաւիթ անյիշաչար եղև սիմէի *նախատչի*. և տէրն խաչողաց իւրոց աղօթէր: - 438. Չորեքտասաներորդ՝ զյովաբ սպանօղ և զսիմէի *նախատիչ* սպան սողոմոն: - 441

**ՆԱԽԱՏԻՊ +** Երրորդ՝ բանն պատկեր է հօր. և մարդն պատկեր բանին. պատկերն զպատկերն էառ կամ *նախատիպն* զպատկերն: - 107. Նախ՝ հայելով ի կերպարանս և ի նմանութիւնս որ է՛ կարգաւորութիւն արարածոց. և սոքօք ի յարացոյցն սոցա ելանել, և ի նմանէ դարձեալ ի *նախատիպ* յարացուցին ելանել. և այնպէս տեսանել թէ է՛ աստուած պատճառ ամենայնի: - 119. Չորրորդ՝ հոգին փոխանցապէս իմանայ և յարացուցի. իսկ հրեշտակն *զնախատիպն* առանց յարացուցի: - 141. Իսկ ուղիղ շարժի՝ յորժամ ի ձեռն զգայութեանց յարացուցի և օրինակաւ հպիմք ի *նախատիպն* աստուած: - 142. Նախ՝ զի հակառա՛կ է աստուծոյ, և մարդն պատկեր է աստուծոյ. յորժամ տկարանայ ի *նախատիպն* ընդ պատկերն հակառակի: - 146. Ապա ուրեմն գործ նախախնամութեան է զիւրաքանչիւր ոգի յառաջ ածել. և *նախատպին* պատկերակից առնել: - 258. Գիտելի՛ է, զի յերից է պատկերին գեղեցկութիւն որով նմանի ի *նախատիպն:* - 271. Բարձրամեծարն գործոյ ներմարդութեան բանին աստուծոյ՝ բազում եղեն *նախատիպք* խորհրդոյ. որպէս մովսէս, յովսէփ, իսահակ: - 417

**ՆԱԽԱՏՕՆԱԿ +** Այլ զշաբաթի երեկոյն *նախատօնակ* առնեմք յարութեանն քրիստոսի: - 508. Եւ բոլորն **ԺԵ** ժամու յառաջ ի միւս աւուրն՝ սկսեալ *նախատօնակ* առնեմք. և զայս յամենայն ուրեք: - 509. Նմանապէս և աստ յայսմ աւուր շաբաթու որ ի կիրակէ յարութեան տօնեմք, այժմ յինն ժամուն ի վեր

*նախատօնակ* առնեմք յարութեանն քրիստոսի. և այս վասն բազում պատճառի: - 509. Յիսուներորդ, Բուրվառ. և գրակալ. և *նախատօնակն*: - 527. Վասն զի սոքա պատարագ մատուցանեն ի *նախատօնակ* ծննդեանն և յարութեանն. և լատինք ո՛չ: - 554. Զի՞նչ է *նախատօնակն* որ յերեկոյն սուրբ զգեստիւ խաչիւ և աւետարանաւ և լոյս վառեալ համաձայն պաշտեմք: - 646. Ա՛րդ՝ ի տօնս տէրունականս *նախատօնական* առնեմք յերեկոյս. և ի վաղիւն զկատարեալ տօնն: - 646. Իսկ հասարակ սրբոցն *նախատօնակ* ո՛չ է այսօր: - 647. Իսկ գլխաւորագոյն սրբոցն, որպէս յաւագ տօներն և յայլս, որ առնեմք *նախատօնակ* որպէս ի տօնս տէրունականս: - 647

**ՆԱԽԱՐԱՐՉՈՒԹԻՒՆ** - Ասեմք եթէ յետ յղացման բանին յարգանդի կուսին օրինօք և ոչ օրինօք բնութեան, ժուժկալեալ ամսոց ըննից և աւուրց հնգից, ըստ հասարակաց ասեմ և անդրանկաց. ըստ հնգից յաւելեալ թւոց նախաստեղծին *նախարարչութեան* աւուրց: - 469

**ՆԱԽԴԻՐ +** Երրորդ՝ զբանտարգել լինիլն. որ ցուցանէ *նախդիրն:* - 740

**ՆԱԽԵՐԳԱՆ +** Առաջին, *Նախերգան:* - 454. Եւ զայսոսիկ գտցես ի սկիզբն *նախերգանի* գրոյս սակաւուք: - 537

**ՆԱԽԸՆԹԱՑ +** Տասներորդ՝ *նախընթաց* և յետամնա՛ց է սպիտակ լոյսն. որպէս յառաւօտս և յերեկոյս տեսանի: - 125. Տապանակն է՛ տէր մեր յիսուս քրիստոս. և *նախընթա՛ց* եղև մեզ ասելով՝ «երթամ և պատրաստեմ ձեզ տեղի»: - 380. Երրորդ՝ ահագին երևումն դատաւորին. և ձայն փողոյն, և հուր *նախընթաց*: - 393. *Նախընթացք* կարապետեցին: - 456. *Նախընթաց*, համընթաց, վերջընթաց: - 731. Զի *նախընթաց* հուրն գայ յարևելից և վառէ՛ զերկիր և զտարերս, և կանգնի յարևմուտս: - 731

**ՆԱԽԸՆԾԱՅ +** Չորրորդ՝ աբգարու թագաւորին *նախընծայ* ի քրիստոս հաւատալն: - 555

**ՆԱԽԸՆՏՐԵԼ** - Այլ տեսութիւնն աստուծոյ զոչ էսն տեսանէ և *նախընտրէ* ...: - 164

**ՆԱԽԸՆՏՐՈՒԹԻՒՆ** - Եւ սոքա որ երևինս մեզ կրտսեր և վերջին, փոխեին և լինէին նախկին և առաջին ըստ *նախընտրութեանն* աստուծոյ: - 310

**ՆԱԽԻՐ +** Զոր օրինակ նշան դրոշմի կայ ի մէջ քո՝ և անասնոյն՝ և տանն. զի ելեալ ի տանէ երթայ խառնի ի հասարակ *նախիրն*...: - 719

**ՆԱԽԿԻՆ +** Եւ եթէ է մի զկնի միոյն, յայտ ուրեմն է թէ *նախկինն* է սկիզբն: - 21. Հինգերորդ՝ զի որ եղեր *նախկին* զպակասութիւնն, բարձեր զէութիւնն հօր և որդւոյ: - 38. Երրորդ՝ զի է՛ հնար առնուլ ի վերայ մարմնական իմաստութեանց՝ և արհեստից հանճարաց՝ և բնականին ներգործութեանց ի բնութիւն իրին յառաջ ածելով զէութիւնն. թէ ասեմք զիմաստութիւնս զայս ստեղծեալ *նախկին*. որ ասացաւ «ամենայն գործոց»: - 40. Երկրորդ՝ բանն աստուած *նախկին* է և սկիզբն արարածոց. զի նովաւ եղեն ամենայնքն: - 107. Ա՛րդ՝ *նախկինն* զյետինն էառ՝ և արար առաջին: - 107. Այլ և այսպիսի ե ասեն զեղանակ *նախկնից*. այսինքն՝ ժամանակաւ. և բնութեամբ. և դաստիւ. և պատւով. և պատճառաւ: - 109. Հինգերորդ՝ բազմանայ ի *նախկինս* և ի սկզբնաւորս. և բազմապատկի յաճանցելս ի նոցանէ և յառաջ եկեալս: - 110. Երկրորդ զանազանութիւն՝ զի *նախկին* սկիզբն համանգամա՛յն է ի միտքն. և երկրորդ սկիզբն նա՛խ է՝ և կատարումն յետոյ: - 163. Արդ այս չափ համեմատութիւն է ի *նախկին* սկիզբն. նախագաղափար տեսութեանն աստուծոյ. և ո՛չ յերկրորդ սկիզբն ի գործ արարչութեան: - 164. Յաւատոյն յատուկ է՝ զի մի՛ անգամ է, և կնի՛ք է ի հոգին *նախկին*: - 166. Նախ՝ զի գոյն *նախկին* է քան զպատահումն. և *նախկին* է աստուած ամենայնի: - 171. Եւ թէ ասիցէ ոք, երևի ապա թէ հոգին ինքն առ ինքն *նախկին* է և յետոյ եթէ մի է հոգի: - 260. Վեցերորդ՝ իսահակ *նախկին* էր կատարումն ուխտի **ը** օրեայ նշանին: - 305. Երկրորդ՝ զի *նախկին* զօրութիւն է ծնողաց: - 309. Եւ սոքա որ երևինս մեզ կրտսեր և վերջին, փոխեին և լինէին *նախկին* և առաջին ըստ նախընտրութեանն աստուծոյ: - 310. Ութերորդ՝ *նախկին* է ժամանակս, և երկրորդ հանդերձեալն. և կեանք ժամանակիս խոտեալ է և անարգ. և հանդերձեալն պատուական է և ընտիր: - 310. Ապա յա՛յտ է՝ զի աստուած ինքն ինքեան *նախկին* և վերջին՝ հաւասար կամ անհաւասար ո՛չ ասի. վասն այն իւր անունն ո՛չ դնէ: - 312. Նա՛խ՝ զի չարչարանքն քրիստոսի պատճառ եղև պարգևաց սուրբ հոգւոյն, պարտ էր *նախկին* գոլ. որպէս ամենայն պատճառ նա՛խ է քան զպատճառելին: - 521. Այս քան վասն *նախկին* սպասաւորաց եկեղեցւոյ. այսինքն Առաքելոց Մարգարէից և Վարդապետաց: - 537. Այլ սոքա ամենայնքն *նախկին* և պատւականք են...: - 541. Նա՛խ՝ վասն դաւանութեանն *նախկին*: - 546. Նա՛խ՝ ի ժամանակս. զի **գ**, և **է**, և ամիսն, և տարին՝ լինի **դ**. և **գ** օրն *նախկին*, որ է՛ եօթն: - 683

**ՆԱԽԿՆԱԲԱՐ +** Ի յասացելոցս յառաջագոյն այս ինչ հաւաքի, եթէ ունակութիւնք մարդկային

առաքինութեանց *նախկնաբար* պատրաստե՛ն ի վարժումն գործնական կենացն. իսկ ունակութիւնք պարգւացն պատրաստե՛ն ի վարժումն տեսական կենացն: - 586

**ՆԱԽՆԻ +** Զի կամ լսիցեն ի *նախնեացն* թէ ի սկզբանէ՛ արար աստուած զերկինս և զերկիր: - 25. Այս է զի ի լուր պատմութեանց *նախնեացն*՝ կամ ի կարգէ՛ իրաց՝ կամ ի տեսս զգալեաց՝ ի ծանօթս գամք աստուծոյն ճշմարտի. յորմէ հաւատն լուսափայլեսցի: - 25. Սակայն աշակերտացն է ուղղութեան՝ ո՛չ յանձնէ խօսիլ. այլ *նախնեացն* սրբոց հետևիլ և նոքօք ուղղել: - 93. Երրորդ՝ այսպէս մեկնեն, եթէ հին աւուրց *զնախնի* ժամանակս նշանակէ. և մանուկն *զնախնի* թիւն. զի միակն սկիզբն է ամենայն թըւոց. և որ մերձ է միակին՝ սկզբնապետագո՛յն է քան զհեռագոյնն: - 115. Այլ և *զնախնիքն* մեր պատրեաց և չարացոյց: - 148. Ամսոցդ անւանք՝ են որ ի *նախնեացն* անուանէ. և են որ յեղանակացդ. և են որ ի դիցն: - 200. Իսկ հռոմայեցւոցն ի վերայ *նախնեա՛ցն* է: - 201. Յունվարի. այս յովանն է *նախնին* իւրեանց: - 201. Իսկ հինգ օրեայ անդրանկանն յետոյ լինիլ՝ բերէ՛ զնմանութիւն *նախնի* մարդոյն. որ յետ **ե** աւուր ստեղծաւ: - 264. Ասեմք եթէ՝ զոր ինչ ի յարութեանն աւուր լինելոց է սրբոցն, զսկիզբն անդանօր սերմանեաց ի *նախնի* մարդն ադամ. զի թէ յիւրում ժամանակին կերեալ էին ի կենաց պտղոյն, լինէին կատարեալ անմահք. և փոխեին յարքայութիւնն: - 282. Եւ *նախնին* կրօնաւորաց մեծն անտոն. և այլք բազումք ըստ տեառն հրամանի, թէ «որ արասցէ և ուսուսցէ, նա մեծ կոչեսցի»: - 288. Այլ ադամ յերեկո՛յն եւ ի դրախտէն. և ո՛չ կատարեաց զօրն բոլոր. վասն այն *նախնիքն* ո՛չ կատարեն զհազար ամն բոլոր: - 290. Իսկ ի *նախնիքն* տղայ և առոյգ էր բնութիւնս՝ վասն որոյ յերկար ապրէին: - 291. Զի **գ** են եղանակք անուանց. այսինքն բնութենական որ ի *նախնւոյն* կոչի: - 312. Ա՛րդ՝ մեք ունիմք զօրինակ կրկին պատարագաց. *զնախնեացն* և զճշմարտութիւնն քրիստոսի: - 362. Ակնառութիւն ո՛չ է աստուծոյ. *զնախնիքն* սիրեաց աստուած, զի արժանիք էին. և եցոյց նոցա զինքն. և զխոստումն աւետեաց ուխտեաց նոցա մարդ լինիլ ի զաւակէ նոցա յետոյ: - 398. Երրորդ երիցունք են անդրանիկքն և *նախնիքն* երանութեամբ: - 711. Յասարա՛կ է և բնութեան իր, զի ամենայն ինչ *նախնի* մարդոյն բնութեամբ է ի մեզ և հասարակ իր. և առ յանդիմանութիւն դժկամակ երևեցան *նախնիքն* մեր. ուստի պատճառեցին զմիմեանս: - 774. Զի անապական մարմնով եդաւ ի գերեզմանի. բառնալով զապականութիւն *նախնւոյն*. և իջանելով ի դժոխս՝ եբարձ զպատիժ նորին: - 776. Վասն որոյ կրկին է և պատիժն. զառաջինն ի *նախնւոյն* հասեալ. և ապա յետոյ յօր մի հաստատեալ ըստ առաքելոյ: - 777. Յանգո՛յն է այսմ և *նախնոյն* ադամայ: - 782. Այլ վարկանին ոմանք զթիւ կազմութեան աւուրց պակաս գոլոյ *նախնւոյն* մարդոյ. զորոյ զտիպ յինքն նկարելով և այժմ անդրանիկն ծնունդ՝ յապաղելով գայ աշխարհ: - 785

***Ի ՆԱԽՆՈՒՄՆ*** - Եւ այս է **ե** զատիկն *ի նախնումն*: - 524

**ՆԱԽՕՐԻՆԱԿ** - Երբեմն նախագաղափար. իբր *նախօրինակ*. և մեք պատկեր և նմանութիւն նորին: - 112

**ՆԱՅԱՆՋ** (տեքստում նաև՝ **ՆԱՅԱՆՃ**) **+** Իսկ կէս մասն ի մեկ ամիսն՝ լինի կէս ժամ. և ի մեկ տարին **զ** ժամ. և ի **դ** տարին ժողովեալ՝ լինի օր մի **իդ** ժամ. և ա՛յն առնէ *զնահանճն*. և շարժէ՛ զտօնս և զեղանակս: - 190. Ոլոմպիաթն չորրորդ ամ է. զոր հայք *նահանջ* ասեն. և Ընդիքտիոնն **ժե** ամ է. որով հոռոմք վարին: - 191

**ՆԱՅԱՆՋԵՄ +** Զոր եկեալ տէրն անմեղ և անապական մարմնովն *նահանջեաց* զմեղս, և զարդարութիւն սփռեաց ի վերայ մարդկան. և դատապարտեաց զսատանայ իբր զդաւաճանօղ մարդկան և կոխան արար ի ներքոյ մարդկան: - 153

**ՆԱՅԱՊԵՏ +** Առաջինն խոհեմք և իմաստունք բնականապէս. որպէս *նահապետքն* առաջինք. աբրահամ. իսահակ. յակոբ. յոբ. կուռնէլիոս. և այլքն: - 269. Երրորդ՝ Վասն կենաց *նահապետացն* և կենաց մեր՝ չափեալ թուով: - 283. Վասն է՞ր *նահապետքն* ի **ռ** ամն ո՛չ հասին. այլ **թճ**, աւելի և կամ պակաս ապրեցան: - 290. Նոյնպէս և անդրանիկ ծնունդքն աշխարհի էին *նահապետքն* որ նախ քան զջուրն, տևէին ի կեանս այս **թճ** կամ աւելի ամ, և ապա ծնանեին ի հանդերձեալ կեանսն մահւամբ ելիւք: - 290. Վասն այն *նահապետքն* զհարիւրն պատկե՛ն որ է՛ ժամանակեան. և ի հազարն ո՛չ հասանին որ մշտնջենաւորն է: - 291. Եւ տէրն ո՛չ ի ձեռս հրեշտակաց սերօբէից և քերովբէից, և ո՛չ միջնորդութեամբ մարդկան ընտրելոց *նահապետաց* մարգարէից առաքելոց կամ մարտիրոսաց: - 302. Իններորդ՝ որպէս իսահակ *նահապետ* եղև երկուց իմն ազգաց: - 305. Տասներորդ՝ բազմամա՛յր եղև սառա ըստ *նահապետացն*. բազմամա՛յր է և կոյսն ըստ հաւատացելոցն. բազմամա՛յր է և եկեղեցի ըստ վերածնելոցն...: - 307. Երկրորդ՝ *նահապետք* և մարգարէք կոչին լերինք և բլուրք մշտնջենաւոր վարուք և անշարժ աստուածապաշտութեամբ: - 319. Ընդ որովք *նահապետք*, վարդապետք, և

թագաւորք: - 347. *Նահապետքն* ունէին կրկին պատարագ. բանաւոր և անբան. որպէս Աբէլ. Նոյ. Աբրահամ. և այլքն: - 362. Նա՛խ` նշանակէ՛ *զնահապետսն*. **իե** ազգ որ բնական օրինօք արդարացան նախ, և ապա՛ գրաւորն բնականաւն զօրացեալ արդարացոյց զնոսա: - 390. Զի **խ** վասն այն կատարեմք, որ առաջինքն զննջեցեալքն **խ** օր լային անմխիթար. որպէս *զնահապետն* յակոբ լացին **խ** օր: - 391. Եւ *նահապետք* յառաջ քան զօրէնս ի նմա: - 395. Նա՛խ` բանիւ ասաց. զի *նահապետք* բնական օրէնք ընկալան. աբրահամ. նոյ. և այլք: - 395. Վասն է՞ր մերձ ի վախճանն հարք և առաջնորդք օրհնեն զմնացորդս. որպէս մովսէս և յակոբ և այլ *նահապետք:* - 408. Երկրորդիւն մարդեղութիւնն քրիստոսի. զի խոստացեալ եղև այն մարգարէիւք և *նահապետօք*: - 458-459. Ա՛րդ` եթէ *նահապետքն* ամենայն որ **թճ** ամ կամ աւելի և պակաս ապրէին` ո՛չ ալևորէին, ապա և ո՛չ տէր մեր յիսուս քրիստոս: - 480. Զի ահա՛ *նահապետքն* բազում կանայս առին և հարճ ևս: - 613. Ա՛րդ` *նահապետքն* առնուին բազում կանայս վասն որդէծնութեան և լրման մարմնաւոր օրհնութեանն: - 613. Այլ և զերիս *նահապետսն* միջնորդ դնէ. այսինքն զաբրահամ զիսահակ և զյակոբ: - 637. Եւ վասն յերկարութեան կենաց, և վասն ո՛չ գիտելոյ զօր մահուն և զկատարածի, ասացեալ է ի վերն առ *նահապետսն* ի **դ** համարն: - 665. Եւ գիտելի է, զի հիմն և սկիզբն անդ եկեղեցւոյն եղև տէր մեր յիսուս քրիստոս յարուցեալ ի մեռելոց. և ընդ ինքեան հանեալ և վերացուցեալ զհոգիս սրբոց *նահապետաց* և մարգարէից: - 688. Եւ *նահապետն* յակոբ` օծ դարանակալ ի ճանապարհի: - 707. Վեցերորդ, զի **բժ**ան ցեղապետք էին հնոյն. և **բժ**ան առաքեալ նորոյս. զերկոցունց ազգաց *նահապետսն* դնելով զբոլոր թիւ ամենայն ազգին, նշանակէ՛: - 712. Երրորդ *զնահապետս* և սուրբս: - 713. Եւ թէ վասն է՞ր ոչ գիտեմք զկատարած աշխարհի և զկենաց մեր, գրեալ է ի վեր անդ առ *նահապետսն* ի **ժը** գլուխն ի **դ** համարն: - 718. Իններորդ, զի բնական օրինացն **գ** են վկայք. բանն և գիրն և աւետարանն. որ տուաւ *նահապետացն* և մարգարէիցն և առաքելոցն: - 742-743

**ՆԱՀԱՏԱԿ +** Վասն նոցա լայր անմխիթար սգով, զի ո՛չ եղև մայր *նահատակացն:* - 312. Սոքա նշանակեն *զնահատակսն* որք բազում վշտաց և փորձանաց համբերեցին: - 357. Արդ` ըստ կարգի` սերմանքն յառաջ են քան զարդիւնսն. և *նահատակքն* քան զպսակն. վասն որոյ որք աստ փորձ գտանին, անդ առցեն զպսակն կենաց: - 662-663

**ՆԱՀԱՏԱԿԱԴԻՐ +** Իններորդ` *նահատակադիրն* քրիստոս է փրկիչն ամենեցուն...: - 159

**ՆԱՀԱՏԱԿԻՄ +** Նաև որք ի ճգունս *նահատակին*. որպէս պօղոս` անտօն` և այլքն: - 50. Զի ա՛յս է ըստ մարգարէին` «զբերան իմ բացի` և առի զհոգի». զի առաւել *նահատակիլն* է՛ բանալ բերանոյն: - 50. Զի ամենայն ճշմարիտ դաւանօղքն զքրիստոս աստուած խոստովանեցան. և ի նոյնն *նահատակեցան*. և առ ճշմարտութիւնն քրիստոս յերկրէ յերկինս վերափոխեցան: - 101. Եւ ոմանք *նահատակին* և զերծանին: - 152. Իններորդ` նահատակադիրն քրիստոս է փրկիչն ամենեցուն. և ամենայն սուրբք զինուո՛րք նորա. պարտին և զինւորքն զօրավարին նմանիլ և *նահատակիլ*...: - 159. Երրորդ` զի ձեռամբ թշնամւոյն *նահատակեցան*. որպէս այլ ամենայն մարտիրոսք: - 322. Վասն երկրորդին հակառակէր ընդ նոսա, զի մի՛ սուտ լիցի վկայութիւն աստուծոյ ի վերայ նորա. զի և մեք ուսցուք` վասն վկայութեանն աստուծոյ այնչափ նախատինս յանձն առնուլ և ո՛չ ուրանալ. որպէս վկայից դասքն *նահատակեցան:* - 324. Որպէս այնոքիկ որք զօրացան այսու մահուամբ և զորդեգրութեանն ընկալան շնորհ և *նահատակեցան*, նոքա չարչարակից եղեն քրիստոսի, և փառացն հաղորդակիցք: - 497. Իսկ որ աւէ սուրբն ստեփաննոս «յիսուս կայ ընդ աջմէ աստուծոյ», կալն նշանակէ իբր պատերազմակից և յօգնականութիւն գալ որք *նահատակին* վասն անուան նորա: - 521. Եւ ապա՛ ընթերցմունք յիշատակ սրբոցն որք աստ *նահատակեցան* և անդ պսակեալք թագաւորե՛ն ընդ քրիստոսի: - 628

**ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ +** Երրորդ` զի կամեցաւ աստուած ո՛չ միայն ողորմութեամբ` այլև ըստ արդարութեան, վարձս *նահատակութեան* տացէ ըստ գործոցն համբերութեան: - 25. Եօթներորդ` զի չարչարանօքն իւրովք յուսադրեաց զմեզ, զի մի՛ յետ տկարութեանս և սակաւ չարչարանաց ի փորձողէն` կասեսցուք ի *նահատակութենէն*. այլ օրինակ դիցուք զչարչարիլն նորա մեզ և համբերեսցուք որպէս աւէ: - 43. Զի եթէ վարձ *նահատակութեան* են այդոքիկ, ո՞ւր իցեն շնորհք: - 94. Ութերորդ` թոյլ տալով սրբոց չարչարիլ` վասն պսակացն առաւելութեան է. զի կենցաղս այս հանդէ՛ս է *նահատակութեան*...: - 159. Եւ ա՛յս է խորհուրդն. զի որ քան են սուրբք ի յերկրի կենդանի, ո՛չ տօնեմք նոցա մինչ ի հանդէս *նահատակութեան* են...: - 647. վասն որոյ ի մէջ գիշերոյ ի վեր սկսանի տօն *նահատակութեան* նոցա: - 647

**ՆԱՅ +** Երրորդ առ այսոքիւք` միաւորութիւն անուանեմք և զխառնուածս երկուց *նայից* ըստ

զանազան որակութեանց. յորում ո՛չ ոք ի խառնեցելոցն զիւր ծայրագոյն որակութիւնն սեռաբար կարող է պահել. այլ շփոթեալ անկանի ի ծայրագոյն որակութենէն. որպէս զջուրց և զգինեացն խառնուած, և զմեղերաց: - 476

**ՆԱՅԱՍՕՆ, ՆԱՅԱՍՈՆ** - Ամինադաբ ամաց **խե**՝ ծնանի *զնայասօն*. և էր ասէ ամինադաբ սպարապետ զօրուն յուդայի ի հանել մովսէսի զորդիսն իսրայէլի յեգիպտոսէ: - 452. *Նայասօն* ամաց **խդ**՝ ծնաւ զսաղմոն: - 452. Եւ էր *նայասօն* իշխան բիւրաւորացն յուդայ յանապատին: - 452. Որպէս ահարօն ունէր զդուստրն ամինադաբայ՝ զքոյրն *նայասոնի* իշխանին յուդայ: - 461

**ՆԱՅԻՄ +** Եւ *զնայելոյն* պատճառն իրինոս մեկնէ թէ՝ զմարդոյն լինիլն ետես այնպէս փառաւոր և ի խորհուրդ եմուտ որպէս ասէ յոբ, «վասն իմ թողին զգործս իւրեանց»: - 147-148. Երրորդ՝ զի առնելն ի սկիզբն *նայի* ստեղծեալ իրին զի լինիցի. և նախախնամելն ի կատարածն զի մի՛ կորիցէ: - 158. Եօթներորդ՝ Տես աչացն հաստատէ՛ զլուրն. և ի վեր *նայիլն* հեշտանայ: - 227. Զինչ է յորժամ մարդ ի վեր *նայի* հեշտանայ աչքն. և յորժամ ի վայր՝ դժուարի: - 239. Զի աչաց լոյսն հուր է. և հուրն վերընթա՛ց է. վասն այն ի բնականսն *նայելով* հեշտանայ, և ի բռնութեամբն դժուարի և զարհուրի: - 239. Նմանապէս և այն. յորժամ զամենայն ինչ թողումք և ի լոյս ճրագին *նայիմք*. զի ազգական է իւր՝ զայն սիրէ և տեսանէ: - 239. Յաչաց *նայիլն*. ի ձեռաց շարժիլն. և յոտից գնալն երևի: - 250. Իններորդ՝ զի որպէս կողից երեսն որ ի փորն *նայի*՝ կոկ գոլով և մզղնատեսակ. իսկ մէջն փուչ և մրրախառն. այսպէս սէրն զոր ցուցանէ առ այրն, նօսր առ ի ցոյցս՝ և երեսս միայն ունի. իսկ ի սիրտն զմրուր դառնութեան: - 276. Եւ զի՞նչ է *նայիլ* և հայիլ: - 285. Ի խոստման աւետիսն ծե՛ր էր աբրահամ, և կինն ամուլ. զի մի՛ անյուսացին ի բնութիւնն *նայելով*. այլ ի բանն աստուծոյ որ ամենազօ՛ր է. վասն այն ասացաւ անթիւ լինիլ զաւակացն. և եղև այնպէս: - 377. Զորօրինակ՝ ճրագ ըզտեսօղս լուսաւորէ՛, և զտկարս խաւարէ՛. կամ որք ի ճրագ *նային* տեսանեն լոյս. և որք յետս դառնան խաւարին: - 403. **Զի՞նչ է *նայիլ* և հայիլ և տեսանելն: - 407.** *Նայիլն* վերուստ ի վա՛յր է. որպէս ասէ՝ «*նայեցարո՛ւք* երկինք»: - 407. Դարձեալ՝ *Նայիլ* և Յայիլ՝ է՛ հոգեկան. ըստ այնմ «հայեա՛ց յանձն քո»: - 407. Դարձեալ՝ *Նայիլն* և Յայիլն յատուկ տեսողութեանն է. իսկ Տեսանելն հասարակ զգայութեան: - 407. Ա՛րդ՝ ի դէմս փրկչին *նայելով* յիրէ՛ն է փրկիչն. իսկ ի դէմս փրկելոցն ի գործոյն: - 473. Եւ պա՛րտ է ի շրջակայքն *նայի*...: - 601. Զոր *նայեսցեն* երկինք և երկիր զանչափ ողորմութիւնն և արդարութիւնն առ մեզ: - 629. ...զնորահրաշն, *զնայեա՛* սիրովն...: - 637. Պռօսխումէն՝ յունա՛ց է. որ է՛ ի վե՛ր *նայեցէք*: - 645. իսկ թէ յայլ երիցն է, *նայիլ* պարտ է առ ինքն թէ ո՞ր յանցանք առաւել զօրացեալ է յինքն, զայն պակասեցուցանել. - 665. Այլ և վառ ունիլ զճրագ մտաց մերոց և *նայիլ* զտունս մտաց մերոց և *նայիլ* զտունս մեր...: - 730. Յոգաբարձութեամբ *նայիլ* ի լուծումն խնդրոյս աղաչեմ զիարազատդ մեր: - 776. Եւ թէ *նայիս* մտօք, թէպէտ առ մեզ փոփոխին տիւ և գիշեր. այլ նա միշտ լոյս և միշտ գիշեր կազմէ ...: - 779

**ՆԱՅՆ +** Իսկ թէ զոր ի զաւակէն դաւթի առանձին, զիա՞րդ եթէ ինքն շնորհօք է սրբեալ՝ սրբեսցէ տիրաբար զառ ի *նա՛յն* հաւատացեալս: - 69

**ՆԱՆԻՐ +** Եւ թէպէտ *զնանիր* խոտոյ ասեն ի նոյն ժամն բուսանիլ և կատարիլ և խամրիլ, ի նոյն թուոյս ոչ ելանէ ժամուք կամ մասամբք: - 263

**ՆԱՇԻՅ +** Յիսունք, Զի՞նչ նշանակէր *նաշիհն* և **դ դ** դորակ գինին՝ ի նորս: - 284. ...և Երկրորդ *նաշիհն* իւղով զանգեալ, ուր խառնէին աղ: - 356. Եւ զանգեալ *նաշիհն* զյիշատակ մարտիրոսացն՝ ուր խառնեմք աղ ի հատ պատարագին և իւղ անոյշ ի խորհուրդ նոցա: - 356-357. Եւ յանկենդանս, որպէս *նաշիհ*՝ իւղ և այլն յաղագս զգայարանաց սրբութեան: - 357. Եւ նախ ասեմք զանկենդանն որ կոչի զոհ. որ է՛ մասնաւոր նուէրք. որպէս *նաշիհ* և իւղ և խունկ: - 357. Եւ դարձեալ՝ *նաշիհն* է՛ նշանակ խոնարհ մարմնոյ մաքրութեան. և խունկն առաքինութեան հոգւոյ. և իւղն զուարթութեան մտաց: - 357. Իսկ պան բաղարջն է՛ *նաշիհն* զանգեալ իւղով. և որպէս բոկեղն եփեալ ի թոնրի: - 357. *Նաշիհ* և իւղ զանգեալ և ո՛չ եփեալ, նշանա՛կ է նոցա՝ որ ի փորձութիւնս մտեալ և փութով ելեալ ի ձեռն աղօթից...: - 357. Իսկ որ վասն մեղաց *նաշիհ* իւղ և խունկ ոչ դնէին. զի տրտմութիւն և խաւար է մեղքն, և գարշ հոտ գայ ի խղճմտանացն մինչև ապաշխարեսցէ: - 357. Ա՛յսոքիկ են պատարագք զոհիցն ի *նաշհոյ*: - 358. Յինգերորդ, վասն մեղաց պատարագ, ի մեռելոտի կամ ի պիղծ ինչ մերձեցեալ. ոչխարով և թռչնով և *նաշհով* առանց իւղոյ և խնկոյ քաւէին: - 358. Եօթներորդ՝ զոհ՝ պատարագն որ ի *նաշհոյ* և յիւղոյ որպէս ասացաւ ի վերոյ: - 358. Եւ զոհ *նաշհոյ*՝ յառաւօտն և յերեկոյն: - 359. Այլ և *նաշիհ*. զի հաց կենդանարար և հատ ցորենոյ կոչեցեալ. ճնշեալ չարչարանօք և որոշեալ ի թեփոյ մեղաց: - 361. Եւ վասն ուխտի,

խաչի, և եկեղեցւոյ: Պտուղս: Շօթ: *Նաշիհ*: Ձէթ: Մոմ: Խունկ. և այլն: - 362. Զի իրն փոխեցաւ ի ճշմարտութիւն, և խորհուրդն մնաց նոյն. որպէս ջուրն և խունկն. իւղն և *Նաշիհն*: - 369. *Նաշիհն*, և Իւղն, և Գինին, զի՞նչ նշանակեն: - 374. Այլ և *Նաշիհ* մարմին սուրբ. և գինի արիւնն. և իւղ օծումն աստուածութեանն. որպէս ասացաւ ի վերոյ: - 374. *Նաշիհն* ճգնութիւն մարմնոյս որոշեալ յաւելորդաց: - 374. Իսկ *Նաշիհն* ճգնաւորք և կուսանք. որք ի յերկանս ճգնութեան ճընշեն զմարմինս իւրեանց: - 374. Զի՞նչ է որ ըստ տօնից մեծութեանն առաւելոյր *Նաշիհն* և իւղն և գինին: - 375. Նոյնպէս և մեք ի հանդէս տօնից նուիրեմք *Նաշիհ* և գինի պատարագի. ձէթ՝ մոմ՝ խունկ՝ և զենումն մատաղի: - 375. Այլ հոգեպէս՝ *Նաշիհն* է՛ մարմնական նուէրքն. և կամ չարչարանք մարմնոյ որ ի տօնս ճգնիմք...: - 375. Իսկ չորրորդ դորակ գինւոյն և իւղոյն ընդ *Նաշիոյ* և գառինն, նշանակէ՛ զբանաւոր և զկենդանի պատարագս մեր: - 375. Նոյնպէս և առաւօտու երգն, և մեսեդի ճաշոյն, և տասանորդ *Նաշիոյն* **ժ** զգայարանաց մարմնոյն ճընշելն: - 375. Իններորդ՝ զի թե՛փն է ամաց մերոց իսկ *Նաշիհ* ալիւրն երիտասարդութիւնն է: - 377

**ՆԱՊԱՍՏԱԿ +** Կամ արագութիւն. որպէս *նապաստակաց:* - 216. Եւ զոր ուտէին և դիւաց զոհէին՝ պիղծ ասաց. որպէս զխո՛զ, զճագա՛ր, և *զնապաստակ:* - 364. Զի սրտիւն ապրին մարմնակեր գազանք. և հեշտ ցանկութեամբ բազմածին կենդանիք աճեն. և երկչոտութեամբ ապրին *նապաստակք* և տկարք ի հզօրից...: - 563

**ՆԱՐԴՈՍ +** Եւ ի ճաշակելեաց և շօշափելեաց, շօշափման բանի և ճաշակման պարարուն. և ուրախութեան *նարդոս* և կերակուր անմահութեան: - 771

**ՆԱՐՕՏ +** Այլ *նարօտն* կարմիր և սպիտակ մանեալ՝ զարիւն և զջուր կողին քրիստոսի: - 594

**ՆԱՒ +** Դարձեալ ասեն, եթէ ոչ է հարկ՝ ընդէ՛ր ոմն քաղաք կործանի և ոմանք ո՛չ. և ոմն *նաւ* հեղձանի, և ոմանք ի կռիւս անկանին: - 12-13. ...որք ի *նաւին* կային. զի սոքա ամենեքեան յայլևայլ ժամանակս և այլևայլ շարժումն աստեղաց էին ծնեալք. ապա ուրեմն ո՛չ է հարկ բախտի և ճակատագրի: - 13. *Զնաւս* վարէ՛: - 202. Քսաննդ՝ *զնաւս* տանի: - 207. Ութերորդ՝ զի *նաւք* ի վերայ ջուրց ընթանան փութով. և զպէտս միմեանց լնուն: - 207. Որպէս առաջին է կառքն և յետո՛յ կառավարն. և առաջին է *նաւն*, և ապա նաւավարն. և պատուական է մարդն քան *զնաւն* և զկառքն: - 230. Երեսուներորդ, *նաւք* թարսսեաց բերէին զմեծութիւն. և աթոռ կազմեաց զարմանալի: - 442. Այլ և խաչաձև ընթանայ *նաւ* ի վերայ ջուրց յորժամ լարէ հողմ զարմիոնն. կամ տարածեալ թևօք հասանին ի նաւահանգիստն: - 494. Դեկ *նաւին* ի ջուրս բեկեալ թուի. և ցաւոտ գլխոյ լերինք շարժեալ: - 662. Եւ դարձեալ որպէս որք յեզր ծովուն հասեալ զառագաստ *նաւին* իջուցանեն. - 676. Որպէս ասեն վարդապետք, ի վերջին ծովէն սպանիու մինչև ի հնդիկս սակաւ աւուրց բացատ գոյ թէ վարեսցէ հողմ *զնաւն:* - 763. Ի ծովուց ջուրց ի չորից *նաւաց* հազիւ մինն կորնչի. և ի ծովու այսմ աշխարհի ի չորից *նաւաց* հազիւ մինն ի նաւահանգիստ փրկութեան հասանէ: - 764

**ՆԱՒԱԲԵԿԻՄ +** ...*նաւաբեկեալքն* որ ի ծովէն ելանեն այնքան ուրախանան, ո՞րչափ ևս առաւել ուրախասցին որք զայս քան նաւաբեկութիւնս կրեալք ի վշտագին ծովէ այսմ աշխարհի զերծան: - 764

**ՆԱՒԱԲԵԿՈՒԹԻՒՆ +** Երկրորդ այնու՝ զի ի *նաւաբեկութենէ* փրկեալք եղիցին. թէ նաւաբեկեալքն որ ի ծովէն ելանեն այնքան ուրախանան, ո՞րչափ ևս առաւել ուրախասցին որք զայս քան *նաւաբեկութիւնս* կրեալք ի վշտագին ծովէ այսմ աշխարհի զերծան: - 764. Այսպէս և ի նաւորդսն զկնի վշտաց *նաւաբեկութեանն* ցնծան յոյժ. վասն զի երկեա՛ն յոյժ: - 765

**ՆԱՒԱԹ** - Երեսունք, յետոյ առ սամուէլ ի *նաւաթ* գնացեալ և հոգի աստուծոյ խաղացեալ. և տէր մեր առ հայր ի յերկինս ելեալ, և յառաքեալսն զհոգին առաքեալ: - 437

**ՆԱՒԱԿԱՏԻՔ +** Զպահս լուծեալ ի միս ձկան, և *նաւակատեաց* զմիս առանց ոսկր ուտեն: - 34. Այլ և զօրհնելն եկեղեցւոյ՝ **ը** օրն *նաւակատիս* կատարեմք: - 373. Քսանեթ, Մեծի շաբաթուն *նաւակատեաց*: - 455. Տե՛ս զի ի ժողովն եփեսոսի հասարակ ամենայն ազգ այսօր *նաւակատիս* առնէին մինչ ի ժողովն քաղկեդոնի ուր փոխեցան տօնք և պահք և դաւանութիւնք: - 509. Եւ տե՛ս, զի լուսաւորիչն կարգեաց *զնաւակատիսս* յայսմ աւուր որ էր յաւուրս նիկիական ժողովոյն. զոր յառաջն ունէին ամենայն ազգ, զնոյն կարգեաց մեզ: - 509. Վեցերորդ վկայ նոյն ինքեանք ազգն Ֆռանկաց. որ յամենայն շաբաթ օր վիճիլ ասեն. և միս ո՛չ ուտեն ի խորհուրդ *նաւակատեաց* մեծի շաբաթուս: - 509. Թէպէտ այսօր վասն պատրանաց մարդկան և փոխելոյ զտօնս՝ ոչ ինչ ուտեն *զնաւակատեաց* որ է ձուկն. զոր միշտ զքառասնորդ պահքս պղծեալ են ձկամբ և արբեցութեամբ: - 509. Վասն է՞ր ի *նաւակատիսս* ձուկն ուտի և միսն ոչ: - 509. *Նաւակատիսն* նորոգումն և տօն կամ ուրախութիւն թարգմանի: - 509. Զի հեթանոսք

զոհէին արեամբ մանկանց. և հրէայք արեամբ անբան անասնոց կատարէին *զնաւակատիսս* իւրեանց: - 509. Իսկ առաքեալքն փոխեցին *զնաւակատիս* մեր առանց արեան զի որոշեսցուք ի նոցանէ: - 509. Եւ զի **Ե** են զգայարանք մեր որով մեղանչեմք, **Ե** օր է *նաւակատեաց* ի բոլոր տարին ի քաւութիւն **Ե** զգայութեանցս: - 510. Եւ խորհուրդ *նաւատակեաց* ի դրախտին աւանդեցաւ յամենայն պտղոյ ուտել և ի միոյն ոչ: - 510. Եւ զի **Գ** է օր ի բոլոր տարին. կամ ամենևին պահք. կամ ուտիք. կամ միջակ. որպէս *նաւակատիկք:* - 510. Պահքն վասն հոգւոյն պատշաճի. և Ուտիքն մարմնոյն. իսկ *Նաւակատիքն* վասն խառնեալ շնչոյն: - 510. Իսկ *նաւակատեաց* կերակուր այն է՝ որ միջակ է սոցա երկոցունց. այսինքն ի կենդանւոյ և ի տնկոյ. որպէս ձուկն, ձու, և կաթն: - 510. Ապա յա՛յտ է կերակուր *նաւակատեացն*: - 510. Եւ **Ը** օր *նաւակատեաց*: - 526. Վասն է՞ր հինգն **Բժ**ան օր *նաւակատիս* կատարէին որ է՛ նորոգումն խորանի տաճարին: - 616. Զի իւրաքանչիւր իշխանք և ցեղք մի մի օր *նաւակատիս* առնէին: - 616. ...կարգեաց **Ը** օր *նաւակատիս* խաչի և եկեղեցոյ ի միասին տօնել: - 617. Եւ ի խորհուրդ եօթանց դարուց կենցաղոյս՝ զեօթն օր *նաւակատիս* կատարեմք թաղման քահանայից: - 674

**ՆԱՒԱՀԱՆԳԻՍՏ +** Այլ և խաչաձև ընթանայ նաւ ի վերայ ջուրց յորժամ լարէ հողմ զարմիոնն. կամ տարածեալ թևօք հասանին ի *նաւահանգիստն:* - 494. Ի ծովուց ջուրց ի չորից նաւաց հազիւ մինն կորնչի. և ի ծովու այսմ աշխարհի ի չորից նաւաց հազիւ մինն ի *նաւահանգիստ* փրկութեան հասանէ: - 764

**ՆԱՒԱՍԱՐԴ +** Եօթն արու. *Նաւասարդի*. Յոռի. Սահմի. և այլն: - 200. *Նաւասարդի*. Նոր ասի. այսինքն սկիզբն տարւոյ: - 200. Իսկ վասն քահանայօրհնէիցն, սուրբն սահա՛կ է արարեալ. յառաջին ամի եպիսկոպոսութեան իւրոյ. ի *նաւասարդի* ամսեանն որ օր մի էր. և յիշատակ սուրբ կարապետին արար զքահանայօրհնէքն: - 659

**ՆԱՒԱՍԱՐԴԱՑԻ** - Իսկ աղուանից ամիս Նաւասարդուլ. որ է՛ *նաւասարդացի*. այսինքն ի թոռանց է. յուստերաց կամ ի դստերաց: - 201

**ՆԱՒԱՍԱՐԴՈՒԼ** - Իսկ աղուանից ամիս *Նաւասարդուլ*. որ է՛ նաւասարդացի. այսինքն ի թոռանց է. յուստերաց կամ ի դստերաց: - 201

**ՆԱՒԱՎԱՐ +** Որպէս առաջին է կառքն և յետո՛յ կառավարն. և առաջին է նաւն, և ապա *նաւավարն*. և պատուական է մարդն քան զնաւն և զկառքն: - 230. Երկրորդ, արուեստական. որպէս բժիշկք, և *նաւավարք*: - 536. Բժիշկք զհիւանդաց առողջութիւն և զցաւս. և *նաւավարք* զխռովութիւն ալեաց և զանդորրութիւն: - 536

**ՆԱՒԵԼ +** Եւ դարձեալ՝ ա՛յժմ է եղանակ *նաւելոյ* ի վերայ ովկիանու: - 200. Ոմանք ի վարել և ի *նաւել* և յայլ ինչ գործս: - 714

**ՆԱՒԹ +** Եւ *նաւթն* կո՛ւպրն է ներքոյ և արտաքոյ ծեփեալ զի մի՛ վնասեսցի: - 293. Նա՛խ՝ անընդմիջաբար յերկրէ. որպէս *նաւք:* - 407

**ՆԱՒԻ** - Յետ վախճանելոյն Մովսէսի՝ առաջնորդեաց ժողովրդեանն փոխանորդ նորին Յեսու որդի *նաւեայ*. ի ցեղէն եփրեմի: - 414

**ՆԱՒՈՐԴ +** Այսպէս և ի *նաւորդսն* զկնի վշտաց նաւաբեկութեանն ցնծան յոյժ. վասն զի երկեա՛ն յոյժ: - 765

**ՆԱՒՈՒՄ** - Ամովս: Միքիա: Յովէլ: Աբդիու: Յովնան: *Նաւում*: Ամբակում: - 450

**ՆԱՓՈՐՏ +** Զի հանդերձն սպիտակ՝ շապիքն է և Կապոյտ վտաւակն՝ *նափորտն:* - 348. Եւ ունին զգեստ՝ *նափորտ* բազմախաչ. և ի վերայ եմիփորոն ե կրկին խաչիւ զարդարեալ: - 607. Եւ ունին *նափորտ* կրկին: - 608

**ՆԵԱՐԴ** (տեքստում նաև՝ **ՆԻԱՐԴ**) **+** *Նեարդք* և ջիլք և արիւնն հրոյ: - 215. Երրորդ՝ զի փափուկ ջիլք և *նեարդք*՝ յերեսացն գան և առնեն զգայարանս. և հաստն ի թիկունքն սփռի վասն ուժոյ և պնդութեան և շարժութեան: - 234. Որ եսդ տէր տէր հաւատարիմ յիսուս, անբաժանելի լեր ի զգայութեանցս. և յամենայն գոյացութեանց աստի իմոցս. ներկեալ խոստովանութեամբ և շնորհօք հոգի մարմին *նիարդք* իմ և աճառք: - 771

**ՆԵԲՐՕԹ** - Եւ ի մեկնութիւն ծննդոց ա ասէ բերեսիաթաս թէ՝ «**Ժ** թագաւորք տիրեսցեն ի սկզբանէ մինչև ի կատարած աշխարհի»: ...Երկրորդ՝ *նեբրօթ*: - 28

**ՆԵԽԵԼ +** Եւ թէ ոք ասիցէ, վասն է՞ր յառաջին օրն *նեխեցաւ*, և յամենայն օր հալէր: - 339. Ասեմք թէ՝ *նեխեցաւ* վասն թերահաւատութեան և ագահութեան ժողովրդեանն: - 339. Դարձեալ՝ աղն նշանակէ՛ զբանն աստուած. որ զանհամութիւնս մեր համեմեաց, և *զնեխեալ* վէրքն ապականութեան մերոյ

ողջացոյց: - 356. ...զի զանհամութիւնս մեր համեմեաց և *զնեխեալ* վէրս սրբեաց: - 657. Իսկ արտասուքն աղի և ջրատեսակ. զի բարեխառնեսցէ մինն զջերմութիւն հրոյ, և միւսն՝ զի մի՛ *նեխիցին* պարուտակք աչաց. շրջապատեալ երակացն լուսոյ: - 786

**ՆԵԽՈՒԹԻՒՆ +** Վասն չորրորդին, որք աստ ժահահոտ *նեխութեամբ* պոռնկութեանն քաղցրապէս փափկանային. արդարապէս անդ դառնապէս տանջին: - 752

**ՆԵՂ +** Ճակատն *նեղ*՝ շատակո՛ւլ է: - 246. Դժոխ՝ զդժուար *զնեղ* և զանձուկն նշանակէ. և կոչի բազմաւոր, Նախ վասն բազում կրիցն. ուր լալ աչացն է և կրճել ատամանց և խաւար ներքին և արտաքին և այլն: - 505. Նա՛խ՝ զի *նեղ* և անձո՛ւկ է...: - 679. ...զի դժոխք զդժուարն և *զնեղն* նշանակէ: - 679. Դժոխքն նշանակէ զդժուարին և *զնեղ* տեղիս որ է՛ խորանն ձախակողմեան. ուր մեղաւորքն կրկին ունին զտանջանս: - 690

**ՆԵՂԱԳՈՅՆ +** Առ որս ասեմք եթէ՝ բանս այս «ամենայն» ո՛չ այնպէս *նեղագոյն* առեալ լինի ի սուրբ գիրս՝ որպէս առ փիլիսոփայսն: - 27. Գիտելի է՝ զի առաջին աստուածաբանութիւնն *նեղագոյն* է և սակաւաբան. որ է տպաւորականն: - 123

**ՆԵՂԱԿՆ** - Եւ *նեղակն* դիւրաշարժ: - 246

**ՆԵՂԱՍԻՐՏ +** Չորրորդ՝ զի մի իցէ *նեղասիրտ* և տառապեալ բարուք տեսանելով զինքն ի չքաւորութեան ստեղծեալ. այլ տեսցէ զամենայն կատարեալ. զի արձակ և առատ բարուք սնանիցի և վայելեսցէ: - 230

**ՆԵՂԵՄ +** Քանզի հրէայքն ի ժամանակս քրիստոսի ո՛չ լինէին *նեղեալք* յումեքէ: - 28. Մետասաներորդ՝ որպէս մինն ի բազումս եկեալ ընդարձակի. և ի բազմաց ի մինն ընթացեալ *նեղի*: - 110. Նոյնպէս և ի միոյն աստուծոյ իջեալ յարարածս ընդարձակի տեսութիւն մեր. և ի սոցանէ ի նա դարձեալ *նեղի*: - 110. Ուստի և *նեղեալք*՝ ի խնդիրս առ ի բարձունս զձեռս տարածել ըղձան: - 184. Իսկ գէջն լինի ամպ. և չորն ի մէջ ամպոյն *նեղեալ* պատառելով զճալմունս ամպոյն՝ լինի որոտ և փայլատակունք ևս: - 204. Այն որ մերձ յարևելս է, Վոռէա՛ս կոչի. *նեղէ*՛ զամպս, և կապէ՛ զանձրևս: - 205. Իսկ շա՛րժն է թանձր գոլորշի արտաքս քարշեալ յերկրէ, և *նեղեալ* ի յելսն շարժէ՛ զերկիր: - 206. Վասն որոյ յետոյ տրտմի և *նեղի*. ատէ՛ զպատճառ մեղացն և դառնայ ինքեան. որպէս ամոնի եղև: - 558. ...յորում բազումս *նեղեաց* զմեզ թշնամին մեր. գանկատիմք նմա և խնդրեմք զփրկութիւն: - 621

**ՆԵՂՈՍ ԳԵՏ** - Ըստ մարմնոյ յա՛յտ է զի երկիրն եգիպտացւոց դա՛շտ է. վասն այն *նեղոս գետն* արբուցանէ զնա՛: - 398

**ՆԵՂՈՒԹԻՒՆ +** Զի մեք որ ի *նեղութիւնս* և ի փորձութիւնս ժուժկալեմք աղաչանօք. իսկ մեր մաղթանքն նմա՛ վերաբերի: - 48. Երբեմն *զնեղութիւնն* ասէ. ըստ այնմ թէ՝ «նշդեհակից եղև ի շնորհս յայս». այսինքն ի *նեղութիւնս* և ի վիշտս: - 139. Երկոտասաներորդ՝ զի սուրբքն բանիւ մեզ ուսուցանեն՝ *նեղութեան* և փորձանաց համբերել. պատրին ինքեանք գործով կատարել զնոյն. զի հաւատարիմ լիցին բանք նոցա: - 159. Հնգետասաներորդ՝ ասէ սուրբն դիոնէսիոս՝ թէ վասն այն տայ աստուած սրբոցն *նեղութիւնս* և փորձութիւնս, զի *նեղութիւնն* սիրելի և փափագելի՛ է նոցա. և յայնժամ ուրախանան սուրբքն, յորժամ ի մարմնական հեշտութեանց հեռանան. և արիանան ի փորձութիւնս. և սակաւ *նեղութեամբ* ժամանեն ի մեծ հանգիստն: - 159-160. Իսկ թէ զի՞նչ համբերութիւնն. ասէ՝ «գործ կատարեալ ունիցի». այսինքն թէ՝ նիւթ աստուծոյ գործոյն՝ փորձութիւնն և *նեղութիւնն* է. և յօրինօղ՝ հաւա՛տն է. և ի կատարումն ածօղ՝ համբերութիւնն է: - 161. ...զի ի մէջ *նեղութեանց* լինելով՝ յանցեալ մեղացն զղջանամք և սրբիմք. և յապագայն զգուշութեամբ պարսպիմք. և ի ներկայն՝ արի՛ և կա՛զմ պատրաստիմք: - 162. Զի որպէս հուր զժանկ արծաթոյ՝ և խարտոց զժանկ երկաթոյ, նոյնպէս և *նեղութիւն* սրբէ զմեղս մարդոյ: - 162. Ութերորդ՝ *նեղութեան*: - 209. Երկրորդն է *նեղութեան* և անձկութեան: - 210. Իսկ արդարք աստ ի *նեղութեան* կան վասն կրկին պատճառի: - 324. Եւ վասն այն գնաց ի սաբեփթա յայլազգիս. զի և զնոցա *նեղութիւնն* տեսցէ. որք չէին անցեալ զօրինօքն մովսէսի: - 443-444. Եւ երբեմն երկոքեանն ծածուկ. որպէս ի *նեղութիւնս* իւրաքանչիւր արդարոց և անմեղաց. և ի հիւանդութիւնս տղայոց: - 459. Հինգերորդիւն աղաղակել առ աստուած ի ժամանակի *նեղութեան*: - 492. Զի յաշխարհի աստ *նեղութիւն* ունիք. ընդ իս զխաղաղութիւն ունեցիք: - 519. Ութերորդ՝ լինի ցաւակից նմա ի ժամանակի *նեղութեան*: - 575. Որոյ գործն այս է. ոչ ի *նեղութիւնն* խորտակիլ և ո՛չ ի հեշտութիւնն կակղանալ: - 580. Երրորդ ի համբերութիւն *նեղութեանց*. որպէս ասէ յերգս «զօրաւո՛ր է իբրև զմահ սէր»: - 581. Եւ մաստութիւնն է նոյն ընդ համբերութեանն. զի համբերութիւնն է տևումն

մարմնաւոր *նեղութեանց*. իսկ մաստնութիւնն է տևումն նախատանաց: - 584. Իսկ ութերորդն ի *նեղութեան* դարուն օրհնել հոգւով. և գովել ի վերինն երուսաղէմ...: - 630. Նոյնպէս և յերեկոյին զ’ի *նեղութեանն* առաքեալքն կարգեցին յաւուրն ելն. զի ելք աստիճանաց ասի...: - 631. Նա՛խ՝ նշանակէ՛ բարեկենդանին արձակութիւնն զպահոց *նեղութիւնս*...: - 657. Երրորդ, որպէս ողջակէզ նորին, և մեզ պա՛րտ է զանազան փորձանաց և *նեղութեան* զանձինս մատուցանել սիրովն աստուծոյ: - 658. Վասն որոյ բռունք յափշտակեն. և բազում *նեղութեամբ* մտանեն: - 663. Այլ արդ ի կեանս յայս տեսանեմք զբազումս որ բարիքն ի *նեղութեան* են և չարքն ի հանգստեան...: - 715. Որպիսութեան կրիցն չափ ո՛չ է անտի տանջանացն. զի բոլոր աստի *նեղութիւնս* համեմատեալ այնմ՝ է՛ որպէս կաթիլ մի ի ծովէ և կայծ մի ի հնոցէ: - 751. Եւ յետ նոցա ամենայն բազմութեանց ժողովելոց յամենայն ազգաց ասէ. որք եկին ի բազում վշտաց աշխարհի. այսինքն որք զանազան առաքինութեամբ և բազում *նեղութեամբ* մտին ի հանգիստն: - 760. Եւ երբեմն երկոքեանն ի ծածուկ. որպէս ի *նեղութիւն* իւրաքանչիւր արդարոց և անմեղաց: - 779

**ՆԵՆԳ +** Ութերորդ՝ զի կողն կեռ գոլով՝ ցուցանէ զկինն *նենգ* գոլ և երկմիտ. կեռ, այսինքն խեռ ընդ առն: - 276

**ՆԵՆԳԱԺՈՏ** (տեքստում նաև՝ **ՆԵՆԳԺՈՏ) +** Կլափն երկայն՝ բարկացօղ է և *նենգժոտ:* - 247

**ՆԵՆԳԱՒՈՐ +** ...սոքա առաջին օձին նմանեալ՝ հրապուրեն զբազումս. և արտաքսեն ի դրախտէ եկեղեցւոյ. և թոյնք իժից ի ներքոյ շրթանց ունելով և խայթոց՝ զի առորս մերձենան, ի յսկիզբն բանից կամ ի վերջն՝ մահացուցանեն զհոգիս. երկճղի ունելով լեզու *նենգաւոր*՝ չար և բարի, ծածուկ և յայտնի: - 35. Զի ամենայն գայլ խորամանկ է. և ամենայն աղուես *նենգաւոր*. և այլն նոյնպէս: - 218. Եւ զի *նենգաւո՛ր* է, թիւր ընթանայ: - 219. Յաստ ձեռն և կարճամատն, *նենգաւո՛ր* է և գող: - 247. Ոտք կարի իմն երկայն՝ *նենգաւո՛ր* է: - 247. Այլ և դարանակալք և *նենգաւորքն* են: - 365

**ՆԵՆԳԵՄ +** Ապա ուրեմն և հայհոյելն մտօք և մախալն և *նենգելն* կատարեալ չարութիւն է և մեղք...: - 557

**ՆԵՆԳՈՒԹԻՒՆ +** Ապա ուրեմն չարն ո՛չ է յաստուծոյ այլ ի մէնջ՝ կամ ի *նենգութենէ* թշնամւոյն որ պատրէ՛ զմեզ: - 19. Զսէր քարոզեն, և զդաւ *նենգութեամբ* կայենի նիւթեն: - 34. Երկրորդ այսպէս. **գ** մասանց աւելին և պակասն լինին **զ** չարիք. և մի գործ մարմնոյն որ լինի է *նենգութեան* խորհուրդ: - 287. Եւ գո՛րծ է սորա՝ որ ինքն *նենգութիւն* ո՛չ առնէ մարդոյ, և ո՛չ յայլ մարդոյ խաբի: - 579

**ՆԵՆԹԱԿԱՅՈՋ** - Այլ ի մարմինն նիւթօրէն և սկզբնաբար. իսկ ի հոգին տեսակաբար և իբր *նենթակայոջ:* - 567

**ՆԵՌՆ +** Ըստ այսմ օրինակի և նոր հերձւածօղք քաղկեդոնիկք *նեռին* կարապետք. հետևօղք նեստորի անիծելոյ՝ և լևոնի պղծոյ: - 34. Եւ զորս ես աստ պարկեշտութեամբ լռեմ, յընթանրական թղթին յօհաննէս ի *նեռն* առակէ ասելով. «արդէն իսկ *նեռինք* եկեալք են. զի ամենայն որ ուրանայ թէ յիսուս չէ՛ Քրիստոսն՝ նա իսկ է *նեռն»:* - 34. Եւ այս վասն բազում բաղդատութեան կոչին սոքա *նեռն:* - 34. Նա՛խ՝ զի գո՛րծ է *նեռինն* ուրանալ զաստուած...: - 34. Երկրորդ՝ *նեռն* հայհոյէ զքրիստոս զինքն կոչելով. նմանապէս և հերձուածօղք ոմանք հայհոյեն զմարդեղութիւնն Քրիստոսի: - 34. Տասներորդ՝ *նեռն* քարոզութեամբ պատրէ՝ և ուրւական սքանչելեց...: - 35. Եւ այլս բազում բաղդատութիւն գոլով հերձւածողի և *նեռինն*. և զորս տէրն գնեաց՝ սոքա ուրացեալք՝ ածեն ի վերայ անձանց զերագահասն կորուստ: - 35. Եւ որպէս *նեռնն* ազդումն է սատանայի՝ որպէս առաքեալն ասէ. և նոքա յազդմանէ սատանայի՝ խորհին և խօսին զանազան հերձուածս ըստ չար խորհրդոց նորա: - 35. Մանաւանդ թէ՝ որպէս վասն *նեռինն* յառաջագոյն պատմեցաւ եկեղեցոյ՝ զի զգուշասցին: - 35. Որև մերձ ի կատարածն դարձեալ յառնելոց է ի վերայ մարդկան ի ձեռն *նեռինն:* - 148. Այլ տե՛ս յայտնապէս, զի զայսպիսի նշան վկայութեան ո՛չ ունէին յուդաս և դևդաս. և ո՛չ *նեռն* ունելոց է դերաքրիստոսն. վասն որոյ ո՛չ են մարգարէ, այլ մոլորեցուցիչք և չարք: - 400. Թողին և հրէայք զտէր մեր և հաւատան *նեռին* և ի հուր նորին այրեսցին: - 423. Վեցերորդ, զի եկեղեցի որ է մարմինն քրիստոսի՝ յետ չարչարանաց *նեռինն* որ հանդերձեալ է կրել, զկնի **խ** աւուր յերկինս համբառնալոց հաւատացեալ լինի: - 521. Եւ վասն *նեռին* և պատրանաց նորա: - 660. որպէս վասն *նեռինն* և դատաստանին ետես. նոյնպէս և զհատուցումն սրբոց: - 690. Եւ սատակեալ վիշապին տուտն է *նեռն*. որ ի վերջին ժամանակս քարշէ զերրորդ մասն աստեղաց. - 706. *Նեռն* ուստի՞ լինի: - 706. Եւ այլ վարդապետք ասեն եթէ, *նեռն* յղանայ ի սերմանէ և ծնցի ի բոզէ՛: - 706. Եւ լինիցի *նեռն* բղջախոհ ի ցանկութիւնս կանանց...: - 707. Նստցի ի տաճարին զոր շինեսցեն նմա հրէայքն. և ասասցէ թէ, յառաջ քան զիս ո՛չ ոք է ճշմարիտ քրիստոնեայ. այլ *նեռինք* են ամենայնքն: - 707. Եւ որպէս ի քրիստոս բնակեալ

է ամենայն լրումն աստուածութեան որպէս ասէ թեսաղոնիկեցոց. նոյնպէս և ի *Նեռն* ամենայն լրումն անօրէնութեան...: - 707. Եւ հրեշտակ բարի նախ կարգեսցի ի պահպանութիւն *Նեռին*...: - 707. Զի՞նչ է անուն *Նեռինն:* - 707. Եւ այս գիտելի է, զի անուն *Նեռին* ջնջեալ և կորուսեալ է ի սուրբ գրոց. վասն այն զանազանապէս կոչեն զնա՛: - 707. Եւ յօհաննէս՝ *Նեռն* կոչէ: - 707. ...զի ինքն *Նեռն* գտանիցէ զգանձս ծածկեալս...: - 708. Եւ որպէս *Նեռն* լինիցի անողորմ քան զամենայն հալածիչս յառաջագոյն...: - 708. Այլք ասեն թէ՝ գօգաւ և մագօգաւ իմացեալ լինին զօրք *Նեռինն*...: - 708. Ընդ երկիլ *Նեռինն* և թագաւորելն յերուսաղէմ, եկեսցեն ենովք և եղիա որպէս ասէ մաղաքիա և դարձուսցեն զսիրտս հարց յորդիս. - 709. Որ և յետ այնորիկ սպանցին ի *Նեռնէն* յերուսաղէմ. և անկեալ լիցին մարմինք նոցա ի հրապարակս զերիս տիւս և զերիս գիշերս: - 709. Եւ յետ մահուն և յարութեան նոցա՝ թագաւորեսցէ *Նեռն* այլևս **Ժ** և **Ե** օր: - 709. Ո՞ր քան թագաւորէ՛ *Նեռն:* - 709. Թագաւորէ՛ *Նեռն* զաւուրս **ռ** երկերիւր **հկը**, ըստ դանիէլի: - 709. Եւ յետ այսորիկ ի լեառն ձիթենեաց ուստի համբարձաւ քրիստոս՝ տէր իշխանութեամբ իւրով սպանցէ *զՆեռն:* - 709. Այլ արքանեակք *Նեռին* յետ մահուան նորա ուրախասցին և առցեն իւրեանց կանայս...: - 709. Այս քան յաւուրս *Նեռինն:* - 709. Ութերորդ, գալուստ *Նեռինն* յառաջագոյն. որպէս ասէ «ես եկի յանուն հօր իմոյ և ո՛չ ընկալայք. թէ այլ ոք եկեսցէ յիւր անուն՝ զնա ընդունիք»: - 730. Հինգերորդ, զի դիցէ զբշնամիս իւր ի ներքոյ ոտից իւրոց. այսինքն կորուսցէ *զՆեռն* և զսատանայ և զամենայն զայթակղութիւն մարդկան՝ զմեղս և զմահ...: - 737. Արդ որպէս յամենայն ժամանակս սոքօք գան ի հաւատս ուղղութեան և է՛ վարձատրելի. այսպէս և ի վերջին ժամանակս որք յետ *Նեռինն* ո՛չ միայն ի հարկէ սքանչելեաց, այլ և ի լրոյ քարոզչաց երկուցն վկայից իջելոց սրբոց: - 785

**ՆԵՍԻՄՈՍ** - բայց թէ ազատեալ լիցի տն կամօք. որպէս *Նեսիմոնս* այն. իսկ թէ զայր որ ընդ ծառայութեամբ է՝ ո՛չ հրամայեցին հայրապետքն սուրբք գալ ի յաստիճան եկեղեցւոյ... - 589

**ՆԵՍՏՈՐ(Ք) +** Առաջին գլուխն Ընդդէմ *Նեստորի* **ի** գլխով: - 30. Երեքտասաներորդ՝ Փախչիլ յևտիքէ և *Նեստորէ:* - 30. Ըստ այսմ օրինակի և նոր հերձուածօղք քաղկեդոնիկք նեռին կարապետք. հետևօղք *Նեստորի* անիծելոյ՝ և լևոնի պղծոյ: - 34. Եւ թէ ըստ մարդկութեանն իմանաս, մի՛ կարծիցես պարզև և շնորհ գտալս զայս. զի այն *Նեստորին* է: - 46. Եւ այլ բազում ինչ հայհոյութիւն հետևի կարծեացն *Նեստորի:* - 68. Իսկ եթէ զանդրանիկն առանձին, ահա՛ զկուսածինն որդի՝ ո՛չ ասէք աստուած՝ ըստ *Նեստորի:* - 68. Ա՛րդ՝ որպէս կարծեն ինքեանք զէն մեծ ունիլ առ երկոսին կողմանս, կամ հարկիւ անկանիլ ի *Նեստորին* բնութիւն և բնութիւն, և կամ ըստ եւտիքեայ շփոթել զբնութիւնսն: - 75. Այսպէս ընդ դէմ *Նեստորի:* - 75. Իսկ սուրբն կիւրեղ ընդ դէմ *Նեստորի* զինէր. որ ասէր բնակութեամբ զբանն ի մարմնի. և նախ զմարդն ծնեալ ի կուսէն և շրջեալ ի յերկրի, և յետոյ բնակեալ բանն աստուած յետ մկրտութեանն. և յետ յարութեանն փառաւորեաց զնա և զօրացոյց յարակցութեամբ ընդ ինքեան: - 79. Սուրբն կիւրեղ ընդդէմ *Նեստորի*՝ որ **բ** բնութիւն բաժանեալ ասէր քրիստոսի՝ ասաց, մի բնութիւն միաւորեալ աստուած մարմնացեալ և մարդացեալ: - 79-80. Ո՞րպէս փախիցուք ի *Նեստորի* բաժանելոյն, և յեւտիքեայ շփոթելոյն: - 80. Նոյնպէս և ի տնօրէնութիւնն քրիստոսի *Նեստոր* չարաչա՛ր բաժանէ զանձինս և զբնութիւնս, զկամս և զգործս: - 81. Ընդ դէմ *Նեստորի* անբաժանելի խոստովանին. և ընդ դէմ եւտիքի անշփոթ միաւորութիւն: - 81. Այլ նոքա ո՛չ խոստովանին զաստուած մարդացեալ. այլ՝ կամ ի նախագոյացեալ անձն բնակեալ ասեն զաստուածայինն բնութիւն, և կամ շնորհօք որդիացեալ որպէս *Նեստորի* բըւի: - 81. Ոմանք՝ որպէս *Նեստոր*. և սամոստացին պօղոս. և դիոթորոս: - 82. Բաժանեն և ուրեք զյատուկ անունն. այսինքն աստուած և մարդ. այս է զմարդկայինն բնութիւնն մարդ, և զաստուածայինն բնութիւնն աստուած. որպէս *Նեստորի* բըւի: - 87. Ա՛րդ՝ նո՛յն է եթէ ի բնութենէ բաժանեն, և եթէ յանձնէ յանձն ըստ *Նեստորի*. և եթէ յանձնէ ի բնութիւն բաժանեն ըստ քաղկեդոնի: - 88. Զի եթէ զմարդկայինն ասէք քրիստոս, ահա՛ առանձնապէս որոշեցիք զնա ըստ *Նեստորի*. և սոսկ մարդ ասէք զքրիստոս: - 89. Այսպէս և *Նեստոր* մի ասէր զքրիստոս ո՛չ ըստ իրին միութեան, այլ ըստ անուանն համաձայնութեան. որպէս հոմանուն ձայն մի ունելով զկոչմունս, և զանազան բնութիւնս ի ներքոյ մի անուանն: - 90. Զի մինն ախորժելի է արիոսի. և միւսն *Նեստորի:* - 94. Եւ այսպէս բազում է ի գիրս հարցմանցս վասն միաւորութեան բանին և մարմնոյն ընդ դէմ *Նեստորի* և երկաբնականց. որ բաւական լուծումն է բանիս: - 95. Իսկ թէ ա՛յլ է բանին և այլ է մարմնոյն, ապա բաժանե՛ս զմարդկութիւնն ի յանձնէն. և ասես **բ** անձն. և երկու բնութիւն. ըստ *Նեստորի* առաջնորդին քոյ. և պօղոսի սամոստացւոյ. որ մինչև ցայժմ ծածուկ է իր նեստորեան, և այժմ յայտնեցեր զքեզ: - 98. Ա՛րդ՝ եթէ հրեշտակք տեսանեն զբանն աստուած՝ և առնուն գիտութիւն ի նմանէ, և մարդն քրիստոս ո՛չ

տեսանէ որպէս ասես *Նեստո՛րդ*, ապա քրիստոս փո՛քր է գիտութեամբ քան զիրեշտակս: - 99. Իսկ ոմանք զքրիստոսէ՛ ասեն բնութեամբ և շնորհօք որդի. որպէս *Նեստորք* և քաղկեդոնիկք անիծեալք. զի այսպէս լինին **բ** որդիք և **բ** անձինք: - 402. Եւ *Նեստոր* կամէր զմարմինն որոշել և սոսկ մարդ դաւանել: - 475. Յոհան անտիոքայ՝ թղթով միաբանեալ. բճ հարք ընդ դէմ *Նեստորի* որ **բ** բնութիւն ասէր և **բ** որդի. կրկին կամք և կրկին ներգործութիւն քրիստոսի. և զաստուածածինն մարդածին: - 542. Զի պողքէր քոյր թագաւորին թէոդոսի ի կուսանաց վանս էր. և պղծեցաւ պոռնկութեամբ ի մարկիանոսէ. և ապա՛ եղև կին նմա. և ասեն թէ ի *Նեստորէ՛* էր մկրտեալ: - 542. ...և նոքա զամենայն ինչ ծածկապէս տեղեկացան. զի ժողովեալքն ի քաղկեդոն ակն առին թագաւորին և կնոջ իւրոյ. և զարհուրեցան ի սպառնալեացն. և *զՆեստորի* կարծիսն հաստատեցին. զերկու բնութիւնսն. և զ**բ** կամսն. և զբ ներգործութիւնսն: - 543. Եւ *զՆեստոր* նզովեցին: - 543. Եւ յոլովք ի գիտողացն ասացին, թէ հաւատք *զՆեստորին* հաստատէք զնա ընդէ՞ր նզովէք: - 543. Այլ որ **ծծ** ամաւ յառաջ եկին ի հայք՝ ասորիք արք քաջաբանք, և կամեցան սերմանել զաղանդն *Նեստորի*. որք նզովեալ որոշեցան. բայց ոմանք ընկալեալ էին և թարգմանեալ ի նոցանէ գիրս սուտս, Զգօրտոսակ. Զկիրակոսակ. Զպղի տեսիլն: - 545. Եւ **բճք**ն որ յեփեսոս ժողովեցան ընդ դէմ *Նեստորի* չարափառի և մարդադաւանի: - 547. Եւ սուրբն կիւրեղ ասաց ի ժողովն եփեսոսի. զմիածին որդին ձայնիւ ընդ դէմ *Նեստորի:* - 632

**ՆԵՍՏՈՐԱԿԱՆ +** Որք ուրանան զբնութեամբ միաւորութիւն աստուծոյ մարդացելոյն, այլ միայն բնակութեամբ և շնորհիւ որդէգրութեան ելեալ յաստուածութեանն փառս. որպէս ասեն *Նեստորականքն:* - 66. Վասն է՞ր քաղկեդոնիկքն և *Նեստորականքն* ուրանան զբնութեամբ միաւորութիւնն. այլ անձամբ միայն և յատկութեամբ ասեն: - 76. Ոմանք զբոլորն բաժանեալ ասեն աստուած և մարդ. որպէս *Նեստորականքն:* - 77. Եւ այժմ առ քեզ խօսեսցուք ըստ վկայութեան կարգիս ո՛վ *Նեստորական* երկաբնակ և մարդադաւան որոշօղ քրիստոսի, և որոշեալ ի շնորհաց նորին: - 98. Այլ թէ արիոսեան լիցի կամ մակեդոնեան կամ *Նեստորական*՝ մկրտեսցի: - 590. Ուստի յայտ է թէ՝ զմարմին բանին ապականացու խոստովանին նոքա՝ որ զխաչն ապականացու ասեն. և են *Նեստորականք:* - 733

**ՆԵՍՏՈՐԵԱՆ** - Ապա և բաժանակա՛ն է ընդ մարդկային բնութեանն՝ և ո՛չ է միաւորեալ ընդ օտար տարբերեալ բնութիւն. և եղեր *Նեստորեան*. **բ** անձն և **բ** բնութիւն յատուկ ասելով քրիստոսի: - 86. Իսկ թէ ա՛յլ է բանին և այլ է մարմնոյն, ապա բաժանե՛ս զմարդկութիւնն ի յանձնէն. և ասես **բ** անձն. և երկու բնութիւն. ըստ նեստորի առաջնորդին քոյ. և պօղոսի սամոստացւոյ. որ մինչև ցայժմ ծածուկ է իր *Նեստորեան*, և այժմ յայտնեցեր զքեզ: - 98

**ՆԵՏ +** Արդ աղեղն և *Նետն* ի վերայ եդեալ՝ նշանակէ՛ զխաչն փրկական ընդ դէմ իմանալի ասորւոյն սատանայի: - 446. Իսկ զանազանի մահացուն և ներելին ըստ առաւելութեան և նուազութեան. որպէս առաւել է հարկանումն օձի քան զլուոյ. և *Նետի* քան զփշի. այսպէս և մահացուն է առաւել քան զներելին: - 568. Եւ թէ ի թիկանց *Նետք* մուխք սատանայի, սովաւ զգուշացիր և անքոյդ մնաս: - 770

**ՆԵՏՈՂ +** Յորում պաշարեալք ի հինից *Նետողաց* կրկին յարուցեալ խորա՛զմ անուանեալ ազգաց: - 788. Սաստկագին գոչմամբ. և ահագնատեսիլ սուսերամերկ կորովալից *Նետողաց*. որ պատեալ պահեալ պաշարէին զմեզ: - 789

**ՆԵՐԲԱՆ(Ք) +** Այսպէս մարմին մարդոյ որ քան է երկայնութեամբ ի գագաթէ՛ գլխոյն մինչև ի *Ներբանս* ոտիցն, նոյն քան է լայնութիւն ի մէջ երկուց երկայն մատիցն ձեռաց: - 232. Վերջին օծումն է խորհուրդ եկեղեցւոյ. որ տուեալ լինի հիւանդաց ի հոգէվարի օրն. յաչքն, յականջն, ի բերանն, ի ձեռքն, ի կուշտն, յոտից *Ներբանքն:* - 604

**ՆԵՐԲՈՂԵԱՆ +** Կարդացմունք. քարոզք. *Ներբողեանք* և այլք. որ ըստ տօնից առաւելուլ պարտ է զնոսա: - 375. և զմարգարէսն ի չորրորդ ձայնս է ընթեռնլի. և *Ներբողեանն* ի վերջին ձայնն: - 643. Եւ եփրեմի *Ներբողեա՛նն* այլ՝ ցոյց զա՛յս տայ. թէ դահիճն ետես ի բանտին որ այսպէս աղօթէր: - 659

**ՆԵՐԳԵԻԻՄ +** Միանգամայն և իղձք փրկական և հրաման հարկի ժամանեալ էհաս առ *Ներգևեալս* ոգի և թաւազարթ թզենի: - 773

**ՆԵՐԳՈՅ +** Զպակասն ուղղեա՛ և զաւելիսն կշռեա՛ աղաչեմ ի *Ներգոյէ՛* քոյինդ մեծանձնութեան: - 95. Այլ դու ո՛վ այրդ աստուծոյ մաքրամիտ և ճգնազգեաց միայնաւոր սուրբ հայրդ սահակ, թէ և զիջանես եղբայրական սիրով խնդրել բանս ի մէնջ. սակայն կարօղ ես և զթերին լնուլ և զյաւելորդն կշռել. և զմեզ օգտեցուցանել ի *Ներգոյէ՛* քոյին պայծառամիտ սրբութեան սրտի: - 558. Եւ ադամայ *Ներգոյի* սկիզբն: - 645

**ՆԵՐԳՈՅԱԿԱՆ** - Ասաց թէ՝ որ ի կերպարանս աստուծոյ էր բանն, այսինքն էակից հօր, ո՛չ ինչ զրկումն համարեցաւ ի *ներգոյական* փառաց զլինիլն հաւասար մեզ: - 93

**ՆԵՐԳՈՐԾԱԲԱՐ** - Երրորդ՝ համակ հանապազորդ ներգործական դարձումն բոլոր մարդոյն առ աստուած. որով մարդն աստուածային քաղցրութեամբն զմայլի. որպէս հրեշտակք ի բոլոր սրտէ՝ յամենայն անձնէ և յամենայն զօրութենէ միշտ *ներգործաբար* դիմեն առ աստուած. և յիւրաքանչիւրսն ճառագայթի՛ ի նմա՛ աստուած: - 462

**ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ +** Կամ է՛ ի *ներգործական* պատճառն. որ ունիցի խափան ինչ և արգելումն. որպէս մանուկս այս երկար ապրեսցի. կամ թէ մանուկս այս լինի երաժիշտ, թէ ո՛չ լինի խափանումն ինն: - 9-10. Եւ թէ է ի պատճառն *ներգործական* որ ունի արգելումն, է՛ որպէս անէծք, կամ օրհնութիւնք, կամ աղօթք. և մանկանն յերկար ապրիլ. կամ լինիլ երաժիշտ: - 10. Նոյնպէս և աստուած է արարողական պատճառ կամացն. այլ *ներգործական* պատճառ է չար՝ կամքս մեր: - 16. Երրորդ՝ ի խրատ մեզ. զի որպէս չարչարանօքն ազատութիւն արար մարդկային բնութեանս, այսպէս ամէն ոք չարչարանօք իւրովք ազատեսցի ի պատժոց *ներգոծական* մեղացն: - 43. Հինգերորդ՝ միտքն տեսանէ որպէս *ներգործական* պատճառ և արհեստաւոր. և զգայութիւնն որպէս գործիական պատճառ և միջնորդ: - 121. Ապա յա՛յտ է՝ զի գիրն *ներգործակա՛ն* է իմացութեանցն որ ըստ ինքեանն զօր ի վերոյ ասացաք: - 143. Իսկ հասարակութիւն է Նախ՝ զի երկուց սկզբանցն մի և նո՛յն է պատճառ *ներգործական*. որ է՛ արուեստաւորն: - 163. Զի էակքս ամենայն՝ ոմանք բանաւորք են և ո՛չ միշտ *ներգործականք*. որպէս մարդս: - 173. Իսկ աստուածայինն է ընդդէմ սոցա. զի է բանաւոր և է միշտ *ներգործական* որպէս ասացաւ: - 173. Եւ զի ջերմ է: Հաղորդական: *Ներգործական*: - 202. *Ներգործական*՝ որ ի վերջնոցն: - 312. Այլ աստ *զներգործական* որակն ասէ տարերաց: - 342. Ասեմք եթէ՝ կրկին է մեղք. բնութեան և անձին. որ է սկզբնական և *ներգործական*: - 351. Այլ *զներգործական* մեղս անձին հօր՝ ո՛չ հատուցանէ անձն որդւոյ. ապա թէ ոչ՝ չար ծնողաց ո՛չ լինէր բարի զաւակ: - 351. Միջինն *զներգործական* մահացուն: - 384. Եւ տէր մեր զսկզբնական և *զներգործական* մեղսն: - 424. Հինգերորդ՝ զընթացս մեղաց և զգործն որ է սկզբնական և *ներգործական* մեղք, և զգլուխն որ է՛ մահ և ապականութիւն, խորտակեաց քրիստոս...: - 426. Երրորդ՝ համակ հանապազորդ *ներգործական* դարձումն բոլոր մարդոյն առ աստուած...: - 462. Երկրորդ՝ զի զօրութեամբ ունի և ոչ է *ներգործական* մասն: - 470. Զի ո՛չ սկզբնական և ո՛չ *ներգործական* մեղս ինչ ունէր: - 485. Եւ ա՛յլ առաքինութեամբք կոխեալ հատանեմք զխայթոցն որ է՛ *ներգործական* մեղքն և մահ հոգւոց և դժոխք: - 489. Այլ ա՛րդ՝ բանն աստուած եղև մարդ և անմեղ պահեաց զբնական կիրս. և *ներգործական* կրիւքն հնազանդ եղև հօր՝ մահու չափ և մահու խաչի: - 492. Դրունք և նիզք յետուստ են. այսինքն կամ սկզբնական և *ներգործական* մեղօք կապեաց յետոյ, կամ մեղօք և յուսահատութեամբ: - 504. Նախ ասեմք եթէ՝ առաջին դժոխք հոգւոցն ո՛չ էր վասն *ներգործական* մեղացն հասարակ. այլ վասն պարտուցն ադամայ: - 506. Նախ ասեմք, եթէ դժոխքն է պատիժ մեղաց. և կրկին է մեղք. այսինքն սկզբնական և *ներգործական*: - 507. Ապաշխարութիւնն ընդ դէմ *ներգործական* մահու չափ մեղացն. և Օծումն ընդ դէմ ներելի մեղացն: - 587-588. Բայց գիտելի է, զի գործ մկրտութեանն է սրբել զհոգիս յամենայն մեղաց զօր ունիցի. թէ բնական թէ *ներգործական* և ի պատժոց մեղացն...: - 590. Զի տանջանք հրոյն *ներգործական* մեղա՛ցն է և ո՛չ սկզբնականին պատիժ: - 593. քան թէ բառնալ զխոստովանութիւնն որ հարկաւոր է. առանց որոյ ո՛չ գոյ *ներգործական* մեղացն թողութիւն գտանել: - 604. ...և վասն *ներգործականին* զուրբաթն. որով սրբասէր լեալ հասցուք առ ճշմարիտն և առ բարին ի ծեռն աստուծոյ: - 654. Ոչ մկրտեալքն կամ չարքն ո՞չ ունին տանջանս վասն սկզբնական կամ *ներգործական* մեղաց: - 690. Եւ զօրօրինակ զկնի մկրտութեանն սկզբնական մեղքն ոչ երևի. նոյնպէս զկնի ապաշխարութեան *ներգործական* մեղքն ծածկի և կորնչի. - 714. Իսկ եթէ բաղդատելով ոք ասիցէ, թէ ի մարմնի գոլով ապաշխարեալ սրբեցաւ նա ի *ներգործականէն* իւրմէ մեղաց. և այս ո՛չ ուրէք երևի ցոյցք ի գիրս սուրբս: - 775-776. ...իսկ Բաղդատութեամբ. որպէս է սկզբնականն առ *ներգործականն* մեղք. այսպէս ադամայն առ որդւոցն նորա: - 777. Եւ այլ ևս. որպէս ասացաւ կրկին է մեղքն. սկզբնական և *ներգործական*: - 777. Յիրաւի դարձեալ՝ դարձցին յետոյ ի պատիժս անձնիշխան կամաց *ներգործական* մեղաց: - 778. Մեղքն ադամայ է՛ *ներգործական* ինքեան. այլ ապաշխարեաց ի մարմնի գոլով: - 778. Յաղագս որոյ որ ինչ գոյ միոյն յայտնի և *ներգործական* մասունք, գոն նոքա և միւսոյն բնաւորապէս ծածուկ և զօրութեամբ: - 786

**ՆԵՐԳՈՐԾԱՊԷՍ** - Իսկ գչորրորդ սրբութիւնն որ է՛ միաւորութիւն բանականին առ աստուած, և միշտ *ներգործապէս* դիմել առ աստուած որպէս հրեշտակք. ընկալաւ աստուածածին կոյսն ի յղանալն զորդին աստուծոյ: - 463. Եւ զմայլեալ ի բոլոր սրտէ և յամենայն անձնէ և ի զօրութենէ միշտ *ներգործապէս* դիմեալ առ աստուած հաստատեցաւ: - 463

**ՆԵՐԳՈՐԾԵՄ +** Երկրորդ, այլ և ո՛չ է բնութեան բերք և արուեստից, եթէ ամենայն են ի հարկէ. զի զանազան բնութիւնք և արուեստք զանազանապէս *ներգործեն:* - 8. Եւ թէպէտ մարմինք մարդկան են տարրականք, այլ բարի և չար *ներգործի* ըստ կամաց և ո՛չ ըստ բանականութեան: - 10. Նախ՝ եթէ դու քեզէ՛ն խոստովանեցար եթէ ոչ գոյ հարկ. այլ՝ աստուած և բնութիւնն և արհեստն ևս *ներգործեն*. ապա թէ է գործ արհեստի և բնութեան, ո՛չ է հարկ բախտի և ճակատագրի: - 13. Այլ արդ՝ աստուած է ամենեցուն ո՛չ հուպ պատճառ, այլ հեռի. վասն որոյ ո՛չ հարկաւոր *ներգործէ:* - 15. Զորօրինակ՝ արուեստաւոր ոք կազմէ սուր ի պատճառս բարւոյ. այլ որ *ներգործեաց* չար՝ նա եղև չարին պատճառ: - 16. Նա՛խ՝ եթէ ուշիմ և ապուշ և այլն ըստ կարգի, սոքա եթէ ի մարմնոյն խառնուածոյ պատճառին՝ և եթէ բնական որակութեամբ հոգւոյն՝ նման և աննման գոլ, առանց *ներգործելոյ* ո՛չ չար են և ո՛չ բարի. ո՛չ գով. և ո՛չ պարսաւ հետևի. որպէս և ո՛չ բնական բարուց անաւնոց: - 19. Այլ մի ասեմք զներգործութիւնսն վասն մի միութենէն *ներգործելոյ*. որպէս մի ձեռն կտրէ՛ և կարէ՛. գրէ՛ և ջնջէ՛: - 85. Եւ զիա՞րդ մարմին ի բնութենէն ադամայ՝ *ներգործօղ* բոլոր գոյից յանէին...: - 94. Նախ՝ զի նոյն ուրացական մասնիկն այն՝ այսինքն ո՛չն՝ *ներգործէ՛* զուրացումն և զբառնալն: - 124. Նախ՝ զի ընդհանուր դասք և իւրաքանչիւր անհատք ունին էութիւն՝ զօրութիւն՝ և ներգործութիւն. այսինքն ըստ որում էացեալքեն, և կարողութիւն ունին, և *ներգործեն:* - 137. Երկրորդ՝ մարդկան քահանայութիւն նիւթական խորհրդով *ներգործի*. որպէս հացիւ գինեաւ և այլով. իսկ նոցայն աննիւթութեամբ կատարի: - 139. Զորօրինակ հուր միշտ ներգործութեամբ է ըստ ինքեան, և միշտ *ներգործէ* առ յայլս: - 162. Եւ ապա զի *ներգործօղն* բա՛նն է աստուածային որ ո՛չ երբէք արգելի: - 167. Դարձեալ այն զօրութիւնն և ներգործութիւնն և հարկաւորն մի է. և հետևին առ միմեանս. զի ամենայն որ հարկաւոր է՝ ներգործութեամբ է. և ամենայն ներգործութիւն զօրութեամբ *ներգործէ...:* - 168. Նախ՝ զի պատահմունքն են յէութենէ իրին երևեալ. այլ արարածք ոչ յէութենէ, այլ ի կամաց արարչին յոչնչէ *ներգործեալ* են: - 169. *Ներգործելն* աստուծոյ բնութեա՞մբ է թէ կամօք: - 173. Եւ այս ինչ է հարցումնդ զի թէ ասեմք կամաւ *ներգործէ*, ասեն՝ ապա փոփոխական *ներգործէ* որպէս մարդ. իսկ թէ ասեմք բնութեամբ, ասեն ցմեզ եթէ անբանապէս և ի հարկէ *ներգործէ:* - 173. Արդ այսպէս պատասխանեմք, եթէ բնութեամբ և կամօք *ներգործէ* աստուած ընդդէմ էակացս: - 173. Եւ ոմանք միշտ *ներգործեն* և ո՛չ են բանաւոր. որպէս հուրն: - 173. Նմանապէս և իմանալի լոյսն *ներգործէ՛* զայս: - 185. Կարկուտ և որոտ *ներգործէ:* - 202. Երրորդն է անապական ըստ զօրութեան *ներգործողին* զնա: - 221. Քսանևա՝ ե՞րբ *ներգործէ* տնկականն և զգայականն և բանականն: - 228. Զի թէպէտ ըստ ներգործութեանն բաժանին երբեմն ի բաժանելի մարմնոյն՝ զի առանց մարմնոյն ո՛չ կարեն *ներգործել* սոքօք...: - 249. **Եւ մանաւանդ զի բնութիւնն յանկարծակի ո՛չ կարէ *ներգործել*. այլ սակաւ սակաւ հետևելով յանկատարէն ելանէ ի կատարելն**: - 255. Եւ ոչ նոր, զի մի և նոյն ի սկզբանէ հրամանն արարչադիր առանց տկարութեան *ներգործէ* մինչ ի կատարած. և ըստ իւրաքանչիւր հոգւոյ՝ նոր հրաման ստեղծանելոյ ո՛չ արժանի: - 257. Եւ ըստ այնմ որ *ներգործէ՛* ի զգայարանս, կոչի զգայական: - 259. Եւ ըստ որում իմանայ և խորհի, կոչի բանական հոգի. որպէս այլուր բաժանի ի տեսողական զօրութիւնն. և յիմացականն. և ի յիշողականն. մնալով անբաժանելի *ներգործէ՛* ի նոսա: - 259. Այսպէս իմա և զբանական հոգւոյն. որ ի մարդն մի է և զանազանապէս *ներգործէ:* - 260. Ասեմք առ այս, եթէ և յետ մահուան ո՛չ բաժանին սոքա ի հոգւոյն ըստ էութեան. զի մի է էութիւն սոցա. այլ ըստ ներգործութեան. զի ո՛չ է մարմին՝ ո՛չ կարէ *ներգործել:* - 260. Ասեմք առ այս, թէ մի է հոգի հաւաստեաւ. և ո՛չ է ինքն ինքեան առաջին և վերջին. զի մի էութեան՝ առաջին և վերջին ո՛չ է. այլ ըստ ներգործութեան. զի ըստ առաջին և վերջին զօրութեանն՝ առաջին և վերջին *ներգործէ:* - 260. Դարձեալ ըստ կարգիս հարցանեմ թէ յո՞րժամ, և ի քանի՞ս սկսանի *ներգործել* տնկականն և զգայականն և բանականն: - 261. Նոյնպէս և արուեստն նախ նկարի ի միտքն և ապա *ներգործի* և կատարի: - 268. Եւ այս *ներգործեալ* եղև ի յադամ. և կամ առեալ ի քրիստոս. և կամ բնաւորեալ ի մեզ: - 275. Դարձեալ՝ բնականապէս ըմբռնէ գիտութիւնն զայն զոր *ներգործէ* բնութիւնն. իսկ գործն աստուածային՝ գիտութեամբ ո՛չ ըմբռնի. այլ հաւատո՛վք իմանի: - 292. Եւ ի ձեռն խաչին *ներգործին* ամենայն սքանչելիք որպէս ի ձեռն գաւազանին մովսէսի: - 332. Այլ և նստեալն ո՛չ կարէր

կանգնիլ. և հուր և լոյս ճրագի ո՛չ կարէր *ներգործել* ի թանձրութենէն: - 334. Սակայն ըստ ներգործութեան մեծագոյն է սրբութիւն մկրտութեանն. զի տպաւորէ զկնիքն. այլ և բանայ զդուռն արքայութեան. այլ և պատրաստէ՛ զմարդն առ ի խորհուրդս ամենայն. զոր ո՛չ *ներգործեն* ա՛յլ երկոքին եզական շնորհքն: - 462. Եւ այս ո՛չ զհետ իրերաց. այլ համանգամայն յանկարծօրէն ի վայրկեան ժամու զօրութեամբ հոգւոյն սրբոյ. որոյ յանկարծօրէն է *ներգործելն* աստուծոյ: - 470. Ի վեց իրաց գլխաւորօրէն փրկութիւն *ներգործեաց*. ըստ յորքայ վեցիցս փրկեցաք նովաւ: - 473. Գերաբնապէս ապա և բանն մարմին եղեալ անփոփոխելի և անապական *ներգործեալ* մարմին ըստ մերոյս բնութեան անբաժ միաւորութեան: - 477. Իսկ քրիստոս ամենևին ա՛կն՝ ամենևին ունկն՝ ընդ հօր և հոգւոյն աստուածաբար *ներգործէ:* - 479. Նախ նշանակէ զպէս պէս զօրութիւնս քրիստոսի. որ երբեմն զբարձրագոյնս *ներգործէր* և երբեմն զնուաստագոյնս երևեցուցանէր յինքեան: - 493. Երկրորդ՝ նշանակէ աստուածային խնամոցն առ մեզ *ներգործեալ:* - 493. Նա՛խ՝ զի յադամ եղև *ներգործեալ*. և ի մեզ բնաւորեալ. և ի քրիստոս առեալ: - 495. Երրորդ՝ ապականութիւնն *ներգործէ՛* հակառակ արարչին. զի արարիչն յանգոյից գոյացուցանէ, իսկ ապականութիւնն զգոյսս ի յանգոյութիւն տարալուծէ և այլայլէ՛. վասն որոյ անապակա՛ն է մարմին արարչին: - 499. Դարձեալ՝ եթէ առհասարակ սոքա՝ կերակուր՝ արիւն և խոցուածք և մահ՝ ապականութիւնք են որպէս դու ասես, և փրկութիւն աշխարհի սոքօք *ներգործեցաւ*. այսինքն չարչարանօք՝ մահուամբ և խոցւածովքն: - 503. Եւ չարչարանքն քրիստոսի երկու իրս *ներգործեաց*. նախ զպարտիս մեղաց վճարեաց. երկրորդ զդրունս երկնից եբաց: - 503. Եւ պատիժ սկզբնականին էր դժոխքն առաջին. և *ներգործելոց*՝ վերջինն...: - 507. Որ նշանակէ՛ թէ ի յայտնութենէն աստուծոյ և ի շարժմանէ հոգւոյն սրբոյ պարտ է *ներգործել* զայդ իշխանութիւն: - 539. Յայնժամ լոյս իմացականին կորեաւ և շիջաւ ի սատանայէ՛. և լոյս շնորհացն ո՛չ *ներգործեաց* ի նա...: - 563. Եւ թէ ասեն, միայն մարմինն օծանի՝ զի՞նչ *ներգործէ* ի հոգին: - 605. Ասեմք թէ՝ յորժամ միաւորեալ էր ի մարմինն միութեամբ *ներգործիւր* ի նմա ամենայն մարմնականքն: - 605. Եօթներորդ, ի սմա՛ է խորհուրդ եկեղեցւոյ *ներգործի*. և ի մեզ կատարի և կրի: - 614. և այլ պահք ամենայն վասն *ներգործեալ* մեղաց մերոց: - 650. Զոր օրինակ ո՛չ էր բնութեանս անսերմ յղանալ և կուսութեամբ ծնանիլ, զոր բանն աստուած սքանչելապէս *ներգործեաց:* - 733. Վեցերորդ՝ զի գործ աստուծոյ է ի նւաստ և ի փոքր ինչ իր զմեծամեծսն *ներգործել*. որպէս կաւովն զկուրին աչքն եբաց, և ի վիմէն ջուր բղխեցոյց **բժ**ան. և այլ բազումս: - 733-734. Ի գնացս հոգւոյն զօրացեալ, զի ըստ տրնօրէնութեանն խորհրդոյ միշտ հոգւով սրբով *ներգործէր*. ունելով տերև զաշխարհակեցոյց վարդապետութիւնն: - 768. Յայտ է յաշխարհակազմութեանն. ըստ որում իւրաքանչիւրքն պատշաճապէս *ներգործեցան:* - 780

**ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ +** Զորօրինակ՝ իրն ի ներկայս որ է նիւթ ներընդունակ՝ ունի կրկին զօրութիւն. որպէս հանդերձն կարէ՛ պատառիլ, և կարէ՛ ո՛չ պատառիլ. և ջուրն կարէ ջերմն գոլ, և կարէ՛ ո՛չ գոլ. և մինն ի նոցանէ՛ լինի *ներգործութեամբ* որն և հանդիպի: - 9. Ա՛յսպէս և որ ի հանդերձեալն լինելոցն է՝ ունի կրկին զօրութիւն լինելոյ և ո՛չ լինելոյ. և հանդիպմամբ մինն յառաջէ՛ ի նոցանէ և լինի *ներգործութեամբ*: - 9. Առ այս ասեմք, թէպէտ ստորնային մարմինք կառավարին վերնային մարմնովք, այլ մարդկային *ներգործութիւնք* կառավարին անձնիշխան կամօք. և անձնիշխան կամքն ո՛չ նըւաճի ի ներքոյ երկնային մարմնոց: - 10. Դարձեալ, որոյ է իր գործեացն՝ նորա՛ է և *ներգործութիւնն*...: - 11. Եւ որպէս կիրք ցաւոցն մարդոյն են, զի զգա՛յ զկսկիծն. նոյնպէս և կիրք հեշտութեանն նորա՛ են, եթէ չարեաց և եթէ բարեաց, ապա ուրեմն մեր է *ներգործութիւնն* և ո՛չ հարկին: - 11. Դարձեալ ասեն, ի հակառակ շարժմանց՝ լինի և հակառակ *ներգործութիւն*. ահա մոլորակք շարժին հակառակ. ապա ուրեմն և գործեն հակառակս: - 12. Երկրորդ՝ ասեմք եթէ և ոչ աստեղք վայրապար են ստեղծեալ. զի կառավարք են տարրեղէն մարմնոց որպէս ասացաք. այլ մարդկային *ներգործութիւնք* կառավարին յանձնիշխան կամաց...: - 13. Այլ արդ՝ որ հակակայութեամբ լինի՝ նա՛խ է զօրութեամբ՝ և ապա՛ *ներգործութեամբ* լինի: - 14. Որև առարկեն Նախ այսպէս, եթէ պատճառն է հարկաւոր. նաև *ներգործութիւն* նորին: - 15. Այլ արդ աստուած է պատճառ ամենեցուն և հարկաւոր. ապա ուրեմն ներգործութիւն նորին է հարկաւոր: - 15. Այլ արդ հուպ պատճառն է՝ հարկաւոր, և *ներգործութիւն* իւր. իսկ հեռին ո՛չ է հարկաւոր որպէս ասացաւ ի վերոյ: - 15. Այլ արդ որ սկիզբն և կատարումն է յաստուծոյ, աստուածային է *ներգործութիւն*. և սքանչելեաց իր: - 17. Երրորդ՝ զի է՛ հնար առնուլ ի վերայ մարմնական իմաստութեանց՝ և արհեստից հանճարաց՝ և բնականին *ներգործութեանց* ի բնութիւն իրին յառաջ ածելով զէութիւնն...: - 40. Տե՛ս՝ զի ի մի բնութիւն օտարութիւն ո՛չ ասի. վասն այն է

աստուծոյ կամքն մի և *ներգործութիւնքն* մի. զի բնութիւնն մի է: - 45. Տարակուսելի է առ այս, զի թէ հա՛րկ է որոց բնութիւնքն մի գոլ՝ նոցա և կամքն և *ներգործութիւնն* մի լինիլ. ընդէ՞ր ապա զի մարդկային բնութիւնս մի է և նոյն հօրն և որդւոյն՝ և ո՛չ է կամքն և գործքն մի: - 45. Իսկ այլ ամենայն անուանքն՝ *ներգործութեանցն* են առ մեզ արարեալ՝ և հովանւոյն. բայց բաժանին ամենայն անուանք յերկուս: - 49. Իսկ եթէ **բ** են սկզբունք, յա՛յտ է թէ **բ** են *ներգործութիւնք*: - 62. Իննևժերորդ՝ զի թէ առանձնապէս մարդ է, ապա հետևի բաժանեալ բնութիւն և **բ** կամք և կրկին *ներգործութիւն*. յայնժամ ո՛չ լինի բանն մարդ եղեալ. այլ մարդն բնակութեամբ ի փառս բանին բարձրացեալ: - 68. Եւ զայս միաւորութիւնս խոստովանիմք մեք մի անձն. և մի դէմ. և մի կերպ. և մի բնութիւն. և մի կամք, և մի *ներգործութիւն*: - 83. Ապա ուրեմն մի՛ է *ներգործութիւնն* ի միոյ կամաց միոյն քիստոսի յառաջ եկեալ և գործեալ: - 85. Ո՛չ ասեմք մի *ներգործութիւն* որպէս թէ չկայ բարձրագոյն և նուաստագոյն: - 85. Այլ մի ասեմք *զներգործութիւնսն* վասն մի միութենէն ներգործելոյ. որպէս մի ձեռն կտրէ՛ և կարէ՛. գրէ՛ և ջնջէ՛: - 85. Եւ այսպէս ասեմք մի բնութիւն և մի կամք և մի *ներգործութիւն* բանին մարմնացելոյ: - 85. Իսկ թէ ոք ընդդիմանալ ասելով, որպէս հրացեալ սուրն կտրէ և այրէ՛, այսպէս և կրկին *ներգործութիւնք* են ի քրիստոս: - 85. Նոյնպէս և զկիրսն և զզօրութիւնսն անբաժանաբա՛ր ասեմք ի քրիստոս. որպէս Կիրք է քաղցնուլն. և *Ներգործութիւն* զհազարսն կերակրել: - 85. Կիրք՝ ծարաւն. և *Ներգործութիւն*՝ արբուցումն. որ ասէր՝ «եթէ ոք ծարաւի իցէ՝ և եկեսցէ առիս և արբցէ»: - 85. *Ներգործութիւն*՝ հանգուցանելն զաշխատեալքս: - 86. *Ներգործութիւն* խաւարեցուցանելն զարեգակն: - 86. *Ներգործութիւն*՝ շարժելն զերկիր: - 86. *Ներգործութիւն*՝ աւերելն զդժոխս: - 86. Իսկ մի գոլ *ներգործութիւնք* և կիրք. որպէս քնարն՝ և որ շարժէ զքնարն՝ մի *ներգործութիւն* կատարեն և ո՛չ երկուս: - 86. Եւ որպէս որ շարժէ զգրիչն՝ և գրիչն՝ մի *ներգործութիւն* կատարեն և ո՛չ երկուս: - 86. Եւ որպէս հոգին և մարմինն մի *ներգործութիւն* կատարեն և ո՛չ երկուս: - 86. Որպէս մի է ի հոգւոյ և ի մարմնոյ մարդն՝ և մի *ներգործութիւն* մարդոյն: - 86. Այսպէս և բանն աստուած կատարէր մի *ներգործութիւն* մարմնով իւրով. զի միաւորութիւն բնութեանցն առանց փոփոխման և բաժանման է: - 86. Իսկ եթէ շնորհօք, զիա՞րդ յետոյ ի *ներգործութեանց* ասես հանդիպիլ այնոցիկ: - 94. Եւ այսու փառօք ըմբռնէր քրիստոս զամենայն հունաւորս *ներգործութեամբ:* - 100. Վեցերորդ՝ սկիզբն է *ներգործութեան*. և պատճառ կատարման. զի ի նմանէ սկսեալք՝ ի նա՛ կատարիմք: - 111. Եւ որպէս մի է արեգակն, և բազմանայ ի *ներգործութիւնս* իւր: - 113. Կամ ննջել և զարթնուլ. որ ո՛չէ ի յաստուած. այլ դնելով ի վերոյ ըստ *ներգործութեանն* տարացուցի: - 123. Եւ կոչի սէր, զի շարժէ՛ զմեզ. և յառաջածու զօրութիւն է. և երևեցուցիչ. և միաւորիչ. զի այսոքիկ սիրոյ *ներգործութիւնք* են. վասն այն կոչի սէր: - 128. Իսկ առողջ լսելիք և տկար՝ պատճառի ի համակարգս. և ի հաւասարն բնութեամբ. որք իմացմամբ և սիրով և *ներգործութեամբ* առաւել կամ նուազ են. ուստի առաւել կամ նուազ պարգևս ընդունին: - 131. Երրորդ՝ զի են էութիւն զօրութիւն և *ներգործութիւն:* - 134. Նախ՝ զի ընդհանուր դասք և իւրաքանչիւր անհատք ունին էութիւն՝ զօրութիւն՝ և *ներգործութիւն*...: - 137. Երրորդ՝ ամենեքեան զօրութիւնք կոչին. զի ունին զօրութիւն էութիւն և *ներգործութիւն:* - 137. Վեցերորդ՝ *ներգործութեամբ*. ըստ որում մաքրեն և մաքրին և այլն: - 138. Կայումն ըստ բնութեան, և շարժումն ըստ իմացման և *ներգործութեան:* - 142. Բոլորակ՝ այսինքն ի բնական *ներգործութեանց*. որպէս հրոյ այրելն և ձեան ցրտացուցանելն: - 142. Եօթն խոյրն զդիւական *ներգործութիւնսն* նշանակէ. որովք յաղթէ՛ զմարդ և պսակի: - 152. Տասներորդ՝ գործ մարդոյս նախ զօրութեամբ՝ և յետոյ *ներգործութեամբ* եղանի. իսկ աստուծոյն միշտ *ներգործութեամբ* է. որպէս ցուցանի յառաջիկայդ: - 157. Զի յատուկ է առաջին պատճառին որ է՛ աստուած՝ ի հարկէ էակ գոլ՝ և միշտ *ներգործութեամբ*, և իսկապէս *ներգործութեամբ*. որովք տարորոշի յայսցանէ՝ որ կարելի՛ են էակ գոլ. և երբեմն *ներգործութեամբ* և հանդերձ զօրութեամբ: - 162. Զի կամ ի զօրութենէ լինի *ներգործութեամբ*. որպէս մանկան հիւսնել: - 162. Եւ կամ ի *ներգործութենէ* լինի զօրութեամբ. որպէս ի շարժմանէ դադարեալ: - 162. Եւ միշտ *ներգործութեամբ* է. զի ո՛չ կարօտի սկզբան և կատարածի զօրութեամբ գոլ. ապա ուրեմն անսկիզբն է և անվախճան: - 162. Եւ իսկապէս *ներգործութեամբ*, զի զօրութեամբ որ է՛ անկատար իր ինչ ի յաստուած ո՛չ է. այլ ամենայն *ներգործութեամբ*. այսինքն ի տեսութիւնն և ի կամքն. ապա ուրեմն անշա՛րժ է տեսութեամբ և կամօք: - 162. Նախ որպէս ցուցաւ միշտ է աստուած էութեամբ և *ներգործութեամբ*. առ ինքեան միշտ է, և *ներգործութիւն* իւր առ ա՛յլս: - 162. Զորօրինակ հուր միշտ *ներգործութեամբ* է ըստ ինքեան, և միշտ ներգործէ առ յայլս: - 162. Չորրորդ զանազանութիւն՝ զի առաջին սկիզբն զօրութեամբ է տաճարին. և

երկրորդն *ներգործութեամբ*: - 163. Իսկ առ աստուած *ներգործութեամբ*. զօրութեամբ և սոսկ մտածմունք ո՛չ բնաւ: - 164. Արդ՝ է՛ զօրութիւն մի՝ որ հանդերձ *ներգործութեամբ* է. և է՛ զօրութիւն որ առանց *ներգործութեան* է: - 167. Զօրութիւն որ *ներգործութեամբ* է՝ հարկաւո՛ր է. իսկ առանց *ներգործութեան* զօրութիւն՝ կարելին է որ է ներընդունականն: - 167. Դարձեալ այն զօրութիւնն և *ներգործութիւնն* և հարկաւորն մի է. և հետևին առ միմեանս. զի ամենայն որ հարկաւոր է՝ *ներգործութեամբ* է. և ամենայն *ներգործութիւն* զօրութեամբ ներգործէ ...: - 168. Դարձեալ՝ այն զօրութիւնն միշտ է. զի բնաւորեալ է ընդ *ներգործութեան*. իսկ միւս զօրութիւնն երբեմն է. զի կամ նախ է *ներգործութեան*. որպէս մանկան հիւսնել: - 168. Կամ յետ *ներգործութեան*. որպէս ի շարժելոյն դադարիլ: - 168. Ապա յա՛յտ է զանազանութիւն սոցա, զի ոմն զօրութիւն հարկաւոր է և *ներգործութեամբ* և անփոփոխ և միշտ. որպէս հրոյ ջեռուցանել, և արեգական լուսաւորել: - 168. Եւ ուսեալք զայս, ընկա՛լ և այժմ զլուծումն խնդրոյն. եթէ լինելութիւն աշխարհի ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ ո՛չ է զօրութեամբ՝ այլ *ներգործութեամբ* վասն բազում պատճառի: - 168. Նախ՝ զի պարզ *ներգործութիւն* է աստուած. զի եթէ գոյ ինչ զօրութեամբ նախատեսութիւնն աստուծոյ՝ ապա բաղադրեա՛լ է և ոչ պարզ *ներգործութիւն*: - 168. Ապա ուրեմն նախատեսութիւնն աստուծոյ ո՛չ է զօրութեամբ. այլ *ներգործութեամբ*: - 168. Երկրորդ՝ զի միշտ *ներգործութիւն* է աստուած. ապա թէ գոյ ինչ զօրութեամբ, ո՛չ լինի միշտ *ներգործութիւն*. այլ երբեմն: - 168. Չորրորդ՝ զօրութիւն և *ներգործութիւն* են հակակա՛յ իրերաց. ապա թէ է զօրութեամբ և *ներգործութեամբ*՝ գո՛յ ինքն ինքեան հակակայ որ է բնաւ սուտ: - 168. Հինգերորդ՝ զօրութեամբ և *ներգործութեամբ* փոփոխեն զմիմեանս: - 168. Վեցերորդ՝ զօրութեամբն է անկատար՝ և *ներգործութեամբն* կատարեալ: - 168. Եօթներորդ՝ *ներգործութեամբն* պատուական է քան զօրութեամբն...: - 168-169. Ութերորդ՝ *ներգործութեամբ* բնութեամբ առաջին է՝ և ժամանակաւ վերջին. որպէս բոլոր եղեալքս: - 169. Իններորդ՝ և է ուրեք ժամանակաւ առաջին *ներգործութեամբն* և վերջին զօրութեամբն. որպէս շարժման դադարիլն: - 169. Է՛ որ միշտ *ներգործութեամբ*. որպէս աստուած. և է՛ որ միշտ զօրութեամբ. որպէս նիւթն և ժամանակ. և է՛ որ երբեմն զօրութեամբ և երբեմն *ներգործութեամբ*. որպէս այսոքիկ որ ի լինելութեան և յապականութեան են: - 169. Ապա ուրեմն յա՛յտ է ի բաժանման է թէ ի յաստուած ո՛չ գոյ իր ինչ զօրութեամբ. այլ բովանդակն *ներգործութեամբ* որպէս ցուցաւ: - 169. Այլ արդ՝ լինելութիւն աշխարհի առ ինքն ըստ ինքեան ասի զօրութեամբ և *ներգործութեամբ*. զի ի զօրութենէ եկն ի *ներգործութիւն*. զի թէ ոչ գոյր զօրութեամբ նախ՝ ո՛չ լինէր յետոյ *ներգործութեամբ*: - 169. Իսկ առ նախատեսութիւն արարչին՝ միշտ *ներգործութեամբ*: - 169. Եւ զորօրինակ՝ անորակ նիւթն որ է՛ միշտ զօրութեամբ, ամենայն մարմինք որ *ներգործութեամբ* են՝ առ նա զօրութեամբ են: - 169. Նոյնպէս և զօրութեամբ լինելութիւն աշխարհիս՝ առ աստուած *ներգործութեամբ* է: - 169. Մին է՝ զի միշտ ոչ ինչ է. զի ոչ զօրութեամբ և ո՛չ *ներգործութեամբ* ունի զգոլն. և յայս ոչ էակէս ոչ ինչ լինի: - 173. Եւ դարձեալ է՛ ոչ էակ՝ որ թէպէտ *ներգործութեամբ* ո՛չ է, սակայն զօրութեամբ ունի զգոլն. և յայսպիսի յոչնչէ եղեն արարածք ամենայն. ապա ուրեմն յայտնի է հարցումնդ: - 173. Նմանապէս ծանիր և զայս կրկին է էակն. մին մշտնջենաւոր և միշտ *ներգործութեամբ*, որպէս աստուած. հրեշտակք. և արեգակն և հուր: - 173. Իսկ մշտնջենաւոր էակն միայն մին ունի զօրութիւն որ է առինքն *ներգործութեամբ*. որպէս հրոյ ջեռուցանելն. և արեգական լոյսն. և հրեշտակին անապականութիւնն: - 173. Եւ թէ ոք ասիցէ, որովհետև *ներգործութիւնքն* բնութեանց հետևին, որպէս հուրն միշտ այրէ, և ջուրն ցրտանայ և ջերմանայ. ապա ճշմարիտ երևի բանն դամասկացւոյն՝ եթէ է՛ ի քրիստոս կրկին *ներգործութիւն*. որպէս և կրկին բնութիւն: - 174. Ասեմք առ այս Նախ՝ եթէ ո՛չ ամենայն գործ բնութեան հետևի, այլ և կամաց. որպէս մարդոյ. զի մի է կամք ի քրիստոս, մի է և *ներգործութիւնն*: - 174. և Դարձեալ՝ որպէս մի է բնութիւն բանին մարդացելոյ ըստ սրբոյն կիւրղի, մի է և *ներգործութիւնն* ըստ սրբոյ աստուածաբանին գրիգորի և դիոնէսիոսի: - 174. Եւ ո՛չ ուրեք երբեք միտք ուղղափառաց բաժանմամբ տեսանէ. ո՛չ զբնութիւնս և ո՛ զկամս և ո՛չ *ներգործութիւնս* որ յառաջն հարցափորձեցաք սակաւիկ: - 174. Հնգետասաներորդ՝ անդադա՛ր է ի *ներգործութիւն* յորս կարգեցաւ: - 186. Ի բաց դնելն կրկին է. մին ըստ տեսակի, և միւսն *ներգործութեամբ*: - 186. Այլ ըստ *ներգործութեան* որ ի մէնջ պակասի և լուսաւորի՝ զայն ասէ: - 186. Այլ ժամանակն է առաջին շարժումն երկնից, սակայն ո՛չ չափէ զնա. այլ չափէ՛ զտարրականս և *զներգործութիւնս* մեր յորում ո՛չ է: - 198. Քանզի ժամանակ ըստ ինքեան ո՛չ ճանաչի. այլ միայն մարդկային *ներգործութեամբ*: - 199. Պտուղքն դրախտին շօշափելիք են և

կերակրելիք. հատանի և ծասկի և փոփոխի ըստ պատահական որակացն. և անապական մնայ ըստ գոյացութեանն և *ներգործութեանն* ի կերօղն: - 223. Որպէս հաց մարմնոյն քրիստոսի ըստ գոյացութեան և *ներգործութեան* անապական է. թէ և փոփոխի ըստ արտաքին որակացն: - 223. Իսկ լեարդն զի *ներգործութեամբ* է արիւնն ի նմա: - 241. Այլ և լինի յաւելի ի հրոյն *ներգործութեանց* սեաւ գոյն. որպէս հնդկայինն ի ջերմոյ արևուն լինի սեաւ գունով: - 245. Զի թէպէտ ըստ *ներգործութեանն* բաժանին երբեմն ի բաժանելի մարմնոյն՝ զի առանց մարմնոյն ո՛չ կարեն ներգործել սոքօք, այլ անբաժանելի մնան ըստ էութեանն ի հոգին. որպէս ցուցանելոց եմք յառաջիկայսդ: - 249. Դարձեալ զօրութիւնք հոգւոյն բաժանին երրակի ըստ երից *ներգործութեանցն*. որ է՛ կենդանանալն. զգալն. և բանաւորիլն: - 249. Եւ որքան սոքա առաւելուն, առաւել ծկտի *ներգործութիւն* իմացականին: - 251. Նախ՝ զի նիւթն այն ունի առ ինքն բնական զկենդանութիւն տնկականին. և տնկականն մա՛սն է զգայականին. և զգայականն բանականին. և սոքա ո՛չ որոշին ի բոլորէն. զի մի են էութեամբ ի մարդն թէպէտ ա՛յլ են *ներգործութեամբ:* - 254. Երկրորդ՝ զի զօրութեամբ ունի զհոգին յինքեան ծածկեալ. որ յետոյ *ներգործութեամբ* երևի: - 254. Եւ թէ ասէ ոք, ո՞րպէս է բանական հոգին նախ զօրութեամբ և յետոյ *ներգործութեամբ:* - 254. Վեցերորդ՝ զի զգործն կենդանւոյ տեսանեմք ի նա որ է՛ ջերմութիւն, շարժութիւն, և *ներգործութիւն*. որ երևի ի կազմելն զհիւթն: - 256. Երրորդ՝ զի զօրութեամբ է նիւթն պա՛րտ է ծածուկ գոլ, զի *ներգործութեամբ* երևեսցի: - 256. Չորրորդ՝ զի զօրութիւն է, և յետոյ *ներգործութեամբ* փոխի: - 256. Այլ զանազան զօրութիւն ի զանազան *ներգործութեանցն* երևի. որ է՛ աճիլն. զգալն. և խորհիլն: - 259. Զի մի և նոյն հոգին ըստ այնմ որ ազդէ՛ ի տնկական *ներգործութիւնն* որ է՛ կերակրական. աճողական. և ծննդական. կոչի տընկական: - 259. Եւ զորօրինակ՝ մի է էութիւն իմացման, այլ ի **ե** զգայութիւնս բաժանի ըստ *ներգործութեանն:* - 259. Այսպէս մի է էութիւն հոգւոյն ըստ ինքեան, և յերիս բաժանի ըստ *ներգործութեան:* - 259. Եւ յայնժամ զգայականն և տնկականն ո՛չ ունին *զներգործութիւն* իւրեանց ի կազմողական զօրութենէն. այլ ի նոյն ինքն ի հոգոյն: - 260. Ասեմք առ այս, եթէ և յետ մահուան ո՛չ բաժանին սոքա ի հոգւոյն ըստ էութեան. զի մի է էութիւն սոցա. այլ ըստ *ներգործութեան*. զի ո՛չ է մարմին՝ ո՛չ կարէ ներգործել: - 260. Ասեմք առ այս, թէ մի է հոգի հաւաստեաւ. և ո՛չ է ինքն ինքեան առաջին և վերջին. զի մի էութեան՝ առաջին և վերջին ո՛չ է. այլ ըստ *ներգործութեան*. զի ըստ առաջին և վերջին զօրութեանն՝ առաջին և վերջին ներգործէ: - 260. Դարձեալ՝ զկարգ յղացման յարգանդին պահէ՛ աստ և ի ծննդեանն. այսինքն զսննդեան և զգայութեան և զբանի *ներգործութիւնս* այսպէս: - 266-267. Ըստ բնականին այս է. զի ամենայն իր որ լինի՝ յանկատարութենէ ի կատարումն ելանէ, և ի զօրութենէ ի *ներգործութիւն* որպէս ի վերոյ ասացաւ: - 267. Զիմաստութիւնն հոմանուն է և ի բազում տեսակս որոշի. և բնաւքն ամենայն՝ մտա՛ցն են *ներգործութիւն*. վասն այն կոչի իմաստութիւն որ է իմացութիւն: - 269. Քանզի, ըստ ունակութեան՝ զօրութեան՝ և *ներգործութեան*. բայց այլազգաբա՛ր են ի մեզ և յաստուած: - 272. Եւ զանչարչարութիւնն ի վերնատունն. յորժամ զմարմինն իւր ուտել ետ աշակերտացն՝ անչարչարելի էր *ներգործութեամբ* և ոչ թէ զօրութեամբ: - 282. Ասեմք թէ յակոբ ո՛չ *զներգործութեան* անունն հարցանէր աստուծոյ, զի գիտէր որ աստուած էր և ինքն իէլ կոչեցաւ որ է աստուածատես. այլ անուամբ զբնութիւնն և զգոյացութիւնն աստուծոյ կամէր ուսանիլ: - 311. Այլ թէ վերջինքս կոչեմք նմա անուն աստուած՝ արարիչ՝ և այլն. *ներգործութեանն* է ցոյցք և ո՛չ թէ գոյացութեան կամ բնութեանն է յայտնութիւն: - 312. Չորրորդ՝ զանազան նկարք աշտանակին, զանազան *ներգործութիւնք* ընթացից նոցա առ երկիրս, կենդանեաց՝ տնկոց՝ և անշնչից: - 346. Չորրորդ՝ պղինձն ոսկէտեսակ. և տեառն մարմինն աստուածատեսակ փառօք և *ներգործութեամբ*: - 386. Այլ և գոհացաւ ի վերջոյ ի վերայ ամենայն յաղթութեանցն. և տէր մեր ի վերայ ամենայն *ներգործութեանցն*. որ և ամենայն օրհնութիւնքն ի տէրն ակնարկէ. որ եղև գլուխ հեթանոսաց. յաղթեաց մահու և բարձրացաւ ի գերեզմանէ: - 438. Զանազանին սոքա *ներգործութեամբ* իւրեանց: - 462. **Սակայն ըստ *ներգործութեան* մեծագոյն է սրբութիւն մկրտութեանն. զի տպաւորէ զկնիքն. այլ և բանայ զդուռն արքայութեան. այլ և պատրաստէ՛ զմարդն առ ի խորհուրդս ամենայն. զոր ո՛չ ներգործեն ա՛յլ երկոքին եզական շնորհքն**: - 462. Եւ ունի երիս *ներգործութիւնս:* - 462. Զի գալ հոգւոյն սրբոյ պատճա՛ռ էր կրկին *ներգործութեան*. այսինքն սրբութեան արմատոյ մեղաց. և պտղաբերութեան կուսածին զաւակին. ծնանիլ և կոյս մնալ յետ ծննդեանն: - 463. Երկրորդ՝ զի *ներգործութեամբ* մասն՝ ո՛չ լինի զօրութեամբ բոլոր. վասն որոյ ոչ է նիւթ ծննդեան: - 470. ...իսկ մեք ո՛չ ի գործոց, այլ ի հաւատոցն քրիստոսի ընկալաք զսկզբնական արդարութիւնն և *զներգործութիւն*

մարմնոյ և զսրբութիւն մտաց: - 473. Ութերորդ՝ որպէս ի միաւորիլ հոգւոյ և մարմնոյ յառաջագայի ի միոյ կամաց միով զօրութեամբ հանճար և *ներգործութիւն:* - 478. Այսպէս և բոլոր տընօրէնութիւն մարդացելոյն բանի՝ միով զօրութեամբ և կարողութեամբ ըստ միութեանն կամաց մի *ներգործութիւն* երևի: - 478. Երկրորդ՝ ի *ներգործութիւնն*. զի մկրտութիւնն քրիստոսի արդարացուցանէ և զդուռն երկնից բանայ. և յովհաննուն ո՛չ: - 488. Քսանը**բ**, Վասն յուսոյ և *ներգործութեանց* նորին: - 526. Ասեմք առ այս, թէ յերրորդութիւնն սուրբ մի է բանն և իմաստութիւնն և բնութիւն և կեանք և *ներգործութիւն* և այլն ամենայն. բաց յառանձնութենէն որ է ծնօղ ծնեալ և բղխեալ: - 530. Եւ նա՛խ զօրութեամբ, և ապա՛ *ներգործութեամբ:* - 541. Այլ սոքա ամենայնքն նախկին և պատւականք են. այսինքն քահանայ քան զսարկաւագ. և բանական քան զգայական. և *ներգործութեամբ* քան զօրութեամբ. այսպէս արծակելն քան զկապելն: - 541. Յոհան անտիոքայ՝ թղթով միաբանեալ. **բճ** հարք ընդ դէմ նեստորի որ **բ** բնութիւն ասէր և **բ** որդի. կրկին կամք և կրկին *ներգործութիւն* քրիստոսի. և զաստուածածինն մարդածին: - 542. ...և նոքա զամենայն ինչ ծածկապէս տեղեկացան. զի ժողովեալքն ի քաղկեդոն ակն առին թագաւորին և կնոջ իւրոյ. և զարհուրեցան ի սպառնալեացն. և զնեստորի կարծիսն հաստատեցին. զերկու բնութիւնսն. և զ**բ** կամսն. և զ**բ** *ներգործութիւնսն:* - 543. Իսկ անձնականն ո՛չ. զի *ներգործութեամբ* է ստացեալ զայնոսիկ: - 568. Եւ բազո՛ւմ է *ներգործութիւն* յուսոյն: - 574. Եւ ըստ *ներգործութեանն* սահմանի քառակի: - 575. Արդ յորժամ ասեմք կրկին զսէրն, այսինքն աստուծոյ և ընկերին. կրկինս այս ո՛չ է ըստ ունակութեանցն. այլ ըստ *ներգործութեանցն*: - 575. Նա՛խ արար խաղաղութիւն յանձն իւր. զի զաստուածային և զմարդկային բնութիւնն միաւորեաց յինքեան ի մի կամս և ի մի *ներգործութիւն* անբաժանաբար: - 585. Չորրորդ ի հասակն է իմանալ. զի տիքն անցանեն, և զօրութիւնք և *ներգործութիւնքն* պակասին...: - 666. Իսկ հոգիք հաւատացելոց որք ոչ գնացին այսպէս զհետ նորա, այլ ընկալան ի *ներգործութեանցն* սատանայի և ի կրից աշխարհի...: - 688. Քսան**ե**, ամենայն *ներգործութիւնք* կամ ենթակայից են, և կամ անձանց. իսկ հոգին բաժանեալ ի մարմնոյն՝ ո՛չ է անձն և ո՛չ ենթակայ: - 694. Ապա հոգին առանց մարմնոյ ո՛չ ունի *ներգործութեամբ* ինչ վարձ կամ պսակ: - 694. Այլ յորժամ հոգին միաւորեսցի ընդ մարմնի և յերկուցն լինիցի անձն, յայնժամ կարէ՛ ունել *ներգործութեամբ* զփառս կամ զտանջանս: - 694. Սակայն ի յղութեանն իջանէ չար հոգին ի յորովայն մօրն. և նմա զօրութեամբն և *ներգործութեամբն* ծնանի մանուկն և սնանի և հասանէ յերիտասարդութիւն...: - 706. ...իսկ *ներգործութեամբ* չարին յապաղեաց ժամանակաւ. - 716. Զպայծառութիւնն՝ ի թաբօր լեառն. և Զանչարչարութիւնն ի յօրհնելն զմարմինն իւր և տալ աշակերտացն ի վերնատունն՝ անչարչարելի էր մարմինն քրիստոսի *ներգործութեամբ* և ո՛չ զօրութեամբ: - 723. Դարձեալ՝ էութիւնն մնայ, այլ *ներգործութիւնն* պակասի՝ այսպէս. զի ջերմութիւն հրոյն և ցրտութիւն ջրոյն և փոփոխմունք օդոյդ որպէս ամպք և այլն, և սևութիւն երկրի...: - 728. Նմանապէս և խաչն աստուծոյ՝ է՛ ի կամացն աստուծոյ և ի նորին *ներգործութենէն* որ անապական կամի զնա. զի նովաւ արար փրկութիւն ազգի մարդկան: - 733. Ասեմք եթէ՝ բնութեամբ բարին մի է. որպէս ասէ մեծն դիոնէսիոս. այլ *ներգործութեամբ* բազում է ի զանազան կամաց յառաջ եկեալ: - 758. Եւ դարձեալ՝ թէ տեսանես ուղղակի՝ ըստ ինքեան առաւել է բարին և բազում. զի է՛ բնութեամբ բարի որպէս աստուած. և *ներգործութեամբ* բարի որպէս արարածք ամենայն: - 758. Իսկ չար՝ թէպէտ լինի *ներգործութեամբ* անձնիշխան կամօք, այլ բնութեամբ չար ո՛չ է ըստ ինքեան. զի ո՛չ է էութիւն այլ պակասութիւն բարւոյ. որպէս ցուցաւ ի վերոյ ի **ե** համարն: - 758. Նոյն և կամք և կիրք և *ներգործութիւն* մարդկային ընդ աստուածայինն միաւորեալ. միջնորդելով հոգւոյ բանականի՝ աստուածութեանն՝ և մարմնոյն. որ է՛ *ներգործութեամբ* միշտ աստուած և փրկիչ բնութեամբ. քրիստոս. նոր ադամ. էմմանուէլ ճշմարտութեամբ: - 770. Եւ է՛ ինչ ի *ներգործութեանց* հոգւոյն աստուծոյ շնորհաց. որ ծածկէ՛ յիմաստնոց և յայտնէ տղայոց յիւրաքանչիւր ժամանակս ըստ կամաց իւրոց: - 772. Դարձեալ, ամենայն շնորհք առ ո ոք և իցէ՝ բառնի վասն մեղաց. ո՛չ ըստ ունակութեան՝ այլ ըստ *ներգործութեան* կամ նշանակութեան: - 782. Եւ է՛ շնորի յատուկ ընրութեամբն աստուծոյ, որ պատճառ է՛ զփառս զանազան *ներգործութեամբ*. և է՛ սա՛ ան՛ի բաց դնելի անզեղջ խոստմամբ ի կողմանէ տուողին. որպէս է՛ առ մեզ շնորհք աւազանին: - 783. Երրորդ, *ներգործութեամբ* ի տեսութիւնս աչաց. սոքա կոչին հաւատ անտեսակ: - 784. Թէ զի՞նչ է ասելն ի սահման հաստատութեանն, մասամբ ինչ զօրութեամբ և մասամբ ինչ *ներգործութեամբ:* - 787. Ո՞ր է մասն զօրութեամբ, և ո՞ր մասն *ներգործութեամբ:* - 787. Զի առաջնոյն ասէ՝ մարմին բարձր լուսաւորեալ *ներգործութեամբ* որ է՛ հրեղէն. այսինքն լուսաւորն երկին:

- 787. Իսկ երրորդն մասամբ լուսաւոր և մասամբ թափանցանց. որ ասէ զօրութեամբ և *ներգործութեամբ:* - 788. Այլ և շարժումն երկնից բոլորածև կարէ՛ ասիլ. մասամբ զօրութեամբ, և մասամբ *ներգործութեամբ:* - 788. Զի մասն որ առ կէտն արևելից՝ է՛ *ներգործութեամբ* ի յելս, և զօրութեամբ ի մուտս: - 788

**ՆԵՐԵԼԱՊԷՍ** - Երրորդ՝ սրբութիւն յատկական. որպէս սրբոյ կուսին, բառնայ զսկզբնական մեղս և զարմատն և դիւրասահութիւն մեղանչելոյն մահու չափ և *ներելապէս:* - 462. Եւ ունէր շնորհօք արգելք ի մեղաց մահու չափ և *ներելապէս*. որպէս յովհաննուն և երեմիային: - 463

**ՆԵՐԵԼԻ +** Վաթսունևմի, Թէ զի՞նչ է *ներելի* մեղքն, և անթողլի: - 285. Եւ ո՛չ *զներելին*, զի հոգւովն մաքրեցաւ: - 383. Վերջինն *զներելին*: - 384. Ականայն անգիտութեամբ է. որ *ներելի*՛ է և թողելի՛. իսկ կամաւորն անթողելին և մահու չափն է: - 385. Եւ երեք է *ներելի* մեղք: - 385. Նա՛խ՝ ի սեռս իւր *ներելի* և փոքր. որպէս դատարկաբանելն և մորոսն: - 385. Երկրորդ՝ որ անգիտութեամբն է և ականայն՝ է՛ մեղք *ներելի* և այն. որպէս մեղք մանկութեան և անգիտութեան: - 385. Երրորդ՝ յորժամ ի խոստովանութիւն և յապաշխարութիւն գայ, լինի *ներելի* և ականայ. զի թէ նախ քան զմեղանչելն ականայն, և եթէ յետ մեղացն ականայն, լինի զղջմամբն *ներելի* և թողելի: - 385. Երրորդ՝ *ներելի* մեղքն և փոքր՝ թէ ո՛չ ապաշխարի, լինի մահու չափ և անթողլի: - 385. Եւ զայս հրոյ իմանի որ առ գալստեամբն քրիստոսի ոմանց մաքրութիւն *ներելեացն* լինիլ և առաւել պայծառանալ. որք ոսկի և արծաթ և ականս պատուականս շինեցին: - 488. Եւ որք **դ** ասեն՝ զներքին դժոխքն մահու չափ մեղաւորացն ասեն. և զքաւարանն *ներելի* մեղաւորաց. և զլիմպոսն արդարոց. և զդժոխս ոչ մկրտելոցն: - 504. Մեղք անունն մի է, և բոլորապէս յերիս տեսակս որոշի. այսինքն ի սկզբնականն, և ի մահացուն, և ի *ներելին*: - 567. Իսկ *ներելի* մեղքն է յանցանք փոքրագոյն. քանզի ի մանկունս յետ մկրտութեան նախ յառնեն *ներելիքն*, և ապա՛ մահու չափքն: - 567. Եւ կոչի *ներելի*, իբր *ներելի* և թողլի. զի ականայ և անգիտութեամբ հանդիպի: - 567. Ա՛րդ՝ մեղք սկզբնականին չորիւք զանազանի յայլոցն. այսինքն ի մահացուէն և ի *ներելոյն*. ըստ միութեան. ըստ հասարակութեան. ըստ հաւասարութեան. ըստ որակի տարբերութեան: - 567. Նա՛խ ըստ միութեան. զի մի է մեղքն սկզբնական և ո՛չ բաժանի. որպէս մահացուն է. և *ներելին* **գ**: - 567. Զի մահացուն ո՛չ էր ի յերեմիայ և ի յովհաննէս որք սրբեցան յորովայնէ. թէպէտ ո՛չ զերծանեին ի *ներելւոյն:* - 568. Այլ կոյսն մարիամ աստուածածին՝ էր ազատ ի մահացուէն և ի *ներելւոյն*. բայց ո՛չ ի սկզբնականէն. զոր հոգւովն սրբով մաքրեցաւ: - 568. Իսկ զանազանի մահացուն և *ներելին* ըստ առաւելութեան և նուազութեան. որպէս առաւել է հարկանումն օձի քան զլուոյ. և նետի քան զփշի. այսպէս և մահացուն է առաւել քան *զներելին:* - 568. Իսկ զանազանի մահացուն և ներելին ըստ առաւելութեան և նուազութեան. որպէս առաւել է հարկանումն օձի քան զլուոյ. և նետի քան զփշի. այսպէս և մահացուն է առաւել քան *զներելին:* - 568. Իսկ *ներելին* թէպէտ որոշի յերիս տեսակս ըստ մեծութեան և նւաղութեան. այլ մանրամասնաբար յանթիւս ելանէ. որպէս ծիծաղիլ. վայրաբանել. և այլն: - 568. Ապաշխարութիւնն ընդ դէմ ներգործական մահու չափ մեղացն. և Օծումն ընդ դէմ *ներելի* մեղացն: - 587-588. Եւ գիտո՞ւն էր որ կարէր ճանաչել զմահու չափ մեղքն և *զներելին:* - 601. Եւ վասն *ներելեացն* թողութեան ասացաւ ի թուոց **իբ** գլուխն, **կա** համարն: - 603. Եւ գործ ա՛յս խորհրդոյս է՛, որ զմնացեալ *ներելի* մեղքն թողու: - 604. Դարձեալ՝ օծումն հիւանդաց ո՛չ սրբէ զմահու չափ մեղս. այլ *զներելիս:* - 604. Իսկ խոստովանութիւնն զմահու չափն և *զներելին* սրբէ...: - 604. ...այսպէս և *ներելին* սրբի բանիւ քահանային և աղօթիւք: - 604. Ապա ուրեմն բան քահանային՝ անուամբն աստուծոյ սրբէ *զներելիսն:* - 605. Եւ որպէս բազում են *ներելիքն* և անթիւ որ ի զգայարանս և ի միտս: - 605. Նոյնպէս և օծումնս այս է՛ վերջին որ զփոշետեսակ և *զներելի* մեղսն սրբէ...: - 605. Թէ գիտէ և մոռանայ, *ներելի* մեղք է: - 620. Եւ յորժամ միտքն երթայ յաշխարհական հոգս թէ զինչ կերիցուք և արբցուք, է՛ *ներելի:* - 620. Եւ արդ՝ անգիտութեամբն *ներելի*՛ է. իսկ գիտութեամբն ապաշխարելի. իսկ չարութեամբ մեղքն է պատժելի. կամ աստ ժամանակեայ, կամ անդ յաւիտենական: - 701. Եւ այլ վարդապետք փայտ խոտ և եղէգն *զներելի* մեղս ասեն. և առաւել և նուազ և միջակ: - 702. Իսկ այլք զերեք տեսակ մեղացն. այսինքն սկզբնականն որ է խոտ. և *ներելին* եղէգն. և մահացուն փայտ: - 702. Երրորդ, նոքա փայտ խոտ և եղէգն *զներելիսն* ասեն. որք անդ ծախին և ազատին. - 702. և Ոմանք դատին այլ ո՛չ դատապարտին. որպէս միջակ արդարքն. որք ունին *ներելի* և մասնաւոր մեղս: - 739

**ՆԵՐԵՄ +** Եօթներորդ ասեն, թէ յաստուծոյ չէ չարն, վասն էր *ներէ* սատանայի, և չար մարդկան: -

17. Դարձեալ, թոյլ տալ և *ներել* չարեաց՝ վասն բարւոյ է: - 17. Նաև մարդկան չարեաց թոյլ տալ. զի կամ ընտրեսցեն զբարիս՝ կամ յետոյ զղջասցին. և այլ պէսպէս նախախնամութեամբ որպէս ինքն գիտէ աստուած՝ *ներէ* չարեաց. որպէս տեսանելոց եմք յառաջիկայսդ: - 17. Նախ՝ եթէ աղքատութիւն և մեծութիւն տիրելն և ծառայելն, է՛ յաստուծոյ. սակայն ոմանց կամելով՝ և ոմանց *ներելով* և թոյլ տալով. այսինքն զբարի մեծատունս և զաղքատս կամելով առնէ. և զչարսն *ներելով* և թոյլ տալով առնէ: - 19. Վասն երրորդին ասէր յոր զբարի և չար գործոց հատուցմունքն լինիլ առհասարակ յետո՛յ ի հանդերձեալն. զի աստ են մեղաւորք և հնացեալք ի մեծութեան. և *ներէ* նոցա աստուած վասն կրկին պատճառի: - 324. Նախ՝ թոյլ տա՛լն է աստուծոյ. որ անձնիշխան կամօք ամրանայ մարդ ի չարն, և աստուած *ներէ* և ո՛չ երկիւղիւ խրատէ զնա: - 336. Նոքա ո՛չ հաւասար մովսէսի *ներեն* զքրիստոս աստուած. զի մովսէս աստուած կոչեցաւ. և զնա մարդ խոստովանին սոսկ: - 350. Այսինքն մինչև գ ազգն *ներեմ*. կամ գ դարս. և ի չորրորդն ո՛չ դառնամ ի վրէժ խնդրելոյ. այլ հատուցանեմ զմեղս հարց յորդիս: - 351. Ո՛չ թէ զմեղս հարց յորդւոցն խնդրէ. այլ մեղաց հարցն *ներէ* երկայնամիտ լինելով մինչև յորդոց յորդիս զի դարձցին ի մեղաց: - 351. **Ապա թէ որդիք և թոռունք չօգտին ի *ներելոյն*, յայնժամ պատուհասէ՛ և ջնջէ զյիշատակ չար ազգին**: - 351. Երբ զերեք հասակի մեղսն *ներէ* աստուած՝ և թէ ի չորրորդն ո՛չ զղջանայ, յայնժամ պատուհասէ՛: - 351. Երկոտասաներորդ, զի ուսուցէ մեզ զմարդասիրութիւնն և *զներելն* միմեանց. որպէս աստուած երկայնամիտ եղև առ քանանացիսն որ պատժապա՛րտք էին: - 417. Յնգետասաներորդ՝ յեսու *ներեաց* աքարայ զտիւն և զգիշերն մինչ լուսով առաւօտին վիճակաւ յանդիմանեցաւ: - 418. Եւ տէրն մեր *ներէ՛* մեղաւորաց աստ ի կեանս և յետ մահու գիշերի. և ի ծագել լուսոյ յարութեանն՝ ստուգութեամբ դատապարտէ՛: - 418. Զի՞նչ է խորհուրդ բարեկենդանին որ յամենայն տեղիս ի վանորայս և յանապատս *ներե՛ն* սակաւ ինչ ի չափաւոր վայելս: - 657. Երրորդ, *ներելով* արծակէ զսատանայ որով փորձին ընտրեալքն որպէս ցորեան ի շտեմարանս արքայութեան...: - 706. Վասն որոյ ի կամս ապաստան *ներեսցուք* հաւանել ճշմարտութեանն: - 759. Եւ պիտանեացն՝ փառս վերընծայել այնմ, որ փառաւորեալն է ի պարգևս իւր. իսկ զանպիտանսն *ներել* մերոյ փոքր ընկալ անօքոյ և դանդաղկոտ փութոյ: - 772-773

**ՆԵՐԸՆԴՈՒՆԱԿ +** Չորրորդ՝ զի թէ զոր ինչ ասեմք՝ ի հարկէ ճշմարիտ էր, յայնժամ աւելորդ էր խորհիլն մեր. զի խորհուրդն ո՛չ է ի հարկաւորացն. այլ ի *ներընդունակացն*. զի կարէ՛ լինիլ, և ո՛չ լինիլ. զի թէ առնեմք զայս՝ եղիցի՛ այն. և թէ ո՛չ առնեմք զայս՝ ո՛չ եղիցի այն: - 9. Զորօրինակ՝ իրն ի ներկայս որ է նիւթ *ներընդունակ*՝ ունի կրկին զօրութիւն. որպէս հանդերձն կարէ՛ պատառիլ, և կարէ՛ ո՛չ պատառիլ. և ջուրն կարէ ջերմն զոլ, և կարէ՛ ո՛չ զոլ. և մինն ի նոցանէ՛ լինի ներգործութեամբ որն և հանդիպի: - 9. Կամ է՛ ի *ներընդունակ* պատճառն իւր. որ հաւասար է ի լինիլն և յոչ լինիլն. որպէս ելանել ի զբօսանս, կամ ո՛չ. լինիլ անձրև, կամ ո՛չ: - 10. Իսկ թէ է ի պատճառն *ներընդունականն*, յայտնի՛ է որ հաւասար ունի զգոլն և զո՛չ գոլն որպէս ասացաւ: - 10. Ասեմք առ այս, եթէ՝ ամենայն ինչ որ լինի՝ ունի պատճառ. և նախ է պատճառն քան զպատճառելին. այլ ամենայն պատճառ ո՛չ է հարկաւոր. այլ զո՛յ և *ներընդունակ* պատճառ. ապա ուրեմն ո՛չ է հարկաւոր պատճառ շարժումն աստեղաց: - 10. Զօրութիւն որ ներգործութեամբ է՝ հարկաւո՛ր է. իսկ առանց ներգործութեան զօրութիւն՝ կարելին է որ է *ներընդունականն:* - 167. Դարձեալ այն զօրութիւնն և ներգործութիւնն և հարկաւորն մի է. և հետևին առ միմեանս. զի ամենայն որ հարկաւոր է՝ ներգործութեամբ է. և ամենայն ներգործութիւն զօրութեամբ ներգործէ. իսկ միւս զօրութիւնն և կարելին և *ներընդունականն* որ է մարթելի՝ մի է և հետևին առ իրեարս. զի ամենայն որ զօրութեամբն է՝ կարելի է և մարթելի: - 168. Վեշտասաներորդ՝ *ներընդունակ* է ջերմոյ և ցրտոյ: - 207. Իսկ ըստ պատահմանն՝ կարելի՛ է և *ներընդունական*. այսինքն փոփոխական և երբեմն: - 550

**ՆԵՐԸՆԴՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ** - Նախ՝ թէպէտ աստուած տեսանէ զամենայն նախատեսութեամբ և ո՛չ ինչէ արտաքոյ տեսութեանն աստուծոյ, սակայն տեսանէ զոմանս ի հարկէ՝ և զոմանս ի *ներընդունակութիւնէ* լինիլ: - 15. Նախ՝ թէպէտ աստուած տեսանէ զամենայն նախատեսութեամբ և ո՛չ ինչէ արտաքոյ տեսութեանն աստուծոյ, սակայն տեսանէ զոմանս ի հարկէ՝ և զոմանս ի *ներընդունակութենէ* լինիլ: - 15

**ՆԵՐԸՆԴՈՒՆԻՄ +** Նա՛խ՝ եթէ թողութիւնն է հետևեալ և կայացեալ ի զղջումն. և զղջումն է ի կամքն. և կամքն է ի կարելեացն. վասն որոյ *ներընդունի* զթողութիւն ի ձեռն զղջման: - 165. Իսկ միւս զօրութիւնն որ կարելի է՝ և *ներընդունի* զգոլն և զչգոլն՝ և երբեմն՝ ասի ի վերայ փոփոխական

բնութեանց. որպէս հանդերձն կարէ՛ պատառիլ և ո՛չ պատառիլ. և ջուրն կարէ՛ ցրտացուցանել և ո՛չ ցրտացուցանել: - 168

**ՆԵՐԿԱՅ +** Երկրորդ՝ զի թէ ի *ներկայս* ասեմք ի վերայ քարի թէ լինիցի փայտ. ո՛չ լինի այնպէս. արդ՝ թէ ասելն մեր *զներկայն* ո՛չ փոփոխէ, նա և ո՛չ զհանդերձեալ. կարէ փոխել. ո՛չ զմերձաւոր հանդերձեալն՝ և ո՛չ զհեռաւորն: - 8. Զի ի վերայ մշտնջենաւորացն բացորոշակի յերեք ժամանակս՝ այսինքն յանցեալն ի *ներկայն* և յապագայն՝ միոյն ճշմարիտ է և միոյն սուտ. որպէս հրոյ ջերմութիւնն և արեգական լոյսն: - 9. Իսկ ի վերայ փոփոխականացս ո՛չ նմանապէս. զի յանցեալ ժամանակս և ի *ներկայս* բացորոշակի միոյն ճշմարիտ է և միոյն ստէ՛ ...: - 9. Զորօրինակ՝ իրն ի *ներկայս* որ է նիւթ ներընդունակ՝ ունի կրկին զօրութիւն...: - 9. Ասեմք առ այս, եթէ ամենայն իր զինչ և իցէ ի *ներկայս*՝ գիտեմք զնա ի յէութեան իւրում. իսկ ի հանդերձեալն ո՛չ գիտեմք ի յէութեան իւրում. սակայն գիտեմք զնա ի պատճառ իւր: - 9. Իսկ ի տեսութիւն մարդոյ է՛ առաջին և վերջին. զի զանցեալն տեսանէ յիշմամբ, և *զներկայն* իմացմամբ. և զհանդերձեալն ի պատճառն իւր ըստ ժամանակին փոփոխման որպէս ասացաք: - 15. Երրորդ՝ զի ի նմա՛ է անցեալն՝ *ներկայն* և հանդերձեալն: - 111. Իսկ ժամանակն **գ** մասն ունի. այսինքն անցեալ՝ *ներկայ*՝ և ապագայ: - 116. Համանգամայն, այս է՝ զանցեալն և զհանդերձեալն իբր *ներկայ* տեսանէ և ներկայապէս. զի յինքն տեսանէ զամենայն. և ինքն *ներկա՛յ* է ինքեան: - 118. Չորրորդ՝ զի զանցեալն և *զներկայն* և զհանդերձեալն տեսանէ: - 119. Իսկ մեք *զներկայն* միայն: - 119. ...զի ի մէջ նեղութեանց լինելով՝ յանցեալ մեղացն զղջանամք և սրբիմք. և յապագայն զգուշութեամբ պարսպիմք. և ի *ներկայն*՝ արի՛ և կա՛զմ պատրաստիմք: - 162. Ասեմք Նախ՝ եթէ ո՛չ մի է. այլ **բ**. այսինքն *ներկայս*, և հանդերձեալ աշխարհն: - 179. Այլ և ո՛չ ունի տեղի մարմնական. և ոչ ի ժամանակի երեքմասնեան. այսինքն յանցեալն՝ ի *ներկայս*՝ կամ յապառնին: - 180. Եւ յանգոյից, զի անցեալն ապականեալ է, և ապագայն ո՛չ է ի միջի, և *ներկայն* անզգայաբար անցանէ: - 198. Ժամանակին ո՞ր մասն է առաջին. անցեա՞լն՝ *ներկա՞յն* թէ ապառնին: - 198. Զի ժամանակն նա՛խ է հանդերձեալ. և ապա *ներկայ*, և յետոյ լինի անցեալ: - 198. Իսկ թէ զանազանապէս իմանաս զժամանակն, նախ է՛ անցեալն որպէս երէկ. և ապա *ներկայն* որպէս այսօր. և յետոյ ապառնին որպէս վաղիւ: - 198. **Իսկ թէ ըստ պատուոյ իմանաս, նա՛խ է *ներկայն*. զի է՛ ստոյգ և ճշմարիտ. և ապա՛ անցեալն. և յետոյ ապառնին. և այսպէս շարադասեն քերթօղքն:** - 198. Վասն այնորիկ յորժամ զիրս հոսականս և շարժունս չափէ՛, հա՛րկ է զի ի նոսին հոսեսցի. քանզի միշտ ժամանակն անցանէ և հոսի. յանցելոյն ի *ներկայս*. և ի *ներկայէս* յապառնին: - 199. Զի և *ներկայ* ժամանակս որ յայտնի երևի, այսպէս անյայտ և անկայուն է. զի ո՛չ ոք կարէ զվայրկեան ժամանակի մի ստուգել...: - 199. Իսկ նշանակէ նախ զժամանակն. զի անցեալն և հանդերձեալն ո՛չ է ի միջի այլ *ներկայն*: - 267. Նոյնպէս և յղանալն հանդերձեալ է, և վախճանեալ անցեալն, որ ո՛չ երևին. այլ միայն ծնեալն երևի որ է՛ *ներկայ*: - 267-268. Երրորդ՝ կարծիք է, զի ի *ներկայս* ո՛չ է. և ուղիղ խորհուրդ, զի յապագայն լինելո՛ց է: - 270. Դարձեալ՝ հանճարն է հանդերձելոյն. իմաստն *ներկայիս*. գիտութիւնն անցեալ ժամանակին: - 270. Դարձեալ՝ ուխտն յապա՛յն է, և սահմանն ի *ներկայն*: - 389. Երկրորդ՝ ծածո՛ւկ է հանդերձեալն գործ. և յայտնի անցեալն և *ներկայն*: - 406. Եւ դևք ո՛չ միայն զապագայն ոչ գիտեն, այլ և *զներկայ* խորհուրդն ո՛չ ճանաչեն. նաև զանցեալ ճշմարիտն և զբարին ի միտ ո՛չ ունին: - 428. Վեցերորդ՝ զի եհարց ի սաւուղ թէ «զո՞ խնդրես». և թէ զառաջիկայն գիտէր, *զներկայ* միտքն ընդէ՛ր ո՛չ գիտաց: - 428. Երրորդ՝ զի ո՛չ ասաց հրեշտակապետն զաքարիայի թէ ահա՛ եղիսաբեթ յղասցի և ծնեցի քեզ որդի *զներկայն* ցուցանելով...: - 483. Մարգարէութիւն է կանխագիտութիւն ժամանակաց անցելոց՝ *ներկայից* և ապագայից, բարի հոգւոյն միջնորդութեամբ: - 536. Սակայն *ներկայ* է ըստ ճանաչման տեսութեանն: - 574. Չորրորդ՝ հաւատն է յանցեալն և ի հանդերձեալն որպէս ասացաւ. յոյսն միայն ի հանդերձեալն. և սէրն ի *ներկայն* որ է միշտն: - 577. **Նախ խոհեմութիւն սրտին. և այս ի կարգաւորել *զներկայն*, ի միտ ածել զանցեալն, և նախատես լինիլ ապագային**...: - 580. Եւ դարձեալ՝ **գ** է ժամանակն. անցեալն. *ներկայս*. և ապագայն: - 623. Մաղթանքն *ներկայիս*: - 626. Իսկ սաղմոսն զամենայն յինքն ունի. զանցելոյն *զներկայիս* և զապագային...: - 643. Երրորդ ի ժամն. զի անցեալ մասն յաւելու. և *ներկայն* անցանէ. և հանդերձեալն պակասի. և բոլորն կատարի և լցուի: - 666. Չորրորդ, զի **գ** է ժամանակ յորում գործեմք զմեղս. այսինքն անցեալն *ներկայն* և հանդերձեալն...: - 675. Նախ ասեմ, եթէ հանդերձ սպիտակ և պսակք և աթոռք և այլն ամենայն զոր ետես ի տեսիլն՝ ո՛չ *ներկային*. այլ հանդերձելոյն էր տեսութիւն որ ինչ լինելոց է ի կատարածի...: - 690. Դարձեալ ասեմք, թէպէտ *զներկայն* ետես, սպիտակ

հանդերձն ո՛չ ցուցանէ զփառս հատուցման. այլ զփառս և զհանգիստ գործոց: - 690. Եւ վասն այն կոչի եկեղեցի արքայութիւն, զի որ ի *ներկայիս* եկեղեցւոյ արքայութիւն առնէ և գործէ՛, ունի զվախճան մեծի փառաց: - 754. Տեսանելի՛ է թէ՝ զի՞նչ արդեօք իցէ ոչ ունելն ի մտի որ է՛ մոռանալ. այսինքն զանցեալն ո՛չ յիշել. և զհանդերձեալն ոչ տեսանել. իսկ *զներկայն* ո՛չ գիտել: - 774. Երկրորդ հմտութեամբ ժամանակին. որով իմանան *զներկայս* և զապառնիս և յառաջեն քան զգործս...: - 784

**ՆԵՐԿԱՅԱԲԱՐ** - Այլ այնպէս ասաց առ ի ցուցանել զանչափ յաւիտենական աստուածութիւնն՝ որ ըստ ինքեան պարունակէ զամենայն ժամանակս. ըստ որում աստուածային ելմունք ի յապառնի ժամանակս իցեն. և կերպիւ ինչ *ներկայաբա՛ր* գոն: - 65. Ո՞րպէս աստուած զանցեալն և զապագայն համանգամայն տեսանէ *ներկայաբար*. իսկ մեք ո՛չ: - 117. Իսկ միտքն աստուծոյ ի վեր է քան զժամանակ. վասն որոյ *ներկայաբար* զանցեալն և զհանդերձեալն տեսանէ: - 117

**ՆԵՐԿԱՅԱԿԱՆ +** Նա՛խ՝ զի էն *ներկայակա՛ն* է. զի էրն և եղիցին անցեալն և հանդերձեալն է: - 312. Ապա յայսմ ամենայն է յա՛յտ է՝ զի ոչ ինչ գիտեն զառաջիկայն դևք. և ո՛չ իմանան *զներկայական* խորհուրդս. և ո՛չ յառնեն մեռեալք. այլ սուտ կերպարանին: - 430. ...զի *ներկայական* է այսօրն: - 697. Այլ *ներկայական* ոչ ինչ է առ նոսա. զի զյետոյսն մոռացեալ են: - 774

**ՆԵՐԿԱՅԱՊԷՍ** - Ա՛րդ՝ աստուածայինն միտ չորիւք յատկութեամբ տեսանի այսպէս. համանգամայն. *ներկայապէս* կատարեալ. և անփոփոխ: - 118. Համանգամայն, այս է՝ զանցեալն և զհանդերձեալն իբր ներկայ տեսանէ և *ներկայապէս*. զի յինքն տեսանէ զամենայն. և ինքն ներկա՛յ է ինքեան: - 118. Իսկ հրեշտակական կենաց է հրաշափառապէս գիտել և ո՛չ մոռանալ միշտ. ըստ որում զանցեալն և զհանդերձեալն *ներկայապէս* կրեն...: - 774

**ՆԵՐԿԵՄ +** Հնձան զխաչն ասէ՝ որ արեամբ *ներկեցաւ:* - 98. Այլ և ի թունից բանսարկուին *ներկին* և լինին չար: - 237. Նմանապէս և զմիջին դուռն բանայ, և զպարզ կերակուրն ի լեարդն յուղարկէ. և նա *ներկէ* յարիւն և բաժանէ: - 242. Ծիրանին ջրոյ. զի կոնքիլոսն որ *ներկէ՛* զծիրանին՝ ի ջրո՛յ է. և Բեհեզն սպիտակ՝ երկրի. զի վուշն յերկրէ լինի: - 342. Եւ զկենդանին *ներկեալ*՝ և կարմիր կապեալ ի պարանոցն, ցուցանէր զմեռանիլն աստուծոյ վասն մեր: - 369. Որ եսդ տէր տէր հաւատարիմ յիսուս, անբաժանելի լեր ի զգայութեանցս. և յամենայն գոյացութեանց աստի իմոցս. *ներկեալ* խոստովանութեամբ և շնորհօք հոգի մարմին նիարդք իմ և աճառք: - 771

**ՆԵՐՀԱԿ +** Դարձեալ ասեն թէ՝ աստեղք ունին բնութիւնս *ներհակս* միմեանց. չար և բարի...: - 12. Երկրորդ և թէպէտ իցեն տարրականք և *ներհակ* որակք՝ յիմիասին դիպիլն՝ ո՛չ միշտ հակակային իրերաց. այլ եթէ կամք խնամողին հրաման տացէ: - 12. Ասեմք առ այս, մոլորականքն ո՛չ եթէ զի ունին *ներհակ* շարժումն վասն այն կոչին մոլորականք...: - 12. Զի եթէ բարի է և առնէ զչար, ահա *ներհակ* գործ է ինքեան: - 14. Վեշտասաներորդ՝ զի թէ չարն է յաստուծոյ որպէս բարին, և երկուցն սկիզբն է աստուած, և արդ՝ եթէ միևնոյն է սկիզբն երկուցն, անկարելի է *ներհակացն* ի միասին ունիլ մի սկիզբն...: - 14. Եւ թէ ոք ասիցէ, այս *ներհակա՛ց* է որք փոխեն զմիմեանս. և ո՛չ ունակութեանց և պակասութեանց: - 21. **Ասեմք առ այս եթէ՝ բարի և չար ըստ ենթակային *ներհակք* են միմեանց. իսկ ըստ ինքեանց՝ ունակութիւն և պակասութիւն որպէս ասացաք:** - 21. Հինգերորդ՝ ոչ ինչն ի յենթակայս եղեալ՝ ո՛չ ներհականայ էի. թէպէտ ըստ ինքեան *ներհա՛կ* է. և չարն ի յենթակայն երևեալ՝ ներհականայ և կորուսանէ՛ զբարին. թէպէտ ըստ ինքեան ոչ ինչ է և ոչ գոյ: - 23. Ութերորդ՝ է՛ անկարգ ախորժակն. որ քարշէ՛ զմիտսն առ *ներհակս* հաւատոյն. այսինքն է երկիւղն՝ սէրն՝ և ատելութիւնն: - 32. **Դարձեալ ասեմք, թէ կոյսն և պոռնիկն՝ առաքինութեան և չարութեան են տեսակք, և *ներհա՛կք* են առաքինութիւն և չարութիւն. զի փոփոխեն զմիմեանս. ըստ այնմ և թողութեան հանդիպին**: - 165. Իսկ Գոյացութիւն կոչի աստուած, ո՛չ ըստ որում *ներհակ* պատահմանց է ընդունական որպէս մեք. այլ ըստ որում բաժանի ընդդէմ պատահմանց. որ է՛ միայն պարզ գոյացութիւն որպէս ասացուք: - 171. Եւ դարձեալ՝ զի նոցա ամենեցուն *ներհակ* գոյ. որպէս մեծութեան աղքատութիւն. առողջութեան հիվանդութիւն. կենաց մահ: - 178. Իսկ իմաստութեան ոչ ինչ է *ներհակ:* - 178. Երկրորդ՝ զի հաւասարութիւն և միաբանութիւն տարերաց անլուծանելի է. ըստ որում *ներհակ* որակօք հաւասարք են հակակայ. և միւսովն միաբանք: - 181. Եւ զի ո՛չ շիջանին հրամանաւ արարչին. ի միջի գոլով երկուց *ներհակացն* օդեղէնն երկին. որպէս ստորին տարերքս հուր և ջուր միջնորդ օդիւն կապակցեալ: - 188. Իսկ Զիւնն ծնանի ի ջերմացեալ ամպս ի մէջ երկուց *ներհակ* հողմոց: - 205. Եւ սառուցեալ ի *ներհակ* հողմոյն, համանգամայն ընդ փոխիլն ի ջուր: - 205. Հինգերորդ՝ զի կարէ՛ մարդ *ներհակ* սովորութեամբ պահօք

և աղօթիւք և կրթութեամբ մարմնոյ սանձել յինքեան զայսպիսիս նշանաց գործ: - 246. Իսկ ամենայն անդամք որ *ներհա՛կ* են այսմ, զբիւրամիտն ցուցանեն: - 248. Եւ բաց յայսցանէ՝ բնական որակօք *ներհա՛կք* են միմեանց դ տարերքդ որպէս ցուցաւ ի վերոյ: - 278. Ութերորդ՝ որք առեալ զօդ դարձեալ արտաքս փչեն *ներհակ* իմն գործով. այսինքն ջերմացուցանեն և զովացուցանեն. վառեն և շիջուցանեն: - 523. Այլ սրգալ վասն յատուկ ինչ չարի, է՛ իւրաքանչիւր առաքինութեան. զի իւրաքանչիւր առաքինութիւն սրգայ վասն *ներհակին:* - 583. Ապա ուրեմն քակտումն *ներհակին՝* գոյութիւն է ընդդիմակին: - 787

**ՆԵՐՀԱԿԱԲԱՐ +** Եւ այս ո՛չ միայն փութանցիկ գոլոյ վասն, կամ *ներհակաբար* հաստուցման որպէս սովորութիւն է. այլ զի ո՛չ ինչ կարեն տանիլ ընդ ինքեանս. բայց միայն նշխարհս ինչ յիշատակութեան ուրուական տեսլեան: - 775

**ՆԵՐՀԱԿԱՆ +** *Ներհական*. որպէս ջերմ և ցուրտ: - 21. Եւ ո՛չ որպէս *ներհականք*. որպէս ջերմ և ցուրտ. սպիտակ և սեաւ. զի սոքա որակութիւնք են. իսկ բարին էութիւն է, և չարն ո՛չ է էութիւն: - 21. Այժմ պատասխանեսցուք հարցմանն եթէ առաքինութեանն չարութիւն, և արդարութեանն անիրաւութիւն *ներհական*. որպէս խաւարն լուսոյ. և էութիւն է լոյսն. և ո՛չ էութիւն խաւարն. և օդն ընդունակ լուսոյ և խաւարի: - 23. Իսկ *ներհական* հակակայքն և այլքն կարեն փոփոխիլ ի միմեանս. որպէս չարն և բարին. ջերմն և ցուրտն: - 165

**ՆԵՐՀԱԿԱՆԱՅ +** Դարձեալ ասեն թէ՝ աստեղք ունին բնութիւնս ներհակս միմեանց. չար և բարի. և միմեանց դիպեալ *ներհականան* իրերաց. և առնեն չար կամ բարի խռովութիւն կամ խաղաղութիւն. աւեր կամ շինութիւն. և այլն: - 12. Չարն ո՞րպէս է ոչ է. զի ահա՛ *ներհականա՛յ* բարւոյն. որպէս առաքինութիւն և չարութիւն: - 22. Հաւասար են ի յոչինչ գոլն չարն որ *ներհականայ* բարւոյ, և ոչինչն որ *ներհականայ* էի: - 23. Հինգերորդ՝ ոչ ինչն ի յեներակայս եղեալ՝ ո՛չ *ներհականայ* էի. թէպէտ ըստ ինքեան ներհա՛կ է. և չարն ի յեներակայն երևեալ՝ *ներհականայ* և կորուսանէ՛ զբարին. թէպէտ ըստ ինքեան ոչ ինչ է և ոչ գոյ: - 23. Վեցերորդ՝ զի *ներհականայ* պատահումն գոյացութեան. այլ աստուած աններհա՛կէ է: - 170

**ՆԵՐՀԱԿԱՊԷՍ +** Եւ յամենևին նըւազիլ կենաց՝ և մահն կորընչի. զի յէութեան ունի զգոլն *ներհակապէս:* - 22

**ՆԵՐՄԱՐԴՈՒԹԻՒՆ +** Բարձրամեծարն գործոյ *ներմարդութեան* բանին աստուծոյ՝ բազում եղեն նախատիպք խորհրդոյ. որպէս մովսէս, յովսէփ, իսահակ: - 417

**ՆԵՐՇՆՉԱԿԱՆ +** Որպէս զխեցգետինն՝ կենդանի *ներշնչական* զգայական: - 54

**ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ +** Չորրորդ՝ տեսեալ զմովսէս առաւել փառաւորեալ, և յետ վախճանին թոյլ ետ *ներողութիւնն* աստուծոյ ժպրհիլ բանսարկուին ստգտանօք մեղաց. զի մի՛ տացեն նմա զգերազանց պատիւն աստուած կարծելով: - 410. Վեցերորդ՝ ի թաղումն մովսէսի միքայէլ սպասաւորեաց. որում սատանայ հակառակ կայր *ներողութեամբն* աստուծոյ: - 410. Նախ ցուցանէ զմեղս անհաւատիցն լցեալ զտաճար *ներողութեանն* աստուծոյ. զի լցեալ և յաղթահարի ողորմութիւնն յարդարութեանէն: - 749

**ՆԵՐՈՒՄՆ +** Իսկ մրրիկ հո՛ղմ է ի յամպոյն ելեալ և առ ինքն ի յամպն *ներման* առեալ և շրջեալ: - 206. Եւ որ յառաջինն դառնայ. զի *ներումն* և թողութիւն շնորհէ: - 401. Ութերորդ՝ ողորմութիւն է ի թողութիւն մեղաց. և արդարութիւն ի *ներումն* պատժոց: - 458. ...և ո՛չ է աստուածային հրաման, այլ առաքելական *ներումն* ի դեղ անժուժկալութեան. զի մի՛ ի պոռնկութեան անդունդս կործանեսցին: - 613

**Ի ՆԵՐՍ (տ. Ի ՆԵՐՔՍ) +** Երրորդ՝ զի ամենայն գործսն տեսանէ *ի ներս* և ի դուրս. զմտաց և զբանից և զայլն: - 119. Բաղկացական է, որ ընդ մարմնոյ մասնկանցն գոյանայ *ի ներս* և ի դուրս. վերոյ և ներքոյ շուրջանակի...: - 174. Իսկ ըստ ևսեբեայ, **վպք** ա՛մ է. զկայենան **ճի** ամ *ի ներս* առեալ, որ է՛ որդի արփաքսաթայ՝ և հայր սաղայի. զոր յիշէ աւետարանն, և ո՛չ յիշէ մովսէս: - 337. Բաց ի քաւութենէն որ ի սուրբն սրբոց՝ *ի ներս* և ի դուրս **ժ** էր բովանդակն: - 364. Իսկ *ի ներսն*, ա՝ հացին երեսաց և գառին. **բ**՝ խնկոցն. **գ**՝ շօթին և զիացին. **դ**՝ մին ա՛յլ **զ** հացին. զի **ժբ** հաց էր. և **բ** սեղան: - 364. Առաջինն՝ զի նախ արտաքին մարմնոյ հանդիպիմք որպէս դրան. և ապա հոգւոյն *ի ներս:* - 395. Մին ի մէջ եւայի և բանսարկուին. որով մուծաւ մահ *ի ներս:* - 465. Եօթներորդ պսակն. որ է՛ խորհուրդ նոր զինուորս *ի ներս* մուծանելոյ ի ձեռն մարմնաւոր ծննդեան: - 587. Եւ յայնմ ձևական բանիցն ո՛չ է պարտ ի բաց թողուլ. և ո՛չ այլ բան *ի ներս* խառնել: - 588. Իսկ մտօքն, յորժամ աղօթէ և միտքն ո՛չ է *ի ներս*. ո՛չ մեղք է և ո՛չ արդարութիւն: - 620

**ՆԵՐՍԷՍ** - Իսկ զբանն *<u>ներսէսի</u>*` ա՛յսպէս պարտ է իմանալ: - 222. Կամ որպէս ասեն թէ` *<u>ներսէս</u>* անուն արուեստաւոր տապանին` շինեաց իւր տուն ի վերոյ կողմանէ. և զի ո՛չ էր հրամանաւն աստուծոյ` սատակեցաւ նա՛ անդ, և զնորա գէշն ուտէր ագռաւն: - 294. Եւ Պատրիարգունք էին անդ, *<u>Ներսէս</u>* հայոց. Կիւրեղ երուսաղէմի. Դամասոս հռօմայ. Նեքտառիոս կոստանդնուպօլսի: - 542. Եւ վերստին հաստատեցին զկարգեալսն սրբոյն գրիգորի և *<u>ներսէսի</u>* և սահակայ և մաշտոցի: - 544. Յորժամ անիծիւք աքսորեցին *<u>զներսէս</u>* եպիսկոպոս որ եղև աղանդովն *<u>ներսէսի</u>*, և այլայլեաց զկարգ և զուղղափառութիւն հաւատոյ: - 545. Եւ հայրապետն *<u>ներսէս</u>* ի ճառս հրեշտակապետաց: - 687. Եւ միւս *<u>ներսէս</u>* ի հանգիստն յոհաննու: - 687. Մերն *<u>ներսէս</u>* անուն տայ` հռասիմ: - 706

**ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՕՆԱՑԻ** - Ջշարականս ո՞վ է ասացեալ: ...Իսկ զայսօր յարեաւն, զնորոգեալ կղզիքն, և զթոռանցն, *<u>ներսէս լամբրօնացին:</u>* - 637

**ՆԵՐՍԷՍ ԿԼԱՅԵՑԻ** - Ջշարականս ո՞վ է ասացեալ: ...Եւ զվառին *<u>ներսէս կլայեցին:</u>* - 637

**ՆԵՐՍԷՍ ՄԵԾ** - Ջշարականս ո՞վ է ասացեալ: ...Իսկ *<u>զներսէսին մեծի,</u>* և զխոտաճարակացն, յոհաննէս պլուզն: - 638

**ՆԵՐՍԷՍ ՇԻՆՈՂ** - Երրորդ ժողովն է դվնայ, ի չորրորդ ամի թագաւորութեանն կոստանդեայ հռոմոց. հրամանաւ մեծի կաթողիկոսին հայոց *<u>ներսէսի շինողի</u>*. և այլ **է** և **ժ** եպիսկոպոսաց` և վարդապետաց բազմաց և իշխանաց...: - 544

**ՆԵՐՏՐԱՄԱԴՐԵԱԼ +** Նախ` զի խօսքն որ է արտաբերեալ բանն, նոյն սա՛ է *<u>ներտրամադրեալն</u>* բան: - 62. Նախ` զի խօսքն է ի մտացն յառաջ եկեալ, որպէս *<u>ներտրամադրեալ</u>* բանն ծնեալ. և հոգին սուրբ ի հօրէ բղխեալ. որպէս բանն ծնեալ: - 66. Որպէս ասի *<u>ներտրամադրեալ</u>* բանն պատկեր մտացն. նոյն և յառաջ բերեալն բան և թանձրացեալ` է՛ պատկեր նորին և հաւասար մտացն: - 93. Զորօրինակ` *<u>ներտրամադրեալ</u>* բանն է՛ նախ ի խորհուրդն կատարեալ. և յետոյ ժամանակաւ լինի յառաջ բերեալ և գրեալ բան. և նո՛յն բանն էր յառաջ բերեալս և գրեալս որ էր նախ ի խորհուրդն: - 169. Իսկ բան` *<u>ներտրամադրեալ</u>* և անբաժանական: - 171. Եւ բան կոչի *<u>ներտրամադրեալն</u>*` և յառաջ բերեալն: - 297. Իսկ առ մեզ Նախ ծածուկ *<u>ներտրամադրեալն</u>* բան. զի աստուած քննէ զսիրտս: - 406. Եօթներորդ` բանին էր պատշաճ պատմել զհօրէ. և երևիլ մեզ. որպէս *<u>ներտրամադրեալ</u>* բանն յառաջ գայ և լինի բարբառ և գրեալ ի քարտիսի, երևի և շօշափի: - 468. Զոր օրինակ, *<u>ներտրամադրեալ</u>* բանն մի է` և յառաջ բերեալ բազմանայ ի լսելիս և ի գիրս: - 529. Եւ մի և նոյն բանն է *<u>ներտրամադրեալն</u>* ի սրտի. զի ըստ բան գոլոյն ո՛չ զանազանի. սակայն ըստ որպիսութեան որակին. զի էր անմարմին ի սրտի` և այժմ մարմնացաւ ի քարտիսի: - 529. Դարձեալ յայտնապէս, զի բանն միացեալ ի մարմնի` էր անբաժանաբար ի հայր. որպէս առ մեզ *<u>ներտրամադրեալս</u>* բան և գրեալն ի թղթի: - 531. Զորօրինակ, յորժամ վկայեսցէ թագաւորն *<u>ներտրամադրեալ</u>* բանիւն ի վերայ գրեալ բանին իւրոյ եթէ` ստուգապէս սա՛ է իմ գիր և բան: - 531. Եւ բանն կրկին է. այսինքն *<u>ներտրամադրեալն</u>* և յառաջ բերեալն. - 612. Նա՛խ` ամենևին անձայն. որպէս *<u>ներտրամադրեալն</u>* ի խորհուրդս: - 639

**ՆԵՐՔԻՆ +** Այսպէս և քահանայապետն մեր միայն եմուտ ի *<u>ներքին</u>* կողմն վարագուրին: - 50. Քանզի *<u>ներքին</u>* մասամբ ի ձեռն զգայութեանց ճանաչէ զերևելիս. որպէս քար: - 103. Ո՞րպէս տեսանէ աստուած զէքս. զի զգայութիւն ո՛չ ունի. որպէս մեք *<u>ներքին</u>* զգայութեամբ զիմանալիս` և արտաքին զգայութեամբ զերևելիս տեսանեմք: - 118. Այսպէս բանն աստուած զվերին աշխարհն մշտնջենաւոր պահէ, և *<u>զներքինս</u>* ժամանակաւ չափելով պահէ՛ և խնամէ: - 125. Այս է յղացմամբ յարգանդի և ծննդեամբ. և քարոզութեամբ. և մահուամբ. և յարութեամբն և համբարձմամբն առ հայր` իբր զպսակ տարւոյ կատարեալ բնութեամբ մեր` ի *<u>ներքին</u>* կողմն վարագուրին մտեալ: - 126. Չորրորդ` *<u>ներքին</u>* է բոլոր մարմնոյն. և հիմն եկեղեցւոյ է քրիստոս ըստ առաքելոյ: - 130. Ծանիր զայս, զի աստուած է միայն իմացական և ո՛չ իմանալի. և հրեշտակք իմացական և իմանալի. զի իմացականք են վերինքն. և իմանալի *<u>ներքինքն:</u>* - 130. Երրորդ` զի վերինքն *<u>զներքնոցն</u>* ունին բոլորապէս զամենայն. և *<u>ներքինքն</u>* զվերնոցն մասնաբար ըստ չափու իւրեանց. և քահանայապետն ունի զաստիճան *<u>ներքնոցն</u>* բոլորապէս. և *<u>ներքինք</u>* զվերին քահանայապետիցն մասնապէս: - 136. Ապա յա՛յտ է զի ա՛յլ է կարգ շնորհականին, և այլ է կարգ բնականին. զի բնականք *<u>ներքինք</u>* զվերնոցն բոլորապէս ունին և կոչին. այլ ո՛չ անդրադարձեալ. որպէս անհատն զտեսակն և զսեռն բոլորապէս ունի և կոչի. զի պետրոս մարդ է և կենդանի և կոչի. այլ կենդանին մարդ` կամ մարդն պետրոս ո՛չ է և ո՛չ ասի: - 136. Ա՛յս է պատճառն, զի որ առաջին է և վերին` ունի զերկրորդն և *<u>զներքինն:</u>* - 136. Ասեմք նախ` եթէ որպէս ասացաք *<u>ներքինք</u>*

զվերնոցն մասնաւորապէս ունին. որպէս վերինք *զներքնոցն* բոլորաբա՛ր: - 137. Եւ արդ որպէս ցուցաւ՝ վերինք մինչ ի միջինս ունին բոլորապէս *զներքնոցն*. և *ներքինքն* մասնաւորաբար մինչ ի զօրութիւնն՝ յաղագս առ հասարակ զօրութիւնք կոչին: - 137. *Ներքին* դասք հրեշտակացն. որ են պատգամաւորք և հրամանատարք: - 144. Որև կործանմամբն իւրով չարչարեաց զվերին դասքն սրտմտութեամբ, և *զներքին* դասքն սասանմամբ, և զհամակամսն ընդ ինքեան քարշեաց: - 148. Կրկին է փորձութիւն. այսինքն *ներքին* և արտաքին. որ է՛ մեղաց և պատժոց: - 160. Արդ *ներքին* է՝ որ ի փափկութեանց և ի հեշտութեանց փորձի բնութիւնս մեր և այլայլի ի զանազան տեսակս մեղաց...: - 160. Եօթներորդ՝ *ներքին* իմաստքն ամենևին խոր և բարձրագոյն տեսութիւն. զոր ըստ ինքեան միայն իմացումն տեսանէ և ի դուրս արտաբերէ՛: - 177. Եւ զի ո՛չ է ի տեղւոջ աստի յայտ է, զի տեղին է վերին և *ներքին* և միջին. և արտաքոյ աշխարհիս ո՛չ երևին սոքա: - 180. Յինգերորդ՝ զի անճերանալի՛ է երկիր. ըստ որում շարժմամբ թօթափի երկիր ի *ներքին* պատահմանց. և հեղեղօք ողողի և սրբի յարտաքին պատահմանց: - 181. Արդ՝ *ներքին* հողմն ի վեր ձգէ զերկիր. և վերին հողմն ի վայր. և այսպէս ի մէջն հաստատ մնայ երկիր: - 181-182. Եւ բնականն Նախ այսպէս. զի օդն որ ի մէջէ մտեալ և փեռեկեալ *զներքին* և զվերին կիսագունդն, նա՛ է պատճառ շարժութեան երկնից: - 182. Երկրորդն՝ *ներքին* մասն հրոյն. որ կոչի օլօմպային երկին. վասն մեծ գոլոյ յօլօմպիոս լեառն: - 183. Յինգերորդ՝ զի տեսցուք և իմասցուք թէ արտաքին սրահն երկնից այսպէս է զարդարուն. քանի՞ առաւել *ներքին* կողմն սրբութեան իմանալեացն դասուց: - 188. Վերին եզրն կենդանակերպիցն է խեցգետինն. և *ներքին* այծեղջիւրն: - 189. Եւ ի *ներքինն* անցեալ՝ գիշեր. զի գարշեցո՛յց զերր. որ է օդ և երես երկրի: - 190. Եւ այն որ կրկին լինի, *ներքին* պայծառն է տիպ յարեգակնէն. և վերին նուազն զտիպ *ներքնոյն* է ընկալեալ: - 203. Եւ դարձեալ՝ զի ի գոլորշեաց է բաղկացեալ՝ արտաքին մասն հով է և զէջ, և *ներքինն* ջերմ և չոր. վասն որոյ զարտաքինսն պահէ՛, և *զներքինսն* ապականէ: - 204. Չորրորդ՝ զի տունկք և բոյսք ի *ներքին* հիւթոյ և ի վերին անձրևոյ միշտ դալար մնասցեն: - 207. Նախ՝ ասեն ոմանք թէ՝ որքան բարձր է ի վերայ երկրի հողն, նոյնքան ծոծո՛ր է ի *ներքին* կողմն. վասն որոյ ջուրք ծովուն դիւրաւ ելանեն: - 209. Չորրորդ՝ ցոյցք է ամենահրաշ խնամոց արարչին. որ զհոսանուտ ջուրս *ներքին* ի մէջ լերանց ի վե՛ր հանէ ի պէտս կենդանեաց որ ա՛նդ են. այլ և յոռոգումն ուր գետք ոչ ելանեն: - 209. Երկրորդ՝ զի վերին մասն օդոյն պա՛րզ է. և *ներքին* մասն մերձեալ ի յերկիր՝ թանձրանայ ի չորութեանց նորին. և ջերմութիւնն խառնեալ ընդ այն՝ առաւել շող լինի: - 211. Եւ որպէս զհուր՝ *ներքին* կողմն լայն է և վերին ծայրքն նուրբք: - 215. **Երկրորդ՝ զի ցորքան իշխէր ինքն ի վերայ անասնական մասանց իւրոց որպէս ասացաք, իշխէր և ի վերայ արտաքին անասնոց և գազանաց. իսկ յորժամ ապստամբեցին *ներքինքն* բանականին տեառն իւրեանց՝ ապստամբեցին և արտաքինքն մարդոյն տեառն իւրեանց:** - 220. Իսկ այլք ասեն թէ՝ վասն առաւել բարձրութեանն՝ լոյս արեգականն ո՛չ երբէք հեռանայ ի նմանէ. թէպէտ ի ներքոյ երկրի անցանէ. որպէս լուսինն թէպէտ ի վերին կամարն լինի, զլոյսն առնու յարևէն որ ի *ներքին* կամարն: - 222. Նա՛խ՝ ըստ փիլիսոփայիցն *ներքին* մասունքն հոգւոյն պատճառե՛ն զարտաքին մասունս մարմնոյն. և ըստ պղատոնի՝ հոգին եռամասնեայ գոլով՝ բան և ցասումն և ցանկութիւն: - 232. Զի այսպէս ի կազմուածոյ քո ուսցիս զբարեկարգութիւն և զպատիւ առ վերինս և առ *ներքինս* և առ հաւասարս: - 232. Երրորդ՝ մարդն նման է բոլոր աշխարհիս. և ի մասունս աշխարհի՝ երկինքն է վերին և բարձր. և տարերք ի *ներքին* վայրս: - 232. Իններորդ՝ ա՛նդ են բերան և լեզուն. ուստի *ներքին* կիրք հոգւոյն և ամենայն բարութիւնք յառաջեն ի մեզ: - 234. Նախ՝ մազն ի վերոյ. և մորթն. և միսն. վերին ոսկրն. և *ներքին* պինտ ոսկրն. խելապատակ մաշկն. և ուղեղն: - 239. Նոյնպէս ընդ *ներքին* դուռն զաւելորդն արտաքս վտարէ ընդ աղիսն. և յայսմանէ ջրատեսակն ընդ ցնցուղ քաղրթին ի փալարբուշտն իջանէ և լինի մէզ: - 242. Զի **դ** հիւթն *ներքին* անդամոց՝ ի ծեռն սրտին պատճառե՛ն զ**դ** հիւթն արտաքին: - 243. *Ներքին* կզակն և վերին. և **բ** քնատեղն մին ոսկր. և գագաթն: - 243. Կամ զօդուածք *ներքին* գլխաւոր անդամոցն և արտաքին մարմնոյն, որ մորթ և միս և արիւն և այլքն առ միմեանս յօդին՝ լինին նոյնքան: - 244. Եւ *ներքինն* կաթալիկ է: - 244. Դարձեալ զօրութիւնք հոգւոյն բաժանին ի *ներքին* զգայութիւնքն և յարտաքին: - 249. Իսկ *ներքինն* որ է հասարակ զգայութիւնն. երևակայութիւնն. կարծիքն. տրամախոհութիւնն. յիշողութիւնն որ է միտք. զի ամենայն ինչ ի յիշողականն մտանէ: - 249. Եւ զանազանութիւն *ներքին* և արտաքին զգայութեանցն ասացաւ ի վերոյ յաղագս հրեշտակաց ի **ը** գլուխն, ի **ծզ** համարն: - 249. Այլ ա՛րդ ի յանքանսն ո՛չ է առաքինութիւն որով սրբի ի մեղաց. ապա պարտ է զի փոխեսցի ի *ներքինն* իւր որ է՛ տունկն. և նման կենդանւոյն զի

աճէ՛: - 252. Այսպէս և *զներքին* կեանս յարգանդին իմա՛: - 255. Հինգերորդ՝ զի ամենայն տեսանէ և քննէ աստուած. այսպէս և մարդն *ներքին* և արտաքին զգայարանօք: - 271. Դարձեալ՝ մարդո՛յն է յատուկ ունել զամենայն սիրելութիւն առ ամենայն ազգս. առ վերինս և առ *ներքինս* և առ միջինս: - 274. Է՛ և *ներքին* և վերին վայր. մարմին և անմարմին. և այլք սոյնպիսիք տարբերութիւնք են բնութեան և ո՛չ թշնամիք: - 278. Եւ երրորդ զբարձրանալն ի *ներքին* վայրէ ի բարձր տեղիս: - 289. Եւ *ներքին* և վերին կողմամբն լինի **զ** կողմ. առաջին զօրեայ ստեղծմանն նշանակ: - 293. Ի *ներքին* տունն չորքոտանիք. և ի միջինն մարդն. և ի վերինն թռչունք: - 293. Զի աթոռք և քերովբէք շուրջ են զավ. և անընդմիջաբար ուսեալք ի սուրբ Երրորդութենէն, որ ուսուցանեն *զներքինսն:* - 345. Եւ սրբութիւնն սրբոցն է՛ *ներքին* կողմ վարագուրին: - 345. Եւ որպէս *ներքին* տապանակն օրինակ ցուցաւ իմանալեացն: - 346. Դարձեալ՝ գութն բնական և *ներքին* սէրն է. և ողորմութիւնն երկրորդ և արտաքին...: - 350-351. Ութերորդ, նոքա մատուցանէին ի ձեռագործ խորանսն որ ի մովսիսէ՛ կանգնեցաւ, իսկ տէրն մեր անցեալ ի *ներքին* կողմն վարագուրին. այսինքն յանձեռագործն մատոյց...: - 354. Վասն մեղա՛ց է՝ որ խոստովանութեամբ արտաքոյ ելեալ ի մեղաց և ապաշխարութեամբ քաւեմք զմեզ *ներքին* խորհրդով և արտաքին գործով: - 362. Եւ կարիքն կրկին է. *ներքին* ամուսնութեանց, և արտաքին ընչից: - 389. Նոյն և երկիրն վերինն երուսաղէմի յանեզրական ծովէ՝ յամպոյ հոգւոյն և շնորհացն իմաստութեան ոռոգի. վերին և *ներքին* դասք հրեշտակաց՝ և մարդկան: - 398-399. Երկրորդ՝ *զներքինս* օրհնեմք, և աստուծոյ բարութեանցն կցորդեմք. ողորմութեան, պարգևաց, կամ այլ ինչ շնորհաց. և այսու եղանակաւ օրհնեմք զքահանայս. զժողովուրդս. զմեռեալս և զկենդանիս: - 406. Հինգերորդ՝ զի մի՛ ընդ դառնալն ի վայր՝ ողողեսցէ *զներքին* կողմ եզերաց գետոյն: - 414. Նա՛խ՝ զի չորեքտասա՛ն էր լուսինն եկն ի *ներքին* կիսագնդէն ի վերին գունդն և ծգեցաւ առ արեգակն: - 490. Չորրորդ դարձեալ՝ **դ** թև խաչին նշանակէ զչորս բարերարութիւնս քրիստոսի. զի վերին մասն ցուցանէ զբացումն արքայութեանն երկնից. *ներքինն* զաւերումն դժոխոց. աջն զբաշխումն շնորհաց. ահեակն զթողութիւն մեղաց: - 493. Հինգերորդ՝ նշանակէ՛ զչորս առաքինութիւնս ի յորս պարտի տարածիլ *ներքին* մարդս մեր. այսինքն վերին մասն նշանակէ զսէրն. *ներքինն* զխոնարհութիւնն. աջն զհնազանդութիւնն. ահեակն զհամբերութիւնն: - 493. *Ներքինն* զկատարած ելից կենցաղոյս: - 493. *Ներքինն* զարի և ժուժկալ վարս համբերութեամբ ստանալ զհոգիս: - 493. *Ներքինոյն* զոր փիլիպպոս մկրտեաց փոքամո՛ս էր: - 495. Զոր օրինակ ի բարձր ուստէք քար հոլովեսցի, և որ մօտն կացցէ ասէ ցնա՝ երթալ ունիս մինչ ի *ներքին* վայր տեղիս և ապա դադարիս: - 497. ...և մեզօք ծանրացեալ էջ ի *ներքին* կէտս դժոխոցն, և այլ ո՛չ կարէր բարձրանալ. մինչ ի վերին կիտէն բանն աստուած էջ ի *ներքին* կէտն. և ապա ել ադամ ի վերին կէտն երկնից: - 503. Եւ որք **դ** ասեն՝ *զներքին* դժոխքն մահու չափ մեղաւորացն ասեն. և զքաւարանն ներելի մեղաւորաց. և զլիմպոսն արդարոց. և զդժոխս ոչ մկրտելոցն: - 504. Դժոխ՝ զդժուար զնեղ և զանձուկն նշանակէ. և կոչի բազմաւոր, Նախ վասն բազում կրիցն. ուր լալ աչացն է և կրճել ատամանց և խաւար *ներքին* և արտաքին և այլն: - 505. Ապա ո՞ր է դժոխք *ներքին* որ ասէ մարգարէն «փրկեցեր զանձն իմ ի դժոխոց *ներքնոց»:* - 505. Ա՛րդ՝ թէ գոյ *ներքին,* գո՛յ և վերին և միջին դժոխք: - 505. Իմաստունք զտեղին յերկուս բաժանեն. ի վերին և ի *ներքին*. զի սոքա են հակակայք և առինչք միմեանց. իսկ միջին տեղի ո՛չ է...: - 505. ...զի վերնոյն *ներքին* է, և *ներքնոյն* վերին. ապա սո՛ւտ է ասելդ թէ գոյ *ներքին* և վերին և միջին դժոխք: - 505. Դարձեալ ասեմք, *ներքին* դժոխք է հոգւոցն. և վերին՝ գերեզման մարմնոցն. և նա կոչի դժոխք ի սուրբ գիրս...: - 505. Ասեմք *ներքին* դժոխք զհոգւոցն. և միջին զգերեզմանս. և վերին զմեղքն որ է՛ ի հոգիս: - 505. Դարձեալ՝ առ հասարակ կարծիք, կոչի *ներքին* դժոխք յատակ դժոխոցն...: - 505. Զայս դաւիթ *ներքին* դժոխք անուանէ: - 505. Նախ ասեն թէ ի չորրորդ դժոխքն գնաց որ է՛ վերին և ո՛չ *ներքին:* - 505-506. Առ առաջինն ասեմք, թէ քրիստոս ո՛չ ի վերին՝ այլ ի *ներքին* դժոխքն էջ: - 506. Հինգերորդ՝ ադամ առաջին յանցաւորն էր ի *ներքին* դժոխս. զի ա՛յն է մահու մեռանիլն. այլ արդ եթէ քրիստոս ո՛չ գնաց ի *ներքին* դժոխքն, ո՛չ ազատեաց զադամ: - 506. Վեցերորդ՝ ամուրն սատանայի է *ներքին* դժոխքն. ուր են դրունք պղնձիք և նիգք երկաթիք. որ է՛ մեղքն մեծամեծք և յուսահատութիւնք. և ա՛յն էր ամրոց նորա: - 506. Ա՛րդ՝ եթէ քրիստոս ի *ներքին* դժոխքն ոչ էջ, ո՛չ է կապեալ հզօրն որպէս աւետարանն ասէ. և ոչ զդրունսն խորտակեալ. և ո՛չ զգերիսն աւար առեալ որպէս դաւիթ ասէ: - 506. Ասեմք եթէ՝ խոստովանիլն կրկին է. մին *ներքին* իմացմամբ. և միւսն մարմնով արտաձայնութեամբ: - 508. Ա՛րդ՝ ի կենդանեաց երկոքինն պահանջին. իսկ հոգւոցն բաւակա՛ն է միայն *ներքին* իմացումն զի չունին մարմին: - 508. Մետասաներորդ՝ փախստեայ դաւիթ

բնակէր ի *ներքնումն* այրի. և սաւուղ ննջեաց յարտաքին այրին: - 513. Ա՛րդ՝ *ներքին* այրն նշանակէ՛ զդժոխս. և արտաքինն զգերեզմանն. և սաւուղն զսատանայ որ ըմբռնեալ էր զմարդիկ: - 513. Իսկ զտեղի համբարձմանն քրիստոսի միտք ո՛չ կարէ ցուցանել. զի ի լոյս անմատոյց է բնակեալ և ի *ներքին* կողմն վարագուրին ըստ առաքելոյն: - 519. Ասեմք առ այս, թէ օրհնելն կրկին է. այսինքն առ վերինս և առ *ներքինս:* - 539. Իսկ առ *ներքինս* օրհնելն՝ իշխանութիւն և շնորհաց տալն թարգմանի. որ քահանայն կամ եպիսկոպոսն տայ. որպէս ցուցաւ ի վերոյ ի **իզ** գլուխն, **իե** համարն: - 540. Այլ անիրաւ կապելն արձակեսցի. և կապօղն պատժեսցի. ոչ միայն ի համակարգից, այլ և ի *ներքնոց:* - 542. Բանին գոլ զիպարտութիւն և զնախանձ առ *ներքինս* և առ վերինս: - 559. Իսկ անիրաւելն է բանիւ առ վերինս և առ *ներքինս* և առ հաւասարս: - 568. Նա՛խ՝ զի գործ մեղաց է՛ ի զգայութիւնս *ներքին* կամ արտաքին: - 568. Դարձեալ՝ կատարեալ սէր է, յորժամ է ունակութեամբ մեծ. *ներքին* շարժմամբն ուղիղ. արտաքին գործքն ժիր. արմատովն հաստատեալ. ջերմ եռանդութեամբն խոհեմ. և քաղցրութեամբն մխիթարական: - 576. ...սակայն ըստ *ներքնոյն* առաւել նմանեցուցանէ խաղաղութիւնն: - 585. ...և իշխէ ժողովրդեանն *ներքին* դասուց որպէս ասացաք: - 608. *Ներքին* դասք՝ այն դատաւորքն են: - 609. Եւ դարձեալ՝ հոգին ունի ե *ներքին* զգայարանք. - 622. Վերին ազոյցն իմացականն հոգի. և *ներքին* կառոյցն մարմնոյ բնութիւն: - 645. Եւ ըստ աստիճանի՝ նախ ի *ներքինն*, և ապա ի վերինն ելք: - 662. Երկրորդ ի թիւ ամացն. զի որքան յերկարեմք անցանելով, պակասի մասն վերին և յաւելու մասն *ներքին*...: - 666. Եօթներորդ, զի հողն ամենևին *ներքին* ծայրքն է ամենայն տարերաց. անդ դնի մարմինն: - 678. Իսկ *ներքին* դժոխք զտանջանաց տեղիքն ասէ մարգարէն. - 679. Երրորդ զմեզ առ այլս դատակշռել. այսինքն առ վերինս և *ներքինս* և հաւասարս: - 745. Այլ նախ ասի միշտ տիւ ի վերին երես երկրի. ուր արեգակն և լուսին զկա՛յտ առեալ. իսկ *ներքինն* միշտ գիշեր և խաւար անփոփոխելի: - 750. Կրճել ատամանց ի ցրտոյ: Խաւար: Ծուխ: Արտասուք *ներքին:* - 751. Եւ վասն այն ասի արքայութիւնն աստուծոյ, զի պատուիրանօքն որ յաւետարանն կամ յայլ գիրս սուրբս գտանին, պահողացն արքայութեանն մուտ բացեալ լինի. և *ներքին* մարդս ամրացեալ հաստատի: - 754. Երկրորդ բաղդատութեամբ այնորիկ՝ որ եղիցի ի ներքոյ ինքեան. այսինքն զի *ներքին* մարմինք մարմնոյ փառաւորելոյ տեղի՛ տան: - 764. Երրորդ այնու՝ զի մեղքն որ յոյժ վտանգեաց զմարդիկ, եղիցի փակեալ ի դժոխս զկնի աւուրն դատաստանի. զի եղիցի ի դժոխս իբր ի տեղւոջ իւրում. զի ո՛չ կարասցէ մնալ. ո՛չ յերկինս և ո՛չ յերկրի. այլ իջանէ ի դժոխս *ներքինս:* - 764. Եւ կէտն արևմտից առ ելս. այնպէս *ներքին* և վերին կիսագունդն: - 788

**ՆԵՐՔԻՆԻ +** Չորրորդ, զի թէ ի ձեռն փիլիպպոսի առաքելոյ որ էր մի յեօթանց անտի սարկաւագացն ո՛չ եղև իջեալ հոգին ի վերայ *ներքինւոյն* մինչև յափշտակեցաւ յազովտոս...: - 589. Զյղանալն ապականութեամբ և կուսութեամբ ասեն. թէ ի *ներքինեաց* առանց խառնելոյ ի ներքս անցեալ յղութիւն առնէ: - 706

**ՆԵՐՔՆԱԳՈՅՆ +** Եւ ի *ներքնագոյնն*, որպէս ի հնազանդեալս՝ և յորդիս: - 143. Ա՛րդ՝ *ներքնագոյն* սիրովն խնամէ աստուած զարարածս. և առաջին դասք հրեշտակաց զվերջինսն. և հարք զորդիս. և վարդապետք զաշակերտս. և իշխանք զիշխեցեալս. տեարք զծառայս. և այս սիրովս շարունակին ընդ նոսա: - 143

**ՆԵՐՔՆԱՏՈՒՆ +** Ոմանք ի վերայ մարդոյս մեկնեն զտապանն և յիրաւի... *Ներքնատունն* թափանն: - 293. *Ներքնատունն* ժողովրդեանն տեղիք: - 294

**ՆԵՐՔՈՅ +** ...և անձնիշխան կամքն ո՛չ նուաճի *ի ներքոյ* երկնային մարմնոց: - 10. Ութերորդ՝ զնա օ՛ձ դարանակալ ասէ ի ճանապարհի. և սոքա առաջին օձին նմանեալ՝ հրապուրեն զբազումս. և արտաքսեն ի դրախտէ եկեղեցւոյ. և թոյնք իժից *ի ներքոյ* շրթանց ունելով և խայթոց...: - 35. Պատասխանեմք թէ՝ ամենայն թիւ ո՛չ բնութեան է յայտնիչ՝ այլ քանիութեան *ներքոյ* արկելոյ թւին: - 54. Այլ անձնաւոր գոյացութիւն *ի ներքոյ* եղեալ ենթակայաբար մարդկութեան իւրոյ: - 88. Ըստ որոյ կերպի և իցէ, թիւ *ի ներքոյ* բերէ միջօէն և առ մին. և նոյնէ անձն որոշեալ թըւով: - 88. Այսպէս և նեստոր մի ասէր զքրիստոս ո՛չ ըստ իրին միութեան, այլ ըստ անուանն համաձայնութեան. որպէս հոմանուն ձայն մի ունելով զկոչմունս, և զանազան բնութիւնս *ի ներքոյ* մի անուանն: - 90. Եւ *ի ներքոյ* սոցա պարունակին ամենայն ճանաչելիք: - 97. ...զի *ի ներքոյ* բանին է զգալեացս տեսութիւն: - 103. Տասներորդ՝ որպէս միակն է *ի ներքոյ* տասնեկին և հարիւրեկին և հազարեկին և բիւրեկին, այսպէս և ի վերոյ նոցա՛ է: - 110. Նմանապէս և արարիչն աստուած. *ներքոյ* և հիմն է ամենեցուն որ կրէ զամենայն

բանիւ զօրութեան իւրոյ: - 110. Երրորդ՝ զի գերիվերո՛յ է ժամանակաց և ո՛չ *ի ներքոյ:* - 114. Վեցերորդ՝ ժամանակն է *ի ներքոյ* երկնից. և միշտն ի վերոյ երկնից. և յաւիտեանն ի վերոյ քան զամենայն երկինս: - 116. Դարձեալ՝ միտք մեր այժմ *ի ներքոյ* ժամանակի՛ է. և **բ** մասն ժամանակին ո՛չէ. այսինքն անցեալն կորուսեալ է, և ապագայն ո՛չէ է: - 117. Երկրորդ՝ միտք զգոյացութիւն իրին տեսանէ որ է *ի ներքոյ* եղեալ. և զգայութիւն զպատահմունքն ի վերայ եկեալ. որպէս որա՛կ քանա՛կ և այլն: - 120. Եօթներորդ՝ սկիզբն և վախճան գիտութեամբն ասի. զի զսկիզբն էից և զկատարածն *ի ներքոյ* իւր ամենահաս գիտութեանն բովանդակեալ ունի: - 129-130. Իսկ թէ դառնային *ի ներքոյ* ինքեանց առ փոփոխական բարին, անկանէին ի չար մեղացն և ի չար պատժոցն. որպէս այժմ դևք և ի կատարածի: - 146. Վասն զարդու գործոց իւրոց. որպէս նըկարիչ ըզթուխ գոյնն *ի ներքոյ* դնէ՝ զի սպիտակն և այլ պատւականքն երևեսցին: - 149. Եւ այլք ասեն թէ՝ ի տէրութեանց դասուն ի վայր *ի ներքոյ* քերօբէիցն յամենայն դասուցն անկան դասու միոյ չափ: - 150. Հրեշտակք ի վերոյ ջրո՛յ են. բայց *ի ներքոյ* հաստատութեան խնամածուք կարգեալ են աշխարհի և մարդկան: - 150. Զոր եկեալ տէրն անմեղ և անապական մարմնովն նահանջեաց զմեղս, և զարդարութիւն սփռեաց ի վերայ մարդկան. և դատապարտեաց զսատանայ իբր զդաւաճանօղ մարդկան և կոխան արար *ի ներքոյ* մարդկան: - 153. Իններորդ՝ զի նախատեսութիւն մեր ի ներքուստ զարտաքոյսն՝ և արտաքուստ *զներքոյսն* ճանաչէ: - 164. Իսկ աստուած տեսանէ *զներքոյսն* ի ներքուստ, և զարտաքոյսն ի ներքուստ...: - 164. Այլ գոյացութիւնն է ունօղ բնութեանն, կամ *ներքոյ* կացեալ բնութեան որպէս մարդ: - 174. Բաղկացական է, որ ընդ մարմնոյ մասնկանցն գոյանայ ի ներս և ի դուրս. վերոյ և *ներքոյ* շուրջանակի...: - 174. Զի ըստ իմաստ նոյն է՛ աստուած ամենայն ուրէք և ո՛չ ուրէք. ոչ ի տեղւոջ իմիք՝ և ո՛չ բացեայ ի տեղւոջէ իմիք. այլ վերոյ սորա, և *ներքոյ* սորա. ի մէջ սորա, և արտաքոյ սորա: - 180. Եւ դիրք տարերացդ է այսպէս Որ երկիրն ծանր է քան զջուր՝ *ի ներքո՛յ* է: - 180. Երկրորդ՝ այսպէս. զի օդն հողմովն փեռեկէ՛ զհուրն ի **բ** կիսագունդս. վերոյ և *ներքոյ*: - 181. Նմանապէս և հոմանուն է հաստատութիւնն *ի ներքոյ* ջրոյ. այսինքն ըերրորդ կամարն. և օդս առ մեզ որ ունի զջուրս ամպով հաստատեալ: - 184. Նա՛խ՝ զի *ի ներքո՛յ* է ամենեցուն. և ամենայնին զօրութիւն առ նա՛ ժողովի: - 187. *Ի ներքոյ* երկրի անցեալ և զերկին փեռեկեալ հաստատուն պահէ: - 203. Տասներորդ՝ *ի ներքոյ* անկանի բազում ամբոխմանց: - 207. Դարձեալ՝ արեգակն ի ձմեռն հեռանայ յերեսաց երկրի՝ և մերձի *ի ներքոյ* երկրի: - 209. Շօշափականն է՛ հողոյն՝ *ի ներքոյ* եղեալ: - 215. Իսկ այլք ասեն թէ՝ վասն առաւել բարձրութեանն՝ լոյս արեգականն ո՛չ երբէք հեռանայ ի նմանէ. թէպէտ *ի ներքոյ* երկրի անցանէ. որպէս լուսինն թէպէտ ի վերին կամարն լինի, զլոյսն առնու յարևէն որ ի ներքին կամարն: - 222. Մինն պարզ և զուտ բարին *ներքոյ* և արտաքոյ. որպէս առաքինութիւն. և հոգևոր գործն. յայսպիսիքս հրամայէ՛ մեզ մերձենալ: - 224. Եւ է՛ միւս բարի խառնակն և պատրուակեալն. որպէս է աշխարհական բարին. զի գունով և երևելեաւ բարի է, այլ *ի ներքոյ* ծածկեալ չա՛ր է. յայսմանէ հրաժարէ՛ զմեզ ոչ մերձենալ: - 224. Յերիս՝ զտարերս. և յերիս զայնոսիկ որք են *ի ներքոյ* տարերց: - 227. Չորրորդ՝ այլ և դիրք տարերաց, հողն է *ի ներքոյ*. և ապա ջուրն և օդն և հուրն: - 232. Նոյնպէս մարմինն է *ի ներքոյ*. և հիւթ արեանցն ի վերոյ. և ապա շունչն օդոյ և հուր լուսաւորացն ի վերոյ: - 232. Վասն է՞ր մարդոյս ձև ուղիղ. գլուխն ի վերայ. և այլ անդամքն *ի ներքոյ:* - 232. Վասն որոյ գլուխն է՛ ի վերոյ. և խռչափողն որ ունի զտուր և զառն՝ օդո՛յդ է նման. և *ի ներքոյ* այլ մարմինք և հիւթ արեան և ջրոյ՝ երկրիս է օրինակ: - 232-233. Գլուխն որպէս երկինք ի վերոյ. և ոտքն որպէս երկիր *ի ներքոյ*. զի ծանրութիւնք և ծորմունք ամենայն ի վայր հոսեսցին: - 233. Զի շօշափելիքն *ի ներքո՛յ* է որպէս երկիր. և ճաշակելիքն ի վերոյ որպէս ջուր. լսելիքն յօդն է. և տեսանելիքն հուրն ի վերոյ: - 235. Եւ այն զի աչքն ի դէմքն է, և ականջն ի կողմանէ. զի աչքն ուղղակշիռ ի դէմն տեսանէ. և ականջն շուրջանակի յամենայն կողմանէ լսէ. ի վերոյ *ի ներքոյ* և այլն: - 235. Վասն զի անձն է մեզ առաջին հիմն և *ի ներքոյ* եղեալ. յորմէ և առ որ ժողովին տեսակն և սեռն և սեռականագոյն սեռք: - 236. Ոսկերքն *ի ներքոյ* սիւն է մարմնոյն, և մորթն ծածկո՛յթ է մսոյն և այլոցն: - 240. Ունականն է՝ յորժամ ժողովէ զկերակուրն՝ ձկտի և լայնանայ և փակէ՛ զամենայն դրունսն որ *ի ներքոյ* և ի վերոյ և ի կողմանէ, զի մի՛ թափեսցի կերակուրն: - 242. Զոր ընդ դերևս հանէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս կազմութեան այսպէս եթէ, որք զհոգին յառաջ ասեն գոյանալ քան զմարմին. և վասն մեղաց եղեալ ի մարմին մարդոյ. որ է՛ համանման բանականութեամբ. և է՛ *ի ներքոյ* երկնային կենաց՝ զի մարմնաւո՛ր է: - 252. Այլ արդ ի մարմնի առաւել մեղանչէ քան յերկնային կեանս. վասն որոյ անկանի ի զգայական մարմին որպէս ասեն՝ որ *ներքո՛յ* է մարդոյն՝ և համանման ախտիւք զի զգայակա՛ն է: - 252.

Այլ արդ՝ ի տունկն ո՛չ կարէ սրբիլ. այլ անկանի յանշունչն, որ *ներքո՛յ* է տնկոյն, և նման նորա զի մարմին է: - 252. Կարգաւո՛ր է ապա՝ զի յանշնչոյն փոխեսցի յանէն և յանգոյն. որ մերձակայ և *ներքո՛յ* է անշունչ մարմնոյն: - 252. Իսկ որք ի **խ** աւուրս ծնանին և կամ ի **ի**, որպէս հաւ. ունին նոքա զխորհուրդ չորից տասանց և չորից հնգից, ըստ **ե** զգայութեանց *ներքոյ* և **ե** զգայութեանց արտաքոյ որպէս ասացաք: - 263. Չորրորդ՝ կօշիկն կարմիր. զի արեամբ չափ *ի ներքոյ* ոտից են հնազանդեալք ամենայն: - 271. Եւ փոխանակ կօշկաց՝ զամենայն ինչ հնազանդ արար *ի ներքոյ* ոտից նորա: - 271. Դարձեալ՝ մա՛րդն է ի պատկեր աստուծոյ եղեալ առաւել քան զիրեշտակս **գ** կերպիւ, *ներքոյ* և արտաքոյ. զորս ո՛չ ունին հրեշտակք: - 275. Եւ նաւթն կո՛ւպրն է *ներքոյ* և արտաքոյ ծեփեալ զի մի՛ վնասեսցի: - 293. Իսկ կցկցեալ. զի յօդեալ և կցեալ են ոսկերք մարդոյն առ իրեարս. և *ի ներքոյ* միս՝ և արտաքոյ մորթն է պատեալ: - 293. Կամ լեարդն *ի ներքոյ*. սիրտն ի մէջն. և թոքն թեթև ի վերոյ: - 293. Դարձեալ՝ ցանկութիւնն *ի ներքոյ*. ցասմնականն ի մէջն. և բանն թռչուն ի վերոյ: - 293. Բնակէր *ի ներքոյ* գողգոթային ուր ադամայ գերեզմանն էր: - 300. Եւ ի կատարածի դիցին թշնամիքն քրիստոսի *ի ներքոյ* ոտից նորա ասացաւ: - 314. Ա՛րդ՝ ո՛չ ասէ թէ *ի ներքոյ* քոյ. զի զոսա կոխեալ էր քրիստոս: - 316. Իսկ պատելն ոսկի *ներքոյ* և արտաքոյ, զի աստուածատեսա՛կք են և մաքուր: - 344. Եւ *ներքոյ*, զի բնութեամբ առին ընդ լինիլն իւրեանց զմաքրութիւնն: - 344. *Ներքոյ* և արտաքոյ ոսկին՝ հոգւոյն և մարմնոյն մաքրութիւնն: - 345. Բեհեզն՝ լուսոյ տարածումն *ի ներքոյ*...: - 348. Երկրորդ՝ յանապատն ամաղէկ և այլքն. յետ մահու որ ընդ հոգիս պատերազմին. որք են այսք չարութեան *ի ներքոյ* յերկնից ըստ առաքելոյ: - 393-394. Երրորդ՝ զի մի՛ իցէ *ի ներքոյ* սկզբնական մեղաց: - 470. Երկրորդ «ի յորդանան». որ ստեղծօղն է տարերաց՝ եդ զինքն *ի ներքոյ* խոնարհ տարեր ջրոյն: - 487. Այլ և աղիւսաձև ակն շափիւղայ *ի ներքոյ* ոտից նորա: - 494. Զի թէ կրեալ էր զմեղս և զապականութիւն, ո՛չ կարէր ազատել զմեզ. ինքն *ի ներքոյ* անկեալ կրից և ապականութեանց: - 497. Եւ տէրն ի մարդեղութեանն զկամաւո՛րն կրեաց յինքեան և ո՛չ զակամայն. զի ո՛չ էր *ի ներքոյ* հարկի և ծառայութեան բնութեան որպէս մեք. այլ տէր և ազատ յամենայն կրից: - 501. Ի գիրս բենետիքտոսի հարցեալ եղև թէ ո՞ւր են դժոխքն. և տուաւ պատասխանի թէ՝ յանկեան և յեզր ծովուն *ի ներքոյ* երկրի ի խաւարչուտ վայրս: - 504. Մետասաներորդ, զի ձգեալ զձեռն նայի հնազանդեցոյց զմարմինն զայն *ի ներքոյ* մահու: - 518. Իններորդ, զի մկրտութիւնն է գործ քահանայութեան. և քահանայութիւնն է ազատ և ո՛չ ընդ ումեք հարկի *ներքոյ*. իսկ կինն ծառայ և ոտք է առն. վասն այսր հարկի ո՛չ է պարտ ծառային առնել զգործ տեառն...: - 589. Եւ դնէ զայս քահանայն սուրբ մեռոնաւն ի ճակատ նուիրելոյն ասելով այսպէս. ըստ այլազգաց եկեղեցեաց. թէ «*ի ներքոյ* ձևիս այս ես կու նշանեմ զքեզ նշանաւ խաչի»...: - 593. Յաղորդութիւնն է խորհուրդ՝ յորում պարունակի քրիստոս *ի ներքոյ* ձևի հացի և գինւոյ. և յերկոքին մասունքն է բոլոր քրիստոս: - 594. Նա՛խ՝ զի ի դառն մաղձոյն հոսի յորովայնն *ի ներքոյ* սրտին և կսկծեցուցանէ զսրտակրանքն...: - 619. ...որ պատեալ է *ի ներքոյ* զսիրտն...: - 619. ...և դնեն ի մէջ եկեղեցւոյն *ի ներքոյ* բեմին: - 671. զի կենդանիք բնակին ի վերայ յերկրի, և մեռեալք *ի ներքոյ* երկրի: - 677. Պարսիկ բառ է՝ *ներքոյ* հողոյ: - 678. Այլ մեր վարդապետք յերկինս և *ի ներքոյ* երկնից ասեն. որպէս և կալիստրատոս վկայն առ **ը** երրորդ կամարաւն ուր են լուսաւորք և եթերային լոյսն: - 686. ...որք ունին զհին օրէնս և ո՛չ զնորս. այլ *ի ներքոյ* մնացեալ սկզբնական մեղաց՝ նոքա ի տանջանս ընթանան: - 678. Կրկին ասեն զշաւիղս ընթացից հոգւոց. այսինքն մինն ի վեր յերկինս, և միւսն *ի ներքոյ* երկնից: - 688. ...ոչ թողու արդար իրաւունքն աստուծոյ ելանել յերկինս. այլ կան և մնան *ի ներքոյ*. ակնունելով հանդերձեալ դատաստանին...: - 688. Իսկ *ի ներքոյ* երկնից առ երկնիւ է կայանք հոգւոց կիսամասնեայ արդարոց այնոցիկ որոց պակա՛ս է արդարութիւն քան զմեղս և կամ առաւել: - 688. Ի մի ասացին գոլ խորանս *ի ներքոյ* երկնից զարդարս և զմեղաւորս. որք դատաստանաւն որոշին: - 689. Նոյնպէս և հոգիք արդարոց ո՛չ մնան ուրեք ընդ *ներքոյ* դատապարտեալ տարերաց...: - 689. ...պակասին սոքա և ժողովին *ի ներքոյ* երկրի և լինին տանջանարանք մեղաւորաց որպէս ասէ սուրբն բասիլիոս: - 728. ...որպէս յա՛յտ է ի սերովբէսն որ *ի ներքոյ* փառաց աթոռոյն, այսինքն է խաչին. թևասքօղեալ զերեքսրբեանն վերածայնէին: - 734. Յինգերորդ, զի դիցէ զթշնամիս իւր *ի ներքոյ* ոտից իւրոց. այսինքն կորուսցէ զնեռն և զսատանայ և զամենայն գայթակղութիւն մարդկան՝ զմեղս և զմահ...: - 737. Զի ի վերոյ կացցէ դատաւորն, և *ի ներքոյ* դժոխքն բացեալ: - 738. Երկրորդ բաղդատութեամբ այնորիկ՝ որ եղիցի *ի ներքոյ* ինքեան. այսինքն զի ներքին մարմինք մարմնոյ փառաւորելոյ տեղի՛ տան: - 764. Եօթներորդ՝ վասն բարձրութեանն ի ջանուց մշակաց. զի որ քան

առաւել բրի *ի ներքոյ* երկիրն և քարինս դնի, այն քան առաւել բարձրանայ: - 766. Որ թէ ի բարձանց լինի պատերազմ անձրև օրէն փորձանաց, *ի ներքոյ* կացցես հաւատոցն և ապրիս: - 770. Զի յայսմ կենցաղոյս զուգաւորին յիշելն երբեմն և մոռանալ *զներքոյս* և զարտաքոյս. ըստ որում փոխանցապէս ունիմք զերից ժամանակաց գիտութիւն: - 774. Իսկ յետ մահու՝ յիշելն է միայն ըստ ինքեան *զներքոյսն*. խափանեալ խառնուածոյ նիւթոյն: - 774. Փեռեկելով զերկոսին կիսագունդս *ներքոյ* և վերոյ և ի միջի հաստատ կացելոյ երկրի: - 788

**ՆԵՐՔՈՒՍՏ, Ի ՆԵՐՔՈՒՍՏ +** Իսկ *ի ներքուստ* ի վեր՝ ի բազմութենէ առ մինն ընթանայ. որպէս խորհրդական աստուածաբանութիւնն արտաքոյ թողեալ զբազումութիւն էից և ի մինն ընթացեալ, որ ամենեւին անբանութիւն է և անիմացութիւն. անճառելի. անիմանալի. և լռութեամբ պատուի յամենայն արարածոց: - 123. Է՞ որ *ի ներքուստ*, որ չարութիւն և ախտ կոչի. և է՛ որ արտաքուստ, որ կիրք և արատ կոչի: - 139. Իններորդ՝ զի նախատեսութիւն մեր *ի ներքուստ* զարտաքոյսն՝ և արտաքուստ զներքոյսն ճանաչէ: - 164. Իսկ աստուած տեսանէ զներքոյսն *ի ներքուստ*, և զարտաքոյսն *ի ներքուստ.* զի զամենայն առ ինքն և յինքն տեսանէ. և ոչ ինչ է արտաքոյ ինքեան: - 164. Յրոտից, ըստ դրութեան է. զի հո՛ւր է ոտիցն որ այրէ՛ *ներքուստ* ի վեր ջերմութիւն արեգականն: - 201. Նմանապէս յամառն մերձի յերեսս երկրի, և հեռանայ *ի ներքուստ*: - 209. Քարշողականն է՝ յորժամ կծկի և քաղցի, *ներքուստ* և արտաքուստ խնդրէ կերակուր: - 242. Եւ այսպէս *ի ներքուստ* ի վեր կրկնեալ եօթնից որ է չորեքտասան, կատարի ցանկական մասամբն և կարէ՛ զնմանն ծնանիլ և կոչի մանուկ: - 264-265. Իսկ անասնոցն ո՛չ է դաստիարակ արտաքուստ. վասն որոյ բնութիւնն խնամէ զնոսա *ի ներքուստ:* - 267. Երրորդ՝ ըստ հիւթին յաւելւածոյ՝ և պակասութեան մաղձիցն՝ *ի ներքուստ* կամ յարտաքուստ, ջերմ և ցուրտ և այլն, զնորին նմանն և զկերպարանն առնու առ ինքն: - 268. *Ի ներքուստ*՝ սիրտն և երիկամունքն և լերդաքոյքն ընդ ճարպին ճենճերեալ ի հոտ անուշից. որպէս հրամայեաց մովսէս: - 367. Յայիլն *ներքուստ* ի վեր. ըստ այնմ «հայեցայ ի բարձունս»: - 407. Այլ զանազանին. զի հպարտն *ի ներքուստ* ունի զբարձրամտութիւնն. և փառասէրն յարտաքուստ յայլմէ՛ բերանոյ ընդունի զփառս գովութեան: - 560. Բոլորովիմք մարդ ի ձեռն մկրտութեանն *ներքուստ* և արտաքուստ սրբի. բայց դարձեալ սերմն նորա ի ձեռն մարմնոյն ցանկութեանն պղծի: - 592. Կամ անդրադարձեալ *ի ներքուստ:* - 640. Երրորդ՝ զի այն արտաքուստ անասնոյ է մարմին. և այս *ի ներքուստ* յինքենէ՛ և զինքն մատուցանէ աստուծոյ: - 658. Այլ և որպէս նախաստեղծքն ի դրախտին ո՛չ ամաչէին. նոյնպէս և սուրբք ի յարութեանն. զի ծածկեալ են *ի ներքուստ* հոգւոյն լուսաւորութեամբն, և արտաքուստ պսակաւն և փառօք: - 726. *Ի ներքուստ* խիղճ մտացն խածեալ, և արտաքուստ աշխարհ բորբոքեալ: - 738. Զի ասին՝ արտաքոյ կիզանիլ հրով որպէս խոտ ի հնոցի. և *ի ներքուստ* ցրտանան...: - 752. Այլք՝ *ի ներքուստ* խիղճ մտացն, և արտաքուստ անքուն որդունքն հրեղէնք: - 753. Եւ թէ *ի ներքուստ* շաղախմունք ապականութեան, ի վերայ հաւատոյն յեցցես և ո՛չ անկցիս: - 770. Իսկ հոսումն արտասուաց, պատճառի՛ *ի ներքուստ*, և արտաքուստ յիմեքէ՛ ինչ: - 786. Իսկ *ի ներքուստ*, ի լինիլ տրտմութեանց՝ խուճապեալ մարմնոյն հոսի մաղձ դառն ի ստամոքս որովայնի. և վերացեալ գոլորշեաց նորա զօրէն շոգոլեաց պուտկի առ խելապատակս գլխոյ. և ծանրացեալ անտի թորի՛ առ բիբն ասացեալական. չոր գոլով և աղէգոյն ի սևատեսա՛կն մաղձոյ: - 787

**ՆԵՐՔՍ (Ի ՆԵՐՔՍ) +** Այլ արդ՝ եդ աստուած զսոսա բնական որակութիւնս ի մասունս հոգւոյն. եդ և զանձնիշխան կամքն տէր և իշխան *ի ներքս* ի հոգին...: - 19. Իններորդ՝ նա՛ ի տաճարին նստի և ուսուցանէ. և սոքա *ի ներքս* ի յեկեղեցի. զկերպարանս բարեպաշտի ունելով արտաքոյ՝ ծածկեալ են գառնենեաւ զգայլենիս: - 35. Երկոտասաներորդ՝ ուսուցանել զմիտս մարդոյն *ի ներքս*՝ միայն աստուծոյ է...: - 58. Եւ խոհեմութեամբ՝ որ *ի ներքս* ի մեզ: - 103. Զի աստուած ո՛չ արտաքոյ ինքեան ունի զտեսութիւնն. այլ *ի ներքս* միայն. զի զինքն ի յինքն տեսանէ՝ և զայլս ի յինքն. ապա զեղեալքս ի յարացոյցն որ է տեսութիւնն աստուծոյ որպէս ասացաք: -118-119. Եւ սոյնպէս ածէ *ի ներքս* զչար խորհուրդսն թէ ի յարքնութեան թէ ի ննջման: - 145. Սակայն զչար խորհուրդն ո՛չ կարէ ածել *ի ներքս* որ միայն հաւանութեամբն է չար: - 145. Ապա թէ կամիս զորոշումն բնութեանց *ի ներքս* բերել ո՛վ երկաքնակ, մի՛ ասեր **բ** բնութիւն. այլ **գ**. այսինքն զմարմնոյ և զհոգւոյ և զբանին բնութիւն: - 176. Գործ զգայարանացն է զարտաքինս *ի ներքս* զգալ. որպէս աչօք զգոյնս. և ականջով զձայնս. և այլն: - 179. Արդ ամենայն ինչ որ զգալի է՝ *ի ներքս* ի սմա՛ է. ձա՛յն. գո՛յն. հո՛տ. համ՛. ծա՛նր և թեթև. և ո՛չ ինչ է արտաքոյ սորա. յաղագս որոյ և ո՛չ զգայարանաց կարօտի: - 179. Վարդապետք ասեն. որպէս սուրբն

բարսեղ՝ թէ որպէս երկբերանի քսա՛կ է լուսինն. ընդ մինն ելանէ և ի վերի թիկունքն ժողովի և պակասի ի մէնջ լոյսն. և ի միւսն *ի ներքս* մտանէ և լուսաւորէ՛ զնեզ: - 187. Եւ զի ի գոլորշեաց որ *ի ներքս* է փակեալ՝ թօթափի և շարժի: - 211. Եւ արդ՝ ուսեալք զայս, մտցուք և *ի ներքս* բանիցս այսոցիկ և տեսցուք: - 261. Այլ թէ հարցանեն զորքանութիւն սիւնիցն. **ծ** սիւն ի մէջ խորանին. և **թ** սիւն վարագուրացն. և մի թափանց ի մէջն յարնելից յարևմուտս. որ լինի **կ**. և **ձ** սփռիչ. և **խ** նիգք. և ամենայնն ոսկեպատ. որ բովանդակն լինի **ճձ** *ի ներքս*: - 343. Եւ քահանայքն հպարտացան և օտար հրով խնկարկեցին *ի ներքս* վարագուրին, վասն այն պատժեցան ի խրատ այլոց: - 364. Երկրորդ՝ որպէս բնութիւնս մեր բարի՛ էր պատկեր եղեալ բարւոյն. և մեք կամօք մեր ախտացուցաք չար ածելով *ի ներքս*...: - 408. Եւ զի ա՛յլ է մահ և ա՛յլ ապականութիւն՝ յա՛յտ է նախ ի գործոյն. զի ինքեամբ մահ *ի ներքս* մտեալ որոշէ՛ զհոգի և զմարմին. և ա՛յս է գործ նորա: - 498. Իսկ ապականութիւն այլայլութեամբն *ի ներքս* մտանէ...: - 498. Իսկ զերրորդն մարկոս պատմէ՛ առաւօտուն և յարևագալն յետ ղուկասու. և տեսին երիտասարդ մի *ի ներքս* ի գերեզմանն ընդ աջմէ նստեալ: - 515. Արդ՝ ըստ առաջին կարգին թէ ցանկայ *ի ներքս*, ըստ որում է՛ հպարտութիւն և փառասիրութիւն: - 561. Արդ՝ մեղանչելն մարդոյ այնպէս է որ զակն խփեաց ի լուսոյն և խաւարեցաւ. սակայն լոյսն ծագէ՛ դեռևս ի վերայ աչացն և սակաւ փայլէ *ի ներքս*. և յորժամ բանայ վաղվաղակի լոյս տեսանէ: - 562. Այնպէս մարդ մեղօք զրկի ի շնորհաց լուսոյն. այլ լոյս խնամոցն աստուծոյ չէ հեռացեալ և սակաւ փայլէ *ի ներքս* ի տրտնջականնն...: - 562-563. Զի միապէս միաւորին արտաքս և *ի ներքս*. զի ամենայն կերակուր և ըմպելի *ի ներքս* միաւորի: - 598. ...և ապա՛ *ի ներքս* մտեալ՝ **խ** օր աւարտեաց ընդ աստուած խօսելով: - 651. Զյղանալն ապականութեամբ և կուսութեամբ ասեն. թէ ի ներքինեաց առանց խառնելոյ *ի ներքս* անցեալ յղութիւն առնէ: - 706. Զի ոչ ինչ է արտաքս որում բաղձան. ոչ ինչ *ի ներքս* յորմէ տաղտկանան: - 767. Իսկ զի և արուի թէպէտ ո՛չ նոյն պիտոյիք. սակայն ո՛չ ընդ վայր կազմեցաւ. ի լրումն **բժան** դրանց անդամոց. *ի ներքս* մուծանելոյ և արտաքս հոսելոյ զպակաս և զաւելորդս ինչ. անվնաս կելով կենդանւոյն: - 786. Որպէս յա՛յտ է ի ծխոյ և ի փոշւոյ և յայլոց. ընդ դէմ գոլոյ պարզութեանցն լուսոյ՝ *ի ներքս* մտեալ զկծեցուցանէ զնա: - 786-787

**ՆԵՓԹԱՂԻՄ** - *Նեփթաղիմ* է և Պետրոս: - 348. Դան. Ասեր. և *Նեփթաղիմ*. **ժե** բիւր և **ռռ** զօրք նոցա: - 378. Չորրորդն Բարակ. որդի ամենեմայ ի կեդեսայ *նեփթաղէմի* ամս **խ**: - 420. ...և փակէի արքայի որդւոյ ռոմելայ. և գերեաց *զնեփթաղիմ* և զգալիլեա. և Զգաղայաթ **զ** ցեղիւքն իսրայէլի. և տարաւ յերկիրն ասորեստանեայց: - 447

**ՆԵՐԱՒՈՎ** - Զյովաքազ գերի տարաւ *ներաւով* փարաւոն. և թագաւորեցոյց զեղիակիմ: - 453

**ՆԵՐՏԱՌԻՈՍ** - Եւ Պատրիարգունք էին անդ, Ներսէս հայոց. Կիւրեղ երուսաղէմի. Դամասոս հռոմայ. *Ներտառիոս* կոստանդնուպօլսի: - 542. Զի այսպէս ասէ *ներտառիոս* հայրապետն հռոմայ թէ՝ չէր հնար իջուցանել զմարմինն տեառն ի խաչէն վասն փայլատակմանցն ի խոցուածոյն: - 631

**ՆԶՈՎ(Ք) +** Այլ որ եղև փոխանակ հնոյն նոր անդամ. և *նզովք* կոչեցաւ վասն իմ և մեղք այն որ ո՛չ արար զնեղս, և ելոյծ զանէծս և եբարձ զնեղս: - 42. Եւ այսոքիկ նզովեալք են ի հոգւոյն սրբոյ ի ժողովն եփեսոսի և այլոցն. և եղիցին ի *նզովս* սուրբ եկեղեցւոյ: - 82. Վաքսունեղ, Վասն բաղամ մոգին. *նզովք* և անէծք: - 285. Որպէս ետ առաքելոցն, Նոյնպէս և նոցա ի գիր *նզովից* զկապելն. և յօրհնութիւն ժողովրդեանն զարձակելն: - 379. Զի՞նչ է *նզովք*, և զի՞նչ անէծք: - 388. *Նզովքն* որոշումն ասի. ըստ այնմ, «կամէի *նզովս* լինիլ վասն ազգին իմոյ»: - 388. Դարձեալ՝ *նզովքն* մարմնո՛յն է, և անէծքն հոգւոյն: - 388. Դարձեալ՝ *նզովքն* ի մէնջէ. և անէծքն ի տեառնէ ...: - 388. Վեցերորդ՝ զի թէ լինի անկարօտ գող և զրկօղ, ընդ տեառն իւրոյ կորուսանէ և զինչսն. որպէս աքարն որ ունէր բազում ստացուածս, և գողացաւ ի *նզովիցն* երիքովի. տեսին ամենայն ժողովուրդն և ցասեան ի վերայ նորա և իրաւունս ետուն սատակմանն: - 416. Եւ *նզովիւք* փակեն...: - 499

**ՆԶՈՎԵԱ +** Վեցերորդ վկայ ի ժողովոյն քաղկեդոնի զոր նոքա ընդունին և ո՛չ մեք. այսպէս է գրեալ թէ՝ որ ոք զհոգին ի հօրէ և յորդւոյ բղխումն ասիցէ՝ *նզովեալ* լիցի: - 64. Ապա ուրեմն *նզովեալք* են նոքա ի կանոնաց իւրեանց: - 64. Զորս *նզովեալ* որոշէ՛ սուրբ եկեղեցի: - 68. Զորս զայսպիսի խորհօղսն *նզովէ՛* եկեղեցի սուրբ: - 82. Եւ այսոքիկ *նզովեալք* են ի հոգւոյն սրբոյ ի ժողովն եփեսոսի և այլոցն. և եղիցին ի նզովս սուրբ եկեղեցւոյ: - 82. Եւ կամ զմի բնութիւնն ուրացեալ. և կամ առ աչօք ասացեալ. զորս *նզովէ՛* սուրբ եկեղեցի աստուծոյ: - 82. Զորս զայնպիսի ասացօղքն և ընդունօղքն՝ որոշեալ *նզովէ՛* եկեղեցի քրիստոսի աստուծոյ: - 226. Զոր զայսպիսի խորհօղսն և ասացօղսն *նզովէ՛* եկեղեցի ամենայն

ուղղափառաց ամէն: - 475. Եւ թղթով *Նզովեցին* զեւտիքէս և զփլաբիանոս և զդոմնաս և զտումարն լևոնի: - 542. Եւ էր սիրելի փլաբիանոսի. և լևոնի. և թէոդորիտոսի զորս *Նզովեցին* յեփեսոս. և վասն նոցա վրէժխնդրութեանն արարին ժողով ողզ եպիսկոպոսաց. և ընկալան զթուղթն լևոնի. և *զնզովեալն* յեփեսոս զփլաբիանոս ընկալան...: - 542-543. Եւ զնեստոր *Նզովեցին*: - 543. Եւ յոլովք ի գիտողացն ասացին, թէ հաւատք զնեստորին հաստատէք զնա ընդէ՞ր *Նզովէք:* - 543. Եւ պետրոս անտիոքու պատրիարգն և սուրբն պարսամ գրեցին ի հայք և զգուշացուցին. և *Նզովեցին* զհաւանեալսն մարկիանոսի: - 543. Եւ սուրբն սիմէոն սիւնակեացն այրեաց զթուղթն դաւանութեանն քաղկեդոնի՝ զոր գրեալ էր թագաւորն մարկիանոս աղաչանօք առ նա՛. և *Նզովեաց* զքղտատարն որ էր թէոդորիտոս գլուխ ժողովոյն: - 543. Յորում զորոգինէի գրեալսն խոտեցին. և զսուրբն եւագրիոս միայնակեաց՝ և զիրաշալի այրն աստուծոյ զդիդիմոս՝ *Նզովեցին:* - 543. Եւ *Նզովեցին* զչպատուօղսն պատկերաց: - 544. Եւ *Նզովեցին* զաղանդն մարկիանու և զարտեմոնի, և զտումարն լևոնի. և միաբանեցան ի մի հաւատս սուրբ առաքելոցն. և ի կանոնս սուրբ ժողովոյն ինչ պետք էին յաւելին գլուխս **թ** ի զգուշութիւն եկեղեցւոյ: - 544. Այլ որ **ճծ** ամաւ յառաջ եկին ի հայք՝ ասորիք արք քաջաբանք, և կամեցան սերմանել զաղանդն նեստորի. որք *Նզովեալ* որոշեցան. բայց ոմանք ընկալեալ էին և թարգմանեալ ի նոցանէ գիրս սուտս, Ջզօրտոսակ. Ջկիրակոսակ. Ջպղի տեսիլն: - 545. Եւ որ հաւատայ նոցա *Նզովի:* - 545. Այլ զչար և զաստուածուրաց ժողովն քաղկեդոնի որ ի ձեռն մարկիանոսի և անիծելոյն պօղքերի՝ ո՛չ ընդունիմք. և զընդունօղսն *Նզովեմք:* - 547. Եւ որ ջուր խառնէ՝ *Նզովեալ* եղիցի ասեն: - 595

**ՆԷԵՄԻ** - Ասեմք եթէ՝ խոստումն աստուծոյ կատարեցաւ ի ժամանակս զօրաբաբէլի և եզրայ. որպէս ասէ *Նէեմի* յաղօթս իւր, «իշեա՛ տէր զբանն՝ զոր պատուիրեցեր ծառային քոյ մովսէսի, որ ասէր, «թէ իցեն ցրուեալք մինչև ի ծագս երկրի, անտի ժողովեցից և ածից ի տեղի զոր ընտրեցի»: - 28. Այլ և աղքատութեամբ. ուստի յա՛յտ է զի անէ՛ծ զգէեզի վասն ընչիցն *նէեմանայ*: - 404. Եւ յետ նոյն քան ամաց շինութեան տաճարին աւելի կամ պակաս, նա՛խ արձակեցաւ եզր դպիր. և յետ նորա *նէեմի*: - 447-448. Եւ յետ եօթանասուն ամի շինածոյ տաճարին՝ ապա արձակեալ *նէեմի* շինէ զպարիսպն երուսաղէմի ի **լբ** ամին արտաշէսի. որպէս ասէ գիրքն եզրի: - 448. Դարձեալ՝ յերիս ժամանակս ազատեցան ի բաբիլօնէ՛. այսինքն կիւրոսիւ սաղմանասարաւ. դարեհիւ զօրաբաբէլ. արտաշէսիւ եզր դպիր և *նէեմի:* - 448. ...իսկ երրորդն *նէեմի* և եզր դպիր՝ կանգնեցին զպարիսպն և զդրունսն. նշանակեն զառաքեալսն զհայրապետսն և զվարդապետսն. որք օրինօք պարսպեն զեկեղեցի, և հանապազ ուսուցանեն զդպրութիւն: - 449. Երկու մնացորդացն: Երկու եզրաս: *Նէեմի*: Եսթեր: Յուդիդ: Տուբիդ և տուբիա. որ լինի **ի** երրորդ: - 450

**ՆԸՍԱ** - Քսանգ, տիկինն սաբայ որ կոչիւր *նըսա*, ցանկացաւ իմաստութեանն սողոմոնի: - 441. Դշխոյին հարաւոյ *նըսա*՛ էր անունն: - 495.

**ՆԺԱՐ +** *Նժարն* է՛ ի մեզ անձնիշխան կամքն: - 744. *Նժարն* ամենակալ իշխանութիւն դատողին: - 745

**ՆԻԳ +** Այլ թէ հարցանեն զորքանութիւն սիւնիցն. **ծ** սիւն ի մէջ խորանին. և **թ** սիւն վարագուրացն. և մի թափանց ի մէջն յարևելից յարևմուտս. որ լինի **կ**. և **ձ** սփռիչ. և **խ** *նիգք*. և ամենայնն ոսկեպատ. որ բովանդակն լինի **ճծ** ի ներքս: - 343. Եւ տէրն ի մէջ գիշերի զդրունս և *զնիգս* դժոխոց խորտակեալ յարեաւ ի գերեզմանէն. և զհոգիս մարդկան էհան յերկինս: - 423. Դրունք և *նիգք* յետուստ են. այսինքն կամ սկզբնական և ներգործական մեղօք կապեաց յետոյ, կամ մեղօք և յուսահատութեամբ: - 504. Վեցերորդ՝ ամուրն սատանայի է ներքին դժոխքն. ուր են դրունք պղնձիք և *նիգք* երկաթիք. որ է՛ մեղքն մեծամեծք և յուսահատութիւնք. և ա՛յն էր ամրոց նորա: - 506. Եւ ի մէջ գիշերի զարթեաւ և զդրունս փակեալ *նզօրն* և սեմօք եհան յուսն և ել ի լեառն: - 513

**ՆԻՋԱԿ +** Տասներորդ՝ յաւուր միում այսահարեալ սաւուղ՝ կամէր *նիզակաւն* բևեռել զդաւիթ յորմն. յորմէ զերծեալ ապրեցաւ և գնաց ի տունն: - 513. Այսպէս և որդիքն սաւուղայ հարեալ նախանձու բևեռեցին զտէրն և խոցեցին *նիզակաւ*. և պահէին զգերեզմանն: - 513

**ՆԻԿԻԱԿԱՆ** - Այսպէս ընկալեալ ի նոցանէ և *նիկիականն* ժողովք՝ հաստատեցին առ մեզ: - 484. Եւ տե՛ս, զի լուսաւորիչն կարգեաց զնաւակատիսս յայսմ աւուր որ էր յաւուրս *նիկիական* ժողովոյն. զոր յառաջն ունէին ամենայն ազգ, զնոյն կարգեաց մեզ: - 509. Որպէս որք յեփեսոս՝ *զնիկիականն* ուղղութիւն ո՛չ քակեցին. այլ ի նոյն տեսակ նոր կանոնս կարգեցին ի հաւատս ուղիղ: - 541. Իսկ անօրէնութիւն է մեզ լուծումն պահոց աւանդեալ յառաքելոց անտի զերեք յիսունս և զչորեքշաբաթի և զուրբաթ. և զայլ շաբաթապահս ի *նիկիական* ժողովոյն սրբութեամբ պահել: - 552. ...որպէս և գրեալ է

ի գիրս *նիկիականն* կանոնացն եթէ զծառայս ի ժառանգութիւն եկեղեցւոյ կարգել ո՛չ հրամայեմք...: - 589. Եօթներորդ՝ շաբաթի օր տօնեմք սրբոցն և պատարագ մատչի ըստ *նիկիական* կանոնին...: - 648. Եւ ի նորս՝ ի չորեքշաբաթ և յուրբաթ փոխեցին առաքեալքն. որպէս յա՛յտ է յառաքելական կանոնս. նաև ի *նիկիականն:* - 652

**ՆԻԿԻԱՅ** - Նոյնպէս և զայս եդին սուրբ հարքն ի *նիկիայ:* - 166. Առաջին ժողովն եղև ի *նիկիայ* սրբոց հարց. զկնի **յժը**՝ կամ **յլ** ամի ծննդեանն քրիստոսի. և ի **ի** ամի թագաւորութեանն կոստանդիանոսի: - 542. Ի *նիկիայ* յաղագս զպատկերս անարգելոյ: - 544. ...և հաստատեցին զկանոնսն երից սուրբ ժողովոյն որ ի *նիկիայ*՝ ի կոստանդնուպօլիս՝ և յեփեսոս: - 544. Որ ի *նիկիայ* յաւուրս մեծին կոստանդիանոսի ընդ դէմ արիոսի ժողովեցան հարքն սուրբ՝ **յժը**: - 547. Եւ մինչ ի ժողովն *նիկիոյ* զայս ասացին: - 635. Այլ ի ժողովն *նիկիոյ* քարոզեցաւ պահք, բայց պատարագ մատչիլ: - 651. Հինգերորդ, կանոնս եդեալ է և հաստատեալ ի *նիկիոյն* ի քարսղին՝ ի յեփրեմին՝ և յայլոցն...: - 652

**ՆԻԿՈԴԻՄՈՍ** - Եւ թէպէտ յովսէ՛փ իջոյց ի խաչէն, և յովսէփ և *նիկոդիմոս* պատեցին, այլ ինքն կամաւն էջ ի բազուկսն յովսեփայ և պատեցաւ զմռով: - 316

**ՆԻԿՈՄԻԴԱՑԻ** - ...զոր արարեալ է սրբոյն եփրեմի խորհին ասորւոյ ի *նիկոմիդացոց* քաղաքին: - 658-659

**ՆԻԿՈՄԻԿՈՍ** - Այլ և սամարուհի կնօջն լուսինա՛ էր անունն...: Դպրին *նիկոմիկոս:* - 495

**ՆԻԿՕԼԱՅՈՍ ՀԵՐԵՍԻՈՍ** - Ցորեան ընդ յարդի. կնճիռն ընդ գինւոյ. մրուր ընդ ձիթոյ. յուդա ընդ յառաքեալսն. *նիկօլայոս հերեսիոտ* ընդ աշակերտսն: - 756

**ՆԻՆՈՒԷ** - Զորօրինակ, քարոզեցաւ *նինուէի* կործանումն. և նախագուշակ եղև եզեկիայի մահ. և ո՛չ մի ի սոցանէ կատարեցաւ: - 779

**ՆԻՆՈՒԷԱՑԻ** - Այլ և զառաւել գութն հեթանոսաց տեսցէ. որպէս յօնան *զնինւէացւոցն* ապաշխարութիւնս: - 444. Այլ և զաղցից կիրակէիցն, և *զնինուէացւոցն*, և զծաղկազարդի հարցն...: - 637. Եւ նոյնպէս *նինուէացիքն* **գ** օր պահեցին. և երկուքն՝ չորեքշաբաթ և ուրբաթ: - 650

**ՆԻՆՋ +** Զի որ ասի մահ, նոյն և *նինջ* կոչի ի սուրբ գիրս. ըստ այնմ թէ «աստուած զննջեցեալսն՝ ի ձեռն յիսուսի ածցէ»: - 496

**ՆԻՇ +** Նշանակէ՛ ըստ փիլոնի, զի անմարմինքն մինչև յերեքն հասանին. որպէս երկրաչափքն գրեն *նիշ*՝ գիծ՝ երևոյթ. ա՛յս է իմանալեացն չափ: - 344

**ՆԻՍԱՆ +** Եւ ի *նիսանի* մեկն կազմութիւն մարդոյն է. զի *նիսանն* կազմութիւն լսի: - 191. Վեցերորդ՝ մուտն *նիսանայ*. որ է սկիզբն տարւոյ եբրայեցւոցն. և կազմութիւն մարդոյ ի սկզբանն: - 196. Քանզի եբրայեցիք և մակեդոնացիք՝ Զաւելեաց աւուրքն դնեն գլուխ տարւոյ. և ասեն օր առաջին. և **բ**. և **գ**. և **դ**. և **ե**. և վեցն մուտ *Նիսան* ամսոյ. որ թարգմանի կազմութիւն: - 200. Իսկ յաւուր **ե** շաբաթոջ երեկունն զգառն զենին և ելին յայգ ուրբաթի. *նիսանի* **ժե**. որ էր առաջին ամիս նոցա. և ի կիրակէ անցին ընդ ծովն որ էր *նիսանի* **ժէ**: - 337. Եւ ի **ժեն** *նիսանի* անցին ընդ ծովն որ է՛ **ե** ամիս. և **է** ամիս ի գործ խորանին: - 344. Ա՛րդ՝ աստի մինչ ի *նիսանի* **ժէ**, և յապրիլի **է**՝ կատարի **է** ամիս. յորում առաքեցաւ գաբրիէլ առ կոյսն մարիամ յաւուր չորեքշաբաթու: - 483. Որ այսպիսի էր պատկեր աւուրն. յաւուր **ե** շաբաթոջ երեկոյին ի չորեքտասան լուսնին զգառն զենին և ելին յայգ ուրբաթի **ժե** ամսեանն. և ի կիրակէ անցին ընդ ծովն որ էր *նիսանի* **ժէ**: - 513

**ՆԻՐՀԵՄ +** Որք զաչս իմաստից յիմանալի ճառագայթիցն խուսափեցին թիւր կամօք, և խոտոր մտօք. զանուղղայս խորհելով, և զանպատշաճս բարբառելով. յարձակեալ անկապ լեզւաւ և անդուռն շրթամբք բացեալ յերկինս. ցոպ բերանով ի բարձունս բարբանջելով. և յածեալ ընդ երկրաւ լեզուագարելով. որոց դատաստանն ի բնէ ո՛չ դատարկանայ. և կորուստն ո՛չ *նիրհեսցէ:* - 31

**ՆԻՒԹ +** Զորօրինակ՝ իրն ի ներկայս որ է *նիւթ* ներընդունակ՝ ունի կրկին զօրութիւն...: - 9. Որպէս արեգակն զամենայն լուսաւորէ, այլ պարզ *նիւթն* լուսաւորի և թանձրն ո՛չ: - 20. Եւ է որ ո՛չ է է՝ և բարի. որպէս *նիւթ* անորակ: - 22. Ասեմք եթէ՝ մի և նոյն հրացեալ *նիւթո՛յն* է կտրելն և այրելն. այսպէս մի և նոյն միաւորութեանն էր այսինքն մարդացեալ բանին բարձրագոյնքն և նըւաստականքն: - 85. *Նիւթն*. ծնն. այսինքն է կերպն. Գաւառն. Ազգայինքն. Ժամանակն. Տեղին. և յատուկ Անունն: - 87. Նախ *զնիւթն* զմի բնութիւն նիւթական որպէս մարդ. և զմիւսն բնութիւն աննիւթ որպէս զաստուած...: - 87. Երրորդ՝ ասի ոչէ՝ *նիւթն* անորակ. որ ո՛չ ունի ձև և ո՛չ ունի տեսակ և ո՛չ որակ: - 111. Ոմանք զայս ընդ *նիւթն* շարադասեն: - 111. Այլ ո՛չ ուղղակի. զի *նիւթն* ամենևին անտեսա՛կ է: - 111. Դարձեալ՝ յարացոյցն ո՛չ

թանձրանայ որպէս տարերք. և ո՛չ որպէս *նիւթ* և տեսակ կերպանայ. և ո՛չ թէ յարացոյցն արար զմեզ: - 112. Ութերորդ՝ սպիտակ լոյսն առաւել թափանցիկ է. որպէս ընդ ամպս և յայլ *նիւթս:* - 125. Յնգետասաներորդ՝ նա՛խ է տեսակն քան *զնիւթն* անի բաց դնելի: - 126. Նախ՝ զի նիւթեղէն միտք՝ միջնորդութեամբ *նիւթո՛յ* հասանէ յաննիւթն...: - 131. Չորրորդ՝ զի թէ պատւական *նիւթով* երևէին որպէս արեգակն՝ հուր՝ ոսկի՝ և ակն. գիտէաք թէ զնոյն բնութիւն ունին, և ո՛չ այլ ինչ գերիվերոյ: - 132. Երկրորդ՝ զի մարդն կարօ՛տ է *նիւթոյ*. իսկ աստուած անկարօ՛տ է *նիւթոյ:* - 156. Իսկ թէ կամիս ուսանիլ թէ զի՞նչ է *նիւթ* պսակին. որ ինչ առ աստուածութեան իւրում մեծութիւն գտանի, զա՛յն պատրաստեաց սիրելեաց իւրոց. զոր ո՛չ կարեմ զմտաւ ածել. կամ վայրապար լսելեօք լսել: - 161. Իսկ թէ զի՞նչ համբերութիւնն. ասէ՝ «գործ կատարեալ ունիցի». այսինքն թէ՝ *նիւթ* աստուծոյ գործոյն՝ փորձութիւնն և նեղութիւնն է. և յօրինօղ՝ հաւա՛տն է. և ի կատարումն ածօղ՝ համբերութիւնն է: - 161. Եւ այլ բազում զանազանութիւն է գործոց մարդկան և աստուծոյ. զի մեք կարօտ եմք *նիւթոյ*. ժամանակի. տեղւոյ. օգնականի: - 164. Է՛ որ միշտ ներգործութեամբ. որպէս աստուած. և է՛ որ միշտ զօրութեամբ. որպէս *նիւթն* և ժամանակ...: - 169. Եւ զորօրինակ՝ անորակ *նիւթն* որ է՛ միշտ զօրութեամբ, ամենայն մարմինք որ ներգործութեամբ են՝ առ նա զօրութեամբ են: - 169. Երրորդ՝ զի պատահումն ընդ գոյացութիւն խառնեալ՝ լինի բաղադրեալ. որպէս *նիւթ* և տեսակ: - 170. Ստորոգութիւնս պատշաճի եղական գոյիցս իսկութեամբ. որ ի *նիւթոյ* և ի տեսակէ՝ ի գոյացութեանց և ի պատահմանց են ժողովեալ: - 171. Եւ դարձեալ՝ է կոչի աստուած, զի նա միա՛յն է տեսակ առանց *նիւթոյ*. և գոյ առանց պատահման: - 171. Ո՞րպէս է զի աստուած պարզ է և աննիւթ, զնիւթականքս յառաջ էած. զի այս է կարգն որ *նիւթն* ի *նիւթոյ*, և աննիւթն յաննիւթոյ յառաջագայի: - 175. Նախ՝ զի ո՛չ ունի քանակ, որակ, ձև, և այլքն, որ *նիւթո՛յ* են յատկականք: - 175. Այլ թէպէտ աննիւթ է աստուած՝ ո՛չ է անկարգ զնիւթականքս յառաջ ածել ըստ այսմ օրինակի. զի *նիւթն* որ է՛ գոյացութիւն մարմնական՝ ունի որակութիւնս իմն մարմնական. որպէս քանակ. որակ. և այլքն: - 175. Եւ որովհետև ծանեաք զի անմարմին են սոքա, յա՛յտ է զի բաժանումն սոցա քակէ՛ *զնիւթն* ի մարմնոյ...: - 175. Զի աննիւթ և պա՛րզ էութիւն է աստուած. և յառաջ էած յոչընչէ զաննիւթ էութիւնքս. այսինքն զգոյացութիւն, զքանակ, զորակ, և զայլսն. և իւրով զօրութեամբն ի միասին ժողովեալ կազմեաց մարմնական *նիւթ:* - 175. Ուստի տարերք և տարրեղէն մարմինք խառնեցան և յառաջ եկին ի մի և ի նոյն *նիւթոյն:* - 175. Յինգերորդ՝ զի առանձին բնութեամբ սոքա ի մի էութիւն ժողովեալ խառնին. և մի բնութիւն *նիւթոյ* կատարեն. և ի բնութիւնս իւրեանց ո՛չ շփոթին և այլայլին: - 176. Որպէս ի *նիւթոյ* և ի տեսակէ մարմին. և ի հոգւոյ և ի մարմնոյ կենդանին. և յարուէ՛ և իգէ ծնեալն. նոյնպէս ի ձայնաւորէ՛ և յանձայնէ՛ բանն ծնանի: - 177. Ութերորդ՝ ի թանձր և ի կարծր *նիւթն* անգործ մնայ. որպէս ի քար և ի հող: - 185. Երրորդ՝ տեսակն յառաջ է քան *զնիւթն:* - 186. Դարձեալ ասեմք թէ՝ զինչ ծանրութիւն որ պատահական է՝ ի ցրուիլն *նիւթոյն* կորնչի ծանրութիւնն: - 202. *Նիւթ* բարբառոց: - 202. Եւ տևէ՛ որքան է *նիւթ* գոլորշոյն. և լուսեղէն բա՛շս արձակէ առ ի ցուցանել թէ ո՛չ է ի բնական աստեղաց: - 203. Իսկ հուրս առ մեզ որ կապեալ է ի *նիւթ*՝ տկա՛րն ունի զայրելն. վասն որոյ նախ զքանակն և զորակն ապականէ, և ապա զգոյացութիւն իրին: - 204. Երկրորդ՝ և *զնիւթս* մկրտութեան շնորհեաց: - 207. Ութևծ՝ լուսնկա՛լ նիւթ է: - 207. Չորրորդ՝ զի *նիւթք* եղեն երկնաւոր խորհրդոյն. որպէս ի տնկոց փայտ խաչին. և յայլ բուսոց հաց պատարագին և գինի. և ձէթ մեռոնի կազմեցաւ: - 212. Վեցերորդ՝ *նիւթ* հրոյ: - 212. Այլ յայտնապէս կենդանութիւնն է օդոյն և հրոյն. և *նիւթ* մարմնոյն է՛ ջրոյն և հողոյն: - 215. Թէպէտ ըստ *նիւթոյն* յապականացու երկրէ է, այլ ըստ կատարման յանապականութիւն փոխեցաւ: - 225. Դարձեալ ասեմք թէ գոյացութիւն դրախտին **բ** իր է. այսինքն *նիւթ* և ապականութիւն: - 225. Ա՛րդ՝ վերջին հրովն յորում վառին երկինք և երկիր, ըստ *նիւթոյ* մասին պարզի. այլ ըստ ապականութեան մնայ անփոփոխ: - 225. Եւ անհատիւ, որպէս *նիւթ* և տեսակ: - 236. Որպէս և իմաստունքն ասացին զամենայն երևելիս յարացոյց իմանալեացն. զոր գոյ և որակ կոչեն. և *զնիւթս* պատկեր գոյին. զի որակն և գոյք անմարմին են և աննիւթաբար ի մտածութիւնս երևին: - 236. Պատասխանեմք առ այս եթէ՝ փչումն ո՛չ զբանական հոգին ասեն սուրբ հարքն. զի մարդ ասելով զհոգի և զմարմին նշանակեաց. և զմարմինն զի ի *նիւթո՛յ* է՝ ի հողոյ ասաց. այսինքն ի **դ** տարերաց որ է՛ ի հողն. և զհոգին ո՛չ նշանակեաց թէ ուստի՞ է. զի յանէից է ստեղծումն նորա: - 253. Ա՛րդ՝ ի *նիւթոյն* լինի կազմած մարմնոյն. և յազդու հրամանէն գոյացութիւն հոգւոյն: - 254. Զի կազմողական զօրութիւնն որ է՛ ի *նիւթն*՝ ազդումն առեալ յարարչադիր հրամանէն, նախ կազմէ՛ և պատրաստէ՛ *զնիւթն* առ ի յընդունելոյ զտնկականն. և ապա զզգայականն. յետ որոյ զբանականն ի ծագմանէն աստուծոյ: - 254.

Նախ՝ զի *նիւթն* այն ունի առ ինքն բնական զկենդանութիւն տնկականին...: - 254. Ասեմք եթէ՝ ի կողմանէ *նիւթո՛յն* կարելի է ասել. զի զոմն ունի, և զոմն ընդունի. այսինքն զտնկականն ունի, և ընդունի զբանականն: - 254. Զի զօրութիւն ունի այս *նիւթ*՝ ընդունել զբանականն. զոր *նիւթ* անասնոցն ո՛չ կարէ ընդունել: - 254-255. Երրորդ՝ ևս յայտնի. զի ընդ *նիւթոյ* կազմութեանն համանգամա՛յն է և երևումն ոգւոյ. զի յորժամ անկատա՛ր է *նիւթն*, միայն կերակրիլն երևի ի նմա: - 255. Եւ այս կազմողական զօրութեանն է որ նախ պատրաստէ՛ *զնիւթ* առ կեանքն. և ապա ի զգայութիւնն. և ապա ի բանաւորութիւնն: - 255. Այսպէս և հոգին ընդ անկատար *նիւթոյն* ունի զկերակրիլն...: - 255. Եւ համանգամայն երևի ասեմ. զոր օրինակ *նիւթն* այն ունի առ ինքն ծածկեալ զմասունս մարմնոյ. զձեռս և զոտս, զմիս և զմազ, որ յետոյ երևին ի նմանէ: - 255. Դարձեալ՝ ջերմ և գէջ չափաւորեալ է ի *նիւթն* այն. և որ արտաքուստ մտանէ՝ անչափութեամբն վնասեցէ՛ զսերմնական զօրութիւնն ընդ *նիւթոյն:* - 256. Երրորդ՝ զի զօրութեամբ է *նիւթն* պա՛րտ է ծածուկ գոլ, զի ներգործութեամբ երևեցի: - 256. Յինգերորդ՝ զի *նիւթն* հատանի, և զօրութիւնն ո՛չ: - 256. Վեցերորդ՝ զի յապականեալ *նիւթոյն* զօրութիւն կենագործի: - 256. *Նիւթ* մարմնոյն է ի ծնողացն. այլ հոգին ո՛չ է ի ծնցաղն. այլ ի հրամանէն աստուծոյ գոյանայ և երևի: - 257. Այլ հատումն *նիւթո՛յն* է և ո՛չ հոգւոյն վասն **գ** պատճառաց: - 257. Այլ հատանի *նիւթն* ունելով առ ինքն զբոլոր կենդանութիւն. և լինի *նիւթ* ա՛յլ մարմնոյ նովին կենդանութեամբն զոր ունի առ ինքն: - 257. Նմանապէս և արուեստաւորն աստուած նախանկար տեսութեամբն ունի ի միտս իւր նախքան զլինիլն մարդոյն՝ զորպիսիութիւնն. զորքանութիւնն. և զայլն. իսկ արուեստն որ է արարչադիր հրամանն, ազդէ՛ ի *նիւթն*. և զի անկատա՛ր է *նիւթն*, անկատար տայ և նմա հոգի զտնկականն: - 258. Իսկ հոգի մի է մարդոյ ի միոյ նախախնամութենէ յառաջ բերեալ. յանկատար *նիւթն* եդեալ զտնկականն և զզգայականն. և ի կատարեալն զհոգի բանական ծագեալ: - 259. Զի սերմնական զօրութիւնն որ է՛ ի *նիւթն* այն՝ իսկ ընդ խառնիլ սերմանցն յարգանդի, զուգապէս ցուցանէ զտնկականն: - 261. Եւ էգն հոգևորի յետ **ծ** աւուրն՝ որպէս ասացաք զպատճառն վասն տեղւոյն ցրտութեան որ է՛ ձախ կողմն արգանդին. որ ցուրտ գոլով վասն փայծաղանն՝ յապաղէ՛ զկազմուած *նիւթոյն* ի կրկնապատիկ ժամանակս **ծ** աւուրց: - 261. Զի վեցն որ է՛ կատարեալ թիւ, և *նիւթն* այն է՛ ի չորից տարերց, և ունի առ ինքն զկազմողական և զտնկական զօրութիւնն որ է **զ**: - 262. Կամ ընդ **դ** տարերց ունի զխառնումն երկուց *նիւթոց*, այսինքն արուական և իգական: - 262. Զի ամենայն *նիւթ* սերմնականի է՛ ի չորից տարերց. և ունի զկազմողականն զօրութիւն. որով լինի տնկականն: - 262. Եւ աճելովն պահի ենթակայ *նիւթն:* - 262. Արդ՝ տնկական զօրութիւնն բնականապէս՝ է *նիւթն*. որով կազմի և պատրաստի *նիւթն* առ տեսակս ազգի իւրեանց: - 262. Եւ թէ ասիցէ ոք, **դ** տարերքն են հիմն ամենայն *նիւթոյ*, պարտ էր լնուլ զ**դ** թիւն: - 262. Ասեմք թէպէտ *նիւթն* ի չորից տարերց է, այլ տնկականն զօրացեալ քան *զնիւթն*՝ ըստ իւրոյ մասանցն ծնանի. զի ծնանիլն տնկականին է. այլ և ունի զտարերացն թիւ. զի յամիսս չորս կատարի այն՝ որ յառաջ ծնաւ: - 262-263. Այլ և յաւելեալ ի վերայ զշարժականն և զշնչականն և զցասմնականն և զցանկականն, ընդ նմին և զկազմողական *նիւթն* և զտնկականն, որ լինի **ժը**. վասն որոյ ոմանք ի տարին և կէսն ծնանին որպէս ուղտ: - 263. Դարձեալ տնկականն ունի **գ** զօրութիւն, և **ա** *զնիւթն*, և **ե** զգայութիւնս, որ լինի **թ**. վասն որոյ **թ** ամսեայ ծնանի: - 263. Եւ է՛ գործի իմացման նոցա՝ ձեռք և մատունք. և ենթակայ՝ *նիւթք* երկրաւոր: - 269. Քանի՞ են պարարտութեան աստիճանք և *նիւթ* լուսոյ: - 285. Կինն ղովտայ վասն է՞ր յաղ և ոչ յայլ ինչ *նիւթ* փոխեցաւ: - 303. Եւ անդանօր լինի անմահ և անապական ծնունդ և որդիք յարութեան. զի մեռանիլ ո՛չ ևս կարեն աւէ. վասն զի յանմահ զօրութենէն աստուծոյ ծնանիմք, և յանապական տարրեղէն *նիւթոց*. վասն որոյ անմահ և անապական կայանան: - 308. Նա՛խ՝ զի կաւովն քերէր զկաւն որ էր *նիւթ* մարմնոյն: - 323. Տասներորդ, մովսէս զեռայարկ խորանն կանգնէր ի չորից *նիւթոց:* - 328. Երկրորդ՝ ընդ դէմ չէիցն է որք միայն անուանին, այլ էութեամբ ո՛չ են աստուածք. այլ *նիւթ* են եղական: - 332. Ուստի յա՛յտ է զի ի մի *նիւթ* ժողովեաց զամենայն որակս համոց: - 339. Վասն է՞ր հրամայեաց ի զանազան *նիւթոց* հրաշալի խորան շինել և այլն: - 342. Երկրորդ՝ զորպիսութիւն և զձև աշխարհիս ցուցանէր ի խորանն եռայարկեան ի չորից *նիւթոց* փոխանակ **դ** տարերաց յանապական և յապականացու բնակչաց: - 342. Երրորդ՝ կամեցաւ զմարդն ի պատկեր իւր՝ երկրորդ ստեղծմանն աշխարհի գործակից և մասնակից լինիլ. վասն որոյ հրամայեաց ի նոցանէ առնուլ *զնիւթ* կազմելոյն: - 342. Ամենայն *նիւթ* ոսկւոյն **իթ** տաղանդ. և արծաթոյն **ճ** տաղանդ. և պղնձոյն **հ** տաղանդ: - 343. Իսկ հնոյն խորհուրդ, **դ** որակ *նիւթոցն* **դ** տարերացն. և ոսկին անապական՝ երկնից: - 348. Զի՞նչ էր *նիւթ* խնկոցն: - 349. *Նիւթ* անուշահոտ

իւղոյն **դ** էր: - 349. Նոյն և Իւղ զուարթարար. և *նիւթ* լուսոյ և շնորհաց: - 361. Նա՛խ ասեն թէ՝ արծաթն *նիւթ* վաճառո՛յ է. և այնու շահի. և ո՛չ տոկոսեօք: - 375. Դիւթ է՝ որ ձեռօք և *նիւթո՛վ* գործէ. որպէս գարի, և ալիւր, և աւազ, և ջուր, և քար. և այն որ թզով չափէ, և այլն ամենայն: - 388. Ա՛յս քան են և *նիւթք* լուսաւորաց: - 407. Նախ ասեն թէ *զնիւթն* աստուած կարծեցին, սատանայ խաբէր թէ ի՛մ է այս մարմինս իբրև տեառն *նիւթոյ*...: - 409-410. Զի ըստ սրբոյն եփրեմի՝ ապաշխարութիւնն է վճարք մեղաց և *նիւթ* պսակաց: - 413. Զի մի և նոյն ապաշխարութիւն է՛ հատուցումն մեղաց, և *նիւթ* բարեաց առ աստուած: - 434. Եւ *նիւթն* ոսկի և արծաթ և պղինձ և երկաթ. այլ և խունկն և պատւական ակունքն ի հեթանոսա՛ց էր: - 440. Այլ և ո՛չ կանանցական սերմն եղև *նիւթ* մարմնոյն քրիստոսի: - 470. Երկրորդ՝ զի ներգործութեամբ մասն՝ ո՛չ լինի զօրութեամբ բոլոր. վասն որոյ ոչ է *նիւթ* ծննդեան: - 470. Ապա ուրեմն պատշա՛ճ էր *նիւթ* մարմնոյն քրիստոսի մաքուր արիւնն կուսին...: - 470. Յաղագս որոյ պատրաստեաց *նիւթ* արեան, կազմեալ զօրութեամբ հոգւոյն. որով լինիցի ճշմարիտ մայր քրիստոսի: - 470-471. Որպէս ձևն բոլորակ՝ և գոյնն՝ ենթակայ *նիւթովն:* - 476. Եւ են որ էութիւնք են և էութեամբ շաղկապին. որպէս երկոքին *նիւթք* սոսընձով կամ երկաթով: - 476. Հինգերորդ՝ միաւորութիւն սովորեցաք կոչել յորժամ *նիւթ* ինչ աննիւթով կերպարանեալ տեսանի տեսակաւ: - 476. Դարձեալ՝ ի մկրտութիւնն քրիստոսի նշանակին գոյացութիւնք մերոյս մկրտութեան. այսինքն Մկրտօղն, Մկրտեալն, *Նիւթն*, Տեսակն, և Դիտաւորութիւնն: - 487. *Նիւթն* ջուրն է. որ առաւել յարմարի մկրտութեան քան զայլ ամենայն հեղուկ *նիւթ:* - 487. Համաձայնին ի *նիւթ* ջրոյն և ի կերպ ընկեղմելոյն: - 488. Զոր մկրտութեամբն իւր քրիստոս սրբեաց զջուրն, և արար սրբութեան *նիւթ* և կենաց: - 489. Այլ և մաքրութիւն մեղաց ըստ չորից *նիւթոց* մարմնոյս: - 493. Չորրորդ՝ զի շինօղ և հաստատօղ եկեղեցւոյ առաքեալքն են. և ձեռնտու *նիւթոց* մարգարէքն. եզր և պարիսպ վարդապետք: - 535. Այսպէս զանազանին մեղք ըստ *նիւթոյն* և ենթակային: - 568. Այս քան ըստ տեսակի և ըստ *նիւթոյ* և ըստ կատարման զանազանութիւն մեղաց: - 569. Երկրորդ՝ զի կուսութեամբ ծնանի առանց ապականութեան. և զայս պատճառէ՛ հոգին սուրբ և *նիւթ* ջրոյն զի հեղո՛ւկ է: - 590. *Նիւթ* այսմ խորհրդոյս է՛ հաց ցորենոյ, և գինի որթոյ: - 594. Ասեմք, թէպէտ *նիւթն* սակաւ է այլ բնութիւնն հաւասա՛ր է...: - 595. Նա՛խ՝ զի արիւնն հեղուկ *նիւթ* է. կամ ո՛չ է տալի որպէս այլ ազգք, և զրկել զժողովուրդն ի փրկական արենէն: - 598. Նա՛խ՝ որպէս նա ի քարանց և յայլ *նիւթո՛ց* է ժողովեալ: - 613. Եւ սա՛ յայսպիսի *նիւթոց* է շինեալ: - 615. Երկրորդ՝ զի *նիւթ* սորա է՛ ի քարանց արտաքին և ի փայտից որ կոխան է եղեալ անասնոց և անսրբոց...: - 615. Չորք աղին չորեքին *նիւթն*, և **դ** առաքինութիւնք: - 641. Դարձեալ՝ սիրտք մեր բուրվա՛ռ է. և աղօթքն խունկ. և հուրն ջերմ սէրն *նիւթ* բուրվառին: - 645. Զի նախ է մարմին քան զհոգի. ոչ ժամանակաւ և պատւով. այլ *նիւթով* և զօրութեամբ: - 662. Երկրորդ ի մեզ. զի **գ** զօրութեամբ հոգւոյ և **դ** *նիւթով* մարմնոյ մեղանչեմք: - 683. և ոսկեբերանն զմահացուն լինիլ ասէ փայտ խոտ և եղէգն. և *նիւթ* յաւիտենից այրելոյն: - 702. Չորրորդ, զի ամենայն մարմինք մարդկան միանգամայն ստեղծան ի կողմանէ առաջին *նիւթոյն...:* - 717. Ասեմք առ այս թէ՝ են *նիւթ* ի մարդն որ յառնեն և են որ ո՛չ: - 718. Այն *նիւթն* զոր ի ծնողացն ունիմք՝ բոլոր առնէ. զի սկիզբն է գոյացութեան մեր...: - 718. ...և *նիւթ* կերակրոյն՝ այն մասն որ փոխեցաւ ի գոյացութիւն մեր՝ յառնէ՛. զի մարմին եղև մարդոյն այլ աւելորդքն ո՛չ յառնեն: - 718. Զի թէ սկզբնական *նիւթն* միայն յառնէ, մարմին մարդոյ ամենևին փոքրիկ և անկատար լինի: - 718. Ապա ուրեմն կենդանեաց մարմինն ոչ յառնէ ի մեզ ըստ բոլոր *նիւթոյն*, այլ ըստ չափոյ զօրութեանն որ փոխեցաւ ի մեզ և եղև մարմին մարդոյ, ա՛յն մարմինն յառնէ: - 718. Որոյ պատճառ է, զի մարմին կերեալ մարդոյն է իւրն *նիւթ* գոյացական և սոցա եղև *նիւթ* պատահական: - 719. Նոյնպէս և *նիւթն* սկզբնական ո՛չ յառնէ ի ծնօղս որ աւելորդ արտահոսումն է նոցա. այլ յառնէ ի ծնեալ մարմինն որոյ հիմն է շինուածոյն: - 719. Իսկ զի *նիւթ* խաչին մնայ ըստ ոմանց՝ այս ո՛չ է ըստ բնութեան կարգի, այլ սքանչելեաց հարկի որպէս ցուցանի յառաջիկայդ: - 727. *Նիւթ* նշանացս է՛ բազում և զանազան. այլ զօրութիւն և ձևն մի և նոյն է խաչին: - 732. Դարձեալ՝ *նիւթ* հրոյն որ աղտ մեղաց, է՛ յաւիտենական. վասն այն յաւիտեան տանջէ զնոսա: - 744. Երրորդ՝ զի *նիւթ* հրոյն և այրելիքն որ է աղտ մեղացն՝ նաև մեղաւորքն՝ են յաւիտենական: - 750. ...որպէս ծաղկեալ գաւազանն ահարօնի նշանակէր զխրատ իմաստութեանն. որով զարդարեալ տայ զպտուղ լուսաւոր *նիւթոյ* կերակուր ոգւոյ: - 768. Իսկ յետ մահու՝ յիշելն է միայն ըստ ինքեան զներքոյսն. խափանեալ խառնուածոյ *նիւթոյն:* - 774. Երրորդ՝ զի կարօ՛տ է *նիւթոյ* ապաշխարութեան: - 780. Բարւոք ասացաւ յարարչէն. զի թէ և բնութիւն թարց երևակայութեան, և արհեստ հանդերձ երևակայութեամբ, սակայն կամք արարչական ետ նոցա բնական և բանական կարողութիւն. և ոչ ինչ

վայրապար կազմեն զտեսակ գոյացական և զտեսակ պատահական. խնդրելով ոմն պարզ *Նիւթ*. և ոմն տեսակացեալ: - 786

**ՆԻՒԹԱԿԱՆ +** Նախ զՆիւթն զմի բնութիւն *նիւթական* որպէս մարդ...: - 87. Հինգերորդ՝ ոչէ ասին *նիւթականքն* որ ի լինելութեան և յապականութեան են. զի երբեմն ո՛չ էին, և յետոյ ո՛չ լինելոց են: - 111. Եւ գիտելի է, զի յարացուցիս և նախասահմանութեանս՝ արարողական պատճառ է աստուած. և *նիւթական* պատճառ իրն այն որ է նախասահմանի...: - 112. Երրորդ՝ պա՛րզ է նոցա տեսութիւնն. և մերս բաղադրեալ և *նիւթական:* - 120. Երկրորդ՝ մարդկան քահանայութիւն *նիւթական* խորհրդով ներգործի...: - 139. Ո՞րպէս է զի աստուած պարզ է և աննիւթ, *զնիւթականքս* յառաջ էած. զի այս է կարգն որ նիւթն ի նիւթոյ, և աննիւթն յաննիւթոյ յառաջագայի: - 175. Երկրորդ՝ զի ի զատ ճողոպրի ի զգայութեանց. այսինքն ի տեսանելեաց, ի շօշափելեաց, և յայլոց, որ *զնիւթականս* զգան: - 175. Այլ թէպէտ աննիւթ է աստուած՝ ո՛չ է անկարգ *զնիւթականքս* յառաջ ածել...: - 175. Եւ որովհետև ծանեաք զի անմարմին են սոքա, յա՛յտ է զի բաժանումն սոցա քակէ՛ զՆիւթն ի մարմնոյ. ապա ուրեմն ի մի վայր ժողովումն՝ ծնանի *զնիւթական* մարմինն: - 175. Երկիր որ կոխի՝ է՛ *նիւթականս* այս: - 210. Այլ ոմանք իմանալի և զգալի. և մարմին *նիւթական:* - 221. Զի է՛ սկիզբն *նիւթական* մարմնոյ կազմուածոյն. և է՛ սկիզբն՝ ծննդեան հոգւոյ: - 254. Եւ կամ աննիւթ ինչ և անկերպ՝ ընդ *նիւթական* կերպարանաց ձևացեալ. յորում իւրաքանչիւրոցն էութիւնք անշփոթաբար երևին. որպէս պղինձ գնդացեալ. կամ քուէացեալ: - 476. Չորրորդ՝ *նիւթական:* - 640. Հինգերորդ՝ զի ո՛չ ոք ապականացու զայլ ոք ամբողջ կարէ պահել որպէս յայտ է ի *նիւթական* իրս ամենայն: - 733. Եւ այնպէս յաղթէ *զնիւթականս* զայս հուր, որպէս այս զնկարեալն պատկեր իրոյ: - 752

**ՆԻՒԹԱՊԷՍ** - Եւ այսպէս քարշեալ եղև ի մեզ սկզբնականն մեղք՝ յանհնազանդութենէ հոգւոյն և ի ցանկութենէ մարմնոյն. անցեալ ի ծնունդս նորա *նիւթապէս* ի մարմինս, և տեսակաբար ի հոգիս: - 776

**ՆԻՒԹԱՒՈՐ +** Պարզ և միեղէն, զի *զնիւթաւորքս* և զբաժանեալքս միով և պարզ տեսանեն: - 119

**ՆԻՒԹԵՂԷՆ +** Դարձեալ՝ *զնիւթեղէնսն* աննիւթապէս տեսանէ. և զբաղադրեալսն պարզ. և զժամանակեայսն յաւիտենական. և զբազումս և զբաժանեալս միեղէն և անբաժան: - 118. Նախ՝ զի *նիւթեղէն* միտք՝ միջնորդութեամբ նիւթո՛յ հասանէ յաննիւթն. որպէս տեսեալ զգիր՝ իմանամք զզօրութիւն նորա. և տեսեալ զորակ և զքանակ՝ իմանամք զգոյացութիւն իրին: - 131. Զի թիւ մեր *նիւթեղէն* և տկա՛ր և չափաւո՛ր է. վասն որոյ զանբաւութիւն նոցա ո՛չ կարէ չափել. ուստի յայտ է՝ զի և ո՛չ զթիւ մեր կարեմք գիտել: - 141. Եւ այն որ ի վերայ վառին *նիւթեղէն* զգեստ, զի գայցէ խաչն ի վերայ լուսեղէն ամպոյ. յօդս բարձրացեալ և ցոլացեալ. - 676

**ՆԻՒԹԵՄ +** Զսէր քարոզեն, և զդաւ նենգութեամբ կայենի *նիւթեն:* - 34. Զոր օրինակ զանգուած ինչ թունիւք ապականեալ լինի. ամենայն հաց ի նմանէ *նիւթեալք* մահաբերք են: - 592. Երկրորդ՝ հասարակն վճարէ՛ զպարտս. և առանձնականն *նիւթէ՛* զպսակ: - 623

**ՆԻՒԹՕՐԷՆ** - Այլ ի մարմինն *նիւթօրէն* և սկզբնաբար. իսկ ի հոգին տեսակաբար և իբր նենքակայոջ: - 567

**ՆԻՒՍԱՑԻ** - Եւ զայլ յերկար քննութիւն տարերաց՝ գտցես ի գիրս *նիւսացւոյն* որ վասն բնութեան մարդոյ: - 181. Եւ երկիրս անշարժ է տեղեաւ, եւ սմա ապականիլ երեսօք. զի տեսեալ մարդիկ եղական և ծառայ իմացեն զնոսա. և մի աստուածս կարծեսցեն և մոլորեսցին. որպէս ասէ *նիւսացին* ի գիրս կազմութեան: - 182. Այսպէս և *նիւսացին* անապական ասէ: - 221. Եւ այլ ամենայն գովութիւն մարդոյն զոր դնէ *նիւսացին* ի գիրս բնութեան, յատկութիւն է մարդոյն: - 275. Եօթներորդ՝ զի ի բազմա՛ցելոց հոգի ասէ *նիւսացին* միաւորի ընդ մարմնոյ: - 479. Եւ այսպէս ասէ *նիւսացին:* - 525. Նա՛խ՝ ի շինուածոյս մերոյ կազմութեան ըստ *նիւսացւոյ* ասիցն: - 780. Եւ սիւնք սորա տարր օդոյ ըստ *նիւսացւոյ:* - 788

**ՆԻՒՍԱՑԻ ԳՐԻԳՈՐ** - Իսկ *նիւսացին գրիգոր* ի բնութեան գիրս՝ ի վերջին դասուց հրեշտակացն ասէ անկեալ: - 150. Այսպէս և *նիւսացին գրիգոր*՝ գործ ստեղծման և գործ նախախնամութեան բաժանէ ի սեռէ՛ ողորմութեան և արդարութեանն աստուծոյ: - 457. Ասեմք ըստ *նիւսացւոյն գրիգորի*, թէ յոյս նոցա ո՛չ է տանջանք, այլ վայելչութիւն է նոցա. - 695. Զի անկումն նոցա մահ է նոցա ասէ *նիւսացին գրիգոր:* - 699

**ՆԿԱՆԱԿ +** և յայնցանէ աճեցոյց տէր զինչս և զանասունս նորա. որպէս յանապատին զսակաւն աճեցոյց *նկանակ*, և զբազումսն կերակրեաց: - 326. Որ ի կաւոյ աչք ստեղծ. և մեռեալս յարոյց. և զանշունչ *նկանակս* աճեցոյց. զոր ոչ արար մովսէս: - 411. Երեսունևը, **ե** *նկանակն* և սուրն. այսինքն

պատճառ կենաց և մահու անարժանից և արժանաւորաց: - 437. Դարձեալ պատճառեն թէ՝ յորժամ *զնկանակն* և զձուկն աճեցոյց քրիստոս՝ մե՛րձ էր զատիկն: - 510. Երրորդ, զայս ի քրիստոսէ ուսաք. զի գոհացաւ ի հօրէ և ապա՛ բաշխեաց զգարեղէն *նկանակսն* և աճեաց...: - 654. ...զոր վասն յոյժ ժտելոյն՝ յարուցեալ միտքն տացէ զխոստովանութիւն հաւատոյ սուրբ Երրորդութեանն. զոր յերիս *նկանակս* յառակեաց: - 697. ...զի լցցին նոքա ի բոլոր մարմնոյն որպէս գարեղէն *նկանակ* հացիցն: - 725

**ՆԿԱՏԵԼԻ** - Վասն զի ի դևն երիս իրս *նկատելի* է. այսինքն բնութիւնն՝ գործն՝ և մեղքն: - 146

**ՆԿԱՏԵՄ +** Դարձեալ՝ չափ և սահման ի վերջին եզր էութեան *նկատէ*, և սկիզբն և պատճառ ի յառաջինն: - 23. Երրորդ՝ որդին ծնունդ *նկատէ* ի յէութիւնն, և հոգին ի կեանքն. և նախ է գոլ իրին՝ և ապա կենդանի: - 109. Երրորդն իմանալի. յորում Երրորդութիւնն սուրբ ի նոցանէ դեմ յանդիման *նկատի:* - 180. Չինգերորդ որ ուղիղն է. զի բ է օր. բնական և արուեստական. և ասացեալքդ ամենայն յարուեստական օրս *նկատեն* և ի չարչարանս: - 516. Իսկ աստիճանք հաւատոյն որք են յէութենէ հաւատոյն, եթէ *նկատեսցի* առ այն որք արարին զիաւաքումն հաւատոյ, են երկոտասան աստիճանք ըստ թուոյ երկոտասան առաքելոցն: - 572. Իսկ թէ *նկատիցեմք* առ այն որք են իբր արմատս հաւատալեաց, յայնժամ են չորեքտասան աստիճանք: - 572. Չանճարեղութիւն է *նկատել* զայնս որ են. և Նախատեսութիւն է տեսանել զլինելոցն. այլ Յիշողութիւնն է վերստին յիշել զեղեալսն: - 580

**ՆԿԱՏՈՒՄՆ +** Ըստ որում ոմն ի բնախօս արանց *նկատմամբ* առաջնորդականին՝ վարաթևեաց ի սկիզբն առաջին՝ թէ է՛ ոմն որ շարժէ՛ զերկնային մարմին: - 26. Այս ո՛չ եթէ բաժանմամբ. այլ *նկատմամբ* ի յատկութիւնս անձանց. ըստ որում սկիզբն է հայր. և փրկութիւն է որդին. և ջերմութիւն հոգին: - 577. Զի *նկատմամբ* առ անփոփոխն՝ միշտ անփոփոխ գոն նախ օրինակաւ. այլ առ ժամանակն՝ փոփոխական: - 779

**ՆԿԱՐ +** Եւ թէ ասեն տգիտաբար, քակեն *զնկարն*. բառնի և էութիւն հօր: - 36. Չորրորդ՝ զանազան *նկարք* աշտանակին, զանազան ներգործութիւնք ընթացից նոցա առ երկիրս, կենդանեաց՝ տնկոց՝ և անշնչից: - 346. Որ և զանազան *նկարքն* զանազան շնորհաց հոգւոյն նշանակք: - 646

**ՆԿԱՐԱԳԻՐ +** Առ որս ասելի է թէ՝ ո՛չ կամաւ, և ո՛չ յոչ կամայ. զի պատկեր և *նկարագիր* էութեանն հօր է որդի, ըստ առաքելոյ: - 36. Ոչ բաժանեալ կամ հատեալ ի հօրէ և ի հոգւոյն. որպէս ո՛չ ջերմութիւն ի հրոյ կամ ի լուսոյ. կամ *նկարագիր* յէութենէ: - 770

**ՆԿԱՐԱԳՐԵՄ +** Օրինակք *նկարագրեցին:* - 456. Իսկ արմաւենեօքն զոր բարձեալ են ի ձեռս՝ զյաղթութիւնն *նկարագրեն:* - 696

**ՆԿԱՐԵՄ +** Երրորդ՝ բացակացեալն ընդ աղօտ լսէ ո՛չ զձայն բերանոյն, այլ զձայն բախման օդոյն. որպէս արձագանչումն յինքն *նկարէ* զձայնն և ո՛չ զբանն: - 131. Երկրորդ՝ հասարակութիւն է, զի որպէս է *նկարեալ* ձևն, նոյնպէս և շինեալ տաճարն քանակութեամբ և որպիսութեամբ. և անդրադարձեալ ևս: - 163. Եւ կամ որպէս պատկերագործք մինչ զոտն և զձեռն *նկարեն* ո՛չ երևի պատկեր մարդոյ. այլ ոտից և ձեռաց: - 255. Զորօրինակ՝ արուեստաւոր ոք կամիցի դրօշել ի քարեայ պատկեր, նախ *նկարէ՛* ի միտս իւր զձև պատկերին. և ապա հատանէ զքարն և տաշէ՛ և դրօշնէ՛ զկերպն ըստ այնմ նմանութեանն որ էր ի միտս ձևացեալ: - 258. Իսկ մարդոյն ուղեղն գէճ է և հով. զի *նկարեսցէ* յինքն զիմացումն մտացն...: - 266. Նոյնպէս և արւեստն նախ *նկարի* ի միտքն և ապա ներգործի և կատարի: - 268. Իսկ տրնկականն միայն գործ է ի կերակրիլն և աճիլն, նա *նկարէ* յինքեան ի զգայութեանցն և ի մտացն ըստ տկարութեան իւրոյ անկարգաբար երևեցուցեալ ի յիշատակարանս մտացն որպէս ասացաք: - 268. Եւ որպէս զպատկեր թագաւորին *նկարեն* թագիւ և ծիրանեաւ և այլովն՝ և անուանեն զպատկերն թագաւոր: - 271. Եւ զի ո՛չ *նկարեցաւ* ի պատկեր կոռոց և ո՛չ պաշտեցաւ մորենին. վասն այն տէր երևեցաւ ի նմա: - 330. Ի յա՛յս միտս յորժամ խաչ *նկարեմք*, զձագ մատին աջոյ մերձ ի բոյթն առնեմք որ է՛ **ի** համարն **զ**երրորդ. զկէս զին նշանակելով: - 345. Խոյրն, վարշամակն. և Միթրն և թիթեղն ոսկի, պատկերք սրբոցն *նկարեալ*. և երկոքին Բազպանն, փոխանակ անդրավարտեաց: - 348. Երրորդ՝ անդ *նկարեալ* էր մեր հոգևորն. և աստ բացայայտեալ խորհուրդ տնօրէնութեան քրիստոսի աստուծոյ մերոյ: - 353. Եւ ի դարձեալ երևիլն դարձեալ լուանալ, այն է՝ որ դարձեալ խոստովանիմք և կրկնեմք զերկն ապաշխարութեան մինչև *նկարեսցի* ի մեզ քրիստոս: - 367. Եւ թէ ասեն՝ ի՛նքն *նկարէ* զսաղմնս: - 404. Ասա՛ թէ՝ զամենայն սաղմն *նկարէ՛* աստուած. և զանասնոց և զգազանաց: - 404. Գիտելի՛ է, զի որպէս զօրութեամբն սամփսոնի՝ տեառն զօրութիւնն *նկարեցաւ:* - 424. Զի՞նչ է որ ի փրկչական պատկերն գիր ի ձեռն և խաչ ի գլուխն *նկարեն*: - 481. Նոյնպէս և քրիստոսի մինչ զտղայական հասակն

*նկարեն*, փաթութեալ hանեն զթուղթն ի ձեռն. իբր ի hրէից ծնեալ զամենայն ինչ ըստ օրինացն առնել: - 481. Իսկ զկատարեալ hասակն *նկարելով* ի ձև չորեքկուսի hանեն զաւետարանն ի ձեռն և ի գիրկն: - 481. Իսկ որ ի գլուխն խաչ *նկարեն:* - 481. Երրորդ՝ եթէ քահանայ է և թագաւոր. վասն այն ընդ թագին և խա՛չն *նկարի:* - 481. Չորրորդ՝ զի կամաւ հնազանդեցաւ խաչի և չարչարանաց. վասն այն ի գլուխն է *նկարեալ:* - 481. Վասն այն ի փրկչական պատկերն *նկարեալ* է ի մին ձեռն գիր և ի միւսն խաչ: - 482. Որ և մովսէս *նկարեաց* զքերովբէսն hովանի ունել ի վերայ քաւութեանն: - 645. Իսկ վասն գրակարդացի և *նկարեալ* եկեղեցւոյ. և վասն զնշխարս ի hանգիստ փոխելոյ. այս ամենայն յիշատակ է մեզ ի սրբոյն գրիգորէ՛ լուսաւորչէն մերմէ: - 659. Եւ այնպէս յաղթէ զնիւթականս զայս hուր, որպէս այս *զնկարեալն* պատկեր hրոյ: - 752. Այլ վարկանին ոմանք զթիւ կազմութեան աւուրց պակաս գոլոյ նախնւոյն մարդոյ. զորոյ զտիպ յինքն *նկարելով* և այժմ անդրանիկն ծնունդ՝ յապաղելով գայ աշխարհ: - 785

**ՆԿԱՐԻՉ +** Այս ո՛չ որպէս չարափառքն ասեն՝ թէ որպէս *նկարիչ* իմաստուն ձևացնէ՛ պատկեր, և ապա ոչ ուսեալն՝ զնոյն օրինակէ՛: - 45. Վասն զարդու գործոց իւրոց. որպէս *նկարիչ* զթուխ գոյնն ի ներքոյ դնէ՝ զի սպիտակն և այլ պատւականքն երևեսցին: - 149

**ՆԿՈՒՆ +** ...որպէս ես աստուածային մարմնոյս զօրութեամբն յաղթեցի փորձողին, նոյնպէս և դու շնորհօք իմովք՝ տկար մարմնով քո՝ յաղթես և *նկուն* առնես զնա: - 159. ...զի որ ընդ ադամայ մարտեաւ և յաղթեաց. աստ *նկուն* եղեալ յաղթահարեցաւ: - 410. Այլ յորժամ *նկուն* եղեն օրէնք ամենայն, և ո՛չ կարեցին փրկել. յետոյ եկն և երևեցաւ նոյն ինքն օրէնսդիրն և փրկեաց զմեզ: - 467

**ՆԿՐՏԻՄ +** Նաև անբարիշտ կամք նորա դարձել է յատելութիւն և ի նախանձ մարդոյն. զի ամենայն ջանիւ *նկրտի* ի կործանումն նորա բազմադիմի փորձութեամբ: - 146

**ՆՄԱՆ +** Որպէս արեգակն զի ո՛չ այրէ որ է hեռաւոր պատճառ. այլ hուրն ի *նմանէ* առեալ զջերմութիւն ի մերձ գոլով այրէ ...: - 8. ...զի լինէր սկիզբն այն ո՛չ պարզ. այլ երկատեսակ. և ո՛չ միեղէն՝ այլ բաժանեալ և այլայլեալ. նաև լինէր ինքն ինքեան hակառակ, և յառաջ եկելոցն ի *նմանէ:* - 14. Վեցերորդ՝ ասեն hակառակքն, թէ՝ չարն ոչ է յաստուծոյ, ապա աստուած ո՛չ ճանաչէ զչարն. որպէս մեք *նմանեաւ* *զնմանն* ճանաչեմք...: - 17. Նա՛խ՝ եթէ ուշիմ և ապուշ և այլն ըստ կարգի, սոքա եթէ ի մարմնոյն խառնուածոյ պատճառին՝ և եթէ բնական որակութեամբ hոգւոյն՝ *նման* և աննման գոլ, առանց ներգործելոյ ո՛չ չար են և ո՛չ բարի...: - 19. Դարձեալ, ասեմք եթէ՝ առնէ՛ աստուած զոմն խոհեմ և զոմն տգէտ, զի նա՛ ի *նմանէ՛* ուսցի: - 19. Վասն ճանաչման իւրոյ աստուած կազմեաց կրկին կերպիւ օրինակս. այսինքն իմանալի և զգալի. որպէս hոգին, միտքն, և *նմանք* սոցա. կամ արեգակն, լոյս, և *նմանք* նոցա: - 24. Եւ վասն առաւել բարրութեանն արար ի պատկեր իւր և *նման* զմարդն: - 24. Իսկ թէ և նա՛ սկսեալ՝ պիտո՛յ է և *նման* սկիզբն: - 25. Չորեքտասաներորդ՝ Զի hայր գործէ՛, և որդին նմին *նման:* - 29. Դարձեալ զի և ադամ անծին՝ ո՛չ է միայն մարդկութիւն, այլ և ծնեալն ի *նմանէ* ասի մարդ: - 38. Այսպէս և ո՛չ միայն hայր աստուած, այլ և ծնեալն ի *նմանէ* աստուած: - 38. Այլ նա ընդ ամենայն է քրիստոս զօրութեամբ և էութեամբ թափանցեալ է. և ո՛չ է տեղի թափուր ի *նմանէ*...: - 45. Այլ այս է առնելն hօր՝ և նմին *նման* որդւոյ, այսինքն կամիլն hօր՝ և կատարեալն որդոյ զնոյն կամս: - 46. Սմին *նման* է զոր ասէ մարգարէն յաղագս քրիստոսի, «ո՛չ մեղք իմ և ո՛չ յանցանք»: - 46. Առակի են *նման*, որպէս թէ ոք որ նախ զպարիսպ քաղաքին ինչ hցէ գիտենայ, և զպարսպէն ասէ ո՛չ գիտեմ: - 48. Երկրորդ՝ զի ի *նմանէ* է՛ անմայր: - 49. Վեցերորդ՝ որ փոխին այլք յայլոց բնութենէ վասն առատութեան բնութեանն. որպէս կարպասածին ճըճին ունի սա ծնունդ սերմամբ իւր *զնմանն*. և ունի ելումն զկերպասն: - 53. Զի ունին ծնունդ *զնմանն* իւրեանց, և ունին զելումն բաց ի ծննդենէն. որպէս ի ձիոյն ձիակապիկն. և յարջառոյն մեղու. և յայլոցն որդն: - 53. Ա՛րդ՝ կարողութիւնն այն է բան և hոգի աստուծոյ. և ո՛չ եղեալք ի *նմանէ:* - 56. Աղբիւր է hայր. զի ի *նմանէ* է՛ աղբիւր կենաց: - 56. Պատասխանեմք նախ, որպէս ասէ ոսկէբերանն թէ՝ նորածնեալքն աւազանաւն՝ ըստ չափու շնորհացն արժանաւորեին իմաստութեան, թարգմանութեան, և այլն. այսպէս և ոմն շնորհս ընդունէր աղօթելոյ կարգաւորապէս. զի ի *նմանէ* ուսանէին և այլքն աղօթել: - 59. Եօթներորդ՝ եթէ մասն աստուծոյ կոչի hոգին սուրբ. և աջ և բազուկ է որդին. ապա ուրեմն և ի *նմանէ՛* է: - 61. Առ երրորդն ասեմք, եթէ՝ «hոգին առաքեցաւ ի յորդւոյ», ի *նմանէ՛* ասի սկսեալ, Ապա առաքեցաւ որդի ի hօրէ և ի hոգւոյն, ի նոցանէ ասի սկսեալ: - 61. Հինգերորդին պատասխանեմք, եթէ փառաւորէ hոգի զորդի՝ ասես ի *նմանէ* սկզբնաւորեալ: - 61. Իսկ թէ անկար, և յառաջ եկեալքն ի *նմանէ* անկար. և ո՛չ ոք ի նոցանէ աստուած: - 62. Յայս օրինակ և ծնեցեալն ի *նմանէ* ճշմարիտ աստուած և մարդ: - 77. Իսկ թէ ո՛չ, այլ պարզաբար

աստուածածին խոստովանիս ընդ մեզ, ապա՛ և զծնեալն ի *նմանէ* խոստովանեա՛ աստուած մարմնացեալ և մարդացեալ: - 79. Վասն որոյ ասէ սուրբն կիւրեղ եթէ՝ ո՛չ մարդն աստուածացաւ, այլ աստուած բանն էջ յարգանդ կուսին և առեալ հոգի և մարմին ի *նմանէ*՝ աստուածն մարդ եղև...: - 79. Նոքա ի կիսաէշ *նման* զտնօրէնութիւնն սուրբ համբաւեն. և կամ առ աչօք և ունայնութեամբ. որպէս մանիքեցւոցն, և կամ եւտիքի կարծի: - 81. Դարձեալ՝ մի բնութիւն ասաց միւս եւտիքէս. ոչինչ առեալ մարմին ի կուսէն. այլ իբր ընդ խողովակ անցեալ իբր ի դարիճակի. միայն զձևն ի *նմանէ* ձևագրեալ: - 81-82. Այլ աստուածութիւնն և մարդկութիւնն ո՛չ *նման* միմեանց. և ո՛չ բոլորին կոչին ըստ ոմանց: - 88. Իսկ աստ *նման* միմեանց՝ և բոլորին կոչի քրիստոս. ըստ որում ասի՝ քրիստոս էջ յերկնից. որ է բանն. և քրիստոս եդաւ ի գերեզմանի. որ միայն մարմինն է աստուածութեամբն. և քրիստոս էջ ի դժոխս. որ միայն հոգին էր աստուածութեամբն: - 88. Նոյնպէս և քրիստոսն անուն՝ և տէր՝ և աստուած՝ և այլն՝ զո՛յգ և հաւասա՛ր է մարդկութեան իւրոյ և աստուածութեանն. և ո՛չ առաւել և նըւազ. կամ տկար և հզօր. կամ անգէտ և ամենագէտ. և որ ինչ այսմ *նման:* - 89. Եւ կամ թէ՝ մկրտիմք յանուն հօր՝ և որդւոյ բ բնութեանցն՝ և հոգւոյն սրբոյ. և որ սոցին *նման:* - 90. Երրորդ՝ զի ո՛չ է *նման* առ մեզ և առ նա մասն և բոլորն...: - 92. Արդ՝ եթէ բոլոր աստուածութիւնն ի քրիստոս էացեալ է մարմնապէս, և ծածկէ զգիտութիւնն ի *նմանէ*, այս լինի կամ ոչ աստուած մարմնացեալ և մարդացեալ կամ զէութիւնն տըւեալ և ի գիտութենէն զրկեալ որ է սուտ: - 98. Առաւօտի՝ որ տեսանեն զբանն աստուած, և առնուն գիտութիւն ի *նմանէ:* - 99. Ա՛րդ՝ եթէ հրեշտակք տեսանեն զբանն աստուած՝ և առնուն գիտութիւն ի *նմանէ*, և մարդն քրիստոս ո՛չ տեսանէ որպէս ասեն նեստո՛րդ, ապա քրիստոս փո՛քր է գիտութեամբ քան զհրեշտակս: - 99. Եւ որպէս հուր յերկաթ միաւորեալ բառնայ ի *նմանէ* զցրտութիւնն և զսևութիւնն և մնայ ծանրութիւնն...: - 100. Այսպէս տեսութիւն մտաց յանմարմինն. որ է *նման:* - 104. Վեցերորդ՝ սկիզբն է ներգործութեան. և պատճառ կատարման. զի ի *նմանէ* սկսեալք՝ ի նա՛ կատարիմք: - 111. Ա՛րդ՝ ո՛չէ ի յաստուած անձնաւոր էութիւն. որպէս Երրորդական անձինքն. և ո՛չ բաժանեալ ի *նմանէ*. որպէս հրեշտակաց դասքն. և ո՛չ որպէս սոսկ մտածութիւն ի տեսութիւնն աստուծոյ: - 112. Վասն որոյ երբեմն կոչի սկիզբն. և մեք սկսեալք ի *նմանէ:* - 112. Այսպէս մի է յարացոյցն ըստ ինքեան. և բազմանայ ըստ բազմացելոցն ի *նմանէ:* - 113. Նախ՝ հայելով ի կերպարանս և ի նմանութիւնս որ է՛ կարգաւորութիւն արարածոց. և սոքօք ի յարացոյցն սոցա ելանել, և ի *նմանէ* դարձեալ ի նախատիպ յարացուցին ելանել. և այնպէս տեսանել թէ է՛ աստուած պատճառ ամենայնի: - 119. Իսկ բացբարձականքն՝ ո՛չ զէութիւն կամ զփառս աստուծոյ բառնայ, այլ զոր յետ էութեանն աստուծոյ է և ի *նմանէ* ստեղծեալ՝ և զխոնարհութիւնսն բառնայ: - 124. Զի առաջինքն խորհրդով և օրինակաւ՝ և վերջինքս իրօք և ճշմարտութեամբ լուսաւորեալք ի *նմանէ:* - 126. Սմին *նման* և տէր մեր ընտրեաց զառաքեալս և նոքօք կոչեաց զհաւատացեալս: - 127. Ասեմք եթէ՝ տպաւորութիւնն լինի կրկնակի. մինն *նման* նմանութեամբ. որպէս լոյս. հուր. և այլն: - 131. Տասներորդ՝ զի ի սոցանէ՛ իմանամք զաննման *նմանն:* - 132. Նախ՝ զի ամենեցուն սկիզբն է և պատճառ, գիտէ զսկսեալսն ի *նմանէ:* - 141. Եւ դարձեալ, զի ամպով և հողմով ասի շարժիլ աստուծոյ. և այսու լինիլ *նման* այսինքն ի վերայ ամպոց և հողմոց և հրեշտակաց շրջելով: - 148-149. Վեցերորդ՝ գործ բնութեանն է նոյնպէս և *նման*. իսկ կամացն զանազանապէս և աննման: - 156. Ապա ուրեմն ո՛չ է նմանապէս ամենայն մեղաց թողութիւն. որպէս և ո՛չ է *նման* գործն: - 167. Գոյացութիւն որ սկիզբն է ամենեցուն և նախասեռ. և ի *նմանէ* զուգաբաժանեալ մարմինն. և շնչաւորն. և զգայունն. և կենդանին. և բանաւորն. և մարդն. ո՞չ ապաքէն բնութիւն են սոքա այլևայլ. և ժողովեալ գոյացուցանեն զմի անհատն պետրոս անշփոթ միութեամբ: - 176. Դարձեալ՝ իմաստութեամբն տիրեմք ծովու և ցամաքի. և բազում բարութիւն հոգւոյ և մարմնոյ ի *նմանէ* ծնանի: - 178. Երրորդ՝ զի արարած լսելով՝ մի՛ կարծեսցես օտար ի *նմանէ* զեղեալքս, կոչէ՛ ծնունդ. և յորժամ ծնունդ լըւիցես, մի՛ կարծեսցես յէութենէն աստուծոյ զեղեալքս՝ ի վերայ բերէ արարած: - 179. Երրորդն՝ է վերին մասն օդոյն. և կոչի եթերային երկին. զի մերձ ի տարրեղէն հուրն է. և վառի ի *նմանէ*. զոր թռիչ աստեղաց կոչեմք: - 183. Ութերորդ՝ որք խստացեալ են անհաւատութեամբ և թանձրացեալ մեղօք՝ անգործ մնան ի *նմանէ:* - 185. Վեցտասաներորդ՝ զի ամենայն լուսաւորք ի *նմանէ*՛ առնուն զլոյսն: - 186. Մերձ եկեալ ի նոյն կենդանակերպն՝ սակաւ լոյսն առնու ի *նմանէ* յարևելից կողմանէ. թէպէտ մեզ ի յարևմտիցն երևի. այլ նմա՛ արևելից մասն է որ զլոյսն առնու: - 187. Եւ այնուհետև նուազի որքան յառաջ է՛ քան զարեգակն և թեքի ի *նմանէ:* - 187. Երրորդ՝ աչք մեր որ է՛ լոյս՝ ի վերին մասն գլխոյս. և լուսաւորքն յերկինս. զի մերձաւոր *նմանն զնմանն* տեսցէ: - 188. Վեցերորդ Փայլածուն. զոր օտարիտ կոչեն. միշտ

շրջի ընդ արեգականն. և սակաւ հեռանայ ի *նմանէ*. զընթացս իւր կատարէ՛ **յը** աւուրս. **ժ** օր պակաս քան զլուսաբերն. և այլք թէ **գ** ամիս: - 189. Իսկ ամառն նորին *նման*. զի հունձք է և կատարած գործոց բարեաց. և ո՛չ ժամանակ սերմանելոյ կամ բուսանելոյ: - 198. Գէջ օդն գոգացեալ և դէմ եղեալ արեգականն՝ առնու զլոյսն ի *նմանէ* ըստ բոլորակ ձևոյ նորա: - 203. Նոյն և սա՛ գոլորշի՛ է վերացեալ հողմոց. և մերձեցեալ ի հուռն՝ վառի՛ ի *նմանէ*. և բռնութեամբ հողմոյն վարեալ երևի իբրև զթռիչ աստղ և փութով շիջանի: - 203. Երկրորդ՝ ասէ արիստոտէլ՝ թէ ջերմութիւն լուսաւորացդ և տարրական հրոյն և օդոյն մտանեն ի ծովն և քարշեն ի *նմանէ* զքաղցր և զպարզ հիւթն. և մնացեալն լինի դառն և աղի: - 208. Տասներորդ՝ զի **դ** ոտքն է *նման* չորից տարերաց: - 215. Իսկ այլք ասեն թէ՝ վասն առաւել բարձրութեանն՝ լոյս արեգականն ո՛չ երբէք հեռանայ ի *նմանէ*. թէպէտ ի ներքոյ երկրի անցանէ ...: - 222. Այլ ա՛յս է ճշմարիտն. որ մինն ծառ էր կենաց՝ և մինն գիտութեան. և ի դրախտին այլ ո՛չ գոյր *նման* նմա. թո՛ղ թէ յերկիրս. ո՞րպէս ասեմք թէ այս է՝ կամ այն: - 224. Եւ թէ՝ յո՛չ են *նմանք* երեսք երեսաց: - 227. Քսանևթ՝ Զինչ է պատկերն և *նմանն:* - 228. Երեսունն՝ Մեք ո՞րպէս պատկեր և *նման* եմք: - 228. Երկրորդ՝ զի հողն բնակա՛ն ունի զթանձրութիւն, և այլքն խառնմամբ ի *նմանէ*. և մարմինս մեր թա՛նձր է ի հողոյ: - 229. Զի *նմա՛ն* է մարդն բոլոր աշխարհի վասն այն աշխարհ կոչի: - 231. Եւ հուրն է ի սիրտն. զի սիրտն ջե՛րմ է և *նման* է հրոյ. լայն է տակն և բարակ ծայրքն: - 232. Վեցերորդ՝ այլ և ոսկերքն *նման* են քարանց: - 232. Երրորդ՝ մարդն *նման* է բոլոր աշխարհիս...: - 232. Վասն որոյ գլուխն է՛ ի վերոյ. և խռչափողն որ ունի զտուր և զառն՝ օդո՛յդ է *նման*. և ի ներքոյ այլ մարմինք և հիւթ արեան և ջրոյ՝ երկրիս է օրինակ: - 232-233. Վասն է՞ր է զի ամենայն անհատք ի մարդկանէ համատիպք են միմեանց. և օտարք իրերաց. զի *նմանք* են, և աննմանք որակութեամբ և ձևով: - 235. Եւ նուազեալ ի սմանէ քանակին, լինի *նման* և աննմանն ցուցեալ. որպէս յա՛յտ է ի տառն գրեալ. զի *նման* և աննմանն ուրոյն են որակի: - 236. Իսկ երրորդն թէ վասն է՞ր յամենայն իրս երևի *նման* և աննման. որպէս ի շնչաւորս և յանշունչս. ի կենդանիս և յանկենդանս և յայլսն ամենայն: - 236. Ա՛րդ՝ վասն զի գոն յամենայն իրս նոյնութիւն և այլութիւն որպէս ցուցաւ, յաղագս որոյ են *նմանք* և աննմանք միմեանց: - 236. Վասն որոյ գտանի յամենայն իրս *նման* և աննման ըստ որում յէից և յոչ էից են հաստատեալք: - 237. Երկրորդ՝ նշանակէ, զի առինչ է արարածս արարչին, ըստ այսմ *նման* են. և զի ա՛յլ են և զատեալք յարարչէն, ըստ այսմ աննմանք: - 237. Եւ ևս, զի **գ** դէմք Երրորդութեանն սուրբ՝ նոյն և *նման* գոն միմեանց: - 237. Նոյնպէս և հոգի. ըստ այսմ *նման:* - 237. Յաղագս որոյ և արարեալք ի *նմանէ* մարմին և անմարմին՝ կենդանի և անկենդան, *զնմանն* արարչին յինքեանս կերպագրեալ, *նմանք* և աննմանք են իրերաց: - 237. Եւ որպէս մարմնոյն պատկերք *նման* և աննման են իրերաց. նոյնպէս և հոգին ըստ միոյ բնութեան ստեղծեալք *նման* և աննմանք են իրերաց: - 237. Է և այլ իմն աննմանութիւն հոգւոյ ըստ իմացմանն. առաւել և նւազ. ուշիմ և ապուշ. չկամ և կամեցօղ. հեզ և յանդուգն. ցանկացօղ և ողջախոհ. ըստ բնական բարոյիցն որակացեալ. *նման* և աննման գոլով իրերաց: - 237. Եւ թէ ոք ասիցէ, խառնուածոցն է այս, կամ յատուկ տեսակաց. որպէս ձայնք և տերևք և կենդանիք չեն *նման* միմեանց: - 237. Եւ ի *նմանէ* են արուեստք և գիտութիւնք սկզբնաւորեալք...: - 237. Որպէս ասեն զշամիրամէ թէ՝ յորժամ սպանաւ արա ի պատերազմին, զայլ ոմն *նման* նորին պատուեաց և ասաց թէ աստուածքն յարուցին: - 238. Կարճ կլափն՝ նախանձո՛տ է և ո՛չ հեզ. զի *նման* է օձի: - 247. Զայնն *նման* ոչխարաց և այծից՝ յիմարի՛ է: - 247. Եւ որ հաւուց *նման* արտաբերէ, թեթևամիտ է: - 247. Նոյնպէս և ի բանական որակութիւնս հոգւոյն՝ *նման* և աննման, հաւասար և անհաւասար բացատրեաց. այսինքն խոհեմ և տգէտ. հեզ և բարկացօղ. ողջախոհ և ցանկասէր. և այլ զանազան բարս բնական՝ մարդոյն: - 252. Այլ ա՛րդ ի յանբանսն ո՛չ է առաքինութիւն որով սրբի ի մեղաց. ապա պարտ է զի փոխեսցի ի ներքինն իւր որ է՛ տունկն. և *նման* կենդանւոյն զի աճէ՛: - 252. Այլ արդ՝ ի տունկն ո՛չ կարէ սրբիլ. այլ անկանի յանշունչն, որ ներքո՛յ է տնկոյն, և *նման* նորա զի մարմին է: - 252. Եւ համանգամայն երևի ասեմ. զոր օրինակ նիւթն այն ունի առ ինքն ծածկեալ զմասունս մարմնոյ. զձեռս և զոտս, զմիս և զմազ, որ յետոյ երևին ի *նմանէ:* - 255. Նա՛խ՝ զի *զնման* և զաննմանն ծնանի. որպէս հատն զցորեանն և զծեղ: - 256. Այլ արդ՝ նախախնամութեամբ է տնկականն և զգայականն. որք փտելով և *զնմանս* ծնանելով պահեն զնոյն տեսակն: - 257. Եւ յորժամ բաժանի արեգակն ի մէնջ, նշոյլքն իւր անբաժանելի են ի *նմանէ:* - 260. Եւ թէ ասիցէ ոք, ո՞րպէս է մի, զի ահա ի մահուանն բաժանին ի *նմանէ:* - 260. Կարգաւո՛ր է և աստ հարցանել թէ վասն է՞ր անասունք յերրորդ ամին կարեն *զնմանն* ծնանիլ, և մարդն ի չորեքտասանն: - 264. Զի բոյսք մանունք և չորքոտանիք մանունք կարեն ի նոյն ամի *զնմանն* ծնանիլ ըստ վերոյ

ասացեալ երրեակ թուոյ ամսոյ, կամ կրկին վեցեկի: - 264. Իսկ տունկք որք են մեծաբոյսք՝ և չորքոտանիք մեծամեծք՝ յերրորդ ամին ծնանին *զնմանն*. որ է թիւ կրկին ամսոյ ընդ երրեակ վեցից: - 264. Զի մանունքն յամսօրէից և ի վայր, ի շաբաթս և յաւուրս և ի ժամս ըստ նոյն թուոյ կարեն *զնմանն* ծնանիլ. և առաւելքն առաւելեալ ամօք կրկին կամ երեքկին որպէս ասացաք: - 264. Եւ այսպէս ի ներքուստ ի վեր կրկնեալ եօթնից որ է չորեքտասան, կատարի ցանկական մասամբն և կարէ՛ *զնմանն* ծնանիլ և կոչի մանուկ: - 264-265. Զի **ժ** ի չորից ծնանի. և չորսն տարրական է. վասն որոյ ի նմա կարէ մարդ ծնանիլ *զնմանն* իւր: - 265. Ապա ուրեմն յա՛յտ է՝ զի տղայութիւնն ո՛չ կարէ *զնմանն* ծնանիլ. այլ մանկութիւնն որպէս ասացաւ: - 266. Վասն որոյ ի մանկութեանն անկա՛ր է *զնմանն* ծնանիլ: - 266. ...ջիլքն ի *նմանէ* յառաջեալ յանդամս մարմնոյն՝ փութապէս պնդէ՛ և տայ շարժիլ: - 266. Իսկ մարդոյն ուղեղն գէճ է և հով. զի նկարեսցէ յինքն զիմացումն մտացն. և ջիլքն յառաջեալ ի *նման* վասն գիճութեան ո՛չ կարէ պնդել զանդամսն. վասն որոյ ո՛չ կանգնի և ոչ գնայ: - 266. Երրորդ՝ ըստ հիւթին յաւելւածոյ՝ և պակասութեան մաղձիցն՝ ի ներքուստ կամ յարտաքուստ, ջերմ և ցուրտ և այլն, զնորին *նմանն* և զկերպարանն առնու առ ինքն: - 268. Ա՛րդ՝ աստուածային գեղեցկութիւնն ո՛չ այսու երանգօք զարդարի զի զմեզ ի *նմանն* իւր կազմեսցէ: - 271. Զոր օրինակ ո՛չ ասի մարդ մարդոյ *նման* գոլ ըստ մարդկութեան. վասն զի նոյնութիւն է և ոչ նմանութիւն. բայց ասի *նման* մարդ մարդոյ ըստ երեսացն և գունոյն և ձևոյն նմանութեան: - 272. Իսկ դրամն և տախտակն ուր գրեալ է պատկեր թագաւորին՝ միայն *նման* է թագաւորին ըստ ձևոյն. այլ ո՛չ ըստ բնութեանն: - 273. Եւ դարձեալ՝ որպէս ձու հաւի և ձու քարեայ՝ *նման* ասին միմեանց, այլ ո՛չ պատկեր. զի ո՛չ են ի միմեանց ելեալ. և ո՛չ զնոյն էութիւն ունին: - 273. Դարձեալ՝ պատկերն ի կերպարանն լինի առեալ. և *նմանն* ի յորակն կամ ի քանակն: - 273. Մեք ո՞րպէս պատկեր և որպէս *նման* եմք աստուծոյ: - 273. Ոմանք ասեն եթէ պատկեր աստուծոյ հօր՝ է՛ որդի, և *նման* հոգին սուրբ: - 273. Իսկ այլք ասեն թէ՝ պատկեր եմք աստուծոյ, և *նման* յարացոյց նախագաղափարին: - 273. Եւ այլք ասեն եթէ՝ պատկեր եղաք այժմ, այլ *նման* լինելոց եմք ի հանդերձեալն...: - 273. Եւ այս ևս ո՛չ է ընդունելի. զի սոցա պատասխանի տայ սուրբն կիւրեղ ի գիրս պարապմանց թէ՝ որ ասաց զպատկերն, իմանամք զնմանութիւնն ի պատկերին որպէս ցուցաւ ի վերոյ. զի ամենայն պատկեր ի հարկէ *նմա՛ն* է: - 273. Եւ այլք ասեն թէ՝ մարդն ո՛չ է պատկեր աստուծոյ. այլ պատկեր պատկերի. զի որդի է հօր պատկեր, և մարդն որդւոյն. վասն այն ասաց *նման* և պատկերի: - 273. Այլ *նման* է աստուծոյ զի աստուած է անմահ և աներևոյթ. և հոգիս մեր է անմահ և աներևոյթ: - 273. Դարձեալ՝ ըստ երից բնական զօրութեանց հոգւոյն պատկեր եմք աստուծոյ. այլ սրբութեամբ արդարութեամբ և առաքինութեամբ *նման* եմք աստուծոյ: - 273. Դարձեալ՝ պատկեր է հոգիս մեր. զի բանն և շունչ կենդանութեանն ի *նմանէ՛* յառաջ գայ: - 273. Իսկ *նման*, զի մի է երիցն էութիւն և բնութիւն. այնու *նմա՛ն* եմք աստուծոյ: - 273. Եւ *նման* աստուծոյ, զի սիրեմք զբարութիւն որպէս ասացաւ ի վերոյ: - 273. Զի թէ ո՛չ էր ասացեալ ընդ պատկերին *զնմանն* լինիլ, ամենայն ոք պատճառէր, և զմարդն պաշտելով անկանէր ի կռապաշտութիւն. վասն որոյ ասաց *զնմանն*, թէ յորժամ տեսցեն պատկերակից աստուծոյ զմարդն բանականութեամբ անմահութեամբ և այլովքն որ ինչ է ի հոգիս, իմանայցեն և զզանազանութիւնն աստուծոյ: - 274. Երկրորդ՝ զի մի՛ անփոյթ և անհնազանդ եղիցի մարդոյն. այլ ի *նմանէ՛* ի կողիցն, զի որպէս մարմին հնազա՛նդ լիցի գլխոյն: - 276. Հինգերորդ՝ զի կողնէ աման և տեղի երիկամանց. յորմէ շարժի ցանկութիւնն. զի թէպէտ ո՛չ շարժէ զնա. այլ ազդումն ինչ ունի *զնմանէ:* - 276. Առաջին իսկապէս թշնամի մարդկան ազգի սատանայ է. իսկ ալ թշնամիք ի *նմանէ՛* պատճառեցան: - 277. Իսկ վարդապետք ասեն թէ՝ չեմք *նման* առաջնոցն ո՛չ ամօք և ո՛չ վաստակօք: - 291. Ինքն *նմա՛ն* էր կոթողի, կամ սագաշէն եկեղեցւոյ: - 293. Նոյ օրհնեաց զսեմ, և սեմայ որդի ո՛չ գոյր *նման* իւր որ օրհնէր զնա: - 300. Դարձեալ՝ արեգակն արդարութեան քրիստոս ի *նմանէ՛* ծնեալ: - 303. Եւ ի քրիստոս բազմութիւն ամենայն հաւատացելոց սերեալք անդամք յանդամոց նորա և մարմինք ի մարմնոյ նորա ծննդեամբ ի *նմանէ* աւազանաւն: - 306. Եւ մարտեաւ ընդ նմա այր, զչափ ուժոյ և զկերպարանքն եսաւայ զգեցեալ. զի կրթեսցի և մի երկիցէ ի *նմանէ:* - 311. Եւ դժոխք ո՛չ յաղթեաց տեառն մերոյ. այլ զերծաւ ի *նմանէ* բոլոր հաւատացելովքն: - 313. Այլ արտաքին տաճար որպէս բնակարան և որիշ ի *նմանէ*՝ ո՛չ է և ո՛չ ասի: - 319. Եւ ունէր է որդիս և **գ** դստերս *նման* բարեպաշտութեան իւրեան: - 321. Եւ սոցին *նման* այլ սպասք և արծաթք և մեծութիւնք: - 321. Եւ էր ինքն բոլոր և սպիտակ *նման* գնծի. և քաղցր որպէս զմեղր: - 338. Իններորդ՝ ի ի *նմանէ՛* լինէր երևումն և աստուածախօսութիւն որպէս նախ ի յերկնէ. պա՛րտ էր երկնազարդ լինիլ: - 342. Եւ ի *նմանէ* լուսաւորեալք՝ պայծառացուցանեն

վարդապետութեամբքն իւրեանց զերկու ժողովուրդս որք ի հրէից և որք ի հեթանոսաց օծեցան մկրտութեամբն: - 347. Եւ ճրագ վառեալ ի *նմանէ*՝ ծնեալն է արփեան լուսով: - 347. Յասպիս՝ *նմա՛ն* է զմրխտի դեղնագոյն. գտանի յեզեր թորքոմէտոս գետոյ յեզր կասբից ծովու: - 348. Սուտակ՝ որ է՛ լիգրոնն. զոր ո՛չ գիտէ ոք զուստն. *նման* է կապուտակ աւազոյ. ոմանք ասեն յամազունից բերաւ ի կանանց աշխարհէն: - 348. Երրորդ՝ զի հոգիքն ի դժոխքն չէ՛ մոռացեալ ի *նմանէ:* - 371. Ուռն՝ կոյսն յարմատոյն և յեսսեայ. և Ողկոյզն տէր մեր ծնեալ ի *նմանէ* զուարճալի կերակուր մեզ: - 381. Այլ ի կուսանս հանգչի. որք հրեշտակաց *նմանք* եղեն կուսութեամբ...: - 404. Եւ սպառնալիքն աստուծոյ և մարդկան ո՛չ են *նման*. զի մարդոյս դատարկ բան է. իսկ սպառնալիքն աստուծոյ՝ է՛ բան զարհուրական. յորմէ լսօղքն զերծանին, և անլուրքն ըմբռնին ի նոյն: - 408. Զոր յիշէ աւետարանն ղուկասու, և մնացորդացն գիրք. և ո՛չ յիշէ մովսէս. զի զսկիզբն կռապաշտութեան ի *նմանէ*՛ ասեն լինիլ: - 411. Երկրորդ՝ զի *նմանեաւն* տանջեցան որկորայք և չարք: - 426. Տասներորդ՝ յորժամ եկն հեզութեամբ լսէր ի *նմանէ*. իսկ զայս ամենայն համեմատելով ի վերայ հրէիցն՝ յիրաւի ուրեմն դատապարտեսցէ զնոսա ի դատաստանի: - 442. Այլ և նշանակէ զպատարագ նորոյս. զոր ինչ մատուցանեմք աստուծոյ հաղորդիմք ի *նմանէ:* - 443. Եւ մանայէն թագաւորն իէլի ետ նմա **դ** տաղանդ արծաթոյ և դարձաւ ի *նմանէ:* - 446. Եւ յետ գերութեանն իսրայէլի անցեալ ամք **ճլե**, եւ արքայն բաբիլացւոց նաբուգոդոնոսոր ի վերայ երուսաղէմի. ի **ժ** ամի թագաւորութեանն յովակիմայ. և էառ հարկ ի *նմանէ*. և զմեծ մասն սրբութեանց տաճարին աւերեաց: - 447. Այսինքն երդումն աբրահամու և դաւթի՝ մարդ լինիլ բանին ի վերայ երկրի ի պտղոյ յորովայնէ նորա. և նստել յաթոռ հօր նորա. և ի *նմանէ* օրհնիլ ամենայն ազգաց: - 457. Նա՛խ՝ աստուածածին վասն այն ասեմք, զի ծնեալն ի *նմանէ* աստուած է: - 466. Եւ թէ ծնեալն ի *նմանէ* որդի է աստուծոյ, ապա և ծնօղն աստուածածին է ճշմարտապէս: - 466. Յինգերորդ, որդի կնոջ ասի ոք՝ որ լինի մարմին ի *նմանէ*. թէպէտ հոգին յաստուծոյ է: - 466. Նոյնպէս որդին աստուծոյ որդի է կուսին որ էառ մարմին ի *նմանէ*. թէպէտ աստուածութիւնն ի հօրէ է. ապա ուրեմն աստուածածին է կոյսն: - 466. Այլ և ցուցանի թէ զայլ ամենայն բարութիւնս ո՛չ խնայէ մեզ զոր ինչ և խնդրեմք ի *նմանէ:* - 468. ...ըստ որում որ էջ հոգին սուրբ յորովայն անարատ կուսին և մաքրեաց զնա, և կազմեաց ի *նմանէ* զարիւնն. և սրբեաց և օծեաց զնա միաւորելով պատկերապէս: - 475. Ասեմք եթէ՝ ապացոյցն ո՛չ ամենայն իրօք է *նման*. ապա թէ ոչ՝ լինէր նոյնն. վասն որոյ նոյնքանաբար տեսանի աննմանութիւն օրինակին առ ճշմարտութիւնն: - 478. Յինգերորդ՝ դարձեալ այլք ասեն եթէ՝ մինչ յաբրահամ ո՛չ էր ալիք ծերութեան. զի *զնմանէ*՛ վկայէ՛ գիր թէ «եղև ալևորեալ և լի աւուրբք»: - 480. Ութերորդ՝ սկիզբն մարդկութեանս ա՛յրն է. և կինն ի *նմանէ*...: - 480. Այլ և եղև այր, զի որպէս ծնօղն աստուածածին ազգի կանանց, և ի *նմանէ* ծնեալն աստուած՝ արանց միանգամայն և հանուրց լիցի փրկութեան պատճառ: - 480. Երրորդ՝ զի զկարգեալ օրէնսն յինքենէ՞ պա՛րտ էր անձամբ կատարել. զի հաւատասցի թէ ի *նմանէ*՛ են կարգեալ: - 485. Զոր օրինակ հուրն հալէ զոսկին և բոցն ջնջէ ի *նմանէ* զժանգն: - 497. Այլ զորօրինակ՝ բժիշկք երբեմն *նմանեաւն* և երբեմն հակառակաւն բժշկեն. *նմանեաւ*՝ որպէս հրով զհուր, և ցրտով զցուրտ: - 497. Այսպէս և տէր մեր *նմանեաւ*, որպէս անիծիւք զանէծս՝ և մահուամբ զմահ եբարձ...: - 498. Եւ պատճառն ասացաւ ի վերոյ, զոր ինչ ինքն եդ զպատիժ՝ *նմանեաւն* եբարձ. և զորս յանձնիշխան կամաց մարդոյն և ի բանսարկուէն արկածք, զայնոսիկ հակառակաւն ելոյծ տէր մեր յիսուս քրիստոս: - 498. Ա՛րդ՝ եթէ ծնօղն անապական է որպէս և է՛, զիա՞րդ ծնեալն ի *նմանէ* ապականացու լիցի. ապա ուրեմն անապակա՛ն է բանն աստուած ծնեալ մարմնովն: - 499. Ասեմք առ այս՝ եթէ ո՛չ են *նման* մահկանացու և ապականացու ասելն. զի ա՛յլ է մահ և ա՛յլ ապականութիւն որպէս ցուցաւ ի վերոյ: - 500. Այլ միաւորեալ ընդ ինքեան բաժանեաց զմեղս ի հոգւոյն և զապականութիւն ի մարմնոյն. որպէս հուր ընդ ոսկւոյ միաւորեալ բաժանէ զժանգն ի *նմանէ:* - 500. Որ և անդ ժամանեաց տէրն և կապեաց զհզօրն. և զկարծրացեալ ամրոցն աւերեաց. և կողոպտեաց ի *նմանէ* զհոգիսն մարդկան որ յադամայ հետէ ընդ բռամբ ունէր: - 503. Եւ տէրն ի գիշերի ելեալ ի գերեզմանէն բաժանեաց և էառ զհոգիս մարդկան ի *նմանէ*. և արար իւր հանդերձ զսուրբ ժողովուրդ իւր: - 513-514. Այս է, զի յորժամ ի մէջ գիշերին հրամայեաց հրեշտակն գնալ և պատմել աշակերտացն, ա՛յլ կանայքն որ ընդ *նմայն* էին՝ գնացին...: - 515. Տասներորդ, զի ցուցցէ թէ թշնամեաց նորա ո՛չ է իշխանութիւն բուռն հարկանել *զնման*...: - 518. Պատասխանեմք թէ՝ *նման* է այնմ որ ասեն թէ՝ բան աստուած է պատկեր հօր, և մարդն ի պատկեր բանին. ապա մարդն ո՛չ է պատկեր աստուծոյ, այլ պատկեր պատկերի: - 530. Նա՛խ՝ որպէս բոլորն է մարմին և իւրաքանչիւր մասունքն. նոյնպէս և բոլորն մի

եկեղեցի՝ և իւրաքանչիւրքն. և բոլորն քրիստոնեայ՝ և մին մարդն. եթէ *նման* են միմեանց և եթէ աննման: - 533. Եւ դարձեալ՝ գլուխ է քրիստոս. և հերք՝ որպէս դասք վերին զօրացն ի *նմանէ՛* առ մեզ իջուցեալ զշնորհս: - 534. Այնպիսին տգէտ և լիրբ է. փախի՛ր ի *նմանէ*: - 537. Եւ այսպէս ղևոնդիոս ձեռնադրեալ ի *նմանէ* պատրիարգ. յորմէ ձեռնադրեցաւ լուսաւորիչն մեր: - 548. Դարձեալ ասեմք թէ զիա՞րդ յետին. զի աբգար թագաւորն հայոց նախ քան զխաչն հաւատաց ի քրիստոս և երանեցաւ ի *նմանէ:* - 549. Երրորդ՝ հպարտութիւն և նախանձ և սոցին *նմանքն* մեղք են: - 556. Յինգերորդ՝ *նման* սատանային լինին որք ուրանան զպատճառն գոյութեան հոգոց իւրեանց...: - 566. Զի *նման* է ջրգողեալ հիւանդի. որ որքան աւելի խմէ, առաւել ծարաւի: - 570. Երկրորդ՝ յօժարութեամբ խօսի *զնմանէ:* - 575. Վեշտասաներորդ՝ զպարգևս տուեալ ի *նմանէ* ո՛չ օտարացուցանէ: - 576. Ութևժ, խնդրէ ի *նմանէ* համարձակ յուսով: - 576. Երրորդ՝ ի ստեղծուածոց. զի ամենայն *նման* սիրէ *զնմանն* իւր. և խնդայ ընդ *նմանին:* - 577. Իսկ սգալ վասն չարին, զի փախիցուք ի *նմանէ:* - 583. Զոր օրինակ զանգուած ինչ թունիւք ապականեալ լինի. ամենայն հաց ի *նմանէ* նիւթեալք մահաբերք են: - 592. ...զի պարտ է *նմանեաւն զնմանն* բժշկել: - 602. Երկրորդ, զի մի կող էառ և ի *նմանէ* շինեաց: - 612. Չորրորդ և ուղիղ, որպէս ասէ տեսիլն հրեշտակք առնուին զխունկս որ է՛ աղօթք սրբոցն, և նուիրէին ի սեղանն ոսկի որ է՛ քրիստոս. և ի *նմանէ* բուրէր ծուխն առ հայր: - 625. ...որպէս ընծայէ՛ զաղօթս մեր աստուծոյ, նոյնպէս և ի *նմանէ* առնու և տայ մեզ զշնորհս և զպարգևս հաշտութեան: - 625. ...նոքա սիրեն զտէր. և զօրացեալ ի *նմանէ՝* կոխեն զանմարմին թշնամին. որպէս ժողովուրդն զփարաւոն: - 629. Նախ որպէս ձայնիւ եղանակաւ *նման* միմեանց. որպէս զողորմեայքն առ նոյն. և զտէր յերկնիցն առ նոյն: - 642. Յայս միտս սարկաւագն նախ առաջի քահանային ընթեռնու իբր ի *նմանէ՛* ուսեալ...: - 644. Չորրորդ, կերակրիմք ի *նմանէ:* - 657. Եւ այնպէս յարաժամ տեսանէ զցաւս մեծ ինքեան և առ ինքն ի չար գործս իւր անբաժանելի ի *նմանէ* մինչ ի յարութեանն օր...: - 669. Ութերորդ, ցուցանէ թէ իշխանութիւն քահանայութեանն անբաժանելի է ի *նմանէ*...: - 672-673. Նա՛խ՝ զի ի սմանէ ելանեմք, և ի *նմանէ* ո՛չ: - 679. Առաջին *նման* է այնմ որ ասեն զհոգին ընդ մարմնոյն ի հող լուծեալ կամ անդ տանջեալ...: - 687. ...*նման* է պղատոնի մարմնափոխութեանցն. որ ի բանական մարդոյն ի զգայականն, և անտի ի տունկն ասեն...: - 687. Իսկ վեցերորդն *նման* է երկրորդին. այլ մե՛րձ է ի ճշմարտութիւնն այնու...: - 687. Նոյնպէս և հոգին պատճառէ՛ զմարմինն՝ թէ յորմէ հետէ բաժանեցայ ի *նմանէ՝* ո՛չ մեղանչեցի: - 691. Ա՛րդ՝ եկեալ հրեշտակն խնդրէ ի *նմանէ* զբարի գործս որով նա կերակրի. - 697. յայնժամ ի բաց կացցէ ի *նմանէ* հրեշտակն...: - 707. Այլ արդ՝ յանմահութենէ հոգւոյն պա՛րտ է զի լինիցի և մարմինն անմահապէս շարժեալ ի *նմանէ:* - 715. Այլ բանն պօղոսի ո՛չ է այսպէս թէ մարմինն էութեամբ հոգի լինի. այլ *նման* հոգւոյ. զի անմահ լինի որպէս հոգի և անկարօտ կերակրոյ: - 720. ...և մարմինն մեռեալ առաւել նոյն ինքն յառնէ. այլ ո՛չ թէ *նմանն* մեզ ըստ ազգի մերում...: - 720. Երկրորդ պակասութիւն է թուլութիւն և մոռացումն մտաց. զի աստ զաստուած մոռանամք և որոշիմք մեղօք ի *նմանէ:* - 722. ...և այս բառնի ի հոգւոյն և լինի ամրութիւն և հաստատութիւն. զի զաստուած հաստատապէս ըմբռնեմք և բնաւ ո՛չ բաժանիմք ի *նմանէ* և ոչ մոռանամք: - 722. Դարձեալ յուշ առնէ մարդոյ զչարչարանքն քրիստոսի. և խնդրեսցի ի նոցանէ մահն քրիստոսի իբր զգին որ տըւեալ է նոցա, և նոքա յափշտակեցին զինքեանս ի *նմանէ:* - 732. Իսկ երկրորդին այսպէս պատասխանեսցուք ընդդիմայարակայութեամբ. զի մարդոյ մարմին ապականի. վասն զի քակտի ի *նմանէ* կենդանացուցիչ նորին հոգին. - 733. Իսկ խաչին կենդանութիւնն քրիստոս է, և ո՛չ քակտի ի *նմանէ:* - 733. Երրորդ, զի որդի է՛ *նման* հօր. իսկ հրեշտակք և մարդիկ շփոթեցին յինքեանս զնմանութիւնն յոր ստեղծան...: - 735. Ո՛չ նոյնն մարմնապէս, այլ *նմանն* հոգէպէս. ծարաւումն, խաւարն, հրախառն կարկուտն, ժահահոտն, և այլն ըստ կարգի: - 751. Չորրորդ՝ *նմանոյն* հատումն մասանց. որպէս ակն ընդական: - 751. Եւ ասի սա *նման* փայտին կենաց որ է՛ ի մէջ դրախտին. այսինքն քրիստոս՝ որ է՛ ի մէջ եկեղեցոյս կարգեալ: - 755. Նմին *նման* և մեք յուսասցուք արժանաւորիլ տեսութեանն քրիստոսի. զի թէ և ի դժոխս իցեմք՝ ա՛յն է արքայութիւն մեր. և ո՛չ թէ յերկրի կամ յայլում տեղւոջ ըստ սրբոյն ոսկէբերանի: - 759. Դարձեալ և այսոքիւք, թէ լինէիր իմաստուն որպէս զսողոմոն. որում ո՛չ գտաւ հանգոյն *նման* ի վերայ երկրի: - 761. Այժմ ճանաչեմք փոքրիշատէ. իսկ յայնժամ ծանեայց որպէս ծանուցայ ի *նմանէ:* - 767. Եւ յայս անկեալ որդիս ծնաւ ապականացու և մահկանացու ի *նմանոյն* յառաջ եկեալ: - 776. ...զի սկզբնաչար և պատճառ ամենայն մեղաց սատանայ է. այլ ադամ այնչափ՝ զի առաջին եղև մեղանչական ի *նմանէ:* - 777. Դարձեալ ասեմ, թէ անուանս այս՝ պակասութիւն, նոյն է որ լսի չարչարանք. զի յորժամ կրէ ոք զչարչարանս զայս ինչ կամ զայն,

պակասի ի *նմանէ* այն ինչ կամ այն. այսինքն առողջութիւն, կեանք, և այլն: - 781. Զի այսպէս ուսաք ի սրբազան վեհէն մերմէ ըստ սրբոցն աւանդութեանց. թէ ամենայն իր որ բնութեան է պարզև, ան'ի բաց դնելի՛ է ի *նմանէ:* - 782. Ասեմք նա՛խ՝ եթէ ամենայն շնորհ զինչ և իցէ տուեալ բնութեան, ո՛չ քակտի ի *նմանէ*. թէպէտ ծածկի երբեմն վասն մեղաց: - 782. Եթէ վարձատրելի է ասիցէ ոք, ապա զիա՞րդ որք ի հարկէ հաւատացին ո՛չ վարձատրեցան. որպէս դևքն ի հալածիլ. և որդիքն սկեւեայ. և սիմոն կախարդն. և այլք *նման* սոցին: - 783. Ըստ աստուածեղէն տառից՝ արարաւ էգն ի յարուէն ամենայնիւ *նման* նմա օգնական: - 786. Զի թէ ոչ գոյր ստինք առն, ապա և ո՛չ կնոջն առեալ ի *նմանէ:* - 786

**ՆՄԱՆԱԲԱՐ +** Բայց վարդապետք ասեն զմիաւորութիւնն ե եղանակաւ: ...*Նմանաբար* և այլոց համանիւթից: - 476

**ՆՄԱՆԱԳՈՅՆ +** Քանզի՝ որդի *նմանագո՛յն* է հօր քան զդուստր: - 109

**ՆՄԱՆԱԳՈՐԾ +** Ասեմք թէ՝ երևմունք նոցա ո՛չ են առ աչօք. որպէս *նմանագործ* ի յաչս ցուցանեն: - 133

**ՆՄԱՆԱԿԱՆ +** Ա՛րդ՝ բաժանի երկինքն յերիս. այսինքն ի բնականն. յատկականն և ի *նմանականն:* - 183. Իսկ *Նմանական* երկինք է **ե**: - 183

**ՆՄԱՆԱԿԻՑ +** և էր կոյս ըստ որում պահեաց զմաքրութիւնն. վասն որոյ *նմանակիցք* նորին՝ թագիւ պսակին ընդ նմին: - 712

**ՆՄԱՆԱՄԱՍՆ +** Իններորդ՝ զի ի հոգի՝ ի *նմանամասունս* և յաննմանամասունս այլ և ա՛յլ գործէ. ըստ որում ակն տեսանէ և ո՛չ լսէ. բերանն ճաշակէ՛ և ո՛չ հոտոտէ: - 479

**ՆՄԱՆԱՄԱՍՆԱԲԱՐ +** Ոչ *նմանամասնաբար*. զի նոքա բոլորին՝ և միմեանց հոմանունաբար ասին. որպէս փայտ ի բազում փայտս: - 88

**ՆՄԱՆԱՄԱՍՆԵԱԼ +** Բոլոր ի մասունս. և այս երկակի. ի *նմանամասնեայս*՝ և յաննմանամասնեայս: - 87

**ՆՄԱՆԱՊԷՍ +** Իսկ ի վերայ փոփոխականացս ո՛չ *նմանապէս*. զի յանցեալ ժամանակս և ի ներկայս բացորոշակի մինն ճշմարիտ է և մինն ստէ՛. որպէս ասեմք՝ երէկ անձրև էր, կամ ո՛չ էր. այսօր անձրևէ, կամ ո՛չ է: - 9. Եւ թէ ոք ասիցէ, բազում բանք մեր բացորոշակի լինին ի հանդերձեալն. որպէս թագաւորն յորժամ ասէ շինեսցի քաղաք, և շինի. և ասեմք թէ այսանուն մարդ մեռանելոց է, և մեռանի. և աղօթեմք և լինի. և այլն *նմանապէս* անէծք կամ օրհնութիւնք: - 9. *Նմանապէս* և աստուած գոլով բարի՝ ճանաչէ զչարս: - 17. *Նմանապէս* և աստուած միակ միջնորդութեամբ ճանաչէ զբարին ըստ ինքեան ի յատուկ տեսակն իւր. և ճանաչէ զչարն կրկին միջոցաւ. այսինքն զի է՛ հակակայ բարւոյն. և է՛ պակասութիւն նմին որպէս ասացաւ: - 17. *Նմանապէս* և ո՛չ սկիզբն ունի և ո՛չ պատճառ: - 23. *Նմանապէս* և մարդկան տեսանել զաստուած առանց օրինակի և միջնորդի՝ անհնա՛ր է ի կեանս յայս: - 25. *Նմանապէս* հաւասարի պաշտօն հերձուածողաց և հրէից: - 34. Եւ սոքա գիտութեամբ յանձինս իւրեանց անարգեցին ...և այլս բազում *նմանապէս:* - 34. Երկրորդ՝ նեռն հայհոյէ զքրիստոս զինքն կոչելով. *նմանապէս* և հերձուածօղք ոմանք հայհոյեն զմարդեղութիւնն Քրիստոսի: - 34. Որով յա՛յտ է թէ յետ ծերութեան մարդկան՝ նոյն ինքն է աստուած. և զայլն *նմանապէս* իմասցիս: - 42. Այսինքն երկնչելովն՝ զերկիւղն իմ. քաղցիւն՝ զքաղցն. վաստակելովն՝ զքիրտն. *նմանապէս* և զայլսն իմասցիս: - 42. *Նմանապէս* և այն՝ «ո՛չ իմ կամք՝ այլ քո՛յդ լիցի». աստանօր ո՛չ յատուկ կամք ցուցանէ բաժանեալ ի հօրէ. այլ առաւել զմիակամութիւնն հօր: - 46. *Նմանապէս* ասա՛ և զայս. զբնութեա՞մբն որդի ասես ընդ աջմէ մեծութեանն նստեալ, թէ որ շնորհօքն որդիացեալ ըստ քեզ: - 70. *Նմանապէս* և որդին միածին էր ի ծոց հօր և յարգանդ կուսին. ի խաչին անարգեալ՝ և յաթոռ փառաց բազմեալ...: - 71. *Նմանապէս*՝ անպարագրելի և պարագրելի: - 75. *Նմանապէս* իմա՛ և զայլն ամենայն: - 78. *Նմանապէս* ասի մարմնով չարչարեալ. և մարմնով մեռեալ. և յարուցեալ. և համբարձեալ: - 79. Եւ թէպէտ և ոմանք *նմանապէս* մեզ ասեն մի բնութիւն՝ բայց շփոթեալ: - 83. *Նմանապէս* որ ասէ, մի և նոյն աստուած և մարդ: - 91. Նոյնպէս արիւնն աստուած՝ և աստուծոյ արիւն. և այլն *նմանապէս*: - 92. *Նմանապէս* և մարմինն քրիստոսի աստուած է առ մասունս մարմնոյն. և աստուծոյ մարմին առ բոլորն քրիստոս: - 92. *Նմանապէս* մարմինն քրիստոսի աստուած է՝ և կոչի աստուած և աստուծոյ մարմին: - 92. Ապա ուրեմն կարեմք ասել զմարմինն քրիստոսի աստուած և աստուծոյ մարմին, և զայլն *նմանապէս:* - 92. *Նմանապէս* մարմին և արիւն և ոսկր և այլն աստուծոյ ասել՝ զաստուած ցուցանէ: - 93. *Նմանապէս* և հաւասարակն թէպէտ բազում է, այլ երկոտասան գլխով նշանակի...: - 105. *Նմանապէս* և արարիչն աստուած. ներքոյ և հիմն է ամենեցուն որ կրէ զամենայն բանիւ զօրութեան իւրոյ: - 110. Այսպէս անժամանակն զժամանակեայս. անմարմինն զմարմնաւորս. անփոփոխն զփոփոխելիս. անսկիզբն զսկզբնաւորքն. և

զայլսն *նմանապէս:* - 113. *Նմանապէս* և այս: - 114. *Նմանապէս* և յաւիտենական. զի ո՛չ ունի սկիզբն և ո՛չ վախճան: - 114. Կամ որպէս բունն մի է ծառոյն, և ճուղքն և տերևքն բազում. *նմանապէս* և աստուածաբանութիւնն: - 123. *Նմանապէս* և իմանալի արեգակն արդարութեան քրիստոս՝ ըստ հաւասարութեան բաշխէ զմարմնաւորս...: - 127. *Նմանապէս* և սէրն. և ազնիւն. և իմաստութիւնն. և այլն: - 128. *Նմանապէս* և նըւագ ձայնն այն՝ փոխո՛ւմն է առաջին ձայնին. վասն այն լսէ զձայնն՝ և ո՛չ զբանն: - 131. *Նմանապէս* և ի միջին կարգ քահանայապետութեանն՝ առաջին է տէրութիւնքն. և ապա զօրութիւնք. և ընդ նմին իշխանութիւնք: - 135. *Նմանապէս* և այս փոխի ի յարութեանն, և հրեշտակաց հաւասար լինի և հոգւոյն: - 141. *Նմանապէս* և հոգին շարժի բոլոր՝ գնդակ՝ և ուղիղ: - 142. *Նմանապէս* և մարմնականն շարժի եռակաբար: - 142. *Նմանապէս* և սէրն է միատեսակ և բազմատեսակ: - 143. *Նմանապէս* և պատասխանին այլ և այլ և ո՛չ մի: - 162. *Նմանապէս* և աստուած ո՛չ կարէ զչար, զի առաւել կարէ զբարին: - 163. Ապա ո՛չ է *նմանապէս* ամենայն մեղաց զղջումն և ապաշխարութիւն: - 166. Ապա ուրեմն ո՛չ է *նմանապէս* ամենայն մեղաց թողութիւն. որպէս և ո՛չ է նման գործն: - 167. Իսկ անեղ և պարզ էութեանն պատշաճի միայն *նմանապէս* համեմատութեամբ...: - 171. *Նմանապէս* ծանիր և զայս կրկին է էակն. մին մշտնջենաւոր և միշտ ներգործութեամբ, որպէս աստուած. հրեշտակք. և արեգակն և հուր: - 173. *Նմանապէս* և հոմանուն է հաստատութիւնն ի ներքոյ ջրոյ. այսինքն ըերրորդ կամարն. և օդս առ մեզ որ ունի զջուրս ամպով հաստատեալ: - 184. *Նմանապէս* և իմանալի լոյսն ներգործէ՛ զայս: - 185. *Նմանապէս* և զայլ մոլորականսն ծածկէ յորժամ ուղղապէս ընդ դէմ անկանի: - 187. *Նմանապէս* պնդի և լուծանի. վասն զի ցո՛ւրտ է և գէջ: - 202. *Նմանապէս* յամառն մերձի յերեսս երկրի, և հեռանայ ի ներքուստ: - 209. *Նմանապէս* և կոչին փայտ. զի ի փտելոյ և յապականելոյ գոյանան այսպէս. յորժամ բորբոսի երկիր՝ նա՛ զարմատն ի վայր արձակէ և զբոյսն ի վեր: - 214. Եւ են որք գործս ունին և ոչ հաւատս. որպէս կեղծաւորքն. *նմանապէս* և սոքա անպիտանք են աստուծոյ: - 215. Այլ այժմ վասն զգեստուց պահեմք զոչխարս. և վասն կերակրոյ զեզինս. և վասն բեռին զէշս. և վասն բառնալոյ զմեզ զձիս. և վասն զթշնամիս հալածելոյ զշունս. և վասն զթռչունս ըմբռնելոյ զբազէս. և զայլսն *նմանապէս:* - 217. *Նմանապէս* և յայլ երիս յառաջնումն աւուր արար զլոյսն ժամանակեայ. զարեգակն և զլուսին և զաստեղս ի վերնագոյն տարրէ՛ հրոյն: - 227. *Նմանապէս* տարբերութեամբ յատկիւ և պատահմամբ. այլ են քննօղ մտաց: - 236. *Նմանապէս* և արարիչն. այլ նա՛ պարզ և ի վեր քան զձեռակերտս յարացուցին: - 236-237. *Նմանապէս* և այն. յորժամ զամենայն ինչ թողումք և ի լոյս ճրագին նայիմք. զի ազգական է իւր՝ զայն սիրէ և տեսանէ: - 239. *Նմանապէս* և բոլոր ամենայն անդամքն է **է** տապաղայ: - 239. *Նմանապէս* և զմիջին դուռն բանայ, և զպարզ կերակուրն ի լեարդն յուղարկէ. և նա ներկէ յարիւն և բաժանէ: - 242. *Նմանապէս* և ո՛չ զհոգի մարդոյն: - 251. *Նմանապէս* և արուեստաւորն աստուած նախանկար տեսութեամբն ունի ի միտս իւր նախքան զլինիլն մարդոյն...: - 258. *Նմանապէս* և կերակրականն ունի զօրութիւնս դ. որ է՛ քարշողականն. ունականն. հալողականն. և վտարականն: - 262. *Նմանապէս* ծառք և տունկք՝ որ յետ երից ամաց կամ չորից ցուցանեն զպտուղս՝ յայսմ թըլոյ ո՛չ ելանեն արտաքս: - 263. Ուստի յա՛յտ է՝ զի այծեամն առաւել է տեսանելեաւ. և շուն հոտոտելեաւ. և այլն *նմանապէս*...: - 266. *Նմանապէս* խոհեմին և անզգամին. տրասիրին, և անյագ անիրաւին: - 268. Ո՛չ կարէ մեռանիլ. և անկա՛ր է մեռանիլ. և այլն *նմանապէս:* - 278. *Նմանապէս* և որք նոր իմն բարեաց սկիզբն լինիցին՝ առաւելապէս պարգևաց արժանասցին: - 288. *Նմանապէս* և մեծն ի մարգարէս աստուածախօսն մովսէս որ աստուած կոչեցաւ փարաւոնի. իշխելով տարերցս փոփոխման, որ ջրածինն էր՝ եղև վիմածին և կայծակնածին. որում լուսաւորեցան երեսք: - 288. *Նմանապէս* և զայս սահման լեզուի ո՛չ ոք կարէ փոփոխել. ո՛չ բռնաւոր և ո՛չ իշխան. բայց միայն աստուած որ եդ զսա: - 298. *Նմանապէս* և միջակ կապիւն, զի ուսանիմք յաստուծոյ ընկալեալք զկարգ կրօնիցն. և ունիմք ուխտ և դաշին և հնազանդութեան նմա...: - 318. *Նմանապէս* և տեառն մերոյ: - 318. *Նմանապէս* եզեկիա և ովսիա և զօրաբաբէլ: - 337. *Նմանապէս* և հոգին սուրբ ի գիշեր կենցաղոյս լուսով աւետարանին առաջնորդէ՛ մինչև հասուցանէ...: - 349. Զայլամն որ է՛ ըշտռտուրմուղն, կեղծաւորքն են և անպիտանքն գործոյ. և այլքն *նմանապէս:* - 365. Երկրորդ՝ որպէս աստեղաց զլխաւորքն թւեցան. **բժ**ան ազգն՝ **բժ**ան կենդանակերպքն. և այլք *նմանապէս:* - 377. *Նմանապէս* և մահու չափն **գ** է: - 385. *Նմանապէս* և **բժ**ան քարինքն հանեալ ի ցամաք և կանգնեալ սեղան՝ հաւատացեալքն են. որք ի ձեռն **բժ**ան առաքելոցն հաւատացին և ելին ի մեղաց. և եղեն սրբութեան սեղան աստուծոյ **բժ**ան անդամօք և բժան առաքելովք: - 415. Նա՛խ՝ զի կոյսն սուրբ՝ նշանակեսցէ

զուրբ եկեղեցի խօսեցեալ քրիստոսի որ *նմանապէս* է կոյս: - 461. Եւ այլ ամենայն *նմանապէս* ասացեալ սրբոց: - 470. *Նմանապէս* և յարութիւնն մեր կոչի ծնունդ ի հանդերձեալ կեանսն...: - 471. *Նմանապէս* և աստ յայսմ աւուր շաբաթու որ ի կիրակէ յարութեան տօնեմք, այժմ յինն ժամուն ի վեր նախատօնակ առնեմք յարութեանն քրիստոսի. և այս վասն բազում պատճառի: - 509. *Նմանապէս* և զկերակուրս **դ** են որոշեալ քրիստոնէից: - 510. *Նմանապէս* և բանն աստուծոյ մի և նոյն է անձամբ և բնութեամբ ի գոյացութեան իւրում, և ի գիրս աւետարանաց գրեալ: - 530. *Նմանապէս* և առ այս ասեմք, թէ ո՛չ ինչ է զանազանութիւն...: - 530. ...և այլ *նմանապէս* առ այսորքիւք երրորդ եկեղեցի որով կարօ՛ղ են հաւաքել ամենայն տիեզերք երկրի և լինիլ միով հաւատովն մի հաւատացեալք որպէս ասացաւ: - 533. Եւ որպէս եղիա որ կապեաց զերկինս և փախեաւ ի սիդոն. նոյն նմա հրամայեաց աստուած բանալ զերկինս. *նմանապէս* և այս: - 542. *Նմանապէս* և ազգս հայոց թէպէտ մի է, կարէ՛ պատւական գոլ բազմաց: - 551. *Նմանապէս* և ամենայն ազգ քրիստոնէից ասէ զինքն ճշմարիտ: - 551. ...և որկրամոլութեամբ մնան բազմամարմինք. և ատելութեամբ զերծանի ոչխարն ի գայլէ. և խորխտումն մեծարգոյ առնէ զձին. և այլն *նմանապէս:* - 563. Եւ թէ **բ** մարդ գործեն զմեղս զայսօսիկ, սպանանելն մեծ է քան զսուտ վկայելն. և այլն *նմանապէս:* - 565. ...*նմանապէս* և ի յարիւնն է կապեալ մարմինն և հոգին համազուգեալ և աստուածութիւնն միաւորեալ...: - 600. Առաջին մեք, և հայրն, և պապն մեր. հօր պապն, և պապու հայրն, և պապուն պապն, և ապպապն. որ է՛ է. *նմանապէս* և ի մօր կողմն: - 611. *Նմանապէս* և յեկեղեցի` ոմանք սաղմոսե՛ն. և սարկաւագն ի տիպ հրեշտակին տայ զօրհնեայն ի քահանայն որ է՛ տիպ քրիստոսի...: - 625. *Նմանապէս* և ամենայն շարական **դ** տուն է, և հարցն **զ**. զի վեցն կրկին **գ** է: - 637. որք են, բառաչել, կառաչել, խխնչել, և այլն *նմանապէս:* - 640. *Նմանապէս* և զեսայի միշտ ի կիրակէս ընթեռնումք...: - 644. *Նմանապէս* և քշոցն` վեցթևեան սերովբէքն: - 645. ...նա զձեռն ի վեր առեալ գոհանայ զաստուծոյ. *նմանապէս* թէ պատմի վասն վախճանի ուրուք: - 659. *Նմանապէս* և յանկարծակամահ լինի, կամ ի խստութենէ ցաւոյն...: - 668. ...այսինքն թէ եպիսկոպոս իցէ` եպիսկոպոսք. և թէ քահանայ` և թէ սարկաւագ. *նմանապէս* և աշխարհականք զաշխարականս: - 674. Զի ցուցցէ թէ *նմանապէս* լինելոց է ի յարութեանն հանգիստ նոցա ի կարգս իւրեանց: - 674. *Նմանապէս* հետևի զի մարմինն ո՛չ կրեսցէ տանջանս. զի ո՛չ յառնէ ըստ նոցա կարծեացն: - 694. Արդ եթէ սիրելիքն աստուծոյ որք զարիւնս իւրեանց հեղին վասն քրիստոսի` ոչ առնուն զվարձս իւրեանց, *նմանապէս* և ամենայն ազգ մարդկան: - 694. *Նմանապէս* և մեղաւորքն անդ ի յարութեանն ի մէջ չարեաց և տանջանաց: - 694. *Նմանապէս* այն որ ասէ եղբօր իւրում մօրոս, պարտաւոր լիցի աստի դատաստանի և գեհենի խղճի մտացն: - 704. *Նմանապէս* և կողն որ առաւ յադամայ և շինեցաւ կին, ո՛չ յառնէ ի յադամ, այլ ի յևա. որոյ հիմն կազմութեան եղև փոխանակ սերման: - 719. *Նմանապէս* և մարմին մարդոյ առ հասարակ մեռանին և ի հող լուծանին և յայլ տարերս...: - 719-720. ...*նմանապէս* և մերկ մարմին մեռելոյ ո՛չ յառնէ մերկ, այլ փառօք. որպէս ցուցանի յառաջիկայդ: - 720. ...*նմանապէս* և մարմինք մեռեալք յերկրի և հոգիք ի կայանս իւրեանց ի միասին կան առհասարակ արդարոց և մեղաւորաց մինչ դատաստանաւն բաժանեսցին օդիքն և այծիք: - 721. *Նմանապէս* և խաչն աստուծոյ` է՛ ի կամացն աստուծոյ և ի նորին ներգործութենէն որ անապական կամի զնա. զի նովաւ արար փրկութիւն ազգի մարդկան: - 733. *Նմանապէս* և բժան աթոռք առաքելոցն սրբոց ի յօդոյդ լուսեղէն: - 736. *Նմանապէս* և չարեացն վկայ` ոսոխն մեր սատանայ և գործակիցքն. և խիղճ մտացս որով տանջիմք միշտ: - 743. *Նմանապէս* և ի բարի գործս փոխեալք: - 745. Եւ *նմանապէս* ըստ չորից իմն է արդարութիւնն: - 746. Զի որպէս յաւուրս **զ** կազմեցաւ աշխարհ և ի **զ** դարս կայացաւ. *նմանապէս* և ի ժամս **զ** նորոգեսցի դարձեալ: - 747. *Նմանապէս* և բարեացն հնձան ասի եռակի: - 748. *Նմանապէս* և հուրն որով հրեղէն լեզուօք երևեցաւ սրբութեան հոգին, բաժանեսցի այրեցումն և մշտափայլ լուսով փայլեսցի որպէս զարփին և որպէս զարեգակն: - 759-760. *Նմանապէս* իմասցի և վասն մի դժոխոցն` գոլ զանազան տանջանք և տանջանարանք: - 760. *Նմանապէս* և բոլորս մարդկութիւն կրեցին զապականութիւն ի նոյն ադամայ. ծնունդ գոլով նորին ցանկութեանն: - 776. Ա՛րդ` որպէս հասեալ պատժոյն հաղորդեցան, *նմանապէս* և հասեալ շնորհօքն ազատեցան: - 777. *Նմանապէս* և ո՛չ զքահանայութիւն կարէ քակել ի յանարժանէն: - 782. Զի որպէս բան պատկերին, այսպէս և բան շնորհացն եռակի. զի միապէս սոքա եղծանին մեղօք, և *նմանապէս* արծարծին մաքրութեամբ առ որ ոք և իցէ: - 782. Այս է` զիրատեսակն յերակս աչաց. և զօդատեսակն լսելեաց. և զայլսն *նմանապէս*. և զմաքրագոյնն սոցա ի խելս ի զգուշութիւն զգայութեանց: - 786. ...ելեալ գոլորշեացն *նմանապէս* առաջնոյն. և լինի քաղցրագոյն

արտօսր. վասն ասացեալ հիւթոյն ի քաղցրորակն անօթոյ: - 787. *Նմանապէս* և հիմունք երկրի ջուրք տատանեցան. այսպէս և սիւնք ասացեալն օդոյ դողային. և լուսաճեմքն խաւարեին: - 788. *Նմանապէս* և աստ յաւուր նոր կիրակէի ասացեալն կրկնո՛յ զատկի, յանկարծահաս ժամու շարժեալ հեղեղաց ուղխից խռովութեանց: - 789. Ասացեալն *նմանապէս* և աստ կատարեալ. ո՛չ միայն յանդի հեռաստան, կամ աղալ յերկան: - 789

**ՆՄԱՆԱՏԻՊ +** Տասներորդ՝ այլև օրինակ և յարացոյց *նմանատիպ* հասարակաց յարութեան և նորոգման տիեզերաց և մարդկային բնութեանս որ յապագայն: - 196-197

**ՆՄԱՆԵՄ, ՆՄԱՆԻՄ +** Ութերորդ՝ զնա օ՛ձ դարանակալ ասէ ի ճանապարհի. և սոքա առաջին օձին *նմանեալ*՝ հրապուրեն զբազումս...: - 35. Այս *նմանէ* մեզ և անկ: - 51. Յարցումնս այս է՛ երկաբնակացն. և *նմանի* այնմ թէ՝ մարդ ըստ հոգւոյն բնութեանն մարմին է, թէ ըստ մարմնոյն բնութեանն հոգի: - 75. Իմաստութեան օձին *նմանիլ*. և թէ զգլուխն ջախջախեմք. և թէ թոյնքն ի գլուխն է: - 155. Իններորդ՝ նախատակադիրն քրիստոս է փրկիչն ամենեցուն. և ամենայն սուրբք զինուո՛րք նորա. պարտին և զինուորքն զօրավարին *նմանիլ* և նախատակիլ...: - 159. Զի՞նչ իմաստութիւն օձին որոյ պարտ է մեզ *նմանիլ*: - 218. Եւ բնականն, Նա՛խ՝ զի *նմանիմք* երկրի որ յերեսն ունի զգեղեցկութիւն բուսոց, և ի թիկունս ոչ: - 234. Նա՛խ ցուցանի զի մի է արարիչ սոցա, և բազում արարածք. յաղագս որոյ *նմանին* և զանազանին: - 237. Շուրթն կախեալ սակաւ մի, տարտա՛մ է. զի յէշ և ի ձիս *նմանի*: - 247. Դարձեալ **թ** թիւն պակա՛ս է ի **ժ**երորդէն. և մեք պակասեցաք յինն դասուց հրեշտակաց, որ նախ հաւասար էաք ի դրախտին. և կարօտացաք մարմնաւոր ծննդեան, *նմանելով* անասնոց...: - 264. Գիտելի՛ է, զի յերից է պատկերին գեղեցկութիւն որով *նմանի* ի նախատիպն: - 271. Վասն որոյ չարքն անամօթ կոչին. իբր թողեալ զպատիւ մարդոյն՝ և անասնոցն *նմանեալ:* - 274. Ոմանք ի վերայ մարդոյս մեկնեն զտապանն և յիրաւի. զի տապանն ունէր զբոլոր աշխարհս. և մարդն մասն է աշխարհի. պա՛րտ է զի մասն *նմանեսցի* բոլորին: - 293. Ապա՛ ի թաբօր լերինն ամպ խոնարհեալ և ձեռն կարկառեալ ձեռնադրեաց զնա ասելով, այս մելքիսեդեկ անհայր անմայր չհամարեալ յազգս՝ *նմանեալ* որդւոյն աստուծոյ: - 300. Ո՞րք են որդիքն աբրահամու *նմանեալ* աւազոյ. և ո՞րք աստեղաց: - 303. Եւ որպէս հայրն աբրահամ *նմանեցաւ* աստուծոյ հօր, նմանաւանդ և որդին իսահակ համեստութեամբ ինչ իրօք *նմանի* որդւոյ նորա քրիստոսի: - 304. Ծաղիկ զմռնեաց. *նմանէ* պոյտն ծաղկի. և Կինամոն. արմա՛տ է խոտոյ ի տմորիս հայոց. և Խնկեղէգն. որ յարմատս ո՛չ ամենայն եղեգան լինի. և Յիրիկ. խէ՛ժ է ծառոց: - 349. Եւ ո՞րք են *նմանեալ* մարմնով ադամայ: - 413. Ո՞րք են *նմանեալ* ադամայ մարմնոյ մասամբք: - 434. Յոգւոյ և մարմնոյ միաւորութիւն ո՞րպէս *նմանի* քրիստոսի: - 476. Ըստ ձեզ ապա և ո՛չ ժողովրդեանն *նմանեցաւ*: - 484. Վասն որոյ *նմանեցաւ* իջումն հոգւոյն սրբոյ փայլական: - 523. Եւ *նմանին* սոքա: - 533. Իսկ մերս դաւանութիւն ամենայնիւ նոյնն եկաց մնաց զոր ունէր նախ ի սրբոյն գրիգորէ՛ լուսաւորչէ և ի *նմանեաց* նորա: - 551. Եւ այս տուեալ լինի յաստուծոյ ընդ դէմ երկիւղին որով *նմանին* քրիստոսի. զի ո՛չ երկնչէր ի բնական մահուանէն. որ ասէր «հոգիս յօժար է բայց մարմինս տկար»: - 582. Եւ ի պահքն առաւել ձայնաւորքն քան զերգս. զի յաւուրս պահոց՝ հրեշտակաց *նմանիմք*, և յուտիքն մարդկան: - 628. Երրորդ, զի օրինակն *նմանեսցի* ճշմարտութեանն. որ պարարա՛կ էր աստուածութեամբն և կատարեալ մարմնով: - 657. ...ապա և մարմինն անապական և հոգին անփոփոխ կացցէ յաւիտեան. *նմանելով* անապական և անփոփոխ մարմնոյն քրիստոսի: - 678. ...և զամենայն ինչ որ *նմանէ* այսմ հոգևոր բարութեան: - 775. Եւ զանազանեալքն ի գիրս անդամոց, զանազանին և ո՛չ *նմանին* գոյացական տեսակօք: - 786

**ՆՄԱՆԵՑՈՒՑԱՆԵՄ +** Այսպէս և յակոբ յօրինելն ըզյուղա՝ *նմանեցոյց* զնա առիւծու: - 27-28. Նոյնպէս և աստ զանբարիշտսն *նմանեցուցանէ* գազանաց: - 28. Երկրորդ, ըստ փիլոնի, օձն ցանկութեան է օրինակ, որ զցանկացօղ ժողովուրդն սատակէր. ի յախտս իւրեանց *նմանեցոյց* զպատիժն: - 386. Տասներորդ, որպէս ասէ փիլոն՝ նշանակ հեշտ ցանկութեան է օձն. որ և զցանկացօղ ժողովուրդն սատակէր. ըստ ախտին իւրեանց *նմանեցոյց* զպատուհասն: - 387. Երրորդ՝ ընդէ՞ր ինքն ո՛չ ասաց թէ ե՛ս եմ սամուէլ. այլ նոքա *նմանեցուցին*: - 429. Վասն է՞ր փայլական *նմանեցուցանէ* զիջումն հոգւոյն սրբոյ: - 522. ...զի թէպէտ ողորմութիւնն առաւել *նմանեցուցանէ* զմարդն աստուծոյ ըստ արտաքին գործոյն...: - 585. ...սակայն ըստ ներքնոյն առաւել *նմանեցուցանէ* խաղաղութիւնն: - 585. Այլ և կարդացողին պա՛րտ է *նմանեցուցանել* զիւր խօսքն ասողին գրոց: - 643. Վասն որոյ տէրն գողոյ *նմանեցուցանէ* զմահն օրհասական: - 730

**ՆՄԱՆՈՒԹԻՒՆ +** ...պիտո՛յ է նմա վերնագոյն բնութեամբ որդի մարմնացեալ ի յոր կերպասցի և սա՛ ի *նմանութիւն* նորա շնորհօք որդի: - 67. Դարձեալ՝ մի բնութիւն ասեն որք առ աչօք և *նմանութեամբ* զճշմարիտ մարդեղութիւնն համբաւեն: - 82. Այն որ նըւաստացոյց զինքն ի յունայնութիւն մարդկան, եղև ի կերպ ծառայի՝ և գործով և կրիւք և *նմանութեամբ* մարդկան...: - 93. Արդ կամ ստեաց զաւետարանն, կամ սուտ լեր ի բանս քո ըստ *նմանութեան* հօր քոյ սատանայի: - 97. Եւ կարծեօքն տպաւորէ *զնմանութիւնս* և ի բացեայ. որպէս սպիտակ: - 103. Ապա ուրեմն հանգիստ է ճշմարտութիւնն՝ և լուծումն՝ և *նմանութիւնն*: - 104. Եւ միութիւնն ի յորակն՝ առնէ *զնմանութիւն*: - 104. Եւ աստուած յայտնի է ի բանականքս իմացմամբ և պատկերաւ. այլ ի կենդանիս և ի բոյսս և ի գոյսս սակաւ ինչ *նմանութեամբ*: - 109-110. Երկրորդ՝ սկիզբն է յարացուցի. և պատճառ էից. պատկեր և *նմանութիւն* նորին յարացուցի: - 110. Եւ յէութիւն եղելոցս. որ է պատկեր և *նմանութիւն* յարացուցի: - 111. Երբեմն նախագաղափար. իբր նախօրինակ. և մեք պատկեր և *նմանութիւն* նորին: - 112. Այլ բազո՛ւմ է և զանազան ըստ պատկերի և *նմանութեան* յարացուցելոցս որք են բազումք...: - 112. Նախ՝ հայելով ի կերպարանս և ի *նմանութիւնս* որ է՛ կարգաւորութիւն արարածոց...: - 119. Ասեմք եթէ՝ տպաւորութիւնն լինի կրկնակի. մինն նման *նմանութեամբ*. որպէս լոյս. հուր. և այլն: - 131. Երկրորդ՝ աննման *նմանութեամբ*. որպէս առիւծ. եզն. և այլն: - 131. Այլ վասն բազում պատճառի աննման *նմանութեամբ* գրեցին: - 131. Վասն առաջնոյն գիտելի՛ է, զի ամենայն շնորհ բղխո՛ւմն է և ճառագայթ, յանեղական լուսոյն իջեալ առ էակս ամենայն իմանալի և զգալի. և զարդարէ՛ զսոսա ըստ *նմանութեան* այնմ պարգևեալ շնորհի...: - 140. Իսկ այլք ասեն թէ՝ հրեշտակն ո՛չ երևի ձևացեալ մարմնովն և ո՛չ խօսի ընդ մարդոյն. այլ՝ դնէ *զնմանութիւն* դիտաւորութեան ի յաչքն կամ ի յականջն մարդոյն. և անդ ընդունի հասարակ զգայութիւնն զտեսակս այնմիկ...: - 145. Իսկ խօսի դնն ընդ մարդոյ՝ կամ փոփոխելով զգոյութիւնն որպէս հրեշտակն կամ զպատկեր *նմանութեանն* ցուցանէ տեսանելեացն. և կամ տպաւորէ՛ յերևակայութիւնն: - 145. Հինգերորդ՝ և որպէս ընդ աղօտ ինչ *նմանութեամբ* ծանօթանամք ի գործն արարչութեան. այսպէս և ստւերակերպ *նմանութեամբ* ի ծանօթս գամք գործոյ նախախնամութեանն. այսինքն առնելոյն և թոյլ տալոյն: - 157. Եւ զի օրինակն ունի *նմանութիւն* և ունի աննմանութիւն. վասն որոյ կոչի օրինակ: - 163. Այսոքիկ *նմանութիւնք* օրինակիս: - 164. Եւ թէպէտ ի յէութիւնս իւրեանց յետոյ, սակայն ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ, գոյին յառաջ քան զլինիլն իւրեանց էութեամբ, և յետոյ եղեն ըստ նոյն *նմանութեան*: - 172. Տասն բնական երկինքն. և **Ե** յատկական. և **Ե** ըստ *նմանութեան*. որ լինին **Ի** երկինք: - 184. Իսկ աշուն *զնմանութիւն* գարնան ունի. վասն այն և նա՛ բուսուցանէ: - 198. Վեցերորդ՝ զի ասէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս կազմութեան եթէ առաջին կեանք դրախտին էր կուսութիւն և անապականութիւն և հրեշտակաց *նմանութիւն*...: - 225-226. Այսպէս գլուխ մարդոյս ունի *զնմանութիւն* երկնից. զի է՛ բոլոր. և աչքն որպէս լուսաւորքն. և իմացումն ի նմա՛ որպէս իմանալիքն յերկինս: - 232. Եւ բնական, Նա՛խ այսպէս. զի ամենայն իր մարմնական ի նոյն տարերաց են բաղկացեալ. վասն որոյ ունին *նմանութիւն* առ միմեանս: - 236. Դարձեալ՝ ասէ պղատոն, եթէ մարդն որ ունի *զնմանութիւն* անասնոց ինչ՝ հետևի և բարուց նոցին: - 248. Կամ ի հայրենեաց *նմանութենէ*: - 251. Այլ այս է ուղիղ. զի որպէս նախախնամութիւնն աստուծոյ զդէմքն մարմնոյն ի հաւասարութիւնն անհաւասար պահեաց, և ի *նմանութիւնն* աննման: - 252. Ջորօրինակ՝ արուեստաւոր ոք կամիցի դրօշել ի քարեայ պատկեր, նախ նկարէ՛ ի միտս իւր զձև պատկերին. և ապա հատանէ զքարն և տաշէ՛ և դրօշմէ՛ զկերպն ըստ այնմ *նմանութեանն* որ էր ի միտս ձևացեալ: - 258. Դարձեալ **Թ** թիւն է երիցս երրեակ. և երեք թիւն է կատարեալ. ունելով առաջին միջին և վերջին. ի *նմանութիւն* **Թ** դասուց հրեշտակաց: - 264. Իսկ հինգ օրեայ անդրանկանն յետոյ լինիլ՝ բերէ՛ *զնմանութիւն* նախնի մարդոյն. որ յետ **Ե** աւուր ստեղծաւ: - 264. Յեղանակս գարնան, և յառաւօտուն մինչև յերեք ժամս, և հիւթոյ արեան, և մանկութեան հասակն ի տղայութենէ ծննդեան և աճման՝ ունին *զնմանութիւն* օդոյ ջերմ և գէջ գոլով: - 266. Իսկ ամառն, և մինչ ի **Զ** ժամս աւուրն, և խարտեաշ մաղձն, և երիտասարդն՝ ըստ *նմանութեան* տարրական հրոյ ջերմ և չոր գոլով. վասն որոյ առաւել բարկացօղ և ցանկասէր լինի: - 266. Իսկ աշունն, և մինչ ի **Թ** ժամս աւուրն, և սեաւ մաղձն, և ալևորն, ըստ *նմանութեան* երկրի ցուրտ և չոր գոլով՝ ծոյլ և պղերգ գոլով ամենայն ուսմանց և գործոց: - 266. Իսկ ձմեռն, և յինն ժամէն մինչև յերեկոյ և բոլոր գիշերն, և սպիտակաթոյր հիւր պլղամին, և ծեր մարդ, ըստ *նմանութեան* ջրոյ ցուրտ և գէջ գոլով. վասն որոյ սպիտակի և ցրտանայ և պակասի զօրութեամբ: - 266. Որո՞վ զանազանի պատկեր և *նմանութիւն*: - 272. Զանազանի պատկեր և *նմանութիւն*, որպէս մարդն

և կենդանին. զի ամենայն մարդ ասի կենդանի. այլ ո՛չ ամենայն կենդանի մարդ: - 272. Նոյնպէս և ամենայն պատկեր ի հարկէ՛ ասի *նմանութիւն*. այլ ո՛չ ամենայն *նմանութիւն* է պատկեր: - 272. Զի ի վերայ *նմանութեան* իր ինչ յաւելու պատկերն՝ որ է՛ նոյնութիւնն, և ապա՛ է պատկեր. զի պատկերն հոմանուն է: - 272. Եւ է՛ որ նոյնութեամբ է պատկեր. և է՛ որ *նմանութեամբ*: - 272. Զի ո՛չ է ըստ *նմանութեան* պատկեր. այլ ըստ նոյնութեան բնութեանն: - 272. Զոր օրինակ ո՛չ ասի մարդ մարդոյ նման գոլ ըստ մարդկութեան. վասն զի նոյնութիւն է և ոչ *նմանութիւն*. բայց ասի նման մարդ մարդոյ ըստ երեսացն և գունոյն և ձևոյն *նմանութեան*: - 272. Իսկ մարդն ասի պատկեր աստուծոյ ըստ *նմանութեանն*. վասն զի ո՛չ ունի զնոյն էութիւն. այլ *զնմանութիւնն* աստուծոյ: - 273. Այսպէս ասեն թէ՝ մարդն կազմեալ է ի պատկեր որդւոյ, և ըստ *նմանութեան* հոգւոյն սրբոյ: - 273. Եւ այս ևս ո՛չ է ընդունելի. զի սոցա պատասխանի տայ սուրբն կիւրեղ ի գիրս պարապմանց թէ՝ որ ասաց զպատկերն, իմանամք *զնմանութիւնն* ի պատկերին որպէս ցուցաւ ի վերոյ...: - 273. Իսկ պատկեր շնորհաց և փառաց է, կատարելապէս ճանաչել և սիրել զաստուած. և այս է *նմանութիւնն* զոր կատարեալքն ունին աստ և ի վերին գաւառին: - 274. Դարձեալ՝ մարդո՛յս է խօսիլ և բանաւորիլ. զի այլ կենդանեացն *նմանութեամբ* է և ո՛չ իսկապէս: - 275. Սա՛ ունի զձև *նմանութեան* տապանին վեցակողմ և կաթողիկէ, և դուռն ի կողմանէ: - 294. Եւ որպէս անդ հոգին ի *նմանութիւն* հողմոյ եկեալ զմինն **իբ** բաժանեաց: - 298. Եւ ըստ *նմանութեանն* քրիստոսի մի զուարակ. որ վասն մեղաց մերոց մեռաւ: - 322. Զի որպէս ստուերն ո՛չ է մարդ, այլ *նմանութիւն* մարդոյ: - 335. Եւ տէրն արդար դատաստանաւ ըստ *նմանութեան* մեղացն պատժէ՛ զմեղապարտն: - 387. Այլ որպէս յարուցեալն *նմանութիւն* է և ո՛չ իսկութիւն, նոյնպէս և խօսքն սուտ է և ո՛չ ճշմարիտ: - 428. Եօթներորդ՝ զի թէ ճշմարտապէս սամուէլ յառնէր, ո՛չ կամէր կինն. զի կորուսիչ էր նոցա. այլ գիտէր որ *նմանութիւնն* էր սամուէլի: - 428. Ապա յա՛յտ է թէ՝ որպէս սաւուղ խաբէր զկինն, նոյնպէս և կինն խաբէր զսաւուղ *նմանութեամբն* սամուէլի: - 428. Նա՛խ՝ զի ո՛չ ետես զնա. այլ միայն կինն. ապա յա՛յտ է զի սուտ *նմանութիւնն* էր: - 429. Հինգերորդ՝ բանն պատկեր է հօր էական. և մարդն պատկեր *նմանութեան*. վասն այն բանն աստուծոյ եղև ի պատկեր մարդոյ: - 468. ...և մեք բաց գլխով զձեռս տարածեալ զնորա *նմանութիւնն* բերեմք ի մեզ: - 635. Երրորդ, զի որդի է՛ նման հօր. իսկ հրեշտակք և մարդիկ շփոթեցին յինքեանս *զնմանութիւնն* յոր ստեղծան...: - 735. Ուղղակի ուրեմն փայտս այս ասի գոլ տընկեալ մերձ յընթացս ջուրց. զի ի *նմանութիւն* մարմնոյ մեղաց երևեցաւ. և զամենայն նուաստութիւնս մեր յինքն ընկալաւ: - 755. Երրորդ իւրաքանչիւրոցն *նմանութեամբ* դարձեալ: - 778

**ՆՆՋԵՄ +** Իսկ ի յաստուած, բարկանալն, *ննջելն*, և զարթնուլն, և գնալն և այլն: - 55. Եւ թէ ո՞րպէս ասեմք *ննջել* զարթնուլ սրտմտիլ կամ տրտմիլ աստուծոյ: - 122. Կամ *ննջել* և զարթնուլ. որ ո՛չէ ի յաստուած. այլ դնելով ի վերոյ ըստ ներգործութեանն տարացուցի: - 123. Եւ սոյնպէս խօսի ընդ արթունս և ընդ *ննջեալս*: - 145. Եւ զի *ննջելո՛յ* է ժամ: - 196. Տասներորդ՝ զի կիրք մարմնոյն հեղուն ի հոգին. որպէս յորժամ մարմինն *ննջէ*՝ և հոգին թմրի և անգործ մնայ...: - 233. Վասն այն յորժամ *ննջէ* մարդն ի վերայ ձախ կողմանն, շուտո՛վ հալի կերակուրն քան ի վերայ աջ կողմանն: - 242. Մէջ գիշեր՝ երիտասարդութիւնն ի խորս մեղաց *ննջեալ*: - 266. Երկրորդ՝ զի բանական միտքն և զգայականն խափանեալ է ի գործոյ յորժամ *ննջէ* ոք: - 268. Հնգետասաներորդ՝ առիւծն յորժամ *ննջէ*՝ բա՛ց ունի զաչսն: - 316. Սիրտ զանմահ աստուածութիւնն ասէ որ ո՛չ *ննջէ* և ոչ ի քուն երթայ պահապանն իսրայէլի: - 316. Վեշտասաներորդ՝ զառիւծ *ննջեալ* ոչ ոք իշխէ զարթուցանել. զի իւր կամաւ ննջէ և յառնէ: - 316. Վեշտասաներորդ՝ զառիւծ ննջեալ ոչ ոք իշխէ զարթուցանել. զի իւր կամաւ *ննջէ* և յառնէ: - 316. Վիուկն ա՛յն է, որ ի վիհաց և յանդնդոց մեռեալս կերպարանեն. դևք ի կերպս մարդկան երևին. զոր դևակոչ ասեն և հազիմաթ. և Նշանագէտ, որ ի գերեզմանս *ննջէ* և նշանաւոր մարդ կերպարանէ ...: - 388. Այլ և դաւիթ եգիտ զսաւուղ և զզօրսն նորա ի քուն և ո՛չ վնասեաց. այլ զզէնն էառ. և տէրն ո՛չ կամի զմահ որք *ննջեն* ի մեղս. այլ զպատճառ մեղացն հանէ: - 437. Վասն է՞ր հարաւ ովսիայ յորժամ խոստացաւ խաղաղութեամբ *ննջել*: - 446. Եւ է՛ բնականն կիրք, որպէս քաղց. ծարաւ. *ննջել*. աշխատիլ. և այլն: - 496. Մետասաներորդ՝ փախստեայ դաւիթ բնակէր ի ներքնումն այրի. և սաւուղ *ննջեաց* յարտաքին այրին: - 513. Երկոտասաներորդ՝ դարձեալ սաւուղ կամէր պաշարել զդաւիթ. և եկն զօրօքն իւր և *ննջեաց* ի դաշտի...: - 514. Երրորդ՝ զի չունէին պատճառս հայհոյութեան հոգւոյն որպէս զորդոյ. զի տեսանէին մարմին զգեցեալ, ուտել և ըմպել, տքնիլ և *ննջել*: - 566. ...զի մի՛ *ննջեսցես* ի մահ. նոյնպէս և այլ զգայութեանցն ըստ իւրաքանչիւր աստիճանին ասէ: - 604. ...և Իններորդն է

հանգստեան ժամն ի դէմս հօր. որ ասեմք եկեսցէ և *ննջեմք*...: - 622. Որով յա՛յտ է՝ զի ի կէս աւուրն որ է **ժբ** ժամն՝ աղօթելի՛ է մեզ յամենայն օր. և զկէսն այլ՝ մարմնական հոգոց պարապիլ. գործոյ աշխատութեան՝ *ննջելոյ*՝ կամ այլ ինչ իրաց: - 623. Եւ դարձեալ ճաշքն ցուցանեն յերիս հասակս զբարեգործսն. և ընթրիսն զվերջին հասակին յորում *ննջեմք* ի գերեզմանի: - 656. Թովմաս ասէ, կին յեգիպտոսէ ի գալ լինի. և անդ ուր կինն ղովտայ էր *ննջէ*: - 706. Նախ՝ զի կամ *ննջելով* հանգչին ի տանջանացն. իսկ անդ հատեալ է քուն յաչաց նոցա: - 750. Զի նախ քան զյանցանելն ադամ ունէր զկիրս բնական և անգոսնելի. որպէս կերակրիլն, *ննջելն*, և այլն: - 759

**ՆՆՋԵՑԵԱԼ +** Ի յայս միտս **խ** կատարեն *ննջեցելոց*: - 391. Զի **խ** վասն այն կատարեմք, որ առաջինքն *զննջեցեալքն* **խ** օր լային անմխիթար...: - 391. Եւ որպէս *ննջեցեալն* քնով՝ ո՛չ տեսանէ զինքն. և որպէս յաւելի կերակրոյ խնուն զգայարանքն. նոյնպէս ազահութիւն և փարթամութիւն և հպարտութիւն մոռանալ տայ զինքն...: - 397-398. Եւ գերեզմանք բացան. զի կարօ՛տ էին *ննջեցեալքն* նմա...: - 490. Այսպէս և տէր մեր էջ առ *ննջեցեալսն* ի գերեզմանս և ի դժոխս: - 514. Երրորդ՝ վասն *ննջեցելոց* ի յանքանից զենուլ և տալ ողորմութիւն աղքատաց: - 553. Այլ և զայս օծումնս ունիմք ի *ննջեցեալ* քահանայս: - 604. Դարձեալ և զօծման խորհուրդս ունիմք ի քահանայս *ննջեցեալս*. - 605. Եւ թէ ոք ասիցէ, այս *ննջեցելոց* օծումս՝ վերջի՞ն օծումն է՝ թէ առաջին: - 605. Ապա թէ ոչ՝ ժա՛մ է քեզ ասել թէ ամենայն կարգ թաղման մարմնոյն՝ ո՛չ է օգուտ հոգւոյ *ննջեցելոցն*: - 605. Այլ և հանգստեան ասեմք. նշանակ առ հասարակ յարութեանն. *ննջեցելոցն* մեր մաղթանք: - 642. Ուրբաթ խաչի և *ննջեցելոց*: - 642. Այլ բաժին *ննջեցելոց* քրիստոնէից արքայութիւնն է և կեանքն քրիստոս: - 656. Չորրորդ, յիշատակ *ննջեցելոց*: - 657. Կոչի կարգ, Նախ զի քրիստոնէից մին կարգ՝ *ննջեցելոց* կատարումն է ի վերայ է խորհրդոցս. ութերորդ խորհուրդ և կարգ. վասն ութերորդին կենաց: - 671. Երրորդ կոչի կարգ, զի զոր ինչ մեք առ մարմին *ննջեցելոցն* կատարեմք, զնոյն կարգ և հրեշտակք առ հոգիսն կատարեն այժմ և ի յարութեանն աւուր: - 671. Ո՛րդ՝ եթէ ի հասարակ ժողովրդենէ իցէ *ննջեցեալն*, հանեն զհին հանդերձն և պատե՛ն սուրբ կտաւովք և զգլուխն փակեղամբ և վարշամակօք, և օղ յոտս: - 671. Այսպէս է կարգ կատարման *ննջեցելոց* սրբոց քահանայից և կրօնաւորաց և առ հասարակ ժողովրդոց: - 674. Երկրորդ, զի *ննջեցեալն* եղբա՛յր է մեր և ունի բազում պատերազմ, օգնական լինիմք նմա: - 676. Եւ երեք աւուր յիշատակ *ննջեցելոց* ունի բազում խորհուրդ: - 681. յայս միտս գամք ի գերեզմանս *ննջեցելոցն*. - 681. Ա՛յս է խորհուրդ գօրեայ *ննջեցելոց* յիշատակին: - 683. ...վասն որոյ նշանաւոր աւուրքս այս յիշատակեմք *զննջեցեալսն*: - 683. Վասն որոյ ի սոյն աւուրքս կատարին արդիւնք *ննջեցելոցն* և յիշատակութիւնք նոցա այսու խորհրդով: - 683. Վասն որոյ խաչին և աւետարանաւ աւետեմք *ննջեցելոցն* զմեծ օր աւետեաց նոցա և կնքեմք զգերեզմանսն: - 684. Ողորմութիւն է *ննջեցելոցն*. և ո՛չ թէ զին աւետարանին շնորհացն: - 684. Այս քան ի խորհուրդ *ննջեցելոց* ի թաղումն և ի կատարումն նոցա: - 684. Երկրորդ, ասէ սուրբն դիոնէսիոս ի *ննջեցելոց* կատարմանց գլուխն՝ եթէ մաքրելոց հոգին հասեալ ի վախճան՝ յայտնի և մերձակայ տեսանէ զամենայն փառս և զպսակ զոր ընդունելո՛ց են նոքա ի յարութեան աւուրն: - 691. ...վասն որոյ ինքն եղև պտուղ *ննջեցելոց:* - 716. Նոյնպէս և եզեկիէլ քանձրամիտ ժողովրդեանն զյարութիւնն *ննջեցելոցն* ի բազումս բաժանեաց. - 717. Առաքեալն պօղոս ո՛չ զայն ասէ թէ յապաղելով լինի յարութիւնն, այլ զկարգն ցուցանէ ոչ ժամանել *ննջեցելոցն*: - 717. Նա՛խ՝ եթէ համանգամա՛յն է յարութիւնն ի նոյն կէտն, այլ *ննջեցեալքն* նա՛խ յառնեն և ապա՛ կենդանիքն ընդ նոսա. - 717. ...զի *ննջեցելոցն* միայն մին գործ է. այսինքն յարութիւնն. իսկ կենդանեացն մահն և յարութիւնն. զի նախ մեռանին ի նոյն կէտն և ապա՛ յառնեն: - 717. Դարձեալ՝ կենդանիքն ո՛չ ժամանեն *ննջեցելոցն*, այսինքն նոցա որ մեռեալ են և ի հող փտեալ և փոշիացեալ...: - 717. ...այսպէս և *ննջեցեալք* ամենայն ծեր և տղայ՝ յառնեն ի մի չափ հասակի երեսնամեայ որ է կատարեալ հասակ որպէս ցուցանի յառաջիկայդ: - 721

**ՆՆՋՈՒՄՆ +** Եւ սոյնպէս ածէ ի ներքս զչար խորհուրդսն թէ ի յարթնութեան թէ ի *ննջման*: - 145. Տեսիլն յոհաննու, և *ննջումն* էր ընդ եղբարսն: - 450

**ՆՇԱՆ +** ...այլ երկնային աստեղքն են արարիչք լուսոյ և ժամանակաց. և ի *նշանս* ապագայից. զի յամենայն ուստեք տեսեալ պատրաստեցին մարդիկք. որպէս ասէ գիր, եղիցին լուսատու լինիլ երկրի. ի ժամանակս և ի *նշանս*: - 12. Եւ շարժումն նոցա ո՛չ պատճառէ զչար և զբարիս մարդկան. այլ են պատճառք աւուրց և ժամանակաց և եղանակաց. ծնանելոյ և աճելոյ. և *նշան* ապագայից որպէս ասացաք. այլ *նշանն* ո՛չ է պատճառ չար լինելոյ ումեք կամ բարի: - 12. Այլ և ատելութիւնն դարձուցանէ

զմիտս բազմաց ի հաւատոցն. որպէս ատելութիւն և նախանձ փարիսեցւոցն՝ ո՛չ տային թոյլ հաւատալ ի քրիստոս. թէպէտ տեսանէին զամենայն *նշանսն* զորս առնէր...: - 32. Չորրորդ՝ վասն ոչ ախորժողաց՝ իբր ոչ կարաց անդ *նշանս* առնել վասն անհաւատութեանց նոցա: - 44. Թուի թէ և այս յոչ պատշաճէն ասի զի վնասեալք էին հաւատովք՝ ո՛չ էր պատշաճ անել նոցա *նշանս*: - 44. Բայց կամեցաւ և յայտնեաց զինքն որդի և զհայր՝ ի ձեռն *նշանաց* աշակերտաց իւրոց. որպէս ի պտղոյն ծառն երևի: - 96. Ա՛րդ՝ եթէ զբոլորն ցուցանել *նշան* է սիրոյ հօր, ապա թէ ո՛չ ինչ ցուցանէ ատէ՛ զորդի: - 97. Վեցերորդ՝ այն է՛ արւեստ ըստ բնութեան կարգի. և այս *նշան* ի վեր քան զբնութիւն: - 133. Երբեմն *զնշան* և զարուեստն կոչէ...: - 140. Այլ և ո՛չ տեղի պատահական. թէպէտ ի *նշան* պատւոյ ասին յերկինս. այլ ոչ իբր ի մարմնական տեղւոջ: - 174. Քսաներորդ՝ է՛ ի *նշանս* և ի ժամանակս և յաւուրս և ի տարիս որպէս ասէ գիրն: - 186. Ութերորդ՝ զի *նշան* ժամանակաց է: - 186. Խաւարի՝ մահու՝ և յարութեան է *նշան*: - 186. Ոմանք ասացին ի խաւարմանէ խաչելութեանն է մնացեալ *նշան*: - 187. Զայս արիստոտէլ *նշան* պարզութեան ասէ: - 203. Իսկ այլք ասեն, թէ ի պարզոյ լինի, *նշա՛ն* է խոնաւի. և թէ ի խոնաւ՝ *նշա՛ն* է պարզի: - 203. Այլ է՛ *նշան* փոխելոյ թագաւորաց. պատերազմի. և սովոյ. կամ այլ ինչ խռովութեան երկրի: - 203. Եւ Մէգն՝ այն է, որ մնաց յանձրևահոս ամպոց. վասն այնորիկ մէգն *նշա՛ն* է պարզոյ: - 204. Եւ թէ տկարանաս ի զօրութիւնն աստուծոյ՝ առ մե՛զ ևս զոն քեզ հաստատութեան *նշան* անփուտ փայտ. և անթառամ ծաղիկ. և մշտականաչ սաղարթ. և անթափ պտուղ: - 223. **Նա՛խ՝ զի այնպիսի *նշանք* ո՛չ դնեն հարկ ի մարդն. այլ ցուցանեն զձկտումն բնութեանն ի յայնպիսի իրս**: - 246. Չորրորդ՝ զի բազմաց լինի *նշան* պատահական և ո՛չ բնական: - 246. **Հինգերորդ՝ զի կարէ՛ մարդ ներհակ սովորութեամբ պահօք և աղօթիւք և կրթութեամբ մարմնոյ սանձել յինքեան զայսպիսիս *նշանաց* գործ**: - 246. Վասն որոյ ո՛չ է պարտ ենթադատել զմարդ վատն այսպիսի *նշանաց* երևման: - 246. Իսկ որ հաւասար ի ճակատէն իջանէ ոչ բարձր և ո՛չ ցած, արիութեան և խոհեմութեան է *նշան*: - 247. Իսկ թէ մարդ լինի շանադէմք, և այն ո՛չ է ի խառնուածոյ շանց, այլ *նշան* է հայրենեաց, կամ սպի անձանց: - 267. Քսանևե, Վասն *նշանացն*: - 283. Քառասունևդ, *Նշան* կենդանեաց սրբոց: - 284. Եւ թէ՝ մեծ էր *նշանն* քրիստոսի որ հոգւոցն արար, քան զմովսէսին որ մարմնոց: - 285. Եօթներորդ՝ *նշանն* որ եղաւ չսպանանել զնա: - 287. **Երրորդ՝ *նշանն* սրբոյն յակոբայ մծբնայ հայրապետին. և գեօղն արկուռի՝ ուր տնկեաց այգի. և քաղաքն նախիջևան, ուր ինքն նոյ հանգուցեալ է ի տապանի**: - 295. Եւ սահման կոչէ զլեզուս որ բաժանէ՛ ի միմեանց զազգս և զազինս. որպէս որք պարսպով և *նշանիւ* սահման դնեն և զանդս բաժանեն: - 298. Չորրորդ՝ նոր չարիս գործեցին, խիստ և առաւել պատուհասեցան. որպէս և կայեն. զի *նշան* լիցին աշխարհի ահի՛ և երկիւղի: - 303. Վեցերորդ՝ իսահակ նախկին էր կատարումն ուխտի ը օրեայ *նշանին*: - 305. Չորրորդ՝ սայլիւք իջին, և *նշանօք* և արուեստիւք ելին: - 314. Եւ յանւանէն և ի *նշանացն* քրիստոսի փաղչի շողոքորթն սատանայ: - 316. Երկրորդ՝ ի *նշան* քաղցրութեանն յորայ. ուստի իջանեն անձրևք: - 326. Նախ գիտելի է, զի գ *նշան* տայ մովսէս ի դէմս սրբոյ Երրորդութեանն: - 332. Այլ զի տեսանօղքն զարհուրեալք ի ճշմարիտ *նշանիցն* մովսէսի՝ առ աչօք թուէր թէ և կախարդքն այնպէս առնէին: - 335. Եւ զպղինձն ի բուրվառացն կորխեանց մծ իցն. յորմէ արար զնուարտանն ծածկոյթ պղնձի սեղանոյն. *նշան* յանդգնութեան նոցա: - 344. Եւ թէ սպիտակէ՛ր, խաղաղութեան էր *նշան*: - 349. Երկրորդ՝ զի դէմ յանդիման եւտես զտէր և *նշան* լուսոյն մնաց ի տեսութիւնն: - 352. Եւ *նշան* սրբոյն և պղծոյն ըստ օրինացն ասացաւ ի վերոյ: - 366. Եւ երին աջոյ՛ իւր քահանային, ի *նշան* աջեա՛յ գործոցն նորա: - 367. Չորրորդ՝ *նշան* պատկառելի է ծերութիւն. որ զհին աւուրցն տպաւորէ՛: - 378. Վասն է՞ր *զնշան* ընտրութեան ի բուրվառս և ի գաւազանս տայ: - 382. Վասն է՞ր թոյլ տայ աստուած լինիլ այսոցիկ *նշանաց*: - 388. Եւ յայտնի *նշան* մոլորութեան նոցա ա՛յս է, զի այնպիսեացն կատարօղք վատթարք են գործովք և մոլի. և առ դևս տանին զմարդիկք բռնութեամբ...: - 389. Նա՛խ՝ զօրաւոր *նշանք* և արուեստքն յեգիպտոս: - 395. Առաջինն ի դէմս *նշանացն* մովսէսի: - 395. Չորրորդն՝ ի դէմս *նշանացն* աստուծոյ: - 395. Վասն է՞ր հասարակաց արարիչն զազգս հրէից միայն սիրեաց այնպիսի օրինօք՝ *նշանօք* և այլն...: - 398. Զի՞նչ է *նշան* մարգարէին որ ասէ, «մարգարէ յարուցէ ձեզ իբրև զիս նմա՛ լուիջիք»: - 399. Աստ գ *նշան* դնէ մարգարէին որ ճշմարտապէս զքրիստոս տէր մեր ցուցանէ: - 399. Չորրորդ՝ *նշան* թէ՝ զոր ասէ և լինի. և տէր մեր զգործս աստուծոյ գործէր առ կաղս և կոյրս և հիւանդս և մեռեալս. զոր ասէր բանիւ՝ կատարէր գործով: - 399. Եւ զի զայս ամենայն վկայութիւնս *նշանի* տեսին աչօք և լսեցին ականջօք և ո՛չ հաւատացին. վասն այն վրէժ խնդրեաց աստուած ի նոցանէ...: - 400. Այլ տե՛ս յայտնապէս, զի զայսպիսի *նշան* վկայութեան ո՛չ

ունէին յուդաս և դնդաս. և ո՛չ նեռն ունելոց է դերաքրիստոսն. վասն որոյ ո՛չ են մարգարէ, այլ մոլորեցուցիչք և չարք: - 400. Մովսէս *Նշան* կատարեաց մեծամեծ. նոյնպէս և ա՛յլ մարգարէք. փրկչին մերոյ ո՞րն է առաւել քան զնոցայն: - 411. Մարմնական *Նշանըն* զոր կատարէր՝ չէ՛ր պակաս քան զնոցայն: - 411. Եւ հաւատն հաւատացելոց *Նշան* և զանազանօղ: - 418. Երկոտասաներորդ՝ նա՛ ապրեցոյց զռահաբ կարմիր *Նշանաւ*: - 418. Գեղմն և ցօղն մի էր. բայց *Նշանն* կրկին: - 421. Վաքսունն՝ **գ** տասն է. *Նշան* նոցա՝ որք զԺ բանեան օրէնսն կատարեն ի զ դար կենցաղոյս. այսինքն ի տղայութենէ մինչ ի մահ. նոքա թագուհիք և ժառա՛նգ են արքայութեանն: - 440. Զի՞նչ էր *Նշանք* սամեայ մարգարէի առ սեղանն րոբովամու: - 442. Եւ կամ *Նշան* խնդրել. և կամ զաստուած հարցանել և ապա՛ գնալ: - 443. Եւ այս է *Նշանն*, եթէ տեսցես զվերանալն իմ, ապա լինի՛ պատիժ նոցա. ապա թէ ոչ տեսցես՝ չեն արժանի պատժոց. այլ շնորհքն խնայէ՛ ի նոսա: - 445. Եւ սքանչելիք յղութեանն և *Նշանացն* քրիստոսի: - 454. *Նշանք* խաչելութեանն. և խաւարումն լուսաւորացն: - 454. Դարձեալ վասն *Նշանացն* քրիստոսի ասեն վարդապետք այսպէս: - 471. Յորում աւուր *Նշանք* սքանչելեաց եղեն: - 485. Առաջինն է խոնարհումն գլխոյն. ի համբոյր և ի *Նշան* հաշտութեան մերոյ: - 489. Երկրորդն է՛ տարածումն բազկացն ի գիրկ արկանել. և *Նշան* ընդունելոյ զդարձեալսն ի մեղաց: - 489. Երրորդն է՛ բացումն կողին. ի *Նշան* ամէնառատ գնոջ փրկութեան մերոյ: - 489. Վեցերորդն է մերկացումն մարմնոյն. ի *Նշան* խոստովանութեան մերոյ որ պարտ է լինիլ մերկապարանոց: - 489. Եօթներորդն է բարձումն խաչին. ի *Նշան* հետևելոյ մեզ նմին: - 489. Ութերորդն է թագիլն փշեղէն պսակօք. ի *Նշան* փառաւորութեան մերոյ: - 489. Քանի՞ եղեն *Նշանք* ի խաչելութեանն: - 490. Քանի՞ են *Նշանք* ի խաւարիլն: - 490. Եւ *Նշանն* ռախաբ պոռնկի: - 494. Վասն է՞ր նախ քան զխաչն և զհամբարձումն ոչ պարգևեցաւ հոգին սուրբ երևելի *Նշանօք:* - 521. Քսանգ, Վասն սիրոյ և սահմանի նորա և *Նշանաց* նորա, և աստիճանացն և այլոցն: - 526. Երեսունևե, Պսակի և *Նշանի*. և կատարումն ի պսակն. և շաղկապ պսակին: - 526. Եւ նա՛ խնդրեաց յաստուծոյ զիջումն լուսոյն ի *Նշան* յարութեանն քրիստոսի: - 549. Երրորդ՝ միով մատամբ *զՆշանն* դրոշմել: - 553. Վասն զի արեգակն արդարության քրիստոս հայրական փառօք և աստուածագումար դասուք և կարապետեալ աստուածային *Նշանն* անտի գալոց է...: - 555. Ապա *Նշան* ընտրելոցն է խոնարհութիւնն. և անարգանացն է ամբարտաւանութիւնն: - 569. Երբեմն զնշանակ սիրոյն. ըստ այսմ որ ասէ՝ «մեծագոյն սէր ո՛չ ոք ունիցի». այսինքն մեծ *Նշան* սիրոյ: - 575. Զի՞նչ է *Նշանք* սիրոյ: - 575. Զի՞նչ է *Նշան* կատարեալ Սիրոյ: - 576. Երրորդ՝ է՛ յայտնագոյն *Նշան* սիրոյ. զի է՛ ընդ դէմ շարժման բնութեանն: - 577. Յանձա՛ր է ճանաչել զփրկութեան *Նշանն*. յորմէ ասաց տէր «որ ունիցի ականջս լսելոյ լուիցէ»: - 582. Եւ դնէ զայս քահանայն սուրբ մեռոնաւն ի ճակատ նուիրելոյն ասելով այսպէս. ըստ այլազգաց եկեղեցեաց. թէ ի ներքոյ ձևիս այս ես կու նշանեմ զքեզ *Նշանաւ* խաչի...: - 593. Իսկ թէ վասն է՞ր դնի *Նշան*: - 609. **Նոյնպէս և *Նշանն* պսակին ծաղիկն է:** - 609. Նոյնպէս և նախ *Նշան* դնի հարսին: - 610. ...որպէս նոքա որ զդեղ մահու խառնեն. վասն որոյ *Նշանաւ* խաչին կնքեմք զնոսա, զի փախիցեն դևքն: - 654. Զայս սովորութեամբ առնեն զոր չէ՛ պարտ. զի յուսահատութեան է *Նշան* և հեթանոսաց գործ: - 656. Քսանևթ, Վասն գալստեան. և *Նշանացն* նորին. և կատարածի իրոյն: - 661. Գօտի ի մէջն, ի *Նշան* արիութեան: - 674. Եւ խաչն բարձրացեալ զի *Նշան* խաչին քրիստոսի յայնժամ ընդ երկնիւք ծագեսցէ և զչորս կողմ աշխարհի լցուսցէ: - 676. ...հաւատն *Նշան* է նոցա, և բարի գործքն զարդ. և մահն ի հարսանիս ընթանալ. - 681. Արդ այժմ ի մկրտութիւնն հաւատն *Նշան* դնի հարսին. և յետ մահու յուսով կոչի ի հարսանիս. և յետ յարութեանն սիրով միաւորի ընդ փեսային: - 693. Երկրորդ՝ *Նշան* իմն գոյ առանձնակի ի խառնուածոյ դիմացն: - 719. Եւ *Նշանս* այս անքակտելի՛ է ի հոգւոյն և ի մարմնոյն խառնեալ. և յորժամ բաժանի հոգին՝ սա ո՛չ բաժանի ի հոգւոյն և ո՛չ լուծանի ընդ մարմնոյն: - 719. Եւ թէպէտ մարմինն փոփոխի հասակաւ կամ հիւանդութեամբ, կամ մեղօք հոգին հիւանդանայ. դիմաւոր *Նշանս* այս անփոփոխ մնայ: - 719. Եւ այսու *Նշանաւ* ճանաչեաց հոգի մեծատանն զհոգին աբրահամու և զղազարու ի գոգ նորա հանգուցեալ: - 719. Իսկ *Նշանս* այս անմարմին է և մնացական և ծածուկ, ինքեանց միա՛յն գիտելի: - 719. Զոր օրինակ *Նշան* դրոշմի կայ ի մէջ քո՝ և անասնոյն՝ և տանն. զի ելեալ ի տանէ երթայ խառնի ի հասարակ նախիրն...: - 719. ...և ի դառնալն այսու *Նշանաւս* ճանաչէ զքեզ և զտունն. և դու ճանաչես քո դրոշմիւն զնա: - 719. Զի՞նչ է *Նշան* գալստեան փրկչին: - 730. *Նշան* բազում ետ քրիստոս իւրոյ գալստեանն: - 730. Յինգերորդ, զի եղիցին *Նշանք* մեծամեծք և արհաւիրք յերկինս և յերկիր և ի ծովս: - 730. Իններորդ, է՛ *Նշան* ամենեցուն ժողովիլն...: - 730. Զի՞նչ լինին բազմութիւնք *Նշանաց* խաչին: - 732. **Նիւթ *Նշանացս* է՛ բազում և զանազան. այլ զօրութիւն և ձևն**

**մի և նոյն է խաչին**: - 732. ...այսինքն յորժամ զճառագայթ բազում *նշանացս* առ ինքն ժողովէ խաչն սուրբ՝ յայնժամ ամենայն կարծիք լուծանին: - 732. Արդ նա՛ որ զամենայն գերեզման կնքեալ պահէ, զեկեղեցիս օրհնէ՛ և հաստատէ՛ և ամենեցուն զօրաւիգն է ի փորձութիւնս, կարօ՛ղ է անապական լինիլ. զի աստուածային է *նշան:* - 733. **Արդ նա՛ որ զամենայն գերեզման կնքեալ պահէ, զեկեղեցիս օրհնէ՛ և հաստատէ՛ և ամենեցուն զօրաւիգն է ի փորձութիւնս, կարօ՛ղ է անապական լինիլ. զի աստուածային է** *նշան:* - 733. **Իններորդ՝ զի դևք հալածական լինին ի զօրութենէ աստուածեան** ***նշանին*. և հրեշտակք սպասաւորեն նմա**...: - 734. Տասներորդ՝ զի զսա՛ ետ մեզ *նշան* տէր իւրոյ գալստեանն. ըստ որում, «ապա՛ երևեսցի *նշան* որդւոյ մարդոյ յերկինս»: - 734. Եւ այս ո՛չ թէ լոյս միայն է. զի զլոյսն ո՛չ ետ մեզ *նշան*. այլ զխաչն փայտեղէն յորոյ վերայ զծեռն իւր տարածեաց միածին բանն: - 734. Որպէս յորժամ կայսր մտեալ ի քաղաք՝ թագ և այլ *նշանք* առաջի տարցին, որով գալուստ նորա ցուցանիցի: - 734

**ՆՇԱՆԱԳԷՏ +** Վհուկն ա՛յն է, որ ի վհաց և յանդնդոց մեռեալս կերպարանէ. դևք ի կերպս մարդկան երևին. զոր դևակոչ ասեն և հազիմաթ. և *Նշանագէտ*, որ ի գերեզմանս ննջէ և նշանաւոր մարդ կերպարանէ. որպէս զսամուէլ սաւուղայ երևեցոյց հարցուկ կինն: - 388

**ՆՇԱՆԱԳԻՐ +** Ոմանք **իբ** ասեն ըստ *նշանագրացն* եբրայեցւոց. և այլք **իդ** ըստ ժամուց աւուրցն: - 226

**ՆՇԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ** - Եւ գիտելի է, զի պսակն սկսանի ի *նշանադրութիւնն*...: - 609

**ՆՇԱՆԱԿ +** Նախ՝ աստուածաբանն գրիգոր՝ զոտքն մարմնով տնօրէնութեանն ասէ *նշանակ*. զի մարմնով եկեալ զփրկութիւն մեր արար. և մարմնով համբարձաւ առ հայր: - 130. Ութերորդ՝ անդ երևումն և ո՛չ ինչ *նշանակ*: - 133. Իսկ աստ երեւումն, և *նշանակ* հանդերձելոյ իրողութեանց: - 133. Եւ ներքին և վերին կողմամբն լինի **զ** կողմ. առաջին զօրեայ ստեղծմանն *նշանակ:* - 293. Երկրորդ՝ արիւնն և շունչն հոգւոյն է *նշանակ*. և հոգին անմահ է: - 295. Երկրորդ՝ զի աբրահամ յետոյ պատարագեաց կենդանիս. որ էր *նշանակ* ժամանակեայ պատարագին ահարօնի: - 300. Այլ մելքիսեդեկին էր *նշանակ* յաւիտենական պատարագին քրիստոսի ի տեսակ հացի և գինւոյ: - 301. Յինգերորդ՝ *նշանակ* ահագին դատաստանացն աստուծոյ...: - 303. Նա՛խ՝ մորենին է՛ *նշանակ* ժողովրդեանն իսրայէլի յեգիպտոս, որ վառեալ տանջիւր և ո՛չ սպառիւր. այլ առաւելոյր օրհնութեամբն աստուծոյ: - 331. Եօթներորդ՝ զաւազանն *նշանա՛կ* է խրատու և արդարութեան: - 332. Առաւօտն *նշանա՛կ* է աստ պատարագելոյն զքրիստոս: - 346. Նախ *նշանա՛կ* էր լուսաւորա՛ցդ երկնից որ ի հարաւ ընթանան: - 346. Եւ դարձեալ՝ նաշիհն է՛ *նշանակ* խոնարհ մարմնոյ մաքրութեան. և խունկն առաքինութեան հոգւոյ. և իւղն զուարթութեան մտաց: - 357. Նաշիհ և իւղ զանգեալ և ո՛չ եփեալ, *նշանա՛կ* է նոցա՝ որ ի փորձութիւնս մտեալ և փուքով ելեալ ի ծեռն աղօթից...: - 357. Այծն՝ մեղաւորա՛ցն է *նշանակ*. որք դառնան ի մեղաց և նւիրին աստուծոյ: - 358. Եւ զարիւնն հեղուլ շուրջ զսեղանովն. որ է կենդանութեան *նշանակ*: - 360. Այլ և *նշանակ* արիական համբերութեանն մերոյ: - 360. Նա՛խ՝ պարտ է զի լիցի օրհնեալ աղիւ. որ է՛ *նշանակ* իմաստութեան և սրբութեան: - 366. Եօթներորդ՝ քածաւարին. այլամազն խառնեալ. զանազան բարուց *նշանակ:* - 371. Երկոտասաներորդ՝ փօշտանկն. որ հատեա՛լ է աղիքն և ի դուր թափեալ. *նշանակ* հոգեկան ցաւոց ի մարմինն երևեալ: - 371. Երրորդ՝ *նշանա՛կ* են սրբոցն տօնից: - 374. Դարձեալ՝ չորրորդ մասն դորակին *նշանակ* չորից առաքինութեանց: - 374-375. Տասներորդ, որպէս ասէ փիլոն՝ *նշանակ* հեշտ ցանկութեան է օձն...: - 387. Գլուխն *նշանա՛կ* է մտաց. զոր չէ պարտ յաւելուլ՝ և ո՛չ պակասել. որպէս մուրճ ո՛չ գործէր ի սեղանն զի մի՛ պղծեսցի: - 390. Ա՛րդ՝ եգիպտոս է՛ *նշանակ* երկրիս այս. և ծովն կենցաղոյս. և անապատն կայանք հոգւոցն: - 393. Չորրորդ՝ ծեռն գործոց է *նշանակ*, և բազուկն զօրութեան զի անաշխատ գործէ: - 395. Երեք *նշանակաւ* է օրհնելն զաստուած: - 406. Կործանեաց զերիքով ի *նշանակ* դժոխոցն: - 414. Եւ կէս գետոյն բաժանեալ և մտեալ ի ծովն աղի. *նշանակ* կորստեան մեղաւորաց և անհաւատից ի յատակս դժոխոց: - 414-415. *Նշանակ* եօթնարփեան հոգւոյն ընկալեալ անկարօտաբար իբր ի գլուխ տէր մեր, և պարգևեալ անդամոց իւրոց: - 422. Չորրորդ՝ *նշանակ* իմանալւոյն դագոնայ, որ զգլուխ իւր ամբարծ ընդ դէմ աստուծոյ. և ընդ բռամբ էարկ և կոխեաց զմարդկային ազգ. զորս խորտակեաց տէր մեր: - 426. Սեղան ողջակիզացն, և սեղան սրբութեանցն և սեղան խնկոցն. ամենայն քառակուսի *նշանա՛կ* են քառաթև խաչին յիսուսի: - 494. Երբեմն *զնշանակ* սիրոյն. ըստ այսմ որ ասէ՝ «մեծագոյն սէր ո՛չ ոք ունիցի». այսինքն մեծ նշան սիրոյ: - 575. Երկրորդ, զի այս խորհրդոյ *նշանակ* ի սկզբան արարածոց աստուած ադամայ ետ և ո՛չ կնոջն. յորժամ էած զկենդանիսն առ ադամ զի անունս դիցէ նոցա: - 589. Նա՛խ՝ զի մարմնաւոր ծնունդն *նշանա՛կ* է հոգևոր ծննդեանն. և որպէս մի է մարմնաւոր ծնունդն, այսպէս մի է և հոգևորն: - 590. Եւ թէ ասեն՝

հաղորդութիւնն *նշանա՛կ* է մահուն Քրիստոսի յորմէ ել արիւն և ջուր: - 596. Եւ ա՛յն էր *նշանակ* չւելոյ բանակին կամ ժողովելոյ իշխանացն. կամ ամսամտից և այլ տօնից նոցա: - 618. Համբարձումն ձեռաց սրբութեամբ աւետարանին, *նշանակ* գործոց բարեաց որով փառաւորի աստուած: - 628. Այլ և հանգստեան ասեմք. *նշանակ* առ հասարակ յարութեանն. ննջեցելոցն մեր մաղթանք: - 642. Որ և զանազան նկարքն՝ զանազան շնորհաց հոգւոյն *նշանակք:* - 646. Դարձեալ՝ *նշանակ* խաչին. և քրիստոս ի վերայ նորա խաչիւն քարոզեալ: - 646. Իսկ շաբաթապահքն բազում ունի *նշանակ:* - 653. Նախ կոչի աթոռ *նշանակ* հանգստեան. որպէս հասարակաց մարդկան: - 736. Երկրորդ՝ աթոռ թագաւորական ի *նշանակ* բարձրութեան: - 736. Երրորդ՝ աթոռ դատողական ի *նշանակ* ուղղութեան: - 736

**ՆՇԱՆԱԿԱՆ +** Երրորդ՝ *նշանական:* - 122. Երրորդն է *նշանական* աստուածաբանութիւն. որ ի զգալի կերպարանաց փոխակցիմք յիմանալի տեսութիւնն. թէ զի՞նչ նշանակէ մարդ երևելին. կամ առիւծ. գառն. հուր. լոյս. և այլն: - 122

**ՆՇԱՆԱԿԱՒ +** Երկրորդ՝ զի խորհրդով և ծածո՛ւկ է. և ո՛չ առակաւ և *նշանակաւ*. որպէս այլ աստուածաբանութիւնքն որպէս ասացաւ ի վերոյ: - 123. Եւ այս է *նշանակաւ* աստուածաբանութիւնն: - 123. Եւ երրորդն որ է *նշանակաւ*, ա՛յլ առաւել և ընդարձակ և բազմաբա՛ն է. վասն զի խառնի ի զգալիսս. որ բազո՛ւմ է և բաժանեալ: - 123

**ՆՇԱՆԱԿԵՄ +** Զորօրինակ՝ ի կենդանեաց բազումք *նշանակեն* զլինելոց իրաց...: - 12. Այլ զայս երկբայիս յաղագս ոչ գիտելոյ քոյ թէ «մինչդ» ամենուրէք ո՛չ որոշէ ընդդէմ հանդերձելոյն. զի թէպէտ *նշանակէ՛* զկէտն ուր մինչն է եղեալ, այլ զոր ա՛նդր է քան զնա՝ ո՛չ ուրանայ: - 42. Այս ո՛չ թէ ունիլ զկիրս *նշանակէ* յաստուած, այլ զպատիժ վասն գործոյ յանցաւորացն: - 60. Առ եօթներորդն ասեմք, եթէ՝ մատն աստուծոյ երբեմն *նշանակէ* զերրորդութիւն անձանցն...: - 62. Իսկ եղևս այս՝ *նշանակէ* զմիաւորութիւն բանին և մարմնոյն: - 72. Տասներորդ՝ դերանուանքն որպէս ես. դու. նա՛. յատկապէս զմի անձն *նշանակեն:* - 73. Որպէս հոմանուն ձայն ի զանազան *նշանակեալս:* - 87. Եւ դարձեալ՝ քրիստոսն անուն զմիաւորութիւնն *նշանակէ* երկուց բնութեանց...: - 95. Նմանապէս և հասարակն թէպէտ բազում է, այլ երկոտասան գլխով *նշանակի*...: - 105. Գիտելի է, զի հին ասելով՝ զյաւիտեանն *նշանակէ*. և օր զժամանակն: - 115. Որ *նշանակէ* հին աւուրց զծերն. և մանուկ զանծերանալին: - 115. Նախ՝ *նշանակէ* ծերն՝ զի սկիզբն է ամենայնի: - 115. Երկրորդ՝ ծերն *նշանակէ* զանսկիզբն գոլն. և մանուկն զանվախճանն. զնոյն միմեամբք՝ և ո՛չ այլ և այլ: - 115. Երրորդ՝ այսպէս մեկնեն, եթէ հին աւուրց զնախնի ժամանակս *նշանակէ*. և մանուկն զնախնի թիւն...: - 115. Եւ *նշանակէ* ծերն զժամանակաւ նախն: - 115. Ապա յա՛յտ է զի հին աւուրցն *նշանակէ* նախ քան զժամանակ և զյաւիտեան. և բարձրագոյն և արարիչ ժամանակի և յաւիտենի. և պարունակօղ յաւիտենի. որպէս յաւիտեանն ժամանակի: - 115. Եւ յորժամ ասեմք ունայնանալ, զառաւել զօրութիւնն *նշանակէ:* - 118. Նոյնպէս և աննիւտ և անզգայ ասելն՝ զգերազանցն *նշանակէ:* - 118. Երրորդն է նշանական աստուածաբանութիւն. որ ի զգալի կերպարանաց փոխակցիմք յիմանալի տեսութիւնն. թէ զի՞նչ *նշանակէ* մարդ երևելին. կամ առիւծ. գառն. հուր. լոյս. և այլն: - 122. Երրորդ՝ կրկին ոտքն զհոգի և զմարմին *նշանակէ:* - 130. Իններորդ՝ զի *նշանակեալքն* վայրիք գազանք՝ հրեղէնք՝ և թևաւորք երևէին...: - 132. Նախ՝ զբնական որակութիւն երկնայնոցն *նշանակէ*. այսինքն Մարդն զբանն: - 132. Չորրորդ՝ *նշանակեն* զտըռնօրէնութիւն փրկչին: - 132. Հինգերորդ՝ *նշանակէ* զչորեսին աւետարանիչքն...: - 132-133. Առիւծն թագաւորական՝ *նշանակէ՛* զյոհաննէս. ի սկզբանէ՛ զբանն աստուած և թագաւոր յաւիտենից ցուցեալ: - 133. Վասն որոյ այսպէս ասեն զկարգ դասուցն. և սոցա տարածայնութիւն զհամահաւասարութիւն դասուցն *նշանակեն:* - 135. Զի՞նչ *նշանակէ* շնորհն: - 139. Վասն որոյ ասէ ռք հազարաց և բիւրք բիւրուց, ո՛չ զորքանն *նշանակէ*, այլ զանբաւն: - 141. Ամպ՝ զբարձրութիւնն *նշանակէ* ի վերայ այլոց. և Դարձեալ՝ ամպ զմարգարէսն. իբր հրամանատո՛ւ լինիլ մարգարէիցն: - 148. Եւ դարձեալ, ամպ զերկինս *նշանակէ*. զի ոմանք օդեղէն ասեն զերկինս: - 148. Եւ **Ծ** կատարեալ թիւ է. *նշանակէ՛* զկատարեալ զօրութիւնս թշնամւոյն որով կռուի ընդ մեզ. զոր նշանակեն եղջիւրքն: - 151. Եւ **Ծ** կատարեալ թիւ է. նշանակէ՛ զկատարեալ զօրութիւնս թշնամւոյն որով կռուի ընդ մեզ. զոր *նշանակեն* եղջիւրքն: - 151. Եօթն խոյրն զդիւական ներգործութիւնսն *նշանակէ*. որովք յաղթէ՛ զմարդ և պսակի: - 152. Իսկ «տուտն», Նախ՝ *նշանակէ* զվերջին հետեւեալսն ընդ նմա. զի նա առաջին ինքնագիւտ էր ի չարն. և այլքն հետևեցան նմա: - 152. *Նշանակէ* զհետևեալսն ի մահ և ի դժոխս քարշել և արկանել: - 152. Չորրորդ՝ տուտն *նշանակէ* զսեռն. որ ի վերջին ժամանակս բռնանայ և քարշէ՛ զերրորդ մասն աստեղաց: - 152. Տասներորդ՝ զանկեղծ սէրն *նշանակէ* զոր ունին առ քրիստոս...: - 159.

Թէպէտ ուր ուրէք զհանգիստ *Նշանակելով* նստիլ ասի աստուծոյ, և ի յօգնութիւն ժամանել: - 172. էութիւն և բնութիւն մի են որպէս մարդկութիւն. այլ էութիւնն երբեմն *Նշանակէ* զանձն որ ա՛ստ է և այժմ. իսկ բնութիւնն ո՛չ: - 174. Նա՛խ՝ *Նշանակէ* զաստուածութիւնն երեք անձինք ի միում բնութեան: - 178. Նոյնպէս և *Նշանակէ՛* զհրեշտակաց բնութիւնն...: -192. Ութերորդ՝ *Նշանակէ* վեց թիւն որ է՛ կատարեալ՝ թէ բոլոր կատարելութիւն աշխարհիս ի յաստուծոյ է ստեղծեալ. երկինք և երկիր՝ և ամենայն ինչ: - 192-193. Իններորդ՝ ի վեց օրն ստեղծեալ աշխարհ. *Նշանակէ՛* **զզ** դարս. որով մնայ աշխարհ: - 193. Տասներորդ՝ **զ** թիւն *Նշանակէ* զժամանակս բարեգործութեան. այլ շաբաթն ուր հանգեաւ աստուած՝ զհանգիստն յաւիտենական: - 193. Չորրորդ՝ *Նշանակէ՛* զփութանցութիւն աւուրցս մեր. զի ամենայն ժամանակք մեր անցանեն իբրև զմի օր անզգայաբար: - 193. Վեցերորդ՝ ամպն զծածուկ և զանգիտութիւն *Նշանակէ՛:* - 206. Երրորդ՝ զառատ բազմութիւնն *Նշանակէ:* - 212. *Նշանակեն* զնոսա՝ որք ունին զպտուղս բարի գործոց. և զծաղիկն հաւատոյ. և զհոտ գիտութեան՝ ամենայն մարդկան անոյշ: - 212. *Նշանակեն* սոքա զչորս դասս մարդկան: - 215. Ի *Նշանակել*՝ զի մահու մարդոյն՝ սկիզբն օձն եղև: - 219. Երրորդ՝ ի նոյն իսկ ի ձևոյ շինուածոյ մարդոյն. զի ուղիղ գոլով՝ զիշխանականն *Նշանակէ*. իսկ կենդանիքն կո՛ր գլխով զծառայականն ցուցանեն: - 220. Չորրորդ՝ հողն զխոնարհութիւն *Նշանակէ*. որպէս աբրահամ ասէր...: - 229. Հինգերորդ՝ զի հողն ապականացո՛ւ է, զապականութիւն մարմնոյս մեր *Նշանակէ:* - 229. Երկրորդ՝ *Նշանակէ*, զի առինչ է արարածս արարչին, ըստ այսմ նման են. և զի ա՛յլ են և զատեալք յարարչէն, ըստ այսմ աննմանք: - 237. Երկրորդ՝ ցուցմամբ. զի տեսանելն զհաւատն *Նշանակէ* որ է հաստատ. և լսելն զուսումն ճարտարութեան: - 239. Թէ կամարաձևն դէպ ի քունն է, *Նշանակէ* զհեղգն: - 246. Աչք որպէս զպայծառ շիտ լուսաւոր՝ *Նշանակէ՛* զհամեստն: - 246. Եղունգն յոյժ կարճ՝ *Նշանակէ* զչարակամն: - 247. Եւ առ հասարակ ասեմ զայս դնել ի մտի. զի չափաւորութիւն անդամոցն ըստ ձևոյն և ըստ գունոյն և ըստ քանակութեան և ըստ կազուածոյն և ըստ շարժմանն, *Նշանակէ* զբարի մտացն ընդաբոյս յարմարութիւնն: - 248. Իսկ որ ի **զ** օրն ասեմք ստեղծեալ զարարածս, այս զկարգ և զդասն *Նշանակէ* մի քան զմի յետոյ. այլ ստեղծումն համանգամայն եղև: - 253. Պատասխանեմք առ այս եթէ՝ փչումն ո՛չ զբանական հոգին ասեն սուրբ հարքն. զի մարդ ասելով զհոգի և զմարմին *Նշանակեաց*. և զմարմինն զի ի նիւթո՛յ է՝ ի հողոյ ասաց. այսինքն ի **դ** տարերաց որ է՛ ի հողն. և զհոգին ո՛չ *Նշանակեաց* թէ ուստի՞ է. զի յանէից է ստեղծումն նորա: - 253. Զայս կարգ պահէ՛ և ի զարգացման հասակին. զի մինչև ցեօթն ամն ատամն բուսանելով և փոփոխելով՝ *Նշանակէ՛* զկերակրականն: - 267. Իսկ *Նշանակէ* նախ զժամանակն. զի անցեալն և հանդերձեալն ո՛չ է ի միջի այլ ներկայն: - 267. Զայս *Նշանակեն:* - 271. Եօթներորդ՝ զի պարունակածն է կողն. ի *Նշանակել*, զի կինն պարունակիչ և հաւաքիչ է տան առն և ընչից: - 276. Իններորդ՝ կին, *Նշանակէ* զթոյլն և զտկարն: - 276. Դարձեալ՝ ի սուրբ գիրս է՛ ուրեք որ զբարերարելն աստուծոյ *Նշանակէ՝* հրամայել ասէ: - 277. Նախ՝ առ ի *Նշանակել* զանձնիշխանութիւն մարդոյն. իբր թէ ունի կարողութիւն պահել և ո՛չ պահել: - 277. Երրորդ՝ ի *Նշանակել* զսէր և զհնազանդութիւն մարդոյն: - 277. Այլ մորթ մաշկեղէն ստեղծեաց և զգեցոյց նմա փոխանակ լուսեղէն զարդուն. զմեռելութիւն նորա *Նշանակելով:* - 280. Եօթներորդ՝ վասն *Նշանակելոյ* զսուգ կամ զուրախութիւն: - 281. Իսկ մաշկն որ է՛ մորթ մեռելոյ, *Նշանակէ՛* նախ զսուգ և զտրտմութիւն վասն մեղաց: - 281. Իսկ այն որ ինքն զգեցուցանէ, *Նշանակէ՛* զինքնազգեստ փառս անմահութեան, զոր այժմ զգեցոյց քրիստոս շնորհօք, և յետ յարութեանն զգեցուցանէ փառօք: - 281. Ըստ իրին *Նշանակէր* զշնորհաց հոգին...: - 282. Այսպէս մշակեղէն հանդերձն *Նշանակէ՛* զտխրալի և ախտաւոր մարմինս: - 282. ...մաշկեղէն հանդերձին ցուցմամբն *Նշանակէ՛* զմարմինս: - 282. Քառասուն, Զի՞նչ *Նշանակէր* կատարումն պատարագացն: - 284. Վասն զանազան շաբաթուց. որ *Նշանակէ՛* զհանգիստն մեր: - 284. Յիսունք, Զի՞նչ *Նշանակէր* նաշիհն և **դ դ** դորակ գինին՝ ի նորս: - 284. Երկու ցեղ և կէսն մնացին յայնկոյս, թէ զի՞նչ *Նշանակէր:* - 285. Եւ զի՞նչ *Նշանակէր* երկիրն աւետեաց: - 285. Եւ դարձեալ՝ որպէս սահմանն զտեսակս ազգացն *Նշանակէ*. նոյնպէս և լեզուն զիւրաքանչիւր ազգս ցուցանէ: - 298. Չորրորդ՝ *Նշանակէ՛* զիրէայս որ էին անդրանիկ ժողովուրդ խոտեցան. և հեթանոսք կրտսերք ընտրեցան և եղեն անդրանիկ ժորովուրդ աստուծոյ: - 310. Հինգերորդ՝ *Նշանակէ* զկրկին ծնունդս մարդոյ. առաջինն մարմնաւոր և խոտելի. և վերջինն հոգևոր և ընտրելի: - 310. Զա՛յս *Նշանակէ* զանդրանիկն խոտել և զրկտսերն պատւել: - 310. Եօթներորդ՝ *Նշանակէ* թէ բնական և անփոփոխ ո՛չ է անդրանկութիւնն. այլ ստացական և փոփոխական: - 310. Որպէս *Նշանակեցաւ* յեփրեմն և ի մանասէ. որք փոխեցան յաջ և յահեակ: - 310. Գօտին զօրութիւն *Նշանակէ* որ էր ի մէջքն. այլ և ի յաղօթս կայր և գօտեաւ պնդեալ էր: - 311. Ասեմք եթէ՝ է

ասելն ո՛չ զբնութիւն *նշանակէ*, այլ զանսկիզբն և զանվախճան գոլն: - 312. Զա՛յս *նշանակէ* է ասելն և ո՛չ բնութիւն կամ գոյացութիւն: - 312. Եւ զգեստ կոչի մարմինն որ ծածկէ զհոգին. ըստ որում մաշկեղէն հանդերձն ադամայ որ էր արտաքին զգեստ և *նշանակէր* զմարմինն: - 318. Նա՛խ՝ *նշանակէ՛* զպատասխանին. զի պատասխանին կրկին է ի վերայ հարցմանն: - 323. Երկրորդ՝ *նշանակէ՛* զհակառակիլն և զկրկնելն: - 323. Երրորդ՝ զի ծածկոյթ ամպն *նշանակէ՛* զանճառելի բնութիւնն աստուծոյ և զփառսն: - 326. Չորրորդ՝ որոտն և մրրիկն յամպոյն՝ զսպառնալիս բարեկամացն *նշանակէ:* - 326. Իսկ թէ զի՞նչ *նշանակէ:* - 331. Դարձեալ՝ մորենին անարգ թուփ՝ *նշանակէր* զխոնարհութիւնն մովսէսի յոր հանգեաւ աստուած...: - 331. Նա՛խ՝ *նշանակէ* զնոյն ինքն սկզբնաչարն սատանայ. որ էր յերկինս գաւազան ուղղութեան և ընկեցեալ եղև օ՛ձ: - 332. Հինգերորդ՝ *նշանակէ՛* զփարաւոն զվիշապն դառնաշունչ...: - 332. Վեցերորդ՝ *նշանակէ՛* զբանն աստուած գաւազան ուղղութեան և թագաւորութեան առ հայր. եկն նա՛ յերկիր և էառ զօձաձև բնութիւնս մեր. և դարձեալ ըմբռնեալ մարմնովն ել յերկինս և նստաւ ընդ աջմէ հօր: - 332. Հինգերորդ՝ բորոտիլն զմահն եգիպտացւոց *նշանակէր*. և ողջանալն զկենդանանալն որդւոցն իէլի որ ի մահ գրաւեալ էին: - 332. Նա՛խ՝ *նշանակէ* զադամ. որ անմեղ և յըստակ ստեղծաւ, և ի մեղանչելն եղև արիւն զազրալի, և մարմին անհոգի: - 333. Հինգերորդ՝ *նշանակէ* թէ զարիւն տղայոցն չէ մոռացեալ աստուած զոր հեղձուցին ի գետն. զայն ըմպել տայ նոցա: - 333. Վեցերորդ՝ գետն *նշանակէ՛* զբանն աստուած, որ հաղորդիլով ի մեզ՝ եղև մարմին և արիւն. և ետ մեզ ըմպելի զարիւն իւր սուրբ. և կերակուր զմարմինն: - 333. Նա՛խ *նշանակէ՛*, զի ի սիրոյն աստուծոյ ցրտացեալք էին և ի սէր սնոտեացս ջերմացեալք: - 334. Նախ *նշանակէ* զբազմապատիկ չարութիւն նոցա: - 334. *Նշանակէր* զխաւար անմտութեան նոցա որ առաւել էր քան զամենայն երկրի. զի զամենայն գարշ կենդանիս ի պաշտօն առին: - 334. Եւ խսրաէլացւոցն լոյս էր, զաստուածպաշտութիւն նոցա *նշանակէր:* - 334. Նոյնպէս և նշխարք մարմնոյն բոլոր. առ ի *նշանակել* թէ բոլոր պարտ է ունել հաւատ կերողացն: - 339. Եւ գ չափն զհաւատն մեր որ ի սուրբ Երրորդութիւնն է *նշանակէ՛*: - 340. *Նշանակէ* զժողովուրդն որք սրբին աւազանաւն և խառնին ի հաղորդութիւն արեանն քրիստոսի: - 341. Եւ այն որ շուրջ զսեղանովն, *նշանակէ՛* զքահանայս. որ մերձ սեղանոյն որ է՛ քրիստոս՝ միշտ սպասաւորե՛ն և պատերազմին արեամբ չափ ընդ ախտս և ընդ դևս: - 341. Նա՛խ՝ զի մովսէս յայտնապէս զկէս արեանն անապական եհեղ զսեղանովն որ *նշանակէր* զանապական խորհուրդ արեանն...: - 341. Զի՞նչ *նշանակէր* **ժ** փեղկ և ձև խորանին: - 342. Նախ՝ *նշանակէր* զձև աշխարհի: - 343. *Նշանակէ՛* ըստ փիլոնի, զի անմարմինքն մինչև յերեքն հասանին. որպէս երկրաչափքն գրեն նիշ՝ գիծ՝ երևոյթ. ա՛յս է իմանալեացն չափ: - 344. Եւ ծնօտ՝ որ է՛ զիկն բոլորեալ. զիմանալի կերակուրն *նշանակէ* նոցա. զի ծնօտն գործի է կերակրոյ: - 344. Ի յա՛յս միտս յորժամ խաչ նկարեմք, զծագ մատին աջոյ մերձ ի բոյթն առնեմք որ է՛ ի համարն զերրորդ. զկէս զին *նշանակելով:* - 345. Դարձեալ՝ աշտանակն *նշանակէ՛* զեկեղեցի սուրբ: - 347. Դարձեալ՝ **է** ճրագն և **է** բերան ճրագացն որ լինի չորեքտասան, *նշանակէ՛* զչորեքտասան աստիճան հաւատոյն. **է** ի յանմարմին բնութիւն աստուծոյ, և **է** ի տնօրէնութիւն բանին: - 347. Երրորդ՝ զի երևելի սրբութիւն մարմնոյն՝ զաներևոյթ սրբութիւն հոգւոյն *նշանակէր*: - 347. Զի՞նչ *նշանակէր* **բժ**ան ակունքն: - 348. Երես զիսկութիւն աստուածութեանն *նշանակ*...: - 350. Վեցերորդ՝ զհեշտ ցանկութիւն *նշանակէ*...: - 356. Երկրորդ, զհպարտացեալ փառքն *նշանակէ*. զոր ո՛չ է պարտ խառնել ի բարիս: - 356. Աղն կըսկծո՛տ է, *նշանակէ՛* զխրատն: - 356. Դարձեալ՝ աղն *նշանակէ՛* զբանն աստուած. որ զանհամութիւնս մեր համեմեաց, և զնեխեալ վէրքն ապականութեան մերոյ ողջացոյց: - 356. Ա՛րդ՝ մանանայն *նշանակէ՛* զփրկական խորհուրդն ուր ո՛չ է աղ: - 356. Սա՛ փոխեալ ի նորս *նշանակէ՛* զմարմնաւոր նուէրքս. որպէս պահք աղօթք, ողորմութիւն: - 357. Սոքա *նշանակեն* զնահատակսն որք բազում վշտաց և փորձանաց համբերեցին: - 357. *Նշանակէ՛* զմանկունս ընդ ձեռամբ խրատու վարժեալ և կրթեալ: - 357. *Նշանակէ՛* զամենայն զառաջին բարի գործս մեր եթէ ի մարմնոյ և եթէ ի հոգւոյ. և ի մտաց նւիրել աստուծոյ: - 357. Որ *նշանակէ* զքրիստոս արտաքոյ դրանն չարչարեալ: - 358. Երրորդ՝ *նշանակէ՛* թէ իւրաքանչիւր ոք իշխա՛ն է մատուցանել զինքն բանաւոր պատարագ աստուծոյ: - 359-360. Դարձեալ՝ հարաւն *նշանակէր* զիրէայս, և հիւսիս զհեթանոսս. ...: - 360. Գլուխ՝ զմիտքն *նշանակէ*. և Ոտք զվարքն: - 360. Զի՞նչ *նշանակէ* կրկին ողջակէզն ի նորս. որպէս զւարակն և երկու խոյն կատարման: - 362. *Նշանակէ՛* զպատարագիլն քրիստոսի ի սեղան խաչին ի հոտ անուշից հօր և հոգւոյն: - 362. Եօթն՝ *նշանակէ* զէ դար շրջանացն: - 363. Դարձեալ՝ որպէս ծառա՛յ են կենդանիք և սպասաւոր մարդկան. նոյնպէս և յօրինակ ընտրութեան մարդկան ընտրեցան զուրբս և զանսուրբս *նշանակելով* այսպէս: - 364. Բորն *նշանակէ՛* զմեղքն: - 367. *Նշանակէ՛* թէ՝ եթէ ի **է** հասակս

մեղքն առաւելու, գեհեանն այրէ: - 367. Որ *նշանակէ* ի մեզ զերեք մասանց թիւրիլն. այսինքն բանից, ցասման, և ցանկութեան հինգ զգայարանօք: - 367. Կրկին հաւն կենդանի սուրբ՝ *նշանակէ՛* զհոգւոյ և զմարմնոյ կենդանութիւն ի ձեռն ապաշխարութեան: - 368. Դարձեալ՝ կրկին հաւն *նշանակէ՛* զքրիստոս. Փայտն, զխաչն. և Կարմիր արիւնն. զի աստուծոյ է արիւն. և Զոպայն, զհոգին սուրբ: - 368. Որ *նշանակէ՛* սերմն զգործն. որ քանի ի մեզ է՝ ո՛չ է պիղծ. և յորժամ գործի՝ պղծէ՛: - 369. Զի՞նչ *նշանակէր* **բ** նոխազն վիճակ արկեալ: - 369. Նա՛խ՝ կաղ. որ *նշանակէ՛* զկաղալն ի յօրէնս: - 370. Երրորդ՝ ի խորհուրդ պատարագողին. զի նուէրքն զնուիրո՛ղն *նշանակէր:* - 370. Չորրորդ՝ մարմառոտն. որ կաշին պատառեալ և խոց լինի *նշանակէ՛* զխոց մեղաց: - 371. Սակայն հաճելին մեր՝ ընդունելի է աստուծոյ. զառաւել սէրն *նշանակէ*. զի որ ինչ մեզ անպիտան է, և աստուծոյ անպիտան է: - 371. Եօթներորդ՝ ստուերապէս *նշանակէր* զազատութիւնն որ եղև մեզ ի ձեռն քրիստոսի. որ ազատեաց յօրինացն դժւարութեանց, և ի մեղացն, զթողութիւն շնորհելով: - 372. Յոգեպէս *նշանակեն* ի մեզ զ**ե** հանգիստ: - 372. Եօթներորդ՝ տօն տաղաւարահարացն որ *նշանակէ՛* առ մեզ զտօնելն եկեղեցւոյ, ի բոլոր ամն **ը** օր կատարի: - 373. Եւ *նշանակէ՛* ի մեզ զտօն սրբոյ խաչին. զի նա՛ է քաւութիւն մեր: - 373. Այլ ըստ ոմանց՝ տօն քաւութեան որթագործութեանն, *նշանակէ* ի մեզ զտօն մեծ քառասնորդացն պահոց: - 373. Այլ և *նշանակէ՛* զօր մեծի ուրբաթուն չարչարանացն քրիստոսի. որով քաւեցաք ի մեղաց: - 373. Առ տեղեաւն՝ *նշանակէր* զնուազութիւն աւուրցն տօնից ի պակասումն զուարակացն: - 374. Նաշիին, և Իւղն, և Գինին, զի՞նչ *նշանակեն:* - 374. Նա՛խ՝ *նշանակեն* զքրիստոս: - 374. Երկրորդ՝ *նշանակէ՛* զբանաւոր պատարագս մեր. այսինքն զհոգի զմարմին և զմիտս մեր անարատ մատուցեալ: - 374. Դարձեալ՝ այն որ մի քան զմի առաւել են չափով դորակին, *նշանակէ՛* զհաւատն և զյոյսն և զսէրն առաւել: - 375. Իսկ չորրորդ դորակ գինւոյն և իւղոյն ընդ նաշիոյ և գառինն, *նշանակէ՛* զբանաւոր և զկենդանի պատարագս մեր: - 375. Երրորդ՝ արծաթ զբանն *նշանակէ*. որոյ չէ՛ պարտ վասն իրաւանց և քարոզութեան արծաթ առնուլ: - 375. Նա՛խ՝ էպատիկ՝ զբազո՛ւմն *նշանակէ*. իբր թէ ըստ բազում մեղաց մերոց բազում և առաւել է պատուհասն: - 376. Նա՛խ՝ զայս *նշանակէ* թէ ի **ժ** դասուց հրեշտակաց մինն անկաւ, և մարդիկ զտեղի և զթիւ անկելոցն լնուն: - 376. Կապուտն *նշանակէ՛* զխորհուրդ յայտնութեանն քրիստոսի: - 379. Անդրանկաց սատակումն եգիպտոսի, *նշանակէ՛* զանկումն սատանայի յերկնից...: - 380. Զա՛յս *նշանակէ* անդրանկաց փոխումն: - 380. Զի՞նչ *նշանակէր* կարմիր երինջն անարատ և անլուծ: - 383. Կարմիր երինջն *նշանակէ՛* զկոյսն սուրբ: - 383. Դարձեալ՝ մոխիր և ջուրն՝ *նշանակէր* զարտասուս և զխոնարհութիւն ապաշխարութեան որով սրբիմք: - 383. Իններորդ՝ նոքա գործովք արդարացան զոր *նշանակէր* օրէնքն. և մեք հաւատով՝ զոր *նշանակէր* վէմն յետոյ: - 385. Տասներորդ՝ զի զքրիստոսի առաջին գալուստն *նշանակէր* տապանակն և տախտակն և մանանայն և այլն. և զվերջինն՝ վէմն աղբիւրացեալ ի յաւիտենից կեանսն: - 385. Վեցերորդ, մովսէս *նշանակէր* զհին օրէնքն որ բարկութեամբ բարի առնէր: - 386. Երրորդ՝ զայժմույս և զհանդերձելոյն *նշանակէ:* - 387. Զի՞նչ *նշանակէ* որ **բ** ցեղն և կէսն մնացին յայնկոյս յորդանանու և ժառանգեցին, և այլքն անցին ի քանանացիքն: - 390. Նա՛խ՝ *նշանակէ՛* զնահապետսն. **իե** ազգ որ բնական օրինօք արդարացան նախ, և ապա՛ գրաւորն բնականաւն զօրացեալ արդարացոյց զնոսա: - 390. Այլ ոմանք՝ **ճ**աւոր զերկին, և վաթսնաւոր զդրախտն, և երեսնաւոր զերկիրս ասեն *նշանակեալ* **բ** ցեղիցն յայնկոյս յորդանանու, և **թ** ցեղիցն յերկիրն քանանացւոց: - 391. Իսկ **թ** ցեղն *նշանակէ՛* զեկեղեցի նոր օրինացս **թ** աստիճանօք կարգաւորեալ: - 391. Զի՞նչ *նշանակէ* եղիազար քահանայ, և յեսու, և իշխանքն որք բաժանեցին զերկիրն: - 391. Զի՞նչ *նշանակէր* քաղաք ապաստանաց: - 392. Եւ *նշանակէ՛ր* այս, զի է՛ թիւ ժամանակեայ և փոփոխական որ առ մեզ է: - 392. Զի՞նչ *նշանակէ* անապատն մեծ և ահագին: - 393. *Նշանակէ՛* որ չէ՛ պարտ կռուիլ մեզ ընդ ամենայն մարդկան. թէ չար թէ բարի. զի ա՛զգ են մեր և որդիք ադամայ: - 393. *Նշանակէ՛* զկրկին դևսն որ ի խորհուրդս և ի զգայութիւնս պատերազմին: - 393. Նա՛խ՝ մովսէս *նշանակէ՛* զհին օրէնքն. որ մինչ ի մկրտութիւնն եկն և վճարեցաւ: - 394. Երկրորդ՝ *նշանակէ՛* զհոգիս սրբոց. որ տեսանեն զփառս, այլ ի յարութեանն առնուն: - 394. Զնոյնս *նշանակէ* **բ** ցեղն յայնկոյս յորդանանու. որք այլոցն պատերազմակից եղեն, և ապա՛ ի միասին զժառանգութիւնն առին: - 394. Երկրորդ՝ *նշանակէ* զերկրպագութիւնն հրէից. որ յամենայն կողմանց շուրջ յէէմ երկրպագէին: - 395. Զի՞նչ *նշանակէ* երկիրն աւետեաց: - 395. *Նշանակէ* զօրէնս քրիստոնէից այսպէս: - 395. Չորրորդ, *նշանակէ՛* թէ՝ մի՛ ընդ յանցանաց ծնողին չարչարեսցես զզաւակն: - 399. *Նշանակէ՛* անառակ որդին զմարդկային բնութիւնս: - 400. *Նշանակէր* զյարութեան խորհուրդն յոր նոքա ո՛չ հաւատային...: - 402. Երկրորդ՝ *նշանակէր* կրտսեր եղբայրն զքրիստոս զերկրորդն ադամ. որով յառնեն մարդիկ յերկրէ: -

402. Եւ տէրն *նշանակեաց* **հռ. ժ** զգայարանացս **բ բռ**: - 404. Եօթներորդ՝ ի կատարածի ասէ՝ «եկա՛յք օրհնեայլք հօր իմոյ» և մտանեն ի փառս. զայս *նշանակէ* կտակ և օրհնութիւնն ի վախճանի: - 409. Զայս *նշանակէ* թէ՝ յետ ելանելոյ հոգւոյ ի մարմնոյ և գնալոյ ի վերին շաւիղն...: - 410. Նա՛խ՝ փոփոխմամբ իւր *նշանակէ՛* զփոփոխելի կենցաղս այս. իսկ արեգակն անփոփո՛խ է. որ է՛ հանդերձեալն: - 411. Երկրորդ՝ *նշանակէ* զմահ և զյարութիւն մեր. որ **լ** ամեայ յառնեմք. որպէս ադամ **լ** ամեայ ստեղծաւ: - 411. Եւ **բժ**ան քարինքն դարձեալ ի գետն եղեալ, *նշանակէ՛* զմեղս ի խորս անդնդոց ընկղմեալ: - 415. Զի՞նչ *նշանակէր* գեղմ և ցօղն գեդէոնի: - 421. Նա՛խ՝ *նշանակէր* զնոյն ինքն գեդէոն. որ երևմամբ հրեշտակին դատաւոր եղև իսրայէլի: - 421. Երկրորդ՝ *նշանակէր* զքաղաքն երուսաղէմ. զի միայն ա՛նդ եղև մարգարէութիւն և օրէնքն. և սեղան աստուծոյ ի սիօն: - 421. *Նշանակէ* զադամայինս մարմին ի կերակրոյ պտղոյն հաւասարեալ անբանից՝ ընդ բեռամբ մեղաց: - 423. Երրորդ՝ զխիստ բարկութիւնն *նշանակէ* որ յիւր սրբութիւնն ո՛չ խնայէ վասն մեղաց մարդկան: - 425. Գերիլն *նշանակէ՛* զօրէնքն և զաւետարանն ի հեթանոսս առաքեալ: - 426. Զի՞նչ *նշանակէր* պատառիլ կրկնոցին: - 427. Նա՛խ՝ *նշանակէ՛* զսեղան խաչին քրիստոսի. որ յերեք ժամուն մինչև ի **զ** ժամն խաչեցաւ- և հաշտեցաւ աստուած: - 435. ...և «եղբօր որդին իմ կարմիր է և սպիտակ». որ *նշանակէ՛* զանմեղութիւնն և զմահն. այլ և զաստուածութիւնն և զմարդկութիւնն միաւորեալ...: - 436. Երկրորդ՝ զկանոնս ապաշխարութեան *նշանակէ* զոր խոստովանահայրն կարգէ. զի թէ յանցանէ ոք՝ մեղանչէ՛: - 439. Սեղանոյն պատառիլն *նշանակէր* զկործանումն սեղանոյն դիցն: - 442. Դարձեալ հաց ոչ ուտել՝ զբարկութիւնն *նշանակէ:* - 443. Այլ և *նշանակէ* զպատարագ նորոյս. զոր ինչ մատուցանեմք աստուծոյ հաղորդիմք ի նմանէ: - 443. Զի՞նչ *նշանակէ* յարութիւն որդւոյ այրւոյն: - 444. Այրին *նշանակէ* զտարերս աշխարհի. զի այրի եղեն յանիծից պտղոյն. և կամ թէ բնութիւնն իւրեանց շարժէ ի լինիլ: - 444. Երկրորդ՝ *նշանակէր* զմանանայն որ նոյնպէս ոչ յաւելոյր և ոչ նուազէր: - 444. Արդ եղիսիէէ *նշանակէ՛* զբանն աստուած. որ փոքրկացաւ և բովանդակեցաւ ի ծոց կուսին ի մարմնի միաւորեալ. և ապա ի խաչն բարձրացեալ կեանս շնորհեաց մարդկան: - 446. Արդ աղեղն և նետն ի վերայ եդեալ՝ *նշանակէ՛* զխաչն փրկական ընդ դէմ իմանալի ասորւոյն սատանայի: - 446. Չորրորդ՝ գերիլն ի բաբիլօն՝ զգերութիւն բնութեանս *նշանակէ*. և եօթանասուն ամն զեօթն դար կենցաղոյս. և ապա դարձումն ի հայրենի բնակութիւնն մեր ի ձեռն փրկչին մերոյ և աստուծոյ: - 448. Նա՛խ՝ *նշանակեն* առաջինքն զմարգարէքն և զարդարսն. որք ո՛չ կարացին զկործանեալ բնութիւնս շինել արդարութեամբ...: - 448-449. ...*նշանակէ* զքրիստոս որ եղև երկրորդ ադամ. և ի վեց դարուն կանգնեաց զկործանեալ բնութիւնս...: - 449. ...իսկ երրորդն նէեմի և եզր դպիր՝ կանգնեցին զպարիսպն և զդրունսն. *նշանակեն* զառաքեալսն զհայրապետսն և զվարդապետսն. որք օրինօք պարսպեն զեկեղեցի, և հանապազ ուսուցանեն զդպրութիւն: - 449. Դարձեալ՝ *նշանակեն* զերիս կոչմունս. մարգարէիւք և առաքելօք. և զվերջինն ի կատարածի հրեշտակօք: - 449. Դարձեալ՝ *նշանակեն* զերիս ազատութիւնս ի կռոց: - 449. Դարձեալ՝ *նշանակէ՛* զերիս օրէնս. զԲանականն. զԳրեալն. և զԱւետարանն: - 449. Այլ որ ստուգիւ տեսութիւն է բանս, յերկինս ասել զողորմութիւն, զառաւել մեծութիւնն *նշանակէ:* - 458. Նա՛խ՝ զի կոյսն սուրբ՝ *նշանակեսցէ* զսուրբ եկեղեցի խօսեցեալ քրիստոսի որ նմանապէս է կոյս: - 461. «Ըստ բանի քում» *նշանակէ* զկատարեալ հաւատն: - 465. Առաջինն *նշանակէ* զմեծ խոհեմութիւնն: - 465. Դարձեալ գիտելի է, զի օծեալն *նշանակէ* երիս դէմս. այսինքն զօծեալն և զօծումն և զօծօղն: - 475. Չորրորդ՝ զարգացաւ հասակաւ, ի *նշանակել* թէ զբնութիւնս մեր ի նուազութենէ ի մեծութիւն և ի փառս է՛ հանելոց: - 479. Նա՛խ՝ զի ծեր և հին աւուրց *նշանակեցաւ* հայր աստուած ի դանիէլէ՛. իսկ որդին նորածին և երիտասարդ հասակաւ: - 479. Յինգերորդ՝ զփշեղէն պսակն որ ի խաչին ի գլուխն էր՝ *նշանակէ՛:* - 481. Իններորդ՝ զի *նշանակեսցէ* զօգտութիւնն մեր: - 486. իսկ քրիստոս ո՛չ ունէր զմեղս. վայն այն վաղվաղակի ել ի ջրոյն. և *նշանակէ* ի մեզ զշնորհաց հեղումն. որ մկրտեալն ազատի ի մեղաց և իսկոյն ելանէ յառաքինութիւնս: - 487. Չորրորդ «ձայնն հօր». *նշանակէ* թէ մկրտութեամբն լինիմք շնորհօք որդիք աստուծոյ...: - 487. Դարձեալ՝ ի մկրտութիւնն քրիստոսի *նշանակին* գոյացութիւնք մերոյս մկրտութեան. այսինքն Մկրտօղն, Մկրտեալն, Նիւթն, Տեսակն, և Դիտաւորութիւնն: - 487. Նախ՝ որ ասէ «դա» *նշանակէ* զմիաւորութիւն բանին առեցեալ մարմնովն: - 487. Զի ո՛չ ասաց թէ որ ի դմա՛ է կամ դոքա ըստ բաժանողաց. այլ թէ դա՛. որ մի անձն բնութեամբ միացեալ *նշանակէ:* - 487. Զի են անուանք որ զբնութիւնն *նշանակեն* որպէս մարդ: - 487. Եւ են որք զանձն և զբնութիւնն *նշանակեն*. որպէս դա՛, սա՛, նա՛: - 487. Երկրորդ՝ ասելն «է» *նշանակէ՛* զմշտնջենաւոր գոլն...: - 487. Երրորդ որ ասէ «որդի» *նշանակէ* զհաւասարութիւնն ընդ հօր. զի որդին լսի հաւասար հօր: - 487. Վեցերորդ որ ասէ՝

«հաճեցայ»․ *Նշանակէ* զմիաւորութիւնն ընդ հօր: - 487-488. Զնախանձն՝ տարածումն բազկացն. որ *Նշանակէ* զգիրկս արկանելն սիրով: - 489. Իսկ խաւարումն արեգականն *Նշանակէ՛* զամենայն կուրութիւնս հրէիցն: - 490. Դարձեալ *Նշանակէ՛* զամենայն կուրութիւնս մարմնասիրաց ի մէջ եկեղեցւոյ: - 490. Դարձեալ *Նշանակէ* զմահն քրիստոսի. զոր արեգակն արդարութեան կամեցաւ ի մարմին իւր թաքչիլ. զի զմեզ լուսաւորեսցէ: - 490. Դարձեալ *Նշանակէ՛* զխաւարումն այնմ ժամանակի, յորում եթէ գուցէ հնար՝ ընտրեալքն մոլորեսցին: - 490. Զի՞նչ *Նշանակէ* քառաթև խաչն. երկայն, և լայն, խոր, և բարձր: - 493. Նախ *Նշանակէ* զպէս պէս զօրութիւնս քրիստոսի. որ երբեմն զբարձրագոյնս ներգործէր և երբեմն զնուաստագոյնս երևեցուցանէր յինքեան: - 493. Երկրորդ՝ *Նշանակէ* աստուածային խնամոցն առ մեզ ներգործեալ: - 493. Չորրորդ դարձեալ՝ **դ** թև խաչին *Նշանակէ* զչորս բարերարութիւնս քրիստոսի. զի վերին մասն ցուցանէ զբացումն արքայութեանն երկնից. ներքինն զաւերումն դժոխոց. աջն զբաշխումն շնորհաց. ահեակն զթողութիւն մեղաց: - 493. Յինգերորդ՝ *Նշանակէ՛* զչորս առաքինութիւնս ի յորս պարտի տարածիլ ներքին մարդս մեր. այսինքն վերին մասն *Նշանակէ* զսէրն. ներքինն զխոնարհութիւնն. աջն զհնազանդութիւնն. ահեակն զհամբերութիւնն: - 493. Վեցերորդ՝ *Նշանակէ՛* զանկանիլն մեր ի դրախտէն: - 493. Եօթներորդ՝ գլուխն և պատուանդանն *Նշանակէ՛* միաւորեալ զաստուածութիւնն և զմարդկութիւնն քրիստոսի. որ խաչեալն է ի նմա: - 493. Ութերորդ՝ *Նշանակէ՛* զչորս տարբերութիւն փրկելոցս նովաւ. այսինքն երկնաւորք և երկրաւորք, կենդանիք և մեռեալք: - 493. Իններորդ՝ *Նշանակէ՛* զչորեսին խորհուրդս մեր: - 493. Տասներորդ՝ *Նշանակէ* զչորեսին առաքինութիւնս մեր այսպէս: - 493. Դարձեալ *Նշանակէ* **դ** թև խաչին՝ փրկութիւն գոլ և լոյս հոգւոյ որք ի **դ** ծագս տիեզերաց հաւատացեալք են: - 493. Այլ և զսոյն *Նշանակէ* գաւազանն եղիսէի: - 494. Զի՞նչ *Նշանակէ* չորս մասն փայտից Խաչին: - 494. Ա՛րդ՝ Կիպարին զանուշահոտ վարս *Նշանակէ*. և Արմաւենին զպտուղ արդարութեանն: - 495. Դժոխ՝ զդժուար զնեղ և զանձուկն *Նշանակ*...: - 505. Իններորդ՝ յա՛յտ է յօրինակէն. զի եգիպտոս հալոց երկաթի կոչի. *Նշանակէ՛* զդժոխքն որ տանջէր զհոգիսն: - 507. Նա՛խ՝ զի մատթէոս զերեկոյի շաբաթուն և զլուսանալ միաշաբաթին յիշէ. այսինքն զսկիզբն և զվախճան գիշերին. զի յերկուց մէջն որ է՛ հասարակն և մէջ գիշերին՝ *Նշանակեսցէ* զժամ յարութեանն: - 512. Որ *Նշանակէ՛* զյարութիւնն քրիստոսի ի մէջ գիշերի զդրունս դժոխոցն խորտակեալ. և զհոգիսն հանեալ ի լեառն երկնային: - 513. Ա՛րդ՝ ներքին այրն *Նշանակէ՛* զդժոխս. և արտաքինն զգերեզմանն. և սաւուղն զստանայ որ ըմբռնեալ էր զմարդիկ: - 513. Ամաղէկ *Նշանակէ* զստանայ որ գերեաց զհոգիս մարդկան հրէից և հեթանոսաց...: - 514. Ասեմք թէ՝ վաղ առաւօտն և խոր երեկոյն զմէջ գիշերն *Նշանակեն*...: - 515. Ծալեալ վարշամակն *Նշանակէ* զաստուածութիւնն որ գլուխ է. և կտաւն զմարդկութիւնն: - 517. Զի թռչիլն *Նշանակէ՛* զզանազան դասս ընտրելոցն: - 519. Այլ համբարձումն *Նշանակէ՛* ի միտս համայն բարձր քան զամենայն դասս իմանալեացն...: - 519. Երկրորդ՝ զի ամպն կալաւ զնա յաչաց նոցա. *Նշանակի* թէ ի մահկանացու մարմինս ո՛չ կարեմք տեսանել ի բարձունս զքրիստոս: - 520. Իսկ որ ասէ սուրբն ստեփաննոս «յիսուս կայ ընդ աջմէ աստուծոյ», կալն *Նշանակէ* իբր պատերազմակից և յօգնականութիւն գալ որք նահատակին վասն անուան նորա: - 521. ...զի որդի և հայր *Նշանակէ* զյատկութիւն անձանցն: - 530-531. Երկրորդ, մի անուն՝ և *Նշանակեալքն* բազումք. որպէս խոյ է յերկինս և յերկրի և ի ծովս. նոյնպէս մի կոչի եկեղեցի կենդանի մարդն և շինեալն ի քարանց և եկեղեցին անդրանկացն յերկինս. սակայն զանազա՛ն են որպիսութեամբ: - 533. Որ *Նշանակէ՛* թէ ի յայտնութենէն աստուծոյ և ի շարժմանէ հոգւոյն սրբոյ պարտ է ներգործել զայդ իշխանութիւն: - 539. Սէրն զբազում իրս *Նշանակէ:* - 575. Երբեմն *Նշանակէ* զշարժումն. որպէս ասի յերգսն՝ «կարգեաց յիս զսէրն»: - 575. Երբեմն *Նշանակէ՛* զբոլորութիւնն. որպէս ասէ՝ «աստուած սէր է». և այս առաւել լինի անձնականապէս և էականապէս: - 575. Ութերորդ, *Նշանակէ՛* զդառնալն մեր յերկինս և առնուլ: - 586. Զի՞նչ *Նշանակէ* մեռոնաւն սուրբ օծանել: - 593. Եւ գիտելի է, զի յետ օծանելոյն զգեցուցանեն զհանդերձս պայծառ. որ զլուսաւոր վարս և զպայծառ հաւատս և զանմեղութիւնն *Նշանակէ:* - 594. Դարձեալ՝ մելքիսեդեկ հաց և գինի մատոյց պատարագ աբրահամու և ո՛չ ջուր. որ *Նշանակէր* զճշմարիտ պատարագն քրիստոսի. ապա ուրեմն ո՛չ է պարտ խառնել ջուր: - 595. Եւ թէ ասեն՝ զեկեղեցին կու *Նշանակէ* ջուրն այն: - 596. ...զի արկանելն զխառնելն *Նշանակէ*. և խառնելն է արկանել գինւոյն ի յանօթն: - 596. Դարձեալ՝ խառնելն զմիաւորելն *Նշանակէ* զարեան ընդ մարմնոյն որպէս մեր է սովորութիւն: - 596. Երկրորդ՝ զի հրամայեաց եզական բանիւ «ա՛յս է մարմին իմ. և ա՛յս է արիւն իմ». որ զմին հացն *Նշանակէ՛:* - 597. Երկրորդ՝ երբեմն *Նշանակէ* հացն զամաք զբանն ի յերկնից իջեալ. և գինին զմարդկութիւնն...: - 598. Եւ երբեմն հացն *Նշանակէ* զմարմինն սուրբ, և արիւնն

զանմահ կենդանութիւնն: - 598. Իսկ որք ոչ միաւորեն, բաժան և որիշ *Նշանակեն* զբանն ի մարմնոյ իւրմէ. որպէս երկաբնակքն քաղկեդոնիկք: - 598. ...այսպէս պատմէ Մատթէոս և Մարկոս. իսկ Ղուկաս և Յոհաննէս յետ ընթրեա՛ցն *Նշանակեն* զթացեալ պատառն: - 599. Եւ յետոյ թացեալ պատառովն *Նշանակեաց* զմատնիչն: - 599. Զի՞նչ *Նշանակէ* եկեղեցին: - 613. Եկեղեցին մի անուն է և **բ** իրս *Նշանակէ*. զշինեալն և զշինօղսն: - 613. Վեցերորդ, ի սմա՛ կրկին դրունք ի հարաւ և յարևմուտս. որ *Նշանակէ*՛ զդուռն ողորմութեան և զդուռն արդարութեան աստուծոյ, հարաւոյն և արևմտիցն: - 614. Ա՛րդ՝ ջուր և գինին և մեռոնն *Նշանակեն* ի մեզ զջուր սրբութեան աւազանին. և մեռոնն որով օծաք և դրոշմեցաք. և ապա ճաշակմամբ մեղսաքաւիչ արեանն կատարեցաք: - 615. Երրորդ՝ ի բանակիլն խաչաձև բանակեցան երկոտասան ցեղքն, և խորանն ի միջի. որ *Նշանակէ*՛ զխորանն եկեղեցւոյ՝ խորհրդով խաչին քարոզեալ ընդ դ կողմ աշխարհի: - 616. Զի՞նչ *Նշանակէ* ժամահարն: - 618. Եւ տապանն *Նշանակէ*՛ զեկեղեցի. որք ի ձայն ժամահարին ժողովին և ապրին ի ջուրց հեղեղաց մեղաց: - 618. Եւ *Նշանակէ՛ր* կրկին փողն զերկու զանկակս, կամ զզանկակն և զժամահարն. կամ զփայտէն և զերկաթին: - 618. Նա՛խ՝ *Նշանակէ*՛ զերեք ժամն. մէջ գիշերին, առաւօտին, և արևագալն: - 618. Վեցերորդ՝ արտասուքն զզղջումն և զսուգն *Նշանակէ*՛ զոր ունիմք վասն մեղաց: - 619. Զի ընդ ամենեսեանն՝ զանձն *Նշանակէ*. իսկ ամենեցունն՝ զշնորհս հոգոյն սրբոյ ցուցանէ: - 625. Իսկ սկսուածն ընդ երգոյն խառնեալ, Նախ *Նշանակէ*՛ թէ զմարգարէից և զառաքելոցն բանս ի միասին խառնեալ ունի նորս եկեղեցի: - 627. Երկրորդ՝ *Նշանակէ* զձայն փողոյն, և ապա՛ զօրհնութիւն յարուցելոցն: - 627. Իսկ յառնելն մեր ի յօրհնութիւն, *Նշանակէ* նախ ի մեռելութենէ մեղաց և ի ծառայութենէ յառնելն: - 627. Իսկ ի կիրակէի խնկարկելն և **ժ** օրհնութիւնն՝ *Նշանակէ* զտասն քաղաքացն իշխանութիւն ունել. և **ժ** քանքարացն: - 628. Այլ և *Նշանակէ*՛ զմարդիկ ընդ հրեշտակաց և զհրէայս և զհեթանոսս խառնեալ ի մի եկեղեցի: - 629. Այլ և *Նշանակէ* նախ զհրէայսն և զհեթանոսս: - 636. *Նշանակէ* այս զմիութիւն հրէից և հեթանոսաց ի մի հօտ և ի մի պաշտօն: - 636. *Նշանակէ*՛ զպատկերն ոսկի **կ** կանգուն երկայն և **գ** լայն: - 637. Եւ այսպէս ի պահոց թագաւորքն *Նշանակի:* - 641. Նա՛խ՝ որպէս ասեն ոմանք՝ Բուրվառն *Նշանակէ* զմարդկութիւնն քրիստոսի. և Հուրն զաստուածութիւնն. Ծխումն զբուրումն հոգւոյն սրբոյ: - 645. Դարձեալ՝ *Նշանակէ*՛ ըզբոլոր արարածս: - 645. Զի՞նչ *Նշանակէ* գրակալն: - 646. Նա՛խ՝ գրակալն *Նշանակէ*՛ զմովսէս. որ ընկալեալ զպատգամն աստուծոյ՝ խօսէր առ ժողովուրդն: - 646. Այլ և դարձեալ *Նշանակէ*՛ զաստիճանաւորս ի խոնարհ քան զքահանայս. - 646. Դարձեալ, *Նշանակէ* զժողովուրդն աստուծոյ...: - 646. Տասներորդ, և աստի ընտրեալքն յաջմէ, և խոտելիքն ի ձախմէ միշտ *Նշանակին:* - 646. Այս է խորհուրդն. զի երեկոյս *Նշանակէ*՛ զկեանս զայս որ տնօրէնութեամբ փրկչին սակաւ ինչ տեսօղ եղաք հաւատով: - 646. *Նշանակէ*՛ զհանդերձեալն որ դէմ յանդիման տեսանելոց եմք զնա: - 646. Եւ զմեզ ի լոյս էած, *Նշանակեն* վառեալ մոմեղէնքն: - 646. ...*Նշանակէ* համաձայն պաշտելն: - 647. ...որ *Նշանակէր* զհանգիստ և զվարս սրբոցն: - 647. ...*Նշանակէ* զհանգիստ ապաշխարողաց. որք յուրբաթի յանցեաք ընդ ադամայ. ի շաբաթի հանգչիմք ընդ քրիստոսի: - 648. Դարձեալ, **խը** քաղաքն ապաստանի, *Նշանակէ*՛ զմեզ պահքն **խը** օր: - 653. Այլև **է** օր տաղաւարահարացն *Նշանակէ*՛ զսրբութիւն պահոց շաբաթոյս. - 653. ...զոր *Նշանակէ* **դ** թիւն. և ուրբաթն սուգ և բօթ լսի՝ պահելի՛ է: - 653. Զի՞նչ *Նշանակէ* բաժանել զբաժակն ըստ կարգի: - 656. Իսկ մատռակն յոտն կացեալ, *Նշանակէ*՛ զծառայն ի գործ սպասու: - 656. Եւ *Նշանակէ*՛ ճաշն զաստիս, և ընթրիսն զհանդերձեալն: - 656. Նա՛խ՝ *Նշանակէ*՛ բարեկենդանին արձակութիւնն զպահոց նեղութիւնս...: - 657. Դարձեալ, *Նշանակէ*՛ բարեկենդանն զդրախտին կեանքն. ամենայնիւ առանց կարօտութեան: - 657. Եւ դարձեալ՝ բարեկենդանն *Նշանակէ*՛ զառաքինութիւն հոգւոյն ամենայնիւ փարթամացեալ: - 657. Զի՞նչ *Նշանակէ* սուգն և կոծն և հանդերձին պատառելն: - 670. Նա՛խ՝ *Նշանակէ*՛ ի մեզ զջերմեռանդ բորբոք այրեցման սրտին. որ ի բա՛ց հանէ զօձիսն և արտասուէ ...: - 670. Դարձեալ՝ *Նշանակէ*՛ յետ մեռելոյն զփոխումն ուրախութեան մեր ի սուգ և ի մերկութիւն. և ի սև հանդերձս. ի խաւար տունս և այլն: - 670. Եւ սոյնպէս զկարօտութիւն և զպակասութիւն ախորժակացս *Նշանակէ*. որ քան ի միտ ածեմք և սղգամք: - 670. Իսկ հող ցանեալ ի գլուխն, գլուխ զմիտքն *Նշանակէ*. որ ինքնիշխան եղև յաստուծոյ. և հնազանդեալ խրատու հողակեր օձին՝ մահացաւ...: - 670. Նոյնպէս և սուգն ի վերայ մեռելոյ զնոյնն *Նշանակէ*...: - 670. Այլ և *Նշանակէ* սուգն զտեառն մերկութիւնն ի խաչին...: - 670. ...ապտակեալ. և նախատեալ. և բևեռեալ. և լուսաւորացն խաւարեալ. և այլն. զոր մեք ի վերայ մեռելոյն *Նշանակեմք:* - 670-671. Դարձեալ՝ *Նշանակէ* զմահ մեղաւորացն ի կատարածի...: - 671. Ա՛րդ՝ զգեստին հանելն նախ *Նշանակէ* թէ՝ զկենցաղ աշխարհի մերկացաւ և զգեցաւ զգեստ լուսեղէն որ ի դրախտին: - 671. Խունկ յոնգունքն,

զանուշահոտ վարս *Նշանակէ:* - 671. Իսկ զի չորիցն բարձեալ տանին, *Նշանակէ* որ **ք** հրեշտակք պահապանք ամբառնան զհոգին...: - 671. ...և նա դնէ յեկեղեցին մերձ առ դուռն որ *Նշանակէ* զկայանք հոգւոցն յերկինս ի վերջին տեղւոջ մինչ ի յարութեանն օր: - 672. Դարձեալ՝ դնեն զքահանայս առաջի սեղանոյն ի վերայ բեմին, և զկրօնաւորս ի մէջ եկեղեցւոյն, և զաշխարհականս առ դուռն, *Նշանակէ* զզանազան տեղիս: - 672. Երրորդ, *Նշանակէր* անդ ի հանդէս մտանել...: - 672. ...զի քահանայապետն զհայր *Նշանակէ*. և իւղն զքրիստոս. և անուշահոտն զհոգին սուրբ որ քրիստոսիւ պարգևեցաւ մեզ: - 672. Վեցերորդ, զբոլոր մարդոյն յարութիւնն և զբոլորին փրկութիւնն և զսրբութիւնն *Նշանակէ* որ է՛ հոգին և մարմինն...: - 672. Տասներորդ, *Նշանակէ* զվերջին օծումն. զի ամենայն կարգ զոր մարմնոյն կատարեմք՝ հոգւոյն է և մարմնոյն որպէս ասացաք: - 673. Չորրորդ՝ զսէր և զհաշտութիւն *Նշանակէ* զոր ունիմք առ նա...: - 673. Ութերորդ՝ զողջութիւնն *Նշանակէ* ողջոյնն բոլոր հոգւոյն և մարմնոյն որ է անբիծ և անարատ: - 673. Եւ *Նշանակէ* նախ զերեք հանգստեանն. միոյն մարմնոյ. և միւսն հոգւոյ. և միւսն հոգւոյ և մարմնոյ: - 675. Իսկ խաչն վառել և ժամահարն յառաջ. *Նշանակէ՛* զվերջին գոչումն փողոյ հրեշտակապետին: - 676. ...զոր *Նշանակէ* մանր վարշամակ վառին: - 676. Նա՛խ՝ *Նշանակէ* զակնարկութիւնն ի վեր առ աստուած ունիլ: - 676. Տասներորդ, զի թաղելն *Նշանակէ* զյարութիւնն...: - 677. ...զի դժոխք զդժուարն և զնեղն *Նշանակէ:* - 679. Դարձեալ՝ *Նշանակէ* զքանակ հասակի մարմնոյն մեռելոյ: - 679. այսպէս և քար տապանիս մեր լիցի. *Նշանակէ՛* զանապական յարութիւնն. որ վիմածին լինիմք և առանց ապականութեան որպէս քրիստոս. և ո՛չ հողածին ապականացու որպէս զառաջին ադամն: - 679. Զի արեգական ծագելն զծնանիլն մեր *Նշանակէ*. և մուտն զգերեզմանն. իսկ այս առաւօտ զյարութիւնն հասարակաց: - 680. Եօթներորդ՝ **գ** օրս այս *Նշանակեցաւ* յերիս աւուրսն որ նախ քան զլինիլն լուսաւորաց...: - 681. Արդ հայրն աբրահամ *Նշանակէ՛* զհայր աստուած. և հուր և սուր՝ տանջանարանք որ հանդիպին ի ճանապարհի օդոյդ: - 681-682. Իններորդ, **գ** տեղիք մարդկան *Նշանակեցաւ* յեռայարկ խորանն մովսէսի. առաջին միջին և վերջինն: - 682. Տասներորդ՝ **գ** օրս այս *Նշանակեցաւ* որ ասէր մովսէս ցփարաւօն՝ արձակեա՛ զիէլ. - 682. Արդ եգիպտոս *Նշանակէ՛* զաշխարհս որ է՛ հալոց չարութեան և տեղի ծառայութեան մեղաց և սատանայի որ է՛ փարաւօն: - 682. Ամիսն *Նշանակէ* մինչ ի դատաստանն. և տարին զյարութիւնն յաւիտենից...: - 683. Իսկ արմաւենիքն զյաղթութիւնն *Նշանակեն*. որք յաղթեցին ցանկութեանց մարմնոյ և սատանայի: - 690. Դժոխքն *Նշանակէ* զդժուարին և զնեղ տեղիս որ է՛ խորանն ձախակողմեան. ուր մեղաւորքն կրկին ունին զտանջանս: - 690. Ա՛րդ՝ դարձեալ տեսանելն զմիւսանգամ գալուստն *Նշանակէ*. որով ուրախ լիցին առանց տրտմութեան: - 692. Այսպէս և աստ մինչև՝ զոր մինչ առ ինքն *Նշանակէ*, և զհանդերձեալն ո՛չ լքանէ: - 704. Դարձեալ *Նշանակէ* զամենայն ապստամբութիւնս որ յառաջին, և միջին, և վերջին ժամանակս լինելոց է: - 707. Այլ և **ռ** ամն է յառաջին գալստենէն քրիստոսի մինչ յերկրորդն. զի զբազում և զառաւելն *Նշանակէ:* - 710. Երիցունք նախ *Նշանակէ՛* զքահանայս որք զանձինս իւրեանց մատուցանեն պատարագ աստուծոյ: - 711. Նա՛խ՝ որպէս բժան գունդ հրեշտակացն և չորք կենդանիքն զբոլոր երկնային զօրսն *Նշանակեն*, նոյնպէս և **իդ** երիցունքն զբոլոր դասս սրբոցն: - 711. Չորրորդ, *Նշանակէ՛* զթիւ աւուրցն ժամուց յորում նոքա վաստակեցին և զարդարեցան: - 711. Վեցերորդ, զի **բժ**ան ցեղապետք էին հնոյն. և **բժ**ան առաքեալ նորոյս. զերկոցունց ազգաց նահապետսն դնելով զբոլոր թիւ ամենայն ազգին, *Նշանակէ՛:* - 712. Եւ ունի բեհեզն վեց յատկութիւնս որ *Նշանակէ* զվայելչութիւն հոգւոց սրբոցն ելեալք ի մարմնոյ: - 712. Երկրորդ զի սպիտա՛կ է. *Նշանակէ՛* զպայծառ առաքինութիւն նոցա: - 712. Չորրորդ զի լուսափա՛յլ է. *Նշանակէ՛* զբարձրագոյն տեսութիւնն որով լուսափայլին իմացմամբ: - 712. Իսկ քնարն Նախ *Նշանակէ՛* զքաղցրաձայն երգս փառաբանութեանն աստուծոյ: - 713. Ապա վասն է՞ր եզեկիէլ յերկար ժամանակս *Նշանակէ* զյարութիւնն...: - 717. Չորրորդ՝ գալարիլ երկնից զգալուստն քրիստոսի *Նշանակէ*. զի գիրք ա՛յնր գիտութեանն բանին: - 729. Նա՛խ *Նշանակէ* զփոքր ժամանակն մինչ ի գալուստն միւս անգամ...: - 730. Քանզի լեառն ծիթենեաց *Նշանակէ՛* զողորմութիւնն որ մե՛րձ է ի ձորն այն: - 738. Ապա յա՛յտ է յասացելոցս թէ՝ քրիստոս երևեցի արդարոցն քաղցրատես, և մեղաւորացն դառնակերպ. որ *Նշանակեցաւ* ի սիւն ամպոյն ի տուէ և ի հուրն ի գիշերի: - 741. Կշռիք գործիական առ մեզ յայտնի՛ է. որ զարդար հաւասարութիւն *Նշանակէ* ի ձեռս մեր: - 744. Իսկ կշիռ արդարութեան՝ պարզաբար զհատուցումն արդարութեան *Նշանակէ:* - 745. Չորրորդ, կշիռն *Նշանակէ՛* զգործս մարդկան. ըստ կշռոյ օրինացն հաւասարել և հատուցանել. եթէ ըստ բնականին կամ ըստ գրոյն և աւետարանին. որում շատ տուաւ առաւել պահանջել: - 747. Զի ծուխ խնկոցն ի վերայ սեղանոյն, Նախ *Նշանակէ՛* սեղանն զքրիստոս. և ծուխն զաղօթս սրբոցն. զոր արծարծէ՛ հօր ի հոտ

անուշից: - 749. Երկրորդ, *Նշանակէ* զծածուկ սէր սրտին. որպէս ծուխն զիուր: - 749. Իսկ ծուխն յերեսացն աստուծոյ, Նախ *Նշանակէ* զահագին սպառնալիք բարկութեան տանջանացն...: - 749. Իսկ Երկրորդն արքայութիւն, *Նշանակի* յազատն սառա. որ ո՛չ ուժգնութեամբ մարմնոյն, այլ միայն շնորհօքն աստուծոյ ծնաւ: - 756. Եւ քանզի մովսէս որ ջրային կամ ի ջրոյ հանեալ թարգմանի. թէպէտ երբեմն զօրէնս և երբեմն զտէրն *Նշանակէ*. այլ աստ ոչ զօրէնս, այլ զտէրն գուշակէ՛. որ ի ջուրց մարդկայինս բնութեան ընկալեալ եղև: - 756. ...որպէս ծաղկեալ գաւազանն ահարօնի *Նշանակէր* զխրատ իմաստութեանն. որով զարդարեալ տայ զպտուղ լուսաւոր նիւթոյ կերակուր ոգւոյ: - 768. Ուստի ասացաւ թէ մահու մեռցիս. ոչ սոսկ. այլ զկրկնակի *Նշանակելով* մահ. այսինքն զմեռանիլն մարմնով և զպատժիլն հոգւով: - 776

**ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ +** *Նշանակութիւնք* աւուր՝ **ժե** գլխով: - 154. Վասն *Նշանակութեան* ջուրց **ժբ** թուով: - 155. Վասն երկրի՝ և *Նշանակութեան* նորին: - 155. Վեց են *Նշանակութիւնք* երկրի: - 210. Տասներորդ՝ անունն յարմար *Նշանակութիւն* է կենդանեաց ըստ բարուցն...: - 220. Յանդերձն մաշկեղէն՝ էր իր, և էր *Նշանակութիւն:* - 282. Եւ ըստ այնմ որ *Նշանակութիւն* է, ցուցանէ զմարմինս մեր փոփոխական. որպէս այն որ փչեաց յերեսս մարդոյն շունչ կենդանի: - 282. Իսկ ըստ *Նշանակութեան* ցուցանէր զբանական հոգին. որով կենդանացաւ մարդն: - 282. Վասն բորոտից. և *Նշանակութեանն* և սրբելոյն: - 284. Իսկ այն որ երբեմն անդրանիկն խոտիւր և կրտսերն ընտրիւր, բազում ունի խորհուրդ և *Նշանակութիւն:* - 310. Եւ լիցի սուրբ ըստ *Նշանակութեան* օրինացն. զի անսուրբն և պիղծն ո՛չ է զենլի: - 365. Եւ *Նշանակութիւնք* նորին: - 413. Եւ տարածայնութիւն թուոցդ յայնմանէ լինի, որ **ծգ** ամաւ յառաջեաց բանն աստուած ի մարդանալն քան *զՆշանակութիւնս* մարգարէիցն: - 449. Դարձեալ ողջոյնս այս՝ ունի *Նշանակութիւն* գերազանցութեան կուսին. բնութեան, շնորհաց, և փառաց: - 464. Դարձեալ՝ *Նշանակութիւն* քառաթև խաչին...: - 494. Այս քան ըստ *Նշանակութեան* սրբոյ Խաչին: - 494. Իբր զի հոմանուն է եկեղեցի և ունի **դ** *Նշանակութիւնս*. որ է՛ ստորինս. և վերինն եկեղեցի. և շինեալք ի մէնջ. և հաւատն ժողովարան մեր: - 534. *Նշնակութիւն* է **գ** ազգ գրոյն ի վերայ խաչին. Եբրայեցի. Յունաց. և Դաղմատ: - 645. Եւ այս *Նշանակութիւն* մնաց ամենայն ուրէք: - 656. Դարձեալ, ամենայն շնորհք առ ո ոք և իցէ՝ բառնի վասն մեղաց. ո՛չ ըստ ունակութեան՝ այլ ըստ ներգործութեան կամ *Նշանակութեան*: - 782. Այսպէս և ժանգ յանցանաց մկրտելոց և քահանայից՝ բառնայ զգործ՝ կամ *զՆշանակութիւն* շնորհացն. իսկ յետ սրբութեան զղջմամբ՝ զիա՞րդ կրկնի ունակացեալն ի նմա՛: - 782

**ՆՇԱՆԱՑԻ +** Այլ և դիրք՝ *զՆշանացի* տեղն ցուցանէ: - 678

**ՆՇԱՆԱՒՈՐ +** Եւ զի ժա՛մ է *Նշանաւոր:* - 196. Եւ եօթն *Նշանաւոր* աստեղք՝ **h** աշակերտքն: - 303. Վհուկն ա՛յն է, որ ի վհաց և յանդնդոց մեռեալս կերպարանեն. դևք ի կերպս մարդկան երևին. զոր դևակոչ ասեն և հազիմաք. և Նշանագէտ, որ ի գերեզմանս ննջէ և *Նշանաւոր* մարդ կերպարանէ. որպէս զսամուէլ սաւուղայ երևեցոյց հարցուկ կինն: - 388. Դարձեալ գիտելի է, զի յերիս *Նշանաւոր* տեղիս եղև պատերազմ նոցա: - 393. ...վասն որոյ *Նշանաւոր* աւուրքս այս յիշատակեմք զննջեցեալսն: - 683

**ՆՇԱՆԱՔԱՐ -** *Նշանաքարն* կրկին, Նախ ցուցանէ զհոգի և մարմին բաժանեալ ի միմեանց: - 679

**ՆՇԱՆԵՄ +** Խօսեցաւ օրինօք նախ և *Նշանեաց* զեկեղեցի սուրբ հարսն երկնաւորին: - 422. Այլ և *Նշանեալ* փայտն խայտախարհի յաւազանս եղեալ: - 494. Եւ դնէ զայս քահանայն սուրբ մեռոնաւն ի ճակատ նուիրելոյն ասելով այսպէս. ըստ այլազգաց եկեղեցեաց. թէ ի ներքոյ ձևիս այս ես կու *Նշանեմ* զքեզ Նշանաւ խաչի...: - 593. Զի յայնմ հետէ հարսն փեսային լինի *Նշանեալ*, և փեսայն հարսինն է՛ յատկացեալ: - 609-610

**ՆՇԽԱՐ +** Որպէս ի *Նշխարս* մարմնոյն է տեսանել. զի ի բոլորն է բոլոր քրիստոսն. և յիւրաքանչիւր մասունս է բոլոր քրիստոսն: - 92. Եւ այլք *զՆշխարս* նախահօրն ադամայ ասեն. զի յաստուծոյ ձեռացն էր յօրինեալ՝ լո՛յս տայր նոցա: - 294. *ԶՆշխարսն* յովսեփու: - 338. Նոյնպէս և *Նշխարք* մարմնոյն բոլոր. առ ի Նշանակել թէ բոլոր պարտ է ունել հաւատ կերողացն: - 339. Երկրորդ՝ սպիտակ. և նոյնպէս *Նշխարն*. զի անաղտ և մաքուրս գործեն: - 339. Երրորդ՝ սառնատեսակ. զի թափա՛նց է խաչ *Նշխարին*. և ի մեզ լուսաւոր միտք: - 339. Վասն այն *զՆշխարն* ի կողմն հիւսիսոյ դնեմք և զսկիհին ի հարաւ որպէս անդ: - 346. Եւ զմնացեալ *Նշխարսն* ուտէին. քահանայքն և արուք նոցա ի սուրբ տեղւոջ: - 358. Որպէս այժմ մին *Նշխարն* ի հաղորդութիւն սուրբ մարմնոյն, և զայլ *Նշխարքն* արժանացեալք արիութեամբ ճաշակեն: - 358. Յինգերորդ՝ և մի՛ ժողովուրդն առջէ ի *Նշխարացն* և պատկեր կազմեսցէ: - 411. Եւ յետոյ բաշխումն *Նշխարաց*. որպէս դաւիթ բաշխեաց ամենայն իէլի բլիթ մի հաց, և պատառ մի ի տապակէ՛ և ի կասկարայիցն: - 431. Եւ մի *Նշխար* օրհնեմք և լինի մարմին քրիստոսի: - 526. Դարձեալ

զորօրինակ, մարմինն քրիստոսի մի և նոյն էր ի խաչին բևեռեալ, և մի և նոյն մարմինն է ի բազում *Աշխարս* միաւորեալ և ո՛չ բազմացեալ. զի նոյն է գոյացութիւն հացին և գոյացութիւն մարմնոյն քրիստոսի: - 530. Զի՞նչ է որ յեկեղեցիս մեր մի *Աշխար* օրհնեմք. և ա՛յլ ազգ բազում: - 597. Մի *Աշխարն* է խորհրդաւոր և ո՛չ բազումն: - 597. Այսպէս և ի ճշմարտութիւնս մի է *Աշխարն* դնելի, և մի բաժակով գինի: - 597. Եւ դարձեալ՝ որպէս բոլոր *Աշխարն* մի մարմին է, և ի մասունս բաժանեալ իւրաքանչիւրն բոլոր և կատարեալ մարմին է քրիստոսի: - 598. Եւ թէ ասեն՝ ամենայն *Աշխարքն* օրհնեալ է ի բեմն: - 599. Ասեմք թէ՝ ամենայն *Աշխարքն* որ ի բեմն և ի խորհրդանոցն օրհնեցաւ այսօր, զնոյնն ի վաղիւն առնոյք և օրհնէք: - 599. Դարձեալ՝ թէ դու հաւատաս զարիւնն ի մարմինն կապեալ, մի՛ հաներ զտեսակ արեանն ի բեմն. այլ *Աշխար* միայն օրհնեա և լիցի մարմին և արիւն քրիստոսի: - 600. ...և զամեն գինւոյն և *զԱշխարն* տանիլ առ աւագ սարկաւագն. և զհանդերձ սեղանոյն լուանալ: - 606. Իսկ վասն գրակարդացի և նկարեալ եկեղեցւոյ. և վասն *զԱշխարս* ի հանգիստ փոխելոյ. այս ամենայն յիշատակ է մեզ ի սրբոյն գրիգորէ՛ լուսաւորչէն մերմէ: - 659. Եօթներորդ, ցուցանէ թէ հոգին սուրբ և քրիստոս հանգուցեալ է ի *Աշխարս* սրբոց. որպէս ի կեանքն՝ նոյնպէս և ի մահն: - 672. Եօթներորդ՝ զի սիրելի և համբուրելի է *Աշխարքն* սուրբ որ ի քրիստոս միացաւ և օծաւ, և քրիստոսի եղև բաժին: - 673. Եւ այս ո՛չ միայն փուքանցիկ գոլոյ վասն, կամ ներհակաբար հատուցման որպէս սովորութիւն է. այլ զի ո՛չ ինչ կարեն տանիլ ընդ ինքեանս. բայց միայն *Աշխարհս* ինչ յիշատակութեան ուրուական տեսլեան: - 775

**ՆՇՈՅԼ +** Որպէս արեգակն զի ո՛չ այրէ որ է հեռաւոր պատճառ. այլ հուրն ի նմանէ առեալ զջերմութիւն ի մերձ գոլով այրէ՛. որպէս յա՛յտ է ի հայելւոջն, որ առեալ *զՆշոյլս* յարեգականէն՝ այրէ՛ ...: - 8. Եւ օրինակ այսմ, որպէս ի ծագել արևուն՝ նախ *Նշոյլքն* երևին և ապա յետոյ արեգակն: - 255. Այսպէս և բանական հոգւոյն *Նշոյլք* է զգայականն և տնկականն: - 255. Եւ օրինակ այսմ դարձեալ տե՛ս *զՆշոյլս* արեգականն. որ նախ երևի՝ և ապա արեգակն: - 260. Եւ յորժամ ծագէ՛ արեգակն, յայնժամ և *Նշոյլքն* իւր ընդ իւր ծագեն և ինքեամբ լուսաւորեն զմեզ որպէս նախ *Նշուլիւքն:* - 260. Եւ յորժամ բաժանի արեգակն ի մէնջ, *Նշոյլքն* իւր անբաժանելի են ի նմանէ: - 260. Վասն որոյ և յաւուրս զաքարիայի հօրն յովհաննու յորժամ յամեաց ի տաճարին և ել, ակնունէր ժողովուրդն տեսանել զա՛կնն և տե՛սին լուսափայլ սպիտակացեալ իբրև զծիւն. և լի՛ եղեն խնդութեամբ. զի երկնաւոր արքայութեան *Նշոյլքն* պայծառացուցին զակն: - 349

**ՆՈԽԱԶ +** Եւ դարձեալ՝ ըստ սողոմոնի **գ** են սիգաճեմք. առիւծ՝ և *Նոխազ*՝ և աքաղաղ: - 54. Եւ ո՞րպէս օրէնք յաւիտենից. և վասն **բ** *Նոխազացն*: - 284. Ուբեծ, չո՛րս են որք հզօրք են և պերճ շրջին ասէ սողոմոն. այսինքն աքաղաղ, և *Նոխազ*, և թագաւոր հրապարակախօս, և առիւծ՝ որ ո՛չ դարձուցանէ թիկունս յանասնոց: - 316. Եօթներորդ, նոքա յօտարա՛ց մատուցանէին. այսինքն զուարակ և *Նոխազ*, իսկ քահանայապետն մեր քրիստոս զմարմին իւր պատարագեաց հօր ի հոտ անուշից...: - 354. Երրորդ՝ վասն անգիտութեան և ակամայի իշխանին և իւրաքանչիւր անձին *Նոխազ* յայծից և ալոջ ի քաւութիւն նոցա: - 358. Այլ և ի տօնի քաւութեանն զուարակ մի և **բ** *Նոխազ* վիճակով. մին տեառն և միւսն արձակման յանապատ: - 359. *Նոխազ*, զի մեղս մեր եբարձ: - 361. Զի՞նչ նշանակէր **բ** *Նոխազն* վիճակ արկեալ: - 369. Երկու *Նոխազն* համատեսակ օրինակ տեառն մերոյ՝ յերկուց միաւորեալ մի անձն. և միաւոր բնութեամբ աստուած և մարդ: - 369. Եւ *Նոխազն* վասն մեղաց մերոց: - 369. Եւ ասեն յետ տարւոյ մի եկեալ *Նոխազն* մաքրեալ յարենէն: - 369. Զուարակն, և Խոյն, և Գառն, և *Նոխազն*, և այլ Նուէրն: - 374. Զուարակն է պատարագեալ. և խոյ մեզ ծնեալ. և գառն կերակրելի. և *Նոխազ* զմեղս մեր առեալ: - 374. *Նոխազն* դարձելոցն ի մեղաց: - 374. *Նոխազք*՝ դարձեալքն ի մեղաց և ապաշխարեալք: - 374. Երրորդ՝ զի մովսէս ի կանգնել զխորանն օրինակի՝ արեամբ *Նոխազաց* և ջրով և հիւղովն էօծ և սրբեաց: - 615

**ՆՈԽԱԶՈՏՆ +** Պերիտոս. ա՛յս՝ պա՛ն է *Նոխազոտն:* - 201

**ՆՈՃ +** Թևէ՛ ի քև և Պատուանդանն *Նոճի*. և Տախտակ վերնագրին ծիթենի: - 494. *Նոճն* զբարձրութիւն խոկմանն. և Զիթենին զկակղութիւն ողորմութեանն: - 495

**ՆՈՄԻՆՈՍ** - Ապա՛ *Նոմինոս*, զատոյց զկղզմն չորրորդ ձայնին. որ է՛ վերջին: - 640

**ՆՈՅ** - Նոյնպէս և աստուած ընդ արժանիսն դէմ յանդիման խօսեցաւ. որպէս առ ադամ. և առ *Նոյ*. և առ աբրահամ. և առ մովսէս: - 177. Զի առաջին օրն ցուցանէ զառաջին դարն՝ որ յադամայ մինչև *զՆոյ:* - 193. Երրորդ՝ բազում աստուածախօսութիւնք ի նմա եղեն. յելանելն *Նոյի* ի տապանէն. և առ աբրահամ. և առ մովսէս ի սինա լեառն. և տուչութիւն օրինացն ի կիրակէ եղև: - 193. Իսկ իար, որ է՛ *Նոյ* արդար. Սիւան, սեմ. Թամուզ. քարա. Ապ, աբրահամ: - 200. Վեցերորդ՝ յամպոյն իջանէ անձրև և առնէ

հեղեղ. որպէս առ *Նոյիւ:* - 206. Եւ *Նոյ*՝ վասն կուսութեան սրբութեանն զշ ամն, և վասն արդար գոլոյն, որում վկայէ՛ մովսէս, «*Նո՛յ* էր այր արդար կատարեալ յազգի անդ իւրում». վասն որոյ ապրեցաւ ինքն և տունն իւր. և երկրորդ սկիզբն եղև մարդկութեանն և աշխարհի շինութեան: - 288. Եւ երբեմն կարծէ՛ ի կենաց որպէս առ *Նոյիւ*. զի **ճի** ամ խոստացաւ նոցա, և զի ամն կարճեաց վասն չարեաց նոցա: - 292. Եւ **է**երորդ ասէ զթիւ ամսոյն *Նոյի* որ է՛ թշրին: - 294. **Երրորդ՝ նշանն սրբոյն յակոբայ մծբնայ հայրապետին. և գեօղն արկուռի՝ ուր տնկեաց այգի. և քաղաքն նախիջևան, ուր ինքն *Նոյ* հանգուցեալ է ի տապանի**: - 295. Զի որպէս տապանաւն պահեաց զտունն *Նոյի* հայր աստուած, պահեսցէ և զմեզ: - 295. *Նոյ* հանգիստ: - 299. Անունք Կանանց Նահապետացն... *Նոյին* զարա՛: - 299. *Նոյ* օրհնեաց զսեմ, և սեմայ որդի ո՛չ գոյր նման իւր որ օրհնէր զնա: - 300. Հինգերորդ՝ ի լերինն մասեայ յորժամ ել *Նոյ* ի տապանէն՝ օրհնեաց աստուած զնա՛ և զորդիսն նորա ասէ գիրն. և հայր և սերմ արար մարդկան ազգի: - 319-320. Յադամայ մինչև ի *Նոյ*, **սմխբ** ամ: - 337. Նահապետքն ունէին կրկին պատարագ. բանաւոր և անբան. որպէս Աբէլ. *Նոյ*. Աբրահամ. և այլքն: - 362. Եւ այսպէս ըստ բարուց մարդկան ընտրէր *Նոյ* ի սրբոցն **է**. և յանսրբոցն **բ**. որպէս ասացաւ ի վերոյ ժ**զ** գլուխն ի **զ** համարն: - 364. Նա՛խ՝ բանիւ ասաց. զի նահապետք բնական օրէնք ընկալան. աբրահամ. *Նոյ*. և այլք: - 395. Իններորդ՝ մանուկն յարգանդի ո՛չ հացիւ կեայ. այլ հրամանաւն աստուծոյ կերակրի ընդ պորտն զինն ամիս. որպէս տնկականք, և որպէս *Նոյ* ի տապանն. մինչ ելանէ յարգանդէ. - 397. Ընդ *Նոյի* **զ**: - 412. Նոյնպէս և բանն աստուած թէ կարի իսկ յառաջին դարս էր մարմնացեալ, որպէս յաւուրս *Նոյի*՝ աբրահամու և կամ մովսէսի՝ լինէր կրկին վնաս: - 467. Իսկ ա՛յլ վարդապետք ասեն, թէ եա զբնական օրէնս որպէս *Նոյի* և յառաջ քան զնա: - 467. Եւ է՛ առաջին դարն Ադամայ: Երկրորդն Ենովքայ: Երրորդն *Նոյի:* - 467. Առաջին դարն յադամայ մինչև ի *Նոյ:* - 467. Երկրորդն ի *Նոյէ*՛ մինչև յաբրահամ: - 467. Այլ և տապանն *Նոյի.* և տապանակն մովսէսի և քաւութիւնն ի վերայ: - 494. Ասեմք մեք, թէ արտածորումն մարմնոյ ո՛չ ունէր մարդն ադամ նախ քան զմեղանչելն ի դրախտին. որպէս *Նոյ* ի տապանին. և մանուկն իննամսեայ յարգանդին: - 502. Աղաւնին աւետաբեր է շնորհաց. որպէս ի տապանն *Նոյի* եբեր զշիւղ ձիթենւոյն. որ ցուցանէ զշնորհս մկրտելոցն: - 525. Բարոյականն՝ *Նոյի*, որ ի բարուց վարդապետեալ բնակէր ի յանապատ և պահէր զկուսութիւն **եճ** ամ: - 528. Եւ *Նոյ* միայն ապրեցաւ, և բազումք կորեան: - 551. Ո՞չ ապաքէն մովսէս ի հինն որոշեաց զսուրբս և անսուրբս. մանաւանդ թէ յաւուրս *Նոյի* գոյր ընտրութիւնս. այսպէս ցուցաւ և մեզ պահելի իբր զբնական օրէնս. այլ սոցա ոչինչ է պիղծ ի կենդանեաց: - 552. Վեցերորդ՝ տապանն *Նոյի* յարարատ ի լեառն մասիս: - 555. Դարձեալ՝ որ ինչ նախ քան զօրէնս գործեին՝ մեղք կոչիւր. որպէս ի դարս *Նոյի*. և այլս: - 555. Ասի ի լրոյ եթէ՝ *Նոյ* արար փայտէ՛ կոչնակ. և կոչեաց զկենդանիսն ի տապանն: - 618. Նոյնպէս *Նոյ* և աբրահամ մի ունէին օրէնք: - 629. *Նոյի* ջրով: - 640. Եւ դարձեալ՝ *Նոյ* և ամենայն կենդանիքն ի տապանն կացին զբոլոր մի ամ և ոչ ինչ կերին. որպէս մանուկն յարգանդի: - 652. Եւ մատաղն, Նախ պատարագ և նուէրք է աստուծոյ. որպէս աբէլ՝ *Նոյ*՝ և աբրահամ մատուցանէին: - 657. Վեց հարիւրն զամս *Նոյի*. որ էր **ո** ամաց և ջրհեղեղով ջնջեցան ապստամբքն: - 707-708. Եւ մինչդեռ ասասցեն զայս, յանկարծակի եկեսցէ ի վերայ նոցա սատակումն որպէս յաւուրսն *Նոյի* ըստ հրամանի փրկչին: - 709. Իսկ վկայութեամբ սուրբ գրոցս, որպէս ասաց աստուած *ցՆոյ*...: - 715. Երեք կարգս այսոքիկ գուշակեին երեքումբք արամբքն զորս եզեկիէլ մարգարէացաւ. փրկելոցն *Նոյիւ* Յոբաւ և Դանիէլիւ: - 755. *Նոյիւ*՝ որ զտապանն կառավարեաց, ամուսնացելոցն: - 755

***ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆ*** - Հինգերորդ՝ Վասն *Նոյեան տապանին*. և եկեղեցւոյ: - 283. Այլ և *Նոյեան տապանն* ի վերայ ջուրց: - 494

**ՆՈՅՆ +** Ապա յա՛յտ է՝ թէ զոր ինչ խորհիմք՝ ի հանդերձեալն *զՆոյն* առնեմք...: - 9. Նախ՝ եթէ չար հիւանդութիւնն և այլն ի հարկէ՛ է, ապա ամենեցուն նոյնպէս պարտ էր գոլ. զի հարկն *Նոյն* է առ ամենեսեան: - 11. Երկրորդ՝ բարին ունակութիւն է, և չարն պակասութիւն *Նմին*. որպէս խաւարն լուսոյ: - 13. Որև առարկեն Նախ այսպէս, եթէ պատճառն է հարկաւոր. նաև ներգործութիւն *Նորին:* - 15. Այլ արդ աստուած է պատճառ ամենեցուն և հարկաւոր. ապա ուրեմն ներգործութիւն *Նորին* է հարկաւոր: - 15. Այլ և ո՛չ է բնութիւն. ո՛չ մասն և ո՛չ բոլոր. այլ պակասութիւն ունակութեան. զի բարին ունակութիւն է, և չարն պակասութիւն *Նորին*...: - 16. Եւ զի ոչ է այս հարկ. զի գոլով *Նոյն*՝ ճանաչեմք զայլսն: - 17. ...զի է՛ հակակայ բարւոյն. և է՛ պակասութիւն *Նմին* որպէս ասացաւ: - 17. **Այլ թըւի որպէս ունակութիւն և պակասութիւն. զի բարին ունակութիւն է, և չարն պակասութիւն *Նմին*. որպէս կուրութիւն երեսաց՝ և խաւար լուսո՛յ է պակասութիւն:** - 21. Այսմ տեսութեանս որք արժանաւորին, նոքա երանին և անքակ

միանան ի սէր *նորին* որպէս հրեշտակք: - 24. *Զնոյն* ասէ եզեկիէլ. լք: - 28. Հինգերորդ՝ Կարէ՞ և հայր ծնեալ ասիլ ի *նոյն* բնութենէ գոլ: - 29. Չորեքտասաներորդ՝ Զի հայր գործէ՛, և որդին *նմին* նման: - 29. Չորրորդ՝ ոչինչ արգելէ ըզհոգին լինիլ որդի, թէ է՛ ի *նոյն* բնութենէ: - 30. Երկոտասաներորդ՝ Ընդդէմ *նմին* երրորդութեանն ունի: - 30. Զպետրոս գլուխ եդեալ, և զդաւանումն *նորին* կոխեն: - 34. Ի գիջութիւնս ախտից հեշտացեալք, և *նոյն* զգլորեալն կանգնեն: - 34. Վասն որոյ և մեք համաձայն գոլով ուղղափառաց հարցն սրբոց՝ դիցուք սուղ ինչ յառարկութեանց նոցա, և ընդ *նմին* զպատասխանիս: - 35. Եւ զի եդեր ըզկամքն միջոց, ի բա՛ց պարսպեցար յողորմութեանց *նորին* առ իւր արարածքս. զի եդեր ա՛յլ իմն զկամիլն և զկամքն: - 36. Ապա ուրեմն ո՛չ է անծնելութիւնն և ծնելութիւնն որիշ որիշ բնութիւն. այլ ի *նոյն* ի մի բնութեանն աստուծոյ: - 38. Հինգերորդ առարկեն, թէ իցէ մի և նոյն բնութիւն հօր և որդւոյ, և որդի ծնեալ ի *նոյն* բնութենէ, կարէ՛ ասիլ և հօր ծնանիլ ի յորդւոյ ի *նոյն* բնութենէն. զի բնութիւնն մի է: - 38. Թէ բնութեանն է, ապա ասեն որդի ո՛չ ունի *զնոյն* բնութիւնն. զի բնութիւնն մի է աստուծոյ: - 39. Դարձեալ ո՛չ ասի անպատճառ պատճառն քան զպատճառելին մեծ. զի և որդի *նոյն* պատճառի հօր փառաց և մեծութեանն է հաղորդ: - 39. Եւ թէ լինէր՝ գոյր և ի բնութենէ օտար. հետևէր ապա ոչ գոլ որդի հօր. թէ ոչ էր ի *նոյն* բնութենէն. ապա և ոչ հայր. զի հայր որդւո՛վն է հայր: - 44. Տարակուսելի է առ այս, զի թէ հա՛րկ է որոց բնութիւնքն մի գոլ՝ նոցա և կամքն և ներգործութիւնն մի լինիլ. ընդէ՞ր ապա զի մարդկային բնութիւնս մի է և *նոյն* հօրն և որդւոյն՝ և ո՛չ է կամքն և գործքն մի: - 45. Այս ո՛չ որպէս չարափառքն ասեն՝ թէ որպէս նկարիչ իմաստուն ծևացնէ՛ պատկեր, և ապա ոչ ուսեալն՝ *զնոյն* օրինակէ՛: - 45. Ասէին՝ առնէր հայր, և ապա որդին ի *նոյն* օրինակէն առնէր: - 45. Եւ *զնոյն* բանն աստուած մարմնացեալ. և շրջեալ ի վերայ երկրի. զի յայնմ օրինակին արար և որդի պիտոյ էր լինիլ և չորս աշխարհք: - 45-46. Այլ այս է առնելն հօր՝ և *նմին* նման որդւոյ, այսինքն կամիլն հօր՝ և կատարեալն որդոյ *զնոյն* կամս: - 46. Նախ՝ որ այժմ ասաց զհայր միայն ճշմարիտ աստուած, *նոյն* և զինքն ասաց ճշմարտութիւն: - 47. Կամ ևս՝ զի և հայր է ամենակատար՝ ընդէ՞ր ո՛չ լինիցի որդի, զի է՛ ի *նոյն* բնութենէն: - 53. Ասեն դարձեալ, օրինակ տուք զի լիցի ի *նոյն* բնութենէն մինն ծնունդ՝ և միւսն ո՛չ ծնունդ. և ապա՛ հաւատամք աստուած զհոգին: - 53. Եւ ապա՛ զադամ, զի ունի զսէթ ծնունդ՝ և զևա ո՛չ ծնունդ. այլ հատումն ի *նոյն* բնութենէ ...: - 53. Նախ՝ ի նոցունց *նոյնք*. որպէս ի ծիոյ ծի, և յարջառոյ արջառ: - 53. Երրորդ՝ յայլոց *նոյնք*. որպէս զձու կաքաւի և սագի թխէ՛ հաւ. և *նոյն* կաքաւ, և սագ ելանէ: - 53. Իսկ արիոսի՝ զի նա միայն զհա՛յր ասէր աստուած. զայս ասեմք թէ, ո՛չ են մեզ երեք աստուածք՝ այլ մի աստուած և երեք անձինք. և երկուքն ի մի և ի *նոյն* էութենէն յառաջ եկեալ. կամօք մի և զօրութեամբ մի: - 54. Եւ իմաստասէրքն զհոմանունսն որ ո՛չ էր ի *նոյն* տեսակէ կամ ի բնութենէ՝ թւակցէին: - 54. Իսկ յորժամ քակես՝ լինի մի և մի. քակեցաւ այժմ ի յառաջին բնութենէն ըստ քեզ՝ և ունի դեռևս *զնոյն* համարն: - 55. Եղև ապա *նոյն* իրն բնութիւն և ո՛չ բնութիւն որ անկա՛ր է: - 55. Այսպէս զհոգւոյն թէ յայտնապէս աստուած ասիլ ծածկեցաւ, և այլ իմն բառիւ յայտնեցաւ. որ ցուցանէ *զնոյն* ճշմարտապէս աստուած կատարեալ...: - 55. Եօթներորդ՝ թէ արարա՛ծ է բանն և հոգին աստուծոյ և են յէութենէ *նորին*, ապա և ինքն արարած է որոյ է բանն և հոգին: - 56. Աղբիւր է հոգին սուրբ. քանզի մեք ամենայնքին *զնոյն* հոգի արբաք: - 57. Հինգերորդ ասեն, եթէ հոգին սուրբ առնու զբնութիւնն ի հօրէ՝ լինի որդի նորին. զի այն կոչի որդի որ ունի զբնութիւնն ի հօրէ ի *նոյն* տեսակէ: - 60. Նախ՝ զի խօսքն որ է արտաբերեալ բանն, *նոյն* սա՛ է ներտրամադրեալն բան: - 62. ...զի թէ զմինն զայն հայր բղխէ, ապա ուրեմն ո՛չ բղխէ որդի. իսկ թէ զմինն զայն որդի բղխէ, բըղխեալն հոգի թո՛ռն լինի հօր, և ո՛չ բղխումն *նմին:* - 63. Դարձեալ հարցանեմ, հայր և որդի *զնո՞յն* բղխեն զհոգին, թէ զայլ: - 63. Եթէ *զնոյն* բղխեն՝ աւելո՛րդ է միոյն բղխումն որպէս ցուցաւ: - 63. Չորրորդ՝ խօսքն *նոյն* է բնութեամբ ընդ բանին և մտացն. և հոգին սուրբ *նոյն* է բնութեամբ ընդ հօր և որդւոյ: - 66. Եւ զի բանն մարմին եղև միաւորութեամբն. ուրեմն յայտ է՝ զի մարմին բանին բան եղև *նոյն* միաւորութեամբն: - 72. Ապա ուրեմն աստուած է *նոյն* մարմինն քրիստոսի: - 72. Ապա ուրեմն և մարմինն այն յատուկ է մարմին բանին աստուծոյ. և այս ո՛չ կարէ լինիլ՝ եթէ ո՛չ լիցի միաւորեալ ընդ *նմին:* - 73. Զի աստուած է իւրում բնութեանն. և *նոյն* մարդ ըստ *նորին* բնութեամբ միաւորութեանն: - 75. Որև մարդկութիւնն աստուած էր ըստ *նորին* բնութեամբ միաւորութեանն. և *նոյնն* մարդ ըստ իւրում յատկութեանն: - 75. Այսպէս և անմահ է բանն ըստ իւրում բնութեանն. և *նոյնն* մահացեալ ըստ միաւորութեանն: - 75. Զի բնութիւնն հասարա՛կ է. և մայր *նորին* Երրորդութեանն լիցի մայր: - 76. Որև ըստ այսմ պարտին նոքա ուրանալ և զանհատ բնութիւնս մարդկութեան *նորին*. զիմի՛ հասարակ մարդկութիւնս միաւորեսցի: - 76. Երկրորդ՝ ասել *զնոյն*

աստուածն մարդ. *զնոյն* մարդն աստուած. ո՛չ փոխարկապէս, այլ փոխատրապէս: - 77. Երրորդ՝ ասի *նոյն* մարդկութիւնն աստուածութեամբն մարդ, և աստուածութեամբն աստուած: - 77. Եւ *զնոյն* բանն աստուած՝ աստուածութեամբն աստուած, և մարդկութեամբն աստուած. զի անբաժանելի՛ է...: - 77. Դարձեալ՝ ըստ *նոյն* սարասի՝ բանն աստուած ունի ծնունդ ի հօրէ նախ քան զյաւիտեանս. և ունի ծնունդ ի մօրէ ի յետին ժամանակիս. և ո՛չ ասի երկածին. այլ՝ միշտ միածին. այսպէս *նոյն* բանն ունի զբնութիւն աստուծոյ ի հօրէ. ունի և զբնութիւն մարդոյ ի մօրէ՛. և ո՛չ ասի **բ** բնութիւն. այլ մի բնութիւն վասն միաւորութեանն: - 77. Եւ ապա ի բարձր հանէ վարդապետութիւն զբնութեանցն միաւորութիւն. ասէ՝ այլ և այլ յորոց փրկիչն. եթէ ոչ՝ *նո՛յն* է երևելին և աներևոյթն. անժամանակն և ընդ ժամանակաւն: - 80. Զի՞նչ է ասելն աստուածաբանին, այլ և այլ ընդ *նմին* Երրորդութեանն ունի...: - 80. Եւ ընդ դէմ *նմին* արիոս ի ձախ խոտորեալ՝ **գ** անձինք և **գ** բնութիւնս որոշեաց: - 80-81. Իսկ ընդ դէմ *նմին* եւտիքէս զամենայն շփոթէ և խառնակէ. զանձն և բնութիւնն. և զկամս և զկիրս: - 81. *Զնոյն* գոլ աստուած և որդի աստուծոյ ըստ հոգւոյ. իսկ որդի մարդոյ ըստ մարմնոյ: - 83. *Զնոյն* և սուրբն կիւրեղ գրէ առ սուկեսոս թղթին...: - 83. Այսպէս և մի անձն է քրիստոս և մի անհատ. զի թէ բաժանես զնա՛ յաստուած և ի մարդ, ո՛չ մնայ բոլորն ի *նոյն*. այլ մասն ինչ և մասն. կամ ոմն և ոմն: - 87. Երրորդ՝ զի բաժանեալ անհատքն ունին *զնոյն* բնութիւն տեսակին: - 88. Այլ է՛ որպէս ի միոջէ և առ մի. այսինքն ի միոջէ բանէն՝ առ մի մարդկութիւն *նորին* կամ աստուածութիւն որպէս նոքա կամին: - 88. Ա՛րդ՝ *նո՛յն* է եթէ ի բնութենէ բաժանեն, և եթէ յանձնէ յանձն ըստ նեստորի. և եթէ յանձնէ ի բնութիւն բաժանեն ըստ քաղկեդոնի: - 88. Եթէ զաստուածային անձն և *զնորին* բնութիւնն ասէք մի քրիստոս, դեռևս կայք յառաջ ասացեալ տարակուսանսդ. զի զաստուածային անձն և զբնութիւնն ասէք չարչարեալ և մեռեալ. զի քրիստոս խաչեցաւ և մեռաւ ըստ գրոց: - 89. Եւ զոր դուք զայլս զրպարտէիք՝ ի *նոյն* բանս ձեր ընկղմեցայք: - 90. Նաև հեռանալ ի փրկութենէ *նորին:* - 90. Մինն է ընդ դէմ երկուին և բազմին. և *նոյնն* է ընդ դէմ այլին: - 91. Իսկ սուրբն կիւրեղ մի ասէ վասն անձինն, և *նոյն* ասէ վասն բութեանն: - 91. Ա՛յս է միտքն՝ մի՛ է և ո՛չ բ աստուած և մարդ. և *նոյն* է և ո՛չ այլ և այլ աստուած և մարդ: - 91. Երկրորդ՝ ասեմք եթէ ամենայն մասունք է՛ ի գոյացութենէ բոլորին. և որ ունի *զնոյն* գոյացութիւն, ունի *զնոյն* կոչումն: - 92. Եւ դարձեալ՝ զի մի՛ կարծի միայն յանմարմնութեանն պատկեր հօր, ի վերայ էած և ի լինելութեանն հաւասար աստուծոյ գոլ *նովին* մարմնովն առանց յափշտակութեան: - 93. Որպէս ասի ներտրամադրեալ բանն պատկեր մտացն. *նոյն* և յառաջ բերեալն բան և թանձրացեալ՝ է՛ պատկեր *նորին* և հաւասար մտացն: - 93. Այլ և *նոյն* կերպարանն հօր՝ խոնարհեցոյց զինքն ի մահ. որ կարի վերջինն էր: - 93. Զի որ խոնարհեցաւ բանն ի մարմին՝ *նո՛յն* բարձրացաւ մարմնով. և որ էջն ի ստորինս երկիր, *նո՛յն* է որ ելն ի վերոյ քան զամենայն երկինս. և որ ունայնացաւ՝ *նո՛յն* ելից զամենայն: - 94. Եւ այժմ առ քեզ խօսեսցուք ըստ վկայութեան կարգիս ո՛վ նեստորական երկաբնակ և մարդադաւան որոշօղ քրիստոսի, և որոշեալ ի շնորհաց *նորին*: - 98. Զի ամենայն ճշմարիտ դաւանօղքն զքրիստոս աստուած խոստովանեցան. և ի *նոյնն* նահատակեցան. և առ ճշմարտութիւնն քրիստոս յերկրէ յերկինս վերափոխեցան: - 101. Եւ մեք *զնոյն* դաւանութիւնն պինդ կալցուք անշարժ յուսով ի կեանս և ի մահ և յետ մահու. և նորին խոստացեալ բարեացն արժանի լիցուք ի քրիստոս յիսուս ի տէր մեր: - 101. Եւ մեք զնոյն դաւանութիւնն պինդ կալցուք անշարժ յուսով ի կեանս և ի մահ և յետ մահու. և *նորին* խոստացեալ բարեացն արժանի լիցուք ի քրիստոս յիսուս ի տէր մեր: - 101. Նմանապէս և հասարակն թէպէտ բազում է, այլ երկոտասան գլխով նշանակի. նախ Բնութիւն. որ *նոյն* է էութիւն. ապա Բարութիւն. Կամք. Անմահութիւն. Իմաստութիւն. Լուսաւորութիւն. Գեղեցկութիւն. Անփոփոխութիւն. Ցնծութիւն. Փառք. Իշխանութիւն. և Արարչութիւն: - 105. Նոյնպէս և էութիւնն աստուծոյ ի յէքս բազմացեալ. և աստուած անունն ի բազում աստուածս. և մնացեալ *նոյն* մի աստուած...: - 106. Չորրորդ՝ զի երեքն *զնոյն* բնութիւն ունի զերիցն. նոյնպէս Երրորդութիւնն սուրբ *նո՛յն* է բնութեամբ: - 107. Վասն է՞ր յորժամ փառս տամք, նախ՝ հօր, ընդ *նմին* որդոյ, և ապա հոգւոյն: - 109. Ի դէմս պատճառին՝ *նոյն* է սկիզբն և պատճառ: - 110. Երկրորդ՝ սկիզբն է յարացուցի. և պատճառ էից. պատկեր և նմանութիւն *նորին* յարացուցի: - 110. Որպէս նախ քան զլինիլն մեր՝ էր սկիզբն մեր. և այժմ է՛ *նոյն* սկիզբն. և յետոյ ի կատարածի անփոփոխելի մնայ ի սկիզբն գոլոյ: - 112. Երբեմն նախագաղափար. իբր նախօրինակ. և մեք պատկեր և նմանութիւն *նորին:* - 112. *Նոյն* է և գիր դպրութիւն կենաց. իբր անջնջելի դարձումն ի նախասահմանութիւնն: - 112. Իսկ արձակապէս և գերազանցն՝ *զնոյն* անեղութիւն Երրորդութեանն բացորոշէ: - 113. Երկրորդ՝ ծերն նշանակէ զանսկիզբն

գոլն. և մանուկն զանվախճանն. *զնոյն* միմեամբք՝ և ո՛չ այլ և այլ: - 115. Զի որ անսկիզբն է՝ անվախճան է. և *նոյն* անվախճանն անսկիզբն է: - 115. Եւ այս *նոյն* է ըստ առաջին մտացն: - 117. Եւ զանազանին միով. այսինքն փոփոխմամբ. զի հրեշտակն *նոյն* և անփոփոխ կենդանի է: - 117. Կատարեալ, զի առանց աւելլածոյ և պակասութեան. և Անփոփոխ, զի տեսութիւնն աստուծոյ *նոյն* է: - 118. Իսկ շնորհականն է ընդդէմ այսոցիկ. զի պարզ և միեղէն իմացմամբ բարձրանայ յաստուածային գիտութիւնն. և այնպէս ի զարմացման լինի տեսութեամբ *նորին:* - 120. Այսպէս և տեսականն որ է բանականն՝ սկսեալ է ի ճշմարտութենէն որ է՛ բանն աստուծոյ, և կատարի առ *նոյն* ճշմարտութիւնն: - 121. *Նոյն* պարզ և աստուածային բանն է ճշմարտութիւնն. որ ո՛չ ունի ինչ ստութիւն և հակառակ իւր: - 121. Նախ՝ զի *նոյն* ուրացական մասնիկն այն՝ այսինքն ո՛չն՝ ներգործէ՛ զուրացումն և զբառնալն: - 124. Պատասխանեմ առաջնոյն, թէպէտ մի և նոյն ուրացական մասնիկն որ է ո՛չն՝ գործէ՛ զուրացումն և զբառնալն, այլ ուրացումն և բառնալն ո՛չ է *նոյն*. զի բազում պատահի որ գործին *նոյն* է որպէս ձեռն. այլ գործելն ո՛չ է *նոյն*. որպէս կտրելն և կարելն: - 124. Երկրորդին պատասխանեմք եթէ՝ ո՛չէ *նոյն* դրութիւն և խոստովանութիւն. որպէս յորժամ ասեմք դնելով թէ՝ չա՛ր է. խաւա՛ր է. և մե՛ղք է. ահա այս ուրացութիւն է և պակասութիւն: - 124. Երրորդ՝ զի *նոյն* են բնութեամբ: - 125. Երկրորդ՝ ես եմ սկիզբն և կատարած ամենայնի. զի ի բանէն աստուծոյ եղեն ամենեքեան և ի *նոյն* բանն վախճանին: - 129. Հինգերորդ՝ ոտքն են հաւատացեալք և առաքեալք *նորին*. և գլուխ է քրիստոս. զի անդամք և մարմին եմք նմա ըստ առաքելոյ: - 130. Չորրորդ՝ զի թէ պատւական նիւթով երևէին որպէս արեգակն՝ հուր՝ ոսկի՝ և ակն. գիտէաք թէ *զնոյն* բնութիւն ունին, և ո՛չ այլ ինչ գերիվերոյ: - 132. Որև այժմ ի յեկեղեցի ի *նոյն* խորհուրդ՝ սերոբէին պատկեր որ է քշոցն՝ ի ձեռն սարկաւագին աւանդի՝ որ է՛ մաքրօղն. և երրորդ կարգ յետ քահանային և քահանայապետին: - 135. Նմանապէս և ի միջին կարգ քահանայապետութեանն՝ առաջին է տէրութիւնքն. և ապա զօրութիւնք. և ընդ *նմին* իշխանութիւնք: - 135. Դարձեալ՝ առ հրեշտակս մի և նոյն իմացումն աստուածային՝ է՛ սրբութիւն՝ լուսաւորութիւն՝ և կատարումն նոցա. զի աստուածային գիտութիւնն սրբէ յառաջին տգիտութենէն և լուսաւորէ՛ զնոսա, և կատարին *նոյն* հանճարովն: - 139. Իսկ առ հրեշտակս բոլոր շարժումն է *ի նոյնէ ի նոյն*. որպէս անիւն զոր ետես եզեկիէլ. այսինքն ի *նոյն* աստուծոյ են սկսեալք, և ի *նոյն* անվախճանապէս մնան: - 142. Իսկ ուղիղ՝ զի իջանեն առ երկրորդսն նախախնամապէս ո՛չ *ի նոյնէ ի նոյն*, այլ ի միոյ ի միւսն: - 142. Ուստի բնութիւն նոցա էր անմարմին և լոյս և անմահ՝ և մնաց ի *նոյն*: - 147. Եւ լուսաւորիչն մեր *զնոյնս* երկրորդէ: - 147. Նախ՝ յորժամ սերոբէն ասէր սուրբ, և միւսն երկրորդէր *զնոյն*...: -147. Եւ յոհաննէս զսա օդո՛յ դասէ. վասն այն *նոյն* անուամբն՝ պօղոս իշխան օդոյս կոչէ. կամ զի յօդս են բնակեալ և իշխեն մարդկան: - 150. Եօթն գլուխն է է չար զօրութիւն *նորին*...: - 151. Զի զորս քրտամբք և աշխատութեամբ յաղթէ՝ *զնոյն* պսակն ի գլուխն իւր դնէ: - 152. ...նոքա *զնոյն* պսակն ժուժկալութեամբ և առաքինութեամբ ընդունին ի գլուխս իւրեանց...: - 52. Վասն լուսոյ և բարութեան *նորին:* - 154. Վասն լուսնի՝ և յատկութեան *նորին:* - 154. Յատկութիւնք գարնան և ամարան, աշնան և ձմերան *նոյն* թուով: - 154. Յատկութիւնք հրոյ քսան գլխով. և հակառակ գործոյ *նորին:* - 155. Վասն երկրի՝ և նշանակութեան *նորին:* - 155. Վասն լուսոյ դրախտին. և զի անպական է դրախտն և պտուղ *նորին:* - 155. Երկոտասաներորդ՝ զի սուրբքն բանիւ մեզ ուսուցանեն՝ նեղութեան և փորձանաց համբերել. պատրին ինքեանք գործով կատարել *զնոյն*. զի հաւատարիմ լիցին բանք նոցա: - 159. Եւ զոր կամի՝ *զնոյն* և առնէ և կարէ. և զոր ո՛չ կամի՝ ո՛չ առնէ և ո՛չ կարէ: - 163. Իսկ առ աստուած կամքն և կարն հաւասա՛րք գոն. վասն որոյ հակադարձին ի միմեանս. զի զոր ինչ կամի՝ կարէ՛. և զոր կարէ՝ *զնոյն* և կամի՛: - 163. Երրորդ զանազանութիւն՝ զի թէ շինի տաճարն և թէ ոչ՝ առաջին սկիզբն որ ի միտքն մնայ՝ *նոյն* ո՛չ առաւելու և ո՛չ նուազէ: - 163. Ասելի է թէ՝ կոյսն և ապականեալն են հակակայք ըստ ունակութեան և պակասութեան. որպէս երեսք և կուրութիւն. որոց ի լինիլն համահետևին երեքին սոքա. այսինքն ժամանակն, և մասն, և *նոյն:* - 165. Մասն՝ զի *նոյն* մասինն որոյ էր ունակութիւն՝ *նորին* եղիցի և պակասութիւն: - 165. *Նոյն*՝ զի *նոյն* ունակութիւնն եղև *նոյն* պակասութիւն: - 165. Ապա յա՛յտ է զի կուսութիւնն է ունակութիւն. և ապականութիւնն պակասութիւն *նմին:* - 165. Դարձեալ ասեմք թէ՝ ամենայն մեղաց մտածումն՝ զղջո՛ւմն է *նորին*. իսկ պոռնկութեան մտածումն՝ վերստին նորոգո՛ւմն է ախտին: - 166. ...և *նո՛յն* բանն էր յառաջ բերեալս և գրեալս որ էր նախ ի խորհուրդն: - 169. Եւ թէպէտ ի յէութիւնս իւրեանց յետոյ, սակայն ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ, գոյին յառաջ քան զլինիլն իւրեանց էութեամբ, և յետոյ եղեն ըստ *նոյն* նմանութեան: - 172. Եւ վասն զի բնութիւնն

հարկաւոր է և *նո՛յն* առ ամենայնսն յաղագս որոյ ամենայնքն ի հարկէ *զնո՛յն* գործեն: - 173. Չորրորդ՝ զի ծնանիմք ի բարի կամացն աստուծոյ յառաջ գիտութեամբ *նորին*. և ապա գոյանամք արդեամբ և գոյացութեամբ ըստ իւրաքանչիւր տեսակաց: - 179. Զի ըստ իմաստ *նոյն* է՛ աստուած ամենայն ուրէք և ո՛չ ուրէք. ոչ ի տեղւոջ իմիք՝ և ո՛չ բացեայ ի տեղւոջէ իմիք. այլ վերոյ սորա, և ներքոյ սորա. ի մէջ սորա, և արտաքոյ սորա: - 180. Մերձ եկեալ ի *նոյն* կենդանակերպն՝ սակաւ լոյսն առնու ի նմանէ յարևելից կողմանէ. թէպէտ մեզ ի յարևմտիցն երևի. այլ նմա՛ արևելից մասն է որ զլոյսն առնու: - 187. Եւ գիտելի՛ է, զի ընդ ամենևին հեռանալն լուսինն խաւարի. և ամենևիմբ մերձ եկեալ ի *նոյն* կենդանակերպն և ուղղապէս ընդ դէմ անցեալ արեգականն՝ խաւարէ՛ զնա. զի ընդ դիմատիպ է անօթ լուսնոյն: - 187. Եւ զի ո՛չ հանապազ խաւարին. զի ո՛չ միշտ ընդ *նոյն* շաւիղս ընթանան. թէպէտ հանդիպին ընդ *նոյն* կենդանակերպն: - 187. Զի յարևելից կիտէ՛ ի *նոյն* կէտ շրջեալ՝ լինի օր մի. որ է իդ ժամ. երկու ժամ միոյ կենդանակերպի: - 190. Այսպէս և կատարումն մասանց լուսնին ի տումարս մեր է և ո՛չ ի յենթակայն *նորին:* - 192. Երկրորդ՝ զի մի և նոյն օր կատարի դարձմամբ արեգականն ի կիտէ՛ ի *նոյն* կէտ արևելից: - 193. Ութերորդ՝ *զնոյն* բնութիւն լուսոյ ունի: - 196. Իսկ ամառն *նորին* նման. զի հունձք է և կատարած գործոց բարեաց. և ո՛չ ժամանակ սերմանելոյ կամ բուսանելոյ: - 198. *Զնոյն* յայտնէ և ի մերս. զի ուրբաթ ասի որ է՛ կազմութիւն: - 200. Զորօրինակ՝ լիտր մին շաքար ի լիտր մին ջուր անկեալ, *նոյն* մին լիտր մնայ կշռեալ: - 202. *Նոյն* և սա՛ գոլորշի՛ է վերացեալ հողմոց. և մերձեցեալ ի հուռն՝ վառի՛ ի նմանէ. և բռնութեամբ հողմոյն վարեալ երևի իբրև զթռիչ աստղ և փութով շիջանի: - 203. **Իսկ Եղեա՛մն է *նոյն* ցօղն թերասառոյց ի վերայ երկրի**: - 205. Երրորդ՝ զի ջուրք ծովուն բա՛րձր է քան զերկիր. վասն որոյ հա՛րկ առնէ և ի վե՛ր մղէ և ապա՛ հեղու յերկիր. **զորօրինակ մարդիկք ի բարձրագոյն լերանց իջուցանեն զջուրն, և ըստ *նոյն* չափոյ ի միւս կողմն ի վեր հանեն սակաւ ինչ պակաս:** - 209. Երկրորդ՝ զի վերին մասն օդոյն պա՛րզ է. և ներքին մասն մերձեալ ի յերկիր՝ թանձրանայ ի չորութեանց *նորին*. և ջերմութիւնն խառնեալ ընդ այն՝ առաւել շող լինի: - 211. Ոմանք թուզ ասեն. թէ ի *նոյն* ժամն որ կերաւ և մերկացաւ՝ և կարեաց ի տերևոյ նորա. և վկայ բերեն թէ՝ վասն այն անէծ զթզենին յերուսաղէմ: - 224. Նոյնպէս և վերջին հուրն *նովին* չափով հեղեղին ի *նոյն* տեղիսն ընթանայ: - 225. Տասներորդ՝ զի յայսմանէ հաստատեսցի ի մեզ հաւատ յարութեանն. որպէս զառաջինն ի հողոյ ստեղծ զմեզ, դարձեալ ի յարութեանն ի *նոյն* հողոյն լուծեալ և փոշիացեալ՝ յարուցանէ աստուած: - 229. Զայս ցուցանէ դէմք ի *նմին* կողմն, և զոտս յառաջ փոխել և զձեռս: - 234. Եւ բնական, Նա՛խ այսպէս. զի ամենայն իր մարմնական ի *նոյն* տարերաց են բաղկացեալ. վասն որոյ ունին նմանութիւն առ միմեանս: - 236. Սեռիւ *նոյն*, որպէս եզն և ձի: - 236. Եւ ըստ ա՛յսմ է տարբերութիւնն և յատուկ և պատահումն *նոյն* գոլ: - 236. Եւ ևս, զի **գ** դէմք Երրորդութեանն սուրբ՝ *նոյն* և նման գոն միմեանց: - 237. Ասեմք թէ՝ *նոյն* է պատասխանին. զի պատահումն առ մե՛զ հանդիպի. այլ առ աստուած ոչ ինչ է պատահմամբ. այլ ամենայն ինչ գիտութեամբ. զի ո՛չ տերև մի ի ծառոյ անկանի առանց գիտութեանն աստուծոյ: - 237. Որպէս ասեն զշամիրամէ թէ՝ յորժամ սպանաւ արա ի պատերազմին, զայլ ոմն նման *նորին* պատուեաց և ասաց թէ աստուածքն յարուցին: - 238. Եւ սուտ առաքեալք զճշմարտիցն կերպանային. և այն զի ո՛չ ունէին *զնոյն* տիպ. իսկ թէ ունիցին *զնոյն* տիպ՝ ո՞րչափ ևս: - 238. Արևմտիցն ընդ դէմ *նմին* հո՛վ է և չոր: - 240. Յիւսիսայինն ընդդէմ *նմին* հո՛վ է և գէջ: - 240. Եւ *նոյն* ջիլն կապէ՛ և շարապնդէ՛ զամենայն յօդուածս ոսկերացն: - 244. Ի ժամ յղացմանն՝ եթէ ի ծնողացն՝ եթէ ի ժամանակէն՝ և եթէ յախտից՝ որ տարր և յաւելու ի խառնուածն, *նոյն* որակ գունով ծնանի զաւակն: - 245. Եւ այսմ պատճառ անհա՛ս է մտաց մարդկան. միայն անքննին դատաստանին աստուծոյ է տալի. և անհետազօտելի ճանապարհաց *նորին*. որև սակաւիկ մի յառաջ ասացաւ: - 252. Եւ դարձեալ *զնոյն* շնորհաց հոգին յետ յարութեանն փչեաց յառաքեալսն...: - 253. Պատասխանեմք եթէ, սերմնական զօրութիւնն որ է՛ ի մեզ, *նոյն* է սկիզբն գոյութեան մարդոյ: - 254. Եւ յորժամ ձևանայ դէմքն, ի *նոյն* ժամն երևի յինքեան պատկերն մարդոյ: - 255. Պատասխանեմք եթէ **դ** իրաց պակասութիւն, խափանէ՛ զկենդանութիւն *նորին:* - 256. Այլ հատանի նիւթն ունելով առ ինքն զբոլոր կենդանութիւն. և լինի նիւթ ա՛յլ մարմնոյ *նովին* կենդանութեամբն զոր ունի առ ինքն: - 257. ...տնկեալ ճիւղն *նոյն* կենդանութեամբն բուսանի զոր ունի առ ինքն: - 257. Ասեմք առ այս. զի թէպէտ ա՛յլ է գործ ստեղծման և ա՛յլ նախախնամութեան. զի ստեղծանելն է առնել իր ինչ ի յոչընչէ. և նախախնամելն՝ զեղեալն փոխանորդութեամբ ի *նոյն* տեսակն պահել: - 257. Այլ արդ՝ նախախնամութեամբ է տնկականն և զգայականն. որք փտելով և զնմանս ծնանելով պահեն *զնոյն* տեսակն: - 257. Եւ իւրաքանչիւր ոք

ծննդեամբ յառաջ եկեալ առնու *զնոյն* պատկերին շնորհ ի ծագմանէն աստուծոյ. և լնուն *զնոյն* թիւ որքանութեան զոր ետես աստուած նախքան զլինինլն աշխարհի որպէս ասէ առաքեալն: - 258. Իսկ որ հասարակն է սոցա և պատշաճաւոր, ունին *զնոյն* հասարակութիւն բուսոց ի *նոյն* ժամանակս: - 261. Եւ որպէս սիրտն նա՛խ գոյանայ, նոյնպէս և յետո՛յ մեռանի վասն ջերմութեան *նորին:* - 261. ...կատարեալ հոգին բանական ի *նո՛յն* ժամն խառնեալ միաւորի ընդ մարմնոյն տարրական...: - 262. Այսպէս և շնչականն գոյացեալ ի **հ**երրորդ աւուր՝ կիսակատար գոլով բանականին *զնոյն* ունի խորհուրդ: - 262. Եւ թէպէտ զնանիր խոտոյ ասեն ի *նոյն* ժամն բուսանիլ և կատարիլ և խամրիլ, ի *նոյն* թուոյս ոչ ելանէ ժամուք կամ մասամբք: - 263. Այլ և յաւելեալ ի վերայ զշարժականն և զշնչականն և զգասմնականն և զցանկականն, ընդ *նմին* և զկազմողական նիւթն և զտնկականն, որ լինի **ժը**...: - 263. Եւ աւելի և պակասն է ի *նոյն* թիւն չորից և երից. եթէ աւուրց և եթէ ժամուց մինչև ի ճանճ և ի մժեխ: - 263. Զի բոյսք մանունք և չորքոտանիք մանունք կարեն ի *նոյն* ամի զնմանն ծնանիլ ըստ վերոյ ասացեալ երրեակ թուոյ ամսոյ, կամ կրկին վեցեկի: - 264. Զի մանունքն յամսօրէից և ի վայր, ի շաբաթս և յաւուրս և ի ժամս ըստ *նոյն* թուոյ կարեն զնմանն ծնանիլ. և առաւելքն առաւելեալ ամօք կրկին կամ երեքկին որպէս ասացաք: - 264. Խնդրեմ և զայս ուսանիլ թէ ընդէ՞ր է՝ զի մարդս կատարեալ կենդանի է քան զանասունս. և յորժամ ծնանին նոքա ահա՛ ի *նոյն* ժամն կանգնին յոտից վերայ և գնան, և այլն. իսկ մարդն ոչ: - 266. Երրորդ՝ ըստ հիւթին յաւելւածոյ՝ և պակասութեան մաղձիցն՝ ի ներքուստ կամ յարտաքուստ, ջերմ և ցուրտ և այլն, *զնորին* նմանն և զկերպարանն առնու առ ինքն: - 268. Ի *նոյն* խոկալով սիրել զնա՛ և ատել զհեշտութիւն զգայութեանցս: - 269. Ճար՝ զկատարումն ասէ. և ստուգաբանի՝ անճար և անխափան լինի կատարումն *նորին:* - 270. Քսանն**ե**, ասէ լուսաւորիչն մեր, թէ ձև մարդոյ երևեցաւ ի ստեղծանելն, զոր առնելոց էր *զնոյն* մարմին յետոյ ժամանակի. և ի *նոյն* պատկերն արար զմարդն: - 272. Իսկ մարդն ասի պատկեր աստուծոյ ըստ նմանութեանն. վասն զի ո՛չ ունի *զնոյն* էութիւն. այլ զնմանութիւնն աստուծոյ: - 273. Եւ դարձեալ՝ որպէս ձու հաւի և ձու քարեայ՝ նման ասին միմեանց, այլ ո՛չ պատկեր. զի ո՛չ են ի միմեանց ելեալ. և ո՛չ *զնոյն* էութիւն ունին: - 273. Եւ ապա զի յոչնչէ եղեալն կարէ՛ նմա և ի *նոյն* փոխիլ եթէ կամքն աստուծոյ թոյլ տացէ: - 274. Զի որպէս որդի՛ է ի հօրէ *նոյն* բնութեամբ. և մարդն ի մարդոյ *նոյն* բնութեամբ: - 275. Եւ որ ոք կամեսցի զդարձն, անդրէն ի ձեռն *նորին* յարմարութեան այսինքն *նորին* կարգին կարողանայ ելանել ի *նոյն:* - 280. Ա՛րդ՝ որ ոք կամեսցի ի *նոյնն* ելանել և առ քրիստոս լինիլ, պատշա՛ճ է ի վերջնագունէն սկիզբն առնել որպէս սանդղօք: - 280. Վասն տապանակին և խորհրդոց *նորին*. և այժմ ո՞ւր է տապանակն: - 284. Եւ յորժամ կորոյս զդրախտին կեանքն, այլ ոչ հասին ի *նոյն:* - 290. Եւ այլք ասեն ընդդէմ այսմ, եթէ յետ **ռ** ամին ի դրախտէն փոխիլոց էին յարքայութիւնն թէ պահէին զպատուիրանն. և յորժամ ելին ի դրախտէն՝ ի *նոյն* թիւն ո՛չ հասին: - 290. *Նոյն* պատճառ է և ո՛չ գիտելոյ զկատարած կենցաղոյս: - 292. Արդ որպէս հաւատով իմանամք հաստատեալ զյաւիտեանս որպէս ասէ առաքեալն. և *նովին* հաւատով իմանամք զկատարած կենցաղոյս և զյարութիւն մեռելոց և զդատաստան հատուցմանն: - 292. Եւ **ծ** ամն՝ որ առ որդւով *նորին* կոստանդեաւ յերկնից լուսափայլեալ ի լեռնէն ձիթենեաց մինչև ի սուրբ գողգոթա: - 294. Եւ ի միւս տարին ի *նոյն* քանիս ամսոյն որ մտին ի *նոյնն* ելին ի տապանէն: - 294. *Նոյնդ* է պատճառն որպէս կնոջ զենեալն ո՛չ ուտի: - 296. Եւ երրորդ՝ զի մի՛ վասն աշտարակին ի *նոյն* տեղին մնասցեն՝ և աշխարհ ամենայն աւերակ կացցէ: - 298. Եւ քրիստոս թագաւորն վերնոյն եէ մի՝ *զնոյն* խաղաղութիւն ետ առաքելոցն զոր ի ծննդեանն հրեշտակք երգէին: - 302. Եւ տէրն վերջին ի լրումն օրինին ի *նոյն* քանիսն եղեալ հրամանին. զի ո՛չ ելոյծ զօրէնսն, այլ էլից: - 305. Տասներորդ՝ և որպէս իսահակ նախասիրէր զանդրանիկն որդի, բայց յետոյ ետ զօրհնութիւնն *նորին*՝ որդւոյն կրսերոյ: - 305. Եւ տէրն եբարձ ի յուս իւր զփայտ խաչին մինչ ի *նոյն* տեղի գողգոթային ուր զենանէր իսահակ: - 306. *Նոյն* և որ հատանի ի ստենէ. և աւազան կրկին ո՛չ է: - 308. Ութերորդ՝ անդրանիկք են ըստ մարմնոյ վերակացուք և տեարք. որպէս թագաւորք, և իշխանք. *նոյն* և առաջին ծնունդք ելեալ յարգանդէ՛: - 309. Նա՛խ՝ զի յանդրանիկ տեսութիւնս իւր ընտրեաց զնոսա յառաջ քան զլինիլն աշխարհի, և յետոյ *զնոյն* անդրանիկսն պատուեաց: - 309. Ըստ կարգի է, զի *նոյն* հոգի և *նոյն* մարմին յառնէ: - 314. Յորմէ վստահացեալ կոչեն զնա *նովին* անուամբն: - 315. Իսկ թագաւորք յամենայն ամի *զնոյն* առնեն ուրախութիւն. ուտել և ըմպել և հեշտութիւն մարմնոյ. որպէս փարաւօն առնէր և հերովդէս: - 321. Երրորդ՝ զի մարմնոյն յիշեցուսցէ *զնոյն* ունել բնութիւն, և ո՛չ այլ ինչ աւելի: - 323. Երրորդ՝ ցուցանէ զգողացեալն ի բանից, *զնոյնն* կրկնել և շրջել պատասխանելով: - 323. Երկրորդ՝ առաջին վկայութիւնն

վասն արդար գործոցն. կրկինն վասն համբերութեան *նորին:* - 326. Վեցերորդ՝ ծեռն հօր է՛ միածին որդին որել ի ծոցոյ հօր և էառ զօձաձև բնութիւնս մեր. և դարձեալ ել առ հայր, ի *նոյն* բնութենէն ո՛չ կացեալ ի բաց: - 333. Երրորդ՝ կեղն և խաղաւարտն եղև և ի կախարդսն և զայլ հարւածսն կրեցին. և ո՛չ կարէին ի մովսէս և յահարոն դարձուցանել *զնոյնս:* - 335. Եւ *նոյն* գաւազան յարմատոյն յեսսեայ. և բուրվառն հօր ի հոտ անուշից: - 345. ...և **բ** Ակունք ուսոյն՝ կրկին կիսագունդք երկնից. ունելով **զզ** կենդանակերպս. և Վակաս լանջացն բժան ակամբք *նոյն* կենդանակերպք ի լանջս երկնից Միթրն՝ պսակ քահանայապետութեան. և Թիթեղն՝ մտաց թեթևութեան: - 348. Եւ զոր ինչ լինելոց էր ի տարին, ի *նոյն* կերպարանս փոխեին և ակունքն: - 349. Հինգերորդ՝ ի խորհուրդ սրբութեան. զառաջինն պարգևէ՛ աւազանաւն. և յետ մեղանչելոյն ապաշխարութեամբ և վաստակօք պարգևէ՛ *զնոյնն:* - 350. Զայս ասէ մեծն ներսէս երեք քառասունք մովսէսի ըստ թուոյ ամաց *նորին:* - 353. *Զնոյնս* պահեմք և մեք **գ** քառասունք: - 353. *Նոյն* և տեռատեսին: - 359. *Նոյն* և Իւղ զուարթարար. և նիւթ լուսոյ և շնորհաց: - 361. Դարձեալ՝ իւղով զանգեալ բաղարջն և *նոյն* չափ իւղովն որ չափ մասն գինւոյն. այն է՝ զի ընդ օրհնութեան բանին աստուծոյ՝ և հոգին սուրբ իջանէ ի հացն և ի բաժակն և կատարէ՛ մարմին և արիւն քրիստոսի: - 361. Այլ զանբան պատարագն ուսան հեթանոսք և կռոց մատուցին. և այն սովորութեամբն իսրայէլ մատոյց աստուծոյ զանբան կենդանիս մինչ եկն քրիստոս և եղև ինքն բանաւոր պատարագ, և *զնոյնս* աւանդեաց մեզ: - 362. Հինգերորդ՝ կրկին ողջակէզն. մին պատարագն է ամենայն աւուր. և միւսն տօն չարչարաց խաչի և մահու յամենայն ամի՛ զոր *նոյն* խորհրդով կատարէ՛ եկեղեցի: - 363. *Զնոյն* և ի նորս տէրն հրամայէ, «արժա՛ն է մշակն կերակրոյ իւրոյ»: - 363. Ի *նոյն* խորհուրդ նոր մանկունք յարգանդի մօր եկեղեցոյ սնանին: - 363. Ութերորդ, ի մարմնոյն է և մնայ ի *նոյն*. և մեղքն ի մարդոյն է և մնա՛յ ի նա: - 367. Երկրորդ, թէ *նոյն* մնայր՝ այրէին: - 367. Որ յետ խոստովանութեան դառնայ ի *նոյն* մեղս, իբր շուն դառնայ ի փըսխած իւր. և սա՛ ևս այրի հրով. զի զառաջինն ևս խնդրեսցեն ասէ առաքեալն: - 367. Ոմանք ասեն՝ գործ մեղաց մնաց *նոյն*. այլ գործ սրբութեանն փոխեցաւ ի հոգևորն: - 369. Այլ մեղքն հոգեկան *նոյն* է աստ և անդ. որպէս շնալ և գողանալ: - 369. Զի իրն փոխեցաւ ի ճշմարտութիւն, և խորհուրդն մնաց *նոյն*. որպէս ջուրն և խունկն. իւղն և նաշիհն: - 369. Երրորդ՝ զի աւետարանիչքն յայտնապէս ասեն թէ՝ ընդ մկրտիլ տեառն՝ *նոյն* ժամայն հոգին հանէ՛ զնա յանապատ. և պահեաց զ**խ** տիւ և զ**խ** գիշեր: - 373. Եւ որպէս ի տաղաւարքն կողերս՝ տերև՝ և ոստ մատուցանէին. *զնոյն* և քրիստոսի մատուցին յաւուրն ողոգոմեան ի գալուստ *նորին* յերուսաղէմ: - 374. Եւ *նոյն* այս որ շահ և գլուխ խնդրի, բաժանի յերեք: - 375. Եւ նախ **գ** օրն. **գ** գոյացութիւն *նորին*. այսինքն աստուածութիւնն՝ հոգին՝ և մարմինն միաւորեալ մի: - 380. Եւ ոմանք ի *նոյն* ժամն ասեն հասանիլ յիւրաքանչիւր օթևանս: - 391. *Զնոյնս* նշանակէ **բ** ցեղն յայնկոյս յորդանանու. որք այլոցն պատերազմակից եղեն, և ապա՛ ի միասին զժառանգութիւնն առին: - 394. *Նոյն* և երկիրն վերինն երուսաղէմի յանեզրական ծովէ՝ յամպոյ հոգւոյն և շնորհացն իմաստութեան ոռոգի. վերին և ներքին դասք հրեշտակաց՝ և մարդկան: - 398-399. Եւ հայրազեղծն որ հարկանէր զծնօղ, զանիծից փայտէ կախէին, և ի *նոյն* օր ի գերեզման իջուցանէին զի մի՛ պղծեսցին: - 400. Ա՛րդ՝ ի *նոյն* օր զանիծեալ հայրազեղծն հանէին ի փայտն անիծից վասն հօրն: - 400. Այլ մեք այսպէս խոստովանիմք զքրիստոս. որդի աստուծոյ բնութեամբ. և *զնոյն* որդի մարդոյ բնութեամբ: - 402. Չորրորդ՝ այժմ տեսանեն աչօք զեկեղեցի սուրբ որ զկախեալ ի նոցանէ՝ աստուած հաւատայ *զնոյն* մեռեալ և կենդանի, և ո՛չ հաւատան: - 405. Եւ է՛ ինչ ի մեկնչաց ուղղեալ. այլ միտքն *նո՛յն* է: - 407. Եւ սպառնալիքն աստուծոյ և մարդկան ո՛չ են նման. զի մարդոյս դատարկ բան է. իսկ սպառնալիքն աստուծոյ՝ է՛ բան զարհուրական. յորմէ լսօղքն զերծանին, և անլուրքն ըմբռնին ի *նոյն:* - 408. Յետ վախճանելոյն Մովսէսի՝ առաջնորդեաց ժողովրդեանն փոխանորդ *նորին* Յեսու որդի նաւեայ. ի ցեղէն եփրեմի: - 414. *Նոյն* և եղիսէոս. այլ ո՛չ յետս դարձաւ: - 414. Ոմանք ասեն միայն զլուսաւորս արգելեալ և զկամարն շրջեալ մինչ հասեալ ի *նոյն* կէտն: - 416. Իններորդ՝ հանեալ ի գետոյն բժան վէմս շինեաց սեղան. և *նոյն* թուով խորասուզեալ ընկղմեաց: - 418. Քսանն**ը**՝ զոր ինչ պատուիրեաց մովսէս՝ *զնոյն* և արար յեսու: - 419. Եւ զոր պատուիրեաց հայր՝ *զնոյն* և արար որդի: - 419. Եւ ի *նո՛յն* ծնօտէ՛ եհան ջուր և էարբ: - 420. Եւ նոյնպէս ամենայն հաւատացեալք մկրտին. և *զնոյն* շնորհք պարգևաց ընդունին: - 421. Եւ որք գիտեն զտնօրէնութիւն փրկչին, զգեցցին զփրկութիւն *նորին*. զի նա՛ է հզօրն յորմէ ել կերակուր քաղցր: - 422. Թողին և հրէայք զտէր մեր և հաւատան նեռին և ի հուր *նորին* այրեսցին: - 423. Եւ տէր մեր ի *նոյն* այրին յազգէ նոցին ըմբռնեալ. և ի զինաւորս պիղատոսի մատնեալ: - 423. Եւ տէր մեր էա՛ռ *զնոյն* և սրբեաց

և նովաւ զամենայն հրաշագործեաց: - 423. Եւ տէր մեր մարմնով զպատերազմն վանեաւ. և *նոյն* մարմնով մեզ կեանս բղխեաւ: - 423. Կամ *զնոյն* մեռեալ մարմինն ի խաչին. և *զնոյն* կենդանի գոլ աստուածութեամբն: - 423. Նոյնպէս և տկարութեամբ *նորին* կորստական խոնարհութիւն ցուցանի մարմնոյ իւրոյ աշխարհի: - 424. Երկոտասաներորդ՝ զերկանս սպասու մարմնոյ գործեսցէ միշտ և ի *նոյն* մեռանի որպէս սամփսոն: - 424. Զի գա՛յ զղջումն և խոստովանութիւն՝ որ զմեղքն բառնայ և զպատիժն ընդ *նմին*. որպէս հատեալ տունկ՝ չորանան ճիւղքն. որ բոլորով սրտիւ զղջայ և խոստովանի և այլ ո՛չ գործէ: - 432. Երկրորդ՝ զի յորժամ ուխտէ մարդ, ի *նոյն* ժամն դադարի ցասումն աստուծոյ. ապա յորժամ կատարեմք՝ երևի մեզ: - 435. Քսանևե, այսն չար խեղդէ՛ր զսաւուղ. և *նոյն* այսն զորդիսն սաւուղայ յաւուրս տեառն: - 436. Երրորդ՝ զի հատուսցէ զշնութիւնն բերսաբէի անարատութեամբ *նմին:* - 439. Երկրորդ՝ զի ի *նոյն* օրն ո՛չ մեռցի: - 439. Եւ ընդ *նոյն* ճանապարհն ոչ դառնալ, զանդառնալի պատուհասն: - 442. Զի ի *նո՛յն* ամն լինի վախճանն և թագաւորելն: - 443. Իսկ ի մէջ ծնկաց գլուխն՝ այն է, որ զծունկն ի գետինն եդ, և զգլուխն հանդէպ *նմին*. և յայսկոյս և յայնկոյս զձեռսն խաչանման ի գետինն: - 444. Երկրորդ՝ եցոյց թէ նոյնպէս ընդ քե՛զ է լինելոց զօրք հրեղինացն *նովին* հոգւովն: - 445. Եւ եղիսէ *նովին* հոգւովն օրհնեաց և եբարձ զանէծսն: - 445. Արդ յերեքտասան ամէ՛ ովսիա մինչև ցմետասան ամն սեդեկիայ որ վերջին գերեցաւ՝ լինի **խ** ամ. և նաբուգոդոնոսորայն **ի** ամ. և որդւոց և թոռանց *նորին* **ժ** ամ. որ կատարի **հ** ամ մինչև յառաջին ամն կիւրոսի որ արձակեաց զգերիսն: - 447. Եւ վասն է բանից *նորին:* - 454. Եւ մեծն ի ծնունդս որովայնի՝ խրաց մի կօշկաց *նորին* լուծելոյ ոչ բաւէր: - 456. Որ և նովաւ զնորայս վասն նորա խօսեսցուք. և ի գովեստ մեծութեան փառաց *նորին* յանկեսցուք: - 456. *Զնոյնս* կամի և մեծն դիոնէսիոս՝ նախախնամութեամբն աստուծոյ եղեալ ամենայն արարածոց: - 457. Հինգերորդ՝ ողորմութիւնն երևի ի մարդեղութիւն բանին. և արդարութիւնն ի մահ *նորին:* - 458. Եւ յետ մահուանն մատթանայ՝ մելքի ի ցեղէն նաթանայ որ որդի էր ղևեայ և եղբայր պանթերայ, առեալ *զնոյն* կին մատթանայ և ծնաւ զելի: - 460. Սովիէ ի *նոյն* բեթլէհէմ ծնաւ զեղիսաբեթ մայր մկրտչին...: - 460. Զոր պարտ է մեզ *զնոյն* առնել: - 466. Եւ *նոյն* է տէրն և աստուածն գոլ. ապա ուրեմն կոյսն սուրբ մայր է տն և աստուծոյ: - 466. Իսկ նորն ադամ *նոյն* ի **զ** դարուն յա՛յց ել և խնդրեաց զկորուսեալ պատկերն ի թիւ խորհրդաւոր կատարեալ վեցերորդին: - 467. Զի մարդն ցանկացաւ գիտութեանն աստուծոյ որ է յատուկ որդւոյ՝ և անկաւ. նոյնպէս *նովին* գիտութեամբն պարտ էր և կանգնիլ: - 468. Յետ որոյ ծնեալ ի *նոյն* կուսական արգանդէ և ո՛չ յայլ ինչ մասնէ: - 469. Ասեմք եթէ՝ ապացոյցն ո՛չ ամենայն իրօք է նման. ապա թէ ոչ՝ լինէր *նոյնն*. վասն որոյ նոյնքանաբար տեսանի աննմանութիւն օրինակին առ ճշմարտութիւնն: - 478. Զի յիսուս քրիստոս երէկ և այսօր՝ *նոյն* և յաւիտեան: - 478. Երկրորդ՝ զի երկրորդ ադամ եղև զպարտիս *նորին* վճարելով, պարտ էր ի կերպս ադամայ երևիլ: - 480. Յառաջագոյն ամենայն ազգք քրիստոնէից սկսեալ յառաքելոցն այսպէս տօնէին. ի վեցն յունվարի զծնունդն, և ի *նմին* աւուր զմկրտութիւնն ըստ աւետարանին վկայութեան: - 482. Եւ որպէս կարգեաց տեառն եղբայրն յակոբոս զընթերցուածն. և ի *նմին* աւուր զերկու տօնս: - 482. Քանզի ո՛չ կարէին ի միում աւուր յերկոսեան ուխտսն կատարել զտօնսն հեռի գոլով ի միմեանց. երուսաղէմացիքն այսր աղագաւ փոխեցին. և փոքր փոքր աճմամբ ընկալան և ա՛յլ եկեղեցիք *զնոյն:* - 482. Իսկ հայաստանեայ քրիստոս որպէս ուսան ի սրբոյն գրիգորէ՝ անփոփոխ կացին ի *նմին:* - 482. Առնեն ի սեպտեմբերի **իէ** զպապանձումն զաքարիային. և ի *նմին* աւուր զյղութիւնն եղիսաբեթի: - 483. Ուստի եղև պապանձեալ զաքարիա ի *նմին* աւուր: - 483. Երկրորդ՝ զի և *նոյն* ղուկաս կրկնէ վասն հաստատութեան...: - 483. Հինգերորդ՝ ի *նմին* իրացն յայտնի է՝ զի ռամիկ ժողովուրդն ի տօնի քաւութեանն երեքօրեայ սրբութեամբ մերձենային առ դուռն տաճարին: - 483. Որ ստոյգ *նոյն* ծննդեան օրն իմանի...: - 484. Եւ այս ամենայն ազգաց յա՛յտ է, որ ի յունվարի վեցն տօնեն մկրտութեան. ապա ուրեմն *նոյն* օրն է և ծննդեանն: - 484. Ութերորդ՝ զի թէ հաւատան աւետարանին և ոչ ստեն **լ** ամաց գալ քրիստոսի ի մկրտութիւն, ի հարկէ՛ պա՛րտին կատարել և զմկրտութիւնն ի *նոյն* ի տօնի ծննդեանն իւրեանց ի դեկտեմբերի **իե** որ իցեն ամենևիմբ սուտ: - 484. Երեքտասաներորդ՝ ականատես տնօրէնութեանն եղբայր տեառն յակոբոս որ կարգեաց զընթերցուածն, յունվարի վեցն աւանդեաց զտօնն ծննդեանն. և ի *նոյն* օրն դարձեալ զմկրտութեանն: - 484. Այսպէս և կիւրեղ երուսաղէմի՝ համախոհ *նմին:* - 484. Երկրորդ՝ ասելն «է» նշանակէ՛ զմշտնջենաւոր գոլն. ըստ այնմ «յիսուս քրիստոս երէկ և այսօր *նոյն* և յաւիտեան»: - 487. Եօթներորդն է բարձումն խաչին. ի նշան հետևելոյ մեզ *նմին:* - 489. Զոր օրինակ՝ զմահապարտ ոմն թագաւորն հրամայէ՛ դահճին ի բանտ դնել. դարձեալ *զնոյն*

թագաւորն աղերսեն և նա հրամայէ՛ արձակել ի բանտէն: - 492. Եւ ոմանք ասեն թէ՝ յերկնաւոր դրախտն եմուտ հոգւովն մինչ ի կիրակէ մէջ գիշերին. և ի *նոյն* ժամն էջ ի դժոխս և ազատեալ զհոգիսն յարեաւ ի գերեզմանէն: - 495. Զի որ ասի մահ, *նոյն* և նինջ կոչի ի սուրբ գիրս...: - 496. *Նոյն* և իր մահուն խա՛ռն է ընդ բարւոյ: - 496. Զի որ վախճա՛ն է կենաց, *նոյն* և սկիզբն կենաց. այսինքն վախճան ժամանակին, և սկիզբն մշտնջենաւորին: - 496. Վասն որոյ նա՛խ ցուցանել պա՛րտ է թէ ո՛չ *նոյն* է մահ և ապականութիւն: - 498. Այլ բանն աստուած զբնութիւնս մարդկային էառ և միաւորեաց զմասունս *նորին* և ո՛չ զապականութիւն զի ո՛չ է բնութիւն. ապա ուրեմն անապակա՛ն է: - 499. Որպէս դաւիթ ասէ յառաջագոյն. և պետրոս *զնոյն* ի գիրս գործոց երկրորդէ՛ «մարմին նորա ո՛չ ետես զապականութիւն». ապա ուրեմն անապակա՛ն է մարմինն սուրբ: - 499. Ասեմք թէ՝ աճումն մարնոյն ո՛չ է ապականութեան ցոյցք, այլ հակառակ *նմին:* - 501. Զի աճումն զզգայութիւնն զարգացուցանէ. իսկ ապականութիւնն ընդ դէմ *նմին* զգոյն ի նուազութիւն և յոչգոյութիւն փոփոխէ: - 501. Ապա թէ ոչ՝ նա՛ որ զադամ երեսնամեայ ստեղծ, կարէ՛ր և *նոյն* հասակաւն ծնանիլ. այլ այն ո՛չ լինէր ըստ սովորութեան մեր որպէս ցուցաւ ի վերոյ: - 501. Վասն որոյ *զնոյնս* գործեաց ի դժոխս: - 503. Իսկ հոգիքն ի դժոխս յորժամ տեսին զքրիստոս, այն էր ժամանակ փրկութեան նոցա և ընդունելոյ զողորմութիւն. յաղագս որոյ հաւատովք արդարացան նոքա միայն ի *նոյն* ժամն: - 508. Եւ դարձեալ՝ դարձցին մեղաւորք անդրէն ի դժոխս թէ ի *նոյն* տեղի ըստ ոմանց...: - 508. **Եւ տե՛ս, զի լուսաւորիչն կարգեաց զնաւակատիսս յայսմ աւուր որ էր յաւուրս նիկիական ժողովոյն. զոր յառաջն ունէին ամենայն ազգ, *զնոյն* կարգեաց մեզ**: - 509. Վեցերորդ վկայ *նոյն* ինքեանք ազգն Ֆռանկաց. որ յամենայն շաբաթ օր վիճիլ ասեն. և միս ո՛չ ուտեն ի խորհուրդ նաւակատեաց մեծի շաբաթուս: - 509. Նա՛խ այսպէս, եթէ ի վերնատունն քրիստոս ծունկն եկեր. պա՛րտ է ի *նմին* աւուր ծունկն ուտել: - 510. Եւ **ե** անգամ ի *նոյն* օրն յորում յարեաւ ի գերեզմանէն. որ լինի **ժ** անգամ: - 511. Եւ ի *նոյն* ժամն ի մէջ գիշերի ծնաւ ի կոյս գերեզմանէն: - 512. Եւ յորում ժամու եւ մովսէս յեգիպտոսէ և եհան զժողովուրդն, ի *նոյն* ժամն յարեաւ քրիստոս ի մեռելոց և եհան ազատեաց զհոգիսն ի հրահալոց չարութենէ դժոխոցն և ի բռնութեանց իմանալի փարաւոնին: - 512. Իննև**ժ**՝ պատշա՛ճ էր ի մէջ գիշերի յառնել. զի ի *նոյն* ժամն սկսանի արեգակն բարձրանալ, և յառաւօտն ծագէ՛ առ մեզ: - 515. Այսպէս իմանալի արեգակն քրիստոս ի *նոյն* ժամն յարեաւ ի գերեզմանէն. և ընդ արշալոյսն երևեցաւ իւղաբերիցն և առաքելոց: - 515. Չինգերորդ՝ զի տացէ մեզ համարձակութիւն յուսալոյ ի *նոյն*. այսինքն մտանել մարմնով ի յաւիտենական ժառանգութիւնն: - 519. Վասն է՞ր յորում աւուր տըւան օրէնքն՝ ի *նմին* աւուր և առաքելոց տուաւ հոգին սուրբ: - 524. Նախ՝ զի ցուցանէ թէ որ ետ զօրէնսն՝ *նոյն* առաքեաց և զհոգին և ի *նոյն* տիպն որոտ և փայլատակումն հողմ և հուր երևեալ որպէս անդ ի լերինն: - 524. Եւ վասն աստիճանաց *նորին:* - 526. Յետ այսորիկ հարցանելի՛ է ի նոր օրինաց և յեկեղեցւոյ կարգաւորապէս ընդ մարդեղութեան բանին յարմարեալ. իբր պատճառելիք առ պատճառ *նորին* հետևեալ և շարադասեալ: - 528. Ասեմք առ այս, եթէ անմարմին իր անկատար ո՛չ լինի. զի սոյն բան աւետարանիս *նոյն* կատարեալ բանն է աստուծոյ որ ի մարմնի է միացեալ. և նախ քան զյաւիտեանս ծնեալ: - 529. Եւ թէ ոք ասիցէ, երևի ապա թէ *նոյն* անձնաւոր բանն աստուծոյ է յաւետարանս խօսեցեալ յայնժամ բազմացեալ է անձամբ և գոյութեամբ: - 530. Զոր օրինակ, մի՛ է արեգակն անձամբ և գոյութեամբ, և ի բազում լուսանցս և ի հայելւոջ երևեալ *նոյն* մի անձամբ և գոյութեամբ և ո՛չ բազում: - 530. Դարձեալ զորօրինակ, մարմինն քրիստոսի մի և նոյն էր ի խաչին բևեռեալ, և մի և նոյն մարմինն է ի բազում նշխարս միաւորեալ և ո՛չ բազմացեալ. զի *նոյն* է գոյացութիւն հացին և գոյացութիւն մարմնոյն քրիստոսի: - 530. Ա՛րդ՝ յորժամ ամենայն ինչ *նոյն* է սուրբ Երրորդութեանն, որով յա՛յտ է՝ թէ հայր խօսի, և թէ որդի, և թէ հոգին սուրբ, մի և նոյն բանիւն խօսին. ապա ուրեմն ո՛չ է անյարմար եթէ հայր *նոյն* բանիւն վկայեսցէ ի վերայ որդւոյ. զի որդի և հայր նշանակէ զյատկութիւն անձանցն: - 530-531. Նա՛խ՝ զի իցէ սկիզբն ամենայն մարմնոյն. և զի իցէ յէութենէ *նորին:* - 532. Երրորդ՝ որպէս որք ելեալ ի սահմանէն՝ ո՛չ են ի *նոյն* տեսակն: - 538. Այսպէս. որք ելեալ ի կանոնէն՝ չեն ի *նոյն* կարգ քրիստոնէից: - 538. Զի թէպէտ քահանայն և բանքն *նոյն* է, այլ ո՛չ դիտաւորութիւնն: - 539. Նոյնպէս և աթոռակալքն որ ի չորս աթոռս, ա՛յլ զայլոյ վիճակեալ ո՛չ կարէ կապել և ո՛չ արձակել. նոյնպէս և ի *նոյն* աթոռն, վերջինն զառաջ *նոյն* ո՛չ կարէ փոխել կանոնս և զկարգ: - 541. Իսկ ի համակարգսն վերջինն զառաջ *նոյն* ընդէ՞ր ոչ փոխէ զկանոնսն: - 541. Ասեմք առ այս, եթէ համակարգ և համիշխանք են վերջինն ընդ առաջնոյն ի կարգել և ի յուղղել. այլ ո՛չ ի թիւրել և ի քակել. զի առաջնոյն աւանդապա՛հ է վերջինն *նո՛յն* մտօք և *նո՛յն* կամօք: - 541. Այլ կարէ յաւելուլ ի *նոյն*

տեսակն ուղղութիւն և կարգ: - 541. Որպէս որք յեփեսոս՝ զնիկիականն ուղղութիւն ո՛չ քակեցին. այլ ի *նոյն* տեսակ նոր կանոնս կարգեցին ի հաւատս ուղիղ: - 541. Իսկ համակարգ քահանայք կամ եպիսկոպոսք *զնոյն* ոմն ընդէ՞ր ոչ կապեն կամ արձակեն: - 541. Եւ դարձեալ՝ որպէս բանն աստուած անէծ զադամ, *նոյն* բանն դարձեալ օրհնեաց մարմնովն. թէպէտ մի է գործ Երրորդութեանն: - 542. Եւ որպէս եղիա որ կապեաց զերկինս և փախեաւ ի սիդոն. *նոյն* նմա հրամայեաց աստուած բանալ զերկինս. նմանապէս և այս: - 542. Երրորդ ժողովն զկնի **խբ** ամի եղև յեփեսոս ի թագաւորութեանն թէոդոսի փոքու ի **ժա** ամի *նորին:* - 542. Չորրորդ, առ *նոյն* թագաւորաւն զկնի **իդ** ամի եղև արժանաւոր ժողովն եփեսոսի ընդ դէմ եւտիգի. որ առ աչօք ասէր զէտն մարդանալն: - 542. Եւ երրորդն յաթոռս աղուանից սրբոյն գրիգորիսի շառաւիղի *նորին* հսկողի: - 544. Եւ ի *նոյն* ժամանակս ասի լեալ անիծեալ ժողովն քաղկեդոնի: - 544. ...որ եզր եղև հաւատոյ ուղղութեան. և հրամանաւ հերակլի հաւանեցաւ ժողովոյն քաղկեդոնի. կացեալ **զ** կաթողիկոսք *նոյն* աղանդովն որ են այսոքիկ. Եզր. Մովսէս. Անաստաս. Իսրայէլ. Սահակ. Եղիա: - 545. Եւ տէր սիոն հայոց կաթողիկոսն անդր հասեալ բազում եպիսկոպոսօք և մեծամեծ ազատօք հայոց և իշխանօք *նոցին*. ընդ դէմ աղանդոց ա՛յնր ժամանակի, և թուլութեան կարգաւորաց եկեղեցւոյ, և բռնութեան իշխանաց: - 545. Առ երրորդն ասեմք թէ՝ երիցս հարցումն սիրոյն և արածելն զոչխարսն՝ վասն երից ուրացութեանցն էր բժշկութիւն. զի ո՛ր մասն որ խոցի՝ *նորին* է բժշկական դեղն դնելի՝ և ո՛չ առողջից: - 547. Եւ փոխանորդ իւր նստոյց յաթոռ զսուրբն արիստակէս համանման *նորին* առաքինութեամբ, և որդի ըստ մարմնոյ. և ապա՛ գնաց ի հռօմ: - 548. Եւ ի գալն յերկիրս հայոց, ետուն նմա օգնական զիւղն օծման զոր քրիստոս օրհնեալ էր. և զգեղարդն. և այլոց ազգաց չկա՛յ այս պարծանքս. զի մեր մեռոնս հանապազ և միշտ *զնոյն* շնորհ ունի: - 549. Դարձեալ, զորօրինակ բազումք ընթանան ի մի ճանապարհ, և ամենեքեան թողեալ զնոյն՝ ընդ այլս գնասցեն, և մինն մնասցէ ի *նոյնն*. ո՛չ ասեմք թէ մինն բաժանեցաւ ի ճանապարհէն, այլ՝ այլքն: - 551. Այսպէս և ամենայն ազգք քրիստոնէից *զնոյն* ունէին ճանապարհ դաւանութեան և աւանդութեան յառաքելոց անտի մինչ ի ժողովն քաղկեդոնի...: - 551. Իսկ մերս դաւանութիւն ամենայնիւ *նոյնն* եկաց մնաց զոր ունէր նախ ի սրբոյն գրիգորէ՛ լուսաւորչէ և ի նմանեաց նորա: - 551. Զա՛յս ասեմ, զի որ ինչ անօրէնութիւն է ազգիս հայոց, *նո՛յն* է օրէնք այլազգ քրիստոնէից. և որ մեզ երկբայութիւն է՝ *նոյն* դաւանութիւն է նոցա: - 552. Բայց ոմանք բերանաբաց եղեալ հակառակին՝ զծնունդն և որ ըստ *նորին* ամենեցուն առ հասարակ միաբանեալ բաց ի հայոց: - 554. Ա՛րդ՝ որք *զնոյն* ախտանան մտօք՝ *զնոյն* մեղանչեն և ընդ *նմին* պատժին...: - 556. Իսկ գործն զհակառակն *նմին* սուտ երևեցնէ զխորհուրդն և չար ցուցանէ զգործն և զազրալի: - 558. Եւ երկրորդ յանցումնէ՝ որք մտօքն հեշտացեալ մեղկանան ընդ տեսութեանն. և հաւանին խոկացեալք ի *նոյն:* - 558. Յայնժամ լոյս իմացականին կորեաւ և շիջաւ ի սատանայէ՛. և լոյս շնորհացն ո՛չ ներգործեաց ի նա. և ի *նոյն* սերտեալ հաստատեցաւ անզղջապէս. վասն որոյ մեծ են մեղք սատանայի և թողութեան ո՛չ հանդիպի: - 563. Վասն որոյ թէպէտ գործն *նոյն* է, այլ բանն և կամքն ո՛չ է *նոյն:* - 563. Հինգերորդ՝ նման սատանային լինին որք ուրանան զպատճառն գոյութեան հոգոց իւրեանց. յիրաւի ապա որպէս սատանայ ո՛չ ունի թողութիւն ի կեանս յայս և ո՛չ ի հանդերձեալն և գործ ունէի *նմին:* - 566. Զի երեք են ի թողութիւնն. այսինքն թողօղ. և այն որում թողու. և պատրաստութիւն *նորին:* - 567. Եւ այս *նոյն* է որ ասացաւ: - 576. Եւ այլ վարդապետք ասեն, սիրել պարտ է նախ զայն որ ի վերո՛յ է քան զմեզ. այսինքն զաստուած. և ապա՛ զմեզ. յետ որոյ զընկերն. և ապա՛ զմարմինս մեր. և ի *նոյն* աստիճանս զմարմին ընկերին. զի մարմինն երկրորդ է հոգւոյն: - 576. Իսկ հեզութիւնն *նոյն* է ընդ մաստութիւնն. զի ասեն թէ՝ մաստութիւն է որ ո՛չ զգայ զդառնութիւն ինչ ոգոյ: - 584. Եւ մաստութիւնն է *նոյն* ընդ համբերութեանն...: - 584. Զի տանելն մահու վասն քրիստոսի՝ է՛ *նոյն* աստիճան ըստ խաղաղութեանն: - 586. Նա՛խ՝ զի *նո՛յն* վարձն խոստացեալ լինի և նմա. այսինքն արքայութիւնն երկնից: - 586. ...***զնոյն* և ամենայն հեթանոսք առնեն. իսկ թէ ի հեթանոսս այսպիսի պարկեշտութիւն պարտ էր առնել, քանի՞ ևս առաւել յեկեղեցիս պարտ է լինիլ. որ է ճշմարիտ կարգաւորութիւն և սրբութեան օրէնք**: - 589. Եւ զայս ցուցանէ *նոյն* ծև բանին որ է կոչմունք Երրորդութեանն. և *նոյն* դաւանութիւն հաւատոյն և այլն: - 590-591. Եւ վասն այն է գրեալ՝ յերրորդ կամ ի չորրորդ ազգս մեղաց վրէժ խնդրեսցի. յորժամ հայրն և որդին և թոռունքն *զնոյն* մեղս գործեսցեն: - 593. Եւ ի *նոյն* ճառն ուր թուէ **ը** քաղցրութիւնս չարչարանցն քրիստոսի, զչորրորդն ասէ՝ ելումն արեան և ջրոյն ի լուացումն մեր: - 594-595. Նա՛խ՝ որպէս հացն *նոյն* է ըստ ծևին, այլ այլ գոյացութիւնն է եղեալ մարմին քրիստոսի...: - 598. ...նոյնպէս վերերևոյթ կերպարանքն *նոյն* է ըստ ծևին. այլ բնութիւնն

միաւորեալ է ընդ բանին աստուծոյ և եղեալ աստուած: - 598. Եւ սուրբն բարսեղ կեսարացի այսպէս բաշխէր ժողովրդեանն. որպէս գրեալ է ի պատմութեան *նորին* յունվարի **ա**: - 599. Ասեմք թէ՝ ամենայն նշխարքն որ ի բեմն և ի խորհրդանոցն օրհնեցաւ այսօր, *զնոյնն* ի վաղիւն առնոյք և օրհնէք: - 599. *Նովին* բանիւն արձակեմ զքեզ յամենայն մասնակցութենէ մեղաց. ի խորհրդոց ի բանից և ի գործոց. յանուն հօր և որդոյ և հոգւոյն սրբոյ: - 602. Զի *նորին* գործն է որ բանայ և փակէ զդուռն եկեղեցոյ: - 606. Երրորդ՝ Մետրապօլիտք. որք են մայրաքաղաքացիք. և ունին սըքեմ *զնոյն*. բայց եմիփորոն **գ** կրկին: - 607. Եւ ունին *զնոյն* սքեմ. բայց եմիփորոն կրկին: - 607. Վասն որոյ *նոյն* աստուածային բանիւն օրհնեմք և սրբեմք յառաջին անծիցն: - 615. ...*նոյն* օրհնութիւնն իջցէ ի սուրբ եկեղեցիս: - 615. Վեցերորդ՝ զի *նոյն* է խորհուրդն որ անդ ի վերայ խաչին պատարագեցաւ, և այժմ յեկեղեցի սուրբ ի խաչ սեղանին: - 616. Վասն որոյ և մեք միշտ ի *նոյն* քանիս ամսոյն սուրբ խաչին և եկեղեցւոյ տօն կատարեմք: - 617. *Նոյն* պատճառաւ զմեռեալս յեկեղեցին ո՛չ թաղեմք: - 617. Եւ մեք խրատեալ *զնոյն* երգեմք: - 621. *Նոյն* սարասիւք այժմ ի ձեռն փրկչին մերոյ յիսուսի՝ տապանակաւ խաչին և աղօթիւք սուրբ եկեղեցւոյս՝ բարձրացեալ պարիսպն չարութեան եօթնից զգայութեանց մեղաց որոշօղ ի մէջ մեր և աստուծոյ, կործանեսցի ի սպառ: - 627. **Այլ զի և մեք *նոցին* բաղձասցուք և նոցա մասնակից լիցուք և զնոսա բարեխօս կալցուք և զնոսա՛ օրինակ դիցուք**...: - 628. Այլ և առընթեր յարութեան աւետարանն. զի *նո՛յն* է խորհուրդ ծննդեանն ի կոյս մօրէ և ի կոյս գերեզմանէ: - 628. Երկրորդն *նոյն* խնամակալութիւն և կշտամբութիւն: - 630. Եւ ի *նոյն* ժողովն ի փառք ի բարձունս, օրհնեալ տէր ուսո՛ ինձ զարդարութիւնս քո. **գ** անգամ: - 632. Որ կամաւ խաչեցար վասն մեր, *նոյն* սիրովն ողորմեա՛ մեզ: - 632. Կարգաւոր է զի ո՛ր դաս որ սկսանի զերգն, *նոյնն* աւարտէ փառօք. թէ այս՝ թէ այն: - 636. *Նոյնդ* է և մեծացուսցէին պատճառն: - 636. Եւ զփրկիչն ի *նոյն* օրն ծնաւ: - 638. *Նոյն* զօրութիւն է ամենայն խաչի. որպէս բազում ճառագայթք արևուն...: - 639. Նախ որպէս ձայնիւ եղանակաւ նման միմեանց. որպէս զողորմեայքն առ *նոյն*. և զտէր յերկնիցն առ *նոյն:* - 642. *Զնոյն* կարգ և ա՛յժմ ունի եկեղեցի: - 643. *Նո՛յնդ* է պատճառ և վասն յիսներեկին. զի յաղուհացն զշաբաթ և զկիրակէ պահեաց...: - 649. *Նոյնդ* է պատճառն որ պատարագ ո՛չ մատուցանեմք. զի անարժա՛ն եմք: - 651. Վասն որոյ ի թագաւորութեանցն սկսանի ընթերցուածն. որպէս յա՛յտ է ի մեկնութիւն *նորին:* - 651 Իսկ թէ քահանայ ոք հանդիպի ի *նոյն* չարիս, մի՛ պաշտեսցէ զքահանայութիւնն...: - 652. Եւ յորժամ ըմպեմք, *զնոյն* օրհնութիւնն քրիստոսի յիշատակեմք: - 655-656. Երրորդ, որպէս ողջակէզ *նորին*, և մեզ պա՛րտ է զանազան փորձանաց և նեղութեան զանձինս մատուցանել սիրովն աստուծոյ: - 658. Յերկրորդ ամէ՛ սրբոյն սահակայ մինչև ի **ժգ** ամն *նորին*՝ կատարեցան ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ: - 659. **Եւ *նոյն* զքահանայթաղէքն, որ ունի է աւետարան. և զաշխարհական թաղումն, ի յայրարատ գաւառի ի վաղարշապատ քաղաքի ի վկայարանս սրբոյն հռիփսիմի. յետ ճժա ամի սրբոյն գրիգորի. զի մինչև ցայն հնովն վարեին**: - 659. Քսանևթ, Վասն գալստեան. և նշանացն *նորին*. և կատարածի հրոյն: - 661. Նոյնպէս և սուգն ի վերայ մեռելոյ *զնոյնն* նշանակէ: - 670. Երրորդ կոչի կարգ, զի զոր ինչ մեք առ մարմին ննջեցելոցն կատարեմք, *զնոյն* կարգ և հրեշտակք առ հոգիսն կատարեն այժմ և ի յարութեանն աւուր: - 671. Եւ զի կտաւն յերկրէ է և արուեստիւ գործեալ. ցուցանէ թէ զոր ինչ գործեաց ոք ի յերկրի, *զնոյն* զգենու և զարդարի: - 671. ...ցուցանէ թէ ի *նոյն* հանդէսն ճանեցաւ և վախճան կատարման ընկալաւ: - 672. ...զի *նովին* երկիւղիւն կան և սպասեն սոսկալի աւուրն այն. - 673. ...յա՛յտ է զի *նոյն* մարմին շարժի և շինի ի յարութեան աւուրն: - 678. Եւ ի *նոյն* օրն ի գերեզման եմուտ և էջ ի դժոխս և քարոզեաց: - 684. ...վասն որոյ *զնոյն* խաչն և զաւետարանն տարեալ ի տուն՝ օրհնեմք զբնակութիւնս մեր: - 684. Նախ ասեն թէ՝ յաւուրսն յայնոսիկ յարեան մանկունքն յեփեսոս ի վկայութիւն առ հասարակ յարութեանն, *զնոյն* յիշատակեմք: - 684. Այլ որք ուղիղ դատեցան վարդապետք եկեղեցւոյ ըստ տեսլեանն յօհաննու. որպէս մեծն անդրէաս և համախոհք *նմին* սուրբն իրինոս, եպիփան, և բասիլիոս: - 687. Նախ՝ մարգարէն եսայի ասէ, և առաքեալն *զնոյն* երկրորդէ՛: - 698. Եւ յետ սակաւուց ի *նոյն* գլուխն ասէ, թէ ո՛չ զգայապէս լինի տեսիլ հրեշտակի...: - 703. ...և յարութեամբն եբարձ զապականութիւն որ է՛ խայթոց *նմին:* - 706. Եւ վասն հրեղէն վիշապին և տտան *նմին* ասացաւ ի վերոյ **թ** գլուխն **իե** համարն: - 706. *Նոյն* հասակաւն որով փոխեցան՝ և գայցեն: - 709. ...և էր կոյս ըստ որում պահեաց զմաքրութիւնն. վասն որոյ նմանակիցք *նորին*՝ թագիւ պսակին ընդ *նմին:* - 712. Դարձեալ՝ որ հրոյ է վերակացու, ի վերայ *նորին* հարկանէ. և որ օդոյ և ջրոյ և երկրի, ի վերայ իւրաքանչիւր տարերաց գոչէ՛: -714. ...ի *նոյն* ժամն ի մէջ գիշերի հարկանի փողն...: - 714. Իսկ մեր վարդապետք

ասեն ի կիրակէի պենտակոստէին ի *նոյն* ժամն գիշերոյն...: - 714. ...և *նոյն* հաւատովն զվախճան աշխարհի և զյարութիւն մարդկան: - 714. Եւ ի *նոյն* կէտ լրմանն որ է՛ վախճան ժամանակի և սկիզբն յաւիտենի` լինի վերառութիւն համայնից մարդկան որպէս գրէ առաքեալն կորնթացւոց...: - 716. ...և ի դադարիլ ժամանակին` ի *նոյն* կէտն համանգամայն վերառեցեալ մտանեն ի կեանս առաջին ըստ խոստման բանին: - 716-717. Իսկ աստուած անհուն է զօրութեամբ` յանկարծակի ի *նոյն* կէտ վայրկեան ժամանակի յարուցանէ: - 717. ...այլ ի *նոյն* կէտն է յարութիւն և միաւորութիւն հոգւոյ և նորոգումն մարմնոյ: - 717. Նա՛խ` եթէ համանգամա՛յն է յարութիւնն ի *նոյն* կէտն, այլ ննջեցեալքն նա՛խ յառնեն և ապա՛ կենդանիքն ընդ նոսա...: - 717. ...զի ննջեցելոցն միայն մին գործ է. այսինքն յարութիւնն. իսկ կենդանեացն մահն և յարութիւնն. զի նախ մեռանին ի *նոյն* կէտն և ապա՛ յառնեն: - 717. Երրորդ, որպէս *նոյն* հատն սերմանեալ *նոյն* հատն բուսանի ըստ ազգի իւրում...: - 720. Երրորդ` քանակաւ հասակին. զի իւրաքանչիւր ոք յիւրն երեսնամեայ յարիցէ. որպէս հարիւրամեան անցեալ և քառասնօրեայ մեռեալ. որ լինելոց էր երեսնամեայ, ի *նոյն* հասակն յառնեն: - 726. Այսպէս և այս ո՛չ է ըստ բնութեան կարգի. զի *նոյն* բանն աստուած ի սա՛ է միաւորեալ անբաժանապէս: - 733. Իսկ երկրորդին այսպէս պատասխանեսցուք ընդդիմայարակայութեամբ. զի մարդոյ մարմին ապականի. վասն զի քակտի ի նմանէ կենդանացուցիչ *նորին* հոգին...: - 733. Նմանապէս և խաչն աստուծոյ` է՛ ի կամացն աստուծոյ և ի *նորին* ներգործութենէն որ անապական կամի զնա. զի նովաւ արար փրկութիւն ազգի մարդկան: - 733. Բայց զոր ինչ մեզ փառաւոր երևի` *զնոյն* և աստուծոյ փառս կոչեմք: - 736. Երրորդ, հաւաստի արդարութեամբ. և այսպէս ամենայն սուրբք և հրեշտակք դատեսցեն զնոսա որք ի *նոյն* շաւիղն յանցաւոր գտան: - 738. Իսկ կշռորդն է՛ օրէնքն աստուածային, և գործք մեր *ընդ* հաւասարեալ և միտեալ հաւատով: - 745. Նախ ի *նոյն* առ ինքն ի դէմս սրբոյ Երրորդութեանն. հասարակ գոլ ամենայնիւ. աստուածութեամբ բնութեամբ կամօք և այլն: - 746. Եւ *նոյնն* գոլ ողորմութեան և արդարութեանն գործոց ունել հաւասարութիւն: - 746. Այլ և ի *նոյնս* գոյ իմն կշիռ արդարութեան ըստ ինքեան...: - 746. Այսպէս հաւասարի և միտէ՛ կշիռ ողորմութեանն ըստ ինքեան առ *նոյնս* և առ այլս: - 746. Նոյնպէս և հատուցի առաւել և նուազ և հաւասար. ո՛չ միայն ըստ սեռի գործոց, այլ և ըստ տեսակի և քանակի և որակութեանց *ընդ*: - 746. Իսկ կշռողականն է զոյգ արդարութեամբ կշռել. որպէս յորժամ ողորմելով միոյն` պատժէ՛ զընդդիմակն *նորին*. որպէս փրկեցաւ իսրայէլ և պատժեցաւ եգիպտոս. և յազատիլ բնութեան մարդոյս` պատժեցաւ սատանայ: - 747. Յարութիւն մարդկան ի վայրկեան ժամանակի և յանկարծակի լինի որպէս ցուցաւ ի վերոյ. այլ զյերկարութիւն ժամու քննութեան դատաստանին, ոմանք ժամ մի ասեն. որքան եկաց ընդ ադամայ ի քննութիւն հարցմանց յետ յանցանաց *նորին*: - 747. Ո՛չ *նոյնն* մարմնապէս, այլ նմանն հոգէպէս. ծարաւումն, խաւարն, հրախառն կարկուտն, ժահահոտն, և այլն ըստ կարգի: - 751. Զի տակաւին է՛ իմնայէլ ընդ իսահակայ, և յակոբ ընդ եսաւայ ի *ընդ* արգանդի: - 756. Ապա ուրեմն մի է բարի արքայութիւնն. և մի դժոխք պակասութիւն *ընդ*: - 758. *Ընդ* նման և մեք յուսասցուք արժանաւորիլ տեսութեանն քրիստոսի. զի թէ և ի դժոխս իցեմք` ա՛յն է արքայութիւն մեր. և ո՛չ թէ յերկրի կամ յայլում տեղւոջ ըստ սրբոյն ոսկէբերանի: - 759. Երկրորդ վասն *նորին* նրբութեանն: - 764. Երրորդ վասն *նորին* թեթևութեանն: - 764. Չորրորդ վասն *նորին* անչարչարութեանն. որպէս ասացաւ նախ, և այժմ ի կարճոյ: - 764. Իսկ առաւօտ և երեկոյ այս է. զի տեսեալ ի բանն աստուծոյ բարձրագոյն և աստուածային իմաստ` առաւօտեա՛ն է ճանաչումն. իսկ ի *նոյն* բանն տեսեալ զգիտութիւն արարածոց` երեկոյեան ճանաչումն է համարեալ: - 767. *Նոյն* է վայելչութիւն հանապազորդեան: - 768. ...վայելեալք երկնաւորք և երկրաւորք ի շնորհաց *նորին* զյաւիտենից կեանսն ժառանգեցաք: - 768. *Նոյն* և կամք և կիրք և ներգործութիւն մարդկային ընդ աստուածայինն միաւորեալ. միջնորդելով հոգւոյ բանականի` աստուածութեանն` և մարմնոյն. որ է՛ ներգործութեամբ միշտ աստուած և փրկիչ բնութեամբ. քրիստոս. նոր ադամ. էմմանուէլ ճշմարտութեամբ: - 770. Արդ ահա ա՛յսորքիկ են ծառ կենաց ի յերկինս և յերկրի տնկեալ. փոխանակ ծառոյն կենաց ի դրախտին եդեմայ. յորմէ հրաժարեցոյց և պարսպեաց բոցեղէն սրովն զճանապարհ *նորին*: - 771. Յաւարտ և ի կատարումն Փառաց Պարգևաց Բանին և Շնորհաց *նորին* Հոգւոյ: - 771. Եւ ապա ի սէր և անձուկ ժտելոյ *նորին*, ապաստանեալ ի *նոյն* որ զօրացոյց զտկարս, ձեռն ի գործ արկեալ աւարտեցաւ բազում միջոցաւ. և փախստեամբ ի տեղիս. և մեծ ջանիւ փութացեալ: - 772. Ի փառս և ի Գովեստ *նորին* Տնկագործի և Առաջնորդի: - 772. Եւ դարձեալ ի ճառս անառակին և կորուսեալ դրամին և մոլորեալ միոյ ոչխարին և անկելոյն ի ձեռս աւազակին, *զնոյնս* ուսուցանեն մեզ հարքն հոգելիցք

արտայայտել: - 775. Ընդ որով թէ ազատեցա՞ն առհասարակ ընդ *նմին:* - 776. Նմանապէս և բոլորս մարդկութիւն կրեցին զապականութիւն ի *նոյն* ադամայ. ծնունդ գոլով *նորին* ցանկութեանն: - 776. Եւ այսպէս պատժոյ *նորին* հաղորդեալ մահու մեռանելոյն հասարակ ամենեցուն որպէս ասացաւ: - 776. Զի անապական մարմնով եդաւ ի գերեզմանի. բառնալով զապականութիւն նախնւոյն. և իջանելով ի դժոխս՝ եբարձ զպատիժ *նորին:* - 776. Իսկ թէ ընդ նախահօրն ազատութեան ընդ *նմին* ազատեցան և որդիք, յա՛յտ է ի բազմաց: - 776. Ուստի յա՛յտ է զի ելեալ էին երբեմն և վերըստին դառնան ի *նոյն:* - 777. Այլ և պատմութիւնք և մեկնութիւնք սրբոց՝ *նորին* հոգւոյն են որք ուսուցանեն մեզ *զնոյնս:* - 778. ...նոյնպէս ողորմութեան և արդարութեան է միշտ բարերարելն և պատժելն ըստ նախասահման գիտութեան *նորին* նախքան զլինիլն էիցս ըստ առաքելոյ: - 779. Եւ դարձեալ՝ զորօրինակ, լոյսն և ջերմութիւն են էութիւն *նորին* զուգասփիւռ. այլ երբեմն մինն ծածուկ, և երբեմն երկոքին յայտնիք, և ընդ դէմ սորա: - 779. Եւ զի ժամանա՛կ է լինելոյ և ժամանակ քակելոյ, յայլում ժամու և ո՛չ ի *նոյնն* սերմանի և հնձի: - 780. Դարձեալ՝ մարմին քրիստոսի խորհրդապէս է՛ եկեղեցի. և պա՛րտին չարչարակցիլ *նորին*՝ հետևելով *նմին:* - 781. Դարձեալ ասեմ, թէ անունս այս՝ պակասութիւն, *նոյն* է որ լսի չարչարանք. զի յորժամ կրէ ոք զչարչարանս զայս ինչ կամ զայն, պակասի ի նմանէ այն ինչ կամ այն. այսինքն առողջութիւն, կեանք, և այլն: - 781. Զի որպէս քրիստոս չարչարանօքն փրկեաց զեկեղեցի և հարսնացոյց, *նոյն* և առաքեալն քարոզութեամբ իբր զկոյս մի սուրբ յանդիման արար փեսային քրիստոսի: - 781. Ամենայն իր բնութեան՝ գոյացակա՛ն է *նորին*. և ամենայն պարգևք այսինքն շնորհք պատահական է ի զարդ *նմին*. յաղագս որոյ ո՛չ բառնին գոյացականքն. որպէս անմահութիւն դիւի և բան մարդոյ: - 782. Յիրաւի ընդ բառնիլ շաղկապին, բառնի և կապակցեալն *նմին:* - 782. Զորօրինակ, ժանգ հայելւոյ ո՛չ զընդունակութիւնն բառնայ, այլ զտեսութիւնն. և յետ սրբելոյն, *նոյն* ծածկեալն երևի ի նմա: - 782. Որպէս ծառ մերկացեալ ի պտղոյ՝ այլ ո՛չ ըստ ունակութեանց. և *նովին* ունակութեամբ վերստին պտղաբերի ինքն: - 782-783. Կոչի և շնորհ գործ *նորին*. որպէս մարգարէանալ: - 783. Եւ այլքն ո՛չ են կնիք. այլ զարդ պակասութեանց *նորին*. վասն որոյ և փոփոխականք են: - 783. *Նո՛յն* բան է և առաջին ամուսնացելոց: - 785. Իսկ ամենայն զգայական կենդանւոյ թէպէտ իգին ըստինք գոն վասն զծնունդս կերակրելոյ. սակայն և արուացն գոյ *նոյն* մասն անդամոց կազմեալ յարարչէն. և այն յի՞նչ պէտս լինի. խնդրել արժան է: - 785. Իսկ զի և արուի թէպէտ ո՛չ *նոյն* պիտոյիւք. սակայն ո՛չ ընդ վայր կազմեցաւ...: - 786. Նոյնպէս և երբեմն յուզել ուրախութեանց. ի փեռեկեալ թոքոյ ի կոտորումն շնչոյն, ի թաղանթէ՛ որ առ լերդաւն՝ հիւթ ինչ ծաւալի առ *նոյն* ասացեալ տեղի...: - 787. Յա՛յտ է զի ի բառնիլ ոչէին՝ էութիւն հաստատի բացասութեամբ կրկին. իսկ ստորասութեամբ *նոյն* մնայ: - 787. Եւ կրկնեալ ճշմարիտն *նոյն* մնայ. զի անփոփո՛խ է ստութեան: - 787. Եւ թէ այս և թէ այն, *զնոյն* իմանամք ասացեալ: - 788

***ՆՈՅՆ ԻՆՔՆ +*** Եւ թէ յոչ ժամանակի, և զի՞նչ էր *նոյն ինքն* ժամանակն որ գոյացաւ ի սկիզբն լինելութեանն: - 37. Եւ *նոյն ինքն* հուրն է՛ օրինակ հօր...: - 38. Դարձեալ քննեսցուք ըստ մեզ. զի ո՛չ են հակառակ առաքելոյն բանն և աւետարանին, թէ հայր մեծ է քան զորդի. զի երկոքին *նոյն ինքն* աստուածութեանն իմանին. ...: - 40. Որով յա՛յտ է թէ յետ ծերութեան մարդկան՝ *նոյն ինքն* է աստուած. և զայլն նմանապէս իմասցիս: - 42. Եւ ծնեալն յանկատարից՝ *նոյն ինքն* լիցի և անկատար: - 52. Այլ և ի *նոյն ինքն* մխիթարիչ հոգին այսպէս ուղղակի՛ է բանս: - 59. Ութերորդ՝ ասաց *նոյն ինքն* որդին՝ «ե՛ս եմ ճշմարտութիւն»: - 67. Զի *նոյն ինքն* քրիստոսդ անուն՝ ուսուցանէ զքեզ աստուածութեամբն մարդ գոլ, և մարդկութեամբն աստուած: - 75. Նախ՝ *զնոյն ինքն* բանն՝ աստուած և մարդ. այսինքն մարդկութեամբն մարդ, և աստուածութեամբն աստուած: - 77. Ասեմք եթէ՝ մի է յաւիտեան անսկիզբն և անվախճան. որ *նոյն ինքն* է աստուած. բոլորն համանգամայն և կատարեալ. և նախ քան զյաւիտեանս. և ամենայն յաւիտենից արարիչ: - 116. Չորրորդ՝ և զի սկիզբն է և վախճան, *նոյն ինքն* է անսկիզբն և անվախճան: - 129. Եւ *նոյն ինքն* նախախնամութիւնն է կամք արարչին յարարածս եղեալ: - 157. Իսկ ի *նոյն ինքն*՝ առաջին է նախախնամութիւնն առ աստուած, և ապա՛ ստեղծումն. զի վասն նախախնամական բարութեանն կամեցաւ ստեղծանել զեղեալքս. որպէս ասէ սուրբն դիոնէսիոս ի **դ** գլուխն որ յաղագս երկնայնոցն քահանայապետութեանց: - 157-158. Ութերորդ՝ ի *նոյն ինքն* ի շօշափականն երևին **դ** տարերքն: - 215. Իններորդ՝ *նոյն ինքն* մարմին կենդանւոյն է՛ շօշափելի և է՛ կալեալ և մածեալ. և շարժի և երևի. որպէս ասացաք վասն հողոյն: - 215. Չորրորդ՝ զի *նոյն ինքն* դրախտն և տունկն է իմանալի և զգալի. որպէս վայելօղ մարդն էր իմանալի և զգալի: - 222. Եւ

դարձեալ՝ *նոյն ինքն* բանական հոգին ո՛չ նոր ստեղծումն է և ո՛չ հին: - 257. Եւ յայնժամ զգայականն և տնկականն ո՛չ ունին զներգործութիւն իւրեանց ի կազմողական զօրութենէն. այլ ի *նոյն ինքն* ի հոգոյն: - 260. Եւ այս ևս չէ՛ ընդունելի. զի ցուցաւ ի վերոյ եթէ յարացոյցն *նոյն ինքն* աստուած է ամենեցուն: - 273. Այլ *նոյն ինքն* խոնարհեալ ի մերս՝ ինքեամբ արար զփրկութիւնս մեր: - 302. Նա՛խ՝ նշանակէ *զնոյն ինքն* սկզբնաչարն սատանայ. որ էր յերկինս գաւազան ուղղութեան և ընկեցեալ եղև օ՛ձ: - 332. Երկրորդ՝ դարձեալ *նոյն ինքն* սատանա՛յ է օձն. որ փոխեցաւ ի բարեկամի ձև. և պատրեաց զնախաստեղծսն: - 332. Չորրորդ՝ ինքն անկարօտ գոլով ստեղծեաց զարարածս. և բարձեալ կրէ՛ զամենայն բանիւ. և *նոյն ինքն* հրամայէ՛ խորան կազմել: - 342. Չորրորդ՝ հաց ի յերկնից իջեալ մանանայն կենարար. և բանն աստուծոյ *նոյն ինքն* տէրն մեր. որպէս ասաց առ փորձիչն թէ՝ ինև կերակրին ամենայն սուրբք և ո՛չ հացիւ: - 397. Հինգերորդ՝ *նոյն ինքն* մարմինն սուրբ ո՛չ թէ հացիւ միայն կայր որպէս հասարակ մարդ. այլ բանիւն կենդանի ի նմա՛ միացեալ: - 397. Երրորդ՝ յա՛յտ է յայսմանէ. զի *նոյն ինքն* բարկութիւնն ո՛չ եկեալ ի գործ՝ չէ՛ չար...: - 408. Նա՛խ՝ նշանակէր *զնոյն ինքն* գեղէոն. որ երևմամբ հրեշտակին դատաւոր եղև իսրայէլի: - 421. Դարձեալ՝ *նոյն ինքն* քրիստոսի է իշխանութիւնն որ աստ լուծանէ ի ձեռն քահանային. և իշխանութիւն նորա ո՛չ տկարանայ երբէք...: - 433. Այլ յորժամ նկուն եղեն օրէնք ամենայն, և ո՛չ կարեցին փրկել. յետոյ եկն և երևեցաւ *նոյն ինքն* օրէնսդիրն և փրկեաց զմեզ: - 467. Եւ *նոյն ինքն* «հնազանդ եղև մահու չափ և մահու խաչի»: - 478. Այսպէս և միաւորութիւնն քրիստոսի է՛ յաւիտենից և ժամանակեայ. անմահ և մահկանացու. աստուած և մարդ. *նոյն ինքն* բանն մարմին եղեալ: - 478. Երկրորդ՝ զի որ անդ ի ծածուկ ծանոյց զինքն յանձինս մարգարէից *նոյն ինքն* աստ զերրորդութիւնն յայտնեաց առաքելոցն: - 524. Իսկ երրորդ սեռն որ է *նոյն ինքն* բանն որ է՛ ենթակայ աստուածային առաքինութեանց: - 572. Երրորդ, և *նոյն ինքն* տիրամայրն՝ խաչին երկիր պագանէր միշտ: - 642. Եւ *նոյն ինքն* քրիստոս երևի մեզ ի խաչն և յաւետարանն: - 646. և մարմինն մեռեալ առաւել *նոյն ինքն* յառնէ. այլ ո՛չ թէ նմանն մեզ ըստ ազգի մերում. - 720. Տասներորդ, գործք մարդոյ անցաւոր է որպէս ինքն. իսկ հատուցմունքն աստուծոյ մշտնջենաւոր որպէս *նոյն ինքն*. վասն որոյ յարուցանէ անմահ, զի հատուսցէ ոմանց զփառս և ոմանց զտանջանս անմահ մարմնով: - 724. Արդ՝ որոյ գործն յաւիտենական է, և *նոյն ինքն* անապական է ասէ փիլիսոփայն. ապա ուրեմն անապական է սուրբ խաչն: - 734. Երրորդ, հայի առ *նոյն ինքն* արդարապէս հատուցումն մանրամասն քննութեամբ բարեացն և չարացն. որք առաւել կամ նուազ ունին. կամ հասարակ յերկուցն կրից: - 746. Ասեմք առ այս, եթէ առաջին կեանքն դրախտին ո՛չ զայն իմանան վարդապետք զոր ունէրն ադամ. այլ զոր խոստացաւն ադամայ եթէ պահեալ էր զպատուիրանն. որ *նոյն ինքն* է արքայութիւնն երկնից ի տեղի անկելոց հրեշտակացն: - 758. Այլ պարզաբար *զնոյն ինքն* կեանք դրախտին ի յարութեանն ո՛չ է իմանալ: - 758. Եւ *նոյն ինքն* տէրն բոլորից վկայ քարոզութեան զգործս կատարէր. զի սովորութիւն է մարդկան քան զլուր լսելեաց տեսութեան աչաց հաւանիլ: - 785

***ՄԻ ԵՒ ՆՈՅՆ +*** Վեշտասաներորդ՝ զի թէ չարն է յաստուծոյ որպէս բարին, և երկուցն սկիզբն է աստուած, և արդ՝ եթէ *միևնոյն* է սկիզբն երկուցն, անկարելի է ներհակացն ի միասին ունիլ մի սկիզբն...: - 14. Եւ ո՛չ լինի ի մէջ *մի և նոյն* էութեանն կամք և ոչ կամութիւն: - 36. Հինգերորդ առարկեն, թէ իցէ *մի և նոյն* բնութիւն հօր և որդւոյ, և որդի ծնեալ ի նոյն բնութենէ, կարէ՛ ասիլ և հօր ծնանիլ ի յորդւոյ ի նոյն բնութենէն. զի բնութիւնն մի է: - 38. Իսկ հնազանդիլն որդւոյ հօր, ո՛չ թէ այժմ անհնազանդ է վասն հակառակութեան. զի այս աւազակա՛ցն է. և անհնա՛ր է ասել *զմի և զնոյն* էութիւնն ինքն ինքեան հնազանդ և անհնազանդ ըստ այնմ որ բան է. այսինքն զպարզ աստուածութիւնն: - 42. Բայց է և այլ իմն տեսութիւն խորին և գեղեցիկ. զի նա՛ վասն սրբութեան չարչարեցաւ. և որ ոք ևս չարչարեսցի վասն սրբութեան՝ *մի և նոյն* է դիտաւորութիւն երկուցն...: - 43. Այլ հոգին սուրբ *մի և նոյն*՝ հաղորդի ամենայն հաւատացելոց. ...: - 59. ...և որպէս ադամ յառաջ էած յինքենէ զսէթ և զևա. զմինն ծնունդ և զմիւսն ո՛չ ծնունդ. և ունին երեքեանն *զմի և զնոյն* բնութիւն մարդոյ: - 60. Որպէս ասեմք զաստուածածին կոյսն մայր և կոյս. ո՛չ **բ** բնութիւն կամ **բ** անձն. որ է մասամբ և բաժանմամբ. այլ *զմի և զնոյն*. ունելով զայս և զայն յատկութիւն: - 77. Եւ կարեմք ասել *զմի և զնոյն*՝ կուսութեամբն կոյս. և մայրութեամբն մայր: - 77. Ա՛րդ՝ հողոյ արարածի և աստուծոյ արարչի՝ *մի և նոյն* բնութիւն ասել ամբարշտութեան է կարծիք: - 81. Ասեմք եթէ՝ *մի և նոյն* հրացեալ նիւթո՛յն է կտրելն և այրելն. այսպէս *մի և նոյն* միաւորութեանն էր այսինքն մարդացեալ բանին բարձրագոյնքն և նըւաստականքն: - 85. Նմանապէս որ ասէ, *մի և նոյն* աստուած և մարդ: - 91. Ա՛րդ՝ տեսութիւն գրոց սրբոց *մի և նոյն* ելով՝ առ բազումս բազմանայ. որպէս *մի և նոյն*

պարզագոյն ջուր՝ իւրաքանչիւր բնութիւնս տնկոց: - 93. Որո՞վ զանազանին և հաւասարին բացբարձականքն և ուրացականքն. զի *մի և նոյն* երևին: - 124. Ապա ուրեմն *մի և նոյն* է վասն **բ** պատճառի: - 124. Ա՛րդ՝ *մի և նոյն* է դրութիւն և խոստովանութիւն. ապա մի և նոյն է բառնալն և ուրանալն: - 124. Ա՛րդ՝ մի և նոյն է դրութիւն և խոստովանութիւն. ապա *մի և նոյն* է բառնալն և ուրանալն: - 124. Պատասխանեմ առաջնոյն, թէպէտ *մի և նոյն* ուրացական մասնիկն որ է ո՛չն՝ գործէ՛ զուրացումն և զբառնալն, այլ ուրացումն և բառնալն ո՛չ է նոյն...: - 124. Քահանապետութիւնն ըստ այնմ որ կա՛րգ է՝ *մի և նոյն* է ի մարդիկ՝ ի հրեշտակս՝ և յաստուածպետութիւնն սուրբ: - 138. Դարձեալ՝ առ հրեշտակս *մի և նոյն* իմացումն աստուածային՝ է՛ սրբութիւն՝ լուսաւորութիւն՝ և կատարումն նոցա...: - 139. Իսկ հաւասարակութիւն է Նախ՝ զի երկուց սկզբանցն *մի և նո՛յն* է պատճառ ներգործական. որ է՛ արուեստաւորն: - 163. Դարձեալ՝ կարելին և անկարելին են այլագիծք և այլասեռք. և ոչ կարեն լինիլ *մի և նոյն*. զի այլասե՛ռ հակակայք են: - 165. Ջորօրինակ լոյսն որ *միևնոյն* է, այլ պայծառ՝ և բժոտեալ ակն ոչ միապէս տեսանէ: - 166. Եւ որպէս լրումն զատկի ունի աւուրս **ժգ**. և այլքն **ժե**. և այս ի տումարս մեր է. և իրն որ է՛ լուսինն *մի և նոյն:* - 192. Երկրորդ՝ զի *մի և նոյն* օր կատարի դարձմամբ արեգականն ի կիտէ՛ ի նոյն կէտ արևելից: - 193. Երրորդ՝ զի յորժամ կատարին **է** աւուրքն՝ դառնամք ի յառաջին օրն որ է՛ *մի և նոյն:* - 193. Եթէ *մի և նոյն* իմանաս զժամանակն, ապառնին յառա՛ջ է քան զայլսն: - 198. Հնգետասաներորդ՝ *մի և նոյն* գուլով մտանէ ի բուրաստանս, և զանազան գոյնս և համս և հոտս յառաջ բերէ: - 207. Եւ *մի և նոյն* է. զի շունչ կենդանեաց է թանձր մասն օդոյս՝ խառնեալ ընդ ջրոյ. և շունչ նոցա է անօսր մասն ջրոյ՝ խառնեալ ընդ օդոյ: - 215. Եւ զի բնութեամբ ունին յայտ է, զի ամենայն տեսակն *զմի և զնոյն* ունի հնարս. վասն զի մի բնութենէ ի նոսա: - 218. Եւ ոչ նոր, զի *մի և նոյն* ի սկզբանէ հրամանն արարչադիր առանց տկարութեան ներգործէ մինչ ի կատարած...: - 257. Զի *մի և նոյն* հոգին ըստ այնմ որ ազդէ՛ ի տնկական ներգործութիւնն որ է՛ կերակրական. աճողական. և ծննդական. կոչի տնկական: - 259. Տասներորդ՝ *մի և նոյն* միտք է յաստուած որով զամենայն տեսանէ և զամենայն բարբառ լսէ. նոյնպէս և ի մարդս մի իմացումն է որ զանազան զգայարանօք իմանայ: - 271-272. Զի սէն՝ յունա՛ց է, և շան՝ ասորի. և *մի և նոյն* է տեսութիւնն որ ասէ, անգոսնեաց, և անգուշնեաց: - 407. Քսանևը, *մի և նոյն* ծնօտն զոգիս մերկանայր այլազգեացն, և զսամփսոնին արկանէր ի մարմինն: - 423. Զի *մի և նոյն* ապաշխարութիւն է՛ հատուցումն մեղաց, և նիւթ բարեաց առ աստուած: - 434. Երրորդ՝ զի թէ հայր էր մարմնացեալ, *մի և նոյն* լինէր հայր և որդի: - 468. Եւ սոյնպէս շաղփաղփ երևէին բանք նոցա. և տեսիլքն սակայն ամենայնք՝ *զմի և զնոյն* յարութիւնն պատմէին: - 515. ...իսկ թէ մի է, ո՞րպէս կարասցուք ասել *մի և զնոյն* բանն աստուծոյ որ նախ քան զյաւիտեանս. և այսօր գրեալ ի քարտիսի: - 529. Եւ *մի և նոյն* բանն խօսեցաւ ի նախահարս և ի մարգարէս առանց մարմնոյ: - 529. Եւ *մի և նոյնն* է միաւորեալ ի մարմնի և երևեալ մեզ և գրեալ ի քարտիսի յիւրաքանչիւր աւետարանս: - 529. Սակայն *մի և նոյն* բանն բազմանայ ի բազումս...: - 529. Եւ այս բազումս որ առ մեզ է, ի բազում թուղթս գրեալ *մի և նոյն* բանն է որ նախ քան զյաւիտեանս ի հօրէ ծնեալ: - 529. Եւ դարձեալ զոր օրինակ, գիր մատանւոյն *մի և նոյն* կատարեալն է տպացեալ յամենայն մոմս կնքեալ և ո՛չ աւելի և ո՛չ նուազ: - 530. Այսպէս *մի և նոյն* բանն է յիւրաքանչիւր աւետարանս ծևացեալ, և ընդ աջմէ հօր նստեալ. և ոչ աւելի և ո՛չ նուազ: - 530. Ասեմք առ այս թէ՝ *մի և նոյն* անձնաւոր բանն աստուծոյ է յաւետարանս խօսեցեալ. այլ ո՛չ է բազում անձն և գոյութիւն բանին: - 530. Դարձեալ զորօրինակ, մարմինն քրիստոսի *մի և նոյն* էր ի խաչին բևեռեալ, և *մի և նոյն* մարմինն է ի բազում նշխարս միաւորեալ և ո՛չ բազմացեալ. զի նոյն է գոյացութիւն հացին և գոյացութիւն մարմնոյն քրիստոսի: - 530. Նմանապէս և բանն աստուծոյ *մի և նոյն* է անձամբ և բնութեամբ ի գոյացութեան իւրում, և ի գիրս աւետարանաց գրեալ: - 530. Զի բազմանայ և ի միութեան մնայ. բովանդակի անբովանդակապէս. և բաժանի անբաժանապէս. որ է *մի և նոյն* տեսակաւ և գոյացութեամբ որպէս ցուցաւ: - 530. Ա՛րդ՝ յորժամ ամենայն ինչ նոյն է սուրբ Երրորդութեանն, որով յա՛յտ է՝ թէ հայր խօսի, և թէ որդի, և թէ հոգին սուրբ, *մի և նոյն* բանիւն խօսին...: - 530-531. Երրորդն ի միոջէ և առ մի. որպէս բժշկական դեղ և գործիք. նոյնպէս մի է եկեղեցի յիւրաքանչիւր ազգս. *զմի և զնոյն* ունելով գործ և իր ի միոյ գլխոյն առ մի անդամքս. ի միոյն քրիստոսէ առ մի քրիստոնեայքս. ի միոյ հաւատոյն առ մի հաւատացեալքս...: - 533. Դարձեալ՝ մի տախտակն է՛ *մի և նոյն* քարոզութիւնն առաքելական ի չորեք ծագեան տիեզերս տարածեալ: - 646. Նիւթ նշանացս է՛ բազում և զանազան. այլ զօրութիւն և ձևն *մի և նոյն* է խաչին: - 732. Երկրորդ, հայի՛ առ ի *մի և նոյն* բարերար կամացն յառաջ եկեալ գործքն. աստուածային՝ արարչական՝ և արքունական. որ է գործ ստեղծման և նախախնամութեան: - 746. Եւ

զանազան տեսութիւնք վարդապետաց չեն ընդ դէմ միմեանց. այլ զորօրինակ ոմն զական պատւականութիւն, և այլ ոմն զբնութեան, և կէսք զաստուածութեան, և ոմանք զորակացն գեղեցկութեանց, պատմեն *զմի և զնոյն* ական իր: - 781-782

***Ի ՄԻ ԵՒ Ի ՆՈՅՆ +*** Իսկ այսորիկ առանձնաւորութիւնք են հօր և որդւոյ. և ո՛չ են բնութիւնք անծնելութիւնն և ծնելութիւնն. այլ *ի մի և ի նոյն* բնութեանն: - 38. Դարձեալ՝ զի յիմարութիւն և իմաստութիւն են *ի նոյն և ի մի* բնութիւն մարդոյն, և ո՛չ ասին հակառակ միմեանց. այլ միապէս ունի յիմարն զիմաստնոյն բնութիւն և զսահման: - 38. Այսպէս անծնելութիւն և ծնելութիւն ո՛չ են հակառակ միմեանց բնութիւնք այլ *ի մի և ի նոյն* բնութիւնն: - 38. Այսպէս *ի մի և ի նոյն* սկիզբն որ է՛ յարացոյցն՝ զբազում սկսեալքս ըստ յարացուցին: - 112. Զի *ի մի և ի նոյն* բանն աստուած տեսանեն զաստուած, և տեսանեն զեղեալքս ի յարացոյցն իւրեանց: - 120. Ուստի տարերք և տարրեղէն մարմինք խառնեցան և յառաջ եկին *ի մի և ի նոյն* նիւթոյն: - 175

***ՆՈՅՆ ԻՍԿ*** - Նախ՝ ի *նոյն իսկ* աստուածային հրամանացն որ ասէ՝ «իշխեսցէ ձկանց ծովու, և զազանաց, և սողնոց»: - 220. Երրորդ՝ ի *նոյն իսկ* ի ձևոյ շինուածոյ մարդոյն. զի ուղիղ գոլով՝ զիշխանականն նշանակէ. իսկ կենդանիքն կո՛ր գլխով զծառայականն ցուցանեն: - 220. Աստ հայր ազգաց բազմաց եղև. մանաւանդ թէ և *նորին իսկ* քրիստոսի ըստ մարմնոյն: - 288

**ՆՈՅՆՈՒԹԻՒՆ +** Ո՛չ թէ նոր իմն տեսակ և կամ նոր աշխարհ. այլ զեղելոցս նախախնամութիւնն. և ի *նոյնութիւն* կալն հայր կամի և որդի կատարէ՛. ոչ ծառայաբար և անուսումնապէս. այլ տիրաբար և հաճճարով: - 46. Նախ գիտելի է, զի միութիւն ի գոյացութիւնն՝ առնէ *զնոյնութիւն:* - 104. Առաջին՝ զի արարչութիւն է յոչէից ստեղծանել. իսկ նախախնամութիւն է զեղեալն ի *նոյնութեան* պահել: - 157. Երկրորդ՝ զի ունին *նոյնութիւն* սեռի և տեսակի և անհատի: - 236. Ա՛րդ՝ վասն զի գոն յամենայն իրս *նոյնութիւն* և այլութիւն որպէս ցուցաւ, յաղագս որոյ են նմանք և աննմանք միմեանց: - 236. Իններորդ՝ անշարժ *նոյնութեամբ* իւրով զամենայն քննէ և իմանայ. այսպէս և միտք առ մարդն գոլով զգիտութիւն էիցս քննէ: - 271. Զի ի վերայ նմանութեան իր ինչ յաւելու պատկերն՝ որ է՛ *նոյնութիւնն*, և ապա՛ է պատկեր. զի պատկերն հոմանուն է: - 272. Եւ է՛ որ *նոյնութեամբ* է պատկեր. և է՛ որ նմանութեամբ: - 272. Ա՛րդ՝ *նոյնութեամբ* պատկեր ասի միածին բանն՝ հօր...: - 272. Զի ո՛չ է ըստ նմանութեան պատկեր. այլ ըստ *նոյնութեան* բնութեանն: - 272. Զոր օրինակ ո՛չ ասի մարդ մարդոյ նման գոլ ըստ մարդկութեան. վասն զի *նոյնութիւն* է և ոչ նմանութիւն. բայց ասի նման մարդ մարդոյ ըստ երեսացն և գունոյն և ձևոյն նմանութեան: - 272. Եւ թէ ոք ասիցէ, *զնոյնութիւնն* ընկալայ. այլ ինձ այսպէս թուի թէ աւետարանս բանն է քրիստոսի, և քրիստոս բանն աստուծոյ. ապա ուրեմն և աւետարանս բան է բանին: - 530. Երկրորդ՝ զի աստուած զամենայն արարածս կրէ բանիւ զօրութեան իւրոյ ասէ առաքեալն և ի *նոյնութեան* պահէ. և սոքա պահին առանց միաւորութեան էութեան նորա: - 733

**ՆՈՅՆՉԱՓ +** Եւ *նոյնչափ* ի միւս դիհն է: - 243. *Նոյնչափ* միւս ոտքն. որ լինի **զ** քառասուն: - 243. Ո՛րչափ ուտիք է, *նոյնչափ* պահք է: - 649. Վասն որոյ կարգեցին առաքեալքն և հարքն՝ **ծձ** օր պահք. և *նոյնչափ* ուտիք: - 649

**ՆՈՅՆՊԷՍ +** Նա՛խ, զի ըստ սոցա ոչինչ է զանազանութիւն մշտնջենաւորացն և փոփոխականացն. որք են երկնայինք և երկրաւորք. զի նոքա միա՛յն են ի հարկէ, որք միշտ *նոյնպէս* ունին. որպէս հրեշտակք անմահք. և լուսաւորք երկնից. և ջերմութիւն հրոյ: - 8. Նախ՝ եթէ չար հիւանդութիւնն և այլն ի հարկէ՛ է, ապա ամենեցուն *նոյնպէս* պարտ էր գոլ. զի հարկն նոյն է առ ամենեսեան: - 11. Իսկ թէ այլ և այլ է ամենեցուն հարկն, ապա *նոյնպէս* ո՛չ լինէր ամենեցուն չար: - 11. Այլ արդ՝ բազմաց *նոյնպէս* մահ, հիւանդութիւն, և այլն. ապա ուրեմն ո՛չ է ի հարկէ: - 11. Եւ որպէս կիրք ցաւոցն մարդոյն են, զի զգա՛յ զկսկիծն. *նոյնպէս* և կիրք հեշտութեանն նորա՛ են, եթէ չարեաց և եթէ բարեաց, ապա ուրեմն մեր է ներգործութիւնն և ո՛չ հարկին: - 11. *Նո՛յնպէս* և տեսութիւնն աստուծոյ ո՛չ հարկէ ի վերայ մեր գործ զբարի կամ զչար. այլ կամք մեր: - 16. *Նոյնպէս* և աստուած է արարողական պատճառ կամացն. այլ ներգործական պատճառ է չար՝ կամքս մեր: - 16. Նախ՝ թէ ըստ այդմ բանի հա՛րկ է ապա և քեզ ջուր լինիլ և զջուրն գիտել. և քար լինիլ և զքարն ճանաչել, և զայլսն *նոյնպէս:* - 17. *Նոյնպէս* և նախագիտութիւնն ճանաչումն է չարեաց: - 18. *Նոյնպէս* և չարաբարոյն: - 19. Այլ արդ՝ եդ աստուած զսոսա բնական որակութիւնս ի մասունս հոգւոյն. եդ և զանձնիշխան կամքն տէր և իշխան իներբս ի հոգին. զի կառավարէ և առաջնորդէ՛ հոգւոյն. զվատ որակն ի բարին ուղղել, և զբարին ի *նոյնն* պահել և առաւելուլ. զի այս է գործ անձնիշխանին: - 19. *Նոյնպէս* և աստուած զամենայն մարդոյ փրկութիւն

կամի. որք անձնիշխան կամօք համակամ լիցին աստուծոյ՝ փրկին. և որք հակառակին կամօք՝ ո՛չ փրկին: - 20. *Նոյնպէս* և բարին միշտ բարի է. թէպէտ ի հոգւոյն պակասեցաւ, դեռևս ի յէութեան է. զի է է բարին. և էութիւն ո՛չ կորնչի: - 23. *Նոյնպէս* չափ և սահման՝ բնութեա՛ն է: - 23. *Նոյնպէս* և յերկինս տեսանելի՛ է չորս ինչ: - 26. *Նոյնպէս* ի ժամանակս քարոզութեանն քրիստոսի և առաքելոցն էր խաղաղութիւն: - 27. *Նոյնպէս* և աստ զանբարիշտսն նմանեցուցանէ գազանաց: - 28. *Նոյնպէս* զիմանալի խորհուրդս և զգիտութիւնս զոր տկարանայ միտք, կարողանայ հաւատքն տեսանել. այլ ո՛չ ունի հաւատ՝ քան զտեսութիւն մտացն: - 31. *Նոյնպէս* ո՛չ կարէ իմանալ յորժամ ի սուրբ գրոց և ի սքանչելեաց և ի բանից սուրբ վարդապետաց՝ դարձուցանէ զմիտքն. որպէս ասէ առակն՝ պակասամիտն ոչ ընդունի զբանս խոհեմութեանց. բայց միայն զայն՝ որ շրջին ի միտս նորա: - 31. Զի որպէս սատանայ ամբարտաւանութեամբն ընդդէմ աստուծոյ՝ զրկեցաւ ի լուսոյն, *նոյնպէս* և հպարտն զրկեցաւ ի շնորհացն ըստ երեմիայ: - 32. Եւ որպէս աչք ո՛չ տեսանէ զպակասութիւնն իւր, *նոյնպէս* բանականն ո՛չ տեսանէ զմոլորութիւնն իւր: - 32. *Նոյնպէս* և հերձուածօղք պղծեն զտաճարն աստուծոյ և զհաւատն սուրբ՝ որով քրիստոս ի մեզ բնակի, և մեք ի նա՛: - 35. *Նոյնպէս* և վասն սոցա յառաջագոյն ասացաւ յառաքելոց և ի վարդապետաց. զի մի՛ յանգէտս խոտորեսցին ընդ նոսա: - 35. Իսկ միաւորութեանն իմանալ՝ ոչ է ինչ մեծ. այլ է հաւասար որպէս առօղն՝ *նոյնպէս* և առեալն զոյգ աստուած և մարդ: - 39. *Նոյնպէս* և զաղաղակն և զարտասուսն՝ զերկիւղն՝ զտրտմութիւնն՝ զաղօթելն՝ և զայլ սոյնպիսին ի դիմաց մերոց իմացիս: - 42. *Նոյնպէս* և առանց հոգւոյ անկենդան և անսուրբն՝ ո՛չ է աստուած. ապա և ո՛չ որդի: - 51. *Նոյնպէս* և հոգին յիւրում ժամանակին. յետ խաչելութեանն քրիստոսի և համբառնալոյն առ հայր. և ապա իջանելոյ հոգւոյն. և յայտնելոյ զաստուածութիւնն իւր: - 55. *Նոյնպէս* և առաքումն հոգւոյն ո՛չ նըւազութիւն ցուցանէ, այլ զհամակամութիւն ընդ հօր և ընդ որդւոյ: - 60. *Նոյնպէս*՝ թէ ասի տրտմութիւն հոգւոյն. զի որպէս տրտմեալն հեռանա՛յ ի տրտմեցուցողէն, այսպէս և հոգին սուրբ հեռանայ ի մեղաւորէն: - 60. *Նոյնպէս* հոգին սուրբ ոչ բղխէ յորդւոյ, այլ միայն ի հօրէ: - 64. *Նոյնպէս* և հոգի ո՛չ է յորդւոյ՝ այլ միայն ի հօրէ: - 64. Եւ գիտելի է, զի որպէս բան կոչի որդին աստուծոյ, *նոյնպէս* խօսք կոչի հոգին սուրբ...: - 66. *Նոյնպէս* հոգին սուրբ պատմէ և ուսուցանէ զգիտութիւն հօր և որդւոյ: - 66. Հինգերորդ՝ որպէս այլ է անձն՝ այլ է խօսքն՝ և այլ միտքն. *նոյնպէս* ա՛յլ է անձն հօր, և ա՛յլ բանին, և ա՛յլ հոգւոյն սրբոյ: - 66. *Նոյնպէս* բանն աստուած եկաց մնաց բան, և եղև մարմին: - 72. *Նոյնպէս* իմա՛ և զաստուածն բան. ունելով զնոյն բնութիւն յառանձնութեան իւրում. և միայն միացեալ ի մարմնի և ո՛չ հայր և հոգի...: - 74. *Նոյնպէս* ի մարդեղութեան բանին անբաժան գոլով հայր և հոգի, ըստ որում «ես ի հայր՝ և հայր ի յիսէ». և թէ՝ «հոգւովն աստուծոյ հանեմ զդևս»: - 75. Եւ որպէս այս ո՛չ ասի, *նոյնպէս* և ո՛չ է հնար երկատելով ասել զքրիստոս անեղ և եղական: - 78. *Նոյնպէս* և ի տնօրէնութիւնն քրիստոսի նեստոր չարաչա՛ր բաժանէ զանձինս և զբնութիւնս, զկամս և զգործս: - 81. Եւ բանն քրիստոս կոչի, և յիսուս, և տէր. և աստուած. *նոյնպէս* և մարդն կոչի քրիստոս, և յիսուս, և տէր, և աստուած: - 82. *Նոյնպէս* և զկիրսն և զզօրութիւնսն անբաժանաբա՛ր ասեմք ի քրիստոս. որպէս Կիրք է քաղցնուլն. և Ներգործութիւն զհազարսն կերակրել: - 85. *Նոյնպէս* գաւառն՝ միոյն երկին, և միւսոյն երկիր: - 87. *Նոյնպէս* տեղիք մարմնոյն պարունակօղ՝ զմինն պարագրելի, և զմիւսն անպարագրելի: - 87. *Նոյնպէս* բանն աստուած որպէս է՛ բոլոր յաստուածութիւնն իւր, *նոյնպէս* բոլորն է ի մարդկութիւնն իւր միաւորեալ: - 89. *Նոյնպէս* բանն աստուած և հոգի և մարմինն միաւորեալ է բոլոր մի քրիստոս. և ի պակասիլ միոյն՝ ո՛չ մնայ քրիստոս: - 89. *Նոյնպէս* և քրիստոսն անուն՝ և տէր՝ և աստուած՝ և այլն՝ զո՛յգ և հաւասա՛ր է մարդկութեան իւրոյ և աստուածութեանն. և ո՛չ առաւել և նըւազ. կամ տկար և հզօր. կամ անգէտ և ամենագէտ. և որ ինչ այսմ նման: - 89. *Նոյնպէս* և այս ընդ դէմ նոցա է՝ որք մի ասեն անձն, և յերկուս բնութիւնս բաժանեն: - 91. Այլ զորօրինակ՝ մարդոյ ձեռն և ոտն մարդ չէ, այլ՝ մարդոյ ձեռն, և մարդոյ ոտն. *նոյնպէս* և զքրիստոս է՛ ասեն: - 91. Դարձեալ՝ որպէս ձեռն և ոտն մարդոյ ո՛չ է մարդ, *նոյնպէս* և ձեռն քրիստոսի ո՛չ է քրիստոս. և ոտն և այլ մասունքն ո՛չ են քրիստոս. ապա և բոլոր մարմինն ո՛չ է քրիստոս. և հոգին ո՛չ է քրիստոս. ապա թէ սոքա չեն քրիստոս, և բանն ըստ ինքեան ո՛չ է քրիստոս: - 91. *Նոյնպէս* արիւնն աստուած՝ և աստուծոյ արիւն. և այլն նմանապէս: - 92. *Նոյնպէս* ասելն զնոսա աստուած՝ո՛չ է բազում աստուած: - 93. *Նոյնպէս* և ասելն թէ՝ մարմինն քրիստոսի աստուած է. և արիւնն աստուած է. և հոգին աստուած է. ո՛չ է բազմաստուած. այլ մի աստուած: - 93. Զի որպէս նըւաստացաւ և եղև մարդ, *նոյնպէս* և շնորհք տըւաւ նմա յաստուծոյ և ի մարդկանէ: - 94. Ա՛րդ՝ եթէ հայր առաւել գիտէ և որդի նըւազ, այս լինի կամ հօրն *նոյնպէս* նըւազ գիտել որպէս որդի. և

կամ որդի՝ ո՛չ ճշմարիտ ասել: - 97. Արդ՝ որպէս օդ լուսաւորեալ՝ ո՛չ ունի մասն խաւարի, *Նո՛յնպէս* հոգին քրիստոսի միաւորեալ ի բանն աստուած՝ ո՛չ ունի մասն տգիտութեան: - 100. ...որպէս ասէ աստուածաբանն Գրիգոր, «համարձակիմ և ասեմ հաւասար աստուած՝ որպէս առօղն՝ *նոյնպէս* և առեալն». զի անմարմինն մարմնացաւ. բանն թանձրացաւ. և աստուածն մարդ եղև. մի անձնաւորութեամբ՝ և միաւորեալ բնութեամբ. մի տէր. մի քրիստոս. մի որդի աստուծոյ և որդի կուսին: - 100. *Նոյնպէս* և տգիտութիւնն մտա՛ցն է խաւար և մոլորութիւն. և կապ. և ծանրութիւն. և անջատօղ. և տգեղութիւն: 103-104. *Նոյնպէս* և միտք ի միշտ իմանալն: - 104. *Նոյնպէս* զորդւոյ և զհոգւոյ իմասցիս: - 105. *Նոյնպէս* փչօղ. փչեալ. փչումն. և այլ ծանօթութիւնք աստ յարմարին: - 105. *Նոյնպէս* և ասելն՝ Երրորդութիւն. սովին թըւով բացայայտի: - 105. *Նոյնպէս* և էութիւնն աստուծոյ ի յէքս բազմացեալ. և աստուած անունն ի բազում աստուածս. և մնացեալ նոյն մի աստուած...: - 106. *Նոյնպէս* և Երրորդութիւնն կատարեալ է. Յայր և Որդի և Յոգի սուրբ: - 107. *Նոյնպէս* հայր սկիզբն է. և որդի և հոգի ի միոյ սկզբնէ: - 107. Երրորդ՝ զի գ մի է. այսինքն մի. մի. և մի. *նոյնպէս* մի հայր. մի որդի. մի հոգի: - 107. Չորրորդ՝ զի երեքն զնոյն բնութիւն ունի զերիցն. *նոյնպէս* Երրորդութիւնն սուրբ նո՛յն է բնութեամբ: - 107. *Նոյնպէս* և որդի և հոգի: - 108. *Նոյնպէս* և որդի և հոգի: - 108. *Նոյնպէս* և ի միոյն աստուծոյ իջեալ յարարածս ընդարձակի տեսութիւն մեր. և ի սոցանէ ի նա դարձեալ նեղի: - 110. Եւ թէ ոք ասիցէ, որովհետև աստուած յաւիտեան է անսկիզբն և անվախճան. *նոյնպէս* և յարաձգականն: - 116. *Նոյնպէս* և անմիտ և անզգայ ասելն՝ զգերազանցն նշանակէ: - 118. *Նոյնպէս*՝ հաւատն միաւորէ զճշմարտութիւնն ընդ հաւատացօղն: - 121. Զի որպէս խաւարն անյայտ է, *նոյնպէս* և առաւել լոյսն անտեսութիւն առնէ. և նա անտես է ի հրեշտակաց. և անյայտ ի մարդկային մտաց. թէ ո՞րպէս կամ զի՞նչ է էութիւն և բնութիւն աստուածութեանն: - 122. *Նոյնպէս* որք ուրանան և ասեն, ո՛չէ աստուած քրիստոս. ո՛չէ հայր. ո՛չէ որդի: - 124. *Նոյնպէս* հայր է սկիզբն որդւոյ ծննդեան. և հոգւոյն բղխման: - 124. *Նոյնպէս* և բանն մարմին եղև. և հոգին ո՛չ: - 125. *Նոյնպէս* բանն աստուած մի քրիստոս է բովանդակեալ մարմնովն անբաժանելի: - 125. *Նոյնպէս* իմանալի արեգակն քրիստոս ի հայրական ծոցոյ անհա՛ս է բնութեամբ՝ և ի սրբոյ կուսէն իբր ի յարևելից ծագեալ. և ջերմ սիրով ի մարդկային ազգս որպէս յարևմուտս խոնարհեալ. և զսառուցեալ բնութիւնս պատեալ. և ի գերեզմանէն ի բարձունս դարձեալ յարևելս առ հայր ամբարձեալ: - 126. *Նոյնպէս* հրեշտակաց և դիւաց՝ չարաց ի մարդկանէ և բարեաց ընտրութեան հոգի ընկալաք: - 126. *Նոյնպէս* չորիւք առաքինութեամբք զարդարեցին: - 126. *Նոյնպէս* կարգ և սահման ընդհանուր եդեալ լուսաւորեցին զամենեսեան: - 126. *Նոյնպէս* զլուսոյ և զհրոյ յատկութիւնս բաղդատել դիւրին է իմանալի լուսոյն ճշմարտի. որպէս գրեալ ի ի գլուխն՝ լե համարն տե՛ս անդ: - 127. *Նոյնպէս* նախանձիլն. զի ո՛չէ և ասի: - 128. Եւ որպէս զարմացումն առաւելութիւն է իմացմանն, *նոյնպէս* և նախանձն առաւելութիւն է կամացն: - 128. *Նոյնպէս* է պարզութիւնն՝ անփոփոխութիւնն՝ և այլն: - 140. Ա՛րդ՝ բանիւ մտացն խօսի աստուած ընդ հրեշտակաց. *նո՛յնպէս* և հրեշտակք ընդ աստուծոյ: - 144. *Նոյնպէս* յերեւումն հրեշտակաց զոր մինն տեսանէ՝ այլ մերձակայքն ո՛չ տեսանեն. որպէս յա՛յտ է ի պատանեակն եղիսէի: - 145. *Նոյնպէս* և խօսի հոգին ընդ հրեշտակն մարմնական կերպիւ զոր իմանայ հրեշտակն որպէս զայլ զգալիս որքան է ի մարմնի: - 145. *Նոյնպէս* և յառնել մարդոյն և յանուն դնելն կենդանեաց՝ փառս ետուն աստուծոյ. իսկ նա լռեաց: - 147. *Նոյնպէս* երևմամբ չարեացն՝ արդարքն պայծառագոյն երևեցին: - 149. *Նոյնպէս* և յաւերժահասունք՝ զի միշտ պատրեն զմարդիկ ուրախութեամբ: - 150. *Նոյնպէս* և այլքն ամենայն: - 150. Եւ որպէս երգովն դաւիթի դադարէ՛ր այսն չարութեան ի սաւուղայ, *նոյնպէս* և այժմ: - 150. *Նոյնպէս* և առ մեզ՝ որք մրցին և ջանան ընդ դէմ բանսարկուին...: - 152. Վեցերորդ՝ գործ բնութեանն է *նոյնպէս* և նման. իսկ կամացն զանազանապէս և աննման: - 156. ...*նոյնպէս* և դու շնորհօք իմովք՝ տկար մարմնով քո՝ յաղթես և նկուն առնես զնա: - 159. *Նոյնպէս* և սատանայ աներևոյթ մօտ՝ ի մարդն երթալ. թէ ամուր է հաւատն և կամքն՝ ո՛չ կենայ անդ, յուսահատի և թողու: - 161. Զի որպէս հուր զժանկ արծաթոյ՝ և խարտոց զժանկ երկաթոյ, *նոյնպէս* և նեղութիւն սրբէ զմեղս մարդոյ: - 162. Եւ թէ ոք ասիցէ, եթէ աստուած զոր ոչ կամի՝ ո՛չ կարէ, որպէս զչար զի ո՛չ կամի և ո՛չ կարէ. *նոյնպէս* զմեղս և զայլսն. ապա երևի անկարութիւն ի յաստուած գոլ: - 163. *Նոյնպէս* վասն առաւել բարի կամացն ո՛չ կամի և ո՛չ կարէ առնել զաշխարհս ո՛չ էː - 163. Երկրորդ՝ հասարակութիւն է, զի որպէս է նկարեալ ձևն, *նոյնպէս* և շինեալ տաճարն քանակութեամբ և որպիսութեամբ. և անդրադարձեալ ևս: - 163. *Նոյնպէս* թէ և իցեն հրեշտակք արբանեկեալք ի ստեղծումն գոյից, սակայն միևն է աստուած պատճառ ամենայն գոյից: - 164. *Նոյնպէս*

և հրեշտակք ո՛չ տեսանեն զնախագաղափար տեսութիւնն որ լինելո՛ց էր յետոյ: - 164. Եւ այս ո՛չ պատճառի ի տկարութենէ շնորհացն որ միշտ *նոյնպէս* է նախ և յետոյ. այլ ի տկարութենէ անձինն շրջելոյ: - 166. *Նոյնպէս* և զայս եդին սուրբ հարքն ի նիկիայ: - 166. *Նոյնպէս* և քահանայն պոռնկեալ՝ ո՛չ լինի քահանայ: - 166. Ուստի յա՛յտ է զի ի լինիլն աշխարհի՝ նախագաղափար տեսութիւնն *նոյնպէս* եկաց մնաց առանց յաւելուածոյ և պակասութեան: - 169. *Նոյնպէս* և զօրութեամբ լինելութիւն աշխարհիս՝ առ աստուած ներգործութեամբ է: - 169. *Նոյնպէս* և աստուած ընդ արժանիսն դէմ յանդիման խօսեցաւ. որպէս առ ադամ. և առ նոյ. և առ աբրահամ. և առ մովսէս: - 177. Որպէս ի նիւթոյ և ի տեսակէ մարմին. և ի հոգւոյ և ի մարմնոյ կենդանին. և յարուէ՛ և իգէ ծնեալն. *նոյնպէս* ի ձայնաւորէ՛ և յանձայնէ՛ բանն ծնանի: - 177. *Նոյնպէս* և այբն խառնի ի թաւ և ի լերկ, ի սուղ և յերկար, և միաբանի ընդ նոսա, և ի մի բնութենէ իւրմէ ո՛չ որոշի կամ այլայլի: - 178. Նախ՝ ի շարժմանէ՛ երկնային մարմնոց. զի միշտ *նոյնպէս* և անդադար շարժին. առնելով զօր և զամիս՝ և զեղանակս՝ և զտարի՝ ստուգագոյն չափով առանց յաւելուածոյ և պակասութեան: - 181. Եւ բոլորակ ձևն պա՛րզ է քան զամենայն ձև. զի եռանկիւնին յերից գծից բաղկանայ, և քառանկիւնին ի քառից. *նոյնպէս* և այլքն: - 182. *Նոյնպէս* հոմանուն է և արփին. այսինքն լուսեղէնն և հաստատութիւնդ: - 184. *Նոյնպէս* յորժամ ասեմք թէ արեգակն խաւարեցաւ, ո՛չ ի բնական լուսոյն՝ այլ ի զմեզ լուսաւորելոյն: - 186. *Նոյնպէս* և լուսինն. զի այն որ պայծառն է՝ կերպարանք երկրի է. և աղտն՝ ծովուց: - 187. *Նոյնպէս* յորժամ հնանայ և պակսի լոյսն: - 187. Ի կշիռն ի կարիճն և յաղեղնաւորն առնէ աշուն. *նոյնպէս* հասարակ տիւ և գիշեր **ժբ** ժամ: - 190. ***Նոյնպէս* և ի մերն ի հին հայոյն, Արեգի ի թ է՛ առաջին օր արարչութեանն:** - 191. *Նոյնպէս* և հոգին նախ ի յինքենէ անտեսակ և անկատա՛ր է. և յետոյ կատարի յաստուծոյ շնորհօք և առաքինութեամբ և գիտութեամբ: - 192. *Նոյնպէս* և նշանակէ՛ զհրեշտակաց բնութիւնն, որ նախ ստեղծան անկատար ճանաչմամբ և գիտութեամբ. այլ յորժամ երանեցան և տեսին զէութիւնն աստուծոյ անընդմիջաբար, յայնժամ կատարեցան ճանաչմամբ և գիտութեամբ: - 192. *Նոյնպէս* և այլքն ըստ կարգի. Աբրաբամ. Մովսէս. Դաւիթ. և Քրիստոս: - 193. *Նոյնպէս* և կեանք մեր. այլայլի ի մանկութենէ ի ծերութիւն. յառողջութենէ ի հիւանդութիւն...: - 199. *Նոյնպէս* և մարդկային կենցաղս ամենեքեան հասարակաբար հաղորդին...: - 199. Պատասխանեմք յայտնի տեսութեամբ, թէ զոր ինչ այրէ հուր, ծախէ՛ և կորուսանէ զամենայն որակսն. այսինքն զգոյն. զհամ. զհոտ. *նոյնպէս* և զծանրութիւն: - 202. *Նոյնպէս* ծանրութիւն փայտին պատահակա՛ն է և եկամուտ. զորս կորուսանէ հուրն: - 202. *Նոյնպէս* և ջուր թէպէտ ջերմանայ, ո՛չ թեթևանայ: - 202. *Նոյնպէս* և գործելին ի հրոյ այրեալ՝ է՛ դառն և աղի: - 208. Որպէս ի մէջ երկրի գոն երակք ջրոց, *նոյնպէս* և հողմոց, ուստի ի վեր փչեն: - 208. *Նոյնպէս* և հրոյ. որպէս յետն է լեառն յարևմուտս: - 208. *Նոյնպէս* և յերկիր: - 209. *Նոյնպէս* և Աշխարհ կոչէ. այսինքն աշխար. և սուգ. և տրտմութեան հովիտ: - 210. *Նոյնպէս* և թագաւորք երկրի և իշխանք՝ որք բարձրացեալ են փառօք և դատա՛րկ յառաքինութեանց, են որպէս հովանաւորք: - 212. Այլ հոգէպէս որպէս ծաղիկք երկրի, *նոյնպէս* աստեղք երկնից են զարդ: - 213. *Նոյնպէս* և զայլսն իմացիր: - 213. Եւ *նոյնպէս* զգայական մարմինք ի փտելոյ և յապականութենէ գոյանան. վասն այն և դարձեալ ապականին: - 214. Յորժամ արար աստուած զմարդն ի հողոյ, նաև զանասունքն և զգազանքն ի հողոյ. *նոյնպէս* զլողակս և զթռչունս ի ջրոյ: - 214. *Նոյնպէս* և ի ջուրն կան այլ **գն**. հողմն երևի ի գոլորշիքն. և հուրն և հողն՝ կայծն ի վայր անկեալ քար լինի: - 214. *Նոյնպէս* և ջուրն ունի զսոսա. զի շօշափելի՛ է՝ և մածեալ՝ և շարժի՝ և երևի: - 215. *Նոյնպէս* և ջրայինքն զշունչ ջրոյ: - 215. *Նոյնպէս* և **դ** են թռչունք: - 215. Երրորդ՝ զի թոյնք և խայթոցք նոցա՝ զէն և պահապան է նոցա. զի առիւծքն պատառելովն ապրին. *նոյնպէս* և այլքն: - 217. Զի ամենայն գայլ խորամանկ է. և ամենայն աղուես նենգաւոր. և այլն *նոյնպէս:* - 218. Երկրորդ՝ զի պատկեր աստուծոյ է մարդն. այսինքն զի որպէս աստուած իշխան և թագաւոր է ամենայն արարածոց. *նոյնպէս* և մարդն իշխան է ամենայն կենդանեաց: - 220. Ա՛րդ՝ որպէս կենաց պտուղն կերակրելի է և կենսունակ, *նոյնպէս* ամենայն պտուղքն կերակրելիք էին և անապականք: - 223. *Նոյնպէս* և նա գիտութեան էր պատճառ բարւոյ և չարի որպէս ասէ սուրբն գրիգոր նիւսացին: - 223. *Նոյնպէս* և տունկք դրախտին ըմպեն զջուր գետոյն որ ոռոգանէ՛ զդրախտն: - 225. *Նոյնպէս* և դրախտն մասն է յապականացու երկրէ. և զանապականութիւն վիճակեալ: - 225. *Նոյնպէս* և վերջին հուրն նովին չափով հեղեղին ի նոյն տեղիսն ընթանայ: - 225. *Նոյնպէս* և ըստ թանձրութեանն: - 225. *Նոյնպէս* և ի դրախտն եղև պսակ օրհնութեան, և մանկարարութիւն ո՛չ: - 225. Ա՛րդ՝ եթէ առաջին կեանքն էր ամուսնութեամբ և որդէծնութեամբ որպէս նոքա շաղակրատեն. ապա և ի վերջին յարութեանն *նոյնպէս* է՛ լինելոց: - 226.

Զայս այսեն սուրբ վարդապետք եթէ՝ որպէս հրեշտակք աճեցին յերկինս, *նոյնպէս* և մարդկան ազգ ի դրախտին: - 226. *Նոյնպէս* և ի դրախտին կարէին ծնանիլ կուսութեամբ և առանց սերման. կատարեալ մարդ ի բնութենէն ադամայ: - 226. *Նոյնպէս* ի հողեղէն և յապականացու մարմնոյս մարդկան՝ էառ բանն աստուած. և միաւորելով ընդ ինքեան ծնաւ անապական մարմնով. անմեղ հոգւով և մտօք. և եղև երկրորդ ադամ Տէր յերնից: - 229. *Նոյնպէս* մարմինն է ի ներքոյ. և հիւթ արեանցն ի վերոյ. և ապա շունչն օդոյ և հուր լուսաւորացն ի վերոյ: - 232. Եւ որպէս սակաւ մասն ոտիցն ի յերկի՛ր է հպեալ և կոխէ, *նոյնպէս* և մեզ սակաւ պէտս մարմնոյ. այսինքն զգեստուց և կերակրոց ի յերկրէ ստանամք...: - 233. Եւ որպէս այս, *նոյնպէս* ի հոգևորն. վասն որոյ մովսէս ցանկայր տեսանել զերեսս աստուծոյ: - 234. *Նոյնպէս* և հոգի. ըստ այսմ նման: - 237. Եւ որպէս մարմնոյն պատկերք նման և աննման են իրերաց. *նոյնպէս* և հոգին ըստ միոյ բնութեան ստեղծեալք նման և աննմանք են իրերաց: - 237. *Նոյնպէս* և գլուխն է տապաղա՛յ է: - 239. *Նոյնպէս* ի **դ** հասակ մարդոյն փոփոխին **դ** հողմունքն: - 240. ***Նոյնպէս* և երկրի է՛ է մասն տիեզերաց. զոր է կլեմ կոչեն**: - 241. *Նոյնպէս* և լեղին: - 241. *Նոյնպէս* լեարդն և լեղին հալեն զկերակուրն արտաքուստ ի յաջմէ կողմանէ: - 242. *Նոյնպէս* ընդ ներքին դուռն զաւելորդն արտաքս վտարէ ընդ աղիսն. և յայսմանէ ջրատեսակն ընդ ցնցուղ քաղրթին ի փալաբուշտն իջանէ և լինի մէզ: - 242. *Նոյնպէս* յորժամ ամաչէ՝ զարիւնն սփռէ ի մարմինն, և քող արկանէ վասն ամօթոյն. յայնժամ յարենէն շառագունի մորթ երեսացն: - 245. *Նոյնպէս* յորժամ բարկանայ՝ կապուտի: - 245. *Նոյնպէս* և ի տրտմիլն սևանայ վասն սեաւ մաղձոյն որ տայ ի յերեսն: - 245. Երկրորդ՝ զի ոչ *նոյնպէս* աւելի և նուազ. այլ երբեմն՝ և հաւասար ամենայն մարդկան: - 246. Որպէս օրինակաւ մասունք հոգւոյ ասացան, *նոյնպէս* է և մասունք մարմնոյն իւրաքանչիւրոցն գործի: - 250. *Նոյնպէս* թէ զարուեստն լաւ առնէ՝ գովի. և թէ վատթար՝ պարսաւի: - 250. *Նոյնպէս* և ի բանական որակութիւնս հոգւոյն՝ նման և աննման, հաւասար և անհաւասար բացատրեաց. այսինքն խոհեմ և տգէտ. հեզ և բարկացող. ողջախոհ և ցանկասէր. և այլ զանազան բարս բնական՝ մարդոյն: - 252. *Նոյնպէս* իմա՛ և զհոգին: - 255. *Նոյնպէս* և ի զգայականս ո՛չ է պարտ ասել **բ** հոգի. այլ **բ** զօրութիւն: - 259. *Նոյնպէս* և աստ իմա: - 259. Եւ որպէս սիրտն նա՛խ գոյանայ, *նոյնպէս* և յետո՛յ մեռանի վասն ջերմութեան նորին: - 261. *Նոյնպէս* և յառիւծոյ և յիշոյ ո՛չ լինի ծնունդ. զի մինն մսակեր է և միւսն ընտակեր: - 267. *Նոյնպէս* և յղանալն հանդերձեալ է, և վախճանեալ անցեալն, որ ո՛չ երևին. այլ միայն ծնեալն երևի որ է՛ ներկայ: - 267-268. *Նոյնպէս* և արուեստն նախ նկարի ի միտքն և ապա ներգործի և կատարի: - 268. Նա՛խ զի աստուած է՛ անձնիշխան և ինքնակալ. *նոյնպէս* և մարդս: - 271. Տասներորդ՝ մի և նոյն միտք է յաստուած որով զամենայն տեսանէ և զամենայն բարբառ լսէ. *նոյնպէս* և ի մարդս մի իմացումն է որ զանազան զգայարանօք իմանայ: - 271-272. Քսանն**թ**, բարի և բարեսէր է աստուած. *նոյնպէս* և զմարդն բարի և բարեսէր ստեղծ: - 272. *Նոյնպէս* և ամենայն պատկեր ի հարկէ՛ ասի նմանութիւն. այլ ո՛չ ամենայն նմանութիւն է պատկեր: - 272. Երրորդ՝ զի որպէս խօսիլ գլխոյն է. *նոյնպէս* լռութիւն կողին է. զի լուռ լիցի կինն ընդ իշխանութեամբ առնն: - 276. Տասներորդ՝ կին, իբր թէ կեանք. զի որպէս կենօք է տնել. *նոյնպէս* տեսակ մարդոյս ի ձեռն կնոջ ծննդեանն տևէ՛, և կայ մնայ մինչ ի կատարած: - 276. Նախ՝ վասն պարզամտութեանն. զի որպէս տղայք ո՛չ ամաչեն անծածուկ ունելով զմասունս. *նոյնպէս* և նոքա: - 278. Չորրորդ՝ **բ** ելին ի դրախտէն մեղօք. *նոյնպէս* և **բ** մտին ի դրախտն անմեղութեամբ: - 289. *Նոյնպէս* և վերացուցանելն զկարող զօրութիւն յայնմ որ վերացոյցն: - 289. *Նոյնպէս* և զփոխումն ենովքայ տեսին եղբարքն ուստերքն և դստերք նորա. զի մի՛ ասիցեն թէ սպա՛ն զնա՛ կուրացեալն ղամեք թոռն կայենի: - 290. *Նոյնպէս* և անդրանիկ ծնունդքն աշխարհի էին նահապետքն որ նախ քան զջուրն, տևէին ի կեանս այս **թճ** կամ աւելի ամ, և ապա ծնանէին ի հանդերձեալ կեանսն մահւամբ ելիւք: - 290. *Նոյնպէս* և արդարութիւնն երբեմն յերկարէ՛ զկեանս որպէս առ եզեկիա. և երբեմն կարճէ՛ որպէս առ ովսիայ: - 292. Եւ որ քան օրս յաւելու, *նոյնպէս* և ցաւս մեր բազմանայ: - 292. Նա՛խ՝ որպէս հատանեմք քաղելով զբանջարն և ապա՛ ուտեմք, *նոյնպէս* զենումք զկենդանին և ապա՛ ուտեմք: - 295. *Նոյնպէս* ի կենդանեաց զսուրբն և անսուրբն ընտրեմք: - 295. *Նոյնպէս* և ի սուրբ կենդանիս ի **դ** մասնէն զմինն ուտեմք: - 296. Զի որպէս այլասե՛ռք են ցամաքայինք և ջրայինք. *նոյնպէս* և այլատեսա՛կ են կենդանութեամբ. և այլատեսա՛կ է զենումն նոցա: - 296. *Նոյնպէս* և **հ** տանուտեարքն միաբանեցան ի չարն: - 296. *Նոյնպէս* լեզու առ լեզու գեղեցկանայ ի խօսքն: - 297. Եւ դարձեալ՝ որպէս սահմանն զտեսակս ազգացն նշանակէ. *նոյնպէս* և լեզուն զիւրաքանչիւր ազգս ցուցանէ: - 298. *Նոյնպէս* և մելքիսեդեկ թագաւոր էր սաղիմայ. որպէս և անունն յայտնէ. մելքի՝ որ է՛ թագաւոր: - 300. *Նոյնպէս* և

որք հաղորդին մարմնոյն քրիստոսի, ո՛չ մերձենան ի զանազան ախտս մարմնական անքլփատութեան և զոհից դիւական: - 301. *Նոյնպէս* և տէրն մեր ետ հաւատացելոցն զկենարար մարմինն և արիւնն իւր. յորոց խնդրէ զգործս տասնաւոր. այսինքն զկատարեալս. և զկատարումն **Ժ** բանեան օրինացն. ի յորս է՛ մաքրութիւն **Ժ** զգայարանացս որպէս ի վերոյ ասացաւ: - 302. *Նոյնպէս* յորժամ բնակին բարեպաշտք ի մէջ անհաւատից, Նա՛խ՝ զի աղօթք նոցա պահապան է նոցա: - 302. Ութերորդ՝ յուսով ժառանգ երկրին ծնաւ իսահակ. *Նոյնպէս* և ժառանգ բոլորիցս տէր մեր. և ժառանգ արքայութեան ծնունդք աւազանին...: - 307. *Նոյնպէս* և ծնունդք սուրբ աւազանին որք են անդրանիկք և անդամք քրիստոսի եղեալք, ագահութեամբ և պոռնկութեամբ կորուսանեն զշնորհն երկնաւոր. և ո՛չ լան և ո՛չ զղջան որպէս եսաւ: - 309. *Նոյնպէս* և յակոբ, եփրեմ, դաւիթ, կրտսեր ի մէջ եղբարցն և թագաւորացն. խնդրե՛մ ուսանիլ: - 309. *Նոյնպէս* և անունն սահմանէ կարճառօտ՝ յայտնիչ բնութեան իրին. որպէս մինչ ասեմք մարդ, քար, յայտնեցաւ բնութիւնն: - 311. Յաղագս որոյ որպէս մարդ ինքն ինքեան անուն ո՛չ դնէ. *Նոյնպէս* և աստուած ինքն ինքեան անուն ոչ դնէ: - 312. *Նոյնպէս* և սատանայ ատէ՛ր զմարդկային բնութիւնս զի ի պատկերն աստուծոյ արարաւ. և հրէայքն ատէին զքրիստոս. զի վկայեաց հայր թէ դա՛ է որդի իմ սիրելի: - 313. *Նոյնպէս* և տէր մեր փոխանակ շնացօղ ազգին հրէից ընկալաւ զեկեղեցի կոյս՝ և սուրբ ժողովուրդ իւր: - 313. *Նոյնպէս* և քրիստոս եկն առ եղբարս իւր որ էին որդիք դաւթի և աբրահամու և առաջնորդք ժողովրդեանն. և յուդա վաճառեց զնա. և տէր եղև կենդանեաց և մեռելոց և կերակրիչ. զի ազատեաց զհոգիսն ի սովոյ դժոխոցն: - 313. *Նոյնպէս* և մեք աստէն քաղցեալ եմք բանիւ մինչ ա՛նդր երթիցուք, և ապա անդ զկրկին զգեստն զգեցցուք. այսինքն զփառս հոգւոյ և մարմնոյ: - 314. *Նոյնպէս* և քրիստոս զզէն և զզօրութիւն սատանայի եբարձ որ էր մեղքն և մահ դժոխոցն: - 314. *Նոյնպէս* և տէր մեր յետոյ բառնալո՛ց է զչար. գազանն զորդին կորստեան և զպաշտօնեայսն նորա ի կատարածի: - 314. *Նոյնպէս* ի մահ խոնարհեալ դաւանիմք զհաւատն, և հաղորդիմք: - 314. *Նոյնպէս* և ամենայնքն մեռանիմք և ամենայնքն յառնեմք: - 314. *Նոյնպէս* և աստ հոլովմամբ ժամանակաց ընթանամք մինչև ընկերեսցի անիւն ի գուբն: - 314. *Նոյնպէս* և սրբոցն միտք լուսաւորին յաջոյն քրիստոսի. զոր աստ շանմանդաղ տեսանէին զփառս, անդ յայտնապէս տեսցեն: - 314. *Նոյնպէս* և սուրբքն ջերմ սիրովն աստուծոյ ժողովին ի կայանս հոգւոցն ի տեղւոջ լուսոյ և հանգստեան: - 315. *Նոյնպէս* և քրիստոս աստ ի գնալն հոգւոց և ի գալստեանն աւուր՝ ընդ առաջ ելանէ սրբոցն և համբուրէ զսիրելիս իւր, որպէս հայրն երկնաւոր ի դարձ անառակին: - 315. *Նոյնպէս* և քրիստոս իմաստութեամբն իւրով կերակրէ՛ զնոսա և զգեցուցանէ որպէս ի **Դ** երիցանցն, որ տուաւ նոցա արկանելիս սպիտակս. այս է շնորհն մաքրութեան զոր ընկալան ի քրիստոսէ: - 315. *Նոյնպէս* և կամաւ իւր յարեաւ: - 316. *Նոյնպէս* և տէր մեր յարուցեալ ի հայրական աթոռոյն՝ գայ ի դատել զերկիր...: - 317. *Նոյնպէս* և կապն միջակօրէն տրամատի ի **Դ**: - 317. *Նոյնպէս* և մարմնական կապովն, զի ազգակից է մեզ և փեսայ հոգևոր. և ցանկամք նմա ակն ունելով վարձուցն հատուցման: - 318. *Նոյնպէս* և տեառն մերոյ կոչի տաճար արտաքին բնակարան. որպէս կոյսն մարիամ, և հաւատացեալ ժողովուրդք, և շինուածք տաճարաց: - 319. *Նոյնպէս* և խեցեաւ սրբէր զքարախն: - 323. *Նոյնպէս* է ուստերք և **Գ** դստերք: - 326. *Նոյնպէս* և կեանքն կրկին: - 326. Նա՛խ՝ զի յաղթեաց փորձողին որպէս յոբ՝ *Նոյնպէս* և տէր մեր: - 327. *Նոյնպէս* և տէր ի հօրէ և ի մօրէ. պայծառութեամբն ի թաբօր. մկրտութեամբն ի ջրոյ. և յարութեամբն ի գերեզմանէ՛: - 329. *Նոյնպէս* և մի տէր յիսուս քրիստոս մի բնութեամբ էր աստուած, և եղև մարդ. հաւատացելոցն ի կանգնումն, և անհաւատիցն ի գլորումն: - 333. *Նոյնպէս* և նոքա կախարդութեամբն իւրեանց ի վաստակս որդւոցն իսրայէլի: - 334. *Նոյնպէս* պաշտօնեայք նորա ցուցանեն ինչ որ չէ ճշմարիտ: - 335. *Նոյնպէս* և նշխարք մարմնոյն բոլոր. առ ի նշանակել թէ բոլոր պարտ է ունել հաւատ կերողացն: - 339. Երկրորդ՝ սպիտակ. և *Նոյնպէս* նշխարն. զի անաղտ և մաքուրս գործեն: - 339. Եօթներորդ՝ զի նոր իմն չնաշխարհիկ կազմեաց. նոր ժողովրդեանն և նոր օրինացն, իցէ և նո՛ր տաճար հռչակեալ ընդ ծով և ընդ ցամաք. որպէս պսակ և փառք արդարոցն է՛ զոր ակն ո՛չ ետես և ունկն ո՛չ լուսաւ. *Նոյնպէս* և սա՛ ի զգալիսս անհաս ի մտաց մարդկան: - 342. *Նոյնպէս* և բարձրացեալ են գիտութեամբ առաւել քան զմարդիկք, և պակաս քան զաստուծոյ: - 344. *Նոյնպէս* և քերովբէքն ի վերայ քաւութեանն հովանացեալ, և ի միջոյ նոցա աստուածախօսութիւնն: - 345. Ա՛րդ՝ **Գ** հաց՝ և գառն խորովեալ դնէին յառաւօտուն. և չորրորդ մասն դորակի գինւոյ. *Նոյնպէս* և յերեկոյն հանապազորդ: - 346. *Նոյնպէս* և սեղան խնկոց և երեսացն ցուցանէ զհոգիս սրբոց ելեալ ի մարմնոց և մտեալ դէմ յանդիման երեսացն աստուծոյ: - 346. Նա՛խ՝ զի տղա՛յք էին և ի տե՛սն զուարճանային. որպէս խորանն

և ա՛յլ սրբութիւնք. *նոյնպէս* և զգեստք քահանայութեան: - 347. Ա՛րդ՝ բնութիւնս մեր ի յաղամ ապականեցաւ մեղօք. վասն այն որպէս նա՛ պատժեցաւ, *նոյնպէս* և մեք պատժիմք: - 351. *Նոյնպէս* և արդարութիւնն հաւասար է. զի ի գլխո՛յն է կենդանութիւն և մահ: - 358. Երրորդ, երկրորդ սեղան է սիրտ քահանային. որպէս սեղանն զողջակէզն մաքրէ՛, *նոյնպէս* իշխանութիւն քահանային: - 363. Զի որպէս ստամոքն զկերակուրն հալէ, *նոյնպէս* և քահանայն զմեղքն: - 363. Դարձեալ՝ որպէս ծառա՛յ են կենդանիք և սպասաւոր մարդկան. *նոյնպէս* և յօրինակ ընտրութեան մարդկան ընտրեցան զսուրբս և զանսուրբս նշանակելով այսպէս: - 364. *Նոյնպէս* ի ձկունս որ թև ունին և թեփ: - 364. *Նոյնպէս* ի թռչունսն, կռաշուրքն և մսակերն նոքա են, որ պատառեն զընկերս՝ պիղծ են: - 365. *Նոյնպէս* քրիստոնեայն որ մեղօք մեռանի՝ և անհաւատն միապէս պիղծ են առաջի աստուծոյ: - 365. *Նոյնպէս* և արիւնահեղն արիւնապա՛րտ է մարդոյ, ո՛չ հեղու զարիւն անասնոյ: - 366. *Նոյնպէս* և ոտքն ըստ չորից տարերց ընթացից: - 367. Երրորդ, աճէ բորն. *նոյնպէս* և մեղքն ի բոլոր անձն: - 367. Դարձեալ՝ մեք մարմին եմք քրիստոսի և անդամք նմա. *նոյնպէս* և զգեստ. այսպէս տուն և տաճար. մկրտութեամբ և հաւատով և բարի գործով: - 367. *Նոյնպէս* և արիւն դաշտանւոյն պղծէ՛ զչորս դէմս. որպէս հոսումն արուին և բղխումն իգին: - 369. Եւ *նոյնպէս* խոստովանութեամբ սրբի: - 369. *Նոյնպէս* և ի նորս պահեսցի էօրեայ սրբութիւն դաշտանի: - 369. և Դարձեալ ասեն, բնական մեղքն խտրութեան մնաց ի գրաւորն, *նոյնպէս* ի նորս. որպէս սերմնակաթն և դաշտանին. այլ պատիժն փոխեցաւ հինն ի նորս: - 369. Եւ արիւնն, զմեղս մեր բարձեալ յինքեան և տարեալ ի դաշտն առ հայր յերկինս. զի որպէս մեռեալ մարմնովն քաւեաց զմեղս. *նոյնպէս* և անմահ աստուածութեամբն կենդանացոյց և յերկինս եհան: - 369. Երկրորդ՝ զի պատարագն զոր մատուցանէին անարատք էին. *նոյնպէս* և սպասաւորքն լիցին: - 370. Եւ եօթնից է տօնեմք յարութեան. *նոյնպէս* զմի օր օրինացն տըւչութեան, տօնեմք **ը** օր հոգւոյն գալստեան: - 373. Երրորդ՝ զի հաւասարք են **գ** տօնքս. որպէս ծննդեան և յարութեան՝ *նոյնպէս* և հոգւոյն գալստեան **ը** օր տօնեմք: - 373. *Նոյնպէս* և մեք ի յառնուլ զհոգին սուրբ պահո՛ք տօնեմք: - 373. *Նոյնպէս* և մեք ի հանդէս տօնից նուիրեմք նաշիհ և գինի պատարագի. ձէթ՝ մոմ՝ խունկ՝ և զենումն մատաղի: - 375. *Նոյնպէս* և առաւօտու երգն, և մեսեդի ճաշոյն, և տասանորդ նաշիոյն **ժ** զգայարանաց մարմնոյն ճնշելն: - 375. *Նոյնպէս* և փոխ հացի և այլ ինչ իրաց: - 375. Երրորդ՝ որպէս ինքն զգալի աստեղս թըւէ՛ և յանուանէ՛ կոչէ, *նոյնպէս* և զիմանալի՛սն ետ թուել: - 377. *Նոյնպէս* և Ղևտացիքն շուրջ զխորանաւն բանակէին ի մէջ **բժ**ան ցեղիցն. և խորանն ի միջի նոցա այսպէս: - 378. Որպէս ետ առաքելոցն, *Նոյնպէս* և նոցա ի գիր նզովից զկապելն. և յօրհնութիւն ժողովրդեանն զարձակելն: - 379. Եւ դարձեալ, երկոտասան արքեպիսկոպոսք. և կաթողիկոսն ի մէջն. *նոյնպէս* և արքեպիսկոպոսն **բժ**ան ունի գաւազան: - 382. Չորրորդ՝ որպէս ո՛չ ունէր զաւելորդ ցանկութեանն, *նոյնպէս* և ո՛չ զկերակրոյ: - 383. Եւ ի հարկէ *նոյնպէս*: - 383. *Նոյնպէս* այժմ ի նորս պարտ է խոստովանիլ վասն կանոնաց եկեղեցւոյ. և զգողօնսն վճարել կամ ի տէրն, կամ ի քահանայս, կամ յաղքատս: - 384. Որպէս սափորն կոյսն էր, և գաւազանն խաչն, *նոյնպէս* վէմն քրիստոս: - 386. Նա՛խ՝ որպէս բարձրացաւ օձն ի ձողին. *նոյնպէս* տէրն մեր ի խաչին: - 386. Եւ որպէս կնոջ ընդ հրամանս առնն իւրոյ յանցանել պոռնկութենէ, *նոյնպէս* և զաւակաց, և ծառայից, և աշակերտաց, և հնազանդելոց, և ժողովրդոց. *նոյնպէս* և հոգիս մեր ելեալ ի հրամանացն աստուծոյ՝ պոռնկութիւն է նմա. եթէ ըստ գործոց. եթէ ըստ հաւատոց: - 389. *Նոյնպէս* և ամենայն ոք հրամանաւ առաջնորդին թէ պահեսցէ զուխտն բարի է. և թէ զանցուսցէ ո՛չ դատապարտի: - 389. *Նոյնպէս* և կրօնաւորն ո՛չ ցաւի և տրտմի և ո՛չ հեշտանայ ընդ աշխարհի: - 390. Զի գործ արդարութեան է սպանանել զքշնամիս. *նոյնպէս* և աւարն արդարութեան մասն է: - 390. *Նոյնպէս* եղիցի և ճշմարտութիւնն: - 392. *Նոյնպէս* առաջին օրէնքն շարժեաց զնոսա ի բուսանիլ. և երկրորդն յաճումն և ի պտուղ: - 393. *Նոյնպէս* յերեք տեղւոջ ոգորի. յերկրի՝ զի հանցէ յերկնից. և յօդ՝ զի արգելցէ. և ի յարութեանն՝ զի ընկեսցէ ի հուրն: - 394. Եւ սա՛ բղխէ զկաթն և զմեղր. որ է՛ քաղցրութիւն և թողութիւն մեղաց. *նոյնպէս* և զ**ժ** բանեան օրէնս: - 395. *Նոյնպէս* և անձն: - 396. Ութերորդ՝ մովսէս ի լեառն եկաց **խ** տիւ և **խ** գիշեր անսուաղ. և կերակրիւր բանիւն աստուծոյ. *նոյնպէս* և եղիա. նաև տէր մեր ի փորձութեան լերինն: - 397. *Նոյնպէս* և մտօք զմասունսն հոգւոյս զբան՝ զցասումն՝ և զցանկութիւնն տեսանել և զարթարել: - 397. Եւ որպէս ննջեցեալն քնով՝ ո՛չ տեսանէ զինքն. և որպէս յաւելի կերակրոյ խնուն զգայարանքն. *նոյնպէս* ագահութիւն և փարթամութիւն և հպարտութիւն մոռանալ տայ զինքն. վասն այն ասեն թէ՝ ինքեանց գիտակքն իմաստունք են: - 397-398. *Նոյնպէս* ազգն իսրայէլի ընտրեցաւ վասն աստուածածին կուսին մարիամու: - 398. Նա՛խ՝ որպէս եղև

մեղք և եբարձ զմեղս. *նոյնպէս* եղև անէծք և եբարձ զանէծս: - 400. *Նոյնպէս* և տէր մեր ո՛չ է անիծեալ: - 400. *Նոյնպէս* և նորոյս խորհուրդն զի անքակտելի՛ է կինն: - 401. *Նոյնպէս* գլուխ է այր կարէ՛ բազում կանայս առնուլ: - 401. Երկրորդ՝ որպէս զօրհնութիւն նորա մարմնական ո՛չ ունիմք. *նոյնպէս* և ո՛չ զանէծսն: - 403. *Նոյնպէս* որ պատրաստեաց սիրելեաց զփառս, և զտանջանս չարեաց, անգիտելի՛ է այժմու կենացս: - 406. Վասն է՞ր կոչի աւագ օրհնութիւն. զի յակոբ ևս օրհնեաց զորդիսն. *նոյնպէս* և իսահակ. և այլն: - 407. ...ըստ որում մեզ ասաց, բարկանայք բանիւ, և մի՛ մեղանչէք գործով. *նոյնպէս* բարկութիւնն աստուծոյ՝ սպառնա՛լն է. և սրտմտիլն գործն: - 408. *Նոյնպէս* և հանդերձեալ պատուհասն բարի է և արդարութիւն: - 408. Մովսէս նշան կատարեաց մեծամեծ. *նոյնպէս* և ա՛յլ մարգարէք. փրկչին մերոյ ո՞րն է առաւել քան զնոցայն: - 411. *Նոյնպէս* և սրբոյն ամենայն ինչ սուրբ է. որպէս ոչխարին մազն և միսն և այլն: - 416. *Նոյնպէս* և յեսու անուանակիր և օրինակ ճշմարիտն յիսուսի: - 417. *Նոյնպէս* անցեալ ընդ մկրտութիւն և յաղթեալ փորձութեանցն և եկեալ ի քրիստոնէութիւն: - 419. Եւ *նոյնպէս* ամենայն հաւատացեալք մկրտին. և զնոյն շնորհք պարգևաց ընդունին: - 421. *Նոյնպէս* և տկարութեամբ նորին՝ կորստական խոնարհութիւն ցուցանի մարմնոյ իւրոյ աշխարհի: - 424. Զի սամփսոն ի ժամ գերծելոյ գլխոյն թմրեալ ի ծունկս թալիլայ խոնարհէր. *նոյնպէս* և ամենայն մեղք զոր գործէ մարդ, և առաւել գէճ ցանկութիւն, անարգէ զմարդ: - 424. *Նոյնպէս* ի նորս քահանայք և ժողովուրդք: - 425. Երրորդ՝ զի ոտք և ձեռք կապեալ բազումք զզաւակս զոհէին նմա. *նոյնպէս* և նորայն հատան: - 426. Երրորդ՝ զի առ աբիմելէք *նոյնպէս* եղև. և որպէս յեգիպտոս գործն. *նոյնպէս* և անդ մուկն: - 426. *Նոյնպէս* և հաց պիղծ կոչի խմորունն և հասարակացն: - 427. Այլ որպէս յարուցեալն նմանութիւն է և ո՛չ իսկութիւն, *նոյնպէս* և խօսքն սուտ է և ո՛չ ճշմարիտ: - 428. Ապա յա՛յտ է թէ՝ որպէս սաւուղ խաբէր զկինն, *նոյնպէս* և կինն խաբէր զսաւուղ նմանութեամբն սամուէլի: - 428. Երկրորդ՝ ուստի՞ ճանաչեաց թէ սամուէլ է. զի ահա՛ կինն ասաց. այլ որպէս կինն երևեցոյց զձևն, *նոյնպէս* կարծեաց և սաւուղ: - 429. Ութերորդ՝ որպէս սուտ էր յարութիւնն, *նոյնպէս* սուտ է և խօսքն և կերպարանօք: - 430. *Նոյնպէս* և դևք ի նրբութենէ տեսութեան իւրեանց՝ կամ ի լսելոյ՝ խաբեն, զառաջիկայն պատմելով: - 430. Կամ զի օրէնքն գրեալ էր՝ կուրի և կաղի մի՛ դնել գայթակղութիւն, աստէին նախատելով թէ՝ որպէս ո՛չ կարես կոխել զդոսա, *նոյնպէս* ո՛չ կարես առնուլ զամուրն յեբուսայ: - 431. Հինգերորդ՝ զի ցուցանէ թէ՝ որ ի սիրելին իւր դաւիթ ոչ խնայեաց, *նոյնպէս* և զամենայն մեղաւորս յանդիմանէ՛: - 432. *Նոյնպէս* և ամենայն խոստովանութիւնն առնէ: - 432. Որպէս դաւթին յետ զղջմանն յիշատակութիւն մեղացն մնաց, ապա *նո՛յնպէս* և ամենայն մարդոյ մնասցէ՞ թէպէտ և խոստովանի: - 432. և Դարձեալ՝ նոյն ինքն քրիստոսի է իշխանութիւնն որ աստ լուծանէ ի ձեռն քահանային. և իշխանութիւն նորա ո՛չ տկարանայ երբէք. որպէս զհաց և զգինին կատարէ և զայլ խորհուրդս. *նոյնպէս* և աստ: - 433. Հինգերորդ՝ բանիւ և արդեամբ սպան զուրիա, և *նոյնպէս* վճարի. բանիւ նախատէ սիմէի, և արդեամբ աբիսողոմ: - 433. Նա՛խ՝ որպէս գեդէոն ջրովն փորձեաց զիւատս զօրացն. *նոյնպէս* և դաւիթ: - 434. Երկրորդ՝ որպէս թուեաց դովեկ զքահանայսն զի մի՛ զերծանիցեն ի սրոյն. *նոյնպէս* և այս վասն քահանայիցն վրէժխնդրութեան էր. զի կամեցաւ ժողովուրդն փրկել զնոսա: - 434. Հետիոտս փախեաւ և ծածկեալ գլխով. և *նոյնպէս* տէրն ի խաչին: - 438. Յայս միտս ի կենդանագիր կուսին՝ ի ձախոյ գիրկս լինի փրկչական պատկերն. *նոյնպէս* և առ ի խաչին ի յաջակողմն կացեալ: - 441. Եւ *նոյնպէս* թագաւորքն մոգուց բերին ընծայ քրիստոսի: - 441. Երկրորդ՝ նշանակէր զմանանայն որ *նոյնպէս* ոչ յաւելոյր և ոչ նուազէր: - 444. Երրորդ՝ ցուցանէ զպտուղ դրախտին *նոյնպէս* գոլ առանց յաւելուածոյ և առանց նուազելոյ. թէպէտ կերակրիւր: - 444. Երկրորդ՝ եցոյց թէ *նոյնպէս* ընդ քե՛զ է լինելոց զօրք հրեղինացն նովին հոգւովն: - 445. *Նոյնպէս* և ամենայն խաչի զօրութիւնն քրիստոս է. ի ձեռս արժանաւոր և կատարեալ հաւատոց առնէ սքանչելիս. իսկ ոչ նոյնպիսեացն ծածկէ զզօրութիւնն: - 445. *Նոյնպէս* և **իբ** գիրք գումարեալ աստուածակերտ գրոց: - 451. *Նոյնպէս* և ողորմութիւնն աստուծոյ **գ** կերպիւ առեալ լինի: - 459. *Նոյնպէս* յովսէփ և մարիամ մերկ էին ի մեղաց և առանց խղճի ամօթոյ: - 461. *Նոյնպէս* պա՛րտ է ամենայն մարդոյ յորժամ լսիցէ զբանն, նախ խորհիլ և հարցանել, և ապա՛ հաւանիլ: - 465. *Նոյնպէս* և որ ասէ, «բանն մարմին եղև». յա՛յտ է թէ ի կնոջէ. ապա ուրեմն մայր է բանին մարմնացելոյ: - 466. *Նոյնպէս* որդին աստուծոյ որդի է կուսին որ էառ մարմին ի նմանէ. թէպէտ աստուածութիւնն ի հօրէ է. ապա ուրեմն աստուածածին է կոյսն: - 466. *Նոյնպէս* և կոյսն սուրբ աստուածածին է վասն աստուածացեալ մարմնոյն: - 466. *Նոյնպէս* և բանն աստուած թէ կարի իսկ յառաջին դարս էր մարմնացեալ, որպէս յաւուրս նոյի՝ աբրահամու և կամ մովսէսի՝ լինէր կրկին վնաս:

- 467. *Նոյնպէս* և հոգին սուրբ լինէր որդի և հոգի: - 468. Զի մարդն ցանկացաւ գիտութեանն աստուծոյ որ է յատուկ որդւոյ՝ և անկաւ. *Նոյնպէս* նովին գիտութեամբն պարտ էր և կանգնիլ: - 468. *Նոյնպէս* և զամբողջութիւն կուսին՝ մուտ և ել աստուածն բան ո՛չ խախտեաց: - 469. Զի որպէս ի կուսական արգանդէ, *Նոյնպէս* ծնաւ ի կոյս գերեզմանէ վիմովն կնքելով: - 471. *Նոյնպէս* և անդրանիկ ծնունդ ի հօրէ: - 472. Եւ երկուց հողոց և օդոց *Նոյնպէս*: - 476. *Նոյնպէս* և յորոշելն ըստ ոմանց զաստուածն և զմարդ՝ ո՛չ է քրիստոս. այլ մարդ սոսկ կամ մերկ աստուած: - 477. *Նոյնպէս* ասի այս անուն մարդ չարչարեալ և մեռեալ. որ և յատուկ մարմնո՛յ են սոքա: - 478. *Նոյնպէս* և ճանաչումն հասակի ընկալաւ ի փոքրութենէ ի մեծութիւն: - 479. Երրորդ՝ զի իւրաքանչիւր հասակի զմեղս բարձցէ. որպէս ծննդեամբն զերկունս ելոյծ. և մահուամբն զմահ. *Նոյնպէս* և տղայ և մանուկ և երիտասարդ հասակաւ զնոսա արդարացոյց: - 479. Զի ծնօղն կանանց. *Նոյնպէս* և ծնունդն կանանց: - 480. *Նոյնպէս* և փրկիչն զիւր աւետարանն ի ձեռն ունի: - 481. *Նոյնպէս* և քրիստոսի մինչ զտղայական հասակն նկարեն, փաթութեալ հանեն զթուղթն ի ձեռն. իբր ի իրէից ծնեալ զամենայն ինչ ըստ օրինացն առնել: - 481. ...*Նոյնպէս* և զայլսն կատարեսցէ. այսինքն ի ծառայութենէ ազատութիւն, և արքայութեան խոստմունքն: - 485. Եւ որպէս զմարմնաւոր թլփատութիւնն աւանդեաց աբրահամու, *Նոյնպէս* զհոգևորն որ է՛ թլփատութիւն սրտի՝ հրամայեաց ի ձեռն մովսէսի...: - 486. *Նոյնպէս* և ադամայ ասաց աստուած՝ ի հողոյ սկսար և ի հող կամիս դադարիլ: - 497. *Նոյնպէս* և զկամաւոր մահն որ է՛ դեղ և առիթ յաւիտենական կենացն, նախ ինքն ճաշակեաց և ուսոյց հետևողաց իւրոց: - 497. *Նոյնպէս* և քրիստոս կերակրիւր անապական մարմնով: - 501. Զի ցուցանիցէ թէ *Նոյնպէս* եկեր և յառաջ քան զխաչն անապական մարմնով: - 501. *Նոյնպէս* և ո՛չ տէր մեր: - 502. *Նոյնպէս* և հոգւոցն որ ի դժոխս լոյս ծագեաց հոգւով և քարոզեաց զփրկութիւն: - 503. Որպէս մարմնական հուր զանմարմին հոգիսն և զղևսն տանջէ, *Նոյնպէս* և տեղին ըմբռնէ: - 504. *Նոյնպէս* և զհոգիքն թողեալք ի յաստուծոյ արգելուն դևքն: - 504. Զի որպէս յեսու աւերեաց զերիքով և անէծ զի մի՛ շինեսցի. *Նոյնպէս* և զդժոխքն աւերեաց քրիստոս և անէծ զշինօղսն չար գործօք...: - 504. *Նոյնպէս* ի մի դժոխքն տեղիք բազումք են և տանջանք: - 505. *Նոյնպէս* մի հուր դժոխոցն զանազանապէս տանջէ զմեղաւորսն: - 505. *Նոյնպէս* և քրիստոսիւ ամենայնքն փրկեցան արդարք և մեղաւորք ըստ առաքելոյ: - 507. *Նոյնպէս* և քրիստոս առհասարակ ազատեաց զհոգիսն և եհան ի կայանս հոգւոցն: - 507. Ա՛րդ՝ որպէս կենդանեաց շնորհեաց զթողութիւն, *Նոյնպէս* և հոգւոցն առ հասարակ ազատութիւն. որպէս ասէ սուրբն եպիփան...: - 507. Եւ թէ ոք ասիցէ՝ ի յերկրի որք հաւատացին փրկեցան, և անհաւատքն ո՛չ *Նոյնպէս* և ի դժոխս: - 507. Եւ դարձեալ որ ուղիղն է, որպէս մարմնով տեսին ի յերկրի, *Նոյնպէս* և հոգւով ի դժոխս պարտ էր հոգւոցն հաւատալ ի հոգին քրիստոսի և ազատիլ: - 507-508. Երկրորդ՝ զի փոխեալ է որպիսութիւն մարդոյն. զի ո՛չ կարէ մեռանիլ. *Նոյնպէս* և ո՛չ կարէ արդարանալ ըստ ինքեան. նաև ո՛չ մեղանչել: - 508. ***Նոյնպէս* և հոգի մարդոյ զկնի մահու ո՛չ կարէ արդարանալ ըստ ինքեան. բայց թէ ի ձեռս այլոց վճարի պարտ նոցա և հասանին ողորմութեան**: - 508. Եւ որպէս յինն ժամու ուրբաթուն լոյս ծագեաց հոգւոցն ի դժոխս, *Նոյնպէս* և յինն ժամու շաբաթուն լոյս ծագէ զճառագայթս իւր արեգակն արդարութեան քրիստոս. մինչ յառաւօտուն բոլորապէս տեսանի ինքն յարուցեալ ի մեռելոց: - 509. Հինգերորդ վկայ, զի ի բոլոր տարին յերեկոյի շաբաթուն կիրակմուտ անուանեն ամենայն ազգք. *Նոյնպէս* և մեք յամենայն շաբաթս յերեկոյին լոյս զուարթ ասեմք, և սուրբ աստուած որ յարեար. ի յայս շաբաթի աւուրս սկիզբն առեալ: - 509. *Նոյնպէս* և որ ոք յայս օրս պահէ և յամենայն կերակրոց չուտէ, կամ միս ուտէ, ընդ դատապարտութեամբ է: - 510. *Նոյնպէս* և քրիստոս ի մէջ գիշերի եհար զսատանայ և կապեաց: - 512. *Նոյնպէս* ըստ օրինակին արար տէր մեր զատիկն յերեկոյի մեծի **ե** շաբաթին. և ի մէջ գիշերին յորում ըմբռնեցաւ՝ եհար զանդրանիկսն դիւաց: - 513. Եւ է՛ այսպէս. զի անուամբ բոլորին պարտ է իմանալ զմասնաւորն. զի առաջին օրն անկատա՛ր է. *Նոյնպէս* և երկրորդն անկատա՛ր է և մասն. այլ միջինն կատարեալ է: - 516. Եւ այսպէս սովորաբար խօսիմք, թէ յուրբաթի կէս օրն ելեալ ոք ի տեղւոջէ՛ մինչև գայ առ մեզ ի լոյս կիրակէին կամ ընդ առաւօտն, ասեմք թէ **գ** օր է ճանապարհին. *Նոյնպէս* և յարութիւնն քրիստոսի: - 516. *Նոյնպէս* և ծածուկ է աստուածային էութիւնն և անհաս յամենայն եղանակաց. միայն խնամօք երևի որոց կամի: - 517. *Նոյնպէս* և նստիլն զհանգիստն ցուցանէ: - 521. *Նոյնպէս* պա՛րտ էր զսերմն հաւատոյ ընդունել նոցա քրիստոսիւ, և ապա փոքր փոքր աճմամբ հասանիլ պարգևաց հոգւոյն, և պտղաբերել և զայլսն: - 521. Նա՛խ՝ զի յանկարծակի՛ փայլէ. *Նոյնպէս* և հոգին սուրբ յանկարծակի էջ: - 522. *Նոյնպէս* և հոգին սուրբ. ըստ այնմ, «հոգին հօր իմոյ

խօսեսցի ի ձեզ»: - 523. *Նոյնպէս* վասն երկրորդին գիտելի է, զի որպէս զփայտ թիւրութեամբ պնդեալ՝ դժուարին է ուղղել. *նոյնպէս* զչար սովորութիւն մարդկան դժուարին է փոփոխել: - 531. *Նոյնպէս* և անչափութիւն բանից և խրատուց հարց և իմաստնոց գիրք սուրբք՝ հին և նոր կտակարանք ցուցանեն զանչափ հիւանդութիւն հոգւոյ. զի սոքօք առողջացին: - 531. *Նոյնպէս* ասա զդաւանութիւնն: - 531. *Նոյնպէս* մի է տէր մեր յիսուս քրիստոս և ո՛չ երկու ըստ բաժանողաց ոմանց: - 532. *Նոյնպէս* մի է քրիստոս և մի մարմին նորա. որ կոչի մի կաթուղիկէ եկեղեցի. որպէս ի հաւատամքն ասի: - 532. *Նոյնպէս* ի քրիստոսէ ի մեզ իջանէ կենդանութիւն հոգևոր, և զօրութիւն, և առողջութիւն, և շարժութիւն յօդոց և խաղալեաց ի ձեռն հաւատոյն շաղկապութեան: - 532. *Նոյնպէս* քրիստոսիւ տեսանեմք զհայր աստուած, և առնեմք զկամս նորա. և կերակրիմք և զմայլիմք հոգէպէս: - 532. *Նոյնպէս* քրիստոս է փառք և ցնծութիւն, բան և իմաստութիւն եկեղեցւոյ սրբոյ: - 532. *Նոյնպէս* և շինեալն օրհնութեամբ. զի լուանամք նախ ջրով և ապա՛ գինւով: - 533. Նա՛խ՝ որպէս բոլորն է մարմին և իւրաքանչիւր մասունքն. *նոյնպէս* և բոլորն մի եկեղեցի՝ և իւրաքանչիւրքն. և բոլորն քրիստոնեայ՝ և մին մարդն. եթէ նման են միմեանց և եթէ աննման: - 533. Երկրորդ, մի անուն՝ և նշանակեալքն բազումք. որպէս խոյ է յերկինս և յերկրի և ի ծովս. *նոյնպէս* մի կոչի եկեղեցի կենդանի մարդն և շինեալն ի քարանց և եկեղեցին անդրանկացն յերկինս. սակայն զանազա՛ն են որպիսութեամբ: - 533. Երրորդն ի միոջէ և առ մի. որպէս բժշկական դեղ և գործիք. *նոյնպէս* մի է եկեղեցի յիւրաքանչիւր ազգս. զմի և զնոյն ունելով գործ և իր ի միոյ գլխոյն առ մի անդամքս. ի միոյն քրիստոսէ առ մի քրիստոնեայքս. ի միոյ հաւատոյն առ մի հաւատացեալքս...: - 533. *Նոյնպէս* և ադամ զծնեալս յինքենէ՝ այլ և այլ զուգիցն կապէր: - 534. Եւ այլն *նոյնպէս* իմասցի ուղղակի: - 534. Ձորօրինակ՝ մեռեալ մարդ ո՛չ ասի պարզաբար մարդ, *նոյնպէս* և այս. որպէս ցուցաւ ի թագաւորութեանցն ի**զ** գլուխն. **ժբ** համարն: - 536. *Նոյնպէս*՝ որք լսեն և ո՛չ առնեն, չա՛ր է: - 537. Ձորօրինակ, քահանայ ոք ի վաճառանոցն ի բազում հացս և ի գինիս ասասցէ «ա՛յս է մարմին իմ և արիւն իմ» ո՛չ կատարի. զի ոչ ունի զդիտաւորութիւնն. *նոյնպէս* և աստ: - 539. *Նոյնպէս* և արձակելն այսինքն օրհնելն ո՛չ կատարի. թէ այնպէս անկարգաբար իցէ: - 539. *Նոյնպէս* և առ սուրբս օրհնութիւնն: - 540. *Նոյնպէս* և զամենայն օրհնելիս իմա՛. արժանաւորքն օրհնել պարտին. և զարժանաւորս. և արժանապէս: - 540. *Նոյնպէս* և որք անբիծ են հաւատովք և սուրբ գործովք. և կամ որք զղջացեալ յետս դառնան ի մեղաց և ի հերձւածողաց. նոցա՛ է արձակումն և օրհնութիւնն: - 540. *Նոյնպէս* և հնազանդեալքն արձակման՝ կրկին պսակեսցին: - 540. *Նոյնպէս* և աթոռակալքն որ ի չորս աթոռս, ա՛յլ զայլոյ վիճակեալ ո՛չ կարէ կապել և ո՛չ արձակել. նոյնպէս և ի նոյն աթոռն, վերջինն զառաջ նոյն ո՛չ կարէ փոխել կանոնս և զկարգ: - 541. Եւ որպէս այսոքիկ ժողովք ընդ դէմ հասարակ հերձւածողաց, *նոյնպէս* և առանձին ժողովք եղև ազգիս հայոց **է** երորդ: - 544. *Նոյնպէս*, ի մէջ առաքելոցն ո՛չ է մեծ և փոքր իշխանութեամբ: - 547. Ո՛չ թէ յայնժամ ետ, այլ յայնժամ խոստացաւ և յետո՛յ ետ. որպէս խոստացաւ նստուցանել յերկոտասան աթոռ և յետոյ ետ. *նոյնպէս* և զայն: - 547. Եւ բերէին զպատարագն որպէս վասն մեղաց՝ *նոյնպէս* և վասն յանցանաց: - 555. Հինգերորդ՝ զի յամենայն մեղս գտանի հպարտութիւն. զի որպէս առանց սիրոյ այլ առաքինութիւնք ոչ ինչ են, *նոյնպէս* առ հպարտութեան ամենայն մոլութիւնք ոչ ինչ են: - 562. Որպէս ոք զգգալի ակն խփէ և զրկի ի լուսոյն և առնէ խաւար. *նոյնպէս* և նոքա: - 562. *Նոյնպէս* և սատանայ ընդ դէմ աստուծոյ հպարտացաւ. որ ասաց՝ «եդից զաթոռն յամպս և յաստեղս»: - 563. *Նոյնպէս* զցանկութիւնն ի շնութիւն և ի պոռնկութիւն յաւելու հանապազ. զոր անասունք յիւրեանց ժամանակին ունին զխառնումն: - 564. *Նոյնպէս* և զորկրամոլութիւնն յաւելու միտքն հնարելով զանազան կերակուրս և ըմպելիս: - 564. Որպէս անպտուղ երկիր կորուսանէ զբարի սերմանս և փուշ բուսուցանէ. *նոյնպէս* և մեք զբարի սերմանս որ եդ ի մեզ աստուած ի չարն փոխարկեմք: - 564. *Նոյնպէս* և զամենայն մահու չափ մեղս իմասցիս: - 565. *Նոյնպէս* և եկեղեցւոյն քան զայլն: - 565. *Նոյնպէս* և Կալն և Ունելն զամենայն մահու չափ մեղս. թէ գործեալ է և թողեալ. զի որ հաստատեալ է մեղքն յինքն, առաւել մեղանչէ: - 565. *Նոյնպէս* Առնելն կամ Կրել. ընդ դէմ բնութեանն առաւել ծանր է քան որ առնէ և կրէ ըստ կարգի բնութեան: - 565. Ձի որպէս ամբարտաւանութիւնն հանէ՛ զմարդն յաստուծոյ, *նոյնպէս* և նախանձն զմարդն զինքն յինքենէ՛ հանէ: - 569. Եւ որպէս օձ յայգւոյ ծաղկէն մեռանի, *նոյնպէս* նախանձոտն սատակի ի տեսանել զբարի ընկերին: - 569. Եւ որպէս հաւատն է ի հանճարն, *նոյնպէս* յոյսն և սէրն են ի կամքն վասն **բ** պատճառի: - 572. *Նոյնպէս* **ժ** բան է հաւատամքն որ է՛ այսպէս: - 572. *Նոյնպէս* և այժմ սրբոց և երանելեաց յոյսն է հանդերձ ստուգութեամբ տեսութեանն. զի դեռևս հանդերձեալ է նոցա մարմնոցն յարութիւն. և փառք

և պսակքն ըստ իրին: - 574. Երկրորդ զօրացուցանէ. որպէս յա՛յտ է ի մակաբայեցւոցն զկնոջէն որ ունէր է որդիս՝ ածեալ ի սպանումն ի միումն աւուր տեսեալ. և տանէր այնմ՝ յուսովն որ առ աստուած. *Նոյնպէս* և ամենայն դասք մարտիրոսացն յուսով զօրացան: - 574. *Նոյնպէս* յապականեալ հօրէն ադամայ ամենայն ծնեալքն ապականեալք են: - 592. *Նոյնպէս* և մեք նախ մեռանիմք մարմնով. և ապա կենդանանամք ի յարութեանն: - 592. Ասեմք թէ՝ առնեմք ըստ ազգին յունաց. որ որպէս քահանայն պատարագէ և մկրտէ, *Նոյնպէս* և դրոշմէ ըստ սրբոյն դիոնիսեայ: - 594. Նա՛խ՝ զի քրիստոս մի հաց էառ ի ձեռն ի սեղանոյն և օրհնեաց. *Նոյնպէս* և զմի գինի: - 597. ...*Նոյնպէս* վերերևոյթ կերպարանքն նոյն է ըստ ծևին. այլ բնութիւնն միաւորեալ է ընդ բանին աստուծոյ և եղեալ աստուած: - 598. *Նոյնպէս* և բոլոր մարմին և հոգին է մի աստուած ընդ բանին միաւորեալ. և բաժանեալ ամբողջական մասունքն է՛ բոլոր և կատարեալ աստուած: - 598. Զի որպէս բաշխի մարմինն, *Նոյնպէս* և մասնաւորեսցի արիւնն առ հասարակ: - 598. *Նոյնպէս* և զօրհնեալ բաժակն առին առաքեալքն և բաժանեցին և յայնմանէ ո՛չ մնաց: - 599. *Նոյնպէս* և ի տեսակ արեանն միաւորեալ այսոքիկ: - 600. ...*Նոյնպէս* և դու մի՛ ճաշակեր. այլ հաւատա՛ ի մարմինն զարիւնն կապեալ: - 600. *Նոյնպէս* **գ** կերպիւ պարտիմք ապաշխարել: - 601. Զի որպէս հուրն դիզին վնասակա՛ր է, *Նոյնպէս* մեղքն հոգւոյն: - 601. Դարձեալ ասեմք թէ կրկին է խոստովանութիւնն. *Նոյնպէս* և թողութիւնն: - 603. *Նոյնպէս* և քահանայացւոյն. *Նոյնպէս* և աւազակին: - 603. Այս սուրբ օծմամբս և իւր գթութեամբն աստուած թողու քեզ զոր մեղանչեցեր տեսլեամբդ. *Նոյնպէս* ասէ և այլ զգայութեանցն: - 604. ...զի մի՛ ննջեսցես ի մահ. *Նոյնպէս* և այլ զգայութեանցն ըստ իւրաքանչիւր աստիճանին ասէ: - 604. *Նոյնպէս* և օծումնս այս է՛ վերջին որ զփոշետեսակ և զներելի մեղսն սրբէ. - 605. *Նոյնպէս* և նշանն պսակին ծաղիկն է: - 609. *Նոյնպէս* և նախ նշան դնի հարսին: - 610. *Նոյնպէս* և ի դրախտին նախ օրհնեաց աստուած և ասէ «աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր»: - 610. *Նոյնպէս* աստուծոյ բանն է որ առնէ զերկոսեանն մի՝ զայրն և զկինն: - 610. ***Նոյնպէս*** **որ օտար անկողնով պղծէ զշաղկապ պսակին, որոշի յօրհնութենէն և պղծի անկողինն սուրբ:** - 610. *Նոյնպէս* և ի մէջ խնամոցն ո՛չ լինի այլ խնամութիւն մինչ ի **դ** ազգն: - 611. *Նոյնպէս* և մասունք մտացն իմացումն է և կամքն: - 612. *Նոյնպէս* և օրինաւոր ազգն խնամութեան, պահի մինչ ի **դ** ծնունդն: - 612. *Նոյնպէս* և մեք ո՛չ առնեմք խնամութիւն ընդ այլազգիս որք ո՛չ են մկրտեալք: - 612. Նա՛խ՝ զի մին կին ետ աստուած մին մարդոյն ադամայ՝ ի յօգնութիւն. *Նոյնպէս* և ամենեցուն օրինադրեաց: - 612. *Նոյնպէս* և մեք ի ճշմարտութիւնս՝ ջրով և գինով և սուրբ մեռոնաւն օծանեմք: - 615. Չորրորդ՝ զի սողոմոն յորժամ շինեաց զտաճարն՝ յաղօթս եկաց և *Նոյնպէս* օրհնեաց և օծ. որպէս մովսէս...: - 615. *Նոյնպէս* և եկեղեցին սրբի լինիլ տաճար սրբոյն աստուծոյ...: - 615. Նա՛խ՝ զի եկեղեցին է ի խորհուրդ դրախտին. ուր անասուն ո՛չ մտանէր. *Նոյնպէս* և յեկեղեցի ո՛չ մտանէ: - 617. Չորրորդ՝ յօրինակ քրիստոսի որ խարազանաւ եհան ի տաճարէն զոչխարս և զարջառս. *Նոյնպէս* և մեք արտաքսեմք: - 617. Նա՛խ՝ որպէս զմեռեալս հոգւով՝ արտաքսեմք յեկեղեցւոյ. *Նոյնպէս* և զմեռեալն մարմնով: - 617. Երկրորդ, զի և ի տաճարն հին՝ ո՛չ թաղեցին զսուրբս. այլ ի գերեզմանատունս. *Նոյնպէս* և առաւել սրբութեամբ պահելի է զնոր տաճարս: - 617. *Նոյնպէս* և քահանայքն հնչէին ի հինն. որպէս այժմ ի յեկեղեցի ժողովեն ի յաղօթս հանապազորդ: - 618. ...յորժամ դնէին զառաւօտու պատարագն ի սեղանն. *Նոյնպէս* յերեկոյն ի դնել պատարագին և ի վառել աշտանակին լուսոյ: - 618. Եւ *Նոյնպէս* **դ** անգամ յերեկոյն. ի լոյս զըւարթն, և յուղղեցին, և յերեքսրբեանն. կամ յարձակմանն խնկարկեն ոմանք: - 618. *Նոյնպէս* ի սրտէն ելանէ կսկիծ արտասուաց. և զհեշտութիւն նորա քաւէ՛: - 619. *Նոյնպէս* հրեշտակք կատարեալ որդիք են յաստուծոյ անընդմիջաբար առնուն: - 620. *Նոյնպէս* ուսոյց և զառանձինն. ըստ այնմ՝ «մուտ ի սենեակ քո և աղօթեա՛ ի ծածուկ»: - 623. *Նոյնպէս* և մեք զնծայս սաղմոսից և զայլ երգոց տամք ի քահանայս...: - 624. *Նոյնպէս* և մեք զբանեղէն պատարագս մեր տամք ի քահանայս ընծայել աստուծոյ, և բերել զշնորհքն թէ «խաղաղութիւն ամենեցուն»: - 624. *Նոյնպէս* և յեկեղեցիս **գ** են դասք պաշտօնէից: - 624. ...որպէս ընծայէ՛ զաղօթս մեր աստուծոյ, *Նոյնպէս* և ի նմանէ առնու և տայ մեզ զշնորհս և զպարգևս հաշտութեան: - 625. ...որպէս յամենայն ինչ իրաց՝ մա՛սն նուիրելի է աստուծոյ. *Նոյնպէս* և ի բարեաց գործոց զգոհութիւնն: - 626. *Նոյնպէս* **է** էր կանոնք սաղմոսին. և **է է** գուբղայք կանոնացն: - 626. *Նոյնպէս* և **ը** ձայն եղանակաց. և **ը** օրեայ զտօնս գլխաւորս. որպէս ծննդեանն ութն օր. և յարութեանն՝ և հոգւոյն գալստեանն՝ և խաչի՝ և եկեղեցւոյ՝ և այլն: - 627. *Նոյնպէս* և խունկն զիւղաբերից կանանցն և զբուրումն հանդերձելոյն առ մեզ: - 628. *Նոյնպէս* խունկն ի տօնս սրբոց: - 628. *Նոյնպէս* և ողորմեայն ի դէմս եւայի: - 628. *Նոյնպէս* նոյ և աբրահամ մի ունէին օրէնք: - 629. *Նոյնպէս* և երկրորդն որ ասէ ոչ

նախանձիլ ընդ չարս որ են անզգամք. և զի ո՛չ գոյր նոցա աստ փոխարէն մեղաց. վասն այն հրովն յաւիտենից այրեսցէ զնոսա: - 629. *Նոյնպէս* և հինգերորդն, բարի՛ է աստուած և ողորմած տեսողացն զաստուած հնգիւք զօրութեամբ հոգւոյ...: - 629. Ութերորդն *նոյնպէս* զերկոցունց կողմանց յայտնէ զփրկելոց և զկորուսելոց...: - 630. *Նոյնպէս* մարդս ի մանկութեանն անմեղ է, և ի մեռանիլն մոռանայ զաշխարհս...: - 630. *Նոյնպէս* և որ անիծից փոխէ՝ զալէլուն որ օրհնութիւն է ո՛չ խառնեմք: - 630. Անբիծքն վասն մեղաց պատարա՛գ է. *նոյնպէս* և յիսներորդ ողորմեայն վասն մեղաց է ալէլու ո՛չ ասի: - 630. *Նոյնպէս* և յերեկոյին զ'ի նեղութեանն առաքեալքն կարգեցին յաւուրն ելն. զի ելք աստիճանաց ասի...: - 631. Յանգիստն որպէս մասնաւորքն. *նոյնպէս* և տունքն: - 631. *Նոյնպէս* յետ ամենայն խորհրդական աղօթից՝ առ հայր ամբառնամք և աղերսեմք զհոգին սուրբ բաշխել մեզ. - 634. *Նոյնպէս* ի հայր մեր յերկինս: - 635. *Նոյնպէս* և ի տեսս սրբութեանցն: - 635. ...որք դաս առ դաս երգէին զսաղմոսն դաւթի. *նոյնպէս* և յեկեղեցի կարգեցաւ: - 636. *Նոյնպէս* և պօղոս հրէից և հեթանոսաց վարդապետ: - 644. *Նոյնպէս* և աստ փոխանակ որոտմանն, Ո՞րթի բարձրաձայն. որ է՛ յառաջ մատիք: - 644. Որպէս ժողովուրդն ասաց և երկիրպագին, *նոյնպէս* և մեք երկիրպագանեմք և համբուրեմք զաւետարանն...: - 644. *Նոյնպէս* և մինն այն ի մէնջ համբուրէ՛ զաւետարանն...: - 644. Վասն որոյ յերեկոյն *նոյնպէս* զսրբութիւնսն արտաքս բերեմք - 647. ...*նոյնպէս* և սուրբքն ի գործոց իւրեանց հանգչին: - 647. Եւ որպէս ի բարին է հանգուցեալ աստուած, *նոյնպէս* և բարի գործքն մեր հանգիստ է աստուծոյ և մեզ: - 647. ...*նոյնպէս* և ի շաբաթի օրս հանգեաւ ի չարչարանաց ուրբաթուն և եդաւ ի գերեզմանի: - 647-648. *Նոյնպէս* և սուրբքն՝ քրիստոսի չարչարակիցք եղեն. և զպակասութիւն չարչարանացն քրիստոսի ի մարմինս իւրեանց կրեցին...: - 648. ...*նոյնպէս* և սուրբքն ակնունին յետ **զ** դարուց վճարման կենցաղոյս ժառանգել զհանգիստն յաւիտենական...: - 648. *Նոյնպէս* և սուրբք որ ա՛յժմ են ի հանգիստ՝ ի կիրակէ գալստեանն ի կատարեալ փառս և ի հանգիստ մշտնջենաւոր փոխին. ի հանգչելոյ ի հանգիստ. ի փառաց ի փառս: - 648. *Նոյնպէս* և հոգւոցն ելեալ ի մարմնոց՝ այլ միջոց և արգելումն կամ խափան պսակացն չկայ: - 648. ...*նոյնպէս* և սուրբքն ամենայն ի գործոց իւրեանց հանգչին և փառաւորին և սպասեն գալստեանն քրիստոսի և հատուցման վարձուցն: - 648. *Նոյնպէս* աշխարհամատրանն և եկեղեցւոյ տօնն ի կիրակէ: - 649. Տօնն ուրախութիւն է. որպէս հոգւոյ՝ *նոյնպէս* և մարմնոյ: - 650. Եւ *նոյնպէս* նինուէացիքն **գ** օր պահեցին. և երկուքն՝ չորեքշաբաթ և ուրբաթ: - 650. *Նոյնպէս* և առաջին շաբաթն պահոց՝ մեզ մուտէ **խ** աւուրցն...: - 651. Եւ թէ կիրակէն ո՛չ է պահք որպէս զերկու աւուրքն լուծանեն, *նոյնպէս* և զկիրակէն լոյծ: - 652. ...այսինքն ի քէն խնդրեն. *նոյնպէս* և մեք խնդրեմք աղօթիւք: - 654. *Նոյնպէս* զսուրբ կերակուրն դարձեալ սրբելի է անուամբն աստուծոյ...: - 654. *Նոյնպէս* և մեք յետ սեղանոյն օրհնեմք զաստուած: - 655. Որպէս աղքատք նախ խնդրեն. և յորժամ առնուն՝ գոհանան. *նոյնպէս* և մեք առնեմք: - 655. Զի՞նչ է յորժամ գինի ըմպեմք, օրհնեմք և շնորհակալեմք միմեանց. և յայլ կերակուրս և ըմպելիս ո՛չ առնեմք *նոյնպէս*: - 655. *Նոյնպէս* զայս ի քրիստոսէ ունիմք քրիստոնեայքս: - 655. ...և յետոյ զբաժին նոցա ի վերայ լնուին. *նոյնպէս* ի տունս և ի դուրս յորժամ յիշէին: - 656. *Նոյնպէս* և բարեկենդանս. զի ի լեառն պահո՛ց ելանեմք: - 657. Երկրորդ, որպէս կենդանւոյն աղ, *նոյնպէս* ի կեանս մեր հանապազ պա՛րտ է ի լեզուս ունել զօրհնութիւն և զփառս աստուծոյ: - 658. ...*նոյնպէս* և մեզ մասն ինչ բարւոյ է և աստուծոյ. և մասն ինչ աշխարհի. մասն ինչ հոգւոյ և մասն ինչ մարմնոյ. աստի՛ կենաց և հանդերձելոյն...: - 658. Որպէս լեզուն մտաց՝ և ձեռքն սրտին է գործի. *նոյնպէս* ունկն կամա՛ց է. հնազանդութեան և կամ ոչ: - 658. Ութերորդ՝ որպէս ողորմած *նոյնպէս* և արդա՛ր է տէր: - 663. *Նոյնպէս* և աղքատութիւնն բնականապէս բաժանի ի չորս: - 664. ...*նոյնպէս* և մարդն թէ համբերող է թէ ոչ: - 664. Երրորդ, զլաւ մարդն աղքատացնէ և փորձէ, թէ վասն ընչի՞ցն սիրէր զաստուած՝ թէ յաղքատութեանն այլ *նոյնպէս* է. որպէս յոբայն: - 664. Ասեն վարդապետք, որպէս միաւորութիւն նոցա կեանք է, *նոյնպէս* և որոշումն նոցա մահ: - 667. *Նոյնպէս* և մեղաւոր հոգին աստ կարէ՛ արդարանալ և կարէ ոչ արդարանալ: - 667. *Նոյնպէս* և մեղաւոր մարդն աստ մեղանչէ. - 667. Որպէս որք ի խաւար բանտից զերծանին և ազատեալք զլոյս տեսանեն. *նոյնպէս* և հոգին բաժանեալ ի մարմնոյ. և են ի լոյս և յերանութեան հանգիստն: - 669. ...*նոյնպէս* և մեղաւորք ո՛չ են առեալ զկատարեալ տանջանս իւրեանց: - 669-670. *Նոյնպէս* և սուգն ի վերայ մեռելոյ զնոյնն նշանակէ: - 670. *Նոյնպէս* թէ քահանայ իցէ՝ կարգիւն պատեն և դնեն ի վերայ բեմին. առաջի սեղանոյն: - 671. Եւ որպէս հրեշտակքն զհոգին ածեն առ աստուած, *նոյնպէս* և զմարմինն տանին առ քահանայապետն. - 672. ...*նոյնպէս* և աստ ի մարտ մտանէ ընդ օդային այսոց՝ նախ օծանի հոգևոր

իւղովն: - 672. Եօթներորդ, ցուցանէ թէ հոգին սուրբ և քրիստոս հանգուցեալ է ի նշխարս սրբոց. որպէս ի կեանքն՝ *նոյնպէս* և ի մահն: - 672. ...զի կնիք է ի հոգին և անքակ. որպէս ի կեանքն՝ *նոյնպէս* և յետ մահու ունի: - 673. ...զի որպէս հոգևոր սիրով կեցաք. *նոյնպէս* սիրով բաժանիմք. և թէ իցէ քէն ինչ, զայն շնորհմեք միմեանց: - 673. ...*նոյնպէս* և մեք ողջունիւս զհոգին և զշնորհքն նորա ընդունիմք ի մեզ: - 673. *Նոյնպէս* և մեզ շնորհացն այնմ պարտ է հնազանդիլ և կատարել զկարգն: - 674. *Նոյնպէս* և ամենայն աշխարհականաց պա՛րտ է կատարել զկարգս իւրեանց...: - 674. ...*նոյնպէս* յորժամ ի գերեզման դնեն զմարմինն, իբր յաշխարհի ծովէ ելեալ զվառն խոնարհեցուցանեն: - 676. Եւ յետ դնելոյ մարմնոյն՝ *նոյնպէս* օրհնէ զհողն ասելով...: - 676. *Նոյնպէս* ի գերեզմանն ուղղակի տանիմք: - 676. ...և որպէս ի կեանքն հանդերձիւ ծածկեմք, *նոյնպէս* ի մահն հողով: - 677. Վեցերորդ, որպէս կենօք փոխեցաւ, *նոյնպէս* և տեղեաւ փոխեսցի...: - 677. ...որպէս սերմանիքն թաղեալ կենդանանան և բուսանին. *նոյնպէս* և մարդոյս մարմին: - 677. Երրորդ, և որպէս այն քար անպիտան է գործոյ, *նոյնպէս* և մեռեալն անպիտան է աշխարհի: - 679. Հինգերորդ, զի և նախահարցն քարեայ էր գերեզմանն. աբրահամու. սահակայ. և յակոբայ. *նոյնպէս* և գերեզման տեառն. և կափարիչ վէմն. - 679. ...*նոյնպէս* յերկրորդ օրն պարտ է գալ կանանց նախ ի գերեզմանն, և ապա արանց. և հոգևոր տեսութեամբ ուրախանալ: - 680. ...*նոյնպէս* զբանական սերմս զայս երէկ թաղեցաք ի հող...: - 680. ...*նոյնպէս* և մեք զհոգևոր դեղն կենաց յերեկեան աւուրն մատուցաք մեռելոյն...: - 680. ...*նոյնպէս* և սուրբքն հոգևոր հա՛րսն են քրիստոսի...: - 681. Իսկ ամսագլուխն և տարեբոլորն *նոյնպէս* յերեք դէմս է: - 683. *Նոյնպէս* և յոտնալուայն և ի խաչհամբոյրն՝ գանձանա՛կն է քրիստոսի զոր յիշատակեմք: - 684. *Նոյնպէս* և յայլ խորհրդոց կատարմունքն. կնքոյ, պսակի, և այլոցն, լուսացուէ և խնկոց գին: - 684. Որք աստ ունին զյաջողակ գործս բարեաց կամ ձախողակ. և *նոյնպէս* դասին յաջակողմն և ձախակողմն քրիստոսի: - 689. *Նոյնպէս* և հոգիք արդարոց ո՛չ մնան ուրեք ընդ ներքոյ դատապարտեալ տարերաց...: - 689. *Նոյնպէս* կրկին է և տանջանք չարաց. այսինքն տանջանք գործոց ըստ ինքեան, և տանջանք հատուցման, զի զտանջանք գործոցն կրեն յետ մահու. և զտանջանք հատուցման ի յարութեանն հոգւով և մարմնով: - 690. ...որպէս վասն նեռինն և դատաստանին ետես. *նոյնպէս* և զհատուցումն սրբոց: - 690. *Նոյնպէս* և հոգին պատճառէ՛ զմարմինն՝ թէ յորմէ հետէ բաժանեցայ ի նմանէ՝ ո՛չ մեղանչեցի: - 691. ...զի որպէս չարչարանացն հաղորդեցաւ, *նոյնպէս* և վայելչականացն նմա: - 691. *Նոյնպէս* և յառակս որ զքանքարն ետ և զմնասն. յետոյ եկն և արար խնդիր: - 693. Այս է ի միւսանգամ գալուստն. որք զարծաթ բանին շահեցան, տալ զփառս և զմուտն ուրախութեան. և որք ո՛չ՝ *նոյնպէս* զտանջանս: - 693. Եւ թէ մասն մարդոյն որ է հոգին՝ տանջի այժմ վասն մեղաց և մարմինն հանգչի, այս ո՛չ է ուղիղ, *նոյնպէս* և զփառսն: - 694. Այլ որպէս ի միասին վարեցին զայս կեանս հոգին և մարմինն, *նոյնպէս* և զայն կեանս ընդունիցին: - 694. *Նոյնպէս* և լուսեղէն պսակքն որ իջանէր ի վերայ նոցա՝ յայտնապէս ցուցումն է իմանալի պսակացն: - 697. *Նոյնպէս* և հոգին յետ բաժանման մարմնոյն ո՛չ կարէ քաւել: - 699. *Նոյնպէս* և այժմ որ քան ի մարմնի եմք՝ գոյ հնար քաւութեան. - 700. ...որպէս և ամենայն աղօթք մեր վասն կատարածի և յարութեանն է, *նոյնպէս* և այս: - 703. Դարձեալ՝ թէպէտ վասն հոգւոյն ասեմք որպէս այս, և տեսիլ անտօնին, և այլոց, այն ո՛չ է բերքաթուր. այլ պատերազմ դիւաց. որպէս աստ մարմնով, *նոյնպէս* և յետ մահու առ հոգիսն. - 703. Նա՛խ՝ որպէս ո՛չ է անդ գործ մեղաց, *նոյնպէս* և ո՛չ թողութիւն: - 704. Երկրորդ, որպէս մարմինն ոչ փոխի ի բարւոյ ի չար, կամ ի հակառակն. *նոյնպէս* և ո՛չ հոգին...: - 704. Եւ որպէս ի քրիստոս բնակեալ է ամենայն լրումն աստուածութեան որպէս ասէ թեսաղոնիկեցոց. *նոյնպէս* և ի նեռն ամենայն լրումն անօրէնութեան...: - 707. ...*նոյնպէս* և սուրբք ժամանակին այնորիկ լինիցին զօրեղագոյն քան զամենայն յառաջագոյն մարտիրոսսն: - 708. *Նոյնպէս* և սուրբքն այժմ թագաւորե՛ն և տիրեն ի վերայ ախտից, և յետոյ ի վերայ դիւաց, և ապա ի վերայ մահու: - 711. *Նոյնպէս* և սուրբք ընդ քրիստոսի յաւիտեանս թագաւորեն...: - 711. *Նոյնպէս* և զօրք հրեշտակաց և մարդիկ երկիր պագանեն սրբոց. վասն որոյ թագաւոր թագաւորաց են և տէր տէրանց...: - 711. Եւ որպէս **բժ**ան բիւր հրեշտակացն, և եօթանասնից եօթն թողուլն, և ամլոյն եօթն ծնանիլն ո՛չ է վճիռ, *նոյնպէս* և **իդ** երիցանցն: - 711. Նա՛խ՝ որպէս **բժ**ան գունդ հրեշտակացն և չորք կենդանիքն զբոլոր երկնային զօրսն նշանակեն, *նոյնպէս* և **իդ** երիցունքն զբոլոր դասս սրբոցն: - 711. Երկրորդ, որպէս չորք կենդանիքն զվեհագոյնս և զնախամեծարս երկնայնոցն ցուցանեն. *նոյնպէս* և **իդ** երիցունքն զնախամեծարս ընտրելոցն մարդկան...: - 711. Երրորդ, որպէս **իդ**ն բազում է քան զչորսն. *նոյնպէս* կարծի վեհագոյնքն ի մարդկանէ բազում գոլ քան զվեհագոյնս երկնայնոցն: - 711. Վեցերորդ զի

կրթելով առնու զսպիտակ գոյնն. *Նոյնպէս* և սուրբքն ի կեանս յայս կրթելով չարչարեցան, և ապա՛ այն կենացն արժանի գտան: - 712. Եւ որպէս զմարմինս մեր ընդունին յաւանդ, *Նոյնպէս* և զգործս մեր խնդրէ ի սոցանէ և յառաջ բերեն: - 714. *Նոյնպէս* կատարեալ խոստովանութեամբն կորնչի մեղքն և բուսանի արդարութիւնն: - 714. Եւ զորօրինակ զկնի մկրտութեանն սկզբնական մեղքն ոչ երևի. *Նոյնպէս* զկնի ապաշխարութեան ներգործական մեղքն ծածկի և կորնչի. - 714. *Նոյնպէս* և եզեկիէլ թանձրամիտ ժողովրդեանն զյարութիւնն ննջեցելոցն ի բազումս բաժանեաց...: - 717. *Նոյնպէս* և նիւթն սկզբնական ո՛չ յառնէ ի ծնօղս որ աւելորդ արտահոսումն է նոցա. այլ յառնէ ի ծնեալ մարմինն որոյ հիմն է շինուածոյն: - 719. *Նոյնպէս* հոգին բաժանեալ և մարմին լուծեալ ի հասարակ տարրն, այսու խառնեալ դրոշմիւս ճանաչեն զմիմեանս անսխալապէս: - 719. *Նոյնպէս* և ի յարութեանն մեռելոց «օրն ընտրեսցէ» ասէ առաքեալն. զի հուրբ յայտնելոց է: - 721. *Նոյնպէս* և մարմինք մարդկան մերկ թաղին՝ այլ մերկ ո՛չ յառնեն. բայց գեղեցիկ յոյժ և պատուական զգեստով զարդարեալ: - 721. *Նոյնպէս* մարմին սրբոցն ընդ ամենայն երկինս անցանէ զօրութեամբն աստուծոյ մինչև ի հրեղէն երկինս. - 722. Եւ որպէս այժմ հոգով և մարմնով զմահկանացու կեանս վայելեաց, *Նոյնպէս* և յայնժամ հոգւով և մարմնով զանմահ կեանս ժառանգեսցէ. վասն այն յառնէ: - 724. Եւ որպէս աստ հոգին ի մարմնոյն կրեաց. *Նոյնպէս* և անդ մարմինն ի հոգւոյն կրեսցէ եթէ զբարիս և եթէ զչարիս: - 724. Եւ որպէս հոգին ունի զզօրութիւն իւր անպակաս. *Նոյնպէս* և անդամք մարմնոյն պարտ է լինիլ անպակաս զի իցէ կատարեալ մարդ: - 725. Այլ և որպէս հրեշտակք զանազանին. *Նոյնպէս* և ի յարութեանն փառօք և պսակաւն: - 725. Այլ որպէս կայծ հրոյ և անօթ արեգական բոլորովիմբ է լոյս, *Նոյնպէս* և անդ բոլոր անդամօքն փայլեսցին իբրև զարեգակն: - 726. Այլ և որպէս նախաստեղծքն ի դրախտին ո՛չ ամաչէին. *Նոյնպէս* և սուրբք ի յարութեանն. զի ծածկեալ են ի ներքուստ հոգւոյն լուսաւորութեամբն, և արտաքուստ պսակաւն և փառօք: - 726. Եւ ա՛յս է պատճառն. զի աստուած ի սկզբան զբնութիւնն ադամայ անթերի ստեղծ. *Նոյնպէս* ի վերջին օրն անթերի պիտի նորոգէ: - 726. Այլ համահասակ քանակաւ ո՛չ. զի աստ ոմն մեծ լինի և ոմն փոքր ի ջերմութենէն որ անհաւասա՛ր է ի նոսա. *Նոյնպէս* և անդ: - 726. *Նոյնպէս* սրբին ամենայն տիեզերք. զի երեսք երկրի այնպէս պայծառանայ որպէս զհայելի: - 728. Հինգերորդ հալեալ մոմ ո՛չ ունի զառաջին կերպն այլ զգոյացութիւնն. *Նոյնպէս* և գոյացութիւնն երկրի ո՛չ կորնչի. այլ պատահմունքն այլայլին. զի ո՛չ ճանաչի թէ այս այն է: - 728. *Նոյնպէս* և լուսաւորքն ի վերջին ժամանակս ի կատարածի ծածկեսցին, և դարձեալ յա՛յլ իմն յազնուականութիւն փոխեսցին: - 728. Որպէս թօթափիլն է լուսաւորաց, *Նոյնպէս* գալարիլն երկնի: - 729. Նա՛խ՝ զի մագաղաթն ի հուր մերձեալ գալարի. *Նոյնպէս* և երկնայինքն յայնժամ խոնարհին յորժամ երկին և երկիր վառեսցին հրով: - 729. Երկրորդ, զի գիր մագաղաթին անջինջ մնայ. *Նոյնպէս* և գործն ի հոգիս մեր գրեալ. - 729. *Նոյնպէս* և մեզ պա՛րտ է լինիլ արթուն ի մեղաց. զորմէ աղերսէր դաւիթ (լոյս տուր տէր աչաց իմոց, զի մի՛ երբէք ննջեցից ի մահ:) - 730. *Նոյնպէս* և ի միոյ ձայնէն ոմանք զօրհնութիւնս և այլք զանէծսն լսեն: - 739. *Նոյնպէս* ի միոյ վճռէն՝ եկա՛յք և գնացէ՛ք լսի: - 739. Եւ որպէս այս առ մեզ, *Նոյնպէս* և զկշիռ իրաւանցն աստուծոյ է տեսանել...: - 745. *Նոյնպէս* առ մեզ գործս բարի և չար: - 745. Եւ որպէս աստ՝ *Նոյնպէս* և ա՛նդ է կշիռ արդարութեան: - 745. Նախ ըստ գոյացութեան. զի որպէս անսկիզբն է աստուածութեամբն, *Նոյնպէս* և անվախճան է մարդկութեամբն հաւասարեալ: - 745. *Նոյնպէս* և հատուսցի առաւել և նուազ և հաւասար. ո՛չ միայն ըստ սեռի գործոց, այլ և ըստ տեսակի և քանակի և որակութեանց նմին: - 746. *Նոյնպէս* և հնձան ասի չարաց և բարեաց: - 748. Մարգարէն եսայի կրկին ասէ զհատուցումն մեղաց. *Նոյնպէս* և ի տեսիլն. և վասն էր դաւիթ եօթնպատիկ ասէ հատուցանել ի ծոց նոցա: - 750. *Նոյնպէս* և հրեղէն որդունքն ի մէնջ ծնանին: - 753. Եւ որպէս որդս այս ո՛չ ունի զգայարանք, *Նոյնպէս* և հրեղէն որդունքն: - 753. *Նոյնպէս* և ջուրն որ հպեցաւ ի մարմին փրկչին, և ծնաւ զմարդիկ որդիս աստուծոյ, նորոգեսցի և պայծառասցի քան զամենայն տեսիլս գեղեցկագոյն ականց: - 759. Ի յայս միտս ի ստորինս եկեղեցի այժմ կրկին են դասք պաշտամանց. որ և *Նոյնպէս* է լինելոց ի վերնումն սիօնի յեկեղեցիս անդրանկաց: - 760. Որպէս ի թաբօր ծածկեաց զլոյս նորա. *Նոյնպէս* և ի յարութեանն: - 760. Հինգերորդ՝ խիստ է կեղևն. *Նոյնպէս* և արդարքն խստակրօնք են...: - 766. *Նոյնպէս* և միշտ զգուշասցի արդարն զի մի անկցի...: - 766. *Նոյնպէս* հաւատն լոյս է որով տեսանէ: - 769. Եւ *Նոյնպէս* որ դատապարտեաց, մերովս արար մեզ ազատութիւն: - 776. Եւ այն զի՞նչ իցէ, զի սա միշտ մի և *Նոյնպէս* մնայ. իսկ նա՛ ստանօր ողորմի զղջացելոցն, և ո՛չ ոչ նոյնպիսոյն...: - 778. ...*Նոյնպէս* ողորմութեան և արդարութեան է միշտ բարերարելն և պատժելն ըստ նախասահման գիտութեան

նորին նախքան զլինիլն էիցս ըստ առաքելոյ: - 779. Զի որպէս բառնի վասն մեղաց, *նոյնպէս* տացի վասն զղջմանն: - 783. *Նոյնպէս* և երբեմն յուզել ուրախութեանց. ի փեռեկեալ թքոյ ի կոտորումն շնչոյն, ի թաղանթէ՛ որ առ լերդաւն՝ հիւթ ինչ ծաւալի առ նոյն ասացեալ տեղի. ելեալ գոլորշեացն նմանապէս առաջնոյն. և լինի քաղցրագոյն արտօսր. վասն ասացեալ հիւթոյն ի քաղցրորակն անօթոյ: - 787. *Նոյնպէս* և քարինք արծանացեալք հաստատութիւն է երկրի. զոր աշխարհ կոչեմք ի մասնէ՛: - 788

**ՆՈՅՆՊԻՍԻ +** Նոյնպէս և ամենայն խաչի զօրութիւնն քրիստոս է. ի ձեռս արժանաւոր և կատարեալ հաւատոց առնէ սքանչելիս. իսկ ոչ *նոյնպիսեացն* ծածկէ զզօրութիւնն: - 445. Վեցերորդ, ոմանք ատոքք և կէսք ազազունք և այլք անպտուղք. այսպէս և մարմինք ընտրելոցն և ոչ *նոյնպիսեացն* ըստ չափու զանազանին: - 721. Եւ այն զի՞նչ իցէ, զի սա միշտ մի և նոյնպէս մնայ. իսկ նա՛ ստանօր ողորմի զղջացելոցն, և ո՛չ ոչ *նոյնպիսոյն*...: - 778. Ապա զի՞նչ է այն՝ որ զշնորհս աւազանին ոչ ուրացութիւն և ո՛չ այլ ինչ *նոյնպիսի* մերկացուցանել կարէ: - 782. Զի ունօղքն բարեկեցիկ կենօք, և ոչ *նոյնպիսիքն* սովմանի տուայտեալք: - 789

**ՆՈՅՆՔԱՆ +** Այլ որքան հայրն հայր. *նոյնքան* և որդին ընդ նմա որդի: - 37. Եւ այսքան է միաւորութիւնն, զի որքան մին ինքն առ ինքն ունի զընութիւնն և զզօրութիւնն և զկամքն, *նոյնքան* և ունի առ երկուսն...: - 54. Վասն որոյ հարկաւորիմ ցուցանել *նոյն քան* գլխով եթէ աստուած է քրիստոս և ըստ մարմնոյն միութեան մարմնացեալ և մարդացեալ աստուած: - 72. Նախ՝ ասեն ոմանք թէ՝ որքան բարձր է ի վերայ երկրի հողն, *նոյնքան* ծոծո՛ր է ի ներքին կողմն. վասն որոյ ջուրք ծովուն դիւրաւ ելանեն: - 209. Երրորդ՝ զի աշխարհ որ քան է ի բեւեռէ՛ հիւսիսոյ մինչև ի բեւեռն հարաւոյ, *նոյն քան* է յարևելից մինչև յարևմուտս: - 231-232. Այսպէս մարմին մարդոյ որ քան է երկայնութեամբ ի գագաթէ՛ գլխոյն մինչև ի ներբանս ոտիցն, *նոյն քան* է լայնութիւն ի մէջ երկուց երկայն մատիցն ձեռաց: - 232. Եւ *նոյն քան* միւս ձեռքն՝ որ լինի **գ**: - 241. Կամ զօդուածք ներքին գլխաւոր անդամոցն և արտաքին մարմնոյն, որ մորթ և միս և արիւն և այլքն առ միմեանս յօդին՝ լինին *նոյնքան*: - 244. *Նոյն քան* թուով երակացն: - 244. Եւ յետ *նոյն քան* ամաց շինութեան տաճարին աւելի կամ պակաս, նա՛խ արձակեցաւ եզր դպիր. և յետ նորա նէեմի: - 447-448. Զի որ քան ամ ի յերկրի քարոզեաց, *նոյն քան* ժամ ի դժոխս առ հոգիսն: - 495. Զի հակակայք են. և որ քան ասի մինն, *նոյն քան* ասի և միւսն: - 504. Եւ ա՛յն է խորհուրդն, զի որ քան ամ մարմնով մարմնաւորացն քարոզեաց. *նոյնքան* ժամս հոգւով հոգւոցն քարոզեաց. այսինքն **լգ** ամ և կէս ի յերկրի. **լգ** ժամ և կէս ի դժոխս...: - 516. Եւ *նոյն քան* ուտիք. սակաւ ինչ աւելի կամ նուազ: - 650. Զի ի հակակայիցն որքանաբար ասի մինն, *նոյն քան* և միւսն: - 758. Որքան մնացին հրեշտակք ի յերկինս, *նոյնքան* և բազմութիւնք ի մարդկանէ ընտրեցին: - 760

**ՆՈՅՆՔԱՆԱԲԱՐ +** Եւ գիտելի է, զի որքան եղանակաւ ասի ոչ էն, *նոյնքանաբար* և էն. զի ընդ դէմ միմեա՛նց են: - 111. Ասեմք եթէ՝ ապացոյցն ո՛չ ամենայն իրօք է նման. ապա թէ ոչ՝ լինէր նոյնն. վասն որոյ *նոյնքանաբար* տեսանի աննմանութիւն օրինակին առ ճշմարտութիւնն: - 478

**ՆՈՐ +** Եւ սոքա մարդաղաւան ուրացօղք խաչին և կրօնից *նորոց*: - 34. Ըստ այսմ օրինակի և *նոր* հերձուածօղք քաղկեդոնիկք նեռին կարապետք. հետևօղք նեստորի անիծելոյ՝ և լևոնի պղծոյ: - 34. Յէից՝ որպէս դու ի քո հօր մէջքն էիր զօրութեամբ, և յետոյ ծնար *նոր* գործութեամբ: - 37. Այլ որ եղև փոխանակ հնոյն *նոր* անդամ...: - 42. Ո՛չ թէ *նոր* իմն տեսակ և կամ *նոր* աշխարհ. այլ զեղելոցս նախախնամութիւնն. և ի նոյնութիւն կալն հայր կամի և որդի կատարէ՛. ոչ ծառայաբար և անուսումնապէս. այլ տիրաբար և հաճճարով: - 46. Եւ կամ թէ զո՛չ նքն ասիցէք, ահա *նո՛ր* աղանդ չարափառութեան և խափանումն տրնօրէնութեան մեծի խորհրդոյն: - 68. Իսկ թէ առանձնապէս մարդոյն, ահա *նո՛ր* իմն և առժամայն մուծանես աստուած՝ հրեշտակաց և մարդկան երկրպագելի: - 70. Ահա *նոր* ուսմունք և երրորդ կտակ: - 89. Իսկ թէ զմարդկային բնութիւնն պաշտէք, եղէք կռապարիշտք. և *նո՛ր* և եղական ոմն աստուած մուծանէք յերրորդութեաննն կարգ: - 90. Իսկ ի վերն քան զամենայն անուն. թէպէտ և անուանեին և յեսու՝ և օծեալք բազումք ի հինն և ի *նորս*: - 95. Ա՛րդ՝ եթէ տգէ՛տ է որդին աստուծոյ հօր, և տգէտ որդւով խօսեցաւ ընդ մեզ. տգիտութեան եղիցի և օրէնքս *նոր* քան զհինն: - 96. Եւ ա՛յս է նոցա առաւօտու և երեկոյի ճանաչումն, զի զաստուած տեսանելով՝ *նոր* լինի նոցա ճանաչումն միշտ՝ որ է՛ առաւօտու: - 119. Եւ զեղեալքս ի յաստուած տեսանելով *նոր* լինի գիտութիւն արարածոց՝ որ է՛ երեկոյի: - 119. Եւ տէրն զհինն կտակն որ խստութիւն էր և սպանօղ՝ ընդ *նորոյս* խառնելով. որ հոգւով է և կեցուցանօղ: - 126. Տասներորդ՝ սկիզբն է օրինացն, և կատարումն ճշմարտութեանն. որպէս հնոյն և *նորոյս*: - 130. ...բե՛ր սկսցուք զսկիզբն արարչութեան եղելոց մինչ ի վախճան կատարման այժմույս՝ ըստ կարգի հին և *նոր* կտակարանաց հետևեալ: - 156. Եւ թէ ոք

ասիցէ, ապա զիա՞րդ *նոր* եկեալքն ի հաւատս՝ թողեալք զկուռս և զամենայն չար՝ լինէին քահանայք և եպիսկոպոսունք. որպէս սուրբն կիպրիանոս: - 166. Ասեմք առ այս. Նախ՝ եթէ *նոր* եկելոցն ի հաւատս՝ սակաւ դնէին կանոնս...: - 166. Զի տեսեալ մարդիկ *զնոր* և հին նորա՝ ասացին՝ մե՛զ ես օրինակ ծննդեան և մահուան. և կոչեցաւ ամիս: - 190. Նաւասարդի. *Նոր* ասի. այսինքն սկիզբն տարւոյ: - 200. Այսպէս երևի թէ և դրախտին պտուղն *նորն* զհինն փոխէ՛: - 224. Եթէ յամենայն ամի *նորն* զհինն փոխէ, այս լինի կամ թափիլ պտղոյն ի ծառոյն. և կամ մնալ հինն ընդ *նորոյն:* - 224. Ա՛րդ՝ եթէ մնայ հինն ընդ *նորոյն* հանապազ. նա՛ ծանրանայ. և ո՛չ կարէ զայն քան ամաց բազմութիւն պտղոցն կրել, և այսպէս լինին ամենայն ծառքն կոտորեալ և ապականեալ...: - 224. Եւ դարձեալ՝ նոյն ինքն բանական հոգին ո՛չ *նոր* ստեղծումն է և ո՛չ հին: - 257. Եւ ոչ *նոր*, զի մի և նոյն ի սկզբանէ հրամանն արարչադիր առանց տկարութեան ներգործէ մինչ ի կատարած. և ըստ իւրաքանչիւր հոգւոյ՝ *նոր* հրաման ստեղծանելոյ ո՛չ արծակի: - 257. Եւ ոչ նոր, զի մի և նոյն ի սկզբանէ հրամանն արարչադիր առանց տկարութեան ներգործէ մինչ ի կատարած. և ըստ իւրաքանչիւր հոգւոյ՝ *նոր* հրաման ստեղծանելոյ ո՛չ արծակի: - 257. Եւ թէ այդպէս է, ուրեմն ի հրամանն աստուծոյ ո՛չ է *նոր*. այլ ի գոյացութիւն իւր *նո՛ր* է: - 258. Եւ ստեղծմամբ զի ըստ գոյութեան իւրոյ շնորհօքն աստուծոյ *նո՛ր* պարգևեցաւ ընդ լինելութեան մարմնոյ: - 258. Իսկ յառաջ ածեալն *նոր* գոյացաւ: - 258. Եւ զուստին մի՛ հարցանէր թէ ի կենդանւո՞յ էառ, և թէ *նո՛ր* գոյացոյց. զի ամենայն ինչ կարելի՛ է աստուծոյ: - 281. Երեսուն**է**, Զանազանի հին և *նոր* օրէնք. և քահանայութիւն տեառն և հնոյն: - 284. Քառասունն**ա**, Կենդանեաց զենումն ի *նորս* խորհուրդ: - 284. Քառասուն**բ**, Վասն *նորոյս* պատարագաց: - 284. *Նոր* օրհնել քահանայից և եկեղեցոյ. Նաբադ և աբիուդ այրեցան: - 284. Եւ թէ ո՞րպէս փոխեցաւ հինն ի *նորս:* - 284. Յիսուննմի, Ուր էր և տօնք ի հինն որ փոխեցաւ ի *նորս:* - 284. Յիսուն**բ**, Զի՞նչ նշանակէր նաշիհն և **դ դ** դորակ գինին՝ ի *նորս*: - 284. Յիսուն**է**, Հին քահանայքն՝ *նորոյս* աստիճանի օրինակ: - 284. Երրորդ՝ զի որ *նոր* չարիս գործեսցէ՝ առաւել պատժեսցի: - 288. Նմանապէս և որք *նոր* իմն բարեաց սկիզբն լինիցին՝ առաւելապէս պարգևաց արժանասցին: - 288. *Նորն* աբրահամ վասն աներկբայ հաւատոյն արդարացաւ...: - 288. Այսպէս և ի *նորս* սուրբն ստեփաննոս որ եղև առաջին մարտիրոս և վկայ քրիստոսի՝ հեղլով զարիւն իւր. տեսանէր բացեալ զերկինս և զյիսուս ընդ աջմէ աստուծոյ: - 288. Չորրորդ՝ *նոր* չարիս գործեցին, խիստ և առաւել պատուհասեցան. որպէս և կայեն. զի նշան լիցին աշխարհի ահի՛ և երկիւղի: - 303. Ուստի եղեն յետինքն առաջինք. և իսրայէլ *նոր* և աստուածատեսք եղեն: - 305. Եւ է՛ որ պատարագն մեծ է քան զմատուցօղն. որպէս *նոր* օրինացս՝ մարմինն քրիստոսի մեծ է քան զքահանայն: - 306. *Նոր* պատարագ, և *նոր* քահանայ, և *նոր* եղանակն: - 307. Դարձեալ՝ *նո՛ր* էր ծնունդ սառայի և ո՛չ ըստ օրինաց կարգի: - 307. *Նոր* ծնաւ և կոյսն զաստուած մարդացեալ յերկրի: - 307. *Նոր* ծնանի և աւազանն զորդիս մարդկան որդիս աստուծոյ: - 307. Եւ հատումն ի ստենէ հնոյն՝ հաստատութիւն եղև *նոր* օրինացս: - 308. Ո՞րպէս էր յոբ օրինակ հնոյն ադամայ և *նորոյն:* - 327. Իսկ զխորհուրդ *նորն* ադամայ բազումս տպաւորէր: - 327. Եւ այլն ամենայն բանք և գործք յոբայ ի տիպ օրինակի էր *նորն* ադամայ չարչարանաց թաղման և յարութեան որպէս յա՛յտ է ի գիրս պատմութեան նորա: - 327. Մետասաներորդ, մովսէս զառաջին տախտակն խորտակեաց և ի *նորն* գրեաց զօրէնսն: - 328. Եւ քրիստոս զիրէայսն ցուեաց, և ի սիրտ հեթանոսաց *նոր* ժողովրդեանն աւանդեաց զօրէնսն: - 328. Եւ թէ ճշմարիտ էր ընդէ՞ր *նո՛ր* ինչ ոչ առնէին: - 335. Զոր տեսեալ ժողովրդեանն *նոր*՝ ասէին ցմիմեանս, զինչ է սա. և կոչեցաւ մանանայ: - 338. Եւ ե միշտ՝ և առ ո՛չ միշտ. զի կերպն փոխեցաւ առ *նորս:* - 340. Իսկ ի *նորս* զատիկ մեր զենաւ քրիստոս և ազատեաց զմեզ: - 341. Եօթներորդ՝ զի *նոր* իմն չնաշխարհիկ կազմեաց. *նոր* ժողովրդեանն և *նոր* օրինացն, իցէ և *նո՛ր* տաճար հռչակեալ ընդ ծով և ընդ ցամաք. որպէս պսակ և փառք արդարոցն է՛ զոր ակն ո՛չ ետես և ունկն ո՛չ լուաւ. նոյնպէս և սա՛ ի զգալիսս անհաս ի մտաց մարդկան: - 342. Հինգերորդ՝ յօրինակ զգեստի *նորս* քահանայութեան: - 347. Ի *նորս* ա՛յսպէս բաղդատին: - 348. Վեցերորդ՝ կրկին տալոց էր օրէնք հին և *նոր*. վասն այն կրկին գրեաց: - 349. Չորրորդ՝ ի խորհուրդ հին օրինացն որ բարձաւ և *նոր* օրէնք տւաւ: - 350. Երրորդ՝ ի խորհուրդ *նոր* օրինացս որ հաստատ մնաց: - 350. Ո՞րպէս զանազանի հին օրէնքն և *նորս:* - 353. Նա՛խ՝ զի հինն ստուեր և օրինա՛կ էր. իսկ *նորս* էութիւն և ճշմարտութիւն: - 353. Մետասաներորդ, նոքա ո՛չ իշխէին ճաշակել զպատարագս իւրեանց. այլ արտաքոյ յարէին. իսկ տէրն մեր և մեք ճաշակեմք զպատարագ *նորոյս*...: - 355. Երկոտասաներորդ, նոքա հին ուխտին էին միջնորդ. իսկ տէրն *նորոյս*...: - 355. Հինն օրինա՛կ էր, և *նորս* ճշմարտութիւն. հանդերձեալն զի՞նչ փոխի: - 355. Նա՛խ՝ հինն օրինակ էր և *նորս* ճշմարտութիւն. և հանդերձեալն առաւել ճշմարտութիւն որպէս սուրբ սրբոց: - 355. Երկրորդ՝ ի յօրինակ *նորոյս* պատարագի ընկալաւ. զի անդ ստուերն է. և աստ ճշմարտութիւն: - 355. Հին պատարագն վասն է՞ր

աղիւ կատարէր և *նորս* ոչ: - 356. Ա՛րդ` հինն *նորոյս* օրինակ էր` ի բովանդակն ա՛ղ խառնիւր: - 356. Իսկ ի *նորս* ունիմք զճշմարտութիւն` ունիմք և զօրինակն: - 356. Սա՛ փոխեալ ի *նորս* նշանակէ՛ զմարմնաւոր նուէրքս. որպէս պահք աղօթք, ողորմութիւն: - 357. Այլ և յիսներեկին է է գառինս. և ի *նոր* մտիցն կրկին հաց ևս: - 359. Ո՛չ միայն զի յանունն աստուծոյ, այլ զի օրինա՛կ էին *նորոյս* պատարագի. և խորհրդովն քրիստոսի սրբեցան: - 361. Իսկ ի *նորս* ճշմարտութենէ պատարագ քրիստոս. որ միշտ բաշխի յեկեղեցի: - 362. Զի՞նչ նշանակէ կրկին ողջակէզն ի *նորս*. որպէս զուարակն և երկու խոյն կատարման: - 362. Զնոյն և ի *նորս* տէրն հրամայէ, «արժա՛ն է մշակն կերակրոյ իւրոյ»: - 363. Ի նոյն խորհուրդ *նոր* մանկունք յարգանդի մօր եկեղեցոյ սնանին: - 363. Զայն խորհուրդն պահեմք ի վերայ *նոր* սեղանոյս: - 363. Իսկ քահանայքն ի *նորս* ո՛չ հեղուն զարիւն: - 366. Պա՛րտ է տալ զոսսա ի քահանայսն որպէս կարգեաց մեծն մովսէս ի հինն, և սուրբն գրիգոր ի *նորս:* - 367. Նոյնպէս և ի *նորս* պահեսցի էօրեայ սրբութիւն դաշտանի: - 369. Ո՞րպէս է փոխեալ հինն ի *նորս:* - 369. և Դարձեալ ասեն, բնական մեղքն խտրութեան մնաց ի գրաւորն, նոյնպէս ի *նորս*. որպէս սերմնակաթն և դաշտանին. այլ պատիժն փոխեցաւ հինն ի *նորս:* - 369. Եւ այլք ասեն թէ, հինն ամենայն է՛ խորհուրդ. և ի *նորս* իր և խորհուրդ: - 369. Երրորդ` յօրինակ հոգւոյ արատոյ ի *նորս* որպէս ասացաք: - 370. *Նորոց* քահանայից ո՞րն է խոտելի արատ: - 370. Ի *նորս* կրկին է քահանայութիւն: - 370. Ի *նոր* պատարագս այսպիսի մարմնոյ ընտրութիւն ո՛չ է: - 371. Իսկ ի *նորս*` զկէս ընչիցն հրամայեցաւ տալ աղքատաց յաւտրնին. որ է՛ հաւասար հոգւոյն և մարմնոյն: - 372. Նա՛խ` շաբաթն հանապազորդ. և ի *նորս* կիրակին: - 372. Երկրորդ` բաղարջակերքն ազատութեան. և ի *նորս* «զատիկ մեր զենաւ քրիստոս»: - 372. Այլ և բոլոր ամենայն տօնք հնոյն` ը տօն էր. զոր այժմ մեք ունիմք փոխեալ ի *նորս:* - 372. Երկրորդ` շաբաթուց նւէրքն կրկին. և ի *նորս* կիրակէն մեր: - 372. Այլ և վասն հին և *նոր* ժողովրդեանս թողութեան: - 373. Իսկ զվարդավառին և զփոխմանն տօն` ի *նորո՛յս* է աւանդեալ. որպէս ողոգոմեանն, և քառասնօրեայ գալստեանն: - 373. Զայն ցուցանէ որ նուազելոց էր հինն և օրինակն` ի գալ *նորոյն* և ճշմարտութեանն քրիստոսի: - 374. Յին քահանայքն ո՞րպէս էին օրինակ աստիճանի *նորոյս:* - 379. Նա՛խ` գ որդիքն ղևեայ գեթսոն, կահաթ, և մերարի, յօրինակ *նորոյս* դ դասուց: - 379. Իսկ ի *նորս*` ի կատարեալ հասակն երեսնամեայ լինին քահանայք. ի հասակ մկրտութեանն քրիստոսի: - 379. Երևումն` քրիստոնէիցս ի *նորս:* - 379. Դարձեալ` քաղեբ և յեսու. հին և *նոր* կտակարանք. որք զհանդերձեալն մեզ պատմեն. և զյաղթելն անմարմին թշնամւոյն: - 380. Եւ խաչօղքն անսուրբք էին մինչ յերեկոյանալ օրինացն հնոյն և ծագել *նորոյն*. մինչև սրբեցան աւազանաւն և խոստովան եղեն զքրիստոս: - 383. Այսպէս ի *նորս* խոստովանօղն սրբի. և ընդունօղն աղտեղի: - 384. Երեք ջուր սրբութեանն զի՞նչ է ի *նորս:* - 384. **Նոյնպէս այժմ ի *նորս* պարտ է խոստովանիլ վասն կանոնաց եկեղեցւոյ. և զգողօնսն վճարել կամ ի տէրն, կամ ի քահանայս, կամ յաղքատս**: - 384. Եւ թէ մեռանի ոք ի տուն ուխտաւորին, պղծեցաւ ուխտն. և անհամար լիցին առաջին աւուրքն, և *նո՛ր* սկսցի: - 390. Այն է որ թէ ի մասանց հոգւոյն և մարմնոյն այսինքն բանիւ` ցասմամբ` և ցանկութեամբ, կամ աչօք կամ լսելեօք կամ այլ ինչ գործով մեղանչէ դարձեալ, ուխտն ո՛չ եղև ամբողջ. դարձեալ *նո՛ր* պարտ է ապաշխարել: - 390. Երկրորդ, հին օրէնքն և մարգարէքն. որ նախ քան զմկրտութիւնս խորհրդով և օրինակօք յառաջապա՛հք եղեն *նորոյս:* - 390. Իսկ թ ցեղն նշանակէ՛ զեկեղեցի *նոր* օրինացս թ աստիճանօք կարգաւորեալ: - 391. Եւ սոքա բաժանեալ մեզ զերկիրն պարգևաց. այսինքն աստ *զնոր* օրէնքն, և անդ զվերինն եէմ: - 391. Յինգերորդ` զի կրկին է օրէնք հին և *նոր*. այսինքն օրինակն և ճշմարտութիւն: - 393. Յինգերորդ` արևմուտք հին օրէնք է. և արևելք *նորս* յետոյ: - 395. Իսկ խոստման երկիրն *նոր* օրինօքս ի ձեռն փրկչին յիսուսի: - 395. Իսկ խորտակեալ տախտակն մովսէսին և մնացեալն` *նո՛ր* օրէնս: - 395. Իսկ մեզ *նորոյս* հրամայէ՛ զբանեղէնն մատուցանել որ է՛ հոգի և մարմին և կամք...: - 396. Իսկ երկիրն *նոր* օրինացս ո՛չ բնական իմաստութեամբ հեթանոսաց ոռոգի, այլ շնորհօքն աստուծոյ և հաւատով դալարի: - 398. Իսկ *նորս* ո՛չ այսպէս. այլ հրամայէ՛ քրիստոս թէ` «զոր աստուած զուգեաց և միացոյց` մարդ մի՛ մեկնեսցէ»: - 401. Նոյնպէս և *նորոյս* խորհուրդն զի անքակտելի՛ է կինն: - 401. Երրորդ` *նոր* օրէնքս անուամբ հնոյն նորոգեալ կոչեցաք իսրայէլ: - 402. Ծալեալ մաշկեակն և *նոր* կուժն: - 413. Եւ նշանակութիւնք *նորին:* - 413. Տասներորդ` և *նորս* թլփատութիւն սրտի` վէմն քրիստոս լինելոց էր. որ կարծրացաւ աստուածութեամբն. և էարկ սուր յերկիր և բաժին: - 415. Եւ տէր մեր *զնորս* հեթանոսաց անջինջ գրեալ օրէնս ի սրտի: - 417. Եւ բաշխեաց երկոտասան առաքելօքն աստ *զնոր* օրէնս, և անդ զվերին ժառանգութիւնն հաւատացելոց իւրոց: - 419. Նոյնպէս ի *նորս* քահանայք և ժողովուրդք: - 425. Վասն այն և ի *նորս* զխաչ և զսրբութիւն և զեկեղեցի և զայլն տայ ի ձեռս այլազգեաց: - 425. Երրորդ` զի *նոր* բան ինչ ո՛չ պատմեաց. այլ զոր ինչ ուսաւ ի սաւուղայ` երկրորդեաց նմա: - 430. Այլ և մարգարէութեանց բաժանումն

ի *նոր* օրէնքն ասացաւ: - 430. Այլ շնորհք *նորոյս* կարողութեամբ արդարացուցանէ զմարդ այնպէս, մինչ զի սպիք մեղացն ջնջին և յիշատակութիւնն ծածկի: - 433. **Սոյնպէս և շնորհք ապաշխարութեան *նորոյս* առաւե՛լ է քան զհնոյն. զի առանց գործոց հատուցման ո՛չ կարէին արդարանալ. իսկ աստ շնորհօք թողութեանն միայն, կարէ՛ արդարանալ**: - 433. Վեցերորդ, խոստեցաւ սաւուղ և ընտրեցաւ դաւիթ. խոստեցաւ հին օրէնքն, և ընտրեցաւ *նորս:* - 435. Քսանք, երկոքին դուստրն խօսեցաւ դաւթի, և կրտսերն տւաւ. և փեսային քրիստոսի կրկին խօսեցաւ եկեղեցի և *նո՛րս* տուաւ: - 436. Երեսունն**է** զօրավարք դաւթի. և **լէ** թիւ հնոյն օրինաց. և այլ *նորոց* կտակի. և կամ **իբ** գլխաւո՛ր են գրոց հնոց. և **ժ** բան օրինաց. և չորից աւետարանաց. և մինն առաքելական: - 438. Եւ շնորհք *նոր* օրինացս հայի յողորմութիւնն աստուծոյ և ի փառս վերինն երուսաղէմի որպէս ասացաւ ի վերոյ: - 439. Նախ զայն ցուցանէ առ *նորս*, եթէ ոք յանգիտութեան մեղանչէ՝ թողու աստուած. և որ դարձեալ կրկնէ, և զառաջինն պահանջէ ասէ: - 439. Այլ և նշանակէ զպատարագ *նորոյս*. զոր ինչ մատուցանեմք աստուծոյ հաղորդիմք ի նմանէ: - 443. Զի՞նչ է *նոր* կուժն և աղն, որով բժշկեցան ջուրքն: - 445. *Նոր* կուժն ի խորհուրդ աստուածածին կուսին. որ *նո՛ր* էր յղացումն և անապական ծնունդ: - 445. Ո՞ր քան են և ո՞րք գիրք սուրբք հին և *նոր* կտակարանք: - 450. Իսկ *նոր* կտակքն յայտնի՛ են: - 450. Իբր լինի **լզ** հին կտակարանք և **լզ** *նորս*. բովանդակն **իբ**: - 451. Եւ *նոր* կտակարանքն ամենայն՝ են տունք՝ **ա՞. փ. շղա**: - 451. Միահամուռ հին և *նոր* կտակարանքն՝ **դ ա՞. էռ. չի** տուն է: - 451. Ա՛յս է Ցանկ *Նորոց* Օրինացս: - 455. Եօթներորդ՝ ողորմութիւն է ի *նոր* օրէնս. ըստ որում «շնորհք և ծիր»: - 458. Իսկ *նորն* ադամ նոյն ի **զ** դարուն յա՛յց ել և խնդրեաց զկորուսեալ պատկերն ի թիւ խորհրդաւոր կատարեալ վեցերորդին: - 467. Ա՛րդ՝ զհինն զամենայն կատարեաց և վճարեաց. և ապա՛ *նորոյս* սկիզբն էարկ մկրտութեան և շնորհաց: - 485. Եւ է՛ որ պատարագն մեծ է քան զմատուցօղն. որպէս *նոր* օրինացս մարմինն քրիստոսի մեծ է քան զքահանայն: - 491. *Նոր* պատարագ և *նոր* քահանայ և *նոր* եղանակ: - 491. Ասեմք թէ՝ ի վերնատունն զհինն կատարեաց մինչ զմարմինն բաշխեաց և *նոր* օրէնս եդ. և մեք հնոյն ո՛չ եմք պարտական: - 510. Ասեմք թէ՝ կրկին սուտ և *նոր* աւետարան: - 511. Ութերորդ, զի ծնունդ էր նա *նոր* և գլխաւոր. և այն՝ զի նովաւ կորընչէին ազգք և տոհմք և դարք: - 517. ...ինքն տէր մեր իբրև քահանայ *նոր* յամենայն ձեռաց պահէր զգուշութեամբ...: - 517-518. Երկրորդ՝ և յայսմ աւուր տըւաւ մեզ *նոր* օրէնս և քարոզութիւն սուրբ աւետարանին: - 524. Երրորդ՝ զի անդ ո՛չ կարէր արդարանալ զի հիւանդ էր սիրտն, ետ *նոր* օրէնս ի սիրտս մեր որ կարօ՛ղ է արդարացուցնել զժողովուրդս և զհեթանոսս: - 524. Առաջին վասն օրինաց և *նոր* օրհնութեան: - 525. Եւ վասն է՞ր ի հին օրէնս յիւրեանց ազգէն առնուին և ի *նորս* ոչ: - 526. Յետ այսորիկ հարցանելի՛ է ի *նոր* օրինաց և յեկեղեցւոյ կարգաւորապէս ըստ մարդեղութեան բանին յարմարեալ...: - 528. Զի՞նչ է *նոր* օրհնութիւնն որ ասէ դաւիթ «օրհնեցէք զտէր յօրհնութիւն *նոր*»*:* - 528. Եկեղեցի սուրբ *նոր* ժողովուրդ կոչեցաւ աստուծոյ. զի հաւատով արդարացաք և եղաք ժողովուրդք և ո՛չ ըստ հնոյն օրինօք: - 528. Դարձեալ՝ ծննդեամբ աւազանին կոչեցաք *նոր* որդիք աստուծոյ և եղբարք քրիստոսի համահայր և համամայր: - 528. Վասն որոյ *նոր* օրհնութիւն նորածին աստուծոյ և տեառն մատուցանեմք *նոր* ժողովուրդքս աստուծոյ: - 528. Երկրորդ՝ ի վերնատանն դասք առաքելոցն ի վերայ *նոր* հաղորդութեանն մարմնոյ և արեանն՝ *նոր* օրհնեցին զքրիստոս և ելին ի լեառն ձիթենեաց որպէս ասէ աւետարանն: - 528. Եւ հանապազ ի տաճարին գովէին և օրհնէին զաստուած *նոր* օրհնութեամբ համբարձելոյն ի յերկինս տեառն և աստուծոյ...: - 528-529. Չորրորդ՝ այժմ մանկունք հաւատոյ ի յեկեղեցիս *նոր* օրհնութիւն տալով **գ** սրբեան ձայնիւ աստուածաբանե՛ն զխաչեալն քրիստոս. և օրհնեն ի վերայ արքայութեան աթոռոյ խաչին: - 529. Ա՛յս է *նոր* օրհնութիւնն ասացեալ: - 529. Բանն աստուծոյ մի է թէ բազում. զի բազում երևի ի հին և ի *նոր* կտակս և յիւրաքանչիւր թուղթս գրեալ...: - 529. Սակայն մի և նոյն բանն բազմանայ ի բազումս. որպէս ի հրեշտակս և ի մարդիկ. ի հին և ի *նոր* օրէնս. այլ ի միութենէն ո՛չ բաժանի: - 529. Նոյնպէս և անչափութիւն բանից և խրատուց հարց և իմաստնոց գիրք սուրբք՝ հին և *նոր* կտակարանք ցուցանեն զանչափ հիւանդութիւն հոգւոյ. զի սոքօք առողջասցին: - 531. Եւ զի քրիստոս է հիմն երկուցն. և **դ** անկիւն առաքեալք և մարգարէք. և հին և *նոր* կտակարանք ասացեալ նոցա: - 533. Եւ փոխանորդ նորա ի յերկրի ի հինն քահանայապետն որպէս ահարոն. և ի *նորս* կաթողիկոսն իւրաքանչիւր ազգի: - 534. Որպէս որք յեփեսոս՝ զնիկիականն ուղղութիւն ո՛չ քակեցին. այլ ի նոյն տեսակ *նոր* կանոնս կարգեցին ի հաւատս ուղիղ: - 541. Ի հինն ասաց սիրել զընկերն, և ի *նորս* յաւել սիրել զթշնամին: - 577. Վեցերորդ, ըստ հրեշտակաց *զնոր* իմաստ և *զնոր* գիտութիւն առնուն: - 586. Առաջին խորհուրդն է՛ մկրտութիւնն որ է *նոր* մտելոցն յեկեղեցի: - 587. Եօթներորդ պսակն. որ է՛ խորհուրդ *նոր* զինուորս ի ներս մուծանելոյ ի ձեռն մարմնաւոր ծննդեան: - 587. ...թէ *նոր* մկրտեալն մեռանի, առ ժամայն թռչի ի կեանս

յաւիտենականս: - 590. Այլ և զհինն իմաստութիւն ընդ *նորոյ* խառնեալ միաւորեաց քրիստոս. այսինքն զօրինակն ընդ ճշմարտութիւնս: - 596. ...և է՛ առաջին վասն *նոր* պատերազմին որ առաջի կայ: - 605. Հինգերորդ, ի *նորս* **զ** ազգ է որպէս ասէ մեկնիչն վարդան այսպէս: - 611. Վասն է՞ր ի հին օրէնս եդաւ յիւր ազգէն առնուլ հարսն, և ի *նորս* յօտար ազգէ: - 612. Իսկ ի *նորս* յօտար ազգս առնել խնամութիւն...: - 612. Իսկ ի *նորս* փոխեցաւ ի հոգևոր օրհնութիւն և ծնունդ. և զմարմնաւորն ի սկզբան չափաւորն կապեաց. որպէս ադամ և եւա: - 613. Իսկ պոռնկութիւնն ի բնական օրէնս և ի գրաւորն և ի *նորս* խոտեալ է: - 613. Աշխարհամատրանն. և յետ գալստեան Հոգւոյն կիրակէն. Տապանակին. Շողակաթին. և **դ** օր ի Խաչին տօնն. **բ** Գալստեանն. Վերնատանն. Եւ *նոր* կիրակէին: - 616. Եւ հին և *նոր* եկեղեցւոյ որ է երկոտասան: - 616. Իսկ հինգերորդն ի *նորոյ*. զի խաչիւն քրիստոսի գնեցաւ և ազատեցաւ եկեղեցի սուրբ: - 616. Իսկ *նորոյ* պատարագն բանաւո՛ր է և անարիւն...: - 617. Երկրորդ, զի և ի տաճարն հին՝ ո՛չ թաղեցին զսուրբս. այլ ի գերեզմանատունս. նոյնպէս և առաւել սրբութեամբ պահելի է *զնոր* տաճարս: - 617. Իսկ ի *նորս* երեք անգամ է. այսինքն յառաւօտուն, և ի ճաշոյն, և յերեկոյն. և իւրաքանչիւրքն **գ գ**: - 618. Իսկ ի *նորս* եկեղեցի քրիստոնէիցս ազգի՝ յաւելեալ է կրկին ժամ. այսինքն յետ առաւօտին զարևագալն. և յետ երեկոյին՝ զխաղաղականն...: - 621. Երեկոյ է տղայութիւնն. յորում *նո՛ր* գամք ի խաւար կենցաղոյս: - 622. Իսկ ի *նորս* առ մեզ, Սակաւ ինչ հոգացեալ զեօթնիցս, այլ ութերորդին փոյթ տարեալ դարուց աւանդապահք եկեղեցոյ, կարգեցին ութն կանոնս **ըը** գուբղայիւ: - 627. Իսկ սկսուածն ընդ երգոյն խառնեալ, Նախ նշանակէ՛ թէ զմարգարէից և զառաքելոցն բանս ի միասին խառնեալ ունի *նորս* եկեղեցի: - 627. Իսկ և եօթներորդն խոստովան լինիլ բարութեան և արդարութեան տեառն. և մերձիլ խնդրուածովք. և օրհնել զաստուած *նոր* օրհնութեամբ յետ աստեացս: - 630. Եւ որ ամէն շարականի սկիզբն ի մարգարէից դնեմք, այս է պատճառն, զի զհինն և *զնորս* ի միասին խառնեմք: - 636. Եւ ի *նորս*՝ ի չորեքշաբաթ և յուրբաթ փոխեցին առաքեալքն. որպէս յա՛յտ է յառաքելական կանոնս. նաև ի նիկիականն: - 652. Իններորդ, ընկալաք կրկին օրէնս հին և *նոր*. վասն որոյ **բ** աւուրս սրբութեամբ պահեմք: - 654. ...իսկ այս ընտրեցաւ վասն *նորոյ* և ճշմարտութեան: - 658. ...որք ունին զհին օրէնս և ո՛չ *զնորս.* այլ ի ներքոյ մնացեալ սկզբնական մեղաց՝ նոքա ի տանջանս ընթանան: - 678. Որք ո՛չ թլփատեցան ի հինն և ոչ մկրտեցան ի *նորս*, կամ չարք ի մարդկանէ, ունին զդատապարտութիւնն զոր զրկելոց են ի դատաստանին զանազան տանջանս և ո՛չ այժմ: - 690. ...որպէս յա՛յտ է յառաջիկայդ ի զանազան վկայութեանց վարդապետաց սրբոց և ի հին և ի *նոր* աստուածաշունչ կտակաց: - 691. ...և եղիցի երկին *նոր* և երկիր *նոր*...: - 701. Եւ վեցն՝ ի կատարումն վեցեակ դարին *նոր* ապստամբն ելցէ և կորուսցէ զբազումս: - 708. Վեցերորդ, զի բժան ցեղապետք էին հնոյն. և **բժ**ան առաքեալ *նորոյ*. զերկոցունց ազգաց նահապետսն դնելով զբոլոր թիւ ամենայն ազգին, նշանակէ՛: - 712. Երկրորդ զքահանայս հին և *նոր*. որ գնեն զպատարագս ուխտից ի սեղանն: - 713. Եւ ի *նորս* առաքեալն պօղոս բազում ուրէք գրէ զյարութիւնն...: - 715. Եւ դարձեալ ոմանք հերձուածօղք ասացին թէ՝ այս մարմինս ո՛չ յառնէ և ո՛չ այս մարդ որ մեռանի. այլ փոխանակ նորա *նոր* մարդ յառնէ: - 720. Որք առին զօրէնս և ո՛չ պահեցին. որպէս չար քրիստոնեայք ի *նորս* և չար հրէայքն ի հինն...: - 739. Հաւատացեալ արդարք. որք ըստ օրինաց հնոյն կամ *նորոյ* գործեցին զարդարութիւն. կամ որք սխալեցին և ապաշխարեցին զմեղս զղջմամբ խոստովանութեամբ պահօք աղօթիւք ողորմութեամբ և այլովք: - 739. Տասներորդ, ասի հնձան և կտակարանքն սուրբ. ուր հին և *նոր* իմաստութիւն ժողովեցաւ ի խառնարանին գինւոյ...: - 749. Այսոքիկ են խնծորք *նոր* և հին. որք հոտով զուարճացուցանեն, և համով զմայլե՛ն: - 756. Խնծոր *նոր* և հին, գիրքն են աստուածայինք. որք հինք են յօրէնս և ի մարգարէս. և *նորք* յաւետարանն և յառաքելական մատեանս: - 756. Զի փոխեսցին յայսմ կերպարանաց զոր ունին, և այլ իմն *նո՛ր* զգեցցին...: - 759. *Նոր* և սքանչելի խառնմամբ միացեալ բնութեամբ: - 769. Նոյն և կամք և կիրք և ներգործութիւն մարդկային ընդ աստուածայինն միաւորեալ. միջնորդելով հոգւոյ բանականի՝ աստուածութեանն՝ և մարմնոյն. որ է՛ ներգործութեամբ միշտ աստուած և փրկիչ բնութեամբ. քրիստոս. *նոր* ադամ. էմմանուէլ ճշմարտութեամբ: - 770. Իսկ առ լուծումն խնդրոյս թէ վասն է՞ր արդեօք առ *նորս* շնորհ՝ որպէս աւազանին և կարգին ո՛չ բառնի ընդ բառնիլ շաղկապին. իսկ առ հնովն բարձաւ. որպէս յա՛յտ է ի վերոյ ասիցդ ադամայ և յայլոցն: - 782. Ապա յա՛յտ է համաձևանալ այսու՝ հնոյն շնորհ առ *նորոյ:* - 782. Իսկ շնորհք *նորոյ* ի ձեռն քրիստոսի տուեալ՝ ո՛չ է փոփոխական. զի վերստին նորոգման է շնորհք և անապականութեան: - 783. Շնորհք որ ի հինն զինչ և իցէ փոփոխական գոլով՝ օրինակ *նորոյ* էր. որպէս քահանայութեան և այլն: - 783. Իսկ շնորհք *նորոյ* հաստատ և անփոփոխ ի ճշմարիտ քահանայապետէն անփոխանցելի պարգևեալ: - 783. *Նորս* խորհրդոյ շնորհք ոմանք են անիբաց դնելիք...: - 783. Նմանապէս և աստ յաւուր *նոր* կիրակէի ասացեալն

կրկնո՛յ զատկի, յանկարծահաս ժամու շարժեալ հեղեղաց ուղխից խռովութեանց: - 789. Յորում ամի եղև ծռատօն զատկաց ազգի կոչեցեալ յունաց. ի վերոյ ասացեալն աւուր *նորոյս* տէրունեաց: - 789

***ՆՈՐ ՏԱՐԻ*** - Այլ և յորժամ սատակեցաւ յուլիանոս, զժողովեալ ինչսն սուրբն բարսեղ բաժանեաց ժողովրդեանն. *նոր տարի* անուանեալ ի կեսարիայ: - 200

**ՆՈՐԱԳԻՒՏ +** Ա՛րդ՝ միաւորել զսուրբ խորհուրդն ո՛չ է *նորագիւտ* ինչ եկամուտ մեզ ինքեանց: - 598

**ՆՈՐԱԾԻՆ +** Նա՛խ՝ զի ծեր և հին աւուրց նշանակեցաւ հայր աստուած ի դանիէլէ՛. իսկ որդին *նորածին* և երիտասարդ հասակաւ: - 479. Վասն որոյ նոր օրհնութիւն *նորածին* աստուծոյ և տն մատուցանեմք նոր ժողովուրդքս աստուծոյ: - 528

**ՆՈՐԱԾՆԻԼ +** Պատասխանեմք նախ, որպէս ասէ ոսկէբերանն թէ՝ *նորածնեալքն* աւազանաւն՝ ըստ չափու շնորհացն արժանաւորեին իմաստութեան, թարգմանութեան, և այլն...: - 59. Գառինք՝ *նորածնեալք* աւազանաւն: - 374. Չորրորդ՝ որդին բնութեամբ. և շնորհօք *նորածնեալք* աւազանաւն որդիք աստուծոյ կոչին շնորհօք: - 402. Ո՛չ կարէ. զի կնքահայր ասեմք և ո՛չ կնքամայր. զի կնքամայր եկեղեցին է *նորածնելոցն:* - 591

**ՆՈՐԱՀԱՍ +** Իսկ Մուրկ *նորահաս*, և Երախայրիք կալոյ: - 361. Զի *նորահաս* պտուղ եղև յարութեամբն մեռելոց, և նստելով ընդ աջմէ հօր: - 361

**ՆՈՐԱՀՐԱՇ +** ...*զնորահրաշն*, զնայեա՛ սիրովն...: Զայս ամենայն մեծն ներսէս է ասացեալ կլայեցին: - 637

**ՆՈՐԱՆԱՄ +** Վասն այն ի *նորանալն* առաւել զօրաւոր և ազդո՛ւ է սերմանելոյ և այլոց: - 187. Չորրորդ՝ ամսամուտն նոցա. զոր ի *նորանալ* լուսնին տօնէին. իսկ մեզ տօն կուսին մարիամու որ լուսաւորութիւն լսի ըստ ոմանց: - 372-373

**ՆՈՐԸՆԾԱՅ +** Նա՛խ՝ վասն *նորընծայ* հաւատացելոցն. անկիրթ գոլով կատարեալ տեսութեանց...: - 687

**ՆՈՐՈԳԵՄ +** Մետասաներորդ՝ աստուծոյ է *նորոգելն*...: - 71. Նախ՝ զի ասեն վարդապետք թէ ո՛չ ումեք խրատու մեղանչեաց, և ո՛չ ումեք օգնութեամբ *նորոգեսցի:* - 150. Չորեքտասաներորդ՝ մերձենալով *նորոգէ*, և հեռանալով ապականէ՛: - 186. Եւ զի *նորոգին* երեսք երկրի: - 197. Եւ դարձեալ՝ գարնան եղանակն սկիզբն է ստեղծման աշխարհի և բուսուց և ամենայն ծննդոց. վասն որոյ ի սոյն ժամանակս առաւել բուսանին և *նորոգին* ամենեքեան: - 198. *Նորոգէ՛:* Պարունակէ՛. և Լուսաւորէ՛: - 202. Զի պատկերն աստուծոյ վերստին *նորոգեցաւ* ի նմա: - 288. Իններորդ՝ յոքայ մարմինն *նորոգեցաւ* յետոյ. և տէր մեր խաչիւն *նորոգեաց* զպատկերն ադամայ և զծննդոց նորա յարութեամբն իւրով: - 327. Որ և ցուցանէր յետ եօթանասուն ամի զդարձ գերույն, և *զնորոգիլն* իրէական կարգին: - 346-347. Երրորդ՝ նոր օրէնքս անուամբ հնոյն *նորոգեալ* կոչեցաք իսրայէլ: - 402. Այլ և իմաստութեանն հօր պարտ էր *նորոգել* զխնդրօղ իմաստութեանն որ է մարդն: - 468. ...և *նորոգեցին* զքուլութիւն և զերկպառակութիւն ինչ եկեղեցւոյ. և հաստատեցին գիրս կանոնականս **բժ**ան գլխոց: - 544-545. Իսկ զայսօր յարեաւն, *զնորոգեալ* կղզիքն, և զքոռանցն, ներսէս լամբրօնացին: - 637. ...յորժամ այս ամենայն հաստատեալ *նորոգեցաւ* հրամանաւ սրբոյն սահակայ պարթևի ի փառս քրիստոսի. ձեռամբ իմով մովսիսի գրչի սահակայ: - 659. Եւ *նորոգին* արարածք: - 661. Երրորդ, ասեն բոլոր աշխարհ *նորոգի* հրով. որպէս ասէ պետրոս...: - 701. ...ապա ուրեմն և հոգիքն *նորոգին* ի հուր քաւարանին: - 701. Ասեմք նախ՝ եթէ երկինք և երկիր մարմին գոլով *նորոգին* մարմնական հրով. իսկ հոգին զի է՛ անմարմին ՝*նորոգի* շնորհօքն քրիստոսի և հոգւովն սրբով: - 701. Զի թէ զչգոյն կոչէ ի գոյ և լսեն նմա, քանի՞ առաւել զգոյն ի գոյից ժողովէ՛ և *նորոգէ:* - 714. Ուստի և փրկչին ակնունիմք *նորոգել* զմարմին խոնարհութեան մերոյ ըստ մարմնոյ փառաց իւրոց: - 716. Եւ ոմանք ասեն՝ հոգոյ և մարմնոյ վերստին *նորոգիլ:* - 716. Եւ ա՛յս է պատճառն. զի աստուած ի սկզբան զբնութիւնն ադամայ անթերի ստեղծ. նոյնպէս ի վերջին օրն անթերի *պիտի նորոգէ:* - 726. Ո՞րպէս *նորոգին* արարածք: - 727. *Նորոգին* արարածք վասն կրկին պատճառի: - 727. Նա՛խ՝ զի ապականեցան տարերք վասն յանցանաց մարդոյն, պա՛րտ է զի ընդ մարդոյն *նորոգեսցին* և նոքա: - 727. Եւ այսպէս *նորոգին:* - 727. Այլ զի մի՛ իրողութիւն դատաստանին և յարութեան ուրուական և առ աչօք թուեսցի ընդհանուր ամենայն մարդկան, վասն որոյ ասեն վարդապետք ի յարութենէն մինչ ի գալուստն և քննութիւնն և հրով *նորոգիլն* և այլն՝ յերկարի միջոցաւ որքան ժամս **զ**: - 747. Զի որպէս յաւուրս **զ** կազմեցաւ աշխարհ և ի **զ** դարս կայացաւ. նմանապէս և ի ժամս **զ** *նորոգեսցի* դարձեալ: - 747. Ա՛րդ՝ *նորոգեսցի* երկիր որ ընկալաւ ի ծոց իւր զտէրունական մարմինն: - 759. Նոյնպէս և ջուրն որ հպեցաւ ի մարմին փրկչին, և ծնաւ զմարդիկ որդիս աստուծոյ,

*նորոգեսցի* և պայծառասցի քան զամենայն տեսիլս գեղեցկագոյն ականց: - 759. Իսկ մարդասիրին աստուծոյ տեսեալ արտագունեալ զպատկեր իւր, կամեցաւ *նորոգել* զնա: - 776

**ՆՈՐՈԳՈՒՄՆ +** Դարձեալ ասեմք թէ՝ ամենայն մեղաց մտածումն՝ զղջո՛ւմն է նորին. իսկ պոռնկութեան մտածումն՝ վերստին *նորոգո՛ւմն* է ախտին: - 166. Տասներորդ՝ այլև օրինակ և յարացոյց նմանատիպ հասարակաց յարութեան և *նորոգման* տիեզերաց և մարդկային բնութեանս որ յապագայն: - 196-197. Եւ առնին ի *նորոգմանէ* տաճարին մինչև ի ծնունդն քրիստոսի ամք **շժը**: - 453. Երրորդ՝ զի *նորոգումն* որ լինելոց էր ծննդեամբ կուսին՝ ո՛չ միայն մարդկան էր, այլ և հրեշտակաց. պարտ էր հրեշտակին սպասաւորել կուսին: - 463. Նաւակատիսն *նորոգումն* և տօն կամ ուրախութիւն թարգմանի: - 509. Վասն է՞ր հինգն **բժան** օր նաւակատիս կատարէին որ է՛ *նորոգումն* խորանի տաճարին: - 616. ...այլ ի նոյն կէտն է յարութիւն և միաւորութիւն հոգւոյ և *նորոգումն* մարմնոյ: - 717. Իսկ շնորհք նորոյս ի ձեռն քրիստոսի տուեալ՝ ո՛չ է փոփոխական. զի վերստին *նորոգման* է շնորհք և անապականութեան: - 783

**ՆՈՒ +** Չորրորդ՝ զի ո՛չ ճանաչէր այր զկին իւր, և ոչ կին զայր իւր. և լինէր անօրէն խառնակումն. որպէս յուդայ *զնու* իւր զթամար ո՛չ ճանաչեաց. և ո՛չ ղովտ զդստերսն իւր: - 238

**ՆՈՒԱԳ +** Եօթն դաս պարուց էին. որոց երեքն բերանով երգէին. այսինքն *նուագն* և սրինգն և փողքն: - 431. ...և յեօթներորդ օրն ի եօթն *նուագին* բարձրաձայն փողովք հնչեցին քահանայքն. և ժողովուրդն բարձրաձայն աղաղակեաց. յորմէ կործանեցաւ եօթնապատեան պարիսպն երիքովի: - 627

**ՆՈՒԱԳԵՄ +** Զի ի կիրակէ և ի տէրունական տօնս ո՛չ կարօտիմք բարեխօսի. այլ երգս սրովբէականս *նուագեմք:* - 627. այլ արար գործի տասն աղի. զի տասն մատամբն որպէս խօսս *նուագեսցէ* աստուծոյ: - 641

**ՆՈՒԱԶ +** Եւ զիա՞րդ կարիցէ ծկտիլ *նըւազն* առ մեծն՝ լնուլ զհայր: - 39. Եւ որպէս ո՛չ ոմն *նուազ* զօրութեամբ ընդ առաւելն մրցի. այլ ընդ համացեղսն: - 44. Թուի թէ *նուազ* է քան զհայր. զի ոչ ունէր և տաւ: - 46. Իսկ զանգիտութիւնն որդւոյ վասն ժամուն և աւուրն թէ բերցեն ընդդէմ մեր հակառակօղքն՝ և այնպէս *նւազ* ասիցեն զորդի: - 48. Դարձեալ հարցանեն, թէ հաւասար է հոգի որդւոյ, զի՞նչ արգելու ո՛չ լինիլ որդի. ապա թէ ո՛չ՝ *նւա՛զ* է քան զորդի: - 53. Պատասխանեմք թէ ո՛չ է *նըւազ* հոգին. զի ո՛չ է անկատար աստուածութիւնն. և ո՛չ նըւազութիւնն առնէ հոգւոյն ո՛չ լինիլ որդի, այլ դէմքն և առանձնաւորութիւնքն: - 53. Եւ այն զի ո՛չ ինչ ունի մինն *նըւազ* քան զերկուսն, և ո՛չ երկուքն առաւել քան զմին, բաց յառանձնութեանցն: - 74. Իսկ որպէս հոմանուն ձայն, զի հաւասարապէս հաղորդի որոց կոչինն. որպէս խոյ երկնային և երկրային և ջրային. զի ո՛չ առաւել և ո՛չ *նըւազ* կոչին. այլ հաւասարապէս: - 89. Նոյնպէս և քրիստոսն անուն՝ և տէր՝ և աստուած՝ և այլն՝ զո՛յգ և հաւասա՛ր է մարդկութեան իւրոյ և աստուածութեանն. և ո՛չ առաւել և *նըւազ*. կամ տկար և հզօր. կամ անգէտ և ամենագէտ. և որ ինչ այսմ նման: - 89. Ա՛րդ՝ եթէ հայր առաւել գիտէ և որդի *նըւազ*, այս լինի կամ հօրն նոյնպէս *նըւազ* գիտել որպէս որդի. և կամ որդի՝ ո՛չ ճշմարիտ ասել: - 97. Իսկ թէ աստուծոյ բան է և անանց, ո՛չ ուրեմն է տգէտ կամ *նըւազ* գիտութեամբ: - 98. Իսկ յատուկ այլ է երիցն. և երկուքն աւելի՛. և *նըւազ* քան զմինն: - 104. Վասն է՞ր զանազանապէս տայ աստուած զպարգևս և ո՛չ հաւասար. որպէս առաւել տայ հրեշտակաց՝ և սակաւ մարդկան. և *նըւազ* կենդանեաց և տնկոց և անշնչից: - 130. Նախ է՛ գործ իմաստութեան աստուծոյ. որով զանազանեցին արարածք՝ առաւել և *նըւազ* ընդունելով. և մի՛ խառնափնդոր և անզանազանապէս: - 130. Զի մի՛ է ձայնն յառաջ եկեալ յասողէն. իսկ լսօղք՝ առաւել և *նըւազ* ընդունին: - 131. Իսկ առողջ լսելիք և տկար՝ պատճառի ի համակարգս. և ի հաւասարն բնութեամբ. որք իմացմամբ և սիրով և ներգործութեամբ առաւել կամ *նըւազ* են. ուստի առաւել կամ *նըւազ* պարգևս ընդունին: - 131. Նմանապէս և *նըւազ* ձայնն այն՝ փոխո՛ւմն է առաջին ձայնին. վասն այն լսէ զձայնն՝ և ո՛չ զբանն: - 131. Երրորդ՝ տեսութեամբն և իմացմամբն աստուծոյ. զի ոմանց առաւել է և ոմանց *նըւազ:* - 137. Իսկ վերնագոյն սիրով սիրեն արարածք զարարիչն. և վերջին հրեշտակք զառաջինսն. և որդիք զհարս. և *նւազք* զմեծամեծս. և այս սիրովս միաւորին ընդ նոսա: - 143. Տասներորդ՝ պատահումն է առաւել և *նըւազ*. իսկ գոյացութիւն ո՛չ է առաւել և *նուազ:* - 171. Եւ զի յաստուած ո՛չ գոյ առաւել և *նուազ*. վասն որոյ միայն գոյացութիւն է և ո՛չ ունի պատահումն: - 171. Նա՛խ՝ զի յոմանս առաւել է լոյսն. որպէս յարեգակն. և յոմանս *նուազ*. որպէս ի լուսին և յայլ աստեղս: - 188. Այլ եերորդ էութիւնն է պարզ և հաւասար. առաւել և *նուազ* ո՛չ ընդունի: - 188. Եւ թէ ասեն՝ յանօրո՛յն է որ մինն առաւել լոյս տայ և մինն *նուազ*, և ո՛չ ի լուսոյն. որպէս յստա՛կ ապիկի առաւել լուսաւորէ: - 188. Եւ զի *նըւազ* լոյսքն երևին: - 196. Ի հեռին *նուազ:* - 202. Եւ այն որ կրկին լինի, ներքին պայծառն է տիպ

յարեգակնէն. և վերին *նուազն* զտիպ ներքնոյն է ընկալեալ: - 203. Եւ վասն առաւել և *նըւազ* ջերմութեանն, է՛ որ ի դուրս պատառիլն շիջանի: - 204. Իսկ մարդոյս հնարք և իմաստութիւնն բանականութեամբ է. վասն այն բազում է ի նոսա հնարք. և առաւել և *նուազ*, և ո՛չ հաւասարք: - 218. Զորօրինակ՝ բնութեան յատուկն և անձին. զի բնութեան տարբերն հեռագոյն է և մեծ. որպէս կենդանին և բանականն. և դիմաց յատուկն մերձ և *նուազ*. որպէս յատուկն մերձ և *նուազ*. որպէս պատկեր և տիպ: - 235. Առաջին և առաւել գոյացութիւն՝ է՛ անհատ անձն և դէմն. և Երկրորդ և *նուազ*՝ տեսակն և սեռ՝ և այլքն ըստ կարգի: - 235. Է և այլ իմն աննմանութիւն հոգւոյ ըստ իմացմանն. առաւել և *նւազ*. ուշիմ և ապուշ. չկամ և կամեցօղ. հեզ և յանդուգն. ցանկացօղ և ողջախոհ. ըստ բնական բարոյիցն որակացեալ. նման և աննման գոլով իրերաց: - 237. Երկրորդ՝ զի ոչ նոյնպէս աւելի և *նուազ*. այլ երբեմն՝ և հաւասար ամենայն մարդկան: - 246. Դարձեալ ᵽ խառնուա՛ծ է չորից տարերց ըստ կրկին քառից որակաց առաւել և *նուազ*, և իններորդն հաւասար է որ է ի մարդն. վասն որոյ ինն ամսեայ ծնանի: - 264. Իսկ այլ նւազունքն և կամ յաղթանդամքն մարմնով՝ առաւել և *նուազ:* - 264. Երկրորդ՝ զմանանայն որ շատ ժողովեաց՝ ո՛չ յաւելաւ. և *նւազն* ո՛չ պակասեաց: - 339. Այլ երուսաղէմ լեառն է և դաշտ, յանձրևոյ ոռոգի. իբր թէ խնամօքն աստուծոյ լինի անձրև աւելի և *նուազ*, ի ժամու և տարաժամու ըստ արժանեացն ձերոց: - 398. Որք առաքինութեամբն են լեառնացեալ և դաշտացեալ աւելի և *նուազ:* - 398. Յաղագս այսորիկ *նւազ* և փոքր լսի գործ արդարութեան քան զգործ ողորմութեան: - 458. Եւ դարձեալ զոր օրինակ, գիր մատանւոյն մի և նոյն կատարեալն է տըպացեալ յամենայն մոմս կնքեալ և ո՛չ աւելի և ո՛չ *նուազ:* - 530. Այսպէս մի և նոյն բանն է յիւրաքանչիւր աւետարանս ձևացեալ, և ընդ աջմէ հօր նստեալ. և ոչ աւելի և ո՛չ *նուազ:* - 530. Դարձեալ՝ գոյ առաւել ճշմարիտ, գոյ և *նուազ* ճշմարիտ, որպէս գոյ առաւել բարի, և *նուազ* բարի: - 550. Այսպէս ասեմք, զի որ ըստ ինքեան է ճշմարիտ և ըստ ինքեան բարի՝ առաւել է. և որ ըստ պատահման է ճշմարիտ կամ բարի՝ *նուա՛զ* է. վասն զի ըստ ինքեանն գոյացութեամբ և հարկաւո՛ր է. այսինքն անփոփոխ և միշտ: - 550. Ապա յա՛յտ է, զի *նըւազ* ճշմարիտն առաւել ճշմարտին հետևեսցի. որպէս *նուազ* բարին առաւել բարւոյն. եթէ ընդհանուրն և եթէ մասնաւորն: - 550. Եւ ցասմանն է բարկութիւն և ծուլութիւն առաւելն և *նուազն:* - 559. Նա՛խ՝ զի որ կամաւ և գիտութեամբ մեղանչէ, առաւել է քան զակամայն և զտգիտութեան. զի թէպէտ և սոքա մեղք են, այլ պատիժն *նւազ*. որպէս անասնոյն քան զմարդոյն: - 563. Երկրորդ ի միտ առ, զի որ առաւել գիտութեամբ և կամօք մեղանչէ, առաւել պատժի քան զայն որ *նուազ* գիտութիւն ունի և կամք...: - 563. Տասներորդ՝ վասն հոգեմարտին մակեդոնի որ հայհոյէր զհոգին սուրբ *նուազ* ասելով քան զհայր և զորդի, ո՛չ թողցի նմա: - 566. Եղիցի անունն, վասն ադամայ *նուազ* ձայնիւ: - 628. Իսկ թէ *նուազ* է, որպէս մանկունքն ճաշուն, և համբարձին. որիշ ասեմք զփառքն և զայժմն: - 636. Եւ որ սաղմոսն ը տուն է՝ կամ ա՛յլ *նուազ*, զփառքն և զայժմն վերջին տան շարականին տամք: - 636. Եւ նոյն քան ուտիք. սակաւ ինչ աւելի կամ *նուազ:* - 650. Եւ այլ վարդապետք փայտ խոտ և եղէգն զներելի մեղս ասեն. և առաւել և *նուազ* և միջակ: - 702. Իսկ խոստելոցն գիր, դպիր է պիղծ հոգին դիւական. և չար կամքն իւրեանց և խորհուրդն և հեշտութիւն մարմնոյն մեւան. և ըստ գործոց առաւել և *նւազ* գրեն ի գիրն դատապարտութեան: - 741. Երրորդ, հայի առ նոյն ինքն արդարապէս հատուցումն մանրամասն քննութեամբ բարեացն և չարացն. որք առաւել կամ *նուազ* ունին. կամ հասարակ յերկուցն կրից: - 746. Նոյնպէս և հատուսցի առաւել և *նուազ* և հաւասար. ո՛չ միայն ըստ սեռի գործոց, այլ և ըստ տեսակի և քանակի և որակութեանց նմին: - 746. Իսկ ըստ քանակի, չափու գործելեացն առաւել և *նուազ* իւրաքանչիւրոց ի խորհուրդս ի բանս և ի գործս: - 746. Ա՛րդ՝ առաջինն անխա՛ռն է արդարութեան. երկրորդն *նուա՛զ* է. երրորդն զո՛յգ է: - 747. Այլ զայս ո՛չ իմանան հասարակ կարծիք. զի արքայութիւնն երկնից մի է. այլ փառք և պսակքն են զանազանք առաւել և *նուազ:* - 758. Եւ ո՛չ այս միայն, այլ և մեղքն ադամայ *նուազ* ևս քան զծննդոց նորա ըստ այսմ օրինակի: - 777

**ՆՈՒԱԶԱԳՈՅՆ +** Վասն առաջնոյն պա՛րտ է գիտել, զի առաւել հասարակն հեռի՛ է և մեծագոյն. և առաւել յատուկն մերձ է մեզ և *նւազագոյն:* - 235

**ՆՈՒԱԶԻՄ, ՆՈՒԱԶԵՄ +** Զի ի *նըւազիլ* ողջութեան՝ հիւանդութիւնն երևի. և ի *նըւազիլ* մարմնոյ՝ ապականութիւնն պատահի: - 22. Եւ ծանիր զայս, զի որքան *նըւազի* ողջութիւնն՝ առաւելու հիւանդութիւնն. և որչափ *նըւազի* մարմին՝ առաւելու ապականութիւն. այլ յամենևին *նըւազիլ* ողջութեան՝ և հիւանդութիւնն կորընչի: - 22. Եւ յամենևին *նըւազիլ* կենաց՝ և մահն կորընչի. զի յէութեան ունի զգոլն ներհակապէս: - 22. Իսկ հերձւածօղքն զփառս ճշմարտին աստուծոյ *նուազեն:* - 33. Բայց և այս բան՝ հանգոյն առաջնո՛յն է իմանալ. որք միտս ունին և ո՛չ *նուազին:* - 45. Իսկ ի սուրբ Երրորդութիւնն հայր կատարեալ. որդի

կատարեալ. հոգի կատարեալ. և կատարեալն ո՛չ յաւելու և ո՛չ *նըւազի:* - 108. Երկրորդ՝ զի կամի այնու զփառս և զպատիւ աստուծոյ *նուազել:* - 146. Ութերորդ՝ գործ բնութեան ո՛չ առաւելու և ո՛չ *նւազէ*. իսկ կամացն առաւելու և *նուազէ՛:* - 156. Երրորդ զանազանութիւն՝ զի թէ շինի տաճարն և թէ ոչ՝ առաջին սկիզբն որ ի միտքն մնայ՝ նոյն ո՛չ առաւելու և ո՛չ *նուազէ:* - 163. *Նուազի՛* և բոլորի՛: - 186. Եւ հեռացեալ *նուազի՛* լոյսն: - 186. Որ և զծովս և զաղբերս և զհեր և զղեղս առաւելու ընդ իւր և *նւազէ՛:* - 187. Եւ այնուհետև *նուազի* որքան յառաջ է՛ քան զարեգակն և թեքի ի նմանէ: - 187. Երկրորդ՝ բնական օրն հաւասարաչա՛փ է. զի ո՛չ առաւելու և ո՛չ *նուազէ:* - 194. Իսկ արուեստական օրն առաւելու և *նուազէ՛:* - 194. Վեցերորդ՝ որքան յամէ՝ լոյսն պայծառանայ, և խաւարն *նուազի՛:* - 196. Տասներորդ՝ *նուազին* գիշերային լոյսք: - 196. Եւ զի *նուազին* ստուերք: - 197. Եւ համառօտ ասեմ, կեանք մեր և ժամանակ որքան առաւել յերկարէ՛ և աճէ՛, այն քան առաւել պակասի և *նուազէ…:* - 199. Եւ որպէս ալիւրն ի սափորն և իւղն ի սրուակն կերակրելի՛ էր, և ոչ *նուազէր* առ եղիայիւ: - 224. Եւ *նւազեալ* յայսցանէ գոյնն՝ մնայ պատկեր ի քանակէ և ի ձևոյ և ի տեղւոյ երևեալ. որպէս յա՛յտ է ի մեռեալ մարդն: - 236. Եւ *նուազեալ* ի սմանէ քանակին, լինի նման և աննմանն ցուցեալ. որպէս յա՛յտ է ի տառն գրեալ. զի նման և աննմանն ուրոյն են որակի: - 236. Եւ այս դէմքս անփոփո՛խ է ի հոգւոյն ի կեանս և ի մահ. ո՛չ աճէ և ո՛չ *նուազի:* - 237. Այլ մեղքն *նուազէ՛* զկեանքն և ո՛չ տայ հասանիլ ի կէտ կոչմանն: - 291. Ուստի յայտ է զի բարձր գոչեաց և եհան զոգի. զի ամենայն մարդկան *նուազի* ձայնն ի ժամ մահուանն: - 316. Ձայն ցուցանէ որ *նուազելոց* էր հինն և օրինակն՝ ի գալ նորոյն և ճշմարտութեանն քրիստոսի: - 374. Հինգերորդ՝ զի *նուազեա՛լ* են ամք կենացն և մերձեալ ի վախճան: - 377. Զի երեսնամեայ յառնեմք. զոր և լուսինն *նուազի* և դարձեալ լուսաւորի: - 399. Եւ յետ մահուանն մարիամու *նուազեաց* ջուրն. յորում եհար բարկութեամբ զվէմն: - 415. Իսկ յետ մահուան ահարօնի *նուազեաց* մանանայն. յորում տրտնջէին և յօձից սատակեցան: - 415. *Նուազիլ*՝ ո՛չ ասեմ զամենևին պակասիլն. զի առ ջրհորաւն մեծի անյայտ եղև վէմն. և յելսն յորդանանու մանանայն ո՛չ գտաւ: - 415. Վասն է՞ր *նւազեցաւ* ջուրն: - 443. Ջուրն *նուազեաց* և կերակուրն արգելաւ, զի ողորմեսցի իէլի: - 443. Երկրորդ՝ նշանակէր զմանանայն որ նոյնպէս ոչ յաւելոյր և ոչ *նուազէր:* - 444. Երրորդ՝ ցուցանէ զպտուղ դրախտին նոյնպէս գոլ առանց յաւելուածոյ և առանց *նուազելոյ*. թէպէտ կերակրիւր: - 444. Չորրորդ՝ ի տիպ մարմնոյն փրկական. զի ոչ յաւելու ի բազում պատարագելն. և ոչ *նւազէ* ի ճաշակելն: - 444. Հինգերորդ՝ էեկի շնորհօք բազմապատկեալ ի հոգւոյն. ոչ առաւելու արգելեալ. և ոչ *նուազէ* բաշխեալ: - 444. Սոքա ըստ իրին ո՛չ առաւելուն և ո՛չ *նւազին*. թէպէտ հաղորդեալքն առաւելուն և *նւազին* ըստ ունակութեան: - 444. …իսկ եբրայեցիք զամենայն շաբաթսն ո՛չ թուէին ի համարն. վասն որոյ *նուազի՛* նոցայն: - 451. Նա՛ և գերազանցեալ քան զիրեշտակս այսու, զի նոքա ի գոյացական վարձս ո՛չ աճիլ կարեն և ո՛չ *նուազիլ*. իսկ երանուհի կոյսն կարէր յառաջանալ յարդիւնս և ո՛չ *նուազիլ:* - 463. Զի մինչ յերեսուն ամն շարժի աճիլ. և յայնմ հետէ ի *նուազիլ:* - 479-480. Եւ գործ նորա այս է. յառաւելութեանն գիտենայ *նուազիլ*. և ի յաղքատութեանն գիտենայ համբերել…: - 581. Զոր առ հնովքն էր սովորութիւնս այս, և յետոյ *նուազեցաւ:* - 631. Իսկ պահքն զչարութիւնն. զի *նուազի* և կարօտի հոգին յամենայն բարեաց. որպէս ի պահոց մարմինն: - 657. Հիւանդութիւն է անչափակցութիւն տարերց մարմնոյ. որ առաւելու և *նուազէ՛*. ջերմ և ցուրտ, խոնաւ և ցամաք: - 665. …և ո՞ր արդարութիւն *նուազեալ* է՝ զայն ուղղել…: - 665. Եւ յորժամ չարութեամբ հոգին *նուազի*, մարմինն զօրանայ և լինի մարդն շնչաւոր և անբան…: - 668. զի *նուազեսցին* դժնդակութիւնք և պատրանք մարդկան և սատանայի: - 709. Նախ զպակասութիւնն. որպէս ի տղայս և յանդամնահատս և *նուազեալ* անդամք. որպէս **դ** մատնի և այլքն…: - 725. Նա՛խ՝ այն է գալարիլն երկնի, զի եթերն որպէս մագաղաթ ծալեալ *նուազի* և նսեմանայ վասն առաւել ճառագայթից լուսաւորացն հրեշտակաց և սրբոցն յերկնէ երևեալ: - 729. Եւ թէ ունիցին ըստ օրինացն հաւասարեալ ի գործս կամ ի հաւատս, և եթէ միտեալ և կամ *նուազեալ*, ըստ նոցին օրինացն հատուցանել. և կամ արտաքոյ օրինացն կորնչիլ ի յայսմ կշռոյ է հատուցումն: - 747. Կամ ցուցանէ զչափով տանջանս մեղաւորացն. որք չափով աստ տանջին, չափով կրեն զհանդերձեալ պատիժն. զի ընդ պակասիլ ծխոյն՝ և հուրն *նուազի:* - 749. Երրորդ՝ կամ գործիք տանջանացն *նուազին*. իսկ անդ հուրն է յաւիտենական որ ոչ պակասի: - 750. Եւ երկոտասան պտուղ յերկոտասան ամիսս, զի ո՛չ երբէք *նուազի* անմահական պտուղն փայտին կենաց: - 768

**ՆՈՒԱԶՈՒԹԻՒՆ +** Նախ՝ ոչ կարել վասն *նուազութեան* զօրութեան ժամանակի և դիմի. որպէս ո՛չ կարէ մանուկ կռուիլ՝ և կորիւն տեսանել: - 44. Պատասխանեմք թէ ո՛չ է նըւազ հոգին. զի ո՛չ է անկատար աստուածութիւնն. և ո՛չ *նըւազութիւնն* առնէ հոգւոյն ո՛չ լինիլ որդի, այլ դէմքն և առանձնաւորութիւնքն: - 53. Նոյնպէս և առաքումն հոգւոյն ո՛չ *նըւազութիւն* ցուցանէ, այլ զհամակամութիւն ընդ հօր և ընդ

որդւոյ: - 60. Առ տեղեաւն՝ նշանակէր *զնուազութիւն* աւուրցն տօնից ի պակասումն զուարակացն: - 374. Չորրորդ՝ զարգացաւ հասակաւ, ի նշանակել թէ զբնութիւնս մեր ի *նուազութենէ* ի մեծութիւն և ի փառս է՛ հանելոց: - 479. Երկրորդ՝ զի ծերն ո՛չ է կատարեալ հասակ, այլ դարձումն ի *նուազութիւն:* - 479. Զի աճումն զզգայութիւնն զարգացուցանէ. իսկ ապականութիւնն ընդ դէմ նմին զգոյն ի *նուազութիւն* և յոչգոյութիւն փոփոխէ: - 501. Իսկ զանազանի մահացուն և ներելին ըստ առաւելութեան և *նուազութեան*. որպէս առաւել է հարկանումն օծի քան զլուոյ. և նետի քան զփշի. այսպէս և մահացուն է առաւել քան զներելին: - 568. Ա՛րդ՝ մէջս այս իմացեալ լինի ի մէջ աւելորդութեան և *նուազութեան:* - 578. Զվիշտս յայտ առնէ անցելոցն *նուազութիւն* և կորուսելոցն բազմութիւն: - 764

**ՆՈՒԱԶՈՒՆ (տ. ՆՈՒԱԶ) +** Այսպէս ի հասարակաց ի *նուազունս* գոլով ի մարմնականն տիպ. իսկ անդրադարձեալ: - 235. Իսկ այլ *նւազունքն* և կամ յաղթանդամքն մարմնով՝ առաւել և նուազ: - 264. Զի *նւազունք* են ամենայն փափկութիւնք որ լինին յաշխարհի մինչև ցօրն դատաստանի, բաղդատեալ առ այն քաղցրութիւն. որպէս կաթիլ մի ջրոյ առ համեմատութիւն ընդ հանուր ծովու: - 762

**ՆՈՒԱՂԻՄ, ՆՈՒԱՂԵՄ +** Երկրորդ՝ և մի՛ փոքր կասցի օրէնքն, տեսանելով զլոյս երեսացն *նւաղեալ:* - 411. Քսաննդ, Վասն եղիայի զոր ագռաւն կերակրեաց. և գնաց ի հեղեղատն. և *նուաղեցաւ* ջուրն: - 413

**ՆՈՒԱՂՈՒԹԻՒՆ +** Իսկ ներելին թէպէտ որոշի յերիս տեսակս ըստ մեծութեան և *նւաղութեան*. այլ մանրամասնաբար յանթիւս ելանէ. որպէս ծիծաղիլ. վայրաբանել. և այլն: - 568

**ՆՈՒԱՃԵՄ +** ...անձնիշխան կամքն ո՛չ *նըւաճի* ի ներքոյ երկնային մարմնոց: - 10. Ասեմք առ այս, թէպէտ խառնւածք մարմնոյն լինին ի շարժմանէ՛ աստեղացն, այլ բազումք անձնիշխան կամօք *նըւաճեն* զվատախառնութիւն մարմնոյն, և գործեն զբարիս: - 10. ...և անձնիշխան կամքն որ անմարմին է՝ ո՛չ *նըւաճի* ըստ շարժմամբ մարմնաւոր աստեղաց: - 13

**ՆՈՒԱՃՈՒՄՆ +** Երկրորդ՝ բոլորովին *նուաճումն* ստորին մասանց բանականին: - 462

**ՆՈՒԱՍՏ +** ...զմեր *նուաստ* և տկար բնութիւնս միացոյց ընդ իւրում աստուածութեանն...: - 40. Այլ զի խոնարհեցաւ ի բարձրութենէ փառացն և **ը** *նուաստ* բնութեան մերում միաւորեցաւ. ա՛յս է որ առաքեալ ասի: - 40. Ոչ թէ *նըւաստ* է քան զհայր, կամ ծառայաբար ծունր կրկնելով բարեխօսէ՛: - 48. Իններորդ՝ ոմանք մեծամեծ իրողութեանց են միջնորդք ուղղութեան, և այլք *նըւաստից* սպասաւորական: - 138. Այլ ա՛րդ եթէ փոխի ի տնկոյն ի մարդն, վատթա՛ր է մարդոյն կեանք քան զտնկոյն. ուստի ի մեծագունէն ի *նւաստն* փոխեցաւ: - 253. Վեցերորդ՝ զի գործ աստուծոյ է ի *նւաստ* և ի փոքր ինչ իր զմեծամեծսն ներգործել. որպէս կաւովն զկուրին աչքն եբաց, և ի վիմէն ջուր բղխեցոյց **բժան**. և այլ բազումս: - 733-734

**ՆՈՒԱՍՏԱԳՈՅՆ +** Առաջին միտք՝ զի ասաց թէ «հայր գործէ՛ և ես գործեմ». և վասն այնր զչարացան հրէայքն, այժմ իբր թէ *զնուաստագոյնս* ճառէ ի զիջումն բորբոքման նոցա: - 45. Ո՛չ ասեմք մի ներգործութիւն որպէս թէ չկայ բարձրագոյն և *նուաստագոյն:* - 85. Ասեմք առ այս եթէ որպէս դու օրէնս եդեր փոխանցիլ ի բարձրագունէն ի *նւաստագոյն* կեանս վասն մեղաց: - 252-253. Նախ նշանակէ զպէս պէս զօրութիւնս քրիստոսի. որ երբեմն զբարձրագոյնս ներգործէր և երբեմն *զնուաստագոյնս* երևեցուցանէր յինքեան: - 493. Ասեմք առ այս, թէ որպէս ի մէջ սերովբէից և քերովբէից և աթոռոց ո՛չ ասի վերնագոյն և *նուաստագոյն*, զի համակա՛րգ են և շուրջ զավ: - 547

**ՆՈՒԱՍՏԱԿԱՆ +** Ասեմք եթէ՝ մի և նոյն հրացեալ նիւթո՛յն է կտրելն և այրելն. այսպէս մի և նոյն միաւորութեաննն էր այսինքն մարդացեալ բանին բարձրագոյնքն և *նըւաստականքն:* - 85

**ՆՈՒԱՍՏԱՆԱՄ +** Զի որպէս *նըւաստացաւ* և եղև մարդ, նոյնպէս և շնորիք տըւաւ նմա յաստուծոյ և ի մարդկանէ: - 94

**ՆՈՒԱՍՏԱՑՈՒՑԱՆԵՄ +** Այն որ *նըւաստացոյց* զինքն ի յունայնութիւն մարդկան, եղև ի կերպ ծառայի՝ և գործով և կրիւք և նմանութեամբ մարդկան. և կերպարանօք գտաւ մարդ. զի ի վեր էր քան զմարդ՝ և քան զկերպարան մարդոյ: - 93. Աստուած հայր. որ առաքեաց և *նըւաստացոյց:* - 94

**ՆՈՒԱՍՏՈՒԹԻՒՆ +** Իսկ թէ մարդ աստուածացեալ, ստէ՛ ուրեմն առաքեալն՝ ի լրութենէն ունայնութիւն ասացեալ. զի այս ընդդէմ նորին ի *նըւաստութենէ* ի բարձրութիւնս ելանէ: - 68. Ուղղակի ուրեմն փայտս այս ասի գոլ տընկեալ մերձ յընթացս ջուրց. զի ի նմանութիւն մարմնոյ մեղաց երևեցաւ. և զամենայն *նուաստութիւնս* մեր յինքն ընկալաւ: - 755

**ՆՈՒԱՐՏԱՆ +** Եւ զպղինձն ի բուրվառացն կորխեանց **մծ** իցն. յորմէ արար *զնուարտանն* ծածկոյթ պղնձի սեղանոյն. նշան յանդգնութեան նոցա: - 344

**ՆՈՒԵՆԱ +** Անունք Կանանց Նախապետացն: ...ենովսայն *նունեա՛:* - 299

**ՆՈՒԷՐ +** Երրորդ՝ զի էր յօժար կամօք և զուարթ սրտիւ. ուստի երևի այս ի *նուէրն*...: -286. Նա՛խ՝ զի սովոր էին յեգիպտոս կռո՛ց զոհել, զայն *նուէրն* ի յինքն ընկալաւ: - 355. Չորրորդ՝ ի բազում անսուրբ իրաց առնու մեղուն. ի սուրբ իրացէ *նւէրն* աստուծոյ: - 356. Եւ նախ ասեմք զանկենդանն որ կոչի զոհ. որ է՛ մասնաւոր *նւէրք*. որպէս նաշիհ և իւղ և խունկ: - 357. Սա՛ փոխեալ ի նորս նշանակէ՛ զմարմնաւոր *նուէրս*. որպէս պահք աղօթք, ողորմութիւն: - 357. Չորրորդ՝ վասն փրկութեան ի հիւանդութենէ կամ ի պատերազմէ՛ փրկեալք, մատուցեն ասէ պատարագ և *նւէրս* ընծայեսցեն ի սեղանն ի հոտ անուշից: - 358. Վեցերորդ, վասն յանցանաց ի *նուէրս* սրբութեանցն, և կամ յօրէնս աստուծոյ, և կամ յընկերս վնասու...: - 358. Սոքա **բժ**ան ազգ *նուէրք* գլխաւոր պատարագք կարգեալ ի մեծէն մովսիսէ՛: - 359. Այլ և *նուէրք* սրբութեանն տունս, անդաստանս պտղաբերս, անասունս, և այլ մասնաւոր *նուէրք:* - 359. Այլ և *նւէրք* **բժ**ան իշխանացն սայլս և եզինս: - 359. Եւ այսոքիկ մասնաւոր *նուէրք* բովանդակք զոր հրամայեաց մովսէս: - 359. Նա՛ է ողջակէզ և փրկութիւն և գոհութիւն, և վասն մեղաց և յանցանաց. և յամենայն *նւիրաց* կատարումն և գլուխ նա՛ է: - 362. Իսկ միւս խոյն կատարմանն, քահանայիցն կերակուր և *նուէրքն* մովսէսի: - 362. Երկրորդ, զի ի *նուիրացն* աստուծոյ առնուն զբաժին քահանայքն և ո՛չ ի մարդոյ. և ամենայն ոք աստուծոյ տայ և ո՛չ մարդոյ: - 363. Չորրորդ յայտ է՝ զի *նուէրքն* աստուծոյ՝ սրբութիւն է. և որ ոք մերձենայ ի նա՛ սրբի: - 363. Վեցերորդ, թիթեղն ցուցանէր ի ճակատն գրեալ սրբութիւն տեառն նուիրեալ. զի *նւէրք* քահանային սրբութիւն է: - 363. Երրորդ՝ ի խորհուրդ պատարագողին. զի *նուէրքն* զնուիրո՛ղն նշանակէր: - 370. Նա՛խ՝ գառն հանապազորդ. և *նուէրք* յերեսաց սեղանն և յողջակիզաց: - 372. Երկրորդ՝ շաբաթուց *նւէրքն* կրկին. և ի նորս կիրակէն մեր: - 372. Նա՛խ՝ զի **ը** էին *նւէրք* պատարագացն. է գառն. և մի խոյ: - 373. Զուարակն, և Խոյն, և Գառն, և Նոխազն, և այլ *Նուէրն:* - 374. Եւ կէս դորակին՝ զի յայժմու կեանս կիսակատա՛րք են ամենայն *նուէրք* մեր մինչ ի հանդերձեալն: - 375. Այլ հոգեպէս՝ նաշիհն է՛ մարմնական *նուէրքն*. և կամ չարչարանք մարմնոյ որ ի տօնս ճգնիմք...: - 375. Ա՛յս է խորհուրդ առաւօտու և երեկոյի գառինն և *նուէրք* նորա: - 375. Եւ **ժ** թիւ կատարեալ *նուէր* և սուրբ է աստուծոյ. յաղագս որոյ թագաւորք երկրի զընծայս ի մարդկանէ՛ հնազանդելոց **թ թ** խնդրեն...: - 376. Այլ ի յաւարէ՛ թագաւորաց որ ի յերկրէն թշնամեաց բերեն՝ հալա՛լ է մատուցի՛ *նուէրք* յեկեղեցին: - 390. Վեցերորդ՝ զի հարկ էր մատուցմունք *նւիրաց* ժողովրդեանն. և կատարեալ էր մի օր պաշտամանն: - 484. Եւ ասելն «ընդ հոգւոյդ քում», և քահանայքն ճաշակէին ի *նըւիրացն* աստուծոյ: - 624. Եւ մատաղն, Նախ պատարագ և *նուէրք* է աստուծոյ. որպէս աբէլ՝ նոյ՝ և աբրահամ մատուցանէին: - 657. Ապա ուրեմն ամենեցուն առ հասարակ պէտք են քահանայական կատարմունք և *նուէրք*. գալ ի գերեզմանն և այլն ամենայն: - 675. Եւ այսպէս տրտմեալ սրգով և թախծեալ մտօք ընծայեցի տխեղծ մատամբ զխունախոյ *նուէրս* բանի, իբր զլոմայս այրւոյն՝ քումդ գանձարանի: - 789

**ՆՈՒԻՐԱՆ +** Ի սմա սեղան սրբութեան. և ի մեզ սիրտ սուրբ սեղան *նուիրանաց:* - 614

**ՆՈՒԻՐԱՆՈՑ +** Եւ **ե** երրորդն՝ յորոյ վերայ խնկաղացն և *նուիրանոցն* և ճաշակն: - 364

**ՆՈՒԻՐԵԼԻ** - Երրորդ՝ մեղրն ո՛չ է վաստակ. ի մեր աշխատանա՛ց է *նուիրելի* աստուծոյ: - 356. Եւ այս է պատճառն, զի աստուած ետ մեզ միտք և բան և ձայնի գործիք և մարմնոյ մասունք և ինչք. վասն որոյ յամենայնէ՛ *նուիրելի՛* է աստուծոյ: - 619. ...որպէս յամենայն ինչ իրաց՝ մա՛սն *նուիրելի* է աստուծոյ. նոյնպէս և ի բարեաց գործոց զգոհութիւնն: - 626

**ՆՈՒԻՐԵՄ +** Զգողացեալն խոստովանիլ. և խոյ մի *նուիրել:* - 285. Վեցերորդ՝ ի սոցանէ երևի և գործ արդարութեան. որ ընտիրսն աստուծոյ *նուիրէր* գիտելով զմեծութիւն նորա և զբոլորիցն տուրսն. և զխոտանն ի՛ւր թողլով: - 286. Ի մանկութենէ կռոց *նուիրեցաւ*, և հրեշտակ աստուծոյ յափշտակեալ սնոյց զնա յանապատի մինչև հասոյց ի կատարումն: - 300. Հինգերորդ՝ մելքիսեդեկ մարդկան *նւիրեաց*. որպէս քրիստոս առաքելոցն և մեզ: - 301. Վեցերորդ՝ *նուիրեաց* մելքիսեդեկ զպատարագն և ընկալաւ զտասանորդն. որպէս քրիստոս պարգևէ՛ հաւատացելոց զշնորհս, և առնու զտասնեակս զկատարեալ և զբարի գործս. կամ զտասն բանեան օրէնս **ժ** զգայարանօք: - 301. Իսկ առ մեզ **ժ** մասունք և **գ** կիցն, զի **ժ**՝ սուրբ և *նըւէ՛ր* է աստուծոյ: - 340. Իբր՝ քահանայապետն գլուխ գոլով՝ առեալ զբոլոր արարածս *նուիրէ* աստուծոյ: - 348. Հասարակ, զի ամենայն քահանայ միջնորդ և հաշտարա՛ր է աստուծոյ և մարդկան. զընծայս ժողովրդեանն աստուծոյ *նուիրելով* և յաստուծոյ շնորհս և քաւութիւն ժողովրդեանն առնելով: - 354. Իսկ այն որ զմեղրովն պտուղն *նուիրէին* քահանայից, բայց ի սեղանն ոչ: - 356. Նշանակէ՛ զամենայն զառաջին բարի գործս մեր եթէ ի մարմնոյ և եթէ ի հոգւոյ. և ի մտաց

*Նւիրել* աստուծոյ: - 357. Որք պտղաբե՛րք են և ծննդականք բարեաց՝ հեզութեամբ *Նուիրին* աստուծոյ: - 358. Գառն՝ որդիք քրիստոնէի. և Ուլն՝ որդիք հեթանոսի յորժամ գան յեկեղեցին սրբին և *Նւիրին* աստուծոյ: - 358. Այծն՝ մեղաւորա՛ցն է նշանակ. որք դառնան ի մեղաց և *Նւիրին* աստուծոյ: - 358. Լերդափոյթն, զուրախութիւնս և զհեշտութիւնս մեր *Նուիրել* աստուծոյ: - 360. Իսկ հեթանոսք ըստ այնմ որ յանուն աստուծոյ *Նուիրէին* ընդունելի՛ էր: - 361. Եւ ողջակէզ սրբութեան է՝ յետ ապաշխարութեան զբարիս գործել. և զբովանդակ զհոգի և զմարմին մեր *Նուիրել* աստուծոյ: - 362. Վեցերորդ, թիթեղն ցուցանէր ի ճակատն գրեալ սրբութիւն տեառն *Նուիրեալ*. զի նէրք քահանային սրբութիւն է: - 363. Երրորդ՝ ի խորհուրդ պատարագողին. զի նուէրքն *զնուիրօ՛ղն* նշանակէր: - 370. Զի ի կեանս յայս հաւատով *Նուիրիմք*. և յետ մահու յուսով. և յետ յարութեան կատարեալ սիրով ընդ քրիստոս միաւորիմք: - 375. Նոյնպէս և մեք ի հանդէս տօնից *Նուիրեմք* նաշին և գինի պատարագի. ծէք՝ մոմ՝ խունկ՝ և զենումն մատաղի: - 375. Վասն է՞ր յորժամ զգողացեալն խոստովանի ասէ՝ և խոյ մի աստուծոյ *Նուիրէ՛:* - 384. Ո՛չ միայն հրէի կամ հեթանոսի, այլ որք *Նուիրեն* նմա զհաւատս ամբողջ սրբութեամբ՝ արժանի լինին շնորհացն նորա: - 398. Որ և դաւիթ տեառն *Նուիրեաց* զջուրն զայն: - 434. Այլ մեզ այսպէս իմանալի է. զի թշրինի մէկն *Նուիրեալ* օր սուրբ տեառն կոչեսցի ասացաւ. որ է՛ սեպտեմբերի **ժը**: - 483. Զոր և անյարմար շարաբանութեամբ «զկո՛ւն» ցուցանեն մկրտել և ո՛չ *զՆուիրեալն:* - 588. Եւ երկրորդ անպատշաճութիւն, զի յասելն թէ՝ ես կու մկրտեմ. երևի թէ *Նուիրեալն* ո՛չ իւր կամաւն է եկեալ ի մկրտութիւն, այլ բռնութեամբ և ի հարկէ՛ կու մկրտեմ: - 588. Եւ դնէ զայս քահանայն սուրբ մեռոնաւն ի ճակատ *Նուիրելոյն* ասելով այսպէս. ըստ այլազգաց եկեղեցեաց. թէ ի ներքոյ ձևիս այս ես կու նշանեմ զքեզ նշանաւ խաչի...: - 593. Եւ սուրբ ժողովուրդն՝ և երեխայն որ դեռևս մկրտի, զայսոսիկ *Նւիրեալք* կոչէ: - 608. Աստ անարիւն պատարագն մատչի. և ի մեզ բաներէն պատարագն հոգի և մարմին միշտ *Նուիրեալ* կենդանի: - 614. ...և նոքա *Նըւիրեն* աստուծոյ և բերեն մեզ զհաշտութիւն...: - 624. Երկրորդ, որպէս ի հինքն մատուցանէին զպատարագն առ քահանայսն. և նոքա *Նուիրէին* աստուծոյ: - 624. Չորրորդ և ուղիղ, որպէս ասէ տեսիլն հրեշտակք առնուին զխունկս որ է՛ աղօթք սրբոցն, և *Նուիրէին* ի սեղանն ոսկի որ է՛ քրիստոս. և ի նմանէ բուրէր ծուխն առ հայր: - 625. Զի որդին մարմնացաւ և նա՛ *Նուիրէ* զբարեգործութիւնս մեր առ հայր: - 625. Ապա՛ զկնի երից մանկանցն աղօթից որով քաւիմք ի մեղաց. ի փառս տալն ի բարձունս՝ անուշահոտ բուրմամբ *Նուիրեմք:* - 628. ...և իւրաքանչիւր ոք լոյս և հուր վառեալ՝ նմա՛ *Նըւիրէին* զպաշտօնն իբր արարչի...: - 638

**ՆՈՒԻՐՈՒՄՆ +** Նոյնպէս և սեղան խնկոց և երեսացն ցուցանէ զհոգիս սրբոց ելեալ ի մարմնոց և մտեալ դէմ յանդիման երեսացն աստուծոյ...: Եւ *Նուիրումն* առ աստուած: - 346

**ՆՈՒՄԱՍ ՊՈՒՄԻԼՈՍ** - Բայց ասեն ոմանք թէ՝ յաւուրս մանասէի՝ *Նումաս պումիլոս* **բ** ամիս յաւել ի տարին հռոմոց. զի յառաջ քան զնա՝ **Ժ** էր. և յաւել ի նոսա զյունվար և զփետրվար: - 201

**ՆՈՒՆԻ ԿՈՅՍ** - Հինգերորդ, զի թէ գո՛յր հնար կնոջ վասն հարկին առնել զգործ քահանայի, ընդէ՛ր ոչ կարաց *Նունի կոյսն* մկրտել զոք ի վրաց յորժամ դարձոյց յաստուածգիտութիւն. - 589

**ՆՈՒՌՆ +** Եւ են որ զմէջն ուտեն և ո՛չ զկեղևն. որպէս *Նուռն:* - 213. Յիսունևը, **բժ**ան լրտեսքն. որ բերին ողկոյզ՝ *Նուռն* և թուզ: - 284. Եւ **գ** պտուղն, ողկոյզ. *Նուռն*. և թուզ: - 381. Իսկ *Նուռն* բժշկական է և դառն կեղևն: - 381. Այլ և կոյսքն ամբողջք՝ և մարտիրոսքն են *Նուռն:* - 381

**ՆՈՒՍԱՍ** - Եւ այս են **հը** լեզուքն: ...*Նուսասք*: - 298

**ՆՈՒՐԲ +** Ծածուկ և զանխո՛ւլ է աստուածաբանութեան տեսութիւն հասարակ մտաց. և հազիւ ճանաչի կիրք խորհրդոց՝ և *Նուրբ* քննութեանց սրբոց: - 81. Եւ դարձեալ զի է՛ *Նուրբ:* - 203. Եւ որպէս զհուր՝ ներքին կողմն լայն է և վերին ծայրքն *Նուրբք:* - 215

**ՆՊԱՍՏՈՒԹԻՒՆ +** Բայց զի յուսացեալ ի բանն ճշմարտութեան յաղագս որոյ բանս հարցափորձութեան, հետևելով ուսուցչացն ուղղութեան, և յուսոյ ուսողացդ *Նպաստութեան*. բացցուք զբերանս մտաց, և ձգեսցուք ի մեզ զհոգին շնորհաց: - 456. Նա՛խ՝ զի կազմեսցի զօրութեամբ բարձրելոյն ի հոգւոյն սրբոյ և ո՛չ *Նպաստութեամբ* մարդոյ: - 470

**ՆՍԵՄ +** Եւ զի *Նսե՛մ* է: - 211. Զի թէ *Նսեմ* երկիրս լուսաւորի, լուսաւորքն վասն է՛ր խաւարին: - 728

**ՆՍԵՄԱՆԱՄ +** Նա՛խ՝ այն է զալարիլն երկնի, զի եթերն որպէս մագաղաթ ծալեալ նուազի և *Նսեմանայ* վասն առաւել ճառագայթից լուսաւորացն հրեշտակաց և սրբոցն յերկնէ երևեալ: - 729. Վասն վեցերորդին, որք զխաւար մեղաց ատէն սիրեցին և առ լոյսն քրիստոս գալ ո՛չ կամեցան. վասն այնորիկ ահագին խաւարաւ անդ *Նըսեմանան:* - 752

**ՆՍԵՄՈՒԹԻՒՆ +** Իսկ ըստ իրին, զի որպէս ամպ զարեգակն արգելու, այսպէս _նսեմութիւն_ օդոյդ զարփին որ արգելէ՛ զտեսութիւն մեր: - 729. Այսպէս և օդն յորս եկաց փրկիչն յետ յարութեանն, փոփոխեսցէ զբնական _նսեմութիւնն_ իւր և պայծառասցի որպէս զեթերն: - 759

**ՆՍՏԵՄ, ՆՍՏԻՄ +** Իններորդ՝ նա՛ ի տաճարին _նստի_ և ուսուցանէ. և սոքա ի ներքս ի յեկեղեցի. զկերպարանս բարեպաշտի ունելով արտաքոյ՝ ծածկեալ են գառնենեաւ զգայլենիս: - 35. Յնգէտասաներորդ՝ համաբարձաւ և _նստաւ_ ընդ աջմէ հօր: - 67. Ա՛րդ եթէ է՛ այլ որդի և եղև աթոռակից հօր, ուրեմն ի բաց էհան զբանն ի _նստելոյն_ ընդ աջմէ հօր որ է սեփհական նմա և վայելուչ հօր՝ լինիլ աթոռակից և գահակից: - 67. Նմանապէս ասա՛ և զայս. զընութեա՞մբն որդի ասես ընդ աջմէ մեծութեանն _նստեալ_, թէ որ շնորհօքն որդիացեալ ըստ քեզ: - 70. Զի թէ զընութեամբն ասես, ստեա՛ց ուրեմն առաքեալն և աւետարանն. որք զքրիստոս ասեն յարուցեալ և համբարձեալ և _նեստեալ_ ընդ աջմէ հօր: - 70. Իսկ թէ զմարդն ասես _նստեալ_, ահա՛ զբանն զրկեցեր յաթոռակցութենէ հօր՝ ո՛վ սիրողդ առանձնութեան: - 70. ...անզուգական բարձրութիւն է մարդոյս բնութեան ընդ աջմէ աստուծոյ _նստիլ_ և հաւասարիլ: - 94. Քսանևմիերորդ՝ արդ՝ եթէ քրիստոս տգէտ ունէր միտս, և տկար հոգի, և ապականացու մարմին և եկն քրիստոս զի բարձցէ զտկարութիւնս մեր. և լուսաւորեսցէ որ _նստէաք_ ի խաւարի. և նա՛ է գառն աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի և զապականութիւն: - 99. Այսպէս և ոչն. որպէս անդ՝ ուր ասէ արիստոտէլ՝ «ո՛չ մարդ» որ է անորոշելի անուն. և «ո՛չ _նստի_» որ է՛ բացասութիւն. և ա՛յլ է անորիշ անունն. և այլ բացասութիւն ստորասութեան: - 124. ...բանն և ձայնն. և լեզուաւ յօ՛դս բախեալ՝ հասանէ մինչև ի լսելիս, և անդ ձայնն արտաքոյ մնացեալ, և բանն անմարմին ի միտս լողացն _նստեալ:_ - 131. Երկրորդ՝ ցուցանէ _զնստեալն_ ի վերայ՝ տէր զօրութեան երկնի և երկրի և ծովու: - 132. Առիւծն գազանաց. և Մարդն ամենայն կենդանեաց. և _Նստեալն_ ի վերայ սոցա Թագաւոր թագաւորաց: - 132. Նախ՝ զի զաթոռն մեծ _նստողին_ տեսին եզէկիէլ և եսայի, և շուրջ զքերոբէքն և զսերոբէքն: - 135. Որև յայլուրեք ի քերոբէս ասի _նստել_. զի ամենեքեան աստուածակիրք են և հանգիստ կամացն աստուծոյ: - 135. Իսկ Կալ՝ ո՛չ զկալն կամ _զնստիլն_ մարմնապէս. այլ զհաստատիլն անշարժ էութեամբ. զի ո՛չ շարժի. ո՛չ բնութեամբ, ո՛չ կամաւ, և ո՛չ տեղեաւ: - 172. Թէպէտ ուր ուրէք զհանգիստ նշանակելով _նստիլ_ ասի աստուծոյ, և ի յօգնութիւն ժամանել: - 172. Կալ՝ ըստ որում «կայ ընդ աջմէ աստուծոյ». և _նստաւ_ ի փառսն հայրենի: - 172. Իսկ պատահական տեղի է, յորում _նեստեալ_ որ՝ կարէ՛ թողուլ զայն և լինիլ յայլ տեղւոջ. որպէս ի վեր կամ ի վայր: - 174. Սոքա ի գլուխս նոցա _նստին:_ - 216. Երկրորդ՝ զի զփոշին սրբէ որ ի յօդոյս _նստի_ յաչքն. որպէս մեք ծեռօք սրբեմք զերեսս հայելւոյ: - 239. Եօթներորդ՝ ի մարդեղութեան իւրում _նստաւ_ ի լերինն ծիթենեաց և զերանութիւնն աւետարանեաց: - 320. Վասն է՞ր յոր _նստաւ_ յաղբիւսն: - 322. Վասն որոյ _նստաւ_ յաղբիւսն փողոցին անհնարին հարւածովք: - 323. Տասներորդ՝ կրկին եղև կեանքն և պատիւն յոբայ. և տէր մեր ել ի փառս առաջին և _նստաւ_ մարմնով ընդ աջմէ հօր: - 327. Վեցերորդ՝ նշանակէ՛ զբանն աստուած զաւազան ուղղութեան և թագաւորութեան առ հայր. եկն նա՛ յերկիր և էառ զօծաձև բնութիւնս մեր. և դարձեալ ընբռնեալ մարմնովն ել յերկինս և _նստաւ_ ընդ աջմէ հօր: - 332. Այլ և _նստեալն_ ո՛չ կարէր կանգնիլ. և հուր և լոյս ճրագի ո՛չ կարէր ներգործել ի թանձրութենէն: - 334. Իններորդ, նոքա ծառայաբար մատուցանէին. ուստի յա՛յտ է զի ո՛չ կարէին _նստիլ_ ի սրբութիւնսն կամ ի քաւութիւնսն. իսկ քահանայապետն մեր տիրապէս և աստուածաբար _նստեալ_ ի յերկինս ընդ աջմէ աստուծոյ...: - 354. Զի նորահաս պտուղ եղև յարութեամբն մեռելոց, և _նստելով_ ընդ աջմէ հօր: - 361. Եւ _նստելն_ յաթոռ՝ պատրեաց զաքայաք: - 413. Եօթներորդ՝ ընդէ՞ր ոչ եկեր ընդ նոսա և ոչ _նստաւ_ և ոչ շօշափեցաւ: - 429. ...իսկ «տեսլեամբ գեղեցիկ», զի _նստի_ յերկինս և հայի յանդունդս. և հայելով ի հիւանդս բուժէր, և զմեղաւորս սրբէր: - 436. **Եւ տէր մեր յերկրի մարդացաւ, և յերկինս թագաւորեաց. իսկ _նստիլն_ ի վերայ ջրոց, որ է խաչն. զի վիրք զխաչն ջուարի կոչեն**: - 441. Ընդ աջմէ _նստի_ և որդւոյն մայրն կոյսն աստուածածին: - 441. Եւ ա՛յս է պատճառն, զի յաջ կողմ արգանդի կրէ զորդին. վասն որոյ յաջ կողմն նորա _նստի:_ - 441. Իսկ որդին աջ և բազուկ է հօր, վասն որոյ աջմէ հօր _նստի:_ - 441. Եւ տեառն մերոյ ի հեթանոսաց փառք և մեծութիւն. որ _նստի_ յանզուգական աթոռ դատողութեան **րժ**ան թագաւորօք դատել զամենայն: - 442. Իսկ _նստիլն_ ի յաթոռ՝ ասէր պատրել զաքայաք, թոյլ տալն է աստուծոյ որ մարդ իւր կամօքն հաւանի չարին և պատժի: - 444. Թագաւորք յուդայ _նստան_ յերուսաղէմ. Ռոբովամ. Աբիա. Ասափ. և այլ թագաւորք **իբ**: - 446. Եւ վասն է՞ր յետ **խ** աւուր համբարձաւ. և _նստելոյն_ ընդ աջմէ: - 455. Այսինքն երդումն աբրահամու և դաւթի՝ մարդ լինիլ բանին ի վերայ երկրի ի պտղոյ յորովայնէ նորա. և _նստել_ յաթոռ հօր նորա. և ի նմանէ օրհնիլ ամենայն ազգաց: - 457. Որ _նստի_ ի քերովբէս՝ ի մսուր դնի: - 470. Եւ զօծումն թագաւորական՝ ի մարեմայ քեռէն ղազարու. յորժամ _նստաւ_ ի վերայ յաւանակին: - 474. Վերին

մասն միշտ զվերինն խորհիլ ուր քրիստոս *նստի*...: - 493. Եւ ապա՛ յետ յարութեանն իջեալ հրեշտակն թաւալեցոյց զկափարիչ վէմն և *նստաւ* ի վերայ նորա և աւետեաց իւղաբերիցն: - 512. Մատթէոս զառաջինն գրէ որ ի մէջ գիշերի եկին. և մի հրեշտակ տեսին. և զվէմն առաջի նոցա թաւալեցոյց և *նստաւ* ի վերայ նորա: - 515. Իսկ զերրորդն մարկոս պատմէ՛ առաւօտուն և յարևագալն յետ ղուկասու. և տեսին երիտասարդ մի ի ներքս ի գերեզմանն ընդ աջմէ *նստեալ:* - 515. Եւ զչորրորդն յօհաննէս պատմէ միա՛յն զմագդաղենացին. և տեսեալ երկու հրեշտակս ի սնարս և յոտս *նստեալ:* - 515. Նոյնպէս և *նստիլն* զհանգիստն ցուցանէ: - 521. Նա՛խ՝ ի կողմանէ պարգևողին. զի յորժամ քրիստոս *նստեալ* լինէր ըստ մարմնոյ ընդ աջմէ հօր իբր զթագաւոր փառաց յաթոռ թագաւորութեան իւրոյ, յայնժամ մեծագոյն լինէր պարգևք հոգւոյն տուեալ ի փառաւոր քրիստոսէ աստուծոյ: - 521. Երրորդ՝ զի զամենայն փորւածս լնու. այսպէս և հոգին էլից զամենայն տունն յորում *նստէին:* - 522. Այսպէս մի և նոյն բանն է յիւրաքանչիւր աւետարանս ձևացեալ, և ընդ աջմէ հօր *նստեալ*. և ոչ աւելի և ո՛չ նուազ: - 530. Զոր յառաջին ամին յորժամ *նստաւ* կաթողիկոս տէր սիմէոնի, ի ձեռն տէր եղիայի մեծահանդէս ժողովմամբ պայծառացոյց զեկեղեցի կանոնական հաստատութեամբ ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս ամէն: - 545. Եւ յետ փոխման առաջնոյն՝ *նստի* կաթողիկոսն երկրորդ: - 546. Զի այսպէս սահմանեցին՝ թէ ինքնակալ թագաւոր մի և ինքնագլուխ հայրապետ մի *նստցի* ի հայս. և թագաւոր մի ինքնակալ՝ և ինքնագլուխ հայրապետ մի ի հռօմ. և ի վերայ միմեանց դիցեն զանձինս ի մահ. և սոսկալի գրով եղեն միմեանց եղբարք. թացեալ զգրիչն յահաւոր խորհուրդն: - 548. Վեցերորդն՝ ելեալ ի յերկինս *նստաւ* ընդ աջմէ հօր. որ է հաւասարութիւն հօր: - 573. Իսկ ելանելն ի բեմն, զի յետ բոլոր անօրէնութեանցն քրիստոս ել յերկինս և *նստաւ* ընդ աջմէ հօր աստուծոյ: - 594. ...և գո՛րծ է նոցա, հրամանաւ քահանային աւետարան կարդալ, քարոզել, և բառնալ քշոց և բուրբառ. և *նստիլ* ամենևին ո՛չ: - 608. Եւ գմբէթն զվերինն խորհիլ ուր քրիստոս *նստի* ընդ աջմէ աստուծոյ: - 614. ...և ապա՛ ի յերկրէ յարուցանէ զմարմինս. որպէս այն որ հրեշտակապետն *նստեալ* ի վերայ վիմին փողէր զյարութիւնն քրիստոսի: - 618. Եւ զսուրբ աստուածն խաչեցար. և այսպէս գրէ՝ եսայի ետես զքրիստոս *նստեալ* յաթոռ որ է խաչն. և երգէին զերեքսրբեանն: - 631. Երեսունք, Վասն աթոռոյ և փառաց *նստելոյն:* - 661. Եւ ապա՛ ի յարևմուտս. զի *նստի* ընդ արևմուտս որ է՛ մարդկային սրբութիւնս. և փառաց աթոռն քահանայութեան աստիճանս. - 673. ...ուր բելիարն *նստի*. զորս աւերեաց քրիստոս, և շինեն մեղսասէրք: - 679. Դարձեալ, ի տիպ պահապան հրեշտակին որ *նստէր* մի ի սնարից և մի յանոտից տեառն գերեզմանին...: - 679. ....և յետ այնորիկ ո՞չ *նստի* ընդ աջմէ հօր որդի: - 704. *Նստցի* ի տաճարին զոր շինեսցեն նմա հրէայքն. և ասասցէ թէ, յառաջ քան զիս ո՛չ ոք է ճշմարիտ քրիստոնեայ. այլ նեռինք են ամենայնքն: - 707. Գո՞յ անդ աթոռ յորում *նստցի:* - 736. Եւ եսայի ետես զտէր *նստեալ* յաթոռ բարձրութեան: - 736. Սակայն երևելի աթոռ ի յօդոյդ կազմեալ հաւատացեալ լինի. զի ամենայն ոք տեսցէ *նստեալ:* - 736. Զի՞նչ է *նստիլն:* - 736. Եւ յայնժամ յաղթեալ զթշնամին և զհարսն առ ինքն ընկալեալ յաթոռ մեծութեան *նստցի*...: - 736. Եօթներորդ, զի ահագնակերպ երևի ի վերայ մեղաւորաց. մինչ ասիցեն լերանց թէ անկերուք ի վերայ մեր. և բլրոց թէ ծածկեցէք զմեզ յերեսաց բարկութեանն աստուծոյ որ *նստի* յաթոռ. որպէս ասէ տեսիլն: - 737. *Նստի* քրիստոս ի բարձրագոյն աթոռ ի վերայ օդոյդ, և սուրբքն ընդ աջմէ. այսինքն ի վեր ի փառս ընդ նմա ի վերայ օդոյդ. հաւատոյ և գործոյ թևօ՛քն բարձրացեալ իբր զարծուի: - 738. Չորրորդ ի դատաւորէն զի *նստեալ* է ի յաթոռ շնորհաց...: - 742. Իսկ դատաւորն *նստեալ* յաթոռ արդարութեան արդարապէս հատուցանէ ըստ գործոց. ըստ որում յիմար կուսիցն փակեցաւ դուռն և ո՛չ առին զխնդիրն: - 742. Իսկ Երրորդն արքայութիւն, գուշակի յաւազանն պղնձի. զոր հրամայեաց մովսէս առնել ի հայելեացն կանանց որ *նստէին* առաջի դրան խորանին...: - 756. Կանայք առաջի դրան խորանին *նստեալք*՝ են հաւատացեալքն. որք դրան երկնաւոր պալատին բանիլ ինքեանց ակն կալեալ մնան: - 756. Ծնունդն, զօրութիւնն, մահն, ընդ աջմէ հօր *նստիլն*, և այլն ամենայն, զաստուած ի մարդում, մանաւանդ զմարդ յաստուածում ըստ սքանչելագործին գրիգորի ցուցանեն: - 770. Որ և մեր *նստելով* իբր ի մետաղս կամաւոր դիպահօջ՝ շահապօնս կոչեցեալ ամրոցի: - 788

**ՆՍՏՈՒՑԱՆԵՄ +** Երկոտասաներորդ՝ ծերացեալ դաւիթ *նստոյց* զնա յաթոռ: - 441. Վասն այն ո՛չ ետ մարիամու մերձենալ. այլ պահեաց զնա բազկին այնմիկ որ *նստոյց* զնա ընդ աջմէ իւրմէ: - 518. Ո՛չ թէ յայնժամ ետ, այլ յայնժամ խոստացաւ և յետո՛յ ետ. որպէս խոստացաւ *նստուցանել* յերկոտասան աթոռ և յետոյ ետ. նոյնպէս և զայն: - 547. Եւ փոխանորդ իւր *նստոյց* յաթոռ զսուրբն արիստակէս համանման նորին առաքինութեամբ, և որդի ըստ մարմնոյ. և ապա՛ գնաց ի հռօմ: - 548

**ՆՐԲԱԳՈՅՆ +** Զի՞նչ է յատկութիւն երկնից: ...Երրորդ՝ *նրբագոյն* է մասն: - 184

**ՆՐԲԱՅԱՅԵԱՑ +** Եւ զոր ինչ տեսանէ աչք արծըւին՝ ո՛չ կարէ տեսանել աչք մարդոյ. այնպէս բթամիտն ո՛չ իմանայ, զոր իմանայ *նրբահայեացն* և ուսեալն յաստուծոյ. զոր եդ աստուած ուսուցիչ այլոց. որպէս մարգարէքն, և առաքեալքն, և վարդապետք: - 31. Յա՛յտ ուրեմն է յասացելոցս, զի դնք ո՛չ ունին հաւատս վարձաւոր. այլ ունին գիտութիւն *նրբահայեաց* որով սարսին յառաջ քան զտանջանս: - 784. Եւ է՛ *նրբահայեաց* գիտութիւն նոցա: - 784

**ՆՐԲԵՄ +** Իսկ քաղելով գործելն, զի սկսեալ բնութիւնս մեր ի գլխոյն լայնանայ ի թիկունքն՝ և *նրբի* ի կրունկն, և բոլորեալ դարձեալ կատարի ի գլուխն: - 293

**ՆՐԲՈՒԹԻՒՆ +** Երրորդ՝ է՛ *նրբութիւն* իմանալեացն և բնութիւն իմացմանն. որպէս բժոտ աչքն ո՛չ տեսանէ զմազն ի հեռաստանէ: - 31. Երրորդ՝ *նրբութիւն* իմացմանն: - 251. Նա՛խ՝ ի *նրբութենէ* իմացման: - 336. Նոյնպէս և դնք ի *նրբութենէ* տեսութեան իւրեանց՝ կամ ի լսելոյ՝ խաբեն, զառաջիկայն պատմելով: - 430. Երկրորդ վասն նորին *նրբութեանն:* - 764. Չորրորդն է ազատութիւնն. առ որ առնեն մարմնոյ թեթևութիւնն և *նրբութիւնն:* - 766

**ՆՍՈՒՐ +** Իսկ Մառախուղն է մթագոյն գոլորշի անծննդական ջուրց. քան զօդ թա՛նձր է, և քան զամպ *նսուր:* - 204. Յերն կակուղ և *նսուր*, ցուցանէ զբթամիտն. և զգռուզն. և զաներկչոտն: - 246. Եւ *նսուրն* զխորամանկն ցուցանէ: - 246. Եղունկն սպիտակ տափակ կակուղ և *նսուր*, կարմրագոյն և փայլուն, ուժե՛ղ է: - 247. Իններորդ՝ զի որպէս կողից երեսն որ ի փորն նայի՝ կոկ գոլով և մզղնատեսակ. իսկ մէջն փուչ և մրրախառն. այսպէս սէրն զոր ցուցանէ առ այրն, *նսուր* առ ի ցոյցս՝ և երեսս միայն ունի. իսկ ի սիրտն զմրուր դառնութեան: - 276

**ՆՍՈՒՐԱՆԱԼ +** Յորժամ պալղամն շատանայ ի մարդն, մազն *նսուրանայ*. վասն այն մարդն ի ծերութեանն լինի ճաղատ: - 240

**ՆՕՏՈՍ +** Իսկ որ ի Յարաւո՛յ հնչէ, հասարակ *Նօտոսր* կոչին: - 205. Յարաւայինք որք *Նօտոսր* կոչին, Այն որ մերձ յարևելս է, Եւրո՛ *նօտոս* կոչի. հալէ՛ զպաղս: - 206. Եւ որ մերձ յարևմուտս է՝ Լիւա՛ *նօտոս*. առնէ մառախուղ. մէգ. և վրդովումն յամպս: - 206. Իսկ միջինն է՛ *Նօտոսն*. առնէ որոտ. և փայլակն. և անձրև խիստ: - 206

# Շ

**ՇԱ** - Զի սէն` յունա՛ց է, և *շան* ասորի. և մի և նոյն է տեսութիւնն որ ասէ, անգոսնեաց, և անգուշնեաց: - 407

**ՇԱԲԱԹ +** Դարձեալ ասէ թէ` ետ ինձ հայր, զի մի՛ հակառակ հօր կարծիցեն զորդի. որպէս կարծէին հրէայքն լուծանելով *զշաբաթսն:* - 46. Օր, ամիս, և տարի և *շաբաթ*, և ժամք, վերադիր, և րոպէք, ոլոմպիադ, և այլն: - 154. Դարձեալ տանի զեղանակս. և զամիսս. *զշաբաթս*. և զաւուրս. զժամս. և զժամանակս: - 190. Իսկ *շաբաթն* որ է՛ **է** օր` կոչեցաւ յեօթն մոլորակաց: - 190. Զոր սուրբ հայրապետք փոխեցին զանուանս նոցա և եդին բոլոր *շաբաթուն* եօթն աւուրցն: - 190. Եւ զկռոնայն` *շաբաթ:* - 190. Տասներորդ` **զ** թիւն նշանակէ զժամանակս բարեգործութեան. այլ *շաբաթն* ուր հանգեաւ աստուած` զհանգիստն յաւիտենական: - 193. Հինգերորդ` այս մին օրս է որ կրկնելով կատարէ՛ *զշաբաթ* և զամիս և զտարի և զդարս կենցաղոյս, և հասանէ՛ ի վերջին օրն. որ է՛ մի օր աներեկ և անփոխանորդ: - 193. Վասն որոյ տօն առաջին աւուրն ի մէջ գիշերի սկսանի. և մեծամեծ տօնքն յերեկօրեայ որպէս ասեմք *զշաբաթի* երեկոյն կիրակմուտ: - 194. Ուստի յա՛յտ է` զի երեկոյ *շաբաթուն* որ կոչի կիրակմուտ` պատուակա՛ն է քան զմիւս գիշերն որ զհետագայ կիրակէին: - 194. Որև յաւելեալ իր ինչ զգայական` լինի **զ**. վասն որոյ առ հասարակ ի **զ** ամիսս ծնանին. և ա՛յլք ի **զ** *շաբաթս*. և կէսք ի **զ** օրս: - 263. Զի մանունքն յամսօրէից և ի վայր, ի *շաբաթս* և յաւուրս և ի ժամս ըստ նոյն թուոյ կարեն զնմանն ծնանիլ. և առաւելքն առաւելեալ ամօք կրկին կամ երեքկին որպէս ասացաք: - 264. Յիսուն, Վասն զանազան *շաբաթուց*. որ նշանակէ՛ զհանգիստն մեր: - 284. Եւ յերեկոյ *շաբաթուն* պատառեցաւ ծովն. և ի գիշերի կիրակէին անցին ընդ ծովն. և ընկղմեցաւ փարաւոն: - 337. Եւ այլ **բժ**ան հաց ի վերայ առաջաւոր սեղանոյն **զ զ** հաց զոր սրբութեան հաց կոչէին *շաբաթէ ի շաբաթ* եդեալ: - 359. Զի՞նչ էր *շաբաթ շաբաթուցն*: - 371. Ի եօթներորդն ամիսն որ է՛ թշրին` **ժ** օր քաւութեան տօնէին. զի **է** *շաբաթ շաբաթուցն* ի նա՛ է. և **է**երորդ ամիսն. այլ և **ժ**երորդ օրն շաբաթ էր: - 371. Դարձեալ *շաբաթ շաբաթուց* այն էր. որ քաւութիւն մեղաց հոգւոցն էր *շաբաթ*. որպէս դատարկանալն մարմնոյն: - 371. Վասն է՞ր այնչափ *շաբաթս* հրամայէ՛ պահել: - 371. Այլ և այս գիտելի է, զի **ե** թւով *շաբաթ* էին ի հինն: - 372. Նա՛խ` օր *շաբաթուն*: - 372. Երկրորդ` *շաբաթ շաբաթուն:* - 372. Առաջին` *շաբաթն*. յորժամ դադարիմք **զ** շարժմամբ և **ե** զգայութեամբ ի մեղաց գործոց: - 372. Նա՛խ` *շաբաթն* հանապազորդ. և ի նորս կիրակին: - 372. Երկրորդ` *շաբաթուց* նւէրքն կրկին. և ի նորս կիրակէն մեր: - 372. Այլ և զաւագ տօնս ի *շաբաթու* տօնեմք: - 372. Զի օր` ժամանակիս այս պատշաճի. և *շաբաթ*` մահուն հանգիստն. և ամիս` մինչ ի յարութեանն: - 399. ...իսկ եբրայեցիք զամենայն *շաբաթսն* ո՛չ թուէին ի համարն. վասն որոյ նուազի՛ նոցայն: - 451. Քսանևթ, Մեծի *շաբաթուն* նաւակատեաց: - 455. Եւ յղութիւնն եղիսաբեթի յաւուր *շաբաթու* ի լուսանալ **ժ**երորդ ամսոյն որ է թշրինի **իզ**: - 483. Վասն է՞ր յերեկոյի *շաբաթուն* լուծանեմք: - 508. Յերեկոյի *շաբաթոյն* ո՛չ վասն այն լուծանեմք թէ յարութիւնն քրիստոսի ի *շաբաթի* աւուրն է. ո՜չ. քա՛ւ և մի՛ լիցի: - 508. Այլ *զշաբաթի* երեկոյն նախատօնակ առնեմք յարութեանն քրիստոսի: - 508. Նմանապէս և աստ յայսմ աւուր *շաբաթու* որ ի կիրակէ յարութեան տօնեմք, այժմ յինն ժամուն ի վեր նախատօնակ առնեմք յարութեանն քրիստոսի. և այս վասն բազում պատճառի: - 509. Եւ որպէս յինն ժամու ուրբաթուն լոյս ծագեաց հոգւոցն ի դժոխս, նոյնպէս և յինն ժամու *շաբաթուն* լոյս ծագէ զճառագայթս իւր արեգակն արդարութեան քրիստոս. մինչ յառաւօտուն բոլորապէս տեսանի ինքն յարուցեալ ի մեռելոց: - 509. Հինգերորդ վկայ, զի ի բոլոր տարին յերեկոյի *շաբաթուն* կիրակմուտ անուանեն ամենայն ազգք. նոյնպէս և մեք յամենայն *շաբաթս* յերեկոյին լոյս զուարթ ասեմք, և սուրբ աստուած որ յարեար. ի յայս *շաբաթի* աւուրս սկիզբն առեալ: - 509. Վեցերորդ վկայ նոյն ինքեանք ազգն Ֆռանկաց. որ յամենայն *շաբաթ* օր վիճիլ ասեն. և միս ո՛չ ուտեն ի խորհուրդ նաւակատեաց մեծի *շաբաթուս:* - 509. ...յերեկոյի *շաբաթուն* է յարութիւնն քրիստոսի յորում լուսանայր կիրակէն...: - 512. Նա՛խ` զի մատթէոս զերեկոյի *շաբաթուն* և զլուսանալ միաշաբաթին յիշէ. այսինքն զսկիզբն և զվախճան գիշերին. զի յերկուց մէջն որ է՛ հասարակն և մէջ գիշերին` նշանակեսցէ զժամ յարութեանն: - 512. Եւ յերեկոյի *շաբաթուն* պատառեցաւ ծովն, և ի գիշերի կիրակէի անցին ընդ ծովն և ընկղմեցաւ փարաւօն: - 513. Ա՛րդ` *շաբաթի* գիշերն և տիւն **իդ** ժամ. և **զ** ժամ ի կիրակէէն մինչ ի մէջ գիշերն. որ լինի **լ** ժամ. իսկ հոգին **դ** ժամ և կէս նախ իջեալ ի դժոխս որ լինի **լգ** ժամ և կէս: - 516. Եւ *շաբաթի* գիշերն և տիւն իւր` լինի **գ** տիւ և **գ** գիշեր: - 516. Եւ յերեկոյի *շաբաթուն* յորում լուսանայր միաշաբաթին լինի յարութիւնն քրիստոսի ըստ մատթէոսի: - 516. Երրորդ սոյնպէս ասեն, ընդ տիւն և ընդ գիշերն **գ**. որ է՛

ուրբաթն, և *շաբաթի* գիշերն, և *շաբաթի* օրն. և յերեկօրեայ յարութիւնն: - 516. Չորրորդ սոյնպէս ասեն. ուրբաթն և իւր գիշերն որ չարչարեցաւ. և *շաբաթն* և իւր գիշերն որ թաղեցաւ. կիրակէ և իւր գիշերն որ յարեաւ. յորում ժամու և իցէ: - 516. Այլ և հանդերձելոյն զի է *շաբաթէ* ի յարութենէն քրիստոսի...: - 524. Եւ **է** *շաբաթն* **ծ** օր է. որ է՛ ազատարար թիւ և օրինակ հանդերձելոյն: - 524. Վասն *շաբաթի* տօնից. և ութօրէք. և փոխմունք ժամատեղաց: - 527. Վկայութիւն պահոցն մեծի. և *շաբաթու*. և չորեքշաբաթին. և զի յինանցն ո՛չ պահեմք: - 527. Երկրորդ՝ ի յաղուհացսն ո՛չ ունել հրաման պատարագ մատուցանել բաց ի *շաբաթէ՛* և ի կիրակիէէ՛: - 554. Վասն որոյ եօթնից էր *շաբաթումն* նոցա աւուրց ամսոց: - 626. Ի յայս միտս և զեօթն օր *շաբաթուն* փոխեցին առաքեալքն ի կիրակէ. որ **ը** երորդ է ըստ կարգի: - 627. Եւ դարձեալ՝ ի հնումն վեց դնէին զհաց երեսացն. և յաւուր *շաբաթի* կրկին **զ**: - 629. Հինգերորդ «որ թաղեցար» յուրբաթի երեկոյն, և յառաւօտն *շաբաթուն* մեծի: - 634. Վեցերորդ «որ յարեար». ի մեծի *շաբաթ* երեկոյն, և յամենայն կիրակմտի և ի կիրակէ աւուր: - 634. *Շաբաթ* մեծամեծ տօն սրբոց. որք են ի հանգիստն երկնից...: - 642. ...զի *շաբաթն* հանգիստ լսի: - 642. Եւ *շաբաթն* տօն մեծ որպէս ասացաք: - 642. ...և զայլ մարգարէսն ի *շաբաթն* ընթեռնուին. վասն այն միշտ սա՛ երգի յեկեղեցի: - 643. Այլ և բոլոր ամենայն տնօրէնութեանցն պատմօղ. վասն այն յամենայն օր ի տօնս, ի պահս, և յուտիս, ի *շաբաթս*, և ի կիրակէ, զնա՛ ընթեռնումք: - 644. Վասն է՞ր ի *շաբաթի* օր տօնեմք սրբոցն: - 647. Նախ՝ զի ի *շաբաթի* սկսաւ հանգիստն և երանութիւն սրբոցն. յաւուր որում հանգեաւ աստուած ի գործոց: - 647. Երրորդ՝ *զշաբաթս* հանգիստ կոչեաց աստուած. - 647. ...և օրէնս եդ որ հանգչէր մարդ ի մարմնական գործոց յաւուրս և ի *շաբաթս*, յամիսս և ի տարիս. - 647. Նոյնպէս և ի *շաբաթի* օրս հանգեաւ ի չարչարանաց ուրբաթուն և եդաւ ի գերեզմանի: - 647-648. Հինգերորդ, որպէս յետ **զ** աւուր լինի *շաբաթ* և հանգիստ...: - 648. Վեցերորդ՝ յետ ուրբաթուն չարչարանաց՝ ի *շաբաթի* օր տօնեմք սրբոցն. - 648. Եօթներորդ՝ *շաբաթի* օր տօնեմք սրբոցն և պատարագ մատչի ըստ նիկիական կանոնին...: - 648. ...նշանակէ զհանգիստ ապաշխարողաց. որք յուրբաթի յանցեաք ընդ ադամայ. ի *շաբաթի* հանգչիմք ընդ քրիստոսի: - 648. Այսու մտօք և տէր մեր զհարուածեալսն ի յուրբաթու՝ բժշկէր ի *շաբաթու*: - 648. Ութերորդ՝ որպէս յետ *շաբաթուց* կիրակէն փոխի: - 648. Զի որպէս ի մէջ *շաբաթուն* և ի կիրակէին այլ միջոց օր չկայ: - 648. Յաղագս որոյ ի *շաբաթի* աւուր տօնեմք մեծամեծ սրբոց: - 648. Ասեմք թէ՝ ծննդեան պահքն **ը** օր է. *զշաբաթն* և զկիրակէ պահեաց...: - 649. Նո՛յնդ է պատճառ և վասն յիսներեկին. զի յաղուհացն *զշաբաթ* և զկիրակէ պահեաց...: - 649. Չորրորդ չարչարանացն ի մեծի աւագ *շաբաթին:* - 649. Այսինքն երեքն ի մին *շաբաթն*. որ է՛ Պահոց, Մարտիրոսաց, և Կիրակէն այլածև կարգ. Առաջաւորցն. Աղուհացիցն. և Յինանցն կարգ: - 649. Եւ է՛ այժմ **ժէ** շաբաթապահք. և թիւ վաթսնիցն **թ** *շաբաթ*...: - 650. ...որ լինի **իզ** *շաբաթ* պահք ի տարին: - 650. Դարձեալ, **ժ** *շաբաթ* պահոց այն է՝ որ մեծն ներսէս կանոնեաց յամենայն ամսամուտս պահել *շաբաթ* մի: - 650. Զոր այժմ պահեմք **ժ** *շաբաթ* **ժ** ամսեան: - 650. Որպէս յաղուհացս զառաջին *շաբաթն* թէոդորոսի կոչեմք. և զմիւսն ղազարու. կամ այլ ինչ: - 650. Եւ դարձեալ՝ յորժամ պահեցաք *զշաբաթն*, յաւարտումն զնոսա միջնորդ աղաչեմք...: - 650. Եւ դարձեալ՝ առաջաւոր կոչի, զի սա՛ է առաջին *շաբաթ* մեծի պահոց աղուհացիցն...: - 650. Եւ յորժամ յետոյ սուրբ հարքն զմիջին երկոքին *շաբաթս* բարեկենդանացուցին...: - 650. ...մնաց *շաբաթս* այն անփոխ և առաջաւոր պահք և մուտ աղուհացից պահոցն: - 650. Իսկ ի *շաբաթն* և ի կիրակէն պատարագ մատչի: - 651. Որ և այժմ ոմանք յազգէ ասորւոց և յունաց՝ *զշաբաթ* և զկիրակէ միա՛յն լուծանեն ձկամբ: - 651. Եւ աւագ *շաբաթ* չարչարանացն քրիստոսի՝ է՛ ընդ քառասունս կարգեալ...: - 651. Եւ այլ ևս, յորժամ *զշաբաթ* և զկիրակէ արտաքոյ թուեմք որ պատարագ մատչի, **ե** օր առաջաւորն ըստ աղուհացիցն համարեալ՝ լինի **խ** օր: - 651. Նոյնպէս և առաջին *շաբաթն* պահոց՝ մեզ մուտէ **խ** աւուրցն...: - 651. Եւ ևս՝ եղիայի և մովսէսի քառասնիցն, սկիզբն է առաջին *շաբաթն*. և կատարումն տօնն ղազարու: - 651. Իսկ տեառն մերոյ քառասնիցն սկիզբն է երկրորդ *շաբաթն*, և կատարումն չարչարանք մեծի ուրբաթուն: - 651. Նախ արարչութեանն *շաբաթ*՝ էր սրբութիւն և պահք մինչև ստեղծաւ ադամ և ելոյծ զպահքն: - 653. Եօթներորդ, **զ զ** դնելն զհացն առաջաւուր ըստ *շաբաթուց*: - 653. Իններորդ, *շաբաթուց շաբաթն* զոր հրամայեաց պահել: - 653. Այլև **է** օր տաղաւարահարացն նշանակէ՛ զսրբութիւն պահոց *շաբաթոյս*. - 653. Եօթներորդ, ի դէմս հոգւոյ և մարմնոյ մերոյ սրբութեամբ պահեմք երկու ի *շաբաթուն:* - 653. Նա՛խ՝ որպէս աղուհացքն *զշաբաթ* և զկիրակի պահել ետ...: - 654. Եւ ժամանակն **գ** է և եօթամբ չափի *շաբաթի* աւուրբ. և եօթն դար կենցաղոյս: - 683. Եւ զայս ո՛չ *շաբաթու* և աւուրց սպառեալ. այլ ամսոց երից սորին յերկարեալ. և գործելոց վրէժ ո՛չ կշիռ հատուցեալ: - 789

**ՇԱԲԱԹԱՆԱՄ +** Զի *շաբաթացեալ* հանգչիցի երկիր ի չար բնակչաց: - 376

**ՇԱԲԱԹԱՊԱՀ +** Այլ և *շաբաթապահքն:* - 373. Եւ **զ** քաղաք` *շաբաթապահքն:* - 392. Իսկ անօրէնութիւն է մեզ լուծումն պահոց աւանդեալ յառաքելոց անտի զերեք յիսունս և զչորեքշաբաթի և զուրբաթ. և զայլ *շաբաթապահս* ի նիկիական ժողովոյն սրբութեամբ պահել: - 552. Իսկ հայրապետքն բաժանեցին զերկու քառասունսն ի *շաբաթապահս:* - 649-650. Եւ է՛ այժմ **ժէ** *շաբաթապահք*. և թիւ վաթսնիցն **թ** շաբաթ...: - 650. Իսկ *շաբաթապահքն* բազում ունի նշանակ: - 653

**ՇԱԲԱԹԱՑՈՒՑԱՆԵՄ +** Զի ի րոբովամէ՛ որ զերինջսն գործեաց` վեց եօթանասուն ամ է մինչև զգերութիւնն սակաւ ինչ պակաս. վասն որոյ եօթանասուն ամ *շաբաթեցոյց* զնոսա ի գերութեան: - 448

**ՇԱԲԱԹԵԱՆ +** Նա՛խ` մեծն մեսրոպ զկարգն ապաշխարութեան. և սուրբն սահակ զաւագ *շաբաթեանն:* - 637

**ՇԱՅ +** Ի փորձութեանց ծանեաք *զշահն* որ ասացաւ ի վերոյ...: - 161. Այժմ տեսցուք թէ զի՞նչ է *շահն* աննման պատկերաց. զի բազում վնաս էր լինելոց թէ անհատք ո՛չ էին որոշեալ դիմօք: - 238. Յիսունզ, Թէ չկայ *շահ* արծաթոյ: - 284. Ասեմք եթէ` բազում *շահ* և օգտութիւն է ի բանս նոցա յաշխարհի արդարոց և մեղաւորաց: - 325. Նա՛խ ասեն թէ` արծաթն նիւթ վաճառո՛յ է. և այնու *շահի*. և ո՛չ տոկոսեօք: - 375. Երկրորդ` զի արծաթն անծին է. վասն որոյ ո՛չ է *շահ:* - 375. Նախ է` որ ո՛չ գլուխն խնդրի և ո՛չ *շահ*. որպէս ողորմութիւն: - 375. Երկրորդ` որ գլուխն խնդրի և ո՛չ *շահ*. որպէս փոխն: - 375. Երրորդ` որ գլուխն և *շահ*. որպէս ի վաճառս: - 375. Մ՛րդ` վասն այն ո՛չ խնդրի *շահ* արծաթոյ, զի փո՛խ է տուեալ: - 375. Եւ նոյն այս որ *շահ* և գլուխ խնդրի, բաժանի յերեք: - 375. Մ՛րդ` առաջնոյն *շահն* է ի յարդեանց: - 375. Մ՛րդ` առաջնոյն *շահն* է ի յարդեանց: - 375. Այլ ի պատճառս տալ իմաստից. որով ո՛չ յագեսցի ակն ի տեսոյ. ի գլուխ գոլոյ իմաստնոյ. մանաւանդ և ի *շահ* օգտի բանաստեղծ մտաց միեղէն եղբարց: - 773

**ՇԱՅԱՊՕՆ -** Որ և մեր նստելով իբր ի մետաղս կամաւոր դիպահոջ` *շահապօնս* կոչեցեալ ամրոցի: - 788

**ՇԱՅԱՎԱՃԱՌ +** Այլ և աստ ապաշաւելն ոչ ինչ օգտեալ. որպէս և անդ ո՛չ լսողաց բերանով հաշեալք. որ և ո՛չ գոյր անդրէն դառնալ. և ո՛չ կարի յօժարացն *շահավաճառ* եղեալ. ո՛չ գիտ և ո՛չ ողորմ. հանգոյն յիմարացն օրհորդաց: - 789

**ՇԱՅԻՄ +** Չորրորդ` յորժամ սիրեմք *շահիմք* մեզ. այլ յորժամ սիրիմք` ա՛յլք *շահին* ինքեանց: - 577. Ողորմութիւն է որով երկրաւորքս *շահին* երկնաւորօքն: - 584. Եւ վերջինս այս վասն այն ասի գործ ողորմութեան, զի կակուղ և խոնարհ պատասխանին խորտակէ՛ զբարկութիւն ընկերին և *շահի*՛ զնա: - 585. ...և այս կենօքս զայն կեանքն *շահի:* - 664. Եւ երթայ առ իւր տէրն հեշտութեամբ. և անդէն վաղվաղակի իբրև երևմամբ և տեսութեամբ իմն *շահի* զպտուղն առաջիկայ երանութեանց: - 691. Այս է ի միւսանգամ գալուստն. որք զարծաթ բանին *շահեցան*, տալ զփառս և զմուտն ուրախութեան. և որք ո՛չ` նոյնպէս զտանջանս: - 693

**ՇԱՂԱԴՐԵԱԼ -** Միաւորութիւնն սեռաբար տրամատի յերիս. ի յանշաղկապն և ի շաղկապեալն և ի *շաղադրեալն*: - 475. Իսկ *շաղադրեալն* միաւորութիւն` և սա՛ բաժանի յերիս. այսինքն ըստ դրութեան. ըստ ժողովման. ըստ կոչման: - 476

**ՇԱՂԱԽ +** Եւ էր թրծեալ աղիւսն ի տեղի քարի, և կուպրն ի տեղի *շաղախի:* - 296

**ՇԱՂԱԽԵՄ +** Եւ Նախ` զի արեա՛մբ *շաղախեցեր* զնա: - 287. Խրա՛տ է լոյս հոգւոյ առ ի յունել զհոգին. որ յերկրայինս և ի մարդկայինս ո՛չ *շաղախի:* - 582. Վասն իններորդին, որք աստ իւրաքանչիւր մեղօք գոյին *շաղախեալք*. արդարապէս ունին զիւրաքանչիւր անդամս կապանօք կաշկանդեալս. և ցանկան մեռանիլ և փախիցէ մահ ի նոցանէ: - 753

**ՇԱՂԱԽՈՒՄՆ +** Եւ թէ ի ներքուստ *շաղախմունք* ապականութեան, ի վերայ հաւատոյն յեցցես և ո՛չ անկցիս: - 770

**ՇԱՂԱԿՐԱՏԵՄ +** Մ՛րդ` եթէ առաջին կեանքն էր ամուսնութեամբ և որդէծնութեամբ որպէս նոքա *շաղակրատեն*, ապա և ի վերջին յարութեանն նոյնպէս է՛ լինելոց: - 226. Իսկ որք այլ իմն *շաղակրատեն* թէ թացեալ պատառնէ՛ յուղայի: - 598. Եւ ո՛չ որպէս *շաղակրատեն* ոմանք մտացածին բանիւ. թէ երեք օրն` կամ յեօթն` կամ յամիսն` և կամ ի տարին ելանեն ի քաւարանէն: - 683-684

**ՇԱՂԱՇԱՐՈՒՄՆ +** Ոմանք կամին ցուցանել ապականացու գոլ զդրախտն և *շաղաշարումն* արուի և իգի. և առաւել ցանկութիւն և ծնունդ զաւակաց: - 225

**ՇԱՂԱՊԱՏԵՄ +** Եւ որք ծուլանան, սողոսկեալ անկանին յերկիր ընդ մարմին մարդոյ *շաղապատեալ:* - 252

**ՇԱՂԻՂ +** Երրորդ, զի մի՛ կոխան լիցի կամ կերակուր գազանաց որպէս *շաղիղ* անասնոցն: - 677

**ՇԱՂԿԱՊ +** Ով արիանոսք՝ զի թէ որպէս զմեզ զորդի շնորհօք ասէք և արարած, մեք զի եմք շնորհօք որդիք՝ ունիմք ընդ մեզ և ընդ հայր *շաղկապ*. իբր թէ զլար զհոգին սուրբ: - 39. Ո՞ ոք է ընդ մէջ որդւոյ և հօր *շաղկապ*՝ զի հրաւիրեսցէ զնա յորդէգրութիւն հօր. և զի ո՛չ ոք: - 39. Եւ դարձեալ՝ զի այժմ ասէ զհայր ճշմարիտ աստուած, և զոր առաքեցեր, նն *շաղկա՛պ է*. ցուցանէ՛ *շաղկապ* գրովն և զիւր աստուածութիւնն ընդ հօր: - 47. Դարձեալ՝ հոգին ելանէ իբրև *զշաղկապ* և միաւորիչ. մի իբրև զմէջ որ շաղկապէ՛ զերկու եզերն. և միւս իբրև երեք՝ և եզր: - 64. Իսկ միաւորութիւնն որ է *շաղկապաւ*, և սա՛ բաժանի յերիս: - 476. Զի են որ միաւորեալքն էութիւնք են և *շաղկապն* պատահումն. որպէս երկուք ոմանք անջատեալք ի միմեանց՝ պատահմամբ սիրոյ շաղկապին: - 476. Երեսունսնե, Պսակի և նշանի. և կատարումն ի պսակն. և *շաղկապ* պսակին: - 526. ...*զշաղկապ* հաւատոյն հատանէ և հաւատովն պղծի: - 610. Նոյնպէս որ օտար անկողնով պղծէ *զշաղկապ* պսակին, որոշի յօրհնութենէն և պղծի անկողինն սուրբ: - 610. Սակայն ի մահն արձակի և քակի *շաղկապ* պսակին: - 610. Եւ կրկին է *շաղկապ* պսակին...: - 610. Զի է՛ *շաղկապ* հոգևոր. այսինքն սրտիցն. և է՛ *շաղկապ* մարմնաւոր՝ խառնմամբ սերիցն: - 610. Յոգևոր մահուամբն արձակի հոգևոր *շաղկապն*: - 610. Եւ մարմնաւոր *շաղկապն* արձակի և քակի մարմնաւոր մահուամբն...: - 611. Դարձեալ, գոյականքն ո՛չ ունին *շաղկապ* գոլոյ. այլ շնորհականքն զամմեղութիւն: - 782. Յիրաւի ընդ բառնիլ *շաղկապին*, բառնի և կապակցեալն նմին: - 782. Իսկ առ լուծումն խնդրոյս թէ վասն է՞ր արդեօք առ նորս շնորհ՝ որպէս աւազանին և կարգին ո՛չ բառնի ընդ բառնիլ *շաղկապին*. իսկ առ հինվն բարձաւ. որպէս յա՛յտ է ի վերոյ ասիցդ ադամայ և յայլոցն: - 782

**ՇԱՂԿԱՊԵՄ +** Դարձեալ՝ հոգին ելանէ իբրև զշաղկապ և միաւորիչ. մի իբրև զմէջ որ *շաղկապէ՛* զերկու եզերն. և միւս իբրև երեք՝ և եզր: - 64. Այլ և մարդ զկենդանիս և զանկենդանս. զի համասեռ գոյեղէնք են. և այս սիրովս *շաղկապին* առ իրեարս: - 143. Միաւորութիւնն սեռաբար տրամատի յերիս. ի յանշաղկապն և ի *շաղկապեալն* և ի շաղադրեալն: - 475. Զի են որ միաւորեալքն էութիւնք են և շաղկապն պատահումն. որպէս երկուք ոմանք անջատեալք ի միմեանց՝ պատահմամբ սիրոյ *շաղկապին*: - 476. Եւ են որ էութիւնք են և էութեամբ *շաղկապին*. որպէս երկոքին նիւթք սոսնձով կամ երկաթով: - 476

**ՇԱՂԿԱՊՈՒԹԻՒՆ +** Նոյնպէս ի քրիստոսէ ի մեզ իջանէ կենդանութիւն հոգևոր, և զօրութիւն, և առողջութիւն, և շարժութիւն յօդոց և խաղալեաց ի ձեռն հաւատոյն *շաղկապութեան*: - 532

**ՇԱՂՓԱՂՓ +** Եւ սոյնպէս *շաղփաղփ* երևէին բանք նոցա. և տեսիլքն սակայն ամենայնք՝ զմի և զնոյն յարութիւնն պատմէին: - 515

**ՇԱՄԱՆԴԱՂ +** Եւ խնդրեցին զդրախտն թէ ա՛նդ զերծանիմք և ո՛չ գտին. զի ծովք և *շամանդաղ* պատեալ էին: - 296. Նոյնպէս և սրբոցն միտք լուսաւորին յաջոյն քրիստոսի. զոր աստ *շանմանդաղ* տեսանէին զփառս, անդ յայտնապէս տեսցեն: - 314

**ՇԱՄԲ +** Մարգաց. որ է՛ ժամանակ ածելոյ զմարդ. որ ի դաշտս և ի հովիտս իցեն. յայգեստանս և ի բուրաստանս. յորժամ արեգակն առ *շամբն* և յետ շանն իցէ. զի ի ժգն՝ մո՛ւտ է ամռան: - 201

**ՇԱՄԻՐԱՄ -** Որպէս ասեն *զշամիրամէ* թէ՝ յորժամ սպանաւ արա ի պատերազմին, զայլ ոմն նման նորին պատուեաց և ասաց թէ աստուածքն յարուցին: - 238

**ՇԱՄՍ -** Չորրորդ Արեգակն. զոր *շամս* կոչեն ջե՛րմ է և լուսաւոր. լ օր և ժ ժամ և կէս յամէ՛ ի կենդանակերպն. և ի բոլոր տարին վճարէ՛: - 189

**ՇԱՄՐՏԱՑԻ +** Եւ ըստ հրէից և *շամրտացւոց*՝ դռ ամ: - 451

**ՇԱՆԱԴԷՄՔ -** Իսկ թէ մարդ լինի *շանադէմք*, և այն ո՛չ է ի խառնուածոյ շանց, այլ նշան է հայրենեաց, կամ սպի անձանց: - 267

**ՇԱՆԱՃԱՆՃ +** Չորրորդ՝ *շանաճանճն*: - 333. Չորրորդ՝ *շանաճանճն*. զի շնաբարոյք էին և մոլէին յառնականաս յու շնութեամբ. զի շանց է ոչ զուգակցիլ որպէս զայլ կենդանիս. վասն որոյ ի շանց ելեալ թունալից ճանճք խայթէին զնոսա: - 334

**ՇԱՆԹ +** Զի՞նչ է *շանթքն* որ ի մէջ ամպոյն: - 204. *Շանթքն* լինի ի մէջ գոլորշեացն որ ի մէջ ամպոյն. և ջերմութեամբն չորացեալ. քանզի հո՛ւր է քարացեալ: - 204. Ո՛չ կարեն դևք զտարերքս փոփոխել. և ո՛չ հուր և ո՛չ *շանթս* և ո՛չ այլ ինչ ի տարերացս առնել որպէս կարծեն ոմանք: - 321

**ՇԱՉՈՒՄՆ +** Երրորդ՝ որդունք անմահք. այսինքն օձք, վիշապք, տեսութեամբ և *շաչմամբ* ահագին: - 752

**ՇԱՊԻԿ +** Զի հանդերձն սպիտակ՝ *շապիկն* է և Կապոյտ վտաւակն՝ նափորտն: - 348

**ՇԱՌԱԳՈՒՆԻՄ +** Վասն է՞ր մարդ յորժամ երկնչի դեղնի, և յամաչելն *շառագունի*: - 245. Նոյնպէս յորժամ ամաչէ՝ զարիւնն սփռէ ի մարմինն, և քող արկանէ վասն ամօթոյն. յայնժամ յարենէն *շառագունի* մորթ երեսացն: - 245

**ՇԱՌԱՒԻՂ +** Ապա ուրեմն որդի և հոգին սուրբ ի հօրէ ելանեն իբր **բ** *շառաւիղ*. և ըստ այսմ ո՛չ ելանէ մի ի միւսոյն: - 65. Իսկ ծաղկեալ գաւազանն չորս ինչ յաւելու. Դալարի. *Շառաւիղ*. Ծաղիկ. և Պտուղն ընկուզ: - 382. Երրորդ, սուրբ խաչն աստուածընկալ դալար զօրութեամբ. *շառաւիղ* թևն. պտուղ քրիստոս ծաղկեալ արեամբ և ջրով: - 382. Զի որպէս զհայելին ո՛չ բեկանէ *շառաւիղ* արեգականն: - 469

**ՇԱՌԱՒԻՂԵՄ +** Չորրորդ, քրիստոնէական ժողովուրդն դալարացեալ ի մեղաց. *շառաւիղեալ* ծննդօք. ծաղկեալ հաւատով և պտղաբերեալ: - 382. Եւ երրորդն յաթոռս աղուանից սրբոյն գրիգորիսի *շառաւիղի* նորին հսկողի: - 544

**ՇԱՏ +** Եւ ուր ջերմութիւնն *շատ* է, մազն ո՛չ սպիտակի. որպէս արտևանունքն աչացն և յայլ տեղիս: - 240. Երկրորդ՝ զմանանայն որ *շատ* ժողովեաց՝ ո՛չ յաւելաւ. և նւազն ո՛չ պակասեաց: - 339. Եւ դարձեալ՝ զի բազմացն *շատ* տացէ զբաժին երկրին, և սակաւուցն փոքր: - 392. Նա՛խ՝ ոմանք ասեն թէ մարդկօրէն կամէր իմանալ զնա և հարցանել վասն խաչին և դժոխոց և յարութեանն. իսկ այս կատարեալ մտաց պէտք էին և *շա՛տ* ժամու: - 517. Չորրորդ, կշիռն նշանակէ՛ զգործս մարդկան. ըստ կշռոյ օրինացն հաւասարել և հատուցանել. եթէ ըստ բնականին կամ ըստ գրոյն և աւետարանին. որում *շատ* տուաւ առաւել պահանջել: - 747

**ՇԱՏԱԽՕՍ +** Մեծ ականջն դէ՛շ է և *շատախօս:* - 246. Ձեռքն թիւր՝ *շատախօ՛ս* է. և շատակուլ: - 247

**ՇԱՏԱԿՈՒԼ -** Ճակատն նեղ՝ *շատակո՛ւլ* է: - 246. Ձեռքն թիւր՝ շատախօ՛ս է. և *շատակուլ:* - 247

**ՇԱՏԱՆԱՄ +** Յորժամ պալղամն *շատանայ* ի մարդն, մազն նօսրանայ. վասն այն մարդն ի ծերութեանն լինի ճաղատ: - 240. Այլ և որք ի մի խնամս վայելեցին յաստուծոյ. յարև և յանձրև. և ի մի տեղիք բնակեցան և մի պիտոյիւք *շատացան*. և նորա զտուօղն ո՛չ ճանաչեցին: - 738

**ՇԱՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ +** Զոր և անյարմար *շարաբանութեամբ* «զկո՛ւն» ցուցանեն մկրտել և ո՛չ զնուիրեալն: - 588

**ՇԱՐԱԳՐԵՄ +** Երկրորդ՝ զի յովսեփիւ ցուցցի ազգաբանութիւն կուսին որ արամբն *շարագրի:* - 461

**ՇԱՐԱԴԱՍԵՄ +** Եւ դարձեալ՝ զի հաներ զբանն ի կագէ Երրորդութեանն. *շարադասելով* զմարդն ի տեղի նորին: - 69. Ոմանք զայս ընդ նիւթն *շարադասեն:* - 111. Իսկ թէ ըստ պատուոյ իմանաս, նա՛խ է ներկայն. զի է՛ ստոյգ և ճշմարիտ. և ապա՛ անցեալն. և յետոյ ապառնին. և այսպէս *շարադասեն* քերթօղքն: - 198. Յետ այսորիկ հարցանելի՛ է ի նոր օրինաց և յեկեղեցւոյ կարգաւորապէս ընդ մարդեղութեան բանին յարմարեալ. իբր պատճառելիք առ պատճառ նորին հետևեալ և *շարադասեալ:* - 528

**ՇԱՐԱԴՐԵՄ +** Ա՛րդ՝ եթէ միակս այս *շարադրի* բազմաց, ո՛չ մնաց մին. իսկ եթէ ոչ *շարադրի*, ո՛չ գոն բազումք. այլ մի և մի. և այս որպէս այս: - 25-26. Սակայն *շարադրի* միակն պատկութեամբ, և անշարադրելի՛ է ինքնութեամբ: - 26. Արդ հնչէ զձայնն ըստ իւրեան միայն. և ծնանի զբանն *շարադրեալ* ընդ բաղաձայնս: - 177. Այլ և ոսկր միս ջիլ և մորթ՝ մի անդամ *շարադրեն:* - 476

**ՇԱՐԱԽԱՌՆԵԼ +** Երկրորդ՝ հրեշտակն պարզապէս իմանայ. և հոգին *շարախառնի* ընդ իրին: - 141

**ՇԱՐԱԿԱՆ +** Ա՛րդ՝ սկիզբն յառաջ շարժութեան հոգւոյն է՛ հայր. որպէս ասի ի *շարականն*...: - 65. Իսկ մըլորակքն ի գօտիս իւրեանց *շարժականք* են. զի բարձրանան և խոնարհին: - 189. *զՇարականն* ո՞վ է ասացեալ. Եւ սակաւ լուծումն նոցին: - 527. Եւ փոփոխումն ձայնից. և *շարականաց* քաղելն: - 527. Իսկ կրկին ասել *զշարականս*. զի եմք հոգի և մարմին: - 636. Եւ որ ամէն *շարականի* սկիզբն ի մարգարէից դնեմք, այս է պատճառն, զի զհինն և ըզնորս ի միասին խառնեմք: - 636. Այլ գիտելի՛ է, թէ սաղմոսն *շարականաց* որ **բժ**ան տուն է՝ զփառքն և զայժմն ի միասին երգեմք. որպէս զօրհնութիւնն, հարցն, ողորմեայն, տէր յերկնիցն: - 636. Եւ ա՛յս է պատճառն, զի մի տան *շարականի* **դ** տուն սաղմոսի պիտոյ է յերկու դասս. և մին *շարականն* **ժբ** տամբ աւարտի: - 636. Եւ որ սաղմոսն **ը** տուն է՝ կամ ա՛յլ նուազ, զփառքն և զայժմն վերջին տան *շարականին* տամբ: - 636. Դարձեալ այլ իմն պատճառ. որոց *շարականաց* փառքն և այժմն ի միասին է...: - 636. Զամէն *շարական* կրկին ասեմք, վասն է՞ր զհարցն երեքկին ասեմք: - 637. Նմանապէս և ամենայն *շարական* **գ** տուն է, և հարցն **գ**. զի վեցն կրկին **գ** է: - 637. *Զշարականս* ո՞վ է ասացեալ: - 637. Որք զձօրանս հոգւոյն արբին և ի ժամանակս ժամանակս երգեցին եղանակաւ զերգս *շարականաց*՝ այսորիկ են: - 637. ...զ'ի քէն հայցեմքն զարևագալին *շարականերն*, զօրհնեմք զքեզն, զայսօր անճառն, զարարչակներն, զաստուած անեղն...: - 637. Այս քան *շարականս* ընդունելի՛ է յեկեղեցի. և աւելին քան զայս՝ խոտելի՛ է և անպիտան: - 638. Երրորդ՝ որ բանն առաւե՛լ է քան զձայնն. որպէս երգ *շարականաց:* - 639. *Զշարականն* ո՞րպէս քաղեմք: - 641. Եւ խաչի *շարական* ասեմք: - 642. Նախ աստուածածնի՞ պարտ է ասել *շարական*. թէ խաչի: - 642. որպէս ասի յերգս *շարականի*...: - 732

**ՇԱՐԱԿՑԵԼ +** Եւ պակասեալ ի սոցանէ մարմնոյն, ցուցանի կերպարան ի գոյէ ի քանակէ և յորակէ և ի տեղւոյ *շարակցեալ*. որպէս յա՛յտ է ի հայելւոջ: - 236. Կամարաւնքն՝ թէ ի վերոյ *շարակցեսցին* սակաւիմա՛ստ է. թէ վայր ի յռնգունսն հասցէ, սրամիտ է: - 246

**ՇԱՐԱՄԱՆԵՄ +** Իսկ մահն ո՛չ է պարզաբար չար. այլ *շարամանեալ* ընդ բարւոյ անուամբ և իրօք: - 496

**ՇԱՐԱՊՆԴԵԼ +** Եւ նոյն ջիլն կապէ՛ և *շարապնդէ*՛ զամենայն յօդուածս ոսկերացն: - 244

**ՇԱՐԱՒ +** Այն է, որ բովանդակ մարմինն այնպէս խոցոտեալ էր կեղով՝ և լուծեալ ի *շարաւ* և ի թարախ. որ ո՛չ կարէր յոտին կալ կամ սողալ ուրեք. և ո՛չ ըմբռնիւր յայլմէ: - 322-323

**ՇԱՐԱՒԱՅՈՏ +** Երրորդ, *շարաւահոտ* և քացախո՛ւտ է. այս մեղաց հոտ է և համ: - 356

**ՇԱՐԺ +** Երկոտասան հողմոց, և *շարժոյ:* - 155. Իսկ *շա՛րժն* է թանձր գոլորշի արտաքս քարշեալ յերկրէ, և նեղեալ ի յելսն շարժէ՛ զերկիր: - 206

**ՇԱՐԺԱԿԱՆ +** Վեցերորդ՝ *շարժակա՛ն* է և զղջական: - 164. Եօթնևժ՝ հեղո՛ւկ է և *շարժական:* - 207. Այլ և զգայականին յաւելեալ շնչականն և *շարժականն* և ցասմնականն ընդ ցանկականին՝ լինի **թ**. վասն որոյ ոմանք յինն ամիսս ծնանին կամ ի **ժ**: - 263. Այլ և յաւելեալ ի վերայ *զշարժականն* և զշնչականն և զցասմնականն և զցանկականն, ընդ նմին և զկազմողական նիւթն և զտնկականն, որ լինի **ժը**. վասն որոյ ոմանք ի տարին և կէսն ծնանին որպէս ուղտ: - 263. Դարձեալ ունի զ**է** զգայութիւնս, և *զշարժականն*՝ և զշնչականն՝ և զսրտմտականն՝ և զցանկականն, որ լինի ինն: - 263

**ՇԱՐԺԵՄ +** Դարձեալ ասեն, ի հակառակ շարժմանց՝ լինի և հակառակ ներգործութիւն. ահա մոլորակք *շարժին* հակառակ. ապա ուրեմն և գործեն հակառակս: - 12. Ըստ որում ոմն ի բնախօս արանց նկատմամբ առաջնորդականին՝ վարաթևեաց ի սկիզբն առաջին՝ թէ է՛ ոմն որ *շարժէ*՛ զերկնային մարմին: - 26. Այլ մեզ մի է որ *շարժիցին* և շարժումն. որպէս մի է ասումն և բան...: - 36. Իսկ յորժամ զյայլումն լսեն՝ արձակին ի վերայ մեր ասելով, եթէ յայլո՛ւմ է՝ պատահումն է ի հայր որպէս զօրութիւնս առ մեզ. իսկ եթէ զօրացեալ է՝ և ընդ զօրանալն դադարեսցէ ամենայնիւ. շարժումն եղիցի և ոչ *շարժօղ:* - 52. Ամենայնիւ այսոքիկ *շարժողի*՛ են և ո՛չ շարժութեան. ապա ուրեմն հոգին ո՛չ է զօրութիւն: - 52. Երրորդ ասեն, *շարժիլն* ստեղծւածո՛յ է: - 60. Զոր օրինակ՝ Աղբիւր բղխեալ առ մեզ հոգին սուրբ ա՛րդ սկիզբն աղբերն *շարժի* ի ծովէ՛. և հասանէ յակն. և յակնէն առ մեզ բղխէ: - 65. Ներգործութիւն՝ *շարժելն* զերկիր: - 86. Իսկ մի գոլ ներգործութիւնք և կիրք. որպէս քնարն՝ և որ *շարժէ* զքնարն՝ մի ներգործութիւն կատարեն և ո՛չ երկուս: - 86. Եւ որպէս որ *շարժէ* զգրիչն՝ և գրիչն՝ մի ներգործութիւն կատարեն և ո՛չ երկուս: - 86. Իսկ զգայականն ունելով զայսորիկ առաւելու զզգալն և *զշարժիլն:* - 117. Եօթներորդ՝ իւրաքանչիւր ոք *շարժի* ի գործս: - 126. Եւ ի սէր աստուածային *շարժեալք*՝ ոմանք յիմաստասիրութիւն. այլք ի ճգնութիւնս. ի կուսութիւն. և ի զանազան առաքինութիւնս: - 126. Երեքտասաներորդ՝ ի ծնունդ և ի կեանս *շարժէ* զտարերքս: - 126. Դարձեալ՝ նախանձո՛տ է և նախանձելի. այսինքն նախանձո՛տ է իբր զսիրեցօղ. և նախանձելի իբր զսիրելի. զի *շարժէ*՛ զմեզ ի սէր իւր: - 128. Դարձեալ՝ ինքնանախա՛նձ է. զի ո՛չ յայլմէ *շարժի* ի սէր որպէս մեք. այլ յինքենէ՛ *շարժի* ի սիրել և ի սիրիլ: - 128. Երկրորդ՝ զի էութիւնն աստուծոյ սէ՛ր է. և *շարժի*՛ սիրել զմեզ. և *շարժէ*՛ զմեզ սիրել զինքն: - 128. Եւ կոչի սէր, զի *շարժէ*՛ զմեզ. և յառաջածու զօրութիւն է. և երևեցուցիչ. և միաւորիչ. զի այսոքիկ սիրոյ ներգործութիւնք են. վասն այն կոչի սէր: - 128. Այլ ի ստեղծումն էիցս՝ սէրն առաջին է քան զբարին. զի ի սիրո՛յ *շարժեցաւ* յառաջ բարերարել և խնամել: - 129. Նմանապէս և հոգին *շարժի* բոլոր՝ գնդակ՝ և ուղիղ: - 142. Իսկ գնդակ որ է կողմնաւոր՝ *շարժի* հոգին, յորժամ բնականապէս լուսափայլի յաստուածային գիտութիւնս տեսութեամբ և մտածութեամբ. և այնպէս հոգէպէս ի յաստուած միաւորի. որպէս աշակերտաց առաքելոց և մարգարէից: - 142. Իսկ ուղիղ *շարժի*՝ յորժամ ի ձեռն զգայութեանց յարացուցիւ և օրինակաւ հպիմք ի նախատիպն աստուած: - 142. Նմանապէս և մարմնականն *շարժի* եռակաբար: - 142. Սէրն ո՞րքան *շարժի:* - 143. Եւ դարձեալ, զի ամպով և հողմով ասի *շարժիլ* աստուծոյ. և այսու լինիլ նման այսինքն ի վերայ ամպոց և հողմոց և հրեշտակաց շրջելով: - 148-149. Թէ ո՞րպէս երկիր անշարժ է՝ և երկինք *շարժի:* - 154. Զորօրինակ՝ որպէս տղայ որ տեսանիցէ ցից ի յորմում, երբայ ի մօտ. թէ ամո՛ւր է՝ թողու. վասն զի ո՛չ կարէ հանել. և երթայ առ միւսն. թէ *շարժի*՝ ի մօտ կենայ մինչև հանէ՛: - 160-161. Կամ յետ ներգործութեան. որպէս ի *շարժելոյն* դադարիլ: - 168. Ո՛ր ըստ որում *շարժօղ* զգայութեանցս որ առ մեզ՝ կոչին որակք՝ գոյն, և համ, և սոյնպիսիք: - 171. Իսկ Կալ՝ ո՛չ զկալն կամ զնստիլն մարմնապէս. այլ զհաստատիլն անշարժ էութեամբ. զի ո՛չ *շարժի*. ո՛չ բնութեամբ, ո՛չ կամաւ, և ո՛չ տեղեաւ: - 172. Բնութեամբ ոչ *շարժի*, զի անփոփոխելի է: - 172. Ասէ զայս, զի բնութեամբ անբովանդակելի է. և ոչ տեղեաւ ըմբռնի. մինչ զի ինքն զամենայն տեղիս պարունակէ.

յորում կեամք և *շարժիմք* և եմք: - 180. Նախ՝ ի շարժմանէ՛ երկնային մարմնոց. զի միշտ նոյնպէս և անդադար *շարժին*. առնելով զօր և զամիս՝ և զեղանակս՝ և զտարի՝ ստուգագոյն չափով առանց յաւելուածոյ և պակասութեան: - 181. Իսկ արիստոտէլ ի վերայ երկուց բևեռացն ասէ *շարժիլ* երկնի որպէս անիւ սայլին ի վերայ սռնոյ: - 182. Երկինքն անապական է բնութեամբ, աստուած ետ նմա *շարժիլ:* - 182. Հինգերորդ՝ թէ երկինքն ո՛չ էր բոլորակ՝ այլ քառանկիւնի կամ եռանկիւնի, յորժամ *շարժէին* անկիւնքն՝ յորմէ տեղւոջէ վերանային՝ մնային առանց տեղւոյ. և տեղի անկեանցն առանց մարմնոյ: - 183. Ընդդէմ երկնիցն *շարժի:* - 186. *Շարժի՞ն* աստեղքն, թէ ամրացեալքն են յերկինս: - 189. Իսկ այլք ուղղակի՛ ասեն՝ թէ անմոլար աստեղքն ամրացեալ են ի հաստատութեանն որպէս սպի ի վերայ մարմնոյ, և ընդ նմա *շարժին:* - 189. Իսկ կէս մասն ի մեկ ամիսն՝ լինի կէս ժամ. և ի մեկ տարին **զ** ժամ. և ի **դ** տարին ժողովեալ՝ լինի օր մի **իդ** ժամ. և ա՛յն առնէ զնահանճն. և *շարժէ՛* զտօնս և զեղանակս: - 190. Եւ զի *շարժին* կենդանիք ի ծնունդս: - 197. Եւ զի *շարժին* կենդանիք ի յղացումն, և սեաւ մաղցք առաւելուն ի մեզ: - 197. Վերընթաց: Վերածօղ: Մշտաշարժ: Ինքնաշարժ: *Շարժօղ:* Անփոփոխ: Սո՛ւր: Զգո՛յշ: Անշե՛ղ: Անթոյլ: Անպարունակ: Թափանցիկ: Աներևոյթ: - 202. Նա՛խ՝ զի Երագաշա՛րժ է հողմն և *շարժօղ* այլոց: - 202. Իսկ միջինն է Զեփիւռն. *շարժէ՛* զծաղիկս: - 205. Իսկ շա՛րժն է թանձր գոլորշի արտաքս քարշեալ յերկրէ, և նեղեալ ի յելսն *շարժէ՛* զերկիր: - 206. Եւ կամ հո՛ղմ է արտաքս թիւրեալ ի ճանապարհէ՛ իւրմէ. և ի խոռոչս երկրի մտեալ. և վասն թանձրութեան երկրին *շարժէ* զնա մինչև գտանէ ելս և ապա՛ դադարի: - 206. Եւ զի ի գոլորշեաց որ ի ներքս է փակեալ՝ թօթափի և *շարժի:* - 211. Դարձեալ՝ ծաղիկն է հրոյն՝ որ նախ *շարժի* և երևի: - 212. Նա՛խ՝ զի սերմնական զօրութիւնն է ի մէջն բնաւորեալ. ուստի բոլորապէս և հաւասար տայ *շարժիլ* տնկոյն: - 213. Նոյնպէս և ջուրն ունի զսոսա. զի շօշափելի՛ է՝ և մածեալ՝ և *շարժի*՝ և երևի: - 215. Իններորդ՝ նոյն ինքն մարմին կենդանւոյն է՛ շօշափելի և է՛ կալեալ և մածեալ. և *շարժի* և երևի. որպէս ասացաք վասն հողոյն: - 215. Եւ նա՛ տայ խաղալ և *շարժիլ* ոտից և ձեռաց և այլ մասանց անդամոցն: - 244. Քանզի միտք *շարժեալ* առիմաստս՝ դադարէ՛ ի ճշմարտութիւնն: - 248. Եւ կամքն է որ *շարժէ՛:* - 248. Վասն այնորիկ զօրութեամբ սիրոյն *շարժի* առ աստուած ի միջին կէտ իւր. զի գերազանցապէս հեշտասցի ի նա՛: - 249. Յաչաց նայիլն. ի ձեռաց *շարժիլն*. և յոտից գնալն երևի: - 250. Նախ եթէ վասն մարմնո՛յն եղև հոգի զի *շարժեսցէ* զնա. ապա անա՛րգ է հոգին քան զմարմին որ վասն նորա եղեալն է. և մեծ և պատուական է մարմին քան զհոգի: - 253. Նախ ասեն ոմանք, եթէ ուղեղ գլխոյ անբանիցն ընդ խելապատակին ունի չորութիւն և հովութիւն. և ջիլքն ի նմանէ յառաջեալ յանդամս մարմնոյն՝ փութապէս պնդէ՛ և տայ *շարժիլ:* - 266. Ուստի յա՛յտ է՝ զի այժեամն առաւել է տեսանելեաւ. և շուն հոտոտելեաւ. և այլն նմանապէս. վասն որոյ փութով *շարժին* և կանգնին քան զմարդն: - 266. Հինգերորդ՝ զի կողնէ աման և տեղի երիկամանց. յորմէ *շարժի* ցանկութիւնն. զի թէպէտ ո՛չ *շարժէ* զնա. այլ ազդումն ինչ ունի զնմանէ: - 276. Դարձեալ՝ հոգի որ յաստուծոյ հեռանայ՝ ինքն յինքենէ *շարժի*. անհաստատ յերկրի, անպատսպարան յերկինս: - 287. Եւ **ծ** կանգունն, զի մանուկն յարգանդի **խ**օրեայ հոգևորի և **ծ**օրեայ *շարժի:* - 293. Սիրելի ասելով՝ առաւե՛լ *շարժէ* զգութ ծնողին: - 304. Նախ՝ զի *շարժեալք* էին ի բանսարկուէին. որպէս երբեմն ի ձեռն կնոջն. և յայնժամ բարեկամօքն մարտնչէր ընդ յոբայ: - 324. Վասն առաջնոյն, զի գիտէր զնոսա *շարժեալ* ի չարասիրէն. և յաղթելով զնոսա յաղթեաց զբանսարկուն սատանայ: - 324. Դարձեալ որպէս իշովն բաղամու զօգուտն խօսեցաւ, և զլեզու սուտ մարգարէին *շարժեաց* յանիծիցն յօրհնութիւնս: - 325. Սոյնպէս բարեկամք յոբայ թէպէտ *շարժեալք* էին ի բանսարկուէն, այլ աստուծոյ հոգւովն զօգտակարսն բարբառէին. վասն այն գրեցան բանք նոցա ի սուրբ գիրս: - 325. Եւ տէրն զերկիր *շարժեաց* և զգերեզմանս եբաց. և **գ** ժամ խաւար էած փոխանակ **գ** աւուր խաւարին եգիպտոսի: - 329. Իններորդ՝ խաւարն շօշափելի. կամ զի թանրացեալ ըմբռնիւր շօշափելով. կամ զի շօշափելով ձեռաց և գաւազանաւ կարէին *շարժիլ:* - 334. Եօթներորդ՝ զի միտքն զախտն *շարժէ* ի չարն. և ո՛չ ախտն զմիտքն. որպէս ասի, խորհուրդք ծերոց զքարինս պատառեն: - 377. Դարձեալ, քահանայից մեղքն զերկին *շարժէ* որպէս անդ: - 381. Նոյնպէս առաջին օրէնքն *շարժեաց* զնոսա ի բուսանիլ. և երկրորդն յաճումն և ի պտուղ: - 393. Երեսունև**դ**, նա՛ զբ սիւնսն *շարժէր* և զտունն կործանէր: - 424. Եւ վասն զի նաթան *շարժեաց* ի զղջումն՝ զկէս պատժոյն կրեաց: - 432. Այրին նշանակէ զտարերս աշխարհի. զի այրի եղեն յանիծից պտղոյն. և կամ թէ բնութիւնն իւրեանց *շարժէ* ի լինիլ: - 444. Եւ գործ արդարութեան ի վախճանի. զի արդարապէս ամենայն որ սկսանի կատարի. և որ *շարժի* դադարի: - 458. Զի մինչ յերեսուն ամն *շարժի* աճիլ. և յայնմ հետէ ի նուազիլ: - 479-480. Նախ՝ երկիր *շարժեցաւ:* - 490. Նա՛խ՝ զի ծանիցի թէ սոցա արարիչ է անարգեալն. վասն այն լուսեղէնք և

օդեղէնք և օդն խաւարեցան. ջուր ի կողիցն բղխեաց. և երկիր *շարժեցաւ:* - 490. Եւ ի ձայնէն վէմք պատառեալ և երկիր *շարժեալ*, տեղի ետուն իջանել ի նոսա՛. և քարացեալ սիրտ նոցա ո՛չ *շարժեցաւ:* - 490. Զմիս կենդանւոյ, որ կատարեալ կենդանի է և ի կենդանւոյ յառաջ եկեալ. այն է կատարեալն որ **Ե** զգայարանս ունի և *շարժի* և շունչ ունի. և է՛ այս կերակուր ուտեաց և զատկի: - 510. Այլ որ այսպէս իրաւամբք կապեսցի՝ հնազանդիլ պարտի կապողին որպէս յաստուծոյ *շարժեալ:* - 540. Տասներորդ՝ և այսմ կողմանէ՛ *շարժին* լուսաւորքդ ի յընթացս իւրեանց. որ են կարապետ մեծին լուսոյ ծագմանն: - 555. Տասներորդ՝ յա՛յտ է ի համազօրութենէ. զի երբեմն *շարժէ՛* ախտ զմիտս. և երբեմն *շարժի* ի մտացն ախտ. որպէս ասէ երանելին եւագրիոս. եթէ մինչ յերեսնամեայ հասակս ախտն *շարժէ* զմիտս ի ցանկութիւն. և անտի յառաջ միտքն *շարժէ* զախտն: - 557. Ապա ուրեմն յա՛յտ է թէ՝ առաւել չա՛ր է խորհուրդն արբեալ որ *շարժէ՛* ի գործն. քան զգործն որ *շարժէ՛* ի զղջումն: - 558. Կամ այլ ազգ. սէրն է սկիզբն գործոց բարեաց, զի *շարժէ* առ այն. որպէս ասեն վարդապետք՝ սէրն գործէ՛ մեծամեծս թէ է՛. և թէ դադարէ ի գործելոյն՝ ո՛չ է սէր: - 575. Եւ այն զի պղծեալ տաճարի կարդամբ. կամ *զշարժեալ* սեղանն հաստատեմք: - 615. Զի յորժամ մեղօք ինչ սրբութիւնս մեր ապականի, կամ *շարժի* ոք ի հաւատոյ, վերստին կարէ՛ հաստատիլ ի հաւատս, և դարձեալ կրկնել զխոստովանութիւն և զապաշխարութիւն: - 615. Զի՞նչ է աւետարանին, Ո՞րթի. և մոմ վառեմք. և բուրվառ *շարժեմք:* - 644. Դեկ նաւին ի ջուրս բեկեալ թուի. և ցաւոտ գլխոյ լերինք *շարժեալ:* - 662. Այլ ստուգաբանի թէ՝ աստի *շարժիմ*, կամ շինիմ...: - 678. ...յա՛յտ է զի նոյն մարմին *շարժի* և շինի ի յարութեան աւուրն: - 678. Նա՛խ՝ զի մի՛ *շարժեսցէ* զնա այսն չարութեան որպէս զմարմին անհաւատից: - 679. Յինգերորդ, որպէս տուտն ջախջախեալ վիշապին *շարժի:* - 706. Այլ արդ՝ յանմահութենէ հոգւոյն պա՛րտ է զի լինիցի և մարմինն անմահապէս *շարժեալ* ի նմանէ ...: - 715. Վասն զի երկին որ *շարժի*՝ յօր դատաստանին դադարի և հաստատի յայն կարգն յոր նա՛խ ստեղծան. արեգակն յարնելս և լուսինն յարևմուտս: - 727. ...այլ ա՛յս է՝ զի իւրաքանչիւր մարմինք սրբոց պայծառասցին **է**պատիկ քան զարեգակն. որպէս տն մերոյ ի թաբօր լերինն. և **թ** դասուց հրեշտակաց լոյսն յերկիր ծաւալին. զի զօրութիւնք երկնից *շարժեսցին:* - 728. Կամ առողջ որպէս զմովսէս. որում ո՛չ վատեցին աչքն և ո՛չ *շարժեցաւ* ատամն: - 761. Ղամպարք ի միում տան. և ուրուք *շարժեցելոյ*՝ ի նոցանէ լոյսն ո՛չ *շարժի* և ոչ բաժանի և ո՛չ հատանի թէ անջրպետ ոչ կայցէ ի միջի. և անդ ո՛չ է միջոց: - 770. Որպէս և բազում ուրէք յերգս գտանի. վէմք պատառեալ. երկիր *շարժեալ* առ խաչին քրիստոսի: - 788. Ա՛րդ՝ որպէս երկիր *շարժեցաւ,* վէմք պատառեցան: - 788. Նմանապէս և աստ յաւուր նոր կիրակէի ասացեալն կրկնո՛յ զատկի, յանկարծահաս ժամու *շարժեալ* հեղեղաց ուղխից խռովութեանց: - 789

**ՇԱՐԺՈՒԹԻՒՆ +** Առաջին պատճառն աստուած՝ եդ զզօրութիւն իւր յաստեղս. և նոքա ազդե՛ն ի մեզ, և դարձուցանեն զմեզ ըստ իւրեանց *շարժութեանն* ի չար կամ ի բարի: - 7. Ամենայնիւ այսորիկ շարժողի՛ են և ո՛չ *շարժութեան.* ապա ուրեմն հոգին ո՛չ է զօրութիւն: - 52. Ա՛րդ՝ սկիզբն յառաջ *շարժութեան* հոգւոյն է՛ հայր. որպէս ասի ի շարականն. «Որ ի հայրաշարժ ի յաղբերէն յառաջ բղխեալ»: - 65. Զի՞նչ է պատճառ *շարժութեան* երկնից: - 182. Եւ բնականն Նախ այսպէս. զի օդն որ ի մէջէ մտեալ և փեռեկեալ զներքին և զվերին կիսագունդն, նա՛ է պատճառ *շարժութեան* երկնից: - 182. Դարձեալ՝ կէտ երկրիս անշարժ է ի մէջն. և պատճառէ՛ *զշարժութիւնն* երկնի: - 182. Իններորդ՝ զի մշտակա՛յ է ի պարունակութիւնս իւր. այսինքն զի ո՛չ ունի այլայլումն և փոփոխումն ըստ անարգ *շարժութեան* երկրի: - 184. Յասարակ և յատուկ *շարժութիւն* ունի: - 186. Եւ օդն է ի թոքն. զի հանապազ ի *շարժութեան* կայ և փչէ՛ ընդ դէմ ջերմութեան սրտին: - 232. Երրորդ՝ զի փափուկ ջիլք և նեարք՝ յերեսացն գան և առնեն զգայարանս. և հաստն ի թիկունքն սփռի վասն ուժոյ և պնդութեան և *շարժութեան:* - 234. Եւ կամ ի *շարժութեանց* մասանց ոտից և ձեռաց և այլն: - 250-251. Վեցերորդ՝ զի զգործն կենդանւոյ տեսանեմք ի նա որ է՛ ջերմութիւն, *շարժութիւն*, և ներգործութիւն. որ երևի ի կազմելն զհիւթն: - 256. Երրորդ՝ ի գլխո՛յն իջանեն կենդանութիւնք և զօրութիւնք և առողջութիւնք և *շարժութիւնք* ի բոլոր անդամս ի ձեռն ջլոյն: - 532. Նոյնպէս ի քրիստոսէ ի մեզ իջանէ կենդանութիւն հոգևոր, և զօրութիւն, և առողջութիւն, և *շարժութիւն* յօդոց և խաղալեաց ի ձեռն հաւատոյն շաղկապութեան: - 532. Չորրորդ՝ վեց են *շարժութիւնք* մարմնոյ. այսինքն վեր և վայր. յաջ և յահեակ. յառաջ և յետ: - 560

**ՇԱՐԺՈՒՄՆ +** Ամենայն ինչ որ լինի՝ ունի պատճառ. և ամենայն պատճառ ի հարկէ է՛ նախքան զպատճառելին. ապա թէ հարկաւոր պատճառս այս ո՛չ է բանն մեր որպէս ցուցաւ, է՛ ուրեմն զորութիւնն աստեղաց ի *շարժմանէ* նոցա ազդեցեալ: - 10. ...այլ գո՛յ և ներընդունակ պատճառ. ապա ուրեմն ո՛չ է հարկաւոր պատճառ *շարժումն* աստեղաց: - 10. Դարձեալ ասեն, թէ ամենայն ստորնային մարմինք՝

կառավարին վերնային մարմնովք. որպէս յա՛յտ է ի չորս եղանակս տարւոյն. այլև ծնունդ և աճումն՝ և բոյսք և պտուղք՝ ի *շարժմանէ* նոցա պատճառին. և *շարժումն* նոցա է՛ հարկաւոր. ապա ուրեմն ամենայն ինչ լինի ի հարկէ: - 10. Դարձեալ ասեն թէ՝ և մարմինք մարդկան են ստորնայինք. և սնանին և աճին *շարժմամբ* աստեղացն: - 10. Դարձեալ ասեն թէ՝ բազումք ի մարդկանէ գործեն ի խառնւածոյ մարմնոյն, որք հարկաւորին ի *շարժմանէ* աստեղացն: - 10. Ասեմք առ այս, թէպէտ խառնւածք մարմնոյն լինին ի *շարժմանէ՛* աստեղացն, այլ բազումք անձնիշխան կամօք նըւաճեն զվատախառնութիւն մարմնոյն, և գործեն զբարիս: - 10. Դարձեալ, թէ էր հարկ *շարժումն* աստեղացն, ինքեանք ո՛չ լինէին ըստ հարկաւ այլոց. ապա թէ ինքեանք են ըստ հարկաւ, ո՛չ են այլոց հարկ. զի են ինքեանք ըստ հարկաւ: - 11. Դարձեալ ասեն, ի հակառակ *շարժմանց*՝ լինի և հակառակ ներգործութիւն. ահա մոլորակք շարժին հակառակ. ապա ուրեմն և գործեն հակառակս: - 12. Ասեմք առ այս, մոլորականքն ո՛չ եթէ զի ունին ներհակ *շարժումն* վասն այն կոչին մոլորականք, կամ պատճառք են չարեաց, այլ զի մեք մոլորիմք ի *շարժումն* նոցա. զի ունին հաւասարակ *շարժումն*, և ունին յատուկ *շարժումն:* - 12. Յաւասարակ *շարժումն* է ըստ ութերորդ կամարին յարևելից յարևմուտս. իսկ յատուկ՝ յարևմտից յարևելս: - 12. Եւ *շարժումն* նոցա ո՛չ պատճառէ զչար և զբարիս մարդկան...: - 12. Ասեմք առ այս, եթէ այսու վկայե՛ս և դու մեզ՝ թէ ո՛չ է հարկ. զի ի բոլոր քաղաքն այնքան բիւր մարդիկ՝ ծեր և տղայ՝ ե՛րբ և ո՛ւր ի մի *շարժումն* աստեղաց ծնան, որք ի միասին կործանեցան. կամ բազմութիւն զօրացն. կամ որք ի նաւին կային. զի սոքա ամենեքեան յայլևայլ ժամանակս և այլևայլ *շարժումն* աստեղաց էին ծնեալք. ապա ուրեմն ո՛չ է հարկ բախտի և ճակատագրի: - 13. Երկրորդ՝ ասեմք եթէ և ոչ աստեղք վայրապար են ստեղծեալ. զի կառավարք են տարրեղէն մարմնոց որպէս ասացաք. այլ մարդկային ներգործութիւնք կառավարին յանձնիշխան կամաց. և անձնիշխան կամքն որ անմարմին է՝ ո՛չ նըւաճի ըստ *շարժմամբ* մարմնաւոր աստեղաց: - 13. Երրորդ՝ զանդադար *շարժումն:* - 26. Այլ մեզ մի է որ շարժիցին և *շարժումն*. որպէս մի է ասումն և բան...: - 36. Իսկ զի ասէ՝ «առաքեցայ» ո՛չ թէ տեղւոջէ ի տեղի. որպէս մեք բովանդակեալքս ի մի տեղի. զի առաքիմք *շարժմամբ* ի միւսն: - 40. Իսկ յորժամ զյայլումն լսեն՝ արձակին ի վերայ մեր ասելով, եթէ յայլո՛ւմ է՝ պատահումն է ի հայր որպէս զօրութիւնս առ մեզ. իսկ եթէ զօրացեալ է՝ և ըստ զօրանալն դադարեսցէ ամենայնիւ. *շարժումն* եղիցի և ոչ շարժօղ: - 52. Դարձեալ՝ *շարժումն* ո՛չ միայն ասի ի վերայ հոգւոյն սրբոյ, այլ և հօր և որդւոյ...: - 60. Իսկ *շարժմունքս* այս ո՛չ ցուցանեն զաստուած ստեղծուած: - 60. Նախ՝ զի բղխումն հոգոյն՝ է՛ ելումն. իսկ ելումն *շարժումն* միոյն ի միւսոյն: - 63. *Շարժումն* նոցա: - 102. Ա՛յլ է բանն՝ և ա՛յլ է ձայնն. զի բանն անմարմին ծնունդն է մտաց. և ձայնն է՛ *շարժումն* օդոյ ի ձայնական գործեաց ի յօդս բախեալ...: - 131. Զի՞նչ է հրեշտակաց կալն և *շարժումն*...: - 142. Ամենայն իր ունի կայումն և ունի *շարժումն:* - 142. Կայումն ըստ բնութեան, և *շարժումն* ըստ իմացման և ներգործութեան: - 142. Իսկ *շարժումն* է եռակի ըստ սրբոյն դիոնիսեայ. այսինքն բոլոր՝ ուղղակի՝ և կողմնաւոր: - 142. Իսկ առ հրեշտակս բոլոր *շարժումն* է ի նոյնէ ի նոյն. որպէս անիւն զոր ետես եզեկիէլ. այսինքն ի նոյն աստուծոյ են սկսեալք, և ի նոյն անվախճանապէս մնան: - 142. Եւ կամ ի ներգործութենէ լինի զօրութեամբ. որպէս ի *շարժմանէ* դադարեալ: - 162. Իններորդ՝ և է ուրեք ժամանակաւ առաջին ներգործութեամբն՝ և վերջին զօրութեամբն. որպէս *շարժման* դադարիլն: - 169. Զի առանց հողոյ շօշափումն ո՛չ լինի. և ո՛չ առանց ջրոյ կալումն և մածումն. և ո՛չ առանց օդոյ *շարժումն*. և ո՛չ առանց հրոյ երևումն: - 180. Նախ՝ ի *շարժմանէ՛* երկնային մարմնոց. զի միշտ նոյնպէս և անդադար շարժին. առնելով զօր և զամիս՝ և զեղանակս՝ և զտարի՝ ստուգագոյն չափով առանց յաւելուածոյ և պակասութեան: - 181. Յինգերորդ՝ զի անճերանալի՛ է երկիր. ըստ որում *շարժմամբ* թօթափի երկիր ի ներքին պատահմանց. և հեղեղօք ողողի և սրբի յարտաքին պատահմանց: - 181. Երրորդ՝ զի բոլորակն սո՛ւր է ի *շարժումն*. և երկինքն սրագո՛յն է ի *շարժումն*, որ ի շրջիլն իւրում շօշափէ՛ զերկիր ի մի կէտ: - 182. Եւ ունին կրկին *շարժումն*. հաւասարակ և յատուկ: - 189. Այլ ժամանակն է առաջին *շարժումն* երկնից, սակայն ո՛չ չափէ զնա. այլ չափէ՛ զտարրականս և զներգործութիւնս մեր յորում ո՛չ է: - 198. Ի գոյից է, զի *շարժումն* երկնի և ընթացք լուսաւորացդ ծնանին զժամանակն: - 198. *Շարժումն* է ջուրց և արեան երակաց: - 203. Եւ զի շուրջ զնովաւ բոլոր *շարժմամբ* երկին և աստեղք շրջագայիւն: - 211. Նա՛խ՝ զի բոյսք և խոտք մե՛րձ են երկրի, *զշարժումն* նորա դիւրա՛ւ ընդունին: - 214. Երրորդ՝ զի ինքն երկիրն ունի զթանձրութիւն որ հողոյն է. և զմածումն որ է՛ ջրոյն. և *զշարժումն* որ է հողմոյն. և զերևիլն որ է հրոյն: - 214-215. *Շարժումն* օդոյ: - 215. Յաղագս այսորիկ անբան կենդանիք փութապէս զգան զառաջին *շարժումն* և զփոփոխումն օդոյդ քան զմարդ. և յառաջագէտ լինին: - 218. Զի ի վերին մասն օդոյն է մերձեցեալ՝ որ է առաւել բարեսուն. և ամպոց և հողմոց *շարժմունք* ի միջին մասն օդոյս ծնանին. և ի

դրախտն ո՛չ հասանեն: - 222. Եւ աստ **զ** *շարժմունքն*. և **գ** հասակ մարդոյս. և բաղդատութիւն **դ** տարերց և եղանակաց և ժամուց աւուրն: - 228. Եւ առ հասարակ ասեմ զայս դնել ի մտի. զի չափաւորութիւն անդամոցն ըստ ձևոյն և ըստ գունոյն և ըստ քանակութեան և ըստ կազուածոյն և ըստ *շարժմանն*, նշանակէ զբարի մտացն ընդաբոյս յարմարութիւնն: - 248. Եւ այսպէս է ըստ ոմանց վեցեկի *շարժմունք* հասակի մարդոյս որպէս ասացաւ. այսինքն Երեխայ: - 265. Եւ նախ ասի իմաստութիւն նոցա, որ զբնութիւն էիցս քննեցին. և *զշարժումն* լուսաւորացն. որպէս իմաստունքն յունաց: - 269. ...**բդ**՝ խլից լսել տայր. **գդ**՝ համերց խօսիլ. **դդ**՝ ձեռաց *շարժումն*. **եդ**՝ կաղաց գնալ...: - 328. Առաջին՝ շաբաթն. յորժամ դադարիմք **զ** *շարժմամբ* և **ե** զգայութեամբ ի մեղաց գործոց: - 372. Իսկ գովութիւն ծերոյ, Նա՛խ՝ զի խափանեալ է ամենայն մեղաց *շարժմունքն:* - 378. Եւ **է**երորդն փախուստն է այլ ընդ այլ՝ արտաքոյ **զ** *շարժմանց:* - 404. Եւ **է** երորդն սատակիլն և կորուստ. զի կեանքս **զ** *շարժմամբ* է, և մահն **է** երորդ արտաքոյ սորա: - 404. Քսանև**զ**, Վերացումն եղիայի *շարժմամբ*. և կառքն և հեծեալք տեսեալ: - 413. Ասեմք եթէ ժամանակն ի *շարժմանէ* լուսաւորա՛ցն է. ըստ գնացից նոցա զառաջիկայն ասեն սովորապէս: - 430. Զի՞նչ է *շարժմամբ* վերանալն եղիայի: - 445. *Շարժումն* ոմանք զյափշտակելն ասեն. և այլք հողմոյ և երկրի. և կէսք զինչումն հրեշտակաց: - 445. Իսկ ձուկն կենդանի՛ է կատարեալ զգայարանօք և *շարժմամբ*. այլ զտուր և առ շնչոյ ո՛չ ունի. վասն այն պակա՛ս է: - 510. Բանականն՝ աբրահամու. բանականաբար ի *շարժմանց* արարածոց ծանուցեալ զաստուած: - 528. Որ նշանակէ՛ թէ ի յայտնութենէն աստուծոյ և ի *շարժմանէ* հոգւոյն սրբոյ պարտ է ներգործել զայդ իշխանութիւն: - 539. Ա՛րդ՝ եթէ *շարժումն* ախտիցն մեղք է ըստ որում է՛, ապա և *շարժումն* մտացն մեղք է որպէս ցուցաւ: - 557. Ի վեր *շարժումն* է հպարտութիւն և փառասիրութիւն. զի յատուկ է սոցա ի վերամբարձումն: - 560. Ի վայր *շարժումն* է տրտմութիւն և ծանծրութիւն. որ է՛ ծուլութիւն. զի մինն ծանրանայ և ո՛չ գործէ զբարիս. և միւսն տրտմի և պակասի: - 560. Յաջ *շարժումն* է արծաթսիրութիւն. զի զբարիս պատճառելով ժողովէ...: - 560. Յառաջ *շարժումն* է բարկութիւն. զի վասն չարեաց ասէ բարեկամ: - 560. Այսպէս յառաջ գան ի վեց *շարժմանց* **ը** խորհուրդք: - 560. Դարձեալ՝ կատարեալ սէր է, յորժամ է ունակութեամբ մեծ. ներքին *շարժմամբն* ուղիղ...: - 576. Երրորդ՝ է՛ յայտնագոյն նշան սիրոյ. զի է՛ ընդ դէմ *շարժման* բնութեանն: - 577. Եւ ողջախոհութիւնն ո՛չ սանձահարէ զանպատեհ *շարժմունս:* - 579. ... մեք հանապազ վեցեկի *շարժմամբ* հոգւով և մարմնով մեղանչեմք...: - 624. ...պահեմք զչորեքշաբաթն. և վեցիւք *շարժմամբ* ի մեղս ընթանամք, պահեմք զուրբաթն: - 653. ...ցուցանէ թէ անշարժ է մեռեալ մարմինն ամենևին ի կենդանական *շարժմանէ:* - 678. Երրորդ պատճառ, ասեն իմաստունքն թէ ծնունդք կենդանեաց և բուսոց լինին ի *շարժմանէ* երկնային մարմնոց. իսկ ի կատարածի խափանի *շարժումն* նոցա. վասն այն անբան կենդանիք և տունկք խափանին: - 727. Զի երկինք ի *շարժմանէ* դադարէ և և՛ս պայծառանայ: - 728. Եւ այլ ևս ի *շարժմանէ* դադարին որպէս ասացաւ. զի ո՛չ առնեն ամառն և ձմեռն: - 728. Վեցերորդ, զի ահագին փառօք գայցէ փողով մեծաւ և ամպախաղաց որոտմամբ և *շարժմամբ* և հրով բորբոքելոյ որպէս ի սինայ: - 737. Այլ որ ուղիղն է տեսութիւն, յետ յարութեան փոխի ժամանակն ի յաւիտեան. և այլ ո՛չ գտանի մասն և րոպէ և ժամ. զի երկնային մարմինք դադարին ի *շարժմանէ* ուստի ժամանակն գոյանայ: - 747. Եւ յամ և յամիս մշտակայ բոլորածև՝ *շարժումն* նոցա: - 767. Այլ և *շարժումն* երկնից բոլորածև կարէ՛ ասիլ. մասամբ զօրութեամբ, և մասամբ ներգործութեամբ: - 788

**ՇԱՐԺՈՒՆ +** Վասն զի առաջին *շարժունն* զայլս չափէ՛, և զինքն ո՛չ չափէ: - 198. Վասն այնորիկ յորժամ զիրս հոսականս և *շարժունս* չափէ՛, հա՛րկ է զի ի նոսին հոսեսցի. քանզի միշտ ժամանակն անցանէ և հոսի. յանցելոյն ի ներկայս. և ի ներկայէս յապառնին: - 199

**ՇԱՐՈՑ +** Եւ սոքա են հարճք որ կարեն ի բաց հանել ի ժառանգութենէ. զի սէրն է կապ և լար *շարոցին* որ ո՛չ թողու ցրիլ: - 440.

**ՇԱՐՈՒՆԱԿ +** Եւ երկայն և կարճ՝ քանա՛կ է *շարունակ*. և **բ** ակն և ունկն տարորո՛շ է: - 236

**ՇԱՐՈՒՆԱԿԵՄ +** Վեցերորդ՝ միակն պատկելով բազմանայ. և աստուած է *շարունակօղ* բազմութեան էից: - 109. Ա՛րդ՝ ներքնագոյն սիրովն խնամէ աստուած զարարածս. և առաջին դասք հրեշտակաց զվերջինսն. և հարք զորդիս. և վարդապետք զաշակերտս. և իշխանք զիշխեցեալս. տեարք զծառայս. և այս սիրովս *շարունակին* ընդ նոսա: - 143

**ՇԱՒԻՂ +** Տասներորդ՝ զի կամակո՛ր են ի չար *շաւիղն*. որոց բժշկութիւնն դժարին է ...: - 32-33. Եւ զի ո՛չ հանապազ խաւարին. զի ո՛չ միշտ ընդ նոյն *շաւիղս* ընթանան. թէպէտ հանդիպին ընդ նոյն կենդանակերպն: - 187. Բարին ճանապարհ. և *Շաւիղ* նորա՝ զգուշութիւնն: - 250. Վեցերորդ՝ զի կաղանալո՛ց էին որդիք նորա ի *շաւղա՛ցն* աստուծոյ: - 311. Զայս նշանակէ թէ՝ յետ ելանելոյ հոգւոյ ի մարմնոյ և գնալոյ ի վերին *շաւիղն*,

հակառակ կայ սատանայ և չար զօրութիւնքն ընդ նմա, տանիլ զհետ իւրեանց որ զչա՛րսն են գործեալ. և յարդարոցն յաղթին հրեշտակին օգնութեամբն. որպէս և անտօն ետես. զի իմացեալ և մեք զգուշասցուք այնմ: - 410. Կրկին ասեն *գշաւիղս* ընթացից հոգւոյ. այսինքն մինն ի վեր յերկինս, և միւսն ի ներքոյ երկնից: - 688. Երրորդ, հաւաստի արդարութեամբ. և այսպէս ամենայն սուրբք և հրեշտակք դատեցեն զնոսա որք ի նոյն *շաւիղն* յանցաւոր գտան: - 738. Զի թէ աստուածային բարութեանց *շաւղացն շաւիղք* այս քան ունին քաղցրութիւնս, զի՞նչ ունի ինքն աղբիւրն անուշութեան աստուած: - 762

**ՇԱՓԻՂԱՅ, ՇԱՓԻՒՂԱՅ +** *Շափիղայ*՝ ծիրանագո՛յն է. և գտանի ի հնդիկս: - 348. Այլ և ադիւսածև ակն *շափիւղայ* ի ներքոյ ոտից նորա: - 494. Տեսանէր ժողովուրդն ուր կայր աստուած, և ընդ ոտիւքն իբր զգործած ադիւս *շափիւղայ*. որ է՛ ակն պատուական. և աղիւսն խաչաձև է: - 639

**ՇԱՔԱՐ +** Զորօրինակ՝ լիտր մին *շաքար* ի լիտր մին ջուր անկեալ, նոյն մին լիտր մնայ կշռեալ: - 202

**ՇԵՂԻՄ +** Երկրորդ՝ հրեշտակք բարձրանան ի տեսութիւնն աստուծոյ. և մարդիկ խոնարհին և *շեղին* ի յիմացւածն: - 120. Իսկ թէ ըստ մարմնոյն *շեղեսցի*՝ ի մահ պարտաւորեսցի և տնկեցի ի մարմնաւոր տեղիս. որպէս և եղև իսկ: - 231. Եւ այն զի՞նչ իցէ, զի սա մի՛շտ մի և նոյնպէս մնայ. իսկ նա՛ ստանօր ողորմի զղջացելոցն, և ո՛չ ոչ նոյնպիսոյն. իսկ անդանօր ո՛չ զղջացելոց ողորմի մարդկան մեղաւորաց և ոչ անզղջից անմարմնոց *շեղելոց*: - 778

**ՇԵՂՋ +** Զի մինն հասարակ է. և միակն մասնաւոր և առանձնակի. զի ամենայն միակ՝ մի է. այլ ամենայն մի միակ ո՛չ է. որպէս յորժամ ասեմք՝ մի հօտ. մի *շեղջ*. մի լիտր. այսպիսիքս մի են. այլ միակ ո՛չ են: - 109

**ՇԵՂՋԱԿՈՒՏԵՄ +** Տասներորդ՝ նեռն քարոզութեամբ պատրէ՝ և ուրւական սքանչելեօք. և այլն. և սոքա քաղցրաբանութեամբ և օրհնութեամբ պատրեն զմիտս անմեղաց. և հրեշտակ լուսոյ կերպարանին որպէս հայրն իւրեանց սատանայ. և ամենայնն ուրւական միայն և ո՛չ ճշմարտութեամբ. և բոլոր դիտումն նոցա է՛ պատրել զմարդիկ և հանել ի հաւատոց. և լնուլ զորովայնս. և զկանայս *շեղջակուտեալս* մեղօք յինքեանս գրաւել: - 35

**ՇԷԿ +** Դեղնի երեսն և կարմրի. և մին մարդն սև, և մին սպիտակ լինի. և *շէկ* և ծիծաղկոտ և այլն: - 227. Վասն է՞ր մին մարդն սեաւ լինի և մինն սպիտակ, կամ *շէկ*, և այլն: - 245. Զի թէ հուրն աւելի է, լինի *շէկ* գունով. և թէ օդն՝ լինի կարմիր. իսկ ջուրն առնէ սպիտակ. և հողն սեաւ գունով: - 245. Զի որ զհուրն առաւել ունի որ է *շէկն* բարկացո՛ղ է: - 245. Դերն *շէկ* և ստուար, ո՛չ է խելամուտ: - 248

**ՇԷՆ +** Դինգերորդ, զի մի՛ ի զազիր հոտոցն և որդանցն զարշեսցուք և թողցուք *զշէնս* աւերակ: - 677

**ՇԻԼ +** Չորրորդ՝ *շիլ*. թիւր տեսութիւն: - 370

**ՇԻԹ, ՇԻՏ +** Իսկ Յօ՛դ է գիճութիւն ի պարզոյ իջեալ. զոր աստեղք ի գիշերի քարշեն ի վեր. և ընդ ծագել առաւօտուն՝ յետ ի յերկիր անկեալ մանրամասն *շիթ*: - 204. Աչք որպէս զպայծառ *շիտ* լուսաւոր՝ նշանակէ՛ զհամբետոն: - 246. Իններորդ, բորն գ ազգ է. սպին սպիտակ *շիտ*. և պալար միատարր. և պաղպաջ *շիտ* աստ և անդ. որ է՛ մտաց և հոգւոյ և մարմնոյ մեղքն: - 367. Դաւիթ ասէր «ծարաւի է անձն իմ առ քեզ աստուած աղբիւր կենդանի». որ ամենայն բարութիւնք աշխարհի իբրև *շիտք* են հոսեալ յայնմանէ: - 762. Եւ վա՛յ է թշնամեացն աստուծոյ. որք *զշիթսն* զայնս յերկրի լիզեն և զաղբիւրն քաղցրութեան արհամարհեն: - 762

**ՇԻԿԱԳՈՅՆ +** Սարդիոն. *շիկագոյն* արիւնատեսիլ. գտանի ի բաբիլօն. և թափանց է և դեղ առողջութեան: - 348

**ՇԻԿՈՒԹԻՒՆ -** Ուստի յա՛յտ է, զի որակ ծնողացն խառնի ի բեղնաւորիլն. ի դաշտանւոյն գօղի. ի հիւանդութենէ, ի *շիկութենէ*. որպէս ադամ տրտմութեամբ ծնաւ զորդին կայէն. ցաւած ծնողացն ցաւածին որդի: - 439

**ՇԻՆԱԿԱՆ +** Նա՛խ՝ որպէս հասարակ *շինականք* ի ծննդեան զաւակաց զմին օրն պատուեն աղարուք կոչելով: - 321. Եօթներորդ՝ երկաթն *շինականա՛ց* է գործի և երկրագործաց՝ անարժան վարկաւ: - 415

**ՇԻՆԵՄ +** Նախ՝ եթէ լինէր բանս մեր ի հարկէ ճշմարիտ, նա ո՛չ մինն միայն, այլև ամենայն բան զինչ ասէաք՝ ճշմարիտ լինէր. որպէս *շինել* քաղաք, կամ ո՛չ *շինել*. տնկել այգի, կամ ո՛չ տնկել: - 8. Եւ թէ ոք ասիցէ, բազում բանք մեր բացորոշակի լինին ի հանդերձեալն. որպէս թագաւորն յորժամ ասէ *շինեսցի* քաղաք, և *շինի*. և ասեմք թէ այսաւուր մարդ մեռանելոց է, և մեռանի. և աղօթեմք և լինի. և այլն նմանապէս անէծք կամ օրհնութիւնք: - 9. Զորօրինակ եթէ կամիցի ոք տաճար *շինել*. նախ ծնանայ ի միտքն և յետոյ շինէ զտաճարն ըստ այնմ ձևոյ: - 163. Զորօրինակ եթէ կամիցի ոք տաճար շինել. նախ

ծնանայ ի միտքն և յետոյ *շինէ* զտաճարն ըստ այնմ ձևոյ: - 163. Արդ՝ տաճարիս այս է՛ կրկին սկիզբն. նախ միտքն *շինողին*, և յետոյ սկիզբն և կատարումն շինուածոյն: - 163. Երրորդ զանազանութիւն՝ զի թէ *շինի* տաճարն և թէ ոչ՝ առաջին սկիզբն որ ի միտքն մնայ՝ նոյն ո՛չ առաւելու և ո՛չ նուազէ: - 163. Հինգերորդ զանազանութիւն՝ զի ծնն անմարմին է ի միտս. իսկ *շինեալն* մարմին: - 163. Երկրորդ՝ հաւասարակութիւն է, զի որպէս է նկարեալ ծնն, նոյնպէս և *շինեալ* տաճարն քանակութեամբ և որպիսութեամբ. և անդրադարձեալ ևս: - 163. Նախ՝ զի որպէս *շինօղ* տաճարին զսկիզբն և զկատարումն ետես. այսպէս և արարիչն աստուած ի կրկին սկիզբն գործոյն զկատարումն աշխարհի ետես: - 163. Չորրորդ՝ և որպէս որք մերձ են զառաջին սկիզբն ո՛չ տեսանեն որ ի միտս *շինողին:* - 164. Հինգերորդ՝ ի տեսանել զշինուածն՝ իմանամք *զշինօղն:* - 164. Նախ՝ զի *շինօղն* էր յառաջ, և յետոյ ետես զշինուածն: - 164. Երրորդ՝ զի *շինօղն* որ ինչ պատահի գործոյն ո՛չ գիտէ: - 164. Ձորօրինակ խեցեղէն անօթ խորտակեալ՝ եթէ կա՛ւ է *շինի* դարձեալ անօթ. և թրծեալն ո՛չ *շինի:* - 166. Նախ՝ զի զգոլն իւրեանց ունէին ի նախագաղափար տեսութիւնն աստուծոյ. թէպէտ յետո՛յ ընկալան գոյացութիւնս յինքեանս. որպէս տաճար ի միտս *շինողին:* - 170. Որպէս տունն ի ժողովիլ փայտից և որմոց՝ *շինի*. և ի ցրուիլն սոցա կործչի տունն: - 175. Իսկ որ զմարմին յառաջ ասեն քան զհոգի, վկայ ածելով զմովսէս որ ասէ եթէ՝ էառ զհողն և *շինեաց* մարմին. և յետոյ փչեաց ի նա զշունչն կենդանի, որ է կենդանարար հոգին: - 253. Երկրորդ՝ զի ի ձախ կողէ՛ *շինեցաւ* կինն. և տկա՛ր է ձախ կողմն մարդոյս: - 276. Նա՛խ՝ եթէ գիտէ՞ր մարդ զօր մահուն, ո՛չ *շինէր* և ո՛չ տնկէր և ոչ ծնանէր զաւակ. և լինէր պատճառ աւերման: - 292. Այլ և եկեղեցի սուրբ *շինեալ* ի քրիստոսէ հոգևոր տապան մեզ ի մէջ ծովու աշխարհիս՝ որ զհոգիս մեր փրկէ ի ջուրց մեղաց: - 293. Ոմանք ծեղուն ասեն յապակէ՛ *շինեալ:* - 294. Կամ որպէս ասեն թէ՝ ներսէս անուն արուեստաւոր տապանին՝ *շինեաց* իւր տուն ի վերոյ կողմանէ. և զի ո՛չ էր հրամանաւն աստուծոյ՝ սատակեցաւ նա՛ անդ, և զնորա գէշն ուտէր ագռաւն: - 294. Զաշտարակն ո՞րպիսի մտօք *շինէին:* - 296. Ապա՛ ասեն՝ *շինեսցուք* բարձր աշտարակ զի մի՛ ջրհեղեղն զմեզ կորուսցէ: - 296. Եւ սկսան *շինել* հաստահիմն լայնամիջոց. աստիճանաձև ելիւք և իջիւք: - 296. Վասն է՞ր հրամայեաց ի զանազան նիւթոց հրաշալի խորան *շինել* և այլն: - 342. Ո՛չ հրամայեցաւ դաւթի *շինել* զտաճարն. ի Հազարս գտի այր մի. և ի կանանց ո՛չ մի: - 413. Իններորդ՝ հանեալ ի գետոյն **բժ**ան վէմս *շինեաց* սեղան. և նոյն թուով խորասուզեալ ընկղմեաց: - 418. Եւ տէր մեր զհաւատացեալս իւր հանեալ ի մեղաց *շինեաց* սեղան և եկեղեցի սուրբ. և զմեղս երկոտասան անդամոցն ընկղմեալ կորոյս: - 418. Երեքտասաներորդ՝ անէ՛ծ յեսու որ *շինէ* զերիքով՝ անդ անդրանիկ և կրտսեր որդւով: - 418. Եւ որ *շինէ* զդժոխս հոգւով և մարմնով. նա՛ և անդրանիկ խորհրդով և մարմնոյ գործով: - 418. Եօթներորդ՝ զի ո՛չ կարէր *շինել* զտաճարն սուրբ: - 433. Դաւիթ էառ զէմ և *շինեաց* իւր տուն. և տէրն զվերինն եէմ, և ետ իւրայնոցն զխաղաղութիւն: - 438. Վասն է՞ր հրամայեցաւ դաւթի ո՛չ *շինել* զտաճարն: - 439. Այլ ա՛յս է ճշմարիտն. զի պատերազմ և խռովութիւն էր յաւուրս դաւթի մինչ սատակեաց զնոսա. և որդի նորա ի խաղաղութեան ժամու *շինեաց* զտաճարն: - 439-440. Եւ այս ի տիպ փրկչին. զի որդին միածին *շինեսցէ* զտաճար բնութեան մերոյ մարդանալովն իւր: - 440. Զի զտեղին յեբուսացւոցն գնեաց դաւիթ. և ճարտարապետն քիրամ տիւրացի էր որ *շինեաց.* և քիրամ արքայ զփայտն առաքեաց: - 440. Եւ ինչ ոչ գոյր ի հրէիցն, բայց միայն սողոմոն. որոյ հրամանաւն *շինեցաւ* ի տիպ հեթանոսաց եկեղեցւոյ զոր շինելոց էր տէր մեր: - 440. Եւ ինչ ոչ գոյր ի հրէիցն, բայց միայն սողոմոն. որոյ հրամանաւն շինեցաւ ի տիպ հեթանոսաց եկեղեցւոյ զոր *շինելոց* էր տէր մեր: - 440. Ութերորդ՝ նա՛ տաճար *շինեաց:* - 441. Ութևժ, նա՛ հեթանոսացն տայր *շինել* զտաճարն: - 441. Տասներորդ՝ զի սողոմոն ի քարանց ձեռագործաց կազմէր տաճար աստուծոյ. իսկ քրիստոս զբանական հոգիս մարդկան *շինէր* օթևան սուրբ երրորդութեանն: - 442. Յեսու անէծ զերիքով և *զշինօղս* նորա. և անէծքն այն առնէր անզաւակ և վաղամահ: - 445. Կիւրոս յառաջին ամի թագաւորութեանն իւրոյ՝ արձակեաց **ե** բիւր զգերիսն յերուսաղէմ, սաղմանաասար իշխանաւն. զի *շինեսցեն* զտաճարն: - 448. Մինչ ի դարեհի **բ** ամն արձակեցաւ զօրաբաբէլ, և ի **դ** ամն *շինեաց* զտաճարն: - 448. Եւ յետ եօթանասուն ամի շինուածոյ տաճարին՝ ապա արձակեալ նէեմի *շինէ* զպարիսպն երուսաղէմի ի **լբ** ամին արտաշէսի. որպէս ասէ գիրքն եզրի: - 448. Եւ այսպէս յետ աւերածոյն և գերութեանն նախ տաճարն *շինեցաւ*, և յետոյ պարիսպն կանգնեցաւ: - 448. Եւ յորժամ զղջանամք ի մեղաց՝ նախ խոստովանութեամբ *շինեմք* զտաճար սրբութեան մերոյ. և ապաշխարութեամբն որ է՛ փոխարէնքն՝ կանգնեմք զպարիսպն եօթնիւք զգայութեամբք: - 448. Նա՛խ՝ նշանակեն առաջինքն զմարգարէքն և զարդարսն. որք ո՛չ կարացին զկործանեալ բնութիւնս *շինել* արդարութեամբ...: - 448-449. ...իսկ երկրորդն զօրաբաբէլ ի **զ** ամին կիւրոսի *շինեցան* զտաճարն...: -

449. Եւ աստի թուեալ ի դարեհէ՛ որդւոյ վշտասպեայ, որ արծածեաց զզօրաբաբէլ. և յորոյ երկրորդ ամին *շինէ* զտաճարն: - 449. Եւ սա՛ *շինէ* զբեթլէհէմ քաղաք ի գետինս յուդայի: - 452. Եւ զայս հրոյ իմանի որ առ գալստեամբն քրիստոսի ոմանց մաքրութիւն ներելեացն լինիլ և առաւել պայծառանալ. որք ոսկի և արծաթ և ականս պատուականս *շինեցին*: - 488. Այլ մեք եղբարք ուղեկիցք իմ և դաւանակիցք եղիցուք. *շինեալք* և հաստատեալք ի վերայ հաւատոյ հիմանն. անշարժ խարսխեալք ի վերայ յուսոյն քրիստոսի, սեռն և յստակ կատարեալ սիրով սուրբ հոգւոյն: - 503. Զի որպէս յեսու աւերեաց զերիքով և անէծ զի մի՛ *շինեսցի*. նոյնպէս և զդժոխքն աւերեաց քրիստոս և անէծ *զշինօղսն* չար գործօք...: - 504. Վասն առանձնակի եկեղեցոյս մեր կարգաւ. և զի՞նչպէս բաղդատի եկեղեցին՝ մարդն՝ և *շինեալն*: - 526. Հիմն և շինուածն ցուցանեն եթէ տաճարս կամի *շինել* զմեզ աստուծոյ...: - 531. Ա՛րդ՝ առաջին հիմն քրիստոս է և գլուխ. և հաւատացեալքն շինուածք ի նա. և հայր *շինօղ*: - 531. Երկրորդ հիմն՝ դաւանութիւնն պետրոսի է. և դաւանօղքն շինւածք. և քրիստոս *շինօղ*: - 531. Երրորդ հիմն՝ առանձին հաւատն է. և գործքն շինուածք. և մեք *շինօղք*: - 531. Եւ հո՛մանուն է. զի եկեղեցի է *շինեալն* ի քարանց, և եկեղեցի է հաւատացեալ ժողովուրդն: - 532-533. Նախ՝ զի երկոքեանն տաճար են աստուծոյ. այսինքն *շինեալն* և մարդն...: - 533. Նոյնպէս և *շինեալն* օրհնութեամբ. զի լուանամք նախ ջրով և ապա՛ գինւով: - 533. Երկրորդ, մի անուն՝ և նշանակեալքն բազումք. որպէս խոյ է յերկինս և յերկրի և ի ծովս. նոյնպէս մի կոչի եկեղեցի կենդանի մարդն և *շինեալն* ի քարանց և եկեղեցին անդրանկացն յերկինս. սակայն զանազա՛ն են որպիսութեամբ: - 533. Իբր զի հոմանուն է եկեղեցի և ունի **դ** նշանակութիւնս. որ է՛ ստորինս. և վերինն եկեղեցի. և *շինեալք* ի մէնջ. և հաւատն ժողովարան մեր: - 534. Եւ որպէս կողն ադամայ եղև կին. և *շինեալ* եկեղեցի լինի հարսն քրիստոսի: - 534. Չորրորդ՝ զի *շինօղ* և հաստատօղ եկեղեցւոյ առաքեալքն են. և ծեռնտու նիւթոց մարգարէքն. եզր և պարիսպ վարդապետք: - 535. Եւ վէմ դաւանութիւնն էր որ խոստովանեցաւ զքրիստոս որդի աստուծոյ կենդանւոյ. և ի վերայ այնմ դաւանութեան *շինեցաւ* եկեղեցի քրիստոնէից: - 547. Ուստի յա՛յտ է, զի առեալ էր զքահանայութիւն. և մկրտեալ զթագաւորն և լուսաւորեալ զազգս, և *շինեալ* եկեղեցիս: - 548. Ապա հե՞զն յամենայնի սուրբն գրիգոր ետ նոցա՝ զի նոքա *շինեսցեն* ընդարձակ. զի դեռ չէր շինեալ: - 549. Ապա հե՞զն յամենայնի սուրբն գրիգոր ետ նոցա՝ զի նոքա շինեսցեն ընդարձակ. զի դեռ չէր *շինեալ*: - 549. Երկրորդ, զի մի կող էառ և ի նմանէ *շինեաց*: - 612. եկեղեցին մի անուն է և **բ** իրս նշանակէ. *զշինեալն* և *զշինօղսն*: - 613. Եւ սա՛ յայսպիսի նիւթոց է *շինեալ*: - 615. Չորրորդ՝ զի սողոմոն յորժամ *շինեաց* զտաճարն՝ յաղօթս եկաց և նոյնպէս օրհնեաց և օծ. որպէս մովսէս...: - 615. Տասներորդ՝ զի դշխոյն հեղինէ որ *շինեաց* զսուրբ յարութիւնն յերուսաղէմ...: - 617. **Գրիգոր մագիստրոսն ի տարօն եկեղեցի է *շինեալ*. և ծախիւք պատկեր բերեալ և անդ եդեալ**: - 639. Եւ յեկեղեցւոյ յառաքելոցն *շինեալ*: - 642. Այլ ստուգաբանի թէ՝ աստի շարժիմ, կամ *շինիմ*...: - 678. ...յա՛յտ է զի նոյն մարմին շարժի և *շինի* ի յարութեան աւուրն: - 678. ...ուր բելիարն նստի. զորս աւերեաց քրիստոս, և *շինեն* մեղսասէրք: - 679. Իսկ որք *շինեն* փայտ, այսինքն զբորբոքեալ սէր ժամանակաւորացս: - 702. Նստցի ի տաճարին զոր *շինեսցեն* նմա հրէայքն. և ասասցէ թէ, յառաջ քան զիս ո՛չ ոք է ճշմարիտ քրիստոնեայ. այլ նեռինք են ամենայնքն: - 707. Նմանապէս և կողն որ առաւ յադամայ և *շինեցաւ* կին, ո՛չ յառնէ ի յադամ, այլ ի յեւա. որոյ հիմն կազմութեան եղև փոխանակ սերման: - 719. Այսպէս և հողն ուստի *շինեցաւ* ադամ, ո՛չ մնայ ի տարերս. այլ յառնէ ի յադամ որ սկիզբն եղև գոյութեան նմա: - 719. Դարձեալ, ծորն յովսափաթու կոչի ծոր դատաստանի. այսինքն է կալն ուռնայի, ուր դաւթի խոստացաւ անդ առնել դատաստան. յորժամ սեղան *շինեաց* և պատարագեաց զեզինսն և բարձաւ մահն: - 737. Ուր սողոմոն զտաճարն *շինեաց*: - 737. Այլ և ոմանք ասեն և է գոլ սեանց ընդ *շինեալ* տունն ի սողոմոնէ. կանգնեալ սիւնս է մարմնապէս. թէպէտ ա՛յլ է իմացումն հոգէպէս: - 788

**ՇԻՆՈՒԱԾ +** Արդ՝ տաճարիս այս է՛ կրկին սկիզբն. նախ միտքն շինողին, և յետոյ սկիզբն և կատարումն *շինւածոյն*: - 163. Երրորդ՝ և թէպէտ իցեն բազում արքանեակք *շինւածոյն*, այլ մինն է արհեստաւորն և պատճառ: - 164. Հինգերորդ՝ ի տեսանել *զշինւածն* իմանամք զշինօղն: - 164. Նախ՝ զի շինօղն էր յառաջ, և յետոյ ետես *զշինուածն*: - 164. Չորրորդ՝ զի *շինուածն* ի միտս զօրութեամբ է և սոսկ մտածմունք: - 164. Եւ զի հիմն է *շինւածոց*: - 211. Նախ՝ ի *շինուածս*: - 212. Երրորդ՝ ի նոյն իսկ ի ծնոյ *շինւածոյ* մարդոյն. զի ուղիղ գոլով՝ զիշխանականն նշանակէ. իսկ կենդանիքն կո՛ր գլխով զծառայականն ցուցանեն: - 220. Եւ յետ **եծ** և **իե** ամաց ջրհեղեղին էր սկիզբն *շինուածոյ* ամբարտակին ի աշխարհին բաբելօնի ի դաշտին քաղանէ: - 297. Զի է՛ տաճար միաւորեալ. որպէս մարմինն մեր կոչի տաճար մեզ...: - 319. Նոյնպէս և տեառն մերոյ կոչի տաճար արտաքին բնակարան. որպես կոյսն

մարիամ, և հաւատացեալ ժողովուրդք, և *շինուածք* տաճարաց: - 319. Եւ յետ եօթանասուն ամի *շինուածոյ* տաճարին` ապա արծակեալ Նէեմի շինէ զպարիսպն էմի ի **լբ** ամին արտաշէսի...: - 448. ժողովին ի մովսիսէ՛ և յելիցն յեգիպտոսէ մինչև *գշինուած* տաճարին ամք **դճձ**: - 452. Եւ յառաջին *շինուածէ՛* տաճարին ցերկրորդն` **շժբ**: - 453. Զի՞նչ է հիմն որ եդեալ է յիսուս քրիստոս, և *շինուածն* ոսկի արծաթ և այլն: - 531. Հիմն և *շինուածն* ցուցանեն եթէ տաճարս կամի շինել զմեզ աստուծոյ...: - 531. Ա՛րդ` առաջին հիմն քրիստոս է և գլուխ. և հաւատացեալքն *շինուածք* ի նա. և հայր շինօղ: - 531. Երկրորդ հիմն` դաւանութիւնն պետրոսի է. և դաւանօղքն *շինուածք*. և քրիստոս շինօղ: - 531. Երրորդ հիմն` առանձին հաւատն է. և գործքն *շինուածք*. և մեք շինօղք: - 531. Եւ *շինուածք* են դասք ամենայն արդարոց. նոքին դարձեալ մարմնով բնակիչք և հաւատով *շինուածք:* - 532. Իսկ վասն *շինուածոց* ասացեալ է յառաջիկայդ ի **լե** գլուխն, ի **լէ** համարն: - 532. Եւ *շինուածքն* բոլոր հաւատացեալք: - 533. Իսկ հինգերորդ մարգարէութիւն է հոգևոր և աստուածային գիտութեամբ. զոր յայտնութեամբ սուրբ հոգւոյն ուսեալք խօսին առ ի զգուշութիւն մարդկան ի հոգևոր *շինուածս:* - 536. Եւ սուրբն դուկիոս սքանչելագործ և մարգարէաշնորհ, գրեաց առ մարկիանոս, թէ սուգ զգեցուցեր առաքելոց և մարգարէից. զի քակտեցեր զնոցա *շինուածն*. և արգելաւ հոգին սուրբ յօրհնելոյ զպատարագն և զաւազան մկրտութեան: - 543. Երկրորդ` հաւատն է հիմն. յոյսն որմ. սէրն *շինուածք:* - 577. Դարձեալ` զի զսկիզբն մարգարէքն եդին, և առաքեալքն *զշինուածն:* - 636. Երրորդ, զի զառաջին պատիժն աստ կրէ. հողանալով գեղեցկայարմար *շինուածն*: - 679. Ասեմք, *շինուած* տաճար և բնակութիւն երկնից զերանելի մարմինն ասէ: - 695. Ա՛րդ` նախ գիտելի է, զի հիմն հաւատն է ի մեզ. և *շինուածն* գործքն: - 702. Եւ որ գործէ զբարիս առանց հաւատոյ, այն է որ առնէ *շինած* ի վերայ աւազոյ: - 702. Զի այրի *շինուածն* որ ո՛չ է յարմար այնպիսի հիման հաւատոյ: - 702. Նոյնպէս և նիւթն սկզբնական ո՛չ յառնէ ի ծնօղս որ աւելորդ արտաhոսումն է նոցա. այլ յառնէ ի ծնեալ մարմինն որոյ հիմն է *շինուածոյն:* - 719. Նա՛խ` ի *շինուածոյս* մերոյ կազմութեան ըստ նիւսացոյ ասիցն: - 780

**ՇԻՆՈՒԹԻՒՆ +** Դարձեալ ասեն թէ` աստեղք ունին բնութիւնս ներհակս միմեանց. չար և բարի. և միմեանց դիպեալ ներհականան իրերաց. և առնեն չար կամ բարի խռովութիւն կամ խաղաղութիւն. աւեր կամ *շինութիւն*. և այլն: - 12. Այլ և ի պէտս *շինութեան* աշխարհի: - 212. Եւ նոյ` վասն կուսութեան սրբութեանն զշ ամն, և վասն արդար գոլոյն, որում վկայէ՛ մովսէս, «Նո՛յ էր այր արդար կատարեալ յազգի անդ իւրում». վասն որոյ ապրեցաւ ինքն և տունն իւր. և երկրորդ սկիզբն եղև մարդկութեանն և աշխարհի *շինութեան:* - 288. Վասն որոյ օրհնութեամբ ցրուեաց զնոսա ի վերայ երկրի, զի աճեսցին և բազմասցին և լցցեն զերկիր ծննդօք և *շինութեամբ* և բարեգործութեամբ ի փառս ամենասուրբ Երրորդութեանն ամէն: - 298. Եւ յետ նոյն քան ամաց *շինութեան* տաճարին աւելի կամ պակաս, նա՛խ արծակեցաւ եզր դպիր. և յետ նորա նէեմի: - 447-448. Երկրորդ` սրբոյն Գրիգորի որ վասն *շինութեան* եկեղեցւոյ տեսիլն: - 555. Նախ` որպէս անդանօր ողջունեն զխաղաղութեան և *շինութեան* գոլ. յեղակարծ ժամու հասանիլ բարկութեան: - 788-789

**ՇԻՇ +** Զօծումն մարմնական ընկալաւ ի պոռնիկ կնոջէն յորժամ եբեկ *զշիշ* իւղոյն ի գլուխ նորա ի տան սիմոնի: - 474

**ՇԻՋԱՆԻՄ +** Զի՞նչ է որ ասէ սուրբն բարսեղ, գնան հրեղէնք ընդ ջուրս և ո՛չ *շիջանին:* - 188. Եւ զի ո՛չ *շիջանին* հրամանաւ արարչին. ի միջի գոլով երկուց ներհակացն օդեղէնն երկին. որպէս ստորին տարերքս հուր և ջուր միջնորդ օդիւն կապակցեալ: - 188. Դարձեալ` հրեշտակք հրեղէնք գոլով` ընդ ջրեղէն կամարն գնալով ո՛չ *շիջանին:* - 188. Նոյն և սա՛ գոլորշի՛ է վերացեալ հողմոց. և մերձեցեալ ի հուռն` վառի՛ ի նմանէ. և բռնութեամբ հողմոյն վարեալ երևի իբրև զթռիչ աստղ և փութով *շիջանի:* - 203. Փայլակն լինի ի *շիջեալ* հրոյն ջրով ամպոյն և հողմով որ ի մէջն է, վերստին արծարծի և արտաքս բացափայլէ: - 203. Եւ վասն առաւել և նըւազ ջերմութեանն, է՛ որ ի դուրս պատառիլն *շիջանի:* - 204. Եւ է՛ որ ի մէջ օդոյդ գայ և *շիջանի:* - 204. Յայնժամ լոյս իմացականին կորեաւ և *շիջաւ* ի սատանայէ՛. և լոյս շնորհացն ո՛չ ներգործեաց ի նա. և ի նոյն սերտեալ հաստատեցաւ անզղջապէս. վասն որոյ մեծ են մեղք սատանայի և թողութեան ո՛չ հանդիպի: - 563. Զի ջուր հակառակ է հրոյ. և զի՞նչ է մեղք, եթէ ոչ հուր. որպէս յոգւոջ բարկութիւն. և ի մարմնի ցանկութիւն. ուստի յայտ է զի հրով տանջանաց պատժի. և աստ զի հուրն *շիջցի* ի ջուր մկրտիմք: - 591. Առաջին` հուր վառեալ. այնպէս, որ թէ բոլորովին ծովք ի վերայ հեղցին` ո՛չ *շիջանիցի:* - 752

**ՇԻՋՈՒՑԱՆԵՄ +** ...իսկ յորժամ սպասաւորեաց հրեշտակապետն` զտիրական անունն ի սաստ կոչելով. յայնժամ ամպ ինչ լուսաւոր ծագեալ ի տեղւոջն, *շիջոյց* զերևումն չարին: - 410. Եւ ջրովն

*շիջուցանէ* զհուրն նախաստեղծ կողին: - 423. Ութերորդ՝ որք առեալ զօդ դարձեալ արտաքս փչեն ներհակ իմն գործով. այսինքն ջերմացուցանեն և զովացուցանեն. վառեն և *շիջուցանեն:* - 523. Զսառուցեալսն ի հաւատս բորբոքեն. և զվառեալսն չարութեամբ՝ *շիջուցանեն*. որպէս զելիմաս և զսիմոն: - 523. Դարձեալ՝ ջուր զաղտս լուանայ. զծարաւս *շիջուցանէ*. զպատկերս ցուցանէ: - 591. Այսպէս շնորհք հոգւոյն սրբոյ ի մկրտութեանն զաղտս մեղաց լուանայ. զծարաւ հոգւոյն բանիւն աստուծոյ *շիջուցանէ*. և զկորուսեալ պատկերն աստուծոյ դարձուցանէ: - 591. Երրորդ՝ զի ջուր արտաասուացն զհուր մեղացն *շիջուցանէ:* - 619

**ՇԻՐԻՄ +** Իսկ *շիրիմն* յիշատակ այնոցիկ ուր զազգին մեռեալքն դնէին: - 678

**ՇԻԻՂ +** Աղաւնին աւետաբեր է շնորհաց. որպէս ի տապանն նոյի եբեր *զշիւղ* ձիթենւոյն. որ ցուցանէ զշնորհս մկրտելոցն: - 525

**ՇԼՆԻ +** *Շլնիքն* և ոսկր լիսեռնածև: - 243

**ՇՂԹԱՅ +** Մետասաներորդ՝ դնի ի բանտ, և կապի՛ ի *շղթայս* մեղաց: - 424. Երրորդ՝ զի *շղթայք* մեղաց այսպէս ունին զկարգն. զի նախ որկորստութեամբ լնու զորովայնն. և յետ այնորիկ պոռնկութեամբ թափէ՛ զնա. և ապա՛ արծաթ ժողովէ զի լնու զորովայնն և պոռնկի...: - 561. Իսկ վեցերորդ կոչին մակստացականք. այսինքն ի վեր ստացեալ աշխատութեամբ. որք հետևին միմեանց իբրև զչարս *շղթայից:* - 582

**ՇՄԱՒՈՆ -** *Շմաւո՛ն* է և Մատթէոս: - 348. Իսաքա՛ր է և *Շմաւոն:* - 348. Ռուբէն. *Շմաւոն*. և Գադ. **ժե** բիւր և **ռնծ** զօրք նոցա: - 378. Իսկ *շմաւոն* ո՛չ էր ապաշխարեալ, վասն որոյ ո՛չ օրհնեաց: - 409. Այլ և զզամբրի յազգէն *շմաւոնի* էր: - 409

**ՇՆԱԲԱՐՈՅ +** Չորրորդ՝ շանաճանճն. զի *շնաբարոյք* էին և մոլէին յառնականայս շնութեամբ. զի շանց է ոչ զուգակցիլ որպէս զայլ կենդանիս. վասն որոյ ի շանց ելեալ թունալից ճանճք խայթէին զնոսա: - 334

**ՇՆԱՄ +** Ըստ կարգաւորս *շնալ* կանանց՝ սրբութիւն նոցա համբաւեն: - 34. Այլ մեղքն հոգեկան նոյն է աստ և անդ. որպէս *շնալ* և գողանալ: - 369. Եւ որ զկին իւր արձակէ՝ նա՛ տայ նմա *շնալ:* - 401. ...զի վասն բոլոր ժողովրդեանն մին էր զուարակ. և վասն միայն քահանայապետին մին. և *զշնացեալ* դուստր քահանային այրէին. և զժողովրդեանն քարկոծէին. և վա՜յ ինձ զի անձամբ զանձն իմ դատապարտեմ: - 563. Զի **ժ** պատուիրանքն և է մահու չափ մեղքն են ըստ գոյացութեան մեղք. որպէս մի՛ *շնարն* և մի՛ գողանարն և մի սպանաներն և մի՛ սուտ վկայերն: - 565

**ՇՆԱՑՕՂ +** Նոյնպէս և տէր մեր փոխանակ *շնացօղ* ազգին հրէից ընկալաւ զեկեղեցի կոյս՝ և սուրբ ժողովուրդ իւր: - 313. Պոռնիկն ըստ այսմ որ *շնացօղ* է թէ կին և թէ այր՝ քարկոծէ՛ր օրէնքն: - 401. Երրորդ՝ զի խրատեցին *շնացօղք:* - 433. Յինգերորդ՝ զի մի՛ դատապարտեցի իբր անժուժկալ. զի էր ի քահանայական ցեղէն. և այսպիսիքս այրեալ լինէին. իսկ այլ *շնացօղք* քարկոծեալ: - 461

**ՇՆՈՐՀ +** Իսկ մարդիկ անձնիշխան կամօք և գործովք հասանին այն փրկութեան և *շնորհաց* և փառաց: - 18. Քանզի որպէս արեգակն ո՛չ տեսանի՝ եթէ ո՛չ լուսովն իւրով. այսպէս իմանալին աստուած ո՛չ տեսանի, եթէ ո՛չ լուսով *շնորհաց* հաւատոյն իւրոյ: - 32. Զի որպէս սատանայ ամբարտաւանութեամբն ընդդէմ աստուծոյ՝ զրկեցաւ ի լուսոյն, նոյնպէս և հպարտն զրկեցաւ ի *շնորհացն* ըստ երեմիայ: - 32. Ով արհանոսք՝ զի թէ որպէս զմեզ զորդի *շնորհօք* ասէք և արարած, մեք զի եմք *շնորհօք* որդիք՝ ունիմք ընդ մեզ և ընդ հայր շաղկապ. իբր թէ զլար զհոգին սուրբ: - 39. Դարձեալ անդրանիկ է ըստ *շնորհաց* հոգւոյն զոր ընկալաւ ո՛չ վասն կարօտութեան՝ զի լիապէս ունէր այլ զի գլուխ էր մեր՝ ընկալաւ՝ զի յանդամս իւր սփռեսցէ: - 41. Զի նմա՛ բնութեամբ է հայր, և մեզ ըստ *շնորհաց:* - 43. Եւ թէ ըստ մարդկութեանն իմանաս, մի՛ կարծիցես պարզև *շնորհ* գտալս զայս. զի այն նեստորին է: - 46. Եւ ընդ անուանցն *զշնորհն* յարմարեն: - 51. Պատասխանեմք նախ, որպէս ասէ ոսկէբերանն թէ՝ նորածնեալքն աւազանաւն՝ ըստ չափու *շնորհացն* արժանաւորեին իմաստութեան, թարգմանութեան, և այլն. այսպէս և ոմն *շնորհս* ընդունէր աղօթելոյ կարգաւորապէս. զի ի նմանէ ուսանէին և այլքն աղօթել: - 59. Եւ ցուցանէ զմիոյն ի բազումս ծաւալումն *շնորհաց* հոգոյն: - 60. Դարձեալ՝ հոգին սուրբ ելանէ ի հօրէ և առաքի յորդւոյ. և ինքնիշխան կամօք շնչէ *զշնորհս* իւր յորս կամի և որքան: - 66. Որք ուրանան զբնութեամբ միաւորութիւն աստուծոյ մարդացելոյն, այլ միայն բնակութեամբ և *շնորհիւ* որդէգրութեան ելեալ յաստուածութեանն փառս. որպէս ասեն նեստորականքն: - 66. Երկրորդ՝ զի թէ նա՛ *շնորհիւ* ունի զորդիութիւնն և ո՛չ էապէս, ապա ուրեմն մասամբ և ըստ կարգի ունի՝ և ո՛չ զլրումն աստուածութեանն. զի *շնորհն* է մասնաւո՛ր պարգև: - 66. Այլ

ի հարկէ **բ** գոլ խոստովանին. զոմն բնութեամբ՝ և զոմն *շնորհիւ:* - 66. Իսկ թէ և նա *շնորհիւ* ունի զորդիութիւնն, զիա՛րդ կարէ տալ ումեք զոր հազիւն հարստացաւ: - 67. Վեցերորդ՝ զի թէ մեք *շնորհիւ*՝ որդեգրեալքս կերպանամք առ ճշմարիտ և բնութեամբ որդին, և թէ և նա՛ է ըստ մեզ *շնորհիւ*, պիտո՛յ է նմա վերնագոյն բնութեամբ որդի մարմնացեալ ի յոր կերպասցի և սա՛ ի նմանութիւն նորա *շնորհօք* որդի: - 67. Զի թէ զաստուածութիւնն բնութեամբ ասես, ապա զմարդկութիւնն *շնորհօ՛ք* ասես: - 69. Զի թէ ասես զառ ի յաստուծոյ հօրէ բանն, ահա կարգեցեր զնա ընդ եղեալքս կարօտ սրբութեան և *շնորհօք* որդիութեան: - 69. Իսկ թէ զոր ի զաւակէն դաւթի առանձին, զիա՞րդ եթէ ինքն *շնորհօք* է սրբեալ՝ սրբեսցէ տիրաբար զառ ի նա՛յն հաւատացեալս: - 69. *Շնորհօ՞ք* ասեմք այժմ հոգի քրիստոսի և ո՞չ բնութեամբ: - 69. Նմանապէս ասա՛ և զայս. զբնութեա՞մբն որդի ասես ընդ աջմէ մեծութեանն նստեալ, թէ որ *շնորհօքն* որդիացեալ ըստ քեզ: - 70. Այլ նոքա ո՛չ խոստովանին զաստուած մարդացեալ. այլ՝ կամ ի նախագոյացեալ անձն բնակեալ ասեն զաստուածայինն բնութիւն, և կամ *շնորհօք* որդիացեալ որպէս նեստորի թըւի: - 81. Որք **բ** անձն և **բ** բնութիւնս՝ և **բ** կամս՝ և **բ** գործս բաժանեն քրիստոսի. **բ** որդի՝ և **բ** քրիստոս յայտնապէս ասեն. զմինն տէր, և զմինն ծառայ, զմինն բնութեամբ որդի աստուծոյ, և զմիւսն *շնորհօք*. և այլն: - 82. Դարձեալ՝ որպէս ասեն աստուած և մարդ անհաւասար. այսինքն հզօր և տկար. անեղ և եղական. բնութեամբ և *շնորհօք:* - 90. Զի որպէս նըւաստացաւ և եղև մարդ, նոյնպէս և *շնորհք* տըւաւ նմա յաստուծոյ և ի մարդկանէ: - 94. Եւ այժմ զինեսցուք առ քեզ՝ քոյին բանիւ. որպէս դուդ ասես՝ *շնորհօք* տըւաւ մարդոյն այն անուն օծութեան և որդիութեան և տէրութեան և իշխանութեան: - 94. Զի եթէ վարձ նահատակութեան են այդոքիկ, ո՞ւր իցեն *շնորհք:* - 94. Իսկ եթէ *շնորհօք*, զիա՞րդ յետոյ ի ներգործութեանց ասես հանդիպիլ այնոցիկ: - 94. Եւ դարձեալ՝ եթէ *շնորհօք* որդի և օծեալ, և ո՛չ աւելի նա քան զմեզ. զի և մեք չեմք ծառայ, այլ՝ որդի: - 94. Սակայն նա բնութեամբ և էութեամբ միացաւ. և սոքա *շնորհօք* և ժամանակաւ: - 95. Ա՛րդ՝ եթէ պակա՛ս է *շնորհք* և իմաստութիւն նորա, մեք զիա՞րդ լիութեամբ առաք: - 97. Եւ այժմ առ քեզ խօսեսցուք ըստ վկայութեան կարգիս ո՛վ նեստորական երկաբնակ և մարդադաւան որոշօղ քրիստոսի, և որոշեալ ի *շնորհաց* նորին: - 98. Զի՞նչ է *շնորհքն*. և զի՞նչ *շնորհք* քահանայութեան: - 102. Եւ զի որդին աստուծոյ բնութեամբ որդի մարդոյ եղև, մի՛ յերկուանալ թէ լինիցիս և դու *շնորհօք* որդի աստուծոյ: - 107. Երրորդ՝ բազմանայ ի յէութիւն եղելոցս. և բազմապատկի ի կեանս. ի *շնորհս*. և յայլ պարգևս: - 110. Յինգերորդ՝ սկիզբն էութեան. և պատճառ կենաց և *շնորհաց* և այլոց: - 110. Եւ գիտելի է, զի յարացուցիս և նախասահմանութեանս՝ արարողական պատճառ է աստուած. և նիւթական պատճառ իրն այն որ է նախասահմանի. և տեսական պատճառ է՛ կարգն. զի նախ տըւեալ լինի *շնորհքն* աստ. եւ ապա փառքն ի հանդերձեալն. և կատարողական պատճառ՝ զի լինիցիմք սուրբք և անբիծք: - 112. Եւ հոգւոյն *շնորհք* իջանէ ի մեղաւորս և լուսաւորէ: - 125. Եւ տէր մեր հաւասար ողորմութեամբ և արդարութեամբ. զի որքան տեսանեն ողորմութեամբ՝ ձգտին առ *շնորհն* արդարութեան: - 127. Իսկ արժանաւորաց զհոգևոր *շնորհս* և զհաւատս աստ, և ի հանդերձեալն զփառս անվախճանս: - 127. Իններորդ՝ սկիզբն է *շնորհաց* որպէս այժմ. և կատարումն փառաց ի հանդերձեալն: - 130. Չորրորդ՝ **գ** որպիսութեամբ. բնութեամբ՝ *շնորհօք*՝ և փառօք: - 134. Ասեմք եթէ՝ նոքա երեքեան դասքն՝ այսինքն աթոռք՝ քերոբէք՝ և սերոբէք՝ միակարգ միապատիւ և գերազանց էութիւնք են. զի անընդմիջաբար յաստուծոյ ամենայն լուսափայլութիւնք իմաստք և *շնորհք* ի նոսա հեղանին համակարգապէս. և ապա նոքօք յայլ ամենայն գոյս երկնաւոր և երկրաւոր: - 135. Իններորդ՝ զի ամենեքեան հրեղէն բնութեամբ են ի *շնորհս* և ի փառս անփոփոխելիք: - 137. Զի՞նչ նշանակէ *շնորհն:* - 139. *Շնորհն* երբեմն ի տեղի ողջունի դնի...: - 139. Երբեմն զմարմնական տուրս *շնորհք* կոչէ...: - 139. Զի՞նչ է *շնորհ* քահանայապետութեան: - 140. Նա՛խ՝ թէ *շնորհս* այս անե՞ղ է թէ եղական: - 140. Վասն առաջնոյն գիտելի՛ է, զի ամենայն *շնորհ* բղխո՛ւմն է և ճառագայթ...: - 140. Այլ արդ՝ *շնորհքն* ըստ իւրում ինքնութեան է՛ անեղ՝ յանեղ է էն յառաջեալ, և նախախնամաբար եղելոցս հաղորդի, և յիւրմէ էութենէն ո՛չ փոփոխի: - 140. Վասն երրորդին անչա՞փ է թէ չափաւոր՝ գիտելի՛ է, զի անչա՛փ է *շնորհն* ըստ իւրում ինքնութեան. այլ չափաւորի՛ ըստ տըւողին կամաց և ըստ ընդունողին կարեաց. որպէս բան մարդոյ ի լսելիս: - 140. Զամենայն հրեշտակս բարի արար աստուած, այլ ո՛չ ծայրագոյն բարիս. այլ միջակս. որ է ի մէջ անփոփոխ և փոփոխական բարւոյն. այնպէս՝ զի թէ դառնային և սիրէին զայն՝ որ ի վեր քան զինքեանս, ելանէին յորպիսութիւն *շնորհաց* և փառաց. որպէս այժմ են հրեշտակք բարիք: - 146. Երրորդ՝ որպէս պօղոսի տուաւ խայթ մարմնոյն զի մի՛ զ'ի վերուստ առեալ *շնորհն* և զօրութիւն՝ հպարտութեամբ լքանիցէ...: - 158. ...այսինքն թէ՝ որպէս ես աստուածային մարմնոյս

զօրութեամբն յաղթեցի փորձողին, նոյնպէս և դու *շնորհօք* իմովք՝ տկար մարմնով քո՝ յաղթես և նկուն առնես զնա: - 159. Եւ այս ո՛չ պատճառի ի տկարութենէ *շնորհացն* որ միշտ նոյնպէս է նախ և յետոյ. այլ ի տկարութենէ անձինն շրջելոյ: - 166. Դարձեալ ասեմք թէ ո՛չ միապէս է մեղքն նախ քան *գշնորհին* և յետ *շնորհացն*. զի առաջինն անգիտութեամբ էր, և վերջինն գիտութեամբ. և առաջինն հաւատովք սրբի, և վերջինս ապաշխարութեամբ և սրբութեամբ: - 166. Նոյնպէս և հոգին նախ ի յինքենէ անտեսակ և անկատա՛ր է. և յետոյ կատարի յաստուծոյ *շնորհօք* և առաքինութեամբ և գիտութեամբ: - 192. Այս է պատճառն. զի ի սկզբանէ տիւն առաջանայր գիշերոյն. զի ադամ ի լուսոյ *շնորհացն* անկաւ ի խաւար մեղաց: - 194. Իսկ գիշեր յարութեանն քրիստոսի՝ փոխեաց զայս կարգ. զի յարութեամբն իւրով եհան զմեզ ի լոյս *շնորհաց* և արդարութեան: - 194. Եօթներորդ՝ զի փչեաց ի նա *գշնորհաց* հոգին զանազան պարգևաց, այժմ զքահանայութեան *շնորհն* երևեցոյց ի նա՛: - 219. Ութերորդ՝ զխոհեմութեան և խօսից և ձայնից և տէրութեան *շնորհն* այժմ երևեցո՛յց ի յադամ: - 219. Երեսունէ՝ եօթն *շնորհքն*, և եօթն յանցանք, և եօթն պատիժն ադամայ: - 228. Երրորդ՝ հողն վերջին է ի տարերս. զի գիտացջէ *գշնորհս* աստուծոյ՝ որ այսպէս առաջին և պատկեր աստուծոյ ստեղծաւ: - 229. Եւ արդ ի կատարեալ մարդն հոգւով և մարմնով՝ փչեաց *գշնորհաց* հոգին ի մարդկայինս ազգ. և ունէին որ քան յանմեղութեան էին. և կորուսին ի մեղանչելն: - 253. Իսկ բանականս մարդ ո՛չ ամենևին նախախնամութեամբ է. զի հոգին ո՛չ ի ծնողաց, այլ ի *շնորհացն* աստուծոյ պարգևի: - 257. Եւ ստեղծմամբ զի ըստ գոյութեան իւրոյ *շնորհօքն* աստուծոյ նո՛ր պարգևեցաւ ընդ լինելութեան մարմնոյ: - 258. Եւ դարձեալ պարզ և յայտնի, այսպէս ասէ սուրբն գրիգոր նիւսացին եթէ, բանականին *շնորհ* ընդ լրումն մարդկութեանս թա՛փ էանց ի տեսութիւնն աստուծոյ՝ որքանութիւնն և որպիսութիւնն...: - 258. Եւ իւրաքանչիւր ոք ծննդեամբ յառաջ եկեալ առնու զնոյն պատկերին *շնորհ* ի ծագմանէն աստուծոյ. և լնուն զնոյն թիւ որքանութեան զոր ետես աստուած նախքան զլինիլն աշխարհի որպէս ասէ առաքեալն: - 258. Եւ ի **իա** աւուրցն ի վեր՝ երևեալ շնչոյն ձևակերպէ՛ զկերպ մարդոյ մինչ ի **խ** օր արու մանկան. և իսկոյն հեղի ի նա՛ հոգին բանական ի *շնորհացն* աստուծոյ ծագեալ ի նա: - 261. Եւ ըստ որում լոյս *շնորհաց*՝ հաւատ և լոյս անուանի: - 269. Երկրորդ՝ *շնորհիւ* ընկալեալք որպէս բեւէլիէլ. եղիաբ ուրիեանց. և սողոմոն: - 269. Քսաննմեկ, զի *շնորհ* քահանայութեան ընկալաւ: - 272. Դարձեալ՝ ասեմք եթէ **գ** կերպիւ մարդն իմանի պատկեր. այսինքն բնական, *շնորհաց*, և փառաց: - 273. Իսկ պատկեր *շնորհաց* և փառաց է, կատարելապէս ճանաչել և սիրել զաստուած. և այս է նմանութիւնն զոր կատարեալքն ունին աստ և ի վերին գաւառին: - 274. Վեցերորդ՝ զի թէպէտ ի ձեռագործ հանդերձից մե՛րկ էին, սակայն ի լուսոյ *շնորհաց* զարդարեա՛լ էին: - 278. Իսկ մարգարէութիւնն լռեաց, զի ո՛չ ևս երևի բան մի յիշատակ *շնորհաց* նորա: - 279. Ո՞ր է **է** *շնորհքն* ադամայ զոր ետ աստուած: - 279. Իսկ այն որ ինքն զգեցուցանէ, նշանակէ՛ զինքնազգեստ փառս անմահութեան, զոր այժմ զգեցոյց քրիստոս *շնորհօք*, և յետ յարութեանն զգեցուցանէ փառօք: - 281. Ըստ իրին նշանակէր *գշնորհաց* հոգին, զոր ի մարմին եղելոցն վերացոյց. և ի վերնատունն դարձեալ փչեաց: - 282. Ո՛չ կերին. զի թէպէտ ժողովեաց, սակայն ո՛չ կերին. այլ *շնորհօքն* աստուծոյ կացին որպէս մանուկն յարգանդի մօրն ապրի: - 294. Ենովք *շնորհ*: - 299. Երեք *շնորհօք* հաւասարք են մելքիսեդեկ և աբրահամ. այսինքն քահանայութեամբ, թագաւորութեամբ, և մարգարէութեամբ: - 300. Վեցերորդ՝ նուիրեաց մելքիսեդեկ զպատարագն և ընկալաւ զտասանորդն. որպէս քրիստոս պարգևէ՛ հաւատացելոց *գշնորհս*, և առնու զտասնեակս զկատարեալ և զբարի գործս. կամ զտասն բանեան օրէնս **ժ** զգայարանօք: - 301. Երրորդ՝ զի մելքիսեդեկ քահանայ ո՛չ ըստ մարմնական ինչ օծմամբ իւղոյ որպէս այլոցն, այլ *շնորհօք* հոգւոյն անընդմիջաբար: - 301. Չորրորդ՝ ըստ գերազանցութեան. զի յանկարծակի ծագէ՛ ի մեզ *շնորհն* աստուծոյ եթէ ի հաւատս՝ և եթէ յայլ ինչ գործս ի հաճոյսն աստուծոյ: - 308. Նոյնպէս և ծնունդք սուրբ աւազանին որք են անդրանիկք և անդամք քրիստոսի եղեալք, ագահութեամբ և պոռնկութեամբ կորուսանեն *գշնորհն* երկնաւոր. և ո՛չ լան և ո՛չ զղջան որպէս եսաւ: - 309. Եւ թէ լան և զղջան բոլոր սրտիւ ի ձեռն ապաշխարութեան, գտանեն վերըստին *գշնորհն* անդրանկութեան, և հասանին թողութեան մեղաց: - 309. Եւ մեք առանց արծաթոյ միայն ձրի *շնորհօքն* քրիստոսի լինիմք փրկեալք և ապրեալք: - 314. Նոյնպէս և քրիստոս իմաստութեամբն իւրով կերակրէ՛ զնոսա և զգեցուցանէ որպէս իդ երիցանցն, որ տուաւ նոցա արկանելիս սպիտակս. այս է *շնորհն* մաքրութեան զոր ընկալան ի քրիստոսէ: - 315. Եւ յա՛յտ է աստի, զի սքանչելիքն քրիստոսի՝ *շնորհք* մարդասիրութեան է առաւել քան զմովսէսին: - 328. Չորրորդ՝ զի գիտասցեն թէ գոյնք և համք զանազան կերակրոց և պտղոց ո՛չ իւրովի պատրաստին, այլ ի *շնորհացն* աստուծոյ: - 339. Վեցերորդ՝ նախ ցօղն կարապետ իջանէր. և ի մեզ

*շնորհքն* նախապատրաստութեան ճաշակմանն: - 339. Եւ **է** ճրագն՝ **է** արփեան *շնորհք* հոգւոյն սրբոյ: - 347. Եւ **գ** ըստ *շնորհաց*. որպէս ի ջրոյ, ի հրոյ, և ի վիմէ. ի տիպ տեառն մերոյ որպէս ասացաւ: - 353. Յաասրակ, զի ամենայն քահանայ միջնորդ և հաշտարա՛ր է աստուծոյ և մարդկան. զընծայս ժողովրդեանն աստուծոյ նուիրելով և յաստուծոյ *շնորհս* և քաւութիւն ժողովրդեանն առնելով: - 354. Երրորդ, այն առանց գթութեան հատուցանէր պատիժս պարտուց. իսկ տեառն մերոյ *շնորհիւ* և ողորմութեամբ...: - 354. Նոյն և Իւղ զուարթարար. և նիւթ լուսոյ և *շնորհաց:* - 361. Երրորդ՝ *շնորհ* ինչ տուեալ յաստուծոյ ի յօգուտ այլոց, ախտիւ ապականեն զնա՛: - 369. և Իւղն *շնորհք* հոգևորք: - 375. Եւ այժմ, օրհնեալք եղերուք ի *շնորհաց* սուրբ հոգւոյն ասեմք: - 380. Երրորդ՝ զի բուրվառովն՝ աստուծոյ ընծայէր և գաւազանաւն *զշնորհս* ի ժողովրդեանն: - 382. Երրորդ՝ ջուր սրսկման զոպային, է՛ տարածումն աջոյն՝ և օրհնութիւնն ժողովոյն ի *շնորհաց* սուրբ հոգւոյն: - 384. Եւ տե՛ս *զշնորհս* խոստովանութեան. վասն այն որ զղջացաւ և յայտնեաց, ի հնգէն զմին տայ տուգանք: - 384. Եւ դարձեալ՝ ոչ ինչ *շնորհ* ունէր բան նորա. զի այնքան օրհնեաց զժողովուրդն, ընդէ՞ր ոչ դարձաւ մահն և սատակումն: - 388. Ապա յա՛յտ է զի անօրհնին ո՛չ անէծքն ունի զօրութիւն. և ո՛չ օրհնութիւնն *շնորհք:* - 388. Եւ բաւականութիւն սոցա է այսպէս. զի եմք մարմին հոգի և միտք գոյացեալ. և ունիմք կարիս և ինչս և *շնորհք* և կրօնք: - 389. *Շնորհքն* է զարդ հոգւոյն և կրօնքն մտաց. և կամքն իշխան և կառավար սոցա: - 389. Երրորդ՝ ըստ օգտութեան աստ. զի փորձին ընտրեալքն. և յետ մահու *շնորհաց*. և յարութեանն փառաց լինին առիթք: - 394. Ո՛չ միայն հրէի կամ հեթանոսի, այլ որք նուիրեն նմա զհաւատս ամբողջ սրբութեամբ՝ արժանի լինին *շնորհացն* նորա: - 398. Իսկ երկիրն նոր օրհնացս ո՛չ բնական իմաստութեամբ հեթանոսաց ոռոգի, այլ *շնորհօքն* աստուծոյ և հաւատով դալարի: - 398. Նոյն և երկիրն վերինն երուսաղէմի յանեզրական ծովէ՝ յամպոյ հոգւոյն և *շնորհացն* իմաստութեան ոռոգի. վերին և ներքին դասք հրեշտակաց՝ և մարդկան: - 398-399. Չորրորդ՝ որդին բնութեամբ. և *շնորհօք* նորածնեալք աւազանաւն որդիք աստուծոյ կոչին *շնորհօք:* - 402. Իսկ ոմանք զքրիստոսէ՛ ասեն բնութեամբ և *շնորհօք* որդի. որպէս նեստորք և քաղկեդոնիկք անիծեալք. զի այսպէս լինին **բ** որդիք և **բ** անձինք: - 402. Եւ բնութեամբ աստուած՝ մարմնովն. և ո՛չ օտար և *շնորհօք:* - 402. Երկրորդ՝ զներքինս օրհնեմք, և աստուծոյ բարութեանցն կցորդեմք. ողորմութեան, պարգևաց, կամ այլ ինչ *շնորհաց*. և այսու եղանակաւ օրհնեմք զքահանայս. զժողովուրդս. զմեռեալս և զկենդանիս: - 406. Երրորդ՝ զեղմն մարգարէքն, և զօղ *շնորհք* մարգարէութեան ի վերայ նոցա: - 421. Եւ այն զի քամեալ լցաւ կուրն և ո՛չ երկիր. զի մնացին և կատարեցան բանք մարգարէիցն ամենայն և ո՛չ եղծան. իսկ յետոյ հոգի տեառն ելից զտիեզերս մարգարէութեամբ և *շնորհօքն* քրիստոսի: - 421. Եւ նոյնպէս ամենայն հաւատացեալք մկրտին. և զնոյն *շնորհք* պարգևաց ընդունին: - 421. Յինգերորդ՝ բառնի *շնորհքն* աստուծոյ: - 424. Այլ *շնորհք* նորոյս կարողութեամբ արդարացուցանէ զմարդ այնպէս, մինչ զի սպիք մեղացն ջնջին և յիշատակութիւնն ծածկի: - 433. Եւ որպէս *շնորհք* մկրտութեան առաւել է քան զքլփատութիւն նոցա, զի զմեղս սրբէ և զարքայութիւնն բանայ: - 433. Սոյնպէս և *շնորհք* ապաշխարութեան նորոյս առաւե՛լ է քան զհնոյն. զի առանց գործոց հատուցման ո՛չ կարէին արդարանալ. իսկ աստ *շնորհօք* թողութեանն միայն, կարէ՛ արդարանալ: - 433. Եւ *շնորհք* նոր օրհնացս հայի յողորմութիւնն աստուծոյ և ի փառս վերինն եկմի որպէս ասացաւ ի վերոյ: - 439. Եւ եկեղեցի փոխանակ բարեաց *զշնորհս* և զփառս: - 441. Յինգերորդ՝ էեկի *շնորհօք* բազմապատկեալ ի հոգւոյն. ոչ առաւելու արգելեալ. և ոչ նուազէ բաշխեալ: - 444. Եւ այս է նշանն, եթէ տեսցես զվերանալն իմ, ապա լինի՛ պատիժ նոցա. ապա թէ ոչ տեսցես՝ չեն արժանի պատժոց. այլ *շնորհքն* խնայէ՛ ի նոսա: - 445. Բայց զի յուսացեալ ի բանն ճշմարտութեան յաղագս որոյ բանս հարցափորձութեան, հետևելով ուսուցչացն ուղղութեան, և յուսոյ ուսողացդ նպաստութեան. բացցուք զբերանս մտաց, և ձգեսցուք ի մեզ զհոգին *շնորհաց:* - 456. Եւ է՛ ողորմութիւն նորա ծրի *շնորհօք* և պարգևօք. իսկ արդարութիւնն տուրք փոխարէնք և հատուցումն: - 457. Եւ ողորմութիւն և *շնորհք* հոգին սուրբ...: - 457. Երրորդն երևի յորժամ աստուած արդարացուցանէ զմեղաւորն. յորժամ պատրաստէ՛ զինքն առ *շնորհն* գործելով զբարին: - 459. Նա՛խ՝ սրբութիւն հասարակ. որպէս *շնորհք* մկրտութեան և խոստովանութեան. զի որք անցանեն ընդ նա՞ սրբին: - 462. Երկրորդ՝ *շնորհք* եզական. որպէս սրբեալքն յարգանդէ երեմիաս և յովհաննէս մկրտիչ...: - 462. Երրորդ՝ *շնորհք* կուսութեան. որ և սա՛ է յատկական եղանակ. որպէս սրբոյ կուսին: - 462. Առաջին որ է հասարակաց սրբութիւն մկրտութեան, մերժէ՛ զմեղս և տայ *զշնորհս:* - 462. Սակայն ըստ ներգործութեան մեծագոյն է սրբութիւն մկրտութեանն. զի տպաւորէ զկնիքն. այլ և բանայ զդուռն արքայութեան. այլ և պատրաստէ՛ զմարդն առ ի խորհուրդս ամենայն. զոր ո՛չ ներգործեն ա՛յլ երկոքին

եզական *շնորհքն:* - 462. Իսկ չորրորդ սրբութիւնն լիակատար *շնորհաց* ի վերին գաւառն որ է՛ հրեշտակային՝ գերազանցէ՛ զամենեքումբք: - 462. Ա՛րդ՝ ունէր սուրբ կոյսն զհասարակ *շնորհացն* մկրտութիւն: - 462. Նաև ունէր *զշնորհս* սրբութեան արգանդին. զի յորովայնէ՛ սրբեցաւ յարգանդէ: - 462. Եւ ունէր *շնորհօք* արգելք ի մեղաց մահու չափ և ներելապէս. որպէս յովհաննուն և երեմիային: - 463. Այսպէս գերազա՛նց է քան զամենայն *շնորհք* հեղեալ ի ստեղծուածս. այս է գերագոյն *շնորհք*. որ պատրաստեաց զկոյսն առ մայրութիւն աստուծոյ: - 463. Երկրորդ՝ վասն ազգականութեան կուսին, առաքեցաւ կոյսն բնութեամբ՝ առ կոյսն *շնորհօք:* - 463. Յինգերորդ՝ ցուցանէ *զշնորհն* որ ասէ՝ «լի *շնորհօք»* ըստ այլ թարգմանչաց: - 464. Երկրորդ՝ ըղձական *շնորհաց*. ըստ առաքելոյ «*շնորհք* ընդ ձեզ»: - 464. Եւ *զշնորհն*՝ յասելն «լի *շնորհօք»:* - 464. Դարձեալ ողջոյնս այս՝ ունի նշանակութիւն գերազանցութեան կուսին. բնութեան, *շնորհաց*, և փառաց: - 464. *Շնորհաց*՝ ասելն «լի *շնորհօք»:* - 464. Նախ՝ թէ ո՞րպէս պատւով ետ զողջոյնն կուսին ասելով «ուրա՛խ լեր լի՛ *շնորհօք»:* - 464. Զի մի՛ յօրինաց, այլ ի *շնորհացն* քրիստոսի իմացուք զարդարութիւն և զփրկութիւն մեր: - 467. Այլ և սուրբ յամենայն մեղաց. և լի ամենայն *շնորհօք* և առաքինութեամբ. զի «ի լիութենէ նորա՝ մեք ամենեքեան առաք *զշնորհս»* ըստ յոհաննու: - 470. Ոմանք եռակի ասեն. այսինքն աստուածային և մարդկային և *շնորհօք:* - 471. Վեցերորդ ծնունդ՝ *շնորհօք* ի սիրտս հաւատացելոց ըստ պօղոսի, «եթէ փորձ ինչ ունիք զքրիստոսի, որ ինև ընդ ձեզ խօսի»: - 471. Երրորդ՝ կոչի անդրանիկ ըստ հոգւոյն *շնորհաց*. զոր նախ ընկալաւ իբր գլուխ՝ և եհեղ յանդամքս իւր: - 473. Իսկ բանն աստուած մարդացեալ՝ էութեամբ է առ հայր. պահպանութեամբ ի բոլոր էակքս. *շնորհօք* յամենայն սուրբս. և բնութեամբ ի մարմնի միաւորեալ: - 478. Երկրորդ՝ զի ցուցցէ զճշմարիտ մարդեղութիւն իւր և ո՛չ կարծեսցի առ աչօք. որպէս զրկեալքն ի *շնորհաց* նորա ասացին: - 485. Ա՛րդ՝ զհինն զամենայն կատարեաց և վճարեաց. և ապա՛ նորոյս սկիզբն էարկ մկրտութեան և *շնորհաց:* - 485. **Իսկ տէրն մեր էր անդրանիկ ի հօրէ և անդրանիկ ի մօրէ. և անդրանիկ *շնորհաց* և արդարութեան. և անդրանիկ յարութեան մեռելոց. վասն որոյ անդրանկապէս ընկալաւ զօրէնս թլփատութեան**: - 486. իսկ քրիստոս ո՛չ ունէր զմեղս. վայն այն վաղվաղակի ել ի ջրոյն. և նշանակէ ի մեզ *զշնորհաց* հեղումն. որ մկրտեալն ազատի ի մեղաց և իսկոյն ելանէ յառաքինութիւնս: - 487. Չորրորդ «ձայնն հօր». նշանակէ թէ մկրտութեամբն լինիմք *շնորհօք* որդիք աստուծոյ. որպէս ասէ աւետարանն յոհաննու...: - 487. Այն է որ հրեղէն լեզուաւ սփռեաց յառաքեալսն *զշնորհս* հոգւոյն սրբոյ: - 488. Երրորդ՝ զի եբարձ զհոգին *շնորհաց:* - 491. Եւ երկայնութիւն աստուածային *շնորհին:* - 493. Չորրորդ դարձեալ՝ դ թև խաչին նշանակէ զչորս բարերարութիւնս քրիստոսի. զի վերին մասն ցուցանէ զբացումն արքայութեանն երկնից. ներքինն զաւերումն դժոխոց. աջն զբաշխումն *շնորհաց*. ահեակն զթողութիւն մեղաց: - 493. Աջն *զշնորհս* արդարոց. ահեակն զպատուհաս մեղաւորացն: - 493. Որպէս այնոքիկ որք զօրացան այսու մահուամբ և զորդեգրութեանն ընկալան *շնորհ* և նահատակեցան, նոքա չարչարակից եղեն քրիստոսի, և փառացն հաղորդակիցք: - 497. Յինգերորդ՝ որպէս մեղքն զամենեսին մեռոյց, և *շնորհքն* առաւել զամենեսին կեցոյց որ գերազօ՛րն է ի վերայ մեղաց: - 507. Տասներորդ՝ առաջին գալուստն քրիստոսի ողորմութեան էր և *շնորհաց*. և երկրորդն արդարութեան և հատուցման: - 507. վասն զի *շնորհաց* և ազատութեան էր ժամանակն. պա՛րտ էր մեղաւորացն ընդ արդարոցն վայելել ի *շնորհն:* - 507. ...եթէ քրիստոս յարեաւ ի մէջ գիշերի. զի այց արասցէ մարդկան ազգի. և զանկեալքս ի խաւարի և ի ստուերս մահու՝ ի լոյս գիտութեան և *շնորհաց* յարուսցէ: - 514. Յինգերորդ, այլք ասեն թէ հայցեաց ինչ *շնորհս* քահանայութեան որ չէր անկ կանանց: - 517. Արդ մի՛ մերձենար դու յիս անկատար գոլով. որպէս մայր քո եւա ի ծառն գիտութեան. յորժամ առ բնութեամբ իմ հայր՝ և ձեր ըստ *շնորհի*՝ և աստուած մարմնոյ իմոյ ես ելանիցեմ, որոտմամբ իջեալ հոգին զձեզ կատարէ՛. արժանաւորիք յայնժամ առ իս մերձենալ: - 518. Նա՛խ՝ որպէս ասաց սուրբն ներսէս՝ քրիստոսի բնութեամբ է հայր՝ և մեզ *շնորհօք:* - 518. Չորրորդ՝ զի փայլատակեալն անբաժանելի մնայ յինքենէ. այսպէս և *շնորհք* հոգոյն սրբոյ անբաժանելի գոլով բաժանեցաւ յառաքեալսն: - 522. Նա՛խ՝ զի յայսմ աւուր էջ հոգին սուրբ յառաքեալսն. և լուծաւ ասացեալն թէ «մի բնակեսցէ հոգի իմ ի մարդիկդ այդ յաւիտեան». և ետ առաքելոցն պարգևս և *շնորհս* զօրութեան: - 524. Իսկ աստուածաբանն ասէ, ուր պիտոյ էր՝ յամենայն լեզուս խօսիլ կարէին. զի լիցի *շնորհքն* խօսողաց և ո՛չ թէ լսողաց: - 525. Աղաւնին աւետաբեր է *շնորհաց*. որպէս ի տապանն նոյի եբեր զշիւղ ձիթենւոյն. որ ցուցանէ *զշնորհս* մկրտելոցն: - 525. Քսանևզ, Վասն է արփեան *շնորհաց*: - 526. Զի նա բնութեամբ է որդի աստուծոյ, և մեք *շնորհօք:* - 528. Եւ *շնորհք* իմաստութեան ի մեզ ծաւալեալ...: - 532. Զի նա բնութեամբ. և մեք *շնորհօք:* - 534. Եւ դարձեալ՝ գլուխ է քրիստոս. և հերք՝

որպէս դասք վերին զօրացն ի նմանէ՛ առ մեզ իջուցեալ *գշնորհս:* - 534. Նա՛խ յաղագս *շնորհին* և ճշմարտութեան. և մարգարէք վասն ստուերին և օրինակին. և վարդապետք ըստ չափոյ պիտոյից նոցին: - 535. Չորրորդ՝ զմիտս լուսաւորելով յայտնապէս առանց երևակայութեան՝ միայն միտքն լուսաւորեալ ի *շնորհաց* հոգւոյն...: - 536. Երրորդ ի *շնորհաց* հոգւոյն. որպէս մարգարէիցն և առաքելոցն: - 537. Եւ որոց պարգևի մասնաւոր այս *շնորհ*, թէ և ո՛չ բոլորապէս ըստ նոցայն: - 537. Իսկ առ ներքինս օրհնելն՝ իշխանութիւն և *շնորհաց* տալն թարգմանի. որ քահանայն կամ եպիսկոպոսն տայ. որպէս ցուցաւ ի վերոյ ի **իզ** գլուխն, **հե** համարն: - 540. Ասեմք առ այս, թէ ձեռնադրեալն իցէ անարժան՝ ո՛չ առնու *շնորհս*. այլ դատապարտի ինքն և ձեռնադրօղն. զի սրբութիւն՝ շանց ետ: - 540. Իսկ թէ ձեռնադրօղն իցէ անարժան, միայն ինքն ոչ օգտի. այլ դատապարտի. իսկ *շնորհն* կատարի՛ ի յընդունօղն: - 540. Իսկ թէ երկոքին ևս իցեն անարժանք, *շնորհն* ոչինչ է օգուտ. այլ դատապարտութիւն լինի երկոցունցն: - 540. Եւ արձակելն ի դէմս *շնորհացն* է և սրբոց: - 540. Եւ նախ մաքրելն է ի մեղաց, և ապա լուսաւորելն ի *շնորհաց:* - 540. Ես խոստովանիմ զքրիստոս ճշմարիտ աստուած և բնութեամբ որդի աստուծոյ. և դու բաժանմամբ մա՛րդ դաւանիս և *շնորհօ՛ք* որդի աստուծոյ: - 548. Զի յղացեալ էր ի գերեզմանին թաղէոսի. և սնաւ անդ՝ ուր առաքեալն սկսաւ քահանայագործել. և փոխեաց յինքն *գշնորհս* նորա անդր եղեալ եպիսկոպոս: - 548. Եւ ի գալն յերկիրս հայոց, ետուն նմա օգնական զիւղն օծման զոր քրիստոս օրհնեալ էր. և զգեղարդն. և այլոց ազգաց չկա՛յ այս պարծանքս. զի մեր մեռոնս հանապազ և միշտ զնոյն *շնորհ* ունի: - 549. Այնպէս մարդ մեղօք զրկի ի *շնորհաց* լուսոյն. այլ լոյս խնամոցն աստուծոյ չէ հեռացեալ և սակաւ փայլէ ի ներքս ի տրտնջականն...: - 562-563. ...և յորժամ դառնայ ի մեղաց, վաղվաղակի *շնորհաց* լուսոյն արժանի լինի: - 563. Յայնժամ լոյս իմացականին կորեաւ և շիջաւ ի սատանայէ՛. և լոյս *շնորհացն* ո՛չ ներգործեաց ի նա. և ի նոյն սերտեալ հաստատեցաւ անզղջապէս. վասն որոյ մեծ են մեղք սատանայի և թողութեան ո՛չ հանդիպի: - 563. Ա՛րդ՝ մեղքն որ ընդ դէմ հոգւոյն սրբոյ՝ մանաւանդ ելանէ ի չար կամաց անձնիշխանականին. և ուղղակի մարտնչի ընդ դէմ *շնորհաց* հոգւոյն սրբոյ. և յիրաւի անթողլի՛ է: - 566. Նա՛խ առ հրէայսն. որ գիտէին զհոգին սուրբ՝ *շնորհաց* բաշխօղ. ուստի ելից հոգին զբէսէլիէլ ճարտարապետ. և զեօթնարփեան *շնորհս* թուէ եսայի...: - 566. Յոյսն է ստոյգ ակնկալութիւն հանդերձեալ երանութեանն. յառաջ եկեալ ի *շնորհացն* աստուծոյ և ի յատուկ արդեանցն: - 573. Եւ պատճառ յուսոյն նախ է *շնորհն* աստուծոյ. և ապա արդիւնքն մեր: - 573. Եւ *շնորհաց*. որպէս ասէ «որք յուսան ի տէր՝ ողորմութիւն տն շուրջ եղիցի զնոքօք»: - 574. Այսպէս և պատկեր վերստին ստեղծմանն ի մեզ կայանայ ի միութիւն *շնորհին* և յերիս ունակութիւնս: - 577. Որ է՛ հաւատ՝ յոյս՝ սէր. և սոքա երեքեան հեղո՛ւմն են յաստուածային *շնորհացն* ի բանական ոգիս. որով ուղղիմք յերկնային կեանս: - 577. Քանզի ի գործս առաքինութեան յորդորէ՛ զմեզ բնութիւն և բանականութիւն. և *շնորհն* յորդորէ՛ զբնութիւնն: - 578. Այս խօսի զհեղեալ առաքինութենէն լուսով *շնորհացն* աստուծոյ: - 578. Եւ մասունք արդարութեան են **գ**. այսինքն կրօնաւորութիւն. գթութիւն. *շնորհ*. վրէժխնդրութիւն. պահպանութիւն. և ճշմարտութիւն: - 579. *Շնորհ* է յիշատակ բարեկամութեանց. և կամք անդրէն հատուցմանց: - 579. Որ և ըստ այսմ կերպիս ո՛չ լինի տուեալ *շնորհք* հոգոյն ի մկրտողէն առ մկրտեալն...: - 588. Այլ զայն ասացեալ յառաջն զձև բանիցն. որ և արժանաւորապէս տուեալ լինի *շնորհք* հոգւոյն: - 588. Երրորդ, զի թէ կայր հնար որ ի ձեռն կնոջն տուեալ լինէր *շնորհք*, աստուածածին կոյսն մարիամ ընդէ՛ր ոչ եղև մերձ մկրտութեան որդւոյն իւրոյ ի յորդանան: - 589. և ապա՛ էջ հոգին ի մկրտելն նորա. զիա՞րդ ի ձեռն կնոջ լինի տուեալ *շնորհք* հոգւոյն լուացմամբ ջրոյն: - 589. Այսպէս *շնորհք* հոգւոյն սրբոյ ի մկրտութեանն զաղտս մեղաց լուանայ. զծարաւ հոգւոյն բանիւն աստուծոյ շիջուցանէ. և զկորուսեալ պատկերն աստուծոյ դարձուցանէ: - 591. Որ և *շնորհաց* նորա և թողութեանն հաղորդեսցուք: - 592. Այսպէս ջրովն մկրտիմք ի քրիստոս և որդիք աստուծոյ կոչիմք. և իւղովն ի *շնորհք* հոգւոյն սրբոյ միաւորիմք: - 593. Եւ գո՛րծ է այսմ խորհրդոյ՝ յաւելցնել *գշնորհն*, և դեղ հանապազորդ մեղացն: - 594. Զի *շնորհքն* աստուծոյ ո՛չ է մասն մասն. այլ բոլոր և կատարեալ: - 601. Ասեմք թէ՝ այնպէս է *շնորհք* խոստովանութեանն որ զյաւիտենից պատիժն ժամանակեայ առնէ. - 602. ...և տայ *գշնորհս* սրբութեան առ որ մերձենայ: - 605. Այսպէս բազմապատիկ թողութիւն շնորհէ քահանայականն կարգ՝ ձեռնդնելով և բանիւ *շնորհաց* սրբելով: - 605. ...և իւղով *շնորհացն* զուարթանամք և լուսաւորիմք: - 615. Երկրորդ, զի **է** է խորհուրդ եկեղեցոյ. և **է** արփեան **է** *շնորհք* հոգւոյն. և մի կատարմունքն ի մեզ, որ լինի **ը**: - 616. Նոյնպէս և մեք զբանեղէն պատարագս մեր տամք ի քահանայս ընծայել աստուծոյ, և բերել *գշնորհքն* թէ «խաղաղութիւն ամենեցուն»: - 624. ...որպէս ընծայէ՛ զաղօթս մեր աստուծոյ, նոյնպէս և ի նմանէ առնու

և տայ մեզ *գշնորհս* և զպարգևս հաշտութեան: - 625. Զի ընդ ամենեսեանն՝ զանձն նշանակէ. իսկ ամենեցունն՝ *գշնորհս* հոգւոյն սրբոյ ցուցանէ: - 625. Եւ առաւել յարմարէ քահանային *գշնորհս* հոգւոյն սրբոյ բաշխել, քան թէ զանձն: - 625. Եւ զայս տէրն ցուցանէ. երբեմն ասէր, «զխաղաղութիւն զիմ տամ ձեզ». որ է՛ *շնորհք* հոգւոյն: - 625. Եւ ապա՛ իբր զկնիք զբաշխումն *շնորհաց* ի հոգւոյն սրբոյ աղերսեմք: - 633. Եւ յերեքշաբաթին ըստ կարգի՝ մարգարէիցն և յովհաննու. որ միջնո՛րդ է օրինաց և *շնորհաց:* - 642. ...վասն որոյ թէ ոք սրբութեամբ երգէ՝ լցցի *շնորհօք* հոգւոյն սրբոյ: - 643. Որ և զանազան նկարքն՝ զանազան *շնորհաց* հոգւոյն նշանակք: - 646. ...այսինքն զպայծառութիւն գործոցն և զանմեղութիւն հոգւոյն զոր ընկալան ի *շնորհացն* քրիստոսի: - 648. Իսկ քրիստոնէիցս օրհնութեամբ է և *շնորհօք:* - 654. Երրորդ՝ ճանապարհ կոչի *շնորհաց* և մաքրութեան...: - 666. ...և զիմանալի լոյս *շնորհաց* ոչ ունին: - 669. ...նոյնպէս և մեք ողջունիւս զհոգին և *գշնորհքն* նորա ընդունիմք ի մեզ: - 673. Եւ վերջոյ ի հիւսիս. որ ցուցանէ *գշնորհն* որ ի հինն սիովնէ հնչեաց յեկեղեցիս հեթանոսաց...: - 674. Նոյնպէս և մեզ *շնորհացն* այնմ պարտ է հնազանդիլ և կատարել զկարգն: - 674. Եւ մկրտութեանն *շնորհք* և դաւանութիւնն սուրբ՝ հովանի և լուսատու լինի հոգւոյն: - 682. Նա՛խ՝ որպէս ասացաւ ի քահանայաթաղն վասն **է** *շնորհաց* հոգւոյն, և **է** խորհրդոց եկեղեցւոյ, և **է** առաքինութեանց, և **է** գլխաւորագոյն մեղաց, և **է** զգայարանօք մեղանչեմք, և է փոփոխմամբ հասակի...: - 683. Իսկ երրորդն ի դէմս Երրորդութեանն և է *շնորհաց* հոգւոյն զոր ընկալաք յաւազանին: - 683. Նա՛խ՝ որպէս մեք ի կիրակէ ուրախացաք և վայելեցաք ի *շնորհաց* յարութեանն քրիստոսի, ի միւս օրն և զնոսա մասնաւորեմք: - 684. Ողորմութիւն է ննջեցելոցն. և ո՛չ թէ գին աւետարանին *շնորհացն:* - 684. Զի որք ընկալան *գշնորհսն*, պա՛րտին նոքա ընչիւք իւրեանց զեկեղեցւոյն լոյսն վառել զաւուրս ութն: - 684. Այլ զտեսութիւն սրբոցն առաւելու լոյսն *շնորհաց* և մաքրութեան. և ազատումն ի թանձրութեանց մարմնոյն: - 685. Երկրորդն վասն *շնորհացն* քրիստոսի: - 686. ...որպէս ասէ մեկնիչն տեսլեան. եթէ սպիտակ հանդերձն *շնորհացն* քրիստոսի մաքրութիւնն է. որ սրբութիւն մեղաց մերոց արար քրիստոս. յոր ամենայնքն վայելեցաք. զի յորժամ սրբի հոգին, բնական ունի զպայծառութիւնն: - 690. Երկրորդ, աներևոյթ են ի տեսութեանց իւրեանց. զի զրկեալ են ի լուսոյ *շնորհաց* որով երանութիւնքն տեսանին: - 690-691. Ասէ մեկնիչն, սպիտակ հանդերձն զոր զգեցեալ էին՝ *շնորհացն* քրիստոսի մաքրութիւնն է. յորմէ ամենեքեան վայելեցաք որպէս ասէ առաքեալն. - 696. Ասեմք նախ՝ եթէ երկինք և երկիր մարմին գոլով նորոգին մարմնական հրով. իսկ հոգին զի է՛ անմարմին ՝ նորոգի *շնորհօքն* քրիստոսի և հոգւովն սրբով: - 701. Նա՛խ՝ զի աստ յայժմու կեանս *շնորհքն* է, իսկ անդ փառքն. որպէս աստ մեղքն է և անդ պատիժն. այլ ո՛չ քաւարան: - 702. Նա՛խ՝ յարութիւն է *շնորհաց*. որ զթողութիւնն մեղաց ընկալաք և զհաւատն քրիստոսի: - 710. Պայծառ հանդերձն զոր զգեցեալ են՝ *շնորհացն* քրիստոսի մաքրութիւնն է յոր ամենայնքն վայելեցաք. - 712. Նա՛խ՝ զի *շնորհն* աստուածային պատկերին որ համանգամայն կամեցաւ զբոլոր բնութիւնս ըստ հրեշտակացն օրինակի մուծանել ի կեանս...: - 716. Ո՛չ յարիցեն ամբարիշտք ի յարութիւնս հոգևորս. այսինքն ի մեղաց ի *շնորհքն*. այլ յառնեն մարմնով: - 724. Երկրորդ՝ զի ո՛չ ունին զլոյս *շնորհացն* որովք տեսանի աստուած. զի որք աստ ո՛չ տեսին հաւատով, և անդ ո՛չ տեսանեն իմացմամբ: - 740. Չորրորդ ի դատաւորէն զի նստեալ է ի յաթոռ *շնորհաց*. ըստ առաքելոյ յեբրայեցւոցն՝ «անկցուք առաջի աթոռոյ *շնորհաց* նորա և գտցուք զողորմութիւն ի դէպ ժամանակի»: - 742. Իսկ հատուցանէ բարի փոխանակ բարեաց և *շնորհ* փոխանակ *շնորհաց*, զի բարի և արդա՛ր է: - 744. Եթէ ումեք տուեալ իցէ *շնորհ* հասարակ կամ յատուկ, որպէս մկրտութիւնն և հաւատքն. քանքար և տաղանդ. իշխան և առաջնորդ. մեծութիւն և ինչք. կեանք լոյս ամանակ և այլն ամենայն. այսու եղանակաւ կշռոյ հատուսցի: - 747. Դարձեալ՝ առաջինն բնութեան է. երկրորդն *շնորհաց*. երրորդն փառաց: - 747. և Եօթներորդ կոչի հնձան եկեղեցի սուրբ. ուր ամենայն առաքինութիւնք մեր ժողովին. ու ճմլէ ապաշխարութեամբ և բաշխէ՛ զգինի *շնորհաց*...: - 749. Ութերորդ՝ հնձան կոչի և աւազանն սուրբ. զի ի նմա ճմլին և կորնչին ամենայն մեղք մեր. «լուացեալ արեամբ խաղողոյ զհանդերձս մեր» և զարդարեալ պէս պէս պարգևօք *շնորհաց* հոգւոյն: - 749. Զի ըստ առաջնոյն ամբարիշտքն կորուսին զաստուած և զամենայն բարի *շնորհս* և զփառս. և ոչ ունին յոյս ողորմութեանն աստուծոյ...: - 751. Իսկ Երկրորդն արքայութիւն, նշանակի յազատն սառա. որ ո՛չ ուժգնութեամբ մարմնոյն, այլ միայն *շնորհօքն* աստուծոյ ծնաւ: - 756. Իններորդ, և որք նախ քան զօրէնս՝ զերեսնաւորն. և որք ընդ օրինօքն՝ զկաւորն. և որք ընդ *շնորհօս*, զհարիւրաւորն տացեն պտուղ: - 758. Դարձեալ, ծառ կենաց է աւետարանն սուրբ տնկեալ ի մէջ եկեղեցւոյ դրախտին. բերելով պտուղ կենաց զիմաստութիւնն երկնաւոր. որ կեանս տայ ճաշակողացն զնա. և միշտ *շնորհս*

բժշկութեան և թողութեան մեղաց: - 768. Դարձեալ, ծառ կենա՛ց է աստուածածին կոյսն մարիամ բղխեալ յարմատոյն յեսսեայ. երկնուղէշ զարգացմամբ մշտասաղարթ կուսութեամբ ծաղկեալ և պայծառացեալ հոգւոյն սրբոյ եկաւորութեամբն. և պտղաբերեալ մեզ անմահ պտուղ զբանն մարմնացեալ. յորմէ վայելեալք երկնաւորք և երկրաւորք ի *շնորհաց* նորին զյաւիտենից կեանսն ժառանգեցաք: - 768. Որ եսդ տէր տէր հաւատարիմ յիսուս, անբաժանելի լեր ի զգայութեանցս. և յամենայն գոյացութեանց ստի իմոցս. ներկեալ խոստովանութեամբ և *շնորհօք* հոգի մարմին նիարդք իմ և աճառք: - 771. Յաւարտ և ի կատարումն Փառաց Պարգևաց Բանին և *Շնորհաց* նորին Հոգւոյ: - 771. Եւ է՛ ինչ ի ներգործութեանց հոգւոյն աստուծոյ *շնորհաց.* որ ծածկէ՛ յիմաստնոց և յայտնէ տղայոց յիւրաքանչիւր ժամանակս ըստ կամաց իւրոց: - 772. Իսկ թէ նա որ սկիզբն կորստեան ամենեցուն մեզ եղև և պատճառ ամենայն մեղաւորաց՝ ապրեցաւ *շնորհօքն* քրիստոսի. - 775. Ա՛րդ՝ որպէս հասեալ պատժոյն հաղորդեցան, նմանապէս և հասեալ *շնորհօքն* ազատեցան: - 777. Երրորդ՝ ժամանակ կենցաղոյս մինչև ի մահ, է՛ ընդունելութեան աստուծոյ. ըստ որում բազմեալ է յաքոռ *շնորհաց* ըստ առաքելոյ. իսկ յետ այնորիկ ո՛չ ևս. զի փոխի յաթոռ դատաստանաց ըստ աւետարանին: - 780. Իսկ զոր ինչ *շնորհօք* լինի ոք ստացեալ, կարէ՛ և մերկանալ. որպէս ադամ զեռակի *շնորհն.* և առ ջրհեղեղաւն...: - 782. Ապա զի՞նչ է այն՝ որ *զշնորհս* աւազանին ոչ ուրացութիւն և ո՛չ այլ ինչ նոյնպիսի մերկացուցանել կարէ: - 782. Ամենայն իր բնութեան՝ գոյացակա՛ն է նորին. և ամենայն պարգևք այսինքն *շնորհք* պատահական է ի զարդ նմին. յաղագս որոյ ո՛չ բառնին գոյացականքն. որպէս անմահութիւն դիւի և բան մարդոյ: - 782. Իսկ առ լուծումն խնդրոյս թէ վասն է՞ր արդեօք առ նորս *շնորհ*՝ որպէս աւազանին և կարգին ո՛չ բառնի ընդ բառնիլ շաղկապին. իսկ առ հնովն բարձաւ. որպէս յա՛յտ է ի վերոյ ասիցդ ադամայ և յայլոցն: - 782. Ասենք նա՛խ՝ եթէ ամենայն *շնորհ* զինչ և իցէ տուեալ բնութեան, ո՛չ քակտի ի նմանէ. թէպէտ ծածկի երբեմն վասն մեղաց: - 782. Զի որպէս բան պատկերին, այսպէս և բան *շնորհացն* եռակի. զի միապէս սոքա եղծանին մեղօք, և նմանապէս արծարծին մաքրութեամբ առ որ ոք և իցէ: - 782. Ապա յա՛յտ է համաձևանալ այսու՝ հնոյն *շնորհ* առ նորոյս: - 782. Դարձեալ, ամենայն *շնորհք* առ ո ոք և իցէ՝ բառնի վասն մեղաց. ո՛չ ըստ ունակութեան՝ այլ ըստ ներգործութեան կամ նշանակութեան: - 782. Այսպէս և ժանգ յանցանաց մկրտելոց և քահանայից՝ բառնայ զգործ՝ կամ զնշանակութիւն *շնորհացն.* իսկ յետ սրբութեան զղջմամբ՝ զիա՞րդ կրկնի ունակացեալն ի նմա՛: - 782. Այսպէս և ադամ զղջմամբ իւրով ընկալաւ. այսինքն երևեցոյց յինքեան զկորուսեալ *շնորհն:* - 783. Այլ զբանիս խրթնութիւն առնէ կոչմանցն անորոշութիւն. զի կոչի *շնորհ* իջեալն պարգև. որպէս մարգարէութիւնն: - 783. Կոչի և *շնորհ* գործ նորին. որպէս մարգարէանալ: - 783. Եւ առ ընդունակ նոցին դադարիլ *շնորհին* գործելոյ, բացբարձումն է շնորհին իջելոյ: - 783. Եւ առ ընդունակ նոցին դադարիլ շնորհին գործելոյ, բացբարձումն է *շնորհին* իջելոյ: - 783. Կրկին է *շնորհքն.* ոմն հասարակ և ոմն յատուկ: - 783. Եւ է՛ հասարակ *շնորհ*, հաւանութեամբ անձնիշխան կամաց՝ պատրաստել զինքն առ ի փրկութիւն օգնականութեամբ *շնորհին:* - 783. Եւ է՛ *շնորհ* յատուկ ընտրութեամբն աստուծոյ, որ պատճառ է՛ զփառս զանազան ներգործութեամբ. և է՛ **սա՛ ան՚ի բաց դնելի անզեղջ խոստմամբ** ի կողմանէ տուողին. որպէս է՛ առ մեզ շնորհք աւազանին: - 783. *Շնորհքն* որ տւաւ ադամայ, փոփոխական էր ըստ նմա: - 783. Իսկ *շնորհք* նորոյս ի ձեռն քրիստոսի տուեալ՝ ո՛չ է փոփոխական. զի վերստին նորոգման է *շնորհք* և անապականութեան: - 783. *Շնորհք* որ ի հինն զինչ և իցէ փոփոխական գոլով՝ օրինակ նորոյս էր. որպէս քահանայութեան և այլն: - 783. Իսկ *շնորհք* նորոյս հաստատ և անփոփոխ ի ճշմարիտ քահանայապետէն անփոխանցելի պարգևեալ: - 783. Նորս խորհրդոյ ***շնորհք*** **ոմանք են ան՚ի բաց դնելիք.** զի են կնիք ի հոգին անփոփոխ գոլով ընդ նմա. որպէս է՛ *շնորհք* կնքոյն դրոշմին և կարգին: - 783. են և այլ *շնորհք* մասնականք պարգևաց հոգւոյն. որպէս բան իմաստութեան և այլն: - 783. Իսկ որք զմի քանքար հաւատոյ կամ զմկրտութեանն *շնորհի* ի բաց կորուսանեն, ո՛չ զկնիքն խորհրդապէս, այլ զարժանն վարձու իրողապէս: - 783. Երրորդ, զի հաւատն է լուսաւորութիւն մտաց հեղեալ յաստուծոյ ի ճանաչել զհոգևոր բարիսն. իսկ դևք ո՛չ ունին զլոյս մտաց և ո՛չ զհեղումն *շնորհաց.* վասն որոյ ո՛չ ճանաչեն զհոգևոր բարիս: - 784. Չորրորդ, հեղմամբ *շնորհաց.* ըստ այնմ «մարմին և արիւն ո՛չ յայտնեաց, այլ հայրն իմ». և է այս տեսակաւորեալ հաւատ: - 784-785. Յաւանեացն տեառն *շնորհք*, և սխալանացն տկա՛րս անօրոյ: - 789.

**ՇՆՈՐՀԱԲԱՇԽ +** Իսկ հոգին սուրբ միշտ *շնորհաբաշխ* և պարգևատու: - 566

**ՇՆՈՐՀԱԼԻ +** Տնկական. զգայական. և բանական. վասն որոյ է ամսեայ ծնեալն ապրի և *շնորհալի* լինի վասն *շնորհալի* թւոյ եօթներորդին: - 263. Իսկ մարդոյն խորհուրդն ըստ չորից տարերց և երից

զօրութեանց տնկականին եօթեամբ կատարի. թիւ *շնորհալի* և մշտակոյս ըստ աթենայ. զի ոչ ծնեալ լինի և ո՛չ զայլս ծնանի: - 264

**ՇՆՈՐՀԱԿԱԼԻՄ +** Նա՛խ՝ զի *շնորհակալե՛մք* հոգւով, և գոհանամք մարմնով: - 406. Զի՞նչ է յորժամ գինի ըմպեմք, օրհնեմք և *շնորհակալեմք* միմեանց. և յայլ կերակուրս և ըմպելիս ո՛չ առնեմք նոյնպէս: - 655. Վասն այն նախքան զըմպելն օրհնեմք. և յետ ըմպելոյն դարձեալ *շնորհակալեմք*...: - 656

**ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ +** Նա՛խ՝ *շնորհակալութիւն* է և գոհութիւն երախտեացն աստուծոյ տրիտուր. ո՛չ իբր կարօտի, այլ անկարօտի որպէս աստուծոյ: - 406. Այսպէս և օրհնութիւն մարդկան որ գերագոյն է քան զմեզ, *շնորհակալութիւն* է և գոհութիւն. որպէս սրբոց կամ թագաւորաց և այլն: - 406. Երկրորդ՝ հոգևորին *շնորհակալութիւն*, և մարմնաւորին գոհութիւն: - 406. Երրորդ՝ ի խոստմունքն *շնորհակալութիւն*, և ի պարգևն գոհութիւն: - 406. Նախ գոհութիւն է և *շնորհակալութիւն* բազում երախտեացն առ մեզ: - 624. Նա՛խ՝ իբր գոհութիւն և *շնորհակալութիւն* աստուծոյ որ զօրացոյց զմեզ: - 627

**ՇՆՈՐՀԱԿԱՆ +** Երկրորդ՝ *շնորհական:* - 120. Իսկ *շնորհականն* է ընդդէմ այսոցիկ. զի պարզ և միեղէն իմացմամբ բարձրանայ յաստուածային գիտութիւնն. և այնպէս ի զարմացման լինի տեսութեամբ նորին: - 120. *Շնորհական* տեսութեամբ հաւասարի. այլ բնականաւն զանազանի: - 120. Ապա յա՛յտ է զի ա՛յլ է կարգ *շնորհականին*, և այլ է կարգ բնականին. զի բնականք ներքինք զվերնոցն բոլորապէս ունին և կոչին. այլ ո՛չ անդրադարձեալ. որպէս անհատն զտեսակն և զսեռն բոլորապէս ունի և կոչի. զի պետրոս մարդ է և կենդանի և կոչի. այլ կենդանին մարդ՝ կամ մարդն պետրոս ո՛չ է և ո՛չ ասի: - 136. Նա՛խ՝ հանճարն է՛ բնական իմաստութիւնն *շնորհական:* - 270. Զի **բ** օր ասացեալ է ի վարդապետաց. մին բնական օր և միւսն *շնորհական:* - 508. Եւ բնական աւուր սկիզբն է ծագումն լուսոյն. և *շնորհականին* ի մէջ գիշերն: - 508. Եւ *շնորհականն* հոգևոր. ուր սկսանին ամենայն տօնք սրբոց **գ** ժամով յառաջ քան զբնական օրն: - 508. Եւ գիտելի է, զի եռակի՛ է սէրն. բնական. բարոյական. և *շնորհական:* - 575. Բարոյականն առ ընկերն. և *Շնորհականն* առ աստուած: - 575. Եւ բառնին *շնորհականքն*. որպէս եռակին ասացեալ ադամայ. և լոյս մտաց. և երանութիւն դիւաց: - 782. Դարձեալ, գոյականքն ո՛չ ունին շաղկապ գոլոյ. այլ *շնորհականքն* զանմեղութիւն: - 782

**ՇՆՈՐՀԵՄ +** Իննևտասներորդ՝ Զի՞նչ է հաւասարն աստուծոյ, և բարձրացոյցն, և *շնորհեացն* անուն: - 30. Եւ միտն արտաքոյ ամենեցուն՝ մեզ *շնորհէ* զտեսութիւն և զկարողութիւն յիւրաքնաչիւր արհեստ: - 51. Եւ կամ յորժամ որպէս զիւր բարի *շնորհէր* հւրայնոցն՝ մարմնապէս փչեալ ի նոսա ասելով՝ «առէք հոգի սուրբ»: - 69. Դարձեալ՝ ընդ դէմ բերես *զշնորհեացն* նմա: - 94. *Շնորհեացն* փոխանակ տալոյն է. «զամենայն ինչ ետ հայր իմ ասէ». և այլն: - 94. Յիրաւի՛ ապա և նմա ասի *շնորհել* և տալ. եթէ զանուն և եթէ զիր: - 94. Այլ և՝ տալ՝ և պարգևել՝ և *շնորհել:* - 105. Ութերորդ՝ սիրելեաց և ատելեաց ընտրութիւն *շնորհէ:* - 126. Տասներորդ՝ բուսոց և տնկոց աճումն *շնորհէ:* - 126. Վասն առաջնոյն գիտելի՛ է, զի ամենայն շնորհ բղխո՛ւմն է և ճառագայթ, յանեղական լուսոյն իջեալ առ էակս ամենայն իմանալի և զգալի. և զարդարէ՛ զնոսա ըստ նմանութեան այնմ պարգևեալ *շնորհի*. եթէ ըստ բնութեան՝ և եթէ անձնական. ի հրեշտակս և ի մարդիկս: - 140. Այլ ինքեանց վերին էութեանցն գիտելի է թիւ նոցա՝ *շնորհեալ* յամէնիմաստ գիտութենէն: - 141. Երկրորդ՝ և զնիւթս մկրտութեան *շնորհեաց:* - 207. Եօթներորդ՝ ստուերապէս նշանակէր զազատութիւնն որ եղև մեզ ի ձեռն քրիստոսի. որ ազատեաց յօրինացն դժւարութեանց, և ի մեղացն, զթողութիւն *շնորհելով:* - 372. Եւ որ յառաջինն դառնայ. զի ներումն և թողութիւն *շնորհէ:* - 401. Արդ եղիսիէէ նշանակէ՛ զբանն աստուած. որ փոքրկացաւ և բովանդակեցաւ ի ծոց կուսին ի մարմնի միաւորեալ. և ապա ի խաչն բարձրացեալ կեանս *շնորհեաց* մարդկան: - 446. Դարձեալ՝ առաջին գալուստն ծածուկ փրկութիւն և կեանս *շնորհեաց*. իսկ յերկրորդին յայտնապէս յարուցանէ: - 446. Իսկ ի մահուն որ յարոյց զմեռեալն յորժամ մերձեցաւ ի յոսկերսն եղիսէի, ի տիպ մահուն քրիստոսի որ մահուամբն մեզ կեանք և յարութիւն *շնորհեաց:* - 446. Ա՛րդ՝ որպէս կենդանեաց *շնորհեաց* զթողութիւն, նոյնպէս և հոգւոցն առ հասարակ ազատութիւն. որպէս ասէ սուրբն եպիփան...: - 507. Որ և զդատողական աթոռս՝ երկոտասանիցն հաւասար *շնորհեաց:* - 546. ...և թողութիւն *շնորհեսցէ* յամենայն յանցանաց քոց. խոստովանելոցն և մոռացելոցն: - 602. Այսպէս բազմապատիկ թողութիւն *շնորհէ* քահանայականն կարգ՝ ձեռնդնելով և բանիւ շնորհաց սրբելով: - 605. Եւ ի լեառն ձիթենեաց հանեալ զնոսա և օրհնեալ՝ արար զնոսա Կաթողիկոսունս և Պատրիարգունս, զամենայն *շնորհելով* նոցա լիով: - 607. Հինգերորդ՝ քաւութիւն մեղաց *շնորհեցաւ:* - 657. Ա՛րդ՝ զայս կեանս *շնորհեաց* և զայն խոստացաւ: - 663. ...զի որպէս հոգևոր սիրով կեցաք. նոյնպէս սիրով բաժանիմք. և թէ իցէ քէն ինչ, զայն *շնորհմեք* միմեանց: - 673. Եւ երկնաւորն այն գաւառ՝ **լ** ամօք արագընթաց աստեղն ճանապարհ *շնորհէ:* - 763. Հաւատ ի մի աստուածութենէն ի մարդիկ *շնորհի:* - 769

**ՇՆՈՐՀԸՆԿԱԼ +** Վեցերորդ՝ *շնորհընկալք*. որպէս խոստովան որդիք. և ժողովուրդք. և քահանայք հայրապետաց: - 389

**ՇՆՈՒԹԻՒՆ +** Երկրորդ՝ զի խ քաղաք առին ի բենիամենէ՛ յուդայի ցեղքն վասն *շնութեան* կնոջն պատահելոյ. և կոտորեցին զնոսա առ հասարակ իեռ արս. և մնաց վեց հարիւր այր զոր յետոյ ըստացան ժառանգութիւն իւրեանց. որպէս յա՛յտ է ի դատաւորաց վերջքն: - 312. Իսկ մի այր և բազում հաւատք և բազում աստուածք՝ *շնութիւն* է հոգւոր: - 401. Նա՛խ՝ զի *շնութեան* էր որդի: - 433. Երրորդ՝ զի հատուցէ *զշնութիւնն* բերսաբէի անարատութեամբ նմին: - 439. Վասն որոյ և տէրն յորժամ ասաց զցանկութիւնն *շնութիւն*, յաւել ի վերայ թէ՝ «ի սրտի իւրում». զի մի՛ կարծեսցի մարմնական *շնութիւն*, այլ հոգէկան և մտաւոր. ապա ուրեմն կատարեալ է մեղք մտացն: - 556. Նոյնպէս զցանկութիւնն ի *շնութիւն* և ի պոռնկութիւն յաւելու հանապազ. զոր անասունք յիւրեանց ժամանակին ունին զխառնումն: - 564. Եւ զի ո՛չ է որպէս մահացուն մեծ կամ փոքր. որպէս *շնութիւն* մեծ է քան զպոռնկութիւն. և մարդասպանութիւն քան զգողութիւն: - 568. Իսկ պսակն է՛ ի խորհուրդ ողջախոհութեան. զի ողջախոհ ամուսնութեամբ զսպեսցէ առ ինքն զբղջախոհ ցանկութիւնն. և արգելցի ի *շնութենէ* և ի պոռնկութենէ. վասն որոյ է են խորհուրդք եկեղեցւոյ: - 587. ...որպէս յորժամ դաւթի ասացաւ թէ՝ «մի՛ պակասեսցէ սուր ի տանէ քումմէ յաւիտեան» վասն սպանման և *շնութեանն:* - 602. Արդ որպէս ի սրտէն յառաջ գայ հեշտութիւն մեղաց, *շնութիւն* ագահութիւն՝ և այլն. որպէս աւետարանն հրամայէ: - 619

**ՇՆՉԱՐԲԵՐԻՄ +** Եւ դարձեալ՝ մանուկն յարգանդի խօրեայ *շնչաբերի* հոգւով: - 363. Յորում թէ վասն է՞ր իննամսեայ ծնանին, կամ յաւուր **խ** *շնչաբերին*, և որպիսութիւնք նոցա: - 785

**ՇՆՉԱԿԱՆ +** Եւ զոմանս ունի խառնեալս ընդ մարմնոյ. որպէս է բնական զօրութիւն կենդանականն և *շնչականն* որպէս ասացաւ ի վերոյ: - 249. Եւ յև՛ս աճիլն՝ տայ *զշնչականն:* - 258. Այսպէս և *շնչականն* գոյացեալ ի իերորդ աւուր՝ կիսակատար գոլով բանականին զնոյն ունի խորհուրդ: - 262. Այլ և զգայականին յաւելեալ *շնչականն* և շարժականն և ցասմնականն ընդ ցանկականին՝ լինի **թ**. վասն որոյ ոմանք յինն ամիսս ծնանին կամ ի **ժ**: - 263. Այլ և յաւելեալ ի վերայ զշարժականն և *զշնչականն* և զցասմնականն և զցանկականն, ընդ նմին և զկազմողական նիւթն և զտնկականն, որ լինի **ժը**. վասն որոյ ոմանք ի տարին և կէսն ծնանին որպէս ուղտ: - 263. Դարձեալ ունի զ**է** զգայութիւնս, և զշարժականն՝ և *զշնչականն* և զսրտմտականն՝ և զցանկականն, որ լինի ինն: - 263

**ՇՆՉԱՒՈՐ +** Եւ ո՛չ ասի *շնչաւոր* վասն *շնչաւոր* մարմնոյն. այլ ամենևին հոգւոր: - 78. Յոգւոր և *շնչաւոր:* - 78. Գոյացութիւն որ սկիզբն է ամենեցուն և նախասեռ. և ի նմանէ զուգաբաժանեալ մարմինն. և *շնչաւորն*. և զգայունն. և կենդանին. և բանաւորն. և մարդն. ո՞չ ապաքէն բնութիւն են սոքա այլևայլ. և ժողովեալ գոյացուցանեն զմի անհատն պետրոս անշփոթ միութեամբ: - 176. Եւ զի անշփո՛թ են սոքա յատկութեամբ՝ յայտ է. ուստի ասեմք, պետրոս մա՛րդ է և բանաւոր և կենդանի և զգայուն և *շնչաւոր* և մարմին և գոյացութիւն: - 176. Իսկ երրորդն թէ վասն է՞ր յամենայն իրս երևի նման և աննման. որպէս ի *շնչաւորս* և յանշունչս. ի կենդանիս և յանկենդանս և յայլսն ամենայն: - 236. Երկրորդ՝ ըստ պատուոյն. զի այս երկնային և վերուստ իջեալ. իսկ այնորիկ երկրաւոր և *շնչաւոր* որպէս ասէ առաքեալն: - 269. Երրորդ՝ աբրահամուն ուտէ և ուտի *շնչաւոր* և արիւնաւոր: - 301. Եւ *շնչաւոր* մարդոյ յիմարութիւն է հոգին. որ և պատժեաց զանանիա և զսափիրայ: - 523. Այսպէս և «*շնչաւոր* մարդ ո՛չ ընդունի զհոգին աստուծոյ»: - 523. Եւ յորժամ չարութեամբ հոգին նուազի, մարմինն զօրանայ և լինի մարդն *շնչաւոր* և անբան...: - 668. Եւ դարձեալ՝ ո՛չ միայն մարդոյս մարմինն, այլ և անշնչից և *շնչաւորաց* զոր ինչ ուտեմք յառնէ՛ ասեն որ է՛ անպատշաճ: - 718. Իսկ այլ ամենայն մարմինք *շնչաւոր* և անշունչ, տունկք և կենդանիք ամենայն ապականին վասն **գ** պատճառի: - 727. Կամ տնկական և զգայական և *շնչաւոր* գոլն: - 745

**ՇՆՉԱՒՈՐԵՄ +** Երկրորդ՝ ընդ մտանելն յարգանդ բանին՝ *շնչաւորիլն* և գտանիլն որպէս քառասնօրեայ: - 471

**ՇՆՉԵՄ +** Դարձեալ՝ հոգին սուրբ ելանէ ի հօրէ և առաքի յորդւոյ. և ինքնիշխան կամօք *շնչէ* զշնորհս իւր յորս կամի և որքան: - 66. Դարձեալ՝ որ զամենայն ստեղծ՝ հայր կոչի. և որ զամենայն պարունակէ՛ զի մի՛ լուծցին՝ որդի. և որ *շնչելով* կենագործէ և զարդարէ զամենայն՝ հոգի սուրբ յորջորջի: - 108. Ութերորդ՝ ի *շնչել* հողմոյ՝ դիւրաւ ջնջի ամպն: - 206. Եօթներորդ՝ զի հողն ի հողմոյ փոշի լինի. այսպէս յորժամ հողմահուն *շնչէ* ի մարմինս մեր՝ ցրւի և լինի փոշի: - 229. Եւ թոքն զի անդադար *շնչէ:* - 241

**ՇՆՉԵՐԱԿ +** Իսկ սիրտն սկիզբն է *շնչերակացն:* - 244. Եւ գիտելի է, զի հետևին միմեանց երեքեան սոքա. այսինքն ջիլն. և *շնչերակն*. և արեան երակն: - 244. Զի արիւնն կերակրէ՛. և ջիլն զգայութիւն տայ. և *շնչերակն* զջերմ կենդանութիւնն բոլոր մարմնոյն: - 244. Յինգերորդ՝ ընտրելի է մասն որ է հատումն գլխոյ. յառաջուստ ուր են *շնչերակքն* արիւնն և այլքն: - 366. Երկրորդ՝ զի *շնչերակք* և արեան երակք և կենդանականքն անդ ի միասին բաժանին: - 366. Ասեն վարդապետք թէ՝ ի լուր ուրախութեան հեշտանայ լեարդն և տարածեալ լայնանայ. և այնպէս շունչն ելեալ յորդ ընդ *շնչերակսն* և առնէ զծաղրն: - 619

**ՇՆՉՈՒՄՆ +** Նախ՝ զի *շնչմունք* հողմոց ի բարձունս են, և զբարձանց ջերմութիւնն բարեխառնեն: - 211. Դարձեալ, որպէս մի *շնչմամբ* օդոյ՝ ցորեանն ժողովի և յարդն հոսի: - 739

**ՇՈԳՈԼԻ +** Իսկ ի ներքուստ, ի լինիլ տրտմութեանց՝ խուճապեալ մարմնոյն հոսի մաղձ դառն ի ստամոքս որովայնի. և վերացեալ գոլորշեաց նորա զօրէն *շոգոլեաց* պուտկի առ խելապատակս գլխոյ. և ծանրացեալ անտի թորի՛ առ բիբն ասացեալ ական. չոր գոլով և աղէգոյն ի սևատեսա՛կն մաղձոյ: - 787

**ՇՈՂ +** Չորրորդ՝ մանր փոշին ի *շո՛ղն* երևի: - 125. Յատկութիւնք երկրի. և վասն լերանց. և ի ստորոտս լերին *շո՛ղ* լինի: - 155. Երրորդ՝ տեղիք են բարեխառն ի *շող* ժամու, և ամրո՛ցք ի խռովութեան աւուրս: - 211. Վասն է՞ր ի ստորոտս լերանց առաւել *շող* լինի քան ի գլուխն որ մե՛րձ է արեգական: - 211. Երկրորդ՝ զի վերին մասն օդոյն պա՛րզ է. և ներքին մասն մերձեալ ի յերկիր՝ թանձրանայ ի չորութեանց նորին. և ջերմութիւնն խառնեալ ընդ այն՝ առաւել *շող* լինի: - 211. Երրորդ՝ անդ մէկին է ջերմութիւն՝ և աստ կրկին. զի հասեալ ի գոգ երկրի, մակադարձութեամբ ժողովին առ նա և լինի *շող:* - 211. և Դարձեալ՝ զոր օրինակ բազում ճառագայթք *շողից* ի լոյսն արևու միաւորին...: - 732. *Շող* յաստուծոյ ծագեալ հաւատ. զերկնից կախեալ լար իմն լուսեղէն. զորմէ բուռն հարեալ ձեռն զձեռամբ փոփոխեալ. ի ծովու սքանչելեաց յերկինս և յօդս վերանալ: - 769

**ՇՈՂԱԿԱԹ +** Աշխարհամատրանն. և յետ գալստեան Յոգւոյն կիրակէն. Տապանակին. *Շողակաթին*. և **դ** օր ի Խաչին տօնն. **բ** Գալստեանն. Վերնատանն. Եւ նոր կիրակէին: - 616. Տապանակին և *շողակաթին:* - 649

**ՇՈՂԱՄ +** Իսկ ի դաշտս ո՛չ է հողմ. վասն որոյ առաւել *շողէ:* - 211

**ՇՈՂՈՔՈՐԹ +** Եւ յանւանէն և ի նշանացն քրիստոսի փաղչի *շողոքորթքն* սատանայ: - 316

**ՇՈՂՈՔՈՐԹԵՄ +** Ի գործոյն, որպէս սողուն ի սողալոյն. ի *շողոքորթելոյն* շունն. ի հեզոյն եզն. յառնելոյն առիւծ: - 220

**ՇՈՐԹԵՄ +** Զլաւագոյն կայս զոր աստուած տուեալ էր նմա՝ կամեցաւ ակամայ յաստուծոյ ի՛ւր *շորթել*. և այլոցն բռնաբար տիրապետել և հրամայել: - 149

**ՇՈՒՆ +** Արդ՝ կռապաշտն և հերձուածօղն հաւասա՛ր են յամբարիշտ գոլն. զի որպէս *շուն* դառնայ ի փսխած իւր. այսինքն զի նա ո՛չ ունէր, և սա՛ ուրացաւ և դարձաւ անդրէն: - 33. Եւ զաստեղսն և *զշունն* ջրային. և երկրային և երկնային: - 54. Մարգաց. որ է՛ ժամանակ ածելոյ զմարդ. որ ի դաշտս և ի հովիտս իցեն. յայգեստանս և ի բուրաստանս. յորժամ արեգակն առ շամբն և յետ *շանն* իցէ. զի ի **ժգն**՝ մո՛ւտ է ամռան: - 201. Այլ այժմ վասն զգեստուց պահեմք զոչխարս. և վասն կերակրոյ զեզինս. և վասն բեռին զէշս. և վասն բառնալոյ զմեզ զձիս. և վասն զթշնամիս հալածելոյ *զշունս*. և վասն զբռչունս ըմբռնելոյ զբազէս. և զայլսն նմանապէս: - 217. Ի գործոյն, որպէս սողուն ի սողալոյն. ի շողոքորթելոյն *շունն*. ի հեզոյն եզն. յառնելոյն առիւծ: - 220. Ուստի յա՛յտ է՝ զի այծեամն առաւել է տեսանելեաւ. և *շուն* հոտոտելեաւ. և այլն նմանապէս. վասն որոյ փուքով շարժին և կանգնին քան զմարդն: - 266. Իսկ թէ մարդ լինի շանադէմք, և այն ո՛չ է ի խառնուածոյ *շանց*, այլ նշան է հայրենեաց, կամ սպի անձանց: - 267. Որպէս թէ ցանկութեամբն ասի խոզ. և բարկութեամբն *շուն*. յափշտակութեամբն գայլ. և այլն: - 274. Երկոտասաներորդ՝ ի հոտոյ առիւծուն փախչի *շուն:* - 316. Չորրորդ՝ շանաճանճն. զի շնաբարոյք էին և մոլէին յառնականայս շնութեամբ. զի *շանց* է ոչ զուգակցիլ որպէս զայլ կենդանիս. վասն որոյ ի *շանց* ելեալ թունալից ճանճք խայթէին զնոսա: - 334. Որ յետ խոստովանութեան դառնայ ի նոյն մեղս, իբր *շուն* դառնայ ի փսխած իւր. և սա՛ ևս այրի հրով. զի զառաջինն ևս խնդրեսցեն ասէ առաքեալն: - 367. Զի պղծոցն ամենայն ինչ պիղծ է. որպէս պիղծ կենդանւոյն *շան* մորթ և մազ և միս և այլն: - 416. Եւ է՛ որ խոստովանի. և ոչ մեղքն միայն թողուի. որք թերի են սրտիւ. և զմեղս թերի խոստովանին. և ի միտս եդեալ են դարձեալ գործել. այսպիսեաց ոչ մեղքն թողուի և ոչ պատիժն. զի որպէս *զշուն* դառնայ ի փսխած իւր: - 432. Կամ ի մարդոյ մինչև *զշուն* և այլն: - 443. Ասեմք առ այս, թէ ձեռնադրեալն իցէ

անարժան՝ ո՛չ առնու շնորհս. այլ դատապարտի ինքն և ծեռնադրողն. զի սրբութիւն՝ *շանց* ետ: - 540. Չորրորդ, արծակէ՛ զսատանայ, զի տեսցէ զիւր ժամանակ տանջանացն մերձեալ. և մոլի որպէս գազան մեծ ի սատակումն. և *շուն* կատաղեալ: - 706

**ՇՈՒՆՉ +** Նախ՝ փչեաց ի յադամ *շունչ* կենդանի և եղև: - 50. Պատասխանեմք եթէ՝ թէպէտ հոգին ունի զբնութիւնն ի հօրէ՝ սակայն ո՛չ ծննդեամբ որպէս որդի, այլ բղխմամբ. որպէս *շունչն* և բանն ունին զէութիւնն հոգւոյն այլ և այլ կերպիւ. և որպէս ադամ յառաջ էած յինքենէ զսէք և զեւա. զմինն ծնունդ և զմիւսն ո՛չ ծնունդ. և ունին երեքեանն զմի և զնոյն բնութիւն մարդոյ: - 60. Եւ որպէս մի է հոգի և բան և կենդանութիւն իւր. որ է՛ խօսքն և *շունչն:* - 107. Քանզի ո՛չ է ծնունդ, այլ բղխումն. որպէս *շունչ* և կեանք ի հոգւոյս մեր: - 109. Իսկ զգայականն ի ջերմութենէ և ի *շնչոյ* օդոյ: - 117. *Շունչ* կենդանեաց: - 202. Եւ թէ ոք ասիցէ՝ *զշունչն* ո՛չ ունին ջրայինքն: - 215. Ասեմք թէ՝ որպէս ցամաքայինքն ունին *զշունչ* օդոյ: - 215. Նոյնպէս և ջրայինքն *զշունչ* ջրոյ: - 215. Եւ մի և նոյն է. զի *շունչ* կենդանեաց է թանձր մասն օդոյս՝ խառնեալ ընդ ջրոյ. և *շունչ* նոցա է անօսր մասն ջրոյ՝ խառնեալ ընդ օդոյ: - 215. Ոմանք զէն ունին զատամունսն. որպէս *շունք* և վարազք: - 216. Նոյնպէս մարմինն է ի ներքոյ. և հիւթ արեանցն ի վերոյ. և ապա *շունչն* օդոյ և հուր լուսաւորացն ի վերոյ: - 232. *Շունչն* հողմոց: - 232. Այլ և ի միտ ածցուք զփառս երկնային կենաց ուստի անկաք, և անդ դիմելոց եմք. զի տեսութիւն մտացն զհոգին ընդ ինքեան ի վեր տանի. և նա *զշունչն*. և *շունչն* ընդ արեանն է կապեալ. և արիւնն ընդ մարմնոյն. զգայարանքն ընդ մարմնոյն. և լինի մարդն բոլորովին երկնային: - 233. Եւ *շունչն* օդն: - 234. Իսկ բարոյականն, Նա՛խ՝ զի յերեսն փչեաց *զշունչ* կենդանի. վասն որոյ յերեսն ունի զգայարանս մարմնոյ: - 234. Զդառնութիւնն ի լեղին. և զհոտածն յերիկամունքն. և զմրուրն և զթքուն ի փայծեղն. և զքաղցր արիւնն ի սիրտն. և սիրտն երակովն և *շնչովն* բաժանէ ի բոլոր մարմինն: - 242. Իսկ որ զմարմին յառաջ ասեն քան զհոգի, վկայ ածելով զմովսէս որ ասէ եթէ՝ էառ զհողն և շինեաց մարմին. և յետոյ փչեաց ի նա *զշունչն* կենդանի, որ է կենդանարար հոգին: - 253. Եւ յորժամ կազմի զգայութիւնն, *շունչն* երևի ի նմա: - 255. Չորրորդ՝ զի ո՛չ է այն մեռելութիւն միայն՝ որ բանականն կամ *շունչն* պակասի. այլ և որ տնկականն պակասի. որպէս քար. ա՛յն է իսկապէս մեռեալ: - 256. Այլ այժմ տնկականն զո՛յ ի նմա թէպէտ ո՛չ *շունչն* և ոչ բանն: - 256. Երրորդ՝ զի հատեալն մասնաւորի. այլ ընդ ծնանիլ զաւակին՝ ոչ ինչ պակասի ի ծնօղն. բան, կամ *շունչ*, կամ կենդանութիւն. այլ բոլորն է ի ծնօղն և բոլորն ի ծնեալն: - 257. Եւ ի **խա** աւուրցն ի վեր՝ երևեալ *շնչոյն* ծնակերպէ՛ զկերպ մարդոյ մինչ ի **խ** օր արու մանկան. և իսկոյն հեղի ի նա՛ հոգին բանական ի շնորհացն աստուծոյ ծագեալ ի նա: - 261. Դարձեալ՝ պատկեր է հոգիս մեր. զի բանն և *շունչ* կենդանութեանն ի նմանէ՛ յառաջ գայ: - 273. Եւ ըստ այնմ որ նշանակութիւն է, ցուցանէ զմարմինս մեր փոփոխական. որպէս այն որ փչեաց յերեսս մարդոյն *շունչ* կենդանի: - 282. Զկենդանին հրամայէ զենուլ. և զարիւնն և *զշունչն* հանել և ապա՛ ուտել: - 295. Նախ՝ զի արիւնն և *շունչն* կենդանութիւնն է որ է աստուծոյ բաժին. վասն այն արիւնն ո՛չ է ուտելի: - 295. Երկրորդ՝ արիւնն և *շունչն* հոգւոյն է նշանակ. և հոգին անմահ է: - 295. Վեցերորդ՝ սկայքն անխտիր ուտէին թէ մեռեալ և թէ հեղծուցեալ. վասն որոյ զի որոշեսցէ ի նոցանէ՝ ասէ արեամբ *շնչոյ* մի՛ ուտիցէք: - 295. Եօթներորդ՝ արիւնն հուրն է՝ և *շունչն* օդն. պա՛րտ է հանել զք տարրն. իսկ մնացեալն ջուր է և հող՝ ուտելի է: - 295. Իններորդ՝ արիւնն և *շունչն* է սկիզբն գոյացութեան մերոյ. զի արիւնն փոխի ի սաղմն, և ջերմ օդով խառնի ի հով և ի գէճն, և լինի աճումն և սնունդ մարմնոյ: - 295. Նա՛խ՝ զարիւնն և *զշունչն* հանեմք: - 296. Զի արիւն և *շունչն* արակա՛ն է որպէս ցուցաւ. վասն այն ա՛յրն հանէ զնոսա. և կինն չէ տուեալ արիւն՝ ո՞րպէս հանէ: - 296. Զենուլ ծկանն այն է՝ որ ի ջրոյն հանեն. զի *զշունչ* ջրոյ ունի և ո՛չ *զշունչ* օդոյ: - 296. Կենդանական, որպէս ջերմութեան և *շնչոյ:* - 318. Երրորդ՝ զենումն. զի լիցի բաժանումն արեան և *շնչոյ* և բնական կենդանութեանն: - 365. Կամ ջրայինն որ ո՛չ ունի զարիւն *շնչոյ*, այլ զարիւն ջրոյ, ո՛չ զենի. զի զենումն նոցա հանումն ի ջրոյն է: - 366. Երրորդ՝ ընտրութիւն է ի զենումն. զի բաժանեսցի նախ արիւնն, և ընդ նմա՛ *շունչն* և բնական ջերմութիւնն: - 366. Եւ թէ *շունչն* քաղի, է՛ հեղձական մահ. ո՛չ է ուտելի: - 366. Իսկ թէ արիւնն ելցէ՝ և *շունչն* և կենդանութիւնն ընդ նմա, ա՛յն է հրամայական մահ: - 366. Եւ թէ լիցի երկաք և ո՛չ սուր, և ո՛չ է պիտանի. որպէս բոլոր երկաթն թէ հարցէ զկենդանին և սպանցէ, ո՛չ է ուտելի, զի թէպէտ զարիւնն հանէ, այլ ո՛չ համանգամայն *զշունչն* և զջերմութիւնն: - 366. Զի արիւնն *շունչ* է և կեանք անասնոց: - 371. Զի թէ ինքն ծնացոյց մարմին և *շունչ* և յարոյց զնա, զիա՛րդ ոչ ճանաչէր: - 428. Վասն զի բոլոր մարդն երիւք է կայացեալ. որ է հոգի և մարմին, և ի մէջ երկուցն *շունչն* է խառնեալ: - 510. Պահքն վասն հոգւոյն պատշաճի. և Ուտիքն մարմնոյն. իսկ Նաւակատիքն վասն խառնեալ *շնչոյն:* - 510. Զմիս կենդանւոյ, որ կատարեալ կենդանի

է և ի կենդանւոյ յառաջ եկեալ. այն է կատարեալն որ **ե** զգայարանս ունի և շարժի և *շունչ* ունի. և է՛ այս կերակուր ուտեաց և զատկի: - 510. Իսկ ձուկն կենդանի՛ է կատարեալ զգայարանօք և շարժմամբ. այլ զտուր և առ *շնչոյ* ո՛չ ունի. վասն այն պակա՛ս է: - 510. Ասեմք, զի ո՛չ ունին *շունչ* օդոյ այլ *շունչ* ջրոյ. և հանեալ ի ջրոյն պակասի *շունչն*. որպէս ասացաւ ի վերոյ ի **ժը** գլուխն ի **գ** համարն: - 511. Եւ ա՛յս է պատճառն. վասն զի տունկն յարմատն է հաստատեալ. և ձուկն ի ջուրն. և կենդանիք ի *շունչ* և յարիւն: - 511. Այսոցիկ սուրբ հարց և սիւնհոդոսաց հնազա՛նդ եմք. և զնոցա կանոնքն ունիմք և զդաւանութիւն, և պահեմք մինչև յելս *շնչոյ* մերոյ: - 547. Ասեն վարդապետք թէ՝ ի լուր ուրախութեան հեշտանայ լեարդն և տարածեալ լայնանայ. և այնպէս *շունչն* ելեալ յորդ ընդ շնչերակսն և առնէ զծաղրն: - 619. Երեք չուանն յեռեալ ի միմեանս մակդարձապէս, է՛ չորեքնիւթեայ բնութիւնս մեր ի տարերց խառնեալ. կամ *շնչոյ* մարմնոյ և հոգոյ խառնումն: - 645. Եւ դարձեալ հոգւոյ և մարմնոյ. և *շնչոյս* պահապան: - 679. Նա՛խ՝ զի յերի՛ց է մարդն. հոգի մարմին և *շունչ* գոյացեալ. ի քակտումն սոցա **գ** վկա՛յ է պիտոյ: - 742. Զի թէ և սակաւ ժամ լինի մնացեալ ի կենացն որ քան աւազակին ի յելս *շնչոյն*. և նա՛ յառաջ քան զամենայն արդարս եմուտ ի դրախտն աստուծոյ ընդ տեառն: - 758. Նոյնպէս և երբեմն յուզել ուրախութեանց. ի փեռեկեալ թոքոյ ի կոտորումն *շնչոյն*, ի թաղանթէ՛ որ առ լերդաւն՝ հիւթ ինչ ծաւալի առ նոյն ասացեալ տեղի. ելեալ գոլորշեացն նմանապէս առաջնոյն. և լինի քաղցրագոյն արտօսր. վասն ասացեալ հիւթոյն ի քաղցրորակն անօթոյ: - 787

**ՇՈՒՏԱՓՈՅԹ +** Ոմն յամրախօս. և ոմն ցոփ և *շուտափոյթ*: - 251

**ՇՈՒՏՈՎ +** Վասն այն յորժամ ննջէ մարդն ի վերայ ձախ կողմանն, *շուտո՛վ* հալի կերակուրն քան ի վերայ աջ կողմանն: - 242

**ՇՈՒՐԹՆ +** Որք զաչս իմաստից յիմանալի ճառագայթիցն խուսափեցին թիւր կամօք, և խոտոր մտօք. զանուղղայս խորհելով, և զանպատշաճս բարբառելով. յարձակեալ անկապ լեզւաւ և անդուռն *շրթամբք* բացեալ յերկինս. ցոպ բերանով ի բարձունս բարբանջելով. և յածեալ ընդ երկրաւ լեզուագարելով. որոց դատաստանն ի բնէ ո՛չ դատարկանայ. և կորուստն ո՛չ նիրհեսցէ: - 31. Ի *շրթունս* խօսին, և ի լեզուս դաւաճանեն: - 34. Ութերորդ՝ զնա օ՛ձ դարանակալ ասէ ի ճանապարհի. և սոքա առաջին օձին նմանեալ՝ հրապուրեն զբազումս. և արտաքսեն ի դրախտէ եկեղեցւոյ. և թոյնք իժից ի ներքոյ *շրթանց* ունելով և խայթոց՝ զի առորս մերձենան...: - 35. Երկրորդ՝ ձայնական գործիքն. որ են է. որպէս *Շրթունք*. Ատամունք. Լեզու. Մակալեզու. Բերան. Խռչափող. Թոք: - 216. Եւ պիտոյանայր լեզու երկայն և *շրթունք* ստուար, զի ժողովեսցէ զկերակուր. և յայնժամ ո՛չ կարէր սպասաւորել բանի որպէս ա՛յժմ: - 233. *Շրթունքն* բարակ և բերանն մեծ, ուժեղ է և մեծասիրտ: - 247. *Շրթունքն* բարակ և բերանն և փոքր բերանն՝ թուլասիրտ է: - 247. *Շուրթն* կախեալ սակաւ մի, տարտա՛մ է. զի յէշ և ի ձիս նմանի: - 247. Կապ բանին ի *շրթունսն*: - 250. Եւ որպէս է **է** գործիք ձայնին, որ է՛ թոքն. խռչափողն. մակալեզուն. բերանն. լեզուն. ատամունքն. և *շրթունքն*. և սոքա միաբանին ի խօսքն: - 296. Երրորդ՝ զի անարժանք էին մեռեալքն հոգւով՝ կենդանի բանին աստուծոյ տեսանել ա՛յն աչօքն որ տեսին զորթն. և համբուրել *շրթամբք*: - 350. Զի յառաւօտն մին խնկարկի ի տէր եթէ *շրթունքն*. և այն ևս **գ** անգամ պար առեալ. և մի յօրհնութիւնն ևս **գ** անգամ. և մի ի փառք ի բարձունսն ևս **գ** անգամ: - 618. ...վասն որոյ յայսմ ժամու սկիզբն է աղօթից բոլոր աւուրն. յորում ասեմք զտէր եթէ *շրթունքն* և զայլ սաղմոսսն ի դէմս հօր աստուծոյ: - 621. Թէ ի բերան պատերազմի յել անմահին և ի մուտ մահկանացուին. դիցես պահապան բերանոյդ. լար կարմիր *շրթանցդ*. այսինքն հաւատով սիրով զօրացեալ. և ո՛չ բաժանիլ ի քնասիրութիւն և յարծաթսիրութիւն. յառաքինասիրութիւն. և յախտասիրութիւն. յընկերսիրութիւն և յարատսիրութիւն: - 770-771

**ՇՈՒՐՋ +** Նախ՝ զի զաթոռն մեծ նստողին տեսին եզէկիէլ և եսայի, և *շուրջ* զքերօբէքն և զսերօբէքն: - 135. Մնացեալ ա՛մպ է *շուրջ* զաստեղօքն. որ քարշէ յինքն զսպիտակ լոյս մոլորակացն և լուսաւորի: - 203. Եւ զի *շուրջ* զնովաւ բոլոր շարժմամբ երկին և աստեղք շրջագային: - 211. Զի՞նչ է որ զկէս արեան պատարագին խառնեաց ի ջուր և ցանեաց ի ժողովուրդն. և զկէսն էարկ *շուրջ* զսեղանովն: - 341. Եւ այն որ *շուրջ* զսեղանովն, նշանակէ՛ զքահանայս. որ մերձ սեղանոյն որ է՛ քրիստոս՝ միշտ սպասաւորե՛ն և պատերազմին արեամբ չափ ընդ ախտս և ընդ դևս: - 341. Զի աթոռք և քերովբէք *շուրջ* են զաստուծով. և անընդմիջաբար ուսեալք ի սուրբ Երրորդութենէն, որ ուսուցանեն զներքինսն: - 345. Եւ եօթն ճրագ *շուրջ* զնովաւ, եօթնեքին դասք ընտրելոց նորա: - 347. Եւ զարիւնն հեղուլ *շուրջ* զսեղանովն. որ է կենդանութեան նշանակ: - 360. Զի հոգի անմահացեալ *շուրջ* գայ զաստուծով ի հեղուլ զաղօթս առաջի նորա: - 360. Նոյնպէս և Ղևտացիքն *շուրջ* զխորանաւն բանակէին

ի մէջ **բժան** ցեղիցն. և խորանն ի միջի նոցա այսպէս: - 378. Նա՛խ՝ *շուրջ* թշնամիք դևք. և գազանք խիղճ մտաց. և ծով մեղաց. և ամայութիւն բարեաց: - 393. Երկրորդ՝ նշանակէ զերկրպագութիւնն հրէից. որ յամենայն կողմանց *շուրջ* յերուսաղէմ երկրպագէին: - 395. **Եւ *շուրջ* զնովաւ հրեշտակք ամենայն ոչ հաւանեցան. զի նոքա զամենայնն ճշմարիտ խօսին. և բարի առնեն մարդկան. և յապաշխարութիւնն խնդան. իսկ սուտ խօսիլն և չար առնելն և ի վիշտս ուրախանալ՝ դիւա՛ցն է որ են չար հոգիքն:** - 444. Զի թէ աստուածային քն ամենայն որք *շուրջ* զաստուծով՝ են անհպելիք. քանի՞ ևս անզննելի իւրն էութեան և եղելութեան աստուածն բանի: - 456. Ասեմք առ այս, թէ որպէս ի մէջ սերովբէից և քերովբէից և աթոռոց ո՛չ ասի վերնագոյն և նուաստագոյն, զի համակա՛րգ են և *շուրջ* զաստուծով: - 547. Երկրորդ՝ Արքեպիսկոպոսք. որ թարգմանին եպիսկոպոսապետք. և սքեմ նոցա քականօթ և պճղնաւոր. և փիլոն. և ի վերայ նորա եմիփորոն **դ** կրկին խաչիւ *շուրջ* զիւրև: - 607. Իսկ տանիլն ի **դ** անկիւնս եկեղեցւոյն, վկայե՛ն նմա թէ՝ չորեքին աւետարանչացն խրատու *շուրջ* եկն զեկեղեցեաւն. - 673. Ուր ետես զիդ երիցունսն *շուրջ* զաթոռովն աստուծոյ. և զբազմութիւն հոգւոց սրբոց յամենայն ազգաց ժողովեալ անդ: - 688. Եւ *շուրջ* զինքեամբ բարի հրեշտակքն որ մղեն ի դժոխս: - 738. *Շուրջ* զաթոռովն ասէ **իդ** երիցանցն գոլ: - 760. ...զի ո՛չ միայն էառ զընութիւնս. այլ և զնոսա որ *շուրջ* զընութեամբն. զի ծանիցի կատարելութիւն առաքինութեանն, և ճշմարտապէս մարդ գոլ: - 781

**ՇՈՒՐՋԱՆԱԿԻ +** Բաղկացական է, որ ընդ մարմնոյ մասնկանցն գոյանայ ի ներս և ի դուրս. վերոյ և ներքոյ *շուրջանակի*. զի իւրաքանչիւր մասունք ի տեղին ունին զդրութիւնն. և կայացեալ ի բոլորն: - 174. Իններորդ՝ պարիսպ լինին *շուրջանակի* ջուրք. ի թշնամեաց ի գազանաց՝ և ի գողոց պահելով: - 207-208. Եւ այն զի աչքն ի դէմքն է, և ականջն ի կողմանէ. զի աչքն ուղղակշիռ ի դէմն տեսանէ. և ականջն *շուրջանակի* յամենայն կողմանէ լսէ. ի վերոյ ի ներքոյ և այլն: - 235. Զոր ոմանք **լ** ստադիոն ասեն զբարձրութիւնն և զլայնութիւնն *շուրջանակի* **խղռ** քայլք. այսինքն **խդ** մղոն ձգեալ ասի: - 297. Իսկ ահագին, Նա՛խ՝ զի թշնամիք էին *շուրջանակի*. և գազանք և սողունք. և ծով. և ամայի. և անպարիսպ: - 393. Եւ անջրպետեալ ի մէջ ժողովրդեանն և մարմնոյն *շուրջանակի*. զի մի՛ իմասցեն զքաղումն նորա: - 410

**ՇՈՒՔ +** Երրորդ՝ յարմար *շուքն:* - 271. իսկ կանանց ազգին պատուիրէ՛ առաքեալն ի ժամ աղօթիցն *շուք* դնել գլխոյն վասն հրեշտակաց. այսինքն վասն քահանայից որ հրեշտակք կոչին ի գրոց...: - 590

**ՇՌԱՅԼԻՄ +** Նա՛խ՝ զի բաժանիցուք յայնցանէ որք զգինի մեղաց ըմպեն. և վասն մեղաց արբենան և *շռայլին:* - 656

**ՇՏԵՄԱՐԱՆ +** Յոռի. զի հորե՛ն երկրագործ և մշակք զցորեան և զգինի, *յշտեմարանս* ժողովեալ. զի **թ** հոռի՝ մո՛ւտ է աշնան: - 200. Եւ յայնժամ զորոնն քաղել առ ի յայրել ի հուրն. և զցորեանն ի *շտեմարանն* ժողովել ի կեանս: - 693. Երրորդ, ներելով արծակէ զսատանայ որով փորձին ընտրեալքն որպէս ցորեան ի *շտեմարանս* արքայութեան...: - 706. Եւ տարերք ամենայն *շտեմարանք* են աստուծոյ. և տիեզերք ամենայն ի ձեռին նորա՛ են ըստ մարգարէին: - 718. Եւ որպէս կարելի է քեզ ի քում ափիդ զսերմանս զանազանել, և զեդեալն ի *շտեմարանս* քո յիւրաքանչիւր անկեան յառաջ բերել...: - 718

**ՇՐԱՅԻԱ -** Եւ յաջակողմն, *Շրայիա՛*. դո՛ւ հաներ զմեզ աստուած: - 338

**ՇՐՋԱԳԱՅԻՄ +** Եւ զի շուրջ զնովաւ բոլոր շարժմամբ երկին և աստեղք *շրջագային:* - 211

**ՇՐՋԱԳԱՅՈՒԹԻՒՆ +** Երրորդ՝ և բաժանի և զանազանի ի բազումս. և այնպէս *շրջագայութեամբ* գտանէ զճշմարիտն. և այսպէս է բնական քննութիւն իմաստասիրացն: - 120. Մ՛րդ՝ եղև զրաւ բանիս, ի *շրջագայութեան* Հայկազեան Տօմարի, **պխզ** թուի: - 772. Որ և զայս թիւ խորհրդոյ պահէ՛ յինքեան ամացն *շրջագայութիւն:* - 785. Եւ այս աղէտ անզերծ տարակուսից շրջապատեալ զմեզ *շրջագայութեամբ* տօմարի հայկազեան սեռից, հարիւրից կրկնակի՛ քառից և վեցեա՛կ վեցից: - 789

**ՇՐՋԱԿԱՅ +** Եւ **խբ** այլ ի *շրջակայ* երկիրն որ լինի **խը**: - 392. Եւ խափա՛ն եղև ի *շրջակայ* ազգացն **խբ** ամ: - 448. Եւ պա՛րտ է ի *շրջակայքն* նայիլ...: - 601. Առաքելական աթոռոյ սուրբ առաքելոյս. և այլ *շրջակայ* հրեշտակաբնակ սուրբ Մենաստանեայց: - 772

**ՇՐՋԱՆ +** Եւ որպէս իննևժերեակն լուսնի, և **իը** երեակն արեգական ի միասին ժողովեալ՝ առնէ զհինգ հարիւրեակ *շրջանն* ի **շլբ** ամին. զի **ժթ իը** երեակ է. և **իը ժթ** երեակ: - 192. Եօթն՝ նշանակէ զէ դար *շրջանացն:* - 363. Այլ սուրբն եփրեմ՝ *զշրջանս* երկնից կացեալ ասէ ընդ լուսաւորացն: - 416

**ՇՐՋԱՆԱԿ +** Եւ պատասխանէ՛ դաւիթ և եսայի՝ «ի ձեռն նորա են ամենայն տիեզերք». որ ունի *զշրջանակ* երկրի ըստ օրինակի պատկերին երկաթեայ: - 180

**ՇՐՋԱՊԱՏԵՄ +** Եւ զի *շրջապատեալ* է յայլ տարերաց: - 211. Որ և պահապանքն *շրջապատեալ*. որ

և զհանդերձն պատատեալ յանկողնի, և լերդ այծեաց և մազ ի սնարսն. և ի գիշերի իջեալ ընդ պատուհանն և ելեալ առ սամուէլ զերծաւ ի ձեռաց նոցա: - 513. Երկրորդ՝ երկինք զիրեշտակս ասէ որ ի վայր գլորեալ խոնարհին ամենայն դասք. աթոռք կազմեալ, և սպասաւորք *շրջապատեալ:* - 729. Իսկ արտասուքն աղի և ջրատեսակ. զի բարեխառնեսցէ միոնն զջերմութիւն հրոյ, և միւսն՝ զի մի՛ նեխիցին պարուտակք աչաց. *շրջապատեալ* երակացն լուսոյ: - 786. Եւ այս աղէտ անզերծ տարակուսից *շրջապատեալ* զմեզ շրջագայութեամբ տօմարի հայկազեան սեռից, հարիւրից կրկնակի՛ քառից և վեցեա՛կ վեցից: - 789

**ՇՐՋԱՊԱՐԵԱԼ** - Եւ *շրջապարեալ* ընդելեաց ի հերատուկ ճիւաղաց: - 789

**ՇՐՋԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ +** Եւ այսպէս *շրջաստեղծութեամբ* անվախճան մնան: - 181

**ՇՐՋԵՄ, ՇՐՋԻՄ +** Նոյնպէս ո՛չ կարէ իմանալ յորժամ ի սուրբ գրոց և ի սքանչելեաց և ի բանից սուրբ վարդապետաց՝ դարձուցանէ զմիտքն. որպէս ասէ առակն՝ պակասամիտն ոչ ընդունի զբանս խոհեմութեանց. բայց միայն զայն՝ որ *շրջին* ի միտս նորա: - 31. Դարձեալ քննեսցուք ըստ մեզ. զի ո՛չ են հակառակ առաքելոյն բանն և աւետարանին, թէ հայր մեծ է քան զորդի. զի երկոքին նոյն իքն աստուածութեանն իմանին. ըստ այնմ որ զմեր նուաստ և տկար բնութիւնս միացոյց ընդ իւրում աստուածութեանն, և անտեսանելին տեսանիւր՝ և ծառայի կերպիւ *շրջէր* վասն տնօրէնութեան՝ ասի փոքր յայս միաւորութեանս քան զհայր. իսկ ըստ այնմ որ է՛ անճառ և նախքան զյաւիտեանս ծնունդ ի հօրէ՛, հաւասա՛ր է հօր և ոչ փոքր: - 40. Եւ թէ էր այսպէս՝ հետևէր ապա հօր զի արարեալ իցէ ա՛յլ աշխարհ. և հանդերձեալ. և *շրջեալ* յաշխարհի. սրբեալ զախտաժէտս. մեռեալս յարուցեալ. և ի վերայ ծովու գնացեալ: - 45. Եւ զնոյն բանն աստուած մարմնացեալ. և *շրջեալ* ի վերայ երկրի. զի յայնմ օրինակին արար և որդի պիտոյ էր լինիլ և չորս աշխարհք: - 45-46. Ասի դարձեալ՝ մարմնով ծնեալ. և մարմնով երևեալ. և մարմնով *շրջեալ*. և այլն: - 79. Եւ ո՛չ ասի մարդով ծնեալ. և մարդով երևեալ. կամ մարդով *շրջեալ*. և այլն: - 79. Իսկ սուրբն կիւրեղ ընդ դէմ նեստորի զինէր. որ ասէր բնակութեամբ զբանն ի մարմնի. և նախ զմարդն ծնեալ ի կուսէն և *շրջեալ* ի յերկրի, և յետոյ բնակեալ բանն աստուած յետ մկրտութեանն. և յետ յարութեանն փառաւորեաց զնա և զօրացոյց յարակցութեամբ ընդ ինքեան: - 79. Եւ դարձեալ, զի ամպով և հողմով ասի շարժիլ աստուծոյ. և այսու լինիլ նման այսինքն ի վերայ ամպոց և հողմոց և հրեշտակաց *շրջելով:* - 148-149. Չորրորդ՝ զի ի դնն *շրջեալ* է տրտնջականն ըստ յառաջանալոյ ի բարին: - 151. Հինգերորդ՝ զի հոգևոր բնութիւնն միանգամ միայն է *շրջելի*. վասն զի բոլորովին *շրջէ* զինքն՝ զոր ո՛չ առնէ մարդն. զի մարմինն միշտ մարտնչի ընդ հոգին. որպէս յառաջիկայդ ասի լք գլուխն: - 151. Իսկ գործ պոռնկութեանն զկնիք կուսութեանն *շրջէ* և զբնութիւնն ապականէ...: - 165. Ասեմք առ այս Նա՛խ՝ եթէ թողութիւնն է ի զղջումն. և կարգն է ի յանձն ապականեալ. ապա ուրեմն իրաւի թէպէտ զթողութիւն ընկալաւ զղջմամբն, սակայն ի կարգն ո՛չ մտանէ ապականեալ և *շրջեալ* անձամբ և բնութեամբ, զորօրինակ բեկեալ և կցեալ անօթ՝ ո՛չ թւի ի կարգ անարատիցն: - 166. Եւ այս ո՛չ պատճառի ի տկարութենէ շնորհացն որ միշտ նոյնպէս է նախ և յետոյ. այլ ի տկարութենէ անձինն *շրջելոյ:* - 166. Երրորդ՝ զի բոլորակն սո՛ւր է ի շարժումն. և երկինքն սրագո՛յն է ի շարժումն, որ ի *շրջիլն* իւրում շօշափէ՛ զերկիր ի մի կէտ: - 182. Ոմանք ասեն որպէս արիստոտէլ, թէ ամենայն աստեղքն բևեռեալ են յերկինս և ընդ նմա՛ *շրջին:* - 189. Վեցերորդ Փայլածուն. զոր օտարիտ կոչեն. միշտ *շրջի* ընդ արեգականն. և սակաւ հեռանայ ի նմանէ. զընթացս իւր կատարէ՛ **յը** աւուրս. **ժ** օր պակաս քան զլուսաբերն. և այլք թէ **գ** ամիս: - 189. Զի յարևելից կիտէ՛ ի նոյն կէտ *շրջեալ*՝ լինի օր մի. որ է **իդ** ժամ. երկու ժամ միոյ կենդանակերպի: - 190. Նա՛խ՝ զի ի նմա՛ *շրջին* գազանք և կերակրին: - 196. Իսկ մրրիկ հո՛ղմ է ի յամպոյն ելեալ և առ ինքն ի յամպն ներման առեալ և *շրջեալ:* - 206. Եւ զի բարեկամութեամբ եկն և *շրջեցաւ* ի թշնամութիւն, ինքն յետս *շրջի* ի խածանելն: - 219. Եւ ձուկն ի ջուրն՝ փոր ի վեր *շրջի:* - 234. Եւ յորժամ զանազան *շրջի*, չարիք գոն ի սիրտն: - 246. Իսկ բարոյականն այս ինչ է. զի զպատկերն արարչական և զառաջին կեանս դրախտին կորուսաք, և զանասնեղէն պատկերն և զերկրորդ և զախտաւոր կեանս ընտրեցաք. յիրաւի *շրջեցաւ* ի մեզ և լինելութիւն հոգւոյն: - 258. Նա՛խ՝ զդարձումն յետս աստուածային փառացն. և վասն այն *շրջեցաւ* ի զբօսանս դրախտին: - 280. Զայս ասէ գիրն եթէ՝ չորեքանկիւնի էր՝ զի մի՛ *շրջեսցի*: - 293. Ութևժ, չո՛րս են որք հզօրք են և պերճ *շրջին* ասէ սողոմոն. այսինքն աքաղաղ, և նոխազ, և թագաւոր հրապարակախօս, և առիւծ՝ որ ո՛չ դարձուցանէ թիկունս յանասնոց: - 316. Երրորդ՝ ցուցանէ զգողացեալն ի բանից, զնոյնն կրկնել և *շրջել* պատասխանելով: - 323. Իսկ հրեշտակք կարե՛ն փոխել զմիտս և *շրջել* ի բարին. նաև զերևակայութիւնս և զզգայարանս, այլ ո՛չ զկամս: - 336. Մեծ, զի **խ** ամ *շրջեցան:* - 393. Ոմանք ասեն

միայն զլուսաւորս արգելեալ և զկամարն *շրջեալ* մինչ հասեալ ի նոյն կէտն: - 416. Յինգերորդ՝ օրհնեալ ի տեառնէ մանուկն սամփսոն, և հոգւով զօրութեամբ *շրջէր:* - 422. Կամ զի աղքատասէ՛ր էր դաւիթ և բազումք *շրջէին* ընդ նմա, վասն այն յեփուսացիքն նախանձեցան: - 431. Զի և նա՛ չարչարէ՛ զհոգիս և է կենդանւոյն ի դժոխս ընդ մեզ *շրջեալ:* - 505. Վեշտասաներորդ՝ ի մէջ գիշերի յարեաւ, զի զհոգիսն ի խաւարային բանտէն ի լոյս կենաց *շրջեսցէ:* - 514. Այլ և զեօթն օր *շրջեցան* տապանակաւն, և կործանեցաւ պարիսպն երիքովի: - 626. Յօրինակ յեսուայ, որ տապանակաւն և քահանայիւք և ժողովրդովք զվեց օր *շրջեցաւ* լռութեամբ...: - 627. Եւ դառնացեալ յոգոց հանէ, և այսր և անդր զերեսն *շրջէ* և թաքչիլ ո՛չ կարէ: - 669. ...և *շրջեսցին* զնովաւ կոծօղք և լալականք հրապարակին...: - 669. Նա՛խ՝ զի խոնարհ և ցա՛ծ է կողմն հարաւոյ. և լուսաւորքն ա՛նդ *շրջին*. և աջ կողմ է աշխարհի. վասն այն ջերմ է: - 731. Յինգերորդ, զի որդին ծնաւ ի կուսէն և յերկրի *շրջեցաւ* և քարոզեաց և չարչարանօք փրկեաց և պատճառ եղև ընդհանուր յարութեան բնութեանս մերոյ...: - 735

**ՇՐՏՆՈՒՄ +** Երրորդ՝ զի անդ բազմաց *շրտնու* տեսութիւնն. և աստ միայն զօրանայ տեսողական մասն միոյն. որպէս աշակերտին եղիսէի: - 133

**ՇՓՈԹԵՄ +** Ա՛րդ՝ որպէս կարծեն ինքեանք զէն մեծ ունիլ առ երկոսին կողմանս, կամ հարկիւ անկանիլ ի նեստորին բնութիւն և բնութիւն, և կամ ըստ եւտիքեայ *շփոթել* զբնութիւնսն: - 75. Նախ՝ զի մի՛ *շփոթեսցին* բնութիւնքն ի միաւորութիւնն որպէս ասաց եւտիքէս: - 76. Զի անմարմին է՝ և միաւորի ընդ մարմնոյ. որպէս հոգի և մարմին բնութեամբ միաւորին և ո՛չ *շփոթին:* - 76. Զի մի՛ զղէմսն, այսինքն զանձինսն *շփոթիցեմք:* - 80. Իսկ բաժանմունքն յորոց փրկիչն՝ ընդդէմ է այնմ. զի բնութեամբ է միաւորեալ. որ ո՛չ է հնար *շփոթելոյ:* - 80. Ո՞րպէս փախիցուք ի նեստորի բաժանելոյն, և յեւտիքեայ *շփոթելոյն:* - 80. Իսկ ընդ դէմ նմին եւտիքէս զամենայն *շփոթէ* և խառնակէ. զանձն և բնութիւնն. և զկամս և զկիրս: - 81. Այլ և մի բնութիւն ասաց եւտիքէս. *շփոթեալ* և խառնակեալ զտարբերութեան յատկութիւնս բնութեանցն: - 81. Եւ սոքա կամ *շփոթեալ* խոստովանին. որպէս եւտիքէս և այլքն: - 82. Եւ թէպէտ և ոմանք նմանապէս մեզ ասեն մի բնութիւն՝ բայց *շփոթեալ:* - 83. Իսկ եթէ աստուածային բնութիւնն և զմարդկայինն առանց անձին ասէք քրիստոս, ահա՛ *շփոթեցիք* զերկու բնութիւնսն առանց անձին միանալոյ ըստ եւտիքեայ: - 90. Յինգերորդ՝ զի առանձին բնութեամբ սոքա ի մի էութիւն ժողովեալ խառնին. և մի բնութիւն նիւթոյ կատարեն. և ի բնութիւնս իւրեանց ո՛չ *շփոթին* և այլայլին: - 176. Որպէս հոգի և մարմին բնութեամբ միաւորին ի մի բնութիւն և ի մի դէմ և ո՛չ *շփոթին:* - 176. Այսպէս իմա՛ ինձ և զբանին մարդեղութիւն յայլևայլ բնութեանց միաւորեալ ի մի էութիւն և ի մի դէմ անձնաւորեալ և ո՛չ *շփոթեալ* բնութեանցն յատկութիւն: - 176. Ապա ընդէ՞ր սոքա՝ գոյացութիւն, որակ, քանակ, և այլքն, եղական գոլով ո՛չ *շփոթին* ի մի բնութիւն խառնեալ: - 176. Չորրորդ՝ երկիրս այս տեղիք ուսմա՛ն է մեր՝ ըստ կարգի կատարեցան. զի մեք զամենայն ինչ ըստ կարգի ուսցուք. և մի՛ անկարգ և *շփոթեալ:* - 192. Իսկ խառնակել՝ ո՛չ *զշփոթելն* ասէ որ անլո՛ւր էին միմեանց լեզուին: - 297. Երրորդ առ այսոքիւք՝ միաւորութիւն անուանեմք և զխառնուածս երկուց նայից ըստ զանազան որակութեանց. յորում ո՛չ ոք ի խառնեցելոցն զիւր ծայրագոյն որակութիւնն սեռաբար կարող է պահել. այլ *շփոթեալ* անկանի ի ծայրագոյն որակութենէն. որպէս զջուրց և զգինեացն խառնուած, և զմեղերաց: - 476. Երրորդ, զի որդի է՛ նման հօր. իսկ հրեշտակք և մարդիկ *շփոթեցին* յինքեանս զնմանութիւնն յոր ստեղծան. - 735. Ո՛չ *շփոթեալ* բանն և ո՛չ ծախեալ մարմինն: - 770

**ՇՓՈԹՈՒՄՆ +** Առաջնոյն ասեմք. թէպէտ բանն աստուած բնութեամբ միաւորեսցի ընդ մարդկութեանն, ո՛չ կրէ *շփոթումն* և կամ խառնակումն ինչ: - 76. Ո՛չ յեղմամբ կամ *շփոթմամբ*. այլ անշփոթ միաւորութեամբ զբանն մարմին եղեալ և միաւորեալ զբնութիւնս մեր կատարելապէս ընդ իւրում աստուածութեանն: - 76. Զի եթէ միաւորութեամբ, ահա՛ *շփոթումն* եղև. զի զանձն և զբնութիւնսն մի ասացիք: - 90. Պատճառելով՝ եթէ միաւորեալ ասեմք զբնութիւնսն, *շփոթումն* լինի: - 176. Եւ անեղ բնութեանցն աստուծոյ զրպարտելով *շփոթումն* համբաւեւս: - 176. Նախ՝ զի ոչ ոք ճանաչէր զհայր կամ զեղբայր իւր. այլ ես զքեզ հայր գիտէի, և դու զայլ ոմն եղբայր. և լինէր մեծ *շփոթումն:* - 238. Նա՛խ՝ զի ամենայն իր որ ընտի՛ր է՝ չա՛փ ունի և սահման. և ո՛չ *շփոթումն*. վասն այն կանգնաւ չափէ զնոսա: - 344. Իսկ պատահումն ընդ պատահման միշտ *շփոթմամբ* միաւորին. որպէս գոյն ի սևէ և ի սպիտակէ՛: - 475. Եւ այնք որ էութիւն ընդ էութիւն միաւորին՝ են որք *շփոթմամբ* միաւորին. որպէս ջուր ընդ գինի. և **դ** տարերք: - 475

**ՇՕԹ +** Եւ *շօթն* թանձր լօշ եփեալ և ապա՛ օծեալ իւղով: - 357. Եւ վասն ուխտի, խաչի, և եկեղեցւոյ: Պտուղս: *Շօթ:* Նաշիհ: Զէթ: Մոմ: Խունկ. և այլն: - 362. Իսկ ի ներսն, **ա**՝ հացին երեսաց և գառին. **բ**՝ խնկոցն. **գ**՝ *շօթին* և զհացին. **դ**՝ մին ա՛յլ **զ** հացին. զի **ժբ** հաց էր. և **բ** սեղան: - 364

**ՇՕՇԱՓԱԿԱՆ +** *Շօշափականն* է՛ հողոյն՝ ի ներքոյ եղեալ: - 215. Ութերորդ՝ ի նոյն ինքն ի *շօշափականն* երևին **դ** տարերքն: - 215

**ՇՕՇԱՓԵԼԻ +** Ապա ուրեմն *շօշափելի* մարմինն է բան կենաց և աստուած: - 73. Նոյնպէս և ջուրն ունի զոսա. զի *շօշափելի*՛ է՝ և մածեալ՝ և շարժի՝ և երևի: - 215. Իններորդ՝ նոյն ինքն մարմին կենդանւոյն է՛ *շօշափելի* և է՛ կալեալ և մածեալ. և շարժի և երևի. որպէս ասացաք վասն հողոյն: - 215. Իններորդ՝ խաւարն *շօշափելի*. կամ զի թանրացեալ ըմբռնիւր *շօշափելով*. կամ զի *շօշափելով* ծեռաց և գաւազանաւ կարէին շարժիլ: - 334. Իսկ ժուժկալութիւնն առ *շօշափելիսն* ըստ ծննդական զօրութեանն. ի յորում դնէ զեղանակն. զի առաւել յօժարի մարդն ի գոլ անհատութիւնն սննդականաւն, և ի գոլ տեսակին ծննդականաւն. և յօժարութիւնքս այս՝ զսպին զգաստութեամբ և ժուժկալութեամբ: - 581. Վեցերորդ՝ խաւար *շօշափելի*. ուստի ասի «երկիր խաւար և մթին ուր ոչ ինչ կարգ և մշտնջենաւոր արհաւիրք բնակեալ»: - 752

**ՇՕՇԱՓԵԼԻՔ +** Իսկ *շօշափելիքն* զգայ զջերմութիւնն՝ և տեսանելիքն զլոյսն միայն ի միում էութեան: - 75. Պտուղքն դրախտին *շօշափելիք* են և կերակրելիք. հատանի և ծասկի և փոփոխի ըստ պատահական որակացն. և անապական մնայ ըստ գոյացութեանն և ներգործութեանն ի կերօղն: - 223. Զի *շօշափելիքն* ի ներքո՛յ է որպէս երկիր. և ճաշակելիքն ի վերոյ որպէս ջուր. լսելիքն յօդն է. և տեսանելիքն հուրն ի վերոյ: - 235. Երեքն ի սոցանէ գռեհիկք են. որ է *շօշափելիք*. ճաշակելիք. հոտոտելիք. զի խառնելովն ի զգալի իրն ճանաչեն: - 235. Եւ է՛ արտաքին զգայութիւնքն **ե**. որ է մասնական զգայութիւն. այսինքն է տեսանելիքն. լսելիքն. հոտոտելիքն. ճաշակելիքն. և *շօշափելիքն:* - 249. Զի որկորստութիւն է ճաշակելեաց. և Պոռնկութիւն *շօշափելեաց:* - 560. Եւ **ե** արտաքին զգայութիւն. այսինքն տեսանելիք. լսելիք. հոտոտելիք. ճաշակելիք. և *շօշափելիք:* - 622. Եւ ի ճաշակելեաց և *շօշափելեաց*, շօշափման բանի և ճաշակման պարարուն. և ուրախութեան նարդոս և կերակուր անմահութեան: - 771

**ՇՕՇԱՓԵՄ +** Երկրորդ՝ զի ի զատ ճողոպրի ի զգայութեանց. այսինքն ի տեսանելեաց, ի *շօշափելեաց*, և յայլոց, որ զնիւթականս զգան: - 175. Երրորդ՝ զի բոլորակն սո՛ւր է ի շարժումն. և երկինքն սրագո՛յն է ի շարժումն, որ ի շրջիլն իւրում *շօշափէ*՛ զերկիր ի մի կէտ: - 182. Երրորդ՝ զծայնն միայն լսեցին և զտեսիլն ո՛չ տեսին. և մեք լուաք և տեսաք և *շօշափեցաք* զբանն կենաց: - 353. Եօթներորդ՝ ընդէ՞ր ոչ եկեր ընդ նոսա և ոչ նստաւ և ոչ *շօշափեցաւ:* - 429. Եօթներորդ՝ բանին էր պատշաճ պատմել զհօրէ. և երևիլ մեզ. որպէս ներտրամադրեալ բանն յառաջ գայ և լինի բարբառ և գրեալ ի քարտիսի, երևի և *շօշափի:* - 468. Անշօշափելին *շօշափեալ:* - 470

**ՇՕՇԱՓՈՒՄՆ +** Նախ՝ զի գործ մարդոյ *շօշափմամբ* է. իսկ աստուծոյն առանց *շօշափման:* - 156. Զի առանց հողոյ *շօշափումն* ո՛չ լինի. և ո՛չ առանց ջրոյ կալումն և մածումն. և ո՛չ առանց օդոյ շարժումն. և ո՛չ առանց հրոյ երևումն: - 180. Եւ ի ճաշակելեաց և շօշափելեաց, *շօշափման* բանի և ճաշակման պարարուն. և ուրախութեան նարդոս և կերակուր անմահութեան: - 771